

Օգնեա՛ Յոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ:

Գրիգորի Եռամեծի բանիբուն վարդապետի քաջ հռետորի՝ ճշմարտասեր իմաստասիրի. ճգնազգեաց անձին եւ անյաղթ փիլիսոփայի. Աշակերտի Յօհաննու Որոտնեցւոյ: Շարժեալ ի բարեսեր մտաց եւ ի հոգւոյն շնորհաց. յաւետ ի հարկեցուցիչ Բանից տիրական հրամանոց՝ տալ ըստ ըղծից ի քէն խնդրողաց: Վասն եղծման չարիմաց բանից նիհամեստ քարոզչաց: Տալով զսա ի յագուրտ մտաց բանասեր անձանց. մանաւանդ ի զարդ պարծանաց ուղղասեր մանկանաց: Ե՛ւս ի պատիւ Սրբոց եւ դարձման ի մեղաց: Պատճառ սրբութեան մաքրասեր հարսին փեսային փառաց. եւ առիթ ժառանգման նախապատրաստեալն բարեաց: Յորեւ ինքն իւրայնօք հանդերձ հասցէ ի վայելումն փառաց անվախճան կենաց:

Երկրորդ հատոր Զարոզ գրոցս. ի բան մարգարէին Դաւթի որ ասէ. (Առաջնորդեա՛ ինձ ի շաւիղս պատուիրանաց քոց, Տէ՛ր, զի ընդ նոսա հաճեցայ) Սաղմ. 118. 35 (Գլուխ. Ա)

Երկու են ճանապարհք կենցաղոյս մարդկան՝ բարի եւ չար. բարի ճանապարհն եւ գործն՝ բնական է մարդոյս. զի անդստին ի ստեղծմանէ եղ Աստուած զբարին ի բնութիւնս մեր: Չի հոգի մարմին եւ միտք մարդոյս բարի են. եւ ի բարւոյն Աստուծոյ ստեղծեալ: Իսկ չարն՝ եկամուտ է. որ յետոյ մուծաւ ի բնութիւնիս մեր ի երկու պատճառէ: Նախ ի սատանայէ. որ սերմանեաց զչարն ի հոգի եւ ի մարմին եւ ի խորհուրդս մարդկան: Եւ երկրորդ՝ յանձնիշխան կամաց մերոց. որ մեր կամօքս հաւանիմք սատանայի սերմանցն, եւ առնեմք զչար: Արդ՝ օրենքն Աստուծոյ դարձուցանեն զմեզ ի չար ճանապարհէն սատանայի. եւ բերեն յուղիղ ճանապարհն եւ ի գործս բարիս. որպէս ասէ մարգարէն: (Օրենք Տէրն անբիծք են. եւ դարձուցանեն զհոգիս:) Այլեւ վասն օրինացն գիտելի է. որ երեք ճանապարհաւ կատարին օրենքն Աստուծոյ եւ պատուիրանն: Նախ՝ լսել զօրէնս եւ ուսանիլ: Երկրորդ՝ երկնչիլ յԱստուծոյ եւ ի մտի պահել: Երրորդ՝ պահել զպատուիրանն Աստուծոյ եւ գործով կատարել. որպէս ասէ իմաստունն Սողոմօն. (որդեակ՝ զամենայն ինչ լուր՝ եւ յԱստուծոյ երկիր՝ եւ զպատուիրանս նորա պահեա՛): Դու որ իմ որդեակ ես հնազանդ, եւ վարդապետութեան իմոյ աշակերտ, զամենայ ինչ զոր ասէ քեզ օրենքն Աստուծոյ՝ լո՛ւր եւ ունկնդիր. զի մի լիցիս տգետ եւ ասիցես, թէ ո՛չ գիտեմ զօրէնս Աստուծոյ. եւ տգիտութեամբ ընդ անպարիշտն կորնչիս: Եւ մի՛ քններ զօրէնս, թէ զայս վասն Է՞ր պահեմ՞ կամ զի՞նչ օգուտ կայ ինձ յայսմանէ: Մի՛ քններ ասէ. այլ զամենայն լո՛ւր առանց հակառակութեան: Երկրորդ բան խրատ տայ եւ ասէ: (ՅԱստուծոյ երկի՛ր.) այսինքն, թէ յորժամ լսես զօրէնսն Աստուծոյ, երկիւղ եւ ահ բեր ի քեզ՝ թէ Աստուած դատաւոր է եւ վրեժխնդիր յանցաւորաց. եւ տանջանք տայ ո՛չ պահողացն. զայսպիսի երկիւղս միշտ ի մտի պահես. որպէս մարգարէն Դաւիթ աղաչէր զԱստուած եւ ասեր. (բեւեռա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ. զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ:) Երրորդ բանն՝ որ ասէ զպատուիրանս նորա պահեա՛. զի յորժամ երկնչի մարդն յԱստուծոյ, զպատուիրանն նա կարէ պահել. որպէս ասէ Դաւիթ. (երանել է այր՝ որ երկնչի ի Տէրնէ. զպատուիրանս նորա նակամի յո՛յժ:) Եւ այսպէս պահելով զպատուիրանն՝ ո՛չ գործէ մարդ զմեղս: Եւ թէ

գործեալ է, ապաշխարե եւ արդարանայ: Չի յայս ստեղծաւ մարդն ամենեւին. որպէս, զմարդ վասն ա՛յն է ստեղծեալ Աստուած. եւ ի յայս կոչեցաւ: Եւ վասն այն եդ ի դրախտին՝ որ լսէր զհրամանս Աստուծոյ. եւ ի յայս կոչեցաւ: Եւ վասն այն եդ ի դրախտին՝ որ լսէր զհրամանս Աստուծոյ. եւ երկնչէր ի նմանէ. եւ պատուիրանս նորս կատարէր: Եւ յայտ է յայնմանէ՝ որ ասացաւ մարդոյն թէ, (ի ծառոյն գիտութեան մի՛ ուտեր. զի մի՛ մահու մեռանիցիս:) Ահա հրամանն Աստուծոյ. եւ ահա երկիւղ մահուն զհետ հրամանին: Իսկ թէ պահեալ էր զպատուիրանն՝ յանմահ կեանս էր փոխելոց:) Այսպէս եւ զամենայն ծնունդս նորա յայս կոչեաց եւ եբեր յաշխարհս: Որպէս ասէր Մովսէս. (լո՛ւր իել. եւ երկիցատս յերեսացն Աստուծոյ. եւ պատուիրանս նորա պահեսցես: Այսպէս ամենայն մարդոյ պարտ է նախ լսել զօրէնս. եւ ապա երկնչիլ յԱստուծոյ. եւ ապա սահել զհրամանս օրինացն: Եւ երկիւղ եւ պահպանութիւն օրինացն Աստուծոյ՝ զմիտս մարդոյն պայծառացուցանեն. եւ լուսով պատուիրանին ի սերն Աստուծոյ եւ ի կատարելութիւնն հասուցանեն: Որպէս ասէ մարգարէն: (Առաջնորդեա՛ ինձ ի շաւիղս պատուիրանաց քոց. զի ընդ նոսա հաճեցայ:) Օրինաց կատարումն՝ սեռաբար երեք օգտութիւն ունի: Նախ՝ զկանոնս եւ զպարտս օրինացն վճարեաց: Երկրորդ՝ անպատկառ է առ օրէնսդիրն Աստուած: Երրորդ՝ զի զբարիս յանձն իւր ժողովէ: Այս երեք օգտութիւնս գլխուր է. վասն զի երեք դեմք են աստ որպէս օրէնսդի՛րն. եւ օրէնքն. եւ առնօղն:

Եւ արդար մարդն ուրախ լինի ի կատարելն զօրէնս: Նախ զի՝ մարմնոյ ուրախութիւնք՝ որպէս հեշտութիւնք փառք եւ մեծութիւնք անցաւորք են: Երկրորդ զի սոքա արդարոյն յանցանաց եւ մեղք են. վասն այն սոքօք ոչ ուրախանայ արդարն. այլ յօրինաց կատարումն: Չի օրէնն կատարողացն՝ ուրախութիւն է եւ կեանք. եւ ոչ կատարողացն՝ տրտմութիւն է եւ մահ. որպէս ասէ առաքեալն: (Պատուիրանն որ տուաւ ինձ ի կեանս, նոյն գտաւ ինձ ի մահ:) Երեք է իմացումն: Նախ այսպէս. զի պատուիրանն Աստուծոյ պահողացն կեանք է. եւ յանցաւորացն մահ:

Երկրորդ՝ զի մարմնոյ մահէ. եւ հոգւոյ կեանք: Երրորդ՝ զի օրինօքն սպանանի յանցաւորն. որպէս ասաց. (մի՛շնար. եւ մի՛ գողանար:) Յորժամ շնամք եւ գողանամք, պատժ է զմեզ նոյն օրէնքն. որպէս յայլ ուր ասէ առաքեալն: (Ես ո՛չ գիտէի զմեղս, թէ ոչ օրինացն էր ասացեալ:) Այսպէս օրէնքն Աստուծոյ եւ պատուիրանն՝ պահողացն կեանք են. եւ ոչ պահողացն մահ. վասն այն մարգարէն աղօթէր առ Աստուած: (Առաջնորդեա՛ ինձ ի շաւիղս պատուիրանաց քոց. զի ընդ նոսա հաճեցայ:) Դարձեալ պարտ է զիտել՝ զի օրէնքն Աստուծոյ՝ պարիսպ է մարդոյս եւ ցանկ. ըստ այնմ որ ասէ Եսայի. (ցանկով փակեցի:) Եւ երեք է ամբութիւն եւ պարիսպ մարդկանց. զոր օրինակ՝ զքաղաք կրկին եւ երեքկին պարսպեն:

Առաջին՝ խոհեմութիւն է պարիսպ ներքին. որ զինչ եւ առնէ մարդ գործէ. նա հաստատ ի գլուխ տանի: Երկրորդ պարիսպ է՝ գործ առաքինութեան. որ յամենայն չարե պահէ զմարդ. որպէս պահք՝ աղօթք՝ ողորմութիւն, եւ այլն: Եւ այս պարիսպս ժուժկալութիւնն է որպէս կիր, որ ի մէջ պարսպին ամբութիւն է. զի ամենայն ժուժկալութեամբ կատարի: Երրորդ պարիսպ օրէնքն Աստուծոյ է. որ պահպանէ զմեզ յամանայն նենգութենէ թշնամւոյն սատանայի: Ի սոցանէ խոհեմութիւնն առաջին

պարհսպ է. գործն միջին օրէնքն վերջին: Դարձեալ իմաստունին՝ իսկիզբն գործէ. եւ ժուժկալութիւնն ի գործն. եւ օրէնքն ի կատարումն: Եւ դարձեալ՝ իմաստութեամբ զմիտս պարսպեմք. եւ գործովն զհոգիս. եւ օրինօքն զբոլոր զգայարանս մարմնոյս. եւ զհոգի, եւ զմիտս: Եւ թէ սք ասէ տարակուսեալ, որպէս պահեն զմեզ օրէնքն. զի ահա ամենայն փորձութիւնք տիրեն մեզ որք ունիմք զօրէնս. որպէս, հիւանդութիւնք՝ ցաւք՝ մահ տարածամք՝ կարկուտ՝ հողմուկք՝ ձմեռն՝ եւ եղանակք՝ եւ ամենայն տարերք յանկարգութիւն փոխին ի վերոյ մեր: Ասեն վարդապետք առ այնպիսի տարակուսեալսն, եթէ պատուեաց Աստուած զմարդ եւ եդ ի նմա երեք կարգ. որպէս անձնական. բնութենական. եւ պատուիրանին: Անձնական կարգ է՝ զի հոգին Տէր է, եւ մարմինն ծառայ. պարտ է ի հնազանդութեան լինիլ: Բնութեան կարգ է՝ զի ցանկութիւնն իցէ ի ներքոյ ցասմականին. եւ ցասումն Բանին մասին. զի Բանն միշտ իշխան է. եւ ցանկութիւնն միշտ իշխեցեալ. ցասումն իշխան եւ իշխեցեալ. որպէս իշխան է ցանկութեանն. եւ իշխեցեալ ի Բանէն: Իսկ պատուիրանին կարգն է. զի հնազանդեացի մարդն օրինացն Աստուծոյ: Եւ զայս երեք բարեկարգութիւնս ունէր մարդն նախ քան զյանցանելն ի դրախտին. իսկ յորժամ անձն իշխան կամօք զայս երեք կարգս փոխեաց, մարմին Տէր եղեւ հոգւոյ. եւ բանականն հնազանդ եղեւ ցասմանն եւ ցանկութեանն. եւ ինքն եթող զպատուիրանս Աստուծոյ: Յայնժամ յիրաւի ամենայն տարերք ի յանկարգութիւն փոխեցան. եւ զազանք եւ անասունք անհնազանդ եղեն մարդոյն եւ թշնամիւնք նմա: Եւ այս ի թոյլ տալոյն Աստուծոյ. փոխանակ զի եթող մարդ զպատուիրանն Աստուծոյ. թողել եղեւ մարդն ի ինամոցն Աստուծոյ. եւ վասն բնական անկարգութեանն՝ փոխեցին տարերք զկարգս իւրեանց: Եւ վասն ներքին զազանաց ապստամբութեանն որ է ցասումն եւ ցանկութիւն, ապստամբեցան արտաքին զազանք եւ անասուն ի մարդոյ: Եւ վասն մարմնոյն բնութեան՝ տիրեցին ցաւք եւ հիւանդութիւնք ի մարմինն. այսպէս եւ յամենայն ժամանակս ներգործի. յորժամ թողումք զպատուիրանս Աստուծոյ, թոյլ տալ Աստուած զի փորձութիւնք եւ նեղութիւնք տիրեն մեզ. ստահակութիւն տարերաց. կարկուտ. երաշտութիւնք. զաւք. մահ տարածամք: Մանաւանդ սով՝ սուր՝ եւ այլ ամենայն պատիժք եւ պատուհասք տիրեն մեզ: Եւ այս եւս բարի է. զի լինին ի խրատ մեզ եւ յահ եւ ի վարջումն. որպէս զի յայսպիսի պատուհասս՝ խրատին հեռելորք եւ երկնչին մերձաւորք. վարժ եւ կրթութիւն նոցա՝ որք կրեն զպատիժն: Դարձեալ խրատ է պատիժ վասն անցեալ մեղացն. եւ ահ եւ երկիւղ վասն ապագային. եւ վարժ եւ կրթութիւն վասն ներկային, զի զգուշացուք ի մեղաց: Եւ այսպէս պատուիրանին Աստուծոյ թողուլն՝ թողու զմեզ ի ինամոցն Աստուծոյ: Նախզի՝ պատուիրանն Աստուծոյ լոյս է իմանալի առ մեզ իջեալ. ըստ այնմ: (Պատուիրանք Տէրն լոյս են. եւ լոյս տան աչաց.) յորժամ թողումք՝ ի խաւարի կորնչիմք: Այլեւ օրէնքն Աստուծոյ ուղղութիւն է մեզ ի ճանապարհ կենցաղոյս. եւ յորժամ թողումք՝ թիրիմք եւ մոլորիմք: Այլեւ օրէնքն օգնական է մեզ որպէս սիւն տան. յորժամ թողումք զօրէնս, խախտի հոգեւոր շինւածս մեր: Այլեւ գաւազան հաստատութեան է օրէնքն. յորժամ ընկենումք՝ դիրաւ գթիմք եւ զլորիմք: Դարձեալ՝ ճանապարհ է որ տանի զմեզ առ Աստուած յերկինս. ըստ այնմ, (ճանապարհ արքունի գնա. մի յաջ խոտորիւր եւ մի յահեակ.) յորժամ թողումք յաշխարհի՝ մոլորիմք: Դարձեալ՝ կեանք է հոգեւոր. ըստ այնմ, (պատուէրն այն՝ կեանք է

յաւիտենական.) յորժամ որոշիմք՝ մահու մեռանիմք: Դարձեալ՝ պատուիրանան ճանաչէ աստուած զմեզ. յորժամ մոռանամք մեք, նա մոռանայ աստուած զմեզ: Եւ տես յորժամ պահէր Ադամ զպատուիրանն, տեսանէր զԱստուած. իսկ յորժամ եթող՝ արտաքսեցաւ յերեսացն Աստուծոյ. Նոյնպէս եւ մեք: Եւ օրէնքն է որ զմեղսն մեզ ցուցանէ. եւ օրէնքն է որ սրբէ զմեզ ի մեղաց: Որպէս ջուրն որ սրբէ զաղտ զմարմնոյ. այսպէս պատուիրանն Աստուծոյ սրբէ զախտ հոգւոյ եւ զմեղս: Եւ օրէնքն է որ զմեզ ի ծառայութիւն Աստուծոյ պահէ. յորժամ թողումք, հեռանամք յԱստուծոյ Ադամ որքան պահէր զեղեալ օրէս՝ ի դրախտին էր եւ տեսանէր զԱստուած. եւ որժամ մոռացաւ զօրէս, հեռացաւ յԱստուծոյ, եւ ել ի դրախտէն: Չի օրէնքն է ծառ գիտութիւն բարւոյ եւ չարի. զոր հրամայեց Աստուած (մի ուտել յայն պտղոյն.) յորժամ կերին, զհրամանն Աստուծոյ կոտորեցին. վասն այն մահապարտք եղէն: Չորօրինակ՝ մարդ որ զհրաման թագաւորին պատառէ՝ ոչ զթղթին տուգանսն տայ. այլ զի գանուն եւ զբան թագաւորին պատառեց, մահապարտ լինիլ: Եւ որպէս ի հրամանս թագաւորին մեծ եւ փոքր չկայ. ամենայն նորա բանք են՝ նոյնպէս եւ յօրէնսն մեծ եւ փոքր չկայ. այլ հաւասար Աստուծոյ հրաման է. եւ պարտ է մեզ պահել. զի ամենայն բարեացն Աստուծոյ հաղորդ լինիցիմք: Չի զամենայն բարոթիւն հոգւոյն եւ մարմնոյ՝ օրինօքն մեզ պարգէւ է Աստուած. յորժամ թողումք զնա՝ յամենայն բարութեանց զրկիմք: Եւ որպէս թողումք զօրէս յորժամ իւրաքանչիւր ոք ըստ կամաց իւրոց գնայ, յայնժամ եթող զկաման Աստուծոյ. զի զոր ինչ կամի Աստուած՝ այն է որ գրեալ է ի պատուիրանս Աստուծոյ. եւ մեզ այնմ պարտ է հետեւիլ. եւ վասն այն կոչիմք օրինաւորք եւ քրիստոնէայք: Եւ որպէս այն եզն որ ունի զլուծն ի վերոյ ուսոյն՝ ոչ կարէ յաջ կամ յահեակ խոտորիլ՝ եւ ոչ ծուլանալ. եւ թէ խոտորի, խարազանան ուղղեն. նոյնպէս եւ քրիստոնէից ազգն: Եւ որպէս այն պախրայն որ ի նախիրն է՝ ըստ իւր կամացն է. թէ նստի, թէ ուտէ, եւ յոր կողմ եւ շարժի. նոյնպէս եւ այլազգին եւ անօրէնն է: Չի օրէնքն օրինաւորացն ասեն, եւ նոցա տիրան. եւ զնոսա խրատեն եւ ոչ զանօրէնսն: Այլ դուք մի նմանիք անօրինացն. զի միապէս անօրէն կոչի այն՝ որ ոչ է առեալ զօրէս, եւ որ ոչ գիտէ եւ ոչ առնէ: Նոյնպէս եւ անօրէն է նա՝ որ առեալ է զօրէս եւ մոռացեալ. եւ ի բաց թողեալ է եւ ոչ առնէ: Եւ զայնպիսին աստուած ի բաց թողեալ է ի յիւր ինամոցն եւ մոռացեալ. ըստ այնմ, (բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց.) Եւ յորժամ Աստուած ի բաց թողու զմարդն, ամենայն պատհարք եւ փորձանք տիրեն մարդոյն. յերկնէ եւ յերկրէ. ի դիւաց եւ ի մարդկանէ. ցաւք ի հոգի. դառնութիւն ի միտս. հիւանդութիւն ի մարմինս. մահ տարածամ, եւ զանազան պատհարք: Եւ գիտելի է՝ զի օրէնքն Աստուծոյ կրկին հատուցումն ունի ընդ իւր. որպէս, պարգէւ առնողացն. եւ պատուհաս յանցաւորացն: Եւ կրկին է պարգէն. մարմնաւոր աստ. եւ հոգեւոր ի հանդերձեալն. նոյնպէս կրկին է պատիժն. ասա անցաւոր. եւ անդ յաւիտենից: Եւ այս վասն այն է՝ զի յանցաւորք օրինացն կրկին են ոմանք կամաւ, եւ ոմանք ակամայ յանցանեն նոյնպէս որք կամաւ յանցանեն յօրէս՝ անանց եւ յաւիտենից է պատուհասն: Իսկ որք ակամայ յանցանեն յօրէս, մարմնաւոր պատուհասին աստ: Նոյնպէս եւ որք կամաւ պատհոյք են օրինացն՝ նոցա պարգէն է յաւիտենական. եւ որք ակամայ եւ ի հարկէ պահեն, նոցա պարգէն է մարմնաւոր աստ: Դարձեալ գիտելի է զի պարգէն Աստուծոյ՝ են

խոստմունքն եւ արդիւքն: Եւ խոստումն նախ է եւ աստ. արդիւքն յետոյ ի հանդերձեալն: Նոյնպէս եւ պատուհասն Աստուծոյ է սպառնալիքն եւ է վճիռն: Եւ սպառնալիքն նախ է աստ՞ եւ վճիռն յետոյ ի հանդերձեալն: Դարձեալ գիտելի է զի սուրբ եւ պիղծ մարդն՝ կրկին իւօք ճանաչի. որպէս սուրբ եւ անսուրբ կենդանիք: Նախ օրէնքն ընտրէ. եւ երկրորդ նշանն որ կայ ի նոսա: Նոյնպէս եւ մարդս նախ ող ունի զօրէնսն՝ սուրբք է. եւ որ չունի՝ պիղծ. զի օրէնքն յուղղութիւն եւ ի սրբութիւն տուան մարդոյս: Երկրորդ՝ որ ունի զնշան եւ զգործ օրինացն սուրբ է. եւ որ չունի՝ պիղծ է. նաեւ անօրէն կոչի: Չի անօրէն է՝ որ չէ առեալ զօրէնս. եւ անօրէն է՝ որ առեալ է եւ ոչ գործէ ըստ օրինացն: Դարձեալ՝ որպէս սուրբ եւ անսուրբ կենդանիքն որոշին ի միմեանց տեղեալ եւ կերակրով եւ այլովն. որպէս ցնի եւ աղաւնի. գայլ եւ գառն: Նոյնպէս եւ մարդիկ ի գործս ի կերակուրս եւ ի խօսս՝ որոշին հաւատացեալք եւ անհաւատք: Մինն կազ եւ կռիւ ուտէ եւ ըմպէ, եւ այլն. եւ միւսն՝ հեզ խաղաղ անյիշաչար, եւ այլն: Այսպէս որոշեցան ի միմեանց. (զի ոչ ինչ է բաժին հաւատացելոյ ըստ անհաւատի:) Դարձեալ՝ չորս են եղանակք հատուցմանց. որպէս, բարի փոխանակ բարւոյ. չար փոխանակ չարի. բարի փոխանակ չարի եւ չար փոխանակ բարւոյ: Բարի փոխանակ բարւոյ՝ մասնաւոր բարի է. եւ չար փոխանակ չարի՝ մասնաւոր չար. բարի փոխանակ չարի՝ ամենեւիմբ բարի. իսկ չար փոխանակ բարւոյ՝ ամենեւին չար: Առաջինն՝ բարի փոխանակ բարւոյ՝ այս բնականօրինացն է քաղաքաց: Երկրորդն՝ չար փոխանակ չարի՝ այս օրինցն է Մովսէսի: Երրորդն՝ բարի փոխանակ չարի՝ այս նոր օրինացս է Քրիստոսի: Իսկ չորրորդն՝ չար փոխանակ բարւոյ՝ այս անօրինաց է. որք չունին յերեք օրինաց: Որպէս Ակիտովել Դաւթի՝ եւ մատնիչն Քրիստոսի՝ բարւոյն չար փոխանակեցին: Վասն որոյ ի խղճէ մտացն հեղձան. եւ մարմնով խաղդեցան եւ անկան ի պատրաստեալ տանջանս: Յորոց փրկեցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր յամենայն արկածից չարին սատանայի ամենայնիւ ի փառս Աստուծոյ. որ է օրինեալ յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին ի սկիզբն տասն բանեան օրինացն. ի բանն որ ասէ (ես եմ Տեր Աստուած քո. ' մի առներ քեզ կուռ. ' մի եղիցի այլ Աստուած բաց յինէն:) Ելից.2.2: (Գլուխ. Բ)

Մարդն ի հոգւոյ իմանալոյ ' ի մարմնոյ զգալոյ է ստեղծեալ: Եւ զգալի մարմինն այնքան ծանրացեալ է ի վերայ իմանալի հոգւոյս եւ սուարացուցեալ զսա, մինչ զի բազմաց կարծել թէ, մարմին միայն եմք: Վկայէ եւ գիրն, յասելն Աստուծոյ. (մի մնասցէ հոգինի դոսա վասն լինելոյ դոցա մարմին:) Վասն որոյ զգայարանաց ներգործելն միայն ճշմարիտ համարէին ի զգալի արարածս. եւ ջանիւք զհեշտութիւն սոցա հնարէին: Աջօք զգեղեցկատեսութիւն եւ ականջօք զհեշտալրութիւն. լեզուաւ զշատախոսութիւն. որովայնի զպարարումն. եւ շօշափելեաց զկակղութիւն: Իսկ միտքն խառնեալ ի սոսա՝ եւ սովորեալ սոքօք հեշտանալ. զի յորժամ աչօքն տեսանէ զբազումս ի պաշտօն իւր, եւ լսէ ունկամբն զհնազանդութիւն եւ զգովութիւն, եւ տեսանէ զպատիւ եւ զերկրպագութիւն, հեշտանայ միտքն: Եւ ոչ գիտէին մարդիկ թէ իմանալի Աստուած գոյ. կամ իմանալի կեանք. կամ բնական է ի յայն խոկալ իմացմանն եւ հեշտանալ մտօք: Վասն

որոյ ետ Աստուած զօրէս. եւ բարձրացոյց զմիտս մարդկան յիմանալի գիտութիւն իւր՝ զի ի ձեռն օրինացն՝ թողեալ զգալի հեշտութիւնս ախտաւորս. եւ իմացական մտօք յաստուած հպեցին: Եւ զի թանձրամիտ էր ժողովուրդն եւ տղայաբարու. վասն այն զիջանէր ըստ նոցա եւ զգայապէս երեւեր. փողովք եւ որոտմամբ. հրով եւ միգով. եւ ահեղ տեսութեամբ. յորմէ զարհուրէին: Եւ զպարգեւսն տայր լորամարգ եւ մանանայ. եւ խոստմունս մարմնականս. խորան զգալի. եւ զոհք եւ նւերք յանբանից. զի սոքօք իմանալոյն ընտելացին. զոր յետոյ անկարօտեցոյց զինքն աստուած: Եւ զայս օրէս յորո՞ւմ ժամու ետ: Ամենագութն Աստուած յորժամ ողորմեցաւ եւ ազատեաց զժողովուրդն ի ծառայութենէ, եւ զԵգիպտոս տասն հարւածովք եհար, փոխարէն տանջանաց նոցին՝ պատառեաց զծովն եւ զփարաւօն ընկղմեաց, եւ անցոյց զժողովուրդն եւ եհան յանապատ, յայնժամ ի ձեռն մեծին Մովսէսի օրէս գրեաց եւ ետ նոցա: Նախ՝ ճանապարհ ուղղութեան եւ փրկութեան նոցա. զի մի դարձեալ դարձին յեգիպտոս եւ կորիցեն: Եւ երկրորդ՝ զի մի միայն ապրեցին մարմնով. այլեւ հոգւով կեցցեն օրինօքն Աստուծոյ. եւ ապա ելցեն յերկին պարգեւաց: Եւ գրեաց մատամբն աստուածեղէն յերկուս տախտակս զտասն բան օրինացն: Չիինգն յանձնառական՝ որ պահելի է պատուեր. եւ զիինգն հրաժարական՝ որ արգիլէ ի չարէն: Եւ երկու տախտակն՝ զի հոգւով եւ մարմնով պահելի է մեզ զօրէսն Աստուծոյ. եւ գրեմք ի սիրոս մեր: Դարձեալ հինգ է առ Աստուած որով սիրեմք զաստուած եւ մօտենամք ի Նա. եւ հինգ առ մարդիկի որով սիրեմք զընկերս եւ հեռանամք ի չարէ: Չի առաքինութիւնն յերկուց մասանց է. որպէս մարդն ի վերոյ երկուց ոտից է հաստատեալ. որպէս մարգարէն ուսուցանէ. (խոտորեա ի չարէ եւ արա զբարի.) վասն այն յերկուս տախտակս գրեաց զօրէսն. մինն խոտորիլ ի չարէ. եւ միւսն առնել զբարի: Եւ դարձեալ՝ վասն այն գրեաց զտասն բան օրինաց յերկու տախտակի. զի նախ ստեղծեաց մեզ զտասն զգայարանս. հինգ հոգւոյ. եւ հինգ մարմնոյ. եւ ետ զտասն բան օրինաց՝ զի զարդարեցուք զնոսա: Այլեւ ասեն իմաստունք թէ՛ բարեպաշտութիւն երկու է. տեսական եւ գործնական. եւ իւրաքանչիւրքն ի հինգ հինգ բաժնին: Եւ է առաջինն իմաստութիւն. տեսողութիւն. լսողութիւն. անմոռացութիւն. եւ կատարումն ճշմարտութիւն: Չի հոգի որ իմաստուն է՝ տեսօղ է. զի հանապալ զուղիղն տեսանէ: Եւ տեսեալ լսէ յայլմէ եւ ուսանի. եւ զուսեալն անմոռաց պահէ. եւ լինի ճշմարտիտ ճշմարտին Աստուծոյ պատկեր եղեալ. եւ այնու ճանաչէ զկրարիչն եւ զարարածս. զի Նա է պատճառ եւ սկիզբն ամենայնի. եւ մեք պատճառաւորք ի նմանէ եղեալք: Չայս ուսանիմք յառաջին հնգէն գրեալ ի տախտակի: Եւ այլ եւս ասեն եթէ, բանն բաժանի ի հինգ մասունս. որ է խոկումն. գործ. առաքինութիւն. հաւատն. եւ բարին կատարումն: Չի խոհականն հանապազ խոկայ զպատեհն. եւ զխոկացեալն գործէ. եւ ի գործոյն առաքինութիւնն կատարի. եւ ապա հաւատն կանգնի. յորժամ զառաքինութիւնն գոծեմք, հաւատն ի մեզ երելի: Այլեւ տեսօղքն մեր եւ լսօղքն մեր հաստատին ի հաւատն. եւ ապա բարին կատարի. զի գործովք հաւատք հաստատի. եւ ինցնէ բարին կատարի: Եւ այսպէս կատարեալ լինի մարդն հաւատովք եւ գործովք: Վասն այն տասն բան օրինաց գրեց. զի այսպէս զամենայն մասունս հոգւոյն եւ մարմնոյ զարդարեցէ ի մեզ: Եւ է առաջին բան օրինացն որ ասէ: (Ես եմ Տեր

Աստուած քո. մի եղիցի քեզ այլ Աստուած բաց յինեն:) Առաջին բարութիւնն է մարդոյ՝ ճանաչել զԱստուած. որպէս ասէ Պօղոս. (հաւատալ պարտ է թէ է Աստուած.) ասպա բարի գործով առ Աստուած մօտիլ. եւ զկամս նորա առնել: Արդ մի է Աստուած եւ Տէր եւ ստեղծողն ամենայի. այլ Երրորդութիւն է պաշտեալ եւ երկրպագեալ. որպէս ասէ յերկրորդ օրէնսն: (Լուր ի Իսրաէլի Տէր Աստուած քո Տէր մի է:) Եւ եմ Տէր Աստուած Զո. որ է երեք դէմ Յայր եւ Որդի եւ Յոգի: Չի որդի եւ հոգի ի Յօրէ Աստուած են. եւ Ոչ օտար ի նմանէ. որպէս ասէ Տէր մեր: (Ելի ի Յօրէ եւ եկի յաշխարհ. եւ հոգին որ ի Յօրէ ելանէ:) Եւ թէ օրինակխնդրեսցես՝ արեգակն մի է. եւ երեք յատկութիւն ունի. որ է բոլորակն եւ լոյսն եւ ջերմութիւնն. եւ մի է բնութիւն երեք յատկութեանն: Նոյնպէս Երրորդութիւնն մի բնութիւն է. մի աստուածութիւն է. մի փառք, եւ մի թագաւորութիւն:

Երկրորդ Բանն որ ասէ: (Մի արասցես քեզ կուռս. եւ մի նմանութիւն յերկինս եւ երկիր:) Յայտնի միտքն այս Է՞ զի ոչ պաշտեմք կուռս արծաթի. ոսկեայ, կամ այլ ինչ. եւ ոչ կանգնեմք պատկեր մարդոյ, կամ թռչնոց, կամ գազանաց, կամ սողնոց. որպէս եգիպտացիքն սողնաց եւ անասնոց երկրպագանէին: Եւ բաբելացիքն մարդոյ պատկեր. եւ այլք արեգական եւ լուսնի. եի այլք հրոյ կամ ջրոյ, կամ այլ ինչ իրաց: Վասն այն ասէ (նմանութիւնս յերկինս եւ երկրի. եւ որ ի ջուրս են:) Այլ գիտելի է՝ զի երեք ազգ է կռապաշտութիւնն. զոր աստ ուսուցանէ հեռանալ: Նախ զանմարմին իր Աստուած ոչ պաշտել. որպէս զհրեշտակս. վասն որոյ ասէ. (մի եղեցի քեզ Աստուած օտար բաց յինեն:) Երկրորդ կուռքն՝ ձուլածուքն են արծաթի եւ ոսկեայ. ասէ՝ (մի արասցես կուռս. զի (կուռք հեթանոսաց դէւք են ասէ մարգարէն:) Երրորդն է պատկեր՝ նմանութիւն շնչաւորաց. կամ անշնչից. որպէս ասէ. (մի արասցես զնմանութիւն որ ինչ յերկինս եւ որ յերկրի:) Եւ թէ ոք տարակուսի թէ, վասն եր մեք զպատկերն՝ պաշտեմք: Ասեմք ի կարծոյ եթէ՝ յայտնի է՝ որ պատկերքս յոր մեք երկրպագեմք, ոչ է դիւաց եւ կռոց. այլ Զրիստոսի է պատկեր, կամ Տիրամօրն, կամ հրեշտակաց, կամ այլ սրբոց: Եւ ոչ թէ զպատկերս զայս Աստուած պաշտեմք, այլ որոյ պատկերս է նման, նմա երկիրպագանեմք եւ պատուեմք: Եւ այս գիտելի է զի պատկերացն որ օրինեալ է՝ երկիրպագանեմք. այլ զխաչն պաշտեմք. զի Զրիստոս ի նման միացեալ եւ բեւեռեալ է անբաժանելի: Չի երկիրպագանելն մարմնաւոր հնազանդութիւնն է. այլ պաշտելն ի ներքո հոգւոյն եւ արտրժակօքն. որպէս եւ գրեալ է. (Տէրն Աստուծոյ քոյ երկիրպագցես. եւ զնա միայն պաշտեսցես:) Չխաչն միայն պաշտեմք հաւատով եւ հոգւոյ եւ խաչապաշտ կոչիմք: Նոյնպէս երկրպագութիւնն այլ է որ երկիրպագանեմք Աստուծոյ. այլ է հրեշտակին. եւ այլ է մարդկան եւ սրբոց: Չոր օրինակ՝ թագաւորին եւ մեծամեծաց երկիրպագանեմք. սակայն այլ եւ այլ է հնազանդութիւնն. նոյնպէս զանազան է երկրպագութիւնն Աստուծոյ եւ մարդոյ: Իսկ թեոք են որք օտար աստուածոց եւ պատկերաց երկիրպագանեն: Ըստ առաջին բանին որ ասէ՝ (օտար աստուածոց մի երկիրպագանէք:) Եբրայեցիքն են եւ հաքարացիք. որ զարս սատանայականս պաշտեն: Եբրայեցիքն զնեռն. եւ այլազգիք զկարապետ նեռինն զմուրար առաջնորդն իւրեանց: Ըստ երկրորդին՝ առնեն դրօշեալս եւ ձուլածուս հերետիկոսք: Չի հերձաւածօղն միայն հաւանի այնմ, զոր միտ իւր ձուլէ եւ կերպարանէ. եւ ըստ հաւատոց կանոնաց ոչ ինչ իմանայ եւ ոչ հաւանի: Իսկ որք առնեն զնմանութիւն

պատկերաց՝ մեղսասեր քրիստոնեայքն են. որք հնազանդին եւ ծառայ են մեղացն: (Չի որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղացն ասէ Տէրն:) Չի հպարտն պաշտէ զնմանութիւն խոցա որք են յերկինս ի վեր. զի հանապազ սիրէ զբարձրութիւն ի վերայ ընկերին: Ազահն պաշտէ զնմանութիւնն որ երկիրս. շատ ուտելով՝ շատ ըմպելով որպէս անասունք: Հրեշտակասերն պաշտէ զնոսա որ ի ջուրս են բոջախոհ ցանկութեամբն: Եւ որ հանապազ միտքն ի յերկիր շրջի՝ զսողունս պաշտէ: Նմանապէս եւ զազանաբարոյքն զգազանս պաշտեն. եւ որկրոմովն զփորն. եւ կնասերն զկինն. եւ այլն նմանապէս. որպէս ասէ առաքեալն. (որոց Աստուած որովայնք իւրեանց են. եւ փառք ամօթն: Եւ յայլ ուրեք ի չորս բաժանէ զպաշտօն կռոց. որպէս ասէ. (մի՛ արասցես ձեռագործ կուռս. եւ մի պատկերս. եւ մի արձանս. եւ մի կոթօղս:)) Ձեռագործն է՝ որք զպաշտօնն Աստուծոյ թողուն, եւ մարմնական գործոյ եւ ազահութեան պարապին. եւ սոքա կրկին մեղանչեն: Նախգի՝ (ազահութիւնն ըստ ինքեան կռապաշտութիւն է. որպէս ասէ առաքեալն:) Եւ երկրորդ զպաշտօնն Աստուծոյ եւ զժամ աղօթիցն զրկեն, եւ մարմնական գործոյն տան. ի վար, ի վաստակ, ի վաճառ, եւ յանասունս. վասն որոյ Աստուածտանի զնոսա. զի մի խափանեցեն զաղօթս. եւ յայնժամ աղքատացեալ՝ առաւել հեռանան զհետ աղքատութեան իւրեաց: Եւ այս հակառակին է գործ. որ երբեմն հարստութեամբն զբաղի. եւ արբեմն աղքատութեամբն տարակուսի. զոր Աստուած բարւոյ ետ պատճառզհարստութիւնն եւ զաղքատութիւնն. զի սոքօք զարքայութիւն ժառանգեցեն: Սատանայ փոխեաց զայս ի հակառակն զժոխսն ժառանգել, զաղքատութիւն եւ զհարստութիւն պատճառելով: Վասն այն ասէ. (մի առնել ձեռագործ կուռս. եւ մի պատկերս:) Այն է որ հանապազ մարդն պակշոտի ընդ երեսս նայելով. կամ ի միտսն նկատելով զդեմն. զոր Տէրն զայնափսին ցանկութեամբ հայիլն շնութիւն կոչեաց սրտի. եւ չար խորհուրդն ի սիրտն սերմն լինի. եւ ապա բուսաանի գործ մեղացն ի մարմինն: Վասն որոյ պարտ է յայնափսի չար հայեցուածոյն հեռանալ. զի շտեսութիւն աչազն՝ կուսութիւն է անձինն. որպէս ասէ յոր. (ուխտ եդի աչաց իմոց չհայիլ ի կոյս.) վասն այն ասէ մի առնէր քեզ պատկերս: (Եւ մի արձան:) Արձանն կրկին է: Մինն է՝ որ մարդն անզեղջ մնայ ի մեղսն. եւ մեղսն ի յինքն հաստատէ եւ ամբացուցանէ: Եւ միւսն այն է՝ որ յետ մահու չար յիշատակ թողու. որ քանի յիշեն, չար ասեն եւ ասնիծանեն. եւ զտորա չարն այլ մարդիկ ուսանին եւ գործեն. եւ չար տանջանք նմա յաւելանայ. որպէս ասէ առաքեալն. (են մեղք որք յառաջ, եւեն որք զհետ երթան ի գերեզմանն.) այն է մեղաց արձանն: Իսկ կոթօղն այն հանապազ օրըստօրէ զմեղս ի վերոյ մեղաց յաւելուն եւ գործեն. կամ զանազան մեղս գործելով կամ ի մի մեղս հեշտացեալ եւ սովորեալ բազում անգամ զայն գործեն. եւ հոգւոյն քարակոյտ առնեն. որով քարկոծի հոգին եւ ծանրանայ ի դժոխս: Ի յայս միտս ոմանք սովորել են ի յանուն չար մարդ կան քարակոյս առնել. իբրեւ թէ չար է մարդ այն. եւ հոգի նորա նոյնպէս քարկոծի եւ ծանրացեալ իջանէ ի դժոխս: Որպէս ի յօրէնսն հրամայաց՝ որ զյայտնի շնացողն հանեն արտաքոյ բանակին եւ դնեն տեսողքն զձեռս ի գլուխ նորա. եւ քարկոծեն ամենայնժողովուրդքն: Չձեռս ի գլուխ դնեն տեսողքն զձեռս ի գլուխ նորա. եւ քարկոծեն ամենայն ժողովուրդքն: Չձեռս ի գլուխ դնեն՝ իբր թէ մեր վկայութեամբս դու սպանիլոյես արժանի. եւ արիւն քո ի գլուխ քո: Իսկ ինոր

օրէնս՝ հանեմք ի եկեղեցւոյ. որոշեմք եւ քարկոծեմք կապանօք զհոգին. եւ ամենայն ժողովուրդն զողջոյնն՝ զամ եւ տուր կարէ ի նմանէ. այս է կոթօղ մեղքն: Յորոց փրկեսցէ զմեզ փրկիչն ամենայն մեղաց չարաց. եւ ողորմութեան իւրոյ արժասնի արասցէ ամէն: այս երկրորդ բանն: Երրորդ որ ասէ. (մի կոչեր զանուն աստուծոյ ի վերոյսնտեաց:) Այսինքն, ոչ երդուիլ սուտ. զի որպէս կռապաշտքն սուտ կոչեն զանունն Աստուծոյ ի վերայ պատկերացն որք չեն Աստուածք: Նոյնպէս որ սուտ երդնու՝ զանունն Աստուծոյ ի վերոյ ստոյն կոչէ: Եւ այս երկու ազգ է: Մինն անպատճառ. եւ միւսն պատճառաւ: Անպատճառն այն է՝ որ ոչ ոք խնդրէ, այլ սովորեալ հանապազ կոչէ զանունն Աստուծոյ ի վերոյ ամենայն սուտ բանի. ի յամ՝ ի տուր՝ ի գինեվաճառ ի չափ՝ ի կշիռ, եւ յայլ ամենայն: Եւ պատճառաւ երկու է. մին որ չի տեսեալ եւ չէ բռնեալ եւ ոչ գիտէ, սուտ վկայէ ի վերոյ այլոց չարեաց: Եւ միւսն որ գիւր չարիսն ծածկէ Աստուած անուամբն. զանքուն ակն եւ ամենեցուն մերձն անտես կարծէ. եւ զմարդիկ խաբէ. վասն այն ասէ՝ (ոչ սրբէ Տէր զայսոսիկ՝ որք սուտ երդնուն.) այսինքն, ոչ քաւէ փոքր ապաշխարութեամբ. զի թէպէտ ի ժամն ի կառափն ոչ հարու. այլ ի փոխ տայ ողորմութեամբ՝ զի ծանր ապաշխարութեամբ դճարեսցէ: Եւ աստ գիտելի է՝ զի յերդումն Գ ազգ մեղանչէ մարդ: Նախ որ սուտ երդնու. որ գիտէ ինքն որ սուտ է՝ այլ արհամարհէ զԱստուած եւ երդնու: Երկրորդ՝ որ երդուաւ՝ ոչ պահէ. այլ յետոյ ստէ: Երրորդ՝ որ զանպատշաճն երդնու. որպէս թէ յալիսն եւ ի մորուսն Աստուծոյ եւ յայլ այսպիսիսս. որ է ծանր մեղք: Եւ դարձեալ՝ անպատշաճ է որ ուրացական երդնու, կամ վկայական. որ զահեղ անունն Աստուծոյ վկայ բերէ: Եւ կամ գրելով. որպէս սովորեն մարդիկ ոմանք. զի գրեն զհոգին՝ սատանայի. այսպիսիքս մեծամեծ մեղք են: Այլ այս է՝ որ քրիստոնէիցն երդումն չկայ. զի քրիստոս հրամայէ թէ, (ծերայոն այո՞ եւ ոչն ոչ:) Իբր զի այնպէս ճշմարիտ հաւատ եւ վարս պիտի ցուցանել՝ որ երդման չկարօտին քրիստոնեայք միմեանց՝ այլ թէ անհաւատ լինին, եւ գործ մեծ վասն հաւատոյ, կամ վասն արեան փրկութեան, նա այսչափ երդուին: Թէ այս խաչիս փառքն, կամ այս անտարանիս, որ այսպէս է. կամ գիտէ Տէր՝ եւ այս խաչս եւ այս եկեղեցիս. եւ այս ի հպարկաւոր ժամանակի, դեռ յետոյ ապաշխարութեամբ քաւէ զնա: Եւ գիտելի է՝ զի երեք ազգ ստութեամբ կոչի անունն Աստուծոյ. սրտիւ բերանով եւ գործով: Սրտիվ որպէս չար հաւատացեալքն սուտ անուն քրիստոնեայք՝ որք մկրտութիւնն առեալ են՝ եւ զշնորհ մկրտութեանն ոչ ունի. զի ոչ ունին սրտիվ զսերն ամ Աստուած. այլ միայն սուտ անամբ եւ լեզուաւ: Բերանով ստեննք՝ որք սուտ երդուին. կամ ուխտեն եւ ոչ կատարեն. կամ սուտ լեզուաւ աղօթեն, եւ ոչ ջերմ սրտիւ. կամ քարոզեն ազահութեամբ եւ փառասիրութեամբ. կամ աղանդով. սոքա են որք զանունն աստուծոյ կոչեն ստութեան բերանով. ըստ այնմ, (ժողովուրդքս այս շրթամբք պատուեն զիս. եւ սրտիւք հեռացեալմեկուսի են յինէն:) Եւ այլ ուր ասէ. (մերձ ես ի շրթունսս նոցա. եւ հառի յերիկամանց նոցա:) Իսկ գործով սուտ են, որպէս կեղծաւորքն. որք զանունն Աստուծոյ կոչեն ըստ վերելոյթ արտաքին գործոյն. եւ ոչ սրբութեամբ սրտին. զի ըստ ունայն է անունն Աստուծոյ ի վերոյ նոցա. զի զվարձն ի մարդկանէ առնուն, եւ ոչ յԱստուծոյ: Եւ ոչ այս միայն, այլեւ (կտրել ասէ զմեղաւորսն ընդ մէջ. եւ զմասն նոցա ընդ կեղծաւորսն դնել ի հուրն յաւիտենից:) Այս երրորդ բանն: Չորրորդ որ ասէ: (Պատուեա զօր շաբաթուն:) Շաբաթն հանգիստ լի, կամ պարապումն յոր

հանգչիմք ի մարմնական գործոյ. եւ պարապիմք ի հոգեւոր գործս Աստուծոյ. որպէս աղօթելն՝ պաշտելն՝ խոկալն զԱստուծոյ, եւ այլն: Դարձեալ՝ հանգչեալ դադարիմք ի չար գործոց. եւ պարապիմք ի գործսբարիս: Առաջին շաբաթանալն այս է: Երկրորդ շաբաթն է՝ հանգիստն Աստուծոյ. օր զվեց օր արար զաշխարհս. եւ յեօթն հանգեալ. եւ մեզ պարտ է ի մարմնական գոծոց պարապիլ եւ հանգչիլ: Երրորդ շաբաթն՝ է մեծի օր շաբաթուն. յոր եմուտ Քրիստոս ի գերեզմանն, եւ հանգեալ ի չարչարանաց խաչին. եւէջ ի դժոխս եւ հանգեալ ազատելով զհոգիսն ի չարչարանաց: Չորրորդ՝ յորժամ մեռանիմք մարմնով, եւ դնիմք ի գերեզման, հանգչիմք ի չարչարանաց կենցաղոյս. (զի մահ մարդոյ հանգիստ է:) Չի թէ մեղաւոր է. գերծաւ ի բազմուէ մեղաց. եւ եթէ արդար, գերծաւ, յորոգայթե որսաղաց, եւ ի մարմնական վշտաց: Չայն ասէ (յիշեա զօր շաբաթուն:) Հինգերորդ շաբաթ է՝ հանգիստն յաւիտենական կենացն. զոր ի կատարումս աստի կենացս՝ պատրաստեալ է սրբոց եւ սիրողաց իւրոց: Այս է շաբաթն զոր հրամայէ (յիշեա զօր շաբաթուն:) (Չվեց օր գործեսցես՝ եւ յեօթն օրն հանգիցես:) Նախզի՝ Աստուած ի վեց օրն արար զաշխարհս. եւ յեօթն հանգեալ. ըստ այնմ օրինակի եւ մեզ պարտ է առնել. զվեց օր գործել. եւ յէ հանգչիլ. զի Աստուածն յաւիտենից՝ ոչ վաստակի եւ ոչ հանգչի: Այլ որպէս ասաց՝ (զոչացայ զի արարի զմարդն. զի մեք զոչացուք ի մեղաց:) Նոյնպէս ասէ՝ (հանգեալ Աստուած.) զի մեք զվեց օր գործեսցուք. եւ յեօթն հանգիցուք. որպէս ի հինն շաբաթն. եւ ի մեզ կիրակէն աւանդեցաւ պահել: Երկրորդ զի ի վեց դարս՝ մարմնական է գործ. եւ յեօթն՝ հանգիստ: Վասն այն զվեց օր գործելի է մեզ. եւ յեօթն հանգիստ: Երրորդ՝ զի վեց են շարժմունք մարդոյս որովք մեղանչեմք. եւ մի շարժումն է սրբութեան՝ որով արդարանամք. վասն այն զվեց օր գործեմք. եւ յեօթն հանգչիմք:

Չորրորդ՝ զի եօթն թիւն սուրբ է եւ նւեր Աստուծոյ. վասն այն զվեցն մարմնոյ գործեմք. եւ գեօթն սրբեմք եւ նուիրեմք Աստուծոյ բաժին: Հինգերորդ՝ զի ժողովուրդք Իսրայելացւոցն խստասիրտք էին եւ անողորմ. վասն այն հրամայեաց զհանգիստն՝ զի ծառայն եւ աղախինն եւ վարձկանն, եւ եզն եւ էշն եւ ամենայն ինչ որք վաստակեալ են, զհանգիստ առնուցուն: Վեցերորդ՝ զի զմին օրն գոնեայ պարապին եւ տեսցեն զարարածս ի փառս Աստուծոյ, եւ իմանան զարարիչն եւ գոհացեալ օրինեն զարարիչն բոլորից: Եօթներորդ՝ զի եօթներորդ օրն է խոստովանութեան եւ քաւութեան մեղաց. զի զոր գործեցին ի բոլոր շաբաթն զմեղս, ի կիրակէն ապաշխարեսցեն: Ութներորդ՝ զի յաւուր կիրակէին ուսցին գործել զբարիս եւ ի միտ առցեն. զի ի բոլոր առաջի կայ շաբաթն պահեսցեն. զի յոյժ մոռացկոտ է մարդն. վասն այն հանապազ պարտ է ուսանիլ՝ զի մի մոռացին զբարին. վասն այն ի հինն զշաբաթն հրամայեաց պահել. ի նորս աւանդեցին առաքեալքն փոխեալ զկիրակէն պահել: Իններորդ՝ պարտ է զկիրակէն պահել. զի առաջին օր ստեղծման աշխարհիս. եւ բազում սքանչելիք ի հինն յաւուր կիրակէի եղեն: Չի յորժամ ծովն պատառեցաւ եւ էանց ժողովուրդն ի կիրակկկէի եր: Եւ յորժամ երեւեցաւ իսսինայ եւ զօրէնսն ետ, ի կիրակի էի եր: Նախ ի նոսա ոմանք զծնունդն Քրիստոսի յաւուր կիրակէի ասեն: Եւ ոմանք ի՛՛՛ շաբաթի ասեն զծնունդն. եւ զաւետիսն ի չորեք շաբթի: Այլեւ յարութիւնն Քրիստոսի յաւուր կիրակէի է. որ յարել ի գերեզմանէն եւ ազատեաց զմեզ ի ծառայութենէ մահու եւ ապականութեան: Նոյնպէս եւ

հոգւոյն սրբոյ իջումն յաւուր կիրակեի Է. վաս այն պահելի Է մագ. զի եւ այսոցիկ շնորհացս արժանաւորք գտանիցիմք: Տասներորդ՝ զի վերջին օրն աներեկ՝ յորում յարութիւն Է ամենայն մարդկան, եւ դատաստան, եւ հատուցումն ըստ գործոց, Է ի կիրակեի: Վասն որոյ այսօր պարապիլ պարտ Է մեզ ի մեղաց. եւ այնմ աւուր ակնուիլ գալստեանն Քրիստոսի եւ փողոյն գոչման: Վասն որոյ պարտ Է ի կիրակեի պարապիլ ի մարմնական գործոց եւ ի մեղաց. զի տիպ Է վերջին աւուր կիրակեին որ աներեկ եւ անփոփոխ օրն Է կատարածի. վախճան ժամանակիս, եւ սկիզբն յաւիտենին: Յաղագս այսորիկ՝ օրէնս եդ ի հինն զշաբաթն պահել. եւ ի նորս զկիրակէն: Եւ ոչ այս միայն, այլեւ հրամայեաց Աստուած յետն շաբաթուց զմինն պահել եւ շաբաթանալ. եւ յետն ամսոյն զմինն: Եւ յետն ամսոյն զմինն: Եւ յետն ամէն զմին ամն ոչ գործել գերկիր. ոչ սերմանել. եւ ոչ հնձել. եւ ոչ զծառս, եւ ոչ զպտուղ այգւոյ քաղել: Նախ զի՝ կերիցեն գազանք եւ վայրի անասունք ասէ. զի եւ նոքա ստեղծուածք Աստուծոյ են. եւ երկիրս նոցա Է տեղիք ուր մեք բնակեցաք. եւ երկրաւորս նոցա Է զոր մեք զրկեցաք. պարտ Է յետն ամին՝ նոցա բաժին տալ: Եւ երկրորդ՝ զի երկիր եւ տարերք հանգչին ի վաստակութենէն. զի և չար գործն մեր՝ տարերք երկրի վաստակին եւ չարչարին ընդ մեզ: Յորժամ չարչարօք ի վերոյ երկրի շրջիմք, եւ զօրս չար բանից հիւթ առնումք, եւ զջուրն ի ցանկութիւն մեղաց կրեմք, եւ ջերմութիւն հրոյն ի սեր եւ ի բորբոքումն չարեաց, յայնժամ տարերք երկրի չարին ընդ մեզ. ապա յորժամ զբարին գործեմք, հանգչին եւ ուրախանան ընդ մեզ: Եւ թէ ոք ասիցէ՝ անշունչ եւ անկենդան տարերք որպէ՞ս չարչարին կամ հանգչին: Ասեմք եթէ՝ իւրաքանչիւր տարերց՝ հրեշտակք գոն ինամիչք եւ պահապանք. նոքա չարչարին ընդ չարութեանն մեր. եւ հանգչին ի բարի գործս: Չի բարի գործքն՝ հանապազ եւ միշտ գործելի են. որպէս ասէ Տէրն. (Յայր իմ մինչեւ ցայժմ գործէ եւ ես գործեմ.) այսինքն, զգործ նախախնամութեանն. որ զկենդանիս եւ զտունկս շարժէ ի ծնունդ. զթագաւորս եւ իշխանս փոփոխէ. զերկիսս եւ զլուսաւորսն շարժէ. զերկիր հաստատուն պահէ: Ապա յայտ Է որ ասէ՝ (հանգեաւ Աստուած ի գործոց իւրոց.) այսինքն, ի նոր ստեղծանելոյ տեսակ. այլ ինամօք միշտ գործէ: Այսպէս եւ մեզ ի մարմնական գործոց պահելի Է եւ ի չար գործոց. եւ ի հոգեւոր եւ ի բարի գործս առաւելուլ: Որպէս եւ քահանայքն ի տաճարին զութնօրեայ մանկունոն թլփատէին եւ չէր մեղք. եւ զհաց սրբութեան եւ զգառն խորովեալ յառաւօտին եւ երեկոյին դնէին ի շաբաթու: Եւ եզին եւ իշոյ ջուր տային. եւ զանկեալ անասունն ի հոր՝ ի դուրս բերէին: Ապա ուրեմն եւ ի կիրակեի զհոգիս մեր ընկղմեալ ի խորս մեղաց՝ հանելի Է արտաքս. եւ ջուր տալի Է անասնաբարոյ ժողովրդեանն: Եւ յամենայն աւուր զինչ եւ բարի գործ Է մարդ՝ շաբաթ Է եւ հանգիստ Աստուծոյ: Այլ ի կիրակեին պահելի Է ի մեղաց. ի վաճառոց. ի թատրոնէ. ի թատերաց. ի դաւոյ. յարբեցութեանց. եւ ի հեշտութեանց անկողնոյ: Չի թէ կանոնեալ Է ծունր ոչ կրկնել ի կիրակեի, զի Քրիստոս յարեաւ ի մեռելոց եւ զմեզ կանգնեաց ոչ Է պարտ յերկիր անկանիլ, քանի՞ եւս առաւել պարտ Է կանգուն կալ եւ ի հեշտութիւն մարմնոյ ոչ անկանիլ: Արդ՝ ի մարմնական գործոց պահել հասարակաց Է պահպանութիւն. եւ ի մեղաց պահել յատուկ քրիստոնէից եւ սրբոց. եւ ի գործս բարիս պարապիլ՝ առաւել յատուկ Է կատարելոց եւ աստուածահաճոյ արանց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որ Է օրինեալ յաւիտեանս ամէն:

Հինգերորդ բան օրինացն: (Պատուեա զՅայր Քո եւ զմայր:) Կնքէ զառաջին հինգ բան օրինացն ի յԱստուծոյ սկսեալ, եւ ի ծնօղս աւարտեալ: Որեւ ծնօղքն երկրորդ Աստուածք կոչին զաւակացն. զի ճշմարիտ Աստուածն է հասարակաց. եւ ծնօղքն առանձին ծննդոցն: Եւ որպէս Աստուած զաներեւոյթ հոգին ստեղծանէ. եւ ծնօղքն զերեւելի մարմինն: Վասն այն անհնար է վճարել զպարտս ծնողացն. զչարչարանսն ի տիւ եւ ի գիշեր. զկերակուրն. եւ զգեստն. եւ զգուրն եւ զպահապանութիւնն: Եւ թէ զամենայն հատուցանեն՝ յայնմանէ վերջանան, զի զծնօղն ոչ ծնանիլ: Եւ բազում պատճառաւ պատուելի է զծնօղն: Նախզի պատկերք են Աստուծոյ որպէս ցուցաւ. երկրորդաբար զպատիւն Աստուած ծնողացն է տալիս: Երկրորդ՝ զի գործիք են մեծի պատկերին Աստուած ի մեզ. զի առանց ծնողացն՝ ոչ զհոգի ստեղծանէ Աստուած, եւ ոչ մարդ կազմէ յորովայնի:

Երրորդ՝ զի զաստուածասիրութիւնն եւ զմարդասիրութիւնն ի ծնօղսն է վարժելի. զի որ սիրէ զԱստուած եւ զամենայն մարդ. եւ որ ծնօղն ոչ սիրէ, ապերախտ է Աստուած եւ ատեցօղ մարդոյ: Չորրորդ՝ պատուելի է զծնօղս, զի բազում երախտեաց նոցա փոքր ի շատէ հատուցումն լիցի: Հինգերորդ՝ պատուելի է զծնօղս, զի որդիք նոցա զնոսա պատուեսցեն. զի զոր ինչ առնես քո ծնողացն, զնոյն առնէ եւ քո զաւակն քեզ. եթէ չար, եւեթ բարի: Վեցերորդ՝ պատուելի է զծնողս՝ զի պատուիրանն Աստուծոյ կատարեսցի. որ ասէ՝ (պատուեա զհայր եւ զմայր:) Եօթներորդ՝ վասն խոստման անտեսացն. (զի բարի լինիցի քեզ ասէ. եւ երկայնակեաց լիցիս.) զի յիրաւի իսկ է՝ որ պահօղն կենաց այլոց, արժանացի պահելոց զկեանս: Ութներորդ՝ հնազանդելի է ծնողաց վասն պատժոյն. որ ասէ յօրէնսն. (որ անարգ է Չհայր եւ զմայր, մահու մեռանիցի.) զի ծնօղն է երկծորդ պատճառ. եւ հայիոյութիւն նոցա յաստուած վերաբերի որ է առաջին պատճառ. ըստ այնմ, (որ զի անարգէ՝ զիս անարգէ. եւ որ զծեզ ընդունի՝ զիս ընդունի:)

Իններորդ՝ պատուելի է զծնօղս. զի վերջին օրհնութեան ծնողացն արժանի լիցին. որպէս Իսահակ օրհնեցաւ Յաբրահամէ. եւ Յակոբ յԻսահակայ. եւ այսու օրհնութեամբս աճեցան զաւակք նոցա եւ բազմացան ի վերոյ իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ: Իսկ որ ոչ արժտնացի օրհնութեան ծնողացն՝ օրհնութեան ծնողացն՝ ժառանգեսցէ զանէծս. որպէս Ռուբէն ի Յակօբայ. եւ քանան ի Նոյէ. որ ասաց՝ (անիծեալ քանան մանուկ. եւ ծառայեսցէ եղբարց իւրոց.) վասն այս անիծիցս քանանացիքն ի սով եւ և սուր մատնեցան յԻսրաէլէ: (Եւ բացաւ երկիր. եւ յեկուլ զկորիս եւ զդադան վասն անիծիցն Ռուբէնի:) Այսպէս է անէծ ծնողացն. եւ այնպիսի օրհնութիւն: Տասներորդ՝ զպատիւ ծնողացն ուսանիլ է յանբան կենդանեաց. որպէս արագիլ արդար՝ զծերացեալ ծնօղսն կերակրէ. եւ ոպոպին ձագք ոչ ամուսնանան, մինչեւ վճարեն զպարտս ծնողացն. եւ հրամանաւ նոցա ամուսնանան: Ապա եթէ ի գրոց ոչ ուսանին, պարտ է յանբանիցն ուսանիլ զհնազանդութիւն ծնողին: Եւ չորս իրս պարտական է ծնօղն զաւակին իւրոց: Նախ՝ պատրաստել զպէտս մարմնոյն. այսինքն, զկերակուր եւ զհանդերձ, եւ զայլ սնունդ: Երկրորդ՝ զուսումն արուեստից, եւ զխրատ շահաւոր: Երրորդ՝ ամուսնութեամբ կարգել: Չորրորդ՝ ի հաւատս եւ ի գործս բարիս վարժել: Առաջինն է պահպանութիւն անհատին եւ մարմնոյ նորին: Երկրորդն ի բարեկեցութիւն նորին եւ իմտացն կրթութիւն: Երրորդի ի

բազմութիւն տեսակին եւ օրհնեալ ծննդոցն: Չորրորդն վասն հոգեւորին եւ յիշատակի բարեաց. զի հաւատով եւ գործով լինի ծանօթ Աստուծոյ. եւ առաւել է նմա քան զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ՝ որ կորստական է. այլ բարեպաշտ մարդոյն յաշխարհի ոչ ինչ նուագի. ըստ այնմ, (հաւատացեալ մարդոյն՝ ամենայն աշխարհի լի է ընչիւք. իսկ անհաւատին՝ եւ ոչ դանկ մի.) ապա յայտ եթէ չորրորդն առաւել հարկաւոր է ծնողացն, քանզառաջ ասացեալ երեքեանն: Նմանապէս եւ չորս իրաց պարտական են զաւակք ծնողաց: Նախ հնազանդ լինիլ հրամանաց ծնողաց. եւ ոչ բան մի թիրելի ի հրամանաց նոցա. (Չի որդի անհնազանդ՝ ի կորուստ է. եւ հնազանդն արտաքոյ է կորստեան ասէ Սողոմոն:) Երկրորդ՝ պատուելի է զծնօղսն ի պէտս մարմնական կերակրոյ եւ ըմպելոյ. հանդերձից եւ այլոցն մինչեւ յօթ մահուն: Երրորդ զի զկտակ ծնողացն հաստատուն, եւ անփոփոխ պահեսցէ, զոր ինչ կամք նոցա իցէ. (զի կտակ յետ մահու հաստատուն է:) Չորրորդ՝ զի զօր մահու փառաւոր արասցէ. եւ յիշատակ բարեաց լիցի հոգւոյ ծնողացն որքան կենդանի իցէ. եւ այսպէս վճարեսցէ փոքր ի շատէ զպարտս ծնողացն: Այլ գիտել պարտ է՝ որ բազումք ի մարդկանէ կոչին հարք: Առաջին՝ մարմնական ծնօղքն՝ մարմնաւոր արարիչք են մարմնոյն որպէս ասացաք: Երկրորդ՝ հայր հոգեւոր եւ վերստին ծննդեանն. որպէս առաջնորդն եւ քահանայն. որք արարիչք են շնորհացն: Երրորդ՝ հայր բանաւոր. որ արարիչ է մտացն. որպէս վարդապետք աշակերտաց. (զի ի Զրիստոս Յիսուս անտարանաւն ես ծնայ զձեզ ասէ առաքեալն:) Չորրորդ՝ հայր կոչի եւ առաջնորդն ուխտից. եւ ծերքն հասակաւ. եւ սոքա հայր են խրատու եւ երկիրդի. զի որ ոչ է առ ոտս ծերոց՝ անջան որս է սա տանայի ասէ ոմոն: Զինգերորդ՝ հարք կոչին թագաւորք եւ իշխանք. որք պահապանք եւ խնամածուք են ազգաց երկրի եւ ազաւառաց: Եւ սոցա պատիւ հնազանդութեանն զանազան է ըստ զանազան հարանցն: Չի մարմնաւոր Զօրն՝ պարտ է հնազանդիլ ի մարմնաւոր իրս որպէս ասացաք: Իսկ հոգեւոր Զօրն՝ ի հոգ եւ որն հնազանդութիւն. իսկ աշակերտքն՝ լսողութեամբ վարդապետաց. (զի ունկնդիք ասէ առաջնորդոց ձերոց եւ հպատակ կացեք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց:) Իսկ միաբան եղբարքն՝ հնազանդեսցին առաջնորդին՝ յահ եւ յերկիր նորին. զի ելցէ ի կամաց իւրոց, եւ զկամառ նորա արասցէ. եւ այնպէս գոցէ զհաճոյս կամացն Աստուծոյ: Իսկ թագաւորին եւ իշխանին՝ պարտ է հնազանդիլ ի ժամանակաւոր եւ ի հասարակ իրս. (զի ոչ յուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ որք կարգեալ են՝ յԱստուծոյ են կարգեալ. զի որ իշխանին կայ հակառակ, Աստուծոյ հրամանին է հակառակ:) Եւ թէ ոք ասիցէ, զամենայն ինչ զինչ եւ ասիցէ իշխանն լսե՞լ պարտ է: ասեմք թէ, զինչ մարմնաւոր գործ դնէ՝ որ հաւատոյ եւ հոգւոյ չէ պակասութիւն, զամենայն կատարիլ է, որպէս ասացի, թէ ի ժամանակաւոր եւ ի հասարակ իրս հնազանդելի է. զի նոքա վասն մարմնոյ են իշխանաք եւ ժամանակեայ իրաց: Իսկ հաւատոյդ եւ հոգւոյդ իշխան եւ դատաւոր Աստուած է. զբան հաւատոյ եւ զբարի գործս նմա է մատուցանելի: Եւ թէ բռնանայ իշխանն, լաւ է սրով իշխանին մեռանիլ մարմնով, քան ի սուրն Աստուծոյ անկանիլ հոգւով. որպէս ասէ. (մի երկնչիք յայնցանէ՝ որք զմարմին սպանանեն. այլ երկերուք յայնմանէ որ զհոգի եւ զմարմին կորուսանէ ի գեհենի:) Որպէս դասք մարտիրոսացն որք վասն քրիստոսի մեռան. եւ ընդ նմին կենդանացան. ի հրոյ գեհենոյն գերծան եւ

յերկնից արքայութիւնն հրաւիրեսցան: Որոց բարեխօսութեամբ ևոցա եւ ամենայն սրբոց՝ փրկեսցէ Քրիստոս առ հասարակ զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ի հրոյ գեհեւոյն եւ յանվախճան տանջանաց, դասելով ընդ սրբոյս եւ ընդ սիրելիս յարքայութեանն երկնից. եւ նմա փառք յաւիտեանս ամեն: Այս առ յանձնառականս:

Նորին քարոզ ի Բանն որ ասէ: (Մի սպանաներ. մի շնար. մի գողանար. միսուտ վկայեր. մի ցանկանար ընչից եղբօրն. ' մի կնոջ ընկերի, ' այլն:) Ելից.20.13: (Գլուխ. 9)

Չտասն բանեան օրէնս ի յերկուս հինգս բաժանեաց. վասն զի տասն զգայրանք են մարդոյս. հինգ հոգւոյս՝ յորում հրամայեաց զհինգ բան օրինացն: Եւ հինգ մարմնոյս՝ որոց ղնեն զհինգ բանս: (Մի սպանաներ. եւ մի շնար, եւ այլն:) Դարձեալ՝ հինգ բանն յանձն առական է որ ասացաւ. եւ հինգն հրաժարական, զոր դեռես կամի ասել: Դարձեալ՝ հինգ հրամայական է պատուեր. եւ հինգն արգելումն է խրատ: Եւ դարձեալ՝ հինգն աստուծային է օրէնք. եւ հինգ մարմնային եւ առ ընկերս: Վասն այն նախագահ եղ զաստուծայինն, քան զմարդկայինս որ ասէ: (Մի սպաներ. մի շնար, եւ այլն:) Եւ գիտելի է՝ զի այս բան եւ խրատ՝ ի բնական օրինացն է. որ սերմանեալ էր ի բնութիւնիս մեր իսկ զբանէ: Եւ սովաւ արդարացան նահապետք առաջինք. որպէս Ենովս. Ենովք. Նոյ. Աբրահամ, եւ այլք. ի բնութենէ ուսեալք եղին դատաւորս եւ քննիչս յանցաւորաց: Սահմանեցին մահ եւ բանտ եւ տանջանք. որպէս ասէ Պօղոս. (եթէ որք զայնպիսին առնեն՝ արժանի մահու.) այսպէս հասին օրինացն Աստուծոյ. որպէս եւ աստ արգիլէ աստուծային հրամանն: (Մի սպանաներ:) Եւ ընդէ՞ր իբրեւ ընդ մի ոք խօսի զհասարակաց օրէնս, եւ ոչ առ բազումս: Այս է պատճառն. զի ամենայն ոք ի յինքն բերցէ զօրէնս. եւ իւրն համարիցի զխրատս. եւ մի ծուլացի իբր բազումս խօսեցեալ անփոյթ առնելով: Եւ դարձեալ՝ թէ մի ոք լինի՝ որ պահէ զօրէնս Աստուծոյ, քան զամենայն աշխարհի պատուական է Աստուած: Վասն այն ասէ: (Մի սպանաներ:) Մեծ եւ անհնարին անօրէնութիւն է՝ զոր յառաջն կարգէ: Չորեւ Նոյի պատուիրեաց: (Որ հեղու զարիւն մարդոյ՝ փոխանակ Նորա հեղցի արիւն Նորա. զի ի պատկեր Աստուծոյ արարի ես զմարդն:) Աստուած զմարդն ի դիւր պատկերն է արարել. եւ մարդասպանն հակառակ Աստուծոյ է կրկին կերպիւ: Նախզի՝ զգործն Աստուծոյ յափշտակեաց. զի կապողին եւ արձակողին, եւ վերստին անլոյծ կապողին է գործ: Նմա որ ասաց. (ես սպանանեմ, եւես կեցուցանեմ:) Չի որ ոք կենդանացուցանել ոչ կարէ, ոչ իշխէ սպանանել: Եւ երկրորդ՝ զի Աստուած ի կեանս եւ ի յեւթիւն եբեր. եւ նա ի մահ եւ յոչ եւթիւն փոխէ հակառակ Աստուծոյ. որեւ արտաքին իմաստունքն արգիլէին զսպանումն: Ըստ Պղատոնի թէ. (որպէս յումեմն ի պահարանում եմք. ոչ է պարտ զինքն, կամ զնմանն իւր արտաքոյ հանել ի մարմնոյն:) Եւ թէ ոք ասիցէ թէ, առաւել մարդասպան այն է՝ որ զի՞նքն սպանանէ, թէ որ զա՞յլս: Պատասխանեն ոմանք. երեւի թէ՝ որ զայս սպանանէ, մեծ մեղք է քան որ զինքն. զի կրկին մեղաց է պարտական. մէկ իւր մեղացն. եւ երկու նմա զոր եսպան: Այսպէս ասեն վարդապետք թէ, ոչ. այլ որ զինքն սպանանէ, մեծ մեղք է, քան որ զայլս վասն երեք պատճառի: Նախզի՝ կենդանի գոլով՝ կարէ յետոյ ապաշխարութեամբ քաւեալ. որպէս

ղունկիանոս եւ բազումք ի հրեիցն. որք խաչեզին զՔրիստոս՝ ապաշխարութեամբ փաւեցին: Իսկ Յուդա ոչ կարաց ապաշխարել. այլ մեղօք էջ ի դժոխս: Երկրորդ՝ որ զայլս եսպան՝ մարդոյ եղել հակառակ եւ թշնամի զորս եսպան. իսկ որ զինքն սպանենէ՝ Աստուծոյ է հակառակ. զի Աստուծոյ է գործ կապելն եւ արծակելն ի մարմնոյ. որպէս ասէ Պղատոն. (որպէս ումեմն ի պահարանում եմք. եւ ոչ է պարտ ումեք զինքն ի բան բառնալ ի կենաց աստի, մինչեւ նա որ կապեացն՝ վերստին լուծցէ:) Եւ դարձեալ ասեն վարդապետք թէ, (մնանք կապողին եւ արծակողին. եւ վերստին անլոյծ կապողին:) Երրորդ՝ զի գոյ հնար որ զայլս եսպան՝ արեամբն իւրով վճարել զարիւնն. որպէս ասեն օրէնքն: (Որ հեղու զարիւն մարդոյ՝ փոխանակ նորա հեղցի արիւն նորա.) եւ վճարեցաւ աստ: Իսկ որ զինքն սպանանէ՝ պատժի ի հանդերձեալն անզրաւապէս. ապա ուրեմն որքան մեծ է տանջանքն յաւիտենից քան զմարմնոյս. նոյնքան մեծ մեղք է եւ առիթ անվախճան տանջանացն՝ այսինքն որ զինքն եսպան. քան որ զայլս եսպան, եւ կրեաց զաստի տանջանս: Նաեւ բանս այս որ ասէ: (Մի սպանաներ:) Արգիլէ զամենայն անհաւ սպանումն: Եւ անհաւ սպանումն՝ լինի երեք եղանակաւ: Մին որ սպանանի առանց մեղաց. որ չէր պարտապան մահու: Երկրորդ՝ որ այնպէս մարդասպանէ՝ որ չունի իշխանութիւն. եւչէ սպասաւոր օրինացն: Երրորդ՝ եւթէ իշխանաւորն սպանանէ՝ այլ ոչ վրէժս ինդրելով օրինացն Աստուծոյ վասն ախտի ինչ. անհաւ սպանումնէ. արեւապարտ է: Այլեւ ոչ այս միայն է մարդասպանութիւն. այլ է եւայլ գործ՝ որ մարդասպանութիւն է համարեալ: Նախ՝ յորժամ տեսանէ զոք ի վերջին կարօտութիւնս, եւ ի մեծ նեղութեան միջի, թէ հոգւոյ, եւթէ մարմնոյ, եւ զանց առնիցէ եւ ոչ օգնեսցէ նմա, մարդասպան է. զի ոչ արար բարի ընկերին: Իսկ երկրորդ՝ որ չար առնէ, եւ թէ ի միտս ատեսցէ զընկերն, մարդասպան է. ըստ այնմ որ ասէ. (որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է:) Երրորդ՝ թէ բերանովն բամբասէ կամ չարախօսէ, կամ մատնէ, մարդասպան է. զի թագաւորք եւ իշխանաք բանիւ հրամայեա գահճաց ի քար ընկեցուլ՝ կամ խեղդել՝ մարդասպանք են: Նոյնպէս եւ այն որ բանիւ մատնէ սպանանել տայ, կամ զինչսն խլել, զի եւ ինչքն արիւն են մարդոյն. զի քրտամբք է ժողովեալ. որպէս ասեն վասն ընչիցն թէ՝ զարիւնս ի վայր ածեր. կամ յորժամ զինչսն առնուն, ի սովոյ մեռանին. այսպիսիքս յայտնապէս մարդասպանք են: Չորրորդ՝ թէ գործով չար օրինակ լինին այլոց եւ պատճառ կորստեան, իմեղս ձգելով կամ հեշտանալով, կամ խաբելով, մարդասպան են համարեալ. (Եւ ամենայն մարդասպան՝ ոչ ունի կեանս յանձին:) Դարձեալ վասն սպանութեան: Չանազան են ազգ սպանողաց. է սպանութիւն՝ որ յատելութենէ է. որպէս Կայենին: Եւ է որ վասն վրէժ ինդրութեան, որպէս Աբիսողոմայն: Է որ նախանձու. որպէս բառնսարկուին առաջին մարդասպանին: Է որ ազահութեան. որպէս գողոց եւ աւազակաց: Է որ զրպարտութեան եւ մատնութեան: Եւ է որ զրկելով զորքն եւ զայրին: Եւ զայս սպանութիւնս մարգարէն յայտնէ. (զայրին եւ զպանտուխոյն սպանանին. զորքս կոտորեցին:) Եւ է սպանումն՝ որ անտեսէ առնելոյ վասն զկարիս ընկերին: Այլեւ այս գիտելի է. զի տասն բանեաց օրէնքս զլիաւորք են. որպէս բոլոր եւ սեռ. եւ ունին տեսակ եւ մասունս. քանզի համառօտ է ասելն: (Մի սպանաներ:) Արգիլէ յամենայն մասանց սպանութեան. որ է սրտի. եւ է

բերանոյ. եւ է գործոյ: Զրամայէ ոչ բարկանալ. ոչ մախալ. ոչ ոխալ. ոչ
նախանձիլ. ոչ նենգել. ոչ քէն ունել զի սոքա սպանութիւնք են սրտի: Այլեւ ոչ
դաւել. ոչ հայհոյել. ոչ նախանձիլ. ոչ քամոսել. ոչ անիծել. ոչ յիշոց տալ. զի
այսպիսիքս լեզուաւ սպանանեն: Այլեւ ոչ հարկանել որ ոչ առ ի մահ. ոչ
ծեծել. ոչ փետել զհերս, կամ մորուս. զի այսպիսիքս մասունք են
մարդասպանութեան գործով. յայսցանէ օրէնս դնէ ոչ առնել: Եօթներորդ
բան օրինացն որ ասէ: (Մի շնար:) Ոչ փոքր ինչ անիրաւութիւն է այս. այլ ի
գլխաւորէ մահու չափ մեղացն մինն՝ բղջախոհութիւնն է. որ է վավաշոտ
շաղաշարումն մարմնոյ՝ յառաջ եկեալ ի պիղծ ցանկութեանց. զի զոր արգիլէ
այժմ ասելով: (Մի շնար:) Չի բազումսինչ մարմնական վնաս գայ ի նմանէ
յառաջ: Նախ եւ առաջին՝ զոգուոյն պնտութիւնն թուլացուցանէ. ծոյլ եւ
անարի գործ է զմարդն յամենայն իրս: Երկրորդ՝ պղծէ զմարմին ըստ
առաքելոյն. (որ պոռնկի՝ իւր մարմին մեղանչէ:) Երրորդ՝ զմիտսն
յիմարեցուցանէ եւ վայրենիս գործէ. որպէս արբեցողն՝ նոյնպէս եւ շնացողն.
որպէս ասէ Ովսէ. (գինի եւ կին՝ յափշտակեն զմիտս եւ զսիրտս.) զի ցնորէ
զխելսն. վասն որոյ մոլի կոչի նա. որպէս թէ հարեալ ի դիւն՝ մոլորեալ շրջի:
Նաեւ բառնի ամօթ երեսացն. եւ լրբութեամբ գործէ զշնութիւնն. ըստ այնմ,
(երեսք պոռնկի եղեն քո. անամօթացար առ ամենայն:) Զորրորդ՝
յանժուժկալութիւն եւ ի գիծութիւն արկանէ. զի ոչ կարէ ժուժել ընդդէմ
ցանկութեան. այլ որպէս հալի մոմ ի հրոյ. եւ նա ի գէճ ցանկութեան. թէ
տեսանէ, թէ մտածէ. զի անյագ է ցանկութիւնն. որպէս զբոց յորս մերձենայ՝
վառէ եւ ոչ շիջանի: Զինգերորդ՝ զժառանգութիւնս ապականէ. զի այր եւ կին՝
հալալ ժառանգաւորք են միմեանց. յորժամ երթան յայլ անկողին, զայլոյ
ժառանգութիւնս ապականեն. այլեւ զինքեանս խառնակեն եւ ապականեն:
Վեցերորդ՝ թշնամութիւն յարուցանեն եւ աղաղակ. զի որպէս շանց կռիւն
վասն քածի լինի. նոյնպէս եւ շնացողաց վասն կանաց: Եօթներորդ՝
սպանութիւնս գործէ. կամ զսեղեխս, կամ զկինն. (զի բուռն է նախանձ առն
ի վերոյ, ոչ հանդուրժէ դատաստանի ասէ Սողոմօն. կամ ցինքն վասն այլոց՝
կամ զայլս վասն ինքեան սպանանեն:) Եւ կամ առաջնորդք
օրինացնսպանանեն. որպէս փենէիես զղամբի եւ զքասքի եսպան. եւ ապա
դադարեցաւ մահն վասն պղծութեանն ի բելբեքովը: Եւ որպէս սիկիմացիքն
սրով կոտորեցան վասն դատերն Յակօբայ դինայի պղծութեանն. որք
թլփատեցան նախ՝ եւ ապա շմաւոն եւղելի սրով սպանին զամենայն
առհասարակ: Ութներորդ՝ ամբոխէ զազգս. որպէս գրեալ է ի դատաւորսն
վասն կնոջն՝ որ ընդ շնութեան գործն մեռաւ. եւ ժողովեալ ամենայն ցեղքն
կոտորեցին զքսան եւ վեց հազար այր պատերազմօղ. եւ շնչեցին զազգն
բենիամենի. մինչեւ վեց հարիւր արք զերծեալ փախան ի լերիսս: Իններորդ՝
քակէ զտունս. որպէս յայտ է ի շխանացօղս. որք զամենայն ինչս կորուսանեն
վասն շնութեանն. եւ աների տունն: Եւ կամ օրէնքն քարկոծել տայ
զշնացօղսն. եւ քակի տունն: Տասներորդ՝ զհարազատ զաւակաց յոյսն
հատանէ. զի ոչ գիտեն ոյր ուրուք է ծնեալն. եւ բազում անգամ որդիք
շնութեան՝ ժառանգեն զբուն որդուցն հայրենիսն. եւ նոքա զրկին՝ ի
ժառանգութեանց: Չայս եւ զսոյնպիսիս վնասէ շնութիւնն ի մարմին
շնացողացն: Իսկ ի հոգեւորն՝ բազում եւս վնասէ: Նախզի՝ զԱստուած
անարգէ պղծելով զտաճար նորա. (դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ եք
ասէ. եւ հոգի Աստուծոյ բնակեանլ ի ձեզ:) Երկրորդ՝ զի հանգիստ եւ

բնակարան լինի դիւաց. որպէս ասէ Յոր. (բեհմովթ ննջէ ի գիճային տեղիս.) որք են հոգիք բղջախոհաց: Եւ որպէս հարեալն ի դիւէ շարժի. նոյնպէս եւ մոլին ի ցաանկութեանց: Երրորդ՝ կուրանայ միտքն ի տեսութենէ. զի կլանի բանականութիւն. նաեւ մոռանայ եւ ոչ յիշէ զվիշտ մահուն եւ դժոխոց: Այլեւ ան հաստատ լինի ի խորհուրդս. երբեմն զայս խորհելով, եւ երբեմն զայն: Չորրորդ՝ գայթակղեցուցանէ զընկերն ձգելով ի մեղս. որպէս ասէ Ովսէէ. (եղէք որոգայթ դիտանոցին. եւ վարմն արածեալ ի լերինն.) զի շնութեամբ ըմբռնեն զբռնուն հոգիս: (Եւ վայ որ գայթակղեցուցանէ զմի ի փոքրկանցս յայսցանէ ասէ Տերն: եւ վայ որ դնէ որոգայթ կուրի ի ճանապարհի:) Զինգերորդ՝ դատէ զմիտս խղճիւ. որպէս ասացաւ Դաւթի. (սուր ի տանէ քումմէ մի հեռասցի:) Եւ զայս ասաց վասն մեղացն որ ընդԲերսաբէի. զի սուր խղճմտանացն հանապազ չարչարէ զհոգի շնացողացն. զի թեպէտ իսակաւ ժամանակ հեշտանայ ի մեղսն. այլ յետ գործոյն՝ դառնանայ քան զլեղի. որպէս ասէ Սողոմօն. (մեղր կաթէ ի շրթանց կնոջ պոռնկի. եւ կատարած նորա դառնագոյն է քան զլեղի:) Վեցերորդ՝ նուաճի ընդ անարգութեամբ. Այսինքն հոգին որ Տերն է՝ ծառայէ զգայարանացն եւ մարմնոյն: Այլեւ ինքն խոնարհի գործակցին ցանկութեան մեղաց եւ հնազանդի. վասն որոյ ասացաւ. (փոխանակ զի լանաւ ձայնի կնոջ քոյ եւ կերեր ի պտղոյն:) Եօթներորդ՝ սիրել տայ զինքն եւ զաստի կեանս. զի ցանկայ երկար կենաց. զի կատարեսցէ զհեշտ ցանկութիւնն: Այլեւ ցանկայ առողջութեան, ուժեղութեան, փարթամութեան, պատուոյ, եւ սոյնպիսեաց. որով գործ շնութեանն ի գլուխ ելիցէ: Ութներորդ՝ ասէ Աստուած որ պատժէ զնոսա՝ որք հետեւի հեշտ ցանկութեանց մարմնոյ, յորժամ տայ հիւանդութիւն աղքատութիւն եւ այլ ինչ խրատ: Այլեւ աստ զսուրբս որք յանդիմանեն զնա յայնպիսի գործս. (զի ատեցին զյանդիմանչս ի դրունս իւրեաց ասէ Սողոմօն.) եւ ոչ մտանէ խրատի ի յունկն նորա. զի (որպէս իժի եւ քարբի խցեալ է զականջս իւր) մեղկութեամբ շնութեանն: Իններորդ՝ յուսահատութիւն հանդերձեալ կենացն եւ փառացն՝ եւ թողութեան մեղաց կամ զղջանալոյ: Այլեւ ոչ ինչ համարի անձին զտանջանս մարմնոյն. եւ զանարգանս ի դատաւորաց կամ յիշխանաց. զի սանձարձակ ընթանայ ի բղջախոհութիւնն: Տասներորդ՝ զի սնտոի եւ առ ժամայն հեշտութեանն բոց՝ նիւթ լինի անշէջ գեհենոյն. զի որպէս առաւել փայտ բորբոքէ զհուր. նոյնպէս աղտեղութիւն հեշտ ցանկութեան՝ բորբոքէ զհուրն յաւիտենից. (որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:) Այսոքիք վնասք՝ են շնացողաց. վասն որոյ արգիլէ օրէնքն եւ պատւիրէ: (Մի շնար:) Այլեւ բաժանի շնութիւնն ի բազում տեսակս. զի ունի բազում մասունս. պարտ է եւ զնոսա արգիլել յայնցանէ: Առաջին՝ է պարզ պոռնկութիւնն. որով ազատ ընդ ազատի շնայ. այր եւ կին: Երկրորդ՝ բոզութիւնն. որ կամ ընդ բազումս զնայ, կամ ընդ յայտնի բոզոյ ննջէ: Երրորդ՝ շնութիւնն. որ ապականէ զամուսնութեանն անկողին. եւ զնայ յօտարս որպէս շուն. եթէ այր, եւ եթէ կին: Չորրորդ՝ պոռնկութիւն. որ կամ ունի երկու կանայս ի կենդանութեան. կամ զկնի մահու յերեքն եւ ի չորսն լինի հասեալ. որ պոռնիկ կոչի ի կանանաց. զի հալալ պսակ առաջինն է. միոյ կնոջ մի այր որպէս երիցանց: Իսկ երկրորդն՝ աշխարհականաց ներելով է՝ եւ թոյլ տալով վասն տկարութեան: Իսկ երեքն եւ չորսն՝ եւ այլ աւելին՝ պոռնկութիւն է. եւ ոչ հալալ ամուսնութիւն. որպէս սամարացի կնոջն հրամայաց Տերն եթէ, (հինգ

այր փոխեալ է քո. եւ այդ գոր ունիս՝ չէ քո այր.) զի պոռնկութիւն է: Յինգերորդ շնութիւն է՝ կուսապղծութիւնն. զի ապականէ զկուսական ամբողջութիւնն: Վեցերորդ՝ սրբապղծութիւնն ի նուիրականն Աստուծոյ. որով կորնչի ողջախոհութիւնն. որք ուխտեցին զինքեանս Աստուծոյ. որպէս ի կրօնաւորս՝ յապաշխարհօղս, եւ յայլս. եւ որքան աստիճանն գերագոյն է, այնքան մեղքն ծանրագոյն է: Եօթներորդ՝ ազգապղծութիւնն. եթէ արեան ազգակցութիւն է. եւ թէ խնամութիւն. եւ թէ հոգեւոր ազգակցութիւն է ապականի: Ութներորդ շնութիւն է սրտի՝ աչաց մեղանչելն. ձեռաց ականաց եւ լեզուաց խեղկատակութեամբ եւ այլ ինչ աղտեղութեամբ գարշանալն: Եւ զայսպիսիս՝ շնութիւնկոչէ Տէրն. (որ հայի ցանկութեամբ՝ զի թպէտ ժամանակն կամ տեղիքն կամ դէմքն խափանեցին զկատարեալ գործն, այլ նա ի սրտի իւրում շնացաւ:) Այլեւ այնպիսի անդամոցն շնութիւնն այն է՝ որ կատարեցաւ: Վասն այն շնութիւն կոչին ցանկութեամբ հայիլն եւ խօսիլն, եւ այլն: Իններորդ շնութիւնն է՝ նզովեալն եւ անասելին օճառագործութիւնքն արուաց եւ իգաց եւ անասնագիտաց, եւ այլ սոյնպիսեաց. որք ընդդէմ բնութեանն մեղանչեն զսողմականն. զի ոչ միայն մարդ, այլեւ անասունք փաղչին յայնպիսի պիղծ շաղաշարութեանց. զի բիւր մահու եւ պատժոց են արժանի այնպիսիքն. եթէ ոչ դառն եւ ծանր ապաշխարութեամբ քաւեցեն. զոր ոչ կամեցաւ Գիրք Սուրբ աղտեղել զինքն եւ զլսօղսն: Այլ միայն ասէ. (մի շնար.) զի աստ զամենն ի ներս պարունակեցէ:) Տասներորդ՝ վաւաշոտ շաղաշարիլն առն եւ կնոջ զոր օրինակ՝ զպիղծ կերակուր ինչ յամենայն ժամ խոսելի է. այլեւ սուրբ կերակուրն. որպէս զմիս ոչ խարի ի պահոց ժամանակս. եւ յանպատշաճ տեղոջ եւ ի դէմս խոտելի է: Ապա թէ ոչ՝ եւ այն լինի պիղծ եւ մուռտառ: Նոյնպէս եւ հալալ ամուսնութիւնն թէ ոչ լինի խտրութեամբ՝ շնութիւն է պոռնկութիւն: Չի ունի ամուսնութիւնն կրկին եղանակ. այսինքն արժան, եւ անարժան: Եւ արժանն է՝ յորժամ լինի վասն զաւակի ծնանելոյ ի պաշտօնն Աստուծոյ եւ կամ վասն պահելոյ զզուգակիցն ի պոռնկութենէ. եւ կամ վասն պարտուց. եւ այն է պարտքն՝ զի որպէս կինն յառնէ եղեւ, այն պարտք է կնոջն. Նոյնպէս այրն ի կնոջէ ծնանիցի եւ վճարիցի պարտքն: Այսքան պատճառս պատուական է ամուսնութիւնն եւ հալալ ասնկողիքն. ընտրելով զտեղին եւ ժամանակն համեստութեամբ վասն տկար բնութեանն. եւ այս է արժանաւոր եւ պարկեշտ ամուսնութիւն: Իսկ անարժանն լի նի հինգ եղանակաւ. որ այս պատուականութիւնս՝ լինի շնութիւն համարեալ: Առաջինն թէ լինի սանձարձակ եղեալ ի պարկեշտ ամուսնութեանց, եւ միշտ յագեցուցանէ զվաւաշոտ ցանկութիւնն բոզական փաղաքշութեամբ, ընդ բոզիցն եւ շնացելոցն համարեալ է: Երկրորդ՝ յորժամ լինի ընդդէմ սովորական կերպին. որպէս ասացաւ յօրէնսն. (զայգի խո մի վարեցես այլ եւ այլ:) Երրորդ՝ յորժամ ի յանպատշաճ ժամանակի լինի. ի տօնս՝ ի կիրակէ, ի պահս՝ եւ յայլս. զի յորում աւուր ոչ է հրաման պսակի՝ ոչ հրաման է խառնիլ յանկողինս: Չորրորդ՝ յոր ժամ ի սուրբ տեղի լինիցի. մերձ յեկեղեցի, ի խաչ, եւ յայլ արգելեալ տեղիս: Յինգերորդ՝ յորժամ մտանիցէ առ յղին որ մերձէ ի ծնանիլ. կամ յորժամ լինի ի կանանց օրինի: Այսչառ հինգ եղանակաւ՝ հալալ անկողիքն լինին շնութիւն եւ պոռնկութիւն. վասն որոյ հրամայէ (մի շնար:) Դարձեալ՝ որպէս ասէ ժողովօղն: (Կինն է որս եւ թակարթ սրտի առն. եւ կապանք ձեռաց նորա:) Չայն ասէ թէ՝ ցանկութիւն կանաց՝ է իբրեւ զորոգայթ, որ ըմբռնէ զթռչունս. եւ որպէս

թակարթ որ ըմբռնէ զանասունս. եւ որպէս ձեռնակապ լինի ի գործոյ: Թեպէտ բազում եւ ազգի ազգի վնասէ կանաց. այլ յատուկ երեք վնաս գործէ ի մարդն: Նախզի՝ միտքն է որպէս թռչուն. նա յիմարի եւ ըմբռնի ի տռփումս կանաց: Երկրորդ՝ մարմինն որպէս զանասուն ի թակարթ ըմբռնի գործելով զցանկութիւն: Երրորդ յետ գործոյն՝ ձեռնակապ լինի յառաքինութենէ եւ խափանի: Եւ այս լինի յերեք պատճառաւ. այսինքն, ի տեսութենէ եւ ի գեղոյ կանաց միտքն յիմարի եւ ափշի. ըստ այնմ, (ոգիք ըմբռնեալք ի մեսոս՝ ի մտաց եւս անկանին:) Եւ ի հեշտութենէն ախտից մարմինն ըմբռնի եւ թակարդի: Եւ ի ցանկութենէն հոգին կապի յառաքինութեան գործոց: Որպէս եւ յայլուր ասէ. (Որպէս զշուն տոռամբ կապել. եւ Որպէս զեղջերու հարեալ. եւ որպէս զառջառ ի սպանդ վարեալ. այնպէս ըմբռնէ ցաանկութիւն անզգամ կանաց զմարդիկ: Եւ թէ զուժգնութիւն կանաց կամիցիս գիտել. տես առ իմաստունն Սողոմոն որպէս ասէ գիրն: Եթէ իմանկութեանն ուղիղ էր սիրտն Սողոմոնի զհետ Աստուծոյն իւրոյ. այլ յորժամ ծերացաւ եւ յանկաւ զհետ կանաց, ոչ էր ուղիղ սիրտն նորա զհետ Աստուծոյն իւրոյ. զի գինի եւ կանայք հեռացուցին զնա յԱստուծոյ: Այլեւ տես առ զօրեղն ստմսոն, թէ որպէս կապեցաւ ի կնոջէն, եւ փորեցաւ աչք նորա, եւ անկաւ ի ձեռս այլազգեաց: Այլ այս ոչ է ամենայն կանաց եւ ոչ ամենայն արանց՝ (զի թողեալն յԱստուծոյ անկցի ի նա ասէ. եւ բարիքն զերծանին ի նմանէ:) Որպէս ողջախոհն Յովսէփ զերծաւ յարբշիռ եւ ի պոռնիկ կնոջէն: Նոյնպէս եւ ողջախոհն շուշան՝ զերծաւ ի վաւաշոտ ծերոցն: Այսպէս եւ ամենայն մարդ՝ որ ունի զերկիւղն Աստուծոյ ի սրտին ամբեացեալ, ոչ անկանի յորոգայթ նոցա: Այլ թոյլքն եւ հեշտասերքն որք զնան զհետ կամաց իւրեանց, եւ թողեալ են ի ձեռացն Աստուծոյ նոքա անկանին յորոգայթս նոցա: Իսկ թէ որպէս զերծանիմք ի շնութենէ: Նախ եւ առաջին՝ փաղչիլ ի տեսութենէ ի մերձ նստելոյ, ի խօսելոյ, եւ յայլ իմն պատճառաց. որպէս ասէ Յոբ. (ուխտ եդի աչաց իմոց, ոչ հայել ի կոյս:) Եւ յառակն ասէ. (որ մերձենայ ի ձիւթ, աղտեղասցի:) Եւ Սիրաք. (որ ըմբռնէ զնա՝ որպէս թէ ըմբռնէ նա զկարիճ եւ զօձ եւ զհուր:) Այլ որպէս ասաց ոմն ի սրբոց. (փախիր մարտիանէ՝ փախիր եւ մի յամեր.) այս առաջին հնար զերծանելոյ ի պոռնկութենէ: Երկրորդ՝ ճնշել զմարմինն սովով եւ ծարաւով եւ տքնութեամբ. զի թէ նուազին նիւթն, շիջանի հուրն. որպէս ասէ Տերն. (այս ազգի դիւաց՝ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք եւ պահօք:) Երրորդ՝ զբաղիլ ի գործս մարմնականս եւ ի քիրտն. կամ յընթերցումս, ի յուսումս, եւ այլ ինչ բարի գործս. զի ասեն վարդապետք. միշտ գործեա բարի. զի գտցէ զքեզ սատանայ զբաղեալ. (զի դատարկութիւն մայր է ամենայն չարեաց:) Չորրորդ՝ ընդդէմ կալ ի սկիզբն փորձութեանց. ի չար խորհուրդն, կամ ի չար շարժումս. զի որպէս օձին զլուխն յորժամ մտանէ ի ծակն, եւ զանձն ի ներքս քարշէ. նոյնպէս զգուշ պարտ է լինիլ ի սկիզբն մեղացն. զի մի մտցէ ի ներքս բոլորն: Եւ դարձեալ որպէս զլուխ օձին թոյլ է՝ դիւրաւ ջախջախի. նոյնպէս եւ սկիզբն մեղացն եւ չար խորհուրդն. վասն որոյ ասաց Աստուած. (նա սպասեսցեքում զլիսոյդ:) Զինգերորդ՝ իմիտ ածել զօր մահու եւ զտանջանս դժոխոցն. որպէս ասեն վարդապետք. ի միտ ած զվախճան քո. եւ ոչ մեղանչես յաւիտեան: Վեցերորդ՝ ոչ վստահանալ յանձն. այլ հանապազ ի կասկածի եւ յերկիւղի կալ. զի թէ անկեալ ես՝ երկիր ի տանջանաց. եւ թէ ոչ ես անկանել, երկիր՝ զուցէ անկանիցիս ասէ առաքեալն: Չի Դաւիթ որ սուրբ էր, անկաւ. եւ

իմաստունն Սողոմոն սխալեցաւ. եւ Սամփսոն զօրեղագոյնն, տկարացաւ: Վասն այն պարտ է հանապազ երկիւղ եկ ի կասկած կալ. եւ զգուշանալ վեցեկի հնարիւքս. եւ խնդրեսլ զօգնութիւն եւ զպահպանութիւն յԱստուծոյ փրկչէն մերմէ. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն: Ութներորդ բան օրհնացն որ ասէ: (Մի գողանար:) Կենցաղոյս օգուտ եւ օգտակարք են այս խրատք. զոր յառաջին հասակն պարտ է վարժել զմանկունսն. եւ արգելել ի գողութենէ. զի մի ի փոքրագոյնն թոյլ տուեալ, ի մեծագոյնն յօժարեցին. զի սովորութիւնն՝ քան զբնութիւնն առաւել լինի ըստ իմաստ նոյն. սովորութիւն ի բազում ժամանակս՝ բնութիւն մակստացական լինի. եւ որպէս բնութեամբ է ննջելն՝ քաղցն եւ ծարաւն. նոյնպէս եւ գողութիւնն լինի: Եւ դարձել՝ ի փոքր գողութենէ զի մի զմեծամեծս գողացի. որպէս խրատէ Տէրն. (որ ի փոքուն հաւատարիմ է, եւ ի բազմին. եւ որ ի փոքուն անիրաւ է, եւ ի բազմին:) Վասն այն ասէն յաշխարհի. ձուագողն եւ ձիագողն՝ մի է. զի միապէս գող կոչին, եւ այլոց իրաց զկրօղ եւ ագահ: Արդ՝ մեք հրաման առաք յԱստուծոյ ի քիրտն երեսաց ուտել զհաց. եւ մի զայլոյ վաստակ. թող թէ ոչ գողանալ: Եւ ի յօրէնսն գրեաց եւ արգիլեաց չգողանալ զայլոցն: Արդ՝ երկոքին հրամանքս այս՝ բնական օրհնացն են. զմեր վաստակն ուտել. եւ զայլոցն չգողանալ: Եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս յաւել ի վերոյ եւ զերրորդ մասն թէ՛ զքոհալալ վաստակն այլոց տնտեսեա եւ բաշխեա. եւ ապա լինիմք կատարեալ: Նախզի՛ ամենեւիմք հեռանամք ի գօրանս զրկելոյ. զի թէ զմերն հրամայ իմք տալ, ապա զայլոցն չէ պարտ գողանալ: Երկրորդ՝ զի սեր ընկերին ցուցանի տրօք ողորմութեան. եւ օրէնքն Աստուծոյ կատարի թէ՛ (սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո:) Երրորդ՝ զի ողորմութեամբ զինչս մեր յերկիսս գանձեմք. մին՝ զի երկնային գանձն անապական մնայ ի գողոց եւ յապականչաց. եւ միւս՝ (ուր գանձք մեր են, անդ եւ սիրտք մեր լինին յերկիսս:) Վասն այն հրամայէ. (վաճառեցէք զինչս ձեր եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ գանձ անպակաս յերկիսս:) Չորրորդ՝ զի ողորմութեամբն թէ թշնամի է, հաշտի. թէ բռնաւոր, խոնարհի. թէ բարկացող, հանդարտի: Վասն այն հրամայեաց. (թէ բռնաւորն հանէ ի քէն զվերին հանդերձն, թող նմա եւ զմիւսն. եւ ամենայն որ խնդրէ ի քէն տուր. եւ ի փոխն մի դարձուցաներ զերեսդ:) Ապա յայտէ որ կատարեալ է քրիստոնէից օրէնս. վասն այն նախ պարտ է զգուշանալ ի գողութենէ որպէս հրամայէ Տէրն: (Մի գողանար:) Այլեւ այսր պատուիրանի մասունք են: Մի զրկեր. մի յափշտակեր. մի հատաներ զաւանդ. եւ մի զպարտս. եւ մի զվարձս, եւ այլն: Չի գողութիւնն բազմատեսակ է. զի այն որ գաղտ տանի զինչս ի տանէն, գող կոչի: Նոյնպէս որ ի վաճառն տանի, զրկօղ է. զի որ քան վարժեսն ի վեր ծախէ եւ պակաս գնէ, գող է եւ զրկօղ: Եւ որ զչափն կրկին դնէ մեծ եւ փոքր, նոյնպէս զլիտրն, նոյնպէս զկանգունն, որ մեծովն առնու եւ փոքրովն տայ, գող եւ զրկօղ է. վասն այն կոչի բնակութիւն նոցա կողբակ. որ է գողի բակ: Եւ որառաջ նորդ է գեղի, եւ ի գեղէն զրկէ, բոլոր գեղին լինի գող: Եւ որ ի յարուեստն վնասէ եւ խառնէ, եւ կամ զայն նիւթն զոր էառ պակասեցուցանէ, գող է եւ զրկօղ: Սոքա սոյնպիսիքս՝ որ ի ծածուկ նենգեն, գող կոչին եւ զրկօղ: Եւ որ յայտնի ի ճանապարհս իլլեն, յափշտակօղք եւ աւագակք կոչին: Եւ բռնաւորքն եւ իշխանքն որք անիրաւեն զաղքատս, յափշտակօղք են: Եւ դատաւորք որք կաշառօք թիւրեն զդատաստանն, յափշտակօղք են: Եւ որ զարձաթ ի վարձու տայ, կամ զկերակուր եւ շահ առնու, յափշտակօղ է. եւ այն ամենայն. որ

յայտնի գրկէ, յափշտակօղ է, եւ որ ւ ծածուկ՝ գող: Նոյնպէս գողութիւն է հատանել զաւանդ եւ զամանաթ. այլ եւ զաւանդ ինչ հայրենեաց կտրել՝ գողութիւն է: Եւ զպարտս ոչ վճարել՝ եւ զվարձս վարձկանի չտալ՝ գողութիւն է եւ զրկանք եւ յափշտակութիւն: Չի սոքա աղաղակէն առ Աստուած եւ լսէ նոցա. ըստ այնմ, (զրկեալն ի ձեռք աղաղակէ. եւ բողոք հնձողացն եհաս յականջս Տէր զօրութեանց:) Եւ զի՞նչ է գողի ճագէն: Այն է՝ զոր ետես Չաքարիայ մարգարէն զհրեշտակն, որ ել ի տաճարէն. եւ գերանդին ի ձեռս իւր. քան կանգունա երկայնութիւնն. եւ տասն լայնութիւնն. եւ ասէ՝ երթամ եւ տանիմ զգերանդիս ի տունս գողոց եւ աւագակաց: Չի հրեղէն սրովն հատանէ աստմարմնով. եւ անդ հոգւով եւ մարմնով ի տանջանս հաւիտենից: Ահա եղբարք այս է գողոց պատիժն ըստ մարգարէին որպէս ցուցաւ: Իսկ ի քաղաքական օրէնս՝ յայտնի են որք ի վաճառն յանցանէն. տուգանք. եւ ծեծ. եւ գռայն. եւ թուրք: Իսկ զհարամին եւ զաւագակն սպանանէն: Եւ զգողին ձախ ոտն եւ զաջ ձեռն հատանէն. զի մի այլ գողացի: Եւ թէ այս երեւի, ի չանկալն ձգեն. եւ յիրաւի՝ զի որ ի ծածուկ գողացաւ, ի բարձր տեղոջ կախեսցի յայտնի: Եւ աւագակն սպանանի իբր զյայտնի թալանօղ: Եւ զաջ ձեռն հատցեն՝ զի մի այլ եւս գողացի. եւ զձախ ոտն՝ զի յաջ կողմն ընթացի վասն ընթացից ընկերին. եւ տուգանքն գող բակաց: Չի ծածուկ խաբօղքն՝ յայտնի առակին. զի գիտացես դու թէ, որպէս է մարմնոյ պատիժն. նոյնպէս եւէ նոցա հոգւոյ պատիժ. որպէս ասացաք: Վասն այն ինկայելով ի մեզ զգուշացուցանէ: (Մի գողանար:)

Եւ զի՞նչ իցէ հնար գողին: Այն՝ զոր յօրէնսն հրամայէ Աստուած. (եթէ գտցին գողունիքն ի ձեռս գողին եւ ըմբռնեն, միոյն կրկին առնուն ի գողէն. եւ տան զմին ի տէր ընչիցն. եւ զմին իշխանին. եւ գանել թողցեն:) Իսկ թէ կերեալ լինին գողունիքն, եւ գտան գողն, միոյն չորս կամ հինգ առնուն ի գողէն. եւ տան ի տէարս եւ իշխանն: Չի թէ ոչխար լինի գողացեալն, միայն չորս հատուցէ. եւ թէ առջառ, միոյն հինգ. զի առաւել լրբութիւն է զմեծն գողանալ քան զփոքրն: Եւ այս է պատճառն որ միայն չորս հատուցանեն: Չի որ փոխ տանի, միոյն մի հատուցանէ: Եւ որ ակամայ զրկէ, միոյն կրկին վճարէ. ապա յիրաւի որ գողանայ. չորս վճարէ. զերկուսն վասն զրկելոյն. եւ զերկուսն վասն գողանալոյն: Եւ դարձեալ՝ չորից տարերաց են ինչքն. չորիւք հատուցանէ գողն: Եւ զի հինգ զգայարանքն գործակից եղեն. միոյն հինգ վճարէ զտուգանսն: Նոյնպէս եւ ի նորս՝ պատիժ նոյն է գողոցն. որպէս ասեր Չաքէնս առ Տէրն. (զկեսընչից իմոց տաց աղքատաց. եւթ զոք զրկեցի, հատուցից չորեքին. վասն որոյ ասաց նմա. այսօր եղել փրկութիւն տանս զրկողաց. յորժամ մեկին Դ հատոյց:) Իսկ թէ ոչ գտանիցի գողն, այլ ինքն զղջացեալ գայ եւ խոստովանի քահանային, զայս հրամայէ օրէնքն. եթէ գողն նախ խոստովանի քահանային, եւ որչափ գողացան՝ զնոյն զլուխն հատուցանէ. եւ զհինգերորդ մասն եւս յաւելեալ. այսինքն զոր ինչ արժէ գողացեալ իրն՝ ի հնգէն զմինն այլ ի վերոյ տուգանս հինգ զգայարանացն որ գողացան. եւ տայ ի Տէր ընչիցն. եթէ մեռեալ է՝ յարեան մերձաւորս նորա. եւ թէ ոչ՝ ի քահանայն տացէ. եւ քահանայն միջնորդ է մեռելոց եւ կենդանեաց. եւ հաշտեսցին նոքա: Եւ առցէ խոյ մի յիսուն դահեկանի. եւ մատուցանէ պատարագ Աստուծոյ. եւ թողցի նմա: Այսպէս էր յօրէնսն. եւ յիրաւի: Չի գողն յանցաւոր է օրինացն Աստուծոյ որ ասաց. (մի գողանար.) եւ յանցաւոր է կանոնաց եկեղեցւոյ եւ քահանայիցն. եւ պարտական է ընչից

Տերն: Վասն որոյ զիոյն Աստուծոյ մատուցանէ. եւ զիսստովանիլն կանոնաց. եւ զինչս ի Տերն վճարէ եւ արդարանայ: Եւ տես զոչումն. զի որ զոչացաւ միայն՝ չորս կամ հինգ ոչ հատուցանէ որպէս զգողն ըմբռնեալ: Այսպէս եւ ի նորս Է. զի միայն խոստովանելով ոչ արդարանայ գողն. այլ պարտ է զորդունիսն յետս ի ՋՏերն. եւ կամ յաղքատս. եւ կամ ի քահանայս եւ յեկեղեցիս. եւ ապա վճարի: Եւ փոխանակ խոյին՝ պահօք եւ աղօթիւք զհոգի եւ զմարմին պատարագել Աստուծոյ. եւ ապա թողցի մեղք գողութեանն: Յայս միտս ամենայն մեղաց ապաշխարանսս դնեն. կամ ողորմութիւն, կամ պահս եւ աղօթս. նոյնպէս գողին առաւել: Եւ գիտելի է՝ զի երեք տեղուոչ գողութիւնն անպատիժ է: Մի՝ յորժամ գողանան զսուրն ի մուկեղնոտէն. զի մի զինքն կամ զայլս վնասեցէ. այս զգուշութիւն է եւ ոչ գողութիւն: Եւ մի՝ յորժամ կարի քաղցեալ լինի մերձ ի մահ, առցէ հաց եւ լցուցէ. եւ այս հարկաւորութիւն է եւ ոչ գողութիւն: Եւ մի՝ յորժամ լինի հրամանաւ. որպէս իսրաւելցիքն առին զանօթ եգիպտացուցն եւ ոչ դարձուցին. զի վարձ աղիւսոյն մնացեալ էր առ նոսա. հրամայեաց Աստուած դաւաճանել զնոսա զի հատուցի: Եւ թէ ոք ասիցէ՝ այս անուն մարդ զրկեաց զիս. եւ թէ ես գողանամ զինչս նորա արդա՞ր եմ: Ասեմք առ այս եթէ, ոչ է պարտ. զի նա ընդ զրկօղն դատի. եւ դու ընդ գողսն: Եւ այն զի հրամայեաց Աստուած ժողովրդեանն՝ ոչ միայն վասն վարձուն էր, այլ զի մի իշխեսցեն դառնալ յեգիպտոս գողացեալ զինչս նոցա: Ապա ոչինչ կերպիւ է պարտ զրկել եւ գողանալ զինչս այլոց. զի փոխանակ ընչիցն զոր գողանան՝ զբարին գործս իւրեանց ի նոսա տան յարդար դատաստանին Աստուծոյ. եւ թէ ոչ ունիցին բարի գործս, զհաւատս եւ զմկրտութիւնս: Եւ թէ այլ ազդիք իցեն, զմեղս նոցա առնուն եւ տանջին ի հուրն. եւ նոքա առնուն զպսակս յԱստուծոյ: Այսպէս ծանրագոյն է եղբարք զրկելն եւ գողանալն. թէ յեկեղեցույ, թէ ի քահանայից, թէ յաշխարհականաց, մեծ մեղք են. իբր զքրիստոնեայ եւ ցեկեղեցի զրկեալ: Իսկ թէ յայլազգաց, զնոցա մեղսնտանին. թէ զմեծատանց, եւ թէ զաղքատաց: Վասն այն զգուշացուցանէ: (Մի գողանար:) Եւ մի վասն կորստական ընչից զհոգի ձեր կորուսանէք. այլ սիրելով զընկերն, ողորմութիւն բաշխեսցուք կարօտելոց եւ կարեկից լիցուք. զաղքատս կերակրեսցուք. զմերկս զգեցուցուոք. յարկ տնանկաց եւ օթեան օտարաց լիցուք: Հիւանդաց ձեռնտու, եւ վշտացելոց մխիթարք լիցուք: Եւ անճառ ողորմութեանն եւ երանաւետ կենացն արժանացուք ի Քրիստոս Յիսուս ի Տեր մեր. որ է օրհնեալ յաւետեանս ամեն: Իններորդ բան հրամանացն Աստուծոյ որ ասէ: (Մի սուտ վկայեր:) Բազում եւ շատ չարեաց պարտաւոր է սուտ վկայն. եթէ խաբի ի բարեկամէ չգիտելով զիրն եւ սուտ վկայէ. եթէ գիտէ զճշմարիտն, եւ ակնառութեամբ սուտ վկայէ: Նախ եւ առաջին մեծ վնաս է. զի ապականէ զճշմարտութիւնն եւ հակառակի նմա. որպէս խաւար լուսոյ հակառակի. եւ չարն բարոյ. եւ ոչ ինչն եւութեան: Նոյնպէս եւ սուտն ոչ ինչ է, եւ չար, եւ խաւար. ի խաւարեալ մտաց յառաջ եկեալ. եւ հակառակի ճշմարիտն: Եւ զի՞նչ է ճշմարտութիւնն: Առաջին այն է գովութիւն նորա՝ զի ճշմարտութիւնն արեգակն եւ լոյս է ամենայն առաքինութեան. զի ցամենայն առաքինութեան գործս՝ ճշմարտութիւնն լուսաւորէ. որպէս արեգակն զզգալի արարածս եւ զաչս լուսաւորէ: Երկրորդ՝ զի ճշմարտութիւնն ի բազում ուրեք ի վերոյ Աստուծոյ կոչի որպէս Քրիստոս ասէ. (ես եմ ճշմարտութիւն:) (եւ Աստուած

ճշմարտութեան եւ հայր: եւ հոգին ճշմարտութեան:) զի ատէ եւ կորուսանէ զամենայն ստութիւն. եւ ոչ ինչ թաքչի ի գեղեցիկ լուսոյ ճշմարտութեան: Երրորդ՝ զի հաճոյ նուէր Աստուծոյ եւ պատարագ ոչ ինչ է քան զճշմարտութիւն. վասն զի Աստուած ճշմարտութիւն է. զճշմարտութիւն առաւել սիրէ, եւ կամի իբր զազգակից իւր: Զորրորդ՝ զի ճշմարտութիւնն յԱստուծոյ է առ մեզ իջեալ. որպէս բարին լոյսն եւ կեանքն. վասն որոյ մեծարգոյ եւ պատուական է. զի յԱստուծոյ է: Իսկ ստութիւնն ի սատանայէ. որպէս չարն եւ մեղքն. վասն այնորիկ անարգ է: Զինգերորդ՝ զի առ մեզ եկեալ՝ ճշմարիտս գործէ զմեզ. որպէս հուրն յորս մեր ձի՝ ջերմանայ. եւ լոյսն լուսաւորէ. նոյնպէս ճշմարտութիւնն ճշմարիտս գործէ զմարդ. եւ ի ստութեանն խաւարէ հեռացուցանէ: Վեցերորդ՝ զի ճշմարտութիւնն մնացական է անանց, եւ յաւիտեան է. զի հին օրէնքն եւ պատարագն՝ ստուեր եւ օրինակ էին խափանեցան: Եւ նորս որ ճշմարտութիւն էր, մնայ յաւիտեան: Եօթներորդ՝ ճշմարտութիւնն իր է եւ եութիւն. եւ ստութիւնն ոչ ինչ եւ անիր որպէս ասացաք: Ութներորդ՝ ճշմարտութիւնն մի է եւ միայն. եւ ոչ ինչ է նմա հակառակ: Իսկ ստութիւնն բազում է որպէս չարն եւ հակառակ միմեանց: Իններորդ՝ ճշմարտութիւնն կատարումն է բանին. որպէս բարին կատարում է գործոյն: Այս է՝ տեսական իմաստութիւնն եւ գործնական առաքինութիւնն ի մեզ ի հոգւոյ եւ ի մարմնոյ յառաջ եկեալ: Տեսական իմաստութիւնն սկսանի ի բանէն. եւ կատարի ի ճշմարտութիւնն. եւ գործնական առաքինութիւնն սկսանի ի կամացն, եւ կատարի ի բարին: Եւ ապա մարդն կատարի հոգւով եւ մարմնով: Տասներորդ՝ ճշմարտութիւնն զօրաւոր է քան զամենայն ինչ. որպէս գրեաց Զօրաբաբել առաջի թագաւորին դարեհի: Զի ոմն գրեաց զգինին զօրաւոր. եւ ոմն զկինն. եւ ոմն զքունն. այլ զօրաբաբել ճշմարտութիւնն: Եւ յարեալ թագաւորն եւ պատուեաց զնա. եւ արձակեաց մեծ փառօք Յերուսաղէմ: Արդ՝ այս առաջին վնաս սուտ վկային. զի կամի զճշմարտութիւնն ապականել. եւ կորուսանել զայն՝ որ զայս ամենայն գովութիւնս ունի: Եւ որպէ՞ս կորուսանի ճշմարտութիւնն ասիցէ ոք: Ասեմք եթէ ճշմարիտն ինքն ըստ ինքեան ոչ կորնչի. այլ հեռանայ ի ստոյն: Զի ասելի է նմա. որպէս ի գիշերի արեգակն ոչ կորնչի, այլ հեռացուցանէ զլոյսն իւր. եւ կամ որք զակն խփեն՝ զրկին ի լուսոյ: Եւ իմաստասերքն այսպէս սահմանեն եթէ՝ ճշմարիտ է՝ որ իրն եւ ձայնն հաւասարին միմեանց. զի զոր խօսիմք, այն իրն նոյն լինի. որպէս ասեմք մարդոյն թէ՝ մարդ է. եւ կենդանի է եւ բանաւոր, եւ այլն. ճշմարիտ է: Իսկ սուտն այն է՝ յորժամ ասեմք մարդոյն թէ քար է կամ փայտ. իրն եւ ձայն ոչ հաւասարեցան, սուտ է: Եւ այլք ասեն թէ, ճշմարիտ է գոլն որ է, եւ ոչ գոլն որ ոչ է. որպէս յորժամ ասեմք թէ, ձիւնն սպիտակ է եւ ոչ սեւ. զի զոր ինչ ունի դնեմք. եւ զոր ոչ ունի բառնամք: Եւ սուտ է՝ ոչ գոլն որ է, եւ գոլն որ ոչ է. զոր ունի բառնամք, եւ զոր ոչ ունի դնեմք՝ որպէս թէ ասեմք զկաթն սեաւ եւ ոչ սպիտակ: Այսպէս սահմանաւ որոշին ճշմարիտն եւ սուտն ընդ իմաստնոց: Վասն պարտ է ունիլ մեզ զճշմարիտն որ գովելի է յԱստուծոյ եւ մարդոյ. եւ թողուլ զսուտն որ անարգ Աստուծոյ եւ մարդոյ, Սուրբ Գրոց եւ արտաքին իմաստնոց: Դարձեալ՝ սուտն ամենայն չարեաց պատճառ է կերպիւ ինչ: Նախզի՝ ամենայն մեղք եւ չարիք ստութեան գործք են. որպէս շնալն, պոռնկիւն, եւ այլն: Երկրորդ՝ զի ամենայն ոք զսուտն դնէ ի մտի եւ գործ է զչար. զի յորժամ հարցանեն, ասիցէ չեմ գործեալ. որպէս գողն.

մարդասպանն. շնացողն. ագահն. եւ այլքն: Այսպէս սուտն պատճառ եւ գլուխ է ամենայն մեղաց. ապա ուրեմն ճշմարիտն գլուխ եկ պատճառ է ամենայն բարեաց: Դարձեալ՝ սուտն սատանայ է. զի նա գառաջին սուտն խօսեցաւ զԱստուծոյ առ մարդն եթէ՝ (ասաց Աստուած յամենայն պտղոցդ մի ուտէք.) եւ կինն ստեաց զնա թէ՝ ոչ այսպէս. այլ յամենայնէ ուտել հրամայեաց՝ եւ ի միոյն չուտել: Եւ ապա տեղի գտեալ սատանայի՝ խաբեաց զպարզամիտն եւ մահացոյց զնա: Նոյնպէս ամենայն մարդ որ սուտ խօսի, որդի է սատանայի, ի նմանէ ընկալեալ զսերմն ստութեան. ըստ այնմ, (որ սուտ խօսի՝ դիւրոցն խօսի. զի սուտ է հայր նորա սատանայ.) եւ որդին սատանայի՝ ժառանգն է հօրն սատանայի. որ նա ինքն է հուրն յաւիտենից. ըստ այնմ, (երթայք ի հուր որ պատրաստեալ է սատանայի:) Վասն այն ասեն՝ սուտ վկային հուրն է բաժին: Ապա ուրեմն յորժամ ստախօսն որդի է սատանայի, ճշմարտախօսն որդի է Աստուծոյ եւ ժառանգակից Քրիստոսի. որ է արքայութիւնն երկնից: Դարձեալ՝ ստախօսն ոչ կարէ արդարնալ բնաւ. զի ամենայն մեղք զոր գործեմք՝ խոստովանութեամբ թողու Աստուած. եւ խոստովանութիւնն ճշմարտախօսուինն է առաջիԱստուծոյ եւ քահանային, եթէ զայս ինչ եւ զայս գործեցի. եւ մեղայ Աստուծոյ. այս եւ այս պատճառաւս դու թողութիւն շնորհեա մեղաց իմոց: Արդ՝ եթէ ճշմարիտ զղջմամբ խոստովանիմք, թողու Աստուած զամենայն մեղս մեր. ապա թէ ստեմք եւ խաբեմք զքահանայն, ոչ թողու Աստուած: Որպէս յորժամ եհարց Աստուած զԱդամ թէ ո՞ր ես՝ պատճառս տալոյ խօսից. եւ ասէ Ադամ. մերկ էի եւ թաքեայ: Եւ ասէ Աստուած. (մի թէ կերե՞ր ի պտղոյն չուտելոյ.) զի ինքն խոստովանեսցի եւ գտցէ զթողութիւն: Այլ ասաց. (կինս խաբեաց զիս:) Նոյնպէս եւ կինն ոչ ապաշաւեաց. այլ պատճառեաց զօճն. վասն որոյ ոչ արդարացան: Քանզի առաջին բարին չմեղանչելն է. եւ երկրորդ յետ մեղացն՝ ապաշխարելն է գտանել զթողութիւն մեղաց: Չի եթէ երկարի յապաշխարանսն՝ հաւասար չմեղուցելոցն լինի. որպէս ասէ ոմն ի սրբոցն թէ՝ արդարագործ չեղեր, արդարախօս լեր. եթէ յերկարի ի նմին, արդարագործ եւս լինի: Ահա տեսեք՝ որ ճշմարիտ խօսքն արդարացուցանէ զմարդն եւ սուտն դատապարտէ. որպէս զադամ եւ զԵւա: Եւ օճն ընդէ՞ր ոչ եհարց: Այն է պատճառն՝ զի օճին լեզու եւ խօսք չէր տուեալ զի՞նչ հարցաներ: Եւ դարձեալ՝ զի օճն ստախօս էր. ոչ եհարց ի նմանէ: Վասն այն սուտ վկայն՝ նման է առաջին օճին անիծեալ. եւ ոչ է պարտ հարցանել զնա յատենի: Եւ ապա դատապարտեաց զԱդամ (անիծեալ լիցի երկիր ի գործս քո, այլն:) եւ զկինն թէ՝ (տրտմութեամբ ծնցիս որդի եւ այլն:) եւ զօճն անէծ թէ՝ (անիծեալ լիցիս.) այսինքն, սատակեալ յամենայն գազանաց. եւ վերոյ լանջաց զնասցես. եւ հողկերիցես զամենայն անուրս: Այս անիծիցս մասնակից է սուտ վկայն. զի ի մէջ ամենայն մարդոյ՝ անիծեալ, եւ ի սիրտն սողայ. եւ օճի կերակուր ուտէ զհող եւ զմեղս: Այս է սուտ վկային բաժինն եղբարք: Դարձեալ՝ ստախօսին մեղքն այն է՝ զոր ասաց Տէրն թէ՝ (որ ուրանայ զիս առաջի մարդկան, ուրացայց եւես զնա առաջի հօր իմոյ.) զի զչարագործն՝ եւ զմարդասպանն՝ եւ զշնացողն՝ ոչ ուրանայ, այլ ողորմի եւ գթայ, յորժամ դառնան ի մեղաց. այլ զուրացողն ուրանայ որ մեղք լեզուին է: Եւ տես յօրինակացն. որ զմաքսաւորն արդարացոյց. եւ զպոռնիկն սրբեաց. եւ զաւագակն յիշեաց յարքայութիւնն. եւ զուրացողն ուրացաւ: Եւ թէ ոք ասիցէ՝ եւ Պետրոս ուրացաւ եւ գտաւ թողութիւն: Ասեմք այո. գտաւ

թողութիւն. այլ բազում լալով եւ դառն արտասուօք յարիւն փոխեալ. եւ այս վասն յուսոյ զղջացեալ: Այլ որք ուրանան եւ անզեղջ մնան, ոչ գտանեն թողութիւն. ըստ այնմ, (ամենայն որ խօսի բան զորդւոյ մարդոյ թողցի նմա:) Այն է՝ որ ուրացողն դառնայ եւ խոստովանի՝ թողցի նմա: (Բայց որ զհոգին սուրբ հայիոյէ, մի թողցի նմա. մի աստ, եւ մի ի հանդերձեալն:) Այնէ՝ որ ուրանայ եւ հայիոյէ զհաւատն, եւ զեկեղեցի, եւ զայլն. եւ յուսահատի եւ անզեղջ մնայ. ոչ աստ առնու զթողութիւն մեղաց, ոչ ի հանդերձեալն զթողութիւն պատժոց: Չի որ ինչ մեղք որ աստ ոչ թողանի քահանայիւն, եւ անդ ոչ թողու Աստուած: Եւ դարձեալ՝ տես զլեզուի մեղսն. զի ուրացողն անպարհիշտ եւ անաստուած կոչի. որպէս կռապաշտքն. Եւոր զործով մեղանչէ՝ մեղաւոր եւ յանցաւոր Աստուծոյ: Եւ դարձեալ՝ յորժամ լեզուաւ խոստովանիմք եւ դաւանեմք զԱստուած, արդարանամք յամենայն մեղաց. որպէս ի մկրտութեանն հաւատացաք եւ արդարացաք. ըստ այնմ, (հաւատաց արբահամ յԱստուած, եւ համարեցաւ նմա յարդարութիւն:) Ապա ուրեմն որ ոք լեզուաւ ուրանայ զԱստուած եւ զհաւատն իւր, ամենայն մեղաց եւ պատժոց պարտական լինի: Եւ գիտելի է՝ որ ամենայն սուտ յերեք բաժանի: Նախ ի վտանգաւորն՝ որ վնասէ զմարդ. որպէս սուտ վկայելն՝ չարախօսելն: Երկրորդ՝ ի կատակն. որ հեշտացուցանէ եւ ծաղրածէ: Երրորդ՝ յանվտանկն՝ որ օգտակար լինի ուրեք. որպէս յորժամ մոլեգնտոն զսուրն խնդրէ, ստեմք թէ ոչ ունիմք: Եւ կամ անարժան ինչ հարցանեն, ասեմք թէ ոչ գիտեմք: Այսպիսի սուտս՝ օգտակար է եւ բարի: Այլ առաջին սուտն՝ մեղք է մեծ եւ մահու չափ: Եւ երկրորդն՝ ներելի մեղք, թէ երբեմն լինի. կամ ի մեջ աշխարհականաց: Ապա թէ միշտ լինի եւ յեկեղեցիս, եւ նա մեղք է մահու չափ: Չի ծաղրածու կրօնավոր՝ դեւ է գերգեսացի ասէ հայրն սուրբ Նեղոս: (Եւ վայ ձեզ որ ծիծաղիքդ ասէ Տէրն) եւ կատակերգակն պատճառ լինի. եւ այն է դատարկաբանութիւնն որպէս Տէրն. (ընդ ամենայն դատարկ բանի՝ համարս տալոց էք.) վասն այն ոչ է պարտ ամենեւին սուտ խօսիլ որպէս հրամայէ Աստուած: (Մի սուտ վկայեր:) Այլեւ այս պատկերանիս մասունք են. ոչ առասպելախօսիլ. ոչ զրաբանել: Եւ թեպէտ սուտն եւ զուրն ի միոյ սեռի են, այլ զանգանին: Չի սուտն է ի բաց բառնալն զոր ունի. այսինքն զբարիս. եւ զուրն՝ դնել զոր ոչ ունի. այսինքն զչարիս: Չույն ստոր ասելն է չարի. եւ սուտն բաց ասելն բարւոյ: Չոր ոչ է պարտ սուտ խօսիլ, եւ ոչ զուր: Ոչ հերձուած խօսիլ. ոչ քսմոսել. ոչ դաւել. ոչ աղաղակել. ոչ մատնել. ոչ անարգել. ոչ հայիոյել. ոչ անիծել. ոչ յիշոց տալ. եւ որք սոցին նման են: Չի որդևալից լինի բերան յիշոցնատուողաց. եւ բարկացուցանեն զԱստուած ի վերոյ աշխարհի. զի յիշոցն ամենայն մեղաց յիշումն առնէ առաջի Աստուծոյ: Չի յերեք իրաց առաւել բարկանայ Աստուած ի վերոյ աշխարհի: Մին յանարժան քահանայից պատարագաց. եւ մին ի սուտ երդմանց. եւ մին ի պիղծ յիշոցնատուաց: Չի այսպիսիքս ոչ միայն ինքեանք, այլեւ լսողքն դատապարտին: Եւ վասն այսոց մեղաց՝ երկինք եւ երկիր չորանան. եւ ծառք անպտուղ լինին. եւ սերմանիք կորնչին. եւ ծնունդք ապականին. սատակումն անասնոց. եւ մահտարածամ ի վերոյ երկրի շարժի: Վասն որոյ զայսպիսիսս ամենայն քրիստոնէից արգելուլ պարտ է. եւ խափանել զանարժան քահանայն ի պատարագ է. եւ զսուտ երդմանակերն. եւ զպիղծ յիշոցնատուն: Եւ ի սոցանէ՝ առաւել չար յիշոցնատուն է. զի դեմ յանդիման զԱստուած հայիոյէ: Չի թէ զհաւատ

անարգէ. հաւատն Աստուած է. կամ զիսաչ, կամ զեկեղեցի, կամ զքահանայ: Խաչն Քրիստոս է. եւ եկեղեցին տաճար Աստուծոյ եւ աթոռ. եւ քահանայն հրեշտակ երկրաւոր: Եւ թէ գերեսս կամ զբերան, երես քրիստոնէին Քրիստոս է. (հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս է ասէ մարգարէն.) Եւ բերանն գերեզման է Քրիստոսի. այլեւ գերեզման՝ եւ ոսկերք քրիստոնէին՝ նշխարք են օծեալ եւ կնքեալ սուրբ մեռնաւն. եւ գերեզմանն խաչիւ եւ աւետարանաւ է կնքեալ. զնոսա անարգէ: Վասն որոյ ծանրագոյն է եւ անթողլի քան զամենայն մեղս: Եւ թէ ոչ դառնայ եւ զղշայ յիշոցնատուն, գրեալ է ի կանօնս հարցն թէ՛ ի մահն ոչ հաղորդեն զնա. եւ ոչ ի գերեզման քրիստոնէից թաղեն. այլ առանց խաչի եւ քահանայի աշխարհականք քարշեն զնա եւ ի հող թաղեն արտաքոյ գերեզմանացն: Եւ յիրաւի՝ զի ի կենդանութեանն սոցա ամենեցուն անարգիչ էր. ի մահն զրկեսցի ի սոցանէ եւ ի շնոր հաց սոցա: Յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս յայսպիսի չար հայիոյութեանց. եւ ճշմարիտ իմացմամբ եւ ճշմարիտ խօսիւք եւ ճշմարիտ գործիւք, արժանի լինիլ ճշմարիտ եւ անսուտ խոստմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որ է օրհնեալ յաւիտե անս ամէն: Տասներորդ բան օրինաց որ ասէ: (Մի ցանկար տան ընկերի քոյ. եւ մի կնոջ նորա. ոչ ծառայից նորա. ոչ աղախնոյ. ոչ եգին. ոչ իշոյ. եւ ոչ ամենայնի որ ինչ նորա իցէ:) Ի վախճան տասն բանեան օրինացն՝ ի ցանկութեանց արգելու. եւ ի վերոյ բազմաց տանի զիրաժարումն ասելով: (Մի ցանկար կնոջ. եւ մի տան նորա եւ այլն:) Նախգի՝ ամենայն ցանկութիւն յերկուս գլխաւորի. ի ցանկութիւն մարմնոյ, եւ ի ցանկութիւն աչաց: Ցանկութիւն մարմնոյ է զոր արտաքուստ ի մարմինս մեր կրեմք: Եւ ցանկութիւն աչաց՝ վասն օտարաց իրաց եւ ընչից. քանզի յերկուսս այս առաւել քարիսի ապականացու բնութիւնս մեր: Մին ի ներքին կիրս ի հեշտութիւն մարմնոյ. եւ միւսն յարտաքինս ի հեշտութիւն աչաց: Եւ երկուցս յայսցանէ արգելու: (Մի ցանկար կնոջ ընկերի, եւ մի ստացուածոց նորա:) Երկրորդ՝ ի վերոյ բազմաց տանի. զի ամենայն մեղք ի ցանկութենէ յառաջ գայ. զի նախ ցանկան եւ ապա պոռնկին. նախ ցանկան եւ ապա գողանան. ապա սպանանեն. ապա արբեան. ապա բարկանան. ապա հայիոյեն, եւ այլն ամենայն: Երրորդ՝ զի չար կամքն եւ ի չար իմացումն մեր՝ քարշէ զմեզ յամենայն մեղս. զի կամքն իշխան է որպէս բռնաւոր. եւ իմացումն տեսող եւ քննող որպէս դատաւոր. ասէ չար կամօք մի ցանկար կնոջն. եկ չար իմացմամբ մի ցանկար ըստացուածոցն եւ ընչից նորա: Չորրորդ՝ ի վերոյ բազմաց տանի. զի բազումք ի մարդկանէ կորնչին ցանկութեամբ. եւ սակաւք գերծանին: Չի ոմանք ցանկան փառաց. եւ այլք իշխանութեանց, եւ այլք ըստացուածոց. եւ այլք կանաց օտարաց. եւ այլք այլ իրաց ցանկան. եւ սակաւք են ի բազմաց թէ կարեն գերծանիլ ի նմանէ. զի ախտ ցանկութեանէ որպէս զգանազան ծողակս թռչնոց. թէ ի միոյն գերծանի, ի միւսն ըմբռնի: Վասն այն խրատէ ամենեւին (մի ցանկար. ոչ կնոջն, եւ ոչ այլոցն:) Հինգերորդ՝ զի ցանկութիւնն մասն է անբան ոգւոյն՝ զի իմաստունք ասեն թէ, հոգին եռամասնեայ է՞ բան. ցասումն. եւ ցանկութիւն. բանն հրեշտակային է ի մեզ. ցասումն գազանային. եւ ցանկութիւնն անասնային: Եւ բանն է առաջին. եւ ցասումն միջին. եւ ցանկութիւնն վերջին մասն: Այսպէս եւ իմասունս մարմնոյս՝ բանն եւ իմաստութիւն գործ է ի խելս գլխոյն. եւ սրտմտութիւնն ի սիրտն. եւ ցանկութիւնն յերկամունսն: Եւ այսպէս ցանկութիւնն ի ներքոյ ի վայր քարշէ զհոգին՝ որ ոչ ունի արիութիւն.

եւ ոչ գերկիւղն Աստուծոյ. եւ խռովէ զխաղացեալ ոգին. եւ ձգէ ի մեղս. վասն այն զցանկութիւնն արգելու: (Մի ցանկար ասելով:) Վեցերորդ՝ երեքէ տեսակ ոգւոյ. այսինքն բանական. զգայական. եւ տնկական՝ Բանական է՝ որով իմանամք եւ խօսիմք: Չգայական է՝ որով տեսանեմք եւ լսեմք. հոտոտիմք. ճաշակեմք. եւ շօշափեմք: Իսկ տնկականն՝ որով սնանիմք. աճիմք. եւ ծնանիմք զնմանն: Եւ այս ցանկութիւնս ի մեզ՝ տնկանանն է. որ հանապազ ցանկայ որպէս գտունկ սնանիլ աճիլ եւ ծնանիլ: Չի բանականն եւ զգայականն՝ երբեմն դադարին ի գիշերի յորժամ ննջեմք: Իսկ տնկանանն որ է ցանկութիւնն ի մեզ՝ երբեք ոչ դադարի. այլ ի ցերեկ եւ ի գիշեր անխափան գործէ, եւ հանապազ ի մեղս գարշէ. վասն այն զսա առաւել արգելու: Եօթներորդ՝ զցանկութիւնն նման են ասացեալ օձի. զի որպէս օձն հեշտ սողայ ի վերոյ որովայնին. նոյնպէս եւ ցանկութիւնն հեշտութեամբ քարշէ զմարդն ի գործն: Եւ դարձեալ՝ որպէս օձն հինգ ման առնու ի գնալն. նոյնպէս եւ հինգ զգայութեամբն շարժի մարդն ի հեշտութիւն: Չի աչօքն ի գոյն՝ եւ ականջօքն ի ձայնն հեշտանայ. նոյնպէս եւ հոտոտելովն եւ ճաշակելովն հեշտանայ մարդ: Եւ դարձեալ գլուխ օձին թոյլ է՝ եւ անձն պինտ. եւ յոր տեղի գլուխն մտանէ, զանձն ի ներս քարշէ. եւ դժարաւ ի դուրս բերի: Նոյնպէս եւ ցանկութիւնն թուլութեամբ ի ներս մտեալ, եւ զգործն քարշ ի ներս. եւ դժուարաւ կտրի մարդն ի գործոյն: Վասն այն զգլուխ օձին պարտ է ջախջախել. որպէս ասէ Աստուած. (նա սպասեսցէ քում գլխոյ:) Նոյնպէս զցանկութիւնն որ գլուխ է եւ սկիզբն մեղաց՝ պարտ է խորտակել ի մեզ. ապա թէ ոչ՝ ի գործոյն ոչ կարեմք զերծանիլ: Եւ այսպէս ասեն թէ, օձին գլուխն ցանկութիւն է ի մեզ. եւ տուտն սրտմտութիւնն. եւ մէջն գործ մեղացն: Չի նախ ցանկամք՝ եւ ապա գործեմք. եւ յետոյ տրտմիմք. թէ ի շնութիւնն եւ ի պոռնկութիւնն, թէ ի գողութիւնն եւ ի սպանութիւնն, եւ յամենայն գործ մեղաց ի վերջն տրտիմք: Եւ ապա դառն թոյլ մահաբեր օձին ազդէ ի մեզ. որպէս գրէ Մովսէս ի թիւսն. (զի ժողովուրդն յանապատին ցանկացաւ եւ տրտնջեաց. յայն ժամ բարկացաւ Աստուած եւ առաքեաց ի նոսա օձս սատակիչս. եւ հարուին զնոսա եւ սատակէին. ըստ այնմ, լարս առանց բժշկութեան արձակեցի ի վերայ նոցա. զգազանս անապատի եւ այլն:) Եւ վասն կրկին պատճառի օձիւ պատուհասեաց: Նախ՝ զի օձին կերակուր զհողն ետ Աստուած՝ եւ ոչ տրտնջէր. նոցա մանանայ ի երկնից ետ՝ եւ տրտնջէին զԱստուծոյ: Եւ դարձեալ՝ որպէս նոքա ցանկացան զցանկութիւնն. նմանապէս ախտին պատժեաց զնոսա. այսինքն օձին. որ զցաանկութիւնն նշանակէ օձն որպէս ասացաք. յայնժամ հրամայեաց Աստուած առնել օձ պղնձի. եւ կանգնել բարձր. եւ որ ոք հայեր ի յօձն՝ թէ հարեալ էր, օձն սատակիւր եւ մարդն ապրէր. եւ թէ ոչ էր հարեալ, առանց երկիւղի մնայր: Չայս խորհուրդ Տէր մեր Յիսուս Քրիստոս յինքն ձգեաց. (որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին.) նոյնպէս բարձրանալ պարտ է եւ որդւոյ մարդոյ: Յայտ է ի խաչն. եւ որպէս որք հայէին ի պղնձի օձն բժշկէին. նոյնպէս որ հաւատով հայի ի Քրիստոս՝ բժշկի ի մահաբեր թունից օձին որ է մեղքն: Եւ այլ եւս՝ զի անդ հակառակն տեսանի. պղնձի օձն զազգակից օձն սպանանէր. եւ թշնամիս իւր զմարդ կեցուցանէր: Իսկ Քրիստոս զազգակից իւր զմարդիկն կեցուցանէր. եւ զթշնամին սատանայ հալածէր եւ սատկէր: Եւ դարձեալ եւս. որպէս օձն անկենդան զօձն սպանանէր. եւ զհարեալսն կեցուցանէր.

Նոյնպէս Քրիստոս մեռեալ մամլով, զմեզս մեռուցաներ ի յինքն. եւ կենդանի Աստուածութեամբն զմարդիկ կենագործեր: Եւ զի այսպէս չար է ցանկութիւնն մեղաց. վասն այն արգելու ասելով: (Մի ցանկար կնոջն, եւ այլն:) Ութներորդ՝ այսպէս չար է ցանկութիւնն. զի ամենայն մեղք ի մերձակայն՝ եւ ունելով գործի. եւ ցանկութիւնն ոչ ունելով եւ ի հեռուն գործէ զմեզս. ըստ այնմ, (ցանկացան զցանկութիւն անապատի:) Եւ թէպէտ մարդն բազում գանձ ունի եւ մեծութիւն՝ ոչ է ազահ որպէս զԱբրահամ եւ զԴաւիթ: Եւ թէ մարդ մին դանկ չունի, եւ ցանկայ ընչից, ազահ է եւ ցանկացող: Եւ թէ մարդն ունի զպարկեշտ ամուսնութիւնն, ոչ է շնացող. եւ թէ ոք ոչ ունի կին, եւ ոչ բնաւ տեսանէ, այլ խորհի ի միտս իւր եւ ցանկայ, շնացող է ի սրտի: Նոյնպէս որ ի հարկաւոր կերակուրս եւ յըմպելիս չափաւորս եւ ի զգեստս շատանայ՝ ոչ է որկորըստող. այլ որ ոչ ունի եւ ոչ ըմպէ եւ ոչ զգենու՝ եւ միշտ ցանկայ եւ տրտնջէ եւ դժգոհէ, այնպիսին, որկորեայ է պճնող. եւ այլ նմանապէս: Որպէս այնորիկ որք ցանկացան ժողովուրդքն մտոյ ի յանապատին եւ տրտնջեցին՝ վասն որոյ ետ Նոցա Աստուած լորամարգ եւ կերին յագ. եւ ապիտեցին ամենայնքն ի լորամարգէն: Վասն որոյ բարկացաւ Աստուած եւ սատակեաց զբազումս. որպէս ասէ Դաւիթ. (մինչդեռ կերակուրք ի բերանս իւրեանց էին, բարկութիւն Աստուծոյ ել ի վերայ Նոցա. եւ սպան բազումս. եւ զընտիրս յիսրաէլէ սատակեաց.) եւ կոչեցաւ տեղին գերեզման ցանկութեան: Որ նշանակէ զմարմինս ցանկացողաց. զի այն է գերեզման ցանկութեան, որ աչօքն ցանկայ, եւ լսելօքն, եւ խորհրդովն. եւ է ինքն գերեզման մեռելութեան եւ մեղաց: Դարձեալ՝ գերեզման ցանկութեան դժողքն է. զի ի նա ժողովին ամենայն ցանկութիւնք մեղաց եւ մեղաւորք. եւ այնպիսի ցանկացող մարմինն դժողք կոչի եւ տուն մեղաց: Եւ թէպէտ ամենայն զգայութեամբ ցանկայ մարդ՝ այլ առաւել ցանկութեան գործի է տեսութիւն աչացն. որ ի հեռաստանէ խոցէ որպէս զնետ. զի այլ զէնքն ի մրձն սպանանեն. իսկ նետն ի հեռու. նոյնպէս եւ աչքն ի հեռու տեսանէ եւ ցանկայ: Եւ զայս ասեն պատճառ. եթէ ի ցանկութեան երակացն որք ընդ գլխովն պատին՝ առաւել սփռեալ է յաչսն եւ ի դէմսն. վասն որոյ ընդ տեսութեանն, ցանկայ: Եւ այլ ասեն թէ՝ չորս գոյնքն գլխաւորք՝ ի չորից տարերացն ժողովին ի դէմսն. սեաւ եւ սպիտակ. կարմիր եւ դեղին. վասն որոյ առաւել եւ միշտ փաղչելի է. զի արգելցի ցանկութիւնն. որպէս ասացաւ ի վերոյ ընդդէմ շնացողացն: Իններորդ՝ ցանկութիւն ջերմ է եւ հուր կոչի. եթէ զնիթ հրոյն ոչ արգելումք, ոչ դադարի. եւ ի ցանկութիւն ջերմէ. յաղագս այնորիկ վաւաշոտ ցանկացողն հանապազ հալի եւ մաշի. զի զճարպն եւ զպարարտութիւնն հալէ ցանկութիւնն. որպէս ասէ Յակօբս. (խնդրէք եւ ոչ առնոյք. վասն զի չարաչար ինդրէք. զի անդէն ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք:) Եւ զնոյն ասէ սեր աշխարհիս: (Շնացողք՝ ո՞չ գիտէք, զի սեր աշխարհիս թշնամութիւն է առ Աստուած:) Եւ այսպէս ցանկութիւնս մարմնոյ՝ թշնամութիւն է Աստուծոյ. եւ շնագող կոչի ցանկացողն. եւ հալի եւ մաշի մարմնով. վասն այն ասէ: (Մի ցանկար կնոջ եւ այլն:) Իսկ տասներորդ՝ որպէս հրոյ բնութիւնն լուսաւոր է եւ զշարժումն զառ ի վեր ունի. նոյնպէս ցանկութիւնն մեր յորժամ ողջ է եւ լուսաւոր ընդ բնութեանն, եւ ջերմ է ի սերն Աստուծոյ, յայնժամ ի վեր առ Աստուած ունի զշարժումն. եւ այս կոչի սեր: Եւ այսու զանազանին սերն եւ ցանկութիւնն. զի այն որ սերն է. ջերմ է եւ լուսաւոր. եւ ի վեր ունի զընթացս. այս կոչի սեր առ

Աստուած եւ առ սուրբս: Իսկ ցանկութիւն այն է՝ որ ոչ ունի զլոյսն. այլ շեղմ է եւ ի վայր շարժէ. այս կոչի ցանկութիւն. որ զբորբոք շերմութեան ունի, յոր եւ մարմինս հակէ: Որպէս այն հուրն որ ի սողօմ տեղաց՝ միայն ունէր զայրելն. եւ ընդդէմ բնութեան էջ ի յերկիր. զի նոքա ընդդէմ բնութեան գործեցին արտաքոյ սովորութեանն. վասն որոյ արտաքոյ սովորական հրոյ այրմամբ այրեցան: Նոյնպէս ամենայն ոք որ զսէրն Աստուծոյ ի ցանկութիւն փոխէ, այսինքն, զհոգեւորն ի մարմնաւորն, եւ զյաւիտենիցն ի ժամանակեայն, եւ զանանցն ի յանցաւորն, նոյնպէս անանց հրով այրելոց է ի դատաստանին. յոր ժամ ասէ մեղաւորաց. (երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից:): Չի որպէս մեք զսէրն Աստուծոյ ի մեր ցանկութենէս բաժանեցաք. նոյնպէս ձայնն Աստուծոյ բաժանէ զբոց ի հրոյ. այսինքն, զլոյսն յայրեցողութենէն. եւ զլոյսն կազմէ պսակ արդարոցն. եւ զհուրն ժողովէ յատակս դժոխոց. եւ անդ այրէ զնոսա. (որ հուրն ոչ շիջանի եւ որդն ոչ մեռանի:): Ուր լալ աչացն է, եւ կրճատել ատամանցն. խաւարն արտաքոյ այցելութեան. եւ տանջանքն յաւիտենական. տրտմութիւն առանց ուրախութեան. արտասուք ներքին. ամենայն չարեաց առաւելութիւն. եւ բարեաց պակասութիւն. եւ ի վերոյ այսր մերժումն յերեսացն Աստուծոյ. եւ տեսութիւն դիւաց. որ մեծ չար է քան զամենայն տանջանս: Յորոց փրկեսցէ Զրիստոս առ հասարակ զամենայն հաւատացեալս անուան Իւրոյ՝՝ զճնունդս Աւագանին սրբոյ՝՝ արժանի արացէ մասին ժառանգութեան սրբոցն ի լոյս ամեն:

Նորին դարձեալ վասն օրինաց տասն բանին առ հասարակ: (Գլուխ Դ)

Որպէս ստեղծանէ Աստուած արարչութեամբ.՝ բարերարէ ինամելով. եւ կարգաւորէ օրինօք. զի ստեղծանէ յոչնչէ. եւ ինամէ զարարեալն պահելով. եւ կարգաւորէ բարեպէս գոլով: Եւ այլ եւս՝ զի ունի մարդն բնութիւն եւ շնորհս եւ փառս: Ստեղծանէ զբնութիւնն. եւ ինամէ վասն շնորհացն. եւ օրէնս դնէ վասն փառացն: Չի օրէնքն ուղղելով զմարդն՝ ածէ իշնորհսն. եւ կատարէ ի փառս: Յաղագս այնորիկ՝ ի ստեղծանելն զԱդամ օրէնս ետ բնական ի պտղոյն գիտութեան ոչ ուտել: Եւ որդւոյն սեթայ չխառնիլ յազգ Կայենայ: Եւ Նոյի ոչ ուտիլ զհեղձուցեալն: Եւ Աբրահամու ուխտ թլփատութեան. եւ այլոց նախահարցն: Իսկ ի ձեռն Մովսէսի՝ գրով աւանդեաց զօրէնս տասն բանեան՝ եւ զայլ մասնաւորս: Նախզի՝ բազումք էին, եւ մի մօռացուք: Երկրորդ զի՝ սովոր էին թագաւորք ընդ հեռաւորս գրովք եւ միջնորդօք խօսիլ: Նոյնպէս յորժամ հեռացաք մեղօքն յԱստուծոյ, առնու միջնորդ զմեծն Մովսէս. եւ գրով աւանդէ զօրէնս: Նախզի՝ մլ ամենեւիմբ հեռացուք յԱստուծոյ եւ օտարացուք: Երկրորդ՝ զի մի պատճառեցուք ոչ գիտել զօրէնս: Երրորդ՝ զի փութացուք յօրինացն գնալ ի կամս Աստուծոյ եւ ի ճանապարհս ուղղութեան: Չորրորդ՝ զի ցուցցէ թէ՛ անձն իշխան է մարդն ի պահելն, եւ յոչ պահելն: Զինգերորդ՝ զի ցուցէ թէ, մեծ է եւ արարիչ ի դնելն զպատուիրանս: Վեցերորդ՝ ցուցանի մարդոյն հնազանդութիւնն ի պահելն. եւ յոչ պահելն, պատուհաս յարարչէն: Վասն այս պատճառի եւ առաւել քան զայս՝ աւանդէ մեզ պատուիրանս որպէս հայր որդւոյ: Եւ օրէնս որպէս Տէր ծառայից: Եւ հրաման որպէս արարիչ արարածոց. զի հայր է մեր եւ ծնող եւ արարիչ եւ Տէր: Վասն որոյ ինամէ զմեզ եւ դնէ օրէնս՝ որ կարգաւորէ զմեզ եւ ուղղէ ի ճանապարհս

բարեգործութեան: Եւ է առաջին բանն որ ասէ: (Ես եմ Տէր Աստուած քո:) Առաջինն՝ ուսուցանէ մեզ զհաւատն ի Սուրբ Երրորդութիւնն: Եսն՝ նշանակէ զհայր. եւ Տէր եւ Աստուած՝ զորդի եւ հոգի: Որպէս յայլ ուր ասէ: (Լուր Իսրաէլ՝ Տէր Աստուած քո Տէր մի է.) այսինքն լուր Աստուածատես ազգ քրիստոնէից. որ կամիս տեսանել հաւատով զԱստուած, հաւատա զԱստուած երեք անձինք եւ մի բնութիւն. որ է հայր եւ որդի եւ հոգին Սուրբ: (Եւ մի լիցին քեզ այլ Աստուածք բաց յինէն:) Որդին որ ի Զօրէն է, ոչ է այլ Աստուած: (Չի ելի ի Զօրէ եւ եկի յաշխարհ ասէ:) Եւ հոգին Սուրբ ի Զօրէ ելանէ եւ լնու զարարածս: Մի ոք իշխեսցէ օտարացուցանել որ ի նմանէն են. զի երեք անձէնք են եւ մի բնութիւն. եւ մի Աստուածութիւն. եւ մի փառք՝ եւ այլ ամենայն: Այլ օտար Աստուած կուռքն են. որք սուտ անուամբ միայն կոչին. եւ Էութեամբ եւ բնութեամբ ոչ. եւ գործով հեռի: Եւ սուտ մարգարէքն՝ որք զինքեանս Աստուած տան պաշտել եւ երկիրպագանել: Երկրորդն՝ (մի արասցես կուռս ձեռագործս. որ ինչ յերկինս ի վեր, եւ երկիր ի խոնարհ:) Առաջին՝ ի յաստուծապաշտութիւն ածէ: Եւ երկրորդ՝ ի կռոցն հեռացուցանէ: Այլեւ ձեռագործ կուռքն այսէ՝ որք թողումք զպաշտօնն Աստուծոյ, եւ ծառայեմք ընչիցն. զիւ զոր ինչ սիրէ ոք առաւել քան զԱստուած՝ այն է նմա Աստուած. եթէ զինքն, եւ թէ զկին. եւ թէ զմարմին, եւ զայլն. ընդ այնմ, (լալով ասեն զնոսա՝ որոց Աստուած որովայնք իւրեանց են. եւ փառք ամօթն:) Նոքա թշնամի են խաչին Զրիստոսի. զի պարտ էր խաչ եւ չարչարանս յինքեանս բերել. իսկ նոքա հեշտութիւն բերեն հակառակ Զրիստոսի: Եւ զի Զրիստոս խաչին զաշխարհս յաստուծապաշտութիւն երեր. նոքա թողուն՝ եւ ընչիցն տան զպաշտօնն: Այն է՝ զի պարտ է յայգ եւ յերեկոյն թողուլ զգործս եւ գնալ յաղօթս եւ ի պաշտօնն Աստուծոյ: Նոքա թողուն զաղօթսն, եւ գնան ի գործ մարմնոյ. ի վարս, ի վաճառ, ի վաստակ, եւ յայլն: Վասն այն աղքատութիւն տայ Աստուած՝ զտի մի զբաղեսցին. յայնժամ առաւել զաղքատութիւնն պատճառեն եւ ծուլանան յԱստուած պաշտութենէ: Երրորդ բան: (Մի կոչեսցես զանունն Աստուծոյ ի վերոյ սնոտեաց:) Այսինքն, սուտ երդումն մի ուտեր: Այլ երդմնազանց մի լինիր եւ ստեր զուխտն եւ զերդումն. զի սուտ երդումն ծան է. զի թէպէտ ի ժամն ի կառափն չտայ մարդոյն. այլ ներէ ողորմութեամբ զի ապաշխարեսցէ. եւ թէ ոչ ապաշխարէ, մեծ դատապարտէ զնա Աստուած: Վասն այն Տէրն հրամայէ յաւետարանին. (ամենեւին միերդնուլ:) Թէ հակառակն ասէ թէ, ճշմարտութեան երդումն չէ վնաս. որպէս թէ ասելն. երդումի որ Զրիստոս Աստուած է ճշմարիտ. եւ կամ թէ՝ երդումի թէ այս հացս հաց է: Ասեմք՝ թէպէտ երդուիլն թէ Զրիստոս Աստուած է ճշմարիտ ոչ է վնաս. այլ ճշմարտութիւնն երդումն ոչ խնդրէ: Նախզի՝ ճշմարիտն անկարօտ է երդմամբ ճշմարտելոյ. զի ինքն ըստ ինքեան ճշմարիտ է եւ յայտնի: Երկրորդ՝ զի ոչ գիտեմք զստոյգ ճշմարիտն, թէ ստոյգ է, թէ կարծօք. վասն այն ոչ է պարտ երդնուլ. ոչ ի ստոյգ ճշմարիտն, եւ ոչ ի կարծեօքն: Իսկ առ հասարակ ոչ է պարտ երդնուլ ոչ սուտ, եւ ոչ ճշմարիտ: Նախզի՝ Տէրն հրամայէ (ամենեւին մի երդնուլ:) Եւ ամենեւինն՝ նշանակէ ոչ ի սուտն, եւ ոչ ի ճշմարիտն երդնուլ: Երկրորդ՝ զի ի սովորութենէն ծնակի երդմնահարութիւնն. արդ՝ եթէ ճշմարիտ երդնուլ՝ լինի երդմնակեր. իսկ թէ սուտ լինի, երդմնահար եւ երդմնազանց: Երրորդ՝ զի յորժամ սովորի, ոչ զանազանի սուտն եւ ճշմարիտն. այլ յամենայն իրաց վերայ երդուի

անորոշակի. Եւ լինի սուտն իբրեւ զճճմարիտ, եւ ճճմարիտն իբրեւ զսուտ. վասն այն որոշեաց Տէրն. (եղիցի բանն ձեր այոն այո. եւ ոչն ոչ:) Չորրորդ՝ զի լինի ի մն մեծ վնաս. զի թէ սուկ սուտն միայն դատապարտի՝ զի ստուրթեան եւ սատանայի լինի որդի. որ զանունն Աստուծոյ կոչէ ի վերայ ստուրթեանն՝ եւ երդմամբ եւ անուամբ Աստուծոյ հաստատէ զսուտն՝ քանի՞ առաւել մեղք է անթողլի. վասն Տէրն հրամայեաց (ամենեւին մի երդնուլ:) Այլեւ սուտ կոչել զանունն Աստուծոյ այն է՝ որ սովոր են մարդիկ ի վաճառս հանապազ երդիլ. եւ ի վերայ սուտ իրաց զահեղ անունն Աստուծոյ շարժել ի բարկութիւն իւրեանց. զի գիտէ որ այն իրն ոչ արժէ զայն գինն, նա զանունն Աստուծոյ ի վերոյ անարժանին դուստր դնէ. եւ ապա խաբէ. ոչ զընկերն, այլ զԱստուած. եւ ոչ զրկէ զնա, այլ զիւր հոգին: Եւ զի վաճառն ի ժամանակիս առանց սուտ երդման ոչ լինի. վասն այն աստուծապշտ մարդն ի վաճառի շահէն պարտի հառանալ. զի հալալ հացն պղծի զիկանօքն եւ սուտ երդմամբն. մանաւանդ քահանայից պարտ է յայսպիսի բանես հեռանալ եւ պատրաստիլ: Վասն այն ի կանօնսն է գրեալ. եթէ հանդիպի որ քահանայ վաճառ առնէ, խրատեն եւ ի կարգէն լուծանեն եւ արքորեն: Դարձեալ՝ ստուրթեամբ կոչել զանունն Աստուծոյ այն է՝ որ վասն խստասրտութեան անիծանէ եւ նզովէ զմարդ. զի անիծանելն սատակել ասի. եւ նզովելն որոշել. եւ զայն անուամբն Աստուծոյ. որքան ծանրագոյն մեղք է. իբր թէ զԱստուած իւր բարկութեանն ընկեր առնէ՝ այլ եւ ծառայ եւ ասէ. երթ անիծեա զայս անուն մարդ. որ հիանալի է ներելն Աստուծոյ: Եւ տես զծանր մեղսն. զի անիծել չէ պարտ զթշնամին. այլ սա զսիրելին անիծանէ իբր հակառակ Քրիստոսի: Նա հրամայէ զանիծելին օրհնել. սա զօրհնելին անիծէ. եւ զայն անուամբն Աստուծոյ. որ անունն Աստուծոյ ոչ երբեք անիծանէ, այլ միշտ օրհնէ. զի աղբիւր է օրհնութեանն, եւ բարութեամբ լնու: Եւ սմա ասէ մարգարէն. (ոչ է Աստուած առաջի աչաց նոցա:) Եւ բաց յերկուց զայլ ոք չէ պարտ անիծանել: Կամ որ ի հաւատն հերձաւծ ունի. կամ որ ի չարն անշեղջ է: Յետ երկու եւ երեք անգամ խրատելոյ՝ ապա անիծանեն զայնպիսին: Եւ վասն ազահութեան կամ փառաց կամ մեղաց՝ ոչ է պարտ անիծանել: (Չի որպէս հաւ որ թռչի ի բունոյ՝ եւ դարձեալ ի բուն իւր դադարի. նոյնպէս եւ անէծք անզգամի ասէ Սողոմօն:) Չորրորդն՝ (յիշեա զօր շաբաթուն:) Որ է կիրակին. զվեց օր մարմնոյ գործեա. եւ զկիրակէն հոգւոյդ: Եւ ի մարմնական գործոց հանգիւր դու՝ եւ անասունն՝ եւ ծառայն՝ եւ աղախինն. զի եւ նոքա ստեղծուածք են Աստուծոյ: Եւ կիրակէն՝ է օր խոստովանելոյ զմեղս զոր ի շաբաթն գործեաց, եւ չէ մոռացեալ: Եւ դառնեալ՝ այլ խրատ եւ քարոզ լսէ յօրինացն՝ եւ ի միւս շաբաթն երկիւղին Աստուծոյ կենայ. զի մոռացկոտ է մարդն. եւ հանապազ պարտի ուսանիլ զբարին: Եւ դարձեալ՝ Քրիստոսի յարութիւնն ի կիրակէի եր. պարտ է եւ իւղաբերիցն մասնակից լինել: Այլեւ համօրէն յարութիւնն ի կիրակէի է. պարտ է յայնմ աւուր հոգալ վասն դատաւորին Աստուծոյ, եւ հատուցման գործոյ չարաց եւ բարեաց: Եւ թէ ի կիրակէն մարմնոյ գործ չէ պարտ առնել՝ քանի՞ առաւել ի մեղաց զատիլ: Մի երթալ ի թէատրոնն: Մի ի յերգս: Մի ի գինմպութիւն: Մի ի պոռնկութիւն: Մի ի բաշխս: Մի ի վաճառ: Մի ի ճանապարհ: Այլ միայն ի դուռն եկեղեցւոյն եւ առ Աստուած աղօթել: Հինգերորդ՝ (պատուեա զհայր եւ զմայր:) Չառաջին հինգ կնքէ ի յԱստուած սկսեալ, եւ ի ծնօղսն աւարտեալ: Չի եւ ծնօղքն Աստուածք կոչին. զի

Աստուած հասարակաց է արարիչ. եւ ծնողն զաւակին. Աստուած զհոգին ստեղծանէ. եւ ծնողն զմարմինն: Եւ նոյնպէս ինամէ եւ չարչարի զհետ զաւակացն զգիշեր եւ զցերեկ. զոր ոչ կարէ զաւակն վճարել. զի թէ զայլ ամենայն վճարէ, զայն ոչ կարէ որ ծնանի զծնողն: Վասն այնորիկ՝ վարձ խոստանայ մնացական. (զի բարի լիցի քեզ ասէ. եւ երկայնակեաց լիցիս.) որ մնացականն առաւել ախորժելի է յայս կենաց բարութիւնս՝ եւ երկար կեանքն: Եւ յայլ ուր ասէ. (որ անարգէ զծնող իւր, մահու մեռեցի:) Չի այսպէս գրեաց. եթէ զանառակ որդին որ արբշիռ է եւ անհնազանդ ծնողացն, տարեցն առ ծերսն. եւ դիցեն զձեռն ի վերայ գլխոյ զաւակին. եւ քարկոծեսցեն ամենայն ժողովուրդքն. եւ բարձցի չարն ի միջոյ. եւ այլքն երկիցեն: Եւ եթէ հարկանէ զծնողն եւ հայրագեղծ լինի, բարձցեն յանիծից փայտն ի խաչ. եւ ի նոյն օր դիցեն ի գերեզման. իբրեւթէ փայտն եւ երկիրն անիծեալ էր Ադամաւ որ ասաց. (Փուշ եւ տատասկ բուսցի քեզ. եւ անիծեալ երկիր ի գործս քո:) Վասն այն զանառակ որդին անիծանեն. եւ անիծից փայտն կախեն. եւ ի նոյն օրն ի հող դնեն. եւ ապա քաւեսցի երկիրն: Այսպէս ծանր է ծնողին պատիւն: Եւ զայս նշանակէ անառակ որդին. մեք էաք մահու արժանի. եւ փոխանակ մեր՝ (տարերքս հեծեն եւ երկնեն) վասն մեղաց մերոց. եւ երբեք զկամս Աստուծոյ Յօր ոչ կատարեցաք: Իսկ նա բազմագութ Աստուած առաքեաց զՄիածինն Որդի փոխանակ մեր. (եւ վասն մեր մեղք եւ անէծք կոչեցաւ. եւ ի փայտ խաչին բարձրացաւ. եւ ինոյն օրն եղաւ ի գերեզմանի. եւ երեքօրեայ յարեաւ. զփայտ խաչին եւ գերեզմանն արար մեզ աղբիւր օրհնութեան. որպէս ասէ Պօղոս: (Զրիստոս զնաց զմեզ յանիծից օրինացն եւ այլն. եւ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ:) Այլեւ ծնօղք են վարդապետք աշակերտաց. եւ առաջնորդք հետեւողաց. քահանայք ժողովրդոց. եւ իշխանք երկրի. որոց պարտիմք հնազանդ լինիլ իբրեւ փոխանորդի Աստուծոյ. եւ զիրամայեալն նոցա լսել եւ կատարիլ: Այս հինգ բան օրհնացն է: Աստ գիտելի է՝ զի տասն բան օրհնացս՝ հինգն յանձնառական է. եւ հինգն հրաժարական. զի հնգին զբարիս գործեմք. եւ հնգին ի չարէն յետս դառնամք. որպէս արգիլէ զմեզ եւ ասէ: Վեցերորդն՝ (Մի սպանաներ:) Չի մեծ է սպանութիւնն, եւ ծանր մեղք, եւ հակառակ աստուծոյ: Չի որ ստեղծանել ոչ կարէ, ոչ իշխէ սպանանել. ըստ այնմ որ ասէ. (ես սպանանեմ, եւ ես կեցուցանեմ:) Վասն այն հրամայեաց Նոյի թէ, (որ հեղու զարիւն մարդոյ՝ հեղցի արիւն նորա.) զի մարդոյ արիւնն է արեան գին, եւ ոչ այլ ինչ. զի հաւասար պատկեր են Աստուծոյ ամենայն մարդիկ: Եւ երեք ազգ է մարդոյ սպանանելն: Մինն՝ որ գիթուոր լինի եւ սպանանեն: Երկրորդ՝ որ անգիտութեամբ եւ յոչ կամայ սպանանեն յանկարծակի ի պատահմանէ: Երրորդ՝ որ կամաւ եւ գիտութեամբ եւ առանց մեղաց ինչ սպանանեն: Առաջին սպանումն՝ արդարութիւն է դատաստանի. զի որ յանցաւոր է, իւր գեթն զինքն սպանանէ եւ ոչ մեք. զհատուցումն մեղացն առնեն: Որպէս թագաւորք եւ իշխանք վասն այն են կացուցեալ՝ որ զգիթուորն հարցանեն. եւ օրհնացն Աստուծոյ վրեժխնդիր լինին: Իսկ երկրորդն պատուհանումն. որ ակամայ եւ տգիտութեամբ լինի, հրամայեաց ի յօրէնսն քառասուն եւ ութն քաղաք ապաստանի շինել. զի ակամայ մարդասպանն անկցի անդ, եւ գերծանիցի: Մինչ քննեսցեն դատաւորք. թէ կամաւ է սպանեալ, տան ի յարեան Տերն զի սպանցէ. եւ թէ ակամայ, դարձուցեն ի քաղաքն ապաստանի. եւ անդ կենայ, մինչ քահանայապետն

մեռանի. եւ ապա ելցի ազատ եւ երթիցէ ի տեղի իւր: Արդ՝ ակամայ սպանօղն՝ նշանակէ զմեղաւորն որ զղջանայ. եւ որ ակամայ լինի մեղքն ի զղջանալն եւ ի խոստովանիլն: Եւ քառասուն եւ ութն քաղաքն՝ ապաշխարութիւնն է քառասունից պահոց, յոր գերծանիմք անդ: Միանչ քահանայապետն մեծ Զրիստոս մեռանի, եւ ապա ազատամիտք ի մեղաց: Այս ակամայ արիւնն է: Իսկ երրորդ արիւնն՝ որ կամաւ լինի, ոչ կարէ գերծանիլ. եւ ոչ զգինն տալ. եւ ոչ կաշառ. եւ ոչ փաղիւջիլ: Չի թէ ի տաճարն մտանէին, եւ անտի հանէին եւ սպանանէին, զի այնպէս ծանրագին է կամաւ արիւն հեղուլն՝ որ թողութեան չկայ ճարակ, մինչ ինքն մեռանի. եւ ոչ հայրն ընդ որդւոյն. եւ ոչ որդի ընդ Յօրն. այլ (անձն որ մեղիցէ, նոյն եւ մեռցի:) Վասն այն հրամայէ. (Մի սպանաներ:) Այլեւ սպանումն ոչ միայն սրով լինի, այլեւ լեզուով: Յորժամ չարախօսեն, սպանանել տան. կամ զինչս խլեն, մեռանի: Չի թագաւորք եւ իշխանք՝ բանիւ սպանանեն զմարդն ասելով. տարէք սպանեցէք. եւ ահա նոքա մարդասպանք են: Նոյնպէս թէ սրտին զնկերն ասէ, մարդասպան է որպէս Կայեն. եւ եթէ բամբասէ զընկերն, եւ թէ չար գործոց պատճառ լինի ընկերին, մարդասպան է. զի հոգի նորա սպանաւ մեղօք: Եօթերորդ բանն որ ասէ. (մի շնար:) Եւ այս մեծ յանցանքն է՝ թողուլ զանկողինս հալալ եւ շնար, կամ պոռնկիլ. կամ ըստ օրինացն բնութեան, կամ արտաքոյ բնութեան: Չի ազգապղծութիւնն՝ շնութիւն է. եւ ընդ առնակինս գնալ. եւ ընդ յայտնի բոզս. եւ կամ որ զանձն նուիրեալ է Աստուծոյ. կամ զկուսանս բռնադատել: Չի այսպէս հրամայեաց օրէնքն. եթէ ընդ առնակին ոք շնայ, գերկուսն ի միասին քարկոծեն. որք պղծեցին զհալալ անկողինն: Նոյնպէս թէ խօսեցել կնոջ ի քաղաքի պոռնկի, գերկուսն քարկոծեն. զի յերկոսինն էր կամք շնութեան: Ապա թէ յանդի բռնադատէ զկոյսն, զայրն սպանցեն. այլ զկոյսն ոչ. զի բռնադատեաց զնա. եւ չկայր ոք օգնական նմա: Որպէս այն սպանանէ բռնութեամբ զմարդ, նա է սպանօղ. եւ սպանելոյն չկայ մեղք. նոյնպէս եւ շնացօղն էր մեղաւոր. եւ կուսին չկայր մեղք: Վասն չորս պատճառի առաւել չար է ընդ առնակինն շնալ, քան ընդ պոռնկի կանայս որ ի քաղաքի: Նախզի՝ պոռնկին միայն մին է պատիժ հուր գեհենին. իսկ սոցա երեք. մին այրն. (որ բուռն է նախանձ առն զկնոջէն. եւ ոչ հանդուրժէ դատաստանի:) Եւ միւս՝ դատաւորք քաղաքաց պատժեն. եւ ապահուր գեհենին: Երկրորդ՝ որ ընդ առնակին գնայ, քակէ ի նմանէ զկապ սիրոյն եւ զպսակն օրհնութեան. իսկ պոռնկի կանայք ոչ ունին զայս: Երրորդ՝ կին պոռնկին՝ կորուսնէ կկին հոգի. զիւրն եւ գործակցին. իսկ առնակինն կորոյս Գ հոգի. զիւրն եւ զգործունէին. եւ զառն եւս. զի քակեցաւ պսակն. եւ շնութիւն է նմա կինն այն: Չորրորդ՝ զի ոչ զիտեն զհարազատ զաւակն թէ որոյիցէ. պոռնկի՞ն, թէ հալալ մարդոյն. եւ ոչ ունի զսեփական ժառանգութիւն. եւ ոչ զհարազատ սեր եւ զգութ. այլ կնոջն պոռնկի ոչ լինի զաւակ: Այլեւ եօթն ազգ վնաս եւ պակասութիւն գայ յառաջ իշնութենէն: Նախզի՝ անցանէ զօրէնս Աստուծոյ որ ասէ. (մի շնար:) Եւ առաքեալն ասէ. (ի բաց լերուք ի պոռնկութենէ բնաւ:) Երկրորդ՝ զի յանցումն է աստուածադիր սահմանին. որ զմինն ետ յամուսնութիւն: Երրորդ՝ զրկումն է եւ ազահութիւն. որպէս ասէ. (մի զանցանել եւ զրկել զեղբայրն յիրիդ յայդմիկ:) Չորրորդ զի ասէ՝ (Տեր է վրէժխնդիր ի վերայ ամենայնի այդորիկ:) Հինգերորդ զի ասէ. (ոչ պոռնկեք՝ ոչ շնացօղք՝ եւ այլն զարքայութիւնն Աստուծոյ ժառանգեն:) Վեցերորդ զի ասէ. (այսուհետեւ որ

անարգէ՝ ոչ զմարդ անարգէ, այլ զԱստուած որեւ ետ զհոգին սուրբ:) Եօթներորդ զի ասէ. (մի մնացէ հոգի իմ ի դոսա վասն լինելոյ դոցա մարմին:) Եւ ոչ միայն այս է շնութիւն, այլեւ աչացն եւ սրտին. եւ ամենայն զգայարանացն շնութիւն գոյ. ասէ՝ մի շնար սրտիւդ. եւ մի աչօքդ յարատ հայիր. եւ մի ձեռօքդ. եւ մի այլ ինչ անդամօքդ: Ութներորդ բանն որ ասէ. (մի գողանար:) Եւ այս կենաց օգուտ եւ խրատ է. եւ պարտ է զգուշանալ մանկանաց. զի մի սովորեցին ի գողութիւն. եւ յետոյ ոչ կարեն համբերել. զի պոռնիկն եւ արբեցողն եւ մարդասպանն՝ կարեն կտրիլ ի մեղաց. եւ գողն ոչ կարէ: Եւ զանազան է գողն. այն որ ի տունն մտանէ գող է: Եւ աւագակն ի ճանապարհին գող է եւ հարամի: Այն որ ի վաճառն խաբէ զմարդ՝ գող է. վասն այն կուրբակ կոչեն. որ է գողի բակ նստեալ ի փողոցի: Այլեւ գողութիւն է կրկին չափն եւ կշիռն. որ մեծան առնուն՝ եւ փոքրովն տան. եւ ատելի է Աստուած ասէ Սողոմօն: գողութիւն է եւ գեղի զրկելն եւ յափշտակելն: Գողութիւն է զաւանդն ի տեարս չտալն: Գողութիւն է գտանելն եւ պահելն. զրկելն եւ յափշտակելն: Եւ հրամայեաց ի յօրէնսն զգողն գտանել՝ միոյն հինգ ի տեարսն տալ՝ վասն հինգ զգայարանացն որ մեղաւ: Իսկ թէ գողն զղջանայ՝ եւ խոստովանի, զգլուխն դարձուցանել. եւ ի հնգէն զմինն այլ աւելի տգանս տալ. եւ զմին խոյ յսուն դահեկանի՝ մատուցանել պատարագ. եւ ապա թողութիւն լինի: Նոյնպէս եւ մեզ ի նորս է՝ զգողունիսն ի յետս դարձուցանել. կամ ի տերն, կամ յացգական նորա. թէ չլինի, ի քահանայն տալ. զի միջնորդ է հաշտութեան մեռելոց եւ կենդանեաց. եւ թէ չլինի՝ յաղքատն տայ եւ ապա ազատի ի գողացեալ իրացն: Եւ թէ ոչ լսէ՝ այն է պատիժն՝ որ ետես Չաքարիայ մարգարէն զհրեշտակ Աստուած ելեալ ի տաճարէն. եւ գերանդին յուսն. քսեն կանգուն երկայն. եւ տասն լայն. եւ ասէ՝ ո՛ւր երթաս. եւ նա ասէ՝ երթամ ի տունս գողոց եւ աւագակաց. եւ ազգաջինջ առնեմ: Եւ գիտելի է՝ զի քաղաքական օրէնս՝ ամենայն յանցանաց պատիժ է կարդեալ. գողոց՝ մարդասպանից, եւ այլոցն: Այսպէս՝ զի զգողին նախ զինչսն յափշտակեն, եւ ի բանտ մատնեն եւ հարկանեն. եւ կամ զաչսն հանեն: Եւ յերկրորդ անգամ թէ այլ առնէ, զաջ ձեռն եւ ձախ ոտն կտրեն: Եւ թէ այլ առնէ, բոլորովին զգլուխն կտրեն, կամ ի փայտ հանեն: Նոյնպէս եւ ավագակին թէ զինչսն միայն է խլեալ, զինչս առնուն. եւ կամ զձեռն կտրեն. եւ յետոյ սպանանեն: Եւ այս է պատճառն: Նախզի՝ օրէնքն ներկէին զառաջինն եւ երկրորդն: Եւ յորժամ առաւելուն ի չարն, առաւելուն եւ զպատիժն. զի ասեն յառակս. ամենայն իրք բարակի եւ կտրի. եւ մեղքն հաստանայ եւ կտրի: Երկրորդ՝ զաչսն հանեն՝ զի նախ աչօքն տեսանէ գողն եւ ական հատանէ. եւ զձախ ոտն՝ զի ձախողակի ընթացաւ ի չարն. եւ զաջ ձեռն՝ որով ըմբռնեաց եւ գողացաւ. եւ արիւն վասն արեան. եւ զան ընդ գանի. եւ զինչսն դարձուցանեն: Իսկ յետոյ զգլուխն կտրեն. զի ոչ ձեռք եւ ոտք միայն ընթացան, այլեւ մտք տեսին եւ գողացան. վասն որոյ զգլուխն հատանեն: Իսկ ի փայտն հանեն՝ որ ամենայն մարդ տեսանէ եւ արժան ասէ: Իսկ ի փայտ բարձր: Նախզի՝ տգեղութիւն չար գործոցն՝ չար պատշօքն գեղեցկանայ: Երկրորդ՝ զի պատիժն է ընդդէմ գործոյն. որպէս գողն ծածուկ ի գգիշերի գողանայ. պատիժն ընդդէմ նմին յայտնի եւ բարձր տեղուջ: Երրորդ՝ զի մի լիցի մահ նոցա ընդ հասարակաց մարդկան ի վերոյ երկրի. այլ ի յօդս ընդ դիւաց լիցի մահ նոցա. որպէս Յուդային եղէ՝ որ կախեցաւ եւ խեղդեցաւ. զի մի լիցի բնակութիւն նորա

ընդ հրեշտակս ի յերկինս. եւ մի յերկրի ընդ մարդկան. այլ ի յօդս կախեալ ընդ դիւաց բնակութեան: Նոյնպէս եւ ըղէղն նորա թափեցաւ ի փոր նորա եւ յորովայնն. որ գմատնութիւնն խորհեցաւ Քրիստոսի. այլ բերան նորա ոչ ապականեցաւ. զի համբուրեաց զՔրիստոս. այլ սիրտն եւ փորն արտաքս թափեցաւ. որ խորհեցաւ եւ հաւանեցաւ մատնել զՔրիստոս: Նոյնպէս եւ պատիժ գողոցն նոյն է. վասն այն ի փայտէ կախեին ի վեր ի յօդս: Իններորդ բանն որ ասէ. (մի սուտ վկայեր:) Եւ այս մեծ չարեաց պարտական առնէ զմարդն. զոր չէ տեսեալ եւ չէ բռնեալ՝ սուտ վկայէ: Եւ այն է պատիժն՝ զոր հրամայէ յօրէնսն. թէ զսուտ վկայն ըմբռնեալ, զոր ինչ սուտ վկայեաց՝ նովին զնա պատժեսցեն: (Անձն ընդ անձին. ակն ընդ ական. եւ ատամն ընդ ատաման:) Եւ որպէս հրեայքն ի վերոյ Քրիստոսի սուտ վկայեցին ի մահ՝ ինքեանք զնոյն կրեցին պատիժ ի սուրն Տիտոսի եւ Վեսպեանոսի. եւ անդ ի հուրն յաւիտենից: Նոյնպէս սուտ ասելն՝ ամենայն մեղաց գլուխ է. զի նախ ի միտսն դնէ զսուտն ամենայն ոք եւ ապա գործէ զմեղս: Եւ սուտն սատանայ է. զի առաջին սուտն նա խոսեցաւ զԱստուծոյ. եւ ստախօսն որդին սատանայի լինի. վասն որոյ ասէ մարգարէն. (ատեցեր զայնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն. կորուսանես զամենայնսն ոյք խօսին զսուտ:) Վասն այն արգել Տէրն. (եղիցի ձեր այոն այո. եւ ոչն ոչ:) նոյնպէս եւ ամենայն չար որ ի լեզուէն յառաջ գայ. հայիոյութիւնք՝ յիշոցք՝ բամբասանք՝ հերձաւծ. եւ այլն ամենայն ստախօսութիւն է: Տասներորդ հրամայէ. (մի ցանկար:) Եւ ի վերայ բազմաց տանի: (Մի ցանկար կնոջ ընկերի. եւ մի ընչից. եւ այլն:) Չի ցաանկութիւնն սկիզբն է ամենայն մեղաց: Նախ ի միտսն խորի մարդ եւ ցանկայ. եւ ապա գործէ մարմնով: Որպէս սերմն նախ արմատ առնու յերկրի՝ եւ ապա բուսանի: Եւ սակաւ սմանք զերծանին ի սմանէ: Չի ոմն ցանկայ մեծութեան. եւ այլ ոմն փառաց. մինն իշխանութեան. եւ ազգի ազգի է. եւ աներեւոյթէ. եւ ոչ ոք տեսանէ: Վասն այն կնքեաց ի վերջին բան օրինացն թէ, (մի ցանկար:) Այլ գիտելի է՝ զի հրամայեաց զտասն բան օրինացս՝ գրել եւ ի ձեռնին պահել. որպէս զմատանի. եւ առաջի աջաց ունիլ. եւ միշտ ի լեզուի խօսիլ. ի նստիլ ի տան. ի գնալ ի ճանապարհի ի ննջել եւ ի յառնել: Եւ ի վերայ սեմոց տանց գրել. զի յել եւ ի մուտն՝ ընթերցցին. եւ թէ ոչ՝ զհինգն միայն. որ է (մի սպանաներ. մի գողանար, եւ այլն:) Այսպէս եւ մեզ պարտ է զօրէնս Աստուծոյ գրել. փոխանակ սեմոց եւ դրանց՝ ի միտս եւ ի զգայարանս մեր գրել. եւ մին մին ի միտ ածել: Յորժամ շարժէ զմեզ ցանկութիւնն՝ ասեմք մի ցանկար. եւ թէ գողութիւնն՝ ասեմք մի գողանար. մի սուտ խօսիլ. մի բարկանար, եւ այլն:) Չի ի տիւն խոկալ զօրէնս՝ անվախս պահէ զմեզ. եւ ի գիշերն՝ չգնայ ի շնութիւն կամ ի գողութիւն. ի յարթութեան՝ ի միտս եւ ի բերանն առնուլ. նաեւ ի գիշերն զնոյն տայ գործել ընդ երագս: Եւ այսպէս զամենայն որդւոյն ուսուցանել: Հայրն որդւոց. եւ մայրն դստերաց. եւ սիրելիք միմեանց: Վարդապետք աշակերտաց. եւ տերք ծառայից. զնոյնս խորհիլ եւ գնալ յօրէնս Աստուծոյ: (Չի օրէնք Տէրն անբիծք են եւ դարձուցանեն զհոգիս. վկայութիւն Տէրն հաւատարիմ է եւ իմաստուն առնէ զտղայս:) Այլեւ օրէնքն ճանապարհ է՝ որ տանի զմեզ առ Աստուած: Այլեւ (օրէնքն լոյս եւ լոյս տան հոգւոյ աջաց մերոց՝ ի խաւարի կենցաղոյս:) Այլեւ օրէնքն խրատ է եւ քանօն ուղղութեան. որպէս լարն չափողի. նոյնպէս օրէնքն օրինաւորաց. ոչ առաւելուլ. եւ ոչ նուազիլ: Եւ որպէս լծեալ՝ ոչ յաջ խոտորի եւ ոչ ի ձախ. նոյնպէս զուծ

օրինացն է ի վերոյ մեր. եւ թէ ծուլանամք, կամ խստապարանց լինիմք, գիտարգան խրատուն ի վերոյ ունիմք: Եւ ո՞րն է խարագանն ասիցէ ոք: Այն է՝ զի օրէնքս բարի պարգել են յԱստուծոյ առ մեզ իջեալ. այլ վկայ է բարեաց եւ չարեաց. եւ պատճառ է մահու եւ կենաց: Չի թէ պահեմք զօրէնս, կենաց լինի պատճառ եւ օրհնութեան եւ խաղաղութեան. եւ ամենայն բարեաց լիութեան. եւ թէ ոչ պահեմք զօրէնս Աստուծոյ, մահու լինի պատճառ որպէս Ադամայ. եւ խռովութեան. սովոյ. ծարաւոյ. գերութեան, եւ այլոցն: Եւ օրինացն Աստուծոյ ոչ միայն լսելն, այլեւ պահելն ի մտի. եւ գործով կատարելն: (Չի ոչ թէ լսելիք օրինացն են արդարացեալ, այլ առնելիքն:) Եւ Տէրն ասէ. (Եթէ գիտիցէք զայս՝ երանելն եւս էք թէ առնիցէք:) Եւ միշտ առնելի է զամենայն օրէնս Աստուծոյ. ոչ զմիսն առնել եւ զմիւսն ոչ. եւ զմիսն պահել եւ զմիւսն ոչ. կամ այնոր առնել եւ ի վաղիսն ոչ. այլ յամենայն ժամանակս առանց տաղականալոյ զամենայն առնել. որպէս հրամայեաց Տէրն. (գնացէք աշակերտեցէք զամենայն հեթանոսս. ուսուցէք պահել զամենայն զոր ինչ ասացի ձեզ:) Եւ Է՞ր վասն. (զի ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի:) Այսինքն, որքան պահեմք զօրէնս Աստուծոյ, այսքան նա ընդ մեզ է պահել զմեզ. եւ յորժամ յանցանեմք, հեռանայ ի մենջ եւ ոչ ինամէ: Եւ յօրինացն Աստուծոյ երկու իր գլխաւոր պահելի է առ մեզ: Նախ՝ բեւեռել ի սեր նորա զհոգիս մեր: Երկրորդ՝ բեւեռել յերկիւղ նորա զմարմին մեր: Չի հոգի եմք եւ մարմին. հոգւոյ (սիրել զԱստուած յամենայն անձէն. եւ յամենայն սրտէ.) եւ մարմնով բեւեռել յերկիւղ նորա զմարմինս մեր: Վասն որոյ զհինգ պատուիրանն եղ զի սիրեսցուք զնա. եւ զհինգն զի երկիցուք ի նմանէ. եւ զնասցուք յարդարութեան ճանապարհս: Այլ աղէկ ճօհարի գիտող է այն մարդն՝ որ զոսկին եւ զարծաթն լաւ ընտրէ. եւ զխասիաթ պատուական ակին եւ մարգարտին ճանաչէ: Յամենայնի պատուական ոսկի՝ է մարդոյ հոգին. արծաթ՝ մարմինն. պատուական եւ անժանկ է պահելի. եւ ակնպատուական՝ է օրէնքն Աստուծոյ. եւ մարգարիտ՝ հաւատն իջեալ առ մեզ. պարտ է զխասիաթ օրինացն եւ զհաւատոյն ճանաչել: Վասն որոյ աղաչեմ զձեզ սիրովն Զրիստոսի. զայս սակաւ ժամանակ պանդխտութեանս մերոյ զոր ունիմք յերկրի՝ զօրէնսն Աստուծոյ մեզ ընկեր առցուք եւ ճանաչեսցուք. եւ ընդ խրատուն նորա գնասցուք: ՉԱստուած սիրեսցուք. ' ի նմանէ երկիցուք. զի նա առաջնորդեսցէ ի ճանապարհ կենցաղոյս. ' ի նմանէ երկիցուք. զի նա առաջնորդեսցէ ի ճանապարհ կենցաղոյս. ' հասուցէ յարքայութիւն երկնից ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն տասն հարուածոցն եգիպտոսի. ի բան իմաստնոյն որ ասէ: (Որովք մեղանչէ ոք՝ նովիմք ' տանջի:) Իմաս.11.16: (Գլուխ Ե)

ՉԱրարիչն Աստուած ողորմած ասեն, ' արդար քարոզեն ամենայն Սուրբ Գիրք ' վարդապետք ուղղափառաց: Որպէս ասէ մարգարէն: (Ողորմած գթած եւ արդար է Տէր:) Եւ դարձեալ՝ (յողորմութիւն եւ յիրաւունս օրհնեցից զքեզ Տէր:) Եւ ողորմութիւնն Աստուծոյ տեսանի նախ ի գործ արարչութեանն. որ զաշխարհս վասն իւր բարերարութեանն եւ

ողորմութեանն հաստատեաց Աստուած. զի ամենայն արարածք յողորմութենէ նորա վայելեցցեն. ըստ այնմ, (ասացեր թէ աշխարհս ողորմութեամբ շինեցցի:) Երկրորդ՝ տեսանի ողորմութիւնն ի գործ նախախնամութեանն. որ զամենայն արարածս պահպանէ Աստուած զի իւրաքանչիւր բնութիւն յիւրում գոյութեանն մնալ. զերկինս եւ զերկիր. զբոլոր եւ զմասնաւոր արարածս. զմարդ եւ զանասուն. զկենդանիս եւ զանկենդանս. զչարս եւ զբարիս. ըստ այնմ, (ծագէ զարեգակն ի վերոյ չարաց եւ բարեաց. եւ ածէ անձրեւ ի վերոյ արդարոց եւ մեղաւորաց:) Այսորիկ ողորմութեամբ Աստուծոյ կառաւարին: Իսկ արդարութիւնն Աստուծոյ տեսանի նախ ի խրատ կենցաղոյս. որ զոմանս տանջէ՝ զի այլք խրատեցին եւ երկիցեն: Որպէս զԵգիպտոս տանջեաց բազում հարուածովք. զի Զանանացիքն եւ այլ ամենայն աշխարհ երկիցեի յԱստուծոյ: Եւ զոմանս տանջէ պատուհասիւ. զի մարմնով կրեցցեն զչարչարանս. եւ հոգւոյ թեթեւացին նեղութիւնքն. որպէս առ ջրհեղեղաւն. նաեւ սողոմայեցիքն. զի ջրով եւ հրով տանջեցանք նոքա աստ մարմնով. զի անդ թեթեւ լիցինոցա տանջանքն հոգւով. ընդ այնմ, (դիւրագոյն լիցի երկրինսողոմացւոց եւ դոմորացւոց յաւուրն դատաստանի քան քաղաքիս այսմիկ:) Այս առաջին գործ արդարութեան աստուծոյ ի կեանս յայսմիկ: Իսկ երկրորդ գործ արդարութեանն է՝ յօրն դատաստանի ի հանդերձեալ կեանս. յորում հատուցանէ արդարութեամբ ըստ իւրաքանչիւր գործոց բարեաց եւ չարեաց. չարեաց զտանջանսն յաւիտենից. եւ բարեաց զկեանս անվախճան: Որպէս ասէ առաքեալն. (Մեզ ամենեցունյնցն յանդիման լինիլ կայ առաջին ատենին Զրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, եթէ բարի եւ եթէ չար:) Եւ այս է կրկին կամք զոր ասացաք գործոցն աստուծոյ՝ ողորմութեան եւ արդարութեան: առաջին կամօք շարժի աստուած ի գործ ողորմութեան. զի կամք արարչին Աստուծոյ է ստեղծանել եւ պահպանել զարարածս: Եւ զայս գործս՝ բնութեամբ եւ յոժարութեամբ եւ առաջին կամօք ներգործէ Աստուած: Իսկ երկրորդ կամօք շարժի ի գործ արդարութեան. զի ոչ կամի Աստուած որ պատուհասէ եւ պատժէ զմարդ. այլ անհրաւ գործք մարդկան շարժեն զԱստուած ի պատուհաս ինքեանց: Եւ նա ակամայ եւ երկրորդ կամօք վասն արդարութեանն վրեժ խնդրէ եւ պատուհասէ զյանցակորս: Որպէս երբեմն ի ժամանակի մեղք եւ անօրէնութիւնք ազգին եգիպտացւոց բազմացան. որք չարչարեին դառն դերութեամբ զազգն Իսրաէլի. աղաղակեալ նոցա առա Աստուած յերկինս. եւ առաքեաց Աստուած զմարգարէն Մովսէս փրկիչ ժողովրդեանն. եւ նա զօրեացեալ ի հոգւոյն Աստուծոյ, տասն հարուածովք տանջեաց զԵգիպտոս եւ զփարաւօն. եւ ապա արձակեաց զժողովուրդն: տասն հարուածքն Եգիպտոսի: Առաջին հարուածն՝ որ զգետն յարին փոխեաց. եւ ոչ կարէին ըմպել եգիպտացիքն. եւ նեղացան ի ծարաւոյ մարդ եւ անասուն: Չայն նշանակէ թէ, զարիւն տղայոցն չէ մոռացեալ Աստուած զոր ի գետն խեղդեցին. զայն ըմպել տայ նոցա: Դարձեալ՝ ի յօրինակ նոցա՝ որ ի սրբութեանցն ի մեղս դառնանա. եւ լինին մարմին եւ արիւն. (որք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն.) մինչ սրբին ի ձեռն ապաշխարութեան եւ արտասուաց. ըստ այնմ, (թէ իցեն մեղք ձեր իբրեւ զորդաանկարմիր, իբրեւ զասր սուրբ արարից:) Եւ էր սքանչելի իմն. զի մի եւ նոյն գետն՝ Իսրաէլի ջուր էր յստակ զոր ըմպէին. եւ եգիպտացւոցն արիւն:

Չայն նշանակեր՝ որ Տեր մեր Յիսուս Քրիստոս Աստուած էր եւ եղել մարդ մի եւ նոյնն: Իսկ հաւատացելոցն՝ ի կանգնումն եւ ի փրկութիւն. իսկ անհաւատիցն՝ ի գլորոումն եւ ի գայթակղութիւն: Նոյնպէս եւ մարմինն եւ արիւնն սուրբ՝ արժանաւորացան կեանք է եւ սրբութիւն. եւ անարժանցին՝ մահ է եւ ապականութիւն: Այս էր առաջին նշանն եւ հարուածն. որ զգետն յարին փոխեաց մարգարէն Մովսէս: Երկրորդ հարուածն գորտն՝ զոր բոխեաց գետն եւ ելից զամենայն տեղիս. ի ներս եւ ի դուրս. ի տունս եւ ի դաշտս. (եւ ապա կանեաց զնոսա գորտիւ ասէ մարգարէն Դաւիթ:) Նախ նշանակէ՝ զի զագիր են գործօք եւ բորոտեալ մեղօք. վասն այն գարշելի կենդանեօք ապականէր զնոսա: Եւ դարձեալ՝ որպէս թէ տղայքն զոր ի ջուրս հեղձուցին, կենդանացեալ տանջեն զնոսա: Երրորդ հարուածն մունն՝ որ մանր տիգ. կամ մժեխ եւ մոծակ. զոր առեալ ի կրակաց հողոյ, եւ ցանկեալ յօղն, երեւ մուն մանր. եւ կսկծեր զնոսա. ի ցուցանել՝ զի մանրակծու էին բարուք. եւ խոցոտիչ բանիւք կսկծէին գիսրաւել. վասն որոյ եւ այնպէս տանջեաց զնոսա: Չորրորդ շանճանճն. զի շնաբարոյք էին. եւ խառնկէին յառնականայս. զի շանց է որ ոչ զուգակցի որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց ելեալ թունալից ճանճք, խայթեր զնոսա: Յինգերորդ պատուհասն մահ անասնոցն. քանզի հինգ զգայարանօք իբրեւ զանասունս եղեն. եւ կորուսին յինքեանս զբանս եւ զիմաստութիւն. այսինքն, ի գամուք եղեն իբրեւ զծիս. եւ խեռաբարոյք իբրեւ զէշ. եւ խորամանկ իբրեւ զուղտ. եւ այլն նմանապէս: Վասն այն ի խրատ նոցա՝ պատժէ զանասունս նոցա. զի զգաստացեալ երկիցեն յանձինս իւրեանց: Վեցերորդ հարուածն կեղն եւ խաղաւարան. զի քերքեշեր զմորթն. եւ ի վեր եռացեալ լինէր խաղաւարտ. եւ մորմոքեր զմարմինս նոցա: Եօթներորդ հարուածն էր կարկուտ հրախառն. զի երկու հակառակն հուր եւ ջուր՝ միաբանեալ եկին ի տանջանս անպարշտացն. եւ զմիմեանս ոչ ապականէին: Վասն զի կարկուտն բեկանէր. եւ հուրն այրէր զծառս եւ զբոյս եւ զտունկս: Չայն նշանակէ՝ որ ի սիրելոյն Աստուած ցրտացեալք էին. եւ Իսրայել սնոտեացս ջերմացեալք: Ութներորդ մարախն թանճր. եւ զմնացեալն ի կարկուտն նոքա ուտէին: Նախ՝ նշանակէ զբազմապատիկ չարութիւն նոցա թանճրացեալ եւ բազմացեալ իբրեւ զմարախ: Եւ դարձեալ՝ զի անյագ եւ ամենակեր է մարախն. նոյնպէս եւ նոքա չարչարանօքն իւրեաց կեղեքէին եւ ուտէին զվաստակս իսրայելացւոցն: Իններորդ հարուածն խաւարն շօշափելի. զի թանճրացեալ ըմբռնիւր շօշափելով. եւ կամ շօշափելով ձեռաց եւ գաւազանակարէին շարժել: Եւ այնպէս թանճրամած էր, մինչեւ նստեալն ոչ կարէր կանգնիլ. եւ հուր եւ լոյս ճրագի՝ ոչ կարէր ներգործել ի թանճրութենէն. եւ իսրայելացւոցն լոյս էր եւ ազատութիւն: Նշանակէր զխաւար անմտութեան նոցա՝ որք առաւել նստմացան քան զամենայն երկիր. զի զամենայն գարշ կենդանիս ի պաշտօն առին: Եւ իսրայելացւոցն լոյս էր. եւ զաստուծապաշտութիւն նացա նշանակէր: Եւ դու տես զխոսութիւն տանջանացն: Նախզի՝ հեռելորքն ի Մովսէս եւ մերձաւորքն՝ միապէս տանջէին յորժամ զհարուածն յարուցանէր: Եւ ոչ էր որպէս զայլ մարդկան. որ մերձն տանջի. եւ հեռաւորն ի հանգիստ մնայ: Երկրորդ՝ յայնմանէ յայտնի է, զի կրկին ունէին զտանջանսն. այսինքն, յիշատակաւ անցելոցն տրտմէին. եւ դեռեւս վասն գալոյ հարուածին երկիւղ կրէին. եւ այսպէս հանապազ տանջէին: Այլեւ տես զներօղ մարդասիրութիւնն Աստուծոյ յերկուց իրաց: Նախզի՝ բացատ եւ միջոց

ժամանակի տայր՝ շունչ առնլոյ եւ զղջանալոյ. եւ ոչ ի վերոյ միմեանց յարուցանէր. այլ նոքա ի տանջանսն ասէին՝ մատն Աստուծոյ է. եւ յորժամ դարձարէր, ոչ հաւատային Աստուծոյ: Երկրորդ՝ զի ի նուագէն ի խստագոյնն ելանէր հարուածն. զի թէ լինի յորժամ ի փոքրն զղջացին, ի մեծամեծ հարուածոցն զերծանիցին. եւ նոքա ոչ զղջացան. այլ (առաւել ասէ խստացաւ սիրտն փարաւօնի եւ ոչ կամէր արձակել:) Տասներորդ հարուածն մահ անդրանկացն. որ էր խստագոյն. զի ամենայն անդրանիկք նոցա մեռանէին, ի մարդոյ մինչեւ յանասունսն. եւ ապա ազատեցան իսրայելցիքն: Նախ նշանակէ՝ զի զանդրանիկ որդիս Աստուծոյ տանջեցին եւ մեռուցին. վասն որոյ անդրանիկք նոցա մահացան: Դարձեալ՝ զի զանդրանիկ խորհուրդն աստուածպաշտութեան կորուսին յանձինս իւրեաց. վասն որոյ անդրանիկք նոցա ապականեցան: Եւ դարձեալ զայն նշանակէ՝ որ զալստեամբն Քրիստոսի՝ անդրանիկ ծնունդն սատանայի կորնչելոց էր. այսինքն, հպարտութիւնն եւ կռապաշտութիւնն. զի զալուստն Քրիստոսի խոնարհութեամբ էր. եւ իմի աստուածպաշտութիւն կոչեաց զմարդիկ. եւ կորոյս զպաշտօնն դիւական: Եւ թէ ոք հարցանիցէ՝ վասն Է՞ր տասն հարուածովք եհար զԵգիպտոս: Ասեմք թէ՝ վասն այն, զի հինգ ազգտանջանօք չարչարեաց զԻսրայել. վասն այն կրկին ընկալաւ զհատուցումն չարեաց: Այսպէս ամենայն մեղաւորաց՝ կրկին է հատուցումն չարեաց. այսինքն, հոգւոյ եւ մարմնով. կամ աստ՞ եւ ի հանդերձեալն. որպէս ասէ Եսայի. (ընկալաւ ի ձեռանէ Տէրն կրկին զհատուցումն:) Եւ այս են Ե տանջանքն Եգիպտոսի: ՆԱԽԳԻ՝ ծառայ եւ գերի պահէին զԻսրայելի: Երկրորդ՝ զարու մանկունսն հեղձնուին ի գետն: Երրորդ՝ կաւագործն եւ աղիւսն. որ յամենայն գլխոյ խնդրէին զհամար աղիւսոյն: Չորրորդ՝ եղեգն փոխանակ յարդի: Հինգերորդ՝ զի հաւատոց նոցա էին հակառակ. վասն որոյ տասն հարուածովք տանջեցան: Դարձեալ՝ հարցանելի է թէ, Վասն Է՞ր զարշելի եւ տկար կենդանեօք տանջեաց զԵգիպտոս. որպէս գորտ. շանաճանճ. մուս. մորեխ. եւ այլն: Եւ կարօղ էր ածել ի վերոյ նոցա արջ եւ առիճ. եւ հրաշունչ կենդանիս, եւ այնպէս տանջել: Այսմ պատասխանէ իմաստունն Սողոմօն ի սիրեցեքն. եւ դնէ չորս պատճառ: Նախզի՝ անմտացան նոքա քան զամենայն մարդ. եւ զճանճս եւ զսողունս՝ զգետս եւ զանասունս՝ պաշտէին. Վասն այն զարշ տկար եւ կենդանեօք տանջեաց զնոսա: Չի գիտացեն թէ՝ (որովք եւ մեղանչէ ոք՝ նովիմբք եւ տանջի:) Երկրորդ՝ զի ցուցէ զտկարութիւն Եգիպտացւոցն. որ տկար զօրացն Աստուծոյ՝ ոչ կարացին ընդդէմ կալ. այլ ի փոքրագոյն զեռնոցն յաղթեացն եւ չարչարեացն զանազան կերպիւ: Երրորդ ասէ՝ զի չափով եւ թուով եւ կշռով տայ Աստուած զտանջանս մեղաւորացն արդարապէս. այսինքն չափն՝ զմեծն եւ զփոքրն, եւ զպակասն եւ զլին նշանակէ: Եւ թիւն՝ զքազումս եւ զսակասս ցուցանէ: Եւ կշիռն՝ զծանր եւ զթեթեւն: Չայն ցուցանէ թէ՝ արդարապէս հատուցանէ Աստուած ըստ չափոյ յանցանացն զպատիժն. թէ աստ մարմնով, թէ ի հանդերձեալն հոգւով եւ մարմնով. այլ մեզ անգիտելի է չափ պատուհասին: Չորրորդ ասէ՝ ինայեաց ի նոսա Աստուած՝ զի մարդիկ էին եւ ստեղծուածք նորա. զի Աստուած մարդասեր կոչի. թէպէտ յանցաւորք էին, ներելով իրատէ զի զղջացին. եւ փոքր տանջանօքն՝ ի մեծամեծացն զերծանիցին: առ ի ուսուցանել զմեզ թէ, պարտ է արդարոյն եւ զմարդասիրութիւնն խառնել, եւ ներողութեամբ

դասել. որպես աստուած առ եգիպտացիսն առներ. այլ նոքա խոստացան եւ անգեղջ մնացին. մինչ զամենայն հարուածսն կրեցին. եւ բովանդակքն ի ծովն Կարմիր ընկղմեցան եւ սատակեցան. փարօն եւ ամենայն կառք եւ զօրք նորա: Որպես ասէ իմաստունն: (Որովք եւ մեղանջէ ոք՝ նովիմքք եւ տանջի:) եւ թեպետ համառօտ եւ կարճ է բանս այս. սակայն բազում եւ ընդարձակ է տեսութիւն սորա: Նախ՝ տեսանի առ ջրհեղեղան. (որք ուտին եւ ըմպին. կանայս առնէին. եւ արանց լինէին.) Վասն ջրհեղեղաւ սաստկեցան: Չի որ ի գէճ ցանկութիւն ախտից ըմբռնեցան եւ հեշտացան՝ գէճ ջրով տանջեցան եւ ապականեցան: Միայն մնայ Նոյ տամբ իւրով. որ Ե հարիւր ամ պահեցան զկուսութիւնն սրբութեամբ մարմնոյ. եւ էր այր արդար յազգի անդ իւրում. վասն այն մնայ սերմ աշխարհի. եւ սկզբն երկրորդ՝ մարդկան ազգի: Երկրորդ՝ առնու բանս ի վերոյ Սողոմայ եցուցն. որք երկնատեղաց հրովն կործանեցան. զի որովք բորբոքեցան՝ ի ջերմութիւնն իջին եւ անօրէն գործոցն, վասն այն ջերմութեամբ հրոյ սատակեցան: Եւ այս վասն երեք պատճառի: Նախ՝ օտար եւ ընդդէմ բնութեան գործեցին. վասն այն օտար եւ երկնատեղաց հրով այրեցան: Երկրորդ՝ զի նոր չարիս գործեցին ի վերոյ երկրի. նոր եւ խիստ տանջանօք չարչարեաց: Որպես Կայեն նոր չարիս գործեաց զսպանութիւն եղբօրն. նոր եւ դառն տանջանօք չարչարեցաւ. նոյնպէս եւ մեք: Երրորդ՝ զի յիշատակ մնացէ ամենայն աշխարհի. զի որք զայնպիսիսն գործեն, այնպէս տանջանաց հանդիպին ի կատարածի. ըստ այնմ. (տեղասցի ի վերոյ մեղաւորաց որոգայթ հուր եւ ծծումբ. այս մրրիկ բաժին բաժակի նոցա:) նոյնպէս եւ կինն դովտայ որ հայեցաւ յետս՝ եղեւ արձան աղի վասն երկու պատճառի: Նախզի՝ յետս դառնալն անհաւատութեան էր նշանակ՝ քարացաւ. զի մնացէ յիշատակ անհաւատացզին. զի անհաւատութեան խստութիւնն՝ քարացուցանէ զմարդ. որպէս զնա մարմնով՝ եւ զայլս հոգւով: Երկրորդ՝ եղեւ արձան աղի. զի հալեցցի եւ մի մնացէ. զի մի ի պաշտօն առցեին յետոյ: Արդ՝ այսպէս ըստ նմանութեան մեղացն տանջեցան: Կինն դովտալ՝ վասն անհաւատութեանն քարացաւ. եւ երկիրն սողոմայ ըստ չար գործոց նոցա այրեցաւ. որեւ հող երկիրն բոյս ոչ բուսուցանէ. եւ քարն հուր ոչ հանէ. զի այրեցած է. եւ ջուրն մեռած է եւ ոչ շարջի ալեօօք. եւ կենդանիս ոչ սնուցանէ. եւ ծառքն ոչ պտղաբերին. զի կեղեւն երեւի թէ պտուղ է, եւ ի մէջ պտղոյն փոշի է եւ հող. զի երկիրն եւ յիշատակ մնացէ ամենայն ազգաց: Երրորդ՝ տեսանի բանս ի վերոյ եգիպտացուցն որպէս ասացաք. (զի որով յանցանէ մարդ՝ նովիմք եւ տանջի:) Չի նոքա յանցեան՝ եւ զամենայն գարշ կենդանիս եւ զգետն Աստուած պաշտեցին. վասն այն իւրանց աստուածովքն տանջեաց զնոսա. զգետն յարիւր փոխեաց. եւ գորտիւ ապականեաց զնոսա. շանաճանճ, եւ այլն զոր ասացաք: Նախզի՝ գիտացէ ամենայն մարդ՝ թէ ճշմարիտ Աստուածն է միայն մարդասեր. եւ նա առնէ բարի ամենայն մարդոյ՝ որ ստեղծեալ է զնոսա: Իսկ որ սուտ են եւ օտար Աստուածք, ոչ առնեն մարդոյ բարի. զի ոչ են ստեղծեալ զնոսա: Երկրորդ՝ զայն ցուցանէ թէ՛ ամենայն մարդ որ բարեկամ լինի սատանայի, եւ զկամս նորա կատարէ, այնպէս տանջելոց է զնոսա ի յաւիտենից հուրն: Չոր օրինակ՝ եթէ մարդ բարեկամ լինի հրոյ, եւ մերձենայ ի նա, այրին. եւ որ մերձենայ ի փուշն, խոցոտի: Այսպէս որ սատանայի բարեկամ լինի, եւ հետեւի զհետ կամաց նորա, մասնակից եւ բաժանակից լինի նմա ի

յաւիտենից հուրն. եւ ընդ նմա չարչարի: Որպէս հրամայէ Տէրն. (Երթայք ի հուրն որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:) Չորրորդ՝ առնու բանս ի վերոյ օրինացն Մովսէսի. որ ետ Աստուած օրէսս նոցա թէ, (եւ եմ Տէր Աստուած քո. եւ ոչ ոք է այլ Աստուած բաց յինքէն. եւ մի երդնուր սուտ յանունն Աստուծոյ եւ այլն. եւ մի շնար. եւ մի սպանաներ. եւ մի ցանկար, եւ այլն:) Եւ խոստացաւ ի յօրէնսն պատիւ եւ պատիժս. պահողացն պատիւ եւ առողջութիւն կեանք եւ խաղաղութիւն. որդիս եւ փորթամուրթիւնս, եւ այլն. զի տղայաբարոյք էին եւ պարզամիտք. վասն մարմնաւոր խոստմանցն պահէին զօրէնսն: Իսկ գյանցաւորն պատժեր օրէնքն. որպէս ասացաւ. (ակն ընդ ական. եւ ատամն ընդ ատաման. եւ արին փոխանակ արեան:) Նոյնպէս գողոցն եւ շնացելոցն եւ սուտ վկայիցն՝ պատիժ ետ օրէնքն. որպէս ասէ առաքեալն. (օրէնքն որ տուաւ ինձ ի կեանս, նոյն եղեւ ինձ ի մահ.) զի օրէնքն կեանք է պահողացն. եւ մահ յանցաւորացն: Եւ վասն կրկին պատճառի այսպէս խստագին եւ անողորմ պատժեր օրէնքն: Նախզի՝ հեթանոսք եւ կռապաշտքն ոչ երկնչէին ի կռոցն՝ զի ոչ դատէին զնոսա. վասն այն օրէսս եդ Աստուած նոցա՝ զի երկիցեն յօրինացն եւ մի գործեսցեն զչարիս: Երկրորդ՝ ինայեաց ի հոգիս նոցա. զի ոչ էին ի շնորիս որք թողութիւն գտանէին Քրիստոսիւ. վասն այն զմարմինս նոցա պատժեր, զի թեթեւացին տանջանք հոգւոց նոցա: Այսպէս ըստ այնմ օրինացն յորում մեղանչէին՝ նովին եւ այն օրինօքն չարչարեր եւ տանջեր զնոսա: Հինգերորդ՝ առնու բանս ի վերոյ ազգին Իսրայելի. որ այնպէս սքանչելեօք եհան զնոսա յեգիպտոսէ. զծովն պատառեաց եւ անցոյց. զթշամիսն ընկղմեաց. եւ զնոսա. Խ ամ յանապատին պահեաց առանց կարօտութեան. զի հանդերձն ընդ նոսին աճեր. եւ կօշիկն ոչ հնանայր: Ի վիմէն ջուր տայր ըմպել նոցա. եւ ի ծովէն լորամարգ հաներ. եւ ի յերկնից մանանայիւն կերակրեր: Յայնժամ նոքա տրտնջէին զԱստուծոյ եւ զանգատէին, թէ զի՞նչ տայ մեզ ուտելոյ. լաւ էր որ մեռեալ էաք առ կաթսայն փարաւօսի՝ որ էր միսն խոզի. առ մեղրապոպն՝ որ էր ձմերուկն՝ Յայնժամ վասն տրտնջելոյն՝ օձ առաքեաց ի նոսա եւ սատկեր զնոսա: Եւ այս է պատճառն զի օձին հող ետ Աստուած ի կերակուր եւ ոչ տրտնջէ. նոքա զմանանայն ուտէին եւ տրտնջէին. վասն այն (լարս օձից առանց բժշկութեան արձակեաց ի վերոյ նոցա. զգագանս անապատին որք այրս եւ անդր գարշեսցեն զնոսա ընդ երկիր:) Որ մարգարէն Մովսէս՝ հրամանաւն Աստուծոյ, արար օձ պղնձի. եւ բարձրացոյց ի վերոյ փայտի. զի որ հաւատով ի նա հայեր, ինքն ապրեր, եւ օձն սատկիր. եւ որ թերութեամբ նայեր՝ մեռաներ: Որ նշանակեր զխաչն Քրիստոսի. զի հաւատացելոցն կեանս պարգեւ է. ըստ այնմ, (որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ. այլ ընկալցի զկեանս յաւիտենականս:) Իսկ որ ոչ հաւատայ ի խաչն եւ ի խաչ ելեալն Քրիստոս ասէ. (ոչ տեսցէ զկեանս. այլ բարկութիւնն Աստուծոյ մնայ ի վերոյ նորա:) Այսպէս վնաս մեծ է տրտունջն եւ սատակօղ հոգւոյ: Նոյնպէս Մարիամ եւ Ահարոն բամբաստցին զՄովսէս. եւ բորոտեցաւ Մարիամ. եւ եօթն օրարտաքոյ եկաց բանակին. որ նշանակէ թէ՛ այնպէս բորոտին եւ գարշանան ամենայն բամբաստողաց հոգիք. եւ արտաքսին ի բանակէն Աստուծայ. այսինքն յարքայութենէն երկնքից: Որպէս ասէ առաքեալն. (բամբաստօք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն:) Վասն այն ասէ իմաստունն: (Որով յանցանէ ոք՝ նովիմբ եւ կորնչի:) Վեցերորդ՝ տեսանի

բանս ի վերոյ մարգարէին Դաւիթ. զի յորժամ թուեաց զժողովորդն Իսրայէլի, թէ այժմ բազո՞ւմ են, թէ առ Մովսիսիւ ի յանապատին. եւ եգիտ նոյն չափովն կրկին քան զնոսա. եւ աւելի եւս. յայնժամ բարկացաւ աստուած, թէ զժողովորդդ ես բազմացուցի. եւ իմ են դոքա. դու վասն է՞ր հպարտացար ի վերոյ դոցա: Եւ առաքեաց առ նա մարգարէ, եթէ ընտրեա յերից պատուհասեդ զմինն՝ զոր տամ ժողովրդեանդ: Կամ երեք ամ սով. կամ երեք ամիս սուր. կամ երեք օր մահ: Եւ նա ընտրեաց զմահն երեք աւուր վասն կրկին պատճառի: Նախզի՝ երեք ամ սովն՝ եւ երեք ամիս սուրն՝ սաստիկ էր քան զերեք աւուր մահն: Երկրորդ՝ զի սովն՝ եւ սուրն զբարին եւ զչարն՝ ի միասին պատժեն. այլ մահն ընտրութեամբ Աստուծոյ է. եւ ժողովի ի վերոյ յանցաւորաց: Եւ յայնմանէ յայտ է՝ որ մարգարէն Դաւիթ ոչ էր յանցաւոր. եւ ոչ պատժեցաւ ընդ ժողովրդեանն: Եւ ետես զհրեշտակն՝ զի յառաւօտն մինչեւ յերեք ժամն՝ եհար հրեշտակն Աստուծոյ ի ժողովրդենէն եօթանասուն հազար. եւ սատակեաց զնոսա ընդ արդարութեան պատուհասին. եւ յայնմ հետէ ողորմութիւնն Աստուծոյ արգել զայլ աւուրսն. ապա թէ ոչ՝ ի միում աւուր կարող էր զամենայն ժողովուրդն սատակել. որպէս զօրքն Ռափսակայ ի միում գիշերի. ՃԶԳ Ռ քն սատակեցան ի հրեշտակէ Աստուծոյ: Իսկ այն զի՞նչ է որ Դաւիթ միայն ետես զկտորօղ հրեշտակն. զի միջնորդեսցէ եւ բարեխօսեսցէ առ Աստուած. վասն որոյ պատառեց զօճիսն. եւ անկաւ յերկիր եւ ասէ առ Աստուած: (Սուր քո յիս, եւ ի տուն Զօր իմոյ. անմեղ ժողովուրդդ զի՞ մեղաւ քեզ:) Եւ ապա ընթացաւ ի կալն ուռնայի. եւ զնեաց զեգիսսն. եւ ողջակիզեաց. եւ վերացաւ սուրն ի ժողովրդենէն: Եւ անդ խոստացաւ Աստուած ամենել դատաստան ամենայն աշխարհի: Եւ անդ առաքեաց զմիածին որդին՝ որ պատարագեցաւ ի վերոյ խաչին. եւ եբարձ զմեղս աշխարհի: Եւ տես յայնմանէ՝ զի պաշտամամբ եւ պատարագաւ յետս դառնայ բարկութեան սուրն. եթէ մահտարածամ, թէ այլ ինչ ցասումս զոր բերէ Աստուած ի վերոյ աշխարհի: Եօթներորդ՝ ամնու բանս ի վերոյ թագաւորին Եզեկիայի. յորժամ առողջացոյց զնա Աստուած, եւ զարեգակն վասն նորա դարձոյց յետս զտասն աստիճանաւոր. որ. Ժ ժամ եկեալ էր. եւ տասն ժամաւ յետս դարձաւ յարեւելս. եւ տասն ժամաւ ի նոյն տեղին եհաս. եւ երկու ժամ այլ. եւ ապա եմուտ արագակն. եւ եղէ օրն այն երեսուն եւ երկու ժամս: Եւ եղեն ընծայաբերք նմա ամենայն երկիր: Եւ յորժամ եկին ընծայաբերք թագաւորին բաբիլացոց, բարձրամտեցաւ նա. եւ եցոյց նոցա զամենայն գանձատունս որ ժողովեալ էր: Եւ եկն առ նա մարգարէն Եսայի եւ ասէ. ո՞վ են սոքա եւ ուստի՞ գան: Ասէ թագաւորն. յերկրէ հեռաստանէ եկեալ են սոքա. եւ ասէ՝ զի՞նչ տեսին ի տան քում. եւ ասէ թագաւորն. զամենայն ինչ որ ի տան իմ էին տեսին. եւ ոչ մնաց զոր ոչ տեսին: Յայնժամ հրամանաւն Աստուծոյ՝ դարձոյց մարգարէն ի նա եւ ասէ. զոր ինչ տեսին դոքա ի տան քում, զամենայն դերի առաքեմ ի Բաբիլօն. եւ աւար ամնեն. եւ զորդիսն Զո որք ելանեն ի Զէն՝ գերի վարեսցեն: Որ կատարեցաւ յետոյ. եւ եկն Նաբուգոդոնոսոր յերուսաղէմ եւ գերեաց զորդին նոսա զՄանասէ. եւ տարաւ ի Բաբիլօն. եւ եդ ի բանտի: Եւ նա աղօթիւք դարձեալ արձակեցաւ եւ եկն յերուսաղէմ. եւ յետոյ երիցս անգամ գերեցաւ Երուսաղէմ. եւ ամենայն գանձ նորա. եւ սրբութիւն տաճարին աւար հարաւ. եւ եօթանասուն ամենայն ի ծառայութեան կացին: Այսպէս զոր ինչ մեղանչեաց եւ հպարտացաւ նա, նովիմբ եւ տանջեցաւ: Ութներորդ՝ ի մանի բանս ի

վերոյ թագաւորին Աքայաբու եւ Եգաբելի. որ եղել չար թագաւոր Իսրաւելի. եւ խոտորեցաւ ի կռապաշտութիւն. եւ զմարգարէսն աստուծոյ հալածել եւ սպաննանէր: Եւ վասն այն մեղացն՝ բարկացաւ Եղիա. եւ կապեաց զերկինս. եւ ոչ անձրեւացաւ յերկինս ամս եւ զվեց ամիսս. եւ անանց ի սովոյ մարդ եւ անասուն. եւ չորացավ ամենայն երկիր. մինչեւ երեւեցաւ եղիա եւ կոտորեաց զմարգարէսն բահաղու ութն հարիւր եւ յիսուն այր. եւ ապա անձրեւ եկն ի վերայ աշխարհի: Եւ յետոյ ցանկացաւ այգւոյն Նաբովթայ. եւ Եգաբել առաքեաց եւ սպան զնա. եւ յափշտակեաց զայգին. եւ ետ ի ժառանգութիւն Աքայաբու: Վասն որոյ առաքեաց Աստուած զեղիա եւ ասէ ցԱքայաբ. փոխանակ զի անիրաւ զրկեցեր զայգին Նաբովթայ, առնում ի քէն զթագաւորութիւն քո. եւ տամ ի ծառայն քո: Եւ որպէս դու հեղեր անմեղ արիւն՝ փոխանակ այնր, զեթթանասուն որդիսն քո սրով սատակեմ. եւ զտուն քո եւ քեզ ի սուր ձգեցից. եւ յարիւն ձեր խոզք լուացին: Որ եղել իսկ. եւ մեռաւ Աքայաբ ի պատերազմին. եւ յեւ ծառայ նորին թագաւորեաց. եւ սպան զամենայն որդիսն նորա եւ զթոռունսն եթթանասուն այր. եւ զԵգաբել կոխեաց յընթացս ձիոց եւ սատակեցաւ. եւ զմարմինն նորա շունք կերին. եւ խոզք յարիւն նորա լուացան որպէս ասաց մարգարէն: Եւ այսպէս որով եւ մեղանչեաց նա, Նովիմբ եւ տանչեցաւ: Ի յօրինակ մեզ՝ զի այսպէս ծանր մեղք է զրկումն. եւ անհնարին անմեղ արիւնն որ հեղանի յերկիր: Իններորդ՝ կատարի բանս այս առ մեզ այժմ, որքան կենդանի եմք. զի որով եւ մեղանչեմք՝ Նովին եւ տանչիմք. զի տեսանէ նախախնամութիւնն Աստուծոյ զմեզ. եթէ իշխանութիւնն ձգէ ի մեղս, զայն հանէ. եւ եթէ փարթամութիւնն, զնոյն աղքատացուցանէ: Եւ թէ առողջութիւնն է պատճառ, հիվանդութիւն տայ: Եւ թէ խաղաղութիւն է, ի խռովութիւն վարէ: Եւ թէ ուսելն եւ ըմպելն, սով եւ սղութիւն տայ. եւ այնու պատժէ եւ տանչէ զմեզ: Չոր օրինակ՝ ճարտար բժիշկ յորժամ տեսանէ զցաւ մարդոյն՝ ի տաք է եւ թէ ի հով է. հակառակ դեղովն ի յառողջութիւն ածէ: Նոյնպէս եւ Աստուած տեսանէ զմեզ եւ ինամարկէ. (զի որովք մեղանչեմք՝ Նովիմբ եւ տանչէ:) Նմանապէս թէ ի միտս եւ ի խորհուրդս մեղանչեմք, տեսանէ Աստուած եւ ցաւ եւ հոգ՝ ի միտս արկանէ. եւ այնու չարչարէ զմեզ: Եւ թէ ի մարմինս, եւ թէ աչօք, եւ թէ լեզուաւ, եւ կամ ձեռօք, ի նոսին ի նոյն մասունս տայ հարւած. զի այնու ուղղիցուք ի մոլորութենէ: Վասն այնորիկ հանապազ զխրատս մարմնական պահէ ի վերոյ աշխարհի. եւ այսր եւ անդր շրջեցուցանէ. թէ սով՝ թէ սուր՝ թէ մահ՝ կամ հիւանդութիւն, կամ այլ ինչ: Չի ոմանք լսիցեն ի հեռու եւ խրատեսցին: Եւ ոմանք կրեսցեն զփոքրն՝ եւ ի մեծէն զերծանիցին. եւ այլք ոմանք տեսանեն զնոյնն՝ եւ զղջացին ի չար գործոցն. զանցեալ մեղսն ապաշխարեսցեն. եւ այլ մի գործեսցեն. վասն այն ասէ: (Որովք եւ մեղանչէ որ՝ Նովիմբք եւ տանչի:) Տասներորդ՝ հայի բանս ի կատարած աշխարհի յաւուրն դատաստանի. յորում նստի Քրիստոս ի դատողական աթոռն. եւ ժողովին առ նա ամենայն արարածք. եւ դասէ զարդարս ընդաջմէ իւրմէ որպէս զօդիս. եւ մեղաւորս ի ձախմէ որպէս զայծիս: Եւ զնին կշիռք արդարութեան. եւ հատուցանէ իւրաքանչիւրոց ընդ գործոց իւրեանց արդար դատաստանաւ. առանց կշռոց եւ առանց ակնառութեան ի յահեղ եւ ի սոսկալի բեմին առաջի. զի ամենայն ճարտարախօս լեզու կարկեսցի. եւ բանք սպառնի. եւ գործք թագաւորեն: Եւ այնպէս մանր քննութեամբ՝ ածէ Աստուած զամենայն գործս մարդկան ի դատաստան. եւ դատէ զմեղս

խորհրդոցն, եւ զբանիցն, եւ զգործոցն: Վասն խորհրդոցն ասէ. (որ քննէ զսիրտս եւ զերկամունս՝ Աստուած արդար դատաւոր:) Եւ վասն բանիցն ասէ. (ընդ ամենայն դատարկ բանի՝ համարս տալոց էք յաւուրն դատաստանի:) Եւ վասն գործոցն ասէ առաքեալն. (Մեզ ամենեցուն յանդիման լինիլ կայ առաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց. եթէ բարի, եւ եթէ չար:) Եւ Նովիմբ մասամբ մարմնոյն դատապարտէ զմարդն. եւ առաքէ ի տանջանս հրոյն յաւիտենից. եթէ աչօքն՝ եթէ ականջօքն. եւ թէ այլ մասամբն իցէ մեղուցեալ՝ ի նոյնն տանջէ: Եւ եթէ բոլոր մարմնովն, նոյնպէս եւ բոլորով տանջէ զհոգին եւ զմարմինն եւ զմիտս մեղաւորաց: Յորժամ ասասցէ թագաւորն. (Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտեանից:) Եւ ասասցէ արդարոցն. (եկայք օրհնեալք Յօր իմոյ ժառանգեցեք զկեանսն յաւիտենից:) Որեւ զամենայն առ հասարակ զհաւատացեալս անուն իւրոյ՝ եւ զերկրպագուս կենսատու Սուրբ Խաչին, դասեսցէ Աստուած ընդ սրբոց դասուցն. ներելով անյիշաչար լիցի ի վերոյ բազում յանցանաց եւ սխալանաց մերոց ի ձեռն արեամբ ներկեալ եւ չարչարանօք Խաչին Իւրոյ սրբոյ: Եւ մաղթանօք եւ բարեխօսութեամբ ամենայն երկնաւորաց եւ երկրաւորաց, եւ համագումար սրբոց եւ սիրեցեալ իւրոց Քրիստոս աստուած մեր: Եւ Նմա փառք ընդ Յօր Իւրում՝ Սուրբ Յոգոյն. յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն տեսլեան՝ երազոց. ի բանն Ովսեէի որ ասէ: (Ես ի տեսիլն յաճախեցից.՝ երազօք խօսեցից ընդ ձեզ:) (Գլուխ. 2)

Բարի է բնութեամբ Աստուած.՝ բարերարութեամբն Իւրով ինամէ զամենայն արարածս. (եւ կամի զի ամենայն մարդիկ կեցցեն, եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն:) Վասն որոյ ետ մեզ ճրագ զպատուիրանս օրինացն. զի լուսով նորին ընթացուք ի գիտութիւն ճշմարտին Աստուծոյ: Եւ թէ ուրեք երբեք սխալիցուք յարդարութեան գնացիցն, եւ զայն եւս բարերարաց կամօք իւրովք խրատէ եւ դարձուցանէ յուղղութիւն: Եւ այս ի ձեռն հնգից իրաց ինամարկէ զմեզ: Նախզի՝ ետ մեզ միտս բանաւոր, որով ընտրեալ որոշեսցուք զբարիս ի չարեաց. եւ խտտորիցուք ի չարէն, եւ ընթացուք զհետ բարւոյն. որպէս խրատէ մարգարէն. (խտտորեա ի չարէ՝ եւ արա զբարի. ինդրեա զխաղաղութիւն եւ երթ զհետ նորա:) որովք բազում խորհին. եւ խորհելով ճանաչեն զառաջիկայն ի փորձոյ իրաց. եւ յետս դառնան ի չարէն: Եւ թէ յայսմանէ մոլորիցուք, յայնժամ ամենայն զերկրորդն ինամարկէ. ի ձեռն տեսեալն եւ երազոց դարձուցանելով ի չարէ: Երրորդ՝ մարմնոյն խաղացմամբ՝ նշանակութիւն իրաց ինչ լինելոց. որպէս յորժամ անդամն ինչ խաղայ. ակն՝ մէջք՝ կամ այլ ինչ. ի փորձոյ իմացեալ ի միտ ածեն զլինելոցն: Չորրորդ՝ ի ձեռն կենդանեաց. որպէս ագռաւք. անձեղք. կամ այլ ինչ կենդանիք. որք ծառայք են մարդոյս՝ համբաւեն մեզ զգուշանալ յառաջիկայն: Հինգերորդ՝ լինի նշան ի տարերս եւ ի լուսաւորս երկնից. որպէս խաւարումն նոցա. կամ զիսաւոր աստղ. ամպ. շարժմունք. որոտմունք, եւ այլ ինչ. որպէս ասէ գիրն. (ի նշանս եւ ի ժամանակս եդ զնոսս.) զի յայնմանէ յամենայն տեղիս տեսեալ պատրաստիմք վասն հանդերձելոյն: Եւ որպէս սովոր է իւրաքանչիւր ոք. եւ այնու ներգործէ զնախապատրաստութիւն նոցա: Չոր օրինակ՝

Եգիպտացիքն երազդիւթք եւ հմայօղք էին. ի ձեռն երազոց կամեցաւ զնոսա ի յուղղութիւն ածել: Որպէս եւ գրեալ է եթէ՝ փարաօն ետես երազ. զի ելանէին ի գետոյն եօթն գեր երինջք. եւ եօթն նիհար: Նոյնպէս եւ եօթն ատոք հասկք՝ եւ է ազազունք: Եւ կլանէին նիհար երինջքն զգերսն. եւ ազազուն հասկքն զատոքսն: Եւ ժողովեաց զամենայն իմաստունս եգիպտացւոցն, եւ ոչ կարէին մեկնել զերազն: Եւ յոր ժամ եկն Յովսէփ, մեկնեաց զերազն: Ասէ՝ եօթն գեր երինջք եւ եօթն ատոք հասկքն այն է՝ զի եօթն ամենայն լիութիւն է լինելոց. եւ յետ այնորիկ լինի եօթն ամ ոսկ. զոր նշանակեն նիհար երինջքն, եւ ազազուն հասկքն: Արդ նախ գիտելի է՝ թէ քանի՞ են եղանակ երազոց: Վարդապետք ասեն թէ, չորս են երազք: Նախ՝ բնական: Երկրորդ՝ փոփոխական: Երրորդ՝ դիւական: Չորրորդ՝ տեսիլ գիտնական: Եւ բնականն է՝ անկարգ բաշաղմուք տնկականին. զի յորժամ ննջէ մարդ, զգայականն խափանի. եւ իմացականն անգործ մնայ եւ ծածկի. յայնժամ տնկականն յածի ի խորհուրդն եւ ի յիշողութիւնն. կամ զանցեալ գործն յիշէ. կամ ի խորհուրդն լինի դեռես գործելոյ՝ զնոսա երեւութացուցանէ յինքեան ստուերապէս: Այս բնականն է: Իսկ փոփոխականն է՝ որ յաւելուածոց տարերաց լինի. յարտաքին կամ ի ներքին կերակրոյ, կամ ի հիւանդութեանց: Եթէ հուրն առաւելու, զնոյն տեսանէ. եթէ ջուրն՝ եթէ օդ՝ եւ եթէ հող՝ զնմանն երեւեցուցանէ յանուրջս: Իսկ դիւական է՝ որ դեք ի սրութենէ մտաց իւրեանց, զառաջի կայն ցուցանեն մարդկան չար կամ բարի. եւ այնպէս պատրեն զմարդիկ: Իսկ չորրորդն որ է տեսիլ եւ աստուածային յայտնութիւն՝ որ կամի պատրաստել զմեզ՝ ի չարեն ի բարին փոխել, տեսանէ մարդ տեսիլ. որպէս ասեն: (Ես ի տեսիլս յածախեցից. եւ երազօք խօսեցայց ընդ ձեզ:) Եւ երկրորդ խնդրելի է թէ՝ վասն Է՞ր անարժանք աստուածային տեսիլ տեսանեն. որպէս փարաօն. Նաբուգոդոնոսոր. եւ այլք: Ասեմք թէ՝ տեսին անարժանքն տեսիլ վասն արժանաւորաց. որպէս փարաօն վասն արժանաւորին Յովսէփայ. զի յայտնի լիցի եւ մեծացի: Նոյնպէս եւ նա Բուգոդոնոսորին վասն Դանիէլի. որ մեկնելով զերազն՝ յայտնի եղեւ թէ, (հոգի Աստուծոյ ի նմա:) Նոյնպէս Բարաղամ մոզն ետես զ հրեշտակն. եւ էշն խօսեցաւ վասն Իսրաէլի. որ օրինեաց եւ ոչ իշխեր անիծնել զժողովուրդն աստուծոյ: Այսպէս եւ կայ իափայ մարգարեացւ վասն Զրիստոսի. որ փրկիչ էր մարդկան ազգի. ասէ՝ (լաւ է նմա մեռանիլ, քան թէ ամենայն ազգս կորիցէ:) Երրորդ՝ խնդրելի է թէ, զի՞նչ օգուտ է երազով կամ մարգարեութեամբ նախագետ լինիլ, եւ ասել զապագայն: Ասեմք թէ՝ երեք օգտութիւն է գլխաւոր: Նախ՝ յոր ժամ բարի ասիցէ, նա զանձինս բարւոյն արժանաւորեմք յառաջիկայն. զի մի զրկիցուք ի նմանէ: Երկրորդ՝ զի թէ չար ասիցէ, զգուշացուք եւ մի անկցուք ի չարն որ գալոց է: Երրորդ՝ զի թէ ներկայ ի չարն լինիմք, դառնամք եւ ապաշխարեմք զմեզս: Յաղագս այնորիկ մարգարեութեամբ կամ երազով տեսանեն զառաջիկայն: Իսկ զերազն փարաօնի մեկնեաց Յովսէփ եւ ասէ. եօթն ամ լիութիւն՝ եւ եօթն ամ սով լինելոց է. եցոյց քեզ Աստուած զտեսիլդ զայդ՝ զի յեօթն ամ լիութեանն ժողովեացես ցորեան. եւ ի սովոյն մի մեռցի երկիրդ: Եւ կացոյց փարաօն զՅովսէփ իշխան ի վերայ ամենայն երկրին: Չմատանին իւր ետ ի ձեռս նորա. բեհեզ պատմուճան. եւ մանեաղկ ոսկի ի պարանոցն. եւ ի կառնս բարձրացոյց: Եւ նա զհնգեակ երկրին ժողովեաց. եւ ամբարեաց ցորեան. որ ոչ գոյր թիւ համբարոցն: Արդ՝ մատանին ցուցանեպատկեր

տնմահ թագաւորին. որ էր անարատ ի նմա: Եւ բեռեզն՝ զպատմութեան անմեղութեան հազւոյն: Եւ մանեակն ոսկի՝ զհաւատն բոլոր եւ անապական: Եւ կառքն՝ որպէս եղիա հրեղէն կառքն. եւ նա ելանէր մտօքն առ Աստուած: Չայն նշանակէ թէ՛ որք լինին որպէս զՅովսէփ սուրբ եւ անարատ ի մեղաց՝ նոքա լինին սիրելի երկնաւոր թագաւորին. եւ իշխան եւ հրամայող երկրի. եւ նոքա գերծանեն ի պատուհասէն Աստուծոյ. եւ բազմաց փրկութեան պատճառ լինին: Արդ՝ եօթն պիւն սուրբ է տօն ճշմարիտն Աստուծոյ. (զի սրբեաց Աստուած զօրն եօթներորդ.) եւ տօն է եօթն օրն Աստուծոյ. որպէս ի շաբաթս կիրակէն: Այլեւ եօթն են զօրութիւնք հոգւոյն սրբոյ. որով խնամէ եւ բարի առնէ մարդկան: Իսկ թէ մարդիկ չլինին արժանի բարթեանցն Աստուծոյ, յայնժամ նոյն թւով եօթնեկին զօրութեամբ պատուհասէ զնոսա. վասն այն եօթն ամ ասաց լիութեան. եւ եօթն ամ սովոյ: Եւ սովորութիւն է Աստուծոյ՝ յորժամ պատուհաս տայ մեղաց, յառաջ երկար ժամանակ տայ միջոց խաղաղութեան. որպէս յաւուրսն Նոյի՝ հարիւր ամ. եւ ապա եբեր զջրհեղեղէն: Եւ որպէս յԵգիպտոս եօթն ամ լիութիւն. եւ ապա սովն: Կամ զի երկար միջոցաւն՝ զղջասցին եւ դարձցին ի մեղաց. զի մի յանկարծակի պատուհասին կորիցեն: Եւ կամ զի գիտացեն թէ՛ յետ խաղաղութեանն՝ խռովութիւն է լինելոց: Եւ յետ լիութեանն ոսվ. զի զինքեանս պատրաստեցեն. զի մի կորիցեն: Եւ զի՞նչ իցէ սովն. բազմաեղանակ է սովն: Նախ՝ է ոսով պակասութիւն կերակրոյ. յորժամ վասն մեղաց լինի երկին պղնձի. եւ երկիր երկաթի: Որպէս ասէ մարգարէին Աստուած. (զի երկինքն ոչ ցօղէ անձրեւ. եւ երկիրն ոչ տայ պտուղ:) Նոյնպէս դալարիք չորանան. եւ ամենայն հունդ եւ արմատ որք գտեղի հացի լնուն, չորանան. եւ ձկունք նւագին. եւ անասունք մեռանին. զի մի կթեցեն. որպէս ասէ՝ (ի քանան էր նեղութիւն մեծ:) Եւ այս վասն այն լինի՝ զի յաճախութիւն կերակրոյ եւ ըմպելոյ՝ լինի մեղաց պատճառ. որպէս ասէ. (այս է անօրէնութիւն քեռ քոյ Սոդոմ. յղփութիւն կերակրոյ. եւ լիութիւն գինւոյ.) որով զայնպիսի գործս գործէին. վասն այն հատանէ Աստուած զպատճառ մեղացն. եւ տայ սով: Դարձեալ՝ սով: Դարձեալ՝ սով է մտաց՝ յորժամ նւագի իմաստութիւնն Աստուծոյ ի մարդկանէ. որպէս ասէ մարգարէն. (տաց ձեզ՝ ոչ սով հացի եւ ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն Աստուծոյ:) Չի որպէս կերակրովն ապրի մարմինն. նոյնպէս բանն Աստուծոյ կենդանութիւն է հոգւոյն. ըստ այնմ, (ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանին Աստուծոյ:) Եւ զայս սովս յայնժամ առնէ Աստուած, յորժամ մարդիկ անարժան լինին լսելոյ բանին Աստուծոյ. որպէս ասէ՝ (հրաման տաց ամպոց իմոց, զի մի տեղացեն յայգի իմ:) Ամպ մարգարէն է՝ վարդապետն է եւ խրատօղն. յոյժամ մարդիկ ի մեղս լինին, եւ արժանի պատուհասի, արգիլէ զխրատատուսն. (զի մի լուիցեն ական ջօք ասէ. եւ իմասցին սրտիք. եւ դարձցին եւ բժշկեցից զնոսա:) Դարձեալ՝ սով է գործոց. յորժամ գործն եւ սրբութիւնն նուագի ի մարդոյն՝ յայնժամ մեղք եւ անօրէնութիւնք պատեն զմեզ. եւ լինիմք սովեալ եւ կարօտեալ բարի գործոց: Որպէս յառակն անառակին ասէ: (Եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ. եւ չբաւորութիւն ի բարի գործոց. եւ յարեցաւ առ մի ոմն. եւ արածեր զխոզս ցանկութեան մեղաց. եւ ոչ յագիւր ի կերակրոյ խոզիցն: Եւ վասն այսր սովու՝ աղօթեր մարգարէն Դաւիթ առ Տէր: (Ապրեցո զիս. զի նուագեցաւ սուրբ. նուագեցան ճշմարտութիւնք յորդոց ի մարդկանէ:) Չի ի նուագիլ ճշմարտութեան եւ

սրբութեան որ է բանից եւ գործոց, յայնժամ ստութեամբ եւ աղտեղի գործով կորնչի մարդն: Չի ստախօս մարդն՝ Բ վտանգ ունի. մին՝ որ ստութեամբն որդի սատանայի լինի. զի ստախօսն սատանայ է. եւ մին որ զինչ ասէ՝ ամենոյ չհաւատան: Չի ասեն յառակս թէ՝ զի՞նչ է ստախօսի շահն. թէ դորդին այլ չհաւատան: Նոյնպէս եւ ընդդէմն՝ որ ճշմարտախօսն Աստուծոյ նման է. մին որ Աստուած ճշմարիտ է. եւ ճշմարտաբանն նման լինի Աստուծոյ. եւ մին՝ յորժամ լսողքն հաստատին ի ճշմարտութիւն բանին, ամենայն բանք եւ խօսք նորին՝ ընդունելի լիցին նոցա: Վասն այն հրամայէ Տէրն. (Եղիցի ձեր բանն այոն այո. եւ ոչն ոչ եւ անելի քան զայն ի չարէն է: Դարձեալ՝ սով է հաւատոց. յորժամ մարդիկ նւագին ի ճշմարիտ հաւատոց. եւ լինին ուրացողք, կամ հերձուածողք, կամ հայիոյիչք. որ իւրաքանչիւր ոք զհետ իւր կամացն ընթանայ, եւ իւր ընտրութեանն, եւ մոլար առաջնորդին. որ ընդ իւր կամացն քարոզէ՝ նոցա հետեւին: Որպէս ասէ առաքեալն. (ընդ ցանկութեան սրտից իւրեաց կուտեսցեն վարդապետս ըստ մարմագելոյ լսելեաց. այսինքն, հաշտութեանց. եւ յառասպելս կործանեսցին:)) Եւ ի ճշմարիտ վարդապետացն ի բաց դարձուցեալ գերեսսս իւրեանց. զի զխրատս իմաստնոց անպարիշտք անգոսեի եւ անարգեն. այլ յառասպելս ստոցան քաղցրանան. (որք քաղցրաբանութեամբ եւ օրհնութեամբ պատրեն զմարդիկ ասէ առաքեալն:)) Եւ Տէրն զգուշացուցաանէ. (զան առ ձեզ հանդերձիք ոչխարաց, եւ այլն:)) Չի ունին կրկին հանդերձ. այսինքն, գառնենի եւ գայլենի. ի վերոյ եւ ի ներքոյ զգեցեալ: Չի հերձուածողն Գ զգեստուք պատրէ զմարդ. եւ պատառէ որպէս գայլ արաբացի: Նախ՝ քահանայական զգեստուքն. զոր զգեցեալ է իբրեւ զկարգաւոր: Երկրորդ՝ բանիւ՝ քարոզութեան, որ հանապազ ուսուցանէ: Երրորդ՝ զի յայտնապէս զօրէնս եւ հաւատաս ուսուցանէ. այլ ծածուկ զանօրէնութիւն եւ զթերութիւն խառնէ. զոր պարզամիտքն ոչ կարեն ընտրել՝ եւ մոլորին: Այլ զի՞նչ. (ի պտղոյ նոցա ծանիչիք զնոսա ասէ. այսինքն ի գործոցն զնոսա ճանաչեցէք. եւ մի խաբիք ի բանսն. զի վասն նոցա ասէ Տէրն. (կապեն բեռնիս ծանունս այլոց. այլ ինքեանք մատամբ ոչ հպին. այլ դուք մի հետեւիք նոցա. զի ասեն եւ ոչ առնեն:)) Չի յորժամ նոուագին մարդիկ ի հաւատոց, նշանակ է կատարածի աշխարհի. որպէս ասէ Տէրն. (Որդի մարդոյ եկեալ գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի:)) Նաեւ նուագեսցի սերն. որպէս ասէ Տէրն. (ի բազմանալ անօրէնութեանց՝ ցամաքեսցի սեր բազմաց.) որպէս այժմ տեսանեմք զամենայն մարդիկ թերացեալ ի հաւատաց. նուագեալ ի յուսոյն Աստուծոյ. եւ ցամաքեալ ի սիրոյն Աստուծոյ, եւ ի սիրոյ ընկերին: Այսպիսիքս՝ սով կոչին հաւատոյ՝ եւ յուսոյ՝ եւ սիրոյ: Դարձեալ՝ սով է իմանալի յետ մահու եւ հանդերձեալ կեանքն. զի այս կեանքս որպէս լիութիւն է, եւ ամենայն իրաց գիւտ: Իսկ այն՝ սով եւ դատարկութիւն ամենայն գործոց. զի ոչ սերմանել կարեն, եւ ոչ հնձել, եւ ոչ ժողովել, որպէս ի ժամանակ սովոյն: Եւ որպէս սովն զլիութիւն կորուսանէ եւ ոչ երեւի. նոյնպէս եւ այն կեանքն զայս. զի յետ մահուն՝ ոչ ինչ երեւի. ոչ գոյք. ոչ շինուածք. ոչ փարթամութիւն. ոչ փառք. ոչ գեղեցկութիւն. եւ ոչ այլ ինչ որ այսմ կենաց է. զի ամենայն խափանեալ է: Այլեւ ոչ զգայարանօք գործել կարէ. ոչ ակն տեսանէ. ոչ ունկն լսէ. ոչ բերանի խօսք. ոչ ձեռքի գործէ. եւ ոչ ոտք գնայ. զի որպէս զիշեր է այն կեանքն, եւ այս ցերեկ. զի գործէ մարդ մինչեւ ցերեկոյ, եւ զիշերն խափանի: Չայն ուսուցանէ Տէրն. (գործեցէք մինչ

որ կայ. գայ գիշեր մահուն՝ յորում ոչ կարե գործել:) Եւ որպէս ամառն եւ ձմեռն են. զի այս կեանքս ամառն է. սերմանելոյ՝ հնձելոյ՝ ժողովելոյ. եւ այլ որպէս ձմեռն, եւ խափան գործոյ. միայն վայելեն զոր ինչ ստացեալն են. եւ որք ոչ ունին՝ ի սովոյ կորնչին: Եւ որպէս զինչ սերմանէ մարդ՝ զնոյն հնձէ. եթէ ցորեան, եւ եթէ գարի, եւ եթէ փուշ. նոյնպէս որ զցորեանն սերմանէ ի հոգին՝ այսինքն, զբարի գործս որ հաճելի է Աստուծոյ, ի հոգւոյն հնձէ զանապական կեանսն. զի հոգին անմահ է. եւ սերմանիքն նորա անմահ: Եւ որ ի մարմինն սերմանէ զգարին՝ որ է կերակուր անասնոյ. այսինքն, զմեղս՝ որով հեշտանայ անասնական մարմինս, եւ որպէս փուշ խոցոտէ զհոգիս, նա ի մարմնոյն հնձեսցէ զապականութիւն եւ զտանջանսն. զի մարմինն ապականացու է. եւ բոյսքն նորա ապականացու. (փայտ՝ խոտ՝ եղեգն. որք լուցկիք են յաւիտենական հրոյն:) Եւ որպէս լիութիւն կշտոյն ի սակաւ ժամ մի է՝ ուտէ մարդ. այլ սովն եւ քաղցն՝ յերկար ժամս, մինչեւ այլ ուտէ. նոյնպէս եւ լիութեան կեանքս՝ ի փոքր ժամանակ մի է եւ անցաւոր. իսկ հանդերձեալն որ սովն է, յերկարաձիգ է եւ յաւիտեան. անեղր եւ անվախճան. որպէս ասէ առաքեալն. (երեւելիքս առ ժամանակ մի են. եւ աներեւոյթն յաւիտենականք:) Այլ զի՞նչ է առնելի մեզ. այս է՝ որպէս իմաստունն Յովսէփ ի լիութեան ամացն էառ զինգեական. եւ ժողովեաց բացում ամբարս ցորենոյ. եւ զինչս եւ զստացուածս եգիպտացւոցն ժողովեաց ի տունն փարաւօնի: Նոյնպէս եւ մեզ պարտ է իմաստութեամբ զչորսն տարերաց մարմնոյս բաժին տայ. եւ զհինգերորդ մասն որ է հոգեւորն՝ հոգւոյս բաժին տայ. եւ զանձել ի տուն արքային երկնից. (ուր ոչ ցեց ուտէ, եւ ոչ գող գողանայ:) Եւ զի՞նչ իցէ այն՝ այսինքն, եթէ հոգեւոր շնորհս ունիս որպէս ցորեն. եւ եթէ մարմնաւոր ինչս ունիս որպէս ոսկի եւ արծաթ նոցա: Եւ եթէ անասուն՝ այսինքն, զհինգ զգայարանսդ անասնական. եւ կամ զերկինս եւ զհայրենիս մարմնոյդ. եւ կամ զքեզ ինքն զհոգիդ ծառայ տուր Աստուծոյ. եւ ժողովեա զամենայն բարութիւնս Քո ի զանձարանս երկնաւոր արքային յերկինս: Եւ ո՞ր է երկինք. այս է՝ հոգիդ Քո երկինք է եւ երկնային ի վերայ երկրի մարմնոյդ. ի հոգիդ քո զանձեա զամենայն: Եւ դարձեալ յեկեղեցիս Սուրբ զանձեա. այս է երկինք ի վերոյ երկրի. որք են աղքատք՝ կարօտք՝ զնոցա պետն լիաց: Եթէ հոգեւորին են կարօտ բանից եւ խրատու, ուտ զնոսա. եւ եթէ մարմնաւորին հանդերձին եւ ամենայն կերակրոյ, կամ հանգստութեանն, լցո զպետս նոցա. նոքա Քրիստոսի անդամք են. զոր ինչ առնես անդամոցն՝ գլխոյն եւ արարեալ: Չի թէ բաժակ մի ցուրտ ջուր տաս, ոչ կորնչի վարձն քո. քանի՞ առաւել թէ այլ մեծամեծ պարգեւ եւ արդիւնս առնես: Ասէ Սողոմօն. (առաքեա զհաց քո ի վերոյ ջրոյ. ի ժամանակի գտցես զնա.) Թէ հացն ի ջուրն ոչ կորնչի, զի ձկուկք ուտեն զնա եւ ստեղծւածք են Աստուծոյ, նա հատուցէ, քանի՞ առաւել յորժամ ի յաղքատս տաս. որ Քրիստոսի պատկեր է աղքատն. եւ Քրիստոս աղքատովն գայ ի դուռն քո. եւ ձեռօք աղքատին ինքն Քրիստոս առնու ի ձեռաց քոց զողորմութիւն. եւ ինքն հատուցանէ զփոխն. (զի որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ ասէ իմաստունն:) Եւ ինքն Տերն ասէ. (զի որ արարիք միում ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարիք. եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեսցէք զկեանսն յաւիտենից:) Որեւ աղօթիւք ամենայն սրբոց՝ զողորմութիւն եւ զնուերս հոգոց ձերոց ընկալիցի Քրիստոս ի հաճոյս իւր. եւ միոյն փոխարեն հատուցէ ձեզ աստ զհարիւրաւորն. ' անդ զկեանսն

յաւիտենից ժառանգեցուցէ ձեզ ի փառս Զօր Իւրոյ՝ Զոգւոյն Սրբոյ. յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ՝ խրատ ամենայն մարդկան. ի բանս՝(Յայեաց ի քեզ՝ գուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քում:) Բ Օրին. 15. 9: (Գլուխ Է)

Նոր Օրէնսդիրն Տէր մեր Քրիստոս զճրագ օրինացն հրամայէ յաշտանակի դնել. զի լոյս տայցէ ամենեցուն որք ի տանն իցեն. այսինքն Է, յեկեղեցի սուրբ. եւ ոչ դնել ի ներքոյ մահճաց հեշտութեան եւ անհոգութեան: Քանզի որք ոչ կամին աշխատիլ յառակաւոր բանս գրոց՝ եւ ի մեկնութեան աշտանակն դնել նոքա ընդ մահճոք դնեն: Եւ որք ընդ գրուանաւ՝ որ Է չափ. նոքա են որք ի չափաւոր կեանս ի մարմնոյ հոգոց ոչ փարափին աստուածային բանիցն պարզելոյ: Եւ որք կամին լսել զբանս Աստուծոյ, պարտ Է դնել զբանն Մարթայ իմտի. որում մեղադրեաց Տէրն. (դու զբաղեալ ես զբացում իրօք. եւ աստ սակաւ ինչ պիտոյ Է:) Եւ զՄարիամուն ընտրել մասն բարի. նստիլ առոտսվարժապետաց հանապազ. եւ ուսանիլ ի նոցանէ: Եւ արդ՝ յաշտանակ մերոյս պարզունակ բանիցս ի վեր հանցուք զինմանէ տուեալս: Նախ՝ զանօթն լուսնկալ. եւ ապա զվառումն ճրագի բանին որ ասէ: (Յայեաց ի քեզ՝ գուցէ:) Բանս այս՝ մեծին Մովսէսի Է. որ յերկրորդ օրէնսն գրեալ Է զսա ի մեջ բազում եւ ընդարձակ օրինաց: Իսկ Մովսէսն այն Է՝ որ ծանեաւ ցՏէր դէմ յանդիման նշանօք եւ արուեստիւք. որ բերան ի բերանս խօսեցաւ ընդ նման Աստուծոյ. երեսօք: Այս Մովսէս առաջին մարգարէն Է՝ եւ աստուածախօս. որ Աստուածաշարժ եւ հոգեբուխ բերանով ասացեալ Է զօրէնս զայս. որ պիտանի Է ամենայն մարդկան: Եկեղեցական եւ աշխարհականաց. թագաւորաց եւ ռամկաց. մեծատանց եւ աղքատանց. առողջից եւ հիւանդաց. եւ ամենայն հասակաց. եւ պէսպէս արուեստաւորաց աշխարհի: Չի հոգին սուրբ ամենեցուն Է ստեղծօղ եւ խնամածու. եւ զամենայնս խրատէ՝ որք առին զօրէնս եւ զմարգարէս եւ զաւետարանս. եւ որք անին միտս եւ աչս հոգւոյ՝ ասէ: (հայեաց ի քեց:) Արդ նախ գիտելի Է՝ զի կրկին աչս ունի մարդս: Մին զգալի աչս որ գերելելիս տեսմանէ. եւ միւսն զմիաննալի միտսն՝ որ զաներելոյթսն տեսանէ: Եթէ վասն զգալի աչացն իմանամք զասացեալս, յոյժ տկարանամք ի պատուիրանէն. քանզի մարմնոյն աչքն՝ ոչ զինքն, եւ ոչ զգլուխն, եւ ոչ թիկունսն կարէ տեսանել. եւ օրէնքն զանկարելիսն ոչ հրամայեն: Ապա յայտ Է՝ զի վասն մտացն ասէ որ աչք Է հոգւոյն. եւ նա կարէ զբոլոր մարդն տեսանել. ըստ այնմ, (ոչ ոք գիտէ զմարդն, բայց հոգին որ ի նմա:) Եւ ի յանբան կենդանեացն կրկին իրս ուսանիմք: Մին՝ որք ընտրեն զմարսական կերակուրն. եւ վնասակարէն հեռանան. եւ յորժամ հիւանդանան, գիտեն զբժշկութեան դեղն: այսպէս բանաւոր մարդս՝ հայելով յինքն, պարտ Է որ զգործն ընտրէ. եւ ի չար գործոցն եւ ի հերձաժ բանիցն հեռանայ որք մահաբերք են հոգւոց. եւ երթայ զհետ բարի գործոց եւ ուղղափառ ուսմանց. որք առողջ կերակուր են հոգւոց: Երրորդ՝ պարտ Է ուսանիլ յանբանից՝ որք զերծանին ի յորոգայթից որսողաց. որպէս այժեամն սուր աչօք եւ ոտիք. եւ թռչունք թել օք թռչին: Այսպէս եւ մեզ պարտ Է յստակել զակն հոգւոյս ի նախանձէ. ի հպարտութենէ. յաղտեղութենէ. եւ յայլոցն՝ որք խաւարեն զմիտս: յայնժամ կարեմք սուր աչօք տեսանել զականատսն. զոր յամենայն կողմանէ թաղէ

սատանայ. ըստ այնմ (լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց. եւ շուրջ շաւղօք իմովք, եղին ինձ գայթակղութիւն:) եւ երկու ոտօօք եւ երկու թեւօք՝ այսինքն, հոգւոյ եւ մարմնով միշտ ի միտ ածեմք գերկու կտակարանս. եւ նոքֆօք թռչիմք յերկինս: Չիւ անդ ոչ որոգայթն, եւ ոչ որսօղքն կանեն մերձենալ. ըստ այնմ, (անձիք մեր ապրեցան որպէս ճնճղուկք յորոգայթէ որսողաց:) Վասն այն ասէ. (հայեաց ի քեզ:) Երկրորդ միտս բանին որ ասէ: (Յայեաց ի քեզ:) Չի ասէ փիլիսոփայն. այլ եմք մեր, եւ այլ է մերն, եւ այլ է շուրջ զմեօքն: Մեր եմք հոգիս եւ միտքս. զի այս է մարդն՝ որ է պատկեր Աստուծոյ եւ անմահ: Եւ մեր է մարմինս եւ հինգ զգայարանս. որով տեսանեմք եւ լսեմք եւ հոտոտեմք եւ ճաշակեմք եւ շօշափեմք, եւ սոքօք հեշտանամք յաշխարհի: Եւ շուրջ զմեօք են հանդերձն՝ կերակուրն՝ տունն, եւ ինչքան ամենայն: Արդ՝ յոր ժամ ասէ. (հայեաց ի քեզ.) պարտ է ի հոգին նայիլ եւ ի միտսն. եւ մաքուր պահել ի գանազան ախտից: Եւ ոչ է պարտ հայիլ ի մարմնական հեշտութիւնս՝ որք զգայարանօքս կատարին. պիղծ եւ գարշելի են որք զայն առնեն, եւ անասնոցն հաւասար: Եւ ոչ է պարտ հայիլ ի գեղգցկութիւն հանդերձին. եւ ոչ ի բնակութիւնն. եւ ոչ յընչից բազմութիւնն. զի չգան ընդ մեզ ի հանդերձեալ կեանս: Նոյնպէս եւ առաքեալն Պօղոս՝ զմարդն կրկին ասէ. այսինքն, ներքին եւ արտաքին. զհոգին եւ զմարմինն. եւ սոքա միմեանց հակառակ ցանկան: Մինն ցանկայ ի վեր ելանել սրբութեամբ աստուած. եւ մինն ի վայր քարշի յախտս մեղաց եւ ի հաշտութիւնս: Վասն այն խրատէ թէ՛ (մարմնոյ ինամ մի տանիք ի ցանկութիւնս: Չի որքան արտաքին մարդն չարչարի եւ տկարանայ, ներքին մարդն նորոգի եւ զօրանայ:) վասն այն ասէ՛ ի հոգիդ հայեաց եւ մի ի մարմնոյ ցանկութիւնս: Երրորդ միտք զայն ասէ՛ թէ առողջ ես եւ անմեղ հոգւով եւ մարմնով՝ եւ զպատկերն Աստուծոյ անարատ ունիս, եւ ցանկալի ես հրեշտակաց որպէս զԴանիել, եւ գերեցիկ ես տեսանելով նման Քրիստոսի գլխոյն եւ սկզբնատպին քրիստոնէից, հայեաց ի քեզ. եւ պահեա զքեզ անարատ յամենայն չարէ: Չի թէ մեղանչես՝ տգեղացար. եւ լինիս գարշելի եւ ատելի հրեշտակաց եւ մարդկան: Եւ դարձեալ՝ թէ մեղար եւ հիւանդացար մեղօք, հայեաց ի քեզ. եւ դեղոյ ապաշխարութեան պէտս արա. զի մի մեռանիցիս զմահն յաւիտենից: Տես՝ թէ ծանր է մեղքն եւ մեծ, ծանր ապաշխարութիւն պիտի եւ դառն արտասուք՝ որպէս Պետրոսին յետ ուրացութեանն: Իսկ թէ թեթեւ եւ սակաւ է մեղքն, ապա հեշտ եւ իւրաւ քաւին պահօք եւ որորմութեամբ տնանկաց: Չորրորդ միտք՝ առնու զբանս ի վեր ամենայն առաքինութեանց: Եւ եօթն են առաքինութիւնք. երեքն աստուածայինք. եւ չորսն մարդկայինք. այսինքն, հաւատ. յոյս. եւ սէր: Սոքա աստուածային եւ գերակատար առաքինութիւնք են: Եւ խոհեմութիւն. արիութիւն. ողջախոհութիւն. եւ արդարութիւն. սոքա մարդկային եւ կատարեալ առաքինութիւնք են: Արդ ասէ վասն սոցա: Նախ որ զհաւատդ ունիս ի Սուրբ Երրորդութիւնն եւ մարդեղութիւնն Քրիստոսի, հայեաց ի քեզ. մի թերահաւատ լինիր. եւ մի հերձուածօղ: դարձեալ՝ մի դիւրահաւան լինի որպէս Եւա. մի անհաւատ. եւ մի դժուարահաւատ որպէս Չաքարիա որ պատժեցաւ: Եւ որ գյոյսդ ունիս՝ հայեաց ի քեզ. եւ մի յուհաւատ լինիր յԱստուծոյ. եւ մի յանարժանս եւ ի տկարս յուսալ. զի որ յուսով մեղան չէ, անյոյս կորնչի. այլ գյոյսդ ի Քրիստոս հաստատեա. եւ նա զօրացուցանէ զքեզ: Եւ որ զսէրդ ունի առ Աստուած եւ առ ընկերն, հայեաց ի քեզ. մի խաբէութիւն խառնել. եւ մի կեղծիւք սիրել զԱստուած լեզուաւ եւ ոչ

սրտի: Վասն որոյ ասէ Աստուած. (ժողովուրդս այս զուր ապշէէ զիս. շրթամբք մերձ են յիս. եւ սրտիւ հեռացեալ յինէն:) Նոյնպէս եւ որ զկերև սիրես՝ հայեաց ի քեզ. մի մոլեկան ցանկութեամբ սիրեսցես. այլ սրբութեամբ եւ հոգւով. եւ մի բանիւ, այլ գործով եւ արդարութեամբք: Այսպէս աստուածային առաքիւնութիւնքն կատարին: Դարձեալ՝ որ ունիս զխոհեմութիւն եւ զիմաստութիւն՝ հայեաց ի քեզ. գուցէ խորամանկ եւ նենգաւոր լիցիս. եւ զիտութեամբն հպարտասցիս, եւ յանհաւատութիւն անկցիս: Եւ կամ անզգամութեամբ զքեզ իմաստուն կարծես. այլ իմաստուն մտօք՝ զանձնդ ի խոնարհ կալ. զԱստուած պաշտեա, եւ զպատուիրանս նորա պահեա: Եւ թէ արիութիւն ունիս ի գործ ինչ, մի յանդգնիր եւ առաւել համարձակիր. զի լիրբն ատելի է Աստուծոյ քան զմեղաւորն: Եւ մի դարձեալ ի ծուլութիւն եւ յերկչոտութիւն ասնկցիս. զի երկոքին ծայրքն չարք են. այլ ի միջին շաւիղն կաց. (մի յաջ խոտորիր, եւ մի յահեակ:) Եւ թէ ողջախոհ ես եւ կոյս անձամբ՝ հայեաց ի քեզ. զի մի մարմնովդ միայն լիցիս կոյս. այլ եւ հոգւով մարմնով եւ մտօք, եւ ամենայն զգայանանօք: Այլ եւ զերկիւղն Աստուծոյ ի քեզ բեր. զի մի անկցիս ի բղջախոհութիւն: Նոյնպէս թէ արդար ես՝ հայեաց ի քեզ զի մի անիրաւեսցես, կամ առ մարդ, կամ առ օրէնս, կամ առ Աստուած: Այլ եւ հատոր զպարտս (որում զերկիւղ. որում զպատիւ. եւ ումեք պարտապան գտանիր որպէս առաքեալն:) Այսպէս հայելով ի քեզ՝ զամենայն մասունս հոգւոյդ կարգաւորեսցես: Զինգերորդ միտք՝ առնուն զբանս ի վերոյ է մահու չափ մեղացն: Որ է հպարտութիւն. նախանձ. բարկութիւն. ծուլութիւն. ագահութիւն. որկրամոլութիւն. եւ բղջախոհութիւն: Չի որ ութն խորհուրդ ասէ սուրբն եւ Ագրիոս. վասն զի զանազան ազգ դիւաց՝ ծածկապէս ի խորհուրդն արկանեն զչար սերմն մեղաց. եւ ապա ի զգայութիւնսն բուսուցանեն: Չոր իմացեալ քաջ եւ իմաստունքն ի մարդկանէ, ընդդէմ կալով յաղթեն զմեղս՝ եւ պսակին ի Քրիստոսէ յաղթութեամբն: Առաջինն հպարտութիւն մեղաց. զոր սերմանէ սատանայ. եւ ցուցանէ նմա, կամ զառաքիւնութիւնն, կամ զգիտութիւնն, եւ զայլն. վասն այն ասէ հայեաց ի քեզ եւ տես. զի հող ես եւ մոխիր. որդն եւ ապականացու. եւ մի հպարտանար եւ կորնչիր: Այսպէս թէ դէն նախանձու նեղէ զքեզ տեսանելով զնկերին յաշողմունսն եւ զպատիւ, մի նախանձիր. զի նախանձն այսպէս թարգմանի: Նախ ի յիւր անձն առնէ զչարութիւնն, եւ ապա ընկերին. (եւ ի նախանձէ բանսարկուին եմուտ մահ յաշխարհս ասէ Սողոմոն:) Այսպէս թէ բարկութիւնն զքեզնեղէ՝ ասէ մարգարէն. (բարկանայք եւ մի մաղանչէք:) Եւ բարկացող մարդն՝ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ:) Որպէս խրատեաց Աստուած զմարգարէն եղիա՝ յորժամ շարժումն լինի, կամ հուր, կամ ուժգին հողմն, ոչ է ասնդ Տէր. այլ յորժամ սիք հանդարտ, եւ անդ է Տէր: Սոքա երեքեան չար խորհուրդս՝ առաւել ի յընտիրս գտանին. զոր ի յաջ մեղանչել տայ սատանայ: Իսկ ծուլութիւն եւ ձանձրութիւն եւ տրտմութիւն ածէ սատանայ ի վերոյ հեշտասիրացն. եւ ի բարեացն ծուլացուցանէ եւ ձանձրացումցանէ. եւ ի պակասիլ չարեացն տրտմեցուցանէ. վասն այն ասէ որ յոյլ է մտօք յուսումն, եւ ծոյլ մարմնով ի գործս, (յուլիցն եւ ծուլիցն՝ փակեալ է դուռն առագաստին Աստուծոյ որպէս յիմար կուսանացն:) Եւ յորժամ զագահութիւնն արկանէ ի միտն, կամ վասն ծերութեան, կամ վասն հիւանդութեան, կամ այլ ինչ պատճառի, ասա. (ագահութիւն որ է կռապաշտութիւն.) եւ Տէրն ասաց. (ոչ կարեք Աստուծոյ

ծառայել եւ մամոնայի:) Եւ յագահութենէն՝ լինի գողութիւն. աւագակութիւն. ստախօսութիւն. մարդասպանութիւն. եւ այլ բազում չարիք: Վասն այն խրատէ առաքեալն. (մի առաւել ազահիլ. այլ բաւական համարիլ որ ինչ ի ձեռն իցէ. ցի ունիմք հանդերձ եւ կըրերակուրս եւ այնու շատասցուք.) այս աշխարհականաց: Իսկ կրօնաւորաց ասէն վարդապետք. որ ունի արեղայ դանկ մի դանկ մի չարժէ: Եւ յորժամ գորկորստութիւնն բերէ սատանայ, հայաց ի քեզ. եւ զժուժկալութիւնն եւ զպարկեշտութիւնն տես. եւ ասա ընդդէմ նմա որպէս Տերն ասաց: (Ոչ եթէ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ:) Եւ յորժամ բղջախոհութեամբն հակառակի, յիշեա զչարչարանս Քրիստոսի. զփուշն՝ զթուքն եւ զապտակն. զբեւեռն, եւ զկողին բացումն. յիշեա զօր մահուն եւ զքակտիլ հոգւոյն: Այլեւ յիշեա զանաչառ դատաստանն Աստուծոյ. եւ զհուր գեհեկին որ պատրաստել է մեղաւորաց: եւ կամ յիշեա զառաջին մովի ցանկացելոց պատիժն. որպէս զջրհեղեղն. եւ զհուրն ի Սողոմ. եւ զայլ բազումս: եւ այնպէս հայելով ի քեզ, զերծանիս յամենայն մահու չափ մեղաց: Վեցերորդ միտք՝ առնուն զբանս ի վերոյ Էխորհրդոյ եկեղեցւոյ: Եւ այս են եօթն խորհուրդք եկեղեցւոյ: Նախ Մկրտութիւնն. Դրոշման. Օծումնն. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. եւ պսակն: Նախ որ լուսաւորեալ ես մկրտութեամբն՝ եւ ծնեալ յորդիս աստուծոյ՝ եւ զհաւատն Քրիստոսի հիմն եղեալ՝ հայեաց ի քեզ. զի մի կորուսցես զշնորհս որդէգրութեանն աստուծոյ. եւ զհաւատն հիմն դրեր՝ մի շիներ ի վերոյ փայտ խոտ եղեզն զնիւթս գեհեկոյն. որք են աստէն հարստութիւնք եւ փարթամութիւնք: Այլ շինեա ոսկի. արծաթ. ականս պատուականս. որք են պահք. աղօթք. եւ ողորմութիւնն, եւ այլն: Այսպէս որ առեր զգրոշմ եւ օծումն՝ զինուոր ես Աստուծոյ. եւ հայեաց ի քեզ. եւ արիացիր ի ճակատամարտն. ագիր զգրահն արդարութեան. եւ դիր սաղաւարտ գլոյնս. առ զսուտեր զաւետարանին բան. եւ զամենայն գրոց զօրութիւն ընդ մեջդ ած: Եւ յամենեցունց վերոյ զվահանն հաւատոյ. զի կարօղ լիցիս զնետս զմուխս չարին շիջուցանել: Նոյնպէս եւ որ հաղորդիս ի սուրբ պատարագն՝ հայեաց ի քեզ եւ տես թէ, արժանի՞ ես. զի պարտ է Աստուածանալ, եւ ապա յԱստուած մերձենալ: Տես զխորհուրդն որ զՔրիստոս պատարագես՝ եւ որ հաղորդիս. զի ասէ առաքեալն. (փորձեսցէ մարդ զանձն իւրձ, եւ ապա ի հացէ անտի կերիցէ. եւ որ անարժանութեամբ ուտէ եւ ըմպէ, դատաստանանձին իւրում ուտէ եւ ըմպէ:) Առաքեալն ի վերնատանն ճաշակեցին զՔրիստոս եւ արդարացաան. եւ Յուդա ճաշակեաց եւ դատապարտեացաւ: Եւ թէ հեռի կաս՝ անհաւատութիւն է եւ յուսահատութիւն. եւ թէ անարժան մերձիս՝ յամոզանութիւն է եւ համարձակութիւն: (Ոյք հեռի արարին զանձինս իւրեանց ի քէն՝ կորիցեն ասէ Դաւիթ:) (Եւ քանի՞ պատժոց արժանի են՝ որք զորդին Աստուծոյ առ ոտն կոխեն եւ արհամարհեն ասէ առաքեալն:) Նոյնպէս որ ապաշխարիես զմեղս քո՝ հայեաց ի քեզ. եւ նախ զղջացիր սրտիւդ. եւ զարմատ մեղաց քակեա ի քէն. եւ ապա խոստովան լեր բերանովդ առաջի քահանային զամենայն մեղս քո մի ըստ միոջէ. եւ մի թագուցաներ բնաւ: Չի զոր աստ թաքուցանես՝ առաջի ահեղ ատենին Քրիստոսի խայտառակիս. եւ զոր աստ խոստովանիս՝ անդ ծածկի եւ կորնչի: Եւ ապա յետոյ ցապաշխարութիւն մեղացն կատարեա, եւ զփոխարենն հատո պահօք եւ աղօթիւք եւ ողորմութեամբ: Եւ

հայեաց ի քեզ. եւ կանգնեա ի գլորելոյդ եւ մի յուսահատիր: Չի այս Բ իրօքս գտանեն զինքեանս. որք են երկիւղն եւ յոյսն: Երկիւղն պիտանի է անմեղաց. եւ Յոյսն մեղաւորաց. զի երկիւղն չտայ անկանիլ ի մեղս. եւ յոյսն կանգնէ եւ չթողու ի մեղս: Այսպէս որ զօրութեան պսակն առեալես՝ եւ մի մարմին եղեալ՝ հայեաց ի քեզ. տես զի՞նչ ասէ առաքեալն: (Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի. զի որպէս գլուխ է եկեղեցւոյ. նոյնպէս այրն կնոջ: Եւ որպէս եկեղեցի հնազանդ է Քրիստոսի. նոյնպէս եւ կնոջն պարտ է հնազանդիլ առն իւրում:) Եւ որ զօրհնութեան պսակն քակէ պոռնկութեամբ կամ շնութեամբ, ինքն զրկեցաւ յօրհնութենէ պսակին. եւ ի շնութեան կարգ եմուտ: (Չի պատուական է ամուսնութիւնն. եւ հալալ անկողիին. բայց զշունս եւ պոռնիկս դատէ Աստուած:) Եօթներորդ միտք բանիս՝ առնու ի վերոյ ամենայն աստիճանաց եւ քահանայ ութե կարգաց: Եթէ կաթողիկոս ես՝ հայեաց ի քեզ. ընդհանուր ասի կաթողիկոսն. եւ տեսուչ եպիսկոպոսն. տես յստակ աչօք եւ անկաշառ զվիճակն սուրբ: Առաքելաբար շրջեաց ի մէջ նոցա. եւ զշնորհս հոգւոյն մի վաճառէր արծաթոյ տգիտաց եւ անարժանից. եւ մի կցորդ լինիր օտարաց մեղաց, եւ արեանն Տէր տղայոց ի բարձր ածելով աստիճան. ուստի վաղվաղակի անկցիր ուշացնորք եղեալք: Եւ թէ քահանայ ես՝ հայեաց ի քեզ. զի քաւիչ կոչիս եւ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ եւ մեղքն քո յԱստուած է ասնպարշտութիւն: վասն զի եթէ մարդոյ մեղաց չէ ոք, զԱստուած աղաչեն. իսկ եթէ յԱստուած մեղանչէ՝ զո՞վ աղաչեն: Եթէ քաւիչդ անքաւելի մեղանչես. ո՞ր խորք ծածկեն զքեզ. եւ զհօտն թէ ոչ քաւեսցես՝ (զարիւն նոցա ի ձեռաց քոց ինդրեսցէ Աստուած:) Եթէ արեղայ ես՝ եւ կրօնաւոր իցես, հայեաց ի քեզ. արեղայն հայր ասի. եւ կրօնաւորն՝ որ կրէ զխաչն Քրիստոսի յունն բարձեալ: ՉՔրիստոս (հայր ասէ մարգարէն հանդերձելոյ աշխարհին:) Որ զամենայն քրիստոնեայսս ծնեալ աւագանաւն՝ կացոյց առաջի հօր ասելով. (ահաւասիկ ես եւ մանկուք իմ.) Քրիստոսի նման է արեղայն. որ նախ զինքն ծնանի եւ իւր հայր լինի. որպէս ասէ Եսայի. (յահ եւ յերկիւղ քո յղացաք. եւ ծնաք զհոգիս մեր) փրկեալ պահօք եւ աղօթիւք եւ անհանգիստ ապաշխարութեամբ. կրելով զահ եւ զերկիւղն Աստուծոյ. անկեր. անխում. պարկեշտ. հեզ. եւ խոնարհ. սիրտ բեկեալ. եւ հոգի մաշեալ. եւ խաչեալ աշխարհի, եւ միայն կենդանի Աստուծոյ: Եթէ սարկաւազ ես կամ դպիր՝ կամ այլ ժառանգաւոր եկեղեցւոյ սրբոյ, հայեաց ի քեզ. զի սար կաւագն յեօթանասունա աշակերտաց կարգին է: Որք երկու երկու առաջի առաքելոցն երթային: Սարկաւազ էր սուրբն Ստեփաննոս նախաւկայն. որ սպասաւորէր ամենայն որբոցն եւ աղքատաց: Տես զգործն Քո՝ որ խունկ արկանես բուրվառն. զոր հին քահանայապետն ուներ՝ այժմ դու ունի զնոյն: Նոյնպէս եւ դպիրն որ զքշոցն կրէ՝ զվեց թելեան սերովբեիցն ունի զօրինակ՝ որք շուրջ կան զաթոռովն Աստուծոյ: Այսպէս ամենայն ինն աստիճանք որք են յեկեղեցիս՝ ինն դասուց հրեշտակաց ունի զնմանութիւն. պարտ է այնպէս սուրբ լինիլ որպէս երկնաւորքն. եւ այնպէս սպասաւորել աստիճանին իւրոյ՝ որ զպատասխանին Աստուծոյ տանցէ: Եւ թէ վարդապետ ես եւ ուսուցիչ կոչեցար՝ հայեաց ի քեզ. զի անուանակից եղեր Քրիստոսի՝ զոր ռաբունի կոչէին. պարտ է եւ գործով նմանիլ Քրիստոսի. (որ առնէր եւ ուսուցանէր:) Չի թէ առնես եւ ուսուցանես, մեծ կոչիս յարքայութեանն երկնից. եւ թէ ուսուցանես այլոց՝ ոչ առնես դու, նման ես զանկակի՝ որ ձայն հանէ, եւ ինքն

դատարկ է. եւ զմեզ ի ժամ կոչէ, եւ ինքն արտաքոյ մնայ: Տես զաստիճան Զրիստոս. որպէս ասէ առաքեալս. (զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են: Նախ՝ զառեքեալս: Երկրորդ՝ զմարգարես: Երրորդ՝ զվարդապետս: Ապա զգօրութիւնս եւ զքօշկութիւնս. եւ զայլ աստիճանս որ յեկեղեցիս:) Ըստ մեծ աստիճանին՝ մեծ են գործքն. (որում շատ տուաւ՝ շատ խնդրեցի ի նմանէ:) Եթէ աշակերտ ես եւ սպասաւոր բանի՝ հայեաց ի քեզ: Աշակերտն Զրիստոսի ես նմանօղ՝ որք բանին Աստուծոյ սպասաւորեին: Աշակերտ ես գրոց՝ մի գրոյն, այլ հոգւոյն ծառայեա. (զի գիրն սպանանէ. այլ հոգին կեցուցանէ:) Զննօղ ես բանից՝ հոգւոյն ես պատկեր. (զի հոգին զամենայն քննէ, եւ զխորս Աստուծոյ:) Զննես զայս. նախ զքեզ քննեա. (զի ինքեանց գիտակքն՝ իմաստունք են ասէ Սողոմօն:) Պայծառ միտս ստացիր. ուղղափառ հաւատ. հաստատուն յոյս. եւ սեր սուրբ ի սրտէ. խոնարհ եւ հնազանդ առաջնորդաց քոց. արթուն հոգւով եւ մարմնով. ժիր եւ արի յամենայն ուսմունս տեսական եւ գործնական առաքինութեանց: Ութներորդ միտք բանիս՝ առնու ի վերոյ մարմնաւոր առաջնորդաց: Եթէ թագաւորս ես, եւ եթէ իշխան, եւ թէ դատաւոր՝ հայեաց ի քեզ. տես նախ՝ զի ոչ ունի բնութեամբ զթագաւորութիւնդ. եւ զիշխանութիւնդ. (այլ յԱստուծոյ տուաւ ձեզ իշխանութիւն որպէս ասէ Սողոմօն:) Երկրորդ՝ զի ոչ միշտ ես. այլ երբեմն թողլոց ես զիշխանութիւնդ: Երրորդ՝ զի որպէս դու յայլմէ խնդրես զհարմարս. նոյնպէս եւ Աստուած ի քէն խնդրելոց է. որպէս ասէ Սողոմօն. (ի վերոյ իշխանաց անաչառ լիցի դատաստան. զի հզօրք հզօրագոյնս պահանջեսցեն:) Նոյնպէս եւ դու դատաւորդ՝ որ նստեալ յաթոռ դատաստանի եւ ի տիպ Զրիստոսի, (որ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս,) հայեաց ի քեզ: Նախ զքեզ դատեա եւ ուղղեա. եւ ապա զայլս. եւ անկաշառ եւ առանց ակնառութեան եւ առանց երկիւղի՝ եւ իմաստութեամբ զդատաստանն քննեա. եւ ապա դու զայլ դատես՝ Աստուած զքեզ է դատելոց: Այսպէս ի վերոյ ամենայն տերանց եւ ազատեաց՝ որք ունին ի ներքոյ ինքեանց հնազանդեալս եւ ծառայս, նոցա հրամայէ հայիլ ի բնութիւնս իւրեանց. որք հաւասար են ամենայն մարդկան եւ մահկանացու են. եւ ոչ զհայրենիս՝ եւ ոչ զիւնչս՝ եւ ոչ զիշխանութիւնս կարեն տանիլ զհետ իւրեանց. այլ զգործս. եթէ չար՝ տանջեսցին. եւ եթէ բարի հանգչիցին: Իններորդ միտք բանից՝ առնու ի վերոյ վեց ազգ գովութեց աշխարհի: Չի վեց իր է՝ որ մարդոյն գովութիւն բերեց. այսինքն գեղեցկութիւնն. զօրութիւնն. ինչքն. իմաստութիւնն. մեծագգութիւնն. եւ արուեստն: Նախ հայեաց ի քեզ. որ զգեղեցկութիւնդ ունիս՝ զայդ նուիրեալ Աստուծոյ եւ ծրարեա յանկողպտութիւն. եւ մի վաճառեր զգեղեցկութիւնդ. եւ զներ զգեհեանն անշիջանելի: Եթէ զօրաւոր ես մարմնով եւ առողջ՝ տուր զոյժդ ի վաստակս այգւոյ եւ անդաստանի պատուիրանին Աստուծոյ. եւ պտղաբերեա հիւանդաց եւ աղքատաց ի Տէրնէ տուեալ քեզ ի բարեացդ: Եթէ ինչս ունիս՝ ի պետս կարօտելոց բաշխես. տուր զմարմնականդ, եւ առ զհոգեւորն. ըստ այնմ, (զամենայն ինչ ունիս՝ վաճառեա եւ տուր աղքատաց. եւ ունիցիս գանձս յերկինս:) Եթէ շնորհ իմաստութեան ունիս՝ աճեցո ի հոգեւորն, բաշխելով առատապէս ծառայակցացն քոց ի ժամու զհոգեւոր կերակուրն: Եւ թէ արուեստ մարմնական ունիս կերակրեա զաղքատս մարմնական կերակրով. առանց զրկանաց եւ գողութեան գործեաց. հալալ վաստակեա ձեռօքդ. եւ հալալ կեր բերանովդ: ԱյլելզՏէր պատուեա յարդար

վաստակոց քոց որպէս խրատէ Սողոմոն:) Եթէ մեծ ազգի ես եւ այնու պարծիս՝ հայեաց ի քեզ. զի ամենայնքն ի մի հողոյ եմք. եւ միոյ հօր Ադամայ որդիք. եւ ի մի հող լուծանիմք. եւ միաչափ է գերեզման ամենեցուն: Եւ թէ կամիս՝ մեծ առաքինութիւն ըստացիր. եւ այնու մեծազգիութիւն մարդոյ եւ փառք. եւ ոչ որ հայրենի եւ փտեալ ոսկերօք պարծիս: Տասներորդ միտք բանիս՝ առնու վերոյ առ հասարակ ամենայն մարդկան. արանց եւ կանանց. ծերոց եւ տղայոց. մեծատանց եւ աղքատանց. առողջաց եւ հիւանդաց. տերանց եւ ծառայից. եւ այլն նմանապէս: Եթէ այր ես մարմնովդ՝ հայեաց ի քեզ. եւ մի լինի թոյլ եւ կնատ հոգւովդ. այլ որպէս մարմնովդ արու ես. այսպէս եւ հոգւովդ արի եւ ժիր կաց յամենայն գործս առաքինութեան: Եւ դարձեալ՝ այր պատկեր թարգմանի. եթէ պատկեր ես Աստուծոյ մի օտար կերպարանս ի քեզ բերել որ չկայ յԱստուած. հայեաց ի քեզ՝ եթէ ցանկատր եւ իգամոլ ես, ձիոյ եւ իշոյ եւ պատկեր եւ ոչ Աստուծոյ: Եթէ հպարտ ես, առիւծոյ. եթէ ռիսապահ ես՝ ուղտոյ. եթէ որկորեայ՝ խոզի. եթէ նենգաւոր եւ խաբօղ՝ օձ եւ աղուետոյ. եթէ գող՝ մկան եւ այլն նմանապէս: Եթէ կին ես՝ հայեաց ի քեզ. զի եւ դու ներքին մարմնովդ պատկեր ես աստուծոյ. եւ զանուն կնոջն կեանս ասաց Ադամ. թէ կեանք ես՝ մի մեղանչեր. զի մի մեռցիս. (անձն որ մեղիցէ՝ մեռցի ասէ Աստուած մարգարէիւն:) Եթէ մարդոյ մեղաց պատճառ լինիս, մայր մեղաց եղեր որպէս Եւա. որ եհան զԱդամ ի դրախտէն: Ամեղ կաց՝ զի լինիցիս մայր կենաց. որպէս զսուրբ կոյսն Մարիամ Աստուածածինն: Եթէ ծեր ոք ես՝ հայեաց ի քեզ. զի մերձեալ ես ի մահ. եւ ի գերեզման է իջեալ գարշապարդ տուր զմնացեալ սակաւ աւուրս Աստուծոյ. աղօթեա արտասուօք՝ զի պաշարով երթիցես ի յանճարակ կեանս: Եթէ երիտասարդ ես եւ տղայ մանուկ՝ հայեաց ի քեզ. մի շաղախիր եւ աղտերեր գքեզ. պահեա զաւազանին պայծառութիւնն. կաց ի Զրիստոսի դրախտն. այսինքն յեկեղեցի. այլ չգտանես զայնպիսի պայծառութիւն. բազում պահեաց եւ աղօթեա. եւ ուժով հասակիդ զբարիս գործեա. եւ ծառայեա Աստուծոյ. եւ մի մոռանար զմահն. զի մահն ծերոց է եւ տղայոց: Եթէ մեծատուն ես եւ փարթամ, արա զխրատն Տէրի. (վաճառեա եւ տուր աղքատաց.) յիշեա զմեծա տունն՝ որ անտես արար զաղքատն. եւ անդէն պապակեալի հուրն, կաթիլ մի ջրոյ չլինէր արժանի. քրիստոս ասաց զայս եւ ոչ մարդ: Եթէ աղքատ ես, հայեաց ի քե. եւ յառաքինութենէ մի լինիր աղքատ. զհոգիդ եւ մարմինդ լից առաքինութեան գանձիւք. գոհացիր զԱստուծոյ. համբերեա նահատակութեանդ. յիշեա զաղքատն Ղազար, որ հանգեաւ ի գոգն Աբրահամու. այսինքն յարքայութեանն երկնից, մասնաւորիլ երանութեանն. որպէս ասէ Տէրն. (երանի աղքատաց հոգւով՝ զի նոցա է արքայութիւնն երկնից:) Եթէ առողջ ես եւ թէ հիւանդ՝ հայեց ի քեզ՝ զառողջ կեանսդ տուր Աստուծոյ եւ զբարիս գործեա եւ յորժամ հիւանդ ես, գոհացիր զԱստուծոյ՝ որ խրատեաց զքեզ. յառողջութեանն զհիվանդութիւնն յիշեա եւ երկիր յԱստուծոյ. եւ ի հիւանդութեանն՝ զմահն յիշեա եւ խոստովանեա զմեղս քո: ԵթէՏէր ես՝ հայեաց ի քեզ. եւ մի զգւեր զծառայն. զի քեզ բնութենակից է եւ ծառայ աստուծոյ՝ որ արար զնա. այլեւ զվարձ ծառայութեանն կորա մի զրկեր. զի ասէ մարգարէն. (զրկեալն ի ձեռք աղաղակէ. եւ բողոք հնձողացն եհաս յականջս Տէրն զօրութեանց:) Եթէ ծառայ ես՝ հայեաց ի քեզ. եւ հնազանդ կաց ի ծառայութեանն՝ եւ մտերիմ ծառայեա մի ակնառութեամբ եւ խաբէութեամբ. զի յԱստուծոյ տուել է նմա

իշխանութիւն. եւ քեզ հնազանդութիւն. ով որ իշխանին հնազանդ է, Աստուծոյ հրամանին է հնազաանդ. եւ հակառակն՝ Աստուած է հակառակ: Երկու իր մի լսեր իշխանին. մին զհաւատոյն. եւ մին զչար գործոյն: Չի հաւատն եւ բարի գործն՝ բաժին Աստուծոյէ, եւ ոչ իշխանին. եւ բաց յայսցանէ՝ զամենայն լուր հնազանդութեամբ: Եթէ է իմաստուն ես, հայեաց ի քեզ. յիմար լեր ի չարիս. եւ իմաստուն ի բարիս: Չչարն բնաւ մի ճանաչեր. եւ զբարին եւ զհանճարն եւ զխելս ամենեցուն բաժանեա ըստ Աստուծոյ: Եթէ տիմար ես մտօք՝ հայեաց ի քեզ. զի կարօտ ես գիտնոց. մի արասցես ինչ քո ընտրութեամբ. այլ բաժանեա ըստ Աստուծոյ: Եթէ տիմար ես մտօք՝ հայեաց՝ ի քեզ. զի կարօտ ես գիտնոց. մի արարեսցես ինչ քո ընտրութեամբ ուսիլ յիմաստնոց: Եւ թէ չունիիս խելս՝ դու վայելեա յայլոց խելացն. զի ամենեցուն բարին յԱստուծոյ է եւ իմաստութիւնն: Եւ այլ եւս համառօտ ասասցուք: Չի յերկուս բաժանի քրիստոնէութիւնս. այսինքն, եկեղեցեականս, եւ յաշխարհականս: Որք երկաքանչիւրքն հայելով յինքեանս ուղղին: Եղեղեցեական ես՝ հայեաց ի քեզ. (թէ որպէս պարտ է քեզ ի տան Աստուծոյ շրջիլ, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ սին եւ հաստատութիւն աշխարհի:) Եւ յոյժամ յեկեղեցականս անարատ եւ վնաս լինի, խախտի եւ ի փուլ գայ աշխարիս. եւ այնքան ակերման եւ հեղման արեաց՝ պարտական գտանիմք մեք: Եւ յոյժ սոսկալի եւ դողիալի է մեզ ի մեղաց՝ որ գործի յեկեղեցականս: Չի որքան մեծ սոսկալի է յեկեղեցւոջ պոռնիկն քան արտաքոյ՝ նոյնքան մեծ է եւ ահագին կարգաւորին մեղանչելն, քան զաշխարհականին. զի նոքա պատճառել կարեն զաանգիտութիւն. եւ մեք ոչ կարեմք: Աղ եւ լոյս եմք կոչեալ. որ թէ անհամիմք, ոչ յաղբի եւ ոչ յերկիր եմք պիտանացու. (եւ թէ լոյսդ որ ի քեզ խաւար է, խաւարն ո՞րչափ եւս.) Աստուած է բանս եւ ոչ մարդոյ. ասաց Աստուած. (երկինք եւ երկիր անցեն՝ եւ բանք իմ ոչ անցանիցեն:) Ահ մեծ ասէ առաքեալն անկանիլ ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ.) Եւ յանկաշառ ատեան նորա մատնիլ: Նոյնպէս եւ դուք որք յաշխարհական կարգին էք, հայեցէք ի ձեզ. զի յայլ կեանս եւ յայլ աշխարհի փոխելոց էք. ուստի այլ չէ հնար յայս կեանս դառնալոյ: Ով աստ վաստակի՝ անդ հանգչի. եւ որ աստ հանգչի, անդ չարչարի: Եւ աշխարհականն՝ աշխարհական ասի, որ սգոյ ասնուն է եւ ողբոց: Չի աշխարելի է աշխարհականն ի բազում հոգւոց եւ իցնորից. ի կնոջէ եւ ի տղայոց եւ ի բռնաւորաց. ի դիւաց եւ ի մարմնաւոր կարեաց. եւ քանի՞ ուժ պիտի եւ արթնութիւն. եւ աղօթք առ Աստուած եւ բարեխօսութիւն սրբոց. որ ոչ ընկղմի ի խորս եւ ի պտոյտս անդնոց: Եւ պարտ է միշտ ունիլ ի մտի: Նախ՝ զմահն իւր. որ անգերծանելի պատուհաս է յԱստուծոյ ամենայն մարդկանց: Երկրորդ՝ եւ գերկիւղ դատաստանին Աստուծոյ. եւ զհամար պարտուցն տալ յահաւոր ատենին Աստուծոյ: Երրորդ՝ եւ զտանջանսն յաւիտենական հրոյն որ ոչ անցանէ, եւ անքուն որդանցն. զլալ աչաց, եւ զկրճտել ատամանց. զխաւարն արտաքին, եւ զմերժումս յերեսացն Աստուծոյ, եւ զաանգիւտ կորուստն: Եւ զայս ամենայն ի մտի ունելով շնորհօքն Աստուծոյ, պահէ զինքն ի մեղաց: Եւ թէ անկանի ի մեղս, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ քաւէ յողորմութենէն Աստուծոյ. եւ հանապազ զգուշ կենաց՝ զի մի այլ մեղանչիցէ. որպէս ասաց Տէրն. (ողջացար՝ մի եւս մեղանչեր. զի մի չար ինչ լինիցի քեզ:) Ապա թէ իբրեւ զշուն դառնաս ի փսխածն քո, եւ որպէս զխոզ լուացեալ ընդ տիղմս

թաւալիս, ատելի եղեր Աստուծոյ եւ հրեշտակաց եւ սրբոց: Վասն այն ասե մարգարէն սուրբ: (Յայեաց ի քեզ՝ գուցէ լինիցի բան ծածուկ անօրէնութեան ի սրտի քում:) որ ոչ միայն գայտնի գործս հրամայէ խափանել. այլեւ զծածուկ խորհուրդ սրտին սրբել ի մեղաց: Եւ այսպէս մեկնեալ եղեւ բանս այս ի սուրբ եւ յուղղափառ վարդապետացն մերոց, ի խրատ եւ ի զգուշութիւն ամենայն հասակի: Այլ որ նախախնամօղն է ամենայն աշխարհի եւ պահապանն Իսրաէլի, ինամարկեալ պատսպարեսցէ զբոլոր եւ զմասնաւոր արարածս իւր. զիմանալիս եւ զգգալիս. զբանաւորս եւ զբանբանս. եւ բացեալ զաննիրհելի եւ զողորմած ակն, տեսցէ զկարիս եւ զկարօտութիւն սուրբ եկեղեցւոյ քրիստոնէախումբ ազանց. յանձախելի ծովէ բարութեան իւրոյ՝ լցուցէ զպակասութիւն իւրաքանչիւրոց: Որեւ մեզ յօգնել նայեսցի տկարացեալ բնութեանս. եւ փութացի յընկերել անկեալ եւ կործանեալ ազգիս մերոյ ի պէսպէս խորխորատս մեղաց. շնորհելով զամենայն յանցանս մեր. գթալով ի վերոյ մեր նովին մարդասէր կամօք. որ եկն ի ինդիր մոլորեալ ոչխարին եւ կորուսեալ պատկերին. եւ խաչիւ եւ թաղմամբ աւարտեալ զփրկութիւն մեր, եւ կործանմամբ դժոխոցն ազատեաց զհոգիսն որք յԱդամայ, յարեաւ Աստուածաբար. եւ ել յերկինս նովին մարմնով: Որ եւ գալոց է հայրենի փառօք՝ դատել զկենդանիս եւ մեռեալս: Որում փառք եւ զօրութիւն եւ երկրպագութիւն ընդ Յօր Իւրում, եւ Ամենասուրբ Յոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն Սուրբ Երրորդութեան. ի բանն՝ (Յոգի է Աստուած. ' երկրպագուած(ց) նորա հոգւով ' ճշմարտութեամբ պարտ է երկրպագանել:) Յօհ.4.24: (Գլուխ Ը)

Երրորդութիւն գերակայ գերագոյնդ Աստուած՝ ' գերագոյնդ բարութիւն. քրիստոնէից վերակացու. երեքլուսեան Աստուածութիւն: Լոյս եւ լոյս. անծին եւ ծնունդ եւ բղխումն անճառ: Յայր. եւ Որդի. եւ Յոգի Սուրբ: Որ լոյս ծագեցար ի մէջ խաւարին ի սկզբան արարչութեանն մերոյ: Եւ յետոյ ի լեառն Սինայ ի մէջ ամպոյն լուսով երեւեցար Մովսիսի: Նոյնպէս եւ յայնմ աւուր հրեղէն լեզւաւ ի դասս առաքելոցն իջեր Սուրբ Յոգի: Որեւ ի նմին աւուր որդիդ միածին գալոց եւ փառօք Յօր եւ Սուրբ Յոգւովդ. եւ նորոգես զամենայն երեսս երկրի: Ծագեա զնշոյլս շնորհաց քոց ի խաւարամած ոգիս մեր եւ ի միտս. եւ ընդ հրեղէն լեզւացն՝ տուր մեզ բան եւ իմաստութիւն: Չի ի քեն, եւ քեւ կարացից խօսիլ եւ իմանալ զբանս Քո վասն Քոյ որ ասէ: (Յոգի է Աստուած. եւ երկրպագուաց նորա՝ հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել:) ՉԱստուածային անեղ եութիւնն՝ երեք անծինք եւ մի բնութիւն ուսուցին եւ դաւանեցին ամենայն Սուրբ Գիրք Աստուածաշունչք, եւ հոգելից վարդապետք: Վասն որոյ եւ մեզ պարտ է զնոյն պաշտել եւ երկիրպագանել: Չի որ կարօտանայ աչաց՝ պարտի հաւատալ տեսողացն զզանազան գոյնս: Եւ խուլն պարտի հաւատալ թէ, գոյ քայցր եղանակ ձայնից: Եւ այս վասն երկու պատճառի: Նախզի՝ թեպէտ զմի զգայութիւն ոչ ունի, այլ զչորս զգայութիւն ունի, որով հմտանայ ի զգալիսս: Երկրորդ՝ զի բազումք են որք վկայեն՝ որք ունին զամենայն զգայութիւնս կատարեալ: Ապա ուրեմն որք ոչ ունին սրատես աչս՝ պարտ է հաւատալ տեսողացն: Նոյնպէս մեք որք մեղօք կուրացեալ ենք, պարտիմք հաւատալ սուրբ

առաքելոցն, մարգարեիցն. եւ աստուածաբան վարդապետացն. զի նոքա են հոգեւոր տեսողք: Եւ զոր օրինակ՝ թէ մանուկ մի ծնեալ իցէ ի խաւարչտին տեղոջ, եւ թեպէտ չէ տեսեամբ զարեգակն եւ զլուսին, պարտ հաւատալ թէ զոյ արեգակն եւ լուսին: Նմանապէս մարդիկ որք ծնեալ են ի մէջ խաւարի մեղաց եւ անգիտութեան պարտին հաւատալ սրբոցն եւ բարի անանց. որոց Աստուած զինքն յայտնեաց նոցա: Որպէս ասաց Տէրն առաքելոցն. (զամենայն ինչ զոր լուայ ի Զօրէ իմ մէ, ծանուցի ձեզ. եւ դուք վկայ էք վասն իմ:) եւ Նիկողիմոս եկեալ առ Յիսուս ասէ. (զհիտեմք զի յԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանդ առնել զորդուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա:) Յայս բանս՝ յիշէ զՍուրբ Երրորդութիւնն. այնու որ ասէ յԱստուծոյ, զհայր Աստուած անուանէ: Եւ եկեալն զորդի. եւ Աստուած իցէ ընդ նմա, զհոգին սուրբ գործակից: Եւ դարձեալ՝ յիշէ զԵրրորդութիւնն Սուրբ այնու որ ասէ. (որ ոչ ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքարութիւնն Աստուծոյ: Նոյնպէս եւ ամենայն ծնեալն ի հոգւոյն:) Եւ յայլ ուր ասէ. (մկրտեցէք զնոսա յանուն Զօր եւ Որդւոյ եւ Զոգւոյն Սուրբ:) Եւ աստ ասէ. (հոգի է Աստուած.) այսինքն, թէ աստուածութիւնն է Զայր եւ Որդի եւ Զոգի Սուրբ: Արդ վասն ամենասուրբ Երրորդութեան զճշմարտութիւն ի յերից վկայութեանց ունիմք հաստատեալ: Նախ՝ յԱստուածաշունչ գրոց: Երկրորդ՝ յարտաքին իմաստասիրաց: Երրորդ՝ յԱստուածաբան վարդապետաց, եւ յօրինակաց: Տեսցուք զառաջինն յԱստուածաշունչ գրոց: Նախ՝ Մովսէս ասէ. (Ի սկզբանէ արար Աստուած. այսինքն Զայր:) Եւ ասաց Աստուած. այսինքն Որդի. (եւ հոգի Աստուծոյ շրջեր ի վերոյ ջուրց:) Եւ դարձեալ ասէ: (Լուր Իսրաէլ. Տէր Աստուած քո Տէր մի է:) Երիցս Տէր եւ Աստուած՝ զերեք անձնաւորութիւն ասէ. եւ մի վասն միութեան բնութեանն: Եւ դարձեալ՝ Նոյ ասէ: (Օրհնեալ Տէր Աստուած Աստուած Սեմայ:) Եւ դարձեալ՝ Աբրահամու երեք արք երեւեցան ի Մամբրէ. եւ որպէս միոյ երկիրեպագ: Եւ դարձեալ՝ Մովսէս ասաց շինել Գ քաղաք ապաստանի. միաչափք հեռի ի միմեանց: Երկրորդ՝ Դաւիթ ասէ ի սաղմոսն: (Կենդանի է Տէր եւ օրհնեալ է Աստուած. եւ բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ:) Եւ դարձեալ՝ (ողորմութեամբ Տէր լի եղեւ երկիր. եւ բանիւ Տէրն երկինք հաստատեցան. եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա:) Եւ դարձեալ ասէ: (Ձայն Տէր ի վերայ ջուրց. եւ Աստուած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:) Եւ դարձեալ ասէ: (Աստուած Աստուած Տէր խօսեցաւ՝ կոչեաց զերկիր:) Եւ դարձեալ ասէ: (Օրհնեաց զմեզ Աստուած Աստուած մեր. Աստուած մեր օրհնեսցէ զմեզ:) Եւ յայլ ուր ասէ: (Որդի իմ ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ:) Եւ յայլ ուր ասէ: (Նա կարդացէ առիս Զայր իմ ես դու:) Եւ դարձեալ ասէ: (Ասաց Տէր ցՏէր իմ նիստ ընդաջմէ իմմէ:) Եւ դարձեալ ասէ: (Յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:) Եւ դարձեալ՝ (Յո՞ երթայց ես յոգւոյ քոմմէ. կամ յերեսաց քոց ես յո՞ փոխեաց:) Երրորդ՝ Սողոմոն ասէ յառակասն: (Որդի եմ ես Զօր իմոյ. միայն միածին յառաջ քան զմայր իմ. եւ նախ քան զամենայն լերինս եւ բլուրս ծնաւ զիս. եւ յորժամ հաստատեր զամենայն, ետընդ նմա էի համապատշաճեալ:) Եւ դարձեալ ասէ: (Աստուած իմաստութեամբ հիմունս էարկ յերկրի. եւ հանճարով իւրով զանդունդս պատառեաց:) Եւ դարձեալ ասէ: (Գոյ ի նմա հոգի մտաւոր՝ Սուրբ՝ Միածին:) Եւ դարձեալ ասէ: (Երեք են զոր դժարին է ինձ իմանալ:) Զորրորդ՝ Եսայի ամէ: (Սուրբ Սուրբ Տէր զօրութեանց.) երիցս սուրբ Աստուծոյն՝

յայտնէ գերորդութեան անձինսն. եւ մի տեր զբնութիւնս: եւ դարձեալ ասէ: (Ձգեաց գերկիսս որպէս խորան. եւ երեք մատամբ կախեաց գերկիր. եւ դու Տէր Յայր մեր. եւ յաւիտենից է անուն Զոն:) Եւ դարձեալ ասէ: (Ես որ ամենեցուն ծնունդ շնորհեմ, մի թէ ես ո՞չ ծնանիցիմ ասէ Տէր ամենակալ:) Եւ դարձեալ ասէ: (Յոգի յինքէն ելցէ. եւ զամենայն շունչ ես արարի: եւ երկոտասան մարգարէքն: Անդգեաս ասէ: (Ես եմ. եւ բանն իմ եւ հոգին իմ ի միջի ձերում ասէ Տէր ամենակալ:) Եւ Չաքարիաս ասէ: (Սաստեցէ ի քեզ Տէր:) Եւ Յոբ ասէ: (Յոգի աստուածեղէն որ արար զամենայն:) Եւ ցԴանիէլ ասաց թագաւորն: (Յոգի աստուծոյ գոյ ի քեզ:) Եւ վասն որդւոյն ասէ: (Ոչ երեք արք արկի ի հնոցն. եւ Չորրորդն նման է Որդւոյն Աստուծոյ:) Եւ դարձեալ ասէ: (Հին աւուրցն նստաւ. որ է հայր. եւ ի նա եկն Որդին Աստուծոյ. եւ թագաւորութիւն նորա յաւիտենից որ ոչ անցանէ:) Այսոքիկ՝ եւ առաւել քան զայս՝ ի Սուրբ Գրոց վկայութիւնք են վասն Սուրբ Երրորդութեան: Տեսցուք գերկրորդն յարտաքին իմաստասիրաց. զոր առաւել ի նոցանէ վարդապետք հաստատեն այսպէս: Նախ՝ բնութեամբ բարւոյն է հաղորդել զինքն այրոցն. եւ որչափ առաւել բարի է, առաւել հաղորդէ զինքն. եւ զի Աստուած է բովանդակ բարի. ապա ուրեմն բոլորովին հաղորդէ զինքն: Եւ զի ոչ ոք ստեղծուած է անչափ որպէս Աստուած. վասն այնորիկ հարկ է ասել Աստուծոյ Որդի ունիլ. որոյ եւ հաղորդեցէ զինքն բոլորովին: Երկրորդ՝ պատուական եւ լաւագոյն է այն՝ որ բարի է ծնանի զբարին եւ բոխէ զանվախճանն. քան զայն՝ որ միայն բարի է եւ անվախճան. ապա թէ ոչ՝ զօրութիւնն պատուական Գոյր քան զներգործութիւնն. այլ Աստուած է պատուական եւ լաւագոյն քան զամենայն է. ապա եւ յառաջ էած յինքէնէ զանվախճան բարին որ է Աստուած: Երրորդ՝ ամենայն ստեղծածքս չափաւորք են. եւ ամենայն որ կայ ի նոսա՝ չափաւոր է. նոյնպէս Աստուած ունի իմացումն եւ կամք. այսպէս աստուած իմացումն եւ կամքն անչափ են. վասն այնորիկ զանձն կայացուցանեն: Չորրորդ՝ յաւիտենական եւ հանուն ներգործութիւնն՝ ներգործէ անհուն եւ յաւիտենական. ապա թէ ոչ՝ ոչ լինէր զուտ ներգործութիւն. ապա ուրեմն ներգործէ զյաւիտենական եւ զանհուն բարին: Հինգերորդ յայտնի է՝ զի Աստուած ունի իմացումն եւ կամք. եւ որպէս իմանալով զինքն ծնանի զբանն յինքէնէ. այսպէս կամելով զինքն, բոխէ զհոգին Սուրբ: Վեցերորդ՝ որպէս ի մէջճ ամենայն եութեանց՝ մին է նախկին եութիւն. այսպէսի մէջ ամենայն շարժմանց՝ մին է նախկին շարժումն. եւ զի ծնունդն է շարժումն. վասն այսորիկ Աստուած որ է ամենեւին նախկին եութիւն՝ ունի երկու ելումն. մին բնական որ է իմացումն իւր. եւ մին կամաւորական որ է կամիլ իւր: Եւ այսպէս Որդին է իմաստութիւն Յօր. եւ Յոգին Սուրբ կամք նորին: Եւ այս նոյն է որպէս յառաջն ասացաւ: Եօթներորդ՝ ամենայն որ կարգ ունի՝ պարտ է զի լինիցի առաջին միջին եւ վերջին. եւ Աստուած կարգ ունի. որպէս ասէ Արիստոտել թէ՛ (Աստուած զամենայն կարգ ունի՝ զոր երեք թուով պաշտելի է:) Ութներորդ՝ ամենայն իր անհատ՝ մարմին թէ անմարմին՝ ունի եութիւն եւ զօրութիւն եւ ներգործութիւն. եւ զի խոստովանեալ է թէ՛ գոյ եւ է է Աստուած. ապա եւ զօրութիւն իւր է Որդին, եւ ներգործութիւն Յոգին Սուրբ: Այլեւ ամենայն մարմին՝ է եռակի տարրոշ. այսինքն, երկայն եւ լայն եւ խոր. օրինակ դիր գտունն. յորոց զմին բառնալն անհնար է. զի ոչ մնայ մարմին: Իններորդ՝ անկատար հայրն՝ կարէ կատարեալ Որդիս ծնանիլ. որպէս կոյր

հայրն՝ աչքաւոր որդի ծնանի: Եւ թեպէտ մարդն ոչ առնու կատարելութիւն ի ծնունդն որդոյ իւրոյ. սակայն ի կատարելութեան մարդոյն է ծնանիլ զնման իւր: Եւ ամենայն կատարելութիւն պարտ է լինիլ ի յԱստուած: Վասն որոյ ասէ Եսայի. (Ես ամենեցուն ծնունդ շնորհեմ. մի թէ ես ո՞չ ծնանիցեմ ասէ Տէր:) Տասներորդ՝ հրեշտակք եւ մարդիկք՝ են պատուական եութիւնք. եւ ունին բան եւ կենդանութիւն: Եւ գրկեալն ի նոցանէ անբան եւ անկենդան որպէս քար: Եւ որպէս կուռքն որ (չ)Աստուածք կոչին՝ անբանք եւ անկենդանք են. այլ Աստուած է պատուական եութիւն. եւ ունի բան եւ կենդանութիւն որ է որդին եւ հոգին Սուրբ: Եւ թէ ասէ հակառակն. ունի Աստուած բան՝ այլ արարած է եւ ոչ ծնունդ: Ասեմք առ այս: Նախ եթէ բանս մեր՝ ծնունդ է մտացս մեր, եւ ոչ արարած. նոյնպէս եւ այլն: Երկրորդ՝ մինչ արար զբանն՝ անբան էր: Եւ դարձեալ՝ ասեն հակառակքն. թէ բանն Աստուծոյ եւ հոգին անձն է ի յԱստուած. ապա բազում անձինքն են ի յԱստուած եւ ոչ Գ: Չի Աստուած ունի բան՝ եւ տեսողութիւն եւ լսողութիւն՝ եւ զօրութիւն եւ ներգործութիւն եւ յաւիտենականութիւն՝ քաղցրութիւն՝ եւ բարութիւն, եւ այլն: Այլ ասեմք առ այս: Նախ թէ՛ սոքա ասացեալքս, տեսողութիւն, լսողութիւն, զօրութիւն, եւ այլն, ոչ հային ի ներքս ի յինքն. այլ արտաքս ի յարարածս: Վասն որոյ ոչ են անձինքն. այլ բան եւ հոգին է ի ներքս եւ յինքեան. վասն որոյ անձնաւորք են: Դարձեալ ասացեալքս ամենայն՝ բարիութիւն, քաղցրութիւն, զօրութիւն, եւ այլն, վերաբերին ի յերեք անձինսն. որպէս ցուցաւ յառաջագոյն: Այս երկրորդ գլուխն: Տեսցուք գերորդն Յաստուածաբան Վարդապետաց. որք հաստատեն գերորդութիւնն ի միտս մեր բազում օրինակաւ: Նախ՝ որպէս արեգակն ունի բոլորակութիւն եւ լոյս եւ ջերմութիւն իւր. այսպէս Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ՝ հաւասարք են միմեանց: Կամ որպէս յարեգակնէն երկու լոյսք ի յառաջ գան. այսինքն, դէղին եւ սպիտակ լոյսն. այսպէս որդին եւ հոգին սուրբ ի Հօրէ:

Կամ որպէս երեք լոյսք ի մի խառնեալ լապտեր: Երկրորդ օրինակ՝ ասեն վարդապետք զմարդն թէ, է պատկեր Աստուծոյ. մի է հոգւով եւ մարմնով եւ բանիւ. թէ հոգի չունի, մեռած է. թէ բան չունի, մուսճ է: Երրորդ օրինակ՝ որպէս Ադամ Եւա եւ Սեթ ի նմանէ. մինն ծնունդ. եւ միւսն ոչ մի է բնութիւն երիցն: Չորրորդ՝ որպէս բանական հոգի մարդոյս՝ ունի միտք եւ կամք եւ յիշողական են երեք զօրութիւնք եւ մի եութիւն: Նոյնպէս Երրորդութիւնն Սուրբ՝ մի է Աստուածութիւն եւ երեք անձինք: Եւ դարձեալ՝ միտքն իմաստումնն եւ կամքն՝ մի են բնութեամբ: Հինգերորդ օրինակ՝ որպէս խնձորն երեք որակութիւն ունի այսինքն, համ եւ հոտ եւ գոյն. եւ երեք զգայութեամբ: Եւ դարձեալ օրինակ՝ որպէս հուր եւ լոյսն եւ ջերմութիւնն իւր: Եւ որպէս կերպիւ ինչ բաժանի ի հրոյն. այսինքն, յորժամ ջուրն ջերմանայ. սակայն ջերմութիւնն անապակաս մնայ ի հուրն. նոյնպէս եւ հոտ խնձորին բաժանիլ կարէ: Այսպէս որդին Աստուծոյ միայն մարդացաւ եւ ծնաւ ի Սուրբ Աստուածածէն, աննուագ մնալով ընդաջմէ Հօր Աստուծոյ: Վեցերորդ օրինակ՝ հոգին եւ բանն եւ շունչն՝ մի են եւ երեք. բանն ծնունդ. եւ շունչն բխումն ի հոգւոյն: Եօթներորդ՝ որպէս մի է մարմինն եւ ձեռն եւ մատն՝ եւ երծեքեանս՝ զմի բնութիւն ունի. այլ երեք յատկութիւն: Ութներորդ՝ որպէս մի բնութիւն են ջրոյ ծով՝ եւ գետ՝ եւ աղբիւր: Իններորդ՝ որպէս մի է արմատ եւ ծառն եւ պտուղն: Եւ դարձեալ՝ մի է ծաղիկն եւ գոյնն եւ հոտն ի

նման: Տասներորդ օրինակ ամենայն եուֆին մարմին թե անմարմին՝ ունի բնութիւն եւ զօրութիւն եւ ներգործութիւն: Եւ դարձեալ՝ ունի եուֆին գեղեցկութիւն եւ բարութիւն: Եւ այլ բազում ինչ օրինակ տան վարդապետք Սուրբ Երրորդութեանն. իբր նեցուկ տկար մտաց մարդկան: Այլ նա ինքն է անօրինակ եւ աննման. եւ ի վեր քան զամենայն եղեալս: Ինքեան միայն է նման. եւ որդին նմին միածին. եւ Յոգին Սուրբ: Եւ թէ ոք ասիցէ ընդդէմ, (չիք ոք բարի, բայց, մի Աստուած ասէ աւետարանն:) Եւ առաքեալն յառաջին կորնթացուցն ասէ. (մեզ մի է Աստուած հայր՝ յորմէ ամենայն:) Ասեմք առ այս: Եթէ ասելն մի Աստուած զորդի եւ զհոգին Սուրբ ոչ ի բաց որոշէ: Նախզի՝ ի միոյն Աստուծոյ է Որդին եւ Յոգին Սուրբ: Եւ դարձեալ՝ որպէս Աստուած է Հայր. Աստուած է Որդին. Աստուած է եւ Յոգին Սուրբ: Այլ մի ասելն՝ չորս կերպիւ է իմացումն: Նախ մի ասելն զԱստուած՝ ընդդէմ բազում Աստուածոց կոռցն է՝ որք չեն Աստուածք. ոչ բնութեամբ, եւ ոչ ներգործութեամբ. եթէ յերկինս, եւ եթէ յերկրի: Երկրորդ՝ մի է Աստուած բնութեամբ՝ զօրութեամբ՝ փառօք, եւ իշխանութեամբ. թեպէտ երեք են անձինք ընդ յատուկ դիմաց: Երրորդ՝ մի է ընդ թուոյն. որպէս արեգակն մի թուով. եւ ոչ երեք թիւ ըստ երեք անձանցն. որպէս Գ մարդ երեք անձինք են, եւ երեք թիւ: Այլ Սուրբ Երրորդութիւնն՝ Գ անձինք են եւ մի թիւ. մի Աստուած եւ մի թագաւոր: Չորրորդ՝ մի Հայր. մի Որդի. եւ մի Յոգի: Չի մի է հայր եւ պատճառ որդոյ ծննդեան եւ հոգւոյ բխման. եւ մի որդի եւ ոչ երկու. թեպէտ որդի եւ հոգի ի հօրէ են. եւ մի հոգի անփոփոխ. զի ոչ փոփոխի ի հայր կամ յորդի: Եւ այսպէս Սուրբ Երրորդութիւնն մի է եւ երեք. երեք եւ մի. ի վեր քան զմիտս եւ բան հրեշտակաց եւ մարդկան: Ինքն ինքեան միայն գիտելի. եւ մեզ հաւատալի ի սուրբ գրոց եկ յօրինակաց. եւ ոչ քննելի: Չի քննել յանդգնութիւն է, եւ հաւատալն փրկութիւն. եւ ճանաչելն կեանք յաւիտեանական: Որում եւ քեզ արժանի արասցէ երկրպագութեան Սուրբ Երրորդութեանն: Եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ ի բանն տերունական որ ասէ: (Յորժամ յաղօթս կայցեք՝ասասցիք Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո:) Դուկ. 11. 2: (Գլուխ Թ)

Ամենայն աղօթք յոյժ պատուական՝ գովելի գործ են. զի զմարդն հրեշտակաց հաւասար եւ խօսակից Աստուած առնեն: Այլ այս Աղօթս՝առաւել գերագոյն եւ պատուական է քան զամենայն վասն չորս պատճառի: Նախզի՝ Աստուած ուսոյց է. զի Տէր մեր ուսոյց մեզ եւ ոչ մարդ ոք առաքեալ կամ մարգարէ: Երկրորդ՝ զի կարճաժօտ է. եւ կարէ ամենայն մարդ ի բերան առնուլ: Երրորդ՝ զի հարկաւոր է ամենայն մարդոյ ուսանիլ. որպէս դաւանութիւն հաւատոյն հարկաւոր է. նոյնպէս եւ աղօթքս այս: Եւ որպէս ի հինն գտասն բանեան օրէսն ամենայն ոք ուսանէր. նոյնպէս եւ զայս ի նորս: Չորրորդ՝ զի բեղմնաւոր է. եւ բազում բարութիւն ի սմա ժողովեալ. այսինքն, զամենայն հոգեւոր եւ զմարնմաւոր ինդիրս պարունակէ. եթէ աստի կենացս է, եւ եթէ հանդերձելոյն: Վասն այն պարտ է ամենայն մարդոյ ուսանիլ եւ ասել. (Հայր մեր:) Եւ այսր բանի՝ երեք ինչ քննելի է մեզ: Նախ թէ՛ որպէ՞ կոչի Հայր: Երկրորդ ասելն Մեր: Երրորդ որ ասէ. (Յերկինս:) Գիտելի է զառաջինն: Չի Աստուած հայր կոչի 2 իմն

եղանակաւ: Նախ՝ բնութեամբ. զի սկիզբն է պատճառ որդւոյ ծննդեան. եւ հոգւոյն բխման. ըստ այնմ, (հոգին ի հօրէ ելանէ:) եւ (Տերասացցիս որդի իմ ես դու:) Երկրորդ՝ հայր կոչի արարչութեամբ. զի ստեղծող է ամենայն արարածոց. ըստ այնմ, (ո՛չ սա ինքն է Յայր քո՝ որ արար եւ ստեղծող զքեզ:) Երրորդ՝ հայր կոչի վերստին նորոգմամբ. զի որ ստեղծանէ յոչնչէ՝ նորոգէ յապականութենէ. ըստ այնմ, (ընկալան իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ:) Չորրորդ՝ Յայր կոչի իմաստութեամբ եւ ուսուցմամբն. որ խրատէ եւ ուսուցանէ. ըստ այնմ, (Աստուած իմ ուսուցեր զիս ի մանկութենէ իմմէ:) Հինգերորդ՝ Յայր կոչի գթութեամբ եւ ինամօք. որ սնուցանէ եւ կերակրէ. ընդ այնմ, (ամենայն տուրք բարիք՝ եւ ի Յօրէն լուսոյ:) Վեցերորդ՝ հայրենի ժառանգութեամբն. որ որդւոյ իւրոց բաժանէ. որպէս ասէր կրտսեր որդին. (Յայր տուր ինձ բաժին. եւ նա բաժանեաց զկեանսն.) Վասն այն կոչի Յայր: Եւ այսպէս վեց կերպիս՝ կոչի մեզ Յայր Աստուած յատուկ: Առաջին՝ քրիստոնէիցս շնորօք եւ կոչմամբ է Յայր. եւ ոչ բնութեամբ որպէս է Յայր եւ պատճառ որդւոյ ծննդեան եւ հոգւոյն բխման: Եւ մեք եղբայրք կոչիմք Քրիստոսի եւ քրիստոսնեայք. եւ ընդունիմք ի մեզ զհոգին սուրբ. յայտ է՝ զի մեք կոչմամբ լինիմք որդիք Յօր Աստուծոյ, թեպէտ ոչ բնութեամբ. որպէս ասէր՝ (ելանեմ ես առ Յայր իմ բնութեամբ, եւ առ Յայր ձեր կոչմամբ, եւ Աստուած իմ կոչմամբ եւ Աստուած ձեր բնութեամբ:) Երկրորդ՝ Յայր է մեզ արարչութեամբ. եւ առաւել քրիստոնէայ Քրիստոս. զի ամենայն Որդի պատկեր եւ նման է Յօրն: Եւ մեք ի պատկերն Աստուծոյ ստեղծաք կերպարանակից ընդ այնմ, (կերպարանակից եմք պատկերի Որդւոյն Աստուծոյ: Երրորդ՝ Յայր է մեզ ծննդեամբ աւագանին. զի պատկերն ապականեալ մարմնաւոր ծննդեամբ, նորոգի ի մեզ հոգեւոր ծննդեամբ. ըստ այնմ, (ոչ յարենէ եւ ոչ ի մարմնոյ. այլ յԱստուծոյ ծնան:) Չորրորդ՝ Յայր կոչի իմաստութեամբ եւ ուսմամբ. զի զաւետարանն ուսոյց մեզ. եւ զիմաստութիւն Սուրբ Երրորդութեանն. ըստ այնմ. (ո՛ Յայր՝ որ ծածկեցեր զայս յիմաստոնց եւ ի գիտոնց. եւ յայտնեցեր տղայոց.) որք աղայք լինիանմեղութեամբ: Հինգերորդ՝ Յայր կոչի մեզ ինամօք. որ սնուցանէ զմեզ եւ կերակրէ. ոչ միայն զմարմնաւորս, այլեւ զհոգեւորն որ է մարմին եւ արին Որդւոյն Աստուծոյ. եւ այնու միաւորէ զմեզ ի գլուխն Քրիստոսի: Վեցերորդ՝ Յայր կոչի մեզ հայրենի ժառանգութեամբն. որ խոստացաւ զարքայութիւնն երկնից. ըստ այնմ, (որպէս Յայր ուխտեաց ինձ՝ եւ ես ուխտեմ ձեզ զարքայութիւն:) Դարձեալ՝ այլ իմն տեսութիւն գոյ բանիս որ ասեմք (Յայր:) Չի տասն ազգ բարութիւն ցուցանէ մեզ: Առաջին՝ ասելն հայր, ցուցանէ զգութն եւ զսերն զոր ունի ի վերոյ մեր. ըստ այնմ, (որպէս գթայ Յայր ի վերոյ որդւոց Իւրոյ:) եւ ե թէ՛ (Յայր սիրէ զորդի:) Երկրորդ՝ յայտնէ մեզ զծածկելոց գիտութիւն. (զի զամենայն ինչ ասէ՝ ցուցանէ նմա:) Երրորդ՝ զի ներէ մեզ եւ ոչ տանջէ. եւ երբեմն խրատէ սիրով որպէս Յայր զորդին: Չորրորդ՝ զի զհայցելին տայ մեսզ ըստ պատճառի. ընդ այնմ, (զոր ինչ ինչդեք ի Յօրէ՛ տացէ ձեզ:) եւ թէ՛ (Յայրն երկնաւոր գիտէ պարզեւ տալ որդւոց իւրոց:) Հինգերորդ՝ զի նա հոգայ վասն մեր եւ պատրաստէ որպէս Յայր որդւոյ. ըստ այնմ թէ, (գիտէ Յայրն ձեր երկնաւոր զինչ պիտոյ է ձեզ:) Վեցերորդ՝ զի Յայր է՝ թողութեանն մեղաց արժնի առնէ. եւ արդարութեանն եւ սրբութեան կցորդ առնէ. ըստ այնմ, (Աստուած զիրաւունս Քո արքայի տուր. եւ զարդարութիւնս Քո Որդւոյ թագաւորի:) Եօթներորդ՝ ի տեսանելն

զմեզ ի չարիս, եւ ի վիշտս փորձութեան, ոչ ժուծէ. այլ օգնական եւ ձեռնտու լինի որպէս Յայր Որդոյ. ընդ այնմ թէ, (փրկիչ իմ ի թշնամեաց իմոց հօրաց: Եւ թէ՛ քեւ փրկեցայց ի փորձութենէ իմմէ:) Ութներորդ՝ զի զհոգին ճշմարիտ ի մխիթարութիւն մեզ տայ. ըստ այնմ, (աղաչեցից զՅայր՝ զի այլ մխիթարիչ տացէ ձեզ զհոգին:) Իններորդ՝ յորժամ Յայր կոչեմք զԱստուած, հանէ զմեզ ի գերագոյն պատիւ եղբայրութեանն Զրիստոսի, եւ ոչ ծառայութեան. ըստ առաքելոյն որ ասէ. (աղաղակեմք արքայ հայր. այսուհետեւ չեմք ծառայ՝ այլ որդի. ժառանգ եւ ժառանգակից Զրիստոսի:) Տասներորդ՝ զի ասէ Յայր՝ ոչ թողուցու զմեզ միայն լոկ անուամբ կոչիլ որդի. այլ ընդ արժանի անուանն եւ գործն ինդրէ: Չի գործն զանունն հպաստատէ. որպէս ասաց առա Յրեայսն. (Եթէ որդիք Աբրահամու Էիք՝ զգործս Աբրահամու գործէիք:) Եւ անհաւատիցն ասէր. (թէ չգործեմ զգործս Աստուած, մի հաւատայք ինձ. ապա թէ գործեմ, թէ ինձ ոչ հաւատայք, սակայն գոծոցն հաւատացէք թէ, Աստուած Որդի եմ:) Նոյնպէս եւ առ մեզ բազում կերպիւ հայր կոչեմք զԱստուած. որպէս ստեղծմամբ, եւ աւագանաւ, եւ այլ որ ասացաւ՝ եւ նոքա ի ծածուկ են: Արդ՝ թէ գործովն Յայր կոչեմք զԱստուած, ամենայ եղանակ հայրութեանն յայտնի լինի եւ ճշմարտի ի մեզ: Եւ թէ ոք ասիցէ՝ զի՞նչ է գործն Աստուծոյ զոր ի մեզ բերեմք: Ասեմք եթէ գործն Աստուծոյ՝ բարութիւն է. սրբութիւն. արդարութիւն. ողորմութիւն խոնարութիւն. ճշմարտութիւն. եւ այլ սոյնպիսիք: Արդ՝ յորժամ զբարին ի միտս մեր բերեմք, զարդարութիւնն ի հոգիս, զսրբութիւնն ի մարմնս, զողորմութիւնն ի գործն, զխոնարիութիւնն ի կամս. զճշմարտութիւնն ի լեզուս, եւ այլ առաքիւնութիւնս ի մեզ կատարեմք, յայն ժամ արժանաւոր որդիք անուանիմք Յօրն երկնաւորի. որպէս ասէ Տէրն. (եղերուք կատարեալք՝ որպէս եւ հայրն ձեր երկնաւոր կատարեալ է.) յայնժամ իշխեմք զԱստուածն ամենայն մեզ Յայր անուանել: Ապա թէ անարժան եմք գործով՝ եւ Յայր կոչեմք զԱստուած, վեց ազգ հայիոյութեամբ մեղանչեմք: Նախզի՛ խորթ լինիմք եւ ոչ հարազատ որդիք. զի ամենայն Որդի հարազատ՝ զնմանութիւն Յօրն բերէ յինքեան. եւ խորթ որդին՝ ոչ ժառանգէ զհայրենիսն: Երկրորդ՝ զի որ զգործս ոչ ունիմք, սուտ խօսիմք թէ հայր ես մեզ. եւ ստախօսն որդի սատանայի է որպէս ասէ աւետարանն: Երրորդ՝ սուտ ուսոյց մեզ ասել հայր՝ որ ճշմարտութիւն է Զրիստոս. եւ այս առաւել հայիոյութիւն է եւ մեղք մեծ: Չորրորդ՝ յանդձնութիւն է եւ լրբութիւն հայր կոչել զԱստուած անարժան գործով: Հինգերորդ՝ զի պիղծ ձայնիւս մեր՝ աղտեղանայ սուրբ անունն Աստուծոյ. որպէս մարգարէիւս ասաց. (ընդ Է՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ եւ այլն:) Վեցերորդ՝ անարգեմք զանունն Աստուծոյ եւ անիծանեմք՝ յորժամ մեք չար լինիմք գործով, եւ զաստուած հայր մեզ կոչեմք: դարձեալ՝ տեսցուք զբանս. յորժամ հայր ամ հայր կոչեմք բանիւ՝ եւ չար լինիմք գործով՝ զաղօթսն լսէ Աստուած եւ զգործսն տեսանէ. զի՞նչ պատասխանի տայ մեզ. այինքն թէ, սուտ ասես բանիւդ. եւ չես իմ որդի գործովդ: Ես անապականութեան եմ հայր. եւ դու ապականեալ ես գործով. ոչ ես իմ որդի. զի պատկերս իմ ոչ է ի քեզ. այլ սատանայի ես որդի. եւ զնորա պատկերն ունիս ի քեզ. չես իմ ընտանի. զի ես բարի եմ եւ դու չար. ես ողորմած եմ եւ դու անողորմ: Ես արդար եմ եւ դու անիրաւ: Ես լոյս եմ. եւ դու խաւար մտօք եւ գործով. եւ ոչ միաբան լոյսն եւ խաւարն. եւ ոչ չարն եւ բարին. նոյպէս եւ այլքն: Ոչ լսեմ քեզ. եւ ոչ կատարեմ զաղօթս քո.

զի ոչ ճանաչեմ զքեզ. այլ հայրն քո սատանայ է՝ նա լսե քեզ: Չայնպիսի բանս պատասխանէ հայրն երկնաւոր, յորժամ անարժան աղօթեմք: Եւ թէ որ ասիցէ՝ որպէս եմք որդիք սատանայի. զի նա զմեզ չէ ստեղծեալ եւ ոչ կոչեմք հայր մեզ: Ասեմք, թեպէտ ոչ է ծնեալ եւ ոչ ստեղծեալ զմեզ սատանայն, եւ ոչ բնաւ կոչիմք որդիք, այլ մարդն լինի որդի սատանայի չորս կերպիւ: Նախ՝ կամօք: Երկրորդ՝ գործով: Երրորդ՝ նմանութեամբ: Չորրորդ՝ պատկերաւ: Առաջին կամօք. զի ամենայն որդի զկամս հօրն առնէ. յորժամ մեք թողումք զկամս Աստուծոյ, եւ կատարեմք զկամս սատանայի, որդի նորա կոչիմք: Երկրորդ գործով. որպէս այն որ առնէ զգործս Աստուծոյ՝ որդի Աստուծոյ կոչի. նոյնպէս որ առնէ զգործս սատանայի, որդի սատանայի կոչի: Երրորդ նմանութեամբ. որպէս այն որ լուսաւոր ունի զմիտս՝ որդի լուսոյ եւ տւնջեան կոչի, եւ զօրաւորն որդի զօրութեան, այսպէս եւ բարկացողն որդի բարկութեան է. եւ մեռեալն մեղօք որդի կորստեան. եւ ստախօսն որդի ստութեան. եւ այլն նմապէս: Չորրորդ պատկերաւն. որպէս այն որ զբարի պատկերն ունի յինքն՝ որդի բարւոյն Աստուծոյ կոչի. նոյնպէս որ զպատկերն սատանայի ունի՝ որդի սատանայի կոչի: Եւ կերպարանք սատանայի են մախանք. ատելութիւն. բանսարկութիւն. հպարտութիւն. ազահութիւն. եւ ախտաւոր ցանկութիւն եւ այլն: Մախանքն սատանայիէ՝ որ զառաջինն մախացաւ ընդ փառս արարչին. եւ ապա նախանծեցաւ ընդ փառս մարդոյն: Ատելութիւնն՝ նախ զի ատեաց զԱստուած. եւ ապա զհրեշտակս եւ զսուրբս: Բանսարկուն սատանայ է. նախզի՝ բանս էարկ ի մէջ հրեշտակացն, եւ խռովեցոյց զնոսա. եւ ապա ի մէջ նախաստեղծիցն. եւ այժմ ի մէջ մեր եւ ընկերացն հանապազ զբանս արկանէ: Հպարտութիւն նորա՝ նախզի հպարտացաւ ընդդէմ արարչին. եւ ապա ի վերոյ ընկերացն հրեշտակաց: Ազահութիւն՝ զի ազահեաց եւ զրկեաց զփառս երկնաւորացն. եւ ազահութեամբ տիրեաց աշխարհի: Ախտաւոր ցաանկութիւն՝ զի զսուրբ սերն փոխեաց. եւ ախտացաւ ի մեղս. եւ այժմ միշտ զպոռնկութիւն սիրէ: Սոքա ամենեցուն՝ եւ բազումք եւս քան զնոսա՝ կերպարանք են սատանայի. եւ որ յինքեան բերէ՝ լինի որդի սատանայի: Ապա ուրեմն որքան ի մէջ մեղաց լինիմք՝ ոչ է պարտ ասել (Հայր մեր որ յերկինս:) Ապա թէ եւ ասէ, երկնաւոր Հայրն ոչ լսե նմա. այլ անդնդայինն որ է սատանայ որպէս ցուցաւ: Երկրորդ հարցումն որ ասէ (մեր.) եւ ոչ ասէ իմ: Գիտելի է՝ զի յասելն Հայր մեր՝ ասացաւ տասն գլխով զգութեալ եւ զսերն զոր ունի ի վերոյ մեր: Այլեւ վեց գլխով զհայրութեան եղանակն. որով կսչիմք որդիք հօր մերոյ: Այլ այժմ ասացուք ի կարճոյ վեց կերպիւ՝ զի ոչ ասի Հայր իմ: Նախզի՝ ասելն Հայր իմ, պատշաճի բնութեամբ որդւոյն. որ է Տէր մեր Յիսուս Զրիստոս: Իսկ ասելն Հայր մեր՝ պատշաճի մեզ, որ շնորհօք կոչիմք որդիք Աստուծոյ. որպէս ինքն ասաց. (Ելանեմ ես առ Հայրն իմ եւ առ Հայր ձեր:) Երկրորդ՝ ցուցանէ թէ, հասարակն յԱստուծոյ ուրեք բարի է եւ հաճոյ Աստուծոյ քան զառանձինն: Չի թէ զառանձին աղօթելն մեր ոչ կամի՝ քանի՞ առաւել զառանձին ինչս եւ զստացուածս մեր ոչ կամի: Վասն այն ասէ. (ուր երկու եկ երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա:) Երրորդ՝ բառնայ զազահութիւնն. զի չէ պարտ միայն վասն իւր աղօթել. այլ վասն ընկերին, եւ վասն ամենայն աշխարհի: Չորրորդ՝ բառնայ զատելութիւնն. եւ հաստատէ զսերն. զի վասն ամենեցուն աղօթել սիրոյ է նշանակ: Հինգերորդ՝ բառնայ զհպարտութիւն. եւ հաստատէ զխոնարհութիւն: Չի ասելն Հայր իմ՝

գիպարտութիւն ցուցանէ. որպէս փարիսեցիս ասեր. (Աստուած իմ գոհանամ զքեւն:) Վեցերորդ՝ ցուցանէ թէ, ամենայն քրիստոնեայքս հաւասարք ենք որդիք Աստուծոյ. եւ նա հաւասար սիրէ զմեզ. եւ ոչ առաւել եւ նուազ. (զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ:) Եւ հաւասար շնորհէ մեզ զթողութիւն մեղաց եւ զարքայութիւնն եւ զանմահութիւնն, եւ զայլ ամենայն պարգեւս: Այս երկրորդ գլուխն որ ասէ (Յայր մեր:) Երրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր ասէ (յերկիսս:) Չի ասէ մարգարէն: (Աստուած մեր յերկիսս եւ յերկրի:) Եւ թէ՛ (ընդ ամենայն տեղիս է տերութիւն Նորա:) գիտելի է՛ զի յերկիսս ասելն՝ տասն պատճառաւ տեսանի: Չի թէպէտ եւ ինամօք եւ էութեամբ եւ զօրութեամբ յամենայն տեղիս է Աստուած. այլ գոյացութեամբ յերկիսս է բարձրացեալ: Եւ նախ եւ առաջին գովէ զմեզ թէ՛ այնպիսի երկնաւոր Յօրն էք որդիք. որպէս յայլ ասեր. (Յայր մի կոչեր ձեզ ձերկրի. զի մի Յայր ձեր որ յերկիսս է:) Երկրորդ՝ երկինքն բարձր է. եւ զնա յիշելով՝ զբարձր եւ զերկնաւոր առաքինութիւնս ինդրէ ի մէնջ. որք են հոգեւոր եւ հրեշտակային: Երրորդ՝ յերկիսս ասելն՝ զգաւառն մեր նշանակէ. ուստի յերկնիցն անկաք վասն Ադամայ. եւ ի ձեռն Քրիստոսի դարձեալ յերկիսս ելանեմք: Չորրորդ՝ յերկիսս անուանելն՝ ցուցանէ թէ, ազգակից ենք երկնաւոր Յօրն. որ ի պատկեր Նորա ստեղծաք. եւ ազգակից ենք հրեշտակաց՝ որք երկիսս փառաբանեն: Հինգերորդ՝ յիշատակել զերկիսս՝ ի միտ ածէ մեզ զբարութիւնն երկնից զորկորուսաք. եւ յորժամ ի միտ ածեմք զփափագումն մեր՝ ի նա բորբոքիմք: Վեցերորդ յերկիսս ասէ՛ զի զխորհուրդս մտաց ի նա ամբառնամք. եւ երկրաւորես հեռանամք. որպէս ասէ առաքեալն. (զվերինս խորհեցարուք՝ ուր Քրիստոս նստի ընդաջմէ Աստուծոյ. եւ մի զերկրաւորս:) Եօթներորդ յերկիսս ասէ՛ զի զհիմն բնակութեան մերոյ յերկիսս հաստատեմք. եւ անդ շինեմք (ոսկի՛ արծաթ՛ ականս պատուականս, որպէս ասէ առաքեալն:) Ութներորդ՝ յորժամ երկիսս շինեմք զտունն, զամենայն բարութիւնս մեր անդ ժողովեմք. ուր ամուր մնայ ի դրժողաց. ընդ այնմ, (զանձեցէք ձեզ զանձս յերկիսս. ուր ոչ գողք մերձեանս:) Իններորդ՝ զի սրտիւ եւ յօժարութեամբ ընդ Յօրն երկնաւորի լինիմք. զի (ուր զանձք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղիցին:) Տասներորդ՝ որ յերկիսս ասելն՝ զճանապարհս երկնից ցուցանէ, թէ պարտ է վերստին ի յերկիսս դիմել եւ անդ գնալ: Եւ ոչ թէ ճանապարհ է երկնից գնալոյն. այլ փախուստ. զի ճանապարհն այն է՛ որ մեր կամօք եւ հանդարտութեամբ գնամք. այլ փախուստն երեք յատկութիւն ունի: Մին՝ որ ի չարէն փախչիմք: Երկրորդ՝ որ շտապ ընթանամք: Երրորդ՝ որ յետս ոչ հայիմք: Այսպէս պարտ է ի չարէ աշխարհի փախչիլ. որպէս ասեր մարգարէն. (փախիր եւ թաքիր առ ժամանակ մի.) եւ փութով ընթանալ ի բարին: Եւ յաշխարհս ամենեւին ոչ նայիլ ցանկութեամբ. որպէս ասէ առաքեալն. (զյետոյսն մոռացեալ եմ եւ յառաջադէմս նկրտիմ. ուշ եղեալ ընթանամ ի կէտ կոչմանն:) Եւ այսպէս ապա կարեմք յերկիսս ելանել: Եւ թէ ոք տարակուսին, ծանր է մարմինս եւ հողեղէն. որպէս կարեմք յերկիսս ելանել: Ասեն վարդապետք թէ, ոչ է մեզ պիտոյ սանդուխք մարմնական, կամ լար, կամ այլ ինչ հնար, որ զմեզ յերկիսս քարշէ. այլ ի ձեռն Չ իրաց զոր ի մեզ բերեմք՝ դիւրաւ յերկիսս ելանեմք: Առաջին այն է՛ որ փոխիմք ի չարէ, եւ ի բարին լինիմք մտօք եւ հոգւով եւ մարմնով. եւ բարին այն յԱստուծոյ է առ մեզ. եւ առ Աստուած յերկիսս հանէ զմեզ: Երկրորդ՝ յորժամ զպատկերն Աստուծոյ ի մեզ նկարեմք սրբութեամբ եւ արդարութեամբ, յայնժամ ուր

Նախատիպն մեր Աստուած է՝ Եւ մեք ընդ նմա լինիմք յերկինս եւ ոչ որոշիմք: Երրորդ՝ զի ամենայն առաքիլութիւն մեր թեթեւ է եւ իմանալի. յորժամ ի մեզ բերեմք, նովաւ թռչիմք եւ ելանեմք յիմանալի յերկինս. որպէս թռչունն թելօք. կամ որպէս ծանրութիւն նետի թեւ ովն բարձրանայ: Չորրորդ՝ հաւատն եւ յոյսն յԱստուծոյ առ մեզ են իջեալ իբր զլուսաւոր լար. եւ նոքօք երկինս ելանեմք: Զինգերորդ՝ սիրով միաւորիմք ընդ Աստուած. զի անխզելի շաղկապ է սերն. եւ ամենայն հարկիւ ուր Աստուած է՝ եւ մեք ընդ նմա լինիմք յերկինս: Վեցերորդ՝ աղօթիւք. զի այժմ աղօթիւք զոր ինչ խնդրեմք՝ առնումք ի նմանէ. որպէս ասաց. (խնդրեցէք նախ զարքայութիւն նորա եւ զարդարութիւն. եւ այդ ամենայն յաւելցի ձեզ:): Այսպէս վեց եղանակաւ՝ կարէ ոք յերկինս առ Աստուած ելանել. վասն այն ասաց. (Յայր մեր որ յերկինս:): Նմանապէս եւ անառակ որդին՝ զոր պատմէ աւետարանն: Էրեց որդի կոչէ զհրեշտակս. զի անդրանիկ են ժամանակաւ. որ ընդ լուսոյ գոյացանն. եւ Էրեց են փառօք պատուով եւ տեղեալ. որ անմարմին են եւ յերկինս բնակեալ. եւ փառաբանիչք Աստուծոյ: Իսկ մարդն Ադամ կրտսեր՝ ի յուրբաթի աւուրն ստեղծաւ. եւ ի հողեղէն եւ յերկրաւոր դրախտն եդաւ. եւ փոքր էր պատուով քան զհրեշտակս. որպէս Դաւիթ. (փոքր ինչ խոնարհ արարեալ զմարդն քան զհրեշտակս, եւ այլն:): (Եւ ասէ կրտսերն ցհայրն. տուր ինձ բաժին. եւ նաբաժանեաց զկեանսն:): Չերկնաւորն ետ հրեշտակաց. եւ զերկրաւորս ետ մարդոյն: Եւ գնացեալ ի տար աշխարհ՝ կորոյս զինչսն անառակ կենօք. եւ յարեցաւ ի դէսն: Չի մեղաւորք մեղաւորաց քաղաքակիցնք եւ դժոխային: Եւ խոզ արածեալն վաւաշոտ ցանկութիւնն է: Նախզի՝ զիճասեր է խոզն. եւ ապա յոյժամ լուանայ՝ դարձեալ ի տիղմս թաւալի: Եւ ցանկութիւն մեղացն անյագ է. վասն այն ասէ. (ցանկայր լնուլ զորովայնն իւր յերջերէն:): Եւ յորժամ կամեցաւ գնալ առ հայրն՝ նախ ի յինքն եկն, եւ ճանաչեաց զինքն. ասէ՝ (ես սովամահ կորնչիմ:): Եւ ապա ի միտսն կրթեաց զբան խոստովանութեանն. եւ ապա ասաց. (Յայր՝ մեղայ յերկինս եւ առաջի քոյ:): Երկինք զդրախտն կոչէ. զի անդ մեղանչեաց եւ յերկիր անկաւ: անառակ որդին՝ նշանակէ զմեղաւորն. նախ պարտ է որ զինքն մեղաւոր տեսանէ եւ դառնայ. եւ ապա զղջանայ եւ զմտաւ ածէ. եւ ապա խոստովանի քահանային: (Եւ Յայրն երկնաւոր ընթացաւ ընդառաջ նորա. որ է վազեաց յառաջ. եւ համբուրեաց եւ անկաւ զպարանոցան եւ երկախառն համբուրեաց զնա:): Նախ վասն դառնալոյ անառակտին հայրն վազեաց յառաջն. եւ վասն զղջմանն՝ համբուրեաց զնա. եւ վասն խոստովանութեանն՝ զարդարեաց զնա զգեստովն եւ այլովն: Նոյնպէս եւ ամենայն մեղաւորաց առնէ գթած հայրն երկնաւոր: Երկրորդ միտքն՝ զի երեք ցեղ է համբոյրն. այսինքն ոտից՝ եւ ձեռաց՝ եւ երեսաց: Ոտիցն թշնամեաց է. եւ ձեռացն օտարաց. իսկ երեսացն սիրելեաց. Այսպէս սիրով ընկալաւ զանառակն: Երրորդ միտքն՝ զի անկաւ զպարանոցան. նշանակէ զբանական լուծ աւետարանին՝ զոր եդ ի վերոյ նորա. որ զառաջին լուծ պատւիրանին ի բաց ընկեց յինքնէ: Այսպէս պարտ է մեզ՝ յորժամ խոստովանիմք, զլուծ ապաշխարութեանն ստանալ: Չորրորդ միտքն՝ զի գրկախառն խաչածեւ լինի. նշանակէ որ զանառակ որդին ընկալաւ միջնորդութեամբ խաչին Քրիստոսի. այսպէս խաչին զթողութիւն մեղաց գտանէ մեղաւորն: Երկրորդ զարդն. որ եհան զաղտեղի հանդերձն. եւ զառաջին պատմուճանն զգեցոյց նմա այս է՝ զանմեաղութիւնն եւ

գլուսաւորութիւնն, զոր ունէր ի դրախտին: Չի անհնազանդութեամբ մերկացաւ. եւ երբ զպտուղն եկեր, ետես զմերկութիւնն: Նոյնպէս եւ մեղաւորն՝ նախ ասանհնազանդ լինի օրինացն. եւ ապա գործելով զմեղս՝ մերկանայ ի շնորհացն: Եւ յորժամ խոստովանի, դարձեալ զգեճու զանմեղութիւնն: Երրորդ մատանին ի ձեռն. ձեռն գործոյ է նշանակ. եւ մատանին իշխանութեան. մատն միտքն է իմացականն մեր. բոլորն զհաւատն նշանակէ. եւ նիւթն զյոյսն անապական եւ մաքուր. եւ ակն լուսափայլ՝ պատկերն Աստուծոյ գեղեցկանայ ի մեզ: Չորրորդ կօշիկն յոտսն՝ ամրութիւն է հոգւոյն եւ մարմնոյն. զի մի դարձեալ խոցէ անիծեալ օձն. այլ աւետարանաւն ամրացեալ՝ կոխեսցէ զգլուխ նորա. ընդ այնմ, (ետու ձեր իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս. եւ ձեզ ոչ մեղիցեն:) Եզն պարարակ միաձնին զեւումն, որ վասն մեր պատարագի. զի պարտ է մեղաւորին յետ խոստովանութեանն հաղորդիլ. այն ի ձեռն այլոց քահանայից: Չի այլոց հրամայեաց ածեք զեզն պարարակ: Այսպէս ասելն՝ (Յայր մեղայ յերկինս եւ առաջի քոյ) խոստովանութիւն է: Եւ ասելն՝ (Յայր մեր որ յերկինս) աղօթք է: Չի թէ չլինին աղօթիցն արժանաւորն արժանաւոր. խոստովանութեամբ ասացեն ընդ անառակ որդւոյն. (Յայր մեղայ յերկինս եւ առաջի քոյ:) Եւ ինքն Յայրն երկնաւոր՝ մարդասեր գթութեամբն իւրով՝ արժանիս արասցէ զամենայն մեղաւորս սիրով համբուրի իւրով. եւ դարձուցէ յերկինս ի յայրենի ժառանգութիւն մեր ի Զրիստոս Յիսուս ի Տեր մեր. որում փառք՝ զորութիւն յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ քարոզ ի նոյն բանն. (Յայր մեր որ յերկինս:) Ղուկ. 11. 2: (Գլուխ. Ժ)

Երեք են եղանակք քահանայութեան. այսինքն, օրինական.՝ խորհրդականն. Օրինականն է հին քահանայութիւնն ի ձեռն Մովսէսի տուել: Եւ ճշմարտութիւնն նոր շնորհոքն ի Զրիստոսէ աւանդեալ մեզ. ըստ որում, (օրէնքն ի ձեռն Մովսէսի տուան. շնորք եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Զրիստոսի եղեն:) Արդ չորս իմն կերպիւ գստուերն ի լոյս, եւ զօրինակն ի ճշմարտութիւն փոխեաց Տեր մեր: Նախզի՝ նոցա մին էր քահանայն. եւ իմին տեղուք. եւ մի անգամ ի տարուջն մատուցաներ: Իսկ Տեր մեր՝ յամենայն տեղիս, եւ յամենայն ժամ, եւ ամենայն մարդոյ հրամայեաց զաղօթսն մատուցանել: Երկրորդ՝ նոքա օտար ջրով սրբէին զինքեանս. իսկ մեք զղջմամբ եւ խոստովանութեամբ եւ արտասուանաց ջրով մաքրեմք զմեզ: Երրորդ՝ նոքա չորեքնիւթեայ գունով զգեճուին պատմուճանս. եւ մեզ զգեստ է չորս առաքիւնութիւն հոգւոյ ի մէջ գեղեցկացեալ: Ոսկին ի մեզ՝ անապական խորհուրդն. եւ արծաթ՝ յստակ բանն. եւ փոխանակ զանազան ականց՝ պատուիւանն Աստուծոյ՝ որ զարդարէ զմեզ. իսկ իւղն պատուական հեղեալ ի գլուխն՝ եւ մեք իմաստութեամբն օժանեմք զմիտս. որ է հաւատաւ, եւ յոյս, եւ սերն առ Աստուած: Չորրորդ՝ զի նոքա անասնոց արին եւ խունկ եւ ողջակեզ մատուցանեին: Իսկ մեք մատուցանեմք պատարագ Աստուծոյ. փոխանակ ինկոց՝ զանուշահոտ աղօթս մեր. եւ արեանցն՝ զկենդանի գործս. եւ մարմինս մեր եւ հոգի ողջակեզ պատարագ: Այսպէս խորհրդական քահանայք լինիմք մեք ամենայնքն: Վասն այն ուսոյց Տեր մեր աղօթել եւ ասել: (Յայր մեր որ երկինս:) Արդ հայր ասելն՝ կրկին

նշանակութիւն ունի: Նախ՝ ցուցանէ զբնութեամբ Որդին Աստուծոյ, որ է Տէր մեր Յիսուս Զրիստոս: Երկրորդ՝ նշանակէ զշնորհօք Որդիսն, որք եմք հաւատացեալքս եւ մկրտեալքս աւագանան: Այլ յորժամ մեք եղբայրք կոչիմք քրիստոսի, եւ որդիք Յօրն երկնաւորի, պարտ է մեզ ըստ անուանն, եւ արժանաւոր գործս ստանալ. զի նմանիցուք Զրիստոսի: Եւ զայս ցուցանեմք ժ գլխով: Առաջին՝ պարտ է զի սիրեսցուք զհայրն մեր զԱստուած. եւ զպատուիրանս նորա պահեսցուք. որպէս ասէր որդին. (Ես զպատուիրանս Յօր իմոյ պահեցի՝ եւ կամ ի սեր նորա: Երկրորդ՝ զի սիրեսցուք ցնկերն իբրեւ զանձն. որպէս ասէր՝ (մեծ եւս քան զայս սեր ոչ ոք ունիցի, եթէ զանձն իւր դիցէ ի վերոյ բարեկամաց իւրոց որպէս ես եդի:)) Երրորդ՝ զի խոնարհեսցուք առ աղքատս եւ կարօտեալս: Որպէս մեծատունն որդի՝ խոնարհեսցաւ առ մեր նուաստութիւնս, եւ ելից զկարօտութիւն մեր: Չորրորդ՝ զի լինիցիմք հեղք սրտիւք. որպէս եւ ինքն Զրիստոս նախատիպն մեր՝ էր հեզ եւ խոնարհ. ընդ այնմ, (ուսարուք յինքէն՝ զի հեզ եմ եւ ոնարի սրտիվ:) Եւ Դաւիթ ասէ. (այլ որք հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն զերկիր:) Յինգերորդ՝ զի թողուցումք զկարեւորսն ըստ մարմնոյ. այսինքն՝ զհայր եւ զմայր եւ զագարակ. եւ գոր ի կարգին է ըստ իւրում հրամանացն. եւ ապա արժանասցուք որդիութեան նորա: Վեցերորդ՝ զի զանձն եւս ուրասցուք. եւ առցուք զխաչ եւ զչարչարանս. եւ կորուսցուք վասն որդիութեան նորա՝ զի գտցուք զնա որպէս ասացն: Եօթներորդ՝ զի լիցուք խաղաղարար եւ հեշտարար առ միմեանս. որպէս Որդին Յօր եղև միջնորդ ընդ մարդիկ եւ ընդ Աստուած. եւ հաշտեցոյց ընդ մեզ: Յիրաւի ուրեմն Որդի Աստուծոյ կոչի այնպիսին. ըստ այնմ, (Երանի խաղաղարաց՝ զի նոքա որդիք Աստուած կոչեսցին:)) Ութներորդ՝ զի թողուցումք միմեանց զպարտս եւ զյանցանս. որպէս որդին Աստուծոյ շնորհեաց մեր գոր բազում պարտեաք. ապա յիրաւի խոստանայ զանուն որդիութեանն թէ՛ (թողցէ ձեզ հայր ձեր երկնաւոր զյանցանս ձեր:) Իններորդ՝ զի թեպէտ նեղիցեն եւ նախատիցեն եւ հալածիցեն եւ բամբասիցեն ամենայն բանիւք սուտ վասն նորա, ընդունակ լիցուք եւ տարցուք ուրախութեամբ եւ համբերեսցուք. որ պէս որդին աստուծոյ զի ներեր հալածանացն, եւ գահավէժ առնելոյն. եւ նախատելոյն, եւ բամբասելոյն: Տասներորդ՝ զի ի վերոյ այսր ամենայնի՝ զի թէ հեղումն արեան հասանիցէ, հնազանդ լիցուք մահու չափ եւ մահու խաչի վասն անուան նորա. որպէս անդրանիկն մեր Զրիստոս: Ապա ուրեմն յիրաւի նոքա կոչին որդիք երկնաւոր Յօրն. եւ նոքա են արժանի համարձակիլ եւ ասել: (Հայր մեր որ երկինս:) Այս առաջին բանն է աղօթից: Երկրորդ բանն որ ասէ: (Սուրբ եղիցի անուն Զո:) Այսինքն, սուրբ փառաւոր լիցի Զո անունդ: Նախ յորժամ մեք զբարիս գործեմք, անունն Աստուծոյ փառաւորի: Չի մարդիկ որք տեսանեն զբարին գործն մեր, փառաւորեն զԱստուած. ըստ այնմ, (տեսցեն զգործս ձեր բարիս, եւ այլն:) Ապա թէ զբարիս ոչ գործեմք, հեթանոսք անունն Աստուծոյ անարգեն. յորժամ տեսանեն զմեզ ծոյլ յաղօթս, ի պահս, ի յողորմութիւնս, անիրաւ, արբեցող, շուն, պոռնիկ, անհնազանդ, եւ հայիոյիչ, յայնժամ ոչ ասեն թէ այն մարդն է չար, այլ զօրէնսեւ զհաւատս մեր հայիոյեն: Վասն այն սաստեր մարգարէին: (Վա՛յ ձեզ որ անուն Իմ վասն ձեր հայիոյի ի մէջ հեթանոսաց:) Երկրորդ՝ զայն է իմանալ՝ որք ունիմք զհաւատս քրիստոնէի, պարտ է սուրբ գործս ստանալ. զի սուրբ եւ ճշմարիտ լինի անուն քրիստոնէութեանն. ապա թէ ոչ՝ սուտ կոչիմք քրիստոնէայք. զի սուտ

ունիմք գործ՝ սուտ լինի անուն եւ հաւատանքն: Նախ առաջին զայս խնդրեմք յԱստուծոյ. որպէս սուրբ անուն քրիստոնէին, եւ սուրբ է հաւատն, սուրբ լիցին եւ գործքն մեր: Դարձեալ՝ յորժամ սուրբ պահեմք զբերանս մեր ի պղծութենէ, ի յիշոցնատութենէ, ի սուտ խօսելոյ, եւ յայլոցն, յայնժամ սուրբ լեզուաւ կոչեմք զանունն աստուծոյ: Ապա թէ ոչ՝ զահեղ անունն Աստուծոյ ո՞վ իշխէ պիղծ լեզուաւ յիշատակել եւ կոչել: Այս երկրորդ բան աղօթիցն: Երրորդ բանն որ ասէ: (Եկեսցէ արքայութիւն Զո:) Այսինքն, թագաւորութիւնդ Զո գայցէ ի վերոյ մեր: Եւ ե՞րբ, կամ յոր ժամանակ է որ չէ թագաւոր Աստուած: Այս է՝ թեպէտ միշտ եւ Աստուած արարածոց Տեր եւ թագաւոր միայն Աստուած է, այլ բռնութեամբ եւ հարկիչ չէ թագաւոր. որպէս աշխարհի թագաւորք բռնութեամբ տիրեն. այլ որք կամին եւ սիրեն զնա, նոցա է թագաւոր: Եւ ասեմք զայս վասն չորս պատճառի: Նախզի՝ սատանայ բռնութեամբ թագաւոր եւ իշխան եղել ի վերոյ մարդկան. վասն այն իշխան աշխարհի կոչի. եւ զամենայն մարդ զհետ իւր կամացն տանի ի կորուստ: Եւ յորժամ աղաչեմք զԱստուած, եւ նա թագաւոր լինի մեզ, յայնժամ փրկէ զմեզ ի սատանայէ. եւ տանի ի կեանս. ընդ այնմ, (փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարին սատանայի. եւ փոխեաց յարքայութիւն որդւոյ իւրոյ սիրելոյ:) Երկրորդ՝ զի մեղք եւ չար գործն՝ ծառայ առնեն եւ տիրեն մեզ. եւ որպէս տոռամբ կապեն. ըստ այնմ, (որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց:) Եւ մարգարեն ասէ. (ի գործս ձեռաց իւրեանց կապեսցին մեղաւորք:) Եւ յորժամ Աստուած թագաւորէ ի վերոյ մեր, ազատէ զմեզ յամենայն մեղագ ծառայութենէ. եւ արձակէ ի կապանց եւ ի տանջանաց մեղաց: Երրորդ՝ յորժամ չար բռնաւորք տիրեն մեզ եւ նեղեն ամենայն իրօք. եւ զայս վասն մեր մեղացն թոյլ տայ Աստուած. որպէս փարաւօն չարչարէր զհսրաւելացիս յոյժամ աղաղակեցին առ Աստուած, լուաւ նոցա. եւ զՄովսէս փրկւիչ ետ նոցա: Նոյնպէս եւ մեր յորժամ խնդրեմք զտիրութիւնն Աստուծոյ, փրկէ զմեզ ի չար բռնաւորացն. կամ փոխէ զնոսա, եւ կամ զսիրտս նոցա դարձուցանէ ի բարին: Չորրորդ ասենք զայս՝ զի ի ժամ աղօթիցն բազմութիւնք դիւաց ժողովին. եւ պատեալ պաշարեն զմեզ. եւ զանազան ախտիւ զմիտս մոլորեն. հպարտութեամբ. բարկութեամբ. եւ այլովք. որպէս ասէր Դաւիթ. (Տեր զի բազում եղեն նեղիչք իմ, եւ այլն:) Եւ յոր ժամ գայ թագաւորութիւնն Աստուծոյ կառօք եւ բազում զօրօք հրեշտակաց, հալածէ զամենայն բացմութիւն դիւական եւ զախտից: (Չի կառք Աստուծոյ բիւրապատիկք են ասէ Դաւիթ. եւ անկցին ի կղմանէ հազարք դիւաց. եւ բիւրք հրեշտակաց ընդաջմէ լինին:) Եւ որպէս հուր զմով այրէ. եւ հողմ զծուխ պակասէ. այնպէս մեղք եւ դելք պակասին եւ կորչին. ըստ այնմ, (յարիցէ Աստուած՝ եւ ցրուեսցին. որպէս պակասի ծուխ պակասեցին:) Յաղագս այս չորս պատճառիս ասեմք: (Եկեսցէ արքայութիւն Զո:) Դարձեալ՝ յայլ օրինակս անտարանի գրեալ է. (Եկեսցէ հոգի Զո Սուրբ եւ սրբեսցէ զմեզ:) Նախ զայն ցուցանէ՝ թէ հոգին սուրբ թագաւոր է եւ տեր. եւ սուրբ եւ սրբօղ զմեզ. ապա ուրեմն Աստուած է եւ հոգին սուրբ ընդ Յօր եւ ընդ Որդւոյ: Երկրորդ՝ ցուցանի դեմ աղօթիցս առ Սուրբ Երրորդութիւնն գոյ: Առ հայր՝ որ ասեմք (հայր մեր որ յերկինս:) Առ որդին՝ (Սուրբ եղիցի անուն Զո:) Առ հոգին սուրբ՝ (Եկեսցէ առ մեզ եւ սրբեսցէ ամենայն պղծութենէ չարեաց:) Դարձեալ՝ այլ իմն ծածուկ իմաստութիւն գոյ: Ասելն Յայր մեր՝ ցուցանէ զմեր պատիւն որ ի հանդերձեալ յարութեանն լինելոց է սրբոց. զի Աստուծոյ եւ յարութեան որդիք կոչին: Չի յայնժամ լինիմք իսկապէս որդիք

երկնաւոր Յօր, յորժամ յարուցանէ զմեզ ի հողոյ՝ եւ հանէ զմեզ յերկինս՝ եւ ժառանգութիւն տայ զարքայութիւնն: Այլեւ յայնժամ Սուրբ անունն Աստուծոյ կոչի ի վերոյ սրբոց իւրոց. ըստ այնմ, (դաս Աստուած ի մէջ աստուածացելոցն:) եւ անտարանն ասէ. (յայնժամ ծագեսցին արդարքն իբրեւ զարեգակն.) եւ յայնժամ թագաւորակից լինին Զրիստոսի. եւ ժառանգեն զարքայութիւնն. ըստ այնմ, (եթէ համբերեմք՝ ընդ Նմին՝ թագաւորեմք ի Զրիստոս Յիսուս ի Տէր մ եր. Որում փառք՝ զօրութիւն յաւիտեանս ամեն:)

ԺԱ

Նորին դարձեալ քարոզ ի նոյն բանն. (Եղիցին կամք քո որպէս յերկինս՝ յերկրի:) Ղուկ. 11. 2:

Վարդապետք ասեն եթէ՝ հինգ պատճառ տեսանի հիվանդութեան մարմնոյ եւ հինգ առողջութեան: Նախ՝ ներքին խառնումն տարերաց՝ հաւասարութիւնն առողջութիւն է մարմնոյ. ջերմ եւ ցուրտ՝ չոր եւ գեջ. այլ առաւել եւ նւազն՝ հիւանդութիւնն առնէ: Երկրորդ՝ արտաքին օդոց բարեսնունդն՝ առողջութիւնն առնէ. եւ ստահակաանութիւնն հիւանդութիւնն: Երրորդ՝ կերակրոյն շահեկանն եւ չափաւորն՝ առողջութիւնն է. իսկ անչափն եւ վնասակարն՝ հիւանդութիւնն:

Չորրորդ՝ կենդանական զօրութիւնն հոգւոյն յորժամ թուլանայ, հիւանդութիւնն է. եւ պակասիլն մահ: Իսկ զօրութիւնն նորին՝ առողջութիւնն է մարմնոյ: Հինգերորդի՝ հիւանդանայ մարդ եւ առողջանայ: Արդ՝ առաջին երեքն բժշկանկան դեղով լինիլ առողջացեալք. իսկ վերջին երկուքն ոչ: Այսպէս եւ հինգ պատճառս այսոքիկ՝ հիւանդութեան եւ առողջութեան հոգւոյն տեսանին: Նախ՝ չորից առաքիւնութեանց մասամբ հոգւոյն՝ չափաւորն առողջութիւնն է. իսկ առաւելն եւ նուազն՝ հիւանդութիւնն է հոգւոյ:

Երկրորդ՝ յարտաքին զգայութեանց, եւ յայսոց չարաց հիւանդանայ հոգին. եւ ի նոյն զգայութեանց եւ կրից բարեաց առողջանայ: Երրորդ՝ նոյն չափաւոր կերակուրք եւ պահք՝ առողջութիւնն են հոգւոյ. ըստ այնմ, (յորժամ տկարանամ՝ յայն ժամ զօրանամ.) եւ շուայտութիւնն հիւանդութիւնն գործ է որպէս ի մարմնի: Չորրորդ՝ տեսական զօրութիւնքն չորսն են. այսինքն, գիտութիւն. հաւատն. եւ սերն. թուլութիւն սոցա՝ հիւանդութիւնն է հոգւոյ. եւ պակասիլն մահ. իսկ զօրութիւնն սոցա՝ առողջութիւնն եւ կեանք է հոգւոյ: Հինգերորդ՝ ի խնամոցն Աստուծոյ՝ զոմանս պահէ առանց գայթակղութեան. զթիրեալսն ուղղէ. որպէս. զընտրեալնէ: Եւ զոմանս թոյլ տայ եւ կորչին. որպէս զխոտեալն. որ գիտէ զպատճառն. եւ ի մէջ լռութիւն: Արդ՝ առաջին երեք հիւանդութիւնք հոգւոյն՝ բժշկին ի ձեռն մեր, եւ այլոց բժշկաց. չորրորդն՝ միայն Աստուծոյ է կարելի. որ տայ զգիտութիւնն եւ զհաւատ. եւ զյոյս եւ սեր: Իսկ հինգերորդն՝ անջնջելի ունի պատճառն: Եւ որպէս բազում եւ զանազան հիւանդութիւնն մարմնոյ. ուստի յայտ է՝ զի բազմազան է նիւթ բժշկական դեղոց. որ յարմատս եւ ի տերեւս. եւ ի զանազան ծաղիկս. նոյնպէս բազում է եւ ազգ ազգի ախտ հոգւոց. եւ զանազան է բժշկութիւնն նոցին որ ի սուրբ գրոց հաւատքի: Եւ զայս վասն այն յիշեցի՝ որ կամքն Աստուծոյ է պատճառ առողջութեան մերոյ. եթէ հոգւոյ եւ եթէ մարմնոյ

մերոյ: Որպէս յայտ է ի բնութիւնս մեր. յորժամ նախահայրն Ադամ՝ հնազանդ էր կամացն Աստուծոյ. ի դրախտին բնակէր. եւ զանմահ կեանս ունէր. առողջ էր մարմնով. անծերանելի հասակաւ. առանց հիւանդութեան եւ ախտի: Նոյպէս եւ առողջ էր հոգևով. ընդ Աստուած քօւէր. ի հրեշտակաց սպասաւորիւր. միշտ Աստուած տեսանէր եւ զուարճանայ: Այլ յորժամ անհնազանդ եղել կամացն Աստուծոյ, եւ էանց զպատուիրանն, հիւանդութիւն եւ մահ հոգւոյ եւ մարմնոյ տիրեաց նմա. ըստ այնմ, (յաւուր յորում ուտիցես ի նմանէ, մահու մեռանիցիս.) Արդ՝ Տէր մեր կամեցաւ տանիլ զմեզ յառաջինս առողջութիւնն հոգւոյ եւ մարմնոյ՝ զկամսն առաջի դէտ աղօթել եւ ասել: (Եղիցին կամք քո:) Այսինքն, քո հաճոյքդ եւ քո խնամքդ. զի կամքն՝ զԱստուծոյ խնամարկութիւն եւ զհաճոյսն ցուցանէ: Եւ ասեմք զայս վասն երեք պատճառի: Նախզի՝ խնդրեմք զառաջին կեանս դրախտին. եւ որպէս Ադամ եթող զկամսն Աստուծոյ՝ եւ կորոյս զամենայ բարութիւնսն. մեք խնդրեմք զկամսն Աստուծոյ՝ զի դարձեալ տացէ մեզ: Երկրորդ՝ որպէս հիւանդն ասէ ցթիշկն թէ՝ քո կամօքդ բժշկեա զիս. այսպէս եւ մեք հիւանդ եմք զանազան մեղօք. աղաչեմք զթիշկն հոգւոց՝ զի առողջացուցէ զմեզ որպէս իւր կամքն գիտէ: Այլ որպէս նախ ասեմք բժշկին զցաւն եւ զպատճառնորին. նոյնպէս նախ խոստովանիլ պարտիմք զմեղս մեր եւ ցուցանել նմա, եւ ապա բժշկէ զմեզ. ըստ այնմ, (խոստովանելուք զմեղս՝ որպէս զի բժշկեսցիք:) Երրորդ՝ զի թողաք զկամս Աստուծոյ. եւ զհետ կամաց չարին գնացաք. եւ զկամս մարմնոյս կատարեցաք. շնութիւն՝ պոռնկութիւն՝ արբեցութիւն՝ ատելութիւն, եւ այլն ամենայն. այժմ ասեմք: Եղիցին կամք քո Աստուած՝ եւ ոչ սատանային. հան զմեզ ի կամաց մերոց. եւ քո կամօքդ առաջնորդեա առ քեզ: Եւ թէ ոք ասիցէ՝ ո՞ւր է կամքն Աստուծոյ. զի մեր կամքս չար է. եւ չարին հետեւիմք: Ասեմք եթէ՝ կամքն Աստուած անգիտելի է տխմարաց. զի մասունք միայն նշմարեն: Այլ կամքն Աստուծոյ՝ նախ ի սուրբ գիրս տեսանի առաքելոց մարգարեից եւ աւետարաանին. զինք նոքա պատուիրեն՝ այլ է կամքն Աստուծոյ:

Երկրորդ՝ կամքն Աստուծոյ ի յառաջնորդս է. զինչ առաջնորդն եւ վերակացուն ասէ՝ այն է բարի եւ կամքն Աստուծոյ. եւ որ ոք նոցա լսէ՝ զկամսն Աստուծոյ կատարէ: Երրորդ ասեմք. զի ամենայն բարի գործոց կամքն Աստուծոյ է օգնական. արդարութեան, արիութեան, խոհեմութեան, եւ այլոցն: Որպէս կամքն սատանայի՝ զմարդն ի չարն տանի. այսպէս կամքն Աստուծոյ ի բարին առաջնորդէ. վասն զի մարդ դիւրաւ զմեղս գործէ. եւ դժուարաւ զբարիս. ի չարն առաքեալ հեշտանայ քան ի բանին: Եւ այսմ կրկին է պատճառ: Նախզի՝ ջլատեցաւ բարին ի բնութիւնս մեր. եւ զօրացաւ չարն ի սատանայէ: Երկրորդ՝ զի բնութիւն մարմնոյս հեշտասէր է. եւ զմեղսն առաւել սիրէ որ հեշտէ. որպէս քարն զառ ի վայր դիրաւ գլորի. այլ զառ ի վեր դժուարաւ տանի: Նոյնպէս մեղաւորք ի դժոխս հեշտ երթան. այլ ի վեր յերկինս օգնական պիտի: Եւ որպէս շուտով խոցի մարմինն եւ հիւանդանայ. այլ դժուարաւ առողջանայ. այսպէս փութով խոցիմք ի մեղաց. եթէ ի սատանայէ, եթէ ի սատանայէ, եւ թէ ի մարդկանէ. այլ դժուարաւ առողջանամք ի հոգեւորն:

Եւ երեք իր պիտի առողջութեան: Նախ՝ ճարտար բժիշկ: Երկրորդ՝ փահրիզն ի յառաջին ցաւոյն: Երրորդ՝ դառն դեղ առնուլ, կամ հատանել: Նոյնպէս ի հոգեւորն իմաստուն բժիշկ Քրիստոս է. եւ քահանայն

երեսփոխան նորա. պարտ է զղջանալ եւ դառնալ յառաջին մեղացն. եւ խոստովանութեամբ հատանել. եւ ապա դառն ապաշխարութեամբ առողջանալ հոգւով: Յաղագս այնորիկ՝ զկամսն Աստուծոյ խնդրեմք. որ ամենայն բարի գործ ի կամսն Աստուծոյ է. եւ նա առաջնորդէ մեզ ի բարիս: Եւ որպէս լոյսն զխաւարն հալածէ՝ եւ առողջութիւն եւ կեանք զմահ. այսպէս բարի կամքն Աստուծոյ՝ զամենայն չար կամս սատանայի եւ զմեղս հալածէ ի մենջ եւ կորնչին: Իսկ չորրորդ զհոնչ է ասելն: (որպէս յերկինս եւ երկրի:) Գիտելի է զի երկու բնութիւն է բանականաց. այսինքն հրեշտակաց եւ մարդկան. հրեշտակք իմանալիք են. եւ մարդիք զգալիք. եւ բնականութիւն հրեշտակացն՝ ի վեր ի յերկինս է. զի իմանալիք են եւ թեթեւ եւ լուսաւոր. վասն այն զիմանալի եւ զլուսաւոր եւ զթեթեւ տեղիսն ետ նոցա Աստուած: Իսկ մարմին մեր հողեղէն է եւ ծանր եւ թանձր եւ վայրաքարշ. զներքին վայրս եւ զհողեղէն տեղիս ընկալաւ ի բնականութիւն: Եւ որպէս գինի կամ ձէթ որ պարզի եւ մրուրն յատակն ժողովի. այսպէս հրեշտակք ի յերկինս կամօքն Աստուծոյ՝ մնացին անմեղք եւ անարատք. եւ չարն սատանայ եւ դէւք նորա եւ չար գործիքն՝ ծանրացան եւ իջին ի վերոյ երկրի: Նոյնպէս եւ Ադամ ի դրախտէն մեղօքն իւր անկաւ յերկիր:

Եւ այսպիսի խաւար մեղաց ըմբռնեալ է զաշխարհս. եւ ոչ կարեմք տեսանել զլոյսն Աստուծոյ. եւ ամենայն մարդ ըստ իւր կամացն ի զանազան չարիս ընթանայ: Այժմ խնդրեմք նախ եթէ՝ հրեշտակք ի յերկինս քո կամօքդ մնացին ի բարին. եւ կամք քո կատարեալ է ի նոսա. նոյնպէս եւ զմեզ քո կամօքդ պահեա եւ ի բարին առաջնորդեա. եւ կամք քո կատարեալ լիցի ի մեզ: Եւ դարձեալ՝ ի հանդերձեալ կեանսն յորժամ յարութիւն լինի ամենայն մարդկան, հան զմեզ յերկինս. եւ ընդ հրեշտակս քո դասեա ընդ անսուտ խոստմանն քում. (երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի. զամ եւ ամնում զձեզ առ իս. զի ուր ես եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի:) Վասն զի քոյ հաւատացեալք եմք. եւ յաւազան քո մկրտեալք. եւ արեամբ միածնիդ զնեցաք. եւ անուն քո կոչե միածնիդ զնեցաք. եւ անուն քո կոչեցեալ է ի վերոյ մեր: Այս է միտքն ի կարճոյ որ ասէ: (Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի:) Այս է ըստ կարգի չորրորդ բան աղօթիցն: Իսկ հինգերորդ բանն որ ասէ: (Չհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր:) Այն որ ասաց մինչեւ ցայժմ՝ հոգեւոր խնդիր էր. իսկ այս մարմնաւոր պիտոյից: Հաց մեր ասելն՝ չորս բան ցուցանէ: Նախզի՝ պարտ է զաղօթսն հասարակաց առնել վասն ամենայն մարդկան. եւ ոչ միայն վասն իւր անձին. զի այն ընկերսիրութիւն է. եւ այս անձնասիրութիւն. վասն այն զամենայն բան աղօթիցս՝ հասարակ բառիւղնէ: Երկրորդ՝ ցուցանէ զչափաւորն. թէ զմեր պիտանին տուր, եւ ոչ զաւելորդն: Երրորդ՝ ցուցանէ թէ զմեր շահն եւ զհալալ վաստակն տուր մեզ. եւ ոչ զօտարացն եւ զանիրան: Չորրորդ՝ մեր հացն՝ այսինքն մարմին եւ արիւնն Զրիստոսի. որ մեզ հաւատացելոցս է հաց. եւ մեր կենացս պատճառ. ըստ այնմ, (հաց յԱստուծոյ է յերկնից իջեալ. եւ կեանս տայ աշխարհի:) Եւ կրկին կերպիւ տայ Աստուծոյ զհացն: Նախ՝ որ ի տարերեաց եւ ի տնկոց եւ ի կենդանեաց տայ զհացն մեր. յերկնէ զանձրեւ եւ արեւ. եւ երկրէ պտուղ եւ զայլ: Եւ այնպէս տայ ամենայն կենդանեաց. ըստ այնմ, (աչք ամենեցուն ի քեզ յուսան. եւ դու տաս զկերակուր նոցա ի ժամու:) Երկրորդ՝ տայ Աստուած հաց ի հալալ վաստակոց եւ յաշխատանաց մերոց. ընդ այնմ, (աչք ամենեցուն ի քեզ յասուն. եւ դու տաս զկերակուր նոցա ի ժամու:) Երկրորդ՝

տայ Աստուած հաց ի հալալ վաստակոց եւ աշխատանաց մերոց. ընդ այնմ, (քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո:) Այս հացս որ յԱստուած է տուրք, եւ հալալ վաստակ մեր, կարեմք ի սմանէ Աստուած բաժին տալ. ըստ այնմ, (պատուեա զՏէր ի քոյոց արդար վաստակոց:) Իսկ օտար հացն՝ եւ զրկանօք եւ գողութեամբն՝ ոչ է հաց յԱստուած. այլ ի սատանայէ. զի նա է հայր անիրաւութեան եւ զրկանաց. եւ զայնպիսի պատարագն Աստուած ոչ ընդունի. այլ սատանայ. ըստ այնմ, (ոչ ընդունիմ ի տանէ քումմք զուարակս:) Եւ թէ՛ (եզն այնպէս է, որպէս թէ զշուն ոք մորթիցէ, եւ այլն.) Այլ զայնպիսի զոհսն սատանայ ընդունի, եւ ոչ Աստուած: Եւ տես՝ զի հաց խնդրեմք որ հարկաւորն է. եւ ոչ զաւելորդն. ոչ ոսկի, ոչ արծաթ, ոչ երկիր, եւնչ այլ ինչ հեշտութիւն մարմնոյ. որ հեթանոսացն է խնդիր: Այլ հաց, որ է կերակուր. որով մարմինք մեր զկենդանութիւնս պահեն. եւ զայն օրըստօրէ խնդրեմք. որ նշանակէ զչափաւորն, եւ զաւելորդ ազահութիւնն: Իսկ ասելն (այսօր՝) կրկին իմն նշանակէ: Նախ՝ ցուցանէ զառօրեայ կեանս մեր. որ այս մին օրս է մեր. զի երեկ անցեալ է եւ կորեալ՝ եւ այգուցն չէ ի միջի. եւ յամենայն կեանս մեր՝ այս մին օրս է մեզ. անցեալ եւ հանդերձեալն չէ մեր. զի այն Աստուած եւ մշտնջենաւորացն վայելէ: Երկրորդ այսօրն՝ ցուցանէ թէ, զայս աւուրս միայն հոգա, եւ մի՛ զվաղւեանն. զի վաղիւն անյայտ է. ոչ գիտեմք թէ զինչ ծնանի մեզ. չա՞ր թէ բարի. մա՞հ թէ կեանք: Վասն այն ասէ Տէրն. (զվաղւեանն մի՛ հոգեաք. շատ է աւուրն չար իւր.) այսինքն, աւուր չարչարանքս եւ հոգս՝ այս աւուր բաւական է. զվաղուեանն միհոգալ. եւ մի չարչարիլ այսօր. ապա թէ ոչ՝ ամենայն աւուր կրկին լինի չարչարանքն եւ հոգն: Եւ թէ ոք ասիցէ, ապա չափաւորք եմք՝ եւ պարտեզ չառնեմք. եւ յայս աշունս ոչ վարեմք. զի վասն առաջիկայ տարւոյն է: Ասեմք՝ այդ չէ վաղւեան հոգն. զի այն որ յաշունն վարեմք՝ թէ զայգի, թէ զայլ ինչ, այն այս աւուր գործն է. եւ այս աւուր չարչարանք. զայն ոչ արգելու Տէրն. զի այնպիսին շինութիւն է երկիր. այլ զայն խափանէ՝ թէ աւելի մի հոգալ. եւ աւելի մի չարչարիլ վասն մարմնոյդ. այլ զչափաւորնհոգա վասն մարմնոյդ պիտոյից. եւ զաւելորդն վասն հոգւոյդ: Եւ թէ ոք ասիցէ Տէրն ասէ. (մի՛ հոգալ վասն վաղւեանն.) եւ յայլ ուր ասէ. (քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո.) եւ սաղմօժն ասէ. (Ով վատ՝ երթ առ մրջիւնն եւ առ մեղուն. եւ ուսիր ի նմանէ զգործն:) Ասեմք եթէ՛ ոչ են հակառակ միմեանց. այլ յոյժ միաբան. Սողմօժն զծոյլսն խրատէ, որք վատ եւ թոյլ են ի վաստակս պիտոյից: Եւ Տէրն զաւելորդ ստուցուածն եւ զազահութիւնն բառնայ: Նոյնպէս ասելն (քրտամբք երեսաց քոց՝) զգողանալն եւ զրկելն բառնայ. եւ արդար վաստակիլն հրամայէ: Այսպէս ասելն՝ (հայեցարուք ի թռչունս, զի ոչ վարեն եւ այլն. ոչ ասէ մի՛ աշխատիք եւ մի գործէք. այլ զայն թէ՛ աւելի մի ջանայք վասն մարմնոյդ. այլ զչափուորն՝ եւ այնու շատասշիք. որպէս թռչունք որք զաւուր կերակուրն միայն խնդրեն: Այս է ասելն: (Չհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր:) Վեցերորդ բան աղօթիցն որ ասէ: (Թող մեզ զպարտիս մեր՝ որպէս եւ մեք թողումք մերոզ պարտապանաց:) Եկն յառաջանով բանս ի մարդասիրութիւն. որ գլուխն է ամենայն բարի գործոց. (զի լրումն օրիւնաց սեր է:) Եւ այս բանս՝ վեց միտս ունի: Նախ՝ ցուցանէ զմարդն Աստուծոյ գործակից լինիլ. զի Աստուծոյ միայն է թողուլ զմեղս. որպէս ասէ աւետարանն. (ո՞ կարէ թողուլ զմեղս. բաց մի աստուած:) Եւ աստ Բ հարցումն է: Նախ թէ՛ վասն Է՞ր միայն Աստուած կարէ թողուլ զմեղս: Ասեմք

թէ՛ յամենայն մեղս զինչ եւ գործեմք, լուծանեմք զբանն Աստուծոյ. եւ պարտական լինիմք հրամանաց նորա. յիրաւի Աստուած կարէ թողուլ՝ զի նորա եղաք յանցաւոր միայն: Երկրորդ հարցումն թէ՛ ապա վասն Է՞ր մարդիկ ի երկրի թողու զմեղս: Ասեմք թէ՛ իշխանութիւն գոյ մարդոյ՝ իւր բանիւն թողուլ զպարտս իւր՝ զոր պարտին մարդիկ եւ խոստովանեալ է այս. ապա ուրամն բանն Աստուծոյ թողուլ կարէ զիւր պարտս ամենայն մարդոյ: Արդ՝ քահանայն թողու զպարտս Աստուծոյ՝ ոչ ընդ այնմ որ մարդ է, այլ ընդ այնմ որ իշխանութիւն ունի բանիւն Աստուծոյ թողուլ զպարտս մարդոյ: այս առաջին տեսութիւն բանիս որ զմարդն աստուծոյ գործակից անէ: Երկրորդ ցուցանէ այնչափ արժանաւոր լինիլ՝ որ Զօրն երկնաւորի որդի կոչին. եւ այլն ըստ կարգի. եւ ապա իշխեն զանյիշխանութիւ խնդրել յԱստուծոյ եւ ասել. (թո՛ղ մեզ զպարտս մեր.) ապա թէ չեն արժանաւոր՝ ոչ խնդրեսցեն: Երրորդ զայն ցուցանէ թէ՛ ո՞րք կարեն զթողութիւն գտանել յԱստուած. զի այն որ բանիւ մաղթէ եւ խնդրէ՛ թողութիւն ո՛չ գտանէ. այլ որ գործով կատարէ, եւ ինքն այլոց թողու, նա գտանէ զթողութիւն յԱստուծոյ: Չորրորդ զայն ցուցանէ թէ՛ մարդն Աստուծոյ նման լինի. զի Աստուած բարի է եւ գթած՝ եւ ողորմած եւ քաղցր, եւ այլն. եւ զամենայն մարդկան զպարտս թողու, եւ զամենայն մեղս: այսպէս եւ մարդ որ լինի բարի եւ գթած եւ ողորմած եւ այլն, եւ ամենայն պարտականացն իւր զամենայն յանցանսն թողու, ստուգապէս աստուածանման լինի եւ բարերար: Զինգերորդ՝ ա՛յլ խոր եւ բարձր տեսութիւն ունի. զի որպէս Աստուած ամենայն բարեաց նախատիպ եւ օրինակ է. որ զամենայն բարութիւնս ի նմանէ ուսանիմք. որպէս Պօղոս. (սմանօղք ինձ եղերուք՝ որպէս եւ ես Զրիստոսի:) Այսպէս եւ զայս կարգս փոխէ. եւ օրինակ մեք լինիմք սիրոյ. եւ Աստուած ի մենչ ուսանի. զայն ասէ. (որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց.) նոյնպէս եւ դու ուսիր, եւ թող քո պարտապանիդ: Այսպէս ասէ ցԱստուած. ես թողու եւ դու թող՞ արձակեցի արձակեա: (Ես ողորմեցայ այլոց՝ եւ դու ողորմեա ինձ:) զի դու հրամայեցեր. (թողէք եւ թողցի ձեզ. արձակիցիք. տուք եւ տացի ձեզ:) Եւ թէ իմ յանցանքն մեծ է առ քեզ քան ընկերին առիս, այո եւ ես ասեմ. եւ դու քանի՞ առաւել մեծ ես քան զիս: դու Աստուած եւ ամենագօր եւ թագաւոր. եւ ես մարդ տկար եւ աղքատ. յիրաւի ընդ քոյ մեծութեանդ առնես թողութիւն: վեցերորդ՝ խոնարհութիւն ուսուցանէ ասելն. (թող մեզ զպարտս մեր.) զի յոր ժամ աղօթեմք, ոչ կարծեմք զմեզ սուրբ եւ մաքուր ի մեղաց որպէս փարիսեցիս՝ որ սնապարծութեամբ կորեալ: Չի թէպէտ սուրբ լինի ոք ի մարմնաւոր մեղաց, մտօքն յանցաւոր է պարտական Աստուած. որպէս ասէ Սողոմօն. (ո՞ պարծեսցի ի միտս սուրբ ունիլ:) Եւ թէպէտ սուրբ լինի գործով ի մեղաց, սկզբնական մեղօքն պարտական է. որպէս Յոբ. (թէ մի օրեայ է կեանք մարդոյ, անհնար է առանց մեղաց լինիլ:) Եւ թէպէտ սուրբ լինի ի մահու չափ մեղաց, անսուրբ է ի ներելոյն: Եւ այլ յայտնի. բնութիւն մարդոյս մեղաւոր է ի մեղանչելոյն Ադամայ. եւ որ ոք ունի զբնութիւն մարդոյ՝ ունի զմեղս Ադամայ: Այսպէս է տեսութիւն բանիս որ ասէ. (թող մեզ զպարտս մեր՝ որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:) Եւ թէ ոչ թողումք, բազում վնաս է յարդօթիցս: Նախզի՛ անիծանեմք զմեզ մեր լեզուաւս. որպէս մեք ոչ թողաք այլոց, նոյնպէս դու մի թողուր մեզ. ընդ այնմ, (թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, եւ ոչ հայրն երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր:) Երկրորդ՝ զի ոխն սատանայի նման առնէ. զի ոխակալն սատանայ Է՛

որ ունի ոխ ընդ Աստուծոյ եւ ընդ հրեշտակաց եւ մարդկան. եւ որպէս սատանայ հեռի է յԱստուծոյ. նոյնպէս եւ ոխակալ մարդն: Երրորդ՝ զի ծառայական երկիւղին զարհուրի, յորժամ ոչ թողու զպարտսն: Չորրորդ՝ զի իւր խղճմտանքն տանջէ եւ չարչարէ զինքն: Հինգերորդ՝ զի բանիւ ողորձէ եւ բախէ զԱստուած թէ, չու թո՛ղ ինձ զպարտս. եւ ես ոչ թողում ընկերին: Վեցերորդ՝ որ ի լեզուն թողութիւն խնդրէ, եւ ի սիրտն ոչ թողու, հակառակի Աստուծոյ տեսութեանն. որ նախ զսիրտն տեսանէ. եւ ապա զբանն լսէ եւ զայլ գործն. զի մարդն մարմին է՝ գործովն եւ բանիւն զսիրտն ճանաչէ. այլ աստուած անմարմին է. նախ զանմարմին սիրտն տեսանէ, եւ ապա զգործն եւ զբանն: Այսպէս վեց կերպիւ վնաս է ոխակալին, յորժամ ոչ թողու զպարտս ընկերին: Տեսցուք եւ զայն թէ՛ զի՞նչ պարտիս դու Տէր քոյ, եւ զի՞նչ պարտի քո ընկերն քեզ: Զո ընկերն՝ կամ բանիւ է պարտական որ անարգեալ է քեզ, կամ բամբաստեալ, կամ զուր ասացեալ. եւ այլ սոյնպիսիք. եւ կամ ինչս պարտի եւ ոչ կարէ վճարել. կամ գողացեալ է, կամ զրկեալ, կամ այլ սոյնպիսի. սակաւ իրօք պարտական է քեզ: Եւ դու Աստուած բազում ես պարտական եւ յանցաւոր. քանի մտօքդ զչարն խորհիս. քանի՞ լեզուաւ զչարն խօսիս. քանի աչօքդ եւ այլ զգայութեամբդ մեղանչես. քանի՞ հայիոյես. քանի՞ ծուլանաս ի պատուիրանաց նորա. եւ այսպէս ասենայն իրօք պարտական ես դու Տէր քոյ. որ ստեղծ զքեզ՝ եւ ետ քեզ հոգի եւ մարմին. եւ զարարածոց բարութիւնս. եւ հանդերձեալ խոստմունսն: Արդ՝ թէ դու զսակաւ պարտսն ոչ թողուս, եւ զբազումն մի խնդրեր ի Տէնէ: Որպէս առակն ասէ անտարանին. որ մինն պարտ էր բիւր տաղանդ. յորժամ աղաչեաց զՏէրն, եթող նմա զամենայն պարտսն. եւ ի դուրս ելեալ եգիտ զմին ծառայ որ իւրն պարտ էր հարիւր դահեկան. խեղդեր զնա թէ զպարտս իմ հատո. յորժամ ծառայքն ասացին զայս տանուտեառն, ասէ ցնա. (ծառայչար եւ վատ. դու աղաչեցեր զիս՝ եւ զամենայն պարտսն քո թողի. յորժամ դու պարտականին քոյ ոչ թողեր, զիմ զամենայն պարտս վճարեա ի յանվճար տանջանսն:) Այսպէս դիւրին է զպարտս ընկերին թողուլ. եւ այսպէս դժւարին է որք ոչ թողուն: Վասն այն ասեմք. (թո՛ղ մեզ զպարտս մեր. որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:) Եօթներորդ եւ ութներորդ բանն որ ասէ: (Մի տար զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա ի չարէ:) Երկու տարակոյս աստ հարցանելի է: Առաջին թէ՛ Աստուած որպէ՞ս տայ զմեզ ի փորձութիւն: Ասեմք եթէ՛ Աստուած զմարդ ի փորձութիւն եւ ի չար ոչ ձգէ. այլ յորժամ մեք անձնիշխան կամօք զհետ մեղացն ընթանամք, թոյլ տայ եւ ոչ բռնութեամբ արգիլէ. այն է տալն զմեզ ի չարիս. որպէս ասաց՝ (ես խոստացուցի զսիրտն Փարաւօնի. այսինքն, որ թոյլ ետ նմա խստանալ ի չարն:) Երկրորդ՝ հարցումն է աստ որ ասէ. (մի տար ի փորձութիւն. եւ առաքեալն ասէ. (երանի որ համբերող է փորձանաց. զի առջէ զպսակն կենաց:) Ասեմք եթէ՛ կրկին է փորձութիւն. մին մեղաց զոր ի մարմնոյս մեր եւ ի սատանայէ կրեմք. այս չար է. աղօթեմք մի տալ զմեզ ի յայս փորձութիւնս. եւ միւսն որ ի յօտարաց կրեմք փորձութիւնս. որ վասն հաւատոց եւ օրինաց չարչարեն զմեզ եւ տանջեն. այս բարի է. (որ համբերէ՛ առնու զպսակն ի Զրիստոսէ:) Այժմ ասեմք թէ զի՞նչ է չարն. եւ զի՞նչ փորձութիւն. որք աղօթեմք փրկել զմեզ: Թշնամին մեր սատանայ՝ բազում անուամբ կոչի: Երբեմն բանսարկու. երբեմն հակառակ. երբեմն զեբուղ. երբեմն այսն չար. երբեմն փորձութիւն. որ փորձէ զմարդ եւ ի չար որոգայթ ձգէ: Եւ փորձելն ի

յայլում տեղուոջ քննել եւ ընտրել ասի: Իսկ աստ՝ խաբելն եւ պատրելն է սատանայի. որպէս խեծ գկարթն եւ զորոգայթն ծածկէ՝ եւ զճուկն եւ զթռչունն ըմբռնէ. այսպէս զհեշտութիւն մեղացն խեծ դնէ սատանայ. եւ զգգայարանս պատրէ. եւ զմեզ ի յորոգայթ մեղացն ըմբռնէ: Եւ որպէս չար է ալիք ծովուն՝ զի ընկղմէ զմարդ. եւ չար է բորբոքել զհուրն՝ զի այրէ եւ ապականէ. եւ չար է պատերազմ՝ որ սպանանէ զմարդ. եւ որ կամի զիրծանիլ՝ հեռանայ ի նոցանէ: Նոյնպէս չար է ալէկոծութիւն ցանկութեանն. եւ չար է հուր բարկութեանն. եւ չար է պատերազմ սատանայի. վասն այն խնդրեմք յԱստուծոյ զերծանիլ ի նոցանէ: Դարձեալ՝ փորձութիւն է ակամայ եւ անգիտութեամբ մեղքն. եւ չար է կամաւորն եւ գիտութեամբ մեղանչելն. աղօթեմք առ Աստուած՝ զի յերկոցունցն փրկեսցէ զմեզ: Դարձեալ՝ փորձութիւն է զգայարանաց մեղքն. որ աչօքն յանկարծակի տեսանէ՝ եւ լսէ՝ եւ մեղանչէ. եւ չար է որ մտօքն խորհի եւ յօժարի. եւ ապա կամօքն գործէ: Դարձեալ՝ փորձութիւն է խաբելութիւնն սատանայի. եւ չար է բռնաւոր զօրութիւնն. զի այս է երկու ձեռքէն նորա. այսինքն, խաբելութիւնն եւ բռնութիւնն: Դարձեալ՝ փորձութիւն է մարմնաւոր պատուհասն զոր աստ կրեմք. եւ չար է անտի տանջանքն յաւիտենից: Յայսցանէ աղօթեմք փրկել զմեզ: Եւ ապա ի վերայ բերէ զիններորդ բանն որ ասէ: (Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս:) Որպէս թէ՛ քեզ պարտ է զմեզ փրկել. որ արքայ եւ Տէր ես եւ թագաւոր ես մեր. եւ քո է կարող զօրութիւն՝ որ փրկես զտկարս ի բնութենէ չարին. եւ փրկութիւնն մեր քեզ փառք է եւ քո անուն. որ ի չարէն եւ ի յաւիտենիզ տանջանացն ողորմութեամբդ քո փրկես եւ ազատես: Եւ տասներորդ բանն որ ասէ: (Ամէն:) Այսինքն, եղիցի զոր խնդրեցաք ի քէն. զանազան խնդիրս մեր կատարեսցի: Եւ դարձեալ՝ ստուգապէս արքայ եւ Տէր եւ զորաւոր դու ես. եւ փառք եւ գոհութիւն քեզ յամենայն յաւիտեանս. յանցեալն, եւ ի ներկայս այժմ, եւ ի հանդերձեալն որ գալոցն է: Յամենայն արարածոց՝ յերկնաւորաց եւ յերկրաւորաց, եւ ի սանդարամետականաց. յամենայն լեզուէ յամենայն բերանոյ եւ յամենայն շնչոյ, փառք եւ երկրպագութիւն Յօր ամենակալի, եւ Որդւոյ Միածնի Փրկչին մերոյ, եւ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Յոզուայն, զոհութիւն եւ բարեբանութիւն եւ փառք յաւիտեանս ամէն:

Նորին առաջին քարոզ վասն հաւատոյ. ի բանն որ ասէ առաքեալն յեբրայեցոց: (Յաւատալ պարտ է այնմ, որ մերձենայ առ Աստուած թէ՛ է Աստուած.՝ որք խնդրեն զնա՝ լինի պարզ՝ատու:) Եբրայ 11. 6: (Գլուխ ԺԲ)

Չաստուածպաշտութեան օրինակ՝ յերից իրաց ուսուցանէ գոլ աստուածաբան մարգարէն Եսայի: Նախ՝ ի լուր լսելեաց. երկրորդ՝ իմացմամբ մտաց. երրորդ՝ ի տեսս աչաց: Վասն առաջնոյն ասէ. (ո՞չ լուարք, եւ ո՞չ պատմեցաւ ձեզ:) Վասն երկրորդին՝ (ո՞չ իմանամք, եւ ո՞չ գիտացիք:) Վասն երկրորդին՝ (ամբարձէք զաչս ձեր եւ տեսէք. ո՞ հաստատեաց զամենայն:) Այս է՝ զի ի նախնեանց պատմութեանց, ի ծանօթս գամբ Աստուծոյն ճշմարիտ. որպէս ասացաւ յօրէնսն: (Ես եմ Տէր Աստուած առաջին, եւ առ յապայ. եւ չիք այլ ոք բաց յինէն.) եւ հաւատալ պարտ է թէ, է Աստուած: Երկրորդ՝ ի կարգէ իրաց մտօք իմանամք զԱստուած. զի ամենայն եղելոց պարտ է սկիզբն եւ պատճառ գոլ. զի իր ինչ՝ ինքն ինքեան սկիզբն եւ

պատճառ անկար է լինիլ: Ապա ուրեմն սկիզբն է պատճառ ամենայնի է Աստուած. որպէս միակ թիւն՝ բազմութեան թուոցն: Երրորդ՝ ի տեսութենէ աչաց. զի տեսանեմք զհաստատութիւն երկրի. եւ զգնացս ջուրց. եւ զլայնատարած կամարն երկնի. եւ զշարժումն ստեղծած եւ զայլոց: Եւ յայսմանէ ճանաչեմք թէ՛ գոյ արարիչ սոցա: Որպէս ասէ առաքեալն ի հռօմեայեցոց թէ՛ (աներեւոյթ Աստուած երեւելի արարածովքս իմացեալ տեսանի:): Որպէս եւ ոմն իմաստուն այսու տեսութեամբ նկատեաց զսկիզբն առաջին ասելով. (Է՛ ոմն՝ որ շարժէ զերկնային մարմին. եւ ինքն մի է. եւ անմարմին է. եւ անբաւազօրէ, եւ անեղէ. վասն որոյ եւ անվախճան է: Եւ նա է արարիչ ամենայն եղելոց. եւ նմա է տալի պաշտօն եւ հաւատ: այպէս եւ առաքեալն ուսուցանէ մեզ. (հաւատալ պարտ է այնմ, որ մերձենայ առ Աստուած թէ՛ Է՛ Աստուած. եւ որք խնդրեն զնա՝ լինի պարգեւատու:): Եւ վասն առաջիկայ բանիս՝ վեց իրս տեսանելի է մեզ: Նախ թէ՛ զի՞նչ է հաւատն: Երկրորդ՝ ո՞րն է առաւել տեսութիւն. հաւատո՞յն, թէ մտացն, եւ թէ աչացն: Երրորդ՝ ուստի՞ գոյանայ հաւատն: Չորրորդ՝ յո՞ր մասն է հոգւոյն: Զինգերորդ՝ թէ քանի՞ են հաւատքն: Վեցերորդ՝ վասն աստիճանաց հաւատոյն, եւ դաւանութեան նորին: Եւ նախ տեսցուք զառաջին գլուխն թէ՛ զի՞նչ է հաւատն. զորեւ առաքեալն այսպէս սահմանէ: (Չի՞նչ է հաւատն՝ եթէ ոչ՝ յուսուցելոց իրաց) հաստատութիւն. եւ յանդիմանութիւն որոց ոչն երեւին: Այսինքն, հաւատն գյուսացեալ բարիսն հանդերձեալ կեաց՝ հաստատէ ի մեզ, եւ զբարեաց պարգեւօղն զԱստուած. որ ոչ տեսանի ի զգալի աչացս՝ յայտնի ցուցանէ ի հոգիս մեր եւ հաստատէ: Որեւ սուրբն Դիոնեսիոս վկայէ: Զաւատն է հաստատ կայումն. որ յարէ զճշմարտութիւնն իմարդն, եւ զմարդն ի ճշմարտութիւնն: Այսինքն, զի ճշմարտութիւնն է Աստուած. եւ հանդերձեալ բարիքն նորին. եւ մարդն հաւատովն յարի եւ մերձենայի ճշմարիտն Աստուած. եւ առնու զխոստացեալ բարիսն. որպէս ուսուցանէ աստ թէ, (հաւատալ պարտ է թէ է Աստուած. եւ որ մերձենայ առ Աստուած եւ որ խնդրէ՛ լինի պարգեւատու:): Այս առաջին բանն: Երկրորդ գլուխն, թէ ո՞րն առաւել տեսանէ. հաւա՞տքն, թէմիտքն, թէ աչքն: Գիտելի է՝ զի արարածքս ամենայն կրկին են. մինն իմանալի է եւ ամարմին. որպէս հրեշտակք եւ երկնային կեանք. եւ մինն զգալի է մարմին. որպէս երեւելիքս եւ այժմու կեանքս: Եւ մարդս ունի կրկին տեսութիւն. այսինքն, միտս, եւ զգալի աչս. զի մտօքն տեսանէ զանմարմին էութիւնս հրեշտակաց. եւ աչօքն հեսանէ զզգալի մարմինս: Վասն որոյ ետ Աստուած զհաւատն ի մեզ՝ զի հաւատով տեսանեմք զԱստուած: Եւ զի առաւել տեսութիւն է հաւատոյն, քան զմտացն եւ զաչացն: Եւ յայտ է ի չորս իրաց: Նախզի՛ աչքն տեսանէ մինչեւ ի դիմատիպ ինչ. որպէս զորմն, կամ զլեռն, կամ զերկինս. եւ յայնկոյս ոչ անցանէ: Իսկ միտքն՝ տեսանէ զսոսա եւ առաւելու յայնկոյս զկնի որմոյն՝ եւ յետոյ լերանց՝ եւ ի վերոյ երկնից զդասս հրեշտակաց, եւ զանմարմինս իմանայ: Այլ ի տեսանել զԱստուած՝ տկարանայ վասն երկու իրաց: Նախզի՛ միտքն եղականէ. եւ Աստուած անեղ. ոչ կարէ եղանականն զանեղն տեսանել: Երկրորդ՝ զի միտքն չափաւոր է. եւ Աստուած անչափ. ոչ կարէ չափաւորն զանչափն իմանալի եւ տեսանել. իսկ հաւատքն զի յԱստուծոյ է եկեալ առ մեզ՝ նա կարողանայ զԱստուած տեսանել եւ իմանալ: Եւ յայտ է ի բազում իմաստասիրացն. որք ունեին զգիտութիւն մտացն՝ այլ ոչ կարացին իմանալի զԱստուած: Երկրորդ յայտ է՝ զի գիտութիւն մտաց՝

հետեւի ի բնութեան իրաց. եւ ի վեր քան զբնութիւն ոչ ինչ տեսանէ. զի ուր բնութիւն ոչ հասաանի, արդ եւ միտք ոչ հասանի: Այլ հաւատքն տեսանէ ի վեր քան զբնութիւն. որպէս է Աստուած. եւ հաւատայ սքանչելեացն որ գործէ ի վեր քան զբնութիւն: Երրորդ յայտէ՝ զի իմաստունքն որք ունէին զգիտութիւն մտաց՝ բազում ինչ խօսեցան ճշմարիտ, եւ բազում սուտ եւ թիւր իմացան. որպէս ի լինելիութիւն երկնի եւ երկրի. եւ վասն սկզբան եւ կատարածի աշխարհի: Այլ մարգարեք եւ առաքեալք որք ընկալան յԱստուծոյ զգիտութիւն հաւատոյն՝ զամենայն ճշմարիտ խօսեցան, եւ առանց թիրութեան՝ վասն պարտ է մեզ զճշմարիտ ասացեալս իմաստնոցն ընդունիլ. եւ որ ընդդէմ խօսին վարդապետաց եկեղեցւոյ, ունայն եւ սուտ համարիլ: Չորրորդ յայտ է՝ որք ունէին զգիտութիւն մտաց՝ վասն գիտութեանն ոչ արդարացան եւ վասն գիտութեան իւրոյ ոչ որք մեռանի: Այլ որք ունի զհաւատն՝ բազումք վասն հաւատոյն մեռան. որպէս դասք մարտիրոսաց. եւ հաւատովքն արդարացան: որպէս ասէ գիրն. (հաւատաց Աբրահամ յԱստուած՝ եւ համարեցաւ նմա յարդարութիւն:) Ապա ուրեմն յայտնի է յասացելոցս՝ որ առաւել է հատն տեսութիւն, քան զմտացն եւ զաչացն: Այս երկրորդ գլուխն: Երրորդ հարցումն թէ՝ հաւատն ուստի՞ գոյանայ: Ասեն վարդապետք. զոր օրինակ՝ մարմնական աչք ունի զբնական լուսաւորութիւն. բայց կարօտի արտաքին լուսոյ արեգական՝ կամ ճրագի՝ որ միաւորի ընդ ինքն, եւ ապա կարէ տեսանել: Այսպէս ի հոգւոյն ակն մեր որ է միտքն՝ եղեալէ Աստուած բնական լուսաւորութիւն. բայց կարօտի լուսոյն՝ որ հեղանի յԱստուծոյ. եւ միաւորի ընդ նմա, եւ նովաւ տեսանէ զԱստուած եւ զհանդերձեալ բարիսն եւ զկեանսն յաւիտենից: Վասն որոյ եւ այսպէս սահման դնեն վարդապետք եթէ, (հաւատն է լուսաւորութիւն մտաց, հեղեալ ի յառաջին լուսոյն ի բնական անձն, առ ի ճանաչեալ զհոգեւոր բարիսն:) Եւ դարձեալ զոր օրինակ՝ թէ յերկու լոսոյն միին պակաս է, կամ բնականն որպէս կոյր մարդ, կամ արտաքին որպէս ի գիշերի, ոչ ինչ կարեմք տեսանել: Նմանապէս՝ թէ բնական բանականութիւնն պակաս է որպէս յանբան կենդանիս, կամ հեղումն լուսոյն Աստուծոյ պակաս է որպէս յայլ ազգիս, որք ոչ ունին հաւատ, ոչ կարեն տեսանել զհանդերձեալ կեանսն: Երրորդ օրինակ՝ որպէս կոյր մարդնամենեւին խաւար է ոչ տեսանէ. եւ բժոտակն շամանդաղ տեսանէ. եւ յստակ ակն պայծառ տեսանէ: Նոյնպէս անհաւատն եւ այլազգին՝ ամենեւին կոյր է ի հաւատոց. եւ հերձուածօղն պակաս ունի հաւատ. եւ այլ ընդ այլ տեսանէ: Այլ ուղղափառ՝ ճշմարիտ եւ կատարեալ ունի զհաւատոյն լոյս. եւ պայծառ տեսանէ: Եւ գիտելի է՝ զի Գ է իմանալի լոյսն. այսինքն, լոյս բնական. եւ լոյս շնորհաց. եւ լոյս փառաց: Բնական լոյսն է բնական բանականութիւն. որպէս իմաստասիրացն: Շնորհաց լոյսն է՝ որպէս լոյս հաւատոյ մարգարեից եւ քրիստոնէից: Փառաց լոյսն է՝ որպէս հրեշտակացն եւ երանելեաց սրբոց որք ի վերինն գաւառի: Արդ՝ բնական լոյսն՝ նման է լուսոյ աստեղաց որ նւազ է: Եւ շնորհաց լոյսն որ է հաւատոյն՝ նման է լուսնի որ մեծագոյն է: Եւ փառաց լոյսն՝ նման է արեգական որ եւ մեծագոյն եւ պայծառ է: Այլ իմաստ տասերքն արտաքին՝ զբնական լոյսն միայն ունէին. իսկ մեք քրիստոնէայքս եւ առաքեալքն եւ մարգարեքն՝ ընկալեալք ի վերոյ բնական լուսոյն զլոյս շնորհացն որ է հաւատն՝ եւ այս լուսովս հասանիմք ի լոյս փառացն զոր ունին հրեշտակք: Այլ սոքա երեքան լոյսք՝ այսպէս զանազանին: Նախագի՝ բնական լոյսն՝ է կարծեաց գիտութիւն.

որպէս իմաստնոցն եւ սուտ: Եւ շնորհաց լոյսն՝ Է ճշմարիտ գիտութիւն եւ նուազ. որպէս հաւատացելոց. եւ փառաց լոյսն՝ Է առաւել գերագոյն եւ պայծառ տեսութիւն. որպէս սրբոցն յերկնիս: Վասն այն հաւատոյ գիտութիւնն Է ի մէջ երկուց գիտութեանց. զի առաւել Է քան զկարծեաց գիտութիւն մարդկան եւ ի ներքոյ Է գիտութեանց հրեշտակաց. զի մարգարէք եւ հաւատացեալք՝ տեսանեն ընդ հայելի օրինակաւ. իսկ սուրբքն որք են յերկնս՝ տեսանեն դէմ յանդիման. որպէս ասէ առաքեալն: (Այժմ տեսանեմք իբր հայելի օրինակաւ. այլ յայն ժամ դէմ յանդիման:) Երկրորդ՝ զանազանին երեքեան լոյսքն. զի նախ Է բնական լոյսն. եւ ապա շնորհացն. եւ ապա յԱստուծոյ փառացն. Եւ բնական լոյսն՝ փոխի ի շնորհաց լոյսն. եւ շնորհացն ի փառաց լոյսն. եւ ուր հաւատոցն լոյս ոչ Է, անդ եւ փառացն լոյս ոչ լինի: Ապա ուրեմն յայտնի Է՝ զի հաւատացեալք որք այժմ ունին զլոյս փառացն Աստուծոյ. եւ անհաւատքն որք չունին զլոյսն շնորհաց, աստ եւ անդ ոչ տեսանեն զլոյսն փառաց: Այս երկրորդ գլուխն: Չորրորդ հարցումն թէ՛ հաւատն յո՞ր մասն Է հոգւոյն: Ասեն վարդապետք եթէ՛ Գ զօրութիւն եւ մասն Է հոգւոյն. այսինքն, անկանակ՝ զգայական՝ եւ բանական: Եւ տնկանանն ամենեւին անհնազանդ Է ի մարդս. որպէս հալոդական զօրութիւն եւ աճողականն, եւ այլք. որք բնաւ ոչ լսեն մեզ. այլ ըստ իւրեանց բնութեանն գործեն. եւ սոքա ի ննջելն՝ առաւել գործեն քան յարթութեանն: Իսկ զգայական մասունքն՝ երբեմն հնազանդին մեզ. եւ երբեմն են անհնազանդ. որպէս ցասումնն եւ ցանկութիւնն: Չի սոքա ահիւ եւ ամօթով երբեմն հնազանդին բանին. եւ դադարին ի ցանկանալոյ եւ ի բարկանալոյ: Իսկ բանական մասունքն՝ ամենեւին հնազանդ են մարդոյս. որպէս իմացականն եւ կամքն: Իմացականն Է հանճարն եւ խորհուրդն. որով տեսանեմք զճշմարիտն. եւ կամքն Է իշխանականն՝ որով գործեմք զբարին: Արդ՝ յայս Գ զօրութեանց հոգւոյս՝ յայն մասն որ տնկականն Է եւ անհնազանդ, ոչ Է հաւատն. զի նա ոչ կարէ լինիլ ենթակայ առաքինութեան. որպէս եւ ոչ տունկք եւ բոյսք: Եւ յայն մասն որ զգայական զօրութիւնն Է, ոչ Է հաւատն. զի թէպէտ լինիլ նոքա տեղիք բարոյական առաքինութեան. զի պարկեշտութիւնն Է ի ցանկութիւնն. եւ արիութիւնն ի ցասումն. այլ ոչ կարեն ենթակայ լինիլ աստուծային առաքինութեան որ Է հաւատն. որպէս եւ ոչ ունին անասուն կենդանիք զհաւատն որ Է բարձրագոյն առաքինութիւն: Ապա ուրեմն հաւատն Է երկրորդ մասն զօրութեան հոգւոյն՝ որ Է եութեամբ բանականն: Եւ բանականին կրկին մասն Է, իմացումն, եւ կամք: Այլ հաւատն Է ի յիմացումն որպէս ի ենթակայ. եւ Է ի կամսն որպէս հրամանատու: Վասն զի կամքն հրամայէ զգործն հաւատոյն. եւ ոչ ոք հաւատայ, եթէ ոչ կամեցողն: Այ նախկին տեղի եւ ենթակայ հաւատոյն՝ Է իմացումն եւ ոչ կամքն, վասն երկու պատճառի: Նախզի՝ հաւատոյն հետեւի ճշմարտութիւնն եւ կամացն բարին. այլ ճշմարտութիւնն Է ի հաւատն. եւ բարին ի յոյսն եւ ի սերն. վասն զի բարութեանն յուսամք, եւ զբարին սիրեմք: ապա ուրեմն հաւատն Է ի յիմացականն. եւ յոյսն եւ սերն ի կամսն: Երկրորդ յայտ Է՝ զի ի փառս արքայութեանն երկնից՝ հաւատն փոխի ի պայծառ տեսութիւն: Որպէս ասէ առաքեալն. (այժմ տեսանեմք ընդ հայելի օրինակաւ. եւ յայնժամ դէմ յանդիման:) Իսկ պայծառ եւ յայտնի տեսութիւնն իմացականին, եւ ոչ կամացն:

Այս չորրորդ գլուխն:

Հինգերորդ հարցումն թե՛ քանի՞ են հաւատք: Գիտելի է՝ զի հաւատն յերիս բաժանի: Նախ ասի անկատար հաւատ զոր ունին դէւք. ոչ ի շնորհաց Աստուած. այլ ի նրբահայեաց ճարտարութենէ իւրեանց՝ եւ տեսութենէ սքանչելեացն Քրիստոսի եւ առաքելոցն, որք բռնադատեալ ասէին թե՛ (գիտեմք զքեզ ո՛վ ես սուրբդ Աստուծոյ. մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ:) եւ Յակօբոս ասէ. (դու հաւատաս զի մի է Աստուած՝ բարւոք առնես. եւ դէւք հաւատն եւ սարսիւն.) եւ այսպիսի հաւատս անկատար է եւ ոչ է վարձատրելի: Երկրորդ՝ ասի հաւատ անտեսակ եւ մեռեալ. զոր ունին միայն անուամբ քրիստոնէայքն: Այս հաւատս ճշմարիտ է քան զդիւրացն. զի հեղանին ի նոսա ի շնորհացն Աստուծոյ ի ժամ մկրտութեանն. զի դէւք ոչ ունին զպարգեւաց հաւատն ունակութեան որպէս ցուցաւ: Այլեւ այս եւս անտեսակ է եւ մեռեալ հաւատ. զի ի չար գործոցն մեռեալ է հաւատ նոցա. եւ ոչ ունին զսէրն որ է տեսակ հաւատոյն. եւ ոչ զբարիգործս որ է կենդանութիւն հաւատոյն: Նաեւ այսպիսի հաւատս՝ ոչ է վարձատրելի. ըստ այնմ, (հաւատք առանց գործոց մեռեալ են:) Իսկ երկրորդ տաւատն՝ է տեսակաւոր, եւ կենդանի, եւ կատարեալ. այսինքն հաւատք սրբոցն եւ ընտրելոցն. որք սիրովն եւ գործովք բարեաց ստացան զնա. որպէս ասէ առաքեալն. (ոչ թլփատութիւն ինչ է՝ եւ ոչ անթլփատութիւն. այլ հաւատք սիրով յաջողեալ:) եւ այսպիսի հաւատոյս վարձն բազում է եւ անսպառելի: Այսպիսի հաւատովք՝ ամենայն նահապետքն արդարացան: Որպէս Նոյ՝ Աբրահամ՝ Իսահակ՝ Յակօբ, եւ այլքն: Այսպիսի հաւատովք՝ մարգարէքն խօսեցան. որպէս Մովսէս՝ Սամուէլ՝ Դաւիթ, եւ այլքն: Այսպիսի հաւատովք՝ առաքեալքն քարոզեցին ընդ ամենայն տիեզերս. որպէս ասէ առաքեալն. (մեք այսպէս քարոզեցաք. եւ դուք այսպէս հաւատացիք:) Վասն այս հաւատոյս՝ մարտիրոսքն չարչարեցան. ճգնաւորքն նահատակեցան. եւ ամենայն դասք ընտրելոցն. առաջինք՝ միջինք՝ եւ վերջինք՝ այսու հաւատով մեռան եւ պսակեցան, այս է կատարեալ եւ վարձատրելի հաւատն. որպէս ասէ առաքեալն: (Չգործն կատարեցի. զհաւատն պահեցի. այդ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդար դատաւորն:) Այս հինգերորդ գլուխն: Վեցերորդ հարցումն թե՛ քանի՞ են աստիճանք հաւատոյն: Գիտելի է՝ զի աստիճանք հաւատոյն՝ օրինակեցան առ սանդուխսն Յակօբայ: Որ ետես սանդուխ յերկրէ յերկինս. եւ Տէր հաստատեալ ի նմա. եւ հրեշտակք իջանէին. եւ մարդիկ ի վեր ելանէին: Արդ՝ սանդուխքս այս՝ նշանակեն զբարձրութիւն հաւատոյն. որով մեք մարդիկ ելանեմք յերկինս. եւ հրեշտակք իջանեն առ հաւատացեալսս. եւ Տէր հաստատեալ ի նմա. զի դաւանութեամբ հաւատոյն՝ աստուած ի մարդիկ հանգչի. եւ մեք յԱստուած յարիմք: Եւ երկու կողմն սանդիսոյն՝ երկայն. մին անմարմին էութիւնն աստուծոյ. եւ միւսն մարդեղութիւն Տէրն մերոյ: Եւ մատուցք սանդիսոցն՝ են չորեքտասն աստիճանք հաւատոյն. որով պնդեալ զմիտս, բարձրանամք եւ ելանեմք առ Աստուած: Եւ չորեքտասն աստիճանքս՝ եօթն են յանմարմին էութիւն երից անձանցն Աստուծոյ. եւ եօթն ի մարմնաւոր տնօրէնութիւնն Քրիստոսի: Արդ՝ ի կողմանէ աստուածութեանն՝ եօթն աստիճան է. զի յԱստուած երեք ինչ է: Առաջին՝ անձնաւորութիւնն Աստուծոյ: Երկրորդ՝ բնութիւնն աստուծոյ: Երկրորդ՝ գործն Աստուած: Այլ ի կողմանէ անձնաւորութեանն՝ լինի երեք աստիճան հաւատոյ: Առաջինն՝ հաւատալ պարտ է զանձն Հօր անսկիզբն. եւ ոչ

յումբքէ: Երկրորդ՝ պարտ է հաւատալ զանձն որդւոյ ծնեալ ի Զօրէ: Երրորդ՝ պարտ է հաւատալ զհոգին սուրբ բխեալ ի Զօրէ: Այլ բնութիւնն մի է. վասն այն չորրորդ աստիճան է՝ հաւատալ զերրորդութիւնն մի բնութիւն. եւ մի աստուածութիւն: Այլ գործն Աստուած Գ ազգ է: Առաջինն է գործ բնութեանն. որպէս ստեղծանելն: Երկրորդ՝ գործ շնորհաց. որպէս ինամել զհաւատացեալս եւ թողութիւն շնորհել: Երրորդ՝ գործ փառաց եւ մեծութեան. որպէս յարութիւն մեռելոց եւ փառք հրեշտակաց: Վասն այն՝ հինգերորդ աստիճան է՝ հաւատալ թէ, աստուած ստեղծող եւ արարիչ է ամենայն եղելոց՝ երեւելեաց եւ աներեւութից: Վեցերորդ աստիճան է՝ հաւատալ ի սուրբ եկեղեցի զթողութիւն մեղաց: Եօթներորդ աստիճան՝ պարտ է հաւատալ թէ, հասարակաց յարութիւն լինելոց է արդարոց եւ մեղաւորաց եւ արդարքն ժառանգեն զկեանսն յաւիտենից. եւ չարքն զտանջանս յաւիտենականս: Այս ի կողմանէ աստուածութեանն: Այլ ի կողմանէ մարդկութեանն Քրիստոսի՝ պարտ է եօթն ինչ հաւատալ: Առաջին աստիճան է՝ զի հաւատասցուք թէ՝ որդին Աստուծոյ յղացաւ ի հոգւոյն սրբոյ ի սուրբ Աստուածածնէն: Երկրորդ աստիճան՝ զի հաւատասցուք թէ, ծնաւ ի կուսէն, անապական մալով կուսութիւն ծնողին: Երրորդ աստիճան է՝ զի չարչարեցաւ մեռաւ եւ թաղեցաւ մարմնով: Չորրորդ աստիճան է՝ զի հաւատասցուք թէ՝ բանական հոգւով էջ ի դժոխս. եւ լուսաւորեաց զհոգիսնորք ի բանտին: Զինգերորդ աստիճան է՝ զի հաւատասցուք եթէ, երեքօրյայ յարեաւ ի գերեզմանէն. ակերեալ զդժոխս եւ ազատեալ զհոգիսն ի բանտէն: Վեցերորդ աստիճան է՝ զի յետ քառասուն ակուր՝ համբարձաւ ի երկինս նովին մարմնովն. եւ նստաւ ընդաջմէ Զօր. այսինքն, հանգեաւ ի փառս աստուածութեանն: Եօթներորդ աստիճան է՝ զի հաւատասցուք զմիւսանգամ գալուստ Տէրն քրիստոսի. զի գալոց է դատել զկենդանիս եւ զմեռեալս: Այս են չորեքտասն աստիճանք հաւատոյ. իբր հիմն եւ արմատ հաւատոյ: Չոր ժողովեալ՝ այսպէս դաւանեմք հասարակ բառիւք:

*Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՅայրն Աստուած. անեղ՝ անծին՝ եւ անսկիզբն. այլեւ ծնող որդւոյ, եւ բղխող հոգւոյն սրբոյ: Զաւատամք զբանն Աստուած անեղ՝ ծնեալ եւ սկսեալ ի Զօրէ նախ քան զյաւիտեանս. ոչ յետոյ, եւ ոչ կրտսեր. այլ որքան Զայրն Զայր՝ ընդ նմին եւ որդին որդի: Զաւատամք զՍուրբ Զոգին՝ անեղ անժամանակ. ոչ ծնեալ, այլ բխեալ ի Զօրէ. Էակից Զօր, եւ փառակից Որդւոյ: Զաւատամք զերրորդութիւնն սուրբ՝ մի բնութիւն. մի աստուածութիւն. ոչ երեք Աստուածք, այլ մի Աստուած. մի աստուածութիւն. մի կամք. մի թագաւորութիւն. մի իշխանութիւն. արարիչ երեւելեաց եւ աներեւութից: Զաւատամք յեկեղեցի սուրբ զթողութիւն մեղաց հաղորդութեամբ սրբոց: Զաւատամք զմին յերկրից անձանց զբանն Աստուած՝ ծնեալ ի Զօրէ նախ քան զյաւիտեանս: Ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյսն Սարիամ, առաւել յարենէ նորա, միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն. ինն ամսեայ ժամանակաւ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին. եւ եղել Աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ. հոգւով, եւ մտօք, եւ մարմնով: Մի անձն. մի դէմ. եւ միաւորեալ մի բնութիւն. Աստուած մարդացեալ առանց փոփոխման. առանց այլայլութեան. անսերմն յղութիւն. եւ անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն աստուածութեան նորա՝ եւ ոչ վախճան մարդկութեան նորա. (զի Յիսուս Քրիստոս՝ երեկ եւ այսօր, նոյն եւ

յաւիտեանս ժամանակաց: Զաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ շրջեալ ի վերայ երկրի. յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն. հայր վկայեալ (դա է որդի իմ սիրելի.) եւ Զոգին Սուրբ աղանակերպ իջեալ. փորձեալ ի սատանայէ եւ յաղթեալ նմա: Զարողեալ մարդկան զփրկութիւն. աշխատեալ մարմնով. վաստակեալ. քաղցեալ. եւ ծարաւեալ: Յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս. խաչեալ՝ մեռեալ մարմնով, եւ կենդանի աստուածութեամբն: Մարմինն եղեալ ի գերեզմանի միաւորեալ աստուածութեամբն. եւ հոգւովն իջեալ ի դժոխիս անբաժանելի աստուածութեամբն: Զարողել հոգւոցն՝ աներեալ զդժոխս՝ եւ ազատեալ զհոգիսն: Յետ երից աւուրց՝ յարուցեալ ի մեռելոց՝ եւ աներեւեալ աշակերտացն: Զաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձեալ յերկինս, եւ նստեալ ընդաջմէ Զօր: Այլեւ գալոց է դատեալ զկենդանիս եւ զմեռեալս. եւ հատուցանել ըստ գործոց. արդարոցն կեանք յաւիտենական. եւ մեղաւորացն տանջանք յաւիտենական: Այս է ուղղափառ դաւանութիւն հաւատոյ. զոր պատ է ամենայն քրիստոնէից՝ յամենայն ժամ ի սրտի եւ ի լեզուի պահել: (Չի սրտիւ հաւատալ արդարութիւն գործէ. եւ բերանով խոստովանիլ զփրկութիւն ասէ առաքեալն:) Սա է հիմն. ի վերայ սորա պարտ է շինել զգործս բարիս: Սա է վեմ անշարժելի. ի սա պարտ է յարիլ եւ հաստատիլ մեզ: Սա է ճրագ ի խաւար կենցաղոյս. պարտ է միշտ ի ձեռին պահել եւ սովաւ լուսաւորիլ: Սա է ճանապարհ.՝ սովաւ ընթացուք ի յաւիտենից կեանսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: Որով՝ ընդ որում Զօր միանգամայն՝ Զոգւոյն Սրբոյ, փառք՝ զոհութիւն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ ի բանն՝ որ ասէ Յակոբոս: (Զաւատք առանց գործոց մեռեալ են առանձինն:) Յակ. 2. 22: (Գլուխ ԺԳ)

Ասեն վարդապետք եթէ՝ առաքիւնութիւն է առնելն.՝ ոչ գիտելն միայն: Չի ոչ է օգուտ գիտելն եւ ոչ առնելն. այլ վասն: Որպէս ասէ Յակոբոս. (որ ոք գիտիցէ զբարին եւ ոչ առնիցէ՝ մեղք են նմա:) Նաեւ գիտելն՝ զմարդն ոչ առնէ երանելի. որպէս ասէ Տէրն մեր աշակերտացն. (թէ զայս գիտեք, երանելի եւս էք թէ առնիցեք զայս: Չի որպէս ասեն իմաստունք թէ՝ ամենայն մարդ որ գիտէ զբժշկութիւն՝ բժիշկ է. այլ ոչ ամենայն որ գիտէ զարդարութիւն արդար է: Նոյնպէս եւ ոչ ամենայն որ գիտէ զհաւատոցեալ է. այլ այն որ գործ է զարդարութիւն արդար է. եւ այն որ առնէ զգործս) հաւատոյն՝ հաւատացեալ: Այլ առանց գործոց՝ հաւատն մեռեալ է եւ ունայն. որպէս ասէ Յակոբոս: (Զաւատք առանց գործոց մեռեալ են:) Բայց ի բանէ հաւատոյս՝ վեց իրս տեսանելի է: Նախ թէ՝ զի՞նչ է հաւատն: Երկրորդ՝ քանի՞ է եղանակ հաւատոյն: Երրորդ՝ մեռեալ եւ կենդանի հաւատն զանազանի: Չորրորդ՝ թէ հարկաւոր է հաւատոյն եւ բարի գործն: Զինգերորդ՝ թէ զի՞նչ շահ եւ օգուտ է ի հաւատոյն: Վեցերորդ՝ զի՞նչ չար անհաւատին:

Տեսցուք զառաջին գլուխն թէ՝ զի՞նչ է հաւատն: Այսպէս սահմանեն վարդապետք: Զաւատն է՝ ունակութիւն շնորհաց հեղեալ յառաջին լուսոյն ի բանական անձն, ի ճանաչել, առ ի ճանաչեալ զհոգեւոր բարինսն: Զաւատն ունակութիւն է զոր ունիմք առ մեզ հեղեալ ի շնորհացն աստուծոյ՝ պարգեւ լուսոյ ի բանական հոգիս մեր. եւ նովաւ ճանաչեմք զհոգեւոր բարիսն. որպէս արեգական լոյսն միաւորի ընդ աչաց լոյսս մեր՝ եւ նովաւ տեսանեմք

զաշխարհս, եւ զմարդ, եւ զքար, եւ զայլսն: Նոյնպէս լոյս հաւատոյն ծագի յԱստուծոյ ի բանական հոգիս մեր, եւ լուսաւորէ զմեզ. եւ այն հաւատոյ լուսովն տեսանեմք զկեանսն յաւիտենից. զփառս արդարոց եւ տանջանս մեղաւորաց: Եւ հաւատն յորժամ ծագի ի մեզ. այս է՝ ի ժամ մկրտութեանն՝ յորժամ արեւմուտս կոյս հրաժարիմք ի սատանայէ, եւ ի խաւարային գործոց նորա, յայնժամ դառնամք յարեւելս եւ հաւատամք ի Սուրբ Երրորդութիւնն եւ ի տնօրէնութիւնն Քրիստոսի: Եւ այս է ուխտ մեր՝ որ զհաւատս ուխտեցաք Աստուծոյ. յայնմ հետէ մինչեւ ի մահ զուխտս զայլ ի սիրտս եւ ի լեզուս մեր պարտ է պահել: Եւ յորժամ մկրտիմք յանուն Զօր եւ Որդոյ եւ Զոգւոյն սրբոյ՝ ի նոյն ժամն ծագէ ի մեզ ծածկապէս զլոյս հաւատոյն: Եւ յայտ է յերկից վկայութեանց: Նախ՝ որ ասէ մարգարէն Յովել. (հեղից յոգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ. եւ մարգարեացին ուստերք եւ դատերք ձեր. եւ ձերք ձեր երագովք երագացին:.) Զեղումն զշնորհս հոգւոյն ասէ, զոր ի ժամ մկրտութեանն պարգեւէ: Երկրորդ՝ առաքեալն Պօղոս վկայէ. (այլում բան մարգարեութեան. եւ այլում հաւատք նովին հոգւով:.) Այն է որ ի ժամ մկրտութեանն՝ զանազան շնորհք առնութիւնն. մարգարեութեան՝ վարդապետութեան՝ լեզուաց գիտութեան. նոյնպէս եւ զհաւատն ասէ շնորհել յԱստուծոյ: Երրորդ՝ վկայէ ակետարանն՝ որ ասաց Պետրոսի: (Երանի է քեզ. զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ. այլ Զայրն իմ որ յերկինս է:.) Չայն հաւատն որ դաւանեաց Պետրոս զՔրիստոս Որդի Աստուծոյ, ասէ թէ՝ Զայրն յայտնեաց քեզ, եւ ոչ մարդ: Եւ երանեաց զնա. զի երանութիւնն Աստուծոյ՝ հաւատացելոցն է. ոչ որք տեսանեն եւ հաւատն, այլ որք ոչ տեսանեն եւ հաւատացեն: Որպէս ասաց Տէրն Թումայի: (Դու տեսեր եւ հաւատացեր. երանի որք ոչ տեսեալ հաւատացեն:.) Եւ այս երանութիւնս մեզ է՝ որք հաւատացաք ի Քրիստոս եւ մկրտեցաք. եւ առաք զպարգեւս հաւատոյն. զո՞րն՝ այսինքն է, զարքայութիւնն երկնից: Չի որպէս մեք ուխտեցաք նմա զհաւատն՝ եւ նա ուխտեաց մեզ զարքայութիւնն. ընդ այնմ, (Զայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն. եւ ես ձեզ ուխտեմ:.) Եւ յոյժամ մկրտեցաք, շնորհօք որդիք կոչեցաք աստուած եւ ժառանկակից Քրիստոսի: Եւ որքան մեք պահեմք զուխտն հաւատոյ եւ զխոստովանութեանս մեր, եւ նա պահէ զուխտ խոստացեալ բարեացն իւրոց. ըստ այնմ, (որ ոք խոստովանեցի զիս առաջի մարդկան. եւ ես խոստովանեցայ զնա առաջի Զօր իմոյ:.) Եւ յորժամ ուրախանամք զուխտ նորա եւ զհաւատն, եւ նա ուրախանայ զուխտն եւ զպարգեւս իւր. ըստ այնմ, (որ ուրանայ զիս առաջի մարդկան՝ ուրացայց եւ ես զնա առաջի Զօր իմոյ որ յերկինս է:.) ահա սարսափելի բան. ահա ահեղ հրաման: Որ վասն մեր ուրախացմանն առաջի մարդկան ինքն փրկիչն մեր Քրիստոս՝ ուրանայ զմեզ առաջի Զօր Աստուծոյ, թէ (ո՛չ ճանաչեմ զձեզ:.) Եւ վասն Դ պատճառի ո՛չ ճանաչեն զմարդ: Նախ թէ՝ գոյն երեսացն փոխեալ լինի՝ զոր յառաջին ունէր, եւ յետոյ սեւացեալ: Այսպէս մկրտութեամբն հոգիս մեր սպիտականայ որպէս ձիւն. այլ յետոյ մեղօք սեւանայ. յայնժամ ոչ ճանաչէ զնա Քրիստոս. որպէս ասէ Երեմիա. (եղիցին երեսք ձեր սեւացեալ իբրեւ զպուտան:.) Երկրորդ՝ թէ ոք ծածկէ զերես իւր՝ ոչ ճանաչեն զնա. նոյնպէս որ յետ մկրտութեանն զմեղս գործէ եւ ծածկէ եւ ոչ խոստովանի, ո՛չ ճանաչէ զնա Քրիստոս. զի մեղքն նման է գործելոյ. թէ բազում ժամանակ թողեն ի ներքեւ հողին, ոչ ապականի. այլ թէ արտաքս հանեն ի վերոյ երկրի յարեւն եւ անձրեւն, շուտով հալի: Այսպէս թէ

ծածկես զմեղս ի սիրտս քո, եւ ոչ խոստովանիս, ամենեւին ո՛չ ապականի. ապա թէ յայտնես՝ շուտով ջնջի: Երրորդ՝ թէ զնշանն զոր յառաջն ունէր փոխէ, ոչ որ ճանաչէ զնա նոյնպէս որ զնշան հաւատոյն փոխէ՝ եւ ուրանայ զՔրիստոս, ոչ ճանաչէ զնա Աստուած, եւ ոչ հրեշտակք. որպէս ասէ սաղմոսն. (նշանս մեք ինչ ոչ տեսաք:) Չորրորդ՝ յորժամ ի տղայութեանն երթան յօտարութիւն, եւ նման մինչ ի ծերութիւնն, երբ գան՝ ոչ ճանաչեն զնոսա. նոյնպէս թէ ի տղայութենէն իւրմէ հեռանայ որ պատուիրանացն մինչեւ ի ծերութիւն, ոչ ճանաչէ զնա Աստուած: ապա ուրեմն ճշարիտ է՝ որ ուրանայ զՔրիստոս հաւատով եւ գործով, եւ ինքն ուրանայ զնա առաջի Յօր եւ հրեշտակաց: Այս առաջին գլուխն: Երրորդ հարցումն թէ՛ քանի՞ է եղանակ հաւատոյն: ասեն վարդապետք թէ՛ հաւատոյ անունն մի է, բայց կրկին զօրութիւն ունի: Առաջին է դաւանութեան հաւատն՝ որ է խոստովանիլ ի Սուրբ երրորդութիւնն. զոր ընկալաւ իւրաքանչիւր որ յաւագանէն. այսինքն է, որք հաւատամք զՅայր Աստուած. եւ հաւատամք զորդին Աստուած. եւ հաւատամք զսուրբ հոգին Աստուած հարթ եւ հաւասար: Ո՛չ առաջին եւ ո՛չ վերջին. ո՛չ երէց. ո՛չ կրտսեր. ո՛չ մեծ. ո՛չ փոքր՝ այլ համագոյ. համապատիւ. զուգափառ. մի իշխանութիւն. մի տէրութիւն. մի թագաւորութիւն. մի աստուածութիւն. եւ մի բնութիւն. արարիչ ամենայն արարածոց: Այլ հաւատամք ի ծնունդն Քրիստոսի. ի մարդեղութիւնն. ի խաչելիութիւնն. ի թաղումն. ի յարութիւնն. ի համբարձումն. ի միւսանգամ գալուստն Քրիստոսի: Այս առաջին դաւանութիւն հաւատոյն որ ի Սուրբ երրորդութիւնն: երկրորդ հաւատն այն է՝ որ զքանս զորս հոգին սուրբ փօսեցեալ է բերանով մարգարէիցն եւ առաքելոցն, եւ վարդապետք եկեղեցւոյ որք զգիրս սուրբս գրեցին, չհամարի առասպելս եւ սուտս. այլ հաւատայ թէ, ճշմարիտ են եւ ուղիղ այնպէս, որպէս թէ իւր աջօքն տեսանէ զամենայն եղեալս, եւ զլինելոցն, եւ զորս ենն այժմ: Եղելն այն է՝ զոր պատմեն թէ, ամենայն երեւելի եւ աներեւոյթ բնութիւնք՝ ոչ էին. այլ յԱստուծոյ հրամանէն ստեղծեալ զոյացան. եւ որ ինչ յետ լինելութեան արարածոցս սքանչելիք եւ զօրութիւնք եղեալ յԱստուծոյ պատմին ի գիրս, ի հնումն եւ ի նորումս, հաւատայ: Եւ լինելոց այն է՝ զոր ասեն բարեգործացն բարի հատուցումն լինիլ յԱստուծոյ եւ չարացն տանջանք եւ հուր յաւիտենական. լալ աչաց, եւ կրճտել ատամանց. խաւար արտաքոյ այցելութեանն Աստուծոյ. եւ հուրն անշէջ. (որ հուր նոցա ո՛չ շիջանի եւ որդն ո՛չ մեռանի:) եւ որ ենն այժմ այն է՝ զոր քարոզեն յամենայն բանս իւրեանց թէ, Աստուած մերձաւոր է առ ամենայնս, եւ ոչ հեռաւոր: Եւ զոր խորհիլն մարդիկ ի միտս իւրեանց բարի կամ չար, իմանայ զամենայն. եւ զոր խօսիլն զքանս լեզուալ՝ լսէ անսխալ. եւ զոր գործեն մարմնով ի ծածուկ՝ տեսանէ յայտնապէս. (զի չիք արարած աներեւոյթ ի նմանէ:) Արդ՝ որ այսոցիկ ի բոլոր սրտէ հաւատայ, նա է որ ունի հաւատ կենդանի. որ ոչ երբէք յանդգնի՝ կամ խորհիլ չար ի սրտի, կամ խօսիլ՝ անիրաւութիւն բերանով, կամ գործել զմեղս մարմնով: Չի թէ միոյ ուրուք մերձ լինելոյ՝ արգելուն զանարժան գործս. եւ յորժամ հաւատայ որ զԱստուած տեսող լինիլ. զի Աստուած տեսող թարգմանի. նա զհա՞րդ ժպրիի խօսիլ ինչ կամ գործել կամակար մտօք զչարութիւն: Իսկ որ բանիւ միայն ունի յԱստուած խոստովանութիւն այլ գործով՝ այնպիսոյն հաւատն մեռեալ է՞ զի յաղագս մեռելոսի գործոցն՝ մեռեալ ունի զհաւատն. որպէս ասէ առաքեալն Յակօբոս: (Յաւատք առանց

գործոց մեռեալ են առանձինն:) Այս երկրորդ գլուխն: Երրորդ հարցումն թէ՛ որպէս զանազանի մեռեալ եւ կենդանի հաւատն: Ասեմք թէ՛ տասն եղանակաւ զանազանին սոքա: Նախ որպէս ասացաք. մեռեալ եւ կենդանի հաւատն՝ բարի գործօքն զանազանին: Չի որպէս հոգին մարմնոյն է կենդանութիւն. այսպէս եւ բարի գործօքն հաւատոյն: Եւ որպէս մեռեալ մարմինն անգործ է. զի ոչ տեսանէ, եւ ոչ լսէ, եւ ոչ խօսի, եւ ոչ գնայ, եւ ոչ գործէ եւ այլն: Նոյնպէս եւ մեռեալ հաւատն անգործ է. զի ոչ զբարիս տեսանէ. եւ ոչ լսէ ունկամբն. եւ ոչ խօսէ զճշմարիտն. եւ ոչ գնայ ի ճանապարհն Աստուած. եւ ոչ առնէ զբարիս: Իսկ որ ունի զկենդանի հաւատն՝ զամենայն բարիս առնէ եւ խօսի եւ լսէ. եւ զայն ամենայն կատարէ:

Երկրորդ՝ ասեն իմաստունք թէ՛ տեսակ մարդոյն հոգին է՝ որ զմարդն կատարէ: Եւ մեռեալ մարդն՝ անտեսակ է. զի շուտով լուծանի եւ ապականի կերպն մարմնոյ: Այսպէս տեսակ հաւատոյն՝ սերն է առ Աստուած եւ առ ընկերն: Որ հաւատայ զԱստուած բարի. եւ սիրէ զնա: Եւ հաւատայ փոխարինացն աստուծոյ. եւ սիրէ զընկերն. որպէս ասէ զաղատացւոց: (Ի Քրիստոս Յիսուս ոչ թափատութիւն ինչ կարող է, եւ ոչ անթափատութիւն. այլ հաւատք սիրով յաջողեալ:) Եւ որ ոչ ունի զսերն՝ անտեսակ է հաւատն եւ անկատար. եւ շուտով լուծանի եւ ապականի. զի զսերն որ զարդարէ զհաւատն եւ կատարէ՝ ոչ ունի: Երրորդ՝ որպէս կենդանին ճշմարիտ մարդ է եւ կոչի մարդ՝ եւ մեռեալն սուտ մարդ է. նոյնպէս որ ունի զկենդանի հաւատն՝ ճշմարիտ հաւատացեալ եւ քրիստոնեայ կոչի. այլ որ մեռեալ ունի զհաւատն, սուտ հաւատացեալ եւ սուտ քրիստոնյա կոչի: Այսպիսին ըրողէմ հրամանացն Աստուծոյ ասէ. (մի կոչեսցես զանուն Տէրն Աստուծոյ քո դատարկ ի վերայ սնոտեաց:) Իբր թէ ասիցէ. թէ կոչիս քրիստոնեայ, զգործս քրիստոնէի գործեա զոր հրամայեաց քեզ. ապա թէ ոչ՝ զանունն Քրիստոսի սուտ կոչես ի վերոյ քոյ: Չոր օրինակ՝ այն որ կոչի սուլթան կամ թագաւոր՝ եւ ոչ ունի զգործսուլթանի կամ թագաւորի. նոյնպէս եւ սուտ է անունն ի վերոյ քրիստոնէին, որ զգործս ոչ ունիցի: Չորրորդ՝ ասի կենդանի եւ անկենդան հաւատ: Չի որպէս ի կենդանի մարդն յորժամ զօրաւոր է բնական ջերմութիւնն եւ ուժն, յայժամ փութով կատարէ զամենայն գործս. եւ ի ծերն եւ ի տհաս մանուկն որ անկատար է ուժն, տկար են ի գործն: Այսպէս որ զօրաւոր ունի զհաւատն եւ ջերմն սիրով, զամենայն բարի գործս փութով կատարէ: Եւ որ անկատար ունին զհաւատս, եւ հնացեալ են մաղօք, տկար են ի գործս բարիս. որ օրինակեցաւ ի գործիս ծննդոցն որ ասէ: (Երեւեցաւ Աստուած Աբրահամու ի մէջօրէի աւուրն.) որ նշանակէր արեգակն զպայծառ եւ ջերմ հաւատն Աբրահամու: Եւ զկնի ասէ. (ամբարձ զաչս իւր եւ ետես, եւ ահա արք երկու կային ի վեր քան զնա. եւ թնդացաւ ընդառաջ նոցա:) Չայն նշանակէ թէ՛ մարդ զօրաւոր հաւատով՝ փութով կատարէ զամենայն գործս բարիս: Հինգերորդ՝ հաւատն ասի կենդանի՝ վասն ունելոյ զգոյն կենդանւոյն. այսինքն զհամեստ վարս: Չի որպէս կենդանւոյն գոյնն որ կարմիր է եւ զուարթ՝ զանազանի ի գունոյ մեռելոյն որ դեղնեալ է: Նոյնպէս վարք արդարոցն. ի վարուց մեղաւորացն: Չի վարք արդարոց՝ նմանի հրեշտակաց. եւ վարք մեղաւորացն սատանայի: Չի ասեն վարդապետք թէ՛ մեռեալ հաւատն՝ է որպէս հաւատն դիւրաց. զի հաւատ սրբոցն՝ ուրախութեամբ է. իսկ հաւատ դիւացն՝ տրտմութեամբ: Եւ

այս օրինակեցաւ ի տեսիլն որ ասէ. (տեսի՛ եւ ա՛յլ ձի դեղին. եւ որ նստեր ի վերոյ նորա՝ ուներ զմահ. եկ դժոխք երթային զհետ նորա:) Դեղին ձին նշանակէ զմեղսն. յորոյ վասն նստոյ մահ. եւ դժոխք երթան զհետ նորա: Եւ դեղին գոյնն՝ պակասեալ է ի սպիտակութենէ եւ ի կարմրութենէ. նոյնպէս մեղքն կոչի դեղին ձի. զի պակասեալ է ի նմանէ սպիտակութիւն անմեղութեանն. եւ կարմրութիւն ջերմ սիրոյն Աստուծոյ: Որպէս ասեն վարդապետք թէ՛ հաւատ մեղաւորին ոչ միայն նման է հաւատոյն սատանայի, այլ եւս չարագոյն. (զի դեւք հաւատան եւ սարսին.) իսկ մարդիկ հաւատան՝ եւ համարձակին սպանանել զՔրիստոս: Վեցերորդ՝ ասի կենդանի հաւատն. զի նմա վայելէ ուսուցանել, որ ունի զհաւատն կենդանի: Եւ որպէս վառեալ մոմն զանազանի ի շիջեալ մոմէն. այսպէս կենդանի հաւատն՝ ի մեռեալ հաւատոյն: Չի ի վառեալ մոմէն լոյս ելանէ. եւ ի շիջանելոյն՝ դառն ծուխ. որ երբեմն վիժել տայ յղոյն: Այսպէս ի կենդանի հաւատոյն՝ ելանէ լոյս ճշմարտութեան առաջի եղեալ մարդկան ի ճանապարհս ուղիղս:

Չի որպէս անաղօտ լապտերն լուսաւորէ առատապէս. նոյնպէս թէ ուսուցանողն ունի հաւատ կենդանի, առաւել լուսաւորէ զմարդիկ, եւ ածէ ի ճանապարհս ուղիղս: Իսկ թէ քարոզողն լինի շիջեալ մոմ, այսինքն, ունիլով մեռեալ հաւատս չար գործովք, ոչ տայ լոյս. այլ ծուխ հանէ յինքենէ՝ որ տայ վիժել զլիսն. այսինքն, գայթակղեցուցանէ զանկատարսն: Եւ այսպիսիք էին որդիքն հեղեալ. որք չար գործովք իւրեանց՝ դարձուցանէին զմարդիկ յոչ զոհել Աստուծոյ: Եօթներորդ՝ կենդանի հաւատն ի բաց մերժէ զհեղգութիւն. զի ասէ Արիստոտել թէ՛ կենդանութիւնն է սկիզբն շարժման ինքեան. զի թէ ոք շարժի յայլ ումեքէ, ոչ ասի վասն այն կենդանի: Այսպէս որ շարժի ի գործս բարիս ոչ յինքենէ, այսինքն ոչ իւր կամօք հաւատալ եւ սիրով, այլ արտաքուստ. այսինքն, վասն ահի, կամ վասն ամօթոյ, կամ վասն փառասիրութեան, կամ ազահութեան, այնպիսին ոչ ունի հաւատ կենդանի. զի սկիզբն շարժմանն՝ ոչ է ի ներքուստ, այլ արտաքուստ: Վասն նոցա ասէ տեսիլն. (անուն միայ է քո թէ կենդանի ես. այլ դու մեռեալ ես. լեր զուարթուն.) այսինքն, առ զսկիզբն կենդանութեան ի ներքուստ: Ութներորդ՝ կենդանի հաւատն ճանաչի, որ զգուշանայ ի վնասակարացն. որպէս կենդանի մարդն. զի թեպէտ ճանճն նստի ի վերոյ շիջեալ գործելոյն՝ այլ ոչ ի վերոյ հրացելոյն. նոյնպէս փորձութիւնն սատանայի՝ փախչի յայնմանէ, որ ունի զհաւատն կենդանի: Որպէս Յակօբոս. (կացէք հակառակ չարախօսին. եւ լինիցի փախստական ի ձեւջ:) Եւ այս գիտելի է՝ յորժամ կարծիս ունի ոք թէ՛ ի կերակուրն խառնեալ է դեղ մահու, վասն կարծեացն միայն ի բաց կայ ի նմանէ. եւս առաւել թէ ստոյգ գիտացէ: Այսպէս հեշտութիւն աշխարհիս՝ յայտնապէս ունի յինքն ցղեղ մահու. որ ոչ զգուշանայ ի նմանէ, ոչ ունի հաւատ կենդանի. եւ մահ հետեւի նմա: Եւ այս յայտ է ի Սորոմօսէ՝ որ ասի ի ժողովօղն. (զամենայն զոր ինչ ինդրեցին աչք իմ, ոչ զրկեցայ ի նոցանէ. եւ ոչ արգելի զսիրտ իմ յամենայն ուրափութեանց:) Եւ յայսմանէ անկաւ ի կռապաշտութիւն. զի ասի յերրորդ թագաւորութեանցն. (կանայք եւ գինի՝ մոլորեցուցին զնա ի հաւատոցն:) Իններորդ՝ կենդանի հաւատն՝ հաշտեցուցաւնէ զԱստուած. եւ մեռեալն տրտմեցուցանէ. զի որպէս պատուէ զԱստուած այն՝ որ մատուցանէ նմա գառն անարատ, եւ անարգո որ մատուցանէ հոգեալ գէշս: Այսպէս որ մատուցանէ Աստուար վասն անմեղս՝

պատուէ զնա. իսկ որ չար վարս՝ անարգէ զնա: Եւ զի Աստուած կեանք է. վասն այն որ բարկացուցանէ զնա՝ ոչ կարէ կեալ. այլ այնպիսին ունի յինքեն զգիրս մահու որպէս ուրիա: զի իւրաքանչիւր մեղաւոր՝ ոնի գրել զամենայն մեղս իւր ի սիրտս իւր. եւ ցուցանէ՝ (թէ ոք զայնպիսին գործէ, զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգէ.) որպէս ասէ առաքեալն. (որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց եւ յանդիմանել զմիմեանս ի խօրհրդոց իւրեանց. եւ կամ թէ պատասխանի իսկ տալ յաւուրն յորում գիտիցէ Աստուած զգաղտնիս մարդկան:.) Չի յաւուրն դատաստանի՝ մեր խորհուրդս զոր այժմ ունիմք, յայնժամ յանդիմանեն զմեզ. զի այժմու խորհուրդս մնայ ի սիրտս մեր որպէս զգիր հաստատեալ: Եւ թէպէտ այժմ ծածուկ են. յայնժամ յայտնեսցին, յորժամ դպրութիւնքն բացցին. այսինքն, զիրք խղճիմտացն. եւ ընթերցցի իւրաքանչիւր ոք զիւրն: Տասներորդ՝ մեռեալ հաւատն՝ յաւելու զպատիժս վասն մեծագոյն մեղացն. զի որպէս տգիտութիւն մեղացն թեթեւացուցանէ զմեղսն. այսպէս գիտութիւն մեղացն՝ ծանրացուցանէ: Չի ասեն վարդապետք թէ, հաւատ մեղաւոր քրիստոնէին՝ յաւելու զդատապարտութիւն նորին: Չի որպէս կարգաթող քահա նայ անարդարգոյն է քան զայն՝ որ ոչ էրառաւել կարգս. եւ բնութիւն հրեշտակաց՝ ի դէս անարգագոյն է քան զամենայն բնութիւնս. նոյնպէս առաւել անարգագոյն է մեղք քրիստոնէին, քան զմեղս անհաւատին: Եւ դարձեալ՝ որպէս ի մեջ մեռեալ մարմնոյ առաւել զարշահոտ է մարմին մարդոյն. թէպէտ կենդանին պատուական է քան զամենայնս. այսպէս սուրբ քահանայն որ կենդանի է շնորհօքն Աստուծոյ՝ պատուական է քան զամենայն աշխարհականս:

Եւ բարի քրիստոնէայն՝ պատուական է քան զամենայն անհաւատս: Իսկ թէ մեռանին մեղօք, եւ զարշահոտ առաջի Աստուծոյ: Այնպիսիքն նման են անիծեալ թզենւոյն. որ թէպէտ երեւին կանաչ եւ սաղարթալի, այլ ոչ ունի պտուղ: Այլ կենդանի հաւատն է՝ որպէս ծառ ծաղկեալ սուրբ դիտաւորութեամբն եւ զարդարեալ տերեւով. այսինքն, օգտակար բանիւք. կատարեալ պտղով գործոց բարեաց: Այսպէս զանազանին կենդանի եւ մեռեալ հաւատքն. որպէս ասէ առաքեալն: (Հաւատք առանց գործոց մեռեալ են առանձինն:.) Այս երրորդ գլուխն:

Չորրորդ հարցումն թէ՛ հարկաւոր է հաւատոյն բարի գործն. որպէս ցուցաւ կենդանի հաւատն: Այլ նախ զայս պարտ է քննել թէ՛ որպէս է ձրի արքայութիւնն, յորժամ ըստ գործոց է վարձն. եւ բազում աշխատութեամբ ստանամք զնա. ըստ այնմ, (բազում նեղութեամբ մտանեմք ի հանգիստն:.) Ասեմք թէ՛ ձրի է արքայութիւնն երկնից վասն երեք պատճառի: Նախզի՛ (չեն ինչ արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոյ փառանցն, որք յայտնելոց են մեզ ասէ առաքեալն:.) Չի զի՞նչ արժէ քո հացն զոր տաս աղքատին, եւ առնուս զանմահ կերակուրն. կամ բաժակ մի ջուրն, զանմահ ըմպելին. կամ հանդերձն քո, զլուսեղէնն. կամ տունն քո, զտուն արքայութեանն. ապա ուրեմն ձրի տուրք է արքայութիւնն: Երկրորդ՝ վասն յուսոյ եւ սիրոյն որ ի Քրիստոս առնումք զարքայութիւնն. եւ ոչ ըստ գործոց: Երրորդ՝ զի հաւատով ստանամք ի Քրիստոսէ. որով արդարացաք. ըստ այնմ, (ո՛չ ի գործոց արդարանամք՝ այլ ի հաւատոց. զի մի ոք պարծեսցի:.) Ուստի յայտ է՝ զի Բ ոմաննք ճգնին մի աշխատութեամբ. մինն առնու զվարձս առ նա յուսոյն. եւ միւսն ոչ. որպէս ասէ աւետարանն. (Եթէ երկու

տղայցենի մի երկանա յայնմ աւուր, մինն առցի. եւ միւսն թողցի: Ապա ուրեմն գործքն բնաւ ոչ կարեն արդարացուցանել. այլ շնորհք ողորմութեանն աստուծոյ՝ ճշմարիտ հրամայէ. (ես տաց զարքայութիւնս իմ ձրի:) Նյլ թէ ոք ասիցէ, ոչ է պարտ ասպա զբարիս գործել. յորժամ հաւատոց է արքայութիւնն: Ասեմք՝ այո պարտ է զգործս բարիս ընդ հաւատոյն՝ծել: Եւ այս վասն տասն պատճառի: Նախզի՝ (հաւատք առանց գործոց՝ դատարկ են եւ մեռեալ:) Իսկ կենդանութիւն հաւատոյն՝ գործքն է. զի որպէս գործք առանց հաւատոց դատարկ է եւ ունայն. նոյնպէս եւ հաւատք առանց գործոց: Երկրորդ՝ պարտ է գործել զգործ հաւատոյն՝ որով արդարանամք. եւ ոչ զգործ հին օրինացն որ ոչ կարէ արդարացուցանել: Երրորդ՝ հաւատովն սրբեցաք ի ժանկոյ մեղաց. եւ գործովքն ի մեզ պահեմք զսրբութիւնս, զի մի աղտեղացուք: Չորրորդ՝ հաւատովն արժանացաք արքայութեանն. եւ գործովք պահեմք միշտ զմեզ արժանաւոր: Հինգերորդ՝ հաւատով զխոստումն արքայութեան առաք. իսկ գործովք ի կատարումն խոստմանց ժամանեմք: Վեցերորդ՝ հաւատն եւ յոյսն առ ողորմութիւնս են. սեր եւ գործք առ արդարութիւնն Աստուծոյ: Արդ՝ որպէս ողորմութիւնն Աստուծոյ արդարութեամբ է, եւ արդարութիւնն ողորմութեամբ. եւ նոյնպէս հաւատքն ի մեզ գործ է կատարեալ. եւ գործքն հաւատով լուսաւորեալ: Եօթներորդ՝ հաւատքն ի մեզ զհոգին զարդարեն. եւ գործքն զմարմինն: վասն որոյ է հաւատք եւ գործք՝ որք զհոգի եւ զմարմին զարդարեն: Ութներորդ՝ հաւատովն մեղքն թողանի. եւ գործովք պատիժն մեղաց. վասն այն պարտ է զհաւատս եւ զգործս ի միասին ըստանալ: Իններորդ՝ հաւատն ուխտ է եւ դաշն. որով հնազանդիմք աստուծոյ. եւ գործքն կատարումն է կամացն Աստուծոյ. զի այն հնացանդն՝ որ զպատուիրանն Աստուծոյ պահէ, եւ զկամս նորա առնէ: Վասն այն պահանջի ընդ հաւատոյն դաւանութեան, եւ գործն սրբութեան: տասներորդ՝ հաւատովն զշնորհն եւ զորդեգրութիւնն առնումք աստ. եւ գործօք զփառս եւ զարդիւսս կենացն յաւիտենից ժառանգեմք: Չի աստ ի կեանս յայս՝ զամենայն բարութիւնս յուսով ունիմք. եւ անդ արդեամբք: աստ շնորհքն է. եւ անդ փառքն: Աստ ծածուկ է. եւ անդ յայտնի: Վասն այն գործօք սրբութեան հանդերձեալ կենացն պատրաստեմք զմեզ շնորհաց եւ ողորմութեան նորին. որպէս ասէ առաքեալն. (ամենայն որ ունի յոյս յանձին, սրբէ իւր ի մեղաց, որպէս եւ նայն սուրբ է:) Եւս յայտնի եւ համառօտ: Չի որպէս երկու եզն հարկաւոր է լծոյն. նոյնպէս հաւատք եւ գործք ի լուծ օրինացն Քրիստոսի: Եւ որպէս արծուին երկու թելօք թռչի. նոյնպէս եւ մարդն հաւատով եւ գործով թռչի յարքայութիւնս երկնից: Եւ դարձեալ՝ հաւատն արմատ է. եւ գործն պտուղ: Եւ հաւատն գլուխ. եւ գործքն մարմին եւ անդամք յօդեալ ի գլուխն. եւ կատարի. զի սոքա մին առանց միւսոյն՝ անպիտան է եւ անկատար. նոյնպէս հաւատք առանց գործոց, եւ գործք առանց հաւատոց: Եւ դարձեալ՝ հաւատն որպէս լուսեղէն անմարմին իմն լարէ առ մեզ իջեալ յերկնից. եւ գործքն որպէս ձեռաց փոփոխելովն ի վեր ելանեմք: Եւ հաւատն բանալի է արքայութեանն. եւ գործքն որպէս շարժելով բանամք զդուռն եւ մտանեմք: Եւ դարձեալ՝ հաւատն որպէս հիմն է. եւ գործքն շինուածք ի վերայ հիման. որպէս ասէ առաքեալն. եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ ոսկի որ է արդարութիւն եւ ճշմարտութիւն. արծաթ որ է մաքրութիւն մտաց եւ սրբութիւն սրտի. ականս պատուականս որք են մասունք բազմապատիկ առաքինութեանց.

սեր. խոնարհութիւն. ողորմութիւն. պահք. աղոթք. ժուժկալութիւն. եւ այլք
նմանք սոցին՝ պատուական ակունք են շինեալ յանձինս արդարոց ի վերայ
հիման հաւատոյ: Իսկ մեղսասիրանցն անձինք՝ ոչ ի պատուական եւ ի
հաստատուն նիւթոցս յայսցանէ ասէ շինեալ ի վերայ հաւատոյն հիման. այլ
յանարդար եւ ի դիւրավատնեալեաց. այսինքն, փայտ, խոտ, եղեգն: Փայտն
զթանձրագոյն մեղսն ցուցանէ. զսպանութիւն. զպոռնկութիւն. զգողութիւն.
Եւ ողք սոցին նման: Խոտն զխորհրդոցն չարութիւն ժողովեալ ի սրտի:
Եղեգն զբանից զգարշուրիւսս նշանակէ. զորս բղխեն մարդիկ ի բերանց,
զլեզուն գործարան տուեալ սատանայի, թշնամանալով զընկերն զանազան
եւ պէսպէս հայիոյութեամբ. որ ընդ գեղջուկ բարբառոյ՝ յիշոցք թարգմանի.
Եւ ըստ սովորութեան գրոց՝ անէծք եւ թշնամանք: Որպէս ասէ Դաւիթ.
(անհծիւք եւ դառնութեամբ լի են բերանց նոցա:) Նաեւ ստութիւն եւ
չարախօսութիւն. եւ մատնութիւն. եւ այլք որք այսմ նմանք են բանք
անիրաւութեան, եղեգանն են օրինակք: Եւ զայսոսիկ զերկու հակառակ
շինուածս՝ որք ի պատուականաց եւ յանարգաց. (հուրն ասէ ընտրեցէ.)
քանզի հրով յայտնելոց է դատաւորն. թէ գործն զոր շինեաց ի վերոյ հիման
հաւատոյն ոսկի է արծաթ, եւ ակն պատուական որք ոչ ապականին, այլեւ
սրբին ի հրոյն, գործօղն կեցցէ եւ վարծս առցէ: Իսկ թէ խոտ եւ եղեգն, եւ
փայտ, որ դիւրաւ ապականին ի հրոյ անտի, որ գործեացն զնա տուժեցի:
Վասն որոյ աղաչեմ զձեզ՝ ընդ հաւատոյ ճշմարտութեանդ զոր ընկալաք ի
ծննդէն աւագանին, եւ ունիք հաստատուն, յարմարեցէք եւ զգործս
արդարութեան. զի մի միով աչօք լուսաւորէք զանձինս, այլ երկոքումբք
պայծառացուցէք: Մի նմանիք չար եւ վատ ծառային. որ զմին քանքարն
առեալ էր եւ ոչ շահեցաւ. եւ արտաքսեցաւ ի խաւարն արտաքին. զի
տաղանդն հաւատն է. եւ շահ տաղանդացն գործ բարի: Վասն նոցա ասէ.
(հաւատք առանց գործոց մեռեալ են առանձինն:) Այս չորրորդ գլուխն:
Հինգերորդ հարցումն թէ՛ զի՞նչ շահ օգտութեան ունի հաւատն: Ասեն
վարդապետք եթէ՛ մեծ են հաւատք, եւ գլուխ ամենայն բարեաց. եւ
յամենայն չարաց հեռացուցանեն զմարդն. եւ սիրելի եւ մերձաւոր առնեն
Աստուծոյ, եւ բարեկամս հրեշտակաց: Չոր ի բազում բարութեանցն՝ սակաւ
ինչ ասասցուք տասն գլխով: Նախզի՛ հաւատք զմանս յերկինս
վերացուցանեն. որպէս զենովք եւ զեղիա: Երկրորդ՝ հաւատքն ջուրցն
հեղեղաց յաղթեցին. որպէս Նոյ տամբ իւրով. զի հաւատով կազմեր
զտապանն վասն ջրհեղեղին. եւ ապրեցաւ: Երրորդ՝ հաւատքն
արդարացուցանեն զմարդ. որպէս զԱբրահամ. զի ասէ զիրն. (հաւատաց
Աբրահամ յԱստուած, եւ համարեցաւ նմա յարդարութիւն:) Չորրորդ՝
հաւատն խոտէ զժամանակաւոր իրս. որպէս ասէ յեբրայեցոց. (հաւատով
Մովսէս իբրեւ եղեւ մեծ՝ ուրացաւ զինքն լինիլ որդի դստերն փարաւօսի. լաւ
համարեցաւ չարչարիլ ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի
վայելել ի մեղս:) Հինգերորդ՝ հաւատն մատնչի ընդդէմ աշխարհի. որպէս
ասէ առաքեալն. (սուրբն հաւատով պարտեցին զթագաւորութիւնս:) Վեցերորդ՝
հաւատն առնու զի՞նչ ինդրէ. ըստ այնմ, (ո՛վ կին դու՛ մեծ են
հաւատք քո. եղիցի քեզ որպէս եւ կամիսդ:) Եօթներորդ՝ հաւատն փրկէ
զմարդն ի մեղաց եւ ի տանջանաց. որպէս ասեր Տէրն մարդաղենացոյն.
(հաւատք քո կացուցին զքեզ՝ երթ ի խաղաղութիւն. եւ ողջ լեր ի
տանջանացդ:) Ութերորդ՝ հաւատն տայ գյարամայութիւնն որպէս ասէ

առաքեալն. (իսկ դու հաւատով կեանս:) իններորդ՝ հաւատն երանելի առնէ
զմարդ. որպէս ասաց Տէրն առ Թոմաս. (այդ զի տեսերդ զիս եւ հաւատացեր.
երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատացեն:) Եւ երանութիւնս պառաւորութիւն
Էամենայն բարեաց՝ զոր հաւատն շնորհէ մեզ: Տասներորդ՝ հաւատքն
զմեռեալն կենդանացուցին. յորժամ անկաւ քոյրն՝ Ղազարու առ ոտս
Յիսուսի, ասէ. (թէ հաւատաս, յարիցէ եղբայրն քո. ասէ՛ այդ Տէր՝ ես
հաւատացի թէ դո՛ւ ես Քրիստոսն որ յաշխարհ գալոց էիր:) Վասն այնորիկ
զչորեք օրեայ մեռեալն յարոյց ի գերեզմանէն: Այսպէս եւ առաքեալն ասէ.
(հաւատովք ընկալան կանայք ի յարութենէ զմեռեալս իւրեանց.) որպէս որդի
այրույն զոր յարոյց եղիա մարգարէն: Նոյնպէս եւ Եղիսէոս զորդի
սոմնացույն: Եւ այլ բազում եւ անթիւ են որք եղեալ են ի հաւատոցն. զոր
թուէ առաքեալն ի թուղթ սն եբրայեցոց: (Որք հաւատովն զծովն
պատառեցին. որպէս Մովսէս:) Եւ զթագաւորութիւնս հաւատով պարտեցին.
որպէս յետու. եւ առին զբանակս օտարաց. եւ ապրեցան ի բբերանոյ սրոյ եւ
հրոյ եւ առիւծուց. որպէս դանիել եւ երեք մանկունքն: Չորս ես փոքր ի շատե
ացի վասն ոչ ձանձրանալոյ լսողաց: Այս հինգերորդ գլուխն վասն
հաւատոց: Իսկ վեցերորդն թէ՛ զի՞նչ վասն եւ չար է յանհաւատութիւնն: Չի
որպէս հաւատն մեծ բարութիւն առնէ մարդոյ, եւ սիրելի Աստուած եւ
բարեկամ հրեշտակաց. այսպէս անհաւատութիւնն չար է քան զամենայն
չարիս. եւ հեռացուցանէ յԱստուծոյ, եւ մերձաւոր առնէ դիւաց: Եւ զի՞նչ է
անհաւատութիւնն. այսինքն, չհաւատալ՝ եւ ոչ զմի ինչ ի պատուիրանացն
Աստուծոյ կատարել՝ այլ ահաւատութեամբ եւ անառակ վարուք շաղախիլ
միշտ յանօրէն գործս. եւ ի զանազան չարիս. ի յաստուծոյ ոչ երկնչելով. եւ ի
մարդկանէ ոչ ամաչելով. եւ ոչ զանխաբ դատաստանն Աստուծոյ ի միտ
ածելով: Եւ անհաւատ աստ՝ ոչ միայն զայն ասեմ որ ոչ խոստովանի զայն՝
որ կոչեցեալ է ի հաւատս, եւ զանուն քրիստոսն էի ունի, եւ
զգործանհաւատի. զի բանիւ զանունն Քրիստոսի կրել, եւ գործ
զսատանայի ստանալ՝ չէ ինչ օգուտ. յորժամ ամենայն զհատուցումն
իւրաքանչիւր գործոցն ոչ հաւատալ, եւ ոչ զանններելի տանջանսն, զանքուն
որդունսն, զլալ աչացն, եւ կրճտել ատամացն, զխաւարն արտաքին, զընդ
մէջ կտրելն, եւ զառագաստին փակիլն, եւ զայլ այսպիսի սպառնալիսն ոչ ի
միտ ածէ, եւ ոչ զարհուրելի, եւ ոչ դողայ, ստուգապէս անհաւատ է:
Անհաւատ է եւ նա՝ որ անգեղջ է ի մեղս. եւ ոչ դառնայ խոստովանութեամբ
եւ սրբէ զնոսա: Անհաւատ է եւ նա՝ որ մամոնային ծառայէ. եւ աստ ի
մեծութիւնս եղեալ է զյոյսն իւր. եւ ոչ սփռէ եւ տայ աղքատաց. (Որոյ
արդարութիւնն մնայ յաւիտեան.) եւ ոչ հաւատայ Աստուծոյ որ ասէ նմա.
(անմիտ յայսմ գիշերի զօգիդ ի քէն ի բաց պահանջեն. եւ զոր
պատրաստեցեր ո՞ւմ լիցի:) Անհաւատ է եւ նա՝ որ զմարմինն իւր
պոռնկութեամբ եւ գիճութեամբ, եւ աղտոյի մեղօք. զի ո՛չ հաւատայ նա
ասողին. (դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք. եւ հոգի Աստուծոյ բնակեալ
է ի ձեզ. եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ, ապականէ զնա Աստուած:)
Անհաւատ է եւ նա՝ որ աստուածացուցանէ զորովայնն ուտելով եւ ըմպելով,
եւ արբեցութեամբ. զի ո՛չ հաւատայ նա ասողին. (լալով ասեմ զթշամեաց
խաչին քրիստոսի. որոց Աստուած որովայն իւրեանց է, եւ փառքն ամօթն:)
Անհաւատ է եւ նա՝ որ ամբարտաւան է փառասեր. սնափառ ամբարտաւաճ.
զի ո՛չ հաւատայ նա ասողին: (Որ բարձր է առաջի մարդոյ՝ պիղծ է առաջի

Աստուծոյ եւ Տէր ամբարտաւանից հակառակ կայ. տայ զշնորհս խոնարհաց եւ դուք զի ա՞րդ կարեք հաւատալ. զի զփառս ի մարդկանէ առնոյք. եւ զփառս Աստուծոյ ո՛չ կամիք:) Անհաւատ է եւ նա՛ որ գողանայ, եւ բամբասէ, եւ տրտնջէ. զի ո՛չ հաւատայ նա աստղին: (Ո՛չ գողք՝ ո՛չ տրտնջողք՝ եւ ոչ բամբասողք զարքայութիւնն Աստուծոյ ժառանգէն.) Անհաւատ է եւ նա ատէ զեղբայր իւր. եւ նախանձի. եւ պահէ ռիս ընկերի իւրում. զի ո՛չ հաւատայ նա աստղին. (որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է. եւ թէ՛ (նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհի. որ ոք զինի ընդ նա՛ ի նորին սակի է:) եւ թէ՛ (անդ յիշեսցես, թէ ունի եղբայր քո խէթ զքէն, թող զպատարագն եւ երթ հաշտեաց ընդ նա:)) Անհաւատ է եւ նա՛ որ սուտ խօսի. եւ սուտ վկայէ. զի ո՛չ հաւատայ նա աստղին: (Որ սուտ խօսի՛ յիւրոց անտի խօսի. զի սուտ է եւ հայր նորա սատանայ:) եւ թէ՛ (կորուսանէ Տէր զայնսսիկ՝ որք խօսին սուտ:) եւ թէ՛ (մի սուտ վկայեր զումեքէ:) Անհաւատ է եւ նա՛ որ դատարկաբան է եւ ծաղրածու. եւ ծաղկասէր. եւ կատակերգակ. զի ո՛չ հաւատայ նա աստղին. (ընդ ամենայն դատարկ բանից՝ համարս տալոց էք յաւուրն դատաստանի, եւ վայ ձեզ որ ծիծաղիքդ:) Անհաւատ է եւ նա՛ որ ո՛չ պատւէ զհայր իւր եւ զմայր. զի ո՛չ հաւատայ նա աստղին. (պատուեա՛ զհայր քո եւ զմայր. եւ որ չարախօսէ զօրէ կամ զմօրէ, մահու վախճանեսցի:) Անհաւատ է եւ նա՛ որ սրտմտօղն է եւ բարկացող. զի ո՛չ հաւատայ նա աստղին. (որ բարկանալ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի զեհեհին:)) եւ թէ՛ (բարկութիւն մարդոյ՝ զարդարութիւն Աստուծոյ ո՛չ գործէ:) եւ թէ՛ (սրտմտութիւն նոցա՛ ըստ նմանութեան օձին:) Անհաւատ է եւ նա՛ որ ո՛չ սիրէ զեղբայր իւր. զի ո՛չ հաւատայ նա Զրիստոսի որ ասէ. (պատուիրան նոր տամ ձեզ. զի սիրեսցիք զմիմեանս. որպէս ես զձեզ սիրեցի. եւ թէ՛ (յայսմ ծանկցեն թէ իմ աշակերտք էք, թէ սիրեցէք զմիմեանս: եւ Աստուած ի ձեզ բնակի:) Անհաւատ է եւ նա՛ որ ծոյլ է յաղօթս, եւ հեղզ ի խնդրուածս: Չի ո՛չ հաւատայ նա աստղին. (խնդրեցէք եւ առնուցուք եւ այլն: եւ յԱստուած ժամ յաղօթս կացէք. զի մի մտանիցիք ի փորձութիւն:) Արդ՝ որ այսմ ամենի անհաւատ գտանի գրոց վարդապետութեան, զի ա՞րդ է նա ի հաւատացելոց մասին. այլ յանհատից կարգի է. եւ չար եւս քան զանհաւատսն վասն որոյ աղաչեմ զձեզ սիրովն Զրիստոսի, զի ընդ հաւատոցս՝ եւ զգործս բարիս ստացուք. եւ հանդերձեալ բարեացն արժանացուք ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր: Որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին դարձեալ վասն հաւատոյ՝ յուսոյ՝ սիրոյ. ի բանն՝ (Յաւատք սիրով յաջողեցեալք:) Գաղ. 5. 6: (Գլուխ ԺԴ)

Միտքս մեր՝ հոգիս բանական՝ լոյս է ստեղծեալ. ոչ զգալի, այլ իմանալի՝ անմարմին: Չի Աստուած լոյս է միմանալի եւ բանական. եւ ի պատկեր իւր արար զմիտս մեր՝ լոյս իմանալի եւ բանական: Եւ որպէս լոյս աչացս միաւորի ընդ լուսոյ արրեգական՝ եւ ապա տեսանել կարէ զգոյն եւ զձեւ եւ զչափ: Այսպէս իմացական լոյսն Աստուծոյ՝ միաւորի ընդ բանական լոյս մտացս, եւ նովաւ տեսանեմք զերկնաւոր եւ զերկրաւոր գիտութեացս զանազանութիւն. եւ հաւատամք Աստուծոյ, եւ հաստատիմք յուսով առ Աստուած: Ա՛յս է լոյս հաւատոյն՝ որ իմացական շնորհն Աստուծոյ հեղանի ի բանական միտս մեր, եւ կայանայ հաւատովն: Որպէս դնեն սահման

հաւատոյն եթէ: Յաւատն է ունակութիւն հեղեալ յառաջին լուսոյն ի բանական անձն, առ ի ճանաչել զհոգեւոր բարիսն: Այլեւ օրինացն լոյս՝ մտանէ ի հոգիս մեր. եւ յայնմանէ հաստատի հաւատն եւ յոյսն մեր: Իսկ ի վերոյ սոցա եկեալ աւետարանին լոյս, հաստատէ ի մեզ զհաւատն եւ զլոյսն եւ զսերն կատարեալ: Եւ այսպէս յերեք լուսոյս՝ այսինքն, ի բանական ի հեղեալ լուսոյն, եւ ի գրաւոր օրինացն, եւ յաւետարանէն շնորհաց, հաստատին աստուածային առաքիլութիւնքն ի մեզ Յաւատ եւ Յոյս եւ Մեր: Եւ աստի յայտ է՝ զի նահապետքն ամենայն՝ երեք աստուածային առաքիլութիւնս մասնաւոր եւ անկատար ունէին: Չի հաւատային միայն թէ՛ Է Աստուած: Մինչեւ հայրն հաւտոց Աբրահամ՝ որ (հաւատաց յԱստուած եւ համարեցաւ նմա յարդարութիւն.) եւ յոյսն եւ սերն Աստուծոյ՝ առ նա եր կատարեալ: Իսկ օրինօքն Մովսէսի՝ ստացան զհաւատն կատարեալ. եւ զյոյսն եւ զսերն մարմնաւոր: Իսկ աւետարան Զրիստոսի՝ հաւատն եւ յոյսն եւ սերն կատարեցան: Չի հաւատն հաստատեցաւ յերեք անձինս Սուրբ Երրորդութեանն: Այլեւ ի մարդեղութիւնն Զրիստոսի: Իսկ յոյսն հաստատեցաւ ի հոգեւոր բարիսն անտեսանելի: Իսկ սեր առ Աստուած. անխզելի կենօք: (Չի ո՞ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Զրիստոսի ասէ առաքեալն:) Բեր տեսցուք զգանազանութիւն երեք աստուածային առաքիլութեանցս: Առաջին՝ զի երեք ժամանակս կատարեցան. այսինքն, նախ քան զօրէսս՝ եւ յօրէսս՝ եւ յաւետարանս, հաւատն եւ յոյսն եւ սերն որպէս ցուցաւ: Երկրորդ՝ զի երեք լուսով հաստատեցան. այսինքն, բանական հեղեալ լուսովն. եւ գրաւոր օրինացն. եւ աւետարանին շնորհացն որպէս ասացաք: Երրորդ՝ զի յերեք աստուածային անձինսն ընդ բաղդատութեան: Յաւատն է ի հայր յոյսն առ որդին պատշաճի. եւ սերն ի հոգին սուրբ: Չորրորդ՝ ըստ երից կարողութեան մտացն: Յաւատոյն հաւանումն է իմացմանն. եւ յոյսն յիշողութեանն աւանդեալ. եւ սերն յօժարութեան կամաց: Յինգերորդ՝ ըստ երից զօրութեանց հոգւոյն. հաւատն է բանական մասին. եւ յոյսն ցասման. եւ սերն ցանկութեան: Իսկ վասն կարգի սոցա զիտելի է՝ զի երեք կարգաւորութեամբ տեսանի: Նախ՝ առաջին է հաւատն. եւ յոյսն ծնունդ նորա. եւ սերն բղիսումն: Չի յոյսն եւ սերն բղիսին ի հաւատոյն. որպէս բանն եւ հոգին ի հօրէ: Դարձեալ՝ որպէս արմատ է հաւատն. եւ ստեղծուք յոյսն. եւ տերեւ եւ պտուղ սերն է ի նմանէ: Կամ որպէս հոգի եւ միտք՝ եւ կենդանութիւն ի նմանէ: Կամ որպէս հոգի եւ բան՝ եւ շունչ ի նմանէ: Կամ որպէս միտք եւ իմացումն՝ եւ կամք ի նմանէ: Կամ որպէս միակն թիւ՝ եւ երկեակն՝ եւ երրեակն ի նմանէ. եւ այլ այսպիսիք: Այս առաջին կարգաւորութիւն սոցա ի միոյ սկզբանէ: Երրորդ՝ զի ընդ հաւատոյն՝ յոյսն եւ սերն կարգաւորի ըստ բնականին: Որպէս նախ է տնկական. եւ ապա զգայական. եւ ապա բական: Կամ որպէս ծաղիկ՝ եւ տերեւ, եւ պտուղ: Կամ որպէս սարգաւազն՝ քահանայն՝ եւ քահանայապետն: Կամ որպէս սպասաւորն՝ զինուորն՝ եւ թագաւորն: Կամ որպէս դուռն՝ եւ տունն՝ եւ վերնատուն: Կամ որպէս խորանն՝ եւ սրբութիւն՝ եւ սուրբն սրբոց: Կամ որպէս երկիր՝ եւ երկինք՝ եւ երկնքից երկինք: Եւ կամ որպէս ծառայն՝ եւ վարձկանն՝ եւ որդին: Եւ զայս կարգաւորութիւնս ըստ բնութեան՝ ուսուցանէ առաքեալն: (Երեք են սոքա՝ հաւատ եւ յոյս եւ սեր. եւ մեծ քան զսոսա սերն է:) Չի է մնացական եւ յաւիտենական: Չի ասա է հաւատն. եւ յետ մահուոյն. եւ յետ յարութեանն սերն մշտնջենաւոր: Այսպէս բնական

կարգի՝ ի նւաստէն ի մեծագոյնն յանկեալէ: Եւ երրորդ՝ կարգաւորութիւն պատուոյ. ընդ հաւատոյն նախ սեր՝ եւ ապա յոյսն. զի նախ հաւատամք ի յԱստուած եւ սիրեմք զնա. եւ ապա յուսամք բարութեանց նորա: Որպէս նախ է բանալ զչարս եւ տեսանել զլոյս. եւ ապա լուսաւորիլ ի նմանէ: Եւ կամ որպէս որդին նախ սիրէ զհայր. եւ ապա ժառանգէ զհայրենիս. այսպէս նախ է սերն՝ եւ ապա յոյսն: Կամ նախ է սերն՝ եւ ապա գործն. եւ ապա հատուցմունքն: Եւ որպէս նախ է սեղանն՝ եւ ապա պատարագն. այսպէս նախ է սերն Աստուծոյ, եւ ապա ակնկալութիւն առ նա: Իսկ որ ասէ առաքեալն: (Բայց մնան հաւատք՝ յոյս՝ եւ սեր. եւ մեծ քան զսոսա սերն:) Եւ զայս տեսցուք չորս կերպիւ: Նախզի՝ հաւատն ծանօթ առնէ Աստուծոյ. եւ յոյսն ուղղէ եւ հաստատուն պահէ ի հաւատն. իսկ սերն կապէ ի միասին. եւ ոչ թողու յանհաւատութիւն եւ յանյուսութիւն բերիլ: Նախ զամենայն ուղիղ վարս կապէ իմարդն. եւ զմարդն ուղիղ վարուք կապէ ի յԱստուած. վասն այն մեծ է սերն: Երկրորդ՝ մեծ է սերն. (զի Աստուած սեր է ասէ Յօհաննէս ի կաթողիկէն. եւ որ սիրէ զԱստուած ի նմա բնակի, եւ նա յԱստուած:) Երրորդ կերպիւ՝ մեծ է սերն. զի ամենայն բարեաց սկիզբն եւ ծնօղ սերն է. եթէ առ Աստուած, եւ եթէ առ ընկերս: Չի վասն սիրոյն Աստուած՝ ամենայն նեղութեանց համբերեցին սուրբքն. եւ չարչարեցան եւ նահատակեցան սպանմամբ սրոյ եւ հրոյ եւ այլն. ընդ այնմ, որ ասէ առաքեալն: (Ռ՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի՝ եւ այլն:) Իսկ վասն սիրոյ ընկերին ասէ. (սեր ոչ նախանձի. ոչ հպարտանայ. ոչ գրգռէ. եւ ոչ այլն:) Վասն որոյ ասէր. (նախանձաւոր լերոք շնորհացն որք լաւքն են. այսինքն սերն քան զլեզուս, քան զմարգարեութիւնս, եւ քան զայլն ամենայն:) Չի թէ զսոսա ունիմք՝ եւ սեր ոչ ունիմք, լինիմք (որպէս պղինձ որ հնչէ, կամ որպէս զծնծոյս որք դօղանջեն: Ապա եթէ զսերն ունիմք, եւ չունիմք մարգարեութիւն, կամ լեզուաց գիտութիւն, զամենայն օրէնսն նորա կատարեմք. ըստ այնմ, (լրումն օրինացն սերն է:) Չորրորդ կերպիւ՝ մեծ է սերն. զի հաւատն է յաստի կեանս մարդկան. եւ յետ մահու՝ ոչ է պիտոյ. զի դեմ յանդիմաան տեսութիւնն է Աստուծոյ: Իսկ յոյսն՝ եւ յետ մահու ի հոգին մնայ. զի ակնունի պսակաց եւ փառաց ի յարութեան մարմնոյն. եւ անդ կատարեցաւ յոյսն. զի ամենայն յուսալիի յերանութիւն ըմբռնելի եղէ: Իսկ սերն առ Աստուած եւ ընկերս՝ մննայ յաւիտեանս յաւիտենից. եւ ոչ նուազի՝ այլ աճէ միշտ. աստուածային սերն առ սուրբս իւր, եւ սեր ընտրելոց առ Աստուած եւ առ ընկերս իւրեանց: Վասն այն մեծ եւ աստուածային սերն քան զամենայն առաքիւնութիւնս: Եւ գիտելի է՝ զի յորժամ ցասմնական եւ ցանկանան մասն թիւրի, բանական մասն կարէ ուղղել զնոսա խրատով եւ իմաստութեամբ. վասն որոյ շուտով դառնան յետս ի շնութեանց եւ իսպանութեանց: Այլ որժամ բանականն սխալի ամբարտաւանութեամբ, կամ նախաանձու, կամ այլ իրօք, զի ոչ ունի խրատիչ, ոչ կարէ ուղղիլ փութով. այլ թէ Աստուած ի ձեռն պատուհասի դարձուցանէ զնա. որպէս զԱդամ որ մահուամբ պատուհասեցաւ վասն յանցանաց նորա: Եւ որպէս այս՝ նոյնպէս տես զայն՝ յորժամ ի մարդկային առաքիւնութեանց մոլութեամբ սխալի ոք, այսինքն, յարդարութենէ եւ յարութենէ եւ յայլոցն, աստուածային առաքիւնութեամբ որ է հաւատն եւ յոյսն եւ սերն, դարձեալ դիւրաւ ուղղին նա ընդ մարդկային գործսն: Ապա թէ՛ ի հաւատոց եւ ի յուսոյն եւ ի սիրոյն է սխալեալ, ոչ ուղղի այնպիսին: Այլ թէ կամի Աստուած՝ խրատով եւ պատուհասիւ ուղղէ զնա: Այսպէս թէ մարմնոյն

գործքն եւ զգայարանքն թիրին ի մեղս ակամայ, միտքն եւ կամքն ուղիղ՝ դարձուցանեն զնոսա դիւրաւ, այլ թէ կամքն եւ միտքն թիրի եւ կամակորի ի մեղս, դժուարաւ ուղիղ եւ պատուհասին Աստուծոյ: Որեւ ինքն բանն կենաց՝ բացցէ զառագաստ մտաց մերոց, ընդունելի զծագումն շնորհաց. այլեւ ուղեսցէ զբանս մեր ի բացումն մտաց. եւ զլսելիս ձեր յընդունակութիւն արժանացաւ. եւ արժանաւորեսցէ գործոցն բարեաց ի կեանս յայս ուղիղ կայիւք, ՚ ի դարձումն ի չարեաց. ՚ ի հանդերձելումն լսել զաւետիս կենաց ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն Յուսոյ. ի բանն առաքելոյ: (Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ:) Զռօմ. 5. 5: (Գլուխ ԺԵ)

Երեք են աստուածային առաքիւնութիւնքն. այսինքն, հաւատն ՚ յոյսն ՚ սէրն. որպէս ասէ առաքեալն: (Սոքա երեքեան՝ եւ մեծ քան զսոսա՝ սէրն.) զի մնացական է եւ յաւիտենական: Եւ վասն այն աստուածայինք ասին՝ զի սոքա երեքեանն յԱստուած վերեբերերին. զի հաւատովն տեսանեմք զմեծագոյն բարին. եւ յուսովն ակնունիմք զերագոյն բարւոյն. եւ սիրովն ցանկամք վերնական բարւոյն: Եւ դարձեալ՝ հաւատովն հաւատամք ի յԱստուած. եւ յուսովն ըմբռնեմք զԱստուած. եւ սիրովն միաւորիմք առ Աստուած: Վասն այն աստուածային կոչին: Եւ վասն յուսոյ՝ երեք ինչ հարցանելի է: Նախ՝ թէ զի՞նչ է յոյսն. եւ յո՞ր մասն հոգւոյն: Երկրորդ՝ թէ որպէ՞ս զանազանի յոյսն եւ հաւատն: Երրորդ՝ թէ որպէ՞ս յոյսն ոչ ամաչեցուցանէ: Տեսցուք զառաջին գլուխն թէ զի՞նչ է յոյսն: Եւ վարդապետք այսպէս սահմանեն: Յոյսն՝ է ստոյգ ակնկալութիւն հանդերձեալ բարեացն, յառաջ եկեալ ի շնորհացն Աստուծոյ եւ ի բարի գործոցն: Ստոյգ ակնկալութիւն վասն այն ասէ. զի կրկին է յոյս: Նախ՝ է յոյսն կենդանեաց ի ճանապարհի աստի կենացս. եւ այս յոյսս՝ է ստուգութեամբ կարծեացս. եւ այս յոյսս՝ է ստուգութեամբ կարծեաց. զի հաստատ հաւատով եւ լույսով զնամք, եւ ոչ կարծեօք: Երկրորդ յոյս է՝ որք ելեալք են ի մարմնոց. եւ յոյս նոցա է ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն ինքեանց: Եւ այն որ ասէ՝ յառաջ եկեալ ի շնորհացն Աստուծոյ եւ ի բարի գործոցն. զայն ցուցանէ թէ՝ կրկին է պատճառ յուսոյն: Նախ՝ շնորհոքն Աստուծոյ եւ ապա բարի գործքն մեր. զի յուսալ յիր ինչ՝ այսինքն, արքայութեանն Աստուծոյ կամ պսակաց, առանց հաւատոց եւ բարի գործոց ոչ է յոյս. այլ յանդգնութիւն: Իսկ թէ յո՞ր մասն է հոգւոյս. զի հոգին եռամասնեայէ. այսինքն, բան՝ ցասումն եւ ցաանկութիւն: գիտելի է՝ զի հաւատն ի բանական մասն է. եւ յոյսն յարութեան ի ցասումն. եւ սէրն ի ցանկութեան մասին: Այս առաջինն: Տեսցուք զերկրորդն թէ՝ հաւատն եւ յոյսն եւ յոյսն որպէս զանազանին: Գիտելի է՝ զի երկոքեանն շնորհք են յԱստուած հեղեալ առ մարդիկ. եւ երկոքենն՝ այսինքն հաւատն եւ յոյսն՝ յոչ երեւելիսն են. այսու հաւասարին: Այլ զաննազանին այսպէս: Նախ՝ հաւատն է ի յեութիւնն Աստուծոյ, որ հաւատամք թէ է Աստուած. եւ յոյսն ի պարգեւս բարութեան նորա: Երկրորդ՝ հաւատովն ճանաչեմք զԱստուած. եւ յուսովն ըմբռնեմք զնա: Երրորդ զանազանութիւն զի հաւատն է ի յանցեալն եւ ի հանդերձեալն. եւ յոյսն միշտ ի հանդերձեալն: Չի հաւատամք ստեղծեալ զաշխարհս բանին Աստուծոյ. եւ հաւկատամք կատարումն

առնիլ սոցա: Այլ յոյսն՝ միշտ յետոյ ի հանդերձեալն է: Չորրորդ զանազանին. զի յոյսն միշտ առ բարիսն է. իսկ հաւատն՝ առ բարի հատուցմունսն, եւ առ պատիժն նայի: Դարձեալ զանազանին. զի յոյսն՝ ակն է հաւատոյն. որպէս ակն մարմնոյ: Այս թէ որպէ՞ս զանազան սոքա: Տեսցուք զերրորդ հարցումն թէ, որպէս յոյսն ոչ ամաչեցուցանէ: ասեմք թէ կրկին կերպիւ: Նախզի՝ չորս ինչ հարկաւոր է յուսոյն: Այսինքն, յուսալին. յուսացողն. յոյսն. եւ յոսալն: Արդ՝ յուսալին է Քրիստոս. եւ յուսացողն մարդ. եւ յոյսն իրն եւ զօրութիւնն. եւ յոսալն գործն եւ ակն ունելն: Յորժամ այս չորսս լինին, նա յոյսն ոչ ամաչեցուցանէ: Դարձեալ՝ առ յուսալին չորս ինչ հարկաւոր է. այսինքն, կարելն, կամիլն, եւ գիտելն, եւ մնալն: Արդ՝ Քրիստոս ամենակարող է. այլեւ զամենեցունց բարին կամի. եւ նա գիտէ զօգուտն ամենայն մարդոյ. եւ ինքն յաւիտենից մնայ: Վասն որոյ՝ յոյսն զոր առ Քրիստոս ունիմք, ոչ ամաչեցուցանէ զմեզ. ոչ աստ, եւ ոչ ի հանդերձեալն: Այլ մարդիկ տկարք են. եւ չկամեցող. եւ տգետ. եւ անցաւոր. եւ յոյսն ի նոսա եղեալ՝ անկատար մնայ: Վասն այն խրատէ մարգարէն. (մի յուսայք յիշխանս եւ յորդիս մարդկան եւ այլն:) Եւ յայլում տեղուջ ասէ. (բարի է յուսալ ի Տէր, քան յուսալ ի մարդիկ, կամ յիշխանս:) Եւ Եսայի ասէ. (վայ որ դիցէ գոյս իւր ի մարդ, կամ ի զօրութիւն բազկի իւրոյ.) այլ յԱստուած՝ որ զամենեցուն զլոյսն կատարէ: Եւ բազում բարութիւն առնէ յոյսն ի մարդն: Նախ՝ ազատէ ի նեղութենէ. ըստ այնմ, (ի քեզ Տէր յուսացան հարքն մեր՝ եւ փրկեցեր զնոսա:) Երկրորդ՝ փրկէ ի թշնամաց. ըստ սաղմոսին. (ո՛ր փրկես զայնոսիկ՝ որք յուսացեալ են ի քեզ:) Երրորդ՝ տայ զժամանակաւոս. ըստ այնմ, (աչք ամենեցուն ի քեզ յուսան. եւ դու տաս կերակուրն նոցա:) Չորրորդ՝ յոյսն ուրախ առնէ զհոգին. ըստ այնմ, (ուրախ լիցին ամենեցունքն՝ որք յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցընծասցեն եւ բնակեցցիս դու ի նոսա:) Եւ դարձեալ ասէ. (ի քեզ Տէր յուսացայ մի ամաչեցից յաւիտեան:) Եւ առաքալն վկայէ. (յոյսն ոչ երբէք ամաչեցուցանէ:) Եւ զայլ ամենայն անթիւ բարութիւնս հոգւոյ եւ մարմնոյ՝ յոյսն է որ հաստատէ ի մարդն: իսկ յուսահատութիւնն՝ ամենեւին չար է եւ վատթար. եւ քան զամենայն մեղս ծանրագոյն եւ վնասակար է մարդոյ: Եւ թէ զի՞նչ է յուսահատիլն: Այն է՝ յորժամ միտքն տեսանէ զինքն առանց օգնութեան օրինացն. զի օրէնքն օգնական է մտացն. որպէս լոյս արտաքին աչաց. յորժամ զգործ օրինացն չէ կատարեալ, ի պատուհասէ օրինացն երկնչի եւ յուսահատի. ապա յայտ է՝ զի ի գործոյ մեղացն եւ յերկիւղէ օրինացն եւ ի միայնութենէ մտացն՝ լինի մարդն յոսահատ: Ապա ուրեմն ընդդէմ այսմ՝ յոսոյ հուսահատութիւնն յերից է. այսինքն, յորժամ օրէնքն օգնական լինի մտացն եւ լուսաւորէ զնա. եւ կատարէ զգործ օրինացն. եւ տեսանէ զխոստմունս օրինացն մարմնաւոր կամ հոգեւոր: Եթէ խոստումն հաւատոյն է՝ թէ բարի գործոյն՝ յայնմանէ հաստատի յոյսն. ապա ուրեմն լոյս օրինացն որ է հաւատն եւ գործն՝ սերումք եւ պատճառք են յուսոյն. եւ յոյսն պտուղ եւ արդիւնք նոցա: Այլեւ հաւատքն եւ գործքն, են այժմ ի ներկայս. եւ յոյսն ի հանդերձեալն է: Այլեւ օրէնքն եւ գործքն՝ տեսանելի են. եւ յոյսն անտես է. ըստ առաքելոյն. (յոյս տեսանելի՝ չէ յոյս:) Ապա ուրեմն որք զլոյս հաւատոյն եւ գործս օրինացն ունին այժմ՝ նոքա ունին զլոյս եւ զակնկալութիւն բարեաց ըստ օրինացն ըստ հաւատոյն ի հանդերձեալ կեանսն: Եւս յայտնի. զի հաւատն առնէ զյոյսն հաստատ. եւ գործք բարի՝ առնեն յոյս բարի: իսկ թիւր հաւատն՝ առնէ

յուսահատ. Եւ չար գործն գերկիւղ տանջանացն: Վասն որոյ՝ բարուք Է ոչ մեղանչելն եւ ոչ խոտորիլն ի հաւատոյ. այլ թէ թիրիմք կամակոր գնացիւք, կամ ի չար ներգործութենէ արկածից, մի յուսահատեալ բեկցուք ի հաւատոց, եւ կամ անուղղայ գնացիւք խոտորիցուք ի գործոց: Այլ ակնկալցուք արարչին. եւ հաստատիցուք ի խոստմունս անսուտ եթէ՝ (յորժամ յոգւոց հանիցես, ասիցեմ թէ՝ ահաւասիկ եմ:) Եւ գիտեմք զի ոչ ըստ մեղաց մերոց առնէ. եւ ոչ ընդ գնացից մերոց հատուցանէ. Այլ միայն ի դարձն նայելով ըստ հաւատոց մերոց, ' ըստ յուսոյ զղջմանն, զբարիս պարզ՝ Է Զրիստոս Աստուած փրկիչն մեր: Եւ նմա ' Զօր Իւրում ամենակալի՝ ' Նորոգող ' փառակից Սուրբ Զոգւոյն, փառք ' Երկրպագութիւն ' անլռելի օրնաբանութիւն յամենայն յիմանալի բանականաց, ' ի զգալի տարրեղիսաց, այժմ ' յաւիտեանս յաւիտենից ամէն:

Յայլմէ քարոզ վասն սիրոյ. ի բանն որ ասէ: (Այս Է պատուեր Իմ, զի սիրիցէք զմիմեանս:) Յօհ. 11. 15: (Գլուխ ԺԶ)

Ասեն իմաստունք թէ՝ թշնամութիւն՝ մեծ պակասութիւն Է ի մեջ մարդկան. այլ սերն եւ միաբանութիւնն՝ բազում շահ եւ օգտութիւն առնէ. որպէս բաժանումք մարմնոյ անդամոց՝ յոյժ ցաւ Է. եւ լինի անտի մահ: Նոյնպէս եւ քրիստոնեայք հոգեւոր մարմինք եւ եկեղեցւոյ. յորժամ ի միմեանց բաժանին, ցաւ Է հոգւոյ. եւ մահ եւ աւերծումն Է եկեղեցւոյ: առաջին օգուտն Է՝ զի միաբանութեամբ յաղթեն զթշնամին. որպէս ասէ առակն. (եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ զքաղաք ամուր Է:) Եւ դարձեալ ասէ. (լաւ Է երկուքն, քան զմիսն. զի թէ զլորեցի մինն, կանգնեսցէ զնա միւս ընկերն: Եւ վայ Է միոյն. զի յորժամ գլորի, ոչ ունի ընկեր զի կանգնեսցէ զնա:) Սատանայ զբաժանումն կամի. որպէս ասաց Գողիաթ. (ընտրեցէք ձեր այր մի՝ որ իջցէ առիս. եւ մարտիցուք առանձինն:) Այլ Աստուած ջանայ միաբանել զգօրս իւր. որպէս Մովսէս եկաց առ դրան բանակին եւ ասէ. (որ ոք տեսանիցէ՝ եկեսցէ առիս. եւ հասին առանա ամենայն որդիքն Ղեւեայ: Երկրորդ օգուտն՝ զի միաբանութեամբ զոր ինչ խնդրեն յԱստուծոյ՝ առնուն. որպէս ասէ Տէրն. (միաբանութեամբ զոր ինչ խնդրէք հաւատով՝ եղիցէ ձեզ ի Զօրէ իմմէ. զի ուր երկու եւ երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ ես ի մեջ նոցա:) դարձեալ օգուտ՝ զի զմիմեանս յորդորեն ի բարի գործս եւ ջերմացուցանեն ի սերն Աստուծոյ: Եւ բազում օգուտ Է ի սիրոյն. վասն այնասաց Զրիստոս: (Այս Է պատուեր իմ, զի սիրեցէք զմիմեանս:) Եւ արդ՝ վասն սիրոյ չորս ինչ գիտելի Է: Առաջին՝ զի բնութիւն Է սիրոյ միացուցանելն. զի ամենայն ինչ որ միանայ՝ սիրով միանայ. որպէս մատուցք ի ձեռն. եւ ձեռն ի բազուկն՝ եւ բազուկն ի մարմինն. եւ մարմինն ի սիրտն. եւ սիրտն ի հոգին սիրով միանայ: Այլեւ ջուրն ի հողն. եւ օղն ի ջուրն. եւ հուրն ի յօղն սիրով միանայ: Այլեւ տասն երկինք սիրով միանան. այսինքն, երկինք լուսնին՝ ի բոլորակութիւն հրոյն. եւ եօթն մոլորակք մինչեւ յերեւակն. եւ հաստատութիւնն ի յերեւակն. եւ ջրեղէնն ի հաստատութիւնն. եւ հրեղէնն ի ջրեղէնն: Այլեւ սոքա ի մարդկանէ առաքեալք եւ մարգարէք, եւ մարտիրոսք եւ նահապետք եւ այլք, սիրով միանան ընդ հրեշտակս. եւ նոքա ի պետութիւնս եւ իշխանութիւնս: Եւ տերութիւնքն ի Սրովբէսն եւ ի Զերովբէսն եւ ի յաթոռսն: Եւ նոքա ի Սուրբ Աստուածածինն. եւ Սուրբ Աստուածածինն ի

Սուրբ Երրորդությունն: Այսպես սոքա ամենայնքն սիրովն են միաւորեալ: Այս առաջինն: Երկրորդ գիտելի է՝ զի մարմնաւոր անդամքս՝ չորս կերպիւ միացեալ են ընդ միմեանս: Առաջին՝ զի մի բնութիւն ունին ամենայն անդամքն. զի գոյացեալ են յոսկերաց եւ ի մտոյ: Երկրորդ կերպիւ՝ միացեալ են յօդուածով եւ ջլով: Երրորդ՝ զի բնական շերմութիւն հոգւոյն եւ զօրութիւն՝ տարածի յամենայն, եւ գնոսա միաւորէ: Չորրորդ՝ զի ամենայն անդամ ունի զմի բանական հոգի: Եւ այս չորս միաւորութիւնս է ի մէջ եկեղեցւոյ՝ որք հոգեւոր անդամք են միմեանց: Առաջին՝ զի ամենայն հոգեւոր անդամքն՝ մի բնութիւն ունին. այսինքն, ամենայն հրեշտակք եւ մարդիկ. կամ տեսակաւ՝ կամ սեռիւ՝ մի են: Չի Զրիստոս գլուխ է՝ ոչ միայն մարդկան, այլեւ հրեշտակաց: Այս առաջին միաւորութիւնս անկատար է. զի հասարակաց է ամենայն մարդկան՝ հաւատացելոց եւ անհաւատից. որք մին տեսակ եւ մին սեռ ունին: Վասն այն պիտոյ է երկրորդ միաւորութիւնն՝ որ հաւատով միանան ընդ իրեարս. որպէս մարմնաւոր անդամս յօդուածով եւ ջլով: Եւ այս եւս չէ կատարեալ. զի կան հաւատացեալք՝ որք ի մէջ մեղաց են. եւ կան որք հերձուածօղք են. եւ սոքա չոր եւ հատեալ անդամք են եկեղեցւոյ: Վասն այն պիտոյ է երրորդ միաւորութիւն՝ որ ամենայն հաւատացեալք լինին կենդանի բարի գործօք, եւ ուղղափառ հաւատով, եւ շնորհօքն Աստուծոյ. որպէս մարմնաւոր անդամքն ունին զբնական կենդանութիւնն ի հոգւոյն: Եւ ի վերայ այս՝ չորրորդ միաւորութիւնն է պիտոյ. զի ամենայն սուրբք՝ մի հոգւով սրբով զոր ընդունին՝ միաւորին. որպէս մարմնաւոր անդամքն մի հոգի ունին բանական: Եւ որպէս բանական հոգին՝ չորաչեալ եւ հատեալ անդամոյն ոչ տայ կենդանութիւն. Նոյնպէս եւ հոգին սուրբ՝ ոչ տայ կենդանութիւն անհաւատին՝ եւ հերձուածողաց՝ եւ բաժանողացն զԶրիստոս եւ զքրիստոսնեայս: Չի հատեալ անդամք են: այս երկրորդն: Երրորդ գիտելի է՝ որպէս սիրեն մարմնաւոր անդամք զմիմեանս. Նոյնպէս պարտ է մեզ զմիմեանս սիրել: Եւ ասեմք զայս տասն կերպիւ: Առաջին՝ զի մի անդամն՝ ոչ նախանձին ընդ միւսոյն. թեպէտ չունի գնորա գործն. զի ձեռն ոչ նախանձի ընդ աչսն. եւ ոչ ոտն ընդ ձեռն: Նոյնպէս եւ ի մարմին եկեղեցւոյ՝ ոմն վերին անդամ է որպէս առաջնորդք: Ոմն վերջին, որպէս գործաւորք: Ոմն միջին, որպէս փարթամք եւ մեծատունք: Եւ ոմանք աղքատք որպէս սոք ծառայեն մեծատանց: Եւ չէ պարտ որ նախանձի մարդ ընդ մարդն: Երկրորդ կերպիւ՝ անդամք սիրեն զմիմեանս. որ մի անդամն՝ ոչ խնայէ այլ անդամոց զգործս իւր. այլ ձրի բառիւ. որպէս աչքն գլոյս իւր տայ ձեռացն եւ ոտիցն: Այսպէս պարտ է մեզ բաշխել ձրի զգործս մեր. զի քահանայքն ձրի տան զխորհուրդ սուրբ եկեղեցւոյ: Եւ վարդապետք ձրի քարոզեն: Եւ մեծատունք ձրի տան զողորմութիւն աղքատաց: Երրորդ կերպ սիրոյ անդամոց. զի ոչ հատուցանեն վնաս միմեանց. թէ մի անդամն խոցէ զմիւսն, ոչ առնու վրեժ ի նմանէ: Այսպէս պարտ է քրիստոսնեին՝ որ չարի չար ոչ հատուցանէ. այլ բարի. որպէս ասէ առաքեալն. (մի ումեք չարի չար հատուցանէք:) Չորրորդ՝ զի անդամն որ տկար է եւ անարգ, առաւել պատիւ ունի. այսպէս պարտ է աղքատաց եւ հիւանդաց առաւել խնամ տանիլ. քան մեծատանց. զի մեծատունն յինքենէ ունի զպատիւն: հինգերորդ՝ զի թէ միանդամ ցաւի, ամենայն անդամքն ի հետ ցաւին. եւ թէ մինն հեշտանայ, ամենայն անդամքն հեշտանան: Այսպէս պարտ է մեզ ուրախակից եւ տրտմակից լինիլ միմեանց: Որպէս ասէ Պօղոս. (լալ ընդ լացօղս. եւ խնդալ

ընդ խնդագօրս:) Չի ասէ Զիպոկրատես բժիշկն. թէ մին անդամոյն ցաւն՝
զմին այլ անդամոյն ցաւն թեթեւացուցանէ: Չի թէ խելագար մարդոյն զոտն
եւ զբազուկն պիտն չուանով կապեն, գլխոյն ցաւն փոքրանայ: Եւ այս է
պատճառն: Չի գլուխն վասն առաւել ջերմութեանն եւ գիշութեանն ցաւի: Եւ
յորժամ այլ անդամքն, նա գլուխն է որ ի յաւելի ջերմութենէն եւ ի գիշութենէն
ուղարկէ ի յայլ անդամսն. վասն այն իւր ցաւն փոքրանայ: Այսպէս թէ
տրտում մարդոյն վշտակից լինին, նորա ցաւն եւ վիշտն փոքրանայ:
Վեցերորդ՝ զի զոր ինչ կրէ մի անդամս՝ թէ բարի եւ թէ չար, ամենայն
անդամքն զայն իւրեանց համարին: Չոր օրինակ՝ թէ զոտն հարկանեն,
բերանն գանգատի, թէ ընդ է՞ր հարկանես զիս: Եւ թէ լուանան զոտն,
բերանն շնորհակալի, թէ զիս լուացեր: Նոյնպէս պարտ է քրիստոնէից՝ որ
զմիւս քրիստոնէից թէ զբարին եւ թէ զչարն իւրն համարի. որպէս Քրիստոս
հրամայէ. (որ զձեզ ընդունի՝ զիս ընդունի. եւ որ ձեզ անարգէ, զի անարգէ:) Եթէ
եթերորդ կերպ՝ այս է մտեր անդամոցն. զի մի անդամս՝ մատնէ զինքն
վասն միւսոյն: Չի թէ գայ ի վերայ գլխոյ նորա կամ աչացն թուր, կամ փայտ,
ձեռն ի մէջն անկանի եւ յինքն ընդունի: Այսպէս պարտ է քրիստոնէին՝ որ
զանձն իւր մատնէ վասն ընկերին. որպէս Քրիստոս գլուխն մեր արար. որ ի
խաչն բարձրացաւ. եւ զբարկութիւն Զօր որ գայր ի վերոյ մեր ի յինքն կրեաց.
եւ զմեզ ազատեաց. որպէս ասէ Սողոմոն. (ի թիկնամէջ իւր ընկալցի զքեզ. ի
հովանի թելոց նորա յուսացիս:) Ութներորդ կերպ՝ անդամքն որ
զկերակուրն առնուն՝ այսինքն, ստամոքսն եւ լեարդն եւ սիրտն, ոչ պահեն
ինքեանց միայն. այլեւ յայլ անդամսն անցուցանեն: Եւ թէ ագահութիւն
առնեն, եւ ոչ անցուցանեն ի յայլսն զկերակուրն, վնաս է ինքեանց. եւ
պատճառ հիւանդութեան լինի: Այս մեծատունք որ ժողովեն զինչս՝ պարտին
տալ աղքատաց մասն՞ ապա թէ ոչ տան, պատճառ կորստեան լինի
ինքեանց ի դժոխս: Նոյնպէս վարդապետք որք ժողովեալ են յինքեանս
զհոգեւոր ուսմունս՝ եւ ոչ ուսուցանեն ժողովրդեանն, դատիւնց են
յաստուծոյ. որպէս ասէ ժողովօղն. (է հիւանդութիւն զոր տեսի ես ի ներքոյ
արեգականն. մեծութիւն ումեք պահել առ ի նմանէ՝ եւ է իւր պատճառ չարի.
եւ կորիցէ մեծութիւն նորա:) Իններորդ՝ զի անդամս յոյժ երկնչի, թէ չորանայ
կամ հատանի. զի թէ կտրի, այլ չկարէ առնուլ զկենդանութիւն հոգւոյն:
Նոյնպէս չէ պարտ որ երկնչի մարդ ի յայլ իրաց, քան թէ յորժամ մարդ մեղօք
կամ հերձուածով կտրի յեկեղեցւոյ. զի թէ կտրի, այլ ոչ կարէ առնուլ զշնորհս
հոգւոյն սրբոյ: Տասներորդ սեր է մէջ մարմնոյ անդամոց. զ յորժամ իմանայ
թէ մարմինն կտրիւոց է, յոյժ սարսի եւ դողայ. թէ ոտն, եւ թէ ձեռն. այսպէս
պարտ է սարսիլ քրիստոնէին, յորժամ մին անդամս կտրի. կամ
ուրացութեամբ, կամ առնգեղջ մեղօք: Արդ՝ թէ մարմնաւոր անդամքն
այսպէս սիրեն զմիմեանս. պարտ է եւ հոգեւոր անդամոցս զմիմեանս սիրել.
վասն այն ասէ Քրիստոս: (Այս է պատուեր իմ, զի սիրեցէք զմիմեանս:) Չորրորդ
գիտելի է՝ զի Քրիստոս օրինակ սիրոյ է տուեալ քրիստոնէից. որ
այնպէս սիրեմք զմիմեանս, որպէս նա սիրեաց զմեզ: Եւ այս Չ կերպիւ:
Առաջին՝ զի Քրիստոս սիրեաց զմեզ՝ ոչ ըստ արժանեաց, այլ ձրի. զի չէաք
զնա սիրեալ. որպէս ասէ Յօհաննէս ի կաթուղիկէն. (յայսմէ սեր նորա. ոչ զի
մեք սիրեցաք զնա, այլ զի նա սիրեաց զմեզ: Այսպէս պարտ է՝ զի
քրիստոնէայքն սիրեն զմիմեանս. եւ ոչ միայն զսիրելիսն, այլեւ զթշնամիսն
սիրել ըստ այնմ, (սիրեցէք զթշնամիս ձեր, այլեւն:) Երկրորդ՝ սիրեաց զմեզ

ճշմարիտ եւ սուրբ սիրով. ոչ վասն իւր օգտի, այլ վասն մեր. ոչ զի առցէ ինչ
 ի մէջ, այլ զի տացէ: Այսպէս պարտին քրիստոնեայքն սիրել զմիմեանս
 սուրբ սիրով: Չի որ սիրէ զոք վասն ինքեան օգտի, ոչ սիրէ զնա, այլ զինքն:
 Երրորդ՝ սիրեաց զմեզ Զրիստոս իմաստասիրութեամբ. զի սիրեաց
 զբնութիւնս մեր. այլ ոչ սիրեաց զմեղս մեր. այսպէս պարտ է մեզ սիրել
 զմարդիկ. եւ ատել զմեղս նոցա: Չի ասէն վարդապետք թէ՛ այն է սահման
 սուրբ սիրոյն՝ որ ոչ աղաչէ զոք գործել ինչ անպատճառ. եւ թեպէտ նա
 աղաչէ զքեզ՝ դու մի լսեր. որպէս ասէ Պօղոս. (սեր ընկերի իւրում չար ոչ
 առնէ:) Չի թէ վասն սիրոյ ընկերին արբեւայ, կամ պոռնիկ, կամ սպանանէ,
 կամ այլ ինչ առնէ անպատշաճ, այն ոչ է սեր սուրբ. այլ ծուռ եւ անիմաստ: Եւ
 գիտելի է՝ զի զանազանութիւն է ի մէջ երկնային մարմնոց, եւ երկրային. զի
 յերկրաւորս որ ինչ անօրս է՝ պատուական է. եւ որ ինչ թանձր է՝ անարգ է:
 Զանգի հուրն հազարապատիկ անօրս է քան զհողն եւ օղն
 հարիւրապատիկ. եւ ջուրն տասնապատիկ նօսր է քան զհողն: Վասն այն
 ասէ Արիստոտել թէ՛ ի մին ափ հողէն՝ տասն ափ ջուր ծնանի. եւ հարիւր օդ.
 եւ հազար հուր: Վասն այն հողն ի մէջ չորս տարերաց անարգ է. զի մրուր է
 նոցա: Այլ երկնային մարմինն՝ որ ինչ թանձրագոյն է, պատուական է. որպէս
 աստղ որ թանձրագոյն է քան զերկնային մարմինն, պատուական է: Եւ ուր
 բազում են ժողովք աստեղաց, անդ բազում զօրութիւն լինի: հողն նշանակէ
 զչարսն. զի որ չափ խիստ սիրով միանան եւ ժողովին ի միասին, առաւել
 անարգ են. եւ բազում չարիս առնեն. եւ լալ է նոցա բաժանումն. զի
 խափանի չար գործն նոցա: Այլ որ սեր սուրբ ունին՝ նման են աստեղաց. զի
 որչափ շատ միաբանին, բազում առնեն բարիս: Չորրորդ կերպիւ՝ սիրեաց
 զմեզ Զրիստոս ջերմ եւ խիստ սիրով. որպէս ասէ Բարնաբաս: (Մեծ էս քան
 զայս սեր ոչ ոք ունի, թէ զանձն իւր դիցէ ի վերոյ բարեկամաց իւրոց:) Վասն
 այն պարտին քրիստոնեայք սիրել զմիմեանս ջերմ եւ խիստ սիրով. եւ դնել
 զանձն ի վերայ միմեանց. որպէս ասէ Յօհաննէս ի կաթողիկէն. (այսուիկ
 գիտասցուք զսերն Աստուծոյ, զի նա եղ զանձն իւր վասն մեր. եւ մէք վասն
 եղբայրց՝ պարտիմք դնել զանձիւս:) Հինգերորդ՝ սիրեաց զմեզ Զրիստոս
 պտղաբեր սիրով. այսինքն, ոչ լեզուաւ միայն, այլեւ գործով: Այսպէս
 քրիստոնեայք պարտին սիրել զմիմեանս գործով եւ ճշմարտութեամբ.
 որպէս ասէ Յօհաննէս ի կաթողիկէն: (Որդեակք՝ մի բանիւ եւ լեզուաւ միայն
 սիրեսցուք զմիմեանս, այլ արդեամբ եւ ճշմարտութեամբ:) Վեցերորդ՝ սիրեց
 զմեզ յաւիտենական եւ անվախճեան սիրով. որպէս ասէ Բարնաբաս.
 (սիրեաց զիւրսն որ յաշխարհէ աստի էին. իսպառ սիրեաց զնոսա:) Այսպէս
 պարտին քրիստոնեայք սիրել զմիմեանս հանապազորդ եւ յաւիտենական
 սիրով. որպէս ասէ Սողոմօն թէ՛ (հանապազ սիրէ՝ որ ճշմարիտ սիրելին է.
 վասն այն ասէ Զրիստոս. (Այս է պատուեր իմ, զի սիրեցէք զմիմեանս:) Այլեւ
 սեր որ ի մէջ անասուն կենդանեացն է՝ յորդորէ ցմեզ սիրել զմիմեանս.
 որպէս ասէ Սիրաքն թէ՛ (ամենայն անասուն կենդանիք սիրեն զհամաստեռն
 իւրեանց.) որպէս գայլ, եւ առիւծ, եւ օձ. թեպէտ պատամոզ են այլոց, այլ ընդ
 ընկերս իւրեանց սեր ունին: Ապա ուրեմն ամենայն մարդ որ պատամէ եւ
 ատէ զընկերս իւր, առաւել անարգ է քան զգազանս: Եւ երանի թէ այնպէս
 սիրէին մարդիկ զիրեարս, որպէս խոզքն. զի յորժամ ըմբռնեն զմին խոզ,
 ամենայն խոզքն թափին ի վերայ՝ եւ թափեն զնա. եւ թէ ոչ կարեն թափել,
 աղաղակեն ողբաձայն գթով ի վերայ ընկերին իւրեանց: Այլեւ մարդիկ կան՝

որք նմանէ շանց. որթէ բազում շունք գան ի վերայ քոյ՝ եւ դու քարիւ հարկանես զմինն, նա թողուն այլ շունքն զքեզ. եւ երթանք զծեծած ընկերն իւրեանց տան դնելով.գզեն: Այսպէս թէ ոք մին յաղքատութիւն եւ ի փորձութիւն անկանի, նա մարդիկ այլ առաւել վիրաւորեն գնա. զպարտսն ուզելով. ի գնտան դնելով՝ եւ ամենեւին չգթան ի նա: Եւ յայսմանէ յայտ է՝ թէ այնպիսիքն չեն Զրիստոսի աշակերտք. զի Զրիստոս ասաց. Յայսմ ծանիցեն թէ իմ աշակերտք էք՝ թէ սիրիցէք զմիմեանս: Եւ Զրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից ամեն:

Դարձեալ յայլմէ քարոզ ի նոյն բանն: (Այս է պատուեր իմ, զի սիրիցէք զմիմեանս:) (Գլուխ ԺԷ)

Վարդապետք ասեն թէ սուրբ սերն չորս յատկութիւն ունի: Առաջին՝ զի համարձակ առնէ ի հոգեւոր պահերագմի.զի սուրբ սերն ջերմութիւն է. իսկ ջերմութիւն համարձակ առնէ զմարդն. վասն այն որք ջերմ սիրտ ունին՝ արի են. եւ որք հով երկչոտ: Այսպէս որք զհոգեւոր սերն ի սիրտն ունին ոչ երկնչին. որպէս ասէ Յօհաննէս ի կաթողիկէն. (կատարեալ սերն՝ ի բաց մերժէ զերկիւղն:) Եւ օրինակ՝ յորժամ բնութիւնի յղացմամբ կազմէ զմարմինն, նախ զսիրտն կազմէ. եւ դէտ անդ զբնական ջերմութիւնն. եւ ապա միջնորդութեամբ. այնր ջերմութեան՝ զայլ անդամսն կազմէ: Նոյնպէս եւ հոգին սուրբ յորժամ վերստին նորոգէ զմարդն, նախ տնկէ ի սիրտ նորա զհոգեւոր ջերմութիւնն՝ որ է սերն Աստուած եւ ընկերին. եւ այն սիրովն բազում բարի գործս կատարէ: Երկրորդ յատկութիւն. զի սուրբ սերն միացուցանէ անբաժանելի. այլ սեր աշխարհիս միաւորէ, այլ ոչ անբաժանելի. զի հիմն ժամանակաւոր է. եւ շուտով ապականի. որպէս օրինակ՝ թէ ոք սիրէ զմարդ վասն մարմնոյ գեղեցկութեան, եւ փարթամութեան, յորժամ փոխի ի գարշութիւն, կամ յաղքատութիւն, յայնժամ սեր նորա խափանի: Այլ սուրբ սերն՝ ունի հիմն յաւիտենական. Այսինքն, զաստուածային բարութիւնն. որ ոչ երբէք պակասի: Վասն այն հոգեւ որ սերն՝ անբաժանելի կապ է. որպէս ասէ Յօհաննէս ի կաթողիկէն. (որ կայ ի սերն յաստուածային բնակի, եւ Աստուած ի նմա:) Երրորդ յատկութիւն. զի սուրբ սերն՝ ի միտ ածէ զսիրելին իւր անմոռանալի. զի որ սիրէ զԱստուած եւ զընկերն՝ ոչ երբէք մոռանայ զնոսա: Որպէս ասէ սիրեցէքն, (լաւ է անգաւակութիւն հանդերձ սիրով. քանզի անմահ է յիշատակ նորա:) Զանզի ոչ նա զԱստուած մառանայ, եւ ոչ Աստուած զնա: Եւ որպէս սիրելիք՝ որք ոչ կամին մառանալ զմիմեանս՝ նշան ինդրեն ի միմանց: Այսպէս Տէրն մեր՝ նշան է առ յինքն զհինգ խոցուածն որ վասն մեր. զի ոչ երբէք մառասցի զմեզ. որպէս ասէ Եսայի: (Մի թէ մառասցի մայր զմանուկ իւր, կամ հարսն զլանջագեղ կամարն. սակայն ես զքեզ ոչ մոռացայց ասէ Տէր:) Այլեւ կամին Տէրն՝ զի եւ մեք զնա ոչ մոռացուք. վասն այն ասէ յերգս երգոցն: (Դիր զիս իբրեւ զմատնեհար ի վերայ սրտի քոյ. եւ իբրեւ զնշան ի վերայ բազկի քոյ. զի հզօր է իբրեւ զմահ սեր քո:) Չորրորդ յատկութիւն է. զի կատարեալ սերն՝ տանջանս տայ կրել. եւ ոչ երբէք զգայ. այս է պատճառն. զի սերն փոխէ զսիրողն առ սիրեցեալն. վասն այն սիրողն ոչ զգայ զտանջանս իւր. այլ զտանջանս սիրողին զգայ. զի նա ոչ յինքն, այլ փոխեցեալ է ի սիրեցեալն: Վասն այն մարտիրոսքն ոչ զգային զտանջանս

իւրեանց. այլ գտանջանսն Զրիստոսի. վասն զի սուրբ սերն՝ փոխեալ էր զնոսա ի Զրիստոս. որպէս ասէ սաղմոսն. (սիրտ իմ եթող զիս.) եւ մարմին որ սիրտ ոչ ունի՝ ոչ զգայ գտանջանս: Եւ այսպէս զօրաւոր է սուրբ սերն. որ համարձակ եւ արի առնէ զմարդն. եւ անբաժանելի միացուցանէ. եւ ոչ մառանայ զսիրելի. եւ ոչ զգայ գտանջանս. վասն այն ասաց Զրիստոս: (Այս է պատուեր իմ, զի սիրիցէք զմիմեանս:) Եւ վասն բազում պատճառի պարտիմք սիրել զմիմեանս: Առաջին՝ զի ամենայն ազգականք սիրեն զմիմեանս. եւ մեք միմեանց ազգ եմք երկու կարպիւ: Նախ հոգւեր. զի ամենայնքն մի հայր ունիմք զԶրիստոս. եւ մի մայր զԵկեղեցի. որպէս ասէ Տէրն. (մի է հայր ձեր որ յերկնս է. եւ դուք ամենայնքն եղբարք էք:) Այլեւ ի մարմնաւոր կողմանէ՝ ազգ ամք միմեանց. զի ի կողմանէ հոգւոյս՝ ամենայնքն յԱստուծոյ ստեղծաք առանց միջնորդի: Այլեւ ըստ մարմնոյ չեմք հեռի ի միմեանց. զի ի մի հողոյ ստեղծաք ամենայնքն: Չի գինի որ ի մի այգոյ է՝ թէպէտ յետոյ, թէպէտ յառաջն լինի կոխած, ասեն թէ ի մի այգւոյ է. եւ մին գինի է: Նոյնպէս ամենայնքն ի միոյ հողոյ եմք. թէպէտ կէսք յետոյ, եւ կէսք յառաջոյ եկին: Եւ ոչ ստեղծեաց Աստուած երկու Ադամ. մին յոսկւոյ վասն իշխանաց. եւ մին ի կաւոյ վասն աղքատաց. այլ մին Ադամ, եւ այն ի հողոյ: Եւ ամենայնքն մեծամեծք աւ փոքունք՝ ի նմանէ յառաջ եկին: Այլ աստ հարցումն լինի թէ վասն էր Աստուած զմարդիկ համանգամայն ոչ ստեղծեաց որպէս զհրեշտակս: Կամ վասն էր երկու ոչ ստեղծեաց՝ զԱդամ՝ եւ զկին նորա. որպէս զանասունս այլ զԱդամ միայն. եւ զԵւա ի նմանէ: Ասեն վարդապետք վասն երկու պատճառի: Նախ զի՝ Ադամ առաջին մարդն՝ լիցի սկիզբն ամենայն մարդկան. զի հպարտութիւնն սատանայի անարգեսցի: Վասն զի կամեցաւ զլուխ լինիլ ամենայն եւ նման Աստուծոյ. այլ ոչ կարաց. այլ այն պատիւն յոր նա ոչ եհաս, տուաւ մարդոյն: Չի որպէս մի Աստուած է սկիզբն ամենայնի ստեղծմամբ. նոյնպէս Ադամ է սկիզբն ամենայն մարդկութանս ծննդեամբ: Երկրորդ պատճառ՝ զի ամենայն մարդիկ այնպէս սիրեսցեն զմիմեանս որպէս ի միոյ հօրէ ծնեալք. վասն այն ոչ ստեղծեաց Աստուած ի սկիզբն երկու զԱդամ եւ զԵւա. այլ մին: Յայսմանէ պարտական են մարդիկ սիրել զմիմեանս առաւել զանասունսն զսիրեալս: Այլեւ առաւալ քան զհրեշտակս. զի ամենայն հրեշտակք ի միոյ հրեշտակէ ոչ եկին յառաջ. եւ ոչ ամենայն անասունք ի միոյ անասնոյ: Այլ ամենայն մարդիկ ի միոյ մարդոյն եկին յառաջ. վասն այն պարտիմք սիրել զմիմեանս. որպէս հրամայեաց Զրիստոս: (Այս է պատուեր իմ, զի սիրեցէք զմիմեանս:) Եւ աստ գիտելի է՝ զի այս հրամանս զոր Զրիստոս պատուիրեաց՝ լուսաւոր եւ օգտակար է կարճ. եւ կատարումն է ամենայն օրինաց: Լուսաւոր է. զի որպէս Զրիստոս լոյս ի լուսոյ է. վասն որոյ զպատուիրանսն իւր լուսաւոր եւ յայտնի ետ. զի մի ոք ասիցէ, թէ պատուերքս այս ծածուկ էին. եւ ոչ կարացի հասկանալ: Եւ որպէս բանն Աստուծոյ վասն մեր կարճ եւ համառօտ եղել ի մարմնի. որպէս ասէ Եսայի թէ՛ (բան մի հակիրճ եւ համառօտ արացէ Տէր ի վերայ երկրի.) վասն այն պատշաճ էր որ զպատուեր հին օրինացն կարճացուցանէր. վասն զի հին օրէնքն՝ վեց հարիւր տասն եւ երեք պատուիրան է. եւ յոյժ ծանր: Եւ Զրիստոս ամենայն ի տասն բովանդակեաց. եւ զտասն ի յերկուս. այս է՝ սիրել յԱստուած, եւ զնկերն: Եւ զերկուսն ի մի՝ այս է՝ սիրել զմիմիանս: Եւ վասն այն կարճացոյց՝ զի մի ասացեն թէ երկայն էր պատուիրանն, չկարացի ի միտ առնուլ: Այլեւ պարտ է գիտել զի

Քրիստոս վասն մեր օգտի եկն յաշխարհս. զի եւ պատուիրանք նորա օգտակարք լինէին. եւ քաղցր, եւ թեթեւ. զի մի ասիցէ ոք թէ՛ պատուիրան նորա ծանր էր եւ դժուար. վասն այն չկարացի կատարել: Այլ ամենայն ոք կարէ կատարել. առողջն, եւ հիւանդն. փարթամն, եւ աղքատն. վասն այն Տէրն ասաց. (լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքր ոգի:) Այլեւ պարտ էր՝ զի (Քրիստոս որ ոչ խափաներ զօրէնս, կամ զմարգարէս, այլ լնոյր.) պարտ էր զի եւ պատուիրանն իւր լինէր կատարումն օրինաց եւ մարգարէից. որպէս Պօղոս. (որ սիրէ զընկերն՝ զօրէնս կատարէ. լրումն օրինացն սերն է:) Արդ՝ թէ ոչ կարեմք զհիմն օրէնս եւ զմարգարէս եւ զաւետարանս ընթեռնուլ եւ կատարել. եւ զայս պատուէրս զոր Տէրն ասէ: (Այս է պատուէր իմ, զի սիրեսցիք զմիմեանս,) կատարեսցուր: Յայն ժամ ամենայն պատուիրանացն Աստուծոյ կատարող եմք:)

Եւ զանազանութիւն է ի մէջ մարմնաւոր պարտուց եւ հոգեւոր. զի մարմնաւոր պարտս մի անգամ վճարեն. այլ ոչ են պարտական. այլ ի հոգեւոր պարտուցն որ սերն է, ոչ ոք ազատի. զի որչափ առաւել սիրէ, առաւել պարտական է սիրոյ. վասն այն ասէ Պօղոս թէ՛ (մի ումեք պարտապան գտանիցիք, այլ միայն զմիմեանս սիրելոյ:) Այս առաջին պատճառ սիրելոյ: Երկրորդ պատճառ. պարտ է սիրել զմիմեանս. վասն զի բնութիւնս ուսուցանէ զսերն եւ զմիաբանութիւն. եւ ուսումն բնութեանս յոյժ ճշմարիտ է, եւ ոչ ստի: Եւ թէ որպէս ուսուցանէ. ոչ բանիւ, այլ գործով: Այսպէս՝ զի ամենայն ստեղծուած ցանկայ միաբանութեան. օրինակ զի բնութիւնս ի բազում անդամոց մի մարմին կազմէ. եւ մի բնութիւն առնէ ի մէջ նոցա: Այլեւ Աստուած ի կրկին ստեղծուածոց որ յոյժ հեռի են ի միմեանց, զմի մարդն կազմեաց. այլեւ ի չորս տարերաց՝ որք հակառակք են միմեանց: Այս է, ջերմ եւ ցուրտ. չոր եւ գեճ. բայց միանան եւ զմի մարմին գոյ ացուցանեն: Եւ սոքա որք յոյժ հեռի են ի միմիեանց՝ սիրով միանան: Ապա որ չափ առաւել պարտին մարդիւ սիրով միաւորիլ. որք յոյժ նման են միմեանց: Եւ ամենայն ինչ զմիաբանութիւն սիրէ, բաց ի մեղաց եւ ի սատանայէ. որ բաժանէ յԱստուծոյ, եւ ինքն ի յինքն ոչ ունի միաբանութիւն: Դարձեալ գիտելի է՝ զի ամենայն գիտութիւն վասն խաղաղութեան եւ միաբանութեան գտեալ եղել. քանզի աստուածային գրոց գիտութիւն վասն այն եղել, զի հաշտեսցին մարդիկ ընդ Աստուծոյ եւ միբանեացին: Այլեւ բժշկական գիտութիւնն վասն այն է, որ զչորս հակառակ տարերսն ընդ իրեարս միաբանեսցէ. թէ նոքա միաբան են, մարդն կենդանի է. ապա թէ հակառակք են, մեռանի: Այլեւ ուղղութիւն եւ գիտութիւն դատաստանին վասն խաղաղութեան գտաւ. զի որք վիճին ընդ իրեարս, կամ վասն հայրենեաց, կամ այլ իրաց, արդար դատաստանաւ ընդ իրեարս միաբանին: Եւ արդ՝ զի ամենայն գիտութիւն վասն սիրոյ եւ միաբանութեան եղել. անբան եւ էջ է որ ոչ սիրէ զմիաբանութիւն եւ զսեր. վասն այն ասաց Քրիստոս: (Այս է պատուէր իմ, զի սիրեսցիք զմիմեանս:)

Երրորդ պատճառ սիրոյ, սիրել զմիմեանսս. զի ընկերն ծանրագին է եւ պատուական: Եւ այս ցուցանի Գ կերպիւ: Առաջին՝ զի Քրիստոսի որդին Աստուծոյ վասն մարդկան զանձն իւր եւ զարիւնն զին ետ. ապա թէ չէր պատուական ընկերութիւնն, չէր այնպէս մեծ զին տուեալ. որպէս ասէ տեսիլն. (որ սիրեաց զմեզ. եւ լուաց զմեզ ի մեղաց մերոց արեամբն իւրով:) Եւ դու զքո ընկերն չէ պարտ որ խոտան եւ անարգ համարիս եւ թեթեւ: Այլ

պարտ է՝ որ կշռես ի մին կողմն զՔրիստոսի. եւ ի մին կողմն զքո ընկերն. զի վասն նորա Քրիստոս զիւր արիւնն ետեղ. յայնժամ իմանաս զպատուականութիւն նորա, զի յոյժ ծանագին է: Վասն այն ասէ Պօղոս. (մի կերակրով զնկերն քո կորումաներ. վասն որոյ Քրիստոսին մեռաւ:) Երկրորդ կերպիւ ցուցանէ՝ զի հրեշտակք սիրեն զմարդն. եւ պահեն զնա յամենայն ճանապարհս նորա. որպէս ասէ սաղմոսն. (հրեշտակաց իւրոց պատւիրեալ է վասն քո. ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո) Իսկ դու հակառակ՝ որ չափ կարես՝ արհմարհես: Ապա ասէ Քրիստոս. (զգոյշ լերուք. մի արհամարհիցեք զմի ի փոքրկանցս յայսցանէ. զի հրեշտակք նոցա հանապազ տեսնեն զերեսս հօր իմոյ որ յերկինս է:) Երրորդ կերպիւ ցուցանէ՝ զի մարդն հաստատեալ է ի պատկեր Աստուծոյ. եւ թեպէտ ոյ սիրէ զորդի սիրելոյն իւրոյ՝ բայց առաւել եւս սիրէ զայն, որ խիստ նման է սիրելոյն իւրոյ: Այսպէս թեպէտ պարտ է սիրել զամենայն ստեղծուածս Աստուծոյ՝ այլ առաւել պարտ է սիրել զմարդն՝ որ նման է Աստուծոյ. վասն այն ասէր: (Այս է պատուեր իմ, զի սիրեսցիք զմիմեանս:) Չորրորդ պատճառ՝ պարտ է զմիմեանս սիրել. զի ընկերն մեր՝ անդամ է այն հոգեւոր մարմնոյն, որոյ Քրիստոս գլուխ է. եւ որ ոչ սիրէ զանդմն, ոչ սիրէ զգլուխն զՔրիստոս: Դարձեալ՝ Գալիականս բժիշկն ասէ թէ՛ այս է յատկութիւն բազկացն. զի զոր սիրտն սիրէ. բազուկն գիրկս արկանէ. եւ տանի մերձ առ սիրտն: Սիրտն որ կայ ի մէջ անդամոցն՝ նշանակէ զՔրիստոսի, որ է ի մէջ եկեղեցւոյ. վասն այն պարտ է՝ զի զոր սիրէ Քրիստոս սիրտն մեր, սիրեսցուք եւ մեք: Եւ Քրիստոս զամենայն անդամս իւր սիրէ. բայց առաւել եւս զսուրբսն. վասն այն ասաց. (սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո:) Եւ բանս այս՝ երեք կերպիւ մեկնեալ լինել: Առաջին՝ զի այն իրօքն որ զքեզ սիրես, պարտիս եւզն կերն քո սիրել: Եւ զքեզ այնպէս սիրես՝ որ յաստի կեանս կամիս լինիլ զշնորհսն Աստուծոյ. եւ ի հանդերձելն զյաւիտենական փառսն: Այսպէս պարտիս եւ զայս կամիլ ընկերին քո յայս կեանս, եւ ի հանդերձելն: Երկրորդ՝ (սիրեսցես զընկեր քո որպէս զանձն քո) այս է՝ թէ որպէս դու կամիս եւ ջանաս (սիրել զԱստուած յամենայն անձնէ, յամենայն զորութենէ, եւ յամենայն մտաց): Այսպէս պարտիս կամիլ եւ ջանալ՝ զի սիրեսցէ ընկերն քո զԱստուած յամենայն անձնէ, յամենայն մտաց: Երրորդ մեկնութիւն. զի զոր ինչ կամիս որ քո ընկերն քեզ առնէ, դու նմա արա. եւ զոր ինչ կամիս որ քո ընկերն քեզ չառնէ, եւ դու նմա մի առներ: Դարձեալ՝ կամիս սիրել զքեզ այսպիսի կարգաւ: Նախ՝ ցանկաս հոգեւոր բարեաց. զի հոգիդ քո սուրբ լիցի, լցեալ շնորհօքն Աստուծոյ: Երկրորդ ցանկաս՝ զի առողջ եւ զօրաւոր լիցի մարմինդ քո՝ առ ի կատարել զիրամանս հոգւոյդ: Երրորդ ցանկաս զի յաջողեսցի քեզ արտաքինն. այսինքնն. կերակուր, հանդերձ, եւ այլ ինչ. զի մի տկարացի մարմինդ: Այսպիսի կարգաւ պարտիս սիրել զընկերն քո: Չի նախ կամեսցիս նմա զհոգեւոր բարիս: Երկրորդ՝ զմարմնաւորս: Երրորդ՝ զարտաքինն: Եւ թէ հակառակ այս կարգիս սիրես զընկերն, զի կամիս նմա զմեծութիւն ընչից առանց առողջութեան. եւ կամ առողջութիւն մարմնոյ առանց փրկութեան հոգւոյ, ապա ոչ սիրես զնա որպէս զքեզ: Յայսմանէ յայտնի է, զի սեր մարդկան անկարգ է յոյժ: Չի սիրեն նախ զարտաքին բարին՝ որ է մեծութիւն աշխարհիս. եւ զմարմնոյ առողջութիւն. բայց վասն բարութեան հոգւոյն՝ ոչ ոք հսգայ. ոչ վասն ինքեան. եւ ոչ վասն այլոց: Այլ թէ սիրես զընկերն վասն ազգականութեան, կամ վասն քաղաքակցութեան, բարի է այս. այլ ոչ է

սուրբ սեր: Այլ թէ սիրես զնա՝ զի լինիցի քեզ քաղաքակից ի վերինն Երուսաղէմ, այս սերս՝ սուրբ է: Այլ ասեն տ վարդապետք թէ՛ սերն եօթն աստիճան ունի: Առաջինն բարձր է քան զամենայն. զի զԱստուած սիրեսցուք առաւել քան զամենայն ինչ: Երկրորդ՝ զի զհոգիս մեր սիրեսցուք առաւել քան զամենայն ինչ: Երրորդ՝ զի զհոգի ընկերին մերոյ սիրեսցուք յետ մեր հոգւոյս, առաւել քան զամենայն ինչ: Չորրորդ՝ զի սիրեսցուք յետ ընկերին հոգւոյն. զմարմինս մեր առաւել քան զամենայն ինչ: Զինգերորդ՝ սիրել զմարմին ընկերին առաւել քան զամենայն ինչ: Վեցերորդ՝ զի սիրեսցուք զարտաքոյ զմարմնական ստացուածս: Եօթներորդ՝ սիրել զմարմնական ստացուած ընկերին: Այս է կարգաւոր սերն. որպէս ասէ յերգս երգոց: (Մուծէք զիս ի տուն գինւոյ. այս է՝ յեկեղեցի. կարգեցէք յիս զսեր:) Չի գիտացից թէ՛ զինչ պարտէ առաւել եւ առաջին սիրովն սիրել, եւ զինչ յետին եւ սակաւ: Ապա յայտ է՝ զի պարտ է առաւել զիւր հոգին սիրել քան զընկերին. եւ իւր հոգւոյն կորստեամբն՝ ոյ է պարտ փրկել զայլոց հոգի: Եւ գիտելի է՝ զի ասեն վարդապետք թէ, Աստուծոյ սերն եւ ընկերին՝ կապել կապեալ կան ընդ իրեար. եւ ոչ երբէք բաժանին ի միմեանց: Չի ոչ ոք կարէ ճշմարտութեամբ սիրել զԱստուած, թէ ոչ սիրէ զընկերն. եւ ոչ զընկերն, թէ ոչ սիրէ զԱստուած. որպէս ասէ Յօհաննէս ի կաթուղիկէն. (թէ ոք ասիցէ սիրեմ զԱստուած, եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած որ ոչ կարէ տեսանել՝ զի ա՞րդ կարիցէ սիրել:) Վասն այն ասեն իմաստունք թէ՛ ի սիրոյ ընկերին ծնանի սերն Աստուծոյ. եւ ի սիրոյն Աստուծոյ ծնանի սեր ընկերին: Դարձեալ՝ նման է սերն կարակնի. որ երկու ոտն ունի. մէկն հաստատ մնայ. եւ մինն ի շուրջ գայ. եւ որ չափ մօտ լինի շուրջ գալն, փոքր առնէ զբոլորակն. եւ որչափ շատ հեռանայ. առաւել մեծ առնէ զծիր բոլորակին: Այս եւ սերն հոգեւոր՝ երկու ոտն ունի. մին Աստուծոյ սերն է. եւ զայն պարտ է հաստատ պահել յԱստուած եւ ոչ շարժել. եւ մին մտն՝ սեր ընկերաց: Եւ թէ ոք զիւրս միայն սիրէ զմերձաւորսն, այս մօտ է եւ նեղ. եւ ոչ զնայ հեռի: Եւ որ զօտարն այլ սիրէ այս ընդարձակ սեր է: Իսկ որ թշնամիսն սիրէ վասն Աստուծոյ սիրոյն, առաւել մեծ է. որպէս ասաց Քրիստոս. (եղերուք կատարելք՝ որպէս եւ հայրն ձեր երկնաւոր կատարեալ է:) Եւ այս գիտելի է՝ զի սերն եւ միաբանութիւն յոյժ հաճոյ է Աստուծոյ. եւ խռովութիւնն եւ անմիաբանութիւնն՝ յոյժ դժուար է Աստուծոյ. որպէս ասէ Սողոմօն յառակսն: (Վեց իրք են՝ զորս ատէ Տէր. եւ եօթեանն ոչ հանդարտի.) այսինքն, աչք թշնամանօղ. լեզու անիրաւ. ձեռն՝ որ հեղու արիւն անբիծ. սիրտ՝ որ նիւթ խորհուրդս չարս. ոտք՝ որք փութան գործել զչարիս. եւ վկայ անիրաւ. եւ որ սերմանէ անմիաբանութիւն ի մէջ եղբարց: Չար սերմ է վեճն եւ անմիաբանութիւնն. եւ չար հունձք ելանեն ի նմանէ: Չի երբեմն յայս չար սերմանէս՝ քաղաքի մի ակեր լինի. եւ երբեմն աշխարհի: Վեճն եւ խռովութիւնն սատանայի է գործ. որպէս ասէ ակետարանն թէ՛ (զայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ:) Եւ հակառակ գործէ Քրիստոսի. որպէս ասէ Մատթէոս. (որ ոչ ժողովէ ընդիս, ցրուէ:) Եւ Քրիստոսի յոյժ դժուար է բաժանելն զանդամս եկեղեցւոյ, քան զխոցումն մարմնոյ իւրոյ ի հրեիցն: Չի զմարմին եկեղեցւոյ՝ առաւել սիրէ Քրիստոս քան զմարմին իւր: Վասն այն ոչ եթող զանկար պատմուճանն իւր պատարել. բայց եթող զմարմինն իւր խոցել: Չի անկար պատմուճանն՝ եկեղեցի նշանակէ. զոր ոչ եթող բաժանիլ: Այլ զոր հրեայքն ոչ իշխեցին՝ զայն հերձաւածօղքն արարին. որպէս նախ

զԶրիստոս բաժանեցին. եւ ապա զքրիստոնեայս ի միմեանց քակտեցին. եւ պատառեցին զպատմութեանն Զրիստոսի: Բարձին զսերն ի միջոյ. եւ ատելութիւն եւ հակառակութիւն սերմանեցին. ընդ դէմ այնոցիկ ասէ Զրիստոս: (Այս է պատուէր իմ, զի սիրիցէք զմիմեանս:) Որեւ զմեզ արժանի արասցէ Զրիստոս՝ սիրոյն իւրոյ եւ ողորմութեան եւ գթութեան: Եւ նմա փառք ընդ հօր իւրում, եւ ամենասուրբ հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն առաքիլութեան. ի բանն՝ (Գովելի են գեղեցիկքն. ' պարսաւելի են գարշելիքն ասէ իմաստունն ստորագրիչն՝ամենայն աշխարհի:.) (Գլուխ ԺԸ)

Եւ զի ըստ Պղատոնի՝ հոգին եռամասնեայ գոլով, ունի բան. ցասումն. ' ցանկութիւն: Բանն է՝ որով խօսիմք. ցասումն որով բարկանամք. ցանկութիւն՝որով ցանկամք ընչից, կերկրոց, եւ այլոց: Եւ թէ վասն է՞ր երեք մասնեայ: Առաջին պատճառ՝ զի երեք տեակ է հոգւոց. տնկական. զգայական. եւ բանական:Եւ երկուքն՝ երկու մտնք են իբանական հոգիս մել: Երկրորդ պատճառ՝ ցանկութիւն անասնական է, եւցասումն զազանային է ի մեզ: Երրորդ պատճառ՝ զի հոգիս մեր՝ պատկեր է Աստուծոյ ասէ Մովսէս: Եւ որպէս Աստուած երեք անձիւք է եւ մի բնութիւն.ոյնպէս հոգիս մեր՝ երեք մասն է ի միում եութեան, եւ գ զօրութիւն: Եւ դարձեալ՝ երեք մասամբ հոգւոյս՝ ընդունմք ի մեզ զերեք հեղումն շնորհաց, որ է, հաւատս՝ եւ յոյս՝ եւ եէր: Հաւատն՝ է ի բանական մասն. եւ յոյսն՝ յարութեան. եւ սեր ի ցանկութեան: Վասն սոց ասէ իմաստունն Արիստոտել: (Գովելի են գեղեցիկքն:) Գեղեցիկ են առաքիլութիւնքն, եւ առաքիլի արքն: Եւ կրկին է գովեթիւն. այսինքն, լեզուի եւ սրտի: Լեզուի գովութիւնն է՝ բանիւ գովել. եւ զգեղեցկութիւնն ցուցանել. որպէս նոքա որ զպատուական ակն մ բերեալ, զխասի աթն պատմեն: Եւ սրտի գովութիւնն է՝ սիրել եւ ցանկալ առ ինքեան ստանալ: Իսկ որ ասէ՝ (պարսաւելի են գարշելիքն:) Գարշելի է ամենայն գործ չարութեան, եւ չարքն մարդկանէ. եւ պարսաւելն բաանս՝ անարգելն է. եւ սրտովն ատելն. որպէս ասէ մարգարէն. (զատելիս քոր տեր ատեցի:) Արդ՝ վասն երկու իրաց խօսելոց եմք. այսինքն, վասն Առաքիլութեան. եւ վասն չարութեան: Առաջին՝ թէ զի՞նչ է առաքիլութիւն: Երկրորդ՝ թէ ի քանի՞ս բաժանի: Երրորդ՝թէ զի՞նչ է գործ նորա: Չորրորդ՝ թէ զի՞նչ է գովութիւն առաքիլութեան: Տեսցուք զառաջինն թէ, զի՞նչ է առաքիլութիւն: Վարդապետք այսպէս սահման դնեն: Առաքիլութիւն է՝ բարի որակութիւն մտաց. զոր միայն Աստուած ներգործէ իմարդն: Այս սահմանս՝ յարմարի շնորհել առաքիլութեան՝ որ տուեալ լինի յԱստուծոյ: Բարի ասէ՝ զի է յԱստուծոյ որ բնութեամբ բարի է. եւ բարեացն տայ. եւ բարի առնէ զունօղսն, եւ ի բարի կատարումն հպնէ: Իսկ արիս տոտել սահմանէ: Առաքիլութիւն է՝ ունակութիւն մտաց, կալովն ի մէջն ի մեր կողմանէ: Մէջն այն է՝ որ ամենայնն առաքիլութիւն չափաւորն է եւ մէջն: Իսկ առաւելն եւ ներքին կողմն չար է. եւ մէջն բարի: Չայս ասէ Սողոմօն. (ճանապարհ զարքունի գնացես. մի յաջ խտորիւր եւ մ յահեակ:.) Եւ այլ բազում է սահման առաքիլութեան. զի առաքիլութիւն զարդարէ եւ ուղղէ, եւ կարգաւորէ զոգիս մեր ըստ բոլորին, եւ ըստ մասանց: Չբանական մասն

զարդարե եւ առնէ խոհեմ: Չցասումն ուղղէ եւ առնէ արի: Չցանկութիւնն ողջախոհ: Եւ զբոլոր հոգին կարգաւորէ եւ առնէ արդար. մեծահոգի եւ ազատաբարոյ: Որպէս ընդ դիմակ չարութիւնն՝ անկարգութիւն է, եւ թիւրութիւն, եւ տգեղութիւն հոգւոյս մերոյ բոլորին եւ մասանցն. վասյն ասէ. (գովելի եւ գեղեցիկքն. եւ պարսաւելի գարշելիքն:) Այս առաջինն: Տեսցուք զերկրորդ գլուխն թէ՛ ի քանի՞ս բաժանի առաքինութիւնն: Նախ՝ բաժանի յաստուածային եւ ի մարդկային: Եւ է աստուածային Յաւատն, եւ Յոյսն, եւ Սէրն, եւ սոքա աստուածային կոչին: Նախզի՛ յԱստուած շնորհք են ի մեզ տուեալ: Եւ դարձեալ՝ զի սոքա երեքեանս յԱստուած վերաբերին. զի հաւատովն հաւատամք զԱստուած. որ միայն իւր բարութեամբն ստեղծեաց զմեզ. եւ վերստին փրկեաց: Յուսովն ակն ունիմք որդորմութեանն Աստուծոյ, որ խոստացեալ է մեզ. զի գթած եւ ճշմարիտ է: Եւ սիրեմք զնա. զի ինքն միայն է բարի. եւ վասն նորա սիրեմք զընկերն՝ զի ստեղծեալ եւ պատկեր Աստուծոյ է: Այս վասն աստուածայն առաքինութեանց: Իսկ մարդկային առաքինութիւնքն՝ չորս են. այսինքն, խոհեմութիւն. որ է իմաստութիւն: Արիութիւն, որ է ժրութիւն: Ողջախոհութիւն. որ է սրբութիւն: Արդարութիւն. որ է հաւասարաբաշխութիւն: Սոքա մարդկայինք կոչին: Նախզի՛ յԱստուծոյ մարդկան են պարգեւեալ սոքա, եւ բար մարդկան: Եւ դարձեալ՝ զի սոքա կարգաւորեն զմեզ. առ մեզ, եւ առ ընկերս մեր: Եւ ընդդէմ սոցա յայտնի է չարութիւնն: Ընդդէմ խոհեմութեան՝ անզգամն է. որ տգետ եւ լիրբ եւ անզգայ կոչի. որ ոչ զգայ եւ իմանայ զբարին: Ընդդէմ արիութեանն՝ բարկացողն է. եւ ծոյլն յաղօթս՝ ի պահս՝ եւ յայլն: Ընդդէմ ողջախոհութեան՝ բղջախոհն է եւ անժուժկալն. զոր Սուրբ Գիրք անառակ կոչեն եւ գեղխ: Ընդդէմ արդարութեան անիրաւն է եւ անհնազանդն Աստուծոյ եւ մարդկան, եւ այլն: Իսկ անհաւատն՝ յայտնի է. որ ոչ հաւատայ Աստուծոյ. եւ ոչ Սուրբ Գրոց. ոչ դատաստանի, եւ ոչ հատուցման: Եւ յուսահատն այնն է՝ որ ոչ ուն յոյս այլ կենաց եւ արքայութեան. այլ միայն զմիտսն եւ զհոգին յերկրաւորս է կապեալ: Եւ ատեցող է՝ որ ոչ սիրէ զԱստուած, եւ ոչ զընկերն. եւ ոչ զբարի գործս. այլ միայն զինքն սիրէ եւ զմեղսն: Վասն նոցա ասէ մարգարէն. (որ սիրէ զմեղս՝ ատէ զանձն իւր:) Այս առաջին բաժանումն առաքինութեանց: Դարձեալ՝ բաժանի առաքինութիւնն բբարոյական: ի տնտեսական. եւ ի քաղաքական: Բարոյականն այն՝ որ զիւր բարսն զարդարէ. եւ կարգաւորէ զմասունս հոգւոյն: Չցասումն եւ զցանկութիւն՝ բանին հնազանդ պահէ. եւ մարմինն հոգւոյն հնազանդ. եւ զհոգին ի վերայ իւր մարմնոյն եւ ցանկութեանն տեր եւ իշխեցող: Եւ տնտեսական է՝ որ հեզ եւ քաղցր լինի. եւ բարեմիտ եւ բարեյշումն. մարդասէր՝ ընկերասէր՝ հիւրասէր, եւ այլն: Եւ քաղաքական է՝ որ զբարին սիրէ, եւ զչարսն ատէ, ոչ տանջէ, այլ բարի առնէ. հանդարտ եւ հաշտ, եւ ներօղ լինի յանցաւորաց: Եւ այս գիտելի է՝ որ զիւր բարսն կարէ ուղղել, եւ զտունն կարէ շինել. եւ որ զբարսն եւ զտունն կարգաւորէ, այնպիսիին կարէ զքաղաք եւ զերկիր կարգաւորել եւ առաջնորդել. այս առաքինութիւնս արդարոցն: Իսկ մեղուցելոցն՝ այլ գոյ առաքինութիւն. այսինքն, զղջումն սրտի. խոստովանութիւն լեզւի. եւ ապաշխարութիւն գործոց: Եւ գործք ապաշխարութեան երեք են. այսինքն, պահք՝ աղօթք՝ եւ ողորմութիւնք: Որպէս ասէ Դանիէլ. (զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես. եւ զանօրէնութիւնս քո տրօք տնանկաց:) Եւ Սողոմոն ասէ: (Ողորմութեամբ սրբին յանցանք:) Այս երկրորդն, թէ ի քանի՞ս

բաժանի առաքնութիւն: Տեցուք զերկրորդ գլուխն թէ, զի՞նչ է գործ առաքնութեան: Չի ամենայն իր գործն ունի. որպէս աչքն տեսանէ. ականջն լսէ. եւ այլն: Եւ ամենայն իր ի յիւր գործոյն ճանաչի. պիտանի՞ է թէ անպիտան. որպէս (ծառն ի պտղոյս ճանաչի:) Արդ՝ նախ եւ առաջին խոհեմութեան եւ իմաստութեան գործն է. ընտրել եւ որոշել զբարին եւ զչարն. զսուտն եւ զճշմարիտն, եւ խոտել զչարն եւ զսուտն. եւ ընտրել զբարին եւ զճշմարիտն. ըստ այնմ, (խոտորեալ ի չարէ, եւ արա զբարի:) Դարձեալ՝ գործ է խոհեմութեան, որ զժամանակն եւ տեղին եւ զդէմն ընտրէ, եւ ապա խօսի կամ գործէ. ապա թէ ոչ՝ բարուքն ոչ բարուք լինի: Եւ ընդդէմ այսմ տգէտն այն է՝ որ ոչ ընտրէ զժամանակն եւ ոչ զտեղին. եւ ոչ որոշէ զչարն ի բարւոյն. այլ զբարին թողու, եւ զչարն գործէ. զճշմարիտն թողու, եւ զսուտն սիրէ: Իսկ արիութեան գործն այն է՝ որ ոչ ի նեղութեան խորտակի, եւ ո ի ի հեշտութեանն կակղանայ: Որ ի սպառնալեացն ոչ զարհուրի. եւ ի մէջ փորձութեանն քաջ եւ արի մնայ. թէ հոգեւոր թէ մարմնաւոր փորձանք հանդիպի: Այլեւ ի վաստակ հոգեւոր՝ կամաւոր եւ ժիր եւ աշխատասեր եւ համբերող լինի: Եւ ընդդէմ այսմ, ծոյլ այն է՝ որ ի հոգեւոր ուտմունսս եւ յաղօթս հեղձ լինի: Եւ յոյլն որ ի մարմնաւոր գործս թոյլ եւ տկար լինի: Դարձձեալ՝ ի ի փոքր եկեղն զարհուրի եւ տրտմի. այլեւ անձնասեր, խենեշ, անաշխատ, եւ պարապ լինի: Իսկ ողջխոհութեան գործն այն է՝ որ ժուժկալ լինի ընդդէմ գէշ ցանկութեանն. եւ այլ ինչ փափկութեան. ուտելոյ՝ ըմպելոյ՝ եւ այլն: Դարձեալ՝ ողջախոհ է՝ որ չափն եւ ի հաւասարն կայ. եւ ոչ յաւելու, եւ ոչ նուազի: Որ ի ի յառաւելն՝ գիտէ նուազիլ. եւ ի աղքատութիւնն գիտէ համբերել. որպէս ասէ առաքեալն. (գիտեմք առաւելուլ, եւ գիտեմք նուազիլ:) Եւ ընդդէմ այսմ, բղջախոհն եւ անժուժկալն է՝ որ միշտ յօժարի հեշտ ցանկութիւնս. եւ բանականն ոչ արգիլէ, զչարն բարի կարծէ եւ սովորի. եւ հանապազ ուրախութեամբ զմեղսն գործէ. որպէս ասէ Սողոմօն. (այր անպարիշտ՝ ծիծաղելով գործէ զմեղս:) Այնպիսին առաւել անկարգանայ. ամամօթ. անպարկեշտ. փափկասեր. պղերգ. արհամարիող. լքեալ թուլանայ մտօք եւ մարմնով: Վասն այն ի կանոնսն կարգեցին թէ՛ քահանայն զլորեալ՝ թեպէտ խոստովանի, այլ ոչ պատարագէ: Չի յիշումս բղջախոհ մտաց՝ վերստին նորոգումն է մեղաց. եւ բնութիւն ապական. որպէս ասէ առաքեալն. (ամենայն որ մեղանչէ՛ արտաքոյ մարմնոյ է. այլ որ պոռնկի, յիւր մարմինն մեղանչէ:) Եւ տէր հրամայէ. (թէ աղն անհամեսցի, արտաքս ընկեսցի:) Եւ վասն անառակ որդւոյն. (ածէք ասէ զեզն պարարակ:) Եւ այլ բազում է վկայութիւն Սուրբ Գրոց. զի անկեալ քահանայն այլ ոչ իշխէ պատարագել: Այսքան՝ մասանց եւ զօրութեան հոգւոյն են գործք առաքնութեան եւ չարութեան: Իսկ բոլոր հոգւոյն՝ երեք է առաքնութիւն. այսինքն, արդարութիւն. ազատութիւն. մեծահոգութիւն: Եւ արադարութեան գործն՝ նախ ըստ արժանեաց հաւասարբաշխութիւն. այսինքն, որ հաւասար բաժանել ըստ արժանեաց: Եւ կրկին այս. մին բնական. եւ միւս բանական: Եւ բնական է՝ որ ամենայնց հաւասար բաժանէ. որպէս արեւն զլոյսն. եւ ջուրն զհամն: Եւ բանական՝ որ ընտրութեամբ բաժանէ ըստ արժանեաց՝ մեծի եւ փոքու. որպէս Աստուած զշնորհն ըստ չափու եւ կարողութեամբ. ըստ այնմ, (ումեմն ի հոգւոյ տուեալ է բան իմաստութեան. եւ ումեմն բան գիտութեան, եւ այլն:) Դարձեալ գործ արդարութեան է հատուցանել Աստուծոյ զերկիւղ եւ զպատկառանս. իշխանաց եւ առաջնորդաց

հնազանդութիւն. հաւասարին գւեր եւ գխաղաղութիւն. փոքերն զուղղութիւն եւ զողորմութիւն. որպէս ասէ առաքեալն. (հատուցեք իւրաքանչիւր ումեք. որում զպարտս. եւ զպատիւ. եւ զայլն:) Դարձեալ՝ որ ճշմարիտ խորհի՝ ճշմարիտ խօսի. ճշմարիտ գործէ. զուխտն կատարէ. զչարսն ասէ. եւ զբարիսն սիրէ: Սոքա ամենայնք գործ արդարութեան են: Եւ ընդդէմ արդարութեան՝ Է անիրաւութիւն: Եւ երեք տեսակ Է անիրաւութեան. այսինքն, անպարշտոոութիւն. անարգութիւն: Նախ անպարհիշտն անհավատն Է եւ ուրացողն եւ հերձուածողն. որ ոչ հաւատալ Աստուծոյ. եւ ոչ հաւանի գրեալ կանոնաց առաջնորդաց եւ հայրապետաց: Երկրորդ՝ ազահութիւնն Է իվաճառն, եւ սա կրկին Է. չար եւ բարի. ըստ այնմ, (որ իրս տայ, եւ իրս առու, բարի Է. եւ կոչի վաճառ. այլ (որ իրս տայ, եւ իրս առնու, բարի Է. եւ կոչի վաճառ. այլ որ ի վեր քան զարժանն տայ, եւ ի վայր առնու կրկին չափով,(եւ կրկին կշռով, մեծ եւ փոքր, ատելի Է ասէ Սողոմօն.) եւ այս կոչի վաճառ. զի բազում սուտ եւ երդումն եւ աղաղակ լինի: Երրորդ տեսակն Է՝ ի յանարգութիւնն. որ Է յիշոց, հայիոյութիւն, եւ այլն: Եւ Է սա անշահ անիրաւութիւն: Վասնտորայ եւ Ենոսիմոս իմաստասերն ասէ. գիտէ զի ոչ ինչ շահի. սակայն անիրավէ: Եւ զայս յիշոցս՝ անէծ կոչէ սուրբ գիրն: (Անէծ եւ դառնութիւն եւ նենգութիւն լի Է իբերան նորա, եւ այլն:) Եւ յիշոցն՝ թարգմանի յիշումն բակութեանն Աստուծոյ. զի որ բարկանայ Աստուած վասն մեղաց աշխարհի եւ ներէ, յիշոցն դարձեալ իմտ ածէ եւ բարկացուցանէ: Այս արդարութիւնն Է. եւ ընդդէմ նորա անիրաւութիւն: Իսկ երկրորդ առաքիւնութիւն. ազատաբարոյն այն Է՝ որ առատ եւ պարզ եւ արձակասիրտ լինի: Գործ Է սուրբ՝ առատ ի բարի տուրս, եւ յարժանաւոր սեղանս: Չգեստ եւ բնակութիւն սրպիկ. եւ բարութն քաղցր՝ ողորմած՝ օտարասեր, եւ այլն: Եւ ընդդէմ՝ անազատաբարոյ. եւ երեք ազգ Է. այսինքն, չարաշահն. եւ ժլատն. եւ անհաղորդն: Չարաշահն Է՝ որ յամենայն իրաց շահիլ ինդրէ. իրաւ, եւ անիաւ. չարաց եւ բարեաց, եւ այլն: Ժլատն ռիշտն եւ անողորմն Է. որ ի չարն մսխէ. Եւ անհաղորդն՝ պինտն Է՝ որ բարի տեղին ոչ մսխէ ամենայն կենդանի որ սուրբ Է՝ հողորդ Է. եւ անսուրբն եւ գազանն անհաղորդ Է: Եւ գործ Է անազատ եւ չանսալ մարդոյն, որ յոյժ փոյթ ունի վասն ընչից. որ ժողովէ եւ ոչ մսխէ, միտքն անպիտան. եւ խօսքն անարգ. մարդատեաց, եւ այլն ամենայն: Իսկ երրորդ առաքիւնութիւն Է՝ մեծահոգին. այն Է՝ որ թէ բարի հանդիպի թէ չար, համբերէ, ընդ մեծութիւնս եւ իշխանութիւնս եւ փառս՝ ոչ փքանայ. զմարմնոյ կենդանութիւն ոչ սիրէ. զստութիւն ոչ սիրէ: Այլ պարզ լինի մտօք. եւ մեծ խորհրդով. եւ ճշմարիտ լեռաւ: Այս Է գործ մեծահոգի մարդոյն: Եւ ընդդէմ այսմ՝ փոքրահոգի մարդն. ոչ ի պատիւն համբերէ՝ եւ ոչ յանապատուութիւնն. թէ պատւի հանդիպի, փքանայ. թէ անպատուոյ, դժգոհ, եւ պարստուէ զիր բախտն յուսա հատ եւ անպիտան խօսիւք: Արդ՝ ասոքիկ են գործք բոլոր եւ մասնաւոր առաքիւնութեան եւ չարութեան մարդոյ: Եւ սոցա ասէ: (Գովելի են գեղեցկքն. եւ պարսուելի գարշելիք:) Այս երրորդ գլուխն: Չորրորդ գլուխն թէ՛ զի՞նչ Է գովութիւն առաքիւնութեան: Գիտելի Է՝ զի բազում գովութիւն դնեն վարդապետք եկեղեցւոյ: Չոր սակաւ ասացից տասն գլխով: Նախզի՛ ամենայն առաքիւնութեան պատճառ Աստուած Է. որպէս ամենայն չարեաց պատճառ սատանայ Է: Չի Աստուած միայն ներգործէ ի մարդն զառաքիւնութիւն որպէս ասացաւ. Յաւատ. Յոյս. Սէր. Խոհեմութիւն.

Արիութիւն. Ողջախոհութիւն. եւ Արդարութիւն: Որպէս ասէ առաքեալն. (Աստուած է որ տայ ձեզ զկամիլն եւ զառնելն:) Եւ տէրն ասէ. (առանց իմ ոչ ինչ կարէք առնել:) Երկրորդ՝ զի ամենայն մարդկան՝ զամենայն մարմնական բարս տայ Աստուած արդարոց եւ մեղաւորաց. ըստ այնմ, (ծագէ զարեգակն. եւ ածէ անձրեւ չարաց եւ բարեաց:) Իսկ զառաք ինութիւնս՝ միայն արդարոց տայ. ըստ այնմ, (ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն երկնից:)

Երրորդ գովութիւն. զի վարձ առաքիւնութեան՝ նոյն ինքն Աստուած է որ ետ զնա. ըստ առաքելոյն. (զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ եւ այլն:) Զորրորդ գովութիւն. զիի առաքիւնութիւնն բարի է ըստ ինքեան. զի առաքիւնութիւն է՝ բարի ունակութիւն մտաց: Չի որպէս բարի է անդն որ մերձ է քաղաքին. այսպէս առաքիւնութիւն որ ի ներս ի հոգին է: Հինգերորդ՝ պատուական է համեմատեալ առ այլ բարիս. որպէս առաքեալն գրէ առ եբրայեցիս. (առաւել բարի է շնորհօք հաստատել զսիրտս:) Վեցերորդ՝ պատուական է ըստ գործոյն. զի բարի առնէ զգործս մարդկան եւ վարձատրելի. զի ոչ լին գործն վարձատրելի, եթէ ոչ առաջ գայ ի յառաքիւնութենէն. որպէս ասէ Սաղմոսն. (զամենայն զոր ինչ արասցէ՝ յաջողեսցի նմա:) Եօթներորդ՝ պատուական ըստ փոփոխման. զի ի գայլոյն գառն առնէ. եւ գլխաւորն դարձուծցանէ ի լոյս. եւ զչար մեղացն՝ ի բարի շնորհաց փոփէ: Եւ այս նշանակեցաւ, յորժամ զջուրն ի գիւնի փոխեաց Քրիստոս: Ութերորդ պատուական է՝ զ գանազանէ զորդիսն Աստուծոյ յոր դուրս սատանայի. ըստ այնմ, (յայսմ ծանկեցն ամենեքեան թէ իմ աշակերտք էք՝ թէ սիրիցէք զմիմեանս:) Իներորդ՝ պատուական է ըստ օրհակի. զի ամենայնի սուրբք՝ ջան եղեալ էին առաքիւնութեանց պարապիլ: Չի ի յաբել անմեղութիւնն գովի: Իյաբրահամ հնազանդութիւնն: Իյովսէփ ողջախոհութիւնն. Ի Մովսէս հեզութիւնն: Ի Ղաւիթ խոնարհութիւնն, եւ յայլսն այլ իմն: Տասներորդ՝ այնչափ մեծ է պատուական առաքիւնութիւնն՝ որ մեր Քրիստոս առնէր եւ ուսուցնէր. ըստ այնմ, (ուսարուք յինէն՝ զի հեզ եւ խոնարհ սրտիւ:) Եւ այլ բազում է գովութիւն եւ գեղեցկութիւն առաքիւնութեան՝ զոր աստ ոչ յերկարեմք: Եւ սոցա ամենին՝ ընդդէմ եւ ներհակ եւ մոլութիւնն. եւ պարսաւելի եւ զարշելի որպէս իսկիզբն ցուցաւ: Եւ փրկողին զմեզ ի չարեաց, ' տուողին մեզ ըզգանազան պարգ'ս բարեաց, Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, փառք ' գովութիւն ' բարեբանութիւն, ընդ հօր իւրում ' ամենասուրբ հոգւոյն. այժմ ' յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն խօհեմութեան. ի բան առակին: (Որ յաւելու ի գիտութիւն, յաւելու ի ցաւս:) Ժող. 1. 18: (Գլուխ Ժթ)

Չմարդն ստեղծ Աստուած հոգի եւ մարմին: Եւ չորս իրօք զհոգի զարդարեաց այսինքն, անձնիշխան կամօք. եւ բանիւ. եւ ցասմամբ. եւ ցանկութեամբ. Եւ յետ յանցանացն՝ զայսոսիկ ոչ եբարձ ի նմանէ եւ ոչ պակասեցոյց. վասն երկու պատճառի: Նախզի՝ մի քակտեսցի նկար պատկերին Աստուծոյ ի մարդոյն: Չի այսոքիւք ձեւանայ դէմ պատկերակցութեանն Աստուծոյ առմարդն: Երկրորդ՝ զի դարձեալ ինքնիշխան կամօք եւ իմաստությամբ եւ արիութեամբ եւ սիրով՝ պահեսցէ զպատուիրանն Աստուծոյ. եւ ելցէ յառաջին արդարութիւնն: Նմանապէս եւ այսոքիկ գոն եւ իդես այժմ, որպէս ի հրեշտակս. այլ զանազանին:

Չհրեշտակք ազատ կամօք ընտրեցին զբարին եւ սիրեցին. եւ հաստատեցան ի նա առանց փոփոխելոյ: Իսկ դեւք՝ անձնիշխան կամօք ընտրեցին զչարն, եւ սիրեցին եւ հաստատեցան առանց փոփոխելոյ: Իսկ մարդս՝ ունի զանձնիշխան կամսն փոփոխել ի բարին, ի չարն ընտրութեամբ բանին: Այլեւ ցասմամբն եւ ցանկութեամբն: Այս չորեքինս՝ Է դեռելս ի հոգ մարդոյն ի ստեղծմանէ եւ յաւիտեան: Սմին նման եւ զպատուհասն ընկալաւ ի մարմինն չորեքկնաբար: Այսինքն: Նախզի՝ ընդ մահու դատապարտեցաւ: Երկրորդ՝ զի յանցաւոր կեանս եմուտ: Երրորդ՝ զի անկարգ պատահման հանդիպեցաւ: Չորրորդ՝ զի հարկաւոր կրից եւ պիտոյից տաժանեցաւ: Արդ՝ եթէ Աստուծոյ բարեգործ եւ ընտիր մարդ եւս լինի, ի ներկայ յաւտեանս յայսցանէ ոչ կարէ զերծնիլ եւ ոչ փոփոխիլ. որպէս այն որ մեղաւոր է անձնիշխան կամօք՝ բռնութեամբ եւ ակամայ ոչ ձգի յարքայութիւն: Այսպէս եւ ոչ պատուհասն մեղաց բարձցի յամենայն մարդոյ ի յաւիտենիս յայս: Եւ այսմ կրկին է պատճառ: Նախզի՝ որպէս զանձն իշխանութիւնն իսկզբանէ ընկալաւ մարդն. նոյնպէս եւ զզպատուհաս մաղացն ի սկզբանէ կրեաց իսկոյն ընդ յանցանելն մարդոյն: Եւ այսպէս ընդ սկզբնական մեղացն՝ սկզբնական եղել պատուհաս մեղացն եւ յաւիտենց: Երկրորդ պատճառ՝ ասէ նոյն ինքն Սողոմոն եթէ, (արար Աստուած զպատուհասն անզերծանելի. զի երկիցեն ի նմանէ.) այսինքն, զի մի տեսեալ զհոգին անմարմին, եւ զմարմինն անկարօտ, անհնազանդ լիցին Աստուած: Որպէս նախնին Ադամ այսպէս տեսեալ զինքն, անհնազանդ եղել Աստուծոյ: Նոյնպէս եւ սատանայ անհնազանդ եղել Աստուծոյ, եւ անկաւ ի փառացն: Իսկ զմարդս արար կարօտ բնութիւն. զի երկիցեն յամենայն իրաց, եւ յերկիւղէն առ Աստուած ապաւինեցցին եւ հնազանդեցցին: Վասն որոյ ասէ առակն: (Որ յաւելու ի գիտութիւն, յաւելու ի ցաւս:) Պարտ է գիտել՝ զի կրկին է գիտութեան տեսակն. մին աստուածային. եւ միւսն մարդկային եւ երկրաւոր: Այն որ աստուածային եւ հոգեւոր գիտութիւն է՝ որքան առաւելու, խնդութիւն եւ ուրախութիւն է. ըստ այնմ, (յիշեցի զԱստուած, եւ ուրախ եղէ. եւ քաղցր են ի քիմս իմ բանք քո, քան զմեղր բերանոյ իմոյ.) որպէս եւ հրեշտակացն եւ սրբոցն որ յերկինս: Իսկ մարմնական եւ երկրաւոր գիտութիւնս՝ որքան յաւելու, ցաւ եւ տրտմութիւն առնէ: Եւ այս է պատճառն: Նախզի՝ զերկնաւորն յիմանալն եւ խորհիլն, միտքն լուսաւորի եւ պայծառանայ: Եւ զերկրաւորս խորհիլն, խաւարի եւ տգեղանայ: Երկրորդ՝ զի զանմարմինս եւ երկինս խորհիլն իւր բնական ընթերցումն է մտացն: Եւ յերկիրս ի վայր դիտել՝ քարշելով բռնադատի. որպէս տեսողական ակն մարդոյս յորժամ ի վեր հայի, հեշտանայ, եւ ի խորհին վայրս նայելով՝ դժուարի: Երրորդ՝ զի երկնաւորքն անփոփոխք են՝ հաստատի յուսով. երկիրս փոփոխական, յուսահատի իմացմամբն: Չորրորդ՝ զի յերկինս իմին միայն խորհի առ Աստուած, վասն որոյ ուրախութիւն եւ խնդութիւն հեղանի ի սիրտս մարդոյ առ ժամայն: Իսկ յերկրաւորս ի բազում հոգս աշխարհի, եւ ի պատրանս մեծութեանց ցրուի եւ տարածի. վասն այն ցաւի եւ տրտմի: Հինգերորդ՝ զի կրկին է իմացումն: Նախ առանձին պարզ ըստ ինքեան տեսանէ զամենայն ինչ. այսպիսիս լոյս կոչի եւ լուսաւոր: Եւ երկրորդ՝ ի զգայ արանս խառնել եւ տեսանել. աչօք զգոյն. ունկամբ զձայն. եւ զայլսն. ըստ կարգի. այսպիսի տեսութիւնս խառնեալ եւ թիրեալ՝ խաւար կոչի. որ զգայութիւնս է կապեալ եւ հեշտացեալ: Արդ՝ այն որ առանձին պարզ տեսութիւն է՝ խնդութիւն եւ

ուրախութիւն ծնանի. իսկ որ թիրեալ եւ շարամանեալ է ընդ զգայութիւնս՝
ցաւ է հոգւոյն եւ կսկիծ եւ դառնութիւն. գորմէ ասէ. (Որ յաւելլու ի
գիտութիւնս՝ յաւելլու ի ցաւս:) Դարձեալ եւ այսպէս տեսանի միտք բանիս որ
ասէ: (Որ յաւելլու ի գիտութիւնս՝ յաւելլու ի ցաւս:) Նախ առ մեզ. յորժամ
յաւելլումք ի գիտութիւն ուսման, ի քննութիւն եւ ի խոկումս, եւ ի յիշեցումս
նորին ի բազում եւ առաւել հոգ վասն ուսեալ իրաց եւ ուսանելոյն: Երկրորդ՝
վասն այլոց. յորժամ քննեմք զբարիս եւ զվարս մարդկան բազում եւ
զանազան, եւ ըստ զանազանութեան նոցա խրատ եւ ուղղութիւն հոգամք ի
միտս մեր, բազում խորհրդոց պետք են: Որպէս բժիշկքն որք զանազան
ցաւոց՝ զանազան սեղանիս զմտաւ ածեն: Երրորդ՝ յորժամ անկար գացեալ
տեսանեմք զմարդիկ ի զանազան բարիս դժուարաշարժ, եւ դիւրաշարժ ի
չարիս, յայնժամ վշտանամք եւ տրտմիմք ի մեզ. ըստ այնմ, (տրտմութիւն
կալաւ զիս իի մեղաւորաց. եւ ոյք թողին զօրէնս քո:) Չորրորդ՝ յորժամ
յամառին ի մեղս, եւ խստանան սրտիւք, զի սովորութիւն է չարաց՝ յետ
խրատու եւ յանդիմանութեան՝ յանդգնիլ եւ յամառիլ ի չարիս. որպէս Տէրն
եսես զկուրութիւն հրէիցն՝ տրտմեցաւ եւ ելաց ի վեր նոցա: Հինգերորդ՝
յորժամ ոչ լսեն ուղղութեան խրատուն հեշտացեալք ի չարիս եւ սովորեալք,
յայն ժամ զօրութիւն բանին ասողի տկարանայ եւ ոչ ներգործէ. վասն որոյ
առաւել ցաւի: Որպէս թէ ոք զիրամանս մեծ մարդոյ արհամարիէ, եւ նա
ցաւի վասն անարգութեան բանին իւրոյ: Վեցերորդ՝ որքան իմաստուն է
մտօք եւ առաւել կարեկից, տեսեալ զչարիս մարդկան եւ զպատուհաս
մեղաց նոցա, վշտակցի ի սիրտս իւր վասն նոցա: Եւ այսպէս իմաստունն
առաւել ցաւի վասն չարաց քան զտգետն: Չոր օրինակ՝ յեզր ծովուն
կանգնեալոք՝ տեսանէ զնաւն ի մէջ ծովուն ալեկոծեալ եւ ընկղմեալ,
վշտանայ եւ ճմլի հոգին բնական բարոյիւքն. որպէս նոքա որք ի նաւին
մարմնով վշտանան. եւ նա հոգւով: Այլ որ ի բացեայ է՝ եւ ոչ տեսանէ զնաւն,
ոչ վշտանայ. նոյնպէս եւ տգետն ոչ վշտանայ. ոչ վասն ինքեան, եւ ոչ վասն
այլոց: Այլ իմաստունն տեսեալ վշտանայ վասն այլոց որ մէջ ալեաց մեղաց
աշխարհի ծփին. եւ կամին ընկղմիլ դժոխս. եւ ոչ լսեն եւ ոչ գան
նաւահանգիստն արդարութեան: Այսպէս եւ իմաստունն ցաւեր. եւ
մարգարէն Դաւիթ տրտմեր. եւ ամենայն մարգարէքն սուգ ունէին վասն
աշխարհի. եւ սգոյ հանդերձ մաշկ եւ այծենի զգետուին: Դարձեալ՝ մեղաւոր
մարդն որ անգետ է եւ անզգայ՝ ոչ զգայ զճանրութիւն մեղաց. որպէս խիստ
հիւանդն ոչ գիտէ զցաւն: Իսկ որ իմանայ զճանրութիւն մեղացն՝ եւ ի միտ
ածէ զցաւ եւ զերկիւղ տանջանացն, եւ ի յինքն բերէ զգործս
ապաշխարութեան, այնպիսին գիտութեամբն յառաջութիւն եւ լաւութիւն
փոխի եւ բժշկի: Դարձեալ՝ որք յաւելլուն ի շնորիս ինչ գիտութեան՝ եթէ
վարդապետութիւն, եթէ քահանայութիւն, կամ այլ ինչ, պարտ է յարգել
զքանքար շնորհացն: Ապա եթէ ի ծովութեան վարշամակն ծրարէ զինչ եւ
առեալ լինի շնորիս յԱստուծոյ, այնպիսին գիտութեամբ մեցանչէ. եւ որ
գիտութեամբ մեղանչէ՝ առցէ սաստիկ պատուհաս: Չայն ասէ (որ յաւելլու ի
մեղս գիտութեամբ՝ յաւելլու ի ցաւս անձին զսաստիկ պատիժն:) Դարձեալ՝
(գիտութիւն հպարտացուցանէ ասէ առաքեալն. այլ սեր շինէ:) Չի պարտ է
իմաստնոց (կոխել զամենայն բարձրութիւն հպարտութեան. եւ գերել
զամենայն միտս ի հնազանդութիւնն Քրիստոսի:) Այլ պարտ է նախ յինքեան
ստանալ զհնազանդութիւն. եւ ապա զայլս ուսուցանել. այն է որ սիրով շինէ:

Իսկ որ հպարտանայ ի գիտութիւն իւր, այնպիսին տգետ է եւ ստանայի նման. որ գիտութեամբ հպարտացաւ եւ կործանեցաւ: Եւ այսպէս հպարտութիւնն ցաւ է եւ ախտ, եւ կործանիչ հոգւոյն: (Եւ Տէր է ամբարտաւանից հակառակ եւ մրցակից:): Չայնմանէ ասէ: (Որ յաւելու ի գիտութիւն հպարտութեան, յաւելու ի ցաւս եւ ի կորուստ անձին իւրոյ:): Դարձեալ՝ վասն հերձուածողաց ասէ. զի նոքա որքան յաւելուն յիմաստս գիտութեան, յաւելուն ի ցաւս կորստեան անձանց: Չոր օրինակ՝ ախտացեալ որովայն՝ զառաջարար կերակուրն փոխէ ի մաղձ դառնութեան, եւ յաւելու ցաւն: Նոյնպէս եւ հերձուածոյն օրօստօրէ ուսեալ ի սուրբ գրոց զբանս սրբոյս, թիրէ ի միտս իւր, եւ մոլորի հետ խորհրդոց մտաց իւրոց ընթացեալ: Եւ զառաջին չորեքեան դասս առ ինքն ժողովէ. այսինքն, անգետ եւ անզգայ. զի անզգամութեամբ եւ տգիտութեամբ զհերձուածս. եւ նա է կամաւ կորացեալ եւ թիրեալ յուղղութենէ. եւ նա է հպարտացեալ ի գիտութիւնս իւր. որով խօսի զանազան հերձուածս պատիր եւ քաղցր բանիւք. եւ այնու հաւանել առնէ զբանս իւր: Չի պատիր եւ խաբեբայ բանիւ՝ զամենայն լսելիս որպէս քաղցկեղ ճարակէ. եւ յինքն փոխէ. եւ քաղցրութեամբ որովօք բանին՝ զմիտս հաւանէ ցուցանէ եւ հաճի ի բանն: Եւ վասն քաղցրութեան եւ մոլեկան խօսիցն՝ առակօղն զբանս նոցա ի մեղր առակէ ասելով: (Մեղր շատ ուտելն՝ չէ բարուք:): Եւ քանզի զանազան են գիտութիւնք. որպէս զանազան են մեղերք: Չի են որք վնասակարք են. եւ են որք շահարարք: Բանք սուրբք եւ ուղղափառք՝ շահարար, մեղր առակին. ըստ այնմ, (քաղցր են ի քիմս իմ բանք քո, քան զմեղր բերանոյ իմոյ:): Իսկ բանք հերձուածողացն՝ ի վնասակարն: Եւ այս վասն բազում պատճառի: Նախզի՝ որպէս այն մեղր քաղցր է ի ճաշակ, եւ չարչարէ զմարմինն է եւ խելագարէ. նոյնպէս եւ բանք հերձուածողացն՝ որպէս ասէ առաքեալն. (քաղցրաբանութեամբ եւ օրինութեամբ պատրեն զանձինս անմեղաց:): Եւ յառակն ասէ: (Մեղր կաթի ի շրթանց կնոջ պոռնկի. բայց յետոյ դառնանայ քան զլեղի:): Յայս միտս եւ Դաւիթ ասէ. (կակուղ էին բանք նոցա քան զձեթ, եւ այլն:): Եւ Տէրն ասէ. (հանդերձիւք ոչխարաց գան, եւ ներքոյ են գայլք յափշտակօղք:):

Երկրորդ՝ զմեղեր ճաշակն առնուլ պարտ է եւ ընտրել. եւ շատ ուտելն չէ բարի ասէ. այսպէս եւ հերձուածողաց բանից չէ բարի աշակերտիլ մտօք. այլ այսչափ միայն ընթեռնուլ՝ զի ընտրեսցէ ցուղղափառին եւ զնոցայն: Եւ զի լուծումն յարմարեսցէ ընդդէմ: Ըստ այնմ, (տուր պատասխանի անզգամին ըստ նորա անզգամութեանն:): Երրորդ՝ զի որպէս վայրին նման ընտանի մեղուին կազմէ զբջիչսն եւ ժողովէ ի ծաղկանց. այսպէս եւ հերձուածոյն զբանն յարմարեն ըստ ուղղափառացն, ժողովելով զվկայութիւն սրբոց գրոց. եւ կերպարանեն ի կերպ ճշմարտիցն. որպէս ասէ առաքեալն. (ունին զկերպարան գիտութեան:): Չորրորդ՝ ի մեղրն ոչ խառն աղ. նոյնպէս հերձուածող բանն՝ ոչ ունի աղ. այսինքն, զշնորհս հոգւոյն սրբոյ. ըստ այնմ որ ճշմարտիցն ասէ. (ամենայն բանք ձեր իբրեւ աղիւ համեմեալ. լիցի. զի տացէ շնորհս լսողացն:): Եւ յիրաւի, (զի շնչաւոր մարդ՝ ոչ ունի զհոգին Աստուծոյ. զի յիմարութիւն է նմա. (զի սուրբ հոգին իմաստութեան փոխիցէ նենգութենէ ասէ Սողոմօն:): Յինգերորդ՝ զի մեղրն, կամ զանգեալն ի նմանէ՝ ոչ մտանէր ի տաճարն պատարագ: Այսպէս եւ հերձուած բանք՝ մի մտցեն յեկեղեցի. եթէ երգք, եւ կամ այլ ինչ. (զի ծառ չոր՝ պտուղ չար առնէ որպէս ասէ Տէրն:): Այս քան համեմատութիւն հերձուածոց բանից ընդ մեղեր:

Իսկ բանք սուրբք՝ առակին ընտանի մեղեր: Նախգի՝ մեղրն մանանայ է յերկնից. եւ բանք աստուածշունչք՝ ի հոգւոյն սրբոյ. ըստ Պետրոսի որ ասէ. (ոչ թէ ըստ կամաց տուան մարգարեութիւնք, այլ ի հոգւոյն սրբոյ կրեալք խօսեցան մարդիկք յԱստուծոյ:) Եւ Պօղոս ասէ թէ՝ (մեզ յայտնեաց հոգւովն սրբովն:) Երկրորդ՝ զի ի զանազան ծաղկանց պարզն հաւաքի: Եւ Դաւիթ ասէ. (բանք Տեառն՝ ընտրեալ են քան զարծաթ. սրբեալ եւ պարզեալ եօթնապատիկ ի հողոյ.) Եւ վարդապետք եկեղեցւոյ խոսանէ հաւաքեն: Երրորդ՝ զի քան զամենայն որակս համոց քաղցու՝ քաղցր է ճաշակ մեղերն: Այսպէս եւ զիմաստութիւնս սուրբ բանից՝ Դաւիթ համեմատէ ասելով. (քաղցր է նա քան մեղու խորիստի:) Եւ պղատոն գրէ առ Թեոդորոս երկրաչափ: (Ով Թեոդորէ՝ այսպիսի իմն բարի պարզեք որպպէս իմաստութիւնս՝ յԱստուծոց ոչ երբեք եկն առ մարդիկ, եւ ոչ երբեք գալոց է:) Չորրորդ՝ զի բժշկութիւն է վիրաց եւ ցաւոց. որպէս ասէ առակն. (մեծամեծք եւ տնանկք՝ ի բժշկութիւն մատուցանեն:) Այսպէս եւ իմաստուն բանք՝ բժշկութիւն են հոգւոյ եւ մարմնոյ. որպէս ասէ առակն. (են որք բանիւ խոցեն որպէս սրով. բայց լեզուք իմաստնոց բժշկեն:) Եւ դարձեալ ասէ. (բժշկութիւն լեզուի ծառ կենաց:) Յինգերորդ՝ զի մեղերքն ըստ որակի գունոցն՝ զանազան են. այլ ըստ որակի համոցն՝ մի ենոյն: Այսպէս եւ բանք սրբոք՝ թեպետ ըստ շարամանին այլեւ այլ ունին զկարգն. այլ ամենայն ըստ մի դիտաւորութեան են, ի յուսումն մեզ եւ խրատ ուղղութեան ըստ առաքելոյ: (Ամենայն գիրք աստուածաշունք եւ օգտակարք՝ ի խրատ են մեզ եւ ի յուսումն:) Այսքան բաղդատութիւն սուրբ բանից ընդ մեղեր: Իսկ որ ասէ առակն: (Թէ հարկանես զանզգամն ի մեջ ատենի, ոչ կարես մերժել զանզգամութիւն նորա:) Անզգամն տգետն է եւ անպարիշտն, եւ խորամանկն եւ հերձաւածոյն: Եւ ամենայն մարդ որ ի բանական մասն ունի զչարութիւնն՝ անզգամ կոչի: Եւ այս անզգամն ոչ ուղղի ի մոլորութենէ վասն տասն պատճառի: Նախգի՝ բանն վերին մասն է հոգւոյն. եւ ոչ ունի խրատիչ եւ ուղղիչ. որպէս ինքն ուղղէ զցասումն եւ զցանկութիւնն. վասն այն ոչ զղջանայ ի մեղացն: Չոր օրինակ՝ առաջնորդն եւ իշխանն զհնազանդեալս իւր խրատէ. այլ ինքն յորժամ սխալի, ոչ ուղղի. զի ոչ ունի ի վերոյ ինքեան խրատօղ: Երկրորդ՝ թէ եւ այլ ոք խրատէ զանզգամն՝ ոչ լսէ. զի զինքն ուղիղ գիտէ քան զքեզ որ խրատես: Երրորդ՝ զի իւր թիւրն՝ իւր ուղիղ թուի. եւ քո ուղիղն՝ նմա թիւր եւ մոլար երեսի. վասն այն ոչ լսէ քեզ. որպէս ասեն իմաստունք թէ՝ խենն՝ իւրն խելօք թուի. վասն այն զխելս ոչ ուսանի: Չորրորդ պատճառ որպէս շիլ աչքն զինչքն ոչ տեսնու. այլ զայլսն. նոյնպէս եւ անզգամն զիւր պակասն ոչ իմանայ. այլ զայլոցն. ըստ այնմ, (զշիւղ ընկերին տեսանես՝ եւ ի քում ականգ զգերանդ ոչ նշմանես:) Յինգերորդ՝ որպէս նաա որ իմաստուն է՝ ի սրբութիւնն է հաստատեալ խոհականան. նոյնպէս եւ անզգգամն ի չարութիւնն: Վեցերորդ որպէս սովորութիւնն զմարմինն ամրացուցանէ ի գործն. նոյնպէս զհոգին հաստատէ կամքն եւ իմացումն: Եօթներորդ՝ զի անզգգամին լոյսն խաւարեալ է. եւ չունի զխիղճ մտացն. վասն այն ոչ զղղջանայ: Ութերորդ՝ զի հաւանութիւնն որ է հաւատն եւ յոյսն եւ սերն՝ պակասեալէ՝ նմանէ. վասն այն ոչ լսէ եւ զղջանայ. զի ոչ ունի ակն բարեաց եւ վարձուց. եւ ոչ սիրէ զԱստուած: Իններորդ՝ զի խոհեմն այն է՝ որ զծածուկն տեսանէ. եւ ի հեռուն նայի որպէս ի հանդերձեալն: Իսկ անզգգամն՝ զվերին երեսին տեսանէ եւ զմերձակայս, որ է հեշտութիւն

աշխարհիս. վասն այն հեռու երկիրդն ոչ երկնչի, եւ ի պատժոցն Աստուծոյ: Տասներորդ՝ զի անզգամս արհամարիէ զօրէնս Աստուծոյ եւ զԱստուած. եւ ոչ ունի օգնականութիւն. ոչ յօրինաց, եւ ոչ յԱստուծոյ. եւ ոչ ի մտացն ի ներքուստ, եւ ոչ յարտաքուստ յումեքէ. վասն այն թէ հարկանես՝ ոչ զգայ. եւ ոչ երկնչի եւ ոչ ամաչէ: Այլ զայսպիսի անզգամս՝ հանճարով եւ կակուղ բանիւ պարտ է ածել փոքր փոքր ի հաւանութիւն. որպէս առաքեալն զազգս հեթանոսաց՝ որք անզգամեալք էին զհետ կռապաշտութեան: Որեւ Քրիստոս Աստուած՝ տացէ մեզ իմաստութիւն եւ հաւատ եւ յոյս եւ սէր. զի երթիցուք զհետ օրինաց նորա. եւ զկամսն Նորա ամենլով, ժառանգեսցուք զկեանս յաւիտենականս: Եւ Քրիստոսի Աստուծոյն մերոյ փառք յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ իմաստութեան ի բանն որ ասէ: (Երանեալ է այր՝ որ եգիտ զիմաստութիւն:) Առակ. 3. 13: (ԳԼՈՒԽ Ի)

Իմաստասիրութիւնն բաժանի ի տեսականն՝ ի գործնականն ըստ փիլիսոփային: Եւ ներգործականն է առաքիւնութիւն՝ որ մարմնով կատարի: Եւ տեսական իմաստութիւնն՝ մտօք ներգործի: Եւ այն որ գործնականն է՝ յերեք բաժանի: Ի բարոյականն. Ի ստացականն. եւ Յաստուածայինն: Բարոյականն է՝ որ բնական է ի մեզ. որպէս Խոհեմութիւն. Ողջախոհութիւն. եւ արդարութիւն: Եւ սոքօք զարդարեմք զբարս մեր: Այլեւ կոչ բարոյական. զի եւ յանասունս երեւին սոքա. որպէս ուղան խոհեմ. առիժն արի. տատրակն աղջախոհ. արագիլն արդար: Իսկ ստացական առաքիւնութիւն է՝ յորժամ մեր կամաւ ստանամք զայս եւ գործեմք. այսինքն, զարդարութիւն. ողջաախոհութիւն. զպարիս. զաղօթս. զողորմութիւն. սոքօք զտունն եւ զքաղաք կառավարեմք: Այլեւ կոչի ստացական՝ զի գիտեմք զպատճառն եւ գործեմք զարդարութիւն: Չապս. զաղօթս. զողորմութիւն. թէ վասն շինութեան. թէ վասն եղբայրսիրութեան, թէ վասն մեր հոգւոյս, եւ այլն: Այսոքիկ ստացական եւ մարդկային առաքիւնութիւնք կոչն: Իսկ աստուածային առաքիւնութիւն է՝ Յաւատն. եւ Յոյսն. եւ Սէրն: Եւ սոքա կոչին աստուածայինք. զի ի շնորհացն Աստուծոյ է հաւատն եւ յոյսն եւ սէրն. այլեւ առ Աստուած ունին զդիտաւորութիւնն: Չ հաւատն ի յԱստուած. եւ յուսան յողորմութիւն նորա. եւ սիրեն զն: Եւ սոքա առաքիւնութիւն վասն այն կոչին՝ թեպէտ ի միտս են ենթակայցեալ. այլ գործով կատարին եւ տեսակաւորին. զի առանց գործոց՝ հաւատն եւ յոյսն եւ սէրն՝ անտեսակք են, եւ ոչ երեւին. (եւ հաւատք առանց գործոց մեռեալ են ասէ առաքեալքն:) Նոյնպէս եւ յոյսն եւ սէրն անկատար են առանց գործոց: Եւ սոքա առաքիւնութիւնքս: Առաաջինն զմեզ առ ինքեան կարգաւորէ: Երկրորդն զմեզ առ ընկերս: Եւ Երրորդն զմեզ առ Աստուած կարգաւորէ: Այս գործնական իմաստութիւնն է: Իսկ տեսականն՝ բազում եղանակաւ է իմաստութիւն. որ առ մեզ ի յեկեղեցիս է եւ պիտանի: Առաջին իմաստութիւնն է Աստուած. եւ իմաստութիւն կոչի՝ զի իմացական մտաց է հաւատալի. եւ ոչ զգայութեանցս է հասանելի: Չի ոչ աչօք տեսանի. եւ ոչ ձեռք 202ափի, այլեւ. այլ իմացմամբ մտաց պարտ է հաւատալ՝ (թէ է Աստուած՝ եւ որք ինդրեն զնա՝ լինի պարզեւատու:) Այլեւ կոչի իմաստութիւն՝ զի նմանէ իմաստնաց ամենայն իմանալ եւ զգալի արարածք, ըստ որպիսութեան իւրեանց եւ կարողութեան: Երկրորդ՝ իմաստութիւն կոչիի եւ Քրիստոս ըստ առաքելոյն.

(Քրիստոս Աստուած զօրութիւն, եւ Աստուած իմաստութիւն:) Նախզի՛ նովաւ եղեն ամենայն արարածք. երեւելիք եւ աներեւոյթք: Այլեւ կոչի իմաստութիւն՝ զի եղեւ մեզ իմաստութիւն եւ արդարութիւն եւ փրկութիւն. ըստ այնմ, (զոր լուայ իի հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ:) Երրորդ՝ կոչի իմաստութիւն եւ Յոգին սուրբ. ըստ եսայեայ. (հոգիի իմաստութեան եւ գիտութեան:) Եւ կոչի իմաստութիւն. նախզի՛ Աստուած է իմանալի՛ եւ մտաց տեսանելի. այլեւ լնու զմեզ շնորհօք. եւ լուսաւորէ գիտութեամբ եւ իմաստութեամբ. ըստ այնմ, (նա ուսուցէ ձեզ զամենայն զոր ինչ ասացի ձեզ:) Չորրորդ՝ իմաստութիւն է եւ երկնաւոր կենացն հաւատ եւ յոյս. յորյորդորէ առաքեալն. (զվերինն խորհիլ ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ:) Եւ կոչի սա իմաստութիւն. նախզի՛ հաւատով եւ յուսով տեսանի այժմ. եւ ապա զի իմաստունք ժառանգեն զերկնաւոր կեանսն: Հինգերորդ՝ իմաստութիւն է եւ բար գործոցն խոկումն եւ ընտրողութիւն. որպէս ասէ Դաւիթ. (յօրէնս Տեառն են կամք նորա. եւ յօրէնս Տեառն խորհեցի նա ի տուն եւ ի գիշերի:) Եւ կոչի սա իմաստութիւն. նախզի՛ խորհիմք զօրէնս Աստուծոյ. եւ ընտեմք զչարն եւ զբարին միմեանց. եւ ապա կատարեմք: Այլեւ հաւատով եւ յուսով ակնունիմք փոխարինացն. վասն այն կոչի իմաստութիւն: Վեցերորդ՝ իմաստութիւն կոչի հելլենացոց քննութեան բնութիւնն երկնի եւ երկրի. ժամանակաց եւ ամենայն գոյից: Եւ կոչի սա իմաստութիւն. նախզի՛ իմացմամբ եւ մտօք ներգործի. այլեւ այսու իմացմամբ՝ ժամանեն վերին իմաստութեան Աստուծոյ: Որպէս նկատումն Արիստոտելի. աստուածաբանութիւնն Պղատոնի. եւ այլոցն: Նաեւ այսու բնական քննութեամբս՝ ժամանեցին կատարելութեանց: Նախ՝ առ իմացումն Աստուծոյ որպէս ասացուք: Երկրորդ՝ ժամանեցին փութով ի հաւատն Քրիստոսի. որպէս աթենացիիք քարոզութեամբ առաքելոյն: Երրորդ՝ ժամանեցին եւ ազատութեան հոգոց, յորժամ զնաց Քրիստոս ի դժոխս եւ քարոզեաց գերելոցն, եւ նոքա հաւատացին եւ ելին: Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ ի կենդանութեան ոչ ունէին հաւատ, անդ որպէս հաւատացին: Ասեմք եթէ՝ նոքա զշնորհաց հաւատն ոչ ունէին. այլ բնական իմացմամբ ծանեան զԱստուած. որով ի դժոխսն հաւատացին: Այլեւ ունէին զբարոյական առաքինութիւն. այսինքն, խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն, եւ արդարութիւն: Այսքան, մինչ իմաստութիւն զխոկումն մահու ասացին. վասն որոյ ազատեցան. Եւ թէ ոք ասիցէ՝ վասն եր կոչի սա երկրաւոր՝ շնչաւոր՝ եւ դիւական: Ասեմք եթէ՝ օն անդր ի բաց տար զմիտդ: Չի մաստութիւն յԱստուծոյ է. եթէ բնական, եւեթ շնորհական: Այլ կոչին երկրաւոր շնչաւոր եւ դիւական, յորժամ այն իմաստութեամբն, զերկրաւոր հեշտութիւնս իմաստասիրեն. եւ գտանեն զկախարդութիւնս եւ զայլ չարիս: Իսկ յորժամ զերկնաւորն խոկան եւ քննեն, ան ժամանեն եւ լինին երկնաւոր եւ սրբոյ եւ գիտութեամբ: Չորօրինակ՝ մի եւ նոյնն են միտք մարդկան եւ զգայարանք. յորժամ ի բարին ուղղեմք լինին բարի. եւ ի չարն սովորեալ, լինին չար: Արդ՝ այսոքիկ են իմաստութիւնք տեսական եւ գործնական որպէս ասացաւ. վասն որոյ ասէ իմաստունն: (Երանեալ է այր՝ որ եգիտ զիմաստութիւն:) Գիտելի է՝ զի եւ աստ տասն եղանակաւ զովէ զիմաստութիւնն որ ըստ Աստուծոյ: Նախզի՛ երանելի առնէ զգիտող իմաստութեան. վասն զի ամենայն կեանքս անցաւորք են, եւ որ ի սմա հեշտութիւնք: Իսկ իմաստութեամբն՝ ի յանցանց կեանս յուսայ եւ խոկայ, յիրաւի երանէ զնա. զի երանութեանց մասին

արժանացաւ: Երկրորդ՝ ասէ: (Մահ կանացուն զհանճար:) Այսինքն, արուեստ եւ հնար անմահութեան մահկանացու մարդոյս՝ իմաստութիւնն է: Չի հաւատք եւ գործք յանմահութիւն առաջնորդեն մեզ. այլեւ անմահութիւն կենդանի Զրիստոս է, յորժամ գտանեմք զնա: Երրորդ՝ ասէ: (Լաւ է զվաճառն զայն գտանել, քան զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ:) Այսինքն, զի գանձն ի մահու ոչ թափէ զմարդն. այլ իմաստութիւն փրկէ ի մահուն յաւիտենից. ըստ այնմ, (ոչ օգնեն ինչք յաւուր բարկութեան. այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ:) Եւ դարձեալ՝ զի մերձ ի մահ եկեալ գանձն՝ որպէս աղբ անպիտան լինի. այլ իմաստութիւն Զրիստոսի՝ զանճառ բարեաց ժառանգութիւնն տայ մեզ. ուրեմն լաւ է քան զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ: Իսկ զի վաճառ ասէ. այն է որ ասէ. (սման է արքայութիւնն երկնից գանձի ծածկելոյ յագարակի. զոր գտեալ մարդոյ, վաճառեաց զամենայն եւ գնեաց զնա:) Գանձ է Տէր մեր Յիսուս Զրիստոս ծածկեալ յագարակի մարմնոյն. եւ գանձ կոչի: Նախ՝ վասն պատուականութեանն: Երկրորդ՝ զի զստացօս իւր փարթամացուցանէ: Երրորդ՝ զի փրկանք եւ գին եղեւ մեզ. ըստ այնմ, (գանձիւք եղիցի փրկութիւն խոցա:) Եւ այսպէս գտանեմք զնա վաճառեալ զամենայն ինչս մեր. այսինքն թէ հոգեւոր՝ հաւատ յոյս եւ սէր. եւ մարմնաւոր՝ արևն եւ մարմին. նաեւ զհեշտութիւն եւ զինչս եւ զհայրենիս եւ զմեծութիւնս եւ զայլ փառս տալ. եւ ապա գտան իմաստութիւնն այն. նաեւ պահօք՝ աղօթիւք՝ արտասուօք՝ եւ ալ չարչարանօք: Եւ այսպիսիքս մեզ դժարին թիւն. վասն այն յորդորէ զմեզ: (Լաւ է զվաճառն զայլ գտանել ասէ:) Չորրորդ՝ ասէ: (Ամենայն ինչ որ պատուական է՝ չարժէ զնա:) Այսինքն, թէ պատուական ինչ լինի աշխարհի, անապականութիւն ոչ կարէ տալ. այլ միայն իմաստութիւնն: Եւ դարձեալ՝ իմաստութիւնն անհակառակ բարի է. զի գանձոյ եւ մեծութեան Գ հակառակ գոյ: Նախ՝ գողք եւ աւազակք գողանան: Երկրորդ՝ իշխանք բռնութեամբ զրկեն զինչսն: Երրորդ՝ փոփոխումն ժամանակաց: Իսկ իմաստութեանն հակառակ ոչ գոյ: Ոչ գողք գողանալ կարեն. եւ ոչ բռնաւորք յափշտակել. եւ ոչ աղքատութիւն կամ հիւանդութիւն հանել կարեն: Չի իմաստունն թէ մեծանայ, զիտէ կարգաւորել. թէ աղքատանայ, (յԱստուած մեծանայ.) թէ առողջ է՝ զոհանայ զԱստուծոյ. փառաւորէ զԱստուած որպէս Յոր. թէ կեայ յաւելու յարդարութիւնն. թէ մեռան, անխիղճ զնայ աշխարհես. այսպէս գովելի է իմաստութիւնն. Յինգեբորդ զի ասէ. (Յայտնի է ամենեցուն, որք մերձին ի նա:) Այսինքն, որք հաւատով մերձենան, յայտնի է իմաստութիւն Զրիստոսի. եւ որք ոչ մերձենան, արհամարհեալ. (զի շնչաւոր մարդ՝ ոչ ընդունի զհոգին Աստուծոյ. զի յիմարութիւն է նմա.) զի ի կարծիս ձգէ յորժամ պատմենք զյարութիւն մեռելոց, եւ զհանդերձեալ կեանսն, եւ զայլսն: Դարձեալ՝ չորս ազգ մարդիկ արհամարհեն զիմաստութիւն: Նախ՝ տգետ հակառակին: Երկրորդ՝ ատեցօղքն արհամարհեն: Երրորդ՝ օտար արուեստքն դժարանան: Չորրորդ՝ հեշտասէր եւ շնչաւոր մարդիկքն: Վասն որոյ իմաստութիւնն ոչ յայտնի խոցա: Այլ իմաստութիւնն յայտնէ զիւր գեղեցկութիւնն այլոց իմաստնոց եւս սիրողաց. եւ որք ի նայ կրթին. եւ զհոգեւորն սիրեն: Վեցեբորդ զի ասէ: (Երկայն աւուրք ընդաջմէ. եւ փառք եւ մեծութիւն յահեկէ:) Ի յանհաւասար կեանս՝ զայս ոչ գտանեմք. զի ի փառաց սրբոյ բազում իմաստունք վրիպին. եւ անմիտք մեծանան եւ փառավորին. որպէս ասէ խոցա առակն. (ընդունայնութիւն ի ներքոյ երկնից. զի ոչ իմաստնոց հաց, եւ

ոչ հանճարեղաց մեծութիւն:) Ապա ուրեմն երկայն աւուրք՝ կեանքն է յաւիտենից. ըստ որում ասէ Քրիստոս. (եկայք օրհնեալք հօր իմոյ. ժառանգեցէք զկեանս յաւիտենականսս:) Փառք եւ մեծութիւն այն է որ ասէ. (փայլեսցին արդարքն իբրեւ զարեգակն:) Չայս իմաստունք այժմ հաւատով եւ յուսով ի միտս իւրենց խոկան. (զի գերեւելիսս ոչ գիտեն. այլ զաներեւոյթն ըստ առաքելոյն:) Իսկ աջ եւ ահեակ ասէ. աջ զհոգւոյն, եւ ահեակ զմարմնոյն փառսն: Այլ աջ է այն կեանքն. եւ ահեակ այս կեանքս, որր յուսով ուրախանայ: Եօթերորդ ասէ: (Ի բերանոյ նորա բղխի արդարութիւն եւ օրէն:) Որ է նոյն ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս. այլեւ իմաստունն միշտ զճմարիտ եւ զարդարն խօսի. զի գիտէ որ (ի բանից արդարանայ, եւ ի բանից պարտաւորի.) որպէս այն որ դաւանութեամբն արդարանայ. եւ ուրախութեամբն կորնչի: Այսպէս զամենայն բան ճմարիտ պարտ է խօսիլ ըստ առաքելոյն. (ճմարտութեամբ ասեմ ի Քրիստոս եւ ոչ ստեմ: Չի կորուսանէ Տէր զայնօսիկ՝ որք խօսին սուտ:) Ութերորդ որ ասէ: (Ճանապարհնը բարի է եւ ուղիղ:) Ճանապարհ է կեանս այս ի ծննդէն մինչեւ ի գերեզմանն: Նախզի՝ որպէս ճանապարհորդն միշտ յառաջ ընթանայ եւ ոչ ընդ կրունկն: Նոյնպէս եւ մեք՝ դեմ եղեալ ի գերեզմանս ընթանամք: Եւ որպէս ոտքն մի քան զմի յառաջ փոխին. նոյնպէս կամք եւ խորհուրդք մեր՝ երբեմն ի չար, եւերբեմն ի բար փոխն: Այսպէս տրտմութիւն եւ ուրախութիւն. ողջութիւն եւ հիւանդութիւն եւ այլն, մի զմի փոփոխեն: Եւ որպէս ճանապարհորդն որքան յերկարի՝ մօտ ուր երթալոցն իցէ. եւ հեռանայ ուստիել: Յայսպիսի կեանս որքան յերկարեմք ամօք՝ ի գերեզմանս մերձիմք: Եւ ի յայս ճանապարհս ոմանք զգւելով եւ զրկելով զաղքատս այսպէս գնան, եւ ի չարն արտեն: Եւ իմաստունքն հեզ եւ հանդարտ եւ սիրով առ ամենեսեան, եւ ի բարին ուղղին կեանսն յաւիտենից: Իններորդ ասէ: (Փայտ կենաց է ամենեցուն՝ որք պատսպարին ի նա. եւ որք յենուն ի նա՝ իբրզւ ի Տէր հաստատութեամբ:) Չիմաստութիւնն նմանեցուցանէ փայտին կենաց՝ որ տնկեցաւ ի մէջ դրախտին. զոր յետ յանցանացն հրաժարեցոյց զԱդամ ի նմանէ: Եւ նախ քան զյանցանս՝ հրամայեալ էր ուտել եւ ի կեանս փոխիլ: Նոյնպէս եւ հոգեւոր իմաստութիւնս որ է նոյն ինքն Քրիստոս եւ Սուրբ երրորդութեանն բան՝ եւ վասն խաչի եւ վասն յարութեան եւ այլոցն, նոցա որք անհաւատք են, յիմարութիւն է եւ տկարութիւն եւ մահ. վասն այն արգլել պարտ է ի նոցանէ: Իսկ որք հաւատով եւ իմաստութեամբ պատսպարին ի նա, իմաստութիւն է եւ կարողութիւն եւ կեանք: Վասն այն տալի է նոցա եւ կերակրելի. զի օգուտ է նոցա: Չի մի եւ նոյն իմաստութեան բանն՝ ոմանց յիմարութիւն է. եւ ոմանց իմաստութիւն. որպէս այն որ Քրիստոս ոմանց վեմ հաստատութեան, եւ ոմանց քար զայթակողութեան է. զի հաւատացեալքն կարգնին. եւ անհաւատքն գլորին: Այսպէս եւ իմաստութիւնն հոգեւոր՝ ոմանց կեանքն է. եւ ոմանց մահ: Եւ որպէս խաչին բան (կորուսելոցն յիմարութիւն, այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ.) նոյնպէս եւ իմաստութիւն: Պատսպարելն այն է՝ ո թիկամբն ամրանան ի պարիսպն: Եւ յենուլն է՝ որպէս ի վերայ գաւազգանի սրտիւք ի վերայ յենուն եւ հաստատին. եւ առանց գայ թակողութեան մնան: Նոյնպէս հաւատով ի յիմաստութիւնն ամրանմք. եւ յուսով նա յյեւնումք եւ զօրանամք. եւ հաւատով եւ յուսով զանմահ կեանս ըստանամք ի Տեառն մեր Քրիստոս հաստատեալք: Տասներորդ գովութիւն որ ասէ: (Աստուած իմաստութեամբ

հիմունս էարկ երկրի:) Եւ այսպէս գովելի է իմաստութիւնն: Չի աշխարհի իմաստութեամբ կանգնեցաւ. ապա ուրեմն պիտանի է ամենեցուն եւ կարի քաջ: Այլ իմաստութիւն է Տէր մեր Յիսուս Քրիստոս. գոր հայր Աստուած զիմաստութիւնն զայն՝ ի նորս արարչութեան հիմն եդ երկրի. այսինքն, սուրբ այնմ, (ահաւասիկ ես դնեմ, ի հիմունս սիօնի վեմ պատուական, գլուխ անկեն. եւ որ ի նա հաւատասցէ, մի ամաչեսցէ:) Եւ խորհրդով իւրով զրեկինս պատրաստեաց.) այսինքն, հոգւովն սրբով. զի (հոգի խորհրդոյ եւ զօրութեան ասէ մարգարէն Եսայի:) Չերկինս պատրաստեանց տեղի եւ հանգիստ սիրողաց իւրոց: (Յանճարով իւրով զանդունդս պատառեաց:) Այսինքն, զխորս գգիտութեան յայտնի արար. եւ կամ զանդունդս մեղաց ասէ. պատառեաց գծով աշխարհի նշանաւ խաչին. որպէս Մովսէս զաւազանաւ գծովն Կարմիր: (Եւ ամաք հոսեցին զանձրել:) Չի յետ տնօրէնութեանն՝ ամապով հոգւոյն արբին զանձրել իմաստութեան. եւ զհեղումն շնորհաց յերկիր տարածեաց. որպէս նախ ի վերնատունն յառաքեալսն: Եւ նոքօք ամենայն աշխարհ այնմ, (լցաւ երկի գիտութեամբ Տեառն իբրեւ զշուրս բազումս որք ծածկեն գծովս:) Արդ՝ այսքան մեծ եւ բարգաւաճել է գովութիւն իմաստութեանն. յիրաւի երանէ զնոսա, որք գտանեն զիմաստութիւն եւ զհանճար: Որոց ամենեցուն մեզ լիցի արժանաւորիլ շնորհաց իմաստութեան նորա.՝ մասնաւորիլ երկնային պարգ՛ացն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ վասն արիութեան՝ գործոյ. ի բանն որ ասէ: (Ի փոյթ մի վեհերոտք. հոգւով եռացեք:) Հռօմ. 12. 11: Կամ (Ով վատ երթ առ մրջիւնն:) Առակ. 6. 6: (Գլուխ ԻԱ)

Չվաստակ արիութեան գործոց ունիմք ի չորս իրաց յաստատեալ: Նախ՝ ի բնութենէս. զի բնականապէս մերկ եւ դատարկ ենք յամենայն բարեաց. ի մարմնաւորէն, եւ ի հոգեւորէն. զի ոչ ունիմք զգեստ բնական որպէս կենդանեաց. եւ ոչ գէն, եւ ոչ այլ ինչ: Նոյնպէս եւ ըստ հոգւոյն՝ ոչ ունիմք սրբութիւն, իմաբտութիւն, եւ ոչ այլ ինչ. այլ զամենայն յետոյ ստանամք. զսրբութիւն եւ զգիտութիւն հոգւոյ. զգեստս եւ զայլ պէտս մարմնաւոր: Եւ այսպէս ստեղծաք, զի գործով եւ աշխատութեամբ եւ զհոգւոյն առաքիւնութեամբ եւ կրթութեամբ: Երկրորդ՝ յայտ է ի սկզբանէ ի հրամանացն Աստուծոյ. զի յոր ժամ ստեղծ զմարդն, եդ ի դրախտին ասէ (գործել զնա եւ պահել) զի մի պարապ եւ անգործ մնացէ. եւ յետ յանցանացն ասէ. (քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց զամենայն աւուրս:) Արդ՝ նախ քան զյանցանելն եւ յետ յանցանացն՝ սկզբանական հրաման եւ օրէնք Աստուծոյ են ի վերայ մեր աշխատանքն եւ վաստակքն: Երրորդ՝ յայտ է ի խրատողաց սուրբ գրոց. որպէս ասէ մարգարէն: (Չվաստակս ձեռաց քոց կերիցես. երանի է քեզ եւ բարի եղիցի:) Եւ առաքեալն գրէ: (Որ արասցէ ոչ՝ կերիցէ մի:) Եւ ոյք ուտեն զհաց ցաւոց.) այսինքն է, դատարկութեամբ զայլոց հաց ուտելն՝ ցաւոց եւ վշտաց հաց է: Վասն զի յուտելն զայլոց վաստակ ամաչէ. եւ միտքն իւր ցաւի. եւ տուօղն վշտանայ: Վասն այսր պատճառի խրատեն զմեզ իւրաքանչիւրք վաստակին եւ ուտել: Եւ դարձեալ՝ զի դատարկութիւնն մայր է ամենայն մեղաց մարմնական եւ հոգեկան. այլ

յորժամ աշխատի, մարմինն տկարանայ ի մեղաց. եւ խորհուրդնն սուրբ մնայ. եւ ի գործոց աշխատանաց այլոց մասնաւորէ: Եւ դարձեալ՝ զի անգործ մարդն՝ ոչ ինչ ունի զի կերիցէ. զմիտսն ի գողութիւն եւ ի զրկումն եւ ի յափշտակութիւն ձգէ՝ զի ապրիցի: Եւ որ վաստակի՝ յայսմանէ ի զատ մնայ: Եւ դարձեալ՝ անաշխատ մարդն՝ հանապազ մարմնով ծանրանայ եւ թուլանայ. եւ տկարանայ յառաջութենէ: Վաս այսց եւ այլ բազում օգտութեանց՝ խրատեն զմեզ արիանալ ի գործս. որպէս ասէ: (Ի փոյթ մի վեհերոտ:) Չորրորդ՝ յայտ է յօրինակաց. որպէս ասէ առակախօսն: (Ով վատ երթ առ մրջիւնն. եւ ուսիր ի նմանէ:) Եւ զայս վասնն այնր տայ օրինակ՝ զյորժամ զօրէնս Աստուծոյ եւ զխրատ սրբոցն մոռանայ ոք՝ զի լսելով է, նա զայս աշխատասեր կենդանիս տեսանէ եւ ուսանի. զի տես աչացն՝ հաստատ է, քանն զլուր ականջին. վասն այնր ասէ: (Ով վատ երթ առ մրջիւնն:) Վատ ասէ զթոյլն մարմնով եւ զծոյլն հոգւով, եւ զտգետն մտօք. Լոքա եւ վատ եւ չար: Երթ առ մրջիւնն՝ որ հանապազ աշխատի եւ ժողովէ, որ տկար է քան զմարգս բազում իրօք: Նախզի՝ մարմնովն տկար է եւ բնութեամբ վտիտ կենդանի եւ մարդն զորեղ եւ մեծ: Երկրորդ՝ նա անբան զեռուն եւ մարդն բանական եւ իմաստուն: Երրորդ՝ նա միայն զմարմնոյն հոգայ, եւ մարդս հոգւով եւ մարմնով է կարօտ: Չորրորդ՝ նա ոչ ունի գործի վաստականաց. ոչ ձեռն, եւ ոչ եզն. ոչ երկաթ. եւ կամ այլ ինչ: Եւ մարդս ունի զդոսա: Զինգերորդ նմա վերակացու եւ փուծացուցանող ոչ է. եւ մարդկան Քրիստոս կայ վերակացու. եւ հրամայէ օրէնքն գործել: Վեցերորդ՝ նմա պատուհաս ոչ է ի չգործելն. եւ մեզ Տէր գոյ եւ պատուհասօղ, թէ ոչ գործեմք: Եօթներորդ՝ նմա օրինակ ոյ գոյ որ ուսանի. այլ մեզ բազումք են՝ մարգարէքն եւ առաքեալքն. որք բանիւ ուսուցանեն, եւ մարմնով գործելն: Չի ասէ. (եւ որք ընդիս էին, պաշտեցին ձեռքս այս:) Չայս եւ այլ բազումս ունի տկարութիւն եւ Լուազութիւն քան զմարդս. եւ թեպէտ այսպէս անզօր զեռուն է. այլ ունի իմաստութիւն եւ ջանս. եւ ջանքն երեւի յերկու իր: Նախ՝ ի հանապազ գործելն: Երկրորդ՝ եւ զամենայն իրս ի ժողովելն: Եւ իմաստութիւն ցուցանի երիւք: Նախզի՝ գիտէ որ ինքն ոչ կարէ վաստակիլ եւ գործել զերկիր. այլոց վաստակաց ընկեր լինի. եւ ժողովէ ի կալոյ, ի յարտոյ, ի խոտոյ, եւ այլոց: Երկրորդ՝ զի գիտէ զամառն գործելոյ ժամանակ, եւ ձմեռն հանգչելոյ: Երրորդ՝ զի գիտէ բնութեամբ զանձերեւ եւ զերաշտ. եւ ինամ տան կերակրոյ, զի մի սովեսցի. կամ մեծացուցանէ զտունն. կամ զդուռն փակէ. կամ զկերակուրն կտրէ, եւ չորացուցանէ յարեւն: Չոր եւ մեզ ուսանելի է: Նախզ՝ հանապազ ջանամք եւ գործեմք. ոչ զմի օր գործեմք, եւ զմիւսն ոչ եւ զմի օր աղօթեմք, եւ զմիւսն ոչ. այլ հանապազ ի գործս. հանապազ յաղօթս. միշտ ի յուսումն. եւ զայն ջանիւք օրըստօրէ զջանսն յասելուլ ի վերայ միմեանց: Երկրորդ՝ զի զամենայն գործ առնեմք. ոչ զմիւսն առնեմք եւ զմիւսն ոչ. այլ զամենայն առնեմք. այսինքն, զմարմնոյ աշխատանս. եւ զհոգւոյ առաքինութիւնս. եւ զուսումն Լուազ: Եւ զայս վասն երեք պատճառի: Նախզի՝ օգուտ են սոքա եւ հանգիստ միմեանց. Որպէս զկերակուրն փոփոխելով՝ երբեմն զայս եւ երբեմն զայն՝ ախորժելի է. Լոյնպէս եւ երբեմն ի մարմնոյ գործն՝ եւ երբեմն յառաքինութիւն՝ եւ երբեմն յուսումն՝ ախորժելի է մարդոյն եւ կամակատար է: Երկրորդ՝ զի ունիմք մարմնական եւ հոգեկան եւ մտաւոր մեղք. մարմնով աշխատել է վասն մեցաց մարմնոյ. եւ զառաքինութիւնն գործելի է վասն հոգւոյն. եւ զուսումն վասն մատց

խորհրդոյն: Երրորդ՝ զի վաստակն զմոր մտոյ պարտսն լնու. զքաղց՝ եւ զծարաւ, եւ զայլսն. եւ առաքինութիւնն զհոգւոյն. եւ գիտութիւնն զմիտսն լուսաւորէ աստ եւ այժմ: Նոյնպէս եւ ի հանդերձեալն փառաւորի եւ հաննզչի մարմինն ի վաստակ մարմնոյն. եւ հոգին ի գործս առաքինութեան. եւ միտքն ի գիտութիւն իմաստութեան դէմ յանդիման տեսլեանն Աստուծոյ: Յաղագս որոյ պարտ է զջանս վաստակոցն ուսանիլ ի իմրջիւնէն: Իսկ զիմաստութիւն նորա ուսունիմք: Նախ որպէս մրջիւնն յայլոց վաստակոց ժողովէ, ի կալոյ, եւ յարտոյ, եւ յայլմէ: Նոյնպէս՝ մէք թէ տկար եմք, զայլոց գրելսն ուսանիմք եւ ժողովեմք. եւ թէ ոչ կարեմք օրէսս դնել եւ քարոզել՝ որպէս մարգարէքն եւ առաքեալքն, մէք ի նոցա վաստակն հաղորդիմք. եւ զօրէսս նոցա կատարեմք. եւ այս է ասելն. (այլք վաստակեցին. եւ դուք ի վաստակս նոցա մտիք:) Եւ թէ տկար եմք՝ չարչարակից լինիլ Քրիստոսի եւ սրբոցն. արտասուօք՝ աղօթիք՝ ընծայիք՝ եւ տրօք ողորմութեանց՝ մասնաւորիմք նոցա. եւ թէ տկարանամք՝ միայն՝ ժամատեղս հասարակացն կցորդիմք: Նոյնպէս ի բանս եւ յայլ ինչ գործս՝ ձեռնտուութեամբ այլոց զգործսն կատարեմք: Երկրորդ իմաստութիւն է, որ ի ժամանակս ամարան ժողովէ՝ որք գտանին ամենայն կերակուրք. եւ ի ձմեռն հանգչի: Նոյնպէս ամառն է այս կեանքս բարեգործութեան. ժողովելոյ, հնձելոյ, ամբարելոյ, եւ գանձելոյ յերկիսս. ըստ այնմ, (գանձեցէք ձեզ գանձս յերկին:) Իսկ այն կեանքն՝ ձմեռն է մեղաւորաց. զի ոչ վստակիլ կարեն. եւ ոչ ժողովել. եւ ոչ ինդրել. եւ ոչ այլ ին եղանակաւ գտանել. որպէս յիմար կուսանքն յիմաստ նոցան ոչ կարացին գտանել. թէպէտ բարեգործացն եւ իմաստնոցն կեանքն այն՝ գարուն է եւ ամառն: Չի յորժամ ամենայն մերձի արեգակն արդարութեան, ցրտութիւն մեղաց եւ չարեաց հալածի. եւ կանաչագեղ մանկութեամբ ծաղկին եւ զարդարին սուրբքն. եւ զարդիւսս գործոցն վայելեն: Սակայն ծուլիցն եւ մեղաւորացն՝ ձմեռն է եւ անճարակ ամենայն իրաց. զայս իմաստութիւնս պարտ է ուսանիլ ի նմանէ: Երրորդ իմաստութիւն է նորա. որ զառաջիկայն տեսանէ. եւ ինամ տանի կերակրոյն: Նոյնպէս եւ մեզ պարտ է մտօք զհանդերձեալն տեսանել. եւ զգործս բարիս այնպէս ամբարել եւ ինսամել. եւ մեծացուցանել զառաքինութեան տունս մեր. զի յերկար է լինելոց սով եւ ձմեռն մահու. եւ զեղուն փակեմք՝ զի մի սատանայ գողանայ կարիցէ եւ կորուսանել. եւ ի յարեն չորացուցանեմք. այսինքն, զգործս մեր ցուցանեմք Աստուծոյ. որ լուսաւորէ՝ եւ զամենայն գարշութիւն մեղացն հանէ. զի մի փառասիրութեամբ կորիցէ: Այսպէս զիմաստութիւն միջեանն ուսանելի է: Իսկ զիմաստութիւն մեղուին որ ասէ. (երթ առ մեցուն:) Չի եւ նա վաստակոց եւ երկասիրութեան է օրինակ. այլ զանազանապէս: Չի մրջիւնն՝ գործնական առաքինութեան է օրինակ, եւ մեղուն տեսական: Նախզ՝ մրջիւնն հանապազ ընդ երկիր ընթանայ եւ վաստակի. նոյնպէս եւ ամենայն մարմնական առաքնութիւնն հանապազ ընդ երկրաւ է. այսինքն, պահք՝ աղօթք՝ ողորմութիւն՝ գետնախշտութիւն՝ խոնարհութիւն, եւ այլն: Երկրորդ՝ զի հանապազ ընդ մի ճանապարհ գնան. նոյնպէս եւ առաքնութեան ճանապարհն՝ մի է ամենեցուն. (նեղ եւ անձուկ՝ որ տանի ի կեանս:) Երրորդ՝ զի զմիմեանց բերսն ոչ գրկեն. նոյնպէս եւ զառաքնութիւն վասն իւր վաստակի. եւ ինքն տանի զիւր գործն ի տունն յաւիտենից: Չորրորդ՝ զի մարմնականն եւ յայնի եւ ծանր հատիկ ժողովեն. նոյնպէս եւ առաքնութիւնն մարմնական գործով եւ ծանր վաստակօք յայտնապէս

չարչարի. յաղագս որոյ ի գործնական բաղդատի: Իսկ մեցուն՝ ի տեսականն. զի թռչի վերընթաց, եւ յամենայն ծաղկացն վերայ նստի. եւ զանօտր եւ զթեթեւ ժողովէ: Նոյնպէս եւ տեսականն՝ իմացմբն թռչի. եւ նստի ի վերայ ծաղկանց սուրբ գրոց. եւ զանօտր եւ զգեղեցիկ բանս քաղցունս ժողովէ ի բժշկութիւն հոգւոց եւ մարմնոց: Չի որպէս խորիսխ մեղուն՝ իմաստութեան բանից համեմատի վասն քաղցրութեան եւ լուսաւորելն՝ ի գործունեայ մեղուն համեմատ: Եւ այս վասն տանս պատճառի: Նախզի՝ մշտաջան ժրութեամբ ժողովէ զմեղրն. վասն որոյ ասէ առակն. (երթ առ մեղուն եւ ուսիր ի նմանէ. զի արդ գործունեայ է եւ այլն:) Այսպէս եւ իմաստութիւնն՝ աշխատաութեամբ քննի. որպէս ասէ Տէրն. (քնեցէք զգիրս. եւ ապա տեսէք:) Եւ Դաւիթ ասէ. (լեզու իմ որպէս գրիչ երագագիր դարի. վասն այն բղխեաց սիրտ իմ զբան բարի:) Երկրորդ՝ եւ որպէս մեղուն օրըստօրէ մասն մասն ժողովելով, լնու զբջիչսն, այսպէս եւ մեզ պարտ է օրըստօրէ աճիլ յիմաստութիւն եւ ի գործս սուրբս. որպէս ասէ Պետրոս. (աճեցէք շնորհօք եւ գիտութեամբ Տեառն:) Երրորդ՝ զի որպէս մեղուն ի զուսաւոր նիւթ ամբարէ զմեղրն: Այսպէս եւ իմաստութիւն՝ հանգչի եւ ժողովի ի մաքուր խորհուրդն. որպէս ասէ առակն. (ես իմաստութիւն՝ բնակեցայ ի խորհրդեան:) Եւ Տեառն ասէ. (որք սուրբ են սրտիւք՝ զԱստուած տեսցեն:) Չորրորդ՝ զի որպէս իմաստութեամբ գործէ ի խաւարային տեղին. զանկիւնս ի վերայ որմոցն հաստատելով նախ. եւ ապա հաւաքէ զմեղրն: Այսպէս պատշաճ է եւ մեզ զգործնական առաքնութիւնն հաստատել. եւ ապա ընդունիլ զտեսականն. զի գործնականն՝ ասպնջական է տեսականին ասէ փիլիսոփայն: Հինգերորդ՝ զ ծնօղասէրք են՝ եւ առաջնորդին հետեւին. ուր եւեթայ, ի նա յարին. ի նա յարին. եւ վասն նորա մեռանին: Այսպէս է մեզ պարտ է զծնօղն մեր զՔրիստոս սիրել. առնուլ զխաչն եւ զհետ հետոց թագաւորին մերոյ ընթանալ. եւ վասն նորա մեռանիլ զօրհանապագ. եւ ոչ բաժանիլ ի նմանէ. ըստ պօղոսի թէ՛ (ո՞ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, եւ այլն:) Վեցերորդ՝ զի ի վաստակս իւր առաւել ամբարէ. զի եւ մարդկան տացէ. այսպէս եւ մեք ի վաստակոց մերոց ըստ հոգւոյ եւ մարմնոյ՝ հաղորդել պարտիմք կարօտելոցն, (ըստ հաւատարիմ եւ իմաստուն տնտեսին. զոր կացոյց Տէր ի վերայ գերդաստանի իւրոյ տալ ի ժամու զկերակուրն. երանի իցէ ծառային այնմ, զոր եկեալ Տեառն գտանիցէ արարեալ այնպէս եւ այլն:) Եօթներորդ՝ զի խայթոցիւն պատերազմի ընդ թշմամւոյն. այսպէս եւ մեզ պարտ է ընդ թշնամւոյն սատանայի պատերազմիլ. որպէս ասէ Պօղոս. (ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս, եւ այլն. վասն որոյ առցուք զվահանն վահանն հաւատոյն. եւ զսաղաւարտն յուսոյ. եւ զսուսեր հոգւոյն. այսինքն, զբանն Աստուծոյ աղօթիւք որպէս խրատէ առաքելն:) Նմանապէս եւ Դաւիթ ասէ. (որպէս զգէն շուրջ եղիցի զքեւ ճշմարտութիւն նորա. ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի եւ այլն:) Ութներորդ՝ որպէս մեղուն ծնանի ձագ՝ ոչ ի սերմանէ, այլ ի վաստակոցն իւրոց:) Այսպէս եւ վարդապետացն՝ պարտ է ստանալ զաւակ հոգեւոր. այսինքն, զաշակերտս բանին. զի նոքօք ուրախ լինին. (որպէս մայր որդուկք բերկրեալք ըստ Դաւթի:) Եւ Յօհաննէս գրէ ի կաթուղիկէն. (իմ ուրախութիւն այն է՝ յորժամ լսեմ թէ իմ որդեակքն գնան ճշմարտութեամբ:) Իններորդ՝ զի երկնաթռիչ է մեղուն. այսպէս եւ մեզ պարտ է երկնաթռիչս լինիլ, (զվերինն խորհելով՝ ուր Քրիստոս նստի ընդաջմէ Աստուծոյ որպէս ասէ առաքեալն:)

Եւ դարձեալ ասէ. (մեր առաքինութիւնն յերկինս Է:) Տասներորդ՝ զի անարին Է մեղուն բնութեամբ. զոր մեզ ստանալի Է կամօք. այսինքն, պահօք եւ անսուաղութեամբ. զի այս ցամաք հոգի՝ իմաստուն եւ առաքինի Է ասէ փիլսոփայն: Եւ մի վայրաբեր լիցուք առաւելութեամբ գէշ եւ ջերմ խառնուածոյն: Չի ասէ մարգարէն. (գիրացաւ ստուարացաւ՝ լայնացաւ Յակոբ. եւ եթող զՏէր Աստուած:) Եւ թէ՛ (մի մնացէ հոգի իմ դոսա վասն լինելոյ դոցա մարմին:) Վասն որոյ եւ Տէրն խրատէ. (զգոյշ լերուք անձանց. գուցէ ծանրանայցէ սիրտ ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ. եւ հոգօք աշխարհականօք. եւ հասանիցի ի վերայ ձեր օրն այն. յաղօթս կացէք գերծանիլ յայնմանէ ամենայնէ. եւ կալ առաջի որդւոյ մարդոյ ի տուէ եւ ի գիշերի:) Որոց՝ մեզ տացէ Քրիստոս Աստուած՝ զառողջ խորհուրդս՝ զառաքինի վարս. զի նովաւ ժառանգեսցուք զկեանսն անվախճան.՝ Նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն Գործոյ. ի բանն որ ասէ: (Եւ Էառ Տէր Աստուած զմարդն զոր արար.՝ եդ զնա ի դրախտին փապկութեան՝ գործել զնա՝ պահել:) Ծննդ. 2. 15: (Գլուխ ԻԲ)

Ի բանես յայսմանէ՝ յայտնապէս ուսանիմք. զի բնական Է մարդոյն գործել՝ աշխատիլ: Բայց յառաջ տեսցուք թէ՛ զի՞նչ Է միտք բանիս. եւ ապա վասն աշխատանաց: Նախ որ ասէ (գործել եւ պահել:) Չգուշութիւն Է վասն փափկութեանն Ադամայ. զի երբեմն՝ փափկութիւն եւ ցնծութիւն թարգմանի: Չայս ցուցանէ թէ՛ փափկութեանն գործել պարտի. եւ ոչ դատարկ նմալ. զի փափկութիւնն եւ դատարկութիւնն՝ մայր Է ամենայն չարեաց: Երկրորդ՝ դրախտն ամենալի էր պտղօք եւ ծառօք. ոչ թէ կարօտ էր գործելոյ. այլ զայս բնականապէս եդ մարդն. զի յորժամ արտաքս ելցէ ի դրախտէն, գործեսցէ եւ աշխատեսցի. եւ մի ձրի հաց ուտցէ: Երրորդի՝ զի յորժամ ելցէ ի դրախտէն, մի միայն զգործս մարմնոյ արասցէ. այլեւ զհոգւոյն որ մնացական Է միշտ՝ զառաքինութեան ծառս եւ զպտուղս հոգ եւ որս: Վասն այն իսկզբանն անմահ անկոյն երկրագործ կացոյց զմարդն: Իսկ զերկրաաւոր բոյսս՝ խոտ կոչեաց, որ Է խոտան, եւ անարգ եւ կորստական կերակուր, համեմատել ի հոգեւորր եւ ի բանեղէնն. եւ Տեառն յաւետարանին ասէ. (երթայք գործեցէք՝ մի զկորստական զկերակուրն, այլ զայնն որ մնայ:) Չորրորդ՝ գործել եւ պահել. այսինքն, անարատ կալ. եւ ապա կարես զդրախտն Աստուծոյ պահել քեզ ի ժառանգութիւն: Իսկ յորժամ ոչ եկաց անարատ, կորոյս զդախտն եւ արատաքսեցաւ: Հինգերորդ՝ վասն երկրորդն Ադամայ Է իմանալ. զի գթացեալ հայր Աստուած առաքեաց զբանն իւր. եւ եղեւ մարդ կատարեալ. եւ եդ զնա ի մէջ դրախտի եկեղեցւոյ. եւ զհաւատացեալս. որ նշանակէ թէ, արդարութեան գործովն պահեաց զհաւատացեալս իւր. եւ չարչարանօք եւ մահուամբ ել յերկինս. եւ նստաւ ընդ աջմէ հօր. ոչ թէ վասն վարձուց որպէս ասեն չարափառքն, այլ վասն զմեզ ուսուցանելոյ, թէ չարչարանօք մտանեմք ի հանգիստն երկնից. որպէս ասէ Պօղոս. (բազում նեղութեամբ պարտ Է մեզ մտանել ի հանգիստն:) Վեցերորդ գործելն եւ պահելն, ցուցանէ զգործս եւ զհաւատս. զի պարտ Է առաջնորդին գործով եւ հաւատով կալ եւ մնալ յեկեղեց: Այլեւ գործով եւ հաւատով պահել զժողովուրդն: Եօթներորդ՝ առ ժողովուրդն ասէ՝ զի գործով

Եւ հաւատով մնան ի եկեղեցին. այլեւ սոքօք պահեն զարքայութիւնն երկնից. վասն որոյ ասէ՝ (գործել եւ պահել:) Ութներորդ՝ դրախտ Է իմաստութիւնն. ասէ գործել եւ պահել՝ զի տեսականն գործնականան պահի. որպէս ասէ իմաստասէրն Պղատոն թէ՝ գործնականն ասպնջական Է տեսականին իմաստասէրն. ասեմ իմաստասէր՝ ոչ գյոզնագետս եւ որ բազումս ի բերան ունի, այլ որ ուղիղ վարս ստացեալ ունի յինքեան: Իններորդ՝ ցգործնականն ասէ. զի պարտ Է զառաքինութեան գործն պահել ի յինքն. այսինքն Է, միշտ գործել. եւ ոչ երբեմն առնել եւ երբեմն ոչ: Եւ դարեալ գործել զառաքինութիւնն՝ եւ պահել ի յինքն ի սիրտս իւր. եւ ոչ ի ցոյցս մարդկան ուսանիլ: Տասներորդ՝ առ տեսականս ասէ՝ որք են աշակերտք բանից եւ ուսմանց. գործել՝ այսինքն, աշխատիլ եւ ուսանիլ եւ պահել. այսինքն, զուսեալն ամուր ի յիշողականն պահել. զի ուսումն Է վերըստին յիշումն: Արդ՝ այսպէս բազմադիմ կերպիւ Է իմանալ զբանս որ ասէ: (Եղ զմարդն ի դրախտին փափկութեան գործել եւ պահել:) Այսքան վասն հոգեւոր գործոյն եղել ասացեալ: Այլեւ զգործ մարմնաւոր եւ զաշխատանս ձեռաց գործելի Է ամենեցուն վասն բազում պատճառի: Նախ՝ վասն Աստուծոյ հրամանացն որ ասաց. (քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո:) Եւ տես՝ զառաջին գործն որ հոգեւորն Է ի դրախտին, նախքան զյանցանսն աւանդեաց. իսկ զմարմնաւորն՝ յետ յանցանաց: Վասն այն առաջնապէս պարտ Է գործել զհոգեւորն. եւ ապա զմարմնաւորն: Երկրորդ վասն բնութեանս՝ որ գործիական կազմեցան շինւածք մարդոյն. որպէս ձեռն, եւ մատուկք, եւ այլն: Երրորդ վասն սովորութեան. զի յորժամ սովորիմք ի գործ մարմնական, եւ զհոգեւորն այլ գործեմք: Չորրորդ վասն վտանգի կրից. զի պէտս ունիմք կերակրոյ եւ զգեստի. ապա թէ ոչ գործեմք, սովորիմք եւ մերկանմք: Հինգերորդ վասն երանութեան. որպէս ասէ մարգարէն. (զվաստակս ձեռաց քոց կերիցես՝ երանի Է քեզ եւ բարի եղիցի:) Վեցերորդ վասն նախատանաց. որպէս առաքեալն. (որ արասցէ ոչ՝ կերիցէ մի.) զի այնպիսին՝ (ուտէ զհաց ցաւոց որպէս ասէ մարգարէն.) եւ նման Է նաա բրետի՝ որ ոչ վաստակի մեղր. այլ զայլոց վաստակ ուտէ: Եօթներորդ՝ զի ընդ գործելն, մարմին աշխատի. եւ նուազի ցանկութիւնն. եւ միտքն աշխատի. եւ նուազի ցանկութիւնն. եւ միտքն պարզ եւ յստակ մնայ: Ութներորդ՝ զի զիւր վաստակն ուտէ, վասն իւր աղօթէ, եւ որ զայլոց՝ զայլոց. որպէս վարձկան ոք՝ որ այլոց աշխատի: Իններորդ՝ զի յիւր վաստակոցն այլք կերիցեն. եւ Է ողորմութեան տեսակ. որպէս իմաստուն կուսանքն՝ որք ունեն զիւր ողորմութեանն: Տասներորդ՝ զի գործուսեայ մարդն՝ նման Է պտղաբեր ծառոյ. իսկ անվաստակն՝ նման Է անպտուղ թզեւոյն զոր անեծ Տէրն: Եւ այնպիսի մարդն՝ ընդ դեմ Է ամենայն ստեղծուածոց. զի ամենեքեան յօգուտ են այլոց: Որպէս զշուրն զի ըմպեմք. զհողն վարեմք. եւ բոյսք եւ տունկք պտուղ տան, կամ հովանի. այսպէս կենդանիք. լուսավորքն երկնից. մինչեւ զի՝ քարիք եւս մամուռ հանեն. եւ պիտաննիքք են շնորհածս. իսկ անվաստակ մարդն՝ քան զսոսա վատթար Է:

Եւ վասն վեց պատճառի առաւել բարի Է երկրագործութիւնն: Նախզ՝ առաջին արուստ Է եւ հրաման Աստուծոյ որ ասաաց՝ (ի դրախտին գործել եւ պահել:) Եւ յելանելն ասաց. (քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո:) Եւ այլ արւեստք յետոյ ի ճարտար մտաց, եւ վասն կերաց գտան: Երկրորդ որպէս ասացաք՝ գողութիւն՝ սուտ ասել՝ զրկել՝ եւ այլ ինչ մեղք զկայ ի նմա:

Երրորդ այլ արուեստք՝ ի ժամանակէն եւ ի մարդկանէ ունին զշահն. որպէս վաճառականք յայս ժամանակս գնեն յաժան, եւ իմիւսն ծախեն ի թանկ. եւ ի յայս քաղաքէս դնեն, եւ յայլ քաղաք տանին վաճառեն եւ շահին: Այլ երկրագործն՝ յերկրէ եւ ի ծառոյ եւ պտղոյ շահի. նաեւ յանասնոց. որ բնական զոգոսա ետ մեզ Աստուած օգնական՝ որ ի դոցանէ շահիմք եւ մեծանամք: Զորրորդ՝ որ երկրագործն է եւ շինական, առաւել մեծանայ քան զայլ արուեստաւորս. զի թէ վաճառական է, եւ եթէ ճանապարհորդ, եւ թէ այլ արուեստաւոր, ամենեքեան աշխատին վասն կերակրոց եւ ըմպելոյ, եւ զգեստի: Եւ զայսոսիկ երկրագործն ունի. զկերակուրն յերկրէ. զմպելին յայգւոյ. զզգեստն ի յերկրէ, կամ յանասնոյ: Յինգերորդ պատուական է. զի զհարկաւորն ժողովէ եւ աշխատի. իսկ այլքն զաւելորդն: Եւ հարկաւոր է մեզ կերակուր եւ ըմպելի, եւ զգեստ. զորս երկագործն տայ մեզ. եւ ոչ վաճառականքն: Վեցերորդ՝ զմեծամեծս եւ զթագաւորս եւ զամենայն մարդ՝ նա կերակրէ. զի առանց սրբոյ՝ ոչ շինութիւն լինի. եւ ոչ թագաւորութիւն հաստատի. եւ առանց այլոցն՝ կարէ ամենայն մարդ ապրիլ: Նա վասն այն ի մեջ ամենայն արուեստիցն՝ երկրագործն բարի է եւ արդար, եւ պիտանի: Այլ շատ ողորմութիւն եւ արդարութիւն լինի ի նմեաւ, քան ի յայլ մարդկանէ. ի նորա հողոյն՝ յարտէն՝ յայգւոյն՝ ի կալէ՝ ի հորէ՝ ի տանէն՝ եւ յամենայն տեղեաց՝ մարդիկ եւ կենդանիք եւ աղքատք վայելեն. եւ յայլ արուեստից՝ ոչ ոք. բայց միայն մի մարդոյ՝ որոյ է գործն: Որեւ մեզ տացէ Զրիստոս Աստուած ժրութիւն եւ ժոժկալուի եւ կարողութիւն. զի վաստակեսցուք հոգեւոր եւ մարմնաւոր գործս բարիս. եւ ժառանգեսցուք զներկայս եւ զհանդերձեալն ի Զրիստոս Յիսուսի ի Տէր մեր. որ է օրինեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն Երկրագործաց. ի բան առակին որ ասէ: (Իբր՝ զանդաստան մի է այր անզգամ. ՚ իբր՝ զայգի, եթէ թողուս խոպանանայ՝ մոլախոտի:) Առակ. 24. 30: (Գլուխ ԻԳ)

Ճշմարիտ առակախօսն՝ քարոզօղն երկնային Տէր մեր Յիսուս Զրիստոս՝ ասէ ի վարդապետութեան իւրում այսպէ: (Ել սերմանացան սերմանել. եւ կեսն անկաւ ի ճանապարհի. եւ կեսն յապառաժի. եւ կեսն ի մեջ փշոց. եւ այլն անկաւ յերկր բարի:) Եւ ինքն դարձեալ լուծանէր զառակն: (Որ սերմանէ ասէ՝ որդի մարդոյ է. եւ ազարակն աշխարհիս. եւ սերմն բանն Աստուծոյ է:) Եւ երեք իր առաջի կայ մեր: Նախ՝ տեսանել զբան առակիս: Երկրորդ՝ ի մեզ փոխանցել օրինակաւ: Երրորդ՝ վասն երկրագործ արուեստից: Եւ ապա ձեռնարկել ի տեսութիւն բանիս որ ասէ: (Իբրեւ զանդաստան մի է այր անզգամ:) Արդ՝ զառաջինն որ ասէ: (Ել սերմանացան:) Նոյն ինքն է բանն Աստուած Տէր մեր Յիսուս Զրիստոս՝ որ ել ի հայրական ծոցոյ. եւ եկն յերկիր, առեալ մարմին ի սրբոյ կուսէն. երեւեցաւ մարդկան ի վերայ երկրի. եւ քարոզեաց զբանն ճշմարտութեան. որպէս ինքն ասէր. (Ելի ի հօրէ եւ եկի յաշխարհի:) (Ազարակն աշխարհիս է ասէ:) այսինքն, մարդիկ աշխարհիս, եւ տեսրք. զի բանաւոր սերմանց տեղի է սիրտ մարդկան. որպէս մարմնաւոր սերմանց՝ երկիրս տեղի զոր կոխեմք: Եւ ի չորս բաժանէ զսիրտ մարդկան: (Ոմն անկաւ առճանապարհաւ՝ եւ ոչ բուսաւ) վասն Գ պատճառի: Նախգի՝ կոխի սերմն: Երկրորդ՝ զի քաղեն

թռչունք: Երրորդ՝ զի ջրշեղջ լինի եւ հոտի: Նոյնպէս այնքիկ որք զչար խորհուրդն սատանայի հանապազ յինքեանս կրեն, ճանապարհ են սատանայի երթելեկութեամբ. ե կոխան եկեալ սերմն բանին Աստուծոյ ոչ բուսանի ի նոսա: Դարձեալ՝ զի թռչունք օդոյն դէք՝ քաղեն զբարի սերմն ի սրտէ մարդկան: Եւ դեարձեալ զի գէշ ցանկութիւնն որ ի հոգի մարդոյն՝ հոտեցուցանել եւ ապականէ զբարիս սերմն, եւ անպտուղ առնէ: Այս առաջին բաժինն: Երկրորդ ասէ: (Ոմն անկաւ յապառաժի:) Ոչ բուսանի: Նախզի՝ ապառաժն անհիւթ է: Եւ երկրորդ՝ զի արեւն չորացուցանէ. նոյնպէս որք խիստ եւ պիտ եւ կարծրացեալք ի մեղս եւ յանհավատութիւնս, սերմն բարի ոչ գտանէ ի նոսա տեղի: Եւ երրորդ՝ յորժամ արեւն փորձութեան հասանի ի վերայ, կամ ի դիւաց, կամ ի մարդկանէ հալածումն վասն հաւատոյ, յորժամ չունին արմատ հաւատոյ, վաղվաղակի չորանան եւ յուսահատին. եւ լինին անպտուղ:

Երրորդ բաժինն՝ (Անկաւ ի մէջ փշոց, եւ հեղձաւ:) Փուշ են եւ ցաւ հոգք աշխարհի եւ պատրանք մեծութեան. շինել, տնկել, ցանել, հոգալ, եւ այլն ամենայն, հակառակք են բուսոց բարութեան սերման. եւ հեղձուցանեն. զի վասն հոգոց աշխարհի՝ գիշեր եւ ցորեկ ի նոյնն կան. թողեալ զբան օրինացն Աստուծոյ, ընդ մեծութեան պարապին: Եւ դարձեալ՝ փուշ է մեծութիւնն եւ խոցոտող. որպէս մարդ որ զփուշ հնձէ եւ ժողովէ, խոցի բոլոր մարմինն. նոյնպէս ի ժողովել զմեծութիւնն, վաստակիմք. եւ ի պահելն ցաւիմք. եւ ի պակասիլն տրտմիմք հանապազ: Այլ փուշ է մեծութիւն որ հանապազ ի փորձութեան եւ ի մէջ ցաւոց պահէ. ի դողոց, յաւազակաց, յընկերաց, ի թշնամեաց, ի բռնաւորաց, եւ յայլոց. որպէս ասէ առաքեալն. (մի ցանկար մեծութեան. զի մի անկցիս ի փորձութիւն.) այսինքն, հոգւոյ եւ մարմնոյ:) Դարձեալ՝ փուշն այրելոյ նիւթ է. նոյնպէս եւ մեծութիւնն նիւթ լինի եւ այրէ զհոգիս մեծատանց. որպէս մեծցատունն որ ի հուրն այրիւր եւ պապակէր: Վասն այն ասէ Տէրն. (վայ ձեզ մեծատանց՝ զ ընկալայք զմիսիթարութիւնն ձեր:) Ճշմարիտ վայ է մեծատանց՝ որք վասն սակաւ հեշտութեանց մարմնոյ, զրկին ի յաւիտենից կենացն: Նա սերմն օրինացն Աստուծոյ՝ յայսպիսի մեծատանաց սիրտս ոչ բուսանի, եւ թէ բուսանի, անպտուղ լինի. եւ ոչ պտղաբերի ոստ: Իսկ չորրորդն որ է (Երկիր բարի եւ արգաւանդ՝ տայ զպտուղն զանազան. երեսուն վաթսուն եւ հարիւր:) Այսինքն է՝ բարի երկիր որ կակղացեալ լինի խոնաարհոթեամբ, եւ օտար խոտն սրբեալ ի նմանէ, յորժամ լսէ քարոզն Աստուծոյ, բանայ զսիրտն եւ ընդունիլ: Եւ դարձեալ՝ ծածկէ ի հոգին. եւ բուսուցանէ իի զգայարանն զզանազան բարեգործութիւնս: Չի միայնն որ զբանն լսէ՝ չէ բաւական. այլ լսել պիտի եւ ի միտ պահել. այն է բուսանիլն: Եւ որպէս մշակն յետ սերմանելոյն՝ ջրով ոռոգէ. նոյնպէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ յետ բանիւ քարոզութեանն, սքանչելիս կատարէր. այնուհաստատէր եւ ծածկէր զքարոզութիւնն ի սիրտս լսողացն: Եւ յորժամ համբարձաւ յերկինս, առաքեց զջուր եւ զցօղ գիտութեան հոգւոյն սրբոյ ի յերկնից. որ էջ յառաքեալսն, եւ ի սիրտս հաւատացելոց. եւ զարգացոյց զնոսա. եւ ապա ետուն զպտուղ երեսուն, վաթսուն, եւ հարիւր: Հարիւր է որպէս կուսութիւնն եւ մարտիրոսութիւնն. եւ վաթսուն է՝ որպէս որք թողուն զաշխարհս, եւ կրօնաւորին եւ ապաշխարեն զմեղս. եւ երեսուն է՝ որպէս առ հասարակ հաւատացեալք ի Քրիստոս հալալ ամուսնութեամբ. որք զօրէնս Աստուծոյ ի վերայ ինքեանց

կատարեն գործով. Եւ ողորմութեանն արժանաւորին: Այս առաջին խնդրն որ ասէ: (Որ սերմանէ՝ որդի մարդոյ Է. եւ ագարակն աշխարհիս. եւ սերմն բանն Աստուծոյ:) Երկրորդն փոխանցեալ ի մեզ զբան առակիս օրինակաւ: Չի աշխարհական մարմինս մեր՝ Է երկիր. եւ միտքն՝ մշակ եւ երկրագործ. եւ սերմն՝ Է օրէնքն Աստուծոյ. Եթէ բնական, եւ թէ գրաւոր, եւ թէ աւետարան: Եւ լուծք եզանց՝ Է զգայ արանս մարմնոյ. զի լուծ լուծեն սոքա. երկու աչք. երկու ունկն. երկու ճակն. երկու լեզուն, եւ մանկալեզուն. երկու ձեռք եւ այլն: Եւ դարձել՝ հինգ զգայարանաք Է հոգւոյս. եւ հինգ մարմնոյս լծակցեալ. եւ նոքօք հերկեմք զբանական երկիրս մեր: Եւ որպէս մշակ առեալ ի շտեմարանէ գսերմն, եւ բերէ սերմանէ. նոյնպէս միտք մեր՝ ի շտեմարանէ սուրբ գրոց, առնու գսերմն օրինացն Աստուծոյ. եւ հաւատոյ իմաստութեամբ՝ իբր ջրով ոռոգանէ զնա, հանապազ ի միտսն յիշատակեալ զէլս կենաց մերոց յաշխարհէ. (Եւ զվերինն խորհեալ՝ ուր նստի ընդաջմէ Աստուծոյ.) այն Է որպէս ջուր եւ ցօղ զուարթարար: Եւ զդաւանութիւնն հաւատոյ եւ զխոստովանութիւնն ի սրտի եւ ի լեզուս ունել. այն Է որպէս արեւ՝ որ ծագէ եւ սնուցանէ զբոյսն հոգեւոր: Եւ ապա պտղաբերէ երկիրս մեր զարմատ բուսոցն հաստատեալ ի հոգիս. եւ ծաղկեալ զգայարանս մարմնոյս զգանազան անուշահոտ առաքիւնութիւնս. եւ պտղաբեալ աստ գործով, եւ ի հանդերձեալն արդեամբք եւ հատուցմամբք ըստ գործոցն: Իսկ երեսունն եւ վաթսունն եւ հարիւրավորն Է. որպէս բոյսն նախ դալարի կանաչագեղ՝ եւ ապա զհասակն կերպայ, եւ ապա ատոքանայ ցորեանն ի հասակինն: Նոյնպէս ժուժկալութիւնն մեզ՝ Է կանաչագեղ գալարաբոյսն. զի ամենայն դալարին՝ կանաչ Է գեղով. նոյնպէս եւ ամենայն բարիի գործ, ժուժկալութեամբ կատարի. այսինքն, պահօք, աղօթիք, տքնութեամբ, չարչարանօք, եւ այլն ամենայն, (համբերութեամբ ձերով ստասչիք զոգիս ձեր:) Չի որպէս աղն յամենայն ինչ խառնի. եւ զամենայն ի համ բերէ. նոյնպէս եւ համբերութիւնն՝ ամենայն գործոց պիտանի Է. եւ զամենայն ի համ եւ ի հոտ բերէ. վասն այն կանաչութիւնն ժուժկալութիւն Է: Իսկ յետ այնորիկ հասկն ձեւացեալ ի մեզ՝ սրբութիւնն Է. որ յամենայն ախտէ սրբեալ լինի հոգի եւ մարմն մեր եւ ազատեցեալ. որպէս հասկն բարձրացեալ ծղովն եւ ամրացեալ: Եւ ատոքացեալ հատիկն ի մէջ հասկին՝ Է պտուղ ողորմութեանն. զի ողորմութիւնն Է կատարումն ամենայն առաքիւնութեան գործոց. զի ողորմութիւնն ի սիրոյ ծնանի. եւ սերն Է կատարումն օրինաց եւ մարգարեից եւ աւետարանի: Նա ծնունդն ի սիրոյ ողորմութիւնն կատարումն Է ամենայն բարեաց: Եւ որպէս պտուղն Է արդիւն սերմանն. նոյնպէս ողորմութիւնն Է արդիւն սերմանն. նոյնպէս ողորմութիւնն Է արդիւն պտղաբերել հոգւոյն եւ մարմնոյ: Եւ ողորմութիւնն Է իւղ լապտերի կուսութեան, եւ այլն առաքնութեան. այս Է երեսնաւորն որ Է ժուժկութիւնն. եւ վաթսնաւոր Է սրբութիւնն եւ մաքրութիւնն. եւ հարիւրաւոր որ Է պտուղ ողորմութեանն: Եւ յետ այսորիկ՝ ժողովէ ի շտեմարանս հոգւոյն որ Է յիշողական միտքն: Չի ամենայն ինչ ի նա մտանէ եւ ամբարի եւ բարութիւն յիշողութիւնն. եւ ապա լինի հաց հոգեւոր բանիւ ճաշակողաց. ըստ այնմ, (ոչ թէ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւն Աստուծոյ:) Այսպէս լինի բանն Աստուծոյ սերմանեալ եւ աճեալ ի մեզ կերակուր հոգւոյնս. նոյնպէս եւ ըմպելի իմաստութիւնն Աստուծոյ: Եւ որ չունի զայսպիսի բանական կերակուրս, անբան Է եւ անիմաստ ի կարգ անասնոց. այլեւ սովեալ եւ

ծարաւել հոգեւոր կերակրով եւ ըմպելեալ: Այս երկրորդ գլուխն, փոփանցել ի մեզ օրինակաւ զբան առակի սերմանացանին: Երրորդն ասելի է վասն երկրագործ արուստից: Գիտելի է՝ զիի արուեստք չորք են՝ դուռն վաստակոց ամենայն մարդկան: Մինն բարի է. մինն չար. եւ երկուքն միջին մասն են: Այն որ բարի է արդար վաստակ՝ երկրագործութիւնն է. որ ի յերկրէ, եւ ի պտղոց, եւ ի կենդանեաց, յանասնոց, եւ յայլոցն շահի: Սա ամենեւին բարի է եւ արդար. եւ հալալ վաստակ է քիրտն երեսաց ուտել զհացն: Եւ միւսն ընդդէմ սուրբ՝ ամենեւիմբ չար, որ բռնութեամբ է եւ զրկելով. որպէս վաշխն ոսկւոյ եւ արծաթոյ. եւ տոկոսիքն ի տուգանաց. եւ մաքսն. եւ սոյնպիսիք ամենեւիմբ չար են: Եւ Բ միջակն՝ խառն ի բարւոյ եւ չարէ. որպէս արուեստութիւնն. հիւսնն. դարսինն. ոստայնանկն. բարի է շատն. եւ սակաւ է չարն. որ կամ զգործն վատ առնէ, կամ ի նիւթէն գողանայ, եւ այլն: Իսկ առաւել է չարն քան զբարին՝ ոպէս ի վաճառանոցն. զի ի վաճառն՝ բազում սուտ լինի եւ երդումն եւ զրկումն ի ճարտարութենէ եւ յազահութենէ: Ապա յայտ է՝ որ զերկիր գործելն՝ քան զամենայն ինչ պատուական է. որ յԱստուած յուսայ եւ աշխատի: Այժմ եկեսցուք ի քննութիւն առաջի եղեալ բանիս իմաստնոյն Սողոմոնի որ ասէ: (Իբրեւ զանդաստան մի է այր անզգամ. եւ իբրեւ զայգիիի եթէ թողուս:) Եւ վասն բազում պատճառի համեմատի մարդն յանդաստան եւ յայգի: Չոր պարտ է իմաստունն քնողաց առնուլ. զի ամենեցուն պիտաանի է եւ օգտակար: Նախ՝ կոչի մարդս անդաստան եւ այգի. զի որպէս յանգն եւ յայգին զոր ինչ սերմանեն բուսացանէ. այսպէս ներընդունակ է մարդոյս քնութիւն. զի ընդ բարւոյն եւ զչար եւս սերմանսն որոմանն կրեմք ի մեզ. եւ բուսուցանեմք գործով. ըստ Տեառն առակի: (Ո՞չ սերմն բարի սերմեցաք. իսկ զորոմն այր թշնամի արար:) Երկրորդ՝ զի ընդ բարի բուսոյն՝ փուշքն եւ մոլախոտքն բուսեալ՝ հեղձուցանեն զնա. որպէս առակն ասէ. (եթէ թողուն զնոսա, խոպանայ եւ մոլախոտի եւ լքանի: Նախզի՝ զջերմութիւն արեւուն արգելուն: Եւ երկրորդ՝ զի զհիւթ երկրին քարշեն. նոյնպէս տունկ է ի մեզ հաւատն ի Քրիստոս է. եւ սերմն՝ օրենքն աստուածային. իսկ բոյսք չարին՝ թերահաւատութիւն եւ յուսահատութիւնն. եւ զանազան մեղաց գործքն աճեցեալ ի մեզ, զծագումն աստուածային շնորհացն արգելուն իմէջն. ըստ այնմ, (մեղք ձեր որոշեն ի մէջ եւ Աստուծոյ.) եւ զհիւթ կենդանական հոգւոյն սրբոյն որ ի ջուրս առակի՝ նուազեն ի մէնջ. ըստ այնմ, (սուրբ հոգին իմաստութեան՝ փախչի նենգութենէ.) եւ Պօղոս ասէ. (Չնչաւոր մարդ՝ ոչ ունի զհոգին Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա:) Երրորդ՝ զիի թէ օրըստօրէ քաղեն զաւելորդն, յայնժամ տան զպտուղն արդիւաւոր. երեսուն, վաթսուն, եւ հարիւր: Նոյնպէս թէ զղջմամբ եւ խոստովանութեամբ ի բաց ձգեմք զմեղսն, աճինն ի մեզ բարեգործութեան պտուղքն. որպէս ասէ՝ յետոյ ասիցես թէ, ես զղջացայ եւ ընտրեցի զխրատ: Եւ թէ կարի եւս յետոյ մերձ ի մահ զղջանան, բարերջանիկք են ասէ մեկնիչն աստ: Չորրորդ՝ զի եւ որ ո յետոյ զղջանայ, այսպիսին է այն՝ քարինք ցանգոյ նորա բրին. այսինքն, ցանգ հաւատոյ նորա քակտի, որպէս ամենեւին անպիտանագոյն: Չայնպիսն՝ յիմար կոչէ Պօղոս ի գաղատացւոցն: (Ո՞ յիմար գաղատացիք՝ սկսեալ հոգւով, եւ վախճանիք մարմնով:) Յիգերորդ՝ կոչէ անդաստան եւ այգի. զի մինն տայ զկերակուր կենդանական. եւ միւսն զգինի ուրախարար. որք են գործնական եւ տեսական առաքինութիւնքն. որով զարդին կատարեալքն: Իսկ ան զգամն

Եւ պակասամիտ այրն՝ ոչ ունի զբանն Աստուծոյ ի կերակուր հոգւոյ ըստ Տեառն. եւ ոչ զիմաստութիւն հոգւոյն սրբոյն ի խառնեալ գիւնոյ ըստ Սողոմօնի: Վեցերորդ՝ վասն այսպետացս ասէ յերբրայեցւոց.(երկիր որ ըմպէ զանձրեւ, եւ տայ պտուղս շահեկանս, ընկալց զօրհնութիւն. իսկ որ բերէ փու եւ տատասկ՝ անպիտան է. եւ մերձ յանէծս. եւ վախճան նորա յայրումն:) Օրհնութիւն՝ ըստ որում ասէ առակն. (պատուեա զՏէր ի քոյոց արդար վաստակոց. զի լցցին շտեմարանք քո ի գիւնոյ. եւ հնձան առաւել եւս բղխեսցէ:) Իսկ անէծք՝ ըստ որում ասէ Եսայի. (այգի եղել սիրեցելոյն յանկեան ի տեղոջ պարարտութեան. մնացի զի բերեցէ ինձ խաղող՝ եւ եբեր փուշ. արդ զի՞նչ արարից. քակեցից զցանգ, այլն:) Եօթերորդ՝ զի որպէս յանդաստանն զանգան բոյսք՝ զանագան կերպիւ հատցին. զի որում եւ փուշն՝ ժողովին նախ յայրումն ըստ Տեառն առակի: (Ասացից ցինձօղսս. կապեցէք զորումն առ ի յայրել. եւ զցորեանն ժողովեցէք յշտեմարանս իմ:) Այսպէս եւ զայգւոյն ասէ Տէրն. (հայր իմ մշակ է. զի զպտղաբերս սրբէ. իսկ զանպտուղն կտրէ եւ ի հուր այրէ. (ժողովեն ասէ եւ ի հուր արկանեն եւ այրի:) Նոյնպէս եւ ազգ մարդկան իմի եւ ի նոյն տեղիս բնակեալ. ոմանք այլազգի եւ այլադէմ. եւ ոմանք ի մէջ՝ այլ ցամաքեալ անհաւատութեամբ, եւ հատեալ ի գլուխոյն Զրիստոսէ. որպէս դասք հերձաւածողացն. որք են լուցկիք հրոյն յաւիտենից. զի (խաբեցանն յարգանդ է եւ խօսեցան սուտ:) Եւ ոմանք հնազանդեալք Զրիստոսի հաւատով՝ ուղղափառ պտղաբերին. ըստ այնմ, (դուք պտուղ յոյժ բերիցէք. եւ եղիցիք իմ աշակերտք.) զոր եւ Տէրն յառաջագոյն նշանակեաց յասելն: (Եթէ իցեն երկու յանդի, միսն առցի եւ միւսն թողցի:) Ութներորդ՝ զի յանդաստանէն մի եւ նոյն բոյսքն՝ ոմանք լինին յայրումն հրոյ որպէս յարգն. եւ ոմանք ժողովին յշտեմարանս որպէս ցորեան. ըստ Ովիաննու. (որոյ հեծանոցն ի ձեռին իւրում.) այսինքն, արդար դատաստանն ի ձեռն. (ժողովէ զցորեանն. եւ գյարդն այրեսցէ անշէջ հրով:) Նոյնպէս եւ յայգւոյն միի եւ նոյն ողկոյզն ճմլեալ, պարզեալ գինին բերի ի ճաշակ բանական մարդկան. իսկ կնճիռն եւ դեղնին՝ կերակուր խոզից: Նմանապէս ի մի եւ ի նոյն ազգ է քրիստոնէից՝ տնկեալ ի տուն Տեառն, եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ, ի նոյն ծնեալք եւ ի նոյն սնեալք, ոմանք լինին ցորեան եւ բաժակ արքայական. եւ ոմանք ի կերակուր դիջասիրին սատանայի, մատնեալ ընդ նմա, ի տանջանս հրոյ. ըստ այնմ, (երթայք յինէն՝ ի տանջանս, որ պատրաստել է սատանայի եւ կամարարաց նորա:) Եւ զայս ասեր յառաջագոյն. (թէ երկու աղայցեն ի մի երկանս, եւ թէ երկու իցեն՝ ի մահիճս, միսն առցի եւ միւսն թողցի:) Իններորդ՝ զի որպէս այգին մի անգամ տնկի. եւ անդաստանն հանապազ յամենայն ամի սերմանի. նոյնպէս եւ հաւատն մի անգամ տնկի ի մարդն ի ծնընդէնէ աւագանին եւ անախտ մնայ. զի մի անգամ թաղեցաք ընդ Զրիստոսի մկրտութեամբն ի մահ. եւ այլ ոչ կրկնի: Այլ յատանելն եւ բերելն այն է՝ որ յամենայն ժամ խոստովանիմք զնոյն բերանով: Իսկ ի գործ օրինացն՝ պարտ է վաստակիլ. եւ օրըստօրէ ներգործել. զի ամենայն ամս՝ (զհանապազ օրն նշանակէ. որպէս ասէ՝ (օր ըստ տարւոյ եղիցի ձեզ:) Վասն որոյ ասէ Պօղոս. (զյետոյսն մեռացեալ եմ, եւ յառաջիկայսն փութամ ի կետ կոչմանն Զրիստոսի:) Տասներորդ՝ ասէ մարգարէն. (հովիտք բազում արացցեն զցորեան) վասն խոնարհ գոլոյն, եւ յամենայն կողմանց ջրոյն: Որ նշանակէ զխորհուրդս ի մարդկանէ. զի (որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի:) Եւ վասն լեռնացեալ

ամբարտաւանից՝ նշանակէ Տէրն յասելն (ասասջիք լերինս այսմիկ բարձիր եւ անկիր ի ծով:) Եւ յառակն ասէ. (Տէր ամբարտաւանից հակառակ կայ. եւ տայ շնորհս խոնարհաց:) Նոյնպէս եւ այգին ի տեղիս ոմանս՝ արքայութեան նշանակ է. ըստ այնմ, (այր իմ տնկեաց այգի. եւ ետ գնա ցմշակսն. եւ յորժամ չետուն զարդարիւնսն, ասէ.(տացէ զայգին այլոց մշակացն, որք տայցեն զպտուղն ի ժամու.) եւ ի վերայ էած. (այսպէս բարձցի ի ձէնջ արքայութիւնն՝ եւ տացի ազգի՝ որ առնիցէ զպտուղն:) Եւ երբեմն ասէ՝ (հրաման տայ ամպոց իմոց զի մի տեղացցեն յայգի իմ.) զանխնամութիւն նշանակէ: Այսքան յաղագս այսորիկ: Զարց՝ զի՞նչ է յորժամ քարոզէ վարդապետն, յետոյ օրհնութեամբ կնքէ զբանն: Պատասխանի: Զարոզութիւն սերմն է եւ օրհնութիւն ջուր. որպէս երկրագործքն առնեն. յետ սերմանելոյ ջրով ոռոգեն՝ զ վաղվաղակի բուսցի: Եւ գիտելի է՝ զի ի քարոզն հինգ ինչ երեւի: Որ է բնաբան. եւ նախերգան. եւ քարոզ. եւ յորդորակ. եւ օրհնութիւն: Եւ այսպէս համեմատի: Բնաբանն է որպէս սերմն կապճով: Եւ նախերգանն հերկն է՝որ կակղացուցանէ զլսելիս եւ զսիրտս: Եւ քարոզն սերմն հոգեւոր: Եւ յորդորակն ցագանն որ հաւսարէ եւ ծածկէ սերմն: Եւ օրհնութիւնն ջուր ոռոգանել: Եւ ժողովուրդն է երկիր արգաւանդ տեղիք սերմանեաց: Վասն այն քարոզողն յոտին կաալով սերմանէ զբանն կենաց. եւ վարդապետն մշակ սերմանցան: Զարց՝ վասն է՞ր յետ քարոզին օրհնէ վարդապետն: Պատասխանի: Նախ որպէս մշակն նախ սերմանէ. եւ ապա ծածկէ. եւ ապա ոռոգէ ջրով: Երկրորդ՝ որպէս բանն Աստուած նախ սերմանեաց զբան քարոզութեանն ի վերոյ երկրի. եւ յետոյ սնուցանող հոգին էջ որպէս ճառագայթ արեգական եւ աճեցոյց եւ պտղաբերեաց զքարոզութիւն բանին. ըստ այնմ. ըստ այնմ, (նա ուսուցէ ձեզ զամենայն. եւ յիշեցուցէ ձեզ:) Նոյնպէս վարդապետն նախ քարոզ է զբանն. եւ յետոյ օրհնութեամբն զշնորհս հոգւոյն պարգեւէ լսողացն. զի արդիւնասցին բանքն: Երրորդ միտք. քարոզ վարդապետին՝ նշանակէ զայս կենաց քարոզութիւնք եւ առաքելօք եւ վարդապետիւք քարոզէ Աստուած զփրկութիւն մարդկան: Իսկ օրհնութիւնն՝ զայնր կենաց՝ որ ի կատարած օրհնէ զհաւատացեալս, եւ մուծանէ ի կեանսն յաւիտենից: Որոց եւ մեզ տացէ Զրիստոս Աստուած՝ լսեն բան քարոզութեան Տեառն մերոյ, Յիսուսի Զրիստոսի, եւ տալ զպտուղն երեսնաւոր. զվաթսնաւոր. ' զհարիւրաւոր. ' նովաւ ժառանգել զկեանսն յաւիտենից ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր. Որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասնսն Զեղգաց. ի բան սաղմոսին: (Վաստակեալ յաւիտեան՝ ' կեցցես մինչ իսպառ. ' ոչ տեսցես զապականութիւն:) Սաղ. 48. 10: (Գլուխ. ԻԴ)

Ի սկզբանէ ստեղծմանն մեր՝ գործ ' վաստակ սահմանեաց Աստուած մարդոյս. զի ետ զդրախտին գործել եւ պահել: Չի թեպետ ի դրախտի ո ին գոյր երկիւղ պահպանութեան. ոչ գողոց. եւ ոչ անասնոց եւ ոյ փորելոյ. կամ տնկելոյ պետք էին այն: Այլ ի գործ եւ ի վաստակ սահմանեաց զմարդն՝ զի յանաշխատ կեանս՝ դատարկ եւ պարապ ոչ կացէ. այլ կամ զաւելիսն հատցէ, կամ ջուր արբուցէ որ բոխիւր յեղեմայ: Իսկ յորժամ ել ի դրախտէն, զնոյն պատւիրանն դարձեալ երկրորդեաց մարդոյն եթէ. (քրտամբ երեսաց

քոց կերիցես զհաց քո զամենայն աւուրս:) Եւ այսպէս անգստին եւ առաջին պատուիրան է գոծելն եւ աշխատիլն: Արդ՝ կրկին է հաց՝ հոգեւոր եւ մարմնաւոր. վասն զի մարդս հոգի է եւ մարմին: Եւ է հոգեւոր հաց այն, զոր ասէ Տեառն. (ոչ թէ հացիւ միայնն կեցցէ մարդ, այլ ամենայն բանին Աստուծոյ. այսինքն, բան պատուիրանին Աստուծոյ՝ հաց է հոգւոյս. յորժամ գործով զհրամանն Աստուծոյ կատարեմք, կերակրի հոգին: Եւ իմաստութիւնն Աստուծոյ եւ գիտութիւնն՝ ըմպելի է հոգւոյն. ոպէս ասէ Տեառն. (որ ոք ծարաւի իցէ՝ եկեցցէ առիս եւ արբցէ:) Եւ վասն մարմնոյ հացին՝ ասէ Նոյն ինքն Տեառն. (զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր:) Այլ սոքա երկոքին հաց քո՝ հոգեւոր եւ մարմնաւոր, առանց աշխատութեան ոչ գտանին: Չի ի հոգեւորն՝ վարժիլ եւ կրթիլ բարի է եւ պիտոյ մամուլս գիտութեան եւ աշխատութեան. Նոյնպէս եւ առաքինութեամբ չարչարիլ ի ճգնութիւնս՝ ի պահս՝ յաղօթս՝ եւ այլսն. եւ այսպէս զկերակուրն հոգեւոր կարէ գտանել: Նոյպէս եւ ի մարմնավորն վաստակիլ պիտոյ է. քրտնիլ եւ աշխատիլ. եւ ապա զմարմնաւորն գտանել: Վասն այն խրատէ զմեզ մարգարէն: (Չվաստակս ձեռաց քոց կերիցես՝ երանի է քեզ եւ բարի եղիցի:) Ապա ուրեմն թէ զմեր վաստակն ուտել երանութիւն է մարդոյն եւ բարի, թէ զայլոց վաստակն ուտէ՝ չար է մարդոյն եւ թշուառութիւն: Եւ այնպիսիքն՝ զհաց ցաւոց ուտեն: Չորս յարուցանէ մարգարէն ի ծուլութենէ ասելով. (արիք մինչեւ եք Ննջեցեալք. եւ ոյք ուտեք զհաց ցաւոց.) այսինքն, հաց Նեղութեան եւ հաց աղաղակի եւ զհաց մեղաց. զի որ զայլոց վաստակ ուտէ, զայլոց մեղս ուտէ: Եւ թէ ոք ասիցէ՝ Տեառն հրամայէ վասն վաղուեանն մի հոգայք. եւ ոչ կերակրոյ, եւ ոչ վասն հանդերձի: Ասեմք առ այնպիսին թէ՝ պատճառեն զպատճառս մեղաց ոմանք՝ որք գործեն զանօրէնութիւնս: Այն որ հրամայէ թէ՝ զվաղուեանն մի հոգալ՝ զաւելի հոգալն եւ զագահութիւնն արգելու. թէ որ վաղուեանն է՝ աւելորդն է եւ անպիտանն՝ մի հոգայք. այլ զկարեւորն եւ զպիտանին հրամայեաց եթէ, (երթայք գործեցեք.) այսինքն, զհոգեւոր եւ զմարմնաւոր գործն. եւ մի անաշխատ հաց ուտեք: Եւ այն որ ասէ թէ՝ (վասն կերակրոյ եւ հանդերձի զի՞ հոգայք.) զայն ասէ թէ՝ հանապազ վասն մարմնոյ մի հոգայք. այլ վասն հոգւոյ առաւել հոգացեք քան վասն մարմնոյ: Չի որպէս պիտոյ է մարմնոյդ կերակուր եւ հանդերձ. Նոյնպէս պիտանի է եւ հոգւոյդ. առաւել հոգացեք քան զմարմնաւորն: Եւ ոչ զայն ասէ թէ դատարկ եւ պարապ կացեք ի գործոյ: Եւ զի՞նչ է որ ասէ. (վասն է՞ր զօրս ցերեկս դատարկ կայք. երթայք գործեցեք յայգւոջ:) Մարմնաւորն զհոգեւորն Նշանակէ. զի մարմնաւորն պիտոյ է հոգեւորին. որ զմարմնաւորն ոչ գործէ, Նոյնպէս եւ ոչ զհոգեւորն: Եւ դու այսպէս լսողդ աւետարանին եւ առնողդ՝ ընդէ՞ր ոչ լսես առաքելոյն որ ասէ. (որ արասցէ ոչ՝ կերիցէ մի:) Եւ ի չորս դեմս բաժանին: Ոմանք առնեն եւ ուտեն. բարի է հոգւոյ եւ մարմնոյ. (զվաստակս ձեռաց քոց կերիցես երանի է եւ բարի եղիցի քեզ:) Ոմանք ոչ առնեն եւ ոչ ուտեն. չար է հոգւոյ եւ մարմնոյ. զի հեղզ են եւ ծոյլք: Ոմանք առնեն եւ ոչ ուտեն. բարեգոյն է. զի այլոց բաշխեն: Եւ ոմանք ոչ առնեն եւ ուտեն. չարագոյն է. զի հոգւոյ եւ մարմնոյ վնաս է: Եւ դու ի չորիցս յայցանէ՝ զվերջինն ընտրես որ առաւել չար է: Եւ ընդէ՞ր յորժամ ասեն մի առներ, լսես եւ կարի քաջ մեկնես. եւ յորժամ ասեն թէ մի ուտեր, չլսես եւ զականջդ խփես: (Այնպիսւոյն պատուիրեմ ասէ առաքեալն գործել ձեռօք՝ եւ զիւր հացն ուտել. եւ ոչ պարապ կենալ:) Չի դատարկութիւնն մայր է ամենայն

մեղաց. զի դատարկ մարդն՝ արգաւանդ երկիր է սատանայի. որ զամենայն չար խորհուրդն ի նա սերմանէ եւ պտղաբերէ: Դարձեալ՝ մայր է ամենայն չարեաց. զի դատաարկութեամբն՝ ոչ զհոգին գտանէ մարդ, եւ ոչ զմարմինն. ոչ աղքատս կերակրէ, եւ ոչ զընկերս սիրէ եւ պատուէ: Դարձեալ մայր է ամենայն չարեաց. զի յորժամ ոչ գործել է, մարմինն կարօտի պիտոյից. կերակրոյ եւ ծածկութի. զի ոչ կարէ մերկութեան եւ սովոյ տանիլ: Յայնժամ կամ երթալ մուրայ եւ խնդրէ, եւ թէ ոչ տան՝ գողանայ եւ յափշտակէ. թէ մուրանայ՝ մարմնոյն է զէն եւ ամօթ. թէ գողանայ, հոգւոյն է զէն եւ տանջանք: Դարձեալ՝ թէ մուրայ, վճարել պարտ է զայն աղօթիւք. եւ թէ ոչ՝ պարտական մնայ: Եւ թէ գողանայ, սուտ ասէ եւ յափշտակէ, զոգին պատիժն սպանումն է եւ չանկալն: Ահա պարապ եւ ան գործ մարդոյն պատիժն այդ է, որ փոքր՝ ի շատէ ծանուցէ ձեզ: Բայց այժմ մտցուք ի սուրբ գիրս եւ անդ տեսցուք թէ, զի՞նչ ասեն վասն յուլիցն եւ ծուլիցն: Եւ յոյն ի մարմնաւոր աշխատանսն. եւ ծոյն ի հոգեւոր ուսմանս եւ առաքինութիւնս: *Արդ՝ նոյն ինքն ի մաստունն Սողոմօն՝ որ դայեակ է, եւ խրատիչ ամենայն հասակի մարդկան: Նա դնէ զնախատինս վատացն, որք են հեղձք եւ տարտամք յամենայն գործս: Չոր տասն գլխով առեալ ասացից ի բանից նորա: Նախ որ ասէ: (որ թաքուցանէ զձեռն իւր իի ծոց իւր ի տարապարտուց. եւ ոչ ի բերան իւր տարցէ զնա:) Տարապարտ զայն ասէ, որ չունենայ ինչ պատճառ տկարութեան: Չի չորս է պատճառ խափաանման ձեռաց. կամ ինքն հիւանդ լինի. կամ կոյր լինի. կամ ձեռն չորացեալ լինի. եւ կամ խոց լինի. ոչ գործելն՝ անմեղադիր է. այլ արտաքոյ սոցա՝ վատութիւն է դատարկ կալն: Իսկ ի հոգեւորն՝ ձեռ նշանակէ զգործ առաքինութեան. զպահս. զաղօթս. զողորմութիւն, եւ զայլն. յորժամ թաքուցանէ զոսս ծուլութեամբ ի ներքոյ հեղձացեալ խորհրդոյն, նա ի բերանն իւր ոչ կարէ տանիլ զնա: Բերան՝ զբանական նշանակէ՝ եւ ձեռն զգործնական առաքինութիւնն: Չ գործնականն՝ կերակուր է բանական հոգւոյն. եւ տնտեսականն՝ ըմպելի: Մինն շուր՝ որ զծարաւն զովացուցանէ միայն. եւ միւսն գինի՝ որ զովացուցանէ եւ զմայլէ: Նոյնպէս որ իմաստնոց եւ աշխարհի գիտութիւնն է՝ զմիտսն զովացուցանէ իմաստութեամբ: այլ ի հոգւոյն սրբոյ գիտութիւն սուրբ գրոց՝ զովացուցանէ իմաստութեամբ, եւ զմայլէ սիրովն Աստուծոյ: Եւ որ ծոյն է՝ ոչ կերակրէ զհոգին գործիականաւ, եւ ոչ արբուցանէ տեսական իմաստութեամբ: Երկրորդ ասէ: (Որպէս դուռն շարժէի ի ծխնւոջ իւրում. նոյնպէս եւ վատն ի մահիճս իւր:) Դուռն ի ծխնւոջ շարժի ի յետ եւ յառաջ. այլ ոչ հեռանայ ի տեղոյն. նոյնպէս եւ յոյն՝ դանդաղեալ յանկողնի, շրջի յայկոյս եւ յանկոյս. եւ ոչ կարէ յառնել եւ ի գործ ընթանալ մարմնական: Իսկ որ ծոյն է ի հոգեւորն, սիրէ զհրեշտութիւն մարմնոյ. դատի ի խիղճէ մտացն. եւ շարժի յայսկոյս եւ յնկոյս. եւ ոչ կարէ փոխիլ ի չարէն ի բարի խորհուրդ. զի ծանրացեալ է մարմինն հեշտութեամբ ծուլութեանն, որպէս քնով յիմարեալ: Երրորդ՝ պատճառ դնէ վատ եւ ասէ: (Առիւծ ունի զճանապարհն. եւ ի հրապարակս սպանանօղք:) Չթոյլ եւ զտարատամն յոր ժամ ի ճանապարհ վասն բանի զրկես, պատճառ դնէ թէ՝ առիւծ կայ ի ճանապարհն եւ գազան. ոչ երթամ. առիւծն ի ճանապարհն զի՞նչ առնէ. առիւծն ի մայրին է. կամ ի վայրի. այլ ասէ՝ թէ սպանանօղք կան ի հրապարակս: Ի հրապարակն ամենայն ժողովեալ են. ուստի՞ է սպանանօղն. այլ նա այսպէս պատճառ դնէ: Իսկ հոգեպէս՝ յորժամ

ուղարկեմք զմարդ առաքիւնութեան ճանապարհաւն յերկինս, ասէ. առիւծն սատանայ ի ճանապարհի կենցաղոյս է. եւ ըմբռնէ զիս. ըստ այնմ, (նստի դատարանեալ ի գաղտնիս, սպանանել զաղքատն:) Եւ սպանօղք են ի հրապարակս. այսինքն, բնական ցանկութիւնս եւ կարօտութիւնս մարմնոյ՝ յամենայն կողմանէ իբրեւ ի հրապարակի՝ խոցոտեն զիս եւ սպանանեն: Առիւծն սատանայ՝ զխորհուրդս մտաց ըմբռնէ. եւ ցանկութիւնք զզգայարանս մարմնոյն խոցոտեն. վասն այն ոչ իշխեմ գնալ յուղի առաքիւնութեան յերկինս: Ամենայն այսոքիկ՝ պատճառք են նմա, որ զծովութիւնս եւ զհեղգութիւնս սիրէ: Տե՛ս զառաջիկան՝ որք արիութեամբ կոխեցին զցանկութիւն մարմնոյ. եւ զերծան յորոգայթից սատանայի: Այլ քեզ հեշտութիւն մարմնոյն լինի պատճառ՝ որ կորուսանէ զքեզ, որ ծոյլ ես եւ հողգ. եւ այսպէս սատանայ տեսանէ թոյլ զքեզ եւ տկար, եւ որսայ: Չորրորդ ասէ: (Վատն՝ մաստնագոյն անծին իւրում թուի, քան զայն որ զլրումն օրինացն բերցէ:) Այն որ հեղգ է եւ տարտամ ի գործն՝ յորժամ հարցանեն թէ ընդէ՞ր ոչ վաստակիս, ասէ. ես քան զամենայն մարդ խելօք եմ. նոքա ամենեքեան ինձ վաստակին. ասեն աշխարհականքն թէ՛ անբախտն առնէ, եւ բախտաւորն ուտէ: Նոքա ինձ մշակեն, վաստակին, եւ ես անհոգ նստիմ: Իսկ ի միտս՝ այն մարդն որ հեղգ է յուսումն, եւ տարտամ ի բարի գործն, զի ոչ ուսանի, եւ ոչ այլոց ուսուցանէ, ոչ գործ է զբարիս, եւ ոչ այլոց ուսուցանէ, ինքն ի յաչս իւր իմաստուն երեւի: Ասէ՛ ես զայն ամենայն գիտեմ. վասն այն ոչ ուսանիմ. եւ ես ինձ համար եմ ուսեալ եւ ոչ այլոց. ինձ զի՞նչ փոյթ է որ ուսուցանեմ զայլս: Ասեմք թէ զգործն է՞ր չես առներ. ասէ՛ ես ծածուկ գործեմ՝ որ չլինի թէ զիս փառաւորեն: Կամ ասէ՛ մարդոյն հաւատ պիտի, գործս ի՞նչ իրք է. անասունք հանապազ խոտ ուտեն. էջք միշտ ի պահս են. ծառքդ խիստ ողորմութիւն տան. այլ միկն ի դոցանէ յարքայութիւնն ոչ գնայ: Նա վայ տայ այնպիսուն մարգարէն Եսայի: (Վա՛յ, այնոցիկ՝ որք յաչս անձանց իւրեանց իմաստունք են, եւ ինքեանց խոր հրդականք երեւին:) Նա վասն այն չեն ուսանիր՝ եւ չեն գործեր, թէ քան զամենն լաւգիտեմք եւ կատարեալ եմք. եւ քան զայնն ասէ՛ որ զլրումն աւետեաց բերեւ: Լրումն՝ կատարեալ առաքիւնութիւնն է. որ տեսականաւն եւ գործնականաւն կատարեալ լինի. եւ աւետիս է, որ զայն քահանայ աւետարանէ այլոց. բանիւ ուսուցանէ զճշմարիտն. եւ գործով ցուցանէ զբարին. եւ այսպէս զամենայն մարդ տեսանելով եւ լսելով խրատէ ի բարին. որպէս Տէրն ասէ. (տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է:) Հինգերորդ ասէ: (Յանկութիւնք սպանանեն զվատն. զի ոչ յօժարի գործել ինչ:) Այն որ թոյլն է եւ անգործ՝ հանապազ ցանկութեամբն չարչարի. զիի կարոտ է ամենայնն բարեաց եկրաւորաց. կերակրոյ, ըմպելոյ, ծածկութիւն, եւ այլ իրաց, եւ ոչ հասանի. զի ոչ գործէ, եւ ոչ աշխատի. ոչ տան նմա զինչ եւ ցանկայ. եւ այն ցանկութիւնն սպանանէ, որ հանապազ հեշտութեան մարմնոյն ցանկայ. եւ վասնայն ոչ աշխատի եւ զկարօտն լնու: Եւ հոգեպէս՝ (սպանանէ ցանկութիւնն զվատն:) զի ծոյլն թէ ցանկայ իմաստութեան եւ ուսման, ոչ գտանէ. զի հեշտութիւն մարմնոյն հակառակի: Նոյնպէս թէ ցանկայ բարի գործոց, առաքիւնութեան, խաղաղութեան եւ այլ ինչ իրաց, ոչ հասանի. զի մարմննով ոչ գործ է. առայլ միայն ցանկութեամբ յօժրի. եւ այնու չարչարի. ըստ այնմ, (ցանկայք եւ ոչ հասանիք. վասն զի ոչ խնդրէք. խնդրէք եւ ոչ առնոյք. վասն զի

չարաչար խնդրեք. եւ անդէն ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք:) Դարձեալ եւ այլապէս՝ (ցանկութիւնն ապականէ զվատն.) զի անպարհիշտն եւ ծոյլն՝ միապէս են յանցաւորք. զի ծոյլն եւ հեղզն՝ մարմնոյ հեշտութեանն ցանկայ զի դիրնսցի: Նոյնպէս եւ անպարհիշտն ի գործ շնութեան, կամ ագահութեան ցանկայ. որ մարմինն դիրանայ եւ հեշտանայ. այսինքն, նոյն եւ հաւասար մեղք է անպարհիշտ եւ թոյլ եւ վատ մարդոյն: Այլ զանագանին՝ զի մինն զբարին ոչ առնէ. այսինքն, հեղզն. եւ մասն առնէ զչարն. այսինքն, անպարհիշտն. եւ մի նոյն է ոչ առնել զբարին, եւ առնել զչարն. վասն այն ասէ. (շնացողք՝ ո՞չ գիտեք. զի սեր աշխարհիս՝ թշնամութիւն է առ Աստուած.) որ զմարմնն սիրէ՝ զԱստուած ատէ, եւ թշնամի է նմա:) Վեցերորդ ասէ: (Որ գործէ զերկիր, լցցի հացիւ. եւ որ հետ երթայ նանրութեան, պակասամիտ է:) Ի մէջ ամենայն արւեստից՝ զերկիր գործելն բարի է եւ արդար վաստակ. մէկ՝ որ առաջին արւեստ է մարդոյս. ասաց Աստուած. (գործել զերկիր եւ քրտամբ ուտել զհաց.) երկու՝ զի յայլ արուեստ՝ լինի գողութիւն, կամ սուտ, եւ զրկանք: Որպէս ի վաճառն որ ստախօսութեամբ լինի. եւ ոստայնանկն եւ դարբինն՝ կամ զրկի վարձն, կամ գողանայ ի նիւթոյն. եւ այլ սոյնպիսիք: Այլ երկրագործութիւնն՝ ամենեւին արդարութեան գործ է. ոչ սուտ ասել գոյ. եւ ոչ գողանալ եւ զրկել. այլ շահարար է նա տարերաց եւ տնկոց. եւ ակն ունի ողորմութեանն Աստուծոյ պտղաբերել. յայնժամ լնանի տունն եւ շտեմարանն հացիւ եւ ամենայն բարութեամբ. յանդէ. յայգւոյ, ի ծառոյ, եւ յանասնոցն, եւ յայլոց: Իսկ որ յայսպիսի գործոցս նանիր եւ դատարկ կայ, պակասամիտ է. զի որ յամառն ոչ գործէ, ի ձմեռն ոչ վայել է. որ զերկիր մարմնոյ իւրոյ չար չարէ եւ հերկէ. ի պահս եւ յաղօթս. եւ յարութիւն, եւ յայլ խոնարհութիւն. եւ սերմանէ զբան պատուիրանացն Աստուծոյ ի սրտի. եւ ոռոգանէ իմաստութեան ջրով հոգւոյն սրբոյ որ ի սրբոյ գիրս խօսեցեալ է. յայնժամ բուսնի եւ տայ զպտուղն երեսնաւոր. վաթսնաւոր. եւ հարիւրաւոր. աստ հոգւով եւ մարմնով անկարօտ լինի. եւ անդ շտեմարանքն երկնից լցեալ լինի ամենայն բարութեան. ըստ այնմ, (զանձեցէք ձեզ զանձս յերկիսս. զի յորժամ այդ պատկասի որ մարմնաւորդ է. ընդունեցին զձեզ ի յաարկան յաւիտենից:) Եւ որ յայսմանէ հողզանայ՝ անմիտ է. եւ զհետ նանրութեան ընթանայ: Չի ամենայն ինչ մարմնական գործ՝ նանիր է եւ ընդունայն. որպէս ասէ ժողովօղն. (ուսայնութիւք ունայնութեանց, եւ ամենայն ինչ ընդունայն է:) Եւ յերկու դիմաց է նանրութիւնն: Մին՝ որ նիւթքս ամենեքեան անցաւորք են. եւ միւս՝ որ մարդս անցաւոր եւ նանիր է. որպէս ասէ Դաւիթ. (մարդ նանրոյ նմանեցաւ. եւ աւուրք նորա որպէս հովանի անցին:) Եօթներորդ ասէ: (Չվատն կործանէ երկիւղ. եւ անձինք կանացեաց քաղցիցին:) Վատն՝ հեղզն է եւ թոյլն ի գործս: Նա այնպէս երկնչի ի գործոյ՝ որպէս թէ մարդն ի փուշ անկանի. որպէս ասէ. (զ ճանպարհս վատաց կալցեն փուշք.) ոչ փուշ կայ ի գործն, այլ ինքն ի տրտմութեն փուշ կարծէ: (Եւ անձինք կանացեաց կորիցեն:) Չհեղզ մարդն եւ զրկինն՝ հաւասարէ ի տկարութիւնն. որ բնական է կանանց տկարութիւն. նա կամաւ ստանայ զբարս կանանց, եւ նոցա նմանի: Դարձեալ ի հոգ եւ որն՝ որ ծոյլն է ի գործս բարիս: Չի ոմանք առաւել յանդուզն են եւ չար. նոյնպէս ոմանք առաւել թոյլ են տկար. եւ այս եւս չար է: Նոքա սնտոյ երկիւղիւ օտարանան յԱստուծոյ եւ ի մարդկանէ. այն է որ ասէ մարգարէն. (ատեցեր զայնոսիկ՝ որք պահեն զերկիւղ սնտոյս:) Եւ յայս

սուտ երկիրէս առաւել տկարանայ. եւ ոչ գործէ զառաքինութիւնս. որպէս այն մարդն՝ զոր Զրիստոս հրամայեաց յաւետարանին. (գիտեմ զի այր մի խիստ ես. երկեայ եւ զարծաթ քո թաքուցի:) Չի կրկին է երկիր. մինն բարի. եւ միւսն չար: Բարի երկիրն է՝ որ վասն տանջանաց գեղենոյն երկնչի յԱստուծոյ. եւ երկնչի յօրինացն եւ իմահուանէ. եւ այս երկիրիս՝ պահեն զօրէնս Աստուծոյ: Իսկ չար երկիր է՝ որք տկարանան եւ տրտմին, եւ զբարին ոչ գործեն. այս յուսահատութիւն է եւ ի չարն տանի. եւ այն երկիրն բարի է եւ ի յարիութիւնն տանի: Այս չար երկիր է որ ասես. չեմ կարել գործել զբարին. այսպէս սատանայ հակառակի. մարդիկ հակառակին. մարմինս եւ աշխարհս հակառակի: Այս չար է՝ որ ժամանակէս վախէ եւ զբարին ոչ գործէ. այն բարի երկիր է՝ որ ի հանդերձեալ տանջանաց երկնչին, եւ զբարին առնէ. այսպէս զանազանին բարի է չար երկիրքն: Նա այնպիսիքն որք զկանացի երկիրն ստանան եւ հեղգանան, աստ ի զգալի մարմնաւոր հացէս զրկին. եւ անդ ի հոգեւոր կենացն զրկին. որպէս այն ծառայն՝ որ չար եւ վատ կոչեցաւ ի Զրիստոսէ, եւ պատժեցաւ ի տանջանս: Ութերորդ ասէ: (Ամենայ արբիռ եւ բոզանոց՝ աղքատացի. եւ պատառատուն զգեցցի ամենայն քնեած:) Այսինքն, որք արբեան զգինին շարժէ գինին զցանկութիւնն եւ պոռնկին. եւ յետ պոռնկութեանն՝ ննջելն հետեւի որ գինին թափի: Այնպիսիքն՝ աղքատանան յընչից գինւոյ գինն, եւ ի պոռնկաց կապեանն, եւ ի վարձսն: Եւ յորժամ արբեան եւ քնին, այլ ոչ գործեն. յայնժամ աղքատանան եւ մերկանան. զ վաստակածն իմեն, եւ այլ ոչ վաստակին: Նոյնպէս ծուլութիւնն եւ մեղքն՝ արբեցութիւն է. յորժամ ծուլութեամբ արբեամք եւ ի բուն մեղացն ննջեմք, յամենայն բարեաց աղքատանամք. զի հոգեւոր մեծութիւնն՝ այսոքիկ են. պահքն. աղօթքն. ողորմութիւնն. ժուժկալութիւն. չարչարանքն. արիութիւնն. եւ այլն: Աստ յայցանէ զրկեալ է. եւ անդ ի հանդերձեալն մերկ եւ պատառատուն զգեցեալ. որպէս այնմ որ ասեր. (ընկեր՝ ոչ ունէիր հանդերձ հարսանեաց, վասն է՞ր մտեր այսր. հանէք զծառայոյ անպիտան ի խաւարն արտաքին:) Իններորդ ասէ: (Ով վատ՝ երթ առ մրջիւնն եւ նախանձեաց ընդ նա. կամ երթ առ մեղուն՝ եւ ուսիր զի արդ գործունեայ է:) Չի գայս տկար կենդանիս ստեղծեալ է Աստուած վասն երկու իրաց: Մին՝ որ զմեզ յամօթ առնէ. յորժամ սոքա չարչարեն զմեզ. այսինքն, մունն. մժեխն. պիծակն. եւ այլ կենդանիք մանր. որք հանապազ չարչարեն զմեզ: Չի զփարաւօն՝ ոչ արջ կամ առիւծ տանջեցին, այլ այսպիսի ժիժմակք կենդանիք. որպէս մուն. մոծակ. գորտ. եւ շանճանճ, եւ այլքն: Եւ երկրորդ՝ որ մեք ի սոցանէ օրինակկ ճնումք ժրութեան գործոց. որպէս մրջիւնն հանապազ յամառնն ի բուն վաստակի եւ աշխատի. ի հնձանէ, ի կալէ, ի խոտանէ, վաստակի եւ ժողովէ եւ ամբարէ. եւ ի ձմեռն վայելէ ոչ կայ ճաշակ ժողովելոց: Այսպէս եւ մեզ պարտ է աշխատիլ ի հոգեւորն եւ իմարմնավորն. գործել յամառն, որ վայելեմք ի ձմեռն: Չի որ յամառն շրջի ի կռնէ ի կուռն, ի ձմեռն շրջի ի դռնէ ի դուռն ասեն խելօքքն: Արդ՝ իմա՝ որ ամառն է չես գործեր, ի ձեռն ուստի՞ վայելես. որպէս ասէ նոյն առակն. (թեպետ նախատի վատ՝ ոչ ամաչէ. եւ որ առնու զցորեան փոխ յամարայն. զի ամառն ժամանակ է ժողովելոյ. յորժամ փոխառնուս, ե՞րբ պիտի վճարես: Նոյնպէս այս կեանքս ամառն է ժողովելոյ զհոգեւոր բարիս. եւ անդ ձմեռն. ոչ սերմանել կայ եւ ոչ ժողովել. եւ ոչ փոխ առնուլ, եւ ոչ գործել. զինչ ի յայս կեանսս ճարակ կայ վաստակելոյ՝ անդ

անճար է: Վասն այն զհոգեւոր եւ զմարմնաւոր գործն՝ ի մրջիւնն պարտ է գնալ եւ ուսանիլ: Այլեւ մեղուն փոքր թռչուն է. եւ հանապազ զքաղցր կերակուրն ժողովէ. զոր թագաւորք եւ տնանկք ի բժշկուի տանին: Նոյնպէս պարտ է թռչիլ մեզ թեւօք մտացս ի գանազան ծաղիկ սուրբ գրոց եւ զգիտութիւնն ժողովել. որք քաղցր կերակուր է մտաց եւ լուսոյ պատճառ. որ զխաւար տգիտութեան հալածէ ի մարդոյ: Եւ այսպէս զօրութիւն է աստուածային իմաստութիւնն՝ որ գանձնիշխան կամսն նա դարձուցանէ ի չարէն ի բարի. զոր ոչ մեծամեծք իշխանք եւ բռնաւորք կարեն. ոչ սուր, կամ նետ, մտանէ ի նա. բանն՝ իւր իմաստութեամբ մտանէ ի նա եւ փոխէ ի չարէն: Եւ այնպէս իմաստութիւնն Աստուծոյ՝ որ յայս կեանս ի փառս եւ ի պատիւ հանէ զմարդն. եւ հանդերձեալն առաջնորդէ յանվախճան կեանս. եւ ոչ միայն ինքեան, այլեւ ամենեցուն խողաց մեծամեծաց եւ փոքունց բժշկութիւն է եւ դեղ հոգեւոր եւ մարմնաւոր: Նա վասն այն զայս երկու կենդանիս օրինակ տայ զմրջիւնն բարի գործոց. եւ զմեղուն բարի իմաստից. որ բարի գործն՝ զմարմինն կարգաւորէ. եւ իմաստութիւնն զհոգին: Իմաստութիւնն զհոգին: Իմաստութիւնն լապտեր է. եւ բարի գործն իւղ՝ որ ի վառ պահէ զլապտերն: Բարի գործն կերակուրն է. եւ իմաստութիւնն ըմպելի ոպէս ասացաւ ի վերոյ: Այլեւ երկուքն եւս պիտոյ է մեզ. որպէս մարմնոյ կերակուրն զքաղցն լնու. եւ ըմպելիին զծարաւ. նոյնպէս ի հոգեւորն է: Վասն այն յերկուսին գործսն արհանալ պիտոյ է. զի զհոգիս կերակրեսցուք ի սովոյ. եւ զիմաստութիւնն արբցուք ի ծարաւոյ:

Տասներորդ ասէ. (Մինչեւ յե՞րբ անկեալ դնիս ով վատ. եւ ե՞րբ ի քնոյ զարթիցես, եւ այլն:) Չի թեպէտ ըստ մարմնոյ ծուլիցն տեսանի այս, զի աղքատ մնան ասէ. իսկ ձեռք ժրաց մեծացուցանեն: Սակայն հոգեւորն միանի այսպէս: Ով վատ եւ դանդաղկոտ յառաքինութեանց. մինչեւ յե՞րբ անկեալ դնիս ի մէջ փշոյ մեղացոյ առանց խլրտալոյ: Կամ ե՞րբ ի քնոյ զարթիցես. զքուն մեղացն ասէ՝ որ տան ի մահ. զոր աղօթէ Դաւիթ. (լոյս տուր Տէր աչաց իմոց. զի մի երբէք ննչեցից ի մահ:) (Սակաւ մի ննչիցես:) Այսինքն, ասես տղայ եմ, փոքր մի հեշտանամ շռայլութեամբ եւ ազատեղութեամբ, եւ ոչ գիտութեանս թէ զող մահուն յորում ժամու գայ: (Սակաւիկ մի դադարիցես:) Այսինքն ասես մեծատուն եմ ընչիւք. փոքր մի կամ ի մէջ փշոտ աշխարհիս եւ ժողովեմ, մինչ մեծանայ որդին իմ եւ ժառանգէ. եւ ոչ գիտես անմիտ, (թէ յայսմ գիշերի զոգիդ քո ի քէն ի բաց պահանջեն:) (Փոքր մի ընկրկեսցես զձեռնդ ի վերայ լանջացոյ:) Այսինքն, ասես տկար եմ մարմնով. անգործ մնամ մինչեւ առողջանամ. ըստ թոյլ ծառային որ ասաց. (Տէր իմ յամէ զգալ. յանկարծակի եկեսցէ եւ կտրեսցէ զնա ընդ մէջ, եւ այլն:) (Այսպէս եկեսցէ իբրեւ զկարապետ աղքատութիւն քո:) Այսինքն, աղքատութիւնդ բարեաց գործոց՝ կարապետ եւ գուշակ լինի քեզ տանջանաց դժիխոցն: (Եւ կարօտութիւն քո.) այսինքն, ըստ յիմար կուսանացն. որք կարօտ եղեն իւրոյ: (Յացէ իբրեւ զսուրհանդակ:) Այսինքն, օրհասական մահն ըմբռնեսցէ իբրեւ զչար ճանապարհորդ. եւ այլ ոչ տայ թոյլ. այլ ի նոյնն սպանանէ. ըստ ժողովին՝ (փայտն յոր կողմն անկցի, ի նոյնն կացցէ.) այսինքն, որպէս մարմինն մեռեալ. թէ ի հիւսիս՝ յանգթութիւնն Աստուծոյ. եւ թէ ի հարաւ՝ այսինքն, ի ջերմութիւն սիրոյն Աստուծոյ. (զի այս է ժամանակ ընդունելի եւ օր փրկութեան ասէ Պօղոս:) Իսկ յետ այնորիկ ասէ. (ընկալցի իւրաքանչիւրոք իւրով մարմնով զար ինչ գործեաց. եթէ բար,

Եւ եթէ չար:) Այժմեղ բարք՝ յորժամ օր մահուն այսպէս փութանակի է, եւ յանկարծակի գայ, եւ անհնար է որ հարկիւ պիտի գայ: Նա զարթնուլ պիտոյ է մեզ ի քնոյ մեղաց. եւ պատրաստ կենալ. զի այսս է ժամանակ փրկութեան՝ որ զհոգին փրկեն ի դժոխոց. այս է ժամանակ ընդունելոյ զարքարյութիւնն. որպէս ասէ առաքեալն. (ահա օր փրկութեան. ահաա ժամանակ ընդունելի. մի եւ մի իւրք տայցէք պատճառս. զի մի արատեսցի պաշտօնն ձեր:) Չի չկայ ճարակ ի յանկ կեանսն գտանելոյ. ոչ զբարի գործս, եւ ոչ զժամանակ կենացս: Չի որպէս հասակս մեր փոխի իիւ տղայութիւնն, ի մանկութիւն, եւ ի ծերութիւնն, այլ ոչ դառնայ յետ: Նոյնպէս փոփոխի եւ անցանէ, եւ այլ ոչ գտանի: Նա աղաչեմ զձեզ սիրովն Քրիստոսի. քանք օր կայ, եւ լոյս է գործելոյ, քանի ամառն է, եւ ժամանակ է ժողովելոյ, քանի առաջ ես եւ ուժ ունիս վաստակելոյ, քանի թագաւորն երկնաւոր յաթոռ շնորհաց է նստեալ, անկեալ առաջի նորա խնդրեսցուք զողորմութիւն ի դեպ ժամանակի: Չի յայնժամ յաթոռ արդարութեան նստի. եւ ուղղութեամբ դատէ. եւ յարդար իրաւունսն ողորմութիւն ոչ ասէ. (մի ողորմի աղքատին ի դատաստանի:) Քանի ժամանակդ ի ձեռսդ է, եւ ուժդ եւ խելքդ ի վերայ է, եւ դու քո կամացդ Տէր ես, նա իր մի պաշար հոգս այն կենացն. (յորժամ այդ պակասի, ընդունին զքեզ ի յարկսն յաւետիեանից:) Թէ չէ՝ գայ ժամանակ, որ ելանես ի մարմնոյս, եւ հանեն ի կամաց քոց, յայնժամ փոշիմանիլն ոչ օգնէ. հառաչանքն անպիտան է. աղաչանաց ոչ լսէ. զարտասուս ոչ տեսանէ: Չոր օրինակ՝ գողն յորժամ տանին ի սպանումն եւ ի չանկալն, թպէտ բազում աղաչէ, ոչ ոք լսէ. նոյնպէս եւ անդ: Նա վասն այն պարտ է այսօր զղջանալ ի մեղաց. այսօր խոստովանիլ. այսօր հառաչել. աչօք լալ. ձեռօք գործել եւ վաստակիլ. եւ բաշխել. եւ տալ աղքատաց: Այս է որ խրատէ մարգգարէն. (վաստակեա յաւիտեան՝ եւ կեցցես մինչ իսպառ. եւ ոչ տեսցես զապականութիւն:) Արդ՝ ինքն ամենողորմ եւ բազմագութ՝ քաղցր եւ առատն Տէր՝ շարժեսցի ի գութ ողորմութեան ի վերայ ձեր. եւ շարժեսցէ ի գործս բարիս. եւ հանցէ ի ձեռք զսիրտ քարեղէն. եւ տացէ սիրտ մարմնեղէն. եւ զհոգին սուրբ նորոգեսցէ ի ձեզ. եւ զամենայն որոգայթ եւ զխաբէութիւն սատանայի հալածեսցէ ի ձեռք: Ի կեանս յայսմիկ խաղաղութեամբ՝ անփորձ պահելով,՝ հետ աստեացս՝ սրբոց՝ սիրողաց անուան իւրոյ մասնակից արասցէ զձեզ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. Որում փառք՝ զօրութիւն ընդ Յօր Իւրում,՝ Ամենասուրբ Յոգույն. այժմ՝ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն քնոյ. ի բանն Ղուկասու: (Չի՞ ննչէք. արիք կացեք յաղօթս:) Ղուկ. 22. 46:(Գլուխ. ԻԵ)

Չորս ազգ է քունն. երկուքն բարի է.՝ երկուքն չար: Նախ՝ բնական քունն բարի է: Երկրորդ՝ յաւիտենական բարեգոյն է: Երրորդ քունն՝ չարէ որ է մեղացն: Չորրորդն՝ չարագոյն է քուն տանջանացն: Այսպէս չորս է արթունութիւնն յայսմ աշխարհի. երկուքն բարի են. եւ երկուքն չար: Առաջին՝ արթնութիւն մարմնոյն բարի է. որ ի գործ ինչ եւ ի վաստակ լինի. ըստ այնմ, (զվաստակս ձեռաց քոց կերիցես. երանի է քեզ եւ բարի եղիցի:) Երկրորդ՝ արթնութիւն բարեգոյնէ, որ մտօքն արթուն լինի եւ ժիր ի բարի գործս. այսինքն, որ զհոգեւորն եւ զմարմնաւորն ճանաչէ. զչարս եւ զբարին ընտրէ. թողու զչարն՝ եւ գործէ զբարին: Վասն այսր ասէ Տէրն. (ամենեցուն

ասեմ ձեզ արթուն կացեք:) Երրորդ՝ արթնութիւնն չար է, որ յոյլն է եւ ծոյլն. եւ ոչ մարմնոյ գործէ, եւ ոչ հոգւոյ աշխատի. եւ ոչ ուսանի, եւ ոչ ուսուցանէ. այնպիսին չար է, թեպէտ մարմնովն արթուն է: (Չի յուլից եւ ծուլից՝ փակեալ է դուռն արքայութեանն:) Չորրորդ՝ արթնութիւնն որ չարագոյն է, որ մարդնն ի չարն լինի արթուն. ի մարմնաւորն ճարտար. եւ ի հոգեւորն տգետ. ի յառ եւ ի տուրս. յուտել եւ յմպել. ի գրկել եւ ի ժողովել. եւ յայլ ամենայն յսպիսիս, առաւել չար արթնութիւն է. զի լաւ էր ննջել, քան յայսպիսին արթուն լինիլ: Այժմ դարձցուք յառաջին բանն մեր՝ որ Դ ազդ է քունն: Առաջին բնական քունն՝ բարի է եւ օգուտ վասն երեք պատճառի: Նախզի՝ ասէ Ասրիստոտել. հարկ է որ ամենայն կենդանի ննջէ. զի յարթնութիւնն աշխատի. այսպէս եւ մարդս: Երկրորդ՝ զի հրեշտակք յայտնի նմա. որպէս սանդուխքն Յակօբայ: Երրորդ իմաստնաւան. որպէս Սողոմօն ի տեսիլ երագոյն զամենայն խորհուրդս Աստուծոյ ի քունն յայտնեաց նմա. որպէս ասէ յերկրորդ թագաւորութեանցն: Այլ աստ լինիի հարցումս վասն երագոյ: Երագն մտա՞ցն է տեսութիւն, թէ զգայութեանցն: Ասեմք թէ՛ երագն ոչ մտաց է տեսութիւն, եւ ոչ զգայութեանց: Եւ զի ոչ է զգայութեանցն՝ յայտնի իսկ է. զի գոլորշիք կերակրոյն վերացեալ ի գլուխն իբրեւ զծուխ որ զլուսանցս տանն՝ խցեալ են զգայարանս: Եւ նոքա խափանել են յիւրաքանչիւր գործոց. եւ կոչի ախտս այս քուն մարմնական: Եւ զի ոչ մտացն է ներգործութիւն՝ յայտ է յերից: Նախզի՝ գործիք մտացն՝ զգայարանքն են. որովք տեսանէ եւ լսէ եւ այլն: Յոր ժամ նոքա խափանեալ են, դադարեալ է եւ միտքն ի գործոյն իւրոյ: Չոր օրինակ՝ արուստաւորք ոչ ունելով գործիս, ոչ կարեն գործել ինչ: Երկրորդ՝ զի գործ մտացն է՝ խորհիլն, եւ ընտրութեամբ դատելն. իսկ երագն՝ այլ ընդ այլոց ժիժմունք են եւ ժանդատեսութիւն, եւ ոչ կարգաւ եւ խորհրդեամբ ինչ: Երրորդ՝ յայտ է ի նոցանէ, որք ոչ ունին բանական միտս՝ եւ տեսանեն երագս. որպէս շունք զի հաջեն յերագի, եւ այլքն. ապա ուրեմն յայտ է՝ թէ տեսիլք երագոյն՝ ոչ է բանական մտացն, եւ ոչ զգայարանացն: Այլ է տեսութիւն տնկականին ոգւոյ. որ է կերակրական մասն: Ուստի յայտ է՝ զ ի ժամ քնոյն՝ դադարի բանականն եւ զգայականն ի գործոյ. իսկ սա առաւել ներգործէ զիւրն: Չ հայէ զկերակուրն. եւ բաշխեալ որոշէ զիւրաքանչիւրսն յիւրաքանչիւր մասունսն. որեւ առեալ գտեսութիւնս իրաց ի յիշատակարան է մտաց, եւ ապա ցուցանէ յնքեան ըստ տկարութեան իւրոյ: Եւ զի ոչ ամենեւին որոշեալ է ի զգայարանացն եւ իմատացն. այլ խառն ընդ նոսա տեսանէ. Նախ՝ յայտ է ի բնութեամբ միաւորութենէն. որով կենդանին է. զի որոշումն սոցա՝ մահ գործէ: Այլ որպէս յարթնութեանն միտքն է առաջնորդ, եւ սպասաւորէր զգայականն եւ տնկականն նմա. նոյնպէս ի քունն՝ հակառակ այսմ, տնկականնն առաջնորդէ. եւ զգայականն եւ միտքն՝ սպասաւորեն նմա առ աչօք տեսութեանն: Երկրորդ յայտ է՝ զի երագն իրօք ինչ կարգաւոր ունի, եւ իրօք ինչ անկարգ: Արդ՝ կարգաւորն է մտացն. որ խառն ընդ նմա. իսկ անկարգն՝ տնկականին է. զի ոչ ուղղակի ընդունի զազդումն նորա: Իսկ այն որ խօսի յերագի՝ տեսանէ, կամ լսէ, ընթանայ, գործէ, կամ ճաշակէ, այն զգայարանացն է որ անբաժ է ի նմանէ: Եւ զայս գրէ ի գիրս կազմութեան սրբոյն Գրիգոր Նիւսեայ: Վասն այն բնական քունն՝ բարի է եւ օգուտ որպէս ցուցաւ: Երկրորդ քունն՝ յաւիտենական: Սա առաւել բարի է վասն երեք պատճառի: Նախզի՝ (մահ մարդոյ՝ հանգիստ է ասէ Յոբ.) զի զերծաւ ի չարչարանաց աշխարհի եւ

մեղաց: Երկրորդ բարի է՝ զի հանգեալ ի ներքոյ ձեռնն Աստուծոյ. որպէս
ասէ Սողոմօն. (բայց հոգիք արդարոց՝ ի ձեռնն Աստուծոյ են. եւ ոչ մերձեսցի
ի նոսա չար. թուեցան յաչս անզգամաց թէ մեռան. այլ նոքա են ի
խաղաղութեամբ:) Եւ ղեւտացուցն ասէ. (ննջեցէք՝ եւ ոչ ոքիցէ որ
զարթուցանիցէ զձեզ:) Երրորդ բարի է՝ ի յարութեան կեանսն յառնէ. որպէս
ասէ Դաւիթ: (Խաղաղութեամբ յայս եւ ի սոյն ննջեսցուք եւ զարթոցուք:)
Սոքա երկոքեան քունս՝ բարի են. այսինքն, քուն բնական, եւ քուն մահու:
Իսկ չար ննջելն՝ է մեղաց քունն. որպէս ասէ Դաւիթ. (ննջեցին ի քունս
իւրեանց, եւ ին ոչ գտին:) Եւ առաւել չարագոյն է, յաւիտենից տանջանացն
եւ մահուանն. որպէս աղաչէր Դաւիթ: (Լոյս տուր Տէր աչաց իմոց. զի մի երբէք
ննջեցից ի մահ:) Արդ՝ մեղքն նման է քնոյ վասն բազում պատճառի: Նախզի՝
մարդն ի քունն բազում սուտ երազ տեսանէ. ուտել, ըմպել, եւ այլն: Նոյնպէս
եւ մեղաւորն ի յագահութիւնն՝ բազում ինչ տեսանէ. իսկ յորժամ մեռանի, ոչ
ինչ ունի. որպէս ասէ. (ննջեցին քունս իւրենց, եւ ինչ ոչ գտին:) Եւ Եսայի ասէ.
(որպէս որք յերագի քաղեալ իցեն եւ ուտիցեն, իբրեւ յառնեն զուր իցէ
տեսիլն. այսպէս եղիցին մեծութիւնք հեթանոսաց:) Երկրորդ՝ որ ննջէ՝
ամենայն գործիական անդամքն նորա խափանին. այսպէս է ծուլութիւնն.
վասն այն ասէ յառակն. (մինչեւ յե՞րբ անկեալ գնիցիս ո՛վ վատ. եւ ե՞րբ ի
քնոյ զարթոցես:) Երրորդ՝ ի ննջելն, ուստի ոչ է պարտ երկնչիլ, երկնչի. եւ
յորմէ պարտէ երկնչիլ. ոչ երկնչի. որպէս ասէ Սողոմօն: (Անդ երկիցեն
զերկիւղ. ուր ոչ իցէ երկիւղ:) Որպէս թէ յերագի սպանութիւն տեսանէ՝
երկնչի. եւ թէ զդաւապէս ոմն զսուրն հանեալ է ի սպանանել, քնեալն ոչ
երկնչի: Այսպէս եւ մեղաւորն ի մահուն ոչ երկնչի. այլ ի կենցաղոյս երկնչի:
Չորրորդ՝ ննջեալն ոչ ինչ զգայ. ոչ տեսանէ, ոչ լսէ, եւ այլն. եւ այս է
պատճառն. որպէս պտուկ եղեալ ի վերայ հրոյ ի ջերմութենէ ելանեն
գոլորշիքն. եւ ի խուփն՝ ժողովին եւ ի վայր իջանեն: Այսպէս ստամոքս
մարդոյն որպէս պրտուկ. եւ ջերմութիւն սրտին եւ լեարդին որպէս հուր. որք
ի ներքուստ զկերակուրն հալեն. եւ գոլորշիքն ի վեր ի գագաթն ելանեն եւ
ժողովին անդ. զի գագաթն հով է: Արդ՝ թանձրացեալ գոլորշին որ ի
գագաթն՝ իջանէ ի վայր, եւ սփռ յամենայն անդամսն. եւ յայնժամ խափանին
ի գործոյ իւրեանց: Այսպէս եւ հոգի մարդոյ՝ ի բազում գործոց մեղաց
անզգայացեալ թմրի, հեշտացեալ ի մեղս: Այսպէս իմասցիս զվերին մասն եւ
զներքին մասն բանկանին, որ հաւանի մեղացն եւ հեշտանայ: Յինգերորդ՝ ի
քունն ամենայն ջերմութիւնն արտաքս սփռի ի մարմնոյն. վասն այն ննջեալն
առաւել ցրտանայ: Այսպէս որ ննջէ ի մեղս, զամենայն ջերմութիւն սիրոյն
Աստուծոյ եւ զընկերին եւ զհոգւոյն եւ զօրինացն, արտաքսէ յինքենէ. եւ
զմեղս միայն սիրէ: Վեցերորդ որ ննջէ, յառականաց ոչ ամաչէ. այսպէս
(ոգիք ըմբռնեալք ի մեղս՝ ի մտաց եւս անկանին:) Եւօթներորդ՝ որ զքունն
սիրէ՝ քան զամենայն ինչ զնա առաւել սիրէ. այսպէս է մեղքն մեղաւորին.
այսինքն, ագահին՝ արծաթասիրին՝ եւ վաւաշոտին ցանկութիւնն,
հպարտին՝ փառքն, եւ այլն նոյնպէս: Ութներորդ՝ որպէս քնեալն ոչ ամենեւն
մեռեալ է, եւ ոչ ամենեւին կենդան. նոյնպէս մեղաւորն ոչ ունի
զկենդանութիւն հոգեւոր, եւ ոչ ամենեւին մարմնով մեռեալ է: Իններորդ՝ ի
սովորեալ ժամուն՝ առաւել ըմբռնէ քունն. եւ մեղքն ի դիւեն եւ յինքենէ՝ ի
սովորեալ ժամուն առաւել տիրեն: Եւ որպէս քունն ի գիշերի գայ. այսպէս եւ
մեղքն առաւել ի գիշերի գործի. (զի գործ խաւարային է:) Տասներորդ՝ զի յետ

քնոյն՝ գոյ եւ արթնութիւն. եթէ յայլմէ, եթէ յինքենէ. այսպէս եւ խափանին մեղք եւ շնչին յանձնէ մերմէ ի շնորհացն Զրիստոսի, եթէ զղջանամք: Կամ ծերութիւնն, կամ տկարութիւնն, կամ մահն խափանէ զմեզս: (Եւ պարտ է մեզ ի քնոյ զարթնուլ.) այնինքն, ի քնոյ մեղացն շուտով յառնել վասն բազում պատճառի: Նախ՝ վասն պատուոյն Զրիստոսի որ զմեզ կոչէ՝ պարտ է զարթնուլ: Եւ երիւք կոչէ զմեզ: Նախ՝ յորժամ բարի խորհուրդ ի սիրտս մեր ձգէ. որպէս ասէ տեսիլն. (ահա ես առ դուռն կամ եւ բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի իմում եւ բացցէ, մտից առ նա եւ ընթրեցից:) Երկրորդ՝ զարթուցանէ ի ձեռնն վարդապետաց քարոզելով. որպէս ասէ առակն: (Որդեակ՝ եթէ լինիցիս յերաշխաւոր բարեկամին քո, մի տար քուն աչաց քոց եւ նորա. զի ապրեսցիս իբրեւ զայծեամս ի հաղբից:) Երրորդ՝ զարթուցանէ հարկանելով եւ խրատելով. որպէս հրեշտակն խթեաց զկողսն Պետրոսի ի գործն եւ զարթոյց զնա. այսպէս խրատն մարմնական՝ զմեզ զարթուցանէ ի մեղաց: Դարձեալ պարտ է մեզ ի քնոյ զարթնուլ. զի ժամանակն հասեալ է. որպէս ասէ Պօղոս. (Ժամէ մեզ ի քնոյ զարթնուլ. գիշեր կենցաղոյս մերժեցաւ. եւ տիւն մերձեցաւ հանդերձեալ լուսոյն:) Դարձեալ՝ պարտ է մեզ ի քնոյ մեղաց զարթնուլ. զի մեղքն տանի ի քուն դժոխոցն՝ որ չարագոյն է քան զամենայն քուն: Որպէս ասէ Երեմիաս: (Արբո զնոսա որպէս զի ննջեսցեն զյաւիտենական քունն, եւ մի զարթոցեն:) Եւ են ոմանք՝ որք խօսող ոչ պահեն ի տունն. զի մի զարթուցէ զնոսա: Ընդդէմ որոց ասէ Սողոմօն. (յարիցեն ի ձայն հաւուն:) Եւ Պետրոս ընդ խօսող հաւուն՝ (յիշեաց զբանն եւ ելաց դառնապէս:) Խօսողն՝ նշանակէ զվարդապետս. որք քարոզելովն զղջանան մեղաւորք եւ յառնեն ի մեղաց: Եւ այն որ երիցս խօսի հաւն՝ զի թէ յառաջինն եւ ի միջինն ոչ յառնեն, ի վերջինն յարիցեն: Եւ նշանակէ զմարգարէսն զառաքեալսն եւ զվարդապետսն: Եւ սովորութիւն է յեկեղեցիս՝ որ ի մեծ տօնս՝ երեք անգամ զգանկական հարկանեն: Չի թէ յառաջինն ծուլանան, յերկրորդն եւ յերրորդն յառնեն: Այսպէս ի տօն արքայութեանն երկնից՝ երեք անգամ փող հնչեցին: Նախ՝ մարգարէքն: Երկրորդ՝ առաքեալքն: Երրորդ՝ վարդապետք օրըստօրէ քարոզեն: Վասն այսորիկ՝ պարտ է յառնել ի յանկողնոյ հեշտութեան եւ աղտեղութեան եւ անհանգստեան՝ որ է մեղքն. որպէս ասէ Միքիա. (յոտն կաց եւ զնա՝ զի ոչ գոյ քեզ անդր հանգիստ վասն պղծութեան:) Եւ Տէրն մեր ասեր. (օն արիք զնացուք աստի:) Եւ թէ՛ (երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի՝ դարձեալ գամ եւ առնում զձեզ առ իս:) Եւ թէ այ ե՞րբ լինի: Ասեմք՝ թեպէտ յամենայն ժամ պարտ է պատրաստ լինի. այլ առաւել ծերութեանն: Չի բնական շարժման սկիզբն թոյլ է. եւ վերջն պինտ. որպէս քար ի լեռնէ յատակն իջանէ. եւ բռնութեամբ շարժման սկիզբն պինտ է, եւ վերջն թոյլ. որպէս նետ եւ քար՝ զոր բռնութեամբ ձգեմք. այսպէս սեր աշխարհիս եւ ցանկութիւն մեղաց՝ բռնութեամբ է յետոյ մտեալ: Վասն այն թէ իտղայութեանն շերմն լինի՝ պարտ է ի ծերութեան թուլանալ: Եւ սեր հոգեւորին եւ անանց կենացն՝ բնութեամբ է ի մեզ. պարտ է ի ծերութեանն պնտիլ: Չի ծեր մարդն որ լինի այսպէս խոհեմ եւ արի, ոչ միայն իւրն է օգուտ, այլեւ պսակ եւ պարծանք է որդւոց: Եւ նոյն ինքն ծերութիւնն՝ նշանակէ զիմաստութիւն եւ զհին աւուրց: Այլեւ սպիտակութիւնն՝ ցուցանէ զանմեղութիւնն եւ զարդարութիւնն: Այլն ի ծերն՝ գոյ իմաստութիւն եւ տկարութիւն. եւ ի տղայն՝ գոյ արիութիւն եւ իմարութիւն: Արդ՝ զարիութիւնն աղայոյն ընկալեալ, եւ զիմաստութիւնն

ծերոյն, բարուք ծեր լինի եւ պատուական: Ապա թէ զմին ի սոցանէ ունի՝ թերակատար է: Իսկ թէ գերկուսն ունի, այսինքն գլխամարութիւն եւ գտկարութիւն, վատ է: Եւ ծերն կոչի ծիր. այսինքն, ծիրեալ եւ մաշեալ: Այլեւ ծեր՝ ի ծայր կենաց ժամանակին իւր հասեալ: Դարձեալ ծեր՝ ի ծայր փոփոխմանն ժամանեալ. որ յայնմ հետէ ի գերեզմանն փոխի: Վասն որոյ ասէ աւետարանն. (Արթուն կացեք՝ մի ննջեք:) Որում զմեզ արժանի արասցէ Զրիստոս Աստուած.՝ նմա փառք յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն հալալ ամուսնութեան. ի բանն որ ասէ առաքեալն: (Պատուական է ամուսնութիւն.՝ սուրբ են անկողինք. բայց զշունս՝ պոռնիկս դատէ Աստուած:)

Եբր. 13. 4: (Գլուխ ԻԶ)

Յորժամ ստեղծ Աստուած զառաջին մարդն՝ եղ ի դրախտին. Էառ զմին ի կողիցն նորա, եւ շինեաց ընդ այնր մարմին. եւ արար զնա կին. եւ ետ օգնական մարդոյն: Օրհնեաց զնոսա եւ ասէ. (աճեցեք եւ բազմացարուք. եւ լցեք գերկիր, եւ տիրեցեք դմա:) Եւ յայն աստուածային օրհնութենէն եւ հրամանացն՝ հալալ եղեւ ամուսնութիւնն, եւ սուրբ անկողինն: (Բայց զշունս եւ զպոռնիկս դատէ Աստուած ասէ առաքեալն:) Արդ՝ բազում է պատուականութիւն սուրբ ամուսնութենէ: Նախ այն՝ յորժամ ոչ գտաւ օգնական նման մարդոյն յամենայն ստեղծումս, վասն որոյ զկինն ետ օգնական նմա. այսինքն, ի տնարարութիւնն, յորդ է ծնութիւնն, եւ յայլն: Իսկ կին պոռնիկ՝ ոչ է օգնական մարդոյն. այլ կորուսիչ տանն եւ ընչից, եւ այլոցն: Երկրորդ՝ է օգնական մարդոյն յառաքինութիւնն, այսինքն, ի պոռնկութենէ պահելով զմարդն. եւ յայլ տեսակս բարեաց ի պահս եւ յաղօթս եւ յողորմութիւնս օգնական է նմա: Իսկ պոռնիկն եւ շունն՝ վարէ զմարդն ի գանազան չարիս. եւ զրկէ յամենայն բարեաց: Երրորդ՝ օգնական է մարդոյն. զի զմենայն ինչս ժողովէ եւ պահէ. այլեւ զհարկիս մարդոյն. եւ որպէս ծով զամենայն գետս յինքն ընդունի. նոյնպէս եւ կինն զամենայն բարութիւն ստանայ, պարունակէ եւ ժողովէ. վասն այն պատուական է ամուսնութիւնն: Իսկ պոռնիկն՝ ցուէ զամենայնն եւ կորուսնէ. վասն այն դատէ Աստուած: Չորրորդ՝ կին կոչի, որ է կէս եւ կենակից. զի կցորդ է կենաց ամն. եւ կէս մարմնոյ նորա. (զի ոսկի յոսկերաց նորա է մարմին ի մարմնոյ նորա:) Այլ օտար կինն՝ ոչ է կէս մարմնոյ նորա. եւ ոչ կցորդի կենաց նորա. վասն այն ոչ է հալալ: Հինգերորդ՝ օրհնեաց զամուսնութիւնն Աստուած. եւ արար զայլ եւ զկինն մի մարմին օրհնութեան պսակաւն: Իսկ պոռնիք՝ շնութեամբ եզեն մի մարմին, եւ ոչ օրհնութեամբն Աստուծոյ. վասն այն դատէ զնոսա Աստուած: Վեցերորդ՝ զի մի մարմին են շաղկապութեամբ սիրոյն որ մէջ ամն եւ կնոջն. եւ այնչափ եղեն մի մարմին, մինչեւ զի կինն ոչ իշխէ իւր մարմանոյ, այլն. եւ ոչ այր իշխէ իւր մարմնոյն, այլ կինն. (զի այնուհետեւ ոչ են երկու, այլ մի մարմին:) Իսկ պոռնիկք՝ ոչ են սիրով մի, եւ մի մարմին. այլ բազում ի բազումս բաժանեալ. վասն այնորիկ Աստուած դատէ զնոսա: Եօթներորդ՝ ամուսնութիւնն վասն որդեծնութեան եղեւ. զի բազմապատիկ լինի մարդն. եւ տեսակն աճի պաշտօն փառացն Աստուծոյ. վասն որոյ պատուական է ամուսնութիւնն: Իսկ պոռնիկն՝ ոչ վասն որդեծնութեան զաւակաց, այլ վասն հեշտ ցանկութեան մարմնոյ ընթանայ.

վասն այն դատե գնոսա Աստուած: Ութներորդ՝ զի նոյն է գործ ամուսնութեան եւ նոյն վայելք. որպէս եւ պոռնկին. այլ մինն զիրամանն Աստուծոյ կատարե հալալ ամուսնութեամբ որպէս ասաց. (աճեցէք եւ բազմացարուք.) վասն այն պատուական է հրամանաւն Աստուծոյ: Իսկ միւսոյն ասաց. (մի շնար՝ մի պոռնկիր.) եւ նա ընդդէմ հրամանացն Աստուծոյ մրցի. վասն այն դատե Աստուած: Իններորդ՝ զի հալազ ամուսնութիւնն՝ ոչ ի մէջ մարդկան դատի կամ անարգի, եւ ոչ ի դատաստանին Աստուծոյ: Իսկ շունք եւ պոռնկկը՝ ի մարդկանէ դատին եւ դատապարտին. որոց իշխանք կարգեցան հրամանաւն Աստուծոյ ի հինս եւ ինորս. որպէս քարկոծել զշնացօղս եւ այրել ի հինն: Նոյնպէս ի նորս՝ հանել. զշրթունսն կտրել. սեւել եւ ծանակել եւ տուծել, եւ գան հարկանել ըստ իւրաքանչիւր գործոց: Իսկ անդ ի հուրն յաւիտենական տանջիլ: Տասներորդ՝ զի հալալ ամուսնութիւնն ի ցերեկի յայտնի ի մէջ եկեղեցւոյ բանին Աստուծոյ պսակի խաչիւ եւ աւետարանաւ. իսկ պոռնկութիւնն՝ ի գիշերի ծածուկ ի մարդկանէ ահիւ եւ սատանայական բանին ներգործի. վասն այն գնոսա դատե Աստուած: Իսկ հալալ ամուսնութիւնն՝ պատուական է եւ սուրբ անկողին: Իսկ հալալ ամուսնութիւնն՝ թեպէտ հալալ է որպէս ասացաւ: Բայց լինի եւ սա երեք եղենակաւ պղծեալ: Նախզի՝ թէ անխտիր եւ յաճախ լինին ի գործն զօրէն անօրինաց եւ անասնոց՝ պղծեցաւ անկողինն. այլ համեստ եւ չափաւոր. զոր օրինակ՝ սակաւ գինին ըմպելի է եւ սուրբ. այլ առաւելն՝ արբեցութիւն է եւ մեծ մեղք. նոյնպէս եւ ամուսնութիւնն: Երկրորդ ժամանակն՝ զի ի հրամայեալ ժամանակն հալալ է. իսկ ի յարգելեալն՝ հարամ է եւ պիղծ: Չոր օրինակ՝ միս ոչ խերի եւ պախրի՝ ի յուտիսն հալալ է. եւ ի պահսն պիղծ: Նոյնպէս եւ յամուսնութիւնն է ժամանակ արգիլման ի յանկողնաց. զոր պարտ է ուսանել: Եւ այն ժամանակ արգիլեալ ի յանկողնոց՝ որ արգիլեալ օր է ի պսակ դնելոյ. որպէս ի կիրակէն ի չորեք շաբաթին՝ եւ յուրբաթի պսակ ոչ դնեն: Նոյնպէս եւ յամենայն շաբաթապահսն պսակ ոչ դնի. նոյնպէս եւ յաղուհացից պահսն պսակ ոչ դնի. այսպէս եւ յինանցն. որով յայտե թէ՛ ի յայսպիսի ժամանակս արգելեալ է մերձաւորութիւնն. վասն ոչ դնեն: Նոյնպէս թէ յայլ ինչ ժամանակ լինի. որպէս յղութիւնն դաշտանին. հիւանդութիւն. ընտրելի է զժամանակն մարդոյ. որպէս սերմանացանն զժամանակն ընտրե գարնան եւ աշնան, եւ ապա սերմանէ. ի ձմեռն եւ յամառն ոչ սերմանէ. զի վատաբոյս լինի: Երրորդ ընտրողութիւն է տեղին, որ հրամանաւն Աստուծոյ լինի. եւ ոչ սատանայական որոգայթիւք: Կամ թէ թողու կինն զայն, եւ յայլ ճանապարհ ընթանայ. կամ այրն զկինն. այսպիսիքս՝ շնութիւն է եւ պղծութիւն համարել նմա. եւ ոչ պատուական անկողին: Եւ թէ ոք ասիցէ՛ վասն է՞ր է պոռնկութիւն արգիլեալ. զի եւ նոյն գործ է որպէս ամուսնութիւն. եւ լրումն է հրամանացն Աստուծոյ որ ասաց. (աճեցէք եւ բազմացարուք:) Նախ նահապետք առին բազում կանայս եւ հարճս: Ասեմք թէ գիտելի է՝ զի եդ Աստուած զցանկութիւնն նիւթ սիրոյ առն եւ կնոջ վասն երկու պատճառ: Նախզի՝ վասն այնր ցանկութեան՝ խոնարհեսցի այրն ի կին. Է զի թէ ոչ եր, յայնպիսի գարշ տեղի եւ ի գործ ոչ մտանէր: Երկրորդ՝ զի կինն տարցէ զժանրութիւն երկանցն՝ եւ զղծուարասնութիւն մանկանցն: Արդ՝ եթէ վասն ցանկութեանն մանկածնութիւնն լինի, կամ վասն մանկածնութեան ցանկութիւնն կատարի, զինչ եւ իցէ՛ աճումն եւ բազմանալն լինի յաշխարհի: Իսկ պոռնկութիւնն՝

ընդդէմ է աստուածային օրինացն: Նախզի՛ գծնունդս խափանեն յայլ եւ յայլ ախտիցն հոսելոյ: Երկրորդ՝ զի տան զանձինս զարշ աղտեղութեանց ի ցանկութիւնս, եւ անյագապէս ի նոյն յօրանան: Երրորդ՝ զի զանմեղ երիտասարդսն՝ ձգեն՝ ի բորբոք ցանկութիւնս ի թակարդ սատանայի, որ է մահն յավետենից: Չորրորդ՝ զի եւ զնա խափանեն ի մանկարարութեան պաշտմանէ, ընդ վայր հոսելով զսերմն նորա: Զինգերորդ՝ զի եւ զինչս եւ զվաստակս նորա ընդ նմին քարշեն. եւ նա արբեալ մոլութեամբ, առ ոչ ինչ համարի զկորուստ ընչիցն: Վասն որոյ յիրաւի զգուշացուցանէ (մի հայիր ի կին չար:) եւ առքելալն ասէ. (Եւ առաքեալն ասէ.) (մի խաբիք՝ ոչ շունք՝ ոչ պոռնիկք՝ զարքայութիւնն Աստուծոյ ժառանգութեն:) Զարց: Վասն Է՞ր բազմայրութիւնն եւ բազմամուսնութիւնն խոտելի է. ոչ միայն ի գրոց սրբոց, այլեւ ի բնական բարոյիցն: Որպէս Յովսէփ հրաժարեցաւ ի կնոջէն պետափրեայ. եւ ռուբէն անար գեցաւ՝ որ ել յանկողինս հօրն: Պատասխանի: Նախզի՛ զկապ սիրոյն որ եղեն երկուքն՝ ի մարմին մի՛ քակէ կինն ի յառնէ իւրմէ, եւ կապէ ընդ այլ ոք. նոյնպէս եւ այլն ընդ այլ կին. եւ ոչ ունին զսերն կամօք առ միմեանս, այլ ի հարկէ: Վասն որոյ վասն այլ ախտի՛ թէ իցէ լեզւանի, կամ գող, ոչ հրամայէ արձակել. բայց միայն (վասն բանի պոռնկութեան.) զի ինքն զինքն արձակեաց յառնէ իւրմէ: Երկրորդ՝ զի ոչ ճանաչեն որդիքն զհայրն իւրեանց: Երրորդ՝ զի ոչ հայրն ունի զգութն ի վերայ որդւոցն. զի կարծեօքն է առ հարազատն: Չորրորդ՝ զի որստոյգ ժառանգն է հօրն՝ զրկի. եւ օտարն մտանէ եւ ժառանգէ: Զնիգերորդ է՛ զի ելին յածային կանօնացն՝ որ մի այր եւ մի կին զուգեցաց. եւ ոչ բազմամուսնութիւն. որպէս նախնիքն մեր Ադամ եւ Եւա. մանաւանդ յօրինացն որ ասէ. (մի շնար.) իսկ նոքա ընդդէմ Աստուծոյ մարտնչին: Այլեւ ոչ է պարտ առնակին մարդոյ սեղեխ լինիլ, եւ խաբելով հանել զնայառնէ իւրմէ: Չորոյ զվասն՝ երկոտասան եղանակաւ ցուցանէ իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմօն: Նախ ասէ. (Չի որ ընդ կապեալն ամուսնութեամբ մոլորի, չար է քան զպոռնիկ կանանց: Չի որ պոռնկի՛ միայն մին է պատիժ հուր գեհենոյն. իսկ սոցա երեք. մին սորա առն. եւ մին պատուհաս դատաւորացն. եւ միւս դատաստանն Աստուծոյ, եւ պատիժ գեհենին: Երկրորդ ասէ. (մի յաղթեսցէ գեղոյն ցանկութիւն կնոջ օտարի:) Այս եղեւ կործանման պատճառ նախաստեղծին. որ (ետես կինն զծառն գեղեցիկ ի տեսանել. եւ հաճոյ աչաց հայելոյ.) նոյնպէս եւ զԴաւիթ տեսութիւնն կապեաց ի սերն Բերսբէի. վասն այն Տէրն հրամայեաց. (մի հայիր ամենեւին ի կին մարդ ցանկութեամբ.) զի հայիլն ցանկութեամբ՝ ի կատարումն գործոյն տանի զմարդն: Երրորդ ասէ. (զին կնոջ պոռնկի՛ իբր զնրկանակ մի հացի է.) այսինքն, զկապէսս պոռնկութեան ասէ. դիւրին է՛ վասն Է՞ր այդպէս պռստալ փղձկիս ի տոփանաց նորա: Կամ որպէս մի նկանակ հաց կերեալ, վաղվաղաակի պակասի ցանկութիւնն: Չորրորդ ասէ. (կին զարանց պատուականաց զոգիս որսայ:) Չի ըստ չորից տարեաց մարմնոյ՝ չորս են որսորդք հոգւոյ. այսինքն, մարմինս. աշխարհս. կին. եւ դէւք: Մարմինն որսայ զհոգիս ըստ ծանրութեան երկրի վայրաքարշ: Եւ աշխարհս որսայ ըստ որակի հրոյ, զանազան գեղեցկութիւնս ցուցանելով: Իսկ դէւք որսան ընդ օղոյդ շնչմանն: Եւ կինն որսայ գէջ ցանկութեամբ ջրոյ: Չի որպէս որսորդն որսայ կերակրովն զթռչունն, եւ արգիլէ յօդապարիկ լինելոյն. նոյնպէս եւ կինն ցանկութեամբն որսայ: Այժմ զվերընթաց միտսն խափանէ.

Եւ յետ մահու՝ զհոգին յերկինս յըթանալոյ: Եւ յետ յարութենն՝ զհոգին եւ զմարմինն կապէ ի հուր գեղենին: Հինգերորդ ասէ. (ծրարե՞ որ հուր, եւ հանդերձն ոչ այրի: Կամ գնա՞յ ի վերայ կայծականց հրոյ՝ եւ ոտքն ոչ այրի:) Հուր է ցանկութիւնն. զի թէ ծրարեմք եւ թաքուցանեմք ի մեզ՝ յետոյ բորբոքի. եւ եթէ կոխեմք զոտս մարմնոյ՝ այրէ. այլ պարտ է զարմատն հատանել՝ որ է ցանկութիւն եւ ընտելութիւն կանանց: Չի իմացմամբ եւ տեսութեամբ եւ խօսիւք եւ տեղեալ՝ փախչելի է ի կանանց: Իսկ ցանկութիւնն ի մեզ հատանի չորիւք. այսինքն, չարչարանօք մարմնոյն, եւ պահօք, եւ սովով, եւ ծարաւով. զի հեշտութիւն մարմնոյն եւ պարարտ կերակուրն, եւ յագ ուտելն եւ ընպելն՝ բորբոքեն զցանկութիւնն որպէս փայտ զհուր: Նոյնպէս եւ որ մտանէ յառնակին, ոչ զերծանի ի պատուհասէն Աստուծոյ. որպէս մեծն Դաւիթ ոչ զերծաւ. այլ վասն այս մին գործոյ՝ ասացաւ նմա. (սուր ի տանէ քումմէ մի պակասեսցի:) եւ անկաւ ի թագաւորութենէն. եւ հետիոտս փախել Յաբիսոդոմայ: Վեցերորդ ասէ. (վասն պակասամտութեան իւրոյ շնացաւ.) այսինքն, զի յօրէնսն հրամայեայ է օրինաւոր ամուսնութիւն. եւ վայելն նոյն է. եւ որդէ ծնութեամբն աճի եւ բազմանայ. պակասամիտ է որր զայս թողու եւ շնայ հակառակ օրինացն. որ ասաց. (մի շնար.) եւ որդիս ոչ ծնանի. այլ միայն վասն զարշուծեանն անկանի ի պատուհասն Աստուծոյ, եւ ի պատուհասն մարդկան: Եօթներորդ զի ասէ. (կորուստ անձին իւրոյ ստանայ շնացօղն:) Այսինքն, կոչի ի դատաստանին Աստուծոյ. զի այժմ արհամարհեաց զօրէնս նորա. եւ ցաւ եւ անարգանս կրէ ի կնոջ մարդոյն, եւ յամենայն տեսողացն. զի չարախօսեն եւ բամբասեն, եւ դատապարտեն ի տուգանս. ծեծելով՝ անիծելով՝ եւ մասն հատանելով: Ութներորդ ասէ. (բուռն է նախանձ առն. եւ ոչ խնայէ յաւուրն դատաստանի:) Չի թէ մարդոյ զայգի կամ զանդ յափշտակեն՝ մախայ եւ սպանումն խոկոյ. քանի՞ առաւել որ զկենաց կցորդն յափշտակէ. որ սիրոյն կապովն միացաւ ընդ այրն. եւ սեղեփն քակէ զմարմին նորա եւ յինքեւ ձգէ: Վասն այսորիկ յորժամ բողոքէ ի դատաստան առաջի դատաւորաց, ոչ խնայէ ի պատիժ նորին: Իններորդ՝ առաքեալն ասէ. (մի զրկէք զընկերս յիրիդի յայդմիկ. զի Տէր է վրեժխնդիր այդորիկ.) այսինքն, զի Աստուած վրեժխնդիր է զրկելոց եւ աղքատաց, որք զինչս մարդոյն զրկեն: Ո՞րչափ եւս որ զկինն զրկէ ի մարդոյն՝ վրեժխնդիր լինի Տէր եւ պատուհասէ: Եւ զայս ի ձեռն դատաւորաց. եւ եթէ նոքա ոչ դատեն, յայնժամ ինքն Աստուած բարկանայ եւ տանջէ. որպէս ջրհեղեղաւն. եւ զսողոմայեցիսն. եւ զայլս բազումս: Տասներորդ զի ասէ. (ոչ փոխանակեսցէ զթշնամութիւնն. եւ ոչ վճարի կաշառօք.) ճշմարիտ է՝ զի թէ Շմաւոն եղեւի զքերցն իւրենց ոչ փոխանակեցին որ նախ քան զօրէնս, այլ ի սուր սուսերի մաշեցին զբնակիչս տեղւոյն, քանի՞ առաւել որ յանկողնոյն իւրոյ խլէ սեղեփն զօրնւոր կինն եւ ոչ առնու կաշառսս. զի զամենայն փարթամութիւն իւր՝ վասն կնոջն ծախէ. կաշառքն զի՞նչ պիտոյ են նմա: Մետասաներորդ զի ասէ. (զի մոլորեցոյց բախւք եւ պոռնկեալ դիմօք.) այսինքն, զանմիտ երիտասարդն չորիւք մոլորեցոյց. ծաղրական դիմօք. եւ փոփոխեալ երեսօք. պատեր բանիւք. եւ պաճուճեալ զարդուքն. եւ նա մոլորեալ գնաց զհետ նորա իբր զարջառ ի սպանումն: Չի անբանացեալ է հոգին նորա. եւ իբրեւ զշուն տոռնեալ. զի մարմին շնացողին՝ շուն կոչի. եւ իբրեւ զթռչուն ի ծօղակ ըմբռնեալ. զի զթռչուն միտսն խաբեաց եւ ըմբռնեաց. եւ որպէս զեղջերու հարեալ ի զերդակողմ որ ոչ ապրի: Նոյնպէս

Եւ պոռնիկն զլեզուն լարեաց որպէս զաղեղն. եւ նետիւք բանից ընդ լսելիսն խոցեալ զլեարդն, որ է ամանց ցանկութեան: Չի որպէս բանին տեղի գլուխն է. եւ ցասմանն սիրտն. Նոյնպէս ցանկութեան լեարդն խոցեցաւ ի պոռնիկ կնոջէ. եւ այնու գերեաց զնա: Երկոտասաներորդ ասէ. (մի երթար զհետ Նորա. զի անթիւք են սպանանելք ի նմանէ.) զ զԱդամ ի դրախտէն կինն եհան եւ մահացոյց. եւ կանայք զջրհեղեղն: Կին զսամփսոն խաբեաց եւ ի թշնամին ետ: ՉԴաւիթ ընկեաց յաթոռոյն. եւ զՍողոմոն կանայք հեռացուցին յԱստուծոյ: ՉՈվհաննէս Մկրտչին ո՞վ զխատեց. ո՞չ ապաքէն կինն. եւ զայլս բազումս: Եւ թէ որպէ՞ս սպանանէ՝ այս է. որպէս մարդիկ ի ձեռն սրոյ զմարմինն սպանանեն. Նոյնպէս կանայք ի ձեռն հեշտութեամբ մարմնոյն՝ զհոգին սպանանեն: Եւ տուն պոռնիկն՝ ճանապարհ եւ շտեմարան է դժոխոցն. զի այժմ ի դուռն մտանէ. եւ յետ աստեաց՝ ի մահն իջանէ. յայն մահն՝ ո՞ հոգւոյ է եւ յաւիտենից. յայն մահն՝ ուր ոչ գոյ յարութիւն եւ ոչ փրկութիւն: Այն մահն՝ որ ի կենացն յաւիտենից գրկէ. ըստ այնմ, (շունք եւ պոռնիկք՝ զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն:) Եւ թէ ոք ասիցէ՝ վասն է՞ր այնչափ խնամով զիրս պոռնկութեան զամենայն ասես մի ըստ միոջէ: Ասեմք վասն հինգ պատճառի: Նախզի՝ թէ մտօք ոչ ուսանի զչարութիւն Նորա՝ մարմնով ուսանի եւ խաբի. վասն այն զգուշացուցանեմք: Երկրորդ՝ ամենայն որ զգաստ միտս ունի, նախ քան զգործն գիտէ զդառնութիւն. այլ անմիտքն յետ գործելոյ մեղացն ճանաչեն. յայնժամ չէ օգուտ. զի անցեալ է եւ գործեցեալ. վասն այն յառաջն ուսուցանեմք: Երրորդ՝ մինչ զգարշնութիւն չարին ոչ երեւեցուցանեն, մարդիկք ոչ փախչին ի նոցանէ:

Չորրորդ՝ որպէս ոք ճրագ առեալ ի մութն գիշեր՝ ցուցանէ զճանապարհն եւ զորոգայթն. զի տեսեալ զգաստանան: Զինգերորդ՝ որպէս իմաստուն նաւաստի զերծեալ ի յալեաց ծովուն, եւ հասեալ ի նաւահանգիստն. որք մերձն են կացեալ՝ յեղեղէ եւ պատմէ զծովուն դժուարութիւնն. զիի մի ընկղմեսցին Նորա: Նոյնպէս եւ իմաստունն Սողոմոն՝ եմուտ ի ծով աշխարհի. եւ զամենայն հեշտութիւնս փորձանաց՝ փորձեաց անձամբ իւրով եւ մեզ ուսոյց թէ՛ (ամենայն ինչ սուտ է եւ ունայնութիւն:) Եւ այսպէս ըմբռնէ սատանայ. եւ այսպէս պատերազմի կինն. այսպէս է մեծութիւն եւ հեշտութիւն աշխարհիս. այսպէս ցանկութիւն մարմնոյ գերէ զմարդիկ. դուք զգուշ լերուք: Չի որպէս զծով է աշխարհս. եւ ցանկութիւնն ալիք վասն հինգ պատճառի: Նախզի բնական է ալիքն ի մեջնն ծովուն շարժեցեալ. Նոյնպէս բնական է ի մեզ ցանկութիւնն մարմնոյն: Երկրորդ՝ զի որպէս ոչ մի ալիք ծովուն, այլ բազում զհետ միմեանց. Նոյնպէս եւ ցանկութիւնս մարմնոյ՝ բազում է. եւ բազում անգամ տիրէ ի տղայութեան հասակէ միչեւ ի ծերութիւնն: Երրորդ՝ ալիքն բարձրացեալ՝ թէ թափի ի նաւն, ընկղմօ զնա, եւ թէ ի ներքոյ անցանէ, զերծաւ ի նմանէ: Նոյնպէս եւ ալիք հեշտութեանս թէ կոխէ զմարդն, իիի խորս անդնդոց ընկղմէ. եւ թէ ոչ՝ զերծաւ ի նմանէ. զայսմանէ ասէ մարգարէն. (մի ընկղմեսցեն զիս պտոյք ջուրց. եւ այլն:) Չորրորդ՝ զի կամ խաղաղ լինի ծովն, եւ կամ յանպոյ եւ կամ ի հողմոյ խռովեալ՝ ալեկոծի: Նոյնպէս խաղաղ է մտքն ի ցանկութենէ. այլ կամ յարտաքին տեսութենէ, կամ ի խորհրդոյն, եւ կամ ի դիւաց ամբոխմանէ շարժ ի ցանկութիւնն: Զինգերորդ՝ որպէս ալիքն խորտակի յեզերաց աւազոյ. Նոյնպէս եւ ցանկութիւնն մեր խորտակի եւ դադարի ի մարդկան ամօթոյ. կամ յահէն Աստուծոյ. կամ ի սրբոյ գրոց. կամ ի խրատու եւ ի քարոզչաց:

Յաղագս այսորիկ հոգ տարան առաջինքն՝ եւ ուսուցին մեզ զլինելոցն յառաջիկայն զչարիս մեղաց, եւ զհատուցումն տանջանաց: Վասն այն ասէ. (պատուական է ամուսնութիւն. եւ սուրբ են անկողինք. այլ զշունս եւ զպոռնիկս դատէ Աստուած:) Յորոց փրկեսցէ զմեզ բազմանդութեւ ողորմածն Տէր մեր Քրիստոս Աստուածն. աստ ի փորձանաց մեղաց, եւ անդ ի հրոյն տանջանաց: Որում փառք եւ զօրութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն: Յետ որոյ սասցաք վասն հալալ ամուսնութեան: Այժմ սասցուր վասն արդարութեան:

Նորին քարոզ վասն արդարութեան. իբանն Ովսեի որ ասէ: (Սերմանեցէք ձեզ զարդարութիւն. ' հնձեցէք զպտուղն կենաց:) Ովսէ. 10. 12: (Գլուխ. ԻԷ)

Արարչագործն Աստուած կազմեաց զմարդն ի պատկեր ' ի նման Իւր. որպէս վկայէ մեծն ի մարգարէս եւ աստուածախօսն Մովսէս թէ՛ (արար Աստուած զմարդն ի պատկեր իւր:) Եւ այս պատկերիս երեք ազգ գեղեցկութիւն եդ. այսինքն, զարդարութիւն, եւ զբարին, եւ զճշմարիտն: Չարդարութիւնն եդ ի բնութիւն. եւ զբարին յանձն իշխան կամսն. եւ զճշմարիտն յիմացումն մտացն: Եւ զայսորիկ ոչ յետոյ, այլ իսկիզբն ստեղծանելոյ սերմանեց ի գոյացութիւն մարդոյն: Նախզի՛ զճշմարիտն իմացի. եւ զբարին կամեսցի. եւ զարդարութիւն գործեսցէ: Եւ այսու նման լիցի պատկերն սկզբնատպին իւրոյ Աստուծոյ: Երկրորդ՝ զի սոքա սերմն բարի լիցին ի բնութիւն մարդոյն. զի յորժամ մին մարդն աճեսցի ի բոլոր ազգս մարդկան, ընդ նրմին աճեսցին բոյսքն բարի յամենայն մարդիկ: Եւ երրորդ՝ զի սոքօք հաւասարեսցին ամենայն մարդիկ առաջին մարդոյն, որք նոյնպէս պատկեր ենք Աստուծոյ, զբարին զճշմարիտն եւ զարդարութիւնն սերմանեալ ունելով բնութիւնս մեր: Եւ դարձեալ՝ չորս վկայ հաստատութեան ետ Աստուած զսուրբ գիրս՝ զհին եւ զնոր կտակարանս. զի ամենայն մարգարէքն եւ անտարանն սուրբ՝ եւ առաքեալքն եւ վարդապետք՝ զնոյն ուսուցանեն մեզ. զբարին. եւ զճշմարիտն, եւ զարդարութիւնն գործել: Ապա ուրեմն յայտ են, զի սոքա չորեքին համաձայնին միմեանսց, եւ ուղղեն ի մեզ զարդարութիւնն. այսինքն, բնութիւնն, եւ կամքն, եւ միտք, եւ Սուրբ Գիրք. որպէս ասէ մարգարէն Ովսիա: (Սերմանեցէք զարդարութիւն. եւ հնձեցէք զպտուղն կենաց:) Եւ այս վասն չորս պատճառի: Նախզի՛ ասէ զիրն. (յերկուց եւ յերից վկայից հաստատեսցի ամենայն բան:) Արդ՝ սոքա են բազում վկայք՝ որք զարդարութիւնն ուսուցանեն մեզ առանց կարծեաց բարի եւ ճշմարիտ գոլ: Երկրորդ՝ բազում են սոքա. զի թէ մին սխալի ի սոցանէ, կամ բնութիւնն, կամ կամքն, կամ միտքն, մին ուղղեսցէ զնա. եւ թէ բոլոր ամենեքեան մոլորեսցին, Գիրք Սուրբ ուղղեսցեն զնոսա. եւ բերեն առ ճշմարտութիւնն: Երրորդ՝ զի ներքին եւ արտաքին հակառակ կայ մեզ: Ներքին է բնական կիրք եւ հեշտ ցանկութիւն մեղաց. զի այս հեշտ ցանկութիւնս՝ հանապազ հակառակի հոգւոյս մերոյ եւ մտացս: Որպէս ասէ առաքեալն. (տեսանեմ այլ օրէնս զինեալ յանդամս իմ հակառակ օրինաց մտաց իմոց:) Եւ է արտաքին հակառակ սատանայ եւ աշխարհիս վասն այն զբնական արդարութիւնն եդ Աստուած ի բնութիւնս մեր՝ զի յաղթեսցէ զբնական կիրս զցանկութիւնս

մեղաց. եւ արտաքոյ զսուրբ գիրս՝ զի ևորօք յաղթեսցուք սատանայի եւ հեշտութեանց աշխարհի. զի թէ գիրք սուրբ չէին ասացեալ, ոչ գիտեաք թէ սատանայ կամ աշխարհս թշնամի է մեզ: Եւ թէ գիրքն չէր ասացեալ (մի շնար մի գողանար,) ոչ ճանաչեաք զմեզս: Չորրորդ՝ բազում են սոքա. զի թէ գիրք եւ օրէնք ոչ լինին ուսուցանող մարդկան, նա բնութիւնն եւ կամքն եւ իմաստութիւնն՝ ուսուցանեն մեզ զբնրիս գործել. որպէս ասէ առաքեալն. (հեթանոսք որք զորէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործեն. զի եւ անձանց իսկ են օրէնք.) որպէս առաջին նահապետքն. Աբել, Ենովք, Նոյ, Աբրահամ. եւ այլքն ամենայն արդարարացան: Նոյնպէս եւ այժմ հեթանոսք որք ոչ ունին զգրեալ օրէնս Մովսիսի, եւ ոչ զաւետարանն,, բնական արդարութիւնն օրէնք է ևոցա, զի բնութիւնս զբարին եւ զարդարն սիրէ. եւ յորժամ ոչ գործեն զբնականն, վասն այն պատուհասէ եւ տանջէ զնոսա. աստ մարմնով, եւ ի հանդերձեալն հոգւով յաւիտենական: Վասն այսքան պատճառացս՝ բազումք ուսուցանեն մեզ զարդարութիւնս գործել. բնութիւնս. եւ կամքս. եւ միտքս. այլեւ մարգարէք, եւ առաքեալք, եւ աւետարանն, եւ վարդապետք: Որպէս մարգարէն Ովսէէ ի դիմաց Աստուծոյ խօսի ընդ մեզ եւ ասէ: (Սերմանեցէք զարդարութիւն. եւ հնձեցէք զպտուղն կենաց:) Եւ ի վերայ այսր բանի՝ երեք իր հարցանելի է: Նախ թէ՛ որպէս սերմանի արդարութիւնն. եւ հնձեն զպտուղն:

Երկրորդ՝ թէ վասն էր ի սերմ օրինակէ զարդարութիւնն: Երրորդ՝ թէ զի՞նչ է արդարութիւնն, եւ քանի՞ են եղանակք ևորա: Վասն առաջնոյն գիտելի է՝ զի զինչ եւ սերմանէ ոք՝ զնոյն եւ հնձէ. թէ զսերմն ցորենոյ, եւ թէ զայլ ինչ: Այլ այժմ արդարութիւն եւ կեանքն՝ ոչ է նոյն. զի արդարութիւն է որ է բարի գործն՝ նեղութեամբ եւ չարչարանօք կատարի. եւ կեանքն անդորրութիւն է եւ հանգիստ: Ապա ուրեմն զարդարութիւնս սերմանելով՝ պտուղ կենաց ոչ հնձի: Պատասխանեմք առ այս եթէ՛ ճշմարտութեամբ արդարութեան սերմանաց որոյ եւ պտուղն՝ կենքն է եւ անմահութիւնն: Եւ այս յայտ է յերից: Նախ՝ ի յօրինակէ սերմանց. զի սերմն ունի կրկին յատկութիւն. այսինքն, զմահ եւ զկեանս. զի նախ ի հողն թաղի եւ մեռանի եւ ապականի, եւ ապա բուսանի եւ կենդանանայ եւ աճի: Այսպէս արդարութիւնն ունի կրկին յատկութիւն այսինքն եւ կեանք. զի յորժամ զարդարութիւնն սերմանեմք ի հոգի եւ ի մարմինս մեր՝ նախ մեռուցանէ եւ ապականէ զմեզ եւ զչար գործս. եւ ապա կենդանանայ բարի գործն ի մեզ եւ աճի: Եւ դարձեալ արդարութեան՝ մեռուցանէ զմարմինն, եւ կենդանացուցանէ զհոգին: Երկրորդ՝ յայտ է ի հակառակէն. զի զսերմանս մեղացն յորամ բուսուցանեմք ի մեզ, պտուղ ևորին պատուհասն է եւ տանջանք. եթէ ժամանակեայ, եւ եթէ յաւիտենից: Այսպէս արդարութեան սերմանց՝ պտուղն եւ արդիւնքն՝ կեանքն է եւ անմահութիւնն: Երրորդ՝ յայտ է ի վկայութեանց սուրբ գրոց. որպէս Սողոմօն. (ոչ օգնեսցեն ինչք յաւուր բարկութեան. այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ:) Եւ Տէրն յաւետարանին ասէ. (սեղ եւ անձուկ է ճանապարհն՝ որ տանի ի կեանսն, եւ այլն:) Այսպէս եւ զայս իմանամք. զի արդարութեան սերմն՝ նեղութիւն եւ անձկութիւն է մարմնոյ. եւ պտուղն կեանքն է յաւիտենից: Եւ այսպէս օրինակեցաւ ի ժողովուրդն հին Իսրայելի. զի յորժամ զանազան մեղս սերմանեցին յիքեանս, պտուղ ևոցին ետ զգերութիւնն ի Բաբելօն. որ աւերեցաւ երկիրն. եւ քակեցաւ տաճարն. եւ անկաւ թագաւորութիւն ևոցա, եւ ինքեանք ի

ծառայութիւն մատնեցան: Եւ յորժամ ի գերութեանն ծանեան զմեղսն իւրեանց եւ զղջացան, եւ դարձան առ Տէր ասելով. (մեղաք՝ անօրինեցաք՝ յանցեաք. եւ արդ գամք զհետ քո ամենայն սրտիւք մերովք.) յայնժամ դարձեալ ազատեցան ի գերութենէ. եւ դարձեալ շինեցին գտաճարն. եւ նոր նորոգեցան յառաջին որպիսութիւնն: Վասն այն Աստուած ասէ առ նոսա. յորժամ սերմանեցիք զմեղս, եւ սերմանեցի զձեզ բարկութեամբ ի գերութիւն Բաբելոնի. այժմ սերմանէք ի ձեզ զարդարութիւն. եւ հնձեցէք զպտուղդ անձին զկենս եւ զխաղաղութիւն. զի վերստին ժողովեմ զձեզ ի բնակութիւնս ձեր: Այսպէս եւ առ մեզ՝ յորժամ սերմանեմք զմեղս, հնձեմք զպտուղս մեղաց. զսով՝ զսուր՝ զգերութիւն՝ զհիւանդութիւն, եւ զմահ տարժամ: Եւ յորժամ սերմանեմք ի մեզ զարդարութիւն, հնձեմք ի մեզ զպտուղ նորին զխաղաղութիւն, զառողջութիւն, զհանգիստ, զերկար կեանս եւ զփարթամութիւն հոգւոյ եւ մարմնոյ: Այս առաջին գլուխն որ ասէ: (Սերմանեցէք զարդարութիւն. եւ հնձեցէք զպտուղն կենաց:) Երկրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր սերման օրինակէ զարդարութիւն եւ զբարի գործս: Ասեմք թէ վասն տասն պատճառի: Առաջին պատճառ: Չի նախ սերմանելն Է, եւ ապա հնձելն. եւ անհնար է առանց սերմանելոյ հնձել: Նոյնպէս եւ անհնար է առանց արդարութեան գործոց հանգիստ կամ արքայութիւն մարդոյ. զի որպէս մշակն նախ աշխատի եւ ապա հանգչի, եւ ապա վարձ առնու. նոյնպէս ամենայն մարդոյ՝ ի կեանս յայս պարտ է աշխատիլ եւ գործել զբարիս. եւ յետ մահու հանգչիլ ընդ սրբոցն. եւ յետ յարութեանն՝ վարձս առնուլ զարքայութիւնն երկնի. որպէս ասէ առաքեալն. (զգործսն կատարեցի. զհաւատսն պահեցի. արդ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն՝ զոր հատուցէ ինձ յաւուր յայնմիկ արդար դատաւորն:) Երկրորդ պատճառ. սերման օրինակի արդարութիւն. զի որպէս սերմն մի հատ սերմանի՝ եւ ոչ թէ մի հատ, այլ բազմապատիկ բուսանի եւ աճի: Նոյնպէս մի գործոյ արդարութեան՝ բազմապատիկ է հատուցումն. որպէս խոստացաւ Զրիստոս. (հարիւրապատիկ առցէ. եւ զկեանս յաւիտենականս ժառանգեսցէ:) Չի մին հացին փոխարէն զոր տաս աղքատին՝ զանմահ կերակուրն, եւ ընդ ցուրտ ջրոյն՝ զաղբիւրն կենաց, եւ ընդ մին հանդերձին՝ զլուսեղէն պատմուճանն առնուս. եւ ընդ փոքր չարչարանաց մարմնոյդ զհանգիստն յաւիտենից. այսպէս սերմն արդարութեան՝ բազմապատիկ ունի զհատուցումն: Երրորդ պատճառ. որպէս նախ հերկելն եւ կակզելն պարտ է զերկիր՝ եւ ապա սերմանել. հերկելն այն է՝ որ զինչ մեղաց բոյս եւ աւելորդ կայ ի քեզ՝ քակես եւ ի բաց ձգես. եւ զհոգիդ եւ զմարմինդ հնազանդես օրինացն Աստուծոյ. եւ ապա զգործ արդարութեան սերմանես ի քեզ որ պտղաբերի. որպէս հրամայեաց Տէրն թէ՛ (արգաւանդ երկիրն տայ պտուղ երեսուն, եւ վաթսուն, եւ հարիւր:) Ապա թէ ի կորդ երկիր սերմանես ի մէջ փշոց, կամ ի ճանապարհի, կամ յապառաժի, ոչ բուսացի: Այսպէս թէ զմի գործ արդարութեան ի մէջ բազում մեղաց սերմանես, ոչ բուսանի եւ ոչ տայ պտուղ: Վասն այն խոստովանութեամբ պարտ է սրբել զմեղս. եւ ապա զարդարութիւն գործել: Չորրորդ պատճառ. յորժամ սերմանէ՝ պարտ է զգուշանալ յերկու իրաց: Նախզի՝ ծածկեսցէ զսերմն՝ զի մի թռչունք քաղեսցեն. եւ երկու՝ զգուշացի՝ զի մի թռչուն գորումն ցանիցէ ի վերայ բարի սերմանցն: Այսպէս եւ երբ զարդարութիւնն սերմանես, նա խոնարհութեամբ ծածկես ի քեզ եւ պահես. որ սատանայ չքաղէ զբարի

սերմանսն ի սրտեդ. եւ ապա զգուշ կաց՝ զի սատանայ ընդ բարի սերմացն՝ զչարն խառնէ եւ սերմանէ ի մարդն. այսինքն, զհպարտութիւն, զբարկութիւն, զնախանձ, զագահութիւն, եւ զայլն. զի հանապազ սովորութիւն է սատանայի՝ կամ զբարի սերմն ի մարդոյն քաղէ, կամ զչարն ի ներս խառնէ. որպէս առակն ասէ յաւետարանին. (զսերմն բարի սերմանեցեր, որոմն ուստի՞ իցէ. ասէ՝ այր թշնամի արար զայն:) Վասն այն պարտ է բարգործ մարդոյն՝ միշտ պատրաստ լինիլ եւ արթուն կալ. եւ պահել զբարի սերմանսն: Հինգերորդ պատճառ. զի պիտոյ է սերմանն ջուր եւ ջերմութիւն արեւու. եւ նոքօք բուսանի եւ աճի: Նոյնպէս արդարութեան գործոյն ջուր՝ արտասուքն է որ բուսուցանէ. եւ ջերմութիւն սերն է որ ունի առ Աստուած. զի ջերմ սիրով եւ արտասուօք պարտ է սերմանել զարդարութիւն. զի ուրախութիւն ի հունձն լիցի. որպէս ասէ Դաւիթ. (երթալով երթային եւ լային որք բարձեալ տանէին զսերմանս. գալով եկեացեն եւ ցնծացեն որք բարձեալ բերցեն զօրայս իւրեանց:) Վեցերորդ պատճառ. զի որ սերմանեն՝ յառաջ քան զիւրեանս սերմանեն եւ ոչ յետոյ: Նոյնպէս պարտ է մեզ սերմանել զարդարութիւն ի կեանս մեր. եւ ոչ թողուլ յետոյ յազգականս մեր. ոչ ի սիրելի որդիս, ոչ յեղբարս, եւ ոչ յայլն. զի ոչ որ սիրէ զքեզ առաւել քան զքեզ. եւ զինչ դու արարեր քո ծնողնի՝ քո որդին քեզ զնոյն առնէ: Վասն այնն խրատ տայ առաքեալն. (ահա օր փրկութեան. ահա ժամանակ ընդունելի. մի եւ մի իւրք տայցէք պատճառս զի մի արատեսցի պաշտօնն ձեր:) Եօթներորդ պատճառ. որք սերմանեն՝ աշոյ ձեռամբ սերմանեն. եւ աշովն հնձեն. մեր աշն՝ հոգիս է. եւ ձախն մարմինս. եւ աշեայ գործն հոգեւոր է. եւ ձախաւորն մարմնաւոր. պարտ է միշտ ի հոգիս մեր զարդարութիւնն սերմանել. եւ ոչ ի մարմինս զմեղս. քանզի հոգիս անապական է եւ սերմանիքն իւր. եւ մարմինս ապականեցու եւ սերմանիքն իւր. որպէս ասէ առաքեալն. (որ սերմանէ ի մարմին, ի մարմնոյն հնձեսցէ զապականութիւն. եւ որ սերմանէ ի հոգին, հնձեսցէ զանապականութիւն:) Ութներորդ պատճառ. որ սերմանէ՝ հաւատով սերմանէ. զի հաւատայ որ բազմապատիկ լինի. ապա թէ ոչ՝ ոչ ցրուէ զսերմն: Նոյնպէս պարտ է հաւատով գործել զարդարութիւն. զի հաւատայ թէ ամենայն գործոց հատուցումն կայ ի Զրիստոսէ. թէ պահք, թէ աղօթք, թէ ողորմութիւն եւ այլն. եւ վասն այն առաւելու ի բարի գործն. որպէս ասէ առաքեալն. (որ առատութեամբ սերմանէ, առատութեամբ հնձեսցէ. այլ որ ճշդիւ սերմանէ, ճշդիւ հնձեսցէ եւ սակաւ.) եւ խորշահար սերմն՝ անպտուղ լինի. այն է՝ որ թերահաւատ լինի. ի հարկէ եւ յակամայ գործէ զարդարութիւն: Իններորդ պատճառ. որ պատուական սերմէ, ի յայս տարիս սերմանեն. եւ իմիւս տարին հնձեն. որպէս ցորեանն. եւ որ անարգ սերման է, ի նոյն տարին սարմանեն, եւ ի նոյն հնձեն. որպէս կորեկ, գարի, եւ այլն: Նոյնպէս որ ճշմարիտ առաքինիքն են՝ աստ սերմանեն զարդարութիւն, եւ հանդերձեալն հնձեն զփառս յաւիտենից: Իսկ կեղծաւորքն՝ աստ սերմանեն, եւ աստ հնձեն զփառս ի մարդկանէ. որպէս հրայէ Տերն. (այն իսկ են վարձք նոցա:) Տասներորդ պատճառ. յայլ եւ յայլ ժամանակս սերմանեն. որպէս յաշունն՝ ի գարունն. եւ ի մին ժամանակ հնձեն յամառն. եւ ի բազում տեղիս սերմանեն. եւ ի մին տեղիս ժողովեն ի կալն: Այսպէս յոր ժամանակն գործէ որ զբարիս, ի տղայութեան, յերիտասարդութեան, կամ ի ծերութեան, յոր տեղիս գործեն, ի տան ի ճանապարհի, յեկեղեցիս, թէ ի դուրս, ամենայն գործոց հունձն եւ

պտուղն, եւ որայն ի միում աւուր յարութեանն լինի. եւ իմի կալ դատաստանին ժողովին. եւ անդ լինի բաժանումն ցորենոյն եւ յարդին. այսինքն, մեղացն եւ արդարութեանն: Եւ յայնժամ բաժանէ Քրիստոս զարդարս, եւ զեղաւորս. որպէս ասէ աւետարանն. (որոյ հեծանոց դատաստանին ի ձեռին իւրում է, եւ սրբեսցէ զկալ իւր. եւ ժողովեսցէ զցորեանն յշտեմարանս արքայութեանն իւրում. եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով:)

Այս երկրորդ գլուխն, թէ վասն Է՞ր սերման օրինակէ զարդարութիւն: Երրորդ հարցումն թէ՛ զի՞նչ է արդարութիւն եւ քանի՞ են եղանակք նորա: Եւ իմաստունք այսպէս սահմանեն: Արդարութիւն է՝ զօրութիւնն բաժանողական, ըստ արժանեաց իւրաքանչիւր ունեք: Իսկ վարդապետք այսպէս սահմանեն. արդարութիւն է՝ զամենայն մասունս առաքիւնութեան յանձն իւր պարագրէ. այս է՝ զխոհեմութիւնն. զարիւնութիւնն. զողջախոհութիւնն. զհաւատ. զյոյս. զսէր. եւ զայլ ամենայն մասնաւոր բարութիւնս. զբարոյական. զտնտեսական. զքաղաքական ի յինքն ժողովէ. այն է արդարութիւնն: Այլ եղանակ արդարութեան՝ երեք է. այսինքն, Նախ՝ ի հոգեւորն եւ ի մարմնաւորն: Երկրորդ՝ յայժմուկեանս, եւ ի հանդերձեալն: Երրորդ՝ յԱստուած եւ ի մարդիկ: Արդ առաջին արդարութիւն է ի հոգին եւ ի մարմինն. որ ոչ թողու որ մարմինն զհոգին զրկէ. եւ ոչ հոգին զմարմինն: Չի թէ մարմինն զհոգին զրկէ, լինի անիրաւութիւն եւ գործ մեղաց. եւ թէ հոգին զմարմինն զրկէ, անձնամատն է. եւ անխնայութիւն մարմնոյ այնպիսին առնէ: Այլ զի՞նչ՝ մարմնոյ տալի է զպետս մարմնոյն, որ հարկաւոր է եւ չափաւոր. որպէս հաց, ջուր, եւ զգեստ: Եւ հոգւոյն տալի է զսրբութիւն, զպահս, զաղօթս, եւ զողորմութիւն, եւ զայլն: Զոգին պատկեր է Աստուծոյ՝ պարտ է նախապատիւ առնել. որպէս զսկզբատիպն իւր. եւ զմարմինն երկրորդ պատուել. որ պատկեր է հողոյ. եւ նման անասնոց. զի ի հողոյս է մարմինս. եւ նման անասնոց ունի զգայարանս. ուտէ եւ ըմպէ. եւ հեշտանայ նման նոցա. հոգին Տէր է եւ տիկին. եւ մարմինն ծառայ եւ աղախին. պարտ է զի մարմինն հնազանդ լինի հոգւոյն. եւ հոգին իշխէ մարմնոյն. մարմինն կառք է. եւ հոգին կառավար. որպէս ձի եւ ձիաւորն. պարտ է որ հոգին առաջնորդէ, եւ մարմինն հետեւի նմա. եւ այսպէս լինի արդարութիւն ի մէջ հոգւոյն եւ մարմնոյն. որպէս ստեղծեաց Աստուած զնոսա: Այս կոչի բարոյական կարգ արդարութեան. ապա թէ զայս կերգս ոչ պահես, այլ զմարմինդ նախապատուես քան զհոգինդ, եւ զհոգիդ մարմնոյդ հետեւես, յայնժամ շրջեցաւ բնական կարգմ, եւ եղեւ անիրաւութիւն ի մէջ նոցա: Երկրորդ եղանակ արդարութեանն՝ է յայժմու կեանս, եւ ի հանդերձեալն: Չի պարտ է զկեանս զայս՝ անցաւոր եւ փոփոխական տեսանել. եւ զհանդերձեալն մնացական եւ անփոփոխ: Նոյնպէս եւ զոր ինչ է ի կեանս յայս՝ անցաւոր է իմանալ. թէ փառք, թէ իշխանութիւն, թէ մեծութիւն, թէ մեծութիւն, թէ հեշտութիւն, ուտել. եւ ըմպել, եւ այլն ամենայն: Իսկ ամենայն ինչ ի հանդերձեալն՝ է մշտնջենաւոր եւ անանց. կեանք, մեծութիւն, թագաւորութիւն, ուրախութիւն, անմահութիւն, եւ այլն: Այլեւ (տալ բաժինս եօթանց՝ այլեւ ութից՝ արդարութիւն է որպէս Սողոսոն:) Եւ զայս կեանս անասնոց իմանալ. եւ զայն հրեշտակաց եւ Աստուծոյ. այս գործոց է ժամանակ. եւ այն հատուցման. զայս կեանս ատել. եւ զայն կեանս սիրել. այս արդարութիւն է. եւ կոչի սա բնական արդարութիւն: Ապա թէ զհակառակն՝ զայս կեանս բարի իմանաս եւ մնացական, եւ սիրես զսա, եւ ի

սմա հեշտանաս, եւ զայն կեանսն մոռանաս եւ թեթեւ բռնես, եւ չտաս բաժին նմա եղեր անիրաւ եւ զրկօղ եւ մեղաւոր: Երրորդ եղանակ արդարութեանն է առ Աստուած եւ առ մարդիկ: Նախզի՛ պարտ է հաւատալ զԱստուած արարչի ամենայնի. եւ զամենայն արարածս վասն մարդոյս ըստեղծեալ. եւ զմեզ ծառայ Աստուծոյ. այլեւ յուսալ յողորմութիւն նորա. զի (աչք ամենեցուն ի քեզ յուսան. եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու:.) Այլեւ երկնչիլ ի նմանէ. եւ պահել զամենայն պատուիրանս նորա. թէ՛ ի հին, եւ թէ ի նոր օրէսս զորս հրամայեաց մեզ Աստուած. եւ ի վերայ ամենեցուն՝ (սիրել զԱստուած ի բոլոր սրտէ. ի բոլոր հոգւոյս, ի բովանդակ մտաց. եւ բոլոր զօրութեամբ.) որ չլինի մասն սիրոյն առ Աստուած, եւ մասն սիրոյ յաշխարհս, կամ յընտանիս, կամ յինչս, կամ ի մարմինս մեր. այլ զԱստուած ի վեր քան զամենայն գերագոյն սիրել. եւ զհրամանս նորա քան զամենայն գերագոյն համարիլ: Այս կոչի աստուածային արդարութիւն: *Եւ երկրորդ արդարութիւն առ մարդիկ եւ առ ընկերս. որպէս հրամայեաց ի յօրէսս: (Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո:.) Չի որչափ սիրես զանձն քո՛ նովին չափովն հաւասար քեզ սիրեսցես զընկերն քո: Այս առաջին արդարութիւնն է առ մարդիկ: Երկրորդ արդարութիւնն է՝ որ գերագունին քան զքեզ՝ հնազանդ լինիս. եթէ աւուրբ մեծ են քան զքեզ, թէ իշխանութեան, թէ գիտութեամբ, թէ ընչիւք կամ այլ իրօք, պատուես զնոսա. եւ հնազանդ լինիս. եւ զքեզ նոցա երկրորդ համարիս: Այլեւ փոքունց քան զքեզ թէ աւուրբք, թէ ընչիւք, թէ գիտութեամբ, նոցա գուր եւ խնամ ցուցանես. եւ ի մեծութենէն քո մասնաւորես զնոսա. թէ գիտութիւն, թէ ինչք, թէ փառք, եւ այլն ամենայն: Այլեւ հաւասար ընկերաց քոց՝ որ զքո հասակդ ունին, կամ քո անունդ, կամ զփառսդ եւ զայլն, նոցա աննախանձ բարեկամ կացից. եւ զնոցան բարին քեզ համարես. այս արդարութիւնն է. որպէս ասէ առաքեալն.(տուր զպարտս. որում զպարտս, որում զերկիւղ, որում զհարկ, որում զմաքս. եւ մի պարտապան գտանիցք:.) Երրորդ արդարութիւն՝ է առ մարդիկ ի վաճառս. ի չափ՝ ի կշիռս՝ ի յարուեստս՝ ի մշակութիւնս՝ ի փոփոխն եւ ի տուրս՝ արդար լինիլ: Ի վաճառս՝ ոչ գին ի վեր ասել. եւ ոչ քան զնորայն գին վայր գնել. այլ է զաժէն: (Եւ կրկին չափ, եւ կրկին կշիռ, եւ կրկին կանգուն՝ այսինքն, մեծ եւ փոքր՝ ատելի է Աստուծոյ ասէ Սողոմօն:.) Այլ որով առնուն չափովն եւ կշռօքն տան, եւ այն է արդարութիւն: Եւ յարուեստն՝ ոչ խորել զմշակութիւնն. միտմիտ առնել եւ ըստ կամաց տեսրցն. զփոխն առանց շահի տալ. զգլուխսն միայն պահանջել. զտուրսն առանց փոխարինաց. զի յԱստուծոյ առցեն փոխարենն եւ զշահնն երկոցունցն: Չորրորդ եղանակ արդարութեան՝ է լեզուին. ոչ սուտ խօսիլ. եւ ոչ սուտ վկայել. ոչ անիծանել. ոչ յիշոց տալ. ոչ հերձուած խօսիլ. ոչ զուր ասել. ոչ մատնել. ոչ չար ասել զմարդոյ. այլ զամենայն բարի խօսիլ եւ զճշմարիտն: Այլ եւս՝ թէ ուխտեալ է, կատարել. մի ուխտագանց լինիլ. թէ խոստացեալ է մարդոյ պարգեւել, մի սուտ լինիլ. եւ այլ սոյնպսիքս՝ լեզուի են արդարութիւք: Զինգերորդ արդարութիւնն է դատաւորաց եւ առաջնորդաց եւ իշխանաց. զի դատաւորք արդարութեամբ գատեսցեն. մի կշռօք. մի ակնառութեամբ. մի վասն երկիւղի, կամ այլ ինչ պատճառի զդատաստանն թիրեցեն: Չի դատաստանն Աստուծոյ է. (եւ դատաստան արդար դատեցարուք ասէ Տէր:.) Այլեւ առաջնորդք հնազանդեցելոց՝ վարդապետք աշակերտաց՝ իշխանք ի վերայ երկրի՝ տեսրք ի վերայ ծառայից՝ արդարութեամբ վարեցին. եւ մի առաւել քան զհարկն պահանջեցեն: Այլեւ

արդարութիւն է գրաստու եւ անասնոց ինամ տանել ի կերակուրն պէտս
 ւոցա. եւ մի աւելի զկարն բռնն դնել. ասէ Սողոմօն. (այր արդար՝ ողորմի
 գրաստի իւրոց:) Իսկ դատեալքն՝ հնազանդ լիցին դատաւորացն զոր ինչ
 ասիցեն, եւ աշակերտք ապետաց. եւ ծառայք տերանց. որպէս օրինադրէ
 առաքեալն. (ծառայք հնազանդ լերուք տերանց. ոչ յակամայ ծառայել, այլ
 միամտութեամբ սրտի.) որպէս ասացաք վերոյ: Վեցերորդ արդարութիւն՝ է ի
 մեջ առն եւ կնոջ. զ սրբապէս պահեսցեն զանկողինս իւրեանց. զի
 (պատուական է ամուսնութիւն եւ սուրբ անկողն ասէ առաքելն:) Մի յաճախ
 բղջախոհութեամբ. եւ մի զրկելով զմիմեանս. այլ պարկեշտ եւ ողջախոհ
 ամուսնութեամբ ըստ կանօնաց եկեղեցւոյ վարիլ: Այլեւ առ որդիս եւ առ
 ազգականս ինամ տանիլ՝ արդարութիւն է: Այլեւ պահել զարեւակիցս, եւ
 զհոգեւոր ազգակիցս աւազանաւն. եւ զօրինոր ազգակիցս՝ որպէս
 ինամութիւն. եւ ոչ խառնել ընդ միմեանս դարձեալ պղծութեամբ. այլ պահել
 սրբութեամբ որպէս օրէն է քրիստոնէից, եւ կանօն սուրբ հայրահետացն,
 արդարութիւն եւ սրբութիւն այս է: Այլեւ համառօտ ասեմ. ամենայն մասանց
 մերոց՝ գոյ արդարութեան գործ. զի աչքն՝ արդարութեաբ տեսանէ եւ առանց
 արատոյ. եւ ականջն արդարութեամբ լսէ եւ առանց նենգութեամբ. եւ
 միտքն՝ արդարութեամբ խորհիլ եւ առանց թիրութեամբ. եւ կամքն բարի
 կամի եւ առանց չարութեան. արդարութեամբ խօսի. արդարութեամբ ըմպէ.
 արդարութեամբ ժողովէ. արդարութեամբ ցրուէ. արդարութեամբ գործէ.
 արդարութեամբ գնայ. եւ յամենայն ինչ՝ արդարութեամբ ուղղէ զկեանս իւր:
 Այս է սերմանել զարդարութիւն.՝ ապա յետ այնորիկ հնձեսցէ զբարութիւն
 յաւիտեանական կենացն, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրինեալ
 յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն արդարութեան. ի բանն Դաւթի: (Արդար է
 Տէր՝ զարդարութիւն սիրէ՝ զուղղութիւն տեսանեն երեսք նորա:) Սաղ. 10.
 8: (Գլուխ. ԻԸ)

Բարի է բնութեամբ Աստուած՝ բարերար.՝ զամենայն բարութիւնս
 իւր՝ կամեցաւ պարզել մարդկան: Վասն զի (արար զմարդն ի պատկեր իւր.)
 եւ որպէս նմանութեամբ եւ պատկերին կցորդ արար. նոյնպէս եւ
 բարութեան իւրում հաղորդեաց զմարդն: Արդ՝ որպէս բազում բարութիւնս
 ետ մեզ Աստուած՝ լոյս, կեանս, անմահութիւն, բան, իմաստութիւն, եւ այլն:
 Նոյնպէս մի բազում բարութեանցն՝ արդարութիւնն է զի շնորհեաց մել.
 որպէս ասէ մարգարէն: (Արդար է Տէր՝ եւ զարդարութիւն սիրէ:) Չի զոր ինչ
 բարի է, սիրէ եւ կամի Աստուած. եւ զոր ինչ սիրէ եւ կամի, տայ Աստուած
 մարդկան ազգի: Եւ դարձեալ՝ որպէս ասէ մարգարէն. (Աստուած սուրբ է, ի
 սուրբս բնակի:) Նոյնպէս (արդար է Աստուած, եւ զարդարութիւն սիրէ. ուղիղ
 է Աստուած, եւ զուղղութիւն տեսանէ:) Իսկ անիրաւութիւն եւ թիրութիւն՝
 ատելի է Աստուծոյ. եւ ոչ տեսանէ, եւ ոչ կամի թէ գործեն մարդիկ. այլ
 զարդարն եւ զուղիղն կամի առ մեզ եւ տեսանէ Աստուած: Այս է որ ասէ
 մարգարէն: (Արդար է Տէր՝ եւ զարդարութիւն սիրէ. եւ զուղղութիւն տեսանեն
 երեսք նորա:) Արդ՝ սահման արդարութեան այն է, որ զմիջին կշիռն ունի:
 Վասն զի արդարութիւնն բնականապէս՝ ոչ ամենեւին բարի է, եւ ոչ
 ամենեւին չար. զի երբեմն ի չարն հակէ արդարութիւնն. եւ երբեմն ի բարին:
 Ի չարն հակէ, յորժամ զսուտ եւ զմարմնական արդարութիւնն ունիցին

մարդիկ: Որ յինքն միայն սոսկ արդարություն լինի, եւ առանց ողորմութեան: Որ այսպիսի արդարութեանս՝ ասէ իմաստունն Սողոմօն. (մի կարի արդար լինիլ, եւ մի առաւել ճարտար. զի մի խոտորեցիս:) Իսկ արդարութիւնն որ բարի է, եւ բարին հակէ, այն է, որ ողորմութեամբ լինի. զի ողորմութիւնն ամենեւիմբ բարի է քան զարդարութիւն: Վասն այն յորժամ մարգարեքն խօսեին զարդարութիւնն Աստուծոյ, ոչ ասէին զնա միայն արդար, այլեւ ողորմած. ըստ այնմ. (ողորմած՝ գթած՝ եւ արդար է Տէր:) Եւ դարձեալ՝ (յողորմութիւն եւ յիրաւունս օրհնեցից զքեզ Տէր:) Եւ դարձեալ՝ (ողորմութիւն եւ ճշմարտութիւն գնացէ առաջի Լորա:) Չի արդարութիւնն Աստուծոյ՝ ողորմութիւնն արդարութեամբ, եւ ոչ առանց միմեանց: Այլ երբեմն ողորմութիւնն յայտնի լինի, եւ արդարութիւնն ծածուկ: Այսպէս եւ առ մեզ տեսանի գործ արդարութեան: Չի է արդարութիւն՝ որ բարի է եւ պիտանի. որր ողորմութեամբն խառնեալ լինի. եւ է արդարութիւն որ պիտան է՝ եւ հակէ ի չարութիւնն, որ առանց ողորմութեան լինի: Այս արդարութիւնն որ սոսկ է եւ առանց ողորմութեան, հին օրինաց արդարութիւնն է եւ մարմնաւոր. այսինքն, (առնուլ ակն ընդ ական. եւ ատամն ընդ ատաման ըստ օրինացնն Սովսեսի.) եւ այս ոչ կարէ արդարացուցանել զմարդն վասն կրկին պատճառի: Նախզի՝ ոչ կարէին կատարել զօրէնս. եւ մնայր օրէնքն ի վերայ Լոցա. որպէս ասէ առաքեալն. (Եթէ հին օրէնքն արգել զամենեսայն ընդ մեղօք:) Երկրորդ՝ զի մարմնական էր օրէնքն եւ տկար. եւ ոչ կարէր արդարացուցանել զմարդն: Այս է օրինաց արդարութիւնն: Իսկ շնորհաց արդարութիւնս որ Քրիստոս է, հանդերձ ողորմութեամբ է. վասն այնորիկ բարի է եւ պիտանի: Չի չորս է անպիտան եւ անօգուտ արդարութիւն: Նախ՝ օրինաց արդարութիւնն որ ասէ. (սիրել զսիրելիս, եւ ատել զթշնամիս. հատուցանել չար փոխանակ չարի. եւ բարի փոխանակ բարւոյ. տալ փոխ եւ առնուլ անդրէն զկշիռն.) եւ այլ ամենայն այսպիսիքս՝ հին օրինաց արդարութիւնն է եւ տաճկաց, եւ աշխարհի դատաւորաց. գնի, վաճառի, եւ յայլն. որ մարմնաւոր է եւ անպիտան է հոգեւորին: Իսկ շնորհաց արդարութիւնն որ պիտանի է՝ այն է զոր Քրիստոս հրամայեաց. (տալ փոխ ուստի ակն, ոչ ունիցիք առնուլ. սիրել զթշնամիս. օրհնել զանիծիչս. բարի առնուլ ատելեաց. աղօթս ի վերայ հալածողաց, եւ այլն ամենայն: Այսպիսի արդարութիւնս՝ բարի է եւ հոգեւոր, զի ողորմութիւն է եւ գութ եւ սէր. վասն այնորիկ պիտանի է: Երկրորդ՝ գոյ եւ այլ արդարութիւն՝ որ անպիտան է եւ չար. որպէս յեփթայի վասն արդար մնալոյ ի յուխտն իւր, սպան զդուստր իւր. զի ոչ հաճեցաւ Աստուած. այլ ընդ մարդասպանիցն դատապարտեաց. զի բան իւր ի վեր համարեցաւ քան զհեղումն արեան: Նոյնպէս եւ Յերովդէս վասն արդար պահելոյ զերդումն՝ զխատեաց զմրտիչն Օվհաննէ. վասն որոյ որդնալից եղեալ սատակեցաւ: Նոյնպէս թէ ոք ուխտեցէ չար ինչ առնել, կամ սպանանել, զինքն կամ զայլս, կամ չար գործել եւ վնաս բերել մարդոյ, թէ վասն արդարութեան զայնպիսի ուխտն պահէ, չար է եւ անպիտան արդարութիւն: Երրորդն՝ անպիտան արդարութիւն է՝ որպէս մարմնական սրբութիւնն. զոր յայնժամ հրեայքն ունէին զշաբաթուցն ճարտարութիւն զբաժակաց եւ ստոմանաց մկրտութիւն եւ այլն. որք թիրեալ էին յօրնացն Աստուծոյ ի յաւանդութիւն ծերոցն. զոր այժմ այլազգիք ունին մարմնական սրբութիւն. լուացումն ոտից եւ ձեռաց եւ մարմնոյ. եւ սրբութիւն զգեստուց եւ բնակութեանց. որ ոչ ինչ է օգուտ հոգւոյ, որ մարմնական է եւ անպիտան:

Որպես Տերն հրամայեաց. (դուք զարտաքին բաժակին լուանայք. եւ ներքինը ձեր՝ պիղծ է անզգամութեամբ եւ մեղօք.) այնպիսին ասէ՝ (սման է գերեզմանաց բռելոց. որք արտաքոյ գեղեցիկ երեւին. եւ ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց եւ ժահահոտութեամբ:) Այս է՝ որ մարմնով եւ հանդերձիւ լուացեալ եւ սրբեալ են ի յաղտոյ. եւ հոգի նոցա լի է մեռելոտի գործովք եւ ժահահոտ մեղօք: Այնպիսի սրբութիւն անպիտան է. զի Աստուած զսրբութիւն սիրէ. որպէս Տերն. (կեղծաւորք՝ նախ սրբեցէք զներքին հոգիսդ, զի եւ արտաքինն լինիցի սուրբ. զի սուրբքն սրտիւք՝ զԱստուած տեսցեն:) Չորրորդ՝ գոյ եւ անպիտան արդարութիւն ի ներքս ի յեկեղեցիս քրիստոնէից. յորմէ հրաժարեցուցանէ առաքեալն եթէ՝ (ոմանք հարեալք ի խիղճէ մտաց, որք արգելուն յամուսնութենէ. եւ մեկնեն ի կերակրոյ, զոր ետ Աստուած ի վայելիս հաւատացելոց:) Այս ինքն, որք ամանք հերձուածօք նաւատիտնոսք՝ մտին յեկեղեցի եւ ասեն. թէ պիղծ է ամուսնութիւնն. եւ պիղծ է շնչաւոր կերակուրն. եւ յետ մրկրտութեան՝ այլ մեղաց թողութիւն չկայ: Վասն որոց գրէ առաքեալն. (պատուական է ամուսնութիւնն. եւ սուրբ են անկողինքն. այլ զշունս եւ զպոռնիկս դատէ Աստուած:) Եւ ոչ կերակուր է պիղծ. զոր Աստուած սրբեալ է յօրէնսն եւ հրաման տուեալ. (այլ նոցա է պիղծ՝ որք խղճին ուտիցեն ասէ:) Եւ աստ գիտելի է՝ զի ոմանք որ զկուսութիւնն սիրեն՝ եթէ վասն սրբութեան է, եւ թէ վասն մարգարեից արքայութեան, ընդունելի է. որպէս հրամայէ աւետարանն. (են ներքինիք՝ որք վասն սիրոյն Աստուծոյ զանձինս արարին ներքինիս:) Իսկ թէ բնական է, եւ կամ ի մարդկանէ եղեալ ներքինի, եւ կամ պիղծ ասեն զամուսնութիւնն, այնպիսիքն վատթար են անարգեալ ի գրոց սրբոց: Նոյնպէս թէ զմիս կամ զայլ շնչաւոր կերակուրս ոչ ուտեն, զի չարչարեսցեն զմարմինն, ընդունելի է. (զի որքան արտաքին մարդն տկարանայ որ է մարմինն, ներքին մարդն զօրանայ որ է հոգին ասէ առաքեալն:) Իսկ թէ վասն պիղծ համարելոյ ոչ ուտէ միս, եւ ըմպէ զգինի, այնպիսի մահու չափ մեղանչէ. եւ է ի կարգս հերձուածողաց: Արդ՝ այսպիսի գունեալ եւ կերպարանեալ արդարութիւնս՝ չէ ճշմարիտ. այլ պատուականեալ է. որպէս անագն եւ կապարն զգոյն զարծաթոյ՝ այլ ոչ է ճշմարիտ արծաթ անապական եւ սուրբ: Նոյնպէս այսօքիկ ոչ են ճշմարիտ արդարութիւն. այլ սնոտի եւ նմանութեամբ. յաղագս այսօրիկ ասաց իմաստունն. (մի առաւել արդար լինիր, եւ մի ամենեւին ճարտար. զի մի թիրեցիս:)

Այս է չորեքկին անպիտան արդարութիւն որպէս ասացաւ. որ առաւել ի չարն հակէ եւ մերձաւորէ զմարդ, եւ ոչ ի բարին. Այլ արդարութիւն որ ի շնորհացն Քրիստոսի է՝ եւ ունի որդորմութիւն եւ գութ եւ սեր առ ընկերս, վասն բարի է եւ ընտրելի. որպէս ասէ մարգարէն: (Արդար է Տեր եւ զարդարութիւն սիրէ. եւ զուղղութիւն տեսանեն երեսք նորա:) Եւ զայս պարտ է գիտել մեզ՝ որ այլ արդարութիւն՝ որ բարի է եւ ընտիր, ե՞րբ լինի չար եւ անպիտան. որպէս ասէ իմաստունն: (Է՛արդարութիւն՝ կորուսեալ յարդարութեան իւրում. եւ է՛ անպարհիտ՝ որ մնաց չարութեամբ իւրով:) Նախ որ յԱստուծոյ իմաստնացեալ էր Սողոմօն, որ զամենայն մարդկան զբարսն եւ զկամսն եւ զգործսն քննեաց եւ ուսոյց, եթէ ո՞րն ի նոցանէ պիտանի է, եւ ո՞րն անպիտան. նոյնպէս եւ քննեաց զարդարն եւ զանպարհիտն եւ ասէ: (Են ոմանք արդարք՝ որք մեջ արդարութեան են, եւ կորուսնեն զարդարութիւնս իւրենց. եւ են ոմանք անպարհիտք՝ որք մեջ

չարութեանն կան եւ ապրին հոգւով. եւ կորուսանեն զչարութիւնս իւրեանց: եւ զսորա օրինակն՝ նախ ի յաւետարանէն ուսանիմք դէմս փարիսեցւոցն եւ մաքսաւորին ասացեալ: Որ փարիսեցւոյն անձն արդար էր ըստ օրինացն. եւ յորժամ պարծելով եւ հպարտութեամբ թուեաց զարդարութեան գործն եթէ, (պահեմ երկիցս ի շաբաթու՝ եւ տամ տասնորդս յամենայնէ՝ եւ ոչ եւ իբրեւ զայս մաքսաւորս) վասն այն դատապարտեցաւ: Իսկ մաքսաւորն՝ զերեսն յերկիր եղեալ, զաչս ի յերկինո ոչ համբառնայր. բախեր զկուրծս եւ ասեր. (Աստուած քաւեր զիս զմեղաւորս:) Արդ՝ սա անպարհիշտ էր՝ խոնարհութեանն գնաց արդարացեալ ի տունն իւր. եւ փարիսեցին վասն պարծօղ հպարտութեանն՝ գնաց մեղօք ի տունն իւր: Այսպէս ամենայն արդար որ զբարիս գործէ՝ ի պահս, ի յաղօթս եւ յողորմութիւն, ի ճգնութիւն, ի գետ նախշութիւն, եւ յայլն, եւ ունի զախտ հպարտութեան, կորոյս եւ պղծեաց զգործ արդարութեանն: Չոր օրինակ՝ սուրբ կերակուր ինչ լիցի անօթով, եւ պիղծ կենդանի ինչ անկցի ի նա, պղծեսցի, բոլորն: Նոյնպէս եւ ամբարտաւանութիւնն մտեալ ի մէջ արդարութեան գործոցն՝ պղծէ զնա եւ կորուստնէ: Իսկ մեղաւորն իւրով խոնարհութեամբն՝ զղջմամբ խոստովանութեամբ եւ բարի գործով՝ կորուսանէ զմեղս եւ ազատի: Վասն այն ասի յառակաց եթէ՝ (մեղաւոր խոնարին բարի է, քան զարդար հպարտն.) զի երբեմն խոնարհութեամբն կամի զղջանալ ի չարեացն, եւ խոնարհիլ ի ներքոյ օրինացն Աստուծոյ: Այլ հպարտ արդարն՝ միշտ զինքն արդար կարծէ. եւ մնաց ի նոյն չարիսն. եւ ոչ խոնարհիլ հրամանացն Աստուծոյ եւ կանօնաց սրբոցն եւ հարց խրատու. վասն այն կորուսանէ զինքն եւ զարդարութեան գործի իւր: Դարձեալ՝ առնանի բանս ի վերայ ազգին հրեից. որք զինքեանս արդար հրամէին եւ օրինաւոր. եւ հակառակէին Զրիստոսի. եթէ մեք օրէնս ունիմք. եւ ըստ օրինացն ընթանամք. որպէս ասէ առաքեալն. (տգետ են արդարութեանն Աստուծոյ՝ եւ զիրեանցն խնդրեն կացուցանել:) Չի ոչ գիտէին թէ ո՞ր արդարութիւն է հաճոյ Աստուծոյ. եւ զիրեանց մարմնաւոր արդարութիւնն գործէին. եւ զշնորհաց արդարութիւնն ի Զրիստոսէ ոչ ընկալան. վասն այնորիկ դատապարտեցան. զի յետ խաչին Զրիստոսի՝ օրէնքն խափանեցաւ: Չ ասեն վարդապետք թէ, առ խաչելութեամբն Զրիստոսի՝ հիւանդացաւ օրէնքն. եւ յորժամ էջ հոգին սուրբ ի դասս առաքելոցն, եւ նորոգեաց զնոր օրէնս, հին օրէնքն մեռաւ եւ բարձաւ ի միջոյ. եւ յայնմ հետէ կատարօղք օրինաց հնոյն՝ հաւասար են կռապաշտիցն եւ անհաւատիցն: Չոր օրինակ՝ լուսինն եւ աստեղք ի գիշերի լուսաւորեն. եւ յորժամ ծագէ արեգակն, խափանի լոյս նոցա: Նոյնպէս օրէնքն Մովսիս՝ որպէս զլուսինն լուսաւորեր. եւ այլ մարգարէքն որպէս զաստեղս պայծառացուցանէին զխաւար կենացողոյս: Այլ ի ծագիլ արեգականն արդարութեան որ է Տէր մեր Յիսուս Զրիստոս, խափանեցան ստուերական օրէնքն. որպէս ասէ մարգարէիւն Աստուած: (Ծագեցից երկիւղածաց մոց զարեգակն արդարութեան:) Այսպէս օրէնքն եւ օրինակքն՝ ի գալ շնորհացն եւ ճշմարտութեանն, բարձան ի միջոյ եւ դատարկացան: Վասն նոցա ասէ Սողոմօն. (է արդարութիւն կորուսեալ յարդարութեան իւրում:) Իսկ անպարհիշտն՝ հեթանոսաց ազգն էր. որք յանհաւատութեան էին եւ ի չար գործս: Յորժամ քարոզեցին առաքեալքն, նոքա հաւատացին ի Զրիստոս. եւ արդարացն շնորհօքն Զրիստոսի: Փոխանակ անհաւատութեան՝ զհաւատս ընկալան. եւ փոխանակ չարեացն՝

զշնորհս արդարութեան գործոց. որպէս ասէ առաքեալն. (կատարումն օրինաց Քրիստոս է յարդարութիւն ամենայն հաւատացելոց:) Այսուհետեւ որք ի Քրիստոս հաւատան՝ արդարանան շնորհօքն Քրիստոսի. եւ որք հաւատան, ոչ կարեն արդարանալ: Չ արդարութիւն եւ փրկութիւն մարդկան Քրիստոս է. եւ աւետարանն ասէ. (որ ոչ հնազանդի որդւոյ, ոչ տեսանէ զկեանս. այլ բարկութիւնն Աստուծոյ մնայ ի վերայ նորա:) Ապա յայտ է թէ՛ անհաւատն եւ այլազին եւ հրեայն՝ թեպէտ բազում բարիս գործեսցէ. ընդունայն է եւ սուտ. եւ ոչ ունի փրկութիւն: Եւ այս վասն երկու պատճառի: Նախ՝ հիմն բարեաց գործոց՝ հաւատն է. եւ ապա գործքն շինածք յարմարեալ. եւ որ ոչ ունի զհիմն հաստատեալ. ոչ կանգնի շնուածն ի վերայ: Երկրորդ՝ զ փրկութիւնն Քրիստոս է. եւ որ ոչ հաւատայ Քրիստոսի, ոչ ընդունի զփրկութիւնն նորա: Եւ վկայ բանիս այսորիկ՝ ասէ ի ժողովն Սողոմօն: (Իմաստութիւնն օգնական է իմաստնոց, քան զտասն իշխանս որք իցեն ի քաղաքի:) Եւ զբանս զայս՝ զանազանապէս մեկնեն վարդապետք: Նախ եւ առաջին իմաստութիւնն՝ է առ Աստուած նայիլն, եւ զԱստուած իմանալն եւ հաւատալն: Եւ այն իմաստութիւնն՝ օգնական է հոգւոց մարդկան ընդդէմ պատերազմօղ դիւաց, առաւել քան զբազմազօր իշխանս, որք սպառազինեալ պահեն զքաղաքս ի թշնամեաց. այլ ոչ կարեն օգնել հոգւոց մարդկան. որպէս օգնեաց երից մանկանցն ի մէջ հրոյն անկեզ պահելով զնոսա. որք ոչ կարէին մարմնական զօրքն օգնել: Նոյնպէս օգնեաց Դանիելի ի մէջ գբոյն ընդդէմ առիւծուցն՝ որք ոչ մերձեցան ի նա: Դարձեալ՝ իմաստութիւն է հաւատքն եւ յոյսն զոր ունիմք առ Քրիստոս. որ օգնեաց հաւատացելոց իւրոց, առաւել քան զտասն բանեան օրէնսն, որք էին ի քաղաքն Իսրայելի. այսինքն, յազգս հրէիցն. զի օրէնքն ոչ կարացին զմարդն արդարացուցանել: Նախ՝ տկար էր եւ մարմնական: Երկրորդ՝ զի ոչ կարէին զօրէնս կատարել. զի դժուարին էր. (ակն ընդ ական, եւ ատամն ընդ ատաման:) Եւ այսպէս ի ներքոյ օրինացն պարտաւորք էին. եւ օրէնքն փակեր զամենայն ընդ մեղօք որպէս ասացաք: Իսկ արդարութիւնն Քրիստոսի եղէ՛ որք արդարացաք ձրի շնորհօքն Քրիստոսի: Եւ զի ձրի արդարացուցանէ զմեզ շնորհքն Քրիստոսի. յայտէ յերկու իրաց: Նախ յայնմանէ՛ յորժամ բազում ժամանակաց ծերք եւ անհաւատք գան ի շնորհսն Քրիստոսի, եւ հաւատան եւ մկրտին, զամենայն մեղաց թողութիւն գտանեն եւ արդարանան շնորհօքն Քրիստոսի: Երկրորդ յայտ է յորժամ դարձեալ յետ մկրտութեանն մեղանչեն զամենայն մեղս, եւ գան զղջմամբ եւ խոստովանին, զթողութիւն մեղաց գտանեն եւ արդարանան շնորհօքն Քրիստոսի: Ապա յայտ է զի առաւել օգնեաց մեզ Քրիստոսի շնորհքն, քան զտասն բան օրինացն Սովսիսի: Դարձեալ՝ (Քրիստոս է՞ Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն ասէ առաքեալն.) օգնական լինի մեզ՝ որք իմանամք զշնորհսն Քրիստոսի, առաւել քան զտասն զգայարանս հոգւոյ եւ մարմնոյ, որք իշխանք են ի քաղաքի բնութեանս մերոյ. զի մարդս կենդանի քաղաք է. եւ ներքին զգայարանքն միտքն եւ կամքն՝ իշխանք են քաղաքիս. եւ արտաքին զգայութիւնքս զօրք նոցա. աչք՝ ականջ՝ ձեռք, եւ այլն. զոր ինչ միտքն հրամայէ՛ նոքա կատարեն: Արդ՝ Քրիստոս առաւել եղէ զօրութիւն եւ իմաստութիւն մեզ, քան զտասն զգայարանս մեր վասն կրկին իրաց: Նախ՝ ներքին եւ արտաքին զգայութեմքս մեր՝ զմեղս գործեցաք եւ նուազեցաք ի փառացն Աստուծոյ. իսկ Քրիստոսի արդարացաք եւ ընկալաք

զփառս: Երկրորդ՝ զի այս զգայութեմբս՝ զօրացաք եւ իմաստնացաք ի ժամանակեայ կենցաղաս, որ փոփոխական է եւ անցաւոր: Իսկ Զրիստոսի՝ զօրացաք եւ իմաստնացաք ի հոգեւոր եւ ի յաւիտենական կեանսն անվախճան: Ապա յայտ է՝ զի առաւել օգնեաց իմաստութիւնն Զրիստոսի մեզ, քան զամենայն իմաստութիւն մեր: Դարձեալ՝ իշխանք են յեկեղեցիս սուրբ եւ պահապան հրեշտակք մեր. զի ոմանք իշխանք եւ պահապանք են անձանց սրբոց. եւ ոմանք եկեղեցւոյ. եւ ոմանք ազգի եւ քաղաքի են պահապան եւ իշխեցօղք. որպէս ասէ մարգարէն Դաւիթ: (Ինձ յոյժ մեծարու եղէն բարեկամք քո Աստուած. եւ յոյժ զօրացան իշխանք նոցա. որք են հրեշտակքն. թուեցի զնոսա՝ եւ քան զաւագ բազմացան:) Այն է որ յայլ ուր ասէ. (բանակք հրեշտակաց Տեառն՝ շուրջ են զերկիւղածովք իւրովք եւ պահեն զնոսա:) Արդ՝ սոքա այսպէս բիւրք հրեշտակաց՝ պահապան են մարդկան. այլ Զրիստոսի օգնականութիւնն՝ առաւել գերազանցէ քան զնոսա, որք իշխանք եւ պահպանօղք են մեր: Եւ այս վասն կրկին պատճառի: Նախզի՝ սոցա սպասաւորութիւնն որք շուրջ են զմեօք՝ պահպանեն զմեզ ի յարկածից չար խորհուրդոցն մեղաց. այլ ի մեռելոտի գործոց մեղաց՝ եւ ի խիղճէ մտաց՝ արիւնն Յիսուսի սրբէ զմեզ: Վասն զի հրեշտակքն մեր՝ ոչ կարեն արդարացուցանել զմեզ ի մեղաց. այլ ի չար խորհրդոցն պահեն: Իսկ օգնութիւնն Զրիստոսի պահէ զմեզ ի յարկածից դիւացն. եւ սրբէ ի մեղացն. որպէս մարգարէն. (Տէր պահապան մեր, եւ Տէր ընկալցի աշոյյ ձեռամբն իւրով. եւ Տէր պահեսցէ զմուտ եւ զել մեր յայսն հետէ մինչեւ յաւիտեն:) Երկրորդ՝ զի հրեշտակք ոչ կարեն արդարացուցանել զմեզ եւ փրկել ի դժոխոց. այլ ինքն Տէրն մեր՝ եկն եւ արդարացոյց զմեզ եւ փրկեաց զհոգիս ի դժոխոց. եւ զմարմինս ի չար ծառայութենէ մեղաց: Որպէս Եսայի. (ոչ պատգամաւոր ոք՝ եւ ոչ հրեշտակք՝ այլ ինքնին Տէր եկեսցէ եւ փրկեսցէ զմեզ:) Եւ թէ ընդ Է՞ր ոչ հրեշտակօք փրկեաց զմեզ: Այսմ դնեն վարդապետք կրկին պատճառ: Նախ՝ եթէ հրեշտակ էր եկեալ եւ փրկեալ զմեզ, պարտ էր մեզ երկիր պագանել փրկչին մերոյ. եւ լինէր այն մեծ կռապաշտութեան հայիոյութիւն: Չի գրեալ է. (Տեառն Աստուծոյ քո երկիրպագցես, եւ զնա միայն պաշտեսցս:) Այլ ինքնին Տէրն՝ որ էր պաշտելի եւ երկրպագելի մեզ նա փրկեաց զմեզ. (եւ նմա երկրպագեն ամենայն երկնաւորք եւ երկրաւորք եւ այլք:) Դարձեալ՝ փրկութիւն եւ արդարութիւն մարդկան՝ կարօտանայր անհուն զօրութեան: Իսկ հրեշտակք՝ եղանակք են, եւ ունին հունաւոր զօրութիւն. եւ ոչ կարեն եղականք զեղականս արդարացուցանել եւ փրկել: Վասն այն ինքն անեղ բանն Աստուած՝ որ ունէր ամենակարօղ զօրութիւն, Էառ մարմին ի սուրբ եւ յանարատ կուսէն, եւ եղ՝ մարդ հոգւով՝ մարմնով՝ մտօք կատարեալ,՝ մարմնովս մեր արդարացոյց զմեզ,՝ փրկեաց յիշխանութենէ խաւարին: Որում՝ զմեզ արժանի արասցէ սրբոց իւրոց՝ սիրողաց անուան իւրում. ընդ Որում Յօր ամենակալի,՝ ազատիչ Սուրբ Յոգւոյն, վայելէ փառք իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ վասն Արդարութեան. ի բանն Դաւթի: (Արարի իրաւունս՝ արդարութիւն. մի՛ մատնէր զիս ի ձեռս նեղչաց իմոց:) Սաղ. 118. 121: (Գլուխ. ԻԹ)

Ըզմարդն ի սկիզբն բարի՝ արդար ստեղծ առանց մեղաց. եւ եղ զնաա

ի դրախտին իբրեւ յարդարութեան տեղիս. այլ չարն եւ մեղքն՝ յետոյ եկամուտ եղեւ ի մարդոյս բնութիւնն: Եւ յայտ է ի 2 իմն վկայութեանց: Նախգի՝ ասէ գիրն. (արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. եւ ըստ պատկերի Աստուծոյ արար զնա:.) Այս է յիւր պատկեր բարութեան եւ արդարութեան ստեղծ զմարդն բարի եւ արդար: Չի ոչ ինչ էր մեղք կամ չար. ոչ ի մարմինն, եւ ոչ ի հոգին, եւ ոչ ի միտս մարդոյն: Չի այնպէս անմեղութեամբն՝ նախաստեղծին Աստուծոյ նմանեացի: Երկրորդ՝ յայտ է ի ձեւոյն. զի ուղիղ է մարդոյն կազմուած. եւ ոչ կորագլուխ կամ խոնարհ: Նշանակէ զայն՝ որ ուղիղ էր հոգի մարդոյն. եւ միտքն ի վեր առ Աստուած. եւ ոչ ինչ ունէր թիրութիւն կամ խոտորումն ի մեղս: Երրորդ՝ յայտ է ի սրբութենէ մարմնոյն. զի մարմինն մարդոյ՝ ոչ ունի ծածկոյթ. մազ. կամ թել, կամ թեփ որպէս այլ կենդանիք. այլ է յստակ եւ մաքուր յամենայնի: Նշանակէ զմաքրութիւն հոգւոյն եւ մտացն. զոր արար Աստուած առանց ծածկութի մեղաց: Չորրորդ՝ յայտ է յայնմանէ՝ որ բազումք ի մարդկանէ սուրբ եւ արդար պահեցին զինքեանս որպէս Նահապետք. Աբրահամ. Իսահակ. Յակօբ. Յոբ. Մովսէս. եւ այլ Մարգարէքն եւ Յարք սուրբք: Չի թէ բնութիւնս մեղանչական էր, ոչ կարէին նոքա արդարանալ ի մեղաց. զի նոքա բնութեանս մարդոյ կցորդ եւ հաղորդք եղեն: Հինգերորդ՝ յայտ է Տեառն է մերմէ Զրիստոսէ. զի բանն Աստուած էառ զմարդկային բնութիւնս. զհոգի, զմարմին, եւ զմիտս կատարեալ. եւ պահեաց զբնական կիրս նոցա առանց մեղաց. զմարմնոյն քաղց՝ զծարաւ՝ զտքնիլ եւ զվաստակիլն կրեաց: Եւ զհոգւոյ զտրտմիլ եւ զերկիւղն կամաւորապէս կրեաց առանց մեղաց: Իյամօթ մարդկայինս ազգի. զի մի ասիցեն թէ, մարմինս մեր՝ է մեղանչական եւ հոգիս: Այլեւ յամօթ թշնամոյն սատանայի. որ չարախօսեր զմեզ եթէ, մարդկային ազգս՝ բնութեամբ մեղանչական է: Եցոյց թէ՝ բնութիւն մարդոյս անմեղ է ստեղծեալ իսկզբանէ: Վեցերորդ՝ յայտ է ի բանիցն Սողոմօսի որ ասէ. (Աստուած զմարդն ուղից արար. եւ նոքա ինդրեցին զանազան խորհուրդս.) այսինքն, զի արդար եւ անմեղ է մարդոյս մարմինն եւ հոգին եւ միտքն ի ծննդենէ: Այլ թէ յուստի՞ մտին ի ծննդենէ: Այլ թէ յուստի՞ մտին մեղքն եւ չարիքն ի բնութիւնս մեր: Ի վերայ բերե թէ (նոքա ինդրեցին խորհուրդս զանազանս.) այսինքն, անձն իշխան կամօք իւրեանց ինդրեցին եւ գործեցին. թէ զբարիս, եւ թէ զչարս: Որպէս նահապետք. Աբրահամ եւ որդիք եւ ազունք նորա՝ ինդրեցին զբարեպաշտութեան հաւատն եւ զբարիս. եւ հետեւեցան նմա: Եւ հեթանոսք եւ բազում չարք եւ վատթարք յազգէն հրէից՝ սիրեցին զանպարշտութիւն եւ զչար գործս. եւ հետեւեցան անիրաւութեան: Վասն զի ամենայն մարդ ի վեց պատճառաց գործէ զմեղս: Նախ՝ ի պատրանաց սատանայի. որ պատճառ է ամենայն չարութեանց. վասն այն սկզբնաչար կոչի. որ զառաջին մարդն ի սկզբանէ խաբեաց եւ ընկեց ի մեղս. եւ ամենայն մարդկան սկիզբն եւ պատճառ լինի կորստեան. զի նա շարժէ եւ յորդորէ զմարդն ի նախանձ. ի հպարտութիւն. ի բարկութիւն. ի պոռնկութիւն. ի գողութիւն. իսպանութիւն. եւ յայլ զանազան մեղս: Վասն այն ասէ Տերն թէ, (սատանայ իսկզբանէ մարդասպան է.) որ յամենայն մեղս՝ սատանայ յորդորէ զմարդն: Եթէ ի խորհուրդն, եթէ ի հոգին, եւ եթէ ի մարմինն, եւ ի ցանկութիւնն: Երկրորդ պատճառ մեղաց՝ է՝ անձնիշխան կամք մարդոյս. որ մեք կամաւ ընտրեմք զմեղսն եւ գործեմք, թեպետ ոչ է հարկ ի վերայ մարդոյս. զի իշխան է եւ Տեր ի վերայ չարի եւ

բարւոյ. Եւ զոր կամի՝ գործ է: Երրորդ՝ գործ է մարդ զմեղս խաբէութենէ չար ընկերաց մարդկան. զի այնպէս է մարդոյ սովորութիւնն՝ թէ բարի տեղոյ հանդիպի, առ բարի վարժապետ, եւ բարի ընկերաց, զբարիս սովորի ի նոցանէ եւ գործէ. ըստ այնմ, (մանուկ մտավարժ էի. եւ հոգւոյ բարւոյ դիպեցայ: (Իսկ թէ ի չար տեղի հանդիպի, առ չար ուսուցիչ, եւ չար ընկերաց, զչարիս ուսանի եւ գործէ ի նոցա խաբէութենէն եւ չար գործոցն: Վասն այն ոչ է պարտ քրիստոնէիցն ի մեջ չարաց, կամ այլազգաց բնակիլ. որպէս ասէ մարգարէ իւր Աստուած. (Ելէք միջոյ նոցա. եւ մեկնեցարուք. եւ ի պիղծս մի մերձենայք:)) Զորրորդ՝ է հեշտութիւն մեղացն եւ սովորութիւնն. զի յորժամ մարդն հեշտանայ եւ սովորի ի մեղս, անխտիր գործէ զչարն իբրեւ զբարի: Զի հեշտութիւն մեղացն եւ սովորութիւնն՝ կապ լինի, եւ զմարդն ի մեղս կապէ. որպէս ասէ մարգարէն. (տոռուք մեղաց պատեցան զինեւ:)) Զինգերորդ՝ Է՛ բնական կամք մարմնոյն. (որ հաստատեալ է յանդամս մեր, եւ սիրէ զմեղս հակառակ օրինաց մտացն.) եւ յորժամ դիպօղ ժամու հանդիպի, այն որ ծածուկն էր, յայտն է զչարիս: Վասնդ այն ասաց Աստուած առ նոյիւ. (միտք մարդկան հաստատեալն են ի խնամս չարին ի մանկութենէ իւրեանց.) այսինքն, ի տղայութենէ բնական է մարդոյս՝ որ զհեշտ ցանկութիւն մեղաց սիրէ: Վեցերորդ՝ գործ է ոք զմեղս. զի անտէր է, եւ անպատուհաս. զի թէ ի գործեալ մեղացն պատուհասիւր, երկնչեր եւ ոչ գործեր. այլ անխտիր է ի մեղս. զի ոչ խրատիի եւ ոչ յանդիմանի ի նոյն ժամն: Այլեւ տեսանէ յառողջութեան զինքն եւ ի յաջողման եւ յուրախութեամբ յամենայն կողմանէ. որպէս ասէ Դաւիթ. (ահա մեղաւորք եւ յաջողեալ է նոցա. կան եւ ունին զմեծութիւն աշխարհի:)) Իսկ թէ զայլ ոք տեսանէ խրատեալ յԱստուծոյ՝ այնու ոչ զգուշանայ: Նախ զի՝ ինքեանք իբրթէ ոչ են ի չարն. եւ զայլոցն ոչ ի միտ առնուն. եւ դարձեալ՝ պատճառեն զպատճառս անեղաց ոմանք թէ, նոքա արժանի են: Այսպէս ըստ 2 եղանակի գործէ մարդ զչարս. եւ ոչ կամի զղջանալ եւ դառնալ. իսկ որ ասէ առակն: (Որ առնէ զարդարութիւն՝ գտցէ օգնականութիւն:)) Արդ՝ արդար մարդն՝ ի վեց կողմանէ օգնական ունի. երեք յարտաքուստ. եւ երեք ի ներքուստ: Եւ արտաքին օգնական է մեզ՝ Նախ Աստուած. ըստ այնմ, (Աստուած յօգնել ինձ նայեց:)) Երկրորդ՝ հրեշտակք օգնական են իբարի գործելն. ըստ այնմ, (հրեշտակն որ պահեր զիս ի մանկութենէ:)) Երրորդ՝ օրէնքն Աստուծոյ՝ օգնական եւ մարդոյն. որպէս սիւն տան. եւ պարիսպ քաղաքի. որպէս ասէ Եսայի. (ձողաբաձ զարդարեցի. եւ ցանկով փակեցի.) այսինքն օրինօքն: Զորրորդ՝ ի ներքուստ բնութիւնս մեր ձեռնտու եւ օգնական է արդարոյն. զի հնազանդ է հոգւոյն. եւ ոչ ոսոխ եւ հակառակ: Զոր օրինակ՝ կազմուած սայլին պատրաստ է ի շարժիլ. նոյնպէս եւ հնազանդ է մարմինն ի գործն սուրբ: Զինգերորդ խիղճ մտացն օգնական է. եւ ոչ ստգտանէ. այլ հանգուցանէ ի խաղաղութեան: Վեցերորդ՝ նոյն ինքն գործն բարի ուրախացուցանէ զմեզ եւ արիացուցանէ ի գործելն զարդարութիւն: Եւ սոքա վեցեքին օգնականքս՝ ի վեց կողմանէ շարժումն նորին այսպէս: Ի վերուստ կողմանէ՝ օգնական է Աստուած: Եւ յաջ կողմանէ՝ հրեշտակն: Եւ յառաջ կողմանէ՝ օրէնքն Աստուծոյ որ յառաջընթաց է ի բարին: Ի ներքին կողմանէ՝ մարմինն օգնական է եւ հնազանդ հոգւոյս: Եւ ի ձախ կողմանէ՝ խիղճ մտացն օգնական է: Եւ յետուստ կողմանէ՝ օգնական են բարի գործքն: Այսպէս յամենայն կողմանէ՝ շուրջանակի օգնական գտանէ արդարութիւնն: Իսկ որ թիւրն է յարդարութենէն եւ մոլորեալ, յամենայն

կողմանէ վարակել եւ պատեալ է ի մեղս. զի օրէնք մարմնոյս՝ հակառակ է նմա. գերէ եւ քարշէ ի մեղս. եւ խիղճ մտացն դատօղ. եւ գործք մեղացն՝ հեշտ եւ թոյլ եւ ծանր՝ ի վայր հակէ: Նոյնպէս եւ արտաքուստ դէն եւ աշխարհս եւ ցանկութիւնք՝ քարշեն ի մեղս: Այլեւ տեսօղքն անարգեն. եւ զրկեալքն աղաղակեն. եւ հանապազ ի մէջ նոցա վարակեալ է եւ դառնացեալ. զի լոյս բանականին՝ դեռնու ի վառ է ի խիղճէ մտացն. եւ կշիռ խոհեմութեանն՝ այսինքն, հաւասարի դատողութեանն. քննէ եւ տեսանէ զթիրութիւն մեղաց. եւ այնու չարչարի: Եւ ոչ է որպէս անպարհիշտն եւ անզգգամն՝ որ լոյսն շիջեալ է. եւ կշիռ խոհեմութեան կորուսեալ: Տեսանելիքն կոյր է. եւ լսելիքն խլացեալ. եւ հոտոտելիք ընտրութեանն խոպանացեալ. եւ ճաշակելիքն անհամացեալ. եւ շօշափելիքն գօսացեալ՝ ոչ կարէ զգալ: Նա հանգստեամբ գործէ մեղսն եւ ուրախութեամբ. (ծիծաղելով գործէ ասէ այր ամպարիշտ զմեղս:) Որեւ մեզ տացէ Քրիստոս Աստուած ուղղութիւն վարուց. զի առնելով զկամս Նորա, արժանասցուք կենացն յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: Որում փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ Արդար վաճառաց՝ կշռոց. ի բանն առակին որ ասէ: (Կշիռ նենգութեան՝ պիղծ էառաջի Տէառն.՝ կշիռ արդար ընդունելի է նմա:) Առակ. 11. 1:(Գլուխ. 1)

Որպէս ասէ մարգարէն. (Արդար է Տէր՝՝ զարդարութիւն սիրէ.՝ զուղղութիւն տեսանեն երեսք նորա) Յաղագս որոյ՝ կամի մեզ զգործս արդարութեան գործել. զմիտս եւ զհաւատս արդար եւ ուղիղ պահել: Չի զարդարութիւն սիրէ Աստուած: Նախզի՝ բնական զմեզ ի յարդարութիւն ստեղծ գառաջինն: Իսկ անիրաւութիւնս եկամուտ եւ յետոյ խառնեցաւ ի սատանայէ: Վասն այն կամի գառաջին արդարութիւնն ի մեզ բերել գործովք: Երկրորդ՝ զի արդարութիւնն է մեզ բնական կենդանութիւն: Չի յորժամ տարերքն հաւասար եւ միաչափ լինին, առողջութիւն եւ կենդանութիւն է մեզ: Իսկ անիրաւն մտնեալ ի ներքս որ է աւելի եւ պակասն, հիւանդութիւն է եւ մահ: Վասն այն կամի Աստուած զարդարութիւնն՝ որ կենդանութիւն է եւ առողջութիւն. եւ ոչ զանիրաւութիւն՝ որ մահ է եւ պակասութիւն: Երրորդ՝ զի գործ արդարութեանն՝ տանի ի յաւիտենից կեանսն արդարոց, որ է անմահութիւն. եւ անիրաւութիւնն՝ տանի ի տանջանսն յաւիտենից, որ է դժոխքն եւ տեղի անիրաւին սատանայի: Վասն այն կամի զարդարութիւնն մեր՝ զի ինքն արդար է. եւ սկիզբն մեր ստեղծմանն՝ արդարութիւնն է. եւ պահօղն կենաց՝ արդարութիւնն է: Եւ ի կեանս արդարոց՝ արդարութիւնն առաջնորդէ եւ հասուցանէ: Որպէս ասէ: (Արդար է Տէր՝ եւ զարդարութիւն սիրէ. եւ զուղղութիւն տեսանեն երեսք նորա:) Վասն այն ի ձեռն Մովսիսի հրամայեաց Աստուած. (չափ մեծ եւ փոքր մի լիցի քեզ. եւ ոչ կշիռք. այլ հաւասար լիցին:) Նոյնպէս եւ ի բնական օրէնս քաղաքաց՝ իմաստութեամբն գտին օրինակ արդարութեան: Չկշիռն: Չչափն: Չկանգունն: Չի կշիռն՝ զծանր եւ զթեթեւութիւն որակացն հաւասար է ի տեսութիւն աչաց: Նոյնպէս կանգունն՝ զքանակն չափ է: Եւ չափն՝ զգոյացութիւնն թուէ: Եւ այսպէս ի տեսիլս աչաց զգործ արդարութեան սոցա տեսեալ, եւ թուով ի միտս պահեմք զարդարութիւն. զի ոչ արտաքոյ, եւ ոչ ի ներքս անիրաւութիւն մտանէ ի մեզ: Եւ ի հաւասարութենէ չափոց եւ կշռոց՝ բազում օգտութիւն է եւ շահ: Նախզի՝ քաղաքական օրէնքն եւ

բարեկարգութիւնն ամբողջ մնայ եւ գեղեցկազարդ, ի հաւասարութենէ կշռոց եւ չափոց: Երկրորդ՝ զի արտաքինք լուել զհաւասարութիւն կշռոց քաղաքաց, ի ներքս դիմեն. եւ որք ի քաղաքս միամտութեամբ վաստակին՝ առաւելու շինութիւն եւ շահն: Երրորդ՝ զի անծին եւ անպտուղ նիւթ չափով եւ կշռով վաճառեալ՝ հանապազ աճին եւ ծնանին. եւ պտղաբերեն զրդիւնս: Չորրորդ՝ զի շնիութիւն է քաղաքաց ի տուր եւ յառս վաճառաց հաւասար շահիլն. զի ծախսոլն շահի զգինն. եւ զնոլն զնիւթն. եւ այսպէս լինի շնիութիւն քաղաքաց: Դինգերորդ՝ զի հաւասար կշռովն՝ աղքատն ոչ զրկի ի մեծամեծաց. եւ ոչ տխմարն եւ փոքրն: Վեցերորդ՝ զի առ եւ տուր՝ փոխ եւ հատուցմունք՝ սոքօք յարմարին: Եօթներորդ՝ թագաւորաց եւ իշխանաց հարկ եւ սպասաւորութիւնք՝ սոքօք կարգաւորին: Ութերորդ՝ այլեւ պարգեւք եւ հռոք մեծամեծաց առ փոքունս՝ չափով քանակին: Իններորդ՝ շնիութիւն տանց՝ եւ ծախք ռոճկաց՝ ել եւ մուտք՝ չափով սահմանին: Տասներորդ՝ այլեւ ո՞ր է քան զայս մեծ շահ եւ օգտութիւն հոգեւոր, որ յորժամ զարդարութիւնն մոռանամք, ի սոցանէ տեսեալ ի միտ պահեմք եւ յիշեմք: Վասն այն ասէ թէ, (կշիռք արդարութեան՝ ընդունելի է Աստուած:) Իսկ նոքա որք նենգեն զկշիռս արդարութեան, եւ կամին զշահն ի յանիրաւութենէ ստանալ. այսինքն, յորժամ կրկին լինի չափ եւ կշիռ, մեծովն առնուն, եւ փոքրովն տան, այսպիսիքս պիղծ են առաջի Աստուծոյ: Չի զօրէնս Աստուծոյ արհամարհեն որ ասաց թէ՛ (չափ մեծ եւ փոքր եւ կշիռք՝ մի լիցին քեզ:) Այլեւ կոխեն զքաղաքական օրէնս. զի նա ուսուցանէ զարդար շահն ստանալ ի վաճառն, եւ ոչ զանիրաւն: Եւ արդար շահն լինի ըստ չորից: Նախ՝ ի պատուական նիւթն, թէ մեծաագին լինի: Երկրորդ՝ ի գին եւ ի նինն ըստ հասարակաց երկրին: Երրորդ՝ ի տեղին: Չորրորդ՝ ի ժամանակն: Չի գոյ յայս ժամանակս աժան. եւ ի միւսն թանկ. եւ ի յայս տեղին աժան, եւ ի յայլ տեղիս թանկ. այսպիսի շահս՝ արդար է եւ հալալ ի վաճառս: Այլ որ ի դէմս մարդոյն թէ կարիք լինի, թանկ վաճառէ, կամ որ ոչ արժէ՝ զգինն ի վեր ասէ, կամ թէ քան զհասարակաց նինն առաւել խնդրէ, կամ կշիռն պակաս դնէ եւ սուտ երդմամբ հաստատէ, այնպիսին զանիրաւ շահն ստանայ. որ ոչ է շահ, այլ գէն եւ յաւիտենից հուր եւ այրեցումն հոգւոյն. վասն այն ասէ: (Կշիռ նենգութեան՝ պիղծ է առաջի Աստուծոյ:) Եւ այնպիսին տասն գլխաւոր մեղօք՝ պիղծ է առաջի Աստուծոյ: Նախզի՝ որ զմարդ խաբէ՝ զԱստուծոյ խաբէ. զորոյ զպատկերն խաբեաց: Երկրորդ՝ զի ոչ հաւատայ զԱստուած տեսող գոլ գործոցն. ըստ այնմ, (ոչ է Աստուած առաջի աչաց նորա. պիղծ են ճանապարհք նորա յամենայն ժամ:) Երրորդ՝ զի ոչ հաւատայ դատաստանին Աստուծոյ, թէ ընդ գողոցն դատապարտի: Չորրորդ՝ զի եւս առաւել չար է քան զգողն. վասն զի գողն ի ծածուկ եւ ահիւ գողանայ. են նա յայտնի է նստել ի մէջ կրպակին. որ է կուղբակ, որ ստուգաբանի գողի բակ: Դինգերորդ՝ զի մարդիկ լսելով յաւազակաց խոյս տան. եւ առ նա իբր առ բարի սիրել ընթանան: Վեցերորդ՝ զի գողն միանգամ գողանայ զմիոյն ստացուածն. իսկ սա՝ բազում անգամ ի մի եւ ի նոյն մարդոյն գողանայ խաբէութեամբ: Եօթներորդ՝ զի աւազակն զմարմին այլոց սպանանէ. իսկ նա զհոգին իւր սպանանէ մատնելով ի գեհեանն. որպէս մեծ է հոգին քան զմարմինն. նոյնպէս մեծ է եւ մահ նորին: Ութերորդ՝ զի ազահութիւն առնէ՝ (որ է կռապաշտութիւն ասէ առաքեալն.) Իններորդ՝ զի եւ զանունն Աստուծոյ կոչէ ի վերայ սնոտեանց, եւ երդմնահարի. զոր հրամայէ Թրիստոս.

(ամենեւին մի երդնուլ:) Տասներորդ՝ զի եւ զայլս գործակցե ի մեղս իւր, վկայ կոչելով զնա. եւ նա վկայե սուտ. զի եւ նա նորին վկայեսցե. եւ պատժեսցի ընդ սուտ վկայիցն Քրիստոսի. որք խաբեցին զպիղատոս եւ պատժեցան յաւիտենից հրովն: Վասն զի ասե առակն. (վկայ սուտ՝ առանց պատժոց ոչ է:) Դարձեալ՝ եւ այլ իմն եղանակ է բանիս իմացումն: Չի կշիռ արդարութեամբ եւ ընդունելի Աստուծոյ՝ զմարդն է իմանալ: Չոր եւ մարգարեն ասե. (ընդունայնն են որդիք մարդկան. ի կշիռս իւրեանց մեղանչեն:) Չի նժար կշռոյն՝ անձնիշխան կամքն է մարդոյն. որ հաւասար կախեալ ունի յինքն զհոգին եւ զմարմինն. եւ լուծն՝ միտքն եւ իմացումն է արդարադատ: Եւ երկոքին թաթքն՝ հոգի եւ մարմին. եւ երեք չուանն կամ չորք՝ հոգին եռամասնեայ գոլով, եւ մարմինն ի չորից տարերաց. եւ կշռորդ է օրէնքն Աստուծոյ, եւ օրինացն հաւասար գործն մեր: Արդ՝ անձնիշխան կամքն ի մեջ հոգւոյն եւ մարմնոյն՝ ոչ պարտի թողուլ զմիմեանս յաղթահարել. զի պիղծ է առաջի Տեառն: Եթէ մարմինն զհոգին յաղթէ չար մեղօք, եւ հոգին զմարմինն յաղթէ եւ սպանանէ, պիղծ է եւ մահապարտ: Այլ եւ սպանանէ, պիղծ է եւ մահապարտ: Այլ ի մեջ ի յօրինաց սահմանն եւ ի չափն հաւասար պահելով զնոսա, ընդունելի է Աստուծոյ: Ապա թէ յաղթահարէ մարմինն զհոգին, լուրր զի՞նչ ասե առաքեալն. (գիրք այլոյն՝ կենդանւոյն մեռեալ է:) Չի (գիրացաւ ստուարացաւ Յակօբ՝ եթող զՏեր Աստուած իւր:) Եթէ հոգին յաղթահարէ զմարմինն, դարձեալ լուր՝ զի ասե առաքեալն աշակերտին. (մի ջուր եւեթ ըմպեալ, այլ սակաւ մի գինի խառնեսցիր վասն ստեպ հիւադութեան:) Չի որպէս ձի գինւորի ոչ է ամենեւին խստերախտ, զի մի գահաւեժ լիցի. եւ ոչ ամենեւն նուազ, զի մի տկարացի: Նոյնպէս եւ զմարմինն ոչ ամենեւին փափկակեաց, զի մի ապստամբեսցի ի հոգւոյն. եւ ոչ ամենեւն տկար, զի մի վերջացի ի պաշտօնն Աստուծոյ. այլ ի չափաւորն եւ կշիռն ըստ օրինացն սահմանի՝ այն է բարի: Եւ թէ ոք հակառակի թէ, ո՞րպէս զհոգի եւ զմարմին հաւասարակշիռ պահեմք: Նախզի՝ հոգին Աստուծոյ է պատկեր. եւ մարմինն հողոյ: Երկրորդ՝ զի ասե առաքեալն. (որքան տկարանամ, այնքան զօրանամ, զի յորժամ արտաքին մարդս մեր զօրանայ՝ ներքինն տկարանայ եւ այլն:) Երրորդ՝ զի տեսանեմք բազում նահատակս՝ որք առաւել չարչարեցին զմարմինն ի պահս, ի ճգնութիւն, ի մարտիրոսութիւն, եւ այլն. եւ այս պիսիքս՝ ոչ պահեն հաւասարակշիռ: Ասեմք թէ՝ կշիռ արդարութեան ոչ է այն, եթէ երբեմն զհոգւոյնն եւ երբեմն զմարմնոյն առնեմք զկամս, եւ ոչ այն՝ թէ մարմնով հեշտանամք եւ հոգւով չարչարիմք, եւ ոչ այն թէ մին բարի առնեմք, եւ մին չար, կամ օրինեմք եւ անիծանեմք: Այսպիսիքս՝ ոչ են կշիռք արդարութեան, այլ անիրաւութիւնք: Եւ այս է արդարութիւն: Որ Աստուած ի սկիզբն զառաջին մարդն բարի ստեղծ բոլովին հոգւով եւ մարմնով, եւ ոչ մասն ինչ չարի եր ի նմա. ոչ ի հոգին եւ ոչ ի մարմինն: Եւ ետ նմա կշիռ արդարութեան զպատուիրանս օրինացն. զի թէ պահեալ եր, ի վերին կետ երկնիցն եր բարձրանալոց: Եւ յորժամ ոչ պահեաց, ծանրացաւ մեղօք եւ անկաւ ի ներքին կետ երկրիս: Եւ այս է այժմ կշիռ արդարութեան ի մեզ. զի զհոգին եւ զմարմին բոլորովիմք ի նոյն յառաջին բարութիւնն պահեմք. եւ ի ձեռն պատուիրանին կշռոյ ի վեր յեկնս ելանեմք. եւ այս կոչի կշիռի արդարութեան. Դարձեալ կշիռ օրինական՝ որ Ը պատուիրանացն հաւասարեմք զմիմիտս զբանս եւ զգործս մեր. եւ զոր ինչ օրէնքն հրամայե՝ զայն առնեմք: Դարձեալ՝ կշիռ է անձնական. յորժամ կշիռ արդարութեան

վարուց եւ բանից յաճախապէս ի մեզ կրեսցուք եւ ծանրասցուք բարի գործով, միտքն ազատեալ վերանայ եւ հպի առ Աստուած: Եւ յորժամ թեթեւանամք եւ նւագիմք ի բարեաց, միտք մեր ի վերայ հակէ եւ յերկիր կապի: Դարձեալ՝ կշիռ է եղբայրական. այ է՝ որ քեզ հաւասար սիրես զնա. ըստ այնմ, (սիրեսցէք զընկեր քո իբրեւ զանձն քո:) Եւ դարձեալ այն է՝ յորժամ տեսանես զոք ի մեծութիւն եւ ի փառս, եւ զքեզ ոչ՝ յայնժամ գոհանաս զԱստուծոյ որ նմա զայն է տուեալ. եւ ոչ նախանձիս. այն կշիռ եղբայրական է: Եւ այսպէս բազում է կշռոյս անունն: Այժմ պատասխանեմք հարցմանց: Առ առաջինն թէ՛ ոչ է արդարութիւն զհոգի եւ զմարմին հաւասար պահել, այլ անհրաւութիւն. զի հոգին տէր է եւ մարմինն ծառայ. զծառայն Ը Տեառն հաւասարել՝ կարի անհրաւութիւն է: Այլ ասեմք թէ, պարտի այսպէս կարգաւորել. ըզմարմնոյն պետսն տալ ծառայի. եւ զհոգւոյն որպէս Տեառն. եւ զմարմինն հանապազ պահել ի ներքոյ հոգւոյն. եւ այն է բնական եւ բարոյական արդարութիւն եւ կարգաւորութիւն: Երկրորդին ասեմք թէ՛ առաքեալն զմարմնոյ տկարանալն եւ զհոգւոյ զօրանալն՝ ոչ բնութեան տկարութիւն ասէ, այլ զկրիցն եւ զգործոցն: Չի յորժամ կիրք մարմնոյ եւ գործք ախտիցն տկարանայ ի մեզ, յայնժամ հոգին զօրանայ եւ կարողանայ ի ներգործութիւն իւր: Առ երրորդն թէ, որք բազումք առաւել չարչարեն զմարմինս եւ նահատակին: Ասեմք եթէ՛ է կշիռ սիրոյ, եւ է կշիռ փոխոյ, եւ է կշիռ հատուցմանց: Արդ՝ ոմանք զկշիռ սիրոյն կարտարեն եւ չարչարին ի սերն Քրիստոսի, լաւ համարելով զսերն Քրիստոսի Աստուծոյ, քան զանձինս իւրեանց. եւ պատուական զկեանսն յաւիտենից, քան զժամանակեայ եւ զանցաւորս: Իսկ կշիռ հատուցմանց այն է, որ Քրիստոս վասն մեր չարչարեցաւ եւ խաչեցաւ. մեք վասն Քրիստոսի մեռանիմք եւ խաչեմք. եւ այսպէս ոմանք փոխարեն կշռովն չարչարեցան: Եւ ոմանք զկշիռ փոխոյն. այսինքն, ճգնեցան վասն հանդերձեալ կենացն. չարչարեցան, զի հագիցեն: Ողորմեցան, (զի զողորմութիւն գտցեն:) Չմարմին սպանին, զի զհոգիս կեցուցցեն: Եւ այսպէս ամենեքեան ի կշիռս արդարութեան ժամանեցին: Չի արտաքոյ սորայ՝ ոչ ինչ է բարեգործութիւն. վասն այն ասէ. (կշիռ արդարութենէ՛ ընդունելի է առաջի Աստուծոյ:) Չի հատուցէ ամենեցուն զկշիռս եւ զվարձս վաստակոց. (չափ զեղուն թաթաղուն ըստ անսուտ խոստմանն ճշմարտութեան:) Որում՝ զմեզ մասնակից արասցէ մասին ժառանգութեան սրբոց Իւրոց ողորմած՝ մարդասերն Տէր Քրիստոս Աստուած մեր. Որում փառք ընդ Յօր Իւրում՝ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն Չրկանաց. ի բան ժողովողին: (Տեսի զրպարտութիւն ի ներքոյ արեգական.՝ արտասուս զրպարտելոցն.՝ ոչ ոք էր որ միխթարեր զնոսա:) Ժող.4.1: (Գլուխ. ԼԱ)

Ի բազում՝ ի գանազան մեղացն զոր գործէ մարդ՝ մինն զրպարտելն է եւ մինն զրկելն: Որ մարդ զմարդ զրկէ, եւ իզուր պարտաւորէ: Այլ իսկապէս եւ առաջին անհաւ եւ զրկօղ՝ սատանայ է մարդկան ազգի: Եւ ապա երկրորդաբար մարդս: Վասն զի՝ սատանայ շարժէ զմարդն ի սպանութիւն, ի գողութիւն, եւ յայլ գանազան մեղս: Վասն այն նա է առաջին ամիրաւ եւ զրկօղ մարդկան: Չոր օրինակ՝ չար իշխանն խորհի չար, եւ հրամայէ

դահճին սպանանել զմարդ: Արդ՝ առաջին սպանողն եղել իշխանն՝ որ հրամայեաց սպանանել: Եւ երկրորդ դահիճն՝ որ զկամս նորա կատարեաց եւ սպան: Նոյնպէս եւ սատանայ՝ Է պատճառ ամենայն չարեաց մարդկան. զի նա խրատէ եւ ձգէ զմեզ ի չար. որպէս ասէ Տէրն. (սատանայ իսկզբանէ մարդասպան է:) Այս է, որ (Աստուած զմահ ոչ արար. նախանձութանսարկութիւն եմուտ մահ յաշխարհիս:) Չի գառաջին մարդն խաբեաց եւ մահացոյց եւ մահացոյց մարմնով եւ հոգւով: Եւ դարձեալ որ ասէ (իսկզբանէ՝) որ սկիզբն եւ պատճառ ամենայն մեղաց սատանայ է. եւ մեղօք մեռանի հոգի եւ մարմինն մարդոյն. վասն որոյ ասէ Սողոմօն: (Տեսի գրպարտութիւն ի ներքոյ արեգական, եւ արտասուսուս գրպարտելոցն:) Ի ներքոյ արեգական ասէ տես գրպարտութիւն եւ անիրաւութիւն. այս է՝ ի վերայ երկրի ի մէջ մարդկան. եւ ոչ յերկինքս ի մէջ հրեշտակաց. զի անդ արդարութիւն է եւ իրաւունք: Եւ դարձեալ ի ներքոյ արեգական՝ այս է, ի ներքոյ ժամանակիս որ է կենցաղոյս. զի յետ կենցաղոյս՝ ի յաւիտենից կեանսն ոչ է զրկումն եւ անիրաւութիւն. այլ արդարութիւն եւ ճշմարտութիւն: Տեսի ասէ զանմտութիւն մարդկան. որք խաւարեալ են մտօք. եւ յառնեն ի վերայ միմեանց որպէս զգազանս. եւ պատահեն զրկելով զմիմեանս: Եւ մոռացեալ են զինքեանս՝ որք ի ներքոյ մահու են վիճակեալ. եւ որպէս զանասուն վճարին. ի կենաց եւ դառնան ի հող. եւ զայն մոռացեալ են՝ որք ի սեփհական եւ ի հալալ ստացուածոց իւրեանց զրկիլոց են մահուամբ. եւ ոչ զգուշանան զրկելոյ զընկերն: Այլ որպէս զանմահ հարկանեն, զրկեն, եւ անիրաւեն. եւ ոչ ի միտ ածեն զահն Աստուծոյ եւ դատաստանն՝ որ պահեալ է ամենայն մարդոյ: Չի որպէս մահն հասարակաց է ամենայն մարդկան, եւ ոչ ոք զերծանի. նոյնպէս եւ յետ մահու՝ դատաստան գոյ ամենայն մարդկան առաջի Աստուծոյ. որ արդարապէս հատուցանէ զրկողացն տանջանս անվախճան. եւ զրկելոցն հանգիստ յաւիտենից որպէս ասէ առաքեալն: Այլ արդ գիտելի է՝ զի բազում եղանակ է զրկելոյն. զոր տասն եղանակաւ ասեն վարդապետք: Առաջին զրկեալն է ի վաճառս. որք յառ եւ ի տուրս զրկեն զմիմեանս. զորոց ասէ առակն. (չափ կրկին՝ եւ կշիռ մեծ եւ փոքր՝ աստի եւ Աստուծոյ:) Այսինքն, որ կրկին չափ դնէ. մեծովն առնու, եւ փոքրովն տայ. զի զարդարութիւնն անիրաւէ: Չի կշիռն եւ չափն՝ արդարութեան է միջնորդ, եւ ոչ անիրաւութեան եւ զրկանաց: Երկրորդ եղանակ զրկելոյն՝ գողութիւնն է. որ ծածուկ զինչսն մարդոյն ի տանէն եւ յայլ տեղեաց գողանայ եւ զրկէ զնա. զիւր հոգին զրկէ եւ գողանայ. եւ զիւր հոգւոյ բարիսն ի նա տայ որոյ զինչսն գողացաւ: Երրորդ եղանակ զրկելոյն՝ Է աւազակութիւնն. որ ի ճանապարհն նստելով թալանեն եւ կողոպտեն զմարդիկ. եւ փոխանակ ընչիցն զոր բռնութեամբ զրկեն ի նոցանէ, զրկեն եւ զմեզս նոցա ընդ ընչիցն. զի Աստուած առնէ իրաւունս զրկելոցն, եւ հատուցանէ արդարապէս. զզրկողն եւ զանիրաւն դատէ. եւ զզրկեալսն փրկէ եւ պսակէ: Չորրորդ եղանակ՝ բռնաւորացն է եւ չար իշխանաց. որք բռնութեամբ եւ յայտնապէս զրկեն եւ յափշտակեն զինչս աղքատաց. եւ որպէս ձկուն մեծամեծք՝ զփոքունս կլանեն. որպէս ասէ Ամբակում. (ընդէ՞ր Տէր ցուցեր ինձ ցաւս. զի տեսանեմ զմարդիկ իբր զծուսս՝ որք մեծամեծք զփոքունս կլանեն.) այս է. զի նախատեն եւ հարկանեն, եւ տուգանեն. եւ անիրաւ յամենայն ժամ զրկեն զաղքատս: Չի որքան զհրամայեալ իրաւունս նոցա աւելի յափշտակեն, զրկանս համարեալ է նոցա. եւ զմեղս աղքատացն ժողովեն: Հինգերորդ

եղանակ՝ որ զանդաստանս եւ զհայրենիս զրկեն ի միմեանց. տունս, այգիս, հողս, եւ այլ ինչս. որպէս ասէ Եսայի: (Վայ այնոցիկ՝ որք յարեն տուն առ տուն, եւ ագարակ առ ագարակ, զի զընկերին հանիցեն:) Եւ զայս ոչ վասն պիտոյից կարեաց առնեն, որ սակաւ հայրենիքն բաւական են մարդոյ պետս. այլ վասն անհրեւելոյ եւ զրկելոյ զմիմեանս: Որպէս Աքայաբ եւ Եզաբել յափտակեցին զայգին Նաբովթայ. եւ ինքեանք զրկեցան ի թագաւորութեանց եւ ի կենաց իւրեանց. այսպէս եւ ամենայն զրկողաց Իսրայելացւոց: Վեցերորդ եղանակ՝ որք զվարձս վարձ կանանց զրկեն. զորոց տրտնջայ Եսայի. (զրկեալն ի ձէնջ աղաղակէ. եւ բողոք հնձողացն՝ եհաս յականջս Տեառն զօրութեանց:) Չի մին՝ որ աշխատեցաւ եւ չարչարեցաւ մարմնով վասն իւր վարձուն՝ եւ դու զրկես զնա. եւ միւս՝ որ աղաղակէ առ քեզ եւ ոչ լսեն նմա: Վասն այն Աստուած բողոքէ. եւ Աստուած լսէ նմա, եւ առնէ իրաւունս զրկելոցն. որպէս ասէ մարգարէն. (եւ դու որ զաղաղակ նորա ոչ լւար, յորժամ աղաղակես առ Աստուած՝ եւ քեզ ոչ լուիցէ:) Եւ որ զնա յիւր վաստակոց վարձուն հաներ, նա հանէ զքեզ ի կենաց քոց Աստուած: Եօթերորդ եղանակ՝ որ զմիմեանց փառս զրկեն, եւ զիշխանութիւնն յափշտակեն. զի որ իշխանութեան կայ հակառակ՝ Աստուծոյ հրամանին կայ հակառակ. որպէս ասէ առաքեալն. (ոչ ուստք իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ որ կարգեալ են՝ յԱստուած են կարգեալ: Այնուհետեւ որ իշխանութեան հակառակ կայ, Աստուծոյ հրամանին է հակառակ:) Եւ վայ է նոցա. որք վասն սուտ եւ անցաւոր փառացս՝ Աստուծոյ հրամանացն հակառակին. եւ ելցեն ի յաւիտենից եւ յանմահ կենացն: Ութերորդ եղանակ զրկելոյն՝ է շնութիւնն. որ թողու զհալալկին իւր, եւ զկին ընկերին յափշտակէ եւ զրկէ զնա. այնպիսին զիւր հալալ անկողինն պղծէ. եւ զընկերին անկողինն պղծէ. եւ զրկէ զիւր հոգին ի յօրհնութենէն Աստուծոյ. այլեւ զգործակիցն Ը որ շնացաւ: Վասն այն հրամայեաց Աստուած ի յօրէնսն Ժ բանեան եթէ՝ (մի ցանկանայցես կնոջ ընկերի քոյ. եւ մի ընչից եւ ստացուածոց նորա:) Իններորդ եղանակ զրկելոյն՝ է սպանութիւն. որ զրկէ զնա ի կենաց. կամ մասանց հատումն առնէ, ձեռաց ոտից եւ այլն: Եւ մարդասպանութիւնն այնպէս ծանր է, զի որ զմարմին ընկերին եսպան եւ եհանն ի կենաց. զիւր հոգին Եսպան եւ եհան յաւիտենից կենացն. որպէս ասէ առաքեալն. (ամենայն մարդասպան՝ ոչ ունի կեանս յանձին:) Նոյնպէս որ վասն փոքու ինչ պատճառի զմասն ինչ մարդոյ հատանէ զնա Աստուծոյ, եւ ի բաց ձգէ յերկրէն կենդանեաց: Տասներորդ եղանակն այն է՝ որ բանիւ զրկեն, նախատեն, եւ բամբասեն զընկերս. եւ զուր խօսիւք՝ առաւել խոցետեն քան նետիւք. որպէս ասէ Դաւիթ: (Ինանիւր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում շրթամբք նենգաւորօք:) Այսպէս եւ առ Քրիստոս նետածիգ լինէին նենգաւոր լեզուս եւ ասէին թէ՝ (բեեղզեբուղաւ հանէ դա զդէս.) առ որ ասաց թէ՝ (որ զհոգին սուրբ զուր հայիոյէ, մի թողցի նմա. մի աստ, եւ մի ի հանդերձելումն:) Այսինքն է, թէ ամենայն որ զսուրբ եւ զանմեղ հոգին հայիոյէ չար ասելով, այնպիսւոյն մեղն՝ մի թողցի նմա: Չի քան զամենայն եղանակս՝ ծանրագոյն ասաց զբանիւ զրկելն եւ զրպարտելն: Այսքան եղանակ է զիխաւոր զրպարտելոյ. այլ մասնաւորքն ընդ սոքօք՝ բազում են եւ անթիւ: Չայտոսիկ ետես իմաստուն մտօք եւ ասէ. (տեսի զրպարտութիւն ի ներքոյ արեգական. եւ արտասուս զրկելոցն:) Չի յորժամ բռնադատէ զրպարտողն, յափշտակէ զինչս, առնու զանդաստանն. նստի ի

ճանապարհս աւագակ. զոմն սպանանէ. եւ զոմն մերկ կողոպտէ եւ թողու. անարգէ, հարկանէ, եւ հայիոյէ զնոսա: Եւ նոքա լան հառաչեն ողբան. առ Աստուած բողբեն՝ առ մարդ աղաղակեն: Եւ բազումք ի նոցանէ մասն առանց մխիթարութեան: Եւ որ երէկ ընչից Տէր՝ այսօր կողոպտեալ եւ հացի քաղցեալ: Եւ որ երէկ բաշխօղ այլոց՝ այսօր մուրացիկ շրջի: Որ երէկ կենդանին եւ առաղջ՝ այսօր յաւագակաց խոցեալ եւ կիսամեռ անկեալ: Որ երէկ սրբութեամբ պատուեալ, այսօր զրպարտեալ բանիւ, եւ ընդ չարագործսն աքսորեալ. եւ ոչ ինչ ունի մխիթարութիւն առ ձեռն: Չի մարդիկ ոչ լսեն. եւ ոչ առնեն դատ. եւ Աստուծոյ մխիթարութիւնն յետոյ լինի, եւ անագան ուրեմն: Չի այն զրկեալ տաղտապի եւ տագնապի. եւ ոչ ինչ ունի մխիթարութիւն յաստի կենացս: Վասն այն յորժամ զայնպիսի անկարգութիւն ետես իմաստունն, ասէ. (գովեցի ես զմեռեալսն յառաջագոյն, քան զայժմու կենդանիսս:) Այսինքն, յորժամ ետես զայսպիսի անիրաւութիւն ի մէջ մարդկան եւ զբնութիւն, երանեաց զմեռեալս որ յառաջագոյն մեռան եւ կարճեցան ի սոցա չարեացն: Որ զրկօղքն ի մէջ անիրաւութեան են հանապագ. եւ զրկեալքն ի մէջ արտասուաց: Եւ անհոգ զայսպիսի չարս գործեն յարածամ. եւ ոչ յիշեն զմահու օրն: Իսկ մեռեալքն՝ գերծեալ են յայսպիսեաց չարացս. եւ հասեալ ի նաւահանգիստ մահուն: (Չի մահ մարդոյ՝ հանգիստ է ասէ Յոր.) վասն այն երանէ զմեռեալսն: Եւ քան զնոսա զարկոսինն՝ լաւ է որ չեւ եւս են եղեալ. այսինքն, անգոյքն որք ի գոյացութիւն չեն եկեալ ասէ՝ լաւ են քան զգոյացեալսն: Եւ Յիրաւի ասէ զայս: Նախզի՝ ամենայն ոք որ գոյացեալ է եւ ծեալ՝ ի հարկէ մեռանելոց է, կամ մեռեալ է. իսկ անգոյն՝ ոչ եղեալ է եւ ոչ մեռանի. վասն այն լաւ է նմա, որ զմահ ոչ ունի: Դարձեալ՝ որք գոյացան եւ եկին ի կենցաղս յայս, եւ զչար գործեցին, զզրկելն, եւ զյափշտակելն, եւ զանիրաւելն, չարեօք մեռանին: Իսկ անգոյն՝ ոչ եկն ի կեանս յայս, եւ ոչ չար գործեաց, եւ ոչ չարաւ մեռաւ: Դարձեալ՝ որ չար պատահմանց դիպեցաւ՝ եւ չարեօք մեռաւ՝ կայ եւ նմայ չարա տանջանքն յաւիտենական: Իսկ ոգ գոյն՝ ոչ է եկեալ յաշխարհս, եւ ոչ մեռեալ եւ ոչ տանջի յաւիտենից: Ի բանս յայս հայեցեալ

Երեմիաս, ասէ. (վայ ինձ մայր իմ. զի ծնար զիս տեսանել զցաւս եւ զտանջանս.) այսինքն, զցաւս մարմնոյ եւ զտանջանս դժոխոց: Եւ Յոր անիծանէ զօրնն յորում ծնաւ ասելով. (անիծեալ օրն յորում ծնայ. եւ գիշերն յորում ասացին թէ արու.) այսինքն թէ ի գիշերին եւ թէ ի տիւն ծնայ՝ անիծեալ լիցի, յորժամ այնպիսի չարաչար տանջանաց հանդիպեցայ: Եւ դարձեալ վայ ասէ՝ թէ անիծեալ է օր ծննդեան իմոյ. զի գիշեր է համարել ինձ եւ իսաւար կեանքս իմ, համեմատեալ ի կենաց լոյսն յաւիտենից: Նմանապէս եւ Տէրն ասէր. (լաւ էր նմա թէ չէր ծնեալ մարդն այն:) Սուրբքն ամենեքեան զայս ուսուցանեն թէ, լաւ է ոչ գոյացեալն եւ ոչ ծնեալն, քան թէ ծննդեամբ ի յաշխարհս եկեալ եւ չար գործոց հանդիպեալ. շնութեան, պոռնկութեան, յափշտակութեան, գողութեան, զրկանաց, եւ այլ չարեաց: Չի ի կեանս յայս՝ չար եւ վատ եւ զրկողաց զանուն ժառանգէ. եւ ի հանդերձեալն՝ մատնի յանաչառ դատաւորէն ի հուրն յաւիտենից: Եւ քան զնոսա չիք եղկելիք եւ խոտանք, որք զրկօղք են եւ յափշտակօղք: Չայս ի միտ առցուք եղբարք. մի զրկեցուք զմիմեանս. մի գողացուք. մի զրպարտեցուք. մի բամբասեցուք. եւ մի որ ինչ չար է՝ հանցուք ի լեզուէ. եւ մի յայլ անդամոց: Այլ որ ինչ բարին է՝ զայն խօսեցուք. զբարին արասցուք: Սիրեցուք

զընկերն: Ողորմեցուք աղքատաց: Տացուք կարօտելոց: Մխիթարեացուք զվշտացեալս: Չի անճառ բարեացն արժանի լիցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն: Յետ որոյ ասացեալ եղև վասն առաքինութեան առ հասարակ: Ասացուք այժմ զյեթօն խորհրդոյ եկեղեցւոյ: Եւ առաջին վասն մկրտութեան:

Նորին քարոզ վասն Եօթն խորհրդոյ եկեղեցւոյ. ' Նախ վասն մկրտութեան. ի բան անտարանին: (Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ ' ի հոգւոյ. ' կամ ծնեալն ի մարմնոյ մարմին է. ' կամ այլ ինչ:) Յօհ. 3. 5 (Գլուխ. ԼԲ)

Բայց նախ զայս հարցանեմք եթէ, վասն Է՞ր կարգ եկեղեցւոյ բանիւ աւանդեցաւ ' ոչ գրով: Ասեմք եթէ՝ բանն մարմնացեալ՝ բանիւ աւանդեացն. եւ նոքա դարձեալ հայրապետաց. եւ նոքա յեկեղեցի այսպէս բանիւ: Վասն որոյ եպիսկոպոսն բանիւ աւանդէ զհշխրանութիւն քահանայից եւ սարգաւակաց: Այլեւ քահանայն բանիւ մկրտէ. եւ բախւ պատարագ է եւ պսակէ, եւ թողութիւն շնորհէ. եւ այլն ամենայն բանիւ կատարի: Եւ այս վասն բազում պատճառի: Նախ՞՞ բանն յանմարմին մտաց ի միտս ընթանայ. որպէս հրետակաց քահանայութիւնն իմացմամբ՝ նոյնպէս եւ զմերս իմացմամբ աւանդեաց: Երկրորդ՝ որ օրինական էր եւ հին՝ գրով եղաւ. իսկ ճշմարտութիւն նորոյս՝ բանիւ. զի բաժանեցի ի հնոյն: Երրորդ՝ զի թաքուն մնացէ յանարժանիցն. որպէս եւ անունն իսկ յայտ առնէ խորհուրդ՝ որ ծածուկ գիտութիւն: Չորրորդ՝ զի զոր աւանդ է՝ պարտ է զգուշութեամբ եւ արժանապէս պահել: Հինգերորդ՝ զի աւանդողին պարտիմք տալ զարդիւնաւոր շահս. որպէս որք զքանքարն յարգեցին՝ երանեցան: Իսկ թէ վասն Է՞ր մարմնական նշանօք աւանդեաց. որպէս ի ջուր եւ իմիւռն. ի հաց եւ ի գինի, եւ յայլն: Եւ այսմ դնեմք բազում պատճառս: Նախ՞՞ մէք մարմնական եմք. մարմնական եմք. մարմնոյ միջնորդով՝ յանմարմին հասանիմք. որպէս տեսեալ զգիրն՝ ապա իմանամք զգօրութիւնն: Երկրորդ՝ զ վարագուրաւ ծածկեցի յանարժանիցն ծածուկ խորհուրդն ի նոսա: Չի որք անարժան են հաւատով եւ մտօ եւ վարուք՝ ոչ տեսցեն. ըստ այնմ, (մի տայք զսրբութիւն շանց եւ այլն:) Երրորդ՝ զի մարմնականիւ է կորուստն մեր. եւ գիւտն դարձեալ մարմնականիւ եղիցի. զիի դեղն պատասխանի տացէ հիւանդութեանն: Չորրորդ՝ զի հիւանդն որ է մարդն՝ հոգի է եւ մարմինն. վասն որոյ մարմնական տամք զհոգեւոր դեղն. զոր օրինակ՝ պատեալ լինի դառն դեղն քաղցր ուտելեան: Հինգերորդ՝ ի դիմաց բժշկին. զի Աստուած՝ է մարդատեալ. նոյնպէս եւ դեղն ուտի աներեւոյթ ինչ զաստուածային շնորհն. եւ ունի մարմնական գերեւելի տեսակ շնորհին: Վեցերորդ՝ վասն վարձուն. զի յոյժ օգտակար է առ վարձն, յորժամ հաւատացեալ լինի Աստուծոյ՝ ուր բնական միտք ոչ կարէ հասանիլ: Եօթներորդ՝ վասն խոնարհութեան. որով խոնարհի մարդն եւ խնդրէ զփրկութիւն ի ներքնագունիցն իւրոց: Իսկ թէ քանի՞ է խորհուրդ եկեղեցւոյ: Ասեմք թէ, եօթն. այսինքն, Առաջին Մկրտութիւնն: Դրոշմն: Պատարագն: Եւ ապա Ապաշխարութիւնն: Օծումնն: Կարգն: Պսակն: Այլ ոմանք ասացին թէ՝ ոչ էր պարտ եօթն. այլ մի խորհուրդ. վասն զի խորհուրդն ունի զօրութիւն ի զօրութենէն Աստուծոյ, ի չարչարանացն Քրիստոսի: Այլեւ մի է զօրութիւնն Աստուծոյ. եւ մի է չարչարանքն Քրիստոսի. (զի միանգամ ի սրբութիւն գտեալ փրկեցաք:) Այլ

ասեն վարդապետք. թեպետ մի է չարչարնքն Քրիստոսի, եւ մի է զօրութիւն
նորին. այլ մի զօրութեամբ՝ կարէ ոք բազում ներգործութիւնս առնել
զանազան գործօք: Նոյնպէս մի զօրութեամբն աստուածային՝ եւ մի
չարչարանօքն՝ ներգործէ ի մեզ զանազան խորհրդօք իբր զանազան
գործօք: Այլ ոմանք ասեն թէ, խորհուրդն կարգեալ է ընդդէմ
պակասութեան մեղաց. իսկ նա կրկին է. այսինքն, մեղքն եւ պատիժն.
բաւական էր ապա երկու խորհուրդն: Պատասխանեն այսմ թէ՛ մեղքն եւ
պատիժն՝ ունին զանազանութիւն ըստ տեսակին. եւ զի զանազան են
տեսակք մեղացն. եւ զանազան են տեսակ պատժոցն եւ բազում: Ապա
ուրեմն եւ խորհուրդն պարտ էր լինիլ զանազան եւ բազում ըստ զանազան
մեղացն եւ պատիժոցն. որպէս ուսանելոց եմք յառաջի կայդ: Իսկ այլ ոմանք
ասեն թէ, խորհուրդն վերաբերի առ գործ եկեղեցական
քահանայապետութեանն. որպէս սուրբն Դիոնեսիոս: Այլ արդ՝
քահանայական գործն երեք է. այսինքն, մաքրել. լուսաւորել. եւ
կատարելագործել. որպէս նոյն սուրբն Դիոնեսիոս կարգէ. ապա պարտ է
լինիլ միայն երեք խորհուրդ: Ասեմք առ այս թէ՛ գործ քահանայապետական
նկատէ առ երիս իրս. այսինքն, առնօղքն. ընդունօղքն. եւ գործքն: Արդ՝
առնօղքն են սպասաւորք խորհրդոյն, որ վերաբերի առ կարգն. իսկ
ընդունօղքն են այնքիկ՝ որք մատչին առ խորհուրդն. որք յառաջ ածին
պսական: Բայց գործքն՝ մաքրութիւն, լուսաւորութիւն, եւ
կատարելագործութիւն: Արդ՝ մաքրութիւնն եւ լուսաւորութիւնն՝
առաջնապէս վերաբերին առ մկրտութիւնն ըստ սրբոյն

Դիոնեսիոսի: Եւ երկրորդաբար առ ապաշխարութիւնն, եւ վերջին
օծումնն: Իսկ կատարելագործութիւնն ըստ առաքինութեան՝ է կրկին.
այսինքն, տեսական եւ վախճանական: Եւ տեսական
կատարելագործութիւնն՝ վերաբերի առ դրոշմն: Իսկ վախճանական՝ առ
պատարագն: Ապա ուրեմն յոթ են խորհուրդք եկեղեցւոյ եւ ոչ երեք՝ որպէս
ոմանք: Իսկ թէ վասն Է՛ր եօթն են խորհուրդք: Վարդապետք դնեն բազում
պատճառք: Նախ՝ ըստ զանազանութեան մարդկան որք են յեկեղեցի:
Առաջին խորհուրդն՝ Է՛ մկրտութիւնն. որր է նոր մտանելոցն ի յեկեղեցի:
Երկրորդն՝ դրոշմն. որ է պատերազմողացն ընդդէմ թշնամւոյն սատանայի:
Երրորդն՝ հաղորդութիւն. որ է վերստին զօրացուցանել ի պատերազմի. եւ
հոգեւոր կերակուր: Չորրորդ՝ ապաշխարութիւնն. որ է վերստի կանգնելոցն.
որք անկանին մեղօք, եւ վերստին կանգնին ապաշխարութեան գործօք:
Յինգերորդ՝ վերջին օծումն. որ է ելելոցն ի կենցաղոյս. եւ գերծանելոյն ի
պատերազմի: Վեցերորդ՝ կարգն. որ է սպասաւորելոցն այսմ խորհրոյս, որք
են ի յեկեղեցի քահանայք եւ այլք: Եօթներորդ պսակն. որ է խորհուր նոր
զինուորս ի ներքս մեծանելոյ ի ձեռն մարմնաւոր ծննդեան: Դարձել՝ եօթն են
խորհուրդ՝ որք պատրաստեն զմեզ ընդունիլ զեօթն առաքինութիւնս: Որ է
հաւատ. յոյս. եւ սէր. խորհեմութիւն. արիութիւն. ողջախոհութիւն. եւ
արդարութիւն: Չի մկրտութիւնն է խորհուրդ հաւատոյ. ուստի յայտ է՝ զի
նախ հաւատամք, եւ ապա մկրտիմք: Դրոշմն է խորհուրդ յուսոյ. զի յուսով ի
զօրութիւն սուրբ հոգւոյն՝ կարողանամք ընդդէմ թշնամւոյն: Հաղորդութիւնն
է խորհուրդ սիրոյ. զի սիրով միաւորիմքք եւ յօդիմք ի գլուխն Քրիստոսի.
(մարմին ի մարմնոյ նորա, եւ անդամք յանդամոց նորա:) Ապաշխարութիւնն՝
է խորհուրդ արդարութեան. զի ի ձեռն զղջման եւ խոստովանութեան եւ

այլոցն՝ արդարանամք ի մեղաց: Օծումն՝ է խորհուրդ լրումն արիութեան. զի եկեալք ի պատերազմէ, զխոշին եւ զքիրտն սրբեմք. որպէս ելեալքն ի մարմնական պատերազմէ: Կարգն՝ է խորհուրդ խոհեմութեան եւ գիտութեան. զի մաստութեամբ եւ գիտութեամբ սպասաւորեսցէ խորհրդոցն. եւ խրատեալ ուսուցէ զժողովուրդն: Իսկ պսակն՝ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ՝ զսպեսցէ առ ինքն զողջախոհ ցանկութիւնն. եւ արգելցի ի շնութենէ եւ ի պոռնկութենէ: Վասն որոյ է՝ են խորհուրդք եկեղեցւոյ: Դարձեալ է եւ այլ պատճառ, զի եօթն են խորհուրդ. զի կարգին ընդդէմ երից մեղաց. եւ ընդդէմ չորեքին պատճոց: Մկրտութիւնն է ընդդէմ սկզբնական մեղաց: Ապաշխարութիւնն ընդդէմ ներգործական մահու չափ մեղաց: Եւ օծումն ընդդէմ ներելի մեղաց: Կարգն ընդդէմ տգիտութեան: Զաղորդութիւնն ընդդէմ չարութեան: Դրոշմն ընդդէմ անկարութեան: Պսակ ընդդէմ ցանկութեան. զոր բարեխառնէ եւ անմեղադրելի առնէ: Է՛ եւ այլ իմն պատճառ. որպէս մարմնաւոր կենաց եւ առողջութեանց համեմատեալ հոգեւոր կեանքն եւ առաղջութիւնն, ասացեալ ի վարդապետաց: Այլ այս բաւական է վասն ժամու: Եկեսցուք ի կարգ բանիս եւ տեսցուք թէ, զի՞նչ նշանակէ կնքահայրն: Ասեմք թէ, որպէս ի մարմնաւոր ծնունդն՝ մանկաբարձն է եւ դայեակն. նոյնպէս ի հոգեւորն կնքահայրն վասն չորս գործոյն: Նախզի՛ բարձօղ է մանկանն եւ կերակրօղ. եւ դաստիարակ եւ զգեցուցիչ: Եւ որպէս է կոչմամբ մայր մանկան. նոյնպէս եւ կնքահայրն՝ կոչի կնքահայր եւ բարձօղ նորածնեալ մանկան: Խրատէ եւ կերակրէ զնա բանիւ. եւ զգեցուցանէ զնա. վասն որոյ պարտ է՝ զի զգեստ մանկանն՝ ի նմանէ լիցի: Եւ թէ մկրտեալն փոքր լիցի եւ թէ մեծ՝ պիտոյ է կնքահայր. զի լեզու եւ միջնորդ է նմա առ քահանայն: Ապա պարտ է զի լիցի արու. զի կնքահայր կոչի: Զարց: Վասն Է՞ր կարգեցին հայրապետքն ի կանօսս ի ժամ մկրտութեան կին մարդոյ ոչ մտանել յեկեղեցին: Պատասխանի: Վասն բազում պատճառի. Նախզի հերձուածօք ոմանք՝ կանանց հրաման տային առնուլ մկրտութիւն. կամեցան հարքն սուրբք՝ զայնպիսի աղանդն արտաքսել յեկեղեցւոյ. եւ ընդդէմ նոցա՝ կին մի բնաւ թողուլ յեկեղեցին յայնմ ժամու: Երկրորդ՝ զի կանայք ախտաւոր եւ մարմնական ծննդեան են պատճառ եւ առիթ. հոգեւոր եւ անախտ ծննդեանս միլիցն հուպ եւ նպաստ: Երրորդ՝ զի պատճառ կործանման եւ գլորման բնութեանս՝ կինն եղել հաւանելով օձին խրատու. ի վերստին կանգնումն աւազանաւս՝ մի լիցի մերձ եւ ձեռնտու: Չոր օրինակ՝ իմաստուն բժիշկ՝ զպատճառ հիւանդութեան նախ հանէ դեղօք. եւ ապա յետոյ սպեղանեօք բժշկէ: Չորրորդ՝ զի մարդս հոգի է եւ մարմին եւ ըստ մարմնոյն՝ ունի մարմնաւոր հայր եւ մայր զծնօղսն. եւ ըստ հոգւոյն՝ հոգեւոր մայր զաւազանն. զհոգեւոր հայր զկնքահայրն որ է Բէլն. եւ այլ մօր ոչ եմք կարօտ. զի կնքահայր ասեմք եւ ոչ կնքամայր. զի մկրտութեամբն լինիք որդիք հօրն երկնաւորի եւ ոչ մօր երկրաւորի: Զինգերորդ՝ զի ի մարմնաւոր մօրէն մեղկութեամբ ծնանի. կանայք բառնան: Իսկ ի հոգեւոր մօրէս արի եւ պիտ եւ կազմ ծնանի. արք բառնան. որպէս Տէր մեր մկրտեալ եւ արիացեալ էլ պատերազմ ընդ փորձողին, եւ յաղթեաց նմա. նոյնպէս եւ մկրտեալս արիացեալ յաղթէ սատանայի: Վեցերորդ՝ իմարմնաւոր դատաստանս՝ կանանց վկայութիւն ոչ է ընդունել եւ ոչ հաստատուն. քանի՞ առաւել հոգեւորս: Եօթներորդ՝ զի հրամայէ առաքեալն. (կանանց շուք դնել, եւ

քող արկանել ի մէջ եկեղեցւոյ. եւ մի բանիւ խօսիլ. զի որ խօսի կամ բանայ գերեսս եւ զգլուխս, յամօթ առնէ զնա գլուխն իւր Քրիստոսի:) Ութերորդ՝ զի եօթն խորհուրդ եկեղեցւոյ՝ արանց աւանդեցաւ եւ ոչ կանանց: Չի ոպէս յայլ խորհուրդս ոչ են կանայք ձեռնամուխ իսպասաւորել կամյայլ ինչ: Նոյնպէս եւ աստ մի լիցին սպասաւոր կամ ձեռնտու. զի թէ ձեռնարկեսցեն յայս, ձեռնարկեսցեն եւ յայլսն: Իններորդ՝ զի յորժամ մկրտեցաւ Քրիստոս, աստուածային եւ այլ կանայք ոչ կային անդ: Եւ դարձեալ՝ յորժամ յարեաւ Քրիստոս, ոչ ետ թոյլ մագդաղենացւոյն մերձենալ յինքն ասելով. (մի մերձենար յիս:) Եւ մկրտութիւնս մեր՝ զթաղման եւ գյարութեանն ունի խորհուր. երեք անգամ ընկղմելն՝ գերեքօրեայ թաղումն նշանակէ. եւ հանելն յաւազանէն՝ գյարութիւն: Վասն որոյ ոչ է պարտ կին մարդոյ մերձ թողուլ, կամ կնքահայր առնել: Տասներորդ՝ զի ի հինն կանայք ոչ առնուին զոք թլփատութենէ. այլ արք միայն. որպէս այլագիք. քանի՞ առաւել յաւազանէն ոչ է պատշաճ առնուլ զոք կին մարդոյ: Վասն որոյ պարտ է զգուշանալ. եւ մի՛ տալ վստահութիւն կանաց ձեռնմուխ եկեղեցւոյ: Այսքան առ այս: Եւ զի լիցի մկրտեալ է հաւատացեալ. զի կարէ միջնորդել առ քահանայն, եւ առնուլ զդաւանութիւն: Եւ մի հերձուածօղ կամ կռապաշտ. կամ տաճիկ կամ ջիւտ: Նախ զի՝ նորընծայ աղայն ի հաւատ կնքահօր վերանորոգի եւ դառնայ. որպէս ասէ Սողոմօն. (որդի հարագատ զնանութիւն հօրն բերէ:) Այսպէս հոգեւոր որդիս՝ զնմանութիւն հոգեւոր հօրն բերէ յինքն որպիսի եւ իցէ. թէ ուղղափառ, թէ չարափառ: Երկրորդ՝ զի կնքահայրն հաւատովն է վկայ հաւատոյ մկրտելոյն. եւ ոչ մարմնով կամ այլ իւրք: Երրորդ՝ զոր ինչ եւ Դաւանէ կնքահայրն՝ զնոյն դաւանի եւ նոր ընծայն. թէ զԱստուած, թէ զմարդ, եւ թէ զայլ ինչ: Չորրորդ՝ զի որպիսի հաւատով եւ իցէ կնքահայրն՝ կնքոյ որդին՝ նովին հաւատովն որդիանայ նմին. եւ կոչի նորին հաւատովն որդի նորին. եւ հայրենեացն ժառանգ. ըստ որում վիճակի սակի իցէ հայրն. որպէս եւ մէք ըստ հաւատոց որդիքս Աբրահամու: Այսքան առ այս: Իսկ այն զի յարեւմուտս հրաժարեմք եւ յարեւելս դառնամք՝ այս է պատճառն: Չի սատանայ եւ տգիտութիւնն եւ մեղքն՝ խաւար են. վասն որոյ ի մուտս արեւու ուրանամք եւ հրաժարիմք. Իսկ Աստուած եւ գիտութիւնն եւ դաւանութիւնն՝ լոյս է. յարեւելից կողմանէ առնումք: Այլ յայսմանէ երեւի երեք ինչ: Նախզի՝ լոյս եւ խաւար՝ տգիտութիւն եւ գիտութիւն՝ չար եւ բարի ի միասն ոչ կարեն լինիլ. զիիի ներհակք են. որպէս ջերմ եւ ցուրտ, մահ եւ կեանք: Չայս ուսուցանէ յաւետարանին. ոչ կարեք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի.) վասն որոյ ի միոյն հեռանալի է. եւ առ միւսն մերձիլ: Երկրորդ՝ զայն ցուցանէ թէ, պարտ է նախ ի չարէն հեռանալ. եւ պարտ ի բարին մերձիլ. եւ ապա ի բարին մերձիլ. ի խաւարէն փախչիլ. եւ ապա ի լոյսն բնակիլ: Չ սրբոյն՝ սրբոյն՝ սուրբ լիցիտեղի: Յայս միտս յամենայն խորհուրդս նախ զմեղս խոստովանիմք. եւ ապա հաղորդեն, կամ պսակեն, կամ թողութիւն շնորհեն, եւ այլն ամենայն: Երրորդ՝ զայն ցուցանէ թէ, ոչ է բաւական միայն ի չարէն հեռանալ. այլեւ զբարիս գործել. ոչ միայն զխաւար է զտգիտութիւն թողուլ, այլ զլոյս եւ զգիտութիւն ստանալ: Չի թէ ոչ չար գործէ եւ ոչ բարի, ոչ տանջի եւ ոչ պսակի: Վասն որոյ ի խոստովանութիւնն որ մեղքն թողաւ եւ սրբեցաւ, պարտ է լուծ ինչ ապաշխարութեան կրել. որ է գործ բարի. զի վարձատրեսցի: Յայս միտս յորժամ հրաժարիմք ի սատանայէ, դաւանիմք զՔրիստոս. եւ յորժամ մեր կացուցանեն զմանուկն, զգեցուցանեն նոր

հանդերձս պայճառս: Չի սրբեցաւ ի մեղաց. եւ նոր ծնաւ հոգւով, եւ ի լոյս հաւատոյ եկն. վասն որոյ եւ զմոմն վառել ունի ի ձեռն: Իսկ երիցս ընկղմելն ի ջուրն եւ հանել՝ զմեռանելն ընդ Քրիստոսի՝ գերեքօրեայ գթողումն եւ գյարութիւնն նշանակէ: Չոր նախ եւ առաջին՝ համեմատեսցու ընդ հասարակաց մահու. եւ ապա առ մահն Քրիստոսի: Եւ նախ ըստ այսմ օրինակի. զի մահ է՝ որոշումն միաւորութեանց. վասն անձնական միաւորութիւնն որ է ի հոգին՝ որոշի. եւ բնութեանն ոչ: Այսպէս զի տարրական միաւորութիւն եւ հիւթական բաժանի ի հոգւոյն. եւ տնկականն եւ զգայականն ոչ որոշի. զի մասն ըստ էութեան ի հոգին մասն գոլով. այլ խափանին ըստ ներգործութեան: Այսպէս ի մահ մկրտելոյն՝ սկզբնական եւ ներգործական մեղքն բաժանի ի նմանէ. այլ արմատ մեղացն եւ դիւրասահութիւնն մնայ ի մարդն. զի յետոյ կարէ մեղանչել: Երկրորդ՝ որպէս մարմին մեռելոյն ծածկի հողովն՝ եւ հոգին աներեւութանայ: Այսպէս եւ մկրտեալն ծածկի ջրով. այն է որ զբոլոր մարմինն թանայ եւ ծածկէ: Երրորդ՝ զի որպէս մահն զրկէ զհոգին՝ ի մարմնոյն բռնաբար. այսպէս եւ շնորիք մկրտութեանն՝ զմեղս սրբէ ի մարմնոյն բռնութեամբ: Չորրորդ՝ որպէս մեռեալ մարմին եւ թաղել՝ այլայլի եւ յայլ ինչ կերպ փոփոխի. այսպէս եւ թաղեալն մկրտութեամբ՝ փոխակերպի եւ լինի որդի լուսոյ: Հինգերորդ՝ մեռռեալն եւ թաղեալն՝ անշարժ է յամենայն ցանկութեանց. նոյնպէս եւ որ մկրտեալն է, մեռեալ է ընդդէմ ցանկութեանց աշխարհի բոլոր անդմօք եւ զգայարանօք: Այս ըստ հասարակաց մահու: Իսկ մեռանիլն՝ զմահն Քրիստոսի նշանակէ. որպէս ասէ Պօղոս: (Որք ի Քրիստոս մկրտեցայք՝ ի մահ անդր նորա մկրտեցայք՝ թաղեալք ընդ նմին մկրտութեամբ ի մահ:) Նախ՝ որպէս Քրիստոս զնմանութիւն մահու ունէր. զի եր մեռեալ եւ եր կենդանի. թաղեալ ի գերեզմանի, եւ եր անապական մարմնով: Նոյնպէս եւ որ մկրտի՝ նմանութեամբ մեռանի. զի մեռանի ըստ մեղաց, եւ է կենդանիի ըստ արդարութեան եւ անապականութեան: Երկրորդ՝ որպէս մահն Քրիստոսի զմահ մեռոյց. եւ թաղմամբն զապականութիւն ելոյծ. այսպէս եւ մկրտեալն՝ զհոգեւոր մահն եւ զապականութիւն մեռուցանէ յինքեան: Երրորդ՝ որպէս Քրիստոս նախ զմահ մեռոյց ի խաչին՝ եւ ապա զապականութիւն ելոյծ ի գերեզմանի: Նոյնպէս եւ մկրտելոյն՝ նախ մեղք սրբի որ է մահ. եւ ապա պատիժն ջնջի որ է ապականութիւն յաւիտենից տանջանացն: Չորրորդ՝ որպէս Քրիստոս ոչ ըստ բնութեան, այլ կամաւորութեամբ մեռաւ. այսինքն, զի ոչ եր պարտական մահու. (ըստ որում ոչ արար մեղս.) այլ զի զպարտս մեր վճարեաց: Այսպէս եւ որ մկրտի՝ ոչ զբնական մահն մեռանի. այլ զպարտս վճարէ յաւիտենական մահուն: Հինգերորդ՝ զի որպէս Քրիստոս մեռաւ ի խաչին՝ եւ երեք օրեայ եղաւ ի գերեզմանի անապական մարմնով եւ յարեաւ փառօք: Այսպէս եւ մկրտեալն՝ մեռանի ընդ Քրիստոս. եւ երիցս ընկղմեալ ի ջուրն՝ ելանէ ի ջրոյն անմահապէս յարութեամբն Քրիստոսի. ըստ այնմ, (որ չարչարնացն կցորդ է, եւ փառացն հաղորդ:) Եւ գիտելի է՝ զի խորհուրդ մկրտութեանն Քրիստոսի եւ խորհուրդ խաչին՝ մի եւ նոյն է. վասն այն ասէ առաքեալն հռոմայեցւոց: (Որք ի Քրիստոս մկրտեցայք, ի մահ անդր նորա մկրտեցայք. թաղեալք ընդ նմին մկրտութեամբն ի մահ:) Նախ՝ որպէս անդ ջուրն յորդանանու. եւ աստ ջուր կողին: Երկրորդ՝ անդ մերկացումն. եւ աստ ի վերայ խաչի: Երրորդ՝ անդ խորտակեաց զգլուխ փշապին. եւ խաչին խորտակեաց զգօրութիւն նորա: Չորրորդ՝ անդ

մկրտութեամբն սրբեաց զմեղս մեր. եւ աստ խաչին (սրբութիւն մեղաց մերոց արարեալ:) Յինգերորդ՝ անդ թաղեցաւ ի ջուրն. եւ աստ ի գերեզմանի: Վեցերորդ՝ աստ փառօք յարեաւ. եւ անդ հոգւովն սրբով զօրացաւ: Այսպէս ի մկրտութիւնս մեր՝ մի է խորհուրդ մկրտութեան եւ խորհուրդ խաչին: Իսկ սուրբ մեռանանն օծանիլն զայն ցուցանէ՝ զի յորժամ մկրտեցաւ Քրիստոս, հոգին սուրբ էջ ի վերայ Նորա. զի է առ որպէս գլուխ մեր՝ եւ եհեղ յանդամս հաւատացելոց իւրոց. ըստ այնմ, (որպէս իւղ զի իջանէ ի գլուխ, եւ այլն:) Այսպէս ջրովն ի Քրիստոս մկրտիմք եւ որդիս Աստուծոյ կոչիմք. եւ իւղովն ի շնորհս հոգւոյն սրբոյ միաւորիմք: *Եւ գիտելի է՝ որ ի ճակատն եւ ի սիրտն եւ ի թիկնամէջն օծանէ՝ այն դրոշմ է: Եւ որ զհինգ զգայութիւնս օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: Եւ որ զայլ մասունս օծանէ՝ յայնմ խորհրդոյ է, որ յառաջ քան զմկրտութիւնն օծանեն յայլ ազգս քրիստոնէից: Եւ թէ որ ասիցէ օծումն խորհուրդ է, ընդէ՞ր մեք ոչ ունիմք: Ասեմք եթէ ունիմք զխորհուրդ օծմանն՝ այլ ծածկապէս ի մկրտութեանն զոր ասացաք: Այլեւ յոտնալուայն: Այլեւ ի մկրտութեանն Տեառն յաւուր յայտնութեան: Եւ թէ ընդէ՞ր ոչ յայտնապէս՝ որպէս այլազգեացն: Վասն զի զխոստովանութիւնն բառնայր. որպէս այժմ յազգս ասորոց եւ վրաց բարձեալ է: Նոյնպէս ազգս մեր՝ վասն օծման ձիթոյն ոչ խոստովանէին, եւ ի մեզս մեռանէին: Դարձեալ՝ օծումն հիւանդաց՝ ոչ սրբէ զմահու չափ մեղս. այլ զներելիս. իսկ խոստովանութիւն՝ զմահու չափ եւ զներելիս սրբէ. որպէս թէ որ հատանէ զարմատն՝ չորանան եւ ստեղուքն. պիտանի է ապա խոստովանիլ՝ քա օծանիլ: Դարձեալ՝ մահու չափ մեղքն՝ բանիւ սրբի ի ձեռնն քահանային. ապա եւ ներելին բանիս սրբի քահանային եւ աղօթիք. որպէս ասէ Յակօբոս. (կոչեցցեն զերիցունս. եւ արասցեն ի վերայ աղօթս. եւ թողցի նմա:) Յայս միտս ժողովիմք քահանայք եւ պաշտօն առնեմք յերեկոյեայ մինչ ի լոյս. եւ պատարագ եւ Խաչ օրհնեմք. եթէ կենդանեաց, եւ թէ մեռելոց. ապա ուրեմն բանք քահանային՝ անւամբն Աստուծոյ սրբէ զներելի մեղս: Եւ թէ որ ասիցէ, պարտ է զի ձեռն քահանային մերձեցի ի զգայարանս: Ասեմք եթէ՝ յարաժամ աջ քահանային մերձի ի գլուխ քրիստոնէին. ուր արմատէ բոլոր զգայութեանց: Եւ ձեռն քահանային՝ է օծեալ եւ սրբեալ մեռունան. եւ տայ զշնորհս սրբութեան առ որ մերձենայ: Եւ որպէս բազում են ներելիքն եւ անթիւ որ ի զգայարանս եւ ի միտս. այսպէս բազմապատիկ թողութիւն շնորհէ քահանայական կարգն ձեռն դնելով, եւ բանիւ շնորհաց սրբելով: Եւ թէ որ ասիցէ, զառաջին օծումն որ նախ քան մկրտիլն ոչ ունիք: Ասեմք թէ՝ եւ զայս ունիմք ծածկապէս. որպէս որ ի ջուր աւազանին խաչանման մեռունն խառնի: Նախ՝ վասն այս խորհուրդս: Եւ երկրորդ՝ զի մկրտութիւնս մեր ոչ ի ջուրն Ովհանու, այլ ի մահն Քրիստոսի է: Եւ վասն այն զանազան իւղ ոչ ունիմք. բայց միայն զմեռունն սուրբ. զի մի համարձակեցցին քահանայք եւ զձեթ օրհնէքն վերստին մուծցեն յեկեղեցի: Այլ ի մեծի հինգ շաբաթին օրհնեմք իւղ. զի մի մեռունն սուրբ ի հասարակաց ոտս մերձեցցի: Դարձեալ՝ զայս օծման խորհուրդս՝ ունեմք ի քահանայս ննջեցեցալս. զի օծանեմք զնոսա որպէս ըմբիշս. զի ի հանդէս մտցէ ընդ այսս չարութեան օդոյդ: Եւ թէ որ ասիցէ, միայն մարմինն օծանի. զի՞նչ ներգործէ ի հոգին: Ասեմք եթէ՝ յորժամ միաւորեալ է ընդ մարմինն՝ միութեամբ ներգործ էին նման ամենայն մարմնականքն: Իսկ այժմ որ բաժան է՝ բաժանմամբ հասանին ի նա ամենայն սրբութիւնք: Ապա թէ ոչ

Ժամ է քեզ ասել, թե ամենայն կարգ թաղման մարմնոյն՝ չէ օգուտ ննջեցելոցն: Ապա եւ ոչ աղօթք եւ պաշտօնք քահանայից: Կամ տուրք կամ պատարագք, ոչ օգուտ հոգւոյն. որ է բնաւ սուտ եւ չար հերձուած: Եւ թէ որ ասիցէ, զդրոշմն ոչ ունիք. վասն զի եպիսկոպոսն ոչ տայ. որպէս ազգն ֆռանկաց: Ասեմք եթէ, ըստ ազգիին յունաց՝ որպէս քահանայն պատարագէ եւ մկրտէ՝ նոյնպէս եւ դրոշմէ ըստ սրբոյն Դիոնիսեայ. եւ քահանայապետ ասէ զնա որ պատարագէ եւ մկրտէ եւ դրոշմէ. զի նա է պետ եւ աւագ ի կատարմունս խորհրոյն. եւ այլ քահանայքն ընկերակիցք. եւ սպասաւորք խորհրդոյն: Դարձեալ՝ ասեմք եթէ քահանայք մեր՝ ունին իշխանութիւն դրոշմելոյ. զոր նոցա եպիսկոպոսն ղնէ. ապա իշխանակիցք են քահանայք մեր եւ եպիսկոպոսք նոցա: Այս ըստ հակառակութեան նոցա ասի: Այլ ուղղութեան՝ քահանայն ունի զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարեալ: Եւ եպիսկոպոսն առաւել ունի՝ զի միայն տայ զկարգն. եկեղեցի օրհնէ եւ սեղան: Իսկ յետ օծանելոյն՝ զգեցուցանեն հանդերձս պայծառս. որ զլուսաւոր վարս եւ զպայծառ հաւատս եւ զանմեղութիւնն նշանակէ որպէս ասացաք: Այլեւ նարօտն կարմիր եւ սպիտակ մանեալ՝ զարիւն եւ զջուր կողին: Եւ խաչն զոր եբարձ՝ ի լուծ պրանոցին: Իսկ ելանելն ի բեմն՝ զի յետ բոլոր տնօրէնութեանցն, Քրիստոս ել յերկինս եւ նստաւ ընդաջմէ հօր: Եւ հաղորդելն՝ որպէս անդամ ի գլուխն յօդէ. զի ամենայն կատարմանց կատարումն՝ հաղորդութիւնն է. այսինքն, կարգին, պսակին, խոստովանութեան, եւ այլոցն: Այլեւ ի ծնունդս աւագանին երեւի. Ե զարմանալի գործս՝ որ ոչ է ի մարմնաւոր ծնունդս: Նախզի՝ կարէ միանգամայն ծնանիլ բոլոր ազգս մի. եթէ հազար, եւ եթէ բիւր. ըստ այնմ, (ո՞վ ետես եւ լուաւ. եթէ երկնեաց. Սիօն. եւ ծնաւ ազգ մի ողջոյն:) Եւ զայս պատճառէ զօրեղ իշխանութիւն քահանային. եւ ջրոյ առաւելութիւնն: Երկրորդ՝ զ կուսութեամբ ծնանի առանց ապականութեան. եւ զայն պատճառէ հոգին սուրբ, եւ սիւթ ջրոյն հեղեղուկ: Երրորդ՝ զի միշտ անդրանիկ ծնանի եւ ոչ կրտսեր. զի զպատկերն Քրիստոսի ստանամք. որ է անդրանիկ հօր: Չորրորդ՝ զի միշտ որդիք ծնանիմք Աստուծոյ, եւ ոչ դուստր եւ էգ: (զի ի Քրիստոս Յիսուս՝ արու էգ ոչ է ասէ առաքեալն.) Եւ զայս ցուցանէ աւագանն ի յաջ կողմն եկեղեցւոյն: Զինգերորդ՝ զի համապատիւ ծնանիմք ամենեքեան. ոչ ոմն պատուով, եւ ոմն անպատիւ. իշխան, կամ իշխեցեալ. որպէս ասէ առաքեալն. (չիք խտիր. ոչ հրէի եւ ոչ հեթանոսի. ոչ ծառայի եւ ոչ ազատի. զի դուք միապատիւ էք ի Քրիստոս Յիսուս. եւ համաժառանգ արքայութեանն.) Եւ զայս ցուցանէ նոյն ձեւ բանին՝ որ է կոչումն Երրորդութեան, եւ նոյն դաւանութիւն հաւատոյ: Այլ աստ հարցանելի է թէ՛ զքրիստոնեայս կրկին մկրտելի՞ է թէ ոչ: Պատասխանեմք թէ՛ ոչ է պարտ կրկին մկրտել զմկրտեալս: Նախզի՝ մարմնաւոր ծնունդն՝ նշանակ է հոգեւոր ծննդեանն: Եւ որպէս մի է մարմնաւոր ծնուրդն. այսպէս մի է եւ հոգեւորն: Երկրորդ՝ զի մկրտութիւնն է ընդդէմ սկզբնական մեղաց. եւ սկզբնական մեղքն միէ եւ ոչ կրկին: Երրորդ՝ զի որ մկրտուի ի մահն Քրիստոսի մկրտութիւն. եւ Քրիստոս միանգամ մեռաւ. եւ թէ որ դարձեալ մկրտեսցէ, (անձամբ ի խաչն հանէ զՔրիստոս զորդին Աստուծոյ. եւ դարձեալ խայտառակ է որպէս առաքելն:) Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն եւ դրոշմն: Վասն որոյ ոչ է կրկին որք յանուն սրբոյ երրորդութեանն մկրտեցան: Զինգերորդ՝ զի որ մկրտի՝

զատանայ եւ զմեղս մերկանայ. եւ զՔրիստոս եւ զսրբութիւն զգենու. ըստ այնմ. (որք ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք:) Իսկ որք կրկին մկրտեն, զՔրիստոս մերկանան եւ զսրբութիւն. եւ դարձեալ զսատանայ եւ զմեղս զգենունս: Եւ դարձեալ որ կրկին մկրտէ՝ ի ճշմարիտ Քրիստոսէն հեռացուցանէ եւ մեկնէ, եւ ի դերեւն Քրիստոսն մկրտէ, եւ մերձաւորէ եւ միացուցանէ: Այլ թէ արիոսեան լիցի, կամ մակեդոնեան, կամ նեստորական, մկրտեսցի. եւ այլք, որք ոչ խոստովանին զմիասնական Սուրբ Երրորդութիւնն՝ մկրտելի է զմկրտեալն ի նոցանէ: Ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն Յօր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն: Այսքան առ այս: Է՛ այլ ուրեք վասն մկրտութեան ասացեալ տասն գլխով. ի եբրայեցւոց թղթին անդ գիտ:

Նորին քարոզ վասն Մկրտութեան. ի բանն Չաքարիայ մարգարէին որ ասէ ի դիմաց աստուծոյ: (Ահաւասիկ եւ փորեցից խորխորատս.՝ շոշափեցից զամենայն անորենութիւնս երկրի:) Չաքարիա. 3. 9: (Գլուխ. ԼԳ)

Փորելն՝ զհաստատութիւն եկեղեցւոյ ասէ. որ նախ փորեմք,՝ ապա զհիմն հաստատեմք: Որպէս եւ Եսայի ասէ: (Գուր հնձան փորեցի ի նմա:) Եւ խորխորատ է խորհրդական արգանդ սուրբ աւազանին. եւ շոշափէ զամենայն անօրէնութիւնս մեր ի նմա: Այսինքն, որպէս շոշափեմք ձեռք՝ եւ զաղտն լուանամք եւ սրբեմք ի մարմնոյ. նոյնպէս աւազանան սրդիմք յամենայ մեղաց ի յօր կենացադոյս: Եւ գիտելի է՝ զի ծնունդն հոգեւոր աւազանին՝ ծննդեան մարմնոյ մերոյ վեց իրօք բաղդատի. եւ 2 իրօք զանազանի: Բաղդատի եւ համեմատի: Նախ՝ որպէս մի է մարմնավոր ծնունդն՝ իմօրէ. եւ մի է հոգեւոր ծնունդ յաւազանէն,, եւ ոչ կրկին: Երրորդ՝ որպէս ծննդեամբ ի խաւարէ արգանդի ի լոյս կենցաղոյս գամք. այսպէս մկրտութեամբն՝ ի խաւարէ անգիութեան՝ ի լոյս գիտութեան գամք. եւ զայս ցուցանէ հրաժարիլն ի սատանայէ յարեւմուտս. եւ խոստովանիլն յարեւելսն: Երրորդ՝ զի ծննդեամբն՝ անձն եւ գեմն երեւի, եւ թիւ մարդոյ մտանէ: Նոյնպէս մկրտութեամբն՝ դեմն եւ կերպարանն Աստուծոյ՝ ելրեւ առ մեզ, եւ ի թիւ ընտրելոցն մտանէ: Չորրորդ՝ ծննդեամբն՝ առնումք զանուն մարդոյ. այսպէս եւ մկրտութեամբն՝ նոր կոչումն եւ անուն ստանամք: Հինգերորդ՝ կերակրիմք իստեանց եւ ընդ ունիմք զօդ. այսպէս եւ յետ մկրտութեանն՝ զմարմին եւ զարիւնս սուրբ ճաշակեմք. այլեւ զկաթն գիտութեան հին եւ նոր կտակարանաց կերակրիմք՝ եւ զհոգն սուրբ ընդունիմք: Վեցերորդ՝ յետ ծնանելոյն՝ զժառանգութիւն ստանամք. այսպէս եւ մկրտութեամբն՝ լինիմք (ժառանգք արքայութեանն Աստուծոյ:) Որպէս ասէ Տէրն. (Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ, ոչ մտանէ յարքայութիւնն:) Այսքան բաղդատութիւն: Իսկ զանազանութիւն: Նախգի՝ ի մօրէ մարմնով ծնանիմք. եւ յաւազանէն հոգւով. ըստ այնմ, (ծնեալն ի մարմնոյ մարմին է. եւ ծնեալն ի հոգւոյն հոգի:) Երկրորդ՝ ի մօրէ սկզբնական մեղօք ծնանիմք. եւ մկրտութեամբն՝ յամենայն մեղաց սրբեալ ծնանիմք: Երրորդ՝ ծնունդն ի մօրէ՝ զանկումն Ադամայ ցուցանէ ի յերկր. եւ յայտ է՝ զի գլուխ ի վայր ծնանիմք: Եւ մկրտութիւնն՝ զկանգնիլն Քրիստոսիւ նշանակէ յերկիրս. եւ յայտ է՝ զի գլուխ ի վեր ունելով մկրտիմք եւ ելանեմք ի ջրոյն: Չորրորդ՝ ի մօրէ արու կամ եգ ծընանիմք. իսկ աւազանան՝ միշտ որդի ծնանիմք եւ անդրանիկ. որպէս ասէ առաքեալն.

(չիք խտիր. ոչ արուհի եւ ոչ իգի. զի դուք մի էք ի Զրիստոս Յիսուս. եւ որք ի Զրիստոս մկրտեցայք՝ զԶրիստոս զգեցեալ էք.) եւ զայս յայտ առնէ աւագանն՝ որ յաջակողմ է մօրս մերոյ եկեղեցւոյ: Հինգերորդ՝ ծննդեամբ՝ որդի մարդոյ լինիմք եւ կոչիմք. եւ մկրտութեամբն՝ շնորհօք որդի Աստուծոյ կոչիմք. որպէս ասէ աւետարանն. (եւս լոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ:) Վասն զի հայր վկայեաց ի վերայ որդւոյ. (դա է որդի իմ սիրելի:) Նոյն վկայութիւնն է ամենայն մկրտելոցն աւագանաւ: Վեցերորդ՝ ծննդեամբն՝ լինիմք ժառանգ մարդկան եւ զգալի կենցաղոյս. եւ մկրտութեամբն՝ հոգւեր կենաց եւ արքայութեան երկնից, եւ ժառանգակից Զրիստոսի. որպէս ասէ առաքեալն. (ժառանգ Աստուծոյ եւ ժառանգակից Զրիստոսի:) Այսքան համեմատութիւն երկու ծննդեանս՝ մարմնոյ եւ հոգւոյ: Նոյնպէս եւ որոշումն եւ զանազանութիւն. զի առաւել է հոգի քան զմարմին. եւ առաւել պատուաւոր է հոգւոյ ծնունդն քան զմարմնոյն: Եւ գիտելի է՝ որ ի ծնունդս մարմնոյ՝ վեց աստիճանաւ յառաջ բերէ արարչիչն. որ համեմատի հոգւեր ծննդեանս, եւ յարութեանն մերում: Նախ զի՝ յոչ գոյից ստեղծանէ: Երկրորդ՝ զի կենդանի առնէ. եւ ոչ անկենդան մարմին: Երրորդ՝ զի ի պատկերն Աստուծոյ մարդ կազմէ, եւ ոչ անասուն ինչ: Չորրորդ զի արու, թէպէտ ոչ ամենեքեան: Հինգերորդ՝ զի պահէ յարգանդի երկանց: Վեցերորդ՝ զի ի լոյս աշխարհի ծնանիմք: Այս վեց աստիճանաւ՝ ծնանի ամենայն ոք մարմնապէս: Այսպէս եւ հոգւեր ծնունդ աւագանին: Նախզի՝ յոչընչէ լինիմք. (զի ամենայն հեթեմոսք՝ ոչ ինչ են, եւ յոչ ինչ համարեցան նմա ասէ մարգարէն:) Երկրորդ՝ զի կենդանայ հոգիս: Երրորդ՝ ի պակերն Աստուծոյ կերպարանի: Չորրորդ՝ զի որդի կոչի շնորհօք Աստուծոյ: Հինգերորդ՝ զի երախայանայ յարգանդի եկեղեցւոյ: Վեցերորդ՝ ի լոյս Աստուած գիտութեան ծնանի. որպէս յայտ է ի սպիտակ զգեստուցն: Նմանապէս եւ ի յարութեանն հասարակաց՝ վեց աստիճանաւ պատրաստի: Նախզի՝ յոչընչէ եւ ի նանիր կենաց, ի ճշմարիտ կեանսն ստեղծանիմք: Երկրորդ զի խոր իմն գոյութիւն, եւ անապական կեանք: Երրորդ՝ զի կերպարանն Զրիստոսի եւ հրեշտակաց հաւասարիմք: Չորրորդ՝ զի յարութեան որդիք, եւ ժառանգակից Զրիստոսի լինիմք: Հինգերորդ՝ զի պահի մարմինն ի տարերս. եւ հոգին ի կայանս հոգւոյ իբր ի մօր արգանդի: Վեցերորդ՝ ի լոյս հանդերձեալ կենացն յառնեմք, յորդիս լուսոյ եւ յորդիս տունջեան. ըստ որում. (փայլեցին արդարքն յարքայութեանն երկնքից իբրեւ զարեգակն ասէ Տէրն:) Այս վեցիւք եղանակաւ համեմատին Գ ծնունդս այսոքիկ: Առաջինն է մարմնաւոր ծնունդ: Երկրորդն՝ հոգւեր: Երրորդն՝ մարմնաւոր եւ հոգւեր: Դարձեալ՝ առաջի ծնունդն է բնութեան: Միջինն շնորհաց: Վերջինն փառաց: Եւ այլ եւս: Առաջն ծնունդն անգիտութեամբ մեր. զի ոչ ոք գիտէ զօր ծնդեան իւրոյ: Միջին գիտութեամբ ծնանիմք. զի դիտեմք եւ հաւատամք զհոգեպէս ծնունդն: Իսկ վերջին գիտութեամբ եւ անգիտութեամբ: Զանզի՝ գիտեմք եւ հաւատամք զբան յարութեան մերոյ. այսպէս գիտութեամբ է: Իսկ զի ոչ գիտեմք զժամանակն թէ ե՞րբ, կամ որպէ՞ս. այսպէս անգիտութեամբ է: Այսքան առ այս: Մկրտութիւնն մի է՝ այլ տեսանի ի նմա երիս խորհուրդս: Նախ՝ հաւատոյ դաւանումն. եւ ապա մկրտիլն. եւ ապա օծանիլն: Արդ՝ սոքա՝ միապէս են ի հայր եւ յորդի եւ ի հոգին սուրբ. ըստ որում մի է բնութիւն երից անձանցն: Յաղագս որոյ՝ հաւատամք եւ դաւանիմք եւ օծանիմք. որպէս ի հայրն, նոյնպէս եւ որդին. այսպէս եւ ի հոգին սուրբ. ըստ

այնմ, (մկրտեցեք զնոսա յանուն Յօր եւ Որդւոյ եւ Յօգւոյն Սրբոյ:) Այլ զանազանին սոքա: Նախ՝ ըստ յատուկ դիմաց երիցն անձնաւորութեանց՝ այսպէս յարմարի: Հաւատաւք ի հայր. մկրտիմք յորդի. եւ օծանիմք ի հոգին սուրբ: Երկրորդ՝ ըստ երից առաքինութեանց այսպէս. դաւանիմք հաւատով. մկրտիմք յուսով. օծանիմք սիրով: Երրորդ՝ ըստ երից մասանց հոգւոյն այսպէս. հաւատն բանին. մկրտիլն ցասմանն. օծանիլն ցանկութեանն: Չորրորդ՝ ըստ երից զօրութեանց մտացն. հաւատն իմացմանն. մկրտիլն յօժարութեան. օծանիլն յիշողութեանն: Հինգերորդ՝ ըստ երից գոյացութեանց մարդոյս. հաւատն մտացն սրբութիւն. մկրտիլն հոգւոյն. օծանիլն մարմնոյն. ըստ որում յայտ է՝ զի ի նորումս նշխարաց սրբոցն երկրպագանեմք վասն օծման շնորհացն. եւ ոչ ի հնումս մարգարեից: Վեցերորդ՝ ըստ երից կարողութեանց նոցին. հաւատն սրբէ. մկրտիլն լուսաւորէ. օծումս կատարելագործէ ըստ մեծին դիոնիսեայ: Եւ գիտելի է՝ զի չորս արարողութիւն է ի մկրտութիւնն: Մին՝ որ ջուրն ջերմս լինի: Երկու՝ որ յաւազանն միւռն հեղուն: Երեք՝ որ լոյս վառեն: Չորս՝ որ խաչ դնեն: Եւ այսէ խորհուրդն: Ջերմութիւն ջրոյն՝ նշանակէ հոգւոյն սրբոյն զջերմութիւնն: Չի հանէ զցրտութիւն ատելութեանն. եւ ի սերն Քրիստոսի ջերմացուցանէ զմկրտեալսն: Եւ հեղումն միւռնոին՝ օրինակէ զհոգին սուրբ. որ էջ աղանակերպ ի յորդանան. եւ այժմ աներեւութապէս ի յաւազանն իջանէ: Իսկ լոյսն վառեալ՝ նշանակէ, որ մկրտեալն լուսաւորի աւազանաւն. այլեւ զայն ցուցանէ. որ Տէր մեր Յիսուս Քրիստոս ի մէջ աւուրն որ պայծառ լոյս էր եւ արեգական, յայնժամ մկրտեցաւ: Եւ ի մէջ գիշերի ծնաւ ի սուրբ կուսէն. եւ ի մէջ աւուրն մկրտեցաւ. առ ի ցուցանել թէ, ծնունդն ըստ մարմնոյ՝ ի խաւարային աշխարհս վերաբերէ զմեզ. եւ ծնունդն ըստ հոգւոյ՝ յերկնային եւ ի լուսեղէն կեանս տանի: Եւ որ խաչ դնեն յաւազանն՝ ցուցանէ թէ ի մահն Քրիստոսի մկրտիմք. զի խորհուրդ մկրտութեանն՝ ունի զխորհուրդ մահւան Քրիստոսի: Երեք անգամ ընկղմելն՝ զերեք օրեայ զթաղումս. եւ հանելն ի ջրոյն՝ զյարութիւնն. ի բեմս հանելն՝ որ ընդ աջմէ հօր նստաւ յերկինս: Եւ նարօտ կարմիր եւ սպիտակ՝ զարիւնն եւ զջուրն, որք բղխեցան ի կողէն: Եւ խաչն կապեալ՝ զի խաչից եղեւ Քրիստոս: Սպիտակն՝ զի մաքրեցաւ բոլոր մարմինն ի մեղաց: Եւ երկու լոյսն՝ զի հոգւով եւ մարմնով լուսաւորեցաւ: Հարց: Չի՞նչ է որ ի դրոշմն նախ զճակատն դրոշմեք: Պատասխանի: Դրոշմն այլ խորհուրդ է մկրտութենէն. զի դրոշմն կնիք է. որպէս ասեմք թէ՛ կնքեցաք զերախայն. այն է կնիքն՝ որ ի հոգին զկնիք դրոշմին առնու. որպէս մոմն զմատնեհարն: Եւ նախ ի ճակատն. այն է խորհուրդն՝ զի ճակատն է տեղի, ուր հասարակ զգայութիւնն ժողովի. ի յերկեղեցիս՝ ճակատ եւ տեսողք են մարգարեքն եւ առաքեալքն: Նախ նոքա ընկալան զհոգին սուրբ. եւ ապա այլ հաւատացեալք՝ որք անդամք են Քրիստոսի: Վասն որոյ նախ զճակատն դրոշմեմք. եւ ապա զհասարակ անդամսն: Դարձեալ՝ Քրիստոս քահանայ էր եւ թագաւոր. զկնիք քահանայութեան շնորհին ընդունիք մկրտութեամբ թագաւորութեանն՝ դրոշմելով ի ճակատն: Դարձեալ՝ մկրտութեամբն ծնանիմք ի յեկեղեցիս որպէս որդիս Աստուծոյ. եւ դրոշմելովն՝ լինիմք զինւոր Քրիստոսի ընդէմ թշնամւոյ սատանայի: Եւ նախ զճակատն դրոշմեմք. զի առանց երկիւղի զինեցին. եւ ապա զբոլոր անդամսն սպառազինեցուք: Դարձեալ՝ ճակատն ցուցանէ, թէ առանց ամօթոյ յայտնի է եւ համարձակ պարտ է որ ցուցանեն զդաւանութիւն հաւատոյն առաջի ամենայն մարդոյն.

եւ ոչ ծածկել եւ թաքուցանել. (զի սրտիւ հաւատալն արդարութիւն է. այլ բերանով խոստովանիլն փրկութիւն է հոգւոյ:) Եւ ապա յետ այնորիկ զբոլոր մարմինն օծնելն, նշանակէ զբոլոր առաքինութիւնն ծածուկ ունիլ: Զարց: Չի՞ն է ասելն: (Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն:) Պատասխանի: Մկրտութիւնն Ովհաննու՝ ապաշխարութիւն է մեղաց. այնու՝ առաւել էր քան զաւագանսն Մովսէսի. որ միայն սրբութիւն էր մարմնոյ: Իսկ նուազ էր քան զմկրտութիւնն Քրիստոսի՝ որ հոգւոյն սրբով: Նախզի՝ զմեղս թողոյր: Երկրորդ՝ տայր զհոգին սուրբ: Երրորդ՝ որդի Աստուծոյ առնէր: Չորրորդ զդուռն արքայութեան բանայր: Զարց: Չի՞նչ է ի մեզ կերպարանն հին Ադամայ, եւ զի՞նչ նոր: Պատասխանի: Երեք է ի մեզ կերպարան հինն Ադամայ այսինքն, բնութիւնն. եւ մեղքն. եւ պատիժն: Բնութիւնն է մարմինն. եւ մեղքն սկզբնականն. եւ պատիժն մահն: Եւ յորժամ ծնանիմք ի մօրէ, ունիմք այսպէս զկերպարան հին Ադամայ մարդոյն: Նոյնպէս եւ ստանամք աւագանան զկերպարան նոր Ադամայ Քրիստոսի: Այսպէս երիւք. այսինքն, շնորհաց, արդարութեան, եւ փառաց. զի ծննդեամբ աւագանին՝ շնորհօք որդիւք Աստուծոյ կոչիմք. եւ առնումք զանագան պարգեւս հոգւոյն. որպէս ի մկրտութեանն վկայեա հայր զճշմարտ որդութիւնն Քրիստոսի. եւ հոգին սուրբ էջ աղանակերպ: Իսկ արդարութիւնն՝ զի սրբիմք ի սկզբնական. մեղացն. այլեւ ի ներգործականէն արդարանամք. եւ զայս նշանակէ ջուր սրբութեամբ աւագանին: Որպէս Քրիստոս ի կոյս արգանդէ եւ ի հոգւոյն ծնաւ. այսպէս եւ մեք ի կոյս աւագանէն հոգւով սրբով ծնանիմք եւ արդարանամք: Իսկ փառքն՝ երեւեցաւ ի յարութիւնն, եւ ի նստիլն ընդ աջմէ հօր. եւ մեք մկրտիլով՝ զխորհուրդ յարութեանն ի մեզ կերպարանեմք. զի խաչն եղեալ յաւագանն՝ ի նշանակ խաչելութեան. եւ երեք անգամ ընկղմելն՝ զերեքօրեայ թաղումն. եւ ելանելն ի բեմն՝ ի նշան հայրենի փառացն: Այս է՝ զհին մարդն խաչակից առնելով, եւ զնոր մարդն զգեւուլ մեզ, նոր նորոգելք ի հնուէ մեղաց: Զարց: Վասն Է՞ր մկրտեմք, եւ յետոյ ի բեմն հանեալ հողորդեմք: Պատասխանի: Ասեմք այսմ չորս պատճառ: Առաջին պատճառն՝ տեսանի ի յԱդամ. որ նախ ի մէջ երկրի ի պատկերն Աստուծոյ ստեղծաւ. եւ ապա ի դրախտին եղաւ առ ծառն կենաց: Նոյնպէս մեք մկրտութեամբ՝ նախ պատկեր լինիմք Աստուծոյ. եւ ապա ի բեմն ելեալ՝ հաղորդ ի մարմնոյն Քրիստոսի: Երկրորդ դարձեալ՝ Ադամ անհնազանդ եղեալ, Աստուծոյ պատկերն ապականեցաւ ի նմա. եւ ապա յերկիր անկեալ՝ ընդ անասնոց կերակրեցաւ: Ընդդէմ այսմ, հաւատովք հնազանդիմք Քրիստոսի. եւ մկրտութեամբ նորոգի ի մեզ պատկերն Աստուծոյ. եւ ապա ելալ ի բեմն կենաց կերակրոյն արժանաւորիմք: Երրորդ՝ զի բանն Աստուծոյ ըստ այսմ կարգի նորոգեաց զմեզ: Նախ ի յարգանդ կուսին բանն մարդ եղեալ, զպատկերն Աստուծոյ նորոգեաց ի մեզ ծննդեամբն. եւ ապա խաչին ի դրախտն եմոյծ. եւ ետ զանմահութեան կերակուր մարմնոյն: Այսպէս եւ մեք կոյս աւագանան ծնանիմք ի պատկերն Աստուծոյ. եւ յետոյ ճաշակելով զմարմինն սուրբ՝ արժանի լինիմք դրախտին: Չորրորդ պատճառ. որպէս ի վերնատունն նախ զոտս աշակերտացն լուաց՝ որ օրինակ էր աւագանին՝ եւ ապա զսուրբ մարմինն իւր բաշխեաց նոցա. այսպէս եւ մեք նախ աւագանան սրբիմք. եւ ապա զմարմինն Քրիստոսի ճաշակեմք: Այլ աստ գիտելի է՝ զի մկրտութիւնս մեր՝ փոխանակ հին թլփատութեանն կարգեաց Քրիստոս: Չի է թլփատութիւն մարմնոյ. եւ Է՞ թլփատութիւն սրտի. որպէս

Մովսես գրեաց ի յերկրորդ օրէնսն: Եւ սրտի թլփատութիւն որ է հատումն մեղաց՝ չորս կերպիւ է: Նախ հաւատն. որպէս ասէ Պօղոս ի կողոսացոց: (Որով թլփատեցայք զանձեռագործ: Թլփատութիւնն: Երկրորդ՝ մկրտութիւնն. որպէս ասէ. (թաղեալք ընդ նմին մկրտութեամբ ի մահ:)) Երրորդ՝ խոստովանութիւն մեղաց. որպէս ասէ. (ի մերկանեալ զանդամս մարմնոց մերոց:) Չորրորդ՝ ապաշխարութիւն եւ բարի գործք. որպէս ասէ փիլիպեցոց. (թլփատութիւն մեք իսկ եմք, որ հողովն զԱստուծոյ պաշտեմք:) Եւ թէ վասն Է՞ր Դ են հոգւոյ թլփատութիւնքս: Ասեմք՝ վասն զի չորս ազգ են մեղք: Առաջին անհնազանդութիւն. եւ ընդդէմ նմա է հաւատն: Երկրորդ՝ սկզբնական մեղքն. եւ ընդդէմ նմ է մկրտութիւն: Երրորդ՝ ներգործական մահացու մեղքն. եւ ընդդէմ նմա է խոստովանութիւն: Չորրորդ՝ ներելի մեղքն. եւ ընդդէմ նմա է ապաշխարութիւն գործոց: Իսկ թէ վաս Է՞ր սոքա թլփատութիւն կոչին: Ասեմք վասն երից: Նախ՝ ըստ անուանն: Երկրորդ՝ ըստ արարողութեանն: Երրորդ՝ ըստ նշանակութեան: Նախ ըստ անուանն. զի թլփատութիւն՝ հաւատումն կոչի: Նոյնպէս մկրտութիւնն եւ խոստովանութիւնն եւ այլքն՝ հատանեն եւ խզեն զաւելորդ մեղս: Երկրորդ՝ ըստ արարողութեանն. զի որպպէս ի թլփատութիւնն բացումն է անդամոցն. նոյնպէս մկրտիլն եւ խոստովանիլն՝ բացումն է մարմնոյ եւ գլխոյ. եւ յայլսն բացումն է մեղաց: Եւ դարձեալ՝ անդ սուր՝ եւ երկու ձեռք քահանային. նոյնպէս աստ սուր՝ իշխանութիւն քահանային եւ հրամանին Աստուծոյ. որ սպասաւորէ քահանայն երկոքին ձեռօքն: Երրորդ՝ ըստ նշանակութեան. զի թլփատութիւնն՝ նշանակ էր ուխտին Աբրահամու: Այսպէս մկրտութիւնն եւ խոստովանութիւնն եւ այլքն՝ նշանակ են ուխտն Քրիստոս: Եւ դարձեալ՝ որպէս թլփատութեամբն մտինն յերկիրն պարգեւաց նոքա. նոյնպէս՝ մեք մկրտութեամբն, խոստովանութեամբ՝ բարի գործովքն՝ ժառանգեմք զարքայութիւն երկնից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. Որ է օրհնեալ ընդ Զօր՝ Ամենասուրբ Զոգիոյն՝ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն Զաղորդութեան. ի բանն՝ (Զացն զոր ես տաց ի յաղորդութիւն՝ մարմին իմ է. նոյնպէս՝ բաժակն:) կամ այլ ինչ: Յօհ. 6. 52:(Գլուխ. ԼԴ)

Նախ քննելի է թէ՛ վասն Է՞ր կոչի հաղորդութիւն: Ասեն վարդապետք թէ՛ խորհուրդս այս՝ բազմանուն է ըստ զանազան ժամանակաց: Չի կոչի պատարագ՝ որ նշանակէ զանցեալն. ըստ այնմ, որ պատարագեցաւ Քրիստոս: Կոչի թոշակ. որ է պաշար ի հանդերձեալն: Կոչի եւ շնորհ, վասն յաւիտենից փառացն: Իսկ հաղորդութիւն՝ վասն ներկայիս: Եւ ի ճշմարիտ գործոյն՝ կոչի հաղորդ վասն բազում իրաց: Նախ զի՛ զբազումս հաղորդէ ի մի այսինքն, անդամք լինիլ Քրիստոս: Երկրորդ՝ հաղորդ՝ այսինքն ժողով. զի զզանազանեալսս մեղօք՝ ժողովեսցէ ի մի սրբութիւն: Երրորդ՝ զի հաղորդէ զմեզ ի շնորհս եւ ի խորհուրդս եկեղեցւոյ: Չորրորդ՝ այլեւ հաղորդէ զմեզ ի գլուխն Քրիստոսի, անդամ եւ մարմին նորա լինիլ. (անդամ յանդամոց նորա, եւ մարմին ի մարմնոյ նորա.) ըստ այնմ, (որ ուտէ զմարմին իմ, յիս բնակի եւ ես ի նա:) Զինգերորդ՝ հողորդ իմք եւ որդիութեանն. զի որպէս Քրիստոս բնութեամբ է որդի Աստուծոյ. եւ մեք շնորհօք որդիք Աստուծոյ լինիմք. եւ ժառանգ արքայութեանն. այլեւ հաղորդ սրբութեան եւ արդարութեան նորա:

Եւ դարձեալ՝ կոչի հաղորդ ըստ իրին. ըստ որում ի բազում հատից ժողովեալ է ի մի հաց. եւ բազում պտղոց՝ մի բաժակ. եւ լինի մարմին եւ արիւն Զրիստոսի: Եւ դարձեալ ազնիւ իմացմամբ՝ հաղորդութիւն կոչի, ըստ որում հողորդիլ եւ հաւասարիլ է աստուծութեան. եւ հողորդէ զմեզ ընդ ինքեա. ըստ որում, (դու հայր յիս, եւ ես ի քեզ. զի եւ սոքա ի մեզ իցեն:) Այլեւ կոչի կարտարողութիւն. զի ամենայն կատարմանց՝ կատարումն է. այսինքն, մկրտութեան, ապաշխարութեան, կարգի, եւ այլոցն. զի ամենայնի կատարումն՝ սա է որպէս ասէ սուրբն Գիոնեսիոս: Չոր օրինակ՝ գլուխն կատարումն է բոլոր անդամոցն. եւ բանականն զգայականին եւ տնկականին. այսպէս ամենայն խորհողոց կատարումն՝ հաղորդութիւնն է: Չի ոմանք մաքրեն. եւ ոմանք լուսաւորեն. իսկ սա՝ կատարեալս առնէ: Այլեւ կոչի խորհուրդ. որ է ծածուկ իրողութեանց նշանակութիւն. զի ըստ այնմ որ ձեն եւ գոյնն եւ համն եւ այլ որակքն հացի եւ գինւոյ մնացեալ են. եւ գոյացութիւն հացին եւ գոյացութիւն գինւոյն որ է իրն անմարմին՝ փոխարկեալ է ի մարմին եւ յարիւն Զրիստոսի: Իսկ խորհուրդն եւ տիպ եւ նշանակութիւն պատահական որակք են հացին եւ գինւոյն: Դարձեալ՝ նշանակութիւնք ձեւք եւ արարողութիւնք խորհուրդեանն. ընթերցմունքն եւ այլն մի ըստ միոջէ. եւ բազում օգտութիւնս նշանակեն: Չ քահանայն ի ջանէ ի բեմէն խիկնարկելով ի բոլոր եկեղեցին. եւ դառնայ անդրէն: Նախ՝ նշանակէ զանուշահոտ լույսափայլութիւնն. որ իջանէ յԱստուծոյ ի յառաջին դասս աթոռոցն. եւ ապա ի միջինսն տարուեաց. եւ ի վերջինսն հրեշտակաց: Եւ միաւորեալ զնոսա ընդ ինքեան, մնայ ի յիւր միեղինութեանն անխառնաբար ի նոցանէ: Երկրորդ՝ զի նոյն նախախնամութիւնն իջանէ նախկնաբար յիմանալի դասս հրեշտակաց, եւ ի բանականս մարդիկ. եւ ի կենդանիս եւ ի յետինս գոյացութիւն: Խնամէ զնոսա եւ պահպանէ ի նոյնութեան. եւ մնայ ի յիւրում նոյնութեան անզանազան եւ անխառնապէս: Երրորդ՝ նշանակէ զբանին մարդեղութիւնն. որ եկն տնօրէնութեամբ ի մերս բնութիւն. եւ անուշահոտ բուրեաց ի մեզ զբուրումն սուրբ անետարանին. եւ դարձեալ (եւ ի յերկինս եւ նստաւ ընդաջմէ հօր:) Իսկ եղանակաւ ժամամուտն՝ ցհրեշտակաց բարբառն նշանակէ անգիտելի մեզ: Իսկ շարականն՝ զերգս առաքելոցն՝ սկզբնաւորեալ ի մարգարէսն: Յետ որոյ սարգաւազն քարոզէ պռօսխումէ. այսինքն ի վեր նայեցէք յաւետարանս սուրբ. զոր դոքա երգեցին: Եւ երեք սրբեանն ինն թուով՝ ինն դասուց հրեշտակաց յերիս երրեակս որոշեալ: Եւ ապա սաղմոսն ըստ պատշաճի աւուրն: Եւ գիտելի է՝ զի սաղմոսն յարաժամ երգի յառաւօտ ի ճաշուն եւ յերեկոյ. այլեւ յամենայն խորհուրդս. այսինքն, ի կնքելն. ի պատարագն. ի կարգն. ի թաղումն. եւ յայլն: Եւ այս վասն երեք պատճառի: Նախ զի՝ սաղմոսն երգ լսի. եւ ի հինսն յամենայն ժամ զսա երգէին ի տաճարն. եւ զայլ մարգարէսն՝ ի շաբաթսընթեռնութիւնն. վասն որոյ միշտ սա երգի յեկեղեցի: Երկրորդ՝ զի սա զամենայն գրելոց զօրութիւնս ունի յինքեան. զի սուրբ գիրք՝ կամ զառաջինսն պատմէ որպէս Մովսէսին. կամ զվարջինսն կանխաճառէ. կամ ի ներկայս աղօթք է եւ խրատ. որպէս Սողոմոնին: Իսկ սա՝ զամենայն ի յինքն ունի. զանցելոյն, զներկայիս, եւ զապագային: Վասն որոյ՝ թէ ոք զսա սրբութեամբ երգէ, զցցի շնորհօք հոգւոյն սրբոյ: Երրորդ՝ զի Դաւիթ աստուածահայր կոչեցաւ. պարտ է առաւել զինչս հօրն ծախել ի տունս եկեղեցւոյ որդւոյ իւրոյ Զրիստոսի: Իսկ զի՞նչ է այն՝ որ նախ

գմարգարես, եւ ապա զառաքեալս, եւ ապա զաւետարանն ընթեռնումք: Ասեմք նաեւ եթէ մարգարէքն իբր յառաջասաց պատմեցին զմարդանալ բանին եւ զփրկութիւն մարդկան: Իսկ առաքեալքն՝ իբր ականատես վկայեցին. եւ առաջ է ասելն քան զվկայելն: Դարձեալ մարգարէքն ի հեռուստ տեսին. եւ առաքեալք մերձ զբանն մարմնացեալ. վասն որոյ զառաքեալսն մերձ յաւետարանն ընթեռնումք: Դարձեալ՝ մարգարէքն սերմանեցին. եւ առաքեալքն հնձեցին: Դարձեալ՝ մարգարէքն ասացին. եւ առաքեալքն կատարեցին: Իսկ ալելու՝ է հրեշտակաց երգ. որք աւետաւորք են զալստեան բանին: Եւ ապա աւետարանն ճշմարիտութեան. որ աւետէ զփրկութիւն մարդկան, եւ զերկնային զկեանս: Եւ նախ քան զաւետարանն ալելուն՝ որ թարգմանի օրհնեցէք զտեր. որք միաբանեալ օրհնեն զՏէր Սաղմոսիս: Եւ տես զի ամենայն ուրեք ընդ ալելուն՝ սաղմոս տուն կայ. զի հրեշտակաց երգն եւ մարդկան՝ ի միասին խառն: Եւ դարձեալ՝ ալելու եւ որթիլ՝ իբրթէ օրհնեցէք զՏէր՝ եւ յառաջ մատիք ի լուր աւետարանին: Իսկ բացաւ զլիսով՝ զի սրբութեամբ ընկալաք զհրամանս քո սուրբ: Եւ դարձեալ՝ (ամենայն մերկապարանոց եւ յայտնի է քեզ:) Եւ մէք ոչ ինչ ծածկեմք ի քէն: Իսկ յետոյ համբոյրն՝ կամ թէ ընկալաք եւ հնազանդեցաք մարմնով. կամ միացաք ընդ քեզ հոգւով. կամ յետ յարութեան ետես զՔրիստոս նախ Պետրոս. եւ նա աւետեաց այլ առաքելոցն: Նոյնպէս մինն այն ի մէջ համբուրէ զաւետարանն. եւ մեզ աւետիս տայ խոնարհմամբ զլիսոյն: Եւ յետ ընթերցմանն՝ ասեմք համաձայն. փառք քեզ Աստուած. իբրթէ ընկալաք եւ փառս մատուցանեմք մարդասիրութեան քոյ: Եւ ապա յետոյ զդաւանութիւն հաւատոյն որ ի նիկիա. իբրթէ զաւանդդ ընկալաք եւ հաւատացաք: Եւ է դաւանութիւնս՝ նշանակ պաշտաման մեր. զոր պարտ է ամենայն Քրիստոնէի ունիլ եւ ասել: Այլեւ պատմութիւն է ամենայն եղելոցն եւ ապագային, մինչ ի կատարած: Դարձեալ՝ գոհութիւն է եւ շնորհակալութիւն ամենայն երախտեաց առ մեզ. որ էացոյց զմեզ եւ կենդանութիւն եւ բանականութիւն ետ, եւ ի պատկերն իւր կազմեց. եւ մէք զրկեցաք ի նմանէ: Որեւ դարձեալ առաքեաց մեզ ի փրկութիւն զմիածին որդն իւր զՏէր մեր Յիսուս Քրիստոս. որ էառ յանապական արեւնէ կուսին. եւ միաւորեաց զբնութիւնս ընդ իւրում աստուածութեանն. եւ եղեւ մարդ ճշմարիտ մարմնով եւ հոգւով եւ մտօք կատարեալ: Մի Տէր. մի Քրիստոս. մի որդի Աստուծոյ մարդացեալ եւ խաչեալ եւ մեռեալ անմահապէս. եւ թողեալ անապական. եւ յարուցեալ աստուածային փառօք. ել յերկինս եւ նստաւ ընդաջմէ հօր միացեալ բնութեամբ. վասն որոյ զայս ամենայն երախտիսս՝ յիշատակեմք եւ գոհանամք: Յետ որոյ սարկւագն զոչէ՝ մի ոք յերախայից եւ այլն, զանարժանս արտաքսէ յեկեղեցոյն: Այլ զիտելի է՝ զի առաջին անարժանք նորա են՝ որք ոչ են հաւատացեալ է ոչ մկրտեալ. որք ոչ լսեն: Մարգարէից եւ Առաքելոց եւ Աւետարանին. ըստ որում ասեն. (զճանապարհս քո ճանաչել ոչ կամիմք:) Վա՛յ ամենագետն Աստուած՝ տեսեալ զնոսա չար կամսն, ոչ առաքէ ի նոսա քարոզս. (զի մի տեսցեն աջօք. եւ լիցեն ականջօք, եւ այլն:) Իսկ որ յեկեղեցիս են՝ Գ բաժին արժանաւոր է. եւ երեքն անարժան. այսինքն է, երախայն որ ոչ է մկրտեալ. եւ այսահարն ի դիւնէ, եւ ախտացեալն մեղօք ի նմին կարգի, եւ որք ընդ ապաշխարութեամբ են. սոքա ոչ են արժանիի տեսութեան խորհրդոյն. վասն որոյ արտաքս ելցեն եւ ունկնդիր լիցին: Եւ տես՝ զ ունկամբ զքարոզն՝ հասարակաց է. արժանից եւ

անարժանից. զի դարձցին ի մեղաց. վասն այն զընթերցմունսն լսիցեն: Եւ թէ վասն է՞ր ի տեսութենէն արտաքս հանեն. այս է պատճառն: Չի խորհուրդն սուրբ ամենայն բարութեամբ լի է. եւ ըստ իւրաքանչիւր չափու՝ արժանաւորապէս բաշխէ զշնորհս. այս է շօշափողացն, ճաշակողացն, եւ տեսողացն: Եւ որպէս որք անարժան ճաշակեն, վնաս է եւ դատապարտութիւն. նոյնպէս որք անարժան տեսանեն՝ վնասին. վասն այն ինամէ զնոսա՝ զի մի վնասեցին. որպէս ախտացեալ աչքն՝ ի լուսոյ արեգականն վնասի: Արդ՝ ասելի է թէ ո՞րք են երեք դասք անարժանցն: Առաջինն երախայն է. որ է ոչ մկրտեալն. որպէս մանուկն ի ծոց մօրն սնանի տնկականաւն. եւ քառասնօրեայ առնու զբանական հոգին ի ծագմանէն Աստուծոյ. յետ որոյ ծնանի եւ ի լոյս գայ: Նայնպէս եւ երախայն՝ ի քառասնօրոց աւուրս ի ծոց եկեղեցւոյ՝ դայեկեալ սնանի. եւ ապա պատկերանայ յորդիութիւն Աստուծոյ. եւ ի լոյս գայ ծննդեամբ սուրբ աւագանին: Արդ՝ երեխայն որ չէր մկրտեալ՝ անկատար է մինչեւ չէ եկեալ ի լոյս. վասն որոյ արտաքսելցէ ի ժամ պատարագին: Եւ յետ սորայ այսահարն ելցէ. զի անկատար է եւ սա իմացմամբ՝ հաւատով՝ սիրով՝ եւ սուրբ գործով. վասն որոյ թերահաւատ զսա կոչէ սուրբ քարոզն: Չի այս է պատճառ այսահարին. այսինքն, պղերգութիւնն որ ծոյլ լինի. եւ տկար մտօք. եւ թերի հաւատով եւ սիրով. եւ ապա թէ ոչ՝ տես զնոսա որք արիքն են գործով. եւ բոլոր ի հաւատս եւ ի սէրն. եւ իմացմամբ կատարեալ. ընդ դիւացն պատերազմին եւ յաղթեն. եւ զդիւահարսն բժշկեն: Ապա յայտ է՝ թէ սոքա անկատարք են, արտաքս ելցեն: Եւ ապա ախտացեալն զանագան մեղօք. այսինքն, պոռնիկքն. ագահքն. արբեցողքն. բամբասօղքն եւ այլքն, արտաքս ելցեն: Չի եւ նոքա նման են այսահարցին: Չի որպէս զնոսա յաղթեց բնակելովն՝ եւ զսոսա յաղթեաց գործելովն զմեղս: Դարձեալ՝ հանմագգիք են նոցա. զի եւ սոքա մոլիք կոչին: Դարձեալ՝ համիմացք են նոցա. զի հաւատով սիրով եւ գործով՝ թոյլ են որպէս զնոսա. այսինքն, զի իմացմամբ տկարացան, եւ փոփոխեցին զանագան կեանս ընդ անցաւորիս: Այլեւ սիրով տկարացն. զի տեցին զճշմարիտ բարին. եւ սիրեցին զսուտ բարիս որ կերպարանեալ է եւ ոչ իսկապէս: Այլեւ գործով թուլացան եւ այլայլեցին զինքեանս յօտար հեշտութիւնս որ ոչ գոյ. եւ փութով զղջանայ ի գարշ հեշտութեանց: Եւ օտար եկամուտ է եւ ոչ մեր բնական. որպէս ասէ Տէրն. (օտարին չեղէք հաւատարիմ, եւ այլն:) Այլեւ հաւատով տկարք են. զի ոչ հաւատան հատուցման գործոց եւ դատաստանին Աստուծոյ: Ապաա յիրաւի՝ ընդ այսահարիցն զրկեսցին սուրբ խորհրդոյն: Եւ որպէս աստ արտաքսեցան յեկեղեցւոյ. եւ անդ առաջին ահաւոր բեմին արտաքսեցին յերեսացն Քրիստոսի: Չի ոչ տեսանել կարեն զփառս աստուծութեանն նորա, թող թէ անարժանք են արքայութեանն. այլ ընդ յիմար կուսիցն արտաքս ելցեն. եւ փակեսցի դուռն: Եւ որպէս զձայնն լսեն ունկնդիրքն՝ այլ զտեսն ոչ. նոյնպէս եւ անդզվճիռ դատաստանին լսեցեն ի Քրիստոսէ. (երթայք յինէն.) այլ զերես աստուածութեանն ոչ տեսանիցեն: Իսկ որք ապաշխարողք են. այսինքն, որք դարձեալ են ի մեղաց, եւ խոստովանեալ, եւ զպարտս յանցանացն որ է պատիժն չեն վճարեալ, անարժան են եւ նոքա, մինչեւ ապաշխարութեամբ քաւեսցեն եւ ապա մտցեն: Որպէս այժմ մեք ի քառասներորդ պահս՝ որք ընդ ապաշխարութեամբ եմք, արտաքոյ եմք եկեղեցւոյ. մինչ. Ե զգայարանօքս սրբիմք կատարեալ. որ նշանակէ զհինգ

տասն. Եւ ապա ազատեալ ի պարտուց, մտանեմք յեկեղեցի: Եւ թէ ոք ասիցէ, խոստովանութիւնն ո՞չ թողու զամենայն զմեղս: Ասեմք եթէ խոստովանութեամբն՝ թողութիւն լինի ամենայն մեղաց. այլ մնայ պատիժն. զոր պահօք եւ աղօթիւք վճարէ որպէս ասէն ոմանք: Դարձեալ խոստովանութիւնն՝ սրբէ զմեղս. զի ոչ տանջի: Այլ ապաշխարութիւնն՝ ամբարէ զբարիս ի հոգին զի պսակեցի: Դարձեալ խոստովանութիւնն սրբէ զանցեալ մեղս. ապաշխարութիւնն ցանկ է եւ պարիսպ ապագային. զի մի եւս գործեսցէ: Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր ապա յորժամ խոստովանին՝ ոչ հաղորդին: Ասեմք եթէ՝ կրկին է խոստովանութիւն: Մին է, որ նախ խոստովանին. եւ յետոյ ապաշխարեն. այլ սոքա ընդ ապաշխարութեան պատժոց են, եւ ոչ հաղորդին. որպէս որք խոստովանին ի մուտս քառասնորդաց պահոց. որպէս ասէ Եսայի: (Լուսացարուք սրբեցարուք. եւ եկայք խօսեցարուք ընդ միմեանս, եւ այլն:) Եւ երկրորդ խոստովանութիւն է՝ որք նախ ապաշխարեն պահօք եւ աղօթիւք եւ ճգնութեամբ. եւ յետոյ խոստովանին եւ հաղորդին այսպիսիքս. որպէս նոքա որք մերձ ի զատիկն խոստովանին, եւ սրբութեանց արժանաւորին: Դարձեալ ասեմք թէ՝ կրկին է խոստովանութիւն. նոյնպէս եւ թողութիւնն: Չի է որ խոստովան զմեղս՝ եւ արմատն հաստատ է. այս է՝ որ ի մտի ունի խոստովանիլ եւ դարձեալ մեղանչել: Որպէս ազգն ֆռանկաց ունին զայսպիսի խոստովանութիւնս միշտ քահանայք եւ ժողովուրդք. եւ այսպիսիս՝ անկատար առնու զթողութիւն. զի խոստովանեալ մեղքն բառնի՝ այլ պատիժն ոչ: Եւ է խոստովանութիւն՝ որ զարմատ մեղացն քակէ ի սրտէ, զղջացեալ ի մեղաց. եւ հաստատ է ի կամս եւ ի միտս այլ ոչ մեղաչել. այսպիսիս՝ կատարեալ խոստովանութիւն է: Եւ զայսպիսոյ մեղս՝ թողու քահանայական իշխանութիւնն. եւ զպատիժն ընդ նմին. զի պատժոյ արմատ՝ մեղքն է. ընդ բաժանիլ մեղաց, բարձաւ եւ պատիժ գեհենոյն: Որպէս Տէր մեր եթող զմեղս անդամալուծին. եւ բարձան պատիժ քան. նոյնպէս եւ քանանացոյն. նոյնպէս եւ աւագակին: Այս քան առ այս բաւականացի ի փառս Զրիստոսի Աստուծոյ մերոյ ամէն:

Դարձեալ նորին քարոզ ի նոյն խորհուրդ: (Գլուխ. ԼԵ)

Իսկ յետ որոշելոյ անսրբոցն երեք դասուն որպէս ասացաւ: Երեք դասք սրբոցն մնան ի ներքս ի յեկեղեցիին. այսինքն, մաքրեալքն. եւ լուսաւորեալքն. եւ կատարեալքն: Որպէս քահանայք եւ ժողովուրդք: Մաքրեալն՝ որ ի ձեռն խոստովանութեան եւ ապաշխարութեան սրբեալ է ի մեղաց: Իսկ լուսաւորեան՝ այսինքն, որ մկրտեալ է եւ լուսաւորեալ հաւատով եւ գործով, եւ մտօք եւ գիտութեամբ: Իսկ կատարեալն՝ որ է արժանացեալ սուրբ միւռնոնին եւ սուրբ հաղորդութեանն, եւ սուրբ կարգոց: Սոքա երեքեան դասքս՝ մնան ի յեկեղեցին ի ժամ սուրբ խորհրդոյն. որպէս երկնային դասքն՝ հրեշտակացն եւ այլոցն. որք են մաքրեալք եւ լուսաւորեալք եւ կատարելք ի երկինս երկնից. եւ արժանաւորապէս վայելեն ի սուրբ խորհրդոյն Զրիստոսի. նոյնպէս եւ եկեղեցի: Եւ նախ ընթանան յաջակողմն՝ ուր է խորհրդանոցն. եւ յառաջ բերեն զընծայն ի սուրբ սեղանն: Որ նշանակէ զբանն Աստուած ծածկեալ ի ծոց հօր. եւ ի ձեռն հրեշտակաց երեւեցաւ մարդկան: Չոր նշանակէ հնչումն զանկակին, եւ ձայնք երգոց խառնեալ ընդ

միմեանս. զի լինելոց է մարմին ճոմարիտ. վասն որոյ բաց գլխով սպասաւորեմք: Եւ քահանայն լուանայ զծայրս մատանցն ի տես ժողովրդեանն առաջի սուրբ սեղանոյն: Գիտելի է՝ զի երկու անգամ լուանայ զձեռս. որ նշանակէ զսրբութիւն կրկնակի մեղաց: Այն որ ի դուրս լուանայ խոստովանութեամբ մահու չափ մեղացն է ցոյց՝ որ ապաշխարեաց արտաքոյ եկեղեցւոյն: Իսկ այս՝ զներելիսն նշանակէ. որ փոշտետեսակն վերջին ծայրիցն. այսինքն, յընթացս աշխարհի, ի միտս, կամ ի զգայարանս աղտեղեալ: Եւ այն զի ի տեսս ժողովրդեանն լուանայ. իբրթ փոշտետեսակն ի ժողովրդեանն ընկալաւ՝ որպէս ի պսակելն եւ յայլն, ոչ կարէ կապել եւ աղտեղել զնա: Իսկ այն զի առաջի սուրբ ընծային՝ իբր թէ առաջի տեսութեանն Աստուծոյ. որ է ամենատես եւ անաչառ. որպէս խիղճ մտացս մեր վկայէ. զի անաչառ դատաւոր է ի մեզ. եւ զամենայն տեսանէ. ըստ Յօհաննու. (եղբարք թէ սիրտք մեր զմեզ ոչ ստգտանեն, ունիմք համարձկութիւն:) Եւ ապա սուրբ ողջոյնն՝ զամբողջութիւն ամենեցուն, եւ զմիարար խաղաղադութիւն եւ զսերն նշանակէ: Չի այլ զանազանութիւն խորհրդոց եւ կամաց եւ մեղաց՝ ոչ է ի մեզ: Այլեւ ծանիր՝ զի ի հանդէս Պատարագին՝ են բանք աստուածային, եւ հրեշտակաց, եւ մարդկան: Աստուծոյ բանն է. (այս է մարմին իմ, եւ այս է արիւն իմ:) Իսկ հրեշտակացն՝ (սուրբ սուրբ Տէր զօրութեանց:) Եւ մարդկան՝ ամենայն եղանակքն եւ աղօթքն: Այլեւ երեք ազգ լեզուա գրեալն ի վերայ տախտակին. Եբրայեցերէն. Յունարէն. եւ Դաղմատերէն: Եբրայեցերէնն՝ որ է (Ովսանայ ի բարձունս:) Յունարէնն՝ Պոստիսմէ. որ է ի վերնայեցեք: Ասէ օթէօս. այսինքն, ասէ Աստուած: Իսկ Դաղատերէն՝ է իւրաքանչիւր լեզու ազգաց, յորս պատարագ մատչի: Իսկ կրկին է օրհնութիւն ընծայիցն: Առաջինն կատարէ ճշմարիտ մարմին եւ արիւն Զրսիտոսի, բանն Զրիստոսի որ ասէ. (Այս է մարմին իմ, եւ այս է արիւն իմ:) Չորս վանգիւք կատարի: Այս՝ նշանակ է միոյ անհատի: Ե՛ ներկայական է: Մարմին՝ նշանակէ զինչն: Իմ՝ զՔրիստոս լինիլ մարմին: Այս վերջին վանգիւս կատարի մարմինն. Նոյնպէս եւ արիւնն: Իսկ երկրորդ օրհնութիւնն՝ աղերս է առ հայր, տալ զհոգին սուրբ: Նախզի՝ մարմին լինիլ բանին՝ կամօք հօր եւ գործակցութեամբ սուրբ հոգւոյն Էր. Նոյնպէս եւ այժմ լիցի. Երկրորդ՝ զի բանն ճշմարիտ մարմինն Էր. այլ յետոյ ի յորդանան ընկալաւ տնօրինպէս զհոգին սուրբ: Նոյնպէս եւ այժմ առնու զհոգին սուրբ: Եւ հոգին սուրբ պարգեւ խաչին. վասն որոյ խաչիւ կնքելի է եւ այժմ զյառաջ գոլն մարմին եւ արիւն: Իսկ յերեսն նկարել զխաչն՝ զի եւ ի մեզ իջցէ հոգին սուրբ որպէս ի դասս առաքելոցն: Որովք ճշմարտապէս մեզ լիցի ի մարմինեւ արիւն հաւատալի: Իսկ որ յաստուածային արիւն իւր՝ մեծարէ ի հաց եւ ի գինի: Եւ այս վասն բազում պատճառի: Նախ որպէս մարգարէն ասէ: (Գինի ուրախ առնէ.) Եւ ընդդէմ տրտմութեան նախնեացն. (եւ հաց հաստատէ զսիրտ մարդոյ սովեցելոյ:) Երկրորդ՝ ի յօրինակն՝ Մելքիսեդեկ հաց եւ գինի պատարագեաց. եւ ճշմարտութիւն Զրիստոսի զնոյն կատարեաց: Երրորդ՝ ի խորան եւ ի տաճարն՝ յամենայն աւուր հաց եւ գինի դնէին ի վերայ երեսաց սեղանոյն. զնոյն եւ Տէրն արար ի վերնատանն: Չորրորդ՝ Սողոմօն ասէ. (եզեն զգեւիս իւր. եւ խառնեաց զգինի իւր. եւ կոչեաց զծառայս իւր եւ ասէ. եկայք կերեք ի հացէ իմմէ. եւ արբեք զգինին զոր խառնեցի ձեզ:) Յինգերորդ՝ կամեցաւ Զրիստոս զշնորհս եւ զսերն իւր զինուովն տալ մեզ. եւ զսրբարար զօրութիւնն՝ հացով. որպէս ի պատարագն

ասէ: (Շնորհք սեր՝ եւ աստուածային սրբարար զօրութիւն:) Վեցերորդ՝ սովեալ էաք եւ ծարաւի հոգեպէս. զսուրբ հացն կերակուր ետ մեզ. եւ զբաժակն ըմպելի հոգեւոր: Եօթներորդ՝ Զրիստոս միջնորդ եղել հաշտութեան Աստուծոյ եւ մարդկան. զհացն հաշտութեան ետ նշան. եւ զբաժակն սիրոյ հոգւոյն: Ութներորդ՝ զհացն ի մարմին իւր փոխարեալ. եւ զգինին արիւն ի կողէն ցօղեալ: Իններորդ՝ հացն զմահ մարմնոյն ցուցանէ. զինին զանմահ Աստուածն ծանուցանէ: Տասներորդ՝ հացն զկեանսն մեզ պարգեւէ. զինին զանմահութիւնն երկնաւոր շնորհէ: Մետասաներորդ՝ հացն զսուրբ կեանս մեր ցուցանէ: Երկոտասաներորդ՝ հացին ի մարմինն Զրիստոսի յօղիմք. եւ սուրբ արեամբն յԱստուածութիւն միաւորիմք: Այլ աստ գիտելի գիտելի է ուրն ինչ: Նախզի՛ մին հաց է մարմին Զրիստոսի. եւ է մին բաժակ որ իսկինն է արիւն Զրիստոսի: Նախ զի՛ զմին հացն առեալ իեղանոյն օրհնեաց. նոյնպէս եւ զմին զինին: Երկրորդ՝ ցուցանեն բանքն եզական. (այս է մարմինն իմ. եւ այս է արիւն իմ.) եւ ոչ ասէ թէ սոքա: Երրորդ՝ առաքեալն ասէ յառաջին կորնթացւոց. (մի հաց մի մարմին եմք բազումքս. զի ամենեքեան ի միոջէ հացէ անտի վայելեմք:) Որ ընդդէմէ եկեղեցւոյ ֆռանկաց. որք բազում նշխարս օրհնեն: Եւ թէ որ ասիցէ, կարողութիւն ունի քահանայն բազում հաց օրհնել: Ասեմք առ այս եթէ, կարողութիւնն է ի գիտաւորութիւն. եւ դիտաւորութիւն է կոպարն, որ է մին հաց որ ասաց. (այս է մարմին իմ:) Ապա ոչ կարէ զբազում հացս օրհնել: Եւ դարձեալ՝ թէ ամենայն հացն օրհնեցաւ այսօր՝ վաղիւն զիա՛րդ օրհնես: Եւ այս պարտ է, կամ զօրհնելն դարձեալ օրհնել որ է սուտ, կամ ամենայն հացն ոչ է օրհնեալ: Երկրորդ գիտելի է՝ զի պատահմունքն եւ որակն՝ մնան ի հացն եւ ի զինին. իսկ գոյացութիւնն փոխարկի ի մարմին եւ յարիւն Զրիստոսի: Նախզի՛ մեք զգայարանօք միջնորդութեամբ պատահմանց՝ հասանիմք ի գոյացութիւնն. զի անմեկնելի որոշմունք են ի գոյացութեանն սոքա: Երկրորդ՝ զի մեք կարասցուք մերձենալ ի սուրբութիւնն. վասն այն մնան պատահմունքն: Չի թէ յայտնի կերպարանօք լիներ միս եւ արիւն, ոչ որ իշխեր մերձենալ: Երրորդ՝ զի վարձատրեսցուք հաւատով. այլ հաւատն յաներեւոյթն է, որ է գոյացութիւնն. վասն որոյ պարտ է աչօք տեսանել զզգային. եւ մտօք հայիլ յիմանալին եւ երանիլ. ըստ այնմ որ թօմաս. (այդ զի տեսերդ՝ երանի որք ոչ տեսեալ հաւատասցեն:) Չորրորդ՝ զի սովաւ իմասցուք զմարդեղութիւն բանին. զի որպէս հացն նոյն է ըստ ձեւին՝ այլ գոյացութիւնն է եղեալ մարմին Զրիստոսի. նոյնպէս վերերեւոյթ կերպարանն նոյն է ըստ ձեւին. այլ բնութիւնն միաւորեալ է ընդ բանին Աստուծոյ: Եւ որպէս բոլոր նշխարն մին մարմին է. եւ ի մասունս բաժնեալ՝ իւրաքանչիւրն բոլոր եւ կատարեալ մարմին է Զրիստոսի. նոյնպէս եւ բոլոր մարմինն եւ հոգին՝ է մի Աստուած ընդ բանին մարմինն եւ հոգին՝ է մի Աստուած ընդ բանին միաւորեալ. եւ բաժանեալ ամբողջական մասունքն՝ իւրաքանչիւրն է բոլոր կատարեալ Աստուած: Ապա ուրեմն հոգին Զրիստոս Աստուած է. եւ մարմինն Աստուծոյ է: Վասն որոյ ճաշակեմք զմարմին եւ զարիւն Աստուծոյ եւ ոչ մարդոյ. եւ ճաշակելովն՝ լինիմք Աստուած ըստ կարողութեան, եւ ոչ թէ լինիմք մարդ: Այս է ընդդէմ երկաբնակ մարդադաւան աղանդաբանիցն: Որք բաժանեն զբանն ի մարմնոյն: Որք բաժանեն զբանն ի մարմնոյն. զի եւ ինքեանք բաժանեսցին յաստուածային շնորհացն Զրիստոսի: Իսկ յիշատակ սրբոցն՝ Առաքելոց Մարգարեից եւ այլն՝

ոչ թե կարօտ են մեր յիշատակութանս սոքա, եւ ոչ թե մոռացեալ է գնոսա զի մեք ասեմք յիշեա Տեր, այլ վասն այլ իմն պատճառի: Նախզի՛ ուր թագաւորն է, անդ է զինուորն. եւ որպէս հրեշտակք են ի սպաս խորհրդոյն որպէս ասացաք. պարտ է եւ գնոսա յիշատակել: Երկրորդ՝ զի ամենայն արարածք՝ կարօտ են սուրբ խորհուրդն. հրեշտակք եւ մարդիկք. կենդանիք եւ ննջեցեալք. զի նորոգեսցին ի շնորհացն Քրիստոսի. վասն որոյ եւ գնոսա յիշատակեմք: Երրորդ՝ յիշատակեմք գնոսա. զի սուրբ են եւ մաքուրք. ասեմք յիշեա Տեր զսրբութիւն նոցա եւ մեզ ողորմեա: Չորրորդ՝ զի լուիցեն ժողովուրդքն՝ եւ յորդորեսցին նմանիլ նոցա: Զինգերորդ՝ զ գիտասցեն ամենեքեան թէ, նոքա առ Աստուած կենդանիք են. (զի փոխեցան ի մահուանէ ի կեանս ասէ Տեր:) Այլ գիտելի է՝ զի յիշելն Աստուծոյ՝ ոչ է որպէս մերս. զի ոչ գիտեաք եւ ուսաք. եւ մոռացաք, եւ դարձեալ յիշեմք:

Այլ յիշումն Աստուծոյ՝ է անմոռաց գիտութիւնն Աստուծոյ: Չի որպէս Աստուած զանցեալն եւ զներկայն եւ զհանդերձեալն համանգամայն ճանաչէ՝ այնն գիտել ասի. նոյնպէս անմոռաց գիտելն՝ յիշել ասի Աստուծոյ: Դարձեալ՝ ճանաչէ Աստուած զաստուածմանսն. այսինքն սրբութեամբ աստուածանման են եղեալ. ըստ այնմ, (ծանեալ Տեր զորս իւրքն էին:) եւ յիշէ գնոսա՝ որք ի նոյն սրբութեանն անփոփոխ մնացեալ կատարեցան: Վասն զի ճանաչելն իսկիզբն է. եւ յիշելն ի վախճանն. ըստ այնմ, (պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց.) այսինքն, որք սրբութեամբ ի կատարումն ժամանեցին: Դարձեալ՝ կերպիւ ինչ ճանաչէ գնոսա Աստուած՝ որք իսկզբանէ առանց միջնորդի զսրբութիւն ստացան. այլ յիշէ գնոսա՝ որք յետոյ ի ձեռն միջնորդի գան ի սրբութիւն մաքրութեան: Իսկ այն որ ի յաջակողմն սեղանոյն գայ եւ լինի ձեռնամած՝ նշանակէ գնոսա՝ որք ի յաջակողմեանն են հրաւիրեալ. եւ մերձ Քրիստոս են անընդմիջաբար: Իսկ գոհութիւնն ի ձախակողմն. զի որք գոհանամք այժմ եւ յիշատակին կենդանիքն՝ դեռեւս ի ձախո կողմն են աշխարհի ի մէջ չարաց. որոց միջնորդութեամբ եւ սոքա արժանացին աջեայցն դասու: Եւ տես՝ զորս յիշատակէ սարկաւազն՝ նոքա են արժանի պատարագին շնորհացն: Յետ այնորիկ բարձրացուցանէ ակներեւ ժողովրդեանն. որ ցուցանէ զխորհուրդն ծածկեալ իսկզբանէ, եւ երեւեալ ներմարդութեամբ բանին: Իսկ կրկին անգամն՝ զի նախ երեցաւ ի բարձունս խաչին բաժանեալ հոգւով եւ մարմնով. եւ երկրորդ երեւեցաւ յարուցեալ հոգւով եւ մարմնով. եւ վասն որոյ միաւորեալ մարմինն ընդ արեան ցուցանի. եւ վերջինն՝ զհամբառնալն առ հայր: Դարձեալ՝ առաջինն նշանակէ զառաջին գալուստն: Եւ երկրորդն զմիսանգամ գալուստն, յորժամ յայտնապէս միւորեալ աստուածութեամբն տեսանի: Եւ վերջինն՝ առ հայրենի փառսն ժողովեալ զիւրսն: Այսբան տեսութիւն է երեւմանցն: Իսկ թէ խորհուրդն՝ զի՛նչ է ցուցանելոյն: Նախ թէ՛ այսպէս պարտ է ձեզ մաքուր եւ սուրբ լինիլ, որպէս տեսնէք ակներեւ. զի մի մոռացի: Երկրորդ՝ թէ պարտ է եւ ձեզ այսպէս յառնել եւ բարձրանալ ընդ գլխոյն Քրիստոսի: Երրորդ՝ թէ պատճառ բարձրութեան եւ կենդանութեան ձերոյ՝ սա է յորս յարութեան քաւութեան, եւ այլն: Դարձեալ գիտելի է՝ զի որակութիւն նշխարին՝ տասն եղանակաւ ուսուցանէ մեզ թէ, որպիսի սրբութեամբ պարտ է ընդունիլ զմարմինն Քրիստոսի: Նախ զի՛ սպիտակ է. եւ այս նշանակ է զսրբութիւն մեր: Երկրորդ՝ որ բոլոր է. եւ բոլորն դիւրաշարժ է. եւ այս նշանակէ զդիւրաշարժութիւն մեր ի պատուիրանս

Աստուծոյ եւ յամենայն բարութիւնս: Երրորդ՝ անխմոր է. եւ մեզ պարտ է լինիլ անխառն յամենայն չարութենէ: Չորրորդ՝ փոքր է եւ թեթեւ. եւ այս զխոնարհութիւնն հոգւով: Զինգերորդ՝ անօսր է. այս զպարկեշտութիւնն: Վեցերորդ՝ որ խաչ կայ ի վերայ. զի պարտ է զչարչարանս Քրիստոսի յանձն բերել: Եօթներորդ բոլորակ ծիր նշխարին՝ նշանակէ թէ հաւատալ պարտ է Աստուած մարդացեալ. եւ այս է բոլորակն՝ որ սկիզբն՝ կատարածին միանայ: Ութներորդ՝ գրած է ի վերայ. (Տէր Աստուած Յիսուս Քրիստոսի.) որ նշանակէ զի իմաստութիւնն. այլեւ ահիւ զճաշակումն. զի դատաւոր է եւ Տէր: Իններորդ՝ հրով եփի. որ է սերն՝ զոր ունիմք առ Քրիստոս. Տասներորդ՝ որ ի վերայ քարի կամ երկաթ եփի. զհաստատութիւն արհուրեանն նշանակէ առ սերն միաւորեալ: Իսկ որ մին նշխարն ի չորս բաժանի՝ է վասն չորից սրբութեան. հոգւոյ եւ մարմնոյ. մտաց եւ բանից: Եւ վասն չորից առաքինութեանցն ի մեզ. կամ վասն հաւատացելոցն ի չորս կողմն աշխարհի: Իսկ այլք՝ ի յերեք մասունս. վասն մարմնոյ հոգւոյ եւ աստուծութեանն Քրիստոսի: Եւ վասն հաւատոյ յուսոյ եւ սիրոյ՝ զոր ունիմք առնա: Այլ աստ գիտելի է երկու ինչ: Առաջին՝ զի նախ ինքն հաղորդի՝ եւ ապա զայլս հաղորդէ. որպէս Քրիստոս արար. որ նշանակէ քահանային՝ թէ զոր ինչ բարի որ այլոց բաշխես՝ նա դու այլ այնբարութեանն կցորդ լեր. թէ այլոց քարոզես զբարին՝ նախ դու արա. թէ ձեռնադրես ի յայն շնորհացն՝ նախ դու ընկալ: Դարձեալ՝ նշակէ թէ, զոր շնորհ որ ունի քահանայն՝ զայն կարէ տալ այլոց. որպէս թէ հաղորդիլ կարես՝ նա զայլս հաղորդեա. թէ խոստովանեալ ես՝ խոստովանեցո. եւ այլն ամենայն: Չոր օրինակ՝ օղն պայծառ եւ պարզ՝ զլոյսն ընդ ունի, եւ զայլս լուսաւորէ: Ապա թէ քահանայն չէ արժանի հաղորդութեան, զայլս ոչ կարէ հաղորդել: Եւ այն որ չէ մկրտեալ՝ զայս ոչ կարէ մկրտել. որպէս թանձր հող եւ քար՝ ոչ զլոյսն ընդունի. եւ ոչ լուսաւորէ: Ապա յայտ է՝ թէ որ անկեալն է ի կարգէ, ի կարգէ, զայլս ոչ հաղորդէ եւ ոչ պսակէ. եւ ոչ կնքէ, եւ զայլ խորհուրդս ամենայն ոչ կատարէ: Չայս ցուցանէ՝ որ նախ ինքն հաղորդի՝ եւ ապա զայլս հաղորդէ: Երկրորդ գիտելի է՝ որ սրբութեամբ ճաշակողքն ի մարմնոյն Քրիստոսի, լինին մարմին եւ անդամք Քրիստոս. որք ի բազում ժամանակս մինչ ի կատարած, եւ ի բազում տեղիս, լինին մին մարմին Քրիստոսի, եւ անդամք իրերաց: Եւ որպէս երեք իր ի գլխոյն սփռի ի մարմինն ի ձեռն ջրացն. այսինքն է, կենդանութիւնն, զգալն, եւ շարժիլն: Նոյնպէս որք հաւատով ճաշակեն անմահ կենդանութեան կցորդ լինին Քրիստոսի: Չչարն եւ զբարին զգան եւ որոշեն. եւ փախչին ի չարէն, եւ շարժին ի բարին: Դարձեալ՝ որպէս անդամքն յարմար են գլխոյն. նոյնպէս որ կամի յարմար անդամ լինիլ Քրիստոսի, զսրբութիւն մարմնոյն Քրիստոսի ըստ չափու յինքեան կրեսցէ. այսինքն, զիմաստութիւն մտացն, եւ զբարութիւն կամացն, զանմեղութիւն հոգւոյն, եւ զարդարութիւն մարմնոյն. եւ ապա լինի ճշմարիտ մարմին եւ անդամ Քրիստոսի: Եւ որպէս անդամքն նմանին իրեարաց. նոյնպէս սրբութեամբ ճաշկողքն՝ նման են առաջնոցն սրբոցն. որք ճաշակեցին եւ մաքրեցան եւ լուսաւորեցան ի Քրիստոս: Իսկ նարժանքն՝ երկու են: Մինն է՝ որ ոչ ունի սեր. ոչ հաւատով, եւ ոչ սրբութեամբ ճաշակէ. այլ պղծութեամբ եւ թերութեամբ. այնպիսիքն՝ որոշեալ եւ հատեալ անդամք են, որոշեալ յամենասուրբ գլխոյն է Քրիստոս. որպէս այն որ հատեալ եւ կտրեալ անդամ լինի: Եւ երկրորդ է՝ որ անարժանութեամբ մերձենայ. որ ոչ ուն սեր,

Եւ ոչ հաւատ, եւ ոչ սրբութիւն: Եւ սա նմանապէս չորացեալ անդամ է. զի ոչ ունի զկենդանութիւն շնորհին ի գլխոյն Զրիստոսէ: Այլ սա՝ առաւել դատապարտի. զի անարժան ճաշակեաց: Եւ որպէս մի եւ նոյն ճաշակմամբն՝ Առաքեալքն սրբեցան, եւ Յուդա դատապարտեցաւ. եւ իմի եւ ի նոյն հրոյն՝ պարզ արժաթն սրբի. եւ անմաքուրն սեւանայ: Նոյնպէս եւ հաղորդութիւնն՝ արժանաւորացն՝ է ի փրկութիւն յաւիտենից. եւ անարժանիցն՝ ի դատապարտութիւն եւ ի տանջանս յաւիտենից: Ապա ուրեմն եղբարք՝ ոչ թուլութեամբ եւ հեղգութեամբ հեռացուք. եւ ոչ յանդգնութեամբ եւ անարժանութեամբ հաղորդիցուք. զի պատիժն միապէս է: Այլ որպէս ի հրոյ՝ մի ամենեւին հեռացուք եւ ցրտացուք ի սիրոյն. եւ մի ամենեւիմբ մօտիցուք եւ այրիցուք ի հրոյ աստուածութեան նորին: (Չի Աստուած մեր՝ հուր ծախիչ է ասէ մարգարէն:) Եւ (ահ մեծ է անկանիլ ի ձեռս Աստուած կենդանւոյ ասէ առաքեալն:) Այլ ի միջին ճանապարհն ընթացուք. մի յաջ խոտորիցուք եւ մի յահեակ. զի երկոքեանն խոտան են: Այլ սուրբ սրտի՛ սրբեալք ի մեղաց խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, աներկմիտ խորհրդով, եւ ջերմեռանդ սիրով, յօդեալ հաղորդիցուք ի գլուխն Զրիստոս Յիսուս ի Տէր մեր: Եւ նովաւ ի հայր եւ ի հոգին սուրբ միացուք. ըստ որում, (դու հայր ի յիս, եւ ես ի քեզ. զի եւ սոքա ի մեզ իցեն. զի տեսանիցեն զփառս իմ ասէ:) Այսքան բաւականացի ի խորհուրդ հաղորդութեան:

Յայլմէ քարոզ վասն Պատարագին. ի բանն՝ (Էառ Յիսուս հաց. օրինեաց եբեկ, ' ետ աշակերտացն ' ասէ. առեք կերայք՝ այս է մարմին ' արին իմ:) Մատ. 26. 26: (Գլուխ. Լ2)

Վարդապետք ասեն թէ՛ սերն պատճառ է միաւորութեան: Վասն այն երկուք ոմանց սիրելիք՝ ոչ կամին բաժանիլ ի միմեանց. զի թէ հնարաւոր ինչ լինէր, միանային հոգւով եւ մարմնով: Այլ ամենակալն Աստուած՝ յոյժ սիրեցեալ է. ըստ որում մարդասէր կոչի. վասն այն կամեցաւ միաւորիլ ընդ մարդկան: Այլ միաւորիլն Աստուծոյ ընդ մարդկան՝ պարտ էր լինիլ միջնորդութեամբ հինգ զգայութեանցս. այլ ի հինգ զգայութեանցն՝ երեք են սրովք ոչ լինի կատարեալ միաւորութիւն. այլ սկիզբն առնու միաւորութեան. զի աչօք տեսանեմք զիրն ի հեռաստանէ. եւ ականջօք լսեմք զձայնն. եւ ռընդամբք առնումք զհոտն: Այլ չորրորդ զգայութեամբն որք են շօշափելիքն՝ յաւելու միաւորութիւնն. զի ոչ կարեմք զիրն ի հեռաստանէ շօշափել. այլ պարտ է մերձենալ շօշափելոյն: Այլ հինգերորդ զգայութիւնն որ է ճաշակելիքն՝ լինի կատարեալ միաւորութիւն. զի կերակուրն ոչ միայն պատուաստի ի մեզ, այլ մտանէ ի ներս ի մարդն եւ միւրօքի ընդ նմա: Արդ՝ յառաջ քան զմարմնանալ բանին՝ այնպէս հեռի էր ի մարդկանէ, զի եւ տեսանել ոչ ոք կարէր զնա. եւ ոչ լսել զձայն նորա: Այլ յորժամ բանն մարմին եղել, յայնժամ մերձեցաւ առ մեզ. զի տեսաք զնա մարմնով. եւ լուաք զձայն քարոզութեան նորա. եւ առաք զանուշահոտութիւն նորա: Այլ ոչ շատացաւ այսու զի տեսաք զնա, այլ կամեցաւ եւս հուպ լինիլ մեզ, եւ շօշափիլ ի մենջ. որպէս ասաց. (շօշափեցէք զիս եւ տեսէք.) եւ դեռեւս այսպիսի միաւորութիւն՝ չէր նմա բաւական. այլ կամեցաւ կատարելապէս միաւորիլ մարդկան: Վասն այն կացոյց զխորհուրդ պատարագին՝ որ է խորհուրդ

սիրոյ. եւ այսպէս լինի կատարել միաւորութիւն ի մէջ Աստուծոյ եւ ի մէջ մարդկան: Չի այս խորհրդովս՝ Զրիստոս զհացն փոխէ ի մարմին իւր. եւ զգինին յարին իւր. եւ տայ մեզ ի ճաշակել՝ զի միաւորեսցի ի մեզ. որպէս եւ ասաց. (ահաւասիկ ես ընդ ձեզ եմ խորհուրդով պատարագիս, մինչ ի կատարած աշխարհիս:) Վասն այն (եւոռ հաց. օրհնեաց՝ երբեք՝ եւ ետ աշկերտացն եւ ասէ. առէք կերայք. այս է մարմին իմ:) Արդ՝ վասն խորհրդոյս այս՝ երեք ինչ հարցանելի է: Նախ թէ՛ վասն է՞ր Զրիստոս հացիւ եւ գինով կացոյց զխորհուրդս զայս: Երկրորդ՝ թէ զի՞նչ է եւութիւն խորհրդոյս այս: Երրորդ՝ թէ որպէս հացն եւ գինին փոխի ի մարմինն եւ յարին Զրիստոսի: Արդ՝ առաջինն նախ հարցանելի է, թէ վասն է՞ր Զրիստոս զմարմին եւ զարին իւր ետ ծածկեալ ի ներքոյ այլ տեսակի. եւ ոչ յատուկ տեսական իւր: Ասեմք թէ՛ վասն երկու պատճառի: Նախ զի՛ հաւատացն կացցէ՛ եւ վարճ հաւատոյն յաւելցի. զի թէ տեսանեաք զԶրիստոս յատուկ տեսական իւր, զի՞նչ վարճ առնուաք. զի հաւատն այն իրացն է՝ որ ոչ երեւի: Երկրորդ՝ զի յոյժ սարսռելի ուտել զմիս մարդոյ եւ ըմպել զարին. եթէ խորհուրդս այս երեք ի տեսակ մարմնոյ եւ արեան, ոչ ոք համարձակեր ուտել զնա. որպէս ասէ յՕրհաննէս յաւետարանին թէ՛ յորժամ ասաց Զրիստոս, (հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, մարտնչէին հրեայքն եւ ասէին. զի ա՞րդ կարէ սա զմարմին իւր տալ մեզ յուտել:) Այլ որպէս բժիշկն որ դէղ տայ հիւանդին՝ եւ նա ոչ կարէ առնուլ զդառն դէղն, յայնժամ ծածկէ զդէղն այլ նիւթով, զի դիւրաւ առցէ զդէղն. այսպէս բժիշկն Զրիստոսի զհոգեւոր դէղն որ է մարմին եւ արին իւր՝ ծածկեաց հացով եւ գինով. զի յօժարութեամբ առնուցուն: Իսկ թէ վասն է՞ր հացիւ եւ գինով աւանդեաց զփրկական խորհուրդն, եւ ոչ այլ ինչ նիւթով: Ասեմք վասն վեց պատճառի: Առաջին՝ զի հացն եւ գինին՝ հասարակ կերակուր է եւ ըմպելի ի մէջ ամենայն կերակրոց. եւ ոչ ձանձրանամք ի յուտելն. վասն այն զճաշակումն հոգեւոր՝ այս կերակրովս աւանդեաց. զի սովորական կերակուր է, եւ առանց ձանձրութեան: Երկրորդ պատճառ՝ զի հացն քան զամենայն կերակուրս՝ առաւել հաստատէ զսիրտն. եւ գինին քան զամենայն ըմպելիս ուրախացուցանէ. որպէս ասէ Դաւիթ. (գինի ուրախ առնէ. եւ հաց հաստատէ զսիրտ մարդոյ:) Չայն ցուցանէ թէ՛ կելոյ եւ բարուք կելոյ՝ է պատճառ հացն եւ գինին: Եւ Զրիստոս պաճառ է մեր ստեղծանելովն, եւ փրկելովն, եւ յաւիտենական փառօքն: Նոյնպէս խորհուրդս այս՝ քան զամենայն խորհուրդ առաւել հաստատ է. եւ ուրախացուցանէ զսիրտ մարդկան որք ի սիրոյ եւ արքեալք: Երրորդ՝ զի հաց եւ գինին՝ սրբագոյն է ի շօշափումն, քան զմիսն եւ զարինն զորս ի հինն պատարագէին. եւ շօշափելն եւ ի բաշխելն՝ ձեռն նոցա թաթաւիւր արեամբ. յայսմանէ երեւի թէ, ձեռքն քահանային որ շօշափէ զմարմինն Զրիստոսի՝ պարտ է սուրբ լինիլ յամենայն մեղաց. զի Ոգիա որ հասոյց զձեռնն իւր ի պատարագն Աստուծոյ՝ ի նոյն ժամն հարեալ սատակեցաւ: Չի ասեն վարդապետք թէ՛ յայնմ գիշերի ամուսնացեալ Էր ընդ կնոջ իւրում. քանի՞ առաւել որ շօշափէ զճշմարիտ մարմին Զրիստոսի, պարտ է սուրբ լինիլ ձեռք եւ անշաղախ գէջ ցանկութեամբ կնոջ. զի մի սատակեսցի հոգեւորապէս: Չորրորդ պատճառ՝ զի հացն եւ գինին՝ յատկապէս ցուցանէ զճշմարիտ մարմինն Զրիստոսի. նաեւ զհոգեւոր մարմին նորա որ է սուրբ եկեղեցի. զի որպէս հացն ի բազում ցորենոյ բաղկանայ. եւ գինին ի բազում պտղոց խաղողոյ. այսպէս՝ եւ մարմինն Զրիստոսի, ի բազում անդամոց

յօդեալ է: Այլեւ նշանակէ զեկեղեցի սուրբ՝ որ ի բազում ենձանց հաւատացելոց միաւորեալ է. (մարմին ի մարմնոյ նորա եւ անդամք յանդամոց նորա ասէ առաքեալն:) Դարձեալ՝ որպէս հացն ի սպիտակ ալելէ՝ եւ գինին յանուշահոտ ծաղկաց որթոյն ելանէ. այսպէս մարմին եւ արիւնն Զրիստոսի յառաջ եկն ի սուրբ աստուածածնէն՝ որ մաքուր եւ սուրբ էր քան զամենայն ալիւր. եւ անուշահոտ քան զամենայն ծաղիկս: Յիսգերորդ՝ զի հացն եւ գինին՝ յայտնապէս ցուցանէ զչարչարանսն Զրիստոսի քան զայլ նիւթս. զի ցորեանն յորմէ լինի հացն՝ կամնասայլիւ մանրել է. եւ հացն ի հնոցին եփեալ. եւ գինին ի հնձանն ճմլեալ: Այսպէս Զրիստոս կամնասայլիւ կոխեցաւ ի չարչարնս. եւ ի նեղութեանցն եփեցաւ. եւ ի հնձան խազին ճմլեցաւ: Եւ այս գիտելի է՝ զի պատարագս այս՝ ցուցաւ ի հին օրէնսն. զի երբեմն մատուցանէին պատարագ ի հասկէ. եւ երբեմն ի յալերէ. եւ երբեմն ի հացէ զանազան կերպիւ եփեալ. զի երբեմն եփեալ լինէր ի փուռն. եւ երբեմն ի տապակի. եւ երբեմն ի կասկարայս: Եւ այս ամենայն՝ օրինակ էր չարչարանացն Զրիստոսի. զի Զրիստոս էր ի նահապետացն յառաջ քան զմարմնամալն իբրեւ զհասկ: Այլի յօրէնս Մովսիսի եւ ի տեսութիւն մարգարեից էր իբրեւ զայիւր, որ մերձ է ի տեսակ հացին. այլ յետ մարմին լինելոյն՝ էր կատարեալ հաց: Այլ երեք անգամ եփեցաւ: Առաջին ի փուռն. այսինքն. յորո վայն սուրբ աստուածածնին եփեցաւ հրով հոգւոյն: Երկրորդ անգամ ի տապակի. այսինքն, ի նեղութիւն աշխարհիս. որ զամենայն աւուրս եկաց ի նեղութեան եւ ի քարոզութեան. եւ յաշխատութեան, եւ նախատեալ ի հրեիցն: Այլ երրորդ՝ եփեցաւ ի կասկարայս. այսինքն, չարչանօք խաչին: Յայսմանէ երեւի՝ զի հացս այս առողջարար է. զի յոյժ եփեալ է. ապա ուրեմն ճշմարիտ է՝ զի նիւթ խորհրդոյս հաց եւ գինի լինէր: Վեցերորդ պատճառ՝ զխորհուրդս զայս՝ ոչ էր պարտ դնել ի խորհուրդոց հին օրինացն Մովսէսի. զի քահանայութիւն նոցա անկատար էր, եւ օրինակ դադարեալ. վասն այն յարմար էր ի նոր օրնէս՝ նոր նիւթ առնուլ. եւ դառնալ ի խորհուրդն որ նախ քան զհին օրէնսն էր. զոր մատոյց Մելիքսեդեկ հաց եւ գինի. որպէս ասէ գիրն թէ՛ Աբրահամ յորժամ յաղթեաց զթշնամիսն եւ դարձաւ, Մելիքսեդեկ քահանայն Աստուծոյ՝ մատոյց նմա հաց եւ օրինեաց զնա: Եւ յայսմանէ երեւի թէ՛ նա է արժանաւոր առնուլ զխորհուրդս զայս՝ որ պատերազմեալ իցէ ընդ մեղացն եւ յաղթեալ զնա: Այլ որ յաղթի հոգեւոր պատերազմին՝ ոչ է պարտ առնուլ զխորհուրդս: Ապա յայտ է թէ, պատշաճ էր Զրիստոսի զխորհուրդս զայս աւանդել հացով եւ գինով: *Երկրորդ ասելի թէ, զի՞նչ է Էութիւն խորհրդոյս. եւ զի՞նչ արարողութիւն սորա: Ասեն վարդապետք թէ, չորս ինչ է Էութիւն խորհրդոյս՝ որք են հարկաւորք. եւ թէ մի ի նոցանէ պակաս լինի, ոչ կատարի խորհուրդն: Առաջինն է՝ զի այն որ պատարագէ՛ ճշմարիտ քահանայ լինիցի. որ առեալ լինի զկարգ քահանայութեան. եւ ոչ լինի անկեալ ի կարգէն. եւ ոչ բանադրեալ. զի թէ ոչ լինի առեալ զկնիք քահանայութեան՝ պատարագ նորա ոչ է պատարագ: Երկրորդ Էութիւն է նիւթն. զի պիտոյ է որ լինի հաց ի ցորենոյ, եւ գինի յորթոյ. զի յայլ ազգ հացոյ՝ եւ յայլ ազգ գինւոյ կամ ի ջրոյ՝ կամ ի շարպաթենէ՝ ոչ լինի մարմին եւ արիւն Զրիստոսի: Երրորդ Էութիւն է ձեւ բանին որ ասէ. (այս է մարմին իմ, եւ այս է արիւն իմ նորոյ ուխտի՝ որ վասն ձեր եւ բազմաց հեղանի ի քաւութիւն մեղաց:) Չորրորդ Էութիւն է ճշմարիտ դիտաւորութիւնն. զի այն որ պատարագէ՛ ունիցի դիտաւորութիւն փոխել

գիացն ի մարմին Քրիստոսի. եւ զգինին յարին Քրիստոսի բանին Աստուծոյ: Եւ այսպէս չորք են եուրօնք խորհրդոյ պատարագին. եւ թէ մի ի սոցանէ պակաս լիցի, պատարագն ոչ լինի կատարեալ: Իսկ արարողութիւն եւ զարդարանք՝ են բազումք: Նախ զի՝ յեկեղեցին ի վերայ օրհնեալ սուրբ սեղանոյն կատարէ զպատարագն, եւ ոչ ի տան, կամ յայլ ուրեք: Երկրորդ՝ զի սկիին օրհնեալ լիցի. եւ նիւթն ոսկի, կամ արծաթ, կամ կլայեկ. զի պղնձն ժամկահամէ. եւ կաւեղէնն անյարմար է. եւ փայտեղէնն յինքն ծօծ գոր ի ներս լուս. եւ ապակին դիւրաւ կոտորի: Երրորդ՝ զի քահանայն առանց սուրբ զգեստից՝ ոչ առնէ պատարագ եւ զգեստն եւ ծածկոց սորբ սեցանոյն՝ օրհնած լինի ձեռամբ եպիսկոպոսին: Չորրորդ՝ զի ի ցերեկի առնեն պատարագ. սկսեալ յառաւօտուն, եւ յերրորդ, եւ ի վեց ժամուն. բաց ի յերեկոյի ճրագալուցէն ծննդեան եւ զատկին: Այլեւ առանց վառեալ լուսոյ՝ ոչ առնեն պատարագ. եւ ոչ առանց սպասաւորի. եւ այլ բազում ինչ նման են այսց, արարողութիւնք են զարդարանք. թեպէտ եւ ոչ են յեուրթնէ պատարագին. սակայն հրաման է սուրբ հայրապետաց. զոր ոչ է պարտ զանց առնել, եւ մնալ ընդ կանօնաց հրամանաց նոցա: Իսկ երրորդ հարցումն թէ՛ որպէս փոխի հացն ի մարմնի Քրիստոսի՝ եւ գինին յարին: Եւ լինի հինգ ազգ հարցումն տարակուսանաց անհաւատից: Նախ եւ առաջին այս՝ զոր հարցանեն թէ որպէ՞ս փոփոխի հացն ի մարմնի Քրիստոսի, եւ գինին յարին: Պատասխանեմք թէ՛ բազում կերպիւ հաստատեմք՝ զի կարէ փոխիլ հացն ի մարմնի Քրիստոսի: Առաջին վկայութիւն. զի յանցեալ ժամանակս հին օրինացն՝ բազում փոփոխումն լինէր. զի զկինն Ղովտայ փոխեաց ի յարձան աղի. եւ զգաւազանն Մովսիսի յօձ փոխեաց. եւ զջուրս գետոյն եգիպտոսի՝ յարին դաձոյց: Իսկ ձեռն Աստուծոյ ոչ է տկարացեալ. զի եւ այժմ այնպէս զօրաւոր է, որպէս յայնժամ. եւ մէք հաւատամքն՝ զի Քրիստոս Աստուած է ճշմարիտ, եւ ամենակարօղ. ոչ է զարմանք թէ՛ հացն այն բանին Քրիստոսի փոխի ի մարմնի իւր. եւ գինին յարին: Երկրորդ վկայութիւն. զի դիւրին է փոխել զիւր ինչ ի յայլ ինչ, քան թէ յոչընչէ նոր ստեղծանել: Իսկ բանն Աստուած՝ զերկինս եւ զերկիր յոչընչէ ստեղծեաց. ապա ուրեմն նոյն բանն Աստուծոյ որ է մեր Յիսուս Քրիստոս կարօղ է զհացն փոխել ի մարմնի իւր: Երրորդ՝ զի զոր ինչ կարէ առնել փոքր զօրութիւնն՝ կարէ եւ զնոյն առնել եւ մեծ զօրութիւնն. իսկ բնութիւնս որ փոքր ունի զօրութիւն՝ կարէ ժամանակաւ զհացն ի մարմնին փոխել, եւ զգինին յարին այնմ, որ ուտէ. ապա ուրեմն Աստուած զօրութիւնն որ մեծագոյն է՝ կարէ յանկարծ զհացն փոխել ի մարմնի Քրիստոսի, եւ զգինին յարին ի ձեռն քահանային: Չորրորդ՝ զի ծառ մի մեծ ընկուզ բուսանի եւ աճի. զի զօրութիւն բնութեանն այնպէս է ի սերմն այն, որ զխոնաւութիւն յինքն քարշէ, եւ փոխէ ի ծառ եւ ի ծաղիկ եւ ի պտուղ. ապա ուրեմն Աստուած որ ստեղծօղ է բնութեան կարէ զհացն ի մարմնի իւր փոխել. եւ զգինին յարին: Հինգերորդ՝ զի ասեն իմաստունք թէ՛ արքայիկ օձն բազում եւ չար թիւսս ունի. եւ է աստղ մի յերկինս՝ որ ունի իշխանութիւն ի վերայ արքայիկ օձին. եւ ժողովէ զամենայն թոյնսն ի գլուխ օձին. եւ զօրութեամբ աստեղն՝ փոխի թոյնն ի յակն պատուական, որ կոչի ճրագ գիշերոյ. որ պատուական է քան զամենայն ակունս որք լինին ի քարանց: Արդ՝ զօրութիւն աստեղ միոյ կարէ զթոյնն ի պատուական քարր փոխել, ո՞րչափ եւս առաւել Աստուած՝ որ ստեղծօղ է աստեղաց, կարէ ձեռամբ քահանայն փոխել զհացն ի մարմնի, եւ

զգնին յարին: Վեցերորդ՝ զի ասէ Արիստոտել թէ՛ սնդիկն եւ ծծումբն յոր ժամ խառնին ընդ իրեար յերակս երկրի, լինին սիւթ ամենայն հրահալելեաց: Չի գորութեամբ աստեղաց՝ սնդիկն եւ ծծումբն յիրեար խառնել, փոխին երբեմն յոսկի, երբեմն յարծաթ, երբեմն յերկաթ, եւ ի պղինձ, եւ ի կլայել: Արդ՝ թէ երկնից գորութիւնն զսնդիկն եւ զծծումբն կարէ յոսկի փոխել՝ որչափ եւս առաւել Աստուած կարէ զհացն ի մարմին իւր փոխել: Եօթներորդ՝ սատաֆն առնու զանձրեւն եւ փոխէ ի մարգարիտ: Ութներորդ՝ կայ յաշխարհս արեւելից ջուր՝ յորժամ զփայտն ձգեն ի ներս, ի քար փոխի, եւ որ ի դուրս է՝ փայտ մնայ. եւ յայտ է՝ որ արմատն քար է, եւ զջուրն ըմպէ եւ ծանն սնասի: Այլեւ յարեւմուտից աշխարհն է ջուր, որ թէ զփայտն դնեն անդ, մասն փայտին որ ի ցեխն է թաղած՝ ի յերկաթ փոխի: Եւ կեսն որ ի ջուրն է ի մարմար քար փոխի. եւ մասն որ ի դուրս է փայտ մնայ ինչ իւր բնութիւն եր: Արդ՝ եթէ Աստուած այնպէս գորութիւն է տուեալ ջրոյն, որ զփայտն ի քար փոխէ. զի՞նչ զարմանք է թէ բանն Աստուծոյ այնպէս գորութիւն ունիցի՝ որ ձեռամբ քահանային զհացն ի մարմին իւր փոխէ. եւ զգինին յարին: Վասն այն առանց տարակուսաց է. զի քահանայն բանին Աստուծոյ փոխէ զհացն ի մարմին Զրիստոս. որպէս եւ Զրիստոս փոխեաց ի մեծի հինգ շաբաթին, յորժամ ասաց (ա՛յս է մարմին իմ:) Այս թէ որպէս փոխի հացն ի մարմին Զրիստոսի, եւ գինին յարին: Դարձեալ՝ երկրորդ տարակոյս ունին անհաւատք եւ տգետք, թէ ո՞րպէս քանակութիւն մարմնոյն Զրիստոսի, պարունակի ի փոքր քանակութեան նշխարին: Ասեմք եթէ՛ մարմին Զրիստոսի՝ ունի գոյացութիւն եւ ունի քանակ. այլ գոյացութիւն մարմնոյն՝ ոչ լնու գտեղին ըստ գոյացութիւն է. այլ քանակն՝ լնու գտեղին, ըստ որում քանակ է. եւ ամենայն ինչ որ լնու գտեղին՝ միջորդութեամբ քանակին լնու: Վասն մարմին Զրիստոսի ի յերկինս՝ լնու գտեղին միջնորդութեամբ քանակին. այլ ի խորհուրդս այս՝ լնու գտեղին միջնորդութեամբ գոյացութեանն, եւ ոչ քանակին. զի գոյացութիւն հացին՝ փոխի ի գոյացութիւն մարմնոյն Զրիստոսի, եւ ոչ ի քանակին: Վասն այն քանակ եւ չափ մամնոյն Զրիստոսի, ոչ է ի խորհուրդս այս ըստ գորութեան փոփոխմանն. այլ է աստ քանակ մարմնոյն Զրիստոսի միջնորդութեամբ գոյացութեանն: Վասն զի քանակն ի գոյացութենէ մարմնոյն՝ ոչ բաժանի. վասն այն որպէս գոյացութիւն մարմնոյն ոչ լնու գտեղի. այսպէս եւ քանակն ի խորհուրդս այս՝ ոչ լնու գտեղի: Այլ բանս այս նուրբ է ըստ իմաստնոցն. եւ խառնիճաղանճ ժողովուրդն թանձրամիտ. վասն այն օրինակաւ ցուցանեմք: Որպէս արեգակն որ բազմապատիկ մեծ է քան զցամաք երկիրս՝ այլ բոլոր արեգակն երեւի ի փոքր հայելոջն. եւ թէ ի բազում մասունս կոտորես զհայելին, բոլոր արեգակն յիւրաքանչիւր մասն հայելոյն երեւի. այսպէս մարմին Զրիստոսի թեպէտ յոյժ մեծ է քան զնշխարն. այլ ի յօրինեալ նշխարն, կատարեալ է եութեամբ իւրով եւ քանակութեամբ եւ ամենայն իրօք: Եւ թէ զնշխարն ի բազում մասունս կոտորես, բոլոր մարմինն Զրիստոսի է յիւրաքանչիւր մասն. եւ որ առնու մին մասն ի յօրինեալ հացէն՝ այնպէս բոլոր ճաշակէ զմարմինն Զրիստոսի, որպէս այն որ առնու զբոլոր նշխարն: Դարձեալ բանկանն հոգի մարդոյն որ է ի մարմինն՝ տեղ ոչ լնու. զի այնպէս կարէ լինիլ ի փոքր մարմինն որպէս ի մեծ մարմինն: Եւ բոլոր հոգին է ի բոլոր մարմին, եւ յամենայն մասն մարմնոյն. այսպէս մարմինն Զրիստոսի՝ է ի նշխարն. եւ ոչ խափանէ գտեղին. եւ այնպէս է խոքր նշխարն՝

որպես ի մեծն. եւ բոլոր մարմինն Զրիստոսի՝ Է ի բոլոր օրհնեալ հացն. եւ բոլոր մարմինն Է յիւրքանչիւր մասն օրհնեալ նշխարին: *Երրորդ տարակոյս հերձուածողաց եւ անհաւատից. որք ասեն թէ, որպէս Է զի քրիստոնեայք յամենայն օր ուտեն զմարմինն Զրիստոսի, եւ ոչ պակասի. զի թէ մարմինն Զրիստոսի որպէս մեծ զեառն էր, պակասեալ զինէր: Ասեմք թէ՛ ամենայն մարդիկ որք են յաշխարհի՝ թէ հանապազ յամենայն օր ուտեն զմարմին Զրիստոսի, ոչ պակասի: Եւ այս Է պատճառն. զի զանազանութիւն Է ի մէջ մարմնաւոր կերակրոց, եւ ի մէջ հոգեւոր կերակրոյս այս. զի մարմնաւոր կերակուրն յորժամ մտանէ ի մարմինն, ապականի եւ փոխի ի մարմին. վասն ուտելովն պակասի: Այլ զհոգեւոր կերակուրս այս որ Է մարմինն Զրիստոսի՝ յորժամ ուտէ մարդն, ոչ ապականի եւ ոչ փոխի ի բնութիւն մարմնոյ նորա. այլ զմարդիկ ի յինքն փոխէ սիրով: Վասն այ ոչ պակասի մարմին Զրիստոսի, թէպէտ բազում անգամ ճաշակեն ամենեքեան: Չոր օրինակաւ հաստատեսցուք: Չի որպէս կինն սարեփթացի եւ որդիքն իւր եւ եղիա մարգարէն՝ յերկար ժամանակս կերին ի բռամբ մի ալերէն եւ ի սակաւ իւղոյն, եւ յամենայ օր յագ ուտէին եւ ոչ պակասեցաւ. որպէս մարգարեացաւ Եղիա. այսպէս մարմինն Զրիստոսի ոչ երբեք պակասի. թէպէտ յամենայն օր ճաշակեն հաւատացեալք: Չորրորդ հարցում անհաւատից թէ, որպէս մի մարմինն Զրիստոսի լինի համանգամայն ի բազում տեղիս. զի ինքն Է յերկինս. եւ յամենայն տեղիս ուր պատարագեն եւ անդ Է՞: Ասեմք թէ՛ մի մարմինն՝ ի բազում տեղիս ոչ կարէ լինիլ. որպէս տեղակալն ի տեղւոջ այլ այլ կերպիւ կարէ լինիլ: Չօր օրինակաւ հաստատեսցուք: Որպէս մի ոսկի խնձոր լինի ի մէջ երկրի. եւ ի չորս կողմ աշխարհի չորս հաց. եւ Աստուած կարող Է զչորս հացն փոխել ի յոսկի խնձորն որ Է ի մէջ երկրի. որպէս տեղակալն ի տեղւոջ. այլ ի չորս կողմ աշխարհի՝ Է զօրութեամբ փոխումն. այսպէս մարմինն Զրիստոսի՝ Է յերկինս. եւ ի չորս կողմ աշխարհի պատարագի: Դարձեալ օրինակ՝ որպէս մի ձայնն որ ելանէ ի բերանոյ վարդապետին՝ մատնէ ի բազում լսելիս. եւ Է բոլորն ի մինն որ խօսի. եւ բոլոր ի բազումս որք լսեն: Այսպէս եւ բոլոր մարմինն Զրիստոսի Է յերկինս. եւ Է ի բոլոր նշխարն փոփոխմամբ: Յինգերորդ՝ հարցանեն անհաւատք թէ՛ հացն այն որպէս Է մարմին Զրիստոսի. զի ահա գոյնն հացի Է. եւ համն հացի. նոյնպէս եւ զինին: Ասեմք թէ՛ ի հացն այն՝ երկու ինչ Է: Մին՝ եութիւն Է ծածկեալ. եւ մին պատահումն որ տեսանի: Եւ երկու կեպիւ զանազանին: Նախզի՝ եութիւն հացին այնչափ մնայ՝ որչափ հաց Է. այլ պատահմունքն այլայլին. որպէս գոյնն՝ համն՝ հոտն. եւ եութիւնն՝ ոչ այլայլի: Երկրորդ՝ զի հինգ զգայութիւնս՝ զեութիւնս հացին ոչ տեսանէ. այլ միայն զպատահմունսն. որպէս աչքն զգոյնն. եւ քիմքն զհոտն. եւ բերանն զհամն. եւ ականջն զձայնն. եւ ձեռքն զտաք եւ զհովն: Այլ իմացումն մարդոյն՝ հասանի մինչ ի յեութիւն հացին եւ տեսանէ: Այլ յորժամ ասէ քահանայն զբանն Զրիստոսի թէ, (այս Է մարմին իմ.) եութիւն հացին փոխի յեութիւն մարմնոյն Զրիստոսի. եւ մասն պատահմունքն. այսինքն գոյնն, համն, հոտն: Եւ պատահմունքս այս՝ որպէս յառաջ քան օրհնութիւնն ծածկէին զեութիւն հացին. այսպէս այժմ ծածկեն զեութիւն մարմնոյն Զրիստոսի: Այսպէս թէպէտ զգայարանքն տեսանեն ի հացն զգոյնն, զհամն, զհոտն որք մասն ի հացն. այլ իմացումն օգնէ ճշմարիտ հաւատոյն. եւ հաւատացեալն իմանայ եւ հաւատայ թէ, գոյացութիւն հացին՝ փոխեցաւ ի գոյացութիւն մարմնոյն

Քրիստոսի: Ապա թե ոք տեսանէ զգոյնն եւ զհամն եւ զհոտն հացի եւ զինւոյ, եւ ասէ թէ ոչ մարմինն եւ արիւն Քրիստոսի, այնպիսին սխալի: Որպէս Իսահակ խաբեցաւ յորդոյ Յակոբայ՝ որ մորթով ուլոյն զբազուկ եւ զպարանոցն ծածկեալ էր. եւ այսպէս աչքն խաբեցան զի մթացեալ էին. եւ կարծեր զԵսաւ տեսանել. բայց լսելիքն ոչ խաբեցան. եւ ոչ հոտոտելքն. զի զծայնն Յակոբայ լսէր. զհոտն Յակոբայ առնոյր. այլ ճաշակելիքն խաբեցան եւ շոշափելիքն. զի զկերակուրն որպէս զԵսաւայ ուտէր. եւ ձեռքն որպէս զԵսաւայ շոշափէր. վասն այն ասէր ձայնդ Յակոբայ. եւ ձեռքդ. ձեռքդ Եսաւայ է: Այսպէս մարմինն Քրիստոսի՝ է ծածկեալ ձեռով եւ գունով հացին. վասն այն չէ պարտ հաւատալ աչացն որ տեսանէ զգոյնն հացի. եւ ոչ ռնգաց որ զհոտ հացի առնու. եւ ոչ ճաշակելեաց որ զհամ հացի առնու. եւ ոչ շոշափելեաց որ զհաց շոշափէ: Այլ պարտ է հաւատեալ Քրիստոս ձայնին որ ասէ. (այս է մարմինն իմ եւ այս է արիւնն իմ:) Եւ դարձեալ զիտելի է՝ յորժամ քահանայն բաշխէ զմարմինն Քրիստոսի, եւ ատամամբն ծասկէ, ոչ կոտորի մարմին Քրիստոսի. այլ ամբողջ մնայ. այլ պատահմունք հացին որ մնացեալ է, այսինքն քանակն՝ այն է որ բաշխի եւ ծասկի: Եւ թեպէտ օրհնեալ հացն ի հուր անկանի, կամ ի ջուր ոչ ապականի մարմինն Քրիստոսի եւ ոչ այրի. որպէս ճառագայթ արեգականն որ անցանէ ի հուր՝ կամ ծագէ ի վերայ տղմոյ՝ ոչ բնաւ ապականի. այլ պատահումն հացին որ մնացեալ է, այն է որ ապականի կամ այրի: Եւ յայժամ մարմինն Քրիստոսի ոչ մնայ անդ. այլ ի յերկինս ընդաջմէ հօր որպէս յառաջն էր: Եւ արդ՝ վասն տարակուսաց անհաւատիցն եւ տգիտացն՝ չէ պարտ կարծիս ընկենուլ ի միտս. այլ ճշմարտապէս իմանալ եւ հաւատալ զհացն եւ զբաժակն օրհնեալ՝ ճշմարիտ եւ անապական մարմինն եւ արիւնն Քրիստոսի: Որում եւ մեզ հաղորդս արասցէ Քրիստոս.՝ նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ ձեռնադրութեան. ի բանն՝ (Քահանայք քո զգեցցին զարդարութիւն:) Սաղ. 131. 16: (Գլուխ. ԼԷ)

Նախ պարտ է գիտել թէ՛ զի՞նչ է Սահման քահանայութեան. եւ զի՞նչ Դիտաւորութիւն: Վասն զի ամենայն ինչ՝ անւամբ կամ սահմանաւ ճանաչի. այլ սահմանաւ՝ առաւել քան անուամբ. Որպէս յորժամ ասեմք, զի՞նչէ մարդ. յորժամ զանունն պատասխանեմք, ոչ գիտեմք թէ որ մարդ է, կենդանի՞ թէ գրեալն: Եւ յորժամ զսահմանն ասեմք՝ կենդանի բանաւոր մահկանացու մտաց եւ հանճարոյ ընդունակ. ահա առաւել յատկացաւ մարդն: Վասն որոյ՝ սահմանէ սուրբն Դոնէսիոս այսպէսոս: (Քահանայութիւն է՝ ըստիս կարգ սրբազան. հանճար եւ ներգործութիւն առ աստուածատեսակ նմանութիւն ըստ կարողութեան:) Չկարգն՝ սեռ դնէ. եւ զայլսն բաղկացուցիչ զանազանութիւն: Քահանայապետութիւն է ասէ՝ այսինքն, իշխանութիւնս որ յերկրի: Կարգ է՝ այսինքն, աստիճան. եւ ունի Առաջին Միջին եւ Վերջին: Եւ կարգ է՝ զի կարգաւորին վերջինքն առաջնովքն. որպէս երկրաւոր մարմինք՝ երկնաւոր մարմնովք կարգաւորին: Եւ յամենայն իրսս տեսանեմք զկարգ: Նախ ի հրեշտակս. զի ունին կարգ՝ առաջին միջին. յերիս երրեակ դասս կարգաւորեալ: Որք են Աթոռք՝ Թերովքէ՝ Սերովքէ՝ առաջինք: Տերութիւնք՝ Չօրութիւնք՝ Իշխանութիւնք՝ միջինք: Պետք՝ Հրեշտակապետք՝ Հրեշտակք՝ վերջինք: Եւ այսպէս ըստ կարգի՝ իջանեն յԱստուծոյ շնորհք

լուսափայլութիւնք եւ գիտութիւնք: Նախ յառաջինսն. եւ նոքօք ի միջինսն. եւ նոքօք ի վերջինսն: Եւ ապա ինոցանէ ի մեզ ի մարդիկ: Նախ ի գլխաւորսն. որպէս ի մարգարէս եւ յառաքեալս եւ ի հայրապետս: Եւ ապա յայլ անդամս եկեղեցւոյ ըստ իւրաքանչիւր կարգի առհասարակ քրիստոնէից: Ըստ այնմ, (որպէս իւզ գի իջանէ ի գլուխ եւ ի մօրուսն Ահարօնի. եւ ի մօրուացն՝ ի ջանէ ի գրապանս զգեստու ժողովրդեանս:) Կարգ է եւ յերկինս. զի որ առաւելք են՝ վերինք են, եւ պատեալք են զնուագունսն: Կարգ են եւ ի լուսաւորս. զի մանունքն՝ ի մեծէն լուսաւորին եւ ծածկին. որպէս յարեգակնէ այլ աստեղք: Կարգ են եւ ի տարերսդ. զի պարզ եւ թեթեւքն՝ վերինք են. որպէս հուր եւ օդ: Եւ թանձրն եւ ծանրն՝ ներքինք են որպէս ջուր եւ երկիր: Կարգ են եւ ի կողմանս աշխարհի. առաջին արեւելք. եւ միջին հարաւ. եւ վերջին արեւմուտք եւ հիւսիս: Եւ զի մի զամենայն ասացից: Կարգ է ի թաագաւորս, եւ ի հնազանդեալս, յիշխանս եւ յիշխեցեալս քաղաքաց. այսպէս եւ քահանայապետութիւնս՝ կարգ է յեկեղեցիս: Բայց զանազանին. զի այն մարմնաւոր կարգ է. եւ այս հոգւեր. այն զմարմինս կարգաւորէ. եւ այս զհոգիս. այն աստի կենացս է. եւ այս հանդերձելոյն: Բայց երկոքին՝ ի միոյ սկզբանէ յառաջ եկեալ. այսինքն, յաստուածապետական իշխանութենէն. ըստ Պօղոսի. (ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ որք կարգեալ են՝ յԱստուծոյ ենն կարգեալ:) Վասն այն ասէ՝ քահանայապետութիւն է կարգ: Իսկ ասելն (Սբազան՝) այսինքն՝ կարգ է սուրբ. որոշելով՝ ի մարմնաւորաց կարգացն. որպէս ունին մեծամեծք եւ փոքունք. իշխանք եւ իշխեցեալք: Կարգ է՝ այլ ոչ սուրբ. զի ոչ կարէ սրբել զնոսա: Այլ սա՝ կարգ է եւ սուրբ. զի կարէ սրբել զկարգաւորեալսն: Դարձեալ՝ է սրբութիւն մարմնոյ, եւ է սրբութիւն հոգւոյ. մարմնոյ սրբութիւն է՝ աշխարհականաց. իսկ հոգւոյ սրբութիւն՝ է իշխանութիւնս ի եկեղեցիս կարգեալ. վասն այն ասէ կարգ սուրբ: (Յանճար եւ ներգործութիւն:) Յանճար՝ այսինքն, խորհուրդ եւ իմաստութիւն եւ գիտութիւն սուրբ: Եւ ներգործութիւն՝ զի այս կարգս եւ իշխանութիւնս որ յեկեղեցի է, ներգործէ զքահանայապետս. զքահանայս. զսարգաւակունս, եւ զայլս ըստ կարգի: Եւ տես՝ զի հաստատեալ է կարգս ի վերայ սուրբ ներգործութեան եւ սուրբ հանճարոյ. որ է հաւատն եւ գործն: Չի սոքա երկոքինս՝ են ընդունակ եւ օթեան իշխանութեան կարգին: Ապաուրեմն ամսուրքքն գործով՝ եւ թերիքն գիտութեամբ եւ հաւատով՝ ոչ են աժանի այսմ աստիճանի. վասն որոյ ասէ: (Առ աստուածատեսակ նմանութիւն:) այսինքն, սուրբութեամբ եւ հանճարով եւ ներգործութեամբ բերեն յինքեանս զաստուածակերպ նմանութիւն: Այս է սահման քահանայապետութեան. որէ իշխանութիւն ի յեկեղեցի կարգեալ: Իսկ թէ զի՞նչ է դիտաւորութիւն սորա. այսինքն, հայեցուածն, թէ առ ի՞նչ հայր քահայապետութեանս կարգ: Այս է՝ թէ յաստուածատեսակ նմանութիւնն. այսինքն, թէ գիտումն եւ իմացումն սորա այնն է, զ զԱստուծոյ զնմանութիւնն յինքեան բերէ: Իսկ թէ զի՞նչ է Աստուծոյ նմանութիւնն. այս է. զի տեսանի առ Աստուած երիս իրս: Նախզի՞ պարզ է եւ անխառն յամենայն աննմանութեանց: Երկրորդ՝ զի բարի է. եւ հաղորդէ զինքեան բարութիւնս այլոց: Երրորդ՝ զի կատարեալս առնէ զայլս: Եւ զայսոսիկ ունի բնութեամբ եւ գոյուցութեամբ եւ անսկզբնաբար: Պարզ է եութեամբ. բարի է իմացմամբ. կատարեալ է ներգործութեամբ: Դարձեալ՝ պարզութեամբն մաքրէ եւ սրբէ: Բարութեամբն լուսաւորէ: Կատարելութեամբն կատարեալս առնէ:

Դարձեալ՝ պարզութիւնն է իսկիզբն. բարութիւնն ի մէջն. կատարումն ի վախճանն: Եւ այսոքիկ ամենայնքն՝ իջանեն ի միոյն բարերար կամաց եւ նախախնամութեանցն Աստուծոյ. եւ հաղորդէ զինքն է իցս. այսինքն, հրեշտակաց եւ մարդկան: Բայց նախ հրեշտակաց, եւ ապա մարդկան. զի հրեշտակք բնութեամբ եւ փառօք եւ տեղեալ՝ մերձաւոր են Աստուծոյ: Բնութեամբ՝ զի Նոքա իմանալիք են, եւ մէք զգալիք: Նոքա անփոփոխք, եւ մէք փոփոխականք: Նոքա անմահք, եւ մէք մահկանացուք: Ապա ուրեմն բնութեամբ մերձ են Աստուծոյ եւ փառօք. զի Նոքա յանճառ փառսն են հաստատեալ. եւ մէք դեռնես ի շնորհս եւ ի յօրէնս: Եւ տեղեալ Նոքա ի սրբութիւն սրբոցն ընդդդ միշտ էին Աստուծոյ. եւ մէք յարտաքին սրահս ի զգալի արարածս եմք բնակեալ: Վասն որոյ նախ ի Նոսա հեղանի ամենայն բղիտումն շնորհաց, լուսափայլութեան, եւ այլն. եւ ապա ի մեզ ըստ կարգի իջանէ որպէս ասացաք ի վերոյ: Արդ՝ այս է քահանայապետութեանս դիտումն՝ զի զմեզ յաստուածատեսակ նմանութիւն բերեցէ. այսինքն, ի սուրբութիւնն՝ ի լոյսն՝ ի կատարելութիւնն: Եւ յայտ է՝ զի զայսորիկ ունի եկեղեցի սուրբ. զի ոմն սրբէ: Ոմն լուսաւորի, եւ ոմն լուսաւորէ: Ոմն Նուիրի, եւ ոմն կատարէ: Եւ այս է կարգն: Նախ մաքրելն. եւ ապա լուսաւորելն. եւ ապա կատարելագործելն: Մաքրիլն է մերկանալ զաղտեղութիւն եւ զխաւար. լուսաւորիլ՝ զգեճուլ զլոյս. այսինքն, մաքրիլն այն է, զոր ունի ընկեճու. եւ լուսաւորիլն՝ զոր չունի առնու: Եւ ապա կատարի: Որպէս ոմն եկեալ ի մկրտութիւն՝ նախ մաքրի եւ հրաժարի յամենայն չարեաց. եւ ապա լուսաւորի աստուածգիտութեան լուսավն ըստ հաւատոյն: Եւ կատարելագործի մկրտութեամբն եւ սուրբ մեռնաւն: Այլ մաքրելն է սարկաւազին. լուսաւորելն քահանային. կատարելագործելն եպիսկոպոսին: Այսպէս եւ եկեալքն ի կարգ. ինչ՝ սարկաւազութեան, քահանայութեան, եւ յայլ ինչ: Պարտին նախ մաքրիլ հանճարով աստուածգիտութեան լուսովն եւ ուսմամբն. եւ ապա կատարիլ ի կնիք կարգին զոր եւ առնուցուն: Եւ վասն է՞ր երեքեան սոքա պահանջին ինվիրելոցն: Նախզի՞ ունին մարմին, հոգի, եւ միտք. ըստ մարմնոյ մաքրին. ըստ մտացն լուսաւորին. ըստ հոգւոյն կատարելագործին կնքովն: Դարձեալ՝ ունին բնութիւն եւ անձն եւ պատուհումն. ըստ պատահման սրբին յամենայն եկամուտ մեղաց: Եւ բնութեամբ լուսաւորին: Իսկ անձամբն կատարին ի կնիքն: Դարձեալ՝ ունին եութիւն զօրութիւն եւ ներգործութիւն. ըստ եութեան մաքրին. ըստ զօրութեան լուսաւորին. ըստ ներգործութեանն կատարելագործին: Դարձեալ՝ Նուիրեալն՝ ունի բնութիւն, շնորհս, եւ փառս: Բնութիւնն նախ է. շնորհն այժմ առնանի. փառքն ի վերինն գաւառի: Վասն բնութեանն մաքրի. վասն շնորհացն լուսաւորի. վասն փառացն կատարելագործի: Դարձեալ՝ վասն երից դիմացն. որ է օծողն, օծումն, եւ օծեալն: Օծողն՝ որպէս քահանայապետն. օծումն՝ քահանայութիւնն. օծեալն՝ որ է Նուիրեալն. սարկաւազն, կամ քահանայն: Արդ՝ ի դիմաց իւրն՝ պարտի մաքրիլ. եւ ի դիմաց օծողին՝ լուսաւորիլ. եւ ի դիմաց օծմանն՝ կատարելագործիլ ի շնորհացն: Արդ՝ վասն ասացեալ պատճառացս՝ ամենայն Նուիրելոց այսպէս պարտ է. մաքրիլ, եւ լուսաւորիլ, եւ ապա կատարիլ: Չի եութիւն կարգին՝ կայանայ ի սուրբ վարս եւ ի սուրբ գիտութիւնս որպէս ասացաւ: Իսկ ներգործողին զշնորհս. որպէս քահանայապետն՝ քահանայն, եւ այլն. որք մաքրեն լուսաւորեն եւ կատարեալս գործեն՝ պարտ է զի ունիցին սեփական

սրբութիւն եւ մաքրութիւն. զի մաքրեցեն զայլս. որպէս ջուր յստակ՝ զի սրբեցէ: Ապա թէ ինքն անմաքուր է, զայլս որպէս մաքրեցէ: Նոյնպէս եւ որք լուսաւորեն՝ պարտ է լինիլ լոյս. եւ ապա զայլս լուսաւորել. որպէս երկատեսակ հայելի՝ առնուլ ցլոյս շնորհաց, եւ լուսաւորել զայլս. որպէս լուսինն առնու զլոյսն յարեւէն ըստ ոմանց՝ եւ լոյս տայ ներքնոցս: Այսպէս օղն եւ ապակին նախ լուսաւորի՝ եւ ապա լուսաւորէ: Ապա թէ լուսինն խաւարեալ է, եւ հայելին ժանկեալ, եւ օղն թանձրացեալ ամպով, ոչ տան լոյս: Նոյնպէս եւ կատարելագործքն՝ որպէս քահանայապետն եւ կամ քահանայն. զի նոցա պարտ է կատարեալ լինիլ, եւ ապա զայլս կատարել: Եւ զի՞նչ իցէ կատարելութիւնն ասիցէ ոք. այն է՝ զի իցի մաքուր վարուք. եւ լուսաւոր գիտութեամբ. եւ կատարելագործ իշխանութեամբ. եւ ապա կատարեցէ զայլս: Նախ վասն ասացեալ պատճառացոյ. զի պարտ է զսրբութիւն զգիտութիւն եւ զիշխանութիւն սեփհականել յինքեան՝ եւ ապա յինքենէ տալ այլոց: Երկրորդ՝ զի նման Աստուծոյ ներգործէ որպէս ասցաք. պարտ է սրբութեամբ եւ լուսաւորութեամբ նմանիլ՝ եւ ապա կատարելութեամբ: Երրորդ՝ զի աստուածագործ է. այսինքն, աստուածարար. զի հասարակաց մարդն՝ որդի Աստուծոյ առնէ մկրտութեամբն: Նոյնպէս զհացն եւ զգինին՝ մարմին եւ արիւն Աստուծոյ կատարէ օրհնութեամբ: Եւ Աստուծոյ է թողուլ զմեղս. եւ տալ զշնորհս, եւ առնել զերկոսեանն մի մարմին. զոր քահանայն առնէ պսակաւն: Եւ որպէս ասեն սուրբ հարք, նախ պարտ է աստուածանալ՝ եւ ապա յԱստուծոյ մերձեալ: Չորրորդ՝ պահանջին սոքա վասն երից պատճառաց այսմ գործոյ. այսինքն, զի է պատճառ ներգործական որպէս Աստուած. եւ է պատճառ շնորհական որպէս կարգն. եւ է պատճառ գործիական որպէս քահանայապետն: Չոր օրինակ՝ ի գործ արուեստի՝ ներգործական է հիւսն. եւ ներգործութիւն արուեստն. եւ գործիք ուրաքն որ տաշէ զփայտն: Եւ ուրաքն պարտ է զի լինիցի պատշաճ եւ սուր առ գործն, որպէս է ի միտս արուեստաւորին. ապա թէ ոչ՝ ոչ կարէ տաշել զփայտն: Նոյնպէս եւ քահանայապետին՝ պարտ է ունիլ պատշաճ սրբութիւն եւ սուրբ գիտութիւն. զի կատարեցէ զայլս. ապա թէ ոչ՝ ոչ կարէ: Եւ թէ ասիցէ ոք՝ շնորհն յԱստուծոյ է՝ եւ ոչ երբեք տկարանայ: Ասեմք եթէ՝ ճշմարտապէս բղիսումն շնորհաց՝ է ի հոգւոյն սրբոյ. եւ է յամենայն կարօղ եւ հզօր: Այլ տկար ընդունակքն՝ ոչ կարեն տանիլ զկարօղն. որպէս բեկեալ անօթ՝ ոչ ընդունի զջուրն: Եւ տկար աչքն՝ ոչ տեսանէ զլոյս. եւ լոյսն ընդ պարզ մարմին թափանցի, որպէս ապակի. եւ ի թանձրն՝ զսպի որպէս ի քար եւ ի հող: Եւ այսմ պատճառ՝ ոչ է տուօղն, այլ առնօղն: Նոյնպէս եւ զշնորհս քահանայութեան իմասցիս (զի յանձն անարժան՝ հոգի իմաստութեան ոչ բնակի ասէ Սողոմօն:) Դարձեալ՝ քահանայն հրեշտակ կոչի. ըստ այնմ, (շրթունք քահանային զգուշացիս գիտութեան. զի հրեշտակ Տեառն Աստուած ամենակալ է:) Ապա պարտ է քահանային հրեշտականմանն սուրբ լինիլ խորհրդօք եւ գործօք: Դարձեալ՝ քահանայն միջնորդ է հաշտութեան. առ Աստուած եւ առ մարդիկ. պարտ է միջնորդին՝ հաշտ եւ համարձակ լինիլ. որով կարիցի միջնորդել. եւ այս լինի սուրբ վարուք եւ ուղիղ հաւատով: Դարձեալ՝ սուրբ քահանայքն՝ նման են սուրբ կենդանեաց, որք պատարագելիք են. այլ անսուրբքն՝ նման են պիղծ կենդանեաց, որք ոչ մերձեանն ի տաճարն. եւ ոչ են կերակրելիք: Դարձեալ՝ պարտին

քահանայքն կատարել լինիլ սրբութեամբ եւ գիտութեամբ. զի գիտութեամբ խրատեսցեն զայլս. եւ սուրբութեամբ օրինակ տացեն: Չի քահանայք դէտ են ի մէջ եկեղեցւոյ. եւ թշնամի են սատանայ, մեղք, եւ հերձաւծօղքն. յորժամ զայցեն առ ժողովուրդն, պարտ է զգուշացուցանել զնոսա հանճարով՝ իմաստութեամբ՝ սրբութեամբ՝ եւ արդարութեամբ: Չի կեցուցէ զիւր անձն եւ զժողովուրդն: Ապա թէ դէտն ծուլութեամբ՝ քնով՝ եւ տգիտութեամբ ծանրացեալ լինի, եւ սուրն եւեւ թշնամին մտեալ ի ժողովուրդն, եւ նա անփոյթ առնիցէ, լիցէ զահաւոր բարբառ հրամանին եթէ՝ (անօրէնն ի յիւր մեղսն մեռանի, եւ զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից ասէ:) Դարձեալ՝ քահանայն աղ է լուսաւոր գիտութեամբ գիտութեամբ եւ սուրբ վարուք. որ ի համ բերէ զամենայն անհամութիւն ժողովրդեանն: Ապա թէ աղն անհամի, արտաքս ընկենլի է. եւ խոտելի ըստ տերունական հրամանին: Դարձեալ՝ ծեր եւ երէց կոչին քահանայք: Նախ՝ վասն խոհեմութեան եւ գիտութեան: Երկրորդ՝ վասն կարգին: Երրորդ՝ վասն արդարութեան եւ արի գործոց: Չորրորդ՝ վասն կատարմանն. զի նախ ինքն կատարի՝ եւ ապա զայլս կատարէ: Զինգերորդ՝ վասն առաջնորդելոյ եւ խրատու: Վեցերորդ՝ վասն հոգեւոր հայրութեան. եւ ժողովուրդքն՝ որդիք են հոգեւորք: Իսկ ծոյլ քահանայն՝ նախ դատի վասն իւրոյ յանցանացն: Երկրորդ՝ զի ոչ ուսոյց զբարին ժողովրդեան. այլ չար ուսոյց նոցա, կամ զայթակղեցոյց: Երրորդ՝ զի եկեր զմեղս ժողովրդենն, եւ ոչ քաւեաց զնոսա: Չորրորդ՝ զի որ գիտութեամբ մեղանչէ, առաւել պատժի: Նմանապէս եւ արի քահանայն՝ նախ վասն իւր գործոյն պսակի: Երկրորդ՝ վասն ժողովրդեանն վարձատրի. որ բարուք հովեաց: Երրորդ՝ որոց զմեղս քաւեաց պատճառ եղել վարձուց: Չորրորդ՝ զի եւ իմաստութեամբ եւ գիտութեամբ գործեաց զբարին. նա այսպիսիքս՝ (կրկին պատուոյ արժանի լինին:) Վասն որոյ լսելով եղբայրք սիրելիք եւ որդիք՝ իւրաքանչիւր ոք՝ զանձինս մեր. քննեսցուք. զի մի յահաւոր բեմին ամօթով լիցուք. եւ մի պատժիցուք որպէս նաբաթ եւ աբիութ որդիքն Ահարօնի՝ որք այրեցան հրով: Եւ որդիք Զեղեայ սատակեցան սրով վասն մեղաց եւ ծուլութեանց: Մի ծուլութեամբ. մի քնով. մի արբեցուք. մի շուայտութեամբ. մի պիղծ խորհրդով: Այլ սուրբ վարուք՝ ուղիղ հաւատով՝ լուսաւոր մտօք՝ ժրաջն մկրտութեամբ եւ համբերութեամբ կատարեսցուք զընթացս մեր, ակնունելով երանելի յուսոյն՝՝ առնստուած սիրոյն, վարձուց հատուցմանն ի պսակողեն Զրիստոսէ Աստուծոյ մերոյ. որ է օրինեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն Քահանայութեան. ի բանն՝ (Դու ես քայանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի:)

Սաղ. 109. 4: (Գլուխ. ԼԸ)

Յառաջագոյն ասացեալ եղ' թէ, զի՞նչ է քայանայութիւն:

Այժմ ասելի է ի կարգէ քահանայութեան: Եւ գիտելի է՝ զի բաժանի նախ քահանայութիւնն ի յերկնաւորն, եւ յերկրաւորս. որ է հրեշտակաց եւ մարդկան: Իսկ հրեշտակաց քահանայութիւնն՝ ունի: Առաջին՝ Միջին՝ եւ Վերջին: Առաջին են Աթոռոց՝ Սերովբեից՝ եւ Զերովբեից դասքն. որք անընդմիջաբար լուսաւորին յաստուածայետականէն լուսոյ: Եւ միջինք են՝ Տերութեանց՝ Չօրութեանց՝ եւ Իշխանութեանց դասքն: Եւ վերջին՝

Պետութեանց՝ Յրեշտակապետաց՝ եւ Յրեշտակացն դասք: Որք են փակ եւ կնիք վերին քահանայապետութեանցն: Չի որպէս առաջինքն անցուցանեն ի միջինս. նոյնպէս եւ նոքա ի վերջինս: Իսկ նոքա ընդունին յինքեանս՝ եւ յայլ դասս ոչ իջուցանեն, քան թէ ի մարդկային ազգս. գոր ուսանելոց եմք յառաջիկայդ: Դարձեալ՝ ունին զերրակ զօրութիւնս. այսինքն, զմաքրողկանն. զլուսաւորականն. եւ զկատարելագործականն: Այսպէս մաքրողականն է ի սուրբ հոգւոյն. եւ լուսաւորականն ի միաժին որդւոյն. եւ կատարողականն ի հօրէ Աստուծոյ: Վասն որոյ այսպիսի զօրութեամբ կատարեն զմիմեանս. այսինքն զմիջինսն, եւ միջինքն զվերջինսն նոյնպէս սրբեն եւ լուսաւորեն զմիմեանսն: Դարձեալ՝ գոյ ի նոսա երեց եւ կրտսեր. ոչ ըստ ժամանակի, եւ ոչ ըստ բնութեան, եւ ոչ ըստ պատճառի: Չի համանգամայն են սոքօք. այսինքն, բնութեամբ եւ ժամանակաւ եւ գոյութեամբ: Այլ երեց եւ կրտսեր ասին ըստ պատուոյ եւ ըստ կարգի. զի առաջին դասքն՝ Աթոռք Սերօբէք Զերօբէք մերձ գոլով, անընդմիջաբար առնուն յԱստուծոյ զլուսափայլութիւն. եւ անցուցանեն ի տերութիւնս եւ յայլսն. վասն որոյ վեցեքին դասքն՝ ի միամեանց քահանայապետեալք կրտսերք են: Իսկ առաջին երեք դասքն՝ երեց եւ նախկին պատուով եւ կարգիւ: Այլ աստ է հարցումն թէ՛ դէւք անկեալք ինցանէ՛ ունի՞ն զքահանայութիւն թէ ո՞չ: Երեւի թէ ունին. զի քահանայութիւնն հրեշտակաց՝ եութեամբ եւ բնութեամբ է. այլ դէւք՝ են յեութենէ հրեշտակաց. ապա ունին զքահանայութիւն: Դարձեալ՝ դէւք յետ անկմանն՝ ունին զբնականս իւրանց. զի են անմարմիւք՝ անմահք՝ եւ լուսաւորք. ապա երեւ թէ ունին զքահանայութիւն: Ասեմք թէ՛ դէւք ոչ ունին զքահանայութիւն. որոյ պատճառ է. զի քահանայութիւն է՝ շնորհ լուսաւոր եւ հանճար եւ ներգործութիւն եւ Աստուծոյ նմանութիւն: Այլ դէւք անկմամբն իւրեանց՝ կորուսին զսոսա. զի ոչ ունին հանճար եւ ներգործութիւն սուրբ եւ Աստուծոյ նմանութիւն. զի խաւարեալ են տգիտութեամբ եւ չարութեամբ: Նաեւ լոյս շնորհացն Աստուծոյ՝ ոչ գործէ ի նոսա. ապա յայտ է՝ զի ոչ ունին զքահանայութիւն: Այժմ պատասխանեսցուք առարկութեանցն: Առաջնոյն՝ թեպէտ հրեշտակաց քահանայութիւնն եութեամբն է, եւ ոչ որպէս մերս յետոյ ստացմամբ. այլ քահանայութիւն նոցա՝ ունակութիւն է. զ անձնիշխան կամօք ստացան եւ ոչ ակամայ: Վասն այսորիկ դէւք ոչ ունին զքահանայութիւն. զիի ունին անձն իշխան կամս բարիս: Երկրորդին պատասխանեմք. թեպէտ դէւք յետ անկմանն մնացին անմահք եւ անմարմիւք՝ ոչ զի պատուեսցն, այլ զի անմահապէս տանջեսցին: Այլ քահանայութիւն է ի պատիւ, եւ ոչ ի տանջանս. յաղագս որոյ զքահանայութիւն ոչ ունին: Նաեւ դէւք ոչ ունին մարգարեութիւն որ է հանդերձելոց գիտութիւն. նաեւ ոչ թագաւորութիւն. զի այս շնորհ ի պատիւ մարդոյն է տուեալ. ըստ այնմ, (զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա. զիսաշն եւ զարջառ:) Իսկ դէւք՝ ոչ ունին պատիւ. վասն այն եւ ոչ մարգարեութիւն եւ թագաւորութիւն: Եւ թէ ոք ասիցէ ըստ Պօղոսի՝ (մեզ մարտ է ընդ իշխանս եւ ընդ պետութիւն օդոց:) եւ Տերն ասէ՛ գայ իշխան աշխարհիս այսորիկ:) Ասեմք առ այս թէ՛ դէւն ոչ ունի իշխանութիւն ի վերոյ մարդկան. այլ որ մարդիկ անձնիշխան կամօք ապստամբեցան յԱստուծոյ եւ հազանդեցան նմա. նոցա եւ իշխան: Դարձեալ՝ ասեն ոմանք թէ, անկեալք դէւքն են յիշխանութեանց եւ ի պետութեանց դասեւն. եւ իշխանք եւ պետք

եղեն զանազան մեղաց. այսինքն, հպարտութեան, պոռնկութեան, եւ այլոցն, զայն ասէ Պօղոս: Եւ թէ ոք ասիցէ, ապա թէ ոչ գիտեն դէք զառաջիկայն, որպէս երագօք ցուցանեն, եւ ի ձեռն կոռցն եւ քահանայիցն զլինելոցն ասեն: Ասեմք եթէ՝ առաջիկայն միայն Աստուծոյ է գիտելի. որ բոլորն համանգամայն է եւ կատարեալ. նաեւ որոց Աստուած յայտնէ. որպէս հրեշտակաց, կամ մարգարէից: Իսկ դէք՝ ոչ գիտեն զառաջիկայն մարգարեաբար. զի Աստուած ոչ յայտնեցն. այլ ի նրբութենէ մտացն՝ կարծեօք գիտեն զառաջիկայն. ոչ զհեռաւոր, այլ զմերձաւոր ապառնին. իսկ զբնութեան ապառնին՝ գիտեն ի փորձոյ անցելոյն: Իսկ զկամաց ապառնին ոչ գիտէ դէն. այլ թէ հրեշտակն յայտնէ վասն բարւոյ իմիք. որպէս բաղաամ մոգին: Այլ այսպիսիքս՝ ի հրեշտակաց լինին եւ ոչ ի դիւաց: Նաեւ ծանիր յայսմանէ՝ զի թէ դէն գիտեր զառաջիկայն, ընդ սբոցն ոչ հակառակեր որք յաղթեցին զդէս: Այլ գիտեն զհանդերձեալ տանջանսն ի մեղաց իւրեանց. ըստ որք ասէին. (մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ.) այլ այնպէս կուրացեալ են եւ հաստատեալ են ի չարն, զի եւս յաւելուն ի տանջանս իւրեանց: Ապա ուրեմն դէք ոչ ունի մարգարեութիւն, եւ ոչ քահանայութիւն: Եւ թէ ոք ասիցէ՝ թէ քուրմք կոռց ո՞չ են քահանայք: Ասեմք թէ ոչ. զի նմանութեամբ քահայիցն գործէին նոքա վասն խաբէութեան որպէս զմարգարեութիւն: Եւ զոր օրինակ՝ նմանութեամբ է կապիկն ծիծաղական, եւ ոչ ճշմարտութեամբ է կապիկն ծիծաղական, եւ ոչ ճշմարտութեամբ. այսպէս նոցա քահանայութիւնն եւ մարգարեութիւնն՝ նմանութեամբ է եւ ոչ ճշմարտութեամբ: Եւ վասն խաբէութեան է ի կորուստ մարդկան: Այս վասն երկնայնոց քահանայութեանն: Իսկ երկնաւոր քահանայապետութիւնս՝ բաժանի յերկուս. ի յօրինակն. եւ ի ճշմարտութիւնն. որ է հինն եւ նորս. զի կամեցաւ Աստուծոյ պարգեւս յետ երկնայնոցն՝ շնորհել մարդկան ազգի: Եւ մինչդեռ տղայ էր բնութիւնս՝ որպէս դաստիարակ եւ կաթն զօրինաց քահանայութիւնն ետ: Եւ որպէս տկար աչաց համեմատ՝ նւազ լոյս ետ, զի մի վնասեցին: Եւ զայս քահանայութիւնս ետ Աստուած նախ Ահարօնի եւ որդւոց նորա ի ձեռն Մովսէսի որպէս ասէ գիրն: Նոյնպէս եւ զվրան ժամուն եռայարկեան կանգնեաց. առաջին միջին եւ վերջին ի տիպ բոլոր աշխարհի: Առաջին սրբութիւն սրբութիւն սրբոցն՝ ուր էր տապանակն ոսկի. եւ քերովբէքն հովանի՝ էր օրինակ լուսեղէն երկնից. ուր միայն աստուածպետութիւնն է բնակեալ ի լոյս անմատոյց. եւ հրեշտակօք եւ սերովբէիք սպասաւորեալ: Միջին սրբութիւնն ուր էր աշտանակն եօթնաչափեան՝ եւ սեղան ինկոցն՝ եւ հաց երեսացն՝ էր օրինակ ութներորդ կամարին. ուր են եօթն լուսաւորք եւ անուշահոտ հոգիք սրբոցն ժողովեալ: Եւ հաց սրբութեանն՝ ոչ թէ անդ է մարմինն Զրիստոսի ըստ հերձուածողաց ոմանց, այլ դեմ յանդիման տեսանեն սուրբքն զԶրիստոս անուշահոտութեամբ հոգւոյն իւրեանց: Չոր յետոյ ի կատարածի մամնով եւ հոգւով վերանան ի լուսեղէն խորանս ի դասս հրեշտակաց: Իսկ արտաքին սրահն՝ էր օրինակ մարմնական աշխարհի. ուր զենմունք կենդանեաց էին. եւ ճենճերումն եւ կերակրոց վայելումն: Այլեւ օրինակ է նորա եկեղեցւոյ որ է բեմն եւ մէջ եկեղեցւոյն, եւ դուռն. կամ արտաքնին ժամատունն: Տապանակն ոսկի՝ սկիին. մանանայն՝ մարմին եւ արիւնն. տախտակքն՝ ատարանն. գաւազանն ուղղութեան՝ Զրիստոս. բուրվառն՝ անուշահոտութիւն նորին. քաւութիւնն՝ շնորհքն. քերովբէքն եւ քշոցն՝

սպասաւորք հրեշտակք: Մի անգամ մուտն ի տարին՝ մի անգամ պատարագիլն յաւուր: Նոյնպէս եւ գառն եւ հացն երեսաց՝ գառն ճշմարիտ եւ խունկ՝ բուրումն հոգւոյն սրբոյ. եօթն ջահն՝ եօթնարփեան շնորհքն: Նոյնպէս զգեստ քահանայութեան՝ լուսացումն՝ պատարագն եւ այլն ամենայն՝ նորոյս են օրինակք: Եւ բազում զանգանութիւն է հնոյ քահանայութեան եւ նորոյս: Նախգի՝ այն օրինակ, եւ այս ճշմարտութիւն: Երկրորդ՝ այն անցաւոր, եւ այս յաւիտենական: Երրորդ՝ այն միջնորդութեամբ Մովսէսի, եւ այս միաձին որդւովն: Չորրորդ՝ այն մարմնական, եւ այս հոգւեր: Դարձեալ գիտելի է՝ զի նորա քահանայութիւն է հասարակ եւ ի մէջն երկնային քահանայապետութեան եւ հնոյ օրինացն. զի ունի իր եւ խորհուրդ. այսինքն, տեսութիւն եւ տիպ: Արդ՝ տեսութեամբն որ է իր, երկնայնոցն է հաւասարեալ. իսկ մարմնական խորհրդովն՝ ընդ հին օրինացն է կապակցեալ. եւ այսպէս երկոցունցն կապ եւ մէջ է եղեալ. եւ զստուերն ընդ ճշմարտութիւն է միաւորեալ: Դարձեալ՝ երկնայնոցն քահանայապետութիւն՝ յերիս որոշի. այսինքն, ի մաքրել ի լուսաւորել, եւ ի կատարելագործել: Այսպէս եւ հիւնն. քահանայապետն՝ քահանայն, եւ սպասաւորքն: Նմանապէս եւ նորս. եպիսկոպոսն կատարէ. քահանայի լուսաւորէ. եւ սարկաւազն մաքրէ: Դարձեալ՝ եւ այլ իմն եղանակաւ կապ է նոցա. զի քահանայապետն. երկնաւորացն եւ ի մանալեացն է համագուգեալ. իսկ քահանայն նոր օրինացս. եւ սարկաւազն հին օրինացն: Եւ այս յայտ է յիւսքանչիւր գործոցն. զի քահանայապետն միշտ կատարելագործէ եւ տայ. որպէս վերինն դասք. իսկ քահանայն զամենայն խորհուրդ եկեղեցւոյ կատարէ: Որն է մկրտութիւն. դրոշմ. պատարագ. եւ այլն. որ է նորոյս քահանայութեան: Իսկ սարգաւազն՝ ցուցանէ զհնոյն բուրվառովն. զի խնկարկելն ի հին քահանայապետիցն էր: Իսկ սոքա թեպէտ այլեւ այլ են ներգործութեամբ. այսինքն, հրեշտակացն հնոյն եւ նորոյս. եւ քահանայապետին եւ քահանային եւ սարգաւազին: Սակայն մի է ամենեցուն դիտաւորութիւն ամ աստուածայինս. եւ ի միութիւն են կապակցեալ միեղէն շնորհօքն. որ է մաքրողական՝ լուսաւորական՝ եւ կատարողական: Այլ գիտելի է՝ զի ինն են աստիճանք եկեղեցւոյ քահանայապետութեան. եւ նմանապէս յերիցս երրակս որոշեալ. որպէս երկնային քահանայապետութիւն: Եւ այս է պատճառն. զի երեք շնորհք անշփոթելիք յառաջագայի ի սուրբ երրորդական անձնաւորութեանցն. ի հօրէ՝ յորդւոյ եւ ի հոգւոյն սրբոյ. այսինքն, մաքրողականն, լուսաւորականն, եւ կատարողականն. թեպէտ բնութիւնն ներգործութիւնն եւ ամինչ հաւասար է սուրբ երրորդութեանն. այլ վասն յատուկութեան անձանցն՝ անձանցն՝ յատկութիւն երեւի ի շնորհն: Մաքրութիւնն է արժանապէս հոգւոյն. լուսաւորելն միաձին որդւոյն. կատարելն ամենակատարն Աստուծոյ Զօր: Արդ՝ սոքա երեքեան շնորհքս՝ յաստուած պետականէն հոգւոյն ի ջանեն յեկեղեցի սուրբ: Եւ երեք են որք առնու զայս շնորհս եւ ներգործեն յայլս. այսինքն, քահանայապետն քահանայն եւ սարգաւազն: Եւ երեք են դարձեալ որք ընդունին զսա եւ կրեն յինքեանս զայս շնորհս. այսինքն է՝ որք մաքրին, եւ լուսաւորին, եւ կատարելագործին: Յաղագս այսորիկ. դասք են աստիճանք եկեղեցւոյ յերիս երրակս որոշեալ: Առաջինն է կաթողիկոսն՝ եպիսկոպոսն՝ եւ քահանայն: Երկրորդն՝ սարկաւազն՝ դպիրն՝ եւ կղերիկոսն. զայսոսիկ հոմ անւամբ պաշտօնեայ կոչէ: Երրորդն՝ են միայնակեացք որք կոչին կամարարք. եւ

սուրբ վուրդն. եւ երախայն որ դեռեւս մկրտութիւն. գայսոսիկ նուիրեալս կոչէ: Ապա թէ եւ գապաշխարօղսն ի թիւ կալցես՝ կաթուղիկոսն լինի տասներորդ. որպէս Աստուած տասներորդ է ի վերայ ինն դասուց հրեշտակաց. այս ըստ սրբոյն Դիոնիսեայ: Իսկ ըստ այլ վարդապետաց՝ իբր ի ներքուստ ի վեր: Առաջին եւ ներքին՝ Է դռնաբացօղն: Երկրորդ՝ ընթերցօղն: Երրորդ՝ երդմնեցուցիչն: Չորրորդ՝ ջահնկայն: Յինգերորդ՝ դպիրն: Վեցերորդ՝ սարկաւազն՝ քահանայն: Ութներորդ՝ եպիսկոպոսն: Իններորդ՝ կաթուղիկոսն. որ է ընդհանուր պարունակօղ ամենայն կարգաց: Ծանիր եւ գայս. զի զիւրաքանչիւր զգործ սոցա ասացեալեմք յայլ ուրեք ի բանն որ ասէ. (վասն այսորիկ է օծ զքեզ Աստուած քո.) անդ գիտ: Այլեւ գիտելի է՝ զի որք նուիրին ի կարգ ինչ՝ նախ մաքրեցեն զգագաթն բոլորակ. եւ զհերսն չափաւորեալ. հոլանի եւ անօգտի անկցին առաջի քահանայապետին ի դուռն եկեղեցւոյն: Եւ քահանայապետն հարցանէ զարժանաւորութիւն. եւ խոստովանահայրն վկայեցէ արժանի գոլ: Եւ ինքն նւիրեալս յանձն առնու զկանոնս եպիսկոպոսին: Նախ զհրաժարականն. եւ ապա զյանձն առնու զկանոնս եպիսկոպոսին: Նախ հրաժարականն. եւ ապա զյանձնառկանն: Եւ խաչակնքէ ի վերայ նւիրելոյն. եւ կա եւ կտրեցէ խաչանման զհերոսն ասելով յանունն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ: Եւ տայ զբանալին եկեղեցւոյն ի ձեռն ասելով. առ քեզ իշխանութիւն ի հոգւոյն սրբոյ բանալ զդրունս եկեղեցւոյ: Եւ սարկաւազ որ մերձն է առնու զբանալին ի ձեռաց նուիրելոյն. նոյնպէս եւ զամենայն կարգն այսպէս տացէ: Եւ գայս առաջինս՝ միայն ի դուռն եկեղեցւոյն: Իսկ գայլսն ի մէջ եկեղեցւոյն աստիճանաւ յառաջ փոխելով: Եւ զդպիրն ի ներքին բեմն աստիճանի. իսկ զսարկաւազն ի վերին բեմն մերձ սեղանոյն որպէս ասելոց եմք: Եւ գայս գիտելի է՝ զի մինչ ի չորս աստիճանն՝ հրաման է ամուսնութեան. իսկ դպրացն կարգի որ է հինգերորդն՝ ոչ գոյ հրաման ամուսնութենէ. որպէս եւ ոչ սարգաւազին որ է վեցերորդն: Իսկ թէ վասն Է՞ր հինգ կարգ է մինչ ի սարկաւազն. եւ նա վեցերորդ: Այսպէս ասէ սուրբն դիոնեսիոս, եթէ մաքրելիք են հինգ դասք՝ յորոց վերայ իշխէ սարկաւան. եւ գործէ զմաքրողականն: Արդ առաջին է արտաքս հանել յեկեղեցւոյն զոչ մկրտեալս, եւ զախտացեալս մեղօք. եւ գայս առնէ դռնապանն: Երկրորդ՝ ուրացօղն. եւ սոցա քարոզէ ընթերցօղն: Երրորդ՝ այսահարն. եւ գայս բժշկէ երդմնեցուցիչն: Չորրորդ՝ որք կիսակատար դարեալք են ի մեղաց. եւ զսոսա լուսաւորէ ջահընկալն: Յինգերորդ՝ որք բոլորովիմք զղջացեալք եւ թողեալք են զմեղս եւ որգեն զբարիս. զնոսա հովուէ դպիրն սաղմոսիւք եւ ալելուիւք: Իսկ վեցերորդ՝ սարկաւազն ի վերայ ամենեցուն առհասարակ քարոզ է եւ իշխէ ժողովրդեանն, եւ ներքին դասուցս որպէս ասացաք: Իսկ ի կարգ եկելոցն՝ հարկաւոր է վեց իր: Նախ զի՝ իցէ արու: Երկրորդ՝ զի իցէ մկրտեալ: Երրորդ՝ զի իցէ անարատ ի հոգի եւ մարմինն: Չորրորդ՝ զի իցէ եպիսկոպոս: Յինգերորդ՝ բանն որ ասէ. աստուածայն եւ երկնաւոր շնորհ: Վեցերորդ՝ զգեստն եւ մեռոնն: Արդ՝ յարարողութիւն օրհնելոյն՝ վեց ինչ հասարակ է երեք կարգացն. այսինքն քահանայապետին քահանային եւ սարկաւազին: Նախ՝ առաջի սեղանոյն մատուցումն: Երկրորդ՝ ծուկն դելն: Երրորդ՝ ձեռնադրելն: Չորրորդ՝ խաչատեսակ կնիքն: Յինգերորդ՝ վերաճառութիւնն աստուածային եւ երկնաւոր շնորհ: Վեցերորդ՝ ողջունելն ի կատարումն: Իսկ առանձին եւ յատուկ՝ եպիսկոպոսին աւետարան դնելն ի վերայ գլխոյ՝

քահանային. Եւ նորա երկու ոտիւք ծունր դնելն. սարկաւագին մի ոտամբ: Որ նշանակեն սոքա թէ, մի քան զմի բարձր են աստիճանաւ: Չի որպէս աւետարանն յինքն ժողովեալ ունի զամենայն կտակս, եւ կատարումն է նոցա. նոյնպէս եւ քահանայապետն յինքն ժողովեալ ուն զմաքրելն՝ զլուսաւորելն՝ եւ զկատարելն. եւ կատարումն է ամենայն աստիճանաւորացն: Եւ որպէս աւետարանն ի յինքն գրեալ ունի զամենայն գործն Քրիստոսի եւ զվարդապետութիւն. նոյնպէս քահանայապետին պարտ է յինքեան բերել զգործն Քրիստոսի եւ զքարոզութիւնն. զի բանիւ ուսուցէ զԱստուած այրին հանճարս եւ զիմաստս՝ եւ գործով ցուցանէ: Իսկ որ ի վերայ գլխոյն ունի՝ իբրթէ անընդմիջաբար առնու զշնորհս եւ զիշխանութիւն ի Քրիստոսէ. որպէս առաջին դասք սերօքեից քերօքեից եւ աթոռոցն: Եւ դարձեալ՝ իբրթէ ես զլուիս եմ ամենայն աստիճանաւորաց. եւ նախ յիս գայ շնորհն. եւ ինեւ ի ձեզ հեղու. ըստ այնմ. (որպէս իւղ զի իջանէ ի գլուխ եւ այլն:) Իսկ քահանային երկու ոտիւք ծունր կրկնելն. զի ունի երկու իշխանութիւն. այսինքն լուսաւորել եւ մաքրել: Այլեւ առնու իշխանութիւն պատարագ մատուցանել. եւ դրոշմել. ուստի յայտի որ զձեզս մեռնեն քահանային: Իսկ սարկաւագին՝ մի ոտամբ ծունր դնելն. զի մին ունի իշխանութիւն. այսինքն, մաքրելոյ միայն: Որեւ ուրարն եւ բազպանն ի մին կողմն ձախոյ՝ կիսակատա ունելով զլուծն եւ զգործն: Իսկ թէ զի՞նչ նշանակեն սոքա: Առաջին հասարակն ի սեղանն մերձիլ Գ դասուցն: Սեղանն Յիսուս է որպէս ասացաւ. իսկ երեք դասքն մերձ սեղանոյն՝ որպէս աթոռքն քերօքեքն սերօքեքն շուրջ զԱստուծով: Չի սարկաւագն որ է մաքրող՝ ի սերովբէն եւ ի դէմք սուրբ հոգւոյն ակնարկէ: Իսկ քահանայն ի քերովբէն եւ ի Քրիստոս: Իսկ քահանայապետն՝ զաթոռոցնն եւ զհօր Աստուծոյ: Իսկ ծունր դնելն՝ զբոլորովին կեանս եւ զկամս մեր. այսինքն է, զմարմին եւ զոգի ի հնգանդութիւն տալ Քրիստոսի: Դարձեալ՝ ծունկն եւ ձեռքն եւ գլուխն յերկիր խոնարհեալ՝ ցուցանէ զամենայն ընթացս մեր եւ զգլուծ եւ զգգայարանս մատուցանել Քրիստոսի: Դարձեալ՝ երեք կարգ են զորս նուիրեմք Քրիստոսի. մաքրելով, լուսաւորելով, եւ կատարելով: Եւ որպէս մաքուր է զազաթն. նոյնպէս զհոգի եւ զմիտս մեր եւ զգայարանս սրբել խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ: Եւ որպէս սուրբ է սեղանն՝ եւ սուրբ է քահանայապետն՝ եւ սուրբ է եւ երկնային շնորհք. նոյնպէս եւ զմեզ սրբութեամբ արժանիս կացուցանել: Իսկ ձեռն դնելն՝ որպէս եւ Քրիստոս ձեռն եդ ի վերայ աշակերտացն եւ օրհնեաց զնոսա: Նախ՝ նշանակէ զհայրական հովհաննին իբր ի վերայ սիրելի որդւոյ: Երկրորդ՝ ի թշնամեացն պարսպէ: Երրորդ՝ զշնորհաց բաշխումն որ ի յաջոյն: Չորրորդ՝ զգօրութիւնն որ ի ձեռցացն. ըստ այնմ, (ձեռն իմ ընկալցի զնա:) Զինգերորդ՝ զգործն սուրբ. զի ձեռն գործոյ է նշանակ: Վեցերորդ՝ զաւանդն տայ ի նա. եւ խրատէ ուսանիլ եւ պահել: Տես ասէ՝ զինչ առեր զգործ՝ զնոյն եւ պահեսցես. որպէս ես ընկալայ եւ քեզ աւանդեմ: Այլ աստ գիտելի է՝ զի սարկաւագն ոչ աջ տալ. այլ միայն քահանայն եւ եպիսկոպոսն: Եւ յայտ է ի չորից: Նախզի՝ սարկաւագի ձեռն ոչ մեռնի. այլ քահանային: Երկրորդ՝ զի սպասաւոր է եւ ոչ կատարող գործոյն. այլ քահանայն կատարէ զաստուածագործութիւնս: Երրորդ՝ զի սարկաւագն ոչ կարէ թողուլ զմեղս. այլ միայն քահանայն ունի իշխանութիւն արձակելոյ: Չորրորդ՝ զի Թօմայի նախ աւանդեցաւ քահայութեան իշխանութիւն. եւ ապա այլ առաքեալքն խոնարհեալ գլխով

համբուրեցն գաշն որ յաստուածացեալ մարմինն հպեցաւ: Իսկ խաչատեսակ կատարումն հերաց գլխոյն՝ որ նշանակեցաւ ի հատումն հերացն Մելքիսեդեկի ի ձեռն Աբրահամու: Նախ ցուցանէ հատանել գաւելորդ ցանկութիւնն ի չորս իրաց. այսինքն, ի զգայարանացն, եւ ի յիշողութեանցն, եւ ի կամացն: Այլեւ ի բաց ընկենուլ զգանազան պատահումն մեղաց՝ որ լինի ի սատանայէ. զի հերն պատահումն է: Երկրորդ՝ նշանակէ ընդ անմեղութեանն զոր ունի կուսութեամբ եւ այլովք՝ եւ զխաչ չարչարանացն յինքն բերել եւ համբերել. որպէս Քրիստոս զի ոչ արար մեղս. եւ ի վերջոյ չարչարանաց եւ խաչ համբերեաց: Յաղագս որոյ եւ զանբիծս ասեն որ մեռելոյ է. իբրթէ մեռեալ են աշխարհի. զի կեցցեն ընդ Քրիստոսի: Եւ այն զի ի գլուխն նկարի: Նախ ցուցանէ զկամաւ հնազանդութիւն մեր անգործ մնացեալ մեղացն եւ խաչեալ. որպէս ինքն Քրիստոս (հնազանդ եղել մահու չափ եւ մահու խաչի:) Երկրորդ՝ զի այսու քրիստոսատեսակ լինիմք. զի սովոր են պատկերագոծք ի գլուխն փրկչական խաչ նկարել. որ ցուցանէ նախ թէ՛ կատարումն ամենայն տնօրէնութեանն՝ խաչն եղել: Երկրորդ թէ՛ խաչն է փառք փրկչին մերոյ. ըստ այնմ, (չեւ էր հոգի՝ զի Յիսուս չեւ էր փառաւորեալ.) այսինքն, խաչեալ: Երրորդ թէ՛ քահանայ է եւ թագաւոր Քրիստոս. վասն այն ընդ թագին խաչ նկարի: Չորրորդ՝ զի կամաւ հնազանդեցաւ խաչ եւ չարչարանաց. վասն այն ի գլուխն է նկարեալ: Յինգերորդ՝ փշեղէ պսակն որ ի խաչին ի գլուխ էր. այսպէս եւ քահանայն քրիստոսատեսակ. զոր ցուցանէ բոլոր հերն եւ հատումն խաչատեսակ: Իսկ վերատեսակ: Իսկ վերաճառութիւնն որ ասէ. աստուածային եւ երկնաւոր շնորհ երեք անգամ ձայնիւ. եւ մինն ի թիւ: Եւ յորժամ ձայնիւ երգեն, քահանայապետն զդեմս յարեւելս առնէ. եւ նուիրեալքն յարեւմուտս ի քահանայապետն: Եւ յորժամ իթիւ կարդայ, նւիրեալքն դառնան յարեւելս. եւ քահանայապետն յարեւմուտս ի դեմս նոց ձեռն դնելով տայ զիշխանութիւն եւ զշնորհս: Նախ ցուցանէ թէ տուողն իշխանութեանց հոգին սուրբ է. ուստի հայցէ զշնորհս: Այլ եպիսկոպոսն սպասաւորէ եւ միջնորդ. որպէս խողովակն առնու զջուրն յաղբերէն՝ եւ անցուցանէ ի մեզ: Դարձեալ՝ ցուցանէ թէ ընտրեալն եւ կոչեալն Աստուծոյ է եւ ոչ մարդոյ. այնմ, (որ յառաջ քան զլինիլն աշխարհի ընտրեաց եւ կոչեաց եւ արդարացոյց որպէս գրէ առաքեալն:) Եւ յայտ է ի չորից օրինակաց: Նախ զի՝ Մովսէս ոչ է Աստուած զԱհարօն ի քահանայութիւն, մինչ յԱստուծոյ եղել հրաման թէ, (առցես զԱհարօն եղբայր քո առ խորանն վկայութեան. եւ օծցես ի քահայս:) Նմանապէս եւ Տէր մեր Քրիստոս՝ (ոչ անձին շուք եռ, այլ որ խօսեցան առ նա հայր թէ, դու ես քահանայ յաւիտեան:) Եւ դարձեալ՝ որ ետ իշխանութիւն առաքելոցն քահանայութեան՝ ի հոգին սուրբ վերագրեր զկատարումն: (Դուք մկրտեսչիք ասէ հոգւովն սրբով. եւ նստարուք ի քաղաքիդ, մինչեւ առնուցուք զգօրութիւն եւ զաւետիս հօր որ է հոգին սուրբ:) Նոյնպէս եւ գլուխ առաքելոցն Պետրոս՝ ոչ իւրով իշխանութեամբ կարգեաց զՄատաթիա ի թիւ երկոտասանիցն. այլ երկիւղիւ հայցեր յԱստուծոյ վիճակաւ. այսինքն, աստուածային յայտնութեամբն: Չի վիճակն ոչ այլ ինչ է, այլ աստուածային յայտնութիւն. որ ազդեաց յառաքեալսն զՄատաթիան կարգել ի վիճակն յոր անկաւ Յուդա. եւ ել Մատաթիա ի նոյն կարգն եւ ի թիւ երկոտասանիցն: Սոքա ամենեքեան ցուցանեն թէ՛ ոչ է եպիսկոպոսն ըստ իւրոց կամացն ընտրող զոր կամի. (այլ զոր Տէր կամի եւ

ընտրե:) Վասն այն ասէ. աստուածային եւ երկնաւոր շնորհն կոչէ զքեզ: Իսկ թէ ոք զանարժանս վասն արժաթոյ ընտրեսցէ, այնպէս է, որպէս թէ ոք կամացն Աստուծոյ հակառակ է. եւ զոր հոգին սուրբ ընտրեաց՝ նա խոտէ. եւ զոր խոտեաց, նա ընտրէ: Այլեւ (խոտան են այնոքիկ՝ ոյք ընտրեալ են արժաթով:) եւ որ ձեռնադրէ զանարժանս՝ կցորդ լինի յանցանաց նոցա. որպէս ասէ առաքեալն. (ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցես եւ այլն:) Իսկ սուրբ ողջոյնն ի կատարումն քահանայապետին եւ քահանայիցն՝ նախ նշանակէ որ այս անուն նուիրեալս կոչմամբ Աստուծոյ սրբեցաւ. եւ պատկերն Աստուծոյ գեգեցկացաւ ի նմա: Վասն որոյ սիրելի է մեզ ամենեցուն եւ ողջունելի: Երկրորդ՝ զի համակարգ եղել մեզ եւ հաւասար: Երրորդ՝ զի զօրութեամբն Աստուծոյ յաղթեաց հակառակորդին. եւ զինուոր եղել Քրիստոսի. վասն որոյ բարձրացուցանեմք եւ պատուեմք. որպէս զյաղթող ըմբշտամարտս եւ զնհատակս: Դարձեալ՝ զուրախութիւն սրտից մերոց նշանակէ սուրբ ողջոյնն. եւ զմիաւորութիւն հոգւոց մերոց առ միմեանս եղբայրական սիրով: Եւ արդ եղբարք՝ տեսէք եւ ի միտ առէք թէ, որպիսի գործոյ լինիք սպասաւոր. զի աստուածագործութիւն անանդի ձեզ. եւ Աստուած հուր ծախիչէ. պարտ է ունելեօք ըմբռել զհուրն. եւ ո՞ր է ունելիք. այսինքն, սրբութիւն: Չի Աստուած սուրբ է. եւ սրբութեամբ արժանաւորիմք սրբոյն. զի սուրբն՝ յանսուրբ տեղւոջ ոչ բնակի: Եւ հոգին սուրբ փախչի ի նենգութենէ մեղաց. տեսէք զի միջնորդ լինիք Աստուծոյ եւ մարդկան: Պարտ է ձեզ հաշտ լինել ընդ Աստուած. եւ ապա զԱստուած հաշտեցուցանել ընդ մարդկան. հրեշտակք էք Աստուծոյ առ մարդիկ. նման եղերուք բարի հրեշտակաց. եւ ոչ չարին սատանայի: Ճրագ էք վառեալք ի տան Աստուծոյ. մի ծուլութեամբ եւ ախտիւք շիջուցանէք զլապտերս հոգւոց ձերոց. զի մի ընդդդ յիմար կուսից արտաքոյ մնայք յառագաստէ փեսային: Այլ արթնութեամբ եւ արիութեամբ ընդ իմաստուն կուսանացն՝ արժան լիցուք երկնաւոր հարսանեացն: Աղէք նեխեալ մարմնոց ժողովորդեանն. մի գիջութեան սրտիւք անհամիցիք եւ ընկեցեալ արտաքս կոխան լինիցիք ի մարդկանէ: Դէտ էք կարգեալ տանն Աստուծոյ. յոր ժամ տեսանիցէք զսուրն եկեալ՝ զգուշացուցէք զժողովուրդն. զի մի զարին նոցա ի ձեռաց ձերոց խնդրեսցէ Աստուած: Հովիւ էք բանաւոր հօտին Քրիստոսի. մի միայն զկիթնն առնոյք եւ զասրն. եւ զոչխարացն անփոյթ առնէք. այլ բարեպէս հովեցէք յարօտ կերակրոյ. եւ ի ջուր հանգստեան սնուցէք առաջնորդելով յեկեղեցիս: Չկարդացեալս յօրէնս, եւ զկուրացեալս ի հաւատս, եւ զբորոտեալս ի մեղս, սրբեցէք եւ բժշկեցէք. եւ միխթարութեան բանիւ տածեցէք: Չի յետ աստեացս՝ յերկնաւոր փարախն առ քաջ հովապետն ժողովեսչիքի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ միայնակեցաց, ի բանն՝ (Որ ոչ թողու զհայր կամ զմայր՝ զայլն:) Ղու. 14.27: (Գլուխ. ԼԹ)

Որպէս ասէ սուրբն Դիոնեսիոս. Յաստուածայետական բարերարութեան՝ մարդասէրն կամաց՝ երեք շնորհք անշփոթելիք իջանեն յեկեղեցի սուրբ. այսինքն է, մաքրողականն, եւ լուսաւորականն եւ կատարողականն. ի հօրէ՝ եւ յորդոյ՝ եւ ի հոգւոյն սուրբոյ որպէս ասացաւ: Իսկ ոմանք յեկեղեցի առնուն զայս շնորհս եւ ներգործեն զայլս. որպէս

քահանայապետն՝ քահանայն՝ եւ սարկաւազն: Եւ սարկաւազն մաքրէ. քահանայն լուսաւորէ. եւ եպիկոպոսն կատարէ: Իսկ ոմանք որք ընդունին միայնն գշնորհս՝ եւ ոչ ներգործեն յայլս. որպէս մաքրելիքն որք կարօտ են մաքրութեան. լուսաւորելիքն որք են սուրբ ժողովուրդք. եւ կարտարելիքն որք են միայն ակեացք: Արդ՝ ներքին եւ առաջին մաքրելիքն՝ կարգ են հինգ: Առաջին երախայքն. որք դեռեւս ոչ են ընկալեալ զհոգեւոր ծնունդն. եւ ոչ կերպացեալ զաստուածային կերպն. որք դայեկին զքառասներորդ օր յարգանդ եկեղեցւոյ, միչեւ առցեն զաստուածային զկերպարանն: Երկրորդ՝ են ուրացողացն, որք թերացան ի հաւատոցն Զրիստոսի՝ եւ դարձեալ դարձան ի սուրբ եկեղեց. եթէ մկրտեալք են յուղղափառաց, ոչ է պարտ մկրտել զնոսա. այլ միայն զդաւանութիւն հաւատոյն խոստովանիլ. եւ զառաջին գործսն ուրանալ. եւ մուծանիլ յեկեղեցի: Այլ թէ ի հերձաւածաց ոմանց՝ պարտ է մկրտել կամ դրոշմել զնոսա: Երկրորդ՝ են այսհարք. որք վասն ծուլութեան՝ զարհուրեալք են ի դիւաց. պարտ է մաքրել պահօք եւ աղօթիւք. եւ աւետարանաւն սուրբ եւ աստուածային անուամբն զնոսա: Չորրորդ՝ որք դարձեալ են ի մեղաց եւ խոստովանեալ զյանցանս, այլ ի միտս ունին դարձեալ գործելոյ, պարտ է զխոստովանեալ մեղս թողուլ. եւ ապաշխարութեամբ պարսպել զնոսա. զի մի դարձեալ գործեսցեն: Հինգերորդ՝ որք ամենեւիմբք զղջացեալք են ի մեղաց եւ ի բաց թողեալ եւ գործեն զբարիս. եւ պարտ է զնոսա մաքրել ի մեղաց եւ թողութիւն շնորհել. եւ կարգել զապաշխարութիւն. զի փոխանակ չար գործոցն ուստի սրբեցան եւ դատարկացան՝ զանազան բարիս ամբարեսցեն յինքեանս եւ պսակեսցին: Այսքան են մաքրողացն կարգ: Իսկ լուսաւորեալք որք են միջին՝ եւ սուրբ ժողովուրդք որք ոչ են կարօտ մաքրութեան վերոյ ասացելոցս. այլ մկրտեալք են. եւ անշարժ մնացեալք ի հաւատս: Եւ արիութեամբ ի գործս պատւիրանացն. ի պահս եւ յաղօթս. յողորմութիւնս եւ այլս: Սոքա կոչին տեսօղք. զի տեսութեամբ պատարագին եւ այլ խորհրոցն արժանաւորին: Իսկ վերնագոյն կարգ սոցա են միայնակեացք՝ կոչին կամարարք ըստ գործոյն ունելով զանունն. զի ուրացեալք են զկամս իւրեանց. եւ առնեն զկամս Աստուծոյ եւ զառաջնորդին: Իսկ վասն միայնակեացցն. այսինքն, որք են մաքուր եւ պարզ եւ հոգեւոր. որք կոչին միայնակեացք. զի ի բազմբաժին կենցաղական կենաց հրաժարրեալք: Նախ կոչի միայնակեաց՝ զի միայն կեայ. (ուրացեալ զհայր եւ զմայր. զկին եւ զորդիս եւ զայլսն ըստ հրամանի Տեառն:) Երկրորդ՝ զի միայն կեայ յաղօթելն առանձնակի. զի հասարակ աղօթքն քահանայից է եկեղեցւոյ: Երրորդ՝ զի միայնացուցեալ զմիտս ի զգայարանացն, միայն յԱստուծ հպի. թողեալ զայլ արարածս արտաքոյ: Չորրորդ՝ զի միայն զհոգին կեցուցանէ. եւ զմարմին սպանէ: Հինգերորդ՝ զի ի կրկին կենաց՝ միայն զանտի կեանսն ստանայ եւ ոչ զայս. ըստ որում, (աշխարհի ինձ ի խաչ ելեալ է, եւ ես աշխարհի:) Վեցերորդ՝ որպէս ասացաք. զի զմի կամս ունիցին ամենեքեան. այսինքն, զառաջնորդին. եւ ոչ առանձնակի եւ կողմաւոր: Չի կամարար լսի միայնակեացն. այսինքն, զի արասցէ զկամս Աստուծոյ. ընդ նմին եւ զառաջնորդին: Արդ՝ սոքա միայնակեացք՝ կրկին իրօք բարձրագոյնք են քան զամենայն կարգս լուսաւորելոց եւ մաքրելոց: Նախզի՝ մաքրելոց դէմքն՝ առ սարկաւազն են. եւ լուսաւորելոցն առ քահանայն. իսկ սոցա կատարելոցս՝ առ քահանայապետն. թեպէտ ի քահանայէն առնուն զկարգ եւ զօրինութիւնս:

Երկրորդ՝ զի ամենեւիմբ մաքրեալք են. այսինքն, մտօք, հոգւով, եւ մարմնով: Եւ ոչ միայն տեսութեամբ լուսաւորեալք, այլ ի գերագոյն հանճարս եւ ի յիրս խորհրդոյն բարձրացեալք եւ հաղորդեալք: Արդ՝ սոքա առհասարակ անուամբ կոչին արեղայք. որպէս կոչեմք քահանայք. այլ բաժանին յերկու դասս. ոմանք են մոնոզոնք. եւ ոմանք են կրօնաւորք: Արդ՝ մոնոզոնք են ներքին եւ փոքունք. որպէս սարկաւագունք. որք միայն խոստանան զկուսութեամբ կեալ. եթէ յարանց եւ եթէ յարանց եւ եթէ ի կանանց: Եւ սքեմաւորք են վեհագոյնք. որպէս երիցունք. որք ոչ միայն զկուսութիւն յանձն առնուն, այլեւ ի մսամոլութենէ եւ ի գին յմպպութենէ պահօք եւ տքնութեամբ չարչարին. եւ ի խաչ հանեն զանձինս վասն Քրիստոսի: Արդ՝ նուիրեալքն ի կրօնս ինչ՝ զան ի դուռն եկեղեցւոյն առ քահանայն, որ է հայր վանիցն հոլանի եւ անգօտի. այսինքն բաց գլխով եւ դօտելոյծ: Որ ցուցաւ՝ զսեր աշխարհիս ի բաց եմ լքեալ յանձնէ. եւ մերկացեալ յամենայնէ. եւ ոչ ունիմ պատուակ ինչ եւ մարմնական ծածկոյթ մեղաց. այլ բաց եւ յայտնի ունիմ: Եւ տանին յեկեղեցին մոմեղէն ի ձեռն. ոչ մի ոտամբ ծունր կրկնել որպէս սարկաւագն. եւ ոչ երկու ոտիւք որպէս քահանայն. եւ ոչ աւետարան ի վերայ գլխոյն որպէս եպիսկոպոսին: Այլ մերձ կանգնին յետոյ քահանային. եւ զգլուխն ի խոնարի ունին: Չայս ցուցանէ թէ, ոչ ունին կարգ յայլս ներգործել. ոչ մաքրել զայլս որպէս սարկաւագն. եւ ոչ լուսաւորել որպէս քահանայն. եւ ոչ կատարել որպէս եպիսկոպոսն. այլ ինքն առ ինքեան ներգործել. եւ կրել ի յինքն եւ ոչ ի յայլս: Ապա ուրեմն միայնակեացն ոչ իշխէ աւետարան ընթեռնուլ. եւ ոչ բուրվառով խունկ արկանել. եւ ոչ մաքրել եւ ոչ քարոզել: Չի սոքա սարկաւագացն եւ իշխանութիւն, ապա ուրեմն եւ ոչ քահանայագործել. ոչ մկրտել եւ ոչ պատարագել կամ պսակել: Եւ ոչ կարէ թողուլ զմեղս. եւ ոչ խաչ տալ. եւ ոչ որ ինչ քահանայիցն է գործ: Այլեւ ոչ որպէս եպիսկոպոսն գաւազանաւ ունիլ, կամ կարգ տալ. կամ առնուլ զկարգ քահանայի. կամ իշխել հրամանաւ ի վերայ քահանայից կամ սարկաւագաց: Իսկ մերձ քահանայիցն՝ ցուցանէ թէ բազում իրօք հեռացեալ է յաշխարհական կենաց եւ մերձ կացեալ քահանային. պարտի նմանապէս քահանային աղօթել պահել եւ աստուածատեսակ լինիլ: Եւ ապա դառնայ քահանայն ի նուիրեալն եւ հարցանէ զնա. նախ հրաժարիլ յամենայն կենցաղականաց. եւ ապա յանձն առնուլ պահել զամենայն լուծ պատիւրանաց. եւ նա խոստովանի եւ յանձն առնու պահել զամենայն: Եւ թէպէտ բազումք են հրաժարականք ըստ մասին՝ սակայն յերիս գլխաւորին: Նախ ի սիրելեաց հրաժարիլ. այսինքն, ի ծնողաց, ի ծննդոց, ի կնոջէ, եւ յեղբարց եւ յայլոցն. որպէս հրամայեաց Քրիստոս վասն այսպիսեացս զկանոնն. (եթէ ոք ոչ ուրանայ զհայր եւ զայլս, եւ առնու զխաչ եւ զայ զհետ իմ:) Երկրորդ՝ հրաժարի ի մարմնական ընչից ի հայրենեաց, ի վաճառոց եւ ի շահից, եւ յայլոցն. (զի ոչ կարէք ասէ Աստուծոյ ծառայել եւ մամոնայի:) Երրորդ՝ հրաժարի ի հեշտութեանց. այինքն, յատելոյ. իննջելոյ. ի տեսութեանց. ի զգեստից. ի ծուլութեանց. ի ձանձրութեանց եւ յայլոցն: Այսոքիկ մարմնական հրաժարելիք: Իսկ հոգեկան դարձեալ հրաժարի յերից: Նախ ի կամաց. զի ոչ իցէ Տէր կամաց իւրոց: Երկրորդ՝ ի չար խորհրդոց. զի միտս անզբաղ պահեսցէ յամենայն ցնորից: Երրորդ՝ ի հպարտութեանց. իսնափառութեանց, ի նախանձու. ի քիւնոյ. յատելութեանց եւ յայլոց: Յայսքանեացս զհրաժարումն խոստովանի առաջի քահանային եւ ուխտ

Աստուծոյ: Եւ քահանայն խաչակնքէ եւ դրոշմէ իբր Քրիստոսի եղեալ: Ապա առնու զկտրոցիկն ինքնին ձեռամբ. եւ տայ ի քահանայն. եւ նա կտրէ զհերս խաչանման ի հինգ տեղոջ. ի ճակատն. ի գագաթն. ի յիշողականն. եւ մերձ ի լսելիսն: Եւ մաքրեն զգագաթն բոլորապէս: Եւ այն է խորհուրդն որպէս ասացաւ յարարողութիւնմ քահանային. այսինքն, կտրել զամենայն զամենայն ցանկութիւնս եւ զգեղեցկութիւն մարմնոյ. եւ զպճնիլն ոչ ընդունիլ եւ օծանիլ եւ հիւսեալ զհերս: Չ որպէս գարշ հոտ գարշ մարմնոյ է նշանակ. Նոյնպէս եւ պճնիլն զցանկութիւն ախտին որ ի սիրտն է, յայտնի առնէ: Իսկ զգեցուցանելն հանդերձ ըստ պատշաճին զլզլեկ եւ խոշոր՝ ցուցանէ թէ որպէս փափուկ զգեստն ի խոշորն փոխեցաւ: Նոյնպէս եւ զվարս աշխարհական կենաց՝ ի խիստն եւ ի խոշորն փոխարկեցէ: Չի բազում ինչ ունին աշխարհական անմեղադրելիք. զորս ոչ է պարտ առնել նոցա. այսինքն, որպէս հալալ ամուսնութիւն. որդեժնութիւն. փափուկ զգեստ. ուտել եւ ըմպել. հայրենիք եւ ստացածք. վաճառք եւ շահք. զորս թէ առնեն կրօնւորք՝ մեղանումք է նոցա: Արդ՝ մոնոզոնն ունի Ե զգեստ: Նախ՝ քուսիթ այն ի գլուխն. որ է ծֆուլն, որ նշանակէ զշորհսն Քրիստոսի ի գլուխն ի ջեալ որ է պատուական մասն անդամոցն. եւ բոլորն՝ զի բոլորապէս զհոգի եւ զմարմին պահպանէ շնորհքն Աստուծոյ: Երկրորդ՝ հանգերձն նեղ ստորոտիք՝ որ է խոշոր վանքն, նեղ եւ անծուկ ընթացքն: Երրորդ՝ գօտին ի զսպումն ցանկութեան երիկամաց: Չորրորդ՝ հողաթափոյս՝ ի նշանակ արիութեան: Հինգերորդ՝ քառակուսի թիկնոցն՝ նշանակ խաչին: Իսկ կրօնւորն է սքեմաւորն՝ ունի չորս զգեստ անելի, այսինքն, զկնկուղն առանց խաւոյ որ է սպիտակ ծիրն. որ նշանակէ զծածկիլն ամենայն զգայարանաց: Եւ միտս զսպելն իյերկրէ. եւ միայն յերկինս ուղղեալ: Այլեւ ունի զսքեմն ի վերայ ուսոյն խաչանման. որ նշանակէ զլուծ պատուիրանին. եւ զխաչն Քրիստոսի յուսն յիւր բարձեալ: Այլեւ զայծենի մաշկ՝ որպէս Ովհաննու եւ Եղիայի. որ է բնական զգեստ տուեալ մարդկայինս ազգի: Այլեւ զաղաբողն նափորտն վերրկեալ ծածկոյթ մինչեւ ի ստորոտն. որ նշանակէ զսեր եւ զխորհութիւն՝ որ է ծածկոյթ եւ զարդ ամենայն առքինութեանց: Այս հասարակ կարգաւորացն է զգեստ: Այլ որ գերագոյնքն են եւ խստակրօն ճգնութեամբ՝ որպէս հարքն եգիպտացիք՝ թեզանատ բաճկոնաւ եւ բոկ որտիւք ժուժկալին. իբրթէ զընթացս երկրաւոր եւ զգործս մարմնական ի բաց եմք մերկացեալ: Այս առաջին զանազանութիւն է մոնոզոնաց եւ սքեմաւորաց: Այլեւ դարձեալ ունին զանազանութիւն. զի մոնոզոնն՝ ի մեջ եկեղեցւոյն մերձ ի դուռն առնու զկարգ. իսկ սքեմաւորն՝ մեճ ի բեմն առաջի սրբոյ սեղնոյն: Է՛ եւ երրորդ զանազանութիւն. զի սքեմաւորն՝ մերձ քահանային ի ներքին բեմն ելանէ. եւ ձեռօք իւր հաղորդի. եւ մոնոզոնն ոչ: Այլեւ զհտելի է՝ թէ յաշխարհականաց գայցէ ի կրօնաւորութիւն, զայսպիսի կարգս կատարելի է: Իսկ թէ յերիցանց՝ կամ ի սարկաւազաց գայցէ ի կրօնաւորութիւն, ոչ կատարի այս կարգ ի վերայ նոցա. զի ունի զգերագոյնն կարգ. այլ միայն զհանդերձն փոխեցեն: Իսկ յետ այնորիկ սուրբ ողջոյնս՝ իբրթէ մեզ համակարգ եղեւ եւ զինուոր Քրիստոսի. սիրելի եւ հոգեւոր եղբայր մեր: Իսկ ի կատարումն հաղորդիլն ի սուրբ խորհրդոյն՝ նախգի ամենայն կատարմանց կատարողութիւն է սուրբ հաղորդութիւն. եւ առանց նորա այլքն անկատարք են: Եւ դարձեալ՝ որպէս քայանայն յաղորդեցաւ ի Քայանայապետէն. նոյնպէս՝ կրօնաւորն ի քայանայէն. զմի յաղորդութիւն

առ միմեանս նշանակէ ամենեցուն ի քահանայական կատարմունսն առ աստուածատեսակ նմանութիւն, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր.

որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Խ

Յայլմէ քարոզ վասն կարգի Քահանայութեան ի Բանս:(Քահանայք սուրբի լիցին. եւմի Գարշեցուցեն զանուն Տէրն Աստուծոյ իւրեանց, զի զպատարագն Աստուծոյ նոքա մատուցեն:) Ղեւտաց. 21. 6: (Գլուխ. Խ)

Վարդապետք ասեն թէ՛ ամենակալ Աստուած ոչ ինչ էթող յաշխարհս առանց կարգի: Չի որպէս ինքն կարգաւոր է. նոյնպէս զամնայն ինչ կարգաւոր կամի: Եւ նախ գտանի կարգ ի համագոյ սուրբ երրորդութիւնն. զի հայր անծին է. եւ որդիծունդ. եւ հոգին սուրբ բղխումն. եւ իւրաքանչիւր դէմն զիւրն անփոփոխ ունի: Երկրորդ՝ գտանի կարգ ի հրեշտակս. զի ամենայն հրեշտակքն՝ երեք պետութիւնք են. այսինքն, Աթոռք՝ Տրութիւնք՝ եւ Պետութիւնք. եւ իւրաքանչիւրքն՝ ունին երեք կարգ: Առաջին՝ են Աթոռք՝ Սերօբէք՝ եւ Քերօբէք ի մի քահանայապետութիւն: Միջին՝ Տրութիւնք՝ Չօրութիւնք՝ եւ իշխանութիւնք: Վերջին՝ Պետք՝ Յրեշտակապետք՝ եւ Յրեշտակք: Եւ այսպէս ամենայն երկնային զօրութիւնք՝ ինն դասք են բովնդակեալք, հազարաց. ի բիւրք բիւրոց. անգիտելի գոլ մեզ թիւ նոցա. այլ գիտեն ինքեանք՝ եւ արարիչ նոցա. (որ թուէ՛ զբազումութիւն աստեղց որպէս ասէ մարգարէն:) Երրորդ՝ գտանի կարգ եւ երկինս. զի երկինքն յերիս բաժանի. առաջինն է հրեղէն երկնքէն. որ ոչ ունի աստեղս. եւ անշարժ է եւ լուսաւոր. եւ կայաք է հրեշտակաց դասուց: Երկրորդ՝ է ջրեղէն կամարն. որ ոչ ունի բնաւ աստղ. եւ կոչի առաջին. զի նա շարժէ զամենայն երկինս: Երրորդ՝ է աստղաւոր երկինքն. եւ այս բաժանի յուրն մասն. ի հաստատութիւնն՝ որ ունիիի անթիւ աստեղս. եւ ի յետն աշխարհս մոլորակաց. որ իւրաքանչիւր ի նոցանէ՛ ունի մի մոլորակ: Որ վերինն է Երեւակն. Լուսնաթագն. Յրատն. Արեգակն. Լուսաբերն որ է արուսեակն. Փայլածուն. եւ Լուսինն ի ներքոյ ամենայնի: Չոր այլազգիք կոչեն անուն սոցա: Չոհալ. Մուշթարի. Մառէխ. Շամս. Չօհրայ. Օտարիտ. եւ Ղամար: Չորրորդ՝ գտանի կարգ եւ ի տարերսդ. զի իմաստասերքն ի չորս բաժանեցին. որք են հին են հիմն եւ բռն ամենայն մարմնաւոր գոյից: Առաջին՝ բոլորակութիւն հրոյն՝ որ պատեալ ունի զամենայն տարերս: Երկրորդ՝ օդն: Երրորդ՝ ջուրն: Չորրորդ՝ երկիրն ի ներքոյ ամենայնի. եւ ի մէջ ամենեցուն: Յինգերորդ՝ գտանի ի բոյսս եւ ի տունկս. որք ունին տնկական հոգի. որով կերակրի աճի եւ ծնանի: Կերակրիլովն մնայ նիւթն. աճիլովն անհատն. եւ ծնանելովն տեսակն եւ ազգն: Այլեւ ունին կարգ. զի բաժանի ի յարմատս եւ ի բունս. ի յոստս՝ ի տերեւս՝ եւ ի ծաղիկս եւ ի պտուղս: Վեցերորդ՝ գտանի կարգ եւ յանասունս. զի ունին զտնկական հոգին. որով կերակրին աճին եւ ծնանին: Այլեւ ունին զհինգ զգայութիւնս. որովք տեսանեն լսեն, եւ այլն. եւ ունին շունչ եւ բազում անդամս ըստ կարգի. որով շարժին եւ ընթանան ի տեղուցէ ի տեղիս: Եօթներորդ՝ կարգ գտեալ լին ի մարդիկ. որք ունին զտնկականն ընդ տնկոցն. եւ զզգայականն ընդ կենդանեաց. եւ զբանական հոգին՝ զմիտս եւ զկամս առաւելեալ ի վերայ

նոցա: Այլեւ գանազան կարգօք զարդարեալեն մարդիկ. զի ոմանք թագաւորք են. եւ ոմանք իշխանք: Ոմանք արուեստաւորք, եւ ոմանք երկրագործք: Եւ արդ՝ զի յամենայն ուրեք գտեալ լինի կարգ. ապա ուրեմն պարտ է զի եւ ի սուրբ եկեղեցիս լինին կարգք: Վասն այն ասեն վարդապետք. որպէս յերկինս եօթն են մոլորակք՝ որք վարիչք են եւ կարգաւորեն զգգալի աշխարհս. այսպէս յեկեղեցի սուրբ որ է իմանալի երկինք՝ գտանի եօթն կարգ. որք լուսաւորեն եւ կարգաւորեն զեկեղեցի Աստուծոյ: Արդ՝ ներքուստ ի վեր առաջին կարգ է դնաբացօղն: Երկրորդն՝ ընթերցօղն հին կտակարանաց: Երրորդն՝ երդմնեցուցիչն: Չորրորդն՝ շահընկալքն որք են մոմավառքն: Եւ այսօքիկ կոչին Դ փոքր կարգ. եւ մինչեւ ցայս կարեն լինիլ երիցունք աշխարհի: Եւ ետ այսորիկ՝ ոչ լինին. այլ մտանեն ի կարգ կուսութեան արեղայութեան: Յինգերորդն՝ է կէս սարկաւազն որ է դպիրն: Վեցերորդ՝ աւագ սարկաւազն: Եօթներորդն՝ որ բարձրագոյն է եւ սրբագոյն քան զայլ կարգս, որ է քահանայութիւնն: Վասն այն հրամայեաց Աստուած Մովսիսի (ասա ցորդիսն Ահարօնի. քահանայք իմ սուրբք լիցին. եւ մի գարշեցուցեն զանուն Աստուծոյ իւրեանց:) Եւ արդ՝ այս եօթն աստիճանքս սպասաւորաց եկեղեցւոյ՝ կոչին խորհուրդք կարգի: Եւ ի խորհրդոյս այս՝ երկու ինչ ասելի է: Նախ թէ՛ Զրիստոս զի՞նչ կամի ի սպասաւորաց եկեղեցւոյ: Երկրորդ՝ թէ զի՞նչ է եութիւն քահանայութեան խորհրդոյն. եւ զի՞նչ զարդարանք եւ պատահմունք նորա: Արդ առաջինն թէ՛ Զրիստոս զի՞նչ կամի ի սպասաւորաց եկեղեցւոյ: Գիտելի է զի կամի Զրիստոս որք սպասաւորք եկեղեցւոյ երեք ինչ ունիցին: Նախ՝ պարտ է զի քահանայքն պատուական լիցին ազգաւ. այսինքն եւ սնեալ ի գոգ եկեղեցւոյ ճշմարիտ հաւատով. ընտրեալ ծնողաց զաւակ. (զի ծառ բարի՝ պտուղ բարի առնէ եւ այլն. զի որ առնու կարգ եւ ճշմարիտ քահանայապետին Զրիստոսի սպասաւոր լինի, պարտ է զի ի քրիստոնէից ազգէ եւ յընտիր ծնողաց զաւակ լինի. որպէս ասէ կաթողիկէն. (դուք ազգ էք ընտիր. քահանայութիւն, թագաւորութիւն, ազգ սուրբ. ժողովուրդ սեփհական. որպէս զի զձեր առաքիւնութիւնսն նուիրիցէք այնմ, որ կոչեաց զձեզ ի խաւարէ ի յիւր սքանչելի լոյսն:) Երկրորդ՝ կամ Զրիստոս զի կարգաւորն լիցի այր կատարեալ եւ զօրաւոր հասակաւ մարմնովն եւ հոգւովն. եւ ոչ տղայ հասական, կամ անկատար մտօքն. զի ի հին օրէնսն՝ քսան եւ հինգ ամաց մտանէին ի կարգ քահանայութեան. զի քսան ամս զինուորաց է եւ քսան եւ հինգ քահանայից: Այսպէս եւ ի նորս պարտ է զոյ կատարեալ հասակաւ՝ որպէս ասէ առաքեալն. (մի մատաղ եւ մանուկ. զի մի ի դատաստան սատանայի անկցի:) Եւ դարեալ հոգեւորապէս քսան եւ հինգ ամաց լիցի. այսինքն, զի սիրեսցէ զԱստուած եւ զնկերս իւր. որ ցուցանէ քսան թիւն. եւ ի բաց թողցէ զհեշտութիւն հինգ զգայութեանցն: Երրորդ՝ կամի Զրիստոս զի քահանայն լիցի անարատ մարմնով եւ հոգւով. որպէս հրաւայեաց Աստուած Մովսեսի թէ՛ (ամենայն այր յորում իցէ արատ ինչ, մի մատուցանիցէ պատարագ ինձ:) Եւ երկոտասանք էին ի հնումն արատք մարմնապէս. այսինքն, Կաղ. Կոյր. Կարճունչ. Ականջատ. Ձեռնբեկ. Ոտնաբեկ. Սապատօղն. Շիլ. Պաղակն. Որ ունիցի քոս. Բաղկեղ. Կամ միորձի. մի մերձեսցի պատարագ մատուցանել Աստուծոյ: Եւ նախ պարտ է զայս ուսանիլ թէ՛ վասն Է՞ր զմարմնոյ արատս խոտէին ի հին օրէնս: Ասեմք թէ վասն երեք պատճառի: Նախզի՛ մի պակաս երեւեսցին քան զհետանսս. որք

խորե գմարմնոյ արատս: Երկրորդ՝ զ պատարագն զոր մատուցանէին՝ անարատք էին. զի այսպէս երկոտասան խորոթեամբ ընտրէին զպատարագն յոչխարաց եւ ի գառանց: Վասն այն պարտ էր եւ մատուցողացն անարատ լինիլ: Երրորդ՝ ի յօրինակ հոգեւոր արատոց ի նորս. զի որպէս անդ երկոտասանն արտաքն ի բաց ընկեցնուին ի կարգէ քահանայութեան եւ սարկաւագութեան. այսպէս ի նոր օրէնս՝ երկոտասան հոգեւոր արատն ի բաց մերժ ի ի կարգէ քահանայութեան: Առաջին արատաւորն կոյրն է. որ նշանակէ զտգետն որ կոյր է մտօք. զի յոյժ անպատշաճ է որ տգետն քահանայութիւն արասցէ: Չի ասէ Մաղաքիա. (շրթունք քահանային զգուշացին գիտութեան. եւ օրէնք ինդրեցին ի բերանոյ նորա. զի հրեշտակ Տեառն ամենակալի է:) Եւ Քրիստոս հրամայէ. (կոյր կուրի յոր ժամ առաջնորդէ, երկուքն ի խորխորատ անկանին:)
Քահանայն առաջնորդ է եւ ժողովուրդն հետեւեալ. զի որպէս ի կառնն բազում ձի է լծած. թէ միջինն կամ յետինն կոյր լինի, ոչ է վնաս. ապա թէ առաջին ձին կոյր լինի, ի խորխորատ ընկեցու զկառնն: Այսպէս թէպէտ ռազմիկն տգետ լինի, ոչ է վնաս. այլ տգետ քահանայն բազում վնաս է. եւ զբազումս ի մեղս ընկեցու: Երկրորդ արատն է կացն. կաղ է՝ որ զճանապարհն ոչ կարէ հաստատուն գնալ. ցուցանէ զայն՝ որ յառաքինութեան ճանապարհն ոչ գնայ հաստատ. այլ փոփոխի ի չարն. զի առաքինութիւնն ի մէջ երկու չար եզերացն է: Որպէս առատութիւնն ի մէջ ռշտութեան եւ շռայլութեան է. զ որպէս երկու զստի կաղն յերկու կողմն ճանապարհին հակէ: Նոյնպէս նա հակամիտ է յերկու եզերս չարութեան. երբեմն շռայլ, երբեմն ռիշտ. երբեմն բարկացող, երբեմն երկչոտ. նոցա ասէ առաքեալն. (այր երկմիտ, առանց հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր:)
Երրորդ արատ է՝ յոյժ կարծունչն. կամ երկայնունչն. կամ ծունն: Ըռնգամբն առնումք զհոտ անուշ եւ զգարշ հոտ. եւ ունչն զխորագիտութիւնն նշանակէ. այն է կարծունչն եւ երկայնն՝ որ զխորագիտութիւնն կամ նուազ ունի, կամ առաւել. այլեւ կարծունչն այն է՝ որ բնաւ ոչ պատուհասէ զմեղաւորս. այլ իբրեւ զանասուն է որ ոչ առնէ զդատաստան արդար: Իսկ երկայն ունիչն է՝ որ առաւել պատիժ զմեղուցեալսն. իսկ որ թիւր առնէ դատաստան՝ նա առձռունկն է: Չի արձակ է զմեղապարտ եւ արդարցուցանէ. եւ զանմեղս դատապարտէ. զայնպիսիս ողբայ Եսայ ասելով. (վայ որ ասէ զլոյսն խաւար, եւ զխաւարն լոյս. զչարն բարի, եւ զբարին չար:)
Չորրորդ արատն է՝ ականջատն. այն է՝ որ ոչ կամի լսել զբանս փրկութեան հոգւոյ. այսինքն, զաստուածային պատկիրանս. այլ յօժարութեամբ լսէ զդատարկաբանութիւնս: Դարձեալ ականջատն է՝ որ ոչ կամի լսել զբարի ընկերին. այլ զչարրն յօժարութեամբ լսէ: Յինգերորդ արատն է՝ ձեռնաբեկն. այն է՝ որ ոչ առնէ զգործս բարիս: Վեցերորդ է՝ ոտնաբեկն. որ ոչ կարէ գնալ յառաքինութենէ յառաքինութիւնս. որպէս ասէ սաղմոսն. (գնասցէ նա ի գօրութիւն. ի փառաց ի փառս. եւ երեւեցի Աստուած հրեշտակաց իւրոց:)
Եօթներորդ արատն՝ է սապատօղն. որ է կուզ. այն է կուզ ըստ հոգւոյ՝ որ ազահութեամբն յերկիր կորացեալ է. այլ է ոք որ ի յառաջ կողմն ունի կուզ. զի սեր աշխարհիս լցեալ է զսիրտ նորա. իսկ որ յետուստ կողմանէ՝ այնէ որ զբեռինս մեղաց ծանրացեալ ունի ի վերայ թիկանցն իւրոց: Ութներորդ արատն՝ է շլութիւնն. այն է շիլ ըստ հոգւոյ՝ որ է կեղծաւոր. որ երեւի առաջի մարդկան թէ առ Աստուած. բայց

դիտաւորութիւնն է վասն փառաց եւ գովութեան մարդկան: Իններորդ արատն՝ է պտղակն. որ ելուստէ ի պտղոյն. այն է՝ որ բիծ ունի ի միտսն. կամ հերձաճոյ, կամ մեղաց: Այլեւ այն է պտղակն՝ որոյ բիբքն սպիտակ լինի. ցուցանէ զամբարտաւանն. զի որպէս սպիտակն գեղեցիկ երեւի. նոյնպէս ամբարտաւանն պայծառ կամօք ուրախ երեւի յաչս իւր. որպէս փարիսեցի որ կայր յաղօթս ի տաճարին. որ զինքն արդար կարծէր եւ զայլս մեղաւոր: Տասներորդ քոստն. որ հանապազ նմայ. այն է՝ որ հանապազ զգէջ ցանկութիւնն ի սիրտս իւր ունի: Մետասաներորդ քաղցկեղն. այն է՝ որ զայ փոխէ ի մեղս բանիւ կամ գործով ուր եւ հասանի: Այլեւ քաղցկեղն՝ պիսակն է. այս հիւանդութիւնս առանց ցաւոց աղտեղի ցուցանէ զմարմինն: Նշանակէ զագահն՝ որ խիղճ մտացն ոչ ցաւեցուցանէ զինքն. զի ասէ թէ՝ վասն մարմնաւոր պիտոյից ժողովեմ. այլ հոգի նորա աղտեղի է առաջի Աստուծոյ: Երկուսասաներորդ արատն՝ է մի որձին. այն է պակասէ զօրութեամբ եւ անգործ. այլեւ միորձին՝ փոշտանկն է. որ աղիքն յաղափն ի ջանէ. ծանրանայ եւ ոչ կարէ քայլել. այն է՝ որ գէջ ցանկութեան խորհրդովն սիրտ իւր ծանրացեալ է. բայց վասն մարդկան ամօթոյ՝ ոչ ածեն ի գործ: Այսպիսիքս որք ունին ցարատ ի հոգիս իւրեանց, կարեն գալ յաստիճան քահանայութեան: Եւ թէ ոք հարցանէ՝ ի մարմնաւոր արատիցն ո՞րն է խտրելի ի նոր կրկին է քահանայութիւն: Նախ՝ որ զՔրիստոս պատարագ է: Երկրորդ՝ զինքն: Այն որ զինքն պատարագ է՝ կամ առանձին կրօնք, կամ հասարակ աղօթիք: Արդ՝ որ առանձինն կրօնաւորի, մարմնոյ արատն ոչ խտիր. այլ հոգւոյն: Եւ որ հասարակ աղօթէ ի մէջ եկեղեցւոյ՝ եւ սմ մարմնոյ եւ հոգւոյ արատն ոչ խտրի: (Չի եղբայր յեղբօրէ օգնեալ, բառնան զմիմեանց պակասութիւնս:) Իսկ որ զՔրիստոս պատարագէ՝ խտրութիւն է արատոյ ի հոգին եւ ի մարմինն զի պարտ է անարատ գոլ բլորովին հոգւոյ մասամբք, եւ մարմնոյ անդամօք. զի Քրիստոս կատրեալ անարատ է աստուածութեամբն եւ մարդկութեամբն. պարտ է եւ քահանային անարատ լինիլ հոգւով եւ մարմնով: Եւ տես՝ զի ասէ օրէնքն. (որ ունիցի արատ՝ կերիցէ ի գոհիցն. այլ ի սեղանն ոչ ելցէ, կամ ի վարագոյրն.) ցուցանէ որ անկեալն ի պատարագէ հաղորդ ի ձեռս այլոց. այլեւ առնու ի հասէ իրաւանցն. այլ զՔրիստոս ոչ պատարագեացէ. եւ ոչ այլ ինչ ի յետքն խորհրդոցն կատարեացէ: Դարձեալ՝ այլ վարդապետք ասեն. թէ ունիցի մարմնական արատ եւ զայ ի քահանայութիւն, են որք արգելին, եւ են որք ոչ: Առաջին պատճառն՝ յորժամ արատն այնպէս լինի, որ ոչ կարէ զխորհուրդ պատարագին առանց վնասու կատարել, զի երկիւղ լիցի ի վայր վայթելոյ կամ այլ ինչ, ոչ է պարտ կոչիլ ի քահանայութիւն: Երկրորդ՝ թէ այլնպէս աղտեղի իցէ՝ որք գայթակղին, ժողովուրդքն եւ գարշին, թեպետ կարէ կատարել՝ մի գայցէ՝ ի քահանայութիւն. որպէս թէ քիթն հոտեալ է որ գարշելի երեւի մարդկան: Երրորդ՝ թէ զամենայն անդամսն ունի՝ այլ թոյլ է տկար, ոմանք լինին քահանայ եւ ոմանք ոչ. որպէս թէ այնպէս կաղ է՝ որ ոչ կարէ կանգնիլ առանց գաւազանի առաջի սեղանոյն Աստուծոյ՝ ոչ լինի քահանայ. այլ թէ կարէ կանգնիլ՝ լինի քահանայ. նոյնպէսս եւ զկոյրն իմասցիս: Չորրորդ՝ թէ հատեալ լինի անդամս փոքր կամ մեծ իւր կամաւ կամ այլոց, ծածուկ կամ յայտնի, թէ բարկութեամբ հատեալ եւ մեծ է անդամս եւ յայտնի, ոչ լինի քահանայ. որպէս թէ ձեռն կամ ոտն է հատեալ: Կամ զսերական անդամսն հատանէ, կարծելով զինքն հաճոյ առնել

Աստուծոյ զի մի անկցի ի պոռնկութիւն, այնպիսին ոչ լինի քահանայ. զի սպանող ինքեան է. այլ թէ փոքր է անդամն, որպէս մասն ինչ որ ոչ գործի խորհրդոյ պատարագին, եւ կամ ծածուկ է կամ ճառահ եհատ եւ այլ սոյնպիսիքն՝ լինին քահանայ: Նոյնպէս եւ ներքինեաց դասքն երեքն են: Որք յորովայնէ մօրն ծնան՝ թէ ունիցին այլ մեղք, արգելու զնոսա. եւ կամ ի մարդկան բռնութենէ լինին, թէ ունիցին այլ մեղք՝ ոչ լինին քահանայ. ապա թէ ոչ ունին եւ արժանաւորք են՝ գան ի քահանայութիւն: Իսկ որք վասն արքայութեանն զանձինս իւրեանց արարին ներքինիք. որմանք թիւր իմացան զբանս. թէ պարտ է հատանել զանդամս զգալի. զայնպիսին կանոնն նիկիական արգելէ ի քահանայութենէ. թէ մալեալն անդամօք՝ մի մտցէ ի քահանայութիւն. եւ որ քահանայ է անկցի: Այլ որք վասն արքայութեանն արարին զանձինս ներքինիս. այսինք, պահօք եւ աղօթիւք ողջախոհացոն, այնպիսիքն առաւել արժանիք են քահանայութեան: Այսպէս ընտրին քահանայքն պատուական ազգաւ, ծնողօք եւ անարատ մարմնով եւ հոգւով ի սպասաւորութիւն անարատ պատարագին Զրիստոսի Աստուծոյ մերոյ ամէն: Այս առաջին գլուխն: Իսկ երկրորդն ասելի է թէ, զի՞նչ է եութիւն քահանայութեան. եւ զի՞նչ զարդարանք եւ պատահմունք նորա: Ասեն վարդապետք թէ, եութիւն քահանայութեան խորհրդոյն՝ է վեց ինչ. որ թէ մինն պակաս է, ոչ լինի կատարեալ խորհուրդն: Առաջին եութիւն է՝ զի որ տայ զաստիճան քահանայութեան՝ եպիսկոպոս լինի: Այս է պատճառն. զի զօրութիւն եպիսկոպոսին ի վերայ քահանայիցն եւ սարկաւազացն՝ է որպէս զօրութիւն թագաւորին ի վերայ արուեստաւորաց քաղաքին. զի զոմն կացուցանէ վերակացու շահիայ ձեռնաւոր. եւ զիւրաքանչիւր արուեստն կարգաւորէ. զդարբին. զոսկերիչ. եւ զայլսոն: Այսպէս եպիսկոպոսն ինամ տանի եկեղեցւոյ որ է քաղաք Աստուծոյ. եւ բաժանէ իւրաքանչիւր զգործս հոգեւորս. զմինն քահանայ. զմինն սարկաւազ. կէս սարկաւազ. եւ զայլսն: Եւ նա օրինէ զեկեղեցի եւ զսուրբ սեղանն. եւ զամենայն անօթս սրբութեան. որպէս գրեալ է ի մաշտոցին թէ՝ եպիսկոպոսն ասէ զաղօթս: Երկրորդ՝ է յեութենէ եւ ի հարկաւորութենէ տալն եպիսկոպոսին ի ձեռն աստիճանաւորացն զնիւթ խորհրդոյն այն. որպէս ի ձեռն քահանային զարկին եւ զմաղզմայն գինւով եւ իշխանաւ. եւ սարկաւագին զաւետարանն. եւ կիսասարկաւագին զսկին դատարկ. այնպէս եւ զայլսն: Երրորդ՝ են յեութենէ եւ ի հարկաւորութենէ բանք ձեւականք. եւ յիւրաքանչիւր աստիճան՝ տուեալ լինի կնիքն յայնմ տեղոջ, ուր տուել լինի նիւթ խորհրդոյն ի ձեռս նոցա: Եւ այս է ձեւ բանիցն. քան զի յառաջին կարգն որ է դռնապանն՝ տալով լինի, կնիք տալով զբանալին ի ձեռս նորա եւ ասէ այսէս: Այսպէս արա որպէս պատասխանի տալ վասն այսր գործոյ. եւ որոց լինին ի ներքոյ փականց բանալեացս զոր տուաք ի քեզ: Երկրորդ կարգն՝ որ է ընթերցողն. տացի կնիք տալով եպիսկոպոսին զգիրս մարգարեականս ի ձեռն նորա ասելով: Առ զգիրս զայս՝ եւ լեր Աստուծոյ բանիցն պատմօղ. եւ թէ հաւատարմութեամբ եւ շերմ սիրով կատարեսցես գործս քո, մասն եւ բաժին առցես ընդ այնոսիկ՝ որք սպասաւորեցին բանին Աստուծոյ՝ իսկ զբանէ: Երրորդ կարգ՝ է երդմնեցուցիչն. տացի կնիք տալով եպիսկոպոսին ի ձեռս նորա զգիրս երդմանց մաշտոցին եւ ասէ: Առ ընկալ եւ ի միտ առ եւ եղիցի քեզ կարողութիւն դնել ձեռս ի վերայ դիւահարաց որք գան ի մկրտութիւն, կամ որք մկրտեալք են: Չորրորդ կարգ՝ է մոմավառն.

հատուցանի կնիք տալով եպիսկոպոսին զմոմակալն մոմովն ի ձեռն նորա ասելով: Առ զաշտանկ մոմովս. եւ ծաիր՝ զի ունիս իշխանութիւն լուցանել զջահս եւ զկանթեղս ի սուրբ եկեղեցիս: Յինգերորդ՝ այլեւ տայ զիշխանութեան կնիք՝ տալով եպիսկոպոսին զսկին դատարկ եւ զմայն ի դաստառչայ ասելով: Առ եւ տես՝ թէ որպիսի սպասաւորութիւն տուեալ լինի քեզ. վասն այն թէ մինչեւ ցայժմ քնաբ եւ ծուլացեալ ես յեկեղեցի, յայսմ հետե ժրացիր եւ արթուն լեր: Եւ զայլ ամենայն բանս ասասցէ որ գրեալ է վասն այսր ի գիրս եպիսկոպոսացն: Վեցերորդ կարգն՝ որ է սարկաւագութիւնն. հատուցանի կնիք տալով զաւետարանն ի ձեռս նորա ասելով զձեւ բանին այսպէս: Առ իշխանութիւն ընթեռնուլ զաւետարանն՝ ի սուրբ եկեղեցի Աստուծոյ յունկն կենդանեաց. եւ յիշատակ ննջեցելոց յանուն Տեառն ամեն: Իսկ եօթներորդ կարգն որ է քահանայութիւն. հատուցանի կնիք տալով եպիսկոպոսին ի ձեռս նորա զսկին լի գինուով. եւ զմաղզմայն նշխարով. եւ ասասցէ զձեւ բանին այսպէս: Առ կարողութիւն պատարագ մատուցանել Աստուծոյ. եւ պատարագ մատուցանել վասն կենդանեաց եւ մեռելոց յանուն Տեառն ամեն: Յայսցանէ երեւի թէ, երրորդ եութիւն խորհրդոյս՝ է ձեւական բանն է: Չորրորդ՝ է յեութենէ խորհրդոյս. զի որ առնու զաստիճան քահանայութեան՝ արու լինիցի եւ ոչ եզ. քանզի թէ եզ լինիցի, թէպէտ զամենայն նիւթս տան ի ձեռս նորա, եւ զամենայն ձեւ բանիցն ասասցեն, ոչ առնու զկնիքն: Այս պատճառն. զի որ առնու զկարգն՝ ի մեծ աստիճան ելանէ եւ լինի գլխաւոր. իսկ գլխաւորութիւն եւ աստիճանս այս՝ ոչ հասանի կնոջն. զի նա է ի ներքոյ ծառայութեան մարդոյն. որպէս ասաց Աստուած ցեւա. (առ այր քո դարձ քո. եւ նա տիրեսցէ քեզ:) Վասն այն ասէ Պօղոս Տիմօթեոսի. (կին մարդ ցածութեամբ ուսցի ամենայն հնազանդութեմբ. այլ ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ. եւ ոչ ճոխաբանել իբրեւ զայր մարդ. այլ ի լռութեամբ կալ:) Վասն այն չէ արժան քահանայութեան. եւ ոչ կարէ առնուլ զկնիքն: Յինգերորդն եութիւն խորհրդոյս այն է՝ զի որ առնու աստիճան քահանայութեան՝ ճշմարտապէս մկրտած լինի. եւ թէ ոչ լինի մկրտեալ, ոչ կարէ առնուլ զկնիք քահանայութեան: Եւ գիտելի է՝ զի ինն ազգ կնիք տուեալ լինի յեկեղեցի: Առաջինն՝ ի խորհուրդ մկրտութեանն: Երկրորդ՝ ի խորհուրդ դրոշմին: Եւ եօթն կնիքն՝ տուեալ լինի ի խորհուրդ կարգին քահանայութեան. զի իւրաքանչիւր աստիճան՝ առանձին կնիք ունի: Այլ ի մեջ կնքոյ մկրտութեանն՝ եւ ի մեջ այլ ութն կնքոցն՝ է կրկին զանազանութիւն: Նախգի կնիք մկրտութեանն՝ է զօրութիւն կարողական. եւ ոչ առնողական: Չի այն որ մկրտի՝ առնու զօրութիւն ընդունիլ զամենայն խորհուրդս եկեղեցւոյ: Իսկ այլ ութներորդ կնիքն՝ է զօրութիւն առնողական. զի իւրաքանչիւր կնիք՝ ունի զգործն իւր. որպէս դրոշն ունի կարողութիւն մարտնչիլ ընդ թշնամւոյն. եւ յայտնապէս խոստովանիլ զհաւատն Քրիստոսի առաջի անհաւատիցն: Նոյնպէս եւ եօթն կարգքն իւրաքանչիւր՝ ունին առանձին գործս. որպէս դռնապանն եւ այլն: Երկրորդ զանազանութիւն է՝ զի մկրտութիւնն է հիմն ամենայն կնքոց եւ դուռն. վասն այն ոչ ոք կարէ առնուլ այլ կնիք, թէ ոչ իցէ մկրտեալ. իսկ այլ ութներորդ կնիքն որիշ ի միմեանց կարեն առնուլ կնիք: Այլ կանոնք է հայրապետացն՝ որք ըստ կարգի առնուցուն: Նախ՝ զմկրտութիւնն. եւ ապա զդրոշմն. եւ ապա զփոքրն. չորրորդ զկարգնն եւ զայլսն: Վեցերորդ եութիւն խոր հոգւոյս՝ որ ճշմարիտ դիտաւորութիւն

ունիցի այն՝ որ տայ զկարգն, եւ որ առնու. զի եպիսկոպոսն ճշմարիտ դիտաւորութեամբ տայ զկարգն. որպէս թէ աներկբայ եղիցի. եւ որ առնու՝ ճշմարիտ դիտաւորութեամբ առնու որպէս սուրբ եկեղեցի: Ապա յայտ է թէ զինչ է Եութիւն քահանայութեան խորհրդոյն: Եւ այս գիտելի է զի որ ինչ յեութենէ եւ ի հարկաւորութենէ լինի, թէ կարգին է, թէ այլ խորհրդոցն, թէ յայնցանէ մոռացեալ լինի եւ թողեալ, պարտ է յառաջուստն սկսանիլ եւ նոր տալ զամենայն ինչ. զի ոչ ինչ է առեալ: Եւ թէ ի պատահմանէ եւ յարարողութենէ խորհրդոյն լինի՝ ոչ է հարկ դարձեան նոր սկսանիլ եւ տալ զամենայն ինչ. այլ զոր մնացեալ լինի ի պատահմանց, զնոյնն տալ յիւր ժամանակին: Եւ այսոքիկ են պատահմունքն:

Օծանել զձեռն քահանայիցն. եւ զգեստն. կամ գօտին. կամ դնել ըզձեռն եպիսկոպոսին ի վերոյ գլխոյ նուիրելոցն ի ժամ ձեռնադրութեանն եւ այլ սոյնպիսիք՝ պարտ է լնուլ ի յիւրում տողոջն ի յիւրում ժամանակին. ի փառս Աստուծոյ եւ ի գովութիւն անունն Զրիստոսի Աստուծոյ մերոյ. որ է օրհնեալ ընդ Յօր իւրում եւ Սուրբ Յոգւոյն, յաւիտեանս ամէն:

Դարձեալ յայլմէ քարոզ վասն կարգի քահանայութեան. ի Բանն: (Քահանայք Զո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբի Զո ցնծալով ցնծացեն:)
Սաղ. 131. 9. (Գլուխ ԽԱ.)

Վարդապետք ասեն թէ՛ պատշաճ է որ յեկեղեցի սուրբ՝ լինէր կարգ քահանայութեանն: Եւ այս է պատճառն. զի երեք է հոգեւոր աստիճանն. այսինքն, բնութիւն. շնորհքն. եւ փառքն: Բնութիւնն է աստիճան ներքին. եւ շնորքն միջին. եւ փառքն: Բնութիւնն է աստիճան ներքին. եւ շնորհքն մջին. եւ փառքն վերին: Վասն զի բնութիւն մարդկան՝ միջնորդութեամբ հրեշտակաց ելանէ ի փառսն վերին: Այլ այժմ եկեղեցի սուրբ է ի միջին աստիճանն. այսինքն ի շնորհս հոգւոյն սրբոյ. վասն այն է ի մէջ բնութեան կենցաղոյս, եւ ի մէջ փառաց երկնաւորին: Իսկ ի բնութիւնն՝ գտանի կարգ. քանզի երկնային մարմինքն՝ իշխեն ստորին մարմնոցս եւ լուսաւորեն զնոսա: Այլ ի բնական մարմին մարդոյս՝ գտանի կարգ: Չի գլխաւոր անդամքն՝ իշխեն այլոց անդամոցն. որպէս գլուխն սիրտն եւ լեարդն՝ իշխեն այլ անդամոցն. եւ ազգեն ի նոսա զբնական շերմութիւնն եւ զշարժումն: Նաեւ ի փառս արքայութեանն երկնից գտանի կարգ: Չի անդ բազում են կարգք եւ աստիճանք հրեշտակաց եւ հրեշտակացելոց: Ապա ուրեմն ճշմարիտ էր զի եւ յեկեղեցիս որ ի մէջն է բնութեան եւ փառաց՝ լինիցի կարգ. զի անկարգութիւնն յամենայն ուրեմք չար է. իսկ կարգաւորութիւնն բարի: Այլեւ պարտ է զի ոչ մի կարգ լիցի յեկեղեցիս. այլ բազում կարգի: Եւ այս վասն երեք պատճառի: Նախզի՝ ընդարձակ լիցի ճանապարհն որ հասանի մար ի ծառայութիւնն Աստուծոյ: Չի թէ մին կարգ միայն էր, նեղ լինէր փրկութեան ճանապարհն. եւ ոչ ամենեքեան կարելին գնալ: Երկրորդ՝ զի բնութիւն մարդոյս տկար է. վասն այն մինն միայն կարգն՝ ոչ կարէր կատարել զամենայն ծառայութիւնս Աստուծոյ. որպէս մարգարէն Մովսէս ոչ կարէր միայն զժանրութիւն ժողովրդեանն բառնալ՝ ընտրեաց ի նոցանէ եօթանասուն ծերս որք բարձին զժանրութիւն ժողովրդեանն: Ապա ուրեմն ճշմարիտ էր զի զիցի յեկեղեցիս բազում կարգ: Երրորդ՝ զի իմաստութիւնն Աստուծոյ յայտնեցի. զի է գործ իմաստնոցն կարգաւորելն. զի արտաքին

փրկիսփայլն՝ ի կարգէ արարածոց ծանեան զիմաստութիւնն արարչին: Եւ յորժամ դշխոյն հարաւոյ ետես զկարգաւորութիւն ծառայիցն Սողոմօնի, յիմարեցաւ եւ ասէ. մեծագոյն է իմաստութիւն քո քան զոր ես լուեալ էի: Եւ նշանակէ Սողոմօն զՔրիստոս. եւ դշխոյն հարաւոյ զեկեղեցիս հեթանոսաց. յորժամ տեսանէ զկարգ ծառայիցն Քրիստոսի, այսինքն զեօթն կարգս եկեղեցւոյ՝ զարմանայ եւ հիանայ յիմաստութիւնն Քրիստոսի: Այլ ի մէջ եօթն կարգաց եկեղեցւոյ՝ վերին կարգն բարձրագոյն է քան զայլսն. այսինքն քահանայութիւն. որպէս եւ գրել է ի թագաւորութիւնս թէ՛ արար Սողոմօնն աթոռ փղոսկրեայ եւ ծածկեաց զնաա ոսկւով: Եւ արար 2 աստիճան աթոռոյն. այսպէս Քրիստոս արար վեց աստիճան որ է վեց կարգ ներքին: Եւ եդ ի վերայ ևոցա աթոռ բարձրագոյն զեօթն կարգն որ է քահանայութիւնն: Եւ պատեաց զնա ոսկւով. այսինքն արդարութեամբ եւ առաքիւնութեամբ. վասն այն ասէ Դաւիթ՝ (քահանայք քո զգեցցին զարդարութիւն:) Արդ՝ ի կարգէ քահանայութեանս ասելի է թէ՛ Քրիստոս երեք ազգ պատուով պատուեաց զքահանայս: Առաջին՝ զի զգեցոյց ևոցա զանազան զգեստ: Երկրորդ՝ զի եդ զթագն իւր ի գլուխս ևոցա: Երրորդ՝ զի ի սեղանն իւր բազմեցոյց զնոսա: Արդ՝ առաջին պատիւն՝ զի զարդարեաց զքահանայսն զանազան զգեստիւք որք են վեց ազգ: Առաջին զգեստն է խոյրն. եւ նշանակէ բան ինչ հոգեւորպէս: Նախ՝ ցուցանէ զգօրութիւն հոգեւոր. զի ծածկէ զթիկունսն՝ որով բառնայ զբռն օրինացն Քրիստոսի: Երկրորդ՝ ցուցանէ խոյն զծածկոյթն զայն՝ որով ծածկեցին հրեայքն զգլուխն Քրիստոսի. եւ հարկանէին ասելով. (մարգարեաց մեզ ո՞վ է որ տհարն զքեզ:) Եւ վասն այն զգեցուցանէ զխոյրն՝ զի անդ է հինգ զգայութիւնն: Չի պարտ է քահանային որ պատարագէ՛ իբր զՔրիստոս լինի որ երթայ ի չարչարանս: Խնուլ զաչս յարատ հայելոյ. եւ զլսելիս եւ զբերանն ի դատարկութեանց. ծածկելով զկուրծս ի վերայ սրտին, որ զբարին խորհրդն ժողովէ ի սիրտն: Երկրորդ զգեստն՝ է շապիկն: Եւ այն ցուցանէ զսպիտակ հանդերձն՝ զոր զգեցոյց Յերովդէս Քրիստոսի վասն նախատանաց. նաեւ ցուցանէ զուրբ վարս՝ որ պարտ է քահանային ևովաւ զգեստաւորիլ: Եւ ի ժամ պատարագին պարտշաճին քահանայիցն սպիտակ հանդերձ. զի գործ քահանայիցն՝ է գործ հրեշտակաց. եւ անտարանն յորժամ խօսի վասն հրեշտակաց հանդերձին, սպիտակ ցուցանէ զհանդերս ևոցա. (տեսին զհրեշտակն զգեցեալ պատմուճան սպիտակ եւ զարհուրեցան:) Եւ ի գործս առաքելոցն ասէ. (ահաւասիկ արք երկու երեւեցան ի հանդերձս սպիտակս.) վասն այն պարտ է զի քահանայի կենքն՝ սուրբ լիցի որպէս հրեշտակաց: Երրորդ զգեստն՝ է գօտին. եւ ցուցանէ զխարագանն զայն՝ որով հարին զՔրիստոս կապեալ ընդ սեանն: Դարձեալ ցուցանէ գօտին զսպումն գէշ ցանկութեան. եւ կրթիլ յողջախոհութեան եւ զգաստանալ. որպէս ասէ անտարանն. (եղիցին գօտիք ձեր պնտեալ ընդ մէջս եւ ճրագունք լուցեալ:) Չի որ զմէջն գօտով ոչ պնտէ, ոչ ինչ կարէ դնել ի ծոցս իւր. այսպէս որ ոչ պահէ զողջախոհութիւն, ամենայն բարի գործքն հեղանին ի նմանէ: Այլ աստ գիտել է՝ զի Եղիա ի հին օրէնսն պնտեր զմէջ իւր մաշկեղէն գօտուով. այլ ի նոր օրէնս՝ ունէր Քրիստոս գօտի ոսկեղէն: Կրկին է զանազանութիւն ի մէջ Քրիստոսի եւ Եղիայի այսպէս. զի գօտին Քրիստոսի ոսկեղէն էր. եւ գօտին Եղիայի մաշկեղէն: Երկրորդ՝ զի գօտին Քրիստոսի առ ըստեամբն էր. եւ գօտին Եղիայի ընդ մէջն: Արդ՝ Եղիայի գօտին ցուցանէ զողջախոհութիւն

հին օրինաց քահանայիցն. զի նոքա վասն երկիւղի օրինացն էին ողջախոհ. այլ ի նոր օրէսս՝ զողջախոհութիւնն պահելի է ոչ վասն երկիւղի, այլ վասն սիրոյն Քրիստոսի. զի ոսկին զաստուածային սերն նշանակէ: Դարձել՝ հին օրէնքն զգործ պոռնկութեան արգելութիւնն. վասն գօտին Եղիայի ընդ մէջն էր: Իսկ նոր օրէսս՝ զգործ շնութեանն եւ զցանկութեան սրտին արգելու. որպէս ասէ Տէրն. (որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ՝ անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում:) Վասն այն գօտին Քրիստոսի էր ի վերայ ստեանցն՝ մերձ է ի սիրտն. որ ցուցանէ զցանկութիւն սրտին զսպել ի յինքեան: Չորրորդ զգեստն է ձեռնուրարն եւ բազպանն. եւ այս ցուցանէ զկապանն որով կապեցին հրեայքն զձեռն Քրիստոսի յորժամ ըմբնեցին զՔրիստոս: Նաեւ ցուցանէ զօրայս փնջեալ. այսինքն, զգործս բարիս ժողովեալ. վասն այն եղեալ է ի ձախոյ ձեռն՝ որ զկեանս զայս ցուցանէ. եւ բազկուրարն որ յերկու ձեռն՝ զի ի կեանս յայս պարտ է սեմանել զբարիս որ է ձախ. եւ ի հանդերձեալն հնձեալ որ է աջ: Նախ ձեռնուրարն՝ ցուցանէ զմաքրումն ներելի մեղաց. զի նման է փոքրիկ վարշամակի որով մաքրեն. զի թեպէտ ի յահեակ կեանս կարեն ի բաց կալ ի մահացու մեղաց՝ այլ ոչ կրեն ի ներելի մեղաց. վասն այն պարտ է մաքրել զերեսս հոգւոյն ի ներելի մեղացն: Հինգերորդ զգեստն՝ որ է ուրարն. որ ցուցանէ զկապանսն որովք կապեցին զՔրիստոս ընդ սիւնն: Նաեւ ցուցանէ զլուծ պատւիրանացն Աստուծոյ՝ որ թեթեւ է եւ քաղցր. որպէս ասէ Քրիստոս. (լուծ իմ քաղցր է:) Վեցերորդ զգեստն՝ է նափորտն. ցուցանէ զկարմիր քղամիթն Քրիստոսի, յորժամ տանէին ի չարչարանս: Նաեւ ցուցանէ զաստուածային սերն. զի որպէս նախորտն է վերին զգեստ եւ ծածկէ զամենայն. նոյնպէս սերն Աստուծոյ ծածկէ զամենայն մեղս. որպէս ասէ առաքեալն. (սեր ծածկէ զբզմութիւն մեղաց:) Եւ որպէս նափորտն է ի վերայ ամենայն զգեստուցն. նոյնպէս սերն ի վերայ ամենայն առաքիլութեանց: Եւ այս գիտելի է՝ զի զամենայն զգեստ զոր ունի վեց կարգն՝ որ ի վայր է քան զքահանայն, կարէ զգենուլ քահանայն. եւ կատարել զամենայն գործս նոցա: Եւ այս ցուցանէ թէ՛ ամենայն առաքիլութիւնք որք տարածեալեն ի ներքին կարգաւորսն՝ պարտ է զի ի քահանայն ժողովեցի: Յայսմանէ երեւի թէ՛ յոյժ պատուեաց Քրիստոս զքահանայսն. զի զգեցոյց նոցա զիւր հանդերձն: Չի ամենայն զգեստ պատարագին՝ նշանակէ զամենայն զգեստ չարչարանացն Քրիստոսի: Եւ ոմանք են որք անգիտութեամբ արհամարհեն զսուրբ զգեստ պատարագին. զոր ի հին օրէսսն հրամանաւն զգգստաւորէին. եւ ապա պատարագ մատուցանէին. որպէս Ահարօն եւ որդիքն իւր. Չի թէ վասն պատարագելոյ զանբան անասունսն այնպէս պարտ էր զարդարիլ զգեստիւք. քանի՞ առաւել պարտ է զարդարիլ որ պատարագ է զգառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի: Վասն որոյ ասէ Դաւիթ. (քահանայք քո զգեցցին զարդարութիւն:) Այս առաջին պատիւն որով պատուեաց Քրիստոս զքահանայսն: Երկրորդ պատիւն՝ դնելով զթագն ի գլուխ նոցա. որպէս եղաւ ի գլուխն Քրիստոսի պսակ ի փշոց նշան թագաւորութեան: Այսպէս եւ քահանայն ունի պսակ ի գլուխս իւր. այսինքն, զի մաքրեն զգլուխն. եւ կազմեն զհերս իբրեւ զթագ բոլոր: Չ ծառայելն Քրիստոսի՝ թագաւորութիւն է. եւ կատարեալ խաչածեւ. զի խաչակից եղեւ Քրիստոսի: Եւ թագս այս բոլոր՝ պատշաճի քահանային վասն չորս պատճառի: Նախզի՛ ասեն իմաստունք թէ՛ բոլոր ձեւ գեղեցիկ է քան զամենայն ձեւս. եւ

քահանային պարտ է ունիլ զգեղեցիկ վարս քան զաշխարհանս: Երկրորդ՝ զի ընդարձակ է բոլորն. եւ բազում ինչ պարունակէ յինքեան. եւ պարտ է զի ընդարձակ լից սիրտ քահանային լցեալ սիրով. զի ոչ միայն սիրեն զսիրելիսն, այլեւ զթշնամիս: Երրորդ՝ զի սրբագոյն է բոլորն. զի ոչ ունի անկին ուրթաքիցէ աղտ ինչ: Նոյնպէս եւ հոգի քահանային լիցի սուրբ ի մեղաց՝ որ ոչ ունիցի անկին խորամանկութեան կամ նախանձու, ուր թաքչի աղտեղութիւն մեղաց: Չորրորդ՝ զի պարզ է քան զայլ ձեւս. զի այլ ձեւք ի բազում գծից են բաղկացեալ. այլ բոլոր ձեւն՝ ի միոյ գծոյ. եւ ոչ ունի սկիզբն եւ կատարած. այլ կատարեալ է. Վասն այն աշխարհիս ի յայս ձեւս եղել եղեալ. որպէս չորս տարերքն. եւ աստեղք. եւ երկինքն. այսպէս պարտ է զի լիցի միտք քահանային պարզագոյն եւ միամիտ իբրեւ զաղանի: Նաեւ սպասաւորեն Աստուած՝ որ է անսկիզբն եւ անվախճան. եւ վասն բոլոր ամենայն աշխարհի բարեխօսեն առ Աստուած. վասն այն հերցն է որպէս թագ բոլորեալ: Դարձեալ՝ ասէ առաքեալն. (գեսք՝ փոխանակ զգեստու տուեալեն.) վասն որոյ պարտ է զի սպասաւորք եկեղեցւոյ՝ մաքրեսցեն զգագաթս իւրեանց բոլորածեւ որպէս թագ: Չայն նշանակէ՝ զի բաց եւ առանց ծածկութիւն լիցին սիրտք նոցա առաջի Աստուծոյ: Այլեւ հերն նշանակէ զմեծութիւն եւ զինչս աշխարհի. որպէս երկայն հերն ծածկէ զգայութիւնս զտեսանելիս եւ զլսելիս, եւ խափանածէ գործոց նոցա. նոյնպէս որ սիրէ զմեծութիւն եւ զինչս աշխարհի ծածկի միտք նորա ի զբաղումն աշխարհիս. եւ ոչ կարէ տեսանել զփառս հանդերձելոյն. կամ լսել զբանն Աստուծոյ. կամ ճաշակել զքաղցրութիւն աստուծային պատւիրանացն: Եւ որպէս թանձր ունի զմազն ի գլուխն՝ խիստ ցաւի գլուխն. զի մազն զշոգլի գլխոյն արգիլէ եւ ի դուրս չելանէ: Նոյնպէս որ միտքն զբազեալ է ի հոգւ աշխարհիս՝ բազում լինի ցաւ նորա. եւ յամենայն ժամ երկնչի ի գողոց եւ յաւազակաց. Իսկ որ չունի ինչս՝ ոչ ունի ցաւ եւ ոչ երկիւղ: Վասն այն պարտ է քահանային սրբել զգագաթն. եւ հարթել զհերն բոլորածեւ նման թագին Քրիստոսի՝ որ եղաւ պսակ ի գլուխն իւր: Յայսմանէ յայտ է՝ զի յոյժ պատուեաց Քրիստոսի զքահանայս, որ զգեցոյց նոցա զիւր հանդերձն. եւ եղ ի գլուխ նոցա զպսակն իւր: Երրորդ պատիւ զոր առնէ Քրիստոս քահանայիցն այն է, զի է սեղանն իւր բազմեցուցնէ. որ է սեղան հրեշտակաց. որպէս ասէ սաղմոսն. (զհաց հրեշտակաց կերին մարդիկ:) Եւ ոչ միայն բազմեցուցանէ զնոսա ի սեղանս հրեշտակաց, այլ եւս առաւել պատուէ զնոսա քան զհրեշտակս: Չ թեպէտ հրեշտակք բազմին ի սեղանս յայս, եւ ուտեն զհացն կենաց իմանալաբար. զի ուրախան ի խորհուրդ պատարագին. այլ ոչ է տուեալ հրեշտակաց կարողութիւն որք զպատարագ զայս մատուցանեն. եւ փոխեն զհացն եւ զինին ի մարմին եւ յարին Քրիստոսի: Նախ զայս կարողութիւնս՝ ոչ է տուեալ թագաւորաց եւ իշխանաց. նա հապետաց կամ մարգարեից. բայց միայն քահանայից: Եւ թեպէտ մեծ պատիւ է մարդոյ ուտել ի սեղան թագաւորին, թեպէտ ի յետին բազմելոցն իցէ, այլ առաւել պատուաւոր է մերձ առ թագաւորն նստիլ անընդմիջաբար: Իսկ քահանայն նստի ի սեղանն Քրիստոսի մերձ առ Աստուած անընդմիջաբար. որպէս սաղմոսն. (մտից առաջի սեղանոյ Աստուծոյ:) Վասն այն պարտ է զի քահանայն որ նստի մերձ առ Աստուած ի սեղանն Քրիստոսի՝ առաւել սուրբ լինիցի. եւ լուսաւորեսցէ զձեռս իւր ի մեղաց խոստովանութեամբ. որպէս ասէ զիրն ղեւտացւոց. (քահանայք որք

մատուցեն պատարագ Աստուծոյ իւրեանց, պարտ է զի սուրբ լինիցին:) Եւ այս վասն չորս պատճառի: Առաջին՝ զի քահանայքն շօշափեն ձեռք իւրեանց զմարմին Քրիստոսի ի վերայ սեղանոյն՝ յորմէ դողան հրեշտակ. վասն որոյ պարտ է սուրբ լինիլ քահանայից: Չոր օրինակ՝ ի հին տապանակն Աստուծոյ այն զի կրէր յինքն զոսկի սափորն լի մանանան ներքոյ եւ արտաքոյ պատեալ ոսկւովն: Սափորն ոսկի լի մանանայիւ՝ է մարմինն Քրիստոսի լի աստուածաբանութեամբ: Եւ քահանայն որ բառնայ զնա ի ձեռն իւր՝ նման է տապանակին Աստուծոյ. Վասն այն պարտ է զի պատեալ լինի ներքոյ եւ արտաքոյ ոսկւով. ներքոյ աստուածային սիրովն. եւ արտաքոյ ընկերին սիրովն: Դարձեալ՝ ի ներքուստ հոգւոյն ողջախոհութեամբն. եւ արտաքոյ մարմնոյն ողջախոհութեամբն: Երկրորդ՝ զի քահանայն սպասաւոր եւ մատռուակ է երկնաւոր թագաւորին. այլ սպասաւորք թագաւորաց երկրի՝ յորժամ մատուցանեն խորտիկս եւ զինի բաժակաւ, թէ ձեռն նորա աղտեղեալ լինի, յորժ ամաչէ ի թագաւորէն: Նոյնպէս որ պատարագէ զմարմին եւ զարիւն գառնին Աստուծոյ ի տեսակ հացի եւ ի տեսակ գինւոյ՝ մատուցանէ առաջի հօր Աստուծոյ: Վասն այն թէ ձեռն նորա աղտեղեալ լինի մեղօք՝ մեծ ամօթ կրէ առաջի Աստուծոյ եւ հրեշտակաց նորա: Վասն այն քահանայն յորժամ մատչի իմատուցումն պատարագին՝ նախ լուանայ զմատուեսս իւր ջրով ասելով. (լուացից սրբութեամբ զձեռնս իմ եւ շուրջ եղեց զսեցանով քով:) Չի ցուցցէ թէ, եւ ի փոշետեսակ մեղացն պարտ է սրբիլ: Երրորդ պատճառ՝ զի թեպէտ որք ուտեն ի սեղան թագաւորին՝ պարտ է նոցա սուրբ ձեռն ունիլ՝ որք ընդ թագաւորին ուտել ի միում պնակի: Արդ՝ պատարագօղ քահանայն՝ ի մի սկաւառակի եւ միով բաժակաւ ուտել եւ ըմպէ ընդ Քրիստոս. որպէս եկեր ինքն ի վերնատունն ընդ աշակերտսն. վասն այն պարտ է սուրբ լինիլ ձեռք ի գործոյ մերաց: Վասն այն Մովսէս լուացարան կազմեաց ի հայելեաց կանանց. զի անդ լուանային քահանայքն զձեռնս եւ զոտս. եւ հայելին ի հայելւոջ եւ սրբէին զաղտս ի մտացն. եւ ապա մտանէինն պատարագ մատուցանել: Լուցարանս այս՝ նշանակէ զխորհուրդ խոստովանութեան. զի անդ պարտ է հայիլ եւ տեսանել զարատս իւր, եւ ջրով արտասուացն լուանալ զմեղս: Եւ ապա մատուցանել պատարագ զմարմինն եւ զարիւնն Քրիստոսի: Չորրորդ՝ զի ամենայն գործք քահանային՝ աստուածագործութիւն է. որպէս պատարագաւն առնէ զհացն եւ զգինին մարմին եւ արիւն Աստուծոյ: Նոյնպէս մկրտութեամբն զորդիս մարդկան՝ առնէ որդիս Աստուծոյ. այսպէս եւ զթողութիւն մեղաց շնորհէ. եւ Աստուծոյ միայն է թողուլ զմեղս ասէ աւետարանն: Այսպէս զօրտար այր եւ կին պսակելովն՝ առնէ մի մարմին. եւ այս եւս Աստուծոյ գործ է. ըստ այնմ, (զոր Աստուած զուգեց՝ մարդ մի մեկնեցեւ:) Արդ՝ այսպէս ամենայն գործ քահանային՝ գործ Աստուծոյ է. վասն պարտ է աստուածանալ՝ եւ ապա յԱստուած մերձենալ եւ զգործս Աստուծոյ կատարել. եւ աստուածանալ սրբութեամբ սրտի. անմեղութեամբ հոգւոյ. ճշմարտախօս լեզուով. անկեղծ սիրով. եւ բարի գործով. Եւ զայլ ամենայն բարեգործութեան մասունս մարդկային առաքիւնութեան եւ աստուածային յինքեանս բերելով, կարէ լինիլ ըստ կարողութեան իւրում նմանօղ Աստուծոյ: Այլեւ գթալ ի վերայ ժողովրդեանն որպէս հայր ի վերայ որդւոց. եւ Աստուած գթայ յարարածս. Եւ որպէս հովիւ քաջ՝ դնէ զանձն իւր ի վերայ հօտին Քրիստոսի այնպէս, թէ համարս վասն ժողովրդէնն եւ

բանաւոր հօտին Քրիստոսի: Որով եւ ընդ քաջ հովուապետին Քրիստոսի: Որով եւ ընդ քաջ հովուապետին Քրիստոսի՝ դասեսցի ի դասս աջակողմեանն ասելով. (ահաւասիկ ես եւ մանկունք իմ զոր ետոր ինձ Աստուած:)

Եւ լսիցէ զձայնն երկնաւոր թէ, (ծա՛ռայ բարի եւ հաւատարիմ՝ մո՛ւտ իւրախութիւն Տեառն քոյ.) ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին վասն Զահանայից. ի Բան մարգարէին: (Շրթունք քահանային զգուշացին գիտութեան եւ օրէնք խնդրեսցին ի բերանոյ Նրա. զի հրեշտակ Տէրն ամենակալ է:) Մաղաք. 2. 7. (Գլուխ. ԽԲ)

Նախ եւ առաջին այսպէս պարտ է իմանալ զբանս: Չի յորժամ ներտրամադրել բանն ընդ խռչափողն ի բերանն՝ պարտ է շրթումք արագիլէր. եւ գիտութեամբ եւ իմաստութեամբ զարդարել եւ ապա խօսիլ: Երկրորդ՝ զի նախ ինքն գիտացէ եւ իմացի. եւ ապա խօսեսցի առ այլս: Երրորդ՝ զի շրթունք հոգւոյ նորա՝ այսինքն, իմացումն եւ միտքն՝ զգուշանայ գիտութեան եւ իմաստութեան յինքն ընդունիլ. վասն որոյ էրեց կոչի. այսինքն, իմաստութեամբ եւ բարի գործօք մեծացեալ: Չորրորդ՝ գիտութիւն եւ իմաստութիւն հօր՝ է որդին միածին. եւ պարտ է զգուշութեամբ պահել առ ինքն քահանային. զի մի փոխիցէ յանարժան գործոց նորա. զի անիծանելն ընդ վայր եւ բամբասելն՝ եւ յիշոցն եւ մատնելն զոք՝ եւ սուտ խօսիլն եւ այլն՝ փախուցանէ եւ հեռացուցանէ՝ զՔրիստոս ի մէջ. զի յանձն չար արւեստ՝ իմաստութիւն Աստուծոյ ոչ բնակի: (Եւ հոգին սուրբ փախչի ի նենգութենէ եւ ի մարմնոյ վարեցելոյ մեղօք ասէ Սողոմօն:) Յինգերորդ՝ զի միտք քահանային՝ զգուշանայ շրթանց ժողորդեանն գիտել եւ ճանաչել զմեղս նոցա. զի կարացէ բժշկել զնոսա ի վերաց անտի: Վեցերորդ՝ զի մի շրթամբք ընթերցցի զգիրս. կամ շրթամբք միայն աղօթեսցէ կամ սաղմոսեսցէ. այլ գիտութեամբ եւ մտօք. ըստ առաքելոյն՝ (սաղմոս ասացից մտօք. սաղմոս ասացից հոգւով. սաղմոս ասացից եւ ի միտ առից.) զի թէ որ աղօթէ ոչ գիտէ, եւ ոչ Աստուած գիտէ կամ կատարէ զխնդիրն: Եօթներորդ՝ զի զգուշացի շրթամբ աղօթից եւ պահոց. եւ գիտացէ՝ զի սոքօք հալածին եւ հերքին դէքն, եւ ներգործութիւնք նոցա ի նմանէ, որպէս ասեր Տէրն. (այս ազգ ոչ իւրք ելանէ, եթէ ոչ աղօթիւք եւ պահօք:) Ութներորդ՝ զգուշացի շրթումբք յամենայն վնասակար բանից՝ եւ յանմաքուր՝ եւ յանմաքուր կերակրոց. զոր չէ արժան կերակրիլ քահանայիցն ի խոզենոյ ըստ կանոնաց հարցն. եւ ի գազանաբեկէ եւ ի զոհելոյ այլազգեաց եւ ի հեղձուցելոյ. եւ գիտացէ զարժանաւորութիւն իւր. եւ ապա մերձեսցի ի մարմին եւ յորին Տեառն. զի մի կրկին անգամ ի խաչ հանիցէ զՔրիստոս ի դատապարտութիւն անձին իւրոյ: Այլեւ զգուշացի շրթամբքն եւ մտօքն՝ մի առնել ծայրաքաղ զսաղմոսն. զի առնու սատանայ զմնացորդ սաղմոսի նորա. եւ ի կատարածի մտանէ ընդ նա ի դատաստան առաջի Աստուծոյ ասելով թէ, զմեզ վաս մի անգամ լռելոյ յօրհնաբանութեացն մերժեցեր եւ մերկացուցեր ի փառաց մերոց. տես զպատկերս քո թէ որքան գողացեալ է եւ պակասացեալ յօրհնութեանց քոց. եւ այլու ամօթ բերեմք Քրիստոսի. եւ ամօթով հալածիմք ի Տեառնէ: Իսկ ասելն (օրէնք պահանջեսցին ի բերանոյ նորա:) Նախ զի՝ բանք քահանային զոր խօսի՝ օրհնուր լինի եւ ոչ անօրէն.

դատարկաբանել՝ խեղկատակել՝ եւ այլ սոյնպիսիք. որպէս ասէ Սողոմօն. (զճշմարտութիւն խոկասցէ կոկորդ իմ:) Երկրորդ՝ զի զինչ օրէնս եւ անտարանս հրամայէ, զայն խնդրէ Աստուած ի բերանոյ քահանայից. եւ պարտէ զգուշանալ՝ զի մի լիցէ թէ, (ի բերանոյ քումմէ դատեցից զքեզ ծառայ չար:) Երրորդ՝ զի պարտ է այնպէս խօսիլ քահանային յարածամ, զի օրէնս եւ կանոնս կարգեցէ ժողովրդեանս. եւ մի լիցի պատճառ բամբասանաց եւ գայթակղութեան. (զի վայ ասէ Տէրն որ գայթակղեցուցանէ զմի ի փոքրկանց:) Չորրորդ՝ զի քահանայն իւր բերանովն ուսուցէ ժողովրդեանս զբան օրինացն եւ զուղղափառ հաւատս. զխորսովանութիւն եւ զայլն. զի սոքօք լուսաւորեալ վարժեցին ժողովուրդքն ի հաճոյնս Աստուծոյ: Յետ որոց ասէ թէ (հրեշտակ Աստուծոյ ամենակալի է:) Եւ նմանի քահանայն հրեշտակի ըստ բազու եղանակի: Նախզի՝ հրեշտակն բարձր է տեղեալ. եւ քահանայն բարձր է պատուով եւ աստիճանաւ: Երկրորդ՝ զի առաջին կարգապետութիւնքն: Աթոռք՝ Սերօբէք՝ եւ Զերօբէք՝ համապատիւ են. այսինքն, աթոռքն՝ ի դէմս հօր. սերօբէքն ի դէմս որդւոյ, եւ քերօբէքն ի դէմս հոգւոյն սրբոյ: Այսպէս քահանայն եպիսկոպոսն եւ կաթուղիկոսն համապատիւք են ի պատարագելն. զի պատարագօղ քահանային Տէր ասի. կաթուղիկոսն ի դէմս աթոռոցն եւ հօր. եւ եպիսկոպոսն ի դէմս սերօբէիցն եւ որդւոյ. քահանայն ի դէմս քերօբէիցն եւ հոգւոյն սրբոյ: Երրորդ՝ զի երեքեան նոքա անընդմիջաբար առնուն զիմաստն Աստուծոյ. այսպէս եւ այս երեքեան դասքս՝ անընդմիջաբար առնուն զշնորհն եւ զիմաստութիւն յԱստուծոյ. վասն որոյ երեք են. այսինքն, սարգաւագն դպիրն եւ այլն: Չորրորդ՝ զի անմարմին են եւ անտես ի մէնջ. այսպէս քահանային պարտ է ի մարմինի անմարմին լինիլ. զ տեսցեն ի նա բիծ եւ արատ ինչ. ըստ այնմ, (հայեցի ի նա ակն անգեղ:) Հինգերորդ՝ զի անմահ են կենդանութեամբ. այսպէս պարտ է քահանային անմահ լինիլ հոգւով ի գործս բարիս. եւ ոչ մեռանիլ մեղօք. ըստ իմաստասիրացն՝ (ոչ է քեզ մահ մահկանացու, այլ անմահ չար է:) Վեցերորդ՝ զի անկիրք են եւ անկարօտ հրեշտակք, այսպէս քահանային պարտ է անկիրք լինիլ ի մեղաց եւ անկարօտ յաշխարհական ընչից: Եօթներորդ՝ զի որպէս զհուր վերնաթաց են դիտաւորութեամբ առ Աստուած. ըստ այնմ, (ո՞ արար զհրեշտակս իւր յոգիս. եւ զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ:) Այսպէս քահանային պարտ է (զվերինն խոկալ եւ խորհիլ, ուր Զրիստոս նստի ընդաջմէ Աստուած ըստ առաքելոյն.) եւ մի գերկրաւորս: Ութներորդ՝ զի անդադար են ի փառաբանութիւնն Աստուծոյ. այսպէս քահանային պարտ է միշտ լինիլ ի յօրինութիւնն Աստուծոյ. յաղօթել՝ յուսանիլ՝ յուսուցանել. որպէս ասէ Դաւիթ. (օրհնեցից զՏէր յամենայն ժամ:) Իններորդ՝ զի միշտ լոյս են նոքա. որպէս ասէ երգն. (ի լուսոյ արարեր զհրեշտակս:) Այսպէս պարտ է քահանային լոյս լինիլ մտօք եւ իմաստուն. եւ ապա լուսաւորել զժողովուրդն. զի տգետ քահանայն՝ կոյր է եւ զաչացու. եւ Տէրն ասէ. (կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալի. եւ երկոցինն ի խորխորատ անկանին:) Տասներորդ՝ զ անապական են բնութեամբ. եւ քահանային պարտ է անարատ եւ անապական վարս ստանալ. որ է սրբութիւն. արդարութիւն. մաքրութիւն. խոհեմութիւն եւ այլն. զի մի ապականեցի հոգի նորա աղտեցի գործօք. զի մի լիցի աղ անպիտան, եւ արտաքս ընկեն լի եւ կոխան. եւ մի լսիցէ թէ, (լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է. խաւարն ո՞րչափ եւս:) Մետասաներորդ՝ զի հանապազ առնուն զիմաստն եւ ոչ լրանալ. այլ եւս

փափագին. այսպես քահանային պարտ է միշտ կրթել զանձն յուսումն եւ յաստուածապաշտութիւն. որպէս ասեր առաքելն առ Տիմօթեոս թէ, (հանապազ միտ գիր ընթերցւածոց. եւ կրթեալ զանձն քո յաստուածապաշտութիւն:.) Երկրտասաներորդ՝ զի պահապան եւ խնամածու կարգեցան յԱստուծոյ մարդկային ազգի: Այսպէս քահանայն խնաւ տանի ժողովրդեանն. եւ պահէ յիմանալի գազանէն սատանայէ եւ ի գայլոց հերձաճողաց: Երեքտասաներորդ՝ զի հրեշտակք զբարի արանց՝ զբարի գործսն մատուցանեն առաջի Աստուծոյ. եւ պարգեւաց արժանացուցանեն եւ ողորմութեան. որպէս զԿուռնելիոսին. եւ զչարսն պատուհասեն. ըստ այնմ, (առաքեաց ի նոսա տանջանս ի ձեռն հրեշտակի չարի:.) Այսպէս քահանային պարտ է զի վասն բարեացն աղօթէ. եւ տայ նոցա զմարմին եւ զարիւն Տեառն. եւ զչարսն եւ զանգեղջսն արտաքսէ յեկեղեցւոյ մինչեւ զղջացին: Չորեք տասաներորդ՝ զի կիզիչք եւ ջեռուցիչք են. այսպէս քահանայն պարտ է սրբութեամբ կիզել եւ սրբել եւ քաւել զեղս ժողովրդեանն. եւ իմաստութեամբ ջերմացուցանել զնոս ի սերն աստուածային: Զնգետասաներորդ՝ զի դժւարաշարժ են ի չարն. մանաւանդ թէ անշարժ. եւ մշտաշարժ ի բարին: Այսպէս քահանային պարտ է ամենեւին անշարժ լինիլ ի չարն եւ ի մեղս. եւ մշտաշարժ առ բարին: Վեշտասաներորդ՝ զի ըստ առաւել պարզութեան եւ նրբութեան որ ինչ է ի մին հրեշտակն՝ տեսանեն այլքն: Նոյնպէս քահանայից չէ պարտ ծածկել զմեղս իւրեանց ի միմեանց. կա զխորհուրդս. կամ զբանն. այլ յայտնել խոստովանութեամբ. եւ զնոյսս ուսուցանել ժողովրդեանն. որպէս զի ուղիղ վարուք եւ ճշմարիտ հաւատով կացցուք յայսմ աշխարհի. եւ հանդերձեալ փառացն արժանի լիցուք ի Զրիստոս Յիսուս Տէր մեր. որ է օրինեալ յաւիտեանս ամէն: Զարց: Վասն Է՞ր այժմ դասք արեղայից եւ կոսնաւորաց ասուիս զդէնուն որ է ասէ ոչխարաց եւ գառանց. եւ ոչ կտաւիս որպէս ի հինն: Պատ: Նախզի՛ մինչդեռ չէր Աստուած ծնեալ եւ ի բնութիւնս խառնեալ, կտաւեա հրամայեաց առնել զգեստ քահանայական. իսկ յորժամ միացաւ եւ խառնեցաւ ընդ ծնանելի բնութեանս, եւ դառն անուանեցաւ, հրամայեաց զգգեստ քահանայիցն ի զգեստից գառանց առնել. եւ ապա պատարագել զգառն՝ որ բառնայ զմեղս աշխարհի: Երկրորդ՝ զի տեսանելով զասւիս, իմացուք թէ՛ զԶրիստոս եմք զգեցեալ. վասն զի գառն կոչեցաւ ի Յոհաննէ. եւ ասր՝ այս է զգեստ նորա. վասն որոյ անմեզ լիցուք որպէս գառն եւ մի մեղիցուք: Երրորդ՝ զի խոշոր է ասրն եւ չարչարող. նաեւ քահանային պարտ է խոշոր եւ խիստ եւ նեղիչ վարս ստանալ. եւ մի հեշտանալ ծուլութեամբ: Չորրորդ՝ զի բուրգն առաւել սրբի ի կեղտոյ ի լուանալն, եւ սրբէ գայլս: Նոյնպէս պարտ է քահային առաւել սրբիլ ի մեղաց եւ սուրբ լինիլ. նաեւ սրբել գայլ ի մեղաց ամենայն բանիւ խրատու: Զինգերորդ՝ զի անգայտ է. այսինքն, կակուղ եւ թոյլ է ասրն. նոյնպէս քահանային եւ կոսնաւորին՝ պարտ է հեզ եւ խոնարհ լինիլ եւ հանգիստ Աստուծոյ. ըստ առաքելոյն թէ, (յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեղս եւ ի խոնարհս, եւ որք դողան ի բանից իմոց:.) Վեցերորդ՝ զի ծածկոյթ եւ զգեստ է կենդանեաց. այսպէս քահանային պարտ է ծածկոյթ լինիլ ամենայն մեղաց ժողովրդեանն, եւ պահել յամենայն վնասակարաց. եւ մի յայտնել զմեղս ժողովրդեանն վասն նախանձու եւ կաշառաց: Եօթներորդ՝ զի յամէ հատանի կարոցաւ. այսպէս քահանային զաւելորդս մեղացն օրստօրէ պարտ է հատանել եւ սրբել սրով բանին Աստուծոյ: Ութներորդ՝ զի ասն բոյս է

կենդանոյ՝ եւ ինքն անկենդան. նոյնպէս քահանայն թեպէտ բուսեալ է ի կենդանի ծնողաց՝ պարտ է մեռուցանել զմարմինն եւ զախտ մեղացն. ըստ առաքելոյն. (սպանելք զանդամս ձեր գերկրաւորս:) Իններորդ՝ պարտ է անմեղ լինիլ որպէս գառն. եւ ապա պատարագել զՔրիստոս զդառն անարատ. զի զգեցեալ է զգգեստ նորա: Տասներորդ՝ զ ասրն չոր է եւ ջերմն բնութեամբ. նմանապէս քահանայն՝ լիցի ցամաք եւ չոր ի գիջութենէ մարմնական ախտից եւ հեշտութեանց. եւ ջերմ ի սերն Աստուծոյ եւ եղբարցն եւ աղօթիցն. եւ ապա կարասցէ արժանապէս պատարագել զգառն Քրիստոս: Զարց: Իսկ ի հինն վասն Էրի հրայեաց կտաւիս լինիլ զպատմութեանն քահանայական: Պատ: Այս վասն բազում պատճառի: Նախզի՝ անախտ ունի ծնունդ այսպէս քահանայն մի ծնցի յախտաւոր ծնունդ: եւ որ ծնցի՝ մի քահանայագործեսցէ. որպէս ասեր առ Մովսէս. (լոյծ զկօշիկս յոտից քոց:) Երկրորդ՝ զի անկենդան է եւ անզգայ. եւ քահանային պարտ է սպանել զանդամս երկրաւորս. զի ցանկայ հակառակ հոգւոյ: Երրորդ՝ զի ի վեր արձակէ զբոյսն. եւ քահանային հրամայէ առաքեալն. (զվերինն խնդրել եւ խորհիլ. ուր Քրիստոս նստի ընդաջմէ Աստուծոյ.) եւ մի գերկրաւորս: Չորրորդ՝ ի բարձր դէ գծադիկն եւ զպտուղն. եւ քահանայից հրամայ է յերկինքս զանձել. (զանձեցէք ձեզ զանձս յերկինքս:) Զինգերորդ՝ պարարտ է պտուղն. եւ քահանայն պարարտասցի բազմապատիկ առքինութեամբ եւ գործովք բարեաց: Վեցերորդ՝ նիւթ է լուսոյ. եւ քահանայն լուսաւորէ զինքն իմաստութեամբ. եւ զայլս քարոզութեամբ օրինացն Աստուծոյ. (որ լոյս տան աչաց ըստ մարգարէին:) Եօթներորդ՝ եւ չարչարելով լինի զգեստ. եւ քահանային պարտ է չարչարանօք մարմնոյ եւ մտաց լինիլ տաճար հոգւոյն սրբոյ՝ եւ շնորհաց նորին. ըստ այնմ, (որ քրիստոսեանցն են՝ զանձնս իւրեաց ի խաչ հանցեն կարեօք եւ ցանկութեամբ հանդերձ:) Ութներորդ՝ զի կերակրելի է պտուղն. եւ քահանայնն զոր բանիւ խրատու, եւ զոր գործօք բարեաց կերակրէ զժողովուրդն. զի լցցին բարութեամբ: Իններորդ՝ բժշկական է ցաւոց. եւ քահանայն բժիշկ է հոգւոց մարդկան՝ որք հիւանդացեալ են զանազան մեղօք: Տասներորդ՝ զի պատուական է կտաւն առ ամենայն մարդ՝ որ վուշ լինի. նոյնպէս պարտ է պատուական գործովք զարգարել զինքն՝ եւ սիրիլ ի բազմաց. եւ պատուական առ ամենեսեան. (զի տեսցեն զգործս ձեր բարիս՝ եւ փառաւորեսցեն զհայրն երկնաւոր:) Եւ զի ընկալաք զայս ի հնոցն ի զգեստ քահանայական պատարագին եւ այլն. իսկ զասրն ի հասարակաց եւ ի հանապազորդ զգեստ. զի ասաց Տէրն. (ոչ եկի լուծանել, այլ լնուլ.) եւ առայս այսքան: Զարց: Չի՞նչ նշանակէ հոլանի հանդերձ ժառանգաւորաց եկեղեցւոյ: Պատ: Իշխանութեան է ցոյց գօտելոծն լինիլ նոցա: Եւ այս վասն վեց պատճի: Նախզի՝ զանամօթ եւ զներկիւղ գոլն նոցա նշանակէ. որպէս թագաւորաց՝ որք ոչ երկն երկնչին կամ ամաչեն յումեքէ: Երկրորդ՝ զարձակ եւ զհամարձակ եւ զանարգել հրամանն նոցա ցուցանէ առ նուաստագոյնսն. որպէս տէրանց առ ծառայս: Երրորդ՝ զի ոչ ունին զկապ մարմնական իշխանութեանց, կամ հարկաց ի վերայ ինքնութեանցն. որպէս զիշխանց ի վերայ իշխեսցելոց: Չորրորդ՝ զի ոչ ունին զկապ եւ զերկիւղ ծառայական. այլ զորդիական սեր. որպէս ասեր Տէրն. (ոչ կոչեմ զձեզ ծառայս՝ այլ զձեզ կոչեցիք բարեկամս. զի զամենայն ծանուցի ձեզ.) եւ սոքա են որք կամին եւ սիրեն զՔրիստոս: Զինգերորդ՝ ցուցանէ զաննխանձ եւ զընդարձակ բարս նոցա. որ անարգելաբար տան եւ բաշխեն

զշնորհս եւ զիշխանութիւնս եւ զիմաստութիւնս միմեանց: Վեցերորդ՝ ցուցանէ զառատ եւ զանպակաս պարգեւսն եւ շնորսն զորս ունին. եւ տան անարգել ոչ տալով կարծիս նուազութեան: Հարց: Չի՞նչ է ասելն ժառանգաւորք եկեղեցւոյ: Պատ: Նախզի՛ նոքա է ժառնգէն զմարմնական հաս եւ զիրաւունս եկեղեցւոյ, որ կարգեալ է ի հարցն սրբոց: Երկրորդ՝ նոքա ժառանգէն զիշխանութիւն հոգեւոր որ յեկեղեցի: Երրորդ՝ նոքա ժառանգէն զպատիւ եւ փառս ի ժողովրդոց: Չորրորդ՝ նոքա ժառանգէն զպարգեւ եւ զշնորհսն Աստուծոյ իջեալ առ նոսա: Հինգերորդ՝ նոքա ժառանգէն զվերին եկեղեցին որ է մայր ամենեցուն. եւ այս ըստ արժանաւորութիւն վարուց նոցա: Հարց: Վասն է՞ր գնաց Քրիստոս ի հարսանիսն: Պատ: Նախզի՛ յայտ արասցէ թէ, սա է որ զամուսնութիւն Ադամայ եւ այլոց նահապետացն օրհնեաց եւ աճեցոյց: Երկրորդ՝ ի յամօթ այնոցիկ, որք պիղծ զօրինւոր ամուսնութիւն համարին: Երրորդ՝ զի որպէս վասն յանցանացն առաջին անձօքն եղէն առ նախնիսն. նոյնպէս եւ նորն Ադամ յառաջին գործ սքանչելեացն օրհնեաց զամուսնութիւնս զայս. եւ յօրհնութիւն փոխեաց զառաջին անձօսն: Հարց: Վասն է՞ր արար զջուրն գինի: Պատ: Նախզի՛ փոխելով զջուրն ի գինին՝ եցոյց թէ, զցրտագոյն սեր աշխարհական ցանկութեանց փոխելոց էր ի շերմութիւն աստուածային բաղձանացն իւրոց հրովն զորեկն արկանել յերկիր: Երկրորդ՝ զի մարդիկ իբրեւ զջուր ցրտացեալ էին յաստուածոցին սիրոյն. եւ ոչ շարժէին ի բարի գործս. ըստ այնմ, (որպէ զջուր մի եռացիս.) իսկ Տէրն փոխելով զջուրն ի գինի՝ այսինքն, զի արբուսցէ զնոսա սիրով հոգւոյն. որպէս ասէին. (ո՞վ կարէ մեկնել զմեզ ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւն, թէ անձկութիւն, ոչ որ կանս եւ ոչ հանդերձեալն:) Երրորդ՝ զի փոխելով զջուրն ի գինի. այսինքն, զերկրաւոր եւ զշնչաւոր իմաստութիւն՝ փոխեաց յերկնաւոր եւ ի հոգեւոր իմաստութեամբ: Չորրորդ՝ ջուրն նշանակէ զհին օրէնսն որ Քրիստոսիւ լցաւ որ էր մարմնական. որպէս ինքն ասէր. (ոչ եկի լուծանել, այլ լնուլ.) այլեւ ասէր. (լցէք մինչեւ ի վեր.) եւ զալստեամբն Քրիստոսի փոխեցաւ ի հոգեւոր անտարանս: Հինգերորդ՝ զի գոյնն ջրոյ երեւեր. եւ բնութիւնն եւ համն փոխեցաւ ի գինի. զի ցուցցէ թէ, առեալն ի Տէառն մարդն՝ մնաց թանձրութեամբն եւ գունովն. բայց բնութիւնն աստուածացաւ միաւորելովն ընդ Աստուած ոչ կորուսեալ զմիմեանս կամ շփոթեալ. այլ միաւորեալ անբաժանելի: Վեցերորդ՝ զանհնազանդութիւնն Ադամայ եբարձ հնազանդութեամբ մօրն. որպէս ասէ Ղուկաս. (եւ էր հնազանդ ծնողացն: Եօթներորդ՝ զի որպէս հինն Ադամ լուաւ եւ եկեր, եւ ել ի դրախտէն. այսպէս այժմ նորն Ադամ լուաւ դստերն Եւայի Մարիամու, եւ եմոյծ ի դրախտն ճաշակմամբ գինւոյն հրամանաւ Տէառն. որ նշանակէր զտերունական արիւնն: Ութներորդ՝ զի ջուրն ի գինի փոխելով՝ զտրտմութիւն Եւայի ելոյծ զտրտմութեամբ ծնցիսն. (զի գինի ուրախ առնէ ասէ Դաւիթ:) Իններորդ՝ զի վասն յանցանաց նախնեացն՝ հեռացաւ Աստուած ի նոցանէ եւ մերժեաց յիկյենէ. (զի մեղք ձեր՝ որոշէն ի մէջ իմ եւ ի մէջ ձեր ասէ Աստուած.) իսկ աստ զմիջնորմն ցանկոյն քակեաց. եւ մերձեցաւ առ մեզ եւ յայտնեաց սքանչելեօքն: Իսկ ասելն Տէառն առ մայրն. (զի՞ կայ իմ եւ քո.) այսինքն, աստուածային բնութեանս եւ մարդկայինս որ ի քէն չկայ երկուութիւն եւ բաժանումն. այլ միաւորեալ մի անբաժանելի: Եւ երկրորդ այլ ազգ. (զի՞ կայ մի եւ քո.) այսինքն, թեպէտ միաւորեալ՝ այլ ոչ շփոթեալ եւ այլայլեալ որ ոչ

մնացեալ՝ ոչ Աստուած եւ ոչ մարդ. որպէս ասաց եւ տիրէս. այլ Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ. ոչ երկու կատարեալ, այլ մի կատարեալ անբաժանելի եւ անշփոթ միութեամբ: Իսկ Չ թակոյքն լի ջրով՝ մին նշանակէ զվեց դարն որ մարդիկ զԷջ ցանկութեամբ աշխարհիս լրացան. զոր եկն Տեառն եւ փախանեաց եւ փոխեաց ի ջերմ ցանկութիւն արքայութեանն երկնից. երկրորդ՝ նշանակէ զհինս Ադամ՝ որ յետ վեց աւուր արարաւ. եւ վեց շարժմամբ ապականեցաւ. իսկ նորն Ադամ՝ վերստին նորոգեալ կենդանացոյց: Դարձեալ տասներորդ՝ վասն արար զջուրն գինի՝ զի այրն եւ կինն անձամբ կացցեն յատուկ եւ առանձին. իսկ բանիւ սրտով եւ կամօք եւ սիրով՝ մի եւ նոյն: Դարձեալ՝ վաս այն զհամս գինի արար՝ եւ զգոյնն ոչ փոխեաց. զի ջուրն ունի երեք յատկութիւն. այսինքն, ցրտութիւն. գիջութիւն, եւ յագեցումն. իսկ գինին ընդ դեմ այսմ՝ ունի երեք յատկութիւն. այսինքն, ջերմութիւն, չորութիւն, եւ անյագութիւն: Եւ այս ի խրատ ամուսնացելոց. զի մի ջերմեռանդ սիրով մոլեցին առ չար ցանկութիւն. զի վասն այնպիսեացն ասէ իմաստունն. (ոգիք ըմբռնեալք ի մեղս, ի մտաց եւս անկանին:) Այլ ցուրտ լիցին առ ցանկութիւն. եւ մի չորցեալ պնտեցին ընդդեմ խրատու սուրբ գրոց եւ առաջնորդաց. այլ կակուղ եւ լսող եւ ընդուող խրատուց: Եւ մի անյագ լիցին ի գործս ամուսնութեանց. այլ չափաւոր եւ հրամանաւ կանոնաց. որպէս ասէ առաքեալն. (ունիցին կանայս՝ այլ այնպէս, որպէս թէ չունցին:) Այլ լիցին ջերմ սիրով առ Աստուած եւ առ ընկերս. եւ չոր եւ պինդ ընդդեմ խրատուն սատանայի. եւ անյագ եւ անդադար ի գործս բարիս: Դարձեալ զի՝ զաշխարհական եւ զապարանաց սերն՝ որպէս զջրոյ ցրտութիւն համարեցին. իսկ զհոգւորն եւ զաստուածայինն եւ զերկնային կենացն՝ իբրեւ զգինի ջերմ եւ ուրախարար եւ զովացուցիչ հոգւոյ: Դարձեալ՝ զի ջուրն մտանէ յորթն եւ լինի խաղող. եւ կթեալ ժողովի ի հնձանն. եւ կոխեալ եւ պարզեալ լինի գինի. նոյնպէս եւ այրն եւ կինն կրթեցեն զմիմեանս ի գինի ուրախութեան Աստուծոյ. ըստ այնմ. (ուրախ եղիցի Տեր յարարածս իւր.) եւ այնպէս հաճոյացին Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան. եւ ժառանգեցեն զկեանս յաւիտենից ի Քրիստոսէ Աստուծոյ. որ օրինեալ յաւիտեանս ամեն:

Յայլմէ քարոզ վասն խոստովանահարց: (Շրթունք քահանային զգուշացին գիտութեան եւ օրէնք խնդրեցեն ի բերանոյ Նրա զի հրեշտակ Տերն ամենակալի է:) Մաղաթ. 2. 7. (Գլուխ. ԽԳ)

Արդ՝ վասն չորս պատճառի պարտի զգուշանալ: Նախ զի՝ սպասաւոր է Աստուծոյ. ըստ որում եւ հրեշտակ կոչէ. եւ պարտ է սպասաւորաց Աստուծոյ՝ իմաստուն լինիլ. զի կարացէ ըստ հաւատութեան Աստուծոյ սպասաւորել. որպէս ասէ Սողոմօն. (ընդունելի է թագաւորի սպասաւոր իմաստուն:) Երկրորդ՝ զի քահանայն միջնորդ է ընդ Աստուած եւ ընդ մարդիկ. վասն որոյ պարտ է զի եղիցի գիտուն եւ իմաստուն. զի ըստ կամացն Աստուծոյ միջնորդեցէ: Երրորդ՝ զի ասէ մարգարէն. (որ հանէ զանարգն ի պատուականէն՝ բերան Աստուծոյ կոչեցի:) Վասն պարտ է ներ հմուտ լինիլ ի մաստութեան. որպէս զի կարացէ իբրեւ զճարտար թովիչ հանել զմեղս ի սրտէ մեղուցելոյն. զի եղիցի բերան Աստուծոյ: Չորրորդ՝ զի անյայտ եւ ծածուկ գործոց մեղաց մարդկան՝ յայտնութեան տեղի է. եւ

խոստովանահայրն՝ պարտ է զգուշանալ գիտութեան. որպէսզ կարասցէ զգանազան մեղսն. եւ անսխալապէս զհոգի մեղուցեալ մեղաւորին բժշկել: Վասն որոյ փոքր ի շատէ ծանուցուք գեղանակ գիտութեան խոստովանահայրութեան. որպէս զգուշասցի փրկալից գիտութեանս այս որպէս ասէ մարգարես. եւ իմաստութեամբ ապրեցուցէ զոգիս իւր եւ բազմաց: Նախ եւ առաջին՝ զի խոստովանահայրն որ է հոգեւոր բժիշկ պարտ է գիտուն լինիլ եւ պատրաստ ձեռնարկել ի խոստովանութեան լսելն. եւ թէ ոչ՝ զբազումս սպանանէ: Չի յորժամ ոչ կարէ ճանաչել զգանազան մեղս եւ ոչ կարէ զգեղ նորա գտանել, եթէ դեղ դնէ՝ ոչ զառողջարարնս դնէ. որպէս ոք որ հպարտութիւն ունենայ եւ խոստովանի, եւ կամ բարկութիւն, նա լուծ դնէ թէ, ի կերակրոյ պատրաստ պահեա զքեզ՝ ոչ է սա առողջարար դեղ հպարտութեան եւ բարկութեան. զի հպարտութեան դեղն խոնարհութիւն է. եւ բարկութեանն համբերութիւնն. իսկ կերակրոց պատրաստ կալն՝ է դեղ որկրամոլութեան եւ բղջախոհութեան: Երկրորդ՝ պարտ է զի խոստովանահայրն քննեսցէ զբարս մարդկան թէ, որպէ՞ս իրաց պատրաստեսցէ զսրտ նոցա ընդունիլ զլուծ ապաշխարութեան. եւ զի գիտասցէ զգանազանութիւն ժամանակաց զարուաց եւ զիդոց: Չ այլ ազգ պարտ է դնել զկանոնս ի վերայ խոստովանաորդոցն ի ժամանակս նեղութեան. եւ այլ ազգ խաղաղութեան. այլ ազգ ի վերայ նեղեալ աղքատաց. եւ այլ ազգ ի վերայ հեշտացեալ փարթամաց. այլ ազգ ի վերայ հեշտացեալ փարթամաց. այլ ազգ կանոն պարտ է դնել իսկիզբան յորժամ նոր լինի սկսեալ ի մեղսն. եւ այլ ազգ ի մեջն յորժամ ոք սովորեալ է ի մեղսն. այլ ազգ տղային. եւ այլ ազգ ծերոյն. այլ ազգ առն. եւ այլ ազգ կնոջն. այլ ազգ առաջնորդացն որք են ի տեղ աչաց. եւ այլ ազգ խառնիճաղանճ ժողովրդոցն որք են ի տեղի ոտից: Երրորդ՝ զի մարմնական բժշկն՝ այն հիւանդն որ ի մահու դուռն է հասել, ոչ տայ դեղ նմա. զի մի բնութիւն առաւել տկարասցի եւ մեռցի. այսպէս պարտ է հոգեւոր բժշկին՝ երբ տեսանէ զմեղաւորն հիւանդացեալ մարմնաւոր ցաւօք, պարտ է լսել զմեղս նորա. այլ ոչ դնել կանոն ի վերայ. այլ զհոգի նորա յԱստուած յանձնել. եւ ցուցանել նմա զպատշաճ կանոնն վասն այն մեղացն. զի թէ յարիցէ ի հիւանդութենէն՝ կատարեսցէ: Չորրորդ՝ պարտ է զի խոստովանահայրն ճանաչիցէ զդեղն ամենայն ցաւոց. զի տացէ դեղ հակառակ մեղացն: Որպէս ընդդէմ ամբարտաւանութեանն՝ զխոնարհութիւն գործել. ընդդէմ նախանձուն եւ ատելութեան՝ զսէրն. ընդդէմ բարկութեան զհեզութիւն. ընդդէմ ծուլութեան զժրութիւն. ընդդէմ ագահութեան եւ արծաթ սիրութեան՝ տուրք եւ ողորմութիւն առնել. ընդդէմ որկրամոլութեան զպարկեշտութիւն. որ ոչ է պարտ արբիլ գիւնով եւ յագիլ մտով. ընդդէմ բղջախոհութեան՝ պահք եւ աղօթք եւ տանջանք մարմնոյ. ընդդէմ յիշոցաց եւ հայիոյութեան՝ զմեղայն եւ զփառաբանութիւն. ընդդէմ ծաղեր եւ կատարկերգութեան՝ զլացն, եւ միշտ ի հոգեւորն խօսիլ. ընդդէմ բամբասնացն զլռութիւն. նոյնպէս եւ այլոցն ըստ չափոյ հիւանդութեան կանոնէ. այսինքն, ներելի մեղացն սակաւ կանոն դնէ. եւ մահու չափ մեղացն ծանր: Եւ հիւանդութիւն մեղացն որ ի վաղուց հետէ՝ տասն տարի, կամ քսան ի նոյն մեղսն մնացեալ է, պարտ է դնել ծանրագոյն. եւ որ նոր է անկեալ ի մեղս՝ թեթեւագոյն: Հինգերորդ՝ պարտ է զիտել թէ, հիւանդութիւն մեղացն բաղադրեալ է թէ պարզ. ամենայն թէ, ազգի ազգի մեղս գործեալէ, պարտ է զի եւ դեղն զանազան լինի. որպէս

պահք եւ աղօթք եւ ողորմութիւն. եւ յամենայն ազգ ապաշխարութենէ: Եւ թէ մեղք պարզ է՝ ապաշխարութիւն եւս պարզ լինիցի. որպէս թէ զուրբաթն կերեալ է՝ ոչ այլ ինչ գործել, ըստ կարողութեան որչափ եւ կարիցէ՝ յանձն առնու զուրբաթն հաց եւ ջուր ուտել. այլ թէ պարզ մեղաց դեղն բաղադրեալ լինի՝ է բարեգոյն: Վեցերորդ՝ եթէ քահանայն խոստովանադրամ առնու՝ ընդդէմ եւ սուրբ եկեղեցւոյ եւ սիմոնական ախտ. վասն որոյ ոչ պարտ վաճառել զշնորհս հոգւոյն սրբոյ. զ կանոնօք փակած է. քանզի այսպէս ասէ Զրիստոս թէ, (ձրի առիք եւ ձրի տուր:) Եօթներորդ՝ զի քահանային պարտ է որ զխոստովանութիւն չյայտնէ՝ թէ եւ մասն մասն արասցեն. զի բազումք երկնչին եւ այլ ոչ խոստովանին. եւ այնպէս մեռանին եւ գնան ի դժոխ. եւ զարին ևոցա Աստուած ի յայնպիսի քահանայիցն պահանջէ՝ որք զխոստովանութիւնն յայտնեն. զի քահանային սիրտն՝ որպէս զկուպղած սնտուկ է. պարտ է այնպէս պահել, որ սնտուկն կոտորի եւ կուպղարքն ոչ բացուի: Ութներորդ՝ պարտ է հոգեւոր բժշկին՝ եթէ մեղքն ի սիրտն թաքուցեալ է, տացէ նմա դեղ զխոստովանութիւնն բազում խրատով, որ արտաքս քարշէ իսիտէ նորա զցաւս հոգւոյն բերանովն եւ խոստովանելովն: Իններորդ՝ թէ ոք մեղօքն պնտեալ եւ քարացեալ է՝ խոստովանութեամբն պարտ է գնա հասուցանել. եւ կակղացուցանել յուսով ողորմութեանն Աստուծոյ. եւ ասել մի վախեր. քանի շատ մեղս ունիս, յորժամ զմենն ճշմարիտ ասեն եւ չծածկես վասն ամօթոյ եւ կամ վասն երկւոյի, նա իբրեւ զկայծ մի կրակ որ յովկիանոս ծովն ձգեն՝ ի նոյն անցանի. զի ծովն ան չափաւոր է: Այսպէս Աստուծոյ ողորմութիւնն անչափ է. եւ քո շատ մեղքն չափաւոր է. յորժամ ի ձեռն ճշմարիտ խոստովանութեան քահանային յԱստուծոյ ողորմութեան ծովն ձգես, նա իբրեւ զկայծ մի կրակ վաղվաղակի անցանի: Տասներորդ՝ եւ թէ ուրուք կապեալ է հոգեւոր փորն, զիի ոչ կամի յիւրմէ վարել զմեղսն, պարտ է նմա դեղ տալ որ վարէ. այսինքն, երկեցուցանել գնա տանջանօք դժոխոցն ասելով թէ, (մեղաւորաց հուրն անշէջ է. եւ որդն անքուն ըստ Եսայեայ. զի անհատ կսկիծն. անսահման է չարչարանքն. անբժշկելի է ցաւն. անարձակելի է կապն. անազատելի է բանտն. անմխիթարելի է սուգն. անփարատելի է խաւարն: Եւ զայս լսելով՝ արձակի փորն եւ յայտնէ զամենայն անօրէնութիւնս իւր: Մետասաներորդ՝ տես որ թէ զգայութիւնն ճապաղեալ է. այսինքն, աչքն ի յարատ հայելն. ականջն ի չաար լսելն. բերանն ի դատարկաբանութիւն. նոյնպէս եւ այլքն. պարտ է հանց դեղ տալ՝ որ կապ է. այսինքն, երկիւղիւ դատաստանին Աստուծոյ, որ ոչ ճապաղի ի մեղս. զի յորժ երկիւղ լինելոց է ի դատաստանին. զի ասէ առակն. (եթէ արդարն հագիւ կեցցէ, իսկ անպարիշտն եւ մեղաւորն ո՞ւր երեւեսցի:) Եւ Պօղոս ասէ. (ահ մեծ է անկանիլ ի ձեռն Տեառն.) զի ամենայն դատարկ բանից՝ համարս ինդրելոց է. եւ յարատ հայելոյն՝ շնութիւն եւ պոռնկութիւն պահանջելոց է. նոյնպէս եւ այլոցն: Երկուտասաներորդ՝ զի թէ ոք հիւանդացեալ է մեղօք, պարտ է զի առողջացուցանէ ապաշխարութեամբ. եւ յորժամ առողջացեալ լինի հոգւով եւ ուժովացեալ, պարտ է նմա դեղ տալ որ զառաղջութիւնն պահել: Եւ որպէս որք կամին զմարմնոյ առողջութիւն պահել, երթան ի բաղանիս՝ ազգի ազգի մաճուն առնուն եւ օժանին եւ զառողջութիւն պահեն: Այսպէս պարտ է զհոգեւոր առողջութիւն պահել բաղանեօք. այսինքն, ջրով արտասուաց. եւ առնուլ մաճուն զխոստովանութիւն որ պահէ զհոգեւոր առողջութիւնն:

Երեքտասաներորդ՝ գործ է խոստովանահորն երթալ ի տես մեղաւորաց. եւ հարցանել զնոսա ի հիւանդութենէ հոգւոյն. եւ մխիթարել եւ հաստատել զնոսա փրկութեան յուսով. զի թէ յուսահատեալ լինի, ոչ կարէ ապաշխարանքն քաւել զնա: Չի Յուդա ոչ եթէ վասն մեղացն ծանրութեան մեռաւ, այլ վասն անյուսութեան: Բայց եթէ յոյսն նորա հաստատեալ լինի՝ եւ սակաւ մի զղջացեալ, ապաշխարութիւնն կարէ քաւել զնա: Չորեքտասաներորդ՝ զի յորժամոք ծանրագոյն մեղանչէ՝ ոչ է պարտ զի ի նմին ժամու հատցէ զնա յանդամոց եկեղեցւոյ անիծելով կամ բանադրելով կամ դարձուցանելով զերեսս ի նմանէ. այլ պարտ է ինամել եւ խրատել զնա եւ դարձուցանել ի մեղաց: Եւ թէ ոչ դառնայ, բայց դարձեալ անզեղջ կամօք քարշի ի մեղս, յայնժամ պարտ է հանել զնա յեկեղեցւոյ բանադրանօք եւ անիծիւք. զի մի զայլսն ապականեսցէ. որպէս ասէ Մովսէս թէ, (բարձ զչարն ի միջոյ:) Յնգատասաներորդ՝ պարտ է որ թէ խոստովանահայրն փորձեալ է, եթէ կարի քաղցր խօսիւք եւ թեթեւ կանոիւք դարձուցանել զմեղաւորն, նա թող դարձուցանէ, եւ թէ ոչ կարէ դարձուցանել ի մեղացն, ապա պարտ է սաստկական եւ խոշոր բանիւ երկեցուցանել զնա. եւ ծանր ապաշխարութիւնն դնել ի վերայ նորա. զի վասն երկիւղի ծանր ապաշխարանացն՝ թողցէ զհեշտութիւն մեղացն: Վեշտասաներորդ՝ պարտ է ի սկիզբն խոստովանահորն՝ ասել թէ առաջի Աստուծոյ խոստովանիս եւ ոչ առաջի մարդոյ. եւ Աստուած ողորմած է. եւ վասն մեղաւորց եկն. Պետրոսի՝ Պօղոսի՝ Մարիամու մագդաղենացւոյն՝ եւ այլ մեղաւորաց արա Աստուած ողորմութիւն, յորժամ զղջացան. յայնժամ քեզ առնէ՝ յորժամ խոստովանիս ճշարիտ. ապա թէ այս քաղցր դեղովս ոչ բացւի խոցն, յայնժամ պարտ է նշարակով եւ կամ շանթով պատահել. այսինքն, ահարկու եւ երկեցուցանօղ բանիւ. եւ ահիւ տանջանցն զնա զարհուրեցուցանել. զի վասն այնու դարձցի ի մեղացն եւ զղջացի: Եօթն եւ տասներորդ գիտելիէ՝ զի թէ ոք զբազում մեղս գործեալ իցէ, եւ զբազումս յորդորեալ ի մեղս, եւ բազում հոգիս կորուսեալ, կամ օրինակ չար տալով, կամ խրատ տալով չար, եւ կամ առաջնորդ գլով ծուլացաւ յիւր գործն, նմա չէ բաւական միայն զղջանալ եւ խոստովանիլ վասն այնոցիկ՝ զորս ձգեալ է ի մեղս. եւ վասն բազում հոգւոցն զորս կորուսեալ է. զի Աստուած ինդրէ զնոսա ի ձեռաց նորա: Չի աստ հարցումն լինի. զի՞նչ կանոն պարտի դնել խոստովանահայրն ի վերայ այնպիսւոյն, որ զբազումս կորուսեալ է. թէ բաւակա՞ն է նմա պահք՝ ողորմութիւն: Պատասխանեն վարդապետք եւ ասեն թէ, չէ բաւական. քանզի թէ ոք ունի ի գլուխն ցաւ՝ եւ զդեղն ի վերայ ոտիցն դնէ, յիմար է այնպիսին. զի ուր ցաւն է՝ պարտ է անդ դնել զդեղն. զի զորս կորոյս մեղօք, պարտ է եւ զնոսա ի զղջումն ածել: Դարձեալ գիտելի է՝ զի գողութիւնն երկու ազգ է. հոգեւոր եւ մարմնաւոր. եւ հոգեւոր գողութիւնն ծանրագոյն է: Արդ՝ այն որ զմարդիկ ի մեղս յորդորեալ է, գողութիւն է. զի զմարդիկ յափշտակէ յԱստուծոյ գանձատանէն: Վասն որոյ ոչ է բաւական նմա պահօք եւ աղօթիւք եւ ողորմութեամբ քաւել զմեղս իւր. այլ պարտէ դարձեալ գտանել զկորուսեալ հոգիսն յորդորելովն ի բարիս. եւ դարձուցանել զնոսա ի գանձս Աստուծոյ: Դարձեալ՝ թէ ոք կողոպտէ զոք եւ մերկացուցանէ, եւ խոստովանահայրն հրամայէ նմա ի պահս կեալ, այսու ոչ կարէ առողջացուցանել զնա. զի հիւանդութիւն ի վերայ թիկանցն է. վասն զի մեր կացոյց զթիկունս մարդկան. իսկ նա զմլիամս դնէ ի վերայ կրծիցն. այսինքն,

զպահս որ թուլացուցանէ զսիրտն. այլ անդ ուր ցան է՝ պարտ է դնել զդեղն. եւ զի մեր կացոյց զմարդիկ՝ դարձեալ պարտ է զգեցուցանել զնոսա եւ զոր յափշտակեալ է՝ յետս դարձուցանել: Եւ Քրիստոսի փառք ընդ Յօր եւ Սուրբ Յոզուին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նորին քարոզ վասն Պսակին. ի Բանն՝(Արար Աստուած զմարդն ի պսակեր իւր արու. արու եւ Էգ արար զնոսա օրհնեաց զնոսա եւ ասէ աճեցէ՛ք եւ լցէ՛ք զերկիր:) Ծննդ. 1. 27. (Գլուխ ԽԴ)

Արարչագործն Աստուած յորժամ ստեղծեաց զԱդամ, ասէ՝ (ոչ է բարուք մարդոյդ միայն լինել. այլ արասցուք օգնական ըստ դմա:) Նախ զայն ցուցանէ թէ՛մարդն է մարդոյ օգնական. զի թեպէտ կային այլ կենդանիք օգնական մարդոյ ի բեռն ի լուծ՝ եւ յայլ պետս, այլ ի յառաքինութիւն եւ ի սրբութիւն հոգւոյ՝ մարդն է օգնական մարդոյ: Եւ յորդեծութիւն եւ յայլ շինութիւն տան՝ կին է օգնական. վասն այն ասէ. (ոչ է բարի մարդոյդ միայն լինիլ:) Դարձեալ՝ Աստուծոյ միայն է բարի միայնակ գոլն. զի անկարօտ եւ անեղ բնութիւն է: Իսկ այլ արարածք՝ եղականք են, եւ կարօտ միմեանց: Որպէս ինն դասք հրեշտակացն՝ են յետրկիսս փառաբանիչք Աստուծոյ. հազարք հազարաց, եւ բիւրք բիւրուց. Նոյնպէս ի երկրի՝ բարի է բազմութիւն մարդկան: Նախ՝ զառատ մարդասիրութիւնն Աստուծոյ ցուցանեն: Եւ երկրորդ՝ զի միմեանց օգնական լինին ի շինել՝ ի տնկել՝ ի յարուեստ՝ ի պետս մարմնոյ՝ եւ յուսումն հոգւոյ, եւ յուրախութիւն միմեանց: Եւ այլ բազում բարիս ի միմեանց գտանեմք. վասն ասէ: (Ոչ է բարի մարդոյդ միայն լինիլ:) Եւ թէ ոք ասիցէ՝ կինն եղել պատճառ յանցանաց մարդոյն՝ ո՞րպէս է բարի: Նախ պատասխանեմք եթէ՛ կանխագետ է Աստուած. գիտեր զի մարդն անմեղութեամբ ոչ կարեր աճիլ որպէս հրեշտակք. վասն այն մարմին ստեղծ. եւ զկինն օգնական ետ. զի անասնական ծննդեամբ աճեցին եւ բազմանայցեն մարդիկ. որպէս օրհնեաց եւ ասէ. (աճեցէք եւ բազմացարուք՝ եւ լցէք զերկիր:) Դարձել ասեմք թէ՛ Աստուած բարի է բնութեամբ եւ առատ եւ բարերար. ոչ կարէ մին մարդոյ մեղք՝ զբոլոր բարութիւնն Աստուծոյ խափանել եւ արգելուլ. այլ միայն ինքն մեղաւորն ի բարութենէն Աստուծոյ զրկի: Չոր օրինակ՝ արեգակն բոլոր զիւր լոյսն ծագէ. այլ թէ մի մարդ զակն իւր խփէ. զարեւու լոյսն ոչ կարէ արգելուլ. այլ ինքն միայն զրկի: Նոյնպէս թեպէտ կինն մեղանչեաց այլ զբազում բարութիւնս ոչ արգել Աստուած ի մարդկան ազգէ: Եւ դարձեալ ասեմք. թեպէտ կինն մեղանչեաց՝ այլ բազում արք ընտիրք եւ արդարք եւ արդարք ի նմանէ ծնան. որպէս նահապետքն եւ մարգարեքն եւ ամենայն ընտրեալք՝ մինչեւ ի կատարած աշխարհի. եւ վասն բարի ծննդոց Նորա ինմեաց եւ պահեաց զկինն. թեպէտ պատճառ եղել յանցանաց: Նաեւ այժմ բազում մարդիկ են ի յերկրի չարք եւ մեղաւորք. եւ թոյլ տայ Աստուած Նոցա մալ ի յերկիր վասն բազում պատճառի: Նախզի՛ թեպէտ ինքեանք չարք եւ մեղաւորք են, ի ծնունդս Նոցա բարի մարդ լինելոց է. վասն այն բարի զաւակին՝ պահէ Աստուած զչար ծնօղսն: Երկրորդ՝ թէ ծնօղք Նոցա բարի են եղեալ՝ վասն բարի ծնողացն ներէ չար զաւակացն. որպէս վասն բարի նահապետացնն Աբրահամու Իսահակայ եւ Յակօբայ եւ այլոցն՝ ներեր Աստուած հրեից ազգին: Երրորդ՝ թէ չար մարդն այն ունի ի ծածուկ մասն ինչ

բարի զոր մեք ոչ գիտեմք, զայն հատուցանէ լոցա ի կեանս յայս: Չորրորդ՝ թէ ինքեանք չարք են՝ այլոց բարւոյ լինին պատճռք. երկրի, գաւառի, շինութեան եւ խաղաղութեան: Չոր օրինակ՝ փուշն ոչ ունի պտուղ՝ այլ զպտղաբերսն պահէ. վասն այն ինամենք զնոսա: Հինգերորդ ի ձեռս լոցա հոգեւոր բարի լինի. որպէս չար բռնաւորք նեղեն զքրիստոնեայս եւ զաղքատս. եւ այնու պսակք եւ վարձք լոցա բազմանտն: Վեցերորդ՝ զի Աստուած ոչ կամի զմահ մեղաւորին. ըստ այնմ, (ոչ կամիմ զմահ մեղաւորին. այլ զդառնալն Նորա եւ զկեալն:) Վասն այն պահէ զնոսա ի յերկրի՝ զի զղջասցին եւ դարձցին ի եղաց: Այս զոր ասացաք. եւ այլ բազում պատճառ գոյ որ ներէ Աստուած մեղաւորին. կամ վասն ինքեան, կամ վասն այլոց բարութեան: Նոյնպէս եւ Նախամայրն եւս թեպէտ յանցեալ, յետոյ ապաշխարեաց. եւ բազում զաւակք ի նմանէ ծնանելոց էին. վասն այն ներեաց Աստուած: Դարձեալ եւ գլխաւորն ամենեցուն՝ թէ կինն ոչ էր յանցեալ, բանն Աստուած ոչ էր մարդացեալ. եւ այս բարութիւնս որ եղել քիւ խափանեալ լինէր: Չի թեպէտ արդարքն անմեղութեամբ մտանելն յարքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն, այլ ոչ շնորհօքն Քրիստոսի: Եւ բնութիւնս մեր ոչ լինէր ընդ Աստուած միաւորեալ. եւ ոչ ի հրեշտակաց երկրպագեալ. եւ ոչ տեսանեաք զմարդն մարդկան արարիչ որպէս եւ այժմ: Այլեւ ոչ առատ մարդասիրութիւնն երեւեալ. եւ ոչ պատուականութիւն մարդոյս ցուցեալ. որպէս այժմ որ ի խնդիր եկն բանն Աստուծոյ. եւ չարչարանօք՝ խաչիւ եւ մահւամբ հրաւիրեալ մեծարեաց զմեզ յերկինս: Այլեւ զի թէ ոչ էր Աստուած մրդացեալ, մեք որդիք Աստուծոյ ոչ լինեաք. եւ ոչ եղբայր Քրիստոսի եւ ժառանգակից. եւ ոչ հոգւովն սրբովն ծնանեաք. եւ ոչ ճաշակեաք զմարմին եւ զարիւն որդւոյն Աստուծոյ: Այլ թէ ի դրախտէն էաք վերափոխեալ, ոչ որ առնոյր զպսակ մարտիրոսական, եւ զայլ ճգնութեան. եւ ոչ առաքելութեան. եւ ոչ մարգարեութեան. եւ ոչ առաքելութեան. եւ ոչ մարգարեութեան. եւ ոչ Նահապետութեան. որք հարք եղեն Քրիստոսի ըստ մարմնոյ: Այլ խափանեալ լինէր ի յերկրի ամենայն գործք եւ արւեստք. շինելոյ. տնկելոյ. գորելոյ զերկիր. հանճար. ուսումն. կարեկցութիւն միմեանց. եւ այլ ամենայն բարութիւնք զորս ոչ երկարեմ, հետեւեցան յանցմանն Եւայի: Եւ թէ որ ասիցէ անհանճար մտօք, յորժամ այս ամենայն բարութեան պատճառ եղել մեղքն Եւայի, վասն Է՞ր ինքն պատժեցաւ: Ասեմք եթէ՝ մեղքն ըստ ինքեան չարէ եւ պակասութիւն բարւոյ եւ արդարութեան: Նախ ինքն Եւա՝ ոչ յայն պատճառս մեղանչեաց թէ այս ամենայն բարութիւնս հետեւի մեզ. այլ մարդասիրութիւնն Աստուծոյ եւ ամենիմաստ գիտութիւնն հնարեաց զփրկութիւն մեր: Որ ոչ կամեցաւ զկորուստ մարդկան ազգի. այլ ի չարէն բարի արար մեզ. եւ փոխեաց ի մեղաց յարդարութիւն. ի մահուանէ ի կեանս. յերկրէ յերկինքս: Եւ յայսմանէ երեւի բարութիւնն Աստուծոյ եւ Նախախնամութիւնն. զի ի չարէն եհան զմեզ ի բարի. եւ անարժնիցս եւ մեղաւորացս՝ շնորհեաց փրկութիւն եւ պարգել: Ապա ուրեմն պատճառ փրկութեան մերոյ Քրիստոս է եւ ոչ Եւս. եւ շնորհք Նորա արդարացուցին զմեզ եւ ոչ գործք մեր: Եւ թէ որ ասիցէ թէ՝ Եւա եւ Ադամ անմեղ էին կացեալ, ո՞րպէս աճեր մարդկային բնութիւնս: Ասեմք եթէ՝ ոմանք ասեն զդրախտն ապականացու զոյ. եւ շաղաշարումն արւի եւ իգի. եւ առաւել ցանկութիւն եւ ծնունդ զաւակաց: Եւ բազումք մտացածին բանս տողեն. որ ընդդէմ է սուրբ գրոց եւ ուղղափառաց հարց: Նախզի՛ ասէ

աստուածային հրամանն. (աճեցէք եւ բազմացարուք՝ եւ լցէք գերկիր.)
յերկրի ետ հրաման աճելոյ. եւ ոչ ի դրախտին: Երկրորդ՝ զի դրախտն է տեղի
անապական. եւ ոչ լինէր ի մարդոյն ծորումն ինչ աղտեղութեան. եւ ոչ
տնկոցն: Արդ՝ եթէ ծորումն ոչ լինէր, եւ ոչ ապականութիւն մարմնական. եւ
ոչ ծնունդ ախտական: Երրորդ՝ եկեղեցի սուրբ՝ օրինակ է դրախտին. արդ՝
պսակ օրհնութեան դնի յեկեղեցին. եւ մանկարարութիւն ոչ: Նոյնպէս եւ ի
դրախտն եղել պսակ օրհնութեան. եւ մանկարարութիւն ոչ: Չորրորդ՝ զի թէ
լինէր ախտական ծնունդ որպէս ի յերկրի, կարօտանայր մարդն ամենայն
պիտոյից զաւակին. սննդեան աճելոյ. խնամելոյ, եւ այլոցն. եւ այսոքիկ ոչ են
ի դրախտն. եւ ոչ զգեստ մարմնական: Հինգերորդ՝ նախ քան գյանցանելն՝
էին Ադամ եւ կինն մերկ եւ ոչ ամաչէին. վասն զի ոչ ունէին ցանկութիւն
տռփանաց առ միմեանս. արդ՝ ի յանմեղութեանն միշտ այնպէս մնային՝
ապա ոչ ունէին ցանկութիւն հեշտութեանց: Վեցերորդ՝ եւս յայտնի. զի թէ
ապականացու էր, զապականեալն Ադամ վասն է՞ր հաներ ի դրախտէն. յայտ
է զի դրախտն չէ ապականացու. եւ ոչ զապականացու բնակիչս ընդունի:
Եօթներորդ՝ զի ասէ սուրբն Գրիգոր Նիւսացին ի գիրս կազմութեան եթէ՝
առաջին կեանքն դրախտին՝ էր կուութիւն եւ անապականութիւն. եւ
հրեշտակաց նմանութիւն. որել յետ յարութեանն՝ վերստին դառնամք
յառաջին կեանս դրախտին յանապականութիւն, եւ հրեշտակաց հաւասար:
Արդ՝ եթէ առաջին կեանքն Ադամայ ամուսնութեամբ էր եւ որդեծնութեամբ
որպէս նոքա ասեն, ապա ի վերջին յարութեան նոյնպէս է լինելոց. եւ լինի
ազանդն մահմետականացն մարմնաւոր արքայութիւն եւ կերակուր. եւ
ամուսնութիւն եւ այլ աղճատանք զորս նզովէ սուրբ եկեղեցի զայնպիսի
ասացօղս եւ զխորհօղ. եւ եղիցին նզովեալ: Իսկ թէ ոք հարցանէ՝ ապա վասն
է՞ր ստեղծական ծնընդական անդամքն, յորժամ ոչ ծնանէին ի դրախտին:
Ասեմք եթէ յառաջագետ Աստուած. եւ նախ ծանեալ եթէ՝ ոչ կարէին աճել
անմեղութեամբ իդրախտին որպէս զհրեշտակս. վասն որոյ կազմեաց
մարմին՝ զի յերկրի անասնապէս աճեսցին: Եւ թէ ոք պնտեսցէ զօրինակ եւ
զորպիսութիւն անմեղութեան ծննդենն: Չայս ասեն վարդապետք սուրբք
եթէ՝ որպէս հրեշտակք աճեցան յերկիրս. նոյնպէս եւ մարդկան ազգ ի
դրախտին աճէին: Եւ թէ ասէ՝ հրեշտակք յանեից գոյացան եւ ոչ ի միմեանց.
Իսկ մարդկան ազգ՝ պարտ էր ի միոյն ծնանիլ: Ասեն սուրբք. որպէս ի միոյ
բազում լոյսք վառէին: Եւ թէ ասեն՝ անկատար է այս ծնունդս: Ասեն
վարդապետք սուրբք եթէ՝ զորօրինակ աստուածային կոյս Մարիամ
կուսութեամբ ծնաւ առանց սերման կատարեալ եւ ճշմարիտ: Նոյնպէս եւ ի
դրախտն՝ կարէին ծնանիլ կուսութեամբ եւ առանց սերման կատարեալ
մարդ ի բնութենէն Ադամայ: Եւ կամ եւս ի կողիցն Ադամայ. եւ կամ այլ ինչ
եղանակաւ. որպէս ինքն գիտէ ամենագետն արարչի: Այլ մեք ոչ միայն թէ
զլինելոցն ոչ գիտեմք. զի ոչ եղեալքն՝ Աստուծոյ են գիտելի: Այլ զայս որ
եղեալ է եւ առ մեզ ի ներկայս՝ բազում աշխատութեամբ կարացուք
գտանել. զի այս է մեզ քննել. որպէս օրինաւոր ամուսնութիւնս արւի եւ իգի:
Չի այսպէս սահմանեն զպսակն: Եթէ պսակն է արդար զուգակցութիւն
արուի եւ իգի, ունելով անբաժանելի կենցաղավարութիւն: Արդ՝ պսակն
սկսանի ի նշանդրութիւն. հաստատի հաւանութեամբ սրտից, յորժամ
յայտնեն բանիւ. զի երկուց կարացն հաւանութիւն հաստատէ զպսակն: Իսկ
կատարի պսակն օրհնութեամբ քահանային եւ մարմնական

զուգաւորութեամբ: Իսկ թէ վասն Է՞ր դի նշան. այս է. որպէս ծառն որ նախ ծաղկի եւ ապա պտղաբերի. Նոյնպէս նշանն՝ պսակին ծաղիկն է: Չի յայնմ հետէ հարսն փեսային լինի նշանեալ. եւ փեսայն հարսին է յատկացեալ: Եւ օրինադրեցաւ ի բանն այն՝ յորժամ ոչ գտաւ օգտաւ ի բանն այն՝ յորժամ ոչ գտաւ օգնական մարդոյն. նա ասաց Աստուած. (ոչ է բարւոք մարդոյ միայն լինիլ. արասցուք դմա օգնական ըստ դմա:) Չի ծնօղն եւ արարիչն Աստուած՝ խորհեցաւ վասն հարսանեացն Ադամայ. եւ նշանեաց զԵւա կազմեալ օգնական նմա: Այսպէս ծնօղք փեսային՝ հոգան եւ նշանեն զհարսն վասն որդւոյն իւրեանց: Եւ որպէս հրեշտակապետն Գաբրիէլ՝ նախ ետ զաւետիս սրբոյ կուսին ասելով. (ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ: Եւ նա խորհեր ի միտս թէ, զի՞նչ իցէ ողջոյնս այս.) եւ յորժամ լուաւ թէ, (հոգին սուրբ եկիսցէ ի քեզ.) իմացաւ զճշմարտութիւն բանին. ապա հաւանեցաւ եւ ասէ. (կամ աղախին Տեառն. եղիցի ինձ ըստ բանի քում.) եւ ապա յղացաւ եւ ծնաւ զբանն Աստուծոյ մարմնացեալ եւ մարդացեալ: Նոյնպէս եւ նախ նշան դի հարսին. իսկ հաւանումն երկուց կամացն՝ հաստատութիւն է պսակին. զի բռնութեամբ եւ առանց հաւանելոյ միմեանց փեսային եւ հարսին՝ ոչ հաստատի պսակ: Եւ այս երեւեցաւ ի բանն այն որ ասէ զիրն. (թէ զկողն զոր շինեաց ի կին՝ Էած առ Ադամ:) Այս էր ածելն առ Ադամ, զի տեսեալ հաւանեցցին միմեանց: Այլեւ անդամն գլխոյն մերձ պարտ է լինիլ. այլեւ ի միասին առցեն զպսակն օրհնութեան: Ի յայս միտս նախ քան զպսակն՝ պարտ է զի տեսցեն զմիմեանս հարսն եւ փեսայն. եւ հաւանեցցին կամօք. եւ ապա ի միասին պսակին: Չայս ունի խորհուրդ որ յառաջն տեսանեն զմիմեանս եւ հաւանին սրտիւ եւ կամօք. եւ ապա պսակին: Իսկ կատարումս պսակին՝ նախ է օրհնութիւն քահանային. եւ ապա մարմնական զուգաւորութիւնն: Որպէս Քրիստոս նախ օրհնէ ասելով. (եկայք օրհնեալք հօր իմոյ.) եւ ապա միաւորի ընդ եկեղեցի սուրբ ի ժառանգութիւն արքայութեան: Վասն որոյ այժմ քահանային օրհնութիւնն է. եւ ապա մարմնաւոր զուգաւորութիւնն. վասն զի նախ օրհնեաց զնոսա եւ ասէ. (աճեցէք եւ բազմացարուք՝ եւ լցէք զերկին:) Եւ ապա ասաց. (եղեցին երկուքն ի մարմնին մի:) Վասն զի աստուածային բանն է որ պսակէ զհաղորդութիւնն որ ասէ. (այս է մարմին իմ, եւ այս է արիւն իմ:) Նոյնպէս Աստուծոյ բանն է որ առնէ զերկոսեանն մի մարմին զայրն եւ զկինն: Իսկ թէ ոք ասիցէ՝ Ադամ ասաց զայս թէ, (եղիցին երկուքն ի մարմին մի:) Ասեմք թէ՝ Աստուած է բանն որ ասաց յայտնի թէ՝ (օրհնեաց Աստուած:) Իսկ ի ծածուկ օրհնութիւնն այն էր թէ՝ (եղիցին երկուքն ի մարմին մի.) որ զայս մարգարեական հոգւովն յայտնեաց Ադամայ: Եւ թէ ոք ասիցէ թէ՝ ձեւ բանին ներկայական պարտ է լինիլ. որպէս այն (այս է մարմին իմ.) իսկ այս ապառնի է որ ասէ, (եղիցին երկուքն ի մարմին մի:) Ասեմք թէ՝ օրհնեացն եւ աճեցէքն ներկայական է. եւ եղիցին ապառնի. զայս ցուցանէ թէ՝ պսակին կատարումս կրկին է. Է ի ներկայն օրհնութեան բանին. եւ է յապառնին մարմնաւոր զուգաւորութեամբ. վասն այն օրհնեաց ասէ եւ եղիցին: Դարձեալ եղիցին՝ նշանակէ զայնոսիկ, որք մինչ ի կատարած աշխարհի պսակին մարմնական զուգաւորութեամբ: Դարձեալ սահմանեն զպսակն ասելով. պսակն է արդար հատուցումն երկուց պատշաճաւոր անձանց ի մի զուգաւորութեանց: Եւ դարձեալ՝ պսակն է արդար զուգաւորութիւն առն եւ կնոջ՝ անբաժանելի պահելով զկենցաղավարութիւնն: Արդար

զուգաւորութիւն վասն այն ասի՝ որ ոչ պարտի լինիլ, եթէ ոչ վասն ծնանելոյ զաւակս ի պաշտօնն Աստուծոյ: Չի ասեն վարդապետք թէ՛ որ սաստիկ սիրէ զկինն, շնացող է: Արդ՝ բարի պսակն եռակի է. այսինքն, հաւատն. զաւակն. եւ խորհուրդն: Հաւատն է՝ զի ոչ ոք ի յերկոցուցան պղծեսցի օտար անկողնով. որպէս այն որ թողու զհաւատն եւ ուրախանա բանիւ՝ զշաղկապ հաւատոյն հատանէ եւ հաւատովն պղծի: Նոյնպէս որ օտար անկողնով պղծէ զշաղկապ պսակին, որոշի յօրհնութենէն եւ պղծի անկողինն սուրբ. որպէս գրէ առաքեալն. (պատուական է ամուսնութիւն եւ սուրբ անկողին. բայց զշունս եւ զպոռնիկս դատէ Աստուած:) Իսկ զաւակն՝ զի ծնցի եւ մնուցանիցի ի պաշտօնն Աստուծոյ. զի վասն ծննդեան զաւակին է հրաման պսակն: Իսկ խորհուրդն այն է՝ զի մի բաժանեսցի. զի թէպէտ եւ եկեղեցի կարէ բաժանել վասն արգելման: Չի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգեւոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառաւ, որք բաժանին այր եւ կին: Այլ ոչ է պարտ բաժանել զպսակն զայնն որ օրինօք լինի պսակեալ. ըստ այնմ, (թէ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ:) Սակայն ի մահն արձակի եւ քակտի շաղկապ պսակին: Եւ կրկին է շաղկապ պսակին. եւ կրկին է մահն որ պատասխանի տայ նոցին: Այսպէս զի է շաղկապ հոգեւոր. այսինքն, սրտիցն, սրտիցն. եւ շաղկապ մարմնաւոր խառնման սերիցն: Իսկ մահն կրկին է. հոգեւոր եւ մարմնաւոր. հոգեւոր մահուամբն՝ արձակի հոգեւոր շաղկապն. յորժամ մարդն մեռանի աշխարհի, մտանելով ի կրօնաւորութիւն: Եւ մարմնաւոր շաղկապն՝ արձակի եւ քակի մարմնաւոր մահուամբն. վասն որոյ ոչ է պարտ բաժանել զօրինաւոր պսակն որքան կենդանի իցեն: Եւ լինի ամուսնութիւնն վասն երից: Կամ խորշելոյ ի պոռնկութենէ. կամ վասն զաւակ ծնանելոյ: Արդ՝ երկոքին սոքա՝ պատուական եւ սուրբ են: Այլ երրորդն է վասն վաւաշոտ ցանկութեան միշտ. եւ այս է մեղք: Վասն որոյ՝ պարտ է գիտել եւ ընտրել զժամանակն. զտեղին. զորպիսութիւնն, եւ զկերպ ամուսնութեան. զի իցէ պատուական եւ սուրբ՝ եւ օրհնութեանցն Աստուծոյ արժանաւոր: Եւ առանց այսոցիկ ընտրութեան՝ բարւոքն ոչ բարւոք լինի. եւ պատուականն պիղծ եւ խոտան. եւ ի զազիր մեղս համարեալ լինի: Եւ զայս առնէ խաբէութիւնն եւ հնարքն սատանայի. զի ամենայն բարեաց հակառակ եւ խափանօղ եւ խափանօղ է: Չի կամ յաճախ սիրով եւ ցանկութեամբ ի մեղս տանի. եւ կամ ատելութեամբ բաժանել եւ քակել տալ. զի թէ այսպէս եւ թէ այնպէս, զօրէնս Աստուծոյ կոխել տայ եւ արհամարհել: Յորոց փրկեսցէ Քրիստոս Աստուած յայնպիսի հնարից սատանայի առ հասարակ զամենայն հաւատացեալս անուան Իւրոյ. եւ օրհնեսցէ զպսակն ողջախոհութեան սուրբ ամուսնացելոց. Ամեն:

Նորին քարոզ դարձեալ վասն Պսակին. ի Բանն՝ (Եւ Էարկ Տերն Աստուած թմրութիւն ադամայ եւ ննջեաց. եւ Էառ կող մի ի կողիցն նրա. եւ շինեաց ադամայ ի կին եւ այլն:) Ծննդ. 2. 21. (Գլուխ. ԽԵ)

Թմրութիւն ի վերայ Ադամայ՝ ոչ բնական քուն է, որ աշխատանաց մարմնոյ եւ ի կերակրոյ գոյանայ. որ ոչ ապշութիւն եւ խելաց ցնորումն

անախորժելի: Այլ է յափշտակութիւն մտացն վերացեալ առ Աստուած մարգարեութեան հոգւով. որպէս Աբրահամ ետես ի ննջմանն. եւ Պօղոս յափշտակեցաւ յերրորդ երկինս. այսպէս եւ Ադամ: Իսկ թէ վասն Էր թմբեցաւ: Նախգի՝ մի զգացի զցաւ կողին: Եւ կարօղ էր Աստուած առնուլ զկողն յարթնութեան առանց ցաւոց. այլ ի խորհուրդ. զի որպէս երկիրն յորմէ առաւ հողն Ադամայ ոչ ցաւեաց. նոյնպէս եւ Ադամ ոչ ցաւեցաւ յառնուլ կողին: Երկրորդ՝ զի բազում ինչ ետես ի ննջմանն վերամբարձեալ մտօք վասն Քրիստոսի եւ վասն եկեղեցւոյ. զարթուցեալ ասաց զմարգարեութիւնն: Երրորդ՝ զի ի ննջելոյն Քրիստոսի ի վերայ խաչին՝ շինեցաւ եկեղեցի ի կողէն, յորժամ ել արիւնն եւ ջուրն ի հաստատութիւն եկեղեցւոյ. ջուր ի մկրտութիւն աւազանին. եւ արիւնն ի ճաշակումն հաղորդութեան: Այսպէս ի ննջելոյն Ադամայ՝ շինեցաւ կինն ի կողէն. որպէս ասէ. (եառ մի ի կողիցն նորա. եւ ելից ընդ այնր մարմին:.) Եւ ընդ Էր ի հողոյ ոչ ստեղծ գեւա որպէս զԱդամ: Նախգի՝ մի իցեն հաւասարք պատուով եւ Նորին քարոզ վասն Մեղաց. ի Բանն յօհաննու: (Եւ մեղք՝ որք մեղք են. եւ Էն՝ որք մահու չափի են:.) Յօհ. 5. 16: (Գլուխ. ԽԷ)

Բնական ընտրողութեամբ ամենայն ոք բնական ստեղծաւ ի յԱստուծոյ: Եւ է բնական ընտրողութիւն ի միտսն: Նախգի՝ ճանաչէ եւ ընտրէ զբարի եւ զչար. եւ որոշէ ի միմեանց. որպէս աչք զգոյն սեւ եւ սպիտակ՝ տեսանէ եւ որոշէ: Յետ այնորիկ երկրորդ ընտրելն է՝ որ զբարին առնէ եւ պահէ. եւ զչարն խոտէ: Առաջին ընտրելն՝ իմացականին է. որ բնակ լուսովն ճանաչէ զնոսա: Երկրորդ ընտրելն՝ կամացն. որ կամօք առնէ զբարին. եւ զչարն ի բաց ձգէ. վասն զի չարն ամենեցուն է փախչելի ըստ ինքեան. իսկ բարին ամենեցուն է բաղձալի: Արդ՝ որ իմաստունք են մտօք՝ այսպէս ընտրեն զբարի եւ զչար. խոտեն զչարն՝ եւ ընտրեն զբարին: Իսկ որ անմիտն է եւ անզգամ՝ ոչ ճանաչէ եւ ոչ խոտէ զչարն. որպէս կոյր աչք՝ ոչ տեսանէ զգոյն. այլ անխտիր զամենայն մեղս չարաչար գործ է: Այլ երեք եղանակաւ զանազանին յանցաւորք: Են ոմանք՝ որք ակամայ եւ անգիտութեամբ յանցանան. որպէս մանկունք: Նոցա ներելի է եւ թողութիւն. որպէս ասէ Դաւիթ. (զմեղս մանկութեան եւ զանգիտութեան իմոյ մի յիշեր:.) Եւ են ոք ակամայ կամօք յանցանեն. թեպէտ գիտեն զմեղս: Եւ են որք կամաւ եւ գիտութեամբ յանցանեն ի մեղս: Արդ՝ այն որ անգիտութեամբ եւ ակամայն է որպէս մանուկ տղայոցն՝ այժմ ոչ յիշեմք. այլ զկատարելոցն քարոզեմք: Չի ամենայն մեղք կատարելոց՝ յերկուս դեմս որոշի: Նախ՝ որ ակամայ մեղանչէ մարմնովն եւ գայթակղեցուցանէ՝ այն երկրորդ՝ կամօք գործէ: Իսկ որ առաջին կամօք եւ կամակար մտօք մեղանչէ՝ այն առաւել չար է եւ անպարշտութիւն. որպէս չարք ի մարդկանէ՝ որք հեշտացեալք են ի մեղս, եւ անզեղջ կամօք մեղանչեն. որպէս կռապաշտք. եւ որպէս այլազգիք. եւ անկիրթ երիտասարդք եւ անխրատք. որք խստացեալ են ի մեղս. զչարն իբի զբարի գործեն: Չնոցա մեղսն զանազանէ թէ, (են մեղք՝ որք մեղք են. եւ եւ են՝ որք մահու չափք են:.) Եւ այս երկու մեղքս՝ այսպէս որոշին: Առաջին՝ այն որ ակամայն է, գայթակղեալ է ի մեղս. որպէս ոք ի ճանապարհն գթի՝ եւ դարձեալ կանգնի: Իսկ կամաւորն՝ զլորեալ է ի մեղս եւ անկեալ ի գուր. եւ ոչ կարէ յառնել: Երկրորդ՝ որ ակամայն է՝ ինքն ի ճանապարհէն է մոլորեալ. եւ դարձեալ գայ ի յուղղութիւն: Եւ կամաւորին ճանապարհն՝ է թիր. որ ոչ

կարէ ուղղիլ. եւ քանի ընթանայ՝ մոլորի: Երրորդ՝ այն որ ականայ մեղան մեղանչէ՝ հիւանդ է. որ կարէ զցաւն զգալ զհոգւոյ: Իսկ կամաւորն մեռեալ է, որ ոչ ամենեւիմբ ցաւի ի մեղաց. վասն այսր ասէ. (եւ մեղք՝ որք մահու չափք են:) Չորրորդ՝ որ հիւանդ է, առողջանայ հոգեւոր դեղով. եւ որ մեռեալն է՝ ոչ կարէ առողջանայ. վասն այն աղաչէ Դաւիթ. (ողորմեա ինձ Տէր՝ զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի ես մեղայ քեզ:) Հինգերորդ՝ այն որ հիւանդն է՝ ի կողէ անկեալ. եւ աչքն տեսանէ եւ ասէ զցաւն: Այսպէս ականայ մեղանչօղն՝ տեսանէ մտօքն եւ խօսի զմեղսն. զի լոյս խղճի մտացն ի վառ է. որպէս ասէ Դաւիթ. (լուսաւոր առնես զճրագ իմ եւ այլն:) Իսկ կամաւորն՝ ննջեալ է եւ մեռեալ ի մեղսն. որ ոչ խօսիլ կարէ. զի խաւարեալ է եւ կուրացեալ է միտքն: Վասն որոյ աղաչէր Դաւիթ. (լոյս տուր Տէր աչաց իմոց. զի մի երբէք ննջեցից ի մահ.) զի խաւար նորա՝ որպէս լոյս նորա է չարին:) Վեցերորդ՝ նա տրտմութեամբ գործէ զմեղսն, եւ գիտէ որ մեղք է. ըստ մարգարէին՝ (տրտմութիւն կալաւ զիս ի մեղաւորաց եւ այլն:) Իսկ կամաւորն՝ ուրախացեալ է ի հեշտութիւն մեղացն. եւ ծիծաղելով գործ է. որպէս ասէ առակն. (ծիծաղելով գործէ այլ անպարհիշտ զմեղս:) Եւ այս երկու մեղացս օրինակ. այն որ տրտմութեամբ գործէ՝ որպէս զխաւար տեսանէ զմեղս. ըստ որում ասէ Դաւիթ. (ասացի խաւար ուրեմն ծածկեաց զիս. եւ զիշեր փոխանակ լուսոյ:) Խաւարն է որ պակասի լոյս աչացն. եւ զիշերն՝ որ պակասի արտաքին լոյսն: Նոյնպէս ականայ մեղքն՝ խաւար է եւ զիշեր. եւ զլոյս մտացն խաւարէ: Իսկ կամաւոր մեղքն զոր ուրախութեամբ գործ է՝ որպէս լոյս հեշտացեալ է. (զի դամբար անպարշտաց մեղքն է ասէ առակն.) վասն զի մտաց բնական լոյսն՝ ընդ մեղաց լոյսն հեշտանայ եւ հաւանի. եւ այնպէս ուրախութեամբ զմեղս գործէ: Եօթներորդ՝ որ ականայն է, մարմինն միայն գործէ զմեղս. այլ ի ներքս կամքն եւ իմացումն անհաճ են ի մեղսն. եւ հաճեալ են ընդ օրէնս Աստուծոյ. եւ ըստ գտանեն եւ խեթկեն ի ներքուստ: Իսկ կամաւորն՝ մարմինն հեշտացեալ է ի մեղսն. եւ կամքն հետեւեալ եւ ամրացեալ. եւ խիղճմտանքն թեպէտ սակաւ ինչ դատէ. այլ մարմին եւ կամքն՝ հեշտութեամբ մեղացն ծածկեն զլոյս նորա եւ խաւարեն. եւ այնուհետեւ շրջանի եւ նա. եւ ամենեւիմբ խաւարի: Ութներորդ՝ այն որ ականայն է՝ թէ որ խրատէ քաղցրութեամբ, լսէ եւ դառնայ ի մեղաց. իսկ կամաւորն՝ ամենեւին ոչ դնէ ունկն խրատի: Ասէ զդառն բանն ըստ Յոբայ. (զճանապարհսս քո ճանաչել ոչ կամիմ:) Այլեւ ատէ զխրատն եւ զխրատօղն. ըստ այնմ, (ատեցին զյանդիմանիչս ի դրունս իւրեանց:) Իններորդ՝ այն որ ականայն է՝ զայլ ոք ոչ քարշէ ի մեղս. այլ միայն ինքեան մեղօքն զգայ. եւ կամաւորն՝ եւ զայլս ընդ իւր քարշէ բանիւ եւ գործով. խաբելով եւ բռնութեամբ. զի ոչ միայն զինքն կորուսանէ, այլեւ զայլս. որպէս չար թագուորքն կռապաշտք եւ այլզգիք. որք յօրինաց հանեն. եւ յիւրեանց կորստեան խաւարն ձգեն: Տասներորդ՝ այն որ ականայն է՝ երկիւղ ունի ի տանջանացն. եւ ահիւ գործէ զմեղս. եւ անձնատանջ լինի յերկիւղէ պատւիրանացն՝ եւ ի մահուն եւ ի դատաստանեն Աստուծոյ: Իսկ կամաւորն՝ ոչ ունի զերկիւղ օրինացն. ոչ մահուն եւ ոչ զդատաստանին, կամմմ զպատժոց նորին: Չի (ասէ անզգամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած.) եւ ոչ հատուցումն. վասն այն առանց ահի գործէ զմեղս: Մետասաներորդ՝ այն որ ականայն է ի մեղս՝ դեռեւս յոյս ունի դառնալոյ եւ թողութեան մեղաց. թեպէտ այսօր ի թուլութենէ կամ ի սատանայէ զմեղս գործէ: Իսկ կամաւորն՝

յուսահատեալ է ի թողութենէ. եւ ընկղմեալ է ի պտոյտս մեղաց. ոչ ունի ակն դառնալոյ եւ ոչ թողութեան: Չորմէ աղօթեր մարգարէն. (մի ընկլցին զիս պտոյտք ջուրց. եւ ջրհոր մի կափուսցէ զբերան իւր ի վերայ իմ:) Եւ այս երկու մեղացս օրինակն՝ է որպէս հնոցի հուրն, եւ շերմացեալ ջուրն. որպէս շերմացեալ ջուրն կարէ զովանալ եւ ցրտիլ. նոյնպէս եւ ակամայ մեղքն՝ կարէ փոխիլ: Իսկ հնոցի հուրն՝ ոչ փոխէ զջերմութիւնն իւր. այսպէս որ կամաւ եւ գիտութեամբ շերմացեալ է ի մեղս՝ անզովանալի է ի մեղս եւ ոչ փոփոխի: Այլեւ այս երկու մեղացս՝ այն որ պատահմամբ եւ զղջմամբ՝ օգնական ունի զԱստուած եւ զիրեշտակս, զպատուիրանս եւ զքահանայս: Սոքա չորեքին՝ օգնեն մեղաւորին որ զղջումն ունի. եւ հանեն ի մեղաց: Իսկ որ ինքնայօժար կամօք է ի մեղս, ոչ ուստեք է օգնութիւն. զի օգնեն քահանայք. եւ ոչ պատուիրանք. ոչ հրեշտակք յորդորեն ի բարիս. եւ ոչ Աստուած դարձուցանէ զնա. այլ լքանէ եւ թողու զնա զնալ զհետ կամաց իւրոց. ըստ այնմ, (բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեկց. զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց:) Եւ թէ ոք ասիցէ՝ վասն է՞ր բռնութեամբ ոչ քարշէ ի մեղացն, եւ բերէ յարդարութիւն զմարդ: Ասեմք թէ՝ վասն երկու պատճառի: Նախ՝ թէ բռնութեամբ քարշէր, հաներ զանձնիշխան կամս մեր. վասն որոյ թողու՝ որ մեր կամօք գամք ի յուղղութիւն: Երկրորդ՝ թէ բռնութեամբ բերէր, թիրուծի լինէր արդարութեան իւրոյ. վասն որոյ արդար է Աստուած եւ ոչ անիրաւ. ոչ բռնութեամբ քարշէ յարդարութիւն: Երկոտասաներորդ՝ որ ակամայն է՝ զղջումն ունի եւ փոշիմանի ի մեղաց գործն. իսկ կամաւորն՝ անզեղջ կամօք գործէ. որպէս սատանայ զի ոչ ունի զղջումն վասն այն ոչ գտանի թողութիւն. որպէս ասէ առաքեալն. (կամակար մտօք յանցուցելոցն՝ ոչ է պիտոյ վասն մեղաց պատարագ. այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին եւ նախանձ հրոյ՝ որ ուտիցէ զհակառակորդս:) Վասն այսր մեղաց՝ ասէ աւետարանին. (ընկալեալ զողորմութիւն ի Տեառնէ, եւ դարձեալ ի մեղս կամակար մտօք անկցի, եւ զառաջինն եւս ինդրեցէ ի նմանէ:) Եւ վասն այս մեղաց՝ ասէ մարգարէն. (յորժամ անպարշտէ մեղաւորն, ոչ յիշեսցին առաջին արդարութիւնքն զորս գործեաց.) այսինքն, կամ կամակար մեղանչելն զառաջին բարութիւնս կորուսանէ. եւ զթողեալ մեղաց պատիժն վերստին կրէ: Չոր օրինակ՝ կատարեալ արդարութիւն՝ զառաջին գործեցեալ մեղսն եւ զպատիժն կորուսանէ. այսպէս եւ կամակար մեղքն՝ (որպէս զշուն դառնայ ի փսխածն, եւ խոզ լուացեալ ընդ տիղմն թաւալի:) Այսպէս է զանազանութիւն կամաւոր եւ ակամայ մեղացն: Չորմէ ասէ առաքեալն. (են մեղք՝ որք մեղք են. եւ են՝ որք մահու չափք են:) Եւ գիտելի է՝ յորժամ մարդ որ ի խորս չարեաց հասանի, զԱստուած դնէ պատճառ մեղաց. իբրթէ ցանկացող արար զմեղ՝ վասն այն պոռնիկիմք: Եւ բարկացող՝ վասն այն սպանանեմք: Եւ կարօտ կերակրոյ՝ վասն այն ազահեմք: Ասեմք թէ՝ սուտ է այս պատճառս: Նախզի՞ Աստուած որ ի մարդս է դրեալ՝ վասն բարւոյ է դրեալ. մեք ի չարն փոփոխեմք. զի ի մեզ բան է դրեալ՝ որ զբարին Աստուած ճանաչեմք եւ ընտրեմք. մեք զչարն ընտրեմք: Չբարկութիւն է տուեալ՝ որ ընդդէմ չարին բարկանամք. մեք փոխելով զայն, ընդդէմ օրինացն բարկանամք: Նոյնպէս զցանկութիւնն է տուեալ վասն բարւոյն՝ մեք չարին ցանկանամք. նոյնպէս կարօտ է արարեալ կերակրոյ եւ զգեստուց՝ որ հանապազ աշխատելով զտանեմք. զի մի պարապիլով զչարն գործիցեմք: Այսպէս Աստուած

զամենայն բարի է դրեալ ի մեզ: Եւ դարձալ՝ զամենայն չափաւոր է մեզ տուեալ. մեք ի յանչափն եւ յաւելորդն տանիմք. որպէս չափաւոր կերակրով պէտք մեր լնանին. եւ բնութիւնս զայն խնդրէ. իսկ գյաճիւելն որկորստութեամբ՝ մեք կամօք ստանամք: Նոյնպէս մի անձնհանդերձ մարդոյն բաւական է. բազումն աւելորդ է: Ի մի ձի հեծնումք. բազումն աւելորդ է. թէպէտ ջուրն շատ է. սակաւն զծարաւ մեր անցուցանէ. եւ ի յօդոյս սակաւ ծծեմք. թէ աւելի առնումք, սատակիմք: Այսպէս եւ զամենայն մեղս տես. զի ցանկութիւնն չափաւոր է. բարկութիւնն չափաւոր է. իմացումն չափ ունի զճշմարտութիւնն. այլ խորամանկելն եւ սպանանելն եւ շնալն յաճախ՝ ի մեր կամացս լինի: Ապա ուրեմն անմեղադրելի է Աստուած. զի մեք եմք պատճառ մեր մեղացս: Դարձեալ՝ որ այսպէս ի խորս մեղաց է հասել՝ անհաւատութիւն տիրէ մարդոյն. եւ զչորս իրս արհամարիէ անհաւատութեամբն: Նախ զԱստուած. զի (ասաց անզգամս ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած:): Չի թէպէտ լեզուան ասէ թէ Աստուած գոյ՝ այլ ի սիրտն ուրանայ. վասն այն՝ (ապականեցան եւ պղծեցան յանօրէնութեան իւրեանց:): Երկրորդ՝ արհամարիէ զդատաստանն Աստուծոյ, եւ զհատուցումն մեղաւորաց: Երրորդ՝ արհամարիէ զպատւիրանս Աստուծոյ. (զմի շնարն՝ եւ զմի գողանարն, եւ զայլն:): Չորրորդ՝ արհամարիէ զգործս բարիս ի յինքն. զի ոչ ի միտսն, եւ ոչ ի լեզուն. եւ ոչ ի մարմինն զբարին կամի. այլ թիրէ զմիտսն եւ զխորհուրդն ի չարն եւ յանհաւատութիւնն: Չլեզուն ի սուտ եւ ի հայիոյութիւն. զմարմինն ի զանազան չար գործս: Այսպէս արհամարիէ անպարիշտն զչորեսինս զայսոսիկ: Եւ յայնժամ ինքն մեղաւորն ի սոցանէ արհամարիի եւ անարգի. որպէս ասէ առակն. (որ արհամարիէ զիրօք՝ արհամարիեցի ի նոցանէ:): Նախ այնպիսին արհամարիի յԱստուծոյ եւ ի մարդկանէ հրամանաւ նորին. ի յիշխանաց եւ յառաջնորդաց մարմնաւոր եւ հոգեւոր. որ հրամանաւն Աստուծոյ պատուհասեն զչարս եւ զանօրէնս. կամ սիրով, կամ զերութեամբ, կամ սովով, աստ տանջէ, կամ անդ ի հուրն յաւիտենից: Երկրորդ՝ դատաստանաւն վրեժ խնդրէ ըստ չափոյ յանցանացն, եւ պատժէ զնոսա. զի որ զդատաստանն ի գործ բարւոյն ոչ յիշեցին, ի վրեժ խնդրելն յիշեցեն եւ ի միտ ածցեն թէ, գոյ դատաստան արդար: Երրորդ՝ պատուհասէ օրիինօքն. թէ բնական. թէ գրաւոր, թէ աւետարանաւն: Սոքա լինին տանջողք մարդկան՝ որք զօրէնս առին եւ ոչ պահեցին. (զի որք օրիինօքն մեղանչեն, օրիինօքն դատապարտին. եւ որք արտաքոյ օրինացն մեղան, արտաքոյ օրինացն եւ կորչին:): Չորրորդ՝ պատուհասեն զնոսա գործք բարիք զորս անարգեն յանձանց եւ գործեն զչրարս. եթէ ի միտս, եւ թէ ի լեզուս, եւ թէ ի գործս. զի որ մասամբ որ զչարն գործէ որ՝ թէ հոգւով է թէ մարմնով, նոյն մասամբն եւ կրէ զտանջանսն, թէ հոգւով, եւ թէ մարմնով: Արդ՝ եթէ մարդ մարդոյ իր մի զէն եւ պակասութիւն ածէ, ատեն զնա եւ թշնամի համարին. որ կամ ընչից զէն բերէ, կամ փառաց, կամ խօսիւք, կամ գործով իւրք: Այլ արդ՝ մեղքն այնպէս թշնամութիւն է մեզ՝ որ ոչ մին իրաց, այլ ամենին եւ բոլորին զէն եւ պակասութիւն է. ընչից եւ կենաց՝ եւ փառաց՝ եւ հոգւոյ՝ եւ մարմնոյ: Ընչից եւ փարթամութեանց զէն է եւ կորուսիչ՝ զոր ընդ գործակիցս չարեաց մտնեն եւ կորուսանեն: Փառաց անարգիչ է՝ զի աչացն ելանեն՝ եւ մարդկան ատելի լինին: Կենաց կորուստ՝ զի աստ ի մարմնաւոր կենացս կարճէ. եւ անդ յաւիտենից հոգւոյ եւ մարմնոյ պակասութիւն եւ զէն: Ապա

ուրեմն ատելի է այնպիսին եւ թշնամի համարելի: Չի մեղքն ոչ միայն հոգւոյն, այլեւ մարմնոյն բազում վնաս առնէ: Նախզի՛ խիղճ մտացն դատէ հանապազ գմեղաւորն, եւ չարչարէ ի ներքուստ: Երկրորդ՝ զի տխրութիւն եւ պատկառանս առնէ դիմացն. որպէս կայէին խոնարհեցան անկան երեսք յետ սպանմանն Աբելի: Երրորդ՝ զի ահ եւ երկիւղ եւ կասկած պատուհասի անկանի ի միտն. որպէս Եւա եւ Ադամ յորժամ մերկացան եւ թաքեան: Չորրորդ՝ զի ամենայն մարդկան ատելի եւ նախատելի լինին. ըստ այնմ, (յԱստուծոյ աչացն ելին. եւ ամենայն մարդկան ատելիք եղեն:) Հինգերորդ՝ զի մոլորի միտք մեղաւորին. եւ ոչ կարէ ուղղել գիտրիւորդն. զի ցրուեալ է ընդ զանազան մեղացն, եւ խաւարեալ տեսողութիւնն: Վեցերորդ՝ զհամարձակութիւն կորուսանէ. եւ զջերմ սերն որ առ Աստուած ցրտացուցանէ: Եօթներորդ՝ զ հանապազ ցանկութեամբն մաշի. զի անյագ է գործ մեղացն. եւ տոչորի միշտ. ըստ այնմ, (անդէն ի ցանկութիւնս ձեր մաշեսցիք:) Ութներորդ՝ զի ծոյլ եւ անարի՛ եւ խենեշանայ մարմինն: Իններորդ՝ զի դատապարտին եւ տանջին ի մարմնաւոր իշխանաց վասն զանազան մեղաց: Տուգանք վասն զրկանաց. քարկոծումն վասն շնութեան. արին ընդ արեանց. հատումն մասանց եւ այլն: Տասներորդ՝ մարմնաւոր պատուհաս. որպէս սով եւ տարածամ մահ հիւանդութիւն. սիրելեաց մահ. անասնոց մահ. անասնոց սատակումն. երաժշտութիւն խռովութիւն. գերութիւն. որոգայթ. եւ այլ ինչ պատուհաս. որպէս առ ջրիեղեղան, եւ առ սողոմայեցւոյվքն: Արդ՝ այսոքիկ մարմնական վասն մեղաց պատիժք: Իսկ առ հոգեւորն՝ ի բազում ինչ վնասակար է մեղքն: Նախզի՛ յանցաւոր առնէ Աստուծոյ եւ պարտկան պատուհասի նորա: Երկրորդ՝ զի արհամարիէ զօրէնս Աստուծոյ՝ եւ լինի օրինազանց: Երրորդ՝ զպատկերն Աստուծոյ կորուսանէ յինքն. եւ շաղախէ մեղօք: Չորրորդ՝ զտաճարն Աստուծոյ ապականէ մեղօք. (դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք ասէ առաքեալն:) Հինգերորդ՝ սատանայի տեղի հանգստեան լինի եւ բնակարան: Վեցերորդ՝ զլոյս շնորհացն՝ հեռացուցանէ ի մարդոյն: Եօթներորդ՝ զճանապարհն որ առ Աստուած տանի՛ կորուսանէ: Ութներորդ՝ կապէ ի մահ զհոգին: Իններորդ՝ խայտառակ եւ ամօթով ի դատաստանին՝ ըստ յիմար կուսանացն՝ զլուխ խոնարհեալ, սիրտ տրտմեալ հալածի ի ձայնէն Զրիստոսի: Տասներորդ՝ դատաստանն ահագին, (եւ տանջանքն յաւիտենից՝ որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:) Յորժամ մեղքն այնպէս վնասակար է հոգւոյ եւ մարմնոյ մարդոյ՝ վասն Է՞ր գործք մարդ: Գիտելի է՝ զի Աստուած զմարդն բարի եւ ուղիղ է ստեղծեալ. զի մարմնով եւ հոգւով եւ մտօք բարի է ստեղծեալ: Եւ որպէս ինքն Աստուած բարի է՝ եւ ստեղծեալքն ի նման է բարի են. այլ Աստուած անփոփոխ բարի է. իսկ մարդն փոփոխական է. ի փոփոխելի կեանս՝ նա կարեմք ի բարւոյն ի չարն փոխիլ մարմնով եւ հոգւով. եւ յուղիղ խորհրդոցն ի թիւրն: Եւ այս յերկու պատճառ է լինի: Նախ՝ ի սատանայ է որ թշնամի է մեր. եւ հանապազ կամի պատրել որ ի բարւոյն ի չարն փոխէ: Երկրորդ՝ զանձն իշխան կամս մեր սատանայ խաբէ՛ որ զչարն բարի կերպարանէ եւ տան գործել: Չի թէ չար ցուցաներ՝ ոչ գործեաք. զի է չարէն ամենայն մարդ փախչի. այլ զչարն բարեաւ զարդարէ եւ պաճուճէ. եւ այնու զմեզ խաբէ: Իսկ մեք անձնիշխան կամօք խաբիմք ի յընտրելն մեր. եւ զայն որ չար է՝ գործեմք. եւ որքան ի գործն եմք, հեշտանայ մարմինն եւ հոգին, եւ ոչ իմանայ: Եւ ի յայս մեղս որ

մինչ ի խորհուրդն է եւ ոչ գործեալ. դիւրաւ ողջանայ. ապա թէ մարդն յերկարի ի մեղսն՝ հեշտանայ մարմինն. եւ զգայարանաքն թմրին ի մեղս եւ ոչ գիտեն զծանրութիւնն: Չոր օրինակ՝ ձուկն որ կլանէ զկարթն ի մեջ ջրոյն խաղայ եւ ոչ գիտէ, մինչ ի ջրոյն ի դուրս անկանի: Նոյնպէս եւ մարդ զմեղաց չարն ոչ գիտէ, մինչ ի զղջումն գայ եւ ելանէ ի մեղաց. եւ կամ մեռանի եւ ելանէ ի կենաց: Ապա յայնժամ հաշի եւ հառաչէ եւ զղջանայ եւ ոչ գտանէ թողութիւն. զի ամեն մեղաւոր՝ ի յայն կեանս փոշի մանի ի հարկէ տանջանացն, եւ ոչ բժշկի: Եւ թէ ոք ասիցէ՝ թէ նոյն ողորմած Աստուածն է, եւ նոյն մեղաւորն. յորժամ զղջայ՝ Է՞ր ոչ թողանի: Ասեմք եթէ՝ վասն երեք պատճառի: Նախ՝ անդ ոչ գոյ մարմին որով ապաշխարէ՝ պահօք, աղօթիք, ողորմութեամբ կամ այլով, եւ գտանէ թողութիւն: Երկրորդ՝ զի ակամայ է եւ ոչ կամաւոր այն կենաց զղջումն. վասն այն ոչ թողանի: Երրորդ՝ զի անցեալ է ժամանակն աշխատելոյ եւ փակեալ դուռն. որպէս յիմար կուսանացն փակեցաւ. եւ թէպէտ խնդրեցին զողորմութիւն, ոչ ընկալան յիմաստնոցն: Ապա ի կեանս այս է պիտանի զղջումն. որ ունի զգործիս մարմնոյն. եւ կամաւ զղջանամք. եւ է ժամանակս ընդունելի ըստ առաքելոյն: (Ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան եւ այլն:) Եւ թէ ոք ասիցէ՝ թէպէտ ես ոչ ապաշխարեմ, այլ ոք վասն իմ ապաշխարէ: Ասեմք եթէ՝ բարի է աղօթք արդարոյն. եւ պաշտօն եւ պատարագ եւ տուրք աղքատացն. այլ նոցա է օգուտ, որք ի մեղաց զղջացեալ լինին եւ խոստովանեալ. մեք աղօթիք օգնեմք նոցա. եւ զպարտսն վճարեմք. այլ անզեղջ մեռելոցն՝ ոչ ինչ է օգուտ: Չորօրինակ՝ ի կենդանութեան աղօթք սրբոց՝ անհաւատիցն չէ օգուտ, այլ հաւատացելոցն. նոյնպէս եւ անզեղջ մեռելոցն՝ ոչ ինչ է օգուտ. այլ զղջացելոցն: Եւ զորօրինակ՝ մարմնաւոր հիւանդն կարէ դեղօք առողջանալ. այլ մեռեալն ոչ՝ որպէս ասացաք ի վերոյ. նոյնպէս եւ որ հիւանդն է մեղօք՝ թէ է զղջացեալ ի մեղացն, օգուտ է. այլ թէ ոք անզեղջ ի մեղս մեռանի, ոչ է օգուտ: Եւ որպէս բազում ջուր չորացեալ ծառի ոչ է օգուտ. եւ բազում լոյս կուրացեալ աչաց. նոյնպէս բազում աղօթք՝ ոչ են օգուտ նոցա որք անհաւատութեամբ են կորացեալ, եւ կամ մեղօք չորացեալ: Եւ ոչ միայն օգուտ չեն, այլ եւս առաւել վնասիչ են. որպէս մերկ ձեռաց՝ հրացեալ երկաթ. կամ որպէս պայծառ լոյս արեւու՝ բժուտ աչաց զսակաւ լոյսն խաւարէ. նոյնպէս անհաւատին եւ մեղօք մեռելոցն՝ անօգուտ է յետնոցն յիշատակութիւն: Վասն որոյ այսօր պարտ է մեզ դառնալ ի մեղաց. եւ արժանաւորիլ ողորմութեանն Աստուծոյ ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրինեալ յաւիտեանս ամեն:

Նորին դարձեալ քարոզ վասն մեղաց. ասէ մարգարէն Մովսէս եթէ: (Առնէ զողորմութիւն Աստուած ի հազար ազգս. եւ հատուցանէ զմեղս հարց յորդիս, յերիս եւ ի չորս ազգս:) Ելից 34. 7: (Գլուխ. ԽԸ)

Առնել զողորմութիւն ի հազար ազգս՝ կրկին իմացումն ունի: Նախ՝ ցուցանէ զառատութիւն պարգեւացն Աստուծոյ. որ ոչ հաւասար եւ կշռով գործոցն հատուցանէ այլ բազմապատիկ եւ հազարաւոր. որ է անվախճան կեանքն յաւիտենից: Երկրորդ՝ զայն ցուցանէ թէ, ի հազար ազգս վասն առաքիւնի հարց՝ բարի առնէ զաւակաց բարեաց. եւ թեթեւ ապացուցանէ զպարտս մեղաց. որպէս արար ողորմութիւն միածին բանն Աստուած.

յիշելով գառաջին արդարսն գնախահարսն մեր. ըստ այնմ, (յիշեաց յաւիտենից զուխտ իւր. եւ զբանն զոր պատւիրեաց մինչեւ ի Ռ ամ:) Իսկ ասելն թէ՛ ածէ զմեղս հարց յորդիս, յերիս եւ ի չորս ազգս՝ բազում տեսութիւն ունի: Եւ ասեմ վեց մտօք: Առաջին՝ երեք եւ չորս ազգն որ լինի Է՛ զեօթն դար կենցաղոյս նշանակէ. յելիցն Ադամայ ի դրախտէն, մինչ ի վերջին ծնունդն որ Է կատարած աշխարհի: Եւ այն Է ութն դարն՝ յորում դատաստանն Է ամենայն մարդկան, եւ հատուցումն ըստ գործոց. եթէ բարեաց, եւ եթէ չարաց: Երկրորդ միտք բանիս՝ զի չորս ազգն՝ նշանակէ զչորս ազգ ծնունդս բոլոր ամենայնի մեղաւորաց, որոց հատուցանի ըստ գործոց: Առաջին ծնունդ այն Է՛ յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն ջրհեղեղաւն ջնջեաց Աստուած: Յերկրորդումն ծննդեան՝ յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն, կարմիր ծովովն ընկղմեաց: Յերրորդ ծնունդն՝ յորժամ զյանցաւորս գրաւոր օրինացն Մովսէսի՝ պատերազմօք սատակեաց: Ի չորրորդ ծնունդ յորժամ զյանցաւորս աւետարանին՝ վերջին հրովն դատեսցէ ի տանջանսն յաւիտենից: Երրորդ միտք բանիս՝ առնու ի վերայ չար ազգաց եւ թագաւորաց ի չորս դարս. այսինքն, ի չորս հարիւր ամս. զի հարիւր ամս՝ մին դար կոչի ըստ այնմ, յորմէ հետէ ետ Աստուած զերկիրն քանանու մեծին Աբրահամու. Եանց առաջին դարն՝ եւ ոչ կոտորեաց զնոսա: Նոյնպէս եւ երրորդն եւ երրորդն: Ապա ի չորրորդ դարուն՝ կոչեաց զԵբրայեցիսն. եւ նոքա ելին եւ կոտորեցին զ ԼԲ. թագաւորս ի նոցանէ. զի ի չորս դարն՝ դարձան նոքա յԵգիպտոսէ. այսինքն, յետ չորս հարիւր ամաց: Չորրորդ միտք բանիս զայն ասէ՛ թէ զմեղս անիրաւ հարցն՝ ներեմ մինչեւ յերեք ազգն. եւ ի չորրորդին՝ հատուցանեմ զմեղս հարց յորդիս: Ոչ թէ զմեղս հարցն յորդուցն ինդրէ, այլ մեղաց հարցն ներէ եւ երկայ նամիտ հարցն ներէ եւ երկայնամիտ լինի մինչեւ յորդուց յորդիս՝ զի դարձցին ի մեղաց: Ապա թէ որդիքն եւ թոռունքն չօգտին ի ներելոյն, յայն ժամ պատուհասէ եւ ջնջէ զյիշատակ չար ազգին. որպէս ասէ Դաւիթ: (Երեսք Տեառն ի վերայ չարագործաց՝ սատակել յերկրէ զյիշատակս նոցա:) Յինգերորդ միտք՝ զի չորս ազգ մեղանչէ մարդ. այսինքն, խորհրդով, բանիւ, գործով, եւ յամառելով ի մեղս. եւ այս Է երեք եւ չորս ազգ հատուցնել, յորժամ վասն գործոց զյամառեալն ի մեղս տանջէ: Վեցերորդ միտք բանիս՝ զի Դ հասակ փոփոխի մարդոյս. այսինքն, մանուկ՝ երիտասարդ՝ կատարեալ հասակ՝ եւ ծերութիւն: Երբ զերեք հասակի մեղս ներէ Աստուած՝ եւ թէ ի չորրորդին ոչ զղջանայ, յայնժամ պատուհասի: Այս վասն առաջին բանին: Տեսցուք զերկրորդն թէ՛ վասն Է՞ր պատուհասէ Աստուած զմեղաւորս: Ասեմք թէ վասն բազում պատճառի: Նախզի՛ վշտացին եւ աղաչեսցեն. զի մի կրեսցեն զյաւիտենից պատուհասն անապական ցասմանն: Երկրորդ՝ զի աստ մարմնոյ տանջանքս՝ պտուղ ունին զապաշխարութիւն, որով թողութիւն մեղաց լինի. որպէս բովն ժանկոյն. եւ խարտոցն երկաթոյն, նոյնպէս տանջանքն զմեղաւորս սրբէն: Երրորդ՝ զերեւելի տանջանս՝ ապացոյց առնուն հանդերձելոյն որով ինայէ ի նոսա Աստուած, եւ մարմնաւորովս խրատէ. ըստ այնմ, (եթէ դատիմք, ի Տեառնէ խրատիմք. զի մի ընդ աշխարհիս դատապարտիցուք:) Չորրորդ՝ զի այս մարմնոյ միայն Է նեղութիւն եւ ոչ հոգւոյ. աստ մարմնաւոր տանջէ. զի անդ ի բոլորէն զերծուցէ. որպէս բժիշկ զմասն մարմնոյն խարէ եւ կտրէ՝ զի բոլոր մարմինն առողջացի: Յինգերորդ՝ զի աստի տանջանօքս կարճին եւ

թեթեւանան յաւիտենից տանջանքն որպէս սողմայեցւոցն. ըստ այնմ, (դիւրագոյն լիցի սողմայեցւոց յաւուրն դատաստանի.) զի զմասնաւոր պատիժն հրոյ կրեցին: Վեցերորդ՝ զի զարթուցէ զմեղաւորսն՝ որք ննջեալն են եւ կապեալ ի սեր աշխարհի. զի աստեացս նեղութեամբ՝ ինդրեսցեն զանտի կեանսն. որպէս զիսրաելացիսն տանջեաց յեգիպտոս՝ զի ելցեն ի նմանէ: Եւ մայրն դառն դեղով հատանէ զմանուկն ի ստեանց կաթին: Եւ մարգարէն ասէ. (ի սանձս եւ ի դանդանաւանդս ճմլեսցես զկզակս նոցա:) Եւ յայլ ուր՝ (լից զերեսս նոցա անարգանօք:) Այս երկրորդն: Երրորդ հարցումն թէ ոք տարակուսի թէ, անհաւատ մարդն՝ կամ որ հաւատացեալ է եւ ի մահու չափ մեղս է, եւ բարի ինչ գործէ, կամ այն որ յետոյ անկանի ի մեղս եւ բարի գործէ՝ զի՞նչ լինի: Ասեն վարդապետք եթէ՝ անհաւատին բարի գործքն՝ եւ այն որ ի մէջ մեղացն է՝ երկոքեանն մեռեալեն. եւ անընդունելի են Աստուծոյ գործք նոցա: Չի մինն անհաւատութեամբ է մեռեալ. եւ մինն մեղօք: Այլ այն որ նախ բարիս գործէ՝ եւ յետոյ ի մեղս անկանի, զանազանութիւն է ի մէջ նոցա: Չի այն որ հաւատացեալ է եւ զբարիս գործէ, եւ յետոյ ի մեղս անկանի եւ դարձեալ զղջանայ, սորա բարի գործքն՝ որ յանմեղութեանն գործեաց՝ յետ զղջանալոյն յիշին: Բայց որ ի մէջ անհաւատութեան, եւ կամ որ ի մէջ մահու չափ մեղացն գործէ բարիս, թեպէտ յետոյ զղջանայ, այն ոչ յիշի: Որպէս որ դու երկու տունկ տնկես. մինն արմատ ունենայ, եւ մինն ոչ. եւ զերկուսն անջուր թողուս՝ բայց յետոյ ջրես. այն որ արմատ ունէր՝ կանանչի. բայց որ չունէր՝ չորանայ: Այսպէս որ ոչ ունի մահացու մեղս՝ եւ արար ինչ բարի, թեպէտ անկաւ ժամանակ մի ի մեղս՝ յորժամ զղջանայ, դարձեալ կենդանանայ. զի ունէր արմատ: Այլ որ յանհաւատութեան կամ ի մեղս արար ինչ բարի՝ թէ յետոյ զղջանայ, ոչ կենդանանայ. զի չունի արմատ. որպէս ասէ մարգարէն. (ոչ թէ յիշեսցին բարիքն զորս արար:) Այլ թեպէտ այսպէս է, սակայն բարի գործքն չեն առանց օգտն. թէ անհաւատն գործէ, եւ թէ մահու չափ մեղաւորն. զի Աստուած արդար է. թեպէտ անհաւատ է եւ անզեղջ մեռանի եւ ի ջանէ ի դժոխս՝ այլ բազում օգտութիւն է ի բարի գործոցն: Առաջին՝ զի տանջանք դժոխոցն՝ թեթեւ լինի բարեգործացն: Երկրորդ՝ զի աստ փոխարէն տայ Աստուած զմարմնոյ մեծութիւնս որպէս մեծատանն. որում ասացաւ՝ (դու ընկալար զբարիսն քո ի կեանս:) Երրորդ՝ զի վասն այն բարի գործոցն՝ ծագէ Աստուած ի սիրտ նորա զլոյս Աստուած գիտութեան որպէս Կուռնելիոսին: Չորրորդ՝ ի մարմնաւոր որոգայթիցն փրկէ Աստուած. որպէս եղէ արքայաբու վասն զղջանալոյն իւրոյ. զի պատուհասն որ գալոց էր ի վերայ իւր՝ ոչ եկն յաւուրսն իւր. այլ յետ նորա: Դիւզերորդ՝ զի աշխարիս շէն ոչ մնայր, թէ մարդիկ բարի ոչ գործէին: Վասն որոյ՝ պարտ է որ ամենայն ոք բարի առնէ. թէ արդար է եւ թէ մեղաւոր. զի աշխարիս շէն մնացէ: Վեցերորդ՝ զի թեպէտ ինքն ի մահու չափ մեղս է կամ յանհաւատութեան եւ գործէ ինչ բարի՝ այնչափ օգուտ է, զի սովորի եւ կրթի ի բարի գործս: Եւ յորժամ ի հաւատ գայ կամ ի զղջումն, ոչ թուի դժուար բարեգործութիւնն. զի սովոր էր յառաջն: Եթէ երրորդ՝ զի որ ի մեղս կամ յանհաւատութեան է՝ հիւանդ է հոգւով. իսկ մարմնաւոր հիւանդին՝ պիտոյ է կերակուր. թեպէտ ոչ սնուցանէ զհիւանդն, այլ պահէ զնա զի մի պակասեալ է ի կարողութենէն մեռցի: Այսպէս բարեգործութեան կերակուրն՝ ոչ միայն արդարոց, այլեւ մեղաւորաց է պիտոյ. զի թեպէտ ոչ առնէ զնա արդանի արքայութեան երկնից, այլ պահէ

զիզի նորա զի մի ամենեւին թուլացի: Ութերորդ՝ զի ամենայն որ է մեղս մահու չափ եւ յանհաւատութեան՝ սատանայի իշխանութիւնն վարի ի վերոյ նորա. որպէս ասաց Քրիստոս. (ամենայն որ գործէ զմեղս՝ ծառայէ մեղացն.) իսկ որ գործէ ինչ բարի՝ ոչ լինի իշխանութիւնն սատանայի ամենեւին ի վերայ նորա, այլ սակաւ: Այլ թէ վասն Է՞ր անհաւատն եւ որ ի մահու չափ մեղս է՝ ոչ առնու զկատարեալ վարձն ի բարի գործոցն իւրեանց: Այս է պատճառն. զի որպէս չորացեալ եւ կտրեալ անդամքն ոչ առնուն զկենդանական զօրութիւնն ի մարդոյն. նոյնպէս այնպիսիքն կտրեալք են ի Քրիստոսէ. ոչ առնուն զկատարեալ փոխարէնն: Եւ այս գիտելի է՝ զի որչափ մարդն յաշխարհիս է, ոչ կարէ գիտել ստուգիւ թէ ի սերն Ա՞ստուծոյ է, եւ թէ ի խռովութիւնն, մինչեւ ելանէ ի մարմնոյ: Բայց ասեն վարդապետք թէ՛ հնար է որ մարդն չորս կերպիւ իմանայ զինքն, թէ ի սերն Ա՞ստուծոյ է թէ ի խռովութիւն: Նախ՝ յորժամ ի գործեալ եւ յանցեալ մեղացն զղջացն զղջանայ ոք, նշան բարւոյ է: Երկրորդ՝ յորժամ զմեղս որ անկանի ի միտս՝ ոչ գործէ: Երրորդ՝ յորժամ զբանն Աստուծոյ եւ զխրատս լսէ եւ հեշտալի թուի: Չորրորդ՝ յորժամ փութայ յամենայն բարեգործութիւնս: Եւ հակառակ այսմ՝ յորժամ չորս նշանքն ոչ երեւեսցին, գիտացիր զի ի խռովութիւնն Աստուծոյ ես: Մին՝ յորժամ ի գործած մեղացն ոչ զղջանաս: Երկրորդ՝ որ յառաջիկայ մեղացն ոչ պահես զքեզ: Երրորդ՝ յորժամ պատուիրանն Աստուծոյ եւ խրատ մարդկան դժուար թուի: Չորրորդ՝ ոչ փութայ գործել ինչ բարիս: Այս առ երրորդ հարցումն: Չորրորդ բան՝ տեսցուք զզանազանութիւն մեղաց: Եւ գիտելի է՝ զի ի չորից բաժանմանց երեւի զանազանութիւն մեղաց: Նախ՝ որ քանակ եւ որակ մեղացն առաւել լինի՝ է ամենեւիմբ չար. զի որակ մեղացն՝ է կամաւ եւ գիտութեամբ եւ կարողութեամբ մեղանչելն. այսպիսիս՝ է մահու չափ մեղք եւ կամակար մտօք մեղանչել: Երկրորդ մեղք՝ որ քանակն եւ որակն նուազ լինի, է սակաւ չար. եւ է այս ներելի մեղք. որ տգիտութեամբ եւ ակամայ եւ տկարութեամբ եւ սակաւ մեղանչէ: Երրորդ՝ որ քանակ մեղացն առաւել է, եւ որակն նուազ. այն է որ տգիտութեամբ մեղանչէ որպէս աշխարհական ոք: Եւ չորրորդ՝ որ քանակ մեղացն սակաւ, եւ որակն առաւել. այն է որ գիտութեամբ մեղանչէ. որպէս քահանայ ոք. սոցա պատիժն հաւասարէ. որ մին մեղք գիտութեամբ լինի՝ եւ բազում մեղք տգիտութեամբ՝ միաչափ կրեն զպատիժն. որպէս քահանայապետն մին զուարակ մատուցանէր. եւ բոլոր ժողովորդն մին: Եւ որպէս միանգամ մեղանչեաց Իսրայել կռապաշտութեամբն՝ եւ հեթանոսք բազում անգամ, հաւասար ի գերութիւն մատնեցան. զի նոցայն գիտութեամբ էր, եւ հեթանոսացն տգիտութեամբ: Վասն այն ասէ առաքեալն. (բարկութիւն ի վերայ ամենայն մարդոյ, որ գործող զչար. նախ հրէին, եւ ապա հեթանոսին:) Այսպէս եւ յընդդիմակէն զբարին ի մասցիս: Չի որ քանակն եւ որակն առաւել բարի է, ամենեւիմբ բարի է եւ կատարեալ: Եւ որ քանակն եւ որակն նուազ է, է սակաւ բարի եւ անկատար: Եւ է որ քանակն առաւել եւ որակն նուազ. որպէս աշխարհականաց որք տգիտութեամբ զբարիս գործեն: Եւ է որ քանակն նուազ, եւ որակն առաւել. որպէս քահանայից որք գիտութեամբ զբարիս գործեն. հաւասար եւ միաչափ են ի վարձն: Չի մին գործ քահանային՝ եւ բազում աշխարհական՝ զոյգ ունին զարդիւնս. զի քահանայիցն գիտութեամբ է. եւ աշխարհականացն անգիտութեամբ: Վասն այն ասէ առաքեալն. (փառք

պատիւ եւ գովութիւն ամենայն մարդոյ՝ որ առնէ զբարիս. նախ հրէին եւ ապա հեթանոսին:) Եւ ընդդէմ այսմ թէ ոք բերցէ զաւետարանին բան, (որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ:) Ասեմք եթէ՝ զայն ոչ ասէ Տէրն թէ՝ քահանայից եւ աշխարհականաց պատիւն եւ վարձն հաւասար է. զի ահա որ զերկու քան քարն էա՝ շահեցաւ կրկին պատիւ. այս աշխարհականացն է: Եւ որ զհինգն՝ շահեցաւ տասն. եւ եկաց ի վերայ տասն քաղաքի իշխանութեանց. այս քահանայիցն է: Այլ զայն հրամայէ Տէրն, թէ քահանայն եօթն աստիճան աւելի ունի քան զաշխարհականն. եօթնապատիկ պարտ է զի առաւել եւս զբարիս գործեսցէ: Եւ եպիսկոպոսն ութն աստիճան աւելի ունի. եւ կաթողիկոսն ինն աստիճան: Նմանապէս պարտ է եւ ևոցա ըստ առաւել աստիճանացն՝ առաւել զբարիս գործել: Իսկ վարդապետն ունի եօթն աստիճան ընդ քահանայիցն. եւ հինգ պատիւ առաւել. այն է զոր ասէ առաքեալն, (կամիմ զբանս հինգ մտօք խօսին ի մէջ եկեղեցոյ:) Եւ ևոցա աստիճանք վարդապետաց են. ապա ուրեմն քան զաշխարհականն, եւ քան զեպիսկոպոսն, եւ քան զկաթողիկոսն, պարտ է վարդապետին առաւել զբարիս գործել: Եւ ըստ բարեաց գործոցն՝ զանազանապէս եւ առաւել ունին զպատիւ եւ զփառս վարձուցն հատուցման ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. որ է օրհնեալ յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ դարձեալ վասն մեղաց. ի բանն՝ (Յանկութիւն յղացեալ՝ զմեղս ծնանի. եւ մեղքն կատարեալ՝ զմահ:) Յակոբոս. 1. 15:(Գլուխ. ԽԹ)

Օձն որ խօսեցաւ ընդ Եւայի եւ խաբեաց՝ զհեշտ ցանկութիւն նշանակէ որ խաբէ զմեզ: Եւ այս վասն տասն եւ չորս պատճառի: Նախզի՝ օձն զազան է թունաւոր. (զի ցանկութիւն յղացեալ՝ զմեղս ծնանի. եւ մեղքն կատարեալ՝ զմահ:) Երկրորդ՝ օձն ծածուկ ընթանայ. եւ ցանկութիւնն ծածուկ ըմբռնէ: Երրորդ ի վերայ երկրի քարշի. եւ ցանկութիւնն ընդ երկիր քարշէ զմարդ: Չորրորդ՝ ի լանջ եւ յորովայն սողաց. եւ ցանկութիւնն նախ սրտի կապէ ի հեշտութիւն. եւ ապա մարմնով գործել տայ: Հինգերորդ՝ հող ուտէ. եւ ցանկութիւնն յերկրէ վայելչանայ: Վեցերորդ՝ օձն հինգ պատ առնու. եւ ցանկութիւնս՝ հինգ է ի զգայութիւնս: Եօթներորդ՝ խայտաբղետ է. եւ զանազան է ցանկութիւն ի զգայութեանց: Ութներորդ՝ թոյլ է գլուխն. եւ տկար է ցանկութիւնն: Իններորդ՝ ուր գլուխն մտանէ՝ եւ զմարմինն քարշէ. եւ հեշտ ցանկութեան՝ գործն հետեւի: Տասներորդ՝ դժուարաւ քարշի արտաքս վասն խորխոյն. եւ դժուար ելանէ ի մարմնոյն ցանկութիւնն վասն հեշտութեան: Մետասաներորդ՝ բազում ձագս ծնանի. եւ բազմածին են դստերք ցանկութեան: Երկուտասաներորդ՝ ընդ բերանն առաւել մտանէ. եւ ցանկութիւնն ճաշակելօքն առաւել տիրէ: Երեքտասաներորդ՝ զարշապարացն սպասէ. եւ յ ընթացս մարմնաւորս՝ ցանկութիւնն ըմբռնէ: Չորեքտասաներորդ՝ զգլուխն ջախջախեմք. եւ զսկիզբն ցանկութեանն պարտ է սատակել ի մեզ. եւ ապա կարեմք յաղթել կրիցն. ըստ Տեառն խրատուն.(դու սպասեսցես Նորա գլխոյն. եւ զարշապարիքում:) Եւ նախ տեսցուք թէ ո՞րպէս զանազանի ցանկութիւնն եւ հեշտութիւնն: Գիտելի է՝ զի ցանկութիւն եւ հեշտութիւն՝ չորիւք զանազանին: Նախզի՝ ցանկութիւն ի հոգին է մասն. եւ հեշտութիւն ի մարմինն: Երկրորդ՝ զի ցանկութիւնն յինքնէ. եւ հեշտութիւնն յայլմէ: Երրորդ՝ զի ցանկութիւն նախ է քան

հեշտութիւն: Չորրորդ՝ զի ցանկութիւն առնել է. եւ հեշտութիւն կրել: Այսպէս չորիւքս այս զանազանին: Դարձեալ՝ փափագն է յապագայն. եւ փափկութիւնն է յանցեալն. եւ հեշտութիւնն ի ներկայն: Այսպէս եւ զանազանին ախտն եւ աղտեղութիւնն: Չի ախտն՝ ի ներքուստ է ի մեջն. եւ աղտեղութիւնն արտաքուստ: Նոյնպէս եւ բիծն ի մասունս հոգւոյն է. եւ արատն ի զգայութիւնս մարմնոյն: Այսպէս չարութիւն է՝ որ ի սրիտէն յառաջ գայ եւ պղծէ զմեզ: Եւ մեղք՝ զոր յայլմէ կրեմք եւ մեղկանամք: Երկրորդ տեսցուք թէ՛ որո՞վ զանազանին մեղք եւ տնօրէնութիւնք: Ասեմք եթէ՛ վեցիւք որոշին: Նախգի մեղքն՝ էր նախ քան զօրէսս մեղանչելն. եւ անօրէնութիւնն՝ է յետ օրինացն: Երկրորդ՝ մեղքն առ ընկերն. եւ անօրէնութիւնն առ Աստուած յանցումն: Երրորդ՝ մեղքն տգիտութեամբն է. եւ անօրէնութիւնն գիտութեամբ մեղանչելն: Չորրորդ՝ մեղքն է ներելին. եւ անօրէնութիւնն մահու չափն: Հինգերորդ՝ մեղքն մարմնոյն է. եւ անօրէնութիւնն հոգւոյն մեղանչելն: Վեցերորդ՝ մեղք է նախ քան զխոստովանիլն. եւ անօրէնութիւնն է յետ խոստովանութեանն դարձեալ մեղանչելն. (եւ որպէս զշուն դառնալ ի փսխածն: Երրորդ տեսցուք թէ՛ զի՞նչ է մեղքն՝ եւ մահն՝ եւ մահու չափն: Ասեմք. մեղքն այն է՝ յորժամ ի կոսնս ինչ լինի ոք, գթե մեղօք եւ դարձեալ ապաշխարէ: Իսկ մահն՝ որ տգիտութեամբ մեղանչէ. թեպէտ ոչ գիտէ, հոգին մահանայ: Իսկ մահու չափն է՝ որ գիտութեամբ մեղանչէ. այս է դառն մահն յաւիտենից: Եւ թէ ոք հարցանէ՝ ո՞րն է գիտութեամբ մեղանչելն: Ասեմք. այն է՝ որ գիտէ զճշմարիտն, եւ առնէ զսուտն: Եւ այս յերեք դեմս է: Նախ ի գործն եւ ի պատիժն. յորժամ գիտէ ոք թէ այն գործն մեղք է եւ գործէ. եւ դիտէ զպատիժն այնմ մեղաց որ ծանր է: Երկրորդ՝ ի գործօղն. որ ունի զճշմարտութիւն ինչ կարգի՝ եւ թողու զայն եւ գործէ զմեղս: Երրորդ՝ ի յաստուածագիտութիւնն. որ եկեալէ ի հաւատս ճշմարիտ, թողու եւ գործէ զմեղս: Արդ՝ երեք է գիտութեամբ մեղանչելն. վասն որոյ ասէ Յօհաննէս. (թէ անգիտութեամբ մեղիցէք, թողու ձեզ Աստուած. ապա թէ գիտացեալ զնա, եւ այնպէս մեղանչէք, եւ զառաջինն եւս ինկորէ:) Եւ թեպէտ զամենայն մեղս գործէ մարդ՝ ի խաբէութենէ չարին լինի եւ ի թոյլ եւ ի հեշտասեր կամաց իւրոց, այլ եւ մեղք՝ որք ի խառնուածոց մարմնոյն ի չորս տարերացն հանդիպի. որպէս բարկութիւն՝ դիշուքիւն՝ ծուլութիւն՝ եւ հպարտութիւն: Որպէս ասէ նիւսացին. բարկացօղք եւ դառնամաղձոտքն. եւ այս հրոյ է: Ցանկասեր եւ արիւն ոտքն. օդոյ է: Տրտմակեացք եւ սերամաղձոտքն. հողոյ է: Ծոյլ եւ հեղձ՝ որք զիւթն ունին ջրոյ: Իսկ օդոյն՝ կրկին է մասն. մինն չոր է եւ հով. եւ միւսն գէշ եւ ջերմ: Գիշոյ մասն է արիւնն ի մեզէ. եւ չորն որ է հողմոյն՝ առնէ ի մեզ զսրնթաց եւ զթեթեւամիտ գոլն եւ զհպարտ: Եւ լինի զարմանալի գործ. զի մարդն ունի առ ինքեան չար եւ բարի. եւ մարդն է հաղորդ կենդանի ստեղծեալ: Չի զոր ինչ ունի ինքեան, մասնաւորէ այլոց. որպէս արեգակն զլոյս. եւ ծառ զպտուղ: Արդ՝ թէ զբարին պահէ յինքն՝ եւ ոչ հաղորդէ այլոց, չար է: Իսկ եթէ հաղորդէ բարի է. թէ գիտութիւն, թէ գիտութիւն, թէ առաքինութիւն, թէ ինչս: Նոյնպէս զչարս թէ մասնաւորէ յայլս, չար է. թէ առ ինքն պահէ՝ բարի է. զի կորնչի յինքեան: Եւ զոր օրինակ՝ թոյն օձի եւ խայթոց կարծի առ ինքեան բարի է. եւ յայլս հեղեալ լինի չար: Այսպէս եւ ամենայն չարութիւն ի մեզ ծածկեալ՝ ոչ է չար. որպէս ցանկութիւն. բարկութիւն. իսկ ի յայլս տարածեալ. լինի եւ այլոց չար եւ ինքեան: Չորրորդ՝ տեսցուք թէ՛ զի՞նչ է որ ասէ Յոր: (Թուեցեր զգնացս իմ. եւ

զանօրէնութիւնս իմ կնքեցեր ի քսակի:) Ասեմք. ոչ թէ Աստուած թուելով գիտէ զգործս մեր.այլ թելլ ասէ վասն չորից: Նախզի՛ որ թուէ՛ գիտէ թէ որ է առաջին, եւ որ երկրորդ. եւ արլլն: Այսպէս Աստուած՝ զամենայն գործս մեր ըստ կարգի գիտէ. զտղայութեան, զերիտասարդութեան, եւ զծերութեան. եւ ըստ կարգի հատուցանէ: Երկրորդ՝ թուովն զամենայն ինչ անմոռաց պահեմք. նշանակէ թէ՛ զգործս մեր չէ մոռացեալ Աստուած. թեպէտ մեք գործեմք եւ մոռանամք, այլ նա գիտէ զխորհուրդոցն զբանիցն եւ զգործոցն: Եւ զայն եւս՝ թէ ակամայ՝ գիտութեամբ թէ անգիտութեամբ գործեմք: Երրորդ թուովն՝ ստուգապէս գիտեմք զարքանն. թէ տասն է, եւ թէ այլ անելի եւ պակաս: Այսպէս Աստուած զգործ մեր ըստուգապէս գիտէ. եւ ոչ անելի կամ պակաս: Չորրորդ՝ որպէս թուեալ իրն շարժականէ. թէ յաւելումքի թուելն, յաւելու թիւն. եւ թէ պակասեմք, պակասի: Այսպէս զթիւ մեղաց մերոց՝ կարեմք մեք յաւելուլ գործով, եւ պակասեցուցանել. զի ի մեր ձեռս է անելին եւ պակաս: Իսկ ասելն. (զանօրէնութիւնս կնքեցեր ի քսակի:) Նախ՝ որպէս կնքէ եւ պահէ ի քսակի՝ ի դէպ ժամու հանէ. այսպէս եւ Աստուած՝ զգործս զբանս եւ խորհուրդս մեր. զի յորժամ ոչ դառնամք ի մեղաց, յառաջ բերէ եւ ածէ ի դատաստան: Երկրորդ՝ յորժամ գիտեմք թէ յիւր քսակն է պահեալ զամենայն գործս մեր, ի զղջումն գամք մեղաց մերոց. եւ նա հանէ ի քսակրէն եւ կորուսանէ: Նաեւ Մովսէս ասէ: (Ո՞չ այս ամենայն ժողովեալ եւ կնքեալ պահի ի գանձի իմում. յաւուր վրիժուց հատուցից նոցա:) Վասն որոյ պարտ է ի միտ ածել եւ զարհուրելի մեզ թէ, զամենայն մեղս զոր գործեմք թեպէտ մոռանամք մեք, Աստուած ի մտին պահէ եւ հատուցանէ: Եւ յորժամ խոստովանիմք եւ յիշենք զմեղս, Աստուած մոռանալ եւ անյիշաչար լինի. զի մարդասեր եւ ողորմած է: Եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Յայլմէ քարոզ եւ ուղիղ վասն սկզբնական մեղաց. ի բանն՝ (Անօրէնութեամբ յղացաւ՝ եւ ի մեղս ծնու զիս մայր իմ: Սաղ.50. 6:)(Գլուխ. Ծ)

Մեղք անունն ի յերիս բաժանի: Իսկզբնականն. ի մահացուն. եւ ի ներելին: Եւ բաժանմունքս այս՝ ոչ է որպէս սեռ ի տեսակս. եւ ոչ իբրեւ տեսակ յանհատս. եւ ոչ ըստ այլոցն. այլ իբր բոլոր իմաստունս: Եւ սկզբնականն՝ չորիւք բաժանի յայլ երկուցն. այսինքն իմահացունն եւ ի ներելոյն: Ըստ միութեան. ըստ հասարակութեան. ըստ հաւասարութեան. եւ ըստ որակի տարբերութեան: Ըստ միութեան զի մի է մեղքն սկզբնական. եւ ոչ բաժանի որպէս մահացուն ի յօթն. եւ ներելին յերեք: Իսկ ըստ հասարակութեան՝ զի հասարակաբարո՛րք եւ հաղորդի ի բնութեանս, հաղորդի եւ նորա, այսինքն սկզբնականին: Չի մահացուն ոչ էր յերեմիա եւ Յովհաննէս՝ որք սրբեցան յորովայնէ. թեպէտ ոչ զերծանելին ի ներելոյն: Այլ կոյսն Մարիամ Աստուածածին՝ ի մահուցունն եւ ի ներելոյն էր ազատ. բայց ի սկզբնականէն՝ ի կէտ հոգեւորելոյն, Յոգւով Սրբով մաքրեցաւ: Բայց միայն փրկիչն մեր Քրիստոս էր ազատ ի սկզբնականէն. որոյ պատճառ է՝ զի ոչ էր ի սերմանէ. այլ ի մաքուր արեւնէ կուսին էառ մարմին:

Իսկ ըստ հաւասարութեան՝ զի սկզբնականն հաւասարապէս է յամենայն մարդիկ. եւ ոչ է որպէս մահացուն մեծ եւ փոքր. որպէս է շնութիւնն մեծ մեղք քան զպոռնկութիւնն. եւ մարդասպանութիւնն մեծ է քան զգողութիւնն: Իսկ ըստ որակացն տարբերութեան: Նախզի՛

սկզբնականն հարկիւ եւ ակամայ տիրէ. իսկ սոքա ըստ կամաց:

Երկրորդ՝ զի սկզբնականն բնութեանն հետեւի. իսկ սոքա՝ անձինն են. վասն այն՝ որ ըստ բնութեանն է մեղք, ըստ բնութեանն եւ յորդիս անցանի. իսկ անձնականն՝ ոչ. զի ներգործութեամբ է ստացեալ զայնոսիկ: Այս թէ որպէս զանազանի սկզբնականն ի յայլոցն: Իսկ զանազանի մահացուն եւ ներելին մեղք՝ ըստ առաւելութեան եւ նուազութեան: Որպէս առաւել է հարկանումն օձի քան զլուոյ. եւ նետի քան զփշի. եւ սարսամ եւ կամ նկարիս ցաւն զմասնաւոր անդամոց. այսպէս եւ մահացուն՝ է առաւել քան զներելին: Դարձեալ՝ զանազանին ըստ թուոյ. զի մահացուն ի յետքն բաժանի. որք են գլխաւորագոյնք. որպէս հպարտութիւն. բարկութիւն, եւ այլն: Իսկ ներելին թեպէտ որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան եւ նուազութիւն. իբր (ի փայտ, եւ յեգեգն, եւ ի խոտ ըստ առաքելոյն:) Այլ մանրամասնաբար՝ յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլն՝ վայրաբանելն եւ այլն: Եւ գիտելի է՝ զի չորս վերք հարուածոց իսկզբնական մեղացն հանդիպի առ հոգիս մեր: Որպէս ի ծանր հիւանդութենէ մարմնոյ՝ թողեալ լինին մնացածք հիւանդութեան. կամ տկարութիւնն զօրութեան. կամ ճաշակելեացն ի բաղձալն: Այսպէս ի մեզ իսկզբնական մեղացն՝ թողեալ լինին մնացուած ի հոգիս՝ որք վերք եւ հարուածք անուանին. այսինքն. ցանկութեան մասին եւ ցասման, իմացմանն եւ կամացն: Առաջինն է ցանկութիւնն. որ վեր է անբժշկելի. որ ծածկապէս թշնամի է հոգւոյ: Չոր օրինակ՝ կենդանին որ կոչի ի գորոս՝ որ թշնամիէ կոկորդիլոսին, շաղկապի ընդ խոտոյ. եւ կոկորդիլոսն ուտելով զխոտն, կլանէ զիդորոսն. եւ թունիւք նորա սատակի: Այսպէս ցանկութիւնն՝ շաղկապի ընդ փափկալի իրաց. եւ գործելովն մահանայ հոգին. որպէս ասաց Դանիէլ ցծերսն՝ որք վառեալ էին ի ցանկութիւնն շուշանայ. (զեղ դորա պատրեաց զքեզ. եւ ցանկութիւն քո՝ շրջեաց զսիրտ քո:) Վասն այն է անբժշկելի՝ զի յորժամ շրջէ զսիրտն, շրջէ զամենայն զգայարանս ընդ նմա: Երկրորդ հարուածն՝ է տգիտութիւնն. որ վիրաւորէ զիմացումն. որպէս ասէ սաղմոսն. (լոյս աչաց իմոց. եւ այսոչ եղել ընդիս:) Այլ ի կորնչիլ տեսութիւն՝ կորնչին ամենայն տեսանելիք: Վասն այն ասէր Տուբիթ. (ուստի՞ է ինձ ուրախութիւն, զի ի խաւար նստիմ. եւ զլոյս երկնից ոչ տեսանեմ:) Եւ ի մեջ ամենայն զգայութեանց՝ տեսութիւնն է առաւել փափկալի: Եւ առաւել է տեսութիւն հոգւոյս, քան զտեսութիւն մարմնոյս: Եւ այս հարուած՝ ի մեղացն եղէ, որք ամենեքեան շրջիմք ի խաւարի մտացն: Երրորդ հարուածն՝ է բարկութիւնն. որ վիրաւոր է զհոգին. որպէս հիւանդութիւն զմարմինն. եւ բարկութիւնն փոխէ զկարգն իւր. զոր պարտ էր ընդդէմ չարին բարկանալ, բարկանայ ընդդէմ բարւոյն: Եւ այս համեմատի յանգամալոյժն՝ որ շարժի ի հակառակն կոյս, զոր ինքն յարէ: Վասն այն ասէ առաքեալն. (ոչ զոր կամիմ զբարին զայն գործեմ, այլ զոր ոչն կամիմ զչարն առնեմ:) Չորրորդ հարուածն՝ է չարութիւնն. որ վիրաւորէ զկամսն. բայց թեպէտ կամքն՝ ոչ ինչ մեղս գործիցէ իւր չարութեամբն. որպէս ասէ սրբոյն Դիոնեսիոս յաստուածային անուանսն: Ոչ որ հայելով առ չարն՝ ներգործէ. զի չարն ոչ կարէ գոլ ըստ ինքեան կամեցեալ: Որպէս վաշխառուն կամ յափշտակօղն՝ ոչ փութայ զգթելն առ Աստուած, այլ փութայ բազմացուցանել զարծաթն: Եւ բղջախոհն կամի զհեշտութիւն մարմնոյ առանց գթելոյ առ Աստուած. բայց կամի մեղանչելովն՝ գթել առ Աստուած, քան թէ թողուլ զհեշտութիւն մարմնոյ: Այսոքիկ չորս վերք եւ հարուածք՝

իսկզբնականեն հանդիպեցաւ հոգւոյս մերոյ. զոր ոչ ուներ մարդն առաջին
նախ քան գյանցանելն ի դրախտին: Այսքան առ այս:

Յաղագս Մահացու մեղաց:(Գլուխ. ԾԱ)

Ասացաւ յաղագս մեղաց սկզբնականին. այժմ ասացուք վասն
մահացուին: Եւ նախ խնդրի թէ՛ Է՞մեղք մահացու: Երեւի թէ ոչ. զի մահն
ապականութեւն լուծանէ զիրն յորս պատահի որպէս կենդանեաց: Այլ մեղքն
մահացու՝ թեպէտ եւ է ի հոգին, անմահ մնայ հոգին: Դարձեալ՝ մահն
խափանէ գյատուկ գործն. իսկ մեղաւոր հոգին՝ ի մեղս մահացու կալով
բազում ինչ քաջութեամբ գործէ. եւ նուրբս իմանայ. ապա ուրեմն երեւի թէ՛
ոչ ինչ է մեղք մահացու: Այլ զի է մեղք մահացու. յայտ է յայսմանէ. զի մեղք
մատցու՝ ապականէ զկեանս: Բառնայ զազդողութիւնն: Թողու
զճանապարհ, եւ կապէ առ գեհեանն: Առաջին՝ մեղքն ապականէ զկեանս
այսպէս: Չի մահն որ է ապականութիւն մարմնոյն՝ լինի ի պակասիլ
ջերմութեան սրտին. քանզի սակաւ սակաւ ջերմութիւնն պակասի ի ծայրից
մարմնոյն. եւ առ սկիզբն կենաց հաւաքի. այսինքն, առ սիրտն. եւ յորժամ
անտի եւս սպառի, մահ է մարմնոյն: Նոյնպէս եւ ի սպառիլ սիրոյ Աստուծոյ,
մահ է հոգւոյն: Եւ է սերն Աստուծոյ երկակի: Առ Աստուած՝ յորժամ սիրեմք
զԱստուած. եւ վասն Աստուծոյ՝ յորժամ սիրեմք զընկերն. որպէս Յօհաննէս.
(որ սիրէ զԱստուած՝ սիրեսցէ նա եւ զեղբայր իւր:) Եւ սպառ է զսերն
Աստուած՝ մեղքն մահացու. որպէս հայիոյութիւն. երդմահարութիւն.
հերձուած. եւ այլ սոյնպիսիք: Եւ զսեր ընկերին՝ սպառէ սպանութիւն.
շնութիւն. զողութիւն. սուտ վկայութիւն, եւ այլն: Այլ որպէս մարմինն է
կենդանի հոգւովն. այսպէս հոգին կենդանի է Աստուծով. եւ որպէս
բաժանումն հոգւոյ մահ է մարմնոյն. եւ բաժանումն Աստուծոյ՝ մահ է
հոգւոյն: Եւ բաժանումն Աստուծոյ՝ է պատճառ մեղքն: Երկրորդ՝ մեղքն
մահացու՝ բառնայ զազդողութիւն. զի մարդ ինքեամբ անկեալ ի մեղս,
ինքեամբ ոչ կարէ յառնել, եթէ ոչ շնորհօք փրկչին. որպէս ասէ սաղմոսն.
(հոգի որ ելանէ՝ այլ ոչ եւս դառնայ.) այսինքն, զի ինքեամբ զնալով մարդ ի
մեղս, եւ ոչ ինքեամբ յառնէ յայնմանէ: Չոր օրինակ՝ որպէս թէ ոք ընկեսցէ
զինքն ի հուր, իշխանութիւն իւր է ընկեանուլն. բայց ոչ է իշխանութիւն իւր
ելանելն: Եւ դարձեալ՝ մարդն ինքեամբ երթայ ի մահ. բայց ինքեամբ ոչ
կարէ յառնել ի մահուանէ. (զի ոգիք ըմբռնեալ ի մեղս՝ ի մտաց եւս անկանին:) Երրորդ՝
մեղքն մահացու՝ թողու զճանապարհն. զի ամենայն սկսեալ՝
փութայ ի կատարումն իւր սկսեալ ճանապարհի. որպէս յայս անուն տեղի:
Այլ ամենեցուն սկիզբն եւ կատարումն է Աստուած. որպէս ասաց
մարգարէիւն: (Ես եմ ալֆա եւ ու.) այսինքն, սկիզբն եւ վախճան: Ապա ուրեմն
եւ մարդս պատկերակցութեամբն սկսեալ ի նմանէ, պարտի ամենեւիմբ
նմանութեամբ աւարտիլ առ նա: Եւ գտանի այսպիսի կատարումսս ի ձեռն
(նեղ եւ անձուկ ճանապարհին՝ որ տանի ի կեանսն որպէս ասէ Տէրն:) Իսկ
մեղքն՝ թողեալ զայս ճանապարհ, այսմ ամենայնի զհակառակն սկսեալ, եւ ի
հակառակն աւարտէ. այսինքն, (լայն եւ արձակ ճանապարհն՝ որ տանի ի
կորուստն:) Եւ առաքեալն ասէ. (լալով ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի.
որոց Աստուած որովայնքն իրեանց են, եւ այլն:) Եւ այսպէս զանազանին
մեղք՝ մահացուն եւ ներելին: Չի ներելին՝ սակաւ ինչ խոտորի ի

ճանապարհեն. այլ ոչ մուրի ճանապարհեն: Այլ մահացուն՝ հեռացուցանե եւ յետս դառնայ. վասն այն ի վախճանս՝ եւս քան զեւս հեռանայ. որպէս ասէ սաղմոսն. (հեռի է ի մեղաւորաց փրկութիւն.) այսինքն փրկիչն. որ վերջին կատարածն է ամենայն մարդկան: Չորրորդ՝ կապէ առ գեհեանն այսպէս. զի մեղօքն կապի մարդ առ սկզբնաչարն սատանայ. եւ նովիմբ ի նորին տեղիսն. այսինքն ի հուրն. որպէս ասէ Տերն. (երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից. որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:) Բայց թուի անպատշաճ թէ, վասն սակաւ հեշտութեան մեղաց՝ յաւիտենից տանջեսցի մարդ: Ասենք վարդապետք թէ՛ պատիճ մեղացն՝ չափի եւ սահմանի ըստ որպիսութեան այնոցիկ՝ որք մեղանչեն. որպէս առաւել մեղանչէ՛ որ հարկանէ զգինուորս քան զռամիկս: Եւ առաւել՝ որ զթագաւոր քան զգինուոր: Ապա ուրեմն որ մեղանչէ Աստուծոյ՝ է անհուն չարիք. արժանապէս անկանի յանհուն տանջանս վասն վնասուն եւ արհամարհանաց աստուածայնոյ մեծութեան: Եւ վասն անհուն մեղանացն՝ լինի անհուն եւ երկարութիւն պատժոց: Ապա ուրեմն յայտէ յայսցանէ՛ զի է մեղք մահացուցիչ: Արդ՝ առաջին որ ասէ՛ հոգին անմահ է, ոչ կարէ մահանալ: Ասեն վարդապետք թէ՛ կրկին է մահ. այսինքն, զի մահ բնութեան. եւ է մահ յանցանաց: Իսկ հոգին առ մահն բնութեան անմահ է. այլ ի մահն յանցանաց՝ մեռեալ է որպէս ասացաւ. զի ի ձեռն մեղաց մեռանի հոգին: Առ երկրորդ որ ասէ թէ՛ մահն խափանէ զներգործութիւն իրին: Ասեն վարդապետք թէ՛ մահու չափ մեղաւորն՝ ոչ կարէ բարիս գործել. զի անընդունելի է ընդ մեղացն եւ բարեգործութիւն: Եւ յայտ է՛ զի յորժամ դառնայ եւ ապաշխարիէ, որ ինչ նախ քան զմեղսն բարեգործութիւնքն են՝ յիշին. այլ զոր ի մէջ մեղացն գործեաց բարիս՝ ոչ յիշին: Ապա ուրեմն յայտէ՛ որ մեղքն խափանեն՝ զվարձս բարի գործոց: Այսքան վասն մահացու մեղացն:

Յաղագս ներելի մեղաց:(Գլուխ. ԾԲ)

Ասացու վասն մահացւին: Տեսցուք այժմ թէ՛ զի՞նչ է ներելի մեղքն: Գիտելի է՛ զի ներելին որ է թող լի ի յերից ճանաչի. այսինքն: Ի հանդիպմանէ: Ի պատճառէ: Ի յիւրն բնութենէ: Ի հանդիպմանէ՛ մահացուն ներելի ասի ի ձեռն զոջման եւ խոստովանութեան: Իսկ ի պատճառ է՛ այսինքն ի տգիտութենէ. կամ ի տկարութենէ. յորժամ ոք արասցէ եւ ոչ կարծէ մեղք գոլ՝ ներելոյ արժանի է: Իսկ ի յիւրն բնութենէ՛ որպէս ծիծաղիլն անչափ. քամահել. բան դատարկ: Եւ այլ: Այս թէ զի՞նչ իցէ ներելի մեղքն: Եւ ծանիր՝ զի թէպէտ ներելի մեղքն ոչ ունին թիւ սահմանիլ զի բազումք են. այլ կարեն անիլ առ սահմանիլն ըստ տեսուղութեան իւրեանց. այսինքն, ի փայտ, ի խոտ, եւ յեզեզն. զի դիւրաւ ծախին եւ մաքրին: Փայտն՝ նշանակէ զներելի ծանրագոյն մեղսն: Եւ եղեզն՝ զթեթեւագոյնսն: Իսկ խոտն՝ զմիջակ մեղսն: Եւ վասն այն է երեք՝ զի ամենայն ինչ ստեղծուած՝ եռակի է. այսինքն, զի ունի զեութիւն. զօրութիւն. եւ զներգործութիւն: Նոյնպէս եւ ամենայն գործք՝ երիւք կայանան. այսինքն, իսկիզբն. ի մէջն. եւ ի կատարածն: Դարձեալ մարդն յերից է գոյացեալ. այսինքն, զի ունի մարմին. հոգի. եւ միտս: Այսպէս եւ միտքն՝ ունի յիշողարկան. իմացական. եւ կամս: Եւ դարձեալ՝ մեղքն սկզբնական՝ ի յերից բղխեաց. այսինքն, յօձէն ի կինն. եւ ի

կնոջն առ այրն: Եւ մաքրութիւն սուրբ՝ յերից եղել. այսինքն, ի մկրտութենէն յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ: Եւ մահացու մեղքն՝ երիւք մաքրի. այսինքն, զղջմամբ. խոստովանութեամբ. եւ ապաշխարութեամբ: Եւ կատարելութիւն հոգւոյ՝ յերից գոյնայ. այսինքն, ի հարւատոյ. ի յուսոյ. եւ ի սիրոյ: Եւ գիտելի է՝ որ մարդ կարէ լինի առանց մահացու մեղաց, եւ ոչ առանց ներելոյ: Եւ այս է պատճառն. զի ցորքան մարդն կենդանի է, ի ներելի մեղս անկանի: Վասն այն ասէ Յովհաննէս ի կաթողիկէն. (թէ ասիցեմք թէ մեղս ոչ ունիմք, զանձինս խաբեմք. եւ ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ:.) Եւ որպէս ի ներելի մեղս յոգնաբար անկանիմք. այսպէս յոգնաբար բժշկիմք. այսինքն, յորժամ հասարակաբար խոստովանիմք. յորժամ բախեմք զսիրտս. յորժամ մաղթեմք լեզուաւ. յորժամ խաչականքեմք զմեզ. յորժամ խաչ ամնիմք ի քահանայից. յորժամ երգեմք զերեք սրբեանն. եւ յորժամ ասեմք զտէրունական աղօթսն. եւ այլ սոյնպիսեօք՝ զներելի մեղս քաւեմք: Եւ թէ զի՞նչ վնաս է մեզ առ հասարակ յամենայն մեղաց: Գիտելի է՝ զի մեղքն մեռուցանէ զգոյացութիւնն: Անարգ ամնէ զկայանս: Մշտընջենաւոր ամնէ զտանջանս: Եւ նսեմացուցանէ զհետութիւնն: Նախ՝ մեռացանէ զգոյացութիւն. զի մարմինք մարդկայինք՝ ի չորս տարերց գոյացեալ, այնքան սիրով միացեալ էին նախ քան զմեղսն, զի ոչ կարէին լուծանիլ: Եւ թէ մեղքն ոչ էին եղեալ, մարդս ոչ էր մեռեալ. եւ ոչ հիւանդացեալ. եւ ոչ ծերացեալ եւ այլն: Այլ ի գալ մեղացն՝ լուծան կապանք սիրոյն. եւ տարերքն սկսան մարտնչիլ ջերմն եւ ցուրտ. գէշ եւ չոր: Եւ յայս կռուոյս՝ եղել լուծումն մարմնոյն: Խօթութիւն. հիւանդութիւն. այլայլութիւն եւ մահ. որպէս ասէ առաքեալն թէ՛ (մարմին ի ձեռն մեղաց մեռաւ:.) Եւ յայսմ պատճառէս՝ մեռանին մանկուսք եւ ծերք. եւ ոչ ումեք ինայէ մահ: Երկրորդ՝ մեղքն անարգ ամնէ զկայանս. զի տեսանեմք որ իւրաքանչիւր ազնիւ իրաց՝ ազնիւ տեղի հասանի. որպէս յայտ է յակն մարդոյն. զի աչք որքան զայլ մարմին ազնիւ է, ի բարձր տեղւոջ է եղեալ բնութիւնն: Այսպէս ի տունն՝ ի հիմն անտաշ եւ կարծր քարինք զնին՝ եւ փայտք յառաստաղն: Այսպէս եւ յաշխարհս. հողն որանարգ է՝ ի ստորել է զ տեղի ամեալ: Եւ աստեղք որ ազնիւ մասունք են, յերկինս են եղեալ: Եւ այսպէս մարդն ազնուագոյն է քան զայլ ստեղծուածս. պարտ էր ի բարձրագոյն տեղւոջ զետեղիլ. այլ ի ձեռն մեղաց՝ անարգանայ եւ ի դժոխս անկանի. որպէս ասէ անտարանն: (Մեռաւ մեծատունն՝ եւ թաղեցաւ ի դժոխս:.) Եւ է այսմ պատճառ. զի որոյ ծնունդն է ազնուագոյն՝ նորին ապականութիւնն է անարգագոյն: Եւ յայտ է ի վախճանին. զի գէշ մարդոյն՝ առաւել անարգէ եւ նեխեալ քան կայլ դիականց: Եւ որպէս վասն ապականութեան մարմնոյն՝ նոյնպէս վասն հոգւոյն է. վասն այն ասեն վարդապետք թէ՛ (մեղաւորն ոչ է արժանի հացին զոր ուտէ:.) Դարձեալ՝ մեղաւորն մեղանչէ ընդդէմ բնութեան սահմանի. որպէս ասէ սուրբն Դիոնսոսիոս. (մեղք է ընդդէմ բնութեան գոլ. մինչ զի պարտ է նմա ըստ բնութեան տեղի գերագոյն, անկանի ի տեղի ստորագոյն: Երրորդ՝ մեղքն մշտնջենաւոր ամնէ զտանջանս. որ թուի ընդդէմ բնութեան. զի պարտ է որ տանջանքն՝ պատասխանի տացեն մեղացն: Չարմանք երեւի՝ թէ առժամանակեայ հեշտութեան որ մեղսն, պատասխանի տացէ պատիժն յաւիտենական: Բայց ասելի է թէ՛ լինի արդար դատաստանաւն Աստուծոյ: Եւ այս է՝ զի որ ոչ կամեցաւ պակասիլ ի մեղաց, ոչ է պարտ պակասիլ ի տանջանանց: Այլ թէ ոք ասէ, թէ որ զսպանութիւն գործէ՝ ոչ կարէ գոլ ի

մեղսն: Ասելի է թէ՛ մարդ ի ձեռն մահացու մեղաց՝ յայնպիսի կայանս դնէ զանձն իւր, յորմէ ինքեամբ յառնել ոչ կարէ: Օրինակ՝ թէ ոք ընկենու քար՝ որ նախ քան զնկենուլն՝ ունի իշխանութիւն ոչ ընկենլոյ. այլ յորժամ ընկենու, ոչ կարէ զնա ոչ ընկենուլ: Չորրորդ՝ մեղքն նսեմացուցանեն զտեսութիւն. քանզի որ է պտղաբեր չար՝ երեւի բարի. որպէս տապացելոյն շերմամբ՝ դառն թուի քաղցրն. եւ ընդդէմ եւս: Վասն որոյ ասէ Եսայի. (վայ որք ասէք զչարն բարի, կամ զբարին չար. եւ այլն:) Այսքան առ այս:

Նորին քարոզ վասն Խորհրդոց մեղացն. ի բանն առակին: (Խորհրդոց անպարշտաց՝ հարց եւ փորձ եղիցի:) Իմաս. 1. 9: (Գլուխ ԾԳ)

Երեք են տեսակք մեղաց՝ զոր գործեն մարդիկ. այսինքն, խորհրդոցն՝ եւ բանիցն՝ եւ գործոցն: Վասն զի յերկից է մարդն հաստատեալ. ի հոգւոյ. եւ ի մարմնոյ. եւ ի մտաց. եւ իւրաքանչիւր գոյութեամբն՝ սխալի մարդն եւ գործ է զմեղս. թէ ի խորհուրդն, թէ ի բանն, եւ թէ ի գործն: Եւ նախ քան զամենայն, է մեղք խորհրդոցն. զոր սերմանէ սատանայ ի միտս մարդկան. եւ յետոյ ի մարմինն բուսուցնէ, եւ տայ գործել զմեղս: Վասն այն ասեն վարդապետք թէ՛ ոչ է բաւական միայն պահել զմարմինն ի մեղաց. այլեւ զգուշանալ խորհրդոյն: Եւ այս վասն տասն պատճառի: Նախզի՝ մեղքն ի խորհուրդն արմատանայ. եւ ապա ի մարմինն բուսանի. պարտ սուրբ պահել զխորհուրդն՝ զի մի արմատասցի չարն ի նմա. եւ մի բուսցի ընդ զգայարանսն: Երկրորդ՝ զի խորհրդոց մեղքն՝ ի բոլոր մարմինն տարածի. որպէս թոյնք իժից. իսկ մարմնոյն մեղք միայն ի մասն այնն է. որով գործեաց. եթէ ի ձեռս. կամ ի յոտս. վասն այն պարտ է առաւել զգուշանալ խորհրդոցն: Երրորդ՝ զի խորհուրդն եւ միտքն՝ կառավար են մարդոյն եւ առաջնորդ: Չոր օրինակ՝ թէ կառն մոլորի, կառաւարն ուղղէ զնա. ապա թէ կառավարն ննջէ, ի միասին կառքն եւ կառավարն կորնչին: Նոյնպէս թէ մարմինն մոլորի, միտքն կարէ ուղղել զնա. ապա թէ միտքն մոլորի եւ հեշտանայ ի մեղս, մարմինն ոչ կարէ ուղղել զնա: Չորրորդ՝ զի չար խորհրդովն հաւանիմք սատանայի եւ բարեկամք լինիմք նմա: Չի ութն խորհուրդ է մեղացն զոր սատանայ սերմանէ ի սիրտ մարդոյ եւ գերէ ի մեղս. եւ որպէս նետիւք՝ ծածուկ ձգէ ի խորհուրդն եւ խոցոտէ զհոգի մարդոյն, եւ սատակէ. վասն այն պարտ է զգուշանալ խորհրդոյ մեղացն: Հինգերորդ՝ զի հոգի է Աստուած եւ ոչ մարմին. եւ յիմացական միտս եւ ի հոգիս մեր բնակի. ըստ այնմ, (դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք. եւ հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ:) Եւ որպէս մարմինս մեր հոգւոյս է տաճար. նոյնպէս եւ հոգիս մեր հոգւոյն սրբոյն: Արդ՝ ոչ է բաւական միայն զմարմինն պահել. այլ զհոգին եւ զմարմինն. զի իցէ տաճար սուրբ Աստուծոյ: Ապա թէ ոչ՝ (սուրբ հոգին իմաստութեան՝ փախչի ի նենգութենէ, եւ յանմիտ խորհրդոց:) Վեցերորդ՝ իմացական միտք մեր՝ լուսատու ակն եւ ճրագ են հոգւոյն. եթէ միտն պայծառ է եւ մաքուր, հոգին լուսաւոր է եւ պայծառ: Ապա թէ աղտեղեալ է մեղօք, հոգին մթացեալ է եւ խաւարեալ մեղօք. ըստ այնմ, (ճրագ մարնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի. եւ թէ չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի:) Եօթներորդ՝ հայելի եւ պատկեր Աստուծոյ են միտքն. որովք զԱստուած տեսանեմք: Արդ՝ որպէս ժանկոտ հայելին կոյր է եւ ոչ տեսանէ. իսկ մաքուրն նկարէ

զպատկերն եւ ցուցանէ. նոյնպէս եւ միտք մեր բանական՝ հայելի են որովք զԱստուած տեսանեմք: Արդ՝ եթէ ժանկեալ է մեղօք, կոյր է. եւ ոչ կարէ յինքն զԱստուած տեսնել: Իսկ (որք սուրբքն են սրտիւք, նոքա զԱստուած տեսցեն հրամայէ Տէրն:) Վասն մաքուր եւ սուրբ պահել է գիտրիւորդն: Ութերորդ՝ միտքս մեր դատաւոր է ի վերայ հոգւոյս եւ մարմնոյս. ըստ այնմ, (դատաւոր մի էր ի քաղաքի ուրումն:) Արդ՝ յորժամ դատօղն անամօթ եւ անկաշառ լինի, ճշմարիտ դատէ եւ ուղիղ: Եւ յորժամ թիւրի, նոյնպէս եւ զդատաստանն թիւրէ: Վասն այն պարտ է զմիտս սուրբ եւ մաքուր պահել ի մեղաց. զի կարացէ ուղիղ եւ արդար դատաստան առնել առ ինքն, եւ առ այլս ի վերայ մարմնոյն ի հոգւոյն: Իններորդ՝ աղբիւր բանին եւ իմաստութեան միտքն է ի մեզ. արդ՝ որպէս աղբեր ակն թէ յստակ է, ջուրն պարզ եւ յստակ բղխի եւ գեղեցիկ. ապա թե՛ական աղբերն պղտորեցաւ՝ դառն եւ պղտոր գայ յառաջ ջուրն: Նոյնպէս եւ հագիս մեր թէ յստակ է ի մեղաց. բանն եւ գիտութիւնն պարզ եւ յստակ գայ յառաջ եւ միսիթարէ գայս. ապա թէ մեղօք ապականեալ է, խառնակ եւ ապականեալ գայ յառաջ բանն. վասն այն պարտ է գիտրիւորդն սուրբ պահել եւ մաքուր: Տասներորդ՝ որ ի խորհուրդն ունի զմեղսն, առաւել սիրէ եւ յօժարի մինչեւ կատարէ զմեղսն: Իսկ որ մարմնովն գործէ, յետոյ տրտմի եւ զղջանայ եւ ապաշխարէ: Վասն մեղք որ ի խորհուրդն է՝ սիրով է կապեալ. եւ ոչ զղջանայ եւ ոչ երեւի իւրն թէ մեղս ունի: Իսկ մարմնոյն մեղքն՝ յայտնի է. եւ զինքն մեղանչական տեսանէ եւ զղջանայ: Վասն այն քանի որ հնար լինի, գիտրիւորդն առաւել պարտ է սուրբ պահել ի մեղաց: Այտքիկ ի յօրինակաց: Իսկ այժմ տեսցուքի վկայութեանց սուրբ գրոց. զի պարտ է գիտրիւորդն պահել ի մեղաց: Նախ՝ ի տերունական հրամանէն որ ասէ: (Որ հայի ի կին մարդ ցանկութեամբ՝ անդէն շնացաւ ի սրտի իւրումն:) Եւ այս յիրաւի ճշմարիտ. զի որ հայի ցանկական մտօք, ի կամս եւ ի խորհուրդս իւր գործն խափանեցաւ. ի տեղւոյն, ի ժամանակէն, եւ ի դիմացն պահեցաւ, այլ նա ի սիրտն իւր գործեաց զմեղսն: Երկրորդ դարձեալ Տէրն հրամայէ. (յաւելուածոց սրտի խօսի բերանն. զի բարի մարդն ի բարի գանձուցն բղխէ զբարին. եւ մարդ չար՝ ի չար գանձուցն բղխէ զչարն: Եւ ի սրտէն յառաջ գայ շնութիւն. պոռնկութիւն եւ այլն, որք պղծեն զմարդ:) Ապա ուրեմն թէ յառաջ եկեալ ծնունդ սրտին չար է, եւ պղծէ զմարդն. առաւել չար է ծնօղ սիրտն. որ մթեր չարութեան էր եւ մեղաց: Վասն այն պարտ է զգուշանալ մտացն, եւ զբարին գանձել. եւ զբարին խօսիլ. (զի ծառն ի պտղոյն ճանաչի.) նոյնպէս միտքն ի լեզուէն եւ ի խօսիցն որք ի նմանէ են յառաջ եկեալ: Երրորդ՝ Մովսէս հրամայեաց ի յօրէնսն: (Յայեացի ի քեզ՝ գուցէ լինիցի բան չար ի սրտի քում. եւ բարկացի Տէրն Աստուած ի վերայ քոյ:) Սրտի չար՝ գիտրիւորդն մեղսն ասէ. զի յորժամ ծածկեմք ի մեզ, բարկանայ Աստուած. զի որպէս հուր ծածկեալ, յետոյ բորբոքի. նոյնպէս մեղքն ի խորհուրդն ծածկեալ՝ յետոյ վառի ի մարմինն եւ այրէ զնա. վասն այն պարտ է գիտրիւորդն սրբել ի մեղաց: Չորրորդ՝ երանելին Յօբ վասն մտածութեանց որդւոցն՝ յամենայն օր զոհս մատուցանէր Աստուծոյ. զի թեպէտ որդիքն բարեգործք էին որպէս զհայրն ունելով զբնական արդարութիւնն. այլ վասն խորհրդոց յանցանաց՝ պատարագաւ քաւեր յամենայն աւուր. մի յառաւօտին, եւ մի յերեկոյին: Եւ որպէս նորա զոհքն՝ մեր աղօթքն է եւ զղջումն խոստովանութեան վասն սրբութեան խորհրդոցն: Յինգերորդ՝ սիրտ մեր եւ խորհուրդս՝ որպէս

սկուտեղ եւ տառայ է՝ որով նուիրեմք զամենայն ինչ Աստուծոյ: Արդ՝ որպէս տառայն թէ սուրբ է, ընդ ունի թագաւորն զաղերսն եւ հաշտի. եւ թէ աղտեղի՝ անարգէ զնա. նոյնպէս յորժամ խորհուրդս մեր սուրբ է ի մեղաց, ամենայն բարեգործութիւնք մեր եւ աղօթք՝ հաճոյ են Աստուծոյ. այլ թէ աղտեղեալ է մեղօք, ոչ ընդունի. եւ անարգէ զմեզ որպէս ասէ Դաւիթ. (զմեղս թէ տեսանէ՝ մի թէ զսէ ինձ Տէր:) Վեցերորդ՝ զի ասէ իմաստունն. (Սուրբ Զոգին իմաստութեան՝ փախչի ի նենգութենէ՝ եւ յանմիտ խորհրդոց:) Այս է՝ զի զգալի լոյսս միաւորի ընդ լուսոյ աչացս՝ եւ ապա տեսանեմք զարարածս. նոյնպէս լոյս շնորհաց հոգւոյն սրբոյ՝ միաւորի ընդ միտս մեր. եւ այն լուսովն տեսանեմք զԱստուած եւ զարքայութիւնն երկնից, եւ զհանդերձեալ կեանսն: Արդ՝ որ այսպէս զլոյս հաւատոյն պայծառ ունի եւ խոկայ ի միտսն զբարի գործս առաքինութեան, միշտ հոգին սուրբ ծագէ ի նմա զլոյս գիտութեան: Իսկ որ նենգաւոր է խորհրդով՝ այսինքն որ թերահաւատն է եւ անմիտն, այսինքն որ յերեւելիս միայն հայի եւ սիրէ, յայնպիսի խորհրդոցն փախչի հոգին սուրբ. եւ ոչ լուսաւորէ զնա. որպէս կոյրն ոչ լուսաւորի յարեգակնէն. եւ մնայ ի խաւար մեղաց եւ անհաւատութեան. վասն այն սուրբ պահելի է զմիտս մեր: Եօթներորդ՝ զի զսիրտ եւ զերիկամունս քննէ Աստուած. վասն զի մարդ ի յերեսն հայի. եւ Աստուած ի սիրտն. որպէս ասէ առակն: (Երիկամանց նորա վկայ է Աստուած. եւ սրտի նորա ոստիկան. եւ լեզուի նորա ունկնդիր:) Այս է՝ զի հոգւոյս մեր երեք են մասուք. բան, ցասումն, եւ ցանկութիւն: Լեզու՝ զբանն կոչէ ի մեզ. զի գործի է բանին. եւ սիրտ՝ զսրամտականն. եւ երիկամունք՝ զցանկութեան մասն: Արդ՝ ի վերայ այս մասանցս ոստիկան եւ վերակացու է հոգին սուրբ. եւ հայի ի գործս նոցին ծածկապէս. եւ յորժամ մոլորին եւ ի չարիս մեղաց անկանին, ոչ ներէ. այլ վկայէ թէ՝ մոլորեցաւ ցանկութիւնդ. եւ սխալեցաւ բանականութիւնդ եւ խռովեցաւ սիրտդ: Եւ այն վկայութիւնն պահէ զմեզ յուղղութիւն. որպէս ասէ Պօղոս. (հեթանոսք որք զօրէնս ոչ ունին բնութեամբ զօրինացն գործեն. որ գրեալ է ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց:) Այսպէս հոգին սուրբ գրէ յամենայն մարդկան սիրտ զօրէնս արդարութեան. եւ այս բնական օրինօք արդարացան նահապետք՝ որք յառաջ քան զօրէնս եւ զաւետարանս էին: Եւ թէ ոք ասիցէ՝ երբ Աստուած այնպէս վերակացու է մեզ, ո՞րպէս մեղանչեմք: Ասեմք նախ եթէ, որպէս Աստուած վերակացու է հոգւոյս մասանցն. նոյնպէս եւ հոգին մեր՝ վերակացու է մարմնոյս մասանցն. եւ հոգին մեր թոյլ տայ եւ շարժէ ի մեղս: Եւ դարձեալ՝ Սուրբ Զոգին վերակացու է մեզ՝ այլ ոչ բռնադատօղ. յորժամ անձնիշխան կամօք հետեւիմք հոգւոյն, պահէ զմեզ ի չարէ. եւ յորժամ կամօք մեր խոտորիմք ի չարն, թոյլ տայ մեզ որք գործեմք. այլ ի ներքուստ խղճին դատէ եւ ըստգտանէ զմեզ: Վասն այն պարտ է զխորհուրդն սուրբ պահել եւ հետեւիլ հոգւոյն սրբութեամբ: Ութներորդ պատճառաւ՝ պարտ է զխորհուրդն սուրբ պահել. զի ամենայն հոգեկան մեղքն՝ խորհրդովն գործի. որպէս հպարտութիւնն. նախանձն. ատելութիւնն. քէնն. ոխն. նենգն. եւ այլն: Եւ սոքա ամենեքեան՝ մեծամեծ մեղք են. զի հպարտութիւնն եւ նախանձն՝ սատանայի գործ է. որ ամբարտաւանեցաւ սատանայ ընդդէմ արարչին. եւ նախանձեցաւ ընդ Ադամայ փառացն: Այսպէս եւ ատելութիւնն՝ ոխն՝ եւ քէնն՝ ընդ մարդասպանիցն է. ըստ այնմ, (ամենայն ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է:) Եւ (զայր արիւնահեղ եւ զնենգաւոր՝ պիղծ առնես դու Տէր ասէ մարգարէն:)

Եւ թէ՛ (արք արիւնահեղք եւ նենգաւորք՝ մի հասարակեցցեն զաւուրս իւրեանց:) Չո՞ր աւուրք. այսինքն, ի մարմնաւոր կենաց կարծէ վասն նենգութեանն. եւ յաւուրցն յաւիտենից ջնջէ: Որպէս յայլ ուր ասէ Դաւիթ. (սակայն վասն նենգութեան լոցա՝ տարագիր արասցես զնոսա ի կենաց՝ եւ կործանեցես ի յաւիտենից կենացն.) վասն այն պարտ է սուրբ պահել զմիտս: Իններորդ՝ պարտ է զխորհուրդն սրբել. զի մի լիցուք կեղծաւորք եւ թերահաւատք եւ մարդախաբ զի միայն մարմնոյ սրբելն այն է՝ որ ի ցոյցս մարդկան լինի. որպէս կեղծաւորաց պահելն են աղօթելն. (եւ այն իսկ են վարձք լոցա որպէս հրամայեաց Տէրն:) Եւ թերահաւատ է՝ որ ոչ հաւատայ զԱստուած սրտին եւ խորհրդոցն գիտող: Եւ մարդախաբն՝ աստուածախաբ է. վասն այն պարտ է զներքին խորհուրդն սրբել. զի եւ լիցի արտաքոյ մարմինն սուրբ. ապա թէ ոչ՝ (սման լինին գերեզմանաց բռելոց՝ որք արտաքոյ գեղեցիկ եւ զարդարեալ են. եւ ի ներքոյ լի ժահահոտութեամբ եւ ոսկերօք մեռելոց:) Նոյնպէս եւ մարդն որ զխորհուրդն պղծեալ է մեղօ, երբեմն արտաքս բղխէ զգարշահոտութիւնն չարաչար խօսիւք. եւ զագրանան մարդիկ. վասն այն պարտ է զխորհուրդն սրբել ի չարեաց մեղաց: Տասներորդ պատճառաւ՝ պարտ է զխորհուրդն սրբել. զի ասէ առակն: (խորհուրդոց անպարշտաց՝ հարց եւ փորձ լիցի:) Եւ կրկին է հարցափորձելն: Նախ՝ է քննութիւն բանին Աստուծոյ. որ քննէ մանրամասնաբար եւ փորձէ. (մինչեւ ցորոշումն շնչոյ եւ ոգւոյ.) այսինքն, քննէ եւ որոշէ զխորհուրդս մեր, թէ ո՞րն է ի կամաց եւ ի գիտուեանց մերոց. եւ ո՞րն է արկած չարին սատանայի: Չի զամենայն չար խորհուրդս սատանայ սերմանէ ի սիրտս մեր. այլ մեք մեր կամաւ հետեւիմք եւ բուսուցանեմք զչարն ի սիրտս մեր հեշտանալով: Այս է որ ասէ մարգարէն. (ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս Տէր. եւ յօտարէն պահեա զծառայս քո:) Օտարն սատանայի արկածն է. որոյ մեք հետեւիմք եւ հեշտանամք ի նոյնն. զայն քննէ Աստուած եւ որոշէ: Երկրորդ հարցափորձելն է՝ որք մեք զղջանամք ի սիրտս մեր եւ ատեմք զմեղս. եւ գնամք առաջի քահանային եւ խոստովանիմք դատապարտելով զմեզ: Յորժամ ի զղջումն մեր՝ տեսանէ Աստուած որ մեք անմեղ էաք, եւ սատանայ պատրեաց եւ խաբեաց. զմեզ արդարացուցանէ ի խոստովանիլն. եւ զսատանայ պարտաւոր է իբր զպատճառ մոլութեան մերոյ: Վասն այն որ այսպիսի հարցափորձութիւնս լինի՝ պարտ է սուրբ պահել զխորհուրդս մեր ի չարէ. եւ Զրիստոս փառք յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն լեզուի. ի բան առակին: (Մահ եւ կեանք՝ ի ձեան լեզուի:) Առակ. 18. 21. (Գլուխ. ԾԴ)

Տէրն մեր եւ Աստուած Յիսուս Զրիստոս հրամայէ յաւետարանին: (Ի բանից քոց արդարասցիս. եւ բանից քոց պարտաւորեցես:) Եւ այսմ կրկին է ի մացումն: Նախ՝ բանիւք արդարանալն է. որպէս դաւանութեամբ հաւատոյն. կամ աղօթիւք եւ խնդրուածովք. կամ խոստովանութեամբ եւ այլովք՝ արդարանայ ի մեղաց: Իսկ պարտաւորին է՝ որպէս ուրացութեամբն առաջի մարդկան. ոչ աղօթել. ոչ խնդրել թողութիւն. ոչ խոստովանիլ զմեղս եւ այլն: Երկրորդ յորժամ չարախօսէ ոք, զրպարտէ, բամբասէ, պարտաւորի. զի սոքա ի կարգ մեծամեծ մեղաց են համարեալ: Իսկ յորժամ լռէ եւ

համբերե, արդարանայ. որպէս ասէ մարգարէն. (լռեցո զլեզու քո ի չարութենէ. եւ շրթունք քո՝ մի խօսեցին զնեզութիւն:) Չի ասեն իմաստունք թէ, (իմաստութեան չափ լռելն է.) զի որքան մարդն լռէ եւ խոկայ զբանն, այնչափ պարզի բանն: Չի յետն փողն խռչակին՝ եօթն անգամ խորհիլ պարտ է. եւ որպէս զարծաթ եօթն անգամ յստակել եւ ապա խօսիլ: Յայնժամ ամենայն Աստուած հաճի եւ մարդիկ հաւանին ի գեղեցիկ խօսեն որպէս ասէ առաքեալն. (ամենայն բանք ձեր ի բարեւ աղիւ համեմեալ լիցին. զի տացէ շնորհս խողացն:) Ապա թէ զայսպիսի ընտրութիւնս ոչ ստանայ, որ զինչ ի բերանն գայ փութապէս խօսի, ամենայն վնաս եւ որոգայթ լինի. վասն այն ասէ: (Մահ եւ կեանք՝ ի ձեռն լեզուի:) Եւ վասն երեք պատճառի՝ մահու պատճառ լինի լեզուն: Նախզի՝ դիւրաշարժ է ի կերպարանել զբանն. եւ դիւրաւ սահի եւ սխալի: Երկրորդ՝ զի անամօթ է լեզուն. անտես ի մարդկանէ. զամենայն մեծամեծս բարբառի. զոր ինչ ի սրտին է՝ յինքն քարշէ. եւ ոչ յումեքէ ամաչէ: Երրորդ՝ զի ոչ երկնչի յամրոցի բերանոյն միջոցի գոլով. ի վերայ՝ ի ներքոյ՝ եւ ի կողմանէ պարսպեալ. եւ ատամունքն եւ շրթունքն՝ դուռն են նմա: Վասն այն զամենայն վնասս խօսի եւ ոչ երկնչի. թէ զգլուխն ծեծեն, թէ զձեռն կարեն, ինքն ոչ ցաւի: Եւ զի այսպէս յանդուզն եւ անամօթ է լեզուն՝ մարգարէն Դաւիթ այլ պահապան խնդրէ ասելով. (դիր Տէր պահապան բերանոյ իմոյ. եւ դուռն ամուր շրթանց իմոց. եւ մի խոտորեցի սիրտ իմ բանիւ չարութեան:) Չի որպէս զչար գազան՝ ի յարգելանոց ձգեն եւ զդուռն պնտեն. թէ ոչ խաղաղի. զնճիլով կապեն. նոյնպէս չար լեզուն՝ չար գազան է մարդոյն. որպէս ասէ առաքեալն. (ամենայն բնութիւնք գազանաց եւ անասնոց՝ հնազանդեալ են մարդկան. այլ զչար լեզուն՝ ոչ ոք կարէ հնազանդել՝ զչարն եւ զանկարզն եւ զլին թունօք մահաբերին:) Նախ վասն այն արտաքին դուռն ունի զշրթունսն. եւ ներքին դուռն են ատամունքն. եւ թէ սոքա ոչ արգիլեն ամուր, յետնափակ խնդրէ մարգարէն որպէս զգնկճիլ գազանին. այսինքն է, զերկիւղն Աստուծոյ. զի երկիւղն Աստուծոյ՝ է սանձ լեզուին. որպէս սանձն ի գլուխն է ձիոյ: Եւ երկու երեսանակ ջիլաւ ունի ձեռքն. եւ ապա սանձահարի ձին եւ ուղիղ գնայ: Նոյնպէս իմաստութիւնն՝ սանձն է լեզուին. եւ երկիւղն Աստուծոյ երեսանակ: Մին երկիւղն աստի տանջանաց. եւ միւսն հանդերձելոյն. ապա սանձահարի լեզունի չարէ: Եւ թէ ոչ ունի գոսսա, որպէս սանձարձակ ձի գահավեժ լինի. կորնչի ինքն եւ վերելակն. նոյնպէս թէ զերկիւղն Աստուծոյ ոչ դնես սանձ լեզուիդ՝ գահավեժ լինի եւ զինքն եւ զքեզ կորուսանէ. վասն այն ասէ. (մահ եւ կեանք՝ ի ձեռն լեզուի:) Եւ բազում բարութիւն գայ ի լեզուէն յառաջ հոգեւոր եւ մարմնաւոր: Նախզի՝ զխաղաղութիւն լեզուաւ առնեն ի մէջ մարդկան. եւ (խաղաղարարն՝ որդի Աստուծոյ կոչի.) զոր ուսուցանէ մարգարէն. (լռեցո զլեզու քո ի չարութենէ. խնդրեա զխաղաղութիւն եւ երթ զհետ նորա:) Երկրորդ՝ զի լեզուան հնազանդիմք ընկերին եւ սիրեմք գնա. եւ ընկերին սիրովն՝ զԱստուած սիրեմք եւ Աստուծոյ հնազանդիմք: Երրորդ՝ զի լեզուան օրհնեմք Աստուած եւ փառաւորեմք սաղմոսիւք եւ հոգեւոր երգովք. այլեւ օրհնեմք զմարդիկ եւ բարեբանեմք: Չի վասն այն է տուեալ լեզու մարդոյ՝ որ հանապազ զԱստուած օրհնեմք եւ գովեմք. եւ զմարդիկ օրհնեմք եւ գովեմք: Չորրորդ՝ զի լեզուան աղօթեմք առ Աստուած՝ եւ խնդրեմք զողորմութիւն եւ զթողութիւն մեղաց մերոց. եւ զայլն որպէս ասացաւ ի վարայ. որպէս ասէ Տէրն. (խնդրեցեք եւ առնուցուք. հայցեցեք եւ գտջիք.

բախեցէք եւ բացցի ձեզ:) Յինգերորդ՝ այլեւ ի մարդկանէ լեզուաւ խնդրեմք գտուրս՝ գողորմութիւնս՝ գկարիս՝ եւ գպարգես՝ եւհանդիպիմք. զի նախ խնդրելն է, եւ ապա առնուլն. որպէս մանուկն նախ խնդրէ եւ աղաղակէ. եւ ապա մայրն գթայ եւ տայ կերակուր: Բայց զանագութիւն է ի խնդիրն Աստուծոյ, եւ ի խնդիրն մարդոյ. զի յԱստուծոյ միշտ հանապազ խնդրել պարտ է. զի թէ մի անգամն չտայ, կրկին խնդրեալ եւ երեքկին, եւ բազում անգամ. ի գիշերի եւ ի ցերեկի. որպէս ինքն հրամայեաց. (յամենայն ժամ պարտ է աղօթիլ եւ մի ձանձրանալ. զի թէ վասն բարեկամութեան չտայ, սակայն վասն ժտելոյն տայ. որպէս այրի կնոջն ետ զնկանակն: Այլ ի մարդկանէ խնդրելն՝ պարտ է գծամանակն ընտրել. եւ գտեղին ընտրել եւ զղեմսն, եւ ապա խնդրել. եւ զխնդիրսն ոչ բռնութեամբ եւ մեծաբանելով, այլ հեզութեամբ եւ աղաչելով. որպէս ասէ Սիրաքն. (քաղցրութեամբ հայցողն՝ գտանէ գթութիւն:)) Վեցերորդ շահ լեզւին՝ զի յորժամ առնուն զխնդիրսն, գոհանան գտուողէն. եթէ զԱստուծոյ, եւ եթէ զմարդոյ. զի գոհութիւնն կրկին գործ ունի. այսինքն, առեալ պարգեւացն հատուցումն է. դարձեալ պարտական առնէ միւս տալոյ. որպէս ասեն ի գրուցաց.(գոհացող բերանն՝ զԱստուած պարտական առնէ:)) Չի այս ամենայն պարգեւացս հոգեւոր եւ մարմնաւոր զոր տուեալ է Աստուած ի յերկնէ, ի յերկրէ, լոյս, կեանք. հոգի. մարմին. մուլք, ստացուածք, կերակուր, առողջութիւն եւ այլն, միայն գոհութեամբն է որ հատուցանեմք: Եւ դարձեալ՝ հանդերձեալ բարեացն, արքայութեանն երկնից, հրեշտակաց դասուն, տեսութեան Աստուծոյ, եւ անթառամ պսակացն, ի ձեռն օրհնութեան եւ գոհութեան արժանաւորիմք: Նոյնպէս եւ գտուրս մարդկան յորժամ գոհութեամբ առնուն եւ շնորհալին, տուողն ուրախանայ եւ այլ խորհիլ ի տալն: Եօթներորդ շահ լեզւինէ՝ զօրէնս Աստուծոյ քարոզել եւ ուսուցանել. զմոլորեալսն դարձուցանել. զչարսն խրատել եւ ուղղել. զտգէտս ուսուցանել. եւ ի հաւատս ուղղութեան ածել. զբարիսն ի գործն հաստատել, եւ Աստուծոյ մերձ կացուցանել զանագան բարիւք. սաստիւք եւ յանդիմանութեամբ. որպէս ասէ առաքեալն. (յանդիմանեա սաստեա, եւ մխիթարեա ամենայն երկայնամտութեամբ.) այսինքն, դիւացն սաստել եւ հալածել. զհերձուածօղս անիծանել. զանհաւատս եւ զանդարձս ի չարեաց ընդ բանիւ կապանաց ղնել: Ութներորդ՝ զի բանիւք խօսիմք ընդ միմեանս. եւ զծածուկ գիտութիւն սրտիս՝ լեզուան յայտնեմք. զկարիսն ցուցնեմք զպէտսն խնդրեմք. շինութիւն եւ աւեր, առ եւ տուր ամենայն, բանիւք կատարին: Իններորդ՝ բանիւք եւ իմաստութեամբ որոշիմք յանբանից տիրեմք իշխեմք՝ եւ թագաւորեմք. յերկրէ յերկիր ընթանամք. ի ծով անցանեմք. ի ճանապարհ գնամք. եւ բանիւք զպիտոյս մեր հայթայթեմք: Տասներորդ շահ բարեխօսել մարդկան առ Աստուած եւ առ մարդիկ. զգերիսն թափել. զբանտեալսն աղատել. աղքատաց ողորմութիւն. մեղուցելոց թողութիւն. եւ այլ ամենայն աշխարհի բանիւք օգնական լինիլ: Եւ զայս եւ այլ բազում շահ օգտի ի լեզուոյն բարութենէ ծնանի ինքեան եւ այլոց. հոգւոյ եւ մարմնոյ. մեծամեծաց եւ աղքատաց եւ այլոցն: Վասն այն ասէ.(մահ եւ կեանք՝ ի ձեռն լեզուի:) եւ որպէս այս զոր թուեցաք զկեանս եւ զբարութիւն լեզուի: Նոյնպէս բազում է մահ եւ չարութիւն լեզուի: Նախ Սուտ խօսիլն: Երկրորդ՝ Սուտ վկայիլն: Երրորդ՝ Յերձուած եւ ուրացութիւն: Չորրորդ՝ Սուտ երդումն եւ երդմանահարութիւն: Յինգերորդ՝ զուր ասել եւ մատնել: Վեցերորդ՝

Բամբասանք եւ քամոսութիւն: Եօթներորդ՝ Խեղկատակ եւ դատարկաբանութիւն: Ութներորդ՝ Բարկութիւն եւ սրտմտութիւն: Իններորդ՝ Կախարդութիւն եւ դիւթութիւն: Տասներորդ՝ Չար յիշոցք՝ որք ի սուրբ գիրս՝ անէծք կոչին: Չորս պարտ է գոսա մի ըստ միոջէ բացայայտել. եւ ապա ճանաչել զվնասակարութիւն չար լեզւի: Եւ Նախ զառաջինն՝ Ստախօսութիւնն. եւ յաստից բազում վնաս լինի: Նախգի՝ անօգուտ է. որպէս այն որ արածէ զհողմն՝ ոչ ինչ օգտի. Նոյնպէս սուտ բանն՝ ձայն է դատարկ. ոչ լսողին օգուտ է. եւ ոչ ասացողին վարձ: Երկրորդ՝ զի այպանեն եւ Նախատեն եւս ամենայն լսողքն գոտու բանս: Երրորդ՝ ընդդէմ ճշմարտութեանն հակառակի. որպէս ասեն թէ՝ սատանայն շահնա այն է, որ զորդին այլ չհաւատան. գիտեն թէ ամենեայն բանքն սուտ են: Չորրորդ՝ ի սուտ խօսիցն՝ լինին կռիւք եւ թշնամութիւնք. դաւի եւ երդումս: Հինգերորդ՝ զի ստախօսն որդի լինի սատանայի. որպէս ասէ Տէրն. (յիւրում անտի խօսի. զի սուտ է եւ հայրն Նորա սատանայ.) այլեւ ինքն այլոց հայր լինի ստութեան, որք ուսանին ի նմանէ: Վեցերորդ՝ զի հոգին սուրբ՝ փախչի ի սուտ խօսից. այլեւ սպասաւոր հրեշտակն մեր. զի ճշմարտութեանն մերձ են եւ օգնական. եւ ի ստութենէն ի բաց հեռանան: Եօթներորդ՝ զի յայտնապէս ընդդէմ օրինացն գործէ. զի Նա ասաց. (մի սուտ խօսիր եւ սուտ վկայեր:) Ութներորդ՝ զի ասէ մարգարէն. (կորուսանես զայնոսիկ որք խօսին սուտ:) Իններորդ՝ զի ամենայն մեղք՝ ստութեամբն գործի այսպէս. զի Նախ ի միտսն դնեն գոտուն՝ եւ ապա գողանան. եւ ապա շնան. եւ ապա սպանանեն, եւ այլն. սոքա ամենեքեան՝ ի յինքն ի ստախօսն բերեն զվնասն: Տասներորդ՝ զի ի ստախօսիցն՝ այլոց բազում վնաս լինի. որպէս այնք որք խաբեն եւ զհերձուած ուսուցանեն եւ օրինաց հանեն. այսպէս եւ այլք գործեն զվնասն սուտ բանիւք. վասն այն զգուշանալի է լեզուի եւ սուտ բանից: Երկրորդ վնաս լեզուի՝ սուտ վկայութիւնն է: Նախգի ընդդէմ օրինացն Աստուծոյ որ ասաց. (մի սուտ վկայեր:) Երկրորդ՝ Նենգիչ է արդարութեան գործոց: Երրորդ՝ ստէ զճշմարտութիւնն: Չորրորդ՝ ընկեր լինի չար գործողացն. զի Նա որ գործէ, եւ սա որ սուտ վկայէ, ի միասին տանջին: Հինգերորդ՝ զի սուտ վկային հուրն է բաժին. որպէս այնոքիկ որք սուտ վկայեցին վասն Քրիստոսի, եւ զհուրն յաւիտենից ժառանգեցին: Վեցերորդ՝ զի սուտ վկայն՝ բազում հակառակութիւն ձգէ ի մէջ դատախազացն. եւ կռիւն եւ խռավութիւնն՝ այլ առաւել բազմանան: Վասն այն պարտ է վկային բազում զգուշութիւնս ունիլ. զի մի դատապարտեսցի: Նախգի՝ յերկար խորհեսցի ի միտսն եւ քննեսցէ. զի խոր եւ ծածուկ է վկայութեանն: Երկրորդ՝ քննեսցէ խղճմտանօքն զինքն. զի որպէս սուտ վկայութիւնն չար է. Նոյնպէս եւ ճշմարիտ վկայութիւնն բարի է. զի որ ծածկէ զճշմարիտ վկայութիւնն՝ մեղք է նմա: Երրորդ՝ զի քննեսցէ զդէմս Նորա վասն որոյ վկայէ զբանն. զի յորժամ լսեն՝ հաւանին եւ արդարացուցանեն զՆա: Իսկ որ վաղվաղուկ է, եւ փութով տայ զվկայութիւն, չորիւք մեղանչէ: Նախ՝ ցուցանէ զթեթեւ ամտութիւնն իւր: Երկրորդ՝ թէ կաշառակուրծ է: Երրորդ՝ թէ աչառոտ է: Չորրորդ՝ զբանսն անիրաւ ցուցանէ. զի ոչ հաւատան ի դիրաւ վկայելն: Երրորդ վնասն լեզուի՝ հերձուածն եւ ուրացութիւնն է: Չի սոքա ի մի կարգի են. այն որ հերձուած խօսին առ Աստուած. կամ ի խաչ, կամ յեկեղեցի եւ յայլ ինչ, եւ այն որ ուրացողն է հաւատոյն եւ դաւանութեանն: Չի հերձուածողն՝ ծածուկ ուրացողն է. եւ ուրացողն՝ յայտնի հերձուածողն. զի երկուքն միապէս բանիւ

յանցանեն: Եւ լաւ է ուրացողն քան զհերձուածողն վասն չորս պատճառի: Նախզի՝ ուրացողն գիտէ զինքն յանցաւոր Աստուծոյ. որպէս ասէ. (որ ուրանայ զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի հօր իմոյ:) Իսկ որ հերձուածողն է, գիտէ զինքն հաւատարիմ եւ հաւատացեալ: Երկրորդ՝ ուրացողն ապաշխարէ եւ դառնայ ի մեղացն. իսկ հերձուածողն ոչ դառնայ: Նախ զի՝ ոչ գիտէ զինքն թիւր եւ սուտ. այլ ճշմարիտ եւ ուղիղ. որպէս ասէ առակն. (ճանապարհ անպարշտաց՝ ուղիղ թւին առաջի նոցա:) Երկրորդ պատճառաւ՝ զի ոչ դառնայ հերձուածողն վասն ինքնահաճութեանն. որ ինքն կամօքն հաճեալ է յայն եւ կամակորեալ: Երրորդ՝ վասն տգիտութեան. զի ոչ գիտէ զսուտն եւ զճշմարիտն որոշել ի միմիեանց. զսուտն իւր՝ որպէս զճշմարիտ կարծէ: Չորրորդ վասն անհաւատութեան, զի հերձուածողն զոր ինչ ինքն ոչ իմանայ, այլոց իմացուածոց ոչ հաւանի. վասն այն ի նոյն անհաւատութեանն մնայ: Չորրորդ վասն լեզուի՝ սուտ երդումն եւ երդմանահարութիւնն է. վասն որոյ ի յօրէնսն հրամայեաց Աստուած. (Եւ մի կոչել զանուն Տեառն Աստուծոյ ի վերայ սնտեաց.) այսինքն, ի յամենայն սուտ բանի վրայ մի համարձակիլ. եւ զահաւոր անունն Աստուծոյ յիշել: Նախ զի՝ ի կռապառտի համարի է. որ ի սուտ իրաց վերայ՝ զԱստուծոյ անունն կոչէ. զի եւ կռապաշտքն՝ զԱստուծոյ անունն ի վարայ սուտ իրաց կոչէին. այսինքն քարի եւ փայտի: Երկրորդ՝ զի զԱստուած ի սուտ իրաց վասն կոչել՝ մեծ հայհոյութիւն է եւ անթողի մեղք. զի զԱստուծոյ անունն պատրուակ դնէ. եւ զսուտն ճշմարիտ երեւեցուցանէ: Նա վասն այն Տէրն ի յաւետարանին արգել. (ամենեւին մի երդնուլ. մի յերկինս զի աթոռ է Աստուծոյ. եւ մի յերկիր. եւ մի յայլ ինչ:) Եւ այս է պատճառն որ ի հին օրէնսն հրաման ետ երդնուլ յանունն Աստուծոյ. զի ի կռոցն հեռացին. եւ զճշմարիտ Աստուածն ի զեզուս եւ ի միտս պահեսցեն. իսկ ի նորս խափանեաց: Նախզի՝ յորժամ սովորի մարդն ի յերդնուլն, յայնժամ զսուտն այլ երդնու: Երկրորդ՝ զի այնպէս զամենայն բան ճշմարիտ խօսիլ պարտէ քրիստոնէին, որ երդման չկարօտի. ըստ այնմ, (եղիցի ձեր բանն այոն այո. եւ ոչն ոչ:) Իսկ երդմանահարութիւնն է առաւել վնաս. զի ուրացութիւն հաւատոյն եւ երդմանահարութիւնն՝ է միապէս մեղք. զի երկուքն զանունն Աստուծոյ ուրացան: Հինգերորդ վնաս լեզուի՝ զուր ասելն եւ մատնելն է: Չի որ զուր ասէ՝ զրի դիպի. կամ աստ առաջի մարդկան, կամ հանդերձեալն: Նոյնպէս մտանելն է մեծ մեղք. որպէս Յուդա որ մատնեաց զՏէրն՝ ի խաչողաց կարգին է. նոյնպէս եւ ամենայն մատնողն՝ ընդ Յուդայի տանջի: Չի մատնողն՝ ի սպանողաց կարգին է. զի որպէս նա սրով սպանանէ. նոյնպէս եւ նա լեզուաւ սպանանէ, կամ սպանանել տայ, կամ զապրանսն առնուլ տայ. եւ ապրանքն՝ մարդոյ արիւնն է. որպէս ասեն թէ՝ զիմ արիւնս թափեաց այն մարդն: Եւ յորժամ զապրանսն տանին, տունն եւ տղայքն ի սովոյ մեռանին. ահա տես որ սպանող եղեւ մատնողն: Վեցերորդ մեղք լեզուի բամբասանքն եւ քամոսութիւնն է. բամբաստօքն առաքեալն ասէ (զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն.) ոչ սուտ է ոչ դորդ: Չի թէ սուտ բամբաստես, եղեր պարտական մեղացն նորա. եթէ դորդ է, բամբաստող գործողին մեղացն ընկերակից լինիս. վասն որոյ ասէ Տէրն. (մի դատեք, զի մի դատիցիք:) (Եւ դու ո՞րես որ դատես զայլոյ ծառայ. իւրում Տեառն կայ, կամ անկանի ասէ առաքեալն:) Եւ Տէրն հրամայէ. (որ ունիս զգերանդ ի քումական՝ մի հաներ զշիւղ յականէ եղբօր քոյ:) Նոյնպէս եւ շոգմոզն եւ

քամոսն՝ վատէ. եւ բազում չարեաց պատճառ լինի, յորժամ լեզուան ընդ քեզ սեր ցուցանէ եւ լսէ զքո խօսսն, եւ տանի այլոց օտարաց պատմէ: Որոց ասէ մարգարէն. (ոյք խօսին զխաղաղութիւն ընդ ընկերս իւրեանց. եւ չարութիւնէ ի սիրտս լոցա. տուր լոցա ըստ գործոց լոցա, եւ այլն:) Եօթներորդ մեղք լեզուի՝ խեղկատակութիւնն եւ դատարկաբանութիւնն է. խեղկատակ՝ այսինքն, այպանելն է եւ նախատելն. այլ խեղ է, զի ծիծաղելով նախատէ. եւ դատարկաբանութիւն է՝ (որ ասէ ցեղբայր իւր մորսս եւ յիմար, պարտաւոր լիցի գեհեմին. զի ընդ ամենայն դատարկ բանից համարս տալոց էք յաւուրն դատաստանի ասէ Տեառն:) Եւ դատարկաբանութիւն երեք ազգ է: Նախ՝ որ ոչ լինի ի խոհեմութենէ. այլ որ ի լեզուն զայ, ձրի եւ ունայն բան խօսի: Երկրորդ՝ որ ոչ լինի յօգուտ ընկերին՝ դատարկաբանութիւն է: Երրորդ՝ որ ծաղրածու եւ կատականաց բան լինի՝ դատարկաբանութիւն է: Ութներորդ մեղք լեզուի՝ բարկութիւնն եւ սրտմտութիւնն է: Չի բարկութիւնն՝ մի է ի մեծամեծ մեղաց. որպէս առաքեալն. (բարկութիւն մարդոյ՝ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ.) այսինքն, բարկացող մարդն՝ զԱստուծոյ արդարութիւնն ոչ կարէ գործել: Չի այն է բարկութիւնն՝ յորժամ եռայ արիւնն որ շուրջի է զսրտին. եւ կամի փոխարէն վրեժխնդիր լինիլ որ զնա տրտմեցոյց. յայնժամ բարկութեան ծուխն ի գլ ուխն ելանէ. եւ զխելապատակն խելագարէ, որ ոչ կարէ բանկանն տեսանել. եւ ծուխն ընդ ճնգունսն թափի. եւ արեան հիւթն ի սիրտն ժողովի. եւ երեսն կապուտի եւ գեղնի. եւ ի բարկութենէն՝ լինին կռիւք. հայհոյութիւք. նախատինք ծեծ. սպանումն, եւ այլն: Այս բարկութիւնս ի մեզ բնական է դրեալ Աստուած որ ընդդէմ մեղացն եւ սատանայի. եւ չար մարդկան բարկանամք. ապա յորժամ ընդդէմ բարեաց բարկանամք, մեղանչումն է: Դարձեալ՝ բարկութիւնն եւ ցասումն՝ զօրութիւն են հոգւոյն. այլ անելորդ ի գործ ածելն՝ է մեղանչումն. որպէս ասէ մարգարէն. (բարկանայք եւ մի մեղանչէք:) Իններորդ մեղք լեզուի կախարդութիւնն եւ գիտութիւնն է. որ է խաբէութիւն. զոր սատանայաբնակքն գործեն եւ ուսուցանեն. եւ այնու խաբէն զմարդ: Այլեւ խաբէութիւն լեզուի՝ որք զընկերն պատրեն եւ ի չար գործս տանին. ի գողութիւն, ի մարդասպանութիւն, եւ յայլ ինչ: Վասն որոյ ասէ մարգարէն. (վայ որ արբուցանէ ընկերի իւրում հրապոյրս պղտորս.) այնպիսին՝ իւր մեղօքն չբաւականանայ. այլ զայլս ընդ իւր կցորդ առնէ չարեացն. եւ երկուքն ի յարւիտենական տանջանս մատնին. որպէս չար թագաւորքն կռապաշտք եւ այլազգիք, եւ ընկերք միմեանց: Տասներորդ մեղք լեզուի՝ չար յիշոցն է. որ ի սուրբ գիրս անեծ կոչի. ըստ այնմ, (անիծիւք եւ դառնութեամբ եւ նենգութեամբ լի է բերան լոցա, եւ այլն:) Եւ յիշոցն եւ հայհոյութիւնն քան զամենայն մեղս անշահ եւ անօգուտ է եւ մեծ մեղք: Անշահ է՝ զի այլ մեղք զոր եւ գործէ, սակաւ մի մարմնոյն շահ բերէ. թեպէտ հոգւոյն զէն. որպէս գողութիւնն՝ որ ինչս ժողովէ. եւ պոռնկութիւնն հեշտացուցանէ. եւ այլն: Իսկ յիշոցն՝ ամենեւին անշահ է. զի ոչ զքաղցն լսու, եւ ոչ զմերկութիւնն. եւ ոչ հեշտացուցանէ. եւ ոչ զհրացուցանէ. եւ այլն: Իսկ մեծութիւն մեղացն՝ յայտնի է յերեք իրաց: Նախզի՝ ամենայն մեղք զոր եւ գործէ մարդ՝ ի յիւր մարմինն մեղանչէ կամ յընկերին. իսկ յիշոցն՝ ի յԱստուած է մեղանչումն. զի թէ զհաւատն անարգէ, հաւատն Աստուած է. եւ բերան քրիստոնէին՝ գերեզման է Քրիստոսի եւ բնակարան սուրբ մարմնոյն. եւ երես քրիստոնէին՝ Քրիստոս է. ըստ այնմ, (հոգի երեսաց մերոց Տեր Քրիստոս:)

Նոյնպէս գերեզմանն քրիստոնէին եւ ոսկերքն՝ խաչիւ եւ աւետարանաւ եւ կնքեալ. զնոսա անարգեն: Երկրորդ մեծ մեղք է՝ զի զաթոռն Աստուծոյ շարժէ ի բարկութիւն. ոչ միայն յիշոցնատուին, այլեւ լսողացն եւ վայրեացն. ուր հասանի ձայն յիշոցնատուին՝ բարկանայ Աստուած եւ սաստէ յերկնէ եւ յերկրէ պատուհասիւ. զանդս չորացուցանէ. զանձրեւս նուազէ. զպտուղս հատանէ, եւ զայլն: Երրորդ՝ մեծ է մեղքն ի պատժոյն որ գրեալ է. եթէ յիշոցնատուին՝ ոչ հասանի հաղորդ. եւ ոչ հող օրհնել ի գերեզմանս սուրբս: Եւ յիրաւի՝ զի բերանն այն որ անարգեր զհաղորդութիւնն, չէ արժան հաղորդի. եւ որ անարգեր զխաչն եւ զաւետարանն՝ ոչ օրհնեն զնա այնու: Եւ զգերեզմանս անարգեր, ոչ թաղեն զնա ի գերեզմանս: Եւ այսպէս մեծ եւ ծանրագոյն է յիշոցն քան զամենայն մեղս: Որ որդնալից եւ ափի բերան լինի բերան յիշոցնատուին առաջի ատենին Քրիստոսի: Ուր բանք սպառնի. եւ գործք թագաւորեն. անդ ամօթով եւ գլխիկոր եւ սեւադեմ հաշեալ եւ հառաչեալ սրտիւ եւ բերկեալ անձամբ, հալածին ի ձայնէ թագաւորին որ ասէ. (ոչ գիտեմ զձեզ. երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական:.) Յորոց փրկեսցէ զմեզ փրկիչն աստ ի լեզուի չարէ. եւ անդ ի յաւիտենից տանջանացն. եւ արժանի արասցէ ողորմութեանն իւրոյ. անճառ խնդութեանն, եւ երկրից արքայութեանն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Յայլմէ քարոզ վասն Մեղաց լեզուի ի բանն (Լուեցո զլեզու քո ի չարութենէ եւ շրթունք քո մի խօսեսցին զնենգութիւն:.) Սող. 33.14: (Գլուխ. ԾԵ)

Ասէ իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմօն թէ՛ (մահ եւ կեանք՝ ի ձեռն լեզուի:.) Որպէս ամենայն ոչ յօժարի եւ ցանկանայ ապրիլ՝ եւ երկնչի ի մահուանէ. նոյնպէս պարտին ամենեքեան սիրել եւ պահել զլեզուս իւրեանց ի չարէ որպէս զկենդանութիւնս իւրեանց: Վասն այն ասէ Յոր. (մի թէ գիտե՞ շատախօսն սուրբ լինի զինքոն.) այսինքն թէ, ոչ կարէ սուրբ լինիլ: Որպէս օրինակ ունիմք ի գիրս ղեւտացուցն որ ասէ.(ամենայն մարդ որ ունիցի զսերմնակաթին՝ պիղծ լիցի:.) Յաւ սերմնակաթին՝ նշանակէ զլեզուս. զի թէ ոք ունիցի բարի խօս եւ բարի գրոյց՝ հազար բարութիւն ելանէ ի նմանէ. զի ամենայն ոք որ լսէ զբարի բանս նորա, շինի եւ յորդորի ինքն ի բարութիւնս. եւ նա նման է բարեբեր ծառայ: Եւ թէ չար խօսք ելան, ստութիւնք, հայհոյութիւնք, բարկութիւնք, բամբասանք եւ այլն, նման են սերմնակաթին՝ որք կորուսանեն զսերմնս իւրեանց ցաւօք: Վասն այն առաքեալն Յակոբոս. (ամենայն որ հաւատարիմ է՝ եւ ոչ սանձահարէ զլեզուս իւր, այնպիսոյն վայրապար է կրօնաւորութիւն:.) Եւ ըստ այսմ ասէ Սողոմօն. (ի ձեռն լեզուի են մահ եւ կեանք.) այսինքն, սրբութիւն եւ մեղք: Եւ Տէրն հրամայէ յաւետարանին. (ի բանից քոց արդարացիս. եւ ի բանից քոց պարտաւորեսցիս:.) Վասն այն խրատէ մարգարէն Դաւիթ. (ով մարդ՝ որ կամիս զկեանս, եւ սիրես զաւուրս քո տեսանել ի բարութեան: Լռեցո զլեզու քո ի չարութենէ. եւ շրթունք քո մի խօսեսցին զնենգութիւն:.) Ապա ուրեմն երեւի՝ զի պարտ է պահել զլեզուն յամենայն չարէ վասն բազում պատճառի: Եւ ասեմ տասն գլխով: Առաջին պատճառ՝ զի Աստուած զմարդս պատուեաց. եւ զբանեղէն լեզուն ետ՝ որ ոչ է տուեալ ամենայն ստեղծածոց: Եւ այս ոչ է

սակաւ պարգել. զի մեծ պակասութիւն էր թէ ոչ ունէր մարդն լեզու. որպէս յայտնի է ի համր մարդոյ: Երկրորդ պատճառ՝ զիլեզուն է գործի եւ գրչի իմաստութեան եւ ել չի սրտին, որպէս ասէն վարդապետք: Արդ՝ գործին կամ գրիչն ըստ ինքեան ոչ շարժի. եւ ոչ սուրհանդակն. Նոյնպէս ոչ է պատշաճ լեզւին խօսիլ, թէ իմաստութիւնն եւ բանականութիւնն պատշաճ ոչ համարեսցի: Երկրորդ պատճառ՝ զի բերան եւ լեզուն՝ առաւել սուրբ է ի մարդն յորժամ պահէ. Նովաւ խօսիմք ընդ Աստուծոյ եւ աղօթեմք. եւ թողութիւն մեղաց գտանեմք եւ այլն: Իսկ յորժամ ոչ պահեմք, պիղծ է քան զամենայն անդամս. զի յայլ ամենայն անդամսն՝ սակաւ ինչ անսրբութիւն կարէ երեւիլ. բայց լեզուն եւ բերանն չար խօսիւք՝ զագիր է զարշելի քան զամենայն ինչ որ կայ յաշխարհի. որպէս ասէ Տէրն. (անլուայ ձեռօք ուտել՝ ոչ ապականէ. այլ ամենայն չար որ ելանէ ի բերանոյ՝ այն ապականէ զմարդն:) Ապա ուրեմն պարտ է մարդոյ պահել զբերանն եւ լեզուն ի չար բանէ. որպէս անմիտքն սովորեալ են եւ ասէն հայհոյութիւն. զգերեզմանս հարց. զբերան. զժամ զհաւատ. եւ զայլն: Չորրորդ պատճառ՝ անպատշաճ է եւ անկարգ տանիլ մարդոյ զանդամս իւր յայնպիսի տեղիս՝ զոր Աստուած ոչ հրամայեաց: Չոր օրինակ՝ աչք որ տեսանէ զսեան սպիտակ, եւ զկարմիրն կանաչ, այն սուտ աչք է: Նոյնպէս զլեզուն Աստուծոյ ստեղծեալ է օրհնութեան եւ փառաբանութեան Աստուծոյ գործիք. եւ վասն խրատու եւ քարոզութեան. եւ ճշմարիտ խօսելոյ եւ աղօթելոյ. ապա ուրեմն յորժամ ի տեղի սոցին հայհոյութիւնք եւ յիշոցք եւ սրտախօսութիւնք ելանեն, ոչ են ներելոյ արժանի: Դարձեալ՝ զի ա՞րդ կարէ ոք առաքել դեսպան առ թագաւորն, որ դեսպան յառաջ վիրաւորեալ է զթագաւորն եւ ատելի է նմա: Լեզուն ի յաղօթսն՝ նման է ելչոյ, կամ քալամաչոյ. բայց յորժամ յիշոց եւ հայհոյութիւն տայ, զի ա՞րդ կարէ աղօթել: Յինգերորդ պատճառ՝ զի զտեղին յորում դնեն զմարմինն Զրիստոսի՝ պարտ է հարկելոր պահել, որ քան զամենայն տեղիս որ յաշխարհիս է՝ սուրբ լինիցի. որպէս սուրբ կոյսն Մարիամ որ տեղի էր մարմնոյն Զրիստոսի, սուրբ էր. եւ եւս սրբագոյն քան զամենայն բնութիւնս Ադամայ: Դարձեալ՝ յորժամ մեռաւ Զրիստոս, Յովսէփ եւ Նիկողիմոս գնացին կտաւ սուրբ եւ նոր՝ եւ պատեցին. եւ եղին ի նոր գերեզմանի. ապա ամենայն քրիստոնէայք՝ զնոյն մարմինն Զրիստոսի առնուն ի բերանս իւրեանց. թէ քահանայքն որք յամենայն օր, ապա որչափ եւս առաւել պարտ է զլեզունս իւրեանց եւ զբերանս սուրբ պահել: Եւ թէ ունէին յայն հանդերձէն զոր Զրիստոս զգեցաւ ի վերայ երկրի, կամ պատուեցաւ, ո՞րչափ եւս առաւել պատուէին. բայց բերանն յորում մարմինն Զրիստոսի մտանէ, եւ ատամունք ծասկեն զնա, ո՞րչափ առաւել պատշաճ է սրբութեամբ պահել: Որպէս ասէ Տէրն յաւիտարանին. (մի տայք զսրբութիւն շանց. եւ մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոցից:) Ո՞վ է շուն եւ խոզ բաց ի լեզուէ. եւ ո՞վ է մարգարիտ զատ ի մարմնոյն Զրիստոսի: Վեցերորդ պատճառ՝ զի յորժամ զլեզուն սրբութեամբ պահեն, զհոգին պահեն. որպէս ասէ Սողոմօն. (ամենայն պահէ զբերան իւր, պահէ զհոգի իւր:) Եւ ով ոք ոչ պահէ, նման է քաղաքի՝ որ առանց պարսպի արձակ: Նոյնպէս մարդ որ ի խօսս ժոյժ ոչ ունիցի, ոչ կարէ արգելուլ զբանս: Որպէս այն որ գրեալ է ի վերս հարանց թէ՛ ոմն ծեր երթայր աշակերտօքն հանդերձ առ հայրն Անտօն. եւ ի ճանապարհին վիճէին ընդ միմեանս բարեաւ բանս աշակերտքն. եւ Անտօնի իմացեալ զբանս նոցա հոգւով սրբով, ասէ Անտօն. հայր՝ բարի

աշակերտս ունիս. եւ ասէ. բարի են, բայց դուռն ոչ ունին. ամենայն ոք կամի՝ մտանէ ի տունս ևոցա եւ լուծանէ զէշս ևոցա: Եօթներորդ պատճառ՝ զի ասաց Աստուած ի հին օրէնսն ի գիրս թւոց.(ամենայն անօթ որ ոչ ծածկեսցի՝ պիղծ լիցի. վասն զի տեղի ուր մեղը եւ կաթն իցէ, եթէ ոչ լինիցի ծածկոյթ ինչ, լցցի ճանճիւք եւ որդամբք եւ ամենայն զեռնօք: Բերան մեր՝ անօթ է իմաստութեան եւ գիտութեանն Աստուծոյ. որքան զմեր եւ զկաթն քաղցր եւ գեղեցիկ է. որպէս ասէ Դաւիթ. (քաղցր են ի քիմս իմ բանք քան զմեղր բերանոյ իմոյ:) Եւ սատանայ նման է ճանճի. որ կամի զամենայն տեղիս՝ եւ լնուլ գարշելի եւ զբարի առնել. եւ նա ջանայ զլեզուս եւ զբանս մեր՝ աղտեղալ գարշութեամբ որպէս ճանճք. վասն որոյ պարտ է փակել զբերանս մեր որ ոչ մտանէ ի ներս սատանայի: Ութներորդ պատճառ՝ ոչ ոք նստի ի վերայ խստերախ ձիոյ առանց սանձուց. եւ ոչ ոք մտցէ ի նաւս ի վարայ ծովու առանց թելոց եւ իցէ խաղաղութեամբ. նոյնպէս եւ լեզուս մեր՝ նման է պարարտ երիվարի՝ որ կամի արշաւել. եւ նման է նաւոյ զոր հողմ վարէ: Եւ իմաստութիւնն եւ խրատն՝ սանձ են լեզուին եւ թել նաւին. թէ առանց իմաստութեան եւ առանց խրատու խօսիմք, կորնչիմք. եւ թէ սանձեմք զձին, ամենայն մարմին նորա ընդ իշխանութեամբ մեր լիցի: Որպէս ասէ Յակոբոս.(տես զի ձիոց ճանճք ի բերանս դնեմք. եւ զամենայն մարմին ևոցա նուաճեմք: Եւ նաւք որպիսի ինչ են՝ եւ փոքր թելօք շրջին յորկոյս եւ միտք ուղղին կամիցն: Նոյնպէս եւ լեզու փոքր ինչ անդամ է. եւ մեծամեծս բարբառի:) Այսինքն, որ տանի զմարդն յարքայութիւնն Աստուծոյ՝ այն է մեծ գործ նորա. ապա թէ ոչ ոք ոչ է խրատեալ իմաստութեամբ՝ ի դժոխս տանի զմարդն: Իններորդ պատճառ՝ որքան վնասակար ինչ ունիցին մարդիկ՝ առաւել զգուշանան եւ պահեն զնա. որպէս սուր. կամ օձ. կամ առիւծ: Իսկ լեզուն մարդկան՝ չարագոյն են քան զլեզուս օձից եւ առիւծուց. որպէս ասէ Յակոբոս. (ամենայն բնութիւնք գազանաց եւ թռչնոց եւ սողնաց՝ հնազանդին մարդկան. բայց զլեզու մարդկան՝ ոչ ոք կարէ հնազանդել զչարն եւ զանկարգն, եւ զլին թունօք մահաբերին:) Արդ՝ թէ ամենայն բնութիւնք գազանաց եւ թռչնոց եւ սողնոց ուսանին ի մարդկանէ. այսինքն, որք վնասեն, այլ զլեզուս ոչ կարէ ուսուցանել, կամ նւաճել. զի չար է եւ անկարգ եւ լի է թունօք մահաբերին: Ապա ուրեմն դժարին է զայնպիսի չարն պահել. եւ յոյժ պարտէ զգուշանալ: Եւ երանի այնոցիկ՝ որք առնեն. որպէս ասէ Սիրաք: (Երանի այնոցիկ՝ որք ոչ անկցի՝ ի բանից իւրեանց:) Եւ հոգին բուրբ յառաքեալսն նման հրեղէն լեզուի, եւ ոչ նման այլ անդամոց էջ. զի ի հրոյն երկնից՝ սրբեսցի հուր դժոխոցն ոխոցն որ է լեզու մարդկան. վասն այն ասէ նոյն առաքեալն Յակոբոս. (սակաւ ինչ հուր՝ զորդիսի անտառս հրդեհէ. եւ լեզուս մեր՝ հուր է զարդ անիրաւութեան. եւ լեզու հաստատեալ է յանդամս մեր՝ որ ապականէ զմարմինս, եւ վառէ հրով զանիւ ծննդեան:) Նմանեցուցանէ զլեզուս մարդկան հրոց. զի որպէս հուրն ի չարս տարերս առաւել զօրեղ է. նոյնպէս լուզուս ի մէջ այլ անդամացս՝ զօրաւոր է ի չար առնելն. վասն այն եկն հոգին սուրբ յերկնից՝ զի սրբեսցէ զհուր դժոխոց լեզուին: Տասներորդ պատճառ՝ պարտ է պահել զլեզուս մեր ի չարէ. վասն զի իւրաքանչիւր ոք՝ ճանաչի ի լեզուէն թէ յո՞ր երկրէ է. որպէս վրացին. եւ հայն. եւ այլն ամենայն: Նոյնպէս ի լեզուէն ճանաչեն թէ այս մարդս Ա՛ստուծոյ է, թէ դժոխոց եւ սատանայի. որպէս ասէին ընդ Պետրոսի. (ստուգապէս դու ինոցանէ ես. զի խօսք քո յայտ առնեն զքեզ:) Եւ սիրտք

ասէ. (ի լեզուաց ծանկոցն զիմաստութիւն:) Եւ դարձեալ ասէ. (նախ քան զխօսիլն՝ մի զոք գովեսցես:) Վասն այն ասէ Սողոմօն. (մահ եկեանք՝ ի ձեռն լեզուի:) Մահ է յորժամ յիմարութեամբ խօսի. կեանք է թէ իմաստութեամբ խօսի: Որպէս օրինակ սեկունդս փիլիսոփայն. որ կամեցաւ փորձել զմայրն. եւ յորժամ զնաց ի յանկողինն յոր մեծարեր մայրն զնա ի մեղսն, ասէ Սեկունդոս. ոչ արասցէ Աստուած թէ դառնամ ի յայն տեղին ուստիելի. եւ լուեալ ծանեաւ մայրն զնա. եւ ի յոյժ ամօթոյն մեռան: Յայնժամ ասէ Սեկունդոս. վատթարագոյն ոչ գտանի ի վերայ երկրի քան զլեզուն. եւ ոչ բարեգոյն եթէ պահեսցես ի չարէ: Եւ յետ այնորիկ՝ լռութիւն ստացաւ՝ որ այլ ոչ խօսեր: Եւ թէպէտ ամենայն ամենայն մարդոյ պարտ է զգուշանալ ի լեզուէն. բայց առաւել պատշաճ քարոզողին զգուշանալ: Եւ քարոզողն պարտ է ի վեց իրս նայիլ: Նախ՝ տեսանէ թէ ո՞վ խօսի, կամ ո՞վ լսէ նմա: Չի պարտ է որ վարդապետն այլ կերպիւ խօսի ընդ թագաւորաց. եւ այլ կերպիւ ընդ իշխանաց. այլ ընդ արւեստաւորաց, եւ ընդ ռամկաց: Չի բազում անգամ հանդիպի՝ որ մին բանն միոյն շահ է, եւ միոյն վնաս. որպէս շնչելն զծին հանդարտացուցանէ. եւ զշունն վիրաւորէ: Այսպէս ընդ մեղաւորաց՝ խօսին խոշոր եւ խրոխաբան. եւ կանանց որք ամօթխած են, կակուղ բան եւ թեթեւ. ընդ ծերաց՝ պատուով խօսին. եւ երիտասարդաց՝ ահեղ որք երկնչին: Աղքատաց յոյս տան. եւ զմեծատունս վախեցուցանեն: Որպէս Տերն ասեր. (երանի աղքատաց հոգւով. եւ վայ ձեզ մեծատանց. եւ վայ ձեզ որք ծիծաղիքդ.) եւ այսպէս ընդ զանազան դիմաց լսողացն՝ զանազան խօսին: Ռամկաց յոյս մխիթարութեան տան. ծառայից եւ որդւոց եւ կանանց հնազանդ լինիլ ուսուցանեն: Եւ տերանաց եւ հարց՝ ինամակալութիւն. եւ այսպէս իւրաքանչիւրոցն քարոզեն: Երկրորդ՝ պարտ է որ քարոզօղն. զի բանն զոր խօսի՝ ոչ լինի խրթին եւ խորին բան կամ բառ. զոր չկարեն իմանալ, կամ ի միտ առնուլ: Երկրորդ՝ պարտ է որ հայ ի իժամանակն, թէ զի՞նչ ինդրէ. եւ ըստ ժամանակի քարոզէ: Չի ասէ Սողոմօն. (քաղցր է բան ի ժամանակի.) եւ Սիրաք ասէ. (ոչ ընդունին առակք յանգամաց. զի խօսին ի ժամանակի:) Չորրորդ՝ պարտ է զգուշանալ վարդապետին՝ զի զջերմութիւն սրտին կարէ ցածացուցանել. զի յորժամ բարկանայ ընդդէմ մեղաց. ոչ խիստ ցուցանէ զբարկութիւնն. այլ հանդարտութեամբ եւ արուեստիւ խօսի. եւ մեծ մեղացն՝ խիստ բարկանայ. եւ փոքր մեղացն՝ սակաւ: Հինգերորդ՝ պարտ է զգուշանալ վարդապետին՝ որ զբանն ողորմ սրտիւ եւ արտասուալից եւ կաղութեամբ ասէ. որ զամեն մարդոյ քարացեալ սիրտ՝ կակղացուցանէ եւ ի յողբ շարժէ: Եւ մի ցուրտ խօսք եւ շտապ քարոզէ. զի որպէս անձրեւն մեծամեծ եւ ջաղբ անօգուտ է՝ եւ հեղեղէ զերկիր. եւ մանր եւ քաղցր անձրեւն՝ ի սիրտն մտանէ եւ պտղաբերէ զերկիրն: Վասն այն ասէ մարգարէն. (ընդունելի լիցի որպէս արնձրեւ բարբառ իմ. եւ իջցեն որպէս ցօղ պատգամք իմ:) Վեցերորդ՝ պարտ է զգուշանալ վարդապետին՝ զի զբարի խրատն որ այլոց տայ՝ նախ ինքն առնէ. եւ ապա այլոց քարոզէ: Չի բարի է գործել գործով. քան քարոզել բանիւ. զի բանիւն անցանի. եւ գործովն՝ հաստատ մնայ: Եւ աչաց տեսն՝ հաստատ է քան ականջին լուր: Վասն այն ասէ առաքեալն. (աշխատասիրին նախ պարտ է ի պտղոյն վայելել.) այս է, որ վարդապետն աշխատի եւ այլոց քարոզէ, պարտ է որ նախ ինքն ի յիւր քարոզէն վայելէ, եւ ապա լսողքն: Եւ Սողոմօն ասէ. (ըմպեա ջուր ի քումմէ աղբերէ. եւ ապա ելցէ արտաքս աղբիւր՝ եւ քեզ միայնոյ

լինիցի.) այսինքն, ըմպեա ջուր ի յիմաստութենէ վարդապետութեան քոյ: Նախ ըմպեսցես դու՝ եւ ապա արտաքոյ քարոզեսցես. եւ յետ այնորիկ՝ վարձքն քեզ միայն լինիցի: Այս է՝ ոչ կորուսանէ զքարոզութիւնն հպարտութեամբ. կամ փառասիրութեամբ. կամ մարդահաճութեամբ. կամ այլ ինչ չար է դիտաւորութեամբ՝ որ ոչ է շահ: Այլ ի շահ լսողոց լիցի քարոզութիւնն եւ ի փառս Քրիստոսի. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Դարձեալ քարոզ վասն չար լեզուի: (Լռեցո զլեզու քո ի չարութենէ. եւ շրթունք քո մի խօսեսցին զլենգութիւն:) Սող. 33. 14: (Գլուխ. Ծ2)

Չառաջագոյն ասացաք զբարութիւն լեզուին, յորժամ լռեմք եւ զգուշանամք եւ իմաստութեամբ խօսիմք. եւ ամենայն բարութիւն՝ ի լեզուէն լինի մեզ որպէս ասացաւ: Այժմ ասացուք զվնաս չար լեզուին: Չոր բազում կերպիւ կարեմք իմանալ: Նախ չար լեզուն՝ վնաս առնէ նմա ընդ ում խօսի. զի ասէն վարդապետք. թեթեւ են խօսք՝ բայց յոյժ հարկանեն զմարդն. վասն զի յոյժ զօրւորք են: Երկրորդ՝ վնասէ զինքն որ խօսի. որպէս ասէ Սիրաք. (պատիւ եւ փառք ի բերանս իմաստնոյն. եւ լեզու յիմարին՝ ընկղմէ զինքն:) Երրորդ՝ որ չար է լեզուն եւ շուտփոյթ՝ վնաս առնէ մարդոյն ի յերկինս զբերանս իւրեանց. եւ զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ: Վասն զի ի մին պահն տան՝ զԱստուած յերկինս հայհոյեն. եւ զեղբարս իւրեանց զայրացուցանեն առժամայն: Չորրորդ՝ զի ոչ ոք կենդանի կամ գազան պատառօղ կարէ այնչափ վնաս առնել, որպէս չար լեզու. զի չար լեզուաւ՝ կարէ մին երկիր աւերիլ, որ հազար գայլ կամ առիւծ՝ ոչ կարէ այսպէս վնաս առնել: Վասն այն ասէ Սողոմօն. ի բերանս անպարշտաց՝ որոզայթ քաղաքաց.) եւ Սիրաք ասէ. (բազում անկան ի լեզուէ, քան ի պատերազմէ:) Եւ Երեմիա նմանեցուցանէ զչար լեզուն նետի ասելով. (յանկարծի հարկանէ եւ վնասէ զմարդ. որպէս ի պատերազմի:) Եւ դարձեալ չար լեզուն՝ նման օձի. որպէս ասէ Դաւիթ. (սրեցին զլեզուս իւրեանց որպէս օձի.) եւ վատթար է քան զլեզուս օձից. զի օձն՝ միայն զմարմինն սպանանէ. այլ չար լեզուն՝ զհոգին եւ զմարմինն: Եւ ո՞վ կարէ ընեդ թուով արկանել զչարութիւն լեզուին. զի բազումք են. որպէս յիշոցքն. տրտունջն. սուտ վկայելն. սուտ երդնուլն. չարախօսելն. նախատելն. պարծենալն. քամոսելն. կռիւն. աղաղակն. մատնելն. զուր ասելն, եւ այլն ամենայն: Այլ ասեմք յաղագս չորից գլխաւորագոյն մեղաց, որք ի լեզուէն յառաջ գան: Նախ՝ վասն ատելութեան: Երկրորդ՝ վասն հայհոյութեան: Երրորդ՝ վասն բարկութեան: Չորրորդ՝ վասն բամբասանաց: Եւ նախ վասն ատելութեան՝ տասն միտք է, որ գրեցաւի վերոյ. ի յառաջին քարոզ լեզուին տես: Երկրորդ վնաս լեզուին՝ հայհոյութիւնն է: Եւ մեծութիւն այսր մեղաց՝ ի բազում իրաց տեսանի: Առաջին՝ զի հայհոյութեան մեղքն՝ շատ անգոհութիւն է եւ ճգոհութիւն Աստուծոյ. վասն զի Աստուած տուեալ է զլեզուս մարդկան՝ զի գոհանամք եւ փառաւորեմք զԱստուած. եւ նա շրջէ՝ եւ փոխանակ փառաբանութեանն՝ հայհոյէ զԱստուած: Եւ վատթար է այնպիսին քան զհրեայն եւ զկռապաշտն. զի թեպէտ հրեայքն խաչեցին զՔրիստոս. տգիտութեամբ էր եւ ոչ գիտութեամբ. որպէս ասէ Պօղոս. (զի թէ էին գիտացեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանեին.) եւ սոքա գիտութեամբ հայհոյեն: Նոյնպէս եւ կռապաշտքն՝ տգիտութեամբ զկուռնս պաշտեին. եւ սոքա գիտութեամբ

զճշմարիտ Աստուած հայիոյեն: Այլեւ սոքա վատթար են քան զամենայն զարշէլի ստեղծուածս Աստուծոյ. վասն զի յիւրաքանչիւր ստեղծուածոց՝ յայտնի է կարողութիւն եւ զօրութիւն եւ բարութիւն Աստուծոյ. եւ մասամբ իւր՝ յայտնեն զփառսն Աստուծոյ: Բայց հայիոյիչքն՝ զզօրութիւն եւ զկարողութիւն եւ զբարութիւն Աստուծոյ՝ հայիոյեն եւ ծածկեն: Երկրորդ մեծութիւն այս մեղացս՝ յայտնի է այնու, որ այլ ամենայն մեղք ի դէմս շնորհացն եւ բարութեանն Աստուծոյ են. բայց այս մեղքս՝ եութեանն եւ զօրութեանն Աստուծոյ է հակառակ. օրինակ՝ որպէս ոք զաղքատ մարդ վիրաւորէ՝ մեղք է. բայց որ զթագաւորն վիրաւորէ ի դէմն, առաւել մեղք եւ վնաս է: Ո՞րչափ առաւել մեծագոյն մեղք է, յորժամի դէմս Աստուծոյ մեղանչեն. որ թագաւոր է երկնի եւ երկրի. եւ ստեղծիչ ամենայնի: Երրորդ մեծութիւն մեղացս յայտնի է՝ որքանան անիծաւ, որ զառականս հօրն յայտնեաց ո՞րչափ եւս առաւել անէծս ժառանգեն նոքա՝ որք զԱստուած երկնի եւ երկրի հայիոյեն չար լիզուա իւրեանց. որ ոչ գտանի ի նա բիծ: Վասն այն ասէ Սիրաք. (թէ բարեկամին քում հանիցես սուր, մի լինիր անյոյս. զի կարես դարձեալ լինիլ բարեկամ. եթէ բան տրորտմութեան խօսեսցիս, լինիցի խաղաղութիւն. բայց թէ յայտնեցեր զառականս եւ զծածկեալս նորա, ոչ դարձցիս ի բարեկամութիւն սիրոյն:) Ապա ուրեմն թէ ոք հայիոյէ զԱստուած՝ դժուարին թողու զմեղս նորա. որպէս ասէ անտարանն. (թէ ամենայն հայիոյութիւնք թողցին մարդոյն. բայց որ զհոգին սուրբ հայիոյէ՝ մի թողցի նմա. մի աստ եւ մի ի հանդերձելումս:) Եւ Յօհաննէս ասէ. (են մեղք՝ որք մեղք են. եւ են մեղք՝ որք մահու չափք են.) այսինքն, որ ոչ թողցի մարդկան: Չորրորդ մեծութիւն մեղացս՝ յայտ է ի պատիժն. զի ասեն ի վարս հարանց թէ. ոմն մարդ սնուցեալ էր զորդին իւր հայիոյիչ ի դէմս ամենայն մեղաց. եւ յաւուր միում հայիոյեաց զԱստուած. եւ դեն խեղդեաց զնա եւ տարաւ զհոգի նորա ի դժոխս: Եւ դարձեալ ոմն մարդ սատրիճ խաղայր. եւ ընդ խաղալն՝ բարկութեամբ հայիոյեաց զաչսն Աստուծոյ. եւ առժամայն թռեաւ աչք նորա. եւ ի դժոխս զտանջանսն յաւիտենից էառ: Որպէս գրեալ է ի տեսիլն. (ի բազում տանջանացն որ ի զլեզուս իւրեանց խածանեն:) Եւ աստ գիտելի է՝ զի հայիոյութիւնն երկու ազգ է: Նախ սրտիւ. եւ երկրորդ՝ բերանով եւ լեզուաւ: Այն որ սրտի հայիոյութիւնն է՝ մեծ մեղք է. զի նախ ի սիրտն յղանայ յօժարութեամբ. եւ ի չարացեալ սրտէն եւ ի խորհրդոյն՝ ծնանի ընդ բերանն եւ հանէ արտաքս զայն՝ զոր ոչ ունի Աստուած: Բայց երբեմն լինի որ ի սատանայի փորձութենէն առանց կամաց մարդոյն յանկարծ չար ի խորհուրդն անցանի. այս թեթեւ մեղքն է. զի այս յանցումն է մտաց. ոպէս ասէ մարգարէն. (զյանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ ի միտ. ի գաղտնեաց միոց սուրբ արա զիս Տէր:) Բայց թէ ինքն ըստ ինքեան խորհի եւ հաւանի եւ ընդունի զխորհուրդն, մահու չափ մեղք է. եւ պարտ է զգուշանալ ի սմանէ որպէս յօժէ: Չի ասէ անտարանն. (ի սրտէ անտի գան չար խորհուրդք՝ շնութեան, պառնկութեան, հայիոյութեան, եւ պղծեն զմարդն:) Իսկ լեզւի հայիոյութիւնն եւ սա կրկին է: Առաջին է՝ կամ ասեն բան ինչ՝ զոր ոչ ունի Աստուած. կամ զոր ունի՝ բառնան: Որպէս օրինակ. ասելն թէ Աստուած ձեռն, կամ Աստուծոյ գլուխ. զոր չունի Աստուած ոտն կամ ձեռն կամ այլ ինչ: Երկրորդ՝ որ բառնան յԱստուծոյ զիմաստութիւն զկարողութիւն եւ զիրաւ դատաստանն. թէ Աստուած զայս ոչ գիտէ. կամ զայս ոչ կարէ առնել. կամ զայս բանս վատ արար եւ ծուռ: Եւ այս մեծ եւ առաւել մեղք է,

քան թե հերձուածն: Չի հերձուածողն զինչ ասէ Աստուծոյ՝ տգիտութեամբ է. զի դիտէ թէ ճշմարիտ խօսի եւ իրաւ: Բայց հայիոյիչն՝ գիտէ որ մեղք է, եւ ի դէմս Աստուծոյ հայիոյէ: Դարձեալ մեծ մեղք է քան զկռապաշտութիւնն. եւ վատ քան զաւագակութիւնն. եւ վատթար քան զսպանութիւնն: Չի կռապաշտն՝ զպատիւն Աստուծոյ առնու եւ տայ կռոցն. այլ հայիոյիչն՝ զպատիւն առնու եւ դարձեալ հարկանէ զԱստուած: Դարձեալ վատթարեն քան զհրեայսն. զի հրեայքն յորժամ հայիոյութիւն լսեն, զականջսս իւրեանց խցեն. որպէս յորժամ քարկոծէին զՍտեփաննոս, (խցին զականջսս իւրեանց.) գիտէին թէ՛ հայիոյէ զԱստուած: Բայց հայիոյիչքն՝ անհոգի եւ աներկիւղ հայիոյեն. եւ ոչ ինուրեւ զականջսս իւրեանց. եւ ոչ երկնչին յԱստուծոյ. ապա ուրեմն երեւի որ նոքա չեն որդիք Աստուծոյ, այլ որդիք սատանայի: Որպէս գրեալ է թէ՛ ոմն մարդ ուներ երեք որդի. եւ ի միում առուր կռուեալ ընդ կնոջն ասէ կինն. երկու որդին ոչ է քո. եւ ոչ ասաց թէ ո՞ր ոք եւ մեռաւ մայրն: Եւ այրն ի տարակոյս անկեալ, եւ ոչ գիտէր զհարազատ որդին. եւ մեռեալ այրն՝ կտակ հաստատեաց թէ, առցէ զժառանգութիւնսս իմ որդին: Եւ յետ մահու հորն՝ կռուեալ որդւոցն, զնացին ի դատաւոր. եւ դատաւորն ասէ. բերեք զմարմին հոր ձերոյ. եւ դրեք նշաւակ նետից. եւ ով լաւ հարկանէ՛ նա առցէ զժառանգութիւն հորն: Եւ ոչ կամեցաւ հարազատ որդին հարկանել զմարմին հորն: Յայն ժամ ետ դատաւորն զժառանգութիւնն այն որդւոյն ասելով. դա է հարազատ որդին՝ որ ոչ կամեցաւ հարկանել զմարմին հորն: Նոյնպէս որք հարազատ որդիք են Աստուծոյ, ոչ հարկանեն զԱստուած հայիոյութեամբ: Բայց որ իշնութեանց են, եւ որդիք սատանայի, նոքա հայիոյեն զԱստուած. եւ այսպէս ծանր եւ մեծ է հայիոյութիւնն քան զամենայն մեղս լեզւին: Յորոց փրկեցէ զմեզ Քրիստոս փիկիչ յոյսն մեր. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն: Այսուհետեւ ասացուք վասն բարկութեան եւ բամբասանաց ըստ կարգի:

Յայլմէ քարոյ վասն Բամբասանոց: (Մի բամբասեք զմիմեանս տղարք. ի կաթուղիկէն Յակոբոս գրէ:) Յակոբոս. 4. 11: (Գլուխ. ԾԷ)

Վարդապետք ասեն թէ՛ հոգեւոր գողութիւնն՝ ծանր է քան զմարմնաւորն վասն երեք պատճառի: Նախ՝ մարմնաւոր գողն՝ միայն զմարմնաւոր ինչն գողանայ. զոսկի եւ զարծաթ: Իսկ հոգեւոր գողն՝ զբարի գործն եւ զանունն գողանայ եւ յափշտակէ: (Եւ լաւ է անուն բարի, քան զմեծութիւն բազում եւ քան զոսկի եւ զարծաթ, շնորհ բարի ասէ Սողոմոն:) Երկրորդ մարմնաւոր գողն՝ զղջանայ եւ դարձուցանէ. բայց հոգեւորն՝ ոչ կարէ դարձուցանել: Վասն զի այս պակասութիւն է մարդկային բնութեանս՝ թէ մին գռեհիկ չար ասէ ումեք, եւ տասն այր վկայեն թէ սուտ է, առաւել այն չարախօսին հաւատան: Երրորդ զի մարմնաւոր գողն՝ թեպէտ սիրէ զխաւարն, բայց զխաւարն ինքն ոչ առնէ. բայց հոգեւոր գողն՝ խաւարն սիրէ. այլեւ ինքն առնէ. այսինքն, զբարի անունն եւ զգործն լուսաւոր՝ որ իբրեւ զմիջօրեայ է, ի չար ամօթն դարձուցանէ բամբասելով եւ չար ասելով: Եւ կամի հասարակ խաւար առնել. զի ամենեցուն չար ասէ. ապա ուրեմն հոգեւոր գողութիւնն ծանր է քան զմարմնաւորն. վասն այն ասէ Յակոբոս: (Մի բամբասեք զմիմեանս:) Եւ հաստատէ զայս թէ՛ ոչ է պարտ բամբասել՝ (զի որ բամբասէ զընկերն՝ զօրէնսն բամբասէ եւ դատէ:) Վասն զի օրէնքն

հրամայեն ոչ բամբասել. զի ասէ Մովսէս ի ղեւտացիսն. (զհամրն եւ զխուլն մի անիծաներ. եւ առաջի կուրին՝ գայթակղութիւն մի դներ:) Եւ բամբասողն՝ զայս երկու հրամանս կախէ. այս է՝ զի չար ասէ այնմ որ ոչ լսէ. այս է, ընդդէմ խլին: Եւ առաջի այնր ասէ՝ որ կոյր է՝ որ չէ տեսեալ աչօք. այլ ի լսելն հաւատայ: Ապա ուրեմն չէ պարտ բամբասել: Արդ ընդդէմ բամբասողաց՝ երեք իրս ասելի է: Նախ ասեմք թէ՝ բամբասողն եւ չարախօսն ի՞նչ իրաց նման է: Երկրորդ ասեմք թէ՝ առաւել մեղք է զառաջնորդն բամբասել: Երրորդ ասեմք՝ զի ոչ միայն բամբասողք, այլեւ լսողքն մեղանչեն: Ասասցուք զառաջին գլուխն թէ՝ բամբասողն՝ նման է ութն ազգ գարշելի կենդանեաց: Առաջին՝ բամբասողն՝ շան նման է. զի ասէ Սիրաք. (իբրեւ նետ հարեալ ազդեր շան. այսպէս եւ բան ի սրտի անմտի:) Չի շուն յորժամ հարեալ է նետիւ՝ ոչ առնու հանգիստ, մինչեւ արտաքս ձգէ զնետն: Նոյնպէս եւ չարախօս մարդն՝ թէ չար ինչ լուաւ, որպէս նետ է ի սիրտ նորա. եւ հանգիստ առնէ մինչեւ արտաքս հանէ բամբասելով: Եւ զայս ոչ է պարտ այսպէս առնել. զի նոյն Սիրաքն խրատէ. (լուա՞ւ ինչ բան՝ մեռցի ի քեզ. պիտ կաց՝ որ ոչ հերձնու եւ ելանէ ի քէն:) Այլ չարախօս մարդիկ՝ իբրեւ գշուն խածանօղեն: Եւ երեք ազգ շուն կայ. մէկ լակոտ. երկու մեծ շուն. երեք կատաղած: Լակոտն միայն միս ուտէ եւ արիւն լիզու: Մեծն՝ զմիս եւ զոսկրն: Իսկ կատաղածն՝ շրջի երեքուն եւ զորս գտանէ՝ խածանէ. եւ կատղացուցանէ որպէս զինքն: Լակոտն՝ փոքր չարախօսքն են. որ զփոքր մարդիկ չար ասեն եւ զմիսն ուտեն: Եւ մեծ շունն՝ մեծ չարխօսքն. որք են սուտ վարդապետք եւ եպիսկոպոսք եւ երիցունք. որք փոքունց եւ մեծամեծաց ասեն չար. եւ որպէս ոսկրն հաստատութիւն է մարդոյն. նոյնպէս մեծամեծ առաջնորդք եկեղեցի՝ որսկերք են. որ նոցա չար ասէ՝ ոսկր ուտէ որպէս շուն: Իսկ կատաղածին նման են, որք ի տեղաց ի տեղի շրջին եւ չար ասեն. եւ զամենսն իւրենց չարաց կցորդ առնեն. եւ ի չարախօսութիւն յորդորեն: Երկրորդ՝ չարախօսն նման է խոզի. զի խոզն՝ ի մէջ բերանոյն եւ ոտիցա զանազանութիւն չունի: Նախզի՝ զբերանն տայ յամենայն աղտեղի տիղմ եւ յաղբ: Նոյնպէս եւ չարախօսքն՝ նախ զբերանն ձգեն յամենայն չար. վասն այն ասի յիմաստութիւն. (ի բամբասանաց ինայեցեղք զլեզուս ձեր. զշշնջիւն գաղտնի՝ դատարկ ոչ անցանի. եւ բերան ստախօս՝ սպանանէ զանձն:) Չի կարի անպատեհ է որ քրիստոնեայն որ զբերանն տայ հաղորդութեան, աղօթից, օրհնութեան, եւ յետոյ չարախօսութեամբ աղտեղացուցանէ: Դարձեալ՝ թէ խոզ մի մտանէ ի ծաղկոց անուշահոտ եւ բարի ծաղկօք լի, եւ իմին կողմն լինի տիղմն խիստ վատահոտ, խոզն ոչ ընդունի զանուշահոտութիւն. այլ ի տիղմն դիմէ: Նոյնպէս եւ չարախօսն՝ թէ լինի մարդ որ ունի բազում առաքինութիւն եւ բարութիւն, զայն անտես առնէ. եւ ոչ առնու օրինակ. եւ թէ մին բան վատ տեսանէ. յայն հանգչի եւ յերկար յիշէ: Ապա ուրեմն բամբասողն նման է շան եւ խոզի: Վասն այն ասէ Քրիստոս. (մի տայք զսրբութիւն շանց. եւ մի արկանեք զմարգարիտս ձեր առաջի խոզից:) Սրբութիւն է խորհուրդ եկեղեցւոյ. եւ շունք անօրէնք. զոր ոչ է պարտ յայտնել: Մարգարիտն ի սատաֆէն ելանէ պայծառ. սատաֆն՝ հին օրինացն է օրինակ եւ գրին. եւ մարգարիտն՝ բանն եւ միտքն: Պայծառ է հոգեւոր մեկնութիւնն. զոր ոչ է պարտ արկանել առաջի աշխարհասիրաց. զի արհամարհեն: Եւ որպէս ոչ կարեն շունն եւ խոզն զսրբութիւնն եւ զմարգարիտն պղծել, այլ առ ոտն

կոխեն. նոյնպէս անօրէնք եւ չարախօսք՝ ոչ կարեն պղծել զմեզ. այլ նախատեն: Երրորդ՝ չարախօսն նման է օձի. վասն ասէ. ժողովօղն. (թէ խածանէ օձն զանխլաբար, քան զսա սակաւ չար ոչ է ծածկաբար բամբասէ:) Եւ չորս ցեղ՝ նման է օձի. մէկ՝ որ թշնամի է. երկուսն որ ծածուկ խածանէ, երեք՝ որ թիւն ընթանայ. չորս՝ որ հող ուտէ?

Այսպէս բամբասօղն՝ նախ որ նենգէ. զի առաջն ցուցանէ զինքն որպէս սիրելի. եւ յետոյ խածանէ: Երկրորդ՝ որ ծածուկ խածանէ. զի թէ գիտեր թէ լսես, չասեր չար. այլ գիտէ որ ոչ լսես, վասն այն ասէ: Երրորդ՝ որ թիւր ընթանայ. նոյնպէս չարախօսն՝ յառաջն գովէ եւ ասէ. ոչ ասեմ վասն նախանձու՝ լաւ մարդէ. եւ յետոյ զթոյնս թափէ եւ ասէ՝ զորս ինչ վնաս ունի. զոր օրինակ բնութիւնս զկերակրոյ զպարարտն ընդունի. եւ զաւերն արտաքս ձգէ. այսպէս նախ զլաւն ասէ. զի զչարն հաւատարիմ արասցէ: Չորրորդ՝ որ զմոխիրն ուտէ. նոյնպէս եւ բամբասօղն՝ զոր ինչ ծանր է եւ տաղտուկ որպէս հող՝ որ մրուր է տարերացդ, զայն ուտէ ասելով զչարն. բայց զհուր սիրոյն եւ զօդ սրբութեանն եւ զշուր իմաստութեանն՝ ոչ ասէ. այլ զմրուր մեղացն որ երկիր կոչի: Եւ այսպիսի բամբասօղն՝ չարագոյն է քան զօձ. վասն զի զօձն թովելով ընտելացուցանեն. բայց զայսպիսիս ոչ. որպէս ասէ Երեմիա. (ահաւասիկ արծակեմ ի ձեզ օձս կոտորիչս՝ յորս ոչ մտանեն թովչութիւնք. եւ հարկանիցեն զձեզ:) Վարդապետք ասեն թէ՝ մին ազգ օձ կայ՝ որ յոյժ ջերմ ունի զթոյնսն. յորժամ խածանէ զմարդոյն ոտն, ջերմութիւն թունիցն ելանէ ի վեր ի սրունկն՝ ի բարձսն՝ ի փորն՝ եւ ի սիրտն. եւ այնպէս լինի մարդն որպէս մեռեալ: Ասեն բժիշկք թէ՝ պարտ է զայսպիսի մարդս կախել զլիսիվայր. որ ի յոտսն ժողովին թոյնքն. եւ յայն ժամ զոտսն կտրեն: Այս օձս՝ նշանակէ զսատանայ. եւ ոտքն մերձաւորքն. թէ սատանայ զթոյնս իւր՝ ի մարդն հեղու որ բամբասէ եւ չար ասէ, զայսպիսի ոտս պարտ է կտրել. ըստ այնմ. (թէ ոտն քո զայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա:) Չորրորդ՝ չարախօսն նման է արջոյ. որպէս ետես մարգարէն Դանիէլ: (Եւ ահա երկրորդ գագանն արջոյ. եւ կաց իմի կողմ. եւ կարգ երեք ատամանց ի բերան նորա: Եւ այսպէս ասեին ցնա. արի կեր զմարմինս բազմաց:) Եւ վասն երեք պատճառի՝ նման է արջոյն: Նախ զի՝ արջն ըստ կերպարանացն նման է մարդոյ, եւ ոչ է մարդ. այսպէս բամբասօղն երեւի մարդ, եւ ոչ է մարդ. այլ արիւնարբու որպէս արջ: Երկրորդ՝ որ ասէ. (եկաց ի մի կողմ. վասն զի ընդ ոչ ունի միաբանութիւն. ինքն ինքեան հաճելի է թուեցեալ. եւ զայլսն արհամարհէ: Երրորդ՝ որ երեք կարգ ատամանց ունի՝ որ երից ոմանց վնասէ. մէկ՝ ինքեան. երկու՝ եղբօրն. երեք՝ Աստուծոյ: Նախ՝ ինքեան վնասէ. զի պարտ էր նմա լուսաւորութիւն աչաց խնդրել՝ նա փուշ խնդրէ որ զաչսն վնասէ. այսինքն, պարտեր զլուսաւոր գորթսն որոնել եւ օրինակ առնուլ. նա զչարն խնդրէ. եւ զինքն կուրացուցանէ: Ոպէս խաղացօղք՝ որք առնուն ամանով ալիւր գործելոյ, եւ կալնուն առաջի մարդկան թէ փչէ. եւ յորժամ փչէ, ի նոյն ժամն երեսն սեւանայ եւ ծաղր լինի: Այսպէս սատանայ որ խաղացօղ է՝ բամբասողացն առաջի ղնէ զայլոց պակասութիւնն. յորժամ բամբասօղն փչէ զչարն, անօթով լինի առ Աստուած եւ առ մարդն: Երկրորդ՝ վնասէ ընկերին. վասն զի զայթակղեցուցանէ զնա. զի չար ասելով՝ հաւատարիմ առնէ զլսօղսն. վասն զի բամբասօղ մարդն, նման է ցուրտ հողմոյ. որ զծաղկեալ այգիս ապականէ. զի բազումք սկիզբն արարին ծաղկիլ առաքիլութեամբ լուան զհողմ չարութեան, թուլացան յամենայն

բարեաց. Եւ ծաղկաթափ եղեն: Երրորդ՝ վնասէ Աստուծոյ կրկին կերպիւ. մին՝ գոյատաստանն Աստուծոյ յափշտակէ. զի Քրիստոս հրամայէ. (մի դատեք.) երկրորդ՝ զի զբաժինն Աստուծոյ նուազեցուցանէ զբարին. եւ զմասն սատանայի առաւելացուցանէ զչարն. զի յորժամ զբարին չար ասէ. զԱստուծոյ բաժինն նուազեցուցանէ: Եւ զի ամենեցուն վնասէ, յամենեցունց ատեցեալ լինի. որպէս ասէ Սիրաքն. (զանձն իւր պղծէ քսուն. եւ ի բնակութիւն իւրում ատեցեալ լինի:) Չորրորդ՝ ասէ սատանայ ընդ այս գազանս. (արի կեր զմարմինս բաղմաց.) այս է, զմարդկան: Չի բամբասօղն՝ երբեմն զհայրն ուտէ. այս է, զառաջնորդս եկեղեցւոյ: Երբեմն զմայրն. այս է, զեկեղեցի. այլեւ ի մեծ պահսն միս ուտեն. վասն զի ոմն ի սրբոցն ասէ. ի մեծ պահոցն լաւ է թէ միս ուտէին ոչխարի, քան զեղբօրն: Այլեւ զմեռեալսն ուտեն որպէս բորենին է. եւ այսպիսիքս չար են քան զամենայն գազանս. զի նոքա զմիմեանս ոչ ուտեն ի տեսակս իւրեանց. իսկ բամբասօղն՝ զնմանն իւր ուտէ. եւ քան զդժոխս չարագոյնք են. զի դժոխքն միայն զչարսն կլանէ. իսկ սոքա՝ զչարս եւ զբարիս: Յինգերորդ՝ նման է խեղ եւ թիւր ծննդեան. որպէս ասէ յառակսն. (ծնունդ չար՝ իբրեւ զսուտեր ունի զատամուսս իւր. եւ զժանիս իւր իբրեւ զկարոց. մաշել եւ ուտել զխոնարիս երկրի. եւ զաղքատս ի մարդկանէ:) Եւ Դաւիթն ասէ. (ատամուքս նոցա որպէս զէն. եւ լեզուքս նոցա որպէս սուր սուտերի.) զի յոյժ սուր է լեզու բամբասօղին. զի մ մի անգամն՝ երեք անձինս սպանանէ. զինքն՝ եւ զով բամբասէ. եւ մօտ յով բամբասէ. որպէս ասէ Սիրաք. (լեզու երեք դիմի՝ արար հալածական յազգս յազգաց. եւ զքաղաքս հզօրս կործանեաց. եւ այլ չարիս առնէ:) Վեցերորդ՝ նման էի բզեզն աղտեղի. որ զաղքն ժողովէ եւ պատառէ: Այսպէս բամբասօղն՝ զչարիս մարդկան. վասն այն գրիգոր զայնպիսին բնաւ ոչէ կալեալ ի կցորդութիւն. եւ ոտանաւորէ շինեալ ի հասարակաց սեղանն. որ բամբասէ զեղբայր, ոչ է յայսմ սեղանոյս: Եօթներորդ՝ բամբասօղքն՝ քահանայք են սատանայի. զի սատանայ նման է կապիկի. զի զինչ տեսանէ որ Աստուած առնէ, զնոյն եւ նա. զի սատանայ զմեծլիսն եւ զշարաբխանէն է շինեալ: Եւ որպէս յեկեղեցին Աստուծոյ սեղան սուրբ. նոյնպէս սատանայ ունի զնարտն. եւ որպէս եկեղեցւոյ մանկունք եղանակեն արուեստիւ կիտի որ գրած է. այսպէս սատանայ զնշան քայթայթին: Նախ ընդդէմ միութեանն Աստուծոյ: Երկրորդ՝ օրինացն: Երրորդ՝ երրորդութեանն: Չորրորդ՝ աւետարանչացն: Յինգերորդ՝ ընդդէր հինգ խոցուածոցն Քրիստոսի: Վեցերորդ՝ ընդդէմ վեց ողորմութեանն: Ընդդէմ երգեցողացն՝ զգուսանս եւ զաղտեղի երգս: Առնէ եւ ընդդէմ սքանչելիս հակառակ Քրիստոսի: Չլուսաւորն՝ կոյր: Չողջն՝ կաղ: Չարադ լեզուն՝ համր: Չողջն՝ մեռեալ. զի ողջ մտանեն ի մաճլիսն. եւ արբեալ՝ որպէս կաղ կոյր եւ մեռեալ հանեն: Եւ որպէս յեկեղեցի պատարագի գառն Աստուծոյ. անդ միս եղբարցն. զոր ուտեն չար ասելով: Որպէս ասէ յառակսն. (մի լինիր արբեցող եւ ձկտեալ ընդ հանգանակօղս մսավաճառաց:) Եւ ընդդէմ ինկոյն՝ զչար մեղաց հոտն արձակեն: Բայց քահանայքն Աստուծոյ՝ ընդդէմ չար քահանայիցն ստանայի պատերազմին. որպէս ասէ առաքեալն Պետրոս ընդդէմ հրէիցն՝ որք երեք կերպիւ բամբասէին զՔրիստոս: Նախ՝ վասն կենացն ասէին. (այր կերօղ եւ արբեցող:) Երկրորդ՝ զուսումն ասէին. (խիստ է բանդ այդ. ո՞ր կարէ լսեր դմա:) Երրորդ՝ զծունդն ասէին. (ո՞չ է որդի հիւսանն:) Իսկ Պետրոս բարի վկայութիւն եղ ընդդէմ սոցա յորժամ ասաց. (դու ես Քրիստոս որդի

Աստուծոյ.) Քրիստոս ասելովն՝ բառնայ գառաջինն. զի որ օծեալ է հոգևով՝ ոչ մեղանչէ: Եւ որ օծեալ է՝ կակուղ է եւ քաղցր. ընդդէմ այնմ որք ասէին. (իսիստ է բանդ:) Եւ դարձեալ ասէ. (առ ո՞վ երթիցուք. բանս յաւիտենից ունիս:) Եւ որ ասէ որդի Աստուծոյ՝ բառնայ գայն որք ասէին. (որդի է հիւսանն:) Վասն այսպիսի չարախօսացս՝ ասէ Պօղոս հռօմայեցւոց. (շոգմագք. չարախօսք. աստուածատեացք. ամբարտաւանք. եւ եզրակացուցանէ թէ՛ (որք գայսպիսիս գործեն, զարքայութիւնն ոչ ժառանգեն:) Ութներորդ՝ նման են բամբասօղքն չար թագաւորին ամոնի. որ զժառայսն Դաւթի նախատեաց. գերծեաց զկէս մուրացն. եւ կարեաց զկէս հանդերձիցն. որ մեկութիւնն յայտնիր: Այսպէս եւ բամբասօղք՝ զկէս մուրսւացն՝ այս է, զբարի գործոցն զկէսն կտրեն. զի բարին յայնժամ է կատարեալ՝ զոր վասն Աստուծոյ սիրոյն առնեն. նա կարէ զկէսն ասելով. կեղծաւորութեամբ առնէ: Եւ զհանդերձ զօրութեանն հատանէ. եւ զչարն բառնայ: Ապա ուրեմն յայտնի է թէ. որոյ իրաց նման է բամբասօղն: Այս առաջին գլուխն: Երկրորդի գիտելի է՝ թէ մեծ մեղք է զհասարակաց մարդ բամբասել. այլ առաւել մեծ է՝ յորժամ գառաջնորդն եւ զգլուխն. եւ յայտ է: Նախ ի Մարիամայ. (յորժամ բամբասեաց զՍովսէս, բորոտեցաւ. որպէս ասէ ի թիւսն.) այլեւ յելսն ասէ. (զԱստուծոյս ժողովրդեան քոյ մի բամբասեսցես:) Երկրորդ՝ (քամ որ գառականս հօրն յայտնեաց՝ անիծաւ բոլոր ժողովրդովք:) Երրորդ՝ որպէս յերրորդ թագաւորութեանց. (Աստուած եհար եւ սատակեաց զոգի՝ որ զձեռն մերձեցոյց ի տապանակն. եւ տապանակ կոչին առաջնորդքն՝ որք ունին յինքեանս զմանանայ քաղցրութեան. եւ զգաւազան խրատուն. եւ զտախտակ գիտութեան:) Եթէ որ զձեռն բամբասանաց բերէ ի սոսա, սատակի յԱստուծոյ: Չորրորդ՝ յառաջին թագաւորութեանց ասի թէ, (Դաւիթ եհաս զտտուն լօղկին Սաւուղայ գաղտ. եւ զղջացաւ եւ ասէ. յօծեալ Տեառն մերձեցայ:) Ապա զի՞նչ պարտ է առնել բամբասողին՝ որ ոչ միայն զհանդերձն, այլեւ զօծելոյն գլուխն կտրէ չարախօսութեամբ: Այս երկրորդն: Երրորդ գլուխն ասելի է՝ զի ոչ միայն բամբասօղքն մեղանչեն, այլեւ յօժարութեամբ լսողքն վասն վեց պատճառի: Առաջին պատճառ՝ զի թէ մեղանչէ այն՝ որ տեսանէ զշուն որ զեղբայրն խածանէ, եւ ոչ օգնէ եւ ի բաց հանէ. ապա եւ որ զբամբասօղն որ լափէ զեղբայրն որպէս շուն, եւ ոչ աղաղակէ եւ ի բաց հանէ, վնասապարտ է: Եւ որ ոչ հակառակի՝ այլ մարդիւրութեամբ լսէ, այնպիսին նման է շան. որպէս ասէ Սիրաք. (զի՞նչ միաբանութիւն է գայլոյ ընդ գառին. կամ բորենւոյ եւ շան:) Երկրորդ՝ նոքա որ մտադիւրութեամբ ունկն դնեն չարախօսաց՝ այնպէս է, որպէս թանլիք տան նոցա՝ որ աւելի միս ուտեն. զի թէ դժկամութիւն առնէին, ոչ իշխէին չարախօսել: Երրորդ՝ զի բամբասօղք՝ որպէս իժ են. եւ բնութեամբ է թշնամութիւն իժից. եւ մարդն յորժամ տեսանէ որպէս օձ զլեզու չարախօսին որ խայթէ զեղբայրն, եւ ոչ քարամբ բանից կոշկոճէ, ինքն նման է օձի. որպէս ասէ աւետարանն. (ծնունդք իժից՝ ո՞եցոյց ձեզ փախչիլ:) Չորրորդ՝ եթէ որ առ գերեզմանս լինի բաց եւ ժամահոտ, եւ ոչ ծածկէ եւ ոչ հեռանայ, մեռաի ի հոտոյն: Նոյնպէս բամբասօղ բերանն՝ ժահահոտ գերեզման է՝ որ միշտ զագիր հոտբուրէ. այսինքն, ընդդէմ հրամանացն Աստուծոյ. որպէս ասէ Դաւիթ. (որպէս գերեզման բաց են կոկորդք նոցա:) Եւ թէ որ նստի մերձ նմա եւ ոչ հեռանայ, անմիտ է եւ մեղաւոր: Չի ոչ ինչ գերեզման այնպէս չար հոտ հանէ, որպէս լեզու չարախօսին. եւ յայնպիսի վատ հոտոյն՝ բազումք

մեռանին: Յինգերորդ՝ եթե խաւարասեր ջղջիկանն բամբասէ զլոյսն, անմիտ է որ հաւատայ. այսպէս չարախօտն որպէս ջղջիկան է, որ ատէ զլոյս առաքինութեանն. եւ սիրէ զխաւար չարութեանն. ապա անգետ է որ նմա հաւատայ: Վեցերորդ՝ եթե բազում վկայք լինին, պարտ է հաւատալ. որպէս ասէ յաւետանին. (յերկուց եւ յերից վկայից՝ հաստատեսցի ամենայն բան.) եւ անբիծք լինին. եւ երդուած՝ եւ փորձած: Բայց սոքա հաւատան չարախօսիցն՝ որք ծուռ վկայեն. արատաւորք՝ առանց երդման եւ անփորձք. եւ վկայեն այնմ, որ ոչ է ի միջի: Եւ այս մեղք է: Գիտել է՝ զի բամբասօղն՝ վէ կերպիւ չարախօսութիւն առնէ: Նախ՝ որ զընկերին ծածկեալ մեղսն յայտնէ: Երկրորդ՝ զչարն որ յայլոց լսէ՝ առաւելութեամբ ասէ: Երրորդ՝ զի հերձիք ասէ ի վերայ: Չորրորդ՝ զծածուկ բարին ուրանայ: Յինգերորդ՝ որ զյայտի բարին պակասեցուցանէ: Վեցերորդ՝ զբարին ի չար փոխէ: Այս ամենայն մեղքս՝ ի մին բամբասելն կան: Վասն այն ասէ առաքեալն Քրիստոսի: (Մի բամբասեք զմիմեանս եղբարք:) Յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած զհաւատացեալս իւր յամենայն չար լեզուէ եւ ի բամբասանաց. ոչ բամբասիլ, եւ ոչ լսել եւ կողորդ լինիլ չարեաց ամեն:

Նորին քարոզ վասն Լեզուի Բարկութեան. ի բանն՝ (լեզու հուր զարդ է անիրաւութեան. Յակոբոս գրէ:) Յակոբոս. 3. 6: (Գլուխ. ԾԸ)

Աստուած զմարդն որպէս զքաղաք է ստեղծեալ: Եւ բնակիչք քաղաքիս այս՝ հոգին է. եւ անձնիշխան կամքն՝ թագաւոր է ի սմա: Եւ բան եւ ցասումն եւ ցանկութիւն՝ զինուորք նմա: Եւ զանազան առաքինութեան գործք բարութիւնք եւ ինչք են քաղաքիս այս: Եւ գող՝ եւ թշնամի՝ սատանայն է սորա. որ հանապազ կամի յափշտակել զինչս նորա. եւ գերի վարել զբնակիչս քաղաքին զհոգի եւ զմիտս: Իսկ մարմինս՝ պարիսպ է քաղաքիս մերոյ: Եւ զգայարանքն՝ դրունք եւ պահուհանք են սմա: Որպէս ամենայն մուտ եւ ել ընդ դրամբքն լինին ի քաղաքն. նոյնպէս ամենայն բարիք եւ չարիք՝ ընդ զգայարանս մտանեն եւ ելանեն: Աչքն է որ տեսանէ. եւ ականջն լսէ. ռնգունքն հոտոտեն. եւ բերանն ճաշակէ. ձեռքն եւ այլ բոլոր մարմինն շօշափեն եւ հեշտանան: Եւ որպէս զդուռն ընդդէմ թշնամեացն փակեմք եւ սիրելեացն բանամք. նոյնպէս զգայարանացս՝ ամենայն բարի գործոցն բանալ պարտ է, եւ ի ներքս մուծանել. եւ ընդդէմ չար գործոցն՝ փակել եւ արգիլել: Եւ որպէս թշնամին՝ երկու ազգ պատերազմի ընդ քաղաքն. մինն՝ յայտնի եւ բռնութեամբ. եւ թէ ոչկարէ, յայնժամ թաքուն ի գիշերի գողութեամբ: Նոյնպէս եւ քաղաքիս մեր՝ յայտնի մեղքն եւ չարն սատանայ՝ պատերազմին եւ քարշեն ի մեղս. եւ թէ ոչ կարեն, յայնժամ ծածուկ խաբէութեամբ գողանան: Նա պարտ է որ դռնապանն որ է միտք եւ վերակացուն զգայութեանս՝ արթուն լինի որ տեսանէ զթշնամին եւ պատերազմի. որպէս Տէրն հրամայէ. (դռնապանին պատուէր տացէ՝ զի արթուն լինիցի:) Արդ՝ այլ ամենայն զգայարանքն՝ որպէս պատուհանք են, ընդ որ նետն մտանէ եւ խոցէ. որպէս ասէ Երեմիա. (պատուհանք մահու են զգայարանք մեր:) Չի տեսանելով եւ լսելով՝ նետ ցանկութեան ի հոգին մտանէ եւ խոցէ: Իսկ բերանն եւ լեզուն՝ դուռն են երկբացիկ. ընդ որ թշնամին ի ներքս մտանէ եւ ասպատակէ եւ աուր հարկանէ: Վասն այն ասէ Յակոբոս: (Լեզու հուր զարդ է անիրաւութեան:) Եւ բերանն եւ լեզուն՝ չորս

իրօք առաւել մեղանչեն քան զայլս: Նախգի՛ ընդ այլ զգայարանսն արտաքուստ մտանեն թշնամիքն եւ խոցեն. իսկ լեզուան՝ ի ներքուստ յառաջ բերէ զչարն. որպէս հրամայէ Տէրն. (Ի ներքուստ ի սրտէն յառաջ գայ խորհուրդ. պոռնկութեան, ստախօսութեան, բամբասանաց. եւ այլն:) Եւ գիտէք որ ներքին թշնամին՝ առաւել վնասակար է: Չի արտաքին թշնամին՝ երբեմն պատերազմի եւ երբեմն ոչ. այլ ներքինն՝ հանապազ վնասակար է եւ ընտանի թշնամի: Երկրորդ այլ զգայարանքն՝ միայն մին գործ ունին. տեսանել, կամ լսել: Իսկ բերանն կրկին. զի մահկանացւին մուտ ունի, եւ անմահին ել ասէ փիլիսոփայն. այսինքն, մահկանացու՝ ուտել եւ ըմպել եւ ազահիլն է, որ զհոգին մեռուցանէ: Եւ բանն որ ելանէ՝ երբ բարի լինի, զանմահութիւն եւ զբարին բղխէ մարդկան. ապա թէ այն եւս չար լինի, նա կրկին չար է ներքուստ եւ արտաքուստ: Երրորդ այլ զգայարանքն՝ միայն մին ունին զչարն՝ տեսանել կամ լսել. իսկ լեզուն՝ կրկին չար: Նախ՝ առ ընկերս զուր ասէ, բամբասէ, նախատէ, եւ այլն: Երկրորդ վեր ի յԱստուած՝ հայիոյէ զ հաւատն՝ զխաչն՝ եւ զեկեղեցի՝ եւ զայլն. այսպէս կրկին չար ի նմանէ յառաջ գայ: Չորրորդ այլ զգայարանքն՝ բացարձակ միայն տեսանեն կամ լսեն, թէ զցանկութիւնն չխառնէ ի ներս սատանայ: Այլ լեզուն կրկնատեսակ մեղանչէ. այսինքն, օրինէ եւանիժաիէ չար ասէ եւ բարի ասէ. գովէ եւ բամբասէ եւ այլն. եւ ոչ է պարտ այսպէս լինի որպէս ասէ առաքեալն: (Նովաւ օրինես զՏէր զհայր. եւ նովաւ անիժանեմք զմարդիկ. ոչ է պարտ այսմ այսպէս լինիլ եղբարք. զի ի միոյ ականէ՝ ոչ բղխի քաղցր եւ դառն:) Եւ մին տունկն խաղող եւ փուշ ոչ բերէ:) Եւ այսպէս չորս կերպիւ լեզուն առաւել մեղանչէ քան զամենայն զգայարանս:) Եւ այս գիտելի է՝ թէպէտ բազում է վնաս լեզուին. որպէս սուտն՝ զտուրն՝ բամբասանքն՝ նախատիւքն՝ եւ այլն: Այլ առաւել քան զամենայն բարկութիւնն: Եւ բազում վնաս լինի ի բարկութենէն. զոր ասեմք տանս գլխով: Առաջինն՝ զի ասէ առաքեալն. (բարկութիւն մարդոյ՝ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ.) այսինքն, բարկացող մարդն՝ զարդարութիւնն Աստուծոյ ոչ առնէ: Երկրորդ՝ ասէ դարձեալ առաքեալն. (ոչ բարկացողն, ոչ բամբասողք, զարքայութիւնն Աստուծոյ ժառանգեն:) Երրորդ՝ զի ախտ բարկութեանն՝ մոլի եւ դիւահար առնէ զմարդն. որպէս յայտ է ի դէմսն. որ աչքն շրջի. երեսն կապուտի. շրթունքն դողայ. եւ լորձիքն ծորին. եւ խօսքն անկարգ. եւ ձայնն աղաղակ:

Չորրորդ՝ ընդդէմ է օրինացն զոր հրամայեաց Քրիստոս (մի բարկանար եղբօր քում ի տարապարտուց. զի որ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի դատաստանի եւ գեհեն հրոյ:) Հինգերորդ՝ զի բարկութիւնն սկզբն եւ մայր է սպանութեան. որպէս արմատն խոտին. նոյնպէս բարկութիւնն սպանութեանն: Չի նախ բարկանայ եւ ապա սպանանէ. վասն այն հրամայեաց Տէրն. (ասացաւ առաջնոցն մի սպանաներ՝ այլ ես ասեմ. մի բարկանար:) Վեցերորդ՝ բարկութիւնն ըմբռնէ զիմաստութիւնն որ վերին մասն է հոգւոյն. որպէս ծուխն ելեալ ի հրոյն լնու զտունն եւ մթանայ. նոյնպէս բուխար բարկութեանն ելեալ ի սրտէն՝ զլոյս մտացն խաւարէ: Եօթներորդ՝ բարկութիւնն ախտ է. որ ոչ միայն զճախակողմեանս ըմբռնէ, այլեւ զաջակողմեանս եւ զընտիր արս. որպէս Մովսէս բարկացեալ եհար զաստուածագիծ տախտակն եւ խորտակեաց: Եւ Եղիա բարկացեալ կոտորեաց զմարգարէսն բահաղու: Այլ այս բարկութիւնս՝ վրեժխնդրութիւն է օրինացն Աստուծոյ եւ խրատ մարդկան: Իսկ ախտաւոր բարկութիւնն՝ չար

Է. որ բարկանայ ի վերայ ընկերին: Ութներորդ՝ տրտմութիւն Է եւ հեռացումն հոգւոյն սրբոյ. (զի հոգին սուրբ խաղաղութեան՝ փախչի ի նենգութենէ, եւ ի բարկութենէ ասէ:) Եւ առաքեալն ասէ. (մի տրտմեցուցանէք զհոգին սուրբ՝ որով կնքեցայք յաւուրն փրկութեան.) այսինքն, զի բարկութեամբն տրտմի հոգին սուրբ եւ վերանայ. որ կնքեաց զմեզ դաւանութեամբ հաւատոյն. յորում հնազանդեցաք եւ փրկեցաք: Իններորդ՝ բարկութիւնն ոչ միայն հոգւոյն Է վնաս, այլեւ մարմնոյն. յորժամ բարկութիւն եւ խռովութիւն ի տունն անկանի, ընտանիքն դառնանան եւ զնա դառնացուցանեն. բաժանին ի նմանէ. եւ վնաս ածեն նմա. քակի եւ բեկանի շինութիւն տանն. կործանի տունն. եւ գլորի տանուտէրն: Տասներորդ՝ ի բարկութենէն լինի կռիւ եւ ծեծ, եւ դատաստան զնալ. եւ տուգանք. եւ բանտ. եւ նախատինքն յամենայն մարդոյ: Չի որ կամեր զնկերն ատել ստել զրկել ծեծել, առաջի դատաւորին քննեալ ինքն սուտ երեւեցաւ. եւ զինքն տուգանեցին: Չի այսպէս որ զինչ եւ ընկերին կամիմք՝ այն մեզ հանդիպի աստ եւ ի հանդերձեալն. աստ ի ձեռն դատաւորաց եւ իշխանաց. եւ անդ առաջի երկնաւոր դատաւորին:

Եւ աստ գիտելի Է՝ որ այլ իր Է բարկութիւն եւ այլ սրտմութիւնն. զի սրտմութիւնն բարկութեանն առաւելութիւնն Է. որպէս ասէ մարգարէն. (սրտմտութիւն Է ի բարկութեան նորա:) Եւ չորս իրօք զանազանին բարկութիւնն եւ սրտմտութիւնն: Նախզի՝ բարկութիւնն հոգւոյն Է. եւ սրտմտութիւնն մարմնոյն. զի բարկութիւնն ցանկականին Է՝ որ մասն Է հոգւոյն. եւ սրտմտութիւնն՝ յորժամ ի մարմինն գայ եւ յայտնի լինի: Երկրորդ՝ բարկութիւնն այն Է, յորժամ դառնանայ հոգին եւ զայրանայ ախտին, եւ գայ ի սիրտն եւ զնա դառնացուցանէ: Իսկ սրտմտութիւնն Է, յորժամ ի յայտ դառնութենէն սիրտ շարժի եւ արիւնն եռայ. եւ ջանայ ամենայն իրօք փոխարէն տրտմեցուցանել զայն որ տրտմեցոյց զինքն: Երրորդ՝ բարկութեանն գործի՝ Է լեզուն. եւ սրտմտութեանն գործի՝ Է ձեռքն, եւ փայտ. կամ քար. սուր. կամ այլ ինչ: Չորրորդ՝ բարկութիւնն ի բանն Է, որ անարգէ նախատէ եւ յանդիմանէ. այլ սրտմտութիւնն ի գործն Է՝ որ հարկանէ եւ սպանանէ: Եւ երկոքինն անողորմք են եւ խիստք. որպէս ասէ առակն: (Անողորմ Է սրտմտութիւնն եւ սաստիկ բարկութիւնն:) Չի յորժամ մրրին դառնութեանն շարժէ զսիրտն, այլեւ ոչ ողորմի եւոչ ինայէ. զամենայն բան նախատանաց ասէ լեզուովն. եւ գործովն կատարէ: Եւ այսպէս բարկութիւնն սկիզբն Է. եւ սրտմտութիւնն կատարումն նորին: Չինչ վնաս կայ՝ ի բարկութենէն յառաժ գայ. նախատինք. անարգանք. անէծք. յիշոցք. հայհոյութիւնք. ծեծել. հարկանել. սպանանել. եւ այլ ամենայն որպէս աստցաւ. վասն այն ասէ: (Լեզու հուր զարդ Է անիրաւութեան:) Այսքան վասն բարկութեան լեզուին: Եւ որպէս ի բարկութենէ բազում վնաս գայ յառաջ. նոյնպէս ի խաղաղ եւ ի հանդարտ լեզուոյն՝ բազում բարութիւն ծնանի հոգւոյ եւ մարմնոյ. ինքեան եւ օտարաց ամենեցուն. զոր ժողովեալ ի սուրբ գրոց, ասեմք տասն կերպիւ: Առաջին բարութիւնն Է այս. զոր հրամայէ Զրիստոս: (Խաղաղարարքն՝ որդիքն Աստուծոյ կոչին:) Եւ այս Դ կրպիւ իմանի: Նախ՝ որ յիւր անձն եւ ի մեջ հոգւոյն եւ մարմնոյն, եւ առ այլս ի մեջ մարդկան խաղաղութիւն առնէ, նման Է որդւոյն Աստուծոյ. որ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի. հրեշտակաց եւ մարդկան: Երկրորդ՝ որ զախտ բարկութեան եւ մախանաց հանէ յինքենէ եւ յայլոց, ստուգապէս գործ որդւոյն Աստուծոյ Է. զի նա զախտս եւ զդիւահարս բժշկեաց: Երրորդ՝

որպես որդին Աստուծոյ զմեղս՝ եւ զկամս զչարս՝ եւ զդէս եւ զմահ եբարձ ի մարդկանէ. նոյնպէս եւ խաղաղարարն՝ զամենայն սպանումս եւ զթշնամութիւն բառնայ: Չորրորդ՝ զի որ առ ամենայն խաղաղութիւն առնէ, նման է Աստուծոյ՝ (որ չարաց եւ բարեաց զաեգակն ծագէ.) յայնժամ որդեգրութեան նորա արժանաւոր լինի: Այս առաջին բարութիւն լեզուին՝ որ խաղաղարար լինի: Երկրորդ՝ (որպէս ջուր զհուրն շրջուցանէ ասէ առակն.) նոյնպէս եւ հանդարտ խօսք քո՝ զհուր բարկութեան ընկերին շրջուցանէ. եւ եղեր պատճառ բարեաց նորա: Չիա ասեն իմաստունք թէ՛յամենայն իր՝ որձն է ուժով եւ գովելի. իսկ ի խօսս՝ կակուղն եւ եգն է ուժով եւ գովելի. վասն զի կակուղ խօսքն՝ ի խոստ եւ բարկութեան սրտէն: Երրորդ՝ ասէ առաքեալն. (մի յաղթի ի չարէն, այլ յաղթեա սարեան չարին:) Չի չարն՝ չարի ոչ կարէ յաղթել համազգի գովել միմեանց. այլ բարին յաղթէ չարի. այսինքն, թէ կամիս որ յաղթես զչարն՝ բարի արա եւ յաղթեա: Չորրորդ՝ ասէ առակն. (մի տայ պատասխանի անզգամին ըստ նորա անզգամութեանն. զի մի նմանեցիս նմա:) Անզգամէ անմիտ եւ լիրբն եւ բարկացեալն: Արդ՝ նա անզգամութեամբ՝ խօսի անարգ բան եւ կռիւ. թէ դու զնոյնն ասեն, կռիւ ընդդէմ կռուի, երդումս ընդդէմ երդման, կամ հակառակութիւն, այսքիւք եւ դու նմանիս չարի նորա: Այլ (տուր պատասխանի նմա ասէ. զի մի իմաստնագոյն երեւեցի յանձն իւր:) Այս է, տուր պատասխանի՝ մի չար չարի, այլ բարի ընդդէմ չարի: Նա անմիտ է՝ դու իմաստութեամբ պատասխանեա. նա լիրբ է՝ դու համեստ լեր. նա դառն է՝ դու քաղցր լեր: Եւ այսպէս յանդիմանեա զբարկութիւն նորա: Մին՝ զի դու իմաստուն եւ քաղցր եւ բարի երեւիս քան զնա. եւ միս՝ զի այնպէս սուտ առնես զնա, որպէս եւ Քրիստոս առնէր հրեիցն: Նոքա անզգամութեամբ ասէին. (սամարացի ես. եւ գոյ ի քեզ.) չարաց թէ դուք եք դիւահար եւ չար. այլ կակուղ բանիւ զանմտութիւն նոցա երեւեցոյց ասելով. (եթէ սատանայ զսատանայ հանէ, բաժանեցաւ թագաւորութիւն նորա:) Հինգերորդ՝ ասէ Տէրն. (մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտին բղիւէ զբարին. եւ մարդ չար՝ բղիւէ զչարն:) Արդ՝ նորա ի չար (յաւելուածոյ սրտին խօսին չար բերանն.) զի չար գանձարան է եղել սատանայի. եւ յաւելուածով չար խորհրդոյն սատանայի խօսի նա: Դու բարի հոգւոյն գանձարան եղեալ, զբարին բղիւեա ի սրտեդ. զի լինիցիս դու մարդ բարի, բարի հոգին ի քեզ բնակելով, եւ զբարի բանն խօսելով: Վեցերորդ՝ ասէ առակն. (զամենայն բարկութիւն թափէ անզգամս. իսկ իմաստունն՝ մեղմով համբերէ:) Այս է՝ որ խրատասիրտ մարդն՝ զինչ ի լեզուն գայ, նախատինք, անարգանք, անեծք. անեծքն՝ յիշոցքն են. եւ նախատինքն՝ որ զծածուկ գործն յայտնէ. եւ անարգանք՝ որ ոչ լինի գործեցեալ, զայն ասէ: Չայտսիկ զամենայն անխնայ ասէ. եւ ոչ թողուն նշխար մի սիրոյ. յետոյ ապա զղջանայ. եւ որպէս իքնոյ զարթուցեալ՝ փոշիմանի. ապաշաւէ բանիւ զբարկութիւնն անցուցանէ: Նախ՝ որ զյետին զղջումս եւ զփոշիմանիլն՝ յառաջ յիշէ եւ ոչ նախատէ. զի գիտէ որ յամեն մեղաց վերջն՝ փոշիմանիլն է. յառաջ զայն ի միտ ած է եւ ոչ գործէ: Այս է իմաստութիւն մարդոյն՝ որ զվերջ բանին ի միտ ածեմք. եւ ի չարէն խոյս տանք. եւ յամեն չարէ այսպէս զերծանիմք: Երկրորդ՝ որ մեղմով եւ հանդարտութեամբ քննէ ի միտն՝ թէ կամայ եւ ակամայ սխալեցաւ. կամ տգիտութեամբ, կամ յայլոց պատրեցաւ. եւ այսպէս համբերելով՝ ածէ զնա ի քաղցրութիւն: Եօթներորդ՝ դարձրեալ ասէ. (այր բարկացող՝ փորեաց

գիականություն. Եւ այր հեզ՝ դադարեցոյց զմեղս:) Բարակցող մարդն եւ անզգամն՝ ոչ լսե առաքելոյն որ ասէ. (թէ հնար ինչ իցէ, ընդ ամենայն մարդկան գիտադադութիւն կալջիք.) այլ նա ի մէջ խաղաղութեան՝ խնդերէ պատճառ մարտի եւ պատերազմի: Տես թէ՛ որպէս գիականակն ամէն առաքելոյն: Նա ասէ թէ՛ (ընդ խռովարարն խաղաղութիւն կալէք.) այլ թէ զայն չկարես, նա ընդ խաղաղարարն խաղաղ կացիր, եւ մի խռովիր. ապա թէ ոչ՝ ընեդ խաղաղարարն խռովութիւն ամնել, խիստ կարի հականակն է: Իսկ այն որ հեզն է՝ ընդդէմ նմին զխռովութիւնն դադարեցուցանէ, եւ հանդարտէ զբարկութիւնն: Այսպիսի էին կորիս եւ դադան եւ բանկան իւրեանց. որք հականակ կացին Մովսէս եւ Ահարոնի: Իսկ հեզն Մովսէս՝ անկեալ առ ոտս՝ աղաչէր զնոսա դադարիլ ի մեղացն. եւ նոքա ոչ կամեցան. այլ առաւել փորեցին գիականակութիւնն. վասն այն (բացաւ երկիր, եւ եկուլ զնոսա. եւ բոց մաշեաց զմեղաւորսն:) Չնոսա նորանշան սատակմամբ կորոյս. եւ զհեզն Մովսէս եւ զԱհարոն՝ փառաւորեաց Աստուած. զի ծաղկեցաւ գաւազանն Ահարոնի եւ եբեր ընկուզ. նոյնպէս եւ զամենայն հականակ մարդ՝ այնպէս պատժէ Աստուած հոգւով. եւ զհեզս փառաւորէ: Ութներորդ՝ դարձեալ ասէ. (արք անօրէնք՝ հուր հարին ի քաղաքս. եւ իմաստունք դարձուցին զայն:) Այն է հուր հարուլն՝ որ անօրէն մարդիկ շարժեն զընկերս ապստամբիլ ի թագաւորէն. կամյիշխանէն գլուխ քարշեն. կամ սպանանեն զգործավար նորա. կամ այլ ինչ: Այլ իմաստուն մարդիկ՝ ոչ թողուն ի գլուխ ելանել զայնպիսի վնասն. զի մի հուր բարկութեան թագաւորին այրեսցէ զնոսա: Որպէս Սեդեկիա զի ոչ լսեաց Երեմիայի՝ այլ ստեաց զդաշինսն բաբիլացւոց. վասնայն եկն Նաբուզոդոնսոր. եւ կազեալ զԵրուսաղէմ, հրկէզ արար զերդմնահար քաղաքն: Այլեւ նաբաղ հուր եհար զտանէն իւրմէ, յորժամ անարգեաց զհրեշտակն Դաւիթի. եւ իմաստուն կին նորա Աբիգայ՝ դարձոյց զբարկութիւն նորա. որպէս գրեալ է ի թագաւորութիւնսն: Այլեւ հուր հարին զսուրբ եկեղեցւոյ հերձուածօղքն. եւ իմաստուն հայրապետք եւ վարդապետք՝ շիջուցին զայն ի ձեռն քննութեան. եւ ուղղափառ հաւատոյ հաստատութեամբ: Իններորդ՝ դարձեալ ասէ. (մի փութար յոգի քո բարկանալ. զի բարկութիւն ի ծոց անզգամաց հանգչի.) այսինքն, զի շուտափոյթ է ախտ բարկութեանն եւ երագ. վասն զի ի տարրական հրոյն է բարկութիւնն. որ շարժական է հուրն եւ երագ. եւ ցասման մասինն է ի հոգին: Վասն այն խրատէ իմաստունն յապաղել զբարկութիւնն. եւ յընտրողութեան վրայ դադարիլ. զի մի շտապեսցի ի բարկութիւնն. եւ ըմբռնեսցի յանիրաւ գործն. որպէս եւ առաքեալն ասէ. (ամենայն դառնութիւն եւ բարկութիւն եւ աղաղակ՝ բարձցի ի ձեռն:) Իսկ անզգամ մարդն՝ ի բարկութենէն ոչ զգուշանայ. (այլ որպէս գերեզման բաց է կրկորդ նորա:) Չի գերեզմանն որ ծածկեալ է՝ զգարշ հոտն իւր արգիլէ. իսկ բաց գերեզմանն՝ զգուշահոտութիւն հանապազ բուրէ: Նոյպէս անզգամ մարդն՝ զանպարկեշտ բանս եւ զժահահոտ՝ հանապազ բղիխէ: Եւ (ի չար գանձուց սրտին բղիխ զչարութիւն հրամայեաց Տէրն:) Տասներորդ՝ դարձեալ ասէ. (բանք բերանոյ իմաստնոյ շնորհք. եւ շրթունք անմտի՝ ընկղմեն զնա:) Չայն ասէ թէ՛ իմաստուն մարդոյն բերանն՝ լի է շնորհօք. եւ լուսաւորէ զլսողսն. որպէս առաքելոյն Պօղոսի բանքն. որեւ գրեր. (շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն.) նոյնպէս եւ առաքեալն մեզ պատուիրէ. (բանն ձեր՝ լի շնորհօք Տեառն իբրեւ աղրիւ համեմեալ լիցի. զի տացէ շնորհս լսուղաց:)

Իսկ անմիտ մարդոյ շրթունքն՝ զինքն ի յորոգայթ ձգէ. այն է զոր հրամայէ Տէրն. (ի բանից քոց արդարացիս. եւ ի բանից քոց պարտաւորեցիս.) եւ դարձեալ՝ (ի բերանոյ քումմէ դատեցից զքեզ ծառայ չար:) Վասն զի անմիտ մարդոյն բանից սկիզբն՝ անհաւատութիւնն է եւ յիմարութիւնն. եւ կատարածն՝ ի միտս լսողացն ծփումն չարեաց: Վասն այն ոչ է պարտ զչար մարդոյ բանն լսել եւ ուսանիլ. զի չարաչարէ զնա՝ եւ ալէկոծէ զմիտս նորա: Չի ամենայն բանի՝ սկիզբն կայ եւ վախճան. սկիզբն բանին՝ է ի սիրտ ասողին եւ ի լեզուն. եւ վախճան բանին՝ է յականջս եւ ի միտս լսողաց: Արդ՝ որպէս նա չար է որ զչարն խօսի եւ ուսուցանէ. նոյնպէս նա չար է՝ որ զչար խօսն լսէ եւ ուսանի. որպէս հերձուածօղք եւ աշակերտք նոցին. որպէս բամբասօղք եւ լսողք նոցին: Նոյնպէս է եւ բարկացողն չար. եւ լսողք եւ հաւանօղք նորին: Ըստ այսմ օրինակի որ զբարին խօսի եւ զբարին լսէ եւ ուսանի, ի միասին փառաւորին. որպէս առաքեալքն որք զհաւատն ուսուցին, եւ հաւատացեալքն որք ուսան եւ հաւատացին: Որպէս որ զբարիս խրատէ եւ որ ուսանի՝ զբարիս գործէ. եւ որպէս որ զիմաստունն բանս խօսի եւ որ զսէ՛ իմաստնանայ: Այսպէս որ զխաղաղութիւնն խօսի եւ որ զխաղաղութիւնն առնէ գործով, ի միասին երկոքեանն հոգւով եւ մարմնով հանգչին. եւ ի Քրիստոսէ պսակին եւ փառաւորին: Այս ամենայն առաւել քան զայս՝ բազում բարութիւն ի հանդարտ լեզու է յառաջ գան: Եւ այսպէս ի տգետ լեզու է եւ ի բարկացող շրթանց՝ բազում վնասք եւ որոգայթք ծնանին. իւր եւ այլոց. հոգւոյ եւ մարմնոյ. զոր փոքր ի շատէ յիշեցաք մեք. վասն այն ասէ առաքեալն: (Լեզու հուր զարդ է անիրաւութեան:) Եւ որ յաղթէ լեզուի՝ յաղթէ ամենայն չարեաց. եւ յորժամ յաղթեմք զչարս՝ բարւոյն հասանիմք. եւ արժանաւորիմք բարի պարգեւացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որ է օրինեալ յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն Համբերութեան ի բան առակին: (Մի ասէր թէ առից վրեժ ի թշնամեաց. այլ համբերեա Տեառն. եւ նա օգնեսցէ քեզ:) Առակ. 20.22: (Գլուխ. ԾԹ)

Վրեժ խնդրելն՝ չարեաց փոխարենն է. եւ բաժանի ի չորս տեսակս: Չի է որ չար բանիցն՝ չար բանս փոխարինէ. որպէս ի բանակոռիս: Եւ է որ գործոցն գործս հատուցանէ. որպէս ակն ընդ ական. եւ այլն: Եւ է որ բանիցն գործս հատուցանէ. որպէս մեծամեծ առ փոքունս՝ բանից յանցանաց գործովք վճարեն: Եւ է որ գործոցն՝ բանս հատուցանեն. որպէս ներքնոցն հայիոյութիւն առ վերինսն. եւ կամ անեծս: Չայս ասէ թէ՛ փութով վրեժ մի խնդրէր, յորժամ սրտմտութիւնդ շարժէ զքեզ: Չի թէ կարճմտութեամբ ի վրեժ շարժիս, կամ բանիւ, կամ գործով, ի վերջն յետոյ զղջանս եւ տրտմիս. թեպէտ մեծ եւ իշխան՝ համբերութեամբ եւ քննութեամբ լեր վրեժխնդիր, եթէ յանցաւոր իցէ օրինացն: Եւ դարձեալ ասէ. յորժամ մեծն քո կամ ընկերն չար ասէ քեզ եւ չար առնէ, դու անենելին մի պատասխաներ եւ մի չար առներ. զի թէ դու վրեժ խնդրես, լինի չորս վնաս: Նախզի՝ չարացն չար հատուցեր. ընդդէմ աւետարանին գործեցեր: Եւ երկրորդ՝ զի զԱստուած քեզ Տէր եւ օգնական ոչ խնդրեցեր. այլ քո ձեռամբդ առեր զվրեժն: Երրորդ՝ զի զԱստուած գործն յափշտակեցեր. (իմ է վրեժ խնդութիւն. եւ ես հատուցանեմ ասէ Տէր:) Չորրորդ՝ զի զքո վարձն կորուսեր վրեժ խնդրելովդ. զի

համբերութեամբ լինել քեզ բարի. յորժամ ոչ համբերեցեր, զբարիս եւ վարձս քո կորուսեր: Ապա ճշմարիտ է իմաստնոյ խրատն. (թէ որ բանիւ զքեզ խոցոտէ եւ չար ասէ, կամ զմարմինդ չարչարէ, կամ զինչսդ զրկէ, դու համբերեա եւ մի չար հատուցաներ. ոչ բանիւ. ոչ գործով. ոչ հայիոյութեամբ. ոչ բամբասելով. եւ ոչ ամենեւին անիծելով: Չի թէ ասես՝ Աստուած քեզ փոխարէնն առցէ. կամ թէ Աստուած է. կամ այլ այսպիսի՝ զայդոսիկ այլ մի ասեր. զի այդ անէծք են բանիւ հատուցումն որպէս ասացաւ: Այլ համբերեա ամենեցուն խրատու եւ զրկանաց. թէ մեծ է, թէ ընկեր է, թէ փոքր, համբեր կաց: Այլ վասն համբերութեանն՝ այսպէս գիտելի է. զի քան զայլ առաքինութիւնս՝ առաւել է. որպէս ի ստացականն՝ արդարութիւնն առաւել է քան զխոհեմութիւնն եւ զարիութիւնն եւ զողջախոհութիւնն. եւ յաստուածայինն՝ սերն առաւել է քան զհաւատ եւ զյոյսն. եւ ի մասնաւորն՝ աղօթքն առաւել է քան զպահս եւ զողորմութիւն: Այսպէս եւ համբերութիւնն՝ բարձրագոյն է քան զայլսն վասն չորս պատճառի: Նախ՝ կատարումն է իւրաքանչիւր առաքինութեանց գործոց. որպէս ասէ Յակոբոս. (համբերութիւնն՝ գործ կատարեալ ունիցի:) Երկրորդ՝ զի աթոռ եւ տեղի է ամենայն առաքինութեանց. զի ուր համբերութիւն ոչ է. առաքինութիւն ոչ բնակի: Երրորդ՝ զի նեցուկ եւ հաստատութիւն է այլոց. որպէս սիւն զտունն հաստատէ. եւ համբերութիւնն զամենայն առաքինութիւնս: Չորրորդ՝ զի ցուպ է ի ձեռին եւ զէն. զի համբերութեամբն մարտնչի մարդ ընդդէմ սատանայի որպէս Յոբ: Այլեւ ընդդէմ ցանկութեան՝ եւ ընդդէմ բարկութեան՝ եւ ընդդէմ ամենայն մեղաց՝ համբերութեամբն հակառակի եւ յաղթ մարդ. վասն այն խրատ է իմաստունն. (համբերեա Տեառն. եւ նա օգնեցէ քեզ:) Եւ աստ պարտ է գիտել՝ զի բազում շահ եւ օգնութիւն լինի ի համբերութենէն. եւ ասեմք տասն գլխով: Առաջին՝ զի Աստուած լինի քեզ օգնական ի համբերելն քոյ. եւ տայ շնորհ համբերութեան եւ փոթով գելսն. ոպէս ասէ Պօղոս. (հաւատարիմն է Աստուած՝ որ ոչ արկցէ զձեզ ի վարձութիւն առաւել քան զկարն ձեր. այլ վաղվաղակի արասցէ եւ զերսն. զի համբերել կարասցիք:) Երկրորդ՝ զի ծնանի գութ. որպէս ասէ առաքեալն. (համբերութիւն զհանդէս ծնանի. հանդէս գոյս: եւ նա սփռէ գութ:) Երրորդ՝ զի Աստուած վրեժ խնեղիր լինի համբերողաց. որպէս ասէ յառակս: (մի խնեղրեր զվրեժ ի թշնամեաց. այլ համբերեա նմա. եւ Տեր օգնեցէ քեզ.) որպէս վասն համբերութեանն Դաւիթի՝ խնդրեաց վրեժս ի Սաւուղայ: Չորրորդ՝ դիւրաւ լսէ համբերողացն աղօթից. որպէս ասէ Դաւիթ. (համբերելով համբերի Տեառն՝ եւ նայեցաւ առիս. եւ լուաւ աղօթից իմոց:) Հինգերորդ՝ զի համբերութիւնն՝ մերձ ածէ ի կատարումն գործոյն. ոպէս ասէ Յակոբոս. (համբերութիւնն գործ կատարեալ ունիցի:) Վեցերորդ՝ զի համբերութիւնն առցէ զյաւիտենական կեանսն ըստ Տեառն. (համբերութեամբ ձերով՝ ստասցիք զոգիս ձեր. եւ որ համբերացէ ի սպառ՝ նա կեցցէ. որպէս մարտիրոսացն դասք: Եօթներորդ՝ զի համբերութիւնն անուանի եւ փառաւոր առնէ. եւ զայլս ի նոյն յորդորէ. ըստ այնմ, (զհամբերութիւն Յոբայ լուարուք.) որով նա ինքն հռչակեցաւ: Ութներորդ՝ զի համբերողն՝ զբազմաց սատակումն տեսցէ անհամբերողացն. ըստ մարգարէին որ ասէ. (համբեր Տեառն եւ պահեա զճանապարհս նորա. եւ բարձր արասցէ զքեզ ի ժառանգել զերկիր եւ զսատակումն մեղաւորաց տեսցես:) Իններորդ՝ զի համբերութիւնն զայլս ի զղջումն ածէ. ասէ Պօղոս հռոմայեցւոց.

(երկայնամտութիւնն Աստուծոյ կամի զքեզ ի զղջումն ածել. այլ դու ըստ անզեղջ սրտիդ՝ գանձես քեզ բարկութիւն:) Յայս միտս եւ Տէրն օրինադրեաց. (որ հարկանէ զծնօտ քո՝ եւ այլն. եւ որ հանէ զբաճկոն քո՝ եւ այլն. եւ որ տարապարհակ վարէ զքեզ մղոն մի՝ եւ այլն:) Տասներորդ՝ զի համբերութիւնն՝ զմարդն Աստուծոյ նման եւ անւանակից առնէ. զի Դաւիթ՝ (զԱստուած ողորմած՝ գթած՝ եւ երկայնամիտ կոչէ:) Եւ որո՞վ զանազանի համբերութիւն եւ ժուժկալութիւն: Ասեմք թէ՝ չորիւք: Նախ համբերելն՝ տանիլն է հոգեկան կրից. եւ ժուժկալելն՝ մարմնական: Երկրորդ՝ համբերելն՝ է բանին մասին. եւ ժուժկալելն՝ ցանկականին յատուկ, եւ հասարակ ցասմնականին: Երրորդ՝ համբերելն՝ է արտաքին վշտաց. եւ ժուժկալելն՝ բնական կրից: Չորրորդ՝ ժուժելն է՝ ոչ խռովիլ ի չար ցանկութեանց. եւ համբերելն ոչ այլայլիլ եւ ոչ պակասիլ յառաքինութեանց ամէն:

Նորին քարոզ վասն Ծիծաղելոյ: (Վայ ձեզ որ ծիծաղիքդ:) Դուկ. 6. 25: (Գլուխ. 4)

Վասն բազում պատճառի՝ նախատելի է ծաղրն: Նախզի՝ ասէ Սողոմօն. (որպէս ձայն փչոց ի ներքոյ կաթսայի այնպէս եւ ծաղր անմիտ.) այսինքն, որպէս ճարճարտէ փուշն ի կրակն ի ներքոյ պուտկի. նոյնպէս ճարճատելով ծիծաղի անմիտն. եւ ոչ որպէս իմաստուն ժպտելով: Երկրորդ՝ որպէս բոց փշոյն զկաթսայն յեռանդեան պահէ. նոյնպէս ծաղրն՝ շարժէ զգայարանս մարմնոյն ի ցանկութիւն զօշոտութեան. եւ ստիպել տայ ի կատարումն գործոյն: Երրորդ՝ զի ծաղրն՝ անմտութեան է նշանակ. որ ոչ կարէ ծածկել յինքեանս զխնդութիւնն սրտին. այլ իմաստունն՝ ոչ ծիծաղի, այլ ժպտի դիմօք. եւ զխնդութիւնն ի սրտին իւր արգելու: Չորրորդ՝ ծաղրն ծոփութեան եւ անզգամութեան է ցոյց. որպէս ասեն վարդապետք. եւ ի բանալ ատամանց՝ վերացի հոգին սուրբ. եւ վասն այսր ասէ առաքեալն. (մի տրտմեցուցանէք զհոգին սուրբ:) Եւ դարձեալ ասէ առաքեալն. (ամենայն խեղկատակատակութիւն՝ բարձցի ի միջոյ ձերմէ:) Հինգերորդ՝ զի ասէ Տէրն. (Վայ ձեզ որք ծիծաղիքդ. զի լայք եւ ողբայք.) որպէս ասէ մարգարէն. (ծաղր ձեր ի սուգ դարձցի. եւ ուրախութիւն ձեր ի տրտմութիւն:) Չի այսպէս փոխի ի հանդերձեալն. որք աստլան եւ սգան՝ անդ ուրախանան. որպէս ասէ Տէրն. (երանի սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին.) եւ որք ուրախանան աստ՝ լացցեն անդ ի հուրն յաւիտենական. (ուր լալ աչաց է եւ կրճտել ատամանց.) որպէս մեծատունն որ ագաներ բեհեզս եւ ծիրանիս, եւ ուրախ լինէր հանապազ առատապէս, անդ ի մէջ տանջանաց հրոյն պապակիւր եւ այրիւր: Վեցերորդ՝ զի Տէրն մեր որ ամենայն կրից մեր հաղորդ եղեւ բաց ի մեղաց, այսինքն, զի կրեաց զտրտմութիւն եւ զերկիւղ. զքաղց եւ զծարաւ. իսկ զծաղրն ոչ կրեաց ամենեւին իբրեւ զմեղս. զի ոչ է գրեալ յաւիտարանին յուրեք ծիծաղիլ Քրիստոսի. այլ ի բազում ուրեք լալ եւ արտասուել եւ տրտմիլ. այսպէս անարգ է ծաղրն: Եւ թէ ոք ասիցէ՝ բնական է ծիծաղական գոլ մարդոյն: Ասեմք եթէ՝ ծիծաղականն բնական է մարդոյն. այլ ծաղրն՝ աւելորդն է. զի թէ ծիծաղի մարդ թէ ոչ, ծիծաղական է. որպէս բնական է ցանկութիւն եւ սրտմտութիւն մարդոյն: Չի հոգին եռամասնեայ է. բան, ցասումն, եւ ցանկութիւն. այլ բարկութիւնն եւ բղջախոհութիւնն՝ աւելորդ է մեղք: Նոյնպէս եւ ծիծաղականն՝ բնական է. այլ ծիծաղիլն՝ անմտութիւն է

աւելորդ: Չի այսպէս սահմանեն զծաղրն: Ծաղր՝ ստերիւրեցելոյ ի մեզ հագագի: Դարձեալ ծաղր՝ մերկութիւն մարմնոյ անվայելուչ. շնչոյ կարկաչումն. ձկտումն այտից. մերկութիւն ատամանց եւ ընտից կոկորդին. ի պարանոցին բախումն ձայն անբան: Եւ դարձեալ՝ այլ ազգ սահմանեն: Ծաղրն՝ հատումն եւ կտրումն շնչոյ. եւ զհ՞նչ այլ՝ բայց անմտութիւն եւ խելագարութիւն: Արդ՝ վասն ծիծաղելոյ՝ չորս իրս պարտ է իմանալ: Նախ՝ թէ ուստի՞ գոյանայ ծիծաղն: Երկրորդ՝ թէ վասն է՞ր ծիծաղին: Երրորդ՝ զվնասն թէ զհ՞նչ է: Չորրորդ՝ թէ ո՞րքան է պատիժն: Տեսցուք զառաջինն թէ ուստի՞ գոյանայ ծիծաղն: Եւ աստ երեք հարցումն լինի: Առաջին՝ թէ ծիծաղն գոյե՞ղ է ի մարդն թէ պատահումն: Պատասխանէ Դաւիթ անյաղթն բազում կերպիւ՝ թէ պատահումն, եւ ոչ գոյացութիւն: Նախզի գոյեղեն՝ անճելովն իւր կատարողական գոյ մեզ. որպէս բանականն աճելովն կատարէ զմեզ: Եւ աճումն բանականին՝ չորս է: Նախ՝ ընդ հասակին աճէ բանականութիւնն: Երկրորդ՝ կրթամբ եւ հանճարով: Երրորդ՝ կատարեալ խոհեմութեամբ: Չորրորդ՝ առաքինութեամբ: Իսկ ծիծաղականն՝ ոչ գոյ. այլ հրաժարական. որպէս ասեն իմաստունք. (մի ծաղր յանգուքն:) Երկրորդ՝ յայտ է յընդ իմակէն. այսինքն, զի լալականն պատահական է. յայտ է թէ եւ ծիծաղն՝ ընդդիմակ նորա պատահումն է: Երրորդ՝ զի որակ է ծիծաղն եւ լացն. երբեմն այն. եւ երբեմն այն. եւ որակն պատահումն է: Չորրորդ՝ զի կրականք են նախ ախորժակաց. այսինքն, ուրախութեանց եւ տրտմութեանց. տրտմութիւնն պակասութիւն. եւ ուրախութիւնն լիութիւն ախորժակաց: Հինգերորդ յայտ է՝ զի առաւելուն եւ պակասութիւնն. եւ առաւելն եւ նուազն՝ պատահումն է. Վեցերորդ՝ զի փոփոխականք են. զի լինին եւ բացալինին. եւ լինիլն եւ բացալինիլն՝ պատահումն է: Եօթներորդ՝ զի չէ ստորոգել յոք. զի աճելով ապականէ զենթակայն իւր. որպէս առ բազումս գոյ՝ որ վասն ծիծաղելոյ պատժեցան սատակմամբ: Ութներորդ՝ զօրութեամբ ծիծաղականն բառնի. որպէս որք ընդ ստոփոսիոնն անցեալք ասէ, առանց ծիծաղելոյ մնացին: Ապա յայտ է թէ՝ պատահական է ծիծաղն եւ ոչ գոյացական: Երկրորդ հարցումն թէ՝ ուստի՞ գոյանայ ծաղրն: Պարտ է գիտել՝ թէ յանբան շնչէն՝ որոց դաշնակից գոմք, այսինքն, հաղորդակից եւ ընկերակից. այլեւ ի մկանց եւ ջլաց լինի ծիծաղն: Եւ մկունք են Բ մեծամեծ երակքն ի խռչափողն. նոքա լնանին օդով. եւ ջիլք այտիցն կծկին. եւ բերանն բացուի. եւ այնպէս լինի ծիծաղն. որպէս յայտ է ի սահմանէ նորին: Երրորդ հարցումն՝ զի թէ մի եւ նոյն շունչ եւ մկունք եւ ջիլքն են ի մեզ եւ յանբանսն, նոքա է՞ր ոչ ծիծաղին: Կրկին կերպիւ պատասխանէ: Նախ թէ՝ եւ նոքա ծիծաղին ըստ Արիստոտելի. որպէս տառեղն եւ կապիկն եւ այլք: Երկրորդ պատասխանէ. թէ մի եւ նոյն շունչ է ի մեզ եւ յանբանս, այլ ոչ մի նոյն ներգործութիւն ի մեզ եւ ի նոսա: Ապա թէ է՞ր, պարտ էր եւ զհաջիւն շանն եւ զխիւնջիւն ձիոյ՝ ի յայլս գոլ: Բայց զանազանապէս ներգործէ մի շունչն. որպէս մի ջուր՝ ի զանազան տունկս՝ զանազանապէս ներգործէ. եւ մի եւ նոյն օդ՝ ի զանազան կենդանիս ներգործէ: Դարձեալ ծիծաղն ոչ է ի բանականն. յայտ է ի չորից: Նախզի՝ անմարմին եւ պարզ հոգիքն՝ ոչ ունի հրեշտակք: Երկրորդ՝ եւ ոչ հոգիքն բաժանեալք ի մարմնոյ: Երրորդ՝ բան ցասումն եւ ցանկութիւն ոչ ծիծաղին: Չորրորդ՝ իմաստունքն եւ առաքինքն որք առաւելեալ են բանականան՝ ոչ ծիծաղին. եւ ոչ տնկականն ծիծաղի ի մեզ. այսինքն, ծննդականն. աջողականն. եւ սննդականն: Ապա ուրեմն յայտ է թէ, անբան

շունչն ծիծաղի: Այսքան յառաջին գլուխն: Եկեսցուք յերկրորդ գլուխն թե՛ վասն Է՞ր ծիծաղին: Եւ ասեմք թե՛ վասն բազում պատճառի: Նախ՝ վասն յանդգնութեան եւ լկտութեան ծիծաղին. որպէս մարգարէն. (ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած.) զի ծաղրածութիւնն՝ սկիզբն եւ պատճառ է ամենայն չարեաց. որ է յանդուզն ծաղրն: Երկրորդ պատճառ՝ է աներկիւղութիւնն. զի ոչ երկնչին յԱստուծոյ. եւ ոչ յառաջնորդաց. զի որք երկնչին միշտ ի տրտմութեան կան որպէս ասէ մարգարէն. (զօրահանապագ տրտում գնայի. զի անձն իմ լի եղել չարչարանօք:) Եւ սաղմոսն ասէ. (սկիզբն զգօնութեան երկիւղ Տեառն.) եւ թե՛ (երկիւղի Տեառն խորշի ամենայն ոք ի չարէ:) Երրորդ՝ վասն անզոջութեան սրտին լինի ծաղրն. զի ոչ ունի դարձ եւ զոջումն ի մեղաց. զի որք ճշմարիտ զոջացեալ են, միշտ ի տուէ եւ ի գիշերի լան եւ ողբան. որպէս մարգարէն ամէր. ասեր՝ (լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ. եւ արտասուօք իմովք զանկողինս իմ թացի:) Չորրորդ՝ վասն չար ցանկութեան կամացն. զի լցեալ է զանազան մեղօք եւ սատանայական խրախանօք. որպէս ասէ ամալկն. (ծիծաղելով գործէ այր անպարհիշտ զչարիս:) Եւ Տէրն թե՛ (մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտին բղիւժ գբարի. եւ մարդ չար՝ ի չարէն բղիւժ զչար.) եւ թե՛ (յաւելուածոյ սրտին խօսի բերանն:) Հինգերորդ՝ զի ոչ ունի ակն եւ ցանկութիւն բարեաց գործոց, կամ յաւիտենական կենացն. զի որք զայս ունին միշտ ի սուգ եւ ի տրտմութեան գոն. որպէս ասէ Դաւիթ: (Վայ ինձ՝ զի ընդ երկար եղել պանտիստութիւն իմ. եւ բնակեցայ ես ի վրանս կենդարու:) Եւ Տէրն ասէ. (երանի որք լան եւ այլն:) Վեցերորդ՝ վասն անկարգութեան ծիծաղին. զի ոչ ունին կարգ եւ սահման. ոչ խօսից, ոչ կերակրոց, եւ ոչ սրբութեան. այել հանապագ ի դատարկաբանութեան եւ խեղկատակութեան՝ զօրէն շամշելոցն անդուռն բերանով՝ օթեան եւ բնակարան լինի դիւաց. որպէս ասէ Սողոմօն. (ո՞հ որոց թողեալ զճանապարհս ուղիղս, երթան ընդ ճանապարհս խաւարին:) Եօթներորդ՝ վասն անվարժութեան եւ անխրատ գոլոյ ծիծաղին. զի ոչ է վարժեալ է կրթեալ աստուածային օրիւնօք, եւ ոչ սնեալ եւ դաստիարակեալ առ ոտս բարի վարդապետաց. որպէս ասէ ամալկն. (որոց թողեալ իցէ զուսումն մանկութեան՝ եւ մոռացեալ զուխտն աստուածեղէն.) Եւ Յակոբոս ասէ. (որ ոչ սանձահարէ զլեզու իւր. վայրապար է այնպիսւոյն կրօնաւորութիւն:) Ութներորդ՝ վասն աշխարհասիրութեան եւ մարմնոյ. զի գերելիսս միայն գտան՝ եւ սոքօք ուրախանան. եւ ոչ մշտնջենաւորօքն. որպէս ասէ. (կեղծաւորք՝ զի ասեր աշխարհիս թշնամութիւն է առ Աստուած.) Եւ Սողոմօն եւս ասէ զանապարշտաց մեղս: Իններորդ՝ վասն ինքնահաճութեան եւ ոտնահարութեան այլոց լինի անբան ծաղրն. զի զինքն ուղիղ գիտէ՝ զայլս թիւր. եւ զինքն պատուական եւ լաւ՝ եւ զայլս յոռի եւ անարգ. որպէս ասէ. (մի անարգէք եւ բամբասէք զայլս:) Տասներորդ՝ վասն մոռացման եւ անհոգութեան զանձինս, թէ զինչ են լինելոց այժմ, կամ յետ մահու. ուրախանան եւ ծիծաղին նման անմիտ անասնոց. որպէս ասէ. (ոպիք ըմբռնեալ ի մեղս՝ ի մտաց եւս անկանին եւ ծիծաղին.) Եւ անբան շնչուն ասացաւ ծաղրն. եւ տես զամենայն սուրբս՝ զառաքեալս՝ զմարգարէս՝ եւ զայլս՝ սգով կացին յաշխարհի. եւ սգով ելին յաշխարհէ. զի անճառ ցնծութեանն եւ մշտաւետ ուրախութեանն հասանիցեն: Վասն որոյ ասէ. (վայ ձեզ որք ծիծաղիք:) Այս երկրորդ գլուխն: Եկեսցուք յերրորդ գլուխն թե՛

զի՞նչ է վնաս ծիծաղելոյն՝ եւ ո՞րքան: Եւ ասեմք թէ՛ վասն բազում պատճառի: Նախ եւ առաջին՝ զի անհաւատութեան եւ յուսահատութեան է նշանակ վայրապար ծաղրն. եւ անհաւատն՝ վատթար է քան զդէս, որպէս ասէ. (դու հաւատաս՝ բարւոք առնես. եւ դէւք հաւատան եւ սարսիս:.) Երկրորդ՝ մոռացումն գործէ ահեղ գալստեանն Քրիստոսի. եւ տանջանացն դժոխոց. որպէս ասէ. (եթէ կամակար մտօք մեղանչես, ոչ է պիտոյ պատարագ. այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին՝ եւ նախանձն հրոյն՝ որ ուտէ զհակառակորդս.) եւ թէ՛ (վայ ձեզ որք ծիծաղիք:.) Երրորդ՝ է արհամարիել եւ քամահել զԱստուած եւ զօրէնս Նորա. որ արգելու ի ծիծաղելոյ. եւ երանէ զսգաւորս: Եւ որք այսմ անհնազանդ են, անարգեն զԱստուած. որպէս ասէ Պօղոս. (եթէ դու արհամարիես զներելովն Աստուծոյ գանձես անձին քում բարկութիւն յաւուր արդար դատաւորութեանն Աստուծոյ:.) Զորրորդ վնաս՝ զի անբան եւ անկարգ ծաղրն՝ յիմարէ եւ կուրացուցանէ զմիտս Նոցա. եւ խափանէ զամենայն բարի խորհուրդ եւ հոգեւոր տեսութիւն աստուածայնոցն. որպէս ասէ առական. (ուրախանան ի չարիս իւրեանց.) եւ Պօղոս ասէ. (որոց Աստուած աշխարհիս այսորիկ՝ կուրացոյց զմիտս:.) Զինգերորդ՝ նման լինին չար դիւաց կաքաւչաց, որք հանապազ ուրախանան ի գործս իւրեանց, եւ ընդ կորուստ մարդկան, եւ ընդ անկումն սրբոց. որպէս ասէ. (հոգին սուրբ փախչի ի նենգութենէ.) յայտ է ի ծաղրածութենէն եւ ի ծաղրէն. որք տուն են եղեալ սատանայի: Վեցերորդ վնաս՝ նմանին դիցապաշտիցն. որք միշտ պղծագործութեամբ եւ գարշութեամբ ուրախացեալ, խայտառակէին առաջի կոռցն. որպէս ասէ առաքեալն. (երբեմն առ կուռս անմռունչս երթայիք:.) Եօթներորդ վնաս՝ նմանին հրէից խաչահանուաց. որք զՏէրն մերկացուցեալ չարչարէին. եւ ուրախացեալ ծիծաղէին ընդ անօրէն գործս իւրեանց: Ութներորդ վնաս՝ զի ամբարտաւանութիւն եւ խստասրտութիւն գործէ. որ սկիզբն եւ մայրն է ամենայն չարեաց, եւ հեռացումն ամենայն բարեաց. եւ ծաղրն՝ հպարտութիւն եւ խստութիւն է՝ որ հանէ զամենայն ձեւ բարի մարդոյ: Իններորդ՝ աննմանութիւն է ամենայն սրբոց արանց. որք լալով եւ ողբալով հաճոյացան Աստուծոյ. որպէս Ովհաննէս՝ Երեմիա, եւ այլքն: Եւ սոքա անհաթեթ եւ անմիտ ծաղրով՝ վնասեն զինքեանս եւ զայլս: Տասներորդ վնաս՝ յայտնի է որ խոտեալ եւ բարձեալ է ծաղրն յամենայն կարգաւորութենէ քրիստոնէիցս. այսինքն, յեկեղեցւոյ. ի ժամատեղաց. ի պատարագէ. ի կարդալոյ աստուածաբանութեանց. ի քարոզութեանց ժամանակէ. եւ յայլ իմաստասիրութեանց ժամանակէ. այլ եւ իմաստունք արք՝ ոչ է ծիծաղին: Այլեւ ի չորս տեղիս լինի ծաղրն. ի հարսանիսս աշխարհականաց. եւ ի լկտի խաղս. եւ ի գինըմպութիւնս անմիտ երիտասարդաց. եւ ի ժողովս պղծագործ անհաւատից: Ապա ուրեամն յայտ է՝ զի բազում վնաս է ծաղրէն: Այսքան յերրորդ գլուխն: Եկեսցուք ի չորրորդ գլուխն թէ՛ զի՞նչ է պատիժ ծիծաղելոյն: Նախզի՛ ամենայն մարդիկ արհամարիեն եւ անարգեն եւ նա յամօթ լինի. եւ այլ ի՞նչ պատիժ քան ամօթ եւ նախատիսս կրել ի մարդկանէ. որպէս ասէ մարգարէն. (նախատիսս ի մերձաւորաց ոչ առնու՝ արհամարիեալ է առաջի Նորա չարագործն:.) Երկրորդ՝ զի բազում անգամ պատին ի թագաւորաց եւ յիշխանաց՝ վասն անմիտ եւ յանդուզն ծաղրէն. որպէս յայտ է ի քաղքեղոնի օրէնս՝ որք տանջեն սպանմամբ զայնպիսին: Երրորդ՝ պատժին եւ յանդիմանին

յօրինաց եւ ի սուրբ գրոց վարդապետութենէ՝ որք գեհեան եւ տանջանս սպառնան այնպիսեացն. որպէս վայ ասէ Տէրն. եւ առակին նմանակաց անհաւատից եւ անպարշտաց. եթէ յմար ասելն գեհենին պատժապարտ առնէ, քանի՞ առաւել ծիծաղիլն լրբաբար: Չորրորդ՝ զի Տէրն լալ եւ սգալ ասէ. եւ նոքա ոչ լսեն՝ այլ զնորա դէմն առնեն, բիւրապատիկ պատժոյ են արժանաւոր եւ դժոխոց. որպէս ասէ Տէրն. (բերեք զամենայն թշնամիս իմ. եւ սպանեք առաջի իմ. որք ոչ կամէին զթագաւորելն իմ ի վերայ նոցա.) եւ թշնամիքն Տեառն՝ են ամենայն անհնազանդք օրինացն Աստուոյ. որպէս ասէ. (թշնամիք Տեառն ստեցին նմա:) Հինգերորդ՝ պատժին ի Տեառնէ եւ անկանին ի նմանութենէ նորին. որ ի կեանս իւր՝ երբէք ոչ ծիծաեցաւ. բայց ի բազում ուրեք ելաց. որպէս ի գերեզմանն զագորու. եւ վերայ քաղաքին. եւ զի՞նչ քան զայս պատիժ, անկանիլ ի նմանութենէն Զրիստոսի: Չի որք անկանին ի նմանութենէ նորա, զրկին եւ որոշին յամենայն շնորհաց նորա. եւ նման լինին դիւաց եւ ամենայն որպէս ասացաւ. եւ որք զրկին ի նմանութենէն, եւ անդ ակցին յամենայն նմանութեանց եւ ի փառացն Զրիստոսի. որպէս ասէ. (նման նման լինելոց եմք:) Վեցերորդ պատժին՝ զի զրկին ի մխիթարութեանց սգաւորացն եւ յերանութեանց նոցա. եւ զի՞նչ քան պատիժ՝ որք զրկին յամենայն մխիթարութեանց հոգւոյն սրբոյ՝ որ մխիթարիչէ ամենայն սգաւորաց եւ տրտմեցելոց. որ տրտմի անբան ծաղերք. որպէս ասէ. (մի տրտմեցուցանեք զհոգին սուրբ՝ որով կնքեցայք յուր փրկութեանց ձերոյ:) Եօթներորդ՝ զի զրկին յարքայութենէն երկնից եւ յամենայն հանգստութենէ արդարոց. որպէս ասէ Եսայի. (բարձի անպարհիշտն յերկրէ. եւ մի տեսցէ զփառս Աստուծոյ.) եւ անպարհիշտ է ի ծաղրառն որպէս ցուցաւ: Ութներորդ՝ ժառանգ լինին յաւիտենից տանջանացն եւ գեհեն հրոյն. եւ դասակից ամենայն չարաց եւ սատանայի. որ պատճառն է ամենայն չարեաց եւ տանջանաց. որպէս ասէ. (արկանիցիս ի բանտ՝ եւ ոչ ելանիցես, մինչեւ հատուցանես զյետին նաքարակիտն:) Իններորդ՝ զի փոքր ներելի մեղօքն՝ ընկերակից լինին բուն չարեացն եւ մեծամեծ մեղացն. քան զայս այլ ի՞նչ պատիժ. եւ ոչ է փոքր, այլ յոյժ մեծ եւ անթողլի. զի ամենայն մեղաց սկիզբն եւ կատարումն եւ պատճառ անզեղչութեան՝ է անբան ծաղրն. որպէս յայտ է իմաստուն մտաց: Տասներորդ՝ ըս տերունական հրամանացն որ ասէ. (վայ ձեզ որք ծիծաղիք:) Եւ վայն՝ պարառութիւն է ամենայն չարեաց. եւ չարն՝ սեռօրէն ի յեօթն բաժանի: Նախ՝ է չար՝ սկիզբաչարն սատանայ: Երկրորդ չար՝ մեղքն: Երրորդ չար՝ որոգայթն եւ փորձութիւնն: Չորրորդ չար՝ պատուհասն: Հինգերորդ չար՝ մահն. զի (մահ մեղաւորին չար է:) Վեցերորդ չար դժոխքն: Եօթներորդ չար՝ տանջանք գեհենին. զայս ամենայն՝ առաւել՝ քան զայս պարունակէ վայ ասելն: Որով՝ զմեզ փրկեցէ Զրիստոս յոյսն մեր յամենայն չար մեղաց՝ ի դառն տանջանաց՝ յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ վասն Ամբարտաւանութեան՝ Խոնահութեան. ի բանն որ ասէ առակն: (Տէր ամբարտաւանաց հակառակ կայ. տայ զշնորհս խոնարհաց:) Առակ. 3. 34: (Գլուխ. ԿԱ)

Սկզբնաչարն սատանայ՝՝ արուսեկն անկեալ՝ որ մայր՝ գտակ եղ՝ ամենայն ամբարտաւանութեան մեղաց՝ նախկին անձնիշխան կամօք

ախտացաւ զամբարտաւանութիւն. եւ ապա խաբելով՝ յայլս սերմանեաց զապականութիւն իւր: Եւ այս եղև պատճառն. զի ետես զինքն անմարմին եւ անմահ եւ լուսաւոր՝ ընդվզեցաւ ընդդէմ արարչին. լռեաց եւ ոչ ետ զփառս Աստուծոյ. որպէս ասէ Պօղոս յերկրորդ թուղթն կորնթացոց. (անօրէն իշխանան՝ աստուածանալ կամեցաւ.) եւ սուրբն լուսաւորիչ՝ զնոյն երկրորդէ: Վասն որոյ անկաւ ի յերկնից ի լուսեղէն կենաց եւ ի դասուց հրեշտակաց յերկրի եւ ի խորս անդնդոց: Եւ յաղագս այսր պատճառի՝ շինեաց Աստուած զմարդն ի հողոյ թանձր մարմին. եւ բնական կրիւք՝ կարօտ պիտոյից. զի ի մարմինն իւր նայելով, ի խոնահուրթեան կացցէ. եւ ելցէ ի տեղի հպարտութեամբ անկելոյն. ի յամօթ եւ ի նախատիկս սատանայի, յորժամ տկարս այս հողեղէն՝ ելցէ եւ մտցէ ի փառս նորա, յորմէ նա որ փառաւորն էր անկաւ: Իսկ չարն տեսեալ զմեծութիւն պատուոյն Ադամայ, նախանձեցաւ ընդ նմա. եւ խաբեաց նովին ախտիւ ամբարտաւանութեանն, որով ինքն կորեաւ: Չի (Աստուած ասէ լինիցիք, թէ ուտէք ի պտղոյն:) Որով եւ նոքա յանցեան եւ անկան յերկիրս մահաբեր եւ անիծից. ըստ այնմ, (նա խեանձու բանսարկւին եմու մահ յաշխարհս:) Եւ այսպէս (Տէր ամբարտաւանից հակառակ կայ.) զի զամբարտաւանն սատանայ՝ ընկեց ի յերկնից. եւ զԱդամ եւ եհան ի դրախտէն: Դարձեալ՝ այժմ որք տեսանեն մարդիկ յորժամ այս ախտիւս հպարտացաւ սատանայ եւ կորեաւ, եւ մարդն ի դրախտէն վասն այն զրկեցաւ, այլեւ տեսանեն զմարմինս թանձր եւ ախտակիր եւ անկեալ ընդ կարեօք, ունելով զամենայն զարշուրթիւս առ ինքեանս վասն հպարտութեան ախտին, զայս ոչ մտածեն, այլ զկործեօք եւ փոքր գիտութիւնս իւրեանց ճշմարիտ եւ մեծ իմանան, եւ ընդդէմ հակառակին մեծամեծաց իւրեանց որպէս աշակերտք վարդապետաց, որդիք հարց, ծառայք տերանց, իշխեցեալք իշխանաց եւ այլն, յայնժամ Աստուած ոչ ողորմի նոցա. այլ ինքն վրեժ խնդրէ ի նոցանէ. պատերազմի եւ պատուհասէ զնոսա: Որպէս զԴաթան եւ զԱբիրոն որք հակառակեցան Մովսէսի՝ (բացաւ երկիր եւ եկուլ զնոսա.) զի այսպէս պատժի ի խորս երկրի բարձրացեալն մտօք ի վեր: Նոյնպէս եւ զկորիս որ յիսկիւքն իւրովք հակառակեցաւ Ահարօնի՝ (հուր վառեցաւ ի ժողովս նոցա եւ այրեաց:) Եւ թէ հարցանէ որ՝ վասն Է՞ր զի կորիսեանքն եւ դաթանեանքն զմի մեղս գործեցին որք հակառակեցան Մովսէսի եւ Ահարօնի՝ ոմանք հրով այրեցա՞ն: Այսմ երեք պատճառ ասեն վարդապետք: Նախզի՝ քահանայութիւնն երկնային Է. վասն այն կորիս յերկնից հրով այրեցաւ. իսկ իշխանութիւնն երկրաւոր՝ վասն այն (երկիր բացաւ եւ եկուլ զԴաթան:) Երկրորդ՝ ասեն եթէ, քահանայից մեղքն՝ զերկինս շարժէ որպէս անդ. եւ երկրաւոր իշխանաց՝ զերկիր. որպէս ասէ առակն: (Երիւք շարժի երկիր. եւ ի չորրորդին ոչ հանդարտի: Առաջին՝ թէ ծառայ թագաւորէ: Երկրորդ՝ թէ անմիտն յագեսցի հացիւ: Երկրորդ՝ թէ աղախինն արտաքաս հանէ զտիկինն: Չորրորդ՝ կին ատելի, թէ դիպեսցի առն բարւոյ:) Երրորդ՝ ասեն եթէ քահանայութիւնն կարգ Է հրեշտակաց՝ պարտ Է սրբութեամբ պահել. ապա թէ ոչ՝ հրեշտակք զայրացեալ հրով այրեն. կամ զմարմին, կամ զհոգի: Իսկ Դաթան քրեական մեղանչեաց. որ Է յանցումն ի թագաւորս: Չի որք ի թագաւորս մեղանչեն, անհնարին պատուհասին, եւ գոյիւք եւ ազգօք շնչին, քանի՞ առաւել որք յԱստուծոյ եւ ի Մովսէս մեղան. որ Աստուած էր կոչեցեալ եւ իշխան ժողովրդեան: Եւ որպէս զնոսա վասն անհնազանդութեանն

պատուհասեաց Աստուած. այսպէս զհեզէն Մովսէս պատուեաց: Որ ասէր՝ (չեսմա բաւական. զի նրբաձայն եւ ծանրալեզու եմ:) Եւ յայնմ հետէ եւ առ յապայ՝ սովորութիւն է Աստուծոյ առ բնաւ ազգս մարդկան, յորժամ ինքնահաճութեամբ խնդրեն զփառս, հոգեւոր կամ մարմնաւոր, արգիլէ եւ յետս ձգէ. եւ որք ոչ խնդրեն՝ նոցա պարգեւէ: Չորօրինակ՝ ստուեր մարդոյ յորժամ փութան ի նա հասանիլ, փախչի ի նոցանէ. եւ յորժամ կանգնին կամ յետս դառնան, զհետ վազէ. նոյնպէս եւ փառք աշխարհիս: Վասն որոյ ասէ. (Տէր ամբարտաւանից հակառակ կայ. տայ զշնորհս խոնարհաց:) Եւ գիտելի է՝ զի այլ ամենայն յանցաւորաց՝ ողորմած է Աստուած. որպէս պոռնկին եւ աւագակին ողորմեցաւ. քանանացոյն եւ մաքսաւորին զմեղսն եթող. ուրացողին եւ սպանողին եւ այլ ամենայն մեղաւորաց՝ ողորմի Աստուած եւ ներէ. (եւ ամբարտաւանին հակառակ կայ:) Եւ այս վասն տասն պատճառի: Նախզի՝ հպարտութիւնն է ի բանական մասն խոհեմութեան. եւ կամաւ եւ գիտութեամբ մեղանչէ. վասն որոյ ոչ ներէ Աստուած: Իսկ այլ մեղք՝ ի սրտմտականն, կամ ի ցանկանանն եւ ի մարմինն, ակամայ եւ տգիտութեամբ գործի. ի թուլութենէ, կամ ի պատրանաց. վասն որոյ ներումն եւ թողութիւն գտանէ: Երկրորդ՝ զի ամբարտաւանն՝ զիր սխալումն ոչ տեսանէ հպարտութեամբն. վասն որոյ եւ զինքն ճշմարիտ կարծէ. ընդդէմ խրատողացն մրցի. իսկ այլ մեղաւորք՝ տեսանեն զմեղս իւրեանց. եւ լսեն խրատու եւ առնուն զբժշկութիւն: Երրորդ՝ զի խիղճ մտացն՝ զամբարտաւանս ոչ դատէ. վասն որոյ ոչ զղջանան եւ ոչ գտանեն թողութիւն. իսկ այլ մարմնական մեղօք եղեալքն՝ ի խղճէ մտացն դատին ի ներքուստ եւ տրտմին վասն մեղացն. եւ զղջանան ի սիրտս. վասն որոյ թողութեան հանդիպին: Չորրորդ՝ զի հպարտութիւնն՝ քան զամենայն մեղս ծանրագոյն է. զի ընդդէմ փառաց եւ եւութեանն Աստուծոյ է մեղանչումն. որպէս սատանային. իսկ այլ մեղք՝ ընդդէմ պատւիրանին Աստուծոյ է յանցումն. կամ ընդդէմ ընկերին. կամ ընդդէմ իւր մարմնոյն. վասն որոյ փոքրագոյն են քան զնա: Չորօրինակ՝ որպէս ոք ի ճառագայթէ լուսոյ զակն խփէ եւ խաւարի՝ սակաւ է խաւարումն. իսկ որ ընդդէմ բոլորակի արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյս եւ խաւարի՝ մեծ է խաւարումն. այսպէս եւ հպարտութեան մեղքն՝ մեծ է եւ ծանրագոյն յանցումն: Հինգերորդ՝ զի հպարտութիւնն յամենայն մեղս գտանի. զի որպէս առանց սիրոյ առաքինութիւնք ոչ ինչ են. նոյնպէս առանց հպարտութեամբ՝ ամենայն մոլութիւնք ոչ ինչ են: Եւ այսպէս երեւի հպարտութիւնն յամենայն մեղս. զի այլ ամենայն մեղք՝ խոտորումն է օրինանցն Աստուծոյ, եւ խոտորումն զհետ հեշտութեան մարմնոյն. իսկ հպարտութիւնն այն է՝ որ խոտեմք եւ անարգեմք զճշմարիտ բարին. եւ ապա խոտորիմք զհետ փոփոխելոյ բարւոյս. եւ այսպէս երեւի հպարտութիւնն յամենայն մեղս: Վեցերորդ՝ զի ամբարտաւանն՝ իւրով հպարտութեամբն անհնազանդ լինի օրինաց եւ կանոնաց. զի ոչ զբնական օրէնս առնէ. եւ ոչ զգրաւորն. եւ ոչ զաւետարանն. եւ ոչ կանոնաց եւ հարց հնազանդի. վասն որոյ անօրէն կոչի: Չի կրկին է անօրէնն. մի՛ որ ամենեւին զօրէնս ոչ է առեալ, անօրէն է. եւ մի՛ որ առեալ է զօրէնս եւ արհամարհեալ. որպէս հպարտն անօրէն է. վասն անօրինին մեղքն ոչ թողանի: Իսկ այլ մեղաւորք՝ օրինաւորք են եւ մեղաւորք. վասն որոյ ի ձեռն օրինացն՝ մեղքն նոցա թողանի: Եօթներորդ հպարտն անպարհիշտ կոչի. եւ անպարհիշտն անաստուածն է որ (ասաց անզգամս ի

սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած.) այսինքն, հպարտն է. վասն զի ոչ հաւատայ Աստուծոյ. թէ վասն այն մեղացն դատապարտէ. եւ ոչ հաւատայ թէ այն մեղք. վասն այն թողութեան ճանապարհն նորա կորեալ է. ըստ այնմ, (ճանահարիք անպարշտաց կորիցեն:) Իսկ այլ մեղաւորք՝ ոչ եեն անպարիշտք. այլ յանցաւորք են Աստուծոյ. եւ հաւատան եւ երկնչին յԱստուծոյ: Վասն որոյ ի ձեռն հաւատոցն՝ թողութիւն առնուն. ըս այնմ, (հաւատաց Աբրահամ յԱստուած՝ եւ համարեցաւ նմա յարդարութիւն:) Ութներորդ՝ զի այլ տեսակք ախտիցն՝ իր ինչ երեւեցուցանեն մեզ. որպէս գողութիւնն գրնչս. եւ պոռնկութիւնն զհեշտութիւնս, եւ այլն: Իսկ հպարտութեանն՝ ոչ գոյ ամենեւին ակնկալութիւն. վասն այն միշտ անհանգիստ են մտօք եւ մարմնով: Իններորդ՝ զի զամենայն բարիս որք ի մեզ են՝ արտաքս հանէ. զոր օրինակ՝ եկեալ խաւարն հանէ զլոյս. այսպէս եւ ի հանդիպիլ հպարտութեանն, արտաքսս ելանեն ամենայն բարութիւնք մեր. զի զգործելն կորուսանեմք՝ եւ այլ ոչ գործեմք հպարտութամբ մերով: Իսկ այլ մեղք որեւ իցէ՝ զիւր ընդդիմակ բարին հանէ. եւ ոչ զայլս. որպէս պառնկութիւնն զողջախոհութիւն. ագահութիւնն զպարկեշտութիւն. եւ այլն նման սոցա: Տասներորդ՝ զի զամենայն մեղս՝ մեղսաստրքն գործեն. իսկ զհպարտութիւն՝ սուրբք եւ ընտիրք. որպս հրեշտակք ի յերկինս. նոյնպէս եւ ամենայն առաքիկիք կարեն պարկեշտանալ յայլ ինչ մեղաց. այլ ոչ ի հպարտութենէ: Չի այս է յաջ խոտորումն. որպէս եւ այլ մարմնականքն ի ձախ. զի սատանայ որսայ զմարդիկ պէսպէս որոգայթիւն. որպէս որսորդ հաւուց վարմ եւ ծօղակ եւ որորգայթ զանազան կազմեն ըստ զանազան բարուց թռչնոց. ախմարաց եւ ճարտարաց: Եւ սոքա չորեքին բառքս թեպէտ մի են տեսակաւ, սակայն ունին զանազան տեսութիւն. որպէս ամբարհաւաճն. ամենայն բարտաւանն. հպարտն. եւ սնափառն: Չի ամբարհաւաճն՝ ինքնահաճ է. որ այլում ոչ հաւանի. այլ միայն իւր կամացն եւ իւր տեսութեանն: Իսկ հպարտն՝ ինքն ըստի ինքեան փքացեալն է եւ մեծամիտն. որ քան զամենն՝ զինքն գերագոյն համարի: Իսկ ամբարտաւանն է՝ որ ի վերայ այլոց ոտնահար լինի. եւ կամի զամենայն ոք փոքր եւ յետին քան զինքն: Իսկ սնափառն եւ փառասէրն՝ մի են. որ յամենայն մարդոյ՝ զփառս եւ զպատիւ եւ զգովութիւն սիրեն: Այսոքիկ են ամբարտաւանից տեսանք եւ գործք: Վասն այն ասէ. (Տէր ամբարտաւանից հակառակ կայ. տայ զշնոհս խոնարհաց:) Իսկ խոնարհութիւնն՝ բազում զովութիւն ունի. որպէս ամբարտաւանութիւն պարսաւանս: Վասն զի (գովելն են գեղեցիկքն ասէ իմաստուն. եւ պարսաւելի են գարշելիքն:) Եւ որովհետեւ գարշելի հպարտութիւնն պարսաւեցաւ. տեսցուք եւ զգովութիւն խոնարհութեանն: Արդ՝ վասն խոնարհութեան գիտելի է՝ որպէս ասէ մեծն Աստօն. ամենայն չար խորհուրդ՝ ի խոնարհութենէ մարդոյն սպառի: Եւ երեք է խոնարհութեան եղանակն. այսինքն, բնական. եւ տեսական. եւ գործնական: Եւ բնական խոնարհութիւն է՝ յորժամ ի միտ ածես զվատթարութիւն եւ զապականութիւն դորա, թէ ուստի՞ սկսաւ, եւ յո՞ւր դադարի. այսինքն, ի հողոյ սկսաւ. եւ ի հող լուծանի: Եւ յապականելի ախտից եւ գարշութեանց՝ դարձեալ ապականի եւ գարշելի լինի: Վասն այն ասէ մարգարէն: (Խոնարհութիւնն քո՝ է ի միջիքում, եւ առ մարմինդ քո:) Իսկ տեսական է՝ յորժամ զանձնդ ի խոնարհութիւն կալնուս ասելով. (ես չեմ բաւական. եւ ոչ արժանի այդմ խորհրդոյ:) Իսկ գործնական է՝ յորժամ զմարմինդ չարչարես ի

տքնութիւն, ի ծուկը, յայնժամ փախչի չար խորհուրդն ի քն. ըստ որում աշխատութեամբ՝ անշրդի վայրեացն փորձութեան գետն սպառնի ասն սուրբք: Եւ բազում է օգտութիւն խոնարհութեան որ ի սուրբ գիրս տեսանի: Եւ նախ առաջին այս զոր ասէ. (Տէր ամբարտաւանից հակառակ կայ. տայ զշնորհս խոնարհաց. զի եթէ մարմնաւոր շնորհ իցէ արուեստից՝ խոնարհութեամբ ուսանին, եւ եթէ հոգեւոր ուսումն գիտութեան եւ իմաստութեան՝ խոնարհացն է շնորհ. որպէս առաքելոցն ի վերնատանն: Երկրորդ՝ խոնարհութեամբ ամենայն օրէնք կատարին. առաքելական՝ մարգարեական՝ եւ կանոնական. զի հնազանդիմք եւ լսեմք եւ կատարեմք զգրեալս խոնարհաց. եւ որպէս հպարտն որ ոչ հնազանդի օրինաց իմիք՝ անօրէն կոչի. նոյնպէս եւ խոնարհն օրինաւոր: Երրորդ՝ խոնարհութեամբ արդարանամք ի մեղաց. յորժամ ստուգանէ ի ներքուստ խիղճ մտացն, տրտմիմք եւ զղջանամք: Եւ յորժամ խրատեն զմեզ արտաքուստ՝ լսեմք եւ ապաշխարեմք զմեղս: Տես որ ամենայն բարեաց պատճառ՝ խոնարհութիւնն է. զի խոնարհութեամբ զօրէնս կատարեմք. եւ թէ գթեմք ի տկարութենէ մարմնոյ, կամ ի պատրանաց թշնամոյն, դարձեալ խոնարհութեամբ ապաշխարեմք եւ արդարանամք: Չորրորդ՝ խոնարհութեամբ ի պատիւ եւ փառս հասանեմք. որպէս զՄովսէսէ վկայէ: (Յեզ է ծառայն իմ Մովսէս.) տես թէ որպէս փառաւորեցաւ. զԱստուած ետես, եւ օրէնսդիր եղէ. ազատեաց զդողովորդն. եւ իշխան խոնարհաց կարգեցաւ: Նոյնպէս եւ վասն Դաւիթ ասէ. (յիշեա Տէր զԴաւիթ՝ եւ զամենայն հեզութիւն նորա.) որով մարգարեութեան շնորհի տեսաւ. եւ նստաւ յաթոռ թագաւորութեան. հայր եղէ Զրիստոսի ըստ մարմնոյ. եւ անուանի յերկիսս եւ երկրի: Յինգերորդ՝ Տէրն հրամայէ. (երանի հեզոց՝ զի նոքա ժառանգեցցեն զերկիր.) զո՞ր երկիր՝ ոչ զայս տրտմութեան եւ մեռելոց, այլ զայն, որ զլոյս եւ զարդարութիւն կրէ, զայն՝ որ երկիրս է կենդանեանց եւ սրբոց. այն՝ որ դրախտ կոչի եւ արքայութիւն: Եւ յիրաւի՝ զի որպէս նոքա որք վասն հպարտութեան անկան ի ժառանգութենէ նորա. որք հնազանդին եւ խոնարհին՝ մտցեն ի նա: Եւ յայլ ուր ասէր. (յինէն ուսարուք. զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտչիք հանգիստ անձանց ձերոց.) այսինքն, աստուծոյ, եւ անդ արդեամբ: Վեցերորդ՝ այլեւ ի մարմնաւոր կեանս՝ խոնարհք եւ հեզք խաղաղութեամբ բնակին. որպէս ասէ մարգարէն. (ով մարդ՝ որ կամիս զկեանս քո տեսանել ի բարութեան, լռեցո զլեզու քո ի չարութիւնէ. եւ շրթունք քո մի խօսեցին զնենգութիւնս:) Յայնժամ առ ամենայնս սիրով եւ խաղաղութեամբ բնակի. կռիւ, անարգանք, ստազրանք, սպանումն, եւ այլ այնպիսիք զորս կրեն չարքն, հեզն եւ խոնարհն յայցանէ հեռի լինի: Եօթներորդ՝ Տէրն հրամայէ. (որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի. եւ որ բարձրացուցանէ՝ խոնարհեցի:) Որպէս այնքիկ որք խոնարհեցան եւ չարչարեցան վասն սիրոյն Զրիստոսի, բարձրացան ի յերկիսս ի կարգս հրեշտակաց. եւ որք ոչ խոնարհեցան այլ բարձրացան, ի յերկիր կործանեցան եւ կորեան: Այս փարիսեցին որ բարձրացոյց զինքն, կորեաւ. եւ մաքսաւորն՝ խոնարհութեամբն արդարացաւ. որպէս յայտ է յաւիտարանին: Ութներորդ՝ խոնարհութեամբն բնակի Աստուած ի մարդն. ըստ այնմ, (ես յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս. եւ որք դողան ի բանից իմոց:) Չայս որ երկինք եւ երկիր ոչ կարեն տանիլ խոնարհութեամբ ընդունի յինքեան. որպէս կոյսն Մարիամ աստուածածին յորժամ ասաց՝ (կամ աղախին Տեառն,) բնակեցաւ

բանն Աստուած յորովայն նորա. եւ ի ծնանիլն մարմնով՝ ասէր. (նայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք:) Իններորդ՝ աչքն Աստուծոյ ի երկնից ի յերկիր ի խոնարհն եւ ի հեզլն ակնարկէ հանապազ. ըստ այնմ, (զխոնարհս տեսանէ յերկնից ի յերկիր. յարուցանէ գտառապետլսն. եւ նստուցանէ ընդ իշխանս.) այսինքն, թէ որք է, թէ այրի, թէ տառապետլ, թէ զրկետլ, թէ նեղետլ, թէ գերետլ, հանապազ ի նոսա է աչքն Աստուծոյ, զնոսա տեսանէ եւ իրաւունս առնէ նոցա: Տասներորդ՝ զաղօթս խոնարհաց տեսանէ. եւ լսէ զաղաչանս նոցա. ըստ այնմ, (հայեցաւ Տէրն յաղօթս խոնարհաց, եւ ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա.) յորժամ ի միտս իւր խոնարհի մարդ, եւ զամենայն մեղս առաջի աչացն դնէ, եւ խոնարհի առաջի Աստուծոյ, զայնպիսւոյ խնդրուածսն՝ անյապաղ կատարէ. (զի զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ.) զի պատարագ է Աստուծոյ հոգի խոնարհ, եւ անձն մաշտալ: Եւ ոչ միայն այս, այլեւ ամենայն բարութեամբ լնու զխոնարհս: Եւ տես ի հովիտս վայրեաց, յորժամ ցած է եւ խոնարհ, յամեն կողմանց անձրեւն ի նա ժողովի: Վասն այն ասէ. (հովիտք բազում արասցեն զցորեան:) Նոյնպէս եւ միտք մարդոյն յորժամ խոնարհ լինի, առատանայ շնորհօքն Աստուծոյ. եւ բազմանայ արդեամբ եւ բարութեամբ: Տես եւ զծառս՝ որ ոստ զպտուղն ունի, ցած է եւ խոնարհ. եւ որ դատարկ է, ցոփ է եւ անխոնարհ: Նոյնպէս ամենայն մարդ որ զբարի ինչ պտուղ ունի՝ խոնարհ է. եթէ գիտութիւն, եթէ ուսումն, եթէ առաքինութիւն եւ այլն: Տես եւ զվարդենին. որ զանուշահոտ ծաղիկն ունի, փոքր է, մերձ ի յերկիր. եւ որ դաժան է եւ ունայն՝ երկայնաձիկ. որպէս բարտին: Վասն այն ի մորենին էջ Աստուած եւ երեւեցաւ Մովսէս, զի փոքրիկ է եւ ցած ի յօրինակ խոնարհաց՝ առ որս իջանէ Աստուած որպէս ասացաւ: Վասն որոյ ասէ Սողոմօն հոգւովն սրբով: (Տէր ամբարտաւանից հակառակ կայ. տայ զշնորհս խոնարհաց:) Եւ առաքեալն ասէ. (խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ. զի զձեզ բարձրացուցէ ի ժամանակի:) Այսինքն, ի ժամանակի գալստեանն. յորժամ ի կեանս յայս խոնարհիմք եւ հնազանդիմք պատուիրանաց նորա, ի կեանսն յայնմիկ՝ բարձրացուցանէ ի տիեզերական հրապարակին՝ ասէ. (Եկայք օրհնեալք Յօր Իմոյ՝ ժառանգեցեք զկեանսն յաւիտենից:) Որոց լիցի մեզ ամենեցուն մասն՝ ժառանգութիւն յարքայութեան Աստուծոյ մերոյ. որ է օրհնեալ յաւիտեանս ամեն:

Նորին քարզ վասն նախանձու. ի բան մարգարէին Դաւթի: (Մի նախանձիր ընդ չարս.՝ մի ընդ այնոսիկ՝ որք գործեն զանորենութիւն:) Սաղ. 36. 1: (Գլուխ. ԿԲ)

Որպէս դայեակ որ վարժէ զըստնդիայ մանուկ՝ ի սրատէ ուսանիլ զբարին՝ յեռանալ ի չարէ: Նոյնպէս շնորայօք՝ հայր է մեզ Աստուած. (որ ծնաւ զմեզ ի յոյսն կենդանի.) եւ մայր հոգեւոր է եկեղեցի սուրբ՝ որ ծնաւ զմեզ աւագանան ի հոգւոյն սրբոյ: Իսկ դաստիարակ եւ դայեակ են մեզէ մարգարէքն եւ առաքեալքն. որք իսրատեն զմեզ եւ ուսուցանեն հեռանալ ի չարէ, եւ առնել զբարի. եւ այնպէս ժառանգ լինիլ մեզ եւ ժառանգակից Զրիստոսի յարքայութեանն երկնից: Վասն այն աստուածահայր մարգարէն Դաւիթ՝ քաղցրութեամբ իսրատէ զմեզ եւ ուսուցանէ: (Մի նախանձիր ընդ

չարս: եւ մի ընդ. այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն:) Այսինքն թէ, ով որդեակ իմ սիրելի. որ ունկն դնես բանից բերնոյ իմոյ. աշխարհի ամենայն ի չարի կայ. եւ աշխարհասէր քան սիրեն զչարս. եւ ի գործելն զչարսն, չարքն վաղվաղակի կորնչին. որպէս զխորդալարին՝ որ փութով չորանայ եւ կորչի. նոյնպէս եւ նոքա: Վասն այն քեզ պատուիրեմ, որ ի բարեաց մասն եւ բաժինն վիճակեցար: Դու մի նախանձիր ընդ չարս՝ եւ որք գործեն զանօրէնութիւն. զի մի վաղվաղակի կորիցես ընդ նոսա եւ լիցիս լուցկի յաւիտենից գեհենին: Այլ բազում է չարագործացն գործ. որ ատելի է բարեգործացն եւ հաւատացելոցն. այսինքն, շնութիւն, պոռնկութիւն, ազահութիւն, գողութիւն, ստախօսութիւն, ծուլութիւն, հպարտութիւն, եւ այլն. յորոց յայսցանէ՝ պարտ է փախչիլ ամենայն քրիստոնէից: Այլեւ ի մէջ գլխաւոր եւ մեծամեծ մեղացն՝ մին նախանձն է. զի այսպէս ասեն վարդապետք եթէ՝ եօթն մահու չափ մեղք են. որք են հպարտութիւն. նախանձ. բարկութիւն. ծուլութիւն. ազահութիւն. որկորստութիւն. եւ բղջախոհ ցանկութիւն: Եւ ի յայս եօթն մեղացս՝ երկուքն առաւել մեղք են մեծամեծ քան զայլսն. այսինքն, հպարտութիւն եւ նախանձն. զի զայլ մեղսն մարդն՝ Ադամ եւ Եւա գործեցին. իսկ զհպարտութիւնն եւ զնախանձն՝ սատանայի գործեաց: Չի հպարտացաւ եւ հակառակեցաւ ընդդէմ փառացն Աստուծոյ. եւ զկեցաւ ի պատուոյ եւ ի դասէ հրեշտակացն. եւ անկաւ յերկիր. եւ ապա նախանձեցաւ ընդ փառս Ադամայ: Պարտեաց զնա եւ եհան ի փառագարդ եւ յանմահ դրախտէն. զմահ եւ զփշաբեր եւ զանհծից երկիր ժառանգեցոյց: Վասն այն մեծ է նախանձն, եւ չար քան զամենայն մեղս. զի սատանայի գործակից եւ նման առնէ զմարդն. որպէս ասէ իմաստունն. (Աստուած զմահ ոչ արար՝ բայց նախանձու բանսարկւին եմուտ մահ յաշխարհ. որ ոք զկնի ընթանայ՝ ի նորին սակի է բաին նորա: Այլ գիտել պարտ է՝ զի կրկին է նախանձն. չար եւ բարի. չար նախանձ է՝ յորժամ զբարի մարդոյն տեսանեն, յաչաղեն եւ ցաւին թէ, վասն է՞ր ունի զայն բարին. զայն փառսն. զայն ապրանսն, եւ զայլն. կամ զչարն տեսանեն եւ ինդան թէ, այնպիսի չար դիպւածոց հանդիպեցաւ. այս չար նախանձ է: Դարձեալ՝ չար նախանձ է՝ յորժամ մարդ զչարագործն տեսանէ, ցանկայ նմանիլ գործոց նորա. կամ զշունն, կամ զարբեցողն, կամ զգողն, եւ զայլն. վասն սոցա ասէ: (Մի նախանձիր ընդ չարս:) Իսկ բարի նախանձն է՝ որ մարդ զբարի գործն տեսանէ՝ եւ ցանկայ նմանիլ. այսինքն, զպահս. զաղօթս. զողորմութիւն. զհաւատ. զյոյս. զսէր: Վասն սոցա ասէ առաքեալն. (Նախանձաւոր լերուք շնորհացն՝ որք լաւքն են.) այսպիսի նախանձս՝ բարի է եւ հաճոյ Աստուծոյ. եւ առ բարի մարդիկ երելի: Իսկ չար նախանձն՝ որ սերմն սատանայի է, եւ առ չարս ի մարդկանէ գտանի, նա հինգ յատկութիւն ունի, որ քան զամենայն մեղս՝ չարգոյն է եւ հեռացեալ ի բարւոյն: Առաջինն այն է՝ որ նախանձու ախտս առ որս լինի, հանապազ միտսն չարաչարէ. զմարմինն մաշէ. հիւծէ եւ տոչորէ. որպէս իւր անունն թարգմանէ. այսինքն, նախ ի յիւր անձն վնասէ՝ եւ ապա յայլս: Եւ նախանձոտն՝ նախանձաբեկ կոչի. որ նախանձն հանապազ բեկէ եւ խորտակէ զսիրտս նորա: Վասն այն նախանձոտին երեսն՝ դեղնեալ եւս եւացեալ լինի ի դառն տրտմութենէ սրտին. բայց զայս յատկութիւնս՝ ի յայլ մեղս ոչ գտանեմք, ոչ ի հպարտն. ոչ ի բարկացողն. եւ ոչ յայլսն: Չի նոքա ի գործելն՝ սակաւ ինչ ուրախանան եւ հեշտանան. թեպէտ յետոյ տրտմին. այլ նախանձոտն՝ միշտ ի դառնութեան եւ ի տրտմութեան կայ առաջ եւ յետոյ

մեղացն. զի հառաջէ եւ թառաչէ յոգւոց հանելով. եւ ոչ փարատի ամենելին եւ ոչ մխիթարի: Երկրորդ յատկութիւն է՝ որ նախանձն ի համանմանն լինի եւ ի մերձաւորն. եւ ոչ յօտարն եւ ի հեռաւորն. որպէս ասէ Սողոմօն: (Նախանձ առն՝ ի մերձաւէ իւրմէ.) զի ոչ նախանձի քաղաքացի ընդ զինուորն. եւ ոչ իշխան ընեդ հողագործ. այլ ընդ հոմանունն եւ ընդ գործակիցն գոյանայ. զի նախանձի թագաւոր ընդ թագաւոր. եւ իշխան ընդ իշխան. աղքատ ընդ աղքատ. եւ փարթամ ընդ փարթամ. երեցն ընդ իւր նմանն. եւ երեստաւորն ընդ իւր գործակիցն: Եւ երեք դեմ մարդոյն. այսինքն, վերին. եւ ներքին. եւ հաւասար: Արդ՝ հպարտութիւն առ ներքինս լինի եւ առ հաւասարս. եւ առ վերինն ոչ լինի: Ընդդէմ այսմ՝ նախանձն առ ներքինս ոչ լինի. այլ առ հաւասարս եւ առ վերինս գոյանայ. սակաւ ինչ լինի առ հաւասարն. զի մի նմանեսցի նմա. եւ առաւելն՝ լինի առ վերնագոյնսն նմա. եւ առաւելն՝ լինի առ վերնագոյնսն յաչաղելով զբարիս ևոցա: Երրորդ յատկութիւն՝ զի զամենայն ջանս եւ զվաստակս՝ աշխատի եւ գործէ վասն նախանձու. որպէս ասէ Սողոմօն: (Տեսի զամենայն վաստակս մարդկան վասն նախանձու առն.) զի վասն նախանձու ընկերին՝ շինեն՝ տնտեն՝ ժողովեն՝ մեծանան՝ ծովագնաց լինին՝ յերկիր հեռաւոր ընթանան. շահին. վաստակին. չարչարին. եւ ունայն է ամենայն եւ ի նանիր վաստակ երկու պատճառի: Նախզի՝ այն որ մեծամեծ եւ բազում գանձս ժողովէ եւ շինէ եւ տնկէ, ոչ ինչ առաւել լնու զմարմնոյ պետսն քան զայն՝ որ տակաւ ունի եւ հանգստեամբ վայելէ. եւ թէ զի՞նչ են պետք մարմնոյն. այն է՝ զոր առաքեալն Պօղոս վկայէ. (ուսիմք կերակուր եւ հանդերձս՝ եւ այնու շատասցուք:) Պիտոյ է կերակուրն՝ զի մի մեռցուք ի սովոյ. եւ հանդերձն պահէ ի ցրտոյ եւ ի մերկութեանց. եւ այլն ամենայն՝ աւելորդ է անպիտան եւ սուտ ցանկութիւն հոգւոյ: Երկրորդ՝ ունայն է եւ սնոտի. զի մահուամբ ամենայն կորնչի եւ ունայնանայ. եւ միայն մեղքն եւ չարչարանքն մնան. եւ ստացուածքն այլոց լինին. որպէս ասէ մարգարէն. (ի զուր խռովի՝ գանձէ եւ ոչ գիտէ ում ժողովէ.) եթէ բարի՞ք ոմանք ժառանգեն, եւ թէ չարքն. ի՞րքն թէ օտարքն. սիրելի՞քն թէ թշնամիքն. զայն ոչ գիտէ: Զորրորդ յատկութիւն. զի նախանձն հին եւ արմատ լինի ամենայն չարգործոց. զի վասն նախանձու զրկեն զմիմեանս. յափշտակեն. հայիոյեն. բամբասեն. նախանձեն. կռուին. հակառակին. սպանանեն. մտանեն. եւ բազում չարիս վասն նախանձու առնեն. զի թէ չէր նախանձն, բաւական էր այս երկիրս այս թագաւորիս. այլ նախանձու՝ զիրն ունի՝ եւ յափշտակէ զնորայն. կռիւ եւ բազում արեան հեղմունք լինին: Վասն նախանձու՝ երկրագործն զմիւսոյն անդաստանն զրկէ. եւ ոչ վասն բնական կարեացն. որպէս ասէ Եսայի. (մերձեցուցանեն տուն առ տուն. եւ անդաստան առ անդաստան. զի զնկերին հանիցեն:) Վասն նախանձու շարժեցան հրեայքն ի վրայ Զրիստոսի զնշանսն Բեեղզերուղաւ համբաւել. եւ ոչ թէ ևոցա բռնութիւն առնէր ի հիւանդս ի կաղս եւ ի կոյրս բժշկելով զնոսա: Վասն նախանձու կորիս եւ դաթան՝ յարեան ի վերայ Մովսէսի. եւ հակառակէին նմա. եւ ոչ թէ զրկեցան ի նմանէ: Եւ տես թէ որպէս կորեան նա խանձաբեկքն. (զի բացաւ երկիր. եւ եկուլ զդաթան. եւ հուր վառեցաւ ի ժողովս ևոցա. եւ բոց մաշեաց զնոսա.) այսպէս հուր բորբոքի ի հոգիս ամենայն նախանձոտաց. այժմ հուրն նախանձունն. եւ յետոյ հուր գեհենոյն: Հինգերորդ յատկութիւն է՝ զոր ասէ Սողոմօն. (անզգամն բուռն եհար զքաղկաց իւրոց. եւ եկեր զմարմին իւր:) Ոչ թէ պայն ստուգէ բանս թէ, մարդ

գիր մարմինն ուտե, այլ օրինակաւ ցուցանէ զբանս թէ, որպէս հարեալն ի դիւե կատաղի եւ զմարմինն իւր ուտե. նոյնպէս նախանձոտն՝ ի դառնութենէ ախտին՝ անզգամի եւ ուտե գիր բագուկն եւ զմարմինն: Բագուկն է հարազատ եղբայր մարդոյ եւ հայրն. եւ այլ ընտանիքն՝ բոլոր մարմին: Արդ՝ ինախանձու ախտեն՝ յիմարի մարդն, եւ ուտե զբագուկ զեղբոր իւրոյ. որպէս վասն ընդունելոյ պատարագին՝ նախանձեալ կային, եսպան զԱբել զեղբայրն իւր: Նոյնպէս վասն նախանձու՝ Աբիսողոմ բուռն եհար զհօրէ եւ յափշակեաց ի նմանէ զթագաւորութիւնն: Այսպէս ուտե նախանձոտն անզգամ զմարմինն իւր: Չայս եւ մարգարէն Եսայի գրե. (այր առ քաղցի՝ դարձցի եւ կերիցէ զկէս անձին իւրոյ.) գիր անձին կէսն ուտելն այն է, որ նախանձն առաւել առ ընտանին լինի, քան ի յօտարն. եւ ի գլուխ հանէ նախանձոտն զչարն: Կամ սպանանելով, որպէս կային զեղբայրն: Կամ բամբասելով, որպէս Մարիամ եւ Ահարօն զՄովսէս բամբասեցին: Կամ զհշխանութիւն յափշտակէ. որպէս Աբիսողոմ զԴաւիթ հօր իւրոյ: Կամ նախանտելով ի մահ ածեն. որպէս հրեայքն զՔրիստոս որպէս ասացաւ յառաջն: Եւ դու տես զդատաստանն նախանձոտին. դորժամ այլոց կամի զչար եւ առնէ, ինքն այլ նոյն չարիւն կորնչի. զի ասէ Սողոմօն. (որ փորէ հոր ընկերի իւրում, անձամբ իւրով լցցէ զնա.) եւ Դաւիթ ասէ. (գուբն զոր փորեաց եւ պեղեաց՝ ինքն ակցի ի խորխորատ զոր եւ գործեաց:) Եւ յայտնի է այս ի նոյն ասացեալ բանիցս. յորժամ եսպան կային զեղբայրն վասն նախանձու, անէծս ընկալաւ յԱստուծոյ, եւ դողդոջում մարմնոյ. եւ յետոյ սպանաւ ի Դամեքայ: Մարիամ որ բամբասեաց զՄովսէս՝ բորոտեցաւ: Աբիսողոմ սպանաւ ի պատերազմին: Յաման որ զփայտն կանգնեաց մուրթբէի՝ ինքն փոխանակ նորա յիւր փայտէն կախեցաւ: Յրեայքն որք ի մահ ածին զՔրիստոս՝ ի Տիտոս եւ ի Վեսպիանոս, եւ ընդ աշխարհիս ցրուեցան: Այսպէս դառն եւ դաժան եւ չարախտ է նախանձն. զի որպէս կատաղեալ շուն՝ զիւրն եւ զօտարն ոչ ճանաչէ, այլ զամենայն խաժանէ: Նոյնպէս նախանձոտն՝ ոչ ընտրէ զիւրն եւ զօտարն. զբարին կամ զչարն. այլ զամենայն ոք վնասէ չար նախանձովն վասն ազահութեան. վասն փառաց. վասն իշխանութեան. եւ վասն այլ իրաց. եւ ինքն ընդ նմին վնասի եւ կորնչի: Այլեւ ասեն վարդապետք թէ, մախացօղ եւ նախանձոտ մարդն՝ նման է երեք իրաց: Նախ՝ նման է գաղտառ շան. զի երկու ազգ եւ շանց. չար եւ բարի: Այն որ յերեսաց գայ եւ հաչէ՝ բարի է. որ ցուցանէ թշնամութիւն իւր. եւ զգուշանայ մարդ: Այլ չար շունն՝ լուռ կալով յետուստ ըմբռնէ զջիւն: Այսպէս եւ բարկացօղն՝ բանիւ զբարկութիւնն յայտ առնէ. այլ նախանձոտն՝ առ երեսն ծածկէ. եւ յետոյ բամբասելով զընթացսն խաժանէ: Երկրորդ՝ նման է մախացօղն հրոյ ի ներքոյ յարդի ծածկեալ. եւ չորս է յատկութիւնն: Նախզի՝ ծածկեալ է հուրն: Երկրորդ՝ զի ի ներքոյ այրէ եւ ուտէ զյարդն: Երրորդ՝ դառն ծուխ ելանէ: Չորրորդ՝ թէ շնչումն հանդիպի, յետոյ բորբոքի: Այսպէս նախանձոտն՝ ծածկէ սիրելութեամբ երեսօք եւ խօսիւք զմախանսն. եւ ի ներքս զսիրտն եւ զոգին այրէ եւ ուտէ: Վասն այն հառաչէ ի սրտէն. եւ դառն ծուխն որ ընդ ռնգունսն՝ ի տեսութիւն ցուցանէ. եւ յորժամ ընկերանան եւ փչեն սակաւ բամբասելովն, յայտնի բորբոքի եւ վառ է զչար նախանձն: Երրորդ՝ մախացօղն նման է նոցա՝ որք ի հոգեվարս մտանեն. կամ նոցա՝ որք կախին զպարանոցէ: Նախզի՝ նոցա աչքն ցամաքին ի լուսոյն. այսպէս եւ նախանձոտին աչքն ոչ կարէ տեսանել: Երկրորդ՝ զի նոցա աչքն ի խոր

անկանի. եւ կոպքն պլտին. այսպէս նախանձոտին: Երրորդ՝ զի յօնքն նոցա ի վայր անկանին. եւ ոչ թողուն տեսանել. նոյնպէս մախացողն: Չորրորդ՝ նոցա ոսկերքն ցցուին. եւ քիթն սրի. եւ գոյնն դեղնի. այսպէս եւ մախացողին մաշի մարմինն. եւ ոսկերքն ի մորթն ցցուին. եւ սրի քիթն. եւ գոյնն դեղնի ի դառն մաղձոյն որ յերեսն տայ: Եւ այլ եւս նշան՝ զի նախանձոտն զափն յիրեար հարկանէ. եւ զմատուսն կցէ եւ երերայ. եւ ի միտսն տարկուսի. եւ ի սիրտէն հառաչէ. ատելի երեւի դէմք նորա որ զնախանձն ունի: Սեղանն դառն թուի. եւ ուրախութիւնն տրտմութիւն. եւ այնպէս զի ի ցաւս եւ ի չարչարանս կայ մարմնով եւ հոգւով: Եւ գիտելի է՝ զի նախանձն առաւել չար է քան զբարկութիւնն եւ զսրտմտութիւնն: Նախզի՝ բարկութիւնն ի վերայ չարաց է. իսկ նախանձն ի վերայ բարեաց, այսպէս զի բարկանամք յորժամ թիւրի մարդ ի հաւատս. կամ անկարգ է ի գործս. կամ թշնամի է մեզ: Իսկ նախանձիմք՝ յորժամ տեսանեմք զմարդն ուղիղ ի հաւատս եւ սուրբ. եւ փառաւոր ի գործս. եւ բարեկամ մեզ. եւ այդ է նշան նախանձոտին. յորժամ այլք գովեն, նա բամբասէ, թէ ուղիղ է, նա այպանէ. նախատէ. զի զայն գովութիւն որ ասեն մարդիկ՝ բառնայ ի նմանէ: Երկրորդ դարձեալ՝ թէ մարդն մեզ չար լինի գործեալ ի յանցեալն, կամ չար խորհի որ առնէ, կամ չար խօսի ի ներկայս, բարկանամք այնպիսեացն: Իսկ նախանձիմք ընդ նմա՝ որ ոչ չար է արարեալ մեզ. եւ ոչ չար խորհի. եւ ոչ չար ասէ մեզ: Եւ յայսմանէ երեւի նախանձոյն ախտն՝ որ ի բարկանալն չարչարի եւ փոխարէն հատուցանէ. այլ նախանձոտն՝ բարւոյն փոխարէն հատուցանէ: Երրորդ դարձեալ՝ բարկացողն եւ սրտմտողն՝ զղջանայ երբեմն եւ հանդարտի եւ հաշտի. այլ նախանձոտն՝ ոչ հանդարտի եւ ոչ զղջանայ, մինչեւ վնասէ զնախանձելին եւ ապա հանգչի. որպէս հրեայքն նախանձ ունէին առ Քրիստոս. թպէտ զամենայն ցաւոց բժշկութիւն ի նմանէ վայելէին, ի նախանձէն ոչ դադարէին. այլ ատէին (ոչ է մարդդ այդ յԱստուծոյ. զի զշաբաթս ոչ պահէ.) եւ այնչափ առաւելացաւ նախանձ նոցա մինչ խաչեցին զՔրիստոս: Չորրորդ դարձեալ՝ այն մարդն որ բարկացող է, վնաս այլոցն առնէ. կամ բարկութեամբն խոտէ, կամ սրտմտութեամբ հարկանէ. այլ նախանձոտն՝ նախ ի յիւր անձն վնասէ. եւ այլոց կամ առնէ վնաս կամ ոչ: Վասն այն նախանձ ասի՝ այս է նախ ի յիւր անձն չարանայ. որպէս հրով փայտն այրի՝ եւ ապա զայլս այրէ կամ ոչ. նոյնպէս ի նախանձէն՝ ինքն այրի եւ տոչորի նախանձոտն. եւ ապա հասանի կամ ոչ չարութիւն նորա: Չոր օրինակ՝ հուր որ ծածկեալ լինի ի յարդի՝ ինքն ի յինքն միայն եւ ծխայ. եւ յետոյ բորբոքի. նոյնպէս եւ նախանձոտն՝ ինքն ի յինքն միայն եւ ոխոյն եւ նենգի. եւ ծուխ նախանձուն ընդ շնչունսն ելանէ. եւ թէ տեղի. դիպի՝ ապա բորբոքի: Հինգերորդ դարձեալ՝ բարկութիւնն յայտին է զոր տեսանեմք սրտմտեալ եւ բարկացեալ. կամ ինքն ամաչէ, կամ յայլմէ խրատի եւ հանդարտի. այլ նախանձն՝ ծածուկ է ի սրտին. եւ ոչ ոք տեսանէ. եւ ոչ ամաչէ: Չոր օրինակ՝ խոցն որ յերեսս մորթոյն է՝ տեսանեն. եւ դեղ եղեալ փութով առաողջանայ. իսկ խոցն որ ի ներս է՝ ոչ տեսանի եւ դժուարաւ բժշկի. նոյնպէս եւ նախանձն ծածուկ է՝ դժուարաւ բժշկի: Վեցերորդ դարձեալ՝ բարկացողն է որպէս չուն որ ի հեռուստ աղաղակէ. նա գիտեն մարդիկ եւ զգուշանան ինքեանց: Իսկ նախանձոտն՝ է որպէս գաղտառ շուն. որ մարդն յանգետս ի վերայ երթայ. եւ նա յանկարծ յետուստ կողմանէ զքիլն խածանէ: Նա այն բարեբարոյ շուն է՝ որ ձայնիւն աղաղակէ թէ, մի գայք՝ զգուշ կացեք. եւ ձեզ թշնամի եմ: Այսպէս բարկացողն այլ բարի

Է՝ որ ճանաչեմք զչարութիւնս նորա եւ պահեմք զմեզ: Այլ նախանձոտն՝ ամենեւին է չար որպէս զգաղտառն. որ յագետս ըմբռնէ. եւ զընթացս բարի բամբասէ եւ չարախօսէ: Եօթներորդ դարձեալ՝ բարկութիւնն ի վերայ փոքունցն է, կամ հաւասարիցն, իսկ նախանձն՝ առ բարձրագոյնսն է եւ առ մեծամեծս. այն որ բարկանայ ի վերայ փոքունց կամ հաւասարից, կատարի գործն եւ հանգչի. այլ որ ի գերագոյնն նախանձի եւ հակառակի, ոչ կատարի կամքն, եւ ոչ հանգչի ի նախանձոյն. այլ հանապազ ի դառնութիւնս եւ իմախանս կենայ. վասն այն առաւել չար է նախանձն քան զբարկութիւնն: Ութներորդ դարձեալ որպէս ասացաք՝ բարկութիւնն ի բարին հանգչի. եւ ի չարն զայրանայ. իսկ նախանձն՝ ընդդէս նմա ի չարն հանգչի, եւ ի բարին զայրանայ: Նա մարդիկ ի վերայ երկրի կամ հոգեւոր են բարիք, կամ մարմնաւոր. նա հանապազ նախանձոտն զնոսա տեսեալ անհանգիստ կենայ: Եւ չկայ պատճառ չարին յոր նա հանգչի: Վասն այն ասեն վարդապետք թէ՝ նախանձոտին պիտոյ է յամենայն կողմանէ ունիլ աչս եւ ականջս՝ որ զամենայն բարիսն մարդոյ տեսանէր եւ լսէր, եւ հանապազ ի չարչարանս կայր: Իններորդ դարձեալ՝ նախանձոտն այնպէս մախայ ընդ այլոց բարիս՝ որ զհւր բարին այլ կորուսանէ վասն նոցա, որպէս ասեն առակս թէ, երկու մարդ նախանձոտք էին ընդ միմեանս. եւ թագաւորն միևն խոստացաւ թէ՝ ինչորեա յինէն պարգեւս. եւ զինչ դու ուզես՝ միոյն կրկին քո ընկերին տամ որ թշնամի է քեզ. ի միտս իւր ասէ՝ թէ ես գեղ ուզեմ, կամ ձի, կամ հանդերձ, կամ ոսկի եւ արծաթ, նոյնպէս կրկին իմ թշնամւոյն տայ. նա վասն նախանձոյն ասէ ցթագաւորն. թէ զայն ինչորեմ ի քէն՝ որ զիմ մին աչս հանես, որ զթշնամւոյն զերկուսն հանես: Տասներորդ դարձեալ՝ առաւել է նախանձն քան զբարկութիւնն. զի վասն բարկութեանն՝ բազում մարդիկ ի յուղղութիւն գան. թողուն զչարն եւ առնեն զբարիս. իսկ ի նախանձոյն՝ ոչ ամենեւին: Ոչ նախանձոտն ուղղի, եւ ոչ նախանձելին այլ յամենայն ուրեք յամենայն կողմանէ՝ չար է եւ վնասակար հոգւոյն եւ մարմնոյն եւ ընչիցն, եւ հանգստեան իւրոյ եւ այլոցն՝ որպէս ցուցաւ: Եւ այնպիսի չար ախտ է նախանձն՝ որ զհամբաւ բարի նախանձելոյն թէ տեսանէ, թէ լսէ, թէ մտածէ, միտքն զկծի եւ ցաւի. եւ հոգին մաշի եւ հալի. եւ սիրտն նեղի եւ չարչարի. վասն այն կոչի նախանձ՝ որ նախ զհւր անձն վնասէ եւ զհւր հոգին. եւ ապա առ այլս մախայ եւ նախանձի: Եւ թէ զի՞նչ են նախանձն՝ եւ մախանքն՝ եւ չարակնութիւնն: Ասեմք թէ զմին չարաբարութիւնս նշանակեն. սակայն զանազանին: Չի չարակնութիւնն այն է՝ յորժամ լսէ կամ տեսանէ զբարի ուրումն, նախ ի միտսն չարակնէ: Եւ նախանձն այն է՝ որ ախտն ի հոգին շարժի ի գործ նախանձնոյն. իբր չարականելն սկիզբն է. եւ նախանձն կատարումն նորին: Իսկ մախանքն՝ մնացորդն է նախանձոյ. որպէս ոխն եւ քէնն մնացորդ է բարկութեանն. նոյնպէս եւ մախանքն նախանձոյն: Չի որպէս հեղեղն որ անցանէ եւ քամն մնայ. նոյնպէս նախանձն եւ բարկութիւնն հեղեղ ախտիցն են. յորժամ շարժին ի գործն, լինի բարկութիւն կամ նախանձ. եւ յորժամ դադարին, քամն եւ մնացորդն կոչին մախանք եւ ոխ եւ քէն: Եւս յայտնի. չարակնութիւնն այն է՝ յորժամ երգեցին պարաւորքն, Սաւուղ պարտեաց զհազարս. եւ Դաւիթ զքիւրս. ցաւեցաւ Սաւուղ՝ եւ չարակնեաց զնա:

Եւ նախանձն՝ յորժամ շարժեցաւ բազում անգամ եւ կամեր սպանանել զԴաւիթ. եւ մախանքն՝ յորժամ ընթանայր ի լերինս, եւ ինչորեք զԴաւիթ

մախանօք նախանձոյն: Այլ թէ ոք կամի որ հանգիստ ապրի զիր ժամանակն, հեռանայ ի յախտ է նախանձու. եւ սակաւ իրօք բաւականանայ: Որպէս իրատէ իմաստունն Սողոմօն: (Լաւ է բուռն մի հանգստեամբ. քան երկու բուռն լի ջանիւ եւ յօժարութեամբ:) Այս է բարուք իրատն. լաւ է ասէ բուռն մի. սակաւ մի ստացուած եւ փոքր մի իշխանութիւն մարդոյ լաւ է առանց նախանձու՝ առանց զրկելոյ՝ եւ առանց աղաղակի, քան մեծ իշխանութիւն լինի մարդոյն նախանձով եւ աղաղակաւ. եւ բազում ստացուած յափշտակութեամբ եւ զրկանօք: Չի զմարմնոյ պետսն որք են կերակուրն եւ հանդերձն՝ փոքր ստացուած լնու. եւ շատն ոչ ինչ առաւելու, քան զցան եւ զփորձութիւնն: Վասն այն ասէն աշխարհականք թէ՛ մեծացաւ. այսինքն թէ, ցան եւ չարչարանքն բազում եղեն եւ մեծ ըստ մեծութեանն: Վասն այն ասէ մարգարէն. (մեծութիւն թէ առիւ գայցէ, մի յօժարեցին սիրոք ձեր:) Եւ առաքեալն իրատէ. (մի ցանկար մեծութեան. զի մի անկցիս ի փորձութիւնս եւ յորոգայթս:) Չի բազում եւ զանազան որոգայթ կայ մարդոյն ի մեծութենէն: Չայս իրատէ Սողոմօն. (լաւ է մին բուռն հանգստեամբ:) Մին բուռն զչափաւոր է զհարկաւոր պետսն հրամայէ ունիլ. եւ այն բաւական է քան զաւելորդն նախանձով եւ դառնութեամբ, որ ի չար ձգէ եւ ի չափաւորէն զրկէ: Եւ տես յառաջնոց օրինակաց. քանի՞ առաւել լաւ էր Յուդայի լիութիւն հարկաւորացն ի յաշակերտութիւնն Զրիստոսի, քան որ արծաթասիրութեամբն ելից զերկու բուռն. մատնեաց զՔրիստոս եւ զրկեցաւ յայնմանէ զոր ուտեր. ել ի կենաց եւ խեղդեցաւ. կորոյս զարծաթն. եւ մնաց ի ներքոյ անիծից եւ տանջանաց. եւ այս յագահութենէ եւ ի փառաց: Նոյնպէս գէեզի ունէր զչափաւոր կեանսն առ եղիսէ մարգարէն. եւ յորժամ ագահացաւ եւ էառ զարծաթն ի նեւմանայ, վիճակեցաւ յազգէ յազգ ի բորոտութիւն: Նոյնպէս քրայար լի բռամբ ունէր զթագաւորութիւնն. յորժամ նախանձեցաւ ընդ այգին Նաբովթայ եւ յափշտակեաց ի նմանէ, յաղագս այնորիկ կործանեցաւ թագաւորութիւն նորա. եւ եօթանասուն զաւակքն ի սուր անկան. եւ բարձաւ յիշատակ նորա յերկրէ: Վասն այն զայսոսիկ ի միտ առցուք եղբարք. եւ զիրատս իմաստնոյն արասցուք. յախտէ նախանձու եւ ագահութեան ի բաց փախիցուք. բաւական համարեցուք զոր ինչ ի ձեռս մեր է. զի հանգստեամբ վայելեցուք զսակաւ ստացուածս մեր:

Մի նախանձեցուք ընդ այլոյ մեծութիւն:

Մի չարակնեցուք զայլոյ փառս:

Մի բամբասեցուք զայլոյ պատիւ:

Մի յաչաղեցուք զայլոյ զգովութիւն:

Մի ատեցուք զեղբարս չար նախանձով. այլ սիրեցուք զնոսա ի սուրբ սրտէ. (զի սեր յԱստուծոյ է. եւ որ սիրէ զեղբայրն՝ սիրէ զԱստուած:) Իսկ նախանձն եւ ատելութիւնն ի սատանայէ է: (Եւ որ ատէ զեղբայր իւր՝ մարդաստան է. եւ ամենայն մարդասպան՝ ոչ ունի զկեանս յանձինն:) Վասն այն իրատէ մարգարէն. (մի նախանձիր ընդ չարս. եւ մի ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն. զի նոքա որպէս զխոտ դալարի վաղվաղակի անցցեն.) եւ լինին լուցկիք յաւիտենական հրոյն: Յորմէ փրկեցէ զմեզ Զրիստոս Աստուած Փրկիչն մեր՝ եւ զամենայն երկպագուս անուան իւրոյ ի յաւիտենական հրոյն եւ ի դառն տանջանաց մեղաւորաց. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն Ազահութեան. ի բանն առակին որ ասէ: (Դժողք՝ կորուստ ոչ յագի. Նոյնպէս անհագ է աչք ազահի:) Առակ. 27. 20: (Գլուխ. 49)

Հինգ են զգայարանք կազմեալ ի մարմինս. այսինքն, Տեսանելիք. Լսելիք. Հոտոտելիք. ճաշակելիք՝ Շօշափելիք: Վասն զի հինգ են ամենայն զգալիք. կամ գոյն է գոր աչքն տեսանէ. կամ ձայն՝ գոր ականջն լսէ. գիտն ռունգն առնու. եւ գիամն ճաշակէ. եւ զմարմինն ձեռքն շօշափէ: Եւ զի ի հնգիցս յայսցանէ՝ արտաքոյ ոչ գոյ այլ զգալի իր յաշխարհի: Վասն այն հինգ են զգայութիւնք՝ որովք ճանաչեմք զնոսա: Դարձեալ չորս են տարերք աշխարհի եւ հիմն ամենայն մարմնոց. այսինքն, հուր. եւ ջուր. օդ. եւ հող: Եւ ունիմք չորս զգայարանս՝ որ նմանեալն զնմանն ճաշակամք. զի աչօք գիուր եւ զլոյս տեսանեմք. եւ ականջով զօդ եւ զձայն ըմբռնեմք. եւ բերանով զհամ եւ զջուր ճաշակեմք. եւ ձեռամբք զձանրն եւ զթեթեւն իմանամք: Իսկ ջրոյ անօրութիւնն եւ օդոյ թանձրութիւնն խառնեալ՝ լինի հոտ, զոր քթովն ընդունիմք: Եւ յայս Ե զգայութեանց՝ աչքն եւ ականջն անյագ են. որպէս ասէ Սողոմօն. (ոչ յագի աչքն ի տեսանելոյ՝ եւ ոչ ունկն ի լսելոյ:) Եւ այս է պատճառն. զի այլ զգայութիւնքն՝ թանձր մարմինն են. եւ զթանձր մարմինն զգան. վասն այն յագեանն եւ դադարին ի հոտոյ եւ ի համոյ եւ ի շօշափելոյ: Իսկ աչքն եւ ականջն՝ անօր տեսութիւն եւ լսելութիւն են. եւ զուրուական նմանութիւնս տեսանեն եւ լսեն. վասն այն ոչ երբէք յագին. զի որքան առաւել տեսանեն եւ լսեն, առաւել կարօտին: Եւ սոքա նման եւ օրինակ են ազահ մարդկան. զի որպէս աչքն եւ ականջն միայն ի տեսն եւ ի լուրն հեշտանան. Նոյնպէս ազահ մարդն՝ ի գոյնն եւ ի ձայն ընչիցն ուրախանայ եւ հեշտանայ: Եւ որպէս անյագ է աչքն եւ ականջն ի տեսն եւ ի լուրն. այսպէս եւ ազահն՝ անյագ է ի տեսութիւն ընչիցն եւ ի լուրն. եւ որքան շատ տեսանեն եւ լսեն զհամարս մեծութեան եւ ընչից իւրեանց, առաւել կարօտին եւ պապակին: Եւ վասն այն զայս կարօտութիւն բարուցս՝ իմաստունն Սողոմօն դժոխոց համեմատէ ասելով: (Դժոխք եւ կորուստ՝ ոչ յագի. Նոյնպէս անյագ է աչք ազահի:) Դժոխքն որ է գերեզման եւ ապականութիւն. եւ մահն ոչ երբէք յագի. զի զամենայն մարմին ապականէ մահ, եւ կրէ գերեզմանն. Նոյնպէս ազահ մարդոյն աչքն եւ միտքն՝ ոչ երբէք լնանին. ոչ ոսկւով եւ արծաթով՝ եւ այլ ընչիւք մթերելալ: Այլ ազահութիւնն հոմ անուն է. զի է որ ազահ սրտիւ եւ աչօք. որպէս ասէ Դաւիթ. (որ ամբարտաւան էր աչօք եւ ազահ սրտիւ՝ ընդ նմա եւ հաց ոչ ուտէի:) Եւ է որ ազահ է բերանով եւ մարմնով՝ եւ որկրամոլ կոչի. եւ երկուքն մահացու եւ մեծամեծ մեղք են. սակայն զանազանին: Նախ ազահութիւնն հոգւոյն է ախտ. եւ որկրամոլութիւնն մարմնոյն: Երկրորդ՝ որկրամոլութիւնն միայն կերակրոյ եւ ըմպելեաց է. իսկ ազահութիւնն՝ այլ արտաքին ընչից: Երրորդ՝ որկրամոլութիւնն մանկանց է. իսկ ազահութիւնն ծերոց: Չորրորդ՝ որկրամոլութիւնն մարմնասիրացն է. իսկ ազահութիւն է ընչասիրութիւն՝ եւ հոգեւորացն հանդիպի: Հինգերորդ՝ որ մարմնական եւ որկորիւ է ազահ՝ սակաւուք յագի եւ կշտանայ. այլ որ սրտիւն է ազահ՝ ոչ լնանի. եւ հանապազ ի քաղց է եւ թերի. այսպէս զանազանի անյագն բերանով, եւ անյագն սրտիւ. զի ազահն սրտիւ՝ անյագն է որ ոչ յագի: Այլ ազահութիւնն յերիս իրս տեսանի: Նախ՝ ի վաճառն՝ որ զրկէ զընկերն: Երկրորդ՝ ի սահմանաց կամ ի ստացուածոց բաժանեալն՝ որ զառաւելն ինդրէ: Երրորդ՝ ի պատիւն՝ որ զմեծանալն կամի: Եւ թէ յորժամ տեսանէ որ

ի վաճառն զրկեցաւ, կամ ի բաժինն կամ ի պատիւն ընկերն առաւելացաւ, նեղի եւ չարչարի. կռուի եւ հակառակի. որպէս ասէ առակն: (Որ ագահն է՝ հակառակի միշտ. եւ որ յուսացաւ ի Տէր՝ պարսպի նովաւ.) այսինքն, որ յուսայ ի Տէր՝ ոչ հակառակի. եւ ոչ պահէ ստացւածս նորա. այլ ի յինքն դարձուցանէ. ի միտ ածէ թէ անցաւոր է ստացւածն. որոնէ թէ եւ չափն մեր գերեզմանն. եւ զրկիլն լաւ է քան զզրկելն: Նախզի՝ որ զրկի՝ մարմինն կորնչի. իսկ որ զրկէ հոգին: Դարձեալ՝ որ զրկէ՝ զԱստուած ի վրէժ խնդիր ունի. եւ որ զրկի՝ օգնական. լաւ համարի զխաղաղութիւնն սիրով, քան զինչս: Եւ ազահութիւնն երեք աստիճան ունի: Նախ՝ որ կարօտն է մտօք, եւ սին աչս ունի: Երկրորդ՝ նոյն ինքն ազահութիւնն բարուցն՝ որ խնդրէ ժողովել: Երրորդ՝ յափշտակութիւնն. որ անխտիր ժողովէ յամենայն կողմանէ: Եւ այսպէս զանազանին սոքա: Կարօտութիւնն ակնարկէ ի պակասութիւնն. զոր օրինակ՝ մարմնոյն քաղցն եւ ազահութիւնն՝ դիտեն լնուն զպակասն. որպէս ուտելն. եւ յափշտակութիւնն է ի գործն, որ զրկէ եւ ժողովէ: Դարձեալ՝ կարօտութիւնն սկիզբն է ախտին. եւ ազահութիւնն մէջն՝ յոր շարժի ախտն. եւ յափշտակութիւնն կատարումն ախտին: Եւ ազահութիւնն պատճառի յերկուց: Մին ի կարօտութենէ ընչից որ աղքատ լինի. եւ մին ի կարօտ բարուցն՝ որ սին եւ նեղ լինի. եւ յայս երկու ազահութենէս խօսիմք յառաջիկայոյ: Առաջինն՝ որ աղքատ է եւ ագահ. որպէս այնոքիկ որք ի պատահմանէ աղքատք են. ի ծնողաց կամ ի զրկողաց աղքատացեալ. այլ ի բարս իւրեանց ունին զազահութիւնս: Վասն այն որք գործեն հանապազ. խնդրեն յայլմէ. եւ մուրանան անդադար: Կամ զրկեն եւ յափշտակեն. եւ կամ գողանան. այսպիսիքն թէպէտ մարմնով աղքատ ենն, այլ բարուքն անազատք են. եւ ցանկութեամբն ծառայեն ազահութեանն: Վասն սոցա ասէ առաքեալն. (աղքատք որք ոչ են բարեմիտք:) Այսպիսիս՝ չար է եւ վատթար վասն բազում պատճառի: Նախզի՝ հանապազ մարմնով չարչարին եւ գործեն զկորստական վաստակն: Երկրորդ՝ հանապազ միտն ի զբազումն է, թէ յումմէ՞ խնդրեմ. զո՞վ զրկեմ. ուստի՞ գողանամ: Երրորդ՝ թէ ոչ գտանէ, տրտմի թաղծի եւ յուսահատի: Չորրորդ՝ անապատ է յաղքատութեանն. եւ միտն ծառայէ ընչիցն: Զինգներորդ՝ միշտ ցանկայ ստրուկ մեծութեանն. ամենայն մեծութիւն մարմնոյ ստրուկ է. զի անցաւոր է. այլ ազահութիւնն առաւել. զի ընչիւք աղքատ է, եւ ցանկութեամբն միայն մեծանայ: Վեցերորդ՝ զի անբան եւ անմիտ է յաղքատութեանն. եւ ոչ կամօք եւ մտաւոր: Եօթներորդ՝ զի ի խեռ եւ ի բամբասանս եւ ի նախանձ է այլոց: Ութներորդ՝ զի խորհի եւ կամի ի միտս իւր հանապազ իշխան լինիլ այլոց. զգենուլ պատւական զգեստ. ժողովել զինչս. փափկանալ կերակրովք եւ այլն: Իններորդ՝ ոչ հաւատայ նա ասողին. (մեծութիւն թէ առիւ գայցէ, մի յօժարեցին սիրտք ձեր.) եւ ոչ առաքելոյն որ ասէ. (մի ցանկար մեծութեան. զի մի անկանիցիս յորոգայթս վնասակար:) Այն է որոգայթ՝ որ վասն ընչիցն իշխանքն տուգանեն. աւազակն թալանէ. եւ գողն տանի. եւ զինքն թէ սպանանեն եւ չարչարեն, ոչ վասն Աստուծոյ, այլ վասն ընչիցն սատակի: Տասներորդ՝ որ առաւել ունի զսեր ընչիցն՝ քան զսերն Քրիստոսի. (մանաւանդ արծաթասէր, քան Աստուածասէր:) Այսոքիկ են չարախորհուրդք աղքատք. որք մարմնով պակաս են յնչից. եւ մտօքն ագահ եւ անազատ: Իսկ երկրորդ ագահն՝ որ թէպէտ ընչիւք մեծատուն լինի, այլ մտօքն սին եւ տառ եւ ծակ աչք: Նախ՝ նոքա նման են ջրգողի. որ հանապազ ըմպէ եւ ոչ յագի.

Նոյնպէս որ աչքն սին է, ոչ յագի ժողովելով: Երկրորդ՝ նման են ծակ կարասի՝ որ ոչ լնանի. նոյնպէս եւ ագահն՝ ծակ է բարուքն եւ ոչ լնանի: Երրորդ՝ նման է հրոյ՝ որ գամենայն կիւթ ըմբռնէ յագի. նոյնպէս եւ ագահն բարուք ոչ յագի: Չորրորդ՝ նման է սին երկրի. որ գամենայն շուր կլանէ եւ ոչ կանաչի. նոյնպէս եւ ագահն՝ թեպէտ բազում ինչս սատանայ, գաղէ եւ ծածկէ ի խաւարի: Դիւզերորդ՝ նման է քաղցեալ գայլի՝ որ ոչ յագի. որպէս ասէ առակն. (առիւծ քաղցեալ եւ գայլ ծարաւի.) նոյնպէս եւ ագահն հանապազ յափշտակէ որպէս զգայլ, եւ որպէս զառիւծ հզօրացեալ ի վերայ փոքունց: Վեցերորդ՝ անմիտ է. զի ոչ վասն պիտոյից, այլ վասն աւելորդացն չարչարի եւ տառապի անդադար: Եօթներորդ՝ կռապաշտ է ագահն. որպէս ասէ առաքեալն. (ագահութիւն որ է կռապաշտութիւն.) եւ ճշմարիտ է. զի թողեալ զպաշտօնն Աստուծոյ եւ զաղօթս, ծառայէ ընչիցն գիշերի եւ ի տունջեան: Ութներորդ՝ զի մոռացեալ է զօր մահուն եւ զդատաստանին. եւ շահիցն պարապեալ. որպէս այն մեծատունն՝ որոյ ետուն անդք զտոհմականսն. եւ ասէ զապարանս իմ մեծ շնիեցից. առ որ ասաց. (անմիտ՝ յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն. եւ զոր ժողովեցեր՝ ո՞ւմ լինիցի:) Իններորդ՝ ագահն անմիտ է. եւ այլոց վաստակի եւ ժողովէ եւ պահէ՝ զի այլք ցրուեսցեն. որպէս ասէ ժողովօղն. (տեսի չարութիւն ի ներքոյ արեգական. ետ Աստուած մարդոյս ինչս եւ արծաթս՝ եւ արար զևա Տեր յուտել յնչից իւրոց:) Եւ որպէս մարգարէն ասէ. (թողցեն օտարաց զմեծութիւն իւրեանց. զի գանձն եւ ոչ գիտէ ում ժողովէ:) Այնպիսին ողորմելի է. զի կորուսանէ զմարմինն եւ ոչ գտանէ զհոգին. ապա յայտ է՝ զի ագահն ոչ մարմնոյ է եւ ոչ հոգւոյ: Տասներորդ՝ ագահն յամենայն մարդկանէ խնդրէ շահիլ. եւ է անխտիր ի չարէ եւ ի բարւոյ. ի յարծաթոյ՝ ի գործոյ՝ ի վաճառոց՝ ստախօսութեամբ՝ անիրաւութեամբ, եւ այլն. միայն իմացումն եւ սերն ի շահից ժողովելն է: Թեպէտ անարգի, թեպէտ չարչարի, թեպէտ սովի, ոչ ինչ զգայ վասն ագահութեան ախտին: Վասն որոյ խրատէ առաքեալն. (բարս անաճաթասերս ունիցիք. բաւական համարեալ միայն որ ի ձեռս իցէ.) զի բնութիւնս չափաւորան շատանայ. եւ ո՞րն է չափաւորն. այն է՝ զոր ասէ առաքեալն. (շատասցուք եւ այլն.) քան զայս աւելին՝ ամենայնն ի չարէն է: Իսկ ագահութեան պատճառն կրկին է ամենայն մարդոյ: Առաջինն՝ որ բնական զմարդն Ադամ ստեղծ Աստուած փառօք եւ իշխանութեամբ. եւ եդ ի դրախտին Տեր եւ թագաւոր ամենայնի. զի ասէ գիրն. (գամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա. զիաշն եւ զարջառ եւ գամենայն ինչ:) Իսկ յետ յանցանացն՝ արտաքսեցաւ ի փառաւոր դրախտէն. եւ ի մեծութենէն զրկեցաւ. մեծատունն աղքատ եղււ. եւ տէրն ծառայ մեղաց. եւ որ իշխանն էր՝ (անասնոց եւ անբանից հաւասարեցաւ ըստ Դաւիթի.) այժմ ի յայս աղքատութիւնս տեսեալ զմեզ՝ ոչ ժուժեմք. այլ զբնական փարթամութիւնն ի միտ ածեալ, ագահեմք. զրկեմք. գողանամք. անհնազանդ լինիմք տերանց. եւ ապստամբիմք ի միմեանց: Իբրթէ բնութեամբ այսպէս ստեղծաք իսկզբանն՝ եւ զրկեցաք ի նմանէ վասն մեղաց, դարձեալ ջանք դնեմք, թէ մեղօք եւ անիրաւութեամբ ի նոյն ժամանեմք. եւ լինի այնպէս ագահութիւն: Երկրորդ՝ լինի ագահութիւն ի բնական կարօտութենէ հարկաւորաց եւ պիտոյից. որպէս կարօտ եմք կերակրոյ եւ ըմպելոյ եւ զգեստուց եւ բնակութեանց, եւ այլ այսպիսւոյ. որպէս ասէ իմաստունն: (Զբազումն չար՝ ետ Աստուած մարդկան զբաղիլ նովաւ.) զբազումն զկարօտութիւն

պիտոյիցն ասէ: Եւ այս ոչ է չար. այլ բարի է վասն վեց պատճառի: Նախ՝ կարօտ արար զմեզ Աստուած. զի լիցի պատճառ խոնարհութեան մեզ. եւ մի որպէս զնախահայրն՝ որ յորժամ անկարօտ էր ի դրախտին կերակոցդ եւ զգեստուց եւ յարկաց եւ այլն. վասն այնորիկ հպարտացաւ եւ կործանեցաւ: Չմեզ կարօտ արար. զի ի խոնարհութեան մնացուք. որպէս ասէ մարգարէն. (խոնարհութիւն քո՝ ի միջի քում.) այսինքն, պակասութիւն որ առ մեզ: Երկրորդ՝ արար զմեզ Աստուած կարօտին պիտոյից. զի վասն հարկաւորին աշխատեսցուք հանապազ. (եւ քրտամբ կերիցուք զհաց ըստ հրամանին Աստուծոյ.) եւ մի դատարկացեալ ի գործոյ, անպարապ հանապազ զմեղս գործեսցուք. որպէս իշխանք եւ բռնաւորք՝ հանապազ դատարկ են ի գործոյ. անպարապ են ի մէջ մեղաց: Երրորդ՝ ստեղծ զմեզ կարօտս ամենայնիւ՝ հոգւով եւ մարմնով պակաս եւ տկար. զի տեսեալ զկարօտութիւն հոգւոյ եւ մարմնոյ մերոյ՝ սիրեսցուք զԱստուած. եւ ինմանէ խնդրեսցուք զլցումս բարութեան: Չորրորդ՝ արար զմեզ կարօտ՝ զի միք ի միմեանց օգնութենէ գտցուք զկարօտութիւն մեր. եւ սիրեսցուք զմիմեանս. եւ լինի եղբայրասիրութիւն. զի այժմ կարօտ ենք միմեանց հոգւով եւ մարմնով. զի ի միոյն ուսանիմք. եւ այլոց ուսուցանեմք. զնեմք եւ վաճառեմք, շինելով եւ տնկելով եւ այլովն՝ դեռելս ատեմք զմիմեանս. քանի՞ առաւել ատեաք թէ անկարօտ էաք միմեանց: Հինգերորդ՝ կարօտ ենք կերակրոյ եւ զգեստի. զի ինամեսցուք զանասունս, եւ ի նոցանէ գրացանէ զպէտս մեր. ի կերակուրս, ի զգեստս, ի լուծս, ի բեռնիս, եւ յայլս: Վեցերորդ՝ արար զմեզ կարօտս եւ մերկս ի բնական զգեստուց եւ զինուց եւ կերակրոց եւ տանց բնակութեանց. զի ետ մեզ բան իմաստութիւն որարուեստիւ հնարիմք եւ գտանեմք զպակասութիւն մեր. թէ զգեստ է, թէ զէնք, թէ կերակուր, թէ բնակութիւն, եւ այլն ամենայն: Արդ՝ այսոքիկ ոչ են չար. այլ բարի եւ պատճառ բարւոյ տուեալ մեզ յարարչէն: Այլ խաբէութիւն ստանայի՝ եւ անձնիշխան կամք մեր. որք հետեւիմք նմա եւ փոխեմք զբարին ի չար. եւ չարաց պատճառ առնեմք զազահութիւն այսպէս. զի յորժամ վասն հարկաւոր պիտոյից զբաղիմք եւ հոգամք զկերակուր, զգեստ, եւ զայլ ինչ, յանկարծ թաքնաբար ի ներքս մտանէ անելորդն եւ անչափն. եւ այն լինի մեզ չար. եւ անելի հոգալովն՝ զրկեմք զմիմեանս. ի վաստակս. ի հողս, եւ ի ջուրս. եւ այն լինի անիրաւութիւն. եւ յորժամ ոչ կարեմք, լինի նախանձ եւ թշնամութիւն եւ պատերազմ, եւ սպանումն. այսպէս կարօտութիւնն տանի զմեզ յազահութիւնն. եւ ի յազահութենէ բազում չարիք յառաջ գան եւ կորուսանեն զմեզ: Եւ տես՝ ի յառաջին հարս սուրբս եւ ճգնաւորս՝ որք ստացան զչափաւոր կերակուրս՝ եւ զզգեստս եւ զյարկս. եւ այնու հաճոյացան Աստուծոյ: Իսկ որք զանելորդն ի ներս խառնեցին՝ եղեւ նոցա չար զբաղումն: Չի գործք մեղացն եւ արդարութեանն՝ երեք իրօք զանազանին: Նախ՝ չափաւորովն: Երկրորդ՝ ժամանակաւ: Երրորդ՝ հրամանաւ: Նախզի՝ ամենայն ինչ որ չափաւոր է եւ ի պէտս կարօտութեան, բարի է եւ արդարութիւն. որպէս սակաւ կերակուրն եւ ըմպելին, եւ ողջախոհ ամուսնութիւնն եւ այլն: Իսկ անչափ կերակուրն՝ լինի ազահութիւն եւ անչափ ըմպելին՝ արբեցութիւն. եւ յաճախ բղջախոհութիւնն՝ լինի պոռնկութիւն: Երկրորդ՝ ժամանակն առնէ զմեղս եւ զարդարութիւն. որպէս քեզ օրինակ՝ ի յուտիսն միսն եւ զինին եւ այլ կերակուրն՝ բարի էր. եւ այսօր ի պահս չար: Նոյնպէս ամուսնութիւնն ի հրամայեալ ժամանակն բարի է եւ

հալալ. իսկ ի յարգելեալ ժամանակն՝ որպէս ի պահսն, ի կիրակէն եւ այլն, լինի պոռնկութիւն եւ շնութիւն: Երրորդ՝ հրամանն անէ զմեղս եւ զարդարութիւնս. զի յորժամ հրամանաւ լինի եւ կամօքն Աստուծոյ, չարն բարի լինի. որպէս պոռնկութիւնն Ովսէի. զի հրամանաւ Աստուծոյ էր՝ ոչ էր մեղք. եւ սպանումն Եղիայի որ կամօքն Աստուծոյ զուրն հարիւր եւ յիսուն մարգարէսն կոտորեաց՝ ոչ էր մեղք. այսպէս եւ Սամուէլ մարգարէն եսպան զագագ թագաւորն Ամադեկայ. եւ փենեհեզ զՉամբրի եւ զՔասքի եսպան. եւ հաշտեցաւ Աստուած եւ եբարձ զմահն յԻսրայէլէ. որպէս ասէ Դաւիթ. (քահեաց եւ արգելաւ մահ. եւ համարեցաւ նմա յարդարութիւն յազգէ յազգ:) Իսկ Սաուլոյի պատարագն զոր առանց հրամանի արար, ի մեղս համարեցաւ նմա եւ բարձաւ թագաւորութիւնն: Ոգիայի խունկն զոր մատոյց տաճարին զի չէր հրաման՝ բորոտեցաւ եւ անկաւ ի թագաւորութենէն. այսպէս եւ ամենայն գործ որ հրամանաւ Աստուծոյ եւ կանոնօք առաջնորդաց լինի՝ բարի է եւ արդարութիւն. իսկ որ արտաքոյ հրամանաց լինի, մեղք է եւ չարիք. այսպէս եւ այս. այն որ չաւաւորն է եւ հրամանաւ՝ բարի է եւ պիտանի. եւ որ առանց հրամանաց է եւ անչափ, ազահութիւն է եւ չար: Եւ բազում չարիս անէ ազահութիւնն: Նախ՝ որպէս ասէ առաքեալն. (ազահութիւն որ է կռապաշտութիւն:) Չի այս է գործ կռապաշտիցն. որք զպաշտօնն ճշմարտին Աստուծոյ խափանէին եւ մատուցանէին կռոցն. որք պատկերք ոսկւոյ եւ արծաթոյ էին: Նմանապէս եւ ազահութիւնն՝ զպաշտօնն Աստուծոյ եւ զծուր եւ զաղօթս խափանէ՝ եւ տայ ընչից ոսկւոյ եւ արծաթոյ. զի ախտիւ Նորին քարոզ վասն Արծաթսիրութեա. ի բանն ժողովողին: (Որ սիրէ զարծաթ՝ ոչ յազեցի արծաթով.՝ որ սիրէ զբազում արդիւնս՝ ունայնութիւն է:) Ժող. 5. 9: (Գլուխ ԿԴ)

Արարիչն Աստուած զհոգիս մարդկան եռամասնեայ է ստեղծեալ ասէ իմաստունն Պղատոն. որ է բան՝ ցասումն՝ եւ ցանկութիւն: Չբանն տուեալ է մեզ՝ որով ճանաչեմք զԱստուած երախտաւոր մեր եւ ստեղծող: Չցասումնն՝ որով բարկրանամք ընդդէմ չարին եւ հակառակիմք: Եւ զցանկութիւն՝ զի զամենայն ինչ որ բարի է՝ ցանկամք եւ սիրեմք եւ գործեմք: Եւ ի յայս ցանկալի իրացս՝ կայ զոր առնումք եւ ցանկամք եւ յազեանամք. որպէս մարմնաւոր տան կերակուրն, եւ ըմպելին. զի սակաւիկ մի զպէտս մեր առնումք եւ յազեանամք: Եւ կայ իր մի՝ որ ոչ է յազեցումն. որպէս այն զոր աչօք տեսանեմք, եւ ականջօք լսեմք, ոչ յազեանամք. որպէս ասէ իմաստունն յայլ ուրեք. (ոչ յազեցի ական ի տեսանել. եւ ոչ ունկն ի լսել.) եւ այսպէս է արծաթսիրութիւնն որ ասէ: (Որ սիրէ զարծաթ՝ ոչ յազեցի արծաթով:) Եւ այս է պատճառն. որ ամենայն կերակուր եւ ըմպելի՝ ի ներքս մտանէ եւ լնանի եւ ծանրանայ մարմինն. վասն այն յազեանամք: Իսկ տեսութիւն ածաթոյն՝ յարտաքուստ զաչսն կերակրէ. եւ զգոյնն ի միտսն տայ եւ մոլորեցուցանէ զնա եւ ոչ յազի. վասն զի զմիտսն մարդոյ՝ անյազ է ըստեղծեալ Աստուած. զի հնապագ տենչայ երկնաւորացն եւ ոչ յազեանայ: Իսկ զմարմինն՝ յազեցող է արարեալ. զի սակաւ իրօք՝ կարօտութիւն պիտոյիցն լնանի եւ դադարի: Արդ՝ տես զարծաթսիրութեան մոլութիւնն կրկին կերպիւ: Նախզի՝ զմիտսն եւ զհոգին որ անյազ է ի սեր երկնաւորացն՝ փոխէ եւ կապէ ի սեր երկրաւոր եւ հողեղէն արծաթոյս: Եւ երկրորդ՝ զմարմինն որ յազեցող է եւ չափաւոր պիտոյիւք, անյազ անէ ի սեր

արծաթոյն. որպէս ասէ: (Որ սիրէ զարծաթ՝ ոչ յագեսցի:.) Այլեւ այս գիտելի է՝ զի արծաթն եւ ոսկին եւ նմանք խոցա՝ ոչ են ի մարմնոյն պետսն զոր արարչին յօգուտ է սահմանեալ մարդոյ. որպէս կերակուրն է եւ ըմպելին եւ հանդերձն. եւ ննջելն եւ արթնութիւնն. զի այսոցիկ են հարկաւոր պետք մարդոյ. այլ արծաթն եւ ոսկին եւ այլն՝ օտար են ի պիտոյից բնութեանս. զի ոչ կերակուրն են, եւ ոչ ըմպելի. եւ ոչ հանդերձ մերկութեան, եւ ոչ այել ինչ: Այլ մարդիկ վասն զօշոտութեան եւ հեշտութեան իւրեանց գտին զնոսա ի վայելչութիւն անձանց. եւ ոչ ի հարկաւոր պետս: Եւ յորժամ հարկաւոր պետքն նուազին, արհամարհել եւ անարգ է ոսկին եւ արծաթն. եւ յորժամ հարկաւոր պետքն լնանին, ապա նոքա ցանկալի լինին ի զարդարանս վայելչութեան. եւ հարկաւոր պետն այն է՝ որ թէ լինի, ապրի մարդ. եւ թէ ոչ լինի՝ մեռանի. որպէս հուր եւ ջուր եւ այլն: Իսկ վայելչական այն է՝ որ թէ լինի՝ ոչ կերնդանացուցանէ զմարդն. եւ թէ ոչ լինի՝ ոչ մեռանի. որպէս արծաթն. ոսկին. ակն. մարգարիտն եւ այլն. զի աւելորդոք են ի մարդկային կեանս՝ եւ ընդունայն եւ ի նանիր: Վասն այն ասէ. (որ սիրէ զարծաթ՝ ոչ յագեսցի արծաթով. եւ որ սիրէ զբազում արդիւնս՝ ունայնութիւն է:.) Իսկ առաքեալն ասէ: (Ազահութիւն որ է կռապաշտութիւն:.) Արդ՝ կրկին է կռապաշտութիւն: Նախ՝ որ զկուռսն պաշտէ: Երկրորդ՝ որ զարծաթ եւ զոսկին ժողովէ: Եւ այս երկուքս՝ մի եւ նոյն կռապաշտութիւնք տասն կերպիւ: Նախ՝ ըստ նիւթոյն. (կուռք հեթանոսաց՝ որսկի եւ արծաթ են՝ ասէ մարգարէն:.) Երկրորդ՝ ըստ սիրոյն. որպէս նոքա զկուռսն սիրէին. եւ սա զոսկի եւ զարծաթ. (ուր գանձք ձեր են՝ անդ եւ սիրտք ձեր եղիցին ասէ:.) Երրորդ՝ ըստ պաշտամանն. որպէս նա թողեալ զԱստուած՝ զկուռսն պաշտէ եւ երկրպագէ. եւ սա թողեալ զպաշտօնն Աստուծոյ եւ զաղօթս՝ խափանէ վասն արծաթոյն: Չորրորդ՝ վասն սպանման. նոքա զոհէին զուստերս եւ զդուստերս իւրեանց. եւ սոքա սպանանեն զմիմեանս վասն արծաթոյ: Զինգերորդ՝ ըստ ժողովման. նոքա բազում կուռս ժողովէին. եւ սա բազում արծաթ, եւ ոչ յագի: Վեցերորդ՝ ըստ պահպանութեան. նոքա զկուռսն պահէին զի մի կորիցեն. եւ սոքա զինչ: Եօթներորդ՝ ըստ տրտմութեան. ի կորուստ կռոցն նոքա տրտմէին. եւ սա ի պակասիլ ընչիցն: Ութներորդ՝ անպիտան են երկուքն. կուռքն՝ զի (աչս ունին եւ ոչ տեսանեն եւ ոչ լսեն. եւ ոչ իսօսին եւ ոչ օգնեն.) այսպէս եւ արծաթն. ոչ ի կերակուր, եւ ոչ յըմպելի, եւ ոչ ի զգեստ, եւ ոչ ի բնակութիւն, եւ ոչ փրկէ զմարդ ի չարէ. ըստ այնմ, (ոչ օգնեն ինչն յաւուր բարկութեան. այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ:.) Իններորդ՝ անպտուղք են երկուքն. եւ արծաթ ոչ ծաղկի եւ ոչ պտղաբերէ. եւ ոչ ծնանի որպէս երկիր՝ որպէս երկիր՝ որպէս անասուն՝ որպէս ծառ եւ տունկ: Այլ թէ շահի տայ զարծաթն՝ զհոգին տուժէ. եւ թէ պահէ՝ սիրտն սեւանայ եւ ժանկի որպէս աման արծաթոյն: Տասներորդ՝ ըստ գործոյն. գործ կռապաշտիցն՝ շնութիւն, արբեցութիւն, եւ պոռնկութիւն. եւ գործ արծաթոյն՝ զնոյն առնէ. եւ քան զնոյն դառն է. զի զամենայն մեղս գործէ մարդ արծաթովն. եւ յետոյ ընդ կռապաշտիցն ի դժոխս տանջի: Չայս վկայէ որ իմաստունն է մտօք. եթէ սեր արծաթոյն՝ եւ բազում արդիւնք եւ շահ եւ վաստակք ամենայն՝ ունայն են եւ սուտ եւ ոչ ինչ: Եւ ճշմարտութեամբ ասէ վասն բազում պատճառի թէ, ունայն եւ սնոտի է սեր արծաթոյն: Նախ զի՝ զմարմինս ոչ մխիթարէ սեր արծաթոյն. զի ոչ կերակուր է եւ ոչ ըմպելի. եւ ոչ զգեստ ըստ ինքեան. թեպէտ վաճառել գտանեմք արծաթովն կերակուր

ըմպելի եւ գայլն. եւ այն ի ճարտարութենէ մարդկան եւ ի հնարից. սակայն ինքն ըստ ինքեան՝ ոչ ինչ մխիթարէ զմարմինն մարդոյ, որպէս ասացաւ: Երկրորդ՝ զի յԱստուծոյ սիրոյն ծաղրացուցանէ զմարդ. որպէս ասէ Տէրն. (Երկու Տէրանց ոչ որ կարէ ծառայել.) այսինքն, Աստուծոյ եւ մամոնայի. զի թէ զմինն սիրէն զմիւսն արհամարհէ: Երրորդ՝ զի ամենայն եղբարցն զրկող առնէ զարծաթասերն. նախ՝ ի ժողովելն՝ զրկէ յափշտակէ գողանայ եւ ամփոփէ. եւ ապա պահէ եւ զրկէ զեղբարսն եւ զընկերսն. եւ ոչ տայ աղքատաց եւ կարօտելոց: Չորրորդ՝ բանս այս որ ասէ. (որ սիրէ զարծաթ՝ ոչ յագեսցի արծաթով.) այս է՝ որ հանապազ անյագ ցանկութեամբն մաշի եւ հաշի եւ ոչ լիանայ. որպէս ասէ առաքեալն. (ցանկայք եւ ոչ առնոյք. զի անդէն ի ցանկութիւնս ձեր մաշեսցիք:) Քանզի արծաթասեր բարքն՝ ծակ է աղքատ. որքան ժողովէ, այնքան առաւել կարօտի. զի արծաթասերն՝ նման է ջրգողեալ ախտի. որքան մպէ՝ առաւել ծարաւի: Զինգերորդ՝ զի միտք արծաթասիրին՝ հանապազի յերկիր եւ յարծաթն է կապեալ. եւ ոչ կարէ հեռանալ. եւ ոչ վերանայ յերկիւս. որպէս հրամայէ Տէրն. (ուր գանձք ձեր են՝ անդէ եւ սիրտք ձեր եղիցին.) զի թիւ համարացն է ի միտսն եւ յաւելուլն արծաթին եւ պակասիլն: Վեցերորդ՝ զի սիրտ արծաթասիրին այնպէս սեւացեալ է եւ ժանկեալ՝ որպէս արծաթն. զի յորժամ ի մին տեղի կապես զարծաթն՝ զամանն սեւացուցանէ, եւ ինքն ժանկի: Նոյնպէս եւ սիրտ մարդոյն՝ սեւանայ եւ ժանկի որ հանապազ ի սեր արծաթոյն է կապեալ. որպէս ասէ Սողոմօն. (ամենայն աւուրք արծաթասիրին՝ ի խաւարի են եւ ի սուգ. ի սրտմտութեան եւ ի հիւանդութեան.) այն է խաւարն՝ որ հոգ արծաթոյն հանապազ զմիտսն խաւարեալ ունի. եւ ոչ լուսաւորի աստուածային բանիւն. որպէս Տէն հրամայէ. (պատրանք մեծութեանն հեղձուցանեն զբանն.) եւ ի սուգ է՝ յորժամ ցանկութիւնն ոչ կատարի, տրտմի եւ տխրի դիմօքն. եւ սրտմտութեամբ զածառայս եւ զմշակսն վարէ ի գործն. զի պատրաստեսցեն աստի եւ անտի զարծաթն. եւ յորժամ պակաս ժողովեն՝ սրտմտի ի վերայ նոցա եւ զայրանայ. եւ յառաւել տրտմութենէն եւ ի բարկութեանցն՝ հիւանդանայ եւ գժմնի դէմ նորա: Վասն այն արծաթասիրին դէմքն դեղնած եւ սեւակերպ լինին. եւ այնու իմաստուն մարդիկք ճանաչեն զնա, թէ արծաթ ունի ժողովեալ: Եօթներորդ՝ արծաթասերն ոչ կարէ քաղցր ի քուն մտանել. որպէս ասէ Սողոմօն. (որ յագի մեծութեամբ, ոչ համարձակ ննջէ. այլ ծառայն քաղցրութեամբ ննջէ.) այս է զի աղքատ մարդն՝ որ չունի զգաւ արծաթսիրութեանն, հեշտութեամբ զհարկաւոր պետսն հոգայ՝ եւ ոչ զաւելորդոյն. եւ թէ շատ եւ թէ սակաւ ուտէ, զքաղց որովայնին լնու եւ հեշտութեամբ ննջէ եւ անհոգ: Այլ մեծատունն՝ վասն ազգի ազգի հոգւցն՝ որ գերեալ է ի սեր ընչիցն, ոչ իշխէ ննջել ի յահէ գողաց եւ աւազակաց, ի յարթութեան լինի եւ թէ ննջէ՝ դրամքք ամրանայ. եւ զզէսս ի ձեռս եւ ի մէջս կապէ. եւ ծառայքն շրջապատեն եւ ապա ննջէ. զի մի թշնամիքն եկեալ սպանցեն զնա. եւ զստացուածսն տիրեսցեն. որպէս յուրիդ արար հողեփեռնեայ. ի գիշերի զգլուխ նորա հատեալ ել ի միջոյ նոցա. եւ ի ցերեկի աւար առին զինչսն ամենայնի. եւ բազմաց այս պատահի: Ութներորդ՝ զի արծաթն եւ մեծութիւնն՝ չարի եւ սատակման լինի պատճառ ստացողին զնա. որ բազմաց հանդիպի. յորժամ մարդ մեծութեամբն զչարն գործէ, եւ զհոգին կորուսանէ, թոյլ տայ Աստուած եւ յափշտակեն զինչս նորա. կամ իշխանք, կամ աւազակք, եւ կամ գողք. զի

զրկեսցի յնչիցն՝ եւ գոցի զհոգին. այլ նա ոչ խորհի զայն եւ զհոգեւորն. այլ եւս ժողովել եւ մեծանալ. որպէս ասէ Սողոմօն. (տեսի չար ի ներքոյ արեգական. զի ումէք մեծութիւն պահեալ, եւ կորիցէ մեծութիւն նորա, եւ նա ի զբաղման չարի է.) այս է չար զբաղումն՝ որ հոգայ վերստին մեծանալ. փոխով եւ շահով՝ գնելով եւ վաճառելով. որ դարձեալ ի յառաջի չարն անկանիցի: Չի ինչքն եւ արծաթն ամենայն՝ կորստեան իրք են. կամ ինքն միայն կորնչի եւ գնայ ի մարդոյն. կամ զստացողն իւր ընդ ինքեան կորուսանէ: Եւ թէ՛ ինչքն կորստական են. Տերն խրատէ զմեզ. (մի գանձէք ձեզ գանձս յերկրի. ուր ցեց ապականէ. եւ գողք ական հատանեն եւ գողանան:) Եւ թէ՛ զստացողն ընդ իւր կորուսանէ. յայտ է ի Սենեքերիմայ. որ վասն յափշտակելոյ զթագաւորութիւնն՝ յարեան որդիքն ի վերայ եւ սպանին զհայրն իւրեանց. եւ յորժամ ոչ կարացի տիրել, Ադրամելէք եւ Սանասար փախստական եղեն ի հայս: Նոյնպէս եւ վասն զմեծութիւնն յափշտակելոյ՝ Կիրոս թագաւորն մարաց եսպան զԲաղտասար թագաւորն բաբիլացոց. ըստ որում մեկնեաց զգիրն Դանիէլ: Եւ այսպէս բազումք են ի մարդ կանէ՝ որք ինչքն եւ մեծութիւնն նոցա չարի չինին պատճառք եւ կորստեան: Իննէրորդ՝ ի պատահիլն մահու՝ յորժամ մեռանի մարդ, թողու օտարաց զմեծութիւն իւր ի նախատինս եւ յանձս. որպէս ասէ Դաւիթ. (յորժամ տեսցես թէ իմաստունք մեռանին, ի միասին անզգամք եւ անմիտք կորիցեն. եւ թողցեն օտարաց զմեծութիւնս իւրեանց:) Եւ զօտարսն զայն ոչ գիտեմք թէ չա՞ր են թէ բարի. սիրելի՞ թէ թշնամի. արծա՞ն թէ անարծան. վասն այն ասէ Դաւիթ: (Իզուր խռովի՝ գանձէ եւ ոչ գիտէ ում ժողովէ:) Տասներորդ՝ զի արծաթն եւ այլ ինչքն՝ ոչ մնան մեզ. եւ ոչ փրկեն զմեզ յորոգայթէ մահուն. եւ ոչ ի մեռանիլն ընդ մեզ տանիմք. մեզ մնան աշխարհիս փառքն եւ ծեծութիւն. զի ոչ կարեմք մեր որդւոցն ի ժառանգութիւն տալ զինչս մեր. զի բազում մեծատանց եւ թագաւորաց որդիք՝ եղեն աղքատ եւ ստրուկք. եւ ոչ կարացին ժառանգել զհայրենիսն. որպէս որդին Սաւուղայ Մեմփիփոստէ կաղն Դաւթի՝ ոչ կարաց ժառանգել զթագաւորութիւն հօրն. այլեւ ծառայ եւ ստրուկ եղեւ ի տան Դաւթի: Այլեւ ոչ փրկեն զմեզ յորոգայթէ մահուն. զի թէ ինչքն փրկել կարէին՝ մեծատունք ոչ մեռանէին: Վասն այն ասէ իմաստունն. (ոչ օգնեսցեն ինչք յաւուր բարկութեան եւ այլն:) Այլեւ ոչ գնան ընդ ի գերեզման. զի ասէ առաքեալն. (ոչ ինչ բերաք. յաշխարհ, եւ ոչ տանիլ ինչ կարասցուք.) այլ որպէս մերկ ելաք յորովայնէ մօր. եւ մերկ դառնալոց եմք ի մայր գերեզմանին. զի որպէս այն որ արածէ զհողմն՝ անկար է ըմբռնել զհողմն: Նոյնպէս անկար է զինչս ընդ իւր տանիլ. եւ որպէս կողովն եղեալ ի ջուր ի հանիլն ի ջրոյն՝ թափուր եւ դատարկ ելանէ ի դուրս. նոյնպէս եւ մարդիկ ի կենցաղոյս այս՝ դատարկ ի յնչից եւ ունայն ելանեն. եւ զամենայն մեծութիւն եւ զփառս՝ եթէ շինածք, եթէ հարյրենիք, եթէ ստացւածք, եթէ գանձս, եթէ ծառայս եւ աղախնեայս, զամենայն ի տեղիս թողումք. որպէս ասէ Դաւիթ. (ոչ թէ ի մեռանիլն իրում առցէ ընդ իւր զամենայն, եւ ոչ թէ իջցեն փառք տան նորա ընդ նմա:) Այլ ախտ չարեաց. որպէս ասէ Սողոմօն. (որ զայն ճգնիմք եւ վաստակիմք հանապազ, որ ի մեռանիլն օտարանայ ի մենջ:) Եւ տեսէք եղբարք այլ իմն չարութիւն եւ ողորմ գործ. որ ինչքն ոչ գան ընդ մեզ. այլ դատապարտութիւն ընչիցն, եւ խիղճ եւ մեղքն ընդ մեզ գան ի յայն կեանսն եւ տանջեն զմեզ: Չոր օրինակ՝ սատակեալ շաղից մեռեալ կենդանւոյ, կամ զազրահոտ աղբ, եւ կամ այլ ինչ որ ինքն ընկեցեալ է ի բաց՝

Եւ զգարշ հոտն բուրբ առ մեզ: Նոյնպէս եւ զարշելի ստացուածք աշխարհիս՝
աստ մնան. եւ դատապարտութիւնն ընդ մեզ գայ. որպէս այն մեծատանն որ
պատակեր կարօտեալ կաթիլ մի ջրոյ. եւ ողորմածն Աբրահամ ոչ
արժանաւորեաց զնա. նոյնպէս եւ ամենայն մարդոյ է լինելոց: Եւ այս է
պատճառն. որ մարմնական ինչքն ընդ մարմնոյն մնան. իսկ գործեցեալ
մեղքն որք անմարմին են, ընդ անմարմին հոգւոյն անդ ընթանան եւ
չարչարեն զհոգին եւ զմարմինն. որպէս ասէ ոմն ի սրբոցն: (Վայ մեծատանց՝
զի ինչքն եւ մեծութիւնն թողուն զնոսա. եւ հուրն յաւիտենից ընդունի
զնոսա:) Այլ այս ոչ ամենայն մեծատանց հանդիպի. այլ չարացն միայն. որք
ստանան զմեծութիւնս եւ ի գործ ածեն ի մարմինս եւ կորուսանեն զհոգիս:
Իսկ բարեպաշտ մարդիկ՝ որոց տայ Աստուած զմեծութիւն, տայ եւ զայն
շնորհ, որք գիտեն այնու գտանել զհոգի եւ զմարմին. որպէս ասէ Սողոմօն.
(Ետ Աստուած մարդոյն մեծութիւն. եւ իշխան արար զնա ուտել ի նմանէ. եւ
առնու զբաին իւր ի վաստակս իւր. այն պարգեւ յԱստուծոյ է.) այս է բանս
զոր զսեմք ի գրոց. զի բարի մարդկան մեծութիւն եւ ինչքն՝ յԱստուծոյ են.
որպէս վասն Յոբայ ասաց սատանայ առ Աստուած: (Դու ամբացուցեր
զներքին նորա եւ զարտաքին:) Ներքին ասէ զմարմնոյն առողջութիւն. եւ
արտաքին՝ զինչսն եւ զմեծութիւնն:

Եւ ասէ Աննա. (Տէր աղքատացուցանէ, եւ Տէր մեծացուցանէ.) եւ յայտ
է՝ զի բարեպաշտից մեծութիւնն յԱստուծոյ է. եւ թեպէտ մեծութիւն չարաց
յԱստուծոյ է՝ թեպէտտ պատահմամբ հանդիպի, կամ ի չարէն յաջողի, կամ
ինքն իւր անձամբն վաստակի եւ ստանայ, եւ այս եւս յԱստուծոյ է. այլ այս
ներողութեամբ եւ թոյլ տալովն է Աստուծոյ. իսկ բարեաց մեծութիւնն,
կամենալովն է

Աստուծոյ: Արդ՝ որպէս զինչս տայ Աստուած բարեացն. նոյնպէս եւ
զիշխանութիւն տայ նոցա՝ բաժին առնուլ մարմնոյն, եւ բաժին տալ հոգւոյն:
Մարմնոյ բաժինն այն է՝ որ զմարմինն անկարօտ պահէ ի պիտոյիցն. եւ
հոգւոյ բաժինն այն է՝ ու աղքատաց տայ եւ զհոգին անկարօտ պահէ եւ
յերկիսս գանձէ. որպէս հրամայեաց Տէր մեր. (գանձեցէք ձեզ գանձս
յերկրիս.) եւ դարձեալ՝ (արաւք ձեզ բարեկամս ի մարմնայէ
անիրաւութեան.) այնպիսի մարդն՝ մեծ պարգեւ էառ յԱստուծոյ. այնպիսին
ուրախ է իւր վաստակն. թէ ինչքն կորնչի թէ մնայ, ոչ ցաւի. զի զիւր բաժինն
յերկնիս գանձեաց: Եւ թէ շուտ մեռանի եւ թէ ուշ, ոչ հոգայ, զի յուսովն
ուրախ է վասն յաւիտենից կենացն. որպէս ասէ Դաւիթ. (ուրախ լիցի
ամենեքեան՝ որք յուսացեալ են՝ ի քեզ. յաւիտեան ցնծացեն եւ այլն:) Եւ
Պօղոս ասէ. (ինձ կեանք Քրիստոսի է՝ եւ մեռանիլն շահ:) Այլ դարձեալ խեղճ
եւ ողորմելի մարդ կայ յաշխարհիս վերայ. որպէս ասէ Սողոմօն. (տեսի
չարութիւն՝ ի ներքոյ արեգական. որ ետ Աստուած ինչս մարդոյն մեծութիւն.
եւ արար զնա Տէր ուտել ի նմանէ եւ այլն:) Չի գերեք ազգ մարտդիկ որք
արծաթասերք են, նախատէ իմաստունն Սողոմօն: Նախ՝ որ ինքն միայնակ
լինի մարդն. որ չէ յաջողեալ յամուսնութեան. եւ չունի զաւակ. կամ չէ ծնեալ
որդի եւ դուստր. կամ մեռեալք են եւ ոչ ունին ազգական. ոչ եղբայր, ոչ քոյր.
կամ ինքն գաւառաւ հեռացաւ եւ օտարացաւ. եւ ոչ ունի որդիս որոց գանձէ
ըստ առաքելոյ. (հարք որդւոց գանձեն.) եւ ոչ ազգական որոց վայելէ. եւ նա
հանապազ առանց դանդաղելոյ ի վաստակ է եւ ի ջանս. ժողովէ, ամփոփէ,
եւ ոչ մսխէ. եւ ոչ յագի. ոչ մարմնովն հանգչի, եւ ոչ հոգւովն անզբաղ կեանս

ստանայ. զի հոգւոյ բարութիւնն անգբաղութիւնն է: Եւ այս եւս գբաղումնս չար է ասէ. զի թէ հայր վասն որդւոյն վաստակի եւ չարչարի, այն բնական աղետն է գոր ունի առ որդիսն: Իսկ նա վասն ինանիր ագահութեան չարչարի. վասն այն գբաղումն չար է: Երկրորդ՝ նախատելի են արծաթասերքն. որ ինչքն իւրեանց՝ սատակման եւ չարի եղեն պատճառ. կամ ի յաւազակաց, կամ ի գողոց, եւ կամ յիշխանաց. եւ նա դարձեալ կամի գառաջին մեծութիւն ստանալ՝ որ դարձեալ պահճառ լինի նմա չարեաց եւ տանջանաց: Երրորդ՝ նախատելի են ագահ արծաթասերք. որպէս ասէ. (Ետ Աստուած նմա ինչս եւ մեծութիւն. արծաթ եւ ոսկի եւ գայլն ամենայն.) եւ նա վասն ագահութեան ծրարէ եւ թաքուցանէ. ոչ ինքն վայելէ եւ ոչ գայլս հաղորդէ աստուածային պարգեւացն: Այլ ասէ ընդ այն մեծատանն՝ որ յաւետարանին է գրեալ. (որում ետուն անոք գտոհմանկանսն. քակեաց գշտեմարանս. եւ մեծամեծս շինեաց. եւ անդ ժողովեաց գցորեանն եւ գամենայն բարութիւնս:) Այսպիսի ռիշա եւ ագահ էր չարն նաբաղ՝ ոչ վայելէր զինչս իւր. եւ ոչ կարաց առատանալ առ Դաւիթ: Վասն այն ի սպառնալեացն Դաւթի սատակեցաւ յԱստուծոյ. եւ օտարն ի նմանէ Դաւիթ՝ արժանապէս ժառանգեաց զկին նորա Աբիգա. եւ գստացուածս նորա վայելեաց: Վասն այնպիսի ագահին՝ ասէ Սողոմօն. (Եթէ ծնցի հարիւր այր, եւ ամք կենաց նորա բազմացի ի վերայ երկրի, սակայն գերեզման ոչ գտցի նմա:) Չի տայ Աստուած այնպիսի ռիշա մարդոյն բազում որդիս եւ երկար կեանս. եւ այս է պատճառն. զի թէ չունէր որդիս՝ ասէին օտարաց ոչ տայ. զի իւր որդւոցն պահէ. ահա զի որդիս ունի՝ եւ ոչ որդւոցն տայ զինչս իւր: Եւ թէ երկարակեաց չլինէր, ասէին տղայ էր եւ ոչ հասաւ ի կատարելութիւն. վաստակ այն բազում ժամանակ տայ Աստուած՝ եւ նա ի յայն չար կամացն ոչ փոխի եւ ոչ արձակէ զձեռնն. ոչ վասն իւր մարմնոյն, եւ ոչ վասն ընտանեացն. այլ կապեալ է զձեռն. եւ միայն պահող է ստացուածոցն եւ ոչ բաշխող: Եւ ոչ առնէ զինչսն փրկանք իւր. վասն զի ապրանքն՝ փրկանք թարգմանի. որ մարդ տայ եւ զմարմին իւր փրկէ, եւ կամ զհոգին. եւ նա որ ռիշա է՝ ոչ մարմնոյն տայ է հոգւոյն, յանկարծակի թշնամիքն գան ի վերայ եւ յափշտակեն զինչս նորա. եւ հանեն զնա ի կենաց. զի գերեզմանի իւրում ոչ լինի արդանի: Որպէս չար թագաւորն Աքայաբ եւ Եզաբէլ վասն ագահութեանն՝ որք յափշտակեցին զայգին Նաբովթայ. յորոյց Աստուած. զՅեու՝ որ եկն ի վերայն նորա. եւ յափշտակեաց ի նմանէ գթագաւորութիւնն. ինքն Աքայաբ սպանաւ ի պատերազմին. որպէս մարգարեացաւ Եղիա եւ Միքիա. եւ զկինն Եզաբէլ ձգեաց արտաքոյ պարսպին եւ սատակեցաւ. եւ շունք լափեցին զմարմին նորա. եւ խոզք լուացան յարեան նորա. եւ գերեզման ոչ գտաւ նոցա: Այսպէս եւ Յուդա արծաթասերն որ մատնիչ եղել Զրիստոսի, անարժան եղել գերեզմանի. այլ կախեալ խեղդեցաւ. եւ գարշ հոտ նորա. յայտին եղել ամենայն քաղաքին: Նոյնպէս եւ բազում որք արծաթասերք են եւ ընչասեր՝ անթաղ ընկեցել լինին մարմինք նոցա. որոց ասէ մարգարէն Երեմիա. (գրեցէք զայրդ տարագիր. զի գերեզման ոչ գտցի դմա:) Դարձեալ՝ այլ իմն առակի նշաւակէ Սողոմօն զագահ արծաթասերն. (ասացի թէ լաւ է վիժացն քան զնա:) Չայս եւ Տէրն հրամայէ յաւետարանին. (լաւ էր նմա, թէ ոչ էր ծնեալ մարդն այն:) Ոչ թէ լաւ է ոչ ծնանիլն քան զծնանիլն. այլ յորժամ այսպէս լինի որպէս Յուդային՝ որ մարմնաւոր կեանքս լինի նմա պատճառ յաւիտենական հրոյն, նա լաւ է ապա ոչ

ծնանիլն: Նոյնպէս եւ Սողոմոն ասէ թէ՛ այնպիսի այրն որ չունի իշխանութիւն ի վերայ ընչիցն զոր վայելէ ինքն եւ կամ որդիքն իւր՝ եւ կամ օտարացն տայ, նա այնպիսին քաղցեալ է ի վերայ սեղանոյն. եւ ծարաւի ի մէջ ջրոյն. լաւ էր թէ ոչ էր ծնեալ եւ զարգացեալ. այլ որպէս զվիժածն ի ծնունդն ապականեալ էր: Վասն զի զայնպիսի ռիշտ մարդ՝ վեց իրօք հաւասարէ վիժածին: Նախզի՛ վիժածին ունայն եղել յղանալն եւ ծնանիլն. Նոյնպէս եւ այնպիսի մարդոյն՝ ունայն է եւ ի նանիր ծնանիլն եւ յաշխարհէ գնալն. եւ յաշխարհէ գնալն. զի ոչ ինչ օգուտ եղել աշխարհի կամ մարդկան: Երկրորդ՝ որպէս վիժեալն ի խաւարէ ի խաւար գնաց. այսինքն, ի խաւարէ արգանդին ի խաւար մահու վճարեցաւ. Նոյնպէս եւ ազահն ի խաւարէ կենցաղոյս՝ ի խաւար յաւիտենիցն ընթացաւ. ոչ զմարմինն մխիթարեաց ուտելով եւ ըմպելով, եւ ոչ զհոգին մխիթարեաց բարի գործովք. այլ եկաց մարմնովն խաւար, եւ մտօքն նսեմ եւ խաւար: Երրորդ ասէ՛ (ի խաւարի անուն նորա ծածկեցի.) այսինքն, զի գերեզմանի ոչ արժանացաւ. ոչ վիժեալն եւ ոչ ռիշտն. քանզի յետ մահուան մարդն՝ ի գերեզմանն յիշատակի. որպէս ասէ Դաւիթ. (կարդասցին անուանք նոցա ի հողս իւրեանց.) իսկ սոքա ոչ մտին գերեզման. եւ անյիշատակ ելին յաշխարհէ: Զորրորդ՝ զի որպէս վիժածն ոչ է տեսեալ արեգակն. Նոյնպէս եւ ոչ նա զիմանալի արեգակն ծանեաւ. որ լուսաւորէ. զմիտս սուրբ հոգին. ըստ այնմե, (ծագեցից երկիւղածաց իմոց զարեգակն արդարութեան:) Զինգերորդ՝ զի որպէս վիժածն անյոյս գնաց ի կենցաղոյս. Նոյնպէս եւ նա անյոյս է հանդերձեալ կենացն. զի ոչ ինչ է բարի գործեալ որ զհանգիստն գտանէ. եւ առանց բարի գործոց՝ ոչ դառնան գեղեցիկ: Վեցերորդ՝ զի որպէս վիժածն ի խաւար ընթանայ վասն սկզբնական մեղացն Ադամայ. զի թէ առեալ է զբնական հոգին յԱստուծոյ, ունի անմահութիւն եւ ունի յարութիւն. այլ զի մկրտութեան շնորհացն եւ բարի գործոցն ոչ ժամանեաց, ոչ մտանէ յարքայութիւնն. եւ ոչ առնու զփառս. այլ զի ոչ ունի ներգործական ոչ տանջի հրով. այլ վասն սկզբնական մեղաց նախահօրն՝ ի խաւարի մնայ: Նոյնպէս եւ ազահ մեծատունն որ ունի գոյս հանգստեան երկնից, զի ոչ է զբարիս գործեալ, այլ վասն չար գործոցն եւ անողորմ բարուցն՝ մատնի ի տանջանս հրոյն: Որպէս այն մեծատունն՝ (որ ազաներ բեհեզս եւ ծիրանիս՝ եւ ուրախ լինէր հանապազ առատապէս. եւ ոչ ողորմէր Ղազարու, մեռաւ եւ էջ ի դժոխս. եւ պապակեր ի մէջ հրոյն. եւ կաթիլ ջրոյ միոյ կարօտէր՝ եւ ոչ ոք տայր նմա:) Նոյնպէս եւ ամենայն անողորմ եւ անբարի մարդ՝ ոչ առնու զողորմութիւն ի բարերարէն Աստուծոյ. (զի անողորմ դատաստան լինիցի այնմ, որ ոչ առնէ զողորմութիւն ասէ առաքեալն:) Եւ Տէրն հրամայէ մեղաւորաց դատուն. (երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից. որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա. զի քաղցեալ եւ ոչ ետուք ինձ ուտել եւ այլն:) Զի որպէս մարմինն որ ի հողն թաղի. Նոյնպէս հոգի մեղաւորին ի դժոխս եւ ի տանջանս մտանէ որպէս մեծատունն: Եւ որպէս Ղազարու հոգին հանգեաւ ի գոգն Աբրահամու. Նոյնպէս եւ հոգի արդարոյն՝ ի հանգիստ արքայութեանն եւ յօթեանս սրբոցն ժամանէ. եւ անդ ուրախանայ ընդ հրեշտակաց դատուն, եւ ընդ պարսիհոմացեղ ընտրելոցն սրբոց. (զի հոգիք արդարոց՝ ի ձեռին Աստուծոյ են. եւ ոչ մերձենայ ի նոսա չար.) այլ են ի խաղաղութեան մինչեւ յօրն վերջին. որ մարմով եւ հոգով ընկալցին զպսակն եւ զփառս անվախճան կենացն ի Քրիստոսէ Աստուծոյ

մերոյ: Որպէս ասէ առաքեալն. (գործն կատարեցի. զհաւատսն պահեցի. այսուհետեւ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն՝ զոր հատուցէ ինձ, այլեւ ամենեցուն որք սիրեցին զյայտնութիւն նորա:) Որով եւ զմեզ արժանի արասցէ առ հասարակ յարութեան՝ փառացն՝ անթառամ պսակացն Զրիստոս Յիսուս Տէր մեր. Որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Յայլմէ քարոզ վասն որկրամոլութեան. ի բանն՝ (Որոնց Աստուած որովայնք իւրեանց են՝ այլն:) Փիլիպ. 3. 19: Կամ (Գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ՝ արբեցութեամբ:) կամ այլ ինչ: Ղուկ. 21. 34: (Գլուխ. 4Ե)

Վարդապետք ասեն թէ՛ որովայնամոլութիւնն է բերան՝ դուռն ամենայն մեղաց: Վասն այն ընդդէմ սմա՛ եդ Աստուած զառաջին պատւիրանն ոչ ուտել ի պտղոյն, յորժամ ասաց թէ (յԱստուծոյ ծառոց կերիցես՝ բայց ի ծառայն որ է ի մէջ դրախտին՝ մի ուտիցես:) Եւ վասն այն որ դուռն է ամենայն չարեաց՝ սատանայ նախ կամեցաւ զայս դուռնս բանալ, յորժամ փորձեաց զԵւա այս մեղօքս: Եւ պարտ է գիտել թէ զի՞նչ է որովայնամոլութիւնն: Որովայնամոլութիւնն է՝ տափումն բացեալ բերանի, լնու զորովայնն անյագելի. եւ սահման գիտենալոյ՝ զի որովայնամոլութիւնն է փափագումն անյագ բերանոյ առփման: Եւ սա է ընդդէմ բնութեան. եւ ընդդէմ եղբօրն. եւ ընդդէմ Աստուծոյ. եւ պակասութիւն հոգւոյ եւ մարմնոյ. եւ ուրախութիւն սարտանայի: Եւ զի է ընդդէմ բնութեան՝ վասն զի գրեալ է ի գիրս բնութեան, թէ կենդանիք որք առաւել արձակ բերան ունին, առաւել պարտին ուտել վասն մեծութեան անձինն. բայց մարդս որ գլուխ է ամենայն կենդանեաց՝ նեղ ունի զբերանն. զի արարիչն Աստուած այնպէս սահմանեաց. զի սակաւ հոեացցէ վասն կերակրոյ քան զանասունս: Դարձեալ՝ ընդդէմ եղբօրն՝ որպէս ասէ Դաւիթ. (որպէս գերեզմանք բաց են կոկորդք նոցա.) զի որպէս գերեզմանն բաց գարշելի է ամենայն մարդոյ. նոյնպէս արբեցողքն եւ որովայնամոլքն՝ գարշելի են ամենայն մարդոյն. զի օրինակ չար տան: Դարձեալ՝ մին մարդ արբեցող եւ շռայլ՝ առաւել խարճ առնէ քան զտասն մարդ: Դարձեալ՝ պակասութիւն է ընտանեաց՝ սիրելեաց՝ բարեկամաց՝ դրացեաց. զի հանապազ աղմուկ կռիւ եւ բարկութիւն է ի մէջ նոցա. որպէս ասէ Սողոմօն. (այր արբեղող՝ վիճախնդիր է:) Դարձեալ ասէ. (անառակ է գինի. եւ թշնամանօղ արբեցութիւն:) Դարձեալ՝ ընդդէմ է Աստուծոյ բազում կերպիւ: Նախ զի՛ զգարշելի ստացուածս Աստուծոյ պաշտէ. որպէս ասէ Պօղոս փիլիպեցւոց. (որոց Աստուած որովայնք իւրեանց են:) Եւ ի վերայ այսր բանի՛ ասեն վարդապետք թէ՛ մարդիկ զայլ իրն պաշտեն՝ զոր առաւել սիրեն: Երկրորդ պակասութիւն՝ զի զտաճարն Աստուծոյ խահարարոց շինէ որովայնին. զի տաճար Աստուծոյ է սիրտ քրիստոնէին. որպէս ասէ Պօղոս. (դուք ամենեքեան տաճար Աստուծոյ էք.) ապա ուրեմն որք թողուն զաղօթս, եւ հոգան զորովայնին, եւ զԱստուծոյ խոկումն թողուն վասն ուտելոց եւ ըմպելոյ, երեւի թէ՛ զորովայնն պաշտեն. եւ ծուխ խնկոցն՝ է գոլոշի կերակրոցն եւ գինւոյն: Երրորդ պակասութիւն՝ զի զպատկերն Աստուծոյ աւերէ եւ ապականէ. որպէս Երեմիա յողբն. (թխացած քան զածուխ տեսիլ նոցա՛ եւ ոչ որ ճանաչէր զնոսա.) եւ սուրբն Ջերոսիմոս ասէ թէ, ոչ ինչ իրք աշխարհիս այնպէս շլացուցանեն զիմացումն մարդոյս,

որպես գյազ ուտելն եւ ըմպելն: Չորրորդ պակասութիւն՝ զի արբեցող եւ որկրամոլք՝ աստն զԱստուած: Որպես եսաւ զանդրանկութիւնն վաճառեաց. եւ յորժամ խորհէր թէ զանդրանկութիւնն իմ վաճառեցի, ծաղր եւ նախանտիք համարէր ի սիրտս իւր զԱստուած: Նոյնպէս արբեցողք եւ որովայնամոլք յորժամ տեսանէն թէ նախատիկք եւ ծաղր են, արհամարհէն զԱստուած եւ հայհոյեն: Հինգերորդ պակասութիւն՝ զի շղթայ է եւ ճանապարհ. զի գոտս մեր ըմբռնէ. զի ի ներքոյ կարեաց մերոց թաքչի. որպէս ասէ Գրիգոր ի վրայ բանին Սողոմոսի. (ի խնդրուծոց իմոց հան զիս Տեր. թէ ի ներքոյ այսր բանիս՝ է շղթայ առաւելութեանն: Դարձեալ՝ վարդապետն ասէ. զկերակուր ձեր կերիցէք ի նմանութիւն դեղի վասն հանգստեան փորձանաց, եւ վասն առողջութեան մարմնոյ. որպէս հիւանդաց տան կերկուր պարկեշտութեամբ. զի թէ շատ ուտէ՝ ստամոքս ապականի ի ջերմութենէ յոլով կերակրոյն: Վասն այն սակաւ տան զկերակուրն. որպէս ասէ Սիրաք. (պատուեա զբժիշկս քո վասն խնդրածոց քոց.) այսինքն թէ, զոր տայ զպիտոյսն քո եւ ոչ զաւելին: Դարձեալ՝ վասն առողջութեան պարտ է զգուշ լինիլ. զի աստն բժիշկք թէ՛ հիւանդք են որպէս տիկինք. եւ ջերմութիւն ստամոքսին՝ որպէս աղախնեայք որք մեծարեն զտիկինս իւրեանց զանազան կերպիւ: Նոյնպէս ստամոքս հիւանդին՝ յորժամ ի կերակրոյ ուտէ, զան որպէս աղախնեայք ցանկութիւնք ուտելոյ եւ աստն՝ կեր յամենայն ազգ կերակրոյ. եւ բազում անգամ յորժամ զան աղախնեայք՝ թաքչի մահադեղ հոգւոյ եւ մարմոյ ի նմա. եւ ուրախանայ մոլորեալ հոգին յայն իրն զոր շահ կարծէ՝ կորնչի այնր իրօք: Վեցերորդ պակասութիւն՝ որ գայ յորովայնամոլութենէն մեծամեծ ցաւ նման բորոտութեան: Եւ աստ գիտելի է՝ զի վեց վնաս եւ պակասութիւն գայ յորկրամոլութենէ՝ որ նման է վեց ազգ ցաւոց: Առաջին՝ զի յանկարծակի սպանանէ զմարդիկ: Երկրորդ՝ յոյժ վշտացուցանէ որչափ եւ կանգնի: Երրորդ՝ զի սակաւ ոք կարէ առողջանալ: Չորրորդ՝ զի բազում ծախս խնդրէ յայն իրացն՝ որք աւելի վնասեն քան թէ շահ: Հինգերորդ՝ զի զամենայն հիւանդութիւն հոգւոյ եւ մարմնոյ՝ ընտդ ինքեան ունի կապեալ: Վեցերորդ՝ զմարդ ի ճլէլս ձգէ. եւ վատ առողջ պահէ: Առաժիկն որ փութով եւ յանկարծակի սպանանէ՝ նման է բօղմայի, որ յանկարծ բռնէ զփողն եւ սպանանէ զմարդն. որպէս Պօղոս գաղատացւոց. (մարմինն ցանկայ հակառակ հոգւոյն. եւ հոգին հակառակ մարմնոյն.) զի թշնամիք են միմեանց. զի յորժամ մինն նուաղ է եւ միւսն գեր, ներհակք են միմեանց. եւ սպանանեն զիրեարս: Բայց զի՞նչ է դեղ այնմ որ յանկարծակի բռնէ զփողսն: Աստն բժիշկք թէ, երակ առնուն ի ծործորակէն զգուշութեամբ՝ որ բազում արին ելանէ. եւ ապա առնու զօշնարին ջուրն ի բերանն եւ ողողէ: Այսպէս եւ հոգեւորապէս ցուցանէ մեզ՝ եթէ ոք անկեալ լինի ի հիւանդութիւն որկրամոլութեան, այս է հնար. զի խոկամք զմահն Զրիստոսի որ է գլուխ մեր. եւ զարին մարմնոյն Յիսուսի որ հեղաւ յաւուր չարչարանացն. ի փոշոց պսակէն, ի կողէն, ի ձեռացն, եւ ի յոտիցն. որպէս ասէ ի մակաբայեցւոց թէ, (յորժամ գնաց Յուդա ի պատերազմ, եւ ունեին բազում փիղս, եւ ի վերայ շինեալ աշտարակ, յայնժամ ցուցին զարին փղիցն.) այսինքն, զարին թթոյն՝ արիացան ի պատերազմ: Նոյնպէս որք նեզին յամենայն փորձութեանց, յոյժ խոկացեալ զչարչարանս եւ զարին Զրիստոսի, ստոյգ առողջանան եւ փրկին ի դիւական փորձութենէ: Դարձեալ՝ ողորմել զբերանն

այս է՝ խոկալ գդառնութիւնն զոր կրեաց Զրիստոս՝ զլեղին եւ զքացախն. որպէս ասէ Երեմիա յողբն. (յիշես զաղքատութիւնս իմ. զօշինարն եւ զքացախն իմ:) Չի թէ ոք առնու զճաշակ աշխարհիս՝ ոչ կարէ ապրիլ, թէ ոչ խոկասցէ զմահն Զրիստոսի. որպէս ասէ Պօղոս յերկրորդ կորնթացւոց. (որպէս կցորդ եմք չարչարանցն. նոյնպէս եւ միսիթարութեան.) եւ այսպիսի հնարիւք կարեմք ազատիլ յայսմ մեղաց: Դարձեալ՝ ասեն բժիշկք. թէ ոք առնու զկաթն խոզին՝ եւ զաղբշանն՝ եւ զջուր շուշանին եւ կղկղէ, յոյժ օգտէ ցաւին որ բռնէ զփողոս: Յոգեւորապէս խոզի կաթն՝ նշանակէ զցանկութիւն աշխարհիս. եւ աղբ շանն՝ նշանակէ զցանկութիւն աշխարհիս. եւ աղբ շանն՝ զչարչարանս դժոխոցն. եւ շուշան՝ զարքայութիւնն. թէ ոք խոկայ թէ վասն կաթին խոզի՝ եւ աղբի շան կորուսանեմք զշուշան արքայութեան, խորհելով զչարչարանս Զրիստոսի, ոչ կարուսանէ վասն ցանկութեան աշխարհիս զարքայութիւնն երկնից: Վասն երկրորդին որ յոյժ վշտացուցանէ՝ նմանի հիւանդութեան, որ կոչի նաժ, որ թարգմանի ստամոքս շնութեան. որ բնաւ ոչ լիանայ կերակրով. որպէս ասէ Դաւիթ. (սովեսցին որպէս շուկք՝ եւ շրջեսցին զքաղաքաւ.) եւ ջերօնիմոս ասէ թէ, յագումն քաղց բերէ եւ ոչ յագումն. զի մարդ որկրամով՝ կամ ունի բազում ինչ կամ սակաւ. թէ սակաւ ունի, բազում ընչից ցանկայ. զի լցցէ զորովայնս իւր. եւ թէ բազում ունի, ցանկայ ստամոքսաց որ յուով ուտէ եւ ըմպէ. զի փսիսէ՝ եւ դարձեալ ուտէ վասն ցանկութեան որովայնին. որպէս ասէ Ովսէ. (կերիցեն եւ ոչ յագեսցին հոգւով. բայց որովայն անպարշտաց անյագ են:) Վասն երրորդին որ սակաւ բժշկի: Չի այս մեղքս՝ արմատանայ որպէս բնութիւն. եւ այնպէս կապակցի ընդ նմա՝ որ ամենեւին ոչ կարէ անվնաս բժշկիլ ի նմանէ. որպէս թէ սովորի արքացութեան եւ յագ ուտելոյ՝ ոչ կարէ թողուլ զգինին. զի կամ մեռանի, կամ դարձեալ անկանի յարբեցութիւն. որպէս ասէ յառակաց. (եթէ ոք սնուցանէ զորդիս իւր փափկութամբ, յետոյ գտցէ անպարիշտեալ.) բայց զի՞նչ պարտ է առնել այնպիսոյն. Պօղոս խրատէ զնոսա ի կորնթացւոց ասելով. (թէ կերակրովն քո եղբայրն գայթակղի. լաւ է ոչ ուտել միս. եւ ոչ ըմպել գինի.) հոգեւորապէս՝ պատ ւական սիրելի մարդոյս՝ է հոգին եւ մարմինն: Եթէ ուտելով կամ ըմպելով գթէ եւ տկարանայ հոգին. լաւ է պարկեշտանալ յուտելոյ եւ յմպելոյ, որ ոչ կորնչի հոգի նորա: Վասն չորրորդին որ բազում ծախս խնդրէ՝ ասէ Ժողովօղն. (ամենայն հիւանդութիւն մարդոյ ի բերան իւր.) եւ այս յոյժ զագիր է եւ զարշելի. զագիր է զի զբաղեալ է ի լցումն որովայնին. եւ զագրութիւն նորա երեւի ի թափումն որովայնին: Դարձեալ՝ ընդունայն է մսիսել զինչս մարդոյ՝ որ սպանանիլոյ է որպէս զաւակ. որք կամին ստոյգ ի վաղիւն սպանանել. ի վարայ ամենայն մարդոյ հրաման է որ մեռանի նման գողոյ. ապա ուրեմն որ զամենայն իւկ մսիսէ որովայնին՝ ի վաղիւն մեռանի. եւ լինի որդանցն կերակուր, եւ ընդունայն է. որպէս ասէ Պօղոս ի կորնթացւոց. (կերակուր պորտոյ. եւ պորտկերակոյ. Աստուած զսա եւ զնա խափանեսցէ:) Դարձեալ՝ վատթար է զայնպիսի տիկն յագեցուցանել, որ բնաւ ոչ հասնի եւ ոչ յագի: Նոյնպէս ստամոքս մարդոյ որ պատրաստեալ է յուտել՝ զամենայն վաստակս մարդոյ ուտէ եւ ոչ յագի. որպէս ասէ Ովսէ է. (ուտելով կերիցեն՝ եւ մի յագեսցին.) այս է անէծ եւ պատիժ մնացեալ ի վերայ մեր վասն որովայնամոլութեան. եւ ոչ ոք գտանի յաշխարհի որ հաւանեցուցանէ զկամս իւր. թագաւոր կամ իշխան. եւ մուրացիկ կամ փարթամ. մեծ կամ փոքր. եւ ոչ ուտելով յագի: Վասն

հինգերորդին որ ասե թե՛ դուռն է ամենայնի մեղաց. թե փակեալ է յամենայն մեղաց՝ փակեալ կայ. եւ թե արծակ է՝ ամենայն մեղաց տեղի. զի որպէս ձի գիրացեալ՝ որ ոչ կարէ սանձահարիլ եւ նւաճիլ հանդարտութեամբ. եւ զվերելեակն ձգէ ի տիղմն եւ ի մօրատ պոռնկութեան: Վեցերորդ՝ որ լինի յորովայնամուտութենէն բազում վնաս եւ պակասութիւն ի կողմանէ մարմնոյն: Նախ՝ որ բերք քաղց. որպէս ասէ Ղուկաս վասն անառակ որդւոյն. (որ էառ զբարժին իւր. եւ եկեր ընդ պոռնիկս եւ ընդ արբեցօղս. եւ յետոյ սովամահ կորնչէր.) եւ այս յոյժ յիմարութիւն ի փողսն գնայ՝ մին տարի սովամահ լինի: Երկրորդ՝ զի յորկրամուտութենէն գայ զանազան աղքատութիւն. որպէս ասէ յառակաց. (ամենայն ոք որ սիրէ զկերակուրս՝ ի պանտիտութեան մնացէ.) ընդէ՞ր զինչս իւր ղնէ ի քսակս ծակոտս. զի բազումք յերկար ժամանակ յոյժ աշխատին եւ վաստակ առնեն. եւ ի մի օր զամն շռայլութեամբ վայրապար մսխեն. որպէս ասէ անդէաս. (զվարձս իւր ժողովեաց եւ եդ ի քսակս ծակոտս.) եւ նմայ դատարկ եւ աղքատ եւ պարտական անօրինաց. եւ ի հաւատոյն ելանէ: Երրորդ՝ ի յորովայնամուտութենէն բազում եւ զանազան ցաւ անկանի ի մարմինն. զի բազում անգամ բորոտին. իւլանան. կուրանան. հիւանդանան. ջեմոտին. որպէս ասէ Սիրաք. (ի բազում կերակրոց ելանեն հիւանդութիւնք. եւ բազումք մեռանին յորկրամուտութենէն. ոպէս յառակս. (որք յաճախեն յուտել եւ ի յմպել ի պարգեսս միմեանց, ապականեսցին նոքա հոգւով եւ մարմնով:) Արդ՝ որկրամուտութիւն եկու կերպիւ ասի: Նախ՝ ուտելով որ կոչի թուխմայ: Երկրորդ՝ ըմպելով որ կոչի արբեցութիւն: Յաղագս այսոցիկ ասէ Ղուկաս. (զգուշ կացէք անձան. գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ եւ հոգօք աշխարհականօք:) Արդ՝ վասն շուայտութեան այս է որ ասացաւս: Եւ վասն արբեցութեան այժմ ասելի է:

Նորին քարոզ վասն Արբեցութեան. ի բանն որ ասէ Պօղոս յԵփեսացոց: (Մի ըմպէր զինի յորում զեղիսութիւն է: Եփես. 5. 18: (Գլուխ. ԿԶ)

Արդ՝ չորս կերպիւ արբենալ իմանամք յԱստուածաշունչ գիրս: Առաջին՝ արբենալն իմաստութեամբ. որպէս արբեցան մարգարէքն եւ առաքեալքն եւ սուրբ վարդապետքն աստուածային գինւովն. այսինքն իմաստութեան արբեցութեամբ: Որպէս ասէ Երեմիա. (զմայլեցուցից եւ արբեցուցից զանձինս քահանայից, որդւոցն Իսրայել ի Ղեւեայ. եւ ժողովուրդ իմ լցցի իմովք բարութեամբք ասէ Տեր:) Զի որպէս ոք որ արբեալ է ի գինւոյ՝ զամենայն ինչս ի բաց ձգէ եւ տայ այլոց. նոյնպէս որ արբեալ է իմաստութեամբ՝ ոչ ինչ համարի զաշխարհս. այլ ի բաց ընկենու. որպէս արարին առաքեալքն. զի յորժամ իմաստութիւնն հօր Քրիստոս կոչեաց զնոսա, թողին զաշխարհս եւ զնացին զհետ նորա. եւ յորժամ զհոգին սուրբ առին, այնպէս կատարեալ արբեցան իմաստութեամբ, եւ ընդ արծակ ունեին զբանս իւրեանց, որք կարժէին նոքա արբած են. որպէս ասէ Սիրաք. (թե որ իմաստունն է՝ թե ամենայն ոսկի եւ արծաթ համեմատեալ լինին իմաստութեամբ, նւազ են ասէ:) Արբեալք աշխարհիս՝ զայս արբեցութիւնս ոչ ընդունին. որպէս ասէ Սիրաք. (սիրտ անզգամաց՝ որպէս զանօթ բեկեալ զիմաստութիւնն ոչ տանի:) Եւ ոչ միայն վասն իմաստութեանն Աստուծոյ

զաշխարհս ոչ ինչ համարեցան, այլեւ փիլիսոփայք ոչ ինչ համարեցան զաշխարհս վասն իմաստութեան. որպէս ընթեռնումք վասն Պղատոնին եւ այլոցն՝ որք ոչ ինչ համարեցան զաշխարհս եւ զինքեանս. որպէս զի կարասցեն հասանիլ իմաստութեանն: Երկրորդ արբեցութիւն է արբեցութիւն ողորմութեանն Աստուծոյ. որպէս ասէ սաղմոսն. (օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս զանապակ արբեցոյց զիս:) Բաժակ զողորմութիւն Աստուծոյ ասէ. զի որպէս մարդ արբեալ ի գինւոյ արի է եւ վստահ. նոյնպէս եւ սուրբքն որք արբեալ էին աստուածային գինւովն իմաստութեան՝ արիացան. որպէս Պետրոս եւ այլ առաքեալքն այնպէս արիացան, որք ամենայնի աշխարհի յաղթեցին: Երրորդ արբեցութիւն՝ է ուրախութիւն եւ ցնծութիւն եւ փառք արքայութեանն. զի որպէս մարդ որ արբեալ է գինւով՝ անչափ ուրախանայ եւ ծիծաղի. նոյնպէս եւ սուրբքն յարքայութեանն՝ անթիւ եւ անսահման ուրախանան. որպէս ասէ Դաւիթ. (արբեսցին նոքա ի պարարտութենէ տան քոյ. եւ զուխս փափկութեան քոյ տացես ըմպել նոցա.) եւ այս երեք ազգ արբեցութիւնս՝ յոյժ բարի է եւ ընդունելի Աստուծոյ եւ սրբոց նորա: Բայց չորրորդ արբեցութիւնս՝ է գինւով աշխարհիս: Եւ վասն այս արբեցութեանս՝ ասէ Սիրաք. (գինի ըստեղծեալ եղեւ վասն ուրախութեան եւ ոչ արբեցութեան.) վասն զի այս արբեցութիւնս՝ յոյժ չար է եւ մեղք, եւ մայր ամենայն մեղաց. եւ թոյն մահու ամենայն բարութեան. որպէս ասէ Գրիգոր. արբեցութիւն է կակուղ դեւ. քաղցր թոյն, անուշ մեղր. եւ ով ունիցի զսա, զրկեալ է յիւրմէ, եւ զինքն ոչ ունի. եւ ով որ զայս մեղս գործէ, ինքն բոլորովին մեղք է: Եւ այլ վարդապետք ասեն. զի որպէս յոյժ վնաս է եւ պակասութիւն երկար երաշտն երկիր. նոյնպէս եւ սաստիկ անձրեւք եւ գիջութիւնք վնասակարք են երկրի. բայց չափաւորն բարի է: Որպէս մարդ որ ոռոգէ զերկիր. նոյնպէս ի հոգիս մարդկան չափաւորն վասն կարեացն բարի է: Բայց արբեցութիւն է որպէս գյորձանս հեղեղաց որ ապականէ զերկիր. եւ զամենայն պտուղ յարմատոց քակէ: Դարձեալ ասեն թէ՛ արբեցութիւնն զրկէ իմտաց. եւ ապականէ զզգայութիւնն. ցրուէ զիմացականն. շարժ է զպոռնկականն. թերացացուցանէ զլեզուն. խառնակէ զարիւնն. եւ զամենայն անդամսն թուլացուցանէ. զկենդանութիւն մարդոյն կարճէ, եւ զփրկութիւն հոգւոյ եւ մարմնոյ կորուսանէ. վասն ասէ Պօղոս: (Մի արբենայք գինւով յորում զեղխութիւն է.) այսինքն, մի ըմպեր գինի յորում ամենայն չարութիւն եւ պոռնկութիւն, ի նմա է: Եւ որք արբենան՝ ոչ միայն պոռնիկն ընդ զեղխութեամբ, այլ ընդ ամենայն ստեղծուածս Աստուծոյ զեղխութեամբ գնան. եւ բնաւ ոչ լինի բարի յարբեցութենէն. այլ խայտառակ է ամենայն ստեղծածոցս: Որպէս օրինակ ունիմք յարարածոց. յորժամ Նոյ էարբ գինի եւ արբեցաւ, մերկացաւ զառականս. եւ որդի նորա ծաղր արար զնա: Եւ մարդն լինի անզգայ. որպէս ի նոյն ասէ. զի զովտ որ փրկեցաւ ի Սոդոմայ, էարբ գինի եւ արբեցաւ. եւ ննջեաց ընդ դստերս իւր: Չի գինին ծծումք է շերմութեամբ պոռնկական մեղացն. եւ նաֆթ պոռնկական հրոյն. զի յոր տեղի լինի, հուր պոռնկութեան բորբոքի. որպէս յառակաց. (գինին է արմատ պոռնկութեան:) Դարձեալ ասէ՛ (մի լիցիս ի պատիւ գինարբուաց. զի որ գինւով պարտին՝ ապականին:) Մի հայեսցիս ի գինին յորժամ իցէ ի կթայն. փայլ գոյն նորա. եւ քաղցր մտանէ. բայց յոտոյ խաճանէ որպէս զօձ. զի աչք գինարբուաց՝ տեսանեն զօտար կանայս. եւ սիրտք խորհին զչար. եւ լինի

որպես մարդ ննջեալ ի նաւ առանց ուղղչի. վասն ասէ Պօղոս: (Մի ըմպեր գինի յորում գեղխութիւն է:) Ճշմարիտ է. զի ամենայն արբեցողք՝ ապականին եւ յամօթ լինին յԱստուծոյ եւ ի մարդոյ: Բայց առաւել վնաս է երեք ազգ մարկան: Նախ՝ ամենայն սպասաւորաց եկեղեցւոյ: Երկրորդ՝ առաջնորդաց եկեղեցւոյ եւ եպիսկոպոսաց: Երրորդ՝ թագաւորաց եւ իշխանաց:

Վասն սպասաւորաց եկեղեցւոյ ասէ ղեւտացւոց. (գինի եւ արբեցութիւն մի ըմպեսցես դու եւ որդիք քո, յորժամ երթիսցես ի տաճար Տեառն. զի մի մեռցիք:) Եւ թէ Աստուած վասն հնոյն վրեժ խնդիր եղել եւ այնպէս մեծ մեծ հրամանս կարգեաց նոցա, ո՞րչափ եւս առաւելլ ի նորս պարտ է զգուշանալ քահանայից եւ եպիսկոպոսաց. որք եմք ի ճշմարտութիւն եւ ի լոյս օրինացս: Դարձեալ՝ մեծ նախատիկք է թագաւորաց եւ իշխանաց արբեցութիւնն. որպէս յառակս. (մի տացես գինի թագաւորաց. զի մի արբեսցին եւ մոռացին զդատաստանն Աստուծոյ:) Եւ ոչ միայն ասէ վասն քահանայից թագաւորաց եւ իշխանաց, այլ ամենեցուն որք տան գանձինս իւրեանց Աստուծոյ, կրօնաւորաց, քարոզողաց, սարկաւագաց, եւ այլոց. որպէս ասէ ի թուոց. (ամենայն մարդ եւ ամենայն կին՝ որ ուխտ է տայ զանձն իւր Աստուծոյ, ի գինւոյ եւ յամենայն արբեցութենէ զգուշացի.) ոչ ասէ թէ չէ հրաման բնաւ ըմպել գինի ի նոր օրէս. զի Պօղոս ասէ. (ջուր միայն մի ըմպեր. այլ սակայն մի գինի խառնեսցես վասն հիւանդութեան քոյ:) Դարձեալ գիտելի է՝ զի գինին ի կարգաւորաց ամենեւին արգիլեալ է. այլ աշխարհականաց չափաւորն է հրամայեալ. որպէս ասէ մեծն եւ Ագրիոս: Գինի ամենեւին մի ըմպեսցես. զայս վասն կրօնաւորացն ասէ. ապա թէ ըմպիցես, զարարիչն քո օրհնեսցես. զայս վասն աշխարհականաց եւ հասարակաց ասէ: Չի ամենեւիմք գինի ոչ ըմպելն՝ է իբրել գկուսութիւն սուրբ. իսկ չափաւոր ըմպելն՝ է որպէս հալալ ամուսնութիւն. եւ անչափ արբեցութիւնն՝ է որպէս շնութիւն եւ պոռնկութիւն: Վասն ասէ առաքեալն. (ոչ շունք, ոչ պոռնկիք, ոչ արբեցողք, զարքայութիւնն Աստուծոյ ժառանգեն:) Եւ գինւոյն՝ կրկին զօրութիւն է բնաւորեալ. այսինքն, այլայլելն եւ շարժելն: Այն է այլայլելն՝ յորժամ ըմպէ մարդ զգինին, ծուխն ելանէ ի խելսն. եւ այլայլէ զմիտսն. թէ ուրախ է, ի տրտմութիւն եւ ի լաց փոխէ. եւ թէ տրտում՝ յուրախութիւն փոխէ: Նոյնպէս յիմաստութենէ ի տգիտութիւն, եւ ի տգիտութենէ յիմաստութիւն. ի զօրութենէ ի տկարութիւն. եւ թէ տկար՝ ի զօրութիւն: Այս առաջի գործ է գինւոյն: Երկրորդ գործն՝ որ շարժէ զարբեցողն ի բարկութիւն, ի ցանկութիւն. ի խաղ. ի ծափ. ի կաքաւ ոտից, եւ այլն. որպէս ասէ գիրն. (նստաւ ժողովուրդն յուտել եւ ըմպել. եւ յարեան ի խաղալ:) Եւ այս երկու զօրութիւնս՝ բնական է գինւոյն: Առաջինն որ այլայլելն է՝ յայմանէ է, որ ինքն այլ այլի հանապազ: Ոչ է որպէս ցորեան եւ այլ պտուղ՝ որք միշտ նոյնպէս մնան. այլ գինին այլայլի. զի խաղող էր, եւ եղել քացու. եւ մաճար. եւ գինի. եւ քացախ. վասն որոյ յոր եւ մտանէ՝ այլայլէ զնա: Երկրորդ շարժումն յայնմանէ է՝ որ գինին շարժի եւ եռալ եփելովն, յորում զտարերսն բաժանէ եւ յստակի. վասն այն ամենայն մարդ զշարժումն գործէ. զի բռնական է նմա: Այլեւ այս գիտելի է՝ զի չորից ոմանց հրաման տայ իմաստունն ըմպել գինի: Նախ՝ աղքատաց եւ տնանկաց. զի մոռացին զթշուառութիւնս իւրեանց: Երկրորդ՝ տրտմեցելոց եւ սգաւորաց. զի մխիթարեսցին եւ ուրախացին: Երրորդ՝ տկարաց եւ հիւանդաց. զի

առողջացին ի ցաւոց: Չորրորդ՝ ծերոց. զի զօրութիւնն եւ գաւազան է նոցա: Իսկ մեծամեծքն բարկասիրտք են՝ զինի մի արբցեն արսէ. զի մի ցրուեսցին խելքն. եւ թիւրեսցեն զդատաստանն աղքատաց: Նոյնպէս եւ ոչ ուրախքն՝ զի մի տրտմեսցին. եւ ոչ առողջքն՝ զի մի տկարացին որպէս ցուցաւ ի վերոյ: Նաեւ տղայքն. զի մի այլայլեսցէ զմիտսն. եւ շարժեսցէ ի ցանկութիւն եւ ի բարկութիւն: Նոյնպէս եւ զգինին հոգեւոր որ է իմաստութիւն սուրբ գրոց՝ այնոքիկ որք աղքատք եւ տնանկք են յառաքինութեանց, եւ ցաւոտ եւ տրտում եւ տկարք են մեղօք, որք միշտ ցաւին եւ տրտմին ի խիղճն մտաց, նոցա տուր զայն գինին որ ասէ. (ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս.) եւ թէ՛ (եկայք ամենայն աշխատեալք եւ ես հանգուցից զձեզ.) եւ թէ՛ (Յիսուս Զրիստոս եկն յաշխարհ վասն մեղաւորաց՝ եւ գլուխն ես եմ.) այսպիսիս՝ նոցա յոյս եւ մխիթարութիւն է եւ գաւազան ուղղութեան: Իսկ որք մեծեալք են առաքինութիւն եւ ուրախ են գործօք՝ եւ արի եւ առողջ՝ անխայէ զիմաստութեան գինին. զի մի յագեալ եւ զմայլեալ լինին գործնականաւն եւ տեսականաւն, եւ այլոց աղքատաց ի գործոց, եւ տգիտաց յիմաստից անողորմ լիցին. եւ ոչ դատեսցեն ողորմութեամբ եւ ուղղութեամբ զնոսա. որպէս ասէ. (մեծամեծք բարկասիրտք են. զինի մի արբցեն.) որպէս Եղիա էր բակասիրտ. եւ լցեալ գործնականաւն եւ զմայլեալ իմաստիւք, փափկեաց զերկինս ի վեարայ Իսրայելի. եւ պատուհասեաց զարդարս եւ զմեղաւորս. զարժանն եւ զանարժանն ի միասին:

Յաղագս Շռայլութեան:

Արդ՝ աստ հետեւ մնացորդ մեղաց Շռայլութեան. որ է ներհակ ազահութեան եւ հակառակ առաքինութեան՝ որ կոչի առատութիւն: Չի շռայլութիւն՝ ներհակ է առատութեան չորս կերպիւ: Առաջին՝ զի շռայլ մարդն՝ ոչ տայ զինչս իւր. այլ հողմ փառասիրութեան յափշտակէ ի նմանէ. զոր օրինակ՝ հողմ զպտուղն ի ծառէն ձգէ. ոչ ասեն թէ ծառն բաշխեաց, այլ հողմն: Երկրորդ զանազանութիւն. զի առատն բաշխէ. բայց շռայլն ընդ վայր ճգէ. որպէս մարդ որ Իսրայելի տիկ կամ ի կարասի վերայ գինի ածէ. կամ ի վատթար աման վայթէ եւ կորուսանէ. նոյնպէս ամենայն մարդ որ տայ զինչս իւր վատ եւ չար մարդկան, շռայլ է եւ վատնօղ: Երրորդ՝ մարդ որ առատ է ոչ վասն բարեկամութեան կամ առաքինութեան, նման է հաւորսի՝ որ խայծ դնէ զի ըմբռնեսցէ զնոսա. ոչ է այս առատութիւն. այլ խաբէութիւն: Չորրորդ առատ է՝ որ բաշխէ զինչս իւր. բայց ռիշտն՝ բազում անգամ յայն իրացն տայ որ ոչ է իւր: Եւ զի՞նչ առնէ շռայլն: Ասեմ թէ բազում: Նախզի՝ զմարդն մուրացիկ առնէ. ի քաղց եւ ի ծարաւ. որպէս ասէ Ղուկաս վասն անառակ որդւոյն: Երկրորդ՝ բազում անգամ անկանի ի ձեռս վաշխառուաց. որք տան նմա յոլով չարիս գործել վաշխառելով եւ ուտելով: Երրորդ՝ զի զմարդիմ գող եւ աւազակ առնէ. եւ նմանի սարդի ոստայնի՝ զի յաղեաց իւր հինէ եւ ըմբռնէ բազում ճանճ եւ ուտէ. եւ դարձեալ հինէ: Չորրորդ՝ որ զհոգեւոր բարութիւնն ատէ. որպէս Եսաւ վասն ոստանն զօրհնութիւն Աստուծոյ վաճառեաց: Եւ թեպէտ ամենայն մարդոյ վատթար է շռայլութիւն եւ վատնելն՝ առաւել եւս վատթարագոյն է քահանայից վասն բազում պատճառի: Նախ՝ ասէ սուրբն Գրիգոր թէ՛ ամենայն ինչ զոր ունին քահանայք՝ աղքատաց է. վասն այնորիկ զամենայն ինչ որ առաւել քան զհանդերձն եւ զկերակուրն առնու՝ անպատշաճաբար մեծ մեղք է եւ աւազակութիւն եկեղեցւոյ: Վասն Էր՝ զի ամենայն ինչ եկեղեցւոյ Զրիստոս է. վասն այն նոցա պարտ է տալ. զոր ինքն

ասէ. (ամենայն որ յաւելցին ի ձեզ՝ տուք աղքատաց.) որպէս ասէ Պօղոս. (ունիմք կերակուր եւ հանդերձ՝ եւ այնու շատացուք:) Եւ տուրք ոսկեբերանն ասէ. յոյժ բարեգոյն է կերակրել զաղքատս, քան թէ ծածկել զքարինս ոսկուով, եւ զորմունս պատկերօք: Երկրորդ՝ պարտ է զի քահանայք բարի օրինակ զիցին այլոց. յոյժ անպատեհ է, թէ բժիշկք որք պարտին զայլս բժշկեալ՝ թէ ինքեանք այլ ի նոցանէ հիւանդանան: Երրորդ՝ զի այս մեղքս՝ արգել է զնոսա յաղօթից եւ ի բարեգործութենէ: Չորրորդ՝ երկիւղ դատաստանին Աստուծոյ. զի ասէ Քրիստոս զբանն զայն նոցա յաւուրն դատաստանի թէ՛ (քաղցեայ եւ ոչ ետուք ինձ ուտել եւ այլն:) Ընդ նոսա զայս ասէ որ զքրտունս իւրեանց ուտեն եւ այլն: Ընդ քահանայիցն զի՞նչ կամի ասել՝ որ զՔրիստոսին ուտեն եւ առնուն. այլ ասէ զբանն զայն թէ՛ (զնացեք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից:) Որովհետեւ ասացաւ վասն ազահուրեան եւ որկորստութեան: Ասացուք այժմ վասն պոռնկութեան:

Նորին քարոզ վասն Պատրանաց սատանայի՝ Պոռնկութեան. ի բանն առակին: (Տգրկի երեք դասերք էին սիրով սիրեցեալք. երեքին ոչ յագեցուցանեին զնա.՝ չորրորդն ոչ լցաւ ասել շատ:) (Գլուխ. ԿԷ)

Մարգարեն Մովսէս՝ զլինելութիւն բոլոր աշխարհի պատմեաց.՝ զսատանայ բնաւ ոչ ինչ ճառեաց վասն կրկին պատճառի: Նախզի՛ մարդիկ յայլ ժամանակին պարզամիտք էին եւ տղայաբարուք. իմանալի եւ անմարմին իր՝ ոչ կարէին գիտել: Վասն այն նոցա օրէնք մարմնական եղ. եւ բարիք մարմնական խոստացաւ. եւ թշնամի մարմնական գիտէին. եւ ի մարմնական մեղաց խորշէին. եւ զհրեշտակաց եւ կամ զդիւաց՝ ոչ ինչ ասաց: Երկրորդ՝ զի նոր էր աստուածածանօթութիւնն. ոչ ասաց. զսատանայ հակառակ գոլ Աստուծոյ եւ թշնամի մարդկան. կամ ի յերկնից անկեալ. զի մի կարծիցեն երկու հակառակ Աստուածս. զմինն բարւոյ արարիչ՝ եւ զմիւսն չարի. որպէս մանիքեցիքն աղանդաբանեցին յետոյ: Այլ ի նոր օրէնս՝ յորժամ աստուածապաշտութիւնն յայտնի եղել, եւ գիտութիւն Սուրբ Երրորդութեանն, մարդիկ լցան իմաստութեամբ եւ հոգւով սրբով, օրէնք հոգեւոր տուան. եւ պարգեւ հոգեւոր խոստացաւ. եւ արքայութիւն հաւատացելոց. եւ տանջանք յաւիտենից անհաւատից եւ անօրինաց: Ապա ի ձեռս առաքելոց եւ հարցն սրբոց՝ յայտնեցաւ թշնամին սատանայ, թէ հակառակ է Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան. եւ ի յերկնից անկեալ. եւ նա է պատճառ կորստեան եւ մեղաց մարդկան: Այլ յառաջագոյն մարգարէքն՝ առակաւ եւ օրինակաւ ցուցակէին զսատանայ թշնամի գոլ մեզ. եւ հակառակ բարի գործոց մերոց: Որպէս մարգարէն Դաւիթ՝ առիւծ կոչէ զնա. (դարանի ի գաղտնիս որպէս առիւծ ի մորուջ իւրում:) Եւ առիւծ կոչի սատանայ վասն յափշտակողութեանն. զի մռնչէ եւ յափշտակէ զմարդկան հոգիս կորուսանէ: Ծուն կոչէ զսատանայ վասն շողոքորթութեանն ի մեղս. եւ ցուլ վասն հարկանողութեանն. (շուրջ եղեն զինեւ շունք բազումք. եւ ցուլք գերք պաշարեցին զիս ասէ.) ի գործոց նոցա անուանէ զնոսա: Իշխան չարախօս կոչէ զնոսա վասն զուր խօսելոյն եւ բամբասելոյն զմեզ: Յալածող եւ թշնամի կոչէ. (հալաթեաց թշնամին զանձն իմ ասէ: Եւ բազում եղեն նեղիչք իմ. բազումք յարեան ի վերայ իմ.) զպատերազմն ասէ զոր ընդ մեզ ունին: Իժ եւ քարք կոչէ վասն նենգութեան նոցա եւ չար թունիցն՝ զոր ի

խորհուրդս մեր եւ ի հոգիս արկանեն եւ ապականեն: Եւ որպէս մարգարեն Դաւիթ՝ կամակոր վիշապ եւ առիժ եւ գազան կոչէ. նոյնպէս եւ իմաստուն որդի Սողոմօն՝ տգրուկ կոչէ գթշնամին սատանայ ասելով: (Տգրկի երեք դասերք էին սիրով սիրեցեալք:)

Եւ վասն բազում պատճառի տգրուկ կոչի սատանայ: Նախզի՝ տգրուկն զարիւնն ծծէ՝ որ է հիւթ կենդանական: Նոյնպէս եւ սատանայ զկենդանական խորհուրդն խոհեմութեան ցասման եւ ցանկութեան՝ ծծէ եւ քարշէ ի մարդոյն. յաղագս որոյ ասէ Զրիստոս. (սատանայ իսկզբանէ մարդասպան է:): Երկրորդ՝ զի տգրուկն զախտաւոր արիւնն որպէս ասեն ծծէ. նոյնպէս կերակուր է սատանայի ախտ մեղացն: Վասն որոյ ի խոզ առակէ յառակս անառակին ասելով. (ցանկայր լնուլ զորովայնս յեղջերեն զոր խոզքն ուտէին:): Երրորդ՝ զի անյագ է տգրուկն. որպէս ասէ աստ. (երեքեանն ոչ յագեցուցանէին զնա.) նոյնպէս եւ սատանայ անյագ է ի գործս չարեաց: Չորրորդ՝ զի տգրուկն լինի ի գէջ տեղիս. եւ սատանայ է հանապազ ի գէջ ցանկութիւն. որպէս ասէ. (բեհմովթ ննջէ ի գիջային տեղիս:): Հինգերորդ՝ զի սողուն է տգրուկն. եւ սատանայ սողալով եւ թաքնաբար մտանէ ի խորհուրդ մարդոյ. (զոր անհնար է ասէ իմանալ ինձ զհետ օձի ի վերայ վիմի:): Վեցերորդ՝ տգրուկն երկու բերան ունի. եւ սատանայ կրկին ունի նենգութիւն ի խօսս. զի նախ քան զմեղանչելն՝ քաղցր՝ բարերար՝ երկայնամիտ ասէ զԱստուած, եւ ձգէ ի մեղս. եւ յետ մեղացն՝ զարդարութիւնն եւ զդատաստանին պատիժն ի միտ ածէ. եւ այնու յուսահատութեամբ կորուսանէ. վասն որոյ ասէ Դաւիթ. (բանք բերանոյ նորա՝ անօրէնութիւն եւ նենգութիւն են:): Եօթներորդ՝ տգրուկն ոչ թողու զմարմինն, մինչեւ լնու զորովայնս արեամբ. այնպէս եւ սատանայ՝ յորժամ ըմբռնէ զոք ի մեղս, ոչ թողու ի բաց, մինչ բովանդակ ի կատարումն ածէ մեղացն. եւ ամենայնիւ տայ մեղանչել: Ութներորդ՝ տգրուկն ի սկզբնդիրութեամբ ըմբռայնէ. եւ ի կատարումն տայ զկսկիծ ցաւոցն: Եւ սատանայ զմեղաց սկիզբն ցուցանէ քաղցր. եւ յետոյ դառնայ ի խիղճ մտացն, եւ ի պատկառանացն, եւ յօրինացն երկիւղէ. որպէս ասէ Սողոմօն. (մեղր կաթէ ի շրթանց պոռնկի եւ յետոյ դառնագոյն է քան զլեղի:): Իններորդորդ՝ տգրուկն գիշակեր է եւ սեւաթորմի. այսպէս եւ սատանայ խաւար կոչի. ըստ այնմ, (խաւար նմա ոչ եղեւ հասու:): Եւ թէ՛ (փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի:): Վաս որոյ աստ խաւար մեղաց եւ անգիտութեան՝ նսեմացուցանէ զմիտս մեղաւորաց. որպէս ասէ Տէրն. (ամենայն որ չար գործէ՝ ատեայ զլոյս. եւ ոչ գայ առ լոյսն.) եւ ի կատարածի՝ ընդ նմին ի խաւարն արտաքին: Տասներորդ՝ տգրուկն յառողջ մասն մարմնոյն ոչ կարէ մերձենալ. եւ սատանայ ոչ կարէ մերձենալ ի կատարեալ առողջսն հոգւով. ըստ այնմ, (գայ իշխան աշխարհիս այսորիկ. եւ ոչ գտանէ յիս յիրոցն:): Այսպէս եւ յամենայն եւ ընտրեալսն. որպէս ասէ Դաւիթ. (ի մերձենալ առիս չարից յուտել զմարմին իմ, նեղիչք իմ եւ թշնամիք նոքա տկարացան եւ անկան:): Եւ դարձեալ՝ (անկցին ի կողմանէ քումմէ հազարք եւ այլն:): Վասն զի (բանակք հեշտակաց Տեառն՝ շուրջ են զերկիւղածովք իւրովք եւ պահեն զնոսա:): Իսկ երեք դասերքն տգրկին սատանայի՝ այսինքն, դժոխքն որ է կորուստ գերեզմանին. եւ սեր կանանց. եւ տարտարոսն որ է տանջանք գեհենին. սոքա են երեք դասերք ստանայի: Եւ վասն Է՞ր դուստր կոչէ եւ ոչ որդի: Վասն կրկին պատճառի: Նախ՝ զվատթարութիւն նոցա յայտնէ

իզական անուամբ: Եւ երկրորդ՝ զի կրօնք եւ ընդունօղք են, եւ ոչ տուօղք. վասն այն դուստր. զի սեր կանանց ըմբռնէ զմիտսն. եւ գերեզման զմարմինն. եւ տարտարոսն զհոգիս մարդկան. եւ ոչ տան. ի բաց: Եւ թէ ոք ասիցէ՝ ահա Քրիստոս զհոգիս ազատեաց ի դժոխոց. եւ մարմինք մարդկան յառնեն ի գերեզմանէ. նոյնպէս եւ Էգն տայ զգաւակ: Ասեմք թէ՝ ինամօքն Աստուծոյ է եւ զօրութեամբ՝ որ մարմինք մարեդկան յառնեն ի հողոյ. եւ հոգիք ի դժոխոց. այլ նոքա կրօնք են եւ ոչ տուօղք. եւ յայտ է ի յաւիտենից տանջանացն՝ որք այլ ոչ երբէք ազատին: Նոյնպէս եւ զայլսն իմացիս որ կրօնք են եւ ոչ տուօղք. վասն այն դուստր կոչէ զնոսա: Եւ դարձեալ՝ թէ ոք ասիցէ, ո՞րպէս են սոքա դատերք սատանայի. զի ահա զկինն Աստուծոյ ետ ի յօգնութիւն մարդոյն. նոյնպէս զդժոխսն պատրաստեաց տանջանաք մեաւորաց. այսպէս եւ զգերեզմանն (հող էիր եւ ի հող դարձցիս ասէ:) Ասեմք թէ՝ սոքա դատերք էին սատանայի՝ ոչ թէ ի նմանէ ստեղծեցան, այլ ի նմանէ ի չարն փոխեցան. եւ նա եղեւ պատճառ սոցա չարութեան: Ասպէս զի կինն բարի ստեղծաւ յԱստուծոյ վասն զաւակի պտղաբերութեան մարդոյն. այլ հեշտ ցանկութեան եւ գործոյ շնութեան՝ սատանայ եղեւ պատճառ. յայնմանէ, որ ցանկութեամբ տեսանել ետ զպտուն ի դրախտին. եւ զցանկութիւնն փոխեաց ի նա: Նոյնպէս եւ զմահ եւ գերեզմանն պատճառեաց. (զի Աստուած զմահ ոչ արար. նախանձու բանսարկութիւնն եմուտ մահ յաշխարհ ասէ առակն.) զի պատրանօքն զպտուղն եկեր եւ ի հող դարձաւ: Նոյնպէս եւ զտարտարոսն եւ զգեհեանն պատրաստեաց Աստուած վասն կատարածի մեղաւորաց. այլ նա բռնութեամբ իսկզբանէ աշխարհի անդ տաներ զհոգիս մարդկան եւ տանջեր: Եւ դարձեալ՝ զի Աստուած մեղաւորացն պատրաստեաց զտանջանս. սատանայ բռնութեամբ զարդարս եւ զմեղաւորաս տանջեր: Ապա յիրաւի դատերք սատանայի կոչեր զկինն, եւ զգերեզմանն, եւ զգեհեանն: Եւ դժոխք կոչէ զգերեզմանն. զի որպէս դժոխք ներքին դժարին եւ նեղ տանջանքն է հոգւոց. նոյնպէս եւ գերեզմանն մարմնոյ է դժոխք. զորմէ ասեր Ղաւիթ. (զսիմէի արեամբ հանդերձ ի դժոխս իջուցես.) այսինքն, ի գերեզմանս. եւ Եզեկիա ասեր: (Ոչ թէ մեռեալք օրինեսցեն զքեզ՝ եւ ոչ խոստովան լինին որք իջանեն ի դժոխս.) այսինքն, ի գերեզմանն: Եւ զսեր կանանց ի մէջն դնէ. ցուցանէ զի երկոցունց պատճառ կինն եղեւ. այսինքն, գերեզմանին մահու, եւ տանջանաց գեհենին: Եւ այս յայտ է յերկուց: Նախ՝ ի նոյն յառաջին կնոջէն Ադամայ. որպէս ասէ առաքեալն. (մարդն ոչ պատրեցաւ, այլ կինն յանցեաւ.) զի մարդն ոչ ըստ կամաց, այլ վասն սիրոյ կնոջն եկեր զպտուղն: Այսու մտօք՝ թէ վասն իմ սիրոյս՝ եւ կնոջս ողորմեսցի որ յանցաւոր է: Եւ եղեւ այնպէս ըստ նորա դիտաւորութեանն յետոյ. յորժամ եհար զհոգին Ադամայ ի դժոխոցն, եհան եւ զկնոջ Եւայի վասն Ադամայ: Չի այս երկու դիտաւորութիւնքս նոցա կատարեցան: Առաջին՝ նախամօրն որ եդ ի մտի ուտել զպտուղն եւ Աստուած որդիս ծնանիլ. եւ կատարեցաւ այս՝ ի ձեռն աստուածածին կուսին Մարիամու. որ ծնաւ զորդին միածին մարմնացեալ եւ մարդացեալ Աստուած: Եւ երկրորդ դիտաւորութիւնն Ադամայ՝ կատարեցաւ յայն, յորժամ Տէր մեր Յիսուս Քրիստոս էջ ի դժոխս. եւ ի պատճառս արդարոցն եւ սիրով նոցին՝ ազատեաց եւ զհոգիս մեղաւորաց ի տանջանաց դժոխոցն: Ապա յայտ է՝ զի կինն յանցեաւ եւ ոչ մարդն. որպէս եւ ինքն վկայէ Ադամ որ ասաց առ Աստուած. (կինս զոր ետուր՝ սա ետ ինձ.) եւ ըստ բնական սիրոյս զոր

ունիմ առ նա՝ կերի ի պտուղոյն: Վասն որոյ ասաց Աստուած. (փոխանակ զի լուաւ ձայնի կնոջ քոյ եւ կերեր ի ծառայն, անիծեալ լիցի երկիր ի գործս քո. փուշ եւ տատասկ բուսցի քեզ. քրտամբք կերիցես զհաց քո, մինչեւ դարձցիս յերկիր ուստի առար. զի հող էիր եւ ի հող դարձցիս:) Արդ՝ տես զի սեր կնոջն տարաւ զնա ի դժոխս գերեզմանին. եւ որպէս մարմինն եմուտ ի բանտ գերեզմանին. Նոյնպէս եւ հոգին ուր ունէր զփուշ մեղացն, եմուտ ի տանջանս գեհենին. եւ անդ տանջեցաւ հոգին Ադամայ ի դժոխսն վեց հազար ամ, մինչ ի գալուստ միածնին Աստուծոյ. որ մարդ եղել եւ չարչարեցաւ. եւ ազատեաց զնա ի դժոխոցն: Վասն այն գտեր կնոջն ի միջին դասէ. զի մահուան մարմնոյն եւ տանջանաց դժոխոցն՝ կինն եղել պատճառ: Առաջին՝ յայսմանէ յայտնի է: Երկրորդ՝ յայտ է յայժմոյս՝ որ դեշեւս կինն լինի պատճառ մահու մարմնոյն, եւ գեհենին յաւիտենից տանջանացն, որ վասն շնութեան եւ պոռնկութեան գործոց. որպէս ասէ առաքեալն. (շունք եւ պոռնիկք՝ զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն.) ահա տանջանք հոգւոյն յոր ածեն կանայք: Նոյնպէս եւ մահք մարմնոյ բազումք եղել ի ձեռն կանաց. որպէս ջուր ջրիեղէղին եղել վասն կանանց. (ուտէին եւ ըմպէին. կանայս առնէին, արանց լինէին:) Վասն որոյ բարկացաւ Աստուած. եւ ջրպեղեղաւ կորոյս զամենեսեան. միայն ապրեցաւ Նոյ եւ երկու որդիք իւր. որ հինգ հարիւր ամ պահեաց զկուսութիւն: Այսպէս վասն դիւանայի դստերն Յակօբայ շնութեան՝ ի սուր սուսերի մաշեցաւ բոլոր քաղաքն սիկիմացոց: Եւ ի յանապատին զի պղծեցան ի կանայս օտարաց՝ եւ կերին զզոհեալ եւ զմեռելոտի՝ ստակեցան ի ժողովրդէնէն ԻԴ հազար արանց. մինչ փենտեզտ եսպան զՉամբրի եւ զՔասբի. եւ դադարեցաւ մահն: Այսպէս եւ յաւուր դատաւորացն՝ վասն հարճի կնոջն ղեւտացւոյ շնութեան՝ բոլոր ցեղն Բենիամենի սատակեցաւ սրով. Լ հազար պատերազմօղ արանց մեռաւ ի մետասան ցեղիցն: Եւ զի՞նչ ասեմ ըստ կարգի: Սամփսոն հզօրն՝ ի ձեռն Դաւիլայ կնոջն խաբեցաւ եւ կորեաւ: Մարգարէն Դաւիթ ի կնոջէն խաբեցաւ եւ անկաւ յաթոռոյն. եւ դարձեալ մեղայ ասելովն արդարացաւ ի ձեռն Նաթանայ: Նոյն ինքն իմաստունն Սողոմօն՝ վասն կնոջն ելաւ յաջան Աստուծոյ. (զինի եւ կանայք ասէ հանին զնա յԱստուծոյ:) Չմկրտիչն Յովհաննէս գլխատեաց կինն: Եւ զԱդամ ի դրախտէն էհան: Եւ այլ բազում վնասս հոգւոյ մինչ ի կատարած աշխարհի՝ ի ձեռն կնոջն է եղեալ եւ լինի. զբազումս է տապաստ արկեալ Նորա խոցելովն. եւ անթիւ են սպանեալքն ի նմանէ. ասինքն ի կանանց: Այսպէս անյագ է թշնամին ստանայ. եւ անյագ է կորուստ կանանց: Չի հանապազ սատանայ պատերազմի չար խորհրդովն ընդ մարդկան. եւ ածէ ի սեր կանանցն. եւ կինն ածէ ի մահ զմարմինն, եւ ի տարտարոսս յաւիտենից տանջանաց զհոգին. եւ (ոչ երբէք ասեն շատ.) այսինքն, որպէս գերեզմանն մարմնով ոչ շատանայ կամ լնանի. եւ ոչ դժոխք տանջանօք: Նոյնպէս եւ ոչ շատանան դէք ի խաբելոյ. եւ կանայք ի կորուսանելոյ. որպէս ասէ առակն. (կին զարանց պատուականաց զոգիս որսայ:) Եւ հետագայ բանին՝ սիրոյ կանանց եւ չար խորհրդոց սատանայի օրինակ տայ ասելով: (Երկիր ոչ յագի ջրով. եւ ջուր եւ հուր ոչ երբէք ասեն շատ:) Այսինքն, որպէս երկիր ոչ յագի ջրով առագելոյ վասն երկու պատճառի: Նախ՝ կրէ յինքն եւ ընդունի: Եւ երկրորդ՝ զի այն ջրովն զանազան բոյսս բուսուցանէ: Այսպէս երկրի զբանական միտս մեր նշանակէ. զգիտութիւնն եւ զխորհուրդն զոր կրեմք ի մեզ: Եւ գիտութիւնն երկու է. մինն բարի է. եւ միւսն չար: Այն որ

բարի գիտութիւնն է՝ ի հոգւոյն սրբոյ Է. սուրբ գրոց գիտութիւն. եւ հոգեւոր իմաստութիւն. եւ բարի խորհուրդ որ յԱստուծոյ գայ առ մարդ: Իսկ չար գիտութիւնն՝ է ի չար հոգւոյն սատանայէ. զոր հանապազ չար խորհուրդ արկանէ ի մարդն եւ կորուսանէ: Եւ մեր բանական միտքս՝ գերկուսն կրէ յինքն եւ ընդ ունի. զչարն այլ, եւ զբարին այլ. զի բանական է՝ բանիւն կերակրի. ոմանք աստուածային բանիւ. ոմանք դիւական: Վասն այն պարտ է հանապազ գաստուածային լսել եւ ուսանել. եւ ի միտս պահել եւ խոկալ. զի մի դիւական խորհուրդն մտցէ ի մեզ. զոր օրինակ՝ աման ինչ զի ջրով՝ զայլ ինչ ոչ ընդ ունի. Նոյնպէս եւ միտքն ի բարի խոկումն՝ զչար խորհուրդն սատանայի ոչ ընդունի: Եւ դարձեալ՝ որպէս ջուրն որ շարժի հանապազ ի յարմատն եւ ի բոյսն՝ ի ծաղիկն եւ ի պտուղն: Նոյնպէս եւ գիտութիւնն եթէ բարի է ի միտս մեր, զբարի արմատն ոռոգէ. եւ ի մարմինս բուսուցանէ. եւ ծաղկէ որպէս զանուշահոտ վարդ եւ մանուշակ եւ այլն. այսինքն, զողջախոհութիւն. զարիութիւն. զհաւատ. զյոյս. զսէր. եւ զայլ ամենայն բարի գործս պտղաբերէ ի մեզ այսպէս: Չի բարի գործն՝ արմատանայ ի միտսն. եւ բուսանի ի մարմինն. եւ ծաղկի անուշահոտութեամբ ի գործելն. եւ պտղաբերէ աստ զմարմնոյ խաղախութիւն եւ անդորրութիւն. եւ ի հանդերձեալն զկեանսն յաւիտենից: Այսպիսի պտուղս է ի բարի գիտութենէ ի սուրբ ջրոյն: Այսպէս եւ չար գիտութիւնն՝ մտանէ ի խորհուրդս մեր. եւ բուսուցանէ զփուշ մեղաց. զբոջախոհութիւն. զանհաւատութիւն. զատելութիւն. զծուլութիւն. եւ զայլն: Նոյնպէս եւ այս չար խորհուրդս՝ արմատանայ ի հոգին.բուսանի ի մարմինն. աճէ եւ ծաղկի ի գործն. եւ պտղաբերէ զչար պտուղն. աստ ի հոգին զխղճմտանսն. եւ ի մարմինն զպատուհաս մեղացն. զհիւանդութիւն, զմահապատիժ, զսով, զսուր, զգերութիւն, եւ զայլն: Իսկ անդ՝ զտանջանսն յաւիտենական, զլալ աչացն, եւ զկրճտել ատամացն զոր տարտարոս կոչէ: Ահա եղբարք՝ տեսէք աչօք եւ իմացէք մտօք. այս է երկու խորհրդոց պտուղն. բարւոյն եւ չարին. զոր կամիք՝ ընտրեցէք: Եւ յետ այնորիկ ասէ. (ջուր եւ հուր ոչ երբէք ասէն շատ:) Չուր ոչ դադարի ի գործելոյ որպէս ասացաւ: Նոյնպէս եւ հուրն ի յերեւելիս զամենայն ինչ զոր արականեմք ի նա, կրէ յինքն, եւ ոչ ասէ շատ. այս է՝ թէ քար, թէ փայտ, երկաթ, եւ այլ ինչ, զամենայն ընդունի եւ առաւել բորբոքի: Այսպէս եւ հուր ջերմութեան սիրոյն ի հոգիս մեր՝ անյագ է եւ առաւել բորբոքի: Եւ այս հուր սիրոյս կրկին է. բարի եւ չար: Այն որ բարին է՝ հոգեւոր սերն է առ Աստուած. զոր ունիմք ի սուրբ սրտէ բոլորովիմք սիրել զԱստուած: Եւ չար սերն այն է՝ որ մարմնական է եւ ախտաւոր, եւ վատթար սեր ի հեշտութեանց աշխարհի. որպէս կնոջ սերն. ուտելոյ՝ ըմպելոյ՝ արծաթոյ՝ փառաց, եւ այլ ամենայն: Եւ վասն ախտաւոր սիրոյն՝ ասէ մարգարէն. (ջեռաւ սիրտի իմ ի փորի իմում. եւ ի խորհուրդս իմ վառեցաւ հուր:) Վառիլն այն է՝ որպէս ոք բորբոքէ զկրակն եւ դնէ զփայտն, նա վառի: Նոյնպէս ցանկութիւնն ի մեզ բնական հուր է. եւ սատանայ ի խորհուրդն բորբոք է. եւ յարտաքուստ տեսութիւն զգայարանացն լինի նիւթ եւ վառէ զցանկութիւն չար. եւ գորթելովն ծնանի զմահ. ըստ այնմ, (ցանկութիւն յղացեալ զմեղս ծնանի. եւ մեզքն կատարեալ զմահ.) այս չարին բորբոքումն է: Իսկ վասն բարւոյն ասէ մարգարէն. (զբերան իմ բացի եւ առի զհոգի. ի պատւրանս քո փափագեաց անձն իմ.) այսինքն, զբերան մտացս որքան բանամք եւ արձակեմք, առնումք ի մեզ զագդումն հոգւոյն սրբոյ. եւ

փափագեալ պատուիրանին Աստուծոյ՝ բորբոքիմք ի սեր նորա. այս բարի սերն է. եւ այս սերս է մնացական. որ ոչ երբեք պակասի ի յերեք պատճառէ. այսինքն, ի սիրելոյն, ի սիրողէն, եւ ի սիրոյն: Սիրելին Աստուած է եւ յաւիտենական: Այլեւ սերն որ է շաղկապ հոգւոյս մեր եւ Աստուծոյ՝ է յաւիտենական. որպէս ասէ առաքեալն. (տոքա երեքին. եւ լաւ քան զտոսա՝ սերն է.) այսինքն, զի հաւատն ի կեանս յայս է. եւ յոյսն յետ աստի կենացս ակնկալութիւն վարձոյն. եւ սերն յետ յարութեանն՝ ի յաւիտենական կեանս մնայ ի մեզ եւ առ Աստուած: Իսկ վատթար սերն աշխարհի՝ ոչ է այսպէս մնացական յերեք կողմանէ. այսինքն ի սիրելոյն, ի սիրողէն, եւ ի սիրոյն: Ի սիրելոյն այսպէս. զի աշխարհս անցանէ. եւ ոսկի եւ արծաթ եւ կինն. եւ ցանկութիւնն ընդ նոսա կորնչի. նոյնպէս եւ մարմինս մեր կորնչի. եւ ցանկութիւն իւր ընդ իւր: Այսպէս եւ սերն ըստ ինքեան որքան յերկարի, այսինքն նւագի: Չի այսու զանազանի սերն Աստուծոյ եւ սեր աշխարհի. զի Աստուծոյ եւ հոգւոր սերն՝ որքան յերկարի, այնքան աճի եւ առաւելու: Իսկ աշխարհի եւ մարդկան սերս՝ որքան յերկարի, թուլանալ եւ պակասի: Վասն զի սկիզբն աշխարհիս սիրոյ՝ պիտ է, եւ վախճանն թոյլ: Իսկ աստուածային սիրոյն՝ սկիզբն թոյլ է, եւ վախճանն պիտ եւ բորբոքեալ: Չայսմանէ սիրոյս ասէ: (Ջուր եւ հուր ոչ երբեք ասեն շատ:) Ասինքն, ջուր գիտութեան հոգւոյն սրբոյ՝ եւ հուր սիրոյ նորա մշտնջենաւոր են եւ յաւիտենական: Չի որպէս այժմ հրեշտակաց գիտութիւնն եւ սերն են մշտնջենաւոր հեղումն յԱստուծոյ: Նոյնպէս անդ ընտրելոց սրբոցն իմաստութիւնն եւ գիտութիւնն Աստուծոյ՝ հանդերձ անսպառ սիրովն բոլորին միշտ եւ յաւիտենական կենօք: Որում զմեզ զամենայնսն զհաւատացեալս անուանի իւրոյ, արժանի արասցէ Քրիստոս երկանային իմաստութեամբ իւրոյ՝ հաղորդիլ անմահական սեղանոյն, զոր խոստացեալէ սրբոց իւրոց. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն վնասուց Պոռնիկ կանանց: (Գլուխ. ԿԸ)

Եթէ զի՞նչ է վնաս պոռնիկ կանանց՝ խրատէ ըստ կարգի իմաստունն Սողոմոն: Նախգի ասէ. (մի հայիր ի կին չար:) Չի ամենայն մեղաց պատճառ՝ ցանկութեամբ հայիլն է յարտաքուստ: Չի հրամայէ Տէրն. (որ հայի ի կին ցանկութեամբ, արդէն շնացաւ ի սրտի իւրում.) թեպէտ զարտաքին գործն խափանեցին տեղիքն եւ ժամանակն. այլ ի կամսն իւր շնութիւն կատարեցաւ: Այլեւ ընդ տեսութեանն սատանայ զցանկութիւնն խառնէ. որպէս նախամօրն Եւայի. (որ ետես զծառն գեղեցիկ:) Եւ զհաճոյութիւնն սատանայ խառնեաց. եւ եկեր ի պտղոյն. վասն այն ոչ է պարտ նայիլ: Եւ դարձեալ նայելովն աչաց՝ ցանկութիւն ախտին շարժի եւ վարէ ի գործն. վասն այն չէ պարտ ամանելին նայիլ: Չի թէ ոչ էր տեսեալ զԲերսաբէ Դաւիթ, ոչ էր ցանկացեալ, եւ ոչ շնացեալ. նոյնպէս եւ Յուդա զԹամար: Այս առաջին վնաս ի պոռնիկ կանանց ի հայիլն աչաց: Երկրորդ վնաս զոր ասէ Սողոմոն: (Շնացողն՝ պակասութիւն իւրում ստանայ եւ նախատիւս:) Եւ առաքեալն ասէ առ կորնթացիսն: (Որ միանայ ի Տէր՝ մի հոգի է. եւ որ միանայ ի պոռնիկ՝ մի մարմին է:) Չի որպէս պոռնիկն չար է, ամենայն չարութեան նորա՝ կցորդի ընդ նմա. որպէս այն որ ընդ աղբ խառնի, զգարշ հոտն ընդունի. եւ որ իմուր՝ սեւանայ: Երրորդ որ ասէ. (մեղր կաթէ ի շրթանց

պոռնկի. բայց կատարածն դառնագոյն է քան զլեղի:) Չի քաղցրապատիր բանիւն՝ ձգէ գերիտասարդն ընդ իւր. եւ ի կատարիլ գործոյն՝ դառնանայ քան զլեղի ի խղճէ մտացն եւ ի մարմնոյն գարշութեանց: Որպէս ամոն ընդ քուեր Աբիսողոմայ. վերջին ատելութիւնն՝ դառն քան գառաջն հեշտութիւնն: Նոյնպէս եւ ամենայն մանկան՝ վաղ կամ անագան՝ այսպէս դառնութիւն հանդիպի: Չորրորդ զի ասէ. (սուր երկսայրի է արեալ.) այսինքն, չար գործն. զի հատանէ զմարմինն ի կենաց եւ զհոգին յարքայութենէն. ըստ այնմ, (մի խաբիք. ոչ շունք՝ ոչ պոռնիկք զարքայութիւնն ժառանգեն:) Յինգերորդ զի ասէ. (ոտք նորա մահու հանդերձ իջանեն ի դժոխս.) այսինքն, պատճառ յաւիտենից մահուն է պոռնկութիւնն. որ ընդ նմա ի գերեզմանն իջանէ յաւիտենից զհոգին: Որպէս առաքեալն ասէ. (ցանկութիւն յղացեալ զմեղս ծնանի. եւ մեղքն կատարեալ զմահ:) Չի կատարումն մեղաց՝ սկիզբն է մահուն յաւիտենից: Վեցերորդ՝ (ոչ է հաստատուն սեր նորա ասէ եւ կորնչի.) զի վասն կապենիցն էր նենգաւոր սեր նորա. եւ յորժամ էառ, այլ ոչ սիրէ զքեզ. թողու եւ զմիւսն սիրէ: Եօթներորդ ասէ. (յափշտակէ զկեանս քո.) այսինքն, զինչսն. զի ապրանք կոչեմք: Չի ի սեր կապէ զմանուկն՝ եւ նավաւ տանի զամենայն ինչսն: Եւ նա արբեալ ի սիրոյ նորա, ոչ ինչ համարի զկորուստ ընչիցն: Չի բազում արբեցութիւնն. այսինքն, մեղաց, եւ իշխանութեանց, եւ մանկութեանց, եւ փարթամութեանց, եւ այլ սոյնպիսեանց: Եւ սոքա ամենեքեան չար արբեցութիւնք են քան զգիւնոյ. որպէս ասէ մարգարէն. (Վայ ձեզ որք արբեալ էք եւ ոչ ի գիւնոյ:) Վասն այն ոչ զգան. ոչ զահ, ոչ զամօթ, եւ ոչ զխրատ. զի արբեալք են մեղօք եւ յիմարեալ. Ութներորդ՝ (յետոյ ի գղջումն տանի, յորժամ մաշեցին անդամք քո.) այսինքն, յայնժամ փոշիմանի եւ վայ տայ, յորժամ ծերանայ եւ հատանի զօրութիւնն. կամ հիւանդանայ եւ նուազի պարարումն. կամ աղքատանայ եւ նուազի կերակուրն եւ ըմպելին: Չի սոքա՝ աղայութիւն եւ առողջութիւն եւ փարթամութիւն՝ ձեռնտու եւ օգնական են չարագործացն. յորժամ սոքա նուազին, հոգին զօրանայ եւ ի խիղճէ մտաց իւրոց չարաչարի. յայնժամ ի մանայ զամօթն եւ զհարկիսն որ գնայ: Չի պոռնիկ կինն՝ ամենայն իրաց զրկօղ է. զինչսն զրկէ. զամօթն տանի. զհարկիսն բառնայ. զկեանսն կարճի զմարմինն չարչարէ. եւ զհոգին ի հուր տանջէ. որպէս ասէ. (անկան. ի բազում չարիս՝ ի մէջ ժողովրդոց եւ եկեղեցւոյ:) Ոչ միայն զաստի բամբասանս եւ զամօթն ասէ, այլեւ յահեղ հրապարակին: Յորդամ աթոռք դատաստանին դնին. եւ դպրութիւնք բանին. եւ երկինք եւ երկիր ի մի վայր ժողովին, անդ են ամօթ եւ նախատինք եւ չարչարանք չարագոծին. ըստ այնմ, (մեզ ամենեցուն յանդիման լինիլ կայ առաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով. եթէ բարի եւ եթէ չար:) Իններորդ զ զի ասէ. (առաջի աչացն Աստուծոյ է գործ քո:) Այս է մեծ ահ եւ երկիւղ քան զամենայն. զի զոր ինչ գործէ ոք՝ տեսանէ Աստուած. եւ ոչ ինչ ծածկի ի նմանէ: Չի ի մարդկանէ չորս իրք ծածկեն զգործն: Նախ՝ միջոց հեռաւորութեան երկրի: Երկրորդ՝ տունն, Երրորդ՝ մուրն: Չորրորդ՝ մարմինն: Արդ՝ հեռաւորութիւնն եւ պատրուակն երկնից՝ ոչ կարէ ծածկել զմեզ ի տեսութենէն Աստուծոյ. ըստ այնմ, (Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան տեսանել.) եւ ոչ տուն. եւ ոչ մուրն. (զի խաւար նոցա որպէս զլոյս է.) եւ ոչ մարմինն. (զի քննէ զսիրտ եւ գերիկամուսս:) Այլ արդ՝ Աստուած տեսանէ զգործս մեր եւ հատուցանէ. եւ մեք ոչ տեսանեմք

զԱստուած: (Չի ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած:) Չի թէ տեսանէ ոք մերձ իւր զԱստուած՝ ոչ մեղանչէ. զոր օրինակ՝ թէ զմարդ տեսանեմք, ոչ գործեմք: Նախ զօրէնսն իւր եղեալ է առ մեզ. որ ի տասն բան օրինացն՝ մին այն էր թէ՛ (մի շնար.) յորժամ արհամարհեմք զայն. ի նոյն օրինացն դատիմք. որ զշնացողն քարկոծել եւ այրել հրամայեաց. Տասներորդ զի ասէ. (անօրէնութիւնքն որսան զնա. եւ մեռանի ընդ անխրատս:) Այսինքն, սատանայ է որսորդն. եւ սակաւ հեշտութամբն՝ ի թակարթ մեղացն պատատէ. ըստ այնմ, (տոռունք մեղաց պատեցան զինեւ.) եւ ընդ իւր ի յաւիտենից տանջանսն քարշէ. որպէս ասէ. (մեռանի ընդ անխրատս:) Արդ՝ մին մահ եւ տանջանք մարմնաւոր են աստ. յիշխանաց երկրի եւ ի դատաւորաց. (զի իշխանք ոչ են յերկիւղ բարեաց, այն յերկիւղ չարաց.) որպէս պոռնկին եւ շանն եւ չարագործին պատիժ տան: Չինչսն յափշտակեն. գանիւ չարչարեն. զմասն հատանեն. կամ զբոլոր գլուխն: Դարձեալ՝ անխրատն սատանայ է. զի ոչ հնազանդեցաւ Աստուծոյ, եւ ոչ հրեշտակաց, եւ ոչ հին եւ նոր օրինաց. ընդ անխրատին սատանայի եղիցի վախճան նորա. զի զնորա խրատն ընկալաւ. եւ զԱստուծոյ եւ զեկեղեցւոյ եւ զսրբոց խրատն արհամարհեաց: Եւ զի՞նչ է երկոցունցն կատարած. այն է զոր ասէ. (երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից. որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:) Այս է բաժին եւ վիճակ ժառանգութեան պոռնկին: Վասն այն ասէ. (մի հայիր ի կին չար:) Եւ այլ վասն շնութեան՝ ասացաւ իսկիզբն գրոցս յօրէնսն. (մի շնար.) անդ տես:

Նորին բան վասն Պոռնկութեան:

Վասն Է՛ր հրամայեաց Աստուած մարգարէին ՌՎսէի պոռնկիլ: Պատասխանի: Բազում խորհուրդ ունի:

Առաջին՝ ցուցանէր զպոռնկութիւն ժողովրդեանն Իսրայէլի. որք թողին զՏէր Աստուած, եւ պաշտեցի զկուռս: Երկրորդ՝ ցուցանէր թէ՛ այսպէս պոռնկելոց էր երկիր նոցա ի ծառայութիւն թշնամեաց նոցա: Երրորդ՝ պատուհաս գալոց էր ժողովրդեանն. եւ նոքա ի տաճարն ապաստանեալ՝ ոչ հաւատային. եւ կարծէին թէ ստին բանք մարգարէիցն: Վասն այն ոչ միայն բանիւ այլ գործով տայ ապացոյց կորստեան նոցա: Չորրորդ՝ բազում էին խօսեցեալ մարգարէքն. եւ ժողովուրդն մոռացեալ էր՝ վասն այն զմարգարէն Եսայի մերկ եւ բոկշրջեցոյց ի յօրինակ գերութեան նոցա. եւ Ռվսէին հրամայեաց պոռնկիլ ի նշանակ կործանման նոցա. զի հաստատ է տեսութիւն աչաց քան զլուր ականջաց. եւ այս նոյն ըստ երրորդ մտացն: Հինգերորդ՝ մարգարէքն՝ բարեխօս լինէին վասն չար ժողովրդեանն: Ասաց Աստուած առ կին պոռնիկ, զի ուսցիս թէ դու մարդ ես եւ զազրիս ի պոռնկէն, ո՞րքան առաւել ես համբերեմ ընդ ինեւ ժողովրդեանն՝ որք միշտ ընդ կուռսն պոռնկին: Վեցերորդ՝ օրինակ եղ զմարգարէն դառնացող ազգին. զի պոռնիկ կին՝ ցածուցեալ զգաստանայ. յորժամ առնուս դու զնա՝ այլ ոչ պոռնկի: Իսկ ժողովուրդն եբրայեցւոց՝ ոչ զգաստացան. թեպէտ յիս մերձեցուցի, այլ թողին զիս եւ պղծեցան ի կուռսն: Եօթներորդ՝ յօրինակ այնմ՝ զի կին պոռնիկ Էառ Աստուած իւր ժողովուրդ զհին եւ զնոր եկեղեցի. զի հրեայքն. պոռնկեալք էին յեգիպտոս եւ ընդ քանանացիս. այսպէս եւ զնոր ժողովուրդս զհեթանոսաց՝ ընկալաւ Զրիստոս: Ութներորդ՝ որպէս սրբեաց մարգարէն

զկինն պոռնիկ՝ զի սուրբն՝ ի պիղծն մերձենալով ոչ պղծի. այնել պիղծն սրբի ի պղծութենէ իւրմէ: Այսպէս եւ էառ Աստուած զպիղծ ժողովուրդս. եւ արբեաց յամենայն պղծութենէ իւրմէ. եւ կոչեաց անուն սուրբ զհրեայսն Իսրայէլ՝ որ է աստուածատես. եւ զհեթանոսս քրիստոնեայ որ է Քրիստոս ի նա: Իններորդ՝ հրամայեաց պոռնկիլ՝ զի ցուցցէ զհնազանդութիւն մարգարեին, եւ զկատարեալ սերն առ Աստուած. զի արհամարհեաց զամօթ եւ զնախատիսս ժողովրդեանն վասն հրամանացն Աստուծոյ: Այսպէս եւ մեզ պարտ է օրինացն Աստուծոյ եւ առաջնորդացն կամաց՝ հնազանդ լինիլ: Տասներորդ՝ ասաց յօրէնսն. (մի շնար.) եւ մարգարեին հրամայեաց պոռնկիլ եւ շնալ. զի ցուցցէ թէ՛ կամքն Աստուծոյ գեր ի վերոյ օրինացն է. եւ ոչ ի ներքոյ եւ կարէ Աստուծոյ զեղեալ օրէնս իւր փոխել: Որպէս ասացաւ (մի սպանաներ.) այլ Սամուէլի հրամայեաց սպանանել զագագ. եւ զփենեհեզի եւ զԵղիայի սպանումն ընկալաւ. սոյնպէս եւ այս: Իսկ պոռնիկութիւնն եւ շնութիւնն՝ զանազանին այսպէս. զի պոռնիկն յայտնին է եւ համարձակն. ըստ այնմ, (երեսք կնոջ պոռնկի եղել քեզ. անամօթացար առ ամենայնի:) Իսկ շնութիւնն է՝ որ ի ծածուկ եւ զաղտագողի գործէ որպէս շուն: Վասն այն ասէ Տէրն. (որ հայի ի կին՝ անդէն շնացար ի սրտի իւրում:) Եւ զի Եփրեմ յայտնի պոռնկեր ի կուռն. եւ Երուսաղէմ ծածուկ. վասն այն ասէ մարգարէն. (շնար Երուսաղէմ եւ պոռնկեր Սամարիայ:) Զարց՝ զի՞նչ է որ Ովսէ ի պոռնիկն մերձեցեալ ոչ պղծեցաւ, այլ կինն սրբեցաւ նովաւ. եւ այլ ոք յարժամ պոռնկի՝ պղծի: Պատասխանի՝ սուրբն եւ պիղծն՝ տրամատեալ ի մանին չորս դիմօք. զի է սրբութիւն հոգւոյ՝ եւ է սրբութիւն մարմնոյ. նոյնպէս եւ պղծութիւն հոգւոյ եւ պղծութիւն մարմնոյ: Արդ՝ պիղծ մարմին մերձեցեալ ի յայսն. պիղծէ զմարմինն, այլ ոչ զհոգին. զի ըստ իմաստնոցն՝ նիւթ եւ որակի պղծութիւնն, ոչ կարէ պղծել զգոյացութիւնն. այլ զորակն եւ զպատուհումն: Նոյնպէս եւ պիղծ հոգին ի յայլս մերձեցեալ պղծէ զհոգի. այլ ոչ կարէ պղծել զորակութիւն մարմնոյ: Իսկ ի միւս կողմն՝ սուրբ հոգին մերձեցեալ ի յայլս՝ կարէ սրբել զհոգին եւ զմարմինն: Այսպէս եւ սուրբ մարմինն մերձեալ ի յայլս, կարէ սրբել զմարմինն. զի զօրաւոր է սրբութիւն քան զպղծութիւն. զի կարողանայ զերկոսին որակսն փոփոխել: Յաղագս որոյ՝ պիղծ կինն մերձեալ ի սուրբ մարգարէն, սրբեցաւ նովաւ. ըստ այնմ, (ընդ սրբոյն սուրբ եղիցիս եւ այլն:) Եւ այլք ի մարդկանէ մերձեալ ի պոռնիկն, պղծին նովաւ. (զի ընդ թիւրսն կործանեսցին ասէ Դաւիթ:) Եւ առաքեալն ասէ. (որ միանայ ի Տէր՝ մի հոգի է. եւ որ միանայ ի պոռնիկ՝ մի մարմին է:) Դարձեալ՝ ամենայն արւեստի ընտրութիւն ի գործոցն լինի զինչ եւ իցէ. իսկ բարի եւ չարն՝ ի պատճառէն ընտրի. եւ պատճառն է դիտաւորութիւն նորին. զի ըստ դիտաւորութեան գործոյն հատուցանի. եթէ բարեաց եւ եթէ չարաց. որպէս ասաց Տէրն. (այն իսկ են վարձք նոցա:) Արդ՝ պատճառ եւ դիտումն ովսէի՝ էր հրամանն Աստուծոյ զոր կատարեաց. վասն որոյ ոչ պղծեցաւ. իսկ այլք ի մարդկանէ՝ պատճառ ունին զհեշտութիւն մարմնոյ՝ վասն որոյ պղծին: Եւ ապացոյց սոցա Փենեհեզ եւ Եղիա. որք զբազումս սպանին եւ ոչ են պարտական արեան վասն պատճառին: Սաւուղ պատարագ մատոյց. ՝ Ոգիա խունկ. ՝ եղեն դատապարտք վասն պատճառին ՝ դիտաւորութեան: Այսքան առ այս:

Նորին քարոզ վասն Լծոյ Օրինացն: Զարց: (Գլուխ. ԿԹ)

Ասէ Ռվստէ՛ (Երինջ կիրթ Է Եփրեմ:) Պատ: Ժողովուրդն յորժամ թողոյր զօրէնս Աստուծոյ, երինջ լծնկեց անասնեաց: Իսկ յորժամ հնազանդ էր ի ներքոյ օրինացն Աստուծոյ, երինջ կիրթ անւանէր: Եւ ունի բազում յատկութիւն: Նախ՝ ըստ անուանն. զի երինջ զծննդականն նշանակէ. եւ նոքա ունէին զծնունդս բարեաց: Երկրորդ՝ կիրթ եւ ընտել Է ի լութն. եւ նոքա յօրէնս Աստուծոյ: Երրորդ՝ արդարագործ Է. զի առ ընկերն զհաւասարութիւնն ունի: Չորրորդ՝ վաստակարար Է եւ արդիւնաբեր: Զինգերորդ՝ զի ուղիղ ընթանայ ի շաւիղն. ոչ յաջ խոտորի եւ ոչ յահեակ: Վեցերորդ՝ արիութեամբ Է ի գործն իւր՝ որքան Է ի լուծն: Եօթներորդ՝ եթէ ծուլանայ կամ յառաջէ քան զընկերն՝ զխրատ գաւազանին առնու: Ասէ մարգարէն. (լից զերեսս նոցա անարգանք. եւ հարից գաւազանաւ զանօրէնութիւնս նոցա:) Ութներորդ՝ հակառակի ընդ նորա որք չունին զլուծն. եւ պարտ Է հաւատացելոցն ընդ անհաւատին հակառակիլ: Իններորդ՝ զպարանոցն խորնարէ ի ներքոյ լծոյն՝ որ նշանակէ զխաչն. եւ սամետէք՝ զանխզելի կապն. զոր հրամայեաց Տէն առնուլ զխազն եւ հետելիլ նմին. այս զկամաւ խոնարհութիւնն նշանակէ: Տասներորդ՝ պարանոցն զհետս եւ զնշան լծոցն ունի. եւ այն Է գեղ պարանոցին. եւ ի վերայ նորա դնի լուծն: Այս Է՝ առաքինութիւնն ի մեզ. եւ նովաւ ընդունիմք զօրէնս եւ զխաչն Քրիստոսի. եւ նովաւ գեղեցկանայ հոգիս մեր: Այսպէս Է յատկութիւն կիրթ երջոյն՝ որ Է հաւատացեալ ժողովուրդս Քրիստոսի: Իսկ լծնկեց երինջն՝ այսմ ամենայնի ընդդէմ Է իմանալ. որ նշանակէ զանհաւատս՝ որք ոչ են հնազանդել ի ներքոյ օրինացն Աստուծոյ: Այսքան առ այս: (Տուր նոցա Տէր արգանդ անորդի. եւ ստիկս ցամաքեալս:) Նախ այս՝ Է ի մէջ Իսրայէլի նախատիւք. ամուլն եւ անծնունդն: Այսպէս անիծանէ զչարս ի մարդկանէ. զի մի լիցի նոցա ծնունդ մարմնոյն եւ յիշատակ ի վերայ երկրի: Երկրորդ՝ ծնօղք թագաւորքն էին՝ որք բազմացուցանեն զգօրսն. եւ ստիկք քահանայքն՝ որք ճմլեն զօրօսս. եւ կերակրեն զժողովուրդն. յորժամ թագաւորքն զկուռսն բազմացուցանեն, եւ քահանայքն զօրէնս ոչ ուսուցանեն, այսպէս անիծանէ զնոսա: Երրորդ՝ կերակրէ. հերժուածօղքն որք զմոլութիւնս յղանան եւ ուսուցանեն՝ զայսպիսի անէծս ընկալցին: Չորրորդ՝ անզանդ Է հոգիս մեր՝ եւ ծնանի զբարիս: Եւ ստիկք՝ Է մարմինն. զի սնուցանէ զործով: Արդ՝ որ ընդդէմ այսմ զչարս յղանայ հոգւով եւ գորէ մարմնով, այսմ անիծից արժանաւորին: Այսքան առ այս:

Նորին բան վասն Սպառնալեաց Մարգարէիցն:

Յարց՝ վասն Է՞ր մարգարէքն յառաջագոյն սպառնային զպատուհաս ժողովրդեանն: Պատասխանի. վասն չորս պատճառի: Նախ՝ զի յանդիմանէին զմեզս նոցա՝ եւ ասէին զպատուհասն. զի գիտացեն, թէ վասն այնպիսի մեղացն՝ զայնպիսի պատիժս կրելոց են: Երկրորդ՝ զի գիտացեն թէ՛ ոչ վայրապար Է պատուհասն. այլ Աստուծոյ հրամանաւն Է եւ անդառնալի: Երրորդ՝ զի նախ միտքն հեշտանայ չար խորհրդովն եւ ապա մարմինն գործէ: Նոյնպէս նախ սպառնալեօք զարհուրի եւ չարչարի ի միտս. եւ ապա ի մարմինն կրէ զպատիժ մեղացն: Չորրորդ՝ զի պատուհասն կրկին մասն ունի. մին սպառնալիքն Է. եւ միւսն գործն: Արդ՝ զսպառնալիսն ետ ի մարգարէսն. եւ գործն ի թագաւորսն ասորաց եւ բաբիլացոցն: Չի թէ սպառնալեացն լիցեն եւ զղջացին զերծանին ի պատուհասն: Որպէս

նինուեացիքն յորժամ ի միոյ բարբառոյ մարգարէին զարհուրեցան եւ զղջացան, ապրեցան ի պատժոյն: Իսկ իսրայելացիքն՝ ի բազում մարգարէիցն զբազում սպառնալիս լսեցին եւ ոչ զղջացան. վասն այն կրեցին զպատուհաս գերութեանն, ի թագաւորացն ասորեստանեայց. եւ ապա զղջացան ի մեղս իւրեանց: Այսքան առ այս:

Նորին բան: (Աքեացս երկու՝ եւ բլթակ մի ունկան:) Յարց՝ զի՞նչ է որ ասէ Ամովս: (Իբրեւ հովիւ մի որ թափէ ի բերանոյ առիւծու աքեացս երկու. եւ բլթակ մի ունկան:) Պատասխանի: Նախ՝ ի վերայ Իսրայելի է բանս: Յովիւ Նորա Աստուած. ըստ այնմ, (Տէր հովուսցէ զիս.) թափեաց գժողովորդ իւր յասորեստանւոյն եւ ի բաբելացւոյն, յորժամ դարձոյց ի գերութենէն: Երկու անքն՝ են երկու թագաւորութիւնքն որք յերուսաղեմ եւ ի Սամարիայ: Եւ բլթակ մի ունկանն՝ մասն է ի բոլոր մարմնոյն. զայն ցուցանէ՝ որ բոլոր աշխարհն ամենայնի ի գերութիւն վարեցան: Եւ միայն զԻսրայել ազատեաց՝ որք լսողքն էին օրինացն Աստուծոյ: Եւ դարձեալ՝ որ յառաջն երկու էին թագաւորութիւնք՝ յորժամ դարձան ի գերութենէն՝ միոյ թագաւորութեան եղէն եւ հնազանդ: Իսկ հոգեպէս՝ հոգիւ է ամենայնի Տէր մեր Յիսուս Քրիստոս. այսինքն, երկնաւորաց եւ երկրաւորաց. հրէից եւ հեթանոսաց. ըստ այնմ, (եւ եմ հովիւն քաջ:) Նա եկն զհետ մահու եւ կորգեաց ի նմանէ զազգս մարդկան: Չի ասելն երկու աքեաց՝ զմարդս փրկեաց որ հոգի է եւ մարմին. եւ ոչ զայլ անասունս, զչորքոտասանիս, կամ զթռչունս: Եւ ասելն բլթակ մի ունկան՝ ընդդէմ սատանայի է՝ որ զնա ոչ փրկեաց. զի ոչ ունէր ամենեւին ունկն հնազանդութեան Աստուծոյ: Այլ մարդս թեպէտ մի ունկամբն լուաւ սատանայի, այլ մի ունկամբն լուաւ օրինացն Աստուծոյ եւ հնազանդեցաւ: Դարձեալ՝ երկու աքեացն՝ նշանակէ զԱդամ որ երկու գարշապարան ընթացաւ ի ծառն՝ եւ արտաքսեցաւ ի դրախտէն: Չոր Քրիստոս ի ձեռն աւազակին՝ վերստին ի դրախտն փափկութեան եմոյծ զնա: Եւ բլթանկն ունկան՝ նշանակէ զԵւա. որ լուաւ զձայն օձին եւ հեշտացաւ. եւ լուաւ զանէծս եւ տրտմեցաւ: Եւ ի ձեռն սրբուհւոյ կուսին լուաւ զձայն հրեշտակին եւ խռովեցաւ, եւ յետոյ հաստատեցաւ ուրախացաւ եւ օրհնեցաւ. ըստ այնմ, (ողջոյն ընդ քեզ Մարիամ զի շնորհօք. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ. օրհնեալ եւ դու ի կանայս:) Յայսն ողջունէ՝ ողջացան վերք ունկանն Եւայի:

Նորին բան վասն գիտութեան եւ փառացն Աստուծոյ:

Ամբակում ասէ: (Լցաւ երկիր փառօք եւ գիտութեամբ Տեառն՝ իբրեւ զջուրս բազումս որք ծածկեն զծովս:) Ծովս՝ նշանակէ զբանս մարգարէիցն: Նախ՝ վասն դառնութեան: Երկրորդ՝ վասն ժողովելոյն յաղագս Իսրայելի: Երրորդ՝ զի կղզի եւ ցամաք մնացին հեթանոսք: Իսկ ջուրք բազում է տեղումն անձրեւաց. նշանակէ զնորս կտակ հեղեալ ի հոգւոյն սրբոյ: Նախ՝ վասն քաղցրութեան ի շնորհաց: Երկրորդ՝ վասն առատութեան ի հրէ այս եւ ի հեթանոսս: Երրորդ՝ վասն միշտ բղջմանն որ յեկեղեցիս: Իսկ որ ասէ (գիտութեամբ եւ փառօք Տեառն՝ լցաւ ամենայն երկիր.) չորս է իմացումն: Առաջին՝ զի մինչ ի գալուստ բանին՝ արդարութիւնն նեղէր զողորմութիւնն Աստուծոյ. զի միայն յաղագս հրէից էր ողորմութիւնն. այլ յամենայն հեթանոսս արդարութիւն. նաեւ զհեյաս արդարութեան օրինօքն դատեր. այլ ի գալուստ բանին՝ ողորմութիւնն նեղեաց զարդարութիւնն. զի փոխեցաւ ի շնորհս եւ ի թողութիւն: Երկրորդ՝ զի յայնժամ ցեղն Իսրայելի միայն էր

ընտրեալ եւ փառաւորեալ. իսկ այժմ՝ հեթանոսք ընտրեցան. (զի չիք խտիր. ոչ հրէի, եւ ոչ հեթանոսի որպէս ասէ Պօղոս.) եւ մարգարէն Յովէլ ասէ. (հեղից յոգւոյ իմոյ ի վերայ ամենայնի մարմնոյ եւ մարգարեացին:) Երրորդ՝ զի ի հինն ի տաճարն միայն էին գոհք եւ պատարագք ըստ օրինացն Մովսէսի. այլ ի նորս՝ յամենայն ոլորտս տիեզերաց շինեցաւ տաճար փառացն Աստուծոյ, ուր կենաց կերակուրն Զրիստոս պատարագի հանապագ: Զորրորդ՝ անդ միայն տաճարն մարմնական, եւ պատարագն եւ պաշտօնն մարմնական. իսկ աստ՝ (դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք ասէ Պօղոս.) եւ պատարագն եւ պաշտօնն բանաւոր եւ խօսուն: Չի խափանեցաւ սուերն եւ օրինակն. եւ հաստատեցաւ Էուֆիւսն եւ ճշմարտութիւնն. այսպէս (լցաւ ամենայն երկիր գիտութեամբ եւ փառօքն Աստուծոյ:) Չի փոխանակ միոյ տաճարին՝ բազում տաճարք. եւ վասն միոյ ազգին՝ բազում ազգք ընտրեցան. մարմնականն ի հոգեւորն. եւ արդարութիւնն՝ ի շնորհս եւ յողորմութիւնս փոխեցաւ: Եւ այս եղէ գալստեամբն Զրիստոսի եւ իջմամբ հոգւոյն սրբոյ ի սիրտս հաւատացելոց:

Դարձեալ Ամբակում ասէ:

(Տեսէք արհամարհոտք եւ եղծարուք. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր՝ որում ոչ հաւատայք, թէ ոք պատմեսցէ ձեզ:) Արհամարհելն այն է՝ որ յայլմէ կրէ. արհամարհողն՝ որ բանիւ զայլս արհամարհէ. իսկ արհամարհոտն՝ որ գործով արհամարհէ. որպէս այնոքիկ որք զներելովն Աստուծոյ արհամարհեն եւ անզեղջ մնան ի չարիս: Ոչ թէ Աստուծոյ քաղցր է մեղքն եւ բարի համարի՝ եւ վասն այն ներէ մեղաւորին: Այլ քաղցր է հաճոյ է Աստուոյ զղջումն մեղաւորին, վասն այն վերջին զղջմանն յերկար ժամանակս երկայնամիտ լինի Աստուած՝ եւ տեղի տայ ապաշխարութեան նմա: Այլ յորժամ անզեղջ մնան ի մեղս մինչ իսպառ՝ յայնժամ բարկանայ Աստուծոյ, եւ զանցեալ ժամանակին մեղսն ժողովէ ի վերայ նորա, եւ պատժէ զնա. թէ աստ, եւ թէ ի հանդերձեալն. որպէս ասէ առաքեալն. (Եթէ զներելովն Աստուծոյ զանձես անձին քում բարկութիւն յաւիտեան ի յարդարութեանն Աստուծոյ:) Եւ երկայնամիտ լինելոյն՝ երկու մասունք են: Նախզի՝ տեսանէ Աստուած զմեղս՝ եւ անտես առնէ: Երկրորդ՝ զի խորիկ զողորմութիւն ի վերայ նորա ածել: Իսկ ոչ երկայնամտելն՝ այս է: Նախզի՝ տեսանէ զմեղսն եւ յիշէ: Երկրորդ՝ զի արդարութեամբ պատուհասէ: Ուսեալք զայս՝ եկեսցուք ի տեսութիւն բանիս: Առաջին միտքն այս է բանիս թէ, տեսէք, տեսէք դուք արհամարհոտք զայնչափ ներելն իմ եւ զքաղցրութիւն առ ձեզ՝ եւ ոչ զղջացայք: Այժմ հաւատացէք ընդ վրեժ ինդրութիւն իմ. եւ զարմացարուք ընդ եղծումն ապականութեան ձերոյ: Չի գործ մի գործեմ ես, որում ոչ հաւատայք պատմողաց: Այս է՝ զի ի լսելիս ոչ հաւատացիք օրինաց իմոց. գործով ի մարմինս ձեր պատուհասեմ. որպէս թէ ի յականջաց ոչ լսեցիք, ի թիկունս լսիցէք: Եւ այնպիսի գործն՝ ձեր անհաւատալի թուի. զի դուք արբեալ եւ յիմարեալ էք մեղօք՝ եւ ոչ հաւատայք պատմողաց: Այլ յորժամ գործով զպատուհասն կրէք ի ձեզ, յայնժամ զարմանք: Դարձեալ միտք բանիս՝ ակնարկէ յառաջին գալուստն Զրիստոսի. որ զարմանալի գործ արար Աստուած ի վարայ արկրի. զի արհամարհոտքն եւ անհաւատքն ոչ հաւատան: Եւ այս չորս կերպիւ: Առաջին՝ զի Աստուածն երկնի եւ երկրի յարգանդին կուսին բնակեցաւ՝ եւ Աստուածն մարդ եղել: Երկրորդ՝ զի անմահն եւ կենդանին Աստուած մեռաւ

մարմնով ի վերայ խաչին՝ եւ զմեզ կենդանացոյց: Չայս լսեն հեթանոսք եւ յիմարին. եւ հրեայքն ծիծաղին. (զի ճառ խաչին կորուսելոցն՝ յիմարութիւն է ասէ առաքեալն:) Երրորդ՝ զի էջ ի դժոխս եւ ակրեաց զնա եւ ազատեաց զհոգիսն որք յԱդամայ. եւ յարեալ ի մեռելոց եւ համբարձաւ յերկինս: Չորրորդ՝ զի հեթանոսքն եւ անհաւատքն հաւատացին եւ փրկեցան. եւ հրեայքն անհաւատք եղեն եւ կորեան: Չորեքին սոքա՝ մեծ գործ էին զորս արար Տէրն. եւ արհամարհոտքն՝ այոց ոչ հաւատան: Դարձեալ՝ անկարկէ բանս ի վերջին գալուստն Քրիստոսի եւ ի կատարած աշխարհի: Եւ այն ամենայն զօրութեան եւ սքանչելեացն Աստուծոյ է՝ եւ ոչ ըստ կարգի բնութեան. այսինքն, յարութիւն մարդկան եւ նորագումն աշխարհի. փառք արդարոց եւ տանջանք մեղաւորաց: Եւ այս եւս մեծ գործ է Աստուծոյ Դ վերպիւ: Առաջին՝ յարութիւն առ հասարակ ամենայն մարդկան՝ որք մեռեալք են եւ ի հող լուծեալք. մարմնով յառնեն եւ կենդանան ի կեանս անմահ: Երկրորդ՝ նորագում աշխարհի եւ տարեաց՝ եւ փոփոխումն կարգաց եւ ժամանակաց. շարժելոցն դադարումն, եւ անշարժիցն միշտ շարժումն: Երրորդ՝ տեսութիւն Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան՝ եւ գործոց ամենեցուն. եւ լսել զլուր մանր քննութեան դատաւորին եւ զպատասխանին: Չորրորդ՝ զի մեռեալք ի դժոխոց եւ ի գերեզմանց յառնեն. եւ կենդանիք ի դժոխս եւ ի գերզմանս իջանեն. տանջողքն տանջեն. եւ տանգեալքն ազատին: Անմարմինքն ի վերուստ ի ստորին կողմ երկրի ստորագուզին. եւ մարմնաւորք ի վերին կողմն վերաբերին. լինին անդ առաջինքն վերջինք. եւ վերջինքն առաջինք. եւ այլ սոյնպիսիք: Եւ վասն այսր հիանան արարածք ամենայն. այնմ աւուր մեծամեծ գործոյն՝ արհամարհոտ դելքն եւ չարքն՝ ի մարդկանէ՝ ոչ հաւատան. այլ յորժամ գործով տեսանեն. զարմանան կրելով զտանջանս անշիջանելի: Այսքան առ այս:

Նորին քարոզ վասն կռապաշտութեան. ի բանն որ ասէ Աստուած Ովսէ մարգարէին: (Եսեմ Տէր Աստուած՝ որ հաստատեցի զերկին՝ զերկիր.՝ ոչ հրամայեմ քեզ երկրպագել զարդուցն նոցա ասէ:) Ովսեայ. 13. 4: (Գլուխ. 3)

Աստ հարցանելի է նախ թէ, զի՞նչ է պատճառն որ արգել զերկրպետութիւն արարածոց: Պատասխանեմ թէ՛ վասն բազում պատճառի: Բայց զլխաւորօրէն դիցուք տասն պատճառ: Առաջին՝ զի ամենայն արարածք ստեղծեալք են յոչնչէ. եւ յոչ ինչ հետեւի կարգ բնութեան դարձեալ, թէ ոչ կամքն Աստուծոյ պահէր նոցա զգոլն. արդ՝ թէ արարածոյ երկրպագէին, լինէին պաշտօնեայք ոչնչի: Երկրորդ՝ զի կարգաւոր է՝ որք արարածք արարչին երկիրպագեն, յորմէ ունին զգոլն իւրեանց. այլ արարծ յարարածոյ ոչ գոյանայ, թէ ոչ հրամանաւ արարչին: Երրորդ՝ անկարգութիւն է որ Տէառն ծառային երկիրպագանէ. որդ՝ Տէր իշխան է մարդս. եւ ամենայն արարածք՝ ծառայեն մարդոյ. եւ վասն սորա արարան: Չորրորդ՝ արարիչն մի է. եւ արարածք բազումք. թէ արարածոց երկիրպագէին, լինէր մոլորումն եւ բազմածութիւն. եւ ոչ գտանէին զմինն Աստուծոյ: Հինգերորդ՝ յատուկ միայն արարչին է առնուլ զպաշտօն. եւ յատուկ է արարարոց՝ տալ նմա. արդ՝ թէ արարածոց տան պաշտօնն, փոխի յատուկն երկրոցունց. վասն այն ասաց. (զփառս իմ այլոց ոչ տամ:) Վեցերորդ՝ ամենայն արարածք յարարչէն

են կախեալ առընչաբար. եւ ի նմա ունին զդիտումն. վասն որոյ նմա երկրպագեն: Եւ արարծք առ միմեանս ոչ ինչ ունին զդիտումն. վասն այն ոչ երկրպագեն: Եօթներորդ՝ Նախատիպ եւ գաղափար ամենայն արարածոց՝ միայն արարիչն է. առ որ ձկտին ամենեքեան. եւ առաւել մարդն միայն պատկեր է Աստուծոյ քան արարածոյ. վասն որոյ զնա միայն պաշտէ, եւ ոչ զարարածս: Ութներորդ՝ որ երկրպագէ ումեք՝ զօգևութիւն խնդրէ. եւ արարածք ամենայն ակար են, եւ ոչ կարեն օգնել. վասն որոյ մարդն ոչ երկրպագէ արարծոց, այլ արարչին՝ յորմէ զամենայն օգևութիւն գտանէ: Իններորդ՝ որ պաշտէ զոք՝ մերձենայ եւ սիրէ զպաշտելին. արդ՝ կամեցաւ Աստուած սիրել զինքն միայն եւ ոչ զարարածս: Տասներորդ՝ առաջին հպարտացեալն Սադայել՝ ոչ պաշտեաց զարարիչն, եւ կործանեցաւ. այլ զինքն պաշտել ետ արարածոց՝ եւ զնոսա կործանեանց. վասն որոյ ընդդէմ նմին հրամայեաց ոչ պաշտել զարարածս. այլ զարարիչն Աստուծոյ: Արդ՝ այսոքիկ զխաւորօրէն պատճառ: Այլ բազում եւ անթիւ պատճառ կորստեան եղել պաշտօն կռոցն. այսինքն, պղծութիւն, օճրագործութիւն, հայհոյութիւն, սպանութիւն, եւ այլ նմանապէս: Վասն որոյ բազում օրինադրեաց մարգարէիքն. (Ես եմ Տէր Աստուած քո. մի երթար զհետ Աստուծոյ օտարի. եւ մի պաշտեսցես զնոսա:) Երկրորդ հարցումն՝ քուրմքն ո՞րպիսի բանիւք հաւանեցուցանէին զմարդիկ զոհել կռոց: Պատասխանի՝ չորս իմն մտածութեամբ զոյ տեսանել: Նախ ասէին թէ՛ յորժամ զորթն եւ զերինջն կանգնեցին, անասուն զոհէին խոցա ըստ նմանութեան խոցա. այլ արդ՝ պատկերի կռոցն. պարտ է զնման մարդիկն զոհել: Երկրորդ՝ անասունք օտար են ի մէջ ասէին. այլ զուստերս եւ զդստերս յանձնէ ձերմէ զոհեցէք, որ առաւել սիրոյ է նշան: Երրորդը ասէին. ի տաճարն Աստուծոյ զանասունս զենուն միայն. արդ՝ դուք զմարդիկ զենեցէք որով որորշիք ի խոցանէ. եւ առաւել լիցի պաշտօնն ձեր: Չորրորդ՝ օրինակ դնէին զհայրն Աբրահամ. որ զորդին պատարագեաց եւ արդարացաւ: Եւ Եփթայի զդուստրն ուխտեաց եւ զոհեաց: Եւ հարքն մեր որք ելին յԵգիպտոսէ՝ (զոհեցին զոստերս եւ դստերս իւրեանց դիւացն որպէս ասէ Դաւիթ:)

Վասն որոյ դուք որդիւք էք՝ զնմանութիւն հօրն բերէք ի ձեզ: Երրորդ հարցումն՝ որպէս մեծ է մեղք կռապաշտութեան քան զամենայն մեղս: Պատասխանի: Նախզի՝ կռապաշտութիւնն մեղանչումն է ընդդէմ եութեանն Աստուծոյ եւ փառացն. իսկ այլ մեղք՝ ընդդէմ ընկերի, կամ յանձն իւր մեղանչէ: Երկրորդ՝ կռապաշտութիւնն հասարակաց էր մեղք. իսկ այլքն՝ առանձնակի: Երրորդ՝ կռապաշտութիւնն յայտնի եւ համարձակ էր. եւ այլ մեղքն՝ ծածուկ գործին: Չորրորդ՝ կռապաշտութիւնն որպէս զբարի գործէին. եւ այլ մեղքն՝ չար եւ խղճիւ գործին: Զինգերորդ՝ զկուռն կամաւ եւ զհիտութեամբ պաշտէին. եւ այլ մեղքն՝ տգիտութեամբ եւ ակամայ գործին: Վեցերորդ՝ կռապաշտութիւնն եւ զայլս քարշէ առ ինքն. եւ այլ մեղքն՝ միայն գործին. եւ յայտ է ի չար թագաւորսն՝ որք բռնութեամբ ի կուռնն դարձուցանէին եւ ոչ յայլ մեղս: Եւ թէ զի՞նչ զրկէին կուռքն յԱստուծոյ: Ասեմք չորս ինչ: Նախ՝ զանունն. զի Աստուած կոչէին: Երկրորդ՝ զպաշտօնն եւ զոհսն: Երրորդ՝ զքահանայսն: Չորրորդ զժողովուրդսն: Չորրորդ հարցումն թէ, ուստի՞ սկսաւ կռապաշտութիւնն: Պատասխանի: Իսկ սկիզբն կռապաշտութեան՝ չորք են: Նախ՝ որպէս ասի՝ վաղամեռիկ որդւոյ հայր՝ արար պատկեր նմա: Եւ երկրորդ՝ այլ բռնաւորք Նախանձեալ նմա, արարին

իւրեանց պատկեր: Երրորդ՝ ի հեռաբնակ աշխարհ տարին ընդ ինքեանս. եւ բազմացաւ պատկերն: Չորրորդ՝ պատկերագործ արուեստաւորքն գեղեցկացուցին զնոյնս. եւ յետոյ ի պաշտօն առին: Դարձեալ՝ չորք են պատճառ կռապաշտութեան: Նախ դեւք՝ որք շարժեցին զմարդիկ ի պաշտել զինքեանս: Երկրորդ՝ դիւթք եւ կախարդք. որպէս Արամազդ. Կռօնոս. Ափրոդիտէս: Որք ի կեանս կախարդութեամբ աստուածացուցին զինքեանս. եւ յետ մահու՝ զպատկերս նոցա պաշտեցին: Երրորդ՝ չար թագաւորք. որպէս Նաբուգոդոնոսոր կանգնեաց զպատկերն Բելայ վաթսուն կանգուն. եւ երկրպագել ետ: Չորրորդ՝ դիւամուլ մարդիկ. որպէս ուրացօղն Յուլիանոս. եւ այլք հարեալք ի դիւէ: Դարձեալ՝ չորիւք հաստատեցաւ կռապաշտութիւնն: Նախ՝ ի նախնեացն աւանդութենէ. որդի ի հարցն ունեալ. եւ երկար ժամանակօք ի նոյն հաստատեալ: Երկրորդ՝ ի գեղեցկութենէ պատկերացն՝ զօշոտեալ պաշտելն զնա: Երրորդ՝ ի յերեւմանէ եւ ի խօսից դիւացն. որք զխորհուրդն յայտնէին. որպէս Սաւուղայ երեւեցաւ դէւն ի կերպս Սամուէլի. եւ ասէր բազում ինչ զառաջիկային: Չորրորդ՝ ի հեշտութենէ մարմնով պղծագործութեանն ի զանազան տօնս նոցա. որպէս Ափրոդիտէս խնդրէր զպոռնկութիւնն: Եւ դիւնս՝ զարբեցութիւնն. եւ այլն նոյնպէս: Յաղագս այս չարս պատճառիս՝ հաստատ կային ի պաշտօն կռոցն: Զինգերորդ հարցումն՝ վասն Է՞ր կռապաշտքն զայնչափ զանազան շարիսն գործէին անխտիր: Պատասխանի. վասն չորս պատճառի: Նախ՝ վասն հեշտութեան սովորութեան մարմնոյն: Երկրորդ՝ զի եւ կուռքն զնոյն խնդրէին. արիւն եւ սպանումն եւ չար գործս: Երրորդ՝ զի ոչ ունէին զօրէս. եւ ոչ ճանաչէին զմեղս: Չորրորդ՝ զի ոչ ունէին երկիւղ ի կռոցն դատիւոյ եւ պատժիւոյ: Վասն այն ի յօրէնսն Մովսիսի հրամայեաց Աստուած հասուցանել չար փոխանակ չարի. (ակն ընդական. եւ արիւն ընդ արեան.) զի երկիցեն եւ մի գործեցեն զչարրիս: Վեցերորդ հացումն՝ վասն Է՞ր սերմանեցին դեւք զկռապաշտութիւն: Պատասխանի. վասն չորս պատճառի: Նախ՝ զի լիցին հակառակ ընդդէմ Աստուծոյ. այն որ ասէր. (եղից աթոռ իմ յամպս. եւ եղեց նման բարձրելոյն:) Երկրորդ՝ զի եւ նոյնպէս առնելոց էր հրեշտակաց ի յերկիսս. ի նոցանէ առնուլ զփառս եւ տիրել նոցա: Երկրորդ՝ զի զմարդն զրկեցէ յԱստուածապաշտութենէ. եւ ընդ իւր կորուսցէ: Չորրորդ՝ զի հաստատեալ է ի չարն. եւ կուրացեալ ընդդէմ բարւոյն. զոր ինչ եւ գործէ՝ առաւելու ի տանջանս իւր: Եօթներորդ հարցումն՝ զի՞նչ է քան դակելն եւ դրօշելն. եւ զի՞նչ կուռք անունն: Պատասխանի. քանդակելն՝ դուրատելն է. եւ դրօշելն՝ նկարելն դեղով. եւ դրօշելն ձուլածոյն. եւ դրօշն եւ ստուերագիրն՝ պատկերն է: Իսկ կուռք անունն՝ նախ՝ զի կուրութիւն է մտաց: Երկրորդ՝ զի կռեալ է եւ գործեալ: Երրորդ՝ զի անուշունչ է եւ կուռք: Չորրորդ՝ զի անշունչ եւ կուռք: Չորրորդ՝ զի հակառակ է Աստուծոյ: Ութներորդ հարցումն՝ ո՞րքան են աստիճանք կռապաշտութեանն: Պատասխանի. ըստ նիւթոյն վեց. եւ ըստ պաշտամանն տասն: Այսինքն է, նախ լուսաւորքն երկնից: Երկրորդ՝ տարրակն մարմինք՝ որպէս հուր եւ ջուր: Երրորդ՝ արծաթ եւ ոսկի: Չորրորդ՝ քարիւնքն տեւօղք: Զինգերորդ՝ փայտք եւ ծառք: Վեցերորդ՝ խեցի բրտի: Սոքա են նիւթք. աստիճանաւ մի քան զմի անարգ: Եօթներորդ՝ մարդոյ պատկերք: Ութներորդ՝ անասնոց եւ թռչնոց պատկերք: Իններորդ՝ անասուն կենդանիք եւ սողունք. որպէս եգիպտացիքն: Տասներորդ՝ բազին անծանօթին

Աստուծոյ. որպէս աթենացիքն. զորմէ առաքեալն ասաց. (զոր դուք յանձանօթս պաշտեք, ես զնոյն քարոզեմք ձեզ:) Իններորդ հարցումն՝ զի՞նչ է ասելն զպարտս հոգւոյ պահանջէ: Պատասխանի. յայսմ բանէ՝ հակառակին այլազգիք: Նախ եթէ՝ կուռք են ամենայն պատկերք: Երկրորդ թէ՝ հոգի խնդրէ Աստուած՝ ի պատկերագործ էն: Առաջնոյն ասեմք եթէ՝ այլ են սուրբք, եւ այլ դէւք. մեք զսրբոց պատկերն նկարեմք եւ ոչ զդիւաց. ապա ոչ ամենայն պատկերք կուռք. զի այլ է նախատիպն սոցա. եւ այլ սոցա: Եւ թէ ասեն, նոյն է նիւթն այս պատկերիս եւ այլ. որպէս ոսկի եւ արծաթ. եւ նոյն ձեւ պատկերին մարդոյ. եւ աղայի: Ասեմք. թեպէտ նոյն է նիւթն՝ այլ զանազանին կատարմունքն. որպէս՝ ի մի նիւթոյ փայտէն՝ կազմի աթոռ եւ անիւ. եւ ի մի նիւթոյ քարանց՝ շինի տաճար Աստուծոյ եւ տաճար կոնց: Նոյնպէս եւ զմին կնդրուկն՝ ոմանք ծխեն Աստուծոյ, եւ ոմանք կոնց. ահա նիւթն մի է, եւ կատարմունքն զանազան են: Առ երկրորդն ասեմք. եթէ ոչ պահանջ է Աստուծոյ հոգի ի պատկերագործէն: Նախզի՝ ասէ Աստուած. (ոգի յինէն ելցէ. եւ զամենայն շունչ ես արարի:) Արդ՝ թէ հոգւոց եւ շնչոց արարիչ Աստուած միայն է, զի ա՞րդ ի մարդոյ հոգի խնդրէ որ անկար է մարդոյ: Երկրորդ՝ ծնօղք մանկանցն՝ զնիւթ մարմնոյն միայն պատրաստեն. եւ ոչ տան հոգի. նկարօղն զի ա՞րդ տայ հոգի: Երրորդ՝ Մովսէս կանգնեաց զՔերովբէսն ի վերայ քաւութեանն. եւ զհսկայածեւ պատկերն ի վերայ աշտանակին լուսոյ: Եւ Սողոմոն ի տաճարին արար զՔերովբէսն ի փայտն նոճոյ. եւ հոգի ոչ խնդրեաց ի սոցանէ: Զորրորդ՝ ի սորս փրկիչն զպատկերն սուրբ նկարեաց ի վերայ դաստառակին. նոյնպէս եւ տիրամայրն ի փոխման իւրում. եւ հոգի ոչ խնդրի. նոյնպէս եւ յայլ պատկերաց: Դարձեալ՝ ասեմք առ հակառակն. թէ դուք զպատկեր կենդանւոյ նկարեք՝ ապա պարտական էք շնչոյ կենդանւոյ. եւ յորվամ զծառս նկարեք՝ պարտական էք տնկական հոգւոյ ստեղծանելոյ որ է սուտ: Իսկ որ ասէ իմաստունն թէ՝ (զպարտս հոգւոյ պահանջէ՝) այս է. զոր արար զպատկեր կոնցն, եւ որ պաշտեաց եւ երկիրեպագ, ի հոգւոց սոցա պահանջէ Աստուած զմեղս կռապաշտութեան՝ եւ տանջէ ի հուր գեհենին: Յորոց եւ զմեզ փրկեսցէ Քրիստոս Աստուած մեր յամենայն մարդապաշտ հայիոյութենէ. ' յամենայն մեղաց ' դառն տանջանաց գեհենոյն ' նմա փառք յաւ:

Նորին քարոզ վասն տարածամ մահու. ի բանն՝ (Աստուած զմահ ոչ արար. նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհս:) Իմաս. 1. 13: (Գլուխ. 3Ա)

Աստուած զմարդն ստեղծեաց ի յանմահութիւն հոգւով ' մարմնով. եւ եդ յանմահութեան տեղիս դրախտին: Եւ ետ նմա պատուիրան՝ զրաւական խոստմանց եւ անմահութեան: Չի թէ պահեալեր զպատուիրանն Աստուծոյ, ի կէտ սահմանեալ ժամանակին յանմահութիւն փոխելոց էր զնա. այսինքն, յարքայութիւնն երկինց: Եւ զի ոչ պահեաց, արտաքսեցաւ յանմահ կենացն եւ յանկարօտ փառացն. եւ անկաւ յերկիր ցաւալից եւ մահաբեր: Եւ յայտ է՝ զի պատուիրանն Աստուծոյ՝ էր ի մէջ կենաց եւ մահու. օրհնութեան եւ անիծից. ի յերկինս ելանելոյ, յերկիր իջանելոյ. որպէս պահպանութիւն պատուիրանին՝ պահեր զմարդն յանմահ կեանս. եւ լուծումն դատապարտեր ի մահ. ըստ այնմ, (յաւուր յորում ուտիցես ի նմանէ՝ մահու մեռանիցիս:) Իսկ

յանկանիլն յերկնից բանսարկուն սատանայ՝ նախանձեցաւ ընդ այսպիսի փառս մարդոյն. եւ խաբեաց զկինն. եւ նովաւ զմարդն աստուածանալոյ ախտիւ. որով ինքն կորեալ, եւ զնոսա կորոյս: Ասէ (յաւուր յորում ուտիցէք, բանայցեն աչք ձեր. եւ լինիցիք իբրեւ զԱստուածս տեսանել զբարի եւ զչար.) զի Աստուածն՝ տեսող լսի: Եւ այնպիսի մոլոր մտօք մոռացան զպատուիրանն Աստուծոյ. դարձուցին զերեսս ի նմանէ. եւ հայեցան ի պտուղն. զի էր հաճոյ աչաց եւ քաղցր ճաշակելեաց. առին եւ կերին. եւ ի ներքոյ մահու գրաւեցան. ըստ այնմ, (անիծել երկիր ի գործս քո. եւ քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչեւ դարձցիս ի հող:) Եւ այսպէս (Աստուած զմահ ոչ արար. նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ:) Եւ յայնմ հետէ օրէնս ետ մարդկայինս ազգի՝ բանիւ եւ գրով եւ աւետարանաւ: Եւ զնոյն վճիռ եղ ի վերայ օրինացն բարի եւ չար. կեանք եւ մահ. խաղաղութիւն եւ խռովութիւն եւ այլն: Չի որք պահեն զօրէնս եւ զհրամանս Աստուծոյ, բարի մասին լինին ժառանգք. եւ խաղաղութեան, եւ կենաց, եւ առողջութեան, ուրախութեան, թէ հոգւոյ եւ թէ մարմնոյ: Իսկ որք մոռանան եւ արհամարհեն զհրամանն Աստուծոյ, մերժին յերեսացն Աստուոյ. եւ ի չարի մասին լինին. եւ խռովութեան, եւ տրտմութեան, հիւանդութեան, եւ մահու: Չոր օրինակ՝ եթէ ոք մերժ է զլոյսն՝ ի խաւարի լինի. եւ որ խփէ զլուսանցն՝ խաւարէ գտունն. եւ որ խնու զակն աղբեր՝ ծարաւով պապակի. եւ որ մերժէ զկերակուրն՝ սովամահ կորնչի: Նոյնպէս (պատուիրանքն Աստուծոյ լոյս են, եւ լոյս տան աչաց:) Եւ ջուր է զովացութեան մարդոյ. եւ անմահ կերակուր հոգւոյ. ըստ այնմ, (ոչ թէ հացիւ միայն կեցցէ մարդ. այլ ամենայն բախն Աստուծոյ:) Չի որպէս հաց զմարմինն կերակրէ. նոյնպէս բանն Աստուծոյ եւ պատուիրանքն՝ զհոգին կեցուցանեն: Արդ՝ որ քան պահեմք զպատուիրանս Աստուծոյ, պահէ զմեզ ինսամն Աստուծոյ. եւ ի մերժել պատուիրանին, մերժիմք ի ինսամոցն Աստուծոյ. յայնժամ ազդի ազգի պատուպաս տրիէ մեզ. յերկնէ եւ յերկրէ. ի ծովու եւ ի ցամաքի. ի մարդոյ եւ ի դիւաց, եւ յամենայն կողմանց: Չորօրինակ՝ ի հեռանալ պահպանին՝ գտարածոցն ցրուեն թռչունք. նոյնպէս յորժամ հեռանայ պահպանող ինսամն Աստուծոյ, դեւք՝ փորձութիւնք՝ որոգայթք՝ եւ ամենայն չարք գտանեն զմեզ: Եւ այս գիտելի է՝ զի երկու իրօք ընթանամք ի մեղս: Նախ՝ դարձուցանեմք զերեսս յԱստուծոյ. եւ ապա դառնամք ի մեղս. զի որքան զպատուիրանսն Աստուծոյ ի մտի ունիմք, հայիմք առ Աստուած. եւ յորժամ մոռանամք, դարձուցաք զերեսս ի նմանէ. այս առաջինն: Եւ դառնալն ի մեղս այն է, որ նախ խորհիմք զչարն՝ եւ ապա հաւանիմք. եւ ապա գործեմք: Եւ այնպէս սովորելով ի հեշտութիւնն՝ ի խորս մեղաց ընկղմիմք հոգւով եւ մարմնով եւ մտօք: Եւ որպէս մեք դարձեալք յԱստուծոյ, դառնամք ի մեղս. նոյնպէս եւ Աստուած դարձուցանէ զքաղցր հայեցումն. եւ հայի դառնութեամք եւ բարկութեամք: Եւ որքան մեք յաւելումք ի մեղս՝ այն քան նա ի խրատն եւ ի պատուհասն: Երբեմն սով. երբեմն սուր. երբեմն հիւանդութիւն եւ մահտարածամ. որպէս այժմ մեզ է հասեալ այգի վտանգ նեղութեանս: Եւ այս վասն երկու պատճառի: Նախզի՝ որպէս բազում է երկայնամտելն Աստուծոյ՝ զի կամի զմեզ յապաշխարհութիւն ածելն. եւ յորժամ ոչ անսամք, յայնժամ բազում եւս զխրատն ցուցանէ. զի որպէս ներելն առաւել է Աստուծոյ. նոյնպէս եւ պատուհասելն. ըստ այնմ, (եթէ երկայնամտելն Աստուծոյ կամի զքեզ յապաշխարհութիւն ածել, եւ դու

ըստ անզեղջ սրտիդ՝ գանձես անձին քում բարկութիւն յարդար դատաստանէն Աստուծոյ:) Եւ երկրորդ՝ վասն այն յերկարէ՝ զի մեք յերկարիմք ի մեղս օրըստօրէ եւ բազմացուցանեմք. եւ նա յերկարէ ի բազում պատուհասն մեր: Չի բազում պարտն՝ սակաւ վճարելով ոչ հատուցանի. որպէս թէ տասն դեկան տալով՝ հազարն ոչ վճարի: Եւ դարձեալ՝ որպէս մարգարէն Մովսէս ասաց ժողովրդեանն թէ, (յոչ պահելն ձեր զպատւիրանս Աստուծոյ, վկայ ունիմ ձեզ այսօր գերկին եւ գերկիր. զի սատակիք դուք եւ կորնչիք:) Վասն է՞ր գերկինս եւ գերկիր բերէ վկայ: Նախզի՝ մեք մեռանիմք. եւ նոքա կան եւ մնան յաւիտենս. ըստ այնմ, (ազգ գայ եւ ազգ՝ եւ երկիր յաւիտեան կայ:) Երկրորդ՝ զի երդմամբ վկայեն երկինս եւ երկիրս չծածկել զգողութիւն կամ զբոզութիւն միշտ տեսանելով: Եւ վկայութիւն նոցա կրկին է: Նախ՝ ազդմամբ եւ ձայնիւ. զի աղաղակեն հանապազ առաջի Աստուծոյ վասն գործոց մարդկան. ինքեանք եւ պահապան հրեշտակք նոցա. ըստ այնմ, (աղաղակ սողոմացւոց եւ գոմորացւոց եւ առաջի իմ.) այսինքն, յերկնէ եւ յերկրէ: Երկրորդ վկայութիւնն է գործով. զի յորժամ արժանի լինիմք՝ խնամեն զմեզ. երկինքն անձրեւով. եւ երկիրս պտղով. գարուն եւ ամառն. աշուն եւ ձմեռն յիւրեանց կարգին: Իսկ անարժանիցն՝ լինին չարչարող եւ պատուհասող: Երկինք պղնձի, եւ երկիր երկաթի. զի ոչ պղինձն գիշանայ, եւ ոչ երկաթն պտուղ տայ. այսպէս եւ տարերք փոխեն զկարգս իւրեանց յանկարգանալն մեր: Նոյնպէս օդս առողջարար՝ լինի վատախառն. եւ պատճառ մահու եւ հիւանդութեան, այսպէս է վկայութիւնն եկնի եւ երկրի յանպարշտիլն մերում: Իսկ վասն տարածամ մահու՝ երկու ինչ գիտելի է: Նախզի՝ պատուհասական մահ է տարածամն. պատուհասն լինի վասն մեղաց. կամ վասն ինքեան, կամ վասն այլոց մեղաց: Որպէս փոքրիկ մանուկն մեռանի վասն ծնողաց մեղաց՝ զի կսկծեսցին. եւ արդարք վասն մեղաւորաց բառնին՝ զի մի բարեխօսեսցեն. եւ դալար փայտն՝ ընդ չորն այրի: Եւ թէ ոք ասիցէ՝ դատաստանն Աստուծոյ արդար է որպէս ասաց. (անձն որ մեղիցէ՝ նոյն եւ մեռցի.) ընդէ՞ր զարդարն ընդ անպարիշտն կորուսանէ: Այսմ կրկին է պատասխանին: Նախ ասեմք թէ՛ ոչ թիւրի դատաստանն Աստուծոյ. եւ ոչ պատուհասի արդարն ընդ անպարշտին: Այլեւ վասն արդարոյն՝ զերծանի մեղաւորն. որպէս ասաց Աստուած Աբրահամու. (Եթէ յիսուն արդար, կամ քառասուն, կամ երեսուն, կամ քսան, կամ տասն արդար գտցի ի քաղաքի, ոչ կորուսանեմ զքաղաքն. այլ ներեմ վասն արդարոցն:) Արդ՝ ի ժամանակիս յայս՝ ոչ գոյ ամենեւին արդար եւ ոչ մի. վասն այն առ հասարակ կորուսանին. ըստ այնմ, (ամենեքեան խոտարեցան ի միասին եւ անպիտանացան. ոչ ոք է որ առնէ զբարի. եւ չէ ոք մինչեւ ցմի:) Երկրորդ՝ այսպէս ասեմք. թեպէտ մեռանին ի միասին արադարք եւ մեղաւորք. այլ ոչ ի միասին պատժին. զի մի եւ նոյն մահն՝ արդարոցն հանգիստ է եւ պսակ. որպէս ասէ Յոբ. (մահ մարդոյ հանգիստ է.) եւ Սողոմօն ասէ. (թուեցան յաչս անզգամաց թէ մեռան. այլ նոքա են ի խաղաղութեան եւ այլն.) այս վասն մահու արդարոցն: Իսկ անպարշտացն ասէ. (մահ մեղաւորին չար է.) զի բարձաւ յոյս նորա. եւ ի մեղս իւր մեռաւ. եւ չկայ զղջման: Եւ փոշիմանիլն անօգուտ է. եւ զհուրն բորբաքեալ տեսանէ. եւ զդատաստանն արդար, եւ զայլն: Ահա բաժանեցան՝ մահ արդարոյն որ հանգիստ է, եւ մահ մեղաւորին որ չարչարանք: Չոր օրինակ կամնասայլն միապէս շրջի ի վերայ որային. այլ ցորեանն սրբի եւ խոտն կոտորի. նոյնպէս

Եւ մահն արդարոց՝ սրբութիւն է. եւ մեղաւորացն՝ տանջանք: Այս առաջինն: Երկրորդ գիտելի է՝ զի տարածամն երեք ազգ է: Մինն է քաղահան. եւ միւսն պտղահան. եւ երրորդն որպէս հունձ: Քաղահանն է՝ որ զչարսն եւ զմեղաւորսն բառնայ՝ որք անպիտան են եւ անպտուղ, եւ զարդարսն թողու որք պիտանի եւ պտղատու են. ըստ այնմ, (ծառ որ ոչ առնէ պտուղ բարի՝ հատանի եւ ի հուր արկանի.) յայտ է զի պտղաբերն ոչ հատանի: Եւ ուստի՞ հատանի անպտուղն. այսինքն, ի բուն արմատոյն որ է Քրիստոս. եւ ի կենացն յաւիտենից: Չի որպէս տապան մահուն զմարմինն յայժմու կենացս հատանէ. նոյնպէս եւ տապան դատաստանին Աստուծոյ՝ զհոգին ի յաւիտենից կենաց հատանէ. եւ զքաղն յարմատոյն իւլեմք եւ ի բաց ձգեմք. զի մի վնասեցէ զպիտանի բոյսն: Այլ արդարն իւրով արդարութեամբն մնայ. եւ չարն իւր մեղօքն պատժի: Եւ ունիմք այսմ օրինակ բազում. որպէս յեգիտոս մահն անդրանկաց՝ եգիպտացոցն էր. եւ իսրայելացոց ոչ: Փարաւօն ընկղմեցաւ. եւ ժողովուրդն էանց. Սողոմ այրեցաւ. եւ դովտ ապրեցաւ. տունն Նոյի ապրեցաւ եւ գերծաւ. եւ չարքն ջրով սուզեցան: (Որք ուտէին եւ ըմպէին մինչեւ յորում եմուտ Նոյ ի տապանն՝ եկն ջրհեղեղն եւ կորոյս զամենեսեան:) Իսկ պտղաբար մահն է՝ որ զարդարն եւ զպիտանին Աստուծոյ տանի. եւ զչարսն թողու. կամ զի չարչարեցին եւ ապա մեռցին. կամ զի դարձցին ի մեղաց եւ ապաշխարութեամբ մեռանիցին. (զի ոչ կամիմ զմահ մեղաւորին ասէ Տէր. այլ գդառնալն նորա եւ զկեալն:) Իսկ զբարիսն տանի որք պիտանիք են Աստուծոյ. որպէս անմեղ տղայքն մեռանին որպէս զմանկունսն Բեթղէեմի. իբր անմեղ գառնիք պատարագ Աստուծոյ ի հոտ անուշից: Կամ զի մի ընկեցին յառաջիկայն ի չարիս. կամ զպատուհասն որ զալոցն է՝ ոչ տեսցեն. որպէս Չովսիա թագաւորն երարձ. եւ ապա գերեցաւ Երուսաղէմ: Կամ զարդարս բառնայ՝ զի մեղաւորքն երկիցեն եւ ի միտ ածցեն զմեղս իւրեանց. ըստ այնմ, (թէ ըստ փայտ դալար այս լինի, ընդ չորն զի՞նչ լինիցի:) Այսպիսիս՝ պտղաբար մահ է. որպէս յայգի մտեալ զգեղեցիկ պտուղսն քաղեն. նոյնպէս եւ Աստուած յայգոյ աշխարիէ՝ զազնիւսն եւ զգեղեցիկսն տանի: Իսկ մահն որ հունձն է՝ զչար եւ զբարիսն ի միասին բառնայ. զչարն՝ զի պատժեցի. եւ զի մի չարիքն առաւել բազմացին: Եւ զբարիսն տանի՝ զի զպարտսն վճարեացէ. եւ զի հանգուցէ ի չարչարանաց: Եւ այս ուր ուրեք լինի. այլ համօրէնն ի կատարածի: Հունձն մահու է լ ինելոց. որպէս մանգաղն առ հասարակ զմեծ եւ զփոքր, զչոր եւ զդալար ի միասին հնձէ: Եւ թէպէտ հունձն մահուն՝ եւ թէպէտ քաղահանն եւ պտղաբարն մահ են եւ մեռանին. այլ վախճան նոցա ոչ է միապէս. ելն մին է. այլ մուտ ոչ է մին. մահն մի՛ այ լ կեանքն ոչ է մի. եւ ոչ օթեւանքն. եւ ոչ տեսութիւնն. եւ ոչ հատուցմունքն: Չի զանազն են ըստ զանազան գործոց արդարոց եւ մեղաւորաց. որպէս ասէ առաքեալն. (մեզ ամենեցուն յանդիման լինիլ կայ առաջի Աստուծոյ. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ. եթէ բարի եւ եթէ չար:) Եւ են ոմանք որք ասեն թէ՛ մահու ցաւն փոխելով է. եւ փախչին պատճառելով զմարգարէն որ ասէ. (փախիր եւ թաքիր առ ժամանակ մի:) Եւ այլք ասեն թէ՛ ոչ փախչիլ պարտ է, եւ ոչ ի մահն երթալ: Ասեմք առաջնոյն եթէ՛ թերութեան է կարծիս եւ անհաւատութեան ցոյց. իբր թէ պատահմամբ է եւ ոչ իրատ Աստուծոյ: Եթէ հաւատաս ինձամոցն Աստուծոյ՝ եւ զմահս պատիժ մեղացն, յայնժամ թէ չունիս զայն մեղսն, ոչ ըմբռնէ զքեզ ցաւն թէպէտ ի մեջն ես. որպէս

հրդեհեալ անդ՝ չոր խռիւն այրի. եւ դալար ծառն նմայ ի մեջն. ապա թէ դու գնոյն մեղսն ունիս՝ պատժիլոց ես. թեպէտ փախչիս կամ ի բերդ մտնուս: Ո՞վ յիմարութեանդ. եթէ փախչելով է ցաւն, ծնօղն ընդ է՞ր ոչ փոխի՝ որ մորմոքելով փարի զգաւական: Եւ ընդէ՞ր որդի դրացւոյն մեռանի, որ ոչ գայ մերձամենեւին: Եւ թէ սոքա ի միմեանս փոխին, առաջինն ուստի՞ փոխեցաւ եւ մեռաւ: Ապա յայտ է՝ զի ոչ փոխեզով մեռանի. եւ ոչ փախչելով գերծանի: Իսկ երկրորդն որք ասեն թէ՝ ոչ փախչիլ պարտ է, եւ ոչ ի մահ երթալ: Ասեմք թէ՝ յորժամ ոչ փախչին եւ ոչ ի մահն երթան գերծանին, ապա սոքա ընդէ՞ր մեռանին յետոյ՝ որք ոչ ի գեղէ ի գեղ գնացին եւ ոչ ի դուրս փախեալ: Այլ թէ ոչ գիտես՝ ուսիր եւ ի միտ առ: Մին վասն այն՝ յորժամ երթան ի մահն՝ դիպի ցաւն. զի կարգաւ մեռանին եւ ճանապարհորդելով. եւ ոչ ի միասին համանգամայն. այլ զմինն խրատե՛ զի միւսն երկիցէ եւ զղջացի ի մեղացն. եւ թէ ոչ զղջայ՝ եւ ինքն պատժեսցի: Երկրորդն այն է՝ զի ի տեսանել զմահ այլոց, իւր սիրտն կսկծի. եւ գետասցէ թէ նոյնպէս մեռանելոց է եւ ինքն անզեղջ կացեալ ի մեղաց: Իսկ այն որ ասէ. (փախիր եւ թաքիր առ ժամանակ մի:) Ոչ փախչիլ ասէ տեղեալ, եւ կամ թաքչիլ յամրոցի. զի իւրաքանչիւր մարդոյ մահ ի հետ իւրն է ուր եւ երթալ: Այլ ի մեղացն ասէ փախիր՝ եւ ի բացթող: Չի յորժամ մեղքն ոչ լինի առ քեզ, ցաւն ոչ ըմբռնէ զքեզ. եւ թաքիր ընդ արդարութեամբն եւ զղջմամբն. զի արդարութիւնն՝ ամուր պարիսպ լինի եւ զրահ. եւ ոչ թողու զցաւն ի մարդ: Այլեւ զղջումն՝ զհրամանն Աստուծոյ յետս դարձուցանէ. որպէս նինուէացւոցն. (զի ոչ կամիմ զմահ մեղաւորին ասէ. այլ զդառնալն նորա ի չար ճանապարհէն եւ զկեալն:) Եւ օրինակ քեզ. հրեշտակն զեգիպտացիսն կոտորէր. եւ ի մեջ նոցա զհսրայելացիսն եթող վասն արեան դրոշմին: ՉՍողոմ այրեաց. եւ զղովտ ապրեցոյց ի լեռն: Չաշխարիս ջրհեղեղաւ կորոյս. եւ զարդարն զՆոյ տապանաւն ապրեցոյց: Նոյնպէս եւ դու ի ժամանակ հեղեղի բարկութեանն Աստուծոյ՝ մուտ ի տապան սրբութեան որպէս զՆոյ. եւ ամրացո եւ փակեա յամենայն ուստէք եւ զզգայարանս քո ի մեղաց: Այլեւ դիր նշան փրկութեան ի դրուսս քո զդրոշմ հոգւոյն շնորհաց. զի մի չարն անդրակածախ մերձեսցի առ քեզ. փախիր ի մեղացն Սողոմայ. եւ փախիր ի լեռն առաքինութեան: Եւ յորժամ փախիցես, մի դառնար յետս եւ հայիր. զի մի լիցիս արձան աղի իբրեւ զկինն Ղովտայ. զի թերահաւատութեան է նշան դառնալ ի յետս ի յառաջին մեղս եւ սատակիլ. ոչ միայն մարմնով, այլ հոգւով եւ մարմնով: Աստ մարմնով մեռանիլ, եւ անդ հոգւով տանջիլ. զի (ահ մեծ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ ասէ առաքեալն:) Այն է եղբարք զարհուրելի եւ սարսռելի: Մանր է քննութիւնն. եւ անկաշառ իրաւունքն: Անդառնալի է վճիռն որ ասէ ընդ մեղաւորսն. (երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից որ պատրաստեալ է սատանայի:) Անել է բանտն եւ անշէջ գեհեանն: Անլոյս է խաւարն. եւ առանց ուրախութեան տրտմութիւնն: Անքուն են որդունքն. եւ անվախճան տանջանքն յաւիտենից: Յորոց փրկեսցէ զմեզ եւ առհասարակ զամենայն հաւատացեալս անւան իւրոյ Փրկիչն մեր Զրիստոս. որ է օրինեալ յաւիտենս ամէն:

Նորին քարոզ վասն Աւուր չարի. ի բանն՝ (Ոչ օգնեսցեն ինչք յաւուր բարկութեան. այլ արդարութիւն քրկէ ի մահուանէ:) Առակ. 11. 4: (Գլուխ. 3Բ)

Նախ գիտելի է՝ զի երեք չար օր է մարդոյ: Նախ՝ օր կենցաղոյս. զի չար է չարացն: Երկրորդ՝ օր մահուն. զի (մահ մեղաւորին չար է:) Երրորդ՝ օր դատաստանին եւ հատուցման չարաց: Օր կենցաղոյս չար է մարմնոյ. օր մահուն չար է հոգւոյ. օր դատաստանին՝ չար է հոգւոյ եւ մարմնոյ: Եւ այս գիտելի է՝ զի Աստուած ստեղծեալ է զմարդն բանական եւ մտաւոր կենդանի. եւ այնու բաժանի յանբանից. եւ այլ ամենայնիւ՝ նման է Նոցա եւ հաւասար. մարմնով՝ շնչով՝ զգայարանօք՝ ուտելով՝ եւ այլն: Այլ այսորս որոշի՝ զի հոգի բանական եւ միտ իմացական ունի: Եւ գործ է մտացն՝ որպէս աչացն տեսանել. ձեռացն գործել. Նոյնպէս եւ միտն ունի կրկրին գործ: Առաջինն է՝ որ ընտրէ եւ ճանաչէ զբարին եւ զչարն: Երկրորդ՝ որ թողու զչարն, եւ գործ է զբարին. որպէս ասէ մարգարէն. (խոտորեա ի չարէ եւ արա զբարի:) Չի չարն ամենեցուն է փոխելի. եւ բարին է՝ որում ամենեքեան ցանկան ասեն իմաստորւնք: Չի առաքինութիւնն յերկու իրաց կատարի. այսինքն առնել զչար, եւ առնել զբարի. զի թէ ոչ չար առնէ եւ ոչ բարի, ոչ փառս ունի եւ ոչ պատիժ: Եւ թէ զբարի եւ զչար խառնեն, ապա կանեն զիրեարս եւ կորուսանեն: Իսկ երրորդ՝ մասն բարի ոչ առնել եւ չար գործել՝ անպարշտաց է եւ չարաց: Այլ չորրորդն՝ չար ոչ առնել եւ բարի առնել՝ հաւատացելոցն է եւ կատարելոցն. վասն այն երկրորդ գործն պահանջի ի մտացն: Իսկ առաջին գործն վասն այն խնդրի, որ դժուարին է զանազանել զբարի եւ զչար: Չի բարին կրկին է. է որ զուտ բարի է ներքոյ եւ արտաքոյ. հոգւոյ եւ մարմնոյ. որպէս աստուածապաշտին. եղբայրսիրութիւնն, եւ այլն. զուտ եւ յստակ բարի են սոքա: Եւ բարի կերպարանեալ՝ որ չար է եւ բարի կերպարանի եւ շրջի. որպէս տեսակք մեղաց. ուտելն եւ ըմպելն. շնալ գողանալ եւ այլն: Սոցա կերպարանն բարի երեւի եւ հեշտ է մարմնոյ. այլ ի ներքոյ չար է ծծկեալ՝ կորուստ եւ չարչարանք հոգւոյ: Եւ այսպէս զամենայն մեղս սատանայ բարի կերպարանաւ ծածկէ եւ խաբէ գործել. որպէս պղնձագործն կլայկէ զպղինձն եւ արծաթ ցուցանէ. սակայն պղինձ է ժահահոտ. Նոյնպէս եւ մեղքն: Եւ որպէս զկարթն ծածկեն մտով եւ ըմբռնեն զձուկն. եւ որպէս հաւորսք զորոգայթն ծածկեն կերակրով՝ եւ ըմբռնեն զթռչունն: Եւ որպէս պոռնիկ կանայք՝ զարդարեն զդէմք եւ կորուսանեն զհոգիս բազմաց. որպէս ասէ Սողոմոն. (մեղր կաթէ ի շրթանց պոռնկի. եւ կատարածն դառնագոյն է քան զլեղի:) Մեղր զհեշտութիւնն ասէ. եւ լեզի զդառնութիւն տանջանացն. զի աստ յետ գործոյն խիղճ մտացն դառնանայ եւ կսկծի. եւ անդ հուրն յաւիտենից տանջէ: Նոյնպէս եւ ամենայն մեղաց սկիզբն հեշտ է, այլ կատարածն դժուար եւ սպառնօղ. որպէս կոթ սրոյն ողորկ է եւ դիւրաւ ըմբռնի. այլ ծայրն սուր է եւ մահացու: Նոյնպէս ամենայն մեղք եւ գողութիւն՝ սպանութիւն եւ այլն. վասն այն իմաստունն միտք պիտոյ է որ ընտրէ զչարն եւ զբարին ի միմեանց: Եւ զի բազումք մոլորին մտօքն՝ եւ ոչ ընտրեն զբարին եւ զչարն. այլ թողուն զճշմարիտ բարին, եւ գործեն զգունովն որ է չար: Նա վասն այն Աստուած զչար տանջանաց ի վերայ բերեւ. զի չար մեղացն՝ ի մէջն է. եւ չար պատժոյն՝ յարդար դատաստանէն Աստուծոյ: Եւ է այս եռակի. այսինքն, չար փորձանաց. չար որոգայթից. եւ չար պատուհասից: Չի չար փորձանաց է՝ հիւանդութիւն մարդոյն. աղքատութիւն. օտարութիւն. սով. եւ այլն: Չի տայ Աստուած մարդոյ զայսպիսի նեղութիւնս եւ փորձէ՝ թէ ընտի՞ր թէ խոտան. զոր օրինակ՝ բովն

փորձէ զարծաթ. թէ յստակ է՝ ժանկն սրբի. եթէ դալլա սեւանայ: Նոյնպէս եւ այսպիսի նեղութիւնքս՝ փորձեն զմարդ. թէ հաւատարիւ է եւ հաստատ, առաւել սրբի փոշետեսակ մեղքն. եւ թերին վնասի եւ պակասի: Իսկ չար որոգայթիցն՝ է ի թոյլ տալոյն Աստուծոյ վասն մեղաց մեր. եւ թշնամին սատանայ բերէ զորոգայթն ի վերայ: Կամ գազան հոսի. կայծակ. նետ. քար. հեղձումն. եւ կամ այլ ինչ: Չի որքան զբարիս գործեմք, պահապան հրեշտակն մերձ է առ մեզ. եւ չարն հեռանայ. յայնժամ թշնամին սատանայ՝ ածէ զորոգայթն ի վերայ: Որպէս զտարածոց անպահապան՝ ցրուեն թռչունք. դարձեալ ասէ առական. (որպէս ձկունք որսացեալ ի ցանցս, եւ թռչունք ի ծօղակս, այնպէս հասան ի վերայ մարդկան որոգայթն:) Այս է՝ որպէս ձուկն եւ թռչունն տգիտութեամբ եւ առանց կամաց ըմբռնին յորոգայթս. նոյնպէս մարդիկ տգետ են որոգայթիցն որք պատահին լոցա մարմնաւոր կամ հոգեւոր: Չի մարգարէն Դաւիթ՝ որ զայլոց ամենեցուն կանխաւ խօսէր, ե՞րբ եղև կանխագետ իւր որոգայթիցն զոր լարեաց Աբիսողոմ որդին իւր, եւ յափշտակեաց զթագաւորութիւնն: Եւ այնպէս յանկարծակի եղև, մինչեւ զի բոկ փախեաւ ի քաղաքէն. այս մարմնաւոր որոգայթ: Նոյնպէս ինքն ցանցեցաւ աչօքն ի տեսութիւն կնոջն ուրիայ որ շրջեր ի տանիսն: Այսպէ մեք հոգւով եւ մարմնով ի մէջ որոգայթից շրջիմք. զի մարմնով որոգայթեն զմեզ թշնամիքն ի մարդկանէ. եւ հոգւով դեւքն որոգայթեն. որք (դարանին զմեօք եւ յափշտակեն որպէս զառիւծ ասէ մարգարէն:) Իսկ ի յայս կրկին որոգայթիցս՝ տերն ուսուցանէ զերծանիլ աղօթիւք եւ ասէ. (մի տար զմեզ ի փորձութիւն մարմնոյ. այլ փրկեա ի չարէն յորոգայթից հոգւոյ:) Եւ թէ՛ (յամենայն ժամ աղօթս արարեք. զի արժանի լինիցիք զերծանիլ յայնմ ամենայնէ որ լինելոց է:) Եցոյց թէ՛ յարժամ աղօթքն է որ յայսպիսի ցանցից փրկէ զմեզ հոգւով եւ մարմնով: Եւ յայլ ուր ասէ. (չիք հնար զերծանիլ յորոգայթից՝ բայց միայն պահօք եւ աղօթիւք:) Իսկ չար պատուհասին է՝ սուր. գերութիւն. մահ տարածամ. անասնոց մահ. երաշտութիւն. կարկուտ. մարախ. չեկ, եւ այլն. որ վասն մեղաց՝ պատուհասէ զմարդ եւ խրատէ: Որպէս ասէ մարգարէն. (ապա թէ ոչ դառնայք առ նա՝ զսուր իւր սրեալ է եւ զաղեղն լարեալ, եւ այլն:) Սպառնայ ցուցանելով զգէնն. որպէս յայլ ուր ասէ. (սրեցից որպէս փայլակն զսուսեր իմ:) Սուր՝ զմահն ասէ ի մօտոյ. իսկ աղեղն՝ ի հեռաստանէ եւ միջնորոք նետի հարկանէ. որ է օտար հեծեալ եւ այլազգի. զոր թիրութիւն նշանակէ. ըստ այնմ, (դարձան եւ եղեն որպէս զաղեղն թիր:) Իսկ կապարճ աղեղանն՝ է յիշումն Աստուծոյ. զդատողական զօրութիւնն՝ նշանակէ ահեակ կողմն: Անօթ մահու՝ զործիք տանջանացն: Չնետս իւր այրեցելովք՝ այրելիք մեղքն են մեր. փայտ. խոտ. եղեգն: Չի հոգեկան եւ մարմնական մեղօք միսին նետք ցասմանն Աստուծոյ: Դարձեալ՝ զդատապարտեալսն ի հուրն՝ նետս կոչէ. զի եւ նա փայտ է: Չի որք զայլս տանջեցին՝ տանջիլոց են եւ ինքեանք. եւ սոքա ամենեքեան խրատ են զգուշութեան: Չի երկու իրօք զմեզ ի զղջումն ած է: Նախ՝ ներելով, եւ բարի առնելով. որ թեպէտ անարժան եմք, երկայնամտէ եւ բարի առնէ. ըստ այնմ, (ծագէ զարեգակն ի վերայ չարաց եւ բարեաց. եւ ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց:) Տայ խաղաղութիւն եւ առողջութիւն եւ այլն ամենայն, զի ամաչեմք ի բարութեանց Աստուծոյ եւ դառնամք: Ապա թէ ի բարի առնելն անզեղջ մնամք եւ մոռանամք զԱստուած, յայնժամ ածէ ի վերայ զխրատ եւ զտանջանս. որպէս ասէ

առաքեալն. (Եթէ զներելովն Աստուծոյ արհամարհիցես, գանձես անձին քում բարկութիւն յարդարութենէն Աստուծոյ:) Ապա յայտ է՝ զի մեք շարժ եմք զԱստուած ի խրատ մեզ. զի ահիւ եւ սաստիւ բերէ ի գոշումն: Եւ զայս եւս խրատս կարգաւ ածէ: Նախ՝ ի յարտաքին ինչս. որպէս զոսկի եւ զարծաթ առնուլ տայ, եւ աղքատացուցնէ. եւ ապա զկերակուրն հատանէ երաշտով կարկտիւ, կամ այլով: Եւ ապա անասնոցն մահ ածէ. զի այլ մերձաւոր են մեզ. եւ յորժամ ոչ դառնամք, յայժամ ի մարմինս մեր բերէ զխրատ տանջանացն: Եւ դրածեալ՝ այլ կարգաւ խրատէ: Նախ՝ ի հեռու աշխարհէ բերէ զպատուհասն՝ զի լսելով մեր զարհուրիմք, եւ ապա ի մերձ աչաց ցուցանէ. եւ թէ յամառիմք ի մեղս, ապա ի մարմինս խրատէ. որպէս ասեն՝ ականջովդ ոչ լսեցեր, ի թիկունսդ լուր: Այնպիսին խոզաբարոյ Է. որ այնչափ ի վերայ սրոյն գնայ, մինչ խիշտի ի սիրտն հասանի. յայժամ ոչ ինչ է օգուտ յետ դառնալն. նոյնպէս եւ անգեղջ մեղաւորն: Այլեւ այս խրատս՝ բարի է թէ զգուշանամք եւ յօրէնս Աստուծոյ գամք. ըստ այնմ, (երանի մարդոյ՝ զոր խրատես դու Տէր. եւ յօրինաց քոց ուսուցանես նմա:) Չի զոր սիրէ Տէր՝ խրատէ, եւ այլն:) Այլ թէ ոչ դառնամք ի մեղաց, աստ տանջէ առ հաւատչեայ մարմնով. եւ անդ հոգւով եւ մարմնով յաւիտեն տանջելով: Այս առաջին չարն է կենցաղոյս. (յորում ոչ օգնեսցեն ինչն յաւուրս այսպիսի չարութեան. այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ:) Երկրորդ՝ չար է օր մահուն. եւ այս զանազան կերպիւ: Նախզի՝ յանկարծակի գայ իբրեւ զգոց. որպէս ասէ Տէրն. (ոչ գիտէք յորում ժամու գողգայ.) որ օր մահուն: Յերեկօրեայ՝ տղայութիւն: Մեջ գիշերի՝ երիտասարդն: Հաւախօսն՝ ալիքն: Առաւօտն՝ ծերն մերձ ի լոյս հանդերձելոյն: Եւ թէ ոք ասիցէ՝ վասն Է՞ր ոչ գիտեմք զօր մահուն. զի թէ գիտեաք՝ պատրաստեաք զմեզ: Ասեմք թէ՝ ոչ էր բարի գիտել զօր մահուն. վասն այն արգել Տէրն. (ոչ է ձեզ պարտ գիտել զժամս եւ զժամանակս:) Նախզի՝ թէ գիտեր մարդ զօր մահուն, ոչ շիներ եւ ոչ տնկեր. եւ աւերիւր աշխարհ: Եւ դարձեալ՝ մարդիկ սովորելով ի մեղս, հեշտանային. եւ յետոյ ոչ կարէին դառնալ. եւ թէ դառնային, եւ զվերջի ամն ընդ ապաշխարութեամբ մեռանէին, ոչ ոք ամնոյր զարդարութեան պսակն: Այլ ոչ գիտելով՝ հանապազ զգուշանամք վասն մահուն մերձ տեսանելով առ մեզ: Եւ այս եւս ինամք է մարդասիրին: Չի նախընթաց ունիմք նախ զալիսն՝ որ նշանակ է մահու: Երկրորդ՝ զպակասութիւնն ի զգայարանս. ի յուժոյ գնացից. ի գործոց, եւ այլն: Երրորդ՝ զհիւանդութիւնն. զի տեսեալ զսոսա՝ պատրաստիմք մահուան. որպէս արտն սպիտակացեալ՝ նշան է հնձոց. եւ տերեւն դեղնեալ՝ աշնան. եւ ձիւնն ի լերինս՝ ձմերան է ցոյց: Դարձեալ՝ չար է օր մահուն. զի դառն է յիշատակ նորա. որպէս ասէ Սիրաք: (Ով մահ՝ ո՞րպէս դառն է յիշատակ քո:) Չի վախճան է կենաց. եւ բաժակէ զհոգին ի մարմնոյ. եւ զայն կարի յոյժ դժուարութեամբ. որպէս է տեսանել յանբան անասունս, թէ որպէս դողան եւ բառաչեն զերկիւղն ցուցանելով: Եւ Տէրն մեր Աստուածն բոլորից՝ ի ժամ մատուն ի տագնապի կայր. (եւ քրտունք արեանն իբրեւ զկայլակր վիժեին.) զի Աստուած էր. գիտեր զառաջիկայն. եւ մեզ ուսուցաներ զվիշտ մահուն: Եւ զայն է տեսանել ի հոգեվարս մարդոյն. զի ծով դառնութեան կուտի ի վրայ. եւ շունչն քակտի ի նմանէ. զձեռնս ձգէ եւ ոչ օգնէ: Չաչս այսր եւ անդր ածէ. զերեսն առ յահէն դարձուցանէ եւ ոչ գործանի: Դարձեալ՝ դարձուցանէ եւ ոչ զերծանի: Դարձեալ՝ չար է օր մահուն. զի անողորմ է կոչօղն եւ անկաշար: Ոչ ի ծերոյն հատկառի, եւ ոչ

տղային ողորմի: Ոչ կաշառ առնու ի մեծատանց, եւ ոչ խղձայ աղքատաց: Ոչ ժամ մի ներե մեղաւորաց դառնալ, եւ ոչ զսէ բարեխօսի: Ոչ երկնչի ի թագաւորաց, եւ ոչ ի զօրաց զարհուրի. ոչ ամբօք թաքչի. եւ ոչ պարիսպ պահէ զոք. ժամանակի ոչ կարօտի, թէ տի՛ւ է թէ գիշեր. թէ ի տա՛ն է, կամ յայլ ինչ տեղիս. զի յորում ժամու հանդիպի ըմբռնէ: Այլեւ գործիք ոչ է պակաս նմա որով սպանանէ. զի հուր եւ ջուր եւ վեմ եւ այլն ամենայնի եւ մարդիկ՝ գործիք են նմա. վասն չար է օր մահուն: Դարձեալ՝ չար է օր մահու մեղաւորին. զի լոյսն մերժի. եւ խաւարն մերձաւորի. զվաստակն մարմնական թողու. եւ զհոգեւորն ոչ ունի: Առաջի տեսանէ զհատուցումն գործոց՝ եւ զպատիժ մեղաց: Չհուրժ բորբոքեալ. եւ զորդն անվախճան. զվճիռ դատաստանին՝ եւ զահագին ատեանն. եւ յելս շնչոյն առնուն զառ հաւատչեայն. զի նոյնպէս տանջելոց են յաւիտեան: Աւաղ յիշատակիս: Այլեւ չար է օրն՝ զի ոչ գիտէ յո երթայ. զի խաւար է ճանապարհն. եւ միայն է յնկերաց: Նոր է քաղաքն. եւ անձանօթ բնակիչքն. ուրախութիւն է սրբոցն. եւ տրտմութիւն է մեղաւորացն. լոյս է արդարոց. եւ խաւար նոցա: Չի թէ աղաղակէն՝ ոչ ոք լսէ նոցա. եւ յետս դառնալ ոչ թողուն. փոշիմանին, եւ ոչ հասանին: Խոստովանիլ եւ ապաշխարել ոչ կարեն: (Չի ոչ եթէ մեռեալք խոստովանին, կամ օրինեն զՏէր:) Վասն այն ասէ. (ոչ օգնեսցեն ինչք յաւուր չարութեան. այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ:) Իսկ երեք օր չար՝ է օր ահագին դատաստանին: Նախգի՝ նա է օրն վերջին եւ աներեկ. վախճան ժամանակին, եւ սկիզբն անվախճան յաւիտենին. ընտրելոց ուրախութեան եւ փառաց եւ պսակաց է օր: Յորում դատաւորն արդար իջանէ յերկնից հայրական փառօք. եւ բիւրք բիւրուց՝ եւ հազարք հազարաց ինն դասք հրեշտակաց սպասաւորեն առաջի նորա. եւ նստի ի վերոյ ի դատողական աթոռ. եւ առ նա ժողովին ամենայն ազգ մարդկան ի բննել եւ հատուցանել զգործս մարդկան: Ըստ այնմ, (մեզ ամենեցուն յանդիման լինիլ կայ առաջի Աստուծոյ. զի ընկալցի իւրաքանչիւր ըստ գործոց. եթէ բարի, եւ եթէ չար:) Յայնժամ կորացեալ գլխով եւ ամօթալից դիմօք՝ ծանրացեալ մեղօք ի ձախակողմն ժողովէ զամենայն մեղաւորաս երկրի: Երկրորդ այն է օր չար՝ զի բանք սպառն՝ եւ գործք թագաւորեն. ճարտարախօս լեզուք կարկին եւ կապին. եւ չարախօսքն լռեն: Անդ ոչ երեւին թագաւորք եւ ոչ իշխանք: Ոչ ծեծատունք եւ ոչ աղքատք: Ոչ բռնաւորք եւ ոչ զօրաւորք. զի ամենեքեան յահէ մեծի թագաւորին՝ զարհուրեալ են եւ դողան ի յակնակել ահագին դիմաց դատաւորին: (Ասեն լերանց թէ՛ անկերուք ի վերայ մեր. եւ բլրոց թէ՛ ծածկեցէք զմեզ յերեսաց դատաւորին որ նստի յաթոռն:) Յանկան մահու, եւ ոչ հասանին. զի անմահապէս տանջին: Եւ աստ յայտնի ամենակարօղ զորութիւնն Աստուծոյ՝ որ մարմինն անմահ տանջի. եւ հոգին հրով տոչորի: Երրորդ այն է օր չար՝ յորում երկինք եւ երկիր վառեսցին հրով: Եւ լերինք եւ բլուրք հալին յերեսաց Տեառն: Լինին ահագին գետնաշարժք. եւ տարերք հարկանեն զմիմեանս. զի վրէժ ինդրութեան է օր, եւ հատուցումն չարագործաց. լինին ձայնք փողոց եւ որոտումն ամպոց. մինչ սարսափին հրեշտակք եւ սասանին արարածք ամենայնի: Յայն ժամ (արդարն հագիւ կեղղէ.) եւ վայ է ինձ՝ որպէս զիս մեղաւորք եւ անպարիշտք ո՛ւր երեւին. Դարձեալ՝ չար է օրն եւ ահաւոր. զի ոչ ոք կարէ փախչիլ. ի վերոյ է բազմեալ ահագին դատաւորն. ի ներքոյ դժոխքն լինի բացեալ զբերանն: Շուրջանակի գետ հրեղէն է պատեալ. առաջի տեսանեն զմեզս իւրեանց գործոցն: Ի ձախ

կողման զդեւս չարախօսող. եւ ի յաջ կողմանէ զհրեշտակս սուրբս ոսոխ եւ տանջող պատրաստեալ. գերի եւ ողորմելի մեղաւորն ո՞ր փախիցէ: Չար է օրն այն. զի ամենայն մեղք որ այժմ ծածուկ են, անդ հրապարակաւ յայտնին. զի դպրութիւնք բանին. եւ իւրաքանչիւր ոք զմոռացեալ մեղս իւր՝ իբրեւ ի պնակիտ ի հոգին եւ ի մարմինն իւր գրեալ ընթեռնու: Եւ ոչ միայն ինքն, այլեւ ամենայն ոք. եթէ հրեշտակք, եւ եթէ սուրբք ի մարդկանէ: Չի այն է մեծ եւ ահագին խայտառակութիւն. զոր աստ ի մին քահանայէ ամօթով թաքուցանեն՝ անդ հրապարակաւ յայտնի: Եւ իւրաքանչիւր մեղաց՝ մանրամասն քննութիւն լինի. ոչ միայն գործոց, այլեւ բանից եւ խորհրդոց. եւ հատուցումն արդարապէս: Ոչ երեսս առնէ, եւ ոչ կաշառս առնու. ոչ երկիւղ է յումեքէ, եւ ոչ մոռացեալ բան ինչ ի գործոց մերոց. եւ ոչ ողորմութիւն ինչ: Չի ծածկեալ է անդ ողորմութիւնն յարդարութեանն Աստուծոյ. որպէս աստ ողորմութեան դուռն է բաց. եւ անդ անողորմութեան. (զի Աստուած դատաւոր արդար է:) Եւ մի ողորմիր աղքատին ի դատաստանին ասէ:) Չար է օր դատաստանին. զի անճար է եւ անհնար. զոր ի յայս կեանս կամ վաստակիմք գործելով. կամ գտեմք կամ խնդրեմք: Եւ այսպիսի դրուքս փակեալ են անդ. զի ոչ գոյ մարմնական արուեստս եւ վաստակ. ոչ ոք վաճառէ զի մեք գնեմք. եւ ոչ ոք կորոյս զոր մեք գտանեմք. եւ ոչ գողանալ կարեմք: Չի սուրբքն յերկիսս գանձեն. եւ մեղաւորքն յերկրի են. եւ ոչ ոք տայ փոխ. զի ոչ ունիմք հատուցանել: Եւ թէ խնդրեմք, ոչ ոք ողորմի. որպէս յիմար կուսանքն խնդրէին յիմաստուն կուսանացն՝ եւ ոչ առին: Չար է օրն այն. զի ոչ ոք լինի բարեխօս եւ ոչ միջնորդ. զի սուրբքն որք այժմ բարեխօսեն յայնժամ ոսոխ լինին մեղաւորաց: Նոյնպէս հրեշտակք աստ պահապանք. անդ տանջողք եւ վրեժ խնդիրք Աստուծոյ: Անդ եւ քաղցր դատաւորն՝ ի դառնութիւն փոխի մեղաւորաց. այլ ոչ ասէ թէ՛ (եկայք առիս ծանրաբեռնեալք եւ ես հանգուցից զձեզ. ոչ ծառայ բարի եւ հաւատարիւ. ոչ թէ ուսարուք յինէն. զի ես հեզ եմ եւ խոնարհ սրտիւ եւ այլն:) Այլ զինչ՝ (կապեցէք զձեռս եւ զոտս. եւ հանէք ի խաւարն արտաքին.) այսինքն, արտաքոյ այցելութեանն Աստուծոյ: Եւ թէ՛ (կտրեցէք ընդ մէջ.) եւ զմասն՝ այսինքն է, բաժանեցէք զհաւատն եւ զմկրտութիւնն զոր է էառն յինէն: Անդ է լալ աչաց. անդ կրճտել ատամացն եւ սառնամանիք: Անդ որդն անքուն. անդ հուրն անշէջ. եւ անդ վերջին վճիռն ահագին բարբառոյ. (երթալք յինքեն անիծեալք ի հուրն յաւիտենից՝ որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:) Այն է վերջին վճիռն եւ անդառնալի. որ արտաքսէ յերեսաց եւ անիծանէ. եւ հուրն յաւիտենակրան առաքէ. զոր պատրաստեալ է սատանայի եւ կամարարաց նորա: Չի որպէս օրն այն անվախճան է. եւ հուրն այն անվախճան. եւ որպէս սուրբքն ոչ ունին եզր եւ վախճան հանգստեան եւ արքայութեանն. նոյնպէս եւ մեղաւորք ի տանջանս աններելի՝ անզերծանելի: Յորոց փրկեսցէ Փրկիչն մեր Զրիստոս Աստուած՝ առհասարակ զմեզ՝ զհաւատացեալս անուան իւրոյ.՝ Նմա փառք յաւ:

Նորին քարոզ վասն նեղութեան: (Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի՝ լաւ ինձ:) Սաղ. 119. 1: (Գլուխ. 39)

Բայց ոչ է պարտ զանց առնել զնեղութեան մեծութենէ. զի մայր է համբերութեան. եւ առաւել քան զամենայն՝ համբերութիւնն մեզ

պիտանեցու է յայժմեան ժամանակիս վասն զանազան վշտաց, յորում տարբերիմք եւ ի տուէ եւ ի գիշերի. զորոց դոյզն ինչ ասասցուք որքան հասանիլ կարեմք: Արդ՝ է նեղութիւն առաջին՝ զոր կրեմք հարկաւոր կիրս բնութեանս. որ իբրեւ Տէր ծառայեցուցանեն զմեզ ի տուէ եւ գիշերի: Երկրորդ՝ յետ այտորիկ անելորդքն. որովք ճոխք եւ փարթամք՝ ի տուէ եւ գիշերի չարաչարին: Երրորդ՝ հիւանդութիւնք որք հարկաւորացն եւ յաւելորդացն. եւ կամ յայլոց դիմաց տիրէ մեզ: Չորրորդ՝ որ ի գազանաց եւ ի թունաւորաց: Հինգերորդ՝ բանականացս առ իրեար սիրելեաց եւ ասուելեաց վասն պատճառի իրիք: Վեցերորդ՝ բանսարկւին եւ չար այսոց նորա որք ծածկաբար եւ յայտնապէս մարտնչին ընդ մեզ: Եօթներորդ՝ որ ի տարերաց ստահակութենէ եւ յաչափութենէ լինիցի. յօդոյ՝ ի ջրոյ՝ եւ յայլոց: Ութներորդ՝ որ վասն Աստուծոյ պաշտութեան՝ որ է զանազան ընթաց առաքիւնութեան: Իններորդ՝ մահն հասարակաց մարդկային բնութեանս: Տասներորդ՝ տանջանքն որք անդ՝ զոր մի լիցի ումեք զփորձ առնուլ հաւատացելոց: Եւ այս մինչեւ ցայս վայր՝ զոր ժողովեցաք զզանազանութիւն նեղութեանց բնութեանս: Իսկ այսք ամենայն՝ ոչ էին յսկզբան լինելութեան նախաստեղծիցն. այլ յետոյ եմուտ ի բնութիւնս: Եւ այժմ բազում պատճառք գոն նեցութեանցս որք դիպին մարդկան եւ ի թոյլ տալովն Աստուծոյ: Ոմանց պատահին նեղութիւնք. զի ծածուկ գործեալ առաքիւնութիւնն ամենեցուն ցուցցի որպէս Յոբայն: Է զի եւ ի ձեռն անտաղի թուեցելոց իրի՝ մեծ ինչ գործիցէ. որպէս ի ձեռն խաչին փրկութիւն մարդկան: Եւ ոմանց՝ զի մի յուղիղ խորհրդոց եւ ի զօրութենէ տուելոյ նոցա ի հպարտութիւն անկանիցին. որպէս Պօղոսի եւ Եգեկիա թագաւորին: Եւ ոմանց ի յուղղութիւն այլոց. զի ի նորա դիպանէն՝ այլք խրատեսցին. որպէս զՂազարուն եւ զմեծատունն: Եւ այլոց վասն փառացն Աստուծոյ. որպէս ի ծնէ կուրին: Իսկ ոմանց՝ ի նախանձ այլոցն եւ վասն փառաց չարչարելոցն, եւ հանդերձեալ ակնունելի յուսոյն որ վասն բարեաց. որպէս Մարտիրոսացն եւ չարչարելոցն որ վասն սիրոյն Քրիստոսի: Եւ դարձեալ անկանիմք ի նեղութիւն. զի զարհուրեալք ի նեղութեանցն, ոչ յանցանիցեմք. եւ եթէ յանցեալք, յուղղութիւն գայցեմք. եւ ի նեղութեան՝ առ բարերարն դիմիցեմք. որպէս ասէ մարգարէն. (Տէր ի նեղութեան յիշեցաք զքեզ:) Իսկ ոմանց յարդարոց՝ զորոց տեսանէ զառատ է զփարթամ միտս նոցա եւ զյօժարութիւնն, թոյլ տայ անկանիլ ի նեղութիւն վասն յուսոյ եւ փոխարինացն: Իսկ այլոց որք աղքատ են մտօք՝ ոչ թոյլ. զի մի վնասեսցին: Եւ ոմանց՝ զի չարչարեալք, թողութիւն առնուցուն մեղաց եւ յանցանաց իւրեանց: Բայց են ոմանք՝ որք աստ տանջին եւ անդ. որպէս վասն սողոմացւոցն ասէ անտարանն: Եւ են որք աստ միայն. որպէս դասք սգաւորաց ի մեղս: Եւ են որք անդ միայն. որոց ներեաց Աստուած աստ եւ ոչ հատոյց. որպէս մեծատունն: Բայց են ոմանք որք ասեն վասն հին օրինացն. աստ միայն տանջի վասն մեղաց. եւ անդ ոչ. զայս ինչ պատճառելով: Նախ թէ՛ ասացաւ նոցա թէ՛ (ակն ընդ ական, եւ արիւն ընդ արեան, եւ այլն:) Դարձեալ ասեն թէ՛ պարգեւքն մարմնաւոր էին, պարտ է զի եւ պատիժն մարմնաւոր լիցի: Առ այս ասեմք նախ զտերունակն բանն որ ասէ. (ծառայ որ գիտիցէ զկամս Տէառն, եւ ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա. արքցէ գան բազում. եւ որ ոչ գիտիցէ՝ գան սակաւ:) Երկրորդ՝ զի թէ սողոմայեցիքն որք առանց օրինաց էին եւ զայեն չարիս սովորեալ էին, աստ տանջեցան՝ եւ անդ

տանջելոց են. ապա առաւել ևոքա որք զօրէսս ունէին: Երրորդ՝ յայտ է յանցաւորաց գողացն. զի ոչ միայն կրկին, այլ չորեքկին հրամայէր օրէնքն հատուցանել: Չորրորդ՝ յայտ է զի Յուդա Մակաբէ՝ հրամայէր պատարագս մատուցանել վասն մեղաց մեռելոցն. եւ որք ի բարիօսէ առաքէին պատարագ վասն հարցն. ըստ այնմ, (քեզ վայել է օրհնութիւն Աստուած ի Սիօն. եւ քեզ տացին աղօթք Յերուսաղէմ:) Առ առաջին ասեմք թէ՛ տուաւ ևոցա պատիժ մարմնական վասն խստութեան ևոցա. զի ևոր եկեալ էին յԱստուածանօթութիւն ի կոնց մոլորութենէ. զի զարհուրեցցին եւ երկիցեն յօրինաց: Առ երկրորդն ասեմք՝ թեպէտ պարգեւքն մարմնակն էին, այլ պահողացն զօրէնսն՝ լինէր պարգեւ հոգեւոր. որպէս Աբրահամ. Մովսէս. Դաւիթ. եւ այլքն արժանացան: Բայց թէ ի ևորս ճշմարտութեան եւ թէ ի հինն՝ որք գիտեն զօրէսս եւ անգեղջ եւ աներկիւղ գործեն զմեղս, քան զտգետսն եւ զերկիւղածս եւ զղջացեալս՝ առաւել դատիցին: Իսկ այնոքիկ որք արդարքն են եւ տանջին, կրկին է պատիւն որպէս սրբոց: Եւ եթէ անիրաւք եւ զղջացեալք՝ խոստովանին զմեղս եւ գոհութամբ ընդունին զտանջանս, ի թողութիւն են տանջանք ևոցա. զի կրկին ոչ պատժ է Աստուած վասն զղջման եւ գոհութամբ տանելոյ ևոցա: Իսկ որք ոչ զղջանան, իրաւապէս աստ եւ անդ տանջեցցին: Եւ թէ Է՞ր վասն թոյլ ետ Աստուած յԵգիպտոս չարչարիլ ժողովրդեանն: Նախ՝ վասն վարձուց փոխարինացն: Երկրորդ՝ զի զգօրութիւնն ցուցցէ ևոցա: Երրորդ՝ զի սպանցէ յաւելորդացն: Եւ թէ վասն Է՞ր եւ զաշակերտսն թոյլ տայ սպանանել: Նախզի՛ եւ սպանեալքն յաղթեցցեն թշնամեացն: Երկրորդ՝ զի թերեւս ի զղջումն եկեցցեն սպանօղք ևոցին: Երրորդ՝ զի զերկայն մտութիւնն իւր ցուցանէր: Չորրորդ՝ զսերն ևոցա առ Աստուած յայտներ: Յինգերորդ՝ զի մի ոք ասիցէ թէ՛ ակն ունելով զերծանելով, վասն այնր տային զինքեանս ի տանջանս: Եւ այս են փորձութիւնք զորս կրեցին առաքեալքն: Նախ՝ Անանիային: Երկրորդ՝ տրտունջն յունաց: Երրորդ՝ Սիմօնի կախարդի: Չորրորդ՝ զՊետրոսէ ամբաստանութիւնն վասն Կուռնելիոսի: Ապա սովն հերովդէի: Եւ որք ջանային զևորընծայ հեթանոսս թլփատել: Եւ ոչ գոյ բարւոյ երբէք լինիլ՝ եւ չարի ընդ նմա ոչ բաղկանալ: Եւ այսոքիկ վասն այնր՝ զի թէ եւ ոչ միոյ հակառակողի գոլով ո՞ր երեւեցցի մեր առ Աստուած սիրոյն ջերմութիւն: Իսկ վան նեղութեան եւ մահու բնութեանս զոր վերագոյն յիշեցաք՝ եւ զայս եւ պարտ է գիտել. զի ըստ երից դիմաց հասանի մահն ի վերայ բնութեանս: Է որ ըստ բնութեան կրիցս. զի մահկանացու է. որ ոչ ի պատուհասից, այլ լցեալ աւուրբք ի մահիճս իւր մեռանի: Եւ է որ ըստ մեղաց պատուհասից. որպէս Եգիպտացոցն՝ ամաղեկացոցն՝ եւ ամոնացոցն ի ձեռն Սաւուղայ զոր Աստուած ասաց: Եւ է որ ըստ խնամելոյ. եւ այս արդարոց եւ մեղաւորաց՝ որ ի թոյլ տալոյն Աստուծոյ լինի, թեպէտ եւ ոչ կամի. որպէս Ովսիայն. եւ զոր Սողոմօն ասէ թէ՛ (ահա արդարք բառնին յերեսաց:) Եւ զոր ի կաթուղիկէն ասէ թէ՛ (մի ոք որ ի փորձութեան իցէ, ասիցէ թէ յԱստուծոյ փորձիմ. այլ յիւրոց ցանկութեանցն ձգեալ եւ պատրեալ.) զի որ ցանկայ փորձութեան, անկանի ի փորձութիւն: Վասն զի պատահի մեծութիւն մեղաւորի եւ արդարոյ. ևոյնպէս եւ հանգիստ. այլ սոցին հակառակն՝ աղքատութիւն եւ տանջանք աստ: Բայց թէ զի՞նչ շահ օգտութեան ի նեղութենէ վշտացն նեղելոց լինիցի կամ վնաս, ասելի է: Արդ՝ շահ օգտութեան առաջին այս է. զի արի եւ կազմ եւ պատրաստ եւ քաջասիրտ եւ

հարբեցող եւ ժուժկալ գործէ. որպէս առ աղքատս եւ փարթամս է տեսանել: Երկրորդ՝ խոնարհս հեզս մարդասերս գթածս եւ աննենգս. (զի որ զփորձ առեալ է, կարող է եւ փորձանաւ որացս օգնական լինիլ:) Երրորդ՝ ստիպէ առ Աստուած դիմել աղօթիւք եւ խնդրուածովք. եւ զայն կամօք եւ յօժարութեամբ ի բոլոր սրտէ. ըստ այնմ, (Տէր ի նեղութեան. յիշեցաք զքեզ:) Չորրորդ՝ զի նովաւ մեղաց եւ յանցանաց եւ ամենայն սխալանաց թողութիւն շնորհիցի եւ մաքրումն. որպէս ի ձեռն հրոյ եւ հարկանելոյ ոսկոյ եւ արծաթոյ եւ երկաթոյ լինի՝ մաքրելով զժանկ եւ զաղոսս նոցա. որպէս առ վկայսն եղեւ: Զինգերորդ՝ վասն այն գովելի է նեղութիւնն՝ զի մեղացն մաքրութիւն է. որով սուրբ սրտիւ զԱստուած տեսանեն ըստ Մաթեոսի. (Երանի որք սուրբք են սրտիւք՝ զի նոքա զԱստուած տեսցեն:) Այլեւ ժառանգ արքայութեան ըստ գործոց. (բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւնն.) որպէս ասէ երանելի Յօհան ոսկեբերանն թէ՛ զոր ինչ առնէ կամնասայլն ցորենոյն՝ եւ խարտոցն երկաթին՝ եւ հուրն ոսկոյն՝ զնոյն առնէ եւ նեղութիւնն արդարոցն: Իսկ վնաս ի նեղութենէն այս է: Նախզի՝ հայիոյն. նախատեն. յուսահատին. որպէս ցուցանէ Յօհաննէս ի յայտնութեան գիրն: Երկրորդ՝ զի առ ի չժուժել նեղութեանն, ի նոցա կողմն խոտորին. որպէս այժմ եղեալ տեսանեմք. եւ ի հնումն առ երկիւղին զարհուրեալք: Երրորդ՝ այլեւ պայծառութեան եկեղեցւոյ եւ կարգաց՝ խաւարումն եւ այլայլումն գործէ. որպէս է տեսանել առ ազգս հայրոց: Չորրորդ՝ եւ նոքա օգնական ինքեանց չարութեանն առեալ նեղիչքն՝ յեսս ամբարտաւանութիւն անկանին. որպէս թէ ի ճշմարտութեան եղեալք, եւ զհակառական նեղեն իրաւունս տալով ինքեանց: Զինգերորդ՝ եւ այսու ճշմարտութիւնն աղաւաղի եւ աղօտանայ. եւ չկարէ ամենայն ոչ ի վերայ հասանիլ ճշմարտիւ. այլ կարծեն զսուտն ճշմարիտ լինիլ՝ եւ զհակառակն սորին: Յորոց փրկեսցէ զմեզ Զրիստոսն Աստուածն մեր յայսպիսեաց,՝ զամենայն՝ զամենայն ուղղափառ դաւանողս սուրբ Երրորդութեան. ամէն:

Նորին քարոզ վասն Պատուհասի. ի Բանն Յովելեայ: (Փող հարեք ի սիօն. սրբեցէ՛ պահս. քարոզեցէ՛ք պաղատանս. ժողովեցէ՛ք զձերս եւ զայլս:) Յովելեայ. 2. 15: (Գլուխ. 37)

Փոփոխական է մարդոյս բնութիւն. երբեմնի չարն եւ երբեմն ի բարին: Չի յորժամ անձնիշխան կամօք օրինացն Աստուծոյ հնարգանդիմք, ի բարին փոխիմք եւ զբարին գործեմք. եւ յորժամ մերժեմաք զօրէնս Աստուծոյ, եւ հետեւիմք կամաց չարին, փոխիմք ի չարն, եւ գործեմք զչար: Նմանապէս յորժամս գործեմք զբարին, ի բարին Աստուծոյ վայելեմք, աստ մարմնով զխաղաղութիւն եւ առողջութիւն եւ զայլն. եւ անդ հոգւով զկեանսն յաւիտենից. որպէս ասէ Դաւիթ. (բարի առնէ Տէր բարեաց՝ եւ այնոցիկ ոյք ուղիղ են սրտիւք:) Իսկ յորժամ գործեմք զչար, փոխէ ի վերայ մեր զպատուհաս չարութեանց: Աստ մարմնով հիւանդութիւն. սով. տարածամ մահ, եւ զայլն: Որպէս ասէ Ամովս. (ոչ ինչ է չար ի քաղաքի զոր ոչ առնէ Տէր.) այսինքն, զի չար մեղացն ի մենջ է. եւ զչար պատուհասին Աստուած առնէ. իսկ անդ զտանջանս դժոխոցն. որպէս ասէ Դաւիթ. (զթիրեալս յափշտակութեամբ՝ տանի ընդ այնոսիկ գործեն զանօրէնութիւն.) այսինքն, ուր թիրեալ են յուղիղ գործոց, բռնութեամբ քարշէ ի հուր դժոխոցն: Իսկ

աստ որ մարմնով պատուհասէ զմեզ՝ կրկին է. կամ վրեժ է, կամ պատիժ. կամ խրատ է, եւ կամ հարւած: Եւ սոքա այսպէս զանազանին: Նախզի՝ խրատն սիրելեաց եւ բարեկամաց է. որպէս ասէ Սողոմօն. (զոր սիրէ Տէր՝ խրատէ.) իսկ վրեժն՝ ատելեաց է եւ թշնամեաց. որ հատուցումն տայ չար գործոց նոցա. որպէս ասէ մարգարէն. (Աստուած վրեժ խնդիր՝ Տէր Աստուած վրեժ խնդիր յայտնեցար. հատո զհատուծումն նոցա նոցին:) Երկրորդ՝ խրատն Աստուծոյ բարութեամբ է եւ քաղցրութեամբ. զի դարձուցանէ ի չարեաց. եւ վրեժն՝ դառնութեամբ եւ բարկութեամբ. որպէս աղաչէ մարգարէն. (Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի բարկութեամբ քով խրատեր զիս:) Երրորդ՝ վրեժն պատիժ է աշխարհի կորստեան. որպէս առ շրիեղեղան. որպէս ի սողոմագիսն. որպէս յԵգիպտոս եւ ի Փարաւօն. իսկ խրատն է խրայելացւոցն. յորժամ թողուին գերեսս Աստուծոյ, կամ ի կուռս, կամ յայլ չարիս խոտորէին, նա երբեմն սուր՝ երբեմն հիւանդութիւն՝ մահտարածամ եւ գերութիւն տայր եւ խրատեր զնոսա: Եւ յորժամ դառնային ի մեղաց, դարձուցանէր զգերութիւնն. եւ տայր լիութիւն. առողջութիւն. եւ զայլ բարութիւնսն: Այսպէս եւ յանենայն ժամանակի եւ յամենայն տեղիս առնէ. զի յամենայն ժամանակի երւ յամենայն տեղիս՝ զմեղս գործեն մարդիկ. որպէս աւելածուն հանապազ սրբէ զտունն. նոյնպէս այսպիսի խրատս որ շրջի ի վերայ աշխարհի՝ որպէս աւել է որ սրբէ զմեղաւորս յերկրէ եւ յաշխարհէ: Չի ուր մեղք է՝ անդ է եւ պատուհասն. թէ ի բոլոր երկիրն, թէ ի մին գեղն, թէ ի մին տունն, թէ ի մին անձն մարդոյն, անդ ընթանայ խրատն եւ պատուհասն Աստուծոյ: Չի մեղքն մեր որպէս խնդրակ լինի. եւ զպատուհասն առ մեզ կոչէ: Արդ՝ մարդասերն Աստուած որ զպատուհասն տայ՝ եւ զայն ուսուցանէ մեզ մարգարէին թէ որպէս գերծանիմք ի պատուհասէն: Ասէ (փող հարէք ի սիօն:) Սիօն գեկեղեցիս նշանակէ. եւ փողն ժամահարն է եւ քարոզն: (Սրբեցէք պահս. քարոզեցէք պաղատանս. ժողովեցէք զծերս եւ զաղայս.) զարս եւ զկին. զփեսայ եւ զհարսն ի յառազաստէ. քահանայ եւ աշխարհական ժողովին ի տաճարն Աստուծոյ. եւ արտասուք եւ լալով պաղատին առ Աստուած: Վեց բան խրատ տայ մեզ մարգարէն Յովել: Առաջին՝ փող հարէք յայտնապէս: Երկրորդ՝ ժողովեցէք ասէ զամենայն հասակս: Երրորդ՝ սրբեցէք պահս: Չորրորդ՝ քարոզեցէք պաղատանս: Հինգերորդ՝ արտասուք պաղատեցէք առ Աստուած: Վեցերորդ զի ասաց՝ ինայեա Տէր ի ժողովուրդս. եւ մի տար ի նախատինս անզգամաց օտարաց, եւ այլն: Այս վեցեքին բանիւքս՝ խրատէ զմեզ մարգարէն հրամանան Աստուծոյ եւ ուսուցանէ: Առաջինն որ ասէ՝ (փող հարէք յայտնապէս.) եւ մի ծածուկ գայք եւ աղօթէք. այլ յայտնի վասն չորս պատճառի: Նախզի ամենեքեան գիտացեն թէ՝ վասն այս իրացս է մեր խնդիրն եւ պաշտօնս. կամ երաշտի, կամ տարածամ մահու, կամ գերութեան, եւ այլն: Որ ամենեցուն միտք եւ աղաչանք՝ ի յայն լինին: Երկրորդ՝ զի պատուհասն ծածուկ ոչ է որ ծածուկ աղաչեմք Աստուած, այլ յայտնի է. վասն այն յայտնապէս պարտ է աղաչել զ ներօղն Աստուած: Երրորդ՝ ծածուկ մեղացն՝ ծածուկ պարտ է ապաշխարել. այժմ մեղքս մեր յամենայն աշխարհի յայտնի է. որ ծուլացեալեմք ի բարիս. եւ ժիր եմք ի չարիս. թողեալ զօրէնս Աստուծոյ եւ անօրինեալ. արբեցութեամբ. պոռնկութեամբ. սպանութեամբ, եւ այլովն: Վասն այն պարտ է յայտնապէս դառնալ ի մեղաց եւ ապաշխարել: Չորրորդ պատճառ՝ զի յորժամ լսէ

Աստուած եւ կատարէ զխնդրուածն, յայտնի լիցի ամենայն աշխարհի. եւ անունն Աստուծոյ փառաւորեսցի. թէ նա ետ զպատուհասն մեղաց մերոց, եւ նա դարձոյց ի յետս վասն ողորմութեան եւ գթութեանն իւրոյ: Վասն այս չորս պատճառիս՝ հրամայէ յայտնապէս փող հարկանել եւ յեկեղեցին ժողովիլ: Այս առաջին խրատն: Երկրորդ բանն որ ասէ. (ժողովեցէք զամենայն հասակս. զժերս եւ զտղայս, եւ զայլսն:) Եւ այս վասն չորս պատճառի: Նախ՝ զմեղսն ամենեքեան գործեցաք. ծեր եւ տղայ. էրեց եւ աշխարհական. այր եւ կին. ամենեքեան առ հասարակ զԱստուած բարկացուցաք մեղանչելով. պարտ է առ հասարակ ամենեցուն ապաշխարել. եւ զԱստուած հաշտեցուցանել: Երկրորդ՝ զի պատուհասն ամենեցուն է երկեալ. երաշտութիւն. հիւանդութիւն. սով, եւ այլն: Վասն այն պարտ է ամենեցուն լալ եւ դարձուցանել զպատուհասն. որպէս ընդ օտար հեծելացն ժողովին քաղաքացիքն եւ կռիւն. այսպէս եւ մեզ պարտ է ամենեցուն միմեանց օգնական լինիլ. եւ պահօք եւ աղօթիք ընդ պատուհասին կռուիլ: Երրորդ պատճառ՝ զի բազմաց պաշտօնն եւ խնդրուածն՝ առաւել հաճոյ է Աստուծոյ քան միոյն. որպէս յայտ է ի մարմնաւոր իշխանս. որք զբազմաց խնդիրս՝ առաւել կատարեն քան զմիոյն. այսպէս եւ Աստուած բազմաց առաւել լսէ քան միոյն: Չորրորդ պատճառ՝ պարտ է ամենեցուն ժողովիլ. զի թէ ոմանց ոչ լսէ զի անարժանք են, ոմանց լսէ զի արժանաւորք լինին: Կամ ի ծերոց ալիսն ինայէ. կամ ի տղայոց դեմնն ողորմի. կամ զստնդիայց զանմեղութիւնն տեսանէ: Կամ զմեղաւորաց հառաչանսն լսէ. հարսին եւ փեսային զայլոցն: Վասն այս չորս պատճառիս՝ պարտ է ամենեցուն առ հասարակ ի յեկեղեցիս ժողովիլ եւ պաշտօն կատարեալ: Այս երկրորդ խրատն: Երրորդ բանն զոր ասէ: (Սրբեցէք պահս. եւ ապա պաղատանս:) Նախ զպասն ասէ. եւ ապա զպաղատանս վասն երկու պատճառի: Մին՝ զի ուտելն եւ ըմպելն՝ զմարմինն ծանրացուցանէ. եւ ծուլանայ յաղօթից: Վասն որոյ պարտ է պահօք եւ ծոմով եւ ծարաւով թեթեւացուցանել զմարմինն. եւ ապա միտն թեթեւանայ, եւ առ Աստուած ելանէ աղօթիք: Երկրորդ պատճառ՝ պարտ է նախ զմարմինն պահօք սրբել յամենայն մեղաց. այսինքն, զսիրտս եւ զլեզուս եւ զձեռս. եւ ապա սուրբ սրտիւ եւ սուրբ ձեռօք եւ լեզուաւ աղօթել առ Աստուած: Եւ վասն պահոցն գիտելի է՝ զի կրկին է պասն. մին պաս է հանապազորդ. եւ միւսն օրըստօրէ: Այն որ հանապազորդ պահն է՝ այն է որր միշտ զամենայն զգայութիւնս մեր պահեմք ի մեղաց. զաչսն յարատ հայելոյ. եւ զլսելիսն ի չար լսելոյ. զլեզունն ի բամբասելոյ. եւ զմիտնն ի չար խորհելոյ. եւ զձեռնն ի չար գործելոյ. եւ զոտնն ի չար ընթանալոյ, եւ զայլսն. այսպիսի պահօքս՝ հանապազ սրբել պարտ է զհոգի եւ զմարմին մեր ի մեղաց: Երկրորդ պահն է՝ որ ոչ հանապազ, այլ օրըստօրէ պահեմք. որպէս այն որ զբերանն ի յուտելոյ պահեմք եւ յըմպելոյ. ի մտոյ եւ ի գիւտոյ, եւ յայլ պարարտ կերակրոյ: Եւ այս պահս այլ՝ յերկուս բաժանի: Մին այն՝ որ զկանոնեալ պահսն պատեմք. որպէս աղուհացից պասն է. եւ տասն շաբաթ ի տարին պաս է. եւ չորեք շաբաթն եւ ուրբաթն յամենայն շաբաթս պաս է յառաքելոցն եւ ի հայրապետացն կանոնեալ: Եւ միւս պասն այն է՝ որ մեք խոստանամք Աստուած վասն ապաշխարութեան եւ թողութեան մեղաց. վասն պատուհասի կամ վասն այլ ինչ իրաց՝ պարտ է որ այլ անելի քան զկանոնեալսն ուխտեմք եւ պահեմք. որպէս ասէ մարգարէն. (ուխտս դիք եւ

կատարեցէք:) Այս է պահոց խրատն որ ասէ (սրբեցէք պահս:) Չորրորդ բանն որ ասէ: (Քարոզեցէք պաղատանս:) Պաղատանքն աղաղակն է սրտին. որ ժտելով եւ թախանձելով խնդրեմք յԱստուծոյ վասն ինչ իրաց եւ իցէ. եթէ վասն պատուհասի, եթէ վասն մեղաց, եւ վասն ամենայն իրաց: Արդ՝ յորժամ պաղատանօք ի խորոց սրտէ աղաղակեմք առ Աստուած՝ եթէ արժանաւոր եմք, լսէ Աստուած եւ տայ զխնդիրսն. եւ եթէ անարժանեմք, եւ յայնժամ առաւել տայ վասն երկու պատճառի: Նախ՝ սովորիմք ի խնդրելն. յորժամ գիտեմք թէ անարժանիցս լսէ Աստուած, առաւել խնդրեմք: Երկրորդ՝ (զի թէ վասն բարեկամութեանն ոչ տայ, սակայն վասն ժողովեանն տայ. զի մի ի սպառ թախանձիցեմք որպէս ասէ աւետարանն:) Ապա թէ արժան եմք՝ թէ անարժան, պարտ է ամենեցուն խնդրել. զի ամենեցուն լսէ Աստուած. (եւ յամենայն ժամ պարտ է խնդրել եւ մի ձանձրանալ:) Եւ զոր ինչ խնդրեմք ի նմանէ՝ առնումք. որպէս խոստացաւ Տէր մեր Յիսուս Քրիստոս թէ, (խնդրեցէք եւ առնուցուք. հայցեցէք եւ գտցիք. բախեցէք եւ բացցի ձեզ:) Եւ վասն առաւել խնդրելոյն՝ կրկնէ զբանն թէ՝ (ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ այլն:) Այս չորրորդ բանն որ ասէ. (քարոզեցէք պաղատանս:) Հինգերորդ խրատն որ ասէ: (Եւ արտասօք լացէք եւ կողեցէք քահանայք եւ պաշտօնեայք եւ ժողովուրդք ի դրան տաճարին:) Վասն զի արտասուօք աղաղակելն՝ սիրելի եւ հաճոյ է Աստուծոյ վասն բազում պատճառի: Նախ՝ արտասուքն զջերմն սերն նշանակէ զոր ունիմք առ Աստուած: Չի յորժամ կսկծիմք եւ տրտմիմք ի սիրտս, գոլորշին ի գագաթն տայ. եւ ծանրացեալ իջանէ յաչսն. եւ լինի արտասուք: Նոյնպէս յորժամ վասն մեղացն տրտմիմք՝ եւ կսկծի սիրտ մեր վասն պատուհասին որք բարկացուցաք զԱստուած, լինի արտասուք՝ որնշան է ջերմ սիրոյն Աստուծոյ: Երկրորդ պատճառաւ՝ պարտ է արտասուել եւ լալ. զի յորժամ զմեղս գործեցաք, ուրախացաք ի մեղսն եւ հեշտեցաք. որպէս ասէ իմաստունն. (այր անպարհիշտ՝ ծիծաղելով գործէ զմեղս:) Իսկ յորժամ զղջանամք, պարտ է լալ եւ կսկծիլ. եւ ցաւօք ապաշխարել զմեղս: Երրորդ պատճառաւ՝ պարտ է լալ եւ սգալ. զի սուգն եւ լացն՝ յուրախութիւն դառնայ. որպէս ասէ մարգարէն: (Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն. Ե գերծ յինէն զքուրծս:) Չի այս կենաց սուգս՝ ի հանդերձեալն յուրախութիւն փոխի. նոյնպէս եւ ուրախութիւնն ի տրտմութիւն. որպէս ասէր Քրիստոս. (երանի սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին. եւ վայ ձեզ որք ծիծաղիք. զի լացջիք եւ ողբասջիք:) Չորրորդ պատճառաւ՝ պարտ է լալ. զի որպէս զհուր ջուրն շիջուցանէ. նոյնպէս եւ զհուր մեղացն եւ զտանջանաց դժոխոցն՝ ջուր արտասուցն շիջուցանէ ի մէնջ: Եւ զի հուր է մեղքն, եւ այրեցող հոգւոյս մեր. որպէս ասէ Սողոմօն. (ծրարիցէ՞ ոք հուր ի հանդերձի եւ ոչ այրիցէ. կամ գնացէ՞ ոք ի վերայ կայծականց հրոյ, եւ ոչ խարշատիցէ զոտս իւր:) Ապա եղբարք՝ զի բազում ունիմք զհուր մեղացն ծրարեալ ի հոգի եւ ի մարմինս մեր. պարտ է բազում լալով եւ հառաչելով արտասուս հեղուլ. որ շրջուցանէ զհուրն յանցանաց մերոց: Հինգերորդ պատճառ՝ պարտ է արտասուս հեղուլ. զի որպէս ջուրն լուանայ զաղտեղի զգեստս. այսպէս ջուր արտասուացն՝ լուանայ զաղտեղութիւն մեղաց մերոց: Եւ զի մեղք աղտեղութիւն է հոգւոյն. ասէ մարգարէն առ Աստուած. (առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ:) Եւ աղտեղի հանդերձին՝ երեք ինչ պիտոյ է զի սրբեսցի: Նախ՝ ջերմ ջուր. երկրորդ՝ սապոն. երրորդ՝ ձեռք հարուկն: Նոյնպէս աղտեղեալ հոգւոյն՝ արտասուքն ջերմ ջուր է. ողորմութիւն առ

աղքատս՝ որպէս սապոն է. եւ հարումն ձեռացն այն է՝ որ չարչարեմք
զմարմինս ի պահս՝ ի յաղօթս ի ճգնութիւնս՝ եւ յայլ գործս
ապաշխարութեան. եւ այսպէս սրբի մեղաւոր հոգին: Վեցերորդ
պատճառաւ՝ պարտ է լալ եւ արտասուօք խնդրել յԱստուծոյ. եւ զայս
ուսանիմք ի մանուկ աղայոց. զի յորժամ առանց լալոյ ստիկս խնդրեն, ոչ
տան մարքն իւրեանց: Այլ հնարս գտանեն զարտասուսն եւ հառաչեն.
յայնժամ մարք ևոցա առնուն ի գիրկս եւ սրբեն զարտասուսն. եւ տան
զստիկսն. եւ համբուրեն զորդիսն: Այսպէս եւ մեք յորժամ ցամաք աչօք
խնդրեմք յԱստուծոյ, յապաղէ եւ ոչ տայ զխնդիրսն. զի կամի որ յարաժամ
խնդրեմք. այլ յորժամ արտասուս հեղումք, եւ ի խոր սրտէ հառաչեմք առնա,
ևա ծնօղ է մեր: Մին՝ որ ստեղծեաց զմեզ մարմնով. եւ միւս՝ որ աւագանաւն
ծնաւ զմեզ հոգևով. եւ երրորդ՝ որ գին եմք արեալ որդւոյ ևորա Զրիստոսի. եւ
չորրորդ՝ որ ճաշակեցաք զմարմինն եւ զարիւնն Զրիստոսի. այլեւ զհոգին
սուրբ ընկալաք. այսպէս բազում կերպիւ՝ շնորհօք որդիք եմք Աստուծոյ: Եւ
ևա որ ծնօղ է մեր՝ քան զհայր գթած է. եւ քան զմայր ողորմած է. յորժամ
տեսանէ զարտասուալից դեմս մեր, եւ զկողկողագին պաղատանս, շարժի
սիրով արարչական գթութեամբն. եւ դեմ ընդ առաջ ելանէ որպէս անառակ
որդւոյն. եւ առնու ի գիրկս ինամոցն. եւ սրբէ զարտասուսն. եւ համբուրէ
զմեղաւոր հոգին. եւ զամենայն խնդիրս ևորա կատարէ: Վասն այն պարտ է
մեզ արտասուօք լալ եւ խնդրել ի նմանէ. զի անցուցէ ի մենջ զցասումն եւ
զպատուհաս յանցանաց մերոց: Այս հինգերորդ բանն: Վեցերորդ բան
խրատ տայ մարգարէն եւ ուսուցանէ, թէ զայս ասացեն յարտասուալից
պաղատանս. (իննայեա Տէր ի ժողովուրդս քո. եւ մի տար զժառանգութիւնս
քո ի նախատիկս օտար ազգաց. զի մի ասիցեն թէ ո՞ր է Աստուած ևոցա:)
Երկու բանս ուսուցանէ մեզ յաղօթելն: Եւ թէ՛ (իննայեա Տէր ի ժողովուրդս
քո.) քո եմք ժողովուրդք. եւ քո խաշն արօտի. եւ քո ժառանգութիւն. զի դու
փրկեցեր զմեզ. որպէս զքո իննայեա եւ ոչ որպէս օտար: Չի զքեզ ծանեաք եւ
հաւատացաք Աստուած. եւ ի քեզ յուսացաք. եւ ոչ ունիմք այլ Աստուած բաց
ի քէն: Մեք մեղաք. մեք անօրինեցաք. եւ ապստամբեցաք ի քէն: Դու
Աստուած մեր. եւ մեք գործք ձեռաց քոց ամենեքեան: Այս առաջին բանն է:
Երկրորդ որ ասեմք. (մի տար ի նախատիկս ազգաց օտարաց. զի մի ասիցեն
թէ ո՞ր է Աստուած ևոցա:)
Այսինքն, մի տար զմեզ ի բամբասանս եւ ի
նախատիկս այլազգեաց. որք ասեն թէ՛ անհաւատք են եւ չարք են եւ անսեր
են: Եւ նախատիկք մեր՝ առ քեզ վերանայ, յորժամ ասեն հեթանոսք թէ՛ ո՞ր է
Աստուած ևոցա. ո՞ր է ամենակարօղն Աստուած. ո՞րն է զօրութիւնն ևորա.
ո՞ր են սքանչելիք ևորա. ո՞ր են օգնելն ևորա. ո՞ր է խոստումն ևորա. ո՞ր է
վրեժն ևորա: Որպէս զայս բանս ասեր ռափսակ՝ եւ հայիոյէր զԱստուած թէ՛
ո՞ր է Աստուածն Եզեկիայի. զի վասն ևորա զամենայն բարձունս եւ
զսեղանս կռոցն կործանեաց. ընդէ՞ր ոչ օգնէ նմա: Յայնժամ վրեժխնդիր
եղել Աստուած. եւ սատակեաց զամենայն զօրս ևորա ի գիշերի: Այս երկու
բանիւ աղաչանացս՝ լսէ Աստուած, եւ փրկէ զմեզ ի յեկեալ հասեալ
պատուպասես որ շուրջ պատեալ է զմեզ: Առաջին բանն՝ է խոնարհութեան
մերոյ եւ աղաչանաց ի դեմք մեր: Երկրորդ բանն՝ է կոչել զԱստուած ի
յօգնութիւն մեզ. եւ խնդրել զվրեժն ի թշնամեաց մերոց: Այս է վեց բան
խրատն զոր ուսուցանէ մեզ մարգարէն. սոքօք դառնալ առ Աստուած եւ
դարձուցանել զեկեալ հասեալ պատուհաս ևորա ի մեջն: Իսկ թէ՛ է

կարողութիւն մարդոյ պաշտամամբ եւ աղօթիւք՝ պաղատանօք արտասուօք եւ պատարագօք զԱստուած հաշտեցուցանել. եւ զպատուհաս մեղացն անցուցանել ի մարդկանէ: Եւ այս յայտ է ի չորս իմն օրինակաց եւ վկայութեանց: Առաջին օրինակ՝ ունիմք զՍիմուէացիս: Սիմուէ քաղաք էր մեծ ի մէջ պարսից եւ ասորոց: Եւ վասն մեղաց եւ չար գործոց ևոցա՝ կամեցաւ Աստուած պատուպասել զնա: Եւ հրամայեաց Աստուած մարգարէին Յովնանու երթալ եւ քարոզել Սիմուէի մահ եւ կործանումն քաղաքին. եւ մարգարէն ոչ կամեր գնալ: Նախզի՝ ոչ կամեր զփրկութիւն հեթանոսաց եւ անհաւատից: Երկրորդ՝ զի տեսանէր մարգարեական հոգւովն զապաշխարութիւն ևոցա եւ զփրկիլն. եւ զինքեան սուտ մարգարէ լինիլն ի մէջ Իսրայէլի: Վասն այն փախեաւ յերեսացն Աստուծոյ. եւ եմուտ ի նաւն. եւ խռովեցաւ ծովն. եւ վիճակով ձգեցին զՅովնան ի ծովն: Եւ կէտն մեծ հրամանաւն Աստուծոյ եկուլ զնա. եւ էր Յովնան ի փոր կիտին կենդանի զերիս տիւս եւ զերիս գիշերս. եւ դարձեալ եհան ի ցամաքն: Առաջին զայն նշանկէ՝ թէ ոչ կարէ մարդ փախչիլ յերեսացն Աստուծոյ. զի ի ցամաքի եւ ի ծովի եւ յամենայն ուրեք՝ ձեռն Աստուծոյ հասանի: Եւ դարձեալ՝ նշանակեր զմահն եւ զյարութիւնն Զրիստոսի: Նախ՝ որպէս Յովնան էր ի փորկիտին զերեք տիւ եւ զերեք գիշեր. Նոյնպէս եւ Տէր ի գերեզմանի եւ ի դժոխս՝ զերեք տիւ եւ զերեք գիշեր: Երկրորդ՝ որպէս փոր կիտին զամենայն կենդանիս ըմբռնեալ ապականէր, եւ Յովնան միայն կենդանի եկաց. այսպէս մահն եւ դժոխքն՝ զամենայն մարգարէսն ըմբռնեալ ապականէր. այլ միայն Տէր մեր Յիսուս Զրիստոս եմուտ ի գերեզման անապակն մարմնով. եւ էջ ի դժոխս անչարչարելի հոգւով: Երրորդ՝ որպէս Յովնան ելեալ ի կիտէն, զնաց՝ քարոզեաց Սիմուէի. եւ Տէր մեր ելեալ ի գերեզմանէն, առաքեաց զաշակերտսն քարոզել հեթանոսաց ազգի: Եւ յորժամ եմուտ Յովնան ի Սիմուէ, խռովեցաւ քաղաքն. մեզն եւ մառախուլն պատեաց զնա. եւ երկիրն երերիւն եւ շարժիր: Խռովարար էր Յովնան. եմուտ ի ծովն եւ խռովեցոյց զնա. ել ի ցամաք եւ շարժեաց զնա. եմուտ ի քաղաքն եւ տագնապեաց զնա: Բոլոր լայնութիւն քաղաքին միոյ աւուր ճանապարհ էր. այլ Յովնան երեք օր վճարեաց քարոզութեամբ ընթացեալ: Եւ զայս քարոզեր եթէ՝ երեք օր այլ է՝ եւ կործանեցի Սիմուէ: Ոչ ուտեր եւ ոչ ըմպեր. եւ ոչ ննջեր. ի մեծամեծաց ոչ երկնչեր. եւ ի մեծատանց կաշառս ոչ հայ էր. այլ առանց պատկառանաց ամենեցուն զմահ բաշխէր: Լուաւ թագաւորն եւ ընկեց զթագն. եւ քուրձ զգեցեալ նստաւ ի վերայ մոխրոյ. Նոյնպէս մեծամեծք եւ իշխանք Նորա: Եւ երեքօրեայ պահս քարոզեաց մեծի եւ փոքու. զի մարդ եւ անասուն՝ խաշն եւ արջառ՝ ոչ ինչ ճառակեցեն. եւ ոչ ջուր արբցեն: Եւ մարք զստինս տղայոց ոչ տացեն. այլ բոլոր քաղաքն ամենայն զքուրձ զգեցաւ. ի պահս՝ ի սուգ՝ եւ յարտասուս փոխեցաւ: Չի թէ թագաւորն քուրձ զգեցաւ, ո՞վ էր որ հանդերձ զգենոյր. եւ թէ թագաւորն եւ իշխանքն ի վերայ մոխրոյ նստան, ո՞վ էր որ ի վերայ անկողնոց հանգչէր. եւ թէ զանասունս անսուաղ պահէին, ո՞վ էր որ ուտեր կամ ըմպէր: Եթէ թագաւորն ի սուգ մտանէր, ո՞վ էր որ ծիծաղէր եւ ուրախանայր: Չի թէ յանկողինս իւրեանց ոչ ննջէին, ո՞վ էր որ շնայր եւ պոռնկէր: Եթէ զմեծութիւնս իւրեանց արհամարհեցին, ո՞վ էր որ զայլոցն գողանայր եւ յափշտակէր: Վասն այնորիկ յետ երից աւուրց՝ որ ակն ունէր կործանելոյն, բացաւ դուռն ողորմութեանն Աստուծոյ. դարդարեցաւ շարժն. փարատեցաւ մութն. ծագեցաւ արեւ. ապրեցաւ քաղաքն: Ո՞վ այսպէս

ապաշխարեաց ի մէջ եւ ոչ լուաւ Աստուած. նոքա ոչ ունէին օրէս եւ մարգարես. եւ բնութեամբ զօրինացն գործեցին: Եւ մեք ունիմք զօրէս եւ զմարգարես եւ զաւետարանս՝ եւ ոչ լսեմք: Նոցա մի անգամ քարոզեաց մարգարէն եւ ապաշխարեցին. եւ մեզ հանապազ քարոզեն, եւ ոչ դառնամք ի մեղաց: Նոցա մահ մարմնոյ խոստացաւ՝ ի հաւատացին եւ զերծան. եւ մեզ դժոխք՝ որ մահ է հոգւոյ, եւ արքայութիւն եւ ոչ հաւատամք: Նոցա ոչ ասաց մարգարէն թէ ապաշխարցէք եւ փրկիք, այլ նոքա իմացան զգոյշումն եւ փրկեցան: Իսկ մեզ խոստացեալ է զղջմամբ եւ ապաշխարութեամբ փրկիլ, եւ ոչ կատարեմք: Այս առաջին օրինակ՝ որ սուգն եւ ապաշխարանքն՝ կարեն զԱստուած հաշտեցուցանել. եւ զպատուհասն յետս դարձուցանել: Երկրորդ՝ օրինակ ունիմք զմարգարէն Դաւիթ, յորժամ կամեցաւ Աստուած պատուհասել երիւք հարուածովքն: Եւ այն եղեւ պատճառ պատուհասին՝ զի կամեցաւ թագաւորն Դաւիթ՝ ի թիւ առնուլ զհամար ժողովորդեանն. եւ յորժամ թւեաց՝ ութն հարիւր հազար էր ցեղն Իսրայէլի. եւ Յուդայի ցեղն՝ հինգ հարիւր հազար այր պատերազմօղ. թող զայլ խառնիճադանճան. եւ Բենիամենի ցեղն՝ եւ ցեղն քահանայից՝ ոչ անկան ի թիւ: Եւ մեծամտեցաւ ի սիրտ իւր թէ, այժմ ժողովուրդ իմ բազում է քան զՄովսիսին. զի յորժամ եհան յեգիպտոսէ, վեց հարիւր հազար էին պատերազմօղք: Ասաց Աստուած՝ ժողովուրդդ իմէ. եւ ես բազմացուցանեմ զնոսա. դու վասն Էր մեծամտիս. արդ՝ առաքեմ պատուհաս ի ժողովուրդդ: Եւ առաքեաց առ նա եւ ասէ. երեք պատուհաս եմ պատրաստեալ ժողովորդեանդ. այսինքն, կամ երեք ամ սով. կամ երեք ամիս սուր եւ գերութիւն. կամ երեք օր մահ: Դու ընտեա ի սոցանէ զմինն եւ տաց քեզ: Եւ ընտրեաց Դաւիթ զմահն: Նախզի՝ երեք ամ սովն՝ եւ երեք ամիս սուրն՝ սաստիկ էր քան զերեք աւուր մահն: Երկրորդ՝ զի սովն եւ սուրն՝ զբարիս եւ զչարս ի միասին պատժէ. այլ մահն՝ ընտրութեամբն Աստուծոյ է. եւ ժողովի ի վերայ մեղաւորաց. վասն որոյ զերեք օր մահն ընտրեաց: Եւ ետես Դաւիթ զի էջ հրեշտակն՝ եւ սուր ի ձեռին եւ եհար զժողովուրդն. եւ յառաւօտէն մինչեւ ի յերեք ժամն՝ եօթանասուն հազար սատակեաց ի ժողովորդենն. եւ այսու համար հինգ հարիւր հազար, եւ վաթսուն հազար կամեր կոտորել ի միում աւուրն. եւ ոչ մնայր ի ժողովորդենն: Յայնժամ ետես Դաւիթ զահագին պատուհասն Աստուծոյ՝ անկաւ ի վերայ երեսացն. եւ պատառեաց զհանդերձս իւր եւ ասէ: Տէր՝ սուր քո յիս եւ ի տուն հօր իմոյ. անմեղ ժողովուրդդ զի՞նչ մեղաւ: Եւ ի նմին ժամու դադարեցաւ սուրն. եւ ասաց Տէր. երթ ի կալն ուռնայ ի. եւ գնեա զեգինս նորա եւ զամենայն կահսն. եւ մատո ինձ ողջակէզս: Եւ մինչ ընթացաւ նա ի կալն, եւ գնաց զտեղին եւ զեգինսն եւ զկալն եւ շինեաց սեղան, եւ մատոյց ողջակէզս, երեք ժամ եւս էանց. եւ ի վեց ժամուն՝ էջ հուր ի յերկնից. եւ ընկալաւ զպատարագն. եւ եբարձ զմեղս ժողովորդեանն եւ հաշտեցաւ: Երկու ինչ նշանակէ: Նախ նշանակէ զսեղան խաչին Քրիստոսի՝ որ յերեք ժամուն մինչեւ ի վեց ժամն խաչեցաւ եւ հաշտեցաւ Աստուած: Երկրորդ զայն ցուցանէ՝ զի յորժամ ուխտէ մարդն զինչ եւ իցէ, ի նոյն ժամն դադարի ցատումն Աստուծոյ. ապա յորժամ կատարեմք զուխտն, յայնժամ երեւի մեզ: Եւ այն զի Դաւիթ միայն ետես զկոտորող հրեշտակն. զի միջնորդ եղեւ հաշտութեան. զայն ցուցանէ՝ թէ զխաւորի եւ առաջնորդի ժողովորդեանն՝ պարտ է տեսանել զաստ եւ զպատուհասն Աստուծոյ. եւ միջնորդ հաշտութեան լինիլ աղօթիւք եւ պաշտմամբ եւ պատարագօք: Եւ տեսէք

եղբարք՝ զի յորժամ հրեշտակն կոտորեաց զեթանասուն հազարսն, ասացաւ նմա արգելուլ զսուրն: Չայն ցուցանէ յայտնապէս թէ՛ տարածամ մահն, ընտրութեամբ եւ կամօքն Աստուծոյ լինի ում եւ հրամայէ, եւ ոչ թէ պատահմամբ. որպէս կարծեն ոմանք ի թերահաւատից: Այսպէս եւ մէք յորժամ ժողովիմք ի դուռն եկեղեցւոյս, եւ աղօթիւք եւ արտասուօք, պաշտմամբ եւ պատարագօք, կարեմք յետս դարձուցանել զբարկութիւնն Աստուծոյ որպէս մարգարէն Դաւիթ: Այս երկրորդ օրինակն: Երրորդ օրինակ՝ ունիմք զբարեպաշտ թագաւորն զԵզեկիա. յորժամ եկն Ռափսակ ասորի հարիւր եւ ութսուն եւ հինգ զօրօք ի դուռն Երուսաղէմի, եւ պաշարեաց զնա, եւ առաքեաց թուղթ նախատանաց Աստուծոյ առ Եզեկիա թագաւորն եւ ասէ. ոչ ոք ի յաստուածոցն կարացին փրկել զքաղաքս իւրեանց ի ձեռաց թագաւորին մերոյ. եւ ոչ ձերընկարե փրկեալ զձեզ. ելէք եւ հնազանդեցէք: Ապա թէ ոչ՝ զմիմեանս ուտիցէք ի քաղաքիդ. եւ ապա սրոյ եւ հրոյ ճարակ տամ զձեզ, եւ զքաղաքդ ձեր. եւ սով եւ ահ եւ դողումն եւ սուրն՝ պատառեսցէ զքաղաքդ ձեր: Եւ Սոմնաս եւ Եղիակիմ եւ Յովաք հազարապետքն՝ բերին զբանն եւ զթուղթն Ռափսակայ առ թագաւորն: Եւ նա էառ զթուղթն. եւ քուրձ զգեցեալ բոկ եւ գլխիբաց ընթացաւ ի դուռն տաճարին Աստուծոյ. եւ արտասուալից աղօթեանց թագաւորն եւ ասէ: Այսօր է օր նախատանաց եւ նեղութեան. որ նախատեաց Ռափսակ զԱստուած կենդանի. եւ եդ զթուղթն ի վերայ սեղանոյն: Եւ առաքեաց Աստուած զմարգարէն Եսայի առ նա եւ ասէ. երթ ի տուն քո. եւ պատրաստեա զզօրս քո. եւ երթ ընդ առաւօտն. եւ ժողովեա զկարասիս նոցա ի քաղաքդ: Եւ ի գիշերի էջ հրեշտակն. եւ սատակեաց զհարիւր եւ զութսուն եւ հինգ հազարսն. եւ Ռափսակ գնաց ի Լաքիսս որ է Սամարիայ առ թագաւորն իւր. եւ փախստական գնաց ի Նինուէ: Եւ Սանասար եւ Ադրամէլէք սպանին զհայրն իւրեանց սրով ի տան կռոցն. եւ ի նեքեան փախստական եկին ի հայս: Եւ թէ վասն է՞ր ի գիշերի սատակեցան զօրքն Ռափսակայ: Ասեմք թէ վասն Գ պատճառի: Նախզի՛ մի զարիւրեսցի Երուսաղէմ տեսեալ զսուրն որ կոտորէր զնոսա: Երկրորդ՝ զի մի ոք փախիցէ ի նոցանէ. այլ ամենեքեան սատակեսցին: Երրորդ՝ զի մի կարծեսցեն թէ յինքեանց անկան սրով. այլ ի հրեշտակէն: Եւ դարձեալ՝ զի տիպ է եւ օրինակ Քրիստոսի. որ ի գիշերի եհար զսատանայ. եւ ազատեաց զհոգիսն ի դժոխոցն. այսպէս աղօթքն եւ արտասուքն Եզեկիայի եւ Երուսաղէմի՝ կոտորեաց զթշամիսն. եւ ապրեցոյց զքաղաքն ամենայն: Նոյնպէս եւ մէք կարեմք աղօթիւք եւ արտասուօք զեկեալ հասեալ պատուհասն եւ զսուր բարկութեանն Աստուծոյ յետս դարձուցանել եւ փոփոխել ի քաղցրութիւն եւ ի բարիութիւն: Այսպէս եւ Զողէփեռնէս յորժամ եկն ի վերայ Սամարիայ բազում զօրօք եւ պաշարեաց զնա, բարեպաշտուի կինն Յուդիթ՝ հինգ օրեայ պահօք եւ աղօթիւք՝ ել առ նա ի գիշերի. եւ եհատ զգլուխ նորա. եւ եբեր ի քաղաքն. եւ ցրուեցան ամենայն զօրք նորա եւ կործանեցան: Այսպէս եւ յետ դարձին ի գերութենէն՝ յորժամ զօգ եւ մաղօգ զօրածողով եղեն ի դուռն Երուսաղէմի անթիւ եւ անհամար զօրօք. եւ ի ձեռն աղօթիցն Չօրաբաբելի, քարեայ կարկտով եհար եւ սատակեաց զնոսա Աստուած. եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի: Մինչեւ ի բազում ժամանակս՝ զբեկտոր զինուցն այրեցին յԵրուսաղէմ. եւ ոսկւով եւ արծաթով նոցա զտաճարն շինեաց Չօրաբաբել. եւ զայլ ինչս եւ զստացւածս նոցա կալան. եւ աղքատութեամբ դարձեալքն ի գերութենէն՝ նովաւ

մեծացան եւ փարթամացան: Այս երրորդ օրինակն: Չորրորդ՝ յայտնի է ի վկայութեանց, զի գիրք սուրբք՝ զԱստուած ողորմած եւ գթած կոչեն. որպէս Մովսէս՝ Դաւիթ՝ եւ այլ մարգարէքն ասեն. (գթած՝ ողորմած՝ երկայնամիտ՝ բազում ողորմ եւ ճշմարիտ. որ զջանայ ի վերայ չարեաց մարդկան:) Եւ թէ զի՞նչ է ողորմութիւնն, եւ զի՞նչ գթութիւն. այս է. գութն բնական եւ կատարեալ սերն է. եւ ողորմութիւնն մասնաւոր սեր՝ որ իգթոյն յառաջ գայ ի մեզ: Եւ դարձեալ գանազանի. զի գութն առ անմեղսն է. եւ ողորմութիւնն որք զղջանան եւ դառնան ի մեղաց: Չի գթած է Աստուած ի վերայ անմեղիցն եւ որդիացելոցն գործով. ըստ այնմ, (որպէս գթայ հայր ի վերայ որդւոյ իւրոյ՝ այնպէս գթացի Տէր ի վերայ երկիւղածաց իւրոց:) Իսկ ողորմած է զղջացելոցն՝ որք դառնան եւ ապաշխարեն զմեղս, ողորմութեամբ քաւէ զմեղս խոցա: Երկայնամիտ է խոցա՝ որք դեռեւս անզեղջ մնան ի մեղս, ներէ եւ երկայնամիտ լինի խոցա: Եւ երկայնամիտ լինիլն կրկին յատկութիւն ունի: Նախզի՝ տեսանէ զմեղս եւ անտես առնէ: Երկրորդ՝ զի խորհի ի վերայ խոցա զողորմութեամբ փրկութիւնն: Եւ այս է պատճառն որ ներէ եւ համբերէ Աստուած ի վերայ մեղաւորին յերկար ժամանակ՝ որ դառնայ ի մեղաց: Այլ ոչ թէ զմեղսն մեր ոչ տեսանէ, կամ զչարութիւնն մեր սիրէ եւ բարի համարի, ոչ՝ այլ ժամանակ ապաշխարութեան տայ. զի թէ մինչ ի ծերութեան հասակն՝ եւ ի վերջին շունչն զղջանայ մեղաւորն, ողորմութիւնն Աստուծոյ հասանի. որպէս աւագակն խաչակից Քրիստոսի՝ որ ի վերջին շունչն զղջացաւ՝ եւ զփրկութիւն ընկալաւ: Ապա յորժամ Աստուած երկայնամիտ լինի, եւ մեք առաւել անզեղջ մնամք ի մեղս, յայնժամ օրըստօրէ զբարկութիւնն Աստուծոյ ժողովեմք ի վերայ մեր. որպէս ասէ առաքեալն. (Եթէ զքաղցրութիւնն Աստուծոյ եւ զերկայնամիտ լինիլն արհամարհես, գանձես անձին քում բարկութիւն յաւուր արդար դատաւորութեանն Աստուծոյ:) Իսկ բազում ողորմ է Աստուած առ բազմապարտս դարձեալս ի մեղաց. զի որքան առաւել մարդն դառնայ ի մեղաց, առաւել ողորմութեան եւ շնորհացն Աստուած հանդիպի. որպէս ասէ առաքեալն. (ուր առաւել եղեն մեղք, անդ եւ առաւելան շնորհք:) Եւ այս յայտ է ի կինն պոռնիկ՝ որ բիրտ քանքարաց պարտական էր. յորժամ դողալով եկն անկաւ յոտսն Յիսուսի, եւ արտասուօքն թանայր, եւ հերովն սրբեր, եւ անուշ իւղով օծաներ, եւ յորժամ Սիմօն երկմտեաց ի միտս իւր, ասէ. (Սիմօն՝ ունիմ ինչ ասել քեզ.) աստ եցոյց զինքն Քրիստոս թէ՛ սրտագետ եւ ծածկագետ եմ ես: Ասէ՛ (երկու պարտանք էին. մինն պարտ էր հինգ հարիւր դահեկան. եւ մինն յիսուն. յորժամ չունէին վճարել, եկոցունցն շնորհեաց:) Հինգ հարիւր դահեկան պարտ էր կինն պոռնիկ. զի զհինգ զգայութեան մեղս զամենայն կատարեալ գործեալ էր. եւ յիսուն դահեկան պարտ էր Սիմօն. զի յիսունն՝ հինգ տասն է. զի այլ սակաւ էր մեղուցեալ քան զնա հինգ զգայութեամբն ի տասն բանեան օրէնսն. եւ երկոցունցն շնորհեաց: Չայեն ցուցնէ թէ՛ ոչ կարէ մարդ առանց շնորհացն Աստուծոյ քաւել զմեղս. եւ այսպէս դարձաւ ի կինն եւ զբազում մեղսն եթող. զի յոյժ սիրեաց ասէ: Իսկ ճշմարիտ է Աստուած ի խոստմունսն իւր. զի զոր խոստացաւ բանիւ՝ գործով կատարէ առանց ստութեան: Արդ՝ խոստացեան է մեզ զարքայութիւնն. ըստ այնմ, (հայր իմ ուխտեաց ինձ. եւ ես ուխտեմ ձեզ զարքայութիւնն:) Եւ դարձեալ ասաց. (Երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի.) եւ թէ՛ (ուր ես եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի:) Այլ յորժամ մեք ի հաւատս եւ ի բարի գործս մնամք զոր խոստացաք նմա,

յայն ժամ խոստման նմա արժանի լինիմք: Ապա թե մեք հրաժարիմք ի յուխտեն, եւ զրկիմք յարքայութենէն, նա ի խոստմունս իւր ճշմարիտ մնայ. անձանց մերոց է մեղադրութիւնն. եւ ոչ նմա որ խոստացան: (Եւ զղջանայ ի վերայ չարեաց մարդկան:) Այն է՝ զի որքան մեք ի մեղսն մեր անզեղջ եմք, այնքան Աստուած ի պատուհասն մեր անզեղջ է. այլ յորժամ մեք զղջանամք ի մեղաց, եւ Աստուած զղջանայ ի վերայ չարեացն, եւ ի պատուհասէն զոր ածէ ի վերայ մեր: Եւ այս յայտ է յերկու իրաց: Նախ՝ Աստուած մարդասեր է. եւ (ոչ կամի զմահ մեղաւորին. այլ զդառնալն նորա եւ զկեալն ասէ մարգարէն:) Երկրորդ՝ զի այժմ ի շնորպաց եւ յողորմութեան աթոռն է բազմեալ. եւ զինչ եւ ինկորեմք ի նմանէ՝ պարգեւէ մեզ. եթէ թողութիւն մեղաց. եթէ արքայութիւն երկնից. եթէ առողջութիւն հիւանդաց. եթէ խաղաղութիւն ամենեցուն. եթէ դարձումն պատուհասի. եւ զինչ եւ ինկորեմք ի նմանէ՝ տայ մեզ. թէ հոգեւոր եւ թէ մարմնաւոր. զի (գիտէ զպէտս մեր եւ զկարիս առաւել քան զոր ինկորեմք եւ իմանամք:) Այլ ի հանդերձեալն ոչ. զի յարդարութեան եւ ի դատաստանի աթոռն բազմի. անդ ուղիղ դատաստան առնէ. եւ ըստ գործոց հատուցանէ. չարացն չար հատուցանէ եւ զտանջանսն յաւիտենից. եւ բարեցն զբարիս եւ զկեանսն յարքայութեանն երկնից: Որում եւ զմեզ զամենեսեան՝ արժանի արասցէ առհասարկ զհաւատացեալս անուան իւրոյ. այժմ զերծանիլ եւ փրկիլ յեկեալ հասեալ պատուհասէ. եւ յետ աստեացս՝ ողորմութեան եւ գթութեանն իրոյ մասնաւորեցէ՝ պարդեւացն այնոցիկ՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Զրիստոս Աստուած մեր: Որում փառք եւ զօրութիւն եւ իշխանութիւն եւ պատիւ՝ ընդ Զօր իւրում եւ Ամենասուրբ Զոգւոյն. այժմ եւ յաւիտեանս ամեն: Յետ այսորիկ ասացուք վասն առ հասարակ եւ մասնաւոր ապաշխարութեան:

Նորին քարոզ վասն ապաշխարութեան. ի Բանն որ ասէ: (Ապաշխարեցեք՝ զի մերձեալ է արքայութիւնն երկնից:) Մատ. 3. 2: (Գլուխ. 3Ե)

Նախ տեսցուք թէ զի՞նչ է ապաշխարութիւնն: Ապաշխարութիւնն՝ ըստ գտանք է գործեցեալ մեղացն: Բայց մեզ աստանօր՝ երիս հարցաքննելի է: Նախ թէ՛ կարե՞ մարդ ապաշխարութեամբ զբժշկութիւն ընդունիլ: Երկրորդ՝ զի թէ ի բազում մեղս լինիլ մարդոյ՝ կարե՞ զմինն ապաշխարութեամբ քաւել: Եւ երրորդ՝ թէ որպէս է ապաշխարութեամբ զմեղս քաւել: Յաղագս առաջնոյն գիտելի է՝ զի զոր ինչ եւ մեղանչէ ոք՝ կարէ ապաշխարութեամբ զքաւութիւն գտանել, յորժամ ատէ եւ ի բաց մերկանայ զմեղսն գործեցեալ: Եւ է հաւաստութիւն սորա ի չորից: Նախ ի շինուածոյս մերոյ գոյացութեանց ի հոգւոյ եւ ի մարմնոյ բաղկացեալ. ըստ որում ասէ սուրբն Գրիգոր Նիւսեայ ի բնութեան գիրս յառաջնումն ճառի թէ՛ երկու պարգեւս առաւել շնորհեաց մարդկային ազգի. զոր ոչ ունին այլք յստեղծուածոցս՝ իմացականք, կամ զգայականք. այսինքն, ապաշխարութիւն մեղաց. եւ յարութիւն մարմնոյ: Եւ պատահի այս հոգեկանին վասն մամնոյն թողութիւն մեցաց. եւ մարմնականին վասն հոգւոյն յարութիւն կենաց: Երկրորդ՝ զի ունիմք կտակ հաստատուն զանսուտ խոստմունսն իւր զոր ասէ: (Ապաշխարեցեք՝ զի մերձեալ է արքայութիւնն երկնից:) Եւ դարձեալ թէ՛ (ոչ եկի կոչել զարդարս,

այլ զմեղաւորս ի յապաշխարութիւն:) Երրորդ՝ ընդունիմք զթողութիւն չարչարանօքն Զրիստոսի. այս է՝ պատուակն մարմնոյ եւ արեան արժանապէս ճաշակմամբն. ըստ Յօհաննու ի կաթուղիկէն: (Արիւնն Յիսուսի՝ սրբի զմեզ յամենայն մեղաց:) Եւ ըստ աւետարանին թէ՛ (որ ուտեր զիս՝ եւ նա կեցցէ վասն իմ:) Չորրորդ՝ վասն միջնորդն. զի ունիմք բարեխօս առ նա զսուրբս. զի ունին համարձակութիւն առ Աստուած վասն մեր: Դարձեալ հինգերորդ՝ զի կրկին է մեղք: Նախ՝ որ ի յանհունն ածէ. որպէս հերձուածողոցն որ անթողլի է: Եւ երկրորդն է՝ (որ յիւր մարմինն մեղանչէ ըստ առաքելոյն:) Եւ այս եւս թեպէտ եւ է անհունին Աստուծոյ պատուիրանազանցութիւն, եւ վասն այն անհուն տանջանք հատուցանին. սակայն դիւին է այսմ թողութիւն, թէ դարձցի ի չարէն ի բարի զղջմամբ: Եւ այս վասն առաջնոյն: Տեսցուք զերկրորդն թէ, ի բազում մեղս գոլով՝ կարէ՞ վասն միոյն ապաշխարել: Ասեն վարդապետք՝ ոչ կարէ ապաշխարել զմինն վասն բազում մեղանց: Եւ այս վասն երեք պատճառի. այսինքն, յաղագս Աստուծոյ. եւ յաղագս շնորհաց. եւ յաղագս հոգւոյն: Նախ՝ յաղագս Աստուծոյ՝ ոչ գտանէ միոյն թողութիւն ի բազում մեղս գոլով ըստ օրինակի թագաւորաց՝ զի ոչ թողուն զմի վնասն ծառայի, թեպէտ բարեխօսք իցեն, յորժամ դեռես ի նոյն պատժապարտութեան իցէ թագաւորին: Իսկ յաղագս շնորհաց՝ զի ոչ կարէ լինիլ ի միում իրի շնորհ եւ ոչ շնորհ. թողութիւն եւ թողութիւն. զի ներհակք են միմեանց. որպէս լոյս եւ խաւար, զի ուր լոյս է, անդ եւ խաւար ոչ է. (զի ունին միաբանութիւն ըստ առաքելոյն.) նոյնպէս եւ շնորհ ոչ կարէ ընդ մեղաց բնակիլ: Իսկ յաղագս հոգւոյն՝ զի պարզ եութիւն է եւ միատեսակ հոգին. վասն այն յորժամ շեղեսցի ի մեղս, ոչ դիմէ յապաշխարութիւն. նոյնպէս եւ զդիմակն իմացիր. ըստ աւետարանին՝ (ոչ կարէք երկու Տերանց ծառայել:) Իսկ երրորդն թէ՛ ո՞րպէս կարէ ոք ապաշխարիութեամբ զմեղս քաւել: Գիտելի է՝ զի յերից տեսանի եութիւն ապաշխարութեանն: Նախ՝ ատել զմեղս եւ ի բաց հեռանալ իբր ի զարշելի իրաց մտօք եւ գործով. ըստ Դաւթի՝ (զմեղս ատեցի եւ անարգեսցի:) Եւ երկրորդ՝ զի բանիւ յայտնեսցէ եւ խոստովանեսցի զմեղս. ըստ Դաւթի՝ (ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. եւ դու թողցես զամենայն անպարշտութիւնս:) Իսկ երրորդ՝ որ գործով զդիմակ մեղացն կատարեսցէ. ըստ Ովիաննու թէ՛ (արարէք պտուղ արժանի ապաշխարութեան.) այսինքն, զի յաղագս հպարտութեան՝ զխորհութիւն արասցէ. ընդդէմ ատելութեանն եւ նախանձուն՝ զսէր. բարկութեան՝ զքաղցրութիւն. ծուլութեան՝ զարիութիւն աղօթից. որկորստութեանն՝ զպահս եւ զանսուաղութիւն. ագահութեանն եւ զրկանն՝ զբաշխելն եւ զտալն. պոռնկութեանն ընդդէմ՝ զողջախոհութիւնն սրբութեամբ ստանալ. նոյնպէս եւ զայլոց մասանց մեղացն իմացցիս: Իսկ զի ցուցաք երիւքս այսոքիւք զկատարումն ապաշխարութեան լինիլ. զի ամենայն ոք ի ձեռն այսոցիկ մեղանչէ. այսինքն, մտօք, կամ բանիւ, կամ մարմնով, որովք եւ ապաշխարէ: Արդ բաժանել պարտ է թէ՛ քանի՞նն ապաշխարութիւնք. եւ ո՞րք են ընդունելիք: Տրամատին ապաշխարութեան տեսակ ի տասն: Եւ մինն ի սոցանէ ընդունելի է. իսկ այլքն անընդունելի. որովք բազումք ապաշխարեն, եւ ոչ վարձաւորին: Առաջինն է՝ որք խոստովանութեամբ ապաշխարեն զգործեցեալ մեղս եւ վերստին ի նոյն մեղս դառնան՝ չէ ընդունելի. ըստ Յակօբու ի կաթուղիկէն. (շուն դառնայ ի փսխածն իւր. եւ խոզ լուացեալ՝ ի տիղմն

թաւայի.) եւ ըստ Յօհաննու թէ՛ (եւ զառաջինն եւս պահանջեցէ:) Երկրորդ՝ զի յորժամ յոչ կամաց լինի, որք կան եւ մնան ի մեղս՝ մինչ հասցէ իր մի պատուհաս վասն մեղացն, ապա դառնան. ըստ Դաւթայ՝ (դարձայ ի թշուառութենէ. զի հարան յիս փուշք.) չէ ընդունելի: Երրորդ՝ զի որք կացցեն մինչ ի ծերութիւնն, որ մեղքն զինքն թողու. եւ այս ի հարկէ է. վասն այսր մարգարէն աղօթէ. (մի ընկենուր զիս Տէր ի ժամանակս ծերութեան:) Չորրորդ՝ որք մեղայ տան, բայց յուսով եւ հաւատով եւ սիրով ոչ լինի որպէս Յուդային, չէ ընդունելի: Զինգերորդ՝ որք զմի մասն ապաշխարեն. այսինքն, կամ զհաւատն առանց գործոց, կամ զգործ առանց հաւատոց. ըստ Յակօբայ՝ (հաւատք առանց գործոց մեռեալ են. եւ գործք առանց հաւատոց դատարկք են:) Վեցերորդ՝ չէ ընդունելի՝ որ յաղագս փառասիրութեան իցէ. ըստ այնմ, (այն իսկ են վարձք ևոցա:) Եօթներորդ՝ թէ վասն կեղծաւորութեան իցէ. զի սերմանիցէ զչար աղանդն՝ յորմէ զգուշացուցանէ Տէրն. (գան հանդերձիւք ոչխարաց՝ եւ ի ներքոյ են գոյլք յափշտակօղք:) Ութներորդ՝ զի առ ժամանակ մի լինի, եւ ոչ յերկար. որք ոչ ըստ խրատուն Սողոմօնի թէ՛ (մի մերժեր զօրէսս մօր քոյ եւ այլն:) Իններորդ՝ որք ի բնութենէ ունին որպէս չեզոքն, ի հարկէ խառնուածոցն եւ ոչ կամաւ, չէ ընդունելի. ըստ տերունեան բաժանմանն թէ (են ներքինիք՝ որք յորովայնէ ծնան այնպէս.) որք ոչ վարձաւորին վասն այն: Իսկ տասներորդն՝ է ընդունելի եւ կատարեալ ապաշխարութիւն, որ հաւատով լինի. (թէ զոր ինչ ինդրէ, առնու.) եւ յուսով արքայութեանն եւ վասն սիրոյն արասցէ:) Տեսցուք այժմ, թէ վասն Է՞ր մարդն ի մեղս անկեալ, ոչ դառնայ եւ ապաշխարէ: Նախ՝ երկչոտութիւն արկանէ ի սիրտն, թէ մեծ է մեղքդ՝ եւ ո՞րպէս կարես ապաշխարել. իբրեւ զիստերախտ խրտոյց ձի՛ գահավէժ առնէ: Յաղագս այսր՝ խրախոյս տալով ասէ ոսկեբերանն Յօհաննէս թէ, (մի երկիւղալից լինիր եւ անյոյս վասն մեղացդ մեծութեան. ոչ յաղթէ ասէ բազմութիւն մեղաց քոց՝ գթութեանցն Աստուծոյ. եւ իբրեւ զկայծ հրոյ է համեմատեալ ընդ Անդլնդական ծովն:) Երկրորդ՝ զամօթն արկանէ ի միտն. այլ ամօթն մեծ մասն է ապաշխարութեան եւ քաւիչ մեցաց. որպէս հուր ժանկոյ արծաթոյ: Երրորդ՝ զծանրութիւն ապաշխարութեանն՝ թէ ոչ կարես տանիլ. եւ լինիս կրկին պատժապարտ. ըստ Յեսայեայ՝ (խոստովանես զյանցանս քո՝ զի արդարասցիս:) Եւ ըստ Դաւթի՝ (ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. եւ թու թողցես զամենայն անօրէնութիւնս:) Չորրորդ՝ հեշտութիւն արկանէ. ասէ՛ դեռ տղայ եմ. առժամանակ մի կենամ յայս. յետոյ ապաշխարեմ: Սողոմօն ասէ. (յիշեա զարարիչն քո յաւուր մանկութեան քոյ. եւ գնա դու ի ճանապարհս արդարս:) Զինգերորդ՝ զյոյս երկար կենդանութեան ձգէ ի միտն: Յաւետարանն՝ (ոչ գիտես թէ երբ գողն գայ.) այսինքն, յերկօրեայ ի տղայական հասակի. ի մեջ գիշերի յերիտասարդութեան. ի հաւախօսի ի կատարելութեան. ընդ առաւօտս ի ծերութեան: Վեցերորդ՝ զերկիւղն ոչ թողութեան արկանէ: Յեզեկիէլէ՛ (յորժամ յոգւոց հանիցես եւ հեծեծեցես, ասացէ՛ ահաւասիկ եմ.) որպէս Դաւիթ նաթան մարգարէիւն: Եօթներորդ՝ զչարսն օրինակ դնէ՛ եւ տայ նախանձիլ. ի Դաւիթէ՛ (մի նախանձիր ընդ չարս:) Ութներորդ՝ վասն սովորութեանն ոչ դառնայ. յաղագս այսր՝ ասէ առաքեալն. (բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստն:) Եւ ըստ աւետարանին՝ (նեղ է դուռն եւ անձուկ է ճանապարհ կենացն:) Իններորդ՝ խաբէութեան յոյս արկանէ, թէ սուրբքն ամենայն բարեխօս են վասն քոյ յայնմ ատենին: Ի

Պօղոսէ՛ (ահա ժամանակ ընդունելի. ահա օր փրկութեան. մի եւ մի իւր տայցէք պատճառս՝ զի մի արատեսցի պաշտօնն:) Տասներորդ՝ ապաստան լինիլ յողորմութիւնն Աստուծոյ. այսինքն, իբր թէ կարիցէ ընդունիլ զայն յորժամ զղջանայցէ: Այլ այս է՝ մեղանչել ընդդէմ նորին. զի ասէն վարդապետք թէ՛ պարտիմք ամաչել յողորմութենէն Աստուծոյ, թէ ոչ կարեմք երկնչիլ յարդարութենէ նորա: Արդ՝ այսոքիկ են շղթայք սատանայի, որք արգելուն զմեզ չգալ ի խոստովանութիւնն: Եւ թեպէտ ըստ իւրաքանչիւր շղթայիցն սատանայի եւ զհնար արծակմանն ցուցաք վկայութեամբ գրոց սրբոց, զի մի մնասցէ ի մեղս անզղջութեամբ: Այժմ վերստին տասն գլխով ասեմք. զի պարտ է մարդոյ վաղվաղակի դառնալ ի մեղաց եւ ապաշխարել: Առաջին պատճառ՝ զի որպէս հուր արկեալ ի տուն փութով շիցուցանել պարտ է. ապա թէ ոչ՝ բովանդակն այրի. այսպէս զմեղս՝ զի այրիչ է հոգւոյն: Երկրորդ՝ սատանայ թշնամի է մեր եւ Աստուծոյ. յորժամ գայ ի ձեռն մեղացն եւ ի մեզ մտանէ, ոչ պարտ ծածկեալ. զի մի պատիժս կրեսցուք. ըստ օրինակի ոմանց՝ որք զթշնամիս թագաւորաց թաքուցանեն: Երրորդ՝ զի պարտ է աղաղակել ապաշխարութեամբ վաղվաղակի, որք ըմբռնին մեղօք ի բերան սատանայի. որպէս անասունք զի ճչեն եւ օգնական ինդրեն, յորժամ անկանին ի բերանս գազանաց: Չորրորդ՝ որ թէ մարդ մի ի բանտ լինի, եւ դուռն ի բաց, թէ ոչ փախչի, անձնամբ անձին մահապարտ գտանի. նոյնպէս թէ ոք ոչ փախչի ի բանտէ մեղաց ընդ դուռն ապաշխարութեան: Զինգերորդ՝ որպէս ոմն կանգնեալ ի քաղաքն, հրաւիրէ զմարդիկ բերել քակոր եւ պղինձ՝ եւ առնուլ ոսկի եւ արծաթ. իսկ յուլացեալքն ձայնին՝ ո՞չ են անմտագոյնք. նոյնպէս են որք ոչ կամին բերել առ քահանայն զմեղս, եւ առնուլ զմաքրութիւն եւ զթողութիւն: Վեցերորդ՝ զի որպէս իմաստուն կուսանքն յառաջագոյն մտին յառազաստ փեսային պատրաստութեամբ. իսկ յիմարքն՝ արտաքոյ մնացին. նոյնպէս եւ որք ոչ պատրաստեն զանձինս ապաշխարութեամբ: Եօթներորդ՝ պարտ է ապաշխարել՝ զի մեծամեծ են խոստմունքն ըստ առաքելոյն. (զոր ակն ոչ ետես եւ այլն:) Ութներորդ՝ պարտ է ապաշխարութեամբ սրբել զանձինս մեր. զի մի ապականիչ լիցուք տաճարին Աստուծոյ. այսինքն, հոգւոյս մերոյ. ուստի եւ պատժիմք յԱստուծոյ ըստ առաքելոյն. (դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք. եթէ ոք զտաճարն Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած:) Նաեւ յօրէնսս գրեցաւ. (անձն որ մեղիցէ, նոյն եւ մեռցի:) Իններորդ՝ պարտ է դառնալ ի մեղաց. զի հիւանդութիւնն վասն մեղացն՝ բարձցի. ըստ այնմ որ Զրիստոս ախտաժետացն արար. զմեղս թողոյր ասելով. (թողեալ լիցին քեզ մեղք քո.) ընդ նմին եւ զցաւն բուժեր, յորմէ ցուցանի վասն մեղացն լինիլ: Եւ թէ՛ (ո՞յր վնաս է սորա, թէ հօր եւ մօր իւրոյ զի կոյր ծնցի:) Տասներորդ՝ զի օրէն է ի վերայ մեր թէ՛ (արարէք պտուղ արժանի ապաշխարութեան.) ոչ է պարտ օրինազանց լինիլ: Դարձեալ հինգ եղանակք են ապաշխարութեան՝ որովք գտանէ ոք ողորմութիւն յԱստուծոյ: Նախ՝ խոստովանութեամբ մեղաց. ըստ այնմ, (ասա դու նախ զանօրէնութիւնս քո.) եւ թէ՛ (պատմեցից ինձէն զմեղս իմ. եւ դու թողցես զամենայն անօրէնութիւնս:) Երկրորդ՝ աղօթիւք կարէ ոք զողորմութիւն գտանել յԱստուծոյ. զի աղօթքն՝ խօսք է ընդ Աստուած. ըս այնմ, (թէ վասն բարեկամութեանն ոչ տացէ, սակայն վասն ժողութեանն տացէ զինդրելին:) Երրորդ՝ խոնարհութեամբ կարէ ապաշխարիել. եւ յայտ է յօրինականէն եւ ի մաքսաւորէն. զի ելին ի

տաճարն յաղօթս. յորմէ մաքսաւորն վասն խոնարհութեանն ել արդարացեալ ի տուն իւր ըստ աւետարանին: Չորրորդ՝ ողորմութեամբ կարէ ոք ապաշխարիել. ըստ Դանիէլի առ Նաբուգոդոնոսոր. (զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես. եւ զանօրէնութիւնս քո տրօք տնանկաց:) Եւ ըստ աւետարանին. (երանի ողորմածաց՝ զի նոքա զողորմութիւն գտացեն: Հինգերորդ՝ թողլով զպարտս յանցաւորաց, կարէ զողորմութիւն գտանել յԱստուծոյ. ըստ այնմ, (թէ թողուցուք մարդկան գյանցանս, եւ Հայրն ձեր թողցէ ձեզ.) Եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ վասն ապաշխարութեան. ի Բանն՝ (Ապաշխարեցեք՝ զի մերձեալ արքայութիւնն երկնից:) Մատ. 3. 2. (Գլուխ. 32)

Տեր մեր զապաշխարութիւնն բանիւ եւ արդեամբք կամեցաւ: Բանիւ այն՝ զոր ասէ. (ոչ կամիմ զմահ մեղաւորին. այլ զդառնալն նորա եւ զկեալն:) Եւ թէ՛ (եկայք առիս ամենայն աշխատեալք. եւ ես հանգուցից զձեզ:) Իսկ արդեամբք՝ որպէս զենովք ապաշխարութեամբ յերկինս փոխեաց: Չմանասի մեղսն եթող: ՉԴաւիթ թագաւորութիւնն հաստատեաց: Չմաքսաւորն արդարացոյց: Չպոռնիկն ընկալաւ: Աւագակին զոսիտն եբաց: ՉՊետրոս որ մարդկութեամբ ինչ տկարացաւ՝ երիւք խոստովանութեամբ բժշկեաց: Եւ զայլն նմանապէս: Եւ արդ՝ եւ ոչ միայն զմարդս. որ թեպէտ դիւախար է ի մեղս, այլ դիւրադարձ է յապաշխարանս. այլեւ բազում ինչ օրինակ ունիմք ապաշխարութեան ի յերկինս եւ ի յերկրի: Եւ նախ զլուսինն. յորժամ յարեւելս գոլով պակասի ի լուսոյ, եւ յարեւմուստ ի մէջ խաւարի, առնու գոյս. եւ սակաւ լուսով ի բոլորն կատարի: Այսպէս եւ մարդյորժամ ի յանմեղութեան լոյսն լինի՝ եւ սխալի եւ պակասի, եւ յորժամ ի մէջ խաւարին մեղաց գոլով, զոչացեալ զայ ի լոյս շնորհաց, սակաւ սակաւ ապաշխարութեամբն՝ յառաջին կատարեալ արդար անմեղութիւնն ժամանէ: Դարձեալ՝ զկրկին տախտակսն գրեալ մատամբն Աստուծոյ բանեան օրէնս՝ ընկեաց Մովսէս եւ խորատակեաց: Եւ այլ տախտակ կոխեաց իբրեւ զառաջինն. եւ գրեցաւ նոյն պատգամն ի վերայ: Նշանակէ կրկին տախտակն՝ զհոգի եւ զմարմին մեր ունելով տասն զգայութիւնս, անարատ ձեռինն Աստուծոյ ստեղծուած: Սա յորժամ վասն արբեցութեան եւ շուայտութեան խորտակի, դարձեալ ի ձեռն ապաշխարութեան կոխելով, այսինքն, զաւելորդն ի մարմնոյն հանելով, զուտելն՝ եւ զմպելն՝ եւ զպոռնկիլն, եւ զայլն: Իսկ ի հոգւոյն՝ զհպարտութիւնն. եւ զնախանձն. զատելութիւնն եւ զայլն, յայն ժամ գրի դարձեալ առաջին հրամանն Աստուծոյ: Երրորդ օրինակ՝ զաւագանն Մովսէսի յորժամ ընկեաց ի գետինն, եղեւ օձ. եւ բուռն եհար՝ եւ եղեւ դարձեալ զաւագան: Նշանակ է ապաշխարութեան. զի զաւագան ուղղութեան եւ հաստատութեան՝ մարդն է. ի ձեռն մեղացն անկանի յերկիր եւ լինի օձ, ընդ հեշտութիւն երկրի սողալով. եւ յորժամ ըմբռնեմք ապաշխարութեամբ, դարձեալ լինի զաւագան հաստատութեան: Չորրորդ՝ ձեռն Մովսէսի զոր էարկ ի ծոցն եհան բորոտեալ. եւ դարձեալ էարկ ի ծոցն՝ եհան սրբեալ: Ձեռն՝ նշանակէ զգործ մեր. որ մեղօք խայտաբղետ եղեալ. լինի բորոտ եւ պիղծ. զի պիղծ էր բորոտն յայնմ ժամանակի: Եւ դարձեալ՝ յորժամ ի ծոց ապաշխարութեան արկանեմք, լինի դարձեալ սրբեալ: Եւ տես՝ զի երկոքինն ի ծոցն գործեցաւ՝

բորոտիլն եւ սրբիլն. այս է՝ զի նախ ի ծածուկ խորհուրդս սրբեմք, կամ պղծեմք զհոգի մեր. եւ ապա գործով արտաքոյ երեւիմք: Հինգերորդ օրինակ. գաւազանն Ահարօնի որ ծաղկացաւ՝ նշանակ էր ապաշխարութեան. զի գաւազանն այն հատեալ ի բուն ծառոյն, չորացաւ ի կենաց. եւ ի գիշերի դարձեալ դալարացաւ եւ ծաղկեցաւ ի մէջ տաճարին: Տուցանէ՝ յորժամ մեղօք ի բուն արմատոյն մերոյ հատանիմք եւ չորանամք, եւ ի նմին գիշերի՝ այսինքն, ի սուգ եւ ի տրտմութիւն ապաշխարութեան դարձեալ առողջանամք եւ պտղաբերեմք զառաջինն: Եւ այն ի տաճարի ի սրբութեան. այս է՝ ի մէջ եկեղեցւոյ. զի ամենայն սրբութիւն մեր՝ ի մէջ ի կեղեցւոյս կատարի: Եւ ոչ միայն այս:

Այլեւ բազումս ունիմք ի կենդանիս եւ յանկենդանս օրինակ ապաշխարութեան: Որպէս արծուի ծերացեալ՝ մերձ երթեալ արեգականն, զամենայն թելս խանձէ ի նմանէ. եւ իջեալ յաղբիւրս լուանայ. եւ նորոգի մանկութեան թելօք: Նոյնպէս եւ մեք յորժամ հնացեալ մեղօք ծերանամք, եւ ելանեմք հաւատով եւ յուսով ընդդէմ արեգականն արդարութեան Զրիստոսի, եւ զմեղս մեր պակասեմք, եւ իջեալ յապաշխարութեան եւ յարատասուաց աղբիւրն լւանամք զմեզ: Եւ այսպէս (նորոգի որպէս արծույ մանկութիւն մեր որպէս ասէ Դաւիթ:) Դարձեալ՝ զարջոյ ասեն թէ՝ յորժամ կամի մտանել ի քուն, երթոյ ի ջուրն եւ ըմպէ. եւ լւանայ զամենայն փորն. զի մի մնացէ մասն ինչ զարջութեան, եւ հոտեալ սպանցէ զինքն: Նշանակ է մեզ՝ յորժամ ի քուն մահու մտանեմք, պարտ է զամենայն մեղս սրբել ի մենջ խոստովանութեան եւ ապաշխարութեան ջրովն. զի մի մնացէ սակաւիկ ինչ մեղք. եւ սպանցէ զմեզ յօր դատաստանին: Դարձեալ՝ տեսանեմք զօձս՝ յորժամ մորթն հնանայ, եւ կամի ապականել զինքն, երթեալ մտանէ ի նեղ տեղիս. եւ զամենայն հին մորթն՝ արտաքոյ հանէ. եւ զնորն զգետու: Նոյնպէս հնացեալ մեղքն մեր որ է ապականութեան զգետտ, պարտ է ի նեղութիւն ապաշխարութեան մտանել. որ է սով՝ եւ ծարաւ՝ եւ չարչարանք. եւ այսու զհնութիւն մեղաց ի բաց դնել. եւ զնոր գործս արդարութեան ստանալ: Չորրորդ՝ օրինակ ունիմք զծառս պտղաբերս եւ անպտուղս. որք ի գարնան ժամանակս կանաչի եւ ծաղկով եւ պտղով գեղեցկացեալ լինի. եւ յորժամ ցրտութիւն ձմերան հասանի, եւ ի հասանի, եւ ի շնչել հողմոյ հիւսիսոյ, տերեւաթափ լինի. եւ մեր կացեալ տգեղանայ: Նոյնպէս եւ մարդ արդարութեան գործով գեղեցիկ է կանաչացեալ եւ ծաղկեալ բարի պտղով. եւ յորժամ ցրտանայ ի հաւատոցն եւ ի սիրոյն Աստուծոյ, եւ սատանայական հողմն շնչէ ի նա, չորանայ եւ մերկանայ յամենայն բարութեանց: Եւ յորժամ շնչէ հարաւ մարդասիրութեանն Աստուծոյ ի հոգիս մեր, դարձեալ կանաչիմք եւ ծաղկիմք որպէս զառաջինն: Հինգերորդ՝ երկիրս զուարճացեալ բուսօք եւ ծաղկօք ի ժամանակի գարնան, ի ձմեռն մեռանի եւ անպտուղ. տգեղանայ. երւ ի գարնան՝ դարձեալ առնու զանձրելն եւ զջերմութիւնն եւ պտղաբերի: Այսպէս եւ մարդս զարդարեալ է բարեաց գործովք. եւ չորանայ եւ տգեղանայ մեղօք. իսկ յորժամ ցօղն երկնայինն եւ հուր հոգւոյն դարձեալ իջանէ ի հոգին, վերստին զարդարի յառաջին կերպարանն գեղեցիկ: Այսօքիկ օրինակք են ապաշխարութեան: Իսկ օրինակք անփոփոխ առաքինութեան՝ բազում գոն ի կենդանիս: Որպէս եղն հանապազ եւ միշտ վաստակի՝ ի ներքոյ լծոյ մեր եղեալ զուսն: Եւ էշ միշտ ի բեռնակրութեան կելով: Շուն միշտ տիրասէր: Այժեամն միշտ սրատես: Ոչխար յամենայն ժամ

զգօն: Գառն միշտ անմեղ: Նոյնպէս եւ մեզ պարտ է ըստ օրինակի նոցա՝ միշտ եւ անփոփոխ յառաքինութեան մեր լինիլ: Արագիլն արդար: Եւ տատրակն աղջախոհ: Ուղտ խոհեմ: Եւ առիւծն արի: Չոր եւ մեզ պարտ է կամօք ստանալ գոր նոքա բնութեամբ ունին: Այլեւ տեսանեմք զբազում ծառս մշտասաղարթս. որք զտերեւն ոչ թափեն յամառն եւ ի ձմեռն. որպէս գին. կիպարին. ձիթենին, եւ այլք: Նոյնպէս եւ մեզ պարտ է ի խաղաղութեան եւ ի խռովութեան՝ զառաքինութեան գեղս մեր պահել եւ ոչ թափել ի բարի գործոց. (որ զպտուղ իւր ի ժամու տացէ:) Այլեւ ապաշխարութիւն երկրորդ աւազան է՝ որ լուանայ զմեղս: Ջուրն արտասուքն է յերկոցունց աչացն. որ զհոգին եւ զմարմինն լուանայ: Եւ մեռուցումն մեղաց մահ է՝ որք ընդ Զրիստոսի յաւազանին թաղիմք. իսկ խոնարհումն սրտին՝ է որպէս իջանելն եւ ելանելն յաւազանէն: Խոստովանութիւն մեղացն՝ է խոստովանութիւն եւ դաւանութիւն Ամենասուրբ Երրորդութեանն: Իսկ ատել զմեղս՝ է հրաժարումն ի սատանայէ. որպէս անտանօր ի մկրտութեանն. նոյնպէս եւ աստանօր յապաշխարութիւնս կարտարի: Եւ որպէս անդ սրբիմք ի մեղաց ի սկզբնականէն եւ ի ներգործականէն. նոյնպէս եւ աստ ի ձեռն ապաշխարութեան՝ սրբիմք ի մահու եւ ի ներելի մեղացն: Վասն որոյ ապաշխարութիւնն երկրորդ աւազան է յետ միանգամ մկրտութեան աւազանին ջրոյ: Ասասցուք այժմ թէ, զի՞նչ է ապաշխարութիւն: Ապաշխարութիւնն է՝ ըստ գտանք գործեցեալ մեղացն. այսինքն, յորժամ ի միտսն մին զմեղսն յիշատակէ եւ տրտմի եւ զղջայ թէ Է՞ր արարի, յայնժամ ապաշաւէ եւ ապաշխարէ: Ապաշաւելն ի հոգին է որ ափսոսայ եւ փոշիմանի թէ, Է՞ր գործեցի: Իսկ ապաշխարելն՝ ի մարմինն. որ չարեաց փոխարէն՝ զբարին գործէ: Եւ այս երկու իրօքս՝ մարդն մօտի առ Աստուած՝ եւ հաճոյանայ նմա. այսինքն, տրտմութեամբն մեղաց, եւ աղօթիւքն առ Աստուած: Յորժամ վշտանայ ի մեղացն, դառնայ առ Աստուած մտօքն. եւ աղօթիւքն՝ ներումն ինդրէ մեղաց իւրոց: Վասն զի երկու իրօք հեռանայ մեղաւորն յԱստուծոյ. այսինքն, յետս դարձմամբն յԱստուծոյ, եւ դարձմամբ ի մեղս. զի նախ յետս դարձուցանեմք զերեսս յօրինցն Աստուծոյ. եւ այսպէս լինի հեռացումն յԱստուծոյ: Եւ յորժամ մօտաւորիմք առ Աստուած նախ թողում զհեշտութիւն մեղացն որ յատոյ հետեւեցաք. եւ ապա դառնամք առ Աստուած յորմէ նախ հեռանաք: Եւ այսպէս նախ տրտմիլն եւ զղջանալն է ի մեղաց. եւ ապա աղօթիւք եւ մտօք դիմելն առ Աստուած, եւ զներումն թողութեան ինդրել: Դարձեալ՝ երկու իր էր ի գործ մեղացն. նախ ատելութիւնն Աստուծոյ՝ յորմէ եղել անհաշտ խռովութիւն. եւ ապա սիրելն յմեղս՝ յորմէ եղել անքակ կապակցութիւն: Նմանապէս եւ ապաշխարութեամբն՝ լինի ատելութիւն եւ քակտումն մեղաց. եւ աղօթիւքն՝ լինի սեր եւ հաշտութիւն առ Աստուած: Դարձեալ գործ մեղացն՝ զրկումն է բարեաց եւ ժողովումն չարեաց. ընդդէմ նմին եւ գործ ապաշխարութեանն՝ պակասումն է չարեաց. եւ աղօթիւք՝ լցումն է բարեացեւ շնորհաց: Դարձեալ՝ մեղքն նուազեցոյց զլոյս շնորհացն Աստուծոյ եւ ուրախութեան. եւ աճեցոյց զխաւար չարեաց եւ տրտմութեանց: Այսպէս ընդդէմ նմին՝ ապաշխարելն փարատէ զխաւար մեղաց եւ տրտմութեան. եւ աղօթքն՝ լնու շնորհօք եւ ինդութեան լուսովն զհոգիս մեր: Յայժամ միշտ յուրախութեան բերկրի սիրտ մարդոյն. եւ երեսն զւարճացեալ. եւ այլ տխրութիւն եւ թաղծումն մեղաց՝ ոչ անկանի ի սիրտ նորա. որպէս գրէ առառքեալն: (Ուրախ լերուք ի

Տեր՝ դարձեալ ասեմ ուրախ լերուք:) Այլ որ ասէ իմաստունն Սողոմօն թէ, (հոգի իշխանին ելցէ ի վերայ քոյ՝ գտեղի քո մի թողուր նմա:) Իշխան գաստանայ կոչէ. որպէս եւ Տերն (իշխան աշխարհի ասէ:) Եւ Պօղոս ասէ. (եթէ ընդ իշխանին իշխանութեան օդոյ՝ որ ընդ մտեալէ յորդիսն ապստամբութեան:) Եւ իշխան կոչի վասն կրկին պատճառի: Նախզի մեք մարդիկ՝ իշխան արարաք զնա ի վարայ մեր, մեր տկարութեամբս եւ չար գործովս: Այլ նա ինքն ի բնէ ոչ ունէր իշխանութիւն ի վերայ մեր. որպէս մարդ ոք թողու զբնական Տերն իւր, եւ օտարաց ի ծառայութիւն մտանէ. նոյնպէս եւ մարդիկ թողին զհրամանս արարչին իւրեանց Աստուծոյ, եւ զկամս սատանայի գործեցին: Երկրորդ կոչի իշխան. զի ոմն ի նոցանէ հպարտութեան իշխէ. եւ ոմն բարկութեան. եւ այլք պոռնկութեան, կամ այլ ինչ չարեաց: Արդ՝ խրատէ իմաստունն թէ, յորժամ չար ոգիքն սատանայի յառնեն ի վերայ քո, եւ մոլորեցուցանեն ի մեղս, կամ բարկութեան, կամ ցանկութեան, կամ ազահութեան, կամ յայլ ինչ ծանր կամ թեթեւ մեղս. զքո տեղին առաքիւնութեան եւ զվարձն զոր ունէիր յառաջն՝ մի թողուր յուսահատութեամբ եւ հեղգութեամբ. այլ առաւել ժրացիր եւ պիտո կացիր եւ արի ի գործն քո: Չի սատանայ կրկին կերպիւ գայթակղէ զմարդն: Նախ՝ որ խաբէութեամբ ի մեղսն ձգէ՝ ի հոգեկան կամ ի մարմնական: Յոգեկան է ամբարտաւանութիւնն. սնափառութիւնն. նախանձն. բարկութիւնն. ատելութիւնն, եւ այլն: Եւ մարմնական՝ ծուլութիւն. ազահութիւն. գողութիւնն. պոռնկութիւնն, եւ այլն: Այս առաջին կերպ մոլորութեանն է: Երկրորդն է՝ որ յետ մեղացն գործոյ, ձգէ զմարդն ի յուսահատութիւն եւ ի հեղգութիւն: Նա պարտ է որ մարդն այսպէս զգուշ կենայ. յառաջ քան զգործն՝ պատրաստ կենայ զի մի մոլորեցի եւ անկցի ի մեղսն: Ապա թէ ի թուլութենէ մարմնոյն, կամ ի պատրանացն սատանայի գլորրի եւ անկանի ի մեղս, յետ մեղացն գործոյ՝ այլ կրկին ապաշխարութիւն ստանալ եւ ժիր պարտի կենալ աղօթիւք եւ արտասուօք: Մին վասն գործեալ մեղացն թողութիւն խնդրել. եւ մին վասն գալոյն ամբանալ եւ պնտիլ. զի մի յուսահատեցի: Իսկ թէ զի՞նչ է յուսահատիլն, այն է՝ որ երեք մասամբ հոգւոյն տկարանայ ի բարի գործոյն: Չի բանական մասն տրտմի եւ խաւարի յընտելոյն. եւ ցասումն յուսահատի ի քաւութենէ. եւ ցանկութեամբն գերի ի հեշտութիւն մեղացն: Եւ այսպէս տիրէ յուսահատութիւնն: Յայնժամ հեծէ եւ մռնչէ եւ յոգւոց հանէ ինքն առ ինքն. եւ տրտմի թէ այլ ոչ բժշկիմ, եւ ոչ ելանեմ ի մեղաց. որպէս ասէ մարգարէն. (զօր հանապազ արտում զնայ. զի անձն իմ լի եղել չարչարանօք. եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:) Եւ ո՞ր ուրեք, թէ լինի որ ի ծանրութեն մեղացն բուռն հարկանէ զշնորհացն Զրիստոսի. եւ նովաւ սրբի ի խղճէ մտացն: Եւ թէ ո՞րպէս մարդ զշնորհացն Զրիստոսի բուռն հարկանէ: Գիտել պարտ է՝ զի շնորհն Զրիստոսի այն է, որ քաւութիւն եւ թողութիւն շնորհէ մեղաց մերոց: Եւ հանապազ պարտ է՝ որ ապաշխարողն գերկոսիսն ի մտի պահէ. այսինքն, զշնորհսն Զրիստոսի եւ զմեղս իւր: Չի թէ՛ զմինն առանց միւսոյն մտածէ, լինի կրկին վնաս. այսինքն, թէ զշնորհսն Զրիստոսի միայն ի մտի դնէ, եւ անխտիր կայ ի մեղս, այն յուսով մեղանչումն է. եւ որ յուսով մեղանչէ. անյոյս կորնչի: Եւ որ միայն զմեղսն ի մտի ունի, եւ ոչ զշնորհսն քաւութեան, այնպիսին յուսահատ է. վասն այն յորժամ ի մտի պահեմք հանապազ զբազմութիւն մեղանց մերոց եւ զառաւելութիւն շնորհացն Զրիստոսի, յայնժամ ողջանայ յորս մեր. եւ

արիանամք ի հաւատս եւ ի յոյս եւ ի սերն Քրիստոսի՝ որ քաւէ զմեղս մեր: Վասն այն ասէ առակն. (ողորունմ՝ դարձուցանէ զմեղս մեծամեծս.) այսինքն, թէ յորժամ չար իշխանն սատանայ ընկղմէ եւ ձգէ յորոգայթ մեղաց, մի անյուսութեամբ կորնչիր. այլ աղօթս եւ աղաչանս առ Աստուած մատո. եւ քաւէ զմեղս քո թէ մեծ եւ թէ փոքր: Չի թէ ուրացան զԱստուած, եւ ելեր ի հաւատոցդ, ըստ Պետրոսի ողորքեա զնա դառն արտասուօք եւ քաւիս: Եւ թէ սպաներ եւ արիւն հեղեր, որպէս զԴաւիթ ի մահիճս քո հեծութեամբ եւ արտասուօք. եւ թողու քեզ զմեղսն քո: Եթէ պառնկեցար եւ շնացար որպէս զկինն պոռնիկ, նիստ առ ոտս Քրիստոսի. այսինքն քահանայից. եւ արտասուօք աղերսեա նմա եւ խնդրեա գթողութիւն. եւ ընդ նմա արձակիս ի խաղաղութիւն: Յիշեա զի զմաքսաւորն արդարացոյց ի տաճարին: Չաւազակն ի դրախտն եմոյծ բանիւ: ՉՂունիկիանոս որ խոցեաց տիգաւ զՔրիստոս, աշակերտ իւր արար: ՉՊօղոս որ քարկոծեաց զՍտեփաննոս, իւրն անօթ ընտիր արար եւ առաքեալ, կրել զանուն Նորա ի հեթանոսս: Յիշեա զի ի բորոտէն ոչ գարշեր. ընդ մեղաւորս ուտեր Քրիստոս. զկոյսն լուսաւորեր. եւ խլից լսել տայր, յորժամ հաւատով աղաչէին եւ խնդրէին ի նմանէ. զի ամենեցուն աննախանձաբար շնորհեր զխնդիրն: Նոյնպէս թէ կարի մեղաւոր իցես եւ մեծամեծ մեղս ունիցիս, յորժամ ողորքես եւ աղաչես զՔրիստոս, քաւ է զմեծամեծ մեղս քո: Եւ ընդ մեծ մեղացն՝ եւ զփոքունսն ներէ եւ ոչ յիշատակէ: Յայնժամ ապա սրբիս ի մեռելոտի գործոցն. եւ մաքրիս ի խիղճէ մտաց քոց շնորհօքն Քրիստոսի: Որպէս ասէ առաքեալն հռօմայեցոց. (մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաւ ընդ մեզ մահաւմբ որդւոյն իւրոյ. զի ա՞րդ ի հաշտիլն մերում ոչ զամենայն շնորհիցէ մեզ:) Այսինքն, յորժամ թշնամիք էաք ընդ Աստուծոյ մեղօքն Ադամայ, հայր Աստուած այնչափ սիրեաց զմեզ, մինչ զորդին միածին ետ ի մահ վասն մեր: Եւ մեք էաք արժանի մահու. (զի անձն որ մեղիցէ, Նոյն եւ մեռցի:) Ինքն որդին Աստուծոյ մեռաւ՝ եւ զպարտս մեր վճարեաց. եւ բազում յանցանօք դատապարտեալ էաք, հոգին սուրբ զամենայն քաւեաց եւ շնորհեաց մեզ: Դարձեալ՝ սեւացեալ էաք՝ ի մեղացն Ադամայ՝ եւ զագրացեալ ի գործոց մերոց. հոգին սուրբ սրբեաց զմեզ. եւ իւրն տաճար եւ բնակարան արար: Չթշնամիս հօր Աստուծոյ՝ յորդեգրութիւն եւ եղբայրակից Քրիստոսի արար, եւ իւրն զաւակ. զի հոգին սուրբ ծնանի զմեզ սուրբ աւազանին: Արդ՝ այժմ յորժամ տեսանէ զմեզ խոցոտեալս ի մեղաց հայրն երկնաւոր, եւ զփախուցեալս ի սատանայէ եւ զդիմեալս առ Նա, զի ա՞րդ արգելու զմեզ: Չի ասաց՝ (որ գայ առիս, ոչ հանից արտաքս:) Այլ հայրն երկնաւոր՝ ընդ առաջ ելանէ որպէս անառակ որդւոյն. եւ համբուրէ զմեզ. եւ սրբէ զարտասուս մեր: Առեալ ի գիրկն իւր, պարսպէ աստուածային բազկաւն: Յայնժամ սատանայ այլ ոչ կարէ խաբել զմեզ. զի ճանաչեցաք զմեղսն եւ զսատանայ՝ որ սուտ էր եւ խաբօղ: Եւ ոչ կարէ բռնութեամբ քարշեր զհոգիս մեր եւ տանիլ ի տանջանս: Տես՝ զի այժմ թեպէտ մեղաւոր եմք, ի հօրն մեր գրկի եմք դարձմամբ ի մեղաց: Չի Նա է բնիկ Տէր մեր. եւ Նա է սեփհական ստեղծօղն մեր. որ ետ զաստուածական արիւնն իւր, եւ գնաց զմեզ. զարեամբ զնեալսս իւր ոչ կորուսանէ: Չի յորժամ մոլորեալ ոչխար էաք, դարձոյց հովին քաջ, եւ խառնեաց ի հօտն երրկնաւոր. այժմ որ զամք առ հովին, զի ա՞րդ հեռացուցանէ: Յորժամ կորուսեալ դրամ էաք, գտաւ զմեզ. այժմ զգտեալ պատկեր իւր զի ա՞րդ կորուսանէ: Որ յայնժամ դարձուցեալ

Եաք գերեսս, եւ փախչեաք ի նմանէ, զհատ եկն անճառ գթութեամբն իւրով եւ ըմբռնեաց զմեզ, եւ այլժմ յորժամ դառնամք առ նա եւ խնդրեմք, զի ա՞րդ հեռանայ ի մենջ: Որ յայնժամ առանց խնդրելոյ ետ մեզ՝ այժմ խնդրելով ի նմանէ զարքայութիւնն զի ա՞րդ ինայէ: Առատ է գթութեամբ. մեծ է ողորմութեամբ. կորօտ է եւ ամենազօր: Որպէս յայնժամ աւազանին ջրովն՝ այժմ արտասուօք բաշխէ զթողութիւն մեղաւորացս. եւ անարատ ողջացուցանէ անսպիապէս քաւիչն մեր Յիսուս Քրիստոս՝ եւ Սուրբ Յոգի կորա: Որով եւ ընդ որում Յօր Աստուծոյ ծնողին մերոյ եւ մարդասիրի, երեք անձնաւորութեանն, եւ մի Աստուածութեանն, վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն զղջման. ի Բանն՝ (Չմեղս ատեցի եւ անարգեցի. եւ զօրէնս Զո սիրեցի:) Սաղ. 118. 163: (Գլուխ. 3Է)

Ի զղջումն եկելոցն՝ պարտ է զդաւթեայն վերա ձայնել զբան. (զմեղս ատեցի եւ անարգեցի:) Չի պարտ է տաղտկալ եւ ի բաց փախչիլ ի մեղացն ժահահոտութենէ. վասն զի յերդժումն եւ յապականութիւն զուսօսս իւր առաքէ: Գիտելի է՝ զի մեղքն երկարի է. մինն կամաւորն է, եւ մինն ակամայն: Այն որ ակամայն է, եւ տգիտութեամբ, եւ տկարութեամբ, ներելի է եւ թողլի. ըստ այնմ, (զմեղս մանկութեան եւ զանգիտութեան իմոյ մի յիշեր:) Իսկ որ կամաւորն է, եւ գիտութեամբ, եւ կարողութեամբ, մահացու է եւ անթողլի. ըստ առաքելոյն՝ (կամակար մտօք եթէ յանցանիցեմք, ոչ է պիտոյ վասն մեղաց պատարագ. այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին. եւ նախանձ հրոյն՝ որ ուտիցէ զհակառակորդս իւր:) Եւ այս երկու մեղքս՝ այսպէս զանազանին. այն որ ակամայն է, գթելն է. իսկ կամաւորն՝ թաւալիլն ի մեղս: Դարձեալ՝ ակամայն՝ յանցանելն է. իսկ կամաւորն՝ մեղանչելն է: Դարձեալ՝ ակամայն փորձանք է մեղացն. իսկ կամաւորն՝ ծառայել է մեղացն. (զի որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց ասէ Տէրն:) Փորձանք է՝ որպէս մշակն որ ոչ հաւանին չար տեանն, մեկնին, ի միմեանց. իսկ ծառայն՝ ոչ կարէ ազատիլ, այլ իւր կաման կորացեան է ի ներքոյ մեղացն. եւ մեղքն չարչարէ զնա՝ որպէս չար տէր զծառայ: Արդ՝ կրկին է կամաւորն: Նախ այն է՝ որ իւր կաման եւ գիտութեամբն գործէ զմեղս: Եւ երկրորդ՝ որ յետ գործելոյ մեղացն՝ անզեղջ մնայ ի նոյնն. այնպիսին յիրաւի առանց թողութեան մնայ. զի ոչ զղջանայ. ոչ յառաջ քան զմեղսն, եւ ոչ յետ մեղացն. այլ անզեղջ կամօք մնայ ի նոյնն որպէս սատանայ, եւ ընդ նմին դատապարտի: Նմանապէս եւ կրկին է ակամայն: Նախ՝ որ անգիտութեամբ եւ յոչ կամայ գործէ զմեղս: Եւ երկրորդ՝ որ յետ գործոյն, զղջանայ ի մեղացն: Եւ այսպէս սա թողութիւն գտանէ. զի կամ յառաջ քան զմեղսն, կամ յետ մեղացն, ունի զղջումն եւ խիղփ մտաց: Եւ թէ ո՞րն է զղջումն, կամ խիղճ մտացն, կամ տրտնջականն, ասացից: Սոքա ամենեքեան առ հասարակ զղջումն են ի հոգին եւ փոխիմանիլ. այլ զանազանապէս: Չղջումն՝ կամացն է. եւ խիղճ մտացն՝ իմացականին. եւ տրտնջականն՝ կարողականին: Եւ երեքեան սոքա՝ յետ մեղացն տիրեն ի մարդն: Այսպէս ընդդէմ կամաւորին՝ զղջումն է. ընդդէմ գիտութեանն՝ խիղճ մտացն. ընդդէմ կարողութեանն՝ տրտնջականն յառնէ: Վասն սոցա ասէ Յօհան ի կաթողիկէն: (Եթէ սիրօք մեր զմեզ ոչ ըստգտանիցեն, եղիցիմք սրբեալք:) Եւ առաքեալն ի հռօմայեցւոց ասէ: (Ուր առաւել եղեն մեղք, անդ առաւելան շնորհք:) Երեք միտս ունի: Նախ՝

հեթանոսք որք առաւել էին մեղօք ի կուռս եւ ի գործս, առաւելան շնորհքն Զրիստոս ի հաւատս եւ ի բարիս: Երկրորդ՝ մկրտեալն որ փոքր տղայ մկրտի, միայն սրբի ի սկզբնական մեղաց: Եւ որ երեսնամեայ լինի, սրբի ի սկզբնականէն եւ ի ներգործականէն. զի անդ առաւելու շնորհն: Երրորդ՝ յապաշխարութիւնն. որ զմեղս սակաւ ունի եւ խոստովանի, սակաւ շնորհիւ. եւ որ առաւել ունի եւ մեծամեծ, շատն եւ մեծն թողանի. եւ բազում շնորհս եւ պարգեւս առնու յԱստուծոյ: Եւ երկու իրօք սա առաւելու: Նախ՝ որ մեծ մեղաց թողութեամբն՝ մեծ շնորհս ընկալաւ յԱստուծոյ: Եւ երկրորդ՝ որ սա առաւել սիրէ՝ որ զմեծ շնորհսն ընկալաւ. ըստ այնմ, (որ յոյժ սիրէ, յոյժ թողութիւն գտանէ:) Չոր օրինակ՝ հուրն որ առաւել նիւթ գտանէ, մեծ բոց արձակէ եւ լուսաւորէ. նոյնպէս եւ յառաւել եւ մեծամեծ թողութիւնն՝ շնորհ հոգւոյն առաւել լուսաւորէ զհոգին: Եւ զի լուացարան մեղացն մեղայն է զղջումս. եւ որքան առաւել է զղջումս ի սիրտն եւ մեղայն ի լեզուն, առաւել սրբի ի մեղաց. որպէս առաւել ջրովն՝ առաւել սրբի աղտ հանդերձին: Նոյնպէս եւ աղտ մեղացն ի հոգւոյն. որպէս ասէ մարգարէն. (թէ իցեն մեղքն ձեր իբրեւ զձանձախարիթ որ է մուր առեացն, իբրեւ զծիւն սպիտակ արարից ապաշխարութեանմբն: Եւ թէ իցեն իբրեւ զորդան կարմիր արեամբ, իբր զասր սուրբ արարից զղջմամբ եւ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ:) Վասն այն ասէ. (ուր առաւել եղեն մեղք, առաւելասցին շնորհք:) Եւ զայս յայտնապէս յաւետարանին ասէ: (Կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրեւ լւաւ թէ Յիսուս բազմեալ է ի տան Սիմօնի բորոտի, եղեր իւր. եւ արտասուօքն թանայր զոտս նորա:) Երեք եղանակաւ մարդ երթայ ի տուն այլոց. եւ Զրիստոս այս երեք կերպիւս գայ ի տունս մեր: Նախ՝ մեծարելով. որպէս Զրիստոս զնաց ի տուն Սիմօնի որ աղաչեաց զնա, զի կերիցէ ճաշ ընդ նմա: Եւ մեք յորժամ աղաչեմք զնա՝ գայ ի տուն հոգւոյս մեր Զրիստոս: Երկրորդ կերպիւ ինքնակամ երթայ. որպէս զնաց ի տունն Չաքէի. այսպէս երբեմն ինքն իւր կաման եւ յօժարութեամբն գայ եւ իջանէ ի մեզ Զրիստոսի: Երրորդ կերպիւ՝ որպէս աղաքատք շրջին ի դրունս մեր. այսպէս եւ Զրիստոս ի կերպարանս աղքատաց շրջի ի դրունս մեր: Որպէս ասէ տեսիլն ի դէմս Զրիստոսի թէ, (ես բախեմ զդրունս. եւ թէ ոք բանայ, մտանեմ առ նա. եւ ուտեմ հաց ընդ նմա եւ նա ընդիս:) Վասն զի յոյժ սիրէ Զրիստոս եւ բնակիլ ընդ մարդկան. այսինքն, ի հոգիս մեր. եւ սեղանակից լինիլ մեզ. որպէս աստ բնակեցաւ ի տուն Սիմօնի. եւ հանգանակեաց ընդ Մարիամու մագդաղաենացւոյ: Չի նա երեք ցեղ պատարագ երեր առաջի Զրիստոսի՝ բայց թթու էր. եւ Զրիստոս այլ երեք ցեղ կերակուր խառնեաց անդ: Առաջին կերակուր՝ էր մեղաւորին կատարեալ զղջումս. եւ Զրիստոսին որ ողորմեցաւ նմա: Երկրորդ՝ խոստովանիլն. եւ Զրիստոսին որ եթող նմա: Երրորդ՝ ապաշխարելն. եւ Զրիստոսին որ ետ նմա. զերկնից արքայութիւնն ասելով. (դուստր երթ ի խաղաղութիւն. թողեալ լիցին քեզ մեղք քո:) Բայց Սիմօն անիրաւ դատեաց զԶրիստոս եւ զկինն. զի ասաց՝ (թէ մարգարէ էր սա, զիտեր թէ որպիսի կին մերձաւ. եւ զՄարիամ՝ զի աղտեղի համարեր զնա:) Վասն այն ասաց Զրիստոսի. (Սիմօն՝ կամիմ ինչ հարցանել քեզ. ուրեմն փոխատուի՝ երկու պարտապանք էին. ոմն պարտ էր հինգ հարիւր դահեկան. եւ ոմն յիսուն:) Հինգ հարիւր պարտ էր Մարիամ. զի հինգ զգայութեամբն կատարեալ հարիւրովն զամենայն մեղս գործեալ էր: Իսկ զյիսունն պարտ էր Սիմօն. զի այլ սակաւ էր. եւ յիսունն հինգ տասն է, եւ

տասն հինգ. եւ սա հինգ զգայութեամբ մեղացեալ էր ի տասն բանեան օրէնսն. եւ երկոցունցն շնորհեաց: Չի ամենայն որ մղանչէ՝ ոչ կարէ վճարել առանց ողորմութեանն Աստուծոյ. որպէս մարդ որ կարէ ինքեամբ ի խորխորատ անկանիլ. բայց ինքեամբ ոչ կարէ ելանել: Եւ կինս այս մեղաւոր՝ բազում բարիս ուսուցանէ մեզ: Նախզի՝ այլ մեղաւորք՝ յապաղեն ի խոստովանութիւնն. իսկ սա իբրեւ լուաւ զՔրիստոսէ, ի նմին ժամու եկն ի խոստովանութիւնն: Երկրորդ՝ ոմանք զմեծ մեղսն թաքուցանեն՝ յորմէ գարշելի հոտ ելանէ. իսկ սա՝ զամենն յայտնեաց. այն է որ զամեն իւղն ետեղ: Երրորդ՝ զի այլք յետ խոստովանութեանն՝ դառնան ի մեղս ի փսխածն իւրեանց. իսկ սա՝ եկաց առ ոտս Յիսուսի: Չորրորդ՝ զի այլք պարծին զմեղս իւրեանց առաջի մարդկան լրբուեամբ. իսկ սա՝ ամօթով, եւ ոչ կարեր ի վեր նայիլ: Հինգերորդ՝ զի այլք ծիծաղելով խոստովանին. իսկ սա՝ լալով: Վեցերորդ՝ այլք տրտնջելով եւ տրտմութեամբ ապաշխարեն. եւ սա ուրախութեամբ. եւ հերով իւրով ջնջեր՝ որ է պատուհումն. նշանակեր զմեծութիւնն աշխարհիս՝ թէ պարտ է զամենայն հեղուլ ի վերայ ոտիցն Քրիստոսի, որք են աղքատք. որպէս նա զամենայն իւղն ետեղ: Եւ գիտելի է՝ զի վեց են պատճառք զղջանալոյ՝ ի մեղաց: Նախ՝ ծերութիւնն յորում սպառի ախտ մարմնոյն. եւ զօրանայ հոգին. եւ զղջանայ ի մեղաց: Երկրորդ՝ հիւանդութիւնն. յորում նուազի պարարտութիւն մարմնոյն եւ տկարանայ: Երրորդ՝ աղքատութիւն. յորում պակասութիւն է կերակրոյ եւ ըմպելեաց: Չորրորդ՝ ի ձեռն լսելեաց զբան խրատու եւ քարոզութեանց՝ զղջանամք ի մեղաց: Հինգերորդ՝ ի ձեռն տեսանելեաց զպատուհաս աշխարհի, զղջանամք ի մեղաց, զսոսա տեսանելով կամ կրելով: Վեցերորդ՝ ի ներքս ի հոգին ծագումն շնորհացն Աստուծոյ՝ որ յուսաւորէ զմիտս եւ դարձուցանէ զկամս մեր ի բարին. որպէս զղջացաւ կինն պոռնիկ. եւ արտասուօքն թանայր զոտսն Յիսուսի: Չի այս է նշան ուղղակի զղջման՝ որ խիղճ մտացն կսկծեցուցանէ զսիրտն. եւ վերացեալ ի գագաթն՝ հեղու արտօսը ընդ աչսն: Եւ զայս եւս պարտ է գիտել՝ թէ յորո՞ւմ տեղուջ թողանին մեղք մարդոյն. ի զղջո՞ւմն, թէ ի խոստովանի՞լին, թէ յապաշխարե՞լն: Չի ոմանք ի զղջումն ասեն. եթէ ի զղջումն թողանի, ապա ընդ Է՞ր խոստովանիմք. եթէ ի խոստովանիլն թողանի, ապա ընդԷ՞ր ապաշխարեմք. եւ թէ ապաշխարութիւնն թողու, ապա ընդԷ՞ր խոստովանիմք: Եւ զի՞նչ է ո ասէ. (ասա զմեղս քո՝ արդարացիս.) այսինքն, խոստովանելովդ: (Եւ յորժամ յոգւոց հանիցէք եւ հեծեծէք, ասացից թէ ահաւասիկ եմ.) այսինքն, ի զղջանալ սրտին: Եւ տարակոյս է ապա այս. եւ այսպէս լուծանի: Չի յորժամ զղջանամք ի սրտի եւ դառնամք ի մեղաց, ի նոյն ժամն թողու Աստուած եւ հաշտի ընդ մեղաւորին. որպէս ասէ. (դարձարուք առիս, եւ ես դարձայց առ ձեզ.) այսինքն, զղջմամբն: Չոր օրինակն՝ յորժամ զկափուցեալ աչսն յետ բանամք, իսկոյն տեսանեմք զլոյսն. նոյնպէս յորժամ ի սրտի զղջմամբ եւ դառնամք ի մեղաց, ծագէ Աստուած զլոյս շնորհաց. եւ թողու զմեղս մեր. այլ ի իւր կողմանէն եթող: Այլ յորժամ խոստովանիմք, ի մենջ ի յանձնէ մերմէ սրբեցաւ եւ քաւեցաւ մեղքն. վասն այն յետ զղջմանն խոստովանիլ պարտ է, որ քահանայն ի կապոյ մեղացն արձակէ զմեզ: Եւ յետ խոստովանութեանն ապաշխարեմք. զի այն որ յաւիտենից պարտաւոր էր, զղջմամբն եւ խոստովանութեամբն եղեւ սակաւ եւ ժամանակեայ. եւ յորժամ ապաշխարեմք, այսինքն զոր ինչ քահանայն լուծ դնէ՝ փոխանակ մաղացն

բարի առնեմք, ազատիմք ի պատժոց: Եւ այս է պատճառն. զի գործ մեղացն՝ ի հոգիս մեր է ըստ ունակութեան. եւ յիշումն Աստուծոյ՝ է ըստ արդարութեան. եւ ի տանջանսն յաւիտենից՝ ըստ պատժոյն: Չի երեք իր կայ ի մեղսն. այսինքն, գործն. եւ յիշումն. եւ պատիժն: Գործն ի մեզ է. յիշումն առ Աստուած. եւ պատիժն ի տանվանսն որպէս ասացաք: Այլ արդ՝ յորժամ զղջանամք ի մեղաց, Աստուած թողու զմեղսն. եւ հանէ ի յիշատակութենէ իւրմէ. եւ յորժամ խոստովանիմք, ջնջեմք ի յանձնէ մերմէ. եւ քահանայն արձակէ զկապ ունակութեան մեղացն. եւ յորժամ ապաշխարեմք, ազատիմք ի յաւիտենից տանջանացն: Ապա ուրեմն յայտ է որպիսի թողութեան մեղաց: Եւ սոցա ունիմք օրինակ ի սուրբ գրոց: Ասիրաւ տնտեսն մերձեալ ի մահ, ասեր. (գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ.) զի ժամանակ ապաշխարութեանն անցեալէր եւ մերձեալ ի մահ: Կոչեաց միտքն զերկու պարտականսն. այսինքն, զհոգին եւ զմարմինն. եւ ի հոգեկան մեղացն՝ եթող զկէս պարտուցն. եւ մարմնաւորին՝ եթող ի հնգէն զմի մասն: Չի միտք անըմբռնելի էր եւ դիւրամեղ. եւ զմարմինն կարեմք ըմբռնել. իսկ սոցա զղջացեալ միտքն՝ եթող ի պատժոց մեղացն զկէս պատժոցն, եւ զհինգերորդ մասն: Այս վասն զղջման:* Իսկ վասն խոստովանութեան՝ ունիմք ի Դաւիթէ. յորժամ ասաց մեղայ Տեառն, (Տեր անցոյց զքեւ զմեղս քո. եւ մի մեռցիս ասէ:) Սակայն սուր խղճմտանացն՝ ի տանէ նմա ոչ պակասեցաւ: (Լուացի ասէ զամենայն գիշեր զմահիճս իմ. եւ արտասուօք իմովք զանկողինս իմ թացի:) Եւ վասն այն յետիոտս փոխեալ յԱբիսողոմայ: Արդ՝ տես որ յաւիտեանից պատիժն՝ ժամանակեայ եղել յորժամ խոստովանեցաւ նաթանայ. այսպէս ամենայն մեղաւորաց իմացիր, թէ զղջմամբ եւ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ քաւեն: Բայց տես՝ զի մի եւնոյն գործ ապաշխարութեանն՝ է փոխարեն մեղացն զոր գործեմք, եւ է փառք յաւիտենից. որպէս ասէ սուրբն Եփրեմ վասն Դաւիթի: Չի վասն երեք պատճառի կարգէն զապաշխարութիւն խոստովանորդոյն: Նախ՝ հեռացի ի չարէն պարսպեալ ապաշխարութեամբ: Երկրորդ՝ զի մի կրեսցէ զյաւիտենից պատիժն. զի ժամանակաւ կրեսցէ: Երրորդ՝ զի փառք եւ պսակ է արդարոցն եւ կատարեալ խոստովանողացն: Դարձեալ՝ քաւելոյ զմեղս եւ ապաշխարելոյ օրինակք՝ են այսոքիկ: Չի որպէս սիրելի ոք ունիցի ի սրտէ մեռեալ, եւ առ աղետս վտանգին անփոյթ առնէ զամենայնէ վասն տրտմութեան սիրելոյն. երկրորդ՝ որպէս վերք ինչ սաստիկ ի մարմինս. երրորդ՝ հատեալ մասն ինչ յանդամոցն. որք ոչ դադարին առ այսոսիկ անչափ հեղուլ զարտասուս՝ զնոյն պարտ է կրել եւ ի մեղոցն ապաշխարութիւնս: Իսկ որք յայսոսիկ գան՝ այսինքն յատելութիւն մեղաց եւ ի քաւել, այս գունակ պարտ է լինիլ: Ասել առ դիւրասայթաք եւ վայրաքարշ բնութիւնս: Ի յերկինս հրաւիրեցար եւ ի դարախտն՝ ընդէ՞ր ի դժոխս իջանել ջանաս. եւ զփուշս խոցոտիչս ժողովեալ: Չաչս հանդերձ այլ զգայանօքնդ եւ անդամօքդ ի բարիս իրատեցար շարժել. ընդ է՞ր զոմն յարատ, եւ զայլսն յայլ ինչ վատթարս շարժես: Ասես զղջալ եւ զամենայն բարիս գործել՝ այլ ի խորհուրդս միայն. եւ ոչ խորհրդածես զօր վախճանին (զի իբրեւ զորոգայթ հասանի.) եւ յայնժամ ոչ ձայնս ողբոց՝ (եւ ոչ փրկէ եղբայր. եւ ոչ գինս փրկանաց. եւ ոչ օգնեսցեն ինչք:) Այլ զի՞նչ՝ (լալ աչաց, եւ կրճտել ատամանց:) Զուրն անշէջ. եւ որդն անքուն. այրումն եւ պապակումն. խաւար շօշափելի. եւ տեղի ժահահոտ: Մինչ զի ոչ ոք կարէ տեսանել ի սաստկագոյն

ցաւոցն. այլ միայն զինքն համարիլ ի չարչարանս. եւ ոչ ունիլ սփոփանս եւ օգնականս որպէս ասացաւ: Եւ արդ՝ գիտելով անձն իմ, ընդ Է՞ր հեղդաս. վասն զի կարող ես դիւրաւ գերծանիլ յայսմ ամենայնէ՝ եւ ի բարութեան լինիլ ի ձեռն քաղցր լծոյն եւ փոքր բեռանց զղջման եւ ապաշխարութեան, մինչչեւ ժամանեալ այսոցիկ: Եւ որպէս առ բժշկութիւն մարմնոյ գոն դեղ զօրաւորք եւ ազդուք. այսպէս եւ առ ոգւոց բժշկութիւնս՝ սեր սիրոյ առ Աստուած եւ առ ընկերս. եւ ողորմութիւն առ կարօտեալս. եւ զայլսն նմանապէս: Որում եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս. եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն խոստովանութեան. ի Բանն՝ (Խոստովան լերուք միմեանց զմեղս ձեր. եւ աղօթս արարեք ի վերոյ միմեանց:) Յակօբոս. 5. 16: (Գլուխ. 3Ը)

Նախ գիտելի է զի խոստովանութիւնն է հարկաւոր. որպէս մկրտութիւնն: Չի նախ մկրտութիւնն է, եւ ապա այլ ամենայն խորհուրդ: Նոյնպէս նախ խոստովանութիւնն է, եւ ապա այլք՝ ապաշխարութիւն, պահք, աղօթք եւ այլն: Այլ ասեն վարդապետք եթէ՝ խոստովանութիւնն է, զթաքուցեալ մեղս յայտնել յուսով թողութեան. զի նիւթ խոստովանութեանն՝ մեղքն է. եւ գործն՝ յայտնել բանիւ. եւ վախճանն է յոյս թողութեանն: Այլ երկու է խոստովանութիւնն. մին մտաւոր. եւ այս լինի Աստուծոյ. զի միշտ եւ հանապազ պարտի զմեղս իւր տարածել առաջի Աստուծոյ ի միտս իւր. եւ միւսն՝ բանիւ. եւ զայս պարտ է յայտնել քահանային: Եւ այս վասն տասն պատճառի: Նախզի՝ մարդն հոգի է եւ մարմին. վասն այն պարտ է հոգւով եւ մարմնով կատարելապէս խոստովանիլ. եւ զայն քահանային՝ որ հայր է հոգւոյ՝ եւ մարմնոյ դայեակ: Երկրորդ պատճառ՝ զի նախ քան զմարմնանալն Քրիստոսի՝ միայն մտօք խոստովանէին Աստուծոյ. եւ յորժամ մարդ եղեւ, պարտ է խոստովանիլ մարդոյ՝ որ փոխանորդ է Քրիստոսի. այսինքն, քահանային: Երրորդ՝ զի քահանայիցն ետ իշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ. ցուցանէ թէ՝ լոքա են դատաւորք մեղաց. եւ լոքա պարտ է խոստովանիլ: Չորրորդ՝ զի քահանային է կատարել զեօթն խորհուրդ եկեղեցւոյ. զմկրտելն. զպատարագելն. զպսակելն, եւ զայլն: Նոյնպէս քահանայն դնէ զապաշխարութիւնն որ մի է ի խորհուրդոցն. վասն այն քահանային խոստովանիմք. զի մի է յապաշխարութեանցն եւ առաջին քան զամենայն: Հինգերորդ՝ զի քահանայք է քաւիչ մեղաւորաց. որպէս անունն իւր յայտնէ. զի քահանայն՝ քաւիչ թարգմանի. վասն այն պարտ է քահանային խոստովանիլ: Վեցերորդ՝ զի քահանայն միջնորդ հաշտութեան է Աստուծոյ եւ մարդոյ, եւ բարեխօս. վասն այն քահանային պարտ է խոստովանիլ. զի հաշտեցուցէ զԱստուած ընդ մեղաւորին: Եօթներորդ՝ զի քահանայն թարգման եւ լեզու է Քրիստոսի առ մեղաւորն՝ որով խօսի ընդ մեղաւորին վասն զղջման եւ դարձի նորին. ըստ այնմ, (որ հանէ զպատուականն յանարգէն, բերան իմ կոչեսցի.)

վասն այն քահանային պարտ է խոստովանիլ: Ութներորդ՝ քահանայն աղերսէ զղջումն մեղաւորին առաջի Քրիստոսի. եւ ի նմանէ զշնորհ թողութեանն ի ջուցանէ առ զղջացեալն. զի թողութիւն զղջացելոյն է: Իններորդ՝ զի քահանայն (հրեշտակ Աստուծոյ ամենակալի է եւ օրէնսդիր,

որպես ասե մարգարէն:) Չի գգործ հրեշտակի կատարէ եւ զօրէնս ղնէ. վասն այն նա պահանջէ զպահպանութիւն օրինացն Աստուծոյ: Տասներորդ՝ զի քահանայն քննող եւ դատող է սրբոյն եւ պղծոյն. արարին եւ անարատին. որպէս ասէ օրէնքն եթէ՝ (նոքա ընտերեսցեն զպիծն եւ զսուրբն. եւ ի վերայ դատաստանի արեան՝ նոքա կացցեն:) Եւ յայտ է զի կոչի Տեր՝ այսինքն, դատող եւ պատժող: Վասնն այնորիկ ի տիպ Քրիստոսի նստի քահանայն ի դատողական աթոռն. եւ մեղաւորն ի ծախմէ յօրինակ ձախակողման դատուն. զլիակոր եւ ամօթալից. արտասուալից աչօք եւ հառաչմամբ սրտի խոստովանի որպէս Քրիստոս զիւր յանցանսն. եւ տայ նմա զթողութիւն իշխանութեամբ կարգին. եւ ղնէ զապաշխարութիւնն ըստ քննութեան դատաստանին, եւ ըստ վճիռին ծանր եւ թեթեւ: Յաղագս այսորիկ պարտ է միայն քահանային խոստովանիլ, եւ ոչ այլ ումեք: Եւ թէ ոք ասիցէ՝ զի՞նչ է խորհուրդն որ խոստովանելով քահանային թողութիւն լինի: Ասեմք թէ բազում է: Այլեւ այժմ զսական ասեմք օրինակաւ եւ յայտնի՝ որ հասկանայք դուք: Առաջին խորհուրդն է՝ յորժամ զմեղս գործեմք, եկեղեցւոյ կանոնաց՝ եւ պատւիրանացն Աստուծոյ պարտական լինիմք. յայնժամ պարտ է գալ եւ ասել թէ՝ զո՞ր պատուիրանս է անցեալ. որ գիտէ քահանայն, թէ քանի հետ է անցեալ. եւ զո՞ր մեղս է գործեալ: Նա որ գալ առաջի քահանային, հնազանդի կանոնաց. եւ որ ասէ մեղայ Աստուծոյ, հնազանդի պատւիրանին Աստուծոյ. եւ քահանայն իշխանութեամբ եւ աղօթիւք արձակէ զնա: Չկանոնաց յանցանսն իշխանութեամբ թողու. եւ զպատւիրանացն Աստուծոյ՝ աղօթիւք խնդրէ յԱստուծոյ զթողութիւն նորա եւ ազատէ յերկուց պարտուցն: Այս է առաջին խորհուրդն: Երկրորդ այն է՝ որպէս մարդ ոք որ զիւր զանգատն ասէ, առ մեծ ոք ասէ. եթէ այսպէս զրկեաց եւ վնաս արար ինձ այս անուն մարդ: Նոյնպէս եւ մեք առաջի քահանային՝ զանգատիմք զսատանայէ թէ՝ զայս ինչ արար եւ զայն ինչ մեղս գործել ետ. եւ կոխեալ է եւ հանապազ յաղթէ ինձ. եւ քահանային զզանգատն հանէ. եւ օգնելով զթշնամին յաղթեն: Երրորդ՝ այն է խորհուրդն. որպէս ծածուկ գող մտեալ ի տունն, եւ յաղաղակելն փախչի ի տանէն, նոյնպէս մեղքն եւ սատանայ՝ գող են մտեալ ի հոգին. յորժամ խոստովանութեամբ յայտնեմք եւ աղաղակեմք առաջի քահանային, եւ քահանայն օգնական լինի եւ խրատ տայ. եւ ապա դադարիմք ի մեղաց. Չորրորդ՝ զդաշն սատանայի քակէ. զի մարդ որ դաշնակից է մարդոյ՝ զծածուկ խորհուրդ նորա պահէ. նոյնպէս եւ մեղաւորն ի մեղս՝ դաշնակից է սատանայի. եւ յորժամ խոստովանի եւ յայտնէ զծածուկն նորա եւ խայտառակի, յայնժամ հեռանայ սատանայ. եւ ոչ տայ այլ գործել զմեղս. զի սիրելին թշնամի եղեւ: Դիւզերորդ՝ այն է խորհուրդն. որպէս կենդանի ինչ՝ որ ի բերան զազանի անկանի, եթէ ձայնիւ աղաղակէ, զան մարդիկ եւ թափեն ի գազանէն: Նոյնպէս մարդն ի մեղս անկեալ՝ ծածուկ ի բերանն սատանայի է մատնեալ. ըստ այնմ, (ոսոխն ձեր սատանայ իբրեւ զամիւծ գոչէ. շրջի եւ խնդրէ թէ, զո կլանիցէ:) Եւ յորժամ խոստովանի եւ յայտնէ զմեղս, զերծաւ ի բերանոյ սատանայի. եւ յորովայնն ոչ երթայ որ է դժոխքն: Չի ի գործելն զմեղս՝ ի բերանն է սատանայի. եւ յետոյ գժոխքն է տեղի: Վեցերորդ զոր օրինակ՝ հուրն որ ի ձեռն կամ ի գոգն լինի, այրէ զմարդ. եւ յորժամ ձգէ, այլ ոչ այրի. նոյնպէս մեղքն հուր է հոգւոյն. եւ որքան ունի՝ այրի հոգին. եւ ի բաց ձգելն՝ հանգչի. որպէս ասէ Սողոմօն. (ծրարիցէ՞ մարդ ի հանդերձս իւր հուր եւ ոչ այրի. կամ զնայցէ՞ ի վարայ կայծականց եւ

ոչ խոցոտի:) Եօթներորդ գործրինակ՝ խոց ծածկեալ՝ ոչ բժշկի. այլ յորժամ ցուցանեմք, դեղ դնէ հեքիմն եւ ողջանայ: Ի յայն միտս՝ զմեղսն որ խոց է եւ վեր հոգւոյն, յայտնեմք քահանային. եւ նա տայ զթողութիւն մեղացն եւ զապաշխարութիւնն՝ որ զսպիս մեղացն ջնջէ. եւ առողջանայ հոգին: Ութներորդ այն է խոր հուրդն՝ զոր օրինակ՝ մարդ ի խոր գուբ ակեալ. եւ յորժամ աղաղակէ ի վեր, գան եւ հանեն աստի: Նոյնպէս մեղաւորն ի խորխորատ եւ ի մեղաց գուբն է անկեալ. եւ յորժամ աղաղակէ, քահանայն ձեռն տայ եւ հանէ անտի: Չի նախ աղաղակելն՝ խոստովանիլն է. զձեռն ձգէ ի քահանայն թողութիւն խնդրելով, յայնժամ քահանայն թողու զմեղսն. եւ հանէ զնա ի գբոյն: Իններորդ այն է՝ որ զգղջումն սրտին յայտնեմք խոստովանելով, թէ ատելի է ինձ մեղքն. եւ փոշիման եմ. եւ ճար խնդրեմ զերծանելոյ. զի որքան ոչ խոստովանիմք. ընդ մեղացն սեր ունիմք: Ապա յայնժամ քահանայն հրամանաւն Աստուծոյ եւ իշխանութեամբն իւրով՝ հեռացուցանէ զմեղսն որ ատելի էր. եւ տայ զապաշխարութիւնն որ սիրելի է նմա: Տասներորդ այն է խորհուրդն՝ զի մեղքն երեք են. մտօք, բանիւ, եւ գործով: Եւ այսպէս կորուսանեմք զնոսա. զմտաց մեղսն զղջմամբն: Եւ զգործոց մեղսն՝ բարի գործովն: Իսկ զբանից մեղսն՝ բանիւ խոստովանութեան: (Չի ի բանից քոց արդարացիս, եւ իբանից քոց պարտաւորեցիս:) Չի այնպիսի է բանս մեր՝ որ երբեմն պարտաւորէ, յորժամ սուտ խօսիմք, հայհոյեմք, ուրախանամք, եւ այլն: Նոյնպէս արդարացուցանէ՝ յորժամ աղօթս առնեմք, զԱստուած դաւանեմք, զմեղսն խոստովանիմք, մարդկան բարխօսեմք, եւ այլն: Եւ թէ զի՞նչ է օգուտ խոստովանութեանն՝ ասեմք թէ բազում ինչ: Առաջին՝ զի ընդդէմ է ատենի աշխարհիս. զի որ յատենի աշխարհականի խոստովանի, դատապարտի. որպէս աքար զարմեան յորժամ խոստովանեցաւ՝ դատապարտեցաւ: Իսկ ի հոգեւոր ատենի՝ որ ոք խոստովանի զմեղս, ազատի. եւ որ ոչ խոստովանի, դատապարտի: Եւ որ աստ յայտնէ զմեղս, առաջի ատենին Քրիստոսի ծածկեցի. եւ որ աստ ի մին քահանայէն ծածկէ, անդ առաջի Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան յայտնեցի: Առաջին այս է օգտութիւն եւ շահ խոստովանութեան: Երկրորդ՝ զվերս հոգւոյն բժշկէ. որպէս խոցուած մարմնոյն ի մահն տանի. նոյնպէս եւ մեղքն՝ հոգւոյն եւ մտացն է խոց, որ տանի ի յաւիտենից մահն: Եւ որպէս մլիհամ եւ դեղ զխոցն բժշկէ. նոյնպէս խոստովանութիւնն բառնայ զմեղս, եւ զհոգին բղշկէ. ըստ այնմ, (ո քաւէ զմեղս քո. եւ բժշկէ զամենայն հիւանդութիւնս.) նոյնպէս զմիտսն ի ցաւոց բժշկէ. եւ թերեւացուցանէ զծանրութիւնն: Երրորդ՝ խոստովանութիւնն ջնջէ զմեղս. որպէս ջուրն լուանայ զաղտ մարմնոյն. նոյնպէս խոստովանիլն եւ արտասուելն՝ լուանայ զհոգին եւ թողու զմեղս. ըստ այնմ, (ասացի թէ պատմեցից ինձնէն զմեղս իմ. եւ դու թողցես զամենայն անպարշտութիւնս մեղաց իմոց:) Չորրորդ՝ խոստովանութիւնն զԱստուած յայտնէ մարդոյն. զի յորժամ ոչ խոստովանիմք, Աստուած հեռու է ի մէնջ եւ ծածուկ. (զի մեղքն մեր՝ որոշեն ի մէջ մեր եւ Աստուած:) Եւ ի խոստովանիլն՝ լուծանի մեղքն. եւ մերձ կենայ Աստուած եւ յայտնի մեզ: Որպէս ասեն վարդապետք թէ, յորժամ ոչ խոստովանիմ, ոչ ծածկեմ զիս իքէն, այլ զքեզ յինէն Տէր: Հինգերորդ՝ զարքայութիւնն բանայ. զի փակեալ է դուռն արքայութեանն ընդդէմ մեղաւորին. որպէս յիմար կուսանացն. այլ յորժամ բանայ զբերանն եւ խոստովանի, բանի նմա դուռն արքայութեանն եւ մտանէ. որպէս աւազակն

աշակողմեան յորժամ եբաց զբերանն առ Քրիստոս եւ խոստովանեցաւ թէ՛ (յիշեա զիս Տեր յարքայութեան քում,) ի նոյն ժամն պատասխանեաց նմա. (այսօր ընդիս իցես ի դրախտին:) Վեցերորդ՝ զի բարեխօս բազմացուցանէ. զի որքան ի մեղս եմք, ոչ իշխեմք խօսիլ ընդ Աստուծոյ. եւ ի խոստովանիլն՝ քահանայն ի մէջ մտանէ եւ բարխօսէ վասն մեր: Յայնժամ ապա մեր իշխեմք բարիս խօսիլ վասն մեր եւ աղաչել զԱստուած: Եւ դարձեալ՝ այն որ միայն մեր աղօթեաք. յորժամ խոստովանիմք, խոստովանահարքն վասն խոստովանորդոցն բարեխօսեն. եւ ամենայն քահանայք վասն խոստովանողացն բարեխօսեն. եւ լսէ Աստուած աղօթից նոցա. որպէս ասէ Յակօբոս. (յոյժ գօրաւորք են աղօթք արդարոց յօգնականութիւն:) Եօթներորդ՝ զողորմութիւնն Աստուծոյ կակղացուցանէ ի վերայ մարդոյն. զի որքան առանց խոստովանութեան է մարդն, բարկութեամբ է Աստուած ի վերայ մեղաւորին: Եւ յոյժամ խոստովանի, քաղցրանայ Աստուած եւ թողու. որպէս ասէ սաղմոսն. (զմեղս իմ ցուցից քեզ. եւ զանօրէնութիւնս իմ ոչ ծածկրեցից ի քէն.) այսինքն, մեր զմեղսն ցուցանեմք. եւ Աստուած թողու: Ութներորդ՝ օգուտ է. զի զպակասութիւն փոխարինացն լնու. զի ասեն վարդապետք թէ՛ խոստովանութիւնն ունի զղջումն եւ զյայտնելն եւ զհատուցումն: Չի մեղացն զղջումն է. եւ յիշելն զմեղս խոստովանիլ. եւ ամօթն եւ արտասուքն՝ տանջանք եւ պատիժ: Չի որքան ամօթն առաւել է, մեղքն առաւել սրբի. վասն այն յորժամ բոլոր զղջմամբ եւ ուղիղ խոստովանիմք զմեղս ի նոյն օրն հաղորդիմք արժանաւոր խորհրդոյն: Իններորդ օգուտն. զգուաշանայ ի չարէն. զորօրինակ՝ որք զփտեալ ատամն հանեն զի մի այլքն ապականեցին. նոյնպէս խոստովանիմք զմեղս միոյ մասին անդամոց. զի մի զայլսն ապականեցէ չարութեամբն իւրով. ըստ այնմ, (ո՞ փրկէ յապականութենէ զկեանս քո:) Տասներորդ օգուտն. զհոգին ցնծութեամբ լնու. եւ զխիղճ մտացն թեթեւացուցանէ. որպէս ասէ Դաւիթ. (ի ձայն ցնծութեան խոստովան եղեց քեզ:) Եւ որպէս զծանօ բեռն են մեղքն. ըստ այնմ. (անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. եւ որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ:) Յորժամ խոստովանիմք, թեթեւանայ խղճմտանքն. եւ հանգչիմք ի չարչարանաց նորա. որ առաւել չարչարէ զհոգին ի ներքուստ, զբազում տանջանս յարտաքուստ: Եւ թէ ոք ասիցէ՛ զի՞նչ է զօրութիւնն խոստովանութեան: Ասեմք եթէ՛ բազում է զօրութիւնն. զոր ցուցցուք ի սուրբ գրոց: Նախ՝ Աստուած օրէնս ետ Մովսիսի թէ՛ յորժամ զգողն ըմբռնեն, միոյն հինգ տուժեցցեն: Այլ թէ զղջայ եւ խոստովանի քահանային, զգողունսն միայն վճարէ ի տերն կամ ի քահանայն. եւ զի հնգէն մին մասն տուգանս հինգ զգայութեանն. եւ խոյ մի պատարագ Աստուծոյ եւ ազատի: Ահա յայտ է՝ որ զմիոյ հինգ տուգանսն ի հիգէն ի մինն եբեր: Եւ վասն այն տային ի քահանայն՝ որ միջնորդ է կենդանեաց եւ մեռելոց. զի վճարէ ի Տերն եւ հաշտեցցին: Եւ մեզ նոյնպէս զգողունսն ի Տերն պարտ է վճարել. եւ կամ յազգականս նորա, կամ ի քահանայն, կամ յաղքատս: Եւ փոխանակ խոյին՝ այս է, ապաշխարութիւն դնել. պահս՝ աղօթս՝ եւ ողորմութիւն. որք զհոգի եւ զմարմին պատարագեն Աստուծոյ: Երկրորդ այն է զօրութիւնն՝ յորժամ պատարագ բերէին ի դուռն խորանին, խոյ՝ գառն՝ կամ այն ինչ, դներ զձեռն ի վերայ գլխոյն. իբր թէ զիմ մեղս ի սա տամ. յայնժամ զենուիսն եւ ազատեր ի մեղաց: Արդ՝ գառն անարատ եւ խոյ եւ այլ պատարագ՝ Քրիստոս է. որ անմեղն վասն մեր մեռաւ. եւ մեր գամք առաջի

քահանային. Եւ խոստովանելով զմեղս մեր, տամք ի Քրիստոս. եւ քահանայն զձեռն ղնելով՝ ազատիմք ի մեղաց: Երրորդ՝ ի սրբութիւն բորոտին. որ եօթն օր արտաքոյ բանակին կենայր. հանդերձն լուծեալ. եւ բերանն կապեալ. եւ զգլուխն՝ խոստովանէ. եւ ապա պատարագաւ մտաներ ի բանակն: Բորն՝ նշանակէ զմեղսն, որով պղծի եւ գարշելի լինի. եւ եօթն օրն՝ Է ժամանակ ապաշխարհողին վասն Է զգայութեան մեղացն: Արտաքոյ բանակին այն Է՝ որ մեղօք ելանեմք յեկեղեցոյ, որպէս Ադամ ի դրախտէն: Բերանն կապեալ՝ զի անպատասխանի Է. եւ պատառեալ հանդերձն՝ զի պատառեցաւ ի շնորհացն. եւ գլուխն զերծեալ՝ զի յստակ եւ պարզ խոստովանեցի զմեղս. եւ ապա մոցէ յեկեղեցին: Այսպէս զօրաւոր Է խոստովանութիւնն: Եւ գիտելի Է՝ զի ապաշխարութիւն մեղաւորին՝ ընդունելի Է Աստուծոյ առաւել քան զհպարտացեալ արդարոց՝ որոք միայն զձեւ արդարութեան ունին: Որպէս դպիրքն եւ փորհսեցինք՝ յաչս անձանց իւրեանց արդար երեւեին, եւ չէին արդարք. զղջացեալն ի մեղաց՝ լաւ Է քան զնոսա: Եւ այս յայտ Է յերկուց: Նախ՝ ի տերունական առակէն. ի մոլորեալ մոլորեալ ոչխարէն. եւ ի կորուսեալ գրամէն. որ կոչեաց զբարեկամս երկնաւոր դասուցն. եւ ուրախացան առ հասարակ: Առ որ ասաց Տէրն. (այսպէս ուրախութիւն Է յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ, քան ի վերայ իննսուն եւ ինն արդարոցն՝ որոց չէ պիտոյ ապաշխարութիւն: Դարձեալ՝ յայտ Է ի պոռնիկ կնոջէն. (որ եհեղ զիւղն ի գլուխն Քրիստոսի. եւ համբուրեր զոտսն. եւ արտասուօքն թանայր.) վասն որոյ ընկալաւ զթողութիւն մեղաց. իսկ զփարհսեցիսն նախատեաց՝ որք երեւեին արդարք. եւ ոչ այնպէս զղջացան: Վասն որոյ ասաց Տէրն. (մտի ի տուն քո՝ համբոյր մի ոչ ետուր ինձ. եւ ջրով ոչ լուացեր զոտս. եւ ոչ իւղով օծեր:) Վասն որոյ ասէ յերգսն Սողոմօն. (լաւ Է իւղ անուշահոտ, քան զամենայն խունկս.) այսինքն, հոտ ապաշխարութեան ընդունելի Է Աստուծոյ, քան զամենայն արդարս հպարտացեալս, որք ոչ ապաշխարեն: Եւ գիտելի՝ զի պոռնիկ կինն՝ զերեք մասունս ապաշխարութեան լիով եցոյց. այսինքն, զզղջումնն, եւ զխոստովանութիւնն. եւ զապաշխարութեան փոխարէնսն. զի զղջացեալ սիրտն՝ կսկծի եւ ելանէ ծուխն՝ ի գագաթն, եւ լինի արտասուք: Եւ խոստովանութիւնն յայտ Է՝ որ համբուրեր շրթամբք զոտսն Յիսուսի: Խոնարհիլ գլխոյն առ ոտն, ցուցաներ զանձն իւր պարտաւոր: Եւ հատուցումն ապաշխարութեան, եր իւղն զոր եհեղ ի գլուխն Քրիստոսի. վասն որոյ ընկալաւ կատարելապէս զթողութիւն մեղաց: Եւ զի՞նչ Է ասելն թէ՛ (տունն լի եղեւ ի հոտոյ իւղոյն.) այսինքն, նախ զայն նշանակէ՝ յորժամ մերձեցաւ իւղն յօծեալ գլուխն Տեառն, առաւելացաւ հոտն. որպէս խունկն որ մերձի ի հուրն. եւ երկրորդ՝ տունն՝ ի յօրինակ տիեզերաց, յոր ել համբաւ նորա ընդ բոլոր կողմն աշխարհիս: Իսկ առ ի մեզ զայն ցուցանէ, յորժամ զղջանամք եւ ապաշխարեմք զմեղս, հոտ անուշից՝ լնու զերկինս եւ զերկիր. եւ հաճոյութիւն Է Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան որպէս ասացաք: Որում եւ զմեզ արժանաւորեցէ Քրիստոս Աստուած. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

ազահութեանն՝ թողու զառաւօտու պաշտօնն. եւ ընթանայ ի վաստակս մարմնոյ: Եւ թողեալ զպատարագն՝ ընթանայ ի վաճառս. եւ թողեալ զերեկոյեան աղօթքս, ընթանայ ի նախիրս անասունս, եւ յայլ ընչից ժողովումն. ահա որ կռապաշտ եղեւ գործով: Երկրորդ՝ ազահութիւնն լինի

բազում չարեաց պատճառ որպես ասացաւ. զի վասն ազահութեան զրկեմք եւ յափշտակեմք. սուտ ասեմք. սուտ երդնումք. նախանձիմք. թշնամանեմք հայիոյութեամբ. անիծանեմք. պատերազմիմք. հակառակիմք. հարկանեմք եւ սպանեմք. եւ այս ամենայն չարիքս եւ խռովութիւնքս՝ թալան, գերութիւն, ւերումն երկրի, վասն ազահութեան լինի ի բռնաւորաց: Երրորդ՝ վասն ազահութեան եւ փառաց՝ անկաւ մարդն Ադամ ի դրախտէն կենաց. զի որ շատացաւ ամենայն պտղով դրախտին. կամեցաւ ազահութեամբ եւ զմինն այլ ուտել. եւ կինն ազահացաւ փառացն Աստուծոյ, թէ տիրեմ ի վրայ մարրդոյն, եւ Աստուած որդիս ծնանիմ. եւ յառաջ եկեր ի պտղոցն: Վասն ազահութեանն անկան եւ յայն փառացն զոր ունէին. մերկացան ի լուսոյն. եւ անկան ի ցաւալից եւ ի փշաբեր երկիրս. ընդ անիծից եւ ընդ մահու գրաւեցան. մինչեւ մտին մարմնով ի գերեզման, եւ հոգւով ի դժոխս. այսպէս ամենայնի ազահութիւն՝ դատապարտէ զմարդ հոգւով եւ մարմնով: Զորրորդ՝ կային որ սպան զԱբել՝ Եր վասն ազահութեան փառացն. որ զնոսա պատարագն ոչ ընդունէր Աստուած. եւ կամ որպէս ասեն՝ վասն կնոջն սպան զԱբել, եւ զրկեաց զկինն. եւ կամ վասն ազահութեան՝ զի միայն ինքն լիցի որդի եւ ժառանգ հօրն Ադամայ. եւ տիրեսցէ ամենայն երկրի: Եւ տես թէ ինչ հատուցանւ նմա յԱստուծոյ. փոխանակ պատարագին օրհնութեան՝ զանէծս ընկալաւ յԱստուծոյ. եւ փոխանակ տիրելոյն երկրի, զեդդողոջումն եւ զերերումն ընկալաւ. եւ փախեաւ ի մարդկանէ՝ եւ ընեդ անասունս շրջեր. եւ փոխանակ կնոջն եւ զաւակացն՝ ջնջեցան եւ կործանեցան զաւակք նորա եւ թոռունք յերկրէ հեղեղաւ ջրոյն. այսպէս չար է ազահութիւնն: Զինգերորդ՝ վասն ազահութեան եւ որկորստութեան ջուրն հեղեղի. եւ կորոյս յերկրէ զամենայն մարդ եւ զկենդանի. ըստ որում հրամայէ Տէրն. (ուտէին ըմպէին.) առանց հրամանի ուտէին զմիս զգինի. եւ յաճախէին ի գործ պոռնկութեան. եւ հարիւր քսան ամեդ Աստուծոյ ժամանակս դարձի. յորամ ամ ոչ դարձան, այլ փութացան յառաւել չարիս, վասն այն Աստուած կարճեաց զքսան ամենայնն. եւ փութացաւ եբեր զջրհեղեղն եւ կորոյս զամենայն. միայն ապրեցաւ Նոյ ի տապանին եւ սերմն կերնդանեացն որ ընդ նմա. զի սուրբ կացին յազահութեան ախտէ եւ ի պոռնկութենէ. այսպէս եւ ամենայն ազահ եւ չար՝ կամ մարմնով պատժի աստ, կամ հոգւով ի հանդերձեալն: Վեցերորդ՝ յորժամ յեսու որդին նաւեայ նգովեաց գերիքով, զի մի ոք առցէ յընչից եւ յանիծից նորա. եւ աքար զարմեան ազահեաց եւ արհամարհեաց զանէծսն եւ գողացաւ յընչիցն, եւ ոչ զղջացաւ ի ձգելն վիճակաց, եւ յորժամ յայտնեցան գողունքն, զինքն եւ զկանայս եւ զորդիս եւ զստացուածս նորա հրամայեաց Յեսու՝ եւ տարան քարկոծեցին. եւ կուտեցին բլուր ի վերայ նորա. եւ յիրաւի՝ զի վասն անիծիցն քարկոծեցաւ. եւ վասն ազահութեանն բլուրն հողոյն ի վերայ դիգեցաւ. զի այնու շատացի եւ լնանիցի ազահութիւն նորա. որպէս ասեն յառակս թէ՝ ազահն մինն ափ հողովն լցուի՝ որ ծածկեն զաչսն նորա ի գերեզմանս: Իսկ կին եւ զաւակսն նորա գերեզմանս: Իսկ կին եւ զաւակքն վասն Է՞ր քարկոծեցան. եւ այս յիրաւի. զի նոքա գիտէին զազահութիւնն եւ ծածկեցին զգողունսն եւ ոչ խոստովանեցան. վասն այն ընդ Աքարայ եւ նոքա պատժեցան: Իսկ ինչք եւ անասունքն վասն Ս պատճառի քարկոծեցան: Մին՝ որ տեսնու ամենայն ժողովուրդն, թէ այնչափ ինչ ունէր. եւ ոչ վասն աղքատութեան՝ այլ վասն ազահութեան գողացաւ. եւ մին՝ զի որ յանիծիցն եւ ի զրկանացն եմուտ՝ ի

տուն՝ զամենայն ինչս նորա պղծեաց. վասն այն զպիղծ ինչս նորա՝ ընդ նմակորոյս: Այսպէս ամենայն ագահաց զրկանքն եւ յափշտակութիւնն՝ կործանեն զտուն եւ զտանուտերն. կամ աստ մարմնով, կամ ի հանդերձեալն հոգւով: Եօթներորդ՝ հարամայեաց Աստուած Սաւուղ թագաւորին գնալ Յամաղէկ. եւ վրեժ խնդրել ժողովրդեանն Աստուծոյ. որք ի յելս Եգիպտոսի պատերազմեցան. եւ ասէ՝ մի առցես յընչից եւ յաւարէ նորա եւ ի գերոյ. այլ զամենայն կոտորեցես սրով. եւ զթագաւորն նորա Ագագ սպանցես. եւ գնաց Սաւուղ եւ յաղթեաց նոցա. եւ վասն ագահութեան՝ գերի եւ աւար էառ զամենայն. եւ զթագաւորն ձեռքակալ էած կենդանի. յորժամ գնաց Սամուէլ մարգարէն՝ եւ ասաց ցնա. ընդէ՞ր վասն ագահութեան քոյ զիրամանն Աստուծոյ անարգեցեր. վասն որոյ եբա՞ծ Աստուած զթագաւորութիւն քո. եւ ետ ընկերի քում լաւագունի քան զքեզ՝ որ առնէ զկամս նորա: Նոյնպէս եւ Աքայաբ եւ Եղաբէլ վասն ագահութեան՝ յափշտակեցին զայգին Նաբովթայ արդարոյ, եւ զինքն սպանին, վասն որոյ ի ձեռն Եղիայի ասաց Աստուած նմա. փոխանակ զի զրկեցիք զայգի արդարոյն, եւ սպանիք զնա, շունք կերիցեն զմարմինս ձեր. եւ խազք լուսցին յարենէ ձերմէ. եւ եօթանասուն որդիք քո սրով սատակեցին. որպէս եղեն իսկ ի ձեռն Յեուայ, որ թագաւորեացտ եւ սպան զԵզաբէլ, եւ զեօթանասուն որդիսն առ հասարակ: Այսպէս է պատիժ ագահաց եւ զրկողոց զինչս այլոց: Ութներորդ՝ Նեեման բորորտն յորժամ եկն ի Դամասկոսէ առ Եղիսէէ մարգարէն, եւ մկրտեցաւ ի Յորդանան եւ սրբեցաւ ի ցաւոյն, դարձաւ առ մարգարէն եւ ասէ. առ ինչս ի բեռանց ոսկւոյ եւ արծաթոյ զոր բերի քեզ. վասն զի բժշկեցեր զիս. եւ մարգարէն ոչ էառ ի նմանէ, եւ ոչ մի դանկ. ասէ՝ անունն Աստուծոյ զքեզ բժշկեաց ձրի. ոչ առնում ի քէն ինչ: Եւ ապա Գեեզի աշակերտ նորա՝ ագահացեալ գնաց զկնի Նեեմանայ. եւ էառ տաղանդս արծաթոյ եւ հանդերձս. եւ բերին ծառայքն ի դուռն մարգարէին. եւ խաբէութեամբ դարձոյց զնոսա յետս. յայնժամ ասէ ուստի՞ զաս Գեեզի. եւ նա պատճառեաց եւ ասէ. ոչ ուստէք. եւ զայն վասն այն եհարց՝ մի թէ զղջացի. եւ յորժամ ոչ զղջացաւ, ասէ՝ ո՞չ ընդ քեզ էր հոգի իմ յորժամ գնացեր առ Նեեման եւ խաբեցեր եւ առեր զարծաթն եւ բերեր. արդ բորոտութիւն նորա ի քեզ դարձցի յազգաց յազգս. եւ բորորտեցաւ Գեեզի. եւ ոչ սրբեցաւ յազգէ նորա բորոտութիւնն: Իններորդ՝ ի նորս Անանիա եւ Սափիրա որք խորեցի ի գնոց գեղջն՝ եւ ոչ յայլմէ գողացան, այլ զիրեանց արծաթն վասն ագահութեան՝ զրկեցին ի հասարակաց աղքատացն. վասն այն բարկացաւ առաքեալն Պետրոս՝ եւ պատժեաց զնոսա եւ մեռան երկոքին: Եւ պատուհասեաց զնոսա մարմնով. զի մի պատժեցին հոգւով. այսպէս ագահաց պատուպաս գոյ ի դատաստանէն Աստուծոյ. եթէ մարմնով, եւ եթէ հոգւով: Տասներորդ՝ եւս յայտնի է ի Յուդայէ. որ վասն ագահութեան մատնեաց զփրկիչն աշխարհի եւ խաչել ետ: Եւ տես զմեծ վնաս նորա: Նախզի՝ աշակերտ էր՝ զվարդապետն իւր մատնեաց, եւ ոչ զօտար ոք: Երկրորդ՝ զի տեսեալ էր զամենայն սքանչելիսն Քրիստոսի. եւ լւեալ զքարոզութիւն աւետարանին: Երրորդ՝ զի յընտրելոց կարգէն էր յերկոտասանիցն. ոչ յետին ոք կամ անպատիւ: Չորրորդ՝ զի զարկղն արծաթոյ ինքն ունէր եւ պահէր. եւ ոչ էր կարօտտ կամ աղքատ: Հինգերորդ՝ զի բազում անգամ զգուշացուցեալ էր զնա, թէ (վայ մարդոյն յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն. որդի մարդոյ երթայ. եւ լաւ էր թէ չէրձ ծնեալ մարդն այն.) եւ թէ՛ (մի ոմն ի ձեռն մատնելոց է զիս.)

Եւ թէ՛ (համբուրելով մատնես զորդի մարդոյ.) այլ սեր արծաթոյն՝ կուրացուցեալէր զնա: Վեցերորդ՝ զի զանմեղն մատնեաց՝ որ չէր ինչ մեղապարտ մահու. ոչ առ նա, եւ ոչ այլս: Եւ այսպէս վասն այսքան պատճառացս՝ մեղքն Յուդայի ծանրագոյն է եւ անթողի. եւ զայս պատճառեաց ագահութիւնն. զի զանմեղն եւ զբարերարն եւ զվարդապետն եւ զարարիչն երկնի եւ երկրի՝ վաճառեաց դիւրագոյն ընդ երեսուն արծաթոյ: Դարձեալ՝ մեղքն Յուդայի եւ Պետրոսի՝ հաւասար էին գայթակղութիւն. ըստ այնմ որք ուրացան զնա: Այլ Յուդա զի կամաւ եւ վասն ագահութեանն ուրացաւ. եւ յուսահատեցաւ ի փրկչէն. եւ չոգաւ խեղդեցաւ. ահա առաւել ագահութիւնն՝ տարաւ զնա ի յուսահատութիւն. եւ յուսահատութիւնն տրաւ ի խեղդ եւ ի մահ՝ որ մարմնով եւ հոգևով կորեաւ: Իսկ Պետրոս ակամայ ուրացաւ եւ պատահմամբ. եւ յոյսն հաստատ էր ի Տէր. ելաց դառնապէս եւ ապաշխարեաց. եւ այնու զփրկութիւն գտաւ հոգւոյ եւ մարմնոյ: Եւ յիրաւի խեղդեցաւ Յուդա. զի որ խեղդ էր ագահութեան չուանովն՝ խեղդեցաւ մահու չուանով: Եւ ոչ օգտեցաւ նա յարծաթոյն. ոչ ի կեանս, եւ ոչ ի մահ: Այլեւ խեղդեցաւ՝ զի մի լիցի մահ նորա որպէս զամենայն մարդկան ի վերայ երկրի. այլ կախեալ ի յօդս՝ ընդ դիւացն տանջեսցի: Եւ ապականեալ ուղեղ գլխոյն՝ ոչ ել ընդ բերանն. զի բերանն նորա ոչ ապականեցաւ որ համբուրեաց զՔրիստոս. այլ էջ ի սիրտն ապականեալ, ուր զագահութիւն խորհեցաւ. եւ զմատնելն Քրիստոսի մտաբերեաց: Վասն ատեն ուղեղ գլխոյն եւ սիրտն ի միասին ապականեցան. եւ թափեցաւ փոր նորա յերկիր. եւ զագիր հոտով ելից զօդս. զի եւ խաչօղն որք հեշտացան ի մատնութիւն բանից նորա, զարշեցան եւ դժուարացան ի հոտոյ նորա: Եւ այսպէս դառն եւ դաժան է ագահութիւն եւ կորուսիչ հոգւոյ եւ մարմնոյ. որպէս փոքր ի շատ ցուցաւ ի սուրբ գրոց: Այլ ինքն մարդասերն Աստուած եւ երկայնամիտ՝ իւրական սիրով ներեսցէ յանցանաց ձերոց. եւ հանցէ ի ձեռք զսիրտ քարեղէն, եւ տացէ ձեզ սիրտի մարմնեղէն. եւ զհոգի ուղիղ նորագեսցէ ի ձեզ. ծածկեսցէ զաչս սրտից ձերոց ընդդէմ ագահութեանց աշխարհի. եւ բացցէ եւ լուսաւորեսցէ ի սեր երկնաւոր կենացն եւ անտի մեծութեան: Եւ ընդ սրբոյ երջանիկ՝ զխաւոր առաքելոյն Պետրոսի՝ տացէ ձեզ զղջումն՝ ապաշխարութիւն գործեցեալ մեղացն.՝ յետ աստի կենացս՝ ի յարութեան աւուրն մեծի, տեսութեան իւրոյ, անճառ գթութեան,՝ երկնից արքայութեան՝ արժանի արասցէ զձեզ Քրիստոս Յիսուս Տէր մեր. Որում փառք՝ պատիւ՝ իշխանութիւն ընդ Զօր Իւրում՝ Սուրբ Զոգւոյն, յաւիտեանս ամէն:

Լ հասակաւ կամ ժամանակաւ. այլ նախապատիւն եւ առաջին է այրն. եւ երկրորդ եւ կրտսեր կինն. զի յառաջին ժամն ստեղծաւ Ադամ. եւ յերկրորդն կինն: Վասն այն յօրինաւոր պսակին՝ պարտ է զի լիցի հարսնն կրտսեր քան զվեսայն: Երկրորդ՝ զի թէ ի հողոյ էր ստեղծեալ, լինէին այր եւ կինն օտար եւ անգութ առ միմեանս. այլ ի մարմնոյն Ադամայ՝ զի սիրեսցէ այր զկին իւր որպէս զիւր մարմին. եւ ցաւակից լիցին միմեանց: Երրորդ՝ զի թէ երկուքն ի հողոյ էին, լինէին աննմանք եւ այլատեսակք. որպէս եզն եւ ձին են ի մի հողոյ եւ այլ բնութիւնք: Ապա եւ մանուկն ի նոցանէ լինէր այլատեսակ եւ աննման ծնողն: Չորրորդ՝ զի թէ ի հողոյ էր կինն, պիտոյ էր նմա այլ եւս որիչ փչումն եւ շունչ կենդանութեան. եւ այլ օրինութիւն եւ հրաման որպէս Ադամայ: Վասն այն ի յԱդա ստեղծաւ՝ զի զօրութեամբ ընդ Ադամայ ընկալաւ զօրինութիւնն եւ զփչումն շնորհաց եւ զայլս: Որպէս

առաքեալն Թօմայ՝ էառ ընդ այլ առաքեալսն զփչումն հոգւոյն, թեպէտ չէր ընդ նոսա, ի վերնատանն: Յինգերորդ՝ զի թէ կինն եւս ի հողոյ էր ստեղծեալ, յայնժամ սկիզբն մարդկան ազգի ոչ լինէր մինն. այլ երկուքն: Այլ այսու եւս նման է մարդն արարչին. զի որպէս Աստուած միայն սկիզբն է բոլոր աշխարհի. նոյնպէս եւ առաջին մարդն՝ միայն էր սկիզբն բոլոր տեսակին: Եւ դարձեալ՝ որպէս հայր Աստուած սկիզբն է որդւոյ ծննդեան եւ հոգւոյ բղխման. նոյնպէս եւ Ադամ սկիզբն է Սեթայ եւ Եւայի. միոյն ծննդեամբ. եւ միւսոյն բղխմամբ. այլ այս օրինակ, եւ նա ճշմարտութիւն. եւ հեռի է օրինակն. եւ իրօք ինչ նմանի: Վեցերորդ ըստ խորհրդոյ. զի որպէս Եւայի սկիզբն է Ադամ. նոյնպէս եւ եկեղեցի սուրբ՝ սկսաւ ի Քրիստոսէ. եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ. որպէս ասէ առաքեալն. (խորհուրդս այս մեծ է. բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի:) Յաղագս ասացեալ պատճառացս՝ ոչ յօտար հողոյ ստեղծեաց զկինն. այլ ի կողէն, Ադամայ: Իսկ թէ վասն Է՞ր ի կողէն եւ ոչ յայլ ինչ մասնէ: Նախզի՝ հնազանդ լիցի Ադամայ եւ լում: Երկրորդ՝ ի կողէն էառ՝ զի մի տկար ոք իցէ. այլ զօրեղ. զի կողեղ եւ հաստակող կոչեմք զմբիշս: Երրորդ՝ զի շարժումն ցանկութեան ի կողից է. որպէս աման է երկկամացն եւ տեղի որ ի կողիցն զօրանայ. նոյնպէս եւ ցանկութեան առն տեղն կինն է. եւ բեղնաւորէ եւ սնուցանէ զսաղմն: Չորրորդ՝ զի կողն է միջասահման վայր. ցուցանէ զպատիւ կանանց ոչ հաւասարիլ գլխոյն. եւ ոչ ընդ ոտիւք կոխան եւ անարգ. այլ զմիջին սերն ստանալ առ նա: Յինգերորդ՝ զի ի կողն կեռ ոսկր է. նշանակէ թէ՛ կինն է ժողովումն եւ հաւաքումն մարդոյն եւ ընչիցն. զի մարդն է որպէս գետ. եւ կինն որպէս ծով. առ որ ժողովին գետք: Վեցերորդ՝ կողն գերեսն փայլուն ունի. եւ զմէջն բրոր. նոյնպէս եւ կինն ի դէմս ցուցանէ զգեղեցկութիւնն. այլ ի սիրտն նենգութիւն ունի լցեալ. զի այլ է ի լեզուին, եւ այլ է ի սրտին: Եօթներորդ՝ երկու երեսս ունի կողն. նոյնպէս եւ կինն ունի զդէմս առ իւրսն եւ առ օտարսն: Ութներորդ՝ սուր է բերան կողին. այսպէս սուր է եւ հատանօղ լեզու կնոջն. եւ պատառէ լեզուան որպէս զչար գազան: Վասն որոյ իմաստսերն Սեկունդոս՝ կոչէ զկինն ընտանի գազան. հանապազորդ կռիւ: Եւ այս Գ յատկութիւնս՝ անզգամ կանանց յարմարին, եւ ոչ համեստից: Իններորդ՝ որպէս Ադամ ետ զկողն եւ էառ մարմին. զի ասէ՝ (եւից ընդ այնր մարմին:) Այսպէս ողջախոհ արք՝ տան զգօրութիւն կանանց. եւ առնուն զտկարութիւն եւ զփափկութիւն: Եւ որպէս մին կող էառ եւ շինեաց մին կին միոյ առն. նոյնպէս պարտ է լինիլ միոյ կնոջ մին այր. եւ մին մարդոյն մին կին. եւ այս է ըստ օրինացն Աստուծոյ: Իսկ կրկինն՝ ներելով եւ թոյլ տալով է. այլ ոչ ըստ կանոնաց: Եւ տես ի կտատարմունսն. զի ամուսնացեալքն՝ ոչ առնուն զթագն ի գլուխս. եւ ոչ առաջի բեմին. այլ ի մէջ եկեղեցւոյն պսակին: Իսկ երրորդն եւ այլն՝ պոռնկութիւն է. եւ ոչ գոյ պսակ. որպէս այն որ կենդանի գլով երկու կանայս առցէ: Եւ որպէս կողն նախ ի յԱդամ էր՝ եւ յետոյ շինեցաւ կին եւ եղեւ մի մարմին անբաժանելի ի նմանէ. նոյնպէս օրինաւոր կինն՝ անբաժանելի է յառնէն. զի զօրհնութեան պսակն ոչ ոք կարէ քակել. ըստ այն, (զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ.) որպէս ցուցաւ յառաջնումն: Եւ որպէս Աստուած էառ զկողն եւ շինեաց կին. նոյնպէս ամենայն մարդոյ պարտ է սրբութեամբ կալ՝ մինչ ինամօքն Աստուծոյ եւ օրհնութեամբ լիցի մարդոյն կին: Եւ ողորմելի են նոքա որք պղծեն զինքեանս ի մոլեգին ցանկութիւնս: Նախզի որպէս ոչ կարէ մարդն ինքն

հանել զհր կողն. նոյնպէս ոչ կարէ մարդ ինքեան կին ածել: Երկրորդ՝ եւ թէ հատանէ զհր կողն, ոչ կարէ լնուլ ընդ այնր մարմին. նոյնպէս ոչ ոք կարէ ինքն զինքն պսակել, կամ շնութեամբ կին ստանալ. զի այն ոչ լինի մարդոյն կին, այլ պղծութիւն նմին. զի պղծի սերմն՝ եւ ինքն ընդ նմին: Չի երկու իր պիղծութիւն է սերման: Նախ՝ յորժամ բաժանի յինքեան, պղծի սերմն: Երկրորդ՝ թէ յօտար մարմին անկանի շնութեամբ՝ պղծի: Ապա յայտ է՝ յորժամ առ մեզ է՝ սուրբ է սերմն. եւ յորժամ ի հալալ տեղի անկանի ի կին որ է մարմին իւր, սուրբ է եւ պատուական ամուսնութիւն: Տասներորդ ըստ խորհրդոյ՝ որպէս ի վերայ ցուցաւ. զի ի կողիցն Ադամայ շինեցաւ կինն. եւ ի կողիցն Զրիստոսի՝ շինեցաւ եկեղեցի սուրբ մկրտութեամբ ջրոյն, եւ հաղորդութեամբ արեանն: Յայս միտս սովորութիւն է եկեղեցւոյ՝ յետ պսակին հաղորդել ի սուրբ խորհրդոյն զօրինաւոր ամուսնացեալսն. եւ կամ օրինեալ զին տալ երկոցունց: Չի հաղորդութեամբ արեանն՝ եղև միացեալ հարսնացեալ եկեղեցի ընդ փեսային Զրիստոսի: Եւ Զրիստոս օրինեաց զգինին ի հարսնիսն ի կանա գալիլեացոց. եւ դարձեալ՝ ամենայն խորհրդոց կատարումն է հաղորդութիւնն սուրբ. որպէս ասէ սուրբն Դիոնեսիոս. վասն այն յետ պսակին հաղորդին: Եւ թէ ասիցէ ոք՝ յո՞ր կողից էառ յաջո՞յ թէ ի ձախոյ: Ասեն վարդապետք եթէ՝ ի ձախոյ. եւ յայտ է: Նախզի՞ կինն ի ձախոյ կողմն գոյանայ յարգանդի. եւ դարձեալ՝ զի կնոջն մին կող աւելի է ի ձախն: Եւ դարձեալ ըստ օրինակի. աջովն ստեղծեաց եւ էառ զկողն. կարգաւոր է ի ձախոյն առնուլ ի դիմացն կոյս: Յայս միտս ի մտանել յեկեղեցին՝ փեսայն ունի զհարսն ի յաջ կողմն իւր, աջ ձեռքն ըմբռնեալ զձեռն: Եւ յորժամ ի դուրսգան, դարձուցանէ զհարսն ի ձախ կողմ փեսային, ձախոյ ձեռքն ըմբռնեալ: Եւ յաջակողմն նստի հարսն փեսային ի բարձր տեղոց: Չայս նշանակէ Գ փոփոխումն. զի աջովն Աստուծոյ ստեղծաւ կինն ի կողէն. եւ եգաւ ի յաջ կողմն ի բարձր տեղոց ի դրախտին: Եւ յորժամ ի ձախ կողմ աշխարհի անկման կինն եղև պատճառ, վասն այն զձախ ձեռն ըմբռնեալ ի գուրս ելանէ յեկեղեցւոյն որ է դրախտ ի վերայ երկրի: Եւ թէ ոք ասիցէ Եւա ի յԱդամայ կողէն է, ապա դուստր է Ադամայ եւ ոչ կին: Ասեմք եթէ, ի ծնունդս գաւակին՝ պիտոյ է երեք ինչ: Նախզի՞ իցէ յառնէ եւ ի կնոջէ: Երկրորդ՝ ի սերմանէ, կամյարեանէ: Երրորդ՝ ի ծննդական մասնէ: Այլ արդ՝ կինն ի կողէն է Ադամայ եւ ոչի սերմանէ կամ յարեանէ. եւ ոչ ի ծննդական մասնէ յառաջ եկեալ. եւ ոչ ներգործութեամբ առն. այլ աստուածային զօրութեամբն առաւ ի կողէն. ապա ուրեմն ոչ է դուստր Ադամայ Եւա: Չի որպէս ածս ոստոց կամ մատուսս որթոց տնկեն՝ եւ զամենայն ինչ ունի զօրութեամբ զծաղիկ, զտերեւ, զպտուղ, եւ զայլն: Նոյնպէս եւ կողն այն լոկ միայն՝ զամենայն ունի զօրութեամբ. զմիս եւ զարիւն եւ զջիլ. զմորթ եւ զայլն. որ յետոյ եղև ներգործութեամբ կազմեալ եւ շինեալ. որպէս ասէ գիրն: (Շինեաց զկողն զոր էառ յԱդամայ ի կինն:) Չկինն շինուած կոչէ Աստուած: Նախ զի՞ Աստուծոյ է շինուած. ոչ ոք կարէ քակել. բայց միայն նա որ շինեացն, որպէս այն որ զհոգի եւ զմարմին կապեաց ի մի՝ ոչ ոք իշխէ լուծանել. բայց նա որ կապեացն՝ եւ նա արձակեսցէ. եւ վերստին անլոյծ կապեսցի: Դարձեալ շինուած կոչէ. զի առանց կնոջ աւեր է տունն. եւ տան շինութիւն կինն է. եւ դարձեալ՝ զի առն քաղաք եւ գաւառ եւ տուն՝ կինն է. հանգստարան եւ բնակութիւն եւ ժողովումն որպէս ասացք ի վերոյ: Չայս սովորութիւն կալան այժմ. եւ կոչեն զկինն տուն. տուն ունի՞ս. տուն առեա՞լ ես: Վասն ասէ.

(զկողն զոր շինեաց, Էած առ Ադամ:) Եւ տեսեալ Ադամայ՝ Նախ հիանայ եւ հրաժարելով ասէ. (այս այժմ ոսկր է յոսկերաց իմոց.) ի բրթէ այս գեղանիշ պատկերս՝ այն մերկ եւ դատարկ կո՞ղն իցէ: Երկրորդ՝ յանձնառական եւ հաւատալի ասէ. ստուգապէս այս է ոսկր յոսկերաց իմոց. որեւ մարմին եւս ի նոյն զօրութենէն առաւ: Երրորդ՝ մարգարեանայ եւ ասէ. այս այժմ միայն է ոսկի եւ մարմին հանեալ յառնէ. յայսմ հետէ՝ այլ ոչ լիցի. այլ յառնէ եւ ի կնոջէ սերմնեալ: (Սա կոչեցի կին. զի յառնէ իւրմէ առաւ:) Ինքն ստուգաբանէ զանունն կին. այսինքն, կէս մարդոյ. կամ կող՝ որ է զօրութիւն մի. կամ ի կենդանոյ առաւ. կամ կողաբոյս եւ կողածին. այս է մեկնութիւն կնոջ անուանն: (Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր. եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ:) Չայն մարգարեանայ եթ՝ յետոյ լինին հայր եւ մայր եւ ծնունդք. դստերք եւ որդիք. որք հարսնանան եւ փեսայանան. եւ թողուն զհայր եւ զմայր: Որպէս Նախ ինքն կատարեաց. զի եթող զհայր եւ զարարիչ Աստուած պատուիրանաւն. եւ զմայր զբնութիւնն յորմէ ստեղծաւ. եւ չոգաւ զհետ կնոջ իւրոյ եւ լլաւ նմա. եւ ել ի դրախտէն որում ոչ էր պատշաճ: Եւ յայնմ հետէ սովորութիւն կալեալ, թողու փեսայն զծնօծսն. եւ երթայ առ հարսն: Եւ ապա հարսն զիւր ծնօղսն թողու. եւ գայ զհետ փեսային եւ պսակի: Եւ դարձեալ՝ թէ շփոթումն ինչ լինի տանն, թողու մարդն զծնօղսն. եւ երթայ զհետ կնոջն: Սակայնն օրինաւորն այն է՝ որ վատթարն զհետ լաւին երթայ. այսինքն, կինն երթայ ի տուն հօր առն իւրոյ: Որպէս եւ եղեւ ի կատարումն մեծի խորհրդոյն. զի Տէրն մեր անբաժանելի աստուածութեամբն ի հօրէ եկեալ. եւ եթող զմայր ի տրտմութեան. եւ գայ ի խաչ զհետ եկեղեցւոյ. ապա այնուհետեւ հարսնացեալ եկեղեցի թողեալ զամենայն այսինքն, զհայրենի սովորութիւն կռապաշտութեանն, եւ զմայրենի սովորական մեղս, եւ երթայ զհետ փեսային Զրիստոսի ի տուն հայրենի. ի հաւատս եւ ի գործս սուրբս. եւ նոքօք յարքայութիւնն երկնից: (Եւ եղիցին երկուքն ի մարմին մի:) Նախ զվատթարն ասէ որ է մարմին. եւ ոչ ասէ մի հոգի. ըստ այնմ, (որ միտնայ ի Տէր՝ մի հոգի է. եւ որ միայն ի կին մի մարմին է.) այսինքն, մի է հեշտախտութիւն եւ ցանկութիւն երկուցն: Դարձեալ մի մարմին. զի ցաւակից եւ խնդակից լինին միմեանց որպէս մի մարմին իրերաց. ըստ առաքելոյն՝ (եթէ վշտանայ մի անդամս, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա. եթէ փառաւորի մի անդամս, խնդան ամենայն անդամքն ընդ նմա:) Դարձեալ՝ մի մարմին են երկոքեանն. եւ կէս մարդոյ է մինն առանց միւսոյն: Եւ թէ ասիցէ ոք՝ եթէ կէս մարդոյ են առանց միմեանց, ապա առն առանց կնոջ ոչ է պարտ եթէ գործ ինչ կատարեսցէ. կամ աղօթեսցէ, կամ այլ ինչ: Ասեմք եթէ՝ մին մարմին լինին այր եւ կին, եւ ոչ թէ մի անձն. զի իւրաքանչիւր ոք՝ յատուկ անձամբ կարէ գործել զինչ եւ կամեսցի: Չորրորդ դարձեալ մի մարմին. զի յերկուցն սաղմն մածեալ լինի ի մին մարմին զաւակին: Զինգերորդ լինին մի մարմին. զի այրն զգեղ կնոջն եւ զհամեստութիւն՝ իւրն համարի. եւ կինն զինչս եւ զփառս առնն՝ իւրն համարի: Վեցերորդ սոսկալին եւս. Զրիստոս գլուխ. եւ մարմին եկեղեցի. եւ գլուխ եւ անդամքն մի են ըստ Պօղոսի. (մարմին եմք ի մարմնոյ նորա. եւ ոսկր յոսկերաց նորա:) Չորեւ օրինեսցէ զձեզ ճշմարիտ գլուխն Զրիստոսի ի փառս եւ ի պատիւ ադամոյ իւրոյ. կալ եւ մնալ ձեզ ի մարմին ի պատճառս օրինութեան յորչէ ծնութիւն զաւակաց. ի լրումն եկեղեցւոյ Սրբոյ. եւ ի յաճումն երկնւոր պսակացն ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր. Որ է օրինեալ

յաւիտեանս. Ամէն:

Նորին դարձեալ վասն պսակին. ի Բանն՝ (Խորհուրդս այն մեծ է, բայց ես ասեմ ի Զրիստոս եւ եկեղեցի:) Եփես. 5. 32.(Գլուխ.Խ2)

Խորհուրդն է ծածկելոց իրաց յայտնութիւն: Եւ է են խորհուրդք եկեղեցւոյ. այսինքն, Մկրտութիւն. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւն. Օծումնն. Կարգ՝ քահանայութեանն. եւ Պսակն: Եւ իւրաքաչիւր ոք ի խորհրդոցն՝ է ընդդէմ անցեալ չարին: Իսկ պսակն՝ է ընդդէմ չարին որ գալոց է: Այլեւ զսպումն է ցանկութեան. զի զողջախոհութիւն աւանդ է մեզ: Այլեւ է ընդդէմ մահու. զի զոր մահն ապականէ զբնութիւնս՝ սա ծննդեամբ զաւակաց՝ վերստին զարդացուցանէ եւ լնու զտեցին: Վասն այն յառաջին արարչութեանն օրհնեաց զպսակն եւ ասէ. (աճեցէք եւ բազմացարուք՝ եւ լցեք զերկիր:) Իսկ յերկրորդ արարչութեանն՝ Տէր մեր Յիսուս Զրիստոս եմուտ ի հարսանիսն ի կանա. եւ օրհնեաց զնոսա. եւ դարձոյց զշուրն ի գինի. վասն որոյ ասէ: (Խորհուրդս այ մեծ է՝ բայց ես ասեմ ի Զրիստոս եւ յեկեղեցի:) Չի պարտ է մեզ ընթանալ. եւ կարգաւ յայտնել զխորհրդոյն մեծութիւն: Եւ նախ սկիզբն պսակին՝ նշանն է. որ կատարի յերկուց. այսինքն, ի հաւանական խօսիցն՝ եւ ի նշան է մատանւոյն եւ այլոցն: Չի թէ երկու կամքն ոչ հաւասարին եւ ոչ հաւանին, անհաստատ է պսակն. որպէս բռնութեամբ եւ ակամայն: Եւ հաւանումն կամացն՝ երեւի ի իտեսանելն աչօք, եւ ի խօսիլն լեզուաւ, եւ յարդիւնս նշանին. եթէ իցէ մատանի. կամ այլ ինչ նիւթ: Եւ այն քահանայից եւ արանց եւ կանանց միջնորդութեամբ: Եւ այս վասն երկու պատճառի: Նախզի՝ յերկուց եւ յերից վկայիցն հաստատ լիցի բան նշանին: Եւ երկրորդ՝ քահանայն է օրհնող նշանին եւ պսակին. եւ առանց նորա՝ ոչ կարէ լինիլ: Եւ արք եւ կանայք՝ փեսաւերք եւ հարսնաձուր՝ ի կողմանէ փեսային եւ հարսին: Եւ մատանին՝ ցուցանէ զմին եւ զբոլոր եւ զկատարեալ սերն հարսին եւ փեսային: Չի որպէս մատանին է ի մին մատն. նոյնպէս հարսն է միոյ փեսային. եւ փեսային միոյ հարսին: Եւ որպէս բոլոր է մատանին. եւ է ի մատն այն՝ որ ունի զերակ սրտին. նոյնպէս բոլոր եւ կատարեալ սեր պարտ է ունիլ փեսային եւ հարսին: Եւ այս երեւեցաւ իսկիզբն նախահօրն Ադամայ. որում ասաց Աստուած. (ոչ է բարւոք մարդոյդ միայն լինիլ. արասցուք օգնական ըստ դմա: Եւ էառ մի ի կողիցն նորա՝ եւ շինեաց կին. եւ էա՞ռ առ Ադամ տեսանել զնա:) Տեսանելն այն՝ էր հաւանումն միմեանց: Եւ Աստուած՝ ներգործող պսակին եւ օրհնող: Իսկ փեսաւերք եւ հարսնաձուր՝ հրեշտակք էին յայնժամ: Ուստի՞ յայտ է: Նախզի՝ այնմ իրի որոյ Աստուած է քահանայագործող՝ հրեշտակաց պարտ է սպասաւորել. այլեւ յայնժամ նախաստեղծքն յանմեղութեան էին եւ ընկերակիցք հրեշտակաց: Եւ յայնմ հետէ սկսան մարդիկ նախ խօսիլ զհաւանական խօսսն միջնորդիւ եւ անընդմիջաբար. եւ ապա դնել նշան հարսին եւ փեսային միջնորդութեամբ քահանայից՝ եւ արանց եւ կանանց որպէս ասացաւ: Այլեւ յորժամ կամեցաւ բանն Աստուած առնուլ զմեր բնութիւնս եւ լինիլ մարդ, նախ առաքեաց զհրեշտակապետն Գաբրիել յաւետիս կուսին: Որ եկեալ առ նա ասէ. (ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ. եւ նա ընդ բան ողջունին խռովեցաւ.) եւ յորժամ ստուգեաց ի հրեշտակէն թէ, (հոգին սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քոյ:) Ապա հաւանեցաւ եւ ասէ. (կամ աղախին Տեառն. եղիցի ինձ ըստ բանի քում:) Եւ

ապա եկեալ բանն Աստուծոյ մարդ եղել ի սրբոյ կուսէն: Յայս միտս Նախ
 Նշան դնի հարսին ի փեսայէն՝ եւ ապա ի հարսնէն փեսային: Եւ այս
 մարմնաւոր հարսանիքս է խորհուրդ հոգեւոր հարսանեացն եւ
 միաւորութեան հոգւոյս առ Աստուած. որպէս ասէ առքեալն: *(Խորհուրդս
 այս մեծ է, բայց ես ասեմ ի Զրիստոս եւ յեկեղեցի:) Չի այն առաջին
 քնամախօսքն՝ էին մարգարեքն. որք յառաջ ժամանակաւ պատմեցին
 զմարդեղութիւն բանին եւ զփրկութիւն մեր՝ ծածկապէս եւ միոյ ազգին
 հրեից: Եւ յետ այնորիկ յորժամ բանն մարմնացաւ եւ երեւեցաւ մարդկան,
 առաքեալքն եւ հետեւողքն փեսաւերք եւ հարսնածուք եղէն. որպէս էր
 Ովհաննէս Նախընթաց եւ հրաւիրող. զի ասէր՝ (որ ունի հարսն՝ Նա է փեսայ.
 իսկ ես բարեկամ եմ փեսային:) Եւ առաքեալն ասէք. (խօսեցայց զձեզ իբրեւ
 զկոյս մի սուրբ՝ յանդիման առնել երեսացն Աստուծոյ:) Իսկ Նշան
 մատանւոյն՝ հաւատն է. որ դնի ի մատն որ է զանազանօղ գործոյն: Նոյնպէս
 եւ Աստուած դնէ զհաւատն ի բանականութիւն մարդոյն. զի Նա որոշէ
 զանազանէ զբարի եւ զչար: Երկրորդ՝ որպէս մատնին դնի ի մին ժատն ի
 հնգիցն. Նոյնպէս հաւատն դնի ի յիմացումն մեր որ մի է ի հինգ
 զգայութեանց ներքնոյն: Երրորդ՝ մատնին է ի մատն յայն՝ որ ունի զերակ
 սրտին. Նոյնպէս եւ հաւատք մեր՝ առ Զրիստոս է շերմ սիրով սրտի
 հաստատեալ. որպէս ասէ առաքելն. (ոչ թլփատութիւն ին է, եւ ոչ
 անթլփատութիւն. այլ հաւատք սիրով յաջողեալ:) Չորրորդ՝ որպէս
 մատանին ոչ է պարտ որ լինի արծակ կամ նեղ. Նոյնպէս եւ հաւատք մեր առ
 Զրիստոս՝ ոչ է պարտ որ լինի անելի կամ պակաս. այս է, դնել զոր ոչ ուին.
 կամ ուրանալ զոր ունի: Հինգերորդ՝ եւ որպէս մատանին պատէ զմատն
 յամենայն կողմաց. Նոյնպէս բոլոր եւ ամբողջ հաւատն՝ պահէ զհոգի եւ
 զմարմին մեր յամենայն մոլութեանց եւ չարեաց: Վեցերորդ՝ եւ որպէս բոլոր
 է մատանին. Նոյնպէս եւ հաւատք մեր՝ բոլոր պարտ է լինիլ առ Զրիստոս
 առանց թերութեան եւ երկմտութեան: Եօթներորդ՝ որպէս պատուական է
 Նիւթ մատանւոյն ոսկի կամ արծաթ. Նոյնպէս պատուական եւ անբիծ է
 հաւատքն մեր առ Զրիստոս: Ութներորդ՝ գոյնն դեղին է կամ սպիտակ. որ
 ցուցանէ զպայծառութիւն հաւատոյն մերոյ. սպիտակն զանմեղութիւն
 հոգւոյս. եւ դեղինն զահ եւ զերկիւղ առաքինութեամբ մարմնոյս: Իններորդ՝
 ձայնեղ է Նիւթն. եւ հաւատքն պարտ է լինիլ յայտնի եւ ի լուր ամենեցուն.
 որպէս ճրագն ի վերայ աշտանակի դնի. եւ ոչ ընդ գրաւանաւ: Տասներորդ՝
 որպէս մի է կնիք մատանւոյն ի բազում կնքեալ մոմս. Նոյնպէս եւ հաւատքն
 առ մեզ ի բազումս՝ մի եւ Նոյն տպաւորութիւն է ի մեջ մեր եւ Զրիստոսի, ի
 նմանէ ի հոգիս մեր գրեալ եւ պատկերացեալ. զայսմանէ ասէր իմաստունն
 Պորփիրիոս: Նախ քան զբազումս՝ ի բազումս՝ ի բազումս՝ եւ ի վերայ
 բազմաց՝ մի եւ Նոյն կնիք հաւատոյն կայացեալ: Դարձեալ՝ հաւատն դնի
 Նշան քրիստոնէին ի կեանս յայս. եւ ի մահանն՝ յուսով տեսանէ զփեսայն
 Զրիստոս. զի յոյսն ակն է հաւատոյն. եւ յետ յարութեանն՝ սիրով միանայ
 ընդ փեսային: Չի աստ հաւատն է ի մեզ կատարեալ. եւ յետ մահու՝ յոյսն.
 (զի յոյս Նոցա լի է անմահութեամբ ասէ Սողոմօն.) եւ ի յարութեանն՝ սիրով
 լինիմք կատարեալ. որպէս ասէ առաքեալն. (տոքա երեքեան՝ հաւատք յոյս
 սեր. եւ առաւել քան զսոսա՝ սերն է:) Չի անտանօր հաւատն՝ է ընդ աղօս
 տեսութիւն. եւ յոյսն հեռագոյն՝ բարձեալ լինի եւ Նուազեաց. այլ սերն
 առաւերեալ՝ որ միաւորէ՝ որ միաւորէ ընդ փեսային Զրիստոսի. որպէս

իմաստուն կուսանքն կազմեցին զլապտերս՝ եւ մտին յառագաստ փեսային: Եւ յառակ հարսանեացն է տեսանել. որ այրն մեծատուն՝ արար հարսանիս որդւոյ իւր. եւ եկն շուրջ հայիլ զբազմականօքն, եւ այլն: Որ ցուցանէ թէ՛ աստ հաւատալն է եւ հաւանիլն. եւ անդ միաւորիլն ընդ փեսային Քրիստոսի. զայս ունի խորհուրդ. իսկ օրինակ հարսին եւ փեսային՝ նշանակէ զկատարեալ սերն, զոր ունի Քրիստոս ընդ եկեղեցի. զի ի մէջ ամենայն մարմնական սիրոյ՝ կատարեալ եւ առաւել է սեր փեսային եւ հարսին. որպէս ասէ յերզսն վասն եկեղեցւոյ. (սեր քո յիս որպէս զսեր հարսին, եւ այլն:) Այս է խորհուրդ նշանին: Իսկ յետ այնորիկ՝ պսակին կարգւորութիւն է: Որ նախ երթայ փեսայն ի հարսին տունն. եւ առնու զհարսն եւ տանի յեկեղեցին եւ պսակի. որպէս ասէ զիրն. (թողցէ այր զհայր եւ զմայր իւր. եւ երթիցէ զհետ իւրոյ. եւ եղիցին երկոքեանն ի մարին մի:) Եւ այս խորհուրդ կրկին է: Նախ՝ է մարդեղութիւն բանին: Եւ երկրորդ՝ միաւորութիւն հարսնացեալ եկեղեցւոյ: Եւ նախ զառաջինն. զի բանն Աստուծոյ անբաժանելի միաւորութեամբ ի հօրէ եւ ի հոգւոյ իջեալ յերկրից յարգանդ սրբուհւոյ կուսին, Էառ յարենէ կուսին որպէս զկողն յԱդամայ. եւ միաւորեաց ընդ իւրու աստուածութեանն. եւ եղեւ մարդ կատարեալ: Եւ այս վասն բազում յատկութեանց կողին: Նախ՝ որպէս անդ զկողն Էառ եւ շինեաց կին. Նոյնպէս եւ աստ բանն Աստուած՝ զարիւնն Էառ ի կուսէն. եւ եղեւ մարդ խառնելով յինքեան: Երկրորդ՝ որպէս կողն այն ունէր զօրութեամբ զայլ մասունս անդամոցն. Նոյնպէս եւ արիւն կուսին՝ ունէր զօրութեամբ ի յինքն զբոլոր անդամս մարմնոյն. զոսկր, զմիս, զարիւն, զերակս, զմորթ, եւ զայլն: Երրորդ՝ որպէս կողն, այն աննման էր Ադամայ՝ անկերպ, անկենդան, եւ անպատիւ, եւ կազմելովն կերպացաւ եւ կենդանացաւ հաւասար Ադամայ: Նոյնպէս եւ արիւն կուսին՝ աննման էր Աստուծոյ. եւ միաւորութեամբ եղեւ Աստուծոյ կենդանութեամբ եւ կերպիւ. եւ հաւասար Աստուծոյ. ըստ այնմ, (որ ի կերպարանս Աստուծոյ էր՝ ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինիլն հաւասար Աստուծոյ.) այսինքն, զմարդկայինս բնութիւն: Չորրորդ՝ անդ մին կող Էառ եւ կազմեաց. Նոյնպէս եւ բանն ի կուսէն զմին անհատ բնութիւնն առեալ՝ միաւորեաց ընդ ինքն. եւ ոչ զընդհանուրն որ է ի մակամտածութեանս մերում: Զինգերորդ՝ եւ որպէս մին կողն այն եղեւ ենթակայ եւ հիմն՝ եւ շինեցաւ բոլոր մարմինն եւ դէմն ի վերայ Նորա: Նոյնպէս մին անձն բանին Աստուծոյ՝ եղեւ հիմն եւ ներքոյ եզեալ բոլոր մարդկութեանն. եւ յինքն խառնելով՝ անձնաւորեաց զբնութիւնս ի մի անձն եւ ի մի դէմ եւ ի մի բնութիւն բանին մարմնացելոյ ըստ սրբոցն հարցն: Վեցերորդ՝ որպէս աջն Աստուծոյ Էառ զձախ կողն Ադամայ եւ շինեաց կին. Նոյնպէս աջն Աստուծոյ որ է միածին բանն՝ Էառ զձախ կողն որ է յանցաւոր բնութիւնս Ադամայ. եւ միաւորելով յինքն, ծնաւ անմեղ եւ անապական մարմին, հանելով յառաջին յաջ եւ յանխոտոր բնութիւնն Ադամայ որ նախ քա զյանցնելն: Եօթներորդ՝ որպէս կողն մէջն է՝ մերձաւոր առոտոսն. Նոյնպէս բանն Աստուծոյ՝ մարդ եղեւ ի ժամանակի մերձ առ վերջին դարս կենցաղոյս՝ որպէս կողն զօրութիւն է. զի հաստակող ասեմք զըմբիշս բանն մարմնով զօրացաւ եւ յաղթեաց թշնամւոյն. ըստ այնմ, (զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր Էած:) Իններորդ՝ կողն է ցանկութեան տեղի. եւ մարմին լինիլն է սեր բանին. զի մարդեղութեամբ՝ սերն Աստուծոյ յայտնեցաւ ի մեզ. ըստ այնմ, (այնչափ սիրեաց Աստուած զաշխարհս՝ մինչեւ զորդին իւր միածին ետ:) Տասներորդ՝ որպէս կողն նախ

քան զառնուլն ի յԱդամ եր. եւ յետոյ առ ինքն միացաւ անբաժանելի. նոյնպէս եւ մարդկութիւնս ստեղծւած է բանին. էառ բանն՝ եւ առմամբն ի նոյնինքն ի բանն միաւորեցաւ անբաժանելի: Չի որպէս աստուածութեան նորա ոչ գոյ սկիզբն. նոյնպէս եւ մարդկութեան նորա՝ ոչ է վախճան: Վասն որոյ ասէ. (եղիցին երկուքն ի մարմին մի.) այսինքն, յերկուց բնութեանց անբաժանելի իմութեամբ մի դէմ՝ մի անձն՝ եւ մի բնութիւն միաւորութեամբն: Այլ այս օրինակ եւ խորհուրդ եւ ստուեր. եւ նա ճշմարտութիւն եւ իր. ըստ այնմ, (մարմին Քրիստոս է:) Այսքան վասն առաջին խորհրդոյն մարդեղութեան բանին. եւ այլ առաւելն եւ բազմազան տեսութիւն միաւորութեան բանին եւ մարմնոյն՝ անճառ մնացէ եւ լռութեամբ պատուեսցի: Իսկ երկրորդ միաւորութիւնն՝ է հարսնացեալ եկեղեցւոյ ընդ փեսային Քրիստոսի: Եւ այս եւս յատկութեան կողին: Առաջին՝ զի որպէս նախ եր Ադամ՝ եւ յետոյ շինեցաւ կինն ի կողէն. նոյնպէս եւ նախ է փեսայն Քրիստոս. եւ յետոյ հարսնացան եկեղեցիք քրիստոնէից: Երկրորդ՝ ի ննջելն Ադամայ՝ առաւ կողն եւ շինեցաւ կինն. նոյնպէս եւ ի ննջելն Քրիստոսի ի վերայ խաչին՝ բացաւ կողն եւ շինեցաւ եկեղեցի ի կրկին վտակացն արեան եւ ջրոյ. զի սրբիմք ջրովն. եւ ճաշակեմք զարիւնն: Երրորդ՝ կողն է ի մէջ գլխոյն եւ ոտիցն. եւ Քրիստոս միաւորի ընդ եկեղեցի միջին սիրով ընդ եկեղեցի միջին սիրով. ի վայր քան զիսկական մարմին իւր. եւ ի վերջան զհասարակ մարմնակիցս: Չի միաւորեցաւ ընդ մարմինն իւր անձամբ եւ բնութեամբ, եւ ի հաւատացեալս շնորհօք եւ սիրով. եւ յանհաւատսն եւ ի չարսն՝ միայն նախախնամութեամբ եւ արդար քննութեամբ. որք են ոտք վերջին եւ կցորդ մարմնոյ նորա: Չորրորդ՝ կողն գոգ է եւ ժողովօղ. նոյնպէս եւ Քրիստոս ժողովէ զհաւատացեալս առ ինքն (որպէս հաւ զձագս. եւ ընդ թելօք իւր պահպանէ:) Հինգերորդ՝ որպէս կողն է ցանկութեան տեղի. եւ եկեղեցի սիրելի է Քրիստոս. որպէս հարսն փեսային: Վեցերորդ՝ կողին եւ Ադամ եղէն մի մարմին. եւ Քրիստոս եւ հաւատացեալք՝ լինին մի մարմին. ըստ այնմ, (մարմին եմք ի մարմնոյ նորա. եւ անգամք յանդամոց նորա:) Եօթներորդ՝ որպէս ի կողէն Ադամայ կինն զօրացաւ. եւ ելից ընդ այն մարմին. այսինքն հանգիստ. եւ այս հետեւի ամենայն առն եւ կնոջ սրբապէս: Այսպէս եւ

Տեր մեր Քրիստոս զօրութիւն եւ օգնական է եկեղեցւոյ. եւ հանգի ի հաւատացեալս իւր: Ութներորդ՝ որպէս սկիզբն Եւայի եւ կողին է Ադամ. նոյնպէս եւ սկիզբն եկեղեցւոյ՝ է Քրիստոս. (որ է անդրանիկ ամենայն արարածոց.) եւ շնորհաց եւ արդարութեան. եւ անդրանիկ յարութեան մեռելոց: Իններորդ՝ որպէս յԵւայէ եւ յԱդամայ լինի ծնունդ մարմնական ցաւոց եւ դատապարտութեան: Այսպէս ի մէջ եկեղեցւոյ՝ լինի ծնունդ հոգեւոր եւ զաւակ օրինութեան. ըստ մարգարէին եթէ՝ (զաւակք օրինեալք են յԱստուծոյ. եւ ծնունդք նոցա ընդ նոսա:) Տասներորդ՝ կողն Եւա կոչեցաւ. կէս մարմնոյ որ է կող մի. կամ կողածին, կամ կողաբոյս: Նոյնպէս եւ եկեղեցի՝ կոչի կողածին եւ կողաբոյս եւ կէս մարմնոյն Քրիստոսի. զի կողէն Քրիստոսի ծնաք եւ բուսաք. եւ մէք անդամք. եւ Քրիստոս գլուխ մեր: Չի որպէս ի գլխոյն ի ջանեն յանդամսն կենդանական շարժմունք եւ զգայութիւնք. այսպէս ի Քրիստոսէ առ մեզ իջանեն ի ձեռնն հաւատոյն՝ կենդանութեան շարժմունք եւ հոգեւորք զգայութիւնք: Եւ որպէս այրն զգեղ եւ զհամեստութիւն կնոջն իւր համարի. եւ կինն զինչս եւ զփառս առն իւր. այսպէս եւ սրբութիւն առաքինութեան մերոյ՝ վերակոչի գլխոյն մերոյ

Քրիստոսի. եւ փառք եւ ինչք եւ ժառանգութիւնն Քրիստոսի՝ հարսին եկեղեցւոյ իւրում: Իսկ որ փեսայն երթայ ի տուն հարսինն եւ բերէ ի պսակն՝ այն է որ ասէ. (թողցէ այր զհայր եւ զմայր իւր. եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ:) Չի որպէս թողու փեսայն զհայր եւ զմայր իւր. եւ երթայ զհետ հարսինն. Նոյնպէս Քրիստոս անբաժանելի աստուածութեամբն ի հօրէ եկեալ, թողու եւ զմայրն ի տրտմութեան. եւ զայ ի խաչ վասն սիրոյ եկեղեցւոյ: Եւ դարձեալ ի կատարածի զայ փեսայն Քրիստոս եւ մտանէ ի տուն աշխարհի. եւ տանի ի հայրենի ժառանգութիւնն իւր. ըստ այնմ, (եկայք օրհնեալք հօր իմոյ. եւ ապա ի յարքայութիւնն երկնից բազմեցուցէ: Իսկ այն որ ըմբռնէ փեսայն աջովն իւրով զձախ ձեռն հարսին մինչեւ յեկեղեցի տանին: Այսպէս աջն Աստուծոյ միածինն որդի՝ աջովն իւր ըմբռնեալ ունի զեկեղեցիս՝ որ դեռեւս են ի ձախ կողմ աշխարհի. մինչեւ մտանեն յանդրանկաց եկեղեցիս վերին, զաջ ձեռս Նոցա ըմբռնեալ ունի. յայնժամ փոխին եւ լինին աջակողմեանք. ըստ այնմ, (կալար զաջոյ ձեռանէ իմմէ. ի խորհուրդս քո առաջնորդեցեր ինձ. եւ փառօք ընկալար զիս:) Իսկ յորժամ արտաքս ելանել յեկեղեցւոյն, հարսն լինի ի ձախ կողմն փեսային. եւ յորժամ Նստին ի բարձր տեղուջն զոր կոչեն թախտ կամ հաճիլք, փոխէ եւ յաջ կողմն Նստուցանէ զհարսն: Այն է՝ զի Ադամ ի դրախտին ունէր զկինն յաջ կողմն իւր. եւ յորժամ արտաքս եկին, եղէ կինն ձախակողմն Ադամայ եւ պատճառ գլորման: Իսկ յորժամ կամեցաւ բանն Աստուած մարդ լինիլ, զձախողակի բնութիւնս մեր ի յաջն փոխեաց. վասն այն յաջակողմն արգանդի կուսին բնակեցաւ. որպէս կարգ է ամենայն արու մանկան ի յաջ կողմն մօրն գոյաւորիլ. իսկ եզն ի ձախն: Նոյնպէս ի վերայ խաչին կամեցաւ զմեզ որդիս ծնանիլ՝ վասն այնն զաջակողմն կողին եբաց. եւ շինեաց զեկեղեցի յաջ կողմն իւր: Որպէս եւ այժմ աւազանն է ի յաջ կողմն եկեղեցւոյն: Եւ դարձեալ ի միւսանգամ գալստեանն՝ (ընդ աջմէ իւր դասեսցէ զեկեղեցի սուրբ որպէս ասէ աւետարանն:) Եւ առաքեալն ասէ. (այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք:) Իսկ Նոր հանդերձ եւ զգեստ զարդուց հարսին եւ փեսային՝ են թուով եօթն. չարս բոլոր անձինն է. եւ երեք գլխոյն: Նշանակէ այնմ՝ յորժամ Ադամ եւ Եւա էին ի փառակենցաղ դրախտին անապական մարմնով եւ լուսազարդ փառօք. ուստի յայտ է զի ոչ տեսանէին զմերկութիւնս միմեանց: Եւ եօթն թուով՝ զի եօթնեկի շնորհօք զարդարեալք էին Նախ քան զյանցանելն պատւիրանին. այսինքն, չորս ի մարմինն. եւ երեք ի հոգին. զորս ի յարութեանն՝ վերստին ստանալոց ենք զեօթն զարդս զայսոսիկ: Եւ յորժամ յանցեան եօթնեկի մեղօք, մերկացան յեօթն շնորհացն. եւ եօթն պատիժս կրեցին: Վասն որոյ ասէ. (եւ բացան աչք երկոցունց՝ եւ տեսին զի մերկք էին:) Նոյնպէս Տէր մեր Յիսոս Քրիստոս ի մարդեղութեանն տնօրէնութեամբ՝ իբր գլուխ մեր Էառ զեօթնարփեան շնորհս. եւ ետ Ադամոց իւրոց. որք ծնանին հոգեւոր աւազանին ծննդեամբ, կամ յորժամ Նորոգին մաքրութեամբ. որպէս յառակս անառակին ասէ. (հանէք ի դմանէ զհնութիւն մեղաց՝ եւ զառաջին պատմութեանն զգեցուցէք դմա:) Իսկ յետ աստի կենացս ի յարութեան աւուրն՝ յորժամ գալ փեսայն Քրիստոս, զեկեղեցի սուրբ զարդարէ եօթն զարդիւք. յորոց երեք է ըստ մարմնոյն. եւ երեք ըստ հոգւոյն: Չի մարմին սրբոցն չորիւք զարդարին: Նախ՝ պայծառութիւն մարմնոյն. (զի արդարքն ծագեսցին յարքայութեանն երկրից որպէս զարեգակն:) Երկրորդ՝ անչարչարութիւնն. զի անկրելիք լինին եւ անմահք: Երրորդ՝ թեթեւութիւնն.

զի սուրբ եւ թեթեւ լինին. եւ ոչ թանձր եւ ծանր: Չորրորդ՝ երագութիւնն. մինչ զի ոչ ինչ դիմատիպ լինի եւ արգելել կարէ: Եւ այնքան երագ լինին եւ սուր՝ մինչ զի ուր միտքն կամիցին, եւ մարմինն անդ հասանիցէ: Այլեւ Քրիստոս յառաջ քան գչարչարանսն՝ գչորեսին զայսոսիկ եցոյց ի մարմինն իւր սուրբ: Չպայծառութիւնն՝ յայլակերպիլն: Չերագութիւնն՝ յորժամ գնաց ի վերայ ծովուն: Չանօսութիւնն՝ զի ծնաւ մարմնով անխախտելի մնալով կուսութեանն: Եւ զանչարչարութիւնն՝ ի վերանատունն ի ժամ ընթրեացն, յորժամ զմարմինն իւր սուրբ ետ ուտել աշակերտացն, զի իմանալի է թէ՛ անչարչարելի էր ներգործութեամբ, եւ ոչ զօրութեամբ: Չորեքին սոքա՝ զարդարանք են մարմնոյն: Իսկ զարդարանք հոգւոյն երեք են: Նախ՝ ճանաչումն իմացանն առանց տգիտութեան. զի տեսանէն զԱստուած դէմյանդիման: Երկրորդ՝ զմայլումն աստուածային ուրախութեան եւ սիրոյ, զի ցնծութիւն լինի առանց տրտմութեան. ըստ այնմ, (դարձեալ տեսից զձեզ եւ ուրախ արարից. եւ զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի ձեւս:) Երրորդ՝ ըմբռնումն եւ ուսումն առանց մոռացման. զի աստ բազում ինչ ուսանիմք եւ մոռանամք. եւ անդ անմոռաց պահեմք: Այս են է զարդքն՝ որք տեսեալ լինին հարսին եկեղեցւոյ. վասն որոյ ասէ Եսայի: (Տնծասցէ անձն իմ ի Տէր. զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան. իբրեւ փեսայի եղ ինձ զպսակ. եւ որպէս հարսն զարդու զարդարեաց զիս:) Եւ դարձեալ՝ որպէս մարմնաւոր հարսին տուեալ լինին երեք իրք. այսինքն, բաժինք՝ օժիտք՝ եւ պարգելք: Բաժինքն տուեալ լինին ի հօրէ հարսինն վասն պիտոյից պսակին: Եւ օժիտքն ի փեսայէն լինին տուեալ: Իսկ պարգելքն՝ ի բարեկամացն լինին տուեալ: Այսպէս հոգեւոր հարսին եկեղեցւոյ՝ բաժին լինի տուեալ արքայութիւնն երկրից ի սոցուածս հարսին: Իսկ օժիտք է խնդութիւնն՝ զոր ունին ի տեսութենէն Քրիստոսի: Իսկ պարգելքն՝ է ուրախութիւն յընկերակցութենէ սրբոցն, եւ ի հրեշտակացն դասուց: Իսկ քօղն արկեալ զերեսօք հարսինն՝ եւ նոր հանդերձն երկոցուցն: Չի որքան նախաստեղծքն ի դրախտին էին անապականութիւնն եր զգեստ նոցա եւ լուսեղէն փառքն. եւ ոչ ունէին ցանկութեամբ նայիլ ընդ միմեանս: Ի նոյն տիպ՝ քօղ արկանի զերեսօքն. զի մի հայեսցի փեսայն ցանկութեամբ առ հարսն: Դարձեալ՝ որքան եմք ի մարմնի աստ՝ յերեք ժամանակս մասին՝ ծածուկ եւ ընդ աղօտ տեսանեմք զփեսայն Քրիստոս. այլ յայնժամ յայտնի եւ բացաւ երեսօք դէմ յանդիման. որպէս ասէ առաքեալն. (այժմ տեսանեմք ընդ հայելի օրինակաւ. այլ յայնժամ դէմ յանդիման տեսանեմք զնա որպէս եւէն: Եւ յայնժամ նորոգեսցի մարմին խոնարհութեան մերոյ, ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց: Չի արդարքն ծագեսցին իբրեւ զարեգակն ի թագաւորութեանն երկնից:) Չայս ցուցանեն նոր հանդերձն եւ քօղն արկեալ զերեսօքն: Իսկ թագ եղեալ ի գլուխն՝ նշանակ է թագաւորութեանն Ադամայ. որ Տէր եւ իշխան եղէ ամենայն կենդանեաց. այլեւ գլուխ եւ Տէր կնոջն եւ թագաւոր. եւ հարսն թագուհի. վասն որոյ երկուցն դնի թագ պսակին. զի մի մարմին եղէն պսակաւն: Վասն որոյ պսակ կոչի, որ է բոլոր եւ կատարեալ. զի բոլորապէս ընկալան զկատարելութիւն այր եւ կինն ի ձեռն պսակին: Իսկ նարօտին զոյնք որակացն կարմիր եւ սպիտակ՝ արեանն եւ ջրոյն ունին զխորհուրդ բղխեալ՝ ի կենարար կողէն Քրիստոսի. որով միացեալ պսակեցաւ եկեղեցի սուրբ: Եւ թագն՝ փշեղէն պսակացն զոր ընկալաւ ի գլուխ իւր փեսայն երկնաւոր. որպէս ասէ յերգն. (տեսաք զարքայն Սողոմօն՝

որ պսակեաց զնա մայր իւր յաւուր ուրախութեան սրտի իւրոյ:) Իսկ որպէս ի հարսանիսն երեք զգայարանօք ամենայն բարեկամքն հաղորդին. այսինքն, ի տես՝ ի լուր՝ եւ ի ճաշակն. իսկ մինն յատուկ որ է միաւորութիւն շօշափելեացն՝ է միայն հարսին եւ փեսային: Այսպէս եւ հրեշտակք խնդակիցք լինին մարդկան ի տես՝ եւ ի լուր եւ յայլն. այլ եկեղեցի միայն կոչի հարսն. եւ միանայ ընդ փեսային Քրիստոսի: Չի ի հարսանիսն լինի միաւորութիւն բնութեանցն. եւ զայս ունին հրեշտակք. զի ոչ են բնութեանակից Քրիստոսի: Եւ այն զի յերկրորդ պսակին ոչ դնի թագ՝ եւ ոչ մերձ բեմին. այլ ի մէջ եկեղեցւոյն պսակին: Եւ ցուցանէ զի ամուսնացեալքն՝ ոչ ունին զկուսանաց պսակն. եւ ոչ զնոյն տեղի: Չի ասեն վարդապետք եթէ, ի դասս հրեշտակաց՝ միայն կուսանքն խառնին ի տեղի անկելոցն: Իսկ ողջախոհ ամուսնացելոցն՝ լինին այլ որոշմունք եւ դասք հանգոյն ինն դասուց հրեշտակաց: Իսկ երեք օր հարսանեացն այն է՝ զի ժամ ուրախութեամբ եղեն ի միասին Ադամ եւ Եւա ի դրախտին. յետ այնորիկ՝ ի ներքոյ ծառոյն ստուերացն: Իսկ ուրախութիւն մարմնական՝ է յերեք ժամանակս. այսինքն, յանցեալն՝ ի ներկայս՝ եւ յապառնին. որպէս երէկ՝ այսօր՝ եւ վաղն. վասն այն երեք օր լինի հարսանիս: Եւ դարձեալ՝ մին օր վասն փեսային. եւ մին օր վասն հարսինն. եւ մին վասն միաւորութեան որք լինին մի մարմին՝ լինի երեք օր ուրախութիւն հարսանեաց: Իսկ յետ եօթն աւուրն ի յուրաներորդն՝ լինի վերացումն թագին. եւ ապա հրաման զուզաւորութեան մարմնական: Այն է՝ որ է ժամ կացին նախաստեղծք ի դրախտին. եւ ապա արտաքսեցան. զի յառաջին ժամ աւուրն ուրբաթի՝ Ադամ ստեղծաւ. եւ յերկրորդ ժամն կինն ի կողէն. եւ ի յերրորդ ժամն՝ խաբեաց օձն զԵւա. եւ ի վեց ժամն՝ կերին ի պտղոյն. եւ յինն ժամն ընդ երեկս՝ արտաքսեցան ի դրախտէն: Որոց եղել ուրախութիւնն ի միասին Ադամայ ընդ Եւայի երեք ժամն. եւ չորս ժամն տրտմութեամբ: Վասն այն յետ երեք աւուր հարսանեացն՝ չորս օր այլ կան ի տանն, որ վճարի եօթն օրն. եւ յուրան օրն՝ երթան յեկեղեցին եւ առնուն զթագն: Դարձեալ՝ է այլ իմն խորհուրդ. զի եօթն օրն՝ նշանակ է զեօթն դար կենցաղոյս. եւ է մարմնաւոր թագ եւ պսակ ի կեանս յայսն: Իսկ ի հանդերձեալն յուրաներորդ դարն՝ վերանան ամենայն թագք եւ պսակք: Իսկ այն որ յետ ուրան աւուրն հրամայէ քահանայն զուզաւորիլ նոցա մարմնով, վասն եօթն շնորհաց հոգւոյն՝ եւ եօթն խորհրդոյ եկեղեցւոյ պարտ է անարատ սրբութեամբ պահել զանկողինն: Եւ դարձեալ՝ եօթն են աւուրք արարչութեանն. պարտ է պահել զեօթն թիւն անարատ: Եւ շինածք մեր ի չորս տարեաց են. եւ երեք զօրութիւն է հոգւոյն. բան՝ ցասումն՝ եւ ցանկութիւն: Այլեւ ունիմք չորս առաքինութիւն ստացական. որ է խոհեմութիւն. արիութիւն. ողջախոհութիւն. եւ արդարութիւն: Եւ երեք առաքինութիւն աստուածային. որ է հաւատ. յոյս. եւ սէր. որ լինի եօթն. վասն Աստուծոյ պահելի է եօթն օր սրբութեամբ: Իսկ ըստ հոգեւորին՝ զի եկեղեցի հարսն է Քրիստոսի. եւ ի յեօթն դար կենցաղոյս ոչ է միաւորութիւն. այլ ի յուրաներորդին լինի իսկապէս միութիւն եկեղեցւոյ ընդ փեսային Քրիստոսի. եւ նովաւ ընդ հօր եւ հոգւոյն սուրբոյ. ըստ որում ասաց. (որպէս դու հայր ի յիս, եւ ես ի քեզ. եւ սոքա ի մեզ իցեն. զի տեսանիցեն զփառսն իմ:) Որոց լիցի եւ մեզ ամենայնոցն արժանաւորիլ տեսլեան անմահ փեսային, եւ սիրով միանալ ընդ նմա. որ է օրինեալ յաւիտեանս յաւիտենից. ամեն:

Նորին դարդձեալ քարոզ վասն խոստովանութեան ի նոյն
Բանն: (Խոստովան եղերուք միմեանց զմեզս ձեր:) Յակօբոս. 5. 16: (Գլուխ.
ՅԹ)

Որպէս ոսկի աղտեղեալ ի բազում ժամանակս, կարօտի
ճարտարապետ արւեստաւորի. զի ի բովս հրոյ վերստին ձուլեցէ եւ
մաքրեցէ զնա: Այսպէս ոսկեղէն է բնութիւն մարդոյս. զի հոգին՝
անապական եւ պատկեր է Աստուծոյ: Այլեւ կրէ ժանկ՝ եւ աղտեղանայ ի
զգայեութեանց մարմնոյն՝ եւ ի գարշ հեշտութեանց աշխարհի՝ եւ ի
պատրանաց սատանայի: Որպէս մաքուր ոսկի անապական է բնութեամբ՝
այլ կրական է. ի մերձ եղեալ գարշութեանց՝ կրէ զհիւթ եւ աղտեղանայ: Իսկ
արուեստաւորն դարձեալ որ կամի սրբել զնա՝ ի հուր եւ ի ջուր արկեալ,
վերստին մաքրէ զնա ի յաղտոյն: Այսպէս ճարտարապետ եւ իմաստուն
արուեստաւորն բնութեանս՝ է Տէր մեր Յիսուս Քրիստոս. որ
մարդասիրութեամբն իւրով կամեցաւ վերստին սրբել եւ մաքրել
զապականեալ եւ զժանկեալ պատկերս իւր զմարդկայինս բնութիւն: Նախ՝
օրինօք եւ մարգարէիւք եւ հրեշտակօք եւ խրատօք՝ սակաւ ինչ սրբեաց
զփոշի ժանկոյն. այլ նորագործ սուրբ աւազանաւն՝ ամենեւիմբ մաքրեաց ի
ժանկոյ մեղաց: Չի այն է հուր եւ ջուր՝ որ ի հուր հոգւոյ եւ ի ջուր նիւթոյն
մկրտիմք եւ սրբիմք ի մեղաց: Չի որպէս ջուրն արտաքոյ զմարմնինն
լուանայ. նոյնպէս ջուրն՝ զօրացեալ ի հոգւոյն սուրբոյ, ի ներքս զհոգին սրբէ
եւ լուանայ: Այս առաջին մաքրութիւն: Եւ երկրորդ մաքրութիւն է եղեալ
ճարտարապետն Քրիստոսի զխոստովանութիւնն եւ զապաշխարութիւնն:
Որք յետ մկրտութեանն դարձեալ աղտեղանամք մեղօք՝ զայն ի ձեռն զղջման
խոստովանութեան եւ ապաշխարութեան կամեցաւ սրբել ի հոգւոյս մերմէ:
Վասն զի կրական է բնութիւն մարդոյս. որպէս հայելի զի յինչ իրս որ
մերձենայ, զնոյն կերպարանէ յինքեան: Նոյնպէս եւ հոգիս մեր թէ ի չարն
մերձենայ՝ յինքն կրէ. եւ թէ ի բարին՝ նոյնպէս: Վասն որոյ որպէս զժանկոտ
հայելին՝ ձիթով եւ սմփարայով եւ չարչարանօք մաքրեն. այսպէս աղտեղեալ
հոգւոյն՝ ձեթ է զղջումն ի մեղաց. եւ սմփարայ խոստովանութիւնն. եւ
չարչարանօք ապաշխարութիւն. պահք. աղօթք, եւ այլն: Եւ ապա պատկերն
Աստուծոյ վերստին երեւի պայծառացեալ հոգին: Չայն ունի ներգործութիւն
խոստովանութեան եւ ապաշխարութեան մեղաց: Դարձեալ՝ վասն ժանկոյն
գիտելի է: Չի ժանկն նշանակէ զմեզս վասն տասն յատկութեան նորին:
Նախզի՝ ժանկն նշանակ է ապականութեան. այսպէս եւ մեղքն հոգւոյն՝
ապականութեան է ցոյց: Երկրորդ՝ ի ներքուստ եւ յարտաքուստ պատճառի
ժանկն. նոյնպէս եւ մեղքն՝ է ինչ ի ներքուստ ի կամաց մերոց. եւ է ինչ
յարտաքուստ ի զգայարանացս կրեալ: Երրորդ՝ ժանկն է յաւելուած, եւ ոչ է
գոյութիւն նիւթոյն. նոյնպէս եւ մեղքն՝ յաւելուած է եւ ոչ բնութիւն: Չորրորդ՝
ան ի պետ է ամենեւին. նոյնպէս եւ մեղքն որ չունի բարի՝ անպիտան է
ամենեւին: Ինչգերորդ՝ ժանկն զազրալի է. որպէս բորն եւ խոցն. այսպէս եւ
մեղքն եւ մեղաւորն՝ զարշելի եւ փախչելիեն: Վեցերորդ՝ ժանկն արգիլէ
զպայծառութիւն. այսպէս եւ մեղքն՝ գեղեցկութիւն հոգւոյն ծածկէ:
Եօթներորդ՝ ուտէ եւ ապականէ զնիւթն. նոյնպէս մեղքն թէ մնայ ի հոգի եւ ի
մարմին՝ ապականէ զնոսա: Ութներորդ՝ ժանկն է որպէս զժանկ ուխտ.
զմերձեցեալսն ժանկէ. այսպէս եւ մեղքն եւ մեղաւորն՝ յորս հասանին,

փոխեն ի ժանկ մեղացն: Իններորդ՝ սրբի ժանկն եւ պայծառանայ նիւթն. Նոյնպէս մեղքն՝ սրբի ի հոգւոյն. եւ զառաջին մաքրութիւնն անու: Տասներորդ՝ չորիւք սրբի ժանկն. շորով որպէս փոշի. ջրով որպէս աղտ. եւ քերելով որպէս երկաթ. եւ հրով որպէս արծաթ: Նոյնպէս չորիւք սրբի մեղքն. այսինքն, ողորմութեամբ որպէս շորով. արտասւօք որպէս ջրով. պահօք որպէս քերելով. աղօթիւք որպէս հրով: Դարձեալ՝ ժանկն է ի ներքս որպէս սպիտակ. եւ է ի դուրս որպէս երկաթ. է ի ներս եւ ի դուրս որպէս խառն արծաթ: Նոյնպէս զղջմամբ եւ խոստովանութեամբ՝ սրբի ժանկ մտացն. ապաշխարութեան գործով՝ ջնջի ժանկ մարմնոյն. փորձութեամբ ի ձեռն այլոց՝ յստակի ժանկ հոգւոյ եւ մարմնոյ. զի որպէս արծաթ ի բովս փորձի. եւ մարդ ի բովս փորձանաց ընտրի. որպէս ասէ առակն. (ջնջան լինի արդարոյն անօրէնս: Դարձեալ ասէ առակն. (որպէս շուն որ դառնայ ի փսխածն՝ ատելի լինի.) նոյնպէս եւ անզգամս յորժամ դառնայ ի չարիսն իւր, փսխել ասէ զզագիր մեղսն. այլեւ յորժամ դառնամք եւ խոստովանիմք: Արդ՝ ի փսխելն՝ երեք իր երեւի: Նախ՝ որ սակաւ սակաւ ուտէ՝ եւ միահամուռ ժայթքէ. նոյնպէս զմեղսն սակաւ սակաւ գործեալ, բոլոր զամենայն խոստովանի: Երկրորդ՝ որ հեշտութեամբ ուտ, դառնութեամբ փսխէ. նոյնպէս ի գործ մեղացն հեշտանամք. այլ դառնութեամբ խոստովանիմք եւ ապաշխարեմք: Եւ երրորդ՝ յորժամ փսխէ, ծանրացեալ սիրտն թեթեւանայ, նոյնպէս յորժամ խոստովանիմք, ի ծանրութենէ մեղաց սրբիմք եւ թեթեւանամք: Այլ դառնալ ի յառաջին գործ մեղացն՝ զագիր է եւ ատելի. որպէս առաքեալն Պատրոս ասէ ի վերայ Նոցա՝ որք զսուրբ պատւիրանն թողին. եւ յառաջին մոլորութիւն դարձան: (Լաւ էր Նոցա թէ բնաւ չէր ծանուցեալ զարդարութեան ճանապարհն, քան թէ ծանեան եւ յետս կացին ի սուրբ պատւիրանէն որ անանդեցաւ Նոցա: Եկեալ ի դէպ Նոցա ճշմարիտ առակին զգօնութեան, եթէ շուն դառնայ անդրէն ի փսխած իւր. եւ խոչ լւացեալ ընդ տիղմն թաւալի:) Լաւ էր Նոցա թէ չէր ծանուցեալ. վասն է՞ր լաւ էր: Նախզի՞ յառաջն անգիտութեամբ եւ ակամայ մեղանչէր. եւ այժմ գիտութեամբ եւ կամաւ մեղանչէ, որ ծանր է քան զառաջինն: Եւ դարձեալ՝ զի յետ մեղացն զղջացաւ. եւ գիտէ զդառնութիւն զղջմանն. այժմ ծանր է քան զառաջինն: Եւ դարձեալ՝ տգիտութիւն երեւի յանմտութեան նորա. զի թէ մեղքն ախորժ էր եւ քաղցր, ընդէ՞ր զագրացար եւ թքեր: Եւ թէ գարշեցար եւ թքեր ի բաց, վասն է՞ր դարձեալ ախորժելով ճաշակես զնոյն թքածն: Չի որպէս զլւացեալ հանդերձն առաւել սուրբ պարտ է պահել քան որ յառաջն. նոյնպէս եւ յետ խոստովանութեանն՝ պատրաստելի է առաւել քան յառաջն: Այլ զայս ոչ ասեմ թէ՛ չէ պարտ խոստովանիլ զկրկին գործեցեալ մեղսն. այլ զայն ասեմ, թէ յետ խոստովանութեանն եւ լուացմանն՝ մի կամաւ այլ զայն գործէք: Ապա թէ ի սատանայէ կամ ի տգիտութենէ, կամ ի թուլութենէ դարձեալ անկանիք ի մեղս, դարձեալ կանգնեցէք եւ խոստովանեցէք: Եւ թէ զբիւր հազար մեղս բազում անգամ գործէք՝ բազում անգամ խոստովանեցէք եւ սրբեցարուք ի մեղաց: Չի յայս փոփոխելի մեղացս՝ զերծանիլ ոչ կարեմք. զի թեպէտ միտք մեր եւ հոգիս հաճեալ են ընդ օրէնս Աստուծոյ որպէս ասէ առաքեալն. այլ օրէնք մարմնոյս՝ հակառակ զինի եւ գերէ զհոգիս մեր. օրէնք մարմնոյս եւ անդամք մեղքն են. որ (հոգին ցանկայ հակառակ մարմնոյ զբարիս. եւ մարմինն ցանկայ հակառակ հոգւոյն զչարիս:) Եւ այսպէս մեր ի մէջ երկուցն տարակուսեալ եմք իբրեւ այր մի տառապեալ: (Ով ապրեցուցէ

գիս ի մարմնոյ աստի չարէ, եթէ ոչ՝ շնորհքն Քրիստոսի ասէ:) Եւ կրկին Է յոյսն մեր ի շնորհացն Քրիստոսի: Նախ այն գոր ասէ. (ուր առաւել եղէն մեղքն, անդ եւ առաւելան շնորհքն:) Երկրորդ՝ շնորհ մահուան եւ չարչարանացն Քրիստոսի. զի թէպէտ ըստ գործոյս մերում որք հանապազ փոփոխիմք ի մեղս. զագիր եմք եւ ատելի. այլ ըստ շնորհացն Քրիստոսի սիրելի եմք: Եւ Է շնորհն Քրիստոսի նախ ի մկրտութիւնն. եւ երկրորդ ի խոստովանութիւնն: Մկրտութիւն՝ սրբէ մի անգամ զհասարակ եւ զսկզբնական մեղս. իսկ խոստովանութիւնն՝ զհանապազորդ եւ զներգործական մեղս մեր: Եւ դարձեալ՝ կրկին Է մահն. Քրիստոսի. եւ կրկին շնորհ ի մահու նորա: Առաջին մահն Քրիստոսի Է՝ որ յատուկ գոյացական մարմնովն իւրով մեռաւ մի անգամ. եւ այլ ոչ մեռանի: Եւ երկրորդ մահն Է՝ որ յատուկ պատարագան իւրով հանապազորդ մեռանի ի վերայ սեղանոյն: Արդ՝ առաջին մահն մի անգամ Է. եւ մի անգամ սրբեաց զբոլո մեղս աշխարհի. եւ մկրտիմք մի անգամ ի մահն Քրիստոսի. եւ սրբիմք մի անգամ ի սկզբնական մեղացն: Եւ երկրորդ մահն Քրիստոսի՝ պատարագն. յոր հանապազ մեռանի եւ հանապազ սրբէ զմեզ ի մեղաց. ըստ այնմ, (արիւնն Յիսուսի՝ սրբէ զմեզ յամենայն մեղաց.) եւ մեք հանապազ խոստովանիմք զմեղս մեր: Ապա ուրեմն յորժամ խոստովանիմք զմեղս, արդարանամք ի մեղաց. եւ զպատիժ մեղաց մերոց՝ հատուցանէ պատարագն առաջին հոր Աստուծոյ. ըստ այնմ, (Տէր հատուցէ ընդ իմ:) Եւ այսպէս շնորհն որպէս ի մկրտութիւնն սրբէ զմեզ զօրացեալ մահուամբն Քրիստոսի. նոյնպէս ի խոստովանիլն՝ սրբէ զմեզ զօրացեալ շնորհն Քրիստոսի. վասն այն պարտ Է հաւատով եւ յուսով խոստովանիլ զմեղս, եւ արդարանալ ի մեղաց: Եւ գիտելի Է՝ զի մկրտութիւնն եւ խոստովանութիւնն՝ զմի շնորհս ունին: Եւ ասեմք տասն կերպիւ: Նախ՝ որպէս մկրտութեամբ սրբին ամենայն մեղք. նոյնպէս եւ խոստովանութեամբն՝ սրբիմք յամենայն մեղաց: Երկրորդ՝ որպէս անդ ջուր. եւ աստ արտասուք: Երրորդ՝ անդ մեկացումն. եւ աստ բացումն զլիսոյ: Չորրորդ՝ անդ հրաժարումն եւ դաւանութիւն. նոյնպէս աստ դաւանիլ պարտ Է ընդ խոստովանիլն մեղաց: Զինգերորդ՝ որպէս անդ կրկին ձեռք քահանային սպասաւորեն. նոյնպէս աստ զկրկին ձեռս քահանայն դնէ ի վերայ զլիսոյն: Վեցերորդ՝ որպէս անդ յանուն երրորդութեանն մկրտէ. նոյնպէս աստ երրորդութեամբն արձակէ: Եօթներորդ՝ զի անդ եւ աստ քահանայն կատարէ. զի թէ ոչ Է քահանայ, ոչ մկրտել կարէ ոք, եւ ոչ արձակել: Ութներորդ՝ որպէս անդ յետ մկրտութեանն հաղորդէ. նոյնպէս աստ յետ խոստովանութեանն հաղորդին. զի սրբեցան ի մեղաց: Իններորդ՝ անդ հաւատով ընդունի զշնորհս մկրտութեան. նոյնպէս աստ հաւատով ընդունի զթողութիւն մեղաց: Տասներորդ՝ որպէս յետ մկրտութեանն՝ զպահս զաղօթս եւ զսրբութիւն կատարեմք. նոյնպէս յետ խոստովանութեանն՝ ապաշխարութիւն կարգեմք: Այսպէս հաւասար են մկրտութիւնն եւ խոստովանութիւնն: Եւս առաւել Է խոստովանութիւնն. զի մկրտութիւնն մի անգամ սրբէ, այլ խոստովանութիւնն՝ բազում անգամ եւ հանապազ: Իսկ մկրտութիւնն առաւել Է՝ զի նախ մկրտիմք. եւ ապա խոստովանիմք. զի առանց խոստովանութեան՝ անկատար Է: Եւ թէ ամօթն արգիլէ՝ գիտելի Է. զի կրկին Է ամօթն. մին բարի, եւ միւսն չար. որպէս ասէ առակն: (Է ամօթ որ ածէ զմեղս. եւ Է ամօթ, որ զփառս եւ զշնորհս:) Նա ընտել պիտոյ Է մեզ եւ զգուշանալ. զի նոյն ինքն ամօթն՝ չար Է եւ բարի. բարի ամօթն այն Է՝ որ

յառաջ քան զմեղսն, գլխտին ամօթն ի միտ ածես եւ պնտես զքեզ ի մեղացն. այս բարի ամօթ է. եւ արգիլէ զքեզ ի չարէ: Եւ չար ամօթն է՝ յոր ժամ զմեղսն գործես եւ տիրէ քեզ ամօթն, ծածկես եւ ոչ խոստովանիս ամաչելով. այն չար է. յայս ամօթոյս փախչիլ պիտոյ է՝ զի չար է եւ վնասակար: Եւ այս կրկին ամօթոյս՝ օրինակ ունիմք ի սուրբ գիրս. զի Յովսէփ եւ Շուշան նախ քան զգործ մեղացն՝ ամրացան ամօթով. եւ ոչ շաղախեցան ի զազիր գործ մեղաց պոռնկորութեանն, որում դառն ամօթ հետեւեր: Վասն ընկալան զշնորհս եւ զփառս յԱստուծոյ եւ ի մարդկանէ: Իսկ աքար եւ գէեզի յետ գողութեանն՝ ընկղմեցան ի յամօթն եւ ոչ խոստովանեցան, պատուհասեցան: Չի աքար՝ զարմիւքն քարկոծեցաւ. եւ Գէեզի՝ իւր ծննդօքն բորոտեցաւ: Եւ յառաջ քան զգործ մեղացն՝ կրկին է ամօթն. մին որ ի մարդոյ ամաչէ թէ, մեծ մարդ է. եւ իշխան եւ պարոն. եւ ոչ գործէ զմեղս. եւ այն եւս չար ամօթ է եւ չար երկիւղ. եւ միւսն՝ որ զամօթ մեղացն ի յինքն բերէ նախ քան զգործն. եւ զերկիւղ պատուհասին Աստուծոյ. այս է բարի ամօթն: Եւ ի վեց կողմանէ ամաչել պարտ է վասն մեղաց: Նախ՝ ի պահպանող հրեշտակէն մերմէ. որ միշտ առ մեզ է, եւ տեսանէ զգործս մեր: Երկրորդ՝ ամաչել պարտ է յԱստուծոյ. որ տեսանէ՝ ոչ միայն զգործս մարմնոյ, այլեւ զսիրտ եւ զխորհուրդս քննէ եւ տեսանէ: Երրորդ՝ զամօթն պարտ է ի միտ ածել՝ զահագին ամօթ դատաստանին ի մեծի ատենին Քրիստոսի: Իսկ առ մեզ՝ պարտ է նախ ամաչել ի մարդկանէ, յորժամ տեսանեն եւ լսեն զչար մեր. (զի ինչ ի ծածուկ որ ոչ յայտնեսցի:) Եւ թէ այլքն չգիտեն, քահանային խոստովանիլ պիտի. զնոսա ամօթն ի միտ ած յառաջ քան զգործ մեղացն: Երկրորդ ամօթն՝ է մեր անուանս, կամ շնորհացն զոր ունիմք. թէ քրիստոնէայ ես՝ եւ յաւազանն մկրտեալ, եւ Քրիստոսի եղբայր անուանեալ, եւ հօր Աստուծոյ որդի ես կոչեցեալ եւ այլ ինչ: Երրորդ՝ ի խիղճէ մտաց մերոց չարչարիլ պարտ է. որ հանապազ դառն ամօթով ի ներքուստ հարու զմեզ եւ պատկառէ: Յայս վեց կողմանէս՝ զամօթն ի միտ պարտ է ածել եւ չգործել զմեղս: Իսկ գլխտ գործելոյն՝ թէ ամաչես ի մեղացն եւ ոչ երթաս ի խոստովանիլ, մի ամաչեր. եւ այն եւս քեզ բարի լինի. զի որքան ամօթխածութեամբ խոստովանիս, այնքան առաւել սրբիս ի մեղաց: Որպէս առաւել հուրն՝ սրբէ զժանկն. նոյնպէս առաւել ամօթն՝ սրբէ զմեղսն քո առաջի քահանային: Եւ թէ ոք ասիցէ՝ յոր ժամ զղջանամք ի սրտի, մեղքն թողանի, վասն է՞ր բերանով խոստովանիմք եւ ապաշխարեմք մարմնով: Ասեմք եթէ՝ մեղաւոր մարդն յորժամ զմեղս գործէ, երից դիմաց պարտական լինի: Նախ Աստուծոյ որ զօրէնս յանցեալ: Երկրորդ՝ եկեղեցւոյ՝ որ զկանոնսն յանցեալ: Երկրորդ՝ ընկերին՝ որում մեղանչեաց շնութեամբ, գողութեամբ, եւ այլն: Այդ՝ յորժամ զղջանամք սրտիւ, թողու Աստուած զմեղսն: Եւ յորժամ խոստովանիմք քահանային՝ ազատիմք ի կանոնաց եկեղեցւոյ: Եւ յորժամ ապաշխարեմք գործով, զպարտ ընկերին հատուցանեմք: Ապա ուրեմն թեպէտ ի զղջումն թողունին մեղքն, այլ հարկաւոր է խոստովանութիւն մեղացն: Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ խոստովանիմք եւ արդարանամք, զի՞նչ հարկ է ապաշխարութիւնն յետոյ: Ասեմք՝ թեպէտ խոստովանութեամբ մեղքն թողանին. այլ հարկաւոր է ապաշխարութիւնն յետոյ վասն վեց պատճառի: Նախ՝ որպէս ի հերկեալ գետին թէ ոչ սերմանեմք, առաւել փուշ բուսանի. այսպէս խոստովանութիւնն՝ զփուշ մեղացն սրբէ. եւ ապաշխարութիւնն սերմն բարի է. որպէս Տէրն ասէ. (յորժամ այսն ելանէ ի մարդոյ, եւ այլն:)

Երկրորդ՝ խոստովանութիւնն որպէս անել է՝ որ զտուն հոգւոյս սրբէ ի մեղաց. եւ ապաշխարութիւնն՝ զայլ բարիսն պատրաստէ, զի մտցէ թագաւորն անդ: Երրորդ՝ խոստովանութիւնն է որպէս ազիյատեալ եւ պարտեզ բուսեալ: Եւ ապաշխարութիւնն՝ պարիսպ է եւ ցանկ՝ զի մի մտցեն օտարոտիք ի նա: Չորրորդ՝ խոստովանութեամբ մեղքն թողանին. այլ ապաշխարութիւնն գյաւիտենից պատիժն ժամանակաւ վճարէ: Հինգերորդ՝ խոստովանութիւնն զմահացու մեղաց սրբէ. այլ ապաշխարութիւնն զներելիսն. զի բազում են եւ ոչ կարեմք թուել եւ յիշել: Վեցերորդ՝ խոստովանութիւնն ի մեղացն արձակէ զմարդ. եւ ապաշխարութիւնն զփառս եւ զպսակս առաւելու: Ապա ուրեմն հարկաւոր է ապաշխարութիւնն յետ խոստովանութեանն որպէս ասացաւ: Եւ գիտելի է՝ զի չար է ամենեւիմբ կաշառն զոր խոստովանադրամ կոչեն. զի այնու թիւրի խոստովանութեան ուղղութիւնն ի լսողն եւ յասացողն. զի ոչ կարէ ուղիղ դատել զմեղսն եւ դնել ապաշխարանս. եւ վասն աղքատութեան ոչ խոստովանին: Այսպէս է եւ կաշառն յամենայն խորհրդոց կատարումն. որ կնքոյ դրամ, կամ պսակ, կամ հաղորդի, կամ այլ իրաց. զի վաճառեն զշնորհսն Աստուծոյ. մանաւանդ յորժամ բռնութեամբ խնդրեն: Այլ այս սպիտակ տան ի կնքելն կամ ի պսակն, կնքոյ դրամ ոչ է. այլ լուսոյ եւ խնկոյ գին տամբ ի յեկեղեցին. եւ վասն պաշտօնեիցն պիտոյից. որք յայն օրն սպասաւորեցին հոգեպէս՝ կերակրեսցին մարմնապէս. զայս դնեմք պատճառ այլ խորհրդոց: Ապա որ ի խոստովանութիւնն դրամ առնու՝ ամենեւիմբ չար է: Իսկ կաշառն որ երբեմն բարի է, եւ երբեմն չար. յորժամ տուրս բերեն հոգւոյ պաշտամանց ժամուց եւ աղօթից, յորժամ առեալ՝ զխնդիր նորա կատարեն աղօթիւք պատարագօք, եւ այլ զինչ եւ իցէ խնդիր, բարի է այն եւ ընդունելի: Ապա թէ առեալ զայն տուրսն, եւ ոչ աղօթ է որպէս կամեցաւ տուօղն, այլ ի մարմին իւր եւ ի փառս եւ յայլս անարգապէս ծախէ, տուօղն էառ զվարձն իւր յԱստուծոյ. այլ նա զհոգին իւր կորուսանէ. եւ զրկանք եղեն նմա. որպէս ասէ մարգարէն: (Ոյք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի. եւ առ Աստուած ոչ կարդացին:) Այսպէս գոյ զանազանութիւն ի մէջ կաշառոց. է որ չար է, եւ է որ բարի: Որում զմեզ արժանի արասցէ Քրիստոս Աստուած որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

Յայլմէ քարոզ Վասն խոստովանութեան: (Ապա թէ խոստովան լինիցիմք զմեղս մեր՝ հաւատարիմ է նա եւ արդար առ ի թողուլ զմեղս մեր:) Յօհան. 1. 9: (Գլուխ. 2)

Վարդապետք ասեն թէ՝ Աստուծոյ դատաստանն քաղցր է քան զաշխարհիս: Նախ դատաստան նոր օրինացս՝ քաղցր է եւ դիւրին քան զին օրինացն: Իսկ դատաստան աշխարհիս՝ որքան առաւել ծածկէ մարդ զմեղս իւր՝ առաւել արդարանայ. եւ որ յայտնէ զմեղս իւր, անել դատապարտի. որպէս գողք եւ աւագակք որք խոստովանին զմեղս իւրեանց՝ չարաչար մեռանին. եւ այսպիսի խոստովանութիւնս՝ դժուար է եւ դառն: Եւ այսպէս եր հին օրինաց խոստովանութիւնն. որպէս գրեալ է ի գիրս Յեսուայ ի յեթն գլուխն վասն Աքարայ՝ որ գողացաւ յանիծիցն երիքովի. եւ եկն բարկութիւնն Աստուծոյ ի վերայ ժողովրդեանն: Եւ կացուցին Չաքար ի մէջ ատենին. ասէ ցնա Յեսու. տուր փառս Աստուծոյ. եւ խոստովանեա զմեղս քո եւ մի

ծածկեր: Եւ նա խոստովանեցաւ զմեղս իւր. եւ փոխանակ թողութիւն առնելոյ, քարկոծեցաւ ի ժողովրդենէն: Բայց Աստուծոյ դատաստանն որ ի նոր օրէնս է՝ այլ ազգ է. քանզի որ թաքուցանէ զմեղս իւր առաջի խոստովանահօրն՝ ոչ գտանէ թողութիւն յԱստուծոյ այնպիսին: Այլ յայտնելոց է մեղք նորա յաւուրն դատաստանի առաջի Աստուծոյ եւ ամենայն արարածոցս: Այլ որ ճշմարտութեամբ եւ խոնհաւութեամբ խոստովանի զմեղս իւր՝ թողութիւն տայ Աստուած եւ ծածկէ զմեղս նորա: Եւ այսպիսի խոստովանութիւնս՝ երանելի է որպէս ասէ: (Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա եւ արդար:) Եւ արդ՝ վասն խոստովանութեան խորհրդոյս գիտելի է: Նախ՝ պիտոյ է երկոտասան ինչ՝ որ խոստովանութիւնն կատարեալ լինի. եւ հարկաւորք են այսոքիկ: Առաջին՝ պիտոյ է որ խոստովանութիւնն իմաստութեամբ եւ ճարտարութեամբ լինի. եւ այս իմաստութեամբ խոստովանութիւնս՝ երեք ազգ է: Նախ՝ որ զամեն մահու չափ մեղսն՝ յատուկ եւ որիչ խոստովանի. որպէս ասէ Դաւիթ. (լուացի զամենայն գիշեր զմահիծս իմ:) Չայս կամի ցուցանել թէ՛ լուացի զամենայն մահու չափ մեղս, որ է գիշեր. յանկողնի՝ այսինքն, ի խղճմտանաց լուացի ջրով արատասուաց: Եւ միայն չէ բաւական առ հասարակ խոստովանիլ եւ ասել թէ՛ բազում մեղք եմ գործեալ՝ եւ առանձինն ոչ ասել զմեղաց անուանսն: Երկրորդ՝ զի ընտեսցէ զխոստովանահայրն թէ՛ գիտէ ճանաչել զմեղս. եւ ունի՞ իշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ: Եւ թէ ոք կամաւ երթայ առ տգետ քահանայ եւ խոստովանի զմեղս իւր ասելով ի միտս թէ, սա զիմ մեղս ոչ ճանաչէ, եւ ինձ սակաւ ապաշխարութիւն դնէ, անօգուտ է այնպիսւոյն խոստովանութիւնն: Երրորդ՝ որ զմահու չափ մեղսն՝ առաւել զղջմամբ պարտի խոստովանիլ. եւ որքան ծանր է մահու չափ մեղքն, եւս առաւել պարտ է ծանր զղջմամբ խոստովանիլ: Երկրորդ՝ պիտոյ է զի խոստովանութիւնն կամաւ լինի եւ ոչ բռնութեամբ. որպէս ասէ Դաւիթ. (ես կամօք իմովք խոստովան եղեց քեզ:) Չի որք բռնութեամբ խոստովանին, նման են գողից. յորժամ ի չանկալն ձգեն, յայնժամ առաջի դատաւորին խոստովանին. նոյնպէս նոքա որք ոչ խոստովանին, մինչեւ առաքէ Աստուած մահ. եւ յայնժամ խոստովանին վասն ահի դժոխոցն, եւ ոչ վասն սիրոյն Աստուծոյ. այնպիսին ոչ է օգուտ. զի պարտ է կամաւ լինիլ եւ վասն սիրոյն Աստուծոյ: Երրորդ՝ զի պարտ է որ խոստովանութիւնն սուրբ լինի. եւ վասն իւր հոգւոյն փրկութեան, եւ ոչ վասն երեսաց մարդկան: Չորրորդ՝ զի համարձակ լինի խոստովանիլն. եւ ոչ ծածկէ զմեղս իւր վասն ամօթոյ: Զինգերորդ՝ պիտոյ է զի ամօթխածութեամբ խոստովանի. եւ ոչ պարծենալով առաջի մարդկան, թէ զայս մեղս գործեալ եմ: Վեցերորդ՝ զի հաւատով եւ արտասուօք եւ ցաւագին զղջմամբ խոստովանի հոգւով եւ մարմնով. յայնժամ կատարեալ լինի. զի հիւանդութիւն հոգւոյն՝ արտասուօք շուտով բժշկի: Չի յորժամ հիւանդն քրտնի, եւ քրտունքն հաւասար լինին, եւ տաք եւ հոտած, բարի նշան է հիւանդին. զի այնպիսի քրտունքն՝ հանեն զցաւն: Այսպէս յորժամոք արտասուէ վասն մեղաց իւրոց, եւ ջերմեռանդ սրտիւ խոստովանի, եւ իւր մեղքն ինքեան հոտած եւ գարշելի երեւի, այս բարի նշան է. զի առողջանալ կամի հոգեւոր հիւանդութիւն նորա: Բայց հիւանդն որոյ ծանր է ցաւն, եւ սկսանի ծիծաղիլ, եւ ոչ կարէ ճանաչել զցաւս իւր, վատ նշան է: Այսպէս որ ծանր մեղք է գործեալ եւ ծիծաղի ի ժամ խոստովանութեանն, ոչ է բարի նշան: Եօթներորդ՝ պիտոյ է զի

խոստովանութիւնն խոնորհութեամբ լինի. որ զինքն տկար եւ հիւանդ, եւ ողորմելի խոստովանի. եւ լինի հնազանդ խոստովանահօրն. որ զինչ ապաշխարհութիւն դնէ, խոնարհութեամբ յանձն առնու եւ կատարէ: Ութներորդ՝ զի խոստովանութիւն հաւատարմաբար լինի. եւ Գ ազգ լինի հաւատարմութիւնն: Մին՝ զի խոստովանօղն եւ խոստովանահայրն՝ ուղղափառ լինին, եւ հնազանդ սուրբ եւ կաթողիկէ եկեղեցւոյ. եւ ոչ լինին ի հերձուածողաց: Երկրորդ՝ որ վասն թողութեան յուսոյն լինի խոստովանութիւնն. եւ ոչ որպէս զՅուդայն, որ խոստովանեցաւ եւ անյոյս լեալ փրկութեան խեղդեցաւ. անօգուտ է այնպիսի խոստովանութիւնն: Երրորդ՝ զի ի խոստովանութեանն սուտ ոչ ասէ. այլ ճշմարիտ. քան զի խոստովանութիւնն առաջի Աստուծոյ է. եւ ծանր մեղք է որ սուտ խօսի առաջի Աստուծոյ, եւ մեծ պատժոյ արժանի. որպէս ասէ. Դաւիթ: (Ատեցեր զայնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն. կորուսանես զամենեսեան որք խօսին զսուտ.) այսինքն, ի խոստովանութեանն. զի կորնչիլն՝ մեծ պատիժ է քան զատելի լինիլն: Ապա ուրեմն սուտ ասելն ի խոստովանութեանն՝ մեծ մեղք է քան զմեղսն գործելն: Դարձեալ՝ ոչ կայ անպիսի մեղքն՝ որ զմարդ կորուսանէ, թէ դորդ խոստովանի. այլ վասն սուտ ասելոյն ի խոստովանութեանն կորնչի մարդն, յորժամ ծանր մեղք է գործել՝ եւ ուրանայ առաջի խոստովանահօրն: Դարձեալ՝ ոչ է արժանի ի խոստովանին սուտ ասել վասն խոնարհութեան. զի կարէ ասել հասարակաբար թէ մեղաւոր եմ, այլ չէ պարտ վասն մեղացն որ չէ արարեալ ասել թէ արարեալ եմ: Եւ աստ գիտելի է՝ զի թէ ոք խոստովանի զմեղս իւր զամենայն, բայց ունի ի կամս իւր դարձեալ առնել զայն մեղսն, այնպիսոյն խոստովանութիւնն ոչ է ընդունելի. եւ ոչ է պարտ զայնպիսին ընդունիլ կամ արձակել. վասն զի արմատ մեղացն մնացեալ է՝ ի սիրտ նորա: Քանզի որ քարշէ զփուշ կոտորելով, եւ ոչ արմատքի խլելով, եւ զմազն զոր ածիլէ՝ յետոյ առաւել բուսանի: Այսպէս թէ մարդ խոստովանի զմեղս, եւ զարմատն ունի ի սիրտն, ի յայն չար արմատոյն՝ բազում ճիւղք բուսանի: Վասն այն պարտ է զկամսն որ է արմատ մեղացն, ի բաց խլել ամենեւին: Եւ աստի յայտ է՝ զի թէ ոք՝ ի յաղուհացսն, ի պոռնկութենէ եւ յայլ մեղաց զինքն ի բաց կտրէ. բայց կամս ունի յետ պահոցն դառնալ ի նոյն մեղս, այնպիսոյն խոստովանութիւնն սուտ է: Չի այնպիսիքն՝ զտուտն դժոխային օձին միայն հատանեն. այնպիսին ոչ է կատարեալ, որ զգլուխն եւ զմարմինն թողու ի հոգին: Եւ այսպիսի յատկութիւն ունի օձն՝ զի թէ գլուխ օձին մնայ, եւ զերկումատն ի մարմնոյն, կամ զերեք հատանես, կարէ ապրիլ: Իսկ գլուխ օձին՝ է չար խորհուրդն. եւ մարմինն՝ է հաւանումն մեղացն. եւ տուտն՝ է ի գործ ածելն: Իսկ մարդիկ որ ի բաց կենան ի մեղաց ի ժամանակ մի, այնպիսիքն կտրեն զտուտն. այլ զգլուխն՝ այսինքն զչար խորհուրդն, եւ զմարմինն. այսինքն հաւանումն մեղացն, ունին ի կամսն: Եւ են ոմանք որք ծեր են մարմնով եւ տկար՝ բայց ի կամսն ունին. եթէ կարօղ էին՝ կատարէին զգործն. այլ մի այն խափանին գործով: Եւ ոչ է պարտ այնպէս լինիլ. զի պարտ է նախ զսիրտն սրբել. եւ ոչ բանիւ խոստովանիլ. եւ ի սիրտն ոչ զղջանալ: Եւ թէ պարտ է սրտիւ բոլորովին զղջանալ. վկայէ Դաւիթ ասելով. (խոստովան եղեց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով:) Չի չէ պարտ զկես մեղացն ասել եւ զկեսն պահել. կամ զկեսն մին քահանայի խոստովանիլ, եւ զկեսն միւսոյն: Եւ որ զայս արասցէ վասն ամօթոյ՝ եւ ոչ վասն մոռանալոյ, ոչ լինի

թողութիւն նմա. այլ զինչ ի միտսն է՝ պարտ է մին քահանայի խոստովանիլ. զի ոչ է Աստուած կիսատ, այլ կատարեալ: Կամ բոլորովին թողու, կամ բնաւ ոչ թողու. զի այնպիսւոյն պարտ է նոր սկիզբն առնել խոստովանութեան, եւ զամենայն խոստովանիլ: Ապա թէ ոք խոստովանի զմեղս իւր, եւ զմին մահու չափ մեղս թաքուցանէ վասն ամօթոյ, նման է նաւի՝ որ ի վերայ ծովուն ունի հարիւր ծակ. զիննսուն եւ զինն կալնու՝ եւ զմինն թողու. եւ ընդ այն մտանէ ջուր. եւ ընկղմէ զնաւն: Կամ որպէս ունիցի ոք հարիւր նետ ցցեալ ի մարմին իւր, եւ զամենն քարշէ՝ եւ զմինն թողու, սպանանէ զնա: Դարձեալ՝ որք ոչ խոստովանին զմեղս յայտնի՝ այլ պատրուակով ասեն զծանրն վասն այն՝ զի խոստովանահայրն ոչ գիտացէ, այնպիսին սուտ է. զի պարտ է այնպէս ասել զմեղսն, որպէս գործեալ է. թէպէտ եւ յոյժ ամաչէ. զի որչափ առաւել ամաչէ՝ առաւել թողութիւն լինի: Եւ թէ վասն ամօթոյ զծանր մեղսն խոստովանի ոչ՝ լինի նմա այնպէս, որպէս այրի կնոջ մի եղեալ է: Չի կին մի մեծատուն՝ ունէր քահանայ որդի. եւ սատանայ ընկեց զկինն ի մեղս. եւ երկու բիճ ծնաւ ի պոռնկութենէ: Եւ զերկոսինն եսպան. եւ զայս մեղս՝ ամենեւին ոչ խոստովանեցաւ վասն ամօթոյ. զի հարկիքն իւր մի պակասեցին. մեռաւ ի յայս մեղս՝ եւ էջ ի դժոխս: Եւ քահանայ որդի նորա՝ առնէր աղօթս եւ պատարագս. ինդրէր յԱստուծոյ թէ՝ ցոյց ինձ զմայրն իմ, թէ յո՞ր դաս հրեշտակաց կանգնեալ կայ. եւ ի վերջ պատարագին՝ երեւեցաւ նմա մայր իւր յոյժ ահարկու տեսլեամբ: Եւ երկու վիշապ փաթաթեալ զնովաւ. եւ բերան վիշապին՝ մին ի մին ծծին. եւ մին ի միւսն. զարմացաւ եւ ասէ՝ ո՞վ ես դու. եւ ասէ՝ ես եմ մայրն քո: Եւ եհարց՝ զի՞նչ եղել քեզ. եւ ասէ՝ իջի յատակս դժոխոց: Եւ ասէ՝ ես գիտէի թէ ի հրեշտակաց դասս կանգնել ես. զի բազում բարութիւնս արարեալ. պահս՝ աղօթս՝ ողորմութիւնս. արդ զի՞ եղել պատճառ քո. եւ այդ վիշապքդ զի՞նչ նշանակեն: Ասէ մայրն. զի ծանր մեղս թաքուցի վասն ամօթոյ՝ եւ զամենայն բարութիւնս վասն այն առնէի ի որ իմ հարկիքս ոչ պակասէին. վասն այն այժմ խաղք եղէ յաւիտեանս յաւիտենից: Այս երկու վիշապքս՝ երկու սատանայն են, որք ծծեն զծիծս իմ երկու որդուցս փոխարէն զորս ծնայ եւ սպանի. եւ ոչ կերին զկաթն իմ: Վասն այն տանջեն զիս յաւիտեանս յաւիտենից. զայս ասացեալ՝ եւ դարձաւ ի դժոխս. ապա ուրեմն ոչ է պարտ թաքուցանել զմեղս վասն ամօթոյ: Չի սովորութիւն է՝ որ աղքատ եւ խոցաւոր մարդ նստի ի պատշաճ տեղի՝ եւ ողորմութիւն խնդրէ, ոչ ցուցանէ զողջ անդամս. այլ ծածկէ եւ զխոցն ցուցանէ. զի առաւել ողորմութիւն առցէ. իսկ եթէ զխոցն ծածկէ, եւ զառողջն ցուցանէ, տգետ է այնպիսին. եւ ոչ առնու ողորմութիւն: Այսպէս եւ խոստովանութիւնն՝ դուռն է երկնային եկեղեցւոյն. եւ մարդ. որ է ի մեղս մահու չափ՝ խոցաւոր է հոգին. վասն այն պարտ է որ զխիստ ծանր մեղսն յայտնէ խոստովանահօրն որ է դռնապան երկնից. զի առցէ ողորմութիւն յԱստուծոյ եւ ի հրեշտակաց: Այլ որք զխոցն ծածկեն, այսինքն զմահու չափ մեղսն, եւ զողջ տեղին ցուցանեն որ է բարի գործն, այնպիսիքն ոչ առնուն ողորմութիւն. այլ տանջանս յաւիտենից եւ նախատինս: Տասներորդ՝ պիտոյ է զի խոստովանութիւնն յատուկ վասն ինքեան լինի. այսինքն, զիւր մեղսն խոստովանի, ոչ զայլոյ. զի ոչ է պարտ որ կինն զանգատի յառնէն եւ զնոսա մեղսն յայտնէ. եւ ոչ այրն զկնոջն. այլ զիւր մեղսն պարտ է յայտնել, եւ ոչ զայլոց մեղս եւ զթշնամւոյ իւրոյ: Եւ ոչ է պարտ որ իւր մեղացն թեր լինի եւ յայլոց վերայ ձգէ. այլ պարտ է որ զինքն մատնէ: Այլեւ ոչ է պարտ

զգործակցին անունն յիշեր ի խոստովանութիւնն թէ կայ հնար. զի առանց քո մեղացն՝ զգործակցին մեղսն յայտնել կարես: Եւ աստ գիտելի է՝ զի որ խոստովանի եւ խռովեալ է հետ այլոց, եւ ոչ կամի հաշտիլ, ոչ է պարտ զնա արձակել մինչեւ հաշտեսցի: Չի քրիստոս հրամայէ յաւետարանին Մաթեոսի. (թէ ոչ թողուցուք մարդկան գյանցանս, եւ ոչ հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ:): Մետանասերորդ՝ պիտոյ է զի խոստովանութիւնն ծածուկ լինի ի կողմանէ խոստովանահօրն, եւ ի կողմանէ խոստովանորդոյն. զի ոչ է պարտ խոստովանողին յայտնի ասել զմեղս իւր առաջի մարդկան. զի բազումք գայթակղին յայնմ կողմանէ. եւ պատճառ առնուն եւ անկանին ի մեղս: Այլեւ պարտ է՝ զի խոստովանահայրն ծածկէ զմեղս եւ ոչ յայտնէ՝ թէ մասն մասն արասցենեզ զնա. եւ թէ խիստ նեղեն, կարէ երդնուլ թէ ես զնորա մեղսն ոչ գիտեմ. այս երդումնս ճշմարիտ է. զի ոչ գիտէ յայնմ կողմանէն որ մարդ է. այլ գիտէ յայնմ կողմանէն՝ որ Աստուծոյ երեսփոխան է: Չի մեղաւորն ոչ խոստովանի քահանային յայնմ կողմանէն որ մարդ է, այլ յայնմ կողմանէն՝ որ յԱստուծոյ տեղին: Վարդապետք ասեն թէ՝ զոչ ինչ իր այնպէս պակաս գիտեմ, զինչ զայն իրն որ խոստովանութեամբ գիտեմ: Այլ զոր ինչ որ գիտեմ, աւելի գիտեմ քան զայն, որ խոստովանութեամբ գիտեմ, զի զայն իրն որ ոչ գիտեմ, կարեմ ուսանիլ եւ այլոց յետ ասել. այլ զոր խոստովանութեամբ գիտեմ, ոչ կարեմ գիտել կամ ասել: Եւ խոստովանութիւնն այնպիսի ամուր փակ է եւ կուպղայ, որ զԱստուծոյ բերանն փակէ. զի զայն մեղսն զոր խոստովանեալ է, Աստուծոյ ոչ յայտնէ. եւ այնպէս ամուր փակէ զբերան քահանային, որ ոչ է արժան բնաւ ասել, թեպէտ եւ սպանցեն զնա: Եւ այն քահանայն որ սատանայութիւն առնէ եւ զխոստովանութիւնն յայտնէ, պարտ է ի կարգէն լուծանել, եւ ղնել ի զընտան մինչեւ ի մահ. զի այլ ոչ տեսցէ զարեւ: Վասն զի յոյժ ծանր մեղք է զխոստովանութիւնն յայտնելն. եւ քակտումն է եկեղեցւոյ. եւ ոչ է պարտ խոստովանիլ այն քահանային որ յայտնէ. եւ ոչ է պարտ թէ մնայ առանց խոստովանութեան, այլ ընտրել արժանի է զխոստովանահայրն, որ զխորհուրդ խոստովանութեանն մինչեւ ի մահ պահէ: Եւ աստ գտելի է՝ զի խորհուրդ խոստովանութեանս՝ ընդհանուր յամենայն քրիստոնեայսն էր. այլ վասն վատթար խոստովանահարց որք յայտնեալեն զմեղս բազմաց, խափանեալ է աշխարհս արեւելից. որպէս յասորոց եւ ի Յակոբ կաց՝ որք բնաւ ոչ խոստովանին: Եւ այլ ազգք որք խոստովանին՝ ահիւ եւ դողութեամբ խոստովանին. եւ երկնչին չար քահանայից խոստովանիլ, թէ մի յայտնեսցեն զմեղս իւրեանց: Երկոտասաներորդ՝ պիտոյ է զի խոստովանութիւն բազում անգամ լինի: Եւ այս երկու ազգ իմանի. մին՝ թէ ոք բազում անգամ ի մին մահու չափ մեղսն անկանի, պարտ է բազում անգամ խոստովանիլ: Եւ այս հրաման է եւ ոչ խրատ: Երկրորդ՝ որ զմահու չափ մեղսն զոր մին անգամ խոստովանեալ է, թէ այլ խոստովանի՝ օգտակար է զի քան որ մարդն շատ խոստովանի զխոստովանած մեղսն՝ տանջանքն թեթեւանան. եւ ողորմութիւնն Աստուծոյ իջանէ առատապէս. այլ այս ոչ է հրաման, այլ խրատ: Չի թէ՛ ոք զմահու չափ մեղսն խոստովանի ուղիղ, բաւական է առ ի փրկութիւն. բայց թէ բազում անգամ խոստովանի զմին մեղսն, բազում պսակ է նորա: Եւ աստ երեք ինչ պարտ է գիտել: Նախգի՝ պարտ է յառաջ քան զխոստովանութիւնն՝ խոկալ զամենայն մեղս իւր եւ ի միտ ածել. զոր առաջի խոստովանահօր ի լման ասել: Եւ բազումք որք յանկարծակի գան ի

խոստովանութիւն. եւ մոռանան եւ ոչ ինչ խոստովանին. եւ այս ոչ է բարի. քանզի հիւանդին յառաջ քան զդէղն, շարպաթ խմել տան՝ որ կակղացուցանէ զցաւ եւ պատրաստէ: Եւ ապա առնու զծանր եւ զդառն գեղն՝ որ զամեն ցաւն հանէ: Այսպէս յառաջ քան զխոստովանութիւնն որ դառն դէղն է՝ պարտ է որ շարպաթ խմէ. այսինքն, որ խոկայ եւ ի միտ ածէ, զի ի ժամ խոստովանութեանն զամենայն ի վայր լնու: Երկրորդ գիտելի է՝ զի ի խոստովանութիւնն ոչ է պարտ խառնել խօսս եւ պատմութիւն՝ որ ոչ ունի զդիտաւորութիւն խոստովանութեանն. այլ միայն զմեղսն պարտ է ասել: Եւ ոչ է պարտ ի խոստովանութիւնն զբարի գործսն ասել. այլ միայն զչարս: Չի խոստովանութիւնն նման է երակ կարելոյ. յորժամ ոք երակ առնու, յայնժամ է օգտակար, որ վատ առողջ արիւնն ի դուրս ելանէ. եւ առողջ արիւնն ի տեղին մնայ եւ սնուցանէ զմարմինն: Իսկ այն երակ առնուլն վատ է, որ առողջ արիւնն ի դուրս ելանէ. եւ վատն ի տեղին մնայ: Բարի գործէն նման է առողջ արան. եւ չար գործն վատ արեան: Որ ի խոստովանին զբարի գործսն ծածկէ, այն բարի խոստովանութիւն է. եւ յայտնէ զչար գործէն: Այլ որք յայտնեն ի խոստովանութիւնն զբարի գործս՝ եւ ծածկեն զչար գործս՝ այնպիսի խոստովանութիւնն վնասակար է: Դարձեալ՝ խոստովանահայրն նման է երակահատի. եւ լեզուն նշտրակի. որ հարկանէ հարցմամբ զսիրտ մեղաւորին. այսինքն, որ իմաստութեամբ հարցանէ զգանազան մեղսն: Իսկ յորժամ երակառուին աչքն վատատես լինին եւ ձեռն գողայ, երկիւղ կայ. զի յորժամ հարկանէ զերակն. հարկանէ զջիւն. եւ բազում վնաս առնէ: Այսպէս խոստովանահայրն որ տգետ է, կոյր է, եւ ոչ գիտէ թէ ո՞րն է մեղք, կամ ո՞րն առաքինութիւն: Չի որ մահու չափ մեղք է եւ ծանր՝ զայն մեղք ոչ համարի, եւ որ ոչ է մեղք զայլ մեղք հաշի եւ զայն հարկանէ, եւ դողայ ձեռն՝ այսինքն, որ ոչ առնէ զարդար դատաստան մեղաւորին, այլ վասն կաշառաց զուղին դատաստանն թիրէ, եւ թոյլ տայ մեղաւորին մնալ ի մահու չափ մեղսն, երկիւղ կայ խոստովանիլ այնպիսույն: *Երրորդ գիտելի է՝ զի խոց որ ծայրն ի դուրս լինի եւ ի բաց, հեշտ է բժշկել. այլ յորժամ ի ներսի կոյսն լինի, ոչ բժշկի. այլ սպանանէ զմարդն: Այսպէս յորժամ վեր մահու չափ մեղացն խոստովանութեամբն յայտնի, փութով բժշկի. իսկ յորժամ թաքուցանէ ի սիրտն զմեղսն եւ ոչ խոստովանին, մեռանի հոգին: Եւ լինի երբեմն որ խոցն ծայր առնէ եւ բացուի՝ այլ ծակն նեղ է եւ թարախն ամեն ի դուրս չգալ. վասն այն ճառահն նշտրակաւն արձակէ զծակն՝ որ զամեն թարախն ի դուրս վայթ է: Այսպէս մեղաւորն յայտնէ զվերս մեղաց իւրոց առաջի քահանային. այլ զծակ խոցին նեղ առնէ. զի ոչ յայտնէ զչափ մեղաց իւրոց. վասն պարտ է խոստովանահայրն որ է հոգեւոր ճառահ՝ արձակացուցանէ զծակ խոցին մեղաց հարցանելովն: Որպէս ասել թէ՝ ոմն մարդ եկն առ խոստովանահայրն եւ ասէ. զարկի զոմն Կղերիկոս. եւ նա ասէ՝ փայտո՞վ հարեր թէ թրով. եւ նա ասաց՝ թրով. դարձեալ ասաց. թրին բերանո՞վ հարեր թէ կողովն. եւ ասաց. բերանովն: Դարձեալ եհարց. խոցեցե՞ր թէ սպանեցեր. եւ նա ասէ թէ սպանի: Ասէ խոստովանահայրն. ո՞վ թշուառական՝ սպանեալ ես եւ ասես թէ զարկի. ո՞րչափ ծանր է սպանանելն քան զհարկանելն: Երկրորդ գիտելի է՝ զի պարտ է մեղաւորին արագ խոստովանիլ եւ ոչ յապաղել վասն բազում պատճառի: Առաջին պատճառ է. զի թէ կրակն անկանի ի տուն ուրումն, ոչ յապաղէ տունուտերն. այլ շուտով շիջուցանէ զկրակն ջրով կամ քացախով. այսպէս մահու չափ մեղքն՝ դժոխային հուր է որ այրէ զհոգին. վասն այն

պարտ է շուտով շիջուցանել ջրով արտասուաց ի խոստովանութանն, կամ քացախով չարչարանացն Զրիստոսի. եւ թէ ոչ՝ այրի յաւիտեան: Երկրորդ՝ զի մահն հանապազ սպասէ մարդկան. եւ ոչ գիտեմք զժամանակն եւ զտեղի մահուանն, թէ ե՞րբ մեռանիմք. վասն այն պարտ է խոստովանութեամբ պատրաստիլ. զի բազումք ծուլանան ի խոստովանութիւնն՝ եւ յանկարծակի մեռանին եւ իջանեն ի դժոխս: Երրորդ՝ զի որ զթշնամին որ բազում վնաս առնէ՝ բազում ժամանակ պահէ ի տուն իւր, այնպիսին յիմար է: Այսպէս սատանայ թշնամի է. եւ որ պահէ զնա ի տուն իւր, բազում վնաս առնէ: Եւ այս յոյժ սոսկայի է. զի սատանայ ոչ միայն մեր է թշնամի, այլ Աստուծոյ: Եւ թէ որք զթշնամի թագաւորին պահէ՝ յորժամ գիտենայ թագաւորն, բազում եւ չարաչար մահուամբ կորուսանէ զնա. վասն այն պարտ է շուտով զնալ առ խոստովանահայրն որ է ի տեղի Աստուծոյ. եւ մատնէ զթշնամին: Չորրորդ՝ զի որ ի մահու չափ մեղս է՝ է ի բերանն սատանայի. եւ որք ծուլանան ի խոստովանութիւնն, ոչ կամին զերծանիլ ի բերանոյ նորա. եւ յիմարագոյն են այնպիսիքն քան զանասունս: Չի անասունք յոր ժամ անկանին ի բերան պատառոզ գազանաց, անդ աղաղակեն եւ հնարք փրկութեան խնդրեն: Իսկ անզգամ մեղաւորն՝ բազում ամ ի բերան սատանայի կայ, եւ ոչ երբեք աղաղակէ կամ խնդրէ հնար փրկութեան. վասն այն սատանայ զբազումս կլանէ եւ իջուցանէ ի դժոխս, որ է փոր սատանայի եւ լի մեղօք: Հինգերորդ՝ զի որ ծանր հիւանդութիւն ունի պարտ է շուտով երթալ առ բժշկն եւ ցուցանել նմա. զի յետ մահուն՝ բժիշկն ոչ կարէ օգնել: Իսկ հոգեւոր հիւանդութիւնն՝ ծանրագոյն է քան մարմնաւորն. վասն պարտ է փութով երթալ առ բժիշկն որ է խոստովանահայրն եւ խոստովանիլ. զի յետ մահուն՝ ոչ կարէ օգնել խոստովանութիւնն. զի դժոխայինքն յայտնապէս. խոստովանին զմեղս իւրեանց ի դժոխս, բայց ոչ օգտին: Վեցերորդ՝ զի թէ ոք եղեալ է ի բանտ առ ի սպանանիլ, եթէ դուռն բանտին փակած է՝ ոչ կարէ փախչել. իսկ եթէ ի բաց է, կարէ փախչիլ: Այսպէս որ է ի մահու չափ մեղս՝ է ի բանտի եւ մահապարտ. եւ դուռն բանտին՝ է բերան մեղաւորին. եւ այս ոչ ունի փակ. յորժամ խոստովանի զմեղս իւր, ի նմին ժամու ել ի բանտէ մեղացն. վասն այն յիմար են այնոքիկ, որք ծուլանան ի խոստովանիլ զմեղս: Եօթներորդ՝ զի թէ սառաֆ կամ վաճառական բանայ զգանձս իւր եւ աղաղակէ առ ամենեստեան թէ՝ որ փոխ ունիք՝ բերեք որ ես ոսկւոյ եւ արծաթոյ փոխեմ. եւ ոչ անտաշ քար ունիք, բերեք որ ես պատուական ական փոխեմ. եւ յորժամ զայս լսէին մարդիկ, ոչ ծուլանային. այլ շուտով գային: Վաճառականս այս՝ է խոստովանահայրն եւ վարդապետն. եւ զանձատուն նմա է եկեղեցին՝ որ լի է բազում ականք եւ մարգարտով. յամենայն օր ձայնէ յորժամ քարոզ առնէ եւ ասէ. ով մեղաւորք՝ բերեք զձեր մեղսդ որ զալպ փող է. որ տամ ձեզ ոսկի եւ արծաթ. այսինքն, զթողութիւնն. բերեք զմեղսդ ձեր եւ զխստասրտութիւնդ՝ որ ծանր է քան զքար եւ կարծր. եւ առեք ձեզ մարգարիտ եւ պատուական ականսս. այսինքն, զփառս հրեշտակաց: Եւ յոյժ հեղձ են որք ոչ փոխեն զփող ընդ ոսկւոյ. եւ թէ յայսպիսի զալպ ստակես լինի ի մահուն օրն ի սնտուկ մարդոյն, այսինքն ի հոգին, յայնժամ առաքին նոքա ի դժոխս: Չոր օրինակ՝ եթէ ոք կարէ զղալպ ըստակ, յերժամ գտանէ թագաւորն, առժամայն սպանանէ զնա. վասն այն ոչ է պարտ պահել զմեղսն որ է զալպ ստակ. այլ շուտով փոխել: Ութներորդ՝ զի որչափ է մարդ ի մահու չափ մեղս՝ բարկութիւնն Աստուծոյ է ի վերայ նորա.

Եւ ունին Աստուած ի ձեռին իւրում նետ եւ աղէղն, զի սպանցէ զմեղաւորն. որպէս ասէ Դաւիթ. (զսուր իւր սրեալ է՝ եւ զաղէղն իւր լարել.) եւ յորժամ յամէ մեղաւորն ի մահու չափ մեղս, առաւել հեռանայ յԱստուծոյ: Եւ Աստուծոյ նետն՝ այսինքն դատաստանն՝ առաւել հարկանէ. եւ մեղաւորն ոչ կարէ փախչիլ ի նետէն, որ է բարկութիւնն Աստուծոյ. զի նետն Աստուծոյ հասանի յերկնից ի դժոխս. եւ յարեւելից յարեւմուտս. եւ ի հիւսիսոյ ի հարաւ. որպէս ասէ Սիրաք: (Մի յապաղէր դառնալ առ Տէր. եւ մի ընկենուր ի վաղիւն. զի մի յանկարծակի հասցէ բարկութիւնն նորա եւ կորուսցէ զքեզ յաւուր վրէժ խնդրութեան:) Վասն այն պարտի շուտով դառնալ ի մեղաց. զի մի անկցի ի վրէժխնդիր բարկութիւնն Աստուծոյ. եւ հաշտիլ ընդ նմա խոստովանութեամբ առաջի խոստովանահօրն որ է ի տեղի Աստուծոյ: Իսկ որք ոչ խոստովանին մինչեւ ի հիւանդութիւնն իւրեանց. յիմարք են այնպիսիքն վասն հինգ պատճառի: Առաջին՝ զի յորժամ յայտնեն զմեղս իւրեանց առաջի հոգեւոր բժշկին, եւ խրատ եւ պատիժ զոր դնէ, ոչ կարեն կատարել. զի ոչ կարեն պահել. ոչ կարեն աղօթիլ զի տկար են. վասն այն պարտ է յառաջ քան զհիւանդանալն խոստովանիլ: Երկրորդ՝ զի բազում անգամ ի հիւանդութեանն լեզուն կապի եւ ոչ կարէ խօսիլ. եւ թէպէտ լեզուն արձակէ, այլ վասն բազում ցաւոցն եւ խիստ, եւ վասն ընտանեացն որ հոգ ունի, ոչ կարէ յստակ խոստովանիլ որպէս ի ժամանակ առողջութեան: Երրորդ՝ զի յորժամ յապաղի եւ ոչ խոստովանի մինչեւ ի խորին հիւանդութիւնն, եւ ապա խոստովանի վասն ահի մահուն, ոչ է ընդունելի այնպիսի խոստովանութիւնն առաջի Աստուծոյ. զի բռնութեամբ լինի եւ ոչ կամաւ: Չոր օրինակ՝ զմուռն ասեն երկու կերպիւ լինիլ. մին այն է՝ որ ինքեամբ ի ծառէն ելանէ. երկու է՝ որ բռնութեամբ հանեն յորժամ ծակեն սրով: Այն որ ինքեամբ ելանէ՝ կարի գեղեցիկ է եւ անուշահոտ. բայց համն դառն է. վասն այն սպանանէ զորդունսն. եւ անապական պահէ զմարմինն: Չխոստովանութիւնս ցուցանէ՝ որ յոյժ գեղեցիկ ունի հոտ առաջի Աստուծոյ. բայց համն դառն է. այսինքն, զի ամաչէ խոստովանօղն յայտնել զաղտեղութիւնս իւր: Եւ սպանանէ զորդունս. այս է՝ զանցեալ գործած մեղսն: Եւ անապական պահէ զմարմինն. այսինքն, ի մեղացն որք գալոց են: Եւ այս հոգեւոր զմուռն որ է խոստովանութիւնն՝ յորժամ կամաւ լինի, յոյժ գեղեցիկ է ի ժամանակս առողջութեան. այլ որ յապաղէ մինչեւ ի մահու հիւանդութիւնն, եւ ապա խոստովանի, ոչ է հաճոյ. վասն այն ասէ Սիրաք: (Կենդանի իցես եւ առողջ՝ խոստովանեա. եւ տուր փառս Աստուծոյ. եւ ցնծա ուրախութեամբ նորեն:) Չորրորդ՝ զի որ յամէ խոստովանիլ մինչեւ ի մահու օրն եւ ի ծերութիւնն, լինի որ ինքն մոռանայ զմեղսն. այլ Աստուած եւ սատանայ ոչ երբէք մոռանան զմեղս նորա: Եւ այլ թէպէտ ոչ է մոռացեալ, այլ ամաչել խոստովանիլ զմեղսն ի ծերութեան ժամանակս զոր ի տղայութեանն գործեալ է: Վասն այն պարտ է յորժամ զմեղս գործեն՝ շուտով խոստովանին: Դիւզերորդ՝ զի յորժամ երթայ քահանայն առ հիւանդն՝ վասն Բ իրաց երթայ. խոստովանացուցանելոյ, եւ հաղորդելոյ. եւ տունն լսանի մարդով. եւ յայնժամ դժուար է յերկար խոստովանացուցանել. զի մարդիկ դժուար ելանեն ի դուրս. եւ թէ ելանեն, հիւանդն ամաչէ յերկար խոստովանիլ: Վասն այն պատրաստիլ պարտ է խոստովանութեամբ յառողջութեանն. զի յորժամ հիւանդանայ, քահանայն երթայ տեսանել զհիւանդն. եւ ի լման զխոստովանութիւնն լսէ. եւ ապա յետոյ տանի

գիաղորդութիւն: Այլեւ որք յապաղեն գիտատրամութիւնն յաղուհացս մինչեւ ի յետին շաբաթն՝ կարի յիմարութիւն է վասն հինգ պատճառի: Առաջին՝ զի նախ պարտ է ձեռն լուանալ, եւ ապա հաց ուտել. զի անպատշաճ է աղտեղի ձեռքը հաց ուտել եւ ապա լուանալ: Այսպէս պահքն եւ աղօթքն՝ են հոգեւոր կերակուր. պարտ է նախ խոստովանութեամբ լուանալ. եւ ապա ուտել. յիմարք են նոքա որ ուտեն նախ զհոգեւոր կերակուրն. եւ ապա լուանին. այսինքն, որք պահեն զպահս, եւ մերձ ի զատիկն խոստովանին: Չի պարտ է նախ զկարասն լուանալ՝ եւ ապա զգինին ի ներս ածել: Երկրորդ՝ զի գետն շաբաթուն աշխատանս կորուսանեն վասն մի պահու աշխատանացն. զի մին օր պասն որ յետ խոստովանութեանն լինի, աւելի արժանէ քան զքառասուն օր պասն, որ մեղս ունի եւ չէ խոստովաւալ: Երրորդ՝ զի Աստուած յառաջ կերակուր խնդրէ եւ յետոյ տան. այսինքն, զխոստովանութիւնն. զի Աստուած յառաջ խնդրէ զխոստովանութիւնն՝ եւ ապա զպահս եւ զաղօթս. որպէս ասէ Դաւիթ: (Կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ. եւ ապա սաղմոսիւք աղաղակեսցուք.) թէ զայս կարգս փոփես, քո հոգեւոր հաց կերոյթդ ոչ թի՛ հեշտ Աստուծոյ: Չորրորդ՝ զի որք յետոյ քան զպահս խոստովանին, նման են այնոցիկ՝ որք նախ զարտն հնձեն. եւ յետոյ քաղ հանեն. կամ որք զայգին կթեն՝ եւ ապա բրեն: Վաս զի պահքն եւ աղօթքն եւ ողորմութիւնն՝ հունձ են. իսկ խոստովանութիւնն՝ քաղհանել՝ յատել եւ բրել: Զինգերորդ՝ զի որք յետոյ քան զպահս խոստովանին, նման են այնոցիկ՝ որք մլիամ դնեն ի վերայ եւ սլաք նետին ի ներս լինի. նախ պարտ է զսլաք մեղացն ի բաց հանել խոստովանութեամբ. եւ ապա մլիամ պահոց եւ աղօթից ի վերայ դնել, զի փութով առողջացի: Իսկ յայսմանէ երեւի թէ՛ ոչ է պարտ յապաղել ի խոստովանելոյ. այլ պարտ է շուտով խոստովանիլ. զի հիւանդն որ ջերմութեամբ վառեալ լինի, յորժամ ածիլեն զմազն նորա, շուտով թեթեւանայ ի ցաւոցն: Այսպէս մեղաւորն որ այրի մահու չափ մեղօք՝ յորժամ մաքրեն զհոգի նորա ածելեալ խոստովանութեանն, յայնժամ զօրանայ: Վասն այն Յեզեկիելի Ե գլուխն ասէ: (Որդի մարդոյ՝ առ քեզ սուսեր Յեսանասուր. եւ ածիցես դու այնու զգլխով քով եւ զմուրուօք. եւ առցես քեզ կշիռ. եւ կշռեսցես զնոսա. զչորս մասն հրով այրեսցես. եւ զսուրն արձակեսցես զկնի նոցա. եւ առցես անտի սակաւ ինչ թուով. եւ ծրարեսցես ի տուտն հանդերձի քոյ:) Իսկ հոգեւորապէս՝ մազն զմեղսն ցուցանէ. եւ սուր ածելի՝ զխոստովանութիւնն. եւ խոստովանահայրն է դալաք. պարտ է որ զգլուխ՝ այսինքն զմիտս մեղաւորին մաքրէ յամենայն մեղաց: Եւ զայն մեղսն պարտ է չորս բաժին առնել: Մին մասն մեղաւորացն աղտեղութիւնն է. եւ զայն մասն պարտ է հրով այրել. այսինքն, հրով աստուածային սիրոյն՝ մաքրել զաղտեղութիւն մեղացն: Երկրորդ մասն է գործ մեղացն, եւ զայս մասն պարտ է սրով խոստովանութեանն մաքրել. զի ոչ է պար զգործ մեղացն միայն խոստովանիլ, այլ զամենայն պատարագս որք ծանրագոյն ցուցանեն: Չոր օրինակ՝ որպէս գողութիւնն մահու չափ մեղք է՝ այլ բազում ունի պարագայս. զի որ գողացեալ է ինչ յեկեղեցւոյ, ծանագոյն է. կամ յաւուրս պահոց եւ տօնից արարեալ է զգողութիւնն. կամ թէ՛ շատ է գողացեալ կամ քիչ. կամ ի հարստէ կամ յաղքատէ. թէ շատ անգամ է արարեալ համարով, եթէ սակաւ. այսպէս պարտ է խոստովանիլ զպարագայս մեղացն: Երրորդ մասն՝ է հեշտութիւն մեցացն. որ այլ ոչ անկանի ի սիրտն. եւ թէ դարձեալ ի

միտսն ընկենու սատանայ զհեշտութիւն մեղացն անցանելոյ, պարտ է վերստին խոստովանիլ եւ ամօթ եւ նախատինս կրել: Չորրորդ մասն՝ է գարշելի հոտ մեղացն. եւ զմասնս զայս՝ պարտ է ի հանդերձս ծրարել. այսինքն, զգարշելի հոտ մեղացն ի միտ ածել. եւ զմեզ առաջի Աստուծոյ խոտան եւ գարշելի համարիլ: Իսկ զսուր խոստովանութեանն պարտ է սրել յեսանաւ. այսինքն, երկիւղի դատաստանին Աստուծոյ. զի որ խոստովանի եւ որ խոստովանութիւն առնու՝ պարտին երկնչիլ յԱստուծոյ որք ո՛չ ձանձրանան. խոստովանողն յասելոյն. եւ խոստովանահայրն ի հարցանելոյն. եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք պատիւ եւ գոհութիւն յաւիտեաննս ամեն: Յետ այսորիկ ասիլ է վասն աղօթից՝ պահոց եւ ողորմութեան:

Նորին առաջին քարոզ վասն աղօթից. ի Բանն առաքելոյն յառաջին Տիմօթեոսի: (Աղաչեմ զձեզ նախ զամենայն ինչ՝ առնել աղօթս ինդրուածս պաղատանս եւ այլն:) 1 Տիմ. 2. 1: (Գլուխ. 2Ա)

Նախ գիտելի է՝ զի երեք են տեսակ բարի գործոցն. այսինքն, Պահքն՝ Աղօթքն՝ եւ Ողորմութիւնն: Եւ թէ վասն է՞ր սոքա երեք են: Ասեմք վասն վեց պատճառի: Նախ՝ ամենայն հոգեւոր գործք՝ վերածին առ աղօթսն: Եւ ամենայն՝ գործ գթութեան վերածին առ ողորմութիւնն: Եւ ամենայն գործ կշտամբելոյ զմարմինն՝ վերածին առ պահսն: Երկրորդ՝ յերեք բաժանին ամենայն մեղք. այսինքն, (ցանկութիւն մարմնոյ. եւ ցանկութիւն աչաց. եւ ամբարտաւանութիւն աստի կենաց. որպէս ասէ Յակօբոս ի կաթողիկէն:) Արդ՝ պահօքն յետս դառնամք ի ցանկութենէ մարմնոյն: Ողորմութեամբն ի ցանկութենէ աչաց: Աղօթիքն ի յամբարտաւանութենէ աստի կենացս: Երրորդ՝ պատճառ՝ զի պահօքն կարգաւորի մարդն առ ինքն. ողորմութեամբն առ ընկերն. եւ աղօթիքն առ Աստուած: Չորրորդ՝ պատճառ՝ զի երիւք հաստատեաց զմարդն. այսինքն, մարմնով եւ հոգւով եւ ընչիւք: Եւ ի սոցանէ բաժին ինդրէ Աստուած, պահքն է ի մարմնոյ բարեաց. աղօթքն ի հոգւոյն. ողորմութիւնն ի յընչիցն: Հինգերորդ՝ պատճառ՝ զի պարտական մարդն՝ երեք կերպիւ վճարէ. այսինքն, կամ պատժիլով. կամ տալով. կամ աղաչելով: Եւ մեք զպարտս մեղացն այսպէս վճարեմք. պատժեմք զմեզ պահելովն. տալով զփրկանս ողորմութեամբն. եւ աղաչեմք աղօթիքն: Վեցերորդ՝ պատճառ՝ զի երեք են թշնամիք հոգւոյս. այսինքն, մարմինս, աշխարհս, եւ սատանայ. եւ երիւքս այսոքիւք պատերազմիմք եւ յաղթեմք զսոսա: Չմարմինս պահօք յաղթեմք. եւ զաշխարհս ողորմութեամբ. եւ զսատանայ աղօթիւք: Այս է պատճառն որ երեք են ամենայն բարեգործութիւնք քրիստոնէից: Երկրորդ գիտելի է՝ զի աղօթքն մեծ եւ սքանչելի գործ է քան զայլսն: Եւ այս վասն երկոտասան պատճառի: Նախ՝ աղօթքն պարտք է եւ հարկաւոր. եւ ողորմութիւնն եւ պահքն կամաւոր եւ ի սիրոյ. թէ կամիս՝ պահես եւ ողորմիս. եւ թէ չկամիս՝ ոչ: Այլ աղօթքն՝ պարտ է՝ վասն այն վճարել պիտի: Եւ հարկաւոր է՝ առանց որոյ հոգին ոչ կարէ կեալ. վասն այն ասէ Տէրն. (պարտ է յամենայն ժամ յաղօթս կալ, եւ ոչ ձանձրանալ:) Երկրորդ՝ զի պահքն եւ ողորմութիւնն՝ երբեմն լինին. այլ աղօթքն յամենայն ժամ. որպէս ասէ առաքեալն. (յամենայն ժամ աղօթս արարէք:) Եւ մարգարէն ասէ. (օրհնեցից զՏէր յամենայն ժամ եւ

այլն:) Երրորդ՝ զի աղօթքն դիւրաւ կատարի. զի թէ տկար է կամ ծեր՝ ոչ պահէ. եւ թէ աղքատ՝ ոչ ունի ողորմութիւն: Իսկ զաղօթսն՝ ծեր եւ տղայ, առողջ եւ հիւանդ, հարուստ եւ աղքատ, առ ձեռն պատրաստ ունին: Չորրորդ՝ պահք եւ ողորմութիւն յարտաքին ընչիցն են բաժին. իսկ աղօթքն՝ ի ներս ի սուրբ սրտէ եւ յանձնէ պատարագ. (զոր Աստուած ոչ արհամարհէ:) Զինգերորդ՝ պահքն եւ ողորմութիւնս՝ մասամբ նուէրք են Աստուծոյ. իսկ աղօթքն՝ բոլորիւ. զի մտօքն մաղէ. եւ սրտիւն աղաղակէ: Աջօքն արտասուէ. եւ ականջովն լսէ: Բերանովն սաղմոսէ. եւ ձայնիւն խօսի. եւ բոլոր մարմնովն ծունր կրկնէ: Վեցերորդ՝ որպէս արդարութիւնս յայլ առաքինութիւնս խառնի. ի խոհեմութիւնս, յարութիւն, եւ յայլսն. այսպէս աղօթքն՝ յամենայն բարեգործութիւնս. զի յորժամ պահեմք կամ ողորմիմք, աղօթեմք՝ զի ընդունելի լիցի: Եօթներորդ՝ զի պահքն մեր եւ ողորմութիւնք՝ այժմ յերկիսս ելանեն եւ գանձին. այլ մեք ոչ. իսկ աղօթիւք եւ մտօք՝ այժմ մեք յերկիսս ելանեմք. եւ մտանեմք ի ներքին կողմս վարագորին, եւ ընդ Աստուծոյ խօսիմք: Ութներորդ՝ պահօք առ մեզ կարգաւորիմք. եւ ողորմութեամբ առ ընկերս, իսկ աղօթիւք՝ առ Աստուած կարգաւորիմք, եւ ընդ Աստուծոյ խօսակցիմք: Իններորդ՝ պահքն սուզն է. եւ ողորմութիւնս տրտմութեամբ. որպէս օրինականս գնաց խոժոռեալ. իսկ աղօթքն՝ որքան յերկարի՝ ուրախանայ զղօթօղն. զի անճառելի խնդութիւն եւ լոյս եւ սեր ծագի ի միտս աղօթողին. վասն այն ասէ Դաւիթ. (ուրախ լիցին սիրտք այնոցիկ՝ որք խնդրեն զՏէր:) Տասներորդ՝ ի պահոցն սատանայ ոչ փախչի. զի նա հանապազ ի պահս է. եւ ողորմութեանս մերձ լինի եւ խափանէ. այլ յաղօթիցն փախչի. յորժամ յիշեմք զանունս Աստուծոյ եւ զայլ սրբոց, եւ կամ խաչ յերեսս նկարեմք, որպէս խաւար ի լուսոյ հալածի. եւ ամենայն որոգայթ նորա ցրուի: Մետասաներորդ՝ թէ պահես՝ քեզ է օգուտ. եւ ողորմութիւն որոց ետուր. իսկ աղօթքն՝ քեզ եւ այլոց՝ եւ ամենայն աշխարհի՝ արդարոց եւ մեղաւորաց՝ կենդանեաց եւ մեռելոց է օգուտ: Երկոտասաներորդ՝ աղօթքն այսպէս անուն յայտնէ. աղ՝ այսինքն, որպէս աղն յամենայն իր խառնի, եւ զամենայն ի համբերէ. այսպէս աղօթքն յամենայն բարի գործս խառնի. եւ քաղցր եւ ընդունելի առնէ Աստուծոյ: Այսպէս բարի է աղօթիցն գործ, քան զայլ տեսակս առաքինութեան՝ եւ հաճոյ Աստուծոյ: Երրորդ հարցումս, թէ զի՞նչ են աղօթք՝ խնդրուածք՝ պաղատանք՝ եւ գոհութիւնք: Գիտելի է նախ՝ զի աղօթքն խօսք է ընդ Աստուած. խնդրուածքն ներկային է. պաղատանքն հանդերձելոյն. գոհութիւնս վասն առեալ պարգեւացն: Երկրորդ ասեն թէ՝ աղօթքն է բաղձանք մարդոյ առ Աստուած սուրբ եւ համարձակ խօսիւք: Եւ խնդրուածքն է՝ որ լինի վասն հարկաւոր եւ ժամանակաւոր իրաց: Պաղատանքն է կալ առաջի Աստուծոյ եւ ժտել զհոգեւոր օգնութիւնս: Եւ գոհութիւնս է ի ճանաչմանէ երախտեացն Աստուծոյ: Երրորդ՝ աղօթքն է համբարձումս մտաց առ Աստուած ի ցուցանել զամենայն պակասութիւնս մեր: Եւ խնդրուածքն է՝ որ լինի վասն այնոր որ զամձն արժանանոր համարի առնուլ. որպէս խնդրուածքն որք լինին յետ բազում պահոց եւ ճնշելոյ զմարմինս: Իսկ պաղատանքն է՝ հայցել զողորմութիւն վասն չարչարանացն Զրիստոսի եւ սրբոց նորա: Եւ գոհութիւնս է՝ զովել զԱստուած վասն ընկալեալ բարեացն: Չորրորդ դարձեալ՝ աղօթքն է՝ որ լինի ի քահանայէն ի ժամ պատարագին յետ ժամամտին եւ Տէր ողորմեային: Եւ խնդրուածքն է՝ որ լինի ի ծածուկ նախ քան զպատարագն: Պաղատանքն է՝ որ լինի ի ներս ի

կանոնն վասն կենդանեաց եւ մեռելոց: Եւ գոհութիւնն է՝ որ լինի յետ հաղորդելոյն: Չորրորդ գիտելի է վասն աղօթից. զի ոմն աղօթէ պտղաւետ. եւ ոմն անպտուղ: Արդ՝ պտղաւետն բազում տեսակս ունի: Առաջին՝ որ լինի ամօթով եւ խոնարհութեամբ. որպէս աղօթք մաքսաւորին. (որ ոչ իշխեր զաչս ի յերկինս համբառնալ.) եւ անառակ որ դին ասեր. (հայր մեղայ յերկինս եւ առաջիքոյ. ոչ եմ արժանի կոչիլ որդի քո:) Չի որքան անհաճոյ է Աստուծոյ յանդգնութիւն մեղաւորին. նոյնքան հաճոյ է նմա աղօթք եւ խոնարհութիւն զղջացելոյն: Երկրորդ՝ որ լինի մաքուր եւ փափագանօք. որպէս աղօթքն շուշանայ որ ասեր. (Աստուած ծածկագետ՝ դու գիտես զի սուտ վկայես վասն իմ.) վասն որոյ փրկեաց զնա Աստուած. եւ զսուտ վկայսն զծերսն կորոյս: Երրորդ՝ է որ լինի ընդարձակ բաղձանօք. որպէս Մովսէս ասեր՝ (Եթէ թողուս զմեղս նոցա՝ թող. ապա թէ ոչ, եւ զիս ջնջեա ի դպրութենէն զոր գրեցեր:) Չորրորդ՝ որ լինի գոհացող ըղձմամբ. որպէս Պօղոս ասէ կողոսացոց. (աղօթից ստետ կացեք՝ տնտեալ ի նմին գոհութեամբ:) Այսոքիկ են պտղաւետ աղօթք: Իսկ անպտուղ աղօթքն՝ նոյնպէս ունի բազում տեսակս: Առաջին է կեղծաւորացն՝ որ լինի միայն շրթամբք. որպէս ասէ Եսայի. (Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս. եւ սրտիւք հեռացեալ մեկուսի են յինէն:) Չի ասեն վարդապետք թէ՛ որպէս ձայն առանց եղանակի է որպէս ձայն ճայից. այսպէս աղօթք առանց ջերմութեան սրտի, է որպէս բջիւն եգանց: Որպէս զանազանի ցորեան եւ յարդն, թեփն եւ ալիւրն, մորթն եւ կենդանին, նոյնպէս է ձայնական աղօթքն. եւ ջերմ սրտից: Չի որպէս զչար հովիւ՝ փոխանակ ոչխարին միայն զմորթն հատուցանէ Տեառն. որ չէ ընդունելի. (զի զողջակեզս զիւղալիցս մատուցից քեզ ասէ մարգարէն:) Երկրորդ՝ անպտուղ աղօթք՝ անհամբերին է փութանակի. որպէս Եղիա խնդրեաց մահ անձին իւրոյ յերրորդ թագաւորութեանցն: Երրորդ՝ է յանդգնաբարն. որպէս որդիքն զԵբեթեայ խնդրէին զարքայութիւնն առանց ըմպելոյ զբաժակն: Չորրորդ՝ ծաղրականն. որպէս փարիսեցւոյն. այնպիսիքն՝ ի յերկիրս ոչ համբառնան զձեռս. այլ ի յերկիր, անտի խնդրելով զվարձս: Ծաղրական վասն այն ասի՝ զի ոչ խնդրեն յԱստուծոյ զողորմութիւն. այլ իբրեւ զպարտս. որպէս ասէ. (պահեմ երկիցս ի շաբաթու եւ այլն:) Վասն այն Տեառն զընդդէմն ուսուցանէ. (յորժամ զամենայն առնիցեք՝ ասասջիք ծառայք անպիտան եմք:) Դարձեալ գիտելի է՝ զի աղօթքն յերկուս բաժանի: Նախ՝ որ վասն ինքեան ոք աղաչէ զԱստուած. վասն հոգւոյ կամ մարմնոյ արքայութեանն, եւ այլն: Երկրորդ՝ զի այլ ոք աղաչէ վասն նորա. եւ այն կոչի օգնականութիւն: Եւ զայս ունիմք նախ ի սրբոցն խնդրել՝ որք են յերկինս մերձաւորք Քրիստոսի. որպէս ասէ Յոր. (Եթէ տեսցես զոք ի սրբոցն՝ ապաւինեա ի նա:) Այս է որ ամենայն սրբոց՝ (յամենայն աւուր տօն կա տարեմք. եւ զբարեխօսութիւն նոցա խնդրեմք:) Երկրորդ՝ պարտ է որ ժողովուրդն խնդրէ ի քահանայէն. որպէս ասէ դէւտացոց. (աղաչեսցէ քահանայն վասն նորա. եւ թողցի նմա.) որպէս եւ քաւեաց Ահարօն վասն ժողովրդեանն. եւ դադարեցաւ սատակումն: Երրորդ՝ պարտին խնդրել զաղօթս ի միմեանց. եւ առաջնորդք ի ժողովրդոց. որպէս ասէ առակն. (Եղբայր յեղբօրէ օգնեալ.) եւ Պօղոս ի կողոսացոց խնդրէր. (աղօթս արարեք վասն մեր եղբարք. զի բացցէ մեզ Աստուած զդուռն քարոզութեան բանին.) եւ թէ՛ (պատերազմակից լինիլ ինձ յաղօթս:) Չորրորդ՝ պարտ է աղօթել վասն նոցա՝ որք ի Տէր մեռանին մարմնով. կամ

մեղօք հիւանդ են. որպէս ասէ Յակօբոս. (աղօթս արարեք ի վերայ միմեանց:) Եւ Յօհաննէս յառաջին կաթողիկէն ասէ. (եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս ոչ առ ի մահ, ինկրեսցէ եւ տացի կեանս մեղուցելոյն: Զինգերորդ գիտելի է՝ զի եօթն կերպիւ լինին աղօթքն հաճոյ: Նախզի՝ ոչ այլ ինչ խոկասցէ միտն՝ բայց զայն միայն զոր աղօթէ. այս է որ ասէ Պետրոս թէ՛ (լերուք զւարթունք յաղօթս:) Չի ասեն վարդապետք թէ՛ տգիտութեամբ աղօթէ, որ աղաչէ զԱստուած զի հայեցի ի նա. եւ նա ոչ ինքեան միտ ղնէ, եւ ոչ Աստուծոյ: Երկրորդ՝ որ մեծաւ բաղձանօք աղօթէ. որպէս ասէ յերկրորդ օրէնս. (ինկրեսցէք զՏէր Աստուած ձեր յամենայն սրտէ ձերմէ.) Եւ այն է աղաղակել սրտին՝ որպէս ասէ Տէր ցՍովսէ. (զի՞ գոչես առիս:) Երրորդ՝ ջերմ արտասուօք. որպէս Աննա ցաւագին անձամբ եկաց յաղօթս առ Տէր եւ ելաց լալով. վասն որոյ էառ զինկրտելին որպէս ասէ յառաջին թագաւորութեանց. զի ասեն վարդապետք թէ՛ արտասուք բռնադատեն զաղաչեալս: Չորրորդ՝ խոնարհութիւն. որպէս ասէ Դաւիթ. (հայեցաւ Տէր յաղօթս խոնարհաց. եւ ոչ արհամարհեաց զինկրտուածս նոցա.) որպէս քանանացին որ նմանեցոյց զինքն շահ՝ էառ զխընկրտելին. նոյնպէս եւ մաքսաւորն խոնարհութեամբ էջ արդարացեալ ի տուն իւր: Զինգերորդ՝ աներկբայութիւն. որպէս ասէ մարգարէն. (միամտութեամբ սրտի ինկրեսցէք զՏէր:) Չի երկմիտն ոչ առնու. որպէս Յակօբոս. (որ երկմիտն է, մի ակն ունիցի առնուլ ինչ յԱստուծոյ:) Եւ այս է պատճառն. զի ոչ հաւատայ թէ ամենակարօղ է Աստուած. եւ զամենայն բարիս մեր կամի: Վեցերորդ՝ վասն յերկարելոյն յաղօթս. որպէս աւետարանն Ղուկաս զանհրաւ դատաւորէն ասէ թէ, (վասն աչխատ առնելոյն՝ արար դատաստան. զի թէ վասն բարեկամութեանն ոչ տայցէ, սակայն վասն ժտութեանն տայցէ:) Եւ թէ ոք ասիցէ՛ (մի շատախօս լինիք ասէ Զրիստոս:) Ասեմք եթէ՛ յերկար աղօթելն ոչ է խոտան. զի նոյն Տէրն (հաներ զգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ ասէ Ղուկաս:) Այլ շատախօսութիւն է աւելորդ բանի ինկրտելն՝ զմարմնաւոր եւ զանարժան իրս: Եօթներորդ՝ է ջերմեռանդութիւն աղօթիցն. զի որպէս հուր եռացուցանէ զջուրն. այսպէս ջերմեռանդութիւնն զաղօթսն: Եւ որպէս ի ինկոյն ոչ ելանէ ծուխ, թէ ոչ ղնի ի հուրն. նոյնպէս եւ աղօթքն ոչ ելանէ առ Աստուած, եթէ ոչ ի ջերմ սրտէ. որպէս ասէ Դաւիթ. (ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քոյ Տէր:) Վեցերորդ գիտելի է՝ զի եօթն արգելմունք են աղօթից: Նախ՝ մեղք աղօթողին. որպէս ասէ սաղմոսն. (զմեղս թէ տեսանէի ի սրտի իմում, մի թէ լուիցէ՞ ինձ Տէր:) Չի որպէս գէջ ակն ոչ կարէ հայիլ ի լոյսն. նոյնպէս միտք մեղօք մածեալ՝ ոչ ընդունի զշնորհս Աստուծոյ: Երկրորդ՝ որ զանօգուտն ինկրէ. որպէս Պօղոս. զի մարմնոյն վերն ոչ բարձաւ. զի այն էր օգուտ նմա: Երրորդ՝ թէ անարժանք են վասն որոց ինկրէ. որպէս ասեր առ Երեմիա. (մի աղաչեր վասն դոցա. զի ոչ լսեմ քեզ:) Չորրորդ՝ չար խորհուրդքն արգելուն. որպէս ասէ սիրեցեքն. (ճանճք մեռեալք՝ զազրացուցին զիւզս անուշս.) մեռեալ ճանճք են չար խորհուրդքն՝ որք կորուսանեն զշնորհսն Աստուծոյ. եւ ի բաց մերժելի է. որպէս Աբրահամ զթռչունսն ի բաց մերժեր որք նստէին ի վերայ յօջելոյ պատարագին: Զինգերորդ՝ խստասրտութիւնն: Նախ ընդդէմ օրինանցն Աստուծոյ: Երկրորդ ընդդէմ աղքատաց: Երրորդ՝ ընդդէմ մեղուցելոց: Չի ասէ առակն. (որ ոչ լսէ օրինացն Աստուծոյ, գարշելի է աղօթք նորա:) Եւ դարձեալ ասէ. (որ ոչ լսէ տնակին, եւ Տէր ոչ լուցէ նմա.) Եւ Տէրն ասէ. (եթէ թողուցուք զյանցանս

Լոցա, թողցէ եւ հայրն ձեր գյանցանս ձեր:) Վեցերորդ՝ յետ աղօթիցն յաւելլու
 ի մեղս. որպէս ասէ Սիրաք: (Մինն աղօթէ, եւ միւսն անիծանէ. ո՞ւմ լսէ
 Աստուած.) այսինքն, որ այժմ աղօթէ, եւ զկնի հայիոյէ: Այլեւ մեղքն
 հեռացումն է յԱստուծոյ. վասն այն զաղօթսն ոչ լսէ. որպէս ասէ Դաւիթ. (ոչ
 հեռի արարին զանձինս իւրեանց ի քէն՝ կորիցեն:) Եօթներորդ՝ է թիւր
 խնդրելն. այս է՝ թէ խնդրեմք զկեանսն յաւիտենից բերանով, եւ ոչ սրտիւ.
 ըստ աղաղակի լռեմք. որպէս ասէ Դաւիթ. (լռեցի ես առ աղաղակելն իմում
 առ քեզ զօրհանապագ:) Այսպիսի աղօթքս՝ ոչ լինին լսելիք Աստուծոյ:
 Եօթներորդ գիտելի է՝ զի վասն բազում իրաց օգուտ եւ գովելի են աղօթք:
 Նախզի՝ բազում անգամ յորդորէ Տէրն ի սուրբ գիրս. որպէս ասէ Երեմիա:
 (Կարդա առիս եւ տաց քեզ պատասխանի.) եւ սաղմոսն՝ (կարդացէ առիս
 եւ ես լուայց նմա:) եւ Տէրն. (պարտ է յամենայն ժամ աղօթս առնել:) Չի թէ ոչ
 կամեր գտալն, ոչ յորդորէր ի նմին զխնդրելն. եւ նա առաւել կամի գտալն,
 քան մեք զառնուլն: Երկրորդ՝ օրինակ ունիմք ի Քրիստոսէ եւ ի սրբոց Լորա.
 որ անկարօտն էր աղօթից՝ այլ վասն մեղուցելոց ասէ. (հաներ զգիշերն ի
 գլուխ յաղօթսն Աստուծոյ.) եւ թէ՛ (եւ ի լեառն կալ յաղօթս.) եւ թէ՛ (նստարուք
 այրո՞ մինչեւ ես կացից յաղօթս.) եւ այլ բազումք: Երրորդ՝ աղօթքն յոյժ
 պատուական է: Նախզի՝ հրեշտակք մատուցանեն առաջի Աստուծոյ: Եւ
 դարձեալ՝ յորժամ աղօթեմք, ըստ Աստուծոյ խօսիմք եւ ընդ Աստուծոյ
 կեամք: Չորրորդ՝ օգուտ է աղօթքն ի կեանս յայս. զի երեք են որք ածեն
 զմարդն յաղաղակել. այսինքն, հուրն, եւ ջուրն, եւ թշնամիք. այսինքն, զի
 յամենայն օր բորբոքիմք ի խիղճէ մտաց ի հուր գեհենին. վասն որոյ ջուր
 արտասուացն շրջուցանէ: Դարձեալ՝ յամենայն օր ալեկոծիմք ի չար
 խորհրդոց սրտից մերոց. վասն աղաղակեմք ընդ աշակերտացն. (Տէր
 փրկեա զմեզ զի կորնչիմք:) Դարձեալ՝ թշնամին հանապագ մերձենայ ի
 դրունս զգայութեանց մերոց. վասն որոյ խնդրեմք յԱստուծոյ զօգնութիւն: Եւ
 զի այսպիսի փորձութիւնք՝ ոչ են ի հանդերձեալն. վասն այն անդ աղօթքն ոչ
 է հարկաւոր. այլ աստ: Զինգերորդ՝ աղօթքն առողջացուցանէ զհիւանդս.
 որպէս ասէ առակն. (որդեակ՝ ի հիւանդութեան քում աղօթեա առ Աստուած
 եւ բժշկեսցի:) Այլեւ երկարակեաց առնէ որպէս զԵզեկիա. զի ասէ՝ (լուա
 աղօթից քոց. եւ տեսի զարտասուս քո. եւ յաւելլում ի ժամանակս քո ամս ժԵ:
 Վեցերորդ՝ փրկէ ի վշտաց իշխանաց. որպէս ասէ Երեմիա. (գոչեցէք առ
 Աստուած. եւ ի բռնութենէ իշխանաց փրկեսցէ զձեզ.) որպէս ազատեցաւ
 Պետրոս ի բանտէն վասն աղօթից եկեղեցւոյն: Այլեւ առնէ յաղթօղն ի
 պատերազմի. որպէս Մովսէս յորժամ տարածէր զձեռն ի յաղօթս, յաղթին
 զԱմաղէկ: Եօթներորդ՝ փախուցանէ զդէս. ըստ այնմ, (այս ազգ ոչ ելանէ՛
 եթէ ոչ պահօք եւ աղօթիք:) Այլեւ փրկէ յորոգայթից. ըստ որում (չիք հնար
 զերծանիլ յորոգայթից, բայց միայն պահօք եւ աղօթիք:) Ութներորդ՝
 լուսաւորէ զմիտս. զի ի վերայ բանին ի գործն (եւ Պետրոս ի տանիսն կալ
 յաղօթս՝) ասեն վարդապետք թէ՛ տարակոյսն առաւել լուծանի աղօթիք,
 քան որոնմամբ: Այլեւ առաքեալքն աղօթելով լցան հոգւովն սրբովն:
 Իններորդ՝ աղօթքն բանայ զերկինս. որպէս ասէ Ղուկաս. (բացան երկինքն
 ընդ աղօթելն Տեառն:) Նոյնպէս եւ փակէ զերկինս. որպէս ընդ աղօթելն
 Եղիայի, փակեցան երկինք, եւ ոչ ետուն զանձրէ: Այլեւ ընդդէմ կայ
 բարկութեանն Աստուծոյ որպէս զասպար. որպէս ասէ Սողոմոն.
 (փութացեալ այրն անարատ՝ աղօթիք եւ խնկօք եկաց ընդդէմ

բարկութեանն:) Եւ վասն ծոյլ առաջնորդաց՝ ամբաստան լինի Եսայի: (Ոչ ոք է որ կարդայ զանուն քո. եւ յարուցեալ ըմբռնեսցէ զքեզ:) Տասներորդ՝ աղօթիքն առնուն սուրբք զոր ինչ եւ ինկրեսցեն. ըստ այնմ, (ինկրեսցէք եւ առնուցուք, եւ այլն:) Եւ դարձեալ՝ (թէ երկուք ի ձէնջ միաբանեսցին յերկրի վասն ամենայն իրաց՝ զինչ եւ ինկրեսցեն, եղիցի նոցա ի հօրէ իմմէ:) Եւ ի վերայ այսր ամենայնի, աղօթքն օգուտ է խաղաղութեամբ կենցաղավարիլոյ. որպէս առաքեալն Տիմօթէոսի ասէ. (առնել աղօթս՝ ինկրուածս եւ այլն՝ վասն թագաւորաց եւ ամենայն իշխանաց. զի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր:) Որում զմեզ արժանի արասցէ Քրիստոս. եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն աղօթից. ի Բանն՝ (Յորժամ յաղօթս կայցէք, մի շատախօս լինիցիք իբրեւ զհեթանոսս:) Մատ. 6. 7: (Գլուխ. 2Բ)

Չաղօթիցս բան՝ ոչ միայն հաւատացեալք, այլեւ հեթանոսք նախապատիւ համարեցան քան զամենայն գործ. վասն այսորիկ յերկարէին շատ խօսութեամբ զաղօթս իւրեանց: Քանի՞ առաւել պարտ է մեզ քրիստոնէիցս թողուլ զամենայն գործս, եւ հանապազ աղօթից պարապիլ: Նախզի՞ ամենայ գործ անցաւոր է. եւ աղօթքն մնացական: Երկրորդ՝ զի ամենայն գործ՝ յաշխարհի է. եւ աղօթքն ի վեր առ Աստուած ի յերկինս: Երրորդ՝ զի օրէնս եւ կանոնս դնէ Տէրն յաւետարանին թէ՛ (պարտէ յամենայն ժամ աղօթել, եւ մի ձանձրանալ:) Եւ ինքն Տէրն յօրինակ մեզ (հաներ զգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ:) Եւ առաքեալն ասէ. (յամենայն ժամ աղօթս արարէք:) Եւ մարգարէն Դաւիթ. (օրհնեցից զՏէր յամենայն ժամ ասէ:) Եւ ո՞րպէս կարեմք յամենայն ժամ աղօթել. զի երբեմն գործեմք, եւ երբեմն ուտեմք, եւ երբեմն ննջեմք: Ասեմք երեք եղանակաւ կատարի յամենայն ժամ աղօթելն: Նախզի՞ կարէ մարդ լեզուան հանապազ աղօթել. կամ մտօքն միշտ ի բարին խոկալ եւ յօժարիլ: Երկրորդ՝ զկարգեալ ժամանակս աղօթիցն է իմանալ. յաւուրն ինն անգամ ծնրադրութեամբ կատարել: Կամ յինն անգամ աղօթիցն ի վճարսն՝ զհայր մեր յերկինս ասել՝ զոր Տէրն ասաց. (յորժամ յաղօթս կայք, ասասցիք հայր մեր:) Երրորդ՝ ի գործոյն մեր աղքատաց բաշխել. եւ նոքա եւս աղօթեն վասն մեր. եւ այսպէս յամենայն ժամ աղօթս առնեմք: Այլ այժմ ծուլացեալ է ամենայն մարդ յաղօթից. ոմն ի վաճառս. ոմն ի յարուեստս ձեռաց. այլք յերկրագործութիւնս. եւ ի զանազան գործս մարմնոյ եմք պարապեալք. եւ զաղօթսն իբրեւ զտուգանս համարիմք. եւ յոչ կամայ կտրեմք: Վասն այնորիկ Տէրն զհեթանոս օրինակ տայ եւ յանդիմանէ զծոյլսն. զի նոքա շատ խօսին յաղօթսն իւրեանց. եւ սոքա ոչ շատ եւ ոչ սակաւ աղօթեն. որպէս ասէ: (Յորժամ յաղօթս կայք, մի շատախօս լինիք իբրեւ զհեթանոսս:) Եւ վասն աղօթից՝ չորս ինչ հարցանելի է: Նախթէ՞ զի՞նչ է շատախօսութիւն աղօթից: Երկրորդ՝ թէ զմարմնական ինկրիսն տա՞յ Աստուած:

Երրորդ՝ թէ ո՞րն է հաճոյ աղօթք զոր լսէ Աստուած: Չորրորդ՝ թէ զի՞նչ է շահ աղօթիցն: Վասն առաջնոյն գիտելի է՝ զի շատախօսութիւն ոչ զայն ասէ, թէ յերկար մի աղօթեր. կամ բազում անգամ ինկրեր. զի սիւս ցուցաւ որ պարտ է յամենայն ժամ աղօթել. եւ միշտ զԱստուած յիշեր. եւ հանապազ ինկրել որքան կարողութիւն է մարդոյ: Այլ շատախօսութիւն հեթանոսաց՝ Ժ

եղանակաւ լինի. յոր չէ պարտ մեզ աղօթել: Նախգի՝ հեթանոսաց Աստուածք՝ դեւք էին ի կուռս մտեալ. եւ դեւն ոչ լինի յամենայն տեղիս. այլ երբեմն յարեւելս, եւ երբեմն յարեւմուտս. վասն այն յերկարէին զաղօթսն՝ զի եկեցցէ ի կուռսն: Իսկ Աստուած մեր՝ յամենայն տեղիս է յերկինս եւ յերկնի. եւ մերձ է աղօթողին. յայն պատճառն՝ չէ պարտ յերկարել զաղօթսն թէ գայ Աստուած: Երկրորդ՝ զի դեւք ոչ են սրտագետ. այլ զմարմինն տեսանեն. վասն այն պարէին՝ բարձր աղաղակէին եւ ցետէին զինքեանս՝ զի տեսանիցեն կուռքն: Իսկ Աստուած մեր՝ սրտագետ է. եւ զճաճուկն տեսանէ. որպէս Սովսես ի սիրտն աղաղակեաց. ասէ (զի՞ գոչես առիս:) Երրորդ՝ զի դեւքն ոչ էին մարդասերք. վասն այն քաղցր ձայնիւ գովէին. եւ զանազան զոհ մատուցանէին. զի շարժեցցին ի գուր: Իսկ Աստուած մեր՝ մարդասեր է եւ գթած. զոր ինչ բուրրով սրտիւ խնդրեմք ի նմանէ, առնումք զամենայն: Այս երեք կերպիս՝ ոչ է պարտ աղօթել մեզ որպէս հեթանոսքն: Դարձեալ չորրորդ՝ շատախօսութիւն է անհանճար եւ անիմաս խնդիրն՝ որ յանբան մտացն յառաջ գայ. այսինքն, որ միտքն յայլ ինչ ցրուեալ լինի. եւ լեզուան աղօթէ. այն շատախօսութիւն է եւ ղողանջել: Զինգերորդ շատախօսութիւն է՝ որ զոչ ինչն խնդրէ. այսինքն, զանօգուտն եւ զանպիտանն խօսի. որ ոչ է շահ. ոչ իւրն, եւ ոչ ընկերին, եւ ոչ աշխարհի: Վեցերորդ շատախօսութիւն է՝ որ զան լինելին խնդրէ՝ որ ինքեան ոչ պատշաճի. որպէս թագաւոր լինիլ կամ իշխան. կամ քաղաք շինել. որպէս անիմաստ մանկունքն մտածեն: Եօթներորդ՝ որ ընդդէմ բնութեան խնդրէ. որպէս թէ յերկինս թռչիլ. եւ յերկար ամս ապրիլ. ոչ ծերանալ, եւ ոչ մեռանիլ. այս շատախօսութիւն է եւ անհնարին: Ութներորդ՝ մարմնականս եւ անարժանս խնդրել յԱստուծոյ. որ երկրաւոր է եւ ոչ մնացական. որպէս արծաթ. ոսկի, եւ այլ ստացուածս. անարժան են այսք. որպէս ի թագաւորէ կաւեղէն անօթ խնդրել, եւ նուաստացուցանել զնա: Նոյնպէս անմիտ է որ յերկնաւոր թագաւորէն զերկրաւորս խնդրէ. եւ ի մշտնջենաւորէն զժամանակաւորս. որ անցաւոր է եւ փոփոխական: Այլ պարտ է խնդրել զարքայութիւնն երկնից եւ զանմահութիւնն. եւ զթողութիւն մեղաց, եւ զայլն. ըստ այնմ, (խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւնն նորա. եւ այդ ամենայն յաւելցի ձեզ:) Իններորդ՝ շատախօսութիւն է ախտաւոր իր խնդրել. որպէս շնալ, պոռնկիլ, սպանանել, յաղթել մարդոյ, հպարտանալ, նախանձիլ, կամ այլ ինչ պիղծ գործոյ օգնական լինիլ: Այնպիսին՝ զԱստուած իւրն ընկերակից առնէ. եւ սպասաւոր եւ օգնական խնդրէ: Տասներորդ՝ շատախօսութիւն է ի յաղթսն չար խորհիլ մարդոյ. եւ չար խնդրել եւ անիծանել. թէ կորո զիմ թշնամին. եւ բարկացիր եւ սպան զնա, եւ այլն: Եւ այս Գ ազգ յիմարութիւն է: Մին՝ զի զԱստուած իւրն ախտակից առնէ եւ ընկեր. որպէս թէ ես բարկացեալեմ, դու այլ բարկացիր նմա: Երկու՝ իւր կամացն սպասաւոր առնէ. կորո զնա. սատակեա եւ անիծեա զնա: Եւ երեք՝ զմին Աստուածն յերկուս բաժանէ եւ փոխոխէ. եւ իբր թէ, ինձ քաղցր լեր եւ նմա դառն. ինձ բարի արա եւ նմա չար. զիս օրհնեա եւ զնա անիծեա: Ոչ զիտէ անմիտն. թէ քաղցր է՝ քեզ է եւ նմա. եւ թէ բարկացեալ է՝ քեզ է եւ նմա: Եւ այս գիտելի է՝ զի զոր զինչ եւ խնդրէ մարդ թշնամոյն՝ զայն իւրեանց տայ Աստուծո՞. թէ չար, թէ բարի. որպէս ասէ առակն. (որ փորէ հոր ընկերի՝ անձամբ լցցէ զնա:) Վասն այն հրամայեաց Տէրն. (օրհնեցէք զանիծիչս ձեր՝ եւ ի բարի արարէք ատելեաց ձերոց.) զի դուք որք թշնամի էք՝ յորժամ դու

զևա օրհնես, եւ նա զքեզ, երկուքդ օրհնիք, նոյնպէս թէ անիծանէք, երկուցդ լինի: Եւ թէ ոք ասիցէ՝ ահա մարգարէն Դաւիթ չար խնդրէ թշնամեացն ասելով. (սատակեա Աստուած զթշնամիս, եւ կորո զնոսա:) Եւ թէ՝ (դարձո Աստուած զչարս ի թշնամիսս իմ:) Եւ Ովսէ ասէ. (տուր նոցա Տէր արգանդ անորդի, եւ ստինս ցամաքեալս.) Եւ այլք բազումք: Ասեմք թէ՝ բնական թշնամիք երկու են մարդոյս: Նախ սատանայ բնութեամբ թշնամի է մեզ. զի նա անմարմին է՝ եւ մեք մարմին. եւ նա յերկնից ի յերկիր անկեալ. եւ մեք յերկրէ յերկինս ելանեմք. եւ նա ատելի Աստուծոյ. եւ մեք սիրելի եւ պատկեր Աստուծոյ: Եւ մարգարէքն որք չար խնդրէին՝ եր վասն սատանայի. զի հակառակ է մեզ: Երկրորդ՝ թշնամիք են մարդոյ զանազան ախտք մեղաց՝ ի սատանայէ ի մեզ արկածքն. այսինքն, հպարտութիւնն. նախանձն. բարկութիւնն. ագահութիւնն. պոռնկութիւնն, եւ այլքն. որք հոգիս մեր ապականեն. եւ նոքա են որք բազմածնունդ լինին ի մեզ. եւ ինամեմք զնոսա. եւ սնուցանեմք մեք ստեամբ որպէս զչար զաւակ: Վասն նոցա ասեր մարգարէն. (արգանդ անորդի լինիլ. եւ ոչ ծնանիլ չար զաւակ. եւ ստինս ցամաքեալս՝ զի ոչ սնուցանիցեմք զնոսա: Չի որպէս կատացի շուն յորժամ խածանէ զմարդ, դեղով ժայթքեն զչար թոյնս նորա. այսպէս սատանայ յորժամ խածանէ մեղօք, պարտ է զչար ծնունդս նորա կորուսանել, եւ ոչ պահել ի մեզ: Ապա յայտ է թէ՝ սոքա են բնութեամբ թշնամիք մեր. այսինքն, սատանայ եւ մեղքն. եւ մեք ընդ նոսա պատերազմիմք. որպէս ասէ Պօղոս. (ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ այսս չարութեան:) Իսկ մարդ մարդոյ թշնամի ոչ է: Նախզի՝ մի բնութիւն են. եւ բնութիւն ինքեան թշնամի ոչ է: Երկրորդ՝ զի մեապէս պատկեր են Աստուծոյ: Երրորդ՝ զի ի մի հողոյ ստեղծեալք: Չորրորդ՝ զի միապէս ունին զկեանս եւ զմահ եւ զյարութիւն: Իսկ որ թուի թէ մարդ մարդոյ թշնամութիւն ամեն՝ ի չարէն շարժին սոքա. եւ ընչիցն եւ մարմնոյն են թշնամիք. եւ ոչ հոգւոյն: Եւ կրկին շահ ամենն. մին՝ որ զինչսն տանի՝ զցաւն եւ զմեղսն տանի. երկու՝ որ զմարմինն չարչարէ՝ պսակաց արժանաւորէ: Ապա ուրեմն մարդ մարդոյ բարեկամք են եւ ոչ թշնամիք: Եւ վասն բարեկամացն պարտ է բարիս խնդրել եւ ոչ չար. եւ ամենայն մարգարէքն՝ մարդոյ չար ոչ խնդրէին. այլ սատանայի եւ զանազան մեղաց: Այս առաջին գլուխն շատախօսութեան: Երկրորդ հարցումն՝ վասն մարմնական խնդրուածոց: Ասեն ոմանք թէ՝ չար ոչ խնդրեմք մարդոյ որպէս ասես. այլ զմարմնական բարիս վասն Է՞ր արգելուս. զի բազումք խնդրեցին յԱստուծոյ եւ ետ նոցա ինչս եւ իշխանութիւն եւ թագաւորութիւն. եւ այնպէս հաճոյք եղեն Աստուծոյ: Ասեն վարդապետք թէ՝ այս յայտնի եւ խոստովանեալ է. զի ամենայն տուրք՝ թէ հոգեւոր թէ մարմնաւոր՝ ի կամացն Աստուծոյ են. եւ նա միայն է տուող. ըստ այնմ, (Տէր աղքատացուցանէ եւ Տէր մեծացուցանէ, եւ այլն:) Այլ թէ զմարմնական տուրս վասն Է՞ր տայ խնդրողաց: Ասեմք թէ՝ վասն Ը պատճառի: Առաջին պատճառ՝ ոչ վասն այն տայ զմարմնական ինչս, որպէս թէ ամենեւին բարի է. այլ վասն այն տայ՝ որ միջակ բարի է. թէ կամիմք՝ սովաւ ի գերագոյն բարին հասանիմք ի ձեռն ողորմութեան աղքատաց. եւ թէ ոչ ի չար փոխեմք մեք: Երկրորդ պատճառ՝ տայ զմարմնական խնդիրն՝ որք ծանծաղամիտքն հաւատան թէ՝ զինչ խնդեմք ի նմանէ, տայ մեզ Աստուած: Երրորդ պատճառ՝ զի ի փոքուն ի մեծ աստիճանն ելանեմք. յորժամ զմարմնաւորս եւ զմերձաւորս ամուսնեմք, գիտեմք զի զանմարմին եւ

զիեռաւորն այլ առնումք. զի երեւելքս՝ օրինակք են աներեւութիցն: Չորրորդ տայ մեզ զմարմնաւորս՝ զի գիտէ որ այժմ այս է մեզ օգուտ. իսկ հոգեւորն եւ անմահութիւնն որ ի հանդերձեալն է օգուտ, այժմ վնասակար է մեզ. որպէս փոքր տղայոց նախ զկաթն տայ մայրն. եւ ապա հաց եւ ջուր. եւ ապա զարդարեալ հանդերձ. եւ ապա զկատարեալ պարգեւսն. նոյնպէս եւ Աստուած մեզ զօգտակարն տայ: Զինգերորդ պատճառ՝ տայ զմարմնաւորս յորժամ խնդրեմք. եւ երբեմն արգիլէ զպէտս եւ խրատէ զմեզ. զի յարժամ դարձցուք ի մեղաց, եւ խնդրեսցուք ի նմանէ: Վեցերորդ պատճառ՝ տայ զխնդիրս մարմնականս՝ որ իմանամք թէ՛ միայն ինքն Աստուած է տւող պարգեւացն եւ ոչ այլ ոք. ըստ այնմ. (աչք ամենացուն ի քեզ յուսան:) Եօթներորդ պատճառ՝ այնու ցուցանէ թէ, ամենակարօղ է Աստուած. եւ զոր ինչ խնդրեմք՝ կարօղ է տալ մեզ. թէ զհոգեւոր, թէ զմարմնաւոր: Ութներորդ՝ ցուցանի մարդասիրութիւնն Աստուծոյ. զի այնչափ մարդասէր է՝ զի զոր ինչ խնդրեմք, տայ մեզ. յաղագս այնորիկ մարմնական սիրով զմեզ առ ինքն ձգէ. որպէս հայր որդւոյ խնձոր տալով առ ինքն կոչէ. եւ յորժամ ծանօթ լինիմք նմա, յայնժամ զհոգեւորն եւ զմեծն պարգեւէ: Եւ ոչ թէ մեծ պարգեւք են մարմնական տուրքս. այլ ոմանց հանդիպի, եւ երբեմն: Այլ բազումք այնք են՝ որք խնդրեն զմարմնաւորս եւ ոչ առնուն: Նախզի՝ նուաստութիւն է եւ խոնարհութիւն ի մեծէն Աստուծոյ զփոքր իրս խնդրել եւ զանաժանս: Երկրորդ՝ զի մի թողցուք զմնացականն, եւ զանցաւորս խնդրեսցուք: Երրորդ՝ զի միտք մեր՝ ընդ երկրաւոր իրացս յերկիր մնայ, եւ ընդ երկնաւորին յերկիրս ելանէ. (զի ուր գանձք ձեր են՝ անդ եւ սիրտք ձեր եղիցեն:) Չորրորդ՝ զի բաժանեալ է մեզ հաւատացելոց գերկնաւորն. եւ անհաւատիցն զերկրաւոր բարութիւնս: Եւ որպէս նոքա ոչ խնդրեն զհոգեւորն. դու մի խնդրեր զմարմնաւորն: Այս երկրորդ գլուխն: Երրորդ հարցումն թէ՛ ո՞ր է հաճոյ աղօթքն զոր լսէ Աստուած: Ասեմք եթէ՛ վասն հաճոյական աղօթիցն խնդիր տասն իր: Նախ՝ պարտ է իմաստութեամբ եւ խոնարհութեամբ խնդրել: Եւ այս երկու ազգ է: Մին՝ որ հաճոյսն Աստուծոյ կամացն խնդրէ, եւ ոչ զիւրն: Եւ երկու՝ որ կարգաւոր՝ եւ ահիւ եւ դողութեամբ խնդրէ. յորժամ ճանաչէ զինքն առաջի Աստուծոյ կացեալ, որպէս առաջի երկրաւոր թագաւորի: Երկրորդ՝ պարտ է արդարութեան գործով ուղղել զաղօթս. զի տեսականն գործնականին ուժովն զօրանայ՝ եւ ի վեր ընթանայ առ Աստուած. զոր օրինակ՝ կշռոյն մին կողմս յորժամ ծանրանայ, ապա միւսն թեթեւանայ եւ ի վեր բարձրանայ. այսպէս որքան բարի գործն յաճախէ ի մարմինն, մտաց խոկումն բարձրանայ եւ հասանի յերկինս: Ապա թէ մարմինն ի գործոց թեթեւանայ, մտօքն ի վայր ի յերկիր քարշի եւ ծանրանայ: Եւ դարձեալ՝ որպէս նիւթ մոմոյ եւ իւղոյ՝ միշտ ի վառ պահէ զլոյսն. այսպէս եւ գործք առաքինութեան՝ օգնեն եւ միշտ ի վառ պահեն զլոյս աղօթիցն. իսկ գործք անիրաւութեան եւ մեղաց ի մարմինն՝ միշտ հակառակին եւ շրջուցանեն զլոյս աղօթից: Չոր օրինակ՝ հուրն որ ի փայտ է ըմբռնեալ, եւ ունի զգիշուրթիւն հակառակ իւրն, ոչ կարէ հուրն վառիլ եւ լուսաւորել. զի ի ծուխն ի գիշութենէն յառաջեալ՝ ծածկէ եւ արգիլէ զլոյս բոցոյն: Այսպէս մեղօք եւ գիշութեամբ լցեալ մարմինն՝ իւր խաւարաւ եւ ծխովն հակառակի եւ ոչ տայ զլոյս աղօթիցն բորբոքիլ: Երրորդ՝ պարտ է ողջախոհ մտօք խնդրել. այսինքն, որ ոչ թողու զմիտսն ցրուիլ ի հեշտութիւնս աշխարհի. այլ յամենայն զգայութեանցն ժողովէ. եւ ի վեր առ

Աստուած հանէ առանց թուլութեան: Չորրորդ՝ հաւատ եւ յոյս պիտոյ է աղօթիցն. զի հաւատով եւ յուսով խնդրեսցէ. (հաւատացի զոր եւ խօսեցայ ասէ մարգարէն:) Հաւատալ պարտ է թէ՛ Է Աստուած լսող աղօթիցս. եւ յուսալ թէ՛ զոր ինչ խնդրեմ հաւատով՝ առնում: Վասն որոյ չասաց Քրիստոս սոսկ թէ՛ (զոր ինչ խնդրէք առնոյք. այլ թէ զոր ինչ խնդրէք հաւատով յաղօթս՝ առնուցուք.) իսկ անհաւատն եւ յուսահատն՝ ոչ առնում: Հինգերորդ՝ պիտոյ է հարազատ սեր առ Աստուած. զի լիցիս բարեկամ եւ սիրելի Աստուծոյ ի հաճոյս նորա. յայնժամ լսէ զխնդիրն. իսկ թէ լիցի խորհուրդ չար ի միտդ, ոչ լսէ. (զի խորհուրդ մարմնոյ՝ թշնամութիւն է առ Աստուած ասէ առաքեալն.) եւ զթշնամեաց խնդիրն ոչ լսեն. վասն պարտ է բարեկամ լինիլ Աստուծոյ խորհրդով՝ մտօք՝ եւ սիրով. եւ ապա ընդունիլ զաղօթս: Վեցերորդ՝ սրբութիւն սրտի. որով աղօթքն նուիրին Աստուծոյ. որպէս ընծայք թագաւորաց՝ զորս մաքուր սկուտեղք մատուցանեմք. ըստ որում ասէ. (սուրբքն սրտիւք՝ զԱստուած տեսցեն:) Եօթներորդ՝ անխաւակալութիւն ընկերին. զի որպէս թողոյք զսխալանս ընկերին՝ (եւ հայրն ձեր՝ զձերն թողցէ ասէ:) Վասն այն ասէ Տէրն. (հան զխէթն ի քէն. եւ ապա մատս զպատարագն:) Ութներորդ՝ պարտ է զի խոնարհութեամբ աղօթեսցէ. որպէս մաքսաւորն որ ոչ կամեր զերեսն ի վեր ունիլ. եւ հպարտութեամբ աղօթքն՝ Է որպէս փարիսեցւոյն զի անարգեցաւ: Վասն այն ասէ Դաւիթ. (հայեցաւ Տէր յաղօթս խոնարհաց. եւ ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա:) Իններորդ՝ զի զբարին խնդրեսցեն՝ որ հոգեւորն է եւ մնացական, լսէ Աստուած. ըստ այնմ, (խնդրեսցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա. եւ այդ ամենայն յաւելցի ձեզ:) Իսկ զշատախօսութիւն հեթանոսաց արգել՝ որ Է մարմնական եւ չարաց խնդիր. զի զմարմնական խնդիրն՝ ոչ տայ հոգեւորաց. եւ ոչ զչարն բարեաց որպէս ասացաւ: Տասներորդ՝ պարտ է նուիրանօք մատուցանել զաղօթս. եւ նուերն Է աղերս եւ ընծայ. եւ աղօթքն խնդրուածք: Եւ չորիւք զանազանին սոքա: Նախ՝ նուերն առաջին Է քան զաղօթս. որպէս սերմն քան զհունձն: Երկրորդ՝ նուերն ի մէջ Է. եւ աղօթքն յԱստուծոյ պարգեւք: Երրորդ՝ նուերն միջնորդ է եւ բարեխօս. եւ աղօթքն խօսք ընդ Աստուած: Չորրորդ՝ նուերն գոհութիւն է անցելոյն. եւ աղօթքն աղաչանք հանդերձելոյն: Եւ են նուերք ի մարմնոյս մեր պահք՝ սրբութիւն՝ ողորմութիւն՝ պատարագ, եւ այլ ինչ: Իսկ ի հոգւոյս մերոյ՝ հաւատ, յոյս, սեր, եւ այլն: Իսկ ի բանից՝ օրհնութիւն, գոհութիւն, եւ փառք, եւ այլն: Եւ յորժամ յայցանէ նուիրեմք Աստուծոյ. զաղօթս մեր լսէ. ապա թէ նուերս ոչ մատուցանեմք, ոչ լսէ: Այսքան յերրորդ գլուխն: Չորրորդ հարցումն թէ՛ զի՞նչ շահ է յաղօթիցն: Ասեմք թէ՛ բազում շահ եւ օգտութիւն ունի աղօթքն: Այլ մեք զսական ասացուկ տասն եղանակաւ: Նախ՝ աղօթքն զմիտս մեր լուսաւորէ. զի յորժամ խօսիմք ընդ Աստուած, ի լուսոյ նորա պայծառանայ իմացումնս մեր. եւ զխաւարն մեղացն փարատէ. որպէս յորժամ նայիմք ի ճրագն, լուսաւորին աչք մեր: Երկրորդ՝ զի ամենայն հպարտութիւն եւ ատելութիւն՝ ոխ եւ քէն եւ նենգութիւն՝ սրբին ի հոգւոյս մերմէ. զի յորժամ աղօթեմք ի վերայ ընկերին, սոքա ամենեքեան կորնչին ի մէջ: Երկրորդ՝ սրտմտութիւն եւ բարկութիւն զիջանի ի մէջ. վասն այն բարկացեալ ոք խաչ նկարէ յերեսն. եւ թէ ընկերն Է բարկացեալ՝ յորժամ աղօթեմք ի վերայ նորա, ցածնու ի բարկութենէն: Չորրորդ՝ աղօթքն զբղջախոհ ցանկութիւն շիջուցանէ. զի յորժամ աղօթեմք, դէն պոռնկութեան հեռանայ ի մէջ եւ

գերծանիմք. ըստ այնմ, (այսն չար ոչ ելանէ, եթէ ոչ պահօք եւ աղօթիւք:) Յինգերորդ՝ յամենայն որոգայթից փրկէ զմարդն. զի ամենայն որոգայթ ի սատանայ է. եւ յաղօթից եւ յանուանեն Աստուծոյ՝ նա հալածի. եւ ամենայն չար որոգայթն ընդ նմա. որպէս ասէ Տէրն. (չիք հնար գերծանիլ յորոգայթից. բայց միայն աղօթիւք եւ պահօք:) Վեցերորդ՝ ի հիւանդութենէ դարձուցանէ. որպէս Եզեկիա հիւանդացաւ եւ ի դուռն մահու մերձեցաւ. յորժամ աղօթեաց՝ դարձեալ առողջացաւ. եւ ապրեցաւ ԺԵ ամ: Եօթներորդ՝ զհուրն շիջուցանէ. որպէս երեք մանկունքն ի Բաբելօն ի մէջ հրոյն օրհնէին եւ գովէին զԱստուած. եւ հուրն նոցա ի ցօղ փոխեցաւ: Ութներորդ՝ աղօթքն զբերան գազանաց կապէ. որպէս Դանիէլ ի մէջ առիւծոցն աղօթէր. եւ լեզուին զոտս նորա: Իններորդ՝ աղօթքն զփոր ձկանն տաճար արար. որպէս Յովնա ի փոր կիտին կենդանի մնալով երեք տիւ եւ երեք գիշեր աղօթէր առ Աստուած. եւ արտաքս ել: Տասներորդ՝ յաղթէ թշնամեաց եւ սատակէ զնոսա. որպէս Եզեկիա աղօթեաց ի տաճարին. եւ էջ հրեշտակն. եւ ի միում գիշերի հարիւր եւ ութսուն եւ հինգ հազար զօրսն Ռափսակայ աներելոյթ սրովն սատակեաց: Այսպէս եւ մարգարէն Մովսէս՝ յորժամ խաչանիշ բազկան աղօթեաց, պարտեաց զամաղէկ եւ զամենայլ զօրս նորա: Եւ զամենայն շահ եւ օգտութիւն աղօթիցն՝ մասնաւորապէս ո՞վ կարէ թուել: Բայց բոլորապէս ասեմք թէ՛ աղօթքն քան զամենայն առաքիւնութիւնս՝ քան զպահս՝ քան զողորմութիւն՝ քան զգետնախշտութիւն եւ քան զայլ ամենայն բարի գործս, գերագոյն է եւ պատուական վասն տասն պատճառի: Նախգի՛ պաշտօն բարի առ Աստուած զաղօթսն անուանէ, յառակսն Սողոմօն. յորում զգիշերոյ հսկումն՝ գիշերապաշտօն կոչեմք: Երկրորդ՝ զի սա միայն զմարդն հրեշտակաց հաւասարէ. որպէս մարգարէն Դաւիթ՝ զհրեշտակս պաշտօնեայս կոչէ Աստուծոյ. զի հանապազ ի յայս գործս սպասաւորութեան են յարակայեալ: Երրորդ՝ զի աղօթքն խօսք է ընդ Աստուծոյ. զի ամենայն առաքիւնութիւն՝ յայն ունի զդիտումն յանդիման լինիլ երեսացն Աստուծոյ: Չորրորդ՝ զի խնդրուածօքն զպարգէս առնուն յԱստուծոյ. զի ամենայն առաքիւնութիւն ի նոյնս փափագի: Յինգերորդ՝ զի խնդութիւն ունի ընդ ինքեան եւ յոյս հաստատուն զբանն զոր ասէ. (զամենայն զոր ինչ. խնդրիցէք հաւատով յաղօթս՝ առնուցուք:) Վեցերորդ՝ զի սա միայն զմիտսն արտաքս քարշէ ի հեշտութեանց զգայարնաց, եւ առ Աստուած մուծանէ: Եօթներորդ՝ սա միայն է կենդանի եւ բանաւոր պատարագ. որ հանապազ աղօթիւք ինքն զինքն մատուցանէ Աստուծոյ. եւ հաճի Աստուծոյ. ըստ այնմ, (զխօսուն պաշտօնս ձեր մատուցէք Աստուծոյ սուրբ եւ կենդանի եւ հաճոյ Աստուծոյ:) Ութներորդ՝ զի թէ ողորմիմք՝ Աստուծոյ ոչ մեծանայ ի տուրս մեր. եւ թէ պահեմք՝ բնութեամբ է միշտ անմարմնոցն պահել. այլ աղօթիւքն՝ փառաւորի Աստուած. ըստ այնմ, (պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս:) Իններորդ՝ սա միայն է որ փոքր սերմանէ, եւ բազում ժողովէ աղօթիւք. եւ միշտ եւ յարաժամ պտղաբերի. եւ ամենեցուն դիւրին է ի սրտի եւ ի լեզւի: Տասներորդ՝ սա միայն լուսով աղօթից զպատկերն Աստուծոյ ի յինքն նկարէ որպէս ի հայելոջ. եւ զամենայն կագ եւ զքէն եւ զսրտնեղութիւն որք ստուեր ածեն մտաց, ի բաց վարէ. եւ զգօնացեալ հանդարտի. որպէս ասէ առակն. (պաշտօն բարի՛ սկիզբն է զգօնութեան եւ հանդարտութեան:) Եւ այս գիտելի է՝ զի երեք են տեսակք առաքիւնութեանց. այսինքն, բարոյական,

ստացական, եւ աստուածային: Եւ ի սոցանէ՝ երեքեանս գերագոյնք են քան զայլս: Ի բարոյականն՝ քան զխոհեմութիւն եւ զարիւթիւնն եւ զողջախոհութիւնն, արդարութիւնն գերագոյն է. եւ հաւասարող ամենեցուն: Ի ստացականն՝ քան զպահս եւ զողորմութիւն՝ զգետնախշտութիւն եւ քան զայլն ամենայն, աղօթքն գերագոյն է որպէս ասացաւ: Իսկ ի մէջ աստուածային առաքիւնութեանցն՝ քան զհաւատ եւ զոյս, սերն գերագոյն է եւ մնացական է. եւ լրումն ամենայն օրինաց: Այսպէս եւ ի մէջ եօթնարփեան շնորհաց հոգւոյն՝ երկիւղն գերագոյն է. եւ պատճառ ամենեցուն. այսինքն, իմաստութեան, գիտութեան, աստուածապաշտութեան, եւ այլոցն. որպէս ասէ յառակսն. (սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն:.) Չի ուր երկիւղ Տեառն է՝ է անդ է պատուիրանաց պահպանութիւն, եւ իմաստութիւն, եւ սեր առ Աստուած, եւ այլն: Ապա ուրեմն երկիւղն եւ արդարութիւնն եւ աղօթքն եւ սերն առ Աստուած՝ յարգոյ ամենեցուն եւ կատարեալ առաքիւնութիւնք են: Արդ՝ յորժամ սերն Աստուծոյ ծնանի ի սրբեալ սիրտ մեր, որ երկիւղին Աստուծոյ եւ արդարութեամբ մաքրեալ լինի, եւ ի սիրոյն ծնանի աղօթքն անպղտոր առ Աստուած, յայնժամ մարտ եւ պատերազմ յառնէ ի հակառակ թշնամւոյն. զի տեսանելով զպաղատանս մեր առ Աստուած մերձեցեալ, զսերն ապականութեան ի խորհուրդն արկանէ. եւ ջանայ թիրել զմիտս յԱստուծոյ. զի մի ի հուր սիրոյ Աստուծոյ բորբոքեցի, եւ կիզցէ զմեքենայս նորա: Այլեւ (Աստուած մեր՝ հուր ծախիչ է.) որք անպղտոր մտօք աղօթեն առ նա՝ թեպէտ սակաւ մի առեալ լինին զհարուածս մեղաց, հրակերպ դիմօքն իւրովք զխռիւ մեղացն ի սոցանէ կիզեալ մաքրէ: Չի օրինակ՝ ասեն զարեգակնէ թէ՛ ի վերայ ջրով լցեալ ապակոյ ի սաստիկ ծագելն՝ հուր արծարծէ: Արդ՝ մեք աման եմք կենդանի ջրոյ սուրբ Յոգւոյն, մաքուր եւ Սուրբ հաւատով որպէս ապակի. միշտ առաջի կացցուք աղօթիւք արեգական արդարութեան. զի ծագեսցէ զճառագայթ իւր՝ եւ արծարծեսցէ ի մենջ գիւր սիրոյ եւ երկիւղ. եւ կիզցէ զխռիւ մեղաց մերոց. եւ լուսաւորեսցէ զմեզ լուսով գիտութեան փառաց իւրոց. եւ նմա եւ հօր իւրոյ՝ փառք եւ երկրպագութիւն եւ զօրութիւն, յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին դարձեալ վասն աղօթից. ի Բանն՝ (Աղօթք իմ սուրբ Էին:.) Յոր. 16. 17: (Գլուխ. 2Գ)

Եւ գիտելի է՝ զի երեք է սրբութիւն աղօթից. այսինքն, սրբութիւն սրտի. սրբութիւն լեզուի. եւ սրբութիւն ձեռաց: Չի երիւք կատարի աղօթքն. սրտիւ, լեզուաւ, եւ ձեռօք: Սրբութիւն ձեռաց այն է՝ զոր ասէ առաքեալն: (Կամիմ զի արք կացցեն յաղօթս. եւ համբարձցեն զսուրբ ձեռս իւրեանց ի վեր.) այսինքն, սուրբ լինիլ ձեռօք յազահողթենէ՝ ի զրկանաց՝ եւ յարենէ, եւ յայլոցն: Իսկ սրբութիւն լեզուի՝ որպէս Տէրն աղօթեանց. (հայր թող սոցա՝ զի ոչ գիտեն զինչ գործեն.) այսինքն, առանց բարկութեան բանի եւ առանց սրտմտութեան գործոց պարտ է աղօթել առ Աստուած: Իսկ սրբութիւն սրտի՝ է առ ինքն եւ առ ընկերս եւ առ Աստուած: Առ ինքն՝ զի իցէ սուրբ ի մեղաց. եւ ապա լուիցէ Աստուած. զի ասէ մարգարէն. (զմեղս թէ տեսանէի ի սրտի իմում, մի թէ լուիցէ՞ ինձ Տէր:.) Եւ առ ընկերս՝ զի ոչ ունիցի նենգ եւ խենթ զընկերէ իւրմէ. յայնժամ լսէ Աստուած. իսկ առ Աստուած՝ այսպէս զգաստութեամբ սրտի պարտ է աղօթել, իբր առ թագաւոր եւ առ Տէր. եւ

որպես առ դատաւոր. եւ որպես առ բարեկամ. եւ այսպէս աղօթելով՝
զամենայն հեճոյսն կատարէ Աստուած: Առ թագաւորն այն է՝ որ հաւատամբ
թէ ամենակարող է. զոր ինչ խնդրեմք ի նմանէ՝ կարողանայ տալ: Եւ որպէս
առ Տէր՝ (զի աչք ծառայի ի ձեռն Տեառն իւրոյ.) պարտ է կողկողագին սրտիւ
պաղատիլ: Եւ որպէս առ դատաւոր եւ քննող գործոց. եւ մեք դատեալ կամք
առաջի նորա. եւ խնդրեմք զի մի դատապարտեսցէ: Եւ որպէս առ բարեկամ՝
զի զամենայն զոր ինչ խնդրեմք՝ կամի գտալն մեզ. որպէս բարեկամն որ
ժտեաց խնդրելով եւ էառ: Այսպէս ի կարծոյ. զի թագաւոր է եւ Տէր՝ կարող է
ի տալն. եւ զի դատաւոր է՝ զիտէ գտալն. եւ զի բարեկամ է, կամի գտալն:
Վասն որոյ այսոքիւք ամենայն խնդրուածք մեր կատարին ի հաճոյսն
Աստուծոյ: Եւ գիտելի է մեզ թէ՝ զի՞նչ է հաճոյական աղօթքն՝ որ առանց
երկբայութեան առնումք զխնդիրն: Ասեմք թէ՝ հաճոյական աղօթքն զոր լսէ
Աստուած՝ ի չորս կողմանէ կատարի: Նախ ի կողմանէ աղօթողին: Երկրորդ՝
ի կողմանէ ընդունողին: Երրորդ՝ ի կողմանէ աղօթիցն: Չորրորդ՝ ի կողմանէ
օգնութեանց: Նախ՝ ի կողմանէ աղօթողին երեք իր պիտոյ է: Առաջին՝ որ
զմիտսն ժողովէ յամենայն զգայութեանց ի խորութիւն սրտին եւ ի սենեակն.
Եւ այնպէս ծածուկ աղօթեսցէ. ըստ այնմ, (մուտ ի սենեակ քո՝ եւ փակեա
զզգայարանսդ.) եւ Դաւիթ ասէ. (ի խորոց կարդացի առ քեզ՝ եւ լուար ինձ:) Երկրորդ՝
որ սրբեալ լինի սիրտն յամենայն մեղաց տեսակաց եւ ի չար
խորհրդոց. եւ այնպէս (սուրբ սրտիւք՝ տեսցեն զսուրբն Աստուած աղօթիւք
որպէս ասէ Տէրն:) Ապա (թէ զմեղս տեսանէ ի սրտին, ոչ լուիցէ որպէս ասէ
Դաւիթ:) Երրորդ՝ զի անձկութեամբ սրտին զսերն բորբոքեսցէ առ Աստուած.
Եւ այնպէս զբաղձանսն մատուցէ. որպէս Աննա բաղձանօք սրտին
աղօթեաց եւ լուաւ Աստուած. եւ Դաւիթ ասէ. (ի ներդութեան եւ յանձկութեան
կարդացի առ Տէր. եւ լուաւ ինձ:) Սոքա ամենեքեան ի կողմանէ աղօթողին
պահանջին: Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողին պիտոյ է Գ իր: Նախ՝ որ
վերանայ մտօքն յամենայն երեւելի եւ աներեւոյթ արարածոց. եւ
իմացութեան ծայրիւն մտցէ ի ներքին կողմն վարագուրին ուր է լոյսն
անմատոյց. եւ այնպէս զաղօթսն սփռեսցէ առաջի Աստուծոյ. այս է
անապատն ի չարեաց. ուր խնդրէր Դաւիթ: (Ո՞ տայր ինձ թեւս որպէս
աղաւնւոյ՝ զի հեռայեալ դադարէի յանապատի:) Այս է սրբութիւն սրբոցն՝ ուր
քահանայապետն միայն աղօթսն մատուցանէր. եւ Դաւիթ ասէ. (մտից
առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած:) Երկրորդ՝ զի անթուլանալի
պահեսցէ այնպէս զմիտսն առ Աստուած, եւ ոչ փոփոխեսցէ, մինչեւ
լուսաւորեալ ի նմանէ առնու զխնդրելին. այն է ասելն Դաւիթ. (աչք իմ
յամենայն ժամ առ Տէր են.) եւ թէ՝ (առ քեզ Տէր համբարձի զաչս իմ
Աստուած:) Երրորդ՝ որ հետեւեսցի կամացն Աստուծոյ՝ եւ զհաճոյս նորա
խնդրսցէ. եւ ոչ բռնութեամբ քարշեսցէ. որպէս ասէր ի յաղօթելն. (ոչ իմ
կամք, այլ քոյդ լիցի.) որ միակամ էր ընդ հօր: Եւ մեզ ուսոյց աղօթել. (եղիցին
կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի:) Սոքա երեքեանս՝ պիտոյ են ի կողմանէ
ընդունողին: Երրորդ դեմն ի կողմանէ աղօթիցն որ է խնդրելին, պահանջի Գ
իր: Նախզի՝ սրբեալ եւ գեղեցկացեալ լինի մաքուր եւ առաքինի գործով. ըստ
Յոբայ. (աղօթք իմ սուրբ էին:) Երկրորդ՝ զի թեթեւացել լինի հաւատոյն եւ
յուսոյն թելօք՝ եւ հաստատ առանց երկբայութեան. ըստ այնմ, (զամենայն
զոր ինչ խնդրիցեք հաւատով՝ առնուցուք.) եւ Դաւիթ՝ (ի քեզ Տէր յուսացայ՝
մի ամաչեցից:) Երրորդ՝ զի զբարին եւ զհոգեւորն խնդրեսցէ. ըստ այնմ,

(խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա.) եւ թէ երբէք զմարմնոյն զհարկաւորն խնդրէ՝ ոչ զաւելորդն խնդրեսցէ. որպէս ասէ. (զիաց մեր հանապազորդն եւ այլն.) սոքա երեքեանս պահանջի ի կողմանէ խնդրելեացն: Իսկ չորրորդ՝ ի կողմանէ օգնութեանց որք են միջնորդք եւ բարեխօսք. եւ սոքա երեք դէմս ունին: Նախ՝ երկնաւորքն. որպէս աստուածածին կոյսն, եւ ամենայն դասք հրեշտակաց եւ սուրբք ամենայն սոքա շարժեն զմարդասէր կամսն Աստուծոյ: Երկրորդ՝ ժողով քահանայից եւ աղքատաց եւ այլոց. սոքա օժանդակեն աղօթողին կամաց: Երրորդ՝ նուերք պատարագաց՝ արտասուք՝ ծունր՝ եւ այլ ինչ. սոքա զաղօթսն համարձակ եւ հաճելի առնեն: Եւ այսպէս ի չորս կողմանէ՝ համարձակ եւ հաճելի առնեն. եւ կատարին հաճոյական աղօթքն կատարելոց եւ սրբոց: Եւ այժմ հարցանելի է թէ՛ քանի՞ են յորդորմունք աղօթից: Ասեմք թէ տասն: Նախ՝ խիղճ մտացն մեր՝ խեթկէ եւ զարթուցանէ զմեզ յաղօթս: Երկրորդ՝ սերն Աստուծոյ եւ արքայութեան: Երրորդ՝ ահ եւ երկիւղ դժոխոցն: Չորրորդ՝ քաղցրութիւն աղօթիցն: Հինգերորդ՝ սովորութիւն մեր յաղօթս: Վեցերորդ՝ պահապան հրեշտակն մեր: Եօթներորդ՝ ընկերք մարմնականք: Ութներորդ՝ տեղիքն սրբութեան: Իններորդ՝ ժամանակն աղօթից. (զի ժամ է յառնել Տեառն՝ խափանեցին զօրէնս:) Տասներորդ՝ ազատութիւն յամենայն մարմնական հոգւոց: Եւ ընդդէմ այսմ՝ բազում են որք խափանեն զաղօթսն: Նախ՝ հակառակութիւն դիւաց՝ որք խափանեն զմեզ յաղօթից. եւ թէ երբեմն աղօթեմք, յայն ժամ զխորհուրդն զանազան ախտիւ ցրուեն: Երկրորդ՝ ծուլութիւն մարմնոյ. որ հեշտանայ եւ ծանրանայ: Երկրորդ՝ զբաղմունք աշխարհի եւ սեր անցաւորաց. որպէս մեծանալ՝ շահիլ, ժողովել, եւ այլն. զորս փուշս կոչէ զնոսա տերն: Չորրորդ՝ հարկաւորացն կարօտութիւն. որպէս յաղքատս է տեսանել: Հինգերորդ՝ չար ընկերք եւ չար մարդիկ են հակառակ հոգւոց: Վեցերորդ՝ զի ոչ է սովորեալ յաղօթս. եւ ոչ առեալ զճաշակ նորա: Եօթներորդ՝ անմտութիւն. զի ոչ գիտէ ընտրել զմնացական եւ զանցաւոր գործս: Ութներորդ՝ անհոգութիւն. զի մոռացեալ է զօր մահուն եւ զդատաստանն Աստուծոյ, եւ զտանջանսն յաւիտենից: Իններորդ՝ անհաւատութիւն. զի ոչ հաւատայ փոխարինաց չարեաց եւ բարեաց: Տասներորդ՝ յուսահատութիւն. զի հատեալ է գլոյսն յերկնաւոր կենացն ի դասուց հրեշտակացն, եւ ի պետութեանցն: Այս եւ այլ սոյնափսիքս՝ խափանեն զծոյլսն ի ժամէ աղօթիցն: Դարձեալ ասէ առական. (ի ճանապարհաց իւրոց թիւրի, յորժամ անմիտ հրեշտակ առաքէ եւ նախատի.) այսինքն, որպէս անմիտ հրեշտակն նախատինք է առաքողին եւ թիւրութիւն՝ եթէ առ իշխանս ուղարկեմք, եթէ առ թագաւորս. յորժամ նա սուտ բան ասէ, մեզ լինի զէնն. որպէս եւ անմիտ հրեշտակն Ռափսակայ եկն յԵրուսաղէմ եւ հայիոյեաց զանունն Աստուծոյ. եւ սատակեցան հարիւր ութսուն եւ հինգ հազար զօրքն Սենեքերիմայ ի ձեռն աղօթիցն Եզեկիայի: Նոյնպէս եւ աղօթքն մեր՝ հրեշտակ է պատգամաւոր ըղծից մերոց՝ զոր առաքեմք առ Աստուած. որպէս ասէ Տեառն վասն աղքատաց թէ՛ (մի զայրացուցանեք զնոսա. ասեմ ձեզ՝ զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ որ յերկինս է.) այսինքն, աղօթք նոցա ընդ հրեշտակացն ելանեն յերկինս առ Աստուած: Արդ՝ եթէ աղօթք մեր անմիտ հրեշտակ լինի, այսինքն շատախօսութիւն հեթանոսաց եւ մարմնական խնդիրք, յայնժամ հրեշտակքն Աստուծոյ որք մատուցանեն զաղօթս մեր,

նախատեն եւ անարգեն զնոսա. եւ ոչ թողուն ի դրունս Աստուծոյ. որպէս մեծամեծք եւ դնապանք՝ ոչ մուծանեն զանարժան մարդն առ թագաւորն: Եւ թէ հրեշտակքն երկնաւորք աղերսեն զաղօթս սրբոց յայտ Է ի Տուբիթն. որպէս հրեշտակն. (յոր ժամ կացեր դու եւ նուն քո Սառայ յաղօթս, եւ մատուցի սրբոյն:) Եւ ի տեսիլն ասէ. (հրեշտակն ուներ ոսկի խնկանոցս ի ձեռն. եւ տուաւ նմա խունկ բագում.) այս Է զաղօթս սրբոցն. զի մատուցէ առաջի ոսկի սեղանոյն: Իսկ օգտութիւն աղօթիցն՝ Է այսպէս: Նախզի՝ անմոռնէ հեծութիւնն եւ աղօթք սրտին՝ առնէ օգուտ. զի յագենայ եւ զուարճանայ իմացմամբ Աստուծոյ. որպէս ասէ Դաւիթ. (որպէս ի ճարպոյ պարարտութենէ լցցի անձն իմ. եւ շրթամբք ցնծութեան օրհնեսցէ զքեզ բերան իմ.) այսինքն, որպէս ճարպն լնու զորովայնն, եւ զուարթ առնէ իւղն. նոյնպէս եւ աղօթք սրտին առ Աստուած՝ զհոգի մարդոյն զուարթացուցանէ՝ եւ պարարէ եւ լնու ցնծութեամբ: Երկրորդ՝ յորժամ զգայարանքն խափանին ի գործոց, յայնժամ ըստ ինքեան առանձնացեալ վերանայ յերկինս. որպէս սրբոյն Ստեփաննոսի. եւ տեսանէ զՔրիստոս ընդաջմէ հօր Աստուծոյ. եւ զհրեշտակաց կարգաւորութիւնս. եւ զմարդկան ընտրելոց անդրանկաց հոգիս դասակից ևոցա. որպէս ետես Յօհաննէս ի տեսիլն զքսան եւ չորս երիցունսն. եւ զհոգիս յամենայն ազգաց ժողովելոցն անդ. յայնժամ այնու յուսով զուարճանայ. եւ պայծառանայ միտքն. եւ ուրախանայ առ ինքեան: Երրորդ՝ միտք մարդոյս երկու ներհակ ունի. մինն ծանրութիւնն մարմնոյս եւ նսեմութիւնն. զի իսմա Է՝ եւ սովաւ տեսանէ եւ լսէ եւ այլ: Եւ երկրորդն՝ հակառակ եւ պատրօղ անմամինն թշնամին. եթէ ի զգալիսս գայ, այսու պատրէ. եթէ առանձին միտքն ի յինքն անփոփի, եւ անդ արկանէ չար խորհուրդս: Եթէ ըստ ինքեան ընթանայ ի խոկումն աշխարհական իրաց, եւ անդ մոլորէ եւ պատրէ. որպէս աղանին թռուցեալ, եւ թշնամի հաւ նմա հասեալ: Այլ յորժամ աղօթիւք թռչի միտքն ի վեր ի յերկինս, եւ մտանէ ի ներքին կողմն վարագուրին առ Աստուած, եւ լուսաւորի լուսով նորին, եւ բորբոքի ի սերն, թշնամին սատանայ զայնպիսի միտսն ոչ կարէ ըմբռնել. այլ փախչի ի ջերմութենէ հրոյն եւ յերկնային լուսոյն, ինքն խաւար գոլով եւ սառուցեալ ի սիրոյն Աստուծոյ: Չորրորդ՝ որպէս ոք դատաւորի աղերս նուիրէ ի ծածուկ՝ եւ նա անցուցանէ զպատուհաս յանցանաց նորա. ապա թէ ոչ նուիրէ, առաւելու բարկութիւն նորա: Նոյնպէս դատաւոր Աստուած՝ եւ յանցաւոր մեք. պարտ Է ծածուկ սրտիւ հեծեծելով նոուիրել զաղօթս. զի անցուցէ ի մէնջ զցատումն. ապա թէ ոչ՝ առաւելու խստութիւնն: Հինգերորդ՝ խոր շտեմարանէ սիրտ մարդոյ. մինչ զի ոչ մարդ, եւ ոչ դէք, եւ ոչ հրեշտակք կարեն իմանալ. այլ միայն (Աստուած քննէ զսիրտ եւ զերիկամունս.) եւ ի նոյն քրքրեալ սրտին յորժամ տեսանէ յստակ զխորհուրդն, ծագէ զլոյս իւր ի նմա. եւ հաստատէ ի հաւատս եւ ի գործս: Որպէս պատկերն տպաւորի ի յստակ հայելոջն. եւ լոյս աչացն զլոյս արեգականն, եւ պայծառ ոսկի եւ արծաթն զճառագայթիլն, այսպէս եւ յստակ միտք աղօթողին՝ զպայծառ լոյս հոգւոյն սրբոյ յինքն ձգէ եւ լուսաւորին: Այսպէս (սուրբքն զԱստուած տեսանեն յաղօթս ըստ Տէն ձայնին:) Որեւ զմեզ արժանիս արասցէ տեսութեան իւրոյ Քրիստոս Աստուած մեր. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն Կարգաց Աղօթից. ի բանն՝ (Տէր՝ եթէ զշրթունս իմ

բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Զո:) Սաղ. 5. 17: (Գլուխ. 27)

Չբերան իմ բացի՝ առի զՅոգի աղօթէ մարգարէն:) Եւ մեք բացցուք զբերան մտաց՝ եւ առցուք զհոգի շնորհաց. եւ նովաւ խօսեսցուք զտեսութիւն առաջի եղեալ բանիս որ ասէ: (Տէր եթէ զշրթունս իմ) շնորհաց. եղեալ բանիս որ ասէ: (Տէր եթէ զշրթունս իմ բանաս:) Եւ նախ քան զտեսութիւն բանիս՝ չորս ինչ հարցանելի է: Նախ թէ՛ քանի՞ են աղօթք: Երկրորդ՝ թէ վասն է՞ր ի գիշերի աղօթեմք: Երրորդ՝ թէ վասն է՞ր ի գիշերի յառնեմք: Չորրորդ՝ ընդէ՞ր մէջ գիշերն է սկիզբն ամենայն ժամուց: Եւ ապա զմեկնութիւն բանիս: Տեսցուք զառաջին թէ՛ քանի՞ են ժամք աղօթիցն: Ասեմք՝ ի հին օրէս եօթն անգամ էր. որպէս ասէ Դաւիթ. (Է անգամ յաւուր օրհնեցից զքեզ:) Իսկ ի նորս՝ ինն անգամ է յաւուրն ըստ ինն դասուց հրեշտակաց. եւ ինն են աստիճանք քահանայապետից: Չերեքն ի գիշերի. զերեքն ի տիւն. եւ զերեքն յերեկոյին: Այս հասարակաց աղօթք: Է եւ երեք առանձնական. նախ քան զմէջ գիշերն. եւ յետ առաւօտուն. եւ յետ երեկոյեան ժամուն: Եւ այս եւս խորհուրդ: Նախ ի դէմս երրորդութեանն. եւ զի անձն մեր՝ յերից է հաստատեալ. ի հոգւոյ, ի մարմնոյ, եւ ի մտաց: Եւ դարձեալ՝ ինն աղօթք հասարակաց՝ եւ երեք առանձնական՝ լինին երկոտասան: Նախ ըստ թուոյ առաքելոցն: Երկրորդ՝ զի երկոտասան ունիմք անգամս: Երրորդ՝ զի երկոտասան են ժամք աւուրն: Չորրորդ՝ երկոտասան գունդ հրեշտակաց ասաց Տէրն: Եւ այպէս Դաւիթ երկոտասան դասս կարգեաց սաղմոսաց մինչեւ յերեկոյ: Եւ սաղմոսդ ԻԴ կարդեաց՝ ոք ի տիւն եւ ի գիշերն՝ մշտապաշտօնք լինէին: Այս առաին հարցումն: Երկրորդ՝ թէ վասն է՞ր ի գիշերի աղօթեմք: Տէրն մեր զկեանս զայս՝ ի գիշեր առակեաց. եւ զհասակս մեր՝ չորս պահու գիշերոյն. եւ հրամայեաց յամենայն ժամ պատրաստ լինիլ: Յերեկոյ՝ որ է տղայութիւնն նոր սկսեալ: Մէջ գիշերն՝ երիտասարդն թմրեալ ի մեղս: Հաւախօս՝ կատարեալ հասակն: Առաւօտ՝ ծերն մերձ ի հաղերձեալն: Վասն այն յայս չորս պահս պատրաստ լինիմք աղօթից: Յերեկոյն՝ եկեսցեն: Ի մէջ գիշերն՝ սաղմոսն: Ի հաւախօսն՝ հարցն: Յառաւօտուն՝ արեւագալն: Եւ դարձեալ՝ մեք յայս երեք հասակս մեղանչեմք որպէս ասացաք: Այսպէս տղայն՝ անգիտութեամբ մեղանչէ: Երիտասարդն՝ գիտութեամբ կամաւ: Կատարեալ հասակն՝ կարողութեամբ մեղանչէ: Ծերն՝ տկարութեամբ կամ չարութեամբ մեղանչէ. զի մեղքն թողեալ է զինքն: Վասն այն յայս Դ ժամ գիշերոյս աղօթեմք՝ զի արդարացցուք: Է եւ այլ իմս պատճառ. զի ի գիշերն խորհուրդ մարդոյն յստակ մնայ յարտաքին զգայութեանցս. զի դադարեալ են: Վասն որոյ գիշերոյ աղօթքն՝ առաւել հաճոյ եւ ընդունելի է: Այս երկրորդ հարցումն: *Երրորդ՝ թէ վասն է՞ր ի մէջ գիշերի յառնեմք: Ասեմք այսմ չորս պատճառ: Նախ՝ ի մէջ գիշերին առաւել ծանրանայ քունն. ի յայս ժամանակս թօթափեմք զքունն եւ աղօթեմք. ուսեալք ի մարգարէ են. (ի մէջ գիշերի յառնելի խոստովան լինիլ առ քեզ:) Երկրորդ՝ ի սոյն ժամս առաւել տիրէ հեշտութիւն մեղաց. ի սոյն ժամս աղօթելով՝ զերծանիմք ի մեղաց: Երրորդ՝ ի մէջ գիշերի յարուցեալ Տէրն երեւեցաւ իւղաբերիցն՝ որք պատրաստք էին իւղօք եւ խնկօք. ի յայս ժամս աղօթիւք եւ արտասուօք պատրաստ կացցուք. զի երեւեսցի Զրիստոս ի հոգիս մեր: Չորրորդ՝ ի խորհուրդ իմաստուն կուսանացն. որք ի մէջ գիշերի կազմեցին զլապտերս. եւ ընդառաջ ելին փեսային: Եւ մեք նմանեալք նոցա,

զլապտերս հաւատոյ եւ զլոյս մտաց վառեցուք. զի Զրիստոս արժանի լիցուք: Այս երրորդ հարցումն: Չորրորդ հարցումն՝ ընդէ՞ր մէջ գիշերն է սկիզբն ամենայն ժամուց: Նախ գիտելի է՝ զի ոմանք սկիզբն աւուրն՝ գերեկոյն ղնեն. որպէս երբայցեցիք եւ ասորիք: Եւ արտաքինքն՝ զմէջ աւուրն ասեն սկիզբն. յորում ժամու արեգական ի կորնթարթն երկնից ելանէ: Այլ ի մէջ քրիստոնէին՝ կրկին է սկիզբն աւուրն: Մին առաւօտն՝ որ զպահսն եւ զուտիսն բաժանէ: Եւ մին մէջ գիշերն՝ որ սկիզբն է տօնից եւ ժամակարգութեանց. վասն այն զտօն վաղուեան աւուրն ի մէջ գիշերի սկանիմք: Չի ի մէջ գիշերի ծնաւ ի սուրբ աստուածածնէն. ի մէջ գիշերի ըմբռնեցաւ ի հրէիցն. ի մէջ գիշերի գալոց է Զրիստոսի ի դատաստան: Դարձեալ գիտել է՝ զի զԱդամայ մինչ ի Զրիստոս՝ տիւն յառաջանայր գիշերոյն: Այլ ի Զրիստոսէ մինչ ի կատարած՝ գիշերն յառաջանայ տունջեան: Եւ այս է պատճառն. զի Ադամ ի լուսոյ ստեղծեալ՝ ի խաւար փոխեցաւ. ընդդէմ նմին՝ Զրիստոս ի խաւարէ ի լոյս փոխեաց զմեզ. յաղագս որոյ ի մէջ գիշերի ծնաւ Զրիստոս. եւ ի մէջ գիշերի յարեաւ ի գերեզմանէն: Այս երկու պատճառ՝ որ մէջ գիշերն է սկիզբն ամենայն ժամուց: Երրորդ պատճառ ի մէջ գիշերի ասեմք զսաղմոսն Դաւթի. զի օրէնքն գիշերէն. եւ աւետարանն լոյս: Եւ Դաւիթ ի մէջ գիշերոյ օրինացն երգեաց զսաղմոսն. այսինքն յաւուրս Դաւթի խոտեաց զգոհս հին օրինացն. եւ հաճեցաւ ի պատարագս օրհնութեան. ըստ այնմ, (ոչ ընդունիմ ի տանէ քումմէ զուարակս. եւ մատո Աստուծոյ պատարագ օրհնութեան:) Վասն այն ի մէջ գիշերի զբանաւոր պատարագս մատուցանեմք: Այժմ տեսցուք զմեկնութիւն բանիս որ ասէ: (Տէր եթէ զշրթունս իմ բանաս:) Եւ զի մեք բանամք զբերանս. վասն է՞ր ի տեան է խնդրեմք: Նախ ասեմք՝ թեպէտ մարմնոյ շրթունքս մեր են, այլ զբերան հոգւոյս Տէրն բանայ՝ որ պատկեր է նմա: Դարձեալ՝ երկու կապ է բերանոյն. այսինքն, հրամանն, եւ երկիւղն սուրբ. կապ են սոքա: Նախ հրամանն՝ զոր եդ Ադամայ ի պտղոյն չուտել. եւ անհրաման եկեր. մեք հրամանաւ նոր բանամք զբերանս ի պտուղ օրհնութեան: Երկրորդ երկիւղն՝ որ յերկեսցէն ասացաւ. (ընդ սուրբ երկիւղ քո բեւեռեալ պահեա:) Եւ եւ այլ չորս կապ՝ որք ոչ են սուրբ. այսինքն մեղք, տգիտութիւն, ծուլութիւն, եւ քուն: Նախ մեղքն կապէ զբերանն. որպէս այն՝ (սակայն մեղաւորին ասէ Աստուած, դու ընդէ՞ր պատմես, եւ այլն:) Երկրորդ՝ տգիտութիւն. ըստ այնմ, (դու զգիտութիւն իմ մերժեցեր, եւ այլն:) Երրորդ՝ ծուլութիւն. (զի յուլիցն եւ ծուլիցն՝ փակեալ է դուռն արքայութեանն.) որպէս այն որ ծրարեաց ի վարշամակի: Չորրորդ՝ քուն. ըստ այնմ, (մինչերս յե՞րբ ննջիցէք. արիք կացէք յաղօթս.) վասն այն յորժամ զարթնումք, համարձակութիւն խնդրեմք: Եւ զի այն կրկին անգամ. զի կրկին բերան էր նախահարցն. եւ մեզ կրկին բերան է՝ հոգւոյ եւ մարմնոյ: Եւ չորս փոխ սաղմոսին՝ ի քաւութիւն չորեքնիւթեայ բնութեանս մեր: Չի հողն զծուլութիւնն ամնէ. եւ ջուրն զգիշտութիւնն. օղն զհպարտութիւնն. եւ հուրն զբարկութիւնն: Եւ դարձեալ չորս է փոխն: Առաջինն փրկիլ խնդրէ ի մարմնոյ փորձանաց. (Տէր զի բազում եղեն նեղիչք իմ ասէ:) Երկրորդն՝ վասն մահու եւ գերեզմանաց: Երրորդն՝ վասն հոգւոյն նորոգութեան: Չորրորդն՝ վասն հանդերձեալ դատաստանին: Եւ հարիւր Տէր ողորմեայն ապաշխարութեան՝ ի խորհուրդ հարիւր ոչխարացն, յորոց մինն էր պակասեալ: Եւ յիսուն մարտիրոսաց՝ զի ազատեալք եղեն: Եւ երեք ի դէմս երրորդութեան ի տեւունական տօնս ի հոգւոյ եւ ի մարմնոյ եւ ի մտաց

մեր սրբութիւն: Իսկ ասելն՝ օրհնեալ Տէրն մեր եւ փրկիչն Յիսուս Քրիստոս: Նախ զի՝ յօրհնութենէ սկսեալք, ի նոյն աւարտեմք: Եւ դարձեալ՝ զամենայն աղօթս մեր՝ ի քրիստոս նուիրեմք. զի նա ընծայէ հօր: Յետ որոյ կանոն սաղմոսաց. Է գուբդայն՝ աստի կենացս. եւ ուրն հանդերձելոյն: Նոյնպէս եւ ուրներորդ կանոնն որ ելք աստիճանաց ասի՝ զելանելն յաստեացս նշանակէ: Իսկ կանոնագլուխն՝ կրկին ունի խորհուրդ: Նախ՝ որպէս Յետու գեթն գեթն օր շուրջ եկեալ յերիքովի՝ զվեց օրն լռութեամբ. եւ յեթն երրորդին՝ աղաղակաւ. եւ կործանեցաւ պարիսպն ի ձայնէն: Այսպէս եւ մեր զվեց գուբդայն ի թիւ ասեմք. եւ գեթն ձայնիւ. եւ զփոխն աղաղակաւ. եւ ի կործանիլ մեղացն, ապա օրհնութիւն Աստուծոյ նուագեմք: Դարձեալ՝ վեցիւք շարժիմք ի կեանս. եւ յեթներորդն հանգիստ հոգւոց. եւ ի գոչել փողոյն՝ յառնեմք. եւ ապա զօրհնութիւն ընդ հրեշտակս մատուցանեմք: Չի տասն օրհնութիւն կիրակէին. նոյնպէս եւ օրհնութիւն մարտիրոսացն. զի ազատեցան յաստեացս: Իսկ ի պահսն ոչ Է օրհնութիւն. զի ընդ ապաշխարութեամբ եմք. նոյնպէս եւ ոչ խունկ. զի գարշահոտ եմք մեղօք: Իսկ թագաւորքն երեք երեք տուն Է՝ ի դէմս երրորդութեանն. եւ միջի տունն ի սաղմոսաց խառնեալ. զի Աստուած Է մարդացեալ: Եւ կրկին Է թագաւորութիւնն Աստուծոյ. առաջինն կամողաց. եւ վերջինն կամողաց եւ ոչ կամողաց: Եւ դարձեալ՝ առաջին թագաւորն Է Քրիստոս. եւ վերջին՝ թագաւորեալքն ընդ նմա. թէ աստ, թէ ի հանդերձեալն. վասն որոյ ընթեռնուեմք զյիշատակս նոցա: Եւ ի տերունական տօնս՝ հրեշտակացն երգակից լինիմք. եւ աստ կատարի մեջ գիշերոյ ժամն: Իսկ հարցն երեք երեք տուն: Նախ՝ ի դէմս երրորդութեանն: Երկրորդ՝ վասն երից նախահարցն: Երրորդ՝ զի երեք էին մանկունքն: Եւ գործատունն երկու տուն՝ զի երկու են զի երկու են արարածք՝ եկնաւորք եւ երկրաւորք. իմանալիք եւ զգալիք: Եւ սաղմոսն վաթսուն տուն՝ զի պատկերն Բելայ՝ վաթսուն կանգուն էր: Եւ վեց տուն շարականն՝ վեց կանգուն էր լայնն: Եւ երեք Աստուած քաւետ՝ ապաշխարութեան Է որպէս ասաց մաքսաւորն: Իսկ մեծացուցէն՝ ամենայն խորհրդոց կատարումն Է. զի թէ չէր ծնեալ ի կուսէ, եւ ոչ էր խաչեալ եւ ոչ յարուցեալ: Եւ զի հարցն ի դէմս Ադամայ էր. եւ ողորմեայն ի դէմս Եւայի յապաշխարութիւն. մեծացուցէն ի մեջն՝ զի լուծիչ Է երկուց դատապարտութեանցն: Եւ այն որ ի կիրակէն փակեմք զդուռն՝ թաղման եւ յարութեան Է խորհուրդ: Եւ համբոյր աւետարանին՝ որ յանուանէ կոչեաց զՊետրոս. այլ ի համբոյր եկն մեզ Քրիստոս մարմնովն: Իսկ ընդ ողորմեայն զկուրծսն բախել՝ զի սովոր են կանայք յապաշխարելն զկուրծսն բախել: Եւ Տէր երկնիցն բարձիւ՝ ընդ հրեշտակաց երգ. եւ երեք փոխն՝ ի դէմս երրորդութեան: Եւ անդ փառք ի բարձուսս՝ զոր երգեցին հրեշտակքն ի ծննդեանն. եւ յերրորդ ժողովն ապա կատարեցաւ: Այս դաւանութիւնս ընդ ծագումն լուսոյն. զի հրեշտակքն ուսուցին. եւ ի ծննդեան ասացաւ. եւ ի Նիկիային ի հասարակ օրն. զոր առաքեալքն եւ հայրապետքն կարգեցին: Եւ այն որ համաձայնիմք՝ զի հրեշտակք ընդ մարդիկս երգեցին: Այլեւ ի հանդերձեալն համաձայնիմք ընդ նոսա Աստուծոյ, ընդ հրեշտակս: Եւ առաւօտու երգն ի դէմս խաչին. զի չորս բաժին Է: Եւ ապա երեք սրբութեանն՝ դառն անմահ զենեալ ի վասն նորա: Եւ որպէս ճաշու մեսեդին եւ երեկոյանն զչորրորդ մասնդ որակի գինւոյն եւ իւղոյն նշանակեն: Նոյնպէս եւ առաւօտու երգն՝ զխաչն քառաթել: Իսկ երեք սրբեանն ի դէմս

Քրիստոսի՝ աւետարանն վկայեաց. (զայս ասաց ասէ Եսայի. եւ խօսեցաւ վասն նորա:) Եւ այս է միտն. թեպէտ որպէս մարդ ըմբռնեցար՝ Աստուած ես. եւ թեպէտ կամաւ ակարացար՝ հօօր ես. եւ թեպէտ մեռար մարմնով՝ անմահ ես. վասն քո չարչարանացդ՝ ողորմեա մեզ: Չայս Յովսէփ արեմաթացին ասաց. եւ ընկալաւ զաստուածացեալ մարմինն ի խաչէն: Եւ զփառաւորեալն՝ թօմա առաքեալն ասաց ի փոխումն աստուածամօր կուսին: Եւ այն որ ի ճաշուն ոչ ասեմք. զի դէմ առ դէմ խօսիմք. եւ չեմք կարօտ բարեխօսի եւ միջնորդի: Եւ զի յօրն երիցս անգամ՝ այս է՝ նախ ի սրբութիւն հոգւոյ եւ մարմնոյ եւ մտաց մերոց: Երկրորդ՝ ի դէմս ինն դասուց հրեշտակաց յերիս երրեակս որոշեալ: Երրորդ՝ ի խորհուրդ ինն աստիճանաց եկեղեկոյ: Եւ յետ այսորիկ մանկունքն. զի ի Քրիստոս մանկասցուք: Նախ՝ մկրտութեամբ: Երկրորդ՝ ապաշխարիութեամբ: Երրորդ՝ արեամբ: Չորրորդ՝ ի հանդերձեալն յարութեամբ: Եւ աստ կատարի առաւօտու ժամն: Յետ որոյ՝ արեւագալին: Նախ՝ ի խորհուրդ այն՝ (որ նստի յերկինս երկրի ընդ արեւելս որպէս ասէ մարգարէն:) Երկրորդ՝ եւ յարեւելից գալոց է ի կատարածի. որպէս զգգալի արեւս ծագեաց՝ հայցեմք որ զիմանալի լոյսն ծագեսցէ ի հոգիս մեր: Դարձեալ յառաւօտուն յարեաւ Քրիստոս. եւ եգիպտացիքն յառաւօտուն ընկղմեցան ի ծովն. յառաւօտուն ստեղծեաց զարարածս Աստուած: Եւ յառաջին ժամու աւուրն՝ երեւեցաւ Քրիստոս իւղաբերիցն: Եւ յառաջին ժամու աւուրն՝ ուսուցանէր Տէրն զժողովուրդն: Եւ յառաջին ժամու աւուրն՝ կացուցին կապանօք առաջի Պիղատոսի: Եւ զհտելի է՝ զի ի հնումն է անգաւ եր ժամն. եւ ի նորս՝ ինն անգամ: Առաւօտեան արեւելիցն՝ եւ երեկոյեան խաղաղականն՝ ոչ եր ի հինն. այլ ի նորս է յաւելեալ: Խաղաղականն ի խորհուրդ իշանելոյն: Ի դժոխս՝ որ խաղաղացոյց զհոգիսն: Եւ արեւագալն ի խորհուրդ յարութեանն. զի յարուցեալ ի մէջ գիշերի, ընդ արշալոյսն երեւեցաւ առաքելոցն եւ իւղաբեր կանանցն: Այս առաւօտու երեք ժամու խորհուրդն: Իսկ ի ճաշ երեք ողորմեայն՝ երեք ժամն է տունջեան: Առաջին ողորմեայն ի դէմս հոգւոյն. որ յերրորդ ժամու էջ ի դասս առաքելոցն: Եւ յերրորդ ժամու աւուրն կապեցաւ Քրիստոս ի հրէիցն: Եւ յերրորդ ժամուն խաչեցաւ ըստ գրեցելոյ աւետարանիչն Մարկոսի: Եւ յերրորդ ժամու կանոնեցաւ ի նոցանէ պատարագել զՔրիստոս: Եւ յերրորդ ժամու հատանի վճիռ յարդար դատաւորէն ի վերայ մեղաւորաց. ըստ որում հատին վճիռ մահու ի վերայ անմահ թագաւորին: Եւ յերրորդ ժամու հաւանեալ կինն՝ ճաշակեաց ի հրաժարեցուցեալ ծառոյն: Իսկ երկրորդ ողորմեայն ի վեցերորդ ժամուն՝ վասն ճաշակման նախաստեղծիցն. որք անկան ի մեղս. եւ արտաքսեցան ի դրախտէն: Եւ ի սոյն ժամու իշխանն մահու հասնի ի վերայ ամենայն ուրուք. որդունակ նախնեացն որք մերկացան զպատմութեանն սրբութեանն: Այսպէս երկրորդն Ադամ՝ ի վեց ժամու աւուրն եկն յիմանալի դրախտն ի սուրբ աստուածածինն. եւ յղացաւ ի նմանէ: Եւ ի սոյն ժամու բելեռացաւ ի խաչին մերկացեալ. ի փայտին ճաշակեաց զլեղին. Այլեւ ի վեց ժամու աւուրն երեւեցաւ մատասանիցն եւ եկեր ընդ նոսա յաւուրն յայն, յորում կամեցաւ համբառնալ յերկինս: Եւ ի վեց ժամու աւուրն օձն պղնձի բարձրացաւ ի Մովսիսէ յանպատին Սինայ՝ յօրինակ փրկչին Յիսուսի: Իսկ երրորդ ողորմեայն յինն ժամու աւուրն՝ ըստ այնմ առադրի. վասն զի ի ժամուն յորում յանցեաւ Ադամ, եւ յետ մեղանացն մնաց ի դրախտին, նոյն չափ

Քրիստոս չարչարեցաւ ի վերայ խաչին. որպէս ասէ եւ Սեբի Եմեսու եպիսկոպոսն: Եւ յորում ժամու վասն անզոջական խոստովանութեան դատապարտեցան ի հրամանէն Ելանել ի փափկութենէ վայրեացն, ի նմին ժամու Տէրն արարածոց արձակեալ աւանդեաց զմարդկային հոգին աստուածացեալ. եւ արձակեաց զկապեալ հոգիսն ի բռնութենէ մահու: Եւ ի ժամու յորում փակեցաւ դրախտն՝ փշրեցան աղիք դժոխոց: Եւ յորժամ ծածկեցաւ ծառն կենաց՝ ի նոյն ժամու խոցեաց զինուորն զեղարդեամբն զկող փրկչին. բացաւ աղբիւրն ի կողէն՝ եւ ել արիւն եւ ջուր: Եւ ի ժամու յորում մերժեցաւ Ադամ յադինայ՝ յայնժամ աւազակն վասն խոստովանութեանն Եմուտ Կարապետ այնոցիկ, որոց անդ են դառնալոց: Վասն այն ի սոյն ժամու աղօթեմք: Եւ փառաւորեմք զՔրիստոս. զի մտցուք ուր ինքն հորդեաց մեզ ճանապարհ: Այլեւ յինն ժամու աւուրն համբարձաւ Քրիստոս յերկինս եւ նստաւ ընդ առաջմէ հօր: Եւ Մովսէս յինն ժամու աւուրն Եհար զվէմս եւ բղիսեաց ջուրն: Վասն այսքան պատճառացս՝ աղօթեմք ի յիններորդ ժամուս: Իսկ ի տասներորդ ժամն՝ յորում Տէրն կենաց էջ իշիրիմ մահացելոցն. եւ անապական յարութեամբ հաստատեաց յոյս մարդկան սեռի. եւ ի ժամու առաջին մարդոյն մաշկասփած լինելոյն՝ պատի պաստառակալօք բնակեալն ի լոյս անմատոյց: Եւ յորում ժամու Ադամ հեռացաւ ի դարախտէն, էջ ի սիրտ երկրի ընդ աջմէ հօր գահակալեալն. ուստի պարտ է աղօթել. (զի որ էջ ի ստորին կողմ երկրի,) տարցէ զմեզ ի վերին աշխարհն անմահ մարմնով նորոգեալ: Իսկ յերեկոյի ժամուն փառաւորեմք զԱստուած. զի յայնմ ժամու Քրիստոս կատարեաց զպատարագն ի վերնատանն. եւ լուաց զոտս աշակերտացն: Եւ ի նմին ժամու ի ջուցին ի խաչէն. այլեւ գոհութիւն վասն զտիւն կատարելոյ: Նաեւ պատճառացն հասեալ ի խաւարիլ լուսոյն, մեծ եւ աւելի փոյթ ունին ի լրութիւն, որովայնին յաղագս պակասութեան գիշերոյն. վասն որոյ զխափան գիշերոյն զմտաւ ածեալ՝ աղօթէ եկեղեցի ըստ մարգարէին ասելով. (Ես առ Աստուած կարդացի:) Իսկ ի վերջին ժամու երեկոյին որ է խաղաղականն՝ օրհնեմք զԱստուած. զի ի նմին ժամու յորժամ զղօթէր Քրիստոս, հեղութիւն ի նմանէ քրտունքն արեան: Եւ ի նմին ժամու եղաւ ի գերեզմանի: Եւ ի նմին ժամու եկաց ի մէջ աշակերտացն դրօքն փակելովք, եւ ետ նոցա ողջոյն: Եւ վասն այսպիսի բարութեաց զորս առեալք եմք ի Քրիստոսէ՝ ի նմին ժամու փառաւորեմք զնա: Այսքան առ այս:

Նորին քարոզ վասն Աղօթից. ի բանն՝ (Եօթն էին հարճք՝ ՝ ինն հարսնածուք ասէ երգն:) Երգ երգոց. 6. 7: (Գլուխ. 2Ե)

Բանս առակաւոր յայտ առնէ զժամանակ աղօթիցն՝ որ ի հնումն եւ ի նորումս: Չի ի հինն եօթն անգամ աղօթիւքն՝ եղեն հարճք եւ աղախիւք. զի ծառայական էր օրէնն. իսկ ի նորս՝ ինն անգամ աղօթելով, եղաք հարսն սիրելի փեսային Քրիստոսի: Եւ թէ վասն է՞ր յաւուրն ինն անգամ յաղօթս կամք: Ասեմք թէ վասն ինն պատճառի: Նախզի՝ յերկինս ինն դասք են պաշտօնէից. ըստ թուոյ նոցա՝ ինն անգամ աղօթէ եկեղեցի սուրբ: Երկրորդ՝ ինն կարգ է յեկեղեցի. եօթն աստիճան քահանայիցն. եւ եպիսկոպոսն եւ կաթողիկոսին. ըստ խորհելոյ նոցա՝ ինն անգամ աղօթէ: Երրորդ պատճառ՝ ինն կարգ է խորհրդոյ. եօթն խորհուրդ եկեղեցւոյ որ յայտնի. եւ կարգ

ննչեցելոցն զոր կատարեմք. եւ կարգ յարութեանն վասն որոյ աղաչեմք եւ յուսամք. այսու խորհրդով՝ ինն անգամ աղօթե եկեղեցի սուրբ: Չորրորդ պատճառ՝ ինն երանութիւն խոստացաւ Տէրն յաւետարանին. աղքատաց, հեզոց. եւ արդարոց: Վասն որոյ ինն անգամ աղօթեմք. զի լիցուք արժանաւոր խոստացեալ պարգեացն: Հինգերորդ՝ ինն բան է աղօթիցն զոր Տէրն ուսոյց աշակերտացն իւրոց. եւ յամենայն աւուր զնոյն աղօթեմք. (հայր մեր որ յերկինս ես, եւ այլն.) ի նոյն թիւ՝ ինն անգամ աղօթեմք եւ փրկութիւն ի Տեառնէ ինդրեմք: Վեցերորդ՝ առ մեզ եօթն է զօրութիւն հոգւոյս մեր. այսինքն, յոյս հաւատ եւ սէր. խորագիտութիւն. արիութիւն. պարկեշտութիւն. արդարութիւն. ըստ այլոց եւ հոգի եւ մարմին մեր. վասն սրբութեան սոցա՝ ինն անգամ աղօթեմք: Եօթներորդ պատճառ՝ ինն անգամ աղօթեմք. զի մարմինս մեր ի չորս տարեաց է. եւ ի սոցանէ ծնանին երեք ազգ մեղք: Ի հրոյն բարկութիւն. ի ջրոյն գիշութիւն. յօդոյն թեթեամտութիւն. եւ ի հողոյն ծուլութիւն. եւ ունիմք հինգ զգայութիւն որովք մեղանչեմք. զտեսանելիսն, զլսելիսն, եւ զայլն: Վասն իննուց սոցա մեղաց թողութեան անգամ աղօթեմք յաւուրն: Ութներորդ պատճառ՝ ինն ամիս տեւէ մանուկն յարգանդի մօրն. եւ ապա ծնանի ի խաւարէ ի լոյս աշխարհիս. յաղագս որոյ՝ ինն անգամ աղօթեմք. զի ի խաւարէ կենցաղոյս՝ ելցուք ի լոյսն յաւիտենից: Իններորդ՝ ի ձմեռն նուազի օրն մինչեւ ցինն ժամն. եւ յամառն գիշերն. ըստ թուոյ ոսցա՝ ինն անգամ աղօթեմք. զի ազատիցուք ի չարէ. ըստ այնմ, (շատ է աւուրն չարիւր.) որպէս ասել՝ յամենայն ժամու չար է պատրաստեալ ամենայն մարդկան ի սատանայէ. պարտ է յամենայն ժամ աղօթել՝ զի փրկիցիմք յամենայնէ: Իսկ աշխարհականացն կանոն է Դ անգամ աղօթել: Նախ՝ վասն մարմնոյ եւ հոգւոյ եւ մտաց սրբութեան: Երկրորդ՝ զի Դ են սեռք մեղաց. խորհրդոց, եւ բանից, եւ գործոց. վասն թողութեան սոցա՝ երեք անգամ աղօթեմք: Երրորդ՝ զի երեք են հոգւոյ մասունքն որովք մեղանչեմք. բան եւ ցասումն եւ ցանկութիւն. ընդդէմ սոցա՝ երեք անգամ աղօթեմք: Չորրորդ՝ երեք է կարողութիւն մեղաց ի միտս մեր. կամք, իմացումն, եւ յիշողականն որ է միտքն. կամքն է որով յօժարիմք ի մեղս եւ կամօք գործեմք. իմացումն է որով խորհիմք զչարն եւ ապա գործեմք. միտքն է՝ որով հանապազ ի մտի պահեմք եւ յիշեմք զհեշտութիւն մեղացն եւ գործեմք. վասն որոյ ընդդէմ սոցա՝ երեք անգամ աղօթս առնեմք: Հինգերորդ պատճառ՝ զի երեք է ժամանակն ի յորս մեղանչեմք. այսինքն, անցեալն՝ ներկայս՝ եւ ապագայն. վասն որոյ յերեք ժամանակս աղօթս առնեմք: Վեցերորդ՝ զի երեք է հասակ մեր. առաջին. միջին. եւ վերջին. որ է մանկութիւն. երիտասարդութիւն. եւ ծերութիւն. եւ ի սոսա մեղանչեմք. վասն որոյ երեք անգամ աղօթեմք յօրն. եւ երից հասակացն սրբութիւն ինդրեմք: Եօթներորդ՝ երեք է որպիսութիւն կենաց մերոց. առաջին՝ կեանքս այս. յորում հոգւով եւ մարմնով մեղանչեմք եւ ապականիմք: Եւ յետ մահու՝ որ միայն հոգին է առանց մարմնոյ: Եւ յետ յարութեանն՝ որ հոգւով եւ մարմնով յանապականութիւն փոխիմք. յաղագս որոյ երիցս աղօթեմք: Ութներորդ՝ ի ինդիրն երեք իր է. նախ ինդրելն. եւ ապա առնուլն. եւ ապա գոհանալն: Այսու խորհրդով՝ երեք անգամ աղօթեմք: Իններորդ՝ յամենայն աւուր իր պիտոյ է մեզ. նախ գործն եւ վաստակն. երկրորդ պետքն հարկաւոր. երրորդ հանգիստ եւ խաղաղութիւն մարմնոյ. վասն որոյ յառաւօտին աղօթեմք՝ զի յաջողեալ լիցի գործն եւ վասնտակն մեր: Ի ճաշն աղօթեմք՝ զի նա տայ

զկերակուրն մեր. ըստ որում, (աչք ամենեցուն ի քեզ յուսան. եւ դու տաս կերակուր ևոցա ի ժամու:) Յերեկոյն աղօթեմք՝ զի (խաղաղութեամբ ևնջեցուք եւ զարթոցուք:) Տասներորդ՝ ի դէմս սրբոյ երրորդութեան՝ երեք անգամ աղօթեմք. յառաւօտուն առ հայր աղաղակեմք. զի ի նմանէ ամենայն պարգեւք բերանաց ծագին յաշխարհս: Ի հասարակ օրն ի դէմս որդոյ. զի նա տայ մեզ կերակուր հոգեւոր եւ մարմնաւոր՝ զսուրբ պատարագ մարմնոյ եւ արեան իւրոյ: Յերեկոյին առ հոգին սուրբ. զի նա է խաղաղութիւն մեր եւ հանգիստ հոգւոյ մերոց. այժմ ի յանկողիսս մեր. եւ յետոյ ի գերեզմանի. եւ յետոյ ի հանգիստն յաւիտենից: Եւ աստ հարցանելի է թէ՛ ո՞րպէս զանազանին հասարակաց աղօթեմք եւ առանձնականն: Ասեմք այսպէս: Նախ՝ հասարակաց աղօթքն է հարկաւոր. իսկ առանձնականն կամաւոր: Դարձեալ՝ հասարակն վճարէ զպարտս. եւ առանձնականն նիւթ զպսակն: Դարձեալ՝ հասարակն զգայարանօք կատարի. իսկ առանձնականն ի միտս լուսափայլի: Եւ չորրորդ՝ հասարակ աղօթքն է միակի պատիւ եւ փառք. եւ առանձնականն կրկնակի: Այլ թեպէտ առանձնականն կամաւոր է՝ այլ ի վերայ վանականաց որք են աբեղայք եւ կոնաւորք՝ հարկաւոր է վասն չորս պատճառի: Նախ ի Տէր ունական բանիցն է յայտ. որպէս ուսոյց հասարակ աղօթել. ըստ այնմ, (երկու եւ երեք ի ձեռք միաբանեցին եւ խնդրեցեն՝ եղիցի:) Նոյնպէս ուսոյց եւ զառանձնականն. ըստ այնմ, (մուտ ի սենեակ քո. եւ աղօթեա ի ծածուկ.) եւ ինքն ի բազում ուրեք առանձին կայր յաղօթս: Երկրորդ՝ վասն զի քահանայ եմք՝ պարտ է հասարակ աղօթել. եւ զի աբեղայ՝ պարտ է առանձին աղօթել: Երրորդ՝ զի ունիմք զբնութիւնս հասարակաց՝ պարտ է հասարակ աղօթել. եւ զի ունիմք անձն եւ դէմ յատուկ՝ պարտ է առանձնակի աղօթել: Չորրորդ՝ վասն հասարակաց եւ յայտնի մեղաց՝ պիտոյ է հասարակ եւ յայտնի աղօթել: Եւ այս եւս գիտելի է՝ թէ ոմանք հանապազ յետ ամենայն կարգեալ աղօթից՝ առանձնակի աղօթեն: Այլ որք ոչ ժամանեն, պարտ է յամենայն աւուր կրկին անգամ յայգ եւ յերեկոյ: Նախզի՝ հոգի եւ մարմին է մարդն: Եւ դարձեալ՝ մինն սկիզբն եւ վախճան է գիշերոյ. եւ միւսն տունջեան: Եւ դարձեալ՝ վասն ելից մեր եւ մտից. որ է կեանք եւ մահ: Եւ չորրորդ՝ վասն այսր աշխարհիս եւ հանդերձելոյն առանձնակի աղօթեմք՝ փրկիլ ի փորձութեանց: Իսկ ոմանք եւս կատարեալք ամենայնիւ, յերեք ժամանակս աղօթեն առանձին: Մին ի մէջ գիշերի յառաջճ քան զհասարակաց ժամս. եւ մի յայգն. եւ մի յերեկոյն: Եւ է այս խորհրդաւոր: Նախզի՝ յերից եմք գոյացեալ. ի մարմնոյ. ի հոգւոյ. եւ ի մտաց. որպէս ասեն ոմանք: Վասն որոյ երեք անգամ առանձնական աղօթս մատուցանեմք: Եւ դարձեալ՝ երեք է ժամանակն. անցեալն՝ եւ ներկայս՝ եւ ապագայն: Եւ դարձեալ՝ երեք են որպիսութիւնք մեր եւ փոփոխմունք. յաստի կեանս՝ եւ յետ մահու՝ եւ յետ յարութեանն. վասն որոյ երիցս աղօթեմք առանձնակի: Եւ այլ խորհուրդ. երեք առանձնական աղօթքն՝ եւ ինն հասարակն՝ որք լինին ամենեքեան երկոտասան անգամ աղօթք: Չի տիւն եւ գիշերն՝ են ԻԴ ժամ. լինի ապա զի ընդ երկու ժամն՝ միանգամ աղօթեմք: Որով յայտ է՝ զի ի կեսն աւուր որ է երկոտասան ժամ՝ աղօթելի է մեզ յամենայն օր՝ եւ ի կեսն այլ մարմնական հոգւոց պարապիլ. գործոյ, աշխատութեան, ևնջելոյ, կամ այլ ինչ իրաց: Դարձեալ՝ ունիմք երկոտասան անգամս. ըստ իւրաքանչիւրոցն՝ մէկ մէկ ժամ աղօթս առնեմք: Այլեւ զերկոտասան գունդս հրեշտակաց յերկնիս, եւ զերկոտասան

առաքեալսն բարեխօս դնեմք առ Աստուած: Դարձեալ՝ երկոտասանն՝ կրկին վեց է. եւ մեր հանապազ վեցեկի շարժմամբ հոգւով եւ մարմնով մեղանչեմք. վասն սոցա երկոտասան ժամու աղօթիւք զթողութիւն խնդրեմք: Իսկ ո՞րք են ինն ժամք աղօթիցն: Գիտելի է՝ զի հին օրէսսն Մովսէսի՝ եօթն ժամ էր աղօթիցն. որպէս ասէ Դաւիթ. (եօթն անգամ յաւուրն օրհնեցից զքեզ:) Եւ էր առաջին ժամ նոցա երեկոյն. վասն զի սկիզբն աւուրն զերեկոյն ասէին. որպէս ասէ Դաւիթ: (Ես առ Աստուած կարդացի եւ լուաւ ինձ՝ յերեկոյս:) Եւ ապա հանգիստեան ժամն. եւ ապա ի մէջ գիշերին. եւ ապա յառաւօտին. որպէս ասէ Դաւիթ. (ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինի առ քեզ.) Եթէ՝ (ընդ առաւօտս կանխեցից:) Չայս Դ ժամու աղօթս՝ ի գիշերն կատարէին: Եւ ապա զինն ժամն՝ որ աւարտ էր նոցա աղօթիցն: Իսկ ի նորս եկեղեցի քրիստոնէից ազգի՝ յաւելեալէ կրկին ժամ. այսինքն արեւագալին որ յետ առաւօտին. եւ յետ երեկոյին խաղաղականն. որ լինի ինն անգամ աղօթք ըստ ինն դասուց հրեշտակաց: Այլէ ինն են աստիճանք եկեղեցւոյ: Եւ զայս եւս մարգարէն ուսուցանէ. (օրհնեցէք զԱստուած եւ սաղմոս ասացէք նմա. ճանապարհ արարէք այնմիկ՝ որ նստի յերկնից երկրիս արեւելս:) Եւ դարձեալ ասէ. (թագաւորութիւնք երկիր օրհնեցէք զԱստուած. ճանապարհ արարէք այն միկ որ նստի ընդ արեւմուտս:) Այս է՝ որ էր յերկինս յերկրից բանն Աստուած ի պայծառ եւ ի լուսաւոր դասուց հրաշտակաց օրհնաբանեալ. եկն յերկիր որ է արեւմուտ եւ խաւար. եւ եղել որդի մարդոյ. յայս միտս մեք ազգք քրիստոնէից՝ յելս արել ու եւ ի մուտս համաձայն վերին զուարթնոցն աղօթեմք առ Զրիստոս Աստուած: Եւ է առաջին ժամ աղօթիցն ի մէջ գիշերի. վասն զի ի մէջ գիշերի յարեաւ Զրիստոս. եւ ի մէջ գիշերի է հասարակ յարութիւն մեր. վասն որոյ յայսմ ժամու սկիզբն է աղօթից բոլոր աւուրն. յորում ասեմք զՏէր եթէ շրթունս. եւ զայլ սաղմոսն ի դէմս հօր Աստուծոյ: Երկու ժամն է օրհնութիւն երից մանկանցն ի դէմս որդւոյ. որ նա էջ ի մէջ հնոցի աշխարհիս՝ եւ փրկեաց զմեզ: Երրորդ ժամն՝ արեւագալին առ հոգին սուրբ. այս երեք ժամն՝ ի գիշերի կատարին: Իսկ չորս ժամն ի ցերեկն: Երրորդ ժամուն ողորմեայն ի դէմս հոգւոյն սրբոյն. որ յերրորդ ժամուն էջ յառաքեալսն: Դիւզերորդ ժամն՝ ի միջին ողորմեայն որ է պատարագն. ողորմեայն ի դէմս հօր՝ որ առաքեաց զորդին ի խաչ. եւ պատարագն ի դէմս որդւոյ որ խաչեցաւ վասն մեր: Վեցերորդ ժամն է վերջին ողորմեայն իններորդ ժամու աղօթքն. յորում Զրիստոս աւանդեաց զհոգին ի ձեռս հօր. որ այժմ այս երեք ողորմեայքս եւ պատարագն ի միասին կատարին: Եօթներորդ ժամն է խոնարհեցոյն եւ ապրեցոյն ի խորհուրդ թաղմանն Զրիստոսի. յորում ժամու մարմնով էջ ի հող գերեզմանի: Ութներորդ՝ խաղաղականն է. ի խորհուրդ հոգւոյն Զրիստոսի յորում ժամու էջ ի դժոխս. եւ լոյս ծագեաց նոցա. եւ քարոզեաց զարձակումն. եւ խաղաղացան հոգիքն ի խռովութենէ տանջանացն: Իններորդ ժամն՝ եկեցեն է. յորում աղօթեմք ի վերայ անկողնոց եւ ննչեմք. որ է վերջ եւ աւարտ ամենայն ժամուց բոլոր աւուրն. որ զմահ մեր նշանակէ. յորում ի վախճանիլ կենցաղոյս մերոյ՝ մտանեմք ի գերեզման: Եւ ինն փոխ բոլոր սաղմոսին՝ ի պահպանութիւն ինն ժամուց գիշերոյն որ անպակաս մնայ: Եւ Չ փոխ կիսատն՝ զի մինչ եւ հինգ ժամն յաւելու գիշերն եւ պակասի: Եւ այս գիտելի է՝ զի գիշերն չորս անգամ աղօթք կատարին. այսինքն է, հանգստեան, մէջ գիշերին, առաւօտին, եւ արեւագալին: Եւ այս վասն երեք

պատճառի: Նախզի՝ չորս պահ է գիշերն. առաջին պահն՝ յորժամ ասեմք գեկեցեն. երկու պահն է մէջ գիշերն՝ յորում ասեմք զսաղմոսն Դաւթի. երեք պահն է հաւախօսն՝ յորում ասեմք գերգ երից մականցն. չորս պահն է լոյս առաւօտին՝ յորում ասեմք զարեւագալն: Չի յիւրաքանչիւր պահ գիշերոյն աղօթս կատարեմք: Երկրորդ պատճառ. զի Տէրն յայսոսիկ ժամանակս զգուշացոյց զմեզ արթուն կալ եւ աղօթել. որպէս ասէ. (ոչ գիտէք յորում ժամու գող գայ. յերեկօրեայ՝ ի մէջ գիշերի՝ ի հաւախօսի՝ եւ թէ ընդ առաւօտս:)

Չի հասակ ամենայնի մարդոյ ի չորս փոփոխի: Երեկոյ է տղայութիւնն՝ յորում նոր գամք ի խաւար կենցաղոյս: Մէջ գիշերն է երիտասարդութիւնն՝ յորում առաւել թմրիմք ի մեղս: Հաւախօսն՝ ալեւորութիւնն: Եւ առաւօտն ծերն է՝ որ մերձ է ծագման հանդերձելոյ աշխարհին: Եւ գողն է որմափոր մահն. որ յամենայն օր մին քար քարշէ ի կենաց մերոց. եւ ծակէ գտուն շինուածոյս մերոյ: Եւ դարձեալ՝ յանկարծակի գայ որպէս գոցն. ըստ այնմ. (իբրեւ զորոգայթ յանկարծակի եկեցէ ի վերայ ձեր օրն այն:)

Եւ դարձեալ՝ գողն զինչս մարդոյն գողանայ. եւ նա զհոգիս յափշտակէ որ է պատուական ինչ մեր. յայս միտս ի գիշերին Դ անգամ աղօթեմք: Երրորդ պատճառ. զի չորեքնիւրեայ է բնութիւն մարմնոյս մերոյ. եւ ուրօք յանցանեմք. վասն սոցա չորս անգամ աղօթեմք ի գիշերի ի դէմս մարմնոյս մերոյ: Իսկ ի ցերեկն աղօթեմք հինգ անգամ ի դէմս հոգւոյս մերոյ: Նախզի՝ հոգին եռամասնեայ է. բան, ցասումն, եւ ցանկութիւն. եւ ունի իմացումն եւ կամս: Եւ դարձեալ՝ հոգին ունի Ե ներքին զգայարանս. որ է հասակ զգայութիւն. եւրեակայութիւն. կարծիք. տրամախոհութիւն. յիշողական որ է միտք: Եւ հինգ արտաքին զգայութիւն. տեսանելիք. լսելիք. հոտոտելիք. ճաշակելիք. եւ շօշափելիք. եւ սոքօք զամենայն չար եւ զբարի գործէ մարդ. վասն որոյ ի ցերեկն հինգն անգամ աղօթեմք: Եւ այս եւս գիտելի է՝ զի այլ է պտղաւետ աղօթելն. եւ այլ է անպտուղն. որ բաժանի յերիս դէմս: Չի յորժամ զմիտս եւ զխորհուրդս եւ զգգայարանս ի միասին ժողովեմք, եւ զոր ասեմք լեզուաւ՝ մտօք զայն խորհիմք, այս է պտղաւետ աղօթքն, եւ ընդունելի Աստուծոյ: Իսկ յորժամ լեզուաւ աղօթեմք, եւ մտօք ոչ խորհիմք, այս է անպտուղ աղօթքն. եւ այս ոչ չար է, ոչ բարի: Իսկ յորժամ լեզուաւ աղօթեմք, եւ մտօք զչարն խորհիմք, եւ ցրուիմք խորհուրդով ի յազգի ազգի հեշտութիւնս մարմնականս, այս ամենեւիմք չար է, եւ յանցանք մահու չափ. զի լեզուն եւ միտքն հակառակ են միմեանց. թեպէտ լեզուն զբարիս աղօթէ, այլ միտքն է աղբիւր լեզուին. եւ նա զհակառակն խորհի. վասն այն չար է այնպիսին եւ անընդունելի Աստուծոյ. որ է օրինեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն Առաւօտու. ի բանն՝ (Ընդ առաւօտս կանխեցից յանդիման լինիլ քեզ:) Սաղ. 62. 7: (Գլուխ. 22)

Վասն բազում պատճառի ընդ առաւօտս աղօթելի է մեզ: Նախ՝ որպէս մարդն հոգի է՝ մարմին. նոյնպէս օրն տիւ է եւ գիշեր: Չի թէ միշտ տիւ էր, ոչ կարէր տանիլ մարմին եւ միշտ աշխատել. եւ թէ միշտ գիշեր՝ ոչ կարէր գործել: Այլ արարիչն Աստուած արար զտիւն՝ զի մինչեւ յերեկոյ վաստակեցէ մարդ զպէտս մարմնոյն. ըստ այնմ թէ, (քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո:) Իսկ զերեկոյն պատրաստեաց գիշեր. զի հանգիցէ

յաշխատանաց տունջեանն. եւ դարձեալ ուժ առնուցու ի միւս օրն գործելոյ: Արդ՝ որպէս սինչն է հանգիստ մարմնոյ. նոյնպէս աղօթքն հանգիս է հոգւոյ: Եւ որպէս ի բոլոր գիշեր հանգուցաք զմարմինն ննջելով. նոյնպէս յառաւօտուն հանգուցանելի է գիտիս աղօթիք: Երկրորդ՝ զի գիշերն բազում անցս անցոյց ընդ մեզ թշնամին սատանայ. պարտ է յառաւօտուն գանգատիլ զայն արարիչն մերոյ. որպէս ծառայ ոք Տեառն իւրում գանգատի թէ՛ զայս ինչ եւ զայն անհրաւեաց ընդիս թշնամին իմ: Եւ զայս ունի միտն բոլոր Տէր եթէ շրթանցն որ ասէ: (Տէր զի բազում եղեն նեղիչք իմ, եւ այլն:) Երրորդ՝ յառաւօտու ժամն առաւելու շարժումն ցանկութեան. զի հեշտացեալ է քնով եւ թօթափեալ ի խոնճմանց վաստակոցն: Վասն որոյ յայնմ ժամու յոտն կալ պարտ է եւ աղօթել. զի անցցէ փորձութեան ժամն: Եւ յայնմ ժամու աղօթեմք զերից մանկանցն երգ. զի որպէս նոքա ապրեցան ի բորբոքեալ բոցոյն. այսպէս եւ մեք ապրիցուք ի ցանկութեանց հրոյն: Չորրորդ՝ յառաւօտուն գոհանալ պարտ է զԱստուծոյ՝ որ պահեաց խաղաղութեամբ ի գիշերի. յորժամ ամենեքեան ննջեալ էաք՝ եւ թշնամին սատանայ արթուն. (զի իբրեւ զառիւծ գոչէ. շրջի եւ խնդրէ թէ, զո՞ կլանիցէ ասէ Պետրոս:) Այլեւ կարէ գտուն փլուցանել. եւ հուր իջուցանել ի վերայ մարդոյ, եւ կորուսանել զինչս. որպէս Յոբայ արար: Արդ՝ Աստուած է որ պահէր զմեզ. ըստ այնմ, (ոչ ննջէ, եւ ոչ ի քուն երթայ պահապանն Իսրայելի:) Ապա մեզ պարտ է յառաւօտուն խոնարհիլ զլիսով եւ ծունր կրկնել. երկիրպագանել եւ գոհանալ զնմանէ՝ որ խաղաղութեամբ էած ի լոյս առաւօտուն: Չոր օրինակ՝ արբեալ մարդ մի անկեալ ի փողոցս. սիրելի ոք տեսեալ զնա, մերձ կացցէ նմա եւ պահեսցէ մինչեւ ի լոյս. եւ յորժամ զարթնու, շնորհակալի նմա եւ գոհանայ. այսպէս առաւել պարտ է մեզ գոհանալ զԱստուծոյ՝ որ է միշտ պահապան մեր. որպէս ուսացանէ քարոզն. (գոհացարուք զնմանէ՝ որպ պահեաց խաղաղութեամբ. եւ առաջնորդեաց ի մահուանէ ի կեանս. յապականութենէ յանապականութիւն, եւ այլն:) Յինգերորդ՝ զի ի ցերեկն ընթանայ իւրաքանչիւր ոք ի վաստակս. ի գործ, ի ճանապարհ, եւ յայլն. պարտ է նախ աղօթել եւ խնդրել զօգնութիւն. զի անվանս եւ յաջողմամբ հասցէ ի կատարումն: Վեցերորդ՝ ընդ ծագիլ զգալի լուսոյ արեւուն, ծագի ի հոգիս մարդկան իմանալի լոյս, եւ շնորհ հոգեւոր. ըստ մարգարէին: (Ի ծագումն լուսոյ առաւօտու՝ բազմանայ ճշմարտութիւն քո Տէր.) պարտ է ի յայն ժամու արթուն կալ եւ բաանլ զմիտս, եւ ընդունիլ զիմանալի ծագումն շնորհաց: Եւ որպէս թռչունք եւ անբան կենդանիք զուարճանան ի ծագումն լուսոյն, եւ օրինեն զարարիչն. որպէս հաւատն խօսի օրինէ զԱստուած. եւ այլքն ճվճիլով ուրախացեալ թռչին յերկինս. քանի՞ առաւել մեզ բանականացս պարտ է ուրախանալ եւ օրինել զԱստուած՝ որ կրկին լուսոյ արժանաւորիմք: Եօթներորդ՝ առաւօտու ժամն սկիզբն է բոլոր աւուրն. եւ Աստուած սկիզբն է եւ պատճառ բոլոր եղելոցս. վասն որոյ արժան է գնոյն ժամն սկզբանն մերոյ աղերսել եւ մատուցանել աղօթիք եւ սրբութեամբ: Եւ զայս սովորեն առնել աշխարհականք. որք նախ ընթանան ի դրունս մեծամեծացն. ողջոյն տան թագաւորաց եւ իշխանաց, ցուցանելով զհնազանդութիւն: Նոյնպէս եւ մեք արարչին մերոյ՝ որ է թագաւոր թագաւորաց. եւ մեք ծառայք նմա: Եւ թէ զայս առնեն այլազգիք, տաճիկք, ջիւտք, կռապաշտք, քանի՞ առաւել քրիստոնէիցս պարտ է առնել. ընթանալ յեկեղեցիս առ պատուանդանս խաչին. եւ կամ յայլ սուրբ տեղիս

աղօթել. զի ցուցցի թէ, ծառայք եմք Քրիստոսի, եւ զինք արեան նորա: Ութներորդ՝ ի սոյն ժամս նախնի հայրն մեր Ադամ ստեղծաւ ի հողոյ. եւ եղաւ ի դրախտին. վասն այն պարտ է ի սոյն ժամու երկիրպագանել արարչին եւ գոհանալ՝ որ ի կոխան հողոյ այսպիսի կենդանի ստեղծեաց զմեզ. եւ աղօթիւք ինդրել ի նմանէ զարքայութիւն. ըստ այնմ, (ինկրեցեք նախ զարքայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա, եւ այգ ամենայն յաւելցի ձեզ:) Իններորդ՝ ի սոյն ժամու առաւօտուս Տէր մեր Յիսուս Քրիստոս կայր կանգնեալ առաջի դատաւորին՝ եւ չարչրիւր վասն մերոյ փրկութեան: Եւ մեզ պարտ է ի սոյն ժամու յոտն կալ յաղօթս, եւ չարչարակից լինիլ Քրիստոս արտասուօք բախելով զսիրտս, խոնարհիլ եւ ծուր կրկնել. զի եւ յարութեան շնորհացն որ է թաղութիւն մեղաց՝ մասնակից լիցուք: Տեսեք քրիստոնեայք, թէ քանի՞ յանցանք է որ Քրիստոս վասն քո չարչարի. եւ դու յանկողինս հեշտանաս. նա վասն քո արտասուէ՝ եւ դու ի քուն մեղաց ննչես: Չի ոչ ունիս զսերն Քրիստոսի, եւ ոչ զերկիւղ տանջանաց հրոյն: Տասներորդ՝ զի յայս ժամ առաւօտուս ի վերջնումն գիշերի՝ յառնեմք ի մեռելոց. եւ ի դատաստան ընթանամք առաջի ահեղ դատաւորին: Եւ յայնմ առաւօտու լինի բաժանումն արդարոց եւ մեղաւորաց ի կեանս եւ ի տանջանս. ըստ այնմ, (ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի. սատակեցից ի քաղաքի Տեառն զամենեսեան ոյք գործեն զանօրէնութիւն:) Վասն այն եղբարք՝ յիշելով զայն սարսափելի առաւօտն, ի սոյն ժամս թօթափեցուք զքուն յաչաց եւ զմեղս յանձնէ. յոտն կացցուք իբրեւ զդատապարտեալ ծառայ. անկցուք եւ լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ. զի նա փրկեսցէ զմեզ յանշէջ հրոյն տանջանաց. եւ դասեսցէ յաջակողմեան դասուն. եւ երանաւետ կոչմանն արժանաւորեսցէ առ հասարակ զամենայն հաւատացեալս եւ երկրպագուս անուան իւրոյ Քրիստոս Աստուած մեր. որ օրինեալ յաւիտեանս ամեն:

Նորին այլ քարոզ վասն Առաւօտու. ի բանն՝ (Ի գիշերաց կանխէ հոգի իմ, առաւտ առնել առ Քեզ Աստուած:) Եսայ. 26. 9: (Գլուխ. 2Է)

Արարիչն Աստուած զժամանակ կենաց մարդկան՝ տիւ ' գիշեր է արարեալ. զի բոլոր աւուր մին բաժինն՝ ցերեկ է, եւ մինն գիշեր: Չի թէ հանապազ գիշեր էր, ե՞րբ գտաներ մարդ զպէտս մարմնոյ իւրոյ. եւ թէ միշտ ցերեկ՝ ոչ կարեր մարդ անհանգիստ ի գործ եւ ի վաստակ կենալ: Այլ մին օրն՝ գիշեր եւ ցերեկ է. որպէս ասէ գիրն. (եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդեայն օր մի:) Եւ այս վասն չորս պատճառի: Առաջին՝ զի մինչ յերեկոյն՝ վաստակեսցին մարդիկ ի գործ եւ ի վաստակ իւրեանց, եւ գտցեն զպէտս մարմնոյ. եւ ի գիշերն հանգիցեն քնով. զի զխոնջում եւ զաշխատանս ցերեկին հանիցեն ի մարմնոյ. եւ այլ եւ ուժ առնուցուն միւսանգամ գործելոյ: Եւ դարձեալ՝ տիւ է եւ գիշեր. զի ի տիւն զհոգեւոր բարիս գործեսցեն որպէս զմարմնաւորն. եւ ապա ի գիշերն հանգչին եւ դադարին. որպէս ասի յաղօթս մեր. (որ արարել զտիւ ի զբօստանս բարեգործութեան եւ փրկութեան անձանց մերոց. եւ զգիշեր ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութեան մերոյ: Երկրորդ պատճառ. զի տիւն օրինակ է բարի գործոց. եւ գիշերն չար գործոց: Նախզի՝ տիւ եւ գիշեր՝ մին զմին փոփոխեն. այսպէս բարի գործն ի մեզ եւ չարն՝ մին զմին փոխեն:) Չի յորժամ կամիմք որ զբարին գործեմք, չարն

փոխի եւ կորնչի. եւ երբ կամիմք որ գչարն գործեմք, զբարին կորուսանեմք: Եւ ի յամառն տիւն առաւելու՝ եւ գիշերն նուազի. եւ ի ձմեռն՝ գիշերն յաւելու եւ տիւն նուազի: Այսպէս եւ մեք յորժամ շերմանամք ի սերն Աստուծոյ, բարի գործն յաւելու ի մեզ եւ չարն նուազի. եւ յորժամ ցրտանամք յաստուածային սիրոյն՝ չար ձմեռն տիրէ մեզ՝ եւ բարին նուազի: Եւ դարձեալ՝ որպէս տիւն լոյս է՝ եւ նովաւ զամենայն ինչ տեսանեմք ի ճանապարհին. եւ ուղիղ ընթանամք. զբարեկամս եւ զթշամիս ճանաչեմք եւ պատրաստիմք. իսկ ի գիշերն ոչ ճանաչեմք. այլ ի խորխորատ ընկղմիմք: Այսպէս բարի գործն լոյս է հոգւոց մերոց. եւ նովաւ տեսանեմք զԱստուած եւ զհանդերձեալ կեանսն. եւ ի պատուիրանն Աստուծոյ ուղիղ ընթանամք: Այլեւ բարի գործովն ճանաչեմք զսատանայ եւ զմեղս. եւ գչարս ի մարդկանէ. որք թշնամիք են հոգւոց մերոց. եւ պատրաստեմք զմեզ: Իսկ մեղքն եւ չար գործքն որք ոչ երեւին՝ քարշեն ի հանդերձեալ կենացն. եւ մեղօքն ի պատուիրանացն Աստուծոյ խոտորիմք, եւ ի խորխորատ դժոխոցն ընկղմիմք. եւ ոչ ընտրեմք զսիրելիսն եւ զթշնամիսն. զմեղսն եւ զսատանայ. եւ զմեղսասերսն մեզ բարեկամ կարծեմք. զարդարութիւնն՝ զհրեշտակս եւ զբարի գործս՝ եւ զբարիս ի մարդկանէ թշնամի կարծեմք. վասն այն՝ որ մեղքն զմիտս խաւարեցուցեալէ. (զի ոգիք ըմբռնեալք ի մեղս՝ ի մտաց եւս անկանին:) Այս երկրորդ պատճառն: Երրորդ պատճառ՝ տիւ եւ գիշեր է օրն. զի գիշերն օրինակ է այսմ կենցաղոյս. եւ տիւն հանդերձեալ կենացն: Եւ զի գիշեր եւ խաւար է կեանք մարդոյս. վասն այն ամենայն մարգարէքն ի սուգ եւ ի տրտմութեան կային. եւ զյերկարիլն ի մարմնի՝ տաղտկանային որպէս ի խաւարի. որպէս ասէ Դաւիթ. (վայ ինձ զի ընդ երկար եղեւ պանտիստութիւն իմ. զի բնակեցայ ես ի վրանս կեդարու.) որ է խաւարի. զի կենդարն խաւար լսի: Իսկ տիւ եւ լոյս է հանդերձեալ կեանքն. որպէս ասէ առաքեալն. (գիշերն մերժեցաւ՝ եւ տիւն մերժեցաւ. ի բաց արարէք զգործ խաւարիս. զի որդիք լուսոյ եղիշիք:) Նախ զի՝ որպէս լոյսն կրկին յատկութիւն ունի. մին որ զծածուկն յայտնէ. որպէս զինչ որ առ մեզ ի յերկիրս կայ. եւ մին որ զյայտնիսն ծածկէ. որպէս զլուսին եւ զաստեղս երկնից: Այսպէս ի հանդերձելն՝ յայտնի լինին ամենայն գործք մարդկան. զոր ինչ ծածուկ աստ գործեցաք եւ թաքուցաք՝ անդ ամն յայտնի լինի. եւ ի տես զայ ամենայն մարդկան եւ հրեշտակաց: Եւ զինչ որ առ մեզ յայտնի եւ պայծառ է, որպէս թագաւորութիւն, իշխանութիւն, փառք, եւ մեծութիւն ընչից, ամենեքեան ծածկին եւ կորնչին: Եւ դարձեալ՝ որպէս ի գիշերի գազանք եւ գողք եւ վնասակար մարդիկ համարձակ շրջին. այլ ի տիւն ամենեքեան կորնչին եւ խափանին: Այսպէս ի գիշեր կենցաղոյս՝ չար գազանն սատանայ վնասէ զմարդիկ. որպէս ասէ Պետրոս. (ոտիւն ձեր սատանայ իբրեւ գառիւծ գոչէ. շրջի եւ խնդրէ թէ զո կլանիցէ.) եւ մեղք եւ չարք ի մարդկանէ վնասեն զմեզ. այլ ի հանդերձեալն՝ խափանին եւ կորնչին սատանայ եւ մեղքն եւ մեղսասերքն. որպէս ասէ մարգարէն. (պակասեսցին մեղաւորք յերկրէ. եւ անպարիշտք մի եւս գտցին ի նմա:) Այս երրորդ պատճառն: Չորրորդ պատճառ. գիշերն օրինակ է մահուան մերոյ եւ գերեզմանին. եւ տիւն օրինակ յարութեան: Եւ այս վասն վեց պատճառի: Նախզի՝ որպէս ի տիւն ամենայն մարդ աշխատի ի զանազան գործս. եւ յերկոյն ի յանկողինս ննջէ եւ հանգչի. այսպէս ամենայն մարդ յաշխատանս եւ ի չարչարանս կայ ի կենդանութեանն. այլ յորժամ մեռանի եւ ի գերեզման մտանէ, հանգչի.

որպես ասէ Յոր. (մահ մարդոյ հանգիստէ:) Չի թէ բարի է գործեալ, հոգին երթայ առ Աստուած եւ հանգչի ի կայանս հոգւոց ի տեղոջ լուսոյ եւ յուրախութեան: Նոյնպէս թէ չար է գործեալ, հանգչի այնպէս՝ զի այլ ոչ կարէ գործել չար. թէպէտ մեղաւորի հոգին ոչ հանգչի. այլ տանջի ի մեղաց իւրոց: Երկրորդ՝ որպէս զամենայն հանդերձս հանեն՝ եւ մերկացեալ մտանեն յանկողինս որ զգերեզման նշանակէ. այսպէս ի մահ մերձեցեալ՝ զամենայն հանդերձս եւ զինչս աշխարհիս մերկանամք եւ ի գերեզման երթամք. որպէս ասէ Յոր. (մերկ եկաք աշխարհս ի մօրէ. եւ մերկ երթամք առ մայրն մեր որ է հողն:) Երրորդ՝ որք ննջեն՝ դատարկ մեան ի գործոյ մարմնոյն. զի ոչ աչքն տեսանէ. եւ ոչ լսէ. եւ ոչ խօսի. ոչ գործէ. եւ ոչ շարժի. այլ միայն մտօքն յածի յերագս. զանցեալն եւ զհանդերձեալն նկատէ. այսպէս որք մեռանին՝ խափանին յամենայն գործոց. զի ոչ չար կարեն գործել, եւ ոչ զբարիս. որպէս ասէ մարգարէն. (ոչ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ. եւ ոչ ամենաքեան որք իջանեն ի դժոխս:) Չի ոչ ունին աչս որք արտասուեն. եւ ոչ բերան որք խոստովանին. եւ ոչ մարմին որք պահեն եւ յաղօթս կան. եւ ոչ ինչս ունին որք ողորմութիւն բաշխեն. զի ի հող է լուծեալ մարմինն. այլ հոգին որ կենդանի է՝ տեսանէ զանցեալ գործն զոր գործեաց. թէ բարի, եւ թէ չար. այլեւ նկատէ զոր ինչ լինելոց է ի հանդերձեալն. զփառս արդարոցն, կամ զտանջանս մեղաւորացն. որք պահին նմա յաւուրն դատաստանի. եւ այնպէս ուրախանայ եւ հանգչի ի բարի գործս իւր. եւ տանջի եւ չարչարի եւ ի չար գործս իւր: Չորրորդ՝ որպէս հաւն խօսի ի մէջ գիշերին եւ յառաւօտուն՝ եւ ի ձայն է հաւուն զարթնուն մարդիկ ի քնոյն. այսպէս ի ձայնէ փողոյն Գաբրիէլի՝ յորժամ գոչէ ի մէջ գիշերի, ամենայն հոգիք մարդկան սլացեալ իբրեւ զարծւի մտանեն ի մարմինս իւրեանց, յառնեն ի մեռելոց. որպէս ասէ աստուարանն. (ի մէջ գիշերի եղեւ բարբառ. ահա փեսայ գայ. ելէք ընդառաջ նորա:) Յնգերորդ՝ որպէս ամենայն մարդ որ զարթնու՝ զիւր հանդերձն զգենու եւ ոչ զայլոց. որպէս այր կին ծեր եւ տղայ՝ զիւրեանցն զգենուն: Նոյնպէս ի յարութեան ամենայն մարդ զիւր գործն զգենու զոր ինչ գործեաց. եթէ բարի եւ եթէ չար. եւ ոչ զայլոյ. զի բարի գործն՝ սպիտակ հանդերձ է. եւ արհուրթիւնն եւ ողջախոհութիւնն՝ գօտի ոսկի. եւ ողորմութիւնն թագ ի գլուխն եւ մոմ ի ձեռս. եւ այսպէս զարդարեալ եւ վառեալ լապտերօք ընդառաջ ելանեն Զրիստոս որպէս իմաստուն կուսանքն: Իսկ մեղաւորքն եւ չարքն՝ մերկ ի հանդերձէ հարսանեաց. սիրտք տրտմեալք. գլուխք խոնարհեալք. լապտերքն շիջեալք որպէս յիմար կուսանացն. հալածին ի ձայնէ փեսայի որ ասէ. (ոչ զիտեմ զձեզ:) Վեցերորդ՝ յորժամ զգենուն զհանդերձն, լուսով արեգականն երթան ի զանազան գործս իւրեանց: Այսպէս յարուցեալքն ի մեռելոց՝ յուսով արեգականն արդարութեան քիւ թնթանան իւրաքանչիւր սուրբքն եւ արդարքն ի փառս եւ ի պսակս իւրեանց յարքայութիւնն երկնից. ըստ այնմ, (եկայք ժառան գեցեք զկեանսն յաւիտենից.) եւ մեղսասերքն եւ չարքն՝ ի զանազան տանջանս եւ ի դժոխս յաւիտենից. որպէս ասէ Տէրն. (երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից. որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:) Այսպէս տին եւ գիշերն՝ նշանակէ զմահ մեր եւ զյարութիւնն. վասն այն պարտ է զարթնուլ մեզ յառաւօտուս վաղ, կամ անազան. զմահ մեր եւ զյարութիւն ի միտ ածել. ընթանալ յեկեղեցիս. եւ զթողութիւն մեղաց մերոց խնդրել. ոպէս ասէ մարգարէն: (Ի գիշերաց կանխէ հոգի իմ. առաւօտ առնել առ քեզ:) Այժմ

ասասցուք թե՛ զո՞րս ունիմք օրինակ, եւ որո՞ց նմանիմք յորժամ զառաւօտու աղօթս կատարեմք: Ասեմք եթե՛ տան ազգ օրինակ եւ վկայութիւն ունիմք առաւօտու աղօթից: Առաջին՝ զնմանութիւն ինն դասուց հրեշտակացն ի մեզ բերեմք. որպէս նոքա հազարք հազարաց եւ բիւրք բիւրուց՝ հանապազ եւ միշտ անդադար բերանով, անհանգիստ բարբառով կանխեալեն յօրհնաբանութիւնն Աստուծոյ. այլ առաւել՝ յորժամ զառաւօտու եւ զերեկոյի գիտութիւնն առնուն՝ բարեբանեն զարարիչն: Եւ ո՞րն է առ նոսա առաւօտ եւ երեկոյ. զի արեգակնս առ մեզ է, որ ելանէ եւ մտանէ. որ լինի առաւօտ եւ երեկոյ. այլ ոչ առ նոսա: Ասեն վարդապետք թե՛ նոքա կրկին գիտութիւն առնուն յԱստուծոյ՝ որ ասի առաւօտեան ճանաչումս եւ երեկոյի. զի տեսանելով ի բանն Աստուծոյ, ասի առաւօտեան գիտութիւն. եւ տեսանելով յարարածս, ասի երեկոյեան գիտութիւն. այս է առաւօտ եւ երեկոյ առ նոսա: Այսպէս եւ մեք յորժամ յառաւօտու յաղօթս կամք՝ եւ օրհնաբանութեամբ Աստուծոյ զհրեշտակաց նմանութիւնն ի մեզ բերեմք կրկին շնորհաց արժանի լինիմք. մին զգալի լուսոյս. եւ միւս իմանալի շնորհացն Աստուծոյ զոր ծագէ ի հոգիս մեր: Այլ եղուկ եւ վայ է նոցա՝ որք յայսմ ժամու առաւօտունս ննջելով եւ հեշտութեամբ ի մեղս, զրկին ի շնորհացն Աստուծոյ: Երկրորդ՝ օրինակ առաւօտու աղօթիցս՝ եղեւ Ադամ. որ ի յառաջին ժամն ընդ առաւօտս ստեղծաւ եւ եղաւ ի դրախտին. եւ որքան զպատուիրանն պահէր, ընդ Աստուծոյ խօսէր եւ ընդ հրեշտակաց փառաբանէր. եւ ի լոյս դրախտին բնակէր: Եւ յորժամ էանց զհրամանն Աստուծոյ, երեկոյ եւ մութն եղեւ կենաց նորա. ի լուսոյն մերկացաւ. ի դրախտէն մերժեցաւ. այլ ոչ ետես զԱստուած եւ ոչ զհրեշտակս: Այսպէս ի ժամ առաւօտունս՝ ի դրախտ եկեղեցոյս մտանեմք եւ ընդ Աստուծոյ խօսիմք. եւ ընդ հրեշտակս փառաւորեմք եւ լուսաւորիմք մտօք: Իսկ որք յայսմ ժամու ննջեն ի մեղս, զրկեալեն յայսպիսի մեծամեծ շնորհացս. եւ ընդ Ադամայ արտաքս ելանեն յարքայութենէն Աստուծոյ: Երրորդ՝ օրինակեցաւ առաւօտու աղօթս ի մարգարէն Մովսէս. որ ի մեջ գիշերին եհար զեգիպտոս. եւ սատակեաց զանդրանիկս նոցա. եւ եհան զժողովուրդն. եւ սին լուսոյ առաջնորդէր նոցա: Այսպէս եւ մեզ պարտ է ի սոյն ժամուս յառնել ի քնոյ եւ հարկանել զանդրանիկս եգիպտացոց. այսինքն, զհրեշտութիւն մեղացն. եւ զքունն որ սիրելի եւ անդրանիկ երեւի մեզ, սատակել եւ ի բաց թողուլ յանձնես մերմէ. եւ լուսաւորել զմիտս մեր կախեալ յաղօթս առ Աստուած: Չորրորդ՝ օրինակեցաւ առաւօտու աղօթս, յորժամ զծովն պատառեաց Մովսէս եւ էանց ժողովուրդն. եւ ընկղմեցաւ փարաւօն զօրօքն որպէս ասէ գիրն. եւ յառաւօտու պահուն խռովեաց զբանակն եգիպտացոց. եւ վարէր զնոսա բռնութեամբ. եւ սատակեաց զնոսա ի մեջ ծովուն. եւ ալիքն հանին զնոսա յայնկոյս առ Իսրաէլացիսն. եւ նոքա կողպատեցին զդիակունսն. եւ օրհնէին զԱստուած եւ ասէին: (Օրհնեսցուք զՏէր՝ զի փառօք է փառաւորեալ. զհեծեալս եւ զերկվարս ընկեաց ի ծով եւ այլն:) Նոյնպէս եւ մեք յառաւօտունս յարուցեալ՝ ի ձեռն աղօթից սատակեմք զիմանալին փարաւօն եւ զդէս. եւ զգօրս նոցա որք են զանազան մեղք. եւ ապա լինիմք արժանի օրհնել զԱստուած եւ փառաւորել զանուն նորա: Զինգերորդ՝ օրինակեցաւ առաւօտու աղօթս, յորժամ հրամայեաց Մովսէս քահանայիցն յառաւօտուն մտանել ի տաճարն եւ խունկ արկանել. եւ զգառն խորովել զինուով եւ բաղարջիւ եւ դնել ի վերայ սեղանոյն առաջի Տեառն: Նոյնպէս եւ

յերեկոյն մտանէին ի տաճարն. եւ զաշտանակն վառէին. եւ դնէին զպատարագն: Այս նշանակէ զմեր գերեկոյի եւ զառաւօտու աղօթս. որ զլոյս մտացս մերոց վառեմք. եւ զիսունկ աղօթիցն մատուցանեմք: Այլեւ զհոգի եւ զմարմին մեր նուիրեմք Աստուծոյ. այլեւ զառաքինութիւնն մեր եւ զուրախութիւն հոգւով մատուցանեմք. որպէս ուրախացար զինի եւ հաց կենդանութեան: Վեցերորդ՝ օրինակ առաւօտու աղօթիցս այն՝ որ հրամայեաց Աստուած ժողովրդեանն, զի յամեանայն աւուր յառաւօտուն ելցեն ի դուռն խորանին իւրեանց. եւ գաւազանաւ կանգնեսցին. մինչեւ իջաներ մանանայն. եւ երթային ժողովէն ըստ չափոյ իւրեանց. եւ ապա մտանէին ի տունս իւրեանց: Այսպէս պարտ է մեզ արթուն լինիլ եւ յոտն կալ յառաւօտու՝ զի առցուք զմանանայն կենաց. այսինքն, զքաղցրութիւնն Աստուծոյ. եւ ապա երթիցուք իւրաքանչիւր ի գործս եւ ի վաստակս մեր ուրախութեամբ: Եօթներորդ՝ օրինակաւ ի մարգարեսն. որպէս որ ասէ Եսայի. (ի գիշերաց կանխէ հոգի իմ առաւօտ առնել:) Եւ Դաւիթ սովորութիւն ուներ ի կիրակէ աւուրն ի մէջ գիշերի յառնել յաղօթս. որպէս ասէ. (ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինիլ առ քեզ:) Եւ ի հասարակ աւուրն՝ ընդ առաւօտն կայր յաղօթս. որպէս ասէ՝ (ընդ առաւօտս կանխեցից՝ յանդիման լինիլ քեզ թագաւոր իմ:) Այլեւ ուսուցանէին զժողովուրդն դառնալ առ Աստուած եւ առաւօտ առնել. որպէս ասէ. (յորժամ սպանաներ զնոսա՝ դառնային եւ առաւօտ առնէին առ նա:) Այսպէս եւ մեզ պարտ է յամենայն կիրակէի ի մէջ գիշերի աղօթել առ Աստուած. եւ ի հասարակ աւուրս՝ ընդ առաւօտս: Առաւել յայնժամ՝ յորժամ պարտուես ինչ խրատու գայ ի վերայ աշխարհի, պարտ է կանխել պաշտմամբ եւ աղօթիք առ Աստուած: Ութներորդ՝ օրինակեցաւ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս. որ զգիշերն ամենայն առանձին կայր յաղօթս. եւ յառաւօտուն ընթանայր ի տաճարն. եւ յորժամ գային ժողովուրդքն յառաւօտուն, քարոզէր նոցա զբանն կենաց. որպէս ասէ Եւստարանն. (ի տուէ ի տաճարին ուսուցանէր. եւ զգիշերն ելեալ որ կոչիւր ի լերինն ձիթենեաց. եւ ընդ առաւօտս կանխէր առ նա ժողովուրդն ի տաճարն լսեր ի նմանէ:) Այսպէս պարտ է քահանայից առանձին աղօթս մատուցանել զգիշերն ամենայն. եւ յորժամ գայ ժողովուրդն յառաւօտուն յաղօթս, աղօթել եւ ուսուցանել նոցա զբանս հոգեւորս. եւ ապա արձակել զնոսա ի տունս իւրեանց: Իններորդ՝ առաւօտու աղօթքն օրինակեցաւ ի խօսիլ հաւուն. զի գերեք բաժին գիշերոյն ննջէ եւ ի լռէ. եւ ի չորրորդ բաժինն՝ արթնանայ եւ ձայնէ վասն երկու իրաց: Մին՝ որ զմեզ զարթուցանէ թէ՛ բաւական է ննջելո՞ ձեր. այժմ զարթիք եւ օրինեցէք զԱստուած. որպէս եւ Դաւիթ ասէ: (Չարթիք փառք իմ. զարթիք եւ ես զարթեայք յառաւօտուց:) Եւ միւս՝ որ զարթնու հաւն՝ եւ իւր ձայնիւն օրինէ Աստուած. ապա պարտ է եւ մեզ յառաւօտուս արթուն լինիլ եւ աղօթել: Կամ նմանիլ հրեշտակաց փառաբանուեցն. կամ մարգարէիցն եւ առաքելոցն՝ որք ի Քրիստոսէ ուսան եւ ուսուցին ամենայն քրիստոնէից: Ապա թէ նոցա նման ոչ կարես լինիլ, քան զհաւն անբան եւ անպիտան չէ մարդն. որ նա յառաւօտուն թօթափէ զքունն եւ օրինէ զԱստուած. եւ մարդ ննջէ: Տասներորդ՝ առաւօտու աղօթքն՝ ունի զօրինակ եւ զխորհուրդ յարութեան մերոյ՝ որպէս ասացաւ ի վերոյ. զի որպէս յայսմ առաւօտուս թօթափեմք զքունն եւ ընթանամք յեկեղեցիս. այսպէս եւ յայնմ առաւօտու՝ յառնեմք ի մահու եւ ընթանամք առաջի Քրիստոսի: Յայսմ առաւօտուս երկիրպագանեմք սուրբ խաչին Քրիստոսի.

զի յայնմ առաւօտու՝ արժանի լինիցիմք տեսութեան լուսոյ խաչին, որ
Նախընթաց լինի առաջի Քրիստոսի: Յայսմ առաւօտուս (խոստովանիմք
զՔրիստոս Աստուած առաջի մարդկան. զի յայնմ առաւօտու՝ ինքն
խոստովանեցի զմեզ առաջի հօր եւ հրեշտակաց սրբոց:) Այն է որ ասէ
քաղցր ձայնիւ եթէ՝ եկայք օրհնեալք Յօր Իմոյ. ժառանգեցէք զարքայութիւն:) Որում
արժանի արասցէ զմեզ Քրիստոս Աստուած. ընդ որում Յօր՝ Յօգուոյն
Սրբոյ՝ փառք պատիւ՝ իշխանութիւն, յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն ճաշու ժամուս. ի բանն՝ (Ես առ Աստուած
կարդացի՝՝ Նա լուաւ ինձ յերեկոյս ի վաղորդեայն՝ ի հասարակ աւուր:) Սաղ. 54. 14: (Գլուխ. 2Ը)

Եւ վասն բազում պատճառի յաղօթս կալի է մեզ ի հասարակ աւուրս:
Նախզի՝ որպէս կերակուրք մարմնոյ եւ. Նոյնպէս աղօթք հոգւոյ է. ըստ այնմ,
(ոչ թէ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւն Աստուծոյ:) Ապա
պարտ է նախ զհոգին կերակրել աղօթիւք. եւ ապա զմարմինն հացիւ. զի
հոգին Տէր է՝ եւ մարմինն ծառայ. եւ հոգին Աստուծոյ պատկեր՝ եւ մարմինն
հողոյ եւ անասնոց. վասն այն նախապուելի է զհոգին քան զմարմինն:
Երկրորդ՝ այս ժամս կերակրիլոյ է. նախ պարտ է աղօթել եւ գոհանալ
զպարգեւողէն. եւ ապա կերակրիլ. զի Աստուած պարգեւ է մեզ ամենեցուն
զկերակուր. ըստ այնմ, (աչք ամենեցուն ի քեզ յուսան. եւ դու տաս կերակուր
Նոցա ի ժամուս:) Եւ որպէս տեսանէ զկարօտութիւն կենդանեաց եւ կերակրէ.
Նոյնպէս եւ զմարդիկ. յայս միտս յորժամ նստիմք ի սեղան՝ նախ աղօթեմք եւ
օրհնեմք. եւ յետոյ դարձեալ գոհանամք: Եւ թէ որ ասիցէ՝ ո՞րպէս կերակրէ
Աստուած. զի ահա ես վաստակիմ, եւ ապա ուտեմ: Ասեմք այնպիսոյն թէ՝
հայեաց ի քեզ եւ տես. զի Աստուած ետ քեզ կարողութիւն եւ իմաստութիւն
եւ մարմնական գործիք՝ զի գործեսցես: Դարձեալ՝ ետ քեզ զսերմանիս՝
զեզիս՝ զփայտ՝ եւ զերկաթ՝ որովք վաստակիս: Դարձեալ՝ հրամանաւն
Աստուծոյ տայ երկինք զանձրել. եւ երկիր զպտուղ. Նոյնպէս ծառք
պտղաբերք: Ապա թէ անասնաբար ուտեմք առանց աղօթից, վասն այն
պակասին պտուղք անդոց եւ ծառոց. Երաշտիւ՝ կարկտիւ՝ խորշակաւ՝
մարախով՝ եւ այլովք. յաղագս որոյ՝ ի ժամս յայս պարտ է ամենեցուն
աղօթել եւ ապա ուտել: Երրորդ՝ դէն ձանձրութեան առաւել ի ժամս յայս
պատերազմի. եւ որպէս ասեն հարք սուրբք թէ՝ ի մէջ աւուր զամենայն գործ
ծանրացուցանէ. եւ ձանձրութիւն առ ինքն՝ եւ հայիոյութիւն ի միտսն: Վասն
որոյ ի ժամանակս յայս աղօթելի է մեզ. զի անցցէ ի մէջ պատերազմս
անուամբն Աստուծոյ եւ նշանաւ խաչին. ըստ այնմ, (ձանձրութեան մարտ
այսուն չարի՝ որ յայսմ ժամու պատերազմի. ղօղեալ յոգւոց մեր հերքեցի՝
քո նշանաւ սրբոյ խաչին:) Չորրորդ՝ ի ժամս յայս դնեն իմաստունքն զսկիզբն
աւուրն. յորում արեգակն ի կորնթարթն երկնից թագաւորէ. զի մինչ ի վեց
ժամն ի վեր՝ բարձրանայ. եւ ի վեց ժամէն ի վայր՝ խոնարհի. այլ ի ժամս
յայս՝ հաստատեալ է յիւրում իշխանութեանն. կատարեալ զջերմութիւն եւ
զլոյսն իւր տարածէ. եւ զամենայն ստուեր հալած է. եւ զցրտութիւն հալէ:
Վասն որոյ ի ժամս յայս՝ յաղօթս կալի է առ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որ է
արեգակն արդարութեան. զի զջերմութիւն սիրոյ եւ զճառագայթ լուսոյ
տարածեսցէ ի սիրտս մեր. եւ ջնջեսցէ զխաւար մեղաց. եւ հալածեսցէ

զգրտութիւն անհաւատութեան. եւ զմեզ լուսովն իւր վառեցէ: Հինգերորդ՝ ի ժամս յայս առաւել վայելչանաչ աչք մեր ի տեսութիւն զբօսանաց աշխարհի եւ ցանկութեանց մեղաց. եւ է այս գաղտնի նետ սատանայի՝ որ թռչի ի տուէ եւ խոցէ զհոգիս մեր. ըստ այնմ. (յիբէ որ շրջի ի խաւարի. ի գայթակղութենէ դիւին ի հասարակ անուր:) Վասն որոյ սպառնազինելի է մեզ աղօթիւք՝ զի անվնաս մնասցուք. ըստ այնմ, (որպէս զգէն շուրջ եղիցի զքեւ ճշմարտութիւն նորա. ոչ երկիցես դու յերկիւղէ զիշերի. եւ ոչ ի նետէ որ թռչի ի տուէ:) Չոր օրինակ զինուորք կրկին զինուք սպառնազինին: Նախ զինքեանս ամրացուցանեն զրահիւք եւ սաղաւարտով եւ այլովն. զի ի սրոյ թշնամոյն անվնաս մնասցեն: Եւ երկրորդ՝ ի ձեռս առնուն զգէն զսուր եւ զայլն: Նմանապէս եւ մեք կրկնազէն լիցուք: Նախ զզգայարանս մեր եւ զմիտս շուրջանակի պնտեսցուք. որպէս խրատէ Պօղոս. (զգրահն արդարութեան զգեցցուք. զվահանն հաւատոյ. եւ զսաղաւարտն յուսոյ. եւ ապա ի ձեռն առցուք զուսեր հոգւոյն որ է բանն Աստուծոյ.) եւ աղօթիւք ի սուրբ սրտէ՝ անվնաս մնասցուք ի թշնամոյն մերմէ: Վեցերորդ՝ ի ժամս յայս առաւել ժողովի բազմութիւն դիւաց ի վերայ մարդոյ. այսինքն, ծուլութեան, տրտմութեան, բարկութեան, հպարտութեան, եւ այլն. զի յիւրաքանչիւր ժամու՝ մէկ մէկ դէս պատերազմի. այլ ի ժամս յայս՝ հազարք եւ բիւրք կուտին ի վերայ մարդոյ, եւ խռովեն զմարդն. ըստ այնմ, (անկցին ի կողմանէ քումմէ հազարք՝ եւ բիւրք ընդաջմէ քումմէ:) Վասն որոյ ի ժամս յայս՝ զբանակս հրեշտակաց օգնական եւ պահապան խնդրելի է աղօթիւք. զի զգունդս դիւացն հալածեսցեն. որպէս ասէ Դաւիթ. (բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք եւ պահեն զնոսա:) Եւ որպէս ետես Յակօբ զբանակս հրեշտակաց ընդ անցանելն առ յորդանանու: Եւ առ եղիսէին եբաց զաչս պատանակին. եւ ետես զգօրս բազումս շուրջանակի: Նոյնպէս առ աղօթօղն ժողովին բանակք հրեշտակաց աներեւթապէս: Եօթներորդ՝ ի ժամս յայս՝ նախահայրն Ադամ եկեր զպտուղն. եւ ել արտաքս ի դրախտէն. զի յերրորդ ժամուն կինն խաբեցաւ յօձէն. եւ ի վեց ժամուն Ադամ եկեր զպտուղն. եւ մերկացան երկոքինն: Վասն այն ի ժամս յայս աղօթելի է մեզ արտասուօք՝ զի արժանասցուք վերստին դրախտին: Ութներորդ՝ ի ժամս յայս վասն մերոյ փրկութեան Տէր մեր Զրիստոս ճաշակեաց զլեղի դառնութեան. զի յերրորդ ժամն ել ի խաչ. եւ ի վեց ժամն զլեղի ճաշակեաց. եւ յինն ժամն զհոգին անանդեաց. զի քաւեսցէ զմեղս նախահօրն Ադամայ: Վասն որոյ ի ժամս այս աղօթելի է մեզ եւ խաչակցիլ Զրիստոսի. զի քաւեսցէ զմեղս մեր որպէս զնոցայն: Իններորդ՝ ի ժամս յայս պատարագ մատչի ի բազում տեղիս. զի երբ օրինաւոր լինի՝ ի 2 ժամս է պատարագն: Վասն այն ի ժամս այս աղօթելի է մեզ եւ մասնակից լինիլ սուրբ պատարագացն որք յամենայն տեղիս: Չի թեպետ մարմնոյ աչօք ոչ տեսանեմք, հաւատոյն աչօք հաղորդիցուք սուրբ խորհրդոյն: Տասներորդ՝ ժամս այս է վերջին դատաստանին Զրիստոսի. յորում անստուեր լուսով երրորդութեանն լուսաւորին արարածք. յորում տապ է մեղաւորաց. յորում ամենեքեան ընթանամք ընդառաջ Զրիստոսի: Վասն որոյ ի ժամս յայս յաղօթս կամք իբր զդատապարտեալ ծառայ՝ դատելով զմեզ ի միտս մեր. յիշելով զամենայն մեղս զոր գործեցաք, եւ թողութիւն խնդրելով. զի մի յայնժամ լուիցուք (զծառայ չար եւ վատ.) եւ թէ՛ (ոչ գիտեմ զձեզ.) եւ թէ՛ եւ թէ՛ (կապեցէք զդորա զոտս եւ զձեռս. եւ հանէք ի խաւարն արտաքին եւ

այլն:) Չայս ունի պատճառ ճաշու ժամն՝ որք ամենքեան ժողովիմք յեկեղեցիս եւ աղօթեմք: Այսքան առ այս:

Նորին քարոզ վասն օրհնութեան սեղանոյն. ի բանն՝ (Աչք ամենեցուն ի քեզ յուսան. ' Դու տաս կերակուր լոցա ի ժամու:) Սաղ. 144. 15: (Գլուխ. 2Թ)

Սովորութիւն է քրիստոնէից՝ զամենայն կերակուր ' զմպելիս օրհնել, եւ ապա կերակրիլ: Եւ այս վասն բազում պատճառի: Նախ՝ որպէս ասէ մարգարէն: (Աչք ամենեցուն ի քեզ յուսան.) այս է՝ ի քէն խնդրեն. վասն որոյ նախ պարտ է մեզ խնդրել աղօթիք. եւ ապա նա տայ մեզ կերակուր. որպէս մանկունք նախ խնդրեն, եւ ապա ծնօղքն կերակրեն: Եւ զի նախ է խնդրելն՝ եւ ապա առնուլն. նախ պարտ է օրհնել, եւ ապա ճաշակել: Երկրորդ որպէս ասացաք՝ աղօթքն հոգւոյն է կերակուր. եւ հացն մարմնոյն. նախ պարտ է զհոգին կերակրել. եւ ապա զմարմինն: Երրորդ՝ զայս ի քրիստոսէ ուսաք. զի յորժամ զգարեղէն նկանակն բաշխեաց, նախ գոհացաւ զհօրէ. եւ ապա բաշխեաց: Նոյնպէս եւ մեք նախ աղօթեմք առ Աստուած. եւ ապա ճաշակեմք. զի սակաւ կերակուրն առատասցի եւ բաւականասցի. որպէս յայն ժամ ի սակաւ հացէն՝ բազումքն կերակրեցան. (եւ բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիւղ. կամ երկոտասան սակառի լի.) այսպէս առատութիւն է ամենայն կերակրոց օրհնութիւն Աստուծոյ. վասն այն զսեղանն օրհնեմք: Չորրորդ՝ զի բաժանեացի կերակուր մեր յանասոց՝ որք խճողեն զմարմինն առանց օրհնութեան. նոյնպէս եւ այլազգիքն առնեն: Այլ մեք զի մարդ բանական եմք այլեւ քրիստոնեայք, պարտ է օրհնութեամբ կերակրիլ. զի որոշիցուք ի լոցանէ որպէս ասացաւ Ադամայ (ուտելով կերիցես.) այսինքն, մանր մանր ծասկելով եւ գոհութեամբ. եւ մի զազանապէս մեծամեծս կլանել. (զի լաւ է շնորհօք հաստատել զսիրտս. եւ ոչ կերակրով որպէս ասէ առաքեալն:) Յինգերորդ՝ մարմինք քրիստոնէից՝ սրբութեան տաճար են Աստուծոյ. եւ որպէս ի տաճարն ամենայն որ սուրբ է մտանէ, այլ պիղծն ոչ մտանէ. նոյնպէս զսուրբ կերակուրն՝ դարձեալ անուամբն Աստուծոյ սրբել պարտ է եւ ապա ուտել: Չի ո՞ գիտէ ի կալս կամ ի հնձանս աղտեղութիւն ինչ լինի խառնեալ: Կամ որ ձարով մաղեմք զալերս, կամ այլ ինչ նոյնպիսիս, սրբեսցին ի միտս մեր. զի մի ինչ կերակուր կամ ըմպելի խղճմտանօքն կերիցուք: Վեցերորդ՝ ընդ կերակուր եւ կամ ըմպելի՝ դէն որ թշնամի է մեր, բազում վնաս խառնէ. որպէս նոքա որ զդեղ մահու խառնեն. վասն որոյ նշանաւ խաչին կնքեմք զամենայն կերակուրս եւ ըմպելիս. զի փախիցեն դէք եւ անվնաս կերիցուք: Իսկ յետ կերակրոյն՝ դարձեալ օրհնեմք կրկին, ուսեալք ի քրիստոսէ. որ ի վերնատանն յետ ընթերացն՝ (օրհնեցին եւ ելին ի լեռն ձիթենեաց.) նոյնպէս եւ մեք յետ սեղանոյն կերակրոց՝ օրհնեմք զԱստուած: Նախզի՝ կրկին պարգեւս ետ մեզ. հոգեւոր եւ մարմնաւոր. վասն որոյ կրկին օրհնեմք: Երկրորդ՝ զի կրկին եմք մարդ. այսինքն, հոգի եւ մարմին. պարտիմք կրկնակի օրհնել զարարիչն: Եւ ոմանք երեքկին օրհնեն. իսկիզբն, ի մէջն, եւ յետ կերակրոյն: Չի յերից եմք գոյացեալ մարդ. այսինքն հոգի, մարմին, եւ միտք: Եւ ոմանք ըստ իւրաքանչիւր պատառոյ՝ զմահն ի միտ ածեն եւ զդատաստանն: Եւ կամ մէկ մէկ տուն սաղմոս ասեն. զի պարկեշտութեամբ լիցի կերակուրն. եւ միշտ

անպարատ լիցին յաղօթից: Երրորդ՝ առաջին օրհնութիւնն ինդրելն է. եւ վերջինն գոհանալն: Չի սովոր են աղքատք՝ որք նախ ինդրեն. եւ յորժամ առնուն, գոհանան. նոյնպէս եւ մեք առնեմք. վասն զի գոհութիւնն կրկին զօրութիւն ունի. նախ զառեալ պարգեւսն հատուցանէ. եւ ապա դարձեալ պարտապան առնէ: Վասն այն ասեն ոմանք թէ՝ գոհացօրք՝ զԱստուած՝ պարտական առնեն: Չորրորդ՝ զի բազում աշխատօրք գոն կերակրոցն եւ ըմպելեացն. յայնմ օրէ՝ որք սերմանեն եւ հնձեն եւ եփեն, եւ պատրաստեն՝ ի սեղանն. պարտ է վասն նոցա ամենեցուն աղօթել. եւ զպարտս նոցա վճարել. զի մեք ի նոցա վաստակն վայելեցաք. նոքա ի մերն մասնաւորեցին: Եւ երկոքեան դասքն՝ ի սեղանոյն Քրիստոսի որ է արքայութիւնն երկրից, մասն եւ բաժին ընկալցին ամէն: Այսքան վասն մարմնաւոր կերակրոյ ասացաւ: Այժմ ասելի է վասն հոգեւոր կերակրոց եւ ըմպելեաց: Եւ չորս եղանակաւ իմանին սոքա: Նախ՝ բանն Աստուծոյ հոգեւոր կերակուր է. եւ հոգին սուրբ ըմպելի. ըստ այնմ, (ոչ թէ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւն Աստուծոյ.) եւ վասն հոգւոյն ասեր. (որ ոք ծարաւի իցէ՝ եկեացէ եւ արբցէ ի ջրոյն զոր ես տաց.) եւ ի վերայ բերէ. (զայս ասեր վասն հոգւոյն՝ զոր ընդունելոց էին:) Երկրորդ՝ հոգեւոր կերակուր է մարմինն եւ արիւնն փրկական. ըստ այնմ, (մարմին իմ ճշմարիտ կերակուր է. եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի. որ ոք ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան:) Երրորդ՝ հոգեւոր կերակուր է գործնական առաքինութիւնն. որպէս պահք, աղօթք, ողորմութիւն. արդարութիւն, եւ այլն: Իսկ տեսական իմաստութիւնն եւ ուսումն գրոց՝ ըմպելի եւ զովացումն ծարաւեաց հոգւոց: Չորրորդ՝ կերակուր է հոգեւոր հաւատն եւ յոյսն առ Աստուած. որով հաստատի հոգին եւ զօրանայ: Իսկ ըմպելի է սերն Աստուծոյ՝ որով զմայլի եւ ուրախանայ. եւ զայսցանէ ասէ Դաւիթ. (զինի ուրախ առնէ որ է սեր. իւղ զւարթ՝ որ է յոյսն. եւ հաց հաստատէ զսիրտ մարդոյ՝ որ է հաւատն հաստատութիւն հոգւոյ:) Յարցումն՝ զի՞նչ է աղ եւ հաց կտրելն: Պատ՝ եւ զայս ի Քրիստոսէ ուսաք. զի այսպէս խաչանման բեկաներ զհացն երկոքին ձեռքն: Եւ յետ յարութեանն՝ այն սովորութեամբն ծանեան զնա. ըստ այնմ, (ետ նոցա ծանօթս ի բեկանել հացին:) Եւ զայս սովորեցաք քրիստոնէից ազգս. զի երկուքն բաժանեն զմի հացն. եւ դարձեալ հատանեն ի ձեռս իւրեանց. եւ լինի խաչ: Եւ այս է խորհուրդն: Նախզի այսու՝ խաչին Քրիստոսի հաղորդիցուք. եւ սուրբ հացին զոր ի վերնատունն բաժանեաց: Երկրորդ՝ զի ուսցուք այսպէս զամենայն ինչս մեր հաղորդել ի պէտս կարօտելոց. եւ զմիմեանս մեծարել եւ պատուել սիրով: Երրորդ՝ զի այսպէս հաղորդ լինիմք վերին սեղանոյն որ է արքայութիւնն երկնից. վասն այն ընդ քրիստոնէից պարտ է բաժանել զհացն. որք հաղորդք ենք միմեանց եւ բաժանորդք արքայութեանն երկնից. եւ ոչ ընդ այլ ազգիս (որ ոչ ինչ է բաժին հաւատացելոյն ընդ անհաւատիս:) Յարց՝ զի՞նչ է յորժամ զգինին ըմպեմք, օրհնեմք եւ շնորհակալիմք միմեանց. եւ յայլ կերակուրս եւ յմպելիս ոչ առնեմք նոյնպէս: Պատ՝ նոյնպէս եւ զայս ի Քրիստոսէ ունիմք քրիստոնեայքս. որ ի հարստանիսն զջուրն ի գինի փոխեաց օրհնեաց. այլեւ ի վերնատունն զբաժակն օրհնեաց. վասն որոյ ըմպելի եղէ քրիստոնէիցս եւ օրհնութեան բաժակ: Եւ յորժամ ըմպեմք, զնոյն օր հնութիւն Քրիստոսի յիշատակեմք. եւ զայս այլազգիք ոչ ունին. այլ ի մենչ են սովորեալ: Վասն այն ասէ սուրբն եւ ազրիոս առ միայնակեացսն թէ՝ զինի ամենեւին մի

ընափոցես. եւ դառնայ առ աշխարհականս ասելով. ապա թէ ըմպիցես, զարարիչն օրհնեցես. այս է՝ զստեղծիչն որ արար զամենայն յոչնչէ. այլեւ զարարիչ օրհնութեան գիւտոյն զՏէր մեր Յիսուս Քրիստոս: Եւ այս է խորհուրդն: Նախ՛ զի՛ բաժանիցուք յայլազգաց՝ որք զգիւնի մեղաց ըմպեն. եւ վասն մեղաց արբեանս եւ շռայլին: Այլ մեք զբաժակս օրհնութեան ճաշակեմք զչափաւորն. եւ ոչ զանչափն որ է մեղք եւ արբեցութիւն: Վասն այն նախ քան զմպելն՝ օրհնեմք. եւ յետ ըմպելոյն՝ դարձեալ շնորհակալիմք. զի մի լիցի այն ի մեղս կամ ի մահ: Երկրորդ՝ զի այսպէս հաղորդիցուք երկնաւոր գիւտոյն որ է իմաստութիւնն Աստուծոյ. ըստ այնմ (ուտիցէք ըմպիցէք ի սեղան հօր իմոյ ասէ Տէր մեր:) Իսկ բաժանելն ըստ կարգի՝ զի հաւասարութիւն ունիմք առ միմեանս. այլեւ կարգ՝ առաջին միջին եւ վերջին: Եւ դարձեալ՝ ի յարքայութիւնն երկնից այսպէս ըստ իւրաքանչիւր չափու եւ արժանեաց՝ կարգաւորապէս պարգեւէ զիմաստութիւն. եւ ոչ անկարգ, կամ զրկանօք, կամ աղաչելով: Իսկ մատռուակն յօտն կացեալ՝ որ նշանակէ զծառայն ի գործ սպասու: Իսկ տեսրքն բազմեալ՝ ի հանգիստ վայելման: Եւ դարձեալ որպէս ասէ Տէրն. (բազմեցուցից զձեզ ի սեղան Յօր Իմոյ՝ եւ անցեալ պաշտեցից:) Որոց արժանաւորեցէ առ հասարակ զամենայն հաւատացեալս անուան Իւրոյ Քրիստոս Յիսուս Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն Երեկոյին ի բանն՝ (Ես առ Աստուած կարդացի՝ ՚ լուաւ ինձ յարեկոյս:) Սաղ. 54. 14: (Գլուխ. Դ)

Եւ վասն բազում պատճառի պարտ է յերեկոյս աղօթել: Նախ՛ զի՛ ի ցերեկն ի վաստակ մարմնոյ գործեցաք. պարտ է յերեկոյս վաստակիլ հոգեւոր աղօթիւք. զի մարմին եւ հոգի է մարդն: Երկրորդ՝ զի ի ցերեկն բազում ցաւք անցին ընդ մեզ. որ ի խորհուրդս, եւ որ ի զգայարանս. պարտ է յերեկոյն աղօթել եւ թողութիւն խնդրել յԱստուծոյ. ըստ այնմ, (զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք.) եւ ապա սուրբ սրտիւ յանկողինս ննջել: Երրորդ՝ զի երեկոյ եւ խաւար է կեանքս այս, յորում եմք այժմ. իսկ աղօթքն՝ լոյս է հոգւոյ. որպէս յերեկոյն ճրագ լուցանեմք. նոյնպէս զլոյս աղօթիցն պարտ է վառել ի հոգիս մեր. որով տեսանեմք զԱստուած: Նաեւ զմեզ ի միտ ածեմք թէ՛ զո՞ր առաւել գործեցաք այսօր. զբարի՞ թէ զչար. զի մի յաւելցի չարն, եւ կորուսցէ զբարին: Չորրորդ՝ զի յերեկոյն ժամանեցաք խաղաղութեամբ. պարտ է գոհանալ զԱստուծոյ՝ որ փրկեաց ի չարէ աւուրս. ի յիւրաքանչիւր ժամու չար է պատրաստեալ մարդոյ. ըստ այնմ, (շատ է աւուրն չար իւր:) Յինգերորդ զի գիշեր եւ խաւար է լինելոյ. եւ արշաւանք թշնամեաց հոգւոյ եւ մարմնոյ. պարտ է աղօթիւք պահպանութիւն խնդրել: Վեցերորդ՝ զի ի գիշերն բազում ժամանակ ի քուն ննջեմք. վասն որոյ պարտ է յերեկոյն զամենայն ժամու աղօթսն վճարել. զի ժամ առանց աղօթից ոչ մնացէ: Չոր օրինակ՝ անասունք մերձել յերեկոյն, փութան ի կերակուրս. զի մի սովեսցին ի գիշերի: Եօթներորդ՝ երեկոյն սկիզբն է գիշերոյն. որպէս առաւօտն ցերեկոյն. պարտ է զայս ժամս աղօթիւք եւ բարի գործօք սկզբանն մերոյ մատուցանել որ է Աստուած: Ութներորդ՝ Ադամ ընդ երեկս արտաքսեցաւ ի դրախտէն. եւ չէր սովոր մթան գիշերոյ. ի սուգ եմուտ, մինչ յառաւօտն դարձեալ ետես զլոյս. պարտ է ի

սոյն ժամու աղօթել եւ սգալ զմեզ. յիշելով զխաւարային կեանս մեր. եւ զմերժումն ի լուսեղէն կենացն: Իններորդ ի սոյն ժամու ընդ երեկս փրկիչն մեր խոնարհեցաւ ի հող գերեզմանին պարտ է երկիրպագանել. եւ թաղմանն Զրիստոսի մասնակից լինիլ. զի եւ յարութեան փառացն կցորդիցուք: Տասներորդ՝ երեկս որ մուտ է արեգականն՝ զվախճան կենաց մերոց նշանակէ. որ խաւար մահու պատէ զմեզ եւ ննջելն յանկողինս՝ զհանգչիլն ի գերեզմանս. յորում մերկացեալ յամենայնէ, մտանեմք ի հող. եւ յետ երեք պահու խօսիլ հաւուն՝ զգոչումն փողոյն յետ երեք մասանց ժամանակի. որ է անցեալն, ներկայն, եւ ապառնին: Եւ ի ծագիլ լուսոյն՝ յարուցեալ զգէնու իւրաքանչիւր ոք զգգեստ իւր. նոյնպէս ի վերջնումն առաւօտին՝ յարուցեալ ամենեցուն զգէնու իւրաքանչիւր ոք զբարի գործս իւր զորս աստ գործեաց. զառաքիւնութիւն, զպահս, զաղօես, զողորմութիւնս, եւ զայլս: Ի յայն խորհուրդն՝ յերեկոյս աղօթեմք յիշելով զմահ մեր եւ զյարութիւն: Եւ զիտելի է՝ զի վեց եղանակ է աղօթից: Նախ՝ մարմնով ծունր կրկնել: Երկրորդ՝ բանիւ խոստովանիլ: Երրորդ՝ ձայնիւ կարդալ. ըստ այնմ, (ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի:) Չորրորդ՝ սրտիւ աղաղակել. ըստ այնմ, (սաղմոս ասացից հոգւով՝ սաղմոս ասացից մտօք:) Հինգերորդ՝ արտասուքն: Վեցերորդ՝ պատարագօք աղօթել որք են նուէրք եկեղեցւոյ. ըստ այնմ, (քեզ վայելէ Աստուած օրինութիւն ի սիօն. եւ քեզ տարցեն աղօթք յԵրուսաղէմ:) Եւ թէ է՞ր են բազում աղօթք: Ասեմք՝ նախզի՝ մի յաղօթից զրկիցի ոք. զի թէ միոյն ոչ հանդիպեցի, միւսովն աղօթեսցէ: Երկրորդ պատճառ՝ զի զոր ինչ ետ մեզ Աստուած՝ յամենայն մասն եւ բաժին խնդրէ. զի ետ մեզ մասունս մարմնոյ. ձեռս եւ ոտս, որովք ծունր կրկնեմք. եւ ետ լեզու եւ բան՝ բանիւ աղօթեմք. եւ ունիմք ձայն՝ վասն այն ձայնիւ կարդամք. եւ այլն նմանապէս: Եւ թէ ոք ասիցէ բազում անգամ աղօթեմ, եւ ոչ լսէ Աստուած: Ասեն վարդապետք թէ՛ վասն բազում պատճառի ոչ լսէ զաղօթս՝ այլ յերկարէ: Նախզի՝ ոչ է աղաչօղ, վասն խնդրոյն միշտ աղաչէ: Երկրորդ՝ զի թէ սիրտ սուրբ ոչ լինի: Երրորդ՝ զի թէ վասն որոյ խնդիրն է, ոչ է զղջացեալ: Չորրորդ՝ զի թէ ոչ արժան տալն, եւ չարեաց կցորդ լինիլն: Հինգերորդ՝ զի թէ մարմնական իցէ. որպէս շատախօսութիւն հեթանոսաց զոր արգել: Վեցերորդ՝ թէ ի նոյն լինիլն նմա շահ է, ոչ տայ զխնդիրն. մին՝ վասն հաշմութեան յօտարութեան կամ բանտի եւ այլ փորձանաց: Երկու՝ զի պահէ ի նոյն փորձութեանն՝ զի յայտնի լիցի. որպէս Յոբայն հաւատ նորա: Երեք՝ զի թէ խոնարհութեան է նմա պատճառ. որպէս Պօղոսի խեթ մարմնոյն՝ զոր Յաղէքսանդրէ ընկալաւ: Եօթներորդ՝ թէ անպատշաճ իցէ. որպէս ընդ օղն թռչիլ. կամ անմահ մնալ. կամ ծերիկ աղայանալ: Ութներորդ՝ զի թէ հպարտութեամբ խնդրէ. որպէս Մովսէս զջրոյն հոսիլն՝ որ ոչ եղեւ: Իններորդ՝ զի լինին որք յանկիւնս հրապարակաց եւ ի ցոյցս մարդկան. (զի այն են վարձք նոցա ասաց Տէրն:) Տասներորդ՝ զի ժամանակն անցեալ լինի. ըստ Պօղոսի. (ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան:) Մետասաներորդ՝ զի թէ փառասիրութեամբ լինի. որպէս օրինականն փարիսեցի. ոչ միայն չեղեւ խնդիրն. այլ զոր ունէրն ելիք: Երկուտասաներորդ՝ զի թերի լինի եւ ոչ կատարեալ հաւատով. (զի նման է ասէ այնպիսին հողմակոծեալ եւ տատանեալ ալեաց ծովու. մի ակնկալցի մարդն այն առնուլ ինչ յԱստուծոյ:) Եւ պիտոյ է խնդրոյն նախ՝ հաւատ կատարեալ: Երկրորդ՝ սրբութիւն անձին: Երրորդ՝ խոնարհութիւն անձին. որպէս ասաց մաքսաւորն: Չորրորդ՝ բոլոր յօժար սրտիւ: Հինգերորդ՝

ժամանակն: Վեցերորդ՝ տեղիքն սուրբ: Եօթներորդ՝ զի յարածամ առնիցէ: Ութներորդ՝ զի անսենգ եւ անխեթ լինիցին այլքն ամենայն ընդ նմա: Իններորդ՝ զի եւ ինքն թողեալ իցէ խոցա գյանցանս: Տասներորդ՝ զի յամենայն ուստեք զմիտս ժողովէ, եւ միայն առ Աստուած խոկասցէ: Եւ թէ ո՞րք են խնդրուածքն որք միշտ լսելի լինին: Նախ՝ խնդրել զարքայութիւնն Աստուծոյ: Երկրորդ՝ բախել մեղաց թողութիւն: Երրորդ՝ հայցել վասն այլոց յանցանաց: Չորրորդ՝ խնդրել զսակաւ պիտոյից օրըստօրէ զհարկաւորն մարմնական: Զինգերորդ՝ (Սուրբ կոչել զանուն Աստուծոյ ի վերայ քոյ.) որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն ձայնական աղօթից. ի բանն՝ (Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի:) Սաղ. 144. 1: (Գլուխ. ՂԱ)

Վասն բազում պատճառի բարձր ձայնիւ աղօթեմք առ Աստուած. ըստ մարգարէին: (Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի:) Նախ՝ որպէս մարգարէքն քնարաւ եւ գործեօք երգէին օրհնութիւն. ըստ այնմ, (տասն աղեալ սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ:) Այսպէս եւ մեք կենդանի քնար եմք հոգւոյն սրբոյ. տասն զգայարանօք հոգւոյ եւ մարմնոյ երգեմք օրհնութիւն: Երկրորդ՝ զբարձրեալն ի բարձունս՝ բարձր ձայնիւ բարեբանեմք. որպէս խրատէ մարգարէն. (բարձր արարեք զՏէր Աստուած մեր. երկիր պագեք եւ այլն:) Եւ այլ եւս. (օրհնեցեք զնա ի ձայն ցնծութեան. եւ ի բարբառ լսելիս:) Երրորդ՝ հրեշտակք անդադար բերանով՝ անհանգիստ բարբառով՝ ի ձայնս իւրեանց բարեբանեն զԱստուած. ըստ մերովբէիցն որք աղաղակէին մի առ մի. (սուրբ սուրբ սուրբ Տէր զօրութեանց.) եւ մեք նմանեալք խոցա, ձայնակից լինիմք ըստ կարողութեան մերում: Չորրորդ՝ ձայնն հեռաւորացն Է. իբր թէ մեղօք հեռացեալք յԱստուծոյ. ըստ որում թէ՛ (մեղքն ձեր որոշեն ի մէջ իմ եւ ի մէջ ձեր.) վասն որոյ բարձր աղաղակեմք լսել եւ ողորմիլ մեզ: Զինգերորդ՝ վերափոխեալ հոգիքն՝ հեռի են ի մենչ բազում հեռաւորութեամբ. կենօք եւ աշխարհօք. եւ մեք սրբոցն մաղթեմք բարեխօսել վասն մեր. եւ վասն մեղուցելոցն թողութիւն խնդրեմք: Վեցերորդ՝ զի սարսիս դելք եւ չքանան ի հոգեւուագ ձայնից. ըստ որում այսն որ չարչարէր զՍաւուղ՝ փախչեր ի սաղմոսելն Դաւթի. եւ որպէս կայծակունք եւ որոտ եւ կարկուտ՝ այսպէս աստուածային ձայնք եւ հոգեւոր երգք՝ այրեն զսատանայ. եւ ահաբեկեալ ի բաց հեռանայ ի մենչ. ըստ Դաւթի. (որոտաց Տէր յերկնից եւ բարձրեալն. ետ զձայն իւր ի կարկուտ եւ ի կայծակունս հուր:) Ըստ որում ի գերեզմանն Ղազարու գոչեաց Յիսուս ի ձայն մեծ՝ զի սարսեցիկն բարապանք դժիւոցն որք են դելք եւ մեղաւորք. եւ ոչ մի այն ի մարդկանէ, այլեւ ի ձայնէ հաւուխօսելոյ եւ ի ժամահարաց՝ հալածին դելք. զի ձայնք խոցա կոչնակք եւ օրհնակք են օրհնութիւնսն Աստուծոյ: Եօթներորդ՝ բարձր ձայնիւ կոչեմք զհրեշտակս երգակցիլ մեզ. ըստ որում հրաւիրէ մարգարէն. (օրհնեցեք զՏէր ամենայն հրեշտակք եւ զօրութիւնք նորա:) Եւ զի երգակցին մեզ՝ ասէ յայլ ուր. (կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն ի մէջ գուսանաց եւ գովչաց:) Ութներորդ՝ զուրախուի հոգեւոր մեր նշանակէ. ըստ որում, (շրթամբք ցնծութեան օրհնեսցէ զքեզ բերան իմ:) Եւ թէ՛ (օրհնեցեք զՏէր ցնծութեամբ եւ ուրախութեամբ.) որպէս հրեշտակք ի ծննդեանն ցնծացեալք՝ բարձր ձայնիւ զփառս ի բարձունս երգէին. եւ ստնդիայ տղայքն եւ աշակերտքն ի

գալստեան Տեան՝ մեծածայնութեամբ Ովսանայ երգէին: Իններորդ՝ գանձկութիւն եւ զնեղասրտութիւն մեր նշանակէ, զոր կրեմք ի սատանայ Է. վասն որոյ բարձրածայնի աղաղակեմք առ բարձրեալն հօր՝ զի փրկեցէ զմեզ: Տասներորդ՝ զի ետ մեզ ձայնական գործիք զմասունս մարմնոյ՝ որով պաշտամամք եւ բարձր ձայնի օրհնեմք զտուօղն. ըստ Դաւթի. (օրհնեցէք զնա ի բանս քաղցր, եւ ի ձայն գոհութեան:) Մետասաներորդ՝ վասն ժողովրդեանն. զի ամենեքեան լսիցեն եւ զարթիցեն ի թմրութենէ եւ ի քնոյ մեղաց. ըստ Եսայեայ խրատու. (գոչեա զօրութեամբ եւ մի խնայեր. բարձրացո իբրեւ զփողոյ զբարբառ քո.) վասն որոյ աղաղակեմք. (զարթիք եւ մի ննջէք նման յիմար կուսիցն եւ այլոցն:) Երկոտասաներորդ՝ բարձր ձայնի զաւետիս տամք ամենայն հաւատացելոց փրկութեան. ըստ որում, (եւ ի վերայ լերինդ բարձու աւետարանիչդ Սիօնի. բարձրացո իբրեւ փողոյ զբարբառ քո աւետարանիչդ Երուսաղէմի:) Երեքտասաներորդ՝ ձայնն առաւել վարժէ զմիտս մարդկան ընդ իւր. վասն որոյ քաղցրածայն երգով զմիտս մարդկան ի քաղցրութիւն Աստուծոյ հրաւիրեմք: Չորեքտասաներորդ՝ հրամայեաց միաբան աղօթել. ըստ այնմ, (թէ երկու եւ երեք միաբանեցին ի ձեռք ի վերայ երկրի վասն ամենայն իրաց՝ անդ եմ ես:) Այդ այս՝ ձայնի առաւել կատարի. զի ներդաշնակաբար ձայնակցեմք միմեանց զբարբառ օրհնութեան: Յնգետասաներորդ՝ զոչ երկնչիլն՝ նշանակէ ձայնի աղօթելն. ըստ այնմ, (որ ոք խոստովանեցի յիս առաջի մարդկան, խոստովանեցայց եւ ես զնա առաջի հօր իմոյ.) ըստ Դաւթի. (խօսէի զվկայութիւնս Քո առաջի թագաւորաց՝ եւ ոչ ամաչէի:)

Նորին քարոզ վասն Ձայնական աղօթից. ի բանն՝ (Ձայնի իմով ես առ Տեր կարդացի:) Սաղ. 144. 1: (Գլուխ. ԴԲ)

Եւ վասն բազում պատճառի ձայնի աղօթելի Է մեզ: Նախզի՝ աղաղակն ստին Է յատուկ. զի զիղծս մեր նշանակէ. որպէս ձայնն բերանոյ. եւ խօսքն լեզուին. վասն այն ձայնի աղաղակեմք՝ որ զպաղատանս յայտնէ ի լսելիս մեր: Երկրորդ՝ զներքին կսկիծն յայտ առնէ բարձր աղաղակելն. զոր ունիմք ի հոգիս մեր վասն մեղաց, եւ հեռանալոյն յԱստուծոյ: Երրորդ՝ որպէս ասաց Մովսէս յօրէնսն, եթէ ընդ պատարագս գառինն չորրորդ դորակ գինւոյ եւ իւղոյ բերցեն. եւ ընդ խոյին զերրորդ մասն դորակի. եւ ընդ դուարակին կէս դորակի. մի քան զմի առաւելեալ: Արդ՝ գառն նշանակէ զմիտսն սուրբ եւ անմեղ: Եւ խոյն՝ զհոգին խոնարի: Եւ զուարակն՝ զմարմինն վաստակեալ ի բարիս. ըստ այնմ, (պատարագ Աստուծոյ հոգի խոնարի. զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարի Աստուած ոչ արհամարհէ:) Իսկ իւղն՝ զուարթութիւն մտացս: Եւ զինին՝ զուրախութիւն հոգւոյն նշանակէ: Իսկ առաւել ձայնն՝ զաւելի զուրախութիւն հոգւոյն նշանակէ եւ ցուցանէ. զոր պարտ Է օրըստօրէ յաւելուլ բարեացն գործովք: Չորրորդ՝ բարձր ձայնն՝ յորժամ պրկին ձայնական գործիքն, առաւել չարչարի եւ վաստակի. զի որպէս որ ծուր կրկնէ վաստակի. նոյնպէս բարձր աղաղակելովն՝ ի սերն Աստուծոյ աշխարհի: Յինգերորդ՝ ի խորխորատ անկեալ ոք՝ բարձր աղաղակէ ի վեր. զի լսիցեն եւ հանիցեն: Նոյնպէս եւ մեք ի խորխորատ մեղաց ընկղմեալ, բարձր աղաղակեմք առ Աստուած. որպէս Յովնան ի փոր կիտին ընկեցեալ. եւ Դաւիթ ասէ. (ի խորոց կարդացի առ քեզ:) Վեցերորդ՝ որքան ձայն

պաշտամանն հասանի՝ հալածին դեք որք ի յօդս են բնակեալ: Չի քահանայից ձայնն՝ որպէս ձայն որոտման սարսռելի է նոցա. եւ անուանակոչումն Աստուծոյ՝ որպէս փայլակն խոցէ զնոսա. եւ կնիք խաչին՝ որպէս քարեայ կարկուտ հարկանէ զնոսա. ըստ այնմ, (որոտաց Տէր յերկնից՝ եւ բարձրեալն ետ զձայն իւր ի կարկուտ:) Եօթներորդ՝ որպէս ձայն յաղթողաց ի պատերազմի՝ լքանէ եւ բեկանէ զմէջս թշնամեաց. Նոյնպէս բարձր ձայնիւ աղաղակելն՝ զյաղթութիւն ի վերայ թշնամեաց նշանակէ. որպէս ի վերայ երիքովի շուրջ գալն եօթնեկի փողովք եւ պաշտամամբ, եւ յեօթներորդ բարձր աղաղակելն՝ կործանեցաւ պարիսպն, եւ հեղաւ որպէս ջուր. Նոյնպէս բազմութիւնք դիւաց կործանին ի յաղաղակելն քահանայից: Ութներորդ՝ ձայնն յողբս շարժի զամենեսեան եւ յարտասուս: Իններորդ՝ ձայնիւն համաձայնիմք միմեանց յաղօթս: Տասներորդ՝ ձայնն զերգս օրհնութեան նշանակէ՝ որք երգեմք զյաղթականն Աստուծոյ. որպէս յորժամ էանց ժողովուրդն ընդ ծովն, եւ փարաւօն ընկղմեցաւ, էառ Մարիամ զթմբուկն. եւ ամենայն կանայք ընդ նմա. օրհնէին զԱստուած եւ ասէին. (օրհնեսցուք զՏէր՝ զի փառօք է փառաւորեալ. զհեծեալս եւ զերիվարս ընկեց ի ծով:) Մետասաներորդ՝ (ի ձայն օրհնութեան կռածոյ փողոյ օրհնութեամբ եւ ցնծութեամբ սաղմոսեցէք ասէ Դաւիթ.) փոխանակ փողոցն՝ ձայնական գործիքն մեր: Երկոտասաներորդ՝ (բարձր արարէք զՏէր Աստուած մեր՝ երկրպագէք ի լեառն սուրբ Նորա.) որ է եկեղեցի լեառնացեալ առաքինութեամբ: Երեքտասաներորդ՝ սաղմոսիւք եւ օրհնութեամբ՝ եւ երգօք հոգեւորօք փառաւորեմք. այս է՝ սաղմոսն ի թիւ եւ աղօթքն. օրհնութիւն շարականն. եւ երգքն հոգեւորք՝ ձայնաւորքն են: Չորեքտասաներորդ՝ ի տօնս կռոց եւ ի հին տաճարն՝ այսպէս երգէին. եւ ոչ է պարտ տաճարին Աստուծոյ եւ Նորոյս պաշտման պակաս գուլքան զնոցայն. եւ անխրախճան եւ խուլ եւ համր. վասն այն՝ որպէս նոցայն էր մարմնաւոր երգ՝ զմերս ի հոգեւորն փոխեցին: Չանմարմինն՝ ի մարմին: Չբարձունս՝ ի ցածութիւն: Չհեռին՝ ի մերձ: Չդժուարինն ի դիւր: Արդ՝ զառաջինն զանմարմինն ի մարմին. այս է՝ զի դեք անմարմին են՝ անտեսանելի եւ անըմբռնելի մեզ: Արդ՝ զչարութիւն նոցա եւ զպատերազմ՝ ի ներս ի մարմինս մեր յաղթեսցուք. զի յորժամ յաղթեմք հեշտութեանց մարմնոյ մերոյ, յաղթեցաք զդէւսն՝ որք հակառակ եւ տիպ են արտաքին թշնամեաց մարմնոյ. զի զնոսա զօրութեամբ յաղթեմք. իսկ զսոսա՝ տկարութեամբ. (զի որքան տկարանամք, այնքան զօրանամք:) Իսկ զբարձունս ի ցածունս. զի որ անհնարին է ծանր մարմնոյ ի բարձունս յերկինս ելանել եւ ընդդէմ բնութեան՝ եւ զայս եւս կարելի արար մեզ. զի որքան ցածանամք եւ խոնարհիմք, այնքան բարձրանամք եւ խոնարհիմք, այնքան բարձրանամք. եթէ հեզութեամբ եւ խոնարհութեամբ, եւ եթէ ծունր կրկնելով եւ ի հող իջմամբ. եթէ ի վայր ի խորափիտս երկրի մտանեմք մարմնով, այնքան ի բարձունս ելանեմք հոգւով: Որպէս զՄանասէէ պատմեն. կապեալ երկաթով ի խոր վիրապս ընկեցեալ. որ յաւուրս քառասունս աղօթիւք բարձրացեալ ի դուրս ել: Նոյնպէս եւ ամենայն ոք ի ձեռն աղօթից եւ խոնարհութեանց վեր ի յերկինս բարձրանայ: Իսկ զհեռին ի մերձն. զի հեռի է դատաստանին ընտրութիւն. եւ ոչ գիտեմք զարդարն եւ զմեղաւորն: Այլ այժմ ի մերձակայս ճանաչեմք զընտրեալն եւ զխոտեալն: Նախ ի միտս մեր. (յորժամ զմեզ ոչ ըստ գտանիցեն, ճանաչեմք թէ հաճոյ էմք Աստուծոյ:) Երկրորդ՝ ի գործս

նայելով՝ իմանամք զբաժին արքայութեանն եւ զժառանգ դժոխոցն: Իսկ չորրորդ զդժուարինն ի դիւրին. զի դժուարին է մտանել յարքայութիւնն Աստուծոյ. (զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ եւ այլն:) Այլ զայս դիւրապէս կարեմք ըստանալ. ի ձեռն ապականացու իրաց՝ զանապականն առնուլ պսակ. այսինքն, (զքաղցն կերակրել. եւ զժարան արբուծանել. եւ զմերկն զգեցուցանել. եւ զօտարն ժողովել. զհիւանդս տեսանել. եւ բանտելոցն մխիթար լինիլ. ցբարիս գործել.՝ բարեացն Աստուծոյ հասանիլ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն Աղօթից. ի բանն առակին որ ասէ: (Լաւ է ճշմարտութիւնն՝ արդարութիւնն քան զարիւն զոհից:) Առակ. 21. 3: (Գլուխ. 14)

Գիտելի է՝ որ պատարագք անասնոցն՝ ի պատկեր մեր մեռանէին. եւ նուիրին արիւնքն եւ ողջակիզին. իբր թէ մէք մեռաք եւ նուիրեցաք Աստուծոյ ըստ այսմ օրինակի: Չի արիւնն ելեալ ի սրտէն, է ինքն արիւն. եւ ունի ընդ ինքեան զկենդանութիւն. եւ զշունչն ընդ խռչափողն խառնեալ: Իսկ ի մէջն ի սրտէ մերմէ աղօթքն բղխեալ, է ինքն բան եւ իղծ եւ ճշմարտութիւն. եւ հեծեծումն ընդ նմին խառնեալ ըստ չորից կրից արեանն: Այլ մարմին զոհին՝ կրեաց զցաւն եւ մեռաւ. եւ ողջակեզ եղել: Իսկ արդարութեան գործն՝ ի մարմին կրէ զվաստակն եւ զմեռելութիւնն ախտի. եւ սիրովն Աստուծոյ ողջակիզի ըստ երից կրից մարմնոյն պատարագի: Արդ՝ լաւ է պատարագ աղօթիցն, քան զարիւն զոհիցն: Նախզի՝ այն պատկեր եւ օրինակ՝ ցուցաւ մեզ. իսկ այս ճշմարիտ պատարագ. որ զոհզի եւ զմարմին մեր նուիրեմք Աստուծոյ: Երկրորդ՝ զի զայս հաճեցաւ Աստուած եւ ասէ. (պատարագ օրհնութեան փառաւոր արասցի զիս: Եւ պատարագ Աստուծոյ սիրտ սուրբ եւ հոգի խոնարհ՝ զոր Աստուած ոչ արհամարհէ:) Իսկ զայն անարգեաց ասելով. (ոչ ընդունիմ ի տանէ քումմէ զուարակս:) Երրորդ՝ արեամբք զոհին ոչ խօսիմք ընդ Աստուած. այլ աղօթքն խօսք է ընդ Աստուծոյ: Չորրորդ՝ յարիւնն սոսկ ոչ հանգչի Աստուած. այլ աղօթիւք եւ գործովք լինիմք տաճար Աստուծոյ: Հինգերորդ՝ աղօթիւք եւ փառաբանութեամբ նման եմք հրեշտակաց՝ որք մերձաւորք են Աստուծոյ: Իսկ արեամբ զոհիցն՝ նմանիմք անասնոցն, որք հեռաւորք են Աստուծոյ եւ ի ներքոյ մեր: Վեցերորդ՝ աղօթիւքն լինիմք հրեշտակաց նման՝ որք կամարարք են Աստուծոյ. եւ արեամբ զոհից՝ նմանիմք անբանից, որք կամարարք են մարդոյ: Եօթներորդ՝ աղօթիւքն պարզի եւ յստակի խորհուրդ մեր եւ ելանէ յերկինս. եւ արիւն զոհիցն՝ թանձրացեալ մտանէ յերկիր եւ ծածկի: Ութներորդ՝ արեամբ մի անգամ նուիրի պատարագ. եւ աղօթքն է նշան սիրոյ. եւ բազում անգամ նուիրի. հանապազ մեռելութիւնն ախտից եւ ողջակիզումն սիրոյ: Իներորդ՝ աղօթքն կենդանի եւ խօսուն պատարագ. իսկ արիւնն՝ անկենդան եւ անբան նուէրք: Տասներորդ՝ աղօթքն յինքնէ, եւ զինքն նուիրէ Աստուծոյ. իսկ ի զոհն՝ զօտար արիւն եւ զօտար կենդանիս մատուցանեմք: Ապա ուրեմն ճշմարտապէս լաւ են աղօթք եւ գործք, քան զարիւն զոհից կենդանեաց: Եւ զգիտելի է՝ զի պատարագ անօրինաց՝ պիղծ են առաջի Տեառն վասն հինգ պատճառի: Նախ՝ թէ մատուցանողն անօրէն է եւ պիղծ, ոչ ընդունի զնուէրսն: Երկրորդ՝ թէ պատարագն լինի զրկանօք եւ անարժան: Երրորդ՝

թէ լինի անարժան Աստուծոյ մատուցեալն. որպէս Կայինին խոտանն եւ անարգն. որում ասեր Աստուած: (Ուղիղ մատուցեր, այլ ուղիղ ոչ բաժանեցեր.) զի զվերջինն եւ զանարգն մատոյց: Չորրորդ՝ թէ լինի չարութեան կամօք որպէս խունկ Ոգիայի, չէ ընդունելի: Զինգերորդ՝ թէ լինի յանդէպ ժամանակի, չէ ընդունելի. որպէս պատարագն Սաւուղի: Յայսցանէ յայտ է՝ զի կամք եւ ժամանակն փոխեն զչարն ի բարի, եւ զբարին ի չար. որպէս սպանութիւնն չար է՝ այլ բարի կամօք որ ըստ Աստուծոյ եւ վասն Աստուծոյ, հաճոյ եղել. որպէս Եղիային եւ Փենէիեսին: Նոյնպէս եւ ժամանակն. թէ յառաջ քան զգողութիւնն պատժեն զգողն՝ չար է. այլ յետ գողութեանն՝ բարի է պատիժն. այսպէս թէ ի պահոց աւուրսն ուտեն զմիս՝ չար է. եւ թէ ի յուտիսն, բարի է ըստ ժամանակին: Դարձեալ՝ կամքն եւ ժամանակն զբարին ի չար փոխէ. որպէս կեղծաւորաց աղօթքն պահքն եւ ողորմութիւնն գործք բարիք են. այլ փառասեր կամքն՝ չարացոյց զնոսա: Այսպէս ժամանակն. յերկ ուտիք էր եւ հրաման կերակրոյ եւ ամուսնութեան. եթէ ի պահս կատարի, թէպէտ հալալէ ամուսնութիւնն, ի շնութիւն է համարեալ վասն ժամանակին. եւ կերակուրն պղծեաց զմարդն: Իսկ արդարոյն պատարագն՝ ընդունելի է. որպէս Աբելին եւ Նոյին. զի նախ զԱստուած առ ինքն հանգուցանէ. եւ ապա զպատարագն ընդունի: Այս է պատճառն. զի մարդիկ զպատարագն ընդունին. եւ նովաւ հաշտին ընդ նուիրողն. իսկ Աստուած ոչ այսպէս. այլ ի ձեռն մատուցանողին ընդունի զպատարագն: Չայս եւ ի բանեղէն պատարագն է տեսանել. զի յանարժան սրտէ ոչ ընդունի զաղօթս. ըստ այնմ, (ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ եւ այլն:) Եւ դարձեալ՝ այլ իմն գոյ բանեղէն պատարագիս պատճառ. այսինքն, զի սիրտն եւ լեզուն թէ միաբանին միմեանց, ընդունելի է. ապա թէ զայլ ինչ մտածէ, եւ զայլ աղօթէ, ոչ է ընդունելի: Նոյնպէս եւ ձայնեղէնն. եթէ իղձ սրտին եւ ձայնն զուգաւորին, ընդունելի է. ապա թէ ոչ՝ աւանդութեան է լրումն. եւ ոչ սիրոյ պտուղ առ Աստուած կամ պաշտօն: Եւ այս գիտելի է՝ զի այն է պատարագ մարմնական՝ յորժամ վասն անուանն Աստուծոյ զարիւնն ի սրտէ կենդանւոյն հանեմք՝ այն է բաժին Աստուծոյ, եւ կենդանին մեռանի. այս է պատարագն եւ մատաղն: Եւ երիւք կատարի. մին՝ զի յանուն Աստուծոյ է. երկու՝ զարիւնն ի սրտէն հանեմք. երեք՝ որ մարմինն մեռանի: Այսպէս աղօթքն որ է բանեղէն պատարագ՝ մատուցանեմք Աստուծոյ: Նախզի՝ յանուն Աստուծոյ աղօթեմք: Երկրորդ՝ ի սրտէն զբանն բղիսեմք: Երրորդ՝ զի զախտն մեռուցանեմք. այսպէս կոչի եւ աղօթքն պատարագ: Եւ թէ ո՞րն է ի սոցանէ ընդունելի՝ մարգարէն ասէ: (Մատո Աստուծոյ պատարագ օրհնութեան: Չի ընդ գոհս եւ ընդ պատարագս ոչ հաճեցաւ Աստուած.) Եւ այս վասն վեց պատճառի: Նախզի՝ աղօթքն բանաւոր պատարագ է եւ խօսուն. եւ այն անբան եւ առանց խօսից: Երկրորդ՝ այս ի մեր անձնէ եւ յեութենէ է. եւ այն արտաքին իր: Երրորդ՝ այս բաժին է ի մեր հոգւոյս եւ մարմնոյս. եւ այն բաժին է յնչից մերոց: Չորրորդ՝ բանն անմարմին է, եւ ազգակից Աստուծոյ. եւ նա մարմին եւ օտար յԱստուծոյ: Զինգերորդ՝ սա միշտ կենդանի եւ պատարագ է. եւ նա ընդ պատարագիլն վախճանեցաւ: Վեցերորդ՝ իղձ սրտին առաւել բանիւն հպի առ Աստուած, քան արտաքին կենդանեօք: Ապա ուրեմն յաղագս այս քան պատճառաց՝ առաւել է աղօթից պատարագն, քան զմարմնական նուերն. ' Զրիստոսի փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն ուրախութեան՝ Տրտմութեան. ի բանն՝ (Ուրախ լերուք ի Տէր. դարձեալ ասեմ ուրախ լերուք:) Փիլիպ. 4. 4: (Գլուխ. ԴԴ՛

ANOT

qo2Anno)

Չայս խրատ թէ՛ հաւատացեալն ի Զրիստոս՝ բարեգործն ամեն՛ին ոչ տրտմի աստ: Չի վասն չորից է տրտմութիւնն. երկուքն պիտակ. եւ երկուքն իսկապէս: Եւ յայսցանէ բարեպաշտ հոգին ոչ տրտմի: Նախ տրտմութիւն է վասն մարմնաւորաց պակասութեան՝ ընչից եւ այլոց. եւ առաքինին վասն այսց ոչ տրտմի. զի միշտ յայնս ցանկայ: Երկրորդ տրտմութիւն է՝ վասն մեղաց. եւ առաքինին մեղս ոչ ունի. եւ թէ տրտմի վասն մեղաց աշխարհի եւ ապաշխարհութեան, այն ուրախութիւն է ի հոգին. եւ կերպարանաւ է տրտմութիւն. սոքա պիտակ տրտմութիւնք են: Եւ իսկապէս տրտմութիւն է առաջին մահն՝ եւ յետ այնր երկիւղ տանջանացն. եւ առաքինիքն ի մահու ի կեանս փոխին. ոչ տրտմին վասն մահու. այլէւ Զրիստոսիւ ազատին ի տանջանաց. եւ վասն այն ոչ տրտմին: Յիրաւի ապա խրատ առաքեալն թէ՛ (անտրտում ուրախութիւն է առհաւատչեայ հանդերձելոյ կենացն.) այժմ ընդունին առ ինքեանս սուրբքն Աստուծոյ: Վասն այն է գրեալ ի վարս հարանցն թէ՛ սուրբն Աստուծոյ ոչ տրտմեր բնաւ. եւ եր գուարթ երեսօք եւ ուրախ սրտիւ. նմանապէս եւ այլքն: Եւ գիտելի է՝ զի ուրախութիւնն լինի ի բարեկարգութենէ հոգեկան կամ մարմնական իրաց. իսկ ծաղրն՝ բղխի յուրախութենէ. զի ուրախութիւն սրտին է. եւ ծաղրն մարմնոյն: Իսկ զքօսանքն լինին ի ծաղրէ. եւ մոռացումն տրտմութեան եւ ցաւոց՝ լինի ի զքօսանաց եւ ի զբաղանաց: Եւ այսպէս ուրախութիւնն եւ ծաղրն՝ զանցեալ տրտմութիւնն մոռանալ տան. այլ ոչ զհանդերձեալ երկիւղ եւ գտրտմութիւն մահուն աւ գտանջանաց: Դարձեալ՝ արժան է գիտել թէ՛ ո՞րպէս զանազանին ամօթն եւ տրտմութիւնն: Պատ: Այսպէս հասարակք են: Նախզի՛ երկոքեանն բնական մասինն են. եւ ոչ ցասման կամ ցանկութեանն: Եւ դարձեալ՝ զի երկոքեանն պակասութիւն ախորժելեացն են: Այլ այսպէս զանազանին: Նախզի՛ ամօթն իմացական մասինն է կիր. եւ տրտմութիւնն կամացն: Երկրորդ՝ զի տրտմութիւն սրտին է կիր. եւ ամօթն երեսացն: Երրորդ՝ գտրտմութիւնն յինքենէ կրեմք. եւ զամօթն յայլմէ: Չորրորդ՝ ամօթն միայն գոյանայ ի պակասիլ բարեացն. եւ տրտմութիւնն բարեացն եւ չարեացն: Չի թէ ոք ախորժ է զբարի կամ զչար, ի պակասիլն նոցա տրտմի. զի տրտմութիւն է պակասութիւն ախորժակացն: Հինգերորդ՝ ամօթն միշտ անցեալ գործոյն է. եւ տրտմութիւնն լինի յանցեալն, լինի եւ վասն ներկային: Եւ այսպէս զանազանին սոքա երկոքեանն: Չի չարն թէ անցեալ է ամօթ ածէ. եւ թէ մերձ է ի ներկայն, տրամութիւն է. թէ ի հանդերձեալ է՝ երկիւղ բերէ: Այլ աստ հարցանելի է թէ՛ զի՞նչ է ուրախութիւն Տեառն՝ եւ ուրախութիւն աշխարհի: Պատ: Ուրախութիւն Տեառն որ է հոգեւոր՝ եւ ուրախութիւն աշխարհիս որ է մարմնաւոր՝ այսպէս զանազանին: Նախզի՛ հոգեւորն մարմնովն աշխատ ածէ. եւ յուսովն ցնծացած. իսկ մարմնաւորն՝ մարմնովն փափկացած՝ եւ հոգւովն վշտացած: Երկրորդ՝ մարմնոյ ուրախութիւնս զղջումն ունի ի պակասիլ պատճառին. իսկ հոգեւորն՝ ոչ ունի զղջումն: Երրորդ՝ զի մարմնոյ ուրախութիւնն

հակառակ ունի գործունեություն. իսկ հոգեւորն՝ առանց հակառակութեան է. զի որքան առաւելուն տրտմականքն մարմնոյ, այնքան աճի ուրախութիւնն ըստ հոգւոյ: Չորրորդ՝ զի մարմնաւորն անցաւոր է եւ ժամանակեայ. իսկ հոգեւորն՝ անանց եւ միշտ ի կեանս. եւ յետ մահու. ըստ որում, (զուրախութիւնն ձեր՝ ոչ ոք հանիցէ ի ձեռք:) եւ դու տես զչափ տրտմութեան Տեառն. զի թէ մարգարէն Դաւիթ որ մարդ էր՝ տրտմեր վասն մեղաւորաց. որպէս ասէ. (տրտմութիւն կալաւ զիս ի մեղաւորաց.) եւ առաքեալն որ զճաշակ մի էառ ի սիրոյն Աստուծոյ՝ ասեր. (ո՞ հիւանդանայ եւ ես ոչ. ո՞ տապանայ եւ ես ոչ վշտանամ:) Քանի՞ առաւել Տէր մեր Քրիստոս վշտանայ եւ տրտմի վասն մեղաւորաց: Նախզի՞ արարիչ եւ հայր է մեր. (որպէս գթայ հայր ի վերայ որդւոյ՝ այնպէս գթացի Տէր.) եւ ապա զի եղբայր եւ ազգակից եղել մեզ: Այլ վասն մեր խաչեցաւ եւ մեռաւ. եւ ետ զարիւնն իւր եւ փրկեաց զմեզ եւ արդարացոյց: Եւ յորժամ մեք զայս ամենայն մոռանամք, զրկիմք ի շնորհաց նորա, եւ կորնչիմք մեղօք. զի զանասելի տրտմութիւն եւ զվիշտս կրէ վասն մեր. եւ այսոքիկ այսպէս ի ժամանակեայս: Դարձեալ՝ տրտմութիւն բերեմք Քրիստոսի յաւուրն դատաստանի. եւ պարծանք սատանայի. յորժամ ասիցէ առ փրկիչն մեր եթէ՝ դու այնչափ երախտաւոր ես մարդկան՝ որ զամենայն արարածս վասն նորա ստեղծեր. զերկիսս եւ զերկիր, եւ զամենայն բարութիւնսս ի սմա. այլեւ ետուր նմա օրէնս եւ մարգարես. այլեւ վասն նորա մարդ եղեր եւ խաչեցար՝ եւ փրկեցեր զնա. զայս ամենայն բարութիւնս արարեր. եւ նա եթող զքեզ. եւ արար զկամս իմ. որ ոչ էի բարերար նմա. եւ ոչ արարածս ստեղծի. եւ ոչ ի խաչ ելի վասն նորա: Արդ՝ զայդ ամենայն արհամարհեաց՝ եւ զքեզ եւ զգործս քո. եւ եկն զկնի իմ. եւ այսպէս տրտմութիւն է մեղաւորին առաջի Աստուծոյ ի դատաստանին: Եւ այս եւս գիտելի է՝ զի որպէս մեղքն մեր տրտմութիւն է նմա. այսպէս բարի գործելն մեր՝ ուրախութիւն է Քրիստոսի. ըստ այնմ, (ուրախ լիցի ի բարւոք վարսն ձեր:) Չի ոչ է միայն բաւական ոչ առնել չար. այլ պարտ է թողուլ զչարն եւ առնել զբարին. որպէս խրատէ մարգարէն. (խոտորեա ի չարէ. եւ արա զբարի.) ապա լինիմք կատարեալք: Չի ոչ չար առնել եւ ոչ բարի՝ անկատար է. եւ չար առնել եւ բարի, խառնակ է. բարի ոչ առնել եւ չար գործել՝ ամենեւիմք չար է. չար ոչ առնել եւ բարի առնել՝ կատարեալ առաքինութիւն է. որով ուրախանայ Քրիստոս վասն բազում պատճառի: Նախ՝ յորժամ տեսանէ զմեզ զհետ պատուիրանացն ընթացեալ, թողել զաշխարհս եւ զնա սիրեալ եւ առ նա փութացեալ, յայնժամ ուրախանայ Քրիստոս ի գործս մեր: Դարձեալ՝ յորժամ արդարապէս կարգաւորեմք զհոգի եւ զմարմին մեր՝ որպէս բնական ստեղծումն է. այսինքն, զմիտս եւ զհոգիս դաստիարակ կացուցանեմք շնչոյս եւ մարմնոյս. եւ զսոսա արբանեակ մտացն. եւ զօրէնսն Աստուծոյ դաստիարակ մտացն. այսպէս զմիտսն հետեւցուցանել օրինացն Աստուծոյ. եւ զհոգին մտացն. եւ զշունչն եւ զմարմինն հոգւոյն. յայնժամ լինի մարդն բոլորովին երկնային, եւ կարգաւորեալ յինքեան: Դարձեալ՝ այլ իմն կարգաւորի մարդն ի ներքս. զի հոգին երեք մասն ունի. որ է բան, ցասումն, եւ ցանկութիւն: Եւ բանն իշխան եւ Տէր է ցասմանն. եւ ցասումն ցանկութեանն. եւ սոքա հետեւեալ նմա եւ հնազանդ բանին. եւ այսպէս պատկերն Աստուծոյ պայծառանայ ի մեզ. եւ ուրախանայ Աստուած: Ապա ուրեմն թէ զայս կարգս շրջեմք, զցասումն եւ զցանկութիւնն անհնազանդ բանին եւ իշխեցող առնեմք, յայն ժամ

կորուսանի պատկերն Աստուծոյ ի մեզ. եւ շրջի կարգ ստեղծմանն: Դարձեալ՝ Աստուած զմարդս բարի է ստեղծեալ. հոգի եւ մարմին եւ շունչ. այլ սատանայ գայ գաղտաբար եւ ի բարի բնութիւնս մեր խառնէ զչար սերմանս իւր այսպէս: Ի հոգին չար խորհուրդ. եւ ե շունչն չար խօսս. եւ ի մարմինն չար գործս. յորժամ զգուշանայ մարդ եւ ոչ տայ տեղի չար սերմանացն, այլ պահէ զմիտսն ի չար խորհրդոց, եւ զլեզուն ի չար խօսից, եւ զմարմինն ի չար գործոց, յայնժամ ուրախանայ Աստուած տեսեալ զմարդն ի չարէն հեռացեալ, եւ ի բարին հաստատեալ: Դարձեալ՝ սատանայ հակառակ է Աստուծոյ եւ թշնամի մարդոյս. եւ կամի Աստուած հանապազ զմարտնչիլն մեր ընդ սատանայ եւ յաղթել նմա. ըստ այնմ, (ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս:) Արդ՝ յորժամ արիութեամբ մերով յաղթեմք հակառակին՝ ուրախանայ Աստուած. եւ տայ զպսակն յաղթութեան: Եւ կրկին է յաղթութիւնն սատանայի. նախ ի խորհրդոյն զգուշանալ եւ յաղթել չարին. այս է առաջին պատերազմ. եւ ապա ի մարմինս. զի յորժամ յաղթեմք մարմնոյս մերոյ եւ տկարանամք, յաղեցաք չարին. եւ տկարացուցաք զնա. եւ այսպէս ուրախանայ Քրիստոս: Դարձեալ՝ յորժամ դառնամք ի մեղաց զղջմամբ եւ խոստովանութեամբ, եւ ապաշխարութեամբ քաւեմք զմեզս, ուրախութիւն է Աստուծոյ եւ ամենայն երկնաւորացն. որպէս ի դարձ անառակին՝ եւ մոլորեալ ոչխարին՝ եւ կորուսեալ դրամին: Գիտելի է՝ զի հրեշտակք հանապազ ուրախանան եւ տօնակից լինին փրկութեան մարդկան. որպէս յայտ է ի կորուսեալ դրամէն, ի մոլորեալ ոչխարէն, եւ յանառակ որդւոյն: Եւ առաւել ուրախութիւն է ևոցա ի դարձ մեղաւորին որ ապաշխարէ, քան ի վերայ բազում արդարոց: Չոր օրինակ՝ ունիցի ոք բազում դրամ, այլ յորժամ գտանէ զկորուսալն՝ առաւել ուրախանայ: Կամ ունի բազում եղբայր՝ այլ ի գիւտ կորուսեալ եղբօրն՝ առաւել ինդայ. նոյնպէս եւ հրեշտակք ի զղջումն մեր: Չի իւրաքանչիւր մարդոյ՝ գոյ պահապան հրեշտակ՝ որ թուէ զամենայն գործս մեր. եւ մատուցանէ առ Աստուած. այլ ի բարի գոծն մեր ուրախանայ. երւ ի չարն տրտմի. որպէս գրեալ է ի հոգէ շահ պատմութիւնս հարցն. եթէ այր ոմն ներկեալ ամենայն մեղօք՝ յորժամ մտանէր յեկեղեցին, տեսանէր զհրեշտակն իւր հեռացեալ եւ զազրացեալ ի նմանէ. եւ յորժամ պատմեցաւ ամենեցուն, եւ զղջացաւ ի մեղաց իւրաց իւրոց, ետես դարձեալ զհրեշտակն մերձ իւր եւ պայծառացեալ. իսկ զդէն հեռացեալ եւ տրտմեալ: Այսպէս եղբարք՝ ի բարի գործն մեր ուրախանան հրեշտակք. եւ տրտմին դէւք. զի կրկին են կիրք. այսինքն, ուրախութիւն եւ տրտմութիւն. եւ մարդս հոգի է եւ մարմին. եւ գոյ մեզ հոգեւոր ուրախութիւն եւ տրտմութիւն. եւ մարմնաւոր ուրախութիւն եւ տրտմութիւն: Չի մարմնաւոր ուրախութիւն մեր՝ ուրախութիւն է դիւաց, եւ տրտմութիւն հրեշտակաց. եւ մարմնաւոր տրտմութիւնն՝ տրտմութիւն է դիւաց, եւ ուրախութիւն հրեշտակաց. նոյնպէս հոգեւոր ուրախութիւնն՝ ուրախութիւն է հրեշտակաց, եւ տրտմութիւն դիւաց: Եւ այսպէս ճանաչեմք. զի ի հեշտութիւն մարմնոյս մերոյ՝ հեշտանան դէւք եւ դժուարին հրեշտակք: Եւ ի չարչարանս մարմնոյս՝ չարչարին դէւք եւ հեշտանան հրեշտակք: Լիցի ապա մեր պարկեշտ քաղաքավարին՝ տրտմութիւն դիւաց, եւ ուրախութիւն հրեշտակաց. զի ընդ նոսին հասարակեալ ի ցնծութեան յարկսն յաւիտենից, տօնեսցուք ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս Աստուած մեր. որ է օրինեալ յաւիտեանս ամէն: Աւարտումն յաղագս աղօթիցն առ հասարակ: Ասացուք

այժմ վասն պահոց:

Նորին քարոզ վասն Պահոց. ի բանն Չաքարիայի որ ասէ: (Պահեա
Ինձ ի չորից. պահեա ի հնգից. պահեա ի յեթնից պահեա ի տասնից:) Չաք.
8. 19: (Գլուխ. ԴԵ)

Գիտելի է՝ զի հինգ տեսանեմք պատճառս հիւանդութեան մարմնոյ.՝
հինգ առողջութեան: Նախ՝ ներքին խառնումն տարերաց՝ հաւասարութիւնն
առողջութիւն է մարմնոյ. ջերմ, եւ ցուրտ, չոր, եւ գէջ. այլ առաւելն եւ
նուազն՝ հիւանդութիւնն առնէ: Երկրորդ՝ արտաքին օդոց բարեսնունդն
առողջութիւնն առնէ. եւ ստահակութիւնն հիւանդութիւնն: Երրորդ՝ կերակրոյն
շահեկանն եւ չափաւորն՝ առողջութիւնն է. իսկ անչափն եւ վնասակարն՝
հիւանդութիւնն: Չորրորդ՝ կենդանական զօրութիւնն հոգւոյն յորժամ
թուլանայ, հիւանդութիւնն է. եւ պակասիլն մահ. իսկ զօրութիւնն նորին՝
առողջութիւնն է մարմնոյ: Զինգերորդ՝ ի խնամոցն Աստուծոյ վասն զանազան
պատճառի՝ հիւանդանայ մարդ եւ առողջանայ: Արդ՝ առաջին երիցն՝
բժշկական դեղով լինի առողջութիւնն. իսկ վերջին երկուցն՝ ոչ: Նոյնպէս եւ
հինգ պատճառք այսոքիկ տեսանին հիւանդութեան եւ առողջութեան հոգւոյ:
Նախ՝ չորից առաքինութեանց մասընկանց հոգւոյն չափաւորութիւնն՝
առողջութիւնն է. իսկ առաւելն եւ նուազն՝ հիւանդութիւնն հոգւոյ: Երկրորդ՝
յարտաքին զգայութեանց եւ յայսոց չարաց հիւանդանայ հոգին. եւ ի նոյն
զգայութեանց եւ կրից բարեաց՝ առողջանայ հոգին: Երրորդ՝ նոյնպէս
չափաւոր կերակուրք եւ պահք՝ առողջութիւնն են հոգւոյ. ըստ առաքելոյն.
(յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ.) եւ շուայտութիւնն՝ հիւանդութիւն
գործէ որպէս ի մարմնի: Չորրորդ պատճառ՝ եւ կենդանական զօրութիւնքն
չորս են. այսինքն, գիտութիւնն՝ եւ հաւատ՝ եւ յոյս՝ եւ սէր. թուլութիւն սոցա՝
հիւանդութիւնն է հոգւոյ. եւ պակասիլն մահ. իսկ զօրութիւնն սոցա՝
առողջութիւնն եւ կեանք է հոգւոյ: Զինգերորդ՝ ի խնամոցն Աստուծոյ. զմասնս
պահէ առանց գայթակղութեան. եւ զթիրեալսն ուղղէ. որպէս զընտրեալսն ի
սկզբանէ. եւ զմասնս թոյլ տայ եւ կորնչին. որպէս զխոտեալսն. որ իւրն
միայն է գիտելի պատճառն. եւ ի մէնջ լռի: Արդ՝ առաջին երեք
հիւանդութիւնք հոգւոյն՝ բժշկին ի ձեռս մեր եւ այլոց բժշկաց. իսկ չորրորդն՝
միայն Աստուծոյ է կարելի. որ տայ զգիտութիւնն եւ զհաւատ եւ զյոյս եւ զսէր:
Իսկ հինգերորդն անջնջելի ունի զպատճառն: Եւ որպէս բազում եւ
զանազան է հիւանդութիւնն մարմնոյ. ուստի յայտ է՝ զի բազմազան է նիւթ
բժշկական գեղոց որ յարմատս, եւ ի տերեւս, եւ ի զանազան ծաղիկս:
Նոյնպէս բազում է եւ ազգի ազգի ախտ հոգւոց. եւ զանազան է բժշկութիւն
նոցին որ ի սրբոց գրոց հաւաքի: Եւ պահքն է բժշկութիւնն ցաւոց հոգւոյ եւ
մարմնոյ. որպէս ցուցանի յառաջի կայգ: Արդ վասն պահոց՝ երիս իրս
տեսանելի է: Նախ՝ զզանազանութիւնն պահոց: Երկրորդ՝ զսրբութիւնն
պահոց: Երրորդ՝ զօգտութիւնն պահոց: Արդ՝ զառաջինն գիտելի է՝ զի բազում
են պահք անընդունելիք: Առաջին պահքն որ ի հարկէ բռնաւորաց լինի, ոչ է
ընդունելի. եւ ոչ ունի վարձս. որպէս դատապարտեալքն ի դժոխս միշտ
պահեն՝ բայց ոչ ապաշխարեն. զի պահք նոցա՝ ոչ ունին վարձս. վասն զի
չեն կամաւորք: Երկրորդ՝ թէ ոք պահէ վասն տկարութեան մարմնոյ՝ ոչ ուտէ
ոչ ըմպէ, չէ ապաշխարութիւնն. եւ ոչ ունի վարձս. զի ի հարկէ բնութեան է.

որպես օրինակ ի բնականացս. զի հուրն ոչ ունի վարձս զի ջեռուցանէ. եւ ոչ արեգակն զի լուսաւորէ. եւ ոչ այլ ինչ՝ զի բնութեամբ գործեն. զի ի բնականաց ոչ գովիմք, եւ ոչ պարսաւիմք եւ այլն: Երրորդ՝ թէ ոք պահէ վասն արծաթսիրութեան. եւ այս ազահիցն է՝ որք ճժդեն որովայնի, զի յաւելցեն դահեկանս. ոչ է պահք ապաշխարհութեան. եւ չէ ընդունելի: Եւ սոքա առաւել դատին արծաթասեր գոլ. քան պահացոյ: Չի իւրաքանչիւր գործ՝ ի վախճանէն դատեցեալ լինի. զի ի վախճանն շարժէ գներգործօղն: Ուստի իմաստասերն Արիստոտել՝ օրինակ տայ թէ՛ որ սիրէ պոռնկիլ ընդ մեծատան պառաւու զի առցէ արծաթս, այնպիսին առաւել դատի ազահ, քան եթէ շուն: Այսպէս եւ պահք արծաթասիրին՝ չէ վարձատրելի: Չորրորդ՝ թէ ոք պահէ վասն կեղծաւորութեան փառաց, չէ ընդունելի. զի ոչ է վասն ապաշխարութեան եւ փառացն Աստուծոյ. այլ վասն կեղծաւորութեան ինչ եւ փառաց մարդկան. Տէրն հրամայէ՝ (այն իսկ են վարձք նոցա:) Այսպէս չորեքին պահքս՝ չեն ընդունելի: Այլ որ արտաքոյ սոցա՝ կամաւոր պահեսցէ եւ վասն սիրոյն Աստուծոյ եւ թողութեան մեղաց, ընդունելի է Աստուծոյ: Այս առաջին գլուխն վասն զանազանութեան պահոց: Երկրորդ՝ վասն սրբութեան պահոց՝ են չորքս այսոքիկ, զորս մարգարէն ուսուցանէ: Առաջին որ ասէ. (պահեա ինձ ի չորից.) այսինքն, յորժամ մարդ պահէ զինքն ի չորից չարեաց որք են ի սրտի: Նախ ի չար խորհրդոց: Երկրորդ՝ ի պատրանաց: Երրորդ՝ ի չար յօժարութեանց եւ կամաց: Չորրորդ՝ ի չար հեշտութեանց եւ սովորութեանց: Յայսպիսի չորիցս՝ առաջին հարքն մեր պահեցին. եւ մեզ պահելի է: Իսկ պահք հինգերորդին է որ ասէ. (պահեա ի հնգիցս:) Յորժամ պահէ ոք զինքն ի հինգ զգայութեանց ախտից. այսինքն, ի տեսանելոյ զչարս. ի լսելոյ. ի հոտոտելոյ. ի ճաշակելոյ. եւ ի շօշափելոյ չարեաց: Այն առաջինն՝ ներքին զգայութեանցն է պահպանութիւն. եւ այս արտաքին: Իսկ պահք եօթներորդին որ ասէ: (Պահեա ինձ յեօթանց.) այսինքն, ի յեօթն գլխաւորագոյն ախտից՝ որք հոգւով եւ մարմնով կատարին. այսինքն, հպարտութիւն. նախանձ. բարկութիւն. ծուլութիւն. ազահութիւն. որ կորստութիւն. եւ բղջախոհ ցանկութիւն: Վասն սոցա ասէ առակն. (եթէ աղաչեսցէ զքեզ թշնամին քո՝ մի հաւատար նմա. զի է չարիք են ի սրտի նորա:) Եւ Տէրն ասէր. (առնու եօթն այսս չարագոյն քան զինքն, եւ բնակի ի մարդն, եւ այլն:) Իսկ պահք տասներորդին է՝ յորժամ զգուշանամք ի չարեաց. եւ պահեմք զհրամանս տասն բանեան պատգամացն Աստուծոյ: Որ հինգն յանձնական է. եւ հինգն հրաժարական. այսինքն, (Ես եմ Տէր Աստուած քո. եւ չիք այլ ոք բաց յինէն: Մի երդնուցուս սուտ յանուն Տեառն Աստուած քոյ: Մի կոչեր զանուն Տեառն Աստուած քո ի վերայ սնատեաց: Պատուեա զհայր քո եւ զմայր. եւ պահեա զօր շաբաթուն:) Այս յանձնառականն է: Եւ հրաժարական: (Մի շնար: Մի գողանար: Մի սպանաներ: Մի սուտ վկայեր: Մի ցանկար ընչից ընկերի քոյ եւ այլն:) Այսոքիկ են պահք սրբութեան՝ որք ընդունելիք են պահք սրբութեան՝ որք ընդունելիք են եւ վարձս առնուն յԱստուած: Երրորդն տեսանելի է վասն օգտութեան պահոց թէ, ընդէ՞ր պարտ է մեզ պահել: Առ որ գիտելի է. թէպէտ մասնաւոր օգտութիւնն բազում է պահոց. զոր կարգեցից մարգարէքն եւ առաքեալքն եւ հայրապատքն եկեղեցւոյ: Այլ գլխաւոր պատճառն եռակի է: Նախ՝ վասն բժշկութեան ցաւոց: Երկրորդ՝ վասն յաղթութեան թշնամոյն: Երրորդ՝ վասն ամբառնալոյ մտաց: Արդ՝ առաջինն վասն բժշկութեան ցաւոց՝

զի ի բազում կերակրոց եւ ըմպելեաց՝ բազում ծնանին հիւթք: Եւ ի բազում հիւթից՝ բազում ապականութիւնք: Եւ յապականութեանց՝ մահաբեր հիւանդութիւնք որպէս ցուցաւ ի վերոյ: Արդ՝ որպէս ի ցաւս մարմնաւորս Նախ հրամայեն բժիշկք անսուադութիւն զոր փէհրիզ կոչեն. եւ ապա տան զդեղ առողջութեան: Ուստի ասէ Գալիանոս թէ՛ ծայրագոյն դեղ է անսուադութիւնն. եւ ներհակք ներհակօք բժշկին: Այսպէս ի հոգեւորն. վասն զի ծնօղքն առաջին Ադամ եւ Եւա՝ ազահութեամբ կերակրոյն մեղան. եւ ի բոլոր ծնունդսն իւրեանց զայս ժանկ հիւանդութեան անցուցին: Վասն այն ընդդէմ նմա՝ սրբուհի մայրս մեր եկեղեցի, սահմանեաց դեղ եւ առողջութիւն. սորա բժշկէ զամենայն ցաւս հոգւոյ եւ մարմնոյ: Այս առաջին օգտութիւն: Երկրորդ օգտութիւն է վասն յաղթութեան թշնամոյն: Արդ՝ մեղքն որ բնակեալ է ի մարմնսս մեր՝ թշնամի է հոգւոյս մեր. եւ ցանկութեամբ հանապազ զհնուորի ընդդէմ հոգւոյն. որպէս ասէ առաքեալն. (մարմին ցանկայ հակառակ հոգւոյ. եւ հոգի հակառակ մարմնոյ:) Վասն այսորիկ մայր մեր եկեղեցի կամելով զարդարութիւն առնել ի մէջ հոգւոյ եւ մարմնոյ, սահմանեաց պահս. զի այսպէս թշնամի որ բնակեալ է ի մարմնսս մեր՝ կերպիւ ինչ յաղթեսցի: Եւ որպէս զդեղեակ ամուր զկերակուր եւ զմպելիս հատանելով յաղթեմք. Նոյնպէս պահօք յաղթեմք զթշնամիս հոգւոց մերոց. եւ որպէս զհուրն շիջուցանեմք զնիւթն պակասելով. այսպէս պահքն զհուր ցանկութեան մարմնոյս շիջուցանէ: Այս իսկ թշնամիս որ է բորբոք մեղաց, չորս ընկերս ունի, որք ծնանին չորս որդիս. եւ սոքա զհոգիս ի մեղս խոնարհեցուցանեն: Վասն որոյ մեղօք դատապարտին. քանզի են ի մարմնի չորս տարեք. յորոց ծնանին չորս հիւթք: Որոց միջնորդութեամբն՝ հոգին ի զանազան մեղս խոնարհի. որ է բարկութիւն. ազահութիւն. գիջութիւն. եւ ծուլութիւն. եւ այսպէս պահօք սանձահարին սոքա որպէս ցուցաւ: Երրորդ օգտութիւն պահոց՝ զի ամբարձումն է մտաց. զի ի յոյժ լիութենէ որովայնի՝ տկարանայ միտքն. որպէս ասեն վարդապետք թէ՛ որքան առաւել զորովայնդ ամբարես, այնքան առաւել զգայութիւն մտացն ինանի: Եւ այս է պատճառն. զի ի լցեալ կերակրոց՝ գոլորշիք ի վեր ելանեն՝ եւ որպէս ծուխ լնուն զիւելապատակն. եւ այնպէս ուղեղ գլխոյն շամանդադեալ, իմանալ ոչ կարէ: Դարձեալ՝ տեսանեմք եւս՝ զի յընդունիլ կերակրոյն, բոլորովին շերմութիւնն ի ներքս ի մարմնին հաւաքի. ապա պահք գոլով ստամոքսացն, յամենայն մասունս մարմնոյ սփռի: Որ ոչ այլ ինչ նշանակէ, քան թէ ի ձեռն պահոց յարդարի հոգեւոր սերն առ Աստուած. եւ առ ընկերն սփռի շերմութիւն սիրոյն: Եւ միտն վերամբարձեալ թեթեւանայ ի ձեռն պահոց. եւ զամենայն բարիս որ ի նմա, եւ զճշմարտութիւն ճանաչէ. եւ հեռանայ ի չարեաց եւ ի ստութեանց աշխարհի: Այս ամենայն օգտութիւնք ի պահոցն լինին. վասն այն որքան առաւել պահեմք, առաւել զօգտութիւն հոգեւոր ի մեզ ժողովեմք ի փառս Զրիստոսի Աստուծոյ մերոյ ամեն: Սակաւ ասացաւ վասն պահոց քարոզս. զի բազումքն ասացեալ եղեն յառաջին հատոր գրոցն: Ասացուք այժմ վասն ողորմութեան կարգաւ:

Նորին քարոզ վասն աղքատաց, ի Բանն Դաւթի: (Երանի որ խորիի զաղքատն եւ զտնանկն, յաւուր չարէ փրկէ զնա:) Սաղ. 40. 1: (Գլուխ. 72)

Նախ պարտէ գիտել թէ՛ զի՞նչ է զանազանութիւն աղքատին եւ

տնանկին: Եւ ապա թէ՛ (Երանի որ խորհի գնոսա:) Չի ասեն վարդապետք թէ՛ ի բազումս բաժանին աղքատաց դասք. եւ որպէս քահանայիցն եօթն են դասք. նոյնպէս եւ աղքատաց. զի եւ նոքա զօրութեամբ քահանայք են Աստուծոյ: Եւ են այսոքիկ: Առաջին աղքատ է՝ որ ի բնէ ծնողաց կարօտ է ընչից եւ պակաս. եւ տնանկ՝ որ ի մեծ տանէ անկեալ է եւ չքաւորեալ: Երկրորդ՝ որքն եւ այրին, որքն կարօտ է ծնողաց. եւ այրին անխնամածու: Երրորդ՝ հիւանդն եւ անդամալոյծն. որպէս կաղ, կոյր, եւ այլ ինչ աղքատացեալք, որք կարօտ են առողջութեան: Չորրորդ՝ բանտեալն եւ գերին եւ ստրուկն. որք կարօտ են ազատութեան: Բանտեալն է՝ որ ի զընտան եւ ի կոճեղս է եւ ի տանջանս: Եւ գերին՝ յոչ կամայ ի ծառայութիւն վարեալ. եւ ստրուկն է՝ որ ոչ է գերեալ սրով. եւ ոչ գնեալ. եւ ոչ վարձեալ. այլ միշտ ծառայ է. այսոքիկ ողորմելիք են: Զինգերրորդ՝ աւետարան՝ պանտուխտն՝ նշդեհն՝ եկն՝ եւ այլն. որք կարօտ են յարկի եւ հայրենեաց. եւ քաղցր խօսից եւ գթոց: Օտար է հիւրն. որ ժողովիլոյ եւ յարկի է կարօտ. ըստ այնմ, (օտար էի եւ ժողովեցիք զիս:) Պանտուխտն՝ որ եկեալ է յայլ գաւառէ ի մեջ մեր. եւ կարօտ է տան եւ ժառանգութեան եւ այլոց: Իսկ նշդեհն է՝ որ կամաւ թողեալ է զագգն իւր եւ հայրենիս. եւ յօտարութիւն շրջի. անինչ անօք եւ անուրեք. նմանեալ որդւոյն Աստուծոյ: Իսկ եկն՝ որ եկեալ յարեալ է ի մեզ. եւ կարօտ է հաւատոց եւ բարեաց գործոց. իրատու եւ ուսման. որոց պարտ է ողորմիլ առաւել եւ տալ զպիտոյնս: Վեցերորդ՝ այնոքիկ որք քաղց են եւ ծարաւ. եւ կարօտ են բնական պիտոյից. թեպէտ ոչ են օտար եւ հիւանդ եւ ոչ ի բանտի եւ ոչ որք եւ ոչ աղքատ. այլ քաղցեալ եւ ծարաւի են. պարտ է զպէտս նոցա լնուլ ըստ հրամանի փրկչին. (զքաղցն կերակրել. զծարաւն արբուցանել:) Եւ վեցերորդք սոքա ի կարգ աղքատաց՝ որք չմարդամոյրք կոչին: Իսկ եօթներորդ՝ մեռեալքն մարմնով. որոց պարտ է ողորմելի եւ թաղել գնոսա ըստ պիտոյից իւրեանց. իսկ այս վերջինս՝ կարի դառն եւ ողորմելի է: Չի որ կենդանի աղքատն է եւ կարօտեալ՝ թերեւս շրջի եւ ինդրէ եւ գտանէ զպէտս: Իսկ մեռեալն՝ ամենեւիմբ ողորմելի է. զի ոչ ունի զոք մերձակայ եւ ոչ զգայարանս որով ինդրէ. եւ որպէս պիտոյ է ի կենդանութեանն՝ նոյնպէս եւ ի մահուն: Եթէ ոք նոցա օգնական լինի, մեծ վարձս առնու: Ոմանք արտասուօք. ոմանք բանիւ Աստուած ողորմի ասելով. կամ տանիլ ի գերեզմանս եւ թաղել ըստ օրինաց: Այս եօթն տեսակք են աղքատաց. եւ սոքա են ողորմելիք. որք հասարակ անուամբ աղքատք կոչին. այսինքն, ի յաղխեաց եւ ի յնչից հատեալ. զի աղխն՝ ինչն եւ ստացուծքն են մարդոյն. եւ կամ աղքատ՝ այսինքն, յաղեաց եւ ի գթոց հատեալ. զի սոքա մարդկան ատելիք եղեալ. եւ սիրելիք միայն Աստուծոյ եւ աստուածասիրացն. որք վասն Աստուծոյ սիրեն. ըստ այնմ, (որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ:) Արդ՝ սոքա զօրութեամբ քահանայք կոչին Աստուծոյ որպէս ասացաք: Նախ ըստ եօթն դասուց. զի որպէս քահանայիցն են դասք բաժանեալք. նոյնպէս եւ սոքա յեօթն բաժանին. թեպէտ բազում են ըստ իւրաքանչիւրոցն: Երկրորդ՝ ըստ նմանութեան. որպէս քահանայից բաժին Աստուծոյ է. եւ զԱստուծոյ բաժինն ստացան. նոյնպէս եւ աղքատքն յերկրէ չունին. այլ զԱստուծոյ բաժինն ստանան եւ կերակրին. զի նա է հայր որդոց. եւ դատաւոր այրեաց. ըստ այնմ, (ի քեզ թողեալ է աղքատն. եւ որ բոյն դու ես օգնական:) Երրորդ՝ զի զօրութեամբ են քահանայք եւ ոչ ներգործութեամբ. այսինքն. զի որպէս քահանայք զինչս մեր նուիրեն

Աստուծոյ. եւ միջնոցդ հաշտութեան լինին. նոյնպէս եւ աղքատքն հաշտեցուցանեն զԱստուած ընդ մեզ: Այլ զի քահանայն իշխանութեամբ թողու զմեղս մեր. եւ դեմ յանդիման խօսի ընդ Աստուած. այլ նոքա աղաչանօք եւ հոլովական խնդրեն յԱստուած ասելով. Աստուած ողորմի նոցա, եւ այլն: Յաղագս այնորիկ ի յօրէնսն Մովսէսի հրամայեաց Աստուած յերկրորդ ամին՝ կրկին տասանորդ տալ. զմին քահանայիցն դէտացոց. եւ զմին օտարին՝ որ բոյն՝ եւ այրւոյն. զոր յիշէ տուրիթ թէ՛ հանապազ կրկին տասանորդս ետու. զմին քահանայից, եւ զմիւսն աղքատաց: Այլեւ օրէս եդ Աստուած թէ՛ զայգի քո մի առնէր ճռաքաղ. եւ զմնացեալ որոյն ի յարտին՝ մի հնձեր. զի զայն ինամքն Աստուծոյ ծածկեաց ի քէն, զի աղքատն տեսեալ ուրախացի. եւ յետոյ ցուցանէ եւ փորձէ զքեզ. թէ պահե՞ս զպատւիրանն Աստուծոյ թէ ոչ: Թեպէտ ըստ մտաց նշանակէ արտ եւ այգին զժողովուրն, զոր չէ պարտ իշխանաց ճռաքաղ առնել եւ զամենայն ինչսն զրկել. ըստ այնմ, (հարկահանք ձեր ճռաքաղ առնեն զայգի իմ եւ զրկեն:) եւ թէ՛ (զրկեալն ի ձէնջ աղաղակէ. եւ բողոք հնձողացն եհաս յականջս Տեառն զօրութեանց:) Թեպէտ վասն աղքատաց եւ զրկողաց ասէ. այլ առ տեղեան զայն նշանակէ: Չի ի հունձս արտին՝ երեք օրէս եդ: Մին՝ որ զառաւելն որ գլուխն է արտին՝ մի հնձեր. այլ աղքատին թող: եւ մին՝ թէ սրպիկի տակ մի՛ հնձեր՝ որ մանր հասկն աղքատին մնայ: եւ երրորդն՝ թէ զանկեալ հասկն ի վեր մի առնուր. այն հասկաքաղին է բաժին. եթէ հասկաքաղ չլինի, թռչունք եւ անասունք ուտեն ի քո վաստակոցն. զի եւ նոքա Աստուծոյ ստեղծուածք են. օրէնքն զնոսա եւս ինամէ. որպէս այն որ ասէ. (Մի կապեցես զցռուկ եգին կալօտոյ.) զի յիւր վաստակոցն վայելեցէ. թեպէտ առաքեալն մեկնէ վասն քարոզողաց որ ի յաշակերտացն կերակրեսցին. այլ առ տեղեան վասն անասնոց ասէ ինամել զնոսա. որպէս եւ Սողոմօն ասէ. (այր արդար՝ ողորմի գրաստու իւրոյ:) եւ վասն չորս պատճառի՝ պարտ է ինամել զանասունս: Մին՝ զի ստեղծուածք են Աստուծոյ. վասն նոցա ստեղծողին՝ պարտ է ինամել զնոսա. զի ոչ կորուսանին վարձքն. ըստ Սողոմօնի՝ (առաքեա զհաց քո ի վերայ ջրոյ. եւ ի ժամանակի գտցես զնա.) այն է՛ յորժամ ձկունք ուտեն, Աստուած տայ զվարձսն: Երկրորդ՝ որ մեր ծառայք են աշխատօղք ի լուծ, ի բեռն, ի կիթն, եւ յայլն. պարտ է ինամել զնոսա: Երրորդ՝ զի հրեշտակք մեզ են պահապան. որպէս մեք անասնոցն. վասն այն պարտ է ինամել զնոսա՝ զի եւ հրեշտակք զմեզ պահեսցեն եւ ինամեսցեն: Չորրորդն այս է՝ զի եւ անասունքն բաժանակից են մեր. զի այս տեղիքս յորում մեք պանտխտիմք, նոցա է բնական. եւ մեք հաւասարեցաք նոցա եւ եկաք աստ. ըստ այնմ, (մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց անբանից եւ նմանեցաւ նոցա:) եւ մին այս՝ որ բաժանակից արար Աստուած ասելով Ադամայ. (մենայն սերմանք եւ ամենայն պտուղք դալարի՛ ձեզ լիցի ի կերակուր. եւ անասնոց եւ զազանաց երկրի:) Վասն այն ընդ մեզ ի պատերազմ են հանապազ. զիւրեանց բաժինն ինդրեն. որպէս թռչունք եւ վայրիք՝ եւ կինճ եւ արջ, եւ այլք: եւ ոչ միայն զնոսա ինամէ, այլեւ զբոյսս եւ զտունկս ասելով. (զպտղաբեր ծառս մի հատցես. այլ զպտուղն կեր. եւ զայգի քո մի վարեսցես այլ եւ այլ.) թեպէտ մեկնութիւնն այն է, որ այգի զկինն նշանակէ. ըստ այնմ, (կին քո որպէս այգի վայելուչ յանկիւնս տան քոյ.) եւ մի բնական եւ անբնական ճանապարհաւ ընթանալ: Այլեւ հրամայէ ի յղի կանայս մի մտանել. զի մի աւերեսցի յղացեալ սաղմն. այս մեկնութեամբ

Է: Այլ առ տեղեան զայն ասէ թէ՛ մի անգամ զայգին վարել. եւ մի կրկնել. զի արմատն նոր բուսեալ մի հատցի. եւ թէ այլ ինչ սերմանք իցեն բուսեալ: Իսկ պտղաբեր ծառն՝ օրինակ է բարեգործաց. եւ անպտուղն չարաց. որպէս Տէր ասէ. (ամենայն ծառ որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի.) յայտ է թէ պտղաբերն ոչ հատանի: Եւ տապարն հատանօղ՝ տարածամ մահն է. որ յաստի կենացս հատանէ զմարմինն: Նոյնպէս արդար դատաստանն Աստուծոյ՝ հատանէ զհոգին ի յաւիտենից կենացն որ է ինքն Քրիստոս կեանք յաւիտենից եւ արմատ անմահութեան. եւ արկանէ ի հուրն անշէջ եւ այրի: Ահա եղբարք՝ այս է չարագործացն բաժին. վասն այնորիկ չարագործք եւ անիրաւք եւ մեղաւորք՝ շուտով կորնչին. որպէս ասէ մարգարէն. (չարք վաղվաղակի սատակեացին:) Իսկ (արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեացին. եւ որպէս զմայրսն լիբանանու բազումք եղիցին. եւ տնկեալք եղիցին ի տան Տեառն:) Չայս վասն այն յիշեցի եւ յերկարեցի՝ որ գիտէք թէ մարդոյն պտուղն ողորմութիւնն է հանապազ: Եւ թէ բուսոց եւ տնկոց՝ եւ անասնոց եւ գազանաց եւ թռչնոց ողորմիլ պարտ է, քանի՞ առաւել մարդկան որ պատկերք են Աստուծոյ առ հասարակ: Եւ որպէս Աստուած զամենեսեան յիւր պատկերն ստեղծեաց. զայր եւ զկին՝ զհրեայս եւ զհեթանոսս. ըստ այնմ որ ասէ. (արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնոսա առ հասարակ:) Նոյնպէս դու զողորմութիւնն առ հասարակ արտպատկերին Աստուծոյ. եւ մի ընտրեր զարդար եւ զմեղաւոր. զհաւատացեալ եւ զանհաւատ: Չի հայրն Աբրահամ՝ հեծանոսաց եւ քանանացւոցն առնէր զողորմութիւն. զի այլ աստուածապաշտ ոչ էր ի յայն ժամանակին. եւ Աստուած ընկալաւ զայն: Նոյնպէս եւ դովտ սողոմացւոցն եւ գոմորացւոցն ողորմէր. եւ ընկալաւ Աստուած. զի Աբրահամ զԱստուած ետես. եւ դովտ զհրեշտակս. զի վասն սիրոյն Աստուծոյ առնէին, եւ ոչ վասն սիրոյ հեթանոսաց: Նոյնպէս եւ դու վասն սիրոյն Աստուծոյ արա առհասարակ զողորմութիւնն: Եւ թէ այլազգեաց ողորմիլ պարտ է, ապա առաւել Քրիստոնէից. որք արեամբ զնեալ ծառայք են Քրիստոս. եւ ծնունդք աւագանի նորա. եւ ճաշակօղք մարմնոյ եւ արեանն սրբոյ. զի զոր ինչ առնեն քրիստոնէից՝ վասն Քրիստոս առնեն. ըստ այնմ, (որ արբուցանէ բաժակ մի ջուր ցուրտ յանուն իմ թէ դուք Քրիստոս եք, ոչ կորուսցէ զվարձս իւր:) Եւ թէ ամենայն քրիստոնէից պարտ է ողորմիլ՝ ապա առաւել քահանայից՝ որք են քրիստնեայք, եւ քրիստոնէից առաջնորդք, եւ Քրիստոսի փոխանորդք. եւ մեղաց եւ յանցանաց քոց քաւիչ եւ բարեխօս առ Քրիստոս, եւ միջնորդ հաշտութեան. վասն որոյ ասէ. (որ զձեզ ընդունի՝ զիս ընդունի:) Ապա թէ քահանային ողորմելի է որ հարկիւ առնու, ապա առաւել քրիստոնեայ աղքատին՝ որ պատկեր է Քրիստոսի. ոչ միայն զի մարդ է եւ հաւատացեալ Քրիստոսի. այլ զի աղքատութեամբ պատկեր է Քրիստոսի. զի Քրիստոս եկն յաշխարհս օտարական. ըստ այնմ, (յիւրսն եկն՝ եւ իւրքն զնա ոչ ընկալան. եւ որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ:) Չի նա եկն յերկնից ի յերկիր հիւր մարդկան. վասն որոյ պատկեր է Քրիստոսի եւ ընդունելի է: Այլեւ աղքատ եւ տնանկ շրջէր. զի աշակերտքն փշրէին հասկ եւ ուտէին բոկ եւ հետիոտ. որ նշանակէ զաղքատութիւն: Այլեւ (որդի մարդոյ ոչ ունի տեղի ուր դիցէ զգլուխ իւր. եւ արտաքոյ ի լերինն ձիթենեաց ազաներ:) Եւ նա որ մեծատունն էր եւ Տէր ամենայն ստացուածոց եւ հանգիստ աշխատելոց՝ քաղցր եւ ծարաւ եւ

վաստակեալ նստեր ի ճանապարհին. եւ աղքատ եւ տնանկ շրջեր. եւ երանեաց զաղքատս ասելով. (երանի աղքատաց հոգւով՝ զի ևոցա է արքայութիւնն երկնից:) Մին՝ զի դու ցանկաս աղքատութեան կենացն. եւ համբերես սովի, ծարաւի, մերկութեան, տնանկութեան, եւ այլոցն ի Քրիստոսէ ուսեալ: Եւ երկրորդ՝ զի զաղքատն եւ զտնանկն ընդունիցիս իբրեւ զՔրիստոս. եւ զօրինչ առնես աղքատին՝ Քրիստոսի առնես. ըստ այնմ, (որ արարիք միում ի փոքրկանց՝ ինձ արարիք:) Եւ թէ սոցա աղքատացս ողորմելի է, ապա առաւել որք են աղքատք եւ ծերք եւ տկարք. կաղ եւ կոյր. որք եւ այրի. անտեր եւ անխնամածու. որք ոչ կարեն շրջիլ. եւ ոչ տեսանել եւ ոչ խնդրել. ողորմիլ պարտ է ևոցա: Եւ առաւել քան զսոսա ողորմելի է օտարն եւ պանտուխտն. որք են աղքատք եւ անծանօթք. անտուն եւ անտեղի: Եւ առաւել քան զսոսա՝ քաղցն եւ ծերն է ողորմելի. որ գործել ոչ գիտէ. եւ մուրանալ ամաչէ: Վասն այն պարտ է տալ այնպիսեաց առանց քննութեան: Եւ ոչ տալ եւ անարգել թէ, գնա բան արա եւ աշխատեաց. կամ թէ դու ինչս ունիս. կամ յերէկ տուի քանի՞ գաս. մի զայդ ասեր. զի կորուսանես զողորմութիւնն: Մի քննէր զնա, թէ ունի՞ եւ թէ ոչ. թէ արժա՞ն է եւ թէ ոչ. զի այս քննելոյ չէ ժամանակ, այլ ողորմելոյ: Եւ ուսիր յԱստուած զողորմութիւնն. զի առ հասարակ է ողորմած. եւ չարաց եւ բարեաց տայ անձրեւ. արդարոց եւ մեղաւորաց ծագէ արեւ. եւ մի լինիր նախ դառնացեալ եւ երես հատեալ: Դու յերէկ կերեր, այսօր չե՞ս ուտեր. կամ թէ մարմինդ հանապազ ուտե՞ հոգւոյդ չպիտի՞ հանապազ կերակուր: Եւ թէ ևոքա քաւիչ են մեղաց քոց. մին մեղք էր քո, այսօր չունի՞ս մեղս որ ողորմիս: Կամ մի անգամ բարեխօսեն քեզ, եւ այլ ո՞չ. զայսպիսիս մի ածեր զմտաւ: Եւ եւս առաւել ողորմելի է գերին եւ ստրուկն եւ բանտեալն: Չի թերես այլ աղքատք ըստ իւրեանց կամաց շրջին. եւ յիւրեանց հաւատոցն են. եւ զբարիս գործեն. այլ գերին եւ բանտարկեալն ի կամաց ելեալ՝ ի հաւատոց եւ ի բարի գործոց ի մեղս անկեալ. վասն այն զնոսա ազատելն եւ օգնելն մեծ վարձս ունի: Ոչ միայն վասն մարմնոյն, այլեւ վասն հոգւոյ ևոցա եւ հաւատոյն: Եւ որպէս Քրիստոս որ ազատեաց զհոգիս ևոցա ի դժոխոց, եւ զմարմինն ի չար ծառայութենէ դիւաց եւ մեղաց: Նոյնպէս նա որ ազատէ զբանտեալն եւ զստրուկն եւ թափէ զգերին. զի վասն այն ասեն թէ՝ քան զամենայն վարձս՝ մեծ է գերւոյն թափելն. զի նման Քրիստոսի լինին ազատողքն գերաց: Չի մեք էաք գերի. եւ Քրիստոս ազատեաց զմեզ. պարտիմք մեք զքրիստոնեայ գերին ի ծառայութենէ այլազգեաց ազատել: Եւ քրիստոնեայ մարդոյ՝ քրիստոնեայ գերի պահել չկայ. զի քրիստոնեայն ծառայ Քրիստոսի է, եւ ոչ մարդոյ. եւ Քրիստոսի ծառայն՝ ազատ է. այլ պարտ է գնել եւ ազատել, եւ Քրիստոսի նմանիլ: Եւ ի վերայ այսոցիկ՝ մեռեալն քան զամենայն ողորմելի է ի յանճարն գնացեալ. ոչ խօսի, եւ ոչ խնդրէ, եւ ոչ գտանէ. այլ միայն առաջի քոյ անկեալ կայ ողորմելի դիմօք: Եւ որպէս զՔրիստոս պատեցին եւ եղին ի գերեզմանի. նոյնպէս ամենայն մեռելոյ պարտ է առնել. եւ ի Քրիստոսէ վարձս ընդունիլ: Մանաւանդ՝ զի համարձակ այսօր առաջի Քրիստոսի երթայ. եւ վասն քո բարեխօսէ: Եւ ի միտ ած զոր դու նմա առնես մարմնով՝ նա քեզ հատուցանէ հոգւով. փոխանակ հացի. զանմահ կերակուրն եւ զմպելին. այլեւ պատանւոյն վասն. զլուսեղէն հանդերձն Ադանիս. եւ վասն դնելոյն ի հանգիստ գերեզմանին, զհանգիստն յաւիտենից: Եւ վասն արտասուացն քոց՝ զանտրտում

ուրախութիւնն եւ զմշտաւետ ցնծութիւնն, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Դարձեալ քարոզ վասն ողորմութեան. ի Բան առակին: (Տուր բաժին եւ Բանց. այլեւ ութնից ասէ սաղմօսն:) Ժողովօղ. 11. 2: (Գլուխ. ԴԵ)

Ասէն վարդապետք եթէ՝ զամենայն ինչ զոր տուեալ է Աստուած մարդոյս՝ եթէ հոգի եւ թէ մարմին, միտս եւ բան եւ զգայարանս. կեանս, իմաստութիւն, ինչս եւ ստացուածս, եւ զայլն ամենայն զորս Աստուած պարգեւեալ է մարդոյս, յամենայն իւրն բաժին խնդրէ: Չի բաժին խնդրէ ի հոգւոյն եւ ի մարմնոյն զբարի գործս. ի մտացն զԱստուած իմանալ եւ հաւատալ. ի բանից զաղօթելն. ի կենաց զժամ աղօթիցն. յիմաստութեանցն զսերն: Նոյնպէս յիւրաքանչիւր զգայութեանց մարմնոյս՝ բաժին է յաչացն տեսանել զարարածս եւ իմանալ զարարիչն սոցա, կամ արտասուել. յականջացն լսել զհարամանս Աստուծոյ. բերանով խօսին զբարին. զձեռս համբառնալ առ Աստուած յերկինս. ոտիւք ընթանալ ի տունս սրբութեան: Այսպէս եւ ինչս եւ ստացուածս է տուեալ. եւ ի սոցանէ զբաժինն խնդրէ ի մէջ. որպէս հրամայեաց ի յօրէնսն. (տալ պտուղ եւ երախայրիս. ի կալոյ եւ ի հնձանոյ. եւ տասանորդս յամենայն ընչից. եւ ի կենդանեաց բաժին տալ Աստուծոյ:) Եւ ոչ միայն այս, այլեւ ի զաւակաց եւ ի ծննդոցն՝ զառաջին ծնունդն հրամայեաց տալ բաժին Աստուծոյ: Եւ դու տես զմեծ գթութիւն արարչին. որ զբոլորն զամենայն ինքն ետ մեզ. եւ դարձեալ ի մէջ զմասնաւորն խնդրէ: Եւ այս վասն երեք պատճառի: Նախզի զմեր սերն առ ինքն ձգէ. զի ասէն յառակս թէ՝ (սրտին սերն՝ ի ձեռաց տուրսն երեւի:) Երկրորդ՝ զի ինչքն մեր սրբեսցին. զի յամենայն որ մասնաւորն Աստուծոյ բաժին լինի, բոլորն սրբի եւ հալալ լինի մեզ. եւ ինչն այն յորմէ Աստուծոյ բաժին չկայ, պղծեալ է եւ հարամ մեզ: Երրորդ կամի որ զմարմնաւոր ինչս մեր առնու որ անցաւոր է եւ ապականացու, եւ փոխարէն տայ մեզ զանանց եւ զանապական կեանս. այս է՝ զարքայութիւն երկրնից: Վասն այն խրատէ զմեզ իմաստունն: (Տուր բաժին եօթանց. այնեւ ութնից:) Եւ ոչ թէ զոր ինչ տամք Աստուծոյ կարօտ է ընչից մերոց, եւ կամ ինքն վայելէ. զի ասէ մարգարէն. (բարիք իմ քեզ չեն ինչ պիտոյ:) Եւ ահա յայտին է՝ որ զբոլորն նա ետ մեզ. մասնաւորին ընդէ՞ր է կարօտ: Եւ այլ եւս յայտնի. զոր ինչ տամք յանուն Աստուծոյ՝ ոչ թէ նա վայելէ, այլ դարձեալ մեք. զի յորժամ զպատարագն նուիրեմք Աստուծոյ, մեք կերակրիմք: Եւ թէ զմերկն զգեցուցանեմք, թէ կերակուր աղքատաց բաշխեմք, դարձեալ մեք վայելեմք եւ ոչ նա. որպէս ասէ մարգարէին. (ոչ ուտեմ ես զմիս զուարակաց քոց եւ զարիւն նոխազաց քոց ես ոչ ըմպեմ:) Այլ այսու զհաճոյսն Աստուծոյ առնեմք, յորժամ կատարեմք զհրամանս նորա. եւ դարձեալ մեզ լինի շահն եւ օգուտն: Չի զոր օրինակ՝ եթէ ոք ի հուր մերձենայ եւ ջերմանայ, կամ զլոյսն տեսանէ եւ լուսաւորի, ոչ թէ հրոյն կամ լուսոյն եղել շահն, այլ մեզ է օգուտն որք մերձ եղաք նոցա: Եւ թէ ոք զաչսն խփէ, ինքն ի խաւարի մնայ. եւ որ հեռանայ ի հրոյն՝ ինքն ցրտանայ: Նոյնպէս թէ մատուցանեմք Աստուծոյ նուէրս, պատարագս, աղօթս, գոհութիւն, եւ զայլն, մեզ լինի օգուտն եւ փրկութիւնն. եւ թէ ոչ մատուցանեմք, մեզ լինի վնաս եւ պակասութիւն: Ապա յայտ է՝ յորժամ զբարիս գործեմք, շահն մեր է. եւ թէ ոչ գործեմք, զէն եւ

պակասութիւն մեզ է վասն որոյ ուսուցանէ իմաստունն: (Տուք բաժին եօթանց. այլեւ ութնից:)

Եւ թէպէտ բազում է եօթանց տեսութիւնն, այլ առ ժամս զսակաւն ասացուք: Նախգի՛ եօթն թիւն՝ սուրբ է եւ նուիրեալ Աստուծոյ. վասն այն հրամայեաց Աստուած ի յօրէնսն (զվեց օրն գործեսցես. եւ զեօթներորդ օրն՝ պահեսցես եւ հանգիցիս ի գործոց:): Եւ դարձեալ՝ (ի վեց օրն արար Աստուած զարարածս ամենայն, եւ յեօթն օրն՝ հանգեաւ յամենայն գործոց իւրոց.) զի Աստուած ոչ վաստակի եւ ոչ հանգչի որպէս մեք. այլ հանգչիլ ասի յեօթն օրն՝ սրբել եւ օրհնել զնա. զի գիտացես թէ, եօթն թիւն սուրբ է եւ նուեր Աստուծոյ: Երկրորդ՝ զի իմաստունքն արտաքինք՝ զեօթն թիւն կոյս ասացին եւ պատուեցին. զի շնորհաւոր է ասեն. կոյս վասն այն է՝ որ ի ներքոյ տասնեկին ոչ ինքն զայլս ծնանի, եւ ոչ ինքն յայնմէ ծնանի. որպէս վեցն ծնանի ի յերկուց երից. եւ ութն ի չորից. այսպէս եւ այլքն: Իսկ նա՛ կոյս է եւ սուրբ. այլեւ շնորհաւոր է. զի եօթն ամսայ ծնեալ մանուկն ապրի. եւ ի շնորհաց լինի. եւ յեօթն ամիսն ատամն բուսանի տղայի. եւ յեօթն ամն փոխէ դարձեալ: Եւ յեօթն ամիսն՝ ուսումն կարէ ուսանիլ. վասն այսորիկ պատուելի եւ շնորհաւոր է եօթն թիւն յիմասնոց: Երրորդ՝ զի գոյութիւնս մեր՝ յեօթանց է. այսինքն, զի մարմինն է ի չորս տարերց ի հողոյ, ի ջրոյ, յօդոյ եւ ի հրոյ: Իսկ հոգին՝ երեք մասն ունի. բան, ցասումն, եւ ցանկութիւն. որ լինի եօթն մասն. ուստի գոյացաւ բնութիւն մարդոյս: Այլեւ ունիմք եօթն զօրութիւն եւ առաքինութիւն ի հոգիս եւ ի մարմինս մեր. որ է հաւատ, յոյս, եւ սէր առ Աստուած. այսոքիկ Աստուածային առաքինութիւն են եւ գերագոյնք: Այլեւ ունիմք մարդկային առաքինութիւնս. զխոհեմութիւնն, զարիութիւնն, զողջախոհութիւն, եւ զարդարութիւնն: Այլեւ եօթն են մոլութիւնք եւ չարութեան գործք գլխաւորք. եւ այսպէս թշնամին մարդկան այսոքիւք կորուսանէ զմեզ. այսինքն է, ամբարտաւանութիւն. նախանձն. բարկութիւնն. ծուլութիւնն. ագահութիւնն. որկորստութիւնն. եւ բղջախոհութիւնն: Այլեւ ընդդէմ այսց եօթն մոլութեանցս՝ ընդունակ լինիմք եօթն շնորհաց եւ խորհրդոյ եկեղեցւոյ: Որոց առաջինն է մկրտութիւնն, որ ի հայր եւ յորդի եւ ի հոգին սուրբ մկրտիմք: Եւ Դրոշմ՝ որով օժանիմք եւ արիանամք: Պատարագն՝ որով հաղորդիմք ճաշակելով զՔրիստոս: Ապաշխարութիւնն եւ խոստովանութիւնն՝ որովք քաւիմք ի մեղաց: Օծումն վերջին: Կարգ քահանայութեան: Եւ Պսակն ամուսութեան: Եւ այլ բազում է առ մեզ եօթեան խորհուրդն: Չորրորդ՝ զի պատուելի էր եօթն թիւն եւ ի հնումն ի մեջ Իսրայելի. զի եօթն օր ելաներ բորոտն արտաքոյ բանակին: Չեօթն օր բաղարջ ուտէին ի գատկին: Եւ յեօթն օր տօն կատարէին. եօթն եօթն բերէին զպատարագն ի գլխաւոր տօնսն իւրեանց: Եւ եօթնից եօթն էր տօն յիսներեկի նոցա. զի որպէս յեօթն աւուրցն մինն սուրբ էր. եւ յեօթն շաբաթուց մին շաբաթն. եւ յէ ամսոց մին ամիսն. եւ յեօթն ամաց մին ամն. եւ յեօթնից եօթն ամն՝ որ է յիսուն ամ, յոքելեան էր ամ թողութեան նոցա: Եւ այսպէս բազում է եօթանց խորհուրդն զոր համառօտեմ: Այլ այժմ որ ասէ. (տուր բաժին եօթանց. այլեւ ութնից. զայն ինչ մտածէ, որպէս ասէ աստուածաբանն Գրիգոր եթէ՛ եօթն թիւն՝ զեօթն դար կենցաղոյս նշանակէ: Նախ՝ յեօթն օր արար Աստուած զաշխարհս. եւ յեօթն դարուն վախճան ածէ արարելոցս. փոխէ յայլ իմն գերագոյն բնութիւն. ի յապականութենէ յանապականութիւն. ի ժամանակէս ի յաւիտենականն: Երկրորդ՝ յայտ է

յաւուրց շաբաթուն՝ որ եօթամբ վճարի. նոյնպէս եւ ժամանակեալ կենցաղս՝
 եօթամբ կատարի: Իսկ որ յաւիտենական կեանքն է՝ ութներորդ դարն է. որ
 օր է առանց երեկոյի, եւ առանց փոփոխման. վասն նորա ասէ: (Տուք բաժինս
 եօթանց կենցաղոյս. այլեւ ութնից հանդերձելոց:) Եւ գայս ասէ վասն կրկին
 պատճառի: Նախզի՝ մի միայն գայս կեանս կարծեսցես՝ որ եօթամբ վճարի
 եւ անցանէ. այլեւ ի միտ ածցես զութներորդ օրն՝ որ անանց է եւ մնացական:
 Երկրորդ՝ զի յայս կենացս որ ի ներս եմք, այն հանդերձելոյն բաժին
 տայցեմք զբարի գոցծս մեր: Եւ թէ ո՞րպէս ի կենացս յայցանէ բաժին
 տանիմք ի հանդերձեալն՝ իմաստունն սողմօժն երեք բանիւք խրատ տայ
 մեզ եւ ուսուցանէ: Նախ ասէ. (ընդ առաւօտս սերմանեա գսերմն քո. եւ ընդ
 երեկս՝ մի լքցին ձեռքս քո:) Սերմն զբարի գործն ասէ. այսինքն, զբարեպաշտ
 հաւատն. զպահսն. զաղօթսն. զսրբութիւն սրտի եւ մարմնոյ. եւ
 զողորմութիւն աղքատաց: Սոքա են սերմն բարի՝ զոր աստ սերմանեմք. եւ ի
 հանդերձեալն հնձեմք. աստ ամբարեմք, եւ անդ վայելեմք: Այլ որ ասէ թէ՝
 (ընդ առաւօտս եւ ընդ երեկոյս սերմանեա:) Առաւօտն նշանակէ
 զմանկութեան կեանս մեր, որ նոր յաշխարհ եկաք. եւ երեկոյն զծերութիւնն,
 որ երեկոյ է կենացն, եւ մերձ ի գերեզմանն ննջելոյ: Չայն ասէ թէ ի
 տղայութեան եւ ի ծերութեան, գիտութեամբ եւ անգիտութեամբ, կամայ եւ
 ակամայ, յառողջութեան եւ ի հիւանդութեան, թէ ուրախ ես թէ տրտում, թէ
 աղքատ ես եւ թէ հարուստ եւ այլն, հանապազ զկամսդ ի բարիս գործել կալ.
 ի տղայութենէ մինչ ի ծերութիւնն եւ ի մահն. եւ այն է առաւել: Չի ամենայն
 գործոց չափ՝ չորս բաժին ունի: Առաջին՝ ոմանք ոչ գործեն զբարի. ոչ ի
 տղայութեան, եւ ոչ ի ծերութեան. եւ են ամենեւին չարք: Եւ երկրորդ՝ ոմանք
 զբարիս գործեն ի տղայութեան եւ ի ծերութեան. եւ են ամենեւին բարի: Իսկ
 երկուքն միջակք են. ոմանք ի տղայութեան գործեն բարիս, եւ ի ծերութեան
 ոչ. այս չէ բարի. թէ վասն այն ի տղայութեան գործեն բարի, որ ի
 ծերութեանն չգործեն, այս չար է. (զի սկսեալ հոգւով, եւ դադարի մարմնով.
 որպէս առաքեալն նախատեաց զգաղատացիսն.) զի վերջին չարն՝ զառաջին
 բարին կորուսանէ: Իսկ թէ վասն այն գործեն զբարին ի տղայութեան, որ թէ
 ի տղայութեան մեռանին, այս բարի է: Իսկ ոմանք ի տղայութեան ոչ գործեն
 զբարիս. այլ ի ծերութեան. եւ այս միջակ է. չար է եւ բարի. թէ վասն այն ի
 տղայութեան ոչ գործեն զբարի, որ ի ծերութեանն գործեն, այս չար է. զի ոչ
 գիտէ մարդ թէ ի վաղիւն զինչ լինիցի նմն. այնպիսին զհողմն խտրէ, եւ
 զամպն դիտէ: Ոչ սերմանէ եւ ոչ հնձէ զբարին. զի որպէս ոչ գիտէ մարդ թէ,
 հողմն ուստի՞ գայ, կամ յո՞ երթայ. նոյնպէս ոչ գիտէ մարդ թէ զինչ լինելոց է
 նմա. բարի, թէ չար. հիւանդութիւն, թէ առողջութիւն. խռովութիւն, թէ
 խաղաղութիւն. կեանք, թէ մահ. վասն այն չէ պարտ զբարին յայս օրէ ի
 վաղն ձգել: Իսկ թէ վասն այնորիկ զբարին գործեն ի ծերութեան, որ ի մահ
 եւ ի գերեզման են մերձեալ, եւ զտղայութեան մեղսն կամին ապաշխարել,
 այս բարի. զի ասէ Աստուած մարգարէիւն. (յորս գտայց՝ ի նմին դատեցայց:)
 Այս առաջին խրատն որ ասէ. (ընդ առաւօտս սերմանեա գսերմն քո. եւ ընդ
 երեկոյս մի լքցին ձեռք քո:) Դարձեալ՝ առաւօտու սերմն՝ ասէ զգործնական
 առաքինութիւն: Նախզի՝ սկիզբն է գործոց բարեաց գործիականն եւ
 վարձկանականն: Եւ երկրորդ՝ զի ի լոյս տեսութեան մեր է. որպէս
 տեսանեմք զգործով բարին: Իսկ երեկոյ ասէ զտեսական առաքինութիւնն՝
 որ գիտութեան եւ հաւատոյ եւ սիրոյն է առ Աստուած: Նախզի՝ տեսականն

ծածուկ է ի մարդկանէ եւ անտես որպէս երեկոյ: Եւ երկրորդ՝ զի տեսականն գործնականին հանգիստ է եւ կատարումն. նոյնպէս եւ գործնականն ի տեսականն հանգչի եւ կատարի, զի գործնականն ի վարձկանականն հայի. եւ տէ Stenութիւն ի հմնարկէքն եկեղեցւոյ: (Գլուխ. ԸԿ)

Վեմ անշատ եւ անկոփ եղեալ ի հիմունս ի մէջ խորանին ի տեղոջ խորանին ի տեղոջ խորանի սեղանոյն՝ Է յօրինակ հոգեւոր վիմին. որ պատարագեցաւ ի գողգոթայ տեղոջ: Եւ երկոտասան անաչքարիքն՝ առաքեալքն որք ոչ էին կրթեալ մարդիկ հեշտութեամբ եւ ոչ խրատեալք օրինօք դպրութեան: Իսկ լուացեալ եւ օծեալ եւ եղեալ ի չորս անկիւնս վասն զի նախ մկրտութեամբ մաքրեցան. եւ հոգւով օծեցան եւ ապա եղէն հիմն կաթուղիկէ եկեղեցւոյ: Իսկ երկոտասան քարիւք հաստատեալ ի չորս կողմանս եկեղեցւոյն ի խորհուրդ մարգարէիցն: Ըստ խրատու իմաստուն ճարտարապետին: (Եթէ շինեալք ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից. եւ գլուխ անկեանն Զրիստոս:) Իսկ ի նաւակատիս եկեղեցւոյ՝ դնի սեղանն սուրբ ի մէջ խորանին. եւ եպիսկոպոսն քահանայիւք եւ սարկաւազօք առաջի բեմին. բայց ժողովուրդքն արաքոյ կան: Եւ սկսեալ եպիսկոպոսն: (Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ:) Եւ կարդացումն մարգարէ ութեանն՝ յ առաջ գուշակումն վասն եկեղեցւոյ: Իսկ դնելն ի խոստովանութիւնն պաղատանօք՝ այս մաղթանք հրեշտակաց, եւ խոստովանութիւնն մարգարէից. որք հեծեծանօք գուժս ողբոց եւ արտասուաց հեղութիւնն առաջի արարչական գթութեանց. որպէս յիւրաքանչիւրսն տեսանի: Վասն որոյ թագաւորն ամենակալ՝ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ. եւ փրկութիւն գերելոց արար խաչին: Այս է վեմն արտաքոյ հանել՝ գալն առ մեզ Զրիստոսի մարմնով խոնարհութեամբ: Եւ երեք սաղմոսն՝ երրորդութեանն խորհուրդ: Առաջին կցորդն (Լուր մեզ տեր՝) այս աղաչանք մարգարէիցն. որպէս ասէ՝ (վասն տառապանաց աղքատին եւ հեծութեան տնանկին այժմ յարեայց ասէ Տէր եւ այլն:) Երկրորդ կցորդն: (Եւ օգնեա մեզ Տէր.) այս որ յետ մարդանալոյն հայցէին օգնութիւն բնութեան անկելոյ. զոր շնորհեաց չարչարանօքն տէրունական: Երրորդ կցորդն: (Ալելուիայ:) Այս ընդ հոգեղէնսն բարեբանելն ազգ հողանիւթեայց զփրկագործն իւրեանց: Եւ երիցս երգել զերեք սաղմոսն ինն՝ ըստ ինն դասուց հրանիւթիցն: Իսկ ի փառս տալ ամենայն սաղմոսաց վերացուցանելն զսեղանն՝ այս Է՝ զի թեպէտ (զկերպարանս ծառայի վասն մեր Էառ. զամձն ունայնացեալ.) սակայն զաստուածագործ հրաշսն ցուցանէ մարմնով. զի զմշտնջենաւոր սպասաւորութիւնն մատուցանելն նմա զօրք սրբասացք: Սաղմոսն առաջին ԸԺԹ. (ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի:) Այս Է՝ զբազում աղէտս մարդկան արկանել առաջի հօր մարգարէիցն դասուց: Երկրորդն՝ (համբարձի զաչս իմ:) Այս առաջին որդւոյ մաղթել սպասաւորաց բանին: Երրորդ սաղմոսն. (ուրախ եղէ:) Այս գոհութիւն առ հոգին սուրբ՝ ծնիցելոցն ի հոգւոյն: Ալելուիայ՝ (Տէր ասեզ զՅիսուս հոգւովն սրբով:) Եւ սաղմոսն ԸԳԷ. (խոստովան եղեցուք երիցս ասելով:) Նախ մեղմ ձայնիւ. այս յառաջ նախահարքն առ հայր աղերս արկեալ՝ պատմելն զվտանգիցն ծանրութիւն: Իսկ ի մարդանալ բանին մինչեւ ի գալն միւսանգամ, աղաղակեն հաւատացեալք որդւոյ ազատ ձայնիւ: (Բայց մեզ Տէր զդուռն ողորմութեան առաջի նեղչաց մերոց:) Իսկ դարձեալ մեղմասացութեամբ մտանեն

յեկեղեցին ընդ սեղանոյ. այսօր հոգւով սրբով ծնեալ ժառանգք Աստուծոյ. յութներորդին ի վերջնումն ի վերին քաղաքն Յերուսաղէմն իմանալի: Եւ տեառնագրեալ խաչին զդուռն՝ ապա մտանէն. վասն զի խաչին եբաց մեզ գերկինս Քրիստոսի: Իսկ յեկեղեցին փոփի սաղմոսն: (Ուրախ եղէ. ալէլուիայ:) Այս առաջին լեալ վասն միանալոյ մեր ընդ հրեշտակս: Եւ զկնի օգնեա. եւ համբարձի. լուր մեզ. ի նեղութեան. վասն զի նախ մեք խաչին հաշտեցաք. եւ ապա Աստուած նոցա ծանոյց զտնտեսութեան խորհուրդն. որպէս գրէ խորագետն կիւիկեան տարսօնացին յեփեսացւոց տօմարին: (Արդ՝ յայտնի լիցի եկեղեցեացս բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ:) Եւ ըստ կատարմանն արտաքոյ՝ նոյնպէս եւ ի մէջ տաճարին կատարի: Եւ ապա առաջի բեմին սաղմոս ճԳ ի թիւ. (իբրեւ սիրելի են.) եւ ապա ձայնիւ զնոյնն: Դարձեալ ի թիւ երիցս. այս զբարձրութիւն մեր ընդ Քրիստոսի յայտնէ յաւուրն յետնումն. (հոգի իմ եւ մարմին իմ ցնծացէ առ Աստուած կենդանի:) Իսկ ի բեմն քահանայքն պայծառ գոչմամբ ասեն. ալէլուիայ, եւ զայլն: Այս է՝ կացուցանէ առաջի իւր զսուրբսն. (ահա հայր՝ զորս ետուր ինձ յաշխարհէ. զի քո են եւ իմ:) Եւ որպէս դրանն ճԺԷ սաղմոսն ի թիւ ասացաւ մի կցորդովն. նոյն օրինակ ՁԳ սաղմոսն ի մտիցն աստիճանաց երկու անգամ ի թիւ, եւ մի ձայնիւ նոյն խորհրդով: Իսկ երիցս ձայնեն ուժգին: (Սեղան քո Տեր զօրութեանց.) եւ հաստատի սեղանն: Այս անմարմնոցն երգ երից անձանցն, եւ միոյ բնութեանն արարչականի: Իսկ լուանալն եւ օժանելն՝ յայտնի զմարմինն Քրիստոսի հաւասարիլ երկրորդ միութեամբ: Խաչին տեառնագրէ. զի նովաւ արար սրբութիւն մեզ. եւ փառք սրբութեան քարոզի: Եւ խաչն ի մէջ սեղանոյն՝ նոյն ինքն չարչարեալ մարմնով: Երկոտասան խաչն ի վերայ սեղանոյն. որպէս երկոտասանքն ի վերնատանն: Եւ երկոտասանքն ի չորս դէմս սեղանոյն. եւ մարգարէքն հուպ հոգւովն եւ ոչ սպասաւորեալ մարմնոյ Տեառն: Իսկ խորանն՝ թէ նովաւ հոգեղինացն հաստատին: Իսկ տաճար՝ զի նովաւ նախ օժան առաջինքն՝ օժեալքն Յաբրահամք արդարքն: Իսկ արտաքոյ որք ի հեթանոսաց ի դառն արմատոյն պատուաստեցան յԱբրահամէ արդարքն Քրիստոսի հաւատացեալք, հաղորդեալք իւղոյն սրբութեան. ընդ որս եւ մեք հաղորդիցուք Քրիստոսի Յիսուսի Տերամբ մերով. որում փառք յաւիտենս ամեն:

Նորին քարոզ վասն եկեղեցւոյ. ի Բանն՝ (Սուրբ արար գյարկս Իւր Բարձրեալն:) Սող. 45. 4: (Գլուխ. ճԲ)

Ամենակարօղ Աստուած որոյ իմաստութեանն ոչ գոյ բաւ՝ իւրաքանչիւր սեռից ստեղծածոց՝ կազմեաց զանազան յարկբնակութեան. այսինքն, հրեշտակաց արար յարկ զհրեղէն երկինն: Իսկ բանսարկուին դժոխս ներքին: Եւ մարդկան զաշխարհս զայս: Ձկանց զծովն: Եւ թռչնոց զօդդ: Իսկ եօթն մոլորակաց՝ զեօթն երկինս: Իսկ զութներորդ որ է հաստատութիւնն՝ արար յարկ բնակութեան անմոլար աստեղացն: Վասն որոյ եւ պաշտած իսկ էր զի վասն ինքեան կազմեսցէ յարկ բնակութեան ըստ սրբութեան իւրում: Եւ արար Աստուած կրկին յարկ սրբութեան իւրոյ. ի յերկինս եւ ի յերկրի: Եւ ի յերկինս երկու են յարկ սուրբք: Մինն իմանալի, եւ մինն զգալի. զգալի որպէս հրեղէն երկինքն. եւ իմանալի որպէս կամք

հրեշտակացն եւ սրբոցն. որք են յարկք հոգեւորք հանգստեան Աստուծոյ. որպէս ասէ մարգարէն. (Տէր գերկինս պատրաստեաց աթոռ իւր եւ այլն:) Նոյնպէս ի յերկրի են յարկք կրկին. այսիքն, հոգեւոր եւ մարմնաւոր. զի յարկ հոգեւոր են ժողովուրդք հաւատացելոց. եւ յարկ մարմնաւոր շինեալ եկեղեցիք: Եւ երկոցունցն պարտ է լինիլ սուրբ. վասն այն ասէ մարգարէն: (Սուրբ արար գյարկս իւր բարձրացեալն:) Արդ՝ իսկիզբն շինուածոյ եկեղեցւոյս՝ հրամայեաց Աստուած անել Մովսիսի յանապատին Սինայ խորան վկայութեան. զի լիցի տուն Աստուծոյ. եւ տեղի աղօթից նոցա եւ պատարագաց: Եւ Մովսէս կազմեաց հրաշալի խորան ի գանազան նիւթոց տասն փեղկեան, եւ եռայարկ ձեւով որպէս հրամայեաց Աստուած: Եւ աստ երեք հարցումն լինի: Նախ թէ՛ վասն Է՞ր հրամայեաց Աստուած խորան շինել: Երկրորդ՝ թէ զի՞նչ նշանակէր տասն փեղկն եւ չորս որակ նիւթոցն: Երրորդ՝ թէ զի՞նչ ցուցանէր եռայարկեան ձեւ խորանին: Եկեցուք յառաջին հարցումն թէ՛ վասն Է՞ր հրամայեաց Աստուած այնպէս գեղեցիկ խորան շինել: Ասէն վարդապետք վասն տասն պատճառի: Նախ հրամայեաց Աստուած գրել զլինելութիւն աշխարհի: Եւ ձեւացոյց ի միտսն Մովսէսի՝ զի մի մոռացի գհանգամանս. վասն որոյ զգալի խորան հրամայէ կազմել: Երկրորդ՝ զորպիսութիւն եւ զձեւ աշխարհիս ցուցանէր ի խորանն եռայարկեան. ի չորից նիւթոց՝ փոխանակ չորս տարեաց յանապական եւ յապականացու բնակչաց: Երրորդ՝ կամեցաւ զմարդն պատկեր իւր՝ ստեղծման աշխարհի գործակից եւ մասնակից լինիլ. վասն որոյ հրամայեաց ի նոցանէ անուլ զնիւթ կազմեզոյն: Չորրորդ՝ ինքն անկարօտ գուլով, ստեղծեաց զարարածս. (եւ բարձեալ կրէ զամենայն.) եւ նոյն ինքն հրամայէ խորան կազմել: Հինգերորդ՝ տղոյ էր ժողովուրդն. եւ զուարճանայր ի տեսութիւնն. վասն այն գանազան գունով զարդարեաց: Վեցերորդ՝ սովոր էին զտաճար կռոց զարդարել. վասն որոյ առաւել քան զնոսա զարդարէ զխորանն. Եօթներորդ՝ նոր իմն չնաշխարհիկ կազմեաց նոր ժողովրդեանն. եւ նոր օրինացն՝ իցէ նոր տաճար հռչակեալ ընդ ծով եւ ընդ ցամաք. որպէս պսակ եւ փառք արդարոցն է. (զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ.) նոյնպէս եւ սա ի զգալիսս՝ անհաս ի մտաց մարդկան: Ութներորդ՝ զի թէ թողցեն զվայելչութիւն խորանիս այս, եւ այլոց հետեւեցին, անպատասխանի լիցին ի պատուհասն, որպէս եթող ապերախտ ժողովուրդն. (եւ եառ զվրանն մողոքայ եւ զաստղն Յռեմփեայ) ի դատապարտութիւն ինքեան: Իններորդ՝ զի ի սմանէ լիէր Աստուած երելումն եւ աստուածախօսութիւն. որպէս նախ ի յերկնէ պարտ էր երկնազարդ լինիլ: Տասներորդ՝ օրինակ էր խորանի եկեղեցւոյ, զի նա ստուեր էր. եւ սա ճշմարտութիւն. վասն որոյ գեղեցկազարդ կազմեցաւ: Երկրորդ հարցումն թէ՛ զի՞նչ նշանակէ տասն փեղկ խորանին: Ասէն վարդապետք եթէ՛ տասն կատարեալ թիւ է. եւ նշանակէր զտասն բանեան օրէնսն զորս ետ Աստուած նոցա: Եւ դարձեալ նշանակէր զտասն զգայարանս մեր. հինգ զհոգւոյ զօրութիւնս եւ հինգ զմարմնոյ զգայութիւնս: Եւ դարձեալ՝ նշանակէր զտասն մասունս արարածոց: Եւ տասն մասունք արարածոց՝ հինգ եղանակաւ իմանին. այսինքն, երկիր եւ երկրաւորք. ծով եւ ծովայ ինք. օդ եւ օդեղէն թռչունք. երկինք եւ երկնաւոր աստեղք. հրեշտակք եւ մարդիկք: Դարձեալ՝ տասն մասն արարածոց՝ բանական բնութիւնք ինն դասք հրեշտակաց. եւ մի մարդկայինս բնութիւն, օրիներգուք Աստուծոյ: Դարձեալ՝ տասն մասն

արարածոց՝ տասն ստորոգութիւնքն Արիստոտելի: Դարձեալ՝ ի խորհուրդ տասն ձայնից երաժշտական երգոց. որք միշտ յերկեղեցիս օրհնաբանին քաղցրաձայնութեամբ. այսինքն, քառորդաց ձայնից. եւ նոցին կողմանց չորից. եւ կրկին ստեղքն: Դարձեալ՝ յօրինակ տասն դասուց վերապատուեալ արանց՝ որք եւ այսոքիկ: Յարք. Նահապետք. Օրէնսգիրք. Զահանայք. Դատաւորք. Թագակալք. Մարգարէք. Առաքեալք. Վարդապետք. եւ Վկայք: Իսկ նիւթն էր ի չորս գունոց. որ նշանակէր զչորս տարերսս. զի բնական որակ տարեցացն՝ Սեան է երկրի. եւ Սպիտակն ջրոյ. Կարմիրն օդոյ. եւ Դեղինն հրոյ: Այլ անդ զներգործական որակ տարերաց՝ հրամայեաց Աստուած առնել ի չորս նիւթոց: Ի կապատակէ եւ ի ծիրանոյ. ի կարմրոյ եւ ի բեհեզոյ: Կապոյտն օդոյ է գոյն. զի թէ այլ գոյն էր՝ վնասիչ էր եւ խափան առնէր տեսութեանցն. որպէս սպիտակ կամ սեաւ. այլ կապոյտն է ի հեշտութիւն տեսութեանցս: Կարմիրն հրոյ է. զի հուր կրկին է. է ի բոլորակն իւր. եւ է ի յամենայն սփռեալ. վասն այն կրկին էր կարմիրն: Եւ ծիրանին ջրոյ. զի կանքելոսն որ ներկէ զծիրանին ի ջրոյ է: Եւ բեհեզն երկրի. զի վուշն որ է սպիտակ՝ յերկրէ լինի: Իսկ ի մեզ հոգեպէս՝ նշանակէ չորս գոյնն զչորս առաքինութիւնս: Ծիրանին թագաւորական է. որ է ի մեզ խոհեմութիւնն: Եւ բեհեզն սպիտակ՝ ցուցանէ զողջախոհութիւնն: Եւ կապոյտն՝ ի մեզ զարիութեան հաստատութիւնն: Եւ կարմիրն հրակերպ՝ արդարութիւնն է ընդ ամենեսեան սփռեալ. եւ կարգաւորէ զայլ առաքինութիւնս որ ի մեզ: Իսկ ձեւ խորանին՝ էր որպէս սագաշէն եկեղեցի: Երկայնութիւնն քսան եւ ութն կանգուն. եւ բարձրութիւնն տասն կանգուն. եւ լայնն քսան բոլոր հասարակ: Իսկ ի մեզ՝ նշանակէ տասն զամն ման կութեան. եւ քսան զպատանեակ զինուորութեան. եւ քսան եւ ութն զհասակ զինուորութեան որ է չորս եօթն: Եւ արտաքին սրահին պատուարն ի մեջ ունելով զխորանն յամենայն կողմանց. հարիւր կանգուն երկայնութիւն ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ կողմն: Եւ յիսուն կանգուն լայնութիւն յարեւելից եւ յարեւմտից կողմն: Եւ տասն եւ հինգ կանգուն բարձր. զի մի երեւեցի խորանն: Եւ սրբութիւնն սրբոցն յարեւելս. զի Երուսաղէմ՝ կողմն արեւելից է նոցա. եւ սրբութիւնն ի մեջն. եւ սրահն յարեւմուտս՝ որպէս մերս եկեղեցի: Եւ զայս յայտնապէս ասէ Աստուածաշունչ Գիրն սուրբ թէ՛ սուրբն սրբոց էր յարեւելից կողմն: Երրորդ հարցումն թէ՛ զի՞նչ նշանակէ եռայարկ խորանն: Ասեմք եթէ՛ հինգ իր նշանակէ: Նախ՝ նշանակէ զձեւ աշխարհի. եւ սրբութիւն սրբոցն՝ զլուսեղէն երկինն եւ զանջրպետ հաստատութիւնդ. եւ սրբութիւնն է երկինք՝ ուր ընթանան լուսաւորք. եւ վարագոյր՝ օդդ. եւ արտաքին սրահ՝ երկինս մարմնաւոր տեղի: Երկրորդ՝ ունի զձեւ երկնայնոցն: Առաջինն՝ աթոռոցն եւ քերովբէիցն. միջինն՝ տերութեանց. եւ վերջինն՝ հրեշտակաց դասուն: Երրորդ՝ ի ձեւ եկեղեցւոյ. ուր բեմն է, եւ մեջ եկեղեցւոյն, ուր բեմն է, եւ մեջ եկեղեցւոյն, եւ արտաքին գաւիթն, կամ ժամատունն: Չորրորդ՝ իմացումն մեր՝ սրբութիւն սրբոց. եւ հոգին սրբութիւնն. եւ մարմինս մեր արտաքին սրահն: Յինգերորդ՝ քահանայք եւ քահանայահետ առաջին միջին. եւ հասարակ ժողովուրդքն սրահն: Եւ այսքան հարցումք եւ պատասխանիք՝ ըստ հնոյ խորանին վկայութեան որ ասէ: (Սուրբ արար գյարկս իւր բարձրեալն:) Այլ որպէս ասացաւ ի վերոյ եթէ՛ ի վերայ երկրի կրկին է յարկ Աստուծոյ. այսինքն, մարմնաւոր եւ հոգեւոր. հոգեւոր որպէս ժողովուրդք քրիստոնէից. եւ մարմնաւոր որպէս շինեալս ի քարանց: Արդ՝ նախ վասն

շինեալ եկեղեցւոյս լինի հարցումն. եւ ապա զկնի կենդանի տաճարոյս: Եւ վասն մարմնաւորիս այսպէս: Եթէ պա՞րտ է պաշտել զԱստուած միայն հոգեւոր ի յերկինս, եթէ մարմնաւոր եւս ակեղեցի շինել ի յերկիր՞: Ասեն վարդապետք եթէ պարտ է զԱստուած պաշտել հոգեպէս առաւել. այլեւ մարմնապէս եւ զգալապէս պաշտելի է Աստուած: Եւ այս վասն երեք պատճառի: Նախզի՞ երեք ազգ բարութիւն պատրաստեաց մեզ Աստուած: Առաջին բարութիւն է հոգեւոր. որպէս բանականս հոգի: Երկրորդ՝ բարութիւն է մարմնաւոր՝ այլ ներքին որպէս մարմինս: Երրորդ՝ մարմնաւոր եւ արտաքին. որպէս ինչք ոսկի եւ արծաթ: Եւ վասն այսոցիկ պարգեւացս՝ պարտիմք ծառայել նմա. ոչ թէ կարօտ է նա այսպիսեաց. զի ասէ սաղմոսն թէ՛ (բարիք իմ քեզ չեն ինչ պիտոյ): Այլ զի նա ստեղծօղ է, եւ մեք ստեղծեալ, պարտ է ամենայն իրօք ծառայել նմա: Առաջին հոգւով. այսինք, ջերմ սիրով եւ սուրբ աղօթիւք: Երկրորդ՝ մարմնով. այսինքն ծնրադրութեամբ եւ երգօք: Երրորդ՝ արտաքին ընչիւք եկեղեցի շինել. եւ զամենայն սպասս եկեղեցւոյ զարդուց պատրաստել: Երկրորդ՝ ասեն վարդապետք թէ՛ Գ ազգ է հոգին: Առաջինն է որ մարմնով ծնանի, եւ մարմնով մեռանի. որպէս հոգիք անասնոց: Երկրորդն՝ որ մարմնով է ծածկեալ, այլ ոչ Ը մարմնոյն մեռանի. որպէս բանական հոգի: Երրորդն է՝ որ ոչ է ծածկեալ մարմնով, եւ ոչ ընդ մարմնոյ մեռանի. որպէս հրեշտակք: Եւ որպէս հոգին երեք ազգ է. վասն զի անասունքն ճանաչեն միայն զայն ինչ՝ որ մարմնաւոր է. այսինքն, հինգ զգայութեամբն: Այլ մարդիկ բանական հոգւովն՝ ոչ միայն ճանաչեն զմարմնաւորս, այլեւ զհոգեւորս: Այլ յառաջն ճանաչեն զմարմնաւորս. եւ ապա միջնորդութեամբ մարմնաւորին՝ ճանաչեն զհոգեւորն. որպէս ասէ առաքեալն. (աներեւոյթքն Աստուծոյ՝ երեւելեօքս իմացեալ տեսանին): Այլ հրեշտակք զհոգեւորս եւ զմարմնաւորս ճանաչեն. այլ նախ զհոգեւորս՝ եւ միջնորդութեամբ հոգեւորին՝ զմարմնաւորս. ապա ուրեմն յայտին է՝ զի բնութեամբ է այս որ մարդիկ մարմնովս ելանեն ի սեր եւ ի ճանաչումն երկնայնոցն. վասն այն պարտ է պաշտել հոգեւոր եւ մարմնաւոր իրօք: Երրորդ պատճառ՝ զի ասեն բժիշկք եթէ՛ երկու ներհակք զմիմեանս բառնան. եւ արդ՝ հիւանդութիւն մարդոյն ի հպարտութենէ էր. որպէս ասաց օճն թէ՛ (լինիցիք իբրեւ զԱստուած, ճանաչել զբարի եւ զչար): Վասն այն պարտ էր զի խոնահութեամբ առողջանայր. այլ կատարեալ խոնարհութիւնն այն է՝ որ փոքրագունին ոք խոնարհի. իսկ մարդս որ է ի հոգւոյ եւ ի մարմնոյ՝ բարձրագոյն է քան զայն, որ է միայն մարմնաւոր: Վասն այն յորժամ խոնարհի փոքրագունին, որպէս է շինելն եկեղեցի, առնու ի նմանէ զսրբութիւն եւ զառողջութիւն հոգեւոր եւ մարմնաւոր: Եւ գիտելի է՝ զի եկեղեցիս շինեալ՝ երեք ազգ փրկութիւն ունի որ ի մենջ մեծարի եւ պատիւ. Առաջին՝ հիմնարկեքն. որ եպիսկոպոսն դնէ զառաջին քարն: Եւ զայս ունիմք ի Յակոբայ, յորժամ ի Բեթելեօծ զվեմն. եւ անւանեաց զտեղին տուն Աստուծոյ, եւ դուռն երկնից: Երկրորդ՝ եկեղեցւոյ օրհնեքն. եւ զայս ունիմք ի Մովսիսէ. յորժամ օրհնեց զխորանն, եւ զամենայն կահս նորա օծեաց իւղով: Երրորդ՝ զսպասս եկեղեցւոյս. մարմնաւորս՝ եւ զսեղանս մարմնաւորս՝ զգինիս եւ զայլ իւղս խորհրդականս. զոր ինչ մարմնաւոր ընտրեալ է Աստուած ի պատիւ անուան իւրոյ: Իսկ մարդս որ մեծ է՝ հնազանդ ի սոցա. եւ առնէ պատիւ վասն փառացն Աստուծոյ: Այս կատարեալ խոնարհութիւն է. որով բժշկի հոգեւոր հիւանդութիւնն մեր. այսինքն, հպարտութիւնն: Վասն

այն Նէեման ասորի որչափ ոչ էր խոնարհեալ ջրոյն յորդանանու, ոչ բժշկիւր ի հիւանդութենէն. այլ յորժամ հնազանդեցաւ հրամանացն եղիսէի, եւ լուաց զինքն ջրովն, շուտով բժշկեցաւ: Ապա ուրեմն յայտ է թէ՛ պարտ է պաշտել զԱստուած հոգեւորօք եւ մարմնաւորօք: Վասն որոյ կազմեմք եկեղեցիս եւ սեղանս՝ զի աստ պաշտեմք զԱստուած: Այլ ոմանք հակառակին ընդ մեզ չորս կերպիւ: Նախ ասեն զբան կնոջջ սամարացւոյն՝ որ եհարց ի Քրիստոս թէ՛ (հարքն մեր ի գերինս երկիրպագին. եւ դուք ասէք թէ՛ յերուսաղէմ միայն պարտ է երկիր պագանել: Պատասխանի ետ Յիսուս. դուք երկիրպագանէք որում ոչն գիտէք. մէք երկիր պագանեմք որում գիտեմքն. հոգի է Աստուած եւ երկրպագուաց նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել:) Ապա ուրեմն երեւի յայսմանէ՛ թէ միայն զԱստուած պարտ է հոգեպէս պաշտել: Այլ այսմ պատասխանեն վարդապետք. թէպէտ հոգի է, այլ ստեղծօղ է մարմնաւորաց. վասն այնորիկ պարտ է պաշտել զնա նախ հոգեւորապէս. եւ երկրորդ մարմնաւորապէս. զի յայտնի լիցի, թէ Աստուած արարիչ է. ոչ միայն հոգեւորացն, այլեւ մարմնաւորացն: Իսկ մանիքեցիքն մոլորեցան երկու Աստուածս ասելով. մինն ստեղծիչ աներեւութիցն. եւ մինն երեւելեացս. վասն որոյ հոգեպէս միայն պաշտէին: Այլ սուրբ եկեղեցի հաւատացելոցս՝ հոգեւոր է մարմնաւոր պաշտ է զԱստուած. զի մոլորեալ աղանդն մանիքեցւոց լուծցի եւ կորիցէ: Երկրորդ՝ հակառակին ոմանք թէ՛ ոչ է պարտ օրհնել զեկեղեցին՝ զսեղանն՝ եւ զաւագանն՝ եւ զայլ ինչ սպաս եկեղեցւոյ: Եւ ասեն նախ եթէ՛ զոր ինչ յանունն Աստուծոյ կազմեմք, անունն Աստուծոյ սրբէ զնա եւ ոչ մարդն: Երկրորդ՝ զի մէք ի նոցանէ ստանամք սրբութիւն. այսինքն, յեկեղեցւոյն եւ յաւագանէն եւ ի սեղանոյն: Արդ՝ զսրբօղն մեր՝ ո՞րպէս սրբեմք եւ օրհնեմք մէք: Պատասխանեմք առաջնոյն. թէպէտ յանունն Աստուծոյ կազմեմք զեկեղեցին եւ զսեղանն՝ այլ պարտ է օրհնել եւ սրբել զնա. զի սրբութեամբ աղաչեմք զԱստուած՝ զի հաճեսցի եւ խոնարհեսցի ի նա. երւ դիցէ զանունն իւր ի վերայ նորա: Երկրորդին պատասխանեմք. թէպէտ մէք սրբիմք յեկեղեցւոյն եւ աւագանէն, պարտ է նախ աստուածային բանիւն օրհնել եւ սրբել զնա. զի ի շնորհացն Աստուծոյ զօրացի եւ կարողացի սրբել զմեզ: Եւ նորակերտ եկեղեցին՝ եւ սեղանն՝ եւ աւագանն եւ դուռն՝ եւ այլ սպասք եկեղեցւոյն՝ պարտին օրհնիլ եւ սրբիլ. յայտ է ի չորից իրաց: Նախ ի Մովսիսէ. յորժամ կանգնեաց զխորանն յանապատին, սուրբ իւղովն եւ արեամբ պատարագացն ցանեաց եւ սրբեաց զբոլոր խորանն եւ զտապանակն, եւ զսեղանն եւ զաշտանակն. եւ զայլ կախս եւ սպասս խորանին: Նոյնպէս եւ Սողոմօն օրհնեաց զտաճարն շինեալ. եւ ապա էջ փառքն Աստուծոյ ի ճարն շինեալ. եւ ապա էջ փառքն Աստուծոյ ի նմա. յայտ է թէ՛ պարտ է օրհնել զեկեղեցիս, եւ զամենայն սպասս եւ զգործիսն ի նմա: Երկրորդ յայտ է՝ զի նիւթ շինուածոյ եկեղեցւոյս՝ են ի հողից եւ ի քարանց եւ ի փայտից, եւ յայլ տարրական իրաց. որ յետ մեղանացն Ադամայ՝ անիծաւ երկիր եւ ապականեցան տարերք: Վասն այն օրհնեամք զեկեղեցին բանիւն Աստուծոյ. զի ազատեսցին նիւթք եւ քարին շինուածոյս յառաջին անիծիցն. եւ զօրհնութիւնս կրեսցեն: Երրորդ՝ զի եկեղեցին շինի ի յայսպիսի նիւթոց հողոց եւ քարանց՝ որք կախեալ են ի յանասնաց եւ ի մարդկանէ. եւ ձեռօք արւեստաւորաց շինեցաւ. վասն որոյ օրհնեմք եւ սրբեմք զնա՝ զի սրբեսցի յառաջին աղտեղդութեանցն: Չորրորդ՝ զի որպէս առ հասարակ մարդն պատկեր Աստուծոյ. այլ օրհնութեամբն՝

լինին ոմանք կարգաւորք՝ քահանայք՝ եւ պաշտօնեայք. եւ աւագանան լինիմք որդիք Աստուծոյ հաց սուրբ Է՝ այլ օրհնութեամբն որդիք Աստուծոյ. եւ ամենայն հաց սուրբ Է՝ այլ օրհնութեամբն հացն լինի մարմին Քրիստոսի. եւ գինին արիւն: Այսպէս թեպէտ ամենեքեան քարինք եւ փայտք առ հասարակ ստեղծւածք են Աստուծոյ եւ սուրբ են. այլ առանձնակի օրհնութեամբն՝ լինին բնակութիւն Աստուծոյ եւ տեղիք անւան նորա: Եւ զոր օրհնակ՝ ի կաւէ շինեալն անօթ ինչ՝ նախ թրծի եւ ապա պիտոյանայ մարդկան: Եւ թրծելն հրով՝ վասն երկու իրաց Է: Նախզի՝ սրբէ զկոխան եւ զանարգ նիւթն հողոյ: Եւ երկու՝ զի պատէ եւ հաստատէ զնա. նմանապէս եւ օրհնութիւնն եկեղեցեաց սրբոց՝ նախ սրբէ զանարգ նիւթն. եւ առնէ տաճար Աստուծոյ եւ բնակութիւն հրեշտակաց: Եւ երկրորդ՝ զօրացուցանէ զնա շնորհս տալ օրք դիմեն առ նա, եւ խնդրեն նովաւ զպարգեւս Աստուծոյ: Ապա ուրեմն պարտ է օրհնել զեկեղեցիս եւ զսեղանս. եւ զխաչն եւ զաւագանն. եւ զայլ ամենայն նիւթս խորհրդաւորս: Երրորդ հակառակին ոմանք թէ՝ Մովսէս զկէս արեան պատարագին խառնեաց ի ջուրն՝ եւ ցանեաց ի ժողովուրդն. եւ զկէսն էարկ շուրջ զսեղանովն. ապա ուրեմն պարտ է ջուր խառնել ի խորհուրդն որպէս եւ Մովսէս: Ասեմք եթէ՝ ջուրն զոր խառնեաց ընդ արեանն՝ նշանակէ զժողովուրդն որք սրբին աւագանան եւ խառնին ի հաղորդութիւն արեանն Քրիստոսի. վասն այն յետ մկրտութեանն՝ մեք հաղորդեմք զկնքեալն: Եւ այն որ էարկ շուրջ զսեղանովն՝ նշանակէ զքահանայս. որք մերձ սեղանոյն որ է Քրիստոս՝ միշտ սպասաւորեն. եւ պատերազմին արեամբ չափ ընդդէմ ախտից եւ ընդ դէս: Եւ զի ոչ է պարտ խառնել ջուր ի խորհուրդն. յայտ է յերից իրաց նոյն անդ ի Մովսէս: Նախզի՝ Մովսէս յայտնապէս զկէսարեանն անապական եհեղ զսեղանովն. որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. եւ զկէսն խառնեաց ի ջուր՝ որպէս ցուցաւ խորհուրդ մկրտութեան եւ հաղորդութեանն խառնեալ: Երկրորդ՝ զի նախ ջուրն եր ի խառնրանն. եւ եհեղ զարիւնն ի վերայ. որ է ցոյց մկրտութեանն. իսկ սոքա նախ հեղուն զարիւնն՝ եւ յետոյ զջուրն: Երրորդ՝ նա զխառնեալ ջուրն ցանեաց ի վերայ ժողովրդեանն որ է մկրտութիւն. եւ սոքա ճաշակեն զջուրն եւ զարիւն. ահա յայտնապէս այլ է ձեւ արարողութեան սոցա ի յօրհնակէն: Եւ յայտնի է՝ զի յետ մկրտութեանն պարտ է հաղորդիլ. եւ նոքա ոչ առնեն որպէս ցուցաւ: Զորրորդ՝ հակառակին ոմանք եթէ՝ զմին անգամ օրհնեալ եկեղեցին, ոչ է պարտ պղծեալ տաճարի կարդալ եւ սրբել. զի մի անգամ օրհնեալ է եւ այլ ոչ բաժանի ի նմանէ: Ասեմք՝ թեպէտ եկեղեցին մի անգամ օրհնեալ է եւ սրբեալ այլ յորժամ պիղծ ինչ մտանէ ի նա, եւ կոխէ եւ շօշափէ, կամ խախտի եւ վերստին շինի, պարտ է վերստին օրնել եւ պղծեալ տաճարի կարդալով սրբել զնա: Եւ այս յայտ է յերկու իրաց: Նախզի՝ ունիմք զպղծեալ տաճարին ի յուղայէ մակաբայեցւոյն. զի յորժամ մտեալ էին հեթանոսք ի տաճարն, դարձեալ ետ սրել եւ օրհնել զնա. եւ օժանել սուրբ իւղովն: Երկրորդ՝ զի մարմնաւոր տաճարն՝ նշանակէ զհոգեւոր տաճարս զմեզ. որպէս ասէ Պետրոս ի կաթողիկէն: (դուք իբրեւ զվեմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգեւորն պատարագ:) Չի իւրաքանչիւր մարդ՝ տաճար է Աստուծոյ. եւ մատուցանէ զինքն կենդանի նուեր Աստուծոյ. եւ զբանաւոր պատարագս աղօթիցն ի սրտէ մատուցանէ: Արդ՝ որպէս շինեալ տաճարն նախ սրբեցաւ օրհնութեամբ եւ սուրբ իւղովն, եւ յետոյ պղծեցաւ եւ դարձեալ կարօտացաւ սրբութեան. այսպէս եւ մեք

Նախ սրբիմք աւագանան. եւ լինիմք տաճար Աստուծոյ, եւ բնակարան հոգւոյն սրբոյ. եւ յետոյ ներգործական մեղօք պղծիմք եւ աղտեղիմք. եւ դարձեալ զղջմամբ եւ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ վերստին սրբիմք ի մեղաց՝ եւ լինիմք տաճար Աստուծոյ. գայն նշանակէ պղծեալ տաճարին՝ որ սրբէ զեկեղեցին: Եւ դարձեալ՝ որպէս յետ եօթանասուն ամի գերութեանն եւ աւերածոյ տաճարին՝ նախ տաճարն շինեցաւ ի զօրաբաբէլէ. եւ յետոյ պարիսպն կանգնեցաւ ի նմանէ ի տիպ խորհրդեան մերոյ տաճարիս. այսպէս յորժամ գերիմք ի մեղացն՝ աւերի տաճար սրբութեանս եօթն զգայութեամբս. իսկ յորժամ զղջանամք ի մեղաց, նախ խոստովանութեանք շինեմք զտաճար սրբութեան մերոյ. եւ ապա ապաշխարութեամբն որ է փոխարենն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբ. եւ եօթն ժամանակաց փոփոխմամբ. եօթն հասարաւ եւ յեօթն դար կենցաղոյս՝ լինիմք տաճար եւ քաղաք Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ դարձեալ՝ որպէս շինեալ եկեղեցիս է ի կոփածոյ եւ ի չորեք անկիւն քարանց. այսպէս կոփածու են դասք ընտրելոցն՝ որք տաշեալք եւ սրբեալք են նեղութեամբ եւ չարչարանօք մարմնոյ. ի պահս, յաղօթս, ի ճգնութիւնս, ի կուսութիւնս, եւ այլ ամենայն նահատակութիւնս, զորս կրեն վասն Քրիստոսի: Իսկ չորեք անկիւնին այն է՝ զի պարտ է կատարելոցն ունիլ չորս իրս. այսինքն, հաւատ, յոյս, սերր, եւ գործ բարի: Եւ այսոքիկ հաւասարք միմեանց. զի որչափ ունիցի հաւատ՝ նոյն չափովն յոյս. եւ որչափ ունիցի հաւատ եւ յոյս՝ նոյն չափովն եւ սեր. եւ որչափ ունիցի հաւատ եւ յոյս եւ սեր՝ նոյն չափովն եւ գործ բարի: Այլ չորեք կուսի քարն՝ վեց երես ունի. եւ յոյժ հաստատի. զի մին երեսն է ի վեր կոյս. եւ մինն ի վայր կոյս. երրորդն յարեւելից կոյս. չորրորդն յարեւմտից. հինգն ի հիւսիսոյ կողմն. եւ վեցն ի հարաւոյ: Այսպէս քրիստոնեայն որ է բանաւոր քար եւ վեմ եկեղեցւոյ՝ պարտ է զի եղիցի չորեք կուսի. եւ վեց երես ունիցի: Առաջին երեսն՝ լիցի յերկնից կողմն. զի խոկասցէ հանապազ զփառս արքայութեանն: Երկրորդ երեսն՝ ի վայր կոյս. զի ի միտ ածցէ զտանջանս դժոխոցն: Երրորդ՝ յարեւելից. զի ի միտ ածցէ թէ, մերկ եկն յաշխարհս յարգանդէ մօր իւրոյ եւ լալով: Չորրորդ՝ յարգեւմտից կոյսն. զի խոկասցէ հանապազ թէ՝ մերկ եւ աղքատ եւ լալով կամիմք ելանել յաշխարհէ մահուամբ: Հինգերորդ՝ ի կողմն հիւսիսոյ. զի ի չարութենէ եւ ի սառուցմանէ եւ ի պակասութենէ բարեացն փախիցէ: Վեցերորդ՝ ի կողմն հարաւոյ որ է ջերմանային. զի խոկասցէ հանապազ զջերմեանդ սերն Քրիստոսի՝ որ վասն մեր կրեաց զբազում չարչարանս եւ զմահ: Չայս նշանակէ Չ կուսի երես ունիլն շինւածոյ քարանց եկեղեցւոյ: Եւ դարձեալ՝ որպէս ի շինուած տաճարին Սողոմօսի ասէ գիրն թագաւորութեանց թէ՝ մուրճ կամ ուրաք եւ սղոց եւ ամենայն ինչ երկաթի՝ ոչ հնչեաց ի շինուած տաճարին. վասն զի արտաքոյ զամենայն քարինսն պատրաստէին: Այսպէս եւ հոգեւոր եկեղեցւոյ քարինքն որք են սուրբք ամենայն, պատրաստին ի կեանս յայս. եւ տաշին նեղութեամբ եւ չարչարանօք. եւ ապա շինին ի վերինն Երուսաղէմ, ուր ոչ գոյ նեղութիւն ինչ կամ աղմուկ: Ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք. եւ միշտ յարագուարճ բերկրանօք ուրախացեալք եւ հանգուցեալք են ի կեանսն յաւիտենականս՝ ի Քրիստոս Յիսուսի ի Տէր մեր. որ է օրինեալ ընդ Յօր իւրում եւ ամենասուրբ հոգւոյն, յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ նորակերտ դռան եկեղեցւոյ. ի Բանն՝ (Այս դուռն Տէրն է. եւ արդարք մտանեն ընչ սա:) Սաղ. 117. 20: (Գլուխ. ԾԳ)

Գիտել պարտ է՝ զի դուռն առաջին՝ զմուտն նշանակէ. եւ ապա ըստ կարգի զբնակութիւն տաճարի: Եւ բազում եղանակաւ ասի դուռն: Նախ՝ արդարութիւնն է դուռն՝ որով մտանեմք առ Տէրն եւ դատաւորն: Եւ արդարութիւն է հաւասարութիւն մասանց հոգւոյն. զի հոգին եռանմասնեալ է. բան՝ ցասումն՝ եւ ցանկութիւն. եւ արդարութիւն պահէ զբանն ի խոնեմութիւն. եւ զցասումն յարիութիւն. եւ զցանկութիւնն յողջախոհութիւն: Եւ դարձեալ՝ արդարութիւնն է արժանաւոր հատուցումն. որպէս ասէ առաքեալն: (Որում զմաքս. որում զպատիւ. եւ այլն:) Եւ այս արդարութեամբս՝ վերնոյն քան զմեր հնազանդիմք. եւ զփոքունսն խնամեմք. եւ ցհաւասարն սիրեմք իբրեւ զանձն. ըստ այնմ, (սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո.) եւ այսպիսի արդարութեամբս մտանեմք առ Աստուած: Երկրորդ դուռն՝ խորհրդոյ եկեղեցւոյ է մկրտութիւնն. եւ ապա դրոշմն եւ պատարագն. ապաշխարութիւնն. օթումն. կարգն եւ ապա պսակն: Եւ առանց մկրտութեան՝ ոչ դրոշմի եւ ոչ պսակի. եւ ոչ կարգ առնու. վասն զի նախ ծնանիմք եւ ի լոյս գամք. եւ ապա զայլ ինչ գործ կատարեմք: Նոյնպէս նախ ծնանիմք հոգւով եւ ի լոյս աստուածգիտութեան գամք. եւ ապա արդարացեալք առաստուած մտանեմք: Ապա յիրաւի մկրտութիւնն է (դուռն Տեառն եւ արդարք մտանեն ընդ սա:) Երրորդ դուռն Տեառն՝ է կարգ եւ աստիճան քահանայութեան. որով ելանեմք առ Աստուած: Եւ առաջին կարգ է դռնապանութիւն. եւ այլքն ըստ կարգի. ընթերցողն. երդմեցուցիչն. ջահավառն. եւ դպիրն. սարկաւազն. եւ քահանայն. եպիսկոպոսն. եւ կաթողիկոսն: Եւ այսպէս ըստ կարգի՝ օծումն շնորհաց ի ջանէ յԱստուծոյ ի կաթողիկոսն. եւ ի նմանէ յեպիսկոպոսն եւ ի քահանայն, եւ յայլսն: (Որպէս իւղ զի իջանէ ի գլուխ հայրապետին. եւ ի մուրուս քահանային. եւ ի գրապանս զգեստու,) որք են ժողովրդականք. զայսմանէ ասէ. (դուռն Տեառն է եւ արդարք արժանացեալք մտանեն ընդ սա:) Զորրորդ դուռն՝ բարեպաշտութեան հաւատն է. ի յԱստուած. եւ ապա յոյսն՝ որով ակն ունիմք ողորմութեան նորա. եւ ապա սերն կատարեալ՝ որով միաւորիմք ընդ նմա. որպէս ասէ առաքեալն. (Նոքա երեքեան՝ եւ մեծ քան զսոսա սերն է:) Զի հաւատն աստ ի յայժմու կեանս է. եւ յոյսն յետ մահու. այլ յետ յարութեանն՝ սերն է անխափան. զի յոյսն եւ հաւատն խափանին անդ՝ ուր է դէմ յանդիման տեսութիւն: Եւ սոքօք լինի մարդն բարեպաշտ եւ կատարեալ քրիստոնեայ. որպէս ասէ առաքեալն: (Ի Բրիստոս Յիսուս՝ ոչ թլփատութիւն ինչ է, եւ ոչ անթլփատութիւն. այլ հաւատք սիրով յաջողեալք:) Զի հաւատն մուտն է. եւ սերն կատարումն. (հաւատք առանց գործոց՝ մեռեալ են.) որպէս մարմին առանց հոգւոյ. եւ սուտ անուն լինի քրիստոնեայ. յորժամ հաւատս ունի եւ գործս ոչ. զի հաւատովք ճանաչեմք զԱստուած. եւ սիրով միաւորիմք անբաժանելի. ըստ այնմ, (ո՞ մեկնեսցի զմեզ ի սիրոյն Բրիստոսի, եւ այլն:) Զինգերորդ դուռն՝ ապաշխարութիւնն է, զղջումն, եւ խոստովանութիւնն. եւ ապա այլ բարեգործութիւնք. պահք, աղօթք, եւ այլն: Եւ այս է պատճառն. զի երիւք գործեմք զմեղս. մտօք, բանիւ, եւ մարմնով. եւ արդ՝ զղջումն ջնջէ զմտաց մեղսն. եւ խոստովանութիւնն զբանիցն. եւ այլ ապաշխարութիւնքն զբանիցն. եւ այլ ապաշխարութիւնքն զմարմնոյն:

Դարձեալ՝ ի մեղսն երեւի կրկին ինչ. նախ գործ մեղացն. եւ ապա պատիժն. գործն առնելն է. եւ պատիժն կրելն. զմեղսն մեք գործեմք. եւ զպատիժն յայլմէ կրեմք: Վասն այն նախ խոստովանութիւնն բառնայ զմեղսն. եւ ապա այլ գործն բառնայ զպատիժ մեղացն: Վասն որոյ յորժամ աստ կրեմք զապաշխարութեան պատիժն, զերծանիմք ի պատժոյ դատաստանին. յիրաւի ապաշխարութիւնն դուռն է՝ որով արդարացեալք մտանեմք առ Աստուած: Վեցերորդ դուռն՝ պատիրանաց պահպանութիւնն է երկիւղին Աստուծոյ. ըստ այնմ, (երանեալ է այր՝ նա կամի յոյժ:) Չի (երկիւղիւ Տեառն խորշի ամենայն ոք ի չարէ ասէ:) Եւ այսպէս բարի է երկիւղն Աստուծոյ վասն այն թախանձելով ինդրէ մարգարէն. (բելեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ.) զի որ ունի զերկիւղն Աստուծոյ՝ զտասն բանեան օրօնսն նա կատարէ: (Սիրելն զԱստուած. եւ սիրել զընկերն. զմի շնարն. եւ զմի գողանարն, եւ զայլն:) Եւ որ երկնչի ի դատաստանէն Աստուծոյ, հիանայ եւ ոչ գործէ զչար. եւ թէ գործեալ է, ի զղջումն գայ. ապայիրաւի որ ունի զդուռն երկիւղին Աստուծոյ՝ արդարանայ ի մեղաց: Եօթներորդ դուռն Տեառն՝ է հեզութիւնն եւ խոնարհութիւնն. ըստ այնմ, (յո՞ հանգեայց ես՝ եթէ ոչ ի հեղս եւ ի խոնարհս. եւ որք դողան ի բանից իմոց:) Չի յորժամ խոնարհիմք եւ հնազանդիմք բանի պատուիրանացն Աստուծոյ, հանգչի Աստուած ի մեզ. եւ տուն եւ օթեան լինիմք նմա. ըստ այնմ, (որ զպատուիրանս իմ պահէ, ես եւ հայր առ նա եկեցուք. եւ օթեանսս նմա արասցուք:) Եւ յորժամ Աստուած ի մարդն հանգչի, ամենայն բարութեանց լիութիւն է. ամենայն շնորհաց առատութիւն. պարգեւաց բաշխումն է. եւ կատարեալ երանութիւն, եւ անճառ ինդութիւն: Եւ այսպէս մեծամեծ պարգեւացս՝ խոնարհութիւնն եւ հեզութիւնն է պատճառ եւ մուտ. զի խոնարհութիւնն գործ Աստուծոյ է. որ վասն մեր մարդոց եղել. եւ խոնարհութեամբն նմանիմք Աստուծոյ. (զի որ խոնարհի, բարձրանայ ասէ Տէրն:) Եւ հպարտութիւնն եւ անհնազանդութիւնն՝ գործ սատանայի է. որ անկաւ յերկնից եւ ի փառաց. Նոյնպէս եւ անհնազանդն. (զի որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի:) Ապա ուրեմն դուռն Տեառն՝ հեզութիւնն եւ խոնարհութիւնն է. որով նմանիմք Աստուծոյ եւ օթեան լինիմք: Ութներորդ դուռն՝ սերն է ամենայն իմաստութեան. զի զինչ եւ իցէ ուսումն, հոգեւոր կամ մարմնաւոր, աստուածային թէ մարդկային սրիրովն ատանամք եւ խոհեմանամք: Եւ սոքա երեքեան՝ խոհեմութիւն իմաստութիւն եւ սեր՝ առնեն զմեզ սիրելի Աստուծոյ եւ տաճար բնակութեան նորա. (զի Աստուած սեր է. եւ որ կայ ի սերն՝ բնակի յԱստուած. եւ Աստուած ի նմա բնակի. եւ սերն է գլուխ ամենայն պատուիրանացն:) Նոյնպէս եւ խոհեմութիւնն որպէս աղ համեմիչ է ամենայն գործոց եւ բանից. ըստ առաքելոյն. (ամենայն բանք. զի տացէ շնորհս զսողաց:) Նոյնպէս եւ ի վարս՝ խոհեմութիւնն է ուղղիչ եւ կարգաւորող. իսկ իմաստունն է՝ որով ճանաչեմք զԱստուած. այլեւ զկեանսս հոգեւորս. այլսեւ զդատաստան եւ զհատուցումն գործոց. այլեւ զմահ եւ զելս աստի կեանց. (զի իմաստութիւնն յելս ճանապարհաց գովի.) եւ ճանապարհ է աստի կեանքս. եւ ելք մահն: Եւ երկու են ճանապարհք. մինն բարի. եւ միւսն չար. եւ բարի է (նեղն եւ անձուկն որ տանի ի կեանսն. եւ չար է լայնն եւ արձակն որ տանի ի կորուստ:) Եւ իմաստութեամբն խոտորիմք ի չարէն. եւ ընթանամք ի բարի ճանապարհն որ տանի առԱստուած. յիրաւի ապա սոքա են դուռն Տեառն. եւ

իմաստունքն մտանեն առ նա: Իններորդ՝ դուռն կոչի Տեր մեր Յիսուս Քրիստոս մտիցն առ հայր. որպես կոչի ճանապարհ՝ զի նովաւ ընթանամք առ հայր. նոյնպէս եւ դուռն՝ զի նովաւ մտանեմք առ հայր եւ հոգի: Այլեւ կոչի դուռն արքայութեան. զի ինքն է արքայութիւն եւ ինքն է դուռն: Չի որպէս դուռն ոմանց բանի եւ ոմանց փակի. նոյնպէս եւ Տեր մեր՝ զոմանս կոչէ զորս կամի. եւ զոմանս արգիլէ ըստ արժանւոյն: Ոմանց բանայ որպէս իմաստուն կուսանացն. եւ ոմանց փակէ որպէս յիմարացն՝ որք արտաքոյ կան եւ բախեն (Տեր Տեր բաց մեզ:) եւ պատասխանէ. (ոչ ճանաչեմ զձեզ զոր գործէին զանօրէնութիւն:) Չի անգամ է. ոչ տայ զխնդրելին. զի այժմ պարտ է ինդրել՝ որ դուռն ողորմութեան է ի բաց. եւ նստեալ է յաթոռ շնորհաց. եւ անդ ողորմութեան դուռն փակեալ է ընդդէմ բազում ինդրողաց. որպէս ասէ՝ (դուրքս փակեալ եւ. եւ մանկունքս կան ընդ ինեւ յանկողնի. ոչ կարեմ յառնել:) Տասներորդ՝ դուռն կոչին դրունք սուրբ եկեղեցւոյս. զի նախ՝ մտանեմք ընդ դուռն՝ եւ ապա ի տաճարն. եւ ապա ի բեմն: Որ նշանակէ դուռն զայս կեանս՝ ուր նախ մտանեմք. եւ տաճարն զհանդերձեալն՝ ուր յատոյ ընթանամք: Դարձեալ դուռն են բնական օրօնքն սրբութեան. եւ տաճար է գրաւորն. եւ բեմն անետարանն կատարելոց: Եւ դրաձեալ դուռն է հին օրէնքն. եւ տաճար նոր օրէնքս. եւ բեմն վերինն Երուսաղէմ: Եւ դարձեալ՝ դուռն է եկեղեցի սուրբ հաւատացեալ ժողովուրդք. եւ տաճար հոգիք անդրանկաց կատարելոցն՝ ու կայանք հոգւոյն է յերկիս. եւ բեմն արքայութիւնն երկնից հոգւով եւ մարմնով կատարեալք: Եւ դարձեալ՝ հինգերորդ դուռն Տեառն կոչին զգայարանք մարմնոյս, յոր ժամ սրբութեամբ պահեմք. եւ տաճար՝ զօրութիւնք հոգւոյն որպէս ասացաւ. եւ բեմն՝ իմացումն մտաց եւ խոկումն Աստուծոյ. զորմէ ասէ. (Այս դուռն Տեառն է՝ եւ արդարք մտանեն ընդ սա:) Եւ դուռն են զգայարանքս. զի ունին զյատկութիւն գրան ըստ վեցից: Նախզի՝ դուռն երկբացիկ է. կամ միափեղկի. նոյնպէս եւ զգայարանքս մեր՝ երկու երկու են. երկու աչք. Բ ականջ. լեզու. եւ բերան. եւ այլն: Իսկ երկուքն զմի եւ զնոյն գործ ունին. տեսանել. լսել. գործել. գնալ, եւ այլն: Երկրորդ՝ դուռն երբեմն փակի, եւ երբեմն բանի. նոյնպէս եւ զգայարանքս փակին ի գիշերի. եւ բանին ի տիւն. բաց են կենդանութեամբ. եւ փակին մահւամբ: Երրորդ՝ ընդդէմ թշնամեացն փակի. եւ սիրելեացն բանի. նոյնպէս զգայարանս մեր բարեացն բանալ պարտ է, եւ ընդդէմ չարեացն փակել եւ արգիլել: Չորրորդ՝ դիւրաւ փակի եւ բանի. նոյնպէս եւ մեզ պարտ է այնպէս հնազանդիլ օրինացն Աստուծոյ. եւ դիւրաւ գալ ի բարին. եւ փախչիլ ի չարէն. եւ մի յամառելով եւ բռնութեամբ: Հինգերորդ՝ ունի կրկին ճշանս վերինն եւ ներքին. նոյնպէս եւ մեզ պարտ է կրկին ստանալ զգացումն եւ իմացումն. վերին յարքայութիւնն երկնից. եւ ներքին ի դժոխս. եւ վասն ահի դժոխոցն եւ սիրոյ որքայութեան՝ առնել զկամս Աստուծոյ: Վեցերորդ՝ յետոյ դրան այլ փակ ամբութեան կայ. նոյնպէս երկիւղն Աստուծոյ՝ փակ է զգայարանացս. մերոց որպէս ասացաք. եւ նոյն երկիւղին արգիլէ զմեզ յամենայն չարեաց: Եւ զայս ինդրէ մարգարէն. (դիր Տեր պահահան բերանոյ իմոյ՝ եւ դուռն ամուր շրթանց իմոց. զի մի խոտորեացի սիրտ իմ բանիւ չարութեան:) Այս՝ զի դուռն են զգայարանքս մեր. եւ մուտ սրբութեան Տեառն արժանաւորաց: Իսկ օրինութիւն եւ օծումն զի՞նչ ունի խորհուրդ՝ (զի արարածք Աստուծոյ ամենայն բարի են յոյժ ասէ մարգարէն:) Ասեմք նախ թէ՛ յայն պատճառս օրինի դուռն՝ զի թեպէտ բարի

են արարածք Աստուծոյ. սակայն տարեարքս վասն յանցանաց մարդոյն դատապարտեցան. ըստ այնմ, (անիծեալ լիցի երկիր ի գործս քո. փուշ եւ տատասկ բուսցի քեզ:) Արդ՝ զայն դատապարտութեան անեծսն՝ դարձեալ նոյն աստուածային բանին օրհնեմք եւ սրբեմք: Երկրորդ՝ որպէս մարդն Աստուծոյ պատկեր է. այլ օրհնութեամբ եւ սրբութեամբ լինի քրիստոնեայ կամ քահանայ. նոյնպէս եւ զդուռն օրհնեմք եւ սրբեմք, եւ լինի դուռն եկեղեցւոյ. այսպէս հացն եւ գինին՝ օրհնութեամբ լինին մարմին եւ արիւն Զրիստոսի: Երրորդ՝ որպէս տաճարն օրհնութեամբ սրբեալ է. նոյնպէս եւ դուռն տաճարին՝ սրբութեամբ եղիցի հանգոյն նորա: Չորրորդ՝ որպէս տաճարի սրբութիւնն ցուցանէ զբնակողին սրբութիւն. նոյնպէս եւ դրան սրբութիւնն՝ զսուրբ եւ զարժանաւոր մտանօղն նորա որպէս ասէ: (Այս դուռն Տեառն է՝ եւ արդարք մտանեն ընդ սա:) Հինգերորդ՝ որպէս տաճարն օրհնութեամբ սրբի զի որոշիցի ի հասարակաց տանց. նոյնպէս եւ դուռն սրբի ի հասարակաց դարանց: Վեցերորդ՝ նշանակէ զսրբութիւն եւ զօծումն զգայարանաց մերոց. զի ի հինգ տեղւոջ օծանի. դուռն. եւ երկու բարաւորքն. եւ երկու սեմքն. որք են ի մեզ հինգ զգայութիւնքս մարմնոյ. որպէս օրհնակեցաւ յազատութիւն յեգիպտոսէ՝ արեամբ գառնին օծանել զբարաւոր եւ զսեմս գրանց նոցա, աներկիւղ մնալ յանդրանկածախ սատակմանէն: Արիւնն գառնին նշանակէ ի մեզ զկենդանարար հոգին սուրբ՝ որ զենմամբ գառնին անարատի պարգեւեցաւ մեզ. եւ նովաւ դրոշմեմք զգայարանս մեր՝ որով զերծանիմք ի բարկութենէն Աստուծոյ: Իսկ լուանալ նախ ջրոյ՝ եւ ապա գինւով, զի նախ մկրտիմք ի ջուր սրբութեան աւազանին. եւ ապա հաղորդիմք փրկական արեան կենարարին:

Եւ ապա օծանիմք դրոշմեալ սուրբ մեռնաւն, որ է կնիք անբաժանելի ի հոգին էացեալ: Եւ դարձեալ՝ ջուրն զովացուցանէ ի տապոյ մեղաց. եւ գինին ուրախ առնէ ի հոգեւոր տրտմութեանց. իւղն սուրբ՝ զուարթութիւն հոգւոյ եւ լոյս յաւիտենական կանաց: Եւ զի դրունք են զգայարանքս մեր. եւ դռնապան միտքն արթնացեալ. ասէ աւետարանն. (այր մի գնացեալ ի տար աշխարհ՝ եւ դռնապանին պատուէր տուեալ՝ զի արթուն լինիցի:) Ազնուական այր է Տէր մեր Զրիստոս. եւ տար աշխարհ՝ երկնային դուռն տարակացեալ յերկրաւորացս. եւ բաժանեալ զշնորհս զանազան: Ոմանց հինգ ըստ հինգ զգայութեանցն. ոմանց երկու ըստ հոգւոյ եւ մարմնոյ. ումեմն մի ըստ մի անձնաւորութեանն. եւ կամ միոյ հաւատոյն եւ մկրտութեանն. եւ պատուէր տուեալ արթուն լինիլ. ոչ միայն ի քնոյ մարմնական, այլեւ ի քնոյ մեղաց՝ որ թմրութիւն է հոգւոյ, եւ ննջումն մահու. ըստ այնմ, (լոյս տուր Տէր աչաց իմոց՝ զի մի երբէք ննջեցից ի մահ:) Այլեւ ննջումն է անհոգութիւն. զի անհոգ լիցի կարգաւորն ի յիւր գործն. վարդապետն. ի յիւր գործն. քրիստոնեայն ի յիւր գործն:

Այլեւ անհոգութիւն մահուան աւուր ննջումն է եւ քում. ոչ ունիլ ի մտի զհամար պարտուցն պահանջելոյ առաջի սոսկալի եւ ահաւոր բեմին որպէս զառայն անպիտան. եւ ոչ ունելով հանդերձ հարսանեաց՝ կապեալ ոտիւք եւ ձեռքք հանիլ ի խաւարն արտաքին: Յորոց փրկեսցէ Զրիստոս Աստուած առ հասարակ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ յանվախճան տանջանացն եւ յանշէջ հրոյն. եւ նմա փառք յաւիտեանս ամեն: Այսքան վաս շինեալ եկեղեցւոյ:

Նորին քարոզ վասն եկեղեցւոյ ժողովրդեան. ի Բանն (Մեաւ եմ ես եւ գեղեցիկ դստեր Երուսաղէմի, որպէս զվրանն Կեդարու եւ որպէս զհարանն Սողոմոնի այլովքն:) (Գլուխ. ԾԴ)

Նախ գիտելի է՝ զի Սուրբ եկեղեցի որք են ժողովուրդք քրիստոնէից, հոգեպէս դուստր եւ հարսն կոչին Աստուծոյ ի սուրբ գրոց վասն վեց պատճառի: Առաջին՝ զգերագանց եւ զծայրագոյն սերն Աստուծոյ նշանակէ. զոր ունի առ հաւատացեալս իւր. որպէս փեսայն առ հարսն. եւ փեսայ է բանն Աստուծոյ. եւ հարսն հոգիք հաւատացելոց: Երկրորդ՝ վասն բազմաճնութեան. որ եկեղեցի սուրբ՝ բազում զաւակս ծնանի զհոգեւոր առաքինուութիւնս. եւ մայր խնդայ ի վերայ հոգեւոր զաւակացն: Երրորդ՝ վասն կատարեալ միաւորութեանն զոր ունիմք ի Զրիստոս. զի գլուխ է մեր. եւ մէք մարմին եւ անդամք նորա լինիմք մի մարմին ընդ նմա եւ մի հոգի. եւ յայտ է ի հաղորդութիւնն. յորժամ ճաշակեմք զսուրբ մարմինն. միանամք ընդ Զրիստոսի մարմնով. եւ ըմպելով զարիւնն, միանամք հոգւով. եւ զի Աստուծոյ մարմին է եւ Աստուծոյ արիւն՝ միանամք ընդ աստուածութեան նորա. այսպէս կատարեալ միանամք ի Զրիստոս վան այն հարսն կոչէ զմեզ: Զորրորդ՝ զի հարսն եւ հարսանիսն՝ ուրախութեան է նշանակ. ցուցանէ՝ որ զալստեամբն Զրիստոսի ուրախացոյց զմարդկայինս բնութիւն. զսուրբ եւ զտրտմութիւն մեղացն յուրախութիւն փոխեաց. (եւ եբարձ զարտօսր յամենայն երեսաց:) Զինգերորդ՝ զի հարսն եւ կոյսն՝ անապական թարգմանի. ցուցանէ թէ՝ սուրբ եկեղեցի կոյս է սրբութեամբ եւ անապականութեամբ հոգւոյ եւ մարմնոյ: Չի որպէս զարդարէ զինքն հարսն եւ պատրաստի փեսային. նոյնպէս եւ մէք զարդարեմք զհոգիս մեր զանազան առքինութեամբ. այս է՝ զգլուխս մեր հաւատաով յուսով եւ սիրով զարդարեմք. եւ զբոլոր անձինս արդարութեամբ՝ ողջախոհութեամբ՝ արիւնութեամբ՝ եւ խոհեմութեամբ. եւ այսպէս զարդարեմք միշտ՝ զի հաճոյացուք երկնաւոր փեսային: Կեցերորդ՝ որպէս նախ նշան դնի հարսին՝ եւ ապա խաչիւ պսակի. նմանապէս եւ այժմ սրբէ զմեզ աւագանաւն. եւ դնէ նշան ոսկի զանապական հաւատն որպէս մատանի ի յաջոյ ձեռին մերում. եւ ապա յետ մահու՝ կոչէ զհոգիս մեր ի հարսանիսն ի տեսութիւն փեսային Զրիստոսի. եւ ապա յետ յարութեանն՝ լինի պսակն եւ հարսանիսն. յոր ժամ փեսայն երկնաւոր գայ եւ իջանէ յերկնից հայրական փառօք, եւ առնու զհաւատացեալս իւր եւ մտանէ յառագաստն լուսոյ ի խորանն երկնաւոր. որպէս յայտ է յիմաստուն կուսանացն որք վառեալ լապտերօք միտին յառագաստ փեսային: Եւ փեսայ կոչի Զրիստոս հոգւոց մերոց. զի որպէս (փեսայն թողու զհայր եւ զմայր իւր, եւ երթայ զհետ հարսին ասէ մարգարէն:)

Նոյնպէս եւ Տէր մեր Զրիստոս անբաժանաբար եթող զհայրն ի յերկինս. եւ զմայրն եթող տրտմագին ի յերկրի. եւ գնաց վասն սիրոյ մարդկան ի գերեզման մարմնով. եւ ի դժոխս էջ հոգւով առ հոգիսն որք անդ. եւ ազատեաց զնոսա ի տանջանաց: Վասն այս՝ եւ առաւել քան զայս պատճառացս՝ հարսն կոչէ զեկեղեցիս հաւատացելոց: Յորոյ ի դիմաց մարդկայինս ազգի՝ ասէ իմաստունն: (Մեաւ եմ ես եւ գեղեցիկ դստերք Երուսաղէմի. իբրեւ զվրանն կեդարու:) Կենդարն խաւար թարգմանի. զայն ասէ թէ՝ սեւ էի գործով՝ եւ խաւար էի մտօք՝ եւ փեսայն երկնաւոր գթացաւ

յիս. եւ գսելութիւն զագիր գործոյս լուաց՝ սպիտակացոյց՝ եւ զխաւար մտացս լուսաւորեաց. որպէս զվրանն սողոմօսի զի էր սպիտակ լուսաւոր. յօրինակ վերին տաճարին Երուսաղէմի. որ է լի լուսով եւ պայծառ մաքրութեամբ: Եւ թէ վասն Է՞ր պատմէ զայս. մին՝ զի գերախտիսն Աստուծոյ չէ պարտ ծածկել եւ մոռնալ. զոր յայտնիէ ամենեցուն՝ թէ այսպէս սեւ էի մեղօք եւ սպիտակացոյց եւ արդարացոյց Քրիստոսի: Եւ մին այլ՝ որ առաջին սուրբքն՝ վերջնոցն վարդապետք լինին եւ ուսուցանեն. վասն այն ասէ. (դստերք Երուսաղէմի:) Որ ներքին Երուսաղէմիս դստերք էք եւ ժողովուրդք. թէ կամիք դուք, նա նմանապէս զձեզ սպիտակացուցանէ եւ մաքրէ. եւ տանի ի վերինն Երուսաղէմ սուրբ եւ արդար գործովք ձերովք: Այլ վարդապետք զբանս զայս՝ նախ ի դէմս նախաստեղծիցն առնուն. որ ասէ՝ (մի հայիք յիս՝ զի ես եմ սեւացեալ.) այսինքն, արարիչն չէ պատճառ իմ սեւութեանս. այլ ես սեւացայ անձնիշխան կամօքս եւ յօժարութեամբս. որ թողի զպատուիրանն Աստուծոյ, եւ կերի ի պիտոյն եւ սեւացայ մեղօք: Այսպէս եւ առ մեզ՝ որք սեւանամք մեղօք անձնիշխան կամօքս մերովք եւ աղտեղանամք: Եթէ սեւանամք սկզբնական մեղօք, այլ է ի ծնողացն. որք անձնիշխան կամօք գործեցին զմեզս: Եւ թէ ներգործական մեղօք սեւանամք եւ խաւարիմք մտօք, այլ ի մեր կամաց լինի: Չի հոգիս մեր՝ ի ստեղծիլն պատկեր է Աստուծոյ՝ եւ մաքուր որպէս զլոյս. իսկ ի մարմինն միաւորեալ, խաւարի եւ սեւանայ մեղօք. զի ցանկութեամբ ծնողացն ծնանի: Եւ դարձեալ՝ հեշտանայ եւ ուսանի զմարմնական մեղս. եւ յայն նայ եւ ուսանի զմարմնական մեղս. եւ յայն ժամ առաւել տգեղանայ. որպէս զպատկեր թագաւորին՝ յաղբն եւ ի տիղմն շաղախեն: (Չի անտես արար զիս արեգակն:)

Արեգակն արդարութեան Աստուած է. այն է անտես առնելն՝ որ թոյլ ետ գնալ ի պատրանս օձին. որպէս արեւս յորժամ մտանէ, զջերմութիւն եւ զլոյսն արգիլէ եւ խաւարիմք. այսպէս ի դրախտին անտես արար եւ թոյլ ետ որ խաբեաց սատանայ, եւ խաւարեցաւ ի լուսոյն. եւ սեւացաւ ի պայծառութենէն: Այսպէս եւ այժմ մեք յայս երեք պատճառէս գործեմք զմեզս. այսինքն, նախ ի պատրանացն ստանայի. որ խաբէ զմեզ եւ արկանէ ի չարն: Երկրորդ՝ յանձնիշխան կամացս. որ մեք մեր յօժարութեամբս հաւանիմք եւ գործեմք: Երրորդ՝ ի թոյլ տալոյն Աստուծոյ. որ ի բաց թողու զմեզ՝ որ անձն իշխան կամօք գնամք ի չարն. եւ ներէ սատանայի փորձել զմեզ եւ ձգել ի մեղս: Այլ ոմանք զսատանայէ ասեն թէ՝ (արեգակն խեթիւ նայեցաւ ընդիս:) Եւ ո՞ր է խեթիւ նայիլն: Խեթիւ նայիլ այն է սատանայի՝ որ նախ ինքն մոլորաեցաւ ի փառաց, եւ ապա զԱդամ աղաչեաց: Սատանայ վասն Է՞ր կոչի արեգեակն: Ասեմք վասն բազում պատճառաց: Նախ զի՝ բնութեամբ լոյս գոյացան ընդ հրեշտակաց. եւ յետ անկմանն՝ զրկեցան ի լոյս շնորհաց եւ յիմաստութեանց եւ ի բարի կամաց: Վասն որոյ ոչ կարեն տեսանել զԱստուած. եւ ոչ իմանան զճշմարտութիւնն. եւ ոչ կամին զբարին: Այլ բնութեան լոյսն գոյ ի նոսա. որով (հրեշտակ լուսոյ կերպարանին ասէ առաքեալն.) եւ պատրեն զմարդիկ. վասն որոյ փայլակն՝ արգակն՝ եւ աստղ կոչին: Երկրորդ՝ զի արեգակն երբեմն առաւել ջերմով. եւ երբեմն պակաս վնասէ. որպէս յամառն եւ ի ձմեռն. այսպէս եւ սատանայ ջերմացեալ ի սեր աշխարհիս, ցրտացեալ ի սիրոյն Աստուծոյ, վնասէ զմարդիկ: Երրորդ կրկին վնասէ ջերմութեամբն. խորշակահար առնէ. եւ զծաղիկն սեւացուցանէ. այսպէս եւ սատանայ փորձութեամբ զծաղիկ հաւատոյն եւ զպտուղ

բարեացն կորուսանէ: Չորրորդ՝ արեգակն գմատադ բոյսս եւ զծաղիկս վնասէ. այլ ոչ զհաստատեալսն: Եւ սատանայ զնոր եկեալսն ի հաւատս եւ ի գործս բարիս՝ խանգարէ որպէս զնախաստեղծսն. եւ զհաւատացեալսն ոչ կարէ: Զինգերորդ՝ արեգակն ի միջին կարգն է մոլորակացն. եւ ի միջին դասուցն ասեն հրեշտակաց անկեալ: Վեցերորդ՝ զի յայլս ազգէ արեգական որպէս ասեն ի մաստունք. եւ ի բազումս աստեաց սատանայ. եւ ընդ ինքեան կորոյս ի հրեշտակաց եւ ի մարդկանէ. որպէս ասէ տեսիլն. (գերորդ մասն աստեղացն տըտամբն քարշեալ:): Եօթներորդ՝ մի է արեգական եւ ի բազումս ազգէ. եւ մի է զլուխ չարին սաղայել՝ որ կոչեցաւ ստանայ եւ հակառակ Աստուծոյ. եւկ ապա զբազումս մոլորեցոյց ընդ ինքեան: Ութներորդ՝ (ի տիւն արեգակն մեղանչէ՝ եւ լուսինն ի գիշերի.) եւ սատանայ որք ի տիւ գործոց են եւ ի լոյս է հաւատոց՝ բարկութեամբ եւ հապարտութեամբ վնասէ. եւ զխաւարեալսն մեղօք՝ զհիշութեան ախտիւ: Իններորդ՝ ոմանք չորանան ջերմութեամբ որպէս խոտք. եւ ոմանք հասանին որպէս պտուղք. եւ փորձութեամբ նորին՝ թերահաւատքն պակասին. եւ հաստատեալքն հաստատին եւ հասանին ի փառս: Տասներորդ՝ արեգակն զգիշութիւնն յերկրէ հանէ. եւ ամպով խաւարէ զնա. այսպէս եւ սատանայ զմեղս ի մարմինս մեր եւ ի հոգիս թանձրացուցեալ, խաւարէ ամպով զմիտս մեր. եւ զրկէ յաստուածային լուսոյն. ըստ այսմ եղանակի ի հակառակն գործելոյ՝ արեգակն եւ փայլակն կոչի սատանայ: (Որդիք մօր իմոյ մարտեան ընդիս:): Չսատանայ եւ զդէս ասէ որդիք մօր. զի հայր է մեզ ամենեցուն արարիչն Աստուած: Իսկ մայր է բնութիւն արարչական. այսինքն, արուեստն Աստուծոյ. որպէս ասեն վարդապետք. զի ամենեքեան հրեշտակք եւ մարդիկք՝ արուեստիւն Աստուծոյ յառաջ եկաք. որպէս հիւսն արուեստիւն գործէ եւ կազմէ զտաճարն, եւ կամ զայլ ինչ: Նոյնպէս ամենայն արարածքս՝ յարուեստաւոր կամացն Աստուծոյ յառաջ եկաք. վասն այն նոքա որդիք մօր կոչին մեզ. եւ եղբայր ոչ կոչին մեզ. զի չարացան եւ թշնամիք են մեր. չարն բարւոյն հակառակ է եւ ոչ եղբայր: Նոյնպէս թեպէտ ի մին արգանդէ աւագանին ծնանին ուղղափառք եւ հերձուածօղք՝ չեն մեզ եղբարք. այսպէս թէ զմին քահանայութեան կարգ առին եւ ի բաց թողին՝ չեն միմեանց եղբարք: Նոյնպէս թեպէտ ի մի յարգանդէ մօր ծնանին՝ երբ թշնամիք լինին, չեն եղբարք միմեանց: Ապա յայտ է թէ՛ այն է առաւել եղբայր՝ որ մին կամօք եւ մին խորհրդով եւ սրտիւ բարեկամ լինի. որպէս Տէրն հրամայէ: (Ո՞վ է իմ մայր եւ եղբայր եւ քոյր. որ առնէ զկամս իմ, նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր.) վասն այն ոչ են եղբարք դէքն մեզ: Նաեւ հրեշտակաց չեն եղբարք. թեպէտ ի մին բնութիւն ծնան անմահ աւ անմարմին եւ լուսեղէն որպէս ասացաք. այլ մեղօքն զոր գործեցին եւ չար կամօքն՝ ելին յեղբայրութենէ եւ յընկերութենէ նոցա: Այլ որդիք մօր ասին՝ զի ի բարի կամացն Աստուծոյ բարի ստեղծան նոքա. այլ յետոյ իւրեանց կամօքն՝ չարացան եւ եղեն թշնամիք եւ հակառակք Աստուծոյ, եւ հրեշտակաց եւ մարդկան: Ընդդէմ արաչին Աստուծոյ հակառակեցան եւ հպարտացան. եւ ոչ ետուն զփառաբանութիւնն Աստուծոյ. եւ անկան ի խաւարն արտաքին. եւ հրեշտակաց թշնամիք են. զի նոքա մնացին յերկինս եւ ի փառս իւրեանց. եւ նոքա զրկեցան: Եւ մարդկան թշնամիք եղեն. զի տեսին զմարդն ի պատկերն Աստուծոյ ստեղծեալ. եւ ի փառակենցաղ դրախտին զարդարեալ. եւ զիւրանց տեղիսն նմա խոստացեալ. վասն այն հնարացան խաբէութեամբ

մարտնչիլ ընդ նմա. զի ընդ Աստուծոյ չկարէին թշնամութիւն առնել՝ ընդ մարդոյն արարին որ պատկեր է Աստուծոյ. որպէս մարդ որ թագաւորին թշնամի լինի՝ յորժամ ոչ կարէ վնասել թագաւորին, ընդ սիրելիս նմա հանէ զքէնն. այսպէս եւ հրեշտակաց չկարէին թշնամութիւն առնել՝ ընդ մարդոյն արարին. զի մի ելցէ մարդն ի դասսնց. եւ զթերին նոցա լցուցէ: Այս մարդոյն կորստեամբն՝ տրտմեցուցին զԱստուած եւ զբարեկամ հրեշտակսն: Եւ տես զի ասէ՝ (մարտեան ընդ իս.) Գ կերպիւ է մարտն: Կռիւն որ է լեզուաւ. եւ մարտն որ է անձամբ՝ որպէս ըմբշամարտիցն. եւ պատերազմ՝ որ է սրով եւ աղեղամբ. եւ այսպէս ոչ կռուին ընդ մարդս լեզուաւ եւ բանիւ. զի չունին մարմին եւ ոչ պատերազմին. զի չունի սուր եւ թուր եւ աղեղն մարդկան. այլ մարտնչին միայն անձամբ. որպէս մենամարտիկք. եւ փոխանակ աղեղան եւ սրոյ նոցա՝ է հնարն եւ խաբէութիւնն իւրեանց. որ միջնորդօք որպէս օձին. եւ անմիջոց մարտնչին ի գիշերի եւ ի տունջեն: Երբեմն ծածուկ ի խորհուրդս. եւ երբեմն յայտնի ի զգայութիւնս մարտնչին: Այս ընդ նախաստեղծսն մարտեան միջնորդութեամբ օձին, եւ զրկեցին ի դրախտէն կենաց: (Եղին զիս ասէ պահապան այգեստանեայց:) Բազում ասէ այգեստան. զզանազան չարիս՝ որով ծառայեցուցանեն զմարդիկ. ուտելոյ. ըմպելոյ. պոռնկութեան. շնութեան. սպանութեան. ազահութեան. կռապաշտութեան. եւ այլ չարեաց. (զի որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղացն ասէ Տէրն:) Եւ այս վասն ի՞նչ պատճառի եղել՝ ասէ. (զի զայգին իմ ոչ պահեցի.) տես զարտասուաց եւ զողբոց բանս եւ զկիրս տարակուսանաց. թէ զգայուն եւ իմաստուն միտս ունիս. ասէ՝ (զայգին իմ ոչ պահեցի.) այսինքն, զդրախտն իմ. զի զդրախտն վասն Ադամայ տնկեաց Աստուած: Չմին այգին ոչ պահեցի ասէ. վասն այն թշնամիքն եղին զիս պահապան բազում այգստանեայց: Եւ դարձեալ՝ զիմ այգին որ ես Տէր էի նմա, ոչ պահեցի. նա տարան զիս եւ եղին պահապան եւ մշակ օտար այգեստանեայց: Չի Աստուած (եդ զԱդամ ի դրախտին փափկութեան գործել զնա եւ պահել:) Եւ զի չէր կարօտ դրախտին գործելոյ եւ պահելոյ. զի գող եւ աւազակ չկայր. եւ անասունք ի դրախտն ոչ մտանէին. եւ ծառք եւ տունկք դրախտին պետս ոչ ունէին ջրոյ յետելոյ. (զի գետ ելաներ եւ ոռոգեր զնա ասէ աստուածային գիրն.) Եւ պտուղքն եւ ճիւղքն. անծորելիք եւ անապականք էին: Ապա զի՞նչ գործեր եւ պահեր մարդն. յայտ է՝ զի զպատուիրանն հրամայեաց Աստուած պահել. եւ զբարիսն գործել. եւ նա ոչ զպատուիրանն պահեաց. եւ ոչ զբարիսն գործեաց: Վասն այն ողբալով ասեն նախաստեղծք. (զի զայգին իմ ոչ պահեցի.) այս ամենայն չարիքս եւ վիշտքս եկին ի վերայ իմ: Սեւութիւն մեղաց. խաւար եւ մթութիւն մտաց. մահ. ապականութիւն. անէծք. փուշ եւ տատասկ. քիրտն եւ աշխատանք. քաղց եւ ծարաւ. եւ յետոյ (հող էիր եւ ի հող դարձցիս.) վիճիռ եհատ աստուածային հրամանն: Չայս ունի միտս բանս որ ասէ: (Սեաւ եմ ես եւ գեղեցիկ դստերք Երուսաղէմի եւ այլն:) Դարձեալ՝ այլ իմն եղանակաւ մեկնի բանս ի վերայ հրէից ժողովրդեանն. որ թեպէտ ամենայն աշխարհ առհասարակ մարդկային ազգս սեւացեալ էր մեղօք՝ եւ խաւարեալ մտօք ի կռապաշտութիւն անկեալ. այլ Իսրայելի ազգն լոյս էր աւատովն. եւ արդար գործովն. (զի հաւատաց Աբրահամ յԱստուած՝ եւ համարեցաւ նմա յարդարութիւն.) եւ եղել բարեկամ Աստուծոյ. եւ ազգքն նորա ի մէջ աշխարհի՝ բարեպաշտութեան հաւատովն Աստուծոյ՝ պայծառ էին եւ լուսաւորք. որպէս զխորանն Սողոմոնի, որ վասն սպիտակութեան եւ

լուսոյն ասի: Իսկ յորժամ մտին յԵգիպտոս, սովորեցան ի գործոց ևոցա ի գործս ևոցա եւ ի կուռս սեւացան եւ խաւարեցան ընդ ևոսա. մինչեւ խնամքն Աստուծոյ եհան զևոսա ի ձեռն Մովսէսի. եւ որպէս զայգի տնկեաց ի պաղեստին յԵրուսաղէմ: Եւ դարձեալ՝ սպիտակացոյց զևոսա օրինօք եւ լուսաւորեաց հաւատով. որպէս ասէ մարգարէն (այգի յԵգիպտոսէ փոխեցեր. հաներ զհեթանոսս եւ զևոսա տնկեցեր:) Եւ Եսայի ասէ. (այգի աղել սիրեցելոյն.) զժողովուրդն Իսրայէլի ասէ. որպէս զայգի վայելչացոյց զևոսա. եւ ցանկով փակեաց: Օրէնն էրր ցանկն: Եւ յայնչ՝ ոչ էր անդամանդեայ ամուր պարիսպ որպէս ևոր օրէնքս. այլ ցանկ էր՝ որ դիրաւ ի բաց իլեցաւ: Եւ դարձեալ՝ ցանկ էր եւ փոշ խոցոտիչ օրէնքն. զի (ակն ընդ ընդ ական էր. եւ ատամն ընդ ատաման, եւ այլն:) Եւ ևոքա ոչ պահեցին զօրէնսն Աստուծոյ. այլ անկան ի կռապաշտութիւն: Վասն այն անտես արար զևոսա արեգակն Աստուած. եւ մատնեաց զևոսա ի գերութիւն այլազգեացն: Իսկ որ ասէ՝ (որդիք մօր իմոյ մարտեալ ընդիս:) Մայր եւ դայեակ ևոցա առ հասարակ՝ օրէնքն էր բոլոր ամենայն ցեղիցն. այլ տասն ցեղքն որք բաժանեցան ի Սամարիայ՝ եւ եղին իւրեանց թագաւոր. եւ մարտեան ընդ Երուսաղէմի կուռս պաշտելով. եւ ոչ եկին ի պաշտօն տաճարին Աստուծոյ եղին քուրմս կոռց իւրեանց. վասն այնորիկ գերեցին զևոսա քաղաքացիքն երկու եւ երեք անգամ. եւ տարան ի Բաբելոն. եղին պահապան քաղաքական ուսմանն եւ կրօնիցն: Եւ այս էր պատճառն որ ասէ. (զի զայգի օրինացն ոչ պահեցին:) Դարձեալ ի դէմս ևորս եկեղեցւոյ քրիստոնէից՝ այսպէս տեսանի բանս: (Սեաւ եմ ես եւ եւ գեղեցիկ:) Ի մէջ քրիստոնէիցս՝ գեղեցիկք են ևոքա, որք հաւատով ուղղափառք են եւ գործով սուրբ. զի հաւատն՝ գեղեցկութիւն եւ զարդն է մարմնոյն: Դարձեալ՝ որպէս գեղեցկութիւն երեսացն ի չորս գունոց է ժողովեալ. որ է սպիտակ. դեղին. կարմիր. եւ սեւութիւն հերացն: Այսպէս չորս իր գեղեցկութիւն է երեաց հոգւոյս մերոյ. հաւատն սպիտակ եւ պայծառագոյն է հոգւոյս. որ առնու զաստուածային լոյսն եւ պայծառանայ: Դեղինն յոյսն է եւ կարօտութիւն առ Զրիստոսս եւ յարքայութիւնն երկնից. սերն կարմիրն է՝ որք շերմանան սիրովն Զրիստոսի եւ զարիւսս իւրեանց հեղուն: Եւ սեւագոյնն որ պայծառացուցանէ զայլ գոյնսն են մարմնական առաքինութիւնքն, եւ չարչարանքն ի մեզ. որք զաստուածային առաքինութիւնսն պայծառացուցանեն եւ գեղեղկացուցանեն: Այսոքիկ են գեղեցկութիւնք երեսաց հոգւոյն: Այս է ասելն թէ՝ (գեղեցիկ եմ:) Իսկ որ ասէ՝ (սեաւ եմ:) Այն է՝ որ թեպէտ հաւատովն պնտի, այլ գործովն աղտեղի եւ սեաւ է. զի որպէս աղան սեւացուցանէ զմարմինն եւ զարշեցուցանէ. այսպէս եւ մեղքն զհոգին զարշեցուցանէ եւ ատելի առնէ Աստուծոյ եւ հրեշտակաց: Եւ որպէս սեաւ գոյնն դժուարաւ փոխի. այսպէս եւ մեղաւոր հոգին՝ որ ներկեալ եւ սովորեալ է ի մեզս, դժուարաւ փոխի ի սրբութիւն. սորպէս ասէ մարգարէն: (դիրին է ընծան թողուլ զխայտաբղետութիւն իւր, քան մարդոյ անզգամի զչարութիւն իւր:) Եւ դառն ողբոց եւ շերմ արտասուաց պետք են՝ որ գերեալ է ի մարմնոյն եւ ծառայ եղեալ մեղացն: Վասն ասէ (դատերք Երուսաղէմի:) Երուսաղէմն խաղաղութիւն թարգմանի: Եւ ևոքա են դատերք խաղաղութեան՝ որք ի խռովութենէ մեղացն դարձեալ են. եւ եկեալ յապաշխարութիւն: Եւ ևոքա ասէ՝ մի հայիք ի սեաւս որ յիս. զի չեմ արժանի հայիւոյ. որ գարշելի եմ եւ սեւացեալ մեղօք. եւ ոչ կարեմ ապաշխարել եւ սպիտականալ: Եւ զի՞նչ է պատճառն որ ասէ. (զի անտես արար զիս

արեգակն:) Արեգակն անետարանն է եւ քարոզն՝ որ զուսաւորէ զհոգիս մեր. եւ այլ է անտես առնելն՝ որ հարկիւ ոչ կոչէ զիս. այլ ասաց: (Որ ոք կամեսցի՝ եկեսցէ զհետ իմ:) Նոյնպէս եւ քարոզօրք՝ ոչ ուսուցանեն զմեզ, եւ ոչ բռնադատեն դառնալ ի մեղաց: Չի սովորութիւն է Աստուծոյ եւ սուրբ արանց՝ որք ոչ բռնութեամբ ձգեն զմարդն ի յապաշխարութիւն. զի ակամայիցն եւ բռնադատելոցն՝ ոչ է կատարեալ սեր. այլ քարոզեն զբարին. որ ոք իւր կամօքն լսէ եւ ուսանի, գերծանի ի մեղաց. եւ որ ոչ լսէ՝ անձինն է պարտական: Եւ երեք կերպիւ անտես առնէ զմարդ: Մին՝ որ ի կամս թողու զմարդ որ կորնչի. եւ ոչ առաքէ քարոզօրս՝ մարգարէ եւ առաքեալ. որպէս այժմ ճանաչէ. որպէս զառաքեալն Պետրոս յինքն թողեալ անտես արար Տէրն. մինչեւ ուրացութեամբն սեւացաւ. եւ դարձեալ ելաց դառնապէս, մինչեւ արդարացաւ. Երրորդ՝ անտես առնէ, յորժամ յետ մեղացն բարկանայ Աստուած եւ պատուհասէ. որպէս զԱդամ յետ մեղացն անտես արար եւ եհան ի դրախտէն բարկութեամբ. այսպէս եւ զամենայն մեղաւորս անտես առնէ. կամ այժմ մարմնաւոր պատուհասիւ՝ ի սով, ի սուր, ի գերութիւն, ի հիւանդութիւն, ի մահտարածամ, եւ այլ իրօք. կամ անդ ի տանջանսն յաւիտենից անտես առնէ: Իսկ ասելն՝ (որդիք մօր իմոյ մարտեան ընդիս:) Չմիտսն կոչէ մայր. եւ զանազան ախտք ծնանին ի մտացն. չար խորհուրդ. ցատումն. ցանկութիւն. ագահութիւն. ծուլութիւն. հպարտութիւն. նախանձ. եւ այլն ամենայն. եւ սոքա հաւառակին ընդ մեզ. եւ զբարի խորհուրդն հանեն ի մէջ: Չսրբութիւն. զարկեշտութիւն. զպահս. զառաքինութիւն. եւ զայլն. զի հանապազ մարմինս ցանկայ հակառակ հոգւոյս. եւ գերէ զհոգին հեշտութիւն մեղաց: (Եդին զիս պահապան այգեստանեայց:) Որո՞յ այգւոյ. այն այգւոյն զոր ասէր մարգարէն: (Յայգւոյն Սողոմայ Էր որթ խոցա. եւ տունկը խոցա ի գոմորայ:) Այսպիսի մեղաց այգւոյս՝ սատանայ է մշակ՝ եւ աճեցուցանէ. (եւ խաղող խոցա խաղող դառնութեան. եւ ողկոյզ խոցա զեղի:) Վասն զի պտուղ մեղացն դառն է. զի ի գործելն քաղցր եւ հեշտութիւն. այլ յետ գործելոյն՝ դառն է քան զլեղի: Այն՝ է որ խղճմտանքն հանապազ դատէ եւ տանջէ զմարդ: (Եւ սրտմտութիւն վիշապաց գինի խոցա առանց բժշկութեան.) այսինքն, որպէս ի վիշապաց եւ յօձից հարեալն ոչ բժշկի. այսպէս եւ հարեալն այսպիսի անբժշկելի ցաւօք՝ ի հուրն յաւիտենական տանջի: Այսպիսի այգեացս՝ մեր չար խորհուրդքս զմեզ պահապան դնեն. զի հանապազ զայն գործեմք՝ որք ոչ թողումք կորնչիլ զզանազան եւ զպէսպէս տեսակս մեղաց: (Չի զայգի իմ ոչ պահեցի:) Եւ այս է պատճառն որ ասէ. որ զիս բարեաց այգւոյն պահապանի ադին. եւ ոչ պահեցի զայն այգին զոր ասաց Քրիստոս: (Ես եմ որթ եւ դուք ուռն. կացէք ի յիս եւ ես ի ձեզ:) Որթն Քրիստոս է հիմն եւ արմատ մեզ. եւ մեք հաւատացելքս ուռն եւ մատն պտղաբեր ի նա հաստատեալ հաւատով եւ յուսով. եւ նա ի մեզ սիրովն եւ ինամօքն. եւ ապա բերեմք զպտուղ բարեգործութեան: Այլեւ այգի է զանազան շնորհն ի մեզ. քահանայութեան, վարդապետութեան, եպիսկոպոսութեան, կրօնաւորութեան, քրիստոնէութեան, եւ այլն: Եւ իւրաքանչիւր մարդ՝ այգեգործ է շնորհաց իւրոց. պարտ է իւրաքանչիւր մարդոյ՝ պտղաբերել զշնորհս իւր, եւ յաւելուլ ի շահն. որպէս որ Էառ զքանքար արծաթոյն՝ շահեցաւ եւ երանեցաւ ի Տեառնէ: Այս է՝ որ քահանայն զիւր գործն առնէ. եւ վարդապետն զիւրն. եւ այլն ամենայն նմանապէս: Ապա թէ ծուլութեամբ կորուսանեմք զշնորհսն ի մեզ, ինքն Տէրն շնորհաց

ինդրէ ի մէջ. եւ տոկոսեօք պահանջէ զշահն. եւ հանէ ի խաւարն արտաքին: Դարձեալ՝ այգի է իւրաքանչիւր մասն զգայարանացն ի մեզ. այգի է աչքն. պարտ է հայիլ եւ տեսանել զբարին եւ պտղաբերել: Այգի է լսելիքն. պարտ է զբարին լսել եւ զօրէնս Աստուծոյ խորհիլ: Այգի է լեզուն. պարտ է զԱստուած փառաւորել եւ օրհնել: Այգի է ձեռքն. պարտ է յերկինս համբառնալ. եւ զողորմութիւն բաշխել: Այգի է ոտքն. պարտ է ի բարիս ընթանալ. եւ յեկեղեցիս դիմել. եւ այսպէս մեզ ինքեանց մշակ եւ այգեգործ լինիլ. եւ զբարի պտուղս ընծայել Տեառն եւ Աստուծոյ տնկողին մերոյ: Ապա թէ մեք զայգիս մեր ոչ պտղաբերեմք, երկու ինչ գիտելի է: Մին՝ որ տերեւն ի հնձանն ոչ մտանէ. այլ խաղողն եւ պտուղն. նոյնպէս աւելորդքն կենաց մերոց՝ տերեւք են. այսինքն, չար գործելն. փառասիրելն. հեշտանալն. ինչս ժողովելն, եւ այլն. սոքա ոչ ժողովին ի հնձան արքայութեանն երկնից: Այլ պտուղն բարի գործոցն. նոքա կոխտին ի հնձան. եւ նոքա լինին մեզ ուրախարար գինի յարքայութեանն երկնից. որպէս ցորեանն որ ժողովի յշտեմարանն. եւ զյարդն եւ զժեղն հողմն ցուէ. եւ այրելիք են հրոյն. այսպէս եւ բարեգործ մարդն ժողովի յարքայութիւնն որպէս ցորեան եւ պտուղ. եւ մեղաւորքն ցրուին եւ կորնչին ի հուրն. որպէս ասէ աւետարանն. (ժողովեսցէ զցորեանն յշտեմարանս. եւ զյարդն այրեսցէ անշեշ հրով:) եւ մին այլ գիտելի է՝ որ թէ մեք ոչ գործեմք զայգիս՝ ինքն հայր Աստուած լինի այգեգործ եւ մշակէ. զամենայն տունկ որ չոր է եւ չորացեալ մեղօք՝ հատանէ եւ ի հուրն այրէ. որպէս ասէ աւետարանն. (տապար առ արմատ ծառոց դնի.) այսինքն. սուր մահուն՝ ի յարմատ կենաց մեր է եղեալ. (որ ոչ պտուղ բարի՝ հատանի եւ ի հուրն արկանի եւ այրի. իսկ որ տայ զպտուղ բարի՝ սրբէ զնա.) եւ զաւելորդ զմեղս հասանէ ի նմանէ. եւ սրբեալ պտղաբերէ զհոգին եւ ժողովէ՝ ի կեանսն յաւիտենից. եւ նմա փառք եւ պատիւ եւ իշխանութիւն, յաւիտեանս ամեն:

Նորին դարձեան քարոզ վասն եկեղեցւոյ եւ սրբոյ: (Տեսի նշանն յերկինս. կին մի արկեալ զիւրեաւ զարեգակն. եւ ընդ ոտիւք զլուսինն. եւ երկոտասան աստղ ի գլուխն:) Յայտ. 123. 1:

Ի սկզբան ստեղծագործութեան աշխարհի՝ արար ասէ Աստուած զարեգակն եւ զլուսին եւ զաստղս լուսատու լինի յերկիր. եւ ի նշանս եւ ի ժամանակս. յաւուրս եւ ի տարիս: Չի որպէս արարիչ են ժամանակաց. զտիւ զգիշեր. զամիս եւ զտարի կտրեն շարժմամբն իւրեանց: Այսպէս եւ զնշան ցուցման մարդկան. եթէ խռովութեան, կամ խաղաղութեան աշխարհի. զի տեսեալ մարդիկ, պատրաստեն զինքեանս վասն պահապանութեան առաջիկային: Իսկ այն նշան՝ մեծ փրկութեան է եւ կենաց՝ որ երեւացաւ յերկինս: Եւ ոչ մահու կամ խռովութեան: (Կին մի արկեալ զիւրեաւ զարեգակն եւ ընդ ոտիւք զլուսինն:) Ոմանք զաստուածածինն ասեն լուսազգեաց կոյս՝ աստուածածնողութեանն: Չի ոչ միայն զգեցեալ էր զլոյս. այլեւ զարեգակն արդարութեան ծնեալ զՔրիստոս. եւ գերազանցեալ ի վերոյ լուսնի հին օրինացն. եւ բանից մարգարեիցն կատարումն եղեալ: Իսկ ըստ այլ վարդապետաց՝ կին կոչի եկեղեցի սուրբ վասն կրկին պատճառի: Նախ՝ հարսն է Քրիստոսի՝ եւ դուստր Աստուծոյ հօր: Եւ երկրորդ՝ զի ծննդական եւ բազմազաւակ է կոյսն: Իսկ (կին մի ասէ:) Չի մի է կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի որ ընդ ոլորտս տիեզերաց. զի թեպետ տեղեալ

զանազան է. այլ մի է խորհրդով եւ գիտութեամբ. եւ մի է պսական եւ փեսային Քրիստոսիւ. զի մի է յոյս կոչման. եւ մի հաւատ. եւ մի կատարումս սիրոյն առ Աստուած: Այլ գիտելի է՝ զի հոմանուն է եկեղեցի. եւ Գ նշանակութիւն ունի: Չի կոչի եկեղեցի շինեալն ի քարանց եւ յայլ նիւթոց իբր ժողովարան: Եւ եկեղեցի կոչին հաւատացեալ ժողովուրդքն ի սմա. որպէս ասացաւ Մովսէսի՝ (եկեղեցացո զժողովուրդդ:) Եկեղեցի՝ կոչի եւ սուրբն ժողովք ելեալքն ի մարմնոց. որպէս ասէ Պօղոս. (յեկեղեցիս անդրանկաց կատարելոցն յերկինս:) Եւ դիտաւորութիւն բանիս՝ նախ առ ստորինս եկեղեցի. որ շինեալ ի նիւթոց. զի որպէս մեզ զգայի լոյս՝ նորա է իմանալի. եւ որպէս մեզ քաղցր է այս լուսոյս նշոյլն. եւ նմա այն ճառագայթն: Եւ որպէս մեզ ոսկի՝ նմա մաքուր անախտութիւնն: Եւ որպէս մեզ ակն պատուական. նմա աստեղք պայծառ եւ լուսաւոր. որովք զարդարի եւ պսակի թագիւ: Իսկ լուսինն՝ է հաւատոյն օրինակ եւ աւազանին: Նախզի՝ ունի լոյս. եւ է խոնաւ գոյացութիւն. նոյնպէս աւազանն՝ հաւատոյն դաւանութեամբ մաքրէ եւ լուսաւորէ զծնեալսն ի նմանէ. զի ունի զլոյս շնորհաց. եւ զխոնաւուտ տարր ջրոյ: Երկրորդ՝ զի լուսին վերստին ծնանի. այսպէս հոգեւոր մայր մեր ամենեցուն՝ վերստին ծնանի զմեզ. զշնչաւորս հոգեւոր ի տիպ նմանութեանն Քրիստոսի: Երրորդ՝ որպէս լուսինն երեսնօրեայ ծնանի. նմանապէս եւ սա ծնանի զմեզ (ի յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի.) որ երեսնամեայ մկրտեցաւ: Այլեւ հինգ լինին զարմանալիք ի ծնունդս աւազանին: Նախ՝ որպէս Քրիստոս ի կոյս արգանդ է ծնաւ. նոյնպէս եւ եկեղեցի սուրբ՝ կուսութեամբ ծնանի զմեզ: Երկրորդ՝ որպէս արու ծնաւ. նոյնպէս ամենայն ծնեալք աւազանին՝ արու ծնանին. զի ոչ ինչ ունին իզական վատթարութիւն: Երրորդ՝ զի ամենեքեան անդրանիկ ծնանին յաւազանէն որպէս Քրիստոս. եւ ոչ ոք կրտսեր: Չորրորդ՝ զի մենեքեան որդիք Աստուծոյ ի Քրիստոսի ծնանիմք, մի մարմին եւ անդամ լինիլ մարմնոյն Քրիստոս զգեցաք: Դիւզերորդ՝ զի ամենեքեամ ազատք եւ ժառանգք Աստուծոյ. եւ ժառանգակից Քրիստոսի ծնանիմք աւազանաւն. որպէս ասէ առաքեալն. (չիք խտիր. ոչ հրէի եւ ոչ հեթանոսի. ոչ ծառայի եւ ոչ ազատի. ոչ արուի եւ ոչ իգի. զի ամենեքեան դուք մի եք ի Քրիստոս Յիսուս:) Եւ զայսպիսի ծնունդս՝ ցուցանէ հոգւովն սրբով մարգարէն Եսայի ասելով: (Ո՞ր ետես՝ ո՞ր լուաւ՝ զի երկնեաց սիօն եւ ծնաւ զազգ մի ողջոյն:) Այս վասն շինեալ եկեղեցւոյ: Դարձեալ՝ ժողովեալս եկեղեցի՝ զգեցեալ ունի զարեգակն արդարութեան որ է Քրիստոս. որով կոչի քրիստոնեայ: Այլեւ լուսով աւետարանին է ճառագայթեալ եւ պայծառացեալ: Իսկ լուսինն ի ներքոյ ոտից՝ որ է հին օրինական լոյսն ստուերապէս ի ներքոյ եղեալ: Նախզի՝ լուսինն է պայծառութիւն գիշերոյ. եւ օրէնքն Մովսէսի՝ լուսաւորէր զգիշեր կենցաղոյս. մինչ ծագեցաւ իմանալի արեգակն Քրիստոս: Երկրորդ՝ զի փոփոխական է լուսինն. եւ հին օրօքն փոխեցաւ յաշխարհական յուսոյն ի յոյսն եկնաւոր: Երրորդ՝ որպէս լուսինն միաւորի ընդ խոնաւուտ տարր նիւթոյն. այսպէս եւ սիւն լուսոյն ընդ ծովն կարմիր. որով ազատեցաւ Իսրայել. եւ ընկղմեցաւ Փարաօն: Նշանակէ զխորհուրդ մկրտութեանն՝ որով ազատիւք մեք. եւ ընկղմին դէք եւ մեղք: Եւ զայս ի ներքոյ ոտիցն ասէ. զի դուռն քրիստոնէութեան եւ արքայութեան է մկրտութիւնն: Նախ պարտ է մտանել առ նա. եւ նովաւ յայլ խորհուրդս եւ յարքայութիւնն երկնից: Իսկ յերկոտասան աստեղաց պսակ ի գլուխն՝ են բանք առաքելականք եւ

առաքինությունք. որովք պսակիմք: Նաեւ երկոտասան աստիճան հաւատոյն՝ որ յերկոտասան առաքելոցն աւանդեցաւ, Է լոյս եւ պսակ պարծանաց սուրբ եկեղեցւոյ: (Եւ էր յղի, եւ ճչեր յերկնելն. եւ բազում վշտօք ծնաներ:) Եւ գիտելի է՝ զի յեկեղեցի սուրբ երեք են ծնօղք եւ դայեակք զաւակաց: Նախ՝ որք բանիւ եւ ուսմամբ ծնանին. որպէս վարդապետք զաշակերտսն. ըստ այնմ որ ասէ առաքեալն. (ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն ես ծնայ զձեզ. եւ երկրնեմ, մինչեւ նկարեցի ի ձեզ Քրիստոս:) Եւ աստ ասէ. (ճչեր յերկնելն. եւ բազում վշտօք ծնաներ:) Այս է՝ զի վարդապետք բազում աղօթեն առ Աստուած վասն աշակերտաց. եւ պեսպէս վիշտս կրեն յուսուցանելն մինչեւ խրատեսցին: Երկրորդ՝ ծնօղք կոչին քահանայք ժողովրդեանն. եւ հայրապետք քահանայից. որք հոգեւոր ծնօղք են նոցա ի շնորհս մկրտութեան, եւ քահանայութեան, եւ այլոցն: Եւ նոքա եւս երկնեն եւ տքնին վասն նոցա. որպէս ասէ առաքեալն. (ուսիկնդիր լերուք առաջնորդաց ձերոց. եւ հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ձեր. որպէս թէ համարս տալոց են ընդ ձեր:) Եւ բարուք լինիլն՝ խնդութիւն Է հարցն նոցա. որպէս գրէ յաւետարանին Յօհաննէս. (իմ ուրախութիւնն այն է՝ յորժամ լսեմ թէ իմ որդեակքն զնան ճշմարտութեամբ:) Երրորդ՝ ծնօղք կոչին գործովք. որ իւրաքանչիւր ոք ի գործս բարիս զփրկութիւն հոգւոյ իւրոյ ծնանի. ըստ այնմ, (յահ եւ յերկիւղ քո յղացեալ երկնեցաք. եւ ծնաք զհոգի փրկութեան մերոյ:) Եւ յասմ եւս բազում չարչարանս պարտ Է յանձինս կրել. եւ ապա զփրկութիւն հոգւոյ ծնանիլ. որք են պահք, աղօթք, ողորմութիւն, խոնարհութիւն. գետնախշտութիւն, տքնութիւն, արտասուք, եւ այլն ամենայն: Եւ երեքին ծննդոցս այսոցիկ՝ (տուաւ ասէ երկու թեւս արծուոյ՝ զի թռիցէ յանապատ եւ կերակրեսցի անդ:) Այսինքն, ինամքն Աստուծոյ օգնական լինի. եւ տայ նոցա կրկին թեւս: Որք բանիւ ծնանին՝ զտեսականն եւ զգոծականն ունին թեւ. եւ նոքօք՝ թռչին յիմաստութիւնն Աստուծոյ եւ կերակրին: Եւ որք ի շնորհս ծնանին՝ թէ Է նոցա մկրտութիւնն եւ ուխտ արեան: Եւ որք զհոգիս իւրեանց ծնանին՝ թեւ են նոցա հաւատքն եւ բարի գործքն: Որովք թռչին յանպան ի մեղաց յերկինս. եւ անդ կերակրին յուսով փառացն Աստուծոյ: Այլեւ կերակուր Է նոցա մարմինն Քրիստոսի. որ Է հանապազորդ կերակուր հոգեւոր. ըստ այնմ, (մարմին իմ ճշմարիտ կերակուր Է. եւ արին իմ ճշմարիտ ըմպելի:) Իսկ եօթնագլխի վիշահն ստանայի Է, որ ունի գեթն չար գորութիւնս. որպէս ասէ Տէրն. (առնու եօթն այսս չար, եւ բնակի ի մարդն՝) որ դատարկ Է ի բարեաց: Այս Է վիշահն հրեղեն՝ որ քարշեաց զերրորդ մասն աստեղաց ընդ ինքեան. այսինքն, զապաստամբ դասս հրեշտակացն ընկեց ի յերկիրս. եւ սխալեցոյց զթիւն. զի մինչ ոչ էին անկեալ՝ չորս կարգ էր դասուցն. զմինն որ չորրորդ մասն Է՝ քարշեաց յերկիր. եւ երրորդն մնաց յերկինս: Այլեւ զաստեղացեալսն մկրտութեամբ աւագանին՝ պայծառացեալ եւ երկնային եղեալսն խորհրդով, որք անհաստատ են մտօք, ի վայր քարշէ, եւ յերկրաւոր գործս կործանէ: Սա անիծեալ օձն առաջին՝ բերանաբաց կայ ընդդէմ եկեղեցւոյ. զի յորժամ ծնցի զմանուկն, կլցէ զնա. որպէս ասէ առաքեալն. (ոսոխն ձեր սատանայ՝ իբրեւ զառիւծ գոչէ. շրջի եւ խնդրէ թէ, զո կլանիցէ:) Այս է՝ զի յորժամ ոք դառնայ ի մեղաց եւ յապաշխարութիւն գայ, կամ ի յուսումն գիտութեան, եւ կամ ի շնորհս ինչ, մկրտութեան, քահանայութեան, կրօնաւորութեան, կամ յայլ ինչ, յայնժամ պատերազմի եւ փորձութիւն յարուցանէ ի վերայ, զի կլցէ՝ զնա

ի վիպն կորստեան: Որպէս ընդ Տեառն մերոյ յետ մկրտութեանն փորձեցաւ եւ յաղթեցաւ: Նոյնպէս եւ ընդ կրօնաւորս որք յանապատ մտանէն, եւ կամ որք յուսումն գան, ծուլութեամբ եւ հերձուածով եւ ստութեամբ կորուսանէ: (Եւ ծնաւ ասէ կին արու եւ յափշտակեցաւ որդի նորա յերկինս:) Արու մանուկն այն է՝ յորժամ վարդապատք զաշակերտսն ծնանին, քահանայք զժողովուրդս, եւ առաքինիք զփրկութիւն հոգւոյ, ոչ է ի նոսա թոյլ եւ իգական վատթարութիւն. այլ ամենայն արի եւ արու. զօրաւոր եւ կատարեալ ծնունդ: Եւ այն զի (յափշտակեցաւ որդի նորա յերկինս եւ յաթոռ իւր:) Յայսմանէ եղեւ սկիզբն եկեղեցւոյ անդրանկաց կատարելոց յերկինս: Նախ՝ տեր մեր Յիսուս Քրիստոս գլուխն եկեղեցւոյ եւ անդրանիկն՝ յարուցեալ ի մեռելոց համբարձաւ յերկինս. եւ նստաւ ընդաջմէ հօր յաթոռ փառաց իւրոց: Եւ ապա ընդ նմա մտին ամենայն անդամք նորա ժողովուրդք հաւատացելոց այժմ յուսով. որպէս ասէ առաքեալն. (ընդ նմին յարոյց՝ եւ ընդ նմին նստոյց յերկնաւորս ի Քրիստոս.) Եւ յետ մահու հոգւով. եւ յետ յարութեանն հոգւով եւ մարմնով: Եւ զի այժմ հոգիք սրբոց շուրջ են զաթոռովն Աստուծոյ. յայտ է ի տեսիլն. որ ետես ժողովուրդ բազում յամենայն ազգաց եւ լեզուաց. որք կային առաջի աթոռոյն Աստուծոյ. արկեալ զհարեամբք հանդերձս սպիտակս, եւ արմաւենիս ի ձեռս: Եւ յայտ է զի ի մարմնաւորացս էին. զի զոր ոչն ունէին՝ ընկալան: Իսկ անմարմին հրեշտակք՝ զամենայն պայծառութիւն բնութեամբ եւ եղութեամբ ունին: Եւ յայտ է զի սուրբքն են ի մարդկանէ՝ որք իսկզբանէ աշխարհի հաճոյք եղեն Աստուծոյ ամենայն ազգաց: Չոսա ասէ Պօղոս ոգիս արդարոց կատարելոց. քանզի որք կատարեալք են՝ ոչ մտանեն ի դատաստան. այլ ընդ Քրիստոսի գլով յերկինս, ընդ նմա գալոց են դատել զհրեշտակս եւ զմարդիկ. եւ յայս ժողովս եմուտ մեծն Անտոնիոս, յորժամ մրցեին դէք ընդառաջ նորա: Իսկ պայծառ հանդերձն զոր զգեցեալ են՝ շնորհացն Քրիստոսի մաքրութիւնն Է. զոր ամենեքեան վայելեցաք. որպէս ասէ առաքեալն. (սրբութիւն մեղաց մերոց արարեալ:) Չի յորժամ սրբի հոգին ի մեղաց՝ բնական ունի զպայծառութիւնն: Իսկ արմաւենին ի ձեռնս՝ զյաղթութիւնն նոցա ցուցանէ: Եւ զի սպիտակ հանդերձն՝ արդարութիւն սրբոցն Է. ասէ նոյն տեսիլն. (տուաւ հարսինն զգենուլ բեհեզս սպիտակս սուրբս լուսափայլս. եւ բեհազն է արդարութիւն սրբոցն:) Եւ բեհեզն ունի վեց յատկութիւն. որ նշանակէ զվայելչութիւն հոգւոց սրբոցն ելեալք ի մարմնոյ: Նախզի՝ բեհեզն է անօսք. ցուցանէ զանօսրութիւն եւ զմտածութիւն սրբոցն առանց թանձրութեան մարմնոյ: Երկրորդ՝ զի սպիտակ Է. նշանակէ զպայծառ առաքինութիւն նոցա: Երրորդ՝ զի սուրբ Է. ցուցանէ զմաքուր սրբութիւն նոցա առանց աղտեղութեան: Չորրորդ՝ զի լուսափայլ Է. նշանակէ զբարձրագոյն տեսութիւնն՝ որով լուսափայլին իմացմամբ: Հինգերորդ՝ զի կարծր Է. ցուցանէ զկարծր եւ զսերտ առաքինութիւն նոցա առանց քակտելոյ: Վեցերորդ՝ զի կրթելով առնու զսպիտակ գոյնն. նոյնպէս եւ սուրբքն ի կեանս յայս՝ կրթեալ չարչարեցան. եւ ապա այն կենացն արժանի գտան: Եւ ասէ՝ մի յերիցանցն: (Սոքա որք զգեցեալ են հանդերձ սպիտակ, ո՞րքն եւ ուստի՞ գան:) Եւ ասէ նոյն ինքն. (սոքա են որք գան ի վշտաց մեծաց. եւ լացին զարկանելիս իւրեանց. եւ սպիտակացուցին արեամբ գառինն:) Արդարեւ մեծ վիշտ՝ զոր գիտեմք ի փորձոյ մերոյ: Նախ՝ ի ներքս ի տկարութենէ բնութեանս, քաղց, ծարաւ, կիրս, չարչարանս, եւ այլն: Եւ ապա վիշտս

արտաքուստ բազմապատիկ. զոր ի մարդկանէ՝ եւ զոր ի դիւաց թշնամեաց մերոց կրեմք հանապազ. սակայն լուացան յաղտոյ մեղաց շնորհօքն Քրիստոսի. որ հեղմամբ արեանն իւրոյ սրբեաց զմեզ ի մեղաց. եւ մեք հաւատով արդարացաք: Եւ այս գիտելի է՝ զի մինչ հասանին հոգիք սրբոցն ի կայանս հոգւոց յերկինս, բազմութիւն դիւաց որք բնակեալ են յօդս՝ բազում մարտ յարուցանեն ընդդէմ. զի արգելուցուն ոչ ելանել յերկինս: Եւ յայտ է ի վկայութեան չորից: Նախ՝ որպէս ասէ առաքեալն. (ոչ է մեզ մարտ ընդմարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս. եւ ընդ այսս չարութեան որք ի ներքոյ երկնից:.) Եւ պատերազմ դիւական է յերեք տեղոջ: Նախ՝ այժմ որք ի մարմնի եմք: Երկրորդ՝ յետ մահու միայն ընդ հոգիս: Երրորդ՝ յետ յարութեանն ոսոխք լինին ի դատաստանին: Երկրորդ՝ յայտէ որպէս ասէ աւետարանիչն. (ի գալս իմում առ քեզ՝ ընկրկեսցի հուրն. շիջցի խաւարն, եւ այլն.) եւ այս երկակի: Նախզի՝ յետ բաժանման հոգւոյն՝ տանջանս կազմեն դէք. հուր բորբոքեն. սառնամանիս ցուցանեն. եւ ապա վասն կատարածի հրոյն եւ տանջանաց հոգւոյ եւ մարմնոյ աղօթէ: Երրորդ՝ յայտ է ի կաթուղիկէսն. (ուր Միքայէլ հրեշտակն վասն Մովսիսեան մարմնոյն ընդ բանսարկուն սատանայի վիճեալ ասէր. սաստեսցէ ի քեզ Տէր:.) Մարմնովն Մովսէսի՝ ցուցանէ զոր ինչ պատահի հոգւոյս մերոյ յետ աստեացս փոխման. զի ամենայն հոգւոյ մարդոյ ընդառաջ ելանեն հրեշտակաց զօրութիւնք՝ եւ կաճառք դիւաց. հրեշտակք զբարի գործս ցուցանեն. եւ դէքն զչարս. եւ այսպէս վիճին ընդ միմեանս. զի ըստ գոծոցն բարի եւ կամ չար, ի սահմանեալ տեղիսն ածիցեն սոքա, կամ նոքա. եւ պահեն մինչեւ ցօր հասարակաց դատաստանին: Վասն այն պատրաստեաց զթաղումն Մովսէսի երեւելի լինիլ. զի տեսեալ զգուշացուք մեք. զի թէ ի սուրբ մարմինն Մովսէսի յառնէին դէքն, փոխանակ հոգւոյն կամէին յափշտակել զմարմինն վասն մեղացն Ադամայ, իսկ զի՞նչ լիցուք մեք՝ որք լցեալ եմք եւ ծանրացեալ: Չորրորդ՝ յայտ է ի տեսիլն որ ա ասէ. (եհեղ վիշապն ի բերանոյն ջուր բազում առաջի կնոջն՝ զի ընկղմեսցէ զնա. եւ օգնեաց երկիր կնոջն եւ եկուլ զջուրն զոր եհեց վիշապն.) այս է՝ յորժամ հոգիք սուրբքն թեւօք հաւատոյն եւ բարեաց գործոց ելանեն յերկինս, յայն ժամ վիշապ օդոյդ հեղու առաջի նոցա ջուր բազում. այս է՝ պատճառս պէս պէս գայթակղութեանց մեղաց, որովք պատրեալ է զնոսա. այսոքիւք փութայ ընկղմեզ. եւ ոչ թողու մտանել յերկինս. որպէս առաջի անտոնի հեղին զջուր տղայութեան սխալմանց. եւ ոչ կարացին ընկղմել զնա. զի արդար գործովքն թռել ի վերայ նոցա. այլ զբազումս ետես զի արգելոյր եւ ընկղմեր: Իսկ որ ասէ՝ (օգնեաց երկիր կնոջն. եւ եկուլ զջուրն.) այսինքն է՝ երկրաւոր մարմինս. եւ տկարութիւն սորա օգնէ հոգւոյն. զի ոչ լսէ Աստուած զչարախօսութիւնն սատանայի: Եւ ազատին հոգիքն ի բռնութենէ նորա. եւ մտանեն առ Աստուած յերկինս ի կայանս սրբոցն: Եւ ազատութիւն հոգւոյն՝ լինի յերից: Նախ՝ վասն անմեղութեան մարմոյ եւ արեամբ սրբելոյն. վասն այն պարտ է յելս շնչոյն զհաւատն գաւանիլ. եւ զփրկական մարմինն ճաշակել: Երկրորդ՝ վասն մեր մարմնոյս տկարութեան: Երրորդ՝ վասն հրեշտակացն օգնականութեան. յորժամ ասէ՝ (սաստեսցէ ի քեզ Տէր.) յայնժամ յարահետ եղեալ կորնչին դէք եւ բռնութիւնք նոցա. եւ հոգիքն սուրբք իբր զաղանիս օդապարիկ եղեալ, թռչին ի վերայ նոցա եւ ելանեն յերկինս. եւ անդ կերակրին յուսով մինչեւ յօր դատաստանին Քրիստոսի: Յայնժամ ցասնու

վիշապն անհծեալ. եւ կրճտէ զատամուսս ի վերայ հոգւոց ևոցա՝ որք գերծան ի նմանէ. եւ գայ պատերազմի ընդ այլ զաւակս ևոցա՝ որք դեռեսս մարմնով եւ յաշխարհի. եւ ջանայ ըմբռնել զնոսա ի թակարդս անհաւատութեան մեղաց. եւ այսպէս գթեսս հաւատոյ եւ բարի գործոցն հատանէ. զի ի ստորեւ քարշէ յերկնային ճանապարհէն. եւ այսպէս պատերազմի մինչ ի կատարած աշխարհի: Դարձեալ՝ ի յետին ժամանակս ստեղծանէ զչար գազանն եօթնագլխի՝ զորդին կորստեան զնեռն՝ որ է մերմնուոր մարդ. զգեցեալ զամենայն զօրութիւնս սատանայի. եւ նովաւ յայտնապէս հալածէ գեկեղեցի երեք ամ եւ կէս: Եւ նա պատերազմի չորիւք եղանակաւ: Նախ՝ ուրուական սքանչելօք եւ կախարդութեամբ: Երկրորդ՝ խաբեբայ քարոզութեամբ: Երրորդ՝ ընչից առատաբաշխութեամբ: Չորրորդ՝ խստագոյն տանջանօք: Եւ ի նմանէ փախստական լինի եկեղեցի սուրբ ինամօք թելոցն Աստուծոյ յերկրաւոր անապատ: Եւ նա հեղու զհետ ևոցա ջուր բազում. այսինքն, հրամանաւ բերանոյն իբր զջուր զբազմութիւն զօրացն՝ զի ըմբռնեսցեն եւ չարչարեսցեն: Այլեւ օգնէ դժուարութիւն անապատին եւ արգելու զնոսա: Եւ ապա դառնան ցասմամբ եւ պատերազմին ընդ այսոսիկ՝ որք ի քաղաքս եւ ի գիւղս իցեն բնակեալ. որք սպառնազինեն զինքեանս հաւատով եւ ճշմարիտ յուսով. եւ վկայեն Քրիստոսի՝ արեամբն իւրեանց: Չի ի ժամանակս նեռին՝ երեք բաժին լինին մարդիկ ի վերայ երկրի: Մին որ յանապատս փախչին. եւ ի ծերպս վիմաց բնակին: Եւ մի հաւատացեալքն՝ որք արեամբ նահատակին ի ձեռս նորին: Եւ մին բաժին կորուսալքն. որք հաւանին նմա. եւ զդրոշմ անւան նորա առնուն ի ձեռս եւ ի ճակատս իւրեանց: Սոքա են (երրորդ մասն աստեղաց զոր վիշապն հրեղէն քարշէաց ընդ ինքեան տտամբն իւրով.) զի սատանայ գլուխ է մոլորութեան. եւ նեռն ի նմանէ տուտն չարութեան. որ ի վերջին ժամանակս պատերազմի ընդ եկեղեցի սուրբ՝ որք պայծառ են հաւատով եւ երկնային յուսով: Դարձեալ՝ երթիցուք իսկիզբն բանիս որ ասէ: (Կին մի արկեաել զհրեաւ զարեգակն եւ զլուսին:) Որպէս ասեն վարդապետք. կին կոչի երկիրս. վասն զի կրէ զջերմ եւ զցուրտ. զգէջ եւ զչոր: Եւ զի ծննդական է բուսոց եւ կենդանեաց. եւ դայեակ եւ դարմանօդ: Եւ զի ստուեր է ամենայն տարերաց. եւ ժողովէ առ ինքն: Չայս երկիր զարդարէ արեգակն եւ լուսին ի վերոյ եւ ի ներքոյ. ընթանալով ընդ երկոտասան կենդանակերպս, բոլորեալ պսակէ զամենայն. որպէս ի գլուխ նորա պսակ յերկոտասան աստեղաց: Սայգի է ամենայն մարդկային ազգիս՝ որք սերմանին մահաւմբ եւ մտանեն յարգանդ երկրի. եւ ճչէ եւ երկնէ մինչեւ ծնանի զսոսա յարութեամբ ի գերեզմանաց. ըստ այնմ, (ամենայն արարածք հեծեն եւ երկնեն. զի ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան յազատութիւն փառաց որդւոյն Աստուծոյ.) զի ընդ մեզ պատժեցաւ երկիրս. եւ ընդ մեզ նորոգեսցի եւ ազատեսցի: Նախ ի ներքին կրից ապականութեանց. եւ ապա յարտաքին խռովութեանց եւ այլայլութեանց. որպէս ձմերան եւ ամարան. տիւ եւ գիշեր եւ ատլն ամենայն դադարեսցի ի սմանէ. մանաւանդ յապականութենէ մեղաց սրբեսցի եւ ազատեսցի: Սմա ընդդէմ կայ բերանաբաց հրեղէն վիշապն սատանայ. զի յորժամ ծնցի երկիր յարութեամբ զմարդկային ազգս, կլցէ զնոսա յաւիենական մահաւմբն վասն դատապարտութեան նախահօրն Ադամայ. որում ասաց (մահու մեռանիլ.) եւ մեք ամենեքեան ի նմանէ ծնեալք, զնորին պատիժն կրեցաք: Իսկ որ ասէ. (կինն ծնաւ որդի արու.) որ է

Տեր մեր Յիսուս Քրիստոս յարուցեալ ի գերեզմանէն. անմեղն եւ անապական, յորում ոչ ինչ գոյր իգական վատթարութիւն: (Եւ նա եղև պտուղ ննջեցելոց՝ եւ անդրանիկ մեռելոց: Չի որպէս Ադամաւ ամենեքեան մեռաք. նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենեքեան կենդանասցուք: Եւ ակն ունիմք փրկչին մերոյ Քրիստոսի. զի նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ՝ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց:) Սա էառ իշխանութիւն հովելլ զամենայն ազգս զաւազանաւ երկաթեաւ. այսինքն, սաստիկ զօրութեամբ եւ անխորտակելի իշխանութեամբ. որպէս ասեր. (տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ երկիր.) որել համբարձաւ յերկինս. եւ նստաւ յաթոռ փառաց իւրոց մերովս մարմնով: Որել գալոց է նովին մարմնովն եւ հայրական փառօք, դատել զկենդանիս եւ զմեռեալս. այսինքն, զարդարս եւ զմեղաւորս. կամ զհրեշտակս եւ զմարդիկ. եւ հատուցումն ըստ գործոց իւրաքանչիւրոց՝ բարեաց եւ չարեաց: Նեղչացն մերոց նեղութիւն. եւ մեզ նեղելոցս՝ հանգիստ եւ մխիթարութիւն: Որել արժանաւորեսցէ զմեզ եւ զամենայն հաւատացեալս անլան իւրոյ՝ դասուն աջակողմեան. եւ ձայնին երանական. ազնիւ ծառայիցն մտերմութեան մասին վիճակի սրբոցն համարձայնութեան փառս վեր առաքել եւ պատիւ գոհաբանութեան Տերն մերոյ եւ Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. եւ կենդանարար Սուրբ Հոգւոյն ընդ Հօր ամենակարողի. այժմ եւ անկէտ յաւիտենիւ ամէն:

Նորին դարձեալ քարոզ վասն եկեղեցւոյ. ի Բանն (Տեսի կին մի որ նստեալ էր ի կարմիր գազանին Եօթնագլխի:) Յայտ. 17. 3: (Գլուխ. ԾՁ)

Ամենայն կանխատեսութիւնք սրբոց որ ի Գիրս Սուրբս ի խրատ զգուշութեան եւ վասն ներկայի, կամ հանդերձելոյ իրաց. որպէս մի ի նոցանէ է բանս այս. զոր մեծն առաքեալ եւ աւետարանիչն Յօհաննէս՝ իշխանականին լուսաւորութեամբ ետես յառաջագոյն. եւ ուսուցանէ զմեզ զգաստութեամբ ուղղել զկեանս մեր: Ասէ՝ (տեսի կին մի որ նստեալ էր ի վերայ կարմիր գազանի, որ ուներ եօթն գլուխս. եւ տասն եղջիրս. եւ կինն լի էր անուամբ հայիոյութեան. եւ արբեալ յարենէ սրբոց. եւ զգեցեալ կարմիր եւ ծիրանի. եւ ոսկի բաժակ ի ձեռնին լի գարշելի պոռնկութեամբ. եւ արբոյց զբնակիչս երկրի. եւ էր ի ճակատ նորա գրեալ Բաբիլօն մայր պոռնկութեան, եւ այլն:) Գիտելի է՝ զի գազան կոչի բանսարկուն սատանայ: Նախզի՝ պատառ է ի կենաց. եւ ապա զի կլանէ ի կորուստ դժոխոցն: Որպէս ասէ Պետրոս. (ոսոխն ձեր սատանայ՝ իբրել զառիւծ գոչէ. շրջի եւ խնդրէ թէ, զո կլանիցէ:) Իսկ եօթն գլուխ նորա՝ են եօթն գլխաւորագոյն մեղքն. որք կոչին մահու չափք. այսինքն, հպարտութիւնն. նախանձն. բարկութիւնն. ծուլութիւնն. ազահութիւնն. որկորստութիւնն. եւ բղջախոհութիւնն: Սոքա են եօթն գլուխ չար գալանին՝ որովք պատառէ եւ կլանէ. ոչ միայն զմարմին, այլեւ զհոգիս մարդկան: Իսկ տասն եղջիրն՝ է յանցումն տասն բանեան օրինացն. որով պատերազմի ընդ մեզ. զի եղջիրն գործի է պատերազմի: Եւ է օրէնքն պահողացն պահապան եւ զէն. եւ ոչ պահողացն՝ խեթկիչ եւ կորուսիչ: Որպէս այն որ ասէ. (մի շնար. մի գողանար, եւ այլն:) Թէ պահեմք՝ այնու յաղթեցաք սատանայի եւ պահեցաք զհոգիս մեր. եւ թէ ոչ պահեմք, սատանայ առնու զզէնս մեր եւ նոքօք խոցէ եւ սպանանէ զմեզ: Իսկ (կինն նստեալ ի կարմիր գազանին՝ եւ զգեցեալ կարմիր:) Կարմիրն նշանակէ

զիտումն արեան. զի չար կանայք որք հանգչին ի կամս եւ ի գործս սատանայի՝ կրկին արիւնա հեղք են. այսինքն, հոգւոյ եւ մարմնոյ. որպէս ասէ Յակոբոս. (ցանկութիւն յղացեալ զմեղս ծնանի. եւ մեղքն կատարեալ զմահ:) Եւ բազումք զիտո պոռնկութեան ընթացեալք, մեռանին մարմնական սրով: Եւ դարձեալ՝ ամենայն մեղք զոր գործէ մարդ՝ կորուստ է միայն գործողին. որպէս գողն, մարդասպանն. իսկ պոռնիկն՝ կրկին է սպանող. զիւրն՝ եւ զգործակցին: Իսկ զարդարանք կնոջն՝ ոսկի եւ ծիրանի եւ այլն: Նախ՝ նշանակեն զգարշահոտ ցանկութիւն սրտին. զի գարշելի հոտն նշանակէ զապականեալ մամին. եւ զարդարանք մարմնոյ՝ զգարշահոտ. պոռնկութիւն սրտին: Եւ ապա յայտնապէս իբր մատամբ ցուցանէ զինքն ամենեցուն. եւ պատրէ զնա տեսանել եւ ցանկալ: Վասն այն առաւել զարդարի քան զայլս. որպէս մարգարէն. (աչօքն ակնարկէին. եւ ի գնացս քարշէին զստորոտս. եւ ի վերայ բարձր պարսպաց ճեմէին.) որպէս սովոր են առնել պոռնիկ կանայք ի տունս պոռնկաց: Ապա ուրեմն յորժամ գան յաղօթս յեկեղեցին՝ ոչ է պարտ կանանց զարդարել զինքեանս. զի մի լիցի տեղի սրբութեան տեղի պղծութեան եւ չարեաց: Չի այս էր կուռքն՝ յորժամ երթայր նահապետն Յակօբ ի Բեթէլ ի տունն Աստուծոյ, ասեր ամենեցուն. (ի բաց արարէք զկուռսդ յանձանց եւ ի գլուխոց ձերոց:) Կուռք՝ որք են զարդարանք գլխոյն եւ անձինն. եւ այս կռապաշտիցն է գործ եւ ոչ քրիստոնէից: Որպէս Ադդա եւ Սելայ կանայք Չամեքայ զարդարեցին զինքեանս ի ծարոյրս եւ ի սեգոյրս. եւ այնու պատրեցին զորդիսն Սեթայ խառնակիլ ընդ դստերսն Կայենի: Վասն որոյ եկն ջրհեղեղն եւ կորոյս առհասարակ զամենեսեան. բայց միայն Նոյ մնաց սերմն կենաց աշխարհի. որ պահեաց զսերմն ողջախոհ սրբութեան իւրոյ: Այլեւ մադիանացիքն զարդարեցին զկանայս իւրեանց առաջի որդւոցն Իսրայելի. եւ յորժամ ցանկացան եւ պոռնկեցան բարկացաւ Աստուած. եւ տհար ի նոցանէ քսան եւ չորս հազար արանց: Այսպէս նետ դեղեալ է ի հայեցուած կանանց եւ կորուստ հոգւոց: Վասն այն ասէ Յօբ. (ուխտ եդի աչաց իմոց չհայիլ ի կանայս:) Իսկ որ ասէ՝ (ի ձեռն ուներ ոսկի բաժակ. եւ լի էր ամենեայն պղծութեամբ եւ գարշութեամբ:) Բաժակ ոսկի՝ զիօսս պատրանաց նշանակէ. որ հեշտ եւ ցանկալի թուի խողացն. այլ ապականէ եւ պղծէ զհոգի մարդոյն. որպէս ասէ յառակն. (մեղր կաթ է շրթանց կնոջ պոռնկի. այլ կատարած նորա դառնագոյն է քան զլեղի:) Եւ այսպէս գարշ եւ պիղծ զինուովս՝ արբեալ է ինքն. եւ արբուցանէ զամենեսեան. որպէս զինուով արբեանս եւ յիմարին մարդիկ. նոյնպէս եւ ցանկութեամբ գարշեալ եւ յիմարեալ, թափին ի խելաց միտք նոցա. ըստ այնմ, (ոգիք ըմբռնեալք ի մեղս, ի մտաց եւս անկանին.) զի ոչ գիտեն զինչն խօսին եւ զինչն գործեն. եւ զամենայն չար իբրեւ զբարի համարին: Այն է՝ որ գարշ եւ աղտեղի գործովն (հաւասարին անասնոց անբանից որպէս ասէ մարգարէն:) Եւ վասն այսր գարշելի պոռնկութեան՝ ասէ տեսիլն: (Տեսի եւ ահա ի բերանոյ վիշապին՝ ելին երեք ոգիք անսուրբք իբրեւ զգորտն:) Վիշապն է անիծեալ օձն առաջին բանսարկուն սատանայի. եւ երեք դեւքն նման գորտան. այսինքն է, դեւն պոռնկութեան. եւ գործն պոռնկութեան. եւ գործունեայք նորին: Եւ զի դեւն պոռնկութեան՝ նման է գորտան: Նախզի՝ գարշահոտ է. եւ ապա զի տղմասեր եւ զազրակերպ է գորտն: Նոյնպէս դեւքն պոռնկութեան՝ գարշելի են հոտով. եւ զազրակերպ եւ տղմասեր. որպէս ասէ Յօբ. (Բեհմովթ ննջեր ի գիջային

տեղիս:) Նոյնպես եւ գործն պոռնկութեան՝ գարշահոտ է զազրակերպ եւ գիջային ցանկութեամբ: Այսպես եւ գործունեայք պոռնկասերք: Նախզի՝ գարշ եւ անմաքուր է հոտ նոցա հրեշտակաց եւ սրբոց. որպէս գրեալ է ի վարս հարանցն. զի սուրբ այր մի եւ հրեշտակն՝ գնացին ի ճանապարհն. եւ տեսին ապականեալ եւ շարաւահոտ շաղիղ մի կենդանւոյ. եւ հրեշտակն ոչ դարձոյց զերեսս. եւ յորժամ տեսին երիտասարդ մի պոռնիկ, դարձոյց հրեշտակն զերեսն ի նմանէ. եւ հարցեալ զպատճառն, ասէ ցօերն. որպէս գարշելի է քեզ հոտեալ մարմին մեռելոյն. Նոյնպես եւ մեզ գարշելի է հոտ պոռնկին: Երկրորդ՝ զի տղմասեր է գորտն. եւ պոռնիկն հանապազ զտիղմ հեշտախտութեան սիրէ: Երրորդ՝ որպէս զազիր է կերպն. Նոյնպես եւ դէմք պոռնկաց՝ տգեղ եւ գարշելի լինին: Չորրորդ՝ զի գորտն զամենայն աղտեղութիւն եւ զվատթարութիւն ջրոյն յինքն ընդունի: Նոյնպես եւ պոռնիկն՝ զամենայն գարշելի տեսակս մեղաց յինքն ընդունի. այսինք, զորկորստութեան. զազահութեան. ծուլութեան, եւ այլն: Զինգերորդ՝ զի երկչոտ է գորտն. եւ ի ջուրս դողի. Նոյնպես եւ պոռնիկք՝ յորժամ յանդիմանին ի խրատողաց, սակաւ մի երկնչին. եւ դարձեալ յառաջին ախտս իւրեանց սահեալ ընկղմին: Իսկ որ ասէ՝ (ի ճակատն գրեալ էր Բաբիլօն մայր կռապաշտութեան:) Բաբիլօնն խառնակութիւն թարգմանի. այս է՝ զի պոռնկութեամբն խառնակի եւ շփոթի ամենայն կարգ հոգեւոր եւ մարմնաւոր. եւ որպէս հալալ ամուսնութեամբ ծնօղ եւ մայր լինին զաւակացն. Նոյնպես պոռնկութիւն՝ մայր է խառնակութեան եւ անկարգութեան: Եւ այն որ ի ճակատն է գրեալ. ճակատովն ցուցանի որ առաւել համբարձակին ի գործ մեղացն. զի որքան ծածուկ է՝ ահիւ գործէ. եւ յորժամ յայտնեցաւ՝ համարձակ եւ առանց ամօթոյ. որպէս ասէ մարգարէն. (Երեսք կնոջ պոռնկի եղեն քեզ. անամօթացար առ ամենեստան:) Վասն այն նեռն յորժամ գայ. դնէ զդրոշմ ուրացութեան յաջոյ ձեռն եւ ի ճակատն: Աջոյ ձեռն ցուցանէ զյաջողակ գործս բարիս կորուսանել: Իսկ որ ի ճակատն՝ ընդդէմ մկրտութեանն. զի ուրանալ տայ. եւ համարձակ գործէ զմեղս. Նոյնպես եւ հեշտասեր պոռնիկքն: Այս է առաջին տեսութիւն պոռնիկ կնոջ նստեալ ի կարմիր գլուխ վիշապին որպէս ցուցաւ: Դարձեալ՝ կին պոռնիկ կոչին ամենայն քաղաքք. եւ կարմիր գագանն՝ զկրկին մահն որ ի քաղաքի: Չի սուրբն մարմնոյ մահ է եւ չարչարանք. եւ անսուրբն՝ մահ ածէ հոգւոյ եւ տանջանս յաւիտենից: Իսկ կին կոչի՝ զի գեջ եւ վատթար հեշտութիւնս տայ ամենայն զգայութեանց. այսինքն, աչօք է եւ լսելեօք. ճաշակելեօքն եւ շօշափելեօքն մեղկանայ եւ թուլանայ ի քաղաքի: Իսկ պոռնիկ կին է՝ որ թողու զօրինաւոր այր իւր՝ եւ ընդ բազումս շնայ. Նոյնպես եւ քաղաքացիք թողուն զաստուածային օրէնս եւ զփեսայն հոգեւոր՝ եւ ըստ հաճոյից կամաց իւրեանց ընթանան եւ պոռնկին: Եւ կամ կոչին պոռնիկ՝ զի ընդ հեշտութեան զազահութիւնն խառնեն. որպէս պոռնիկն ունի զհեշտութիւն մարմնոյն եւ զազահութիւն. զի բազմանկողին լինի: Նոյնպես եւ ի քաղաքս ընդ հեշտ ցանկութեան մարմնոյ՝ եւ զազգի ազգի ազահութիւն շահուց խառնեն ի յառ եւ ի տուրս, եւ յայլսն: Իսկ զարդարանք հանդերձին՝ նշանակեն զերեւելի փառս եւ զպատիւ քաղաքին: Եւ ի ձեռնին ոսկի բաժակ լի պղծութեամբ. զի ամենայն ինչ ի քաղաքի՝ յերեւելիս պատուական է որպէս զոսկի. այլ ի ներքոյ գարշութիւն է եւ պղծութեամբ լի. որով արբենայ ինքն. եւ զայլս ամենայն արբուցանէ զինուով մեղաց իւրոց: (Եւ էր ի ճակատ նորա գրեալ

Բարիլօն մայր պոռնկութեան:) Ճակատն՝ նշանակէ զիշխանս քաղաքին՝ որք կրեն զյանցանս նորա: Վասն այն նախատանաց քաղաքին կցորդին. եւ որ արբենայ ինքն կամ զայլս արբուցանէ, այն է՝ որ բռնութեամբ եւ հրամանաւ զչարիս եւ զմեղս տայ գործել այլոց. որպէս ասէ մարգարէն. (իշխանք ձեր գողակիցք գոցոց:) Եւ այսպէս կոչի ի վերայ քաղաքի տեսութիւն բանիս որ ասէ: (Տեսի կին պոռնիկ նստեալ ի կարմիր զագանին:) Դարձեալ՝ կին պոռնիկ կոչին հերձուածօրք վասն կնատ եւ թոյլ փոփոխական մտաց իւրեանց: Իսկ պոռնիկ՝ զի որպէս կին թողու զայր իւր՝ եւ ընդ այլոց պոռնկի. նոյնպէս եւ հերձուածօղն թողու զօրէնս իւր եւ զճշմարիտ գիտութիւն եւ զհաւատ. եւ պոռնկի հաւատով եւ օրինօք: Չի որպէս ասեն վարդապետք. վեց ազգ է պոռնկութիւն՝ ընդդէմ վեց ազգ կուսութեան: Առաջին՝ պոռնկութիւն է մարմնոյ. նոյնպէս կուսութիւն է մարմնոյ. որպէս ասէ՝ (եւ ներքինիք վասն սիրոյն Աստուծոյ:) Երկրորդ՝ պոռնկութիւն է հոգւոյ՝ որք պղծեն զոգիս Էգ ցանկութեամբ ընդ հեշտութիւն զգայութեանց. նոյնպէս կուսութիւն է հոգւոյ՝ սրբութիւն զգայարանաց յիւրաքանչիւր գործոց: Երրորդ՝ պոռնկութիւն է մտաց՝ յորժամ զխորհուրդս լցեալ ունին զանազան ախտիւք եւ մեղօք. նոյնպէս կուսութիւն է մտաց՝ անբիծ պահելն զմիտս ի չար տեսութեանց: Չորրորդ՝ պոռնկութիւն է հաւատոց. որպէս ուրացողաց եւ կռապաշտից. ըստ այնմ, (շնայր Երուսաղէմ ընդ քարի եւ ընդ փայտի.) վասն նոցա ասէ. (որք թողին զՏէր՝ եւ պաշտեցին զկուռս:) Իսկ հաւատացեալքն եւ ուղղափառքն՝ կոյս են հաւատով: Հինգերորդ՝ պոռնկութիւն է լեզւի. որպէս հերձուածօղն եւ ստախօսն. նոյնպէս եւ ուղղափառն եւ ճշմարտախօսն՝ զկուսութիւն լեզուի ունի: Վեցերորդ՝ պոռնկութիւն է գործոց՝ որք թողուն զբարի գործս եւ առնեն զչար. նոյնպէս կուսութիւն բարի գործոց՝ յորժամ ատելով զչարն, սիրեմք զգործս բարի եւ առնեմք: Ապա ուրեմն յայտ է՝ զի վեց է կուսութիւն. այսինքն. մարմնոյ՝ եւ հոգւոյ՝ եւ մտաց՝ եւ հաւատոյ՝ եւ լեզուի՝ եւ բարեաց գործոց: Իսկ եօթնազլիս զագանն ուր նստեալ էր կինն՝ ութն զլիսով նշանակէ զայն՝ զի ութն են պատճառք ամենայն հերձուածողաց: Առաջին է՝ անգիտանալն զտկարութիւն եւ զփոքրկութիւն մարդկային մտացս. զի ոմանք ոչ գիտելով թէ միտք մարդկան ունի սահման՝ կարծեն լինիլ զնա պարունակօղ ամենայնի. վասն այնորիկ ոչ երեւի ճշմարիտն նոցա. զի ոչ ըմբռնէ միտքն: Երկրորդ՝ է դարձուցանել զիմացումն ի հաւատալեացն եւ յայնցանէ՝ որք ածեն զմարդն առ հաւատալին. այսպիսիքս խաբեցեալք են. զի ոչ է բնութեամբ մարդոյն տեսանել զյետոյսն իւր, եւ ոչ տեսանել առանց աչաց եւ հայելոց. այսպէս ոչ կարէ իմանալ յորոց դարձուցանէ զմիտսն. այսինքն, ի սուրբ գրոց եւ ի բանից վարդապետաց: Երրորդ՝ է նրբութիւն իմանալեացն. եւ բթութիւն իմացմանն այսպիսեացս՝ է ասել թէ, (բժտտեալ աչք՝ ոչ տեսանէ զմազն ի հեռաստանէ. եւ զոր ինչ տեսանէ աչք արծուին՝ ոչ տեսանել կարէ աչք մարդոյ.) այսպէս բթամիտն ոչ իմանայ զոր իմանայ նրբահայեացն եւ ուսեալն յԱստուծոյ. զորս եղ Աստուած ուսուցիչս այլոց. որպէս մարգարէք՝ եւ առաքեալք՝ եւ վարդապետք: Չորրորդ՝ է հեռաւորութիւն հաւատալեացն. քանզի որք ոչ կրթին ի գործ իմացմանն, բայց միայն ի գործ զգայութեանն, հեռի են ի հաւատալեացն. որպէս երկիր յերկնէ. վասն որոյ ոչ կարեն իմանալ: Հինգերորդ՝ է հեղձութիւն խնդրելոյն զօգնականութիւնն Աստուծոյ ի հաւատալն. քանզի հաւատն ոչ է բնական. զի ըստ այսմ միապէս լինէր առ

ամենեստան. այլ յընտրութենէ բարութեանն Աստուծոյ. եւ է ձրի պարգել. վասն այտորիկ պարտ է խնդրել ստեպ եւ խոնարհութեամբ. որպէս ասէ Մարկոս. (հաւատամ՝ օգնեա անհաւատութեանս իմոյ:) Վեցերորդ՝ է պարտուակ մեղացն. քան զի ոմանք չար գործօքն իւրեանց՝ ի բաց մերժեն յինքեանց զլոյս արեգականն արդարութեան: Եօթներորդ հպարտութիւնն. որ է իբրեւ զփքացումն երեսաց մտացն. որպէս ամբաստան լինի զինքենէ. որպէս Երեմիա ասէ. (յանդգնութիւն քո խաբեաց զքեզ, եւ ամբարտաւանութիւն սրտի քոյ:) Ութներորդ՝ է անկարգ ախորժակն, քարշելով զմիտս առ ներհակս հաւատոյն. այսինքն են երկիւղն, սերն, եւ ատելութիւնն. որպէս գիջակնութիւնն ոչ տայ թոյլ աչացն յստակ տեսանել. այսպէս երկիւղն զբազումս յետս քարշէ ոչ հաւատալ ի Զրիստոս: Նաեւ սեր աշխարհիս եւ փառաց՝ ոչ տայ թոյլ հաւատալ. այլեւ ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոց. որպէս ատելութիւն եւ նախանձ փարիսեցւոցն՝ ոչ տային թոյլ հաւատալ ի Զրիստոս: Իսկ զարդարեալ հանդերձն՝ եւ ոսկի բաժակն լի պղծութեամբ՝ նշանակէ զպատրօզ եւ զհաւանական բանս հերձուածողաց. զոր զարդարեն արտաքոյ վկայութեամբ սուրբ գրոց. եւ ի ներքոյ խառնեալ են զպղծութիւն հերձուածոյն իւրեանց. որպէս որք զմահացու դեղն խառնեն ընդ քաղցրութեան մեղութիւն. նոյնպէս եւ նոքա զբանս իւրեանց. ըստ առաքելոյն. (եթէ քաղցրաբանութեամբ եւ օրհնութեամբ պատրեն զանձիսս անմեղաց.) եւ մարգարեն ասէ. (կակուղէին բանք նոցա քան զձեթ. եւ ինքեանք որպէս սլաք:) Եւ զայն ընտրեն բազումք. (եւ ըստ մարմաշելոյ լսելեաց իւրեանց՝ կուտեսցեն վարդապետս եւ յառասպելս կործանսցին:) Եւ որ ասէ՝ (արբեցոյց զբնակիչս երկրի.) այսինքն, զի որք ի յերկիր ունին հակեալ զմիտս, եւ երկրաւոր գիտութեամբ կամին քննել զերկնային եւ զհոգեւոր իմաստս, նոքա արբենան՝ յիմարին եւ մոլորին. զի ոչ ունին զճշմարտութեան հաւատն առաջնորդ. եւ խելագարեալ բարբանջեն զանուղղայս առ Աստուած եւ յեկեղեցիս. ի կարգս եւ ի կրօնս. ըստ այնմ, (եդին յերկինս զբերանս իւրեանց. եւ զլեզուս իւրեանց ածեն զերկրաւ:) Եւ անուն նորա լի հայհոյութեամբ:) Այս է՝ զի հերձուածողն հայհոյիչ լսի. եւ լի է հայհոյութեամբ միտ եւ բերան նորա: Չի զոր ինչ իմանայ մտօք եւ խօսի՝ ամենայն հայհոյութեամբ է. եւ ուր ուրեք վասն պատրանաց կերպարանէ զճշմարտութիւնն՝ այնու ծածկէ զսուտն:

Դարձեալ՝ կին կոչի կենցաղս այս մարմնական. վասն զի եզ եւ թոյլ եւ հեշտասեր է ախտիւ եւ ծննդական: Իսկ պոռնիկ՝ զի խառնեալ է զբարի եւ զչար. զմեղս եւ զարդարութիւն. զսուտ եւ զճշմարի. եւ զայլ ամենայն հակառակսն որք ի սմա գտանին: Իսկ որ ի ջուրս է բնակեալ. այսինքն, ի ծով մեղաց աշխարհի. յոր հանապազ ալեկոծի եւ տատանի հոգւով եւ մարմնով. ի խորհուրդս, ի բանս, եւ գործս: Իսկ եօթն գլուխն՝ եօթն դար ժամանակիս մինչ ի կատարած կենցաղոյս: Եւ որպէս ծով կոչի սա՝ զի մեղօք ընկղմէ. այսպէս գազան կոչի վասն պատժոյն. զի զամենեստան կլանէ եւ կորուսանէ: Չոմանս մարմնով, եւ զոմանս հոգւով: Իսկ տասն եղջերքն՝ թուով տասն մասունք արարածոցս. այսինքն, երկին եւ երկնաւորք. երկիր եւ երկրաւորք. ծով եւ ծովայինք. օդ եւ օդեղէնք. հրեշտակ եւ մարդիկ: Կամ տասն սեռքն ամենայն արարածոց՝ զոր ասէ իմաստունն. գոյացութիւն. որակ. քանակ, եւ այլն: Եւ զարդ լուսաւորացն. որպէս ոսկի եւ ակն եւ մարգարիտն՝ զտիւ եւ

զգիշեր զգեցեալ, որպէս ծիրանի եւ կարմիր: (Եւ ոսկի բաժակ ի ձեռն լի պղծութեամբ.) այսինքն, զի կենցաղական իր՝ որպէս ոսկի պատւական եւ հեշտալի երեւի մարմնոյս. այլ դառնութիւն է հոգւոյն եւ պղծութիւն: Եւ բազումք ի մարդկանէ որք երկրասերք են՝ արբեանս ի հեշտութեանց սորա եւ յիմարին մոլորութեամբ: (Եւ անուն նորա լի հայիոյութեամբ.) զի աշխարհ ամենայն ի չարի կայ եւ ի մէջ մեղաց: (Եւ գրեալ է ի ճակատն մայր պոռնկութեան եւ չարեաց.) զայն է իմանալ՝ որ երկիրս է դատապարտութեան տեղի. զի յորժամ յանցեաւ սատանայ՝ յերկնից աստ անկաւ. նոյնպէս եւ մարդն ի դրախտէն յերկիր դատապարտեցաւ: Եւ որպէս ճակատ եւ իշխան եղեւ սատանայի. եւ զանազան խառնակութեամբ մոլորեցոյց զմարդիկ. ինքն գտակ եւ վարդապետ չարեաց եղեւ. եւ ուսոյց մարդկան պէս պէս չարիս. կռապաշտութիւն, պղծութիւն, մարդասպանութիւն, եւ այլն ամենայն: *Դարձեալ կին պոռնիկ կոչի թագաւորական քաղաքն որ է նորն Զոմ: Որպէս մերկն է հրեշտակն ի տեսիլն Յօհաննու: Կին կոչէ զնա վասն անառակ եւ յաճախ գէշ եւ պղծալից ախտին որ ի նմա: Եւ պոռնիկ՝ զի յատկապէս երեք ազգ պոռնկութիւն երեւի առ նա: Նախ՝ մարմնական անիծեալ եւ պղծալից ցանկութեան նորա. որպէս ի հինն Զոմ, զոր Բաբիլօն կոչէ զնա առաքեալն Պետրոս վասն անօրէն խառնակութեանց նորա: Երկրորդ՝ պոռնկութիւն հերձուածոյն. որ առաւել եղեւ ի նմա քան յայլ տեղիս. որպէս Արիոս. Մակեդոն. Նեստոր. եւ այլն ամենայն. որպէս ասէ. (անուն նորա լի հայիոյութեամբ:) Եւ այս վասն այն՝ (զի սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն.) որ ոչ ունէին գերկիւղն Աստուծոյ. համարձակ զհերձուածս խօսեցան:)

Երրորդ՝ պոռնկութիւն յաւուրս նեռինն. որ նախ անդ երեւի թագաւորութիւն նորա. եւ հնազանդին ամենեքեան. եւ ապա նստի յերուսաղէմ թագաւոր երեք ամ եւ կէս. որպէս ասէ առաքեալն. (մինչեւ բարձի այդ որ այժմդ ունի. եւ ապա եկեցի մարդն անօրէն. եւ զնա կոչեն արեանարբու.) զի ի հինն Զոմ եւ ի նորն՝ առաւել մարտիրոսք եղեն եւ վկայք Զրիստոսի: Եւ ի վերայ ծովու է բնակեալ զգալի. այլեւ զժողովուրդս բազումս եւ զազգս եւ զլեզուս որք հնազանդին նմա, կոչէ ջուր բազում: Իսկ է զլուխ զազանին՝ եօթն չար թագաւորքն են. որք յետ Զրիստոսի մինչ ի Կոստանդիանոս թագաւորեցին. որպէս Ներոն. Դոմետիանոս. Դեկոս. Դիոկղետիանոս: Իսկ Ժ եղջիւք՝ տասն թագաւորք են: Եւ այս եռակի է իմանալ: Նախ՝ որպէս ասեն ոմանք թէ, առաջին թագաւոր է Աստուած: Երկրորդ՝ Նեբոթ: Երրորդ՝ Յովսեփ: Չորրորդ՝ Սողոմօն: Զինգերորդ՝ Նաբուգոդոնոսոր: Վեցերորդ՝ Կիւրոս: Եօթներորդ՝ Դարեհ: Ութներորդ՝ Աղէքսանդր: Իններորդ՝ Օգոստոս: Տասներորդ՝ Մեսիայն. որ է առաջին եւ վերջին թագաւոր. յետ որոյ նեռն թագաւորէ սակաւ ժամանակս եւ կորնչի: Երկրորդ՝ այսպէս: Նախ թագաւորութիւնն ասորւոց: Երկրորդ՝ մարաց եւ հնդկաց: Երրորդ՝ բաբելացւոց: Չորրորդ՝ պարսից: Զինգերորդ՝ մակեդոնացւոց: Վեցերորդ՝ հռոմայեցւոց: Եօթներորդ՝ նոր հռոմոց: Ութներորդ՝ եգիպտացւոց: Իններորդ՝ հայոց: Տասներորդ՝ սկիւթացւոց. որ է ալանաց. յորոց միջի նեռն երեւի: Երրորդ այսպէս. զի ի վերջին աւուրս՝ թագաւորութիւնն հռոմոց ի տասն պատճառի. որպէս ետես Դանիէլ տասն եղջիւրս. եւ փոքրիկ եղջիւրն՝ որ զերեքն ի բաց խլէր է նեռն. որ զերեք թագաւորսն սպանանէ. եւ եօթներին հնազանդին Նզովելոյն: Եւ ապա գայ

յԵրուսաղէմ եւ հակառակի սրբութեան: Չոմանս որք հետեւին նմա հոգւով սպանանէ. եւ որք արիանան ի հաւատս՝ մարմնով չարչարէ: Եւ ապա ինքն յետ սակաւ աւուրց՝ սատակի եւ մատնի ի կորուստն յաւիտենից: Յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած՝ յայսպիսի չարաց. եւ հանգուցէ ի վերինն Երուսաղէմ. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն կուսանաց. ի Բանն որ ասէ առակն: (Բազում դասերք ստացան զմեծութիւն. բազումք արարին զգօրութիւնս. բայց դու առաւել եղել՝ եւ անցուցեր զամենեքումքք:) Առակ. 31. 29: (Գլուխ. ԾԷ)

Գովելի են գեղեցիկն՝ ասեն իմաստունք. եւ պարսաւելի են գորշելիքն: Նախ զի՝ գիտացէ ամենայն ոք՝ եթէ գարշելի գործոց պարսաւանք հետեւին. աստ ի կեանս՝ եւ ի հանդերձեալն: Եւ երկրորդ՝ զի մի նախանձեսցուք գարշելի եւ չար գոցծողաց. այլ ի բաց փախիցուք. զի չար է՝ որ ամենեցուն է փախչելի: Իսկ (գեղեցիկքն գովելիք են:) Նախզի՝ ծանիցուք եթէ ամենայն բարեաց փառք եւ գովութիւն հետեւի ի մարդմաւորս եւ ի հոգեւորն: Եւ դարձեալ՝ զի նախանձեսցուք ի բարիս. եւ կատարեսցուք ի միտս ցանկութեամբ. եւ ի մարմինս գործով. զի բարին ամենայն մարդոյ ցանկալի է եւ գործելի. որպէս բարեգործ եւ առաքինի կուսանքն սուրբք. որպէս բարեգործ եւ առաքինի կուսանքն սուրբք. որք դուստր կոչին թագաւորին երկնաւորի, եւ հարսն անարատ փեսային Քրիստոսի. որպէս ասէ առաքեալն. (խօսեցայց զձեզ իբրեւր զկոյս մի սուրբ՝ յանդիման լինիլ փեսային Քրիստոսի:) Եւ արդ՝ վասն զի կուսութեամբ հարսնացան Քրիստոսի. պարտ է նախ վասն կուսութեան խօսիլ բան. եւ ապա վասն հարստութեան: Եւ գիտելի է՝ զի Չ եղանակ է կուսութեան՝ որ բաց որոշի ընդդէմ վեցեկի պոռնկութեան: Առաջին՝ պոռնկութիւն մարմնոյ. եւ նոյնպէս կուսութիւն է մարմնոյ. վասն սոցա ասէ Տէրն. (են ներքինք՝ որք վասն սիրոյն Աստուծոյ եղեն:) Երկրորդ՝ պոռնկութիւն է հոգւոյ՝ որք պղծեն զհոգին եզ ցանկութեամբ ընդ պպեշտութեան զգայութեանց: Նոյնպէս կուսութիւն է հոգւոյ՝ սրբութիւն զգայարանաց յիրաքանչիւր գործոց. այսինքն, զաչսն յարատ հայելոյ. եւ զունկն ի չար լսելոյ եւ այլն: Երրորդ՝ պոռնկութիւն է մտաց՝ յորժամ զխորհուրդս լցեալ ունին զանազան չար ախտիւք եւ մեղօք. նոյնպէս կուսութիւն է մտաց՝ անբիծ պահել զմիտս ի չար տեսութեանց. ի չար կամաց. եւ ի վատ խորհրդոց. զորմէ ասէ Դաւիթ. (ի մեղաց իմոց սուրբ արա զիս Տէր. եւ յօտարէն պահեա զծառայս քո.) այսինքն յօտար խորհրդոց եւ ի չար իմացմանց: Չորրորդ՝ պոռնկութիւն է հաւատոց. որպէս ուրացողաց եւ կռապաշտից. ըստ այնմ, (շնար Երուսաղէմ ընդ քարի եւ ընդ փայտի.) վասն սոցա ասէ. (որք թողին զՏէր՝ եւ պաշտեցին զկուռս:) Իսկ հաւատացեալքն եւ ուղղափառքն՝ կոյս են հաւատով. որք անշաղախ եւ անապական պահեցին զուղղափառութեան հաւատս իւրեանց ի ծննդենէ աւագանին: Զինգերորդ՝ պոռնկութիւն է լեզուի. որպէս հերձուածօղն եւ ստախօսն. նոյնպէս եւ ուղղափառն եւ ճշմարտախօսն՝ զկուսութիւն լեզուի ունի. որպէս ասէ առակն. (չափով եբաց զբերան իւր. եւ իմաստութեամբ զխօսս. եւ կարգաւոր զլեզուս:) Արդ՝ չափովն նախ այն է՝ որ սակաւ խօսին եւ ոչ յաճախ. զի յաճախ եւ անչաափ խօսիլն՝ յանցումն է մարդոյ. (եւ որ բանիւ ոչ յանցաւ ասէ առաքեալն, նա է մարդ կտարեալ:) Երկրորդ այն է

չափով՝ որ հանդարտ խօսի. եւ ոչ շուտափոյթ եւ բարձր ձայնիւ. նոյնպէս եւ իմաստութիւնն կրկին է: Նախ՝ որ զինչ խօսի ոք՝ իմաստութեամբ խառնեալ լինի. զի իմաստութիւնն աղ է եւ համեմիչ բանին որպէս աղն կերակրոն. ըստ այնմ, (ամենայն բանք ձեր՝ իբրեւ աղիւ համեմեալ լիցի. զի տացէ շնորհս լսողաց:) եւ երկրորդ իմաստութիւն է՝ որ նախ միտքն ընթանայ ի բանն. եւ ապա լեզուն հետեւի. որպէս նախ ճրագն ընթանայ՝ եւ ապա մարդն. եւ յայնժամ ոչ թիրի. ապա թէ լեզուն յառաջ է քան զմիտսն՝ նա տգիտութեամբ սխալի եւ որոգայթի. որպէս ծնունդ ինչ կենդանւոյ յառաջեալ քան զծնօղն՝ ի խօրխորատ անկանի: Նոյնպէս եւ կարգաւոր խօսքն՝ կրկին է: Նախ՝ որ զխօսից սկիզբն եւ զմէջն եւ զկատարումն գիտէ, եւ կարգաւ խօսի. որպէս կարգաւ փոխեմք զոտս. նախ ի մերձն՝ եւ ապա ի հեռուն: Երկրորդ կարգաւ խօսքն ճշմարիտ է. իսկ անկարգն՝ սուտն: Եւ սուտն կրկին է. թէ գիտութեամբ եւ կամաւ՝ որդի սատանայի առնէ զմարդ. ըստ այնմ, (որ սուտ խօսի, սուտ է եւ հայրն նորա սատանայի:) Իսկ թէ ակամայ եւ անգիտութեամբ է սուտն՝ նա լինի դատարկաբանութիւն. վասն որոյ՝ (ընդ ամենայն դատարկ բանից՝ համարս տալոց էք ասէ Տէրն:) Ապա ուրեմն պարտ է զգուշանալ յանկարգ խօսից եւ ի ստութենէ. թէ կամաւ թէ ակամայ. այսպէս է պոռնկութիւն լեզւի: Վեցերորդ՝ պոռնկութիւն է գործոց. որք թողուն զբարի գործն՝ եւ առնեն զչար. նոյնպէս կուսութիւն է բարի գործոց՝ յորժամ ատելով զչարս, սիրեմք զգործս բարիս եւ առնենք. ըստ այնմ. (խոտորեա ի չար է՝ եւ արա զբարի:) Ապա ուրեմն յայտ է՝ զի ըստ վեց եղանակի է կուսութիւն. այսինքն, մարմնոյ. եւ հոգւոյ. եւ մտաց. եւ հաւատոյ. եւ լեզուի. եւ բարերաց գործոց: Իսկ որք այսպէս ամենեւիմք սրբութեամբ ունին զկուսութիւն յամենայն կողմանէ որպէս ցուցաւ, նոքա կոչին դուստր եկրաւոր թագաւորին Աստուծոյ հօր. եւ հարսն հոգեւոր եւ անախտ փեսային Զրիստոսի. որպէս գրէ առաքեալն. (խորհուրդս այս մեծ է՝ բայց ես ամեմ ի Զրիստոս եւ յեկեղեցի:) Չի եկեղեցի սուրբ՝ եւ հոգիք հաւատացելոց՝ հարսն կոչին Զրիստոսի վասն բազում պատճառի: Նախ՝ վասն մկրտութեան. որ հաւատով եւ յուսով հոգիք սուրբք՝ միացեալ են ընդ Զրիստոսի. ըստ այնմ, (կացէք դուք ի յիս՝ եւ ես ի ձեզ:) Երկրորդ՝ վասն շերմեռանդ սիրոյն՝ որ է ի մէջ փեսային եւ հարսին. նոյնպէս եւ հոգիք սրբոց՝ շերմ եւ անքակտելի սիրով միացեալ են ընդ Զրիստոսի. որպէս ասէ առաքեալն: (Ո՞ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Զրիստոսի. նեղութիւն, թէ անձկութիւն, եւ այլն:) Երրորդ՝ վասն բազմածնութեան. զի հաւատացեալք՝ ունին զբազում ծնունդս հոգեւորս. ըստ այնմ, (բնակեցուցէ զամուլն ի տան ուրախամիտ՝ որպէս մայր որդւովք բերկրեալ.) զի ամուլ էր նախ յանհաւատութեան. եւ եղեւ մայր՝ բազումք որդւովք բերկրեալ, առաւել քան զմարմնական ծնունդս: Նախ զի՝ նոքա մարմնոյն են ծնունդք. եւ առաքիւնութիւնքն հոգւոյ. եւ որպէս պատուական է հոգի քան զմարմին. նոյնպէս եւ հոգւոյ ծնունդն քան զմարմնոյն: Երկրորդ՝ զի մարմնոյն ծնունդն՝ մահկանացու է եւ անցաւոր: Իսկ հոգւոյն՝ անմահ եւ յաւիտենից: Երրորդ՝ զի մարմնոյն ծնունդք բազումք չար եւ վատթար հանդիպին. իսկ հոգւոյն՝ ամենեքեան բարիք եւ փրկանք հոգւոյն. այսպէս վասն ծննդեան՝ հարսն կոչին հոգիք սրբոց: Չորրորդ հարսն կոչի վասն զի մարմին է հարսն՝ եւ գլուխ փեսայն. այսպէս եւ եկեղեցի (մարմին է ի մարմնոյ նորա. եւ ոսկր յոսկերաց նորա ըստ առաքելոյն.) եւ հնազանդ եւ ցաւակից գլխոյն մերոյ Զրիստոսի: Հինգերորդ՝

որպես հարսն միայնոյ փեսային է եւ ոչ այլ ումեք. նոյնպէս եւ եկեղեցի սուրբ՝ հեռացեալ եւ որոշեալ յամենայն պաշտամանց ի հրէից եւ ի հեթանոսաց. միայն պատրաստեալ է զինքն հաւատով փեսային Քրիստոսի. ըստ այնմ, (որ ունի հարսն՝ նա է փեսայ:) Իսկ այլքն՝ բարեկամք են փեսային օտարք ի հարսնէն: Վեցերորդ՝ զի զբնական գեղեցկութիւնն ունի եւ զհամեստութիւնն: Նոյնպէս եւ հոգիք համեստ եւ պարկեշտ վարուք՝ պայծառ ունին զբնական գեղեցկութիւնն, յորում ստեղծաւ ի պատկերն Աստուծոյ եւ տգեղացաւ մեղօք. վերստին նորոգեցաւ, յորժամ հարսնացաւ Քրիստոսի եւ սրբեցաւ աւազանին մաքրութեամբ: Եօթներորդ՝ հարսն նշանեալ է նախ՝ եւ յետոյ պսակի. նոյնպէս հոգիք սրբոց՝ այժմ նշանեալ են հաւատով եւ յուսով հարսնացեալ Քրիստոսի. եւ ի հանդերձեալն լինի պսակ սիրով եւ միաւորութեամբ. ըստ այնմ որ հարսանեաց առակէ զարքայութիւն: (Այր մի ազնուական՝ հարսանիս որդւոյ իւրոյ. եւ ետես անդ այր մի՝ որ չունէր հանդերձ հարսանեաց, եւ այլն: Եւ ի մէջ գիշերի՝ եղեւ բարբառ ահա փեսայ գայ՝ ելէք ընդ առաջ նոա. եւ մտին իմաստուն կուսանքն յառազաստ փեսային. եւ փակեցաւ դուռ յիմար կուսանանց:) Ութներորդ՝ հարսն եօթն զարդուք է պաճուճեալ. որ է երեք զխոյն. եւ չորրս զգեստ ծածկոյթ մարմնոյն. նոյնպէս եւ եկեղեցի սուրբ զհոգին որ է զլուխ՝ զարդարութենէ հաւատով յուսով եւ սիրով. եւ զմարմինն զարդարէ շորիւք առաքիւնութեամբ. որ է խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն. եւ արդարութիւն: Իններորդ՝ ի բարձր տեղոջ է ընդ փեսային. նոյնպէս եւ հարսնացեալ եկեղեցի սուրբ՝ բարձրացեալ է ի փառս եւ ի պատիւ ամենայն եկնաւորացն դասուց. եւ լցեալ զտեղի անկելոցն բարձրագոյն դէսուց յարքայութեանն Աստուծոյ: Տասներորդ՝ հարսն միայն թագակցեալ է ընդ փեսային. այսպէս եւ հարսնացեալ հոգիք սուրբք եւ հաւատացելոց՝ միայն ունին զթագ արքայութեանն Քրիստոսի ի մէջ ամենայն աշխարհի երկնաւորաց եւ երկրաւորաց. որպէս ասէ Եսայի. (ընկալչիք զթագ արքայութեան ի ձեռանէ Տեառն.) Պողոս ասէ. (եթէ համբերեմք, ընդ նմին եւ թագաւրեմք.) զի սուրբքն Աստուծոյ՝ են թագաւորեալք ընդ Քրիստոսի. եւ ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի. որպէս ինքն Տեառն խոստացաւ ասելով. (հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւնն. եւ ես ուխտեմ ձեզ. զի ուտիջիք եւ ըմպիջիք ի սեղան հօր իմոյ:) Այսպէս կոչին սուրբք կուսութեամբ եւ անարատութեամբ դուստր Աստուծոյ, եւ հարսն անարատ երկնաւոր փեսային Քրիստոսի: Եւ զայնպիսի անախտ եւ մաքուր հարսունքն՝ գովէ փեսայն եկնաւոր եւ ասէ: (Բազում դստերք ստացան զմեծութիւն. բազումք արարին զգօրութիւն եւ այլն:) Եւ այս իմանալի է՝ նախ մամնապէս եւ առանձնութեամբ. եւ ապա հոգեպէս եւ հասարակ: Մարմնապէս՝ զի բազում դստերք մեծատանց թագաւորաց եւ իշխանաց՝ ստացան մեծութիւն մարմնոյ. տնարարութիւն եւ իմաստութիւն. եւ բազումք եղեն զօրաւորք եւ արդիւնաւորք գործով: (Բայց դու՝ առաւել եղեր քան զամենայն.) որպէս սուրբքն Յովսէփմեանքն, Գայիանէ, Սուրբն Սանտուխտ, Թեկո, եւ Վառվառ, եւ այլք: Չի առաւել գերազանց եղեն քան զդասս թագաւորաց եւ իշխանաց. զի նոքա մարմնով միայն եղեն իմաստունք ի տնարարք եւ զօրաւորք. այլ նոքա սուրբ կուսանքն՝ կուսութեամբ եղեն հոգւով իմաստունք եւ զօրաւորք, եւ դստերք երկնաւոր թագաւորին: Այս առանձնապէս եւ առ հասարակ: Իսկ հոգեպէս՝ զի (բազում դստերք ստացան զմեծութիւն:) Ոմն զտեսական՝ եւ ոմն

զգործնական. զի հրեից ժողովուրդն՝ միայն ուներ զգործնականն. եւ պակաս էր՝ ի տեսականէն: Իսկ հեթանոսաց ժողովուրդն՝ ուներ զտեսականն իմաստութիւն. եւ պակաս էր նոցա գործնական առաքինութիւնն. որք ոչ տեսականաւ, եւ ոչ գործնականաւ ճանաչեցին զԱստուած: Իսկ եղեցեցի սուրբ՝ գերագանց է քան զնոսա ամենեսեան. զի ունի զտեսականն կատարեալ հաստատ առ Աստուած. եւ ունի զգործնական գերագանց սրբութիւնն: Իսկ այնոքիկ որք մաքուր կուսութեամբ են հոգւով եւ մարմնով՝ առաւել կատարեալ են եւ անթերի ի հոգեկան եւ ի մամնական իմաստութիւնն. (զի առնեն եւ ուսուցանեն. եւ մեծ կոչեցան յարքայութեանն Աստուծոյ:) Որպէս ասաց՝ (սուտ հաճութիւն եւ ընդունայն գեղ կնոջ ոչ գոյ ի քեզ:) Սուտ հաճութիւն է՝ որ է հեշտութիւն եւ ցանկութիւն մարմնոյ: Եւ այս երեք դիմօք իմանի: Նախ՝ հաճոյացեալն: Երկրորդ՝ հաճիլն: Երրորդ՝ հաճոյութիւնն որ է հեշտ ցանկութիւն մամնական ի մէջ հաճելոյն, եւ ի մէջ հաճողին: Եւ սուտ են ամենեքեան. զի մարմնաւորք են եւ անցաւորք. որպէս ասէ մարգարէն. (մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր. որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկի. շնչէ ի նա հողմն մահւան. ոչ է, եւ ոչ եւս երեւի տեղի նորա:) Ապա յայտ է՝ յորժամ մարմին խոտ է եւ անցաւոր ծաղիկ մամնոյն եւ փառքն եւ հեշտութիւնն՝ անցաւորք են եւ կորստականք. վասն սոցա ասի յերգս. (ոչ հեշտացան ի գրկանս փափկութեան. իմացան եթէ սնոտի է անցաւոր մեծութիւնս:) Եւ ընդունայն է գեղն երեսաց. այսինքն, սուտ եւ ունայն. եւ սուտն կրկին կերպիւ որոշի ի ճշմարտութենէն: Նախ՝ որպէս սուտն միայն կերպարանաւն է պաճոյճ, եւ ի ներքս անպտուղ եւ անարդիւն է. նոյնպէս գեղ երեսաց կանանց՝ միայն զարդարութենէ եւ ծաղկեալ. այլ ի ներքս ի հոգին եւ ի գործն նայելով՝ անվաւեր եւ սուտ եւ տգեղ: Երկրորդ՝ սուտն առաւել զարդարուն երեւի եւ խաբէ զլսողն, քան զճշմարիտն. եւ այս է պատճառն. զի սուտն զհեշտն եւ զճշմարիտն ի դէմն ունի. եւ զսուտն ծածկեալ: Իսկ ճշմարիտն՝ զդժուարն ի դէմն ունի. եւ զճշմարտութիւնն ծածկեալ. որպէս բանք սուրբ եւ ուղղափառ վարդապտաց. դժուարին է տեսութիւնն, եւ ծածուկ ճշմարտութիւնն: Իսկ բանք հերձուածողաց՝ դիւրին եւ հեշտ ունի զտեսութիւնն. եւ ծածկեալ է խաբէութիւնն. այսպէս եւ գեղ չար կանանց՝ առաւել պատրէ զմարդիկ քան զբարի. եւ ձգէ ի խորխորատ կորստեան. որպէս հերձուածողաց բանք. եւ որպէս յորոգայթ թաքուցեալ թռչնոց՝ կերակուրն հեշտալի երեւի՝ եւ ականատն ծածկեալ է. իբրեւ եկեր՝ ըմբռնեցաւ ի ներքս. այսպէս եւ գեղ կանանց չարաց՝ արտաքոյ երեւի հեշտալի. եւ ի ներքոյ՝ դառն եւ լեղի. որպէս ասէ իմաստունն. (մեղր կաթէ ի շրթանց կնոջ պոռնկի. եւ վախճան նորա դառնագոյն է քան զլեղի:) Եւ գիտեն զայս գործունեայք գործոյն. զի յետ մեղացն՝ դառնանայ խիղճ մտաց նոցա եւ տրտմի քան զլեղի: Այսպիսի սուտ հաճութիւն եւ սնոտի գեղ կանանց՝ ոչ է ի քեզ ասէ. այլ գեղեցկութիւն սրբոց եւ կուսանաց՝ ճշմարիտ հաճոյութիւն է: Նախզի՝ ոչ է ի կերպարան մարմնոյն. այլ ի ներքս ի հոգին է զարդ. ըստ այնմ, (ամենայն փառք դատեր թագաւորի ի ներքոյ ի վերջ աւորս յոսկէ հուռս զրադարեալ եւ պաճուճեալ:) Երկրորդ՝ զի ոչ է անցաւոր. այլ մնացական է եւ յաւիտենական. այսինքն. իմաստութիւն. հաւատն. յոյսն. սէրն. ողորմութիւնն. խոնարհութիւնն. եւ այլն ամենայն, հետեւի առաքինութեանց գործոց: Երրորդ՝ (զի սուտ հաճութիւն՝ ոչ գոյ ի քեզ.) այսինքն, փառասիրութեան եւ մարդահաճութեան արտաքոյ. զի սովորեն

սոքա զգուել զկատարեալս առաքինութեամբ. եւ ի ցոյցս մարդկան տալ գործել. գորմէ ասէ Տէրն. (այն իսկ եւ վարձք սոցա.) այլ դու զամենայն ի փառս Աստուծոյ կատարեա: Վասն այն ոչ գոյ ի քեզ սուտ հաճութիւն եւ ունայն գեղ. զի (կին բարեպաշտօն եւ իմաստուն օրհնեսցի:) Կին ասէ՝ որ արտաքին գունով գեղեցկացեալ, ոչ օրհնի եւ ոչ գովի. վասն զի այն յԱստուծոյ շնորհք եւ. որպէս զօրութիւն ուժոյ. որպէս հասակն. որպէս իմաստութիւնն. Նոյնպէս եւ գեղեցկութիւնն շնորհ է յԱստուծոյ: Արդ՝ եթէ զմարմնոյն գեղն ի բարին ի գործ էած, եւ զհոգին գեղեցկացոյց, այն (քանքար է՝ զոր շահեցաւ ի վերայ ըստ տէրունական առակին:) Ապա թէ զգեղեցկութիւնն ի չարն ի գործ էած, եւ զհոգին տգեղացոյց մեղօք, նա որպէս (գինտ ոսկի է ի քիթ խոզի, որ ընդ աղբս շաղղախի ասէ իմաստունն:) Նոյնպէս գեղեցկութիւնն է չար կանանց. այսպէս եւ հասակն. այսպէս եւ ուժն. այսպէս եւ իմաստութիւնն. թէ ի սոցանէ իչարն ածեմք ի գործ, պարսաւիմք. եւ թէ ի բարին, ապա թէ գովիմք եւ փառաւորիմք: Եւ այս է պատճառն. որ այն որ բնական շնորհն է՝ յԱստուծոյ է. ի մէջն ոչ ինչ է. վասն այն ոչ գովիմք եւ ոչ պարսաւիմք. ապա թէ զայն շնոհն մեր կամաւս ի բարին գործեմք, գովիմք. եւ թէ ոչ՝ պարսաւիմք: Չի գով եւ պարսաւան՝ կամաւորացն է գործոց. եւ ոչ բնական ակամայիցն: Վասն այն ասէ. (կին բարեպաշտօն օրհնեսցի:) Բարեպաշտութիւնն երեւ ի հաւատն եւ ի գործն մարդոյ. իսկ իմաստութիւնն՝ յողորմութիւնն. ի համեստութիւնն. ի չափաւոր խօսսն, եւ յայլն: Դարձեալ՝ բարեպաշտութեամբն զԱստուծոյ ճանաչեմք եւ սիրեմք զնա. եւ իմաստութեամբ զընկերն սիրեմք եւ զաղբատս: Եւ այսպիսի բարեպաշտ կինս՝ օրհնի յԱստուծոյ, եւ գովելի ի մարդկանէ. վասն զի յօրհնութեան աստիճանն է բարձրացեալ իւր իմաստութեամբն եւ աստուածապաշտութեամբն: (Չերկիւղածս Տեառն գովեսցեն ասէ:) Մարմնապէս այն է՝ որ բարեպաշտ կինն նախ օրինակ տայ զանձն այլոց ի բարի գործս. յաղքատսիրութիւն, ի ժրութիւն, ի ծուկն, եւ յաղօթս, եւ յայլն. զի այլքն ուսցին ի նմանէ զբարիս, ըստ այնմ, (տեսցեն զգործս ձեր բարիս՝ եւ փառաւոր արասցեն զՅայր ձեր որ յերկինս է:) Այլեւ ունի աննախանձ կամս՝ որ զամենայն երկիւղած եւ զբարեպաշտօն կանայս գովէ եւ բարեհամբաւէ. եւ բերկրի եւ ուրախանայ ընդ բարութիւնն սոցա. եւ ոչ նախանձի. որպէս չար կանայք յորժամլսեն զբարութիւնն սոցա, չարխօսեն այպանեն եւ նախատեն. զի միայն ինքեանք բարի երեւեսցին կամ գեղեցիկ: Չի մարդոյն կատարելութիւնն խոնարհութիւնն է. թէպէտ լինի ինքն կատարեալ եւ իմաստուն եւ առաքինի, խոնարհ այլոց. եւ աննախանձ կամօք զայս գովէ. որպէս բարեպաշտ կինն առնէր: Իսկ հագեպէս՝ զայլս գովելն է՝ որ յայլ սուրբոց յիշատակս տօն կատարեմք. որպէս երկնաւորացն հրեշտակաց. եւ մարգարեից. եւ առաքելոց. հայրապետաց. մարտիրոսաց. կուսանաց, եւ այլոց. զպատմութիւնն սոցա ընթեռնումք հոգեկան աղօթիւք. ձայնական պաշտմամբ. մարմնական նուէրս ընծայ եւ պատարագ մատուցանեմք եւ ուրախանամք թէ՛ այսպէս սուրբքն ելին յաշխարհէս եւ մտին առ Աստուած: Եւ մեզ բարեխօս են յերկինս. այնու ցնծամք եւ օրհնեմք զնոսա: (Տուք նմա ի պտղոյ շրթանց նորա. եւ գովեսցի ի դրունս այր նորա:) Ըստ գրոյն այս է. թէ դուք երկիւղածք յԱստուծոյ. ուսայք ի նմանէ զօրինակ բարեաց. եւ ընկալայք ի նորա շրթանցն զգովութիւնն եւ զբարի համբաւն. փոփաղարձեցէք նմա եւ զգովութիւնն եւ զբարեբանութիւնն. ոչ միայն

զինքն, այլեւ զայր իւր ընդ նմին: Նախզի՛ գլուխ է նմա եւ մարմնակից. ըստ անդամոյն եւ զգլուխն գովեցէք: Երկրորդ՝ զի այրն եւ կինն միմեանց պատճառք եղեն բարեպաշտութեանց. եւ զբարին ի միասին գործեցին: Վասն այն ի միասին գովեցէք զնոսա: Իսկ նշանակութեամբ այն է՝ որ փեսայն երկնաւոր Զրիստոս հրամայէ երկնաւորացն եւ ամենայն սրբոց եթէ. տօն կատարեցէք հարսնացեալ եկեղեցւոյ սրբոյ. եւ գովեցէք զնոսա. եւ ուրախ լերուք ի փրկութիւն նոցա. եւ ուրախացուցէք զնոսա: Եւ զայս տօն ուրախութեան յերեք ժամանակս կատարեն նոքա: Մին՝ յորժամ դառնայ ոք ի մեղաց եւ ապաշխարէ, կամ զաչյ ի հաւատս քրիստոնէութեան եւ մկրտի, կամ զչարչարանս ի յանձն առնու վասն Զրիստոսի եւ նահատակի եւ ճգնի, ուրախանան հրեշտակք եւ սուրբքն ի յերկինս. եւ տօն մեծ կատարեն. որպէս ի դարձի անառակին եւ մոլորեալ ոչխարին՝ (կոչէ զբարեկամս իւր եւ ասէ. ուրախ լերուք ընդ իս. զի գտի զդրամս իմ կորուսեալ:) Երկրորդ՝ յորժամ ելանեն հոգիք սրբոցն ի մարմնոյս եւ մտանեն յերկինս, յայնժամ ուրախացեալ ցնձան ամենայն դասք երկնաւորացն եւ ամենայն սրբոց. զի յաւելան ի դասս նոցա սուրբքն ի մարդկանէ ընկերակիցք իւրեանց. եւ լնուն գտեղի անկելոցն դասուց: Երրորդ գովութիւնն՝ է յաւիտենական, յորժամ հարսնացեալ հոգիքն՝ յետ յարութեանն միաւորին ընդ փեսային Զրիստոսի, եւ մտանեն ի յառազաստ որպէս իմաստուն կուսանքն, յայնժամ ամենայն դասք հրեշտակաց տօնախմբութեամբ գովութիւն մատուցանեն. որպէս Զրիստոսի գլխոյն՝ եւ եկեղեցւոյ անդամոց նորա յաւիտենական ցնծութեամբ. եւ օրհնեն եւ գովեն զգլուխն Զրիստոսի՝ որ պատճառ եղել փրկութեան աշխարհի. եւ գովեն զսուրբսն՝ որք եղին զանձինս ի վերայ Զրիստոսի. թողին զանցաւորս. եւ աշին զանանցն եւ զյաւիտենականն: Այս է յորդորելն թէ, (տուք նմա գովութիւն ըստ պտղոյ շղթանց նորա:) Չի ճանապարհ առն՝ առաջի երեսաց իւրոց երթիցէ. եւ յաջողեսցին յաւիտենաս յաւիտենից:) Այս է ըստ գրոյն. զի կենցաղս այս ճանապարհ է. նոյնպէս եւ օրէնքն ճանապարհ է. նա պարտ է որ կինն ի կենցաղոյս ճանապարհն՝ ընդ առն իւրոյ հետեւեսցի ի յօրէնսն Աստուծոյ: Չորօրինակ՝ երկու մարդ որ ընդ մի ճանապարհն գնան ի միասին, երկուց դէմքն յառաջիկայ են. եւ ընթացքն միապէս. եւ ի միասին հասանին յօթեւանս: Ապա թէ երկու ընդ միմեանց հանդիպին եւ բաժանին՝ որքան յամեն, հեռանան ի միմեանց ի յայլ օթեւանս: Այսպէս այր եւ կինն՝ պարտին ի մի ճանապարհ օրինացն գնալ. համակամ, համամիտք, համակարիք լինելով յամենայն, գործս հոգեւոր եւ մարմնաւոր. որ յաջողին նոցա առաջի Աստուծոյ: Ապա թէ այրն եւ կինն երկմիտ են առ միմեանս. որպէս այն որ երկու մարդիկ միմեանց դիպին եւ բաժանին. նոյնպէս յորժամ մարդն եւ կինն մտօք եւ կամօք բաժանին ի միմեանց, ոչ յաջողի նոցա յԱստուծոյ. (զի թագաւորութիւն բաժանեալ յանձն աւերի. եւ տուն բաժանեալ յանձն կործանի ասէ Տէրն:) Նոյնպէս եւ նոքա յորժամ կամօք եւ մտօք բաժանեցան, յայնժամ գործօք բաժանին: Մինն ի չորն, եւ միւսն ի բարին. եւ հակառակութիւն ի մէջ նոցա անկանի. քակտումն եւ անհանգստութիւն. եւ ոչ յաջողի նոցա՝ ոչ ի կեանս յայս, եւ ոչ ի հանդերձեալն: Իսկ որ բարեպաշտ եւ երկիւղած կինն է՝ եւ բարի եւ հաւատարիմ մարդ, որք ի Տեառնէ պատահեցան միմեանց, ի չորս բաժին են սոքա: Մին՝ այրն բարի եւ կինն բարի հանդիպի. այս արժանաւորացն է: Երկրորդ՝ որ այրն չար եւ կինն չար դիպի. այս ամենեւին անարժանիցն է:

Երրորդ՝ որ այրն բարի եւ կինն չար դիպի: Չորրորդ՝ որ կինն բարի եւ այրն չար հանդիպի: Առաջինն որ այրն եւ կինն բարի եւ երկուդած լինին՝ ամենեւիմբ բարի են յԱստուծոյ: Միւսն՝ որ այր եւ կինն չար լինին եւ վնասակարք, եւ վաստակացք եւ արբեցօղք ի միասին, սոքա ամենեւիմբ չար են. եւ ի միասին մատնին յաւիտենական տանջանացն: Իսկ երկու միջինն՝ որ այրն բարի է եւ կինն չար, կամ կինն բարի եւ այրն չար, եթէ բարին որն եւ իցէ՝ չարեացն հետեւին, չարացան եւ ևոքա. իսկ եթէ չարն որն եւ իցէ, այրն կամ կինն, բարեացն հետեւին եւ խրատին եւ ուսանին ի միմեանց, ևոքա ի բարինն լինին: Իսկ այն՝ որ այր եւ կինն ի բարի մասինն են, յաջողի ևոցա աստ ի խաղաղութեան բնակիլ եւ սիրով լինիլ առ միմեանս. եւ ի հանդերձեալն՝ ըստ իւրաքանչիւր գործոց հասանին ի մասն ժառանգութեան սուրբցն ի լոյս յաւիտենական կենացն: Այս է բաժին բարի եւ հաւատարիմ եւ ողջախոհ ամուսնացելոցն առն եւ կնոջ որպէս ցուցաւ մարմնապէս: Իսկ հոգեպէս՝ այն եւ փեսայ հարսին եկեղեցւոյ Քրիստոս է. պարտ է մեզ զճանապարհ նորին առաջի մեր դնել. եւ զհետ շաւղաց նորա հետեւիլ. եւ զկամս նորա կտարել: Եւ զի՞նչ իցէ շաւից եւ ճանապարհ նորա. այսինքն, նախ կուսութեան սրբութեան հետեւիլ. եւ ապա աղքատութեանն. (որ մեծատունն էր՝ վասն մեր աղքատացաւ:) Եւ ապա հեզութեան եւ խոնարհութեան նորա. որպէս ասէր. (յինէն ուսարուք՝ զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիս անձանց ձերոց:) Եւ ապա զբեռն ծանրութեան միմեանց բառնալ բանիւ եւ գործով ընկերակցեալ. որպէս Քրիստոս զծանր բեռն եբարձ. (լուծ իմ քաղցր է. եւ բեռն իմ թեթեւ:) Եւ ապա (սիրել զմիմեանս ի սուրբ սրտէ, եւ անկեղծաւոր խորհրդոց.) եւ զնել զանձն ի վերայ միմեանց. որպէս Քրիստոս եդ զանձն իւր ի վերայ մեր: Եւ ի վերայ այսր ամենային, խաչին եւ չարչարանօք ել յաշխարհէ. նորին հետեւիլ մեզ. առնուլ զխաչն Քրիստոսի եւ ընթանալ զհետ նորա. եւ ապա գտանել զնա: Այս է ասելն՝ (ճանապարհ առն՝ առաջի երեսաց իւրոց երթիցէ:) Եւ որ այնպէս լինի՝ յաջողի նմա աստ ճանապարհ առաքինութեան. զի ամենայն առաքինութեան վարք եւ գործք բարիք՝ շորիք եւ պարգեւք են յԱստուծոյ տուեալ. որպէս հաւտան: որպէս յոյսն. որպէս սերն. որք աստուածային առաքինութիւնք են եւ պարգեւք: Նոյնպէս խոհեմութիւնն. արիութիւնն. ողջախոհութիւնն. արդարութիւնն: Այլեւ հեզութիւնն. ողորմածութիւնն. չարչարել զմարմինն. տանջանքն. կուսութիւնն. եւ այլն ամենայն՝ պարգեւք են յԱստուծոյ: Եւ որպէս որում առաքինութիւնքն ի կեանս յայս պարգեւին յԱստուծոյ. նոյնպէս եւ նմա պարգեւի ի հանդերձեալն մուտն յաւիտենական կենացն. որպէս ասէ Տէրն. (ազնիւ ծառայ բարի եւ հաւատարիմ. որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն Տեառն քոյ:) Ազնիւ կոչումն Աստուծոյ յարմարի. ըստ այնմ, (այր մի ազնուական գնաց ի տար աշխարհի:) Նոյնպէս եւ բարին Աստուած է. (չիք ոք բարի՝ բայց մի Աստուած:) Եւ (հաւատարիմ է Տէր յամենայն ի բանս իւր.) սոքա ամենեքեան՝ են վայելչականք Աստուծոյ: Չայս կոչմանս ընտրելոցն պարգեւէ. վասն զի նմա հետեւեցան բարի գործօք. զնոսա անունն ընկալան բարի կոչմամբ: Իսկ սակաւուդ հաւատարիմս այն է, որ զմասնաւոր առաքինութիւնն կատարեաց. եւ յարգեաց զքանքար պարգեւացն. եթէ հինգ էր՝ ըստ հինգ զգայութեանցն. եւ թէ երկու՝ հոգւով եւ մարմնով. կամ զհաւատս եւ զգործս. զի զիւր հոգին շահեցաւ եւ զայլոց. այս

Է սակաւուն հաւատարիմն: (Ի վերայ բազմաց կացուցից.) այսինքն, կատարեալ պարգեւացն տասն զգայարանացն. եւ կամ տասներորդ դասուց ընտրելոց սուրբոցն, որք են տասներորդ ըստ. թուոյ ինն դասուց հրեշտակացն ի տեղի անկելոց փառաց: (Մուտ յուրախութիւն Տեառն քո.) այսինքն, կամ մուտ յուրախութիւն Աստուծոյն քոյ եւ զւարճացիր նովաւ ի կեանս անմահս: Կամ դու գործով քո ուրախութիւն ես Տեառն քոյ. զի ի վերայ բարեգործացն՝ ուրախանայ Աստուծոյ. եւ ի վերայ չարացն տրտմի. որպէս զայն (որ չունէր հանդերձ հարսանեաց՝ կապեալ ոտիւք եւ ձեռքոք հանին ի խաւարն արտաքին:.) Վասն որոյ ասէ՝ դու (մուտ յուրախութիւն Տեառն քոյ.) որ պատճառ եղեր ուրախութեան եւ ցնծութեան հօրն երկնաւորի, եւ փեսային Քրիստոսի, եւ ինդութեան հոգւոյն սրբոյ: Որ եւ մեք մաղթեսցուք ի բոլոր սրտե եւ յամենայն անձնե, միջնորդակից եւ բարեխօս ունելով զմիջնորդ հաշտութեան զսուրբ կոյսն Աստուածածին. Մարիամ, եւ զամենայն սրբոց հանդէս կուսանաց եւ ընտրելոցն սուրբոց՝ որոց այսօր է յիշատակ. զի գթասցի իւրով աստուածային ինամօքն ի վերայ մեր. եւ ներումն եւ ջնջումն շնորհեսցէ ամենայն յանցանաց մերոց. շնորհեսցէ մեզ ըստ բազում առատութեան իւրոյ եւ ըստ մեծի ողորմութեանն, հաղորդս լինիլ մտիցն առաքաստի ուրախութեան յաւիտենից կենացն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ ընդ Յօր իւրում եւ Ամենասուրբ Հոգւոյն այժմ եւ յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ քարոզ վասն կուսութեան. ի Բանն՝ (Ծնեալն ի մարմնոյ մարմին Է. եւ ծնեալն ի հոգւոյն հոգի:.) Յօհ. 3. 6: (Գլուխ. ԸԸ)

Վարդապետք ասեն թէ՝ մարդս հոգի եւ մարմին Է եղեալ. եւ ունի մարմնաւոր ծնօղ զծօղ զհայրն եւ զմայրն. իսկ հոգեւոր՝ զհոգին սուրբ եւ զեկեղեցի. յարգանդէ աւագանին ջրովն սուրբ ծնեալ. եւ որդի Աստուծոյ կրչեցեալ. ըստ այնմ որ ասէ Յօհաննէս աւետարանիչն թէ՝ (յԱստուծոյ ծնան:.) Նոյնպէս եւ ծնանիմք մեք հոգեւոր զաւակ եւ մարմնաւոր. եւ մարմնոյն յայտնի Է՝ որ յառնէ եւ ի կնոջէ լինի մին մարմին զաւակի. որպէս ասէ Աստուած. (եղիցին երկրքեանն ի մարմին մի.) այսինքն, յերկուց ծնողացն խառնեալ մի մարմին զաւակի. եւ ծնանի ուստր կամ դուստր: Այսպէս ծնանիմք հոգեւոր զաւակ. զսերմն պատւիրանին Աստուծոյ ընկալեալ ի խորհուրդս մեր, յղանամք եւ ծնանիմք հոգեւոր զաւակ. այսինքն, զբարիս եւ զառաքինութիւնս՝ որք են փրկութիւն հոգւոյ. որպէս ասէ Եսայի. (յահ եւ երկիւղ քո յղացեալ երկնեցաք. եւ ծնաք զհոգի փրկութեան:.) Արդ երկրքին ծնունդքս այս՝ մինն լինի ամուսնութեամբ որ Է մարմնաւորն: Եւ միւսն լինի կուսութեամբ որ Է հոգեւորն: Եւ պարտ Է համեմատել եւ գիտել թէ ի սոցանէ ո՞րն առաւել ծնունդ եւ զաւակ. հոգեւորն թէ մարմնաւորն: Գիտելի Է՝ նախգի մարմնոյն զաւակ՝ ապականութեամբ յղանայ եւ մահուամբ վախճանի. զի սկիզբն ապականութիւն Է, եւ վախճանն մահ: Իսկ հոգւոյն զաւակ՝ անապական Է աւ անմահ, ըստ նմանութեան հոգւոյն յառաջ ծնեալ: Երկրորդ՝ զաւակ մարմնոյն՝ մահուամբ բաժանի ի մեռանիլ ծնողացն, կամ ինքեան: Իսկ հոգեւոր զաւակն՝ ոչ բաժանի. ոչ ի կեանս, եւ ոչ ի մահ. զի անմահ մնայ ի հոգիս: Երրորդ՝ մարմնաւորն տրտմութեամբ ծնանի. ըստ այնմ, (տրտմութեամբ ծնիցիս որդի:.) եւ զայս

ցուցանէ այն՝ յորժամ բաժանի մանուկն, լայ եւ ողբայ գտրտմութեամբ ծնանիլն իւր: Իսկ հոգեւորն՝ ուրախութեամբ. ըստայնմ, (բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ՝ որպէս մայր որդւովք բերկրեալ:) Արդարեւ ամուլ հոգին՝ կոյս եւ մայր գոլով, ուրախանայ եւ ինդայ վասն անմահ եւ անապական զաւակաց. եւ ինքն ամուլ է վասն անախտութեան: Չորրորդ՝ զաւակ մարմնոյն՝ (անօրէնութեամբ յղանայ եւ ի մեղս ծնանի. որպէս ասէ Դաւիթ.) այն է՝ զի Ադամ եւ Եւա յետ յանցմանն՝ հեշտ ցանկութեամբ ծնան որդի: Եւ այժմ նոյն հեշտ ցանկութեամբ եւ սկզբնական մեղօք ծնանիմք զաւակ մարմնոյ: Իսկ զհոգեւոր զաւակն՝ օրինօք եւ անմեղութեամբ ծնանիմք. զի զպատուիրանս Աստուծոյ ընկալեալ, ծնանիմք զփրկութիւն հոգւոյ: Հինգերորդ՝ այս զաւակ ի կամաց առն եւ ի մարմնոյ եւ յարեւն լինի. իսկ այն զաւակ՝ ոչ յարեւն կամ ի կնոջէ եւ յառնէ. այլ յԱստուծոյ ծնանիմք որդիս Աստուծոյ եւ զաւակ արքայութեանն: Վեցերորդ՝ մարմնոյ զաւակ ոչ ամենեցուն լինի. զի կամքն Աստուծոյ, կամ տկարութիւն բնութեանն խափանէ զծնունդն. իսկ հոգեւոր զաւակ՝ ամենեքեան որք կամին, կարեն ծնանիլ եւ մայր լինիլ. որպէս ասէ Տէրն. (որ առնէ զկամս իմ, նա է իմ եւ եղբայր եւ քոյր եւ մայր:) Եօթներորդ՝ մարմնաւոր զաւակն այնքան է յիշատակ՝ որքան կենդանի է. թերեւս թէ լինիցի բարւոք զաւակ. իսկ թէ չար՝ անզաւակութիւն է համարեալ: Այլ հոգեւոր զաւակն՝ յաւիտեանս է յիշատակ. ըստ այնմ որ ասէ Դաւիթ. (յիշատակ յաւիտենից եղիցի արդարն. եւ ի համբաւէ չարէ նա մի երկիցէ:) Ութներորդ՝ մարմնոյ զաւակ ի ծնանիլն ցաւ է եւ երկն. եւ ի պահելն հոգ է եւ աշխատանք. եւ ի մեռանիլն. կսկիծ է եւ դառնութիւն ծնողացն: Իսկ հոգեւոր զաւակն որ է իմաստութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն, եւ այլն, ընդ ծնանիլն ինդութիւն առնէ. եւ յերկարիլն յոյս. եւ ի մեռանիլն անմահութիւն տայ եւ փառս. ըստ այնմ, (արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից. եւ եղջիր նորա բարձր եղիցի փառօք:) Իններորդ՝ մարմնոյ զաւակ վնասէ զհոգի եւ զմարմին ծնողին. զմարմինն այսպէս. զի որքան զաւակ ծնանի, զօրութիւն մարմնոյ պակասի. եւ զհոգին այսպէս. զի վասն զաւակին՝ գողանայ զրկէ ազահէ ժողովէ եւ ծուլանայ յամենայ գործոց բարեաց: Իսկ հոգեւոր զաւակն՝ ինամէ զհոգի եւ զմարմին. զի մարմնով անցաւ եւ անաշխատ է. իսկ հոգւով երանելի. ըստ այնմ, (երանի որ ունի զաւակ ի Սիօն. եւ ընդունակ նորա յԵրուսաղէմ:) Տասներորդ՝ մարմնոյ զաւակ անցաւոր կենացս է աճումն. մանաւանդ որքան առաւելու ծնունդն, առաւելու եւ մահ. զի սկիզբն մահուն՝ ծնունդն է մարմնոյ: Իսկ հոգեւոր զաւակն՝ աճումն է հոգեւոր եւ միշտ կենացն. մանաւանդ ընդդէմ եւ արգելք է մահուն. որպէս ցուցանելոց ենք յառաջիկայդ: Այլ գիտելի է՝ զի զմարմնաւոր զաւակն առնէ ամուսնութիւնն. իսկ զհոգեւոր զաւակն՝ առնէ կուսութիւնն: Վասն որոյ ըստ կարգի նախ տեսանելի է զթշուառութիւն ամուսնութեան. եւ ապա զմեծութիւն կուսութեան: Արդ՝ ամուսնութեան կեանք այն որ կարի ցանկալի թուի բազմաց այն է՝ զի իցէ այրն եւ կինն մեծ ազգի եւ ընչեղք՝ միաչափ հասակաւ եւ վայելուչ դիմօք. սիրով առաւելեալք, եթէ փառս եւ պատիւ՝ զօրութիւն եւ իշխանութիւն ունիցին: Այլ տես զայսոցիկ հեշտալեացս՝ թէ զինչ դառնութիւն ունին: Նախզի՝ յանպիսեացն որք գեր ի վերոյ են քան զնոսա հանապազ ոտն հարութիւն եւ կոխումն կրեն վասն ասացեալ հեշտութեանցդ եւ փառացդ. զի մի հաւասարեցին ինքեանց. այլ ի խոնարի

մնացեն ամենայնիւ: Երկրորդ՝ ի ներքնագունիցն միշտ նախանձ՝ մախանս եւ ատելութիւնս կրեն. ի նոցանէ՝ որք ոչ ունին զայնպիսի փառս: Երրորդ՝ ի հաւասարիցն՝ բարկութիւն, կռիւ, թշնամութիւն, ոխ, եւ քէն ունիցին. զի ի միմեանց յափշտակեսցեն զինչս, զկանայս, զփառս, եւ զայլս. եւ յայնպիսի կասկածի կան միշտ: Չորրորդ՝ զի իւրաքանչիւր ոք՝ զերկիւղ մահուն ի մտի ունի. եւ զգերեզման բացեալ եւ ի միմեանց զբաժանումս տեսեալ. եւ ընդ ուրախութիւնն տրտմութիւն խառնեալ. եւ ընդ հեշտութիւնն դառնութիւն. եւ այսպիսի զի ամենայն թշուառութեամբ լինի նոցա կեանքն: Հինգերորդ դարձեալ՝ եթէ մերձ յերկունս ժամանեալ հանդիպեսցի մահ. եթէ զաւակին իցէ, յայնժամ ողբան եւ հառաչեն զանպտղութիւնս իւրեանց եւ զանյիշատակ մնալն. եւ նախ քան զտեսն ծննդեան՝ յառաջէ սուգ եւ կսկիծ մահուն: Իսկ եթէ ի ծնանիլն մեռանիցի մայրն, յայնժամ հառաչեն եւ ողբան զչար ծնունդ զաւակին. եւ զորբութիւն նորա եւ զայրութիւն հորն. յայն ժամ ուրախութիւնքն ի սուգ փոխարկին. եւ երգեցիկքն ի լալականս. սպիտակութիւն հանդերձիցն ի սել փոխի. եւ յոյսն ի խաւար. փոխանակ առագաստին՝ կազմի գերեզման. եւ յիշեն զառաջին կեանս որ առանց ամուսնութեան. նզովեն զխրատատուս. մեղադրեն ոչ խափանողացն. բամբասեն զծնօղս թէ ընդէ՞ր ոչ ասացին զայս. հայիոյն զԱստուած. ցանկան մահու, քան թէ այնպիսի կենաց: Վեցերորդ՝ եթէ ապրեցաւ յերկանցն, ծնաւ զաւակ փոխանորդ ազգին, յայնժամ առաւելուն հոգք եւ ցաւք աշխատութեանց. սննդեան, խնամելոյ, պահելոյ յամենայն վնասակարից. թողում զցաւս երկանց. զի բաժանումս է հոգւոյ եւ մարմնոյ. այլ մինչեւ ցայն ժամ երկու եր երկիւղ մահուն. յայնժամ եւ վասն զաւակի մահուն՝ եղել երեք տրտմութիւն հանապազ: Եօթներորդ՝ զի թէ լինի որ մեռանիցի այրն՝ եւ զաւակն մնայ որք եւ կինն այրի. նոյն առաջին ասացեալ թշուառութիւնն ողբաց եւ սուգ ժամանէ. մինչեւ մահ եւս բաղձայ կինն մնացեալ այրի: Եւ թէ սակաւ ինչ մոռացեալ զսուգն, յորժամ տեսանէ որք զզաւակն, դարձեալ նորոգի սուգն. եւ թէ ոչ իցէ զաւակ, կորիցէ յիշատակն առմոռաց: Թողում զայրութեան զվիշտն. զի ոմանք ոտնհար լինին. թշնամիքն ուրախանան. ծառայքն արհամարհեն. որք բազումք ոչ համբերեն վշտացն: Դարձեալ՝ ի յառաջին փորձանս անկանին. եւ այլք կամ մնան այնպիսի այրի՝ զառաջին վտանգ ամուսնութեան, յիշելով: Արդ՝ այս նոցա է, որք հեշտալի ամուսնութեամբ եւ փարթամութեամբ են զուարճացեալ: Ութներորդ՝ նոցա ամուսնացելոց՝ որոց աղքատութիւն եւ դժուարութիւն իցէ ի կեանս, հաշմութիւն, հիւանդութիւն, կին, եւ մանկունս. եւ այնչափ բազում ունին հոգս եւ ցաւս՝ մինչ զի զչարիս մարմնոյն ոչ կարեն հռչակել. եւ այսոքիկ անթիւ եւ բազում: Իններորդ՝ տես դարձեալ ի միասին զաղքատս եւ զփարթամբ առ հասարակ ի տրտմութեան զինիլ. զի փարթամս խռովէ յիշատակ մահուն. եւ աղքատք տրտմին յերկարիլ կենացն. եւ երկուքն ի տրտմութեան մնան: Նոյնպէս հաւասար տրտմին, թէ ունին մանկունս եւ թէ ոչ. թէ մեռանին եւ թէ ապրին: Չի մինն ողբայ թէ անզաւակ եմ. եւ միւսն թէ չունիմ կերակուր զաւակաց: Միոյն սիրելի մանուկ մեռանի. եւ միոյն կեայ անառակութեամբ: Եւ երկուքն ողորմելիք են. զի մինն զմահն աղբայ. եւ միւսն զկեանս. եւ այլն նմանապէս: Տասներորդ՝ եթէ պարտիցէ ասել, յամուսնութեան լինի կռիւ, նախանձ, ատելութիւն, մարդասպանութիւն. եւ մանաւանդ մանկասպանութիւնք. մանկակերութիւնք. անօրէն

խառնակութիւնք. որպէս ասէն պատմութիւնք զառաջնոցն: Այլ ել եւ տես ի կանոնս եւ ի քաղաքական օրէնս՝ զազգի ազգի պատուհաս եւ զվճիռ չարաչար մահու. որք յայտնի ուսուցանեն զամուսնութեան սեփհական չարիս. զի վասն նորա լինին գողութիւնք. աւագակութիւնք. ազահութիւնք. եւ այլք. որպէս ուսանելոց ենք յառաջիկայոյ: Արդ՝ որովհետեւ ասացաք փոքր ի շատէ զվտանգ ամուսնութեան. ասասցուք սակաւուք եւ զմեծութիւն կուսութեան: Եւ գիտելի է՝ թէ որ կամեսցի արժանապաես գովել զկուսութիւնն. այնպիսի է, թէ որ զշիթս քրտանց՝ ծովու յաւելուած կարծիցէ. կամ զփուք բերանոյ՝ հողմոց առաւելութիւն: Այլ վասն երկու պատճառի՝ ասելի է զմեծութիւն կուսութեանն: Նախզի՝ ծանկցուք թէ մեծ է եւ սքանչելի. եւ պատմօղ բան նմա ոչ հաւասարի: Երկրորդ՝ զի եւ այլք յորդորեսցին ի կուսութեան բարիս: Արդ՝ նախ անունն իւր յայտնի առնէ զմեծութիւնն իւր. այսիքն, զի կոչի անապական. զի կոյսն անապական լսի. եւ զանփորձն ամուսնութեան՝ ա նապական կոչեն մարդիկ. որպէս զաստուածային կոյսն Մարիամ՝ անապական կոչեմք: Ահա տես՝ զի ի մէջ բազում եւ մեծամեծ առաքիւնութեանց՝ որք են հաւատ յոյս՝ սեր՝ խոհեմութիւն՝ արիութիւն՝ եւ այլն, պահք՝ եւ աղօթք՝ եւ այլն, կուսութիւնն միայն անապական կոչեցաւ: Դարձեալ՝ իմանի մեծութիւն շնորհիս ընդ անապական հօրն. որեւ հայր է կուսութեամբ. որեւ որդի ծնաւ անախտ եւ անապական զմիաձինն Աստուած, զանապականութիւն առաջնորդն: Որեւ դարձեալ ծնաւ ի մօրէ անախտ եւ մաքուր ծնունդ. հաւասար նմին սքանչելի. որդի ի կոյս մօրէ անապական հոգւովն սրբով ծնեալ. ըստ այնմ որ ասաց հրեշտակն առ Յովսէփ եթէ՝ (որ ի նմայն ծնեալ է՝ ի հոգւոյն սրբոյ է:) Երրորդ կուսութիւն անմարմին բնութեանն՝ է առանձին եւ սեփհական. ըստ որում հայրն հոգւոց յառաջ էած զհրեշտակս՝ եւ զհոգիս մարդկան ստեղծմամբ յոչնչէ: Եւ այսպէս ընդ ամենայն գերաշխարհիկ բնութեանս առաքիանայ, եւ յաստուածայնոցն՝ ոչ բաժանի ասէ սուրբն Գրիգորիոս: Որեւ զնոյն կուսութեան բարիս որ առանձին է անմարմին բնութեանն՝ վասն մարդասիրութեան վիճակեցոյց մարմնաւորացս: Չի զվայր կործանեալ մարդկան բնութիւն ախտաւոր վարուք, կուսութեամս ի վեր ուղղեսցէ: Վասն այսորիկ աղբիւր անապականութեան Տեր մեր Յիսուս Քրիստոս՝ ոչ յամուսնութենէ մարդ եղեւ, այլ ի կուսական յարգանդէ անապական մարմնով երեւեցաւ. զի ցուցցէ զայս մեծ խորհուրդ՝ եթէ Աստուծոյ զալստեանն եւ մուտ ճանապարհի ի մեզ՝ ոչ այլ ինչ է բաւական, եթէ ոչ կուսութիւն եւ բոլորովին ախտից մաքրութիւն: Եւ զոր օրինակ՝ յանարատն Մարիամ որ կուսութեամբ էր պայծառացեալ՝ եղեւ մարմնապէս լրութիւն աստուածութեանն ի Քրիստոս: Նոյնպէս եւ յամենայն կոյս ոգւոջ՝ հոգեպէս լինի զալուստն Տեառն. որպէս ասէ յաւետարանին: (Ես եւ հայր առ նա եկեսցուք. եւ օթեանս առ նմա արասցուք:) Յայսմանէ տես զմեծութիւն կուսութեան. մինչ զի յերկինս ի հայրն հոգւոց կայ եւ մնայ. եւ ի մարդկան փրկութիւն միաբանի: Կուսութիւնն զԱստուած ի մարդկային կեանս ի ջուցանէ. եւ զմարդիկ յերկնից ցանկութիւնն ամբառնայ: Իբրեւ կապ լինի կուսութիւնն մարդոյ առ Աստուած ընտանութեան որպէս ասացաք: Այս գովութիւն ի մեծութենէ կուսութեան իրին: Որեւ զմեզ արդանաւորեսցէ Քրիստոս Աստուած յոյսն ամենեցուն. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին դարձեալ քարոզ վասն կուսութեան: (Գլուխ. ԸԹ)

Իսկ թէ զի՞նչ օգտեցուցանէ զմեզ: Ասասցուք զայս ըստ հինգ եղանակի: Նախ զի՛ յառաջին կեանս դրախտին հանէ: Երկրորդ՝ զնմանութիւն վերջին յարութեանն առ ինքն բերէ: Երրորդ՝ արուեստ է աստուածային կենացն: Չորրորդ՝ մաքրութիւն է սրտի: Հինգերորդ՝ անհոգութիւն մարմնական կենաց: Բեր այժմ գիրաքանչիւրսն բացայայտեցից: Նախզի՛ յառաջին կեանք դրախտին հանէ. եւ զի առաջին կեանք դրախտին կուսութիւնն էր: Ուստի յայտ է յայնմանէ՝ զի նախ քան զյանցանելն՝ (էին մերկ Ադամ եւ կին իւր. եւ ոչ ամանչէին.) զի ոչ ունէին զամօթ ցանկութեանն: Եւ թէ ոք ասիցէ՝ ապա զի՞նչ էր արու եւ եղն: Ասեմք առ այս եթէ՛ գիտեր արարիչն կանխատես գիտութեամբ, եթէ ելանելոց էին ի դրախտէն. եւ ոչ աճէին որպէս հրեշտակք: Վասն որոյ արու եւ եգ արար զնոսա. զի ըստ նմանութեան անասնոց աճեսցին յերկրի: Ուստի յայտ է որ ասաց. (աճեցէք եւ բազմացարուք՝ եւ լցէք գերկիր:) Չերկիր ասաց, եւ ոչ զդրախտն. ապա ուրեմն առաջին կեանքն մարդկան կուսութեամբ էր ի դրախտին: Այլեւ ունէր չորս ազգ մեծութիւն ի դրախտին. որպէս սուրբն Գրիգոր Նիսացին ուսուցանէ: Նախզի՛ մերկ էր ի մեռեալ մորթոց ծածկութիւնց. որով յայտ է թէ՛ լուսեղէն էր զգեստն նախ քան զյանանելն: Երկրորդ՝ համարձակ յԱստուծոյ դեմսն հայեր. իբր թէ չունէր երկիւղ եւ ամօթ յանցման: Երրորդ՝ ոչ ճաշակելեօք եւ տեսանելեօք զբարին ընտրէր՝ որք սխալապէս ընտրէն. այլ միայն ի Տէր զուարճանայր. որ ցուցանէ թէ յայնժամ մտացն էր իմացումն եւ հայեցուած՝ որ զուղիղն ընտրէ: Չորրորդ՝ օգնականան որ տուաւ նմա ի նոյն վարիլ. ցուցանէ թէ՛ օգնական տուաւ նմա. ոչ թէ վասն ամուսնութեան լինելոյ ի դրախտին, քաւ լիցի. այլ օգնական. այսինքն, յաստուածային տեսութիւնն. ի Տէր զուարճանալ յառաքինութեան գործս. որպէս նշանակեն գիրք: Եւ յայտ յայնմանէ որ ասաց. (տրտմութեամբ ծնցիս որդի:) Չի այս երկանց դատապարտութիւնս պատիժ է. զոր ոչ էր նախ քան զմեղանչելն. զի վասն մեղացն էր այս դատապարտութիւնս: Բայց գիտելի է՝ զի տասն աստիճան դնէ անկման մարդոյն ի դրախտէն. որով որդիքս վասն պարտուց հօրն արտաքոյ մնացաք: Եւ որ ոք եւ կամեսցի զդարձն անդրէն, ի ձեռն նորին յարմարութեան, այսինքն, կարգին, կարողանայ ելանել ի նոյն: Արդ՝ անկման աստիճան առաջինն էր հեշտութիւնն. որ ունի ինքեան զերեք կարգն. այսինքն, մէկ՝ զդարձումն յետս յաստուածային փառացն. եւ վասն այն շրջեցաւ ի զբօսանս դրախտին: Երկրորդ՝ հեշտութիւն ի խօսակցիլ օձին. եւ վասն այն կամեցաւ լսել՝ զի հեշտացաւ վասն փառաց Աստուած անալոյն: Երրորդ՝ հեշտութեամբ եւ ճաշակելեացն. ըստ այնմ թէ՛ (զեղեցիկ էր ի տեսանել, եւ քաղցր ի կերակուր:) Չորրորդ ամօթն. (բացան ասէ աչք երկոցունցն, եւ տեսին զի մերկք էին. եւ վասն այն արարին ի թգենոյն ծածկոյթ:) Հինգերորդ՝ երկիւղն յայնմ, (զի լւան զձայն գնալոյ Տեառն եւ երկեան:) Վեցերորդ՝ ոչ եւս համարձակութեամբ կալ առաջի Աստուծոյ: Եօթներորդ՝ տերեւովք եւ ստուերօք թաքչիլն. ըստ այնմ, (լուայ զձայն քո եւ երկեայ, քանզի մերկ էր եւ թաքեայ:) Ութներորդ՝ մաշկեղէն հանդերձն. ոչ ըստ ոմանց թէ զմորթ մարմնոյս. զի ունէր զայս յստեղծմանէն. այլ մորթ մաշկեղէն ստեղծեաց եւ զգեցոյց նմա փոխանակ լուսեղէն զարդու՝

զմեռելութիւն նորա նշանակելով. որպէս ասէ՝ (արար հանդերձս մաշկեղէնս եւ զգեցոյց նմն:) Եւ ապա Իններորդ՝ ի ցաւալից երկիրս այս պանտխտանալ. եւ ասէ. (փուշ եւ տատասկ բուսուցէ քել երկիր. եւ քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց զամենայն աւուրս:) Իսկ Տասներորդ՝ յորում ամուսնութիւն միխթարութիւն տուաւ յեւանելոյն. ըստ այնմ թէ՛ (աճեցէք եւ բազմացարուք՝ եւ լցէք զերկիր:) Եւ դարձեալ թէ՛ (տրտմութեամբ ծնցիս որդի:) Տես՝ զի յայտնապէս ցուցանէ սուրբ. զի թէ պահպանութեամբ կացեալ էին ի դրախտին, ոչ եւս ամուսնութեամբ լինէր աճումն: Այլ կամ իբր զհրեշտակս. կամ որպէս ի միոյ լուսոյ բազումքն. կամ կուսութեամբ ծնունդ. որպէս կոյսն Մարիամ աստուածայինն՝ սրբութեամբ կուսութեան ծնեալ, փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն եւ կնոջ. ի կուսութեան ծնունդ միայն ի մօրէ: Արդ՝ որ ոք կամեսցի ի նոյն եւանել եւ առ Զրիստոս լինիլ, պատշաճ է ի վերջ նագունէն սկիզբն առնել. որպէս սանտխովք: Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալ ի տանէ. յորժամ դարձցին վերստին ի տուն իւրեանց, նախ թողուն զվերջին բանակետոյն ուստի զիմեցին երթալ: Եւ արդ՝ հեռանալոյ մեզ ի դրախտէն կենաց՝ վերջին ամուսնութիւնն եղել: Չայն նախ պարտ է թողուլ. եւ ապա յերկրաւոր հոգոց եւ ի տառապանաց հեռանալ: Եւ երրորդ՝ զմաշկեղէն պատմուճանն մերկանալ. այսինքն, զխորհուրդս մամնեղէնս եւ զմեռելոտիս: Եւ չորրորդ՝ յայտնել խոստովանութեամբ զգաղտնիս ամօթոյն: Եւ հինգերորդ՝ ոչ եւս թզենաւ դառն վարուք սուերանալ. զի տերեւ թզենոյն դառն է եւ փշուտ. եւ ըստ մեղացն առակի: Վեցերորդ՝ զի անկասկած լիցուք ի վատթար երկիւղէ. յորում երկիւղագգեացքն չարչարին ըմբռնեալք ի մեղս: Եօթներորդ՝ դարձեալ՝ առաջի աչաց կալ արարչին: Ութներորդ՝ զխաբէութիւնս որ ճաշակեօքն եւ տեսանելեօքն է՝ ի բաց մերժել՝ եւ զամենայն զգայութեանց ընտրողութիւն տալ: Իններորդ՝ խորհրդակից ունիլ՝ ոչ զթունարկու օճն, այսինքն, զարկածս չարին, այլ զպատուիրանս Աստուծոյ որ ի գիրս սուրբս: Տասներորդ՝ առ յատուկ բարին մերձենալ. այսինքն, առ ամենեւին եւ զուտ բարին որ է Աստուած խորհրդով բանիւ եւ գնացիւք: Եւ այսպէս կուսութիւնն հանէ զմեզ յառաջին կեանս դրախտին: Երկրորդ գլուխն՝ եթէ զնմանութիւն վերջին յարութեան առ ինքն բերէ: Եւ այս ըստ բազում եղանակի: Նախզի՝ ի յարութեանն բոլորովին մեղքն մեռանի. այսպէս եւ կուսանն՝ միանգամայն մեղացն մեռեալ է, եւ Աստուծոյ կենդանացեալ: Երկրորդ՝ զի անմահ է կեանք յարութեանն. այսպէս եւ կոյսն ոչ պտղաբերէ զմահ. այսինքն, զի ոչ ծնանի զաւակ միկանացու. այլ զանմահութիւն հոգւոյն որպէս ասացաք: Երրորդ՝ ի յարութեանն ամենայն մարդկան կենաց կատարած լինի. այսպէս կատարած եւ վախճան է արարեալ ամենայն մարմնական կենցաղական հոգոց: Չորրորդ՝ զի միշտ սպասէ (երանելի յուսոյն եւ յայտնութեան մեծին Աստուծոյ:) Զինգերորդ՝ զի ոչ ինչ ունի հեռաւորութիւն ի մեջ իւր եւ զալստեանն Աստուծոյ ազգօք եւ ծննդօք: Վեցերորդ՝ զլաւագոյն յարութեանն բարիս՝ այսինքն, զուգահաւասար լինիլ հրեշտակաց, ըստ խոստմանն Տեառն թէ՛ (ոչ արք կանայս առնեն. եւ ոչ կանայք արանց լինին. այլ են իբրեւ զհրեշտակս,) զայսպիսի մեծագոյն բարիս այժմ ի յինքն ցուցանէ կուսանն՝ ազատ լինելով յամուսնութեանց որպէս ասացաւ:) Երրորդ գլուխն որ ասէ՝ կուսութիւնն արւեստ է աստուածային կենացն: Որպէս իւրաքանչիւր արւեստ՝ ազգի ազգի գործի ունի, զի այնու

կատարեցե՛ղ զգործն. այսպէս աստուածային եւ անմարմին կենացն նմանիլոյ՝ արուեստ եւ գործի է կուսութիւնն: Եւ աստուածային կեանքն այն էր՝ զոր ասաց մարգարէն. (արար Աստուած զմարդն ի պատկեր իւր:): Չի մտաւոր եւ բանական բենդանիս այս մարդ՝ ոչ ըստ բնութեան, եւ ոչ ըստ լինելութեան զախտական եւ զարատաւոր կիրս ունէր յինքեան. եւ այսու նման է սկզբնատպին Աստուծոյ: Այլ յետ յանցանացն սպրդեալ եմուտ ախտն ի նա. եւ տգեղացոյց զպատկերրն առաջին կազմութեանն, իբրեւ երկաթ ինչ սեւացեալ չարութեան ժանկով: Եւ որպէս ի տիղմն անկեալ՝ ապականեաց զաստուածային պատկերն. եւ զկաւեղէն պատկեր մեղացն զգեցաւ: Չոր թէ յստակ ջրով՝ այսինքն, մաքուր առաքինութեամբ կուսութեանն լուսնայ ոք զհողեղէն ծածկոյթն, դարձեալ երեւեցի հոգւոյն գեղեցկութիւնն: Վասն որոյ ասէ Տէրն եթէ՝ (արքայութիւնն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է.) այսինքն, թագաւորական պատկերն Աստուծոյ: Չոր յայլում տեղոջ զկորուսեալ դրամն հրամայէ մեզ խնդրել. այսինքն, այրի ոգւոյն զճրագն լուցանել. ճրագ զբանն ասէ իմաստութեամբ բորբոքեալ. զի հերքեցէ զխաւար մեղացն՝ եւ զծածուկն յայտնեցէ: Իսկ դրամն՝ ամենայն իրօք զկերպարան թագաւորին ցուցանէ. այսինքն, որպէս ասեն ի մասուտունք թէ՝ դրամին բոլոր ձեւն՝ զաշխարհս առակէ. եւ գրելն ի վերայ՝ զանունն Աստուծոյ, թէ Տէր է բոլոր աշխարհի. իսկ ի միւսն դէմն պատկեր թագաւորին՝ ցուցանէ թէ՝ մարդն պատկեր է Աստուծոյ: Իսկ դրամն որ ոչ ամենեւին կորուսեալ էր, այլ ծածկեալ յաղբ որ է աղբ աղտեղութեան մամնոյն. որոյ աւելածելով եւ մաքրելով, յոյժ ինամակալութեան բարուցն գտանէր զհայցելին: Վասն որոյ բերկրի հոգին եւ ի հաղորդութիւն ուրախութեանն կոչէ զդրացիս. այսինքն, զգօրութիւն հոգւոյն. զբան. զցասումն, եւ զցանկութիւն: Դարձեալ՝ դրացի են հոգւոյն՝ հաւատ յոյս սեր. խորագիտութիւն. զօրութիւն. պարկեշտութիւն. եւ արդարութիւն. յայնժամ յիրաւի զաստուածային եւ զանճառելի զգեղեցկութիւնն տեսանելով, ինդան եւ ուրախ լինին ամենեքեան: Զանզի ասէ՝ (ուրախ լերուք ընդիս. զի գտի զդրամն իմ զոր կորուսի:): Եւ այս լինի ի ձեռն կուսութեան մարմնոյն որպէս ասացաք: Չորրորդ գլուխն՝ կուսութիւնն է մաքրութիւն սրտի: Եւ մաքուր սրտի կարէ ոք ի մաքուրն Աստուած հպիլ. եւ նմանեան զնմանն տեսանել. ըստ այնմ, (որք սուրբ են սրտիւք, նոքա զաստուած տեսցեն:): Չոր օրինակ՝ ի գիշերի փայլումն լինի յօգս՝ զոր սլացեալլ աստղ կոչեն. որ օդ է՝ բռնութեամբ հողմոյ ի տարրական հուրն մերձեցեալ եւ լուսաւորեալ. Նոյնպէս միտք մարդոյ թողեալ զերկրաւորս, վեր ի յաստուածոյին լոյսն մերձեցեալ լուսաւորի: Եւ որպէս պայծառ հայելի եւ յստակ ջուր վասն ողորկութեան եւ յստակութեան իւրեանց զճառագայթս արեգական յինքեանս ձգեն եւ զայլս լուսաւորեն. եւ զայս ոչ կարեն առնել եթէ անմաքուր իցեն. Նոյնպէս եւ մեք եթէ ի բարձրագոյնսն ելանելոց եմք մտօք, պարտ է թողուլ զերկրաւոր պղտորմունս. եւ ապա ճշմարիտ լուսովն Զրիստոսի լուսաւորիլ: Եւ չորս ինչ պիտոյ է մաքրութեան սրտի: Նախ զչար խորհուրդս մաքրել ի մտաց: Երկրորդ՝ զսպել զչար հայեցուածս աչացն: Երրորդ՝ զլսել ականջաց եւ զխօսիլ լեզւաց: Չորրորդ՝ պահել զբերանս ի չարաչար որորստութեանց: Վասն որոյ մեծն՝ ի մարգարէս Եղիա եւ Ովհաննէս մկրտիչ՝ որպէս պատմութիւնն ասէ զնոցանէ: Իմանկութենէ օտարացն ի մարդկային կենաց յանապատս բնակելով. անտես եւ անլուր ի

մարդկանէ: Ոմն կերակրիւ ի ձեռաց ագռաւու. եւ ոմն մարախ եւ մեղր վայրենի: Մինն՝ զգետնոյ ստորեւ ուղտու. եւ մինն մաշկեայ մորթի: Վասն որոյ ամն ի նոցանէ Եղին՝ շտեմարանապետ եղել Աստուծոյ պարգեւացն. փակեր մեղուցելոցն՝ եւ բանայր ապաշխարողացն: Եւ Ովհաննէս արժանաւորեցաւ մկրտել զբանն Աստուած. եւ ի Տեառնէ վկայեցաւ մեծ լինիլ ի ծնունդս կանանց. եւ զայս վասն այն արարին՝ զի մի խորհուրդ նոցա ընդ զգայարանացն ի վայր ցնդիցի եւ ճապաղեսցի: (Եւ այսոքիկ ի խրատ մեզ գրեցան որպէս ասէ առաքեալն.) զի մեք ըստ նմանութեան նոցա զխորհուրդս մեր զսպեսցուք. զի մի ընդ հեշտութեան զգայուեացս ճապաղիցին յերկիր եւ ցրուեսցին. որպէս ջուր ցրուեալ ի վերայ երկրի, ոչ ինչ կարէ գործել. ապա թէ ժողովեսցի ի մի վայր, բազում ինչ օգտութիւն գործիցէ. նոյնպէս եւ միտք մարդկան: Եւ դարձեալ՝ որպէս ջուր շուրջանակի խողովական պնտեալ ի ներքուստ ի վեր ելանէ. նոյնպէս եւ միտք պնտեալ ժուժկալութեամբ, վեր ի բարձուսս ելանէ առ Աստուած, միշտ առ նա խորհելով ըստ առաքելոյն. (զվերինն խորհիլ ուր Քրիստոս նստի ընդաջ մէ Աստուծոյ. եւ մի գերկրաւորս:) Եւ այս յայն ժամ լինի՝ յորժամ կուսութեամբ մաքոր պահեսցուք ի ցանկութեանց աշխարհի: Հինգերորդ գլուխն՝ կուսութիւնն անհոգութիւն է մարմնական կենաց՝ որ երեւի յամուսնութեան թշուառուեաց. որ ի ժողովեալն աշխատին. եւ ի պահելն հոգան. եւ ի կորուսանելն կսկծին եւ ցաւին: Դարձեալ՝ ոչ ունին տրտմութիւն ի կեանս. եւ ոչ սուգ եւ հառաջանս զաւակաց եւ այլոց. ոչ սրբութիւն. ոչ այրութիւն. ոչ կռիւ. ոչ նախանձ. ոչ ագահութիւն. ոչ սնափառութիւն. եւ ոչ այլն: Չի մարմնական ստացուած որքան միոյն առաւելու, այնքան միւսոյն նւագի: Վասն որոյ կռիւք եւ աղաղակք բազմանան ի նոսա. իսկ ստացուած կուսութեան որքան առաւելու ի մինն՝ ոչ նուագի ի միւսոյն: Եւ գիտելի է՝ զի կուսութիւնն երեք ազգ է: Նախ եւ առաջին՝ որ կոյս լինի հոգւով եւ մարմնով. այսինքն, բոլոր խորհուրդով, եւ բոլոր զգայութեամբ. այս ամենեւիմբ կատարեալն է. որպէս Եղիա եւ Ովհաննէս, եւ այլքն նմանապէս: Երկրորդ՝ է կուսութիւն որ մարմնովն ամուսնացեալ լինի, եւ հոգւովն կոյս եւ ողջախոհ. որպէս էր Աբրահամ. ի սահակ. Յակօբ. եւ այլ սրբոքն՝ որք ամուսնութեամբ հաճոյացան Աստուծոյ. եւ այս է կատարեալ. սակայն երկրորդ ճանապարհաւ. քան զի առաջին կուսութիւն է՝ որ հոգւով եւ մարմնով լինի: Իսկ երրորդ կուսութիւն է՝ որ մարմնով միայն լինի կոյս եւ ոչ հոգւով. այսինքն, ոչ խորհրդով եւ մտօք եւ սրտիւ. այլ միշտ ի չարն ամուսնանայ. եւ զմարմինն միայն պահէ կոյս. որպէս յիմար կուսանքն զի կոյսք էին մարմնով. այլ զի հոգւով ոչ էին, մնացին արտաքոյ մտիցն արքայութեանն. սա նուագագոյն է քան զառաջինսն: Վասն կուսանաց:

Եւ գիտելի է՝ զի կոյսն պարտի ունիլ վեց իրս, առ ի կատարել զկուսութիւնն: Առաջին՝ զդաստութիւն կերակրոյ եւ ըմպելոյն. որք են պատճառ ցանկութեան: Երկրորդ՝ է աշխարտութիւնն. որ խոցոտէ զփուշ ծուլութեանն. յայսցանէ ասէ Չեկիել. (այս է անօրէնութիւն Սողոմայ քեռ քոյ. յղփութիւն ցորենոյ. եւ լիութիւն գինւոյ. եւ դատարկութիւն:) Երրորդ՝ է խոշոր հանդերձն. քանզի որդիքն Իսրայելի պոռնկեցան ընդ դստերսն Մովաբու որք էին զարդարեալ: Չորրորդ՝ է պահպանութիւն զգայարանանց. զի անկարգութիւն զգայութեանցն՝ է ճանապարհ պոռնկութեան. յայտէ ի գինայ՝ որ ել տեսանել զկանայս երկրին եւ ապականեցաւ: Հինգերորդ՝ է

համատուրփին բանից. զի շատախօսութիւնն՝ խոցոտէ զողջախոհութիւնն. որպէս ասէ յառակաց. (պահես զքեզ ի կնոջէ չարէ, յորժամ բանիւ զքեզ ի պատրասս արկանիցէ:) Եւ Պօղոս ասէ. (ապականեն զբարս քաղցունս բանք չարք:) Վասն այսորիկ ասեն վարդապետք. եղիցին բանք կուսին խոհեմ, համեստ, սակաւ, եւ ամօթխած: Վեցերորդ՝ է փախչիլ ի պատճառաց մեղացն. զի կոյսն պարտի կերպիւ իմն վայրի լինիլ. զի որպէս վայրի կենդանիքն գեղեցկագոյն ունին զմորթն քան զնտանիսն. այսպէս կոյսն որ յարակից լինի աշխարհի՝ ոչ կարէ լինիլ ամենեւին սուրբ: Վասն այրեաց:

Գիտելի է՝ զի այն որ կամի պահել զողջախոհութիւնն՝ այսինքն, այրին՝ պարտի ունիլ երիս իրս: Առաջին է՝ ոչ շրջիլ տանէ ի տուն. այլ նստիլ ի տան իւրում. կամ աղօթել ի տաճարին. որպէս ասէ վասն Աննայի՝ (որ ոչ մեկնիւր ի տաճարէն զգայ՞ զքեզ եւ զգերեկ:) Չի շատաշրջիկ այրին՝ յանդիմանեալ լինի յառաջին Տիմօթէոսն. (դատարկք անձինք՝ ուսանին շրջիլ տանէ ի տուն. եւ ոչ միայն դատարկք, այլ քասփուսք եւ հետաքրքիրք. եւ խօսին որ ոչ ինչ է պիտոյ:) Երկրորդ՝ խոշորութիւն կերակրոյն. որպէս ասէ յառաջին Տիմօթէոսն: (Գիրք այրին՝ կենդանոյն մեռեալ է.) այսինքն, հոգւով: Երրորդ՝ է խոնարհ զգեստն. զի ասէ ծննդոց թէ՛ (եհան Թամար զհանդերձն այրութեան. եւ զգեցաւ զհանդերձ զարդու. եւ զնաց ի գործ հեշտութեան:) Չայսպիսի այրեացս ասէ Գրիգոր. երեք ազգ են այրեացն: Նախ՝ որ է կատարելագոյն՝ նախապատրաստեալ երկնային վարձուցն. որ զգայ՞ զքեզ եւ զգերեկ պահօք եւ աղօթիւք ծառայէ Աստուծոյ: Երկրորդ՝ որ ինամէ զտուն իւր եւ զորդիսն. սա ոչ է պատուական որպէս զառաջինն. այլ է գովելի ըստ այնմ՝ որ ոչ հետեւի հեշտախտութեանցն: Երրորդ՝ է որ խորտկաց եւ հեշտութեանց պարապի. եւ այսպիսիքս պահեալ լինին յաւիտեանական մահուն: Եւ Ամբրոսիոս ասէ. յայն ժամ է այրին ողջախոհ, յորժամ պարկեշտանայ ի գինւոյ: Եւ ոչ ցանկացէ առն, եթէ ոչ փարձեսցի ի գինւոյն. զի թէ Յուդիոյ ըմպեալ է գինի, ննջեալ էր ընդ Զողեփեռնեայ: Արդ՝ զի՞նչ այլ գովութիւն այրւոյն, քան պահել զհաւատ մեռեալ զուգակցին իւրոյ: Եւ զի՞նչ այլ օգուտ, քան արժանաւորիլ արքայութեանն երկնից. որպէս ասաց Տէրն. (են ներքինիք՝ որք զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեանն երկնից:) Վասն լսելիաց:

Գիտելի է՝ զի ի բազուրմ իրաց պարտ է ինուլ զականջս: Մեկ՝ իքնարից գուսանաց. որպէս ասէ Յոբ. (առեալ սաղմոսարան եւ քնար. եւ ուրախ լինեին ձայնիւ երգոց. եւ ի մի կէտ իջանեն ի դժոխս:) Երկու՝ ի յերգոց կանանց. որպէս ասէ Սիրաք. (մի յաճախեր ընդ կաքաւօղ կանայս. եւ մի լսեր զձայն նոցա. զի մի կորիցես գեղով նոցա.) եւ զկնի ասէ. (խօսք նոցա իբրեւ զհուր բորբոքի:) Երեք՝ ի լսելոյ զչար ընկերաց. որպէս ասէ Սիրաք. (պատեա զականջս քո փշօք. եւ մի լուիցես զչար լեզուս:) Չորս՝ ի լսելոյ զգովութիւն անձին. զի ասեն վարդապետք, թէ շողոքորթօղքն՝ իբրեւ զհեշտութիւն փոխեն զմիտս: Զինգ՝ ի հեշտութենէ ձայնին իւրոյ. զի ասէ Գրիգոր. որ ցանկայ զքաղցրագոյն ձայնի, կորուսանէ զհամեստութիւն անձին: Եւ այլ վարդապետք ասեն. յորժամ շարժէ զքեզ ձայնն քան զբանն, լաւագոյն է լռելն. եւ Քրիստոս փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ սրբոյն Գրիգորի. ի Բանն՝ (Եղին զիս ի գրի ներքնումն, ի խաւարի եւ ի ստեուերս մահու:) Սաղ. 87. 7: (Գլուխ. ԸԺ)

Նախագիտութիւնն Աստուծոյ՝ ընտրեաց զլաւսն եւ գովեաց. եւ զվաթարս խոտեաց եւ անարգեաց: Որպէս եւ ասէր. (զՅակօբ սիրեցի, եւ զԵսաւ ատեցի:) Այսպէս եւ զմեծն Գրիգորիս սիրեաց. եւ զսուրբն ատեաց եւ խոտեաց զԱնդրանիկն: Չի որպէս բարի սերմանք թաղեալ յերկրի, աճին եւ բազմանան, եւ սփռեալ տարածին ընդ բնաւ: Նոյնպէս ընտրեալ սերմանքն Աստուծոյ՝ այսինքն, առաքելոցն գումարք ուր եւ թաղեցան, աճեցան եւ բազմացան պտուղքն իւրեանց ընդ անհունս: Այսպէս եւ մերն Գրիգորոս լուսաւորիչն՝ պտուղն օրհնութեան շնորհաց առաքելութեան առաքելոյն Թաղեոսի բարւոք սերման: Աճեցոյց եւ բեղնաւոր արար զբանն կենաց յազգս հայկազեան: Նախահայրն եւ նախասկիզբն հոգեւոր զաւակացս՝ եւ պատճառ կենդանութեան մերոյինս ազին՝ երջանիկ հայրն հաւատոյ մեծն Գրիգորիոս՝ համեմատ նախնոյն մարդկութեանս Ադամայ առաջնոյ: Նախզի՝ որպէս նա ձեռօք Աստուծոյ ի հողոյ ստեղծեալ. նոյնպէս եւ սա ինամօք բազկացն Յիսուսի՝ առեալ ի հողոյ գերեզմանէ խորագոյն գբոյն, նոր նորոգեալ ի պատկեր իւրական: Երկրորդ՝ որպէս նա եղել սկիզբն աճման ծննդոց մարդկան. այսպէս եւ սա սկիզբն եւ պատճառ մեղուցեալ որդոցս աճման հոգեկան. ըստ առաքելոյն թէ՛ (ի Քրիստոս Յիսուս անտարանաւն եւ ծնայ զձեզ:) Երրորդ՝ զի որպէս նա (եղ անուանս ամենայն կենդանեաց՝ եւ այն է անուն նոցա.) այսպէս եւ ի ձեռն սուրբ գրեցան անուանք հաւատացելոց ի դպրութիւն կենաց անջնջելի տպաւորութեամբ: Չորրորդ՝ որպէս նա եղել գլուխ եւ Տէր ամենայն կենդանեաց անբանից. նոյնպէս եւ սա եղել գլուխ եւ Տէր եւ առաջնորդ եւ հովիւ քաջ հաւատացելոց ի Քրիստոս, ինամել տածել եւ ածել ի հանգիստն երկնաւոր ասելով. (ահա ես եւ մանկունք իմ զորս ետ ինձ Աստուած:) Այլեւ գերազանց գտաւ քան զնա բազում առաւելութեամբ: Նախզի՝ նա խրատով օձին հաւատացեալ բարձրամտեցաւ՝ եւ զրկեցաւ ի տեսութենէն Աստուծոյ. իսկ սա օձատանջ ճգնութեամբն խոնարհեցաւ եւ նուաստացաւ այնչափ, մինչ զրկեցաւ ի տեսութենէ արեգականս. եւ տեսութեանն Աստուծոյ արժանացաւ. որպէս ասէր՝ (զօրացիր եւ քաջ լեր երանելիդ Գրիգորիոս. զի ես ընդ քեզ եմ:) Երկրորդ՝ զի նա օձին խաբմամբն եկեր ի պտղոյն հրաժարեցուցեալ. եւ յանցեաւ եւ մեղաւ. իսկ սա՝ օձատանջ տքնութեամբ մերժեալ եւ ի հարկաւոր պիտոյիցն, անճաշակ լինելով գերեք տասան ամ, մաքուր եւ արդար գտաւ: Երրորդ՝ զի նա օձապատիր խաբմամբն՝ մերկացաւ ի լուսեղէն զգեստուցն. իսկ սա՝ ի ձեռն օձատանջ չարչարանացն, էարբ զմկրտութեան բաժակ չարչարանաց Տեառն. եւ զգեցաւ զՔրիստոս. եւ զգեցոյց զհետեւօտս իւր մկրտութեան շնորհին. ըստ առաքելոյն. (որք ի Քրիստոս մկրտեցայք՝ զՔրիստոս զգեցեալ էք:) Չորրորդ՝ զի նա օձախաբ իրագործութեամբն ամօթալից եւ երկիւղալից եւ տերեւազգած եղեալ թաքեաւ ընդ ներքոյ ծառոց դրախտին: Իսկ սա օձատանջ քրտմամբն՝ ելեալ ի գբոյ տառապանացն, եկաց առաջի ազանց ազգաց եւ թագաւորաց. եւ աներկիւղ քարսզեաց զՔրիստոս ճշմարիտ Աստուած ի լուր ամենայն մարդկան: Հինգերորդ՝ զի նա օձապատիր խաբմամբն՝ արտաքսեցաւ ի մշտալոյս դրախտէն. եւ ստուերացաւ յայսմ աշխարհի: Իսկ օձատանջ ջանին՝ ել ի խաւարամած բանտէն լուսաւոր հոգւով. եւ լուսաւորեաց զխաւարեալս մեղօք եւ անգիտութեամբ. որպէս եւ լուսաւորիչ կոչեցաւ: Վեցերորդ՝ զի նա

օճապատիր կամօքն զրկեցաւ ի սպասաւորութենէ հրեշտակաց. որպէս եւ ասաց Աստուած (բոցեղէն սերովբէից՝ պահել զճանապարհս ծառոյն կենաց:) Իսկ սա օճաչարչար ճգամբն պահպանեալ եւ սպասաւորեալ եղել ի հրեշտակաց. որպէս յայտ եղել ի հարցմանէ հրեշտակին որ ի չորրորդ դասուն. որպէս ասէ Դաւիթ. (բանակք հրեշտակաց Տեառն՝ շուրջ եւ զերկիւղածովք իւրովք եւ պահեն զնոսա:) Եօթներորդ՝ զի նա օճապատիր ճաշակմամբն՝ եղել հող եւ կերակուր օճին: Իսկ սա ի ձեռն օճատանջ նեղութեանցն, եղել բժիշկ եւ ապաքինիչ հարելոց ի մահաբեր թունից եւ սատակիչ եւ կորուսիչ չարանախանձ վիշապաց: Ութներորդ՝ զի նա օճախաբ գործովն տուաւ ի հարւածս օճին ի գարշապարս. իսկ սա՝ օճատանջ վշտօքն՝ եղել սպասաւորեալ ի Լոցուսց. զի ասի ի պատմութիւնն թէ՛ գային զմարմնովն եւ լեզուին զոտս Լորա. որպէս ասեր Դաւիթ. (ի վերայ իժի եւ քարբի գնացեր դու.) եւ Տէրն ասեր. (Ետու ձեզ իշխանութիւն կոխել զօճս եւ զկարիճս:) Իսկ աստանօր՝ չորս իւրս հարցանելի է մեզ: Նախ թէ՛ վասն Է՞ր մատնեցաւ ի գուբ խաւարային բանտին: Երկրորդ՝ թէ վասն Է՞ր օճիւ տանջեցին զերանելին: Երրորդ՝ թէ վասն Է՞ր ի կերպարանս վարագի կերպափոխեաց զթագաւորն տրդատես: Չորրորդ՝ թէ վասն Է՞ր կոչեցաւ Գրիգոր:

Տեսցուք զառաջին գլուխն թէ՛ վասն Է՞ր ի գուբ խոր ընկեցեալ եղել սուրբն Գրիգորիոս: Ասեն իմաստունք եկեղեցւոյ թէ՛ վասն տասն պատճառի: Նախ զի՝ Տեառն սորա Զրիստոսի յերկնից ի յերկիր խոնարհեցաւ վասն փրկութեան մարդկան Լոյնպէս եւ սա համանման Տեառն իւրոյ՝ խոնարհեցաւ ի խորն վիրապ վասն փրկութեան ազգիս հայկազեան: Երկրորդ՝ զի զանկեալսն ի խոր խորատ՝ պատին մարդիկ խոնարհիլ ի վայր, եւ ապա ի վեր հանել եւ կանգնել: Այսպէս եւ ազգս հայոց՝ ընկղմեալ էր ի խորխորատ մեղացն. խոնարհեցաւ հովին քաջ ի խորս երկիր, եւ զընկղմեալսն մեղօք՝ ի վեր եհան եւ կանգնեաց. ըստ այնմ, (եհան զիս ի գբոյ տառապանաց:) Երրորդ՝ զի խաւար էր վիրապն այն. որ Լշանակեր զխաւար անհաւատութեան յաստուածային գիտութեանց. եւ իջանելով քաջ հովին ի խաւարային գուբն, լուսաւորեաց աստուածագիտութեամբ ըստ մարգարէին. (որք նստէին ի խաւարի եւ ի սուերս մահու, լոյս ծագեաց Լոցա:) Չորրորդ՝ վիրապն տեղի էր մահապարտն. եւ ազգս հայոց մահապարտ էր. որպէս ասեր Մովսիսիւ. (անձն որ մեղիցէ՝ Լոյն եւ մեռցի:) Վասն որոյ քաջ հովին եղ զանձն ի վերայ ոչխարաց. եւ մատնեաց զանձն իւր ի մահ. եւ վճարեաց զպարտս մեր. եւ զերծոյց զմեզ ի մահուանէ եւ ի դժոխոցն բանտէ. ըստ Դաւիթի. (փրկեցեր զանձն իմ ի մահուանէ:) Զինգերորդ՝ զի ահընկեց եւ զարհուրելի էր գուբն այն. զի որ ոք կամեր հայիլ իներս, սարսեր եւ յետս փախչեր: Լոյնպէս եւ մահն վասն Զրիստոսի զարհուրելի է եւ սարսելի. զի մարդիկ խոյս տուեալ փախչէին. վասն որոյ երջանիկ Նահատակն յառաջ ընթացեալ, յորդորէ զմեզ փութալ եւ յօժար կամօք երթալ զհետ Լորա. եւ ասեր մի երկնչիք՝ դիւրին է եւ հեշտալի. որպէս ասեր Տէրն. (մի երկնչիք յայնմանէ՝ որ զմարմինն սպանանէ:) Վեցերորդ՝ զի որ ինչ ի խորհուրդն Է՝ ոչ երեւի. զի ծածկեալ է խաւարաւ. Լոյնպէս եւ խորհուրդ տնօրէնութեանն Զրիստոսի ծածկեալ էր ի մարդկանէ. որպէս ասեր Դաւիթ. (եղ զխաւարն ծածկոյթ իւր.) իսկ լուսաւորիչն արի՛ մտեալ յանդունդս աստուածային խորոցն, եւ բազմօրեայ վարդապետութեամբն

յայտնեաց մեզ (գիտորհուրդն որ ծածկեալն էր յազգաց եւ յաւիտեանց:) Եօթներորդ՝ զի գարշահոտ է հորն այսպէս եւ ազգս հայոց՝ գարշահոտեալ եւ զազրացեալ էր մեղօք. որպէս ասեր Եսայի (խունկ մեղաւորին՝ որպէս հայիոյիչ է:) Իսկ որպէս զարրեգական պայծառ սուրբն Գրիգորիոս՝ անուշահոտեալ ամոքեաց զմեզ. եւ արար (հոտ անուշ Զրիստոսիւ առ Աստուած ըստ առաքելոյն:) Ութներորդ՝ զ ի բոլորակ էր բրեալ հորն եւ ընդունայն. իսկ երջանիկն Գրիգորիոս՝ ընդունայն եւ յոչ ինչ համարեցաւ զանուածեւ կեանս մարդկան. եւ դատարկ եւ թափուր ըստ խրատուն Սողոմօսի. (ունայնութիւն ունայնութեանց. ամենայն ինչ ընդունայն է:) Իններորդ՝ ասեն իմաստունք թէ՛ լուսատու ակն որ է ի խոր տեղւոջ՝ եւ մտանելն անդ անհնարին է մարդկան, ձգեն մարդիկ զշաղիղս անասնոց ի խորն. եւ ակունքն ջերմացեալ ի յարեգականէն, կպին ի շաղիղն. եւ ապա արծիւք ի ջանեն եւ հանեն զշաղիղն ի վեր յափն ձորոյն հանդերձ ակամբն. եւ կերեալ զմարմինն, մնայ ակն ի տեղւոջն. եւ մարդիկ առնուն եւ կազմեն թագ թագաւորական: Այսպէս հովին իմաստուն սուրբն Գրիգորիոս՝ ետես զբազմազան առաքիլութիւնս եւ զսեր արքայութեանն յանգիտութեան խորս ընկեցեալ, անհայելի եւ անելանելի եւ անտես ի մարդկանէ, զշաղիղ մարմնոյն իւրոյ ընկեաց ի խորն. եւ աստուածային սիրովն ձգեաց եւ միաւորեաց յինքն. եւ հոգի նորա որպս զարծուի սլացեալ սպասաւորելով հրեշտակաց. եւ հանեալ ի վեր ի յերկինս ի զարդ պսակի փեսային Զրիստոսի. ըստ այնմ, (եդ ի գլուխ նորա պսակ ի քարէ պատուականէ:) Տասներորդ՝ զի Զրիստոս Աստուած մեր չորեքնիւթեայ բնութեամբ (եղել ի սիրտ երկրի գերիս տիւս եւ գերիս գիշերս.) եւ յարոյց ընդ ինքեան զհոգիսն ամենայն ի գբոյ տառապանաց զորդիս մահապարտաց: Այսպէս եւ հովին բարի՛ նմանեալ քաջ հովին Զրիստոսի, երբեակ չորիւք ամօք լինելով ի խորս երկրի, որպէս սերմն բարի թաղեալ ի պարարտ երկրի. եւ ել բազում տոհականօք հանելով ընդ ինքեան զբազմութիւն արանց եւ կանանց ի գբոյ մեղաց զորդիս մեղապարտաց. ըստ այնմ, (եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կեայ. ապա թէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ:) Տեսցուք եւ զերկրորդ գլուխն թէ՛ վասն Է՞ր օձիւն տանջեցին զմեծն Գրիգորիոս: Ասեմք եթէ՛ զբարս օձի ունէին ամենայնիւ. կամեցան օձին միջնորդութեամբ զդառնութիւնս իւրեանց թափել առ սուրբն: Եւ այս վասն ութն պատճառի: Նախզի՛ երկայն է օձն որպէս լար. նոյնպէս եւ նոքա զերկարութիւն կենաց ունէին ի մտի. եւ ոչ իմանային զստութիւն եւ զդիւրանցութիւն կենցաղոյս. որ (իբր զհովանի եւ զծաղիկ խոտոյ շուտով անցանէ:) Երկրորդ՝ զի երկրաշարժ է օձն. նոյնպէս եւ նոքա հանապազ մտօք իւրեանց յերկիր քարշէին. եւ զաստիս միայն գիտէին վայելուչ: Երրորդ՝ զի խայտաբղետ է օձն. զի ասեն իմաստունք թէ՛ եօթն են ազգ օձից. եւ եօթնապատ են. նոյնպէս նոյա եօթն մահու չափ մեղօք ներկեալ եւ բորբոսեալ էին մեղսաներկ անձամբ. որպէս ասեր Դաւիթ. (բազմացան յիս անօրէնութիւնք իմ:) Չորրորդ՝ ցուրտ է միշտ. նոյնպէս նոքա ցրտացեալք էին ի սիրոյն Աստուծոյ. որպէս ասեր առաքեալն Թադէոս. զիա՞րդ գնացից ի ցուրտ եւ ի կոպիտ ազգն: Հինգերորդ՝ զի մահացուցանէ զմարդ եւ զանասուն. այսպէս եւ նոքա չարաթոյնք նախանձով, սպանանէին զմարդիկ հոգւով եւ մարմնով. որպէս կամեցան մահացուցանել զսուրբն Գրիգորիոս: Վեցերորդ՝ զի ողորկ եւ լարծուտ է. նոյնպէս եւ նոքա դիւրասահ էին ի մեղս

Եւ ի չարիս անհաւատութեան: Եօթներորդ՝ զի ոմանք ընդ երկինս թռչին. եւ ոմանք ընդ երկինս սողին. նոյնպէս եւ նոքա ոմանք հպարտք էին եւ ամբարտաւանք. եւ ոմանք ծոյլք եւ հեղգացեալք ի բարեաց: Ութներորդ՝ զի զթիրակէսն յօժից կազմեն մարդիկ. նոյնպէս եւ նոքա զհոգեւոր դեղթափն զսուրբն Գրիգոր՝ օձիւքն կազմեցին առ ի բժշկութիւն մահացեալ հոգւոց մարդկան: Այսքան վասն օձին: Իսկ երրորդ գլուխն թէ՛ վասն Է՞ր ի տիպ վարագի կերպափոխեաց զթագաւորն Տրդատէս: Ասեմք թէ՛ վասն տասն պատճառի: Նախզի՛ անբան է կենդանին այն. նոյնպէս թագաւորն Արդատես հաւասարեալ էր անասնոց անբանից: Եւ սուրբն Գրիգոր՝ նուաճեաց զնա այնու յանբանական բռնութենէն, զի զգօնասցի: Երկրորդ՝ զի միշտ ընդ երկիրս հայի. եւ ոչ բնաւ յերկինս. նոյնպէս եւ մեծն Տրդատ՝ զ երկրաւորս եւեթ խորհեր. եւ ոչ կարէր հայիլ եւ տեսանել զիմանալի լոյսն զարեգակն արդարութեան: Երրորդ՝ զի արածամ ի տիղմն թաւալի խոզն. նոյնպէս եւ նա միշտ եւ հանապազ ի տիղմն մեղաց թաւալիւր եւ ի բազմազան չարիս: Չորրորդ՝ զի զաղտեղութիւն եւ զգարշուքիւն սիրէ. եւ զանուշահոտութիւն ատէ եւ փախչի. նոյնպէս եւ նա զբղջախոհ գիշութիւն աղտեղութեանց եւ զգարշուքիւն սիրէր. եւ զողջախոհութիւն եւ զսրբութիւն ատէր. որպէս յայտ եղել առ սուրբն Յովնիսիմէ. զի յամօթ եւ յաղթեալ եղել: Հինգերորդ՝ զի միշտ յոգւոց հանէ եւ տքայ խոզն. նոյնպէս եւ Տրդատէս՝ մինչ յանհաւատութեան էր, վասն առաւել հիւանդութեանց զոր ունէր յոգին, տքայր եւ յոգւոց հանէր. զի էր կարեվեր խոցեալ. մինչեւ գտաւ զհոգեւոր բժիշկն: Վեցերորդ՝ զի խոշոր է զգեստուքն խոզն. այսպէս եւ նա խոշոր եւ անգութ եւ անագորոյն էր բարուքն. որպէս եցոյց առ սուրբն Գրիգոր զայնքան ժամանակս անտես արարեալ: Եօթներորդ՝ զի վայրենի անընտել ունէր բարս: Վասն որոյ ի կերպարան վայրենի եւ անընտել կենդանւոյ փոխեցաւ. որպէս բռնաւորն Նաբուգոդոնոսոր՝ ի կերպ չորից կենդանեաց. զի զբարս նոցա ունէր: Ութներորդ՝ զի պատճառ ուրկութեան եւ կուրութեն լինին միս խոզին. նոյնպէս եւ Տրդատ հոգեւոր կուրութեան եւ գողութեան լինէր պատճառ բարեաց, որք ընդ իշխանութեան նորա էին: Իններորդ՝ զի ի վերայ կշտին անկանի եւ ընկղմի. եւ ոչ կարէ նստիլ. նոյնպէս եւ նա ընկղմեալ էր յԱստուած պաշտութենէ եւ գլորեալ. եւ կործանեալ ի 6 շմարիտ աստուածագիտութեանց: Տասներորդ՝ զի ի լերդակողմն կոյս հարեալ. ապա զգայ զհարուածն. նոյնպէս եւ նա հարեալ ի բարկութեն Աստուծոյ յոգին եւ ի զգայարանսն, ապա զգաց զհարուած պատուհասին. եւ գոչեաց առ մարդասէր բժիշկն՝ եւ զղջացեալ ողջացաւ. (զի ոչ ի սպառ բարկանայ Տէր. եւ ոչ ընդ վայր հարկանէ.) զի մարդասէր է եւ ողորմած: Չի զայսպիսի ապարասան այր յորժամ դարձաւ առ Աստուած. (կոչեաց առ ինքն եւ սրբեաց եւ արդարացոյց, եւ փառաւոր արար:) Մինչ զի բազում բազիք եւ մեհանք սովաւ կործանեցան. եւ հաւատն Զրիստոսի սովաւ պայծառացաւ. եւ եկեղեցիք սովաւ հաստատեցան. եւ Զրիստոս սովաւ փառաւորեցաւ. զի ասէ Աստուած մարգարէին: (Դարձարուք առիս՝ եւ ես դարձայց առ ձեզ:) Ապա ուրեմն մի հեղգասցուք. զի թէ այնպիսի ողորմած եւ մարդասէր Տէր ունիմք, դարձցուք առ նա. եւ նա դարձցի առ մեզ. սիրեսցուք զնա. զի նա սիրեսցէ զմեզ. զղջասցուք ի մեզ. զի եւ նա զղջասցի ի պատուհասելոյ. եւ նա բժշկեսցէ զկարեվեր հիւանդութիւն հոգւոց մերոց: Այս քան վասն Տրդատայ:

Տեղուք զչորրորդ գլուխն թե՛ վասն Է՞ր կոչեցաւ անուն նորա Գրիգոր. զի ոչ ոք էր յազգէ սորա որոյ անունն Գրիգոր կոչիւր: Ասեմք թե՛ վասն բազում պատճառի: Նախ ի խնամոցն Աստուծոյ. զի թէ կոչէին զնա յանուն նախնեացն, գտանէին զնա լինիլ յազգէն անակայ, եւ սպանանէին. եւ խաւար ածէին ազգիս հայոց: Երկրորդ՝ զի ազգայինք նորա մի գտցեն զնա անուամբ նախնեացն. եւ բռնի տարեալ մեծարեալ դիցեն յիշխանութիւն. եւ դարձուցեն ի կուռս իւրեց: Երրորդ՝ եղև այս հրեշտակաց միջնորդութեամբ. զի դայեակ նորա յորժամ տարաւ զնա ի կեսարի Աստուծոյ, եւ ի մերձենայն ի քաղաքն, նստաւ ի ներքոյ ծառոյ ինչ հանգչիլ. եւ եկեալ հաւ մի նստաւ ի վերայ ծառոյն. զոր ոմանք գուրգուր, եւ ոմանք դռուն կոչեն. եւ ձայնեաց գուրգուր: Իսկ իմացաւ դայեակն եթե՛ հոգին սուրբ է ձեւակերպեալ ի տիպ հաւու՝ որ ունի զնմանութիւն աղաւնոյ. եւ անուանեաց զմանուկն Գրիգոր. եւ ապա մտեալ ի քաղաքն, մկրտել. եւ անուանեաց Գրիգոր: Չորրորդ՝ զի գրկեալ գգուեալ եղև ի հոգւոյն սրբոյ ի յերանուհի արգանդն ոգուիւեայ. որր գրկեաց եւ ծնաւն զմեզ աւագանաւն յորդէգրութիւն հօրն երկնաւորի. վասն որոյ կոչեցաւ Գրիգոր: Հինգերորդ՝ զի Գրիգորն՝ վեց գիր է. եւ սա զկնի վեցից յիսունից ազատարար թուոց ազատողին բոլորից՝ ազատեաց զմեզ ի դիւամոլ կռապաշտութեանց եւ ի ծառայութենէ մեղացն. (զի որ ամեն զմեղս, ծառայէ մեղաց:) Վեցերորդ՝ զի մեք վեց շարժմամբ խոտորեալ էաք ի չարն. այս է՝ յաջ եւ յահեակ՝ որ է հոգեկան եւ մարմնական մեղք՝ յ ետ եւ յառաջ՝ յառաջանալով ի չարն, եւ յատ փախչելով ի բարւոյն եւ ի պատւիրանցն Աստուծոյ: Ի վեր եւ ի վայր՝ խորհելով զերկրաւորս եւ հպարտանալով քան գյոքունս: Իսկ սուրբն Գրիգորիոս ուղղեաց զվեց շարժումն մեր ի բարին ասելով. (սմանօղք ինձ եղերուք՝ որպէս եւ ես Քրիստոսի:) Եօթներորդ՝ զի վեցիւքս այս՝ նմանեցաւ վեց թելեան սերովբեիցն. թեպէտ զկնի վեց աւուր ստեղծաւ, այ համադասեալ ընդ նոսին զուարթուն անունն, փառաւորէ գերրորդութիւնն սուրբ: Ութներորդ՝ Գրիգորն արթուն լսի. զի մարմնով ոչ ննջեաց գերեքտասան ամ ի մէջ բազմութեան թունաւորաց. վասն զի հրեշտակք պաշտօնակից էին նմա. եւ ասեր (ոչ տաց քուն աչաց, եւ ոչ նինջ արտեւանաց իմոց. մինչեւ գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակօբայ:) Իններորդ՝ զի արթուն էր միշտ հոգւովն առ Աստուած. զի ոչ ննջեաց ամենեւին զքուն մեղաց ասելով. (լոյս տուր Տէր աչաց իմոց. զի մի երբէք ննջեցից ի մահ:) Տասներորդ՝ զի արթուն էր ի վերակացութիւն եւ ի պաշտպանութիւն բանաւոր հօտին Քրիստոսի, յառնել եւ յուսուցանել ի տուէ եւ ի գիշերի. խրատելով յօրօսս Տեառն. եւ լուսաւորելով ի հաւատս ճշմարիտս: Եւ զայս վասն Տեառն բանին որ ասէ: (Արթուն կացեք՝ զի ոչ գիտեք երբ Տէր տանն գայցէ, յերեկօրեայ ի մէջ գիշերի եւ այլն:) Եւ ի բրել զիմաստուն տանուտեր՝ զիտաց զգալ գողոյն՝ եւ պատրաստ եւ արթուն եղև. եւ ոչ ետ ակն հատանել զտան իւրոյ ասելով. (անձինք մեր ապրեցան որպէս ճնճուկք յորոգայթ որսողաց:)

Այսքան վասն անուանն:

Այլ առ քեզ ով հայր բարեգութ անյիշաչար եւ բարեսեր. լուր զպաղատանս մեր. զի գիտեմք զբարեխօսդ մերձ առ պարգեւատուն: Մաղթեա վասն անարժանիցս քոյոց հոգեւոր եկանց ծնեալ զաւակաց: Անցուցանել ի մէջն զարդարա կշիռ պատուիհաս յանցանաց մերոց ի կրկին

վրիժապարտաց. այսինքն, յաշխարհակալէն յստ հոգւոյ գերողէն. եւ յըստ մարմնոյ նորին արբանեկաց չարաչար տանջողաց: Չի թերեւս լիցի հնազանդութեամբ եւ մտերիմ ծառայութեամբ սպասաւորել միշտ ճշմարիտ թագաւորին մերոյ Քրիստոսի: Իսկ թէ առ ի մէջ եւ յամենեցունց անքննելի դատաստանաց նոցին սահմանեալ է մեզ յաստիս լինիլ ծառայութեամբ որպէս եմք իսկ ստրկացեալք ի խոստասիրտ տէրանց, մաղթեսցես դասուք ամենայն ընտրելօք որք ընդ քեզ. զի զչարչարանս զայս զոր կրեամք յակամայ լինիլ իբրեւ զկամաւոր ապաշխարութիւն ի թողութիւն մեղաց մերոց: Չի ազատեալք յայսմանէ, արժանի լիցուք որդիքս լուսոյ ընդ հորդ լուսոյ եւ ընդ ամենայն սուրբս, փառաւորել զերրեակ անձնաւորութիւն եւ զմի Աստուածութիւն համագոյ եւ զուզական Երրորդութեանն լուսոյ Յօր եւ Որդոյ եւ հոգւոյն Սրբոյ. յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն առաջնորդաց թագաւորաց եւ իշխանաց. ի Բանն առակին որ ասէ: (Որոց ոչ գոյ առաջնորդութիւն, թօթափին իբրեւ զարեւ:) Առակ. 11. 14: (Գլուխ. ԾԺԱ)

Գրէ ուրեմն հանճարեղ եւ իմաստնացեալն յԱստուծոյ առակախօսն. սողմօս թէ՛ (որ հանճարեղն իցէ, զառաջնորդութիւն ստասցի:) Չի որպէս հանճար ետ Աստուած մարդոյն՝ նովաւ կարգաւորեմք զներքին եւ զարտաքին գործս մեր. այսպէս զի հոգին եռամասնեայ է. բան ցասումն եւ ցանկութիւն: Բանն է որով խօսիմք. եւ ցասումն որով բարկանամք. եւ ցանկութիւնն որով կարօտիմք կերակրոյ եւ ըմպելեաց, եւ այլն: Իսկ բանն որ առաջին զօրութիւն է հոգւոյն Տէր է եւ իշխան ի վերայ ցասման եւ ցանկութեան. եւ նոքօք տիրէ ի վերայ մարմնոյն զգայարանաց. եւ այսպէս կարգաւորէ զնոսա: Նոյնպէս եւ ի մէջ մարդկան զհանճարեղն ընտրէ Աստուած եւ դէտ իշխան եւ Տէր ի վերայ ամենայն մարդկան. եւ կարգաւոր զնոսա ի ձեռն հնազանդելոց իւրոց. մեծամեծաց զփոքունս. որպէս են թագաւորին իշխանք. եւ իշխանին զօրք. եւ նոքօք կատարեն զգործ եւ զշինութիւն աշխարհի, զքաղաքի, զգեղջ եւ զտան: Դարձեալ՝ որպէս գլուխն մի է բոլոր մարմնոյն՝ եւ բարձրացեալ ի վերայ ամենայն անդամոցն՝ եւ ի նմանէ իջանեն ամենայն կենդանութիւնք եւ զգայութիւնք եւ շարժումն ի բոլոր ամենայն օդուածս մարմնոյն: Նոյնպէս եւ իշխանն մի է ի մէջ մարդկան. եւ բարձրացեալ փառօք եւ մեղղութեամբ. եւ գլուխ նստեալ ամենայն մարդկան. եւ ի նմանէ գայ ի մարդ հրաման եւ շարժումն. մահ եւ կեանք. շէն եւ աւեր. եւ ամենայն նորա հրամանաւ կարգաւորի ընդ երկիր: Դարձեալ. որպէս ակն միայն է յամենայն զգայութիւնս տեսանօղ. եւ բարձրացեալ տեղեաւ քան զամենայն զգայարանս. եւ նորա լուսովն այլքն գործեն. ձեռն ըմբռնէ. ոտքն գնայ. արւեստէ. խօսի. նսաի. ուտէ. եւ այլն: Նոյնպէս իշխանն տեսանօղ է եւ առաջնորդ ամենայն երկրին. նա տեսանէ. նա շինէ. նա զհւրաքանչիւրսն յիւր կարգին պահէ: Դարձեալ՝ որպէս լէլուն մի է յամենայն անդամս՝ եւ նա ի մէջ բերանոյն է ամրացեալ. եւ նա խօսի եւ յառաջ բերէ զներքին իմաստն. եւ նա գանկատի եւ ցուցանէ զցաւս բոլոր մարմնոյն: Նոյնպէս եւ իշխանն ամրացեալ տեղեաւ եւ զինուորաւ. եւ լեզու է եւ հրամայօղ բոլոր աշխարհին. վասն նոցա խօսի ի մեղ դիւանին. զնոցա գանկատն ինքն ասէ: Եւ որպէս լեզուն զչարն անարգ է եւ զբարին գովէ.

Նոյնպէս իշխանն զբարիսն յարգէ եւ պատուէ. եւ զչարսն խրատէ եւ յանդիմանէ: Դարձեալ՝ որպէս սիրտն մի է ի բոլոր անդամսն ներքին. եւ նա է սկիզբն կենդանւոյն. ի նմանէ շունչն եւ ջերմութիւնն սփռի ի բոլոր անդամս. այլեւ երակ արեանն եւ բնական կենդանութիւնն: Այսպէս եւ իշխանն՝ սիրտ է ամենայն երկրին եւ հիմն. եւ ի նմանէ ամենայն մարդիկ ամուսն զսէր զգուր զպետս զկերակուր եւ զայլն: Եւ յորժամ ի սիրտ ելանէ, արիւնքն ամենայն ի սիրտն ժողովին. որպէս զօրք առ թագաւորն. նոյնպէս եւ հրամանաւ իշխանին կամ ամենայն հնազանդեալքն. ի բան, ի գործ, ի պատերազմ, ի խաղաղութիւն. եւ յայլսն: Այս հինգ մասանց անդամոց նման է իշխանն. այսինքն, բանականին որ ի միտսն. եւ գլխոյն. եւ աչացն. եւ լեզուին. եւ սրտին: Եւ ոչ միայն մարմնաւոր իշխանն, այլեւ հոգեւորն: Չի երկու է իշխանութիւն. այսինքն, հոգեւոր եւ մարմնաւոր. զի կրկին է մարդն. այսինքն, հոգի եւ մարմին. վասն որոյ կամեցաւ Աստուած հոգեւոր իշխանութեամբ զհոգիս կարգաւորել. եւ մարմնաւոր իշխանութեամբն զմարմինս. (զի ոչ ուստէք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ որք կարգեալ են՝ յԱստուած են կարգեալ ասէ առաքեալն:) Վասն այն հոգեւոր իշխանն՝ իսկապէս հանճար է եւ միտք. զի նովաւ կառավարին ամենայն դասք եկեղեցւոյ: Այլեւ գլուխ է բոլոր ժողովորդեանն. եւ առաջնորդ ի կեանս հոգեւորս: Այլեւ ակն է լուսատու ամենայն հաւատացելոց. եւ լոյս խաւարելոց: Այլեւ լեզու է եւ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, եւ բարեխօս անդադար: Այլեւ սիրտ եւ սկիզբն հոգեւոր կենաց, ի նմանէ ընկալեալ զամենայն բարութիւնս հոգեւորս. բժշկութիւն, եւ թողութիւն մեղաց. շարժումն ի գործս բարիս, եւ այլն: Եւ արդ՝ գիտելի է՝ զի յորժամ միտն սխալի ի գիտութենէ, բոլոր հոգին եւ մարմինն ընդ սխալին: Այսպէս յորժամ կարգաւորն եւ իշխանն սխալին, ամենայն ժողովորդքն եւ իշխեցեալքն ընդ նոսին սխալին եւ անկարգանան: Չի երկիւղ եւ խրատ՝ նոքա են. յորժամ ի նոցանէ ոչ խրատին, զամենայն չարիս առանց ամօթոյ գործեն: Նմանապէս եւ գլուխն յորժամ ցաւի, ամենայն մարմինքն ընդ նմա ցաւին. նոյնպէս եւ առաջնորդն թէ ցաւոտ եւ հիւանդ է մեղօքն, ամենայն հետեւեալքն նոյնպէս ցաւոտ լինին. վասն որոց ասէ մարգարէն. (յոտից մինչեւ զցգլուխ չիք առողջութիւն:) Այսպէս եւ աչքն թէ վատատես է եւ կոյր, ամենայն մարմինն խաւար լինի: Եւ թէ իշխանն խաւարեալէ մեղօք, նոյնպէս եւ իշխեցեալքն. յայնժամ լինի ասացեալն ի Տեառնէ. (կոյր կուրի յորժամ առաջնորդէ, երկոյքինն ի խորխորատ անկանին:) Այսպէս եւ լեզուն թէ վատախօս է եւ անիրաւ, կամ սիրտն բարկացօղ է եւ նենգաւոր, բոլոր մարմինն՝ նոցա հետեւի: Չայս ցուցանեն՝ թէ հոգեւոր առաջնորդն եւ մարմնաւոր իշխանն անիրաւ լինին եւ վատ, ամենայն հնազանդեալքն նոյնպէս անիրաւ են. որպէս ասէ առական. (թագաւոր անիրաւ՝ ընդ նմին եւ հնազանդեալքն անիրաւին:) Վասն այն պարտ է զի նոքա որք գլուխ եւ առաջնորդ են, ուղիղ լիցին. զի ամենայն հետեւեալքն նոքօք ուղղեսցին: (Եւ նոցա որոց ոչ է առաջնորդութիւն՝ թօթափեսցին իբրեւ զտերեւս ասէ:) Այս ինքն, որպէս տերեւք ի վերայ ծառոյն՝ գեղեցկութիւնք են նմա. նոյնպէս եւ փառք թագաւորի՝ զօրք իւր ասէ: Եւ դարձեալ՝ որպէս տերեւքն ի վերայ ծառոյն ամրացեալք ի նմանէ ամուսն զբնական հիւթն. եւ կանաչանան գեղով. եւ հովանի արձակեն յինքեանց: Եւ երբ թօթափին ի ծառոյն, չորանան եւ տգեղանան, եւ լինին կոխան եւ կորնչին: Նոյնպէս երկիր եւ քաղաք

ամրարացեալք են իշխանան եւ հոգեւոր առաջնորդան. ի նոցանէ առնուն զհոգեւոր եւ զմարմնաւո կենդանութիւնն: Եւ են բարձրացեալ փառօք՝ եւ զուարճացեալ ուրախութեամբ. եւ այլոց բազմաց շուք եւ հովանի եւ պահապան լինին: Իսկ յորժամ երկիր առանց իշխանի լինի, եւ ժողովուրդն առանց առաջնորդի, բաժանեալ են ի կենդանութեանց. անկեալ ի բարձրութեանց. եւ կոխան եղեալ ամենայն մարդկան. եւ ցրուեալք յամենայն հողմոց. տգեղացեալ եւ չորացեալ եւ ապականեալ զանազան մեղօք. որպէս ի ժամանակս յայս տեսանեմք յազգս մեր անիշխան եւ անառաջնորդ. իբրեւ զոչխար առանց հովուի՝ գազանակուր լինին եւ կորնչին. եւ զտարածոց առանց պահապանի թռչունք եւ հաւք ցրուեն: Եւ որպէս պարտեզ առանց պահողի՝ եւ այգի առանց մշակի՝ խոպանացեալք են եւ անպտուղք ամենայն բարեաց. ի հոգեւորէն եւ ի մարմնաւորէն ասեմ: Վասն այն պիտոյ է որ առաջնորդն եւ իշխանն՝ այնպէս ամենայն բարեաց պատճառ լինի: Բայց տես զի ասէ. (փրկութիւն գոյ ի խորհուրդս բազումս:)

Այս է զի իշխանն եւ իշխեցեալքն՝ վարդապետն եւ աշակերտքն՝ առաջնորդն եւ հետեւեալքն՝ միմեանց պիտանիք են եւ օգնական եւ ձեռնտու: Չի որպէս միացումն պետս ունի զգայութեանցն. եւ նոքօք ճանաչէ զգոյն. եւ լսէ զխօսս. եւ առնու զհոտ. եւ զայլսն: Նոյնպէս եւ իշխանին՝ աչք եւականջ եւ բերան իւր իշխեցեալքն են. զի խորհրդով նոցան արասցէ զամենայն բան: Եւ որպէս գլուխն մարմնոյն է պիտանի. նոյնպէս եւ մարմինն գլխոյն: Այսպէս եւ առաջնորդն եւ հետեւեալքն՝ միմեանց պիտանիք են. իշխնութիւն երկրի. ի խորհուրդ. ի պատերազմ. ի խաղաղութիւն. յուրախութիւնս, եւ յայլսն: Եւ առաւել քան զամենայն պիտանաւորութիւն՝ ունին առմիմեանս զժողովիլն ի խորհուրդ. եւ ապա համաձայն նոցին խորհրդով՝ վարել զշինութիւն աշխարհի: Եւ յայտ է ի չորից: Նախ ի շինուածոյ կազմութեանց մարդոյս. զի մարդս ոչ է ինքնաբաւական. այլ կարօտ է ստեղծիլ, եւ միմեանց օգնական լինիլ: Որպէս յայտ է ի գետոս եւ ի քաղաքս՝ որք ի մի վայր ժողովիմք. եւ զկարօտութիւնս միմեանց լնումք: Նոյնպէս պարտ է եւ ի խորհուրդն կցորդիլ միմեանց. եւ զուղիղն գտանել. եւ որպէս կարօտ են միմեանց ճորտ եւ պարոն. հարուստ եւ աղքատ. վարդապետ եւ աշակերտ. նոյնպէս եւ միտքն կարօտ է առաջնորդի եւ խորհրդակցի: Եւ իմաստուն մարդն՝ հանապազ խնդրէ իւր խորհրդակից եւ օգնական մտացն իւրոց: Երկրորդ յայտ է՝ որպէս մին մարդն կարէ զմինոյ տան շինութիւնն խորհիլ. այլ մի մարդն՝ զբազմաց ոչ կարէ. վասն այն պարտ է բազմաց ի մի վայր ժողովիլ. եւ զբազում երկրին զօգուտն գտանել: Երրորդ՝ յայտ է յօրինակաց յառաջնոցն. որպէս արարին հռոմայեցւոց թագաւորքն եւ տիեզերակալք եղեն. զի ասէ ի մակաբայեցիսն թէ, Ծ այր յամենայն աւուր ի խորհուրդ. նստին. եւ նոցա համաձայնութեամբն զիշխանութիւնն վարեին. վասն որոյ մնաց թագաւորութիւնն հաստատ. աւ տիրեն միւսնէ ցայսօր: Եւ մերս առաջնորդք եւ իշխանք հոգեւոր կամ մարմնաւոր՝ որք ինքնիշխանութեամբ կատարեն զգգործն առնց խորհրդակցի, վասն որոյ բարձեալ է իշխանութիւնն. եւ աւերեալ երկիրն. եւ տարագրեալ են ժողովուրդք մեր ի վերայ երկրի. եւ ցրուեալ յամենայն ազգս: Չորրորդ՝ ի նոյն ինքն յամենիշխան թագաւորէն յայտ է. (ուր ամենայն գանձք իմաստութեանն առ նա են գանձեալ.) եւ ի նմանէ բաշխի ամենայն արարածոց. ասէ զիրն վասն արարչութեան մարդոյս թէ՛ (խորհեցաւ հայր ընդ ողի եւ ընդ հոգին սուրբ. եկայք արասցուք

մարդ ըստ պատկերի մերում եւ նմանութեան:) Եւ նա անկարօտ է խորհրդոյ. այլ զայս վասն զմեզ ուսուցանելոյ ասաց:

Եւ նոյնպէս մարդացեալ բանն Աստուած ի վերայ երկրի ժողովեր առանձին զաշակերտսն. եւ զխորհուրդ փրկութեան մերոյ խորհեր ընդ նոսա թէ՛ (որդի մարդոյ մատնի ի խաչ ելանել. եւ յերիր յաւուր յառնել. եւ այսպէս կատարիլ պարտ էր ամենայն գրոցն եւ զայլն ամենայն:) Վասն որոյ դու որ մարդ ես՝ առաւել կարօտ ես օգնականի եւ խորհրդակցի. որով աշխարհի շինութիւն եւ խաղաղութիւն ծնանի: Եւ երկու իրօք շինի աշխարհն եւ հաստատի իշխանութիւն պարոնին. այսինքն, խորհրդակցութեամբ եւ արդար դատաստանաւ: Վասն խորհրդոյն յայտ է ի Սաւուղայ եւ ի Դաւթայ: Սաւուղ որ զՍամուէլի խորհրդակցութիւնն արհամարհեաց, եւ ապրեցոյց զագագ թագաւորն Ամադեկայ, բարկացաւ Աստուած եւ եբարձ զթագաւորութիւնն Սաւուղայ: Իսկ Դաւիթ որ խորհրդակից արա զԶուսի արաքացի բարեկամս իւր՝ նովաւ խափանեաց զխորհուրդն Ակիտոփելի. եւ ապրեցաւ ի ձեռաց Աբիսաղոմայ. որպէս յայտ է յերրորդ թագաւորութեանցն: Այս վասն խորհրդոյն՝ որ պիտանացու է իշխանաց բարի խորհրդակից ունիլն: Իսկ վասն երկրորդին ասէ Սողոմօն. (արդարութիւն բազմացուցանէ զիշխանութիւն. եւ մեղքն նուազեցուցանէ.) որպէս ի յօրհնութիւնս եւ յանէծս գրեաց Մովսէս: (Եթէ արդարութեամբ գնացեն ի պատուիրանս Աստուծոյ՝ խաղաղութեամբ բնակեցին ի վերայ երկրի. սուրբ նոցա՝ ի վերայ թիկանց թշնամեաց նոցա. որք ընդ մի ճանապարհ գայցեն, եւ ընդ եօթն փախիցեն, եւ այլն: Իսկ որք թողցեն զպատուիրանս Աստուծոյ, զվաստակս նոցա օտարք կրեիցեն. եւ արտաքուստ մանկակոտոր լիցին սրով ի թնամեաց. եւ ի ներքս ի յամրոցին մահտարածամ, սով, եւ խռովութիւն, եւ այլն:) Չի սովորութիւն է Աստուծոյ՝ յորժամ տայ իշխանութիւն ի վերայ ազգաց, եթէ զարդարութենէ բուռն հարկանեն, եւ իրաւամբք վարեն զաշխարհս, բարձրանայ իշխանութիւնն. եւ օրօստօրէ առաւելանի. եւ երկիրն իշինութիւն եւ ի խաղաղութիւն աճի: Իսկ թէ զանիրաւութենէ բուռն հարկանեն, նուազի իշխանութիւն նոցա. եւ երկիրն խռովի եւ աւերի: Եւ զբանիս ճշմարտութիւնն՝ տեսցես յիսմայելացուց ազգս. եւ ի սեռս մեր: Որ աճեաց եւ մեծացաւ իշխանութիւն նոցա. եւ մերս նուազեցաւ եւ կորեաւ: Եւ ո՞ր է արդարութիւն անհաւատիցն ասիցէ որ: Ասեմք եթէ՛ երեք է արդարութիւնն: Նախ՝ արդարութիւն հաւատոցն. զոր նոքա ոչ ունին. այլ անհաւատք են: Երկրորդ՝ արդարութիւն է գործոց. եւ գործով պիղծ եւ անօրէնք են: Երրորդ՝ արդարութիւն իրաւանց դատաստանի. եւ զայն ունին. զի իրաւամբք եւ արդարութեամբ վարեն զաշխարհս: Նա հաղ եւ անիրաւութիւն ոչ ունին. որպէս յայտ է ի քաղաքական օրէնս նոցա. որք զգողս զչարագործս զմարդասպանս եւ զզարկօղս պատժեն. ասախ եւ ուղղութիւն ի վերայ զօրաց. իրաւունք եւ շարդ դատաստանի որբոց եւ այրեաց եւ այլն ամենայն. որպէս յայտ է ամենայն մարդոյ որ ի մեջ նոցա: Վասն ա յն Աստուած զիշխանութիւն նոցա աճեցոյց. զի այնք որք անհաւատ են եւ անսուրբ՝ իւրեանց անձանց է վնասիչ եւ ոչ այլոց: Իսկ յիշխանութիւնն պարտ է արդարութիւն իրաւանց ունիլ. որով աշխարհն շինի. եւ զայն ունին: Չոր օրինակ՝ հովիւն թէ միամիտ իցէ եւ այլազգի, տերն ոչ հանէ զհովուութիւնն. ապա թէ քրիստոնեայ իցէ եւ վատնօղ ոչխարացն, վարէ զայն հովիւն. եւ տայ զոչխարսն ի ձեռս այլոց:

Նոյնպէս եւ գիշխանութիւնն առնէ Աստուած. որք արդարութեամբ եւ ուղղութեամբ վարեն զաշխարհս, նոքա յերկարին. եւ զանիրաւս հանէ Աստուած յիշխանութենէ: Ապա ուրեմն երկոքին սոքա հարկաւորք են իշխանին. այսինքն, արդար իրաւունքն. եւ խորհրդակից բարեկամ ունինլն: Եւ խորհուրդն ոչ միայն ի շինութիւն աշխարհին է պիտանի իշխանաց. այլեւ ի ժամ պատերազմի առաւել պիտանի իշխանաց. այլեւ ի ժամ պատերազմի առաւել պիտանի է. որպէս ասէ իմաստունն. (խորհուրդ մտօք պատրաստեսցի. եւ պատերազմ իմաստութեամբ մղեսցի:) Չի ասէ մարգարէն. (ոչ թէ ի բազում զօրս իւր ապրեսցի թագաւորն. եւ ոչ հսկայ ի բազում զօրութեան իւրում:) Եւ այս յայտ է ի փարաւօնէ՝ որ բազում զօրս ունէր. եւ ընկղմեցաւ ի ծովն կարմիր. եւ գողիաթ որ քաջ հսկայ էր՝ սպանաւ ի ձեռն Դաւիթ. զի ոչ ունէին խորհուրդ. այլ միայն հեծելոց եւ զզօրութիւն ուժոյ: Վասն այն ասէ իմաստունն. (ուժ առանց խելաց՝ զուսօսս իւր վնասէ.) զի որպէս ուժն մարմնոյն է. նոյնպէս եւ իմաստութիւնն հոգւոյն է զօրութիւն: Այլ ասեն վարդապետք թէ՛ ի պատերազմի ժամ, չորս ազգ իմաստութիւն պարտ է ստանալ՝ եւ վանել զթշնամին: Առաջինն՝ բարեպաշտութիւն եւ աղօթ զօրապետին եւ իշխանին. որպէս ասէ Դաւիթ. (սուտ է ձի ի փրկութեան իւրում: Այլ աչք Տեառն ի վերայ երկիւղածաց իւրոց. եւ ոյք յուսան յողորմութիւն նորա:) Եւ յայտ է յեզեկիա՝ որ աղօթիւք յաղթեաց Յռափսակայ. եւ կոտորեցաւ հարիւր ութսուն եւ հինգ հազար այր ի զօրաց նոցին: Երկրորդ իմաստութիւն է՝ զի գիտացէ յարմարել զճակատ պատերազմին. զոմանս յաջ կողմանէ. եւ զոմանս ի ձախ. զքաջազօրսն առաջի. եւ զնոցա թիկնապահս եւ զընկերակիցս. եւ զայլս նմանապէս կարգաւորեսցէ: Վասն այն ասէ յառակսն. (առաջնոցդութեամբ մղի պատերազմ:) Երրորդ իմաստութիւն է զօրավարին զի բանիւ քաջալերեցէ զզօրսն արի կալ. եւ մի թուլանալ. եւ մի երկնչիլ. եւ զառաջին քաջ նահատակսն յիշեսցէ թէ՛ այնպէս քաջացան. յաղթեցին եւ անուն բարի ժառանգեցին. (զի եղբայր յեղբօրէ օգնեալ, իբրեւ զքաղաք ամուր հզօրացեալ լինի.) սիրտ դնելով նոցա եւ արիացուցանելով: Չի ասէ առակն. (զւարթի թագաւորի՝ իբրեւ զցօղէ ի վերայ դալարոյ:) Չի որպէս ցօղն որ իջանէ ի վերայ դալարոյ եւ զւարթացուցանէ զնա. նոյնպէս ցօղն են բ անք եւ քաջալերութիւնք նոցա. եւ արիացուցանեն ի պատերազմի: Չորրորդ իմաստութիւն է՝ զի խոստանայ պարգէս մեծամեծս. որպէս ասէ առակն. (զյաղթութիւն ստանայ որ տայ կաշառս. եւ զոր ինչ խոստանայ՝ ոչ լինի սուտ ի բանից իւրոց.) այլ զամենայն կատարէ յետ յաղթութեան պատերազմին. վասն այն ասէ թէ (ողորմութիւն եւ ճշմարտութիւն պահապան է թագաւորի:) Չայս չորեսին իմաստութիւնս՝ պարտ է ստանալ իշխանին ի ժամ պատերազմի. այսինքն, զաղօտսն առ Աստուած. եւ բանիւ քաջալերել. եւ տուրս եւ պարգէս խոստանալ. եւ զճակատն յարմարել. զհրաքանչիւր ոք ի տեղի իւր կարգաւորել. եւ ապա վանեսցի պատերազմ: Եւ թէ ի ժամ պատերազմին խորհուրդ եւ իմաստութիւն խնդրի յիշխանէն եւ յառաջնորդէն. քանի՞ առաւել ի հանդարտութեան ժամանակս: Չի մեծ ուսումն է իշխանին եւ դժուարին գործ. զոր օրինակ՝ թագաւորն տայ ի մարդ մի բազում եւ ազգի ազգի կենդանիս զի պահեսցէ. որ մինն լինի ընտակեր. եւ միւսն մսակեր. այլքն խոտակերք. կամ հացակերք. իւրաքանչիւրոցն՝ պիտոյ է զիւր կերակուրն տալ. եւ ապա ապրին նոքա: Ապա թէ ընտակերին

միս տայ, եւ բազէին գարի, կամ հացկերին խոտ տայ, եւ առիւծուն ուստ, տգիտութիւն է. եւ ոչ ապրին կենդանիքն: Նոյնպէս մեծ ջան եւ իմաստութիւն պարտի ունիլ իշխանին՝ որ գերկիրն իշխանութեան պահէ. եւ զամենայն մարդ ի յիւր տեղին կառավարէ. եւ յԱստուած բաց երես լինի: Չոր օրինակ՝ հովիւն եթէ զգուշացի ոչխարացն, հանապազ հովիւ կենայ. ապա թէ գողն տանի եւ գայլն ցրու է, եւ չունի ն փոյթ, տէր ոչխարին հանէ զնա. եւ ի ձեռն այլոց հովուի տայ զոչխարսն: Նոյնպս եւ առաջնորդն եւ իշխանն՝ հովիւ են բանաւոր հօտին Աստուծոյ. եւ ընդ նոցա համարս պահանջէ Աստուած. զի թէ կամօքն Աստուծոյ արդարութեամբ հովուեն, պահէ Աստուած հանապազ ի հովուութեան. այլ թէ անփոյթ առնեն, առնու զոչխարս ի նոցանէ. եւ տայ այլոց իշխանի. եւ ի նմանէ զհամարն պահանջէ եւ պատժէ զնա: Վասն որոյ աղաչեմք՝ իմաստութեամբ հովուել զսեփհական ժողովուրդս Քրիստոսի Աստուծոյ, զոր գնեաց արեամբն իւրով ըստ կամաց նորա. զի յերկարեցէ զձեզ բազմաժամանակեայ պահելով խաղաղութեամբ ի վերայ երկրի. եւ յետ աստեացս՝ ընդ սուրբ իշխանացն եւ հովուապետացն արժանի արասցէ զձեզ երկնից արքայութեանն. եւ Քրիստոսի պսակողին զսուրս՝ փառք եւ իշխանութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն մեծատանց. ի Բանն որ ասէ: (Այր մի էր մեծատուն՝ եւ ազաներ բեհեզս եւ ծիրանիս եւ ուրախ լինէր եւ այլն:) Դուկ. 16. 19: (Գլուխ. 6ԺԲ)

Նախ պարտ է գիտել՝ զի բազում իրօք զանազանի մեծութիւն Աստուծոյ եւ մեծութիւնն մարդոյ: Առաջին՝ զի մարդոյս մեծութիւն տալով է ստացեալ. իսկ Աստուծոյ մեծութիւնն՝ բնութեամբ է եւ ոչ յայլմէ: Երկրորդ՝ Աստուծոյ մեծութիւնն անսկիզբն է եւ անվախճան. իսկ մարդոյս՝ սկսեալ եւ վախճանաւոր. զի էր երբեմն որ ոչ ունէր. եւ եղիցի երբեմն զի ոչ ունիցի: Երրորդ՝ Աստուած մեծութիւն ծայրագոյն է եւ կատարեալ. իսկ մարդոյս՝ մասնաւոր է եւ անկատար: Չորրորդ՝ Աստուծոյ մեծութիւնն անանց եւ անփոփոխ է. իսկ մարդոյս՝ անցաւոր եւ փոփոխական: Հինգերորդ՝ մեծութիւնն Աստուծոյ աններհակ է. իսկ մարդոյս՝ ներհակ գոյ աղքատութիւնն: Վեցերորդ՝ Աստուծոյն զուտ բարի է, իսկ մարդոյս խառնեալ ի բարւոյ եւ ի չարէ: Եւ այս կրկին է: Չի հոգեւոր մեծութիւնն առ մեզ բարի է. իսկ մարմնաւորն չար. եւ դարձեալ՝ զսոսա թէ ի հոգեւորն ի գործ ածեմք, բարի է. եւ թէ ի մարմնաւորն, չար: Եօթներորդ՝ Աստուծոյ մեծութիւնն միշտ երանութիւն է. իսկ մարդոյս՝ երբեմն թշուառութիւն. Աստուծոյ հոգեւոր. եւ մերս մարմնաւոր. մերս ցաւօք եւ տրտմութեամբ. Աստուծոյ առանց ցաւոց եւ հեշտութեամբ: Մեք կարօտ մեծութեանն. ըստ այլնմ, (բարիք իմ չեն քեզ ինչ պիտոյ:) Արդ՝ այս մեծատունս ստացաւ արարչութեամբ գերկիր ամենայն իբրեւ զյատակ. եւ գերկին ի վերայ ձգեալ իբրեւ զձեղուն. եւ հաստատեաց զամենայն իբրեւ զմի տուն ամենառատ զանձիք եւ բարութեամբ լցեալ: Այլ են ոմանք որք ասեն թէ՝ մեծութիւնն չար է. որպէս ասէ Տէառն. (վայ ձեզ մեծատանց. զի ընկալայք զմիսիթարութիւն ձեր:) Ասեն վարդապետք եթէ՝ մեծութիւնն ոչ է չար. այլ բարի է. եւ յայտ է ի բազմաց: Նախզի՝ ի չարէն բարի ոչ լինի. այլ արդ ի մեծութենէն բարի լինի.

զի մարմնաւորաւս զհոգեւոր մեծութիւնն ստանամք որ է արքայութիւնն երկնից. ըստ այնմ, (վաճառեցէք զինչս ձեր եւ տուք ողորմութիւն. եւ ունիցիք զանձս յերկնիս.) ապա ուրեմն բարի է մեծութիւնն: Երկրորդ՝ մեծութիւնն ոչ է չար. զի քան զԱստուած մեծատուն ոչ ոք է. որոյ երկնս եւ երկիրս ստացածք են նմա. (զի իմ է արծաթ՝ եւ իմ է ոսկի ասէ.) եւ զամենայն ինչ ի պետս մարդկան տուեալ է. զի թէ արգելու, մեռանիմք. եթէ առատ բաշխէ, մեծապէս գոհանամք զնմանէ. ապա ուրեմն բարի է մեծութիւնն: Երրորդ՝ զի զմեծութիւնն Աստուծոյ տայ մարդոյ. Նոյնպէս եւ զաղքատութիւնն. ըստ այնմ, (Տէր աղքատացուցանէ եւ Տէր մեծացուցանէ.) այլ արդ ի յարարածս Աստուծոյ՝ ոչ ինչ է անպիտան եւ խոտան: Չորրորդ՝ երանութեան արդանաւորէ զմարդն. զի թէ ողորմելի են աղքատք, երանելիք են մեծատունք՝ որք կերակրեն զնոսա. ապա ուրեմն բարի է մեծութիւնն: Զինգերորդ՝ զի թէ յայս կրթի մարդ, Աստուծոյ նման լինի ողորմութեամբն. որպէս ասէ. (եղերուք գթածք՝ որպէս եւ հայր ձեր երկնաւոր գթած է. եւ ծագէ զարեգակն ի վերայ չարաց եւ բարեաց. եւ ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց:) Նոյնպէս եւ մարդոյ պարտ է անխտիր առ հասարակ զողորմութիւնն բաշխել. այլեւ ուսիր ի հօրէն Աբրահամէ. ի ժամանակին նա միայն էր աստուածապաշտ. եւ այլազգեացն եւ քանանացւոցն առնէր օտարսիրութիւն եւ ողորմութիւն: Վեցերորդ՝ ի մեծութենէն լինի Աստուծոյ պտուղ. ըստ այնմ, (հան ասէ պտուղ Աստուծոյ ի քոցոց արդար վաստակոց:) Եօթներորդ՝ զի բազում մեծատունք զԱստուած եւ զիրեշտակս ընկալան մեծութեամբ. որպէս հայրն Աբրահամ. Դովտ. եւ այլք բազումք. ապա ուրեմն բարի են մեծութիւնք: Ութներորդ՝ բարի է մեծութիւնն. զի զԱստուած պարտական առնէ. ըստ այնմ, (որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ.) եւ այս լինի մեծութեամբն. զի թէ ոչ ունի ինչս, ո՞րպէս փոխ տայ Աստուծոյ: Իններորդ՝ մեծութեամբն լինին բազում արդիւնք ի յերկրի. որպէս եկեղեցի շինել. խաչ կանգնել. կամուրջ՝ հոգետուն եւ այլ ինչ. ապա ուրեմն բարի է մեծութիւնն: Տասներորդ՝ մեծութիւնն նշանակէ զինամսն Աստուծոյ եւ զպարգեւսն. որպէս վասն Յակօբայ եւ Իսահակայ ասէ գիրն. (մեծացան յոյժ պարգեւօքն Աստուծոյ. զի օրհնեաց զնոսա Աստուած:) Եւ թէ ոք ասիցէ՝ ապա այլազգիքն որք մեծտունք են՝ ինամօքն Աստուծոյ են քան զաղքատս: Ասեմք եթէ՝ կրկին է մեծութիւնն. Է որ զրկանօք եւ անիրաւութեամբ. եւ այս ոչ է կամօքն Աստուծոյ. այլ թոյլ տալով եւ պատահմամբ մեծանան: Եւ է մեծութիւն՝ որ արդարութեամբ է եւ հալալ վաստակօք. եւ այս պարգեւ է Աստուծոյ. զի որ ստեղծ զհոգին՝ արար եւ զմարմինն. եւ երկուցն ինամտանի. աստ մարմնով փարթամացուցանէ. եւ անդ հոգւով. որպէս զՆահապետսն. Աբրահամ, Յակօբ, Յոբ, Մովսէս, Դաւիթ, եւ այլք. որք մարմնով եւ հոգւով մեծատունք էին. ապա ուրեմն բարի է մեծութիւնն: Իսկ այն որ ասէ Տէրն. (վայ ձեզ մեծատանց:) Գիտելի է՝ զի մեծութիւնն ինքն ըստ ինքեան բարի է որպէս ցուցաւ. այլ մեղք ինք ի նա խառնի՝ եւ չարացուցանէ զնա: Չորօրինակ՝ հոգի եւ մարմին ըստ ինքեան բարի են ըստեղծեալ յԱստուծոյ, այլ մեղքն եկամուտ մտանէ ի նոսա՝ եւ լինին մեղաւորք եւ չարք: Կամ որպէս կերակուր ինչ սուրբ՝ թէ անմաքուր եւ պիղծ ինչ խառնի՝ ի նա՝ պղծի: Նոյնպէս ի բարի մեծութիւնն խառնի վատթար ինչ եւ պղծէ զնա: Եւ զի՞նչ իցէ խառնուածն. այս է: Նախ՝ անիրաւ ժողովելն: Երկրորդ՝ ազահութեամբ պահելն: Երրորդ՝ փառասիրութեամբ ցրուելն. կամ ի

մարմինն մսխելն: Սոքա երեքեան մեղքս՝ մտանեն ի մեծութիւնն. իսկիզբն՝ ի մեջն՝ ի յեզրն. եւ լինի չարեաց պատճառ եւ կորուստ հոգւոյ: Եւ այս ոչ թէ՛ ի մեծութենէն եղել. այլ ի մեղացն որ խառնեցաւ ի նա. եւ ի չար կամացս մերոց. որ այնպէս գործեցաք զնա. վասն սոցա ասէ. (վայ ձեզ մեծատանց:) Իսկ թէ զմեծութիւնն արդարութեամբ ժողովեն, եւ առանց ագահութեան զչափաւորն պահեն եւ ի պետս աղքատաց, եւ ի հոգեւորն մատակարարեն, այնպիսի մեծութիւնն բարի է եւ պատճառ բարւոյ որպէս ցուցաւ: Նոյնպէս եւ աղքատութիւնն ինքն ըստ ինքեան բարի է եւ պատճառ բարւոյ. ըստ այնմ, (երանի աղքատաց հոգւով՝ զի նոցա է արքայութիւնն երկնից ասէ Տէրն:) Այլ երեք ինչ խառնի յաղքատութիւնն. եւ զբարին ի չար փոխարկէ եւ անվարձ առնէ: Նախ՝ կամք մեծութեանն. որ թէ աղքատն ցանկայ մեծութեան եւ ուտելոյ եւ ըմպելոյ, այնպիսւոյն ակամայ է աղքատութիւնն. եւ չէ աղքատ հոգւով եւ ոչ երանելի: Երկրորդ՝ թէ աղքատ է եւ գողանայ զայլոց վասն աղքատութեանն իւրոյ, մեղք է եւ կորուստ հոգւոյ: Երրորդ՝ թէ զսակաւ ինչսն զոր տայ Աստուծոյ՝ ագահութեամբ պահէ եւ յայլմէ ինդրէ, եւ կամ փառասիրութեամբ եւ չարաչար ի գործ ածէ, այնպիսին չունի զվարձս աղքատի. զի ընդ ագահս եւ ընդ մոլիսն կորնչի: Ապա յայտ է ի բանս՝ զի ոչ մեծութիւնն ուրոյն կորուսանէ զմարդ. եւ ոչ աղքատութիւնն արդարացուցանէ. այլ իյերկու դասն գտանին լաւք եւ վատթարք: Չի լինին մեծատունք արդարք եւ մեղաւորք. եւ լինին աղքատք արդարք եւ մեղաւորք: Իբր թէ ի քո ձեռնդ է. թէ կամիս՝ մծութեամբն արդարանաս. եւ թէ կամիս՝ աղքատութեամբն պարտաւորիս: Չի չորս իրս տուեալ է Աստուած ի ձեռն մարդոյ որպէս սուր. զի թէ կամիմք՝ գործ ածեմք ի բարին. Եթէ կամիմք՝ ի չարն. այս է: Նախ՝ իմաստութիւնն: Երկրորդ՝ գեղեցկութիւնն: Երրորդ՝ կարողութիւնն: Չորրորդ՝ մեծութիւնն: Արդ՝ մեծ բարի է իմաստութիւնն մարդոյ: Նախզի՝ մարդն պատւական՝ բանիւ եւ իմաստութեամբն է. եւ նովաւ տիրէ ծովու եւ ցամաքի. եւ նովաւ բաժանիմք յանբան կենդանեաց. եւ նովաւ հաւասարիմք հրեշտակացն Աստուծոյ: Դարձեալ՝ իմաստութեամբն ճանաչեմք զԱստուած. եւ նովաւ մխիթարիմք արքայութեանն յուսով. եւ իմաստութեամբն երկնչիմք ի դատաստանացն Աստուծոյ: Դարձեալ՝ չիք ինչ քան զիմաստութիւնն մեծ պարգեւ ի յԱստուծոյ տուեալ մարդկան. զի հարցին զոմն իմաստուն թէ՛ զի՞նչ երեւի քեզ ընտիր յամենայն բարութեանցն Աստուծոյ որք տուեալ են մարդկան. այս է՝ հոգի, կեանք, լոյս, մարմին, մարմնաւոր բարիք, առողջութիւն, եւ այլն: Ասաց թէ՛ քան զամենայն մեծ պարգեւ՝ է իմաստութիւնն. զի ամենայն ինչ՝ հակառակ ունի ի կեանս յայս. մեծութիւնն զաղքատութիւնն. առողջութիւնն զհիւանդութիւնն. գեղեցկութիւնն զտգեղութիւնն. ուրախութիւնն զտրտմութիւնն. լոյսն զխաւարն. կեանքն զմահն. եւ այլն ամենայն նմանապէս: Իսկ իմաստութեանն՝ չկայ հակառակ: Եթէ մեծանայ՝ զիտէ իմաստութեամբն բարւոք ի գործ ածել: Եթէ աղքատանայ՝ յԱստուծոյ մեծանայ. թէ առողջ է՝ ուրախ է եւ գոհանայ. թէ հիւանդանայ կամ տրտմի, զնոյն փառաւորէ. թէ կենդանի է, յաւելանայ արդարութիւնն հանապազօր. եւ թէ մեռանի՝ անխիղճ զնայ յաշխարհէս: Արդ՝ այս իմաստութիւնս որ ասացաք՝ որպէս սուր է. եւ թէ կամիմք՝ այս իմաստութեամբ զթշնամին սպանանեմք. եւ թէ կամիմք՝ զմեզ: Չի յորժամ իմաստութեամբն զԱստուած գտանեմք, եւ զհոգիս ճանաչեմք եւ փրկեմք, այնու սպանանեմք զթշնամին

մեր զսատանայ. եւ թէ շրջեմք զիմաստութիւնն, ի մարմինս եւ յաշխարհս եւ ի հնարս, եւ նովաւ չար գործեմք, սպանանեմք զհոգիս մեր: Նոյնպէս եւ այլքն՝ մեծութիւն, կարողութիւն, գեղեցկութիւն, սուր են ի ձեռս մեր: Եթէ զգեղեցկութիւն պատկերին ի մեղս շաղախեմք, եւ ուժով եւ կարողութեամբ զմեղս գործեմք, եւ զմեծութիւն եւ զինչս ի մարմինս մսխեմք, նիւթ որկորստութեան եւ ազահութեան առնեմք, յայնժամ սպանաք զմեզ: Ապա թէ զգեղեցկութիւն անշաղախ պահէ ի մեղաց եւ Աստուծոյ տայ, եւ ուժով եւ կարողութեամբ զառաքինութիւն գործէ, եւ զմեծութիւնն իրաւամբ ժողովէ, որ ի պէտս կարօտելոց մսխէ, նա այսպիսի թրով զթշնամին իւր սպանանէ: Որպէս գեղեցկացեալն յԱստուծոյ Յովսէփ. եւ շուշան երկիւղածն յԱստուծոյ. որք պահեցին զգեղեցկութիւն պատկերին ի հաճոյս Աստուծոյ: Վասն որոյ գեղեցկութիւն գունոց՝ նոցա վայելէ. եւ ոչ շնացողաց. եւ մեծութիւն Յոբայ վայելէ. եւ ոչ ազահաց: Չի որպէս զինտ ոսկի ի քիթ խոզի է շնացողաց գեղեցկութիւնն. որք հանապազ ի տիղմն մեղաց շաղախին. եւ մեծութիւնն ազահի՝ որպէս սուր է ի ձեռս մաղասկթաց. որով զինքն վիրաւորէ: Չի թէ ամենայն երտասարդք էին որպէս զՅովսէփ ողջախոհն, եւ ամենայն կանայք պարկեշտ որպէս զշուշան, ոչ պղծիւր օրինաւոր անկողինն: Եւ թէ ամենայն մեծատունք էին իբրեւ զՅոբ, որ էր հայր որ բոց եւ խնամածու այրեաց, ոչ լինէին որքք անհայր. եւ ոչ կին այրի. զի սոքա երկոքեանս՝ առաւել ողորմելիք են. մանուկ որք եւ կին այրի. անպահապան եւ անայցելու: Չի վասն չորս պատճառի տայ Աստուած մեծութիւն մարդոյն: Նախզի՝ թէ բարի է մարդն, ընտրէ Աստուած եւ տայ զմեծութիւնն ի ձեռս նորա՝ որ աղքատաց եւ կարօտելոց ծնօղն լինի. եւ ի պէտս նոցա մսխէ. եւ այս կեանօքս զայն կեանսն շահի. որպէս պարոն մարդն ընտրէ զհաւատարիմն ի տան իւրում. եւ զամենայն ինչս իւր ի նա վստահանայ: Երկրորդ՝ թէ չար մարդ լինի, տայ Աստուած մեծութիւն որ ի յայն կեանսն պատասխանի չունենայ, թէ ինձ ի՞նչ ետուր որ ես բարի գործէի: Երրորդ՝ վատ մարդոյն վասն այն տայ Աստուած մեծութիւն, որ այն իրօքն՝ յԱստուած դառնայ ասելով ի միտն իւր. թէ ես անարժան եմ. զայս մեծութիւնս յաւելու ինձ ի կեանս. եւ զկեանսն յաւիտենից տայ: Որպէս մէկ մի որ զփոքր տղայն խնձորով կամ այլ իրօք ընտելացուցանէ եւ առ ինքն կոչէ: Չորրորդ՝ թէ մարդոյն գործն ամենայն չար է, եւ մին մասն բարի լինի գոծեալ, նա Աստուած ի յայս կեանս մեծութիւն տայ. եւ զմին բարին վճարէ՝ որ ի յայն կեանսն այլ ակն չունենայ բարւոյ: Այսպիսի մեծութիւնս՝ կարի խեղճ եւ ողբալի է. որպէս մեծատանն որ ի դժոխս էր՝ ասաց Աբրահամ. (դու ընկալար զբարիսն քո ի կեանս յայնմիկ:) Նոյնպէս եւ վասն չորս պատճառի տայ Աստուած մարդոյն աղքատութիւն: Նախ՝ զկէս մի աղքատ արար Աստուած այս կեանացս՝ որք զարքայութիւնն Աստուծոյ վաճառեն մեծատանց ի ձեռն ողորմութեան. զի զողորմութիւն աղքատաին՝ ինքն Աստուած առնու ի փոխ. եւ ինքն վճարէ ողորմածին. ըստ այնմ, (որ արարիք միում ի փոխքրկանցս՝ ինձ արարիք:) Երկրորդ՝ տայ Աստուած մարդոյն աղքատութիւն եւ փորձէ զնա. որպէս հուրն զոսկին ընտէ. թէ ի յաղքատութիւնն համբերօղ եւ լաւ լինի, նա յայն կեանսն տայ Աստուած զերկնից մեծութիւնն: Երրորդ՝ զբարի մարդն որ մեծութիւն ունի՝ աղքատացուցանէ եւ փորձէ. թէ վասն իրա՞ցն սիրէ զԱստուած, թէ յաղքատութեան այլ նոյն է՞. զի աշխարհի բարի օրինակ դնէ զայն մարդն.

որպես Յոբայ արար: Չորրորդ՝ թե մարդն բազում բարի է գործեալ, եւ մին մասն մեղաց ունի, նա տայ աստ աղքատութիւն եւ չարչարե զնա. որ այն մի մեղքն քաւի. որ ի յայն կենսն սուրբ եւ արդար ժառանգեսցէ զարքայութիւնն Աստուծոյ. որպէս Ղազարոս աստ աղքատութեամբ եկաց. եւ հանգաւ ի գոգն Աբրահամու, որ է արքայութիւնն երկնից: Որեւ զամենայնսն առ հասարակ զաղքատս եւ մեծատուսս՝ արժանախ արասցէ Քրիստոս արքայութեանն երկնից եւ մասին Սրբոց իւրոց ամէն:

Նորին քարոզ դարձեալ վասն մեծութեան եւ աղքատութեան. ի Բանն (Տէր աղքատացուցանէ եւ Տէր մեծուցանէ:) 1 Թագ. 2. 7: (Գլուխ. ԸԺԳ)

Վարդապետք ասեն թէ՛ բարի մեծութիւնն երեք եղանակաւ է: Նախօր իւր՝ հալալ հալալ վաստակովն ստանայ. ի հայրենեաց, եւ յանասնոց, եւ այլն: Երկրորդ՝ որ թէ յայլմէ ժողովէ՝ ոչ անիրաւութեամբ եւ զրկանօք, այլ ըստ կամաց եւ արդարութեամբ: Երրորդ՝ որ ոչ մթերէ. այլ ցրուէ եւ բաժանէ զինչս ի պէտս աղքատաց եւ կարօտելոց: Իսկ որ ընդդէմ սոցա է, որ զայլոց ժողովէ զրկելով եւ անիրաւութեամբ, եւ ռիշտ է բարուքն, նուազի այնպիսեաց մեծութիւնն: Եւ վասն չորս պատճառի տայ Աստուած զմեծութիւն: Նախ՝ վասն փառաց իւրոց. զի առեալ զմեծութիւն, մեծ փառս եւ երկրպագութիւն տայ Աստուծոյ. զի ի մեծութենէ շնորհացն Աստուծոյ, առաւելացին գոհութիւնք: (Չի զամենայն ինչ արար Տէր վասն իւր ասէ առակն:) Նոյնպէս եւ զմեծատուսս առնէ վասն մեծութեան փառաց իւրոց: Իսկ որ մեծութեամբն զիւր փառսն որսայ, եւ ոչ զԱստուած փառաւորէ, որպէս թէ զրկեաց զփառս Աստուծոյ. այնպիսին չարեաւ կործանի. կամ աստ որպէս Յերովդէս զի ոչ ետ փառս Աստուծոյ եւ սատակեցաւ. կամ անդ որպէս մեծատուսն, զի ընկալաւ զմիսիթարութիւնն ի կեանս յայս: Երկրորդ՝ տայ զմեծութիւնն՝ զի ի պէտս աղքատաց բաշխեսցէ. զի Աստուած ինամակալ է ստեղծուածոցն իւրոց: Որպէս զմեծատուսս անընդմիջաբար ընչիւք ինամէ. նոյնպէս եւ զաղքատս միջնորդիւ մեծատանց ինամէ: Յորժամ զմեծութիւնս այսպէս բորւոք բաշխեմք, այլ առաւելանայ մեծութիւնն աստ. եւ փոխանէնն ի հանդերձեալն: Եւ թէ ոչ բաշխեմք կարօտելոց, իւլէ զմեծութիւնն եւ տայ այլում: Չի ասէ մարգարեիւն. (Իմ է արծաթ՝ եւ իմ է ոսկի. եւ ում կամիմ տաց զնա:) Երրորդ՝ տայ զմեծութիւն մարմնոյ՝ զի այնու ստացուք զմեծութիւն հոգւոյ. եւ զայս կամ (վաճառել եւ տալ աղքատաց. որպէս հրամայէ Տէրն.) կամ ի ձեռն այլ ինչ արդեանց բարեաց: Եկեղեցի շինել. կամուրջ. հոգետուն. նուէրս. եւ այլ ինչ իրօք ստանալ զհոգեւոր բարութիւնն. եւ լինիլ մեծատուն երկու աշխարհով. մարմնով աստ, եւ հոգւով ի հանդերձեալն: Իսկ թէ ոչ ստանայ զմեծութիւն հոգեւոր, կամ կենօք զրկէ ի մարմնաւորս. կամ մահւամբ. եւ անդ տայ զաղքատութիւն եւ զկարօտն յաւիտենից: Չորրորդ պատճառաւ՝ տայ զմեծութիւն մարմնոյ՝ զի այնու հաւատացուք զմեծութիւն հոգւոյ, թէ ճշմարիտ են այն կենաց խոստմունքն՝ զորս սիրելեացն պատրաստեալէ: Ուստի յայտ է՝ զի աստ տայ առ հաւատչեայ հանդերձեալ մեծութեանն: Եւ որք առնուն զայս մեծութիւնս, եւ խոնարհութեամբ մտաց եւ բարուց՝ ի գործ ածեն, որպէս ասէ առակն: (Որքան ի մեծութիւն հասանիս, ի խոնարհս զիջանիցիս:) Յայնժամ առաւելանայ շնորհ մեծութեն օրըստօրէ աստ, եւ կատարեալն ի

հանդերձեալն: Որպէս մեծատունն Աբրահամ. եւ թագաւորն Դաւիթ. Կոստանդիանոս. Տրդատ, եւ այլք: Որք ընդ մեծութեանն՝ ունէին եւ զմտաց խոնարհութիւնն. որպէս ասէր Դաւիթ: (Ես աղքատ եւ տնանկ եմ.) եւ այլքն նոյնպէս: Իսկ որք ընդ մեծութեան ընչիցն եւ իշխանութեանն՝ զմեծութիւն մտաց ստանան եւ փքանան, եւ ոտնհար լինին ի վերայ այլոց, այնոքիկ են, զոր հրամայէ Տէրն. (որ բարձր է առաջի մարդկան՝ պիղծ է առաջի Աստուծոյ.) այսինքն, որ մտօքն է բարձր այլ ոչ թէ ընչիւք կամ իշխանութեամբ. որպէս ցուցաւ առ Աբրահամ առ Դաւիթ: Եւ բարձրամիտն ո՞րպէս է պիղծ առաջի Աստուծոյ. այն է՝ զոր ասէ առակն: (Տէր ամբարտաւանից հակառակ կայ.) որպէս սատանայի: Եւ կամ զինքն, եւ կամ զպատճառ մեծութեանն կորուսանէ. որպէս Զերովդէի. Սենեքերիմայ. Նաբուգոդոնոսորայ. Փրաւօսի, եւ այլոցն: Արդ՝ թէ որ մեծութիւն ունի եւ հպարտանայ, կորուսանէ Տէր. իսկ որ աղքատ լինի եւ հպարտ, քանի՞ առաւել ատելի է Աստուծոյ: Որպէս ասէ Սիրաք: (Երեք են զորս ատեաց անձն իմ. զմեծատունն սուտ. եւ զաղքատ հպարտ. եւ զձեր պոռնիկ:) Աստ հարցանելի է թէ՛ զի՞նչ է շահ ի մեծութենէն: Ասէն վարդապետք տասն եկանակաւ: Նախ այն է՝ զի որպէս քաղաքն պարսպով ամրանայ. նոյնպէս եւ մեծատունն յամենայն դրժողաց. զի տայ առատապէս. որպէս ասէ առակն. (մեծութիւն առն իբրեւ զքաղաք ամուր:) Երկրորդ՝ զի զերծանի ի փորձանաց. որպէս ասէ առակն. (փրկանք առն մեծութիւն իւր:) Երրորդ՝ զի ոչ պանտխտի որպէս զաղքատն կամ սովի. ըստ այնմ որ փարթամ է ամենայն ընչիւք: Չորրորդ՝ շքեղացեալ յամենեցուն պատւի. որպէս ասէ առակն. (փառք նորա մեծապէս հովանի է նորին.) ուստի յայտ է՝ զի մի եւ նոյն գոյութիւն է աղքատին եւ մեծատանն. եւ կազմուած մարմնոյն. յաղագս որոյ՝ ի մեծատանէն պատկառիմք. եւ զաղքատս արհամարհեմք: Զինգերորդ՝ զի զբազում բարեկամս ունի. որպէս ասէ առակն. (մեծութիւն յաւելու բարեկամս բազումս. իսկ աղքատն ի բուն բարեկամէն քակի:) Վեցերորդ՝ զի համարձակ է ի խօսս. որպէս ասէ առակն. (մեծատունն յանդուգն տայ պատասխանի:) Եօթներորդ՝ զի մեծութիւն ուրախ պահէ հանապազ. որպէս զմեծատունն՝ (որ ադաներ բեհեզս եւ ծիրանիս. եւ ուրախ լինէր հանապազօր:) Ութներորդ՝ զի արիանայ ի գործս այլս բազում ժողովելով. որպէս ասէ ժողովօղն. (որ սիրէ զարծաթ՝ ոչ յագի արծաթով.) եւ առակն ասէ. (որ ժիրքն են՝ հաստատին մեծութեամբ:) Իններորդ՝ զի որ այլ եւս իմաստունքն են, կարեն մեծութեամբն զթողութիւն գտանել, յորժամ ողորմին աղքատին ըստ Դանիէլի. (զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես. եւ զանօրէնութիւնս քո տրօք տնանկաց:) Տասներորդ՝ զի կարեն զբարեկամս հոգելորս առնել ի մեծութենէն. որպէս ասէ Տէրն. (արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասեսցի այդ, ընկալցին զձեզ ի յարկս իւրեանց:) Այսքան առ այս: Աստ հարցանելի է թէ՛ զի՞նչ է թշւառութիւն աղքատին: Ասէն վարդապետք այսմ տասն պատճառ: Նախ զի՞ յամենայն կողմանց կապ եւ առանց յաջողութեան լինի. որպէս ասէ Դաւիթ. (կապել էին յաղքատութեան որպէս յերկաթս:) Երկրորդ՝ զի ամենայն իրաց կարօտութիւն եւ նուազութիւն լինի. որպէս Ղազար որ ցանկայր փշրանաց սեղանոյ մեծատանն: Երրորդ՝ զի լի է ամենայն վշտօք եւ ցաւօք. որպէս ասէ Դաւիթ. (աղքատ եւ ցաւած եմ ես Աստուած.) եւ դարձեալ՝ (նեղութիւնք եւ վիշտք գտին զիս:) Չորրորդ՝ զի ատելի լինի եւ բարեկամաց իւրոց. որպէս

ասէ առակն. (բարեկամք ատեսցեն զբարեկամս աղքատս.) որպէս բարեկամքն Յորայ. վասն որոյ ասեր՝ (դուք բժշիկք մեղանչականք էք. եւ ոչ ողջացուցիչք:) Հինգերորդ՝ զի ամենեցուն ողորելով եւ հանդարտ խօսի. որպէս ասէ առակն. (յողոք բանի եւեթ կայ տնանկն:) Վեցերորդ՝ զի ասէ առակն. (աղքատն ոչ հանդարտի պատուհասի:) Եօթներորդ՝ զի ասէ առակն. (աղքատութիւն զայր խոնարհեցուցանէ:) Ութներորդ՝ (մի ձկտիր թէ աղքատ իցես ընդ մեծատանն. այլ քո իմաստութեամբ հրաժարեա ի նմանէ:) Իններորդ՝ զի գողանայ յորժամ ոչ ունի զաղքատութիւնն կամաւ. որպէս գէգի զարծաթն եւ հանդերձն Նեմանայ. եւ Անանիայ եւ Սափիրայ ի կնոց գեղջն իւրեանց. որպէս ասէ առակն. (մեծութիւն եւ աղքատութիւն մի տար ինձ. այլ կշռեա զբաւականն իմ. զի մեծացայց եւ ստեցից. կամ աղքատացայց եւ գողացայց եւերդայց յանունն Տեառն Աստուծայ իմոյ:)

Տասներորդ՝ զի ասէ ժողովօղն. (իմաստութիւն աղքատին արհամարհելէ. եւ բանք նորա ոչ լինին լսելի:) Այսոքիկ ըստ մարմնոյ թշուառութիւն աղքատին:

Դարձեալ այժմ հարցանելի է թէ՛ զի՞նչ է շահ եւ հոգեւոր մեծութիւն աղքատին: Ասեն վարդապետք այսմ տասն պատճառ: Նախ գիտելի է՝ զի է աղքատութիւն ի հարկէ եւ ակամայ. որպէս որք դժուարին եւ դժգոհեն եւ ցանկան մեծութեան. այս չէ գովելի: Եւ է աղքատութիւն ըստ կամաց. որպէս որք գոհութեամբ եւ ուրախութեամբ տանին զպատահիլն. այս գովելի է. զի յազատութիւն է: Իսկ շահ այս է. զի ասէ Քրիստոսի. (երանի աղքատաց հոգւով՝ զի նոցա է արքայութիւնն երկնից:) Երկրորդ՝ զի եւ յանցանք մեղացն՝ աղքատութեամբն քաւին որպէս Ղազարուն. վասն որոյ ասեր Աբրահամ. (դու ընկալար զբարիսն ի կեանսն յայն. եւ սա զչարիսն. արդ՝ սա աստ մխիթարի եւ այլն:) Երրորդ՝ զի վրեժ ինդիր է Աստուած աղքատաց զրկիլոց. որպէս ասէ առակն. (որ ծաղր առնէ զաղքատն՝ բարկացուցանէ զարարիչն նորա.) որեւ Դաւիթ տսէ. (վասն տառապանաց աղքատին եւ հեծութեան տնանկին՝ այժմ յառնեմ ի դատաստան.) եւ զնոսա փրկեմ. եւ համարձակ տանջեմ զզզւօղս նոցա: Չորրորդ՝ զի ասէ առակն. (են որք մեծացուցանեն զանձինս եւ ոչ ինչ ունի. այսոքիկ մեծատունք. եւ են որք խոնարհեցուցանեն զանձինս, եւ լի են մեծութեամբ բազմաւ.) այսոքիկ աղքատք են ըստ մամնոյ, եւ փարթամք երկնաւոր գանձիւք: Հինգերորդ՝ զի ասէ առակն. (լաւ է աղքատ արդար, քան մեծատուն սուտ.) եւ ժողովօղն ասէ. (լաւ է մանուկ աղքատ եւ իմաստուն, քան թագաւոր ծեր եւ անմիտ:) Վեցերորդ՝ զի ասէ ժողովօղն. (գտանի ի քաղաքի այր աղքատ եւ իմաստուն. եւ ապրեցուցանէ նա զքաղաքն իմաստութեամբն իւրով:) Եօթներորդ՝ զի ասէ առակն. (լաւ է բանճար խաղաղութեամբ, քան զպարարակ իմոյ թշնամանօք.) եւ մարգարէն Դաւիթ. (լաւ է սակաւիկ ինչ արդարոյ. քան զբազում մեծութիւն մեղաւորաց:) Ութներորդ՝ զի աղքատն ոչ ունի զփարթամութիւն ընչից՝ որք վարեն զմարդ ի գործս չարեաց եւ ի հեշտութիւն մարմնական. զի ամենայն ինչ ձեռնհաս է նոցա. իսկ աղքատութիւնն՝ բարեգործութիւն է մարդոյ. որպէս ասէ Դաւիթ. (բարի է ինձ՝ զի խոնարհ արարեր զիս. որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քոյ:) Իններորդ՝ զի աղքատն չունի զհոգ մեծութեան աշխարհիս. որով փարթամքն չարչարին, եւ ոչ պարապին օրինացն Աստուծոյ. զի Տէրն փուշ կոչէ ասելով. (հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեան՝ հեղձուցանեն

զբանն եւ լինի անպտուղ:) Տասներորդ՝ զի ասէ Դաւիթ. (անխայտեցէ նա յաղքատն եւ ի տնանկն. եւ զանձինս տնանկաց կեցուցէ. ի վաշխից չարաց որ է տանջանք դժոխոցն՝ փրկեցէ զնոսա:) Եւ դարձեալ՝ (ես աղքատ եւ տնանկ եմ Աստուած խորհեա՛ զիս:) Եւ դարձեալ՝ (օգնեաց տնանկին յաղքատութեան. եւ առաջնորդեց որպէս խաշին ազգի նոցն:) Եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն դիւոց խաբէութեան. եւ մեծատանց եւ աղքատաց. ի Բան առակին որ ասէ: (Երկու ինչ խնդրեմ ի քէն. զշնորհ քո մի հեռի տաներ յինքէն, մինչեւ մեռանկոցիմ. զգուր եւ զսուտ հեռի արա յինքէն:) Առակ. 30. 7: (Գլուխ. ԾԺԴ)

Աստուած զմարդն իմաստուն եւ հանճարեղ կենդանի է ստեղծեալ. եւ այսու պատել է զսա քան զամենայն: Եւ է գործ իմաստութեան՝ որով ճանաչեմք զարարիչն մեր եւ զԱստուած. եւ գործ հանճարոյն՝ որով զպակասն մեր ի նմանէ խնդրեմք եւ առնումք. որպէս ասէ առաքեալն. (հաւատալ պարտ է թէ Աստուած. եւ որք խնդրեն զնա լինի պարգեւատու:) Այն է իմաստութիւնն՝ որք հաւատամք եւ ճանաչեմք զԱստուած, թէ է Աստուած՝ եւ կարող է. զի գոր ինչ խնդրեմք ի նմանէ՝ պարգեւէ մեզ: Եւ իմաստունն ի նմանէ՝ պարգեւէ մեզ: Եւ իմաստունն երկու իր խնդրէ աղօթիւք յԱստուծոյ. որ ամենեցուն պիտանի է եւ հարկաւոր: Մին հոգեւոր է. եւ միւս մարմնաւոր: Եւ այս է հոգեւորն: (Մի հաներ զշնոհս քո յինէն. եւ զգուր եւ զսուտ բան հեշացո յինէն:) Չի մարդկային ազգս յայս երկու զօրութեանց միջիս կայ մինչեւ ի մահ. այսինքն, շնորհացն Աստուծոյ, եւ խաբէութեան դիւաց: Չի ի մին կողմն շնորհն Աստուծոյ է մեզ օգնական եւ պահող. եւ ի միւս կողմն դէքն են խաբող եւ որոգայթօղ: Եւ է Աստուծոյ պահապանութիւնն կրկին. այսինքն, զի ի ներքս զհոգի եւ զիմացումն եւ զկամս մեր շնորհօքն իւր պահէ ի չարէն, եւ առաջնորդէ ի բարին: Եւ յարտաքս՝ ի ձեռն հրեշտակաց պահպանէ զզգայարանս մարմնոյս եւ զգործս պահել ի չարէ, եւ օգնել ի բարին. ըստ այնմ, (բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք եւ պահեն զնոսա:) Եւ այսպէս ասեր ցԱստուած վասն Յոբայ. (դու ամրացուցեր զներքինս նորա եւ զարտաքինսն.) այսինքն, զհոգին եւ զմարմին շնորհօք եւ հրեշտակօք պահպանեցեր. այսպէս ինամքն Աստուծոյ եւ պահապանութիւնք հրեշտակաց՝ են ընդ մարդկան հանապազ յամենայն ուրեք: Նմանապէս եւ բազմութիւնք դիւաց՝ ենն ընդ մարդոյն հանապազ. եւ խաբեն զմիտսն եւ որոգայթեն ի մեղս. ըստ այնմ, (անկցին ի կողմանէ քումմէ հազարք. եւ բիւրք ընդ աջմէ քումմէ. որք առ քեզ ինչ ոչ մերձեցին:) Յաջմէ եւ ի կողմանէ ասելն՝ նշանակէ զդիւաց պատերազմ ընդ մարդկան յաջմէ եւ ի ձախմէ: Եւ ի ձախն մէկին պատերազմի. եւ ի յաջն կրկին եւ առաւել: Չի ի ձախն միայն օգնական լինի եւ ձգէ ի մեղս մարմնականս. այսինքն, յուտել եւ յմպել, իշնալ ի գողանալ, եւ յայլ սոյնպիսիս: Իսկ ի յաջ կողմն կրկին պատերազմի. այսինքն, նախ հակառակի չգործել զբարիս. եւ թէ ոչ կարէ՝ յայնժամ օգնէ ի բարին եւ ձեռնտու լինի. եւ փառասիրութեամբն կորուսանէ. այսպէս յաջ եւ յահեակ պատերազմին դէք ընդ մեզ: Եւ Մովսէս մարգարէն ասէ. (մինն ի ձեռք զհազարս հալածեցէ. եւ երկուք զբիւրս շարժեցեն.) եւ զայս բիւրս եւ

գիագարս՝ Դաւիթ յաջմէ եւ յահեկէ ասէ: Եւ թէ ո՞րպէս է կողմանէ հագարք, եւ բիւրք ընդաջմէ: Այս է՝ զի յահեակ կողմն մեր՝ միայն պատերազմի եւ ձգէ ի չար մեղացն որպէս ցուցաւ: Իսկ յաջ կողմանէ՝ տասնեկի: Նախզի՝ հակառակի ի գործելն զբարին. ի յաղօթս, ի պահս, ի յողորմութիւնս, եւ յայլն: Երկրորդ՝ զիտեսեալ զմրադն ի ժուժկալութիւնս եւ յառաքինութիւնս, քծնի. որպէս շուն ողորքէ. շողօքորթէ եւ աղաչէ զմարդ. կամ զառաջին աղայութեան վարսն ի միտն արկանէ. կամ զկարօտ ծնողացն. կամ զսէր ընկերացն. եւ ասէ՝ պաշտած է քեզ սիրել զընկերս. զի զօրէնս կատաես. եւ այնու ի շնութիւն ձգէ: Կամ պատշաճ է քեզ վրեժ խնդիր լինիլ եւ խրատել. եւ այնու ի բարկութիւն տանի: Կամ պիտոյ է քեզ ողորմութիւն տալ այլոց. եւ հիւանդութիւն ունիս. ծերութիւն կայ. յերուսաղէմ երթաս. եւ այսուտայ զարծաթն սիրել. եւ այլն նմանապէս: Երրորդ՝ յորժամ ոչ կարէ՝ յայն ժամ օգնէ առաքինութեան եւ ձեռնտու լինի ի պահս՝ յաղօթս՝ ի ճգնութիւնս. եւ այնու ձգէ ի հպարտութիւն եւ ի սնափառութիւն: Այս երեք ճանապարհաւս հակառակի յաջ կողմն. եւ յորժամ միովն ի սոցանէ յաղթէ, յայնժամ բերէ զեօթն մահու չափ մեղսն եւ գործել տայ նմա. ըստ այնմ, (եօթն այլ այսս չարս քան զինքն բերեալ բնակի ի մարդն. եւ լինի յետինն չար քան զառաջինն) զանազան մեղօք եւ դառն յուսահատութեամբ: Այսպէս ի յաջ կողմնէ բիւրք են հակառակք. եւ ի ձախմէն հագարք: Եւ այսու մտօքս է իմանալ զառակն զոր հրամայէ Տէրն: (Եթէ թագաւոր ունիցի զօրս տասն հագարաց. եւ գայցէ ի վերայ նորա քսան հագարաւ.) այսինքն, տասն զգայութիւնս հոգւոյս եւ մարմնոյս մեր. եւ իւրաքանչիւրոցն՝ կրկին դելք պատերազմին ընդ մեզ. ոմն յաջ եւ ոմն յահեակ: Իսկ հագարն՝ զկատարեալ պատերազմն նշանակէ եւ զբազումն. զի բազում եւ անթիւ մարտնչին ընչ խորհուրդս եւ ընդ գործս մեր: Եւ այսպէս շուրջանակի ի մէջ դիւական որոգայթից շրջիմք որքան ի կենացադս եմք եւ կենդանի մարմնով. ըստ այնմ, (լարս ճգեցին որոգայթ ոտից իմոց՝ եւ շուրջ զշաւղօք իմովք եղին ինձ զգայթակողութիւն:) Չոր օրրինակ՝ թռչնոց ի յամենայն կողմանէ գուր եւ որոգայթ պատրաստեն. զի յոր կողմ ընթանայ, ըմբռնի: Նոյնպէս եւ մարդոյս է զանազան որոգայթ ի սատանայէ. քահանայի, աշխարհականի, փարթամի, աղքատի, ծերի, տղայոյ, եւ այլն ամենայն. որպէս ասէ Դաւիթ. (ճանապարհ յոր եւ գնայի՝ թաքուցաւ ինձ որոգայթ:) Վասն այն աղաչէ զԱստուած թէ՛ որքան կենդանի եմ մարմնով ի մէջ դիւաց որոգայթից, ինամօք եւ հրեշտակօքդ պահապանեա: Եւ աստ գիտելի է՝ զի յերեք տեղոց պատերազմ է մարդկան ընդ սատանայի. որպէս ասէ առաքեալն. (ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ եւ ընդ արեան. այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ այսս չարութեան որք ի ներքոյ երկնից:) Չի որպէս մարմնաւոր զօրք մեր ընդ օտարաց պատերազմին. նոյնպէս եւ քրիստոնեանք՝ զինուորք են Քրիստոսի. սոցա մարտ պատերազմի է ընդ դիւաց ազգս՝ որք են հակառակ Աստուծոյ եւ օրինաց եւ սրբութեանց. եւ թշնամի մարդկան ազգի: Եւ յերեք տեղոց է պատերազմ սատանայի եւ մեր: Նախ ի կեանս յայս որքան ի մարմնի եմք: Երկրորդ՝ յետ մահու ընդ հոգւոցն ի ճանապարհս կայանին: Երրորդ՝ յետ յարութեանն ոտիսք լինին ի դատաստանին: Եւ աս երեքին պատերազմք դիւաց՝ նշանակեցան ի հինն, յորժամ հաներ Մովսէս զժողովուրդն յեգիպտոսէ եւ տաներ յերկիրն պարգեւաց. զի յերեք նշանաւոր տեղոց եղեւ պատերազմ նոցա: Նախ՝ յեգիպտոս ընդ Փարաւօսի որ

տանջեր զժողովուրդն. եւ տասն հարւածովք եհար զնոսա: Նշանակէ եգիպտոս զկեանս այս յոր եմք ի մարմնի. զի Եգիպտոսն հալոց չարութեան թարգմանի. եւ Փարաւօնն՝ Է իմանալին սատանայ՝ որ չարչարէ զմեզ զանազան մեղօք. եւ յորժամ զօրանամք, յաղթեմք տասն հարուածովք, այսինքն Է՝ տասն զգայ արանօք մարմնոյ եւ հոգւոյ. եւ տասն բանեան օրինօքն: Երկրորդ՝ պատերազմ եղել նոցա յանապատին ընդ Ամաղեկայ. նոյնպէս եւ մեզ պատերազմ Է ընդ դիւաց յետ ելիցն ի կենաց աստի. զի անապատն՝ զկայանս հոգւոցն նշանակէ: Երրորդ՝ պատերազմ էր նոցա յերկրին անտեսաց ընդ քանանացիս. նոյնպէս եւ մեզ պատերազմ Է յետ յարութեանն ընդ ոսոխացն դիւաց: Եւ այս պատերազմն վասն այն Է յերեք տեղոջ՝ որ ցուցանէ թէ միշտ հակառակ եւ թշնամիք մեր են. ի կեանս ի մահ եւ յամենայն ուրեք: Ապա վասն Էր ասէ (մինչեւ մեռեալ իցեմ, պահեա շնորհօք քո:) Այս Է՝ որ սատանայ ջանս ունի առաւել, որ աստ որոգայթէ զմեզ մեղօք. զի յորժամ աստ մեղօք յաղթէ, յետ մահու եւ յետ յարութեանն յաղթէ եւ տանջէ. եւ թէ աստ յաղթին ի մենջ, յետ մահու եւ յետ յարութեանն ամաչեցեալ լինին եւ պարտին: Վասն այն ասէ. (մինչեւ մեռեալ իցեմ, շնորհօք քո եւ պահապան հրեշտակօք ինամեա մինչ ի մահ.) եւ յետ մահու՝ զերծանիմք յորոգայթէ դիւացն. զի ոչ կարեն այլ խաբել եւ մեղս տալ գործել: Իսկ որ ասէ. (զբան զուր եւ զսուտ հեռի արա յինէն:) Այսինքն, զի սատանայ եւ դէւքն՝ միշտ զուր եւ սուտ խօսին ի խորհուրդս մեր, եւ ստիպեն ի մեղս: Նախ գիտել պարտ Է թէ՛ զի՞նչ Է զուրն եւ սուտն. եւ ապա թէ ո՞րպէս զրպարտեն զմեզ: Արդ՝ զուր եւ սուտ բանն՝ այսպէս որոշին. զուր Է նանիր չարախօսութիւն զայլոց. յորժամ չարախօսէ ոք, որ ի նանիր եւ ընդունայն լինի բանն: Եւ սուտն այն Է՝ որ յինքենէ ասէ. եւ դէւք զայս երկուսս ունին. զի զրպարտեն եւ չարախօսեն զօրէնսն Աստուծոյ. իբր թէ անշահ եւ անօգուտ Է արդիլելն ի մեղաց. եւ սուտ ասէ՝ այսինքն, իրաւացի Է շահ Է գործել զմեղս եւ հեշտանալ մարմնով. եւ հաւանեցուցանեն զմեզ կատարել զմեղս: Եւ զի սուտ Է մեղքն. յայտ Է ի զղջմանէն. որ յետ գործելոյն՝ տրտմութիւն եւ զղջումն հետեւի: Այսպէս խաբեցին զնախաստեծսն ի զուր եւ ի սուտ բանս. որք ասացին. (գիտեր Աստուած յորժամ ուտէք ի պտղոյն, լինիցիք իբրեւ զԱստուածս:) Արդ՝ Է այս զուր ի վերայ Աստուծոյ. որ զրպարտեաց զԱստուած. եւ սուտ Է՝ զի ասաց յինքենէ թէ, երբ ուտէք՝ Աստուծօք լինիք: Այսպէս զամենայն մարդ զուր եւ սուտ բանի խաբեն եւ քարշեն ի մեղս. զի զօրէնսն Աստուծոյ զուր ցուցանեն եւ անօդուտ. եւ զմեղսն շահ եւ օգուտ: Այսու զօրէնսն որ բարի Է, չար եւ անօգուտ ասէ. եւ զմեղսն որ չար Է եւ վնասակար, բարի ասէ եւ շահ: Չբարկացողն տանի ի սպանութիւն: Չոմն ի շնութիւն եւ ի պոռնկութիւն: Չոմն ի գողութիւն. զոմն յարբեցութիւն եւ ի զանազան մեղս. յորժամ զմիտսն խաբէ եւ զօրէնսն զուր եւ նանիր ասէ. եւ զմեղսն շահ եւ պիտանի: Վասն այն պարտ Է աղաչել զԱստուած որքան ի մարմնի եմք՝ պահպանութեամբ հրեշտակացն անփորձ մնալ ի խաբութեանց դիւաց: Դարձեալ՝ այն Է զուրն, որ զմարդոյ բարին չար ասէ. եւ սուտն այն Է, որ զչարրն բարի ասէ. զի մինն դնելով Է՝ որ զուր զչարրն ի վերայ դնեն. եւ միւսն բառնալով՝ որ սուտ ասելով զբարին բառնան: Նոյնպէս սատանայ հանապազգուր եւ սուտ ասէ զմենջ առ Աստուած. զի զբարին մեր բառնայ եւ սուտ ասէ. եւ զչարրն դնէ ի վերայ մեր եւ զուր ասէ. որրպէս վասն Յոբայ չարախօսեր առ Աստուած. նոյնպէս եւ ամենայն

մարդկան առնէ. յայսմանէ հանապազ պարտ է մեզ աղօթել եւ փրկիլ: Դարձեալ զուրն եւ սուտն այն է՝ զոր մարգարէն ասէ. (բանք բերանոյ Նորա՝ անօրէնութիւն եւ նենգութիւն են.) այսինքն, զի յորժամ զմարդն ի մեղն չէ ձգեալ, զԱստուած մարդասէր՝ ողորմած ասէ. եւ տայ գործել զմեղս. եւ յետ գործելոյն՝ ասէ. տանջօղ է Աստուած եւ բարկացօղ եւ անողորմ. եւ արդար դատաստան ունի. եւ զքեզ դատապարտէ. զի այսու ի յուսահատութիւն արկցէ զմեզ: Այս է զուրն եւ սուտն սատանայի. զոր մեզ պարտ է զընդդէմն իմանալ եւ խորհիլ: Չի յառաջ քան զգործ մեղացն՝ իմանամք զդատաստանն Աստուծոյ. եւ զպատիժն հրոյ գեհենոյն. եւ այնու երկրիւն խորշիլ ի մեղացն. որպէս ասէ առակն. (երկիւղէ Տեառն խորշի ամենայն ոք ի չարէ:) Իսկ յորժամ ի պատահմանէ ի մեղս անկանիմք, յայն ժամ զԱստուած ողորմած, քաղցր, եւ բարի խոստովանիլ. զի դիւրաւ քաւէ զմեղս եւ ողորմի. ըստ այնմ, (խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է՝ զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:) Այսպէս են զուր եւ սուտ բանքն սատանայի. եւ այսպէս աղօթելի է մեզ եւ զերծանիլ ի նմանէ: *Չի՞նչ է որ ասէ առաքեալն յաջ եւ յահեակ է պատերազմ թշնամոյն: Չորիւք իմանի:

Նախ՝ գաղտնի ի խորհուրդս. եւ ապա յայտնի ի գործս: Երկրորդ՝ զբարիսն հպարտութեամբ փորձէ. եւ զչարսն մամնական մեղօք: Երրորդ՝ բարի իմացմամբ զմեղս տայ գործել. որպէս առաքինին բարկանայ վրեժ խնդրելով. եւ զեղին պատճառէ ասելով. (որ ինչ ի բերանն մտանէ՝ ոչ պղծէ զմարդ.) Նոյնպէս վաւաշտոն զմարգարէս կանամբիս. եւ այլն նոյնպէս: Չորրորդ՝ հեշտութեամբ մեղօք կամ տանջանօք երբեմն պատերազմի. որպէս վկայիցն. զի կամ զհոգի, կամ զմարմին սպանանէ: Եւ այսպէս զանազան է որոգայթ որսողին մերոյ. եւ ղնէ շուրջանակի (լար ոտից մերոց ըստ Դաւթայ:) Դարձեալ՝ յաջ խոտորումն կրկին է: Նախ՝ սնափառութեամբ աղօթելն եւ ողորմութիւնն. որպէս ասաց Տէրն մեր: Երկրորդ՝ որ զբարիս գործէ ի փառս ինքեան. որպէս: Ոգիայի խունկն. եւ Սաւուղայ պատարագն. եւ Յեփթայեայ զոհն: Իսկ ձախն յայտնի է որպէս շնութիւն եւ սպանութիւն: Եւ յայսցանէ երեւին երեք փառաք: Առաջին՝ բարի գործքն ի փառս Աստուծոյ: Երկրորդ՝ չար գործքն սատանայի՝ որ սնափառութեամբ ի փառս այլոց. եւ ինքնահաճն ի փառս ինքեան. եւ փառքն է հաճելի նմա եւ փառաւորիլն: Եւ յայսցանէ՝ առաջին փառքն է գովելի. եւ այլքն ոչ. զորով ասէ Տէրն. (զփառս ի միմեանց առնոյք. եւ զառ ի միոյն ոչ խնդրէք:) Դարձեալ գիտելի է՝ որպէս սատանայ զբարի գործն ի չար փոխէ. նոյնպէս եւ բարերարն Աստուած՝ ի չարէն բարի առնէ. որպէս Եղիային սպանումն. եւ Ովսէի պոռնկիլն: Յայսցանէ երեւին չորս զանազանութիւնք է որ գործն աջ է. եւ փառքն ձախ. որպէս կեղծաւորացն: Եւ է որ գործն ձախ. եւ փառքն աջ. որպէս փենտեհեսին: Եւ է որ գործն եւ փառքն աջ. որպէս խոնարին հոգւով: Եւ է որ գործն եւ փառքն ձախ՝ որպէս շունք եւ պոռնիկք: Իսկ սոցա զէն՝ է արդարութիւնն զոր առաքեալն ուսուցանէ. (ոչ յաջ խոտորիլ եւ ոչ ի ձախ. այլ մնալ ի մեջն ուղղութեան:) Որում Փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ մեծատանց եւ աղքատանց. ի Բան առակին որ ասէ: (Մեծութիւն եւ աղքատութիւնսմի՛ տար ինձ. այլ կշռես զբաւականն իմ եւ արժանն:) Առակ. 3ժ. 8: (Գլուխ. ԸԺԵ)

Մարդս ի հոգոյ եւ մարմնոյէ գոյացեալ: Նախ խնդրեաց վասն հոգւոյն զպահապանութիւն ինամոցն Աստուծոյ ի դիւական որոգաթից: Այժմ խնդրէ վասն մարմնոյս. զի մի ի պատահմանց մեծութենէ եւ յաղքատութենէ որոգայթեսցի ի մեղս: Քանզի անչափ մեծութիւնն եւ անչափ աղքատութիւնն՝ հաւասարապէս վնասեն զմարդ. զի ծանր լուծ է աղքատութիւնն ի վերայ մարդոյ. ըստ Դաւթի որ ասէ. (կապեալ էին յաղքատութեան որպէս յերկաթս.) զի որպէս լուծն ի վերայ երկու եզին ծանրութիւն է. նոյնպէս եւ ակամայ աղքատութիւնն՝ հոգւոյն եւ մարմնոյն է ծանրութիւն. եւ որպէս լուծն ի վերայ ուսոյն կապէ եւ զշունչն. նոյնպէս կարի աղքատութիւնն՝ թշուառութիւն է մարմնոյ եւ հոգւոյ: Այսպէս եւ փարթամութիւն բազում չարեաց պատճառ լինի մարդոյն. զի փարթամ ուտելով եւ ըմպելով՝ գիրանայ եւ ըստւարանայ. եւ թողու զարարիչն իւր. ըստ մեծութեանն զբաղի միտքն. եւ զօրէնս Աստուծոյ արհամարհէ եւ զայլն. որպէս ցուցանի յառաջիկայդ: Վասն այն աղաչէ իմաստունն թէ՛ (մեծութիւն եւ աղքատութիւն մի տար ինձ:*) *Եւ աստ երեք ինչ տեսանելի է: Նախ՝ զզանազանութիւն մեծութեան եւ աղքատութեան: Երկրորդ՝ զբանս որ ասէ. (մեծութիւն եւ աղքատութիւն մի տար ինձ:*) Երրորդ՝ որ ասէ. (կշռեա ինձ զբաւականն եւ զարժանն:*) *Տեսցուք զառաջինն: Չի մեծութիւնն յերեք բաժանի: Առաջինն՝ որ ամենեւիմբ բարի է: Երկրորդն՝ որ ամենեւիմբ չար: Երրորդն՝ միջակ: Այն որ ամենեւիմբ բարի է՝ է հոգեւոր մեծութիւնն որ է առաքինութիւնն. հաւատն. յոյսն. սերն. խոհեմութիւնն. արդարութիւնն. արիութիւնն. ողջախոհութիւնն. պահքն. աղօթքն. ողորմութիւնն եւ սոյնպիսիք. սոքա հոգեւոր մեծութիւն են եւ բարի: Երկրորդն որ ամենեւիմբ չար մեծութիւնն է. որպէս այնոքիկ՝ որք չար մեղօք են փարթամացեալք. անիրաւութեամբ. բղջախոհութեամբ. թերահաւատքն. յուսահատքն. բարկացողքն. արբեցողքն, եւ այլն. այսպիսիքս են չար մեծութիւն: Իսկ երրորդն որ միջակն է՝ մարմնաւոր մեծութիւնն է որ փոփոխական է: Թէ կամիս ի բարին, եւ թէ կամիս ի չարն փոխես. այլ առաւել ի չարն մերձ է քան ի բարին. վասն այն Տէր մեր արգելու ասելով. (մի գանձէք ձեզ գանձս յերկրի եւ այլն:*) Չի մարմնաւոր գանձն՝ վեց պակասութիւն ունի: Նախզի՝ յերկրէ է: Երկրորդ՝ զի յերկիր կապէ զմիտս մեր: Երրորդ՝ զի յերկիր լուծանի եւ մնայ: Չորրորդ՝ զի խաբէ զզգայութիւնս մեր: Զինգերորդ՝ զի ժանկն եւ ցեցն ապականեն զնա: Վեցերորդ՝ զի գողք եւ աւագակք՝ կամ բռնաւորք կամ մահն բաժանէ ի մենջ զնա: Իսկ հոգեւոր գանձն որ առաքինութիւնն է եւ հաւատքն՝ ընդ այսմ վեց բարութիւն ունի: Նախզի՝ յերկնից է: Երկրորդ՝ զմիտս մեր յերկնս կապէ: Երրորդ՝ զի յերկնս ժողովի: Չորրորդ՝ զի ոչ խաբէ. այլ զզգայութիւնս մեր ի ճշմարիտ բարին դարձուցանէ: Զինգերորդ՝ զի անապական եւ անկորուստ մնայ: Վեցերորդ՝ զի ոչ գողք եւ ոչ բռնաւորք՝ եւ ոչ մահն ի մենջ զնոսա կարեն բաժանել: Տես՝ զի մահն զհոգին եւ զմարմինն բաժանէ. եւ զառաքինութիւնն ոչ կարէ բաժանել. եւ մարմինս փոխի ի յերկիր. եւ առաքինութիւնն ի հոգին մնայ. սիրելիքն հեռանան ի մենջ. եւ բարի գործքն ոչ հեռանան: Այսպէս պատուական եւ շահաւոր է հոգեւոր մեծութիւնն. այսպէս բաժանի մեծութիւնն ի բարին եւ ի չարն եւ ի միջակն: *Իսկ աղքատութիւնն նմանապէս յերեք բաժանի: Առաջինն՝ որ ամենեւիմբ չար է՝ որ ի բարեացն աղքատ է. յարդարութենէ՝ յարիութենէ. յողջախոհութենէ. ի հաւատոց. ի յուսոյ. ի պահոց եւ յաղօթից.

յիմաստութեանցն Աստուծոյ. այսպիսի աղքատս չար է եւ թշուառական եւ ողորմելի. որպէս ասէ ի տեսիլն. (դու ես ողորմելի աղքատ՝ եւ մերկ եւ կոյր:) Երկրորդ՝ աղքատութիւնն որ ամենեւիմբ բարի է. է այն՝ որ ի չարեացն աղքատացեալ է. ոչ ի հոգին ունի զչար խորհուրդն. եւ ոչ ի մարմնինն. զչար գործն. ոչ ոխ. ոչ քէն. ոչ նախանձ. ոչ բարկութիւն. ոչ հպարտութիւն. եւ յայլ ամենայն այսպիսի չարեացս աղքատ է եւ դատարկ. այս բարի աղքատութիւնն է: Իսկ երրորդն որ միջակն է՝ այն մարմնոյ աղքատութիւնն է. զի փոփոխական է. երբեմն ի բարին. եւ երբեմն ի չարն փոխի. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայոյ: Չայցանէ ասէ իմաստունն եթէ՝ (չար մեծութիւն եւ չար աղքատութիւն մի տար ինձ:) Այս առաջին գլուխն թէ ո՞րպէս բաժանի մեծութիւն եւ աղքատութիւն: *Իսկ երկրորդն որ ասէ. (մեծութիւն եւ աղքատութիւն մի տար ինձ:) Չայս վասն մարմնաւոր մեծութեանն ասէ, եւ վասն մարմնաւոր աղքատութեանն: Չի առաւել մեծութիւնն չար եւ վնասարկար է. որպէս եւ ինքն իմաստունն ի վերայ բերէ զվնասն: (Չի մի մեծացայց եւ ստեցից. եւ ասիցեմ, ո՞վ տեսցէ զիս:) Այսպիսեքն, զի մեծատունն մեծաբան եւ պանծացող լինի. ի խօսսն մեծաբանէ. ի յինչսն պարծենայ. զփառսն սիրէ. հեշտութեամբն յօրանայ. եւ սուտ է ամենայն. որպէս ասէ ժողովօղն. (ունայնութիւն ունայնութեանց. ամենայն ինչ ընդունայն է:) Չի յի՞նչ իրս պարծի, յորժամ մահու եւ ապականութեան է վիճակեալ. եւ նանիր է ամենայն վաստակ նորա. զի յորժամ մեռանի, (յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա) զինչ եւ ունէր. մեծութեան, փառաց, շինելոյ, տնկելոյ, եւ այլն. (զի գանձն՝ եւ ոչ զիտէ ում ժողովէ ասէ մարգարէն. եւ ի միասին ազգամբ եւ անմիտք կորիցեն. եւ թողցեն օտարաց զմեծութիւնս իւրեանց:) Ապա է՞ր վասն օտարաց այդչափ չարչարիս՝ զրկես՝ յափշտակես՝ անիրաւես՝ որք օտարք զմեծութիւնն տանին եւ դու զմեղսն: Եւ ինքն զինչ լինիցի՝ ասէ. (գերեզմանք՝ տունք նոցա եղիցին յաւիտեան.) զի փոխանակ փափուկ անկողնոցն՝ գետինն լինի իշտի նոցա. եւ մեծամեծ ապարանիցն եւ զարդարուն՝ հողն եւ գերեզմանն նեղ. եւ որդունք զազրահոտութիւնք տիրեն նմա. (եւ կարդան զանուանս նոցա ի հողս իւրեանց.) այս անուն մեծատան գերեզմանն այս է. որ ոչ ինչ աւելի ունի քան զաղատին. զնոյն հողն. զնոյն չափն. եւ ոչ ինչ առաւել: Յորժամ ամ այս է վիճակ մեծատան, ապա յի՞նչ իրս պարծիս եւ մեծաբանես: Այլ մեծատունն սիրով ընչիցն արբեալ է. եւ ոչ ածէ զմտաւ զմահն: Եւ այս է պատճառն. զի յիշատակ մահուն հեռու է դժուար. իսկ փարթամութիւնն մերձ է եւ հեշտ. վասն այն մերձաւորովն հանապազ արբեալ է եւ յիմարեալ: Արհամարիէ զաղքատն եւ հեռու պահէ. զի մի համարձակեսցի ի տեսութիւն նորա եւ ի խօսս: Դռնապան կարգէ. զօրք շուրջանակի պարսպին. եւ այսպէս ծանրանայ ի վերայ աղքատին: Չայն ոչ ի միտ ածէ, թէ ի վաղիւն յորժամ մեռանի՝ աղաչէ զաղքատն զի հատցեն զգերեզման նորա. եւ աղաչէ զի տեսցեն զնա եւ կոխեսցեն զգերեզման նորա. եւ ոչ տեսանին այսոքիկ որք ի մարմինն գործին. զոր աչօք տեսանեմք: Իսկ հոգին զի՞նչ լինիցի. այն է՝ զոր յայտնէ աւետարանն. (մեռաւ մեծատունն՝ եւ ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանս Եր.) փոխանակ հեշտ կենացն՝ տանջանք եւ չարչարանք. եւ փոխանակ լուսոյն՝ մութն եւ խաւար. լալ աչաց եւ կրճտել ատամանց. փոխանակ անուշ ըմպելոյն՝ պապակումն ծարաւոյն. եւ այլն նմանապէս: Այդ՝ այս է վախճան մեծատանն. վասն այն ասէ (մեծութիւն մի տար ինձ զի

մի ստեցից. եւ աղքատութիւն մի տար ինձ:) Նմանապէս եւ ակամայ աղքատութիւն վնասակար է մարդոյն. ի մարմնաւորս ամենայն իրաց կարօտ է ի պակաս. որպէս ասացաք երկաթի լուծ է ի վերայ նորա: Այլեւ ի հոգեւորն: Նախզի՛ վշտանայ ի միտն հանապազ վասն պիտոյիցն եւ կարօութեանցն: Երկրորդ՝ զի դժգոհի եւ դառնանայ ի սիրտն եւ ի լեզուն: Երրորդ՝ զի զմիմեանս ատեն աղքատք. զի աղքատք չեն բարեկամք միմեանց ասէ: Չորրորդ՝ զի անասնեղէն միտս ստանայ ի գբադիլն աղքատութեամբ. ոչ ժամու եւ ոչ աղօթից պարապի: Զինգերորդ՝ զի վասն կարեացն ագահէ եւ գրկէ եւ գողանայ. եւ երդնու եւ վնասէ զհոգին. որպէսս գէեզի որ փութացաւ զհետ Նէմանայ վասն արծաթոյն եւ զգեստուցն. եւ բերեալ պահեաց եւ ոչ ասաց Եղիսէի: Եւ յորժամ եհարց զնա, երդուաւ եւ բարոտութեան վիճակեցաւ յազգէ յազգ: Այսպէս Անանիա եւ Սափիրա աղքատ մտօք իւրեանց գողացան ի գնոց գեղջ իւրեանց. եւ ի հարցանելն ստեցին. այն էր երդնուլն. եւ պատժեցան յառաքելոյն: Այսպէս բազում որոգայթ լինի ի մեծութենէ եւ յաղքատութենէ. վասն այն աղաչէ զԱստուած: (Մեծութիւն եւ աղքատութիւն մի տար ինձ:) *Այլեւ աստ գիտելի է՝ զի կրկին է մարմնոյ մեծութիւնն: Մինն բարի, եւ միւսն չար: Եւ կրկին է մարմնոյ աղքատութիւն. մինն բարի, եւ միւսն չար: Բարի մեծութիւնն այն է՝ որ ակամայ լինի ի մեծութիւնն. որ թեպէտ դիպի մարդոյն մեծութիւն, եթէ հանդիպելով, եթէ ի հայրենեաց, կամօքն աղքատ լինի եւ յօժարութեամբն. այնպիսին ազատ է մտօք. որպէս բարեպաշտ թագաւորքն Կոստանդիանոս. Թեոդոս. եւ մարգարէն Ղաւիթ. որ ասեր զինքն աղքատ գոլ եւ տնանկ: Է եւ այլ մեծութիւն բարի, յորժամ ի պետս աղքատաց եւ կարօտելոց բաշխեսցէ զինչս. որպէս Աբրահամ աղքատասերն եւ հիւրընկալն Յոբ որ վերակացուն էր որբոց եւ այրեաց: Այսպիսիքս բարի մեծութիւնք են եւ կամաւն Աստուծոյ. զի (իմ է արծաթ եւ ոսկի. եւ ում կամիմ տաց զնա ասէ.) այսպիսիս՝ զայս կեանս եւ զայն ժառանգէ: Այլեւ գոյ բարի աղքատութիւն՝ որ կամաւորն է. որպէս Եղիսէին որ կամաւ աղքատացաւ. եւ զսեփիական լուծս եզանցն կերակուր ետ մշակացն. եւ ընթացաւ զհետ Եղիայի: Եւ որպէս առաքեալքն թողին զամենայն եւ զնացին զհետ Քրիստոսի. եւ որպէս կամաւոր աղքատքն Ալէքսիանոս եւ Ղազարոս ի դուռն մեծատանց անկեալք, եւ այլք: Վասն որոյ ասէ Տէրն. (երանի աղքատաց հոգւով:) Է եւ այլ կամաւոր աղքատ. յորժամ դիպի աղքատութիւն կամ ի ծնողաց, կամ ի զրկանաց եւ յաւազակաց, նա իւր կամաւ համբերէ վասն իւր հոգւոյն. ոչ նեղասրտութիւն. ոչ դժգոհայ. ոչ ցանկայ այլ փարթամութեան: Այնպիսիքն կամաւոր աղքատք կոչին եւ բարի են: Այսպիսի մեծութիւնս եւ աղքատութիւնս՝ բարի է. վասն սոցա ոչ ասէ (մեծութիւն եւ աղքատութիւն մի տար ինձ:) Այլ գոյ մեծութիւն որ չար է, յորժամ կամաւ եւ յօժարութեամբ լինի. որ յափշտակէ՝ զրկէ՝ ագահի ժողովէ՝ կուտէ եւ ամբարէ. այնպիսին թեպէտ փարթամ է ընչիւք, այլ աղքատ է մտօք եւ ծակ եւ նեղ սրտիւ. եւ ագահ է բարքն եւ ռիշտ. այս չար է: Այլեւ գոյ չար մեծութիւն՝ որ բազում չարեաց պատճառ լինի. ուտէ եւ ըմպէ եւ հեշտանայ. ծուլանայ պոռնկի. եւ այլն: Վասն սոցա մարգարէն Ղաւիթ. (ահա մեղաւորք են յաջողեալ է նոցա:) Այս մեծութիւնս չէ ցանկալի. ըստ այնմ. (մեծութիւն թէ առիւ գայցէ, մի յօժարեսցին սիրտք ձեր:) Եւ առաքեալն ասէ. (մի ցանկար մեծութեան. զի մի անկցիս ի փորձութիւն:) Այսպիսի մեծատունս՝ ի ժողովելն աշխատի. ի պահելն ցաւի. եւ ի պակասիլն տրտմի

Եւ վշտանայ: Այսպիսի մեծատունն՝ գոյսն ի մեծութիւնն դնէ, եւ ոչ յԱստուծոյ. վասն որոյ գրէր առաքեալն աշակերտին. (պատուեր տուր մեծատանց աշխարհի. զի մի յուսացին ի սնտոյ մեծութիւնս. այլ յԱստուած:) Այսպիսի մեծատանցս վայ ասէ Տէրն: (Վայ ձեզ մեծատանց. զի ընկալայք զմիտարութիւն ձեր ի կեանս յայս:) Եւ դարձեալ ասէ. (դժուարաւ մտցէ մեծատուն յարքայութիւնն երկնից:) Այսպիսի մեծութիւնս որ չար է՝ ասէ. (մեծութիւն մի տար ինձ:) Այլեւ գոյ աղքատութիւն որ չար է. որ ակամայ լինի. որ յօժարի մտօքն եւ ցանկայ փարթամանալ. ուտել ըմպել եւ այլն: Այսպիսիս թեպէս մարմնով աղքատ է, հոգւով չէ աղքատ. սա չէ երանելի. սա ի կրկին կենաց է զրկեալ. մարմնով աստի. եւ հոգւով անտի որպէս ցուցաւ յառաջն: Այսպիսի աղքատութեանս ասէ. (մի տար ինձ մեծութիւն եւ աղքատութիւն.) զի երկուքն չարաչար վնասիչ են հոգւոյ: Այս երկրորդ գլուխն: *Իսկ երրորդն որ ասէ. (կշռեա ինձ զբաւականն եւ զարժանն:) Ո՞րն է այն՝ որ բարի է. յոր հանգչի միտք մեր անխռով խաղաղութեամբ: Այն է մեր բաւականն եւ արժանն. զոր առաքեալն չափ եւ սահման դնէ մեզ առքեալն չափ եւ սահման դնէ մեզ. (ունիմք կերակուր եւ հանդերձ. եւ այնու շատասցուք:) Եւ Տէր մեր ուսոյց ինդրել զհացն օրըստօրէ: Արդ՝ այսու բաւականանայ բնութիւնս. զի կերակրով զքաղցն լնումք՝ որք ոչ մեռանիմք ի սովոյ. եւ զայն ոչ աւելի պատրաստել եւ հոգալ զօրըստօրէն. եւ հանդերձի ծածկել զմերկութիւն մեր. որ պահէ յամօթոյ եւ ի ցրտոյ եւ ի տօթոյ. եւ զայն ոչ աւելի ունիլ երկու մարդոյ զգեստ. կամ ապրշում եւ ոսկեգործ. զի այնոքիկ աւելորդ եւ վայելչականք են. եւ աւելին չար է եւ մեղք: Նոյնպէս կերակուրն հաց լինի միայն եւ ջուր եւ հասարակաց կերակուր. որ առ ձեռն հանդիպի. եւ ոչ աւելի է զանազան խորտիկ. եւ զանազան եւ անուշահամ ըմպելի. զի նորա ամենեքեան չար են: Եւ այս է կշիռն եւ հաւասարն. եւ արտաքոյ սոցա յայսկոյս եւ յայնկոյս հակել՝ ի հակառակն բերի. որքան զայս առաւել լինի է՝ փարթամութիւն. եւ պակաս՝ աղքատութիւն: Ապա ուրեմն յորժամ այս է բարի կշիռ՝ տես զԱստուծոյ ինաման ի վերայ ազգիս մերոյ. որ ի հաւասար կշիռն պահէ. եւ ոչ թողու առաւել հարստանալ. եւ ոչ կարի աղքատանալ: Դեռեւ յամենայն ուրեք գտանեն զկերակորն եւ զզգեստն. եւ զոր յայս մարմնաւորես պակաս է, հատուցանէ ի հոգեւոր կեանսն զմեծութիւնն անանցանելի: Որեւ զմեզ զամենեսեան առհասարակ՝ արժանի արացէ հոգեւոր մեծութեան եւ կենացն յաւիտենից Տէրն մեր Յիսուս Քրիստոս. որ կամաւոր (աղքատացաւ վասն մեր նա որ մեծատունն էր. զի մեք նորա մեծութեամբն ճոխասցուք:)

Մասնաւորեցէ այժմ եւ ի հանդերձեալ կեանսն. այժմ յուսով եւ ինդութեամբ. եւ անդ մասին ժառանգութեան ընդ Սրբոց աղքատացն արժանաւորեցէ Աստուած մեր. որում փառք եւ գոհութիւն յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն հայրապետաց եւ առաջնորդաց. ի Բանն տերունական: (Ո՞վ իցէ հաւատարիմ եւ իմաստուն տնտես՝ զոր կացոյց Տէր ի վերայ ծառայից տալ նոցա կերակուր:) Դուկ. 12. 42: (Գլուխ. ԾԺԶ)

Բարի է Աստուած եւ աղբիւր բարութեան. յորմէ ի բարերար կամաց յառաջ շարդեալ, գոյացոյց զերկիր, եւ զամենայն որ ի նոսա: Այս իսկ գոլով

պատճառ արար չութեան էից. զի ի բարոյն Աստուծոյ էացեալք, ի բարիութիւն նորին վայելեացեն յաշխարհի. ըստ իւրաքանչիւր յիւրում կարգի եւ անկորութեան՝ առաւել եւ նուազ հաղորդիլ բարոյն: Որպէս իմանալեացն դասք առաւել. եւ բանականքն ընդ նոսա: Յետ նոցա զգայական տեսակք. եւ ապա բուսոց եւ տնկոց աճումն: եւ վերջին անշունչ տարերք՝ ունելով միայն զգոլն ըստ ինքեան: Իսկ բուսոց եւ տնկոց՝ ունելով զգոյացութիւն տարերաց. եւ յաւելեալ ի վերայ զկերակրականն. զաճողականն. եւ զձննդականն: Կերակրիլն է ի պահպանութիւն անհատին. եւ ծնանիլն ի բազմութիւն տեսակին. եւ աճիլն ի սնունդ ենթակայ մարմնոյն: Եւ զգայականն առաւելու ի վերայ սոցա զհինգ զգայութիւն ներքին եւ արտաքին. եւ զնէր չնչականն գոլ. եւ զտեղեալ շարժումն: Իսկ բանականն մարդ ունելով ի վերայ սոցա անձնիշխան կամս եւ իմացումն. ներտրամադրեալ բան՝ եւ արտաբերեալ խօսս. հոգի բանական գոլով. եւ մարմինն զգայական: Իսկ իմացականք եւ իմանալի բնութիւնք՝ անմահ գոլով էութիւն անձնիշխան կամօք ի պաշտօն եւ ի սեր արարչին կանխեալք. որպէս յայտ է ի սահմանէ նոցին. էութիւն անմարմին՝ անմահ՝ Աստուծոյ սպասաւոր: *Արդ՝ արարիչն Աստուած տուն եւ տեղի բնակութեան նոցա պատրաստեաց զլուսեղէն երկինս վերին. եւ եղ զնոսա տնտես ի նմա եւ կարգաւորող միմեանց: Եւ զանազանեաց զնոսա ինն դասիւք յերիս երրակս կարգապետութեամբ: Առաջին. Միջին. եւ վերջին: Որոց առաջինն է. Աթոռք. Զերովբէք. եւ Սերովբէք. եւ առաջին քահանայապետութիւնք նոցա: Եւ միջին՝ Տերութիւնք. Զօրութիւնք. եւ Իշխանութիւնք. եւ երկրորդ քահանայապետութիւնք նոցա: Եւ վերջին՝ Պետութիւնք. Զրեշտակապետք. եւ Զրեշտակք. եւ երրորդ քահանայապետութիւնք նոցա: Եւ այսպէս տնտեսեն եւ առաջնորդեն միմեանց: Չի առաջին քահանայապետութիւնքն՝ որք են աթոռք քերովբէք եւ սերովբէք՝ համապատիւք են կարգաւ եւ գիտութեամբ եւ իշխանութեամբ. զի անընդմիջաբար առնուն յաստուածային լուսափայլութեանցն. եւ անցուցանեն ի միջին դասս յերկրորդ քահանայապետութիւնսն: Եւ նոքա առեալ յառաջնոցն զգիտութիւն, տան ի վերջին դասս քահանայապետութեանցն: Եւ այսպէս ըստ երից եզանակաց իմանի տնտեսութիւն նոցա: Նախ՝ առաջին տնտեսք են ամենայն երկնայնոցն դասուց առաջին քահանայապետութիւնք. աթոռոց՝ սերովբէից՝ եւ քերովբէից որպէս ցուցաւ: Երկրորդ տնտեսք են երից դասուցն մին քահանայապետութիւնք. որպէս տերութիւնքն՝ զօրութեանց եւ իշխանութեանց. եւ պետութիւնքն՝ հրեշտակապետաց եւ հրեշտակաց: Երրորդ՝ տնտեսք են եւ առաջնորդք. որպէս Միքայել՝ հրեշտակապետացն. եւ Գաբրիել՝ հրեշտակացն. այսպէս եւ այլոցն ամենայն. ըստ այսմ երից եղանակաց իմանի տնտեսութիւն երկնայնոց նահապետութեանց ի դասս իւրեանց: Է եւ չորրորդ եղանակ տնտեսութիւն եւ ինսամարկութիւն այլոց արարածոց. երկնի եւ երկրի եւ մարդկան ազգի. բազմօրինակ եւ զանազան պահպանութեամբ եւ առողջնորդութեամբ ազգի եւ ցեղի. թագաւորաց եւ ժողովրդոց, եւ իւրաքանչիւր մարդկան. ըստ այսմ, (կարգեաց սահմանս հեթանոսաց ըստ իւրաքանչիւր հրեշտակաց Աստուծոյ:) Այս է վերին եւ իմանալի աշխարհին անտեսք կարգեալք ի մէջ նիքեանց եւ այլոց որպէս ցուցաւ: *Դարձեալ՝ ի չորից տարերաց կազմեաց Աստուած երկրորդ աշխարհ եւ տուն զգալի. զերկինս որպէս ձեղուն. զերկիր յատակ:

Չլուսաւորսն վառեաց ճրագ. եւ զայլ բարութիւնս մամնական ի վայելս պիտոյից: Եւ արար զմարդն ի հողոյ ի պատկեր իւր. եւ եդ զնա ի բարձր պատուական եւ անմահ տեղոջ դրախտին: Տէր եւ իշխարն կացուցեալ ամենայն զգալեաց. որպէս ասէ գիրն. (զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա զխաշն եւ զարջառն՝ եւ զձուկս եւ զթռչունս:) Եւ կարգեաց զնա տնտես ի մէջ դրախտին (գործել զնա եւ պահել:) Դարձեալ յորժամ մարդն Ադամ գտնտեսութիւն դրախտին ոչ պահեաց, անկաւ ի փառաց եւ դատապարտեցաւ. կամեցաւ նորա տուն շինել զեկեղեցի. եւ ի սմա կարգել անտես եւ առաջնորդ, հովիւ եւ խնամածու մանկաց եկեղեցւոյ: Եւ այսմ կարգաւորութեան՝ նախ տնտես եւ առաջնորդ եդ զմարգարէսն հինն Իսրայել. որպէս Չմովսէս եւ զայլսն: Եհան զժողովուրդն յԵգիպտոսէ՝ եւ առաջնորդեաց յանապատին. եւ զայլն ըստ կարգի: Կացոյց դատաւորս. թագաւորս. քահանայս. եւ կարգաւորեաց զնոսա ըստ հին օրինացն ստուերին եւ օրինակին: Մինչ միածին որդին Աստուծոյ Տէր մեր Յիսուս Զրիստոս երեւեցաւ մարմնով. եւ շինեաց նոր եկեղեցի ի վերայ վիմի հաւատոյ անշարժ կառուցմամբ. զորմէ ասաց առ Պետրոս. (դու ես վեմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. եւ դրունք դոխոց զնա մի յաղթահարեսցես:) Եւ այսմ տան եկեղեցւոյ՝ տնտես կարգեաց նախ զգունդ առաքելոցն սրբոց. եւ հետեւողաց նոցին աշակերտաց. զի նոքա կարգաւորեցին զեկեղեցիս որ ընդ ոլորտս տիեզերաց, հաստատելով ի հաւատս ճշմարիտս սրբոյ երրորդութեանն ի հայր եւ յորդի եւ ի սուրբ հոգին: Եւ յետ նոցա հայրապետք եւ վրադապետք կացուցան տնտեսք եւ առաջնոցոք տանս սրբոյ եկեղեցւոյ. որպէս ասէ առաքեալն. (զոր եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս. երկրորդ զմարգարէս. երրորդ զվարդապետս:) Չի նախ էին առաքեալքն ինքնալուրք եւ անկանատեսք մարդացեալ բանին: Եւ երկրորդ էին մարգարէքն վասն ստուերին եւ հեռագոյն պատմութեանց: Եւ երրորդ վարդապետք վասն նոցին բանիցն մեկնութեան եւ թարգմանութեան: Արդ՝ սոքա են այժմ տնտեսք կարգեալք ի մէջ եկեղեցւոյ. հայրապետք. վարդապետք. քահանայք. եւ այլք: Չորոք ասէ Տէրն: (Ո՞վ իցէ հաւատարիմ եւ իմաստուն տնտես. զոր կացոյց Տէր ի վերայ ծառայից իւրոյ տալ ի ժամու զկերակուրն:) Հաւատարիմ բառն՝ ըստ չորս եղանակաց իմասցի: Նախ հաւանականն՝ ըստ կերպի դաւանութեան հաւատոյ. ըստ այնմ, (հաւատալ պարտ է թէ Աստուած:) Երրորդ՝ ի տեղի ճշմարտութեան. ըստ այնմ, (հաւատարիմ է Տէր յԱստուած ի բանս իւր:) Երրորդ՝ ի տեղի հնազանդութեան. ըստ այնմ, (Յիսուս հաւատարիմ է արարչին իւրոյ:) Չորրորդ՝ ի տեղի միամտութեան. որպէս Մովսէս հաւատարիմ էր Աստուծոյ: Որեւ աստ հաւատարիմ եւ իմաստուն տնտես կոչէ վասն միամիտ եւ հնազանդապետ սպասաւորութեան: Եւ երկու իրօք երեւի տնտեսին միամտութիւն: Նախ՝ զինչսն Տեառն իւրոյ ոչ ընդ վայր մսխել. կամ գողանալ եւ կորուսանել: Երկրորդ՝ ըստ կամաց տանուտէրն գործել եւ բաշխել անխնայ: Նոյնպէս եւ առաջնորդք տնտես են կարգեալ բանին Աստուծոյ եւ իշխանութեանց: Նախ պարտ է ոչ ընդ վայր կորուսանել եւ գողանալ ծուլութեամբ. որպէս ծառայն չար եւ վատ՝ (որ էառ զմին քանքարն եւ թաքոյց ի վարչամակի ծուլութեան.) վասն այն պատիժս ընկալաւ: Երկրորդ՝ պարտ է ըստ կամաց նմին առ հասարակ զամենայնսն կերակրել ի ժամու աննախանձաբար. եւ բաշխել

զշնորհս ըստ իւրաքանչիւր կարգի առանց ակնառութեան: (Յայնժամ երանի է ծառային այնմիկ՝ որ առնէ այնպէս. զի յարքայութեան երկնից ի վերայ ամենայն ընչից կացուցանէ զնա:) Ապա թէ խորհի չար ի սրտի իւրում եւ ասէ. (Տէր իմ յամէ զգալն. եւ սկսանի հարկանել զծառայսն. ուտիցէ եւ ըմպիցէ, գայ Տէր ծառային եւ պատժէ զնա:) Իսկ թէ ո՞րպէս եւ կամ վասն Է՞ր պատշէ. գրէ ըստ կարգի առակախօսն իմաստուն: (Չերծ գհանդերձ Նորա. զի երաշխաւոր եղեւ օտարի:) Երաշխաւոր լինիլն՝ տէր կենալն է. որպէս որք ի պատիւ իշխանութեան ելցեն. եթէ հոգեւոր, եւ թէ մարմնաւոր: Այս է՝ քահանայութեան. վարդապետութեան. եպիսկոպոսութեան. եւ այլն. սոքա այլոց փրկութեան Տէր նստին. եթէ կամօք եւ թէ հարկիլ՝ յաստիճան հրաւիրին. վասն այն կոչեմք Տէր. այսինքն, դէտ եւ երաշխաւոր այլոց. ըստ այնմ, (դէտ կացուցի զքեզ. եւ զարիւն Նորա ի ձեռաց քոց խնդրեցիցի:) Արդ Տէր են. եթէ թագաւոր աշխարհի. եթէ իշխան գաւառի. եթէ առաջնորդ գիւղի: Նոյնպէս Տէր է քահանայ ժողովրդեանն. վարդապետք աշակերտաց. կաթուղիկոս ընդհանուր ազգին. եթէ ըստ կամաց Տեառն զհօտն իւրեանց յանձնեալն՝ ընծայեն Աստուծոյ: Ի դալար վայրի կերակրելով զնոսա. այսինքն, ի սրբութեան կերակուր հոգեւոր: Եւ ի ջուր հանգստեան սնուցանել. այս է՝ աստուածային իմաստութեան ջրովն արբուցանել զնոսա: Չմեղօք հիւանդսն բժշկել: Որ կաղ եւ ծոյլ է յընթացս առաքիկութեան, կաղան դնել: Որ կոյր է մտօք՝ լուսաւորել: Որ անլուր է՝ յունկն քարոզել: Որ մուրճ է՝ յաղօթսն Աստուծոյ ուսուցանել: որ կարկամեալ է ձեռօք ի տուրս աղքատաց եւ ի խնդիրս՝ առ Աստուած շարժել: Որ բոր ունի՝ զմարմնական մեղս սրբել: Որ ի խորհուրդն է տկարացեալ՝ առողջացուցանել. եւ զայլսն նմանապէս: (Տղայոցն կաթն ջամբել. եւ կատարելոցն հաստատուն կերակուր:) Չմոլորեալսն դարձուցաւ. եւ առաջի ընթանալ ի բարիս. ընդ թշնամւոյն սատանայի կռուիլ: Չմեղսն որ գողութեամբ մտանէ՝ ըմբռնել եւ կորուսանել: Չգացան հերձուածողաց գասս՝ ի հօտէն Քրիստոսի հալածել: զորմէ հրամայ է Տէրն եթէ՝ (հանդերձիւք ոչխարաց գայլք են յափշտակօղք:) Այս է՝ զի հերձուածողն զնոյն ունի կերպարան եւ զձեւ քահանայից՝ եւ ի սուրբ գրոց խօսի. այլ նենգաւոր է շրթամբ. (զի օրհնութեամբ եւ քաղցրաբանութեամբ պատրեն զմարդիկ:) Եւ որպէս սատանայ ի հրեշտակ լուսոյ կերպարանի. եւ ի խաւար դժոխոցն տանի. նոյնպէս եւ նոքա զկերպարան բարեպաշտի ունին. եւ զանպարշտութիւն ուսուցանեն: Եւ անպարիշտ կոչի անհաւատն եւ անաստուածն. որպէս կռապաշտն. նոյնպէս եւ հերձուածողն անպարիշտ եւ անհաւատ կոչի եւ անաստուած: Եւ որպէս մեղք կռապաշտութեան ծանր է քան զամենայն մեղս. ուստի յայտ է՝ զի զամենայն մեղս զինչ եւ գործէին մարդիկ՝ ի ձեռն զանազան պատարագաց քաւէին. որպէս յայտ է ի գիրս Մովսէսի: Իսկ կռապաշտութեան մեղքն՝ ոչ քաւեցաւ նոքօք, մինչեւ միածին բանն Աստուծոյ մարդ եղեւ. եւ մարմնովն պատարագեցաւ ի սեղան խաչին. եւ ապա քաւեաց զմեղս կռապաշտութեան: Այսպէս եւ զմեղս հերձուածողացն անթողլի քարոզեաց Տէրն մեր ասելով. (որ ոք ասիցէ բան զորդուց մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զհոգին սուրբ հայհոյեցէ՝ մի թողցի նմա. մի աստ. եւ մի ի հանդերձեալն:) Եւ այս վասն Է՞ր եւ կամ ա՞րդ. այս է՝ զի ամենայն մեղք որ զղջումն ունի՝ թողութիւն ունի. այլ հերձուածողն ոչ ունի զղջումն. եւ այս պատճառն. զի ամենայն մեղաւոր զինքն յանցաւոր գիտէ. վասն այն զղջանայ: Իսկ

հերետիկոսն՝ վասն հպարտութեան իւրոյ զինքն ճշմարիտ եւ ուղիղ կարծէ. վասն որոյ ոչ զղջանայ. եւ զի ոչ ունի զղջումն, ոչ ունի թողութիւն: Այլ որպէս կռապաշտիցն մեղք ընդդէմ եութեան եւ փառացն Աստուծոյ Է. զի զրկեն յԱստուծոյ զանուն եւ զփառս. եւ մատուցանեն կռոց: Նոյնպէս եւ մեղք հերձուածողին՝ ընդդէմ եութեան եւ փառացն Աստուծոյ Է. որպէս Արիոսին. Մակեդոնին եւ Նեստորին: Չի ոմն արարած ասէ զորդին. եւ ոմն պաշտօնեայ զհոգին: Նեստոր եւ Քաղկեդոնիքն՝ բաժանեն զբանն ի մարմնոյն. եւ սոսկ մարդ ասեն զՔրիստոս. եւ բաժանեն զբնութիւնս եւ զփառս եւ զկամս. զի մի իցէ ըստ նոցա ասից Քրիստոսի ճշմարիտ Աստուած. այլ սուտ եւ կոչմամբ միայն: Արդ՝ այսպէս չար վնաս է մեղք հերձուածողին. զի ամենայն մարդ զինչ եւ գործէ՝ գողն, շունն, մարդասպանն եւ այլն, առ ինքն մեղանչէ. որպէս ասէ մարգարէն. (եղին յերկիս զբերանս իւրենց. եւ զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ.) այսինքն, զտնօրէնութեամբն Քրիստոսի: Եւ որպէս այնոքիկ որք մահու դեղ նիւթեանն՝ ի շարպաթ խառնեն եւ զշրթունս ամենայն մեղու օժանեն. զի քաղցր լինի յմպելն. եւ մահ գործէ յորովայնն: Նոյնպէս եւ բանք նոցա՝ քաղցրապատիր են. եւ խաբէլով զհոգիս մարդկան կորուսանեն: Չորոց ասէ առակն. (մեղր կաթ է շրթանց կնոջ պոռնկի. եւ կատարածն դառն է քան լեղի. եւ յատակս դժոխոց հայի:) Կին պոռնիկ՝ իմանին հերձուածողք. զի որպէս մարմնոյ պոռնկութիւն թողուլ զհալալ անկողինս. եւ զհետ օտարաց ընթանալ: Նոյնպէս եւ Է հոգւոյ պոռնկութիւն, թողուլ զճշմարիտ գիտութիւն. եւ զհաւատ ուղղութեան. եւ զհետ օտարաց ընթանալ: Այսպիսին շնացաւ հաւատով եւ մտօք. որպէս ասէ գիրն. (Չնայր Երուսաղէմ, եւ պոռնկէր Սամարի ա ընդ փայտի եւ ընդ քարի:) Այն է՝ որք թողին զճշմարիտ Աստուածն. եւ քարի եւ փայտի երկրպագին: Նոյնպէս եւ բանք նոցա՝ քաղցրապատիր են. եւ հաւանին անփորձք եւ տխմարք. որպէս երիտասարդք պատին ի պաճուճեալ դէմս պառնկաց. այլ կատարածն Է դառնագոյն քան զլեղի. եւ հայեցուցանէ յատակս դժոխոց զմբռնեալսն: Այսպէս թէ որք բարի հովուութեամբ զժողովուրդն ինամէ, եւ ի չար գազանաց պահէ, եւ կերակրէ զնոսա որպէս ցուցաւ, (յայժամ երանելի են ծառայքն այնոքիկ:) Չի քահանայք կրկին պատուոյ արժանասցին. մին վասն իւրեանց գործոցն. եւ միւս վասն ժողովրդեանն որոց առաջնորդեցին. այն է՝ որ (բազմեցուցէ յարքայութեանն, եւ անցեալ պաշտեսցէ զնոսա: Ապա թէ ասիցէ ծառայն չար ի մտի, Տէր իմ յամէ զգալ:) Գալուստ Տեառն կրկին Է իմանալ: Առաջին գալուստն մահուան: Երկրորդն յարութեամբն: Մահնհանէ ի կենաց մարմնոյ. եւ յարութիւնն հանէ ի մահու մարմնոյ. մահն ի դրունս դատաստանի տանի. եւ յարութիւնն ի վճիռ հատուցման: Եւ այս երկու գալուստս՝ չարացն եւ մեղաւորացն յամր եւ հեռու թւի. եւ յիշելն՝ դժուարին յանցաւորք. զի ի դատաստան եւ ի պատիժ ընթանան: Իսկ սրբոցն եւ արդարոցն՝ մերձաւոր եւ առ դուրս թուի. եւ յօժարին՝ ի մահն իբր առաջի Քրիստոսի եւ ի հանգիստ ընթանան. եւ զերծանիլ ի չարչարանաց մարմնոյ: Իսկ հեշտասիրացն յամր թուի. (եւ սկսանի հարկանել զծառայս եւ զաղաշնեայս. ուտէ եւ ըմպէ ընդ արբեցողս:) Եւ այս Է հարկանել զծառայս. որ զրրկէ, յափշտակէ, տուգանէ, ծեծէ, անիծէ. ոչ վասն օրինացն Աստուծոյ, այլ վասն ազահութեան ընչից եւ պատուոյ եւ փառաց: Եւ զինչսն զոր ժողովէ՝ ոչ ի պետս աղքատաց եւ կարօտելոց, կամ եկեղեցւոյ եւ միաբանից հասակաց, այլ միայն ի պետս իւր. եւ այնու ուտէ եւ ըմպէ. եւ նիւթ չարաց

առնէ: Չի նոյն ինքն արծաթ եւ ոսկի՝ թեպէտ եւ իրաւամբ ժողովէ, սնտոյ է եւ ունայն. զի չէ մնացական՝ այլ անցաւոր: Իսկ յորժամ ստութեամբ եւ անիրաւութեամբ ժողովէ եւ ի գործ մեղաց մսխէ, լինի կրկին եւ երեք կին չար: Նախզի՝ նիւթն սնտոյ է: Երկրորդ՝ զի ստութեամբ ժողովէ: Երրորդ՝ զի ի սուտն գործ ածէ: Դոքա ամենեքեան սուտը՝ ի հօրէն սատանայէ լինի. եւ գործակից է հայրն ստութեան: Վասն այն ընդ նմա ի տանջանսն մտանէ յաւիտենից, (որ սատանայի է պատրաստեալ եւ հրեշտակաց նորա:) Որպէս ասէ Սողոմօն. (որ ստութեամբ ժողովէ զգանձս՝ յորոգայթ մահու անկանի:) Չայս հրամայէ Տէրն. (հարկանէ զծառայս՝ ուտէ եւ ըմպէ ընդ արբեցօղս. գայ Տէրն յանկարծ ժամու.) զի գալ մահուն եւ օր դատաստանին՝ անգիտելի է. եւ յանկարծ հանդիպի: Չոր յայլուր գողոյ նմանեցուցանէ. (թէ ոչ գիտէք յորում ժամու գող գայ.) որ է մահն. զի գողն յանկարծ մտանէ ի տունն եւ գողանայ զինչսն: Նոյնպէս եւ մահն յանկարծակի գայ. որ եւ հանէ զհոգին որ պատուական է՝ քան զամենայն ինչս: (Չի իբրեւ զորոգայթ հասանի ի վերայ մարդոյ ասէ:) Չի յանկարծ պատահի որոգայթն մարդոյ. նոյնպէս եւ մահն եւ գալուստն Քրիստոսի ի դատաստանն: (Եւ որպէս յաւուրսն Նոյի՝ ուտէին եւ ըմպէին. մինչեւ եկն ջրհեղեղն եւ կորոյս զամենեսեան. նոյնպէս եւ գալուստն որդւոյ մարդոյ լինի յանկարծակի) եւ կորուսանէ զամենայն անարժանս: Վասն այն ասէ (յանկարծակի գայ Տէր ծառային՝ եւ կտարէ զնա ընդ մէջ:) Վայ եւ եղուկ հազար բերանով մտաց իմոց իմոց եւ լսելեաց. (կտրէ ասէ ընդ մէջ. եւ զմասն նորա ընդ անհաւատս դիցէ:) Ո՞րէ կտրել ընդ մէջ: Երեք կերպիւ է: Նախ այն է՝ (որ բանն Աստուծոյ՝ հատու է քան զամենայն սուր երկսայրի. եւ հատանէ եւ սպանանէ զհոգի եւ զմարմին. զոսկերս եւ զօղս. եւ զուղեղս ըստ առաքելոյն:) Որպէս նա ծեծելով եւ անիծելով յափշտակեաց զինչս այլոց. նոյնպէս եւ նա հատանի եւ անիծանի ի բանէն Աստուծոյ: Եւ բաժին նորա ընդ կեղծաւորս դիւ: Նոքա են կեղծաւորք՝ որք ունին զծէ եւ զիշխանութիւն քահանայութեան. եւ ոչ ունին զգործն սրբութեան: Երկրորդ՝ այն է ընդ մէջ կտրելն՝ որ զամենայն շնորհս բաժանէ ի նմանէ. զգիտութիւն, զքահանայութիւն, զվարդապետութիւն, զհաւատ, զկրօնս, զբարի գործս, զպատիւս, զփառս, եւ զայլն ամենայն որոշէ ի նմանէ. եւ զնա մտնէ ի տանջանսն յաւիտենից. որպէս այն որ ասէ. (առէք ի դմանէ զքանքարն. եւ զծառայդ անպիտան՝ հանէք ի խաւարն արտաքին:) Երրորդ՝ այն է կտրելն ընդ մէջ. այսինքն, յաջակողմեան դասուցն. ի սրբոցն ընտրելոց եւ ի հրեշտակացն Աստուծոյ. եւ յայն ժողովրդենէն զոր զրկեաց: Եւ յարքայութենէն բաժանէ եւ ի դասս ձախակողմեան ընդ զրկողոցն եւ չարացն սատանայի ի հուրն մատնէ: Որպէս այն որ ոչ ունէր հանդերձ հարսանեաց՝ ասէ. (կապեցէք զդորա զծէնս եւ զոտս. եւ հանէք ի խաւարն արտաքին:) Այս է ասելն իմաստնոյն: (Չերծ զհանդերձ նորա. զի երաշխաւոր եղեւ օտարաց:) Եւ թող թէ, երաշխաւոր եղեւ. վասն է՞ր զհանդերձս շնորհաց նորա կողոպտեն ի նմանէ: Ի վերայ բերէ զպատճառն եթէ՝ (ի հիւրութեան գրաւեաց զնոսա:) Եւ յայտ է՝ զի վասն մարմնաւոր երաշխաւորի չէ բանս. զի կարգաւոր է որ երաշխաւորն է. որ Տէր է կացեալ մարդոյ. գրաւ առնու ի նմանէ՝ զի հաւատարիմ մնացէ: Այլ ի մեզ քահանայս ակնարկէ. զի մեք հիւր եւ պանտուխտ եւ օտար ենք եկեալ ի կենցաղս յայս. եւ աստ գրաւեմք զժողովուրդն զորս յերաշխի առաք: Եւ ո՞րն է գրաւելն. այսինքն, զի ժողովեմք ի նոցանէ արծաթ եւ ոսկի. թէ այս իրաւունք են մեզ. եւ փառք եւ

պատիւ ի նոցանէ. եւ իշխանութիւն ի վերայ նոցա: Այս է՝ որք առնումք զգրան, եւ զնոսա անտես առնեմք. որպէս յայլ ուր ասէ մարգարէին: (Եթէ հովիւք ժողովրդեանն իմոյ՝ զկաթն ուտեն. զասրն զգենուն. եւ բեկման նոցա փոյթ ոչ առնեն.) որպէս ցուցաւ յառաջագոյն: Նոյնպէս եւ Դաւիթ ասէ. (որք ուտեն զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի: եւ առ Աստուած ոչ կարդացին:.) Նա վասն այսորիկ առաջի ատենին Քրիստոսի մերկանան զպատիւն եւ զգրան. եւ զհամարն պահանջէ արդար դատաւորն: Եւ յորժամ ոչ են հատուցեալ աստ մարմնով եւ աղօթիւք, անդ ի հուրն յաւիտենից տուծէ որ անել բանտ է. եւ անվճար պատուհասն: (Չի քաղցրացաւ նմա հաց ստութեան. եւ բերան նորա լցի կոպճով:.) Հաց ստութեան՝ զրկանօքն եւ անիրաւութեամբ է որպէս ասացաք: Այլեւ հաց սնոտի ուտեն՝ որք զբերանն բացեալ են ի զբաղումն եւ ի հոգս աշխարհի. եւ ի փառս մարմնաւորս որ սնոտի է եւ նանիր. որպէս ասէ ժողովօղն. (ունայնութիւն ունայնութեանց. ամենայն ինչ ընդունայն է:.) Իսկ ի հոգեւոր հացէն որ է գործ առաքինութեան, եւ յմպելոյն որ է իմաստ գիտութեան, սովեալ եւ ծարաւի են մնացեալ. որպէս ասէր մարգարէին: (Տաց ձեզ՝ ոչ սով հացի եւ ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն Աստուծոյ:.) Եւ բերան նորա նախ ասէ լցցի կոպճով:.) այսինքն, ի հոգեւոր եւ ի ճշմարիտ կերակրոյն սովեալ են. եւ կոպճով են լցեալ եւ յագեալ: Չի այս մարմնաւոր եւ երեւելի փառքս եւ մեծութիւնս՝ որպէս կոպտուիք եւ թեփ եւ աւելորդ են հոգեւոր եւ իմանալի փառացն: Այնպիսոյն բազում անգամ տայ եւ ոչ արգիլէ զերեւելի եւ զմարմնաւոր յաջողմունս եւ զմեծութիւնս: Եւ նոքա ուտեն եւ ըմպեն. եւ պարարին փափկութեամբ. եւ հեշտացեալ ի մեղս. անգիտանան հատուցման գործոց: Եւ ոչ իմանան. զի թեպէտ մեք անգիտութեամբ գործեմք զմեղս, պատիժն գիտութեամբ գայ ի վերայ մեր: Եւ թեպէտ այժմ մեք կամաւ մեղանչեմք, ակամայ մատնիւք ի տանջանսն: Որպէս մեծատունն որ ուտեր եւ ըմպեր անհոգացեալ յաշխարհի. եւ ետես զինքն աստեացս՝ (ամբարձ զաչս իւր. եւ ետես զինքն ի պապակումն հրոյն:.) Վասն այն վայ եւեղուկ ասաց մեծատանց՝ որք աս վայ եւ եղուկ ասաց մեծատանց՝ որք այս կենօքս փափկանան. (վայ ձեզ մեծատանց. զի ընկալայք զմխիթարութիւն ձեր. վայ ձեզ որ յագեալդ էք այժմ զի քաղցիցք: Վայ ձեզ որք ծիծաղիքդ. զի լացցէք եւ այլն:.) Եւ թէ մեծատանց ըմչիւքն յագենան. քանի՞ առաւելապէս ապա քահանայից եւ առաջնոցդաց՝ որք այլոց ընչիւք եւ զրկանօք փափկանան եւ արբենան: Չի վասն չորից պատճառաց մեծ է յանցանք քահանայիցն քան ժողովրդեանն: Նախզի՝ ժողովուրդն միայն վասն իւր մեղացն տանջի. իսկ քահանայն վասն իւր վասն շատ եւ թէ սակաւ. (զի որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ըստ Տեառն:.) Երկրորդ՝ պարտ է քահանային զբարին ուսուցանել եւ խարատել հանապազ զժողովուրդն. եւ թէ զայն ոչ առնէ եւ ծուլանալ, եւ զչարն առնէ եւ ուսուցանէ զնոսա եւ զայթակղին, պատճառ նոցա մեղացն լինի. (զի վայ որ զայթակղեցուցանէ զրանն. լաւ էր նմա խեղդիլ ի ծով, քան թէ զայթակղեցուցանել:.) Երրորդ՝ զմուտս ժողովրդենն ուտեն քահանայքն. պարտ է վճարել զայն. որպէս ասէ օրէնքն. (զմեղս ժողովրդեան իմոյ կերիցեն քահանայք. եւ քաւեսցեն վասն նոցա:.) Արդ՝ որր ուրք զմեղսն եւ ոչ քաւէ աղօթիւք եւ սրբութեամբ, պարտական է մեղաց նոցա: Չորրորդ՝ զի քահանայն է զօրէնս. եւ զճանրութիւն մեղացն. եւ զյաւիտենից տանջանսն: Վասն որոյ առաւել տանջի քան զաշխարհականն՝ ո ի նմանէ ուսանի զօրէնս

եւ զկամս Աստուծոյ: Վասն որոյ ասէ Տէրն. (որ գիտէ եւ գործէ արժանի գանի, արբցէ քան բազում) քան որ ոչ գիտէ եւ գործէ: Այլ չորեք պատիկ յանցանօք առաւել է տանջանք առաջնորդաց քան զժողովրդեանն: Եւ այսպէս դնի մեղք ի վերայ մեղաց. այսինքն, մեղք ժողովրդեանն ի վերայ քահանայից. (զի մի մտցեն յարքայութիւնն Աստուծոյ ասէ մարգարէն:) Եւ արդ՝ զի՞նչ արասցուք առաջնորդքս. զի պատիժն այսպիսի ահագին եւ մեծ է. եւ մեք ոչ կարեմք թողուլ զգործն, զի՞նչ լինիմք: Ասեմք առ այս, եթէ հաս եւ իրաւունք հահանայիցն ոչ են մեղք. այլ սրբութիւն, յորժամ զգործ քահանայի ունիցին: Նախզի՛ հրամանաւն Աստուծոյ է եղեալ. որպէս ասաց Մովսիսի յօրէսս. (տալ զհաս եւ զիրաւունս քահանայիցն Ահարօնի եւ որդւոց նորա:) Երկրորդ՝ զի ի նուիրացն Աստուծոյ առնուն զբաժին քահանայքն եւ ոչ ի մարդոյ. եւ ամենայն ոք Աստուծոյ տայ եւ ոչ մարդոյ: Երրորդ պատճառ՝ զի երկրորդ սեղան է սիրտ քահանային. եւ որպէս սեղան ողջակիզացն զպատարագն մաքրէ զնուերս պատարագացն: Չորրորդ յայտ է՝ զինւերն Աստուծոյ սրբութիւն է. եւ որ ոք մերձեւայ ի նա սրբի: Հինգերորդ՝ զի ասէ. (զմեղս ժողովրդեան իմոյ կերիցեն քահանայք. եւ քաւեսցեն վասն նոցա.) զի որպէս ստամոքս զկերակուրն հալէ. նոյնպէս եւ քահանայն զմեղսն: Վեցերորդ՝ թիթեղն ցուցանէր ի ճակատ քահանայապետին գրեալ՝ զսուրբութիւն Տեառն նուիրել. զի նուեր քահանային՝ սրբութիւնն է. եւ բաց երես ի ճակատն ունի: Նոյնպէս եւ միթոք քահանայապետին ի գլուխն՝ այն որ երկճղի գառ ի վեր: Նախ նշանակէ զհին եւ զնոր կտակարանացն սպասաւորելն: Երկրորդ՝ նշանակէ զի ի վերայ հոգւոյ եւ մարմնոյ ժողովրդեանն ունի իշխանութիւն. զի յատկապէս ի վերայ հոգւոյն իշխէ եւ առաջնոցդ. եւ պատեհաբար ի վերայ մարմնոյն. զի պատժէ եւ տուգանէ եւ այլն: Երրորդ՝ նշանակէ տեսական եւ գործնական իմաստութեամբ ի վեր առ Աստուած զամբառնալն մտօք: Իսկ ոսկի եւ քարինք պատուականք՝ զարդարսն ի հոգեւոր եւ ի մարմնաւոր առաքիւնութեանց. զորս կրէ յինքեան. եւ այնպէս վայելչանայ առաջի Աստուծոյ եւ առաջի մարդկան: Իսկ արկոքին վարշամակքն նուրբ ի վայր խոնարհեալ՝ ցուցանեն զգուր եւ զվշտակից լինիլն քահանայիցն առ ժողովուրդն նոյն տեսական եւ գործնական իմաստութեամբ. զի որ բանիւ ուսուցանէ՝ եւ գործով արասցէ զամենայն քարոզեալս. եւ յայնժամ նմանէ Քրիստոսի (որ առնէր եւ ուսուցանէր:) Չնոյն ցուցանէր եւ զխարկն քահանայից. եւ վեղար ի գլուխ արեղայից եղեալ: Նախզի ծածկոյթ է զգայարանաց յիւրաքանչիւր վատթար գործոց. զի զսպէ յաշխարհէ զաչս եւ զլսելիս եւ զայլսն: Երկրորդ՝ նշանակէ ծայրն վերին՝ զտեսական միտս եւ զխորհուրդս զերամբարձ պահել միշտ առ Աստուած. (զվերին խորհելով միշտ առ Աստուած. (զվերին խորհելով ուր Քրիստոս նստի ընդաջմէ Աստուծոյ որպէս ասէ առաքեալն:) Եւ ներքինն լայնացեալ ի վայր խոնարհեալ՝ եւ պատեալ առ թիկամբն՝ զգործնական առաքիւնութիւնն, որով ամրանայ ի չարէ ինքն. եւ հաստատէ զժողովուրդն: Իսկ գոյն որոկացն որ է թուխ՝ զսխրութիւն ապաշխարութեան եւ զսուգ կենցաղոյս: Այլեւ ծածուկ եւ անգիտելի բազմաց զխորհուրդն նշանակէ խաւարատեսակ գոլն. որպէս զԱստուծոյ ասի. (եղ զխաւարն ի ծածկոյթ իւր.) որ է անգիտութիւնն ի յեղելոց: Եւ այսպէս ընդ հնոյ օրինացն՝ սրբութիւնն է եւ արդարութիւն նուեր քահանայիցն. յորժամ քահանայն ըստ կարգի եւ օրինացն կատարեսցէ: Նոյնպէս եւ ի նորս Տէրն հրամայէ. (արժան է մշակն կերակրոյ իւրոյ:) Եւ

(յորոց սերմանեն զհոգեւորն, հնձեն զմարմնաւորն որպէս ասէ առաքեալն:) Եւ դարձեալ՝ (երիցունք կրկին պատուոյ արդանի լիցին.) աստ զհասն. եւ անդ զկեանսն յաւիտենցից:

Վասն զի կրկին է գործ քահանայից. նախ զմեղսն սրբել ի մարդոյ. եւ ապա զմարդն ընծայել Աստուծոյ: Եւ զայս ցուցանէ որ հին քահանայքն նախ զմորթն ի բաց հանէին. եւ ապա ի վերայ սեղանոյն պատարագէին: Այս նոցա է՝ որք սրբութեամբ ունին զքահանայութիւնն. զի կրկին՝ մանաւանդ թէ, չորեքկին պատուոյ արժանացին: Վարձատրեսցին: Երկրորդ՝ որք զբարին խրատեն եւ ուսուցանեն ժողովրդեանն: Երրորդ՝ որ զեղս ժողովրդեանն քաւեն. եւ Աստուծոյ ընծայեն ժողովուրդ եւ բաժին արքայութեան: Չորրորդ՝ զի գիտութեամբ գործեն զբարին: Եւ յոյս նոցա հաստատուն է. վասն այն չորեքկին վարձս առնուն ի Զրիստոսէ. որ արդարն է դատաւոր: Իսկ թէ որպէս պարտ է սրբութեամբ եւ իրաւամբք հովել զժողովուրդն: Ասեմք նախ եթէ զամենայն հաս իրաւանցն իրաւամբք եւ արդարութեամբ խնդրել. եւ ոչ խառնել ի յիրաւունսն անիրաւութիւն զրկանս եւ յափշտակութիւն. կամ ծեծ եւ անէծս եւ այլն: Երկրորդ՝ զի յորժամ արդարութեամբ ժողովէ զհասն եւ զիրաւունսն՝ նոյնպէս եւ արդարութեամբ բաշխէ. այսինքն, ի պէտս տնանկաց եւ աղքատաց. որբոց եւ այրեաց. որպէս ի կանոնսն է գրեալ: Այլեւ զպէտս հասարակաց եւ եկեղեցւոյ եւ կաթողիկոսին վճարել: Եւ ոչ է պարտ արդարութեամբ ժողովել եւ անիրաւութեամբ ի փառս իւր եւ ի մարմինն ծախել եւ չար գործել. կամ այլազգեաց կաշառս տալ եւ զեկեղեցին ի խապալ հանել վասն իւր ախտին: Կամ զշնորհսն Աստուծոյ որ պարտ է ձրի բաշխել՝ ոչ վաճառել եւ ծախել դրամի, եւ այնու զհոգին կորուսանել: Երրորդ՝ ի վերայ այսր հոգ անձին ունիլ եւ տեր կալ ժողովրդեանն. միշտ աղօթիք առ Աստուած՝ զԱստուած հաշտեցուցանել ընդ նոսա. եւ ցաւիլ վասն մաղաց նոցա: Որպէս գլուխն կրէ զցաւս ամենայն անդամոցն. նոյնպէս եւ առաջնոցն զժողովրդեանն. ըստ առաքելոյն. (ո՞ հիւանդանայ եւ ես ոչ հիւանդանամ. ո՞ գայթակղի եւ ես ոչ տապանամ:) Այլեւ աղօթս առնել վասն ճանապարհորդաց, դառնալ խաղաղութեամբ. եւ այսպէս վասն ամենայն մարդկան: Մանաւանդ վասն ննջեցելոց. զի քահանայն հոգւոց հայր է. առաւել պարտ է ցաւիլ վասն վախճանելոցն քան կենդանեացն: Եւ չորրորդ՝ որպէս զժողովուրդն առ Աստուած հաշտեցուցանէ. նոյնպէս զԱստուած առ ինքն հաշտեցուցանէ, որ կարէ միջնորդել այլոց: Եւ այսպէս զհոգի եւ զմարմին իւր խաղաղութեամբ պահեսցէ. եւ զայլ ժողովուրդս ընդ միմեանս խաղաղացուցէ. (զի խաղաղարարք որդիք Աստուծոյ կոչեսցին:) Եւ այսպէս բարւոք հովուապետութեամբ խնամեսցէ զբանաւոր հօտն Զրիստոսի. եւ յետ աստեացս աչալրջութեամբ յանդիման կացցէ առաջի Զրիստոսի պարծելով. (ահա ես եւ մանկունք իմ զորս ետուր Աստուած:) Եւ լսեսցէ զձայնն եթէ՝ (ե՛կ ծա՛ռայ բարի եւ հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն քոյ.) որ օրինեալ յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն վարդապետաց եւ խրատու. ի Բանն որ ասէ առաքեալն Յակօբոս: (Որ լսէ միայն զԲանն՝ եւ ոչ առնէ, նման է այնմ, որ տեսնէ զերես իւր որ ծնանի ի հայլուջն. ետես եւ անդէն մոռացաւ:) Յակ. 1. 23: (Գլուխ. ԾԺԷ)

Ամենայն ինչ կենցաղական՝ յերկուս բաժանի. այսինքն. ի հարկաւորն. եւ ի վայելչականն: Հարկաւոր է պիտոյն. որպէս հացն եւ հանդերձն. եւ վայելչականն աւելորդն է. որպէս խորտիկ. եւ ոսկեզօղ: Եւ է յատուկ հարկաւորին նախ՝ որ զկարօտն լնու: Երկրորդ՝ որ անցաւոր է եւ այլ կարօտի: Նոյնպէս վայելչականն յատկանայ նախ՝ որ ոչ է կարօտութեան լրումն: Եւ երկրորդ՝ որ ոչ անցանի: Եւ այս է ի հանդերձեալն. զի անդ է վայելչութիւնն առանց կարօտութեան. եւ միշտ առանց փոփոման: Ապա ուրեմն այսր կենցաղոյս զինչ եւ տեսանես՝ պետք է, եւ ոչ վատելութիւն. որպէս ասէ առաքեալն. (անցեալ է վայելչութիւն աշխարհիս, եւ այլն:) Իսկ երկրասերք՝ վայելչութիւն կարծեն զհարս կենցաղականս: Նախզի՝ վասն առատութեան ամենայն իրաց: Երկրորդ՝ զի առ ձեռն պատրաստ գտանեն զինչ եւ խնդրեն: Յայսմանէ մոլորեալք, կարծեն թէ անանց եւ անփոփոխ է: Այլ մեզ զայս պարտ է մտածել. զի թեպէտ առատ է ամենայն ինչ, այլ փոփոխի եւ անցանէ: Եւ թեպէտ առ ձեռն պարտաստ, այլ կարօտ է լրման: Ապա ուրեմն ոչ ինչ է ի կեանս յայս վայելչական. այլ ամենայն ին ի պետս է: Իսկ ի հանդերձեալն ամենայն ինչ վայելչական է որպէս ցուցաւ: Վասն այն ասէ առաքեալն: (Այժմ տեսանեմք իբր հայելի օրինակաւ:) Արդ՝ հայելին կրկին գործ ունի: Նախ՝ զնման անտեսին երեւեցուցանէ: Երկրորդ՝ զպակասն ցուցանէ: Արդ՝ (աներեւոյթն Աստուծոյ՝ երեւելեօքս իմանի:) Յայնմնէ՝ որ կայ յերեւելիսս բարի. եւ յոյս. եւ գեղեցիկ. եւ քաղցր. Չի այսպէս (երկինք պատմեն զփառս Աստուծոյ:) Եւ երկրորդ՝ յորժամ զվերինն խորհիմք, եւ բաղդատեմք առ երկիրս, տեսանեմք զերկրաւորիս պակասութիւնն. զի է անդ մեծութիւն առանց պակասութեան. եւ փառք եւ հանգիստտ անփոփոխ. եւ կեանք յաւիտենական: Յայնժամ զիտեմք որ երկրաւորիս մեծութիւնն եւ փառք՝ ուրուական եւ անցաւոր են. յայնժամ ապա թիկունս դրձուցանեմք յերեւելիսս. եւ զաներեւոյթն եւ խնդրեմք նախայօժար կամօք եւ ասեմք առ Աստուած Դաւիթ թէ՛ (որպէս զանասուն համարեցայ) նախ որ զերկրաւորս խորհէի. եւ այժմ (յամենայն ժամ ընդ քեզ եմ,) յորժամ զերկրաւորդ խորհեցայ եւրնտեցի: Վասն այն ասէ. (որ լսէ միայն զբանն՝ նման է այնմ, որ տեսանէ զերեսս իւր որ ծնանի ի հայելւոջն. ետես եւ անդեն մոռացաւ:) Աստաւօր զվարդապետս եկեղեցւոյ՝ ի հայելի օրինակէ առաքեալն Յակօբոսս. զի բազում բաղդատութիւն ունի միտք վարդապետաց առ հայելին: Եւ ասեմք ժ եղանակաւ: Նախ եւ առաջին՝ որպէս հայելին մաքուր՝ տպաւորէ յինքն զկերպարան իրաց զինչ եւ իցէ. նոյնպէս եւ միտքն պարզ՝ տպաւորէ յիքն զամենայն իմացուածս. եթէ բարի. եւ եթէ չար. եւ յորժամ ճշմարիտ իմանայ՝ ցուցանէ զբարին բարի, եւ զչարն չար: Երկրորդ՝ որպէս հայելին ըստ իւրեանց չափուն մեծ եւ փոքր ցուցանէ զիրն. այսպէս եւ միտք ըստ չափոյ իմացուածոց իւրեանց, առաւելուն զիմանալիսն եւ նուագին: Երրորդ՝ որպէս պայծառութիւն հայելւոյն յորժամ ի հիւթոյ ինչ ժանկի եւ տգեղանայ՝ այլ ոչ տպաւորէ յինքն զնմանութիւն ուրուք. այսպէս եւ միտն ի հիւթոյ ինչ աշխարհականէ՝ կուրանայ եւ խաւարի: Եւ ոչ կարէ բան ինչ ինքեան իմանալ. (զի ոգիք ըմբռնեալք ի մեղս. ի մտաց եւս անկանին: Չորրորդ՝ եւ զնոյն ժանկեալ հայելին յորժամ սրբեն, վերստին մաքրի եւ պայծառանայ. նոյնպէս եւ մեղօք խաւարեալ միտքն՝ ի ձեռն զղջման եւ խոստովանութեան՝ վերստին ի լոյս գիտութեան հասանի. որպէս նոքա որք

ի ձեռն ապաշխարութեան հասանին փրկութեան:) Յինգերորդ՝ որպէս հայելին յորժամ ամյարեգակն եւ ի լոյս հայի. առաւել պայծառանայ. նոյնպէս եւ միտն ի խոկումն աստուածային պատուիրանացն՝ առաւել լուսաւորի. (զի պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց:)

Վեցերորդ՝ որպէս զպայծառութիւն հայելոյն կամ զտգեղութիւն յամենայն զգայարանացս միայն աչքն տեսանէ. նոյնպէս եւ որք իմաստունք են ի մէջ ամենեցուն՝ նոցք միայն ճանաչեն զգեղեցկամիտսն. եւ զոչ նոյնպիսին: Վասն այնորիկ նոցա է պարտ խրատել եւն ուսուցանել զհրաքանչիւրսն: Եօթներորդ՝ որպէս փոս եւ նստագոյն հայելին՝ առաւել տպաւորէ յինքն զկերպարանն քան զբարձրագոյնն. նոյնպէս եւ որ զմիտսն ժողով ունի առ նիքն, առաւել իմանայ զկերպ իրացն. մանաւանդ թէ ըստ խոնարհութեան կերպի. (զի Տեր տայ շնորհս խոնարհաց ասէ:) Ութներորդ՝ որպէս հայելին զամեալ տիպն ոչ պահէ յինքեան. այլեւ ցուցանէ այլոց, որք ոչ կարեն տեսանել զերեսս իւրեանց. այսպէս եւ նոքա որք զբանն իմանալ կարեն աւ առաւել ունին ի միտս իւրեանց, ոչ է պարտ միայն ծածկել ի յինքեանս. այլ քարոզել եւ ուսուցանել միշտ. (եւ արկանել ի սեղանաւոր միտս. մարդկան կարօտելոց:) Իններորդ՝ որպէս հայելին կարէ ընդունիլ ինքեան զամենայն կերպարանս յոր եւ դիպի. եւ ոչ ատանայ եւ ոչ ի միմեանս խառնակէ. եւ այսպէս եւ միտն ընդունի զբազմազան եւ ազգի ազգի գիտութիւն. եւ զմենեսեան ամբողջաբար ունակացուցանէ յիքեան. զի ոչ խառնակին ի միմեանս բանքն. եւ ոչ յազի բազում բանիւք. ըստ այնմ, (ոչ յազի ակն ի տեսանել. եւ ունկն Իսրայելի:) Տասներորդ՝ որպէս հայելին յետս դարձուցեալ՝ ջնջի տպաւորեալ կերպարանն. եւ որ տեսաներն՝ անգէն մոռանայ զկերպն իւր. որպէս ասէ Յակօբոս. (որ ծնանիցի ի հայելոջն՝ ետես եւ զանց արար. եւ անդէն մոռացաւ:) Նոյնպէս եւ որք ուսուցանեն եւ որք ուսանին. այսինքն, քարոզողն եւ ժողովուրդն. յորժամ լսեն եւ կամ ասեն զխրահ սուրբ գրոց եւ գործել ոչ կարեն, նա մոռացեալ են նոքա զասացեալ բանսն. զի ոչ կացուցանեն ի գործս. այլեւ ի մտացն ջնջի բանն սուրբ. ըստ այնմ, (թէ զոր ունինցի՝ բարձցի ի նմանէ.) այս նոցա է որք ասեն եւ ոչ առնեն: Իսկ որք լսեն եւ ոչ առնեն, նման են նոքա ասէ այնմ, (որ շինէ զտուն իւր ի վերայ աւազոյ եւ այլն.) շուտով կործանի յամենայն փորձութեանց: Եւ դարձեալ նոքա երկիր են փշաբեր եւ ապառաժ ճանապարհ սատանայի ասէ. զի ոչ բուսուցանեն զսերմն բարի: Իսկ որ առնեն գործով՝ նման են արգաւանդ երկրի՝ որք տան զբազմապատիկ պտուղն. որ հատուցանի նոցա ի կեանսն յաւիտենից: *Այլ աստ գիտելի է՝ զի որք ուսուցանեն եւ քարոզեն այլոց՝ ի չորս դասս բաժանին: Չի ոմանք ասեն եւ ոչ առնեն: Ոմանք առնեն եւ ոչ ասեն: Ոմանք ոչ ասեն եւ ոչ առնեն: Եւ ոմանք ասեն եւ առնեն: Առաջինն որ ա սէ եւ ոչ առնէ՝ չար է. թեպէտ զայլս շահի. զանձն կորուսանէ. որպէս ասէ Տերն. (զինչ օգուտ է զաշխարհս շահիլ եւ զանձն կորուսանել:) Երկրորդն՝ որ առնէ եւ ոչ ասէ՝ բարի է ինքեան. այլեւ այլոց. զի թեպէտ ոչ խրատէ ի լսելիսն, սակայն խրատէ ի տեսանելիսն: Երրորդ՝ որ ոչ ասէ եւ ոչ առնէ, այս առաւել չար է. զի զինքն եւ զայլս կորուսանէ: Նախզի ոչ ուսուցանէ: Երկրորդ՝ զիի եւ այլքն զնա չարաց օրինակ առնուն. զի թէ որ ասէ եւ ոչ առնէ՝ չար է, իրաւի ապա չարագոյն եղիցի, որ ոչ առնէ եւ ոչ ուսուցանէ: Չորրորդ՝ դասն՝ որ առնէ եւ ուսուցանէ՝ այս բարեգոյն է եւ առաւել բարի: Նախզի՝ ինքն շահի առնելովն: Երկրորդ՝ եւ զայլս շահի

ուսուցանելովն. այլեւ այլոց բարեաց օրինկ լինի յամենայն ժամ: Այսպէս եւ լսողքն՝ ի չորս բաժանին. զի ոմանք լսեն եւ ոչ առնեն. եւ ոմանք լսեն եւ առնեն. ոմանք ոչ լսեն եւ ոչ առնեն. եւ ոմանք լսեն եւ առնեն: Որք լսեն եւ ոչ առնեն՝ ևոքա են որք միայն զքարոզութիւնն լսելեօք լսեն, եւ ի միտ ոչ առնուն. եւ ոչ գործով կատարեն. այս չար է ամենեւիմբ. զի չլին լաւ է քան զլսելն եւ ոչ առնելն. որպէս ասէ Յօհաննէս ի կաթուղիկէն. (լաւ էր ևոցա թէ չէր ծանուցեան զարդարութեան ճանապարհն եւ այլն:) Եւ յայլ ուր թէ՛ (զառաջինն եւս խնդրեսցէ:) Իսկ որք ոչ լսեն եւ առնեն, այս բարի է ամենեւիմբ. զի (որոց սակաւ տուաւ՝ սակաւ խնդրէ:) Իսկ ևոքա որք սակաւ առնուն՝ եւ շատ հատուցանեն. որպէս այնոքիկ՝ որք ոչ ամենեւիմբ գիր գիտեն. եւ միշտ զհաճոյսն Աստուծոյ կատարեն. որպէս Պօղոս. Անտօն. եւ այլք: Այս ի հաւատացեալս: Այլեւ են այսպիսիք ոմանք ի յարտաքիսսն. որպէս ասէ Պօղոս. (հեծծանոսք որք զօրօսս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործեն. զի որք զօրէսս ոչ ունին, ևոքին իսկ անձանց են օրէնք:) Որպէս ևահապետքն առաջիկք՝ որք ոչ ունէին առեալ զօրէսս. եւ զհաճոյսն Աստուծոյ կատարէին: Եւ որպէս կուռնելիոս: Իսկ որք լսեն եւ առնեն՝ այս բարի. որպէս հաւատացեալ ժողովուրդք, որք թպէտ ոչ գիտեն ուսմամբ, սակայն միշտ ընթանալով յեկաղեցիս՝ լսեն զսուրբ գիրս եւ զքարոզութիւնս. եւ առնեն զպատուրանս Աստուծոյ ըստ առաջնորդաց կանոնացն. ըստ այնմ որ ասէ Տէրն. (զամենայն զոր ասիցեն ձեզ՝ արարէք:) Այլ ոմանք են՝ որք ոչ լսեն եւ ոչ առնեն. այս եւս չար է. եւ այսպիսիք են բազումք ի հաւատացելոց՝ որք անուամբ քրիստոնեայ կոչին. եւ գործովք ուրացեալք եղեն. զի ինքեանք ոչ գիտեն՝ այլեւ ոչ լսեն եւ ոչ առնեն զկամսն Աստուծոյ. վասն սոցա ասէ Դաւիթ. (որպէս իժի եւ քարբի խցեալ են զականջ իւրեանց:) Այլեւ գոն այսպիսիք բազումք այլազգիք եւ անհաւատք. որպէս տաճիկք եւ կռապարիշտք. որք ոչ լսեն զբանս հաւատոյ եւ ոչ առնեն: Այլ թէ ոք ասիցէ՛ եթէ այնոքիկ որք ոչ գիտեն զբան հաւատոյ, եւ ոչ են լսեալ զքարոզութիւն սուրբ գրոց, եւ ոչ հաւատան, եւ ոչ առնեն գործօք, զի՞նչ լինին. ևոքա. փրկի՞ն թէ կորուսանի՞ն: Եւ վասն այսոր ասացեալ է յայլում տեղուոչ: Տէրն հրամայէ: (Մի դատէք՝ զի մի դատիցիք:) Ապա վասն է՞ր ասէ յօրէնս. (յանդիմանելով յանդիմանեա զչարս. զի մի առցես զմեզս վասն ևորա:) Եւ հեղի որ ոչ յանդիմանաց զորդիսն, պատուհասեցաւ վասն ևոցա: Ասեմք եթէ՛ չորիւք ընտրութեամբ է դատեալն եւ այնդիմանելն: Նախ՝ որ առաջնորդ է իշխան՝ նմա է դատելն. իսկ ընկերին ոչ. արպէս առաքեալն գրեր ժողովրդեանն. (մի զմիմեանս դատէք:) Եւ աշակերտին գրեր. (սաստեա յանդիմանեա. եւ դարձեալ մխիթարեա:) Եւ Տէրն ի դատաստան եկի յաշխարհիս յայս ասեր զինքենէ. եւ մեզ հրամայեաց: (Մի դատէք՝ զի մի դատիցիք:) Այսինքն, կամ զվերնագոյնս, կամ զընկերս մի դատէք. (զի մի է դատաւոր եւ օրէնսդիւր ասէ առաքեալն. եւ դուք ամենեքեան եղբարք էք.) այլ զփոքրագոյնսն պարտ է խրատել առաջնորդաց: Երկրորդ՝ այլեւ՝ այլեւ զներքինս մի դատէք. որ ևս ունի զշիղ յանցանաց. եւ դու զգերանդ: Չի ասէ առաքեալն. (եւ դու զնոյն գործս որով դատես զընկերն:) Ապա թէ դու չունիս զսխալանս, եւ ևս ունի, դատեա զևա եւ խրատեա: Երրորդ՝ մի յանդուզն եւ ևսխանձու դատել. (զի ընդ ամենայն դատարկ բանի՝ համար տալոց էք. եւ որ ասէ ցեղբայր իւր մորոս, պարտական լիցի դատաստանի:) Այլ խրատեա սիրով եւ յանդիմանեա վասն ուղղելոյ եւ շահելոյ զևա. ըստ այնմ,

(յանդիմանեա սաստեա եւ միխթարեա ամենայն երկայնմտութեամբ:) Չորրորդ՝ մի դատել զկամօք չարացեալն. այն է որ ասէ. (զճանապարհս քո ճանաչել ոչ կամիմ:) Վասն որոյ (մի արկանեն զմարգարիտս առաջի խոզաց: Այլ զնա խրահեա՝ որ գիտութեամբ է չարացեալ. եւ յուղղութիւն ած: Եւ այս գիտելի է՝ զի երբեմն պարտ է լռել. եւ երբեմն քաղցրութեամբ խրատել. եւ երբեմն խոտութեամբ յանդիմանել: Այսպէս՝ զի առաջի ծերոց պարտ է լռել. որք հասակաւ կամ իմաստութեամբ, կամ պատուով ծերք իցեն: Իսկ առ ընկերս պարտ է հեղութեամբ եւ քաղցրութեամբ խօսիլ եւ խրատել. (զի եղբայր յեղբօրէ օգնել ի բրել զքաղաք ամուր է:) Իսկ առ ներքինս սաստիւ յանդիմանել. որպէս առաքեալն ասէ. (սաստեա:) Դարձեալ՝ որ ի մարմինս. միան ունին զմեղս, եւ ոչ ի կամս եւ յիմացումս, նոցա սաստեա եւ յանդիմանեա զի դարձցին: Եւ որ իմացմամբ եւ տգիտութեամբ մեղանչեն ի մասումբ եւ քաղցրութեամբ խրատեա. եւ ած յուղղութիւն: Եւ որ ի կամս են չարացեալ, լռեա առ նոսա. զի ոչ դառնան յուղղութիւն: Եւ դարձեալ՝ որ ակամայ եւ անգիտութեամբ է յանցաւոր, զնոսա քաղցրութեամբ խրատեա եւ իմաստութեամբ. որպէս նաթան զԴաւիթ հեզութեամբ եւ իմաստութեամբ էած յուղղութիւն: Իսկ որ կամաւ եւ գիտութեամբ՝ սաստեա եւ յանդիմանեա. որպէս Երեմիա զժողովուրդն, եւ Եղիա Չաքայաբ, եւ մեծն մկրտիչ զհերովդէս յանդիմանեցին: Եւ զնոսա որ այլ ազգի ժողովուրդ են՝ լռութեամբ եւ գործով խրատեա. (զի տեսցեն զգործս բարիս եւ այլն:) Եւ թէ ասես. զկամօք չարացեալն եւ զանգիտութեամբն որպէս գիտեսք: Ասեմք եթէ՝ երիւք ճանաչի կամօք չարացեալ եւ անգիտութեամբն: Նախ՝ որպէս ասէ Սողոմօն. (խրատեա զիմաստունս, եւ յաւելցի սիրերել զքեզ. եւ ատեսցէ զքեզ:) Որ կամօք է չարացեալ՝ ատէ զխրատողն. եւ որ անգիտութեամբն է՝ սիրէ զխրատողն. զի տեսանէ զշահ խրատողին եւ սիրէ զնա: Երկրորդ՝ որ ախորժելով լսէ զխրատն, եւ որ անհնազանդ լինի՝ ճանաչի կամօք չարացեալն եւ ակամայն: Երրորդ՝ որ ի միտ պահէ եւ գործով կատարէ, ակամայ էր չար. եւ որ չպահէ ի մտի, եւ չկատարէ գործով, այնպիսին կամաւ է չարացեալ: Այնպիսի չարին յետ մի անգամ եւ երկիցս խրատելոյ՝ յորժամ ոչ լսէ, հրաժարեա ի նմանէ: Եւ զհրաժարիլն այսպէս արա: Կամ ըստ Տեառն ձերոց ի քաղաքն, որք ոչ լսիցեն ձեզ. այսինքն, անիծիւք հրաժարեա. որպէս առաքելն ասէ. (յառնէ հերձուածօղէ յետ մի անգամ եւ երկիցս խրատելոյ՝ հրաժարեա.) եւ այսպէս անիծիւք: Եւ դարձեալ սիրով՝ որպէս ասէ առաքեալն. (ի սուտ եղբօրէ սիրով հրաժարեա.) եւ Տերն խրատէ. (յանդիմանեա միայն առանձին. թէ ոչ լսէ, առ ընդ քեզ մի եւս եւ երկու. եւ թէ ոչ լսէ,, ասա յեկեղեցւոջն. եւ թէ ոչ լսէ՝ եղիցի քեզ զիրեւ զիրեայս եւ զհեթանոսս:) Ասէ առակն. (որ ոչ պատկառի յարդարոյ՝ չէ բարւոք. եւ ակնածէ յանդիմանեալ՝ չէ գովելի: Որ ակնածէ եւ ոչ յանդիմանէ զանկրաւն՝ զէ բարի:) Նոյնպէս որ ոչ ամաչէ յարդարոյ՝ ասէ կրկին մեղք է. Մին՝ որ ոչ ամաչէ յարդարոյ. եւ մին՝ որ ամաչէ եւ ոչ յանդիմանէ: Մի եւ նոյն ամօթն որ է առաքինութիւն՝ է ի յառաջնորդն եւ ի յանդիմանօղն չար. եւ ի հետեւեալն եւ ի յանդիմանեալն բարի: Եւ դարձեալ՝ ոչ ամաչելն մոլութիւն է. իսկ ի յանդիմանօղն բարի է. եւ ի յանդիմանեալն չար է: Այժմ տես՝ զի ակնածելն եւ ոչ յանդիմանելն՝ մեծ վնաս է գործոց. որպէս հեղիզի քաղցրութեամբ խրատեր զորդիսն, եւ ոչ սաստիւ, վասն այն մեղացն՝ տապանակն գերեցաւ. եւ ժողովուրդն պարտեցաւ. եւ ԼԹ ի դասուց պատերազմողացն անկան. եւ

հեղի եւ որդիքն մեռան: Եւ այսմ կրկին է պատճառ: Մին՝ զի հեղի ոչ յանդիմանեաց. եւ որդիքն ոչ պատկառեցան յերեսաց հօրն: Երկրորդ ժողովուրդն պատուհասեաց. այսպէս ամենայն առաջնորդի մեղք՝ է այն չափ, որքան ժողովրդեանն: Եւ իշխանացն՝ որպէս իշխեցելոցն: Եւ յայտ է յօրինացն՝ որ բոլոր ժողովրդեան յանցանացն, մին զուարակ էր ողջակեզ. եւ իշխանին կամ քահանայապետին՝ մին զուարակ. զի հաւասար է մեղք առաջնորդին եւ հնազանդիցելոցն: Եւ վասն չորս պատճառի ոչ յանդիմանեն զանիրաւ իշխանս: Նախ՝ վասն մարդահաճութեան ական առնուն երեսաց խոցա եւ ոչ անդիմանեն: Երկրորդ՝ վասն փառաց. զի մի անարգեսցեն զնոսա մեծքն. (զի սիրեցին զփառս մարդկան, առաւել քան զփառս Աստուծոյ:) Երրորդ՝ վասն երկիւղի. զի մի բարկացեալ զրկեսցեն զինչս կամ չարչարեսցեն: Չորրորդ՝ վասն ազահութեան եւ կաշառոց. զի մի զրկեսցին ի պատուոյն եւ ի սեղանոյն. որպէս ասէ առակն. (այնպիսին վասն պատառ մի հացոյ վաճառէ զմարդն.) եւ ճշմարիտ է. որպէս այն որ մտանէ զմարդ առնել չար, նա է պարտական չարին. նոյնպէս որ լռէ գործել զչարն եւ ոչ յանդիմանէ, պարտական է չարին: Եւ տես որ ի չորս դիմաց՝ վնաս բերէ ոչ յանդիմանօղն ստուեութեամբ: Մին՝ զանիրաւի հոգին վնասեաց՝ որ ոչ զգաստացոյց զնա: Եւ երկրորդ զիր հոգին՝ որ ընկեր եղել անիրաւ չարին եւ կամակից: Եւ երրորդ՝ կորոյս զմարմին զրկելոյն՝ որ տուգանեցաւ, կամ ի բանտ եղաւ: Եւ չորրորդ զտեսողացն՝ որք գայթակղեցան ի խոցանէ. եւ երկմտացան ի զրկողէն եւ ի կամեցողէն: Իսկ զի՞նչ շահ եղել նմա մարդահաճութիւնն. որ (Տէր ցրուէ զոսկերս մարդահաճոյից:) Չէ որպէս այլք որք վաճառաշահ լինին. ոմանք բանից. եւ այլք ընչից. երւ նա սուտ փառաց եւ մարդահաճութեան: Եւ թէ ոք ասիցէ՝ զիմ խրատն նա ոչ լսէ. վասն այն զնա ոչ յանդիմանեմ: Ասեմք թէ՛ պատճառ է այս վասն անօրէնութեան քոյ. զի ասէ Էզէկիէլ. (դէտ կացուցի քեզ. ասա դու զմեղս խոցա. զի թէ դու ասես եւ նա ոչ լսէ, նա ի մեղս իւր մեռցի. եւ դու զանձն քո ապրեցուցեր: Այլ թէ դու ոչ ասես, զարիւն նորա ի ձեռաց քոց ինկրեցից:) Ահա մեծ պատուհաս. ահա ահագին երկիւղ. ահա սաստիկ վճիռ մեզ առաջնորդացս. որք այսօր եմք յայս անբարի ճանապարհս մեք, երւ նմանօղքն մեր: Որ վասն մարդահաճութեան՝ ոչ յանդիմանեմք. եւ լինինմք պարտական արեան խոցա. եւ սուտ պատճառ դնեմք թէ՛ նա ոչ լսէ. նա լիցի պարտական: Այլ դու որ խրատօղք ես մի յանդուզն եւ անամօթաբար խրատեր. եւ առաւել գայրացուցաներ: Այլ հանճարով եւ առակով յանդիմանեա. որպէս նաթան զԴաւիթ. եւ Զրիստոս զմեծատունն. եւ առաքեալն զհռոմայեցիսն յանդիմանեաց վասն չար գործոց խոցա. եւ Էսծ յուղղութիւն: Եւ թէ այսպէս խրատես՝ թէպէտ առ ժամն դառն թուի, այլ յետոյ յորժամ յինքն գայ եւ մտածէ, զքեզ իմանայ առաւել բարեկամ, քան քնոսա որք մրադահաճոյ խօսեցան: Չի յայս է բնաւորեալ բնութիւնս մարդոյ. յորժամ զխրատն իմանայ՝ յետոյ ապա սիրէ եւ պատուէ զյանդիմանօղն. որպէս ասէ առակն. (որ յանդիմանէ զայն ի ճանապարհս իւր, շնորհակալութիւն գտցէ քան զսուտակասպասն. որ է մարդահաճոյն եւ առ երես գովօղն:) Եւ Զրիստոսի փառք եւ գոհութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին դարձեալ քարոզ վասն վարդապետաց խրատու եւ հնազանդութեան լսողաց. ի Բանն առակացոր ասէ: (Որպէս ոսկի ինձորընդ

սարդիոն յեռեալ. այնպէս եւ Բանի իմաստնոց խօսեալ:) Առակ. 25. 11:
(Գլուխ. ԾԺԸ)

Ամենայն խրատ առժամայն տրտմութիւն է մարդոյ. բայց յետոյ
զխաղաղութիւնն պտղաբերէ ուսուցանէ առաքեալն:) Չի որպէս արմատ
ծառոյն դառն է պտուղն քաղցր. նոյնպէս խրատն ի սկիզբն դառն է. բայց
ետոյ զքաղցր պտուղն համբերողացն տայ: Այլ որպէս զծառն յորժամ տնկեն,
զգուշանան եւ պահեն զի հաստատի եւ տայ զպտուղն. նոյնպէս զխրատն
պարտ է լսել եւ ի միտն հաստատել. եւ ապա պտղաբերի: Եւ յայն ժամ
պահեմք զբանն՝ որ ներքին սրտի ականջովն լսեմք: Չի այս որ արտաքին
ականջս է, երկու դուռն ունի. ընդ միւսն մտանէ, եւ ընդ միւսն ելանէ բանն. եւ
ոչ պահի: Այլ ներքին ականջն մին դուռն ունի զլսողութիւնն. եւ յորժամ լսէ՝
տանի ի միտսն եւ ամարէ զոր յիշողութիւն կոչեմք եւ միտք: Չի ամենայն ինչ
ի նա մտանէ եւ ժողովի. եւ յիշողութիւն՝ զի յորժամ կամիմք եւ յիշեամք,
անտի յառաջ բերեմք զինչ եւ պիտոյ իցէ: Եւ այնչափ անձակ է միտքն՝ որ
զամենայն արարածոց գիտութիւնն ի յինքն տանի եւ ոչ լնանի: Նա այսպէս
զխրատն ի ներքս ի միտսն պարտ է հաստատել եւ ամբարել. որ յետոյ
բուսանի եւ տայ զխաղաղութեան պտուղն: Եւ դարձեալ զորօրինակ՝ զսերմն
բարի ի սիրտս երկիր ծածկեմք. եւ ապա բուսանի. ասա թէ յերեսն թողումն,
հաւք քաղեն կամ չորանայ. կամ կոխի՝ կամ հոտի ի բազում ջրոց եւ ոչ
բուսանի: Նոյնպէս զբան խրատուն յորժամ լսեմք՝ թէ ոչ ծածկեմք եւ
պահեմք ի սրտի, նա թռչունն սատանայ քաղէ ի սրտես մերմէ զբարի
սերմանսն. եւ լինի անպտուղ: Չի այսպէս սովորութիւն է թշնամոյն մերոյ՝
որ զբարի սերմանսն ի սրտես մերմէ քաղէ եւ կորուսանէ. եւ զչար որոմն
սերմանէ. եւ զայն բուսուցանէ: Որպէս Տերն յաւետարանին հրամայեաց եթէ՝
(սերմն բարի սերմանեցաւ. արդ որոմն ուստի՞ է. ասէ՝ այր թշնամի արար
զայն՝ որ ցանեաց ի վերայ ցորենոյն:) Յորեան են բարի խրատք
վարդապետաց. բանք հոգեւորք: հրամանն Զրիստոսի. քարոզութիւնք
առաքելոցն. որք կերակուր են հոգեւոր. եւ ամբարին ի կեանսն յաւիտենից:
Իսկ որոմն է չարութեան խրատն սատանայի. ծուլութեան. ազահութեան.
բարկութեան. ամբարտաւանութեան. անողորմութեան. եւ այլն ամենայն
որոմունք են եւ փուշք. որք այժմ խոցոտեն զհոգիս մեր. եւ յետոյ լուցկի
լինին հրոյն յաւիտենից տանջանաց: Այսպէս թռչունն սատանայ՝ քաղէ բարի
սերմն: Իսկ չորանալն այն է՝ յորժամ արեւն ի վերայ ծագէ, եւ հիւթն
պակասի, լինի անպտուղ: Նոյնպէս յորժամ փորձութիւնն սատանայի եւ կամ
մարդկան գայ ի վերայ մարդոյն, չորացուցանէ զբան խրատուն եւ անպտուղ
առնէ: Իսկ կոխիլն այն է սերման՝ որ սատանայ ի մարդոյն խորհուրդն
ճանապարհ առնէ հանապազ. կամ զանազան խորհուրդ չար. մեծութեան.
փառաց. ազահութեան. աշխարհի. սիրոյ. եւ այլ այսպիսիքս կոխեն զբարի
սերմն. եւ ոչ բուսանի: Կամ հոտի ի բազում ջրոց սերմն. բազում ջուր՝
զբղջախոհ ցանկութիւնն է իմանալ. որ հանապազ զմիտսն մարդոյ մոլորէ եւ
յիմար պահէ. եւ չտայ թոյլ որ բարի սերմանքն բուսանին: Այլ զի՞նչ պարտէ
առնել. այսինքն, զբարի խրատն եւ զօրինացն Աստուծոյ յորժամ լսեմք, ի
սիրտս մեր թաղել պարտ է եւ ծածկել. որպէս ասէ մարգարէն. (ի սրտի իմում
թաքուցի զբանս քո:) Չի թաքուցանելն զբանն՝ կրկին շահ է եւ օգուտ: Մին՝
որ ի թշնամեացն պահպանի. ի թռչնոց. յարեւու. եւ այլոցն որպէս ասացաւ:

Եւ մին՝ որ հաստատի բանն ի խորհուրդն եւ արմատանայ. եւ ապ ի զգայարանն բուսանի կանաչագեղ. ընդ աչսն. ընդ լսելիսն. ընդ լեզուն. եւ ընդ այլսն: Եւ ապա ծաղիկ անուշահոտութեամբ ի գանազան գործսն: Եւ ապա պտղաբերէ աստ զխաղաղութիւն հոգւոյն եւ մարմնոյ. եւ անդ զպարգեւսն յաւիտենից կենաց: Եւ չորեքկին պտուղ տայ աստ բարեգործութիւնս մեզ: Նախզի՝ բարեգործ մարդոյն բազում օգուտ լինի եւ խաղաղութեան պատճառ. շինութեան. խրատու. եւ այլ բազում բարութեան: Երկրորդ պտուղ՝ որ զմեզ առ այլս հաշտ եւ խաղաղ պահէ. եւ բարեկամ միմեանց: Երրորդ պտուղ՝ որ զմեր հոգի եւ զմարմին խաղաղ եւ անդորր պահէ ի մեր խղճմտանացս չարչարելոյ: Չորրորդ՝ որ զմեզ ընդ Աստուած հաշտ եւ խաղաղութեամբ պահէ բարեգործութիւնս մեր:

Այս է ասելն առաքելոյն թէ՛ (ամենայն խրատ՝ առ ժամայն տրտմութիւն է մարդոյ. բայց յետոյ զխաղաղութիւնս պտղաբերէ ընդունողաց զնա:) Դարձեալ գիտելի է՝ զի խրատօղն եւ ուսուցանօղն՝ ունի զդէմս հիւանդի: Եւ խրատն է որպէս զբժշկական դեղ: Արդ՝ երկու ազգ է հիւանդն: Մին՝ որ խնդրէ զդեղն եւ հնազանդի բժշկի: Նա առեալ զդեղն, առողջանայ: Եւ միւս հիւանդն՝ որ արհամարհէ զդեղն, եւ կռուի ընդ բժշկին, ոչ առողջանայ. այլ մեռանի: Նոյնպէս եւ հոգեւոր բժիշկ է առաջնորդն եւ վարդապետն. եւ բժշկութեան դեղ են բանք քարոզութեանց եւ խրատու նոցա: Իսկ հիւանդ է մեղաւորն՝ որ ի գանազան ախտից եւ մեղաց տկարացեալ է: Արդ՝ որպէս բժիշկին դեղն դառն է. որպէս սապր. եւ այլն. եւ երբեմն կտրէ եւ խարէ. եւ ապա առողջանայ: Նոյնպէս խրատն դառն է. բայց առողջացուցանէ. եւթէ այլ խիստ լինի, յանդիմանէ՝ նախատէ՝ եւ կսկծեցուցանէ. այն է խարելն եւ կտրելն: Նա այն հիւանդն որ լսէ եւ հնազանդի բանին եւ դառն խրատուն, այնպիսին առողջանայ ի ցաւոյն: Եւ որ ոչ լսէ, այլ արհամարհէ զդեղն եւ զբժիշկն, այնպիսին մերձ է ի մահ եւ մեռանի իւր չարովն: Վասն որոյ ասէ առակն. (յորժամ նախատիցէ զքեզ բարեկամն. խոյս տուր. մի արհամարհեր եւ մի մարտնչիր. զի մի լիցի քեզ ի մահ:) Բարեկամ ասէ զվարդապետն եկեղեցւոյ եւ զծերն. որ խրատէ զքեզ՝ խոյս տուր ասէ յայն չարէն որ խրատէ զքեզ եւ հեռացիր. եւ այլ մի գործեր. մի արհամարհեր. եւ մի կռուիր: Կրկին է արհամարհելն: Մին՝ որ զբան խրատուն արհամարհէ եւ ոչ լսէ: Եւ մին՝ որ ընդ խրատօղն կռուի, թէ վասն է՞ր յանդիմանես զիս. զի՞նչ է իմ գեթն. զի՞նչ պարտիմ քեզ. եւ այլ սոյնպիսիս: Չի թէ այսպէս հակառակիս ընդ նմա, լինի քեզ այն ի մահ ասէ: Եւ մահ՝ ոչ զզգալի մահս ասէ որ հոգին ի մարմնոյն բաժանի, եւ դարձեալ միաւորի եւ կենդանանայ ի յարութեանս: Այլ մահ՝ զմեղսն ասէ. որ հոգին մեռանի մեղօք. եւ անկանի ի տանջանս յաւիտենից եւ ոչ գերծանի. այն է մահ հոգւոյն: Այլ կրկին է մեղքն. որպէս ասէ աւետարանիչն. (են մեղք՝ որք մեղք են. եւ են՝ որք մահու չափք են:) Չի մեղքն զոր զղջմամբ գործէ մարդն, եւ յետոյ փոշիմանի եւ խոստովանի, այն մեղքն հիւանդութիւն էր. զի դարձեալ առողջացաւ խոստովանութեամբն. իսկ որ անզեղջ է ի մեղսն, այն մահ կոչի. որպէս սատանայ որ անզեղջ կամօք մեղնչէ՝ ոչ ունի թողութիւն: Նոյնպէս եւ անզեղջ մեղաւորն՝ ոչ ընկալնու թողութիւն. զի թողութիւնս ի վերայ զղջմանն է. թէ զամենայն աշխարհի մեղս գործէ մարդ եւ զղջայ, խոստովանի, զամենայն ներէ Աստուած եւ թողու. եւ այլ թէ մին փոքր մեղք զոր մարդն անզեղջ կամօք գործէ, եւ չբերէ ի խոստովանիլ, այնմ թողութիւն

չկայ: Եւ այն է մահու չափ մեղքն՝ որ անզեղջ մնայ: Իսկ թեպէտ մեծամեծ մեղս գործէ մարդ եւ զղջանայ՝ այն ներելի է եւ թողութիւն գտանէ: Այժմ զայն ասէ իմաստունն թէ՛ յորժամ կռուիս եւ ոչ հնազանդիս խրատողին, լինի այն քեզ ի մահ. վասն որոյ թեպէտ դեղն դառն լինի եւ կսկծոտ՝ ոչ արհամարհեմք. այլ ընդունիմք. զի նա տայ զառողջութիւնն: Նոյնպէս յանդիմանութիւնն եւ խրատն՝ է քեզ որպէս դառն դեղ. եւ նախատինքն եւ սաստն՝ որպէս խարել եւ կտրել՝ որ կսկծեցուցանէ զքեզ. այլ թեպէտ կսկծեցուցանէ, այլ զառողջութիւնն ի ներքս ածէ: Դու մի վասն դառնութեան խրատուն ի հոգեւոր առողջութենէն վրիպիր: Չի՞նչ օգուտ է քաղցր շարպաթն. յորժամ մահադեղ լինի խառնեալ: Նոյնպէս եւ աշխարհիս հեշտութիւնն եւ մեղքն՝ որպէս քաղցր շարպաթ է. այլ մահացու մեղք է հոգւոյ: Ի յմպելն քաղցր է. ապա կատարածն ի մահ տանի. որպէս ասէ առակն: (Մեղր կաթէ ի շրթանց կնոջ պոռնկի. այլ կատարածն նորա դառնագոյն է քան զլեղի:) Չոր օրինակ՝ դանակին ըմբռնելիքն հեշտ է եւ կոկ. այլ միւս ծայրն մահացու է եւ սպաննող: Նոյնպէս աշխարհիս հեշտութիւնն եւ մեղքն՝ ողորկ եւ հեշտ են մարմնոյն որքան ի կեանս է. այլ յորժամ մեռանի միւս ծայրն որ մահացուն է՝ տանի ի տանջանս դժոխոցն: Եւ որպէս հիւանդն որ զցաւն զգայ՝ մերձ է առողջութեան. նոյնպէս որ հնազանդի խրատու եւ լսէ, մերձ է առողջութեան. եւ բժիշկի ի ցաւոց: Եւ որ ծանր է հիւանդութեամբ, ոչ գիտէ զցաւն. այլ խելագարեալ փախչի ի բժշկէն. եւ մեռանի ի ցաւն: Նոյնպէս որ յիմար մտօք զիմաստնոց զբանս զխրատս արհամարհէ եւ ոչ ընդունի, այնպիսն մերձ է ի մահ. եւ հասել ի դրունս դժոխոց եւ ի չարն իւր զոր խնամ տանի եւ սիրէ. եւ այնու մեռանի եւ լինի անզգայ: Իսկ որ զգայուն է եւ իմաստուն մտօք՝ իմաստունն Սողոմօն առակախօս բանիւն իւրով խրատէ եւ ասէ: (Որպէս ոսկի խնձոր ընդ սարգիոն յեռեալ. այնպէս է խրատ իմաստնոց խօսեցեալ:) Եւ վասն բազում պատճառի զխրատս իմաստնոց ոսկւոյ եւ սարդիոնի համեմատէ: Նախ զի՛ նոքա գեղեցկութեամբ զուարճացուցանեն զաչս: Եւ իմաստուն բանք զմիտս. ըստ Պօղոսի. (ամենայն բանք ձեր ի բրել աղիւ համեմեալ լիցին. զի տացեն շնորհս լսողացն:) Երկրորդ՝ զի որպէս ի նոցանէ գինտ պատուական է յականջս. նոյնպէս պատուական է իմաստուն բանն այնց՝ որք ունկն դնեն. ըստ այնմ, (ի միտ առցէ զառակս եւ զբանս խորինս. զճառս իմաստնոց. եւ զառակս նոցա. որոց իբրել լուիցէ իմաստունն իմաստնագոյն լիցի:) Եւ Տէրն՝ (ձեզ ասեմ որ լսեքդ. եւ թէ որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:) Երրորդ՝ որք գնենն գնոսա՝ ունին որպէս զվաճառօղն: Եւ ունկնդիրն՝ իւր սեփհականէ զբանն որպէս զասացօղն. որպէս ասէ առակն. (լուտրուք զիմաստութիւն եւ իմաստնագոյն լերուք:) Չորրորդ՝ զի արհամարհելի են կուրաց. եւ իմաստուն բանք՝ որք ոչ դնեն ունկն, մարգարիտ է արկեալ խոզաց: Եւ Պօղոս ասէ. (շնչաւոր մարդ՝ ոչ ունի՝ զհոգւոյն. զի յարմարութիւն է նմա:) Զինգերորդ՝ զի սարդիոնն քար է ի տախտակ դատաստանի քահանայապետին. նոյնպէս եւ իմաստուն բանք՝ դատեն զդատաստանն ուղղութեամբ. որպէս Սողոմօն զպոռնիկ կանայսն. եւ Դանիել զձերսն շուշանայ: Վեցերորդ՝ զի անապական է բնութիւն նոցին. նոյնպէս եւ իմաստուն բանք՝ անջնջելիք. որպէս ասէ իմաստունն: (Լուսաւոր եւ անթառամ է իմաստութիւնն:) Եօթներորդ՝ զի ի բազմաց սակաւք ունին գոսսա. նոյնպէս եւ զիմաստութիւնն սակաւք ի մարդ կանէ գտանեն. որպէս ասէ ժողովօղն. (ի հազարաց գտի այր մի.)

վասն որոյ երանէ զնոսա. (երանեալ է այր՝ որ եգիտ զիմաստութիւն. եւ մահկանացու՝ որ ետես զհանճար:) Ութներորդ՝ զի ոսկին եւ սարդիոնն՝ մի զմի գեղեցկացուցանեն. եւ բանք իմաստունք՝ հաճելի են ուղիղ գործովք. եւ գործքն իմաստութեամբ: Վասն որոյ՝ ընդ բանիցն սքանչելագործեր Զրիստոսի. եւ յետ նշանացն՝ քարոզութեամբ հաստատեր. ըստ այնմ, (Յիսուս ամներ եւ ուսուցանէր:) Իններորդ՝ զի ոսկին եւ սարդիոնն՝ աշխատութեամբ ճարտարաց կազմի. այսպէս եւ իմաստութիւնն՝ աշխատութեամբ ստացեալ լինի. որպէս ասէ ժողովօղն. (ամենայն բան ջանիւ:) Եւ փիլիսոփայն սահմանէ. (իմաստասիրութիւն է գիտութիւն եակացն՝ ըստ որում եակք են:) Տասներորդ՝ ոսկին եւ ակն ծածկեալ են ի սիրտս երկրի իսկիզբն. եւ երբեմն ի ժամանակի գտանին ոմանց ոմանց: Այսպէս եւ (գանձք իմաստութեան՝ են ծածկեալ յԱստուած ըստ առաքելոյն:) Եւ յայտնէ ոմանց յորժամ եւ կամի. ըստ այնմ, (գոհանամ զքէն հայր Տէր երկնի եւ երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց՝ եւ յայտնեցեր տղայոց:) Եւ արդ՝ եղբարք եւ իմաստուն որդեակք. լսեցէք որ այսպէս բարի է իմաստութիւնն եւ լսելն զխրատն. եւ չար է անիմաստն եւ անխրատն: Չի ամենայն մեղաց պատճառ լինի տգիտութիւնն եւ անխրատ կենալն մեր: Վասն որոյ՝ աղաչեմ զձեզ սիրովն Զրիստոսի. քաղցրութեամբ լսել իմաստուն բանից եւ վարդապետաց սրբոց. զի նոքա տքնին եւ չարչարին վասն ձեր հոգւոցդ փրկութեան: Որպէս ասէ առաքեալն. (ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց եւ հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց. զի խնդութեամբ արասցեն զայն:) Եւ ինքն իմաստութիւնն հոր Յիսուսի Զրիստոսի բանն՝ ճշմարիտ՝ բացցէ զիւր երկնաւոր գանձն իմաստութեան. եւ լցուցէ զմիտս ձեր ամենայն բարութեամբ հոգեւորով: Արհամարհել տացէ ձեզ զերկրաւորս. եւ սիրել եւ ընթանալ զհետ երկնաւորին. եւ հասանիլ ի յօթեանս երկնից ի մասն վիճակի ժառանգութեան սրբոցն ի լոյս՝ ի նոյն ինքն ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ ընդ Յօր իւրում եւ Սուրբ Յոգւոյն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ վասն երիտասարդոց կամ տղայոց գրէ ի Բանն: (Ի՞ր ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ ի պահել զԲանս քո:) Սաղ. 118. 9: (Գլուխ. ԸԺԹ)

Չընթացս չորից՝ անգիտելի ասաց առակօղն. այսինքն (զհետ արծույ յօդս թռիցելոյ. եւ զհետս օձի ի վերայ վիմի. եւ զհետս նաւի ի վերայ ծովու. եւ զմիտս ամն երիտասարդի:) Չի թեպէտ ըստ մտաց ի Զրիստոսի ակնարկէ. սակայն ամենայն միտք մանկան երիտասարդի՝ անհաստատ է. եւ դիւրափոփոխ յամենայն բանս եւ ի գործս. որպէս զհոսումն գետոց, եւ զընթացս ալեաց ծովու տատանեալ: Վասն որոյ զճանապարհս կենցաղոյս ոչ կարէ ուղղութեամբ ընթանալ. զի երբեմն յաջ, եւ երբեմն յահեակ խոտորի. ի չար եւ ի բարի. յառաքինութիւն եւ ի մոլութիւն. որպէս զեղեզն շարժուն ի հովմոյ՝ անհաստատ եւ թեթեւ է: Եւ այս կամ վասն հասակին. զի յաճումն է եւ ի շարժութեան. զբարիս իւր այնպէս փոփոխէ. եւ կամ զի տհաս է միտքն եւ տկար. զչարս եւ զբարիս ոչ կարէ ընտրել. եւ կամ թշնամին մեր դիւրաւ կարէ ի Աբել՝ անկիրթ գոլով մանկանց: Յաղագս այսորիկ՝ խրատէ մարգարէն Դաւիթ զի հաստատեսցի ի բարին. ասէ: (Ի՞նչ ուղղեսցէ

երիտասարդ զճանապարհս իւր. այլ ի պահել զբանս քո:) Այսինքն, զբան պատուիրանին Աստուծոյ պահել եւ անփոփել ի սրտի. եւ ապա ուղիղ ընթանան զարդարութեան ճանապարհն: Եւ զբան պատուիրանին Աստուծոյ չորեքկին եղանակաւ պահելի է մեզ: Նախ՝ ծածկել զգործն եւ ոչ առնել ի ցոյցս մարդկան. որպէս Տէրն հրամայէ. (զողորմութիւն, զպահս, եւ զաղօթս, առնել հօր քում ի ծածուկ. եւ նա հատուցէ քեզ յայտնապէս:) Երկրորդ՝ ծածկել եւ պահել ի թշնամոյն. զի մի զբարի սերմանիս մեր քաղեսցէ. եւ զորումս սերմանեսցէ. որպէս այն (որ անկաւ առ ճանապարհաւն. եւ թռչունք քաղեցին:) Երրորդ՝ պահել զբան օրինաց ի սրտի. զի արմատանայ առ ինքեան. զի յորժամ թիրիւք յարտաքին ընթացս, ի ներքուստ կշտամբէ եւ բերէ յուղղութիւն: Չորրորդ՝ պահելի է զբանն ի սրտի վասն բազում օգտութեան, զօր ընդունիմք ի նմանէ. զի նա է իմաստութիւն. եւ նա խրատէ զմեզ. եւ նա լուսաւորէ. եւ զայլն ամենայն. որպէս ցուցանի յառաջի կայգ: *Եւ վասն բազում օգտութեան եւ շահի զբանն Աստուծոյ պահելի է ի սրտի: Նախզի՝ դիրասահ է միտք մարդոյ եւ լարծօղ. փութով գայթակղի եւ թիրի: Իսկ բանն Աստուծոյ՝ որպէս գաւազան ի ձեռնն եւ սիւն տան՝ հաստատէ զմարդն ի ճանապարհս բարիս. վասն ասէ. (փայտ կենաց է ամենեցուն. որք պատսպարին եւ որք յենուն ի նա իբրեւ ի Տէր հաստատութեամբ:) Երկրորդ՝ երիտասարդն դայեկի եւ խրատողի պիտոյանայ. զի ուսուցէ զբարիս. զի երիտասարդ որ ոչ է առ ոտս ծերոց, անջան որս է սատանայի: Այլ արդ՝ որպէս դայեակն յարտաքուստ ուսուցանէ. նոյնպէս եւ բանն Աստուծոյ ի սրտին՝ միշտ խրատէ եւ դաստիարակէ զմանուկն, ոչ գնալ ի ճանապարհս թիրս. եւ թէ գնացեալ է, դարձուցանէ: Երրորդ՝ զի մոռանայ մարդկային միտք զբան խրատու. եւ այս յերեք պատճառէ: Կամ ի բնութենէ որ հով եւ գէշ է ըղեղ գլխոյն, փտի բանն ի գիշոյն եւ մոռանայ շուտով. կամ ի հարստահարութենէ ախտից մարմնոյ յուտելոյ եւ յըմպելոյ՝ գոլոշիքն ի գլուխն ելեալ, մոռանայ զբանն: Կամ ի պատրանաց թշնամոյն. որ հանէ զբարի բանն ի մտաց. վասն այն զօրէնս Աստուծոյ պարտ է ի մտի պահեալ. որպէս հրամայեաց Աստուած Մովսէսի: (Եղիցին պատգամքս այսոքիկ ի բերան քո. ի նստիլ ի տան. ի գնալ ի ճանապարհի. ի ննջել եւ ի յառնել:) Չորրորդ՝ խաւար է միտք մարդոյս. եւ զբարին՝ ոչ տեսանէ առանց լուսոյ պատուիրանին. այլեւ խաւար է կենացաղս այս. վասն որոյ զբանն Աստուծոյ պահել պարտ է ի սրտի. զի լուսաւորեսցէ զմիտս. ըստ այնմ, (ճրագ են բանք քո ոտից իմոց:) Ոտք զմիտսն եւ զխորհուրդն ասէ. զի որպէս նախ ոտն ընթանայ եւ զհետ տանի զմարմինն. նոյնպէս նախ կամք եւ իմացումս մեր ընթանան՝ եւ զմարմինն զհետ քարշեն: Այլ որպէս ոտն յորժամ հաստատ լինի՝ զմարմինն ուղիղ պահէ. եւ թոյլն ոչ կարգնի. նոյնպէս եւ միտք մեր յորժամ ի բանն ուղիղ հաստատի, զբոլոր մարմինն ի յայն գործն կանգնէ: Հինգերորդ՝ թշնամին սատանայ շուրջանակի լար եւ որորգայթ դնէ մեզ, զի որսացէ զմեզ. ըստ այնմ, (լարս ձգեցին որորգայթ ոտից իմոց. եւ շորջ զշաւղօք իմովք եղին ինձ զգայթակղութիւն:) Եւ որպէս մեք զթռչնոցն որորգայթ զանազան դնեմք, ճարտարացն եւ տխմարացն. որպէս վարմ. ծաղաղակ. եւ այլն. նոյնպէս եւ որորգայթ որսողին մարդոյ բազում է. զի յաջ եւ յահեակ դնէ որորգայթ. այսինքն, զիմաստունն եւ զառաքինիսն ի յաջ կողմն. եւ զմարմնասեր ի ձախն: Նոյնպէս զտղայն. նոյնպէս զծերն. զայր եւ զկին. եւ զայլն: Իսկ յորժամ զբան պատուիրանին ի սրտի պահեմք, ճանաչել

տայ իւրաքանչիւրոցն զիւր որոգայթն՝ եւ զերծանին ի նմանէ: Վեցերորդ՝ պահել է զբանն Աստուծոյ ի սրտի. զի նովաւ կարգաւորին ընթացք մեր: Եւ այս կրկին է: Նախ՝ ներքին զօրութիւնք հոգւոյն. զի պարտ է որ բանն իշխէ ի վերայ ցասման. եւ ցասումն ի վերայ ցանկութեան. եւ սոքա երկուքս՝ հնազանդ լինին բանին. եւ բանն է իշխան եւ տեր ի վերայ սոցա: Երկրորդ՝ արտաքին մարմինն ստրուկ եւ աղախին է. եւ հոգին Տէր եւ տիկին. պարտ է զիւրաքանչիւրսն ի յիւրում կարգն պահել. զհոգին Տէր՝ եւ զմարմինն ծառայ: Եւ զի հոգին պատկեր է Աստուծոյ. զնա հանապազ յիմացումն Աստուծոյ պահել. եւ մարմինն պատկեր է հողոյ եւ անասնոյ. զիւր զչափաւոր պիտոյսն տալ. եւ զառ աւելն հոգւոյն: Եւ զայս այսպէս բանն Աստուծոյ կարգաւորէ՝ որ պահի ի սրտի: Եօթներորդ՝ բանն Աստուծոյ զախտ հոգւոյ եւ մարմնոյ բժշկէ. եւ առողջացուցանէ. որպէս ասէ առակն. (ապա բժշկութիւն եղիցի մարմնոյ քոյ. եւ դարման ոսկերաց քոց:) Մարմին կոչէ զգգայարանս՝ որ օտար ախտիւք հիւանդացեալ լինի: Աջօքն յարատ նայիլն. եւ ունկամբն հեշտացեալ. եւ այլ զգայարանօքն: Բանն Աստուծոյ ի ներքուստ զօտար ախտն հանէ եւ բժշկէ զնոսա: (Եւ դարման ոսկերաց:) Ոսկերք զգօրութիւն հոգւոյն ասէ. որ է բան, ցասումն, եւ ցանկութիւն, զի նոքօք զօրանայ հոգին. որպէս ոսկերօք մարմինն: Արդ՝ բանն Աստուծոյ առողջարար կերակուր է. ըստ այնմ, (ոչ թէ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւն Աստուծոյ:) Չի որպէս դեղն զոր ըմպեն՝ ունի կրկին գործ. այսինքն, զցան բժշկէ. եւ զառողջութիւն ի ներքս ածէ: Այսպէս բանն Աստուծոյ ի սիրտս մեր՝ զախտ մեղացն բժշկէ. եւ զհոգին առողջացուցանէ եւ կերակրէ: Ութներորդ՝ (զնասցես յուսով խաղաղութեան զճանապարհս քո:) Եւ կրկին յոյսն է խռովութեան յոյս՝ յորժամ ակնուկիմք պատուհասի. եւ է խաղաղութեան յոյս՝ զոր ի պահելն զօրէս Աստուծոյ ակնուկիմք հանդերձեալ փոխարինացն. եւ այն յուսովն՝ խաղաղութեամբ զնամք զճանապարհ կենցաղոյս: Չայն խոստացաւ Տէր մեր. (զխաղաղութիւն զիմ տամ ձեզ:) Այսպէս բանն Աստուծոյ ի մեզ՝ զյոյսն հաստատուն առնէ: Իններորդ՝ ասէ. (զի թէ նստիցիս՝ աներկիւղ իցես. եւ թէ ննջիցես՝ քաղցր ի քուն լիցիս:) Այսինքն, յորժամ բան պատուիրանացն Աստուծոյ ի սրտիդ լինի, եւ ի նոյն խոկաս, խռովարարքն աշխարհի զքեզ ոչ կարեն վնասել. ոչ պակասութիւ մարմնոյ. ոչ փառաց. ոչ հեշտութեան. եւ յամենայն ժամ հանգիստ լինիս ի նստիլն եւ ի ննջելն: Այլեւ նստիլն՝ զհանգչիլն ասէ մտաց ի հոգեւոր տեսութիւնն. յորժամ ննջեն եւ լքանին զգայարանքն, յայնժամ Աստուած արեալ միտքն՝ անպատմելի հեշտանայ աստուածային քաղցրութիւնն, եւ ի խոկումն պատուիրանին: Չի թէ մտօքն եւ զգայարանօքն տեսեալ զգգալիս այսպէս հեշտանայ՝ յորժամ միտքն ըստ ինքեան զիմանալիսն խոկայ՝ քանի՞ առաւել քաղցրանայ: Տասներորդ՝ ասէ. (ոչ զարհուրիս ի վերայ հասելոց եւ յարշաւանաց անպարշտաց.) այսինքն, թշնամին սատանային յորժամ մերկ ընդ մերկ մարտնչի, ոչ զարհուրս. եւ յորժամ արշաւանօք՝ այս է՝ միջնորդութեամբ չար մարդկան, կամ կանանց կամ բռնաւորաց, ոչ երկնչիս. զի բանն Աստուծոյ ի սրտիդ է հաստատեալ. եւ ինքն Տէրն վերակացու է քեզ եւ պահպանող: Որպէս ամենայն սրբոցն որք զօրութեամբն Աստուծոյ յաղթեցին թշնամւոյն. նոյնպէս եւ ինամն Աստուծոյ մեզ է կառավար, յորժամ զպատուիրան նորա ի սիրտս մեր պահեմք. զայս ասէ մարգարէն: (Ի՞նչ ուղղեսցէ երիտասարդ:) Եւ գիտելի է՝ զի պահել զբանն Աստուծոյ՝ կրկին

եղանակաւ լինի: Նախ՝ լսել եւ ուսանիլ. եւ ապա ի միտսն պահել եւ առնել: Վասն որոյ կրկին պարգեւս խոստանայ: Նախ այնմ որ լսել հնազանդութեամբ զխրատն եւ ուսանի, ասէ: (Լուր որդեակ խրատուիոր քոյ. եւ մի մերժեր զօրէնս մօր քոյ. զի պսակ շնորհաց ընկալցիս ի գլուխ քո. եւ մանեակ ոսկի ի պարանոցի քում:) Եւ պարտ է լսել որդւոց զխրատս ծնողաց: Նախզի՝ նոքա աննախանձաբար խրատեն զգաւակս իւրեանց՝ որք յետ արարչին երկրորդ արարիչ են գաւակացն. զի զհոգին Աստուած ստեղծանէ. եւ զնիւթ մարմնոյն նոքա պատրաստեն հրամանաւն Աստուծոյ: Երկրորդ՝ զի զգոյութիւն ի ծողացն ունին. պարտ է նոցա հնազանդիլ եւ լսել զխրատն: Արդ՝ հայր մեր Աստուած է՝ (որ ծնաւ զմեզ վերստին ի յոյսն. յանեղծ եւ յանթառամ ժառանգութիւնն. որպէս ասէ առաքեալն:) Եւ մայրն մեր՝ եկեղեցին է. որ ծնաւ զմեզ յարգանդէ սուրբ աւագանին: Եւ մարգարէք եւ առաքեալք եւ վարդապետք ի սմա՝ հանապազ խրատողք են մեզ ի բերանոյն Աստուծոյ: Եւ վասն կրկին իրաց լսել պարտ է զխրատս նորա: Նախզի՝ հրամայէ մեզ Աստուած շնորհաց. ապաուրեմն՝ զամենայն խրատ ճշմարտութեամբ ուսուցանէ եւ աննախանձ. վասն որոյ հնազանդիլ պարտ է մեզ: Երկրորդ՝ վասն փոխարինացն որ ասէ: (Չթագն շնորհաց առցես ի գլուխդ. եւ մանեակ ոսկի ի պարանոցդ.) այսինքն, թագակից առնէ զմեզ ընդ բնութեամբ որդւոյն իւրոյ Զրիստոսի. ըստ այնմ, (առէք զթագն գեղեցկութեան ի ձեռանէ Աստուծոյ. եւ զմանեակն ոսկի որ է լանջագեղ կամարն ի պարանոցն՝ որ սփռի ի վերայ սրտին:) Եւ զի ոսկւոյն բնութիւնն անապական է. նշանակէ զանապական խոստմունսս հանդերձեալ փառացն: Եւ պարանոցն եւ սիրտն՝ գոյսն նշանակեն. որ յայժմու կեանս յուսով ունիմք զխոստացեալ բարիսն. եւ ապա ի հանդերձեալն առնուն արդանաւորքն: Արդ՝ զայս յուսով փոխարէնս՝ նոցա դնէ որք լսեն զխրատն եւ ուսանին: Իսկ երկրորդն այն է՝ որք լսեն զբան խրատուն եւ ի միտ պահեն եւ կատարեն գործով, նոցա իմն փոխարէնս խոստանայ ի ձեռն Սողոմօսի ասելով: (Որդեակ՝ զօրէնս իմ մի մոռանար. այլ պահեա ի սրտի քում. զի երկարութիւն կենաց եւ ամբ խաղաղութեան յաւելցին քեզ:) Որդեակ ասէ. փաղաքշական է՝ որ զգորովագութ սերն նշանակէ: Եւ դարձեալ՝ զանմեղ եւ զփոքրիկ մանկունսն՝ որք անմեղք են հասակաւ եւ իմաստութեամբ: Ասէ՝ յորժամ զբանդ ի սրտի քում պահես, կեանքդ երկարի. եւ խաղաղութիւն յաւելանայ քեզ: Եւ զերկարութիւն կենաց նախ խոստացեալ է ամենեցունց. որ բարեգործացն զերկար կեանսն յաւիտենից տալոց է Աստուած. ըստ այնմ որ ասէ. (երկայք օրինեալք հօր իմոյ. ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն:) Եւ խաղաղութիւնն այն է որ ասէ. (յաշխարհի աստ զնեղութիւն ունիցիք. ընդիս զխաղաղութիւն ունիցիք. եւ զխաղաղութիւն զիմ տամ ձեզ:) Սակայն եւ աստ զնոյն մարմնաւոր կենաց երկարութիւն տայ: Եւ այս յայտ է յերից: Նախ ի նախահարցն. որք ըստ Աստուծոյ կամացն գնացին. ավելորեալ եւ լի աւուրքք ծերացեալ յաւելան առ հարս իւրեանց. որպէս Աբրահամ. Իսահակ. Յակօբ. եւ այլքն: Երկրորդ՝ յայտ է յեզեկիայ. որ զհաճոյսն Աստուծոյ պահեաց եւ աղօթեաց՝ երկարեցաւ ի կեանս նորա հնգետասան ամ: Երրորդ՝ զ յայտ է յնդգիմակէն. որ չարաց աւուրքն կարճի. որպէս ասէ Դաւիթ. (արք արիւնհեղք եւ նենգաւորք՝ մի հասարակեցցեն զաւուրս իւրեանց:) Ապա ուրեմն թէ նոքա որք չարքն են, կարճին աւուրքն. յայտ է զի բարեացն յերկարին: Եւ թէ ո՞րպէս յերկարի. այս է. Աստուած

զամենայն մարդկան կենաց թիւն՝ ընդ ծնանիլն իւրեանց չափեալ է առ Նոսա. եւ զգործս բարիս եղեալ առաջի. զի այն բարի գործովն չափի այնքան թիւ ամացն: Արդ՝ թէ մարդն ըստ կամացն Աստուծոյ գործեաց զբարին, յերկարեցան ամք Նորա. եւ ժամանեաց ի լրումն կենացն: Եթէ ոչ գործեաց զբարին, որպէս Նա գործն կարճեաց՝ Աստուած զկեանսն կարճէ եւ ոչ յերկարի: Չորօրինակ մշակն մինչ ի յերեկոյն պարտ է վաստակիլ. եւ թէ ոչ՝ զվարձն ոչ տայ. այսպէս եւ Աստուած կարճէ զկեանս չարաց: Իսկ թէ վասն Է՞ր յերկարին կեանքն բարեացն. այն է՝ զի հանապազ զհանճոյսն Աստուծոյ կատարեն. եւ զայլս ի Նոյն յորդորեն բանիւ եւ գործով զկամս Աստուծոյ առնել. եւ առանց կռոյ եւ առ ամենայն մարդ: Վասն որոյ ի խաղաղութեան կենան. ըստ այնմ որ ասէ մարգարէն. (ով մարդ՝ որ կամիս զկեանս քո տեսանել ի բարութեան, լռեցո զլեզու քո ի չարութենէ. եւ շրթունք քո մի խօսեցին զնենգութիւն:) Դարձեալ՝ այն է յաւելումն կենացն՝ որ աստ այժմ զակնկալութիւն յաւիտենից կենացն յուսով ունի առ ինքն. եւ հաւատացեա է այժմ. զայն կեանսն ի վերայ այսր յաւելու եւ յերկարէ: Եւ է առանց խռովութեան ախտից եւ մեղաց եւ ի խաղաղութեան միշտ առ Աստուած. այսպէս յերկարին կեանքն եւ խաղաղութիւնն հոգեւոր եւ մարմնաւոր յայժմու կեանս: Եւ ի հանդերձեալն՝ պատրաստեալ կենացն ժառանգութեան արժանաւորեցէ զայնոսիկ, որք լսեն զԲան պատւիրանացն Աստուծոյ եւ ի միտս պահեն: Որոց լիցի մեզ ամենայն հասանիլ անմահ եւ յաւիտենից կենացն եւ արքաիւթեանն երկնից և Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրինեալ յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ քարոզ վասն խրատու տղայոց. ի Բան առակին: (Որ ինչայի ի գաւազանն, ատեայ զորդի. եւ որ սիրէ՝ ինամով խրատէ:) Առակ. 13. 24: (Գլուխ. ԾԻ)

Չմարդն բանական կենդանի է ստեղծեալ Աստուած. հանճարոյ եւ իմաստութեան ընդունակ: Չի այսպէս սահմանեն իմաստունքն զմարդն: (Մարդ՝ կենդանի բանաւոր մահկանացու մտաց եւ հանճարոյ ընդունակ:) Այս է ընդունակ գոլն՝ որ հոգի մարդոյն բանական, որպէս անգիր պնակիտ է. կամ լուացած մագաղաթ. որ զինչ գրեն ի վերայ՝ զայն առնու: Նոյնպէս մարդոյն զինչ ուսուցանեն՝ թէ չար, թէ բարի, զայն ուսանի: Եւ յայտ է ի փոքր տղայսն. որ ի մին տան միոյ ծնողաց զաւակք. զորս յինչ արուեստ տան զհրաքանչիւրան, զայն ուսանին: Մինն զիւսն. դարբին. ջուլահակ, եւ այլն: Այսպէս յինչ գործ յոր վարժի տղայն զայնպիսին ուսանի բարի կամ չար: Եւ որպէս յինչ լեզու որ լինի տղայն՝ զայն ուսանի. հայի. կամ վրացոյ, եւ այլն: Նոյնպէս միտք տղային զինչ խրատեն՝ զայն ուսանի իմաստութիւն, գիտութիւն, քահանայութիւն, եւ այլն: Արդ՝ ծնօղն զաւակին չորս ինչ պարտական է ի մարմնաւորն: Նախ՝ սնունդն եւ դաստիարակելն: Երկրորդ՝ պիտոյք կերակրոց եւ զգեստուց: Երրորդ՝ ինչք եւ հայրենիք: Չորրորդ՝ կարգել զնոսա ամուսնութեամբ. որդոյն կին ածել. եւ դստերն այր: Եւ որպէս այս ի մարմնաւորն: Նոյնպէս եւ ի հոգեւորն պարտական է երից: Նախ ուսման հաւատոյ եւ աստուածապաշտութեան: Երկրորդ՝ ուսման բարեգործութեան: Երկրորդ՝ ուսման բարեգործութեան: Երրորդ՝ ուսման արուեստի: Եւ այս հարկաւոր եւ բարի է քան զառաջինսն. զի սովաւ կարէ

զևոսա ստանալ. գիարուեստին մուլքս եւ ստացուածս կարէ գտանել. եւ բարեպաշտութեամբն լինի Աստուծոյ բարեկամ: Դարձեալ արուեստն անգրկելի ապրանք է մարդոյն ի յայս կեանս. եւ բարեպաշտութիւն ի հանդերձեալ կեանսն. զի արուեստն մարմնոյն է. եւ բարի գործն հոգւոյն: Արդ՝ զայսոսիկ զուսումն հաւատոյ եւ զբարի գործոյ եւ զարուեստից՝ պարտական է ծնօղն ուսուցանել զաւակին: Չի թէ արուեստ չգիտէ տրդայն, գող լինի եւ աւագակ. եւ իսպանումն երթայ: Եւ թէ հաւատ եւ բարի գործ չունի, չար է եւ անօրէն. շնայ, պոռնիկի, ուտէ եւ արբենայ. եւ ի պատուհաս օրինացն եւ ի պատիժ դատաւորացն մատնի. եւ ի ձեռս զրկելոցն մատնի: Այսոքիկ մարմնաւոր պատուհաս են չա

ր զաւակացն, եւ անխրատից ծնողացն: Իսկ հանդերձեալ պատուհասն յայտնի է ամենեցուն. (որ ոչ շունք եւ ոչ պոռնիկք, ոչ գողք, ոչ արբեցողք, զարքայութիւնն Աստուծոյ ժառանգեն. այլ հուր յաւատնից է բաժին նոցա.) որպէս ասէ մարգարէն. (տեղացի ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր եւ ծծումբ՝ այս մրրիկ բաժին բաժակի նոցա:) Որպէս Սողոմ եւ Գոմոր այրեցան երկնային հրով ի մարմինս իւրեանց յօրինակ չարացն. զի տեսցեն եւ ի միտ առցեն զայրեցումն հրոյն յաւիտենից նոյն չարաց եւ շնացողաց: Արդ՝ իմաստունն Սողոմօս խրատէ զծնօղս. (Եթէ սիրեսցես զորդին քո, խրատեա գաւազանաւ. զի մի լիցի կատարած նորա որպէս սողոմացւոցն եղել. ապա թէ ինչայես ի գաւազանն՝ ատես զորդին քո:) Չոր օրինակ՝ փոքր անասուն որ այսր եւ անդր երթայ ի ճանապարհէն, մտրակաւ ուղղեմք զնա: Նոյնպէս եւ փոքր տղայն թէ՛ ի ճանապարհ օրինացն թիւր ընթանայ, գաւազանաւ խրատելի է. զի ուղղիցի ի ճանապարհս օրինաց: *Եւ թէ վասն Է՞ր գաւազանաւ խրատեմք: Նախզի՝ զքաղցրութեան խրատ եւ զիմաստութեան բան նշկահէ եւ արհամարհէ տղայն. իսկ գաւազանաւ կսկծի եւ ուղղի: Չի երեք հասակ է մարդոյս. եւ երեք ազգ խրատէ նմա. այսինքն, տղայն. երիտասարդն. եւ կատարեալն: Որ է առաջին. միջին. եւ վերջին հասակ: Արդ՝ զտղայն պարտ է եկիւղիւ խրատել. իսկ զերիտասարն քաղցրութեամբ. իսկ զկատարեալն իմաստութեամբ: Եւ այսպէս յարմար է՝ որ զտղայն գաւազանաւ եւ երկիւղիւ խրատեն: Երկրորդ՝ ոչ մարմնաւոր եւ ոչ հոգեւոր խոստմանս ունի ի միտսն. բայց միայն զհեշտութիւն մարմնոյն. վասն այն պարտ է զայն հեշտութիւնն դառնութեամբ եւ գաւազանաւ խրատել. զի դիւրաւ գայցէ յուղղութիւն: Երրորդ՝ զի տհաս է հասակաւն՝ ապստամբիլ ոչ գիտէ. գաւազանաւ խրատեա. այլ երիտասարդն եւ կատարեալն՝ դիւրաւ ապստամբի ի գաւազանէն: Չորրորդ՝ փոքր տղային՝ բազում մասունքն են ուղղելիք. այսինքն, ձեռն. լեզուն. աչքն. ականջն. եւ բոլոր մարմինն: Վասն որոյ բանիւ ոչ ուղղի. այլ խրատով գաւազանին: Զինգերորդ՝ զերդ մատղաշ ուռ է՝ որ ոլորի. եւ մոմ կակուղ՝ զմատնէհարն առնու: Նոյնպէս եւ տղային զգայարանքն կակուղ են. խրատու գաւազանին՝ զմատնէ հարն ուսման պարտ է դրոշմել ի միտս նորա: Վեցերորդ՝ որպէս մորթեգործք ի ձեռն չարչարանաց եւ աղաղելով գործեն զմորթին. նոնպէս պարտ է խրատու գաւազանաւ զտղայն աղաղել եւ գործել. զի կակղացի եւ ի գործ գացէ: Ապա թէ ոչ՝ կոպիտ եւ անգործ մնայ եւ անպիտան: Եօթներորդ՝ որպէս հիւսն զփայտն տաշէ՝ զաւելորդն եւ զանպիտանն հանէ՝ եւ ապա աթոռ կազմէ կամ այլ ինչ: Նոյնպէս զաւելորդ եւ զանպիտան տղային պարտ է խրատել եւ ուղղել. եւ ապա լինի նա աթոռ ուսման եւ

բնակարան Աստուծոյ. եւ պիտանի մարդկան: Ութներորդ՝ երկրագործն գերկիրն կակղացուցանէ՝ եւ ապա սերմանէ. նոյնպէս եւ զմիտս տղային պարտ է գաւազանաւ կակղել եւ հերկել. զի յստակիցի՝ եւ զսերմն ուսման բուսուսցէ յինքեան եւ պտղաբերեսցէ. ապա թէ ոչ՝ ի կորդացեալ երկիր սերմն ոչ բուսանի: Իններորդ՝ որպէս պարտիզի եւ զարտի հանապազ զքաղն հանեն՝ զի բոյսն զարգասցի. նոյնպէս զփոքր տղային զաւելորդ քաղ պիտին որ ի զգայարանսն բուսանի՝ պարտ է խրատովն մի մի ի բաց խլել. զի ուսմանն բոյսք ի յինքն աճեսցին: Տասներորդ՝ զի տղան զբնական անմեղութիւնն եւ զերկիւղն եւ զամօթխածութիւնն ունի. յորժամ ի մանկութեան անվարժ եւ ակիրթ թողուն, ընդ աճիլ հասակին՝ եկամուտ պիտն ի յինքն աճի. եւ զբնական ամօթխածութիւնն եւ զերկիւղն կորուսանէ. եւ լինի լիրբ եւ յանդուզն եւ անզգամ: Այլ յորժամ խրատով վարժեն զնա եւ կրթեն, արտաքին ուսումն բարեաց եւ բնական անմեղութիւնն ի միասին խառնին. եւ զեկամուտ պիտն կորուսանեն. եւ այսպէս ի մանկութենէ ի բարին վարժեալ, ժամանէ ի կատարումն բարեաց հոգւոց. որպէս ասէ. (մանուկ մտավարժ էի. եւ հոգւոյ բարւոյ դիպեցայ:) Այսպէս մտավարժ մանուկն ի ձեռն խրատողի եւ առաջնորդի՝ ժամանէ ի կատարեալ բարութիւնն. (զի մանուկ որ ոչ է առ ոտս ծերի՝ անջան որս է սատանայի.) այսինքն, զի յորժամ ծեր եւ խրատող ոչ լինիտղային, յայնժամ ի չար ընկերաց եւ ի դիւին պատրասաց եւ յիւր մարմնոյն հեշտութեանց՝ սակաւ սակաս սովորի ի չարն: Եւ սովորութիւնն յերկարեալ ի բազում ժամանակս՝ բնութիւն ստացական լինի. յետոյ թեպէտ ջանս դնեն, այլ ոչ կարեն զնա յուղղութիւն բերել: Վասն այն խրատէ իմաստունն թէ, (որ ի տղայութեան հասակն խնայէ ի գաւազանն՝ ատեայ զորդին. եւ որ սիրէ՝ խնամով խրատէ.) այսինքն, զի սեր տղային եւ խնամ խրատն է: Այլեւ խնամով խրատելն՝ է չափաւորն. որ ոչ անխրատ թողու, եւ ոչ առաւել խրատէ որպէս զթշնամի. այլ որպէս զիւր սիրելի ցաւակցութեամբ խրատէ: Եւ այնպէս խնամով խրատեա՝ որ այնու ի յուղղութիւն բերես զմանուկն: Եւ առաւել քան զամենայն՝ յերից իրաց զգուշանալի է տղային: Նախ՝ լեզուին: Երկրորդ՝ ձեռացն: Երրորդ՝ մարմնոյն: Նախ՝ պարտ է զլեզու տղային պահել. զի մի շատ խօսեսցի. եւ մի ի սուտ սովորեսցի. եւ այնու ի յերդմնահարութիւն, ի հայիոյութիւն, ի յիշոց, եւ յայլ մեղս սովորեսցի. վասն այն ամուր լկամ եւ պարիսպ պարտ է դնել դռան բերանոյն ի շատ խօսելոյ: Երկրորդ՝ պահել զձեռն ի գողութենէ. զի յորժամ սովորի ձեռն ի գողութենէ. զի յորժամ սովորի ձեռն ի սակաւ գողութիւնն, համարձակի եւ ի մեծամեծն. եւ այնու յաւազակութիւն եւ ի մարդասպանութիւն ընթանայ եւր կորնչի: Երրորդ՝ զգուշանալ պարտ է եւ պահել զբոլոր մարմինն ի ծուլութենէ. զի մի քնու եւ ծոյլ եւ շատակեր ուսցի. զի այնու ի մեծամեծ չարիս ընթացցի: Այս երեք իրաց՝ զամենայն ուրեք պարիսպ պարտ է ածել եւ զգուշանալ: Այս ի կողմնէ խրատողին: *Իսկ տղային՝ պարտ է հնազանդ լինիլ խրատու հօրն վասն չորս պատճառի: Նախզի՝ իմաստուն որդւոյն՝ պարտ է ի միտ ածել թէ՝ չիք իմ բարեկամ առաւել քան զձեռն իմ, զի որ զիս ծնաւ նա առաւել զբարին իմ կամի. ապա պարտ է հնազանդութեամբ լսել: Երկրորդ որ ի նմանէ ունի զմարմինն՝ ի նմանէ ունի եւ զարգասիսն. վասն այն պարտ է հնազանդիլ ծնողացն: Երրորդ՝ վասն օրինացն Աստուծոյ. որ հրամայէ (պատուեա զհայր քո եւ զմայր. եւր որ անարգէ զհայր եւ զմայր՝ մահու

վախճանեսցի:) Չորրորդ՝ զի ամենայն ոք գովէ զհնազանդ որդին եւ բարեբանէ. նաեւ զօրհնութիւնն առնու զծնողին որ հնազանդ է որդի: Որպէս ի Սահակ զԱբրահամուն. եւ Յակոբ զԻսահակայ օրհնութիւնն էառ: Յաղագս այսքան պատճառացս՝ պարտ է հնազանդիլ ծնողաց: Իսկ որ ոչ է հնազանդ որդի. ասէ իմաստունն. (որդի անհնազանդ՝ ի կորուստ եղիցի) յաղագս վերոյասացեալ պատճառացս: Նախզի՝ ասելի եղեւ նոցա զօրէսս արհամարհելով: Երկրորդ՝ զի ամենայն անարգ է եւ վատ եւ անհնազանդ ասէ: Երրորդ՝ զօրհնութիւն ծնողին ոչ առնու: Չորրորդ՝ զի արգասեաց եւ փարթամութեան հօրն՝ ժառանգ ոչ լինի վասն անհնազանդութեան իւրոյ. (այլ ի կորուստ եղիցի.) այսինքն, ի հայրենեաց ժառանգութենէն հեռացեալ եւ կորուսեալ ի վերայ երկրի: Եւ դարձեալ՝ ի կորուստն յաւիտենից տանջանացն վասն անհնազանդութեանն: Եւ յիրաւի՝ զի որ հօրն անհնազանդ է. կրկին վնաս գործէ: Նախ՝ ընդդէմ օրինացն Աստուծոյ: Երկրորդ՝ ընդդէմ բնութեան կարգին: Եւ վասն զի ընդդէմ բնութեան կարգին գործէ՝ մարմնով յարգասեացն կորնչի. եւ զի ընդդէմ օրինացն գործէ՝ հոգւովն ի տանջանսն կորնչի: Այս է անհնազանդ որդւոյն բաժինն. թէ հոգեւոր որդի, թէ մարմնաւոր: Չի հնազանդութիւնն ծառ է պտղաբեր. որոյ պտուղն կեանք է հոգեւոր եւ մարմնաւոր: Արդ տես՝ որոյ ծառն է՝ պտուղն. նոյնպէս որք ունին զհնազանդութեան ծառն՝ նոցա է պտուղն կեանք: Եւ որպէս նախ ծառն է եւ ապա պտուղն. նոյնպէս նախ գործ հնազանդութեանն է. եւ ապա պտուղ մեծութեանն: Եւ որպէս ծառն չոր է, եւ պտուղն չոր. եւ որպէս ծառն դաւար է, եւ պտուղն դաւար. նոյնպէս որ ունի զհնազանդութեան ծառն չորացեալ, եւ պտուղն նորին է չորացեալ: Եւ որ օրօստօրէ զհնազանդութիւն գալարէ, եւ պտուղ նորին օրօստօրէ նորոգի եւ աճի: Եւ զորր օրինակ՝ եթէ ծառ կեանք լինի տնկեալ, որոյ պտուղն զանմահութիւն պարգեւ է, ամենեքեան ցանկանալ տեսանալ զնա եւ ճաշակել ի պտուղոց նորա: Արդ՝ ծառ կեանք եւ անմահութեան է հնազանդութիւնն. եւ ոչ ի տեղիս հեռաւոր ի դրախտն, կամ յարգելելս, կամ ի հարաւ, այլ ի ներքս ի քեզ ի քումդ հոգւոջ. եթէ կամիս՝ հնազանդութեամբ կթես զանմահութիւն. զի ոչ այլ ինչ է ցանկալ հնազանդութեան, եթէ ոչ անմահ կեանք: Լուր ի Քրիստոսէ որ ասէ. (երանի հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիսս) անմահ եւ յաւիտենական կեանքն: *Եւ որպէս մարմնաւոր որդիք մարմնաւոր ծնողացն են հնազանդ. նոյնպէս եւ մեք ըստ հոգւոյ որդիք ենք Աստուծոյ շնորհօք. եւ հայր մերէ Աստուած՝ (որ ծնաւ զմեզ վերստին ի յորսն կենդանի. յանեղծ եւ յանթառամ ժառանգութիւնն երկնից:) Եւ մայր մեր եկեղեցիս. որ ծնաւ զմեզ աւազանաւն որդիս Աստուծոյ: Եւ որպէս ժառանգութիւն մարմնաւոր հարց որդւոց է. նոյնպէս եւ ժառանգութիւն հօրն երկնաւորին՝ մեզ հաւատացելոցս է. որպէս ասէ առաքեալն. (որով աղաղակեմք Աբբա հայր. այսուհետեւ չեմք ծառայ. այլ որդի՝ ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի:) Եւ թէ ոք ասիցէ ամենայն մարդիկ ստեղծմամբն որդիք են Աստուծոյ. ըստ այնմ որ ասէ մարգարէն. (ո՞չ սա ինքն է հայրն քո, որ ծնան զքեզ եւ ստեղծ զքեզ:) Ասեմք եթէ՝ նոքա որդիք են ստեղծմամբն Աստուծոյ մարմնաւոր կենդանի. եւ տուեալ է նոցա զմարմնաւոր աշխարհս ի ժառանգութիւն: Իսկ մեք որդիք հոգւոր ծննդեամբ. տուեալ է մեզ զհոգեւոր ժառանգութիւնն երկնից. ապա յայտ է որ երկու որդւոցս՝ երկու ետ ժառանգութիւն: Մարմնաւոր որդւոցն

զմարմնաւոր աշխարհս. եւ հոգեւորացն զհոգեւոր կեանս: Եւ որպէս մարմինն անցաւոր է՝ եւ ժառանգութիւնն իւր անցանէ. եւ հոգին անմահ է՝ եւ ժառանգութիւնն յաւիտենից: Եւ թէպէտ նոքա ստեղծմամբն որդիք եւ ն. այլ գործովն ծառայք են եղեալ մեղաց. ըստ այնմ, (որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց:) Ապա յայտ է զի ծառայիցն ծառայական աշխարհ է ժառանգութիւնն եւ ի հանդերձեալ կենացն ոչ ունին ժառանգութիւն: Իսկ հոգեւոր որդիքն՝ ստեղծմամբն որդիքն են Աստուծոյ առ հասարակ. եւ հոգւովն որդիք են յատկապէս. եւ գործովն որդիք են առանձին: Վասն որոյ ունին սոքա երեք ժառանգութիւն: Չմարմնաւորն աստ առ հասարակ ժառանգութիւն: Եւ զհաւատոյ ժառանգութիւնն յետ մահու հոգւով միայն: Եւ զգործոց ժառանգութիւնն ի կեանսն յաւիտենից հոգւով եւ մարմնով: Ապա զի սիրելի որդիքն եւ ժառանգութիւնն նոցա, եւ ծոյլքն ատելի որդիքն եւ ժառանգութիւնն նոցա, բաժանեցան ի միմեանց: Վասն այն սիրելի որդիքս հանապազ ինդրեմք զթագաւորութիւնն երկնից ասելով: (Յայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեցե՛ք արքայութիւն քո ի վերայ մեր:) Արդ՝ եթէ մարմնաւոր որդւոց ծնողացն հնազանդիլ պարտ է՝ զի լինիցին ժառանգք նոցա ցուցաւ, առաւել մեզ հոգեւոր որդւոցս պարտ է (հնազանդ լինիլ հորն հոգւոց եւ կեցցուք:) Եւ որպէս (անհնազանդ որդի ի կորուստ եղիցի որպէս ցուցաւ:) Նոյնպէս եւ մեք թէ անհնազանդ լինիմք որդիքս Աստուծոյ, կորնչիմք: Չո՞ր կորուստ. ոչ զանցաւորս, այլ զյաւիտենիցն. որ անգիւտ կորուստն է. որպէս ինքն ասեր մարգարէիւն: (Դուք զի՞ կոչէ զիս հայր. եւ զոր ասեմս ոչ առնէք: Կոչեմ զձեզ որդիս՝ այլ ժառանգս ոչ առնեմ զձեզ ինձ:) Եւ վկայէ այսմ իմաստունն Սողոմոն ասելով. (որդւոյ նենգաւորի բարի մի լիցի. ծառայի իմաստնոյ՝ յաջողեցին գործք:) Այսինքն, թէպէտ ի կարգ որդիութեան է, այլ նենգաւոր եւ անհնազանդ. վասն այն զրկի ի բարութեանցն Աստուծոյ. (եւ չարն չարեաւ կորնչի:) Իսկ ծառայն որ իմաստուն լինի եւ հնազանդ եւ բարի գործով, ի կարգ ազատութեան ելանէ. որպէս իսրայելացիքն որդիք կոչեին Աստուծոյ. ըստ այնմ, (որդի անդրանիկ է իմ Իսրայել:) յորժամ անլուր եղեն օրինացն Աստուծոյ, զրկեցան յարքայութենէն Աստուծոյ: Եւ հեթանոսք որք ծառայք էին մեղաց եւ կոռց, լուան Քրիստոսի եւ հնազանդեցան. եւ հաւատովք իմաստունք եղեն. եւ բարի գործով յաջողակք եղեն. եւ ազատեցան ի մեղաց՝ եւ ժառանգք եղեն արքայութեանն Աստուծոյ: Նոյնպէս եւ մեք այժմ որդիք եմք շնորհօք. յորժամ զկամս Աստուծոյ թողումք, զրկեցաք ի բարութենէն: Եւ թէ այլ ոք այլազգի կամ մեղաւոր որ այժմ ծառայ է մեղաց՝ ի ձեռն խոստովանութեան եւ ապաշխարութեան ազատի նա. եւ ի կարգ որ դէգրութեան մտանէ. ըստ այնմ, (գայցեն յարեւելից եւ բազմեցին ընդ Աբրահամու. եւ որդիքն ելցեն արտաքս:) Եւ որպէս հայրն որ սիրէ զղին իւր խրատէ զնա ասացաւ ի վերայ. եւ որդին հնազանդի հորն. նոյնպէս եւ հայրն երկնաւոր յայնժամ սիրէ, յորժամ խրատէ զմեզ. որպէս ասէ յայլ ուր առակն. (զոր սիրէ Տէր, խրատէ տանջէ զամենայն որդի զոր ընդունի:) Եւ ճշմարիտ սիրոյ նշանէ խրատն Աստուծոյ ի վերայ մեր: Նախզի՛ աստ խրատէ անցաւորօքս. եւ ի յաւիտեանից տանջանցն փրկէ. որպէս ասէ Դաւիթ. (խրատելով խրատեաց զիս Տէր, եւ ի մահն յաւիտենից ոչ մատնեաց:) Երկրորդ՝ նշան է սիրոյ. որպէս ասէ Դաւիթ. (երանի մարդոյ՝ զոր խրատես դու Տէր. եւ յօրինաց քոց ուսուցանես դու նմա:) Յորժամ մեք կամաւ անգիտանամք զօրէնսն,

խրատելովն Աստուծոյ ի գգուշութիւն գամք: Երրորդ՝ նշան է սիրոյ որ հանգստեամբ մարմնոյ ծանրանայ եւ խաւարի միտքն եւ հեռանայ յԱստուծոյ. վասն որոյ տայ զխրատն՝ եւ գստուեր հեշտութեանցն հռացուցանէ. եւ զմեզ առ ինքն մերձաւորէ: Չորրորդ՝ նշան է սիրոյ՝ որ զսիրելի որդին իւր զՏէր մեր Քրիստոս ի չարչարանս եւ ի մահ մատնեաց. յորժամ զմեզ այնու չարչարանօքն կցորդ առնէ Քրիստոսի, նա սիրոյ նշան է մեզ. (զի յորժամ չարչարանացն կցորդիմք, փառացն հաղորդ լինելոց եմք.) որպէս գրէ Պետրոս. (մի օտար համարիլ զեռանդն փորձութեան որ ի ձեզ լինիցի. այլ իբրեւ հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն՝ ուրախ լինիցիք:) Ապա ուրեմն ճշմարիտ սիրոյ նշան է խրատն Աստուծոյ ի վերայ մարդկան. վասն որոյ ասէ. (զոր սիրէ Տէր՝ խրատէ:) Իսկ մեզ համբերել պարտ է. եւ տեսանել զսիրելիսն Աստուծոյ՝ որք ոչ յամենայն ժամ ի մեծութեան կացին. այլ ի նեղութեանն համբերեցին. եւ ապա անուանիք եղեն: Չի ահա Յոբ որ նախ լցեալ էր մեծութեամբ եւ փարթամութեամբ, յետոյ ի փողոցս օթագայեալ նստեր խրատելովն Աստուծոյ: Աբրահամ որ ընչիւքն էր յղփացեալ՝ երբեմն յեգիպտոս տառապանօք շրջէր կարօտեալ կերակրոյ: Նոյնպէս եւ նահապետն Յակօբ եւ Յովսէփ եւ Դաւիթ նախ պանտիտեցան խրատովն Աստուծոյ. եւ ապա յետոյ ի հնգիստ ժամանեցին: Եւ ի նորս այսպէս ուսաք յառաքելոցն: (ամենայն անձն որ կամի բարեպաշտութեամբ կալ ի Քրիստոս Յիսուս՝ ի հալածանս կացցէ:) (ամենայն անձն որ կամի բարեպաշտութեամբ կալ ի Քրիստոս Յիսուս՝ ի հալածանս կացցէ:) Եւ Տէրն՝ (թէ հալածեն զձեզ ի քաղաքս յայսմանէ, փախիցիք յայլ զի ընդիս զխաղաղութիւն ունիցիք:) Վասն այն պարտ է նեղութեանն համբերութեամբ տանիլ. զի այս նեղութիւնս՝ հասուցանէ ի հանգիստն մշտնջենաւոր. որպէս ասէ առաքեալն. (բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել ի հանգիստն:) Եւ այնպէս գովելի է նեղութիւնն՝ զոր մարգարէն պատուական գիւտ համարէր ինքեան ասելով. (զնեղութիւն եւ զանձկութիւն գտի:) Ապա պարտ է համբերել նեղութեան. եթէ յարրտաքուստ գայցէ. եւ եթէ ոչ լինի, մաք մեզէն անձամբ մեր պարտ է գտանել նեղութիւն. եւ զմարմինս մեր չարչարել ի պահս՝ յաղօթս՝ ի ճգնութիւնս ի սով՝ ի քաղց՝ ի ծարաւ՝ ի յայլն: Վասն այն (ի խրատու համբերութեան կայք. իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած.) Այսպէս պարտ է հնազանդիլ Աստուծոյ. եթէ նեղութիւն իցէ, եւ եթէ չարչարանք, եւ եթէ մահ ուրախութեամբ կրել. զի սոքօք մերձաւորիմք Աստուծոյ. եւ հանդերձեալ կենացն արժանաւորիմք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն դատաւորաց աշխարհի. ի Բանն որ ասէ: (Դատ արեւ որ բոյն.եւ դատ իւաւունսայրոյն, կամ դատել զժողովուրդս արդարութեամբ. եւ զաղքատս իրուամբք:) Եսայ. 1. 17: (Գլուխ. ԾԻԱ)

Որ հանճարեղն իցէ զառաջնորդութիւն ստասցի ասէ իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմօն:) Վասն զի որպէս ամենայն արուեստաւոր նիւթ ինչ առաջի եղեալ ունի առ ի գործել. որպէս հիւսն զփայթ. եւ դարբին զերկաթ: Նոյնպէս առանորդաց եւ դատաւորաց աշխարհի նիւթ են գործք մարդկան եւ բանք ի նոցանէ խօսեցեալ առ ի քննել: Եւ որպէս նոքա նախ ի միտս երեւեցուցանեն զարուեստն եւ ապա ի գործն. նոյնպէս եւ դատաւորն նախ ի

միտս իւր իմաստութեամբն խորհի եւ իմանայ զհեռաւորն եւ զհանդերձեալն. եւ ապա ի դիպօղ ժամու խօսի եւ յառաջ բերէ: Եւ որպէս ձեռք եւ մատունք արւեստաւորացն են գործիք. նոյնպէս լեզուն եւ բանն դատաւորաց: Եւ փոխանակ արտաքին գործեաց՝ ունի եւ դատաւորն եւ առաջնորդն զիրս ուսուցութեան դատաստանի եւ քննութեան կանոնաց եւ օրինաց: Եւ որպէս որ վարժեալ է յարուեստն. նա գործէ զգործն. նոյնպէս որ վարժեալ ունի զմիտս իմաստուն, եւ զլեզուն հանճարեղ. եւ է կարգաւոր ի խօսս, նա նստի յաթոռ դատաւորութեան. եւ ուղղեսցէ զմարդիկ: Վասն այն ասէ. (որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստացի) վասն չորից պատճառաց: Նախ՝ զասացեալ բանս՝ կարեն գործով ցուցանել եւ լինիլ օրինակ բարեաց: Երկրորդ՝ զի զայլս բերցեն ի հաւանութիւն հանճարովն իւրեան. ողորջանօք, եւ կամ սաստիւ: Երրորդ՝ զի զդատաստան ըստ պատշաճի արացեն: Չորրորդ՝ զի (ի միտ առցեն զառակս եւ զբանս խորինս. զճառս իմաստնոց, եւ զառակս նոցա:) Նաեւ վասն չորից պարտ է ուղիղ առնել զիրաւունս դատաստանի: Նախզի՝ դատաստանն Աստուծոյ է ասէ մեծն Մովսէս. իսկ (Աստուած արդար դատաւոր է ի վերայ ամենայնի ասէ մարգարէն:) Նա պարտ է ուղիղ դատաստան առնել. զի մի թիրեցէ զդասաստանն Աստուծոյ: Երկրորդ՝ դատաւորն պատկեր Աստուծոյ է նստեալ ի դատել եւ ի քննել. պարտ է ըստ նմանութեան Աստուծոյ ուղղապէս դատել. զի մի դատապարտեսցի յԱստուծոյ: Երրորդ՝ զի հրեշտակն յաթոռոցն Աստուծոյ առաքի առ դատաւորն եւ տեսանէ. զի նոքա են վերակացուրք դատաստանի: Եւ նոքա ցուցանեն զիրաւունս կամ զանիրաւութիւն դատաւորին: Չորրորդ՝ զի եւ դատաւորն դատիլոց է առաջի Աստուծոյ. եւ որպէս նա զայլս դատեաց իրաւամբ թէ անիրաւութեամբ. նոյնպէս լինելոց է նմա եւ յարդար դատաստանին Աստուծոյ: Եւ գիտելի է՝ զի վասն չորից իրաց թիրի դատաստանն. տգիտութեամբ. կաշառօք. երկիւղիւ. եւ ակնառութեամբ: Այլեւ չորս իր հարկաւոր է դատաստանին: Նախ՝ իմաստութիւն. զի ընտեսցէ զճշմարիտն եւ զսուտն: Երկրորդ՝ արդարութիւն. զի մի ակն առցէ կամ երկիցէ: Երրորդ՝ ամուր հաւատ. զի հաստատ կացցէ ի բանն որպէս ի հաւատն: Չորրորդ՝ փարթամ ընչիւք. զի մի վասն կարեաց կաշառս առցէ: Այլեւ չորս ինչ պիտանի է մարդոյ: Նախ՝ խոնարհութիւն զի լսիցէ զգանկատն: Երկրորդ՝ հեղութիւն, զի մի բարկացի: Երրորդ՝ համբերութիւն. զի մի շուտափոյթ լիցի: Չորրորդ՝ զի զօրութեամբ տացէ զպատիւն եւ զպատիժն դատախազացն: Իսկ զառաջինն պարտէ ստանալ զիմաստութիւնն: Նախ՝ կրթիլ եւ վարժիլ ուսմամբ զգիր դատաստանացն եւ զկանոնացն. եւ զնօմոսացն թագաւորաց. եւ զՄովսէսին: Եւ ապա առնել դատաստան. որպէս գրէ առաքեալն առ Տիմոթէոս. (ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես. որ կարօղք են իմաստուն առնել զքեզ:) Երկրորդ՝ պարտ է յստակութիւն մտաց. որ ոչ ինչ ցաւ եւ հոգ լինի ի միտն եւ պղտորէ: Երրորդ՝ վշտակցութիւն. զի այնպէս երկու դատախազացն ցաւակից լինիլ. որպէս հայր ի վերայ որդւոց. թեպէտ ի ցեն անծանօթ: Չորրորդ՝ զի իցէ համբերօղ ի բանն. զի զերկու դասուցն լուիցէ. ապա կարէ ուղիղ դատաստան առնել. թէ մարմնաւոր, եւ թէ հոգեւոր: Եւ վասն սոցա ասէ առակն. (գիտէ արդարն դատաստան առնել. իսկ անպարիշտն ոչ է խելամուտ.) այսինքն, զի ոչ է վարժեալ յիմաստութեանց. եւ ոչ ընթեռնու զգիրս դատաստանի. ոչ զելս եւ զմուտս իրացն գիտէ: Նմա ոչ է յստակութիւն մտաց. եւ ոչ է ցաւակից. եւ ոչ

ունի համբերութիւն. վասն այն լինի անիրաւ դատարւոր: Եւ վասն կրկին պատճառի գողաց երդումն ոչ է: Նախզի՝ գողին գործքն երդմնահարութիւն է. զի երբմնահարն այն է, որ արհամարհէ զԱստուած տեսող եւ վրեժխնդիր լինիլ եւ գողն յորժամ գողանայ, արհամարհէ զտեսութիւնն Աստուծոյ եւ զպատուհաս նորին: Երկրորդ՝ զի երդումն ի վերայ ճշմարտութեանն է դնելի. վասն զի սարսափելի անունն Աստուծոյ՝ ի վերայ ստութեան ոչ դնի. եւ գողն ստութիւն ունի. վասն այն ոչ է տալի երդումն. եւ թէ տան երդումն գողին՝ երկոքինն յանցաւորք են պատժին յԱստուծոյ. որք զերդումն տան, եւ որք զերդումն ուտեն: Վասն այն յորժամ երկու դատախազքն գան ի դատաստան, այն ոսոխն որ զդաւին առնէ, նմա է գիրն եւ վկայն եւ երդումն: Եւ գիրն առանց վկայի՝ անպիտան է. այլ վկայն առանց գրոց հաստատ է: Իսկ երդումն ոչ է կարօտ երկուցն. զի առաւել հաստատ է. վկայ զԱստուած բերէ. եւ ի հոգին կրէ զերդումն: Վասն այն ասէ թէ՝ երդումն կեր. այսինքն, կրեա ի քեզ. եւ կրեա ի հոգիդ. որպէս կերկուր մարմնոցն թէ հիւանդ է. մահ ածէ. եւ թէ առողջ կեանս. այսպէս եւ երդումն ուտելն՝ թէ ճշմարիտ է, օգնել եւ հաստատէ զմարդ. եւ թէ սուտ՝ սպանանէ. աստ խղճի մտօք. եւ անդ հոգւով ի տանջանս: Եւ թէ ասես՝ սա որ զդաւին առնէ՝ չունի վկայ կամ գիր. երդումն ո՞րպէս տամք նմա, զի թէ զուր ասէ: Ասեմք եթէ՝ զրախօսն ի չորս իրաց երեւի: Նախ թէ այլ բազմաց լինիցի ասացեալ զուր: Երկրորդ՝ թէ կարօտ է եւ աղքատ: Երրորդ՝ թէ նախանձ եւ թշնամութիւն ունի: Չորրորդ՝ ի կարգէ խօսիցն ճանաչի: Եւ թէ այս չորիցս մինն երեւի՝ թէ երդումն տաս, ի վերայ ստութեան է. մի տար երդումն: Ապա թէ արտաքոյ է ի չորից՝ որ մինն ոչ երեւի ի նմա, ուտէ երդումն եւ տանի. զի որ ուտէ զերդումն հոգւով, առնու եւ ուտէ զինքն մարմնով. եւ թէ տաս երդումն, այլ իմն իրաւամբ հաւանեցո զերկոսին կողմն: *Եւ թէ վասն է՞ր նստին դատաւորք ի վերայ աթոռոցն ի դատելն: Նախզի՝ լիցի ահարկու ի վերայ դատախազիցն որք զճշմարիտն ասիցեն. եւ մի յանդգնեցին ի հաւասար նստիլն: Երկրորդ՝ զի դատաւորն մի տեսցէ ակն նոցա. կամ երկիցէ ի դատելոյն. վասն այն ի բարձր նստի քան զնոսա: Երրորդ՝ զի միտքն ի ներքս ի յընտրութեան աշտարակն է բարձրացեալ. եւ ապա ի ներքոյ իւր քննէ եւ որոշէ զսուտն եւ զճշմարիտն: Նոյնպէս եւ արտաքին մարմնով ի բարձր է նստեալ. եւ քննէ եւ որոշէ զսուտն եւ զճշմարիտն նոցա: Չորրորդ՝ որպէս այն որ ունի զկշիռն ի ձեռն՝ ի բարձր է նստեալ. եւ զնժար կշռոյն է բարձրացուցեալ. եւ ապա երեւի արդարութիւն: Նոյնպէս եւ դատաւորն ի բարձր է նստեալ. եւ ունի զարդարութեան կշիռն. այսինքն, որ զբանն արդարութեամբ հարցանէ. եւ իրաւամբք հատուցանէ երկոցունցն: Եւ յերեք տեղի երեւի արդար կշիռն: Նախ ի նժարն. եւ ապա ի լուծն. եւ ապա ի թաթն: Նոյնպէս ի դատաստանն նախ պարտ է լսել զերկուց խօսսն հանդարտութեամբ. եւ ի միտս քննել որպէս զնժարն զոր ի վեր քարշեմք. եւ ապա լեզուովն որպէս ի լուծն զարդարութիւնն խօսիլ: Եւ ապա որպէս ի թաթն զվճիռ իրաւանցն հատուցանել: Զինգերորդ՝ հատուցմունք փոխարինացն՝ են ի բարձրագունից եւ ի մեծամեծաց. որպէս ի թագաւորաց կամ յիշխանաց: Արդ՝ դատաւորն ոչ միայն քննող է, այլեւ հատուցանող բարեացն եւ չարացն. պատիւ կամ պատուհաս. վասն այն ի բարձր տեղւոջ է նստեալ՝ որ ցուցանէ զիշխանութիւն հատուցանելոյն: Վեցերորդ՝ ունի այլ իմն բարձրագոյն խորհուրդ. զի (Աստուած է արդար դատաւոր ասէ մարգարէն:) Եւ դատաւորն

փոխանորդ Աստուած՝ զգործս Աստուծոյ գործէ. Եւ որպէս Աստուած ի բարձունս երկնից Է բազմեալ Եւ դատէ զարարածս. Նոյնպէս Եւ դատաւորն ի բարձր Է Նստեալ: Եւ որպէս Տէր մեր Յիսուս Քրիստոս յորժամ գայցէ ի դատաստան ի կատարածի աւուրն, Նստի յաթոռ փառաց իւրոց. այսինքն Է, լուսեղէն ամպով ի վերայ օդոյ ի բարձունս: Եւ ոմանք աջակողմեանք. Եւ ոմանք ձախակողմեանք անդ ժողովին. Եւ դատէ արդարութեամբ: Այսպէս դատաւորն ի տիպ Եւ յօրինակ Քրիստոսի Նստի ի վերայ աթոռոյ. Եւ այնպէս ի ծունկս անկեալ առաջի Նորա ի հաւասար տեղւոջ երկու դատախազքն. այսինքն, ոսոխք Եւ դատեցեալքն: Եւ յորժամ քննէ արդարութեամբ, զոմն ի յաջակողմն կանգնէ որ ճշմարիտն Է. Եւ զոմն ի ձախ՝ որ սուտն Է. Եւ տայ վճիռ երկոցունցն: Իսկ վկայն հաստատութիւն Է բանին: Նախ պարտ Է որ ընտրէ զվկայն՝ որ հաւատարիմ լինի ի խօսսն Եւ ճշմարիտ հանապազ: Եւ արդար ի գործսն. Եւ ուղիղ ի հաւատսն. այնպիսին ճշմարիտ վկայութիւն տայ: Այլ ստախօս մարդոյ Եւ չարի Եւ անհաւատի վկայութիւնն՝ սուտ Է Եւ չէ ընդունելի: Դարձեալ՝ հաւատարիմ վկային երեք ինչ պիտոյ Է: Նախզի՝ յապաղէ Եւ քննէ ի միտսն իւր զվկայութեան բանն. զի թաքուն Է բանն որ վկայութիւն ինդրէ: Երկրորդ՝ զի տեսցէ զիւր դէմսն Եւ զնոցայն որով զվկայութիւն տայ. զի մի ի մեղս անկցի: Երրորդ՝ զի զբան վկայութեանն հաստատ Եւ հաւանական բանիւք խօսեսցի: Ապա թէ զայս քննութիւնս ոչ ունի, ասէ առանկ. (վաղվաղակի վկայն՝ ունի լեզու անիրաւ:) Չի որ վաղվաղակի տայ վկայութիւն, երեք պակասութիւն ունի բան Նորա: Չի կամ Է թեթեւամիտ. Եւ կամ կաշառակուրծ. կամ աչառոտ: Եւ յետ սոցա վկայութեան բանն՝ անհաւատ լինի լսողացն: Այսպէս պարտ Է քննել զվկայսն: Եւ յօրէնսն Է գրեալ թէ՝ (յերկուց Եւ յերից վկայից՝ հաստատի ամենայն բան:) Եւ թէ ոք ասիցէ՝ ո՞րք են ի վկայս հաստատ. որ տեսանէ՞, թէ որ լսէ՞, թէ որ ըմբռնէ Եւ վկայէ՞: Ասեմք թէ՝ երեք դեմք են դատաստանի. այսինքն, դատաւորն. դատախազքն. Եւ վկայքն: Արդ՝ դատաւորին պարտ Է որ զինչ լսէ՞ դատէ զնոյն. ըստ Տեառն. (որպէս լսեմն դատեմ:) Իսկ վկայիցն հաստատ Է տեսն աչաց. ըստ այնմ, (որ ետես Եւ վկայեաց. Եւ գիտեմք զի ճշմարիտ Է վկայութիւն Նորա:) Իսկ ոսոխացն գործ՝ փոխանակ ձեռացն Է քննելի: Ապա ուրեմն յայտ Է յայսցանէ՞ զի լսելով վկայն չէ հաստատ. Նաեւ կուրին վկայութիւնն թեպէտ ձեռօք ըմբռնէ, չէ հաստատ. իսկ թէ խուլն տեսանէ Եւ վկայէ՞ հաստատ Է: Եւ գիտելի Է՞ զի դատախազքն չորիւք առնուն զվճիռն: Նախզի՝ միտք դաւընկերին՝ զիւր թիւրն ուղիղ տեսանէ: Երկրորդ՝ զինքն յաղթօղ կամի ի վերայ ընկերին: Երրորդ՝ զի գրգռէ ի դատաստան առ դատաւորն: Չորրորդ՝ հարցաքննեալ Եւ սուտ գտեալ, առնու զվճիռն զայն՝ զոր ինքն ընկերին կամէր՝ զսուտ լինիլն Եւ գյաղթիլն Եւ զպատժիլն: Եւ այս երեւի յայտնապէս ի յերկու պոռնիկ կանայսն՝ որք վասն մանկանցն կացին առաջի Սողոմօնի ի դատաստան: Իսկ կաշառն ի տուօղն Եւ յառնօղն՝ վեց վնաս գործէ: Նախ՝ որ տայ զկաշառն Եւ զիրաւունսն թիւրէ: Երկրորդ՝ որ զհոգին իւր կորուսանէ: Երրորդ՝ ի յնչից զրկի: Նոյնպէս Եւ կաշառառուն Նախ՝ զիրաւունսն Աստուծոյ թիւրէ: Երկրորդ՝ զի կուրանայ աչքն համարձակայեաց՝ Եւ ոչ կարէ ուղիղ տեսանել: Երրորդ՝ զի զհոգին կորուսանէ: Որպէս ասէ առանկ. (կաշառառուն՝ զանձն իւր կորուսանէ Եւ սատակէ: Այս վեց ազգզէն՝ Է մի միայն շահ լինիլն ի կաշառուց: Եւ տես զչարն որ այն սակաւ ինչքն՝ զայս ամենայն բարիս կորուսանեն: Եւ այն Է

պատճառն՝ որ զԱստուծոյ իրաւունսն փոխէ. վասն այն ասէ. (որ կաշառ ի վերայ իրաւանց ոչ առնու, մի սասանեսցի յաւիտեան:) Իսկ եթէ կաշառ լինի վասն իրաւանց հաստաստութեան՝ բարի է. որպէս յորժամ վասն հաստաստութեան հաւատոյ եւ եկեղեցւոյ՝ ինչս եւ կաշառս տամք այլազգեաց. եւ կամ յաղօթս յիշատակելոյ. կամ նուերս պատարագաց. եւ այլ արդիւնս, այսպիսիքս բարին են: Այլեւ գիտելի է՝ որ երկու ազգ է մարմնաւոր կաշառն: Մինն ամենեւին չար է տուողին եւ առնողին. որ ի վերայ դատաստանին լինի՝ որ թիւրի իրաւունքն: Եւ է մին կաշառ՝ որ երբեմն չար է, եւ երբեմն բարի: Որպէս յորժամ աղերս տանին մեծամեծաց՝ եւ այն եւս կաշառ է. թէ առնու զայն եւ զնորա խնդիրսն կատարէ, կամ փրկէ ի զրկողաց, կամ փոխարէնս կշռէ, այսպիսիս բարի կաշառ է: Եւ չար է՝ յորժամ առնուն զկաշառս եւ զաղերս՝ եւ զնոսա կամսն ոչ կատարեն. եւ ոչ փրկեն ի զրկողէն. եւ փոխարէնս ոչ տան: Դարձեալ՝ կաշառն չորս իրաց մեղանչէ: Նախ՝ զօրէնսն Աստուծոյ. որպէս ասէ ամբակում. (այն որ հրամայեաց Աստուած թէ կաշառս ի վերայ իրաւանց մի առնուցուք:) Երկրորդ՝ զիրաւունս դատաստանին փոխէ յանիրաւութիւն: Երրորդ՝ զդատաւորն կուրացուցանէ եւ կորուսանէ: Չորրորդ՝ զդատախագն զրկէ եւ պարտաւորէ: Եւ այսպէս վնասիչ է կաշառն: Վասն այն մարգարէն Ամբակում յորժամ ետես զդատաւորն որ էառ զկաշառն եւ թիւրեաց զդատաստանն առաջ իւր, չար թուեցաւ նմա. եւ խրատեաց զդատաւորն. յորժամ ոչ լուաւ, յայնժամ դարձաւ առ Աստուած եւ թախանձելով պատուհաս խնդրէր զրկողացն: Եւ յորժամ երկայնամիտ լինէր Աստուած եւ ոչ պատուհասէր, յայն ժամ աղաղակէր. (ընդ է՞ր ցուցեր ինձ ցաւս եւ վաստակս. զի դատաւորն առաջի իմ էառ կաշառս. թիւրեաց զդատաստանն եւ պարտաւորեաց զարդարն:) Դարձեալ՝ դատաւորքն որք առնուն զկաշառս՝ չորս իրօք մեղանչեն: Նախ՝ որ կապի միտքն ի սեր նիւթական ընչիցն: Երկրորդ՝ կուրանայ աչքն. եւ զԱստուած տեսող ոչ համարի: Երրորդ՝ ընդ նմա զօրանայ միտքն ըստ այնմ, որ զքաղց ազահութեան կերակրեաց. զի ազահութիւնն քաղց է առաւել քան զկերակրոյն: Մին որ քաղցն կերակրոյ՝ ստամոքսին է. եւ քաղցն ազահութեան՝ հոգւոյ եւ բարուցն: Եւ միւս՝ որ մարմնոյ քաղցն յագի. եւ ազահն բարուք ոչ յագի այլ հանապազ ի քաղց է եւ կարօտ: Չորրորդ՝ որ զիրաւունս աղքատին թիւրէ, եւ զրկէ զնա. վասն այնորիկ դատէ զնա Աստուած այնու որ ասաց (դատաստան արդար դատեցարուք. եւ դատ արարէք որբոյն եւ այրւոյն:) Եւ նոյնպէս ըստ մեղացն չորեք կին պատժէ զնա դատաւորն Աստուած: Նախ վասն այն՝ որ միտքն կապի ընդ արծաթոյն. կապեսցի հոգի նորա եւ մարմին նորա յերկիր եւ ի դժոխս: Եւ վասն երկրորդին՝ կուրանայ եւ ոչ տեսանէ զդատաւորն Աստուած. եւ Աստուած անտես առնէ զնա ի դատաստանին: Վասն երրորդին՝ զօրանայ անյազ պատիժն ի վերայ նորա՝ որ անվախճան տանջէ: Եւ վասն չորրորդին՝ զրկեսցի եւ ինքն յարդար իրաւանցն Աստուծոյ. եւ դատապարտիցի ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն: Եւ թէ վասն է՞ր դատաւորք ընդ փոքր յանցանացն մեծ պատիժ տան մարդոյ. որպէս վասն գողութեան զակն հանեն. եւ զձեռն կտրեն, եւ այլն: Ասեմք եթէ՝ արդարապէս պատժին յանցաւորք. ըստ գործոց, եւ վասն գործոց. ըստ գործոցն այն է՝ զի որ մասն որ գործող զչարն, նովին եւ պատժի. որպէս անարգողաց զլեզուն հատանեն. եւ գողոց զձեռն: Եւ վասն գործոցն այն է՝ որ զգործն ոչ կարեմք պատժել,

զմասն կտրեմք. զի մի դարձեալ գործեսցէ զնոյն: Այսպէս եւ ի վերջնումն դատաստանին՝ պատժ է Աստուած զգործունեայն մեղաց. եւ զմեղս ընդ նմին: Դարձեալ՝ ասէ իմաստունն. (որ սերմանէ անզգամութիւն հնձեսցէ զչար:) Սերմանքն երեք յատկութիւն ունին: Նախ՝ զինչ եւ սերմանեն՝ զնոյն եւ հնձեն. թէ գարի. թէ եղինչ: Երկրորդ՝ որ սերմանէ՝ բեղնաւոր հնձէ: Երրորդ՝ որ սերմանէ՝ դարձեալ ժողովէ: Նոյնպէս որ սերմանէ զչար գործս, հնձէ զչար պատիժս. կամ անդ յԱստուծոյ կամ աստ ի դատաւորաց հոգւոյ եւ մարմնոյ իշխանաց. որք վրեժ ինդրեն ի չարագործաց: Այլ երիւք զանազանի պատիժն Աստուծոյ եւ դատաւորաց: Նախզի՝ աստ դատաւորք ըստ մարմնոյն պատժեն. իսկ անդ Աստուած զհոգին եւ զմարմինն տանջէ: Երկրորդ՝ աստ ժամանակաւ պատժի. եւ անդ յաւիտենից: Երրորդ՝ աստ ըստ գործոց, եւ վասն գործոց պատժի. իսկ անդ ըստ գործոց, եւ վասն գործոց, եւ զգործսն տանջէ որպէս ցուցաւ: Ապա յայտ է որպիսութիւն տանջանաց աստի դատաւորաց: Որով փրկեսցէ զմեզ Զրիստոս եւ զամենայն հաւատացեալս իւր՝ յահեղ դատաստանեն եւ ի դառն տանջանացն եւ ի յաւիտենից հրոցն եւ ի վճռոյն ամեն:

Նորին քարոզ ի տօնս Պետրոսի եւ Պօղոսի. ի խոյ հարդ երկոտասն առաքելոցն. ի Բանն: (Կոչեաց առ ինքն զերկոտասան աշակերտս եւ առաքեաց զնոսա:) Մարկ. 6. 7: (Գլուխ. ճիԲ)

Թէ վասն Է՞ր զառաքեալսն երկոտասան ընտրեաց: Վարդապետք եկեղեցւոյ ասեն բազում պատճառի: Նախ՝ որպէս երկոտասան գունդս հրեշտակաց ասաց ի յերկինս: Եթէ ըստ իւրաքանչիւր դասուցն՝ եւ զբոլոր գունդս իմանալեաց. որպէս ոմանք այսպէս դատեցին: Եթէ յերիցն կարգապետութիւն դասուց՝ որ է առաջին, եւ միջին, եւ վերջին, չորրորդ կարգ էին. որպէս չորեքկերպեան կենդանիքն: Իսկ հրեղէն վիշապն որ անկաւ երկնից՝ տտամբ իւրով քարշեաց զմի յերից մասանցն զչորրորդն. եւ յերկիր կործանեաց: Եւ մնացեալն ի նոցանէ եղեւ ինն դաս: Երեք առաջին. երեք միջին. եւ երեք վերջին: Արդ՝ որպէս ի յերկինս են երկոտասան գունդս հրեշտակաց. նոյնպէս Տէրն ի յերկրի ընդրեաց երկոտասան գունդս առաքելոցն: Այլեւ Եսայի երես զՏէր նստեալ ի վեայ աթոռոյ. որ էր բանն մարմնացեալ ի վերայ եկրի: Եւ երկու սերովբէքն վեց վեց թելս ունելով՝ երկոտասան առաքեալքն որք սպասաւորք էին Զրիստոսի: Այլեւ գերագոյն պատիւք սերովբէցն՝ զերկոտասաներորդ կարգապետութեան նոցա գոյն նշանակեցին վեց վեց թելօքն իւրեանց: Երկրորդ՝ որպէս ի կամարն երկնից են երկոտասան կենդանակերպք, շրջապատեալ զերկուս կիսագունդս: Նմանապէս եւ յեկեղեցի որ է երկին ի վերայ երկրի, երկոտասան առաքելովք է շրջապատեալ. որպէս մարմնով առ ստորինս Սիօն. եւ հոգւով ի վերինն Երուսաղէմ (յոգիս անդրանկաց կատարելոց որպէս ասէ առաքեալս:) Երրորդ՝ որպէս երկոտասան ամիսք պսակք են բոլոր տարւոյն. նոյնպէս ամենայն անօրէնութիւն փրկչին եւ տարեկան Տեառն ընդունելի՝ երկրոտասան առաքեալովք պսակի եւ կատարի: Չորրորդ՝ երկոտասան ժամ է աւուրն. որպէս հրամայէ Տէրն: Օր կոչէ զինքն. եւ ժամք զերկոտասան առաքեալսն: որք զլոյս աւետարանին ծագեցին Ամենայն աշխարհի: Հինգերորդ՝ երկոտասան հողմուկք ընդ չորս ծագս տիեզերաց, որ ի չորս

ծագս տիեզերաց, որ ի չորս եղանակս տարոյն, որով սառն եւ պարզ. ձիւն եւ ձօռք յերկիր իջանեն, շարժելով զբոյսս դալարի ի ծաղիկ եւ ի պտուղ: Նոյնպէս երկոտասան առաքեալքն՝ շնորհօք հոգւոյն ընդ ոլորտս տիեզերաց զգարնանաշարժ հողմ հարաւոյ՝ եւ զղօղն կենաց արձրել են հաւատով եւ պտղով բարեաց: Այլեւ անհաւատից աւ անզղջից՝ ձիւն եւ սառն, կարկուտ եւ կայծակ խրատ պատուհասի արկանեն մարդկան. զի զղջացեալ դարձցին ի մեղաց եւ ապաշխարեցեն: Վեցերորդ՝ երկոտասան էին նախապետք հնոյն Իսրայելի. նոյնպէս եւ երկոտասան առաքեալք ցեղապետք եւ ծնօռք նորոյս Իսրայելի. յորմէ բազմացան եւ եղեն որպէս զասեղս երկնից լուսաւորք. որ ոչ ոք ի սոցանէ հարճ որդիք, այլ ամենայնքն ազատք եւ ազատի ծնունդք վերնոյն Երուսաղէմի: Եօթներորդ՝ երկոտասան էին աղբիւրքն աղիմայ, եւ եօթանասուն արմաւենիք, յորժամ անցին ընդ ծովն եւ ելին յանապատ: Եւ երկոտասան վտակք ի վիմէն բղխեալ. նշանակ երկոտասան առաքելոցն. զովացուցանօղք մարդկան՝ որք անցանեն ընդ ջուր աւազանին մկրտութեամբ. եւ քաղցրագոյն վարդապետութեամբ. որք ի կենդանի վիմէն բղխեցին ընդ ոլորտս տիեզերաց երկոտասան ազգք քրիստոնէից: Ութներորդ՝ երկոտասան էին իշխանք որք անցին ընդ ծովն կարմիր. նմանապէս եւ երկոտասան առաքեալքն՝ իշխանք եւ թագաւորք տիեզերաց. որք կոխեցին զծով կռապաշտութեան՝ որ որդէկոտոր արեամբն ներկեալ էր. եւ ցամաք ոտիւք բնակեցան ի ծոց եկեղեցւոյ: Այլեւ երկոտասան լրտեսքն ի նոցանէ առաքեալք՝ ի տիպ երկոտասան առաքելոցն. որք լրտեսեցին զտիեզերս. ոչ երկմիտ որպէս տասուներն. այլ միամիտք որպէս երկուներն. որք բերին մեզ զողկոյզն կենաց Քրիստոսի լծակօք խաչին. եւ զբժշկական քաղցր վարդապետութիւն հոգեւոր կենացն ապաշխարութեան: Իններորդ՝ երկոտասան էին ակունք վակասին ի լանջս քահանայապետին. ի տիպ երկոտասան առաքելոցն՝ որք լուսաւոր բանիւ ճառագայթածեւ փայլմամբ յարեգականէն արդարութեան պայծառացեալ. ոչ ի կուրծս միոյ քահանայի, այլ ի բովանդակ ի սիրտ եւ ի հոգիս հաւատացելոց անբաժանելի միաւորութեամբ եղան: Այլեւ ի ճշմարիտ քահանայապետին Քրիստոսի որպէս ասէր. (դու հայր ի յիս եւ ես ի քեզ. կամիմ զի եւ սոքա ի մեզ իցեն. զի տեսանիցեն զփառս իմ:) Տասներորդ՝ երկոտասան քարինքն յորդանանու՝ յորժամ եհան յետու ի ցամաք եւ շինեաց սեղան՝ նշանակք են երկոտասան առաքելոցն. որք ի միջոյ փորձանաց աշխարհական գետոց՝ ելին ի ցամաք. եւ շինեցան սեղան Աստուծոյ եւ հիմունք եկեղեցւոյ. յորոյ օրինակ ի շինուածս նորա եկեղեցւոյ՝ անտաշ քարինս երկոտասան դնեմք ի հիմունս. եւ երկոտասան լուսանցոյցքս զառաքելոցն ի մեզ նկարեն զխորհուրդ. որք ճանապարհ եմուտ եղեն երկնաւոր լուսոյն ի մեզ ծագելոյ: Մետասաներորդ՝ երկոտասան եզինք Սողոմօնի՝ որք ի չորս կողմանէ բարձեալ էին զծովն պղնձի. երեքն յարեւելից. եւ երեքն յարեւմտից. եւ երեքն ի հիւսիսոյ. եւ երեքն ի հարաւոյ: Նոյնպէս եւ երկոտասան ամուլք հաւատոյ էին առաքեալքն. երեք երեք առաքեալքն ի դէմս երրորդութեանն. որք ի չորս կողմ տիեզերաց բարձեալ բերին զիմանալի աւազանն. զոր ճշմարիտ Սողոմօնն շինեաց ի սրբութիւն հոգւոյ եւ մարմնոյ մեղաց: Երկոտասաներորդ՝ արար զարմանալի աթոռ Սողոմօն. եւ երկոտասան առիւծակերպ կենդանիք ընդդէմ միմեանց ի նշանակ երկոտասան առաքելոցն. որք բարձին զՏէրն ի վերայ ինքեանց. եւ եղեն հանգիստ եւ

բնակութիւն նորա. եւ են առիճակերպք ահագին ի վերայ թշնամոյն. եւ թագաւորք աշխարհի: Երեքտասաներորդ՝ երկոտասան էին իշխանք հացատուք տանն Սողոմօնի. ի նշանակ երկոտասան առաքելոցն. որք եղեն կերակրիչք հաւատացելոց Քրիստոսի կենդանական հացիւ բանին Աստուծոյ. վասն որոյ ասէր մարգարէն. (կացոյց զնոսա իշխանս ընդ ամենայն ազգս. զի յիշեսցի անուն նորա ընդ ամենայն ազգս ազգաց:)

Չորեքտասաներորդ՝ երկոտասան են տիրական անդամք մեր՝ որք են գործիք ամենայն մեղաց եւ արդարութեան: Նմանապէս եւ սուրբ առաքեալքն՝ երկոտասան անդամք են գլխոյն Քրիստոսի. եւ իբր զիմաստուն բժիշկ՝ բուռն հարեալ գտիրական անդամաց մերոց. զոր թշնամին սատանայ արար զէն մահու եւ մեղաց, արարին ի Քրիստոս գործի կենաց եւ արդարութեան: Յնգետասաներորդ՝ կոչմունք երրորդութեանն դիմաց նոյնքան գրով դրոշմին. որ է հայր. որդի. հոգի: Վասն որոյ մեր՝ նոյնքան առաքեալս ընտերաց. եւ յայտնեաց նոցա զերիցն անձնաւորութիւն բոլոր տիեզերաց. եւ դրոշմեաց ի սիրտ հաւտացելոց զերրորդութեանն դաւանութիւն: Վեշտասաներորդ՝ որպէս ասէ տեսիլն: (Նշան երեւեցաւ յերկինս. կին մի արկեալ զիւրեւ զարեգակն. եւ զլուսինն ի ներքոյ ոտից. եւ երկոտասան աստեղք պսակ ի գլուխ իւր:)

Արդ՝ կինն նշանակէ զԵկեղեցի սուրբ. զի հարսն է Քրիստոսի եւ բազմածին. որ զարեգակն առաւօտին է զգեստաւորեալ: Եւ ի վերայ ստուերակերպ եւ փոփոխական օրինացն է բարձրացեալ: Իսկ պսակ յերկոտասան աստեղաց՝ է երկոտասան առաքելոցն քարոզութիւն. եւ երկոտասան աստիճանք հաւատոյն. որովք պայծառացեալ պսակի սուրբ Եկեղեցի ի գլուխն իւրով ունելով զդաւանութիւն հաւատոյն, ընդ առաքինութեան սիրոյն յեռեալ եւ շարագարդեալ ի փառս եւ ի պատիւ փեսային Քրիստոսի: Եօթնետասաներորդ՝ որ ասէ տեսիլն. (քաղաքին Աստուծոյ՝ երկոտասան էին դրանք յերկոտասան մարգարտաց միաձեւ:)

Քաղաք եւ տաճար Աստուծոյ կոչի Եկեղեցի սուրբ. այսինքն, ներքինս եւ վերինն Սիօն ըստ այնմ, (զնացից ի նոսա, եւ բնակեցայց ի նոսա:)

Եւ երկոտասան դրունք քաղաքիս այսր՝ երկոտասան առաքելքն վասն երից: Նախզի՝ զճանապարհս եւ զդրունս երկնից բացին մեզ: Երկրորդ՝ զի նոքօք զէ շնորհս. եւ զմատչիլն առ հայր ընկալաք: Երրորդ՝ զի բանան եւ փակեն. այսինքն, հաւատացելոցն բանան. եւ անհաւատիցն փակեն: Իսկ մարգարիտ կոչին վասն երից: Նախ՝ վասն ողորմութեան. զի ոչ ինչ ունին յանհարթութեան չարութեանց: Երկրորդ՝ վասն պայծառ իմացմանցն եւ հաւատոցն առ Քրիստոս: Երրորդ՝ վասն մաքուր սրբութեանց: Իսկ միաձեւ դրունքն՝ զի երկոտասան առաքեալքն համաձեւ են իշխանութեամբ եւ պատուով եւ փառօք. զի միապէս ետ ամենեցուն զիշխանութիւնն կապելոյ եւ արձակելոյ: Եւ ի համբառնալն՝ (եղ զձեռս ի վերայ ամենեցուն առ հասարակ եւ օրինեաց զնոսա:)

Եւ առ հասարակ ետ զդատողական իշխանութիւնն ասելով. (նսաջիք եւ դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգս Իսրայէլի:)

Այսպէս առաքեալքն՝ են երկոտասան դրունք քաղաքին Աստուծոյ:

Որեւ չորեքլուսի էին ձեւք դրանցն. եւ երից բանալն. այսինքն, երեք յարեւելից. եւ երեք յարեւմտից. երեք ի հարաւոյ. եւ երեք ի հիւսիսոյ: Չչորից ծագաց տիեզերաց զերկրպագութիւն սրբոյ երրորդութեանն նշանակէ: Եւ նոյն ինքն դուռն խաչաձեւ տեսակացեալ զայն ցուցանէ՝ որք ի ձեռն

կենարար խաչին ընկալաք զգիտութիւն սուրբ երրորդութեանն. եւ արժանացաք մտիցն: Իսկ որ ասէ. (դրունքն ոչ փակէին ի տուէ եւ ի գիշերի. այլ բաց էին հանապազորդ:) Յուցանէ թէ՛ առաքելական քարոզութիւն բաց է ամենեցուն, որք կամին մտանել. եւ ոչ փակի երբէք. եթէ ի գիշեր մեղաց իցեն որպէս զԿիպրիանոս. եւ եթէ ի տիւ առաքինութեանն որպէս զկուռնելիոս: Ութնետասներորդ՝ երկոտասան էին հրեշտակք պահապան դրանն: Նախ նշանակէ զնոյն զառաքեալսն՝ որք կոչին դուռն եւ դռնապանք եկեղեցւոյ նորոյս եւ վերինն Երուսաղէմի. զի բանան հաւատացելոց. եւ փակեն անհաւատից: Երկրորդ՝ երկոտասան էին հրեշտակք որք գործակից էին առաքելոցն. որպէս Տեառն մերոյ գործակից էր հոգին սուրբ. (զի հոգւովն Աստուծոյ հաներ զդէս:) Նմանապէս եւ երկոտասան առաքելոցն գործակից՝ երկոտասան հրեշտակք. որք յառաջ ընթանային հաւանական արարեալ զմիտս ժողովրդեանն ի լսողութիւն բանից քարոզութեան: Չի թէ իւրաքանչիւր հաւատացելոյ հրեշտակ մի պահապան լուեալ հաւատացաք. ապա ո՞րչափ առաւել նոցա՝ որք հիմնարկօղք են եկեղեցւոյ, եւ քարոզք անտարանին. ի հրեշտակաց առաջնորդէին իմանալապէս զհետ երթալով նոցա: Իննետասներորդ՝ (երկոտասան էին պտուղք ծառոյն կենաց ըստ միոյ ամսոյն ասէ:) Ծառ կենաց է Տէր մեր Յիսուս Քրիստոս. զի նա է դալար աստուածութեամբն եւ կենարար ամենեցուն՝ որք մերձեանս ի նա: Իսկ երկոտասան պտուղք՝ երկոտասան առաքեալն են. որք ի նմանէ պտղաբերեցան յամն եւ յամիսն մարմնով երեւելոյն աշխարհի: Իսկ տերեւ ծառոյն կենաց՝ էր բժշկարար. նշանակէ տերեւն զաշխարհակեցոյց վարդապետութիւնն Քրիստոսի եւ առաքելոցն. յորմէ զովացան ամենայն ազգաց ի տապոյ մեղաց. եւ բժշկեցան յիւրաքանչիւր հոգեկան վիրաց առողջացեալք: Զսաներորդ՝ (պարիսպ քաղաքին ասէ ունէր հիմունս եկոտասան. եւ ի նոսա անուանք երկոտասան առաքելոցն գրեալ:) Հիմն կոչի Քրիստոս ըստ առաքելոյն. (զհիմն ոչ ոք կարէ դնել, քան զեղեալն որ է Քրիստոս:) Իսկ պարիսպ կոչին շինեալքն յիւրաքանչիւր ազգաց. որք ի նա արմատացան եւ հաստատեցան յօդակապեալք հաւատովն: Այլեւ որ աստ հիմունս ասէ զերկոտասան առաքեալսն. զի գործք եւ բանք նոցա՝ հիմն կառուցան եկեղեցւոյս. որպէս ասաց առ Պետրոս. (դու ես վեմ. եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ.) այսինքն, այդ դաւանութեանդ որ խոստովանեցար զիս որդի Աստուծոյ՝ է սկիզբն եւ հիմն քրիստոնէից եկեղեցւոյ: *Եւ աստ գիտելի է՝ զի հիմն կոչի Քրիստոս. եւ հիմն կոչին առաքեալքն. եւ հինմ է հաւատն ի մեզ: Այսպէս գիտելի է՝ զի հիմն կոչի Քրիստոս եւ զլուխ անկեան. զի նա է սկիզբն եկեղեցւոյ եւ կատարումն. (որ արար զերկոսեանն մի.) այսինքն, զերկինս եւ զերկիր. զիրեայս եւ զհեթանոսս: Իսկ հիմունք են առաքեալքն իբր մերձաւորք Քրիստոսի. եւ իբր զճարտարապետ շինօղք: Իսկ հիմն է հաւատն ի մեզ. եւ իւրաքանչիւր գործք շինւած ի վերայ նորա. ոսկի, արծաթ, եւ այլն. կամ փայտ, խոհու, եւ այլն: (Եւ հիմունք քաղաքին՝ էին յականց պատուականաց. եւ ի նոսա անուանք առաքելոցն գրեալ էին ասէ.) Չի ի վերայ դրանց քաղաքին Աստուծոյ՝ երկոտասան ազգաց քրիստոնէից անուանքն էին գրեալք. զի որ ոք հաւատացէ ի Քրիստոս, նա մտցէ ի նա: Նոյնպէս եւ ի վերայ հիման երկոտասան առաքելոցն անուանքն էին գրեալք՝ զի որ ոք աշակերտեսցի նոցա, նա շինեսցի ի վերայ նոցա: Եւ դարձեալ՝ որպէս ի վակաս

քահանայապետին հնոյ գոյր երկրոտասան ակն պատուական. նոյնպէս ի հիմունս եկեղեցւոյս նորոյ, են երկրոտասան ակունք պատուականք: Եւ որպէս այն զնահապետացն անուանսն. այսպէս եւ այս զամենահամբաւ եւ զհռչակելի առաքելոցն ունի զնկարագրութիւն անւանցն: Եւ այսու ցուցանի թէ՛ ձայնակից են միմեանց հին եւ նոր եկեղեցի: Այլ այսու զանազանին: Նախգի՛ անդ օրինակ. եւ աստ ճշմարտութիւն: Երկրորդ՝ զի այն ի տարին միանգամ ի լանջս քահանային եւ ի տաճարն մտեալ: Եւ աստ միշտ եւ հանապազ առ քահանայապետն Թրիստասի եւ հիմն վերին տաճարին կառուցեալ: *Չոր պարտ վարկանիմ զհւրաքանչիւրոցն յայտնել զյատկութիւն ըստ սրբոյն վարդանայ ասացեալ այսպէս: Հիսն առաջին պարսպին՝ Յասպիս. որ է Պետրոս. զի յասպոյ որակի գոյնս՝ է կանաչ որպէս զմրուխտ: Սա ունի զնմանութիւն գլխաւոր առաքելոյն Պետրոսի վասն երից: Նախգի՛ զմեռելութիւնն Թրիստոսի ի մարմնի իւր եբարձ գլխիվայր խաչելովն. վասն որոյ ճարտարք զկենդանագիր պատկերի նորա՝ թխակերի գրեն փռանկի դահնայ կոչեցեալ. որ ունի զկանաչագեղ մթին եւ թուխ: Երկրորդ՝ նշանակէ զմիշտ կենդանի սերն՝ որ առ նա փթթեաց. եւ յայտ է յերից հարցմանց սիրոյն՝ որ բժշկութիւն եղեւ երից ուրացութեանց նորին: Երրորդ՝ ցուցանէ որ հովուեաց զմեզ ի տեղի դալարոջ կենարար մարմնոյն ճաշակման: Եւ առ ջուրս հանգստեան սնոյց կենսաբուխ վարդապետութեանն. որպէս ընկալաւ հրաման ի Տեառնէ. (արածեա զոչխարս իմ:) Վասն որոյ ակն յասպիս՝ նշանակէ զՊետրոս առաքեալն: Երկրորդ Շափիւղայ. որ է Պօղոս: Չի այս քար՝ նշան է երկնային օդոյն կապուտակ գունով. որպէս լազվարդ. որ է ապացոյց առաքելոյն Պօղոսի վասն երկուց: Նախգի՛ նա (բարձրացաւ մինչեւ յերրորդ յերկինս. եւ լուա բանս անճառ:) Երկրորդ՝ զի ի քարոզ աւետարանին՝ որպէս զօդ փոփոխական արար զվարս իւր. (ընդ հրեայսն հրեայ լինէր. եւ ընդ հեթանոսս հեթանոս. եւ յամենայն ամենայն. զի զամենեսեան շահեցաւ:) Երրորդ Ակն Կոճագմ. պղնձագոյն. զոր կոչեն ոմանք Կայծ. որ է Անդրեաս վասն երկուց: Նախգի՛ բորբոքեցաւ հոգւով ի սերն Թրիստոսի: Եւ երկրորդ՝ խաչեալ ընդ Թրիստոսի. եւ զանձն ի վերայ սիրելոյն պատարագեալ. եւ այսու նմանեալ Թրիստոսի: Չորրորդ Չմրուխտ. որ Յօհաննէս վասն երկուց: Նախգի՛ զմրուխտն կանաչ է գունով. եւ երկրորդ զի ձիթով սնանի: Նշանակէ զաւետարանիչն Յօհաննէս. զի աւետարանական ճառիւն՝ եօծ զմեզ շնորհօք հոգւոյն սրբոյ. որպէս ուսոյց թէ՛ (շնորհք եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Թրիստոսի եղեն:) Այլեւ կենդանացոյց զմեզ յաւիտենից յուսովն. որպէս գրէր. (կեանքն յայտնեցաւ. եւ տեսաք եւ վկայեմք ձեզ զյաւիտենից կենացն որ է առ հօր եւ երեւեցաւ մեզ:) Վասն այն զմրուխտ է Յօհաննէս. զմիշտ կենդանութեան մանկութիւնն նշանակելով: Հինգերորդ Ակն Ըղնկնաքարն. որ է Յակօբոս. մարդկայի ըզնկան գունով է քարն այն: Եւ ըղունկն ունի երեք յատկութիւն: Նախգի՛ անզգայ է: Երկրորդ՝ զմեռելոյ գոյն ունի: Երրորդ՝ զի նախ մեռանի քան զբոլոր մարմինն: Եւ յիրաւի հայր առ Յակօբոս եղբայրն Յօհաննու. զի ի մեջ երկուտասան առաքելոցն՝ նախ քան զամենեսեան ընդ Թրիստոս ի մեռելութիւն մարմնոյն՝ ընկալաւ զբաժակն որպէս եւ ուխտեաց. զի որք ըմպեն զբաժակ գինւոյ՝ անզգայ լինին. նոյնպէս եւ նա բաժակաւ սիրոյն եւ չարչարանացն Թրիստոսի. վասն այն ըղնկնաքարն է Յակօբոս: Վեցերորդ Սարգիսն. որ է Փիլիպպոս վասն երկուց: Նախգի՛ Սարգիոն զիրոյ

գոյն ունի պայծառ. եւ առաքեալն փիլիպպոս՝ ի կախաղանին աստուածային հրովն մաքրեաց զկռապաշտութիւն ի մտաց մարդկան: Երկրորդ՝ զի բժշկական ունի զօրութիւն. որ զխոցեալս ի սրոյ բժշկէ. նոյնպէս եւ առաքեալն զխոցեալ հոգիս նոցա ի մահ մեղաց՝ բժշկէր եւ թողութիւն շնորհէր ի վերայ խաչին: Եօթներորդ Ոսկէ քարն. որ Է Բարթուղիմէոս. զի քարն այն՝ ունի զնմանութիւն ոսկւոյ փայլելոյ: Եւ առաքեալն Բուրթուղիսէոս՝ զնմանութիւն ճշմարիտ եւ անապական մարմնոյն Զրիստոսի՝ յանձին ստացաւ: Չի մերկացաւ զմորթ մեռելոտի մարմնոյն. եւ զգեցաւ զգեստ զանմահ եւ զանապական յաւիտենից կենացն: Ութներորդ Բիւրեղ. որ Է թովմաս վասն երից: Չի քարն այն ծովատիպ Է եւ օդակերպ. եւ ընդ ակինթն լծակցի. նշանակէ զթովմաս՝ որ էր երկուորեակ ընդ աշակերտակիցն իւր: Որեւ հնդկաց եղէ քարոզ. որք էին արջասպնագոյն մարմնով: Եւ ի ձեռն հաւատոյն՝ վերածեաց զնոսա առ Զրիստոս եւ արար երկնային հոգւով: Իններորդ Տրապիզոն. որ Է Մատթէոս վասն երկուց: Նախզի՝ ակն այո կարմիր Է գունով որպէս կայծակն: Եւ երկրորդ՝ աչացանն յորժամ տեսանէ, առողջանայ: Յուցանէ զերանելի անետարանիչն Մատթէոս՝ որ նախ եցոյց զճառագայթս անետարանին. եւ զխաւարեալ միտս մարդկան նովաւ լուսաւորեաց: Տասներորդ Դահանակն. որ Թաթէոս: Զարս այս խորագոյն գոյն ունի քան զոսկոյ: Յորում ցուցանէ զառաքեալն Թաթէոս. այն որ ցանկալին քան զոսկի, եւ քան զականս պատուականս. այսինքն, զհաւատն Զրիստոսի իւրովն քարոզութեամբ շնորհեաց թագաւորին Յեղեսիա Աբգարու: Նաեւ քարսոսկեգոյն՝ նշանակէ զՅուդա Յակոբեան. զի Յուդայն խոստովանօղ լսի. եւ հաւատն Է վեմ կարծր եւ անապական: Մետասաներորդ Յակինթ. որ Է Սիմօն վասն երկուց: Նախզի՝ ակինթն զօդոյ ունի զորակ եւ լուսաւորի. նշանակէ զՍիմօն՝ որ նախանձաւոր եղէ շնորհացն Զրիստոսի: Եւ դարձեալ՝ երկրնային ունէր զխորհուրդն: Չորեւ ասաց առ փրկիչն. (Եթէ կամիս զայդ նշանդ առնել, երթ եւ յայտնեա զանձն քո աշխարհի.) վասն այն նախանձայոյզ կոչեցաւ: Երկուտասաներորդ Կարկեհան. որ Է Մատաթիա վասն երից: Նախ՝ զթիւ աշակերտացն էլից. որպէս կարկեհանս զականցն: Եւ երկրորդ՝ զի ծիրանի Է գունով: Չայն ցուցնէ՝ զի ի բաժանիլ հրեղէն լեզուացն՝ մասնակից գտաւ: Երրորդ՝ զի թագաւորական Է ծիրանին. եւ սա թագաւորեաց գումարեալ ի վերայ երկրի ի սաղիմ որպէս ասէ Դաւիթ: Այսպէս ըստ սրբոցն ասացեալ բանից՝ Եպիփանու եւ Անդրեասի, համարին յատկութիւնք ականցն ըստ հնոյ նահապետացն եւ ըստ նորոյ առաքելական հիմանցն: Չի նոքա են ճշմարտապէս հիմն հաւատոյ եւ քարինք պատուականք. ըստ մարգարէին եթէ՝ (քարինք սուրբք թաւալեցան յերկրի մերում:) Չի երկուտասան առաքեալքն հիմն եղեն. ոմն այսպէս, եւ ոմն այնպէս. եւ ի վերայ ինքեանց շինեցին զտաճարս Աստուծոյ զբանականս եկեղեցի: Եւ որպէս երկուտասան են առաքեալք. նոյնպէս եւ երկուտասան մարգարէք ի հիմն. այլեւ երկուտասան վարդապետք ի նորս: Եւ սոքա են հիմունք եւ վերակացուք եւ դաստիարակք տանն Աստուծոյ եկեղեցւոյ սրբոյ. որպէս ասէ առաքեալն. (զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ ա՛յս են. նախ զառաքեալս. երկրորդ զմարգարէս. երրորդ զվարդապետս:) Եւ այսպէս ամենքն սոքա երկուտասան թուով՝ որպէս ասացաւ. ի փառս Զրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որ Է օրհնեալ յաւիտեանս ամեն:

սականն ի յորդիութեան սերն ժամանէ: Այս է առաջին խրատն Սողոմոնի: Իսկ երկրորդ խրատն որ ասէ: (Առաքեա զհաց քո ի վերայ ջրոց. եւ յետ բազում աւուրց՝ գտցես զնա:) Չայս բանս առական եւ օրինական խօսի. զի ո՞վ կարէ գտանել զհաց ի հոսանս ջուրց անկեալ: Այլ նախ այսպէս իմանի. եթէ զողորմութիւնն ում եւ առնես, եւ յուր առնես, ոչ կորնչի, թէ մարդ չգտանես որ տաս զողորմութիւնն, անասուն կենդանեաց եւ թռչնոց եւ ձկանց տուր. զի եւ նոքա ստեղծուածք են Աստուծոյ. եւ Աստուած հատուցանէ քեզ զփոխարէնն: Վասն այն ի յօրէնսս հրամայեաց Աստուած. (զայգի քո մի առնէր ճռաքաղ. եւ ոչ զծառն. եւ ոչ զծիթենին. եւ ոչ զարտորայսն.) զի նմացորդն թռչնոց լիցի եւ գազանաց. զի եւ նոքա ստեղծուածք են Աստուծոյ. եւ բաժանակից են մարդոյս. զի յանասնոց տեղիս եմք բնակեալ եւ նոցա հաւասարեալ ըստ Դաւիթ. (մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց անբանից եւ նմանեցաւ նոցա:) Առաջին այսպէս իմանի բանս: Երկրորդ՝ ասէ առաքեալն. (զհացն ի վերայ ջրոյ)՝ այսինքն թէ, առատ արա զողորմութիւնն. որպէս ջուրն առատ բղխէ. եւ մի ճշդելով. (զի որ ճշդելով սերմանէ, նոյնպէս եւ ճշդելով հնձեսցէ:) Եւ դարձեալ թէ՝ միշտ է հանապազ արա զողորմութիւնն. որպէս ջուրն միշտ բղխէ. եւ մի ասէր թէ յերէկ տուի այսօր չունիմ. քանի որ կայ հնար, եւ գոյ ի ձեռինդ, առանց ողորմութեան օր ի վերայ քոյ միանցուցանէր. եւ աղքատին անողորմ բարս մի ցուցանէր. (զի անողորմ դատաստան լինելոց է այնմ. որ ոչ առնէ զողորմութիւնն:) Եւ ո՞ր իցէ յետ բազում աւուրց գտանելն. այն է՝ յորժամ ի դատաստանի օրն բազմին աղքատքն շուրջ զարքունական աթոռովն Քրիստոսի, ունելով իւրաքանչիւրքն զողորմութիւնն ի ձեռս իւրեանց առաջի Քրիստոսի. եւ ի նոսա ձգէ թագաւորն զձեռն իւր եւ ասէ. (որչափ արարիք միում յեղբարցս ի փոքրկանցս, ինձ արարիք. դուք եկայք օրինեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զարքայութիւնն:) Այսպէս է առաքել զհաց ի վերայ ջուրց, եւ յետոյ գտանել: Դարձեալ երրորդ բան զայս խրատէ իմաստունն թէ, (պատրաստեա յելս զգնացս քո, եւ շինեա քեզ տուն վերստին:) Ելք՝ զմահն ասէ. որ ի կենցաղոյս ելանեմք՝ ի հարկէ եւ յակամայ գնամք: Ապա զանտի պատրաստութիւն պիտի հոգալ մեզ եւ ոչ զաստի. զի այս օտար տեղի է. եւ մեք պանտուխտ աստ. զայն պարտ է հոգալ՝ ուր գնալոց եմք: Անդ շինեա. անդ տնկեա. անդ ժողովեա զինչսս քո: Վասն այն ասէ. (շինեա քեզ տուն վերստին. (ի յո՞ւր շինեմք. անդ ի տանն Աստուծոյ հօր՝ ուր (օթեւանք բազում են ասաց Տէրն:) Անդ՝ ուր երանէ մարգարէն թէ, (ելս եդ ի մտի իւրում, ելանել ի հովտես տրտմութեան ի տեղուշն յորում ուխտեաց:) Ասէ՝ (շինեա վերսին քեզ տուն:) Վերստինն՝ կրկին ասի. զի կրկին եմք գոյութիւն, մարմինն եւ հոգի. աստ զմարմնոյդ շինեցեր՝ անդ զհոգւոյդ շինեա: Եւ կրկին է կեանքս. աստ ժամանակեայ շինեցեր. անդ զյաւիտենիցն շինեա: Եւ կրկին են տեղիքս. աստ ի յերկիրս շինեցեր. անդ ի յերկիրս շինեա: Աստ ի խաւարկեանս առ մարդիկ բնակակիցս շինեցեր, անդ ի լոյսն մշտնջենաւոր եւ դասակից հրեշտակաց շինեա: Եւ դարձեալ՝ (վերստին շինեա տուն.) մկրտութեամբ արագանին շինեցաւ քեզ տուն յերկինս. եւ մեղօք քակտեցեր զնա: Եւ ո՞րպէս շինեմք աստի անդ տուն. այս է ի ձեռն մարմնական գործոց շինի տուն հոգեւոր. մի երկնչիր. դժուարին. որպէս զմարմնական տունդ շինես մարմնական նիւթով եւ գործով. նոյնպէս եւ զհոգեւոր տունն բարի գործով շինեա: Եւ զոր օրինակ՝ գտունն շինէ

տանուտերն, եւ ճարտարապետն, եւ մշակն: Տանուտերն զինչսն տայ. եւ մշակն զնիւթն ժողովէ. եւ ճարտարապետն շինէ: Նոյնպէս հոգեւոր տանս՝ տանուտերն տայ զողորմութիւնն. աղքատն ամբարէ զնիւթն զոր էառ. ճարտարապետն Աստուած է որ շինէ: Եւ այս կրկին է. կամ նմանովն զնմանն շինեմք. կամ աննմանովն զաննմանն: Նմանովն այսպէս. զի զգեստիւ աղքատին՝ զգենումք զգգեստն երկնաւոր. եւ կերակրելով եւ արբուցանելով եւ մխիթարելով եւ ի տունս ժողովելով՝ զկերակուրն եւ զմպելին հոգեւոր եւ զտունն շինեմք: Իսկ աննմանովն այսպէս. որ միայն ընչիւք ողորմութեան շինեմք զզանազան տուն լիութեամբ բարութեան. որպէս ասետարանն ասէ. (արարեք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պսակեսցի այն՝ ընկալցին ի յարկսն յաւիտենից:.) Եւ թէ ոչ ունիցիս ինչս, ջուր միայն կարես տալ աղքատաց: Ի տես կարես գնալ. ի տունն կարես բերել. եւ մի անմասն լինիր յողորմութենէն. թէ եւ ոչ զայնս ունիս. բան ունիս եւ լեզու. խրատեա եւ քարոզեա ի բարին. եւ այն եւս ողորմութիւն է հոգեւոր: Ի միտսդ տրտմեաց վասն մեղաւորին. աղօթեա արտասուօք վասն նորա. եւ այն եւս ողորմութիւն է: Դարձեալ՝ այլ իմն բարեգործութեամբ շինես զտունն. այսինքն, պահօք՝ աղօթիւք՝ արտասուօք՝ գետնախշտի լեալ. խոնարհութեամբ, հեզութեամբ, քաղցր բարուք, եւ այլ այսպիսեօք: Եւ որպէս անդ աղքատք եղեն քեզ մշակ. աստ հրեշտակք քո պահապանք՝ լինին քեզ մշակք. եւ տանին զբարի գործս քո ի վեր յերկինս յանճառ երանութիւնսն առ ճարտարապետն. եւ անդ ժողովեն եւ զանձեն. եւ նա հատուցէ քեզ յաւուրն դատաստանի. եւ տարեալ հանգուցանէ ի շինեալ օթեւանն քո: Այս է վերստին տուն շինելն: Վասն օգնութեան ողորմութեանն: Բազում օգտութիւն է յողորմութենէն. զոր սակաւուք դիցուք աստ: Նախզի՝ շինութիւն է աշխարհի. ըստ Դաւթի. (ասացեր թէ աշխարհ ողորմութեամբ շինեսցի:.) Երկրորդ՝ ոչ միայն շինութիւն, այլեւ լիացուցիչ աշխարհի. ըստ այնմ, (ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր:.) Երրորդ՝ հաւասարութիւն արդարութեամբ. որպէս ասեն վարդապետք՝ ըստ թուոյ մարդկան եւ զպիտոյսն տուեալ Աստուծոյ: Իսկ փարթամութիւն եւ աղքատութիւն՝ եղեւ ի զրկելոյն. իսկ յորժամ ողորմութեամբ բաշխի իւրաքանչիւրն, մասն ի նոյն հաւասարութեանն: Չորրորդ՝ ինամք է ողորմութիւնն մեծատանց. զի թէ այլով առաքինութեանք յետնեալ գտանին, ողորմութեամբն յաջողեսցին: Հինգերորդ՝ թողութիւն մեղաց առնէ. ըստ Դանիէլի առ Նաբուգոդոնոսոր. (զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես:.) Վեցերորդ՝ յաւուր չարէ փրկէ ըստ Դաւիթ. (երանի որ խորհի զաղքատն եւ զտնակն՝ յաւուր չարէ փրկէ զնա Տէր:.) Եօթներորդ՝ (բարձրագլուխ պարծի առ դատաստանաւն.) ըստ որում ասէ Ոսկէբերանն թէ՛ ողորմութիւնն թռչի իբրեւ զաղաւնի արծաթապատ թելօք. եւ բազմի՛ իբրեւ դշխոյ ընդաջմէ փեսային. եւ զորս ճանաչէ՛ կորզէ առ ինքն յաջակողմեան: Ութներորդ՝ ողորմութիւն զԱստուած պարտական առնէ. ըստ այնմ, (որ ողորմի աղքատին, փոխ տայ Աստուծոյ.) եւ թէ՛ (որ առնէ միում ի փոքրկանցս՝ ինձ առնէ:.) Իններորդ՝ զհուրն յաւիտենական շիջուցանէ. ըստ Եզեկիէլի թէ՛ (զհուրն եռանդնաշարժ շիջուցանէ ողորմութիւնն:.) Տասներորդ՝ ողորմութիւնն անդրժելի եւ անզողանալի չարին. ըստ այնմ, (զանձեսցէ ձեզ զանձս յաշխարհս. ուր ոչ ցեց մերձենայ. եւ ոչ գողքն չարակնելով պատառեն եւ գողանան:.) Մետասաներորդ՝ զմարդն ի նմանութիւն եւ յորդիութիւն Աստուծոյ հրաւիրէ. ըստ այնմ,

(եղերուք գթածք՝ որպէս եւ հայրն ձեր երկնաւոր գթած է:) Երկոտասաներորդ՝ ոչ միայն նման լինի, այլեւ զԱստուծոյ անունն առնու. ըստ այնմ, (ողորմած գթած է Տէր.) եւ երանելին եւ միայն հօգօրն ըստ առաքելոյ՝ ասի եւ սմա. (Երանի ողորմածաց՝ զի նոքա զողորմութիւն գտցեն:) Երեք տասներորդ՝ ողորմութիւնն զմարդն Աստուծոյ մերձաւոր առնէ. ըստ Մատթեոսի՝ որ բաշխեաց զամենայն ինչս իւր. եւ հետեւեցաւ Քրիստոսի: Չորեքտասաներորդ՝ ամենայն վարձ բարեաց նովին չափով չափի. (չափ շարժուն թաթաղուն զեղուն տացին ձեզ ըստ Տեառն:;) Իսկ ողորմութեան միոյն՝ հարիւրապատիկ եւ հազարապատիկ. ըստ առաքելոյն Պետրոսի թէ՛ (մեք թողաք զամենայն ինչս մեր՝ զի՞նչ լինիցի մեզ. պատասխանեաց. (հարիւրապատիկ առցէ. եւ զկեանսն յաւիտենից ժառանգեսցէ:) Յնգետասաներորդ՝ ողորմութիւն զդուռն առազաստի փեսային բանայ. ըստ օրինակի իմաստուն կուսանացն՝ որք զիւղն ողորմութեան ունէին: Վեշտասաներորդ՝ ողորմութիւնն զեօթնալիւր օրինութեան բարբառն լսելի առնէ. ըստ այնմ որ ասէ. (օտար էի եւ ժողովեցիք զիս եւ այլն:) Յայնժամ ասէ մէկ՝ եկայք. երկու՝ օրինեալք հօր իմոյ. երեք՝ ժառանգեցէք. չորս՝ զպատրաստեալն ձեր. հինգ՝ զարքայութիւնն. վեց՝ իսկզբանէ. այսինքն, մշտնջենաւորն եւ զանանցն նշանակելով. եօթն՝ հանդերձեալ երկիրին: Դարձեալ նման լինի ողորմածն Աստուծոյ. ըստ որում ընդաբոյս է ողորմութիւնն նմա. եւ Քրիստոսի փառք յարւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ վասն ողորմութեան. ի Բան առակին (Ողորմութեամբ եւ հաւատով սրբին մեղք) Առակ. 15. 27: (Գլուխ. ԴԸ)

Չամենայն արարածս զոր ստեղծ Աստուած բարի եւ օգտակար արար. որպէս ասէ գիրն. (զամենայն զոր արար՝ ետես եւ ահա բարի են յոյժ:) Եւ այս է բարի գոլն ամենայի՝ որք այլոց շահ եւ օգտութիւն ունին ի բնութենէ իւրեանց. եւ առանց բարւոյ եւ օգտութեան ոչ ինչ է յաշխարհս. Որպէս տեսանեմք զերկինս՝ զի հանապազ շրջելով պահէ զաշխարհս ի ծոց իւր. արեգակն եւ լուսին եւ աստեղք՝ զլոյս շնորհեն աչաց: Ծովք՝ զկենդանիս սնուցանեն: Գետք եւ աղբիւրք՝ զերկիր ոռոգեն. եւ զծարաւս արբուցանեն: Բոյսք երկիր եւ տունկք՝ պտղօք իւրեանց կերակրեն: Խոտ՝ ծաղիկք դալարիք անուշահոտք, կամ զարդարանք եւ կամ բժշկութիւնք են: Որպէս եւ քարիք եւ մայրիք՝ պէտք են շինութեանց: Եւ անասնոցն յայտին է բարութիւնն. ոմն ի լուծ. ոմն ի կիթ. բեռնաւոր եւ այլ ամենայն: Եւ զինչ եւ տեսանես՝ ամենեքեան բարութիւն ինչ շնորհեն այլոց: Ապա առաւել բարի է մարդս ստեղծեալ բանական կենդանի, եւ պատկեր Աստուծոյ. եւ տէր եւ իշխան ի վերայ արարածոցս. պարտ է առաւել բարերար եւ օգտակար լինիլ այլոց: Եւ մի յամենայն բարութեանց գործոց՝ ողորմութիւնն է մարդոյ. որպէս ասէ իմաստունն Սողոմօն: (Ողորմութեամբ եւ հաւատով սրբին մեղք:) Եւ արդ գիտելի է՝ զի չորս իրք ստիպեն զմեզ յողորմութիւնն. այսինքն, բնութիւն. բարութիւն. բարեմտութիւն. եւ օրէնք: Առաջին՝ բնութիւն ածէ զմեզ յողորմութիւն. զի բնութեամբ է որ ամենայն իր որ բարձրագոյն է, օգնական եւ կառավար լինի նուաստից. որպէս երկնային մարմինքն որք բարձրագոյնք են եւ լուսաւորք, օգնեն երկրաւոր մարմնոց, եւ կառավարեն

գնոսա: Նոյնպէս պարտ է որք ունին զմեծութիւն ընչից. օգնական լինիլ եւ կառավար աղքատաց. որբոց եւ այրեաց. եւ ուղղել գնոսա: Այլեւ բնութեամբ է որ ցաւակցին անդամք իրերաց. Նոյնպէս եւ մեզ պարտ է ցաւակից լինիլ պակասութեան եղբօրն մերոյ: Նաեւ բնութեամբ է ստամոքսին զկերակուրն բաշխել ի բոլոր մարմինն: Այսպէս պարտ է մեզ զինչս մեր հաւաստել ի բոլոր մարմին եկեղեցւոյն. ի պետս աղքատաց եւ չունեւորաց մսխել: Այսպէս բնութիւնն ածէ զմեզ յողորմութիւն աղքատաց: Երկրորդ՝ բարութիւն շարժէ զմեզ յողորմութիւնն. այն է որպէս ասացաք. որ զինչ բարի տուեալ է Աստուած ստեղծուածոց՝ զնոյն եւ այլոց հաղորդեն: Նոյնպէս զբարութիւնս զոր տուեալ է մեզ Աստուած՝ թէ հոգեւոր եւ թէ մարմնաւոր, պարտ է հաղորդել այլոց կարօտելոց. եթէ հոգեւորին եւ խրատու ողորմութեան են կարօտ, զնոյն շնորհել. եւ թէ մարմնաւոր պիտոյից են կարօտ, զնոյն բաշխել եւ հաղորդել այլոց. զի այն է մեր պտուղ հոգւոյ եւ մարմնոյ. (որպէս ծառ բարի՝ պտուղ բարի առնէ. եւ ծառ չար՝ պտուղ չար տայ:) Նոյնպէս եւ ողորմութիւնն՝ բարի պտուղ է մարդոյ. եւ անողորմութիւնն չար պտուղ. (եւ ամենայն ծառ՝ ի պտոյոյ իւրմէ ճանաչի:) Ապա ուրեմն զբարի պտուղ մեր պարտ է հաղորդել այլոց. որպէս բարի ծառն զպտուղն հաղորդ է մեզ: Երրորդ՝ բարեմտութիւնն շարժէ զմեզ յողորմութիւն: Այն է՝ որ մեք աղքատ եաք եւ կարօտ ամենայն բարւոյ, Տէր մեր ելից զկարօտութիւնս մեր. եւ հաղորդեաց իւր բարւոյն. այսինքն, զի քաղցեալ եաք՝ ետ մեզ զմարմին իւր. ի կերակուր, եւ յագեցոյց զմեզ: Եւ ծարաւ եաք, ետ մեզ զարիւնն իւր սուրբ ըմպելի. ըստայնմ, (մարմին իմ ճշմարիտ կերակուր է. եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի:) Տնանկ եաք՝ եւ ետ մեզ զյարկն յաւիտենից. ըստ այնմ, (երթամ եւ պատրաստեմ ձեզ տաղի:) Հիւանդ եաք, եւ բժշկեաց զմեզ. ըստ այնմ, (առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զնոսա:) Ի բանտի, եւ ազատեաց զմեզ. ըստ այնմ, (Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ եւ այլն:) Եւ այսպէս բարեմտութիւնս՝ ածէ զմեզ յողորմութիւն ընկերին. յորժամ ի միտ ածեմք զբարիս զոր արար Տէր մեզ եւ ուսոյց. պարտ է եւ մեզ զնոյնս առնել աղքատաց: Չորրորդ՝ օրէնքն ածէ զմեզ յողորմութիւն: Այն որ հրամայեաց Մովսէսիւ. (սիրեսցես զընկերն քո իբրեւ զանձն քո:) Չի որպէս զմարմնոյս մեր զպետս տամք. նոյնպէս զընկերին պարտ է տալ ըստ օրինացն Աստուծոյ. եւ սեր ընկերին՝ ճանապարհ լինի եւ տանի զմեզ ի սերն Աստուծոյ: Յորժամ զընկերն սիրեմք, ուսանիմ եւ զԱստուած սիրեմք:(Եւ թէ զընկերն զոր տեսանեմք ոչ սիրեմք, զԱստուած զոր ոչ տեսանեմք զիա՞րդ սիրեմք ասէ անտարանիչն:) Ապա ուրեմն պարտ է սիրել զընկերն. զի նովաւ զԱստուած. սիրեսցուք. եւ ամենայն օրինաց կատարումն՝ Աստուծոյ սերն է եւ ընկերին: Այլեւ աշխարհի օրէնքն ցուցանեն զսեր ընկերին. զի զմիմեանց կարօտութիւնս լնումք: Որպէս ի քաղաքի տեր եւ ծառայ. ճորտ եւ պարոն. տանուտեր եւ մշակ եւ այլքն. կարօտ են միմեանց: Նոյնպէս մեծատուն եւ աղքատ՝ կարօտ են միմեանց. որպէս ցուցանէ յառաջիկայոք: Ապա յայտ է թէ՝ որպէս օրէնքն Աստուծոյ եւ օրէնք աշխարհի ածեն զմեզ յողորմութիւնն. վասն որոյ ասէ իմաստունն: (Ողորմութեամբ եւ հաւատով սրբին մեղք:) *Եւ արդ՝ նախ պարտ է գիտել թէ, զի՞նչ է օգտութիւն եւ շահ յողորմութենէն. զի յոժամ գիտեմք զխասիաթն եւ զգօրութիւն նորա, յօժարիմք ի սեր նորա եւ ստանամք: Եւ թէ՝ բազում եւ անչափ է շահ եւ օգուտն ողորմութեան: Այլ գլխաւորօրէն՝ ցուցուք ըստ տասն եղանակի. ի

գրոցն Սողոմոսի յառակաց գրոցն որք են այսք: Նախ՝ որպէս ասէ նոյն ինքն առակն զառաջի եղեալ բանս եթէ, (ողորմութեամբ եւ հաւատով սրբին մեղք:) Չսոյն եւ Տէր մեր հրամայէր. (տուք ողորմութիւն. եւ ահա ամենայն ինչ ձեր սուրբ է:) Եւ դարձեալ՝ առ Նաբուգոդոնոսոր՝ ասաց. (զմեղս քո ողորմութեամբ քաւեցես, եւ այլն:) Եւ այս է պատճառն. զի որ ողորմիս կարօտելոյն եւ վշտակից լինիս թէ, տնանկ է, թէ վիրաւոր է մարմնով, թէ մերկ է ի զգեստուց, կամ քաղցեալ եւ ծարաւի, եւ զինչ եւ իցէ, լնուս զկարօտութիւն նորա, եւ Աստուած տեսանէ զքո կարօտութիւնդ՝ եւ քեզ լինի վշտակից. եւ հաւասար չափէ քեզ որպէս դու աղքատին. եւ զքո նեղութիւնդ դիրացուցանէ. այսինքն, զհոգիդ սրբէ ի մեղաց եւ առաջացուցանէ եւ զգստաւորէ: Երկրորդ՝ զի հաւատ եւ յոյս ողորմածին առաւելանայ. զի հաւատայ Աստուծոյ. եւ յուսով փոխարին տայ զողորմութիւնն. որպէս ասէ. (ողորմութիւն եւ հաւատք ի քէն մի պակասեցին:) Իբր թէ անպակաս արա. մի ասեր մի անգամ ողորմեցայ բաւական է. այլ հանապազ արա: Որպէս հաւատդ առ քեզ անպակաս է. նոյնպէս զողորմութիւնն ի քէն անպակաս պահեա: Երրորդ՝ (որ ողորմի աղքատին՝ երանելի է ասէ.) զի ողորմելով աղքատին՝ յերկինս գանձեմք զինչս մեր. եւ իմասն երանութեանն հասանիմք. որպէս եւ Տէրն ասէ. (գանձեցէք ձեզ գանձս յերկինս:) Չորրորդ ասէ. (որ գթայ ի յաղքատն, ողորմութիւն գտցէ.) որպէս եւ Տէր մեր հարմայեաց. (երանի ողորմածաց՝ զի նոքա զողորմութիւն գտցեն:) Եւ աստ որպէս Տուբիա ողորմած էր աղքատաց եւ թաղեր զմեռեալս՝ աչքն լուսաւորեցան: Եւ անդ ողորմութիւն գտանէ. որպէս այն զոր Քրիստոս կոչէ օրինութեամբ եւ ասէ. (եկայք օրինեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զկեանսն եւ այլն:) Զինգերորդ ասէ. (որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ.) ճշմարտապէս փոխ է ողորմութիւնն. զի հատուցանէ կամ աստ, կամ ի հանդերձեալն, կամ յերկու կեանսն: Աստ հատուցանէ որպէս այլազգեաց եւ մեծատանց՝ որք զփոխ ողորմութեանն առնուն ի մարմինի. եւ անդ՝ որք յուսով հանդերձելոյն տան զողորմութիւն. եւ յերկու կեանս զի մի յուսահատեցին: Աստ զմարմնաւորս տալ առատութեամբ. եւ անդ զհոգեւորն. վասն զի փոխ է՝ յորժամ կամի առնու. թէ այժմ, թէ յետոյ: Դարձեալ՝ փախ է ողորմութիւնն. այլ հատուցումն ոչ ըստ տրիցն հաւասար է, այլ ըստ կարողութեան: Չի որպէս մարդն ըստ տկարութեանն տայ զչնչին փոքրն. Աստուած ըստ իւր զօրութեանն վճարէ զմեծն. զի սա հիւանդին ի տես գնաց եւ ի բանտարկեալն. եւ նա հատուցանէ զկեանսն յաւիտեանականս: Փոխանակ մին զգեստին՝ զլուսեղէն պատմուճանն. եւ փոխանակ մին հացին՝ զանմահ կերակուրն, եւ այլն նոյնպէս: Վեցերորդ ասէ. (մեծ է մարդ եւ պատուական այր ողորմած.) այսինքն, զի ողորմածութեամբն մեծանայ մարդ եւ պատուի առաջի Աստուծոյ: Որպէս մեծն Աբրահամ հիւրասիրութեամբ եւ ողորմութեամբ պատուական եղեւ: Եւ համբերօղն Յոբ՝ հայր էր սրբոց եւ այրեաց. որ այնպէս պատուական աղեւ: Դովտ հիւրասեր եւ աղքատասեր՝ ի հրոյն Սողոմայ զերծաւ: Ի նորս Տաբթայն ի պատիւ ողորմութեանն՝ զոր յարոյց Պետրոս ի խնդրոյ որ բոցն եւ այրեացն: (Կուռնելիոսին աղօթքն եւ ողորմութիւնն ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ.) որ եղեւ այր պատուական եւ առաջին հաւատացեալ ի հեթանոսաց: Եօթներորդ ասէ. (ողորմութիւն եւ ճշմարտութիւն՝ պահապան թագաւորի.) այսինքն, զի ճշմարիտ դատաստան եւ ողորմութիւն առ

աղքատոս՝ հաստատեն զթագաւորութիւնս նորա. զի արդար իրաւունքն՝ շինութիւն է աշխարհի. յորժամ զբարիս պատու է զչարսն պատժէ, ամենայն չարգործքն փախչին. եւ տեղիքն խաղաղին եւ շինին: Նոյնպէս եւ ողորմութիւնս. զի յորժամ վշտակից լինի աղքատաց եւ ձեռնտու՝ ամենեքեան փարթամանան: Ութներորդ՝ (տուրք աղքատաց՝ դարձուցանէ զբարկութիւնս ասէ.) այսինքն, որպէս յանցաւորք յորժամ դատաւորաց նուէրս տան, զերծանին ի պատուհասէ. ապա թէ խնայեն յինչսն, աճի բարկութիւնս: Նոյնպէս դատաւոր մեծ Աստուած է. եւ մեք յանցաւորք նմա. եւ կամի պատուհասել զմեզ. յորժամ տուրս տամք աղքատաց, զայն ընդունի Աստուած եւ դարձուցանէ զբարկութիւնս. ապա թէ ոչ տամք, աճի եւ առաւելանայ պատուհասն: Մին՝ վասն յանցանացն. եւ միւս անողորմութեանն: Իններորդ զի ասէ. (գտուրս զուարթս եւ առատս սիրէ Աստուած:) Այսինքն է, մարդ որ գտուրսն տրտմութեամբ եւ դառն երեսօք տայ, վարձն թերի է. զի ըստ տրոցն առնու վարձս. այլ ըստ թերի կամացն ոչ: Այլ որ զուարթ երեսօք տայ եւ առատ բարուք, կրկին վարձս առնու: Մին՝ վասն ուրախ սրտին եւ բարի կամացն. եւ միւս՝ վասն տրոցն: Եւ սիրէ Աստուած զզուարթն մտօք՝ որ յստակ է միտք եւ պարզ խորհուրդն. որպէս զհեղն եւ զխոնարհն սիրէ Աստուած. զի ոչ ունի մախանս եւ հպարտութիւն: Այլեւ սիրէ Աստուած զմարդ որ առատանայ ի տուրս աղքատաց կրկին կերպիւ: Նախ՝ յորժամ սիրեմք զաղքատն, նովաւ սիրեմք զԱստուած. զի սեր ընկերին՝ ճանապարհ է սիրոյն Աստուծոյ. յայնժամ եւ Աստուած զմեզ սիրէ: Եւ դարձեալ՝ ի ձեռն աղքատաց Աստուած յինքն ընդունի զողորմութիւնս եւ սիրէ զմարդն. փոխանակ սիրոյն սեր. եւ փոխանակ տրոցն՝ պարգեւ յԱստուծոյ: Տասներորդ որ ասէ. (որ ողորմի տնանկին՝ ինքն կերակրի. զի հացէ իւրմէ ետ աղքատաց:) Այս զհաւասարութիւնս ցուցանէ. որ կերակրէ զաղքատն՝ ինքն կերակրի յԱստուծոյ եւ որ զգեցուցանէ, ինքն զգենու յԱստուծոյ. եւ որ հանգուցանէ, ինքն հանգչի յԱստուծոյ: Այն բանն է զոր Տէրն հրամայէ. (երանի ողորմածաց՝ զի նոքա զողորմութիւնս գտցեն:) Իսկ որ ասէ թէ՛ (ի հացէ իւրմէ ետ աղքատաց:) Իւր հաց՝ զսեփհականս ասէ. զի իւրն՝ չորս կերպիւ լինի: Կամ թէ ինքն է վաստակեալ եւ ստացեալ: Կամ թէ զնեալ է յայլմէ: Կամ այլք տուեալ են նմա: Կամ յատուկ իւր բերանոյ կերակուրն է, եւ իւր անձին զգեստն: Այս է իւր սեփհականս. զայսպիսիս պարտ է տալ աղքատաց: Ապա թէ զօտարն տայ՝ վարձն օտարաց է: Եւ յայլում տեղուջ ասէ: (Առաքեա զհաց քո ի վերայ ջրի. զի ի ժամանակի գտցես զնա:) այսինքն, թէ չլինի աղքատն, զհաց քո ձկանց բաշխեա. զի եւ նոքա ստեղծուածք են Աստուծոյ. տայ Աստուած զվարձս քո: Եւ կամ տուր թռչնոց երկնից եւ կենդանեաց. եւ մի զրկիր յողորմութենէ: Չի թէ ի ջուրն ոչ կորնչի հաց մեր, եւ ոչ թռչնոց, քանի՞ առաւել յորժամ զաղքատն կերակրեմք: Այսոքիկ եւ առաւել քան զայսոսիկ՝ շահ եւ օգուտ յողորմութենէն լինի մեզ. որպէս ուսոյց իմաստունն մեզ: Եւ զիտել պարտ է թէ՛ զի՞նչ է վնաս եւ զէն յանողորմութենէն: Նախ՝ որ ասէ նոյն ինքն Սողոմօն: (Որ զրպարտէ զտնանկն՝ բարկացուցանէ զարարիչն նորա:) Չի պատշաճ է ստեղծողին Աստուծոյ ինամարկել զստեղծուածս իւր. որպէս հայր զորդիս: Այլ աղքատք հաւասար մեծատանց ստեղծուածք են Աստուծոյ. եւ որպէս զմեծատունսն ընչիւքն ինամէ. նոյնպէս զաղքատս ինամէ ի ձեռքն մեծատանց: Արդ՝ որ ի չքաւորութիւնս աղքատին նայի եւ զրպարտէ զնա, թէ վասն Է՞ր ես դու

աղքատ. ատելի եւ նախատելի ես. այսպիսի բանք զամենակարօղն Աստուած բարկացուցանեն ի վերայ իւր. զի նա զմինն աղքատ արար. եւ զմինն մեծատուն: Երկրորդ զի ասէ. (որ անարգէ գտնանկն, մեղանչէ Աստուծոյ.) այսինքն, որպէս այն ողորմի աղքատին հաւատ եւ յոյս նորա առաւելանայ վասն փոխարինացն. նոյնպէս անողորմն՝ թերահաւատ է դատաստանին Աստուծոյ եւ յուսահատ. վասն այն ոչ առնէ ողորմութիւն: Երրորդ զի ասէ. (որ կատակէ զաղքատն, ոչ արդարացէ:) Սարսուելի է բանս իմացական մտաց. զի ոչ ոք կարէ զերծանիլ յայսմանէ. թէպէտ փոքր երեւի կատակելոյն մեղքն. սակայն պատուհասի յԱստուծոյ: Չի քամ եւ քանակ վասն այն անիծան որ զՆոյ կատակեցին. եւ մեղքող անծնունդ եկաց. զի զԴաւիթ կատակեց ի բերել տապանակին: Մանկունքն ի Բեթղէեմ սատակեցան. զի զեղիսէ կատակեցին: Նոյնպէս որ զաղքատն կատակէ եւ արհամարիէ, բարկանայ Աստուած. զի թէպէտ աղքատ է մարմնով՝ այլ փարթամ է հոգևով. եւ Աստուած զսրտի փարթամութիւնն կամի եւ պատուէ. եւ դու որ անարգես զնա՝ ոչ արդարանաս: Չորրորդ զի ասէ. (ամենայն որ ատէ զեղբայր աղքատ, հեռի լինի ի սիրոյ նորա:) Եղբայր աղքատ կոչի Տէր մեր Յիսուս Զրիստոս. որ վասն մեր աղքատացաւ. եւ մեզ մարմնակից եղբայր եղել. ի դէմս աղքատաց շրջի ի դրուսս մեր. եւ խնդրէ զբաւականն որ կարօղ ենք տալ: Եթէ ոչ տամք գթով հեռանամք ի նմանէ յաւուրն դատաստանի, լսելով զահեղ ձայնն. (երթայք յինէն անիծեալք՝ ի հուրն յաւիտենից. զի քաղցեայ՝ եւ ոչ ետուք ինձ ուտել, եւ այլն:) Հինգերորդ ասէ. (որ ինու զականջս իւր, զի մի լուիցէ տնանկաց, եւ նա կարդայ առ Աստուած՝ եւ ոչ լսէ նմա:) Եւ այս որպէս մեծատունն եղել. զի որպէս նա ոչ լսէր աղքատին Ղազարու ի յելս եւ ի մուտս յարկաց իւրոց. նոյնպէս եւ ինքն ի պապակիլն կարգաց առ Աբրահամ. եւ ոչ լուաւ նմա: Եւ այսոքիկ վասն մեր գրեցան. զի ի միտ ածցուք թէ՛ որպէս մեք աղքատին եւ տնանկին որք կարօտ են մեզ ոչ լսեմք, եւ յորժամ մեք աղաչեմք զԱստուած թէ աստ թէ հանդերձեալն՝ ոչ լսէ մեզ: Վեցերորդ ասէ. (մեծտունք եւ աղքատք՝ հանդիպին միմեանց. եւ երկուցն այց առնէ Տէր.) այսինքն, զմեծատունս եւ աղքատս ի ձեռն միմեանց կառավարէ Աստուած. զի աղքատն մեծտամբն ապրի. եւ մեծատունն աղքատովն շինի. այսպէս երկուցն այց առնէ Աստուած եւ ինամէ: Դարձեալ՝ այց առնելն՝ հատուցանելն է. յորժամ աղքատն սատարութեամբ ծառայէ մեծտանց, նոքա գրկեցեն զաղքատն. եւ մի զգուեսցեն զնա: Չի զաղքատին աղաղակն լսէ Աստուած. եւ զնա ազատէ. եւ զմեծատունն վնասէ եւ պատուհասէ. որպէս զհարայելացիսն ազատեաց. եւ զփարաւօս պատուհասեաց: Եօթներորդ ասէ. (մի յապաղէր բարի առնել կարօտելոյն յորժամ ձեռնհաս իցես եւ կարօղ. եւ մի ասեր թէ երթ եւ ի վաղիւն տաց. զի ոչ գիտես զինչ լինիցի քեզ ի վաղիւն.) այսինքն, թէ մի հեղգար ի սփռել եւ ի տալ աղքատաց՝ որ ունիս կարողութիւն. զի քանի որ կարես՝ արա զողորմութիւն այսօր. եւ մի ասեր թէ ի վաղիւն առնեմ: Չի լինի երկու վնաս. մին՝ որ նա այսօր է կրօտեալ կերակրոյ կամ ծածկութիւն. եւ մին՝ որ քեզ պատահի կամ ի դիւաց խստութիւն ընդդէմ նորա, կամ ի չար մարդկանէ, կամ ի մոռացմանէ, եւ զրկի աղքատն յողորմութենէն. եւ դու ի վարձուցն: Ութներորդ ասէ. (որ զրպարտէ զաղքատն, բազում առնէ չարիս.) այսինքն, աղքատին. նորա չէ չար, այլ չարչարողին. որպէս ասէ մարգարէին Աստուած. (վասն տառապանաց

աղքատին, եւ հեծութեան տնանկին, այժմ յառնեմ ի դատաստան, եւ ի վրեժ. եղից զփրկութիւն իմ. եւ փրկեմ զաղքատն եւ զգրկեալն. եւ համարձակիմ եւ դատեմ զնոցին չարչարողսն:) Եւ տես թէ որպէս աղքատին պարտ է ողորմիլ եւ տալ. զի այն է կարգն. եւ այս բարի է. եւ թէ ոչ տաս եւ ոչ ողորմիս, ի բաց թող. մի լինիր անողորմ եւ մի առնուր ի նմանէ. եւ այդ չար է: Իսկ թէ առնու եւ ինդրես յաղքատէն, է ամենեւին չար: Այլ թէ ըստ չորրորդ կերպին զգուես եւ զրկես զաղքատն. եւ նեղելով եւ չարչարելով զրկես զնա, է ամենեւին դառնագոյն չար. եւ քանզ չարն չարագոյն: Եւ ոչ գիտեմ թէ որո՞յ դժոխոց եւ տանջանաց մատնես զքեզ, որ այնպիսի անողորմ լինիս: Չի առաքեալն հրամայէ. (անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ զողորմութիւն:) Եւ թէ որ զողորմութիւն ոչ առնէ, անողորմ է դատաստան նորա. եւ այն որ զրկէ զաղքատն եւ չարչարանօք խլէ զինչս նորա, ո՞ր հրեղէն գետ ընդունի զնա. եւ անողորմ է դատաստանն որպէս մեծատանն. որ ի մէջ հրոյն պապակէր. եւ կաթիլ մի ջրոյ ոչ տուաւ նմա. զի նա ոչ ետ աղքատին Ղազարու ի կեանս իւրում: Իններորդ ասէ. (մի հարստահարեր զտնանկն. եւ մի անարգեր զնա. քանզի աղքատ է:) Յարստահարելն այն է՝ որ բռնութեամբ յաղթահարէ աղքատին. զինչսն խլէ. եւ բանիւ անարգէ. եւ զանիւ չարչարէ: Եւ սորա պատճառն այն է ասէ, որ աղքատ է. վասն այն զինչսն զրկես. եւ արհամարհես եւ հարկանես. զի զմեծատունն ոչ չարչարել կարես, եւ ոչ անարգել, եւ ոչ զրկել: Արդ՝ խրատ տամ քեզ ասէ. մի բռնադատեր զաղքատն. զի Տէր դատէ զդատաստան նորա: Չի որպէս փարթամն ահարկու երեւի քեզ վասն պայծառ հանդերձին, եւ վասն բազում ընչիցն, եւ վասն սպասաւոր ծառայիցն որք շուրջ են զնովաւ: Նոյնպէս բաց զաչս մտացո՞ եւ տես զհոգեւոր եւ զպայծառ հանդերձ աղքատին, եւ զանտի մեծութիւն կեանցն: Այլեւ տես՝ զի Աստուած է աղքատին պաշտպան եւ վրեժխնդիր. որ պարսպէ զնա եւ փրկէ ի քո չարեդ. եւ վրեժ ինդրէ ի քն որ բռնադատես զնա: Մի բռնադատեր զնա. եւ մի վասն նորա չարչարանս եւ պատիժս կրել յԱստուծոյ: Տասներորդ ասէ. (փրկեա զնոսա զորս ի մահ տանին. եւ զմահապարտս դնել մի ինայեր:) Աստ զկատարեալ սիրոյ ճանապարհն ուսուցանէ՝ որ ծածուկ էր ի հին օրէնս. եւ ի նորս յայտնեցաւ: Չի այս էր ի հին օրէնս, թէ (սիրեցես զսիրելիս, եւ ատեցես զթշնամիս:) Իսկ Տէր մեր հրամայեաց. (սիրեցէք զթշնամիսն ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց:) Եւ այսմ է կրկին պատճառ: Նախզի՝ ի հին օրէնսն զարդարութիւնն ուսոյց. ասաց թէ՝ (մի անիրաւէք. զսիրելիսն մի ատէք. բարեացն չար մի առնէք. այլ բարեցն բարի արարէք. զսիրելիսն սիրեցէք:) Այս արդարութիւնն է: Իսկ ի նոր օրէնս Քրիստոսի՝ ողորմութիւն է սիրել զթշնամին, եւ բարի առնել ատելոյն: Չի ամենայն գործ՝ կամ պակաս է քան զօրէնսն որ է անիրաւութիւն. կամ հաւատար օրինացն որ է արդարութիւն. կա ի վեր քան զօրէնս որ է ողորմութիւն զոր Քրիստոս ուսոյց մեզ: Երկրորդ պատճառ՝ զոր ինքն գործով կատարեաց, զնոյն ուսոյց մեզ. զի մեք էաք թշնամիք եւ ատելիք Աստուծոյ. զթշնամիսս սիրեաց. ատելեացս բարի արար. զնոյն եւ մեզ օրէնս եդ: Որպէս եւ աստ զխրատս իմաստնոյն նախ ինքն կատարեաց՝ որ փրկեաց զմեզ ի մահու. եւ դին ետ եւ ազատեաց զմեզ. ըստ այնմ. (ոչ ապականացու արծաթեղինօք եւ ոսկեղինօք զնեցայք, այլ անապական եւ սուրբ արեամբ գառնին. զի անապական է արին Քրիստոսի եւ պատուական. զի Աստուծոյ է արին. զին ետ մեզ մահապարտացս. եւ

փրկեաց ի մահու եւ ի տանջանաց: Նոյնպէս եւ առաքեալքն եւ հետեւողք
նոցա քարոզութեամբն իւրեանց փրկեցին ի գործոց մահու եւ ի տանջանաց:
Եւ թէ ոք ասիցէ յորժամ Քրիստոս փրկեաց զմեզ ի մեղաց եւ ի տանջանաց,
առաքեալքն այն զի՞նչ փրկեցին: Ասեմք եթէ՝ Քրիստոս փրկեաց ի
սկզբնական եւ զընդհանուր մեղաց զաշխարհս ամենայն. եւ ազատեաց ի
հասարակ դժոխոցն. ուր հարկիւ ամենայն ոք արդար եւ մեղաւոր տանջիւր:
Այլ առաքեալքն փրկեցին ի ներգործական մեղաց. եւ յառանձնական
տանջանաց եւ դժոխաց: Չի քարոզութեամբն ի մեղաց եւ ի կոնց դարձուցին
որ մահ է հոգւոց. եւ հաւատով եւ բարի գործովք ազատեցին ի տանջանաց
դժոխոց: Արդ՝ որպէս Քրիստոս փրկեաց զմեզ եւ ազատեաց ի տանջանաց
յաւիտենից. նոյնպէս պարտ է քեզ եւ զմահապարտն դնել եւ ազատել. թէ
անմեղ է ի չարչարնս, եւ թէ մահապարտ է ի դատաւորաց մատնեալ: Եւ թէ
ասես՝ զնա ոչ ճանաչեմ. ոչ ազգաւ՝ եւ ոչ հաւատով՝ եւ ոչ ծանօթութեամբ. եւ
ոչ նա զիս ճանաչէ բարերար եւ երախտաւոր: Ասեմք՝ թեպէտ դու ոչ
ճանաչես զնա՝ այլ Աստուած ճանաչէ զնա. եւ թէ նա քեզ չէ երախտաւոր.
այլ Աստուած քեզ երախտաւոր է՝ որ զքո շունչդ եւ զկեանսդ ետ, եւ
զամենայն մարմնոյ բարութիւնս. նորա փոխարէն հատո. եւ զշունչ եւ
զկեանս նորա թափեա: Այլեւ քեզ բարերար է Քրիստոս՝ որ քեզ ի մահու
ազատեաց. Քրիստոս զարհիւնն իւր ետ. դու արծաթ եւ ոսկի տուր՝ եւ
ազատեա զնա: Այլեւ վասն նորա հրամանացն որ ասէ. (եթէ սիրեք
զսիրելիսն՝ ո՞ր շնորհ է ձեր. այլ տուք փոխ ուստի ակն ոչ ունիք
հատուցման:) Վասն նորա հրամանացն թեպէտ անծանօթ է, կաշառ եւ գին
տուր եւ ազատեա զնա: Արդ՝ տեսեք եղբարք զազատութիւնն եւ զգերի
թափելն. ծանօթից եւ անծանօթից՝ սիրելեաց եւ ատելեաց պարտէ առնել:
Չի նա է հատուցանող ասէ՝ որ ստեղծողն է ամենայնի: Ապա քանի՞ առաւել
պարտ է զքրիստոնէյն՝ որ քո հաւատակից է, եւ Քրիստոս վասն նորա մեռաւ
եւ ազատեաց զնա, պարտ է դնել զնա. եւ ազատել ի ծառայութենէ: Եւ թէ
զգերին գնել պարտ է, որ շատ է գինն եւ մեծ, քանի՞ առաւել զաղքատն
կերակրել. եւ զմերկն զգերցուցանել. կամ զօտարն ժողովել. կամ ծարաւոյն
ջուր տալ. կամ ի հիմանդն ի տես զնալ. որ կարող ես առնել: Եւ այս գիտելի
է՝ զի զողորմութիւնն պարտէ առնել առանց ակնառութեան ամենայն
կարօտելոց. թէ հարուստ է թէ աղքատ, արժան թէ անարժան, արդար թէ
մեղաւոր, չէ պարտ ընտրել. այլ առանց խտրութեան ամենայն կարօտելոց
բաշխել: Որպէս Աբրահամ ողորմածն եւ հիւրընկալն՝ միայն էր յայն
ժամանակին բարեպաշտ եւ արդար. եւ զողորմութիւնն քանանացւոցն
առնէր եւ այլազգեացն: Նոյնպէս անխտիր պարտէ տալ զողորմութիւնն. զի
ոչ մարդոյ տամք թէ ի նմանէ առնումք. այլ զյոյսն ունիմք առ Աստուած, որ ի
նմանէ առնումք: Վասն այն յուսովն Աստուծոյ պարտ է ամենեցուն տալ. զի
ամենեքեան ստեղծուածք են Աստուծոյ. եւ այնու նմանիլ Աստուծոյ. որպէս
(զարեգակն ծագէ ի վերայ չարաց եւ բարեաց. եւ ածէ անձրեւ ի վերայ
արդարոց եւ մեղաւորաց:) Նոյնպէս առհասարակ ամենայն կարօտելոց
պարտ է առատանալ. եւ ծագել զգութ սիրոյ. եւ ածել անձրեւ ողորմութեան
պարգեւաց: Չի այլ բարի գործք՝ սերմանք են. եւ ողորմութիւն անձրեւ. զի թէ
ոչ լինի անձրեւ ողորմութեան, այլ բոյսքն ամենեքեան չորանան, եւ ոչ
պտղաբերեն: Այլ գործքն ամենեքեան՝ ինչք են մարդոյն. եւ ողորմութիւնն
զգեստ եւ զարդարանք. եւ որ չունի զողորմութիւնն, ելանէ ի հարսանեացն.

որպես այն՝ որ չուներ հանդերձ հարսանեաց: Այլ գործքն ամենեքեան՝ սրբութիւն եւ մաքրութիւն են հոգւոյն. որպէս կուսութիւնն, պահքն, եւ այլն: Իսկ ողորմութիւնն՝ իւր է լապտերին եւ լոյս ճանապարհին. որ զողորմութիւնն չունի՝ խաւարեալ է ի լուսոյ. ի շիջանի լապտերն. որպէս յիմար կուսանացն շիջաւ լապտերն. եւ փակեցաւ դուռն ողորմութեան: Որեւ ի ձեռք առ հասարակ զիւր ողորմութեան շնորհաց իւրոց՝ անշէջ պահեսցէ առ ձեզ Քրիստոս Աստուած մեր. եւ յետ աստի կենացս՝ ընդ իմաստուն եւ սուրբ կուսանացն արժանաւորեսցէ բացաւ երեսօք, անշէջ լապտերօք, մտանել ի յառազաստ հարսանեաց փեսային ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ վասն ողորմութեան. ի Բանն՝ (Եղերուք գթածք՝ որպէս եւ հայրն ձեր երկնաւոր գթած է:) Դուկ. 6. 36: (Գլուխ. ԴԹ)

Չարարիչն ամենայն արարածոց՝ նախախնամօղ եւ պահապան ուսուցանեն բոլոր եւ մասնաւոր եղեալ սուրբ գիրք. եւ վարդապետք ուղղափառութեան: Եւ երկու եղանակաւ երեւի նախախնամութիւն ամենայն. այսինքն, հասարակ. եւ առանձնակի: Եւ է հասարակն՝ տալ զմարմնոյ կենաց պատճառն եւ առողջութեան. որ է հարկաւորն եւ պիտանին. որպէս կերակուր եւ ըմպելի. զգեստ եւ յարկ ծածկութիւն, եւ այլն: Չի առանց կերակրոյ եւ ընպելոյ՝ ոչ մնայ մարմինն կենդանի. ոչ յառողջութեան առանց հանդերձի. եւ այսոքիկ հարկաւորք եւ պիտանիք են շնորհեալ յարարչէն մերմէ. ըստ այնմ որ ասէ Տէրն. (ոգի առաւել է քան զկերակուր. եւ մարմին քան զհանդերձ. եւ գիտէ հայրն երկնաւոր՝ որ պիտոյ է այդ ամենայն ձեզ:) Եւ մարգարէն ասէ. (աչք ամենեցուն իքեզ յուսան. եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու. եւ բանաս զձեռն քո եւ լցուցանես.) եւ յաւտարանին տերն հրամայէ. (ծագէ զարեգակն ի վերայ չարաց եւ բարեաց. եւ ածէ անձրեւ ի վերա արդարոց եւ մեղաւորաց:) Արդ՝ զայսոսիկ մարմնական պէտսս հասարակաց է բաշխեալ. որպէս երկիր, ջուր, օդ, լոյս, կեանք, հոգի, մարմին եւ այլն, արդարոց է եւ մեղաւորաց: Եւ ոչ միայն մարդկան, այլեւ ամենայն կենդանի ի չորից տարերց եղեալ, ունի զնոյն պարգէս յարաչէն: Դարձել՝ եւ այլ եղանակաւ առանձնակի ինամէ զարդարս եւ զմեղաւորս. այսինքն է, զբարիս ի մարդկանէ եւ զչարս: Չի այնոցիկ որք անձնիշխան կամօք թողուն զչարութիւն, եւ սիրեն զբարութիւնս, յաւելու նոցա ի վերայ մարմնաւոր բարեացն եւ զպարգէսս հոգեւորս. որք բովանդակին վեց թուով. որպէս ասէ իմաստունն: (Ետ զիմաստութիւն է զգիտութիւն եւ զուրախութիւն:) Իմաստութիւնն է իմանալ զԱստուած՝ եւ հաւատալ ի նա: Այս երկու է: Չի բազումք են ի մարդկանէ որք իմացան զԱստուած, այլ ոչ հաւատացին ի ճշմարիտն Աստուած. որպէս արատքին փիլիսոփայք: Այլ որք բարիքն են ի մարդկանէ՝ նոցա տայ Աստուած իմանալ զինքն եւ հաւատալ ի նա: Իսկ ճշմարիտ գիտութիւն է պատուիրանն Աստուծոյ. եւ գործով կատարելն զնա. զոր Աստուած պարգէս է իւր սիրելեացն զպատուիրանս օրինաց իւրոց. եւ զկատարումս գործոց ըստ պատուիրանին. այս չորսն է: Իսկ հինգն եւ վեցն ուրախութիւնն է՝ որ յետ պատուիրանին կատարմանն՝ աստ ինդութիւն եւ ուրախութիւն ի ջանէ ի հոգի մարդոյն. որպէս ասէ Դաւիթ: (Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որք

խնդրեն զՏեր.) եւ Պօղոս ասէ: (Ուրախ լերուք ի Տեր դարձեալ ասեմ ուրախ լերուք:) Իսկ ի հանդերձեալն՝ է ուրախութիւնն յաւիտենական: Չի ուրախութիւնն յաւիտենական: Չի ուրախութիւնն հոգեւոր հաւատոցն եւ բարի գործոցն՝ այնպէս հետեւի բարեգործ մարդոյն, որպէս մարդ որ հայի ի լոյս՝ եւ լուսաւորի եւ հեշտանայ ակն նորա: Եւ որպէս որ գնայ մարդ ի ճանապարհ՝ հետք ոտիցն հետեւի նմա. այսպէս եւ ուրախութիւնն անզոջանալի աստ հետեւի եւ ծագի ի հոգին. եւ անդ ուրախութիւնն առանց տրտմութեան պարգեւի մարդոյն: Եւ այսոքիկ տեսանին ի հայրն Աբրահամ. որ բնական ունէր զբարութիւնն. վասն որոյ ետ Աստուած զիմացումն եւ զգիտութիւն իւր նմա. եւ (հաւատաց Աբրահամ յԱստուած. եւ ետես զօրն Զրիստոսի եւ ուրախացաւ:) Նոյնպէս եւ Կուռնելիոս ունէր զբնական բարութիւնն. վասն որոյ նախ քան զմկրտիլն՝ էջ հոգին սուրբ ի վերայ նորա. եւ ուրախացաւ հաւատովն Զրիստոսի: Այսպէս առանձնակի ինամէ Աստուած զբարիս ի մարդկանէ. որպէս ասէ Դաւիթ. (բարի առնէ Տեր բարեաց եւ այլն:) Իսկ առանձնակի ինամէ եւ զմեղաւորս եւ զչարս ի մարդկանէ. որպէս ասէ իմաստունն. (ետ մեղանչականին զբաղումն յաճախել եւ ժողովել.) այս է՝ որպէս բարւոյն ըստ իւր յօժարութեանն ետ զմնացական բարին. զհաւատն՝ զիմաստութիւնն՝ եւ զայլսն որպէս ասացաւ: Նոյնպէս եւ չարին ի վերայ հասարակաց ինամոցն՝ ետ եւ զմարմնոյ փարթամութիւնն եւ զմեծութիւնն: Որ ամենայն ինչքն ի չորս գլխաւորին. զի կամ են անշունչ եւ անկենդան. որպէս քարինք, ոսկի, արծաթ, եւ հանդերձ, եւ այլն. եւ որպէս զիւղ եւ քաղաք: Եւ կամ ի տանկոց եւ ի պտղոց երկրի. որպէս ցորեան. զինի. եւ պտուղ, եւ այլն: Եւ կամ յանբան կենդանեաց. որպէս անասուն. արջառ. ուղտ. ջուկ, եւ այլն: Եւ չորորորդն՝ որպէս բանաւոր ծառայք, աղախնեայք, ընտոծիւնք, մշակք, եւ հնազանդեալք: Այսոքիկ չորս սեռք են փարթամութեան մարդկան. որք մեծանան զանազան ընչիւք: Եւ երկուք դարձեալ՝ որք հեշտանան մարմնով ի սոցան. եւ ուրախանան մտօք ի սոսա. յայս ուրախութիւնս՝ որ տրտմութեամբ է. եւ յայս հեշտութիւնս՝ որ դառնութեամբ է եւ անցաւոր: Արդ՝ այսպէս բաժանեալ է զառանձնակի պարգեւս սոցա. բարեաց եւ չարաց: Վեց թուով զբարիս եւ զիմաստունս ինամէ Աստուած. եւ վեց թուով՝ չար զբաղումն տայ Աստուած չարաց եւ մեղաւորաց. որք այնու հանապազ զբաղին եւ չարչարին ի կեանս աշխարհի: Այլ բարեացն բարիք անանց եւ մշտնջենաւոր. եւ չարացն ժամանակեայ եւ անցաւոր: Եւ զայս տեսանեմք յառաջագոյն ի հեթանոսաց ազգն քանանացոց եւ եգիպտացոց եւ այլոցն՝ որք էին կռապաշտք եւ մեծատունք եւ փարթամք. եւ աբրահամ եւ զաւակք իւր պանդուխտ ի մէջ նոցա շրջէին. զի հաւատն նոցա բաւական համարեալ, պահեր զնոսա պանտուխտ: Նոյպէս եւ յայսմ ժամանակի՝ բաժանեալ է ինամքն Աստուծոյ. նոցա որք աշխարհասերքն են՝ տուեալ է նոցա զմեծութիւն եւ զփառս աշխարհիս. եւ որք զբարին աստուածասիրեն եւ զհոգեւորականս. նոցա է պարգեւեալ աղքատութիւն եւ կարօտութիւն. այլեւ հիւանդութիւնս եւ չարչարանս. զի բաւական ունին զհաւատն եւ զօրէնս Աստուծոյ. որք աստ ի կեանս հաւատովն իւրեացն եւ նեղութեամբն եւ աղքատութեամբն, զպսակն եւ զհանգիստն յաւիտենից կենաց ժառանգեն: Այսպէս է բաժանեալ առանձնակի զինաման չարաց եւ բարեաց: Եւ դարձեալ՝ ոչ եթող զմեղաւորն անյոյս ի փրկութենէն. այլ արար զբարին եւ

գիմաստունն կարօտ եւ աղքատ ընչից. զի փարթամն տացէ նմա յընչից իւրոց, եւ հաղորդիցի նորա իմաստութեանն եւ բարութեանն. որպէս ասէ Ղանիէլ. (զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես. եւ զանօրէնութիւնս քո տրօք տնանկաց:) Չի թէ ոչ էին աղքատք, մեծատունն ոչ հասանէր փրկութեան: Եւ թէ իցեն աղատք եւ ոչ առնեն զողորմութիւնն, նոյնպէս ոչ հասանին ողորմութեանն Աստուծոյ. այլ որպէս զչար մեծատունն՝ ի տանջանս պապակին, զի աղքատին Ղազարու ոչ ողորմեցաւ: Այլ յորժամ առնեն զողորմութիւն աղքատաց, յայն ժամ առնուն ողորմութիւն յԱստուծոյ. ըստ այնմ, (Երանի ողորմածաց՝ զի նոքա զողորմութիւն գտցեն:) Եւ թէ ոք ասիցէ՝ ես մեծատուն եմ կամ իշխան, ամենայն ինչքն իմ անիրաւութեամբ է եւ զրկանօք. եւ ոչ է իմ քիրտն եւ վաստակ. ո՞րպէս առնեմ զողորմութիւն: Այսմ պատասխանեմք նախ եթէ՝ կրկին է ողորմութեան տեսական: Մին՝ պատարագն եւ նուէրքն Աստուծոյ ի յեկաղեցիս քահանայից՝ պաշտաման եւ պատարագացն Քրիստոսի. յայտոսիկ պիտոյ է ընտրեալ զհալլալ վաստակն իւր, եւ մատուցանել Աստուծոյ բաժին. զի ասէ առակն. (պատուեա զՏէր ի քոյոց արդար վաստակոց. եւ հան նմա պտուղ արդարութենէ:) Այլ ողորմութիւնք աղքատացն եւ տուրքն՝ անխտիր. ուստի եւ իցէ, ողորմութիւն է արդիւնաւոր. որպէս հրամայէ Տէրն թէ՝ (արարեք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի թէ յօտար ընչիցդ չէք հաւտարիմ եւ խնայեք տալ, զձերն որպէս տայք:) Ապա ուրեմն զողորմութիւնն տալի է անխտիր յամենայն ընչից: Երկրորդ դարձեալ ասեմ. որ ի քո վաստակոցն տաս՝ միայն քո հոգւոյն է բարին. եւ որ զայլոցն տաս՝ քեզ է եւ նորա բարին եւ շահն: Չի դու ըստ ողորմութեան եւ առատ կամացդ առնուս. եւ նա ըստ իւր վաստակոցն: Երրորդ դարձեալ՝ թէ որպէս այն որ զրկեալ ապրանօքդ մեղս եւ չար գործես, ամենայն քո է եւ ոչ վասնակողին: Չորրորդ՝ թէ որպէս այն որ զրկեցեր զինչսն եւ չար գործեցեր՝ կրկին մեղք է. մին զրկանքն. եւ մին չար գործքն: Նոյնպէս որ ի յայն զրկանանց բաշխեցեր՝ կրկին բարիք եղեն քեզ եւ նորա. յորմէ զրկեցեր եւ խլեցեր: Եւ թէ ոք ասիցէ՝ զողորմութիւնն խտութեամբ առնեմ. արդարո՞ց թէ արդարոց եւ մեղաւորաց: Ասեմք այսմ կրկին պատասխանի: Նախ՝ զողորմութիւնն պարտ է անխտիր եւ հասարակ առնել. չարաց եւ բարեաց. արդարոց եւ մեղաւորաց. որպէս հրամայէ Տէրն: Չի հայրն Աբրահամ անխտիր առնէր զողորմութիւնն քանանացւոցն եւ կռապաշտիցն: Նոյնպէս զովտի մէջ սողմոնոցն էր բնակեալ. եւ առնէր նոցա ողորմութիւն: Նոյնպէս Յոբ այլազգեացն տայր զողորմութիւն, յորժամ բարիք եւ Աստուած ապաշտք ոչ կային: Նոյնպէս եւ դու արա զողորմութիւնն առանց խտութեան չարաց եւ բարեաց: Վասն զի յանունն Աստուծոյ տաս զողորմութիւն. եւ յԱստուծոյ առնուս զփոխարէնն եւ ոչ ի նոցանէ: Երկրորդ՝ ասեմք թէ բարեացն եւ արդարոցն առաւել պարտ է տալ զողորմութիւնն. որպէս հրամայէ Տէրն. (որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի. զվարձս մարգարէի առցէ. եւ որ ընդ ունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ:) Վասն զի առաւել տուողին յոյսն հաստատի, յորժամ բարեացն առնէ ողորմութիւն քան չարացն: Վասն այն առաւել քիրստոնեայ աղքատին պարտ է առնուլ ողորմութիւն ի սերն Քրիստոսի, քան այլ ազգեաց. եւ կարի խիստ կարօտելոյն պարտ է ողմիլ քան ոչ կարօտելոյն: Նոյնպէս քահանային առաւել պարտ է. զի քահանայն կրկին պատուոյ արժանաւորի: Նոյնպէս եւ գերետիրոջն առաւել ողորմելի է յանուն

Քրիստոսի. զի մեք էաք գերի մաղաց. եւ ծառայ անկեալ դժոխոցն ի ձեռն սատանայի: Եւ Քրիստոս իւր չարչարանօքն ազատեաց եւ գնեաց զմեզ. եւ մեզ պարտ է զմարմնոյն գերին զայն գնել: Ապաուրեմն ի վերայ այսց հիւանդաց կամ կուրաց եւ հաշմանդամոցն՝ առաւել պարտ է ինսամել եւ տալ զողորմութիւնն: Եւ թէ այս այսպէս է, առաւել ողորմիլ պարտ է մեռելոյն՝ որ աղքատ եւ անյիշատակ լինի յընչից. եւ կամ աղքատ ի բարեաց գործոց. եւ յանճարն է գնացեալ. զնորա հոգին պարտ է յիշել եւ առնել ողորմութիւն՝ առաւել. եւ տալ յանուն մեռելոյն. եւ օգնել նմա հանդերձեալ կենօքն: Այսպէս ողորմութիւնն մին քան զմին՝ առաւել վարձս ունի: Եւ թէ ոք ասիցէ՝ ողորմութիւնն բարի թէ ա՞յլ ինչ բարի գործք. որպէս պահք՝ աղօթք՝ չարչարանք՝ կուսութիւն՝ եւ այլ ինչ: Ասեմք եթէ՝ առաջին ճանապարհ եւ դուռն արքայութեանն՝ են ըստ մարմնոյ բարեգործութիւնքն. որ ինքն զամձն իւր չարչարէ. եւ զինքն նուիրէ եւ մատուցանէ Աստուծոյ. պահօք զմարմինն ընծայէ. եւ աղօթիւք զհոգին. եւ այլ ինչ չարչարանօք՝ զհոգին եւ զմարմինն նուիրէ Աստուծոյ. որպէս ասէ Դաւիթ. (պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ:) Իսկ որք մեծատունք են եւ սիրեցին զաշխարհս եւ զինչս՝ ոչ կարեն պահել կամ աղօթել. կամ զմարմինն չարչարել եւ այլն. զի զբաղեալ են զհետ ցնորից եւ մեծութեան ընչից. եւ զփուշս ժողովեն. որպէս Տէրն զպարանս մեծութեան փուշ կոչէ. զի ի ժողովելն ցաւի. եւ վաստակի եւ քրտնի եւ տկարանայ մարմնով: Այլեւ ի պահելն եւ ի հոգալն ցաւի. եւ վշտանայ հոգւով՝ զի մի պակասեցի ի գողոց կամ յաւազակաց եւ յայլոց: Իսկ ի մսխելն եւ ի նուազիլն՝ ցաւի դարձեալ եւ տրտմի. զի պակասեցան ինչքն: Այսպէս յամենայն ուրեք՝ փուշ եւ խոցոտիչ է մեծութիւնն աշխարհական: Վասն այն յորժամ հրամայեաց Տէրն թէ՝ (դժուարաւ մտանէ մեծատունն յարքայութիւնն, դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն մտանել: (Ասեն աշակերտքն՝ (ո՞վ կարէ ապրիլ.) պատասխանեաց Քրիստոս. (անհնարիւնքն ի մարդկանէ՝ հնարաւորք են Աստուծոյ.) այսինքն, որ զմեծութիւնն ի ձեռն կարօտելոց եւ աղքատաց տալով: Եցոյց Աստուած զերկրորդ դուռն եւ ճանապարհ արքայութեանն. զի մի զրկեցին մեծատունք յարքայութենէն. եւ լինէր մեղադրանք Աստուծոյ. զի նա ետ զմեծութիւնն նոցա. ըստ այնմ, (Տէր աղքատացուցանէ՝ եւ Տէր մեծացուցանէ:) Նա վասն այն դեղ է հրամայեաց նոցա մեծատանց զաղքատանց սիրել. եւ նոքօք զարքայութիւնն Աստուծոյ գտանել: Եւ թէ ոչ կամեցին սիրել եւ բաշխել՝ ինքենք լիցին պարտական անանց կորստեան իւրեանց: Չի հրամայէ առաքեալն. (անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնէ զողորմութիւն.) եւ իմաստունն ասէ. (յորժամ ինուս զլսելիս քո ընդդէմ աղքատին, եւ յորժամ դու ինդրես յԱստուծոյ, եւ ոչ նա լսէ զինդրուածս քո:) Եւ թէպէտ ողորմութիւնն երկրորդ ճանապարհ է արքայութեանն, սակայն այլ ամենայն առաքինութեանց հաւասար է եւ բարձրագոյն: Հաւասար է՝ զի յորժամ զողորմութիւնն տաս, եւ դու աղքատացար. եւ ինչս ոչ ունիս. ի պահս ես. եւ կարօտութեամբ զքեզ չարչարես եւ նեղես: Իսկ բարձրագոյն է քան զամենայն գործս բարութեանց: Նախզի՝ այն որ աղքատն է՝ ակամայ ի պահս է. իսկ որ տայ զողորմութիւնն եւ աղքատանայ՝ կամաւոր պահք է եւ կամաւոր աղքատ. եւ կամաւորն՝ մեծ է քան զակամայ բարեգործութիւն: Երկրորդ՝ յորժամ տայ զողորմութիւնն,

ամենքեան վասն նորա աղօթեն. եւ վասն պահեն. եւ վասն նորա բարեխօսեն. եւ մեծ է եւ առաւել բազմաց աղօթքն եւ բարեխօսելն քան զմիոյն: Երրորդ՝ յայտ է ի դժուարութեանցն՝ որ քան զպահս եւ զաղօթս եւ զայլն ամենայն՝ ողորմութիւնն դժուարաւ կատարի. որպէս յայտ է յօրինականէն. որ զամենայն օրէնսն պահեալ էր ի մանկութենէ. որ յորժամ հրամայեաց Տէրն (երթ վաճառեա զամենայն ինչս քո եւ տուր աղքատաց, նա գնաց խոժոռեալ ընդ միտս իւր. զի ուներ ինչս բազումս.) ապա ուրեմն յայտ է՝ զի մեծ է քան զամենայն առաքիւնութիւնս՝ որ դժուարաւ կատարի: Զորրորդ՝ որք զայլ առաքիւնութիւնս ունին՝ աղաչելով խնդրեն զփոխարէն յԱստուծոյ. իսկ ողորմածն՝ համարձակութեամբ առնու. ըստ այնմ, (ողորմութիւնն բարձրագլուխ պարծի առ դատաստանաւն:) Զինգերորդ՝ ողորմութիւնն փոխ է առ Աստուած, որ ոչ կորնչի. զի թէ զայլ ուղղութիւնս գործէ մարդ՝ եւ յետոյ մեղիցէ, կորոյս զառաջինն, որպէս յորժամ ի պահս կենան, աղօթս առնեն, կուսութեամբ ճգնին, հաւատս ունիցին, թէ յետոյ ի հաւատոց անկանին, կամ ի պոռնկութիւն, կամ յայլ մեղս, (ուղղութիւնք առաջինք ոչ եւս յիշեսցին ասէ մարգարէն:) Այլ ողորմութիւնն. փոխ է առ Աստուած. ոչ կորնչի վասն յետին գործոց: Եւ զի փոխ է ողորմութիւնն, երբ կամի՝ առնու փոխատուն. թէ աստ, թէ ի հեաղերծեալն: Եւ զփոխն շահով առնուն. եւ վասն ողորմութեան ասացեալ է թէ՝ (ընդ միոյն հազարապատիկ եւ բիւրապատիկ առցէ:) Վեցերորդ՝ թպէտ զայլ առաքիւնութիւնս գործէ մարդ, Աստուծոյ նման ոչ լինի. թէ ի պահս կենայ, թէ աղօթս առնէ, թէ չարչարի. թէ այլ ինչ, իսկ ողորմութեամբ՝ մարդն Աստուծոյ նման լինի. ըստ այնմ որ ասէ Տէրն. (եղերուք գթածք՝ որպէս եւ հայրն ձեր երկնաւոր գթած է:) Ապա ուրեմն որպէս մեծ է Աստուծոյ նման լինիլն քան զամենայն պատիւ. նոյնպէս մեծ է գործ ողորմութեանն քան զամենայն բարիս: Եօթներորդ՝ ողորմութեամբն Աստուծոյ օրէնքն կատարին ի մեզ. որպէս ասէ. (սիրեցես զՏէր Աստուած քո. եւ սիրեցես զընկեր քո.) այս երկու օրէնքս՝ մեծ են քան զամենայն, եւ կատարումն եւ գլուխ են ամենայնի որպէս հրամայէ Տէրն. (ամենայն օրէնք եւ մարգարէք՝ յայս երկու օրէնս կախեալ կան.) եւ ողորմութիւնն՝ զայնս կատարէ: Զի վասն սիրոյն Աստուծոյ առնեմք զողորմութիւն աղքատաց. այս՝ աստուածասիրութիւնն է. եւ ըստ որում զպէտս աղքատաց լնումք՝ այս ընկերասիրութիւնն է: Ութներորդ՝ ողորմութիւնն իբր զհարսն եւ զղշիտյ է երկնաւոր թագաւորին. եւ բազմի ընդաջմէ Քրիստոսի. եւ ի մեջ ամենայն բազմութեանն ի մեծի ատենին՝ ճանաչէ զողորմածն իւր. եւ առ ինքն ձգէ եւ կացուցանէ ընդաջմէ Քրիստոսի բաց երեսօք եւ ուրախ սրտիւ:

Այս է զոր ասէ թէ՝ (ողորմութիւնն զմարդն հաւասար հրեշտակաց առնէ եւ որդի Աստուծոյ:) Իններորդ՝ ողորմութիւնն իւղ լապտերաց է իմաստուն կուսանացն. զի այլ ամենայն առաքիւնութիւնքն՝ լապտերք եւ լոյսք են. եւ ողորմութիւնն՝ իւղ եւ նիւթ լապտերացն: Զի թէ զայլ ամենայն առաքիւնութիւնս ունիցի մարդ, զկուսութիւնս, զչարչարանս, զպահս, զաղօթս, եւ զողորմութիւնն ոչ ունի, շիջանին լապտերքն որպէս յիմար կուսանացն: Որք ասեն ցիմաստունսն. (տուք մեզ յիւղոյդ ձերմէ. եւ ասեն նոքա. ոչ է մեզ եւ ձեզ բաւական. գնացէք ի վաճառականսդ. եւ գնեցէք ձեզ:) եւ վաճառականք են աղքատացն դասք. որոց վաճառեմք եւ ստանամք ի նոցանէ զիւղն գնիւթն լուսոյ արքայութեանն երկնից. (իբրեւ նոքա գնացին,

եկն փեսայն եւ պատրաստքն մտին ի հարսանիսն. եւ փակեցաւ դուռն:) Ահա վայ իմ լսելեացս. զամենայն ժամանակս կուսութեամբ չարչարեցան, թէ փեսային արժանի լիցին. եւ զի ոչ ունէին զողորմութեան իւղն, ոչ տեսին զփեսայն Զրիստոսի: Եւ յիրաւի զի փեսայն Զրիստոսի ողորմած եւ գթած է բարուք. եւ հարսունքն անգութ եւ անողորմ՝ չեղէն արժանի հարսանեաց.(յետոյ գան եւ ասեն. Տէ՛ր Տէ՛ր բաց մեզ. եւ ասէ՛ ոչ ճանաչեմ զձեզ:) Ո՞վ ողորմելի աղետիս. վասն նորա՝ կուսութեամբ զանձինս սուրբ պահեցին եւ չարչարեցան՝ ասէ (ոչ ճանաչեմ զձեզ.) մի մտանէք յառազաստ իմ. զի այս տեղի խաղաղութեան եւ սիրոյ է: Դուք անողորմ բարուք՝ ի վերայ ընկերին զխռովութիւն եւ զատելութիւն զործեցիք. ի բաց կացէք ի դրանեդ. զի մի՛ եւ զձայնս լսիցէք. այսպէս անողորմութիւնն չար է. եւ ողորմութիւնն բարի: Տասներորդ՝ զի ի դատաստանին՝ թեպէտ զայլ ամենայն բարիս զործեալ է մարդ՝ ոչ յիշի. այլ միայն ողորմութիւնն. ասէ՛ (եկայք օրհնելք իմ իմոյ՝ ժառանգեցէք զպատրաստեալ ձեր զարքայութիւնն. զի քաղցեալ եւ ետուք ինձ ուտել, եւ այլն ըստ կարգի:) Եւ ասիցեն արդարքն. (ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ եւ կերակրեցաք. ասէ Տէրն. (որ արարիք միում յեղբարցս՝ ինձ արարիք:) Եւ անողորմիցն ասէ.(երթայք յինէն անիծեալք՝ ի հուրն յաւիտենական զի քաղցեալ՝ եւ ոչ ետուք ինձ ուտել. եւ նոքա ասեն. Տէր ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ, կամ ծարաւի, եւ ոչ պաշտեցաք զքեզ: Պատասխանէ. որովհետեւ ոչ արարիք միում յեղբարցս՝ եւ ոչ ինձ արարիք. եւ երթիցեն նոքա ի տանջանս յաւիտենական վասն անողորմութեան. եւ արդարքն ի կեանս վասն ողորմութեան:) Մաղթեսցուք յամենողորմ եւ ի մարդասեր Տէրն է՝ զի իւր ողորմութեանն եւ անճառ խնդութեանն՝ արժանաւորեսցէ զմեզ Զրիստոս Յիսուս Տէր մեր. որում փառք եւ զօրութիւն եւ պատիւ ընդ Յօր իւրում եւ Սուրբ Յոգուոյն, յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ վասն ողորմութեան. ի Բան առակին: (Խնամ տար խաղանց եւ երամակաց քոց. եւ դարմանեա զնոսա. զի լիցին ոչ խորք քո ձորձաբերք:) առակ. 27. 26: (Գլուխ. Ծ)

Չանազան դասս աղքատաց՝ բազում բանիւք օրինակեն զիրք Սուրբք: Երբեմն ի քաղց եւ ի ծարաւ. երբեմն ի հիւանդ եւ ի բանտեալ: Երբեմն յորք եւ յայրի. զի զաղէտ եւ զգութ մեր շարժեսցեն ի նոսա: Նոյնպէս եւ աստ իմաստունն Սողոմօն՝ զդասս աղքատաց ի ջոկս անասնոց առակէ, որք հանապազ առ մեզ են. եւ ընտել են ի բնակութիւնս մեր. եւ սիրեմք եւ խնամեմք զնոսա. յայցանէ ուսուցանէ սիրել եւ գթալ ի վերայ տնանկաց: Չի ի հարկէ ամենայն մարդ արդար՝ զիւր անասուն պահէ եւ ընդունի. որպէս ասէ. (այր արդար եւ ողորմած՝ ողորմի անասնոց իւրոյ:) Ի յայսմանէ ի միտ ածէ մեզ թէ, պարտէ ողորմիլ մեզ աղքատաց եւ տնանկաց: Եւ վասն բազում համեմատութեան՝ օրինակ առնու զխաչինս անասնոց եւ զջոկս երամակաց, դասուց աղքատաց: Առաջին՝ որպէս անասունքն որք ընդ ձեռամբ մեր են, մեզ է հարկ պահելոյ եւ խնամելոյ. նոյնպէս եւ աղքատքն՝ մեզ են խնամելոյ եւ պահելոյ եւ կերակրելոյ. ըստ այնմ, (բողեա քաղցելոց զհաց քո եւ զաղքատս անյորկս տար ի տուն քո այլն:) Երկրորդ՝ որպէս անասնոց ակն ի վերայ Տեառն իւրեանց է խնամել զնոսա եւ տածել. նոյնպէս եւ ակնկալութիւն աղքատին՝ ի վերայ մեր է կերակրել՝ զգեցուցանել՝ եւ այլ

պիտոյիւք. ոչ իշխէ բանիւ խնդրել՝ այլ աղաղակէ եւ արտասուէ. եւ զակնկալութիւնս պահէ առ քեզ. եւ այնու շարժէ զգուրթ քո: Երրորդ՝ անասունքն օգտակարք են մեզ. ոմանք ի կերակուրս. ոմանք ի զգեստս՝ բեռնս, եւ յայլս: Նոյնպէս եւ աղքատք ամենեքեան շահաբերք եւ օգտակարք են մեզ. բեռնակիր լինին մեզ. եւ տանին զողորմութիւնս մեր ի հայրենի տունն մեր. եւ զանձեն յաշխարհս: Նոյնպէս եւ զգեստն. նոյնպէս զկերակուրն եւ զայլ ամենայն բարիս ժողովն մեզ: Չորրորդ՝ որպէս զորս առաւել դարմանեմք զանասունս՝ առաւել օգտակար են մեզ. նոյնպէս զաղքատս՝ որոք առաւել բարի առնեմք, առաւել շահիմք ի նոցանէ. եւ ոչ միայն կերակրեմք զանսունս, այլեւ պահեմք ի թշնամեաց. ի գողոյ՝ ի գազանէ՝ եւ յայլոցն: Նոյնպէս զաղքատն պահել պարտ է ի թշնամեաց՝ ի զրկողացն՝ ի բռնաւորաց՝ զի մի վնասեսցեն զնոսա. եւ այնպէս շահիմք ի նոցանէ: Հինգերորդ՝ որպէս ի յանասունս ոմանք են ծննդականք՝ եւ ոմանք անծնունդ. որպէս խոյրք եզինք եւ այլք. անծնունդ են աղքատք, այրիք, եւ գամիւք. որպէս որբք. զորս պարտէ ինամել. ըստ Յոբայ որ ասէ. (հայր էի որբոց. եւ ինամածու այրեաց): Խոյրք են ծնօղք հոգեւորք՝ որպէս քահանայք. եւ եզինք երկրագործք՝ որպէս վարդապետք. որք հերկեն զբանաւոր երկիրս մեր. եւ սերմանեն ի մեզ զբանն կենաց. որպէս ասէ առաքեալն. (երիցունք կրկին պատուոյ արժանի լիցին.) մանաւանդ որք բանիւ աշխատին ի մեզ եւ ուսուցանեն: Վեցերորդ՝ ի յանասնոցս ոմանք սուրբք են. որպէս աչխար եւ պախրէ. եւ ոմանք անսուրբք. որպէս ձի գրաստ եւ այլք. եւ ոմանք կիսասուրբք. որպէս ուղտք. զորս առ հասարակ կերակրեմք զնոսա: Նոյնպէս եւ աղքատաց. ոմանք սուրբք են ի հաւատս եւ ի գործս. որպէս քրիստոնեայ աղքատք եւ միայնակեացք եւ աղօթօղք: Եւ ոմանք անսուրբք հաւատով եւ գործով. որպէս այլազգիք: Եւ ոմանք կիսասուրբք. որք ունին հաւատս եւ քրիստոնեայք են. այլ անսուրբ եւ պակաս են առաքիւնութեամբ. որոց ամենեցուն առհասարակ պարտ է առանց խտրութեան ողորմիլ եւ տալ կարօտելոց: Ոչ խտրել թէ այս արժան է, եւ այն անարժան. այլ ամենայն մարդոյ որ կարօտեալ է եւ աղքատ՝ պարտ է ողորմիլ. զի հրամայեաց Տէրն: (Երանի ողորմածաց՝ զի նոքա զողորմութիւն գտցեն:) Բանս այս կրկին տեսութիւն ունի: Նախզի՝ որպէս արդարութեամբ հատուցանելն արդարացուցանէ. նոյնպէս ողորմութիւն Աստուծոյ՝ ողորմածացուցանէ: Երկրորդ՝ զի անորոշ կշռեաց զողորմութիւնս յերկուղէմսն. զի ոչ ասաց թէ ո՞վ առնէ զողորմութիւնս, կամ թէ ո՞վ առնէ զողորմութիւնս, կամ թէ ո՞ւմ առնէ. այլ ով եւ առնէ զողորմութիւնս, թէ արդար թէ մեղաւոր մարդ, այր կամ կին, զողորմութիւն գտանէ. եւ ում եւ առնես զողորմութիւնս՝ թէ արդարոց, թէ մեղաւորաց, գտանես զողորմութիւնս: Վասն զի դու ի սերն Քրիստոսի ողորմիս. եւ Քրիստոս հատուցանէ քեզ. եւ մարգարէն Դաւիթ ասէ: (Երանի որ խորհի զաղքատն եւ զտնանկն.) եւ ոչ ասաց թէ այս անուն կամ այն: Եւ հայրն Աբրահամ հիւրասեր էր. եւ Յոբ ողորմած. քնանացոց եւ այլազգեացն առնէին աղքատասիրութիւն: Չի յայնժամ ոչ գոյր աստուածապաշտ բաց ի նոցանէ, որ տունն էր Աբրահամու եւ Յոբայ. եւ նոքա անկարօտք էին. նոյնպէս եւ ամենայն աղքատաց առ հասարակ պարտ է տալ զողորմութիւնս: Եօթներորդ՝ որպէս յանասնոց ոմանց զկերակուն եւ զկիթն առնումք. եւ ոմանց բեռն դնեմք որք չեն կերկրելի. նոյնպէս եւ ոմանք յաղքատաց

աղօթեն եւ գոհանան. նոքա են որք զկերակուրն եւ զկիթն տան: Եւ որմանք ոչ գոհանան եւ ոչ գիտեն աղօթել. նոքա զբեռն մեղաց թեթեւացուցանեն զքո. եւ զվարձսն տանին ի շտեմարանս երկնից: Թէ ասես՝ նոքա անարժան են երկնից, ե՞րբ տանին զիմ ողորմութիւնն յերկինս: Ասեմք թէ՝ այնոքիկ որք բռնութեամբ խլեն ի քէն եւ զրկեն, նոքա մեղսն թեթեւացուցանեն. եւ զհրեանց տանջանսն յաւելուն: Եւ որք երկիւղիւ եւ աղաչելով խնդրեն, Զրիստոս վասն նոցա հատուցանէ քեզ. զի ընդ աղքատին նա մտանէ ի տուն քո աներեւ ութաբար. եւ առնու ի ձեռաց քոց զողորմութիւնն. եւ տանի զանձէ յերկիս: Ութներորդ՝ որպէս որք բազում ունին անասունս, մեծատուն եւ փարթամ ասեմք զնոսա. թէ այն չափ տաւար ունի. եւ այնչափ ոչխար ունի. եւ այլ մարմնաւոր օրինութիւն է. որպէս ասեմք թէ՝ օրինեաց Աստուած զՅակօբ եւ զԱբրահամ. եւ այնպէս փարթամ էին անասնովք եւ ջոկովք: Նոյնպէս որ զբազում աղքատս սիրէ եւ կերակրէ, հոգւով է մեծատուն. եւ առնու զհոգեւոր օրընութիւնն յԱստուծոյ: Նաեւ ի մարմնաւորս ոչ ինչ պակաս է ողորմածին. որպէս ասէ առակն. (որ տայ աղքատաց՝ ոչ կարօտասցի:) Վասն զի աղօթիւք աղքատացն՝ ինամէ զնա Աստուած. եւ փրկէ յամենայն չարէ: Չի տուրք ողորմութեանն՝ եւ աղօթք աղքատացն՝ եւ ինամքն Աստուծոյ ի միասին խառնեալ, երեքկին պարսպիւ ամրացուցանեն զնա: Եւ թէ ասիցէ՝ Յոբ ողորմած էր եւ Աբրահամ հիւրասեր, վասն է՞ր անկան ի փորձութիւն: Ասեմք եթէ՝ ամենիմաստ ինամքն Աստուծոյ՝ թոյլ ետ նոցա փորձիլ. զի դու գիտասցես թէ՝ ողորմածին փոխարենն այն ոչ է միայն որ ի յայս կեանս հատուցանէ, այլեւ անդ ի հոգեւոր կեանս: Չի ոմանց միայն աստ հատուցանէ. որպէս այլազգեաց վասն ողորմութեան իւրեանց՝ տայ Աստուած խաղաղ եւ յերկար կեանս. ուստերս եւ դստերս եւ ծառայս. մեծութիւն. փարթամութիւն եւ առողջութիւն մարմնոյ. եւ ուրախութիւն հանապազօր: Իսկ ոմանց հատուցանէ անդ միայն ի յերկնաւոր կեանսն փոխարեն ողորմութեանն. որպէս այն որ ասէ: (Քաղցեայ եւ ետուք ինձ ուտել. ծարաւ էի եւ արբուցիք զիս եւ այլն. եկայք օրինեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զկեանսն յաւիտենից:) Եւ ոմանք աստ եւ անդ հատուցանէ. որպէս Յոբայ յետ փորձութեանն՝ հատոյց կրկին զամենայն ստացուածսն. անասնոց՝ եզանց՝ ջոկոց՝ եւ այլոցն. եւ անդ զկեանսն յաւիտենից: Որ գիտիցես թէ՝ ողորմութիւնն այնպիսի վաճառ է՝ որ յայս կեանս առնուս զգլուխն մասնաւոր եւ յայն կեանս զշահն բոլորովիմք: Չի ողորմութիւնն փոխ է. (որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ ասէ.) եւ զփոխն առանց աղաչելոյ եւ հարկիւ խնդրես ի պարտականէն. նոյնպէս զողորմութիւնն հարկիւ առնումք յԱստուծոյ: Եւ դարձեալ՝ որպէս զփոխն յուր եւ քեզ պիտոյ է՝ առնուս. նոյնպէս եւ զողորմութիւնն թէ աստ կամիս՝ առնուս զհատուցումն. թէ անդ կամիս՝ առնուս. որպէս այն որ զպարտսն տայ, եւ ի պայմանին խնդրէ. նոյնպէս եւ ողորմութեան պայմանն առ քեզ է. թէ պիտի աստ՝ առնուս. եւ թէ անդ քեզ պիտի՝ անդ: Ապա ուրեմն ճշմարիտ է՝ որ տայ աղքատին՝ ոչ կարօտի. ոչ աստ եւ ոչ ի հանդերձեալն: Եւ ապա ասէ. (որ դարձուցանէ զակն իւր յաղքատէն. ի բազում կարօտութեան լիցի:) Դարձուցանելն այն է՝ որ զմիտսդ եւ զքաղցր կամսդ քո դարձուցանես յաղքատէն. եւ կամ զերեսդ դարձուցանես եւ զականջդ. ոչ տեսանես զնա եւ ոչ լսես զաղաչանսն: Կամ զձեռնդ դարձուցանես ի տալոյն, եւ արհամարհես զնա: Նա ասէ (ի բազում կարօտութեան եղիցի:) Այն է՝ յորժամ ասէ

թագաւորն. (որովհետեւ ոչ արարիք միում ի փոքրկանցս, եւ ոչ ինձ արարիք:) Եւ դարձուցեալ գերես իւր Զրիստոս, մատնէ ի հուրն. եւ անդ լինի բազում կարօտութիւն այնքան, որ կաթիլ միջոյ կարօտին. որպէս մեծատունն որ դարձոյց գերեսն իւր յաղքատէն Ղազարէ: Ինկերորդ՝ որպէս ի ծննդոց անասնոցն վաճառեմք՝ եւ զգինն ի շտեմարանս ժողովեմք. թէ թշնամիք տանին զհօտն, կամ հարուածովք սատակին, այլ ստանամք փողովն եւ ոչ աղքատանամք: Նոյնպէս եւ յընչիցս մեր զոր ունիմք՝ սա կորստական է, տալովն ի յաղքատն՝ շտեմարանեմք յերկինս. զի յորժամ այս պակասի եւ անցանէ, այնու փարթամանամք: Դարձեալ՝ որպէս Տէրն խրատէ. (արարեք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասի այն՝ ընկալցին զձեզ ի յարկսն յաւիտենից:) Եւր Սողոմօն ասէ. (ոչ յաւիտեանն եւ Տէր ընչիցդ. եւ ոչ յազգէ յազգ խաղաղութիւն քեզ:) Եւ որպէս իմաստուն տանուտէրն Նախահոգակ լինի՝ եւ զայլ տարեանն ի յայս տարիս հոգայ եւ սերմանէ. եւ զեզցենն այսօր՝ եւ զձմեռանն յամառն: Նոյնպէս մարդն որ է իմաստուն՝ զհանդերձելոյն ի ներկայս հոգայ եւ պատրաստէ՝ եւ այսօր մինչ կենդանի է. (եւ մի ձգեր ի վաղիւն ասէ. զի ոչ գիտես թէ ի վաղիւն զինչ ծնանիցի քեզ:) Եւ այս կեանքս ամառն է ժողովելոյ եւ շտեմարանելոյ. եւ այն կեանքն ձմեռն եւ անճար ամենայն իրաց. զոր ինչ աստ ժողովես՝ անդ վայելես: Տասներորդ զի ասէ. (խնամ կալ բանջարոյ. եւ հնձեա խոտ. զի եղիցին ոչ խարք ձորձաբերք:) Չայն նշանակէ թէ՝ որպէս անասնոցն հոգ տանիմք յամառն. արածեմք եւ պահեմք, եւ վասն ձմեռան ձեռօք խոտ քաղեմք, եւ յարկ պատրաստեմք խոտ: Նոյնպէս պարտ է ձեռօք վաստակիլ եւ տալ կարօտելոց. թէ զկերակուր, թէ զզգեստ, թէ զբնակութիւն. զի որ զքո վաստակն տաս, քեզ առնուս զփոխարէնն. եթէ զայլոց վաստակ տաս, այլոց լինի շահն. զի ասէ առական. (պատուեա զՏէր ի քոյոց արդար վաստակոց. եւ հան նմա պտուղ ի քոց արդարութեան արմտեաց:) Չայն որ աղքատին տաս եւ Աստուծոյ բաժին, ի քո հալալ ընչիցն եւ յաշխատանացն տուր. մի ի զրկանաց, մի ի գողութեանց եւ յայլոցն: Եւ թէ ոք ասիցէ՝ ես պարոն եմ եւ տանուտէր. կամ առաջնորդ. ոչ կարեմ աշխատիլ եւ ինձ ոչ ինչ կայ. այլ ամենայն այլոց է: Ասեմք եթէ՝ Գ ազգ է տէրութիւն ընչիցն: Մին՝ թէ ինքն մարմնով չարչարի եւ ստանայ, տեր է ընչիցն: Եւ մին՝ թէ այլք տան նմա: Եւ միւսն՝ թէ զնէ յայլոց: Եւ արդ՝ ամենայն մարդ յայսցանէ անիչք չէ: Թէ պարոն մարդ է, իշխան կամ առաջնորդ, թէպէտ մարմնովն ոչ աշխատի, ստացեալ է եւ զնեալ յայլոց. եւ կամ տուեալ են նմա: Եւ այժմ նորա է իշխանութիւն ի վերայ ընչիցն տալոյ տղքատացն: Եւ Տէրն ասէ. (թէ յօտարին չեղէք հաւատարիմ, զձերն ո՞վ տացէ:) Այս է՝ թէ յօտար ընչիցդ ոչ տաս ողորմութիւն, ի քոցդ ո՞րպէս տաս: Եւ մարմնական ինչքն ամենեքեան օտար են ի մէնջ. զի յերկրէ են եւ յերկիր մնան. եւ յորժամ երթամք՝ ոչ տանիմք ընդ մեզ: Իսկ երկնաւոր կեանքն՝ են մեզ բնական ստացուածք. յորժամ զայս օտարս ինայեմք տալ աղքատաց, զմերն ո՞վ տայ մեզ: Նա վասն այն պարտ է յամենայն իրաց մերոց ողորմութիւն տալ. թէ տուեալ են քեզ, թէ ինչ եւ իցէ, ընչից Տէրն զիւր վարձսն առնու՝ եւ դու գողորմութեանն զոր ետուր: Ապա յորժամ ձեռօքդ վաստակիս եւ տաս, բոլոր վանձս քո է: Եւ թէ ոք ասիցէ՝ ես աղքատ եմ եւ տկար. ոչ զնել կարեմ, եւ ոչ վաստակիլ. եւ ոչ այլք տան ինձ. ուստի՞ առնեմ զողորմութիւնն: Ասեմք թէ՝ ողորմութիւնն երկու է. մինն մարմնաւոր. եւ միւսն հոգեւոր. թէ մարմնաւոր աղքատ ես,

զհոգեւորն արա ողորմութիւն. կամ բանիւ խրատեա զմարդ. եւ զտգետն ուստ. ողորմութիւն է ի չար ճանապարհէն դարձո. կամ աղօթս արա ի վերայ այլոց. եւ թողութիւն խնդրեա. ողորմութիւն է: Կամ թէ լեզու այլ չունիս. միտս ունիս, մտօքդ ի յաղքատն. եւ քաղցր կամս ստացիր. ողորմութիւն է: Եւ դարձեալ՝ թէ խիստ աղքատ ես յընչից, տուն ունիս. զաղքատն տար եւ հանգո. թէ ծարաւի է՝ ջուր տուր. զայդ կարես տալ. եւ մի ամենեւիմք արտաքոյ մնայ յողորմութենէն: Ապա ասէ թէ, (լինին ոչխարք ձորձաբերք.) այսինք, յորժամ բազմի թագաւորն յաթոռ փառաց, եւ դասէ զյօդիսն յաջմէ, յայնժամ աղքատ եւ օղեաց դասքն բերեն քեզ ձորձս. ոչ զմարմնաւորս եւ զանցաւորս, այլ զհանդերձեալն լուսեղեն եւ երկրաւոր: Նոյնպէս փոխանակ հացին՝ զանմահութեան սեղան. եւ փոխանակ հացին՝ զանմահութեան սեղան. եւ փոխանակ ջրոյն՝ զիմանալի աղբիւրն կենաց: Եւ վասն մին գիշերոյ ժողովելոյ օտարացն՝ զհանգիստն եւ զօթեւանն երկնից, այսպէս զամենայն փոխարկէ Քրիստոս եւ հատուցանէ. ընդ մարմնաւորս զհոգեւորն. եւ վասն անցաւորիս՝ զանանցն:

Թէ զգեստ է, կամ կերակուր է, թէ սպիտակ է, թէ գինչ եւ իցէ, որ զկարօտութիւն աղքատին լնուս, Քրիստոս հատուցանէ. ըստ անուստ խոստմանն իւրոյ որ ասէ. (քաղցեալ էի՝ եւ կերակրեցիք զիս. մերկ էի՝ եւ զգեցուցիք զիս, եւ այլն. եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զկեանս յաւիտենից:) Արդ՝ տեսէք եղբարք զմե՛ծ շահ ողորմութեանն. զի ոչ թէ դու տաս աղքատին, եւ առնուս ի նմանէ. փոքր տաս՝ եւ մե՛ծ առնուս: Եւ թպէտ մարդն շատ բարի գործ է արարեալ՝ սքանչելիս կատարեալ՝ կաղ զնացուցեալ՝ կոյր լուսաւորեալ՝ եւ այլն, կամ ի բազում պահս կացեալ՝ աղօթել եւ այլն, զայնս ոչ յիշէ. միայն զայս վեց ազգ ողորմութեան տեսակս յիշէ: Մին՝ որ գիտես թէ ողորմութիւնն ի վեր է քան զամենայն առաքիւնութիւնս. քան զպահս, քան զաղօթս, քան զկուսութիւն, եւ զայլն: Չի յորժամ ողորմութիւն տաս աղքատին, ինչքո՞ պակասին, եւ ի պահս լինիս հանապազ. եւ այն որ դու միայն աղօթէիր, այժմ ամենայն աղքատքն աղօթեն վասն քոյ: Եւ դարձեալ՝ կուսութիւնն լապտեր է. եւ ողորմութիւնն ձեթ. առանց ձիթոյ եւ իւղոյ՝ շիջանի լապտերն. որպէս յիմար կուսանացն՝ որք չունէին զողորմութիւնն. թեպէտ զկուսութիւնն ունէին, փակեցաւ դուռն առագաստին. եւ արտաքոյ մնացին: Եւ դարձեալ՝ (ողորմութիւնն բարձրագլուխ պարծի առ դատաստանան Աստուծոյ.) որպէս թագ ի գլուխն զարդարեալ ոսկւով եւ ակամբ. եւ ամենայն ոք ի նա հայի: Դարձեալ ասէ մարգարէն. (որ խորհի զաղքատն եւ զտնանկն, յաւուր չարէ փրկէ զնա Տէր:) Եւ օր չար է օր դատաստանին, եւ հատուցումն մեղաւորացն. զի այն ոչ է օր, այլ խաւար է եւ մութն անհնարին մեղաւորաց: Այն օրն՝ է օր սրբոցն եւ աներեկ. որ ոչ խաւարի: Եւ գիշեր եւ խաւար է մեղաւորաց՝ որ ոչ լուսանայ: Այն է օրն՝ յորում ճարտարախօս լեզու կարկի եւ լռէ. (զի բանքն սպառին. եւ գործքն թագաւորեն:) Այն է օրն՝ յորում կաղկողագին աչօք նայի մեղաւորն յամենայն ուստեք, եւ ոչ օգնէ. յամենայն կողմանէ շուրջանակի պատեալ պաշարեն զմեղաւորս չարիքն իւր: Ի վերուստ կողմանէ թագաւորն թագաւորաց բազմեալ ի չորեք կերպեան աթոռ. եւ ահագին դիմօք սաստկապէս հայի ի մեղաւորն. (որք ասիցեն լերանց թէ՛ անկերուք ի վերայ մեր. եւ բլրոց թէ՛ ծածկեցէք զմեզ.) յայնմանէ՛ որ նստի յաթոռն: Ի ներքուս կողմանէ՛ դժոխքն է բացեալ զբերանն իւր եւ կլանէ զմեղաւորն: Յետուստ

կողմանէ՝ հուրն շրջապատել՝ զի ոչ կարէ փախչիլ: Յառաջուստ կողմանէ՝ մեղքն բազմապատիկ զոր գործեալ է՝ յանդիման երեւի առաջի աչացն: Ի ձախ կողմանէ՝ դեւքն չարատեսիլք եւ ոսոխք մարդկան: Ի յաջ կողմանէ՝ հրեշտակք անողորմք՝ որք քարշեն եւ առաքեն զմեղաւորն ի հուրն յաւիտենից: Եւ այնպէս մեղաւորն յամենայն կողմանէ տագնապեալ եւ տարկուսեալ կայ. եւ յայնժամ յանկարծակի գայ ողորմութիւնն իբրեւ զպարսն զարդարեալ. եւ իբրեւ զոշխայ եւ թագուհի երկնաւոր՝ բազմի ընդաջմէ Քրիստոսի. եւ մեծ համարձակութեամբ առ ինքն ձգէ զողորմածն իւր. եւ նստուցանէ ընդ աջմէ Քրիստոսի. եւ նա հատուցանէ առատապէս զփոխարէնն եւ զհատուցումն բարեաց ասելով. (Եկայք օրհնեալք իմոյ՝ ժառանգեցէք զկեանս յաւիտենից:) Եւ զայս վեց առաքիւնութիւնս թուէ: Նախ՝ (քաղցեայ եւ ետուրք ինձ ուտել:) Երկրորդ՝ (ծարաւեցայ եւ արբուցիք զիս:) Երրորդ՝ (մերկ էի եւ զգեցուցիք զիս:) Չորրորդ՝ (օտար էի եւ ժողովեցիք զիս:) Զինգերորդ՝ (հիւանդ էի եւ տեսիք զիս:) Վեցերորդ՝ (ի բանտի էի եւ եկիք առիս:) Չի թեպէտ բազում են առաքիւնութիւնք զորս գործեն մարդիկք. այլ կատարումն եւ գլուխ ամենայն առաքիւնութեան՝ ողորմութիւնն է. վասն այսորիկ՝ միայն գտեսակս ողորմութեան յիշէ: Չի գիտացես թէ՛ եւ այլոցն կայ հատուցումն. յորժամ զողորմութիւնս որ ի ձեռս աղքատաց տուաք, յինքն ընկեալ ասէ. (ինձ ետուրք ուտել եւ ըմպել. եւ զիս զգեցուցիք, եւ այլն:) Ապա ամենայն աշխատանաց՝ այսպէս պսակ եւ փոխարէն հատուցանէ: Եւ վճիռ արդարոցն դասուց՝ պարունակէ յինքն զեօթն մասունս բարութեան: Առաջին՝ կոչումն սիրական որ ասէ. (Եկայք:) Չի թէ երկրաւոր թագաւոր կոչէ զմարդ՝ ուրախանայ. քանի՞ առաւել որ ասէ երկնաւոր թագաւորն ցողորմածն եթէ եկայք: Երկրորդ՝ աստուածային օրհնութիւնն որ ասէ. (Օրհնեալք:) Երրորդ՝ սերն հայրական որ ասէ. (Յոր իմոյ:) Չորրորդ՝ զհատուցումն բարեաց որ ասէ. (Ժառանգեցէք:) Զինգերորդ՝ զմեծութիւն թագաւորութեանն որ ասէ. (Չարքայութիւնն:) Վեցերորդ՝ զնախապատրաստութիւնն փառաց զոր ասէ. (զՊատրաստեալ ձեզ:) Եօթներորդ՝ զյաւիտենականութիւնն որ ասէ. (Իսկզբանէ աշխարհի:) Այս է եօթնալիր օրհնութիւնն: Իսկ վճիռն որ վասն չարացն է, ունի մասունս վեց: Առաջին՝ զհեռացումն յԱստուծոյ որ ասէ. (Երթայք յինէն:) Չի թէ յերեսաց թագաւորի զգիթուրն արտաքս հանեն, ամօթ է եւ նախատիկք. քանի՞ առաւել անդ յերկնաւոր թագաւորի երեսացն արտաքսիլ: Երկրորդ՝ զանեծսն որ ասէ. (անիծեալք.) այսինքն, սատակեալք, կամ որոշեալք: Երրորդ՝ զբանտարգեալն լինիլ. զոր ցուցանէ նախդիրն. (Ի:) Չորրորդ՝ զդառնութիւն տանջանացն որ ասէ. (Յուր.) որ խստագոյն եւ դառն տանջանք է քան զայլ նիւթս տարերաց: Զինգերորդ՝ զյուսահատութիւն ազատութեան որ ասէ. (Յաւիտենական.) որ անվճար եւ անվախճան է: Որպէս ասէ Եսայի. (հուր նոցա ոչ շիջանի. եւ որդն ոչ վախճանի:) Վեցերորդ՝ զընկերակցութիւն դիւաց որ ասէ. (Որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:) Չի դաժան եւ դառն տեսութիւն դիւացն՝ առաւել քան զհուրն եւ քան զտարտարոսն տանջէ զմեղաւորս: Այսպէս զօրաւոր է ողորմութիւնն՝ որ յայնպիսի դառն տանջանացն փրկէ. եւ արքայութեանն երկնից եւ հատուցման բարեացն արժանաւորէ: Որեւ ամենաողորմ Աստուած եւ մարդասեր՝ որ իւր ողորմութեամբ վասն մեր մարդ եղեւ, եւ ազատեաց ի մահու եւ յապականութեանց դժոխոց, նոյն ինքն մարդասիրապէս ինայնեցէ ի մեզ առ

հասարակ ի գինս արեան իւրոյ. զողորմածն եւ զողորմելին. զմեծ եւ զփոքր. զծեր եւ զտղայ. զայր եւ զկին, արժանի արասցէ թողութեան մեղաց. աջակողմեան դասուն. երանաւետ ձայնին. մշտաւետ ուրախութեանն. եւ անթառամ պսակացն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ:

Նորին քարոզ վասն եոթանասուն ' երկու աշակերտացն. ի բանն որ ասէ: (Յետ այսորիկ երե'եցոյց Տէր 'ս եօթանասուն 'երկու առաքեալս. ' առաքաց զնոսա երկուս երկուս:) Դուկ. 10. 1: (Գլուխ. ՃԻԳ)

Իսկ եօթանասուն ' երկու աշակերտացն՝ նախանկար ' օրինկ խորհրդոյ բազումք են. զոր պարտ է զնոսա բացայայտել: Նախ՝ որպէս յաւուրս աշտարակին չար միաբանութեամբ եօթանասուն եւ երկուքն ժողովցան, եւ անպարիշտքն կամեցան շինել աշտարակ. եւ ճանապարհ առնել յ երկինս եւ հակառակիլ Աստուծոյ. զոր ուժգին հողմով ցրուեաց զաշտարակն եւ խափանեաց զգործս նոցա. եւ զմի լեզուս յեօթանասունս բաժանեաց: Այսպէս նոյն Տէրն յետոյ շինեաց բարձր աշտարակ զԵկեղեցի՝ երկին ի վերայ երկրի հաստատուն եւ անշարժ հիմամբ: Չոր ոչ շնչմունք դիւաց. եւ ոչ անձրեւք փորձանաց՝ եւ ոչ զետք մեղաւորաց կարենն շարժել զնա. զի ի վերայ հաստատուն վիմին շինեալ է: Այն աշտարակ ի Բելայ շինեցաւ եօթանասուն տանուտերօք: Եւ այս աշտարակ՝ ի Տեառնէ հիմնարկեցաւ եօթանասուն աշակերտօք: Անդ մին լեզուն ի եօթանասուն բաժանեցաւ. եւ աստ զեօթանասուն լեզուս ի մի անձն ժողովեաց: Դարձեալ՝ անդ զչար միաբանութիւնն քակտեաց. եւ աստ զանջատեալ եւ զբաժանեալ մարդիկ իմի միաբանութիւն ած. եւ ի մի հոգի եւ ի մի մարմին եւ ի մի յոյս կոչման հրաւիրեաց. որպէս ասէ. (բազմութիւն հաւատացելոցն՝ էր սիրտ եւ անձն մի:) Այսպէս ի ձեռն եօթանասուն աշակերտացն՝ արար զամենայն հաւատացեալս ի մի ծնորունդ աւագանին սրբոյ. եւ ի մի յորդիս լուսոյ եւ տունջեան. ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի: Երկրորդ՝ որպէս նահապետն Յակօբ նոյն քան թւով ոգիս սերեալ յինքենէ եմուտ յԵգիպտոս. եւ բազում բանակօք ել ի նմանէ: Նմանապէս եւ Տէր մեր եօթանասուն եւ երկու աշակերտօք յինքենէ կոչեցեալ, եմուտ ի խաւարաբնակ գաւառն հեթանոսաց. եւ անթիւ բանակօք՝ բազմութեամբ հաւատացելոց ել: Որք զտիղմն կաւագործ մեղացն թողին. եւ ի ծառայութենէ մեղաց իմանալի փարաւօտէն ազատեցան. եւ ի չար գործակալէ նորին: Եւ անցին ընդ ծով մեղաց աշխարհի. եւ հասին յանապատն ի չարեաց. այսինքն, այժմ յեկեղեղի. եւ յետ մահու յեկեղեցիս անդրանկաց ի ժողովս ընտելոց. եւ յետ յարութեանն հոգւով եւ մարմնով յարքայութիւնն երկնից. որ է երկիր պարգեւաց: (Չի ուր եսն եմ՝ ա նդ եւ պաշտօնեայն իմ եղիցի ասէ ճշմարտութիւնն Աստուծոյ:) Եւ այս ամենայն բարութիւնս՝ եղեւ մեզ ի ձեռն աշակերտացն սրբոց: Երրորդ՝ յորժամ եհարձ Մովսէս զծովն կարմիր խաչանիշ գաւազանաւն, եկին նախ առ երկոտասան աղբիւրս. եւ ապա առ եօթանասուն արմաւենիս: Նոյնպէս գաւազանն բղխեալ յարմատոյն յեսսեայ, խաչանիշ գաւազանաւն պատառեաց զծով աշխարհի. եւ անցոյց զժողովուրդ իւր. եւ Էած յանապատ նախ առ երկոտասան առաքեալսն՝ որք զշուրն կենդանի մեզ արբուցին: Եւ ապա առ եօթանասուն արմաւենիս աշակերտացն դասու՝ որք յիրաքանչիւր քաղաքաց քաղաքաց նստան եպիսկոպոսք. եւ քաղցր վարդապետութեամբն

իւրեանց՝ զհոգիս հաւատացելոց կերակրեցին: Չորոց մարգարէն Դաւիթ կանխաձայնեալ ասեր զգովութիւն սոցա. (արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեացին. եւ որպէս զմայրսն լիբանանու բազումք եղիցին) աշակերտօքն իւրեանց: Տնկեալք եղիցին ի տան Տեառն որ է եկեղեցի սուրբ. եւ ի գաւիթս Աստուծոյ ծաղկեացին ի ձեռն ջուրց աւազանին հոգւովն սրբով: Որ է համաշխարհական աւետարանն. որ իբր ի գաւիթս արտաքս գայ հովիւն քաջ եւ ճանաչէ յինքենէ զհովուեալսն: Իսկ ծաղկիլն այն է՝ զոր Սողոմօն ասէ. (ծաղկեացի կշին.) այսինքն, ի յարութիւն արդարոցն. եւ Տէրն. (փայլեացին իբրեւ զարեգակն յարքայութեանն անուանեաց:) Այս է իմացումն եօթանասուն արմաւենեացն: Չորրորդ՝ սոքա են եօթանասուն ծերքն՝ որք ի Սովսիսէ կոչեցան. եւ նստան դատաւորք եւ պետք ամենայն ժողովրդեանն: Այլ սոքա ի հոգւոյն Սովսեսի արբին. եւ սոքա ի հոգւոյն Զրիստոսի. որպէս ասացաւ. (յորժամ երթամ, առաքեցից զնա առ ձեզ. եւ նա ուսուցէ ձեզ զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ:) Եւ են սոքա ծերք եւ դատաւորք փոխանակ առաքելոցն ի մէջ եկեղեցւոյ. եւ երկրորդ աթոռակիցք յետ երկոտասանիցն. դատաւորք ահեղ ատենի աւուրն: Հինգերորդ՝ եօթանասուն ամ գթիւ մարդկան սահմանեաց մարգարէն Դաւիթ. եւ որդին Դաւիթի ըստ մարմոյ՝ այնքան թուով աշակերտս ընտրեաց. զի ժամանակեայ կենցաղոյս մերոյ՝ ինամածու եւ դայեակ լիցին. յետոյ ի կեանս յաւիտենից առաջ նորդեալ մուծանեն ասելով. (ահաւասիկ եւ մանկուկն իմ զորս ետուր ինձ. լսելով ծառայ բարի եւ հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն քոյ:) Վեցերորդ՝ եօթանասուն ամ յամեաց ժողովուրդն ի գերութեանն Բաբիլօնի. եւ յետոյ ի ձեռն Չորաբաբելի ազատեցաւ: Արդ՝ Բաբիլօն չար խառնակութիւն թարգմանի. կշանակէ գաշխարիս՝ յ որում զանազան մեղօք խառնակիմք. եւ լինիմք գերի եւ ծառայ չար բռնաւորին դիւաց. (զի որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց ասէ Տէրն:) Եւ այս թէ ըստ հասարակաց մարդկան, թէ առանձին իւրաքանչիւր ումեք. որ գերի յախտէ եւ լինի ծառայ մեղաց. յորժամ (առգետս բաբիլացւոց նստեաք եւ լայաք.) այսինքն, առ գետս յորդախաղաց ախտից լայաք: (Չի ոչ գոյ ուրախութիւն անպարշտաց ասէ Տէր. եւ մեղաւորք իբրեւ զծով ծփին եւ հանգիստ մի գտցեն:) Յորժամ բարեպաշտութեան քնարքն լռեալ եւ դատարկացեալ, յանպտուղ ծառ կախեցան: Չի անձն որ զչարն գործէ՝ անպտուղ է որպէս ուռի. եւ ի նմա կախեալ քնարքն հոգւոյն՝ տասն զգայութիւնքս են լռեալ եւ դադարեալ յօրհնութեանցն Աստուծոյ: Չի աստուածային հոգւոյն կնտնտոցն ոչ բախէ զնոսա. զի ոչ վայելէ ի բերանոյ մեղաւորին օրհնութիւնն Աստուծոյ. որպէս գրեալ է ի սաղմոսն: Այսպէս գերի լինի մեղաւոր հոգին չար բռնաւորին սատանայի: Իսկ եօթանասուն ամն գերութեան՝ զի թիւս այս չափ է կենաց մարդկան որպէս ասացաւ: Չայն կշանակէ թէ՛ կեանք մարդկան ի ծննդենէ մինչ ի կատարումն՝ ընդ ծառայութեամբ էին ստանայի: Մինչ եկն բարձանց թագաւորն փառաց. եւ եօթանասուն աշակերտօքս իբր քաջ զօրականօք զեօթանասուն ամեայ գերին թափեաց եւ դարձոյց ի քաղաք բնակութեան իւրոյ ի վերինն Երուսաղէմ: Այսպէս եւ զիւրաքանչիւր ոք անկեալ ի մեղս եւ ի սուգ տրտմութեան, ի ձեռն աշակերտացս այսոցիկ, դարձուցանէ յուրախութիւն եւ ի նաւահանգիստ կամաց իւրոց: Եօթներորդ՝ հարցեալ Պետրոսի զոր քանութիւն թողութեանն, ասէ՝ մինչեւ յե՞օթն թողից յանցաւորին որ ապաշխարիցէ՞. պատասխանէ Տէրն.(ոչ մինչեւ ցեօթն, այլ

եօթանասնեկին եօթն թող յանցաւորին յորժամ դառնայցէ:) Չի հաւատարիմ լիցի բանն՝ ընտրեաց արս եօթանասուն. եւ առաքեաց առ բազմապարտ ազգս հեթանոսաց. զի բիւր տաղանդս առակաւոր բանին նշանակեաց. եւ պատուիրեաց նոցա զհիւանդս բժշկել. եւ զանդամալոյծս կանգնել եւ զայլ ամենայն ախտս փարատել որք ի մեղաց բուսանին. եւ զդէս հանել՝ յոր բանսարկուն բունեալ էր ի մարդիկ. եւ կարծէր թէ յաւիտեան իւր իցեն իսկ այսպէս թողութեամբ մեղաց՝ եւ բժշկելով զազգի ազգի վերս, եւ զդէս հալածելով ի մարդկանէ, ինքեանք աւետաւորք լինէին առ փրկիչն ասելով. (Տէր՝ եւ դէք հնազանդին մեզ յանուն քո:) Վասն որոյ ուրախական աւետեացն իբր աւետչու պարգէս խոստանայր նոցա. ասէ՝ (խնդացէք զի անուանք ձեր գրեալ են յերկինս:) Ութներորդ՝ բանիս կարգ տանի հանէ յառաջինսն. զի ի Կայենէ եօթն վրեժ ինդրեցաւ. եւ ի Ղամեքայ եօթանասնեկին եօթն: Կամ զի նա ոչ ունէր օրինակ սպանողաց. եւ սա ունէր: Կամ զի նա զմինն Եսպան զԱբել. եւ սա կրկին. որպէս ասէր. (այր սպանի ի ցաւս. եւ երիտասարդ ի հարուածս:) Կամ սմա հրամայեաց Աստուած՝ ոչ ումեք սպանանել զԿայեն. եւ յանցեաւ զհրամանն Աստուծոյ. վասն որոյ աւելի կերեաց պատուհաս Ղամեք քան զԿայեն. զի զԿայենի անէծսն ջրհեղեղան եբարձ Աստուած ի յերկրէ. որ եօթներորդ էր ազգի նորա: Իսկ զՂամեքայն՝ ի ձեռն յորդանանու եբարձ. որպէս թէ եօթանասուն գոլի յազգաբանութեան Ղուկասու: Վասն որոյ փոխանակ եօթանասուն ազգացն՝ եօթանասուն աշակերտս ընտրեաց ի ծննդոց նոցա. որով քաւին անծք յանցանաց նոցա: Իններորդ՝ եօթն եօթանասներորդ՝ համառօտեցաւ ի վերայ ժողովրդեանն Իսրայելի. որպէս ասէ Ղանիէլ: (Եւ բարձցին օծութիւնք: Եւ եօթներորդ վաթսուն եւ երկու համառօտեցին. եւ յետ այնորիկ սպանցի օծեալն:) Արդ՝ եօթներորդ վաթսուն եւ երկու. այսինքն, եօթներորդ վաթսուն եւ ինն. որք են ամք չորս հարիւր ութսուն եւ երեք. մինչեւ եկեացէ փշմարիտ օծեալն: Եւ յետ գերութեանն՝ այնքան թուով ամաց կացին քահանայքն առաջնորդ. եւ խափանեցաւ Տէրութիւն օծելոց քահանայիցն. զի յորժամ ծնաւ ճշմարիտ օծեալն Զրիստոս, Յերովդէս այլազգի տիրէր նոցա. եւ խափանեալ էր ամենայն կարգ օրինաց նոցա: Վասն այն ի սոյն ժամանակի լրումն եօթանասներորդացն Ղանիէլի՝ ընտրեաց աշակերտս եօթանասուն. եւ հրամայեաց օծանել զհիմանդս եւ բժշկել. զի ճշմարիտ օծմամբ նորոյս՝ խափանեցի հին եւ ստուերական օծումն քահանայից: Տասներորդ՝ ամենայն գիրք Աստուած եղէն հին եւ նորր կտակարանաց՝ ի թիւս եօթանասուն եւ երկու բովանդակին. որք ի մարգարեից եւ յառաքելոց խօսեցեալ եղէն վասն փրկութեան աշխարհի: Եւ ի հինն եօթանասուն եւ երկու թարգմանչօք կամեցաւ Աստուած թարգմանել եւ յայտնել զբանս մարգարեիցն ամենայն ազգի: Նոյնպէս եւ ի նորս՝ եօթանասուն եւ երկու աշակերտօք կամեցաւ յայտնել եւ սփռել զԱւետարանն սուրբ, եւ զբանս առաքելական ընդ ոլորտս տիեզերաց յեկեղեցիս քրիստոնէից: Չայս եւ առաւել քան զայս՝ վարկանիւ ունիլ խորհուրդ եօթանասուն աշակերտացն. որպէս ցուցաւ ի բանից վարդապետացն սրբոց: *Իսկ պատճառ կոչման աշակերտացս՝ այսոքիկ են: Փարիսեցիքն որ յամենայն հակառակէին Տեառն եւ փրկչին մերոյ՝ ի տեսանել զաստուածագոր նշանսն, երբեմն ասէին թէ՝ (Բեեդգբուղաւ հանէ դա զդէս.) եւ երբեմն թէ, արուեստագիտութեամբ: Եւ աշակերտացն

գրծկութիւնս ուսեալ ի նմանէ. ուստի յայտ է՝ յորժամ էջ ի լեռնէն որ զաստուածութեան զփառսն երեւեցոյց. իշխան ոմն այսահար ունելով զորդին՝ եկն առ Յիսուս եւ ասէ. (մատուցի զորդի իմ առ աշակերտսն քո. եւ ոչ կարացին բժշկել:.) Որեւ դպրացն եւ փարիսեցւոցն ըստ իւրեանց կարծեացն թուեր թէ, չէին ուսեալ ի վարդապետէն. եւ վասն այն չկարացին հանել: Որեւ աշակերտքն դեռեւս անկատար գոլով՝ ի նոյն կարծիս անկեալ հարցանէին. (մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել. նա պատասխանի ետ. վասն թերահաւատութեան ձերոյ:.) Իբրթէ՛ հաւատօք կատարի այսպիսի նշան. եւ ոչ արուեստիք. վասն այն զայրանայ իշխանին եւ անհաւատ եւ թիւր կոչէ: Եւ յայտնի սաստէ դիւին եւ ասէ. (խուլ եւ համր դեւ՝ ես տամ քեզ հրաման ել ի դմանէ. եւ այլ մի մտցես ի դա:.) Եւ այսու զչար կարծիս նոցա բառնայ: Եւ քանզի բազում ժողովուրդ կուտեցաւ ի տեսիլ սքանչելեացն՝ յայնժամ կոչեաց զաշակերտսն. եւ ընտրեաց ի նոցանէ եօթանասունս. եւ բաժանեաց զնոսա երկուս. եւ առաքեաց յամենայն քաղաքս եւ ի գիւղս, կատարել նշանս. եւ բժշկել զհիւանդս. եւ հանել զդեւս: Եւ պատուիրեաց նոցա մի ինչ բառնալ ի մարմնական պիտոյից. մի հաց մի գաւազան. մի մախաղ. մի այլ ինչ. այլ միայն քարոզութեան ակետարանին հոգալ: Եւ զպետս մարմնոյն յաշակերտելոցն առնուլ. (զի արժանի է ասէ մշակն կերակրոյ իւրոյ:.) Եւ որպէս նահապետն արձակեաց զաղանիսն տեսանել թէ ցածուցեա՞լ է ջուրն. եւ նա եկեալ տերեւով ձիթենւոյն ակետեր զնուազութիւն աշխարհակործան ջուրցն հեղեղի: Նոյնպէս եւ եօթանասուն աշակերտքս այսոքիկ՝ արձակեցան ի Զրիստոսէ. եւ հնազանդութեամբ դիւացն ակետիս ետուն աշխարհի, եթէ ի արիւնտիւնց է ջրհեղեղ դիւապաշտ մոլորութեանց աշխարհի. եւ ճշմարտութիւն ակետարանին տիրէ ընդ բոլոր տիեզերս. ըստ սաղմոսին. (տիրեսցէ նա ի ծովէ մինչեւ ի ծով. ի գետոց մինչ ի ծագս աշխարհի:.) Արդ՝ տիրեաց եւ թագաւորեաց Տէր մեր ամենայն աշխարհի. եւ զբազմադիմի պատերազմ չարին խափանեաց. (եւ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկիր. հեռաւորաց եւ մերձաւորաց ակետարանեաց զնոր պարգեւս բարեաց:.) Եւ ուղղեաց զմեզ հայիլ ի յերկինս. նախ պաշտել զԱստուած կենդանի. եւ բարի գործօք հաճոյանալ նմա: Եւ ապա (ակն ունիլ գալստեան նորա յերկնից հանդերձ հօր փառօք եւ հրեշտակաց սրբոց հրոյ, առնուլ վրեժ յայնցանէ, որք ոչ հնազանդեցան ակետարանի փառաց նորա:.) Իսկ զաշակերտեալս եւ զհաւատացեալս բանին կենաց՝ յաւիտենից եւ անմահ կենաց առնել ժառանգորդս. ըստ անսուտ խոստմանն իւրոյ թէ՛ (ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. զի տեսանիցեն զփառս իմ:.) Որում եւ զմեզ եւ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ՝ արժանի արացէ ուրախութեան ամենայն սրբոց երկնաւորաց եւ երկրաւորաց. առաքելական զնդին. եւ աշակերտաց դասուն. ընդ ակետարանչացն ճշմարտութեան մասնակից՝ հաղորդս լինիլ անճառ երանութեանց՝ անպատում խնդութեանցն ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ ընդ Զօր՝ Սուրբ Զոգւոյն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ Բարթոլոմէոսի առաքելոյն, ի բանն: (Եղերուք խորգետք իբր՝ զօձս. 'միամիտք իբր՝ զաղանիս:.) Մատ. 10. 16: (Գլուխ. ԾԻԴ)

Նախ պարտ է գիտել՝ թե՞ զի՞նչ է խորագիտութիւն օձին ի դէմս առաքելոյն: Եւ ասեմք տասն գլխով: Առաջին՝ որ զամենայն մարմինն ի սպանումն տայ. եւ գլխոյն միայն զգուշանայ: Չայս պատուիրէ թե՛ զամենայն ինչս տալ մեզ. այլեւ զմարմինն ի չարչարանս: Եւ թե՛ մահ հանդիպի, զհոգին եւս տալ եւ զհաւատն միայն պահել՝ որ է գլուխ եւ արմատ մեր. զի զսոսա կարեմք գտանել. այլ հաւատն կորուսեալ՝ ոչ գտանի: Երկրորդ՝ ի պատրելն գեւա՝ եղել իբր հնազանդի կերպիւ. այսպէս ի քարոզելն զհնազանդի կերպ ստացէք ասէ: Երրորդ՝ զդէմսն ընտրեաց՝ զի դիրաւ խաբիցէ. այսպէս զդէմք ընտեցէք ընդունողաց: Չորրորդ՝ զի հեռի գտաւ ի յԱդամայ. այսպէս զԺամանակն եւ զտեղին ընտրեցէք: Հինգերորդ՝ զի ոչ հանգչելով կամ բարձրաձայն ոտիւք. եւ դուք մի հպարտ եւ սնապարծ երթայք ի քարոզել. այլ խոնարհ եւ քաղցր բանիւ: Վեցերորդ՝ զի յեւայէ եգիտ զպատճառ խօսակցութեան իւրոյ: Եւ դուք ինոցա բանիցն եւ ի գործոց՝ զնոսա ի հնազանդութիւն ածէք. որպէս Պօղոս զաթենացիսն մեհենօքն իւրեանց: Եօթներորդ՝ զմեռելոտի եւ զհնացեալ խորին մերկանայ. պարտ է ձեզ մերկրանալ զախտն, որ է մեռելութիւն հոգւոյ եւ ապականիչ: Ութներորդ՝ խոտորնակ ընթանայ. բայց ի բոյնն ուղիղ մտանէ. այսինքն թե՛ վարքն ձեր ի ցոյցս մարդ կան պարկեշտ լիցին. զի մի գայթակղեսցին: Կամ թե՛ հաճեսցին զմիտս նոցա վասն շինելոյ ի հաւատս: Այսպիսիք թեպէտ երեւին բարիք՝ սակայն յաջ եւ յահեակ թիրութիւն է. բայց ի միտս ամենեւին ուղիղ պարտ է մտանել: Իններորդ՝ զաչս խաւարեալ՝ լուսաւորէ. յխաւարեալ աչս մտաց՝ իմաստութեամբ եւ հաւատով պարտ է լուսաւորել: Տասներորդ՝ զի զթոյնսն թափէ յմպել ջրոյն. այսպէս ի յուսումն հոգեւոր՝ պարտէ զամենայն նենգութիւն թափեալ. այլեւ զմեղսն խոստովանիլ. եւ ապա հաղորդիլ: Այս վասն խորագիտութեան օձին: *Եւ թե՛ զի՞նչ է միամտութիւն աղաւնոյն: Ասեմք տասն գլխով: Նախզի՛ աղաւնին երամասեր է. այսպէս պարտէ ձեզ ընկերասեր լինիլ: Երկրորդ՝ թեպէտ առնուն զձուն եւ զձագն՝ եւ քակեն զբոյնն, ոչ հեռանայ: Նոյնպէս թե՛ զինչս ձեր առնուցուն, եւ ի տանէ եւ ի հայրենեաց վարեն, եւ զընտանիս ձեր դատապարտեն վասն իմ, ուրախ լերուք. եւ մի դարձջիք յինէն: Երրորդ՝ թե՛ մի ի նոցանէ պակասի, այսինքն, որձն կամ եգն, ոչ հեստին: Նոյնպէս եւ դուք զթիւ ձեր մի պակասեցուցանէք. որպէս եղել զի պակասեցաւ Յուդա, եւ եմուտ Մատաթիա: Չորրորդ՝ զի ոչ միայն զձագս իւր, այլեւ զօտարսն սնուցանէ. նոյնպէս եւ գուք ոչ միայն զսուրբս, այլեւ զմեղաւորս սրբեցէք եւ խառնեցէք յերամս ձեր: Հինգերորդ՝ որ զբոյն ձագուցն սրբեն. նոյնպէս եւ դուք զսիրտս քրիստոնէից սրբեցէք յամենայն աղտէ մեղաց: Վեցերորդ՝ զի ձագուցն նախ շօր հող տայ եւ սրբէ զատամուսնս: Այսպէս եւ դուք զեղութիւնն եւ զապաշխարութիւն տուք աշակերտացն. զի սրբեսցի ստամոքս հոգւոց նոցա. եւ կարօտացին անմահական կերակրոյն: Եօթներորդ՝ զի ոչ է զհշակեր. այլ ընտակեր: Եւ կերակուր լիցի ձեզ՝ ոչ մեղք, այլ արդարութիւն եւ բանն Աստուծոյ: Ութներորդ՝ զի ոչ պատառէ կտցով եւ կամ ոտիւք որպէս բազէ. այլ թելօքն սակաւ մի հարկանէ: Այսպէս եւ դուք մի պատկառէք զոք բանիւ կամ նենգութեամբ. այլեւ թելօք. այսինքն, առաքիլութեամբ ձեր խրատեցէք զայլս, եւ օրինակ բարի տալով: Իններորդ՝ զի նստեալ յեզր ջրոյ՝ ընկղմէ զինքն եւ զերծանի ի բազէն. այսպէս եւ դուք տեսեալ զփորձութիւնն սատանայի, արտասուօք եւ սուրբ գիտութեամբ գրոց զերծիք ի նմանէ:

Տասներորդ՝ զի լեղի ոչ ունի. նոյնպէս եւ դուք զլեղի դառնութեան եւ բարկութեան՝ ամենեւին մի ստանայք. այլ զպտուղ բարեաց: Այսքան վասն աղաւնւոյն: Այլ վասն սուրբ առաքելոյն Բարթողիմէոսի՝ որ մերկացաւ զհանդերձ մարմնոյն գիտելի է: Չի երեք ցեղ հանդերձ գրտանի ի գիրս սուրբ: Առաջին հանդերձ է հեշտութիւն աշխարհիս եւ մեղաց. որպէս ասէ Պօղոս. (ի բաց մերկացարուք զհին մարդն գործօք իւրովք: եւ զգեցարուք զնոր մարդն Քրիստոսի:) Եւ հրաման տայ մեզ թագաւորն մեր Քրիստոս մերկանալ զհանդերձս մեղաց. եւ զգենուլ զնոր հանդերձն զՔրիստոս: Երկրորդ՝ հանդերձ են մարմնաւոր ինչքն. ոսկի, արծաթ, համդերձ: Եւ զհանդերձս զայս՝ յիշատակէ Մատթէոս. (թէ ոք հանէ ի քէն զշապիկս, թող ի նա զբաճկոն քո.) այսինքն, զի ոք կամի փախչիլ ի կռուոյ եւ ի նեղութենէ, թողու զշատիկ եւ զբաճկոն. այսինքն, զփոքր եւ զմեծ ստացուածս իւր թողու ի բաց. զի հանգիստ գտցէ: Եւ թագաւորն մեր հրամայէ զայսպիսի հանդերձս մերկանալ, յորժամ ասաց աշակերտացն. (մի ստանայք ոսկի՝ եւ մի արծաթ:) Երրորդ՝ հանդերձ է մարմինս՝ որ է ծածկոյթ հոգւոյն: Յայսմանէ խօսի Յոք ասելով. (միս եւ մորթ զգեցուցեր ինձ:) Չհանդերձս զայս հրամայեաց թագաւորն մերկանալ ասելով աշակերտացն. (մի երկնչիք յայնցանէ՝ որք զմամին սպանանեն. եւ զհոգին ոչ կարեն:) Չայս երեք հանդերձս՝ սուրբն Բարթողիմէոս ի բաց մերկացաւ: Չառաջինն մերկացաւ՝ յորժամ եթող զամենայն հեշտութիւնս եւ զմեղս: Չերկրորդն մերկացաւ յայնժամ, յորժամ եթող զամենայն ինչս մարմնաւոր եկն զհետ Քրիստոսի: Չերրորդն մերկացաւ, յորժամ մեռաւ վասն Քրիստոսի. եւ հանաւ մորթ նորա ի հայոց: Եւ զայս հանդերձս մերկացաւ Բարթողիմէոս վասն տասն պատճառի: Առաջին պատճառ՝ զի երթիցէ յարքայութիւնն երկնից. վասն զի հանդերձս մեր՝ է աղտեղի. եւ աղտեղի հանդերձիւ ոչ ոք կարէ մտանել յարքայութիւնն երկնից. որպէս գրեալ է Յեսթերն թէ՛ թագաւորն հրամայեաց ոչ ումեք մտանել յապարանս արքունի աղտեղի հանդերձիւ: Յանդերձ աղտեղի է մեղքն՝ որ ոչ ինչ աղտեղի է քան զնա: Յայսմանէ խօսի Եսայի թէ՛ (հանդերձ թաթաւեալ արեամբ՝ կերակուր լիցի հրոյ:) Վասն զի գժոխայինքն հոգւով եւ մարմնով կերակուր հրոյ դժոխոց լինիցին. վասն զի թաթաւեցան ի մեղս: Արդ՝ զայս հանդերձս պարտ է մերկանալ մեզ. որպէս արար ողջախոհն Յովսէփ՝ որ զհանդերձն իւր եթող ի կինն ցանկասեր եւ փախեալ ի մեղաց: Նոյնպէս զքեզ եթէ կինս այս որ է հեշտութիւն աշխարհիս յինքն քարշէ, թող ի նա զհեշտութիւն. եւ փախիր մերկ. զի լաւ է մերկ յարքայութիւնն մտանել, քան այսպիսի հանդերձիւս իջանել ի դժոխս: Այսպէս արար Բարթողիմէոս. զի յորժամ ետես եթէ մեղքն ըմբռնէ զնա, եթող զմեղսն եւ փախեալ. եւ յորժամ աշխարհս կամեր ըմբռնել զնա մամնական ազահութեամբ, ի նմանէ փախեալ. եւ յորժամ ըմբռնեցին զնա կռապաշտքն եւ բռնադատեին զնա ուրանալ զՔրիստոս, եթող ի նոսա զհանդերձս իւր. այսինքն, զմորթս իւր. եւ փախեալ յարքայութիւնն երկնից: Որպէս է կենդանի ինչ՝ որք որսան զնա եւ առնուն զերկրորիս նորա ի պետս դեղոյ. եւ նա տեսեալ զորսորդն, ինքնին հանէ զերկրորիսն եւ փախչի: Այսպէս եւ դեւք որք որսան զքեզ վասն մեղաց՝ դու թող ի նոսա զմեղսն եւ փախիր: Մեղաւորք որք ոչ մերկանան զհանդերձս մեղաց, ի յաւուրն դատաստանի զգենուն զայն հանդերձն. որպէս ասէ սաղմոսն թէ՛ (զգեցցին զամօթ. եւ ակցեն որպէս կրկնոց զամօթս իւրեանց զիւրեամբք:) Ով թէ

որպիսի ատելի հանդերձս այս. այսինքն, երեսն եւ աստառն վատ. վասն զի կրկին է. եւ երկուքն են ատելի. զի ներքին է եւ արտաքին. այսինքն, զի հոգւով եւ մարմնով այրին ի դժոխս մեղաւորք: Երկրորդ պատճառաւ. մերկացաւ զհանդերձն՝ զի կամի գօտեմարտիլ ընդ սատանայի. եւ թէ ըմբշամարտքն հաւասարք են միմեանց ուժգնութեամբ, ո՞րն յաղթէ ի նոցանէ. այսպէս թուի թէ, որ մերկն է՝ յաղթէ զայն որ զգեցեալն է. զի մերկն ոչ ունի տեղի ըմբռնելոյ: Նոյնպէս սատանայն գօտէ մարտի ընդ մարդոյս. եւ է զօրեղ եւ ճարտար. զի ի սկզբանէ աշխարհի մարտընչի ընդ մարդկան. եւ է մերկ ի մարմնական իրաց: Իսկ մարդս շատ է զգեցեալ. ինչս, տուն, հայրենիս, եւ այլ ինչ. վասն որոյ յաղթէ զմարդիկ: Վասն այնորիկ մերկացաւ սուրբն Բարթողիմէոս զամենայն հանդերձս իւր, զի յաղթեսցէ զսատանայ: Եւ զի սատանայ մերկ էր ի մարմնոյ. զի անմարմին է. վասն այսորիկ Բարթողիմէոս զմարմինն եւս մերկացաւ. զի անմարմնաբար մարտիցէ ընդ նմա: Դարձել՝ ասէն վարդապետք թէ՛ օձն յորժամ տեսանէ զմարդ զգեցեալ՝ յարձակի ի վերայ նորա եւ խածանէ. այլ յորժամ զմարդն մերկ տեսանէ, յոյժ փախչի: Վասն զի յորժամ խաբեաց զԱդամ, մերկ էր. վասն այն դատապարտեցաւ՝ զի փախիցէ ի մերկ մարդոյ: Այսպէս ո զգեցեալն զհոգս աշխարհիս, յորժ խածանէ զնա օձն սատանայ: Բայց դասք առաքելոցն՝ մերկ էին յաշխարհէս եւ հոգւով աղքատք՝ յաղթեցին զնա: Դարձեալ՝ որպէս Դաւիթ ոչ կարաց զինուքն Սաւուղայ յաղթել Գողիաթու. զի ծանր էր. այլ մերկացաւ զայն՝ եւ հովուական ցպովն յաղթեաց մնա: Նոյնպէս Բարթողիմէոս մերկացաւ զծանրութիւն հին օրինացն. եւ էառ ի ձեռն ցուպ զխաչն Քրիստոսի. եւ այնու յաղթեաց զանմարմինն գողիաթ: Երրորդ պատճառաւ մերկացաւ՝ զի կամէր զինքն պատարագ Աստուծոյ մատուցանել: Չի հրաման էր յԱստուծոյ՝ զի յանասնոց սրբոց մատուցանելն պատարագ Աստուծոյ. եւ զմորթն քերթին. եւ մասն մասն արարեալ Եփէին. եւ հոտ անուշ ելանէր առ Աստուած: Այսպէս եւ սուրբ առաքեալն՝ էր սուրբ եւ անարատ պատարագ Աստուծոյ. վասն որոյ հանեալ զմորթ նորա, եւ հանեալ ի խաչ, ապա իջուցին ի խաչէն. եւ հոտին զգլուխն. եւ այնպէս եղել ընդունելի պատարագ Աստուծոյ: Նոյնպէս եւ մեք պարտիմք մեռուցանել զմեզ պատարագ ընդունելի Քրիստոսի՝ զղջմամբ եւ ապաշխարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի. որպէս Քրիստոս վասն մեր մատոյց զինքն պատարագ ի վերայ խաչին: Չորրորդ պատճառաւ մերկացաւ՝ զի յոյժ ջերմացեալ էր եւ չոգեալ. որպէս որք խմեն զգինի՝ ջերմանան եւ ի բաց մերկանան զհանդերձն. որպէս արար Նոյ: Այսպէս եւ առաքեալս արբեցաւ աստուածային զինուովն. եւ մերկացաւ յինքենէ զհանդերձս իւր. քանզի անկեաց այգի քարոզութեամբն զքրիստոնեայս. եւ ջրեաց զնա աւազանին ջրովն. եւ արբեցեալ սիրով հաւատացելոցն, մերկացաւ զհանդերձս իւր: Հինգերորդ պատճառաւ մերկացաւ զհանդերձն՝ զի կամեցաւ ելանել ի լեռն արքայութեանն երկնից: Եւ որպէս եղիա յորժամ կամէր համբառնալ՝ ընկեց զմաշկեակն իւր: Եւ Քրիստոս յորժամ կամէր ելանել առ հայր՝ մերկացաւ զհանդերձս իւր ի վերայ խաչին: Նոյնպէս սուրբ առաքեալս յորժամ կամեցաւ ելանել յերկինս, մերկացաւ զհանդերձս իւր եւ զամենայն ծանրութիւնս. եւ թեթել թելօք թռեաւ յերկինս: Այսպէս եւ մեք պարտիմք մերկանալ զամենայն հանդերձս աղտեղիս. այսինքն, զմեղս եւ զինչս աշխարհիս. նաեւ զմարմինս մեր. զի թեթել հասցուք յարքայութիւնն

երկնից: Այլ նոքա որք ոչ մերկանան զծանր զգեստս զայս, իջանեն յատակս դժոխոց. որպէս ասէ Մովսէս. (ծով ծածկեաց զնոսա. ընկղմեցան իբրեւ զվեմ:) Եւ թէ ոք ասիցէ՝ ոչ կարեմ տանիլ այսպիսի չարչարանացս. զի յոյժ դառն կերակուր է այս: Ասեմք թէ՛ Զրիստոս քաղցրացուցանէ զայսպիսի դառնութիւնս. որպէս յաւուրս եղիստի գնաց ոմն յորդոցն Իսրայելի քաղէլ բանճար. եւ տեսեալ որթ վայրի՝ քաղեաց ի նմանէ ազոխ. եւ ելից ի հանդերձս. եւ բերեալ եփեաց զնա. եւ ոչ կարէին ուտել. զի դեղ մահու էր. վասն որոյ ետ խառնել անդ Եղիսէոս ալիւր. եւ քաղցրացաւ եւ ոչ վնասեաց:

Այսպէս եւ Բարթոլոմէոս կամեցաւ պտուղ ժողովել յանհաւատիցն. այսինքն, դարձուցանել ի հաւատս. այն էր վայրենիս յոյժ դառն. քանզի լցին զմարմինս նորա ազգի ազգի չարչարանօք. այլ Եղիսէոս՝ Աստուծոյ՝ որդին՝ խառնեաց անդ զքաղցրութեան հաւատս: Վասն զի զփառս հրեշտակաց եցոյց նմա: Վասն որոյ թէ քեզ դառն եւ դժուարին է չարչարանքն եւ աշխատութիւնն, աղաղակեա առ Զրիստոս զի քաղցրացուցէ զայն: Վեցերորդ պատճառաւ՝ մերկացաւ զհանդերձն իւր՝ զի առցէ այն փոխարէն զհանդերձն որ ի յերկնաւոր հօրէն: Որպէս յորժամ հանին ի բանտէն յՅովսէփ, մերկացուցին ի նմանէ զհին հանդերձն. եւ զգեցուցին նմա հանդերձ պատուական. եւ կացուցին առաջի թագաւորին: Այսպէս եւ սուրբն Բարդուղիմէոս՝ էր ի բանտի ի կեանս. վասն այն մերկացաւ. զամենայն աղտեղութիւնս մարմնականս եւ զկարիս մարմնոյ. եւ զգեցուցին նմա հանդերձ լուսեղէն. եւ կացուցին զնա առաջի թագաւորին երկնաւորի. եւ յոյժ մեծացոյց զնա թագաւորն Զրիստոսի: Եւ սովորութիւն է Աստուծոյ՝ որ ոչ տայ ումեք նոր հանդերձ, մինչդեռ հանդերձ նորա ոչ է հին եւ պատառոտուն: Որպէս էր տանուտեր ոմն՝ որ ուներ բազում՝ որդիս. եւ յաւուր տօսի զգեցոյց որդոցն՝ որք զհանդերձն հին եւ պատառոտուն ունէին, նոր եւ պատուական հանդերձ. եւ ոմն յորդոցն ոչ ուներ հին հանդերձ եւ պատառոտուն. զի զհին հանդերձն իւր խնամով էր պահեալ. ոչ ետ նմա նոր հանդերձ: Վասն որոյ երթեալ ծակոտեաց քրտամբ զհին հանդերձն. եւ էառ ի հօրէ իւրմէ նոր հանդերձս: Այլ հայրն երկնաւոր այնոցիկ որք պատառեն զհանդերձս իւրեանց՝ այսինքն, որք ոչ խնամեն զմարմինս ի չարչարանացն եւ յապաշխարութենէ, նաեւ պատառեն զհին հանդերձն որէ մեղքն խոստովութեամբ, զգեցուցանէ նոցա Աստուած հանդերձ լուսաւոր: Իսկ որք խնամ տանին մարմնոյս՝ ուտելով ըմպելով եւ այլ հեշտութեամբ, ոչ զգեցուցանէ նոցա Աստուած նոր հանդերձ: Վասն այսորիկ սուրբն Բարթոլոմէոս՝ որ պատառեաց զհանդերձս իւր, վասն այն ընկալաւ ի Զրիստոսէ զհանդերձս լուսեղէնս: Իսկ որ միանգամ մերկանայ զհանդերձս աղտեղիս եւ զմեղաց՝ ոչ է պարտ դարձեալ զգեճուլ զնա. վասն զի գրեալ է յաւետարանին թէ՛ (որ յանգի իցէ՛ մի դարձցի յետս առնուլ զձորձս իւր.) այսինքն, թէ որք են յանդաստանս ապաշխարութեան՝ եւ անդ սերմանեն զառաքինութիւնս՝ ոչ պարտին դառնալ յետս եւ զգեճուլ զաղտեղի հանդերձս որ է առաջին մեղքն զոր եթող: Չայսպիսիս՝ ուսուցանէ մեզ օճն. զի յորժամ ծերանայ եւ ոչ տեսանէ աչք իւր, եւ կամի վերստին նորոգիլ, հինգ իրս առնէ: Նախ՝ ուտէ դառն խոտ եւ խսիսէ զթոյնս իւր: Երկրորդ՝ երթայ լուանայ զինքն յաղբերս ջրոց. զի կակղացի մորթն: Երրորդ՝ զի քառասուն օր ի պահս մտանէ. զի թուլացի մորթն ի մարմնոյն: Չորրորդ՝ զի անկանի ընդ նեղ քարածերպս. եւ անդ թողու զխորխն. զի թէ արձակ իցէ

քարածերպան, ոչ իսկ զխորիս օձին. եւ պարտ է որ քարածերպան այն պիտու եւ հաստատ լինի. որ չքարշէ զօձն ի հետ իւրն: Հինգերորդ՝ զի երթայ եւ կայ ընդդէմ արեգականն՝ զի նոր մորթն հաստատեսցի. եւ գթողեալ մորթն՝ այլ ոչ զգենու: Այսպէս արար եւ Բարթոլղիմէոս. զի ասէ յերգ երգոցն ի դէմս նորա. (մերկացայ զհանդերձս իմ. զի ա՞րդ ագեցայց:) Չի յայնժամ ուտեն զդառն դէղս մեղաւորք՝ յորժամ զղջանան ի մեղաց իւրեանց. եւ յայնժամ լուանան յաղբերս՝ յորժամ լուանան իւրեանց ջրով արտասուացն. եւ պարտ է զի պահեսցէ պահս բազումս՝ զի գիրութիւն նւագեսցի. եւ մարմինն տկարասցի. եւ պարտ է անկանիլ ընդ նեղ ծերպս քարանց. այսինքն, ընդ նեղ եւ ընդ անձուկ վարս: Բայց են ոմանք՝ որք ընդ արձակ ծերպս անցանեն. այսինքն, որք մտանեն ի կարգս. եւ վարին աշխարհական կենօք. վասն այն ոչ մերկանան զհին մեղսն: Եւ են ոմանք յաշխարհականաց՝ որք ուխտեն ինչ եւ առնուն յանձն պահել եւ անցանել ընդ նեղ կեանս. բայց ոչ ունին հաստատութիւն. քարոզեն զուխտս. եւ ոչ մերկանան զհին գործս իւրեանց. այլ դարձեալ թողուն զուխտն՝ եւ դառնան յարաջին գործն իւրեանց: Ոչ այսպէս Բարթոլղիմէոս. այլ զնեղ եւ զանձուկ վարս զոր յանձն էառ՝ զնոյն միշտ կատարեաց. վասն այն եթող զմորթս հինս, եւ այլ ոչ զգեցաւ: Եւ զնոր կեանս եւ զգգեստն զոր զգեցաւ՝ տարածեր ընդ դէմ արեգականն արդարութեան Զրիստոս պահօք եւ աղօթիք. զի պնտագոյն հաստատեսցի: Եօթներորդ պատճառաւ մերկացաւ՝ զի զինքն անմեղ ցուցցէ յաշխարհէս եւ սուրբ. եւ զի ոչ է գողացեալ ինչ յաշխարհէս. զի որպէս ոք որ ելանէ՝ եւ անդ լեալ է գող, եւ կարծեն զնմանէ թէ նա է գողն, նա մերկանայ զինքն ցուցանելով սուրբ ի գողութենէն: Այսպէս որք ելանեն յաշխարհէս մահուամբ՝ զան դէքն եւ ասեն. գողացեալ ես դու ինչ ի տանես մերմէ որ է աշխարհս. եւ թէ գտանեն ինչ ի նմա, չարչարեն: Իսկ Բարթոլղիմէոս զի ցուցցէ զինքն թէ ոչ ունի ինչ յաշխարհէս. վասն այն մերկացաւ զհանդերձն իւր, զի մի ինչ գտցէ սատանայ ի նմա յիւրոցն. զի գիտէ զսովորութիւն դիւանցն. զի յոյժ ինչդէ գտանել ինչ ի մարդս: Ութներորդ պատճառաւ մերկացաւ՝ զի առանց ծանրանալոյ եւ արգելման սպասաւորեսցէ Զրստոսի. որպէս արար եւ Տերն մեր Զրիստոս. յորժամ կամեր լուանալ զոտս աշակերտացն, ի բաց եհան զհանդերձս. զի մի արգելումն լիցի սպասաւորութեանն: Այսպէս եւ Բարթոլղիմէոս ուտեալ ի Զրիստոսէ, կամեցաւ լուանալ զոտս մեղաւորաց. ի բաց մերկացաւ զմորթն՝ զի մի լիցի արգելումն սպասաւորութեանն: Եւ որպէս Զրիստոս արկաւ զհիւրեալ զղենջակ եւ այնու մաքրեր զոտս աշակերտացն: Նմանապէս արկաւ զհիւրեալ զկեանս մաքուրս. որով մաքրեցան մեղքն բազմաց, առեալ զնա օրինակ բարեաց: Իններորդ պատճառաւ՝ մերկացաւ զհանդերձս, զի հանգիցէ հոգին. որպէս ոք ի ձմերայնի զգենու հանդերձ ծանր եւ հին եւ ոչլոտ. որ ոչ տաքացուցանէ. այլ առաւել անհանգիստ պահէ. զի յորժամ մերկանայ՝ հանգիստ քնի: Եւ արդ՝ կեանս այս է ձմեռն մեղաց եւ սառուցեալ ի սիրոյն Զրիստոսի. եւ բնութիւնս մեր լցեալ զազիր խորհրդովք: Չի ասեն իմաստունք. թէ ոք չուխայ առնէ ի գայ լառ ոչխարի բրդոյ, յոյժ լինի ոչլոտ. ո՞րք են ոչխարք. Ադամ եւ Եւա. զորս պատառեաց գայլն սատանայի: Իսկ հանդերձք մեր՝ այսինքն, մարմինս է ի նոցանէ. որ է լցեալ զազիր խորհրդով. եւ ոչ հանգչի հոգին որչափ է ի մարմնի: Վասն զի (ցանկայ մարմինն հակառակ հոգւոյն.) որպէս ասէ Պօղոս ի հռօմայեցւոց. (այր մի

տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուցէ զիս ի մարմնոյ աստի չարէ:) Վասն այն մեկացաւ Բարթուղիմէոս՝ զի հանգիցէ հոգի նորա: Եւ դարձեալ՝ զի ծանր է հաղերձս այս. եւ ոչ տաքացուցանէ. որպէս ասէ մարգէն անգեաս թէ՛ (զգեցուցիք զանձինս ձեր՝ եւ ոչ տաքացայք:) Յորժամ ծերացաւ Դաւիթ, թեպէտ բազում բազում հանդերձիւ ծածկէին զնա՝ ոչ ջեռնոյր. նոյնպէս հանդերձ մեղաց եւ հեշտութեան՝ եւ ինչք մարմնականք, ոչ ջերմացուցանեն զսերն աստուածային. այլ առաւել սառուցանեն ազահութեամբ եւ ցանկութեամբ աշխարհի: Վասն այն մերկացաւ Բարթուղիմէոս. զի հանգիցէ յարքայութեանն երկնից: Տասներորդ պատճառաւ՝ մերկացաւ զհանդերձս իւր. զի էր առ Զրիստոս վաճառական հոգեւոր. (եւ զտեալ մի պատուական մարգարիտ. այսինքն, զսերն Զրիստոսի, վաճառեաց զամենայն զոր ուներ. նաեւ զմարմինն իւր. եւ գնեաց զայն մարգարիտն:) Եւ թէ ոք հարցանէ զնա՝ վասն Է՞ր այդպէս ծանր գնով գնես զմարգարիտդ զայդ: Պատասխանի տայ թէ՛ սերն Աստուծոյ պատուական է քան զամենայն մարդկան: Եւ զի ես այն գնովն գնեցի զսերն մարդկան. այս խիստ է յաժան. եւ վասն սիրոյ մարդկան ստեղծեաց զամենայն արարածս. նաեւ խոնարհեցաւ յանճառ փառաց իւրոց. եւ եղէ մարդ. եւ զմարմինս եւս զոր էառ ի կուսէն՝ ետ եւ գնեաց զսեր մարդկան. զի մեռաւ ի խաչին վասն մեր. եւ չէ զարմանք թէ ես զին տամ սիրոյն Զրիստոսի զհանդերձս իմ: Այսքան վասն Բարթուղիմէոսի՝ որ մերկացաւ զմորթ հանդերձի իւրոյ վասն սիրոյ Զրիստոսի Աստուծոյ մերոյ՝ Որ է օրնեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ ի խորհուրդ տապանակին: (Եւ արար Բեսելիել զտապանակն յանփոյթ քայտից. ' պատեաց ներքոյ ' արտաքոյ ոսկով:)
(Գլուխ. ԾԻԵ)

Ասէ Աստուծային գիրն. (եկաց Մովսէս ի լեռն Սինայ քառասուն տիւ ' քառասուն զիշեր. եւ ետ նմա Աստուած զօրէնսն գրեալ ի քարեղէն տախտակի:) Եւ թէ վասն Է՞ր ոչ ի քաղաքի, այլ ի յանապատ լերինն: Այս վասն չորս պատճառի: Նախ զի աշխարհի եւ քաղաք լի է զանազան չարիք. ոչ էր արդան իջման Աստուծոյ. այլ ի յանապատ տեղիս: Երկրորդ՝ ցուցանէ թէ՛ որք զօրէնս Աստուծոյ ընդունին, պարտ է մաքուր լինիլ յամենայն մեղաց որ ի քաղաքի գործի. որպէս բժիշկք նախ զախտն մաքրեն. եւ ապա զգեղն տան: Երրորդ՝ որպէս ոք երթայ ճանապարհ ընդ ծով՝ նախ ի ցամաքին պատրաստէ զամենայն պէտս նաւավարութեանն. զառագաստն, զղեակն, եւ զայլն: Նոյնպէս Աստուած նախ յանապատին պատրաստեաց զնոսա օրինօք. զի զորժամ ի քաղաքսն երթիցեն՝ զնոյն սովորութիւն ունիցին: Եւ չորրորդ՝ յանապատին ետ զօրէնսն, զի հաստասեցին ի միտս թէ յԱստուծոյ էր օրէնն եւ ոչ ի մարդկանէ. որեւ զմանանայն յերկնից, եւ զջուրն ի վիմէն ետ. եւ զայլսն. զի սոքա մարմնոյն էին կերակուր. եւ օրէնքն հոգւոյն տւեալ յԱստուծոյ: Եւ այն որ ի քարեղէն տախտակի. զի կարծր է նիւթն. եւ ոչ որպէս փայտ կամ քարտեզ որ դիւրաւ ջնջի: Եւ այն զի առաջին տախտակն խորտակեցաւ: Այն է՝ որ հին օրէնն փոխեցաւ եւ նորս հաստատեցաւ: Եւ կրկին տախտակն՝ հոգի եւ մարմին մեր. հինգ ներքին եւ հինգ արտաքին զգայութեամբ զարդարեալ. որպէս յերկրքին տախտակսն տասն բան օրինացն էր գրեալ. որպէս ասէ առաքեալն յերկրորդ կորնթացւոց. (դուք էք

թուղթ գրեալ՝ ոչ ի տախտակս քարեղէնս, այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս. ոչ մարմնով՝ այլ հոգւովն սրբով:*) *Եւ արդ՝ վասն տապանակին 2 ինչ հարցանելի է: Նախ՝ զի՞նչ էր խորհուրդ. տապանակին: Երկրորդ՝ վասն է՞ր տապանակն առաջի ընթանայր. եւ վէմն յետոյ: Երրորդ՝ վասն է՞ր գերեցաւ տապանակն եւ դարձաւ: Չորրորդ՝ վասն է՞ր մեռաւ Ոգիա: Հինգերորդ՝ վասն է՞ր այսօր տապանակին տօնեմք: Վեցերորդ՝ վասն նաւակատեաց աւուրս: *Եկեսցուք յառաջին գլուխն թէ՛ զի՞նչ է չափ տապանակին: Երկու կանգուն եւ կէս երկայն. կանգուն եւ կէս լայն. կանգուն եւ կէս բարձր: Եւ սորա բազում է խորհուրդն: Բայց նախ հրեշտակաց յարմարի ցոյց տապանակին. զի նոքա են բնութեամբ անապական եւ անմահ: Իսկ չափն՝ նախզի ամենայն իր որ ընտիր է, չափ ունի եւ սահման: Եւ ոչ շփոթումն. վասն այն կանգնաւ չափէ զնոսա: Երկրորդ՝ այսպիսիս հաստատուն է. զի կիբիկոն է. զի հաստատ եւ յարամայք են: Երրորդ՝ երկայնութիւն է կեանք նոցա եւ անմահ. զի գերազանցեալք են քան զժամանակս. եւ պակաս քան զյաւիտենականն Աստուած: Այլ են մշտնջենաւոր որպէս հոգիս մեր. սկիզբն ունի՝ այլ ոչ վախճան: Նոյնպէս բարձրացեալ գիտութեամբ առաւել քան զմարդիկ. եւ պակաս քան զԱստուած: Այսպէս եւ լայնք. որք աճին իմաստութեամբ ի յեութիւնս իւրեանց: Չորրորդ՝ եւ բովանդակն հինգ կանգուն՝ ցուցանէ թէ ոչ են նոքա ի չորից տարերաց. այլ հինգերորդ էութիւնք են. որպէս ասեն ոմանք. անմարմինք. անփոփոխք. եւ անմահք. որ ոչ է տարրականս այս: Իսկ կէսն՝ զի կիսակատար եւ պակաս են քան զԱստուած. այնու՝ զի եղականք են. եւ յոչ էից գոյացեալք որպէս ասացաք. եւ կամ զի կէս բանականացն յերկնիս են ստեղծեալ. եւ կէս յերկրի են բնակեալ: Հինգերորդ՝ որ ասացաք գերեք ձեւն. երկայն. եւ լայն. եւ բարձր. եւ ոչ զխորն որ է թանձրութիւն: Նշանակէ ըստ փիլոնի՝ զի անմարմինքն մինչ ի յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն. նիշ. գիծ. երեւոյթ. այս իմանալեացն չափ: Իսկ չորրորդ որ է մարմին՝ զգալիքս են թանձրացեալ: Իսկ պատելն ոսկւով ներքոյ եւ արտաքոյ. զի աստուածատեսակք են եւ մաքուր: Եւ ներքոյ՝ զի բնութեամբ առին ընդ լինիլն իւրեանց զմաքրութիւն: Եւ արտաքոյ՝ զի օրըստօրէ յաւելուն լուսափայլ իմաստիւք ըստ մեծին Դիոնիսեայ: Եւ ծնօտ որ է զիկն բոլորեալ՝ զիմանալի կերակուրն նոցա նշանակէ. զի ծնօտն գործի է կերակրոյ: Եւ չորս օղքն եւ երկու լծակքն՝ զի չորեքնիւթեայ աշխարհի են ինամածուք երկակի զօրութեամբ ինամոցն Աստուծոյ. այսինքն, արարչական եւ արքունական: Չի բարերարաք են. եւ պատուհասեն՝ զոմանս պահելով ի խաղաղութան: Իսկ վկայութիւն որք են տախտակքն օրինաց. զի վկայեն պահողացն բարի. եւ ոչ պահողացն պատիժ: Այլ իմանալեացն դասք՝ վկայք են: Նախզի ի դրունս են սուրբ երրորդութեանն. եւ տեսօք անփառելի փառացն: Երկրորդ՝ յորժամ յերկրի երեւին՝ պակնուն տեսօղքն. երեւմամբն իւրեանց վկայք լինին փառաց ամենագօրին: Նոյնպէս եւ քերովբէքն ի վերայ քաւութեան հովանացեալ. եւ ի միջոյ նոցա աստուածախօսութիւն. զի աթոռք եւ քերովբէք եւ սերովբէք՝ շուրջ են զԱստուծով. եւ անընդմիջաբար ուսեալք ի սուրբ երրորդութենէն, ուսուցանեն զներքինսն: Սոքա են ի սրբութիւն սրբոցն. որ է լուսեղէն երկինքն բնակարան անմարմինն զօրացն: *Դարձեալ՝ Տապանակն է ի խորհուրդ սուրբ աստուածածնին: Անփուտ փայտն՝ անապական կուսութիւնն: Ներքոյ եւ արտաքոյ ոսկին՝ հոգւոյ եւ մարմնոյն

մաքրութիւն. ի յորում երկու տախտակն գրեալ՝ հոգին եւ մարմինն միաւորեալ բանին: Եւ մանանայն՝ անապական մարմինն: Եւ նոյն գաւազանն՝ յարմատոյն յեստեայ. եւ բուրվառն՝ հուր ի հոտ անուշից: *Դարձեալ ընդ սրբոյն կիւրդի Տապանակն է Տէր մեր Յիսուս Քրիստոս: Եւ անփուտ փայտն՝ անապական մարմինն: Ոսկի՝ հոգին եւ մարմինն միաւորեալ աստուածութեամբն: Եւ քաւութիւն ի վերայ՝ զի նա եղել քաւութիւն մեր: Եւ սրբութիւն սրբոցն՝ ներքին կողմն վարագորին: Եւ որպէս առաջնորդեր ժողովրդեանն ի չուելն. եւ Տէր մեր ասէր. (ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի:)

*Դարձեալ՝ Տապանակն քառակուսի եւ անփուտ: Խաչն քառաթեւ անապական եւ աստուածընկալ: Եւ խաչին քաւեաց գմեգ. վասն որոյ սուրբ խաչ կոչի: *Դարձեալ՝ Տապանակն սուրբ եկեղեցի. անփուտ ի մեղաց գիշութեանց. որ թեպէտ հրով այրիւր՝ այլ ի ջրոյ եւ ի յորդանց ոչ ապականիւր: Նոյնպէս սրբոցն՝ թեպէտ լուծան մահուամբ՝ այլ գէջ ցանկութեամբ ոչ մեղկացան. եւ ոչ ետուն տեղի որդանն, որ է ոխակալութիւն եւ նախանձ սրտի: (Պատեալ ներքոյ եւ արտաքոյ ոսկով:)

Այն է՝ որք ըստ աշխարհիս են՝ միայն զարտաքինսն մարմնոյն զարդարեն. իսկ սրբոցն՝ նախ զհոգին զարդարեն հաւատով եւ առաքինութեամբ. եւ ապա զմարմինն սուրբ գործովք. որպէս ասէ առաքեալն. (խորհիմք զբարիս՝ ոչ միայն առաջի մարդկան, այլեւ Աստուծոյ:)

(Ունելով յինքեան զերկուս տախտակսն:)

Չխաչն հրաշագործ. եւ զկենսատու մանանայն. եւ զբուրվառն. զխունկն. զվեմն. եւ զսեղանն սուրբ. եւ քերովբէք զքշոցս երկու: Իսկ հինգ կանգուն եւ կեսն՝ զի գալուստն Քրիստոսի եւ փրկական խաչն եւ եկեղեցի՝ է ի հինգերորդ դարն եւ կեսն. երեւեալ իմուտս վեց հազար ամին: Չի եօթանասունքն՝ հինգ հազար երկու հարիւր, պակաս երկու թիւ գրեցին: Եւ այլք հինգ հազար հինգ հարիւր ամ. որ է Ե դար եւ կես: Յայս միտս յորժամ խաչ նկարեմք, զծագ մատն աջոյ մերձ ի բութն որ է ի համարն վեցերորդ, զկես վեցին նշանակելով: Այս է խորհուրդ տապանակին որ ի սրբութիւն սրբոցն: Այժմ ո՞ր է տապանակն: Երեմիա եւ աշակերտն տարան զտապանակն եւ որք առ նմայն էին՝ ի լեառն Սինայ: Եւ անդ կնքեցին ի վիմին անւամբն Աստուծոյ ասելով. ոչ ոք բացցէ զսա, եթէ ոչ Մովսէս որ եբերն: Եւ ոչ ոք բացցէ, եթէ ոչ Ահարօն: Ի տուէ ամպով ծածկեալ լինէր. եւ ի գիշերի լուսով: Այս առաջին գլուխն: *Իսկ երկրորդն թէ՛ վասն Է՞ր տապանակն յառաջ ընթանայր. եւ վեմն զհետ բանակին: Տապանակն էր Քրիստոսի. եւ ունէր զտախտակ օրինացն: (Եւ վեմն էր Քրիստոս, ըստ առաքելոյն:)

Եւ բազում է տեսութիւն: Նախ՝ ցուցանէ թէ, Քրիստոս է առաջին եւ վերջին. այսինքն է, սկիզբն եւ կատարումն եկեղեցւոյ: Ոչ միայն աստուածութեամբն, այլեւ մարդկութեամբն: Երկրորդ՝ զի պահապան է առաջին եւ վերջին թշնամեացն՝ որք են սատանայ եւ մեղքն: Երրորդ՝ զի առաջնորդ է ի մուտս մեր եւ յելս յաշխարհէ. ըստ որում, (Տէր պահեսցէ զմուտս եւ զելս քո:)

Չորրորդ՝ նախ օրէնքն եւ ապա ջուրն. զի նախ հոգւով ինամէ. եւ ապա մարմնով: Զինգերորդ՝ յառաջ տապանակն գնայր եւ դիտեր հանգիստ. եւ զհետ վեմն տայր ջուր. զի այժմ զհանգիստն պատրաստէ. եւ յետոյ զվայելչութիւն տայ: Վեցերորդ՝ զի թեպէտ համբարձաւ յերկինս՝ ընդ մեզ է զամենայն աւուրս որպէս ասաց: Եօթներորդ՝ զի նախ զօրէնս կատրեմք. եւ յետոյ զմխիթարութիւն առնումք: Ութներորդ՝ նախ օրինակն է. եւ ապա ճշմարտութիւնն: Իններորդ՝ նոքա գործօք արդարացան զոր

նշանակեր օրենքն. եւ մեք հաւատովք՝ զոր նշանակեր վեմն յետոյ: Տասներորդ՝ զի զառաջին գալուստն Քրիստոսի նշանակէ տապանակն եւ տախտակն եւ մանանայն եւ այլն. եւ զվերջինն՝ վեմն աղբիւրացեալ ի յաւիտենից կեանս: Զարց՝ վեմն որպէս էր Քրիստոս: Պատ. որպէս սափորն կոյսն էր. եւ գաւազանն խաչն. նոյնպէս վեմն Քրիստոս: Եւ վեմ կոչի: Նախզի՝ Ադամ հողացաւ. եւ Քրիստոս վեմ անմեղութեամբ: Երկրորդ՝ զի կարծրացաւ աստուածութեամբն: Երրորդ՝ զի անապական էր մարմնով: Չորրորդ՝ զի հիմն էր եկեղեցւոյ: Զինգերորդ՝ զի էր գլուխ անկեան: Եւ յայս վիմէ՝ նախզի ջուր բոխեցաւ իլացումն եւ յարբումն. որպէս ի կողից փրկչին ջուրն եւ արիւնն: Երկրորդ՝ քարոզութիւն երկոտասան ազգաց: Երրորդ՝ հոգին սուրբ՝ որ քիւ ծաւալեցաւ: Չորրորդ՝ կրկին հարկանելն՝ զի ոմանց տայ, եւ ոմանց արգելու. այսինքն, սրբոց եւ անսրբոց: Զինգերորդ՝ գաւազանաւ բախեր. զի իշխանութեամբ բաշխի առ ամենայն ազգս: Այս երկրորդ գլուխն: *Իսկ երրորդ գլուխն թէ՛ վասն Է՞ր աւերե գործութիւնս, եւ գերի վարե: Նախզի՝ անարժան են սպասաւորքն. որպէս Ոփնին եւ Փենեիզ որդիքն Զեղեայ: Նոյնպէս ի նորս քահանայք եւ ժողովուրդք. որպէս Մովսէս զտախտակն աստուածագիծ խորտակեաց վասն յանցանաց ժողովրդեանն: Երկրորդ՝ զի մի ի պատճառս նորա չարիս գործեսցեն. որպէս ասէին. տաճար Տեառն առ մեզ է. եւ զանօրէնութիւնս առնէին: Երրորդ՝ զիսիստ բարկութիւնն նշանակէ՝ որ ի յիր սրբութիւնն ոչ ինայեաց վասն մեղաց մարդկան: Չորրորդ ցուցանէ թէ ի սրբութիւն իւր ոչ ինայէ, եւ ոչ ի ձեզ յանցաւորսդ թէ ոչ դառնայք. վասն այն ի նորս զխաչ եւ զեկեղեցի գերի տայ այլազգեաց: Զարց՝ վասն Է՞ր կործանեցաւ դագոն առաջի տապանակին: Պատ. կրկին է կործանիլն դագոնայ: Չի նախ օրինօքն Մովսիսի անկաւ՝ եւ Քրիստոսի կործանեցաւ: Եւ գլուխն եւ ձեռն եւ ոտն հարեալ: Նախզի՝ մի կարծեսցեն այլազգիքն թէ դիքն օգնականութեամբ գլուխ եղեն զօրացն, եւ հարին զպատերազմն: Երկրորդ՝ զի ժողովուրդն որտիւքն գնայր. եւ զձեռս տարածէր. զգլուխս խոնարհել երկիրպագաներ. վասն որոյ հատանին այնպիսի մասունքն: Երրորդ՝ զի զոտս եւ զձեռս կապեալ՝ բազում գաւակս զոհէին սմա. նոյնպէս եւ նորայն հատաւ: Չորրորդ՝ ի նշանակ իմանալոյն դագոնայ. որ զգլուխն իւր ամբարձ ընդդէմ Աստուծոյ. եւ ընդ բռամբ էարկ եւ կոխեաց զմարդկային ազգս. զոր խորտակեաց Տէր մեր խաչիւն: Զինգերորդ՝ զընթացս մեղաց եւ զգործն՝ որ է սկզբնական եւ ներգործական. զգլուխն որ է մահ եւ ապականութիւն. զորս խորտակեաց Քրիստոս ի Յորդանան: Զարց՝ զի՞նչ է որ զերաստանսն ուռոյց. զմկունս եռացոյց: Պատ. նախզի՝ գարշելի իրօք տանջէր զգարշելիսն: Երկրորդ՝ զի սմանեան տանջեաց. զի էին որկորայք եւ չարք: Երրորդ՝ զի առ Աբիմելէք նոյնպէս եղեւ. որպէս յԵգիպտոս գորտն. նոյնպէս եւ անդ մուկն. Չորրորդ՝ մինն տեսակին, եւ միւսն անհատին էր պատիժ: Զարց՝ զի՞նչ է յետ եօթն ամսոյ դարձումն տապանակին: Պատ. գերիլն նշանակէ զօրէնսն եւ զաւետարանն ի հեթանոսս առաքեալ: Իսկ դարձումն ի յետ՝ զեօթն դար կենցաղոյս: Դարձեալ ուստի ելին՝ ժողովին ամենայն սրբութիւնք: Իսկ անդրանկածին երինջքն՝ են մարգարէք եւ առաքեալք. որք զհաւատացեալս անդրանկիկ ծնան. նոքա են սուրբք եւ պատարագք Աստուծոյ: Իսկ սայլքն՝ կրկին կտակք. որք միշտ հոլովին առ մեզ. եւ ինքն առ ինքն կրկին խոնարհելով եւ բարձրանալով: Այս երրորդ գլուխն: *Իսկ չորրորդն թէ՛ վասն Է՞ր պատժեցաւ Ոգիմ: Նախզի՝ պարտ էր

ուսով բառնալ գտապանակն որպէս հրամայեաց Աստուած: Եւ նոքա սայլիւք բերէին որպէս այլազգիքն: Երկրորդ՝ զի անարժան էր ի գիշերին: Երրորդ՝ զի ոչ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէ Դաւիթ ի քահանայսն. դուք դէտացիք՝ սրբեցէք եւ բարձէք գտապանակն. զի մի լցուք որպէս զոգիա: Եւ եօթն դաս պարուց էին. յորոց երեքն բերանով երգէին. այսինքն նուագն. եւ սրինգն. եւ փողն: Եւ չորսն ձեռօք. որ է տաւիղն. քնարն թմպուկն. եւ ծնծղէք: Եւ ի մեզ եօթն են ձայնկան գործիք՝ որով սաղմոսեմք. եւ է զօրութեամբ հոգւոյն. եւ է առաքինութեամբ. չորս մարմնական. եւ երեք աստուածայինք: Յայս միտս ի բերել ընծային ի սեղանն, եօթն դասք քահանայից կան ի սպասու եւ երգեն եղանակաւ. եւ քչոց եւ բուրվառ եւ զանկակ հնչեն: Եւ սարկաւազք սպիտակ զգեստիւք հոլանի որպէս Դաւիթ: Եւ ջահք վառեալք. ըստ որում ասէ՝ (եւ լոյս յաշխարհ եկի:) Եւ յետոյ բաշխումն նշխարաց. որպէս Դաւիթ բաշխեաց ամենայն Իսրայելի բլիթ մի հաց. եւ պատառ մի ի տապանակէ եւ ի կասկարայիցն: Այս առ չորրորդ գլուխն: * Յինգերորդ հարց՝ վասն Է՞ր աստ յայսմ աւուր տապանակին տօնեմք: Ասելի է չորս պատճառաւ: Նախ՝ զոր ի հինն տապանակին տօնէին. ի նորս փոխեցին եկեղեցւոյ տօնել. եւ այսօր եկեղեցւոյ է տօն: Երկրորդ՝ զկնի զատկին յիսուն աւուրք՝ էառ Մովսէս զօրէնսն յԱստուծոյ եւ զհրաման կազմել գտապանակն: Արդ՝ ի նոյն յիսներեկին՝ իջման հոգւոյն սրբոյ տօնեցաք: Եւ ի միւս յիսներեկիս՝ տապանակին տօնեմք: Երրորդ պատճառ՝ այս յիսնեակս՝ քառասունքն է Մովսէսի զոր պահեաց ի լերինն, եւ էառ զօրէնսն յԱստուծոյ: Նոյնպէս եւ մեք պահեցաք. եւ ի գլուխ պահոցս՝ տօնեմք տուչութեան օրինացն եւ տապանակին Աստուծոյ: Չորրորդ պատճառ՝ զի ի վաղիւն որ է տօն վարդապառնի՝ ի հինն տաղաւարաց տօնէին. զեօթն օր արտաքոյ քաղաքին՝ տաղաւարօք բնակէին: Նախ՝ ի յիշատակ քառասնամեայ ի յանապատին տաղաւարօք բնակելոյն: Երկրորդ՝ ի յօրինակ մեզ որ զեօթն դար կենցաղոյս արտաքոյ բնակիմք յոյս ունելով ի յուրերորդին ի սեփահակեա ժառանգութիւնն մեր մտանել. վասն որոյ այսօր փոխանակ տաղաւարաց հնոյն՝ տապանակին Աստուծոյ տօնեմք: * Վեցերորդ հարցանելի է թէ՞ զի՞նչ է խորհուրդ նաւակատեացս: Խնդրելի է թէ՞ զի՞նչ է նաւակատիս անուն աւուրս, կամ պատճառ չուտելոյ միս: Նաւակատիսն՝ նորոգումն թարգմանի. որ եղեւ մեր բնութեանս նորոգումն ի հնութենէ մեղաց յայտնութեամբն եւ յարութեամբն եւ այս քառասնիւքս՝ զոր պահեմք ի խորհուրդ այլակերպութեանն Տեառն: Իսկ միս չուտելոյ՝ ոչ միայն յայսմ աւուր, այլ յերկու ճրագալոյցսն արգելեալ է: Այլեւ զամենայն աւուրս յիսներորդաց երից՝ սահմանեցաւ յառաքելոցն արտաքոյ մտոյ լինիլ. եւ ի կատարմանն գառն գենուլ: Որք ոչ կարեն ի գառնն Աստուծոյ մարմնոյ ճաշակել անմաքուր գոլով, նախ անտի ուտիցեն. եւ ապա յայլ կերակրոյ. զի գոնեայ օրինակին հաղորդեսցին: Իսկ կատրեալքն նախ ի ճշմարտութենէն եւ ապա յօրինակէն. եւ ապա ի հասարակաց կերակրոյն: Չի ասացին թէ՞ այս երեք քառասունքս՝ օրինակքն էին Ադամայ կենացն ի դրախտին. եւ կարծեալ են թէ, քառասուն օր եկաց ի դրախտին: Եւ անդ մսակերութիւն ոչ էր ասէ Բասիլոս. եւ յայս հոգեւոր դրախտիս ի սուրբ քառասունս եմք: Աստ ծառն կենաց Աստուծոյ բանն է՝ անտի կերիցուք. եւ գիտութիւն չարի եւ բարւոյ է փայտ պահքս. պահողացն բարի, եւ ոչ պահողան չար: Արդ՝ խոստովանութիւն պահոք՝ զանազանին շնորհն ունի. զոր մեղանչեմք ի

քառասունս խոստովանութեամբ եւ պահօք ապաշխարիցեմք. եւ նորանամք Քրիստոս խորհրդովն նորոգեալք: Այս է գոր նաւակատիս ասեմք: Չոր ' յայտ արարաք վասն նաւակատեացս ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրնելոյն՝ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին դարձեալ քարոզ Յաւուր Վարդավառի. վասն Աղ օրհնութեան. վասն Ընծայից ' Պատարագաց: (Պատուեա զՏէր ի քոյոց արդար վաստակոց. ' հան նմա պտուղ ի քոց արդարութեան արմտեաց:) Առակ. 3. 9:(Գլուխ. ՃԻՉ)

Տուրք ողորմութեան յերկուս դեմս որոշի: Մին հասարակ աղքատաց. որպէս ասէ. (ողորմութիւն եւ հաւատք ի քէն մի պակասեսցին:) եւ միւսն՝ ընծայ եւ նուէրք Աստուծոյ. որպէս ասէ: (Պատուեա զտէր ի քոյոց արդար վաստակոց:) Նախ գիտելի է զի պատիւ եւ փառք՝ այսպէս զանազանին: Փառքն՝ իմացմամբն է եւ բանիւ օրհնել եւ գովել, եւ բարեբանել զԱստուած: Իսկ պատիւն՝ մարմնովն ծուկն կրկնել. չարչարիլ վասն նորա. ընծայ եւ նուէրս եւ պատարագ նուիրել Աստուծոյ. զի մարդն հոգի է եւ մարմին. ի հոգւոյն փառս, եւ ի մարմնոյն պատիւ մատուցանել: Եւ այս վասն չորս պատճառի: Նախ՝ զոր ինչ ունիմք՝ յամենայն բաժին տամք Աստուծոյ: Այլ արդ մարդն յերից է գոյացեալ. ի հոգւոյ. եւ ի մարմնոյ. եւ ի յնչից: Պարտ է որպէս ի հոգւոյն աղօթս. ի մարմնոյն ծուկն. նոյնպէս եւ յնչիցն մասն ընծայել Աստուծոյ: Երկրորդ՝ ի յօտար իրացս՝ պարտ է մեզ բարեկամ առնել զԱստուած. ըստ խրատուն թէ՛ (արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ. զի յորժամ պակասեսցի այդ, ընկալցին զձեզ ի յարկսն յաւիտենից:) Երրորդ՝ զի այս ընծայիւքս՝ միտն մեր եւ յոյս առ Աստուած վերանայ եւ հաստատի. ըստ այնմ, (ուր գանձք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղեցին:) Չորրորդ՝ զսերն մեր առ նա նշանակէ. զի սրտի սերն՝ ի ձեռաց տուրսն երեւի. ապա վասն Աստուծոյ սիրոյն նուիրեմք զինչս մեր նմա: Եւ որպէս ցուցաւ՝ երկու են տուրք. միւսն աղքատաց. եւ միւսն նուէրք Աստուծոյ: Ո՞րն է ի սոցանէ գովելին: Ասեմք թէ՛ երկուսն այլ պատուական է: (Չի որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ ասէ.) զի վասն Աստուծոյ սիրոյն առնեմք: Այլ ունին զանազանութիւն ուրն կերպիւ: Նախ՝ ողորմութիւնն զսեր ընկերին կատրէ. իսկ նուէրքն՝ զսերն Աստուծոյ. այլ որպէս պատուական սերն Աստուծոյ քան զնկերին. նոյնպէս եւ ընայքն քան զողորմութիւնն: Երկրորդ՝ ընծայքն անընդմիջաբար՝ Աստուծոյ են նուէրք. իսկ ողորմութիւն միջնորդութեամբ աղքատին. զի միւսն ի յԱստուած է ուղիղ. եւ միւսն վասն Աստուծոյ հոլովմամբ:

Երրորդ՝ զի ընծայքն Աստուծոյ՝ նախկին եւ սննդակից են բնութեանս մեր, քան զողորմութիւնն. որպէս յորժամ ոչ գոյր աղքատ՝ հրամայեաց Աստուած Աբելի եւ Կայէնի պատարագ ընծայել Աստուծոյ: Որում զԱբելին ընկալաւ. զի ուղիղ սրտիւ եւ զընտիրսն ի գառանց մատուցանէր Աստուծոյ: Եւ զԿայէնին արհամարհեաց. զի թերասիրտ եւ զազագունն ի պտղոց ընծայէր Աստուծոյ: Չորրորդ՝ վասն սակաւութեան. զի Նոյ եւ Աբրահամ եւ այլք՝ միանգամ պատարագ մատուցին Աստուծոյ. եւ աղքատաց բազում անգամ ողորմութիւն: Ուստի յայտ է թէ՛ վասն պատուականութեանն ոչ իշխեին հանապազ ընծայել: Չայս եւ Տէրն յայտնեաց. (զաղքատս յամենայն

ժամ ընդ ձեզ ունիք. եւ յորժամ ամիք՝ առնէք. այլ զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք ասէ:) Յիւզերորդ՝ զի խոստումն Յակօբայ այս էր. յորժամ գնայր յասորեստան, ետես մեծ տեսիլ: Սանտուիք յերկրէ յերկինս եւ այլն. ասէ՝ (եթէ տացէ ինձ Տէր հաց զի ուտիցեմ, եւ զհանդերձ զի զգեցցիմ, տամ Աստուծոյ տասանորդս յամենայնէ.) զոր ի դառնալն տասանորդեաց զամենայն ինչս իւր. եւ ետ Եսաւայ. եւ փրկեցաւ ի նմանէ: Վեցերորդ՝ ի յօրէնսն հրամայեաց Աստուած Մովսիսի տալ տասանորդս յամենայնէ. զի. Ժ երրորդն կատարեալ է եւ նուէր Աստուծոյ. այլ յօրէնսն հարկաւոր է. իսկ աղքատաց ողորմութիւնն. կամաւոր: Եօթներորդ՝ յորժամ հեղգացաւ՝ ասաց Աստուած Մաղաքիա մարգարէին. (իցէ՞ թէ խաբիցէ ոք զԱստուած. եւ ի՞նչ խաբիցէ. զի ահա տասանորդքն եւ նուէրքն առ ձեր են առ ի յափշտակութիւն տանց ձերոց. եւ մի հեղցէ երկին զնձրեւ ի վերայ ձեր:) Տեսէք՝ զի զնուէրս Աստուծոյ գողանալն՝ խաբել է զԱստուած եւ յափշտակութիւն տանց: Նախ այն է՝ որ զինչս եւ զանասունս ի յափշտակութիւն տայ Աստուած. եւ երաշտով եւ հարուածով զանդ եւ զպտուղն կտրէ: Երկրորդ այն է՝ որ զինչ մարմնոյն ի յափշտակութիւն տայ. եւ լ զինամս հոգեւորս արգիլէ: Ութներորդ՝ յայտ է յայնմանէ, որ ողորմութիւնն միայն յայն կեանսն վճարի. իսկ ընծայքն Աստուծոյ ի կրկին կեանս. անդ զհանդերձեալ փոխարէնսն տայ. եւ աստ զմարմնաւորն. որպէս ասէ. (զի լցցին շտեմարանք քո լիութեամբ ցորենոյ. եւ զինուով հնձանք քո առաւել եւս բոխեսցեն:) Ապա յայտ է վասն ասացեալ պատճառացս՝ զի գովելի է ընծայն Աստուծոյ քան զտուրս ողորմութեան: Այլ պարտ է գիտել՝ զի զողորմութիւնն ի յաղքատս տամք. իսկ զընծայն Աստուծոյ՝ ի տուս Աստուծոյ եւ ի քահանայն պարտ է բերել վասն չորս պատճառի: Նախ զի՝ Մովսէս աւանդեաց զնուէրս եւ զամենայն պատարագս բերել ի տաճարն եւ տալ ի քահանայն. զնոյն եւ ի նորս առաքեալքն կանոնեցին: Եւ սուրբն լուսաւորիչ եւ սուրբն Իսահակ եւ այլ հայրապետքն՝ զերախայրիս զնուէրս եւ զայլ պատարագս տանիլ յեկեղեցին եւ տալ ի քահանայս: Երկրորդ՝ որպէս զընծայս թագաւորաց ի սպասաւորս նոցա տամք. եւ նոքա աղերսեն. նոյնպէս ի յերկրի ի տանն Աստուծոյ սպասաւորք քահանայքն են. որպէս ի յերկինս հրեշտակքն. վասն այն ի քահանայն տամք՝ որք մատուցանեն Աստուծոյ:

Երրորդ՝ զի Աստուած բաժին եւ ժառանգութիւն քահանայից. վասն այն ոչ ունին այլ երկրաւոր ժառանգութիւն: Վասն այն զբաժինն Աստուծոյ ի քահանայն տամք. զի զոր ինչ նոցա առնեմք՝ Աստուծոյ է. ըստ այնմ որ ասաց Սամուէլի. (ոչ թէ զքեզ անարգեցին, այլ զիս:) Եւ առաքելոցն ասէր. (որ զձեզ ընդունի՝ զիս ընդունի:) Չորրորդ՝ զի քահանայքն են քաւիչ եւ ուսուցիչ ժողովրդեանն. (զմեղս ժողովրդեան իմոյ կերիցեն ասէ քահանայքն եւ քաւեսցեն վասն նոցա: Եւ երիցունք կրկին պատուոյ արժանացին: Եւ արժանի է մշակն կերակրոյ իւրոյ:) Որ զհոգեւորն սերմանէ՝ պարտ է զմարմնաւորն հնձել. վասն այսքան պատճառացս՝ զընծայն Աստուծոյ տալի է առ քահանայս: Իսկ որ ասէ: (Պատուեա զՏէր ի քոյոց արդար վաստակոց:) Երեք որպիսութիւն ղնէ ընդունելի նուիրաց: Նախ զի՝ ա սէ Զո: Երկրորդ՝ Արդար: Երրորդ՝ Վաստակ: Չի թէ մինն ի սոցանէ պակաս է՝ անկատար է: Այսպէս՝ զի թէ քո լինի՝ սակայն ոչ արդար վաստակ, այլ անիրաւ եւ զրկանք, անպիտանէ: Եւ թէ լինի քո, եւ արդար, այլ հօր քոյ կամ

եղբոր, ևոցա է ևուերն գոր վաստակեցին: Ապա թէ լինի քո եւ արդար վաստակ, յայնժամ կատարելապէս քո են բարիքն: Վասն այն վարդապետք չորս են եղեալ զանազնութիւն: Նախ՝ որ ևուիթողն անարժան է, եւ ևուիթեալն արժանաւոր, չէ ընդունելի. զի ասէ՝ (խունկ ձեր անպիտան է ինձ. զի ձեռք ձեր լի են արեամբ: Եւ անօրէնն թէ մատուցանէ եզն, այնպէս է, որպէս թէ շուն ոք մորթիցէ:) Երկրորդ՝ որ ևուիթողն արժանաւոր է, եւ ևուիթեալն անարժան, ի գրկանաց կամ յայլ ինչ, չէ ընդունելի. զի Աստուած վրէժխնդիր է գրկելոյն. ըստ այնմ, (գրկեալն ի ձեռք աղաղակէ.) այնպէս է՝ որպէս թէ ոք գորդի կամ զծառայ թագաւորին կողոպտէ, եւ թագաւորին տանի աղեսէ: Երրորդ՝ ևուիթողն անարժան, եւ ևուերն անարժան, չէ ընդունելի. որպէս զոհն Կայէնի. զի ինքն թերի էր սրտիւ. եւ նենգութիւն ուներ եղբորն. եւ ևուերն վատ եւ ազագուն. վասն որոյ ասէ. (ի կային եւ ի զոհս ևորա ոչ հայեցաւ Աստուած.) զի նախ ի սիրտն հայի Աստուած. եւ ապա զևուերն ընդունի: Իսկ չորրորդ մասն՝ ևուիթողն արժանաւոր՝ եւ ևուերն արժանաւոր՝ այս ընդունելի է եւ կատարեալ. որպէս Աբելին սիրտն սուրբ եւ անմեղ էր. եւ պատարագն ընտիր եւ պարարտ. վասն որոյ ասէ գիրն. (հաճեցաւ Աստուած ի Յաբել եւ ի պատարագս ևորա:) Նոյնպէս եւ ամենայն մարդկան այսպէս ի չորից մի մասն ընդունելի է եւ հաճելի Աստուած: Եւ թէ ոք ասիցէ վասն Է՞ր ապա մարտիրոսքն ի ձեռս անպարշտաց չարչարեալ ընդունելի պատարագք եղեն Աստուծոյ: Ասեմք թէ. Նոքա ոչ վասն անպարշտաց կամացն եղեն հաճելի, այլ վասն իւրեանց կամացն. որք կամաւ վասն սիրոյն Աստուծոյ չարչարեցան՝ արժանաւորք եղեն Աստուծոյ. եւ անպարիշտքն տանջեցան. զի ևոցա կամքն չարէ եւ ոչ բարի: Նոյնպէս եւ այն գոր ասեն թէ՝ Յուդա մատնեաց զՔրիստոս. եւ հրեայքն խաչեցին. եւ հայր մատնեաց գորդի ի խաչ. ըստ այնմ, (որ յիւր որդին ոչ ինայեաց. այլ վասն մեր մատնեաց:) Եւ ինքն որդի կամաւ մատնեաց զանձն իւր վասն մեր եւ չարչարեցաւ. ապա անմեղ էր Յուդա կամ հրեայքն: Ասեմք թէ ոչ՝ զի հայր մատնեաց գորդի վասն սիրոյ մերոյ. եւ որդի մատնեաց զիքն եւ չարչարեցաւ վասն փրկութեան մերոյ. իսկ Յուդա մատնեաց զՔրիստոս վասն ազահութեան: Նոյնպէս եւ հրեայքն վասն նախանձու խաչեցին. վասն այն դատապարտեցան: Ապա յայտ է ի բանէս՝ թէ կամք ևուիթողին որ զպատարագն մատուցանէ՝ բարի լինի, եւ յետս դարձեալ ի չարեաց, ընդունելի է պատարագն. եւ վասն մեղաց ևորա ապաշխարութիւն համարի Աստուած զևուերն զայն զինչ եւ իցէ: Իսկ որ ասէ. (զի լցին շտեմարանք քո լիութեամբ ցորենոյ. եւ զինուով հնձանք քո առաւել եւս բղխեսցեն:) Նախ վասն այն ասէ՝ զի գիտացուք թէ, ոչ միայն ի հանդերձեալ կեանս ունի զփոխարենն, այլ աստի յայս ժամանակս. զի մարմնով եւ հոգևով հատուցանէ Աստուած: Եւ երկրորդ՝ զի ամենայն հոգեւոր՝ մարմնաւորովս ճանաչի եւ հաւատացեալ լինի. ըստ այնմ, (աներեւոյթն Աստուծոյ երեւելի արարածովքս իմացեալ տեսանի.) զի ի մարմնաւորս որ առաւել զառատութիւն եւ զփարթամութիւն գոյից լինի, իմանամք թէ ի հոգեւորն տալոց է: Եւ թէ որք տխմար մտօք եւ թերահաւատ կարծեօք ասիցէ՝ ո՞րպէս առատանայ ցորեանն եւ զինին ի տալն. զի ահա գոր ինչ շտեմարանեմք, նոյն չափն լինի: Ասեմք եթէ՝ յայտնի է ի վեց իրաց, որ գոյ աճումն եւ առատութիւն ի գոյսն: Նախ՝ ի բնականաց. երկու յօրինակաց. երեք՝ յօրինութեանց. չորս՝ ի սքանչելեաց. հինգ՝ ի ներհակաց.

վեց՝ ի մերձաւորաց: Եւ արդ՝ նախ ի բնականաց տեսանի որ գոյ աճումն. որպէս հասակ մարդոյս. ի բոյսս եւ ի տունկս. եւ ի փոփոխումն լուսնի. զի աճին եւ նուազին ջուրք եւ աղբիւրք. եւ դեղ կենդանւոյն. մազ եւ եղունկն: Նոյնպէս եւ փոքր մի խմորով զանկուածն աճի. ապա յայտ է յայսցանէ՝ թէ գոյ եւ ընչիցն կամօքն Աստուծոյ աճումն եւ առատութիւն: Երկրորդ՝ յօրինակաց տեսանի յառաջինսն. Յաբրահամ. յԻսահակ. եւ ի Յակօբ. ի Մովսէս. ի Դաւիթ. եւ յայլսն. որք ի կամս Աստուծոյ աճեցան եւ փարթամացան գոյիւք. վասն որոց ասէ. (օրհնեաց զնոսս եւ բազմացան յոյժ. եւ անասունք նոցա ոչ նուազեցան:) Երրորդ՝ յայտ է յօրհնութեանց ի ստեղծմանէ. որոց ասաց (աճեցէք եւ բազմացարուք. եւ լցէք գերկիր. եւ զջուրս եւ զօդս.) եւ յայնմանէ կենդանեաց եւ թռչնոց եւ այլոց տեսակք աճին եւ ոչ նուազին. զի թեպէտ մին մին անհատն պակասի բոլորն մնայ: Չորրորդ՝ յայտ է ի սքանչելեաց՝ որ մանանայն աճեր յանապատին. յորժամ երեք ափկիցս տանէին օրստօրէ, բաւական լինէր որոց ի տունն. եւ ոչ նուազեր մինչ ի միւս օրն: Նոյնպէս եւ սարեփթացի կինն որ գեղիայի քաղցն պատուեաց՝ որ այր էր Աստուծոյ քան զմանկունս իւր, սափոր ալերն եւ սրուակ իւղոյն աճեաց եւ առաւելաւ: Այսպէս եւ զարեղթն նկանակ հացիցն զոր օրհնեաց Զրիստոս աճեցաւ. եւ այնքան յաւելաւ ի կերողացն. ապա ուրեմն գոյ ի սքանչելեացն Աստուծոյ աճումն եւ առատութիւն գոյից: Զինգերորդ՝ յայտ է յընդիմակէն. զի յորժամ մասն Աստուծոյ մնացեալ յափշտակութիւն է տանց եւ արգելումն ինամոցն Աստուծոյ որպէս ասաց մարգարէն. ապա ուրեմն հաւատով եւ յուսով տուողացն՝ առատապէս առատանան եւ գոյք նոցա: Վեցերորդ՝ յայտ է ի մերձաւորս այժմ ի վերջին ժամանակս. որ արեւմտեան ազգն դադմատացւոց՝ բազումք ազգք քրիստոնէից են. եւ հանապազ յամենայն ամի յամենայն ընչից տան զտասանորդն բաժին Աստուծոյ եւ փարթամեն գոյ իւք եւ առատութեամբ: Իսկ արեւելեան ազգս մեր՝ որ ռիշտ եւ անհաւանք են, եւ կամ թէ տան պտուղ ակամայ զանպիտանն եւ զխոտանն, մաշին հանապազ յաղքատութեան եւ տառապին. եւ բազում վաստակին. եւ սակաւ վայելեն. շատ սերմանեն. եւ սակաւ հնձեն. եւ ոչ առատանայ փարթամութիւն նոցա. զի զրկեն զմասն Աստուծոյ. եւ զօրհնութիւն նորա ոչ խառնեն. յինչս իւրեանց: Եօթներորդ՝ յայտ է ի մարմնաւոր օրինակաց. որ անօթ ամանոյն որ ունի զջուր եւ կամ զայլ ինչ, որքան լի է՝ այլ ոչ լնուն. եւ յորժամ դատարկի, այլ լնուն: Նոյնպէս եւ մարդ յորժամ պահէ զԱստուծոյ բաժինն, այլ ոչ տայ Աստուծոյ. եւ յորժամ. տայ՝ դարձեալ առատապէս լնանի. որպէս օրինակեցաւ ի չորրորդ թագաւորութիւնս: Կին մի այրի՝ որոյ այրն զբազում մարգարէս եւ ասէ. (զորդիսն իմ գրաւ տանին պարտատերքն. եւ ասէ՝ զի՞նչ ունիս. եւ նա ասէ. ոչ ինչ ունիմ. բայց սակաւ իւղ օժման. եւ ասէ՝ երթ եւ զամենայն անօթսից նովաւ. եւ տուր ի պարտատերսն քո: Եւ նա գնաց. եւ աղօթիւք մարգարէին՝ լցան ամենայն անօթքն իւղով. մինչեւ ասացին որդիքն թէ՛ այլ ոչ կայ. եւ դադարեցաւ իւղն:) Այսպէս յորժամ զբաժինն Աստուծոյ ասեմք թէ ոչ է, չբաւորին ինչքն: Ութներորդ՝ յայտ է ի շինողաց՝ որք զնիւթ քարին կամ զայլ ինչ մինչ ի ձեռս ունին, այլ ոչ տան մշակքն. եւ յորժամ դնէ ի վերայ որմոյն, դարձեալ առնու: Նոյնպէս յորժամ ի ձեռս ունիմք զբաժինն Աստուծոյ. այլ ոչ տայ. եւ յորժամ տամք, միւսանգամ առնումք: Իններորդ՝ յայտ է յաղբիւրս ջուրց. որքան առնումք՝ ոչ պակասի.

այլ ի տեղին լնանի. եւ երբ չառնումք, նոյն չափն մնայ: Այսպէս եւ մեք որքան առնումք յողորմութեանց աղբերէն, ոչ պակասի, այլ լնանի. եւ թէ ոչ առնումք, նոյն չափն մնայ եւ ոչ յաւելանայ: Վասն որոյ ասէ. (չափ շարժուն գեղուն թաթաղուն չափեսցի ձեզ, որով չափով չափէք.) եւ այս ի կեանս յայսմիկ եւ ի հանդերձեալն: Տասներորդ՝ յայտնի է ամենեցուն ի զգալի իրաց. ապա թէ մտօք ոչ իմանան, զգալի աչօք թող տեսնուն. զի մի եւ նոյն սերմն՝ եւ նոյն հողն. ի մի ամն սերմանեալ տոհմական եւ բազմապատիկ ժողովեն. եւ ի միւս ամն սերմանեալ, եւ զգլուխն կորուսանեն. եւ պատուհասին երաշտով. կարկտով. անձրեւով. ժանգ. մորեխ. եւ այլ պատուհասք բազմանան ի խրատ մեր. եւ մեք ոչ զգաստանամք: Այլեւ զայս ոչ ածեմք ի միտս՝ թէ ամենայն մարդ զհւր պարտսն կարէ առնուլ ի մարդոյ. ապա Աստուած առաւել կարօղ է՝ որ զհւր պարտսն չթողու առ մեզ. զի յորժամ մեք մեր կամաւ չտամք, յակամայ առնու ի մէջ ի ձեռն պատուհասի. երաշտով՝ կարկտով՝ որպէս ասացաք. կամ ի ձեռն բռնաւորաց եւ աւազակաց եւ զինչ պատճառ եւ իցէ, առնու ի մէջ զհւր բաժինն տասանորդաց: Եւ ո՞րն է այժմ տասանորդ մեր եւ երախայրիք թէ հարցանէ որ: Ասեմք եթէ՝ այն է՝ զոր պտուղ կոչեմք. ի կալէ եւ ի հնձանէ եւ ի ծառոց: Եւ դարձեալ՝ սովոր եմք ի մուտս աշնան. յորժամ արմտիք ժողովին ի կալոյ եւ յայգւոյ եւ ի ծառոց, երթամք ի սուրբ տեղիս ի վանորայս. եւ պաշտօն առնեմք մտադօք. զքահանայս եւ զաղքատս կերակրեմք, հացն ի կալոյն բաժին. եւ մորթելիքն յանասնոց. եւ դրամն յայլ ընչից: Եւ զայս խրատէ իմաստունն Սողոմօն եւ ասէ. (որդեակ՝ եթէ կամիս որ յայս ամենայն պատուհասից զերծանիս՝ պատուեա զՏէր քոյոց արդար վաստակոց. երև հան նմա պտուղ ի քոց արդարութեան արմտեաց:) Դարձեալ՝ այլ իմն տեսութեամբ հոգեւոր այսպէս իմանի որ ասէ. (պատուեա զՏէր ի քոյոց արդար վաստակոց:) Արդար վաստակ՝ զմարմնական բարի գործն ասէ. որպէս պահք. աղօթք, ծունր, ողորմութիւն, արիւն, ողջախոհութիւն, եւ այլն: Իսկ արմտիք պտղոց՝ զհոգեւոր իմաստութիւնն ասէ. զհաւատ, զյոյս, եւ զսէր: Եւ սոքօք արդարութեամբ պատուելի է զԱստուած, այսինքն, ի գործ մարմնականն՝ ոչ իցէ կեղծաւորութիւն. փառասիրութիւն. եւ այլ ինչ: (Չի այն իսկ են վարձք նոցա) յորժամ ի ցոյցս մարդկան առնեն. այլ զամենայն բարի գործս՝ ծածուկ եւ անխարդախ առ հայր Աստուած. (եւ հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուցէ քեզ յայտնապէս:) Նոյնպէս զպտուղս հոգւոյն՝ զխորհեմութիւնն՝ զհաւատն՝ զյոյսն՝ եւ զսէրն զոր առ Աստուած ունի՝ յստակ եւ արդար լիցին առանց հերձուածոյ եւ առանց թերութեան. հաստատուն հաւատով եւ աներկբայ յուսով եւ ճշմարիտ սիրով առ Աստուած եւ առ ընկերն: Յայնժամ (լցցին շտեմարանքն լիութեամբ ցորենոյ. եւ զինւոյ. եւ զինւով հնձանն առաւել եւս բղխեսցէ:) Այսինքն, զի աստ ի նոյն գործն ժրութիւն եւ արիւթիւն առնու օգնականութեամբ Աստուծոյ. եւ հաստատի ի յիմաստութիւն բանին եւ առաւելու յուսումն: Նոյնպէս հաւատն յոյսն եւ սէրն՝ հաստատուն եւ անշարժ լինին: Իսկ ի հանդերձեալն՝ ըստ իւրաքանչիւրոցն փոխարեն՝ վարձ եւ պսակ հատուցանէ Աստուած. ըստ այնմ, (որովհետեւ ի սակաւդ հաւատարիմ ես. ի վերայ բազմաց կացուցին զքեզ. մուտ յուրախութիւն Տեառն քոյ.) ի դասն աջակողմեան. եւ եօթնալիր օրհնութեանցն արդանաւոր արասցէ եթէ՝ (Որովհետ՝ ըստիք միում ի փոքրկանացս յայցանէ՝ Ինձ արարիք. եկայք օրհնեալք Յօր Իմոյ՝

ժառանգեցէք զկեանս:) որոց լիցի մեզ ամենեցուն առ հասարակ ողորմութեամբն Քրիստոսի, արժնաւորիլ երկնային կոչմանն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. Որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ Վարդավառին. ի բանն Մատթէոսի: (Եւ յետ վեց աւուր՝ առնու ընդ իւր գՊետրոս ' զՅակոբոս ' զՅօհաննէս. ' հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձին. ' այլակերպեցաւ առաջի լոցա ' այլն:) Մատ. 9. 1: (Գլուխ. ԾԻԷ)

Տէր Տէր տուր ինձ լեզու խրատու. զի գիտացից խօսիլ զբանս ի ժամու: Ծագումն փառաց՝ փարատեայինէն զխաւար մտաց. փչումն շնորաց՝ շնչեա ի շրթունս իմ զբան կեանց. զի առանց քոյ՝ ամենայն բանք մարդկան անբանութիւնք են համարեալ. ի իմաստութիւնք տգիտութիւնք: Բո՛ւ եւ վասն քոյ՝ եւ քեւ յայտնեցից սակաւ ինչ զիմաստ բանիս զոր ասէ աւետարանն: (Եւ յետ վեց աւուր՝ առնու ընդ իւր գՊետրոս եւ այլն:) Ի վերայ այս բանի՝ տասն իմն գլխօրէն մեկնութիւն տեսանելի է: *Նախ ընդէ՞ր Մատթէոս յետ վեց աւուր ասէ: Եւ Ղուկաս (յետ ութն աւուր առնու ընդ իւր:) Ասեմք: Նախզի՛

Ղուկաս գերկու պատկեր օրն յիշէ՝ յորս Պետրոս դաւանեաց. եւ այլակերպեցաւ: Իսկ Մատթէոս՝ զմիջոց զվեց օրն: Եւ այս է խորհուրդն: Չի Մատթէոս զառաջին գալուստն Քրիստոսի ի վեց դարուն զուշակէ. եւ Ղուկաս զերկրորդ գալուստն՝ որ յուր դարուն լինելոց նշանակէ: Եւ դարձեալ Մատթէոս եցոյց ըստ այլաբանութեան թէ՛ Տէր գալստեամբ իւրով եբարձ զմեղս մեր՝ զոր ի ձեռն վեց շարժմանն գործեմք: Իսկ Ղուկաս՝ վկայեաց նմա թէ՛ եւ զուրթն խորհուրդսն մաքրեաց՝ որով խորհիմք առնել ինչ. եւ արար մաքուր զմեզ: Իսկ երկրորդ՝ հարց թէ վասն է՞ր յերկուտասանիցն՝ միայն զերեք աշակերտսն տարաւ ընդ ինքեան ի լեառն: Եւ այնքիկ Պետրոս եւ Յակոբոս եւ Յօհաննէս: Եւ այս վասն բազում պատճառի: Նախզի՛ լոքա պայծառ էին տեսութեամբ քան զայլսն. որպէս ի զգայութիւնս մեր՝ միայն ակն է տեսող. եւ կամ ակն քան զակն պայծառ. վասն այն պայծառ տեսութեան լոցա միայն ցուցանէ զիւր աստուածութեանն փառս: Երկրորդ՝ զի Պետրոս էր գլուխ առաքելոցն. եւ Յօհաննէս առաջին յաւետարանիչսն. եւ Յակոբոս առաջին մարտիրոս եղեւ յերկուտասանիցն. վասն որոյ զսոսա տարաւ ընդ իւր: Երրորդ՝ զի առաւել սիրէր Պետրոս զՔրիստոս քան զայլսն ըստ Տեառն հրամանացն: Եւ Յօհաննէս սիրելի աշակերտաց Յիսուսի. որպէս ասէ թէ՛ (աշակերտսն այն զոր սիրէր Յիսուս:) Եւ Յակոբոս զի յանձն եառ ըմպել զբաժակ չարչարանացն. Քրիստոսի. վասն որոյ զնոսա ընտրեաց: Չորրորդ՝ զի ոչ էր արժան տեսութեանն այն Յուդա. եւ թէ զամենայն էր տարեալ եւ զՅուդա ոչ՝ իրաւ լինէր վասն մատնութեանն Քրիստոսի: Հինգերորդ՝ զի կարգն եւ սահմանն ուղիղ մնացէ. զի առաջնոցն պարտ է զառաջին խորհուրդն գիտել. եւ այլոցն նուազ: Վեցերորդ՝ զի յօրէնս եդ Տէրն թէ՛ (յերկուց եւ յերից վկայից հաստատեցի ամենայն բան.) վասն որոյ պարտ էր նախ ինքեան լինիլ վկայ երեք՝ աստուածութեանն իւրոյ ի հաստատութիւն: Եօթերորդ՝ եցոյց մեզ օրինակաբար թէ՛ զորպէս մարդ խորհրդակից առնել արժան է. զի առանց ծերոց՝ ոչ է արժան մանկագուկից ասել զխորհուրդս մեծագոյնս: Ութներորդ՝ զի զփառս ոչ է պարտ ի մեջ բազմաց՝ յայտնել. այլ առանձին. եւ զայն ի մեջ գիտուն եւ առանց

թերութեան մարդոյ: Իններորդ՝ զի ոչ էին արժան այլ աշակերտքն յայնժամ բաց յայնցանէ՝ զորս տարաւ ընդ ինքեան տեսանել զփառս աստուածութեան իւրոյ. վասն որոյ երեք տարաւ: Տասներորդ՝ եցոյց խորհուրդաբար գտսօղս ինքեան ի միւսանգամ գալստեանն. զի Պետրոս զհարիւրաւորսն նշանակէ զի ծեր էր. եւ Յակօբոս զվաթսնաւորսն զի էր միջակ մարդ. եւ Յօհաննէս զերեսնաւորսն զի էր երիտասարդ երեսնամեայ. վասն որոյ զնոսա տարաւ ընդ ինքեան: * Բեր տեսցուք զերրորդ գլուխն թէ՛ վասն Է՞ր ի մարգարեիցն զՄովսէս եւ զԵղիա երբ: Եւ այս վասն բազում պատճառի: Նախ՝ պատուական էին նոքա քան զայլ մարգարէս: Ոմն լուսաւորութեամբ երեսացն. եւ ոմն հրեղէն կառօքն յերկինս համբարձմամբն: Երկրորդ՝ զի ցուցցէ թէ՛ նա ինքն է օրէնսգիր. եւ ոչ հակառակ Աստուծոյ. քանզի հակառակ կարծեին հրեայքն. վասն որոյ երբ զՄովսէս, եւ զԵղիա նախանձախնդիր Աստուծոյ, վկայ աստուածութեան իւրոց. այսինքն. զՄովսէս. եւ զմինն ի կենդանեաց երբ. այսինքն, զԵղիա. զի ցուցէ թէ՛ Տէր է կենդանեաց եւ մեռելոց: Չորրորդ՝ զմինն յերկնից երբ. այսինքն, զԵղիա. եւ զմինն յերկրէ եհան. այսինքն, զՄովսէս. զի ցուցցէ թէ՛ Աստուած է երկնի եւ երկրի: Զինգերորդ՝ վասն մեծութեան իւրոյ. թէ որ ի հինն պատուաւորք էին եւ մեծք՝ այժմ են ի սպասու եւ յերկրպագութիւն նորա. զոր տեսեալ առաքելոցն՝ հարկիւ հնազանդեցին Տեառն: Վեցերորդ՝ զի ուսուցէ աշակերտացն զորքանութիւն սիրոյն առ ժողովուրդսն. եւ երբեմն զսաստն եւ զխրատն. զի մինն վասն ժողովրդեանն ջնջիլ ասէր ի պրութենէն կենաց. այինքն, Մովսէս. եւ Եղիաս զերկինս կապեաց վասն մեղաց ժողովրդեանն. վասն որոյ զնոսա կոչեաց զի եւ ինքն նոյնպէս առնելոց էր հաւատացելոց: Եօթներորդ՝ զի մի յուսահատեցին վասն անընչութեան եւ աղքատութեան. ցուցանէ թէ՛ միոյն յերկնից կերակուր տայի: Եւ զմինն ի ձեռն ագռաւուց կերակրէի. զի իմ էին աշակերտք եւ կամարարք: Ութներորդ՝ զի մի եւ վասն տկարութեան իւրեանց յուսահատեցին առաքեալքն. զի որպէս նոքա տկարք էին. Մովսէս յաղթեաց Փարաւօսի. եւ Եղիա Աքայաբու. այսպէս եւ դուք ասէ մի երկնչիք. զի յաղթէք ասէ Ամենայն բնաւորաց: Իններորդ՝ ցուցանէ սոքօք աշակերտացն զհնազանդ՝ լինլին Աստուծոյ. եւ զնախանձ վրեժխնդրութեան օրինացն Աստուծոյ. որպէս Մովսէս հեղ ծառայ էր Աստուծոյ. եւ Եղիա հուր յերկնից իջուցանէր: Տասներորդ՝ զի որպէս ետու նորա իշխանութիւն ի վերայ տարերաց. երբ զնոսա. զի ուսցին առաքեալքն թէ եւ ինքեանց տուեալ է այնպիսի իշխանութիւն: Այլեւ թէ՛ ոպէս նոքա չար եւ դառնացող ազգին եղէն առաջնորդք եւ հովուէին զնոսա. դուք մի երկնչիք վասն նեղութեան. զի դիւրաւուր ժողովրդեանն եւ դուք լինիցիք առաջնոցք եւ հովիւք: * Բեր եւ զչորրորդ գլուխն՝ զի տեսցուք թէ ո՞րպէս ծանեան աշակերտքն զՄովսէս եւ զԵղիա: Գիտելի է՝ զի բազմազգ ծանօթութեամբ ճանաչեցին զնոսա: Նախ ասեն թէ՛ որպէս Ովհաննէս մկրտիչն ծանեաւ հոգւովն սուրբով զՏէրն ի մեջ բազմախումն ժողովրդոց. եւ վկայեաց թէ նա է Քրիստոս. այսպէս եւ առաքեալքն ծանեան զԵղիա եւ զՄովսէս հոգւովն սրբով: Երկրորդ՝ զի ի գալն երեւեցան. մինն քօղարկեալ զերեսօքն՝ որ նշանակէր զՄովսէս. զի լուեալ էին յօրինացն: Եւ մինն՝ մաշկեայ հանդերձիւ. այսինքն, զԵղիա. որպէս եւ գրեալ է վասն նորա: Երրորդ՝ զի լուեալ էին ի կտակացն թէ՛ Մովսիսի լուսաւորեցան երեսքն. իսկ ի յերեւիլն առ Տէրն, տեսին զնա

Լոյնալէս եւ ծանեան: Եւ զԵղիա հրեղէն կառօք եկեալ. վասն որոյ ծանեան. զի գիտէին զՆա այնալէս վեափոխեալ յերկինս: Չորրորդ՝ զի ի ձեռն Մովսիսի տախտակ երեւեցաւ. որ ունէր յինքն զպատգամսն Աստուծոյ. եւ Եղիայի մաշկեակ: Հինգերորդ՝ զի ի վաղուց հետէ տեսեալ էին առաքեալ և զպատկեր Նոցա նկարեալ ի գիրս սուրբս. ծանեան զԵղիա ըստ թաւարծի գալոյն. եւ զՄովսէս ըստ Նօսրահեր գլխոյն եւ մուրուացն: Վեցերորդ՝ ոմանք ասեն թէ, յիրեանց իսկ լուան զնւանսն, մեծարելով մի զմի յերկրպագութիւն Զրիստոսի: Եօթներորդ՝ այլք ասեն թէ՝ Զրիստոս ետ զանւանս Նոցա խօսելով ընդ Նոսա. զի իմասցին աշակերտքն: Ութներորդ՝ այլք ասեն թէ՝ Մովսէս վասն զի ի մեռելոց յարուցեալ երեւեր հողոտ. եւ ի գերեզմանէն ելեալ. եւ լուեալ էին թէ ոչ էին թորշամեալ ծնօտքն Մովսէսի. զի այլ մեռելոց ոչ եղեւ այսպիսի. վասն որոյ ծանեան զՆա: Իսկ Եղիայի՝ վասն զի երկնանման փայլէին երեսք Նորա. իմացան թէ յերկնից է գալն. որ դեռեւս կենդանի է: Իններորդ՝ զի ասէին հրեայքն թէ՝ Եղիա գալոց է. եւ սպասէին Նմա հանապազ. եւ սովորութիւն է մարդկան՝ զի զոր ինչ կարծիս ունի ի մտի յորժամ դիպի իրաց. Նմանեցուցանէ. իսկ զՄովսիսէ ի Տեառնէ լուան: Տասներորդ՝ զի Նախ քան զգալն ի լեառնս՝ տհարց Տեր զաշակերտսն: (Չո՞ ոք ասեն զինէն. եւ Նոքա ասեն. ոմն զԵղիա. եւ այլք զՄովսէս:) Վասն որոյ ի լեառն տհար եւ եբեր զերկոսեանն դէմ յանդիման Նոցա եւ ասաց. տեսէք՝ ահա Եղիա եւ Մովսէս. ես միածին բանն եմ: Յետ որոյ հայր վկայեաց (դա է որդի իմ սիրելի. դմա լուարուք:) *Իսկ այժմ տեսցուք զհինգերորդ գլուխն թէ՝ վասն Է՞ր պայծառակերպեցաւ: Եւ այս վասն տասն պատճառի: Նախզի՞ յորժամ ասաց զչարչարանսն որ Յերուսաղէմ, երկեան աշակերտքն թէ, իբրեւ զմարդոյ լինիցի մահն: Եցոյց զաստուածութիւն իւր իբրեւ ասել. թէպէտ ես մեռանիմ ի ձեռն հրեից, սակայն աստուածապէս անմահ մնամ: Երկրորդ՝ զի ցուցցէ Նոցա թէ՝ ես եմ հալածիչ խաւարի. տգիտութեան եւ անաստուածութեան. որպէս Նախ յառաջագոյն ասեր. (եւ լոյս յաշխարհ եկի. զի որ հաւատասցէ յիս՝ ի խաւարի մի նմացէ:) Երրորդ՝ զի որպէս դաւանեաց Պետրոս զՆա որդի Աստուծոյ. այժմ յայտնապէս տեսանիցեն եւ լուիցեն զվկայութիւն հօր: Չորրորդ՝ պայծառակերպեցաւ՝ զի կատարեսցէ զբանս մարգարեականս զոր ասէ թէ՝ (զեղեցիկ է տեսութեամբ քան զամենայն որդիս մարդկան:) Հինգերորդ՝ զի կարծէին աշակերտքն թէ՝ ի դատաստան որ գալոց է՝ թէ ուրուք հրամանա՞ւ գալ, եւ թէ իւր կամաւ. եւ թէ զի՞նչ կերպիւ գայցէ. Եցոյց զկերպարանն անտեսանելի մարմնական աչաց: Վեցերորդ՝ պայծառակերպեցաւ՝ զի յայտնեսցէ զմիակամութիւն ընդ հօր եւ հոգւոյն. որպէս թէ ասիցէ՝ թէպէտ ի մարմինն միացայ, ոչ ինչ աւելի ունին հայր եւ հոգի քան զիս: Եօթներորդ՝ խորհէին առաքեալքն թէ՝ այն լուսեղէն զգստն որ առաւ Յաղամայ՝ վերստին տալո՞ց է ի նա թէ ոչ. վասն որոյ պայծառակերպեցաւ՝ եւ Եցոյց յինքեան թէ՝ որդի եղեւ ըստ բնութեան Ադամայ. եւ վերստին Էառ բնութիւնս զնոյն զգեստն: Ութներորդ՝ զի որ ասացն թէ՝ (փայլեսցին արդարքն յարքայութեանն երկնից որպէս զարեգակն.) այժմ զգալապէս զկերպարանն Եցոյց զփառաց արդարոցն ի նմանութիւն իւր. ըստ այնմ թէ, (նման նմա լինելոց եմք. որպէս տեսաք ի թափօր լերինն:) Իններորդ՝ զի մերձ յայն աւուրսն՝ կամեր Տերն ի խաչ ելանել. վասն որոյ պայծառակերպեցաւ՝ զի թէ ի խաչին տեսանիցեն՝ զՆա տգեղ, մի երկմտեսցին: Տասներորդ՝ զի յետ յարութեանն՝ հանդերձեալ էին

աշակերտքն զՏէրն նոյն կերպարանաւն տեսանել. վասն որոյ պայծառակերպեցաւ նախ՝ զի յորժամ տեսցեն յետ յարութեանն՝ պաստաստեսցին թէ, նոյնն է զորտեսաք յառաջն: Դարձեալ՝ տարակուսէին աշակերտքն թէ՛ ո՞րպէսի էր փառքն Ադամայ. վասն որոյ պայծառացեալ եցոյց թէ՛ այսպիսի էր զոր կորոյս մարդն Ադամ: Եւ դարձեալ պայծառակերպեցաւ՝ զի կարկեսցէ զ բերան նեստորի եւ այլոց հերձաժողաց. որք ասէին զմարմինն Տեառն ապականացու մինչեւ ի խաչն. վասն որոյ յառաջ քան զխաչն՝ եցոյց անապական. սակս որոյ յետ յարութեանն ասաց թէ՛ (շօշափեցէք՝ զի ես նոյն եմ որ ի թափօր տեսիք անապական մարմնով: (Վասն զի մարմին նորա ոչ ետես զապականութիւն ըստ մարգարէին ձայնի:)) *Տեսցուք եւ զՎեցերորդ թէ՛ (բարւոք է մեզ աստ լինիլ:)) Եւ այս վասն բազում պատճառի: Նախզի՛ յապահովս լինէին ի չարչարանաց եւ ի նեղութեանց հակառակորդաց հրէիցն աշակերտքն ի լեառն. վասն որոյ ասէ՛ (բարւոք է մեզ աստ լինիլ:)) Երկրորդ՝ զի Տէրն յառաջագոյն ասաց զչարչարանաց իւրոց. երկնչէին առաքեալքն ի քահանայիցն վասն խաչելութեան Տեառն. վասն որոյ ասեն՝ (բարւոք է մեզ աստ լինիլ:)) Երրորդ՝ զի բոյսք եւ ծաղիկք տեղոյն ուռճացեալք ի փառացն աստուածային՝ բուրէին հոտ անուշից. եւ նոքա զմայլեալք ասէին բարւոք է: Չորրորդ՝ զի տեսին զՍովսես եւ զԵղիա ընկերակիցք վարդապետին իւրեանց. ասեն. սոքա բարւոք են մեզ մերձակիցք եւ ոչ խաչահանուքն: Զինգերորդ՝ զի տեսին զՍովսես անաշխատ մանանայ բերէ մեզ յերկնից. եւ Եղիա ջուր անձրեւոյ՝ զի արբուսցէ. ապա ուրեմն մեզ այլ տեղիք ոչ են պիտոյ. (բարւոք է մեզ աստ լինիլ:)) Վեցերորդ՝ զի ասաց Պետրոս թէ՛ Տէրն եւս որ զհացն եւ զձուկն աճեցոյց յանապատին ժողովրդեանն՝ աստ է. եւ ոչ ինչ է մեզ փոյթ. ապա ուրեմն (բարւոք է մեզ աստ:)) Եօթներորդ՝ զի ամպ ի վերայ նոցա հովանի. եւ տեղին լեառն եւ բարեխառն. զի մի ի դաշտին այնպէս ջերմութիւնն վնասեցէ մեզ. աստ ի լեառն բարւոք է մեզ կալ: Ութներորդ՝ զի զԶրիստոս այնպէս պայծառ տեսլեամբ տեսանէին ի լեառն՝ կարծէին թէ ի լեռնէս ի ջանեմք, այլ ոչ տեսանեմք զնա այնպէս. վասն որոյ ասեն. (բարւոք է մեզ:)) Իններորդ՝ զի որք ընդ նմա շրջէին աշակերտքն, զծուծ տեսանէին եւ մերկ եւ բոկ. եւ այլ ոչ էին զնա տեսեալ նոյնպէս: Իսկ յորժամ տեսեալ զնա պայծառ տեսլեամբ՝ ուրախացան ընդ փառս նորա: Տասներորդ՝ զի զոր ինչ Տեառն տեսեալ էին առաքեալքն՝ ամենեցուն հաղորդեալք էին. որպէս մկրտութեանն՝ եւ սքանչելեացն. իսկ այժմ տեսեալ զպայծառութիւնն՝ կամէին հաղորդիլ եւ պայծառութեան նորա. վասն որոյ ասեն. (բարւոք է մեզ աստ լինիլ:)) *Իսկ եօթներորդ գլուխն թէ՛ զի՞նչ է որ ասաց. (արասցուք երիս տաղաւարս:)) Զի ափշեալք էին զգիտէին զի՞նչ խօսէին. իսկ ըստ միտս: Նախ՝ զմեր զհոգի եւ զմարմին եւ զմիտս կազմեսցուք տաղաւար Աստուծոյ: Երկրորդ՝ զմասունս հոգւոյն. զխոհեմութիւն. զարիութիւն, զարդարութիւն, եւ զողջախոհութիւն՝ տաղաւար կազմեմք Տեառն: Երրորդ՝ օրինօք բարոյական եւ տնտեսական եւ քաղաքական՝ տուն շինեսցուք Աստուած: Չորրորդ՝ երեսնաւոր, եւ վաթսունաւոր, եւ հարիւրաւոր առաքիւնութեան պտղովն տաճար շինեսցուք Տեառն: Զինգերորդ՝ երեք յիսնեակ կարգեսցուք, որ է աղուհացիցն. Եղիային. եւ Սովսիսն: Վեցերորդ՝ զհաւատ գոյս եւ զսէր՝ բնակութիւն քեզ շինեսցուք: Եօթներորդ՝ զերեք ժամանակս. զմանկութեան, զերիտասարդութեան,

զծերութեան՝ քեզ նուիրեսցուք: Ութներորդ՝ գկուսութիւն, զողջախոհութիւն, եւ զապաշխարութիւն, քեզ տաճար շինեսցուք: Իններորդ՝ զմարգարեական, եւ զառաքելական. եւ զվարդապետական բանս՝ քեզ երգեսցուք: Տասներորդ՝ ի կեանս, ի մահ, եւ ի հանդերձեալս՝ քեզ բնակարան լիցուք: *Եկեսցուք եւ յութներորդ գլուխն թէ՛ վասն Է՞ր ամպով երեւեցաւ: Նախգի՛ բնաւորեալ է Աստուած ամպով երեւիլ. որպէս ասէ մարգարեն՝ (ո՞եղ յամպս զգնացս իւր.) եւ թէ՛ (նստեալ ի վեայ թեթեւ ամպոյ.) եւ թէ՛ (ամպն կալաւ զնա յաչաց նոցա:) եւ զի լուսաւոր էր՝ Երկրորդ զայն եցոյց՝ թէ խոստումն պարգեւաց եւ ձայնն. եւ ոչ որպէս Մովսիսիւ որի խաւարէ եւ ի միգէ տայր. զի վասն սաստիւ խօսելոյն՝ եւ մարգարեն ասէ. (խաւարային ջուրք մինչեւ յամպս օդոց:) Երրորդ զի հոգին սուրբ էր լուսաւոր ամպն. որով լինի երրորդութիւնն յայտնի ի տեղուջն յայն: Դարձեալ թիւ աշակերտացն՝ զերրորդութիւնն յայտնեաց. նոյնպէս Մովսէս եւ Եղիա եւ Տէրն իմէջ նոցա՝ զերրորդութիւնն նշանակեաց: Այլեւ հայր վկայելովն, եւ հոգին երեւլովն, եւ Տէրն պայծառութեամբ, երեք անձնաւորութիւնքն յայտնեացան: Նմանապէս եւ ասելն Պետրոսի (արասցուք երիս տաղաւարս՝) զերրորդութիւնն եցոյց: Իսկ հայր վկայելովն յերկնից՝ կարկեցոյց զբերան երկաթնակացն, որք ոչ խոստովանին զբանն ի մարմնի միացեալ բնութեամբ. վասն որոյ ասէ: (Դու ես որդի իմ սիրելի) այսինքն, միացեալ մարմնովդ: Եւ դարձեալ՝ հայր վկայեաց յերկնից. զի թէպէտ ի յորդանան նոյն ձայնն եղեւ՝ բայց զայն ոչ ի Տէրն աշակերտքն: Իսկ աստ խօսելովն՝ հաստատեաց զաշակերտսն ի հաւատս Տեառն մերոյ: Եւ դարձեալ՝ զի կրկին անգամ խօսեցաւ զմի զձայնս. մինն ի յորդանան. եւ զմինն աստ. հաստատեաց հայր Աստուած զճմարիտ հաշտութիւնն իւր ընդ մարդկային բնութեանս. այլ որդին եւ հոգին ի ձեռն հրեշտակի: *Տեսցուք եւ զիններորդ գլուխն թէ՛ վասն Է՞ր անկան ի ձայնէն. զի եւ ի յորդանան եւ ի խաչին եղեւ այսպիսի որոտումնս եւ ոչ անկան: Նախգի՛ տեղին բարձր էր եւ ահարկու: Երկրորդ՝ զի անապատ էր անմարդաբնակ: Երրորդ՝ զի լոյսն սեռն էր եւ սաստիկ առաւել քան զարեգակն: Չորրորդ՝ զի ամպն էր հովանի: Հինգերորդ՝ զի զքրիստոս այլափոխեալ տեսանէին: Եւ թէ՛ վասն Է՞ր յարոյց Քրիստոսի: Նախգի՛ մի ի յափշտութենէն անկանիցի տեսիլն ի մտաց նոցա: Երկրորդ՝ զի տեսցեն զնացեալ զՄովսէս եւ զԵղիա, եւ զՔրիստոս միայն գիտացցեն թէ՛ վասն Քրիստոսի եղեւ ձայնն: Եւ վասն Է՞ր պատուիրաց ոչ յայտնել: Նախգի՛ ոչ էին կիրթ ժողովուրդքն: Երկրորդ՝ զի ոչ հաւատային զգալն Մովսէսի եւ Եղիայի: Երրորդ՝ զի առաւել թերանային զՔրիստոս ի խաչին տեսանելով: Չորրորդ՝ զի ոչ հաւատային լսել նոցա զձայնն, եւ արժանի լինիլ եւ տեսանել զփառսն: Հինգերորդ՝ ուսոյց մեզ թէ՛ մինչդեռ կենդանի եմք, ոչ է պարտ յայտնել զառաքինութիւն մեր: *Եկեսցուք ի տասներորդ գլուխն. եւ ասասցուք թէ՛ վասն Է՞ր վարդավառ կոչեմք զանուն տօնիս: Եւ այս վասն բազում պատճառի ըստ համեմատութեան վարդին առ Տէրն: Նախ գի՛ որպէս վարդն ի մէջն պատենից իւրոց է ծածկեալ նախ քան զցուցումն իւր. այսպէս եւ Տէրն նախքան զպայծառակերպիլն՝ ունէր միացեալ ընդ ինքեան զպայծառութիւն աստուածութեանն: Երկրորդ՝ զի որպէս վարդն փթթեալ յայտնի երեւի ամենեցուն. այսպէս եւ Տէր մեր՝ այսօր պայծառակերպեալ՝ յայտնեաց զաստուածութիւն իւր: Երրորդ՝ զի վարդն իր է եւ անուն. այսինքն, զուարթ, յայտնիչ բնութեան իւրոյ. այսպէս եւ Տէր մեր եութեամբ

Աստուած է. վասն որոյ եւ Աստուած կոչի. եւ ոչ սոսկ անուամբ որպէս ասէն հերձաճօղքն: Չորրորդ՝ զի վարդն ի մէջ փշոց բուսանի. այսպէս եւ Տէր մեր ի մէջ հրէիցն երեւեցաւ յորոց եւ խաչեցաւ: Հինգերորդ՝ զի կատարի հասակաւ՝ եւ ապա փթթի վարդն. այսպէս եւ Տէր մեր կատարեալ գոլով հասակաւ՝ այսիքն, երեսնամեայ՝ եւ ապա երեւեցոյց զաստուածութիւն իւր: Վեցերորդ՝ զի անուշահոտութիւն բուրբ ի վարդէն. այսպէս եւ ի պայծառակերպութեան Տեառն մերոյ՝ բուրբաց հոտ անուշ՝ յորմէ թմրեալ աշակերտքն ննջէին: Եօթներորդ՝ զի վարդն ունի չորս երանգ գունոց. այսինքն, կանաչ, եւ կարմիր, սպիտակ, եւ դեղին. այսպէս եւ ի Տէր մեր՝ երեւին սոյն երանգք. զի դեղինն ցուցանէ զանմեղութիւնն Քրիստոսի. ըստ այնմ, (ոչ արար մեղս՝ եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա:) Իսկ սպիտակութիւն՝ զաստուածութիւնն ի մարմնի պարունակեալ: Իսկ կարմրութիւն՝ զարեամբ թաթաւիլն ի խաչին. ըստ այնմ, (ընդէ՞ր եւ կարմիր ձորձք քո:) Իսկ կանաչութիւն՝ զգեղեցկութիւն նորին հասակի. ըստ այնմ, (գեղեցիկ տեսեամբ քան զամենայն որդիս մարդկան:) Ութներորդ՝ զի վարդն հինգ պատենեօք պահպանի. այսպէս եւ Տէր մեր՝ կատարեալ էառ զհինգ զգայութիւնս մարդկայինս բնութեան: Իններորդ՝ զի բժշկական է սրտի վարդն. այսպէս մարմին եւ արիւն Տեառն բժիշկ է հոգւոց եւ քաւիչ մեղաց: Տասներորդ՝ զի ի փոքր եւ ի նւաստ տունկս ունի զբնակութիւն իւր. այսպէս եւ Տէր մեր ասէ. (Ես յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս. եւ յայնոսիկ՝ որք դողան ի բանից իմոց:) Եւ վասն այսքան պատճառացս՝ կոչի վարդավառ տօնս այս: Իսկ թէ վասն է՞ր աստ տօնեմք. զի քառասուն աւուրբ յառաջ քան զխաչելութիւնն այլակերպեցաւ: Այս է՝ զի ինքն ասաց Տէրն. (մի ումեք պատմիցեք զտեսիլդ, մինչեւ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ:) Վասն որոյ կատարեալ գտօն յարութեան Տեառն, աստ կատարեմք զտօնս: Դարձեալ ասաց թէ՛ (յորժամ յարիցէ՛ ասիցեք.) զի եւ մեռեալք յարիցեն եւ մտցեն ի քաղաքն. եւ յորժամ շարժունք լինիցին, եւ արեգակն խաւարեցի, եւ դուք զհոգին սուրբ ընկալչիք, զի զմեռեալս յարուցանիցեք, հաւատացեն թէ՛ եւ վարդապետն նոցա եքեր զեղիա. եւ թէ մտին մեռեալք բազումք ի քաղաքն, ապա եւ զՄովսէս յարոյց. եւ թէ սոքա զհոգին սուրբ արբին, ապա ուրեմն յայնժամ տեսին եւ լսեցին: Եւ զի շարժունք եղեն, եւ խաւարեցաւ արեգակն աւ յարեաւ ի մեռելոց, յայտ է թէ եւ պայծառակերպեցաւ: *Արդ՝ երանելիք եւ առաքեալքն. որք յարկակից են Քրիստոսի եւ տեսողք. բայց թէ մեք կամիցիմք, առաւել եւս տեսանեմք: Նախզի նոքա փոքր մի եւ կիսաբաց տեսին. զի ոչ կարէին տանիլ. այլ որք արժանաւորին, լիակատար փառօք զարդարեալ տեսանեն: Երկրորդ՝ զի յայնժամ Մովսիսիւ եւ Եղիայիւ. իսկ ի վերջին աւուրն՝ հանդերձ բիւրաւոր հրեշտակօք եւ սերովսէիւք: Երրորդ՝ զի այժմ ամպ էր յարկն որ սուրբ երեւեր՝ եւ ձայն լսելի լինէր. իսկ յայնժամ լուսեղէն երկինքն գալարեալ, տուն եւ օթեւան լինի տեմողացն. եւ զփառսն Աստուծոյ յայտնի երեւեցուցեալ: Չորրորդ՝ զի այս տեսումն ի լեռն՝ յերկրի եղեւ. ուր հող է եւ մոխիր. այլ ի հանդերձեալն յիմանալի լեռնն յաստուածակերտ խօրանն: Հինգերորդ՝ զի աստ մի ժամ տեսին առաքեալքն եւ ցնծացան. իսկ անդ՝ ոչ մի ժամ, այլ միշտ յարադուարճ բերկրանօք: Վեցերորդ՝ զի աստ միայն տեսութիւն էր առաքելոցն. իսկ անդ՝ լինելով սուրբքն պայծառութեամբ որպէս զարեգակն ըստ Տեառն բանին: Եօթներորդ՝ զի աստ որոտումն եղեւ դողութեան. յորմէ

ահէ թմրեցան առաքեալքն. իսկ անդ՝ բարբառ քաղցր թէ, (եկայք օրհնեալք
հօր իմոյ՝ ժառանգեցէք զարքայութիւնն:) Ութներորդ՝ զի աստ դեռեւս երկիւղ
կասկածանաց գոյին յաշակերտսն. վասն որոյ ասէին. (բարուք է մեզ աստ
լինիլ.) իսկ անդ՝ (մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք. եւ այլն:) Իններորդ՝ զի
աստ ոչ գիտէին զինչ խօսէին. իսկ անդ՝ դեմ յանդիման խօսակից լինիլ
Քրիստոսի. զի դատաստանի է ժամ՝ յատուցման: Որոց՝ զմեզ արժանի
արասցէ Քրիստոս Աստուած մեր.՝ նմա քառք յաւիտեանս ամեն:

Նորին դարձեալ քարոզ Վարդավառին. ի նոյն բանն: (Եւ յետ վեց
աւուր՝ առնու Յիսուս ընդ Իւր զՊետրոս՝ զՅակոբոս՝ զՅօհաննէս.՝ հանէ
զնոսա ի լեռն մի բարձր առանձին.՝ այլակերպեցաւ առաջի նոցա՝ այլն:)
Մատ. 9. 1: (Գլուխ. ՃԻԸ)

Յոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս Աստուածն մեր՝ զբանս Իւրական,
հոգի կոչեաց՝ կեանք: Որում դուք այժմ փափագեալ երեւիք սրբազանիցդ
հանդէս: Յարանց եւ հարազատիցդ մեր լրութիւն: Ի Ձեզ բերելով
զփրկաւետն քաղց՝ եւ զծարան արդարութեան: Եւ վասն այդորիկ՝ էք
մանաւանդ երանելիք: Որեւ տացէ մեզ բան առ ի բանալ բերանոյ մերոյ. ըստ
անսուտ խոստմանն թէ, (մի հոգայք թէ զինչ խօսիցք, այլ զոր հոգին հօր
ձերոյ խօսեցի ի ձեզ:) Ապա ուրեմն ապաւինեալ ի մի հոգին սուրբ եւ ի
յօժանդակութիւն ներգործական աղօթից ձերոց, բուն հարցուք զառաջիկայ
բանս որ ասէ անտարանիչն Մատթէոս: (Եւ յետ վեց աւուր՝ առնու
զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅօհաննէս եւ այլակերպեցաւ:) Եւ ի վերայ այսր
բանի՝ կամիմ տասն գլխաւոր բան հարցանել: *Առաջին՝ վասն Է՞ր Մատթոս
յետ վեց աւուր ասէ. եւ Ղուկաս յետ ութն աւուր: Մատթէոս զառաջին
գալուստն նշանակէ Քրիստոս՝ որ ի վեց դարուն: Եւ Ղուկաս զերկրորդն՝ որ ի
յուրն դարուն: Դարձեալ՝ այլ իմն ունի խորհուրդ. զի Ադամ ստեղծաւ ի
պատկերն Աստուծոյ ի վեցերորդ աւուրն ուրբաթու. եւ ի նոյն օրն ի վեց
ժամն կորոյս զփառս խաբէութեամբ չարին: Իսկ Տէր մար ի վեց դարուն
առնու զմարմինն Ադամայ. եւ ի վեց աւուր ուրբաթու՝ եւ ի 2 ժամն ի խաչ
բարձրացաւ վասն փառացն ադամայ: Իսկ այսօր եցոյց միայն զփառս նորա
թէ՝ զայս կորոյս Ադամ. եւ ես եկեալ վերստին տամ ծննդոց նորա, որք
պահեն զպատուիրանս իմ: Իսկ ութն օրն զոր ասէ Ղուկաս՝ նախ ցուցանէ
զօրն ի կիրակէ՝ յորում ել ի թափօր: Երկրորդ՝ օրն՝ է յարութիւնն որ ի
կիրակէն եղեւ: Երրորդ՝ միսանգամ գալուստն եւ յարութիւնն մեր՝ յուրն
դարն է լինելոց: Չորրորդ՝ զի հինն եօթամբ վարէր. եօթն շաբաթու. եւ եօթն
տօնիւ. եւ եօթն պատարագաւ: Իսկ Տէր մեր՝ փոխեաց ի յուրն զխորհուրդ
եօթանցն. զի ութն օր տօնեմք տերունի. որպէս ծննդեան եւ յարութեանն. եւ
ուրներորդ դարուն ակնունիմք ըստ Սողոմօսի. (տուք բաժին եօթանցս. այլեւ
ուրնիցս:) Իսկ թէ ոք հարցանէ՝ վասն Է՞ր առաջին գալուստն ի վեց դարուն
եղեւ. եւ երկրորդն ի յուրն: Ասեմք թէ՝ պատճառ վեց դարուն աստ ցուցաւ:
Այլ յուրն գայ: Նախ ըստ կարգի. զի վեց աւուրս ստեղծեաց զարարածս. եւ
յեօթն հանդեաւ. եւ յուրն նորոգեցէ: Երկրորդ՝ ըստ թուոյ. զի չորս են
տարերք. եւ չորիւք ապականեցան. վասն որոյ յուրներորդին ազատէ
յապականութեանց: Երրորդ՝ ըստ պատուոյ. զի հոգին պատուական է.
առաջին գալստեամբն ազատեաց զհոգիս. եւ զմարմինս երկրորդ

գալստեամբն: *Երկրորդ հարցումն թե՛ վասն Է՞ր միայն գերեք առաքեալսն եհան ի լեառն. զՊետրոս. եւ զՅակօբոս, եւ զՅօհաննէս: Ասեմք այսմ չորս պատճառս: Նախ՝ սոքա են երեք սիւնք եկեղեցւոյ՝ յորոյ վերայ հանգչի սուրբ երրորդութիւնն. եհան ի լեառն՝ զի վկայեցեն սուրբ երրորդութեանն: Երկրորդ՝ զի երեքեան սոքա՝ առանձնաբար տեսանելոց էին զխոնարհութեամբ աղօթելն ի գիշերի ուրբաթուն. այժմ տեսին զպայծառութիւնն՝ զի մի տկարասցին յայնժամ: Երրորդ՝ զի Պետրոս սրտիւ հաւատաց. եւ լեզուաւ դաւանեաց. պարտ էր աչօք տեսանել եւ ականջով լսել՝ զի մեզ վկայեցէ. եւ Յօհաննէս ասէ. (տեսաք զփառս Նորա՝ զփառս իբրեւ զմիածնի.) եւ Յակօբոս արեամբ վկայեաց թե՛ Աստուած է Քրիստոս. վասն որոյ մեռաւ: Չորրորդ՝ Տէր մեր ի յերկրի կամեցաւ զերկնաւոր կարգն յօրինել: Չի անդ երեք դասքն առաջին՝ անընդմիջաբար առնուն յԱստուծոյ զլոյս գիտութեան. եւ տան ի միջինս. եւ Նոքա ի վերջինս: Այսպէս երեք յաշակերտացն՝ ականատես եղեն. եւ այլոցն ուսուցին. Պետրոս վէմն եւ հիմն եկեղեցւոյ՝ որպէս աթոռքն. եւ Յակօբոս հանճարեղ՝ որպէս քերովբէքն. եւ սիրելի աշակերտն՝ ըստ սերովբէից դասուն. ըստ չափոյ իւրեանց տեսողք են խորոցն Աստուծոյ: *Երրորդ հարցումն թե՛ վասն Է՞ր հանէ ի լեառն բարձր առանձին: Գիտելի է՝ յորժամ կամի ոք խորհուրդ եւ թատքիր առնել՝ պարտ է զտեղին առանձին ընտրել. պարտ է զի լինիցի անդ ոմն մեծագարմ եւ փառաւոր հանդերձիւ՝ որ հասկանայ զբանս Նոքա զոր ինչ խորհին. զոր ընդունիլոցն է՝ ընդունի. եւ զոր արհամարհիլոցն է՝ արհամարհէ. եւ զոր թիրն է՝ ուղղէ: Արդ՝ մեծ խորհուրդ մի եւ հասարակաց զոր Քրիստոս արար ի թաբօր լեառն՝ ոչ գիտեմք երբեք աղեալ յաստուածաշունչ գիրս. զի յամենայն տեղեաց անդ ժողովեցան: Չի ի յերկնից եկն սուրբ երրորդութիւնն. հայր ձայնիւ դա է որդի. հոգին սուրբ լուսաւոր ամպով հովանացաւ. եւ որդին մարմնացեալ: Եւ ի Ներքուստ ի դժոխոց եկն Մովսէս: Եւ ի հրեշտակաց եւ ի դրախտէն եկն Եղիա: Այլեւ ի մարդկանէ եւս էր Եղիա: Էին եւ այլ ոմանք աշակերտք Քրիստոսի՝ որք չունէին այնպիսի խելս դեռես: Կայր անդ մեծագարմ եւ պայծառ հանդերձիւ Քրիստոս պայծառակերպեալ: Ապաուրեմն պարտ էր եւ տեղին առանձին լինիլ: Վասն որոյ ասէ. (եհան զնոսա:) Եւ թե ո՞րն է լեառնս այս: Ոմանք զսուրբն Սիօն ասեն. եւ ոմանք զՍինա. եւ ոմանք զդրախտն: Եւ չէ ընդունելի. վասն զի դրախտն խաչին բացաւ: Եւ հին օրէնքն ի Սինա տուաւ: Եւ յարութիւնն Քրիստոսի ի Սիօն եղէ: Իսկ այս՝ Թաբօր լեառնէ վասն չորս պատճառի: Նախ՝ ըստ վկայութեանն Դաւթի. (Թաբօր եւ Յերմօն՝ յանուն քո ցնծացեն:) Երկրորդ՝ զի Մելքիսեթ ի յօրինակին աստ քահանայացաւ: Երրորդ՝ զի Մովսէս երկրին աւետեաց ցանկացաւ: Չորրորդ՝ զարագութիւնն ի վերայ ծովու՝ եւ զանչարչարութիւնն ի յարտեան լերինն արար. եւ պարտ էր եւ զպայծառութիւնն աստ ցուցանել: *Չորրորդ հարցումն թե՛ վասն Է՞ր այլակերպեցաւ Քրիստոս: Ասեմք վասն վեց պատճառի: Նախ՝ խոստացաւ զարքայութիւնն տեսանել Նոքա. ասաց՝ (են ոմանք՝ որք ճաշակեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ.) եթէ թողեալ էր յուսով՝ տրտմութիւն էր Նոքա. այլ ի մերձակայս եցոյց եւ լցոյց զնոսա ուրախութեամբ: Երկրորդ՝ խոստացաւ թէ (գալոց է որդի մարդոյ փառօք հօր իւրոյ.) այժմ եցոյց զփառսն հայրենի թե՛ այսու կերպարանօք գամ: Երրորդ՝ ասաց Նախ. (որ ետես զիս՝ ետես զհայր. ես եւ հայր իմ մի եմք.) այժմ

պայծառացաւ եւ եցոյց թէ, այսու տեսլեամբ միաւոր եմ ընդ հօր եւ հաւասար
նմա: Չորրորդ՝ վկայեաց մարգարէն թէ՛ (գեղեցիկ է տեսլեամբ քան
զամենայն որդիս մարդկան.) այժմ պայծառացաւ՝ զի յորժամ ի խաչին
նուագեսցի, մի երկմտեսցին առաքեալքն. ըստ Եսայեայ. (տեսիլ նորա
նուագեալ քան զամենայն որդոց մարդկան:) Յինգերորդ՝ ասաց մարգարէն.
(իբրեւ ճրագ որ տայցէ լոյս ի խաւար չտին տեղոջ, մինչեւ տիւն
լուսաւորեսցի, եւ արուսեակն ծագեսցի ի սիրտս ձեր.) ճրագ էր օրէնքն
Մովսէսի՝ որ ի գիշերի սակաւ մի լուրսաւորէր: Եւ աւետարանն արեգակն՝ որ
ի տիւն լուսաւորէ: Արդ՝ ի Թաքօր զիւն լուսաւորեաց Քրիստոս. զի
կատարեսցէ զբան մարգարէին վասն նորա ասացեալ: Վեցերորդ՝
տարակուսէր բնութիւնս վասն փառացն Ադամայ, թէ զի ա՞րդ զգենումք.
եցոյց յինքեան թէ՛ այս էր առաջին փառքն Ադամայ, զոր կորոյս Ադամայ
մեղօք. եւ ես որդի զպարտս նորա վճարեցի. եւ զգեցուցի բնութեանս. եւ
որպէս անառակին ասաց. (հանէք ի դմանէ զպատմութեանն. եւ զառաջինն
զգեցուցէք:) Եւ յայտ է բանս ընդդէմ նոցա՝ որք յետ յարութեանն ասեն
փոփոխեալ զմարմինն փրկչին եւ եղեալ անապական եւ փառաւոր եւ
լուսաւոր: Վասն զի մարմինս մեր որ ապականացու է՝ փոփոխիմք եւ
առնումք զչորս օժիտս յարութեանն: Նախ՝ անկրական եւ անապական:
Երկրորդ՝ արագ եւ թեթեւ: Երրորդ՝ նուրբ եւ անընդդիմահար: Չորրորդ՝
պայծառ եւ մաքուր: Արդ՝ զսոսա եցոյց Տէր մեր ի մարմնի իւրում: Յառաջ
քան զխաչն զանապականութիւնն ի վերնատունն՝ որ բաշխեաց զմարմինն
անապական: Եւ յարատեան լերինն՝ զի ոչ կրեաց կիրս: Եւ զարագութիւնն
ի վերայ ծովուն թեթեւացեալ: Եւ զնրբութիւնն ի կուսէն ծնեալ: Եւ
զպայծառութիւնն ի լերինն Թաքօր: Եւ թէ ոք ասիցէ՝ վասն է՞ր ասեմք յետ
յարութեան փառաւորեալ մարմնով: Ասեմք եթէ՛ զայսոսիկ ծածկապէս ունէր
ի հոգին անդասին ի յղութենէ արգանդին. այլ յետ յարութեանն՝ երեւեցոյց ի
մարմինն. որպէս ասէր առ աշակերտսն. (չօշափեցէք զիս եւ տեսէք. զի ես
նոյն եմ. եւ ոչ փոփոխիմ:) Իսկ թէ ի հանդերձն վասն է՞ր պայծառացաւ՝ զի ի
յարութեանն ոչ է հանդերձ: Ասեմք եթէ՛ հանդերձն Քրիստոսի՝ չորս ինչ
նշանակէ: Նախ՝ հանդերձ Քրիստոսի՝ է ժողովուրդն իւր. ըստ այնմ, (զձեզ
իբրեւ զհանդերձ զգեցայց.) ցուցանէ թէ՛ այսպէս պայծառացուցանեմ:
Երկրորդ՝ ասաց մարգարէին թէ՛ (մեղք ձեր իբրեւ զձանձախարհիթ, իբրեւ
զձիւն սպիտակ արարից.) եցոյց թէ՛ այսպէս կարօղ եմ զձեզ ի մեղաց սրբել:
Երրորդ՝ զմարմինս մեր նշանակէ. զի գիտացեն թէ՛ այն որ փոխեաց
զհանդերձն ի կերպ լուսոյ՝ կարօղ է եւ զմարմինս ի գերեզմանէ յարուցանել
ամենայն մարդկան: Չորրորդ՝ հանդերձն զսուրբ գիրս եւ զաւետարանն
նշանակէ. որ լուսագարդ բանիւ պայծառանայ ի միտս հետեւողաց. ըստ
այնմ, (ծածկեցեր յիմաստնոց. եւ յայտնեցեր տղայոց:) Իսկ թէ ո՞րպէս տեսին
զիմանալի լոյսն զգալի աչօք: Ասեմք եթէ՛ զօրացաւ տեսութիւն նոցա որպէս
սրբոյն Ստեփաննոսի՝ որ ետես զերկինս բացեալ. եւ մկրտիչն ի յորդանան
ետես զերկինս ցելեալ. եւ Եղիսէոս զիրեղէն կառսն Եղիայի: Եւ որպէս
Մովսէս ի լերինն ետես. այսպէս եւ առաքեալքն զօրացան՝ որքան
կարողութիւն է ի մարմնի տեսանել: Անտանօր երկու արեգակունք եղեն. մին
ի յերկինս. եւ մին ի Թաքօր. եւս առաւել պայծառ քան զարեգակն: Եւ յայտնի
է: Նախզի՛ ծածկեաց զլոյս արեգական եւ ապա երեւեր: Երկրորդ՝ զի անկան
աշակերտքն յերկիր: Այս չորրորդ գլուխն: *Յինգերորդ հարցումն թէ՛ վասն

Է՞ր ի մարգարեիցն միայն զՄովսես եւ զԵղիա եբեր: Ասեմք տասն պատճառ: Նախ զի՝ կարծէին զՔրիստոս մի ի մարգարեիցն գոլ. ոմանք զԵղիա. եւ այլք զայլ ոք. վասն որոյ զգերագոյնսն ի մարգարես որ օրէնսդիրն է, եւ հրեղէն կառօք վերացեալն եբեր ի սպասաւորութիւն. զի յայտ լիցի տէրութիւն նորա. եւ ծառայութիւն նոցա: Երկրորդ՝ բամբաստին հրեայք թէ՝ օրինացն է եւ հայիոյիչ Աստուծոյ. զի շաբաթս ոչ պահէ. եւ զինքն որդի Աստուծոյ շաբաթս ոչ պահէ. եւ զինքն որդի Աստուծոյ կոչէ: Եբեր զՄովսես օրինադիրն վկայ թէ՝ Տէր է օրինացն եւ ոչ լուծիչ: Եւ զԵղիա՝ զի նախանձախնդիր է փառացն Աստուծոյ. յամօթ արա զնոսա թէ՝ որդի է Աստուծոյ եւ ոչ հակառակ: Երրորդ՝ զի երկոցին սոքա յոյժ փափագէին տեսանել զԱստուած: Մովսես ասէր թէ՝ (ցոյց ինձ գերեսս քո:) Եւ Եղիա քառասուն օր գնաց ի քորեբ, թերես տեսցէ զնա: Եւ լուան թէ՝ անհնար է ըստ աստուածութեանն. վասն որոյ այսօր ածէ ի մէջ՝ եւ զբաղձանս նոցա կատարէ. (զի զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր:) Չորրորդ՝ զի ցուցցէ զինքն տուիչ օրինացն. եւ քարոզեալ օրինօքն եւ մարգարեիւքն: Եբեր զՄովսես օրէնսդիրն. եւ զմարգարէն Եղիա. զի նորա հրամանաւն ընթանան: Հինգերորդ՝ համարձակութիւն տայ առաքելոցն թէ՝ ոմն ծանրալեզու եւ նրբաձայն էր. եւ ոմն շինական եւ անկիրթ դպրութեան. եւ յաղթեցին զիմաստունսն: Նոյնպէս եւ դուք յաղթեցէք ամենայն իմաստնոց աշխարհի: Վեցերորդ՝ առաքեալքն զանգիտէին ի չարչարանացն Քրիստոսի. եւ ոչ կամէին զխաչն եւ զմահն Տեառն: Եբեր զՄովսես եւ զԵղիա վարդապետ նոցա՝ որք աղաչէին զՔրիստոս զի փութով խաչեսցի. այլեւ ինքեանք մի երկիցեն տալ զնձինս ի չարչարանս որպէս նոքա. զի ոմն ընդ եգիպտացին, եւ ոմն ընդ Աքայաք պատերազմեալ յաղթեցին. նոյնպէս եւ դուք յաղթէք ամենայն բռնաւորաց աշխարհի: Եօթներորդ՝ էին մարգարեք յառաջնոցն. եւ առաքեալք ի վերջնոցս. ցուցանէ՝ զի առաջինք եւ միջինք ակն ունին փրկութեանն Քրիստոսի. որպէս (ժողովուրդն որ առաջի եւ զկնի երթային՝ ա ղաղակէին Ովսաննայ փրկութիւն ի բարձունս:) Այլեւ էին անդ կոյսք որդիքն զԵբեթեայ. եւ Եղիա. եւ ողջախոհք Պետրոս եւ Մովսես: Չի եկեղեցի այժմ ունի կոյս եւ ողջախոհ: Եւ նոյնպէս յարքայութեանն ընտեսցին կոյսք եւ ողջախոհք: Ութներորդ՝ երկուքն մարգարէ՝ եւ երեքն առաքեալք. որք վկայք եղեն աստուածութեանն Քրիստոսի: Չի ըստ օրինացն՝ (երկուց եւ յերից վկայից հաստատեսցի ամենայն բան:) Իններորդ՝ երեք դասք են որք փրկութեանն Քրիստոսի ակն ունին. այսինքն, հրեշտակք յերկինս. եւ մարդիկ յերկրի. եւ որք մեռան մարմնով եւ կենդանացան հոգւով: Արդ՝ Եղիա յերկնից էջ՝ զի աւետաւոր լիցի հրեշտակաց. եւ Մովսես ի մեռելոց՝ զի աւետասցէ հոգւոցն: Եւ առաքեալքն յերկրի մարդկան աւետարանեացեն զփրկութիւնն Քրիստոսի: Եւ թէ վասն Է՞ր հրեշտակաց եւ հոգւոցն մի աւետաւոր, եւ մարդկան բազում: Նախզի՝ հրեշտակք եւ հոգիք՝ անմարմին բնութիւնք են. եւ անվրեպ տեսողք բանից եւ գործոց. դիւրաւ հաւատն եւ շարժին ի բարիս: Իսկ մարդիկ մարմին ունելով՝ եւ ցանկութիւն գրգռիչ սմին. դժուարաւ հաւատան, կամ բնաւ իսկ ոչ: Դարձեալ՝ յանմարմնոց մինն՝ ծանուցանէ բոլորիցն. վասն զի միտք են ընդ ամենայն անցանելով: Իսկ մարդիկ զի ցրուեալք՝ բազմաց պետք են վկայից՝ զի առ ամենայն ոք երթիցեն եւ քարոզեսցեն: Տասներորդ ասէ՝ (Մովսես եւ Եղիա երեւեալ փառօք:) Նախ զայն ցուցանէ՝ որ այժմ ծածկեալ եւ աներեւոյթ ի մէջ. ի գալստեանն Քրիստոսի՝ երեւեսցին եւ յայտնի լիցին գործօք: Եւ զայն

տեսեալ որդւոցն զԵբեթեայ, (խնդրէին աստիլ մի ընդաջմէ եւ մի ընդ ահեկէ.) որպէս Մովսէս եւ Եղիա: Դարձեալ՝ զի ոչ միայն ինքն Տէրն փառաւոր լիցի, այլեւ զսուրբս իւր փառաւորէ եւ պսակէ. ըստ այնմ, (գաս Աստուած ի մէջ աստուածացելոցն պսակել զսուրբս քո:) Այս հինգերորդ գլուխն: *Վեցերորդ հարցումն թէ՛ զի՞նչ խօսէին Մովսէս եւ Եղիա յորժամ յայսպիսի խորհուրդս ժողովեցան: Ասէն վարդապետք եթէ՛ նախ եւ առաջին գայ Եղիա եւ ասէ զիւր բանն թէ՛ ես յերկոցունց կողմանէ եկեալ կամ. այսինքն, ի հրեշտակաց եւ ի մարդկանէ: Չի ի դրախտէն գամ. այն մերձ հրեշտակաց է. եւ զի մարդ եմ, ըստ այնմ ի կողմանէ մարդկան առաքեցայ: Եւ ասէ ի դիմաց հրեշտակաց: Ով Տէր՝ դու Աստուած ես եւ որդի Աստուծոյ: Եւ զիտեմ զի աստուածային բնութեամբդ անչարչարելի ես. նաեւ մարդկութիւնդ քո անմահ է. զի դու անմեղ ես եւր արդար. բայց հայեաց ի քո հախասահմանեալ կարգաւորութիւնդ թէ, որպէս կարգաւորեցեր զհրեշտակս եւ զթիւ խոցա կնքեցեր որքան լինելոց էր. այժմ ինդրեմք զթիւ խոցա լնուլ՝ եւ զպակասութիւնն կատարել. եւ այժմ առանց մահու քոյ անհնար է լինիլ: Եւ ի դիմաց մարդկային ասէ: Ով Տէր յիշեա զի դու ստեղծեր զմարդն ի պատկեր եւ ի նմանութիւն քեզ. եւ խոցա յանցեան ընդ հրամանս քո. եւ ոչ են արժանի փրկութեան: Եւ չես պարտական վասն խոցա չարչարիլ: Բայց զոր խօսեցար մարգարեիւքն թէ՛ (գթութիւն նորա ի վերայ ամենայն արարածոց իւրոց:) Եւ Երեմիայիւ. (ողորմութիւնք Տեառն անսպառք են.) պարտ է զի բանք խոցա ճշմարիտ լինիցին: Հրեշտակք չունին պէտս ողորմութեան. զի չունին վտանգ ուստեք: Եւ սատանայի ոչ վայելէ ողորմութիւն. զի անգեղջ է: Եւ ոչ այլ կենդանիք. զի ոչ յարքայութիւնն մտանեն, եւ ոչ ի դժոխս. զի ոչ ստեղծան ի պատկեր քո բայց միայն մարդս է ողորմելի՝ որ ի պատկեր քո ստեղծաւ եւ մեղօք անկաւ: Արդ՝ ըստ այնմ որ քո պատկեր է՝ պատշաճ է ողորմութեան. եւ ըստ այնմ որ անկեալ կայ ի մեղս կայ ի մեղս՝ անարժան է ողորմութեան եւ թողութեան: Չայս Եղիա աղաչեր ի դիմաց հրեշտակաց եւ մարդկան կենդանեաց: Նոյնպէս եւ Մովսէս վասն մեռելոց աղաչեր ի դիմաց նախահարցն եւ Ադամայ. եւ ասեր ողորմագին: Ով Տէր Աստուած մեր եւ որդի Աստուծոյ՝ յիշեա զի քո ձեռամբդ արարեր զմեզ. եւ ի քո պատկերդ ստեղծեր. եւ զայն յիշեա՝ որ խաբեաց զմեզ սատանայ եւ ընկեաց ի դրախտէն յայնպիսի տանջանս դժոխոցն. պարտ է որ դու ողորմիս մեզ. զի մեք մեր կամաւ ոչ մեղաք, այլ ի սատանայ է խաբեցաք: Եւ այժմ չունիմք այլ օգնական. որ ազատէ զմեզ. հրեշտակք ոչ կարեն օգնել մեզ. զի չեն յազգես մերմէ. եւ իմ ազգս ամեն ի դժոխս են: Եւ սատանայ թշնամի մեր. եւ այլ ոք ոչ կարէ փրկել զմեզ. բայց միայն դու որ Աստուած ես եւ ողորմած. հայր ես եւ գթած. որդի ես եւ փրկիչ: Յիշեազ զխոստումն քո՝ ասացեր գալ եւ ազատել. զոր բերանովն Դաւթի աղաչեցի թէ՛ (յիշեա զբան ծառայի քոյ՝ յոր եւ յուսուցուցեր զիս:) Այսպէս ի դիմաց ամենայն նահապետացն աղաչեր: Չաբելի անմեղ պատարագն յիշեա. եւ զարդար արիւնն որ հեղաւ վասն քոյ: Ենովս ի քեզ յուսացաւ: Նոյ արդարն որ հինգ հարիւր ամենայն կուսութեամ եկաց. եւ ապրեցաւ ի ջրհեղեղէն. Աբրահամ որ ցանկացաւ տեսանել զօր կատարման քոյ: Իսահակ ի պատկեր քո եւ յօրինակ կապեցաւ ի հօրէն, եւ կամեր զենուլ: Յակօբ զքեզ ետես եւ Իսրայել կոչեցաւ. եւ դու ես խոստացեալ զաւակացն խոցա՝ որք ի քեզ օրհնին, եւ ազատին ամենայն ազգք երկրի: Նոյնպէս ի դիմաց ամենայն մարգարեիցն աղաչեր զքեզ Դաւթ

Եւ ասեր. (քեզ սպասեն արդարքն մինչեւ դաս դու Տեր եւ ազատես զմեզ, զդրունս դժոխոց պղնձիս խորտակելով, եւ զնիգս երկաթիս փշրելով:) Եւ Եսայի ասէ. (որ նստէին ի խաւարի եւ ստուերս մահու՝ լոյս ծագեաց ևոցա:) Եւ Յոբ ասէ. (բանայցեն քեզ դրունք մահու. եւ զգանձս աներեւոյթս տաց նմա.) որք են հոգիք ընտրելոցն: Ասէ Ամբակում. (երեւեցար ի փրկութիւն ժողովրդեան քոյ ի փրկել զնտրեալս քո:) Եւ Յովհաննէս Մկրտիչն ասէ: Ես եկի քեզ կարապետ ի դժոխս. եւ աւետիս ետու: Յորժամ հարցի՝ զքեզ ի բանտին, թէ դո՞ւ ես որ գալոց ես, թէ այլում ակն կալցո՞ւք: Եւ դու հրամայեցեր. (կոյրք տեսանեն. խուլք լսեն. մեռեալք յառնեն. եւ աղքատք աւետաւորին. եւ երանի որ ոչ գայթակղեսցի յիս.) եթէ յերկրի, եւ եթէ ի դժոխս: Արդ՝ ես մարգարեիցն եւ սրբոցն աւետիս ետու. եւ ևոքա խնդացին: Նոյնպէս եւ ևոքա որք կոյրք էին սկզբնական մեղօք, եւ խուլք որք ոչ էին սլեալ զօրէնս քո, եւ մեռեալք մահու չափ մեղօք եւ աղքատք ի բարի գործոց եւ այլք ամենայն, խնդացին վասն գալստեան քոյ. յորժամ ի ջանես ի դժոխս, լուսաւորես եւ ազատես զմեզ: Եւ այս ամենայն փրկութիւնս՝ խաչին է լինելոց. եւ դու փութա գփրկութիւն խաչին զոր կատարելոց ես յերուսաղէմ: Այս էր ծածուկ խորհուրդն եւ աղաչանքն Մովսէսի եւ Եղիայի զոր խօսէին առ Զրիստոս. ոպէս ասէ. (Մովսէս եւ Եղիա որք խօսէին ընդ նմա վասն ելիցն զոր կատարելոց էր յերուսաղէմ:)* Եօթներորդ հարցումն որ ասէ. (պատասխանի ետ Պետրոս:) Թէ ո՞ւմ տայ պատասխանի. յայտ է թէ՛ մարգարեիցն: Որք աղաչէին զԶրիստոս փութով ելանել յերուսաղէմ եւ ելանել ի խաչ. զի կատարեսցի փրկութիւն մարդկան: Եւ զի ի խոր խոցիւր Պետրոս յորժամ լսեր զմահն Տեառն: Վասն այն ասէ. (բարուք է մեզ աստ լինիլ:) Եւ այս տասն կերպիւ իմանի: Նախզի՛ յայտնապէս չիշխեր հակառակիլ. զի մի պատժեսցի որպէս յառաջն. բայց այլ բանիւք զնոյն ակնարկէ: Երկրորդ՝ տեղիքն անապատ եւ յապահովս էր յամենայն խռովութեանց: Երրորդ՝ օղն բարեխառն. եւ տաղաւար շինէին. կամ ամպ հովանի լինելոց էր: Չորրորդ՝ զի հանգուցեալ եմք աստ լսելէօք ի հակառակաց դպրացն: Հինգերորդ՝ ի հոտոտելիս ունիմք բուրեալ զհոտ անուշ արքայութեան: Վեցերորդ՝ զԶրիստոս այնպէս պայծառ փառօք տեսանէին. զոր հրեայքն անարգէին: Եօթներորդ՝ ուրախ եղեն ընդ Մովսէսի եւ ընդ Եղիայի բնակիլն: Ութներորդ՝ ցնձացան. զի հեռացան ի կայիափայ եւ ի հերովդէ: Իններորդ՝ Եղիա աստ է՛ հուր իջուցանէ թշնամեացն եւ այրէ. որպէս գերկու յիսնապետսն: Եւ Մովսէսիւ մտանեմք յամպն. եւ չիմանայ ոք թէ աստ եմք: Տասներորդ՝ զի անաշխատ կերիցեն. Մովսէս մանանայ տայ. եւ Եղիա ջուր անձրել յերկնից: Մանաւանդ թէ՛ Զրիստոս հաց եւ ձուկն: (Բարուք է մեզ աստ լինիլ. Տեր՝ եթէ կամիս արասցուք երիս տաղաւարս. քեզ, եւ Մովսէսի, եւ Եղիայի:) Աստ աւետարանն. (զարհուրեալ էր եւ ոչ գիտեր զինչ խօսեր:) Նախ՝ յերկիւղէ մահու զոր ունէր ի սրտին: Երկրորդ՝ յառաւել լուսոյն՝ յոր թմրեցան տեսութեամբ. եւ զՏէրն ընդ ծառայս համարէին: Եւ այս էր պատճառն. մինչ զհոգին ոչ էին առեալ, անկատարք էին նախ քան զխաչն: Եւ աստ լինի հաւատարիմ բանն. (հոգիս յօժար է.) այսինքն մարգարեքն որք ի մահ աղաչէին. (եւ մարմինս տկար.) այսինքն առաքեալքն. զի նախքան զխաչն՝ զհոգին չէին առեալ: *Ութներորդ հարցումն թէ՛ զի՞նչ է բարբառն հօր որ ասէ: (Դա է որդի իմ սիրելի. ընդ որ հաճեցայ. դմա լուարուք:) Ասեմք եթէ՛ բարառն հօր՝ զեօթն գերազանցութիւն ցուցանէ առ որդին: Նախ որ ասէ

(դա.) զմիաւորութիւն բանին եւ մարմնոյն ցուցանէ անբաժանելի. զի ոչ ասէ դոքա որ է երկու անձն. եւ ոչ ի դմա, որ է երկու բնութիւն. այլ դա եւ դմա. մի անձն եւ միացեալ բնութիւն: Երկրորդ որ ասէ (է.) որպէս ասաց (ես եմ որ էս.) այսինքն, մշտնջենաւոր եւ անփոփոխելի մարմնով: Երրորդ (որդի.) այսինքն, ի բնութենէ իմմէ ծնեալ նի քան գյաւիտեանս. եւ ժամանակաւ ծնեալ ի մորէ նոյն որդի: Չորրորդ (իմ.) այսինքն, համագայակից իմ. եւ ոչ կրտսեր. միաւորեալ մարմնովն փառակից իմ եղև: Զինգերորդ որ ասէ (սիրելի.) զհամակամութիւնն ընդ իւր ցուցանէ. զի մի է կամք եւ գործ հօր եւ բանին մարմնացելոյ. եւ սիրելի՝ զի ոչ է ատելի որդի որպէս հինն Իսրայելի: Վեցերորդ (հաճեցայ.) զիւր եւ զհոգւոյ հաճութիւնն ասէ ի տնօրէնութիւնն որդւոյ: Եօթներորդ (դմա լուարուք.) որ հաւասար է իմ. եւ ձեզ՝ զի Աստուած է մարդացեալ: Այլեւ զվճիռ դատաստանին լւարուք: Իսկ թէ վասն է՞ր անկան աշակերտքն ի ձայնէն. զի ահա ի յորդանան՝ եւ որոտումն առ խաչին լուան եւ ոչ երկեան: Ասեմք թէ վասն ուրն պատճառի: Նախզի՝ տեղին անապատ էր. եւ ոչ ի մէջ խուռն ամբոխի ոպէս ի Յորդանան: Երկրորդ՝ զի լեռն բարձր էր, եւ անձայնահաս: Երրորդ՝ ծածուկ էր ի մարդկանէ: Չորրորդ՝ զի այլակերպս տեսին զՏէրն: Զինգերորդ՝ լոյսն սեռն եւ սաստիկ էր: Վեցերորդ՝ ամպն տարածեալ ի վերայ: Եօթներորդ՝ ձայնն ահարկու էր: Ութներորդ՝ յանկարծակի: Եւ այն որք տեսցին զՅիսուս չորս պատճառի: Նախ՝ յորժամ վկայեցին Մովսէս եւ Եղիա, դարձան ի տեղիս իւրեանց: Երկրորդ՝ զկարօտութիւնս իւրեանց լցին եւ դարձան: Երրորդ՝ փութացան աւետիս տալ հոգւոցն: Չորրորդ՝ զի բարբառն հօր ի Զրիստոս ձգեսցի եւ ոչ ի նոսա: *Իններորդ հարցումն թէ՛ վասն է՞ր ասաց (մի ումեք ասէ գտեսիլդ:) Ասեմք վասն տասն պատճառի: Նախզի՝ ոչ կամեր զմեծամեծ սքանչելիսն յայտնել. զի ոչ կարէին տանիլ տղայաբարոյք գոլով: Երկրորդ՝ զի ոչ հաւատային թէ զՄովսէս եւ զԵղիա եւ բեր ի մեռելոց եւ ի կենդանեաց: Երրորդ՝ զի անարժան համարէին զերեք գծուծ արսն աստուածատեսութեանն եւ ամպոյ եւ ձայնի. զոր ամենայն Իսրայել եւ Մովսէս հազիւ լսէին: Չորրորդ՝ թէ այսպէս ի պայծառ երեւմունս եւ ի ձայն Աստուծոյ՝ զի ա՞րդ լինէր ծածուկ, եւ ոչ ոք լսեր զահագին բարբառն: Զինգերորդ՝ զի չունէին ընդ ինքեան զՄովսէս եւ զԵղիա վկայ բանիցն: Վեցերորդ՝ նաեւ ոչ ամենայ աշակերտքն էին տեսող եւ վկայ բանիցն. բայց միայն երեքն: Եօթներորդ՝ թէ այսպէս համբաւեալ էին եւ հաւատացեալ, եւ յետոյ զնա ի խաչ տեսեալ, բազում գայթակղութիւն եւ վնաս լինէր: Ութներորդ՝ զի կամեցաւ ի խաչին նախ ի հայր աւանդել զպտուղ տնօրէնութեան իւրոյ. եւ ապա այլոց ուսուցանել. ըստ այնմ, (հայր ի ձեռս քո աւանդեմ.) այսինքն զկատարումն տնօրէնութեանս: Իններորդ՝ կամեցաւ նախ հոգւոցն տեսանել զայնպիսի լոյսն. եւ ապա մարմնոց քարոզել: Տասներորդ՝ կամեցաւ զճշմարիտ յարութիւնն իւր ցուցանել. եւ ապա զօրինակն ուսուցանել. վասն որոյ ասէ. (մինչեւ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ:) *Տասերորդ՝ ո՞րքան միջոց է ի պայծառութենէն մինչեւ ի յարութիւնն: Ասեմք եթէ՛ քառասուն օր. եւ յայտ է ի չորից: Նախզի՝ յետ քառասուն աւուր յարութեանն հաստատեցին Տեառն եղբայրն եւ առաքեալքն գտօն այլակերպութեան: Երկրորդ՝ զի եւ անտի մինչ ի տօն վերացման խաչին՝ քառասուն օր հանդիպի: Երրորդ՝ ի վեցէն օգոստոսի մինչ ի տասն եւ չորս սեպտեմբերի՝ քառասուն օր է: Չորրորդ՝ զի յետ սատակելոյ նեռին, եւ Եղիայ եւ Ենովքայ վերանալոցն մինչ ի յարութիւնն

հասարակաց, թուե՛ն ոմանք աւուրս քառասուն. եւ ոմանք քառասուն եւ հինգ: Եւ այս է պատճառն. զի մինչ յուրբաթ խաչին՝ քառասուն է. եւ երկու օր ուրբաթուն՝ եւ շաբաթն՝ եւ կիրակէն՝ եւ պատկեր օր այլակերպութեանն՝ լինի քառասուն եւ հինգ: Այսքան ի խորհուրդ այլակերպութեան փրկչին: Արդ՝ երանելիք եւ առաքեալքն՝ որք յարկակից եղեն Զրիստոսի՝ եւ տեսողք փառացն. բայց թէ եւ մէք կամիցիմք, առաւել եւս տեսանեմք. զի նոքա փոքր մի եւ կիսաբաց տեսին. զի ոչ կարէին տանիլ. այլ որք արժանաւորին, լիաբոլոր փառօքն հօր տեսանէն զԶրիստոս: Յայնժամ Մովսիսիւ եւ Եղիայիւ. իսկ ի վերջինն հանդերձ բիւրք բիւրուց հրեշտակօք եւ սերովբէիւք: Եւ որ այժմ ամպ էր յարկն. յայնժամ երկինքն գալարեալ՝ եւ փառքն Աստուծոյ յայտնի երեւեալ: Եւ ոչ ի լեռնն երկրի. այլ ի յերկնից ի յիմանալին. եւ ոչ ժամ մի, այլ միշտ: Ոչ միայն տեսանելով, այլեւ լինելովն պայծառ քան զարեգակն. ըստ այնմ, (գաս Աստուած ի մէջ աստուածացելոց:) Ոչ որոտում դողութեան, այլ բարբառ քաղցր թէ՛ (եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զկեանսն յաւիտեանից.) եւ դեմ ընդ դեմ խօսակից Զրիստոսի. զի դատաստանի է ժամ եւ հատուցման: Իսկ մեղաւորքն ոչ նոյնպէսիք. այլ (երթայք ի հուրն. եւ ծառայ չար եւ վատ. եւ թէ՛ կապեցէք զոտս եւ ձեռս. եւ որ ոչ ունի հանդերձ հարսանեաց. տապարաւ կարէ. եւ զմասն ընդ կեղծաւորսն գիցէ. եւ զմնացեալսն յուռկանէն ընկենու ի բաց:) Ոչ լինի անդ երեսօք կամ կաշառօք: Ոչ հարուստ եւ ոչ աղքատ: Ոչ ծառայ եւ ոչ ազատ. ոչ իմաստուն եւ ոչ տգետ: Այլ ամենայն որ աստի կենացս է՝ անցանէ.՝ գործքն թեգաւորեն. ջի հատուցումն է ըստ գործոց.՝ քննիչ՝ յանդիմանիչ նոյն Ինքն արդար դատաւորն: Որում արժանի լիցուք զերծանիլ յայնմ ամենայնմէ.՝ ուրիսութեամբ տեսանել զնա աղօթիւք՝ բարեխոսութեամբ ամենայն սրբոց: Եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին դարձեալ քարոզ վասն Այլակերպութեան Տեռն. ի բանն Մատթեոսի: (Են ոմանք ի սոցանէ որք աստ կան. որք մի ճաշակեցցեն զմահ, մինչ՝ տեսցեն զարքայութիւն եկեալ փառոք:) Մատ. 16. 28: (Գլուխ. ԾԻԹ)

Ով ամենօրնեալ Յայր երկնաւոր որդիդ միածին.՝ Յոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ. բարերար. մարդասեր. եւ ողորմած: Դու զօրացո մեզ առնել զկամս քո անթերի: Տուր մեզ իմաստութիւն իմանալ միայն զխոստմունսս քո: Եւ հրով քո՝ ջերմացո զհոգիս մեր ի սեր քո. ծագեա զլոյս պարգեւաց քոց ի մեղօք խաւարեալ միտս իմ. բաց զկապեալ եւ փակեալ շրթունսս իմ խօսիլ զուղիղն: Եւ տուր զհոգի շնորհաց՝ ի սիրտս լսողաց խորհրդաւոր բանիս որ ասէ: (Են ոմանք ի սոցանէ որք աստ կան. ոչ ճաշակել զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւնն եկեալ փառօք:) Ասաց յառաջ քան զայս թէ, զալոց է որդի մարդոյ փառօք հօր իւրոյ եւ հրեշտակաց սրբոց: Բանս զմիութիւն փառացն ընդ հօր նշանակելով եցոյց թէ՛ բնութիւնն մի է ընդ հօր. զի փառքն բնութեանն հետեւի. զի մի բնութեանն՝ այլ եւ այլ փառք ոչ լինի. եւ ոչ այլ բնութեանն՝ մի փառաք: Եւ ի վերայ բերէ (ամեն ասեմ ձեզ.) փոխանակ երդման է ամենն. կամ եղիցի ասէ եւ հաւատաարիմ. կամ ստոյգ եւ ճշմարիտ: (Ասեմ ձեզ. զի են ոմանք որք աստ կամ՝ որք ճաշակել ասէ վասն չորս պատճառի: Նախզի՝ ի փաշակմանէն Ադամայ եղեւ մահ: Երկրորդ՝ ճաշակելովն ի բոլոր մարմինս խառնի. եւ մահն ի

բնութիւնս:) Երրորդ հասակ է ամենայն կենդանեաց ճաշակելն. եւ մահն է ամենայն մարդոյ: Չորրորդ՝ զի շունչն ընդ ճաշակելիսն ելեալ մահանայ: Իսկ արքայութիւն երկնից զայն կոչէ՝ որք երեք առաքեալքն տեսին զաափոս արքայութեանն Քրիստոսի ի թաքօր լերինն. որպէս պատմէ աւետարանն: (Եթէ յետ այսց բանից՝ իբրեւ անցին աւուրք վեց, առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակօբոս եւ զՅօհաննէս. եւ հանէ զնոսա ի լեամն մի բարձր. եւ այլակերպս եղեւ առաջի խոցա, եւ այլն:) Ի վերայ այսր՝ կամիմ բանս տասն հարցանել: *Առաջին՝ թէ վասն Է՞ր նախ խոստացաւ, եւ յետոյ եղոյց: Ասեմք վասն չորս պատճառի: Նախզի՝ կրթեսցին տեսլեանն, եւ մի վնասեսցին. որպէս ակն ի լոյս արեգական: Երկրորդ՝ զի կարօտացին եւ սրբեսցին սիրով: Երրորդ՝ զի արթուն լիցին, եւ հոգացեն վասն տեսլեանն: Չորրորդ՝ զի սրբեսցին ի հոգիս, եւ արժանի լիցին. որպէս ի հնումն ասաց նախ սրբիլ ջրով, եւ յետոյ տեսանել զԱստուած ի լերինն: Այսպէս եւ մեզ նախ խոստանայ՝ եւ յետոյ կատարէ՝ զի արթուն լիցուք մտօք եւ սրբութեամբ: *Երկրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր ի լեամն հասանէ եւ ցուցանէ զփառս իւր: Ասեմք վասն տասն պատճառի: Նախզի՝ բարձրացեալ էին մտօք. եւ զաչս ի յերկինս համբարձեալք ըստ մարգարէին. պարտ էր եւ մարմնով ի լեամն տանիլ: Երկրորդ՝ զի հարքն առաջին ի լերինս տեսանէին զԱստուած. որպէս Աբրահամ, Մովսէս, Եղիա, Սողոմօս եւ այլք. եւ աստ ի լեամն՝ ցուցանէ թէ նոյն Աստուածն է: Երրորդ՝ զՄովսէս ի լեամն եհան եւ գրեաց զօրէնս հին. պարտ էր եւ զառաքեալսն ի լեամն հանել՝ եւ գրել զնոր օրէնս. ոչ ի տախտակս քարեղէն, այլ ի բանական սրտի. ըստ այնմ. (տաց զօրէնս իմ ի սրիտս խոցա. եւ ի միտս խոցա գրեցից:) Չորրորդ՝ ի լեամն եհան՝ զի ճշմարտեսցէ զմեկնութիւն քարին որ ի լեամն առաւ. եւ եղաւ հիմն եկեղեցւոյ: Յինգերորդ լեամն բարձր՝ նշանակէ զնորոյս բարձրութիւն ի վերայ հնոյն, զի անդ մարմնական օրէնք. եւ աստ հոգեկան: Անդ Մովսէսիւ. եւ աստ՝ Քրիստոսիւ: Այն անցաւոր. եւ այս մշտնջենաւոր: Արդ ամպ եւ ծուխ. եւ աստ ամպ լուսաւոր: Անդ երեսքն Մովսէսի լուսաւորեալ յայլմէ. եւ աստ յիւքենէ յաստուածութենէն իւրմէ: Վեցերորդ՝ եհան ի լեամն՝ եւ եցոյց խոցա առանձին եւ չգնաղ տեսութիւն. այսինք, զարքայութիւնն երկնից. զի չէին տեսեալ մարդիկ յորմէ հետէ զրկեցաւ Ադամ: Վասն այն բարձր եւ առանձին ասէ: Եօթներորդ՝ ցուցնէ առ մեզ թէ՛ արքայութիւնն ոչ է յերկրի, այլ յերկինս: Ութներորդ՝ թէ ի կեանս մարմնոյ ոչ է. այլ յետ մահու ի հանդերձեալն: Իններորդ՝ ընտրէ զաշակերտս. եւ յընտրելն ի լեամն հանէ. զի ցուցցէ թէ՛ առաքիւնութիւնն ոչ է խոտելեացն. այլ ընտրելոցն որք բարձրանան հաւատովք եւ գործովք: Տասներորդ ցուցանէ՝ որպէս Ադամաւ ի բարձր դրախտ անկաք. այսպէս Քրիստոսիւ բարձրացաք ոչ ի դրախտն Ադամայ, այլ ի վերին արքայութիւնն երկնից: *Երրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր ասէ այլակերպեալ՝ զի առ աչօք երեւի: Ասեմք թէ՛ այլակերպիլն Տեամն ոչ է առ աչօք. այլ գոյացութեամբ: Եւ յայտէ ի վեց իրաց: Նախզի՝ որ առաջն ճշմարիտ եւ թանձր մարմին էր. այժմ ոչ լինի առ աչօք: Երկրորդ՝ զի յետ յարութեանն՝ նոյնպէս երեւեր միշտ: Երրորդ՝ Մովսէս պայծառացաւ՝ եւ ոչ էր առ աչօք: Չորրորդ՝ օղն ընդունի զլոյսն. եւ չէ առ աչօք: Յինգերորդ՝ աչքս մեր ընդունի զլոյսն. եւ չէ առ աչօք: Վեցերորդ՝ առաքեալն ասէ. (ոչ եթէ պաճուճեալ ինչ առասպելաց զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏեամն մերոյ զալուս Տեամն եւ զօրութիւնն, այլ մեզէն եղեալ ականատես նորա

մեծութեանն ի սուրբ լերինն եւ այլն:) Իսկ պայծառացաւ վասն չորս պատճառի: Նախ եցոյց թէ՛ զԱդամ որ ստեղծ Աստուած ի պատկերն իւր, եւ եղ ի դրախտին, այնպիսի պայծառ կերպարանս ունէր մինչեւ չէր անցեալ զպատուիրանն: Ապա ուրեմն յետ յանցմանն՝ մերկացաւ զայն. եւ զգեցաւ զմաշկեղէն հանդերձ զմեռելոտի եւ զապականացու մարմինս: Երկրորդ՝ Մովսէս մարգարէն յորժամ ետես զԱստուած ի Սինա, լուսաւորեցան երեսք նորա՝ որ ոչ ոք կարէր հայիլ ի նա: Նոյնպէս եւ Տէրն մեր երեւեցոյց զփառս իւր ի թաբօր. եւ նոյն Մովսէս եւ Եղիա տեսին եւ լուսաւորեցան. զի ցուցցէ նոյն Աստուած գոլ անդ եւ աստ: Երրորդ՝ զի յետ յարութեանն՝ այնպիսի կերպարանօք երեւեցաւ աշակերտացն. զի ոմանք յերկուացան որք չէին տեսեալ: Աստ երեւեցոյց, զի անդ ճանաչիցեն զնոյն Տէրն գոլ: Չորրորդ՝ զի ի յարութեանն՝ փառք արդարոցն այնպէս լինելոց են՝ որպէս Տէրն երեւեցոյց ի թաբօր. որպէս խոստացաւ ասելով. (փայլեսցին արդարքն յարքայութեանն որպէս զարեգակն:) Եւ Եսայի ասէ. (Եղիցի լոյս լուսնի իբրեւ զլոյս արեգակն. եւ արեգակն եօթն պատիկ եղիցի:)* Չորրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր ի մարգարեիցն միայն Մովսէս եւ Եղիա երեւեցան: Ասեմք թէ վասն տասն պատճառի: Նախզի՝ նոքա մեծամեծք էին ի մարգարէսն. եբեր ի սպասաւորութիւնն իւր, զի ցուցցէ թէ վասն նորա խօսեցան ամենայն մարգարէքն յառաջագոյն: Երրորդ՝ եցոյց աշակերտացն թէ՛ մի պատճառք զաղքատութիւն. զի երկոքեանն անինչ էին. զի Եղիա քան զմաշկեղէնն ինչ որ ունէր. եւ Մովսէս զոսկերսն Յովսէփու բառնայր. եւ դուք զմարմինն բանին կրէք ի ձեզ եւ զշնորհս հոգւոյն սրբոյն: Երրորդ՝ ուսուցանէր զնոսա մի հոգայք վասն պիտոյից ձեռոց. զի մինն մանանայ ուտէր. եւ միւսն իի ձեռաց ագռաւուց կերակրիր: Չորրորդ՝ մի պատճառք զսքանչելիս. զի նոքա ոչ առին զշնորհս ամենայն նշանաց. զի թէպէտ Մովսէս զծովն պատճառաց՝ այլ Պետրոս ի վասն ալեաց հետիոտս ընթացաւ. եւ զլերինս փոփոխէր, եւ զդէս հանէր: Եւ ստուերն բազում զօրութիւնս կատարէր: Եւ թէպէտ Եղիա մի մեռեալ յարոյց. եւ առաքեալքն զբիրս յարուցանէին. եւ այն նախ քան զխաչն: Դիւցերորդ՝ զի զհեզութիւնն ի Մովսիսէ ուսցին. եւ զվրեժխնդիր լինիլն յԵղիայէ: Վեցերորդ՝ զի ինամակալ եւ սաստ լիցին ժողովրդեանն. զինամս մեղուցելոցն ի Մովսիսի ուսեալ որ ասէր. (Եթէ թողուս սոցա՝ թող. ապա թէ ոչ՝ եւ զիս ջնջեա ի դպրութենէն կենաց:)* Եւ զսաստն անզեղ ժողովրդեանն յԵղիայէ. զի երեք ամենայն վեց ամիս սովեած վասն մեցաց նոցա: Եօթներորդ՝ զարանց կատարելոցն ինդրեր զառաքիւնութիւնն ի նոցանէ. իբեր զՄովսէս եւ զԵղիա՝ որ յիւրեանց հասակն ցուցին զառաքիւնութիւն եւ հաճոյացան Աստուծոյ. զի եւ նոքա յօժարեսցին: Ութներորդ՝ զՄովսէս եւ զԵղիա եբեր թէ՛ սոքա ի հինս են. եւ դուք ի նորս. առաւել եւս պահանջեմ ի ձեւջ. զի դուք նորոյս էք քարոզք. ըստ այնմ, (թէ ոչ առաւելուցու արդարութիւնն ձեր աւելի քան զդպրաց եւ զփարիսեցոց, ոչ մտանէք յարքայութիւնն Աստուծոյ:)* Վասն որոյ յորժամ ինդրեցին առաքեալքն հուր իջուցանել որպէս զԵղիա, սաստեաց նոցա. (ոչ գիտէք թէ յորոյ հոգւոյ էք դուք.) այսինքն, նոքա ի հինն զպատժելն ունէին եւ զբարկութիւն. զի տղայաբարուք էին ժողովուրդքն եւ խրատելոյ արժանիք: Իսկ դուք կատարելոցդ էք օրէնսդիր. պարտ է ձեզ շնորհել եւ անոխակալ լինիլ, եւ քաղցրութեամբ ուսուցանել: Իններորդ՝ զմինն ի կենդանեաց յերկնից եբեր զԵղիա. եւ զՄովսէս ի մեռելոց. զի ցուցցէ թէ՛ Տէր է

կենդանեաց եւ մեռելոց. եւ արարիչ երկնի եւ երկրի: Տասներորդ՝ Մովսէս ի մեռելոց, եւ Եղիա ի կենդանեաց. ցուցանէ թէ՛ յայնմ աւուր մեռեալքն՝ յառաջագոյն յառնելոց են ըստ առաքելոյն. եւ կենդանիքն առանց մեռանելոյ եւ ապականելոյ թեթեւացեալ ամայօք յառաջ Տեառն վերանան յօդս: *Յինգերորդ հարցումն թէ՛ ստուգապէս Մովսէս եւ Եղիա՞ էին, թէ նմանութիւնն նոցա: Ոմանք ասեն թէ՛ հրեշտակ էր ի դէմս նոցա կերպարանեալ յօդոյ: Եւ այս սուտ է. զի աւետարանն Մովսէս եւ Եղիա ասէ. եւ ոչ նման նոցա: Սակայն Եղիա իւր մարմնովն երեւեցաւ. իսկ հոգին Մովսէսի ձեւացեալ յօդոյ: Եւ թէ իւր մարմնովն յարուցեալ՝ ուստի՞ սատանայ պատերազմէր վասն Մովսիսեան մարմնոյն: Եւ այս կարելի է ամենագօրին Աստուած: Իսկ թէ ո՞րպէս ճանաչեցին առաքեալքն զՄովսէս եւ զԵղիա: Ասեն վարդապետք տասն ծանօթութեամբ: Նախզի՛ երեւեցան մինն քօղ արկեալ. եւ միւսն մաշկեակ զգեցեալ: Երկրորդ՝ մինն լուսաւոր դիմօք. եւ միւրսն հրեղէն կառօք, եւ մինչ մերձեցան ի Քրիստոս, նուազեցան ի մեծի լուսոյն: Երրորդ՝ ի ձեռն Մովսէսի գաւազան եւ տախտակք. եւ զուսովն Եղիայի մաշկեակ: Չորրորդ՝ զերեսն Մովսէսի պակաս ի հերացն. եւ Եղիա թաւարձի: Յինգերորդ՝ Մովսէս թօթովախօս լեզուաւ. եւ Եղիա համարձակ: Վեցերորդ՝ պատկերք նոցա դրոշմեալէր ի գիրս. այնու ճանաչեցին: Եօթներորդ՝ յիւրեանց լուան գանուանս, մեծարելով մի զմի յերկրպագութիւնն Քրիստոսի: Ութներորդ՝ ի Տեառնէ յորժամ խօսեր ընդ նոսա: Իններորդ՝ կամ հոգւովն ծանեան. որպէս Ովհանէս զփրկիչն ի մէջ բազմախումն ամբօխին: Տասներորդ՝ եւ իսկապէս՝ զի օրինակ էր հանդերձելոյն. որպէս անդ սուրբքն ճանաչեն զմիմեանս. նոյնպէս եւ աստ: *Վեցերորդ հարցումն թէ՛ Մովսէս եւ Եղիա զի՞նչ վկայէին նմա: Ասեմք թէ՛ վեց են ասացեալ վարդապետք: Նախ այն՝ որ ի ծերպս վիմին մտեալ Մովսէս ետես զյետոյսն Աստուծոյ ի Սինա. որ յետոյսն զմարդկութիւնն գուշակէր. զի յետոյ ի ժամանակի մարմնով երեւեցաւ: Արդ՝ վկայեաց Մովսէս թէ՛ նոյն Աստուածն է զոր ես տեսի ի լերինն Սինայ. եւ լուսաւորեցան երեսք իմ ոպէս զարեգակն: Եւ սա նոյն է որ այժմ մարմնով է պայծառացեալ: Եւ զնոյն վկայ էր Եղիաս՝ որ ետես ի լերինն քորեբայ ի յօդ հանդարտ գանմարմինն Աստուած. եւ այժմ մարմնով երեւի: Երկրորդ՝ վկայէր. սա է օրէնսդիր հնոյն. որ ի լերինն Սինա պատուիրեաց ինձ անմարմնապէս. եւ եկեալ այժմ մարմնով՝ նոր օրէնս դնէ նոր ժողովրդեան իւրոյ: Երրորդ՝ վկայ էր զօրինակացն եթէ՛ զամենայն նուէրս պատարագաց զոր մատուցի վասն սորա՝ սա է ճշմարտութիւնն. վասն որոյ աղերսեր ի մահ խաչին: Չորրորդ՝ վկայեաց որ ասաց. (մարգարէ յարուցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձեպոց իբրեւ զիս՝ նմա լուիջիք.) սա է մարգարէն որպէս դուք կարծէք. եւ Տէր մարգարէիցն որպէս ես վկայեմ: Յինգերորդ՝ վկայէր որ ասաց. (տեսանիցէք զկեանս կախեալ զփայտէ.) ի յորոյ օրինակ ես պղնձի օձ արարի՛ որ կեցուցանէր զհարեալսն յօձից. սա է կեանքն եւ կենդանարարն. որ զհարեալս ի մահաբեր թունից վիշապին՝ կեցուցանէ ի ձեռն խաչին: Վեցերորդ՝ վկայէր վասն մահու խաչին թէ՛ կատարումն ամենայն օրինացն խաչն է. եւ մարդեղութեան խորհուրդ քո՛ վասն խաչին է. եւ ազատութիւն մարդկան խաչին լինի. երւ խոստումն ամենայն նահապետացն խաչին կատարի. վասն այն աղերեր փութով ելանել ի խաչ եւ կատարիլ յերուսաղէմ: Չի այսպէս ուսուցանեն հարքն հոգելիցք. եթէ՛ այսպէս մեծ է խորհուրդ խաչին. որեւ ամենայն մարգարէքն

վասն խաչին խօսեցան. օրինակօք՝ եւ ձեւով՝ եւ խորհրդով: Օրինակօք՝ որպէս ծառն կենաց ի մէջ դրախտին՝ խաչն էր. որ զկեանս զՔրիստոս մեզ պտղաբերեաց: Այլեւ պատարագն Աբելի՝ եւ խոյն կախեալ զծառոյն Սաբեկայ՝ խաչն էր յոր Քրիստոս պատարագեցաւ: Սանտուիքն Յակօբայ յերկրէ յերկինս՝ եւ Տէր հաստատեալ ի նմա՝ զի խաչին ելին մարդիկ յերկինս եւ հերշտակք իջին: Այլեւ գառն զենեալ յԵգիպտոս՝ եւ արեամբն դրոշմեալ զսեմս բարաւոր տանն՝ որ էր խաչն արեամբն Քրիստոսի ներկեալ: Եւ ամենայն պատարագն ողջակիզեալ ի սեղանն. այսինքն, խաչն. զւարակն արտաքոյ բանակին՝ որ արտաքոյ քաղաքին խաչեցաւ Քրիստոս: Սեղան երեսաց գառինն հանապագ. զի անմեկնելի է Քրիստոս ի խաչէն: Եւ այլքն մի ըստ միոջէ՝ օրինակք էին խաչին: Իսկ ձեւ խաչին փրկական չորեքկուսի՝ տապանն Նոյի էր ի ձեւ խաչին. որ փրկեաց ի ջրհեղեղէ մեղաց աշխարհի: Գաւազանն Մովսէսի խաչն է. որ եհերց զծով մեղաց աշխարհի: Որեւ գաւազանն ահարօնի ծաղկեալ եւ պտղաբերեալ զՔրիստոս: Այլեւ ակն շափիւղայ աղիւսանման՝ ի ձեւ խաչին ընդ ոտիւքն Աստուծոյ երեւեալ: Այլեւ խորանն քառակուսի ի չորից գունաց յարմարեալ: Եւ սիւնքն բազմահոյլք ոսկի խոյակօք եւ խարսխօք հաստաեալ: Քաւութիւնն քառակուսի: Եւ սեղանն ոսկի: Աշտանակն եօթնաշաւիտան. եւ եօթն աստեղեան: Եւ սեղան ինկոնցն եւ ողջակիզացն: Տախտակն վկայութեան էր ձեւագրեալ աստուածեղէն մատամբն քառակուսի: Եւ տարածումն ձեռացն Մովսէսի ընդդէմ Ամաղեկայ: Օձն պղնձի փայտիւ բարձրացեալ: Եւ գայիսունն յեսւայ՝ ոտնակապեաց զլուսաւորսն: Եւ աստ խաւարեցան խաչին: Այլեւ խորհրդով խաչին յորդանան յետս դարձաւ. եւ պարիսպն երիքովի որպէս ջուր հեղաւ: Եւ այլ բազում օրինակօք եւ նմանութեամբ խորհուրդ խաչին ձեւանայր: Եւ ոչ միայն այս, այլեւ մարմնով երեւիլն Քրիստոսի վասն խաչին եղել: Եւ աւերումն դժոխոց՝ եւ բացումն արքայութեանն՝ խաչին եղել: Եւ զբաշխումն շնորհաց եւ զթողութիւն մեղաց՝ խաչին մեզ պարգեւեաց: Որպէս ցուցանէ ձեւ նմին ի վեր, խոնարհ, յաջ, եւ յահեակ: Եւ զի՞նչ այս՝ որեւ միւս անգամ գալուստն Քրիստոսի՝ խաչին լինի. եւ կատարում ամենայնի: Որեւ սկիզբն աշխարհի գոյացութեան վասն խաչին եղել. ըստ այնմ որ յառաջ քան զլինիլն աշխարհի՝ սիրեաց ի ձեւ խաչին մարդ լինիլ. եւ վասն մարդկան խաչեցաւ մեռանիլ եւ յառնել: Եւ զի գայս ամենայն խորհուրդ՝ ծածկեալ ունի յինքեանն փրկական խաչն աստուածակիր: Չորմէ ասէ առաքեալն: (Չիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. զիմաստութիւն ոչ զխափանելեացս այսոցիկ, այլ խօսիմք զԱստուած իմաստութիւնն ծածուկ խորհրդով՝ յառաջ քան զլինիլն աշխարհի. զոր ոչ ոք իմացաւ յիշխանաց աշխարհիս. զի թէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հաւէին:)

Վասն որոյ աղերսեր մեծն Մովսէս. եւ վկայ էր զելիցն նորա զոր կատարելոց էր յերուսաղէմ: Այս էր Մովսէսի եւ Եղիայի վկայելն: *Եօթներորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր ամպ հովանի եղել նոցա: Ասեմք վասն տասն պատճառի: Նախզի՛ մարգարէն ասէ. (ամպ եւ մեզ շուրջ են զԱստուածավ.) աստ ցուցանէ թէ՛ ըստոյգ ի մարգարէն Աստուած է դաւանեալ: Երկրորդ՝ Պետրոս ձեռագործ խորանի կարօտ կարծեր. նա զանձեռագործ խորանն եբեր ի լուսաւորութիւն մտաց նոցա: Երրորդ՝ որպէս ի Յորդանան երրորդական անձնաւորութիւնն յայտնեցաւ. նոյնպէս եւ աստ որդին այլակերպեալ. հայր վկայեալ. հոգին ամպ լուսաւոր շրջապատեալ:

Չորրորդ՝ ամպն բարձր է. ցուցանե գբարձրութիւնն անհամեմատ. որպէս ասեր կործանեալն. (եղից գաթոռս իմ յամպս. եւ եղեց նման բարձրելոյն:) Յինգերորդ՝ թեթեւ է. (Տէր նստեալ ի վերայ թեթեւ ամպոյ.) զի ընդ ինքեան վերացուցանե գմեզ:

Վեցերորդ՝ արագ է. ասէ՛ (եղ յամպս զգնացս իւր:) Եօթներորդ՝ ծածկոյթ է. ըստ այնմ, (եղ զխաւարն ծածկոյթ իւր:) Ութներորդ՝ ցոյ իջուցանե. եւ նա ետ զցոյ քաղցրութեան իւրոյ: Իններորդ՝ ամպօք վերացաւ. ըստ այնմ, (ամպն կալաւ զնա յաչաց նոցա:) Տասներորդ՝ ամպօք եկեցե դարձեալ. ըստ այնմ, (որդի մարդոյ ընդ ամպս երկնից գայր:) Այլեւ սուրբքն ամպօք ընդ առաջ Տեառն թռչին յօդս: Չայս ամենայն ցուցանե ամպով երեւիլն: Իսկ զի ասէ՛ (ամպ մի.) նշանակե զհոգին սուրբ յատկացեալ ի բնական ամպոց: Լուսաւոր՝ զի լոյս է բնութեամբ. եւ լուսաւորե գմիտս: Իսկ հովանի՝ զի պահպանե եւ հանգուցանե ընդ թեւօքն իւրովք: Եւ յայս միտս է որ ի սմին աւուր ի տիպ շնորհաց հոգւոյն՝ ջուր սրսկեալ յերեսս գովանամք շնորհօք սուրբ հոգւոյն: *Ութներորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր ձայն եղեւ յամպոյն: Ասեմք վասն չորս պատճառի: Նախզի՛ ցուցե թէ՛ յերկնից յԱստուծոյ է ձայնս. եւ ոչ յայլ ուստեք: Երկրորդ՝ զի հայր միջնորդութեամբ որդւոյ եւ հոգւոյ խօսի: Երրորդ՝ զի յորդւոյ ուսեալ էին. այժմ ի հօրե ուսանին. եւ յետոյ ի հոգւոյն սրբոյ: Չորրորդ՝ որպէս ի հինն առ Մովսէս եւ առ Յոբ յամպոյն խօսեցաւ. այսպէս ի նորս. այլ անդ մրրկեալ եւ միգապատ ամպով. որ զսպառնալիս ցուցաներ. եւ աստ լուսաւոր՝ որ զուրախութիւնն աւետարանե: Եւ զի՞նչ է բարբառն որ ասէ. (դա է որդի իմ:) Ասեմք եթէ՛ նախ առ Պետրոս իմասցիր որ զանգիտեր ի մահուն Քրիստոսի: Եւ նախ մոռացաւ զբանս մարգարեիցն եւ օրինացն՝ որք վասն չարչարանացն Քրիստոսի: Երկրորդ՝ մոռացաւ զդաւանումն իւր որդի Աստուծոյ գոլ եւ կենդանի: Երրորդ՝ ընդդէմ եկաց Քրիստոս եւ ասեր. (քաւ լիցի քեզ Տէր մեռանիլ:) Չորրորդ՝ ընդդէմ պատասխաներ Եղիայի եւ Մովսէսի: Աստ ասեր հայր գոնեայ՝ լուր ինձ եւ մի տրտմիր: Նախզի՛ որդի է ինձ՝ եւ ամենազօր որպէս ես: Երկրորդ՝ զի որդի իմ. եւ ոչ ոք վայրապար մատնե զորդի իւր ի մահ: Եւ այն զի սիրելի որդի: Նախզի՛ ոչ այնպէս սիրես դու որպէս ծնէդս սիրեմ: Երկրորդ՝ թէ զորդիս սիրես՝ զծնօղս վասն եր ատես: Չի ոչ եմ քան զԱբրահամ անգութ եւ տկար. որ նա զորդին իւր ետ ի մահ եւ ես ոչ տամ վասն փրկութեան աշխարհի: (Ընդ որ հաճեցայ:) Նախզի՛ դովաւ լինի հաշտութիւն աշխարհի: Ասեն թէ՛ յԱդամայ հետե հայր Աստուած ընդ մարդոյ ոչ խօսեցաւ մինչեւ ի Յորդանան եւ ի Թաբօր. զի որդւովն հաշտեցաւ ընդ մարդկային բնութեանս: Երկրորդ՝ զի համակամ է ինձ եւ համագործ: Ապա (դմա լուարուք:) Նախզի՛ կամի ի խաչ ելանել. մի ընդդէմ դառնայք: Երկրորդ՝ զոր ինչ խօսի ի կամաց իմոց բարբառի. ունկնդիր լերուք: Եւ թէ վասն Է՞ր կրկին անգամ վկայեաց հայր. ի Յորդանան եւ ի Թաբօր. (դա է որդի իմ սիրելի:) Նախ ցուցանե՛ զի վկայեալն որդի Աստուած է եւ մարդ միացեալ: Երկրորդ՝ զի զառաջինն լուաւ Ովհաննէս. զերկրորդն առաքեալքն: Երրորդ՝ զառաջինն լուան կենդանիք. զերկրորդն մեռեալքն: Իսկ առ մեզ՝ Նախզի՛ մկրտիլովն լինիմք սիրելիք եւ որդիք Աստուծոյ: Եւ երկրորդ՝ սրբութեամբ եւ առաքինութեամբ՝ հաճելիք եւ ընտրելիք նմա: Երկրորդ՝ զառաջին ձայնն ոչ լսեցին ամենայն մարդիկ. զի ներգործութեամբ եր շնորհ. եւ զերկրորդն ի Թաբօր լուիցեն. զի խոստմամբ աւետարանե:

Երրորդ՝ առաջինն տայ մեզ զորդեգրութիւն շնորհաց որ ի յայժմուս. երկրորդ տայ զորդեգրութիւն փառաց որ ի հանդերձեալնի: Եւ թէ վասն Է՞ր հրեշտակք ոչ սպասաւորեն որպէս ի յայլ տնօրէնութիւնս. վասն չորս պատճառի: Նախգի՝ փառաւորիլ մարմնոյն Քրիստոսի՝ գլխառս մարմնոյ մերոյ նշանակէ եւ ոչ զհրեշտակաց: Երկրորդ՝ որդեգրութիւնն մեր ոչ ի ձեռն հրեշտակաց եղել, այլ որդւովն եւ հոգւովն. վասն որոյ եւ ոչ ի մկրտութիւնն հրեշտակք մերձեցան: Երրորդ՝ յայնժամ զփրկութիւն մարդկան հրեշտակք աւետարանեցին. այլ այժմ զփրկութիւնն հրեշտակաց մարդիկք: Չորրորդ՝ որպէս յանմարմութեանն մարդիկ ի հրեշտակաց ուսան. այսպէս ի մարդեղութեանս՝ մարդիկ հրեշտակաց ուսուցանեն. ըստ այնմ, (յեկեղեցւոյ ուսան զմագմապատիկ իմաստութիւնն: *Իններորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր ասէ (մի ումեք ասեք զտեսիլդ, մինչեւ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ:)) Ասեմք վասն տասն պատճառի: Նախգի՝ զորոտումն լսիցեն՝ եւ ապա ձեզ հաւատասցեն: Երկրորդ՝ զի զհոգին որոտմամբ ընդունիցիք. եւ ամենեքեան համաձայնեցին: Երրորդ՝ զի նշանք խաչելութեանն ձեզ զօրաւիգն լիցին. (որ երկիր շարժեցաւ. վեմք պատառեցան. եւ լուսաւորք խաւարեցան, եւ այլն:)) Չորրորդ՝ զի գայթակղութիւնն խաչին բարձեալ լինի յարութեամբն՝ եւ հաւատասցեն: Դիւզերորդ՝ դուք զօրացեալք ի հոգւոյն՝ թէ ոչ հաւատն ձեզ, զմեռեալս ի հոգւոյն՝ թէ ոչ հաւատն ձեզ, զմեռեալս յարուցանէք ի յանդիմանութիւն սոցա եւ ի փառս ձեր: Վեցերորդ՝ յորժամ մեռեալք յառնեն հին եւ նոր՝ եւ մտցեն ի քաղաքն, օգնեսցեն վկայութեան ձերոյ: Եօթներորդ՝ հրեշտակք քարոզէ զյարութիւնն իմ. յայնժամ հաւատան թէ՛ որ զինքն յարոյց ի մեռելոց՝ կարօղ է եւ զՄովսէս յարուցանել: Ութներորդ՝ ասեն առ խաչին. (տեսցուք թէ Եղիա գայ ի փրկել զդա. այժմ նախ քան զբանս՝ բերէ զԵղիա եւ զայլս յառաքելոցն եւ ի մարգարեիցն վկայ. զի կարօղ է զԵղիա եւ զայլ բազումս բերել: Իններորդ՝ պատճառ ընդհանուր մարդկան՝ է յարութիւնն Քրիստոսի. պարտ է նախ պատճառին՝ եւ ապա պատճառելեացն երեւիլ. եւ յայն ժամ դիրաւ հաւատան: Տասներորդ՝ յորժամ ամպովք վերանամ յերկինս, յայնժամ հարւատն թէ՛ կարօղ եր զԵղիա յերկնից բերել. եւ լուսափայլ ամպովք երեւիլ. եւ ամպովք գալ միւսան գամ. եւ զընտրեալս իւր ամպօք յափշտակել յերկինս: *Տասներորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր են երեք յիսնակք ի տարին: Ասեմք եթէ՛ վասն յիսնակացս՝ չորս ինչ գիտելի է: Նախ՝ երեք յիսնակս՝ զհաւասարութիւն երից տօնիցն նշանակէ. այսինքն, զծննդեանն Քրիստոսի. եւ զյարութեանն. եւ զայլակերպիւոյն: Վասն այսորիկ երեք յիսնակ պահեմք. եւ ի կատարումն՝ զերեք մեծամեծ տօնսն կատարեմք: Երկրորդ պատճառ՝ տօն ծննդեանն Է՛ որ Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկրի երեւեցաւ, եւ ընդ մարդկան շրջեցաւ: Եւ տօն յարութեանն՝ որ էջ ի գերեզմանն եւ յարեաւ. եւ ազատեաց զհոգիսն ի դժոխոց. եւ ընդ ինքեան եհան յերկինս: Եւ տօն վարդավառիս Է՛ յոր իջանէ դարձեալ, եւ յարուցանէ զՄովսէս եւ զմեռեալս. եւ հանէ յերկինս: Այսպէս երեք տօնս մի են խորհրդով. վասն որոյ եւ երեք յիսնակս պահօխ կատարեմք: Երրորդ՝ զի երեք յիսնակս տօնէ եկեղեցի: Առաջին յիսնակն՝ ցուցանէ՝ ցուցանէ զաստուածապաշտութիւն եւ զարդարութիւն նահապետացն. յԱդամայ՝ ի Զաբէլայ՝ ի Սեծայ՝ եւ Յենովքայ՝ ի Նոյէ՝ մինչեւ ցԱբրահամ եւ յԻսահակ եւ ի Յակօբ: Երկրորդ յիսնակն՝ նշանակէ զՄովսէսի օրէնսն. եւ զմարգարէսն մինչեւ ցՅովհաննէս: Երրորդ յիսնակն՝ նշանակէ

զաւետարանի քարոզութիւնն Տեառն մերոյ մինչ ի կատարումն ամենայնի: Չորրորդ՝ ծննդեանն տօն՝ նշանակէ զայն, որ ելեալ յաստի կենացս, ծնանիմք ի հոգեւոր աշխարհն: Իսկ յարութեանն՝ գյարութիւն մեր նշանակէ. իսկ այս տօնս՝ զպայծառ փառօք վերանայն յերկինս: Այլ աստ է կրկին հարցումն: Նախ՝ յորժամ այսպէս հանդիսաւոր էր տօնս այս՝ վասն Է՞ր Յակօբոս եղբայր Տեառն եւ կիւրեղ ոչ կարգեցին յընթերցւածին զայս տօնս: Ասեմք այսմ երեք պատճառ: Նախգի՝ ծնունդն Քրիստոսի եւ մահն եւ յարութիւնն՝ ի մարգարեիցն եւ յօրինացն գուշակեցաւ. եւ յետ ժամանակի կատարեցաւ. եւ մէք տեսաքս եւ մասնաւոր հաղորդեցաք ծննդեանն եւ մահուն եւ յարութեանն Քրիստոսի. որպէս մկրտութեամբ աւագանին. եւ մեռեալքն որք յարեան ընդ Քրիստոսի եւ մտին ի քաղաքն սուրբ: Իսկ վարդավառիս տօն՝ թեպէտ՝ ի մարգարեից եւ յօրինաց գուշակեցաւ եւ ի Քրիստոս ցուցաւ՝ այլ ի մեզ ոչ կատարեցաւ. զի ոչ է այսմ կենաց. այլ ի հանդերձեալն է լինելոց հաստատապէս. վասն որոյ յընթերցուածին ոչ եղաւ: Երկրորդ՝ զի որպէս խոստումն արքայութեանն (զոր ակն ոչ ետես՝ եւ ունկն ոչ լուաւ) եւ հաւատոյ պատրաստեցաւ մեզ. նոյնպէս եւ տօն վարդավառիս՝ անտեսանելի էր աչաց մերոց. վասն այն եւ ոչ ընդ տեսութեամբ գրոյ անկաւ. այլ հաւատով աւանդեցաւ: Երրորդ՝ զի զծնունդն եւ զմկրտութիւնն՝ զխաչն եւ գյարութիւնն զոր կատարեաց Քրիստոս՝ եցոյց զգալի աչաց մերոց. վասն այն ընդ զգալի գրով կարգեցին զպատմութիւն. իսկ աստուածային փառացն կերպարան՝ անտեսանելի էր զգայութեան մարդկան. զի աշակերտքն թերի եւ կիսաբաց աչօք տեսին. այլեւ հոգւովն Աստուծոյ տեսին որպէս մարգարէքն: (Չի այժմ ընդ հայելի օրինակաւ տեսանեմք.) վասն այն յընթերցուածին ոչ եղ: *Երկրորդ հարցումն թէ՛ զի՞նչ նշանակէ անուն տօնիս որ կոչի վարդավառ: Ասեմք նախ եթէ՛ վարդն ունի երեք որակութիւն. այսինքն, կարմիր եւ սպիտակ եւ անուշահոտ: Է ի խորհուրդ երրորդութեանն. որ այսօր հայր վկայեաց. եւ հոգին ամպով հովանացաւ. եւ որդին այլակերպեալ էր. որպէս եւ երեքին տաղաւարքն զնոյն բերեն խորհուրդ: Երկրորդ՝ երեւի Քրիստոս. որպէս վարդն որքան ի կոկոնին Է՛ ոչ տեսանի եւ ոչ զանուշահոտն բուրէ. այլ յորժամ փթթին գունով՝ հոտով ուրախ ամեն զմարդ: Այսպէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս ի կուսական արգանդին որպէս ի կոկոնի սնաւ եւ զարգացաւ. եւ յորժամ ծնաւ ի մօրէ՛ ապա յայտնեցաւ որպէս վարդ (գեղեցիկ տեսանելով քան զամենայն որդւոց մարդկան որպէս ասէ Դաւիթ:) Եւ դարձեալ՝ վարագունաւ մարմնոյն ծածկեալ որպէս ի կոկոնի. եւ այսօր բացեալ յայտնէր զհայրենի փառն անաջի անաքելոցն եւ մարգարեիցն: Երրորդ դարձեալ՝ ունի վարդն երեք որակ. կարմիր եւ սպիտակ, եւ անուշահոտ որպէս ասացաք: Կարմիրն նշանակէ զարիւնն ի խաչին. եւ սպիտակն զանմեղութիւնն. եւ հոտն զհոգին զոր փչեաց յառաքեալսն: Այլեւ անուշ հոտով ելից զտիեզերս. եւ զճենճերս շարաւահոտ կոռցն մաքրեաց. վասն նորա ասէ. (եղբօր որդին իմ սպիտակ է եւ կարմիր. ընտրեալ ի բիւրոց:) Չորրորդ՝ զի թողեալ զվէն՝ արդաւար ասի: Նախգի՛ այսօր եհան զաշակերտսն ի լեառն. եւ ետ հրաման աւար հարկանել զսատանայ. եւ գերել ի նմանէ զմարդիկ ի հնագանդութիւնն Քրիստոսի: Եւ երկրորդ՝ աւարաւ գարծուցանել ի դժոխոց զազգս մարդկան. եւ տալ նոցա պարգեւս զհոգին սուրբ: Եւ երրորդ՝ արդ աւար է արքայութիւնն Աստուծոյ: (Եւ բռնադատի. եւ բռունք յափշտակեն զնա:) Չայս

ցուցանէ արդաւարն: Հինգերորդ՝ վարդավառ. այսինքն, վարդապետք. զի աշակերտքն այսօր վարդապետք անուանեցան: Նախզի՝ ամենայն աշխարհի զաստուածագիտութիւնն ուսուցին. եւ զսուրբ երրորդութիւնն ծանուցին տիեզերաց: Երկրորդ՝ վարժապետք. զի եւ ի վարժս ետ զաշակերտսն ի Մովսէս եւ Յեղիա, անստացած եւ համբերօղ լինիլ որպէս եւ նոքա: Երրորդ՝ վարդապետք եղեն փառացն Տեառն. զի զորտեսին եւ լուան զհայրական ձայնն՝ քարոզեցին մարդկան համարձակապէս զՔրիստոսի աստուածութիւնն: Չորրորդ՝ վարդապետք եղեն չարչարիլ եւ նահատակիլ վասն խոստացեալ բարեցն ի Քրիստոսէ. զի զառհաւատչեալ յարութեանն ընկալան: Վեցերորդ՝ զի հեթանոսք զայս տօնէին յանուն Ափրոդիտեայ կռոցն. եւ զվարդն նմա մատուցանէին. եւ յանուն նորա ծաղկօք տօնէին: Այլ Տէրն մեր զսնտի յոյսն նոցա խափանեաց եւ յինքն դարձոյց: Նախզի՝ ասէ. (Ես Աստուած նախանձոտ եմ. զփառս իմ այլում ոչ կամիմ:) Եւ երկրորդ՝ ցուցանէ թէ՛ նա է ճշմարիտն Աստուած. ստեղծօղ ամենայնի. (եւ նմա է տալի զպաշտօն եւ զպատիւ ծաղկանց:) Վասն որոյ զաւուրս անուն՝ վարդավառ կոչեցին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորն քարոզ Փոխման Աստուածածին Կուսին. ի բանն Սողոմօսի: (Բազում դատերք ստացան զմեծութիւն. բազումք արարին զգօրութիւն. բայց դու առաւել եղեր.՝ անցուցեր զաենեքումբք:) Սաղ. 31. 29: (Գլուխ. ԸԼ)

Ճ Արարիչն Աստուած արար ըզլուսաւորս մեծամեծս՝ փոքունս: Չարեգակն զլուսինն եւ զաստեղս եւ զճրագս լուսոյ՝ փարատել զխաւար եւ լուսաւորել զաչս. եւ զուարճացուցանել զսիրտս. ըստ այսմ օրինակի՝ յորժամ զսբոցն տօնեմք զյիշատակս, պայծառանան միտք. եւ հրճուին զգայութիւնք ըստ Սողոմօսի. (յիշատակաւ սրբոցն՝ ուրախասցին ժողովուրդք:) Եւ որչափ արեգակնդ գեր ի վերայ է քան զայլ լուսաւորսդ՝ այնչափ յիշատակ Աստուածային կուսին քան զամենայն արդարոց: Քանզի յորժամ զՏիրամօրն տօնեմք զյիշատակ, ցնծան երկինք. զուարճանայ երկիր. տօնակից լինին մեզ երկնային զօրքն. եւ պարզելք հոգւոյն սրբոյ տարածին. եւ ամենասուրբ կոյսն բարեխօս լինի վասն մեր. եւ կտակք մեղացն ջնջին. եւ ամենայն ցաւք հոգւոց եւ մարմնոյց մերոց փարատին: Վասն որոյ ժողովեալք աստանօր ի վերափոխումն բազմերջանիկ եւ ամենագովելի սրբուհւոցն ի գերաշխարհնոցն եւ նազելի կեանս վերին: Ոչ եթէ ի ի ճառեալն անհաս մնայել ի բաց ընկենու զբանս՝ եւ արտաքս մերժ է զմեզ, այլ վասն մարդասէր կամացն եւ անարգամեծար բարուցն՝ ընդունի եւ յարգէ եւ ուրախանայ. որպէս մայր ընդ թօթօվախօսութիւն տղայոյ իւրոյ. եւ որպէս վարդապետ ի բանս անկատարից աշակերտաց. քանզի ոչ ինքեան հայցէ զփառս որ գերագոյնն է ամենայն փառաց, այլ զտօնողացս կամի զօգուտ եւ զփրկութիւն ի յիւրն փառաւորութենէ: *Արդ՝ սրբուհին Մարիամ՝ դուստր էր Յովակիմայ եւ Աննայի ի թագաւորական ցեղէ եւ յազգէ Դաւթի ըստ հօրն Յովակիմայ. եւ ըստ մօրն՝ յազգէ քահանայիցն ի ցեղապետէն Դևեայ. դուստր Մատթոն քահանայի ի Բեթղէիմէ: Բայց ինքն սուրբ կոյսն՝ սքանչելի վարուք եւ սրբութեամբ սնեալ առաւել քան զամենայն սուրբս ըստ առակողին: Վասն որոյ ամենայն երանութեամբ լցեալ եւ ներբողեալ

բարեբանութեամբ ի հրեղէն լեզուացն. եւ է բարեխօս վասն ամենայն աշխարհաց: Մաքուր քան զլոյս. անխառն որպէս զօդ. անշաղախ ըստ նմանութեան արուսեկին. սկիզբն եղէւ անսկիզբն բանին. եւ անժամանակին ժամանակ ըստ մարմնոյ: Հօր եւ հոգւոյն սուրբոյ գթոյն հաւասարեալ առ մարդիկ: Եւ որք հաւատով կատարեն գլխատակս վասն փոխման նորա յամենայն եկեղեցիս յամսեանն օգոստոսի տասն եւ հինգ, նոքա ընկալցին զանմահական պարգեւս փառաց: Քանզի ինքն ամենասուրբ կոյսն՝ աւետեաց զաւակ եղէւ յամուլ ծնողացն Աննայէ Յովակիմայ: Եւ յորժամ եղէւ երից ամաց՝ տարան զնա ծնօղքն եւ ետուն ի տաճարն Աստուծոյ նուեր Տեառն: Եւ ըստ մարմնոյ գործեր զսպաս տաճարին. եւ մաներ գԲեհեզն եւ զծիրանին: Եւ ըստ հոգւոյ կրթիւր ի վարս պարկեշտութեան զօրհանապագ: Եւ իբրեւ լցան նորա ամբ չորեքտասան՝ յանձնեցին քահանայքն զնա ի պարկեշտ ծերունին Յովսէփ. զի պահեսցէ անարատութեամբ զկուսութիւն նորա. եւ դէպ ժամանակի օրինօք ամուսնացուցանել. որպէս եւ Եսայի ասէ վասն առնս այսորիկ եւ անարատ կուսին եթէ՝ (տացի թուղթ առն, որ գիտիցէ զդպրութիւն:) Քանզի Յովսէփ հմուտ էր ամուսնութեան. եւ ծնեալէր զաւակս: Եւ նա ասէ՝ (ոչ կարեմ ընթեռնուլ զի կնքեալ է:) Վասն անխախտելի կուսութեանն ասէ: Զարտեզ կնքեալ՝ որ գտաւ ընդունակ անճառելի բանին Աստուծոյ: Եւ առեալ զնաց ի Նազարեթ ի տուն իւր. եւ կացոյց զնա ի մէջ զաւակաց իւրոց: Եւ սրբուհին հին էր ամաց չորեքտասնից յորժամ յանձնացաւ Յովսէփոյ. եւ կացեալ ի տան նորա ամիսս երիս: Եւ ետ հրեշտակապետն Գաբրիել զաւետիս կուսին. եւ յղացաւ զբանն Աստուած. եւ ծնաւ զփրկիչն աշխարհի ի հնգետասան ամի իրոյ: Եւ երեսուն եւ երեք ամ մինչ ի խաչելութիւն փրկչին. եւ յետ համբառնալոյն յերկիս՝ երկոտասան ամ. որ եղէւ ի սկզբանէ կենաց նորա մինչեւ ի փոխումն վաթսուն ամ: Այլ ինքն հրեշտակատեսիլ կոյսն ի հրաշափառ գեղոյ երեսաց՝ յայտնի ճանաչիւր անթառամելի գոյ կուսութիւն նորա: Բարետեսիլ էր աչօք: Մեծ ակն: Անձամբ չափաւոր: Եւ տիպ պատկերացն վայելուչ: Բազուկքն եւ մատունքն երկայնագոյն: Եւ լի էր շնորհօք սուրբ հոգւոյն: Բղիսիւր անարատ եւ անապական կաթն ի սուրբ եւ յանհպելի ստեանցն արբուցանել զարարիչն բոլորից: Եւ Յովսէփ քառասուն եւ մէկ ամաց էր, յորժամ կոյսն յանձնացաւ նմա. եւ ի յերեսուն եւ մէկ ամի կենարարին՝ հանգեաւ ի Նազարեթ ի տան իւրում լցեալ ամօք եօթանասուն եւ երկու: Եւ ապա սպասաւորէր կուսին արդարն Յակօբ ի Յովսէփայ յանձնեալ նմա: Չի եւ ընդ Յովսէփու՝ նա հոգայր ծառայապէս հեզն եւ արդարն. մինչեւ ի Քրիստոսէ Յօհաննու յանձնեցաւ. որպէս ասաց Եսայի. (տացի թուղթս առն՝ որ ոչ գիտիցէ դպրութիւն:) Որ գուշակեաց զՅօհաննէս զորդին Չերեթեայ. քանզի ի վերայ խաչին յանձն արար զաստուածածինն Յօհաննիսն: Եւ էր սրբուհին անարատ ամաց քառասուն եւ ութից: Եւ յետ համբարձմանն Քրիստոսի՝ եկաց առ նմա ամս եկոտասան: Եւ որպէս ասացաք՝ ամենայն կեանք նորա վաթսուն ամ: Եւ յետ յարութեանն՝ երեւեալ Տէր աշակերտաց իւրոց. եւ շրջեր ընդ նոսա աւուրս քառասուն. եկն ի լեառն ձիթենեաց հանդերձ աշակերտօք իւրովք: Եւ յորժամ կամեր համբառնալ, եկաց մայրն Աստուածածին առաջի Միածնին իւրոյ ասէ: Ո՛վ Տէր իմ եւ Աստուած իմ արարիչ իմ եւ որդի իմ: Ահաւասիկ դու վերանաս ի փառսն քո հայրենի. եւ զիս թողուս ի կենցաղս անայցելու եւ տարակուսեալ: Եւ դու գիտես զապերախտութիւն հրեիցն՝ որ

բարերարիդ չար հատուցին. ինձ զի՞նչ անկիցեն: Եւ ասէ Տէր. խաղաղութիւն ընդ քեզ քաղցրիկ մայր իմ. ոչ թողից զքեզ տապանակ եւ խորան սրբութեան իմոյ: Այլ կաց սակաւ մի ժամանակ ի մէջ ընտրեալ աշակերտաց իմոց. զի տեսեալ զքեզ միսիթարեացին: Եւ յորժամ ելանկիցես ի մարմնոյդ, ոչ առաքեմ առ քեզ հրեշտակս, եւ ոչ հրեշտակապետս կամ զմի ոք ի սերովբեիցն, այլ ես իսկ եկեալ հրաշալի փառօք եւ պատուով տարայց զքեզ յիմանալի կեանս՝ վերինն Երուսաղէմի: Եւ բնակեր սուրբ կոյսն յԵրուսաղէմ ի տեղի ծնողաց իւրոց. եւ Յօհաննէս սպասաւորեր նմա. եւ քարոզեր զբանն կենաց ի թլփատութեանն: Եւ ինքն սուրբ կոյսն՝ բազում չարչարանս կրեաց իԿայիափայ. եւ հալածանս ի հրէիցն. զի ոչ տային թոյլ ընթանալ ի գերեզմանն եւ յայլ տեղիս տնօրէնութեանն եւ աղօթել յայտնապէս. այլ ծածուկ: Եւ յորժամ սպանին զեղբայրն Յօհաննու զՅակօբոս, երթեալ հուր հարին ի տունն յորում կայր սրբուհին: Եւ շրջապատեալ հուրն՝ այրեաց ի հրէիցն արս եօթն. եւ երկուցեալ այլ ոչ իշխէին համարձակիլ ի սուրբ անձն: Եւ յաւուր մկրտութեան Տեանն՝ գնացին խաժամուժ ամբոխքն ի հրէիցն ըմբռնել զկոյսն սուրբ եւ զՅովհաննէս. իսկ հրեշտակ Աստուծոյ՝ եղ գնոսս յայնկոյս գետոյն. եւ հրեայքն անցանել կամեցան՝ արս քսան կորոյս Յորդանան: Եւ յաւուր համբարձման Տեանն՝ ի լեանն ձիթենեաց յախումն քարամբք հասեալ ի վերայ սրբուհւոյն, սատակեցին յինքեանց արս յիսուն քարավէժս: Եւ այլ բազում սքանչելիս Է՝ զոր ոչ յերկարեմ: *Եւ իբրեւ անցին երկուտասան ամենաքեան յետ վերնալոյ փրկչին, ի միում աւուր յորժամ աղօթեր աստուածածին կոյսն ի սենեկի իւրում, երեւեցաւ նմա Գաբրիէլ հրեշտակապետն որ զաւետիս յղութեանն ետ. եւ ասէ ցնա: (Ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ:) Եւ ետ նմա Բրաբիոն ոսոս արմաւենեաց յաղթութեան աշխարհի: Եւ կոչեալ զնա հրեշտակն ի լեանն ձիթենեաց ուր սովոր էր յաղթօս կալ: Եւ ելեալ զնաց անդէն: Երւ ի ծունր դնել նմա ի տեղի վերանալոյ փրկչին, ահա ամենայն տունկք ի լերինն խոնարհեալ երկրպագութիւն մատուցանելին նմա: Եւ երեւեալ նմա դարձեալ հրեշտակն եւ ասէ. (ուրախ լեր բերկրեալդ.) քանզի միածին որդին կոչեր զքեզ առ ինքն: Եւ ասէ՝ ժամանակ պանտիստութեան քոյ յօտարութեանդ լցաւ. եկ այժմ ի սեփական հայրենի ժառանգութիւնն քո: Մի կալ մնալ ի գաւառդ մահու. զի անմահ կենացն վիճակեցար. զյաղթութեանն նշան կանգնեցեր. ի հրէից բազում չարչարանս կրեցեր: Արդ՝ զրաւ եղել չարչարանացն. կատարումն էառ աշխատութիւնն: Անցին տրտմականքն: Ժամանեաց ուրախութիւնն: Հանգիստն պատրաստեալ է: Խորանն լուսոյ կազմեալ է: Աթոռն փառաց յարդարեալէ: Արդ՝ եկ եւ հանգիր ի բազում աշխատութեանցդ. եւ վայելեա ընդիս տեսլեամբ փառաց իմոց որ նախ քան զլինիլն աշխարհի: Եւ յորժամ զայս ասաց զուարթունն, ետ զբրաբիոնն եւ վերացաւ յերկինս: Եւ բրաբիոնն էր նման ոսոնց արմաւենեաց. եւ հինգ իրս նշանակեր: Նախ՝ հաւատացուցաներ զվերափոխիլն կուսին յաշխարհէս: Երկրորդ՝ նշանակի դրախտին Աստուծոյ. եւ դարձեալ անդր երթալոյ. այսինքն յերկնաւորն դրախտ: Երրորդ՝ զի տեսցեն առաքեալքն՝ եւ առաջին նորա օրինութիւնս վեր առաքեսցեն: Չորրորդ՝ ի նշան յաղթութեան աշխարհի եւ ամենայն չարեաց: Հինգերորդ՝ զի լինիցին նշանք յոսոյ արմաւենեացն: Եւ այսպէս իբրեւ ել ի լեանն, ամենայն բոյսք եւ տունկք խոնարհեալ երկրպագին նմա: Եւ յորժամ դարձաւ ի յարկս իւր, մեծապէս դղրդեցան եւ շարժեցան ամենայն

տեղիքն այն. եւ ի յինքեանց բազում լոյսս ջահից վառեցին: Եւ Մարիամ աղօթեաց առ Աստուած եւ ասէ. ով Տէր ամենայնի եւ արարիչ բոլորից. դու ինքնին խոստացար ինձ գալ եւ աւանդել զհոգին իմ: Եւ եղև ձայն առ նա եւ ասէ. ոչ թողից զքեզ: Եւ հրամայեաց կոչել զազգակիցս եւ զդրացիս իւր եւ ասէ. լուցէք զամենայն ջահս եւ զղամբարս. եւ անսացէք առիս զերիս աւուրս: Եւ պատմեաց լոցա բազում ինչ զմեծամեծս Աստուծոյ եւ ասէ: Երկու հրեշտակք երթան առ հոգի մարդոյն. մինն չարութեան. եւ միւսն արդարութեան: Չոր այսպէս մեկնեն վարդապետք եթէ՝ յորժամ ահեղ եւ սարսափելի օր վախճանին հասանի մարդոյ, եւ մերձեանայ հրեշտակն որ գտագնապէալ հոգին պահանջէ, նաեւ դեւք չարք ընդ նմա մօտին: Եւ թէ լինիցի մարդն սուրբ հոգւով եւ մարմնով եւ զգայութեամբ, ուրախանայ բարի հրեշտակն. եւ որպէս բարեկամ եւ սիրելի՝ ողջագուրէ զնա սիրով. եւ չար դեւքն՝ տրտմին եւ ի բաց գնան: Եւ հրեշտակն քաղցրութեամբ աւանդէ զհոգին. եւ առաւալ հետեւի յերկնային ուղին: Իսկ օդային չար հոգիքն թէպէտ ընդ առաջ գան թերեւս գոցեն տեսակ մեղաց ի նմա, եւ յորժամ ոչ գտանեն, սաստէ ի նոսա սուրբ հրեշտակն. եւ պատկառանօք յետս ընկրկին: Եւ առեալ հրեշտակին անցանէ ի վեր քան զամենայն պարունակս լուսաւորացն գեր ի վերայ եթերին եւ հաստատութեանն. եւ երկրպագեցուցանէէ առաջի աթոռոյ աստուածութեանն: Եւ տարեալ դասակարգէ ի կայանս կատրեալ արդարոցն. զոր Պօղոս (յոգիս անդրանկաց կատարելոցն ասէ:) Եւ կան եւ մնան լի անմահութեան յուսով, մինչ ի ժամանակս դատաստանին, եւ հատուցմանն ըստ իւրաքանչիւր գործոց. որպէս ասէ Դաւիթ. (քեզ սպասեն արդարքն, մինչեւ հատուցես:) Իսկ զհոգիս միջակ արդարոցն՝ որք ոչ անցուցանէ ի վեր յերկինս, այլ առ ուրաներորդ կամարան ի կայանս համացեղից հոգւոցն դասաւորէ զնոսա. եւ լոքա ակն ունին ողորմութեանն Աստուծոյ յաւուրն դատաստանի: Այսոքիկ երկոքին կայանք՝ արդարոցն են. մինն ամենեւիմբ կատարելոցն ի յերկինս. եւ միւսն միջակացն ի ներքոյ երկնից: Իսկ թէ մեղօք շաղախեալ իցէ հոգին, տրտմի սուրբ հրեշտակն եւ գարշի ի պղծութենէ նորա: Եւ մեղսասեր դեւքն՝ խնդան եւ ուրախ լինին ընդ անմաքրութիւն հոգւոյն: Սակայն սուրբ հրեշտակն թէպէտ ակամայ կամօք, այլ վասն հրամանին Տեառն աւանդէ զհոգի նորա. եւ սոսկալի դեմս ցուցանէ նմա. որպէս դահիճ առաքեալ ի թագաւորէ ի տանջանս ի տանջանս չարգործցաց. վասն այն հրեշտակ չար կոչի. ըստ այնմ, (առաքեաց ի նոսա տանջանս ի ձեռն հրեշտակի չարի:) Այլ ոչ թէ բնութեամբ չար է հրեշտակն, եւ ոչ թէ դեւն աւանդէ զհոգին մարդոյ, զի չունի իշխանութիւն. այլ բարի հրեշտակն վասն չարչար տանջանացն՝ չար կոչի: Եւ յորժամ արձակէ զչար հոգին ի չար մարմնոյն, եւ առեալ ելանէ գեր ի վերոյ մեր ճանապարհորդեալ ընդ օդդ, ընդ առաջ գան չար հոգիքն գունդ առ գունդ. ուրախ լինին եւ ծափս հարուն ընդ կորստական հոգին. եւ կամին յափշտակել ի ձեռաց սուրբ հրեշտակին: Եւ զամենայն չար գործս նորա յառաջ բերեն եւ իրաւաբանեն եթէ, մեր է՝ եւ ըստ մեր կամացս հետեւեցաւ: Այն է՝ վասն որոյ աղօթէ անտարանիչն Յօհաննէս. (ի գալս իմում առ քեզ՝ ընկրկեսցի հուրն. շրջցի հնոցն. ամաչեսցեն հրեշտակք չարին:) Վասն զի տանջանարանս կազմեն. հուր բորբոքեն. սառնամանիս ցուցանեն. զի գիտասցէ մեղաւոր հոգին թէ՝ այն է պատահելոց նմա յաւուրն դատաստանի: Եւ ապա յետ սակաւ մի թոյլ տալոյ, ի նա սուրբ հրեշտակն եւ

յետս ընկրկին: Եւ ոչ արժանաւորէ զհոգին մեղաւոր հանել ի գեր ի վերոյսն եւ երկրպագեցուցանել աթոռոյ աստուածութեանն. այլ տարեալ դասէ զնա ընդ այլ չարագործ հոգիսն ի յօդս այս՝ յորում կան բազում կոծով եւ աշխարանօք. եւ սպասեն յաւիտենական տան ջանացն: Եւ թէպէտ յայժմ ոչ են առեալ չար հատուցումն ըստ գործոց իւրեանց. սակայն ակնկալութեամբ անսխալ տանջանացն՝ ի չար գործոց իւրեանց միշտ տրտմութեամբ չարչարին. որպէս եւ արդարքա յուսով փառաց պսակացն եւ ի գործս իւրեանց ուրախանան եւ հանգչին: Չայս եւ այլ սոյնպիսիս ընդ երկար բանիւք պատմեր նոցա աստուածածին կոյսն՝ կուսանացն սրբոց: Եւ յորժամ զայս լուան մաքուր կուսանքն եւ երջանիկ կանայքն ի կուսութեանցն մօրէ, յարտասուս հարեալ ածեին ողորմ ձայն եւ ասեին: Ո՛վ մայր լուսոյ եւ առագաստ սրբութեան. ահա զքեզ ունեաք փոխանակ Տեառն մերոյ եւ միածնի քոյ սփոփիչ ի տրտմութիւնս. եւ զօրացուցիչ ի տկարութիւնս: Եւ արդ՝ զի՞նչ լինիցիմք ի մէջ բազում վշտացս: Պատասխանեալ ամենասրբուհին եւ ասէ. մաքուր հարսունք Քրիստոսի լուարուք. թէպէտ ես ոչ կամեի մնալ աստիս ի վերանալ միածնին իմոյ. այլ նա հրամայեաց ինձ լինիլ յերկրի որչափ կամք նորա սահմանեաց. այսպէս եւ դուք կացէք ի յերկրի մինչ ի կոչումն ձեր. եւ արիութեամբ գործեցէք զերկիր բնութեան ձերոյ. եւ լերուք մշակ առանց ամօթոյ. զի զվարձս աշխատութեան ընկալչիք ի Տեառնէ: Չողջախոհութիւն պատուեցէք. զսրբութիւն սիրեցէք. պահօք պնտեցարք. աղօթից ստեպ կացէք. զլապտերս կուսութեան անշէշ պահեցէք. զի ընդ փեսային Քրիստոսի յառագաստն մտանիցէք: Եւ մինչդեռ զայս ընդ նոսա խօսեր, ահա եկն հոգեւոր որդին կուսին կուսանն Յօհաննէս. եւ տուեալ ողջոյն ծնողին իւրոյ եւ երկրպագեալ: Եւ զի լի էին տրտմութեամբ. հարցաներ զպատճառն: Իսկ ամենասրբուհին զուարթ երեսօք եւ բերկրեալ սրտիւ պատմեաց նմա զամենայն կարգաւ. զերեւումն հրեշտակին. եւ զկոչելն յարքայութիւնն վերին: Եւ իբրեւ լուա Յօհաննէս, յարտասուս ցնդեալ ողբայր հառաչմամբ զորք մնալն ի հոգեւոր մօրէն: Եւ եղէ յանկարծակի որոտումն եւ թնդիւն. եւ ժողովեցան համագումար դասք սրբազան առաքելոցն ամպօք վերաբերեալ ի տան Աստուածամօրն. ըստ այնմ, (ուր մարմին իցէ՝ անդր արծուիք ժողովեսցին:) Եւ անդ յայտնեաց նոցա Աստուած զննչումն ամենասրբուհւոյ Աստուածածնին: Եւ մինչդեռ նոքա յարտասուս հարեալ ասեին. Ո՛վ մայր Տեառն եւ Աստուածածին կոյս. յետ վերանալոյ միածին որդւոյ քոյ՝ դու մխիթարէիր զտրտմութիւն մեր. եւ քեւ զօրանայաք ի բազում չարչարանաց: Եւ արդ՝ ո՞վ մխիթարէ զվիշտս մեր. ով սփոփէ զնեղութիւն մեր. որ յամենայն ուստեք շրջապատեն զմեօք: Ետ պատասխանի սրբուհին եւ ասէ. ո՛վ վսեմական դասք քարոզչաց որդւոյն իմոյ. որ ընտրեցայք նախ քան զլինիլն աշխարհի: Մի ողբովք զուրախութիւնս իմ լնոյք: Մի մարդկօրէն ինչ զմտաւ ածէք. ունիք զմխիթարիչն որով զամենայն վշտացեալսն մխիթարէք. ունիք զզօրացուցիչն որով զբնաւ տկարութիւնս աշխարհի բառնայք: Արդ՝ մի վիատիք ի վիշտս. մի երկնչիք ի չարչարողաց զմարմին. մի սուկայք յանցաւոր մահուանէ: Եւ դուք որպէս ուսայք ի Տեառնէ, զամենեցունց զփրկութիւնն հոգացէք. եւ զիս աղօթիւք յուղարկեցէք առ որ անձկացելեմ. զի խաղաղութեամբ անցից ընդ խաւարային իշխանութիւնս. եւ ժամանեցից յերկնաւոր նաւահանգիս Տեառն. եւ ընդ ձեզ Տեր եղիցի զամենայն աւուրս

կենաց ձերոց ի պանտիստութեան տեղիս: Եւ իբրեւ լռեաց սրբուհին ի խօսելոյ, առեալ աւետարանիչն Յօհաննէս փայտ կիպարեայ. ուստի եւ խաչն կենսաբեր զոր ձեւակերպեալ էր յառաջագոյն փայտեղէն պատկեր. եւ բերին ամենայն աշակերտքն առ սրբուհին եւ ասէն: Մայր լուսոյ՝ եւ տաճար բարձրելոյ բանին. աղաչեմք զքեզ. որովհետեւ հանդերձեալէս վերափոխիլ առ միածին որդին քո՝ ընկալ զպատկերս զայս նկարեալ ի Յօհաննէ. եւ դիր ի հանդէպ աստուածազարդ պատկերիդ. եւ օրհնեա զսա պատճառ կենաց աշխարհի. որպէս որդին քո միածին զփայտ չարչարանաց իւրոց ետ նշան փրկութեան աշխարհի. զի տեսանելով զսա, միսիթարիցուք որպէս զքեզ իսկ տեսեալ: Այլեւ զի գտցուք առողջութիւն սովաւ ի պէսպէս վտանգից եւ յախտ բորոտութեան. որպէս այժմ եռայ յերկրի մանաւանդ Յերուսաղէմ: Եւ ասէ սուրբ կոյսն. ընդէ՞ր հարկէք զաղախին Տեառն առնել իրս յանուն իմ որ ոչ է արժան: Դուք ընտեալք աշակերտք Քրիստոսի. դուք աղաչեցէք զնա եւ լինիցի ձեզ: Եւ յորժամ ստեպ թախանձեցին աշակերտքն. առեալ զպատկերն ի սուրբ ձեռս իւր. եւ տարածեաց Աստուածաբարձ բազուկն իւր. աղօթեաց եւ օրհնեաց զնա: Եւ կամար լուսեղէն եկաց ի վերայ սրբուհոյն. եւ խաչանման լոյս կայթեաց ի սուրբ պատկերն. եւ եդ սրբուհին զպատկերն ի վերայ սուրբ երեսաց իւրոց. եւ թացեալ զնա յորդառատ արտասուօքն զոր հեղոյր առաջի Տեառն: Եւ առեալ Պետրոսի զպատկերն ի ձեռաց աստուածածնին. եւ ամենքեան երկրպագեցին ահիւ մեծաւ Աստուածածին կուսին եւ սրբոյ պատկերի նորա: Եւ յետ այնորիկ մտեալ սուրբ կոյսն ի սենեակն առանձին. եւ ի բաց դներ զհանդերձն հին. եւ զգէնոյր նոր եւ սպիտակ հանդերձ ի ցուցումն նորոգ կենացն, եւ պայծառ լուսոյն յոր փոխիլոց էր. եւ զհինն տուեալ աղքատաց կուսանացն որ մօտակայքն էին նմա. եւ ինքն ընկողմանեցաւ ի սուրբ անկողինն: Եւ սուրբ առաքեալքն նստան զմահճօք նորա արթնութեամբ զցայգն ամենայն. եւ խօսէին դրուատս գովեստի ի փոխումն աստուածամօրն. եւ ի խրատ եւ յօգուտ ժողովրդեան: Եւ ի հասարակիլ մէջ զիշերոյն՝ եղեւ շարժումն սաստիկ. եւ որոտումն եւ փայլատակումն. եւ ծագեաց ճառագայթ լուսոյ. եւ բուրեաց անուշահոտութիւն. յորմէ բազումք թմրեցան: Եւ ահա Տէրն տերանց եւ թագաւորն սերովբէից՝ բազում հրեշտակօք անմարմին զօրաց խոնարհեալ ի բարձանց յաւանդումն լուսապայծառ ոգւոյ ամենասուրբ ծնողին իւրոյ: Իսկ դասք ընտրելոցն՝ կային հիացեալ ահիւ մեծաւ. եւ խնդութեամբ փառաւորէին զՏէրն իւրեանց, որոյ արժանի եղեն տեսութեանն ի մարմնի: Իսկ ընդ առաւօտն՝ որպէս զխունկ անուշ ականդեաց սուրբ կոյսն զսրբասնեալ հոգին ի ձեռս միածին իւրոյ ասելով. (ի ձեռս քո յանձն առնեմ զհոգին իմ:) Չոր ընկալեալ Տէրն մեծաւ պատուով՝ ետ ի հրեշտակապետն Միքայել: Եւ տեսեալ առաքելոցն զհոգի ամենամաքուր կուսին իբրեւ զլոյս փայլեալ քան զարեգակն ի կերպարանս մարդոյ առանց արուի եւ իգի: Ասէ Պետրոս. Տէր ո՞վ իցէ ի մարդկանէ ոգի այդպէս լուսափայլ՝ որպէս ծնողիդ քոյ: Ասէ Տէրն. ով պետրէ՞ ամենայն հոգիք մարդոյ յառաջագոյն այդպէս սպիտակ եւ լուսափայլ եւ. այլ ի մեղացն շաղախեալ սեւանան եւ տգեղանան: Եւ զայս ասելով վերացաւ Տէրն անմարմնական բազմութեամբ: Իսկ առաքելոցն պատեալ զմարմինն աստուածընկալ սուրբ կտաւովք. եւ բարձեալ ի վերայ աստուածարեալ բազկաց իւրեանց. եւ ամենայն բազմութիւն հաւատացելոցն եւ սուրբ կուսանացն ջահիւք եւ լապտերօք, եւ

բուրմամբ անուշահոտ իսկոց տարան ի նախասացեալ տեղին ի Տեառնէ ի ձորն Գեթսամանի ունելով զբրաբիոնն ոստոյ արմաւենւոյն ընդ նմա: Եւ լոյս խաչանիշ եկաց ի վերայ Աստուածակիր մարմնոյն մինչեւ ի տեղի հանգստեանն, եւ մինչ ի վերափոխելն զնա ի գերեզմանէն: Եւ դասք անմարմնոցն պարակից եղեալ առաքելոցն՝ յաներեւոյթս երգէին զերգս հոգեւոր պաշտամանն: Իսկ տիրասպան հրեայքն՝ բարկութեամբ ամբոխ յարուցանելն ի վերայ սուրբ առաքելոցն. եւ աստուածասաստ բարկութեամբ հարան ամենեքեան կուրութեամբ. եւ յարկիր կործանելն: Եւ մի ոմն ի քահանայիցն որում անուն էր Սոփոնիա՝ բուռն հարեալ զդագադացն, կամեր յերկիր ընկենուլ զգանձն աստուծային. եւ եհաս արժանաւոր պատուհասն Աստուծոյ ի վերայ նորա. եւ հատան երկոքին ձեռքն յարմկացն. եւ կախեցան զդագաղէն. եւ յերկիր կործանեալ, լայր դառնապէս. եւ կոծեր զանձն. եւ աղաղակեր առ առաքեալսն եւ ասեր: Ողորմեցարուք աշակերտք Քրիստոիս. որ ըստ արժանւոյն իմոյ պատուհասեցայ յարդար դատաւրէն Աստուծոյ. նոյնպէս եւ ամենայն հրեայքն ասէին: Ասէ Պետրոս. ով անհաւատ հրեայք՝ ոչ զղջացայք յանգեղջ սիրտ ձեր. այժմ դարձարուք եւ ապաշխարեցէք. եւ գթասցի ի ձեզ բարերարն Աստուած: Աղաղակեաց ամենայն բազմութիւնն եւ ամբոխն. խոստովանիմք աստուածածին զսուրբ կոյսն. եւ զծնեալն ի նմանէ Աստուած ճշմարիտ երկնից եւ երկրի. միայն գթասցի ըրի մեզ՝ եւ թողցէ զյառաջին յանցանս մեր: Եւ առեալ զարմկացն Պետրոսի՝ եբեր մերձեցոյց ի յօդս ձեռինն հատելոյ. եւ միացեալ կցեցան իբրեւ զառաջինն. եւ առեալ յոստոյ արմաւենւոյն, մերձեցոյց յաչս կուրացելոցն. եւ ամենեքեան լուսաւորեցան եւ մկրտեցան յաւուր յայնմիկ բազմութիւն ժողովրդոց ի հրէից եւ հեթանոսաց. որք եւ լուսաւորեցան ի լոյսն ճշմարիտ: Իսկ առաքեալքն տարան զմարմինն Աստուծոյ կնկալ. եղին ի գերեզմանի. եւ պահէին զերիս աւուրս որպէս պատուիրեաց նոցա Տէր. եւ ձայն հրեշտակացն լսելի լինէր անլռելի զտիւ եւ զգիշեր զաւուրսն զայնոսիկ. եւ ի լրման երից աւուրն՝ լռեալ դադարեցան: Իսկ սուրբ առաքեալն Բարթոլոմէոս՝ ոչ ժամանեաց ընդ այլ աշակերտսն ի փոխումն Տիրամօրն: Քանզի այսպէս էր կամք Տեառն. որպէս եւ Թոմաս ոչ էր ընդ աշակերտսն յորժամ դրօքն փակելօք եմուտ. այլ յետոյ խոստովանեցաւ զնա Տէր եւ Աստուած: Նոյնպէս եւ Բարթոլոմէոս յետոյ եկեալ՝ զի ի պատճառս նորա յայտնի լիցի եւ աշխարհի վերափոխումն ամենասրբուպոյն: Եւ եկեալ յետոյ՝ տրտմէր յոյժ. եւ աղաչէր զաշակերտակիցսն ցուցանել նմա զգանձն աստուածային: Եւ բացեալ զգերեզմանն, գտին ունայն զպատանսն յաստուածակիր մարմնոյն. եւ հիացեալ մեծաւ զարմանալեօք, փառս մատուցանելն Աստուծոյ. եւ իմացան թէ յետ դադարելոյ օրինաբանութեան անմարմինն զօրացն, վերափոխեալ եղեւ ի նոցունց իսկ յանմարմինն զօրացն յիմանալի խորանսն անմահից: Եւ առաքեալն Թոմաս երգեաց զփառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի՝ մատո զաղաչանս մեր որդւոյ քո եւ Աստուծոյդ մերոյ: Չոր եւ մէք ազգ հայկազեան տահմի՝ այսօր տօնեմք՝ ոչ զննջման տօն, այլ զյարութեանն եւ զվերափոխմանն առ որդին իւր միաին: Չի այսօր փոխեցաւ աստուածածինն միշտ կենդանի. քանզի զանմահութեան բաժակն ճաշակաց. եւ է բարեխօս վասն մեր միշտ առ միածին որդին: Ապա յայնժամ առեալ սուզ առաքելոյն Բարթոլոմէոսի, զի

Եւ մարմնոյն որում բաղձայր՝ ոչ եղել տեսութեանն արժանի. վասն որոյ մխիթարիչքն աշխարհի՝ մխիթարեցին զսուգ եղբօրն. ետուն նմա զգանձն աստուածային զտիպ աստուածմօրն պատկերի: Եւ նորա առեալ լի եղել ուրախութեամբ որպէս թէ նոյն ինքն զսրբուհին տեսանիցէ. եւ տարեալ յաշխարհն պարսից եւ հայոց. նովաւ կատարեր բազում սքանչելիս. որպէս եւ գրեալ է ի պատմութեան իւրում: Իսկ առաքելոցն նստեալ յաւուրս ինչ յերուսաղէմ, եւ ողջոյն տուեալ միմեանց, զնացին իւրաքանչիւրոք ի վիճակս իրեանց: *Այլ աստանօր՝ երիս իրս հարցանելի է մեզ: Նախ եթէ՝ մարմինն Աստուածամօր սոսկ միայն եղել վերափոխեալ յանմարմնոցն, եթէ միաւորեցաւ գերամաքուր հոգին եւ յարեաւ ի մեռելոց: Արդ՝ թէ ոք ասիցէ միայն մարմինն վերափոխեալ առանց ոգւոյ: Ասեմք եթէ՝ անմարթ է զայս իմանալ վասն վեց պատճառի: Նախզի՝ անպատշաճ է որ յերկրէ ի յերկինս դիակիր լինին հրեշտակք. եւ տարցեն սոսկ մարմին առանց հոգւոյ: Երկրորդ՝ զի ոչ ինչ է պատիւ եւ ոչ յօգուտ ամենօրինեալ կուսին մարմինն անզգայ եւ անկենդան վերափոխեալ ի կեանս անմահ: Երրորդ՝ զի եւ ոչ երեք երբեք երեւեցաւ այսպէս յառաջինսն կամ ի վերջինս. զի թէպէտ Եղիա եւ Ենովք զհասարակաց յարութիւնն ոչ են ընկալեալ. սակայն զմահացու կենդանութիւնս զայս ոչ են ի բաց եղեալ. այլ կենդանին են՝ եւ ի զգայութեան եւ յիմացութեան. թէպէտ յետոյ զպարտս բնութեան վճարեցեն եւ նորագեսցին: Եւ թէ նոքա կենդանի են՝ զի ա՞րդ մեռեալ: Զորրորդ պատճառ՝ զի եւ աշխարհն այն՝ կենդանեաց է տեղի. եւ զմեռեալ մարմին ոչ ընդունի. որպէս ասէ մարգարէն. (հաւատամ տեսանել զբարութիւն Տեառն յերկրին կենդանեաց. եւ դու ես յոյս եւ բաժին իմ յերկրին կենդանեաց:) Զինգերորդ՝ զի թէ մարմինն անկենդան էր վերափոխեալ, վասն Է՞ր պատանքն ի գերեզմանի մնային. զի անվայելուչ է զդին մերկ առանց պատանաց բառնալ եւ տանիլ: Վեցերորդ՝ յայտնապէս մնալ պատանացն՝ զյարութիւն մարմնոյն գուշակեր. որպէս զՏեառն մերոյ եւ փրկչին. զի եւ առաքելոցն հաստատուն նշանակ յարութեանն քան զաւետիս կենացն՝ թողուլ պատանացն եղել ի գերեզմանին. որպէս ասէ արեւտարանն. (տեսեալ զպատանսն եւ զվարշամակն ուրոյն ծաւալեալ,) հաւատացին թէ՝ յարեաւ ի մեռելոց: Նոյնպէս եւ մեք ի հասարակ յարութեանն՝ ոչ թէ պատանօք յառնեմք, այլ չնաշխարհիկ մարմնով եւ լուսափայլ կերպարանօք: Ապա ուրեմն թողուլ պատանացն՝ պաստատուն նշանակ է յարութեան մօր կենդանւոյն յաւիտենից: Որ յարեաւ երեքօրեայ որպէս զմիաձինն իւր. եւ մնաց յաւիտեան անմահ: Իսկ թէ ոք ասիցէ՝ աստուածային է սահման նախ քան զհասարակացն յարութիւն ոչ յառանել ումեք այնու կերպարանաւ, եւ ոչ ժառանգել զփառացն պատիւ: Ասեմք եթէ՝ եւ նոյնն հրամանին է սահման ոչ կուսին ծնանիլ եւ զբնութեան անբողջ պահել զկնինք: Եւ որպէս միայնակ առ սա լուծան օրէնք բնութեան. զի սա միայն յղացաւ առանց սերման եւ ծնաւ անախտ կուսութեամբ. այսպէս եւ նախ քան զհասարակաց յարութիւնն՝ սա միայն յարեաւ՝ եւ զանապատում փառսն ժառանգեաց: Եւ դարձեալ՝ զի օրինադիրն ի ներքոյ սահմանի օրինաց ոչ գրաւի: Իսկ թէ ոք հակառակեցի՝ մեք ոչ ունիմք զայն սովորութիւն: *Երկրորդ հարցումն թէ՝ վասն Է՞ր ի սուրբ եկեղեցիս ոմանք մի օր տօնեն զտօն վերափոխման կուսին. եւ ոմանք Գ օր. եւ ոմանք ինն օր: Ասեմք եթէ՝ ամենեքեան են խորհրդաւորք: Այնք որք մի օր տօնեն ի տասն եւ

հինգ օգոստոս ամսոյ՝ զննչումն ամենասուրբ կուսին տօնախմբեն: Եւ այնք որք Գ օր՝ գյարութիւնն տօնեն. զի յետ երկոց աւուրցն որ ձայնք հրեշտակացն դադարեցան՝ իմացեալ եղել տառաքելոցն յարութիւն ամենօրհնեալ կուսին: Իսկ որք ինն օր տօնեն՝ այսու մտօք, զի որպէս որդին իւր միածին յետ համբառնալոյն յերկինս՝ յիրաքանչիւր օր ի մի մի դասս հրեշտակաց հանգուցեալ՝ տօնախմբէին ուրախութեամբ մինչ ի տասներորդ օրն. յորում ի վեր էացն քան զամենայն իշխանութիւնս եւ զպետութիւնս. եւ եմուտ ի ներքին կողմն վարագուրին նստեալ ընդաջմէ հօր իւրոյ. եւ ի տասներորդումն աւուր առաքեաց զմխիթարիչ հոգին սուրբ ի դասս առաքելոցն: Եւ զայս ուսաք ի սրբոյն Գրիգորի լուսաւորչէն մերմէ. եւ ունիմք աւանդութեամբ առմեզ հաստատեալ: Նոյնպէս եւ զմայր միածնին ի փոփոխումն յերկրէ ի յօթն աստեղեան լուսեղէն խորանս՝ ըստ իւրաքանչիւր դասուց՝ ընդառաջ ելեալ մեծաւ ուրախութեամբ տօն կատարէին. սկսեալ ի ներքուստ ի վեր ի հրեշտակաց դասուն, մինչ ի դասս աթոռոցն վերին. ըստ զանազան դասուցն՝ զանազան օրհնութեամբ բարեբանութիւն եւ օրհնութիւն մատուցանէին. եւ պատուէին որպէս զմայր եւ զծնող բանին Աստուծոյ: Իսկ ի տասներորդումն աւուր՝ վերանցեալ գերազանցեալ քան զամենայն ինն դասս հրեշտակաց, եւ մտեալ ի ներքին կողմն վարագուրին, նստաւ ընդաջմէ միածին որդւոյն: Եւ որպէս յամենայն դասակարգութիւնսն զարժանապէս յամենայն դասակարգութիւնսն զարժանապէս օրհնութիւնսն մատուցանէին. նոյնպէս եւ մեծ քան զամենայն եւ առաւել բարձրագոյն եւ արժանապէս՝ հայր հանդերձ հոգւովն ի վերուստ բարբառէր ասելով: (Բազում դստերք ստացան զմեծութիւն. բազումք արարին զգօրութիւն. բայց դու առաւել եղեր եւ անցուցեր զամենեքումբք. սուտ հաճութիւն՝ եւ ընդունայն գեղ կնոջ ոչ գոյ ի քեզ:) Արդ՝ եկ եւ հանգիր ի գերարփի եւ յանպատում լուսաճեմ խորանս. եւ վայելեա ի փառս միածնի որդւոյ քոյ. զոր պատրաստեալ է քեզ ի սկզբանէ աշխարհի: Այս վասն իննօրեայ տօնից: *Երրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր ազգս մեր կանոնեալ ունի յառաջնոցն՝ միշտ եւ հանազազ ի կիրակէ տօնել զփոխումն սրբուհւոյն: Ասեմք թէ՛ վասն հինգ պատճառի: Նախ զի ասեն թէ՛ ի կիրակէ էր օր յարութեանն. զի որպէս չորեք շաբաթի աւետիս առեալ՝ եւ ի հինգ շաբաթի ծնեալ զՏէրն: Յորում աւուր որ Իսահակ ծնաւ ի մօրէ յաւուր հինգ շաբաթոջ: Ի նոյն հինգ շաբաթի օրն եւ կոյսն էր թնեալ ի մօրէ իւրմէ յԱննայ Է. եւ ի նմին աւուր վախճանի. եւ ի կիրակէ յառնէ. զի կարգաւոր մահ գայն ասեն, որ ի ծննդեանն աւուրն լինի: Եւ մեք յայս միտս՝ ի կիրակէ տօնեմք գյարութիւնն. եւ ոչ զմահն որպէս ասացաք: Երկրորդ՝ զի այլք ասեն եթէ՛ յառաջ քան զերեսուն օր՝ ժամանակ ինդրեաց աղօթիւք. եւ ի կիրակէ դիպեցաւ երեսուն երրորդ օրն: Երրորդ պատճառ՝ զի կիրակէն տերունի թարգմանի: Եւ աւուրս տօն երեք պատիւ ունի: Մին՝ զի գալուստի է փրկչին յերկիր: Եւ երկու՝ զի ննչումն է աստուածածին կուսին. որ աւանդեաց զամենասուրբ հոգին ի ձեռս միածնին: Եւ երեք՝ որ յարութիւն է եւ վերափոխումն ծնողին առ ծնեալ որդին միածին: Եւ այսպէս տերունական է տօնս. վասն որոյ ի կիրակէ տօնեմք: Չորրորդ պատճառի զի ի կիրակէ տօնեմք գյարութիւնն Քրիստոսի. եւ ի կիրակէ տօնեմք գյարութիւնն աստուածամօրն կուսի: Նաեւ յառաջնումն աւուրսն՝ զմեծացուցէն ի կիրակէ երգէին: Այս է՝ զի զմայր ընդ որդւոյն պատուեմք ի կիրակէ. եւ ոչ ի հասարակ աւուրս որպէս գայլ սրբոցն: Չի մի է

դաւանումն խոստովանութեան. որ ոք խոստովանի զմայրն աստուածածին՝ խոստովանի եւ զծնեալն ի նմանէ Աստուած ճշմարիտ: Եւ որ ոք Աստուած խոստովանի զորդին միածին՝ խոստովանի եւ զմայրն ճշմարտապէս աստուածածին: Վասն որոյ ի միում աւուր տօնեմք գյարութիւնն որդւոյն միածնի. եւ գյարութիւն ամեն օրհնեալ մօր իւրոյ եւ կուսի: Հինգերորդ՝ զի եւ մեր յարութիւնն ի կիրակէ Է լինելոց որպէս Տեառն մերոյ: Եւ ապաստան յուսոյ մերոյ՝ սուրբ կոյսն Է. վասն որոյ ի կիրակէ տօնեմք՝ զի յայնմ կիրակէի գտցուք զողորմութիւն ի նմանէ որ նստեալ Է ընդ աջմէ միածնին իւրոյ: Որեւ այսօր յերես անկեալ հառաչանօք սրտի, եւ արտասուագոչ պաղատանօք, աղերսեմք առ հասարակ ի միասին: Ով Աստուածածին կոյս: Ով Աստուածակիր խորան: Ով Աստուածաբնակ տաճար: Ով Աստուածատունկ ծոց: Ով Աստուածահանգիստ գիրկ: Ով Աստուածադիաց ստիկնք: Ով Աստուածաշօշափ մատունք: Ով Աստուածաճոյճ ձեռք: Ով Աստուածաբարձ բազուկ: Ով Աստուածամերձ բերան: Ով Աստուածահամբոյր շրթունք: Ով Աստուածահայեաց աչք: Ով Աստուածալուր ունկն: Ով Աստուածախօս լեզու: Մայր Տեառն եւ ծնօղ փրկչին մերոյ եւ Աստուծոյ. վասն անբիծ եւ անարատ սրբութեանդ մարենի աղեսիդ, եւ սիրալիր գթոյթ, բարեխօսեա առմիածին ծնեալն ի քէն վասն գթոտ եւ սխալական անդամոցս որդւոյ քոյ սիրելւոյ: Չի քաղցր ակամբ հայեսցի ի գինս անբիծ եւ անարատ արեան իւրոյ. ի խոստովանօղսս զքեզ Աստուածածին սուրբ կոյս եւ մայր Քրիստոսի: Այժմ անփորձ անբասիր մնալ կենօք ուղղափառ հաւատով եւ անշարժ յուսով ի սեր սիրելի որդւոյ քոյ Տեառնդ մերոյ: Եւ ի ժամ մահուն՝ հրեշտակի բարւոյ յանձն առնել զմեզ. քաղցրութեամբ աւանդել զհոգիս մեր. եւ հասանիլ յօթեւանս լուսոյ ի կայանս արդարոց: Եւ անդ յահագին աւուր յարութեան մերոյ, եւ ի սոսկալի բեմին անաչառ դատաւորին, ներողութեամբ անյիշաչար լինիլ բազում եւ անթիւ յանցանաց մերոց: Չի արժանի լիցուք յանցանաց մերոց: Չի արժանի լիցուք քոյին անդառնալի բարեխօսութեամբդ՝ տեսանել զքեզ ի մէջ իմատուն կուսանացն բազմեալ ընդաջմէ փեսային Քրիստոսի. 'Ք' զուարճացեալ տեսլեամբ ' ուրիսացեալ սրտիւ, հանցուք զփառս ' զպատիւ Միածին Որդւոյ Թոյ ընդ Հօր ամենակալի ' ամենասուրբ Հոգւոյն. յաւիտեանս յաւիտենից ամեն:

Յայլմէ քարոզ Աստուածածնին. ի բանն Սողոմօնի: (Եղ' նա իբր' զնաւ շահաբեր. որ ի հեռաստանէ ժողովէ զմեծութիւնս:) Առակ. 31. 14: (Գլուխ. ԾԼԱ)

Չամենապայծառ ' զպատուական գեղեցկութիւն սուրբ ' մաքուր Աստուածածին կուսին՝ աղեղանն որ Է ծիածան երկնից բաղդատեն վարդապետք բազում պատճառաւ: Առաջին՝ որպէս ծիածանն ոչ երեւի ի ժամանակս պարզ եւ յերաշտ. այլ յորժամ լինի ամպ եւ մութն. այսպէս ի պարզ ժամանակս յորժամ ուրախանան մարդիկ մարմնական ուրախութեամբ, եւ երաշտանան ի բարի գործոց, ոչ երեւի սուրբ կոյսն ի մէջ նոցա. այլ յորժամ տրտմին եւ տխրին վասն մեղաց իւրեացն՝ եւ ցօղեն արասուս, յայնժամ երեւի ի մէջ նոցա: Երկրորդ պատճառ՝ յորժամս լինի ամպն փոս, եւ սակաւ սակաւ ցօղէ, եւ արեգակն ծագէ ի վերայ նորա, յայնժամ երեւի աղեղն: Այսպէս սուրբ կոյսն՝ եր փոս եւ խոնարհ. եւ հանապազ ցօղէր զողորմութիւնն իւր ի վերայ ամենեցուն. եւ ոչ ինչ մեղք

անկանի ի մէջ ինքեան եւ արեգականն արդարութեան Զրիստոսի. վասն այն ծագէ ի նա եւ գեղեցիկ երեւի. ալ որ է հպարտ եւ անողորմ, եւ ունի մեղս, արգիլէ զարեգակն եւ ոչ ծագէ ի նա: Երրորդ պատճառ՝ ի ծիածանն երեք գոյն կայ՝ վերին կոյսն կարմիր. մէջն դեղին. եւ ներքին կոյսն կանաչ: Եւ երկու ցեղ մեկնեն: Առաջին՝ զի երեք գոյնն ցուցանէ զերեք առաքինութիւնն սորին: Կարմիրն զսերն աստուածային. որ վառեալ էր որպէս հրով: Եւ դեղինն՝ զի պարկեշտ էր եւ առաքինի: Կանաչն ցուցանէ զկուսութիւնն սորին. եւ վասն այս առաքինութեանս՝ բնակեցաւ արեգակն Զրիստոսի ի նմա: Երկրորդ՝ մեկնեն այսպէս: Ամպ աստուածածինն. եւ ծիածանն Զրիստոսի որ երեւի ի նմա: Կարմիր գոյնն՝ ցուցանէ զաստուածութիւնն. դեղինն զբանական հոգին. եւ կանաչն զմարմինն: Եւ զի ասէ Արիստոտել թէ՛ ոչ ոք կարէ նկարել զծիածանն դեղով՝ որ նման լինի նմա. նոյնպէս ոչ ոք կարէ պատմել զամենայն առաքինութիւն սուրբ կուսին. եւ ոչ ոք կարէ կատարելապէս իմանալ զմիաւորութիւնն Զրիստոսի: Եւ որպէս կոյսն սուրբ է աղեղն երկնից՝ եւ ունի յինքն զերկնային առաքինութիւնն. նոյնպէս որ ունի յինքն զհպարտութիւնն, զագահութիւնն, զբղջախոհութիւնն, է աղեղն դժոխոց. եւ պիղծ դեւք երեւին ի նա: Զորրորդ պատճառ՝ զի աղեղն այն յորժամ երեւի, է նշան հաշտութեան Աստուծոյ. որպէս ասաց Աստուած Նոյի. (եղից զաղեղն իմ յամպս. եւ յիշեցից զուխտն իմ եւ ոչ ապականեցից զերկիր:.) Նոյնպէս կոյսն սուրբ՝ է նշան հաշտութեան Աստուծոյ զի մինչ դեռ չէր ծնեալ կոյսն սուրբ՝ մեծ խռովութիւն էր ի մէջ մարդկանց եւ Աստուծոյ. այլ յոր ժամ ծնաւ նա, եղեւ հաշտութիւն եւ սեր: Եւ զի է նշան հաշտութեան՝ ձեւ աղեղանն այն ցուցանէ. զի աղեղան կոյսն է դեպ ի վեր. եւ յարին կոյսն է դեպ ի վայր: Չի թէ երկու մարդ թշնամիք միմեանց՝ մինն ունի աղեղն ի ձեռն. յորժամ աղեղան կոյսն դեպ ի թշնամին լինի, եւ լարն դեպ ի յինքն, խռովութիւն նշանակէ. զի կամի նետ ձգել: Եւ թէ լարն դեպ ի դուրս է, եւ աղեղն ի յինքն, հաշտութիւն նշանակէ. զի չկամի նետ ձգել: Այսպէս աստուածութիւնն որ է պիւստ իբր՝ զաղեղն՝ ի վեր կոյս է.՝ մարմինն զոր էառ ի կուսէն՝ ի մեր կոյս. եւ այս է նշան հաշտութեան: Եւ այժմ է աղեղան լարն ի մեր ձեռս. եւ կարեմք նետ ձգել յԱստուած. այսինքն զաղօթս, զողորմութիւն, եւ զայլ առաքինութիւնս որք հեշտ թուին Աստուծոյ: Այլ են ոմանք որք ձգեն նեա եւ խոցեն զԱստուած. այսինքն, որք բազում մեղս գործեն ընդդէմ Աստուծոյ. վասն որոյ Աստուած յաւուրն դատաստանի՝ խոցէ զնոսա նետիւ բարկութեան իւրոյ: Զինգերորդ պատճառ՝ զի յորժամ երեւի աղեղն, ոչ ոք կարծէ թէ՛ հեղեղ գալոց է. ոչ հրեղէն, եւ ոչ ջրեղէն: Չի ասեն իմաստունք թէ՛ երկու գոյնն որ երեւի ի նա՝ կարմիրն եւ կանաչն՝ կարմիրն զհուրն նշանակէ. եւ կանաչն զջուրն. թէ մին գոյնն երեւեր, յաննժամ մինն յաղթեր. զի հակառակ են միմեանց. եւ երկիւղ լիներ ջրոյ կամ հրոյ հեղեղ գալոյ. այլ յորժամ երկու գոյնն երեւի, գիտեմք որ ոչ լինի ցասումն Աստուծոյ: Նոյնպէս որ ի միտս եւ ի հոգիս իւր տպաւորեալ է զկոյսն սուրբ, որ է նման աղեղան, ոչ գայ ի վերայ նորա ցասումն Աստուծոյ. ոչ հոգեկան, եւ ոչ մարմնական: Վասն այն տօնեմք զտօն ծննդեան կամ փոխման՝ կամ զայլ Աստուածածին կուսին՝ որ է միջնորդ հաշտութեան եւ բարեխօս առ Աստուած: Եւ բազում շահ բարութիւն եւ օգտութիւն առ մեզ հասանի. որպէս ասէ իմաստունն: (Եղեւ նա իբրեւ զնաւ շահաբեր՝ որ ի հեռաստանէ ժողովէ զմեծութիւն:.) Եւ վասն տասն պատճառի Աստուածածին կոյսն ի նաւ համեմատի: Առաջին՝ զի

յորժամ թագաւորք որ թշնամի է երկրի, ցնաւս վաճառականաց արգիլէ որք շահաբերք են. եւ զանաւս պատերազմողաց առաքէ անդր. եւ այս նշանակ է խռովութեան. այլ նաւ վաճառականացն՝ է նշան հաշտութեան: Նոյնպէս երկնաւոր թագաւորն Աստուած յորժամ ի խռովութեան էր ընդ աշխարհիս, նաւ բարկութեան առաքէր աշխարհի. որպէս զհրեշտակն սատակիչ անդրանկացն յԵգիպտոս: Եւ յաւուրս Դաւիթ ել հրեշտակն եւ ի փոքր ժամանակս՝ կոտորեաց Յ հազար: Եւ յաւուրս Եզեկիայ՝ եկն բարկութեան եւ պատերազմի նաւ՝ եւ կոտորեաց յասորոցն հարիւր ութսուն եւ հինգ հազար մարդ. եւ այլ բազում այսպիսի. զի շահաբեր նաւ եւ վաճառաց՝ յԱստուծոյ ոչ գայր յաշխարհս: Վասն այն յորժամ աղաղակեցին նահապետքն եւ մարգարէքն առ Աստուած մեծածայն, խնդրելով զհաշտութիւն եւ զողորմութիւն, յայնժամ զԱստուածածին կոյսն կազմեաց իբրեւ նաւ գեղեցիկ. եւ ելից զանազան բարութեամբ. եւ առատ. վաճառականաւ հոգւովն սրբով առաքեաց յաշխարհս. որ եղեւ նշան հաշտութեան. եւ լցոյց զմեզ ամենայն բարութեամբ: Երկրորդ պատճառ՝ զի նաւն ի ներքուստ կողմանէ փակեալ է ամենեւին. զի ոչ մտանէ անդ ջուր. այլ ի վերուստ կուսէ բաց է՝ որք լնուն զնաւն կումաշով: Այսպէս կոյսն սուրբ՝ ի կողմանէ աշխարհիս որ է ծով մեղաց, ամենեւին փակեալ էր. որ ոչ եմուտ ի նա ցանկութիւն, կամ հեշտութիւն գեշ, կամ այլ ինչ մեղք: Չի էր նման տապանին Նոյի՝ յոր ոչ եմուտ անդ ջուր. զի էր ծեփեալ ներքոյ եւ արտաքոյ կպրածիթով: Այսպէս սուրբ կոյսն՝ աստուածային սիրովն ամրացեալ էր հոգւով եւ մարմնով. յոր ոչ եմուտ չար խորհուրդ ի նմա: Բայց ի վերուստ կողմանէ բաց էր. զի ամենայն կարօտութիւն եւ դիտաւորութիւն նորա էր առ Աստուած. եւ լցեալ էր ամենայն շնորհօքն Աստուծոյ: Այս է նաւ երկնային եւ աստուածային. այլ են մեղաւորք նաւ սատանայի. եւ տանին զբերոհնս մեղաց ի դժոխս. որք ի ներքուստ կուսէ բաց են ամենեւիմբ. այսինքն, կամք եւ սիրտք իւրեանց ի մեղս են եւ յաշխարհս. այլ ընդդէմ աստուածային բարեացն՝ փակեալ են, որ ոչ ինչ մտանէ առ նոսա յաստուածային շնորհացն. եւ ոչ խոկան աղօթել կամ խոստովանիլ: Այլ են բազում նաւք որք խաղաղութեամբ երթան ի ծովն. այլ մարդ թշնամի ի ներքոյ անցեալ ծակէ շաղափով. եւ լնանի անդ ջուր եւ ընկղմի նաւն. վասն այն ճարտար նաւավարքն՝ շուտով կալնուն զնաւ եւ ապրին: Այսպէս բազումք են սուրբք ի մեջ ծովու աշխարհիս՝ որ փակեալ են զինքեանս ընդդէմ ամենայն մեղաց. այլ թշնամին սատանայ երթեալ գաղտ ծակէ զնաւ մեղօք. զոր զգաստ մարդիկ ի մանան եւ կալնուն խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, եւ ոչ ընկղմին: Որպէս Դաւիթ յորժամ անկաւ յերկու մեծամեծ մեղս ի շնութիւն եւ ի սպանութիւն, եւ յորժամ իմացաւ, աղաղակեաց. (կեցո զիս Աստուած. զի հասին ջուրք յանձն իմ. ընկլայ ես ի խորս անդնդոց.) վասն այն ապրեցաւ: Այլ են բազում նաւք թեպէտ ոչ ծակի, այլ զջուրն քարշէ ծածկապէս. եւ թէ գայն ի դուրս չձգեն, կամ հոտի կամ ծանրանայ եւ ընկղմի: Այսպէս բազումք են սուրբք ամրացեալք. եւ ոչ մտանեն ի նոսա մահու չափ մեղք. այլ ընդ զգայութիւնսն ծածկապէս մտանեն մեղք ներելիք. եւ գայն պարտ է սրբել. զի կամ հատի. կամ շատանայ եւ լինի մահու չափ. որպէս մին մին աւագ ժողովեալ ծանրանայ յորժ: Այլ կոյսն սուրբ՝ այնպէս ամրացեալեր՝ զի ոչ մահու չափ, եւ ոչ ներելի մեղք ամենեւին ի մուտ ի նա: Երրորդ պատճառ՝ զի բարձած նաւն՝ խաղաղութեամբ երթայ ի վերայ դառն ջրոյն՝ քան ի վերայ

քաղցր ջրոյ. զի ի քաղցր ջուրն երկիւղ կայ ընկղմելոյ. քանզի ասէն թէ՛ որ զողջ ձուն ձգեն ի քաղցր ջուրն՝ յատակն իջանէ. եւ թէ ի դառն ջուրն, ի վերայ երեսին լեղայ: Եւ այս է պատճառն՝ զի քաղցր ջուրն թոյլ է եւ չկարէ պնտել զծանր իրսն. եւ դառն ջուրն թանձր է եւ պինտ. եւ որչափ խիստ դառն է ջուրն՝ անելի ուժով է: Քաղցր ջուր է հաշտութիւն աշխարհիս. եւ որք գնան ի վերայ սորա՝ ընկղմին ի դժոխս: Վասն այն իմաստուն վաճառական Աստուծոյ՝ եբարձ գկոյսն սուրբ եւ ելից ամենայն առաքիւնութեամբ. եւ ոչ եղ ի մեծութիւն եւ ի փառս աշխարհի. զի մի ընկղմեսցի. այլ ի վերայ դառն ծովու՝ այսինքն, յապաշխարհութիւն, ի ժուժկալութիւն, եւ յաղաքատութիւն. վասն որոյ խաղաղութեամբ եհաս յերկնայինն Նաւահանգիստն: Ապա յայտ է յայսմանէ թէ՛ որք են յաղքատութիւնս եւ ի հալածանս, ոչ է պարտ յուսահատիլ եւ ասել թէ, Աստուած թողեալ է զմեզ ի ձեռաց. զի գիտեմք որ Քրիստոս ստոյգ սիրէր զմայրն իւր. եւ ոչ ետ նմա մեծութիւն եւ փառս. այլ աղքատութիւն եւ հալածումն. վասն այն պարտ է ուրախանալ ընդ աղքատութիւն մեր: Չորրորդ պատճառ՝ զի ասէն վարդապետք թէ՛ կայ ի վիշապ մի որ ի յօդս թռչի եւ ի ցամաքն սողայ. եւ ի ծովս լեղայ. եւ այնպէս ջերմ է՝ բնութեամբ՝ որ հուր շնչէ. եւ խիստ սիրէ զքամին եւ յինքն ծծէ. եւ ուր քամին լինի՝ անդ հասանի. եւ յորժամ տեսանէ ի հեռու զարմիսն Նաւին որ լցեալ է փքով՝ անդր թռչի եւ անկանի ի վերայ Նաւին եւ ընկղմէ զնա. եւ յորժամ իմանան Նաւավարքն, ի վայր առ Նուն զարմիոնն. եւ այնպէս փրկին: Այն վիշապն՝ ցուցանէ զսատանայ. զի երեք կենցաղ է. յերեք մեղս հանգչին Նա. ի յօդս որ է հպարտութիւն. ի ցամաքն որ է ազահութիւն. ի ջուրն որ է գեշ ցանկութիւն: Եւ է ջերմային. զի ի բերանոյ Նորա ելանէ հուր դժոխոցն. եւ սիրէ զքամի. այսինքն, զմեծութիւնն եւ զփառս աշխարհի. եւ թռչի ի Նոսա եւ ընկղմէ զնոսա: Վասն այն երկնաւոր Նաւավարն ետես զվասն վիշապին՝ ոչ եթող ի կոյսն սուրբ զմեծութիւն եւ զփառս մարմնական. այլ խոնարհութիւն եւ աղքատութիւն. որպէս ասէ. (հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ.) վասն ոչ փութացաւ ի Նա չար վիշապն: Նոյնպէս որք խոնարհութեամբ եւ աղքատութեամբ կան՝ զերծանին ի չար վիշապէն. եւ ոչ ընկղմին ի դժոխս: Զինգերորդ պատճառ՝ զի ասէ Արիստոտել թէ՛ քաղաք որ յեզր ծովու է, բազում օգնութիւն ունի քան զայն՝ որ հեռի է. զի Նաւով երթայ յայլ քաղաքս եւ լնու զպետսն իւր. որպէս եւ ելից Սողոմօն զԵրուսաղէմ բազում մեծութեամբ. որպէս ասէ ի թագաւորութիւնսն թէ՛ եղ արքայ Սողոմօն զոսկի եւ զարծաթ յԵրուսաղէմ իբրեւ զքարինս. զի Նաւ թարսսացի էր նմա ի ծովու. եւ բերէր նմա ոսկի եւ արծաթ. եւ ժանիս փղոց. եւ կապիկս եւ սիրամարգս: Սողոմօն Նշանակէ զԱստուած. եւ Երուսաղէմ զաշխարհս որ կարօտ էր յամենայն մեծութեան: Եւ սուրբ կոյսն Մարիամ որպէս զնաւ եկն բազում մեծութեամբ. եւ փարթամացոյց զեկեղեցի. զի թարսիսն ուրախութիւն թարգմանի. եւ է ի հարաւոյ կոյս. Նշանակէ զարքայութիւնն երկնից որ է ուրախութիւն հրեշտակաց եւ ի լոյս ընթացեալ:

Եւ եբեր Նաւս այս հինգ ցեղիրս: Առաջինն ոսկի որ է Յիսուս Քրիստոս անապական մարմնով. եւ աշխարհս էր քարուտ կռապաշտութեամբ լցեալ անհաւատութեամբ եւ քարեղէն եւ կաւեղէն աստուծօք. եւ ի գալուստ սուրս կուսին՝ որ եբեր զՔրիստոսի յաշխարհս. զցաք ոսկւով. այսինքն, ճշմարիտ հաւատովն. որ պատուական է քան զոսկի: Երկրորդ՝ եբեր արծաթ բազում՝ որ քաղցր ձայնտայ. ցուցանէ զառաքեալս եւ զվարդապետս եկեղեցւոյ. որք

քաղցր վարդապետութեամբն իւրեանց՝ նորոգեցին զաշխարհս: Երրորդ՝ եբեր նաւս այս ժանիս փղոյ. որ նշանակէ զդասս կուսաաց. զի նախ քան զսուրբ կոյսն՝ չէին սովոր մարդիկ ի կուսութիւն. այլ յորժամ եկն նա՝ բազմացան կուսանք յարանց եւ ի կանանց ի մէջ Զրիստոնէից: Եւ զի՝ ժանիք փղին դուրս է՝ եւ մէջն սպիտակ է. ցուցանէ զմաքուր կուսութիւնն հոգւով եւ մարմնով: Այլեւ ատամն փղին ցուրտ է բնութեամբ. զի պարտ է կուսին ցուրտ լինիլ. ի պոռնկական ջերմութենէն: Եւ դարձեալ՝ զի ոսկրն այն կարծր է եւ պինտ է կուսին հաստատ մնալ յուխտ կուսութեան իւրոյ. եւ ոչ երբէք թուլանալ: Չորրորդ՝ եբեր նաւս այս սիրամարգ. այսինքն է. զդասս սրբոցն՝ որք արժանի եղեն բազում շնորհաց եւ զանազան գիտութեան հոգւոյն սրբոյ. եւ զարդարեցան իբրեւ զսիրամարգս. քանզի ասեն իմաստունք թէ՝ սիրամարգն տարածէ առաջի իւր զգեղեցիկ փետուրսն, եւ յոյժ ուրախանայ եւ փառասիրի. բայց յետոյ հայր ի վերայ ոտիցն զի սեւ է եւ զարշ. ապա զիջանի ի փառասիրութենէն եւ տրտմի. եւ յինքն ծածկէ զփետուրսն: Այսպէս եւ հրեշտակք առաջին՝ զարդարեալ էին յամենայն կողմանց գեղեցիկ փառք. եւ չկայր պակասութիւն նոսա: Վասն այն հայեցեալ ի բազում փառս իւրեանց՝ հպարտացեալ կորեան: Այլ դասք սրբոցն առաջնորդք եկեղեցւոյ՝ որք զարդարեցան մեծապէս փառք, եւ զի մի հպարտացին, տուաւ նոցա մարմին եւ տկարութիւն մամնոյ. որպէս Պօղոս յետ պատմելոյ զփառս իւր՝ ի կորնթացւոցն ասէ. (տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատան կռփել զիս. զի մի հպարտացայց:) Յինգերորդ՝ եբեր նաւս այս կապիկս. զի որպէս սիրամարգն ցուցանէ զգլխաւորս եւ զառաջնորդս եկեղեցւոյ որք ճոխացեալ են փառք. այսպէս կապիկքն ցուցանեն զխոնարհս եւ զյետիսս եւ զհետեւեօղս նոցին առաջնորդացն. զի կապին սովորութիւն է՝ որ զինչ տեսանէ զոր առնէ մարդ եւ գործէ՝ զնոյն եւ ինքն առնէ: Նոյնպէս ժողովուրդքն զոր ինչ տեսանեն յառաջնորդն՝ զնոյն եւ ինքեանք գործեն զբարիս: Այլ են ոմանք կապիք սատանայի. եւ զոր ինչ չար տեսանեն՝ զայն առնեն: Եւ այսպէս նաւս այս՝ բազում բարկութեամբ եկն առ մեզ. եւ լցոյց զմեզ երկնային պարգեւօք. վասն այն ասէ Սողոմօն թէ՝ (եղեւ նա իբրեւ զնաւ շահաբեր. որ ի հեռաստանէ ժողովէ զմեծութիւն:) *Վեցերորդ պատճառ՝ զի որք նաւ կազմեն՝ թէ փայտ նաւին թաց եւ ծանր լինի եւ գերան ոչ ունի. այլ թեւօք վարեն, դժւար երթան. եւ ոչ հասանին ի նաւահանգիստն. այլ ոք կազմեն նաւ ի չոր եւ ի թեթեւ փայտէ, եւ լինի ի մէջն գերան եւ արմիոն խաղաղութեամբ ի նաւահանգիստն հասանին վարեալ հողմով: Նոյնպէս որք էին ի հին օրէնս՝ եւ նոքա երթային նաւով. այլ զի թաց էին սկզբնական մեղօքն Ադամայ՝ եւ ծանրացեալ օրինօք անդամոցն որք զինին ընդդէմ մտացն. եւ չունէին զգերանն որ է խաչն Զրիստոսի. եւ ոչ արմիոն որ լցեալ լինէր հողմով հոգւոյն սրբոյն. այլ թեւօք վարէին. այսինքն, իւրեանց ջանիւքն. նոքա ոչ հասին ի նաւահանգիստն երկնից. այլ ի դժոխս իջին, մինչեւ Զրիստոս փրկեաց զնոսա: Այլ նաւ սուրբ կուսին՝ Եր ի չոր փայտէ եւ թեթեւ. զի սրբեցաւ իսկզբնական մեղացն յորովայնէ. եւ խլեցան ի նմանէ օրէնք անդամոցն. եւ ունէր տնկեալ ի սրտի զխաչն Զրիստոսի. եւ բեւեռեալ Զրիստոսի ի նմա լցեալ հողմով հոգւոյն սրբոյ. վասն որոյ փութով եհաս ի նաւահանգիստն երկնից: Եօթներորդ ասէ Սողոմօն: (Ոյք նաւով անցանեն Ընդ ծովս՝ նոքա յայտնեն զդժուարութիւնն եւ զորոգայթս ի նմա.) զի զանազան որոգայթ կայ ի ծովս: Առաջին՝ է ի հողմոյն եւ ի յալեացն. եւ

յայսմանէ բազում նաւք ընկղմին: Երկրորդ որոգայթ Է. զի բազում աւագ լինի ժողոված ի տեղի մի. անդ խրի նաւն եւ այլ ոչ շարժի: Երրորդ որոգայթ. զի անկանի ի պտոյտ ինչ եւ ի վայր ընկղմի: Չորրորդ որոգայթ զի վեմ լինի թաքուցեալ ի ջուրն. ի նա դիպի նաւն եւ բեկի: Հինգերորդ որոգայթ. յաւազակաց լինի. որք ալափեն գնան եւ գերեն: Վեցերորդ որոգայթ. մօտ ի նաւահանգիստն շտապ գնալովն՝ դիպին յեզր ծովուն. եւ վնասի նաւն: Այսպէս ի կեանս յայս որ նման է ծովու՝ Չ ցեղ որոգայթ հանդիպի. եւ բազում հոգիք կորնչին: Առաջին որոգայթ քրիստոնէից է ալեկոծութիւն հողմոց. այսինքն, հալածումն անօրինաց եւ նախատիւք. որք հալածեն եւ չարչարեն զքրիստոնէայս. եւ բազումք ուրանան զՔրիստոս. եւ ընկղմին ի դժոխս: Երկրորդ՝ ազահութիւն աշխարհիս. որ իբրեւ գաւազ անպտուղ է. եւ ծանարանայ սիրտ արծաթասիրին. եւ ազահի ի սեր աշխարհիս. եւ այլ ոչ կարէ ելանել: Երրորդ՝ որկրամոլութիւնն եգէջ ցանկութիւնն. զի որ անկանի ի մէջ սոցա՝ իբրեւ ի պտոյտ շրջի եւ յանկարծակի ընկղմի ի դժոխս: Չորրորդ որոգայթ. խռովութիւն՝ նախանձ ոխակալութիւն՝ խստասրտութիւն՝ որք ոչ հաշտին ընդ ընկերս իւրեանց. եւ թաքուցանեն զխռովութիւնն ի սիրտս իւրեանց. եւ թաքուցանեն զխռովութիւն՝ ի սիրտս իւրեանց իբրեւ զքար ի մէջ շրոյն. եւ բեկեալ զհոգիս իջանեն ի դժոխս: Հինգերորդ յաւազակաց՝ որք են դէք. որ հասեալ ի վերայ մարդկան, կողոպտեն զամենայն բարի գործս. եւ գերեն զմարդիկ ի դժոխս: Վեցերորդ որոգայթ՝ պատահի ի ժամ մահու. կամ յանկարծամահ լինի. կամ յուսահատի. կամ առանց խոստովանութեան մեռանի. եւ այնպէս ի մէջ զանազան որոգայթից ենք ի կեանս յայս. վասն այն ողորմածն Աստուած՝ կազմեաց գեղեցիկ նաւ մի եւ ամուր զԱստուածածին կոյսն. եւ եդ զմեզ անդ. զի անվնաս նաւեսցուք նովաւ ի նաւահանգիստն երկնից: Չի սուրբ երբէք հոգայ կամ ընկղմի. զի եւ ոչ երբէք երկմտեցաւ ի Քրիստոսէ ի հալածմանէ անհաւատիցն: Եւ ոչ սիրեաց զազահութիւն. եւ ոչ յաղթեցաւ յորկրամոլութենէ կամ ի ցանկութեանց: Եւ ոչ ունէր ընդ ումէք ոխ կամ խռովութիւն: Եւ ոչ կարաց ինչ կողոպտել սատանայ ի նմանէ: Եւ ոչ երբէք յուսահատեցաւ ի ժամ մահանն. այլ մեծաւ յուսով եմուտ ի նաւահանգիստն երկնից: Եւ արար մեծ շահ եւ օգուտ երկնաւոր թագաւորին. զի զամենայն զգերբեալսն ի սատանայէ զմարդիկ բարձեալ ի յինքն նաւս այս՝ տարաւ յերկիսս. վասն որոյ ասէ: (Եղեւ նա իբրեւ զնաւ շահաբեր. որ ի հեռաստանէ ժողովէ զմեծութիւն:)* Ութներորդ պատճառ՝ զի յորժամ կամին կանգնեցուցանել զնաւն, ձգեն խարիսխ երկաթի յամենայն կողմանց եւ հաստատեն. որպէս ի գործս առաքելոցն է գրեալ. (նաւն որ տանէր զՊօղոս ի Զոմ՝ արկին խարիսխս ի չորս կողմանց. եւ կանգնեցուցին զնաւ:*) Եւ չորս խարիսխն այն՝ ցուցանէ զչորս հաստատութիւնս՝ որք հաստատեն զհոգիս: Առաջին շնորհքն Աստուծոյ. որպէս ասէ Պօղոս յեբրայեցոց. (լաւ է շնորհօք հաստատել զսիրտս եւ ոչ կերակրօք. որք ոչ օգտեցան որք այնպէսն գնացին:*) Երկրորդ համբերութիւնն. որպէս ասէ յաւետարանին. (որ համբերէ իսպառ, նա կեցցէ:*) Երրորդ՝ խարիսխ է աղօթքն. որպէս ասէ Քրիստոս. (յամենայն ժամ յաղօթս կացէք չմտանել ի փորձութիւն:*) Չորրորդ՝ յոյս հանդերձեալ կենացն. որպէս ասէ Պօղոս յեբրայեցոց. (հաստատուն մխիթարութիւն ունիմք զհանդերձեալ յոյսն. եւ իբրեւ զխարիսխ հաստատուն անձանց մերոց. որեւ մտանիցէ ի ներքին կողմն վարագուրին՝ ուր Կարապետն մեր Յիսուս եմուտ

վասն մեր:) Այլ չորս խարիսխքս այս՝ կային ի սուրբ կոյսն. զի լի էր շնորհօքն Աստուծոյ եւ համբերօղ. եւ հանապազ աղօթօղ. եւ յոյս նորահաստատ կայր յերկինս ուր էր որդին իւր: Եւ զի սովորութիւն է նաւավարաց՝ յորժամ կամին հասանիլ ի նաւահանգիստն եւ ոչ կարեն, յայնժամ ձգեն զխարիսխն ի ցամաք. եւ պնտեն յոյժ. եւ ապա կալով ի նաւին քարշեն զչուան խարիսխին յինքեանս. եւ այնպէս ինքեանք եւ նաւն հասանին յեզրն: Այսպէս եւ նաւահանգիստ մեր՝ է արքայութիւնն երկնից՝ եւ Յիսուս Քրիստոս կայ անդ. եւ կոչէ զմեզ առ ինքն. եւ պարտ է մեզ զխարիսխս մեր ձգեալ եւ պնտել. այսինքն, գոյսս մեր. եւ չուանօք քարշել զմեզ անդ. այսինքն, բարի գործօք: Եւ դարձեալ սովորութիւն է նաւավարաց՝ յորժամ ծանրութիւն նաւին զցորեան զբեռն եւ զամենայն ինչ ի ծովն ընկենուն եւ զերծանին: Այսպէս պարտտ է մեզ թողուլ զծանրութիւն հոգոց աշխարհի. եւ զմարմնաւոր ինչս մեր բաշխել աղքատաց. զի լաւ է որ ինքն միայն փրկի, քան թէ մարմնավան ազահութեամբն ի դժոխս իջանէ: Այսպէս սուրբ կոյսն թեթեւացեալ էր յամենայն ընչից եւ ի հայրենեաց. եւ թեւօք հոգւոյն եհաս յերկինս: *Իններորդ՝ զի որք ընտրեն զնաւս թէ որ է ամուր եւ հաստատ՝ յառաջն հային ի գերան արմիոնին որ ի մէջ նաւին թէ հաստատ է եւ ամուր. եւ չէ ճեղք կամ կոտորած. յայնժամ առանց երկիւղի մտանեն ի նաւն յայն. զի ամենայն պատրաստութիւն եւ լարքն նաւին՝ են ի գերանն յայն: Այլ ի նաւ սուրբ կուսին՝ գերանս այս յոյժ գեղեցիկ եւ բարձր էր. այսինքն, խոնարհութիւնն հաստատեալ ի մէջ հոգւոյ նորա: Վաս որոյ որդին Աստուծոյ որ կամեցաւ նաւել ի յաշխարհս՝ նախ հայեցաւ ի գերան նաւիս այս եւ հաճեցաւ. որպէս ասէ կոյսն յերգն իւր. (զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ:) Վասն զի ամենայն առաքիւնութիւնք յօդեալ են ի խոնարհութիւնն. զի խոնարհութիւնն մայր է ամենայն առաքիւնութեանց: Չի ասեն վարդապետք թէ՛ ամենայն առաքիւնութիւն առանց խոնարհութեան՝ այնպէս ցրուի, որպէս փոշի առաջի հողմոյ. զի հպարտութիւնն նման է հողմոյ՝ որ ցրուէ զառաքիւնութիւնս: Եւ որդին Աստուծոյ հաճեցաւ յոյժ ընդ խոնարհութիւն նորա, քան ընդ այլ առաքիւնութիւնս. վասն այն խոնարհեցաւ որդին Աստուծոյ եւ էջ յերկնից. եւ հանգեաւ յարգանդի սուրբ կուսին: Նաեւ մեք կամիմք նաւել յերկինս. մտցուք ի նաւս յայս. զի յոյժ խաղաղութիւն է աստ: Վասն զի ասեն իմաստունք թէ՛ է կենդանի ինչ ի ծովն՝ որ ի միջացն ի վեր ունի զկերպարանս գեղեցիկ կնոջ. եւ ի վայր կոյս՝ իբրեւ զճանկ արծուոյ. եւ ունի քաղցր ձայն. զի յորժամ լսեն նաւավարքն. ի քաղցրութենէն ննջեն. եւ յորժամ ի մանայ գազանն թէ ի քուն են, գայ եւ յափշտակէ զմարդն ի նաւէն եւ տանի պատառէ եւ ուտէ: Իսկ իմաստունքն խնուն զականջս իւրեանց. եւ կապեն զինքեանս ի գերան արմիոնին. եւ այնպէս փրկին: Գազանս այս՝ ցուցանէ զպոռնիկ կանայս. որք գեցեղիկ երեւին. եւ քաղցր խօսիւ խաբեն զմարդիկ եւ ննջեն ի հեշտութիւն մեղացն. այլ պտուղ նորա ի մահ եւ ի կորուստ եւ պատառումն է հոգւոց: Իսկ իմաստունքն՝ խնուն ականջս իւրեանց երկիւղիւն Աստուծոյ. եւ մտանեն ի նաւ սուրբ կուսին. եւ կապեն զինքեանս ի գերան նաւիս այս յուսալով ի խոնարհութիւն սուրբ կուսին՝ եւ փրկին ի չար գազանէն այն: Տասներորդ՝ զի նաւորդք որք երկնչին յաւազակաց՝ շինեն չորս անկիւնի բերդ ի յետ կոյս նաւին. եւ նստի ղեկավարն անդ. զի թէ յառաջ կոյս նստի՝ ոչ կարէ ուղղել զնաւն. եւ երկու թեւ նաւին ի ձեռին իւրում յաջ եւ յահեակ. եւ յորժամ ծռի նաւն, զմին թեւն ի

յիւնքն քարշէ. եւ զմիսն ի բաց մղէ յիւնքնէ. եւ այնպէս ուղղէ զնաւն: Այսպէս պարտ է զի լինիցի բերդ ի նաւս մեր. որ է չորս առաքնութիւն հոգւոյն, այսինքն, բանականութիւն. արիութիւն. ողջախոհութիւն. եւ արդարութիւն: Եւ նստցի բանականութիւնն յետ կոյս որ է վերջին օր մահուն մերոյ. զի տեսանիցեմք զմեզ մահկանացու եւ տկար եւ աղքատ. եւ մի հայեցուք յառաջ կոյս. այսինքն, ի ծնունդն մեր հպարտանալով, թէ որդի եմք մեծատան եւ թագաւորի. թէ զայս խորհիմք նստելով յառաջ կոյս նաւիս մերոյ, ոչ կարեմք ուղղել զսա. զի որ հայի ի ծնունդն թէ ես պարոնի որդի եմ, ոչ կարե տեսանել զմեղս իւր եւ զմահ: Եւ երկու թեւն՝ ցուցանէ զերկու գործս զչարս եւ զբարիս. զի պարտ է զբարին առ ինքն մօտեցուցանել. եւ զչարն հեռացուցանել. որպէս ասէ Դաւիթ. (խոտորեա ի չարէ եւ արա զբարի:)

Այսպէս սուրբ կոյսն Աստուածածին՝ էր նաւ հոգեւոր. եւ կռոյի ընդդէմ դիւաց. եւ կայ բերդի նմա շինեալ չորիւք առաքնութեամբ: Եւ թեպէտ էր ի մեծ զարմէ թագաւորաց եւ մարգարեից եւ քահանայից, յայն ոչ հայեր, այլ այլոյժ ինսարիութեամբ կայր. եւ իբրեւ զղեկավար ճարտար ուղղէր զնաւս իւր. (խոտորելով ի չարէ եւ առնելով զբարի:) Եւ որ կամի կռուիլ ընդդէմ սատանայի եւ մեղաց. նստցի ի նաւս յայս՝ եւ կռուցի ընդ նոսա. ի յօգնութիւն սուրբ կուսին ապաւինեալ: Այլ սովորութիւն է նաւավարաց՝ որք կամին յերուսաղէմ նաւել՝ յորժամ լինի ժամանակ նաւելոյ. աղաղակեն առ ուխտաւորսն. եկայք շուտով՝ զի հասեալ է ժամանակ նաւելոյ. որք փութով երթան՝ առնուն տեղի ընդարձակ եւ հանգիստ. եւ որք յատոյ մտանեն ի նաւն, լինին նոցա տեղիքն նեղի: Եւ որք երթան եւ հանգչին ի տունս իւրեանց՝ եւ յետոյ գան, գտանեն զնաւն գզնացեալ անտի. եւ ինքեանք նման միայն: Նոյնպէս որ կամի նաւել ի վերինն Երուսաղէմ, պատրաստէ նաւ. այսինքն, զբարեխօսութիւն սուրբ կուսին: Եւ ժամանակ նաւելոյ՝ ապաշխարութիւն գործել. եւ որ շուտով մտանէ ի նաւս յայս՝ այսինքն ի աղայութենէ ի վեր, գտանէ յերկինս տեղի արձակ եւ հանգիստ: Եւ որք ի ծերութեանն գան, գտանեն տեղի նեղ. զի նեղ եւ դժար է ի ծերութեանն ապաշխարութիւնն. զի ծանրացեալ է մարմինն եւ տակարացեալ: Իսկ որ մինչ ի մահ ծուլութեամբ կենայ, անցանի ժամանակ ապաշխարութեանն. եւ մնայ ի դժոխս առանց ապաշխարելոյ: Այլեւ նաւ մի փոքր կապեն ի մեծ նաւն. եւ է ծառայութեւոր եւ սպասաւոր մեծ նաւին: Եւ յորժամ լինի սաստիկ ալէկոծութիւն, առնուն եւ դնեն զնաւն փոքրիկ ի մեջ մեծ նաւուն: Եւ որպէս նաւն մեծ ոչ երկնչի յալէկոծութենէ որ է սուրբ կոյսն. նոյնպէս եւ նաւն փոքրիկ այլ մարդիկ որք ծառայեն եւ սպասաւորեն սուրբ կուսին, ոչ երկնչին յալէկոծութենէ մեղաց: Եւ զի ծով մեծ է աշխարհս այս. վասն պարտ է զմեզի նա կապել երեք կղի չուանով. այսինքն, հաւատով յուսով եւ սիրով: Եւ յորժամ լինիցի սաստիկ ալէկոծութիւն, այսինքն ի ժամանակ մահուանն, Յայնժամ աղաղակացուք. զի առցէ զմեզ առ ինքն՝ տարցէ ի նաւահանգիստն վերին արքայութիւնն երկնից առ Միածին Որդին իւր՝ Տէր աստուած Մեր: Որում փառք՝ զօրութիւն՝ իշխանութիւն ընդ Զօր Իւրում՝ Ամենասուրբ Զօգւոյն, յաւիտեանս յաւիտենից ամէն:

Դարձեալ յայլմէ քարոզ Աստուածածինի փոխման՝ արեւտեաց. ի բանն Սողոմոնի որ ասէ յերգսն: (Մտի ի պարտագ իմ քոյր Իմ հարսն:) Երգ երգոց. 4. 12: (Գլուխ. ՃԼԲ)

Վարդապետը ասելն թե՛ սուրբ Ատուածածին կոյսն՝ նման է դրախտին եղեմայ վասն կրկին պատճառի: Առաջին՝ զի դրախտն յերրորդ օր ստեղծաւ. եւ եղաւ անդ մարդն՝ ոչ զօրութեամբ մարդոյ, այլ ձեռօք Աստուծոյ (գործել զնա եւ պահել:): Այսպէս սուրբ Ատուածածին որ է դրախտ հոգեւոր յերրորդում աւուր աշխարհի տնկեցաւ: Մէկ օր ժամանակ բնական օրինացն. երկու օր գրաւորական օրինացն. երեք օր նոր օրինացս. յորում տնկեցաւ սուրբ կոյսն. եւ եղաւ անդ. երկրորդն Ադամ որդին Աստուծոյ. ոչ ի սերմանէ մարդոյ, այլ ի հոգւոյն սրբոյ յղացեալ: Եւ անդ արար զփրկութեան մերոյ գործ. եւ այնպէս պահեաց պահեաց զնա՝ որ օձն սատանայ ոչ եմուտ անդ: Երկրորդ պատճառ՝ զի ջրհեղեղն ոչ եհաս ի դրախտն վասն բարձրութեանն յաւուրսն Նոյի: Եւ ոչ հեղեղն հրեղէն հասանելոց է անդ յաւուրն կատարածի: Եւ այս գոլորշիքս որք ելանեն յերկրէ՝ եւ առնեն արձել ձիւն եւ կարկուտ, անդ ոչ հասանին վասն բարձրութեանն. եւ է բարեխառն. եւ ոչ աւելի ջերմ կամ ցուրտ: Այսպէս իմանալի դրախտ սուրբ Ատուածածինն՝ յորժ բարձր է սրբութեամբ. եւ հեղեղ մեղաց ոչ եհաս ի նա: Եւ այս գիտելի է՝ զի ծովու մեղաց երկու եզր է. մինն երկիւղ արդարութեանն Աստուծոյ. եւ միւսն սեր ողորմութեանն Աստուծոյ: Վասն զի մարդն երկնչի ի մեղաց վասն ահի դատաստանին Աստուծոյ. եւ կամ վասն սիրոյ ողորմութեանն Աստուծոյ: Եւ յորժամ սոքա երկոքին ծայրքն աւերեցան, յայնժամ ծով մեղացն ի դուրս հեղաւ եւ ապականեաց զերկիր. որպէս ասէ Ովսէէ. (զի ոչ գոյ արդարութիւն եւ ոչ ողորմութիւն. եւ ոչ գիտութիւն Աստուծոյ. այլ անէծք եւ սպանութիւն եւ շնութիւն հեղեալ ի վերայ երկրի, ընդմեր զբազումս:): Այլ որ կամիցի որոջ ընկղմեսցի ի հեղեղէ մեղաց՝ երթիցէ ի դրախտն իմանալի առ կոյսն սուրբ. զի ոչ եհաս ի նա բնաւ հեղեղ մեղաց. եւ բարձր է մինչեւ յերկիսս: Վասն այն ոչ եհաս անդ անձել փորձութեան, կամ կարկուտ մեղաց. այլ բարեխաւնութիւն հոգւոյն սրբոյն է անդ: Եւ որ անդ հասանի՝ հանգչի. որպէս Ենովք եւ Եղիա ի դրախտն հանգեան: Եւ սոքա զերկու վարս նշանակեն. այսինքն, զտեսականն եւ զգործնականն. եւ այս երկու ազգ մարդիկս հանգչին յայս իմանալի դրախտս. այս է՝ որք գործել զգործս բարիս. կամ խոկան մտօք զԱստուած. այլ որք ոչ ունին զտեսականն եւ ոչ զգործնականն. այլ դատարկ շրջին, նոքա ընկղմին ի հեղեղոյ մեղաց: Վասն այն ասէ իմաստունն Սողոմօն: (Մտի ի պարտեզ իմ քոյր իմ հարսն:): Եւ օրինակ՝ տան վարդապետք թէ՛ ոմն թագաւոր ունէր պարտեզ մի որ էր երեք բաժին: Ի յառաջին բաժինն մտին խոզք եւ բովանդակ ապականեցին: Եւ զերկրորդն ապականեցին՝ բայց յետոյ շրջեցին եւ նոր սերմանեցին: Այլ երրորդ մասն ամենեւին գեղեցիկ էր եւ ամենայն բարութեամբ լի: Եւ թագաւորն յորժամ ի զբօսանս երթայր, թողեալ զառաջին եւ զերկրորդն, եւ յերրորդն հանգչիր: Յոգեպէս թագաւորն զԱստուած նշանակէ. եւ պարտեզն զբնութիւնս մեր: Եւ այս յերեք է բաժանած: Առաջինն զնոսա ցուցանէ՝ որքկան ի մահու չափ մեղս. եւ խոզք դժոխոց ապականեցին զնոսա: Եւ անդ ոչ եմուտ Զրիստոս. որպէս ասէ Սողոմօն. (յանձն չար արուեստ՝ իմաստութիւն ոչ մտանէ. եւ ոչ բնակի ի մարմնի վարեցելոյ մեղօք:): Երկրորդն զնոսա ցուցանէ՝ որք զղջացան ի մեղացն. եւ զապականեալն զղջմամբ նորոգեցին: Եւ ոչ աստ եմուտ որդին Աստուծոյ. զի անպատշաճ էր մարմին առնուլլ յապականեալ անձնէ: Չի պարտ էր որ մայրն Աստուած

այնպես սուրբ լիներ՝ որ ի մարդկային բնութիւնս այնպիսի սուրբ այլ ոչ ոք էր լեալ: Եւ այս երրորդ պարտեզն՝ էր սուրբ Աստուածածինն՝ որ լի էր ամենայն բարութեամբ եւ արդարութեամբ. վասն այն եկն առ նա որդին Աստուծոյ. որպէս ասէ: (Մտի ի պարտեզ իմ քոյր իմ հարսն:) *Այլ ասեն իմաստունք թէ՛ իրն որ կորուսեալ է, պիտի խնդրօղն յայն տեղին խնդրէ՛ ուր կորոյս: Չի թէ ի ջուր է կորուսեալ՝ չէ պարտ ի ցամաքի խնդրել. եւ թէ ի ցամաքի՛ ի ջուրս. ապա թէ ոչ՝ չկարէ գտանել: Իսկ մարդկութիւնս կորուսեալ էր ի դրախտին. եւ խնդրէին նահատետքն յայլ տեղի. զի Ադամ ի դրախտին կորեալ. ոպէս ասէ. (ո՞ւր ես Ադամ.) պարտ էր նոցա անդր խնդրել. որպէս խնդրեցին՝ Նոյ. Աբրահամ. եւ ոչ գտին: Նոյնպէս կորուսին գթրիստոս ի յերկինս. նա ի քնիշտ ջիւտնոյն խնդրէին. այլ Աստուած որ կորուսեալ էր զմարդն՝ անդ խնդրեաց ի պերտեզ դրախտին ի սուրբ Աստուածածինն՝ եւ եգիտ: Օրինակ. որպէս այն որ ձգէ նետ մի ի պարտեզ մի՛ եւ ւ այն կորնչի, պարտ է որ զհետ այն նետին մին այլ ձգէ՛ եւ ապա կարէ զառաջինն գտանել: Նոյնպէս Աստուած Ա նետ ձգեաց զԱդամ ի դրախտն. եւ այն կորեալ. դարձեալ ձգեաց զերկրորդն Ադամ ի դրախտ սուրբ կուսին. եւ եղին անդ զմարդն զոր կորոյս. վասն այն ասէ: (Մտի ի պարտեզ իմ քոյր իմ հարսն:) Դարձեալ՝ Յուդա եգիտ գթրիստոս ի պարտիզին. զի Քրիստոս անդ գնաց որ զմարդն խնդրէր: *Եւ արդ վասն պարտի զիս՝ այս՝ երկու ինչ ասելի է: Նախ՝ ասելի է վասն գեղեցկութեան պարտիզին: Երկրորդ՝ ասելի է վասն յատկութեանց պարտիզին: Եւ զառաջինն գիտելի է՝ որ բազում ինչ պիտոյ է պարտիզին՝ որ վայելէ թագաւորին: Եւ ասեմ հինգ իր գլխաւոր: Նախ՝ պարտ է որ բոլորն ցանգած լինի. ուրբագանք լկարեն մտանել եւ աւերել. որպէս զառապար դաշտս: Նոյնպէս անհաւատքն նման են առապար դաշտի. որ ընդարձակ յամենայն կողմանէ մտանէ սատանայ: Բայց սուրբ կոյսն՝ էր արտեզ փակեալ կրկին պարսպով. որպէս ասէ յերգսն: (Պարտեզ փակեալ քոյր իմ հարսն. պարտեզ փակեալ.) երկու անգամ ասաց. որ ցուցանէ թէ՛ բնութեանն օրինօք փակեալ էր սուրբ կոյսն. կամ ի պահպանութենէ հրեշտակացն եւ առաքելոցն: Բայց լինի երբեք՝ թէ դուռն այսպիսի պարտիզիս ի բաց մնաց մնայ, եւ մտանէ անասուն ի ներս, եւ դարձեալ փակի եւ արգիլի անասունն, նա առաւել վնասէ. կոխէ եւ ուտէ առաւել քան զայն՝ որ դուռն ի բաց էր: Նոյնպէս կուսանք եւ կրօնաւորք որք ուխտեալէն զկուսութիւն եւ զառաքինութիւն, եւ մտանէ ի նոսա ցանկութիւն ինչ, լաւ էր թէ արձակ էր դուռն նոցա. եւ ամուսնացեալք էին. զի առաւել ջերմացուցանէ ծածկեալ ցանկութիւնն ի միտսն. որպէս ասէ Պօղոս. (լաւ է ամուսնանալ քան զջեռնուլ:) Իսկ սուրբ կոյսն Մարիամ՝ այնպէս փակեալ էր, որ ամենեւին ոչ բացաւ. վասն այն ասէ Սողոմօն երկու անգամ, պարտեզ փակեալ: Դարձեալ՝ պարտեզս այս երեք փակով փակեցաւ. եւ երեք պարիսպ էած Աստուած. զի զառաջին դրախտն ոչ էր փակեալ՝ վասն այն վնասակարն եմուտ ի ներքս: Այս է Գ փակն. զի սատանայ երեք բանալի ունի. մէկ զօրութիւն ընդդէմ տկարացն. երկրորդ՝ իմաստութիւն ընդդէմ տգիտացն. երրորդ՝ չարկամք ընդդէմ բարեացն: Եւ այս է երեք փակն ընդդէմ նորա. զի զօրութիւնն հօր պատեաց զսուրբ կոյսն. եւ իմաստութիւնն որդի իմաստութեամբ փակեաց. եւ հոգին սուրբ բարի եւ սուրբ կամօք ելից եւ պարսպեաց զնա: Եւ այնպէս ամուր պարսպեաց զնա՝ որ թեպէտ անմարմին բնութիւն է սատանայ, ամենեւին մուտ մտանելոյ ոչ եգիտ ի կոյսն սուրբ: Երկրորդ՝ պարտ է որ ի պարտեզ թագաւորին աղբիւն

լինի՝ որ բազում առնէ պտուղ. իսկ անջրդի պարտեզն ոչ բերէ պտուղ: Այսպէս սիրտք մեղաւորաց՝ անջրդի եւ անպտուղ են. որպէս ի դեմս Նոցա ասէ Դաւիթ. (անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ:) Իսկ կոյսն սուրբ՝ աղբիւրով պարտեզ է երկնաւոր թագաւորին. որպէս ասէ Սողոմօն. (պարտեզ փակեալ եւ աղբիւր կնքեալ:) Ասէն իմաստունք թէ՛ հանդիպի որ յակն աղբերն օձ մտանէ. եւ զթոյնսն անդ թափէ. եւ կամ մարդ թշնամի դեղէ զջուրն. վասն այն թագաւորք առանձին աղբիւր գուգեն՝ ի պարտեզն եւ մատնէ հարեն՝ զոր թշնամիք եւ օձք ոչ կարեն վնասել: Արդ՝ մեղաւորք եւ թոյլ մարդիկ իբրեւ զծովակ են՝ ուր ամենայն ազգ գեռուն ի ներս մտանէ եւ ապականէ. եւ որք ըմպեն՝ Նոցա եւս ապականին. զի սատանայ զանազան մեղօք զնոսա ապականէ. եւ այլք բազումք ի Նոցանէ ապականին: Իսկ զկոյսն Մարիամ աղբիւր կնքեաց Աստուած՝ յոր ոչ կարաց սատանայ արկանել անդ զթոյնս մեղաց: Վասն այն ի նմանէ Էառ մարմին. եւ ըմպեաց զկաթն ստեացն. եւ մարդիկ ըմպեն ի նմանէ շնորի եւ ողորմութիւն: Դարձեալ՝ կնքեալ է. զի մարմնաւոր օրինակաւ ծածկեալ էր առաջնոցն. զի յանապատին զհաց հրեշտակաց զմանայն ետ Նոցա ձրի առանց աշխատանաց: Նոյնպէս սուրբ Աստուածածինն՝ ետ զհացն կենաց Զրիստոս մարդկան առանց գործոց մարդկան: Որպէս գրեալ էր ի տախտակն Մովսէսի առանց գրչի պատուիրանն կենաց գրեալ մատամբն Աստուծոյ: Նոյնպէս իմաստութիւնն հօր առանց առն՝ գրեալ ի կոյսն Մարիամ ի յուսուսն հաւատացելոց կենաց ճանապարհին: Դարձեալ պարտեզ փակեալ՝ զի զխորհուրդ մարդեղութեանն Զրիստոսի ոչ ոք կարէ գիտել. բայց միայն Աստուած եւ իւրքն. որպէս ասէ Եսայի. (խորհուրդ իմ ինձ եւ իմոցն:) Եւ այս պարտեզ ոչ թէ զաղբիւրն միայն իւրն ունի բաւական, այլեւ այլոց. որպէս ասէ Սողոմօն թէ՛ (նա է աղբիւր պարտիզաց. ջրիոր ջրոյ կենդանւոյ հոսեցելոյ ի Լիբանանէ.) այսինքն, յարքայութենէն: Երրորդ՝ պարտ է որ ի պարտեզ թագաւորին լինի զանազան կանաչ ի կերակուր եւ ի բժշկութիւն: Եւ վասն այն ասի կոյսն սուրբ պարտեզ. զի զանազան առաքիւնութիւն ունի՝ որ յոյժ օգուտ է աչաց եւ ամենայն ցաւոց. որպէս ասէ Էզեկիէլն. (արդ երկիրն առանց խնամելոյ եղել իբրեւ զպարտեզ փափկութեան:) Դարձեալ ասէ Մովսէս. (բուսուցէ երկիր զբանջար խոտոյ:) Երկիր է սուրբ Աստուածածինն. որ բուսոյց խոտ անուշութեան զՅիսուս Զրիստոս: Եւ որպէս երկիր առանց վարելոյ ի զօրութենէ արեգականն բուսուցանէ խոտ. նոյնպէս սուրբ Աստուածածինն առանց սերման ի զօրութենէ սուրբ հոգւոյն ծնաւ զբժշկական բոյսն զԶրիստոս: Եւ օրինակ բերեն թէ՛ անողորմ մարդիկ խաղղ առնան եւ զծիծռան ծագուն հանեն զաչսն. յայնժամ զնայ մայրն եւ բերէ այնպիսի խոտ մի բժշկական. եւ ղնէ յաչս ձագուն եւ ողջանայ: Նոյնպէս անողորմ սատանայ կուրացոյց զմիտս մարդկան ի դրախտին. իսկ մայրն բնութեանս սուրբ կոյսն՝ եբեր զխոտն կենաց Զրիստոսի լոյս մարդկան: Դարձեալ՝ խոտս այս կերակուր է անասնոց. այսինքն, մեղաւորաց. վասն այն յորժամ ծնաւ. ի մուր յանբանից եղաւ. զի (մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց անբանից:) Վասն այն որչափ ի դրախտին էր՝ զհաց հեշտակաց ուտեր զտեսութիւնն Աստուծոյ. եւ յոր ժամ անասուն եղել, եբեր կոյսն զմարմին որդւոյն Աստուծոյ զի կերիցեն եւ կենդանասցին: Զորրորդ՝ պարտ է որ ի պարտեզ թագաւորին բարեխառն եւ քաղցր օդ լինի, զի բժիշկք ասեն թէ՛ ժահահոտ եւ խառնակ

օղն՝ վնասակար է ավելի քան զչար կերակուրն. զի վատ կերակուրն ի փորն
 գնայ. բայց ի սիրտն ոչ հասանի: Իսկ դառն կոտն՝ ի սիրտն գնայ եւ առաւել
 վնասէ զմարդ: Նոյնպէս չար օրինակն՝ ավելի զմարդն սպանանէ իբրեւ զչար
 հոտ: Արդ՝ ի պարտեզ սուրբ կուսին՝ օղն քաղցրախառն էր. զի վարք սուրբ
 կուսին օրինակ բարի էր. որ քաղցրացոյց զսիրտ սրբոցն. որպէս ասէ յերգն:
 (Արի հիւսիս. եւ եկ հարաւ շնչեա ի պարտեզ իմ. եւ բուրեցին խունկք մեր.)
 այս է՝ թէ արի սատանայ ի սառն նախանձ. եւ եկ ջերմութիւն սուրբ հոգւոյդ ի
 սիրտս մեր. եւ բուրեցին զանազան առատիւնութիւնք եւ սքանչելիք:
 Յինգերորդ՝ պարտ է որ ի պարտեզ թագաւորին լինին զանազան ծաղկունք
 անուշահոտք: Նոյնպէս եւ ի սուրբ Աստուածածինն՝ զանազան
 անուշահոտութիւնք. որպէս ասէ Սողոմօն. (սիրելին ի մէջ պարտիզաց եւ ի
 դաշտս խնկող, հովուել ի բուրաստանս՝ եւ ժողովել շուշանս:) Այսպէս եւ ի
 սուրբ կոյսն գտանի մանուշակ խոնարհութեան՝ որ քաղցր է Աստուած.
 որպէս ասէ. (հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ:) Եւ գտանի վարդ
 կարմիր վասն կուսութեան ամօթոյն. եւ վասն ջերմն սիրոյն որ առ Աստուած:
 Եւ ծաղիկ նարգէզ. որ զգոյնն պահէ հանապազ զմիշտ կուսութիւնն
 ցուցեալ. եւ շուշան՝ զի ասէ Սողոմօն. (որպէս շուշան ի մէջ փշոց. այնպէս
 քոյր իմ հարսն ի մէջ դաշտաց:) Եւ որպէս շուշան ի մէջ փշոցն թէպէտ
 խածանի ի նոցանէ՝ զգեղեցկութիւն սպիտակութենն ոչ թողու. եւ առաւել
 բարձրանայ քան զծով եւ զամենայն բանջար: Այսպէս զսուրբն Մարիամ
 թէպէտ շատ չարախօսեցին եւ խածանէին, այլ ամենեւին ոչ խոնարհեցաւ ի
 մեղս. եւ ոչ եթող զպայծառ մաքրութիւնն իւր: Դարձեալ գեղեցկութիւնն
 շուշանին մնայ ի մէջ փշոցն: այսպէս գեղեցկութիւն սուրբ կուսին՝ ծածկեցաւ
 ի մէջ աղքատութեան եւ խոնարհութեան. բայց յիմար կուսանքն որք
 արտաքոյ ելանեն ի փշոյ վարուց առաքիւնութեան, ապականին
 յանասնաբարոյիցն: Այս առաջին գլուխն: Երկրորդ գլուխն՝ ասելի է վասն
 յատկութեանց պատիզին: Գիտելի է՝ որ պարտեզս այս ունի երեք
 յատկութիւն պատուական որ գովելեացն: Առաջին՝ որ ազգի ազգի գեղեցիկ
 տեսով՝ եւ քաղցր եղանակաւ թռչունք լինի: Երկրորդ՝ որ զանազն պտուղք
 լինին: Երրորդ՝ որ օղն բարեխառն լինի: Վասն առաջնոյն ասէ Սողոմօն
 յերգսն. (ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում:) Եւ աստ միայն զուրթ
 երգեցօղսն յիշեմք: Նախ որպէս տատրակ՝ երգեաց նահապետն Յակօբ
 վասն մարմնոյն Զրիստոսի եւ ասէ. (մի պակասեցի իշխան յուդայ. եւ մի
 պէտ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ այն որ իւրն է թագաւորութիւնն. զի նա
 է ակնկալութիւնն հեթանոսաց:) Եւ այս կատարեցաւ. զի Մարիամ էր յազգէն
 Յուդայի. եւ պակասեցաւ իշխանութիւնն Իսրայելի: Երկրորդ՝ Մովսէս որպէս
 պլպուլ մարգարեացաւ թէ՝ (մարգաւէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր
 յեղբարց ձերոց իբրեւ զիս՝ նմա լուիջիք. եւ որ ոչ լուիցէ նմա՝ սպանցի:) Եւ
 այս կատարեցաւ. զի Մարիամ էր Յրեայ. եւ որք ոչ հաւատացին՝
 սատակեցան ի Տիտոսէ եւ ի վեսպիանոսէ: Երրորդ՝ Դաւիթ (իջցէ որպէս
 զանձրեւ ի վերեյ գեղման եւ որպէս զցօղ:) Եւ գեղեօն նշան ինդրեաց թէ,
 (իջցէ որպէս ցօղ ի վերայ զգաթոյն. եւ ամենայն երկիր մնացէ ցամաք.
 ապա գիտացից թէ փրկես զԻսրայել:) Եւ այս կատարեցաւ. զի ցօղն կենաց
 էջ ի զգաթն Մարիամ ի յօր ավետեաց կուսին. եւ ամենայն երկիր մնաց
 ցամաք: Չորրորդ՝ Սողոմօն ասէ. (իմաստութիւն շինեաց իւր տուն. եւ
 կանգնեաց սիւսս եօթն. եզեն զզենլիս. եւ խառնեաց ի խառնելիս զգինի իւր.

եւ պատրաստեաց զսեղան իւր:) Այս է՝ իմաստութիւնն հօր Յիստուսի շինեաց իւր տուն զսուրբ կոյսն. եւ եօթն սիւն կանգնեաց ի նմա զեօթն շնորհս հոգւոյն. եւ յայս տունս խառնեաց զԱստուածութիւն եւ զմարդկութիւն իւր. եւ պատրաստեաց զինքն սեղան խաւատացելոց: Յինգերորդ՝ Եսայի ասէ. (ահա կոյս յղացի եւ ծնցի որդի. եւ կոչեսցեն զանուն նորա Էմանուէլ:) Եւ այս կատարեցաւ. զի կուսութեամբ ծնաւ. եւ Աստուածն ամենայնի եղել ընդ մեզ մարդ: Վեցերորդ դարձեալ՝ Բաղասամ այլազգեաց մագարեացաւ ասելով. (ծագեսցի աստեղք ի Յակօբայ. եւ ելցէ այր յիսրայէլէ. եւ հարցէ զիշխանն Մովաբու:) Եւ այս կատարեցաւ. զի Մարիամ որպէս պայծառ ասող ծագեցաւ յազգէն Յակօբայ. եւ յայս աստեղէ ծնաւ Քրիստոս եւ եհար զաստանայ: Եօթներորդ՝ Էզեկիէլ ասէ. (դուռնս այս փակեալ կացցէ. եւ ոչ ոք մտցէ եւ ելցէ ընդ սա. բայց Տէր Աստուած Իսրայէլի:) Եւ այսս կատարեցաւ. զի յօր աւետեացն էջ Տէր Աստուած յարգանդ կուսին. եւ ել ծննդեամբ. եւ դուռն որ է նշան կուսութեան՝ անխախտ մնաց: Ութներորդ՝ Դանիէլ (վէմ ասէ առանց ձեռին հատեալ ի լեռնէն. եւ եհար զպատկերն ի վերայ երկրի:) Լեռնն սուրբ կոյսն. եւ առանց ձեռն՝ այս է, առանց գործակցութեան մարդկան ի հոգւոյն սրբոյն յղացաւ. եւ զպատկեր կռոցն փշրեաց: Այս առաջին յատկութիւն պարտիզին՝ որ ազգի ազգի թռչնօք՝ քաղցր եղանակաւ երգէին: Երկրորդ յատկութիւն՝ որ զանազան պտղօք լինին: Եւ վասն այս պտղոցս՝ ասէ Սողոմօն յերգսն. (ամենայն մրգաբերք նոր առ հնովն պահեսցի քեզ:) Եւ գիտելի է՝ զի ոմանք զմիրգ պտղոց իւրեանց զտղայութեան եւ զծերութեան՝ ընդ վայր կորուսանեն եւ տան սատանայի: Եւ ոմանք զնոր պտուղն Աստուծոյ տան. եւ զհինն սատանայի. զի ի տղայութեանն բարի են. եւ ի ծերութեանն չար: Իսկ ոմանք զտղայութեանն սատանայի, եւ զծերութեանն Աստուծոյ. բայց սուրբ կոյսն՝ զտղայութեան եւ զծերութեան պտուղն ետ Աստուծոյ. այս է նոր պտուղն առ հնովն: Դարձեալ՝ ասէ յերգսն. (իջի ի պարտեզ ի մ հայիլ ի խնծորս հովտաց. տեսանել թէ ծաղկեա՞լ իցէ որթն. կամ պտղաբե՞ր իցեն նռնենիք:) Այս է՝ զի Գ կարգ է յեկեղեցի. երեք՝ եպիսկոպոսացն: Վասն այն էջ բանն Աստուած՝ զի տեսանէ եւ հովուեսցէ զխնծորս խոնարհութեան գործեն զառաքինութիւն: Երկրորդն՝ զի հայսեսցի թէ որթքն ծաղիկ եւ պտուղ ունին. այս է, վարդապետք՝ քահանայք՝ ճշմարիտ քարոզս եւ կատարեալ գործս ունիցի՞ն: Երրորդն՝ թէ նռնենիքն պտուղ ունին. այս է՝ ծերք եւ առաջնորդք ի կատարումն են հասեալ: Եւ պտուղ նռանն երեք իր ունի. արտաքուստ դառն է. եւ ի ներքուստ քաղցր. եւ հատն կարմիր, եւ սպիտակն ի նմին խառնեալ: Նոյնպէս պարտ է առաջնորդաց եկեղեցւոյ լինիլ արտաքուստ դառն ապաշխարութեամբ. եւ ի ներքոյ քաղցր խոկմամբ աստուածային. եւ կարմրութեամբ որ է սերն: Արդ՝ այս ամենայն միրգքս գտանին ի սուրբ Աստուածածինն. զի նման խնծորոյ ունէր գեղեցիկ գոյն՝ որ վարք առաքինութեան. եւ անուշահոտ համբաւ բարի. եւ անուշահամ՝ որ սիրով եւ յօծարութեամբ կատարեալ էր: Եւ յորժամ եղել տասն եւ չորս ամաց, ծաղկեցաւ իբրեւ որթ. եւ յղացաւ զբանն Աստուած: Եւ յետ չարչարանացն Քրիստոսի՝ եղել կոյսն իբրեւ պտուղ նռնենի կատարեալ: Այս երկրորդ յատկութիւն: *Երրորդ յատկութիւն պարտիզին այն է՝ որ բարեխառն օդ լինի, որ ոչ լինի առաւել ջերմ տեղի եւ ոչ առաւել պաղ. այլ բարեխառն՝ որ կարէ պտուղ բերեալ: Չի ասեն իմաստունք թէ՛ երկիրս երեք մասն ունի. եւ մինն

տայ պտուղ. երկուսն ոչ: Բեւեռն հիւսիսոյ առաւել պաղ է եւ անպտուղ: Եւ հարաւոյն ջերմ առաւել եւ անպտուղ: Եւ հարաւոյն ջերմ առաւել՝ եւ անպտուղ: Իսկ մին մասն ի մէջն առաւել բարեխառն. վասն այն տայ պտուղ յոյժ: Նոյնպէս ի մարդկանէ ոմանք անպտուղք. զի պաղեալեն ի նախանձսուէ եւ յագահութենէ: Նման են օձի. զի ազգ մի օձն կայ՝ որ յետ անձրեւ գայ. զի յայնժամ ծնանի. եւ այնպէս պաղ է բնութեամբ՝ որ թէ հարկանէ զոտն մարդոյ, առ ժամայն ժահրն հաւասարի եւ մեռանի: Այսպէս չարաբարոյքն եւ ազահքն որ զայլոց զրկեն, եւ կամ զչարն ուսուցանեն, զինքեանս սպանանեն, եւ զմերձակայսն իւրեանց. եւ են անպտուղ: Եւ ոմանք ունին զջերմութիւն պոռնկութեան. եւ նման են ծծմբի. զի զհով ջուրն հոտեցուցանէ եւ ջերմացուցանէ. եւ հոտն զգոյն խնծորին տանի: Այսպէս վաւաշոտք զկուսանսն թէ ի մօտ անկանին. զկուսութեան հովութիւնն իջերմութիւն պոռնկութեան շարժեն. եւ զգոյն գեղեցկութեան բարի համբաւոյն կորուսանեն: Եւ սուրբք են անպտուղ. ապա ուրեմն սուրբ կոյսն գեղեցիկ պարտեզ էր Աստուծոյ. զի ոչ ուներ այսպիսի ջերմութիւն եւ կամ պաղութիւն առաւել. վասն այն եբեր պտուղ զամենօր հնեալն Աստուած: Ապա յայտ է թէ՝ որպէս ուներ զյատկութիւն պարտիզին: *Եւ ոչ միայն պարտեզ կոյսն Աստուածածին, այլեւ աղբիւր պարտիզաց. որպէս ասէ յերգսն: (Աղբիւր պարտիզաց ջրհոր ջրոյ կենդանւոյ ի Լիբանանէ:) Եւ վասն Գ պատճառի կոչի աղբիւր: Առաջին՝ զի որ հայի յաղբիւրս՝ զպատկերս իւր տեսանէ անդ. եւ որչափ խաղաղ է աղբիւրն՝ անսխալ երեւի պատկերն. այլ ի շարժմանն ոչ երեւի պատկեր մարդոյն պարզ: Այսպէս սիրտ մեղաւորաց է իբրեւ զաղբիւր ամբոխեալ ի զանազան հողմաց բարկութեան, հպարտութեան, եւ այլ փորձութեամբ. վասն այն պատկերն Աստուծոյ ոչ երեւի ի նոսա: Այլ սուրբ Աստուածածինն՝ նման է խաղաղ աղբիւր. որ ամբոխումն հողմոց կամ շարժումն՝ ոչ գոյ ի նմա: Վասն այն որդին Աստուծոյ որ է պատկեր հօր՝ երեւեցաւ ի նմա. վասն զի էջ յարգանդ նորա եւ եղեւ մարդ: Բայց զպատկերս զայս ոչ ոք տեսանէ. բայց նոքա որք մերձ են նմա. եւ երկու աչօք հային ի նա: Վասն այն պարտ է մեզ ընթանալ առ կոյսն սուրբ եւ երկու աչօքն ի նա հայիլ. այսինքն, հանճարով եւ կամօք. զի հանճարով իմանամք զնա մայր Աստուծոյ եւ հաւատամք. եւ կամօք սիրեմք զինքն եւ զորին իւր միածին. ապա նովաւ կարեմք տեսանել զլոյս արքայութեանն երկնից: Երկրորդ պատճառ՝ զի աղբիւրն այն որ չափովն որ դար ի վայր գայ, նոյն չափովն դար ի վեր կարէ զնալ փողոթակով: Եւ զի Աստուածածին կոյսն խոնարհեցաւ քան զամենայն ստեղծուածս. եւ ասաց զինքն աղախին: Վասն այն բարձրացաւ. ի վերոյ քան զինն դասս հրեշտակաց: Բայց բազում զանազանութիւն է ի մէջ աղբերաց եւ սուրբ կուսին. զի այլ աղբերք ի խորոց երկրէ առնուն զջուրս. եւ դէպ ի վեր մղեն զելս իւրեանց: Այլ սուրբ կոյսն՝ ի վերուստ է առեալ զջուր շնորհացն ի հոգւոյն սրբոյ. եւ ի վերայ հեղու ի մեղաւորսս զողորմութիւն իւր: Վասն նորա ասէ թէ՝ (աղբիւր է պարտիզաց, եւ ջրհոր կենդանւոյ հասեցելոյ ի Լիբանանէ:) Չի Աստուածածին կոյսն՝ աղբիւր է պարտիզացս եկեղեցւոյ հոսեցելոյ ի Լիբանանէ. այսինքն, ի հոգւոյն սրբոյ: Այլ ջրհորս այս խոր է, եւ մեք դոյլ ոչ ունիմք, որպէս կարեմք հանել ջուր: Եւ այս է հնարն. զի սիրտս մեր արասցուք դոյլ փոս եւ խոնարհ. եւ չուան երեք կղի կապեսցուք ի դոյլն. այսինքն, զաղօթս առ կոյսն սուրբն: Չի աղօթքն երեք կուղս ունին. այսինքն, մտօք, բանիւ, եւ գործով. յայնժամ

սիրտք մեր լնանին շնորհօք նորա: Երրորդ պատճառ՝ զի աղբիւրն խիստ քաղցր է չորս ցեղ մարդկան. մէկ ճանապարհորդաց. երկրորդ՝ աշխատողոց. երրորդ՝ աղքատաց որք գինի ոչ ունին չորրորդ՝ որք ջերմանան եւ շոգին: Այսպէս սուրբ Աստուածածինն քաղցր աղբիւր է այնոցիկ՝ որք ընթանան ի ճանապարհս սուրբս. եւ ոչ կամին հեշտանալ յաշխարհի. այլ կամին հասանիլ յարքայութիւնն երկնից: Այլեւ քաղցր է աշխատողաց. այսինքն, որք գործեն զպատուիրանս Աստուծոյ: Այլեւ յոյժ քաղցր է աղքատաց. այսինքն, որք աղքատք են ի հոգոր բարեաց. բայց ճանաչեն զպակասութիւնս իւրեանց. եւ իբրեւ զմուրացիկ երթան առ կոյսն սուրբ եւ խնդրեն ողորմութիւն: Այլեւ յոյժ քաղցր է նոցա՝ որք ջերմացեալք են ակամայ՝ մեղաց ցանկութեամբ. եւ աղաղակեն առ սուրբ կոյսն՝ եւ շիջանի տապ ցանկութեան նոցա: Այլեւ Սողոմօն խրատ է զմեզ ոչ յապաղել առնուլ ջուր շնորհաց յայսմ աղբերէ. քանզի ասէ: (Յիշեա զարարիչն քո յաւուր մանկութեան քոյ. մինչչեւ կործանեալ իցէ լար արծաթոյն. եւ խորտակեալ մանկեակ ոսկոյն. եւ մանրեալ սափորն յաղբիւրն. եւ ընկրկեալ անիւն ի գուրն:)

Չի մարդիկ ի տղայութեան իւրեանց կարեն հեշտ հանել ջուր ի յաղբերէ սուրբ Աստուածածինն. զի ունին զսափորն ողջ այսինքս, զսիրտս՝ որ պատրաստ է յամենայն ուսմունս: Եւ լար արծաթի ունին. զի ունին լուսաւոր իմացուած ի միտս տեսօղ: Եւ ունին մանեակ ոսկի. զի պատրաստ է ողորմութիւնն Աստուծոյ: Եւ ունին անիւ որ շուտ շրջի. այսինքն, զնթացս կենաց որ ոչ դադարի: Եւ աղբիւր է սուրբ Աստուածածինն. եւ գուր որդին իւր ունելով ի գիրկս: Այլ բազումք ծուլանան ի ժամ երիտասարդութեան. եւ յապաղեն ապաշխարել մինչեւ յօր մահուն իւրեանց. յայնժամ դժւար է ապաշխարել. զի կարեալ է լար արծաթին. զի յօր մահուն խաւարի հանճար մարդոյն. եւ կուրանայ միտքն. եւ պակասի խելքն. եւ ոչ կարէ ի միտ ածել զմեղս իւր եւ կարգաւ խոստովանիլ: Այլեւ անիւ կեանք մարդոյն խորտակի. զի մահն ի վերայ հասանի. եւ մանեակ ոսկին մանրի. զի ժամանակ ողորմութեանն Աստուծոյ փոխի ի ժամանակ դատաստանի: Եւ կոտորի սափորն. զի բեկի սիրտ մեղաւորին. եւ ունայն մնայ ի շնորհացն Աստուծոյ: Վասն այն պարտ է փութալ առ կոյսն սուրբ. եւ բարեխօս արկանել եւ միջնորդ հաշտութեան առՄիածին Որդին: Չի նորին բարեխոսութեամբն՝ անդամնալի հայցուածովն՝ փրկեսցէ զեկեղեցի իւր Սուրբ այլեւմ ի զանազան փորձութեանց մեղաց.՝ հանդերձեալն ազատեսցէ ի յաւիտենից տանջանացն: Եւ նմա՝ Զօր Իւրում՝ Ամենասուրբ Զօրոյն՝ փառք՝ զօրութիւն՝ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Յայլմէ քարոզ Փոխման Աստուածածին Կուսին. տեսիլն ասէ: (Նշան մեծ եր'եցաւ յերկինս. կին մի արկեալ զիւրեաւ զարեգակն.՝ զլուսինն ի ներքոյ ոտից նորա.՝ ի վերայ գլխոյ նորա պսակ երկոտասն աստեղաց:)

Յայտ. 12. 1: (Գլուխ. ԾԼԳ)

Չոգաւ Դաւիթ եւ եհան զտապանակն Տեառն ի տանեն Աբիաթարայ ի քաղաք Դաւթի ուրախութեամբ. եւ եօթն դասք պարուց էին ընդ նմա. որպէս գրեալ է յերկրորդ թագաւորութիւնսն:)

Դաւիթ թարգմանի բաւականաճեռն. կամ սիրեցեալ: Նշանակէ զՔրիստոս որ է ամենակարօղ եւ սիրեցեալ ի հօրէ: Իսկ տապանակն զսուրբ կոյսն. զի տապանակն ունէր չորս օղ. եւ երկու

լծակ: Չորս օղն նշանակե՛ գչորս բարոյական առաքինութիւնս: Եւ երկու լծակն գտերն Աստուծոյ եւ ընկերին: Ի տապանակն կայր գաւազանն Մովսէսի իրատական. մանանայն քաղցրութեան. բուրվառն ոսկի անուշութեան: Եւ տախտակք քարեղէն ուսումնական. եւ փառքն Աստուծոյ Իսրայելի էր ի վերայ տապանակին: Եւ տունն Աբիթարայ օրհնեալ եղեւ ընդ մտանել տապանակին: Արդ՝ Երուսաղէմն նշանակե՛ գերկիրն. եւ եօթն դաս պարուցն՝ գեօթն դաս սրբոցն: Չի որպէս անհնազանդութիւնն է պատճառ անկման. նոյնպէս խոնարհութիւնն է պատճառ բարձրութեան: Որպէս ասէ. (նշան մեծ երեւեցաւ յերկնիս:) Այսինքն, ոչ ի վերայ օդոյ կամ ջրոյ կամ հողոյ, այլ ի երկինս: Եւ որպէս թագուհին արտաշէսի ոչ եկն ի հարսանիսն՝ անարգեցաւ. եւ մեծարեցաւ Եսթեր վասն խոնարհութեանն զի թարգմանի թաքուցեալ. որք նշանակեն զհեայս եւ զհեթանոսս: Ապա ուրեմն կոյսն թագուհի երկնից: Եւ թագուհոյն՝ չորս ինչ պիտոյ է. այսինքն, աթոռ որ երկինքն: Երկրորդ՝ պատուանդան՝ որ է լուսին ի ներքոյ ոտից նորա: Երրորդ՝ զգեստ՝ որ է արգակն: Չորրորդ՝ թագ՝ որք են եկտասան աստեղք: Սուրբքն քան գերկինս՝ ինն աստիճանաւ բարձր են: Եւ սուրբ կոյսն՝ քան զամենայն դասս հրեշտակաց բարձր է: Եւ վեց վկայութեամբ հաստատի՝ որ սուրբ կոյսն հոգւով եւ մարմնով ի յերկինս է. որպէս ասէ սաղմոսն. (կացցէ դշխոյ ընդաջմէ քումմէ, ի հանդերձս ոսկէ հուռս զարդարեալ:) Նախզի՛ զանազան են գոլորշիք. զի է որ յոյժ թանձր է եւ ի սիրտ երկրի. եւ ոչ կարէ ելանել արտաքս. եւ ոչ կարէ անդ լինիլ, գետնաշարժ եղանի: Եւ այս ցուցանէ զագահսն. որք կապին ի սեր աշխարհիս. միշտ ի դողման են ի յափշտակիլոյ ընչիցն: Երկրորդ գոլորշի՝ որ սակաւ ինչ անօսր է. եւ բարձրանայ մինչեւ յառաջին մասն օդոյդ. եւ անդէն անկանի ի խոնարհ. եւ նշանակե՛ զհպարտսն: Երրորդ՝ է որ բարձրանայ մինչեւ յերկրորդ մասն օդոյդ. եւ լինի անձրեւ եւ ձիւն: Եւ նշանակե՛ զգիջասերսն: Չորրորդ՝ է անօսրագոյն. եւ ջերմութիւն շատ ունի. եւ հասանի մինչեւ ի չորս տապաղայ օդոյդ մերձ ի բոլորակ հրոյն: Եւ յայնմանէ լինի աստղ աքելոր. որ է նշան անկման թագաւորաց. եւ ոմանց կանգնիլոյ: Յոգեւորապէս՝ գոլորշիս այս նշանակե՛ զսուրբ կոյսն. որ էր ամպ թեթեւացեալ յերկրային ցանկութեանց. եւ ջեմացեալ Աստուածային հրովն. զի զարգակն զՔրիստոս զգեցեալ էր: Վասն որոյ ասէ սաղմոսն: (Արի Տէր ի հանգիստ քո. դու եւ տապանակ կտակի սրբութեան քոյ:) Վասն այսորիկ ասէ. (նշան երեւեցաւ.) այսինքն, աստղս որ է սուրբ կոյսն: Եւ նշանակեաց զանկումն սատանայի. որպէս ասէ. (այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ. ընկեսցի արտաքս:) Որ նշանակե՛ զվիշապն՝ որ անկաւ յերկնից. (եւ տտամբն քարշեաց ընդ իւր գերեք մասն աստեղացն.) իսկ սուրբ կոյսն յոյժ բարձրացաւ յերկինս. եւ զբազումս ընդ իւր ձգեաց: Երկրորդ՝ զի Տէրն հրամայեաց պատուել զհայր եւ զմայր. եւս առաւել պատուեաց զմայր իւր. զի հոգւով եւ մարմնով փառաւորեաց: Երրորդ՝ զի ծնօղքն առաւել պատուելիք են՝ քան զծառայս ըստ կարգի բնութեանն: Արդ՝ հաւատամք թէ Տէրն զՅօհաննէս անտարանիչն հոգւով եւ մարմնով փառաւորեաց եւ փոխեաց յերկինս. եւս առաւել զմայրն իւր: Եւս՝ եւ ոչ գտանի ի նշխարաց նորա յերկրի որպէս այլ սրբոցն. բայց միայն ի հերացն եւ ի հանդերձիցն: Չորրորդ՝ Տէրն ասէ. (որով չափով չափեք՝ չափեսցի ձեզ:) Եւ զի յորժամ որդին Աստուծոյ եկն յաշխարհս. սուրբ կոյսն պատուեաց զնա. ապա ուրեմն եւ յետ մահու մօրն՝

պարտ էր որդւոյն հոգւով եւ մարմնով փառաւորել զնա: Հինգերորդ՝ եթէ մարդիկ անմեղ մնացաւ էին ի դրախտին՝ հոգւով եւ մարմնով փառաւորիլոց էին յերկինս. արդ՝ սուրբ կոյսն էր հոգեւոր դրախտ: Վեցերորդ՝ զի թագաւոր որ ի հանդերձէ ինչ կտրէ զգեստ՝ զմնացելն ոչ թողու ընկեցեալ: Արդ՝ Տէրն էառ մարմին ի կուսէն. եւ զայն կարի իմն պատուեաց. զի միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն. եւ զմնացեալն՝ այսինքն, զմարմին մօրն պարտ էր պատուել: *Իսկ երկոտասան աստեղքն՝ նշանակեն զերկոտասան կերպ փառաց նորա: Որ երեք պսակ ունի ի կողմանէ սուրբ երրորդութեանն: Չառաջին պսակն՝ ունի ի հօրէ. զի որպէս ծնաւ հայր զորդի յաւիտենականապէս. նոյնպէս սուրբ կոյսն ծնաւ ի ժամանակի. եւ նոյն է որդին Աստուծոյ եւ որդի կուսին: Երկրորդ աստղն ի յորդւոյն եղաւ. զի պատուեաց զնա հոգւով եւ մարմնով. այն զի ըստ բնութեան որդին՝ հնազանդի ծնողացն: Երրորդ՝ եղ պսակ հոգին սուրբ. զի որպէս հոգին սուրբ ողորմութեան աղբիւր է. այսպէս սուրբ կոյսն ողորմութեան մայր է: Չորրորդ՝ փառս ունի ի կողմանէ հրեշտակացն. այսինքն, զի Աստուած էառ զբնութիւն մարդկան՝ եւ ոչ զհրեշտակաց. (զի զգաւակէն Աբրահամու բունն տհար:) Հինգերորդ՝ զի ի ձեռն կուսին կայանք հրեշտակացն լցան ընտրելօքն: Վեցերորդ՝ զի ոչ միայն էացն ի վեր քան զմի դասս հրեշտակաց. այլեւ քան զքերովբէսն եւ զսերովբէսն մերձ երրորդութեանն: Եօթներորդ ի կողմանէ մարդկան. զի ամենեքեան էաք որդիք բարկութեան. իսկ շնորհօք սուրբ կուսին՝ եղաք ժառանգորդք տանն Աստուծոյ: Ութներորդ՝ զի ամենեքեան ծնաք մեղօքն Ադամայ. եւ ի ծառայութիւն մատնեցաք սատանայի. իսկ սուրբ կուսին ազատեցաք: Իններորդ՝ ամենեքեան ի նեղութիւն մատնեցաք. իսկ սուրբ կուսին՝ հասաք ի հանգիստն յաւիտենական: Տասներորդ՝ ունի փառս ի կողմանէ դիւաց: Նախզի՝ էին նոքա անմեղք եւ կորուսին. զոր եզիտ սուրբ կոյսն: Երկրորդ՝ զշնորհս նոցա եզիտ. որպէս ասէ. (գտեր շնորհս յԱստուծոյ:) Երրորդ՝ ունէին զօրութիւն եւ կորուսին. զոր եզիտ սուրբ կոյսն: Չի այժմ դողան յանուանէ նորա դէք. Որպէս գրեալ է ի դատաւորաց ինն. թագաւորն Աբիմէլէք զնայր պատերազմիլ ընդ քաղաքս Իսրայէլացւոց. եւ քաղաքացիքն մտին ի բերթ. եւ նա երթալ պատերազմել եւ կամեր յաղթել: Կին ոմն՝ բեկտոր երկանի ընկեց ի վերայ գլխոյ նորա եւ սատակեաց: Կինս այս՝ նշանակէ զսուրբ կոյսն. քարն զՔրիստոս. բերթն եկեղեցի. աբիմէլէք զսատանայ: Գիտելի է՝ զի ոչ ոք յեօթն դասուց սրբոցն արժանի համարեցաւ լինիլ ասպնջական կուսին. որպէս եւ ասի օրինակ ինչ թէ՛ ձկնորս ոմն որսայր ձուկն. եւ եկն այր մի եւ ասէ. զոր ինչ որսայցես՝ ես գնեցից: Եւ ձգեալ զվարմն, եզիտ սեղան ոսկի. եւ վիճէին ընդ միամէնս: Եւ էին ի ժամանակին յայնմիկ եօթն իմաստունք. ասեն՝ տացուք նոցա զի մէք ոչ եմք լայեղ: Եւ տարան առ առաջինն. եւ ոչ էառ նա. եւ առ եօթանեսինն՝ եւ նոքա զանարժանաւորութիւնս խոստովանեցան: Յայնժամ տարեալ դրին ի տուն Աստուծոյն իւրեանց. զի հասարակ լիցի: Ծովն աշխարհս է. եւ ձկնորսք ազգ սուրբ կուսին. գնօղքն հաւատացեալ հեթանոսք: Եօթն իմաստունքն՝ եօթն դաս սրբոցն. զի ոչ ոք արժանի համարեցաւ զսեղան ոսկի որ է սուրբ կոյսն ընդունիլ առ ինքն. այլ եղին ի գանձն Քրիստոսի: Դշիւոյն հարաւոյ եկն ի տեսութիւն Սողոմօնի. եւ եբեր նմա բարձեալ ուղտօք ոսկի արծաթ եւ ակունս պատուականս. եւ խունկս անուշս. եւ ասաց՝ ոչ ոք է. լուեալ զկէս

փառաց քոց զոր այժմ տեսի: Հարան նշանակէ զաշխարհս. ոչխոյն զսուրբ կոյսն. Երուսաղէմն զերկինս: Սողոմօն զՔրիստոս. ուղտքն զմեղաւորս: Չոր բարձեալ սուրբ կոյսն զանազան գործօք բարեաց՝ տարաւ յերկինս այսօր: Որով եւ զմեզ արժանաւորեսցէ Քրիստոս. եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Դրախտ շնչաւոր եղեմական. յորմէ բղխեաց Յիսուս Քրիստոս աղբիւրն կենաց. բաժանեալ ի չորս գետս աւետարանչացն: Նոյեան տապան. զի ի նմա մտին մարդիկ եւ ապրեցան ի ջրհեղեղէն: Իսկ սա զբոլոր տիեզերս փրկեաց: Մորենի ան կիզելի. զի հուրն ծախիչ՝ լուսով աստուածութեանն բնակեցաւ յորովայն նորա. եւ ոչ բոցակիզեաց: Հապանակ ուխտի. որ կրեաց զանպարագրելի բանն Աստուծոյ. որ առաջնորդեաց՝ ոչ միայն որդւոցն Իսրայելի յերկիրն աւետեաց. այլ բոլոր ազգի մարդկան ի վերինն Երուսաղէմ: Սափոր ոսկի. որ կրեաց զբանն ի հօրէ զկենաց մանանայն. Չոր ոչ միայն զԻսրայել կերակրեաց. այլ զբոլոր տիեզերս: Գաւազան ծաղկեալ յարմատոյն յԵսսեայ. ըստ Յակօբայ. (ի շառաւիղէ ելեր. ընծայեցար մեզ ողկոյզ յուրախութիւն տրտմեցելոց:) Աշտանակ ձոյլ ոսկի. որ զմարմնացեալ բանն Աստուծոյ ճրագ լուցեալ ջահ տիեզերաց. եւ եօթն բերան ճրագացն՝ եօթնարփեան շնորհք հոգւոյն սրբոյ. երկու ձիթենիք ընդաջմէ եւ ընդ ահեկէ՝ հին եւ նոր կտակարանք: Արեւելք. որ ծագեաց զարգակն արդարութեան. որ հալածեաց զխաւար աղջամղջին. եւ լոյս ծագեաց որք ըստէին ի խաւարի եւ ի ստուերս մահու: Լեռն վիմածին. յորմէ վեմն առանց ձեռին հատաւ բանն Աստուած միացեալ ի մարմնի առանց սերման: Գեղմն իմանալի. յոր էջ բանն Աստուած անպարագրելի որպէս ցօղ. եւ միշտ հասեալ ելից գտիեզերս ջրովն կենդանի: Չսա Եսայի ետես թեթեւ ամպ՝ յորում նստեալ Բանն Աստուած եկն յԵգիպտոս. եւ կործանեաց զբազմ աստուած մոլորութիւնն սոցա եւ այլն: *Երկին վեհագոյն. յորում Աստուած բնակեցաւ: Արեւելք. ուստի արեգակն արդարութեան ծագեցաւ մեզ: Լոյս՝ որով խաւարեալք լուսաւորեցան: Դրախտ՝ յորմէ զեղեմայ տնկօղն տեսաք: Ծառ՝ ուստի զանթառամ ծաղիկն վայելեցաք: Բարունակ՝ յորմէ զքաղցր ողկոյլն կթեցաք: Ողկոյզ՝ ուստի ուրախարար գինին բղխեաց: Երկիր. ուստի ճշմարտութիւնն բուսաւ: Երկին. յորմէ արդարութիւն երեւեցաւ: Տախտակի բանաւոր. յորմում Աստուած նկարեցաւ: Մորենի անկիզելի, յորում Աստուած տեսաւորեցաւ: Գաւազան ծաղկաբեր. յորում Աստուած տպաւորեցաւ: Քաղաք կենդանի. յորում Աստուած բնակեցաւ: Թեման հարաւային. ուստի եկն Աստուած: Դուռն փակեալ. ընդ որ եմուտ Աստուած: Աղբիւր կնքեալ. որ զԱստուած արբուցեր: Որովայն աստուածակրօղ: Մայր Աստուածածնօղ՝ սրբուհի եւ միշտ կոյս: Դշխոյ երկնից. եւ պարագլուխ ամենայն սրբոց հրասեռից եւ հեղեղինաց. զամենեսեան ընդ քեզ միաբանեալ հայցեսցես յորդւոյ քոյ եւ Աստուծոյ մերոյ զփրկութիւն տօնողացս զոր յիշատակի վերափոխման քոյ ի լուսաճեմ խորանսն. յարփիահրաշ առագաստն. յանտրտում ուրախութիւնսն. զոր տիրապէս նա միայն գիտէ՝ որ պատրաստեացն քեզ զայսոսիկ եւ ընկալաւ ի նոյն: Վասն որոյ՝ մաղթեա աշխարհի զխաղաղութիւն: Եկեղեցւոյ հաստատութիւն: Քահանայից պաշտպանութիւն: Սարկաւագաց սրբութիւն: Վարդապետաց ուղղութիւն: Աշակերտաց հնազանդութիւն: Ժողովրդոց ունկնդրութիւն: Մեղաւորաց դարձ եւ ապաշխարութիւն: Այլեւ հիւանդաց առողջութիւն: Սգաւորաց մխիթարութիւն: Նեղելոց անդորրութիւն:

Վտանգելոց փրկութիւն: Ննջեցելոցն թողութիւն մեղաց. եւ հանգիստ յարքայութիւնն երկնից: Այլեւ հարկաւոր պիտոյից մերոց լրումն: Ամպոց քաղցրութիւն: Օդոց բարեխառնութիւն: Անդոց պտղաբերութիւն: Անասնոց աճողութիւն: Եւ ամենայն պատահարաց մերոց յարդար իրաւանցն Աստուծոյ բարձումն: Չի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարսեցուք զկեանս մեր ամենայն աստուածապաշտութեամբ. եւ հանդերձելոց բարեացդ հասցուք շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուս Զրիստոսի. ընդ որում հօր միանգամայն եւ հոգւոյն սրբոյ փառք պատիւ եւ զօրութիւն եւ երկրպագութիւն յամենայնի լիականապէս յիմնալեաց եւ ի զգալեաց. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն: Այլ դու ով գերապատուեալ յերկնաւորաց եւ յերկրաւորաց: Աստուած ընկալ հարսն: Աստուածաբնակ տաճար: Նախահօրն փրկիչ: Նախամօրն ազատիչ: Մարգարէից նախաձայնութիւն: Գուշակելոց լրումն: Օրինաց աւարտումն: Ստուերին դադարումն: Ճշմարտութեանն հաստատութիւն: Բնակողին երկնից բնակարան: Հայրական բանին ծնօղ: Ստեղծողին էից աթոռ: Անհարսնացեալ հարսն: Երկնային առազաստ: Կուսանաց զարդ: Ամուսնացելոց աղջախոհութիւն: Գլորելոց կանգնումն: Մեղաւորաց յոյս: Նեղելոց ապաւեն: Արտասուաց փարատիչ: Տրտմեցելոց ուրախութիւն: Վշտացելոց մխիթարութիւն: Եկեղեցւոյ պարծանք: Հաւատացելոց առ Աստուած աղէրս: Վասն որոյ յամենեցեան քեւ բարեգործելոցն այսօր՝ համաձայնեալ վերապատութիւնս: Բանզի եկեղեցիք տօնեն: Բահանայք օրհնեն: Բահանայապետք մեծացուցանեն: Սարգաւազունք սպասաւորեն: Կրօնաւորք փառաւորեն: Կուսանք մեծարեն: Հաւատացեալ ժողովրդք բարեբանեն: Արք բարեհամբաւեն: Կանայք ծունր կրկնեն: Ծերք խոստովանին: Տղայք երկրպագանեն. եւ ամենեքեան առհասարակ փառաւորեն զանկարօտդ ամենայն փառաց եւ պատուոյ: Վասն որոյ ամենեցունց հայցեա ի բոլորիցն Տեառնէ զներումն եւ զհաշտութիւն. զխորին խաղաղութիւն. եւ զանշարժ հաստատութիւն աստի կենցաղավարութեան. եւ անտի կենացն երկնայնոցն դասակցութեան: Որք ընդ հրանիւթիցն սեռս այսօր հանդիսացեալ վերապատւեմք զօր յիշատակի վերափոխման քոյ ի ստորինս Երուսաղէմէ, ի վերինն Սիօն՝ յազատն՝ ի մայրն մեր ամենեցուն: (Ի քաղաք Տեառն զօրութեանց. եւ ի քաղաք թագաւորին մեծի: Յեկեղեցիս անդրանկաց յոգիս արդարոց կատարելոցն:) Չի բարեխօսութեամբ անդամնալի հայցուածոց քոց՝ որպէս մայր առ որդի՝ արժանի լիցուք տեսանել զքեզ յանզուգական փառս փառաւորել. եւ քոյին միջնորդական պարզ՝օք՝ զպարզ՝աբաշն օրհնել, գովել, ' փառաւորել անլռելի բարեբանութեամբ ի բարձունս Հօր ' Որդւոյ ' Հոգւոյն Սրբոյ. այժմ ' միշտ ' յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ Աստուածածնին Փոխման. ի բանն Սողոմօսի որ ասէ յերգսն: (Պարտեզ փակեալ ' աղբիւր կնքեալ:) Երգ երգոց. 4. 12: (Գլուխ. ԸԼԴ)

Աստուածային ձեռամբ կազմեալ ըզմարդն առաջին ըստ պատկերի եւ նմանութեան Արարչին, եղ զնա յաստուածատունկ դրախտին փափկութեան (գործեալ զնա եւ պահել:) Եւ երկոտասան պարգեւօքն զարդարեալ, իշխան

եւ Տէր ամենայն երկրի կացուցեալ: Ըստ որում, (զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա:) *Եւ արդ՝ առաջին պարգեւ եւ՝ ունէր զտեսութիւն Աստուծոյ: Երկրորդ՝ Խօսակցութիւն: Երրորդ՝ Անմահութիւն: Չորրորդ՝ Լուսեղէն պատմութեան: Հինգերորդ՝ Անախտ կեանս: Վեցերորդ՝ Անծերանալի հասակ: Եօթներորդ՝ Վայելչութիւն անաշխատ դրախտին: Ութներորդ՝ Մշակութիւն Աստուծոյ անմահ տնկոց երկրագործ եւ պահապան: Իններորդ՝ Սէր եւ գութ Աստուծոյ ի վերայ մարդոյն հնազանդութեամբ պատուիրանին. զի գայր առ նա: Տասներորդ՝ Թագաւորութիւն ի վերայ ամենայն ձեռակերտաց: Մետասաներորդ՝ Զահանայութիւն: Երկոտասաներորդ՝ Մարգարեութիւն: Չայս երկրոտսան պարգեւս՝ եհան ի մենջ առաջին կոյսն եւա: Նախ՝ ի տեսութենէն. զի ոչ եւս յաւել տեսանել զերեսս Աստուծոյ: Ի խօսակցութենէն. զի միւս ի Յորդանան այլ ոչ ասի հօր Աստուծոյ խօսիլ ընդ մարդկան: Իսկ յանմահութենէն. զի վճիռ եհատ (հողէին եւ ի հող դարձցիս:) Ի լուսաւոր պատմութեանէն. յորժամ կերին ի պտղոյն, ծանեան զի մերկ էին. եւ արարին սփածանելիս: Իսկ յանախտ կենացն. (տրտմութեամբ եւ քրտամբ կերիցես զհաց:) Իսկ յանծերանալի հասակէն. (փուշ եւ տատասկ բուսցի քեզ:) Իսկ ի պահպանութենէն. (յորմէ պատուիրեցի քեզ չուտել՝ կերե՞ր արդեօք ի նմանէ:) Իսկ ի վայելչութենէն՝ ասէ. (եհան զնա եւ բնակեցոյց ընդդէմ դրախտին փափկութեան:) Իսկ ատելութեան ցոյց. (զուցէ ձգիցէ զձեռն իւր:) Այլ ի թագաւորութենէն. (մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ հաւասարեացաւ անասնոց անբանից:) Ի քահանայութենէն. զի ոչ իշխեաց պատարագ մատուցանել ի կեանս իւր: Իսկ մարգարեութիւնն լռեաց. զի ոչ եւս երեւի բան մի յիշատակ շնորհաց նորա: Եւ ընդդէմ այսմ, սուրբ կոյսն Մարիամ ոչ թէ միայն տեսութեանն Աստուծոյ արժանաւորեցաւ ի հեռաստանէ, այլ ինն ամիս տաղաւարեցոյց զորդին յարգանդի իւրում: Եւ փոխանակ լսելոյ զխօսս Աստուծոյ՝ արար զորդիս Ադամայ՝ որդիս Աստուծոյ. որ ասացաւ նախ նման լինին Աստուծոյ. (ասաց եւ եղէն՝ հրամայեց եւ հաստատեցան:) Եւ փոխանակ լուսեղիսին՝ զգեցոյց զՔրիստոս ըստ առքելոյն: Եւ անմահութեանն՝ զկեանսն յաւիտենականս պարգեւեաց. ըստ այնմ, (որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս. եւ զմահ մի տեսցէ:) Եւ անցաւոր կենացն՝ զայն. ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք: Իսկ անծերանալի կենացն՝ (զգափ հասակի կատարման Քրիստոսի:) Իսկ վայելչութեան դրախտին՝ (զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ այլովքն հանդերձ:) Իսկ պահպանութեան դրախտին՝ ընթեռնուլ զիմաստս սուրբ գրոց. զի խստանայ բանալ զգանձս աներեւոյթս: Իսկ սիրոյն՝ (ոչ ոք ունիցի այնպիսի սէր, որ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց որպէս ես եղի:) Իսկ թագաւորութեանն երկրի՝ զայն որ (նմա կրկնի ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրաւորաց եւ այլն:) Իսկ քահանայութեան՝ զանարիւն պատարագն. (զայս արարեք առ իմոյ յիշատակի:) Իսկ մարգարեութեանն՝ (յաւուրս յետինս՝ հեղից յոգւոյ իմոյ ի վերայ ամենայն մարմնոյ. եւ մարգարեացի ուստերք եւ դատերք ձեր եւ այլն:) Եւ զայս ամենայն պարգեւս՝ վերստին առ մեզ դարձոյց սրբուհի կոյսն Աստուածածին Մարիամ ի ձեռն Միածնի Որդւոյն կոյս եւ անապակրան ծննդեամբն: Վասն որոյ ասէ իմաստունն: (Պարտեզ փակեալ եւ աղբիւր կնքեալ:) *Եւ աստ չորս ինչ ասելի է մեզ: Նախ թէ՛ զի՞նչ է առաւել պատիւն

մերքան զԱդամայն եւ զհրեշտակաց: Երկրորդ՝ զի՞նչ է պարտեզ փակել եւ աղբիւր կնքեալ: Երրորդ՝ պարտեզ է եւ եկեղեցի սուրբ: Չորրորդ՝ վասն փոխման տիրուհոյն: *Եւ զառաջինն գիտելի է՝ զի կոյսն Մարիամ՝ ոչ միայն զփառս Ադամայ ետ մեզ զոր ունէր ի դրախտին, այլ զայն զոր Աստուած խոստացաւ նմա յարքայութիւնն վերին: Եւ այժմ եկեղեցի սուրբ եւ հաւատացելոց հոգիքն՝ չորս կերպիւ առաւել պատիւ ունին քան զԱդամ որ ի դրախտին: Նախզի՝ Ադամ ձեռօքն Աստուծոյ արարաւ. եւ բանիւ որպէս այլ ամենայն արարածք: Իսկ եկեղեցի սուրբ՝ մարդեղութեամբ Քրիստոսի՝ եւ չարչարանօքն՝ մահուամբն՝ եւ յարութեամբն սրբեցաւ: Երկրորդ՝ զի Ադամ ի մեջ մահու եւ կենաց էր. իսկ հաւատացեալք որք սրբեցան աւագանաւն՝ յանմահութիւն գրեցան որպէս ամենայն մկրտեալքն: Երրորդ՝ զի նա խոստմամբ ունէր զարքայութիւնն վերին. իսկ մկրտեալքն արեամբ՝ զխոստացեալ տեղի նորա ընկալան արդեամբ. որպէս ամենայն մարտիրոսք եւ վկայք Քրիստոսի: Չորրորդ՝ զնա ի պատկերն Աստուծոյ արար ըստ նմանութեամբ իւրում. իսկ սա՝ որդի Աստուծոյ շնորհօք, եւ ժառանգակից Քրիստոսի. զի ունի զպատկեր նմանութեանն. եւ այսու առաւելեալ է ի վերայ: Եւ զայս մեծ պատիւ եւ զփառս՝ ետ մեզ Աստուածածին կոյսն ի ձեռն Միածին որդոյն: Եւ ոչ միայն այս, այլեւ բարձրացոյց զմեզ գեր ի վերոյ քան զպատիւ հրեշտակացն: Չի այժմ եկեղեցի սուրբ՝ չորս պատուով առաւել է քան զհրեշտակս: Նախզի՝ եկեղեցի սուրբ հարսն եւ անդամ է Քրիստոսի. ըստ այնմ, (մարմին եմք ի մարմնոյ նորա. եւ անդամք յանդամոց նորա.) եւ նոքա ծառայք Քրիստոսի: Երկրորդ՝ նոքա երկիր պագանեն գլխոյն մերոյ. եւ սպասաւորք են մարդկան. որպէս ասէ առաքեալն: Եւ մեք ոչ երկրպագանեմք նոցա. եւ ոչ սպասաւորեմք հրեշտակաց. զի ծառայակիցք են մեզ: Երրորդ՝ մեք չարչարանացն Քրիստոսի եւ փառացն հաղորդիմք. եւ նոքա ոչ զի ոչ ունին մարմին որք չարչարին եւ փառաւորին: Չորրորդ՝ զի սուրբ եկեղեցի՝ օրըստօրէ յաւելու ի գոյացական վարձս իւր առաքինութեամբ եւ ճգնութեամբ: Եւ նոքա ոչ կարեն յաւելուլ. այլ զոր ունին զպատիւ ի նոյն մնան անփոփոխ: Այսպէս եկեղեցի սուրբ՝ առաւել բարձրացաւ ի յերկիր քան զհրեշտակս ի յերկինս: Եւ զայս բարձրութիւնս՝ այժմ ունինմ հաւատով. եւ յետ մահու հոգւով. եւ յետ յարութեանն՝ հոգւով եւ մարմնով յերկինս: Եւ այս ամենայն մեծամեծ բարեաց եւ անասելի պարգեւաց՝ պատճառ եղել կոյսն Աստուածածին. որ սուրբ եւ անապական ծննդեամբ ծնաւ զՈրդին Միածին. վասն որոյ ասէ Սողոմօն: (Պարտեզ փակեալ եւ աղբիւր կնքեալ:) Այս առաջինն ի կարճոյ: *Երկրորդ գիտելի է՝ զի բանս այս զանագան մտօք իմանի: Եւ ասեմք վեց կերպիւ: Նախ առ մեզ աղբիւր՝ զմաց զօրութիւնն է իմանալ. յորժամ ի բարի գործն շարժիմք եւ յօժարիմք, յայնժամ կնքեալ է առ մեզ. իսկ յորժամ ի չար խորհուրդն յօժարիմք, աղբիւր մտաց մերոց վատնի եւ արտաքս հոսի ի փուշ մեղացն եւ կորնչի: Եւ պարտեզ է զանագան առաքինութիւնն մեր. պահք՝ աղօթք՝ ողորմութիւն, եւ այլք. որովք հաճոյանամք Աստուծոյ եւ հրեշտակաց նորա: Եւ փակեալ է՝ որ ոչ լինի կեղծեօք եւ ի ցոյցս մարդկան. որպէս Քրիստոս հրամայէ: (Մուտ ի սենակ քո. եւ փակեա գդուռն քո. եւ հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ:) Կամ այն է փակելն՝ որ զփուշ մեղացն սերմանեալ սատանայի ի հոգիս մեր, քակեմք եւ ի բաց ձգեմք եւ արգիլեմք՝ որ այլ ոչ բուսանի ի մեզ: Երկրորդ՝ պարտեզ են զագայութիւնք մարմնոյս

բարեբերք. զի աչօք զբարին տեսանեմք. եւ ականջովք լսեմք. եւ լեզուա զբարին խօսիմք. երւ ձեքօք զբարին գործեմք: Փակել պարտ է զսոսա ընդդէմ չարին. որ ոչ սերմանէ սատանայ զորոմն ի վերայ բարի սերմանցն. որպէս Տէրն հրամայէ. (ի քուն լինիլ մարդկան, եկն թշնամին եւ ցանեաց զորոմն ի վերայ բարի սերմանցն:) Եւ աղբիւր է խոհեմութիւնն. ի ներքուստ կնքելի է. զի մի պղտորեսցի չար խորհրդով. որպէս ակն աղբերն յորժամ պղտորի՝ ապականէ զպարտեզն: Այսպէս հրամայէ Զրիստոս թէ՛ (ի սրտէ գան խորհուրդք չարութեան. պոռնկութեան, սպանութեան, եւ այլն. եւ պղծեն զմարդն:) Երրորդ՝ պարտեզն յուրով բարձարով եւ ծաղկով է բուսեալ. եւ մեզ պարտ է ստանալ զանագան առաքինութիւնս. հաւատ, յոյս, սէր, արիութիւն, արդարութիւն, եւ այլն: Եւ աղբիւր է վարդապետութիւն սուրբ հոգւոյն: Եւ սոքա ունին փակ եւ կնիք զօրէնս եւ զմարգարես: Եւ ոչ է պարտ քան զնոսա արտաքս ելանել. այլ զոր ինչ օրէնք եւ մարգաթք եւ սուրբ վարդապետք հարմայ են՝ զնոյն պարտ է առնելլ վարդապետել. երւ ոչ մտացածին բանիւք այլանդակ խօսիլ կամ գործել. եթէ զբանս եւ եթէ զգործս: Այն է փակելն եւ կնքելն՝ զի պարտ է որ Տէր պարտիզին եւ նորա բարեկամքն վայելեն՝ ուտեն եւ ըմպել. եւ ոչ օտար խոզքն թաւալին եւ կոխեն: Չորրորդ՝ պարտեզ է կերակրելի սուրբ մարմինն եւ արիւնն Զրիստոսի. փակել պարտ է յանարժանիցն. եւ արժանաւորացն բանալ. ըստ այնմ, (մի տայք զսրբութիւն շանց.) եւ աղբիւր է իմաստութիւնն Աստուծոյ եւ աւետարանն սուրբ: Կնքել պարտ է ի մէջ հաւատացելոց. (եւ մի արկանել զմարգարիտն խոզաբարոյիցն.) որք առ ոտն կոխեն եւ արհամարհեն զսուրբ գիտութիւնն: Զինգերորդ՝ պարտեզ փակեալ եւ աղբիւր կնքեալ էր մարդեղութիւն բանին Աստուծոյ. զի ոչ հրեշտակք՝ եւ ոչ մարդիկ կարեն իմանալ. ըստ այնմ. (խորհուրդն որ ծածկեալ էր յաւիտեանց եւ յազգաց.) եւ փակն եւ կնիքն այն է՝ որ ի մարգարեսն եւ յօրէնսն ծածկապէս յայնեցաւ. օրինակաւ եւ ծածուկ խորհրդով. որպէս Մովսէս զմորենին վառեալ ետես յօրինակ սուրբ կուսին. եւ գաւազանն սքանչելիս առնէր յօրինակ սուրբ խաչին: Եւ Աբրահամ ետես զխոյն կախեալ զծառոյն յօրինակ պատարագին Զրիստոսի. այսպէս եւ ամենայն մարգարեքն օրինակաւ եւ ծածուկ խօսեցան: Երւ այժմ յեկեղեցի տնօրէնութիւնն Զրիստոսի կնքեալ է եւ փակեալ երեք կերպիւ: Նախ՝ փակեալ է յօտաւորաց եւ յանարժանից գիտութիւնն Զրիստոսի: Երկրորդ՝ փակեալ է եւ կնքեալ. զի առ մեզ պահեմք ամրացեալ. (զի խորհուրդ իմ ինձ եւ իմոցն ասէ:) Երրորդ՝ այն է փակն եւ կնիքն զի թեպէտ իմաստութիւնն Աստուծոյ եւ շնորհքն բոլորին ի մարդիկ, այլ ոչ պակասին եւ ոչ աւելանին. այլ կնքեալ կան ի նոյնութեանն: Տես զմկրտութեանն շնորհ. տես զպատարագն որ յամենայն տեղիս մատուցանի մի եւ նոյն մարմինն Զրիստոսի. այսպէս եւ զայլսն իմա: Վեցերորդ՝ զսուրբ կոյսն Աստուծածին՝ ասէ պարտեզ փակեալ. որպէս եղեմ դրախտն որ հրեղէն սրովն փակեցաւ ի յանբան անասնոցն եւ ի չարացն: Այսպէս եւ սուրբ կոյսն՝ ի հոգւոյն սրբոյն ամրացաւ. զի արկած չարին ոչ կարաց մտանել ի նա. ոչ հոգեկան, եւ ոչ մարմնական: Եւ աղբիւր կնքեալ՝ զի ջրհոր եղել կենդանի ջրոյն. միայն բանին Աստուծոյ բացեալ եւ կնքեալ. այսինքն, զի էջ Բանն Աստուած ի կուսական արգբանդն. եւ առանց սերման մարմնացաւ եւ ծնաւ մարմնով. եւ նշան կուսութեանն անխախտելի մնացեալ: Չայսմանէ եւ Էզէկիել ասէ. (Դուռնս այս փակեալ կացցէ. եւ ոչ ոք մտցէ եւ ելցէ՝ բայց միայն

Տեր Աստուածն Իսրայելի:) Եւ բազում կերպիւ Է իմանալ զդուռն: Նախ՝ դուռն կոչէ զտնօրէնութիւնն երեք կերպիւ: Առաջին՝ զի նովաւ եմուտ Բանն Աստուած ի բնութիւնս մեր. եւ յօրինեաց զմեզ: Երկրորդ՝ զի նովաւ մտանեմք ի գիտութիւն աստուածութեան նորա: Երրորդ՝ զի նովաւ մտանեմք յերկինս՝ եւ առ հայր ելանեմք. որպէս ասէ. (Ես եմ դուռն. եթէ ոք մտցէ ընդիս՝ մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ:) Երկրորդ կերպիւ՝ դուռն Է գթութիւնն Աստուծոյ. զի ոմանց բանայ. եւ ոմանց փակէ. որպէս ասէ. (Իմաստունք մտին եւ փակեցաւ դուռն:) Երրորդ՝ եկիրս դուռն Է երկնից. եւ եկեղեցիս վերին Սիօնի: Չի նախ աստ գամք. եւ ապա անդ ելանեմք: Չորրորդ կերպիւ՝ դուռն կոչէ զկոյսն Մարիամ. զի Բանն Աստուած էջ նախ եւ բնակեցաւ ի նմա. եւ ապա ի նմանէ մարմնով երեւեցաւ մեզ: Այս երկրորդ գլուխն՝ զի դուռն արեւալ եւ պարտեզ փակեալ կոչի Աստուածածին կոյսն: *Երրորդն՝ եւ յայլ ուր պարտեզ՝ ցեկեղեցի կոչէ ասելով: (Արի հիւսիս. եւ եկ հարաւ. շնչեա ի պարտեզ իմ. եւ բուրեցիս խունկք:) Պարտեզն՝ նշանակէ զեկեղեցի սուրբ՝ որք են հաւատացեալ ժողովուրդք. զի են տեղի հանգստեան Աստուծոյ: Որք ի շուրս աւազանին տնկեցան. եւ աւետարնին վարդապետութեամբ ոռոգին. եւ ծաղկեալ են հաւատովք. եւ զուարճացեալ յուսով. եւ աճեցեալ սիրով. եւ իբրեւ գիտնակ անուշահոտ՝ ունին զանազան առաքինութիւնս մարմնավորս: Իսկ հողմն հիւսիսի՝ զփորձութիւնս սատանայի նշանակէ. եւ հողմն հարաւոյ՝ զշնորհս հոգւոյն սրբոյ. այսպէս: Հիւսիսային կողմն՝ խաւար Է եւ ցուրտ. զի հեռի Է յարեգականէն. նշանակէ զսատանայ՝ որ խաւար Է եւ չար. զի գրկեալ Է յիմանալի լուսոյն Աստուծոյ եւ ի բարւոյն. եւ բարձրացեալ Է հպարտութեամբ որպէս զլերինս հիւսիսոյ. եւ յորս մերձենալ՝ ի լուսոյն զրկէ եւ խաւարէ. եւ ի բարւոյն փոխէ. եւ զչարն տայ գործել. եւ հպարտութեամբն ընկենու ի դժոխս որպէս ինքն անկաւ: Եւ հողմն հիւսիսոյ՝ վեց ազգ վնասէ զերկիր: Նախ՝ կարկուտ բերէ: Երկրորդ՝ ձիւն: Երրորդ՝ ցուրտ: Չորրորդ՝ սառն: Հինգերորդ՝ պակասէ զջերմութիւն: Վեցերդ՝ անպտղութիւն գործէ: Եւ զայսոսիկ գործէ սատանայ: Նախ՝ զկարկուտ բարկութեանն շարժէ. եւ այնու հարկանէ զմարդ բանիւ եւ գործով: Ապա զձիւն զանազան փորձութեան մեղաց ի վերայ բերէ մարդոյ. ապա զսառն կռապաշտութեան եւ պնտութեան դնէ ի սիրտ մարդոյ. եւ զցուրտ ատելութեան. որ ատէ զընկերն եւ զբարի խրատ. ապա պակասէ ի սիրոյն Աստուծոյ եւ յարքայութենէն. եւ յամենայն բարի գործոց անպտուղ առնէ: Վասն այն պարտ Է աղաչել զԱստուած՝ զի պեռացուցէ զսատանայ եւ զամենայն փորձութիւնս նորա: Իսկ ընդդէմ այսմ՝ հարաւակողմն լոյս Է եւ ջերմ եւ խոնարհ: Նշանակէ հոգւոյն սրբոյս՝ որ լոյս Է. եւ լուսաւորէ զհոգիս. եւ ջերմն սիրով կապէ առ Աստուած. եւ խոնարհութեամբ իջանէ առ մեզ. եւ տայ զանազան շնորհս: Եւ որպէս հողմն հարաւոյ վեց իր գոծէ: Նախ՝ զսառն հալէ: Երկրորդ՝ զցուրտն հերքէ: Երրորդ՝ զջերմութիւն ի յերկիր տնկէ: Չորրորդ՝ գարուն բերէ: Հինգերորդ՝ անձրեւ բերէ: Վեցերորդ՝ ի ծաղիկ եւ ի պտուղ շարժէ: Այսպէս ուր իջանէ հոգին սուրբ՝ նախ զսառն մեղաց եւ անհաւատութեան հալէ. ըստ այնմ, (շնչեսցեն հողմք եւ գնացեն ջուրք.) այսինքն, զի յորժամ հողմն սուրբ հոգւոյն շնչէ՝ հոգիք մարդկան արձակին ի կապից մեղաց. եւ խառնին ի հանդերձեալ կեանս: Երկրորդ՝ բառնայ զցրտութիւն ատելութեան, որք ունին առ միմեանս եւ առ Աստուած: Երրորդ՝ զջերմութիւն սիրոյն հաստատէ ի սիրտս մեր՝ որով սիրեմք զԱստուած եւ

զընկերս: Չորրորդ՝ գարուն առնէ հոգւոց. եւ նորոգէ ի հնութենէ մեղաց. ըստ այնմ, (առաքես զհոգի քո եւ ստանաս գնոսա. եւ նորոգես զերեսս երկրի:) Յինգերորդ՝ տայ զանձրեւ զանազան շնորհաց. ըստ այնմ, (ումեմն ի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան. եւ այլում գիտութեան, եւ բժշկութեան, եւ այլն:) Վեցերորդ՝ ի ծաղիկ հաւատոյ եւ ի պտուղ բարեգործութեան շարժէ զհոգիս. զի ամենայն բարի գործոց եւ առաքինութեանց պտղաբերիչ է հոգին սուրբ. վասն այն հարսնացեալ եկեղեցի սուրբ՝ աղօթ առ Աստուած ասելով: (Արի հիւսիս. եւ եկ հարաւ. շնչեա ի պարտեզ իմ:) Իսկ նախ՝ պարտեզ եղեն առաքեալքն. զի նախ ընկալան զհոգին սուրբ յինքեանս. եւ ապա ի մեզ բուրեցին զանուշահոտ քարոզութիւնն հոգւով սրբով. եւ տնկացին պարտեզ յեկեղեցիս սուրբ: Եւ այն որ ասէ. (եջ ի պարտեզ իւր.) այսինքն, յիւր ձեռագործ ստեղծածն եւ յիւր պատկերն. որ է սուրբ կոյսն Մարիամ: Եւ դարձեալ՝ պարտեզ գերեզմանին ասէ ուր եղաւ Քրիստոսի: Եւ կամ հանապազ առ մեզ իջանէ ի սիրոս սրբոյս. ըստ այնմ, (ես եւ հայր առ նա եկեսցուք. եւ օթեանս առ նմա արասցուք:) Այս երրորդ գլուխն վասն եկեղեցւոյ: *Եւ չորրորդ գլուխն վասն փոխման Տիրամօրն ասէ: (Պարտեզ փակեալ եւ աղբիւր կնքեալ:) Չի ի բոլոր կեանս իւր՝ բոլոր մարդովն՝ այսինքն, հոգւով մարմնով՝ մտօք եւ զգայութեամբ՝ ամրացեալ էր եւ կնքեալ անմտանելի չարին: Այլ առաւել նկատէ բանս այս ի վերայ փոխումն Տիրամօրն, յորժամ պարտեզն զանազան բարութեամբ լի՝ եւ աղբիւրն յորդառատ շնորհաց փակեցաւ եւ կնքեցաւ ի գերեզմանի: Չի այսպէս է պատմութիւնն: Եթէ սուրբ Կոյսն Մարիամ, դուստրեր Յովակիմայ եւ Աննայի. ի թագաւորական ցեղէ. եւ յազգէ Դաւթի ըստ հօրն Յովակիմայ: Եւ ըստ մօրն՝ յազգէ քահանայիցն ի ցեղէն դեւեայ դուստր մաթան քահանայի ի Բեթղէեմէ: Բայց ինքն սուրբ Կոյսն՝ էր ամլութեան ծնունդ. եւ աւետեաց զաւակ ի ծնողաց իւրոց: Երից ամաց եղեալ՝ տարան զնա ի տաճարն սուրբ. եւ անդ կայր իբրեւ զանբիծ աղանի մինչ ի չորեքտասան ամն որ յանձնեցաւ յարդարն եւ ի պարկեշտ ծերունին Յովսէփ: Եւ եկաց ի Նազարեթ ի տանն Յովսէփայ ամիսս երիս. եւ ետ հրեշտակապետն զողջոյնն Մարիամու. եւ ի հնգետասան ամի իւրոյ՝ ծնաւ զմարդացեալն Աստուած զՏէր մեր Յիսուս Քրիստոս: Եւ կացեալ ընդ փրկչին զամս երեսուն եւ երեք. եւ ի խաչին յանձնեաց զմայրն իւր ի Կուսանն Յօհաննէս աւետարանիչն: Եւ նա սպասաւորեաց նմա եկիւղիւ զամս երկոտասան: Եւ ամբ կենաց նորա յերկարեալ ի մարմնի ամս վաթսուն այսպէս: Չի հնգետասան ամաց ծնաւ զորդին Աստուծոյ. եւ երեսուն եւ երեք ամ կենարարին՝ որ լինի քառասուն եւ ութն ամ. եւ յետ խաչին Քրիստոսի՝ երկոտասան ամ. որ լինի վաթսուն. եւ վերափոխի առ Որդին իւր Միածին: Եւ յայսմանէ կանոնեալ է ի մեջ պաւատացելոց՝ զի այր մարդ յամենայն աւուր երեսուն եւ վեց ծունր կրկնեսցէ ի փառս Քրիստոսի. երեսուն եւ երեք ըստ ամաց կենարարին որ յաշխարհի կացեալ. եւ երեք ի դէմս Սրբոյ Երրորդութեանն: Նմանապէս կանոնեալ է՝ զի կին մարդ յամենայն աւուր վաթսուն ծունր կրկնեսցէ ի պատիւ եւ ի բարեխօսութիւն սուրբ Աստուածածին. որ վաթսուն ամ կեցեալ ի մարմնի, վերափոխի հոգւով ի չնաշխարհիկն, ի գերաշխարհայնոցն կայանս, յարքայութիւն արքային որդւոյ իւրոյ եւ Աստուածն մերոյ: Եւ մարմինն Աստուածընկալ՝ պատեալ յառաքելոցն եւ եղեալ ի գերեզմանի ի գերթամանի, ջահիւք եւ լապտերօք ի ձորն ջահից կոչեցեալ: Եւ սին լուսոյ

Եւ շող եկնային ի վերայ իջեալ ի բարձանց՝ ակներեւ ամենայն տեսողաց մինչեւ յերիս աւուրս: Եւ խաւարեալ ընդ լուսոյն զօրաց լուսեղինացն զերգս հոգեւորականս, որք գովէին օրհնէին մեծարէին, եւ մեծացուցանէին անճառելի ձայնիւ զմարմինն տիրակիր Աստուածածին Կուսին: Եւ Երրորդումն աւուր յարուցեալ ըստ Միածնի որդւոյն իւրոյ՝ երկնառաք լուսովն եւ դասիւք հրեշտակացն վերանայ յարքայութիւնն արքայ որդւոյն, զանմահականն առեալ թագաւորութիւնն անսպառ յաւիտենիւ: Անցեալ ընդ ամենայն զգալի եւ իմանալեաց աշխարհն՝ եւ յԱստուածականն հասեալ խորան ի սուրբն սրբոց կոչեցեալ. ի ներքին կողմն վարագուրին յանճառելի փառս, եւ յանգրաւակն պատիւս: Բարեխօս խոստովանողացս զնա Աստուածածին. եւ զՈրդի նորա Աստուած ճշմարիտ: Չի բարեխօսութեամբ ամենասրբուհւոյ Աստուածածին՝ որոյ այսօր է յիշատակ փոխման՝ անմեկնելի եւ անփոխադրելի մնացէ ի մենջ անբովանդակելի շնոհն նորա: Չի որպէս համբարձաւ Աստուածն մեր Քրիստոս առաջի տեսութեան աշակերտացն՝ եւ ընդ մեզ է ստուգապէս զամենայն աւուրս որպէս ասաց. (Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս) աներեւութապէս. զի տանիլ կարացէ աշխարհ: Նոյնպէս եւ մայրն իւր վերացեալ եւ փոխեալ յերկինս, ընդ մեզ է ի Տեառն տուեալ պարգեւօքն: Վասն որոյ անւամբ եւ ներգործութեամբ ի խաչ եւ յեկեղեցիս եւ ի կենդանագիրս իւր՝ յոգիւ եւ ի սիրտս եւ ի շրթունս հաւատացելոց է՝ եւ խոստովանողացս զնա Աստուածածին. վասն որոյ յամենայն ամի շրջագայութեան՝ զնոյն օր վերափոխմանն տօնեմք ցնծութեամբ եւ հսկմամբ. պահօք եւ աղօթիւք. եւ օրհնութեաք եւ երգօք հոգեւորօք: Որպէս յայնմ աւուր դասք առաքելոցն համահաւաքեալ հանդերձ հրեշտակօք՝ ուղարկաւորք լինիմք վերափոխման Աստուածածնին, բերելով ի մեզ զառատ պարգեւացն Աստուծոյ զքաղցրութիւն զքաւութիւն եւ զթողութիւն մեղաց: Այլեւ զորդեգրութեան պատիւ հօրն երկնաւորի. եւ զեղբայրակցութիւնն որդւոյն միածնի. եւ զտաճարակցութիւն հոգւոյն սրբոյ: (Որով աղաղակեմք արբա հայր. եւ լինիմք ժառանգք Աստուծոյ. եւ ժառանգակիցք Քրիստոսի:) Եւ որպէս քաղցրացոյց Տէրն մեր զդառնութիւն մահու կամաւորաբար ճաշակելով զնա իբրեւ զգինի ուրախարար. այսպէս եւ զմայրն իւր ոչ ինայեաց ի նմանէ. այլ արար զնա իւր մահակից եւ գերեզմանակից. եւ վերացմանն կցորդ եւ յարութեանն հաղորդ եւ փառացն ժառանգորդ: Նոյնպէս եւ մեզ զդժուարինն ի դիւրինն արացէ. եւ զառապարն ի հարթս ճանապարհաց. առանց երկիւղի եւ զարհուրանաց անցուցէ ընդ այսս չարութեան որք ի ներքոյ երկնից, հայելով ի Տէրն մեր եւ ի մայրն իւր եւ յամենայն սրբոյս: Այլեւ ուղղափառ հաւատով եւ բարի գործով եւ սրբութեամբ սրտի առ Աստուած եւ առ մարդիկ, զնացուք ի Տէր անմոլար ուղեզնացութեամբ ի հաճոյսն Աստուծոյ, բարեխօս ունելով զօրհնեալն ի կանայս զամենասուրբ զԱստուածածինն: Չի տացէ աշխարհի խաղաղութիւն. քրիստոնէից միաբանութիւն. եկեղեցականաց բարեկարգութիւն եւ զգուշութիւն: Աշխարհականաց երկիւղ եւ լսողութիւն: Ամմեղաց պահպանութիւն եւ փրկութիւն: Մեղաւորաց դարձ եւ ապաշխարութիւն: Մեծատանց քաղցրութիւն եւ ողորմութիւն առ աղքատաց: Նեղելոց եւ տնանկաց համբերութիւն եւ ազատութիւն: Գերեաց արձակումն եւ խաղաղութիւն: Օդոց բարեխառնութիւն. անդաստանաց պողաբերութիւն: Այլեւ ննջեցելոցն հանգիստ եւ ողորմութիւն. եւ յաւիտենից

պասկացն արժանաւորութիւն: Եւ երախտաւորացն մերոց դարձաւծ եւ բազմապատիկ փոխադարձութիւն:

Եւ տօնողացս զմեծապայծառ տօն ջահաւորեալ Աստուածածին կուսին, ' երգեցողացս զքարոզս բանից, ընթերցողաց եւ սրտի մտօք լսողաց, յիշատակ առ Տէր եղիցի: Այլեւ քաւութիւն եւ թողութիւն եւ անյիշութիւն մեղաց եւ յանցանաց. որ ի ժամանակս մեր ի խորհուրդս ի միտս եւ յոգիս ի բանս եւ ի գործս եւ ի մարմինս, մաքրութիւն եւ յստակութիւն ողորմութեամբ ' գթութեամբ Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Որում փառք ' զօրութիւն ' իշխանութիւն՝ պատիւ ' երկրպագութիւն ընդ Յօր Իւրում ' Ամենասուրբ Յօգւոյն, յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ վասն Ճննդեան սուրբ Կուսին ի Յովակիմայ ' յԱննայէ. որ յետ փոխմանն՝ ի սեպտեմբերի ութն տօնեմք. ի բանն որ ասէ: (Յոգին Սուրբ եկեցէ ի քեզ. ' զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քոյ:) Ղուկ. 1. 35: (Գլուխ. ՃԼԵ)

Չամենաշնորհ ' զտօնելի աւուրս ծննդեան ծնողին Ատուծոյ՝ որ սկիզբն է ամենայն եկեղեցական տօնից, աստուածային հոգին ի ձեռն Սողոմօնի դրուատ: (Ի պտղոյ արդարութեան՝ բուսանի ծառ կենաց:) Ծառ կենաց՝ նոյն ինքն աստուածածին է. որ պտղաբերեաց մազ զկենաց պտուղն զՔրիստոս. որպէս ասէր. (Ես եմ կենաք. եւ որ ուտէ զմարմինս իմ, կեցցէ յաւիտեան:) Եւ այս վասն բազում օրինակի: Նախզի՝ ծառ եւ պտուղ էր՝ որ պատճառ եղէ մեզ մեղաց եւ մահու. ծառն եւ պտուղն լիցի մեզ պատճառ կենաց եւ արդարութեան: Երկրորդ՝ որպէս առ Աբրահամ ծառն ի Սաբեկայ ծնաւ զաննմանն իւր զգառն՝ եւ կեցոյց զԻսահակ. այսպէս եւ կոյսն մայր ծնաւ զաննմանն իւր զԱստուած մարդացեալ. եւ ապրեցոյց զմեզ եւ զաշխարհս: Երրորդ՝ որպէս գաւազանն Ահարօնի առանց խոնաւութեան ծաղկեցաւ՝ եւ պտուղ եբեր զարքայականն ընկոյզ. այսպէս եւ կոյսն սուրբ ի ցեղէ նորին առանց սերման ծաղկեցաւ զծաղիկն տիեզերաց. եւ պտղաբերեաց զկերակրիչն ամենայն աշխարհաց: Չորրորդ՝ առ Մովսէսիւ մորենին վառեալ եւ անկէզ մնացեալ. այսպէս եւ կոյսն Մարիամ՝ զհուրն Աստուած յարգանդի տարեալ եւ անկիզելի պահեալ: Հինգերորդ՝ ծառ կոչէ զնա եւ մարգարէն Դաւիթ: (Որ զպտուղ իւր ի ժամու տացէ. եւ տերեւ նորա ոչ թափեցի:) Որ ընդ անժամ ճաշակել պտղոյն ետ զպտուղն Քրիստոսի ի ժամու: Եւ որպէս ծառն որ տայ զպտուղն՝ յետոյ դեղնի եւ թօթափի տերեւն. այսպէս կին յորժամ ծնանի զմանուկն, թառամի կուսութիւնն: Իսկ Տիրամայրն ծնեալ զՔրիստոս, անլուծանելի մնաց կուսութիւնն: Չի (աղբիւր կնքեալ եւ պարտեզ փակեալ կոչեցաւ:) Վեցերորդ՝ Եսայի ասէ վասն սրբուհւոյ կուսին: (Բղիսեցէ գաւազան յարմատոյն յԵսսեայ.) զի որպէս գաւազան՝ տկարացեալ բնութեանս մերոյ եղէ կանգնումն: (Եւ ելցէ ծաղիկ ի նմանէ.) վասն սուրբ կուսութեանն՝ զտիրական ծնունդն անւանէ: Եօթներորդ՝ ծառ կենաց եւ պտուղ արդարութեան բուսեալ զայն ցուցամնէ՝ որպէս ամենայն պտուղ սերմանեալ՝ զնմանն իւր ծառ բուսուցանէ. այսպէս եւ յառաջին արդարոցն յԱբրահամէ ի Դաւիթէ եւ յայլ մարգարէիցն հաւատք եւ գործք առաքինութեան՝ զնա բուսուցին կենաց ծառ. որ ետ մեզ զպտուղն արդարութեան զՔրիստոս. (որք ի նա օրինեցան ամենայն ազգք երկրի:) Ութներորդ՝ ծառ եւ պտուղ կոչէ. զի որպէս ծառն անսերմն յղանայ եւ առանց

ապականութեան ծնանի պտուղ. այսպէս եւ ն անսերմն յղացաւ զԲանն Աստուած. եւ անապական կուսութեամբ ծնաւ զՏէր մեր Յիսուս Զրիստոս: Իններորդ՝ որպէս ամենայն ծառ ի յերկրի արմատացեալ, ի վեր առ երկինս ունի զծկտումն: Այսպէս եւ կոյսն սուրբ՝ ի բանական երկրէ բուսեալ. եւ եկնային խոկմամբ զարգացեալ. եւ ցօղովն արդարութեան առ լցեալ. որպէս ասէ Դաւիթ. (ճշմարտութիւն յերկրէ բուսաւ. արդարութիւն յերկնից երեւեցաւ:) Տասներորդ՝ ծառ կենաց կոչէ զԱստուածածին կոյսն. զի կենդանի ծառն՝ ունի հովանի եւ ծաղիկ եւ է պտուղ եւ կանաչագեղ: Այսպէս եւ կոյսն սուրբ ի տապոյ առաջին խորշակէն զովացոյց զմեզ եւ զհոտ անուշ բուրեաց աշխարհի. եւ բոլորից զպտուղն անմահութեան պարգեւեաց: Եւ այս միշտ յարագուարճ բերկրանօքս եւ յաւիտենական կենօք: Վասն որոյ հոգին սուրբ՝ լեզուան Սողոմօնի կոչէ զնա: (Ծառ կենաց ի պտղոյ արդարութեան բուսեալ:) Այսինքն, յարդար ծնողացն Յովակիմայ եւ յԱննայէ. որ արդար օրինօք եւ արդար գործովք Էին արդարացեալք: Եւ պտղաբերեցին այսօր զբոյսն սուրբ. զփոխարենն եւ զպտուղն ամենայն մարգարէից եւ արդարոց: Եւ համաձայնեալ նմա հրեշտակապետն Գաբրիէլ ասէ: (Յոգին սուրբ եկեսցէ ի քեզ. եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քոյ:) *Եւ արդ՝ երիս իրս ասելի է մեզ: Նախ՝ վասն ծնողաց Աստուածածնին: Երկրորդ՝ վասն յղացման նորին: Երրորդ՝ վասն ծննդեան սրբուհոյն: *Եւ զառաջինն գիտելի է՝ զի ամենօրինել Աստուածածնին՝ դուստր էր Յովակիմայ եւ Աննայի: Եւ Յովակիմ էր ի թագաւորական ցեղէն Դաւթի. ըստ որում. (երդուաւ տեր Դաւթի ճշմարտութեամբ. եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:) Եւ Աննա մայր նորա էր ի քահանայական ցեղէն. դուստր Մաթան քահանայի: Այս Մաթան քահանայ՝ բնակեր ի Բեթղէեմ. եւ ուներ երեք դուստր: Նախ՝ Մարիամ: Երկրորդ՝ Սովիւէ: Երրորդ՝ Աննա: Մարիամ ամուսնացաւ ի Բեթղէեմ. եւ ծնաւ զՍողոմի զմանկաբարձն Յիսուսի. ոչ որ մայր եղել որդուցն զԵբեթեայ. զի այն Սողոմի դուստր էր Յովսեփայ Աստուածահօրն: Եւ սովիւ է ի նոյն Բեթղէեմ ծնաւ զԵղիսաբեթ զմայր մկրտչին: Իսկ Աննա ամուսնացաւ ընդ Յովակիմայ ի Գալիլեայ ի Նազարեթ. եւ ծնաւ զԱստուածածինն Մարիամ ի պրոպատիկէ ի տունն Յովակիմայ. եւ անտի տարեալ եղել ի տաճարն Տեառն: Որպէս զի լիցի կոյսն Մայրամ յազգէ հարց ի թագաւորական ցեղէ. եւ յազգէ մօր ի քահանայից: Չի թեպէտ փակեալ Էին օրէնքն՝ եւ երկու ցեղքն ոչ խառնէին ընդ միմեանս. սակայն ղեւտացւոցն ոչ գոյր ժառանգութիւն եւ բաժին: Խառնէին երբեմն ընչ թագաւորական ազգն Յուդայի. որպէս Ահարօն ուներ զդուստր Ամինադաբայ զբոյր Նայասօն իշխանին Յուդայ. այլեւ Յովիդա քահանայ զդուստր Յովրամայ արքայի զբոյրն Ոքոզիայ: Այսպէս եւ Յովակիմ ի Յուդայէ՝ էր յազգէն Դաւթի երեսուն եւ ութներորդ ի թոռանցն Նաթանայ որդւոյն Դաւթի. որպէս պատմէ անտարանն Ղուկաս: Եւ էառ զԱննա զդուստր Մաթան քահանայի ի ցեղէն դեւեայ: Եւ վասն այն խառնեցան երկու ցեղքն. զի ծնեալն ի նոցանէ ըստ մարմնոյ Զրիստոսի՝ մի թագաւոր եւ քահանայ լինէր. ըստ այնմ, (դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելիսեդեկի:) Եւ թէ՛ (տացէ նմա զաթոռն եւ զփառս թագաւորութեան տանն Դաւթի:) Եւ այսպէս ունի պատմութիւնն: Եթէ Յովակիմ եւ Աննա արդարք Էին եւ անարատք յամենայն բժոյ մեղաց. ժիրք զոլով յաղօթս եւ ի պահս. եւ կիրթ օրինացն Աստուծոյ: Մեծատուք յոյժ եւ

ողորմածք. որ յամենայն ամի զամենայն պտուղս արդեանց՝ յերիս մասունս բաժանեին. զմինն տային ի տաճարն Աստուծոյ քահանայիցն. եւ գերկրորդն աղքատաց բաշխեին. եւ գերրորդ մասն ի պետս իւրեանց ընտանեաց եւ հիւրոց առնէին: Եւ քսան ամ կացեալ պարկէշտութեամբ ոչ լինէր զաւակ նոցա. եւ փակեալ էին ամլութեամբ. զի պարտ էր սքանչելեօք ծնանիլ ծնողին Աստուծոյ: Եւ յամենայն ամի ելանէին ի տաճարն պատարագօք ինդրել զաւակ. զի տացեն զնա նուեր Աստուծոյ: Եւ յորժամ մերձեցաւ տօն մեծ նաւակատեաց տաճարին Աստուծոյ, ընդդէմ եկաց նմա քահանայապետն Աբիաթար եւ ասէ. չէ արժան քեզ յառաջ մատուցանել զընծայս Աստուծոյ. զի չունիս զաւակ ի մէջ Իսրայելի: Եւ նա գնաց տրտմեալ յանապատ. եւ արտասուօք աղօթս մատուցանէր Աստուծոյ: Եւ երեւեցաւ հրեշտակապետն ի տեսլեան եւ ասէ. մի տրտմիր վասն բանից քահանային. զի արդար է դատաստանն Աստուծոյ. եւ ոչ մեղադրիս դու վասն ակամայ կրիցդ: Յիշեա՛ զի սառայ ամուլ եկաց ամաց իննսնից. եւ ապա ծնաւ զԻսահակ զաւետեաց որդին. այսպէս Ռեբեկայ յերկար ժամանակս ամուլ եկաց եւ ծնաւ զՅովսէփայ: Նոյնպէս Սամփսոն եւ Սամուել աւետեաց էին որդիք ի յամուլ ծնողաց: Այսպէս եւ ձեր ամլութեամբ փակիլդ սքանչելօք է: Այժմ լուաւ Աստուած աղօթից քոց. եւ ծնանի Աննա քեզ մանուկ՝ որ կոչի անուն նորա Մարիամ. եւ ի մանկութեանն ընծայեսցես պարգեւ Աստուծոյ որպէս խոստացար: Այսպէս երեւեցաւ եւ Աննայի. եւ ետ զայս աւետիսս նմա: Նախ ել Յովակիմ ի տաճարն Աստուծոյ պատարագօք. եւ ապա էջ ի տուն իւր. եւ հանգեաւ առ Աննա: Եւ յորժամ լցան աւուրքն, ծնաւ զամենօրինեալ ծնունդն. եւ անուանեաց զնա Մարիամ. որ է լուսաւորեալ. զի լուսաւորեաց զԻսահակեալ ազգ մարդկան: Եւ յորժամ 2 ամսեայ եղել, կանգնեցաւ Մարիամ. եւ քայլեաց քայլս եօթն. եւ դարձաւ ի գիրկս մօրն: Եւ ասէ կենդանի է Տէր. զի ոչ կոխեսցէ գերրկիր մինչեւ տարայց զդա ի տուն Տեառն: Եւ սրբութեամբ սնոյց զնա ի սենեկի: Եւ յորժամ եղել տարեկան՝ արար Յովակիմ ընդունելութիւն. եւ կոչեաց զքահանայսն. եւ մատոյց զմանուկն ի ձեռս քահանայապետին. եւ նա օրհնեաց զնա եւ ասէ: Աստուած հարցն մերոց՝ օրհնեա գտղայս զայս. եւ տուր սմա անուանի լինիլ յամենայն ազգս: Եւ իբրեւ եղել երեից ամաց. հատին զնա ի ստենէ. եւ տարան ի տաճարն մոմեղիսօք եւ բազում պատարագօք ընծայել Աստուած որպէս խոստացան: Եւ եղեն մեծ հրաշք. զի երից ամաց մանուկն՝ առանց ումեք ձեռն տալոյ՝ ել ընդ հնգետասան աստիճանս տաճարին որ հաներ ի սեղանն մեծ. եւ զարմացան ամենեքեան: Եւ քահանայապետն Չաքարիաս՝ օրհնեաց զնա յոյժ. եւ կարգեցին ի տաճարին ի պաշտօնն Աստուծոյ: Եւ Մարիամ աճեր օրըստօրէ յամենայն բարիս ջերմեռանդ սրտիւ: Եւ աղաւնակերպ հրեշտակք Աստուած՝ կերակրէին զնա մինչ ի չորեքտասան ամն. եւ հրամայեաց նմա քահանայապետն ամուսնանալ. որպէս այլ կուսանացն: Եւ նա յանձն ոչ առնոյր ասելով. ի ծնողացն իմոց նւիրեցայ կուլ ի տաճարիս: Եւ ես ուխտեցի Աստուծոյ մնալ ի կուսութեան: Եւ քահանայ ասպետն տարակուսեալ ինդրէր յԱստուծոյ թէ զինչ արասցէ: Եւ եղել ձան ի յերկնից որ ասէ. ժողովեա զգաւազանսն եւ դիշիր ի խորանն. եւ ում գաւազանն ծաղկեսցի նմա տաշիք գկոյսն: Յայնժամ քահանայապետն կոչեաց զնոսա. եւ զգաւազանսն եդ ի խորանն. եւ առ ժամայն գաւազանն Յովսէփայ ծաղկեցաւ. եւ շնորհ հոգւոյն երեւեցաւ ի վերայ նորա: Եւ ապա օրհնեաց

քահանայապետն գկոյսն. եւ յանձն արար Յովսէայ ծերոյն. որ էր քառասուն եւ մէկ ամաց. զոր ընկալեալ երկիւղի սպասաւորեր նմա, մինչեւ յերեսուն եւ մէկ ամ կենարարին. եւ ապա փոխեցաւ յաշխարհես եօթանասուն եւ երկու ամաց: Եւ ոմանք եօթանասուն եւ վեց ասէն: Բայց յորժամ ընկալաւ գկոյսն ի տաճարէն՝ տարաւ ի տուն իւր Նազարեթ. եւ ինքն գնաց ի Բեթղէիւմ առնել պատրաստութիւն հարսանեաց: Եւ Մարիամ մինչդեռ յաղօթս կայր. երեւեալ նմա Գաբրիէլ, ետ զաւետիս ծննդեանն Զրիստոսի եւ ասէ: (Յոգին սուրբ եկեսցէ ի քեզ:) Այս առաջին գլուխն վասն ծնողաց Աստուածածինն կուսին: *Երկրորդն վասն բանիս որ ասէ: (Յոգին սուրբ եկեսցէ ի քեզ եւ զօրութիւն բարձրելոյն:) Գիտելի է՝ զի հոգին սուրբ երկու անգամ եկն ի վերայ սուրբ Աստուածածինն. եւ երկու անգամ մարքրեալ գնա: Առաջին՝ մինչեւ էր յորովայն մօր իւրոյ: Երկրորդ անգամ՝ յորժամ եղել տասն եւ չորս ամաց: Առաջին մաքրումն նորա՝ հաստատի կրկին կերպիւ: Նախ՝ սուրբ զիրն վկայէ յերգսն. (Տէր արար զքեզ եւ պատրաստեաց զքեզ յարգանդէ գեղեցիկդ ի կանայս. ծնցիս մարմին անխիղճ:) Պատրաստել յարգանդէ՝ զսրբիլն ասէ: Երկրորդ կերպիւ հաստատի. զի քան զամենայն պարգէս զոր ետ Աստուած սիրելեաց իւրոց՝ առաւել ետ մօր իւրում: Արդ՝ երկու մարգարէք մաքրեցան յորովայնէ մօր իւրեանց. ի հինն երեմիաս. որպէս ասէ թէ՛ (յորովայնէ մօր քոյ սրբեցից զքեզ:) Եւ ի նորս Ովհաննէս Մկրտիչն. որպէս ասէ Ղուկաս թէ՛ (լցցի հոգւով սրբով անդստին Յորովայնէ մօր իւրոյ:) Ապա ուրեմն սուրբ Աստուածինն՝ էր մեծ քան զերեմիա եւ զՅովհաննէս. առաւել սրբեցաւ քան քնոսա յորովայնէ մօրն. եւ լցաւ հոգւով սրբով: Եւ այսպէս երկու անգամ լցաւ հոգւով սրբով. որպէս անտարանն: (Յոգին սուրբ եկեսցէ ի քեզ:) Եւ այս առաւել մեծագոյն էր քան զառաջինն: Բայց քննելի է թէ՛ յո՞րպիսի ինչ իրաց մաքրեցաւ կրկին մաքրութեամբ: Եւ թէ զի՞նչ զանազանութիւն է ի մէջ առաջին մաքրութեանն եւ երկրորդին: Ասեն վարդապետք թէ՛ երեք են ազգ մարդկան: Յիսուս Զրիստոս ունի զմին եզրն. եւ այլ մարդիկ զմիւսն. իսկ Աստուածածինն՝ է ի մէջն: Արդ՝ Յիսուս Զրիստոս յորժամ յղացաւ յորովայնի մօր իւրոյ՝ ոչ եհաս ի նա սկզբնական մեղքն Ադամայ. վասն զի ոչ էր ի սերմանէ մարդոյ. այլ ի հոգւոյն սրբոյ: Եւ դարձեալ՝ զի նա էր փրկիչ ամենեցուն. պարտ էր զի ոչ տիրեր նմա մեղքն Ադամայ: Այլեւ ոչ լինէր օրէնք անդամոցն ի նա. այն զոր ասէ Պօղոս հռօմայեցւոց թէ՛ (տեսանեմք այլ օրէնս յանդամս իմ զինեալ հակառակ մտաց իմոց. եւ գերեալ զիս օրինօք մեղացն որք են յանդամս իմ:) Իսկ այլ մարդիկ յղանան սկզբնական մեղօք. եւ յորժամ մկրտին, սրբին ի մեղացն Ադամայ. այլ մնան ի նոսա օրէնք անդամոցն մինչեւ ի մահ: Այլ վասն մկրտութեանն՝ տկարանան ի նոսա օրէնք անգամոցն: Իսկ որք ոչ մկրտին, մնայ ի նոսա մեղքն Ադամայ. եւ օրէնք անդամոցն զօրաւոր: Վասն զի օրէնք անդամոցն՝ երկու ինչ գործէ ի մարդն. այսինքն, ի չարն արագ լինիլ. եւ ի բարին հեղձ: Իսկ սուրբ կոյսն յորժամ էառ զհոգի բանական յորովայնի մօրն, ոչ է հաս ի նա սկզբնական մեղքն. զի թէ սկզբնական մեղքն հասեալ էր ի նա, ոչ լինէր ամենեւին (գեղեցիկ ընտերալ ի բիւրոց.) այլ լինէր երբեքեմն արատաւորեալ ընդդէմ երգոյն Սողոմօնի թէ՛ (արատ ինչ ոչ գոյ ի քեզ:) Որ ըստ այսմ թեպէտ ազատ էր ի մեղաց. բայց ըստ այլ իրիք դեռնէս եւ կարօտիւր փրկութեանն Զրիստոսի. եւ ըստ այսմ Զրիստոս համանգամայն լինէր փրկիչ հասարակաց եւ մօր իւրոյ: Եւ թէ ոք ասիցէ՛ եթէ ի սուրբ Աստուածածինն ոչ է հաս

սկզբնական մեղքն, ուրեմն անպաուուի լինի Զրիստոսի: Ասեմք թե՛ եւ այս մոլորութիւն է. զի առաւել պատուի Զրիստոս զմայրն ազատ պահելով յսկզբնական մեղաց, քան թոյլ տալով թէ եւ մի րոպէ եւ վայրկեան առ ի թագաւորել ի հոգի մօր իւրոյ: Իսկ թէ ասէ ժողովօղն. (գտի այր մի ի հազարաց. բայց կին ամենեւին ոչ:): Ասելի է թե՛ անտանօր Աստուածածինն ի բաց բառնալի է ի թւոյ կանանց. զի որպէս յամենայն մարդկանէ մի միայն գտաւ առանց սկզբնականին՝ եւ ազատ ի մեղաց որ է Զրիստոս. այսպէս եւ յամենայն կանացն՝ մի միայն մայր նորա գտաւ ազատ յսկզբնական մեղաց. զի թեպէտ եւ Երեմիաս եւ Ովհաննէս մկրտիչ սրբեցան յարգանդի մօր իւրեանց. բայց նոքա զկնի հոգիաւորելոյն. իսկ Աստուածածինն ի հոգեւորիլն: Եւ վասն այնորիկ ի սուրբ Աստուածածինն՝ սկզբնական մեղքն ամենեւին ոչ եկաց: Զանգի ոմանք մնան իսկզբնական մեղսն մինչեւ մկրտին եւ ոմանք փութով մաքրին ի սկզբնական մեղացն ի յորովայնի մօրն. որպէս Ովհաննէս մկրտիչն եւ Երեմիաս: Թեպէտ ոմանք առանց հիման ասեն թե՛ Ովհաննէս մինչեւ ի վեցերարոդ ամիսն մաքրեցաւ, յորժամ լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբէթ: Այլ սուրբ Աստուածածինն՝ ամենեւին ոչ եկաց ի մեղս սկզբնական. զի յառաջին կէտն յորժամ ստեղծաւ բանական հոգի նորա, ազատ գտաւ ի նոյն թեպէտ եւ ի սերմանէ մարդոյ էր. զի սկզբնական մեղքն՝ ոչ է սերմն մարդոյ. այլ յերկրորդ կէտն հոգին սուրբ էջ եւ մաքրեաց զնա յօրինացն անդամոց, կապելով ի նա զօրէնն անդամոց. վասն զի լի էր շնորհօք հոգւոյն սրբոյ. վասն այնորիկ օրէնն անդամոց ոչ կարաց գործել ինչ ի նա. այլ էր ի հանդարտութեան՝ որպէս զԱդամ ի դրախտին նախ քան զմեղանչելն: Այլ ի չորեքտասան ամիսն յորժամ կրկին լցաւ հոգւով սրբով. ի զօրութենէ հոգւոյն սրբոյ եւ ի զօրութենէ որդւոյն Աստուծոյ որ յղացաւ ի նմա, ամենեւին մաքրեցաւ ի յօրինաց անդամոց: Չի բնաւին արմատաքի խլեցաւ ի նմանէ. եւ ի բարին այնպէս հաստատեցաւ յայնմ հետէ, զի ոչ կարաց մեղանչել. ոչ ներելի, եւ ոչ մահացու չափ որպէս եւ հրեշտակք: Եւ այսպիսի պարգեւաց ոչ ոք արժանաւորեցաւ ի մարդկանէ: Արդ՝ յայտնի եղել թե՛ ի Զրիստոս ոչ էհաս սկզբնական մեղքն: Եւ սուրբ կոյսն ի հոգեւորիլն իւր՝ ազատ գտաւ ի մեղացն Ադամայ: Վասն այն գրեալ է Յոք՝ որ անիծանէ զգիշեր ծննդեան իւրոյ: Գիշերն նշանակէ զմեղսն Ադամայ: Ապա ասէ. (սպասէ գիշերն այն տեսանել զլոյսն, եւ ոչ տեսցէ. այլեւ ոչ տեսցէ նա զելումն առաւօտին:): Լոյսն է Յիսուս Զրիստոս ոչ ետես մեղքն Ադամայ. եւ առաւօտ սուրբ Աստուածածինն՝ զի ոչ ետես զելումն նորա սկզբնական մեղքն. զի ի հոգեւորիլն իւր մաքրեցաւ: Այլեւ մարգարէն Դաւիթ վկայ է վասն կրկին մաքրութեան կուսին ասելով. (զնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ:): Որ է առաջին մաքրութիւն սրբոյ կուսին՝ որ էր քաղաք Աստուծոյ: Եւ այն որ ասէ. (սուրբ արար զյարրկս իւր բարձրեալն.) ցուցանէ զերկրորդ մաքրութիւն սուրբ կուսին. որ է յարկ հանգստեան բարձրելոյն: Վասն որոյ ասէ: (Յոգին սուրբ եկեսցէ ի քեզ:): Այս երկրորդ զլուսն: *Երրորդ զլուսն վասն ծննդեան կուսին: Նախ հարցանելի է թե՛ բազում ամուլք էին. եւ ետ նոցա Աստուած սքանչեալեօք զաւակ. եւ որդիք էին եւ ոչ դստերք. որպէս Իսահակ. Սամփսոն. Սամուէլ. Ովհաննէս, եւ այլք: Եւ զի՞նչ է պատճառն՝ զի Յովակիմ եւ Աննա սիրելիք էին Աստուծոյ. եւ հրեշտակն ետ նոցա աւետիս. եւ ծնաւ դուստր եւ ոչ որդի: Ասեմք թե՛ Սողոմօն տայ այնմ պատասխանի թե՛ (է դուստր՝ որ լաւ է քան զորդի:): Չի ամեն օրինեալ դուստր Աստուածածինն՝

լաւագոյն է քան զամենայն որդիս. բայց յորդոյն Աստուծոյ որ ծնաւ ի նմանէ: Եւ բանս այսպէս հաստատի. զի կնոջն ուրախութիւն է որդի ծնանիլ, քան դուստր վասն չորս պատճառի: Նախզի՝ դստերն բազում ծախք պիտոյ են առնել եւ բաժինս տալ. այլ որդին շինէ գտունն եւ բաժինս բերէ: Երկրորդ՝ զի յորժամ հայրն ծերանայ, դուստրն ոչ ինչ կարէ օգնական լինի հօրն. այլ երթայ առ այրն իւր եւ ընդ նմա միաբանի. իսկ որդին՝ օղնական լինի ծերութեան հօրն: Երրորդ՝ զի դուստրն ոչ կարէ վրէժ առնուլ ի թշնամեաց հօրն. այլ որդին առնու վրէժ: Չորրորդ՝ զի դստերովն ոչ մնայ անուն եւ յիշատակ հօրն. զի նա երթայ յայլ տուն. բայց որդովն մնայ անուն եւ յիշատակ հօրն. որպէս ասէ Սիրաք. (մեռաւ հայր նորա եւ չէ մեռեալ. զի նման իւր եթող յաշխարհիս.) վասն այն ասէ անետարանն թէ՛ (կին յորժամ ծնանի՝ տրտմութիւն է նմա զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնանի՝ ոչ յիշէ զառաջին նեղութիւնն. զի ծնաւ մարդ յաշխարհս:) Այլ վասն չորս պատճառի՝ ամենօրինեալ դուստրս այս լաւագոյն է քան զամենայն որդիս: Նախզի՝ Ադամ նախահայրն աներեաց գտունս որ է աշխարհս. եւ բազում որդիք ծնան. նահապետք եւ արդարք. եւ ոչ կարացին շինել գտունս: Այլեւ ամենօրինեալ դուստրս այս յորժամ ծնաւ, շինեաց զաշխարհս. որպէս թագաւորք որ առնու զդուստր աղքատի ի հարսնութիւն. եւ աղքատ ազգականք դստերն այն յոյժ փարթամանան գանձիւք թագաւորին: Նոյնպէս թագաւորն երկնաւոր արար հոգեւոր հարսանիս ընդ սրբոյ կուսին առնլով մարմին ի նմանէ. վասն այն փարթամացաւ երկնային եւ աստուածային գանձիւք ամենայն մարդկային բնութիւն: Երկրորդ՝ զի պարտի որդին օգնական լինիլ հօրն ի հիւանդութեան եւ յաղքատութեան. այլ Սուրբ Կոյսն՝ օգնեաց հօր իւրում Ադամայ եւ հիւանդացեալ մեղօք. եւ նա ծնաւ զդեղն կենաց Քրիստոսի. եւ ազատեաց զնա եւ զորդիս նորա. եւ բնակեցոյց ի տեղիս անկելոց հրեշտակաց: Երրորդ՝ զի սատանայ յոյժ նախատեաց զԱդամ եւ զորդիս նորա. եւ յայսպիսի դառնութիւնս ընկեաց. եւ ոչ ոք կարեր առնուլ վրէժս ի նմանէ, բայց միայն սուրբ Աստուածածինն. զի ջախջախեաց զգլուխ նորա, որպէս ասաց Աստուած Եւայի թէ՛ (դու սպասեսցիս նորա գլխոյն:) Չորրորդ պատճառ՝ զի գեղեցիկ դուստրս այս՝ զանուն եւ գլխատակ հօրն նորոգեաց. զի որդին որ ի նմանէ ծնաւ՝ անուանեցաւ երկրորդ Ադամ: Չի այս դուստրն կորուսանէ զանուն հօրն, որ յայլ սերմանէ որդին ծնանի. իսկ սուրբ կոյսն՝ ոչ ի սերմանէ մարդոյ, այլ զորդին Աստուծոյ եւ զնոյն որդի Ադամայ ծնաւ: Վասն այն ոչ կորոյս զանուն հօրն. այլ պահեաց գլխատակն: Եւ այսպէս ճշմարիտ երեւի ասելն Սողոմոնի. (զի է դուստր՝ որ լաւ է քան զբազում որդիս:) Եւ ուրախութիւն եղել՝ ոչ միայն ծնողաց իւրոց, այլեւ բազում աշխարհի երկնաւորաց եւ երկրաւորաց: Եւ այս ի չորս դէմս: Նախ՝ ցնծայ այսօր ամենեցուն արարիչն Աստուած հայր որդովն եւ հոգովն. եւ ամենայն երկնաւորքն ընդ նմա: Չի թէ մարդ զկանուխ սկսեալ գործն անարտէ եւ ի գլուխ հանէ, հանգչի եւ ուրախանայ ամենայն բարեկամօքն: Ապա ո՞ր չափ ուրախութիւն է այսօր Աստուծոյ. զնախ սկսեալ գործն իւր ի գլուխ հանելով. այսինքն, զծնունդն Մարիամայ, զոր հաւատամք կանուխ ընտրեալ եւ հիմն եղեալ Աստուծոյ: Չի թէ Երեմիաս յառաջ քան զծնանիլն ընտրեցաւ. եւ առաքեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի ընտրեցան, ապա առարել սա՛ ամենայն մարգարէից եւ առաքելոց ընտրութեանն Էր պատճառ: Եւ այսօր ծնաւ նա՛ որ ամենայն

ճշմարտութեանն Աստուծոյ կատարումն էր ճշմարիտ տօր մեծ Է Աստուծոյ եւ բոլոր աստուածայնոցն ցնծութիւն: Երկրորդ՝ ցնծան հոգիք նեհապետաց եւ արդարոց. որպէս մշակն յորժամ զվարձ քրտանցն ընդունի, հանգչի եւ ուրախանայ: Այսպէս եւ ամենայն արդարք հարք եւ մարգարէք եւ նահապետք՝ ցնծան այսօր. զի զարդարութեանն իւրեանց զփոխարէն ընկալան յԱստուծոյ զծնունդ սրբոյ կուսին. որք յուսացան ի զաւակէ նորին օրինիլ ամենայն ազգաց: Երրորդ՝ ցնծութիւն Է այսօր բոլոր ամենայն մարդկան. զի թէ վասն Ովհաննու ասեր հրեշտակն. (բազումք ի ծննդեան նորա խնդացեն:) Ո՞րչափ զՏիրամօրն ամենեցուն եւ զերրկնաւոր թագահոյն պարտ Է ցնծալ. որ բոլորից Է պատճառ խնդութեան: Չորրորդ՝ ապա եւ մեք հաւատացեալքս՝ ցնծասցուք ի ծնունդ սորա. որ մայր Է ամենայն քրիստոնէից. եւ ծնօղ կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ. զի սկիզբն Է անախտ ծննդեան սուրբ աւագանին: Չի որպէս ի կուսէն եւ ի հոգւոյն ծնաւ Քրիստոս. այսպէս ի ջրոյ եւ ի հոգւոյն սրբոյ ծնանիմք քրիստոնէայքս: Եւ որպէս անհնար Է կուսի առանց առն մանուկ ծնանիլ՝ եւ ծնաւ հոգւովն: Այսպէս ջրոյ անմարթ էր մարդիկ ծնանիլ. եւ ծնանի հոգւովն: Եւ դարձել՝ զօրացաւ կոյսն սուրբ հոգւովն եւ ծնաւ զորդին Աստուծոյ. այսպէս զօրացաւ արգանդ աւագանին եւ ծնանի զմեզ որդիս Աստուծոյ: Ապա յայտ Է՝ զի կոյսն եղէ սկիզբն եւ բացօղ աւագանին հոգեւոր ծննդեանս: Չի նա ծնաւ զԱստուածն բնութեամբ. եւ զեղբայրն մեր մարմնով. զի ոչ ամօթ համարի կոչել զմեզ եղբայրս իւր, յորժամ ծնանիմք աւագանան: Արդ՝ Քրիստոս եղբայր կոչի մեզ. այսպէս եւ հայր նորա Աստուած՝ հայր կոչի մեզ. նոյնպէս եւ մարյս նորա Աստուածածինս Մարիամ՝ մայր եւ ծնօղ կոչի մեզ: Եւ որպէս մայր առ որդիս գթալով սիրով եւ աղետիւ կապեալ Է ի բոլոր հաւատացեալսս. եւ անդադար բարեխօսէ վասն մեր իբրեւ զկրտսեր որդւոց: Որեւ ինքն որդին Միածին՝ հնազանդութեամբ լսէ աղաչանաց մօր իւրոյ վասն անունեալ եղբարցս: Եւ որպէս զծնօղդ անարատ եւ զծնունդ քո կուսութեամբ բարեխօս ունիմք առ միածինն բան: Այսպէս եւ առ քեզ ճշմարիտ ծնօղդ բանին Աստուծոյ, բարեխօս ունիմք զքոյին ծնօղսն զՅովակիմ եւ զԱննա, եւ զայսօր ծնանիլն նոցա. զի մաղթեսցես բոլոր սրտիւ վասն տօնողացս քո կրտսեր եւ մեցուցեալ զաւակացս: Որ աղքատ մտօք՝ անարժան բերանով՝ եւ խոնարհի հոգւով՝ զբանեղէն աղերս քեզ մատուցանեմք: Ընդ Ադամայ իրախացեալ գովեմք. եւ ընդ Եւայի զտղայութիւնդ զգուեմք: Ընդ բոլոր նահապետացն երկրպագութիւն մատուցանեմք: Եւ ընդ մարգարեիցն խմբից՝ նոցին բանիւ դրուատեմք: Որով գոչեմք առ քեզ ով տիրուհի. եւ օրհնաբանեմք ընդ Գաբրիէլի: (Ուրախ լեր բերկրալդ Տէր ընդ քեզ:) Տէր ընդ հոգիդ: Տէր ի սրտիդ: Տէր յորովայնիդ: Տէր ընդ քեզ յօգնութիւն: Սուրբ հոգին եկեսցէ ի քեզ: Եւ դու օրհնեալ ես միշտ ի կանայս: Բարեբանեալ ամենայն երանութեամբ ի հրեղինաց՝ ի հողեղինաց այժմ՝ առ յապայ անլռելի արտագոչութեամբ, յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ Խաչին Մեծի. ի բանն՝ (Փայտ կենաց Է ամենեցուն. որք պատսպարին ի նա՝՝ որք յենուն ի նա՝ իբր՝ ի Տէր հստատութեամբ:) Առակ. 3. 18: (Գլուխ. ԸԼԶ)

Աստուածային եւ նախնին մեծն ի մարգարէս աշխարհապատումն

Մովսես՝ տնկեալ ասէ ի սկզբանն զդրախտն եղեմ ընդ արեւելս: Եւ ի մէջ
 նորա զփայտն կենաց. զորեւ յետ ըստունգանելոյ պատուիրանին՝
 հրաժարացոյց ի նմանէ աստուածային հրամանն. (գուցէ ձգիցէ զձեռն իւր ի
 փայտն կենաց. եւ կեցցէ յաւիտեան:) Այլ ի վերջին ժամանակս՝ տնկեաց
 զփայտ կենաց ի յերկրի, ունելով կախեալ ի նմանէ զպտուղն կենաց: Չորեւ
 նոյն Մովսես վկայէ. (տեսանիցէք զկենս ձեր կախեալ զփայտէ.) որ է Տէր մեր
 Յիսուս Զրիստոս պտուղ անմահութեան կախեալ զփայտէ խաչին. որ է
 փայտ կենաց եւ անմահութեան: Չի որ ունիցի զպտուղն կենաց, եղիցի եւ
 ինքն փայտ կենաց. ուստի (ամենայն ծառ՝ ի պտղոյ իւրմէ ճանաչի:) Արդ՝ որ
 ոք հաւատոյն իմացմամբ տեսանէ զնա եւ իմանայ պտուղ անմահութեան
 զՏէր մեր, եւ զխաչն նորին գործի կենաց, ճաշակէ հաւատով զպտուղն
 կենաց եւ անմահանայ. եւ իմաստութեամբ նորին զօրանայ: Իսկ որ ոչ
 տեսանէ հաւատով, մահանայ հոգով. յիմարի մտօք. եւ տկարանայ: (Չի
 ճառ խաչին ասէ առաքեալն՝ (կորուսելոցն յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ
 զօրութիւն Աստուծոյ:) Եւ այսմ համարձայնեալ ասէ իմաստուն
 առակախօսն. (փայտ կենաց է ամենեցուն. որք պատսպարին ի նա՝ եւ որք
 յենուն ի նա իբրեւ ի Տէր հաստատութեամբ:) *Պատսպարելն՝ է թիկամբ
 ամրանալ որպէս ի պարիսպ. եւ յենուլն՝ սրտիւ հաստատիլ որպէս ի
 գաւազանի: Եւ յայսմանէ լինի մեզ երեք տեսակ բարութեան. այսինքն,
 իմաստութիւն, զօրութիւն, եւ անմահութիւն. որպէս ասի ի յերեք սրբեանն.
 սուրբ Աստուած. սուրբ եւ հօր. սուրբ եւ անմահ: Այսինքն է, զի թեպէտ
 որպէս մարդ խաչեցաւ, Աստուած է բնութեամբ. եւ թեպէտ որպէս զտկար
 խաչեցին հրեայքն, հօր է զօրութեամբ. եւ թեպէտ մեռաւ վասն մեր, անմահ
 է կենդանութեամբ: Արդ՝ զայս երեքեան բարութիւնս՝ յորժամ պատսպարիմք
 ի նա իմացմամբ եւ հաւատով, իմաստնանամք ի նմանէ թէ՛ որ խաչեալն է ի
 վերայ նորա՝ Աստուած է եւ անմեղ. այլ վասն մերոյ փրկութեան մեռանի. զի
 զպարտս մեր վճարեցէ. եւ զմեզ ազատեցէ ի մահու: Իսկ յուսով եւ սրտիւ
 յենումք ի նա. զի որ հօր զօրութեամբ յաղթեաց թշնամոյն մերոյ՝ եւ զմեզ
 զօրացուցանէ ի վերայ նորա, կոխել զզօրութիւն նորա: Իսկ սիրով եւ
 հաւատով միանամք ի նա. զի անմահութեան իւրոյ տնկակից արասցէ մեզ
 կենացն յաւիտենից: Այսպէս իմաստնանամք մտօք. զօրանամք մարմնով.
 անմահանամք հոգով ի ձեռն հաւատոյ յուսոյ եւ սիրոյ, զոր ունիմք առ նա:
 Եւ այս յայնմանէ է որ ասէ. (պատսպարիմք ի նա.) այսինքն, հաւատով
 յուսով եւ սիրով: Իսկ ասելն: (Որք յենուն ի նա՝ իբրեւ ի Տէր
 հաստատութեամբ:) Իբր ասելն այն է՝ զոր առաքեալն ցուցանէ. (որ ի
 կերպարանաս Աստուծոյ էր՝ ըստ նմանութեան մարդկան եղել. եւ
 կերպարնօք գտաւ իբրեւ զմարդ.) որպէս անդ նման ասէ մարդկան. աստ
 իբրեւ ասէ ի Տէր: Եւ նմանն եւ իբրն՝ նախ զայն նշանակէ. զի ոչ սոսկ մարդ
 էր, այլէ Տէր. եւ ոչ միայն Տէր, այլէ մարդացեալ Աստուած: Երկրորդ զայն
 յայտնէ՝ յորժամ տեսանես զնա ծառայական մարմնովն ի ծառայի պաշտօն,
 մի թերահաւատիր. այլ հաստատեաց ի նա իբրեւ ի ստոյգ տէր եւ թագաւոր
 անխարդախ մտօք. եւ ապա զօրանաս եւ յաղթես դրանց դժոխոց
 հերձուածողացն բանից: Չորեւ առաքեալն ասէր. (թէ էին ծանուցեալ՝ ոչ
 արդէօք զՏէրն փառաց ի խաչ հանէին:) Որ նա Տէր փառաց կոչէ զխաչեալն
 Զրիստոս նոյն եւ իմաստունն ասէ. (հաստատեաց ի նա հաւատովդ ստոյգ
 Տէր եւ Աստուած խաչեալ:) Որպէս աստուածաբանն վկայէ. Աստուած

խաչեալ՝ վասն որոյ արեգակն խաւարեալ: Եւ զի՝ Աստուած է խաչեալն եւ Տէր. յիրաւի խաչեցօղքն տիրասպան եւ աստուածանենգ կոչեցան. ապա ուրեմն Աստուած է խաչեալն, եւ Աստուծոյ է խաչն եւ կենաց. վասն որոյ աստուածընկալ եւ կենսաբեր կոչի սուրբ փայտ կենաց. որպէս ասէ աստ. (փայտ կենաց է ամենեցուն:): Դարձեալ՝ ոմանք ամօթ համարին զԱստուած խաչեալ ասելն՝ եւ զմեռեալն Աստուած. որպէս հրեայք անհաւատք յորժամ լսեն՝ գայթակղին. եւ հեթանոսք յիմարին եւ ծիծաղին: Վասն որոյ գրէ առաքեալն աշակերտին. (մի ամօթ համարիր զվկայութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եւ մի զիս զկապեալս վասն նորա:): Չի ոչ է ամօթ խաչն Քրիստոսի. այլ պարծանք է քրիստոնէից. ըստ այնմ, (ինձ քաւ լիցի պարծիլ. բայց միայն ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:): Նոյնպէս եւ իմաստունն ասէ. մի ամօթ համարիր. այլ հաստատեաց հաւատովդ ի նա. եւ քարոզեա զխաչեալն ստոյգ տէր եւ թագաւոր, եւ զօրութիւն հաւատացելոց: Չայս եւ Պօղոս ասէ. (թէ հրեայք նշան հայցեն, եւ հեթանոսք զիմաստութիւն ինդրեն եւ ոչ հաւատս, մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս. անհաւատ հրէից գայթակղութիւն. եւ հեթանոսաց յիմարութիւն:): Այլ նոցին իմաստուն եղելոցն յայս խորհուրդս, եւ կոչեցելոցն ի հաւատս, (զՔրիստոս Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն:): Չի նոյն ինքն Քրիստոս իմաստութիւն է հօր. զի նովաւ գոյացան ամենայն երեւելի եւ աներեւոյթ արարածք. եւ զօրութիւն է հօր՝ (որով կրէ եւ նախախնամէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ:): Եւ նոյն ինքն Որդին Աստուծոյ Բանն Միածին՝ որ երեւեցաւ մարմնով ի վերայ երկրի՝ (եղել մեզ իմաստութիւն եւ արդարութիւն եւ փրկութիւն եւ սրբութիւն, ի ձեռն փրկական խաչին կենաց որպէս գրէ առաքեալն:): *Արլ արդ գիտելի է՝ զի չորեքին բառիւք այսոքիւք զչորից փրկական ներգործութիւնն նշանակէ. որ եղել Քրիստոսի ի ձեռն խաչին: Նախ՝ ասէ իմաստութիւն. զի ինքն Քրիստոս եղել մեզ իմաստութիւն փոխանակ տգիտութեանն Ադամայ, որ յանցեալ զպատուիրանաւն: Իսկ արդարութիւն եղել. զի ազատեաց ի դատապարտութենէ վճռի անիծիցն նախնեաց: Իսկ փրկութիւն եղել ի մեհուն եւ յապականութեանցն. որ հոգին գերեցաւ ի դժոխս. եւ մարմինն ի գերեզմանի: Իսկ սրբութիւն եղել մեղացն եւ քաւեաց՝ որ ամենայնին էր պատճառ. ըստ այնմ, (սրբութիւն մեղաց մերոց արարեալ, նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս:): Այսպէս իմաստութիւն արդարութիւն եւ փրկութիւն եւ սրբութիւն ետ մեզ Քրիստոս: Եւ զի խաչին ներգործեաց ի մեզ զայսպիսի փրկութիւնս. նոյն ինքն խաչն եղել եւ կոչի իմաստութիւն արդարութիւն եւ փրկութիւն եւ սրբութիւն: Եւ զայս յայնմ պատճառէ՝ զի ունի խաչն յինքեան զչորեսինս զայսոսիկ. այսինքն, զզօրութիւն, զնիւթ, զձեւ, եւ զգործի: Չօրութիւն խաչին՝ Քրիստոս է ի նմա միացեալ եւ բեւեռեալ: Իսկ նիւթն՝ փայտէ: Իսկ ձեւն՝ քառակուսի: Եւ գործին՝ կենաց: Արդ՝ առաջին՝ իմաստութիւն է մեզ խաչն: Նախ զի՝ տեսեալ զխաչն, իմանամք զխաչելեալն ի նմա անբաժանելի. ըստ այնմ, (այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. ի սմա բնակեցայց. զի հաճեցայ ընդ սա:): Եւ փիլիսոփայն Դաւիթ ասէ. ի սմա, եւ էացի ի սմա յաւիտեանս յաւիտենից: Երկրորդ՝ իմանամք զի խաչեալն ի նմա է անմեղ մարմնովն. ոչ վասն իւր պարտեաց, այլ վասն մեր. զի զպարտս մեր վճարեսցէ. եւ ի մահու ի կեանս փոխեսցէ: Երրորդ՝ ի մանամք զգեներալն ի վերայ նորա անմահ. եւ մեռեալ՝ այսինքն, մարմնովն մեռեալ, եւ աստուածութեամբ կենդանի. ոչ այլեւ այլ,

այլլ նոյնն որ մեռեալ՝ նոյնն երևանմահ նմացեալ. եւ նոյն անմահն վասն մեր մեռեալ: Եւ զայս յայտնեն կրկին վտակք արեան եւ ջրոյն. արիւնն՝ զի Աստուած էր խաչեալն եւ կենդանի. եւ ջուրն՝ զի մեռեալ էր մամսով վասն մեր: Չորրորդ՝ իմանամք, զի եւ մեք հաւատացեալքս կրեմք ի մեզ գմահ նորա եւ զանմահութիւն. այսինքն հաւատով պատուաստեալք ի նա, եւ ընդ նմին խաչեալք, մեռանիմք մարմնով. եւ կենդանանամք հոգով. այսինքն, մեռանին ի մեզ մեղքն. եւ կենդանանայ արդարութիւնն: Այսպէս չորիւք եղանակօք՝ զօրութիւն խաչին իմաստութիւն է մեզ հաւատացելոցս: *Երկրորդ գլուխն՝ արդարութիւն է մեզ խաչն վասն նիւթոյն. եւ այս չորիւք: Նախզի՝ ի կենաց փայտէն խոստացաւ մարդոյն ուտել եւ անմահանալ. յորժամ ոչ եկել, արդարապէս վերստին կենաց փայտին խաչի՝ անմահացոյց գմարդիկ: Երկրորդ՝ զի սատանայ փայտին յաղթեաց մարդոյն. իրաւապէս դարձեալ նոյն փայտին յաղթեաց յաղթողին մեզ: Երրորդ՝ զի փայտին եւ պտղովն անկա մարդն եւ մեռաւ. արդարութիւն էր փայտին կանգնել եւ կենդանացուցանել: Չորրորդ՝ զի ինքն արտաքսեաց ի ծառոյն կենաց. զի մի կերիցէ եւ անմահ մնացէ. յիրաւի նոյն ինքն մեր ձեցոյց ի ծառն կենաց. զի ուտելով ի պտղոյ նորա՝ անմահ մնացուք յաւիտեան: Այսպէս չորեքկին արդարութեամբս՝ փայտ ընդ փայտի. յաղթութիւն ընդ յաղթութեան. կեանք ընդ մահու եւ պարգեւք ընդ խոստման արդարապէս կատարելոյ: Այսպէս է արդարութիւն մեզ փայտն կենաց եւ անմահութեան: *Երրորդ գլուխն՝ փրկութիւն է մեզ խաչն ըստ ձեւոյն. զի քառաթել է ձեւ խաչին: Նախ՝ նշանակէ զչորս բարերարութիւնս Քրիստոսի: Չի վերին մասն՝ ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից: Ներքինն զաւերումն դժոխոց: Աջն՝ զբաշխումն շնորհաց: Ահեակն՝ զթողութիւն մեղաց: Երկրորդ՝ նշանակէ զչորս առաքիւնութիւնս. առ որս պարտի տարածիլ ներքին մարդս մեր, այսինքն, վերին մասն՝ նշանակէ զսերն. ներքինն՝ զխոնարհութիւնն. աջն՝ զհնազանդութիւնն. ահեակն՝ զհամբերութիւնն: Երրորդ՝ գլուխն եւ պատուանդանն նշանակէ զաստուածութիւնն եւ զմարդկութիւնն Քրիստոսի. որ խաչեալն է ի նմա. աջն զշնորհս արդարոց հաւատացելոց. ահեակն զպատուհաս մեղաւորաց եւ անհաւատից: Կամ աջն զփրկութիւն մարդկան աջովն Աստուծոյ. ահեակն զսաստ սատանայի ի ձեռն խաչին: Չորրորդ՝ նշանակէ զչորեսին խորհուրդս մեր: Վերին մասն՝ (միշտ զվերինն խորհիլ ուր Քրիստոս նստի ընդաջմէ Աստուծոյ:) Եւ ներքինն՝ զկատարած ելից կենցաղոյս: Աջ եւ ահեակ՝ զընտրութիւն դատաստանին. զփառս աջակողմեանց. եւ զպատիժ ջախակողմեանց: Այլերու նշանակէ զանկումն մեր ի բարձրութենէ դրախտին ի յերկիր. եւ զի աջ էաք, եւ ահեակ դարձաք. Քրիստոսի վերստին ի նոյն դարձաք աջակողմեան հաւատով: Եւ այլ պէտես եղանակաւ՝ նշանակէ զփրկութիւն մեր քառաթել ձեւ խաչին. վասն որոյ կոչի խաչն փրկութիւն: *Չորրորդն՝ սրբութիւն է մեզ խաչն ըստ այնմ, որ է գործի: Նախզի՝ փայտ խաչին յառաջն էր գործի մահու եւ անիծից. ըստ այնմ, (անիծեալ ամենայն որ կախեալ կայցէ զփայտէ:) Իսկ Քրիստոսի էառ զփայտն անիծից եւ մահու. եւ արար մեզ գործի կենաց եւ օրինութեան. ըստ այնմ, (Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն՝ եղեալ վասն մեր անէծք:) Երկրորդ՝ սրբութիւն արարեալ մեղաց մերոց, արդարացոյց իւրով անմեղ պատարագան ի վերայ քառաթել խաչին. որպէս գառն օրինակին ի վեր

սեղանոյ. ըստ այնմ, (սրբութիւն մեղաց մերոց արարեալ, նստաւ ընդաջմէ մեծութեանն ի բարձունս:) Երրորդ՝ սրբութիւնն Քրիստոս Է. (զոր հայր սրբեաց եւ առաքեաց:) Արդ՝ սուրբ եւ անարատ մարմնովն միացաւ ի փայտ խաչին՝ եւ սրբեաց զնա: Եւ ետ մեզ գործի սրբութեան. ի դիւաց, ի մեղաց, եւ ի հիւանդութեանց, եւ յայլ ինչ պղծութեանց. զի որք հաւատով մերծեամք ի խաչն սուրբ՝ սրբիմք նովաւ յայսցանէ ամենեցունցն: Չորրորդ՝ սրբութիւն Է մեզ. զի ի ձեռն խաչին սրբութեան՝ հոգին պարգեւեցաւ մեզ. (զի չեւ էր հոգի ասէ. զի Յիսուս չեւ էր փառաւորեալ:) Չայն սրբութեան հոգին զոր նախ փչեաց յերեսս մարդոյն եւ կենդանացաւ շնորհօք. եւ վասն մեղաց եբարձ ի մարդկանէ մարմին եղելոցն. եւ ի ձեռն ի մարդկանէ մարմին եղելոցն. եւ ի ձեռն խաչին յետ յարութեանն՝ վերստին փչեաց ի նոսա եւ ասէ. (առէք հոգի սուրբ:) Եւ այժմ վերացաւ առ հայր՝ եւ հաշտեցոյց ընդ մարդկան: Եւ պարգեւ մահուան իւրոյ եւ չարչարանացն՝ առաքեաց զհոգին սուրբ ի դասս առաքելոցն. որ խաչանման եւ հրեղէն լելօք հանգեաւ ի նոսա: Վասն որոյ յորժամ յիշատակեմք զհոգին սուրբ, զնշան սրբութեան խաչին յերեսս դրոշմեմք: Իբր պատճառ եւ նշան առ մեզ սրբութեան հոգւոյն: Յաղագս այսորիկ՝ կոչի խաչն (սրբութիւն, փրկութիւն, արդարութիւն, եւ իմաստութիւն մեզ որպէս ասէ առաքեալն:) *Եւ վասն խաչի սրբոյ տօնիս գիտելի Է՝ զի մերոյ, եւ վերանալոյն յերկիս, փայտն փրկութեան սուրբ խաչն՝ անխնամ թաղեալ կայր ի գողգոթայ իբր զգործի մահապարտի: Եւ ի ժամանակս գարնան՝ որք սովոր են մանկունք զբօսնուլ. մանուկ մի կաղ սողուն ի ծնէ՝ խաղացեալ ընդ ընկերացն, եւ յարեցեալ ի խաչն աստուածամուխ, առ ժամայն յարուցեալ վազեր եւ օրհներ զԱստուած, եւ գոհանայր զսուրբ խաչէն: Եւ տեսեալ հաւատացելոցն՝ բերէին զամենայն կաղս եւ կոյրս եւ բորոտս. եւ առ հասարակ ողջանային: Իսկ կոյր եւ խուլ ժողովուրդն հրեից՝ ըստ Եսայեայ եթէ՝ (ո՞վ Է կոյր եւ խուլ, եթէ ոչ որդիքն Յակօբայ.) յափշտակեալ զսուրբ խաչն՝ եւ տարեալ դնեն ի դրան տաճարին որ կոչիւր գեղեցիկ, եւ անդամալոյծ մի նստեր անդ վասն ողորմութեան. նիրհեաց քնով. եւ յարեցաւ ի խաչն. եւ յանկարծակի հաստատեալ անդամօք յարուցեալ զնայր եւ փառաւորեր զՔրիստոս: Եւ ապա ուրուկ մի մերծեցեալ, թափեաց զապականեալ մորթն եւ յաճախեր գոհութիւն աստուածային խաչին: Եւ տեսեալ հրեիցն, տարեալ եղին ի գերեզմանն. եւ զվեմն կափարիչ ի վերայ. եւ լոյս ելանէր ի ծերպս վիմին. եւ սկսան զնալ նեղեալք եւ ողջանալ: Եւ հրեայքն կանգնեցին անդ զպատկերն Ափրոդիտեայ. զի անտի կարծեսցին սքանչելիքն: Յաւուրս յայս՝ կինն կղօղիայ կոյսեր՝ որում անունն էր պատրոնիկէ՝ բանիւ առաքելոյն Պետրոսի հաւատաց ի Քրիստոս. եւ մեծ յուսով զայ ի Յոսմայ յերուսաղէմ ուստերօք եւ դստերօք. եւ գտանէ ի գերեզմանն զփայտ խաչին ընդ աւազակացն. զի իբրեւ զմի ի նոցանէ կարծեսցի. որով մտօք եւ զՏեառն ընդ աւազակսն դատեցին: Եւ ի ընդացեալ սուրբ տիկինն. եւ մտանէ ի տեղի յարութեանն. եւ մեռանի դուստրն. եւ յարութեամբ դստերն՝ յայտնի սուրբ խաչն Քրիստոսի. աւ ամաչէ սատանայ: Եւ խնդրէ մասն ինչ յառաքելոյն Յակօբայ ի կենդանարար խաչէն. եւ առեալ զնայ ի Յոսմ: Չոր յետոյ սուրբն Յովսիփմէ եւ Գայիանէ՝ որք էին երկրքեանն յազգէ պատրոնկեայ՝ ժառանգեն զմասն սուրբ: Եւ էին ի վանս կուսանաց սուրբ առաքելոյն Պետրոսի երեք հարիւր կուսանք. եւ սուրբն Գայիանէ մայր կուսանաց վանիցն՝ սնուցանէ զսուրբն Յովսիփմէ անդր, արկեալ ի

պարանոց նորա զմասն պատրոնիկեայ մեծեալ արեամբ: Եւ ի հասանիլ նեղութեանն, առնու եւ փախչի յԵգիպտոս եւ Յաղեքսանդրիա. եւ գալ Երուսաղէմ. եւ հրաման առնու թէ՛ զնացէք ի վիճակն Թադեոսի առաքելոյն. եւ գան յԵգեսիա. եւ յուրվք մնան ի տեղւոջն ուր պատկերն էր փրկչին. եւ այլքն գան Յայրարատ: Եւ որք ի տեղին մնացին քոյրն Գայիանեայ զոյի անուն եւ այլքն՝ կոտորեցան ի Դիոկղետիանոսէ: Եւ այն է խաչն վարագայ. զոր ի գալն՝ թողին ի Տոսք գաւառն պարգել մեծ Յայաստան աշխարհիս եւ ինքեանք նահատակեալք ի Տրդատայ, ծնան սրբութեամբ զագգն օտարացեղ յորդիս Աստուծոյ. որպէս յայտ է ի պատմութիւնս նոցա: Իսկ ի վախճանիլն ի կղօղիայ՝ առնու զթագաւորութիւնն Ներոն. եւ հրեայքն վստահացեալ սպանին զՅակօբոս. եւ յետ սպանման նորա՝ առեալ զխաչն տարան թաղեցին ի Խորափտի ի գագաթան տեղւոջն մինչ ի ժամանակս Կոստանդիանոսի բարեպաշտ թագաւորի. որ կոչին նա ամ խաղաղութեան եկեղեցւոյ: Եւ մայր նորա Յեղինէ Զրիստոսասեր դշխոյն՝ ել յԵրուսաղէմ ի խնդիր իր աստուածային նշանին. եւր կշտամբեալ զհրեայսն, գտեալ բազում խուզիւ ի ձեռն Յուդայ որ կոչի Կիրեղ: Այն որ նա հատակեցաւ ի յուլիանոսէ սուրբն Կիրեղ եւ մայրն իւր: Եւ ապա աստուածասեր դշխոյն՝ պրամանաւ որդւոյն իւրոյ Կոստանդիանոսի, մեծափառ տեսչանօք շինէ ի սուրբ տեղիսն հրաշագան եկեղեցիս. եւ կարգէ տօն նաւակատեաց խաչի եւ եկեղեցւոյ ի միասին ի սեպտեմբերի տասն եւ Դ. զոր եւ տօնեմք. զորեւ խաչվերաց անւանեմք: Քանզի վերացուցանէր քահանայապետն ի տես եւ ի պահպանութիւն հաւատացելոց. եւ դներ ի Գողգոթայ. եւ մինչեւ յօր գալստեան Տեանն՝ այլ ոչ շարժ էր: Չորեւ մեք առնեմք ըստ սովորութեան. որ յամենայն կիրակեի ելեալ խաչիւ պահպանեմք. եւ մինչ յողորգմեանն այլ ոչ ելանեմք: Կամ թէ մինչ ի յայս՝ զկնի արձակման պատարագին, խաչին ելանէ պատարագօղն. եւ յայսմ օրէ վեացուցանէ: Բայց ասեն թէ՛ այս պատրոնիկեայ գիւտն է եւ ոչ Յեղինեայն. վասն որոյ ի կիրակե տօնեմք. զի նա ի կիրակե եգիտ. իսկ Յեղինեայն այն է՝ որ յետոյ տօնեմք: Սակայն տօնս հանդիսաւոր եւ երեւելի կարգեցաւ ի սեպտեմբերի տասն եւ չորս: Այլեւ Դաւիթ մեծացուցանէ զպատիւ աւուրս. (նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց:) Երես՝ հօր որդի. եւ լոյս երեսաց՝ հոգին սուրբ. որ նշանաւ խաչին եկն՝ ի դասս առաքելոցն. եւ նշանելով ի մեզ զխաչն՝ հաղորդիմք հոգւոյն: Եւ դարձեալ՝ անամօթ՝ լուսաւոր երեսօք յանձն կալաւ զխաչիլն.՝ ուրախ էր սրտիւ,՝ ուրախարար սրտից մերոց. ի փառս Զրիստոսի Աստուծոյ մերոյ. որ է օրինեալ յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ քարոզ վասն Խաչին. ի Բանն որ ասէ: (Որպէս Մովսէս բարձրացոյց զօճն յանապատին. նոյնպէս պարտ է բարձրանալ որդւոյ մարդոյ եւ այլն:) Յօհան. 3. 14: (Գլուխ. ԾԼԷ)

Մեծն ի մարգարես աստուծայինն Մովսէս՝ զխորհուրդ փրկական խաչին՝ նշանակաւ օճի կրկին անգամ օրինակեաց ի յանապատին: Առաջին ի լերինն սուրբ վասն նշանացն. որ հրամայեաց Աստուած ընկենուլ զգաւազանն յերկիր. եւ եղէ օճ. եւ ըմբռնեալ գտուտն, եղէ գաւազան: Նախ՝ նշանակէ զնոյն ինքն սկզբնաչարն սատանայ. որ էր յրեկինս գաւազան ուղղութեան. եւ ընկեցեալ եղէ օճն. (հրեղէն վիշապն ասէ

քարշեաց զերրորդ մասն աստեղաց:) Երկրորդ դարձեալ՝ նոյն ինքն սատանայ է օձն. որ փոխեցաւ ի բարեկամի ձեւ. եւ պատրեաց զնախաստեղծն: Երրորդ՝ թագաւորական գաւազան էր Ադամ ի դրախտին. յորժամ մեղաւ, անկաւ երկիր. եւ եղեւ օձ մեղաւոր: Եւ դարձեալ Բանն Աստուած (բուռն եհար զգաւակէն Աբրահամու.) եւ եղեւ անօթ թագաւորական: Չորրորդ՝ ի ձեռն Յովսէփայ ժողովուրդն էջ յԵգիպտոս. եւ եղեւ չարութիւն. եւ ի ձեռն Մովսէսի՝ դարձեալ եղեւ գաւազան թագաւորութեան եւ քահանայութեան: Հինգերորդ՝ նշանակէ զփարաւօս վիշապն դառնաշունչ. ըստ այնմ, (դու փշրեցեր զգլուխ վիշապին ի վերայ ջուրց:) Ըմբռնելն՝ յուսադրեաց Մովսէսի՝ յաղթել փարաւօսի եւ հանդարտիլ: Վեցերորդ՝ նշանակէ զԲանն Աստուծոյ գաւազան ուղղութեան եւ թագաւորութեան առ հայր. եկն յերկիր. եւ էառ զօձաձեւ բնութիւնս մեր. եւ դարձեալ ըմբռնեալ մարմնովն, ել յերկիսս. եւ նստաւ ընդաջմէ հօր: Եօթներորդ՝ գաւազանն նշանակ է խրատու եւ արդարութեան. զոր թէ ընկէնու ոք՝ լինի եկրաքարշ մարդ եւ մեղաւոր: Եւ զղջացեալ՝ դարձեալ ըմբռնէ յետոյ. եւ լինի պատճառ կանգնիլոյ եւ փրկութեան: Ութներորդ՝ գաւազանն նշանակէ հեշտութեան եւ հանգստեան. զի որ ընկէնու եւ իմանայ մտօք, օձ է մահացուցիչ հոգւոյ. իսկ օձն՝ զմահ եւ զչարչարանս նշանակէ. զի որ վասն Քրիստոսի զչարչարանս եւ զմահ կամաւ յանձն առնու՝ հանգչի եւ հաստատի ի կեանս յաւիտենից. որպէս ասէ Տէրն. (թէ որ զամենայն ուրանայ զմարմնաւոր հանգիստ՝ եւ առնու զխաչն. այսինքն, զչարչարանս, նա է ինձ արժանի.) եւ առաքեալն, (թէ չարչարարանացն կցորդ եմք, եւ փառացն հողորդ լինելոց եմք:) Իններորդ՝ Մովսէս նշանակէ զվարդապետս եկեղեցւոյ. եւ գաւազանն ի ձեռին զխրատն ի վերայ անբանացեալ ժողովրդեանն. զոր պարտ է վարդապետաց հանապազ զաստ խրատու պահել ի վերայ ժողովրդոց եւ զգաստ ցուցանել զնոսա. եւ զաւելորդ փոշի մեղացն թօթափել ի նոցանէ. իսկ որ ընկէնու ծուլութեամբ զխրատ եւ ոչ սաստէ, լինի գաւազանն եւ իշխանութիւնն ինքեան օձ խածանօղ մահացուցիչ. եւ դարձեալ ըմբռնեալ՝ հանգչի հոգւով եւ անդատապարտ մնայ: Տասներորդ՝ խաչն փրկական՝ նախ էր մահու գործի. զոր առեալ ի ձեռն Քրիստոսի, եղեւ կենաց պատճառ: Եւ ի ձեռն խաչին ներգործին ամենայն սքանչելիք. որպէս ի ձեռն գաւազանին Մովսէսի: Այս առաջին օրինկան: *Իսկ երկրորդն՝ զի հրամանաւս Աստուծոյ Մովսէս արար պղնձի օձ. եւ բարձրացոյց ի դուռն խորանին. եւ որ հայեր ի նա՝ ապրեր ի թունից օձիցն: Չայս խորհուրդ յինքն ձգեաց Տէրն ասելով: (Չի որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին. նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ:) Նախ՝ որպէս բարձրացաւ օձն ի ձողին. նոյնպէս Տէրն ի խաչին: Երկրորդ՝ որ հայեր յօձն՝ բժշկի ի թունից մահաբեր օձին: Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ օձն պղնձի զմարդիկ թշնամիս իւր կեցուցանէր. եւ զօձն սատակէր. եւ Տէրն զմարդիկ ազգակից իւր կեցուցանէ. եւ զսատանայ հալածէ: Չորրորդ՝ պղինձն ոսկետեսակ. եւ Տեառն մարմինն աստուածատեսակ փառօք եւ կարօղ ներգործութեամբ: Հինգերորդ՝ անփուտ է պղինձն. եւ անապական մարմինն Քրիստոսի: Վեցերորդ՝ առանց դառնութեան եւ թունից էր օձն. եւ Տէր մեր առանց դառնութեան մեղաց: Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձս. եւ զհարեալսն կեցուցանէր: Եւ Տէր մեր՝ մեռեալ մարմնով, զմեղս մեռուցանէր. եւ կենդանի

աստուածութեամբն զմարդիկ կենդանագործեր: Ութներորդ՝ եպատ առնուլ օձին՝ զհինգ զգայութիւնս մեր նշանակէ. զոր էառ Տէրն եւ սրբեաց զմեզ: Իններորդ՝ գլուխ եւ տուտն՝ ցասումն է՝ եւ տրտմութիւն զկնի. եւ ամենայն մեղաց՝ յետոյ տրտմութիւն հետեւի. որեւ տրտմեցաւ Տէրն մինչեւ ի մահ. զի զտրտմութիւնս մեր եբարձ. եւ զայրացաւ իգերեզմանն Ղազարու ի վերայ մահուն: Տասներորդ՝ որպէս ասէ Փիլոն. նշանակ հեշտ ցանկութեան՝ Է օձն. որեւ զցանկացող ժողովուրդն սատակեր. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց եւ զպատուհասն: Եւ Տէրն արդար դատաստանաւ՝ ըստ նմանութեան մեղաց պատժէ զմեղապարտս: Վասն որոյ ասէ. (Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին. Եւ յայնպէս բարձրանալ պարտ է:) *Եւ արդ՝ վասն սրբոյ խաչին՝ տասն ինչ հարցանելի է: Առաջին՝ զի թէ այսպէս խորհրդաւոր է փայտ խաչին որպէս ցուցաւ ի գաւազանէն Մովսէսի եւ ի ձողին յանապատին, վասն Է՞ր այժմ փոխեմք եւ այլ նիւթոյ կազմեմք: Պատասխանեմք եթէ Զրիստոս զփայտ խաչին ետ մեզ փոխանակ փայտին կենաց. եւ զձեւ սորա՝ փոխանակ ձեւոյ իւրոյ: Արդ՝ յորժամ նա փոխանակ ձեւոյ իւրոյ: Արդ՝ յորժամ նա փոխեաց զնիւթն փոխանակ նիւթոյ. եւ զձեւն փոխանակ ձեւոյ. եւ պահեաց զտեսակն: Եւ յայնպէս եւ մեք կարեմք փոխել զնիւթ փոխանակ նիւթոյ. եւ պահել զտեսակ խաչին: Դարձեալ ասեմք. նիւթ խաչին ոչ էր մի փայտ, այլ զանազան փայտ. զի այլ էր բունն կիպարի. եւ խոտորակն Լոճի. պատուանդանն արմաւենի. եւ տախտակ գլխոյն ձիթենի: Այլ թէ յայնժամ ի զանազան նիւթոց եղեւ խաչն, կարէ եւ այժմ ի զանազան նիւթոց կազմիլ խաչ: *Երկրորդ հարցումն է թէ՛ ամենայն օրինակքն՝ պարտին համաձայնիլ առ ճշմարտութիւնն: Արդ՝ խաչին օրինակքն՝ յառաջագոյն փայտ տպաւորեցան. որպէս ծառն Սաբեկայ. Սանտուիքն Յակօբայ. եւ գաւազանն Մովսէսի. եւ նիզակն Յետուայ. եւ այլ բազումք: Ապա պարտ է զի եւ ճշմարիտ խաչն փայտ լիցի: Ասեմք թէ՛ սոքա ամենեքեան օրինակք են խաչին. ոչ ըստ նիւթոյն, այլ ըստ ներգործական զօրութեանն: Չի որպէս ի ծառոյն Սաբեկայ՝ կախեցաւ խոյն եւ ազատեցաւ Իսահակ. այսպէս ի ծառոյ խաչին կախեցաւ Տէր մեր. եւ ազատեցաւ մարդկայինս բնութիւն: Այսպէս եւ սանտիսօք խաչին՝ մարդիկ ի յերկինս ելին. եւ հրեշտակք յերկիր իջին: Եւ գաւազանաւ խաչին պատառեաց զծով մեղաց աշխարհի. եւ անցոյց զժողովուրդ իւր յանապատ յերկինս: Եւ որպէս նիզական յետուայ՝ եսպան զթշնամին սատանայ. եւ խաւարեցոյց զլուսաւորս ի յերկինս. այսպէս եւ այլքն ամենայն: Ապա յայտ է՝ զի խորհուրդք էին խաչին. ոչ ըստ նիւթոյն, այլ ըստ սքանչելի ներգործութեանն: Ապա թէ ոչ՝ նոյն վեմն զոր եօժ Յակօբ ի խորհուրդ խաչին, եւ ակն շափիւղայ ի ներքոյ ոտիցն Աստուծոյ, այլեւ վեմն ի ներքոյ ձեռացն Մովսէսի, այլեւ արձանն զոր կանգնեաց յետու ի վիմաց գլուղ, խորհուրդք էին խաչին Զրիստոսի: Դարձեալ ասեմք եթէ՛ որպէս զգառն օրինակին ինքն կատարեաց. եւ մեզ ևոր ուխտ հաստատեաց մարմնով իւրով. Եւ յայնպէս եւ զփայտ խաչին ինքն կատարեաց ըստ հնոյ օրինակին. եւ մեզ ևոր նիւթ հաստատեաց կանգնել զխաչ նմին: Եւ որպէս ինքն կատարեաց զթլփատութիւնն մամոյ. եւ մեզ ևոր ուխտեաց զմկրտութիւնն սրտի թլփատութիւն: Եւ յայնպէս եւ այս: Դարձեալ զի կռապաշտքն՝ զամենայն նիւթս պաշտեցին եւ երկրպագեցին: Առաքեալք եւ հայրապետք հրամայեցին յամենայն նիւթոյ խաչ կազմել. զի պաշտօն եւ երկրպագութիւն կռոցն փոխեցցի յերկրպագութիւն եւ ի պաշտօն խաչին. եւ

խափանեստի կուռքն: Այլեւ սրբեսցին սիրթ պղծեալք ի ձեռն խաչին. որպէս ինքն Տէրն անշնչացաւ ի խաչին. զի զպաշտօն անշունչ պատկերացն յինքն ձգեսցէ: *Երրորդ հարցումն. վասն Է՞ր գտեսակ հացին եւ գինւոյն պահեմք ի պատարագն, եւ գտեսակ փայտին փոխեմք ի յայլ սիրթ: Ասեմք եթէ՝ Զրիստոս զմարմինն իւր ետ մեզ կերակուր ի հացն եւ ի գինին եւ ասաց. (զայս արարէք առ իմոյ յիշատակի:) Իսկ նշան փրկութեան ոչ ետ մեզ զփայտն, այլ զխաչն. վասն այն յայլ եւ յայլ սիրթոյ կազմեմք խաչ: Ուստի յայտ է՝ զի եւ առանց սիրթոյ զնշան խաչին յերեսս դրոշմեմք եւ ի սիրտ՝ յեկեղեցիս եւ յամենայն տեղիս ուր պիտոյանայ: Դարձեալ ասեմք եթէ՝ ի պատարագն Զրիստոսի զոյացութեամբ հացին եւր գինւոյն միացեալ է ի պատահական որակս նոցին. զի զոյացութիւնն է փոխարկեալ եւ եղեալ մարմին եւ արիւն Զրիստոսի: Իսկ ի խաչն՝ ընդդէմ նմին. ի նշան եւ ի ձեռն խաչին է միացեալ Զրիստոս. եւ նովաւ ի սիրթն: Եւ զի ձեռն առանց սիրթոյ ոչ կայանայ. վասն այն յամենայն սիրթոց որ ամուր պահէ զձեռն՝ կազմեմք զնշան խաչին: *Զորրորդ հարցումն. սիրթն է պաշտելի խաչին, թէ ձեռն, եւ թէ գո՞րծն: Ասեմք եթէ՝ որոշաբար ի սոցանէ ոչ ոքն. զի բազումք են ի նկարս եւ ի կենդանիս խաչին ձեռն. եւ ոչ է պաշտելի: Այլեւ սիրթն առանձին փայտ եւ քար՝ եւ գործն մահարար՝ ոչ է պաշտելի: Այլ միաւորաբար պաշտելի է խաչն. զի զօրութիւն Զրիստոս է ի նմա միացեալ. յաղագս որոյ՝ նախ օրինեմք եւ օծանեմք զխաչն. եւ ապա երկրպագեմք. զի օրհնութեամբ միացեալ Զրիստոս ի նմա, անորոշելի է ի ձեռոյն, ի սիրթէն, եւ ի գործոյն: Դարձեալ ասեն ոմանք եթէ՝ պաշտեմք զխաչն՝ եւ երկիրպագանեմք սիրթոյն: Ասեմք թէ՝ պաշտօնն է գերագոյն պատիւ Զրիստոսի ի նմա բելեռեալ. իսկ երկրպագութիւն սիրթոյն՝ ենթակայ խաչին կայացեալ. յաղագաս որոյ զսիրթն խաչին ելեալ ի ձեռոյն, ոչ անպատուեմք. եւ յորժամ ձեռանայ դարձեալ խաչ նոյն սիրթն, վերստին ոչ օծանեմք զնա. զի օծումն եւ օրհնութիւնն անբաժանելի էր ի նմանէ յաւիտեան: *Յինգերորդ հարցումն թէ՝ վասն Է՞ր օրհնեմք եւ օծանեմք զխաչն. զի օրհնութիւն եւ օծումն Զրիստոս է ի նմա միացեալ, յորժամ յանուն նորա կանգնեմք խաչ: Ասեմք եթէ՝ զխաչն եւ զպատկերս եւ զեկեղեցիս վասն այն օրհնեմք եւ օծանեմք սուրբ իւղովն՝ զի որոշեսցի սիրթն այն յայլ սիրթոց եւ յայլ պատկերաց. եւ օրհնութեամբ եւ օծմամբն այնու՝ լինի բնակարան Զրիստոսի, եւ երկրպագելի մեզ: Դարձեալ՝ զի որպէս մարդն պատկեր է Աստուծոյ, եւ օրհնեմք եւ ապա լինի քահանայ. եւ զտղայն մկրտեմք եւ ապա լինի քրիստոստնեայ. եւ զհացն եւ զգինին օրհնեմք, եւ ապա լինի մարմին եւ արիւն Զրիստոսի: Նոյնպէս եւ զխաչն եւ զպատկերս եւ եկեղեցիս օրհնեմք նոյն ինքն իւր բանին. եւ ապա լինի խաչ Զրիստոսի. կամ պատկեր. կամ տաճար: *Վեցերորդ հարցումն. ապա ո՞ր է օրհնութիւն եւ օծումն խաչիս այս՝ յորում հանապազ յերեսս դրոշմեմք, եւ ի կերակուրս եւ յայլ սիրթս: Ասեմք եթէ՝ անմարմին նշանիս այսմ, բաւական է անմարմին դիտաւորութիւն մտացն որ յանուն Զրիստոսի դրոշմեմք: Այս է օրհնութիւն դրոշմի նշանինս: Դարձեալ ասեմք եթէ, ամենայն օրհնութիւն՝ բանիւ եւ սուրբ կոչմամբ եւ սուրբ օծմամբ կատարի. նոյնպէս եւ աստ բանիւ կոչամք զանուն սուրբ երրորդութեանն. եւ օծեալ մատամբ դրոշմեմք զնշանն սուրբ՝ որով սրբին նմենայն սիրթ օրհնութեան բանին եւ սուրբ նշանան: *Եօթներորդ հարցումն. թէ ամենայն խաչ օրհնութեամբ եւ օծմամբն սրբի,

ո՞րն է օրհնութիւն եւ օծումն խաչափայտին Քրիստոսի: Ասեմք եթէ՝ այս է օրհնութիւն խաչիս՝ որ բանիւն Քրիստոսի եւ սուրբ օծմամբն՝ միացի Քրիստոսս ի նա եւ լինի խաչ Քրիստոսի: Իսկ անդ՝ Բանն Աստուած բոլորովին օծեալ մարմնով իւրով, բեւեռեալ եւ միացեալ էր ի նմա. եւ այնու եղեւ խաչ Քրիստոսի եւ երկրպագելի մեզ: Դարձեալ՝ օրհնութիւն խաչիս՝ են բանք սուրբ հին եւ նոր կտակարանաց զոր ընթեռնումք ի վերայ. եւ լուանամք ջրով եւ գինով. եւ օծանեմք խաչ: Նոյնպէս եւ անդ է բանքն զորս խօսեցաւ ի վերայ խաչին. եւ կրկնավտակ աղբերան եւ եօծ զնա արեամբ եւ ջրով: Որով այսու զփայտն մահու եւ գործի անհօից՝ ետ մեզ փայտ կենաց, եւ գործի օրհնութեան ըստ այնմ, (Քրիստոս զնեաց զմեզ յանհօից օրհնաց եղեալ վասն մեր անեծք. եւ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս:) *Ութներորդ հարցումն. վասն Է՞ր միայն զխաչափայտին նիւթն պաշտեմք. եւ ոչ զամենայն նիւթ խաչի: Ասեմք եթէ՝ Բանն Աստուած նիւթական մարմնովն բեւեռեցաւ ի նիւթ խաչափայտին անընդմիջապէս. վասն որոյ նիւթ աչին բոլորն եւ մասունքն՝ երկրպագելի եւ պաշտելի են մեզ: Իսկ ի բազում խաչս՝ միջնորդութեամբ ձեւոյն բեւեռի ի նիւթն. վասն որոյ նշան սուրբ խաչին պաշտելի է մեզ, եւ ոչ նիւթն: Դարձեալ՝ ասեմք եթէ զգալապէս կաթուած արեանն Քրիստոսի՝ կայացաւ ի խաչն ըստ որակի գունոյն. եւ է մինչ ի կատարած աշխարհի որակի արեանն Քրիստոսի ի գործիս չարչարանաց նորին անբաժանելի: Չի որպէս արիւնն Աբելի ոչ ծածկեցաւ յերկրի մինչեւ ջրհեղեցն սրբեաց. այսպէս եւ արիւնն Քրիստոսի ոչ ծածկի յերկրի, մինչեւ հուրն սրբեցէ: Եւ որպէս վերք խոցածոյ նշանացն մնան ի մարմինն Քրիստոսի մինչ ի կատարած. (զի հայեցին ի նա յորիւնցեցինն:) Նոյնպէս եւ որակ արեանն մնայ ի խաչ եւ ի բեւեռս եւ յայլ գործիս չարչարանացն Քրիստոսի. մինչեւ երեւեսցի յաւուր գալստեանն մեծի: Վասն այն երկրպագանեմք նիւթոյ խաչին՝ եւ ամենայն մասանց նորա եւ բեւեռացն: *Իններորդ հարցումն եթէ՝ քանի՞ էր փայտ խաչին: Ասեմք եթէ՝ չորս էր որպէս ասացաւ ի վերոյ. այսինքն, բունն, կիպարի. պատուանդանն նոճի. խոտորնակն արմաւենի. իսկ տախտակ վերնագրին՝ ձիթենի: Եւ յայցանէ կազմեցաւ փայտ խաչին: Դարձեալ ասեմք եթէ՝ նոճն նշանակէ զբարձրութիւն խոկմանն: Իսկ կրպարին զանուշահոտ բարեհամբաւութիւնն: Ձիթենին զկակղութիւն ողորմութեանն: *Տասներորդ հարցումն թէ՞ ի միւսանգամ գալստեանն՝ փայտ խաչի՞ն եկեցէ թէ ձեւ խաչի՞ն: Ասեմք եթէ ոմանք ասեն եթէ՝ լոյսն երեւի ի ձեւ խաչին: Եւ ոմանք եթէ՝ խաչն լուսաւորեալ ճառագայթէ. որպէս բեւեռքն եւ գեղարդն: Եւ այս է տարածայնութիւն սոցա: Չի ոմանք ապականացու ասեն զխաչն տերունական, առարկելով կրկին կերպիւ: Նախզի՝ ամենայն որ ի չորից տարերաց է, կրէ զապականութիւն. արդ՝ խաչն փայտ է եւ ի չորից տարերց. ապա ուրեմն ապականի եւ նա: Երկրորդ՝ զի մարդոյ մարմին որ է բանական եւ կենդանի ապականի մահուամբ. ապա ուրեմն եւ խաչն եւս ապականի. զի ոչ կենդանի է, եւ ոչ բանական. այլեւ կենդանութեան քակտիչ է. զի գործի է մահու: Որոց պատասխանեցուք այսպէս դիմակայութեամբ եթէ՝ ոչ է ըստ օրինի բնութեան անապական մնալ նմա. այլ սքանչելիք աստուածային: Չոր օրինակ՝ ոչ էր բնութեանս անսերմն յղանալ եւ կուսութեամբ ծնանիլ, զոր Բանն Աստուած սքանչելապէս ներգործեաց. այսպէս եւ այս ոչ է ըստ բնութեան կարգի. զի նոյն Բանն ի սա է միաւորեալ անբաժանապէս: Իսկ

երկրորդին, այսպես պատասխանեցուք ընդդիմայարակայութեամբ: Չի մարդոյ մարմինն ապականի. վասն զի քակտի ի նմանէ կենդանացուցիչ նորին. այսինքն հոգին. ըստ այնմ, (մարմինն դառնայ ի հող ուստի առաւ. եւ հոգին երթայ առ Աստուած:) Իսկ խաչին կենդանութիւն Քրիստոս է. եւ ոչ քակտի ի նմանէ. ըստ այնմ, (ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա:) *Արդ ցուցցուք՝ զի ճշմարիտ անապական է խաչն բնական քննութեամբ եւ սուրբ գրոց վկայութեամբ: Նախ բնականաբար քննութեամբ. զի արարածք ամենայն գործք ձեռին Աստուծոյ են. ըստ այնմ, (ո՞չ ձեռն իմ արար զայս ամենայն:) Արդ՝ որպէս հրեշտակք յոչ գոյից գոյացան՝ եւ են անապականք եւ անմահք ի կամսն Աստուծոյ. այսպէս եւ չորս տարերք ըստ ինքեան անապականք են. զի մասնաւորքն ի նոցանէ ապականին եւ դարձեալ ի նոսա խառնին. եւ այսոքիկ ըստ կամացն Աստուծոյ են անապական մշտապէս: Նմանապէս եւ խաչն Աստուծոյ ի կամացն Աստուծոյ եւ ի նորին ներգործութենէն անապական կամեցեալ է. զի նովաւ արար փրկութիւն ազգի մարդկան: Երկրորդ՝ զի Աստուած զամենայն արարածս (կրէ բանիւ զօրութեան իւրոյ ասէ առաքեալն) եւ ի նոյնութեան պահէ: Եւ սոքա պահին առանց միաւորութեան եութեան նորա. ապա ուրեմն եւս առաւել խաչն մնայ անապական՝ զի եութիւնն Աստուծոյ է ի նմա. այսինքն, Բանն Աստուած որ է մարմնով սեւեռեալ ի նմա: Երրորդ՝ զի խաչն այն մեծեալ է արեամբն աստուածային. ըստ որում բեւեռեցաւ ի նմա: Արդ՝ եթէ խաչն ապականի, ապա եւ արիւնն որ ի նմա. ուստի յայտ է թէ՛ զմարմինն բանին ապականացու խոստովանին նոքա՝ որք զխաչն ապականացու ասեն՝ եւ են նեստորականք. իսկ որք զբանն մարմնով անապական խոստովանին՝ պարտին զխաչն աստուածընկալ անապական խոստովանիլ: Չորրորդ՝ յայտ է յօրինակաց. զի գաւազանն Ահարօնի որ ծաղկեցաւ՝ օրինակ էր խաչին. եւ տախտակք բանին. եւ ծառն կենաց ի մէջ դրախին: Արդ՝ սոքա անապականք են յայսմ հետէ եւ առ յապայ որ օրինակք են. ապա ուրեմն եւ ճշմարտութիւնն անապական է խաչն Աստուած ընկալ: Հինգերորդ՝ զի ոչ ոք ապականացու զայլ ոք անբողջ կարէ պահել. որպէս յայտ է ի նիւթական իրս ամենայն. արդ՝ նո որ զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս օրինէ եւ հաստատէ, եւ ամենեցուն զօրաւիզն է ի փրկութիւնս, կարօղ է անապական լինիլ. զի աստուածային է նշան: Վեցերորդ՝ զի գործ է Աստուծոյ ի նւաստ եւ ի փոքր ինչ իրս զմեծամեծս ներգործել. որպէս կաւովն զկուրին աչս եբաց. եւ ի վիմէն ջուր բղխեցոյց եկոտասան. եւ այլ բազումս: Այսպէս եւ զչնչին փայտ առաւել արար փրկութիւն տիեզերաց. եւ արար անապական: Եօթներորդ՝ զի Սողոմօն ասէ. (օրինեալ է փայտն՝ որով լինի արդարութիւն.) որ է խաչն փրկական: Արդ՝ յայտնեալ է նա եւ որոշեալ ի մէջ ամենայն փայտից գոլ արմատ արդարութեան. որով փրկեցաք ի բանսարկութենէն: Արդ՝ որոյ գործն յաւիտեական է, եւ նոյն ինքն անապական է ասէ փիլիսոփայն. ապա ուրեմն անապական է սուրբ խաչն: Ութներորդ՝ զի որ գործարան է մահու նա է ապականացու. իսկ վասն խաչին ասէ. (փայտ կենաց է ամենեցուն:) Եւ զոր օրինակ՝ փայտն գիտութեան պատճառ մահու եղել. այսպէս եւ սա պատճառ կենաց եղել. պատասխանեալ դեղն ցաւոց. արդ որ մայրն է կենդանութեան՝ նա անապական է. այսինքն, սուրբ խաչն: Իններորդ՝ զի դեւք հալածական լինին ի զօրութենէ աստուածային նշանին. եւ հրեշտակք սպասաւորեն նմա.

որպես յայտ է ի սերովբեսն որք ի ներքոյ փառաց աթոռոյն. այսինքն խաչին թեւասքօղեալ գերեք սրբեանն վերածայնէին: Արդ՝ եթէ ապականացու եր սա՝ երկնչէին ի սմանէ դելք. որպէս եւ ոչ յանասնոց եւ յանշնչից. ապա ուրեմն անապական է խաչն: Տասներորդ՝ զի գսա ետ մեզ նշան Տէրն իւրոյ գալստեանն. ըստ այնմ, (ապա երեւեցի նշան որդւոյ մարդոյ յերկրինս:) Եւ այսու ոչ թէ լոյս միայն է. զի զլոյս ոչ ետ նշան. այլ զխաչն փայտեղէն՝ յորոյ վերայ գծեմն իւր տարածեաց միածին Բանն, իսկ լոյսն՝ ի փառս խաչին այնորիկ երելի: Չի որպէս խաչեալն ի ժամ խաչելութեանն տգեղ երելեր. եւ ի միւսանգամ գալստեանն՝ փառօք հօր եւ ընդ ամպս: Այսպէս եւ խաչն իւր՝ աստ տգեղ երելի. եւ ի կարապետութեանն իւրում, արեգակնափայլ ճառագայթիւք. ապաուրեմն անապական է սուրբ խաչն: Որով զմեզ զամենայն զհաւատացեալս իւր՝ արժանի արասցէ Քրիստոս Աստուած պայծառ երեսօք՝ եւ զուարթ սրտիւ եւ լուսով խաչին՝ տեսանել զփառս սուրբ Երրորդութեանն. որում փառք յաւիտեանս ամեն:

Նորին դարձեալ քարոզ Խաչի. ի Բանն՝ (Չի ճառ խաչին՝ կորուսելոցն յիմարութիւն Է. այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ:) Կորն. 1. 18: (Գլուխ. ՃԼԸ)

Փողն բարձրաբարբառ եւ ազդարար՝ յերրորդ երկինս ելօղ՝ անհասիցն տեսօղ եւ անճաշնցն պատմօղ՝ աստուածային խորհրդոցն հազարապետ խորին՝ եւ գանձուցն իմաստից տնտեսն հաւատաիրիմ՝ անօթն ընտրութեան՝ քարոզն ճշմարտութեան առաքեալն Պօղոս՝ ձայն է ի մեջ եկեղեցւոյ եթէ: (Ճառ խաչին կորուսելոցն՝ յիմարութիւն Է. այլ փարկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ:) Այսինքն, չարչարանք եւ մահ խաչին Քրիստոսի՝ անհաւատիցն յիմարութիւն թուի. այլ մեզ հաւատացելոցս որք չարչարանօք խաչին փրկեցաք, Աստուծոյ զօրութիւն Է եւ իմաստութիւն: Չի որպէս առողջարար կերակուրն հիւանդին տաղտկալի է եւ վնաս. նոյնպէս եւ կամակորացն անհաւատութեամբ՝ բան խաչին: Եւ որպէս խելագարեալն գերախտաւոր բժիշկն իւր անարգէ եւ ի բաց մղէ. նոյնպէս եւ նոքա զխաւն ասեն. թէ կարողութիւն ունէր՝ ընդէ՞ր եւ ինքն ըմբռնեցաւ ի չարչարանսն. մեռաւ եւ թաղեցաւ. եւ զոր ինքն ոչ ունի՝ քեզ զի ա՞րդ շնորհէ ասեն: Չայս հեթանոսք: Նոյնպէս եւ հրեայք. (թէ որդի Աստուծոյ է, իջցէ ի խաչէն եւ հաւատացուք.) որպէս եւ կորուսեալ աւագակն: Առ որս ասացուք թէ՛ առաւել յայնժամ զօրաւորէ որ՝ յորժամ ի դժնդակ փորձութիւն մտեալ իցէ եւ ելեալ, քան ոչ մերձեցեալ. իբր թէ ի յորդահոսան յորձանաց գետոց, կամ յալեաց ծովու: Եւ քաջամարտիկն ի պատերազմի, այլ ոչ թէ արտաքոյ կացեալն առնէ զյաղթանակն: Նմանապէս եւ երեք մանկունքն ի մէջ հնոցի հրոյն եղեն սքանչելիք՝ զի ոչ այրեցան. եւ ոչ թէ ոչ էին իսկ մերձեցեալ: Եւ մարգարէն Յովնան ի փոր կիտին մտեալ եւ ելեալ ամբողջ, եղեւ հռչակեցեալ, քան թէ չէր ի նաւ ելեալ: Այսպէս եւ Տեառն մերոյ եւ փրկչին այն եր առաւել յաղթութիւն՝ զի բեւեռեալ ի խաչին, եւ զկապեալսն արձակեր. մեռեալ, եւ զմեռեալսն յարուցաներ. մահւամբ զմահ խափաներ. ի գերեզման իջեալ, եւ զմեզ ի յերկինս Էհան: Նոյնպէս եւ քրտամբքն եւ փշօքն եւ թբօքն, եւ ոտիւքն եւ ձեռօքն, եւ ճաշակմամբ լեղւոյն եւ խոնար հիլով զլիտոյն, բացմամբ կողին եւ այլովն ամենայն, զնախաստեղծիցն բուժեր

զախտան: Եւ թեպէտ տկար ասի խաչն. տես զի յամենայն ուրեք հակառական զառաւելութիւն ներգործեաց: Որպէս ի սկզբանն իսկ ի հակառակ տարերց գոյացոյց զաշխարհս: Եւ զծով չնչին աւազան սանձեաց: Եւ զծանրութիւն երկրի թեթեւութեամբ ջրոյն բառնայ: Եւ յայլ հակառակ է՝ փոշով զաչս կուրին լուսաւորէ. շարաւոտ թաշ կինական Պօղոսի՝ զամենայն ախտան բուժէր. եւ հովանիք նոցա զհիւանդս բժշկէին: Եւ հանդարձք նոցա զմեռեալս յարուցանէին. զի ծանիցես զգօրութիւնն Աստուծոյ ի տկարութեան ներգործեալ: Այսպէս եւ խաչն մեզ փրկելոցս զօրութիւն Աստուծոյ: Չի խաչն է նշան հակառակութեան. ըստ այնմ, (սա կայ ի կանգնումն եւ ի գլորում բազմաց, եւ ի նշան հակառակութեան.) այսինքն, ըստ զօրութեան, ըստ ներգործութեան, ըստ տեսոյն, եւ ըստ ձեւոյն: Նախ՝ ըստ զօրութեան. զի մի եւ նոյն զօրութիւն խաչին՝ հաւատացելոցն կանգնումն է եւ արդարութիւն. իսկ անհաւատիցն՝ գլորումն եւ գայթակղութիւն. ըստ այնմ, (ճամ խաչին կորուսելոցն՝ յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ:) Երկրորդ՝ ըստ ներգործութեանն. զի խաչն մարդկան ազգի փրկութիւն գործեաց. եւ դիւացն գնդից գկորուստ. ըստ այնմ, (մերկեաց զհշխանութիւնս եւ զպետութիւնս:) Երրորդ՝ ըստ տեսոյն. զի խաչն գործի է չարչարանաց եւ մահու. եւ կեանք եւ անմահութիւն ծածկեալ ի ներքոյ. ըստ այնմ, (այսպէս պարտ էր չարչարարիլ Զրիտոսի եւ մտանել ի փառս իւր:) Եւ թէ ոք (չարչարանացն կցորդ լիցի, եւ փառացն հաղորդ լինելոց է:) Չորրորդ՝ ըստ ձեւոյն. զի քառաթեւ ձեւ խաչին՝ ընդդէմ միմեանց ներգործեն. այսինքն, ներքին պատուանդան խաչին՝ աւերէ զդժոխս. վերին գլուխն՝ բանայ զդուռն դրախտին. աջ թեւն՝ բաշխէ զշնորհս մարդկան ազգի. ահեկն՝ զսաստ եւ զպատուհաս դիւաց: *Եւ զայլ փրկութիւն մարդկան որ եղեւ խաչին Զրիստոսի՝ յայլ ուր գրէ առաքեալն: (Չի որ անհնարինն էր օրինացն, որով տկարանայր մարմնով. Աստուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց. եւ վասն մեղաց. եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում:) Արդ՝ զԱստուծոյ մարդանալոյն պատճառէս՝ ասեն վարդապետք թէ՛ սատանայ չարախօսեր առ Աստուած. ես ոչ պատրեմ զմարդիկ. այլ իւրեանց բնութեամբն եւ կամօքն մեղանչեն: Եւ այս մեղադրութիւնս նախ ի յարարիչն բնութեանց ակնարկէ. եւ ապա ի մեզ: Եւ ոչ ոք կայր անմեղ որ սուտ առնէր զսատանայ: Վասն որոյ Աստուած հայր առաքեաց զմիածինն՝ որ էառ մամին եւ հոգի. եւ եղեւ մարդ ի կուսէն. եւ մարմնովն կրեաց զմամնոյ կիրս առանց մեղաց. եւ հոգւովն զհոգւոյս: Եւ այսպէս զբնութիւնս մեր առանց մեղաց պահելով, փրկեաց զմարդիկ ի մեղաց. եւ շատագով եղեւ Աստուծոյ՝ որ զբնութիւնս անմեղ ստեղծ. այլ սատանայ է պատճառ մեղաց որ պատրէ զմարդիկ: Եւ այսպէս արդարացոյց զմարդն. եւ դատապարտեաց զթշնամին: Յետ այսորիկ որ զբնութիւնս անմեղ երեւցոյց՝ եկն ի չարչարանս խաչի: Նախզի՝ կամաւ պատարագ մատոյց զանմեղ մարմինն իւր հօր Աստուծոյ ի հաշտութիւն մարդկան: Երկրորդ՝ զի մեք էաք մահու եւ անիծից պարտական. զի մեղանչական էաք այլ նա անպարտականն՝ փոխանակ մեր զմահ եւ զանէծս ընկալաւ եւ ազատեաց զմեզ: Երրորդ՝ երկնչէր մերդս ի մահուանէ մինչ որ ունէրն յոյս յարութեան. եւ մեղադրէին հրամանացն մահավճռին: Եկն ինքն. եւ գեղեալ մեհն իւր կրեաց. մեռաւ եւ յարեաւ. եւ յորդորեաց զմեզ ոչ երկնչիլ ի մեհունանէ, որ զկնի յարութիւնն հետեւի: Չորրորդ՝ խաչին պարտաւորեաց

թէ՛ դու ես պատճառ մեղաց եւ մահու մարդկան. որպէս ես որ անմեղ էի. դու խաչել ետուր: Եւ յայսպիսի դաւ եմու ընդ թշնամոյն. եւ առաջի հօր դատապարտեաց զսատանայ ի մեղս: Եւ գրեաց զմարդս ի յարդարութիւն եւ ի կեանս: Վասն որոյ ասէ առաքեալն. (դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում:): Եւ այս բազում կերպիւ: Նախ՝ այնու դատապարտեաց. (զի ոչ արար մեղս. եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա:): Երկրորդ՝ դատապարտեաց զմեղս. այսինքն, զպատիժ մեղաց նախահօրն այսպէս. քրտամբ զքիրտն. եւ փուշն. եւ զանէծսն, եւ զայլն: Չի զայսպիսիս կրէր. եւ որպէս հուր զմոմ ծախէր ի յինքեան: Երրորդ՝ դատապարտեաց զմեղս. այսինքն, զմեղասասներն սատանայ. ըստ այնմ, (այսուհետեւ իշխան աշխարհիս դատապարտեալ է:): Եւ Պողոս (մերկեաց զիշխանութիւնս եւ զպետութիւնս. յայտ յանդիման խայտառակեալ նշաւակեաց:): Չորրորդ՝ դատապարտեաց զմեղս, այսինքն, զդժոխս աւերելով. ըստ այնմ, (որ նախ կապեաց զհօրն՝ եւ զտուն նորա աւերեաց.) որ է դժոխքն. զի այլ ոչ ի նոյն ընթանան հոգիք մինչեւ ի հասարակաց յարութիւնն. եւ ապա (դարձցին մեղաւորք անդրէն իդժոխս:): Հինգերորդ՝ դատապարտեաց զմեղս. այսինքն, զմահ յարութեամբ մամնոյ իւրոյ. (որ եղեւ պտուղ ննչեցելոց. եւ անդրանիկ մեռելոց ըստ Պողոսի.) ըստ այնմ, (ո՛ւր է մահ յաղթութիւն քո. ո՛ւր է դժոխք խայթոց քո:): Չի զոր հարկիւ պարտեաք մեռանիլ, եբարձ զայն սքանչելի յարութեամբն իւրով: Եւ այս երկակի է: Նախ՝ յարութիւն հոգւոյ. եւ ապա յարութիւն մամնոյ. զյարութիւնն մամնոյ ունիմք զօրութեամբ ի մեզ. եւ յուսով ի հասարակ յարութեանն ըստ նմանութեան մարմնոյ Զրիստոսի: Իսկ զյարութիւն հոգւոց՝ ընկալեալք այժմ ներգործապէս. ըստ այնմ որ ասէ եբրայեցւոց: (Եւ դուք որք երբեմն մեռեալ էիք ի մեղս ձեր եւ յանցանս՝ կենդանի արար ի Զրիստոս:): Վասն որոյ ասէ: (Աստուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց:): Եւ նմանն այն է՝ որ ունի զնոյնութիւնն եւ ունի զայլայլութիւնն: Արդ՝ վասն Զրիստոսի ասի լինիլ մամին ըստ նմանութեան մարմնոյ մեղաց: Նախզի՛ ունի զնոյն մարմինս մեր հոգւով մտաւոր. եւ այլ էր՝ զի Աստուած էր մարմնացեալ. եւ մարդ է եւ ո՞ ծանկիցէ զնա. (զնա հայր կնքեաց Աստուած.) այսինքն, վկայեաց: Երկրորդ՝ նոյն էր ըստ մարմնոյ մեղաց յղացմամբն յարգանդի. եւ ժուժկալութեամբն ինն ամսեայ. եւ ծննդեամբն յերկրի: Եւ այլ էր՝ զի անսերմն էր յղութիւն նորա. եւ անապական ծնունդն. (զի որ ի նմայն ծնեալ է՝ ի հոգւոյն սրբոյ է:): Երրորդ՝ զի նոյն մարմինս էր ի զանկաւածոյն Ադամայ. որդի Աբրահամու՝ որդի Դաւթի. այլ անապական էր մարմինն նորա. զի սկիզբն գոլոյն մարդ՝ ոչ էր յապականացու սերմանէ. այլ ի մաքրեալ յարենէ կուսին. յաղագս որոյ (մարմին նորա ոչ ետես զապականութիւն ասէ մարգարէն:): Չորրորդ՝ զի անապական նոյն էր ըստ մարմնոյ մեղաց. եւ այլ էր՝ (զի ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա:): Հինգերորդ՝ զի նոյն էր ըստ կրիցն անանգոսնելի. այսինքն, քաղցի, եւ ծարաւի, եւ վաստակելոյ. եւ այլ էր՝ զի կամաւ կրէր եւ ոչ ի հարկէ բնութեանն. ըստ այնմ, որ յետ քառասուն աւուրն՝ ապա քաղցրեաւ: Վեցերորդ՝ զի նոյն էր մարմին մեղաց. որպէս յայլ ուր ասէ առաքեալն. (անմեղն վասն մեր մեղս արար.) այսինքն, զի զպատիժ մեղաց ընկալաւ. եւ վասն մեր անէծք եղեւ. այլ այսու այլ էր՝ զի ոչ վասն իւր յանցանացն, այլ վասն մեր կերաց. ըստ Եսայեայ. (վասն անօրէնութեան մերոյ ի մահ մատնեցաւ:): Եօթներորդ՝ զի կրեաց զկսկիծ չարչարանացն եւ

գմահն ճշմարտապես ըստ մեզ. եւ այլ էր՝ զի ի չարչարանսն անչարչարելի էր աստուածութեամբն. երւ ի մահն անմահ էր եւ կենդանի նոյն ինքն մարմնովն. եւ յայտ է ի կողիցն՝ յորում ջուր եւ արիւն բղխեաց: Ութներորդ՝ զի նոյն էր ընդ մեզ տեսութեամբն ի վերայ խաչին պրկեալ. ըստ Եսայեայ. (տեսաք մեք զնա՝ եւ ոչ գոյր նորա տեսիլ. այլ անարգ նւագեալ քան զամենայն որդւոց մարդկան:) Եւ այլ էր այնու՝ զի ամենայն մարդոյ մահ՝ իւրն միայն է փրկութիւն. իսկ նորայն մահ՝ բոլոր աշխարհի եղեւ փրկութիւն եւ զին. ըստ Պետրոսի. (ոչ ապականացու արծաթեղիւօք, այլ անապական արեամբն Զրիստոսի գնեցայք:) Իններորդ՝ նոյն էր ըստ հոգւոյ իջանելոյն ի դժոխս. ըստ այնմ որք յԱդամայ հետէ մեռանէին. որպէս ասէ՝ (թագաւորաց մահ յԱդամայ մինչ ի Մովսէս. եւ ի վերայ չյանցուցելոցն առ հասարակ:) Եւ այլ էր՝ զի ոգի նորա՝ ոչ թողաւ ի դժոխս ըստ մարգարէին. (այլ ակերեաց զդժոխս. գեցեաց զգերութիւն ասէ Պօղոս:) Տասներորդ՝ նոյն է թաղիլովն ի գերեզմանի ըստ հասարակաց մարմնոց. եւ այլ էր՝ զի ինքնիշխան զօրութեամբ փութով յարեաւ. ըստ այնմ, (իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ. եւ իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զսա:) *Իսկ թէ ո՞րքան փրկութիւն է խաչին Զիստոսի՝ որ եղեւ մարդկան ազգի: Ասեն վարդապետք. վեց իմն գլխաւորօքն փրկութիւն գործեաց: Նախ՝ փրկեաց ի մեղաց. եւ կոչեցաւ փրկիչ. (զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր:) Երկրորդ՝ փրկեաց յօրինակցն ծառայութենէ եւ յանիծից. (իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զորդի իւր. որ եղեւ ի կնոջէ. եւ եմուտ ընդ օրինաօք. զի զորս ընդ օրինօքն իցեն՝ գնեսցէ:) Եւ թէ՛ (Զրիստոս գնեաց զմեզ յանիծիցն օրինացն եղեալ վասն մեր անեծք:) Երրորդ՝ փրկեաց ի բուռն ծառայութենէ սատանայի. ըստ այնմ, (փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի. եւ փոխեաց յարքայութիւն որդւոյ իւրոյ:) Չորրորդ՝ փրկեաց ի մահուանէ. ըստ այնմ, (եղեւ առաջին պտուղ ննջեցելոց՝ եւ անդրանիկ մեռելոց:) Եւ դարձեալ՝ (փրկիչ ակն ունիմք. զի նորոգեսցէ զմարմին խոնարհուեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց:) Զինգերորդ՝ փրկեաց զհոգին ի բանտէ դժոխոցն. զի ասէ առաքեալն. (եւ ի բարձունս եւ գերեաց զգերութիւն. Էառ աւար:) Նախ՝ (կապեսցէ զհզօրն՝ եւ զտուն նորա աւար հարկանիցէ:) Վեցերորդ՝ փրկեաց ի կռամով դիւապաշտութեանցն. եւ Էաժ յաստուածապաշտութիւն հաւատոցն. որպէս ասէր յարութեանն. (զնացէք՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ:) Այսպէս եղեւ մեզ հաւատացելոցս զօրութիւն եւ փրկութիւն խաչն Զրիստոսի. որպէս ասէ առաքեալն: (Չի ճառ խաչին՝ կորուսելոցն յիմարութիւն Է. այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ:) *Այժմ տեսցուք թէ զի՞նչ է անունն որ կոչի խաչ: Գիտելի է՝ զի կոչի խաչ չարչարանք մարմնոյ. ըստ այնմ, (որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի:) Դարձեալ՝ կոչի խաչ նշանակ մահու. ըստ այնմ, (աշխարհ ինձ ի խաչ ելեալ Է. եւ ես աշխարհի:) Դարձեալ՝ կոչի խաչ դատապարտութեան գործի քառաթել. որ նշանակ է անարգ եւ նախատելի մահու. ըստ այնմ, (համբերեաց մահու չափ եւ մահու խաչի:) Եւ թէ վասն Է՞ր քառաթել: Ասեմք բազում պատճառ: Նախզի՝ փրկութիւն Է չորից ծագաց տիեզերաց: Երկրորդ՝ զի սրբութիւն Է չորից առաքիւնութեանց հոգւոյս: Երրորդ՝ զի մաքրութիւն Է մեղաց ըստ չորից տարերաց մարմնոյս: Չորրորդ՝ զի ետես Էզէկիել աթոռ չորեք դիմի. եւ որդի մարդոյ ի վերայ. որ

նշանակե՛ գիտա՛ն, եւ գՔրիտոսս ի նմա: Յինգերորդ՝ զի չորիւք յատկութեամբ տարբերին փրկեալքս նովաւ. այսինքն, երկնաւորք եւ երկրաւորք. կենդանիք եւ մեռեալք: Վեցերորդ՝ զի պահապան է չորից զգայութեանց ըստ չորից տարերացն եւ ակն խաչին. որ խառնուած է չորս թելոցն խառնեալ ի զգայութեանց: Եօթներորդ՝ զի նշանակե՛ զանկանիլն մեր ի դրախտէն յերկիր. զի աջ էաք եւ ահեակ դարձաք: Ութներորդ՝ զի ունի զչորս կարգ օրինացս: Բնականն՝ որ Ադամայ տուաւ: Բանականն՝ Աբրահամու: Գրաւորականն՝ Մովսէսի: Իսկ աւետարանն որ չորս է՝ ի ձեռն խաչին: Իններորդ՝ զի նշանակ է երկիւղի ի չորս հասակի մարդկան ազգի. ի մանկութեան. երիտասարդութեան. յալւերութեան. եւ ի ծերութեան: Տասներորդ՝ գլուխ եւ պատուանդանն՝ նշանակե՛ միաւորեալ զասուուածութիւնն եւ զմարդկութիւնն Քրիստոսի որ խաչեալն է՝ ի նմա: Աջն զշնորհաբաշխութիւն արդարոց. եւ ահեակն զսաստ դիւաց որպէս ցուցաւ ի վերոյ: *Եւ թէ վասն է՞ր խաչին ձեւն միայն է պաշտելի. զի բելեռեցաւ. եւ փուշ պսակ եղաւ ի գլուխն. եւ գեղարդեամբ խոցեցաւ, եւ այլն: Իսկ ձեւ նոցա՝ ոչ է պաշտելի. այլ միայն խաչն՝ զի զձեւն Քրիստոսի ունի: Վասն որոյ Քրիստոսս յամենայն ժամ է ի նմա. եւ էացի՝ եւ եղիցի ի նմա. եւ ոչ երբեք հեռացի ասէ Դաւիթ: Իսկ խաչս որ եր նախ դատապարտութեան գործի. այժմ է փրկութեան պատճառ. զի փրկիչն մեր ի նմա միացեալ բելեռեցաւ: *Խաչն՝ բելեռք երկնի. եւ հաստատութիւն երկրի: Խաչն՝ նախապետացն ցանկութիւն. եւ մարգարեիցն նախաձայնութիւն: Խաչն՝ առաքելոցն քարոզութիւն. եւ հայրապետացն դաւանութիւն: Խաչն՝ մարտիրոսացն պսակ. եւ նահատակացն յաղթանակ: Խաչն՝ թագ թագաւորաց. եւ իշխանութիւն իշխանաց: Խաչն՝ կուսանաց սրբութիւն. եւ ողջախոհութիւն ամուսնացելոց: Խաչն շնորհք արանց. եւ բարեգարդութիւն կանանց: Խաչն՝ ծերոց ցուպ հաստատութեան. եւ տղայոց գաւազան միաստութեան: Խաչն՝ փայտ կենաց. եւ պտուղ անմահութեան: Խաչն՝ խրատ անմեղաց. եւ քաւիչ մեղաւորաց: Խաչն՝ ճանապարհ մոլորելոց. եւ ճառագայթ խաւարելոց: Խաչն՝ նաւահանգիստ նաւելոց. եւ օթեան ճանապարհորդելոց: Խաչն՝ ցնծութիւն երկնաւորաց. եւ զուարճութիւն երկրաւորաց: Խաչն՝ երկիւղ սանդարամետակաց. եւ սասատ օղականաց: Խաչն՝ փառք Քրիստոսի. եւ պարծանք քրիստոնէից: Խաչն՝ զէն հոգեւոր. եւ սուսեր անբթելի: Խաչն՝ աւերիչ դժոխոց. եւ գերիչ գերելոց: Խաչն՝ դրախտին բացօղ. եւ զարքայութիւն ժառանգեցուցանօղ: Խաչն՝ կարապետ Քրիստոսի. եւ հրաւեր յարութեան: Խաչն՝ կնիք գերեզմանաց. եւ յարութիւն կենաց: Խաչն՝ դրախտին բացօղ. եւ զարքայութիւն ժառանգեցուցանօղ: Խաչն՝ կարպետ Քրիստոսի. եւ հրաւեր յարութեան: Խաչն՝ կուրութիւն անհաւատից. իսկ հաւատացելոց զօրութիւն: Որեւ պայծառացուցեալ զերկրպագուս իւր ընդաջմեկացուցէ Քրիստոս Աստուած մերոյ. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ ի դէմս եկեղեցւոյ. ի Բանն Չաքարիայի: (Ահա ես ածեմ զծառայ իմ զծագումն, զվէմն զոր ետու առաջի երեսացն յետուայ. ի վերայ վիմին եօթն աչք են:) Չաք. 3. 9: (Գլուխ.ՃԼԹ)

ՉԲանս զայս՝ ոմանք ի Չօրաբաբել մեկնեն: Ծագումն անուանէ զնա

վասն չորս պատճառի: Նախզի՝ ոչ իւր զօրութեամբն, այլ ի կամացն Աստուծոյ եղել թագաւոր, արտաքս եկեալ ի Բաբելօնէ յԵրուսաղէմ. որպէս յայտ է ի գիրս եզրի վասն դարեհի: Երկրորդ՝ զի թագաւորն ի լոյս եւ յուրախութեան կեանս է: Երրորդ՝ զի գնա եղ փրկիչ ժողովրդեանն. եւ ազատեաց ի խաւարէ գերութեանն: Չորրորդ՝ զի յաղթօղ եղել ի վերայ ամենայն հակառակորդաց եւ հեթանոսաց: Այլեւ գնա կոչէ վէմ վասն հաստատ եւ անշարժ թագաւորութեանն: (Եւ առաջի երեսացն յԵսուայ:) Չի իշխանութիւն թագաւորութեանն հնազանդ է ի ներքոյ իննամոց քահանայից իշխանութեանն. որպէս յԵսու առաջի Մովսէսի. եւ Դաւիթ առաջի Սամուէլի: Նոյնպէս Չորաբաբել առաջի յԵսուայ քահանայի մեծի: (Ի վեր վիմին եօթն աչք են:) Չայն ասէ՝ որ եօթն աչք հայ էին ի վերայ Չորաբաբելի. գեթ թն քահանայսն եւ զմեծամեծ արսն օգնական եւ լուսատու ետ նմա. այսինքն, յԵսու. Չաքարիայ. Խողիա. Տուբիա. Յեդոյա. Յեշովիա. եզր դպիր: Այսպէս օրինակն ի Չորաբաբել՝ եւ ճշմարտութիւնն ի Զրիստոս տեսանի: Չի Զրիստոս է ծագումն եւ լոյս. որ նախ ի հօրէ ծագեցաւ լոյս. եւ յետոյ ի մօրէ ծագեցաւ եւ լուսաւորեաց մոզ՝ կոչեաց աստղ ի Յակօբայ: Եւ Մաղաքիա կոչէ գնա արեգակն արդարութեան: Եւ աստ Չաքարիայ ծագումն: Եւ ինքն յաւետարանին ասէ. (եւ լոյս յաշխարհ եկի:) Եւ զի ոչ է բանս ի Չորաբաբել: Նախզի՝ ասէ. (եւ ածեմ:) Եւ ահա Չորաբաբել թագաւոր եր ածեալ: Երկրորդ՝ զի չէր յայլ ուրեք. այլ ի մէջ նոցա թագաւորեր: Եւ թէ ոք շեղէ զբանս վասն այլ թագաւորի ասացեալ, ոչ է ճշմարիտ: Նախզի՝ այլ թագաւոր ոչ եղել յետ Չորաբաբելի: Երկրորդ՝ զի ոչ անարգէր մարգարէն զՉորաբաբել, եւ յայլ թագաւորի գեմս խօսեր: Ապա ճշմարտութեամբ մարգարէիս Բանն ի Զրիստոս կատարի. զի նա եղել լոյս աշխարհի. եւ գնա ծառայ կոչէ: Նախզի՝ ծառայական եր մարմին նորա: Երկրորդ՝ զի ծառայեաց բազմաց: Եւ այն զի կրկին անգամ կոչէ զծագումն մարգարէն ի գիրս իւր: Չայն ցուցանէ՝ որ նախ ծագեցաւ բանն անմարմին ի հօրէ. զի ծագումն այն լոյս կոչի՝ որ ճառագայթ է եւ փայլումն ի պատճառէն լուսոյ: Վասն որոյ առաքեալն ասէ. (որ է լոյս փառաց. եւ ճառագայթ եութեանն հօր:) Երկրորդ՝ զի ծագեցաւ մարմնով ի կուսէն, եւ լուսաւորեաց զմեզ. վասն այն կրկնէ զծագումն անուն: Նախ՝ ի տեսիլն. եւ ապա ի բան մարգարեութեանն առ ամենայն ժողովուրդն: Դարձեալ գիտելի է՝ զի ծագումն փրկչին մերոյ ըստ տասն եղանակի առեալ լինի: Նախզի՝ ծագեցաւ ի հօրէ: Երկրորդ՝ ծագեցաւ ի յորդանան մկրտութեամբն. որում հայր վկայեաց. եւ հոգին աղանակերպ էջ: Չորրորդ՝ ծագեաց քարոզութեամբն. եւ լուսաւորեաց զհաւատացեալս: Զինգերորդ՝ փայլեաց առաքիւնութեամբ գործոցն. եւ պայծառացոյց զքարոզութիւնն: Վեցերորդ՝ ծագեաց առ կոյրսն մարմնով. եւ լուսաւորեաց զնոսա. եւ զամենայն հիւանդութիւնս բժշկեաց: Եօթներորդ՝ ծագեաց հոգւովն ի դժոխս, եւ լուսաւորեաց զնոսա. ըստ Եսայեայ. (որք նստին ի խաւարի՝ լոյս ծագեաց նոցա եւ ազատեաց:) Ութներորդ ծագեաց առ մեզ յարութեամբն. եւ զյոյսն անմահութեան պարգեւեաց մեզ: Իններորդ՝ համբարձեալ առ հայր, եւ լուսաւորեաց զդասս երկնայնոցն: Տասներորդ՝ ծագելոց է միւսանգամ զալստեամբն յերկնից. ըստ որում, (Աստուած մեր յայտնապէս եկեսցէ. եւ հուր առաջի նորա բորբոքեսցի:) *Իսկ ասելն (զվէմն զոր ետու առաջի երեսացն յԵսուայ:) Ոչ յԵսուայ որ ի յովսեփեկեայ. այլ Յիսուս որ ի Մարիամայ: Զայր Աստուած ետ զվէմն որ է եկեղեցի սուրբ՝

հաստատեալ ի վերայ դաւանութեանն Պետրոսի. (եւ դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն:) (Ի վերայ վիմին եօթն աչք են:) Արդ՝ եռակի ասի վեմ: Նախ՝ վեմ կոչի Զրիստոսի. եւ եօթն աչք ի վերայ՝ եօթն զօրութիւնք հոգւոյն սրբոյ՝ որ ի գլխոյն մերմէ Զրիստոս է էջ առ մեզ: Այս է, (հոգի Աստուծոյ. զօրութեան. երկիւղի. գիտութեան. իմաստուաթեան. հանճարոյ. եւ աստուածապաշտութեան:) Երկրորդ՝ վեմ կոչի շինեալս եկեղեցի. եւ ի սմա է աչք են եօթն խորհուրդք եկեղեցւոյ. որովք լուսաւորէ զմեզ. այսինքն է, մկրտութիւնն. դրոշմն օծումնն. պատարագն. ապաշխարութիւնն. կարգ քահանայութեանն. եւ պսակն: Երրորդ՝ վեմ կոչի եւ եկեղեցի հաւատացելոց. եւ ի սմա եօթն աչք են. այսինքն է, եօթն աստիճանք հաւատոյն զորս ունի ի մարդեղութիւն բանին. եւ եօթն աստիճանք յաստուածութիւն նորին: Եւ դարձեալ՝ ի նոյն խորհուրդս նորին: Եւ դարձեալ՝ ի նոյն խորհուրդս տեսանի աշտանակ ձոյլ ոսկի. եւ գունդ ջահ ի վերայ նորա. եւ եօթն ճրագ. եւ եօթն բերան ճրագաց. եւ երկու ձիթենիք: Աշտանակն ոսկի՝ նշանակէ զսուրբ եկեղեցի. եւ անապական է ոսկին եւ պինտ եւ կարմիր. այսինքն, է անապական հաւատն. եւ հաստատուն յոյսն. եւ ջերմ սերն առ Զրիստոս. եւ ջահն վառեալ՝ է Զրիստոս: Եւ երկու ձիթենին՝ երկու ժողովուրդք որք մկրտութեամբ օծան. այսինքն, հրեայք եւ հեթանոսք: Եւ եօթն ճրագն եւ եօթն բերան ճրագացն՝ են չորեքտասան աստիճանք հաւատոյն. եօթն յանմարմնութիւնն Աստուծոյ. եւ եօթն ի մարդեղութիւնն Զրիստոսի: Եւ յանմարմին Էութիւնն Աստուծոյ առաջինն է՝ հաւատալ զմիութիւն աստուածային բնութեանն: Երկրորդ՝ հաւատալ զանձն հօր. այն որ ասէ. (հաւատամք ի մի Աստուած:) Երրորդ՝ զորդին գոլ Աստուած որ ա սէ. (ի մի Տէր Յիսուս Զրիստոս:) Չորրորդ՝ զհոգին սուրբ Աստուած որ ասէ. (հաւատամք ի հոգին սուրբ:) Հինգերորդ՝ պաւատալ ի յեկեղեցի զքաւութիւն մեղաց: Վեցերորդ՝ ի յարութիւն մեռելոց: Եօթներորդ՝ հատուցումն բարեաց: Իսկ է առ մարդեղութիւնն Զրիստոսի են այսք: Առաջին՝ հաւատալ զորդին յղացեալ ի հոգւոյն սրբոյ: Երկրորդ՝ ծնեալ ի կուսէն Մարիամայ: Երրորդ՝ որդին Աստուծոյ վասն մեր չարչարեալ եւ խաչեալ եւ մեռեալ: Չորրորդ՝ որդի Աստուծոյ իջեալ ի դժոխս ըստ հոգւոյն: Հինգերորդ՝ յարուցեալ յերրորդ աւուր: Վեցերորդ՝ ելեալ ի յերկինս եւ նստեալ ընդ աջմէ հօր: Եօթներորդ՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս. այսինքն, զբարիս եւ զչարս: *Դարձեալ ի Չաքարիայ: (Եւ ասէ Տէր ցատանայ. սաստեսցէ Տէր ի քեզ. եւ սաստեսցէ Տէր ի քեզ՝ որ ընդդեացն զԵրուսաղէմ:) Երեք Տէրն՝ զերիս անձինս նշանակէ. թեպէտ եւ ոմանք զհրեշտակապետն Միյալէլ ասեն: Ասող յառաջագոյն մարգարէն Չաքարիայ թէ՛ (տեսի զՅեսու քահանայ մեծ. զի կայր առաջի հրեշտակին. եւ սատանայ կայր ընդաջմէ նորա հակառակիլ ընդ նմա:) Յեսու քահանայ մեծ կոչի վասն չորս պատճառի: Նախզի՝ քահանայապետ եւ եպիսկոպոս էր ի վերայ քահանայիցն փոքունց: Երկրորդ՝ զի առաջին էր քահանայապետ ի դարձի գերութեանն: Երրորդ՝ զի ի հրեշտակէն Էառ զպատիւ եւ զզգեստ քահանայութեանն որպէս Ահարօն ի Մովսիսէ: Չորրորդ՝ զի օրինակ էր մեծի քահանայապետին մերոյ Զրիստոսի: (Եւ սատանայ կայր ի յաջմէ նորա:) Նախ զայն իմանամք՝ որ Սաղայէլ աջ Աստուծոյ թարգմանի. եւ ընդվզել նմա, կոչեցաւ սատանայ որ է հակառակ: Երկրորդ՝ սատանայ կոչի եւ հակառակ ազգն հեթանոսաց. որք յետդարձին հակառակէին Չօրաբաբելի վասն շինելոց զտաճարն. որպէս Սիսին իշխան.

Եւ Սաթրաբուղան: Եւ զնոսա աջ կոչէ՝ զի աջակողմն մեր՝ առաւել զօրաւոր է: Եւ նոքա յաղթող բռնաւորք էին ի հակառակիլն. եւ խափանեցին զշինուած տաճարին քառասուն եւ վեց ամ. որպէս վկայէ աւետարանն. (զքառասուն եւ զվեց ամ շինեցաւ տաճարս այս:) Երրորդ՝ աջն զայն ցուցանէ, որ սատանայ ընդ առաջնորդս եկեղեցւոյ յաջմէ պատերազմի. որպէս հպարտութեամբ, նախանձու, եւ այլն: Յաղագս որոյ ասէ հրեշտակն. (սաստեցէ ի քեզ Տէր:) Եւ այս երեք մտօք իմանի: Նախ զի՝ սաստեաց Տէր ի սատանայ եւ ընկեաց յերկիր: Երկրորդ՝ սաստեաց ի ժողովրդէն հրեից: Երրորդ՝ սաստէ այժմ եւ արտաքսէ յեկեղեցւոյս քրիստոնէից: Եւ այն զի կրկին ասէ զսաստելն: Առաջին տեսութիւնն՝ երեք կերպիւ է: Նախզի՝ զառաջինն սաստեաց յերկնից եւ կործանեցաւ յերկիր. ի կատարածի՝ սաստէ դարձեալ եւ կործանի՝ սաստէ դարձեալ եւ կործանէ ի հուր գեհեհնին: Երկրորդ՝ սաստեաց ի լեռն փորձութեան եւ յաղթեաց նմա. եւ ապա սաստեաց խաչին եւ կորոյս զսատանայ: Երրորդ՝ զի սաստեաց եւ հեռացոյց յայնժամ ի հինն Իսրայէլէ. այլ ոչ ի հեթանոսաց. ոչ յայնժամ եւ ոչ այժմ. զայս յայտնէ կրկին սաստելն: Իսկ երկրորդ տեսութիւնն՝ յազգն Իսրայէլի է բանս: Նախ սաստեաց յԵգիպտոս եւ ազատեաց զժողովուրդն: Եւ դարձեալ՝ սաստեաց ի Բաբելոն. եւ արձակեաց զգերին: Երկրորդ՝ սաստեաց ի սատանայ. եւ դարձեալ սաստեաց յիշխանս որք հակառակ կային նմա: Երրորդ՝ սաստեաց ի կրկին հակառակսն տաճարին: Նախ ի գօգ եւ մագօք. եւ ապա յանտիոքացին: Այսպէս առ հրեայսն: Իսկ երրորդ տեսութիւնն է ի սուրբ եկեղեցիս: Նախզի՝ յաջ եւ յահեակ պատերազմի ընդ մեզ. վասն այն երկու կողմանցն հրամայեաց սաստել: Երկրորդ՝ զի պատերազմի այժմ ի կեանս. եւ յետ մահու ընդ հոգիսն ընդ առաքելոյն. (ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս՝ ընդ այսս չարութեան:) Երրորդ՝ զի կրկին է ձեռն սատանայի. այսինքն, աջն բռնութեան. եւ ձախն խաբէութեան. այժմ զբռնութիւնն սատանայի խորտակեաց Քրիստոս առաջին գալստեամբն. այլ կայ դեռելս խաբէութիւնն. զոր խորտակեցէ ի միւսանգամ գալստեանն իւրոյ Քրիստոսի: Որում փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտեանից:

Նորին դարձեալ վասն Խաչի. ի Բանն՝ (Ետես Յակօբ սանդուխք մի յերկրէ յերկինս. եւ Տէր հաստատեալ ի նմա:) Ծննդ. 28. 12: (Գլուխ. Ծե)

Այլ եւ վասն Խաչի խորհրդոյս գիտելի է. որպէս գրեալ է ի գիրս արարածոց եթէ՝ նահապետն Յակօբ յորժամ իջանէր յասորիս, եկն ի տեղի մի որ կոչեցաւ Բեթէլ. եւ եղ վէմ մի ի սնարս եւ ննջեաց. եւ ետես տեսիլ (սանտուխ մի յերկրէ մինչեւ յերկինս. եւ Տէր ի նմա հաստատեալ. եւ հրեշտակք ելանէին եւ իջանէին ընդ սանտուխն. զարթեալ եւ ասէ. (ահեղ իմն է տեսիլս այս. եւ այս է տուն Աստուծոյ. եւ դուռն երկնից:) Եւ կանգնեաց զվէմն արձան. եւ եօծ իւղովն զոր ունէր: *Արդ՝ մեծ է խորհուրդ վիմիս այս. զոր ցուցցուք փոքր ի շատէ: Վէմս այս էր որ հատաւ ի լեռնէն առանց ձեռին. եւ եհար զպատկերն եւ փշրեաց ի տեսիլ Նաբուգոդոնոսորայ: Եւ վէմն էր ինքն Քրիստոս որ ծնաւ ի կուսէն առանց սերման. եւ փշրեաց զթագաւորութիւնս մեղաց եւ կռամուլութեան. եւ ինքն թագաւորեաց յաւիտեանից: Դարձեալ՝ վէմս այս էր ի յանապատին. որ արբոյց զժողովուրդն

քառասուն ամ. (եւ վեմն էր ինքն Քրիստոս ասէ առաքեալն.) որ ի վերայ խաչին եբաց զկողն. եւ բոխեաց կրկին աղբերս արեան եւ ջրոյ. արիւնն ի յարբուցումն մեզ. եւ ջուրն ի սրբութիւն աւագանին: Դարձեալ՝ վեմն այս էր առ Մովսիսիւ. որով պարտեցաւ Ամաղէկ որ էր գլուխ հեթանոսաց: Նոյնպէս տարածմամբ ձեռացն Քրիստոսի ի վերայ խաչին՝ պարտեցաւ ի մանալին Ամաղէկ. որ էր գլուխ չարութեան եւ մեղաց. Դարձեալ՝ վեմն այս՝ էր առ Յեսու որդի Նաւեայ. ուր էին տախտակք կտակարանացն. եւ շրջելով գետն անգամ, կործանեաց զպարիսպն երիբովի: Եւ վիմովս այս դարձոյց զգետն Յորդանան յետս. եւ արար զամենայն յաղթութիւնս: Յօրինակ փրկչին Յիսուսի. որ ետն անգամ աղաղակեաց ի վերայ խաչին. եւ կործանեաց զդժիխս. եւ նզովեաց զշինողս նորա. եւ ապրեցոյց զհաւատացեալս նշանաւ խաչին. եւ դարձոյց զհեղեղ մեղաց յետս փոխանակ Յորդանանու: Եւ զամենայն զօրութիւնս խաչին ներգործեաց Քրիստոսի. (զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն Է. այլ մեզ փրկելոց՝ զօրութիւն Աստուծոյ ասէ առաքեալն:) Դարձեալ՝ վեմն այս Է հիմն երկրի եւ բարձրութիւն երկնից. զի որպէս զգալի վեմն Է հաստատութիւն երկրի. նոյնպէս վեմն իմանալի՝ Քրիստոս Է: (Նա կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ. եւ ի ձեռս նորա են ամենայն տիեզերք երկրի:) Դարձեալ՝ վեմն այս Է հիմն եկեղցւոյ. ըստ այնմ, (ահաւասիկ ես դնեմ ի հիմունս Սիօնի վեմ ընտիր զգլուխն անկեան պատուական.) եւ շինուածք հաւատացեալքն են. որ ի վերայ հաստատուն վիմիս այս շինեցին զտունս իւրեանց, որ յիշանել անձրեւաց փորձութեանց իշխանաց, եւ յառնել հեղեղաց մարմնոյ ցանկութեանց, եւ ի շնչել հողմոց բանսարկին զայթակողութեանց, ոչ կարեն կործանել զշինուածն ի վերայ հաստատուն վիմին Քրիստոսի: Որպէս յայլ ուր ասեր. (եթէ անցանիցես ընդ հուր փորձութեան՝ զքեզ մի այրեսցէ. եւ ջուր ցանկութեան զքեզ մի ողողեսցէ. եւ շարժումն երկրի զքեզ մի խռովեսցէ. զի ընդ քեզ եմ:) Դարձեալ՝ վեմն այս Է հիմն հաւատոյն. որպէս ասէ առաքեալն. (զի հիմն այլ ոչ ոք կարէ դնել՝ քան զեղեալն որ Է Յիսուս Քրիստոս. եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ ոսկի, արծաթ, ակունս պատուականս, վարձս առցէ.) այս Է՝ զսրբութեան գործս: Ոսկի որ Է սերն անապական՝ եւ գլուխ ամենայն պատուիրանաց: Եւ արծաթ զբան խրատու եւ քարոզութեան. ակունս պատուականս զայլ առաքիւնութիւնս. խոհեմութիւն. արիութիւն. ողջախոհութիւն. եւ արդարութիւն: Նոյնպէս եւ մարգարիտ՝ պահք. աղօթք. ողորմութիւն, եւ այլն: Այնպիսիքն առցեն վարձս զհարիւրապատիկն աստ. եւ զկեանս յաւիտենից ի հանդերձեալն: Եւ ո՞ր իցէ արդեօք հարիւրապատիկն սրբոց. զի ի կեանս յայս ի մեջ նեղութեան եւ աղքատութեան չարչարին: Այս Է նախ եւ առաջին. զի միտք առաքելոյն հանապազ ի յուրախութեան կայ. եւ ոչ տեսանէ յինքն պատճառ տրտմութեան. որպէս մեղաւորն հանապազ տանջի ի խիղճէ մտացն իւրոց. որպէս ասէ մարգարէն. (ոչ գոյ ուրախութիւն անպարշտաց ասէ Տէր:) Երկրորդ այն Է՝ զի յետ մահու տօնախմբեմք զյիշատակս նոցա ի բարեխօսութիւն մեզ սուրբ ընծայիւք՝ պատարագօք, եւ այլն: Երրորդն Է՝ զի ի հոգիս իւրեանց յուսով ուրախ են անճառ խնդութեամբն, եւ մերձ ի յինքեանս տեսանեն զփառս անպատումս. եւ գրեալ են յերանութիւնն. եւ ոչ հասանին ի նոսա չարք. զի ի ձեռնն Աստուծոյ են: Այս ամենայն կատարեալ խնդութիւնս՝ Է վարձ սրբոցն հարիւրաւոր. եւ յետ սակաւ միոյ ի կատարածի՝

առցեն զբիրապատիկն ի կեանսն յաւիտենից հոգւով եւ մարմնով. ըստ այնմ, (քեզ ըպասեն արդարքն մինչեւ հատուցես:) Իսկ որ շինէ ի վերայ հիման հաւատոյն փայտ, խոտ, եղեգն, որ է մեծամեծ եւ միջակ եւ մանր մեղք, զոր աստ ոչ խոստովանիմք եւ ապաշխարեմք, անդ ի հուրն յաւիտեանական տանջիմք անվճար յաւիտենիւ: Արդ՝ այսոքիկ եւ առաւել քան զայսոսիկ՝ է խորհուրդ վիմին. զոր եդ Յակօբ ի սնարս իւր: Եւ էր վեմս այս խարիսխ ի ներքոյ սանտխոյն. եւ ի վերոյ Տէր հաստատեալ ի նմա. այսինքն, նախ ի հիմն հաւատոյ գամք. եւ ապա ի սանտուխ բարեգործութեան ելանեմք. եւ նովաւ հասանիմք առ Աստուած: Չի ոմանք սանտուխք իմանան զբարոյական եւ զստացական առաքինութիսս. որ է խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն, եւ այլն: Իսկ մատն սանտխոցն՝ հաւատն յոյսն եւ սերն. որով ելանէ մարդ յերկրիսս առ Աստուած: Դարձեալ՝ սանտուխք իմանան զչորս տարերս եւ զերկնային գունդս մի քան զմի բարձրացեալ. զերկիր ի ներքոյ. եւ ի վերոյ երկնիցն զԱստուած հաստատեալ: Եւ ի ներքոյ դարձեալ (նա կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ:) Իսկ հրեշտակացն ելանել եւ իջանել՝ յոյս տայ եւ աւետիս մարդկան ազգի դարձեալ ելանել յերկիսս. եւ ի ջանել հրեշտակացն՝ ի պահպանութիւն եւ յօգնութիւն մարդկան: *Այլեւ ստուգապէս սանտուխն այն՝ նշանակէ զսուրբ խաչն փրկական. որ ի յերկրէ ի յերկիսս բարձրացեալ. եւ Տէր հաստատեալ ի նմա. ի վերոյ եւր ի ներքոյ. այսինքն, Քրիստոս խաչեալն ի նմա անբաժանելի է ի նմանէ յաւիտեանս ժամանակաց: Այլեւ հաւատով մերձենամք ի նա. զոր նշանակէ վեմս ի ներքոյ եղեալ: Եւ որպէս ի սանտուխն է առաջին. միջին. եւ վերջին աստիճան. նոյնպէս եւ խաչն ունի պատւանդան, եւ թեւ ի մէջն, եւ գլուխ ի վերոյ: Եւ որպէս սանտխովն՝ նոյնպէս եւ խաչին վերացեալ բարձրանամք յերկիսս. որպէս ինքն Տէրն ասէր. (ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսեան ձգեցից առիս.) այսինքն, զամենայն հաւատացեալս խաչին եւ երկրպագուս:

Եւ այսպէս խաչին բարձրացան բոլոր տիեզերք յերկիսս: Առաջին սուրբքն եւ նահապետքն՝ խորհրդով խաչին. եւ վերջինքն ի ձեռն հաւատոց. որք հաւատացին եւ եղեն երկրպագուք խաչին: Եւ թէ ոք ասիցէ՝ եթէ յորժամ սանտուխն խաչն էր, վասն է՞ր ոչ բարձրացան մարդիկ եւ ելին յերկրո՞սս: Ասեմք եթէ՝ որպէս նախ է առակն. այսինքն, օրինակն. եւ ապա մեկնութիւնն եւ ճշմարտութիւնն. պարտ էր նախ լինիլ օրինակին, եւ ապա ճշմարտութեանն: Եւ էր օրինկան երեքկին, այսինքն, նախ իջանելն Յակօբու ի յասորիս. եւ ապա ելանելն: Եւ ապա որդւոցն նորա իջանելն յԵգիպտոս եւ ելանելն: Եւ երրորդ՝ իջանելն ի Բաբելոն եւ դառնալն անտի: Արդ՝ սոքա են օրինակքն: Իսկ ճշմարտութիւնն այս է: Յակօբու միայն իջանելն ի յասորիս՝ եւ ստանալն անդ որդիս եւ բազում մեծութիւնս եւ երկու բանակօք ելաւելն նշանակէ զմիաձնին միայն իջանելն յերկնից. եւ մարմնանալ ի սուրբ կուսէն. եւ ծնանիլ զհաւատացեալսս: Եւ բազում մեծութիւն եւ երկու բանակքն՝ այսինքն, հրեայք եւ հեթանոսք եղեն եկեղեցի Քրիստոսի եւ ելին յերկիսս: Իսկ ի ջանելն Յակօբու եւ որդւոցն յԵգիպտոս՝ նշանակէ զիջումն բանին ի գերեզման եւ ի դժոխս. եւ յարեաւ երեքօրեայ հարեալ բազում հարուածովք զԵգիպտոս. այսինքն, զդժոխս եւ զիմանալին փարաւօն. եւ զժողովուրդս իւր զազգս մարդկան հանեալ յանապատ յերկիսս: Իսկ երրորդ իջումն ի Բաբելոն օրինօք եւ մարգարեիւք՝ եւ որք դարձան ուրախութեամբ՝

նշանակէ զիջումն աւետարանին յազգս հեթանոսաց ի ձեռն առաքելոցն քարոզութեան: Եւ ելանելն նոքօք ի ձեռն հրեշտակաց՝ յարքայութիւնն երկնից. այսինքն, ի կատարածի ազատիլ ի ծառայութենէ ապակնութեան իբրեւ ի Բաբիլօնէ. եւ դառնալ ցնծութեամբ յարքայութիւնն երկնից: Չայս նշանակէր սանտուխն մինչեւ յերկինս՝ որք ելանէին եւ իջանէին հրեշտակք եւ մարդիկ: Վասն որոյ զարթեալ Յակօք եւ ասէ. (ահեղիմն է տեղիս այս. եւ տուն Աստուծոյ է սա. եւ դուռն երկնից:) Նախ՝ տուն Աստուծոյ եղեւ տեղին եւ դուռն երկնից՝ որ կոչեցաւ բեթել: Եւ անդ՝ շինեցան Սիօնն եւ տաճարն եւ գողգոթայն եւ սուրբ յարութիւնն եւ այլ տնօրինականք փրկչին: Երկրորդ՝ զխաչն կոչէ տուն Աստուծոյ եւ դուռն երկնից. զի տուն եւ տեղի է Բանին Աստուծոյ անմեկնելի գոլ ի նմանէ միշտ. զի ուր խաչն է՝ անդ է եւ խաչեալն. անդ երւ խաչելութիւնն: Եւ դուռն երկնից՝ զի նա երաց զճանապարհ ծառայն կենաց. զոր շուրջանակի սերովբէիւք փակեալ պահիր: Երրորդ՝ տուն Աստուծոյ եւ դուռն երկնից՝ է նոյն ինքն նահապետն Յակօք. զի զԱստուած ետես յինքեան. եւ ճանապարհորդեաց յերկինս: Չորրորդ՝ ամենայն որ ըստ կամաց Աստուծոյ գործ գործէ՝ յորում տեղուջ եւ գործէ՝ անդ բացեալ լինի եւ դուռն եկնից նմա. եւ լինի ինքն տուն Աստուծոյ, զկամսն Աստուծոյ հանգուցեալ յինքեան: Վասն որոյ կանգնէ զվեմն անձան. եւ իւղով օծանէ զնա. եւ եղեւ յետոյ վեմն այն կափարիչ գերեզմանին Զրիստոսի. յօրինակ իմանալի վիմին՝ որ կոչեցաւ վեմ. ըստ այնմ, (եթէ որ հարցի ընդ վեմս այս, զայթակղեսցի եւ փշրեսցի:) Ոչ եթէ բնութեամբ եղեւ վեմ, այլ յատկութեամբ, ունելով զբնութիւնս Ադամայ: Այլ որպէս Ադամ ապականացու գոլով հող կոչեցաւ: Իսկ Տէրն մեր՝ անապական մարմնով ծնեալ ի կուսէն, վեմ անուանեցաւ. եւ նա օծաւ իւղով. այսինքն, աստուածութեամբ իւրով եօծ զմարդկութիւնն իւր յօծումն եւ ի լոյս հաւատացելոց. ըստ այնմ, (եօծ զբեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեան:) Եւ առաքեալն ասէ. (զնա Տէր եւ օծեալ Աստուած արար:) Որով ընդ օծողին Յօր՝ եւ օծելոյն Միածին Որդոյն, եւ օծման սուրբ հոգւոյն, փառք պատիւ եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ Մարտիրոսաց. եւ սրբոյնԳեորգայ. ի Բանն՝ (Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան՝ զի նոցա է արքայութիւն երկնից:) Մատ. 5. 10: (Գլուխ. ԾեսԱ)

Չհանդէս գերամեծար եւ փառաւորեալ վկայից՝ Տէրն մեր եւ հանդիսագիրն մարտիրոսաց կրկին պատուով փառաւորեաց: Նախ բանիւ. եւ ապա գործով: Բանիւ յորժամ ասաց. (Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան՝ զի նոցա է արքայութիւնն երկնից:) Եւ գործով՝ յորժամ ինքն հալածեցաւ. եւ չարչարանօք խաչին նահատակեցաւ. (եւ վկայեաց առաջի պոնտացւոց Պիղատոսի զբարուք դաւանութիւնն:) Եւ գիտելի է՝ զի երեք կերպիւ է վկայութիւնն: Նախ վկայութիւն սրտի: Երկրորդ՝ վկայութիւն լեզուի: Երրորդ՝ վկայութիւն արեամբ: Սրտի վկայութիւնն հաւատն է՝ զոր ունիմք ի հոգիս մեր հաստատեալ. ըստ այնմ, (սրտիւ հաւատալն արդարութիւն է.) եւ լեզուի վկայութիւն՝ բանիւ խոստովանութիւնն է առաջի մարդկան. ըստ այնմ, (որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցայց եւ ես զնմանէ առաջի հօր իմոյ որ յերկինս է:) Եւ արեան

վկայութիւն՝ մարտիրոսութիւնն է եւ չարչարանքն. ըստ այնմ, (որ կամեսցի զալ զհետ իմ, առցէ զխաչ իւր եւ եկեսցէ. զի որ կորուսանէ զանձն իւր վասն իմ, գտցէ զնա:) Առաջինն՝ բարի է հասարակաց հաւատացելոց: Երկրորդն՝ առաւել բարի՝ որ բանիւ զծածուկ հաւատն յայտնի ցուցանէ. ըստ այնմ, (խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց եւ ոչ ամաչէի:) Երրորդն՝ եւս առաւել բարեգոյն եւ կատարեալ. որպէս մարտիրոսացն: Նախ զոր բանիւ վկայեաց՝ գործով կատարեաց: Երկրորդ՝ զարիւնն իւր ընդ արեան Տեառն փոխանակեաց. ըստ այնմ, (չարչարեցաւ եւ նորին փառացն կցորդեցաւ:) Վասն որոյ երանէ զնոսա ասելով: (Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան՝ զի նոցա է արքայութիւնն երկնից:) *Այլ արդ՝ ի վերայ այս բանի չորս ինչ հարցաքննելի է: Նախ՝ յաղագս երանութեան: Երկրորդ՝ վասն Է՞ր աղքատաց հոգւով, եւ աղքատասիրաց, եւ հալածելոց միապէս զարքայութիւնն երկնից խոստանայ: Երրորդ՝ թէ զի՞նչ երանութիւն գոյ որ վասն Տեառն հալածի եւ չարչարի: Չորրորդ՝ թէ վասն Է՞ր վկայիցն դասք այնքան ուրախութեամբ կրէին զչարչարանս վասն Քրիստոսի: * Տեսցուք զառաջին գլուխն յաղագս երանութեան: Եւ գիտելի է՝ զի արտաքին փիլիսոփայքն՝ երեք կրեպիւ ասեն զերանութիւնն. սակայն թիւր: Նախ՝ ստոյի կեանքն ասեն թէ՝ երանութիւնն կայանայ ի յառաքիւնութիւն հոգւոյն: Երկրորդ՝ ճեմականքն ասեն թէ՝ երանութիւնն կայանայ ի ճանաչումն ճշմարտութեան: Երրորդ՝ եպիկուրեանքն ասեն թէ՝ երանութիւնն կայացեալ է ի բարի հեշտութիւնս մարմնականս: Առաջին երկուքն՝ հոգեպէս իմանան. այլ անցաւոր. այլ վերջինն՝ ամենեւին սուտ եւ մարմնաւոր: Նախզի՝

կեանս այս թշուառական է եւ անցաւոր: Երկրորդ՝ զի ոչ է պարտ երանել զմարդ մինչեւ ցօր մահուն ասէ իմաստասէրն: Իսկ աշակերտքս ճշմարտութեան կրկին ասեմք զերանութիւն: Մին արտաքին. եւ միւսն ներքին: Արտաքին երանութիւն է ստեղծեալ. որ երանելի առնէ զմեզ տեսակաբար ի վերինն զաւառի յետ փոխելոյ աստի կեանցս: Եւ միւսն ներքին. որ է անստեղծ երանութիւնն. որ երանելի առնէ զմեզ ներգործաբար որ ինքն Աստուած: Այլ առաջին երանութիւնն որ է ստեղծեալ՝ երանելի առնէ զմեզ՝ որով պսակեալ եւ որով հանգուցեալ լինիմք: Երկրորդ երանութիւնն որ է անստեղծ՝ երանելի առնէ՝ առ որ պսակեալ, եւ ի յոր հանգուցեալ լինիմք: Առաջինն է պսակն եւ հանգիստն սրբոցն: Եւ երկրորդն՝ պսակիչն եւ հանգուցիչն Քրիստոսի: Չորմէ ասէ առաքեալն: (Կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն՝ զոր հատուցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդար դատաւորն:) Եւ զայս խոստանայ Տէրն: (Երանի որք հալածեալք իցեն վասն արքայութեանն երկնից:) Իսկ այս երանութեանս՝ սահման դնեն այսպէս եթէ, երանութիւն է պարառութիւնն ամենայն բարեաց. արպէս եւ թշուառութիւնն պարառութիւն է ամենայն չարեաց: Չի այն է երանութիւնն՝ որ զինչ բարի իմանայ միտքն եւ ցանկայ հոգին, զամենայն լիով պարունակեալ ունիցի առանց կարօտութեան: Այսպէս եւ թշուառութիւնն՝ պարունակէ յինքեան զամենայն չարութիւն եւ զցաւս: Եւ հետեւի երանութեանն խնդութիւն եւ ուրախութիւն: Եւ թշուառութեանն՝ վիշտ եւ ցաւ: Վասն այսոսիկ աստի կեանքս՝ ոչ է երանելի. այլ թշուառական եւ ցաւօք լցեալ: Իսկ անտի կեանքն՝ է երանելի. ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք: Չոր անետեաց Քրիստոսի. (Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան՝ զի նոցա է արքայութիւնն երկնից:) Իսկ թէ ո՞րք են երանելիք.

ասեն վարդապետք եթէ՝ երեք եուփիւնք են երարնելիք ի մէջ ամենայն գոյից: Արդ՝ առաջին եւ ճշմարտապէս երանելի է նոյն ինքն աստուածութիւնն. որ զամենայն բարեաց լիութիւն բնութեամբ յինքեան պարունակեալ ունի. զկեանս, զանմահութիւն, զթագաւորութիւն, զլոյս, զուրախութիւն, եւ զայլս. որպէս ասէ առաքեալն. (երանելին եւ միայն հզօրն՝ թագաւորն թագաւորաց՝ եւ Տէրն տէրանց. որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց:)

Երկրորդ՝ երանելիք են իմանալի եուփիւնք ինն դասք հրեշտակաց յերկինս. որ մինն ի նոցանէ թշուառացեալ է եւ անկեալ յերկիր. եւ այլք մնացին եւ երանեցան յանճառ փառս եւ յանմահ կեանս: Իսկ երրորդ՝ երանելի եր մարդկայինս բնութիւն ի պատկեր արաչին ստեղծեալ. ի դրախտին փափկութեան վայելչացեալ. եւ անմահ կենօք զարդարեալ, եւ այլն ամենայն: Եւ պատրանօք չարին անկեալ յայնպիսի երանութենէն՝ ի թշուառական կեանս մեղաց եւ մահու եւ ապականութեան ծառայեալ. եկն ինքն որդին Աստուծոյ. եւ սրբութեամբ աւազանին եւ զանազան չարչարանօք մարմնոյն՝ զառաջին երանութիւնն եւ զարքայութիւնն երկնից պարգեւեաց մեզ ասելով: (Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան՝ զի նոցա է արքայութիւնն երկնից:)

*Տեսցուք զերկրորդն թէ՝ վասն Է՞ր աղքատաց հոգւով, եւ աղքատասիրաց եւ հալածելոց միապէս զարքայութիւնն երկնից խոստանայ: Վասն զի որոց հանդէս գործոցն մի է, նոցա եւ մրցանակն մի է. ըստ այնմ, (երանի հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Եւ երանի սգաւորաց՝ զի նոքա միսիթարեսցին.) եւ այլն նմանապէս: Իսկ սոցա երեք առաքիւնեացս՝ միապէս խոստանայ զարքայութիւնն երկնից: Չի ասաց՝ (երանի աղքատաց հոգւով՝ զի նոցա է արքայութիւնն երկնից.) եւ աղքատասէրք եւ ողորմածք՝ զողորմութիւն գտցեն. զայն՝ զոր ասէ. (եկայք օրհնեալք հօր իմոյ. ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն երկինց:) Եւ աստ ասէ. (երանելիք ենե հալածեալք՝ զի նոցա է արքայութիւնն երկնից:)

Արդ՝ այս է տրակոյս՝ զի երեւի թէ, աղքատն եւ աղքատասէրն եւ հալածեալն՝ չեն նման միմեանց յառաքիւնութիւնն: Նախզի՝ աղքատասէրն տայ զինչսն. եւ աղքատն առնու. արդ՝ տալն եւ առնուլն՝ չեն մի գործ: Երկրորդ՝ զի հալածեալն փախչի. եւ աղքատասէրն ի յարկն իւր ընդունի: Երրորդ՝ զի աղքատն եւ հալածեալն՝ կարօտ են բժշկի. եւ ողորմածն զնոցա կարօտութիւնն լնու: Ապա ուրեմն երեւի թէ՝ ոչ են միապէս առաքիւնութիւնք. վասն Է՞ր միապէս զվարձն առնուն սոքա երեքեան: Ասեմք առ այս եթէ՝ յարմար են սոքա եւ նման երեք իրօք. այսինքն, գործով, եւ յաղթութեամբ, եւ դիտմամբ: Նախ գործով. զի որ աղքատսէր է՝ աղքատանայ. եւ աղքատն հոգւով՝ աղքատասէր է, վասն այն աղքատանայ. եւ աղքատն հալածեալ է ի մարդկանէ յամենայն ուրեք. եւ հալածեալն ի տանէ եւ յնչից՝ աղքատանայ: Ահա որ միապէս են գործով՝ յիրաւի միապէս զարքայութիւնն երկնից ժառանգեն: Երկրորդ յաղթութեամբ. զի հալածեալն հակառակ ունի զբռնաւորն եւ զհալածիչն. եւ աղքատասէրն եւ աղքատն՝ զինչ ունի հակառակ յերկնիս ընթանալոյ. զի բռնաւորն ընդդէմ կայ հաւատոյն. եւ զբարի գործն խափանէ. եւ ինչք աշխարհիս՝ ընդդէմ կան բարի գործոյն եւ զհաւատն խափանեն: Այլ արդ՝ որ հալածեալն է վասն հաւատոց՝ զհալածիչն ի թիկունս թաղու եւ երթայ յերկինս. ապա ուրեմն երեքեանն միապէս զթշնամիսն յաղթեցին, յիրաւի միապէս զարքայութիւնն երկնից ժառանգեն: Երրորդ՝ վասն մի դիտաւորութեան նոցա եւ յուսոյն. զի որ

աղքատանայ հոգւով՝ վասն սիրոյն Զրիստոսի աղքատանայ. զի նա աղքատացաւ վասն մեր: Եւ որ զաղքատն սիրէ ողորմութեամբ՝ զԶրիստոս սիրէ. եւ յուսով արքայութեանն բաշխէ զինչս իւր. նոյնպէս որ հալածի ի բռնաւորաց՝ եւ զանազան չարչարանս կրէ՝ վասն սիրոյն Զրիստոսի համբերէ. (զի չարչարանացն լիցի կցորդ. եւ փառացն հաղորդ:) Որպէս մեծ վկայն Զրիստոսի սուրբն Գեորգէոս՝ զայնքան սարսռելի եւ անտանելի տանջանս կրեաց. որպէս յայտ է ի պատմութեանն: Սրալից անին. երկաթի կօշիկն բեւեռեալ. ի մէջ եռացեալ կրոյն համբերելով երեքօրեայ. բազում անգամ մեռեալ եւ կենդանացեալ: Չայս ամենայն կրեաց ի սերն Զրիստոսի. յիրաւի զարքայութիւնն երկնից ժառանգեաց: Աստ զհարիւրուորն ընկալաւ. եթէ որ քան անւանի է ընդ ամենայն աշխարհս. եւ նշխարք նորին ոսկերացն՝ զանազան բժշկութիւնս ախտաժետաց կատարեն. եւ անդ հոգւովն զկեանսն յաւիտենից ընդ Զրիստոսի ժառանգէ: Ապա ուրեմն յայտ է՝ զի երեքեան սոքա նման են գործովք եւ յաղթութեամբ եւ դիտաւորութեամբ յուսովն. յիրաւի նմանապէս զարքայութիւնն երկնից ժառանգեն: Այս երկրորդ գլուխն: *Երրորդ հարցումն թէ՛ զի՞նչ երանութիւնն՝ որ վասն Տեառն հալածի եւ չարչարի. որպէս ասէ. (երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան:) Ասեմք թէ՛ հալածումն որ յաղագս Զրիստոսի՝ բազում բարութիւն եւ երանութիւնս ցուցանէ: Նախզի՛ հալածումն զփախուստն եւ զհեռանալն ի չարէն նշանակէ. որ է մեծ երանութիւն. զի որպէս որ հեռանայ ի հրոյն՝ զերծանի յայրիւոյն. նոյնպէս որ հեռանայ ի չարէն՝ փրկի ի տանջանաց նորա: Երկրորդ՝ երանութիւն է. զի որքան հեռանամք ի չարէն՝ մերձեանամք ի բարին. զի վախճան չարին՝ սկիզբն է բարւոյն. եւ որքան հալածիմք ի չարէն, նոյնքան հաստատիմք ի բարին: Վասն զի կեանք մարդոյս՝ ի մէջ բարւոյ եւ ի մէջ չարին է սահմանեալ. թէ ի բարւոյն հեռանամք՝ ի չարն անկանիմք. եւ եթէ ի չարէն օտարանամք, ի բարին լինիմք. եւ առաւել բարի է Զրիստոս՝ որ հալածիւովն ի նա հաստատիմք: Երրորդ՝ զի հալածումն՝ զքաջապետութիւն ցուցանէ մարմնոյն. այսպէս որ հալածեցեալն է վասն Զրիստոսի՝ քաջապետի ի հաւատս եւ ի յոյս եւ ի սեր նորին: Չորրորդ՝ որպէս հալածեալն ըստ մամնոյ՝ երազ եւ փութապէս ընթանայ. այսպէս որ հալածի վասն Զրիստոսի՝ փոյթ եւ երազ ընթանայ առ Զրիստոս. ըստ այնմ որ ասէ առաքեալն. (ցանկամ ելանել ի մարմնոյ եւ մտանել առ Աստուած:)

Յինգերորդ՝ հալածեալն որ յառաջ ընթանայ քան զհալածողն՝ զյաղթութիւն նշանակէ. զի նա յետոյ ընթանայ եւ ոչ կարէ ըմբռնել զնա: Վեցերորդ՝ որպէս հալածեալն թեթեւացեալ ի հանդերձէ եւ ի բեռանց փութապէս փախչի. այսպէս սուրբքն թեթեւացեալք ի ստացուածոց եւ ի հայրենեաց եւ ի ծանրութենէ մեղաց, փութով փախչին եւ զերծանին ի կենցաղոյս. վասն այն երանէ զհալածեալսն: Եօթներորդ՝ զի հալածեալն ոչ տեսանէ զոր թողու. այլ միշտ յառաջիկայն հայի. նոյնպէս եւ նա (զյետոյսն մոռացեալ է. եւ յառաջիկայն նկրտի ըստ Պօղոսի. յոյս եղեալ ընթանայ ի կետ կոչման Զրիստոսի:) Եւ այս է յոյս յաղթանակին զոր ասէ Տէրն. (երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան՝ զի նոցա է արքայութիւնն երկնից:) Ութներորդ՝ որ հալածի՝ զտեղին թողու եւ հեռանայ. այսպէս որ հալածի յերկրէ ի մարդկանէ՝ յերկինս ելանէ եւ առ հրշտակս հասանի. քանզի երկինք եւ երկիր՝ հրեշտակաց եւ մարդկան կրթութեան եւ ընտրութեան են տեղիք. որպէս յերկնից յորժամ ի հրեշտակաց կրթեցան,

անկան յերկիր եւ եղեն դեւք: Այսպէս մարդիկ կրթեալք եւ ընտրեալք ի յերկրի, ելանեն ի յերկինս ի դասս հրեշտակաց: Եւ դարձեալ անմարմին ոգիք նախ անկան ի յերկնից. եւ ապա մարմնով մարդն ի դրախտեն: Այսպէս նախ հոգիք ընտելոց ելանեն յերկինս. եւ ապա մարմնով ի կատարածի մտանեն առ Աստուած: Ապա ուրեմն թէ հալածիմք յերկրէ, ելանեմք յերկինս. եւ թէ ոչ հալածիմք, մնամք յերկրի: Իններորդ՝ զի չարչարանքն որ վասն Զրիստոսի պսակ է եւ փառք ինքն ըստ ինքեան. ըստ այնմ, (չեւ էր հոգի. զի Յիսուս չեւ էր փառաւորաեալ.) այսինքն, չարչարեալ: Եւ Պօղոս ասէր. (պարծիմք եւս ի նեղութիւնս մեր. զի որ չարչարի մարմնով՝ դադարի ի մեղաց.) յաղագս որոյ երանելի է: Տասներորդ՝ երանելի է հալածումս վասն Տեառն. զի Տէրն հանդիսադիր է եւ չարչարակից. եւ այս երեք եղանակաւ: Նախ՝ հանդիսադիր է յառաջ ընտրութեամբ. որպէս առաքեալն. (նախ քան զլինիլն աշխարհի ընտրեաց զմեզ. զի զորս յառաջ ճանաչեաց՝ զնոսին ե կոչեաց. եւ արդարացոյց եւ փառաւոր արար:) Երկրորդ՝ զի նախ ինքն եղ զհանդէս նահատակութեան եւ չարչարեցաւ. եւ ապա զհետեւեալսն իւր առ ինքն կոչեաց: Երրորդ՝ զի այժմ զհանդէս վկայիցն ինքն Տէրն դնէ՝ եւ ընդ նոսա չարչարակից լինի եւ օգնական. եւ պատերազմի ընդ թշնամիսն եւ յաղթ զնոսա. եւ ինքն պսակէ զսուրբս իւր. որպէս ասաց. (ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարծ աշխարհի:) Յաղագս այս քան եւ աւելի քան զայս պատճառաց՝ երանելիք են որք հալածին վասն անւանն Զրիստոսի: Այս երրորդ գլուխն: *Չորրորդ գլուխն տեսանելի է թէ՛ վասն Է՞ր սուրբքն եւ վկայքն՝ ուրախութեամբ կրէին գտանջանս. եւ զչարչարանս մարմնոյ ոչ ինչ համարէին: Ասեմք թէ վասն երկոտասան պատճառի: Նախ՝ զքրիստոս մարտակից եւ օգնական տեսանէին. որպէս սուրբն Ստեփաննոս ասէր. (տեսանեմք զերկինս բացեալ. եւ զՅիսուս զի կայ ընդ աջմէ Աստուծոյ.) զի նա է հանդիսադիրն. եւ նա է գործակից. ի կատարումս հանօղ. ըստ այնմ, (առանց իմ ոչ ինչ կարէք առնել:) Երկրորդ՝ զխոստումս բարեացն առաջի աչացն ունէին. որպէս ասաց. (երանի որք հալածեալք իցեն յաղագս արդարութեան:) Եւ թէ՛ (ցնծացէք եւ ուրախ լերուք. զի վարձք ձեր բազում են յերկինս:) Երրորդ՝ զերկիւղ յաւիտենից տանջանացն ի մտի ունէին. զլալ աչացն, եւ զկրճտել ատամանցն. վասն այն զյանցաւորս ոչ ինչ համարէին, ըստ այնմ, (երկիւղիւ տեսառն խորշի ամենայն ոք ի չարէ:) Չորրորդ՝ զչարչարանսն Զրիստոսի որ Աստուած էր եւ վասն մեր կրեաց՝ միշտ խոկային. զխաչն. զքեւեռն. զգեղարդն. զփուշն. զծարաւն, եւ զայլն. մանաւանդ թէ զյարութիւն փառացն: Վասն այն յօժարութեամբ չարչարէին. ըստ այնմ, (Զրիստոս չարչարիլն վասն մեր. եւ դուք ի նոյն միտս վառեցարուք:) Յինգերորդ՝ զխրատ աւետարանին անմոռաց ունէին թէ՛ (մի երկընչիք որք զմարմին սպանանեն. այլ ի նմանէ՛ որ զհոգի եւ զմարմին արկանէ ի հուրն:) Եւ դարձեալ՝ (ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ եւ անձուկ. եւ որ ոչ թողու զհայր եւ զմայր եւ առնու զխաչ իւր եւ զայ զհետ իմ, չէ ինձ արժանի:)

Վեցերորդ՝ ծանրութիւն մարմոյս վայրաքարշ է եւ դժւարաշարժ. եւ դիւարաւ ըմբռնելի առնէ թշնամեաց. որպէս կրիայն եւ այլ խեցէ մորթք ծանրացեալք են. եւ դժուար շարժին. եւ դիւրաւ ըմբռնին. վասն այն ուրախութեամբ ի մարմնոյս ելանէին. եւ յերկինս մտանէին: Եօթներորդ՝ գտանջանսն բժշկութիւն եւ մաքրութիւն մեղաց գտանէին. զի ամենայն

մեղք՝ հեշտութեամբ մտանէ ի մեզ. եւ չարչարանօք վարի. որպէս հիւանդութիւն մարմնոյն դառն դեղով. վասն այն գործիք տանջանացն հուրն եւ սուրն՝ ցանկալի էին նոցա. եւ ի վերայ տանջողացն աղօթէին որպէս բարերարի: Ութներորդ՝ զի տանջանք մարմնոյս կրկին գործ ունի. մին՝ զմեղսն ի հոգւոյն վարէ. եւ ի տանջանաց ազատէ. եւ միւսն՝ որ զարդարութիւն եւ զպսակն պատրաստէ. յաղագս որոյ սիրելի է սուրբցն: Իններորդ՝ որպէս ամենայն ծառ նախ ծաղկի եւ ապա պտղաբերի. զի ծաղկկն նշանակէ զպտուղն. նոյնպէս պտղոյ հանգստեան ծաղկկք են տանջանք եւ չարչարանք մարմնոյս. վասն այնորիկ սուրբքա զանազան կրէին զծաղկկն. զի զանազան կրեսցեն զպտուղն. ըստ այնմ, (յորժամ նախատեսցեն եւ հալածեսցեն, ցնծացէք եւ ուրախ լերուք. զի վարձք ձեր բազումք են երկինս:) Տասներորդ՝ որպէս մեծամեծ զպատուական ստացուածն սիրելեացն տան. եւ զանապահին ատելեացն. այսպէս եւ առ Աստուած տաջանք մարմնոյ պատուական է զոր տայ սիրելեացն, քան զհեշտութիւն մարմնոյ որ աշխարհասիրացն. ըստ այնմ, (զոր սիրէ Տէր՝ խրատէ. եւ տանջէ զամենայն որդի զոր ընդունի:) Վասն այն նոքա յօժարութեամբ ընդունէին զտանջանս մարմնոյ որ հաճոյ է Աստուծոյ: Մետասաներորդ՝ տանջանք մարմնոյ ուրախութիւն է հրեշտակաց՝ եւ տրտմութիւն դիւաց. որպէս հշտութիւն մարմնոյ ուրախութիւն է դիւաց. եւ տրտմութիւն հրեշտակաց. վասն սուրբքն տանջին եւ չարչարեն զմարմինս. զի նոյնպէս յաղթեսցեն զհակառակ թշնամին. եւ առցեն զպսակն յաղթութեան: Երկոստասաներորդ՝ սիրովն Աստուծոյ արբեալք եւ թմրեալք էին որպէս գինւով. վասն այն զտանջանսս ոչ զգային. զի այնպիսի է սերն Աստուծոյ: Իյորս բնակի՝ մոռանայ զինքն. եւ վասն սիրոյ նորա ոչ ինչ համարի զտանջանս մարմնոյ. որպէս Պօղոս կրէր զզանազան չարչարանս. եւ Յակօբոս զգլխատումն. սուրբն Ստեփաննոս զքարկոծումն որպէս զցօղ համարէր. Պետրոս զգլուխ ի վայր խաչումն. որ ասէր՝ չեմ արժանի թէ նման Տեառն իմոյ խաչեցայց. այլեւ զառաջին անկումն Ադամայ բերեմ յիս. նոյնպէս եւ զելանելն յերկինս: Այսպէս եւ ամենայն սուրբք՝ զհուր եւ զջուր. զվիհ եւ զգազանս. զցրտութիւն սառնամանեաց. զսով եւ զծարաւ. զքերումն մարմնոյ. զսողոցումն. զբեւեռս. զծայրատութիւն մատանց, եւ զայլ բոլոր չարչարանս մարմնոյ ոչ ինչ համարէին վասն սիրոյն Քրիստոսի. վասն այն ասէ: (Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան:) *Եւ արդարութիւնն Քրիստոս է. (որ եղեւ մեզ արդարութիւն եւ սրբութիւն եւ սրկութիւն եւ փրկութիւն որպէս ասէ առաքեալն:) Ապաուրեմն ճշմարտապէս երանելի է որ վասն ճշմարիտ եւ ուղղափառ հաւատոյ հալածի իբռնաւորաց: Երանելի է որ վասն Քրիստոսի ի գործոց զրպարտի եւ հալածի: Երանի որ բամբասեալ իցէ եւ չարախօսեալ: Երանի որ նախատեալ իցէ եւ չարախօսեալ: Երանի որ նախատեալ իցէ եւ անարգեալ վասն անուանն Քրիստոսի: Այլ վայ է եւեղուկ բռնաւորաց եւ հալածողաց: Վայ է հերձաւորաց եւ հակառակաց: Վայ է զրպարտողաց եւ չարախօսաց: Վայ է նախատողաց եւ անարգողաց: Դարձեալ՝ յայսմ կարգ է երանութեանս են որք զխրատ պատուհասին Աստուծոյ ընդունին եւ դառնան ի մեղաց. ըստ այնմ. (Երանի մարդոյ զորխրատես դու Տէր.) եւ որք ոչ դառնան՝ վայ է նոցա. զի անզեղջ սրտիւ կորուսին զինքեանս: Երանի է նոցա հետեւողաց՝ որք զխրատ առաջնորդաց ընդ ունին. զի ամենայն խրատու արմատն դառն է. եւ

պտուղն քաղցր. ըստ այնմ որ ասէ առաքեալն. (ամենայն խրատ առժամայն ոչ ուրախութեան թուի. այլ տրտմութեան. բայց յետոյ պտուղ խաղաղութեան հատուցանէ նովաւ կրթեցելոցն:) Եւ վայ է անհնազանդիցն. (զի զխրատս անպարհիշտք անգոսնեն ասէ իմաստունն:) Եւ զի՞նչ է արքայութիւնն զոր խոստանայ հալածելոցն: Ասեմք եթէ՝ ոչ թագաւորութիւն երկրի խոստանայ որ անցաւոր է եւ փոփոխական. զի ոչ թագաւորք երկրի, եւ ոչ թագաւորութեան իշխանութիւնք մնան. այլ երկոքեանն փոփոխին եւ կորնչին. այլ երկնից թագաւորութիւնն՝ անփոփոխ է եւ մնացական: Եւ զի՞նչ է երկնից թագաւորութիւնն: Ասեմք եթէ՝ թագաւորութիւն երկնից կրկին իմանի. նախ ի վերայ երկրի. եւ ապա ի վերայ երկնից: Եւ առաջինն այսպէս իմանի որ ասէ Տէրն. (ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց.) այսինքն, ծառայ լինի գործոյ մեղացն եւ ուխտին եւ գործակցին, եւ պատճառի մեղացն: Եւ ծառայն անպատիւ է եւ հնազանդ կամաց Տեառն. ապա ուրեմն որ ի բաց եկաց ի մեղաց, ոչ է ծառայ մեղաց. այլ ազատ. եւ զպատիւ ազատի ունի: Եւ այն է ազատութիւնն՝ որ ինքնիշխան լինի. ապա ուրեմն մարդիկ թեպէտ թագաւորք եւ իշխանք կոչին ի վերայ երկրի. այլ յորժամ մեղաց ծառայք են, եւ ախտից գերիք անկեալք, ոչ են ազատք. զի ոչ են անձնիշխանք. այլ ընդ իշխանութեամբ մեղաց: Այլ արդ՝ թագաւորութեան պատիւն այն է՝ որ անտէր լինի. եւ ինքնիշխան այլոց: Այսպէս նա որ ազատ է ի մեղաց՝ անտէր է. զի ոչ է ընդ իշխանութեամբ մեղաց. այլէւ ինքնիշխան է ի վերայ մեղաց: Ապա ուրեմն առաջին թագաւորութիւնն երկնից այս է՝ զոր խոստացաւ Քրիստոս սիրելեաց իւրոց. զոր ոչ ունին ամենայն թագաւորք երկրի. այս է (հարիւրապատիկն զոր ասաց առնուլ աստ. եւ յետոյ զկեանսն յաւիտենից:) Իսկ երկրորդ արքայութիւնն՝ է թագաւորութիւնն երկնից. որպէս ասէ առաքեալն. (եթէ համբերեմք, ընդ նմին եւ թագաւորեմք:) Իսկ յերկինս ասելն՝ նախ ցուցանէ թէ՝ ոչ է երկրաւոր ինչ. այլ (զոր ակն ոչ տես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց:) Երկրորդ՝ ցուցանէ թէ մշտնջենաւորք են եւ անանց. զի թագաւորութեանն երկնից վախճան ոչ գոյ: Երրորդ՝ ցուցանէ թէ՝ դասակից հրեշտակաց լինելոց են. զի գտեղի անկելոց հրեշտակաց լսուն: Չորրորդ՝ ցուցանէ թէ՝ ի լուսաւորութեան են միշտ. զի թէ արտաքին սրահն երկնից այսպէս լուսաւոր է, քանի՞ առաւել ներքին արքայութիւնն պայծառ եւ լուսաւոր լիցի: Զինգերորդ՝ ցուցանէ թէ՝ մերձ են առ Աստուած. եւ ի նա հային. եւ զնա տեսանեն միշտ. (զի այժմ տեսանեմք ընդ հայելի օրինակաւ. այլ յայնժամ դեմ յանդիման:) Վեցերորդ՝ զի ընդ հրեշտակաց զնոր իմաստ եւ զնոր գիտութիւնն առնուն: Չայս եւ առաւել քան զայս՝ նշանակէ խոստումն արքայութեանն երկնից: Եւ այսմ պատճառ՝ հալածանքն լինին եւ չարչարանք մարմնոյն. ապա ուրեմն սիրելի են մեզ չարչարանքն՝ որք զայսպիսի հանգիստ եւ զփառս բերեն, քան զհեշտութիւն եւ զփափկութիւն մարմնոյ՝ որք զտանջանս յաւիտենից պատրաստեն: Վասն այն ասէ առաքեալն. (որք կամիցին աստուածապաշտութեամբ կալ ի Քրիստոս Յիսուս՝ ի հալածանս կացցեն:) Եւ այսպէս բարի են հալածանքն մեր. եթէ ի չարէն սատանայ է, եթէ ի բռնաւորաց եւ յիշխանաց, եթէ ընչից տուգանք, եւ եթէ մարմնոյ չարչարանք, եւ եթէ յերեսս նախատինք, եւ եթէ անէծս եւ այլ ինչ, մի դժարասցուք եղբարք հայելով ի մեր ձակայ պակասութիւնն. այլ ակն կալցուք յուսով ի փոխարէնսն որ հեռաւոր է. զի որքան յամէ փոխն,

այնքան յաւելու շահն: Վասն այն ասէ. (ցնծացէք եւ ուրախ լերուք. զի վարձք ձեր բազումք են երկինս:) Այսինքն է բազում օթեանք. որպէս ասաց. (ի տան հօր իմոյ օթեանք բազում են:) Չի իւրաքանչիւր գործ բարի՝ գործողին իւրոյ օթեան է եւ հանգիստ. եւ նոյնն պսակ եւ վարձ. որպէս թէ, արդարն արդարութեամբն պսակի. եւ ողորմածն ողորմութեամբն. սուրբն սրբութեամբ, եւ այլն նմանապէս: Չի ըստ գործոյն՝ եւ ի գործոյն առնուն զվարձս աշխատութեան. զոր յայլ ուրեք յերիս բաժանէ. ի յերեսնաւոր, ի վաթսնաւոր, եւ ի հարիւրաւոր. ըստ չափոյ առաքինութեանցն զպսակն եւ զպարգէս խոստանայ: Եւ բազում պարգելքն որք լինին բազմաց՝ ի միոյ Տեառն երեսաց բազմանան ի բազումս. եւ յիւր միութենէն ոչ որոշի. այլ զամենայն սուրբս պսական ընդ ինքէն կապէ եւ բոլորէ: Չի ինքն Տէրն է որ բաժանէ զժառանգութիւն արքայութեանն. եւ ինքն է բարի ժառանգութիւն. որպէս ասէ մարգարէն. (Տէր բաժին ժառանգութեան իմոյ եւ բաժակի իմոյ դու ես՝ որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս:) Վասն զի ինքն ամենեցուն բաւական է. եւ արտաքոյ նմա այլ բարի ոչ է. այլ ամենայն բարի ի նմա ժողովեալ եւ կատարեալ: Ինքն է որ ճոխացուցանէ. եւ ինքն է ճոխութիւն մեր եւ գանձ ծածկեալ յագարակի: Ինքն է պատուական մարգարիտն. եւ ինքն է որ տայ զվայելչութիւն մարգարիտին յաւիտեանականի: Այլ պարտ է վաճառել զամենայն ինչ զոր ունիմք՝ եւ գնել զմարգարիտն զայն: Եւ վաճառն երեք յատկութիւնն ունի: Նախ՝ զոր ունի՝ տայ. եւ զոր ոչն ունի՝ առնու: Երկրորդ՝ զանպիտանն տայ, եւ զպիտանին առնու: Երրորդ՝ արժանապէս առնու՝ որ որչափ տայ, նոյնչափ եւ առնու: Ապա պարտ է զմարմնաւորս զոր ունիմք տամք. եւ զհոգեւորն զոր ոչ ունիմք առնումք. թէ ոչ տամք՝ ոչ առնումք: Եւ դարձեալ՝ զանպիտանս եւ զապականացուս տամք. եւ զանապականն ստանամք: (Եւ որով չափով չափեք՝ չափեսցի ձեզ ասէ Տէրն. չափ գեղուն թաթաղուն շարժուն տացի ի գիրկս ձեր) ի բարերար Տեառն է մերմէ Յիսուսէ Զրիստոսէ: Որեւ զմեզ զամենեսեան արժանի արացե երանաւետ խոստման արքայութեանն երկնից՝ եւ անթառամ պսակացն ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր. որով ընդ որում Յօր միանգամայն եւ հոգւոյն սրբոյ՝ փառք եւ պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ վասն մարտիրոսաց. ի Բանն որ ասէ: (Ամենայն տուրք եւ ամենայն պարգէս կատարեալք՝ ի վերուստ են իջեալք առ ի Յօրէն լուսոյ:) Յակ. 1. 17: (Գլուխ. ԾԽԲ)

Ասէ առական. (Շնորհք եւ բարեկամութիւնք ազատք են:) Գիտելի է՝ զի շնորհքն եւ տուրքն՝ նախ զանազանին. զի տուրքն փոխարինաց է. կամ նախ կամ յետոյ. եւ շնորհքն անփոխարէնք: Երկրորդ՝ զի տուրքն ծառայական է ի հատուցանելն, կամ ի պակաս մնալն. եւ շնորհքն ազատ: Եւ բացայայտութիւն սոցա գիտելի է՝ զի ձիրն սեռ է. եւ շնորհքն եւ պարգելքն տեսակք նմին: Եւ այսպէս յայտ է՝ զի շնորհքն ձիր է. աւ պարգելքն ձիր. եւ ոչ անդարդարձեալ. որպէս մարդն կենդանի է. եւ ձին կենդանի է. եւ ոչ անդարդարձեալ: Իսկ շնորհն եւ պարգէսն զանազանին. զի շնորհն նախկին է. եւ պարգէսն վերջին: Չոր օրինակաւ ցուցից. ձիր է եւ մկրտութիւնն. ձիր եւ խոստովանութիւնն. արդ նախ ի մկրտութիւնն մեղքն թողանի որ է շնորհ. եւ

արդարանայ որ է պարգեւ: Նոյնպէս եւ ի խոստովանութիւնն նախ է շնորհ թողութեան. եւ ապա պարգեւ արդարութեան: Եւ այլ ընդարձակ իմա. շնորհն է ի կեանս յայս. եւ պարգեւն ի հանդերձեալն փառք. շնորհն է մարտիրոսաց աստ նահատակութիւնն եւ համբերութիւնն. եւ պարգեւն է անտի պսակն եւ փառքն: Եւ թէ որք ասիցէ՝ յորժամ մկրտութիւնն եւ խոստովանութիւնն ձիր է եւ շնորհ, վասն է՞ր յետ մկրտութեանն զբարիս գործեմք. եւ յետ խոստովանութեանն ապաշխարե՞մք: Ասեմք եթէ՝ ճշմարտութեամբ ձիր է շնորհ մկրտութեանն. զի հաւատ միայն պահանջի եւ ոչ այլ ինչ գործ. եւ արդարանայ մարդ: Նոյնպէս եւ ի խոստովանութիւնն՝ զղջումն միայն պահանջի. եւ զամենայն մեղսն թողու Աստուած. ապա յայտ է՝ զի ձիր եւ շնորհ են երկոքինն ի շնորհացն Աստուծոյ: Իսկ զի յետոյ զբարիս գործեմք կամ ապաշխարեմք՝ կրկին է իմացումն: Նախզի՛ պարտ է յետ մկրտութեանն եւ խոստովանութենն՝ նոյնպէս միշտ սուրբ կալ. այլ այս ի ձեռն բարի գործոց եւ ապաշխարութեանն լինի: Երկրորդ՝ վասն ողորմութեանն եւ արդարութեանն Աստուծոյ. զի կամի Աստուած ողորմութեամբ զձիրն շնորհել. եւ արդարութեամբ տալ զպսակն փառաց: Արդ՝ որպէս ձիրն եւ շնորհն է ի հաւատն եւ ի զղջումն որպէս ցուցաւ. նոյնպէս տուրք արդարութեանն՝ է ի բարի գործն յետ մկրտութեանն. եւ ապաշխարութիւնն յետ խոստովանութեանն: Եւ այս ի մին կողմանէ՝ էր ձիր շնորհ եւ պարգեւ որ զանազանեցաւ: Նոյնպէս ի միւս կողմանէ՝ տուրք՝ փոխ՝ եւ վարձ. եւ երեքին սոքա՝ փոխարինաց են եւ ծառայականք: Եւ այսպէս զանազանին: Տուրքն սեռ է. եւ փոխ եւ վարձն՝ տեսակ. եւ ոչ անդրադարձեալ: Արդ՝ փոխն նախ է քան զհատուցումն եւ զգործն. եւ վարձն զհետ գործոյն: Արդ՝ փոխն երեւի առ ծառայսն. որք նախ զգինն տամք. եւ ապա նա հատուցանէ վաստակով: Իսկ վարձն՝ երեւի առ մշակս. զի ի ցերեկի վաստակի. եւ յերեկոյին վարձաւորի: Եւ որպէս այս՝ նոյնպէս ի հոգեւորն իմացիր: Չի տուրք փոխոյն Աստուծոյ է այժմ. եւ տուրք վարձուցն ի հանդերձեալն: Արդ՝ այժմ տուրք են օրէնքն Աստուծոյ եւ պատուիրանքն. զի պահանջէ զգործն: Տուրք են եւ փոխ մարդեղութիւնն Աստուծոյ եւ չարչարանքն՝ որ պահանջէ զփոխարէնն: Նոյնպէս քարոզութիւնն տուրք է. զի պահանջէ զլսելն եւ զկարտարելն: Չի սոքա են քանքար յաւետանին զոր ետ մարդկան. եւ պահանջէ զշահիլն: Իսկ վարձն է զկնի գործոց, եւ զկնի աստի կենացս ի հանդերձեալն: Այսպէս բացայայտին շնորհք եւ տուրք: Նոյնպէս քննութիւնս է եւ վասն բարեկամին որ ասէ. (բարեկամք ազատք են:) Չի այն որ ճշմարիտ բարեկամն է՝ ոչ ի տալն սիրէ, եւ ոչ յառնուլն ատէ. ոչ ի նախատիլն տրտմի, եւ ոչ ի գործելն ուրախանայ: Այլ որ օտար է եւ ծառայ եւ մշակ՝ ի տալն սիրէ. եւ յոչ տալն ատէ. ի գովելն գովէ. եւ ի նախատիլն նախատէ: Եւ այսպէս ճշմարիտ բարեկամ աշխարհի քրիստոս է եւ առաքեալքն իւր. զի թէպէտ նախատեցին եւ ատեցին եւ չարչարեցին զքրիստոս, զիւր բարերարութիւնն ոչ պակասեցոյց. ոչ ատեաց եւ ոչ նախատեաց զմեզ. այլ չարչարանօքն իւր փրկութիւն գործեաց աշխարհի: Նոյնպէս եւ առաքեալքն ճշմարիտ բարեկամք էին մարդկան. թէպէտ չարչարեցին եւ նախատեցին, սոքա ի քարոզելոյ եւ ի խրատելոյ ոչ դադարեին. որպէս գրէ առաքեալն. (հալածեին զմեզ յանձն առնուաք. նախատին համբերեաք. անիծեին օրհնեաք:) Քարշեին արտաքս ի քաղաքէն՝ դարձեալ ի ներս մտաներ. եւ քարոզելով միսիթարեր զանձն իւր եւ

գժողղղղղվորդն ասելով: (Բազում նեղութեամբ պարտ է մտանել մեզ ի հանգիստն:) Նոյնպէս եւ ամենայն ոք՝ թէ առաջնորդ՝ թէ վարդապետ, քահանայ եւ այլն, եթէ ի գովելն եւ ի սիրելն ուրախանայ եւ ժրանայ, եւ ի նախատելն եւ ի չարչարելն տրտմի եւ թուլանայ, ոչ է ճշմարիտ բարեկամ ժողովրդեանն. եւ ոչ քահանայ, այլ օտար եւ վարձկան եւ ծառայ: Այլ նա է ճշմարիտ բարեկամ Քրիստոսի՝ որ նմանի Քրիստոսի եւ առաքելոցն. թեպէտ նախատեն, թեպէ չարչարեն, յանձն առնու. եւ զբարութիւնն իւր ոչ պակասէ ի նոցանէ որքան կարէ: Վասն նոցա ասէ Քրիստոս. (ոչ կոչեմ զձեզ ծառայս. զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ Տէրն իւր. այլ զձեզ կոչեցից բարեկամս. զի զամենայն գոր լուայ ի հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ:) *Եւ թէ վասն է՞ր զսուրբս իւր եւ զբարեկամս տայ Աստուած ի չարչարանս եւ ի փորձանս մարմնոյ: Ասեն վարդապետք վասն չորս պատճառի: Նախզի՝ աստ պանտիստութիւն եւ օտարութիւն տայ. զի երկնաւոր գաւառին ցանկասցին. եւ զայն ինդրեսցեն. որպէս ասէ առաքեալն. (եթէ նահապետքն օտարք եւ պանտիստք եղեն. զի ազնւական գաւառին ցանկասցին:) Երկրորդ՝ տայ զսիրելիսն իւր ի փորձանս. զի Աստուծոյ սէրն ի նոսա երեւեսցի, եւ նոցայն առ Աստուած. (զի զոր սիրէ Տէր՝ խրատէ Սողոմօն.) եւ նոքա որքան համբերեն փորձանաց՝ այնքան սիրեն զԱստուած: Երրորդ՝ զի յորժամ արիութեամբ տանին, Աստուած փառաւորեսցի. որպէս ասէր ի ծնէ կուրին. (ոչ դորա եւ ոչ հօրն եւ մօրն է վնաս. այլ զի Աստուած փառաւորեսցի ի դմա:) Չորրորդ՝ զի սատանայ պատկառեսցի եւ յամօթ լիցի ի նահատակութիւն սրբոցն. որք հողեղէն եւ տկար մարմնով յաղթեցին թշնամոյն: Եւ այս դիտելի է՝ որ Աստուած ըստ ժամանակի կարգաւ ածէ զփորձանս ի վերայ մարդոյն: Չառաջինն որ դեռես նոր էին եկեալ ի հաւատս՝ եւ նուազ էր աստուածապաշտութիւնն՝ միայն օտարութեամբ եւ պանտիստութեամբ փորձեաց: Որպէս զնահապետսն՝ զԱբրահամ, զի Սահակ, զՅակօբ. որք ասէին եթէ՝ օտար եւ պանտիստք ենք յերկրի. եւ յորժամ ընդ արձակեցաւ աստուածապաշտութիւնն, ծանրացոյց զմարմնական փորձանս. որպէս ի վերայ Յոբայ. որ համբերութեան սկիզբն եղեւ եւ օրինակ. եւ յորժամ այլեւ հաստատեցան հաւատաքն եւ օրէնքն յաւուրս մարգարէիցն, այլեւս ծանրացաւ նեղութիւնն: (Որք քարկոծեցան՝ սղոցեցան՝ սպանմամբ սրոյ մեռան. նեղեալք, կարօտեալք, զորս ոչ արժէ աշխարհս ասէ առաքեալն:) Եւ այս ոմանց ոմանց. զի զարկոծեցաւ Երեմիա. սղոցեցաւ Եսայի. սրով սպանաւ Չաքարիա. նեղեալք կարօտեալք՝ որպէս Եղիա եւ Եղիսէոս, եւ այլք: Իսկ յետոյ յորժամ Բանն Աստուած վասն մեր մարդ եղեւ եւ չարչարեցաւ եւ ասաց. (եթէ ոք գայ զհետ իմ, առցէ զիսաչ իւր եւ եկեսցէ,) ամենայն հաւատացեալք նմին հետոցն հետեւեցան. արհամարհեցին զանցաւոր կեանս. եւ առին զանանցն եւ զյաւիտենականն, եւ ոչ մերժեցան. որպէս ասէ. (ո՞ մեկնեսցէ զմեզ ի սիրոյ Քրիստոսի. նեղութիւն, թէ անձկութիւն, եւ այլն:) Արդ՝ սքանչելի պատարագիլ մարտիրոսացն սրբոց՝ է եռակի: Նախ՝ ի պատարագէն: Երկրորդ՝ ի մատուցողէն: Երրորդ՝ ի յընդունողէն: Նախ ի պատարագէն այսպէս. զի որ իւրովի սպանանէ զինքն, մահապարտ է յօրէնս. իսկ նոքա կամաւ իւրեանց ետուն զինքեանս ի մահ փոխանակ մահուն Քրիստոսի. եւ կենդանացան ընդ նմա յաւիտեան: Երկրորդ՝ իմատուցողէն. զի անարժանն եթէ մատուցանէ պատարագ՝ ոչ է ընդունելի. որպէս Կայէնին զի ոչ հաճեցաւ Աստուած: Եւ Եսայի ասէ. (թէ

անօրէն մատուցանիցէ պատարագ. որպէս թէ հեղու գարին խոզի:) Իսկ մարտիրոսքն սուրբք՝ անպարշտաց եւ անսրբոց մատուցան ձեռօք պատարագ ընդ ունելի Աստուծոյ: Երրորդ՝ ի յընդունողէն. զի յառաջագոյն ոչ կամեր Աստուած զհեղումն արեան մարդոյ. զոր դիւաց զոհէն զուստերս եւ զդսիերս. այլ զողջակեզս խոյաց եւ զուարակաց օրինադրեաց ի ձեռն Մովսէսի: Իսկ այժմ ընդունի զհեղումն արեան սրբոց՝ որք վասն անուան նորա նահատակեալ չարչարին: Եւ զայս երեքին սքանչելի պատարագս ուսանանք ի Զրիստոսէ՝ որ նախընծայ եղել այսմ պատարագի. եւ կամաւ իւրով ետ՝ ի մահ զանձն իւր. եւ ի ձեռս անօրէն հրէիցն խաչեցաւ. եւ եհեղ գարին իւր վասն փրկութեան մարդկան. յորմէ ուսան վկայքն սուրբք. եւ վկայեցին արեամբն իւրեանց փոխանակ արեանն Զրիստոսի: Եւ սոքա մարտիրոսաց դասք՝ առաջին պտուղ առաքելական վերընծայեցան Աստուծոյ. զի յորժամ քարոզութիւնն ընդ արծակեցաւ, վարդապետք եւ մարտիրոսք բազմացան ի յերկնի եւ կվայքն զենմամբք ի վերին սեղան սրբութեանն նուիրեցան. եւ սիրովն Զրիստոսի վառեալ բորբոքեցան իբր զբոլորապտուղ պատարագ եւ ողջակեզ Աստուծոյ ի հոտ անուշից: Եւ զի՞նչ էր պատճառ որ այսչափ յերկար համբերէին սուրբքն ի չարչարանս վասն Զրիստոսի: Վարդապետք ասեն երեք պատճառս: Նախզի՝ այնպէս միացեալ են ի սերն Զրիստոսի՝ զի ոչ կամին անգամ բաժանիլ ի նմանէ. որպէս ասէ առաքեալն. (ո՞ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Զրիստոսի. նեղութիւն, թէ անձկութիւն, թէ այլն:) Եւ վասն առաւել սիրոյն՝ կամին ոչ մի անգամ մեռանիլ վասն Զրիստոսի, այլ թէ հնար գոյր, բիւր անգամ մեռանէին եւ զօրհանապագ. ըստ մարգարէին. (զօր հանապագ մեռանիմք վասն քոյ:) Արդ տեսանէ Զրիստոս զառաւել սերն նոցա, եւ ճանաչէ զպատրաստութիւն սրտից նոցա որք կամին յերկարիլ ի տանջանս, վասն որոյ տայ նոցա համբերութիւն տոկալ եւ յերկարիլ ի տանջանս: Որպէս լուսաւորիչն մեր ի կախադանին ասէր. կամիմ զի յերկարեցին տանջանք հոգւոյս: Երկրորդ պատճառաւ՝ տայ սրբոցն համբերել երկար եւ խիստ տանջանացն. զի եւ այլք ի մարդկանէ տեսեալ նախանձեսցին տանջանաց նոցա եւ նմանեսցին. որպէս Ադրիանոս եհարց զչարչարեալսն թէ՝ վասն Է՞ր այդպէս յերկար եւ դառն տանջանաց համբերե՞ք. եւ նոքա ասեն. վասն սիրոյն Զրիստոսի եւ արքայութեանն երկնից՝ ոչ ինչ համարիմք զտանջանս. վասն որոյ եւ նա հաւատաց ի Զրիստոս եւ նահատակեցաւ: Այսպէս եւ այլք բազումք ի տեսանել զչարչարանս սրբոցն, հաւատացին ի Զրիստոս: Երրորդ պատճառաւ՝ տայ նոցա համբերութիւն. զի գիտացեն թէ ոչ յինքեանց, այլ ի Զրիստոսէ ունին զկենդանութիւնն եւ զգօրութիւնն. զի որպէս ի մեռելոց կենդանացուցաներ զնոսա. նոյնպէս ի չարչարանսն զօրացուցաներ եւ տայր համբերութիւն. որպէս զսուրբն Գեորգէոս երեք անգամ կենդացոյց. եւ զայլս բազումս. զի գիտացուք թէ՝ Զրիստոսի զօրութեամբ համբերէին եւ ոչ մարմնով. (զի զօրութիւն տայ Տէր երկիւղած իւրոց ասէ մարգարէն.) Եւ ինքն Տէրն ասէ. (առանց իմ ոչ ինչ կարեք առնել:)* Եւ այս գիտելի Է՝ թեպէտ դասք մարտիրոսացն եւ առաքելոցն զանազանապէս չարչարանս կրեցին, ոչ հաւասարէր փոխարէն լինիլ մահուն Զրիստոսի. այլ գերազանց էին չարչարանքն Զրիստոսի. եւ նոցայն նուագ: Եւ յայտնապէս ուսուցանէ զքեզ չորեքին սոքա. այսինք, բնութիւնն. կարիքն. կարգն. եւ պատճառն: Նախ բնութիւնն. զի նոքա մահկանացուք էին բնութեամբ. եւ մեռան. եւ Տէր մեր

անմահ էր բնութեամբ, եւ մեռաւ մարմնով: Երկրորդ կարիքն. զի նոքա վասն անմահութեան կամ արքայութեան կամ փառաց կամ թողութեան մեղաց մեռան. այլ Տէրն անկարօտ է ամենայնի սոցա: Երրորդ կարգն. զի նախ Քրիստոս մեռաւ. եւ ապա սուրբքն ուսեալ ի նմանէ. որպէս Պետրոս նախ ուրացաւ առ խաչին եւ յետոյ տեսեալ զՏէրն՝ խաչակից եղել. նոյնպէս եւ այլքն: Չորրորդ պատճառն. զի սուրբքն վասն Քրիստոսի մեռան՝ որ Աստուած էր եւ բարի բնութեամբ. իսկ Քրիստոս վասն մարդկան մեռաւ. եւ ոչ վասն բարեաց, այլ վասն չարաց եւ մեղաւորաց. վասն որոյ հրամայեաց. (զայգ ամենայն արարեալ՝ ասացէք ծառայք անպիտանք եմք. զոր պարտ էաք առնել արարաք:) Նախզի՝ զոր ինչ չարչարիմք՝ պարտք է Քրիստոսի առ մեզ. թէ պահք, թէ աղօթք, թէ ողորմութիւն, գետնախաշտութիւն, խոնարութիւն, ողորմութիւն, չարչարանք, ապտակ, գան, նախատինք, թուք, եւ այլն ամենայն պարտք է Քրիստոս առ մեզ զորս հատուցանեմք: Եւ անպիտան եմք՝ զի ոչ հաւասարի մերս մնայն որպէս ասացաւ: Երկրորդ՝ զի գովութիւնն մեր ի նմանէ լինիցի եւ ոչ ի մէնջ. զի նա զօրացոյց զմեզ. եւ նա ուսոյց. եւ նա փառաւորեաց: Եւ զի՞նչ է պատճառն որ ժողովիմք ի տօնախմբութիւն սրբոցն: Ատ իմաստունն Սողոմօն: (Յիշխանութիւնս անպարշտաց հեծեն արդարք:) Նախզի՝ յորժամ յիշեմք զանգութեալ եւ զանողորմ բարս չարչարողաց սրբոց, հեծեմք եւ ողբամք զանմտութիւնս նոցա. որպէս յորժամ թէ, եղբարքն վաճառեցին զՅովսէփ եւ ի գուր արկին. զողջախոհն շուշան հոլանի ի սպանումն տանէին: ՉԱստուած Աբան մարգարէն Եսայի սղոցեցին: ՉԵրեմիա քարկոծեցին: Չնոյն ինքն զՏէր մեր զբարեգործն Քրիստոս ի խաչ բելեռեցին: Չառաքեալսն իւր եւ զծառայսն սպանին. որպէս զնահատակն արի գտուրքն Լուսաւորիչ զանագան եւ անտանելի չարչարանօք տանջեցին. եւ հնգետասան ամօք ի մէջ վիշապացն ի վիրապն ընկեցին: Չայս յեիշելով, հեծեմք եւ արտասուեմք զանպարհիշտ միտս չարչարողաց նոցա: Երկրորդ՝ հեծեմք եւ կսկծիմք եւ սարսռին ոսկերք մեր ի մտածումն խստագոյն եւ անըմբերելի կրից նոցա. զմանրամասն կտրումն. որպէս գտուրքն Յոկովիկ. գյօղիցն լուծումն. զքերանս ճանկիցն. զքանցումն լուսաւորացն. զշանթս շափրացն. եւ զմիտումն բելեռացն. ի կոճեղս պնտիլն. զսրալից անիւսն: Չսարսումն սղոցացն. զբանտ խաւարային. զտուլայտումն ի սով եւ ի ծարաւ. եւ ի սառնամանիս լճաց եւ յայրեցումն հրոյ, եւ զայլսն: Եւ սիրոյն հպաւորութեամբ որպէս մերձ գոլով աստ՝ եւ այժմ տեսեալ զհեռաւորն ժամանակաւ եւ տեղեաւ, հեծեմք եւ հառաչեմք սրտիւ վասն գործոց անօրինաց ի սուրբսն Աստուծոյ: Երրորդ՝ հեծեմք եւ յորդոց հանեմք եւ հիանամք ըն դ անհաս խորս դատաստանին Աստուծոյ թէ՛ յի՞նչ պատճառս գտուրքս իւր տայ ի ձեռս անսուրբ եւ անպարհիշտ արանց այսպէս դառն չարչարել զնոսա. զի սուրբք են եւ ոչ են արժանի չարչարանաց: Սոքա տանջին. երւ անսուրբքն որք պարտականք են բազում տանջանաց՝ նոքա հանգչին եւ մեծանան ուրախութեամբ: Չորրորդ՝ համանգաման ի միասին ուրախանամք եւ հեծեմք, եթէ ունիցիմք ի մեզ այսպէս յանդուգն եւ անողորմ բարս որպէս նոքա. եւ ուրախանամք, եթէ կրեալ եմք զնոյն յանդգնութիւն ի յայլմէ անպարշտաց: Դարձեալ՝ ուրախանամք եթէ ունիցիմք իշխան բարեպաշտ՝ որ խաղաղ եւ հանդարտ զկեանս մեր ուղղիցեմք. եւ հեծեմք՝ եթէ հանդիպեսցի մեզ այնպիսի անպարհիշտ եւ խռովարար իշխան, եւ հակառակ եղեղեցւոյ եւ օրինաց: Որով

զմեզ զամենայն զհաւատացեալս եւ զերկրպագուս անուան իւրոյ՝ արժանաւորասցէ փրկիչն մեր Քրիստոս մասին բարեաց. եւ չարչարանացն սրբոց պսակակից եւ հաղորդս փառաց. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ մարտիրոսաց. ի Բանն՝ (Շնացողք՝ ո՞չ գիտէք. զի սեր աշխարհիս՝ թշնամութիւն է առ Աստուած:) Յակ. 4. 4: (Գլուխ. ՃԽԳ)

Գիտելի է զի վեց են շուրջանակի թշնամիք հոգւոց մերոց: Նախ՝ ախտն բնաւորեալ ի մեզ. որ հաստատեալ է այլ օրէն հակառակ մտաց. այս է՝ բարկութիւնն, ցանկութիւնն, հպարտութիւնն, ծուլութիւնն, եւ այլն: Երկրորդ՝ մարմինս է թշնամի հոգւոյս մերոյ. (զի մարմինն ցանկայ հակառակ հոգւոյ. եւ հոգին հակառակ մարմնոյ որպէս ասէ առաքեալն:) Երրորդ՝ սատանայ թշնամի է անմարմին՝ որ հանապազ գաղտ ի խորհուրդս մեր պատեարագմի եւ ձգէ զնետ ի խաւար. եւ դնէ շուրջանակի լար է գայթակղութիւն ոտից մերոց: Չորրորդ՝ թշնամի է աշխարհս. որ զինչ մարմնոյ ցանկութիւնն է՝ առ ձեռն պատրաստ յառաջ բերէ, օգնելով ցանկութեան մարմնոյ. եւ հակառակի ընդդէմ հոգւոյն: Հինգերորդ՝ թշնամի է հոգւոյ կինն. որ զգայարանաց հեշտութեամբ՝ որսայ եւ ըմբռնէ ի կորուստ զմարդկան ոգի. որպէս ասէ առակն. (անթիւ են սպանեալքն ի նմանէ. եւ զբազումս ի տապաստ է արկեալ:) Վեցերորդ՝ թշնամիք են կռապշտք՝ հերձուածօղք եւ այլազգիք. սոքա հանապազ հակառակք են կրօնից մերոց եւ օրինաց. որպէս նախկին չար թագաւորքն. եւ այժմ այլազգիք յայտնի. եւ հերձուածօղք ի ծածուկ. սոցա ամենեցուն ընդդէմ կալլ պարտ է եւ զինիլ. զի մի յաղթեսցեն եւ կորուսցեն զմեզ: Այլ յաղթելով առնումք զպսակ յաղթողաց. որպէս ասէ տեսիլն. (որ յաղթէ՝ տայ նմա զպսակ կենաց:) Իսկ թէ վասն է՞ր թոյլ տայ Աստուած փորձողին նելել զմարդիկ եւ փորձել: Ասեմք թէ՝ վասն հասարակաց փորձանաց թէ զի՞նչ է օգտութիւն նեղութեան փորձութեան՝ բազում ասեն վարդապետք: Չի զգործեալ մեղս սրբէ. որպէս հուր զժանկ արծաթոյն. եւ յառաջիկայն զգուշացուցանէ. եւ ի ներկայն արի եւ կազմ առնէ զմարդիկ. եւ այլ բազում: Իսկ սրբոց որք ոչ ունին մեղս՝ որպէս առաքեալք, մարտիրոսք, եւ այլ սուրբք, վասն էր տայ նեղութիւն եւ չարչարանս: Ասեն վարդապետք բազում պատճառս: Նախզի՝ թէպէտ սուրբք ոչ ունին մեղս զի նեղութեամբ եւ փորձութեամբ քաւեսցին. սակայն սոքա զինուորեալք են Քրիստոսի՝ պարտին Տեառն իւրեանց նմանիլ որ հաղիսադիրն է, եւ ընդ նոյն գնալ. ըստ այնմ, (ոչ ոք զինուորեալ, եթէ ոչ՝ զօրավարին հաճոյ լինիցի, եւ այլն:) Երկրորդ՝ զի օրինակ լիցին հետեւողաց նոցա եւ ամենայն մարդկան. որպէս Յոբայ փորձութիւնն. եւ Ասրահամուն. ըստ այնմ, (զհամբերութիւնն Յոբայ լուարուք. եւ զկատարումն Տեառն տեսէք:) Երրորդ՝ զի զոր բանիւ այլոց ուսուցանեն՝ պարտին ինքեանք գործով կատարել. զի հաւատարիմ լիցին բանք նոցա. որպէս ասէ առաքեալն. (ճնշեմ զմարմին իմ եւ հնազանդեցուցանեմ. զի մի որ այլոց քարոզեցի՝ ես ինքնին անպիտան գտանիցիմ:) Չորրորդ՝ զի մի հպարտասցին ի մեծամեծսն, եւ մարմնով զանմարմնոց վարս ունեալ. ըստ Պօղոսի՝ (զի մի հպարտացայց ասէ՝ տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատան կռոփ.) որ է բնաւորական կիրք մարմնոյ. որով թշնամին սատանայ ընդ մարդիկ պարտեարագմի եւ փորձէ. թէպէտ ոմանք ի սուրբոց վասն արտաքին

թշնամեաց առնուն: Հինգերորդ՝ զի տկար մարմնով՝ անմարմին եւ զօրաւօր թշնամունյն յաղթեսցեն. որով Աստուած իսկապէս փառաւորի, զտկարսն յաղթօղ զոլ զօրաւորին. ըստ որում զախորժակս իւր յայտներ սիրելունյն. (շատ է քեզ շնորհն իմ. զի զօրութիւն իմ ի տկարութեան քում կատարի.) այսինքն, թէ որպէս ես աստուածային մարմնոյս զօրութեամբ յաղթեցի փորձողին. նոյնպէս դու շնորհօք իմ՝ տկար մարմնով քով՝ յաղթես եւ նկուն առնես զնա: Վեցերորդ՝ զի գիտացէ սատանայ զտկարութիւն իւր թէ՛ ոչ միայն յԱստուծոյ, այլեւ ի մարդկանէ յաղթիմ. ըստ Տեառն որ ասեր. (տեսանէի զսատանայ տնկեալ. ձեզ ետու իշխանութիւն կոխել զօծս եւ զկարհնս եւ զամենայն զօրութիւնս թշնամունյն:) Եօթներորդ՝ զի պսակքն բազմացին. որպէս սրբոյն Ստեփաննոսի մարտիրոսական պսակն ի վեայ առաքելականին. որպէս ասեր Յակօբոս. (եթէ ընտիր եւս գտանիցի՝ առցէ զպսակն կենաց:) Ութներորդ՝ զանկեղծ սերն նշանակէ զոր ունին առ Զրիստոս. փոխանակ չարչարանաց նորա չարչարանս կրել. եւ ի սիրոյ նորա ոչ մեկնիլ. որպէս ասեր առաքեալն. (ես զչարչարանս Զրիստոսի ի մարմինի իմում կրեմ.) եւ յայլ ուր թէ, (ո՞ մեկնեսցի զմեզ ի սիրոյն Զրիստոսի. նեղութիւն, թէ չարչարա՞նք. ոչ որք կանս. եւ ոչ հանդերձեալն:) Իներորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի խրատ եւ յուղղութիւն այլոց. որպէս զՂազարուն եւ զմեծատանն. զի տեսանելով զՂազարոս՝ եւ լսելով վասն մեծատանն, զարհուրիմք եւ զամք յուղղութիւն: Տասներորդ՝ ասէ սուրբն Դիոնեսիոս. վասն այն տայ Աստուած սրբոցն նեղութիւնս եւ փորձութիւնս՝ զի նեղութիւնն սիրելի եւ փափագելի է նոցա. եւ յայն ժամ ուրախանան սուրբքն յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան եւ արիանան ի փորձութիւնս. եւ այսպէս նեղութեամբ ի մեծ հանգիստն ժամանեն. ըստ առաքելոյն. (բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել ի հանգիստն:) *Եկեսցուք այժմ ի տեսութիւն բանիս որ ասէ: (Շնացօղք՝ ո՞չ գիտէք. զի սեր աշխարհիս՝ թշնամութիւն է առ Աստուած:) Ասեն վարդապետք եթէ՛ շնութիւնն յերկուս բաժանի. ի հոգեւորն եւ ի մարմնաւորն: Իսկ մարմնաւորն՝ եւ նա բաժանի յերկուս. ի շնութիւն սրտի. ըստ որում Տէրն հրամայէ. (որ հայի ցանկութեամբ՝ անդէն շնացաւ ի սրտի:) Եւ ի շնութիւն գործոյ. ըստ որում, (շունք եւ պոռնիկք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն:) Իսկ հոգեւոր շնութիւն կոչի այն՝ որք թողուն զՏէր Աստուած իւրեանց, եւ պաշտեն զկուռս. ըստ որում ասեր մարգարէն. (շնայր Երուսաղէմ եւ պոռնիկ էր Սամարիա:) Նոյնպէս եւ որք թողուն զհայրենի օրէնս սուրբս եւ զուղղափառ դաւանութիւնս. եւ մտանեն յայլ ինչ աղանդս, մահմետականաց կամ քաղկեդոնականս, շնացել կոչին: Նաեւ վերատեսուչք եւ հոգեւոր հովիւք՝ որք հոգեպէս պպսակեալք են ի վիճակս իւրեանց. եթէ ոք մտցէ ի ժողովուրդս նոցա եւ հանցէ ի նոցանէ, շուն եւ պոռնիկ կոչի. որպէս ասէ առաքեալն վասն սուտ քարոզողացն. (որք մտին ի մէջ ժողովրդեանն. եւ հակառակէին ընդ ճշմարիտ վարդապետացն:) Իսկ որ ասէ. (սեր թշնամութիւն է առ Աստուած.) բազում եղանակաւ է: Նախ՝ աշխարհ ասէ աստ զանառակ կեանս զմայրն ապականութեան. զոր թէ ոք կամեսցի սիրել եւ ընդունիլ թշնամի առնէ՛ զանձն Աստուծոյ: Երկրորդ՝ ի հեղգութենէ եւ ի ցանկութենէ՝ յորմէ ծնանի հեռ եւ նախանձ. եւ ի սոցանէ անկարգութիւն յառաջէ՝ որ է թշնամութիւն առ Աստուած: Երրորդ՝ զչարութիւնն սահմանէ սեր աշխարհի. եւ զբարութիւնն սեր Աստուծոյ. իսկ

չարն եւ բարին ի միասին բնակիլ ոչ կարեն: Չորրորդ՝ զի որ սիրէ զաշխարհ վասն մեղաց, ատելի է Աստուծոյ. եւ որ սիրէ զԱստուած բարեպաշտութեամբ ի բոլոր սրտէ, վաղվաղակի թշնամի գտանի աշխարհի. ըստ որում ինքն ասաց. (ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի. կամ սիրել զԱստուած եւ զաշխարհս:.) Վասն որոյ եկեալ Տէրն նոր սեր հաստատեաց մարդկան առ Աստուած. եւ զսեր աշխարհի բաժանեաց ի մենջ, տալով յապաւիչ յերկրաւոր խորհրդոյ զհրաման պատուիրանի իւրոյ ի ձեռս հետեւողաց իւրոց ասելով. (ոչ եկի խաղաղութիւն արկանել յերկիր. այլ սուր եւ բաժին:.) Եւ բազումք սպառազինեցան ընդդէմ աշխարհի. որոց խոստացաւ տալ զխաղաղութիւն. (ոչ որպէս աշխարհի տայ տամ ես ձեզ ասէ.) այլ զայն՝ որ միայն ընդ Տէրն ձեր զանխոռով խաղաղութիւնն ունիցիք. այլ ընդ անառակ կեանս ի պատերազմ կայցէք: Իսկ զի՞նչ տայ աշխարհս. զանցաւոր հեշտութիւնս. որով բազումք վարանին եւ տկարանան. եւ զրկին յերկնաւոր պարգեւացն: Դարձեալ հրամայէ Տէրն. (թէ ակն կամ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ եւ այլն, հատանել լաւ է եւ մտանելի ի կեանս:.) Եւ սուրբն Ոսկէբերան ասէ. ոչ վասն անդամոց զայս ասէ, այլ վասն սիրելեաց եւ բարեկամաց: Նոյնպէս եւ առաքեալս ասէ զսեր աշխարհիս. այսինք, զբարեկամաց սեր. զի թէպէտ չիցեն ի վատթար սիրելեաց, այլ գթեն զնոսա յառ Աստուած սիրոյն. ի բաց թողլի է զնոսա: Ոպէս եւ բազումք կարացին կոխել զայնպիսի սեր՝ զհօր եւ զմօր եւ զայլն. եւ արժանացան Քրիստոսի: Արդ՝ այժմ մեծ սաստիկ հրաման առաք հրաժարիլ ի սիրոյ եւ ի զբօսանաց աշխարհի: Ապա ուրեմն եղբարք՝ ի նեղութեան են վիճակեալ կեանք մեր. որպէս եւ առաքեալն պարծեր. (ի նեղութիւնս, ի դանս, ի բանտս:.) Բայց պարտ է գիտել՝ զի նեղութիւնս այս որ հաստատութիւն է հաւատոց մերոց՝ ոմանք կրեն զանօգուտն: Նախ եւ առաջին՝ որք ոչ նախայօժար բաղձանօք եւ սիրով կրեն այլ ի մէջ նեղութեան գոլով, ունին զբաղձանս հեշտութեան: Երկրորդ՝ յորժամ ոչ համբերութեամբ ի գլուխ տարցեն այլ պատահմամբ, կասին ի նեղութենէ: Երրորդ՝ յորժամ ի գալ նեղութեանց՝ տկարանան հաւատով, ոչ ունելով զնեցուկ յուսոյն ի ճանապարհն կենաց. այլ յորժամ գտանեն հեշտութիւն՝ փութով արտաքս վագեն եւ յօրանան ի նոյն: Չորրորդ՝ յորժամ ոք զերանել կեանս ունիցի բաժին իւր. այսինք, զնեղն եւ զանձուկն ընտեսցէ ճանապարհ. եւ խոտեսցէ զլայնն եւ զարձակն: Եւ այսպիսիքս երկակի են. ոմանք բանաւոր. եւ ոմանք անբան եւ յիմար. վասն որոյ ոմանք ընտրին եւ ոմանք խոտին. զի այն որ անբան է՝ թէպէտ զնեղն եւ զանձուկն ունի ճանապարհ, եւ բազում այլ ինչ գայցէ ի վերայ նորա ցաւագին վիշտ մարմնական՝ որպէս աղքատութիւն, հիւանդութիւն, եւ այլն, լայն եւ արձակ է համարեալ նմա. զի ոչ ունի զչորս պարագայս զայսոսիկ: Նագի՝ ոչ ունի հաւատ եւ յոյս. այլ ի ցոյցս մարդկան առնէ: Երկրորդ՝ զի ոչ յօժար կամօք կրէ: Երրորդ՝ զի ոչ ի փառս Աստուծոյ գոհանայ զնմանէ: Չորրորդ՝ զի անբանապէս ոչ գիտելով զպատճառն՝ այլ կեայ չար անմեղութեամբ, եւ վատթար առողջութեամբ: Իսկ այն որ արդար է եւ իմաստուն ընդդէմ նմա ունի զայսոսիկ: Նախզի՝ ի մէջ նեղութեանց եւ փորձանաց՝ ոչ նւագի ի հաւատոցն. այլ որքան յաճախէ, ուրախ է յուսով հանդերձեալք բարեացն: Երկրորդ՝ զի առաւելու ի գոհութիւնն: Երրորդ՝ զի շնորհ համարեսցի ինքեան, այսու չարչարակից լինիլ Քրիստոսի:

Չորրորդ՝ զպատճառն գիտելով թէպէտ հեշտութեան հանդիպի,

փախչի ի նմանէ. զի մի կերեալ յագեսցի եւ մոռացի զՏէր Աստուած իւր. եւ զրկեսցի ի խոստացեալ բարեացն յաւիտենից: Այլափսին ընթացակից է առաքելոյն ընդ անձուկ ճանապարհն ի հանգիստ ժամանել. որպէս ասէ. (յամենայն նեղեալք, այլ ոչ նւագեալք. չարչարեալք, այլ ոչ տարակուսեալք:) Եւ թէ՛ (գիտեմ նուազիլ, գիտեմ առաւելու:) Եւ այս զայս կրել. այսինքն ի ժամանակս այս չարչարիլ. եւ ի միւսն ոչ տարակուսիլ: Իսկ թէ ի մի եւ ի նոյն ժամն, այս կատարելոցն է. զի ի չարչարանսն գոլով, յուսով հանգստեանն միտարեին: Նոյնպէս նւագիլն ի մարմնի. եւ առաւելուլն յոգի. եւ թէ տրտմէր, ուրախ էր յուսով: Նոյնպէս եւ զամենայն ներհակսն իմացիս. զքաղց, եւ զծարաւ, եւ զայլն: Իսկ թէ ոք ասիցէ՛ թէպէտ այնքան նեղին եւ ճգնին սուրբք՝ բազում գովութիւնս առնուն ի մարդկանէ: Ասեմք թէ՛ ոչ է յայս դիտաւորութիւն սրբոցն. այլ հետեւումն է նոցա. իսկ դիտաւորութիւն նոցա այն է, որք զանբան ցանկութիւնս կորուսանեն յինքեանք: Իսկ թէ ոք ասիցէ եթէ՛ մեծատուք զայս ոչ կարեն առնել. այլ ընդ իրս աւելորդօքն վատթարանան: Ասեմք թէ՛ այնափսին թէպէտ յաղցաւոր աղքատութեան իցէ՛ ոչ կարէ համբերել եւ ընտիր լինիլ. զի զմեծութիւնն ոչ գիտեր վայելել. զի ինքն է պատճառ վատթարութեան իւրոյ. եւ ոչ մեծութիւնն: Այլ որ համբերէ վշտաց վասն որդւոյ իւրոյ՝ թէպէտ յառողջութեան իցէ եւ ի հանգստեան եւ ի փարթամութեան, առ ոչ ինչ համարի զնոսա: Թողեալ զամենայն յաջողմունս, մինչտ եռայ եւ տարփայ սիրոյ յաւիտեանական կենացն. որպէս Աբրահամ, Դաւիթ. Կոստանդիանոս. եւ այլք: Վասն որոյ այնափսիքն փոխանակ վրիպական կենցաղոյս՝ առցեն զանվրեպ կեանսն: Եւ աստ ի նեղութիւնս օգնական լինիլ նոցա. ըստ այնմ, (Աստուած մրե ապաւեն եւ զօրութիւն՝ օգնական ի վերայ նեղութեանց որք գտին զմեզ յոյժ:) Եւ այս հարցանելի է թէ՛ նեղութիւնքն բազմատեսակք զորս կրեն սուրբքն՝ ոմն զպահս՝ ոմն զաղօթս, ոմն զկուսութիւն, ոմն զանսուաղ կեանս, ոմն զանբերելի նահատակութիւնս. որպէս մարտիրոսացն հեղումն արեան, գլխոյ հատումն, հրով այրումն եւ այլն, սոքա ամենեքեան մի՞են, եթէ զանագա՞նք: Ասեմք եթէ՛ ամենեաքան սոքա, եւ այլ զինչ եւ իցէ նեղութիւն՝ ըստ անուանցն զանագանք են. այլ ըստ դիտաւորութեանն մի. այսինքն իկիրսն զանագանք են սոքա. այլ դիտաւորութիւնն նոցա ի մինն ակնարկէ ի յոյսն՝ որ ոչ երբէք ամաչեցուցնէ: Իսկ թէ զի՞նչ է յոյսն. այս է՝ որ ի նեղութիւնս կալով ունին նպատակ հանգստեան. այսու յուսով համբերեն ի նեղութիւնսն. եւ այս էր պարծանք սրբոցն: *Եւ թէ մեզ զի՞նչ օգուտ է ի սրբոցն՝ առաքեալն ի յեբրայեցուցն ուսուցանէ: (Այսու հետեւ մեք որք այսչափ շուրջ զմեզ մածեալ ունիմք զբազմութիւն վկայիցս.) այսինք, որք Յաբելէ մինչ ի նահապետսն եւ ի մարգարեսն եւ յառաքեալսն մարտիրոսք եղեն: Ոմանք հաւատով վկայեցին. ոմանք գործով. ոմանք պանտուխտք. ոմանք ողբատք. ոմանք կուսութեամբ եւ ճգնութեամբ: Ոմանք արեամբ. սողոցեան, քարկոծեցան, կոշկոծեցան, այրեցան, եւ պէսպէս չարչարանս կրեցին: Եւ այժմ շուրջ զմեզ մածեալ են. որպէս զլուսաւոր ամպ՝ հոգիք նոցա ի բարձունս հովանի լինին մեզ: Եւ նշխարք նոցա ի յերկրի յորդորեն զմեզ: Եւ պատմութիւնք նոցա ի լսելիս մեր ուսուցանեն զմեզ նմանօղս լինիլ նոցա: Եւ չորս ինչ պիտոյ է մեզ՝ զոր առաքեալն խրատէ: Նախ՝ զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեսցուք. որ է հոգեկան մեղք. եւ զամենայն մեղս կատարս. որ է ցանկութիւն մարմնոյ. որ կարեօք ըմբռնէ զմեզ: Երկրորդ՝

ասէ. (համբերութեամբ ընթացուք ի պատերազմ.) այսինքն, նախ ընդ սատանայի: Երկրորդ՝ ընդ հալածօղս: Երրորդ՝ ընդ ախտից մարմնոյ: Եւ ամենայն պատերազմ սրբոց ի սատանայէ լինի. որ երբեմն հեշտութեան ախտի՝ երբեմն չար բռնաւորօք զինի: Երրորդ՝ ասէ. (հայեցարուք ի զօրագլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս) Չօրավար Զրիստոս է այսմ մարտի. եւ ամենայն առաջինք եւ վերջինք՝ զինւորք են նմա. ի Զրիստոս հայեցէք ասէ եւ ոչ ի մարդ: Նախզի՝ մարդ ոմն զայս ինչ ունի. եւ ոմն զայն. այլ Զրիստոս զամենայն. զկուսութիւն. զսրբութիւն. զառաքինութիւն. զարիւն. զխաչ. եւ զայլն: Երկրորդ՝ զի նոքա մարդիկ են հողեղէն եւ մահկանացու. այլ Զրիստոս Աստուած է՝ որ զամենայն խոնարհութիւնս գործեաց: (Որ փոխանակ ուրախութեանն զոր բնութեամբ ունի՝ յանձն էառ զխաչ. արհամարհեց զամօթ. եւ ոչ ինչ համարեցաւ:) Եւ ապա այն մարմնովն որ յաղթեաց ախտից, (նստաւ ընդաջմէ Աստուծոյ:) Նոյնպէս եւ մեք թեպէտ ունիմք զանազան շնորհս եւ աստիճանս. այլ նեղութիւնքն եւ չարչարանքն են հանգստեան պատճառ. ըստ այնմ, (բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել ի հանգիստն:) Չորրորդ՝ ասէ. (մոռացայք զմիսթարութիւնն որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի) ի ձեռն Սողոմօնի: (Որդեակ՝ զգուանաց է. մի լքանիր ի խրատու Տեառն. զի զոր սիրէ Տեր՝ խրատէ՝ տանջէ զամենայն որդի զոր ընդունի. ի խրատու համբերութեան կայք՝ իբրեւ յորդիս սիրելիս մատուցեալ է ի ձեզ Աստուած:) Չի խրատն հայրենի է առ սիրելիս, եւ ոչ առ օտարս: Եւ նախ յայտնի է ի Զրիստոսէ՝ որ սիրելիս որդի է Աստուած. որպէս հայր վկայեաց. զնա ետ ի չարչարանս վասն փրկութեան մարդկան: Երկրորդ՝ ի սուրբ. որպէս առաքեալքն՝ մարգարէքն, եւ այլք. որ ետ զնոսա ի չարչարանսս վասն բազմոց օրինակ լինելոյ որպէս ցուցաւ ի վերոյ: (Եւ ամենայն խրատ՝ առ ժամայն դառն թուի. բայց յետոյ պտուղ բարեաց բազում նովաւ կրթեցելոցն.) այսինքն, ամենայն խրատ ի սկիզբն դառն է. բայց յետոյ քաղցրանայ լսողացն. որպէս ծառոյն արմատն դառն է. եւ պտուղն քաղցր. եւ դառն դեղն առողջարար է: Ընդդէմ այսմ՝ ամենայն մեղք ի սկիզբն հեշտ եւ քաղցր թուի. բայց յետոյ դառն է քան զլեղի. որպէս ասէ առակն. (մեղր կաթի ի շրթանց կնոջ պոռնիկի. եւ յետոյ դառն է քան ի լեղի:) Եւ տեսիլն ասէ. (քաղցր էր ի բերանս իմ որպէս ի մարմինս. եւ դառնացաւ յորովայնի իմում.) այսինքն ի հոգիս: Ապա ասէ: (Չի թէ առանց խրատու էք՝ ապա խորթք էք:) Առ մեզ հարազատ որդին այն է՝ որ ի հօրէն եւ ի մօրէն լինի. եւ խորթ ասեմք՝ որ ի միոյ կողմանէն լինի ի մօրէն, եւ ոչ ի հօրէն: Այսպէս սերտ եւ հարազատ որդիք նոքա են՝ որք հաւատովն որդիք նոքա են՝ որք հաւատովն եւ աւագանան որդիք Աստուծոյ կոչեցան: Իսկ որք ոչ ունին զճշմարիտ հաւատն, եւ չեն մկրտեալք, խորթք կոչին Աստուծոյ եւ յերկրէ միայն: Եւ զայս Տերն որոշեաց. (դուք ոչ էք յաշխարհէ աստի. այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ.) սոքա հարազատքն են: Եւ դարձեալ ասեր. (աշխարհս զիւրն սիրէ արդօք.) սոքա խորթքն են: Եւ չորիւք որոշին որդին եւ խորթն: Նախզի՝ ի հօրէն են: Երկրորդ՝ զի որդի կոչին: Երրորդ՝ սիրէ եւ խրատէ: Չորրորդ՝ բաժանորդս առնէ: Արդ՝ առաջինն այն է՝ որ նախ քան զլինիլն աշխարհի ի նախածանօթութիւր ընտրեաց զբարիսն. եւ խոտեաց զչարսն: Երկրորդ՝ որ աւագանան շնորհօք որդիք կոչեցան: Երրորդ՝ որ սիրէ եւ խրատէ նեղութեամբ մարմնոյ: Չորրորդ՝ որ ժառանգորդ առնէ անմահ կենացն: Եւ տես՝ որոց որպէս աստ զնեղութիւնն բաժանէ

զանազան կերպիւ որպէս ինքն կամի. նոյնպէս անդ զփառս եւ զպսակն բաժանէ որպէս ինքն գիտէ: Եւ զայս կարգի ի Զոմայեցոցն ուսուցանէ առաքեալն ասելով: (Չորս յառաջայոյն հրաւիրեաց.) այս առաջինն է: (Չնոսին եւ կոչեաց.) այս երկրորդն է: (Եւ զորս կոչեաց եւ արդարացոյց.) այս երրորդն է: (Եւ փառաւոր արար.) այս չորրորդ է: Եւ դարձեալ ասէ: (Յուշլիցին ձեզ կապեալքն եւ չարչարեալքն. որպէս թէ դուք ընդ նոսա իցէք.) այսինքն թէ, զկապեալսն յիշեցէք եւ միտքարեցէք զնոսա ի չարչարանս: Այլեւ յիշումն նոցա՝ մեզ լինի շահ եւ օգուտ: Յորժամ տօնիւք եւ պատարագօք կամ այլ ինչ արդիւնս կատարեմք, նոցա չարչարանացն եւ փառացն հաղորդ լինիմք. ըստ այնմ, (եթէ չարչարանացն կցորդիմք, եւ փառացն հաղորդ լնելոց եմք:) Որոց արժանի արասցէ զմեզ Քրիստոս ողորմութեամբ իւով. եւ նմա փառքյաւիտեանս ամեն:

Յայլմէ քարոզ առհասարակ ամենայն Մարտիրոսաց սրբոց ի Բանն որ ասէ: (Ողջոյն տուն ձեզ ամենայն սուրբք. մանաւանդ որք ի տանէ կոյսերն:) Փիլիպ. 4. 23: (Գլուխ. ՃԵԴ)

Արդ՝ տօն ամենայն սրբոցն՝ վասն երեք պատճառի եղև կացուցեալ: Նախզի՝ ի հռոմ յաւուրս կռապաշտութեանն կայր տաճար մի՝ ուր յամենայն ազգաց կռոց եգեալ կայր, որք ամենեքեան անդ զսիէին: Իսկ յորժամ դարձան առ Քրիստոս՝ ի տեղի ամենայն կռոցն կատարեն տօն ամենայն սրբոց: Երկրորդ՝ զի սուրբք բազում են. եւ աւուրք սակաւ. ոչ կարեն առանձին իւրաքանչիւրոցն տօնել. վասն այն ամենեցուն ի մի օր տօնեն: Երրորդ՝ ծուլութիւն մարդակն բազում է: Չի կամ ի պահս կամ ի տօնս, եւ կամ յայլ պատիւս որ պարտ է, պակասեալս գտանին. վասն այն ի մի օր տօնեն՝ զի պակասութիւնն այն կատարի: Արդ՝ եօթն են դասք սրբոցքն՝ որք ողջոյն տան մեզ. այսինքն, հրեշտակք. կուսանք. նահապետք եւ մարգարեք. առաքեալք. մարտիրոսք. վարդապետք. խոստովանօղք: Եւ զի սոքա ամենեցուն հրացան սիրովն Աստուծոյ: Ոմանք որպէս հրացեալ քարինք: Ոմանք որպէս մորենի վառեալ: Ոմանք որպէս գետք հրեղէնք: Ոմանք որպէս լեռնն հրեղէն: Ոմանք որպէս բանք հրեղէնք: Ոմանք որպէս աչք հրեղէնք: Արդ՝ հրացեալ քարինք են հրեշտակք. յորոց ասէ Էզեկիել. (ի մէջ հրեղէն քարանց զնացեր անարատ:) Յրեշտաք ի քար օրինակին վասնն երեք պատճառի: Նախզի՝ կարծր եւ պինտ մնացին ընդդէ սատանայի. եւ ոչ գլորեցան ընդ նոսա: Երկրորդ՝ զի են իբրեւ քարինք պատուականք լի ամենայն բնական պարգեւօքն Աստուծոյ: Երրորդ՝ զի նոքա են քարինք կենդանիք հաստատելով զհիմն վերինն Երուսաղէմի: Արդ՝ զսոսա պարտ է մեզ պատուել վասն բազում պատճառի: Նախզի՝ պահապանք են մեր. որպէս ասէ սաղմոսն. (հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո ի պահել զքեզ ճանապարհս քո:) Երկրորդ՝ զի նոքա զարթուցանեն զննչեցեալսն ի մեղս. որպէս ասէ յերկրորդ թագաւորութեանց. (որ ննչեր Եղիա՝ մերձեցաւ հրեշտակն եւ ասէ արի:) Եւ ի գործս առաքելոցն ասէ թէ՝ (յոր ժամ ննչեր Պետրոս ի մէջ զինւորացն՝ հրեշտակն խեթեաց զկող նորա եւ ասէ արի:) Երրորդ՝ զաղօթս մեր մատուցանեն Աստուծոյ. որպէս ասաց Ռաֆայել հրեշտակն ցՏուբիթ. (յորժամ աղօթէիր, եւ մատուցանէի զաղօթս քո առաջի Աստուծոյ. նա եւ զմարմինս ի վերայ երկրի զորս թաղէիր:) Որպէս ասէ

Ղուկաս. (Եւ տարեալ հրեշտակաց գՂազար ի գոգն Աբրահամու:) Չորրորդ՝ զի զհոգիս մարդկան տանին առաջի Աստուծոյ: *Երկրորդ՝ զի եղեն որպէս հրեղէն մորենի. Եւ սոքա են սուրբ կուսանք. ի մէջ որոց սուրբ Աստուածածինն է գլուխ. Եւ այս նշանակեցաւ յելսն: Երկրորդ՝ զի մորենին վառեալ էր Եւ ոչ այրիւր. նոյնպէս Բանն Աստուած մարմնացաւ ի կուսէն. Եւ անապական մնաց պատիւ կուսութեանն. Եւ ա յլ ամենայն կուսանքն վառեալ փորձութեամբ մարմնոյ Եւ աշխարհիս՝ ոչ կորուսին գտելողութիւնս իւրեանց. վասն այն պատուական է կուսութիւնն առաջի Աստուծոյ վասն բազում պատճառաց: Նախ զի՝ կեանք կուսանացն նման են երկնային կենացն. որպէս ասէ Մատթեոս. (նման է արքայութիւնն երկնից տասն կուսանացն.) ուր ասէ մեկնիչն թէ՝ կուսութիւնն ունի զերկնային կեանս ի յերկրի. (ուր ոչ արք կանայս առնեն. Եւ ոչ կանայք արանց լինին.) Եւ որպէս ի յերկնս է անապականութիւնն. նոյնպէս Եւ կուսանք պահեն անապական զհոգիս. Եւ զմարմինս իւրեանց առնեն անուշահոտ որպէս շուշան Եւ պալասան. որպէս ասէ յերգսն. (ով են սոքա որք ելանեն որպէս զստեղն խնկոյ ծխեալ:) Երկրորդ՝ զի կուսանքն քաղցրագոյն սիրեցեալ լինին ի Զրիստոսէ. որպէս յայտ է ի Յօհաննէ. զի անկաւ զլանջօքն Յիսուսի. Եւ բազում ծածկեալ խորհուրդք յԱստուծոյ յայտնեցան նմա: Վասն այն մեծագոյն հեշտութիւն գտանեն կուսանքն աշխարհիս: Չի ասէ սուրբն Բեռնարտոս. զի որպէս ոչ կարեն լինիլ հուրն Եւ ջուրն ի միասին. նոյնպէս Եւ ոչ հոգեւոր Եւ մարմնաւոր հեշտութիւնքն: Չի զոր սնուցանէ զանազան խորտիկն, Եւ հեշտացուցանէ զանազան գոյն հանդերձիցն Եւ փափութիւն անկողնոցն, զանց առնէ զսոքօք երկնաւոր հանգիստն: Չի ասէ Տէրն. (Եկայք առիս ամենայն աշխատեալք. Եւ ես հանգուցից զձեզ:) Եւ վասն հեշտասիրացն ասէ. (վայ ձեզ՝ զի ընկալայք զմիխիթարութիւնն ձեր:) Երրորդ՝ զի կուսանքն հետեւին Զրիստոսի. որպէս ասէ Յօհաննէս ի տեսիլն. (Երթան զհետ գառնին ուր Եւ երթայցէ. Եւ երգէին երգ նոր առաջի աթոռոյն Աստուծոյ. Եւ ոչ ոք կարէր երգել զերգն զայն բայց միայն նոքա:) Վասն զի կուսանքն անառիկ պահեն զտկարագոյն բերդն ի զօրաւորագոյն թշնամոյն. վասն այնորիկ ի վեր քան զայլսն պսակին. որպէս ասէ առաքեալն. (ոչ պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին մարտիցի:) *Երրորդ՝ զի եղեն հրեղէն գետք. Եւ սոքա են նախահարք Եւ մարգարէք: Վասն սոցա ասէ Դանիէլ. (գետ հրեղէն Եւ յորդ ելանէր ի բերանոյ նոցա.) գետս այս է իմաստութիւնն Աստուծոյ. որ լուսաւորեաց զսոսա ճանաչել զմարմանալ որդւոյն Աստուծոյ. որպէս ասէ Եսայի. (ահա կոյս յղասցի. Եւ կոչեսցի Յիսուս.) նաեւ զտանջանս դժոխոց. որպէս ասէ Դաւիթ. (դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս:) Եւ դարձեալ ասէ. (զնացք գետոյ ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ:) Վասն այսորիկ իմաստութիւնն Աստուծոյ բաժանեաց զնոսա յաշխարհէս. Եւ միացոյց ընդ Աստուած. որպէս ասէ իմաստութեան գիրքն: (Իմաստութիւնս այս՝ ի հոգի սուրբ փոխէ զնոսա. Եւ բարեկամս Աստուծոյ Եւ մարգարէս կացուցանէ զնոսա:) Չորրորդ՝ եղեն որպէս լեամն հրեղէն. սոքա են սուրբ առաքեալքն. զի որպէս լեամն բարձրացան ի յերկրէս. Եւ հրացան սիրովն աստուածային. զի որպէս Աստուած էջ ի լեամն Սինայ հրով՝ Եւ ետ զօրէնս. նոյնպէս Եւ էջ ի վերնատունն հրեղէն լեզուով. Եւ հաստատեաց զնոսա օրինօք. այսինքն, զհաւատ անետարանին: *Եւ զի վասն բազում պատճառի պարտիմք պատուեալ զնոսա: Նախզի՝ նոքա են որսորդ մեր.

որպէս ասաց Քրիստոս Պետրոսի. (յայսմ հետէ զմարդիկ որսացես ի կեանս:) Չի թէպէտ ևոքա ևնչեցին, սակայն գործիք ևոցա հանապազ հանեն զմեզ ի դառն ծովէ աշխարհիս: Երկրորդ՝ զի եմք աւանդեալ պահպանութեան ևոցին. որպէս ասէ Տէրն. (առցեն զայգին ի չարացն. եւ տացեն այլոց մշակաց.) այսինքն, առաքեալքն. զի ևոքա են յատօղք այգւոյս այս. այսինքն, հոգւոց մարդկան. որք արմատախիլ արարին զտունկն բարեպաշտութեան ի հոգիս մարդկան: Երրորդ՝ զի եղեն սուրհանդակ ընթանալով յարեւելից միջեւ ի մուտս արեւու վասն փրկութեան մարդկան. որպէս ասէ Պօղոս. (յերուսաղէմէ մինչեւ ի լիւրիկիա՝ եւ մինչեւ ի սպանիա՝ լցի զաւետարանն:) Վասն այսորիկ ասէ Եսայի. (ո՞վ են սոքա որք իբրեւ զամպս թռուցեալք են:) Հինգերորդ՝ եղեն որպէս կառք հրեղէնք եւ երիվարք հրեղէնք. սոքա են մարտիրոսքն: Արդ՝ երեք իրս ասէ. այսինքն, կառք հրեղէնք. երիվարք հրեղէնք. եւ շարժմամբ վերանալ յերկինս. որպէս ասէ ի չորրորդ թագաւորութիւնս: Երկրորդ՝ վասն Եղիայի՝ ևախ ասէ կառք հրեղէնք. որ ցուցանէ զայն՝ որ զհրեղէն օրէն յինքեանս ունէին. այսինքն, զսերն Աստուծոյ եւ զընկերին: Երկրորդ՝ զի զօրութեամբ յաղթող ձիք էին. զի զամենայն պատերազմուես սատանայի վանեցին եւ թեթեւ անցին ընդ աշխարհս: Երրորդ՝ զի շարժմամբ վերացան. այսինքն, բազում չարչարանօք. զի ասէ առաքեալն. (չարչարանօք. ևեղեալք, զորս ոչ արժէ աշխարհս. յանապատի մոլորեալք.) եւ իբրեւ զԵսայի սղոցեցան. փորձեցան. սպանմամբ սրոյ մեռան. եւ Պօղոս դարձեալ ասէ: (Վիշտս ի գետոց. վիշտս յաւազակաց. վիշտս ի սուտ եղբարց:) Վասն այսորիկ ասէ Քրիստոս: (Երանի է ձեզ՝ յորժամ ևախատիցեն զձեզ. զի վարձք ձեր բազումք են յերկինս:) Արդ՝ վարձք եւ փառք սրբոցն՝ բազում են վասն բազում պատճառի: Նախզի՝ կատարեալ սիրեցին զՔրիստոս. որպէս ասէ աւետարանն. (մեծ եւս քան զայս սեր ոչ ոք ունի՝ եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամին:) Վասն այսորիկ ասէ Քրիստոս. (որ կորուսանէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա:) Երկրորդ՝ զի ունէին երկիր զմեծ յԱստուծոյ, քան ի դատաւորաց աշխարհի. ըստ այնմ, (մի երկնչիք յայնցանէ՝ որք սպանանեն զմարմինն:) Վասն այն եր օգնական ևոցա յամենայն վիշտս. որպէս ասէ սաղմոսն. (երկիր զառք Տեառն յուսացան ի Տէր. օգնական եւ փրկիչ էր ևոցա:) Երրորդ՝ զի էին անօթք Աստուծոյ. որպէս ասաց Քրիստոս. (ամօթ ընտրութեան է ինձ՝ կրել զանուն իմ առաջի թագաւորաց:) Չի ի մեջ մեծամեծ վշտաց ոչ խորտակեցան. այսինքն, ոչ թուլացան. այլ քաջապէս խոստովանէին զՔրիստոս. եւ բաժանէին զանդամս ևոցա ի միմեանց՝ եւ միտք ևոցա միանայր ի սերն Քրիստոսի: Չի ասէին. յուսանմք լաւագոյն առնուլ. որպէս ասացին մակաբայեցիքն. եւ Պօղոս. (յորժամ յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք:) Վեցերորդ՝ որպէս բանք հրեղէնք են այսոքիկ սուրբ վարդապետք. որք լուսաւորեցին զաշխարհս բանիւ քարոզութեան իւրեանց՝ եւ զմոլորութիւն բարձին յաշխարհէս. եւ հանապազ բառնան: Արդ՝ գիտելի է վասն վարդապետաց. զի մեծագոյն պսակի արդանաւորեացան. որպէս ասէ Փիլիպպեցւոց. (ուրախութիւն իմ եւ պսակ:) Խօսի զբանս զայս ընդ հաւատացեալքն զորս ծնաւ բանիւ վարդապետութեանն իւրոյ. եւ խօսի զբանս զայս՝ ոչ զեական պսակէն զոր ունին վարդապետքն վասն գերագոյն վարդապետութեանն: Եւ այս վասն բազում պատճառի: Նախզի՝ եղեն աչք եկեղեցւոյ հեռանալով յերկրաւոր փոշոյ. զի սակաւ փոշին ընկեցեալ յաչսն՝

կուրացուցանէ. որպէս ասէ Սիրաք. (կաշառ կուրացուցանէ զաչս իմաստնոց:) Երկրորդ՝ զի սերմանեցին զԲանն Աստուծոյ ի հոգիս արանց բազմաց. որպէս ասէ կորնթացոց. (մէք ի ձեզ զհոգեւորն սերմանեցաք. մեծ ի՞նչ է թէ զմարմնաւորն հնձիցեմք:) Վասն այսորիկ ասէ Զրիստոս. (սոքա եղիցին ձեր դտաւորք.) այսինքն, թէ ոչ առնիցէք ըստ քարոզութեանս ևոցա: Երրորդ՝ զի ազատ սրտիւ քարոզեցին զաւետարանն. այսինքն, զի ոչ էին անկեալ ընդ ծառայութեամբ ընչից աշխարհիս: Չի որք ունի ինչս՝ ոչ ունին ազատ կամս ի քարոզելն: Չի ասէ սենեքա. մեր էաք՝ եթէ մերքն ոչ էին. այլ զի կամ մերքն, ոչ եմք մեր. այլ մերոցն: Վասն այն ասէ Մատթէոս. (ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի:) Վասն զի այնքիկ որք կամին քարոզել զԲանն՝ Աստուծոյ՝ պարտին թափուր լինիլ յաշխարհէ ընչիցն եւ լի հոգւովն սրբով: Չի կարտարի ի վերայ ևոցա բանն Դուկասու. (հոգի Տեառն ի վերայ իմ. աւետարանել աղքատաց առաքեաց զիս:) Վասն այնոսիկ վարդապետք որք արժանաւորապէս կատարեցին գործս իւրեանց՝ մեծ վարձուց արժանաւորք եղեն յարքայութեանն: Եթէն երրորդ՝ եղեն որպէս աչք հրեղէնք՝ որք են խոստովանողքն. որք են մեծապէս փառօք պսակեալ յերկինս վասն բազում պատճառի: Նախզի՝ հանապազ զաչս մտացն ունին առ Աստուած. որպէս ասէ Դաւիթ. (առ քեզ Տեր համբարձի զաչս իմ) եւ յայլ ուր ասէ. (առ քեզ Տեր Տեր են աչք իմ. ի քեզ յուսաց:) Վասն այն ասէ տեսիլն վասն ևոցա թէ՛ (աչք ևոցա իբրեւ զբոց հրոյ:) Երկրորդ՝ զի ցուցին զինքեանս ի կեանս այս պանտուխոք. ասելով զբանն Դաւթի. (պանտուխտ եւ անցաւոր եմ ես որպէս ամենայն հարքն իմ:) Վասն որոյ հատին ի սրտից իւրեանց նաեւ յայլոց զհեշտութիւն մեծութեան աշխարհիս, ասելով ըստ սաղմոսին. (մեծութիւն թէ առուով զայցէ՛ մի յօժարեցին սիրոք մեր:) Չի ասէ առաքեալն Յակօբոս. (սիրոք մեծութեան աշխարհիս՝ թշնամի առնեն զանձինս Աստուծոյ:) Երրորդ՝ զի կատարեալ ոչ ուրախացան յաշխարհի. այլ լային հանապազ զինքեանս եւ զայլս. զինքեանս՝ որպէս ասէ Դաւիթ. (լուացի զամենայն զիշեր զմահիճս իմ:) Նաեւ զայլս՝ զի ընթերցեալ լինի զսուրբն ամրոսէ թէ՛ յորժամ լսեր զխոստովանողն, շարժուր յարտասուս: Արդ՝ զիտելի է եղբարք՝ թէ մէք կամիմք հետելիլ եւ նմանիլ սրբոցն, պարտ է մեզ բորբոքիլ բիրով որպէս ևոքա. եւ լինիլ պատրաստ՝ զի ոչ շիջանի ի մեզ սերն Աստուծոյ. որպէս կրակն՝ որ եօթն կերպիւ շիջանի: Նախ շիջանի կրակն՝ յորժամ ցրուեալ լինի. նոյնպէս բարկացեալն յորժամ ցրուէ բանս բարկութեամբ, սերն Աստուծոյ եւ ընկերին ի նմա շիջեալ լինի: Երկրորդ՝ շրջանի կրակն՝ յորժամ բացեալ լինի. նոյնպէս փառասերքն որ զամենայն բարիս առնեն ի ցոյցս մարդկան. վասն ևոցա ասէ Զրիստոս. (ամեն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք ևոցա:) Երրորդ՝ շրջանի կրակն քամով. որ նշանակէ զմեղսն նախանձու եւ ատելութեան. որ հանապազ փչեն ասելով չար ընկերին. եւ այսպէս շիջուցանեն յինքեանց յինքեանց եւ յայլոց զսերն Աստուծոյ. վասն ևոցա ասէ Սիրաք. (չար է աչք նախանձոտին:) Չորրորդ՝ շիջանի կրակն ջրով. որ ցուցանէ զմեղս պոռնկութեանն. զոր թէ մտանէ խորհուրդս այս ի սիրտ մարդոյ. ոչ մնայ անդ սերն Աստուծոյ. որպէս ասէ Անսերմոս. որով չափով հեղուս ջուր ի լապտերն՝ նոյն չափով հեղեալ լինի ձեթն. եւ թէ բոլորովին լնուս, բոլորն թափի. վասն այն ասէ Պողոս. (պոռնկութիւն եւ ամենայն պղծութիւն մի անուանեցի ի միջի ձերում:) Զինգերորդ՝ յորժամ հող արկանեն ի վերայ՝ շիջանի կրակն. ցուցանէ

զագահութիւնն. զի ասէ Աստուած. (մի ունիցիս Աստուածս օտարս:) Իսկ ագահք որք առնեն զընդդէմն՝ յոյժ ծառայ են ընչիցն. վասն որոյ կռապաշտ կոչին. ըստ առաքելոցն որ ասէ. (ագահութիւն որ է կռապաշտութիւն:) Վեցերորդ՝ շիջանի կրակն յորժամ խեղդեալ լինի. ցուցանէ գորկրամոն. վասն որոյ ասէ Դաւիթ. (կերին եւ յագացան.) եւ յետոյ ասէ. (մինչդեռ կերակուրք ի բերանս իւրեանց էին, բարկութիւն Աստուծոյ էջ ի վերայ նոցա:) Եւ ըստ առաքելոյն՝ (որոց որովայնք իւրեանց Աստուածք են:) Եօթներորդ՝ շիջանի կրակն՝ յորժամ ոչ ունի այրելիք. ցուցանէ զծուլութիւնն՝ որ ոչ գործէ զգործս Աստուծոյ. վասն որոյ ասէ Նեղոս. անիծեալ որ գործեսցէ զգործս Տեառն հեղգութեամբ. եւ որք ոչ առնեն զգործս Աստուծոյ՝ շիջեալ է ի նոսա սերն Աստուծոյ: Վասն այս ասէ Դուկաս. (արթուն կացեք եւ յամենայն ժամ աղօթս արարեք. զի արժանի լիցիք յայնմանէ գերծանիլ:) Արդ՝ վասն գրելոցս ասէ Պօղոս. սիրով արմատացեալք եւ հաստատեալք. զի կարօղ լինիջիք հասանիլ ընդ ամենայն սուրբս. գիտել զինչ է երկայնութիւն. լայնութիւն. բարձրութիւն. եւ խորութիւն Աստուծոյ: Երկնութիւն յաւիտենականութեանն Աստուծոյ. լայնութիւն սիրոյն Աստուծոյ. բարձրութիւն կարողութեանն Աստուծոյ. խորութիւն իմաստութեանն Աստուծոյ: Որով լուսաւորեաց զաշխարհս փառաւորաց՝ եւ զմեզ եւս հասուցէ ի փառս արքայութեանն:

Նորին քարոզիւրէշտակապետաց. ի Բանն որ ասեր: (Աթոռք անկանէին. եւ հին աւուրցն նստաւ ի վերայ:) Դանիէսլի. 7. 9: (Գլուխ. ճԽԵ)

Ի լոյս անմատոյց եւ ի մեզ աներեւոյթ ասի բնակել գերաբնապէս գերաբունն իսկութիւն. ըստ որում գերագանց եութեամբ՝ գերագոյն է արտափայլեալ՝ անհաս անիմանալի վերնագոյն եւ հրաբուն զօրաց իմացութեանցն խմբից. եւ անմուտ մտածութեանց հողեղէն եւ երկրորդ սեռից բանեղէն գոյից. ըստ որում, (եղ զխաւարն ծածկոյթ իւր. եւ ամպ եւ մեզզ շուրջ զնովաւ են:) Եւ այն յիրաւի վասն կրկին պատճառի: Նախզի՝ եղականք ամենայն իմանալիք եւ զգալիք՝ չափաւորեալք գոյացան: Իսկ անեղ եութիւնն՝ անչափութեամբ է տարակացեալ. եւ չափաւորան անչափն ոչ չափի: Երկրորդ՝ զի իմացումն մտածութեանց՝ հասարակի ընդ գոյութիւն եութեան. եւ ուր եզերի բնութիւն՝ անդ եւ մտածութիւն. յայտ ուրեմն է, զի որ ի վեր է քան զեութիւն՝ ի վեր է քան զգիտութիւն: Այլ զի ինսամարկեալ բարերարութեամբ յառաջ ճանապարհաւ յամենապատճառն հաղորդութիւն՝ ըստ համեմատութեան կարի լուսափայլ ծագման աստուածատեսակն ճառագայթից՝ ոչ ամենեւին զրկիլ յաստուածանոյն պարգեւաց բարեաց. եւ ոչ յանդգնութեամբ յարձակիլ կերլով զխաւարումն անկեալ արուսեկին. այլ ի լուծ կշռոց արդարապէս յարկանալ: Այսմ լծոյ ղեկավարին ամենայն երկնայինքն դասք. ըստ որում նշանակէ սերովբէին գերեսս եւ զոտս ծածկելն, եւ միջին թելովք թռչիլն: Այսմ լծոյ եւ ամենայն աստուածաբանք՝ մարգարէք եւ առաքելք եւ հարք սուրբք՝ համահետեւին եւ խրատեն զմեզ, ոչ յանչափն ձեռնարկել եւ համարձակիլ. եւ ոչ ի չափաւորէն ծուլանալ եւ խոտորիլ. այլ ողջախոհ մտօք՝ զանհասն լռութեամբ պատուել. եւ զղծուարահասն՝ երկիւղիւ ընդունիլ. եւ ի դիրահասն՝ ոչ անպարշտիլ ոտնհար եւ տաղտուկ գոլով: Վասն որոյ մի ի բազմաց աստուածաբանից տեսութեանց՝ բանս է առաջի արկեալ որ ասէ:

(Աթոռք ականեին. եւ հին աւուրցն նստաւ ի վերայ:) Յին աւուրցն՝ նշանակէ զծերն եւ զբազմաժամանակեան:

Արդ՝ ծերն չորս յատկութիւն ունի: Նախ զի՝ բազմաժամանակեայ է: Երկրորդ՝ զի հնացեալ է: Երրորդ՝ զի աւուրքն պակասեալ են: Չորրորդ՝ զի փոխոխեալ է: Արդ՝ երեքն ոչ յարմարին Աստուծոյ ասել. զի ոչ հնանայ եւ ոչ ծերանայ. եւ ամենեքեան ոչ պակասին. ըստ մարգարէին. (դուք նոյն ես՝ եւ ամք քո ոչ պակասին:) Եւ ոչ փոփոխի կամ այլայլի. (ըստ որում չիք փոփոխումն կամ շրջելոյ ստուեր:) Այլ զի բազմաժամանակեայ է եւ յաւիտենից: Դարձեալ՝ հին աւուրց՝ վեցօրծեայ արարիչն: Գիտելի է՝ զի հին ասելով՝ գլաւիտենականն նշանակէ. եւ օր՝ զժամանակն: Այս է՝ զի կոչի յաւիտեան, եւ ժամանակ, եւ օր. ըստ այնմ, (յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու ես. եւ ամք քո ոչ անցանեն:) Եւ եկեաց օր Տեառն իբրեւ զգող: Եւ օր հատուցման Աստուծոյ մերոյ:) Եւ թէ՛ (Յիսուս Զրիստոս երեկ եւ այսօր որ է ժամանակ. նոյն եւ յաւիտեան:) Եւ այս վասն երեք պատճառի: Նախզի՝ Է եւ գոյ Աստուած յամենայն յաւիտեանս, եւ յամենայն ժամանակ, եւ այամենայն օր: Երկրորդ՝ զի նախ է քան զամենայն յաւիտեան. եւ քան զժամանակ. եւ քան զամենայն օր:

Երրորդ՝ զի պատճառ է յաւիտենից եւ ժամանակաց եւ աւուրց: Որպէս լոյս իմաստութիւն եւ կեանք կոչի. զի պատճառ է սոցա: Դարձեալ գիտելի է՝ զի հին աւուրց եւ ծեր ետես Դանիել. հեր գլխոյ նոցա սպիտակ իբրեւ զծիւն. իսկ Աբրահամ՝ մանուկ. ըստ որում երեք արքն՝ երեք մանկունք էին ասէ Փիլոն: Որ նշանակէ հին աւուրցն զծերն. եւ մանուկն զան ծերանալին: Եւ ա յսպէս մեկնեն:

Նախ նշանակէ ծերն՝ զի սկիզբն է ամենայնի. եւ մանուկն զի անփոփոխ եւ առանց այլայլութեան է: Երկրորդ՝ ծերն նշանակէ զանսկիզբն գոլն. եւ մանուկն զանվախճան. զնոյն միմեամբք, եւ ոչ այլ եւ այլ. զի որ անսկիզբն է, եւ անվախճան է. եւ նոյն անվախճանն անսկիզբն. թեպէտ առ մեզ տեսանի անսկիզբն յառաջին կողմն. եւ անվախճանն ի վերջին. այլ ի նա ոչ է առաջին եւ վերջին. զի պարզ եւ միեղէն է: Երրորդ՝ այսպէս մեկնեն եթէ՛ հին աւուրցն՝ զնախնի ժամանակս նշանակէ. եւ մանուկն զնախնի թիւս: Չի միակն սկիզբն է ամենայն թուոց. եւ որ մերձ է միակին սկզբնապետագոյն է քան զհեռաւորսն: Եւ զի ժամանակն ընդ թուոյն է շարագուգեալ: Եւ նշանակէ ծերն զժամանակաւ նախն. եւ մանուկն զթուոցն: Ապա յայտ է՝ զի հին աւուրցն՝ նշանակէ նախ քան զժամանակս եւ գլաւիտեան եւ բարձրագոյն եւ արարիչ ժամանակի եւ յաւիտենի, եւ պարունակող յաւիտենի. որպէս յաւտտեանն ժամանակի. ըստ որում ասէ. (արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից.) այսինքն, պարունակութիւն ամենայն յաւիտենից: Իսկ որ ասէ նստաւ՝ դիտելի է. զի նստիլն մարմնոյ է. զի է պարագրելի տեղեալ եւ սահմանաւ եւ կալզմամբ: Եւ ամենայն մարմին ունի զայս յատկութիւն. զի պարգրեալ է տեղեալ. եւ սահմանեալ է քանակաւ. եւ կալեալ է յորակութեանց: Եւ ամենայն անմարմին անպարագրելի է. զի ոչ ունի տեղի մարմնական. եւ ոչ քանակ. եւ ոչ որակ. յաղագս որոյ՝ ոչ պարունակի ամենայն անմարմին: Այլ տեսցուք եւ զզանազանութիւն անմարմնոցն. զի հոգի մարդոյ անպարագրելի է եւ անտեղի. սակայլ կալմամբ ի մարմինն եւ սահմանելի է: Իսկ հրեշտակաք ոչ են կալմամբ ի մարմնի. եւ ոչ պարգրին տեղեալ. այլ սահմանելիք են. զի եղականք են: Իսկ

Աստուած արտաքոյ սոցա ամենեւին անպարագրելի է. տեղեալ ոչ պարունակի. զի յամենայն ուրեք է եւ յոչ ուրեք. եւ ոչ սահմանի. զի անչափ է. եւ ոչ կալեալ լինի. զի անըմբռնելի եւ անհաս է մտաց: Ապա յայտ է՝ զի անպարագիր է բնութեամբ. եւ ոչ ասի նմա նստիլ մարմնապէս ի տեղոջ ուրեք. այլ նստելովն՝ այլ ինչ նշանակէ: Չի աստուածաբանութիւնն ի չորս տրամասի: Նախ՝ որ է եւ ասի. որպէս լոյս, բարի, կեանք եւ այլն: Երկրորդ՝ որ ոչ է եւ ոչ ասի. որպէս չար, ապականութիւն, եւ մեղք: Երրորդ՝ է եւ ոչ ասի, յորժամ ի բաց բառնամք. անսկիզբն եւ անվախճան՝ ոչ է, ոչ գոյ. եւ այլն: Չորրորդ՝ ոչ է եւ ասի. որպէս ննջել, զարթնուլ, նստիլ եւ կալ: Չի այսպիսիքն այլ ինչ նշանակեն առ Աստուած: Ննջելն՝ է անփոյթ առնել ի ինամոց եւ իբաց թողուլ. ըստ այնմ, (բացձր թողի զնոսա:) Իսկ զարթնուլն՝ է ի ինամել, ի խրատ, եւ ի վրեժ ինդրութիւն. որպէս հայցեր մարգարէն. (զարթիր ընդէ՞ր ննջես Տէր. արի եւ մի մերժեր զմեզ ի սպառն:) Իբր թէ մի անփոյթ առնէր. եւ մի մոռանար իսպառ. այլ արի ինամելով. փրկեա զմեզ. եւ վրեժխնդիր լեր թշնամեաց մերոց: Այսպէս եւ աստ նստիլն՝ այլ ինչ նշանակէ. այսինքն, զհանգիստ, եւ զփառս, եւ զպատիւ, այլեւ զանփոփոխն գոլ: Չի անփոփոխ եւ առանց այլայլութեան է բնութեանք, եւութեամբ, եւ մշտնջենաւորութեամբ. ըստ որում ասէ. (ես նոյն եմ եւ ոչ փոփոխիմ:) Նոյնպէս եւ կալն՝ զնոյնութիւն եւ զհաստատութիւն նշանակէ. ըստ այնմ, (Աստուած կայ եւ մնայ յաւիտեան:) Եւ դարձեալ՝ կալն զյօգնութիւն ժամանելն նշանակէ. որպէս սրբոյն Ստեփաննոսի. (տեսանեմ ասէ զերկինս բացել. եւ զորդի մարդոյ զի կայ ընդաջմէ Աստուծայ:) Իսկ աթոռոց անուամբ՝ նշանակէ հասարակէ եւ յատկապէս: Հասարակ՝ զի աթոռն զհանգիստ նշանակէ. եւ ամենայն երկնային եւութիւնք՝ առ հասարակ հանգիստ են կամաց աստուածութեանն. ըստ այնմ, (պաշտօնեայք եւ արարօք ըստ կամաց նորա.) զի անդադար են ի պաշտօն փառաբանութեան: Եւ արագաշարժ ի բարիս. անշարժ կամ դժուարշարժ ի չարիս. որպէս ասէ աստուածաբանն Գրիգոր: Չի յորմէ հետէ երանեցան նոցքա ի կէտ ստեղծմանն, անշարժ եւ հաստատուն կացին մնացին ի բարի ունակութեան անվախճան կենօք ըստ կամաց արարչին: Իսկ յատկապէս՝ զի մի է աթոռոցն դաս յիններորդ դասուցն. յերիս երրեակս որոշեալ կարգապետութիւն: Որոց առաջինն է՝ Աթոռքն, Զերովբէքն, Սերովբէքն: Եւ մի է կարգ եւ քահանայապետութիւն նոցա: Եւ երկրորդն՝ Տէրութիւնք, Չօրութիւնք, Իշխանութիւնք: Եւ միջին կարգ քահանայապետութեան նոցա: Երրորդն՝ Պետութիւնք, Հրեշտակապետք, եւ Հրեշտակք. եւ վերջին քահանայապետութիւնք նոցա: Եւ է առաջին քահանայապետութիւնն որք են աթոռք, քերովբէք, սերովբէք՝ համակարգ եւ համիմացք: Չի յաստուծայն լուսափայլութեանց տռնուն զգիտութիւն եւ զշնորհս անընդմիջաբար: Եւ տան ի միջին դասս որք են տերութիւնք, զօրութիւնք, եւ իշխանութիւնք: Եւ նոցա վերջնոցն որք են պետութիւնք, հրեշտակապետք, եւ հերշտակք: Եւ ի ձեռն հրեշտակաց ի մարդկիկ եւ յայլլ ամենայն արարածս, ի մարմին եւ յանմարմին, ի շնչաւոր եւ յանշունչ, ի կենդանիս եւ յանկենդանս, ըստ իւրաքանչիւր չափու եւ որպէսութեան բաշխի անախանմութիւնն Աստուծոյ եւ բարերարութիւնն: Եւ որպէս անդուստ այսպէս կարգաւ հեղանի շնորհ յամենայն արարածս. նոյնպէս եւ յարարածոց փառք, պատիւ, եւ աղօթք, եւ մաղթանք, այսպէս կարգաւ ելանեն ի վերջնոցն ի միջինսն, եւ ի նոցանէ

յառաջինս. եւ ապա առաջի Աստուծոյ: Եւ է զանազանութիւն երից երրակ դասուցն. յառաջին, ի միջին, եւ վերջին: Առաջինն միշտ ուսուցանէ. եւ վերջինն միշտ ուսանի. եւ միջինն ուսանի եւ ուսուցանէ. այսինքն, զի ուսանի յառաջնոյն. եւ ուսուցանէ վերջնոցն. դարձեալ առաջինն իշխէ. վերջինն իշխի. միջինն իշխի եւ իշխէ: Նմանապէս մաքրեալն, լուսաւորելն, եւ կատարելագործելն. եւ ամենայն կարգ այսպէս անփոփոխելի է ի նոսա: Իսկ թէ ո՞ր քան է թիւ դասուցն: Ասեմք թէ՛ ինն դաս յերիս երրեակս որոշեալ որպէս ասացաք: Իսկ թէ ոմանք գոլ ասեն տասն դաս՝ եւ զմինն անկեալ՝ այսմ կրկին է իմացումն: Նախ թէ նկեալքն ի նոցանէ են ի չափ միոյ դասի: Երկրորդ՝ թէ մինն ի տասն դասուց անկաւ. եւ մնաց ինն: Այլ առաջին կարծիքն հասարակ է եւ ճշմարիտ: Նախ՝ ըստ սրբոյն Դիոնիսեայ. որ ինն ասէ գոլ զդասս կարգապետութեանց նոցա: Երկրորդ՝ զի տասն երրորդ է մարդս կարգեալ ի թիւ նոցա ըստ հարիւրեակ մոլորեալ ոչխարին, եւ կորուսեալ տասն գրամին. ապա թէ ոչ՝ լինէր մետասաներորդ: Դարձեալ՝ զի տասներորդ է աստուածապետութիւնն կատարումն ի վերայ նոցա: Նմանապէս եւ յեկեղեցի՝ իններորդ է աստիճան քահանայապետութեան. որ է եպիսկոպոսն. քահանայն. եւ սարկաւազն. դպիրն. կղերիկոսն. եւ դռնապանն. միայնակեացն. սուրբ ժողովուրդն. եւ երախայն անմկրտել յորաց կարգի են եւ ապաշխարողքն որք արտաքոյ են դրանն: Իսկ կաթողիկոսն տասներորդ է ի վերայ սորա: Այս ըստ սրբոյն Դիոնիսեայ: Իսկ ըստ այլ վարդապետք՝ իբր ի ներքուստ ի վեր՝ է առաջին դռնաբացողն. ընթերցողն. եւ երդմնացուցիչն. այս Գ կարգ: Ջահընկալն. կիսասարկաւազն որ է դպիրն. եւ սարկաւազն. որ է վեցերորդն: Քահանայն. եպիսկոպոսն. եւ կաթողիկոսն. որ է ինն դաս ընդ երկնայնոց քահանայապետութեանց: Իսկ թէ վասն է՞ր կոչին աթոռք. զոր ասացեալ է յայլ ուրեք ընդ արձակապէս. եւ սակաւ ինչ ասասցուք աստ: Նախզի՛ աթոռն բարձր է եւ ուղիղ եւ հաստատուն: Այսպէս եւ նոքա գերամբարձեալք են յամենայն երկրաւոր նւաստութեանց՝ եւ բարձրացեալ ուղիղ եւ անխորտոր իմացմամբ առ Աստուած: Եւ անշարժելի հաստատութեամբ են միտեալ: Եւ աստուածակիրք եւ հուպք նստողին ի վերայ նոցա. որպէս ասէ Եսայի. (տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան եւ այլն:) Իսկ քերավբէն՝ յերբրայեցուց ի մերս թարգմանի բազմութիւն գիտութեան եւ հեղումն իմաստութեան: Որ նախ նշանանկէ զբազում գիտութիւնս՝ որ առատապէս հեղանի ի նոսա յաստուածայնոցն իմաստից: Եւ ապա զի աննախանձ եւ առաահեղմամբ հաղորդեն զերկրորդս իւրեանց աստուածային լուսափայլուեցն. որպէս երկատեսակ հայելի՛ առաեալ յառաջնոցն, անցուցանեն յերկրորդսն: Իսկ սերովբէն դարձեալ ջեռացիչ ասի կամ կիզիչ, որ նշանակի ի յատկութիւնս հրոյ: Նախ յինքեանս վերընթաց մշտաշարժ եւ ջերմ գոլով յաստուածային սերն: Եւ ապա զայլս սրի ներքոյ՝ մաքրեն լուսաւորեն եւ ի սերն Աստուած միաւորեալ կատարելագործեն: Այս է առաջին դաս քահանայապետութեան նոցա: Իսկ աթոռն՝ ուղղութեան ի դէմս հոր. ըստ օրում, (յիրաւունս եւ յարդարութիւն ուղղեալ է աթոռ նորա:) Եւ քերովբէն ի դէմս որդւոյ. զի (նա է իմաստութիւն եւ գիտութիւն հոր ըստ առաքելոյն:) Եւ սերովբէն որ է ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. զի նա է հուր սիրոյ զոր էարկ Տէր մեր յերկիր: Իսկ ի ներքինս եկեղեցի՛ զդէմս աթոռոցն ունի եպիսկոպոսն. եւ զքերովբէիցն քահանայն. եւ զսերովբէիցն սարկաւազն: Ի յորդուց տիպ՝ վեց

թելեան սերովբէն որ է քոնցն՝ դնի ի ձեռս սարկաւագին: Իսկ տերութիւնք կոչին: Նախզի՝ ամենայն որ Աստուծոյ է ծառայ՝ Տէր է եւ ազատ: Երկրորդ՝ զի տիրեն այլոց հրեշտակաց. եւ ազատ են ի բռնութենէ: Երրորդ՝ զի Տէր են եւ ազատ. եւ ոչ ծառայք մեղաց. զի (ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց.) զի (ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց) որպէս սաղայել: Իսկ զորութիւնք: Նախզի՝ արիապէս են ի կատարումս ներգործութեանց: Երկրորդ՝ եւ զօրաւորք են ի յնդունիլ զպարգեւսն: Երրորդ՝ զի զօրութիւնք են ներքնոցն եւ զօրեղ զօրացուցիչք: Իսկ իշխանութիւնք. այսինքն կարգաւորութիւնք: Նախզի՝ իշխանութիւն կարգաւորէ զամենայն որ ի ներքոյս իւրեանց: Երկրորդ՝ զի իշխանք են՝ ոչ ի վատթարն կոյս հպին, այլ ամենայն իշխեն: Երրորդ՝ զի իշխանութեամբ եւ առանց արգելման զաստուածայիս կրեն յինքեանս: Գիտելի է՝ զի Տէրութիւնն ակնարկէ առ հայր. եւ զօրութիւնն առ որդի. եւ իշխանութիւնն առ իշխանակից սուրբ հոգին: Դարձեալ՝ առաջինքն կարգաւորեն զգործս հրեշտակաց եւ Տէրութեանց մարդկան: Երկրորդքն՝ զօրացուցանեն ի գործ սքենչելեաց եւ հոգեւոր պատերազմաց: Երրորդքն՝ յետս ընկրկեն զիշխանութիւնս դիւաց եւ չարաց: Այս է միջին դասուց անուանակոչութիւնք եւ գործք: Իսկ պետութիւնք կոչին: Նախզի՝ զաստուած անման պետութիւնս յինքեանս բերեն: Երկրորդ՝ պետք են եւ առաջնորդք այլոց հրեշտակաց. եւ զամենայն պետութիւնս ևոքա պատրաստեն ի կատարումս իւրեանց: Երրորդ՝ զի առ գերագոյն պատութիւնն Աստուած բոլորավիմբ են դարձեալք: Իսկ հրեշտակապետք կոչին: Նախ զի՝ համակարգ են պետութեանց եւ հերշտակաց. վասն զի մի է քահանայապետութիւն ևոցա: Երկրորդ՝ զերկոսին ծայրսն ի մի ունին անուամբ եւ գործով. ըստ այնմ որք կոչին պետք եւ հրեշտակք: Երրորդ՝ զի ընդ պետութեանցն՝ առ գերագոյն պետութիւնն են դարձեալք. եւ պետաբար առաջնորդեն ներքնոցն: Եւ որպէս զհրեշտակս՝ առաջնորդին եւ ուսանին ի վերնոցն: Իսկ հրեշտակք կոչին: Նախզի՝ ուսանին ի վերնագունիցն եւ սպասաւորեն ևոցա: Երրորդ՝ զի ուսուցանեն զմարգարտսն եւ յայտնեն ևոցա: Երրորդ՝ զի մարդկան են ինամարկուք եւ օղնական, եւ առ Աստուած դարձուցիչք: Նմանապէս եւ այս կարգ այսպէս ուղղի. զի պետութիւնն պատշաճի առ հայր: Եւ հրեշտակապետն առ որդի իբր յերկուց միացեալ: Եւ հերշտակն ի դէմս հոգւոյն՝ իբր նախ եկաւորեալ յամենայն ուրեք. եւ ապա որդի եւ հայր բնակեալ: Դարձեալ՝ առաջինքն կառավարեն ազգի եւ թագաւորութեան որպէս Միյայել: Երկրորդքն մեծագոյնս աստարանեն որպէս Գաբրիել: Երրորդքն պահպանեն զիրաքանչիւր անձինս որպէս Ռաֆայել: Արդ՝ մեք պարտիմք նմանիլ աթոռոցն ուղղութեամբ: Քերովբէիցն ճանաչմամբ զԱստուած: Սերովբէիցն սիրով: Այլեւ Տէրութեանց զմարմինս ևուաճելով: Այլեւ Տէրութեանց զմարմինս ևուաճելով: Չօրութեանցն արիական գործով: Իշխանութեանցն փորձութեանց հակառակին ընդդէմ կալով: Այլեւ պատութեանց զմեծամեծսն պատուելով: Հրեշտակապետաց ուսուցանելով: Եւ հրեշտակաց սպասաւորելով: Այս է բարեզարդ դասուցն իմացութեանց կարգ եւ անուանք եւ գործք ևոցա. վասն որոյ ասէ: (Աթոռք եղան. եւ հին աւուրցն նստաւ ի վերայ:)* Եւ ըստ այլ եղանակի ետես հրաշատեսն Էզէկիել չորեքկերպութեան աթոռ: (Որ էր մարդոյ. առիձու. եզին. եւ արծուոյ. եւ որդի մարդոյ ի վերայ նորա:.) Գիտելի է՝ զի այսպիսի գազանց կերպ եւ

անասնոց եւ թռչնոց՝ ոչ է ի յերկինս ի դասս հրեշտակաց: Այլ վասն խորհուրդոյ այսպիսի կերպիւ տպաւորեալ երեւին յաչս տեսողաց: Երբեմն լոյս. երբեմն հուր, երբեմն ծառ, եւ այլն: Նմանապէս եւ աստ չորս կերպարանք երեւեցան ի կառս աթոռոց: Առաջին՝ այս է խորհուրդն. զի մարդն է թագաւոր ամենայն աշխարհի. առիւթն թագաւոր գազանաց. եզն թագաւոր անասնոց. արծիւն թագաւոր թռչնոց: Եւ որդի մարդոյ ի վերայ նոցա՝ զի թագաւոր թագաւորաց է Աստուած ի վերայ ամենայնի: Դարձեալ այսպէս իմանի առ անմարմին զօրութիւնս: Առաջինն ի մարդոյ կերպ. ըստ որում յատկանայ ի յանբանից. եւ հաւասարի իմանալեաց: Նախզի՝ իմացական է մարդն ըստ սերովբեիցն. եւ տեսողական ըստ քերովբեիցն. եւ ուղիղ ձեւով ըստ աթոռոցն: Դարձեալ՝ եւ իշխանական է եւ Տէր ամենայնի կենդանեաց բանական զօրութեամբ եւ կարողութեամբ. որովք միջին դասուն է համեմատեալ: Դարձեալ՝ պետ է եւ ազատ եւ հանճարոյ ընդունակ ուսմամբ. եւ անըմբռնելի ընութեամբ ըստ հրեշտակաց դասուն. վասն որոյ ի մարդոյ կերպ երեւեին նոքա: Իսկ յառձիւծուն կերպ: Նախզի՝ թագաւորական է առիւծն: Երկրորդ՝ զի ուժգին է եւ հզօր: Երրորդ՝ կրմուղ. որ է անընտել եւ վայրի. որպէս դասք հրեշտակացն ի մէջն: Չորրորդ՝ ցետովն զհետն ծածկէ. ծածուկ է եւ ընթացք նոցա ի մէջն. որպէս եւ Աստուծոյն. ըստ այնմ, (ի ծովու են ճանապարհք քո. եւ հետք քո ոչ եւս երեւին:) Զինգերորդ՝ զի սրամտօղ է. եւ նոքա վրեժխնդիրք են ի վերայ չարեաց: Իսկ յեզինն կերպարան: Նախզի՝ ուժեղ է եւ հզօր. եւ նոքա հզօր զօրութիւնք են: Երկրորդ՝ արդիւնարար է. եւ նոքա ներգործութեամբ իւրեանց: Երրորդ՝ ակօսահերձ է. եւ նոքա զիմանալի ակօս սրտից բացեալ առ ի յընդունիլ զբարձրաագոյն պարգեւսն: Չորրորդ՝ եղջերովն հարկանէ. եւ նոքա զթշնամին: Զինգերորդ՝ անըմբռնելի է. եւ նոքա ի մարմնաւորաց: Իսկ յարծույն կերպարան: Նախզի՝ թագաւոր է արծիւն թռչնոց. եւ նոքա թագաւորք բանականաց: Երկրորդ՝ վերամբարձ. եւ նոքա դերամբարձ են մտօք առ Աստուած: Երրորդ՝ սրատես ի կերակուրն. եւ նոքա ի Բանն Աստուած որ կերակուր է նոցա: Չորրորդ՝ զտկարատես ձագն ի բաց ընկենու. եւ նոքա զսատանայ: Զինգերորդ՝ նորոգի մանկութեամբ. եւ շլացեալ ակն պայծառանայ յառեալ յարեգակն: Այսպէս նոքա բոլորովմբ հայեցեալ յիմանալի արեգակն պայծառ իմացմամբ, նորոգին միշտ մանկութեամբ առանց ծերութեան: Եւ գիտելի է՝ զի այսպիսի կերպարանք անասնոց եւ գազանաց՝ ոչ յերկինս. այլ առ աչս նմանութեամբ երեւին այսպիսի կերպարանք վասն բազում պատճառի: Նախզի՝ նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթոյ հասանի յաննիւթն. որպէս տեսեալ զգիր՝ իմանամք զզօրութիւն ի նմա: Եւ տեսեալ զօրակ եւ զքանակ իմանամք զգոյացութիւն իրին: Երկրորդ՝ զի ծածկեցի յանարժանիցն մտօք եւ գործովք. ըստ այնմ, (մի տեսցեն աչօք. եւ մի իմասցին սրտիւք:) Երրորդ՝ զի մեզ յայտնեցի ծածուկ խորհուրդն. ըստ այնմ, (ձեզ տուեալ է գիտել զխորպուրդս:) Չորրորդ՝ զի տեսեալ զանարգ կերպն, ինդրեմք զճշմարիտ իմացումն: Զինգերորդ՝ զի նշանակեալք վայրիք գազանք՝ հրեղէնք եւ թելաւորք երեւին, ցուցանեն թէ արտաքոյ եւ հեռի են յերեւելեացս բնութեանց: Վեցերորդ՝ զի ի սոցանէ իմանամք զաննման նմանն այսպէս: Չի սոքա ունին սրտմտութիւն եւ ցանկութիւն. իսկ նոցա այն է արիութիւն եւ սէր Աստուած: Եւ սոքա կոչին անբան եւ անզգայք ըստ պակասութեան. եւ նոքա ըստ առաւելութեան՝ զի ունին զիմացական բան եւ զզգայութիւն: Այսքան առ անմարմին զօրութիւնս

երկնից: Դարձեալ՝ յետ իմանալեացն՝ արարաւ մարդն ի պատկերն Աստուծոյ երկրորդ բանական. ըստ այնմ, (արար Աստուած զմարդն ի պատկեր իւր:): Եւ բերե զնմանութիւն չորեքկերպեան աթոռոյն՝ չորեքնիւթեայ տարրական մարմնոյն, եւ չորիւք առաքինութեամբ հոգւոյն. ըստ որում հոգին եռամասնեայ գոլով. բան, ցասումն, եւ ցանկութիւն: Որ նշանակէ ի մեզ մարդն զբանականն. առիւծն զցասմնականն. եզն զցանկանն: Իսկ վերաթռիչ արծիւն՝ գիտութիւնն է խոհեմութեան. իսկ անձնիշխան կամքն՝ ուղղիչ նոցա ի բարին: Եւ որպէս ի կառսն նախ էր մարդն եւ ապա այլքն զկնի: Նմանապէս եւ ի մեզ՝ Տէր է կարգեալ բանականն. եւ ցասումն եւ ցանկութիւնն հնազանդ բանին. եւ այսպէս կառք հոգւոց մերոյ ուղղապէս ընթանայ յաստուծային պատւիրանս: Իսկ յորժամ շրջի այս կարգ, եւ ծառայն լինի Տէր, եւ աղախինն լինի տիկին, այսինքն յորժամ ցասումնն եւ ցանկութիւնն տիրեն բանին, յայնժամ անձնիշխան կամքն դառնայ ի չարն: Եւ որ էր յառաջագոյն կառք Աստուծոյ եւ պատկեր բարւոյն. լինի կառք սատանայի եւ պատկեր չարին: Եւ դարձեալ՝ Աստուած ի ստեղծանելն զմարդ ասաց. (իշխեսցէ թռչնոց երկնից եւ անասնոց երկրի. եւ ձկանց ծովու:): Որչափ մարդն հնազանդ էր Աստուծոյ՝ այսոքիկ ամենեքեան հնազանդ էին մարդոյն. ըստ այնմ որք գային առ Ադամ. եւ նա եղ անուանս ամենայնի կենդանեաց: Իսկ յորժամ մարդն անհնազանդ եղէ Աստուծոյ, սոքա անհնազանդ եղեն մարդոյս: Որեւ Պղատոն երեք սեռ ասէ կենդանեաց. այսինքն, օդայինք, ջրայինք, եւ ցամաքայինք. ըստ ճառին այս է: Եւ ըստ մտաց՝ այլ եղանակաւ մեկնեն վարդապետք եթէ՝ հոգի մարդոյ երեք զօրութիւն ունի. բան ցասումն եւ ցանկութիւն: Որչափ մարդն հնազանդ էր Աստուծոյ՝ զօրութիւնքս այս հնազանդ էին մարդոյն. բանն որպէս թռչուն. ցասումն որպէս գազան. ցանկութիւնն որպէս ձուկն: Ապա ուրեմն յայտ է ի բանես՝ որքան մարդն հնազանդ է Աստուծոյ՝ ներքին եւ արտաքին կենդանիք ամենեքեան հնազանդ են մարդոյն. որպէս առիւծքն Դանիէլի. եւ իժն Պօղոսի. եւ օձք եւ վիշապք մեր լուսաւորչին Գրիգորի՝ ոչ վնասեցին. այլ հնազանդ էին նմա: *Դարձեալ՝ չորեքկերպեան կառք ուղղին ի վերայ նոցա՝ որք յաշխարհական կենաց գան ի վերս ճգնութեան եւ կրօնաւորին: Եւ չորք կերպարանք՝ են չորք առաքինութիւնքն ստացականք. որք են խոհեմութիւն. արիութիւն. ողջախոհութիւն. եւ արդարութիւն. որք խառնեալ են ի նոսա: Եւ լինին նոքօք կառք եւ հենգիստ սրբոյ երրորդութեանն: Չի մարդն նստեալ՝ նշանակէ զհայր. եւ ամպն զմարմնացեալն որդի. եւ հողմն զհոգին սուրբ: Չի ասէ Տէրն. (որ ոք զպատուիրականս պահեսցէ՝ ես եւ հայր առ նա եկեսցուք. եւ օթեւանս առ նմա արասցուք:): Եւ թէ՛ (ես յո՞ հանգեայց. եթէ ոչ ի հեզս եւ խոնարհս. եւ յայնոսիկ որք դողան ի բանից իմոց:): Իսկ հիւսիսոյ ի հարաւ շարժիլ կառացն՝ ցուցանէ ի վատթար կենաց ի լաւն դիմելն. այսինքն ի սառնասառոյց ցրտութենէ յաստուածային ջերմութիւն սիրոյն: Իսկ ոտքն ուղիղ եւ առանց կրկնուած՝ զի ուղիղ եւ անխոտոր է զնալ ի պատուիրանս Աստուծոյ: (Մի յաջ խոտորիբ եւ մի յահակ:): Այլեւ առանց խոնարհելոյ՝ բարձր մնալ յամենայն երկրաւոր ընթացից: Իսկ կճղակն որ հաստատութեան է նշանակ՝ ցուցանէ զօճահալած բնութիւնն. որով հաստատապէս կոխեսցեն զօճս եւ զկարիճս իմանալի, եւ զամենայն զօրութիւնս նոցա: Իսկ թելքն ի միմեանս միաւորեալ կենդանացն՝ ցուցանէ զպարգեւս հոգւոյն զոր ի միմեանց օգտիմք. եթէ մարմնաւոր արուեստիւք՝

զմիմեանց պետս լնումք. եւ թէ հոգեւոր սիրով՝ պահօք, աղօթիւք, արտասուօք, եւ ուսմամք, ի միմեանց օգտիմք: Իսկ ձեռն ի ներքոյ թելոցն ըմբռնեալ՝ ցուցանէ թէ՛ զամենայն բարեկարգութիւնն հաստատ եւ պինտ է ըմբռնելի. եւ ոչ փոփոխմամք կամ թուլութեամք: Իսկ անիւքն բոլորակի՝ զի գեղեցիկ է բոլոր ձեւն եւ կատարեալ. զկատարեալ առաքինութիւնս նշանակէ. զխոհեմութիւն, զարիութիւն, եւ զայլն: Այլեւ զբարոյականս որ է բնական ուղղութիւնն ամբողջ պահել: Չգործնականն որ է ստացականն եւ զԱստուած գիտութիւնն որ է հաւատոյն իմաստութիւն. լի եւ կատարեալ ունելով զսոսա: Չի տգեղ է մասնաւորն եւ անկատարն. որպէս ասէ Յակօբոս. (եթէ ոք զամենայն օրէնս պահիցէ, եւ միով իւրք գթիցէ, եղեւ ամենայն օրինացն պարտական:.) Եւ Տէրն աշակերտացն պատուիրէր. (աշակերպեցէք զամենայն հեթանոսս. ուսուցէք լոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ:.) Իսկ շափիւղայն եւ սառնատեսակն՝ զաննենգ եւ զպարզ բարս նշանակէ ունել: Իսկ ծիածանն՝ զուխտ խաղաղութեանն նշանակէ զոր ունիմք առ նա. ըստ այնմ, (ուխտս դիք եւ կատարեցէք:.) Նաեւ զուխտ նորին առ մեզ. ըստ այնմ, (որպէս հայր ուխտեաց ինձ զարքայութիւնն՝ եւ ես ուխտեմ ձեզ:.) Իսկ հուրն եւ լոյսն փայլատակեալ՝ հուրն զչարչարանս մարմնոյն նշանակէ զի հուրն տանջիչ է. իսկ լոյսն՝ զի յետ չարչարանացն մտօք ի հանգստութեանն եւ յուրախութեանն լինի: Դարձեալ՝ յետ աստի չարչարանաց՝ անդ ի հանգիստն վայելեցցէ. ըստ այնմ, (բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել ի հանգիստն:.)

Դարձեալ՝ չորեքկերպեան աթոռն՝ նշանակէ զչորս գլուխս ււետարանչացն: Մարդն Մատթեոս ի մարդէղութիւն Տեառն սկսեալ: Առիւծն մարկոս հզօրաբար պատմաբանեալ: Եզն Դուկաս ընդարձակ ակօսադրեալ եւ երկարածիգ լեալ:

Արծիւն Յօհաննէս ի բարձուսս սւլացեալ. զի ի սկզբանէ զբանն ււետարանեալ: Այս են չորեքկերպեան աթոռք ընդ չորս կողմ աշխարհի բարձրացեալ եւ ււետարանեալ: Յորոց վերայ նստեալ է բանն մարմնացեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Դարձեալ՝ աթոռ անճառ բանին եւ մարմնոյն եղեւ սուրբ կոյս Մարիամ աստուածածինն չորիւք վեհագոյն առաքինութեամբ, այսինքն, հնազանդութեամբ. խոհեմութեամբ, սիրով. եւ հաւատով: Չի ի հաւանական պատասխանին զոր ետ հրեշտակին՝ երեւի չորս առաքինութիւն սրբուհոյ կուսին: Չի ասելն ահաւասիկ՝ ցուցանէ զյօժարական հնազանդութիւնն: Աղախին Տեառն յայտնէ զկատարեալ խոնարհութիւնն: Եղիցի ինձ՝ նշանակէ զբորբոքեալ սերն: Ըստ բանի քում՝ զջերմեռանդ հաւատն: *Դարձեալ՝ աթոռ քառակերպեան՝ նշանակէ զսուրբ խաչն քառաթեւան. զի նա է աթոռ յաւիտենական եւ տեղի փառաց յոր բարձրացաւ արարիչն Աստուած՝ եւ փրկեաց զարարածս. ըստ այնմ, (ելեր դու ի կառս քո. հեծելութիւն քո փրկութիւն եղեւ:.) Եւ վասն նորա ասէ մարգարէն. (հաճեցաւ տէր ընդ Սիօն որ է դիտանաց խաչին. եւ ընտրեաց բնակիլ ի նմա. ասէ՛ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից:.) Եւ դարձեալ ասէ. (աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղութեան. գաւազան արքայութեան քոյ:.) Իսկ չորք թելք խաչին՝ նշանակէ զչորս գերագանց առաքինութիւն փրկիչին: Որում պարտիմք նմանիլ մէք հետեւեալք նմա. քանզի վերին մասնն՝ նշանակէ զսերն. ներքինն՝ զխոնարհութիւնն. աջն՝ զհնազանդութիւնն. ահեակն՝ զհամբերութիւնն:

Դարձեալ՝ չորս թեւ խաչին՝ նշանակէ զչորս բարերարութիւն նորին. քանզի վերին մասնն՝ նշանակէ զբացումն դրանն երկնից. ներքինն՝ զաւերումն դժոխոց. աջն՝ զբաշխումն շնորհաց. ահեակն՝ զթողութիւն մեղաց: Այլեւ չորս էին փայտք խաչին որպէս ասէն ոմանք. զի պատուանդանն էր նոճի. բունն կիպարի. խոտորնակն արմաւենի. իսկ տախտակ վերնագրին ձիթենի: Արդ՝ նոճն նշանակէ զբարձրութիւն խոկմանն, կիպարին զանուշահոտութիւն բարեհամբաւութեանն. իսկ ձիթենին զկակողութիւն ողորմութեանն Զրիստոսի: Որեւ մեզ պարտ է ունիլ ուղղակի զխոկումն ի վեր՝ (ուր Զրիստոս նստի ընդաջմէ Աստուծոյ.) եւ զանուշահոտ վարս. եւ զբարեգործութեան պտուղս. եւ զողորմութիւն առ ընկերս եւ առ կարօտեալս: Եւ այսպէս արժանացեալ լինիմք բառնալ զխաչն Զրիստոս. եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ վասն հրեշտակաց. եւ դիւաց. եւ մարդկան ընտրելոց. ի Բանն՝ (Ծառայ իմաստուն՝ տիրեսցէ տերանց անմտից. եւ ընդ եղբորս բաժանեսցէ մասն ժառանգութեան:.) Առակ 17. 2: (Գլուխ. ճեշ)

Ասէ ուրեմն ի մարգարէս աստուածային Մովսէս. (յայտնիքն մեզ եւ որդւոյ մերոց՝ եւ ծածուկքն Տեառն Աստուծոյ: Չի յանքնին խորհրդոց իւրոց՝ զոր ինչ կարեմք առնել՝ կամի եւ յայտնէ. եւ զանկարելին խնամէ ի ծածկէ: Նոյնպէս եւ մեք զոր ինչ յայտնէ մեզ առատաբաշխ հոգին՝ տեսցուք եւ յայտնեսցուք. եւ զծածուկն լռութեամբ պատուեսցուք: Չի մի զօրէն անկելոյ արուսեկին կրեսցուք զխաւարումն. զի որ բոլորակ արեգականն յառիցի տկար աջօք, եւ ի սակաւ լուսոյն զրկեսցի: Օն անդր օժադակեալ լուսով հաւատոյ՝ ուղղեսցուք զբիբ իմանալի տեսութեան մերոյ. եւ լուսով նորին պարգեւաց՝ դիտեսցուք զլոյս իմաստից նոցին գիտութեանց զոր ասէ: (Ծառայ իմաստուն՝ տիրեսցէ տերանց անմտից. եւ ընդ եղբարս բաժանեսցէ մասն ժառանգութեան:.) Բարի է Աստուած. եւ ի բարերար կամացն արարչագործեաց գերկին եւ գերկիր. զիմանալի եւ զգալի արարածս: Իսկ տեղիք եւ կայանք իմանալեացն՝ նախ պատրաստեաց Աստուած զբարձրագոյն տեղին որ է լուսեղէն երկինքն. եւ ի նմա հաստատեալ գոյացոյց ի լուսոյ զհոյլս լուսեղէն բանականաց. բանական եւ անմարմին գոլով կենդանի. հազարք հազարաց. եւ բիւրք բիւրուց անթուելի մեզ գոլով. ինքեանց կարելի. եւ որ գոյացոյցն գնոսա՝ (նա թուէ զբազմութիւն աստեղաց կաճառաց. եւ զամենեան յանուանէ կոչէ:) Այլ են ինն դասիւք եզերեալ. յերիս երրակս որոշեալ. առաջին, միջին, եւ վերջին դասուք: Առաջին դասք՝ աթոռոց սերովբէից եւ քերովբէից: Միջինք՝ տերութիւն, զօրութիւնք, եւ իշխանութիւնք: Վերջինք՝ պետութիւնք, հրեշտակապետք, եւ հրեշտակք: Առաջին դասքն՝ անընդմիջաբար ընդունին յԱստուած պետական բարերարութենէն զլոյս իմաստից եւ գիտութեան, երեք գոլով դասուց, եւ հաւասար եութեամբ եւ փառօք, ի յերեք անձնայ սրբոյ երրորդութեանն դիմաց եւ միոյ աստուածութեանն այսպէս: Չի աթոռոց դասն՝ հայի ի դէմս հօր. եւ քերովբէն ի դէմս որդւոյ. եւ սրովբէն առ հոգին սուրբ. զոր երեք սրբաբանութեամբ անդադար փառաբանեն զսուրբ երրորդութիւնն եւ զմի տերութիւն Աստուած պետական բարերարութեանն: Եւ ընկալեալ յինքեանս զանճառ գիտութիւնն Աստուծոյ, եւ զմեծ պարգեւս որքան կարէ եղականաց

տեսանել, անցուցանեն ի միջին դասս տերութեանց զօրութեանց եւ իշխանութեանց: Եւ ի ևոցանէ առ պետութիւնս, առ հրեշտակապետս, եւ առ հրեշտակաս ներքին դասուց որքան կարէ ևոցա հասանիլ: Ինքեանք լուսափայլին. զայլս հաղորդեն. որպէս երկատեսակ հայելի ընկալեալ յառաջևոցն՝ թափանցեն ինքեամբք յերկրորդս: Եւ այս կրկին կարգաւորութեամբ: Նախ՝ յառաջին եւ ի վերնագոյն դասուցն իջեալ ըստ կարգի ի միջին դասս տերութեանց զօրութեանց եւ իշխանութեանց. եւ ի ևոցանէ ի պետութիւնս ի հրեշտակապետս եւ ի հրեշտակս: Եւ ևոքօք առ մեզ իջանէ ի մարդկային ազգս ամ ինամ եւ շնորհ եւ լուսափայլ գիտութիւն յԱսուծոյ: *Երկրորդ՝ Է եւ այլ կարգաւորութիւն: Որ յաթոռոց դասուն իջանէ ի տերութիւնս. եւ ևոքօք ի պետութիւնս: Եւ ի քերովբէիցն առ զօրութիւնս. եւ ևոքօք ի հրեշտակապետս: Եւ ի սերովբէիցն իջանէ իշխանութիւնս. եւ ևոքօք ի դասս հրեշտակաց վերջին: Եւ այսպէս անդադար բերանով՝ եւ անհանգիստ բարբառով՝ ի դէմս սրբոյ երրորդութեան անձանց յերիս երրեակս կարգաւորին դասուք: Եւ Է տեղիք ևոցա երկինն լուսեղէն. որ ի սկզբանէ յառաջևումն աւուր արարաւ. եւ ըստ լուսոյն երկնից գոյացան ամենայն լուսեղէն բնակիչք ընդ նմա. զոր սահմանեն գնոսա. (Էութիւնք անմամիւնք, անմահք, Աստուծոյ սպասաւորք:) Եւ այլք ստորագրեն. (հուր անկիզանօղ. լոյս թափանցիկ. հողմն անվայրափակ:) Չի ոչ ինչ տեղի եւ վայր կարէ փակել գնոսա եւ արգիլել. եւ վասն հոգեղէն գոլոցն՝ հողմ անվայրափակ կոչին: Եւ զի լոյս են իմանալի եւ անստուեր՝ լոյս թափանցիկ կոչին: Եւ զի ջերմացեալ են ի սերն Աստուծոյ՝ եւ միշտ ի նոյն բորբոքին՝ հուր կոչին. ըստ մարգարէին: (Ո արար զհրեշտակս իւր յոգիս. եւ զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ.) զի երբեմն պատժեն զյանցաւորս: Արդ՝ տեղիք դասակարգութեան ևոցա՝ Է ի բարձունս ի հրեղէն երկինս. մասն ժառանգութեան ընկալեալ զլոյսն եւ զհանգիստն մշտնջենաւոր. կարգեալ ի դրունս մեծի եւ ամենակալի տերութեանն՝ պարսպեալ ի ևոցանէ իմանալի խորանան ի վերոյ քան զհրեղէն երկինս. զոր առաքեալն՝ ներքնի կողմն վարագուրին կոչէ. եւ լոյս ամնատոյց եւ խաւար անգիտելի: Չի գիտութիւն եղական մտաց մինչ առ նա ընթանայ. եւ ի ներքս ոչ կարէ մտանել, անճառելի գոլով եւ անհաս արարածոց եւ եղական մտաց:

Չի որպէս զգալի երկինս հաստատութեան՝ մեզ Է անջրպետ եւ իմանալի զօրութեանց երկինց. նոյնպէս խորանն իմանալի եւ լոյս անմատոյց՝ անջրպետ եւ վարագոյր Է երկնայնոցն դասուց: Որեւ նոյն լոյսն անմատչելի՝ կոչի երկին եւ աթոռ Աստուծոյ. ըստ այնմ, (երկինք աթոռ իմ են. եւ երկիրս պատուանդան ոտից իմոց:) Որեւ ապացոյց օրինակի ունիմք զվրան ժամուն ի Մովսիսի կազմեալ. եռայարկեան խորան. եւ կրկին վարագուրաւ անջրպետեալ ի միմեանց: Առաջին սուրբն սրբոց ուր սեղան քաւութեանն էր. եւ սերովբէիւք հովանացեալ՝ եւ առաջին վարագուրաւ անջատեալ՝ նշանակէ զիմանալի խորանս անմատոյց լուսոցն: Միայնակ երրորդութեանն առանձնացեալ եւ հեռացեալ յեղելոց: Եւ սեղան քաւութեան ի նմա՝ Է Տէր մեր Յիսուս Զրիստոս նստեալ ընդաջմէ հօր. եւ նա Է քաւութիւն եւ թողութիւն մեղաց մերոց եւ ամենայն աշխարհի: Եւ սերովբէք շուրջ զնովաւ այս Է՝ յորժամ նախախնամութեամբ յառաջ զայ ի ծանօթութիւն եղելոց. նախկին երեքեան դասքն անընդմիջաբար են շուրջ զԱստուածաձայ եւ աթոռ կազմեալ. եւ ի նոսա հանգուցեալ Է կամք աստուածային

քաղցրութեանն: Այսպէս առաջին խօրանն անմատոյց՝ անջրպետեալ առաջին վարագուրան. (յորր միանգամ եմուտ քահանայապետն մեր արարեալ սրբութիւն յաւիտենից:) Իսկ միջին սրբութիւն խորանին՝ ուր էր սեղան խնկոցն եւ երեսաց հացին՝ եւ աշտանակն լուսոյ՝ եւ երկրորդ վարագուրան անջրպետեալ՝ նմանեալ իմանալեացն դասուց անուշահոտ մաքրութեամբ հոգւոց կատարելոց. զորմէ ասէ առաքեալն. (մերձեցեալէք ի բիրաւոր բանակս հրեշտակաց յեկեղեցիս անդրանկաց յոգիս արդարոց կատարելոցն յերկինս:) Ուր էին Ի եւ Գ երիցունքն տեսալ ի Յօհաննէ. անդ մտանեն յամենայն ժամ քահանայքն կատարել գործութիւնս: Այլեւ է աստ սեղան լուսով պայծառացեալ: Չոր ոմանք է երկինք ասացին ըստ եօթն դասուց գլարթնոցն կարգաւորութեամբ այսպէս: Չի առաջին Գ դասքն համապատուեալ՝ ի մի երկինս են գերամբարձեալք. եւ ի նոցանէ առ դասս ներքնիս հրեշտակաց վեց եւս դասակարգութիւն. որ լինի եօթն. ըստ մեծին Իրինոսի եւ Եպիփանոս: Եւ այսպէս զգալիս երկինք վարագուր եւ անջրպետ ի մէջ նոցա է անկեալ. որեւ սա ունի յինքեան եօթն աստեղեան խորանս. այս է՝ զկայանս հոգւոց արդարոց դէմ յանդիման կացեալ երեսացն Աստուծոյ. սպասեալք կատարածի աւուրն դատաստանի եւ գալստեանն Քրիստոսի: Չորոց եւ ասէ Դաւիթ. (քեզ սպասեն արդարքն մինչեւ գաս դու Տէր:) Իսկ արատքին սրահ խորանին՝ նշանակէ զվայրս ստորին զմասն երկրի: Ուր տեղի է հասարակ ժողովրդեան արդարոց եւ մեղաւորաց: Ի սմա մատչին պատարագք զենմանց անասնոց եւ թռչնոց՝ եւ նւիրին յերկինս ի քաւութիւն մեղուցելոց: Չի ի սմա է կերակուր եւ ըմպելի. եւ կատարին աստ նուերք եւ մաղթանք ի կեանս յայս. եւ ապա արժանի լինին երկնային մտիցն: Այսպէս կազմեցաւ աշխարհ իմանալեացն վերին բնակութիւն. եւ զգալեացս ստորին վայրս երկրի: *Արդ յետ իմանալեացն դասուց՝ կազմեցեալ կազմել զգալի արարած ի չորից տարերց. եւ ի սմա բարձրագոյն եւ գերամբարձ տեղի (տնկեաց Աստուած զդրախտն եղեմ ընդ արեւելս.) տեղի վայելուչ եւ լուսաւոր. անապական եւ անմահութեան տեղի, զմիջինն ունելով սահման ամենայնիւ: Եւ ձեռօք իւրովք արար զմարդն ի հողոյ երկրէ. եւ փչեաց յերեսս զշունչ անմահ կենդանութեան. եւ եդ անդ զմարդն զոր արար հոգի եւ մարմին. զի մարմնովն վայելչասցի ընդ զգալի արարածոցս. եւ հոգւովն իմաստնասցի ընդ իմանալեացն դասուց պահպանողացն ի դրախտին: Եւ արար զմարդն ի պատկեր իւր Տէր եւ իշխան ի վերայ ամենայն զգալի արարածոց. զի որպէս Աստուած Տէր եւ թագաւոր է իմանալեացն զօրութեանց երկրից եւ բորոր գոյից: Նոյնպէս եւ մարդն ի պատկեր Նորա՝ տիրեսցէ ամենայն երկրի ըստ այնմ, (զամենայն ինչ հնազանդ արարեր, ի ներքոյ ոտից Նորա. զխաչն եւ զարջառ եւ զամենայն ինչ:) Իսկ մին ի յանկելոց երկնայնոց դասուց՝ նախանձեալ ընդ գերապատիւ փառս առաջին մարդոյն, պատրեաց զնա նովին հպարտութեան ախտին, որով ինքն անկաւ ի փառաց. (եթէ ուտիցէք ի պտղոյն լինիք իբրեւ զԱստուածս անմահ կեանօք եւ գերամբարձ փառօք.) յորում օճապատիր խաբմանն պաւանեալ եւ կերեալ ի պտղոյն, աստուածութեանն ոչ հասին. այլ եղկելի կենօք ի ներքոյ մահու գրուեցան. եւ զոր ունէին զփառս՝ եւ յայնմանէ զրկեցան ըստ արդար վճռին: Նախ եթէ՝ (յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիցիք.) այսինքն, եթէ է ոմն անձնաւոր մահ որ է բանսարկուն. եւ նովաւ մահու մեռանիցիք ասէ: Երկրորդ թէ՝ անասունքն մահկանացուք են.

նոցա մահուամբն մեռանիցիք: Երրորդ՝ մահու մեռանիլ՝ զհոգւոյ մահն ասէ որ մեղօքն մեռանի. զի այն է առաւել մահ եւ յաւիտենից չար որպէս ասէ Զրթօղն. (ոչ է դա քեզ մահ մահկանացու, այլ անմահ չար:) Չորրորդ՝ մահու մեռանիլն այն է՝ որք հոգւով եւ մարմնով արտմին, եւ անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս. եւ յետ մահու. զի որ մեռանի մարմնով, զպարատս վճարէ. եւ որ տրտմի հոգւով եւ մարմնով, անմահ մահանայ: *Եւ աստ է տասն ինչ հարցումն վասն դիւաց: *Առաջին թէ՛ ուստի՞ Էր ստանայ որ պատրեաց զմարդն: Ասեն վարդապետք եթէ՛ սատանայ Էր մի ի դասուց երկնաւոր հրեշտակացն. եւ զի հպարտացաւ եւ հակառակ եղէ Աստուծոյ. որպէս անունն իւր յայտնէ սատանայ. որ է հակառակ. եւ Սադիէլ՝ որ է հակառակ Աստուծոյ: Եւ զլինիլն հակառակ՝ բազումք բազում ինչ ասեն: Նախ Պօղոս յերկրորդ թղթին կորնթացւոց ասէ թէ՛ (անօրէն իշխանն՝ իբրեւ աստուածանալ կամեցաւ.) եւ լուսաւորիչն մեր զնոյնս երկրորդն է: Եւ այլք ասեն եթէ՛ լռեաց եւ ոչ ետ փառս Աստուծոյ. եւ կրկին է այս: Նախ՝ որպէս յորժամ սերովքէն ասէր սուրբ, միւսն երկրորդ Էր զնոյն. եւ սատանայ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդել թէ, փառքն ի վերայ իւր անկանի եւ աստուածանայ որպէս ասաց Պօղոս: Երկրորդ՝ ասեն. որպէս ի լինիլն աստեղաց հրեշտակք օրհնեցին զԱստուած ըստ Յոբայ. նոյնպէս եւ յառնեաց՝ փառս ետուն Աստուծոյ. իսկ նա լռեաց: Եւ ոմանք ասեն եթէ՛ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ. եւ ի խորհուրդ եմուտ թէ, սորա կատարումն ի՞նչ լինի. եւ ոչ կարաց հասու լինիլ: Չի ասէ աստուածաբանն թէ՛ յԱստուած մերձենայաք եւ Աստուած լինեաք յայսմ, որ Զրիստոս գալովս եղէ: Չորեւ յեկեղեցւոյ ուսան հրեշտակք ըստ Պօղոսի: Իսկ Սողոմօն ասէ. (ի մուրիլ ժողովրդոց՝ բեկումն հզօրաց:) Եւ Յօհաննէս ասէ թէ՛ մուրիլն ի ճանապարհին՝ յայլ ընդ այլոց նայելոյ լինի. եւ զնայելոյն պատճառն երինոս մեկնէ թէ՛ զմարդոյն լինիլն տեսաւ այնպէս փառաւոր. եւ ի խորհուրդ եմուտ. որպէս ասէ Յոբ. (վասն իմ թողին զգործս իւրեանց:) Իսկ Նարեկացին Գրիգոր ասէ թէ, յորժամ ի սկզբանն Աստուած կամեցաւ ստեղծանել զարարածս, Բանն Աստուած մարդեղենութեան կերպարանաւն լինէր եւ ստեղծանէր. որպէս ի ստեղծանելն Ադամայ. որպէս ասէ մերն լուսաւորիչ. եւ ամենայն հրեշտակական եութիւնքն տեսին զբանն կերպիւն Ադամայ եւ երկրպագեցին եւ օրհնեցին. եւ սատանայ ոչ երկրպագեաց սոսկ մարմին եւ մարդ կարծելով: Իսկ Յօհաննու տեսիլն եւ մեղոթ ասէ թէ՛ կամեցաւ (զերրորդ մասն աստեղաց ընդ իւր քարշել.) այսինքն, ի դասէն ի չորիցն երեք բաժինն ի վայր անկաւ. եւ մինն անդ մնաց. եւ յիշխանութեանց դասն խառնեցաւ: Վասն այն ասի սատանայ գտակ եւ հայր չարեաց. զի ինքնագիտ չարիւ նախ՝ ինքն չարացաւ որ ասի գտակ. եւ ապա զայլս չարացոյց որ ասի հայր, որպէս սկիզբն եւ սերմանօղ չարեաց ի յայլս. զի կործանմամբ իւրով՝ չարչարեաց զվերին դասսն սրտմտութեամբ. եւ զներքինսն սասանմամբ. եւ զհամակամսն ընդ ինքեան քարշեաց: Այլեւ զնախնիսն մեր պատրեաց եւ չարացոյց: Այլեւ գործակից նմա մարդիկ՝ անուանակից եղեն նմա եւ չար կոչեցան. վասն այն կոչի սատանայ գտակ եւ մայր չարեաց: Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ Աստուծոյ: Չի յորժամ ետես զինքն փառօք եւ վայելչութեամբ քան զայլ դասսն պատուեալ. կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայն հրեշտակացն եւ հաւասար Աստուծոյ. եւ թէ զի՞նչ է հաւասարն Աստուծոյ եւ կամ մեծն ի վերայ այլոց. այսինքն, զի

զլաւագոյն տեղիս կայանին զոր Աստուած տուեալ էր նմա՝ կամեցաւ կամաւ յԱստուծոյ իւր շորթել եւ ի վերայ այլոցն բռնութեամբ տիրապետել եւ հրամայել. վասն որոյ անկաւ եւ կորեաւ: Եւ զայսմանէ ասէ Եսայի. (եղին զաթոռ իմ լամպս. եւ եղեց նմա բարձրելոյն:) Ամպ զբարձրութիւնն նշանակէ ի վերայ այլոց եւ դարձեալ՝ զի ամպով եւ հողմով ասի շրջիլ Աստուծոյ. եւ այսու լինէր նման Աստուծոյ. այսինքն, ի վերայ ամպոց եւ հրեշտակաց շրջելով: Այս առաջին հարցումն թէ՛ ուստի՞ էր սատանայ, եւ ո՞րպէս անկաւ: *Երկրորդ հարցումն թէ՛ յո՞ր դասէ անկան. եւ այլքն զի՞նչ մեղան որք ընդ նմա անկան: Ասեն վարդապետք եթէ՛ հաճոյ թուեցաւ նոցա բարձրութիւն նորա խորհելով զայս ինչ. զի թէ նա Աստուծոյ յաղթօղ էր, եւ նոքա այլոցն իշխեին կարողութեամբ: Վասն այն ընդ նմա եւ իշխանք նորա անկան. եւ ի տանջանս մատնեցան: Իսկ թէ յո՞ր դասէ անկան: Հասարակաց կարծիս է թէ՛ տասներորդ դաս հրեշտակացն անկաւ. եւ մարդս զանկեալ տեղին լնու: Այլ այս ոչ է հասարակ թէ տասն դաս էր հրեշտակաց եւ մինն անկաւ: Չի ոմանք ասեն թէ՛ ի միջին դասուցն անկաւ երեք մասն եւ մինն մնացեալ յիշխանութեանցն խառնեցաւ: Եւ այլք ասեն թէ, ի տերութեանց դասուն ի վայր ի ներքոյ քերովբէիցն՝ յամենայն դասուց անկան դասու միոյ չափ: Իսկ Նիսացին Գրիգոր՝ ի գիրս կազմութեան եւ բնութեան՝ ի վերջին դասուց հրեշտակաց ասէ անկանիլ: *Երրորդ հարցումն թէ՛ ընդէ՞ր այլ հրեշտակս ոչ ստեղծ փոխանակ նոցա: Եւ դարձել՝ վասն Է՞ր Զրիստոս զնոսա ոչ փրկեաց որպէս զմարդիկ: Ասենք թէ՛ այս հարցումնս զանազան է. վասն այն պիտոյ է զանազան պատասխանի: Վասն առաջնոյն ասեմք եթէ՛ այլ հրեշտակ ոչ էր պարտ ստեղծանել փոխանակ նոցա: Նախզի՛ գոյին այնպիսի հրեշտակք որք մնացին ի բարին: Երկրորդ՝ զի պարտ էր այլոց տեսանել զմեղս նոցա եւ զպատիժն՝ եւ մնալ ի բարին: Վասն երկրորդին ասեմք թէ՛ Զրիստոս զնոսա փրկեաց որպէս զմարդիկ: Նախզի՛ ամենայն հրեշտակք զուգապէս ստեղծան. եւ ոչ ի միոյ հերշտակէ. որպէս: մարդն ի մարդոյ ծնաւ: Վասն այն՝ թէ Զրիստոս զմի հրեշտակի բնութիւն ընդունէր, զնա միայն փրկէր. իսկ այլքն արտաքոյ մնային ի փրկութենէն: Եւ դարձեալ՝ եւ ոչ զնա միայն փրկէր. զի մեռանիլ ոչ կարէր. զի Աստուած փոխանակ ապաշխարութեան զմահն կամեցաւ. եւ հրեշտակք անմահք են. վասն որոյ առանց փրկութեան մնացին: *Չորրորդ հարցումն թէ՛ այսպիսի մեղք վասն Է՞ր է անթողլի: Եւ այսմ դնեն վարդապետք զանազան պատճառս: Նախ ասեն թէ՛ ոչ ումեք խրատու մեղանչեաց. ոչ ումեք օգնութեամբ նորոգեսցի: Երկրորդ՝ զի ծառայ առ Տէրն, եւ ընդ աստուածակերպ իմացմանն մեղանչեաց. եւ որքան պատւական է ճանաչումն այնքան մեծ է սխալումն: Երրորդ՝ ասէ դամասկացին. հրեշտակն ոչ է ընդունակ ապաշխարութեան. նմին իւր եւ ոչ թողութեան: Չորրորդ՝ զի հոգեւոր բնութիւնն՝ մի անգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն. զոր ոչ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտն չի ընդ հոգին: Հինգերորդ՝ զի ի դէն շրջեալ է տրտընջականն ըստ յառաջանալոյ ի բարին: Չի անձնիշխան կամօք զլոյս աստուածային մերժեաց յինքենէ եւ խաւարեցաւ: Չոր օրինակ՝ եթէ ոք զգգալի ակն խփէ, զրկի ի լուսոյ եւ առնէ խաւար. նոյնպէս եւ նոքա: Բայց կրկին է զրկումն լուսոյ: Մին՝ որ ի ճառագայթ է լուսոյն զակն. խփէ եւ խաւարի: Եւ երկրորդ՝ որ ընդդէմ բոլորակի արեգականն հայիցի, կորուսանէ զլոյսն եւ խաւարի: Արդ՝ մեղանչել մարդոյն այնպէս է՝ որ զակն խփեաց ի լուսոյն եւ

խաւարեցաւ: Սակայն լոյսն ծագէ դեռեւս ի վերայ աչացն. եւ սակաւ փայլ է ի ներս. եւ յորժամ բանայ՝ վազվզակի գլոյսն տեսանէ: Այսպէս մարդ մեղօք գրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն Աստուծոյ չէ հեռացեալ. եւ սակաւ փայլէ ի ներս ի տրտնջականն: Եւ յորժամ զղջմամբ դառնայ ի մեղաց, վաղվաղակի շնորհաց լուսոյն արժանի լինի: Իսկ մեղանչելն սատանայի այպէս է՝ որ ընդդէմ արգեականն հայի. եւ լոյսն կորուսմանէ եւ խաւարի: Նոյնպէս սատանայ ընդդէմ Աստուծոյ հպարտացաւ եւ մեղանչեաց. յայնժամ լոյս իմացականին կորեաւ եւ շիջաւ ի նմա. եւ լոյս շնորհաց ոչ ներգործեաց ի նմա. եւ ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ ոչ հանդիպի թողութեան: Այս առ չորրորդ հարցումն: *Յինգերորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր սատանայ այնչափ հակառակ մարդոյ: Ասեն վարդապետք թէ՛ վասն չորս պատճառի որսաց եւ խաբէ գմարդիկ: Նախ՝ սատանայ հակառակ է Աստուծոյ. եւ մարդն պատկեր Աստուծոյ. յորժամ տկարանայ ի նախատիպն, ընդ պատկերն հակառակի: Երկրորդ՝ զի կամի այնու զփառս եւ զպատիւ Աստուծոյ նուագել, որ խաբէ գմարդիկ: Երրորդ խաբէ՛ զի ի սիրոյն Աստուծոյ գրկեսցէ գմեզ. զի կարասցէ յաղթել եւ կորուսանել: Չորրորդ՝ զի ընդ ինքեն ի տանջանս քարշեսցէ. զի ընդ իւր պատուոյ անկումն այնչափ չէ տրտում, որքան ընդ մարդոյ փառաւորիլն: Եւ այնքան է անպարհիշտ կամքն նորա դարձեալ յատելութիւն եւ ի նախանձ մարդոյն, զի ամենայն հնարիւք ջանայ ի կործանումն նորա բազմադիմի փորձութեամբ յայտնի եւ ծածուկ. ի խորհուրդս, ի բանս, եւ ի գործս: Եւ այնչափ կուրացեալ է եւ խոստացեալ ի չարն, մինչեւ զի պատերազմի ընդդէմ Աստուծոյ. թեպէտ գիտէ զայն ինքեան լինիլ ի չար. զի զօր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն՝ մեղանչէ մահու չափ: Սակայն լաւ համարի որ կործանելովն գմարդ՝ տանջանքն իւր յաւելանի, քան մարդ ի պատիւ մնայ եւ ի փառս ելցէ: Այս հինգերորդ հարցումն: Վեցերորդ հարցումն թէ՛ դեւք վասն Է՞ր կոչին իշխանք օդոյ: Ասեն վարդապետք եթէ՛ հրեշտակք ի վերոյ ջրոյ են ի հրեղէն երկինս. բայց ի ներքոյ հաստատութեան խնամածուք կարգեալ են աշխարհի եւ մարդկան. որ ի մեկնութեան տեսլեանն Յօհաննու ասէ զոմն ջրոյ. եւ զոմն հրոյ: Այլ Յօհաննէս այս օդոյդ ասէ. վասն այն նոյն անւամբն Պօղոս իշխան օդայդ կոչէ: Եւ դարձեալ յօդս են բնակեալ եւ իշխեն մարդկան: Չի տեղեալ անկումն սատանայի եղեւ կամ ի դժոխս, կամ ի յօդս աղջամղջին. որ է միջին կայարան օդոյն: Քանզի դեւք ոչ են ի վերին մասն օդոյն. զի մի խնդասցեն լուսովն. եւ ոչ ի ստորին մասն. զի մի առաւել վնասեսցեն մարդկան: Վասն զի ի դէն երիս իրս նկատելի է. այսինքն, բնութիւն. եւ գործ. եւ մեղք: Արդ՝ բնութեան նոցա պատշաճիւր բարձրագոյն տեղի որ է երկինքն՝ յորում ստեղծան. զի թէ կացեալ էին, կատարելոց էին անդ: Եւ գործոյն որք ունին կրթել գմարիկ յամարի օղն որ է մերձ առ մեզ փորձելոյ գմեզ. այլ ոչ ի լոյս. զի մի ուրախասցին: Այլ մեղացն՝ պատշաճի ստորին տեղի որ է դժոխք. զի ի կատարածի աշխարհի յորժամ դադարի գործ դիւաց, ամենեքեան միահողոյն ի դժոխս փակեսցին: Այս վեցերորդ հարցումն: *Եօթներորդ հարցումն թէ՛ յաւերժահարսունք եւ քաջք զի՞նչ են: Ասեմք եթէ՛ ոչ են յաւերժահարսունք որպէս ամանք կարծեն եթէ՛ յերկու տարերաց են. այսինք, ի հրոյ եւ յօդոյ. եւ են բանական կենդանիք. եւ ունին ծնունդ եւ ունին մահ: Սուտ է այսպիսի կարծիս եւ հակառակ սուրբ գրոց. զի բանական

կենդանի մահ կանացու՝ մարդս միայն է. որոյ եւ յարութիւն եւ դատաստան գոյ: Այլ նոքա ամենեքեան ազդ են դիւաց. եւ ըստ զանազան գործոցն՝ զանազան անուան դիպեցան: Որպէս դէն հպարտութեան. եւ դէն պոռնկութեան. եւ Բեեդգերուդ. եւ Բեմովթ, եւ այլն: Նոյնպէս եւ յաւերժահարսուք. զի միշտ պատրեն զմարդիկ ուրախութեամբ: Եւ որք ի վէմս իշխեն՝ քաջք կոչեցան: Եւ որք ի ջուրս եւ ի ծնունդս կանանց՝ այլ կոչին. զի գէջ ախտին զհոգիս կորուսանեն. եւ ի ծնունդս զմարմինս եւ զհոգիս: Նոյնպէս եւ այլքն ամենայն: Եւ որպէս երգովն Դաւիթի դադարիւր այսն չարութեան ի Սաւուդայ. նոյնպէս եւ այժմ դիւրանան ի նոյն ձայնական երգոցն: *Ութներորդ հարցումն թէ՛ զի՞նչ է հրեղէն վիշապն զոր ասէ տեսիլն: Ասեն վարդապետք եթէ՛ բանսարկուն է վիշապ. որպէս ասէ Յոր. (եղեր շրուշակ ի քիմս նորա. եւ արարեր խաղալիկ հրեշտակաց:) Եւ Դաւիթ ասէ. (վիշապն զոր ստեղծեր խաղալ նովաւ:) Չայսմ վիշապէ ասէ. (զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց ի յորդանան.) այն է որ զամենայն ջուրս ծովուն յակնակապիճս իւր ընդուներ: Չսա հրեղէն ասէ: Նախզի՛ ուրախ լինի ի վերայ սպանելոցն յիքենէ: Երկրորդ՝ զմերձեցեալսն ի յինքն տանջէ եւ այրէ յաւիտենական հրովն: Երրորդ՝ վասն գոյացութեան իւրոյ՝ որ անկաւ ի հրեշտակաց դասուցն: Եւ երեք է գոյացութիւն նոցա. անմարմին, եւ անմահ, եւ հրեղէն գոլն. ըստ այնմ, (ո՞ արար զհրեշտակս իւրժ յոգիս՝ եւ զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ:) Եւ թեպէտ եւ անկան եւ եղեն դէք՝ գոյացական մնացին առ նոսա. (հրեշտակ լուսոյ կերպարանին ըստ առաքելոյն:) Եւ թէ զի՞նչ եօթն գլուխն եւ տասն եղջիրն: Եօթն գլուխն՝ է եօթն չար զօրութիւնք նորին. որպէս հոգւոյ մարդոյ եօթն բարի զօրութիւնք են. եւ եօթն առաքիւնութիւնք. որպէս Տերն ասէ. (եօթն այս չար հոգի բնակի ի մարդն) զորս գտանէ թափուր ի բարեաց գործոց: Եւ Սողոմօն ասէ. (թէ աղաչեսցէ զքեզ թշնամին, մի հաւանիր նմա. զի եօթն չարիք գոն ի սիրտ նորա.) որք են հպարտութիւն, նախանձ, եւ այլն: Իսկ տասն եղջիրն՝ է տասն պատուիրանին անցումն. որով պատերազմի ընդ մարդկան. զի պահպանութիւն օրինացն՝ մարդոյս է զէն պատերազմի: Իսկ յանցումն օրինաց՝ լինի զէն եւ գործի դիւաց. որով պատերազմին ընդ մարդոյ: Եւ դարձեալ՝ տասն կատարեալ թիւ է. նշանակէ զկատարեալ զօրութիւնս թշնամւոյն. որով կռուի ընդ մեզ. զոր նշանակեն եղջիրքն: Եւ այնք որք տասն են եղջիրք եւ եօթն գլուխք. զի երեք գլխոյն կրկին է եղջիրն. որ է հպարտութիւն. նախանձ. եւ բարկութիւն. զի սոքօք յաջ եւ յահակ պատերազմի. եւ առննտիրս եւ առ խոտանս՝ գտանին ի բազում ուրեք երեքին ախտքս այսոքիկ: Իսկ ծուլութիւն, ագահութիւն, որկորստութիւն, եւ բղջախոհութիւն, միայն առ մոլիսն գտանին սոքա: Եւ թէ զի՞նչ է եօթն խոյրն ի գլուխ վիշապին: Ասեն վարդապետք. եօթն խոյրն՝ զդիւական ներգործութիւնս նշանակէ. որովք յաղթէ զմարդ եւ պսակի: Չի զոր աշխատութեամբ եւ քրտմամբ յաղթէ՛ զնոյն պսակն ի գլուխն իւր դնէ. նոյնպէս եւ առ մեզ. որք մրցին եւ ջանան ընդդէմ բանսարկուն, եւ մեռուցանեն զեօթն գլուխ նորա, նոքա զնոյն պսակն ժուժկալութեամբ եւ առաքիւնութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զոր կոխեն եւ յաղթահարեն. որպէս ասէ ի տեսիլն. (որ յաղթէ՛ ընկալցի զպսակն կենաց ի գլուխս իւր:) *Իններորդ հարցումն թէ՛ զի՞նչ է տուտն նորա՝ որ քարշեր գերորդ մասն աստեղաց: Պատասխանեն վարդապետք: Աստեղս

զիրեշտակս կոչէ վասն բարձրութեան եւ պայծառ լուսոյն. որպէս հրեշտակք ի յերկինս: Իսկ երրորդ մասն՝ ասէ սուրբն Մեթողիոս եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ. որք զթիւ երկնաւոր դասուցն սխալեցին: Չի մինչ ոչ էին կործանեալ, չորս կարգ էր իւրաքանչիւր դասուց որպէս յայտ է ի չորեքկերպեան կենդանեացն: Իսկ բանսարկուն սադիւլ՝ զմին յերից մասանցն զչորրորդն՝ քարշեաց ընդ ինքեան եւ կործանեաց յերկիր. որպէս ասէ տեսիլն. (առիւծն անկաւ ի յերկիր. եւ հերշտակք նորա ընդ նմա:) Եւ յասմանէ ասէ Եսայի. (զի ա՞րդ անկաւ արուսակն որ ընդ առաւօտն ծագեր:) Դարձեալ՝ զպայծառացեալսն մկրտութեամբ որպէս զաստեղս. եւ յերկինս եղեալ զխորհուրդս իւրեանց: Իսկ դէլքն՝ զանհաւատասն մտօք ի ստոր եւս քարշեն եւ յերկիր կործանեն զերկրաւորս խորհելով՝ եւ ընդ ինքեանս յատակս դժոխոց մերժեն: Իսկ տուտն՝ նախ նշանակէ զվերջին հետեւեալսն ընդ նմա. զի նա առաջին ինքնագիւտ էր ի չարն. եւ այլքն հետեւեցան նմա: Երկրորդ՝ զօրաւոր մասն է տուտն սողնոց. ցուցանէ զբռնութեամբ քարշելն ընդ ինքեան: Երրորդ՝ գլուխ վիշահին է մեղքն. եւ տուտն մահ եւ դժոխք: Նշանակէ զհետեւեալսն ի մահ եւ ի դժոխս քարշել եւ արկանել: Չորրորդ՝ տուտն նշանակէ զնեռն. որ ի վերջին ժամանակս բռնանայ եւ քարշէ զերրորդ մասն աստեղաց. այսինքն, զի ոմանք փախչին յանապատ եւ թաքչին. եւ ոմանք նահատակին եւ զերծանին: Իսկ զոմանս կորուսանէ եւ պատրէ որ է երրորդ մասն կորուսելոցն: *Տասներորդ հարցումն թէ ո՞րքան է անկումն սատանայի: Ասեն վարդապետք. անկումն սատանայի եռակի է իմանալ: Առաջին՝ եւ միջին՝ եւ վերջին: Առաջինն է տեղական: Երկրորդն յանդիմանութեան: Երրորդն պատժողական: Տեղական անկումն եղել գիւին ի սկիզբն ստեղծման իւրոյ վասն ամբարտաւանութեան եւ մախանաց ընդդէմ արարչին փառաց: Ուստի անկաւ յերկնից ի դասուց հրեշտակաց, եւ փառաց իւրոց: Իսկ յանդիմանութեան անկումն դիւաց՝ եղել զալստեամբն Զրիստոսի ի ձեռն խաչին: Եւ այս չորեքին: Նախ՝ անկումն դատապարտութեան. ըստ որում, (իշխան աշխարհիս դատապարտեալ է.) եւ այս վասն այսորիկ՝ զի չարախօսեր զմարդիկ եթէ՝ ինքնայօժար կամօք եւ բնութեամբ մեղանչեն, եւ ոչ ի պատրանաց իմոց. որպէս չարախօսէին զՅորայ. (եթէ ձրի՞ պաշտէ Յոր զՏեր, եւ այլն:) Եւ Դաւիթ ասէ. (նստան իշխանք եւ չարախօսէին զինէն.) այսպէս եւ զամենայն մարդկանէ: Չոր եկեալ Տերն անմեղ եւ անապական մարմնովն, նահանջեաց զմեղս. եւ զարդարութիւնն սփռեաց ի վերայ մարդկան. եւ դատապարտեաց զսատանայ իբրեւ զդաւաճանող մարդկան. եւ կոխան արար ի ներքոյ մարկան. ըստ այնմ, (տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրեւ զփայլակն. եւ ետու իշխանութիւն կոխել զնա:) Երկրորդ՝ անկումն եղել փառաց յուսոյն. ըստ այնմ, (իշխան աշխարհիս ընկեցցի արտաքս.) որպէս ասէ սուրբն իրինոս զբանս յուստիանոսի թէ՝ բարուք ասաց վկայն յուսախանոս: Եթէ մինչ ի զալուստն Զրիստոսի՝ ոչ իշխեր հայիոյել զԱստուած. զի յոյս ուներ դառնալոյ ի փառս. այլ յորժամ լլաւ զպարտաւորութիւնն իւր, եւ զարտաքսիլն ի փառաց, ապա քարացաւ ի չարութենէ իմաստութիւն սրտին նորա. անամօթաբար հայիոյեր զնա. եւ մատնիւր յաւիտենից տանջանացն: Երրորդ՝ անկումն էր ակնկալութիւն տանջանաց. եւ զայս մինչ ի Զրիստոս՝ ոչ զիտէին զպատրաստեալ տանջանսն իւրեանց, այլ յորժամ զբացախօսութիւն գեհենին լուան ի

Քրիստոս, ասէին. (մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ սուրբոյ Աստուած. գիտեմք զքեզ զի տանջող ես մեր:) Չորրորդ՝ անկումն է ի զօրութենէ իւրեանց, մինչ անգործ եղեալ մարտին. եւ այս կրկին: Նախ՝ խաբէութեամբ զմարդիկ ի մեղս եւ ի կռապաշտութիւն ձգելոյ: Եւ երկրորդ բռնութեամբ զհոգիս ի տանջանս տանելոյ մինչ ի Քրիստոս: Իսկ զալստեամբն Քրիստոսի՝ ակարացան ի կրկին զօրութենէ. ըստ այնմ, (թշմաւոյն զէն պակասեաց մինչ իսպառ:) Չոր ի տեսիլն անտօնի՝ խոստովանելն զբանս զայս մեկնելով ի վերայ ինքեանց: Այս վասն առաջնոյն: Եւ վասն երկրորդին՝ ինքն Տէրն ասէ. (կապեալ զհօրն՝ եւ զտուն նորա աւար հարեալ.) որ է դժոխքն. ըստ այնմ, (զքաղաքս ակերեցեր՝ եւ կորեալ յիշատակ նոցա աղաղակաւ.) զի յետ Քրիստոսի դադարեցաւ սատանայ զհոգիսն ի դժոխս ի տանելոյ. որպէս ասէ սուրբն Եպիփան եւ Դանիէլ: Այս երկրորդ՝ անկումն դիւաց չորեքկին: Իսկ երրորդ անկումն՝ տանջանաց յաւիտենական հրոյն. ըստ որում ասէ. (երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից. որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:) *Եւ աստ է կրկին հարցումն: Նախ թէ՛ սատանայ յորժամ հպարտացաւ եւ անկաւ յերկնից, թէ չէր նախանձեալ եւ անկաւ յերկնից, թէ չէր նախանձեալ ընդ փառս մարդոյն, մատնի՞ւր ի հուր գեհենին թէ ո՞չ: Պատասխանի. ասեն ոմանք. եթէ ոչ էր նախանձեալ ընդ մարդոյն սատանայի, ոչ մտաներ ի հուրն: Եւ յայտ է յայսմանէ: Նախզի՛ կրկին էր մեղքն սատանայի. այսինքն, հպարտութիւնն եւ նախանձն. եւ վասն հպարտութեանն անկաւ յերկնից. եւ վասն նախանձուն մատնեցաւ ի հուրն. զի այն էր պատիժ հպարտութեանն՝ որ անկաւ ի դասուց հրեշտակաց եւ ի տեսութեանց Աստուծոյ. զի (որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի:) Եւ այն էր պատիժ նախանձուն՝ որ վառեցաւ նախանձու հրովն. եւ ի հուր գեհենին մատնիւր: Երկրորդ՝ յայտ է ասեն՝ զի թէ չէր նախանձեալ ընդ մարդոյն, եւ ոչ էր զրկեալ ի փառացն, Աստուած ոչ դատապարտէր զմարդն. եւ ոչ լինէր առաջին գալուստն Քրիստոսի. նա ոչ վերջին. եւ ոչ դատաստան. եւ ոչ գեհեան հուրն յաւիտենից: Այլ ես ասեմ թէ՛ կարծիս այս ոչ է հաստատուն վասն կրկին պատճառի: Նախ՝ թէ վասն հպարտութեանն անկաւ սատանայ՝ եւ վասն նախանձունն ի հուրն մատնի, յայնժամ մեծագոյն լինէր մեղանչումն ընդդէմ ընկերին քան ընդդէմ արարչին. որ է սուտ: Երկրորդ՝ զի մեղք հպարտութեանն ընդդէմ Աստուծոյ՝ եւ մեղք նախանձունն ընդդէմ մարդոյն՝ համանգամայն կրեցաւ ի սատանայ մինչ ի յերկինս էր. որպէս ասեր Յոբ. (վասն իմ թողին զգործս իւրեանց.) այսինքն, զի սատանայ ետես զմարդոյն լինիլն այնպէս փառաւոր՝ եւ նախանձեցաւ ընդ նմա. որպէս ասէ մեծն Իրինոս. եւ այնպէս ախտիւ հպարտութեան եւ նախանձու անկաւ յերկնից: Ապա ուրեմն սուտ են կարծիքն թէ վասն հպարտութեանն միայն անկաւ. եւ վասն նախանձունն ի հուրն մատնեցաւ: Իսկ որ ճշմարիտն է՝ թեպէտ յետ ստեղծանելոյ մարդոյն նախանձեցաւ. այլ յորժամ հպարտութեան ախտիւն անկաւ յերկնից, մատնեցաւ ի հուր գեհենին: Եւ յայտ է յերկուց: Նախզի՛ կամակոր մտօք հպարտացաւ սատանայ. որ է կամք եւ մեղք. եւ ըստ որում մեղք է հպարտութիւնն անկաւ յերկնից. եւ ըստ որում կամաւ՝ մատնեցաւ ի հուր: Երկրորդ՝ զի նոյն ախտիւ հպարտութեան որով ինքն անկաւ՝ պատրեաց զԱդամ եւ որպէս Ադամ ի դրախտէն եւ մատնեցաւ ի հուր. այսպէս եւ սատանայ վասն հպարտութեան իւրոյ՝ ընկալաւ զկրկին

պատիժս: Այժմ պատասխանեցուք կարծեաց ևոցա: Առաջնոյն ասեմք թէ՛ ոչ միայն մեղքն սատանայի կրկին էր, այլ բազում եւ անթիւ: Նախզի՛ սկզբնաչար եղել. եւ ապա ամենայն չարեաց առիթ. ապա պարտ էր զի գամենայն պատիժս կրեսցէ: Երկրորդին ասեմք. թեպէտ չէր նախանձեալ ընդ մարդուն. ոչ գերծանիւր ի գեհեւոյն. այլ յորժամ մարդն յարքայութիւն վերափոխէր վասն պատւիրանին պահելոյ՝ ի նոյն ժամն սատանայ ի գեհեանն տանջիր. զոր պատրաստեալ էր նմա ի սկզբանէ աշխարհի: Եւ մեղք նախանձուն՝ յաւելլ նմա զխստութիւն տանջանաց գեհեւոյն. զի պատճառ եղել բազմաց կորստեան: Եւ դարձեալ՝ նախանձն սատանայի՛ ոչ եղել պատճառ մարդեղութեան բանին. ա յլ տեսչութիւնն հօր. զի նախքան զյաւիտեանս սահմանեաց Քրիստոսիւ գիրկութիւն մարդկան. այլ կարգ փրկութեան՝ յետ նախանձու եւ անկանելոյ մարդոյն եղել: Այս առաջին հարցումն: *Երկրորդ հարցումն թէ՛ ո՞րպէս է զի անկումն սատանայի մահ է համարեալ նմա. եւ այն զի խաչին սպանաւ. եւ ի կատարածի մատնելոց է ի հուրն: Պատասխանի: Ասեմք եթէ՛ անկումն սատանայի երեք է. այսինքն, տեղական. յանդիմանութեան. եւ պատժական: Տեղական անկումն է ի սկիզբն ստեղծմանն՝ որ վասն հպարտութեան իւրոյ ընդդէմ փառաց արարչին անկաւ յերկնից եւ զրկեցաւ ի հրեշտակաց դասուց, ըստ այնմ, (զի ա՞րդ անկաւ արուսեակն որ ընդ առաւօտն ծագէր:) Իսկ յանդիմանութեան անկումն՝ եղել խաչին Քրիստոսի. ըստ այնմ, (իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է. եւ ընկեսցի արտաքս.) զի յանդիմանեցաւ եւ երեւեցաւ պարտկան ամենայն մեղաց. այլեւ յանդիմանեցաւ եւ ծանեաւ զպատիժն իւր յոր յաւիտեան էր տանջելոց. որպէս ասէին դէւքն. (զիտեմք՝ մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ:) Իսկ պատժական անկումն է ի հուրն յաւիտենից. զի ի կատարածի ընդունելոց են զտանջանս: Արդ՝ որպէս սոքա երեք են անկմունք սատանայի. այսպէս երեք են մահք սատանայի. առաջին. միջին. եւ վերջին: Առաջին՝ անկումն ևոցա մահ է համարեալ: Միջին՝ խաչին Քրիստոսի սպանաւ սատանայ եւ կապեցաւ: Եւ վերջին մահն՝ ի հուրն տանջեսցի: Եւ դարձեալ՝ որպէս մահն Ադամայ եռակի է. այսինքն, մահ մեղաց. եւ մահ պատժոց. եւ մահ տանջանաց: Չմեղաց մահն կրեաց յորժամ անկաւ ի դրախտէն, եւ պարտական եղել մահու: Եւ զմահ պատժոցն կրեաց ի մեռանիլն: Եւ զմահ տանջանացն ի դժոխս: Այսպէս եւ սատանայ կրեաց զմահ մեղացն, յորժամ անկաւ յերկնից: Եւ զմահ պատժոյն ի ձեռն խաչին Քրիստոսի: Եւ զմահ տանջանացն՝ ի հուրն յաւիտենից: Այսքան առ այս: Արդ՝ այսպէս եղել սատանայի անմտութիւնն եւ կորուստն որպէս ասացաւ: Վասն որոյ ասէ իմաստունն: (Ծառայ իմաստուն տիրեցէ Տերանց անմտից. եւ ընդ եղբարս բաժանեսցէ մասն ժառանգութեան:) Արդ ծառայ չար կոչէ զմարդակայինս բնութիւն՝ որք ծառայք եղեն մեղաց. (զի ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց.) եւ որպէս ծառայք եղեն մեղաց՝ տեր եւ իշխան արարին անձնիշխան կամաւ ի վերայ ինքեանց զսատանայ որ պատճառն էր մեղաց: Չի իշխան աշխարհի կոչեցաւ. ոչ թէ իշխան էր կամ Տեր աշխարհի, այլ աշխարհասեր մարդիկ աշխարհ կոչին. որոց տիրեաց սատանայ կռապաշտութեամբ եւ անօրէնութեամբ: Եւ երկու ամրոց եւ քաղաք շինեաց ստանայ. մին զկռապաշտութիւնն. եւ զանազան մեղօք պարստեաց զնա: Եւ երկու քաղաք՝ էր դժոխքն. եւ մահն պարիսպ նմա: Եւ այս երկու քաղաքաս՝ տիրեաց մարդկան. եւ չարչարեր զնոսա ի կեանս

մեղօք եւ կռապաշտութեամբ. տիրեր եւ իշխեր մարդկան: Եւ յետ մահու՝ զհոգիս յամրոցս դժոխոց տանչեր. եւ փական ուներ զմահն. յորմէ ոչ ոք կարեր զերծանիլ. եւ այնպէս հանապազ ի կեանս եւ ի մահ՝ տիրեր եւ չարչարեր զմարդիկ: Իսկ յորժամ մարդասերն Աստուած գթացաւ ի մարդկային ազգս, Էառ զժառանգի կերպարանս. եւ եղեւ մարդ ի կուսէն. եւ անմեղ եւ անարատ պահելով զհոգի եւ զմարմին ի յարկածից բանսարկու թշնամւոյն, յաղթեաց նմա չորիւք յաղթութեամբ: Նախ՝ ի փորձ մտանելով յաղթեաց փորձողին. զի որ զառաջինն Ադամ փորձեաց եւ յաղթեաց. զերկրորդն Ադամ փորձեաց եւ յաղթեցաւ: Երկրորդն Ադամ փորձեաց եւ յաղթեցաւ: Երկրորդ՝ յաղթեաց նմա անմեղութեամբն ի հոգին ի մարմին, ի միտս եւ ի բանս. որպէս ասեր՝ (գայ իշխան աշխարհիս այսորիկ. եւ յիս ինչ ոչ գտանէ յիւրոցն: Չի ոչ արար մեղս՝ եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա:) Երրորդ՝ յաղթեաց յորժամ ի խաչ բարձրացաւ եւ մեռաւ վասն մեր անպարտականն մահու, զպարտս մեր վճարելով, եւ մահւամբ զմահ եբարձ: Եւ յետ այնորիկ էջ ի դժոխս. եւ ազատեաց զհոգիսն ի տանջանաց. եւ այնպէս զիշխանութիւնս սատանայի եբարձ ի մարդկանէ եւ դատապարտեաց զնա. ըստ այնմ, (իշխան աշխարհիս՝ դատապարտեալ է եւ ընկեցցի արատաքս:) Եւ այսպէս չորիւք յաղթութեամբ զկրկին քաղաքս եւ զերկոսին ամրոցս սատանայի կործանեաց. այսինքն, փորձութեամբն զկռապաշտութիւնն եբարձ. եւ անմեղութեամբ զմեղսն. մահւամբ զմահ եբարձ. եւ զհոգիսն ի տանջանաց ազատեաց. եւ այսպէս կործանեաց զիշխանութիւնն սատանայի. եւ զքաղաքս նորա աներեաց. ըստ այնմ որ ասէ Դաւիթ. (զքաղաքս նորա աներեցեր. եւ կորեաւ յիշատակ նորա աղաղակաւ:) Եւ որպէս որ զթշնամին յաղթէ՝ զգէն նորա յափշտակէ. նոյնպէս տեր զթշնամին այսպէս յաղթեաց. կապեաց զհզօրն. եւ զգէն նորա յափշտակեաց. այսինքն, զրկին ձեռն սատանայի զբռնութիւնն եւ զխաբէութիւնն. զորս կապեաց Քրիստոսի: Չբռնութիւնն արգել զի այլ ոչ իշխէ տանիլ զմարդկան հոգիս ի դժոխս. եւ զխաբէութիւնն յայտնեաց՝ զ ի ամենեքեան ճանաչեն զպատրանս նորա. եւ սոքա էին զէնք եւ ատամուկս նորա. ըստ այնմ, (գատամուկս մեղաւորաց փշրեցես:) Դարձեալ զէն էին թշնամւոյն. որպէս կախարթք, դեղատուք, չարագործք, եւ մարդասպանք. զորս զամենեսեան խափանեաց եւ կորոյս. ըստ այնմ, (թշնամւոյն զէն պակասեաց մինչ իսպառ:) Եւ որպէս ինքն կատարեաց զայսոսիկ, եւ յաղթեաց թշնամւոյն. նոյնպէս իրախոյս ետ հաւատացելոցն ասելով. (քաջալերեացուք՝ զի ես յաղթեցի աշխարհի. եւ ետու ձեզ իշխանութիւն կոխել զօծս եւ զկարիճս եւ զամենայն զօրութիւն թշնամւոյն:) Օձ եւ կարիճ կոչէ զսատանայ: Նախզի՝ որ բարձրացեալ էր եւ իշխեր մարդկան՝ արար ի ներքոյ ոտից եւ կոխան մարդկան: Երկրորդ՝ զի օձն եւ կարիճն՝ ընդ երկիր սողալով հարկանէ. եւ ոչ կարէ բարձրանալ: Նոյնպէս եւ սատանայ երկրաքարշ խորհրդով պատերազմի. եւ ոչ կարէ իշխանութեամբ տիրել: Երրորդ՝ օձն ի գլուխն ունի զթոյնսն. եւ կարիճն ի տուտն. նշանակէ գլուխն զմեղսն. եւ տուտն զմահն: Եւ դարձեալ՝ գլուխ է մահն ըստ մարմնոյ. եւ իսայթօցն յետոյ է դժոխքն. զորս եբարձ Քրիստոսի. եւ ետ իշխանութիւն հաւատացելոց իւրոց կոխել զնոսա. ըստ այնմ, (ո՛ր է մահ յաղթութիւն քո. ո՛ր է դժոխք իսայթօց քո:) Եւ այսպէս պայծառ էր մարդկային ազգս. եւ իմաստութեամբ իւրով տիրեաց անմիտ տերանց: Իսկ թէ զի՞նչ է նմտութիւնն

սատանայի. ի վերայ բազում անմտութեանն որ ցուցաւ ի վերոյ՝ կրկին եւս անմտութիւն է նմա. Առաջին՝ զի ոչ հաւատացին եւ ոչ ծանեան զնա: Չի թեպէտ ի կրից տանջանացն ասէին յոչ կամայ. (գիտեմք զՔրիստոս ով ես Աստուծոյ.) այլ կարծեօք էին. ի խստութենէ տանջանացն եւ յոչ կամայ ասէին: Երկրորդ անմտութիւն է նոցա՝ զի ոչ կարացին ապաշխարել եւ զղջանալ զմեղս որպէս ցուցաւ ի վերոյ: Վասն այսր անմտութեանս որ կարծեր իշխան գոլ զինքն եւ տէր, ծառայ եւ կոխան եղել ի ներքոյ մարդկան: Իսկ թէ զի՞նչ է իմաստութիւն մարդոյ: Նոյնպէս կրկին է: Նախզի՝ հաւատացին ի Քրիստոս եւ փրկեացան: Երկրորդ՝ զի ապաշխարեցին զմեղս. որով ապրեցան եւ գերծան ի տանջանաց. որպէս ինքն Տէրն ասէր. (որդիք աշխարհիս՝ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց:) Տես՝ զի որդիք լուսոյ ասէ զնոսա. ոչ յանձինս իւրեանց, այլ յազգս իւրեանց. զի սատանայ խաւար է մտօք եւ մեղօք եւ տանջանօք. թեպէտ ի լոյս կերպարանի զի այնու պատրեցէ զմարդ: Այն է որ ասէ: (Ծառայ իմաստուն՝ տիրեցէ տերանց անմտից. եւ ընդ եղբայրս բաժանեցէ մասն ժառանգութեան:) *Եղբարս կոչէ մարդոյս զհրեշտակացն դասս. զի ի միոյ ծնողէ եւ արարչէ գոյացան եւ եղեն. որպէս յառակս անառակին՝ երեց եւ կրտսեր որդիս անլանէ: Նախզի՝ նոքա երեց են ժամանակաւ. զի ընդ լուսոյն եւ հրեղէն երկնիցն գոյացան. եւ մարդս կրտսեր ի վեցերորդ աւուրն արարաւ: Երկրորդ՝ նոքա իմացականք են. եւ մարդս բանական: Երրորդ՝ նոքա անմահք. եւ մարդս մահկանացու: Չորրորդ՝ նոքա անմարմինք. եւ մարդս մարմին եւ կրտսեր: Հինգերորդ՝ երեցեն նոքա. զի միահաղոյն գոյացան եւ կատարեցան թուով. իսկ կրտսեր է մարդս ծննդեամբք ի միմեանց յապաղելով կատարեալ: Վեցերորդ՝ երեց նոքա եւ ուսուցիչ եւ ինամածու մարդկան. եւ սոքա ի նոցանէ դաստիարակեալք: Եօթներորդ՝ երեց են տեղեալ, ի բարձունս ընկալեալ զտեղի եւ զլոյս. եւ մարդս կրտսեր ի ներքին վայր աշխարհի եւ խաւարամած: Ութներորդ՝ երեց են նոքա հզօր զօրութեամբ եւ կարողութեամբ: Իսկ մարդս կրտսեր եւ տկար գոյացութեամբ եւ պատահմամբ: Իններորդ՝ երեցեն նոքա մերձակայ Աստուծոյ. եւ ի դրունս թագաւորին սպասաւորք. զոմանս պատուեն. եւ զոմանս պատժեն. եւ կրտսեր մարդս տարաշխարհիկ եւ գռեհիկ գոլով. եւ ի ձեռն նոցա կառաւարեալ: Տասներորդ՝ երեց են նոքա ի նոյն կէտ ստեղծմանն երանեալք եւ ընկալեալք զփառս եւ զպատիւ. եւ կրտսեր մարդս. զի բազում ամօք եւ չարչարանօք ժամանէ ի նոյն: Արդ՝ այսոքիւք եւ և առաւել քան զայսոսիկ՝ փառօք եւ պատուով երեց եւ անդրանիկ կոչին հրեշտակք քան զմարդիկ. եւ են ի հանգիստ երւ ի լոյս վիճակեալք յաւիտենից: Իսկ գալստեամբն Քրիստոսի՝ մարդկային ազգս եղբարց իւրոց հրեշտակաց մասնակից եղել երկնային հանգստեանն՝ եւ լուսեղէն պսակացն եւ պատուոյն: Որպէս առաքեալն. (փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի.) այսինքն, ի խաւարային դիւաց. (եւ կոչեաց Քրիստոս ի մասն վիճակի սրբոցն ի լոյս.) այսինքն, կոչեաց ի բաժին ժառանգութեան լուսեղիսացն սրբոց: (Որով ունիմք զփրկութիւն ի ձեռն արեան նորա. եւ զթողութիւն մեղաց.) այսինքն, խաչիւ եւ արեամբ իւրով ներգործեաց զայս ամենայն Տէր մեր Քրիստոս: Որ զպարտս մարդկային ազգի վճարեաց. եւ զհայր հաշտեցոյց իւրով անապական մահուամբ. եւ զդուռն դրախտին երկնաւորի եբաց. եւ արժանի արար ի ձեռն հաւատոց ժառանգութեան

Լորին: Որեւ այսօր ունիմք զփրկութիւն եւ զթողութիւն մեղաց ի ձեռն արեան
 Լորա. որ միշտ պատարագի ի վերայ սրբոյ սեղանոյս Աստուծոյ, ի
 փրկութիւն եւ ի փառս ամենայն հաւատացելոց իւրոց: Այլեւ գիտելի է՝ որ
 այսպէս կրտսեր եղբարք՝ ժառանգակից եղաք անդրանկացն դասուց որպէս
 ցուցաւ: Որեւ ոչ ըստ հաւասարութեան, այլ առաւել եւս չորից գերազանց
 պատուոյ, արժանի արար զմեզ միածինն մարդեղութեամբ: Նախ եւ
 առաջին՝ զի Բանն Աստուած եղեւ մարմին ի բնութենէ մերմէ, եւ ոչ ի
 հրեշտակաց. ըստ առաքելոյն. (զի ոչ զհրեշտակաց բունն հարկանէ, այլ
 զգաւակէն Աբրահամու:.) Չորեւ միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն,
 նմա երկրպագեն ամենայն երկրաւորք եւ երկրաւորք: Այլ մեք հրեշտակաց
 ոչ երկրպագեմք. որպէս ասացաւ առ Դանիէլ. (մի երկիրպագաներ ինձ՝ այլ
 Աստուած. զի մեք պաշտօնեայք եւ ստեղծակից ձեր ենք:.) Երկրորդ յայտ է
 այսու՝ զի մեղանչական բնութիւնս մարդկային դարձմամբ եւ հաւատովն ի
 Քրիստոս՝ ել յերկինս եւ ելից զտեղի անկելոց ևոցին: Իսկ երրորդ յայտ է
 յայսմանէ. զի ծննդեամբ ի հոգւոյն սրբոյ լինիմք որդիք Աստուծոյ հօր եւ
 եղբարք Քրիստոսի եւ ժառանգակիցք: Իսկ ևոքա ոչ ծնանին աւագանաւն. եւ
 ոչ զորդիութեան պատիւն ունին. եւ ոչ լինին եղբարք Քրիստոսի. այլ միշտ
 զտերութեան եւ զծառայութեան կարգս: Չորրորդ՝ զի գլուխ գլով մեր՝ եւ
 մեք անդամք. նա կոչի փեսայ՝ եւ եկեղեցի հարսն Քրիստոսի: Եւ միաւորի
 ընդ մեզ որպէս գլուխ յանդամս, եւ փեսայ ընդ հարսին անքակտելի
 միութեամբ: Իսկ ընդ հրեշտակս միացեալ է որպէս Տեր ընդ ծառայս եւ ընդ
 պաշտօնեայս. թողում զայն՝ (զի յեկեղեցւոյ ուսաց զբազմապատիկ
 իմաստութիւնս ըստ առաքելոյն: Եւ հոգիք են հարկաւորք ի սպասու
 այնոցիկ՝ որք ժառանգելոց են զփրկութիւն:.) Այլ այսու գերազանց
 միութեամբ՝ որպէս անդամք ի գլուխն մեր միացեալ. զի գլուխ մեր Քրիստոս
 է. եւ նավաւ ենք ի հայր միացեալ. զի Քրիստոս Աստուած է ընդ հօր
 հաւասար. ուրեմն ապա միջնորդութեամբ որդւոյ՝ հայր ընդ մեզ միացեալ է.
 եւ լինիմք մի ընդ նմա ըստ անսուտ խոստմանն. (որպէս դու հայր ի յիս եւ ես
 ի քեզ. զի եւ սոքա ի մեզ իցեն. զի եղիցին կատարեալք ի մի:.) Եւ այսու
 միութեամբ լինիմք Աստուած ընդ Աստուած միացեալ անբաժանաբար:
 Որում արժանաւորապէս վայելեցցի փառատրութիւն եւ երկրպագութիւն
 Տերն եւ Արարչին, երիցն ի միում անբաժանելի բնութեան, երիցն ի միում
 անբաժանելի բնութեան յարակայ եւ անկետ յաւիտեանից ամէն:

Յայլմէ քարոզ հրեշտակապետացն. ի Բանն որ ասէ տեսիլն: (Եղեւ
 պատերազմ արկինս. Միքայել եւ հրեշտակք իւր՝ կռուէին ընդ վիշապին. եւ
 ոչ կարացին ընդդէմ կալ, եւ այստեղի ոչ գտաւ ևոցա յերկինս:.) Յայտ. 12. 7:
 (Գլուխ. ճեւէ)

Յոր ժամ ել Յակօբ ի տանէ Զօր իւրոյ եւ երթայր յօտարութիւն, եւ
 հասել ի Բեթել ևնջեաց. եւ եղ վէմ մի ի սնարս իւր. եւ ետես սանտուխ յերկրէ
 յերկինս հաստատեալ. եւ Տեր էր ի գլուխ սանտիւոյն. եւ հրեշտակք ելանէին
 եւ իջանէին:.) Ամենայն ինչ որ կայ ի մէջ հակառակաց՝ բարեխառն է. որպէս
 իր որ լինի ի մէջ երկնից արքայութեանն եւ դժոխոցն. պատեհ էր որ
 բարեխառն լինէր. եւ արդ ոչ է այսպէս զի կարի մերձ ենք ի դժոխս, քան
 յերկինս. եւ դէպ ի վայր ընկնիլն հեշտ է քան ելանել ի վեր: Վասն այսորիկ

կազմեաց Աստուած սանտուխ գտուրք կոյսն Մարիամ. եւ երկու կողմն սանտխոցն՝ Է հոգի եւ մարմինն նորա: Եւ սանտուխս այս՝ ունի եօթն մատն. այսինքն, եօթն գործ ողորմութեանն, զոր արար սուրբ կոյսն որդւոյն իւրոյ: Նախզի՝ Էր քաղցեալ եւ կերակրեաց. ծարաւի եւ արբոյց. մերկ եւ զգեցոյց, եւ այլն: Արդ՝ արժանաւորք սանտխոյս այս՝ պարտ է զի օտարք լիցին յաշխարհական հեռութեանց որպէս Յակօբ. եւ ի Բեթել՝ որ նշանակէ գտուրք եկեղեցի. եւ որ ննջեր՝ այսինքն, անհոգս լիցի ի հոգոց աշխարհի. եւ որ դներ վեմ ի սնարս, այսինքն, որ հաստատէ գոյս իւր ի Զրիստոս: Յորժամ լինի քո ի հօր կողմանէն որդի թագաւորի, եւ ի մօր կողմանէն որդի ծառայի, եթէ սիրէ զմեծութիւնն՝ պարտի յարիլ առ ընտանիս հօրն. եւ խոտել զազգականս մօրն: Արդ՝ մեք որդի եմք թագաւորի ի կողմանէ Աստուծոյ. եւ ընտանիս ունիմք զհրեշտակս. եւ մայր ունիմք զհողս. եւ ընտանի զանբանս եւ զսողունս: Վասն այսորիկ պարտ է խոտել զփառս աշխարհիս. եւ յարիլ հրեշտականց. եւ որք անասնական կենօք վարին, են զօրք վիշապին. եւ որք սրբութեան կենան՝ են զօրք հրեշտակաց՝ որք պատերազմեալք յաղթեցին վիշապին: Գիտելի է՝ զի պատերազմս այս եղեւ յերկինս՝ երկեցուցանէ զմեզ վասն վեց պատճառի: Նախ զի՝ թէ յերկինս ոչ է խաղաղութիւն, եւ անկան յերկնից բազում հրեշտակք, զի մի վիշապ կայր անդ, զի՞նչ լինելոց է յաշխարհս որ է անապատ ի բազմավիշապ: Վասն որոյ ասէ սաղմոսն: (Ահ եւ դողումն եկն ի վերայ իմ. եւ ծածկեաց զիս խաւար:) Երկրորդ՝ զի թէ Սադայել անկաւ ի մեղս որ ոչ ուներ մարմնական ցանկութիւն ի ներքուստ. եւ ոչ փորձիչ յարտաքուստ: Իսկ մեզ զի՞նչ լինելոց է որ զերկուսն ունիմք: Երրորդ՝ զի թէ դեք վասն մի մեղաց հպարտութեանն անկան: Իսկ մեք զի՞նչ լինիցիմք՝ որ զեօթն մահու չափ մեղսն գործեմք: Վասն այսորիկ Պետրոս ի կաթողիկէն ասէ. (թէ որ ապստամբ հրեշտակացն ոչ ներեաց՝ եւ ոչ քեզ:) Եւ հռօմայեցւոցն ասէ. (մի հպարտանար. այլ երկիր. զի թէ Աստուծ ի բուն ոստն ոչ ինայեաց, գուցէ երբեք եւ ի քեզ ոչ ինայեսցէ:) Մեղք դիւրին՝ Էր հպարտութիւն, եւ նման լինիլն Աստուծոյ. եւ ոչ լինիլ ի ներքոյ ձեռինն Աստուծոյ. եւ իւր զօրութեամբ իշխել ամենայն հրեշտակացն. որպէս եւ Եսայի ասէ զմեղս Սադայելի: (Դու ասեր ի սրտի քում. ելից ի վերոյ քան զաստեղս եկնից. եւ անդարկից զաթոռ իմ:) Չորրորդ՝ զի թէ սատանայ իշխեաց վիճել ընդ հրեշտակս, զի՞նչ արասցէ եւ ընդ մեզ, զի եւս ընդ Զրիստոս պատերազմեցաւ ի յանապատին: Հինգերորդ՝ զի ոչ պատերազմի ընդ մեզ վասն ոսկոյ եւ արծաթոյ. այլ վասն փառացն զոր ինքն կորոյս: Վեցերորդ՝ զի բազում զինուք մարտնչի ընդ մեզ. այսինքն, տասն գլխօք եւ եօթն եղջերօք. եւ տտամբն եւս որպէս ասէ տեսիլն: Նաեւ բերանովն մարտնչի. որպէս ասէ տեսիլն թէ՝ (եհեղ օձն զթոյնս իւր զհետ կնոջն իբրեւ զգետ. զի ընկղմեսցէ զնա. եւ օգնեաց երկիր կնովն. եբաց երկիր զբերան իւր, եւ եկուլ զգետն զոր եհեղ վիշահն ի բերանոյ իւրմէ:) Կինս այս՝ նշանակէ զեկեղեցի յաւուրս Զրիստոսի. յոր վիշապն յարոյց զանազան փորձութիւն. այլ երկիր Էր մարմինն Զրիստոսի՝ որ եկուլ զամենայն փորձութիւնս չարչարանօքն իւրովք ի պատռուածս խոցուածոցն Զրիստոսի: Արդ՝ որպէս ընդ պատերազմիլն դիւին տրտմեցաք. այսինքն եւ ընդ յաղթելն սուրբ Միքայելի՝ ուրախասցուք: Գիտելի է՝ զի ոմանք ասեն թէ՝ հրեշտակք որք ստեղծան ի միաշաբաթի՝ յերկու շաբաթի օրն անկան. վասն այսորիկ ոմանք տօնեն զերկու շաբաթի օրն ի պատիւ հրեշտակացն՝ որք ոչ անկան, այլ

հաստատեցան: Իսկ այլքն՝ ստուգագոյն ասեն թէ՛ մին օր ի լման ոչ մնացին. այլ յառաջին կետն որք ստեղծան՝ յերկուսն անկան: Ոմանք ասացին թէ՛ դեւքն չար ստեղծան յԱստուծոյ. եւ այս մոլորութիւն է. զի ամենայն ինչ յԱստուծոյ բարի ստեղծաւ: Եւ Տէրն ասէ Յօհաննու վասն սատանայի. (ի ճշմարտութեանն ոչ եկաց.) այսինքն, ի ճշմարտութիւնն ստեղծաւ. եւ այն զի ճշմարիտն եւ բարին անդրադարձին: Այլեւ ոչ ի նոյն կետն որք ստեղծան անկան. զի անկարելի է ումեք ի նոյն կետն չար եւ բարի լինիլ: Սաղայել անկաւ ի վերին դասուն վասն հպարտութեանն՝ տեսանելով զինքն գեղեցիկ. որպէս ասէ Էզեկիել վասն Սաղայելի: (Դու կնիք նմութեան լի իմաստութեամբ. ի գրգանս դրախտին Աստուծոյ եղեր. եւ զամենայն ակունս պատուականս ի քեզ կապեցեր. զսարդիոնն եւ զտպագիոնն, զգմբուխտն եւ զկարկեհանն եւ զշափիւղայն. զասպիս. զգրճագմն. զակինգ. զմելեսիկ. զոսկեքարն. զքիւրեղն եւ զեղընկնաքարն: Եւ յետոյ ասէ. բարձրացաւ սիրտ քո ի գեղեցկութեան քում. եւ ապականեցաւ հանճար քո. եւ վասն բազմութեան մեղաց քոց՝ ընկեցի զքեզ յերկիր:) Ինն ակամբն՝ նշանակին ինն դասակարգութիւնք հրեշտակաց. եւ երիւքն երեք քահանայապետութիւնքն: Սոքա ամենեքեան՝ էին ի հանդերձս սաղայելի. ի յամենայն դասէ որք հաւանեցան սաղայելի՝ անկան. զի սաղայել զկամս իւր ամենայն հրաշտակացն եղոյց. եւ որք հաւանեցան՝ անկան: Որպէս եւ սուրբ վարդապետ ոմն քարոզէր յեկեցեղի մի. զոր դեւքն ցուցին բազում կրօնաւորօք ի լի. նա յորժամ սկսաւ քարոզել՝ յառաջի դասէն ոմանք ի կրօնաւորացն ելին. եւ այսպէս մինչեւ ի վերջին դասն եկն. եւ ամենեքեան ելին. եւ ինքն մնաց միայն. եւ գիտաց որ դիւական էր: Եւ այսպէս յայտ է թէ՛ յամենայն դասուց անկեալ են. Միքայել է ի դասէ պետացն. ի ժամանակս Մովսեսի էր պահապան հիւնն եկեղեցւոյ. եւ այժմ նորոյս: Սաղայել փորձեաց զՏէրն ի յանապատին. եւ ետ սպանանել. իսկ Տէրն կապեաց զնա շղթայիւք ի դժոխս. որպէս ասէ տեսիլն: (Տեսի այլ հրեշտակ զի իջաներ ի յերկնից. եւ ուներ զփականս դժոխոցն. եւ շղթայս մեծ ի ձեռին իւրում. եւ կապեաց զիշապն հազար ամ. եւ յետ այնորիկ՝ լուծցէ զնա սակաւ ժամանակս:) Յրեշտակն ցուցանէ զՔրիստոս. եւ հազար ամն՝ զկատարեալ թիւն նշանակէ որ է մինչեւ ի ժամանակս նեռին. եւ նեռն զօրութեամբ սաղայելի բազում չարիս գործէ. իսկ սուրբն Միքայել՝ հրամանաւն Քրիստոսի սպանանէ զնեռն ի լեռն ձիթենեաց: Վասն որոյ եւ մարգարէն Դանիէլ խօսի զաւուրց նեռինն եթէ՛ (ի վերայ այսր ամենայնի՝ ոչ ոք էր որ օգներ մեզ. բայց միայն Միքայել զլուխն մեր:) Եւ սաղմոսն ասէ. (հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո ի պահել զքեզ:) *Գիտելի է՝ զի հրեշտակք ոմանք են պահապան բոլոր աշխարհի. ոմանք միոյ թագաւորութեան. ոմանք միոյ գաւառի. ոմանք միոյ քաղաքի. եւ ոմանք միոյ անհատի: Սերովբէքն եւ քերովբէքն եւ աթոռքն՝ միշտ առաջի Աստուծոյ կան: Սերովբէն ասի կիզիչ. եւ նշանակէ զօրերն: Եւ քրովբէն բազում գիտութիւն. կամ հեղումն իմաստութեան: Իսկ աթոռքն են՝ յորս Տէրն նստի: Իսկ բնականապէս սերն նախկին է քան զիմաստութիւնն. եի իմաստութիւնն քան զդատելն: Տերութիւնքն են ի վերայ ամենայն թագաւորութեան ինամելով զնոսա ի վերայ այլոց հրեշտակաց: Իսկ զօրութիւնքն են ի վերայ շարժմանց երկնից, շարժելով զնոսա հրամանաւն Աստուծոյ. եւ այլոց եւս բաշխեն զօրութիւնս: Եւ իշխանութիւնքն արգիլեն զդեւսն չառնել այնչափ որքան կամին: Իսկ պետութիւնքն են ի վերայ

թագաւորութեան մերոյ. որպէս ասէ Ղանիէլ. (իշխանն պարսից եկաց ընդդէմ իմ քսան եւ մէկ օր:) Գիտելի է՝ զի ասէն ոմանք թէ՛ գլխաւորն պարսից որ կայր ընդդէմ հրեշտակին իսրայելացոց, դէւ էր. զի որպէս ամենայն թագաւորութիւն ունի վերակացու բարի հրեշտակ. այսպէս եւ ունի չար հրեշտակ. ասելով թէ՛ բարի հրեշտակն՝ ընդ բարի հրեշտակին ոչ պատերազմի: Այլ Գրիգոր պահն՝ լաւագոյն ասէ թէ՛ երկու էին բարի հրեշտակք. զի չար հրեշտակն ոչ կարէ ընդդէմ կալ բարի հրեշտակին ԻԱ օր: Այլ այնչափ էր պատերազմ ի մէջ խոցա՝ զի հրեշտակն իսրայելացոց ի գերութենէ. զի եւ Ղանիէլ ստեպ աղօթեր: Իսկ հրեշտակն պարսից ասէր. օգտակար է իսրայելացոցն ի գերութիւնս կալ. զի աստ առաւել պահեն զպատուիրանս Աստուծոյ, քան յազատութեանն: Այլ կամքս այս յերկու հրեշտակն՝ զանազանապէս էր ի միտս. այլ ոչ գործով պատերազմէին. բայց ոչ գիտէին զկամս Աստուծոյ: Իսկ յորժամ գիտացին, ոչ հակառակեցան: Չի թէպէտ հրեշտակք տեսանէն զԱստուած անընդմիջաբար. այլ ոչ զամենայն խորհուրդս եւ զկամս Աստուծոյ գիտեն: Յրեշտակապետք պահապանք են քաղաքաց. իսկ հրեշտակք անհատի միոյ. որպէս ասէ Տէրն. (զգուշ լերուք. մի արհամարիէք զմի ի փոքրկանցս. զի հրեշտակք խոցա հանապազ տեսանէն զերեսս հօր իմոյ:) Յորժամ տղայն առնու զբանական հոգին՝ հրեշտակ կարգի պահապան նմա մինչեւ ի մահ: Զրիստոս ոչ ունէր պահապան զհրեշտակն, այլ սպասաւոր: Նեռն ունինցի պահապան հրեշտակ. այլ յորժամ կարի խստանայ ի չարն, ի բաց կացցէ հրեշտակն: *Պահապանութիւն հրեշտակացն՝ չորս ազգ օգտութիւն առնէ հասարակաբար: Նախզի՝ զմարդիկ ի բարին յորդորեն՝ այլ բռնադատեն: Երկրորդ՝ պահեն որ ի մեղս ոչ անկանիմք: Երրորդ՝ թէ անկանիմք, կանգնեն: Չորրորդ՝ զի մի այնչափ չար գործեմք, որչափ սատանայ կամի: Այլ մասնաւոր օգնութիւնքն բազում են: Առաջին՝ զի նախատեն զմարդն վասն չար գործոցն. որպէս յայտ է ի դատաւորութեանց. (հրեշտակ Տեառն եկն առ ժողովուրդն հրեից ի գաղգաղայ եւ նախատեաց զնոսա վ ասն մեղացն ասելով թէ՛ զիրաման Տեառն ոչ պահեցիք. եւ նոքա զղջացեալ լացին:) Երկրորդ՝ որք ննջեն ի մեղս՝ զարթուցանեն. որպէս ասսէ ի գործսն. (հրեշտակ Տեառն խթեաց զկողսն Պետրոսի եւ յարոյց զնա. եւ անկան շղթայքն ի ձեռաց նորա:) Երրորդ՝ զարգելմունս բարեացն խափանեն. որպէս ասէ յելսն թէ՛ (սպան հրեշտակն զանդրանիկս եգիպտացոցն. եւ ոչ եղէ արգել ժողովրդեանն ելանելոյ:) Չորրորդ՝ զի զդէսն ի մարդկանէ հալածեն. որպէս յայտ է ի Տուբիթ. ուր հրեշտակն Ռաֆայել հալածեաց զդէսն՝ որ զեթթն այն Սառայի խեղդեալ էր: Յինգերորդ՝ զմարդիկ ուսուցանեն. որպէս յայտ է ի Ղանիէլէ որ ասէ թէ՛ (Գաբրիէլ հրեշտակն եկն եւ ուսուցանէր զՂանիէլ:) Վեցերորդ՝ զխորհուրդս Աստուծոյ ծանուծցանէն մարդկան. որպէս յայտնեցին Աբրահամու զխորհուրդս Աստուծոյ որ վասն սողմայ: Գիտելի է՝ զի ամենայն երեւոյթ Աստուծոյ որ եղէ ի հին օրէնսն՝ էր ի ձեռն հրեշտակաց. որպէս յիշէ Ստեփաննոս ի գործս առաքելոցն թէ՛ (առիք զօրէնս ի հրամանս հրեշտակաց:) Չի Աստուծ ըստ ինքեան ոչ երեւեցաւ ըստ անձնաւորութեանն, այլ հրեշտակօք: Իսկ ի նորս՝ երեւեցաւ ըստ անձնաւորութեանն. եւ պատուեաց զսա: Առնու հրեշտակն մարմին յոր ձեւ որ կա մի. եթէ ծեր եւ եթէ տղայ. նաեւ թէ կա մի հրեշտակն զիւր յատկութիւնն եւ զկերպարանն ցուցանել, այնպէս երեւի. եւ յայն ժամ ասի

թէ՛ Աստուած երեւեցաւ: Վասն այսորիկ հրեշտակն որ ի ի յիւր գոյացութիւնն երեւեր Մովսէսի, ասէին թէ Աստուած է:

Եօթներորդ՝ զի մխիթարեն գտրտմեալսն. որպէս ասէ ի Տուբիթն. (եկն Ռաֆայել հրեշտակն եւ մխիթարէր զՏուբիթ վասն կուրութեանն. եւ բժշկեաց զնա:.) Ութներորդ՝ զի քաջալերեն եւ ջերմացուցանեն զմարդիկ. որպէս հրեշտակն զօրացոյց զԵղիա զփախուցեալն յԵզաբելէ. որպէս ասէ յերրորդ թագաւորութեանց: Իններորդ՝ զի ճանապարհորդակից լինին մարդկան առաջնորդելով ի բարիս. որպէս Տուբիթայ որդւոյն առաջնորդելով եւ դարձուցանելով ի տուն իւր: Տասներորդ՝ պատերազմին ընդ թշնամիսն հաւատացելոց. որպէս ասէ Եսայի թէ՛ (եւ հրեշտակն եւ կոտորեաց զարսն սենեքերիմայ հարիւր ութսուն եւ հինգ հազար:.) Մետասաներորդ՝ զի փորձութիւնս սատանայի անդորրացուցանեն. որպէս հրեշտակն որ էջ ի հնոցն ընդ երից մանկանցն. եւ շիջոյց զհուրն: Երկոտասաներորդ՝ զի զաղօթս կատարելոցն եւ զբարիսն՝ տանին առաջի Աստուծոյ. եւ զհոգիս արդարոցն տանին յարքայութիւնն. որպէս ասէ գործք առաքելոցն. (եկն առ Կուռնելիոս հրեշտակն եւ ասէ. աղօթք քո եւ ողորմութիւնք յիշատակաւ ելին առաջի Աստուծոյ:.) Եւ Տուբիայի ասաց. (ես էի որ զաղօթս քո տանէի առաջի Աստուծոյ:.) Ապա ուրեմն հրեշտակք կարի ուրախանան ընդ փրկութիւն մարդկան՝ եւ ընդ կորուստն տրտմին: Որպէս ասէ թէ՛ ոմն կրօնաւոր Նեղացեալ ի կարգէն զնաց յաշխարհ հեշտանալ. երեւեալ նմա պահապան հրեշտակն իւր եւ ասէ. պահե՛հ է զի յամենայն մարդիկ զոր պահեալ եմ կորուած՝ առաջին կորուածն դու լինիս. յայնժամ զղջացեալ դարձաւ ի վասս. եւ եղէ այր բարի: *Ի սերովբէիցն ուսցուք զսերն: Ի քերովբէիցն զգիտութիւնն: Ի յաթոռոցն, զի զմեզ դատեսցուք: Ի տերութեանցն, զի զմարմինս մեր հնազանդ արասցուք: Ի պետութեանցն, զի խորհուրդս կառավարեսցուք: Ի հրեշտակացն, զի միամեանց ինամ տարցուք: Իսկ ըստ Գրիգորիսի՝ ի մարդկանէ ոմանք ելանեն ի դասս սերովբէից. ոմանք ի քերովբէից. եւ ի յայլսն նմանապէս. զորոց յատկութիւնս բերեն ի յինքեանս՝ երգակից լինին հրեշտակաց. որպէս ասէ սաղմոսն. (առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ:.) Գիտելի է՝ զի երգ երաժշտականացն հինգ կերպիւ լինի անյարմար: Եւ որ այնպէս երգեն՝ ոչ խառնի ի դասս հրեշտակաց: Նախզի՛ որք իսկիզբն բարձր սկսանին եւ ոչ կարեն աւարտել. դելքն այսպէս սկսան հպարտութեամբ. վասն այսորիկ եւ անկան: Երկրորդ՝ յորժամ իսիստ ցած սկսանին՝ որ ոչ երեւի ձայնն. որ նշանակէ զերկրաւորն սիրելի: Երրորդ՝ որք անյարմար ձայնս արձակեն, եւ զայլոց եղանակն խառնակեն. որ լաւ եր նոցա անխօս կալով օգնել. սոքա են աղմկասէր մարդքն՝ որք զայլոց եղբարց զհամաձայնութիւն խառնակեն: Չորրորդ՝ որգողի լինի եւ կտրած ձայնն՝ նշանակէ զպոռնկութիւնն: Զինգերորդ՝ որ ոչ ընտրէ զժամանակս. որպէս յորժամ ի ժամանակս սգոյս սկսան զերգս ուրախականս. որ նշանակէ զուրախութիւն այսմ աշխարհի. եւ ըստ այնմ զի ասէ սաղմոսն. (զի ա՞րդ երգեսցուք զօրհնութիւնս Տեառն յերկրի օտար:.) Իսկ ծոյլ առաջնորդք որք ոչ տանին ինամ ժողովրդեանն Աստուծոյ՝ որպէս այն որ գրեաց դելն թէ՛ ի դժոխոց առաջնորդսն ողջոյն. շնորհակալ եմ ձեզ. որ վասն ծուլութեան ձերոյ՝ դժոխոցս պատրաստէք: Եւ ետ զդիրն ի վարդապետն՝ որ կամեր գիրս ասել. եւ ըմբռնեաց զձեռն նրա եւ սեւացան մինչեւ ի յայն, որ կարդաց առաջի առաջնորդացն. եւ դարձեալ սպիտակացաւ ձեռն: Այսքան առ այս:

Քարոզ մահու. ի Բանն որ ասէ: (Պատուական Է առաջի Տերն մահ սրբոց իւրոց. որ Տէր եւ ծառայ քո եմ. ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:) Սաղ. 115. 15: (Գլուխ. ՃԽԸ)

Յամենայն արարածս Աստուծոյ՝ գոն պատուականք եւ ազնիւք: Ի հրեշտակս՝ վերինն դասք. աթոռոյն, քերովբէիցն, եւ սերովբէիցն. զի անընդմիջաբար տեսանեն զգործ. զի յերկինս առաջին են նոքա տեղեալ եւ փառօք: Երկուս լուսաւորս՝ արեգակն: Յաստեղս՝ արուսեակն: Ի չորս կողմանս՝ արեւելք: Ի յերկրի՝ դրախտն: Ի յերինս՝ Սիօն եւ Թաբօր: Ի գետս՝ յորդանան: Ի յոսկիս՝ արաբացւոցն: Ի յակունս՝ չափիւղայն եւ տպագիոնն: Ի կանայս՝ Մարիամ աստուածածինն: Յարս՝ Աստուած Բանն մարդացեալ: Այսպէս յանարգ մահուն՝ Է մահն որ ըստ Աստուծոյ. զի դառնութիւն նորա քաղցրանայ ի սերն Աստուծոյ որպէս ասէ: (Պատուական Է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց:) Չայս գովութիւն ղնէ սրբոց մահուն: Նախզի նախատիկք եւ յիմարութիւն թուեր վկայիցն մահ. իսկ առաջի Տեառն՝ պատուական Է ասէ: Չի ոչ որպէս տեսանէ մարդ՝ տեսանէ Աստուած. զի մարդ յերեւելիսս. եւ Աստուած յաներեւոյթսն հայի: Երկրորդ՝ զի երկնչէին ի մահու. ասէ՝ մի երկնչիք. զի ոչ Է ապականութիւն, այլ կենաց պատճառ, եւ փոխումն ի փառս եւ ի հանգիստ: Վասն այն ասէ: (Պատուականէ առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ր Տէր եւ ծառայ քոյ եմ. ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:) Բայց տեսաելի Է թէ՛ զի՞նչ Է մահ. եւ ի քանի՞ս բաժանի: Մահ՝ Է որոշումն հոգւոյ ի մարմնոյ. զի որպէս գոյացութիւն մարդոյ ի տարերաս Է. նոյնպէս եւ մահն: Չի չորս տարերքս այսոքիկ՝ հուր եւ օդ՝ ջուր եւ երկիր՝ միաւորեալ գոյացուցանեն զմարմինն հանդերձ հոգւովն՝ որ կենդանական փչումն Է յԱստուծոյ: Այսպէս յորժամ ի բաց բաժանին, եւ իւրաքանչիւր տարր յիւրն փոխի, լուծանին մարմինն. (եւ հոգին դառնայ առ Աստուած յարարիչն իւր. եւ մարմինն յերկիր ուստի առաւ որպէս ասէ Սողոմօն:) Եւ այս բաժանումսս՝ մահ անուանի: *Եւ զիտելի Է՝ զի մահն ի հինգն դէմս բաժանի: Նախ՝ որ բնութեամբ: Երկրորդ՝ պատհամամբ: Երրորդ՝ անձնիշխանութեամբ: Չորրորդ՝ նախախնամութեամբ: Դինգերորդ՝ յօժարական կամօք: * Առաջինն՝ բնութեամբ մահ Է՝ յորժամ ծերանայ մարդ, տկարանայ եւ մեռանի: Երկրորդն պատահմամբ Է՝ որ յորոգայթ լինի. ի գազանաց, ի գետոց, յաւազակաց, յագահութենէ, յահէ, եւ ի չաչարանաց: Երրորդն՝ անձն իշխանութեանմբ, որպէս ոք սպանանէ զանձն իւր, կամ զնկերին. կամ զհոգին մեղօք սպանանէ, կամ զընկերին. չար մահ են չորեքին սոքա: Չորրորդ մահ՝ ի նախախնամութենէն Աստուծոյ. որպէս յորժամ գայ ի վերայ մարդոյ մահ վասն իւր օգտի: Նախ որպէս մանուկն մեռանի զի մի ի չար անկցի: Երկրորդ ծերն մեռանի՝ զի ազատիցի ի մարմնոյ չարաց: Երրորդ արդարն մեռանի՝ զի ի գործս իւր հանգիցէ: Չորրորդ մեղաւորն մեռանի՝ զի մի յաւելցի ի մեղս. իսկ անգեղջ մեռանի՝ եւ զառհաւատչեայ տանջանաց կրէ. որպէս սողոմագիքն եւ այլքն: Իսկ հինգերորդ մահն՝ յօժար կամօք. եւ սա յերկուս բաժանի. այսիքն, ի բարի եւ ի չար: Նախ՝ բարի Է յօժարութեան մահն, յորժամ ի յապրիլն կենդանոյն զմահ խոկամք. եւ զմեռելութիւն ախտիցն գործեմք ի մեզ. այսինքն, ճգնութեամբ եւ բարի գործօք. որպէս ասէ առաքեալն գաղատացւոց: (Որք քրիստոնեանքն են՝ զանձինս իւրեանց ի խաչ հանեն կարեօք եւ ցանկութեամբ հանդերձ:) Երկրորդ՝ որք յօժարին

մեռանիլ մարտիրոսութեամբ վասն անւանն Զրիստոսի մահուամբ սրոյ, եւ հրոյ, եւ այլն: Երրորդ՝ յօժարութեամբ մահ է մկրտութիւնն. որպէս ասէ առաքեալն. (որք մկրտեցաք ի Զրիստոս Յիսուս՝ ի մահ անդր նորա մկրտեցաք. թաղեալք ընդ նմին մկրտութեամբն ի մահ:): Չի յորժամ հաւատացաք թէ Զրիստոս վասն մեր մեռաւ, եւ զմեզ ձրի արդարացոյց, յայնժամ մեք թէ՛ վասն Զրիստոսի յուսոյն մեք ցանկութեանց աշխարհիս մեռանիմք, զի ընդ Զրիստոսի կենդանացուք. որպէս ասէ առաքեալն: (Մեռայք՝ եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Զրիստոսի յԱստուծո:): Այսպիսի մահ սրբոցս՝ սուրբ են եւ պատուական. որպէս ասէ մարգարէն: (Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց:)* Է եւ չար մահ. որպէս ասէ սոյն մարգարէն. (մահ մեղաւորին չար է:): Նախ՝ որք կենդանի գոլով մեղօք զհոգիս կորուսանեն՝ չար մահ է. որպէս ասէ առաքեալն յիեսացոց: (Դուք երբեմն մեռեալ էիք ի մեղս ձեր եւ յանհաւատութեամբ:): Երկրորդ՝ որք վասն չար գործոց իւրեանց մեռանին՝ չար մահ է. որպէս ասէ Պետրոս ի կաթողիկէն: (Մի ոք ի ձեւջ չարչարեսցի իբրեւ զսպանօղ. կամ իբրեւ զգող. կամ իբրեւ զչարագործ. ապա թէ իբրեւ զքրիստոնեայ՝ փառաւորեսցէ զԱստուած անուամբս այսուիկ:): Երրորդ՝ չար մահ է. որ զինքեանս սպանանեն որպէս ասացաւ: Չորրորդ՝ չար է, որ աստուածասաստ պատուհասի սատակին. վասն այն մարգարէն ի յերկուս բաժանէ զմահն. ի չար եւ ի բարի: (Մահ մեղաւորին չար է ասէ. եւ մահ սրբոց՝ պատուական:): Արդարեւ չար է մահ մեղաւորին. զի մարմնով զգայի մահու մեռան. եւ հոգւով ի մշտնջենաւոր տանջանսն անկան: Իսկ արդարքն՝ զգգալի մահս միայն ճաշակեն. եւ հագւով կենդանի են առ Աստուած. որպէս վասն Աբելի ասէր Աստուած. (ձայն արեան եղբօր քոյ զոչէ առիս:): Չի Աստուած արժանաւորացն լսէ. թեպէտ վախճանեալ իցեն: Դարձեալ գիտելի է՝ զի երկու են մահք. մին զգալի. եւ մին իմանալի. նոյնպէս եւ երկու կեանք. այժմուս, եւ հանդերձեալսն: Ի սոցանէ երկուքն սիրելի, եւ երկուքն ատելի են մեզ. այսինքն, առ ժամանակեայ մահս յորամ աստուածպաշտութեամբ լինի, եւ յաւիտենից կեանքն սիրելի է. զի յայս երկոսեանս վայելեն սուրբքն: Իսկ ատելի է առօրեայ կեանքս, եւ յաւիտենից մահն՝ որ պատահի չարացն եւ մեղաւորացն: Չի արդարքն թեպէտ մեռանին, հոգւով կենդանի են առ Աստուած. որպէս Աբրահամ. Իսահակ. Յակօբ, եւ այլքն. որպէս ասէր. (ես եմ Աստուած Աբրահամու Իսահակայ. եւ Յակօբայ. եւ Աստուած ոչ է մեռելոց, այլ կենդանեաց:): Իսկ մեղաւորքն թեպէտ մարմնով կենդանի են, հոգւով մեռեալ են. որպէս ասէ Տէրն. (թոյլ տուք մեռելոցն հոգւով, թաղել զմեռեալսն մարմնով:): Ապա յայտ է՝ զի մահ որդարոցն ցանրկալի է քան զկեանս անպարշտաց զի ադարքն թեպէտ (յաչս մեր մեռեալ երեւին, այլ յոյս նոցա լի է անմահութեամբ որպէս ասէ Սողոմօն:): *Արդ՝ պատուական է մահ սրբոց: Նախզի՝ զբարիս գործեցին յուսով հանդերձեալ կենացն. այլեւ յանցաւորես ի մշտնջենաւորն ժամանեցին. եւ ի նեղութեանցս ի հանգիստ. եւ յեղկելի կենացս յերանութիւն ժամանեցին եւ հասին: Դարձեալ՝ պատուական է մահ սրբոց. զի յակամայ փորձանացս որ ըստ հոգւոյ եւ մարմնոյ, ի յանդորր փոխեցան. ի ծերութենէ եւ ի տկարութենէ, ի ներոգումն ելին. եւ յաղթեցին ամ կարեաց մարմնոյ: Դարձեալ՝ պատուական է մահ սրբոց. զի յայս կենացս մեռան. եւ ընդ Զրիստոս կանդանացան. որպէս ասէ առաքեալն կողոսացոց: (Եւ յորժամ Զրիստոս կեանքն մեր յայտնեսցի, յայնժամ եւ դուք

ընդ նմա յայնեսչիք փառօք) ի փառս ամենա սուրբ երրորդութեանն: Իսկ մահ մեղաւորաց չար է ասէ: Նախզի՛ յուսահատութեամբ է վախճան ևոցա. այլեւ զրկեցան ի ժառանգութենէ երկնից. եւ դժոխոցն եղեն ժառանգք: Այլեւ աստ ոչ յիշեցին զօր մահուն. եւ անդ ոչ կարեն գործել զբարիս: Դարձեալ՝ չար է մահ մեղաւորաց. զի փակի դուռն ապաշխարութեան ևոցա. եւ բանին դրունք դժոխոց: Այլեւ մատնին ի ձեռս անողորմ եւ չար հրեշտակի. այլեւ ի մեղաց գործոց իւրեանց չարչարին. եւ զհանդերձեալ չարչարանսն մերձ տեսանեն: Դարձեալ՝ չար է մահ մեղաւորացն. զի ոչ լսեն ի Տեառնէ թէ՛ (դարձարուք առիս, եւ ես դառնամ առ ձեզ:) Այլեւ զի՞նչ. (կապեցէք զդորա զոտս եւ զձեռս.) եւ թէ՛ (հանէք ի խաւարն արտաքին.) եւ թէ՛ (ծառայ չար է վատ.) եւ թէ՛ (երթայք յինէն անիծեալք:) Եւ յայնժամ ջրոյ կարօտին որպէս մեծատունն. եւ իւղոյ լապտերի որպէս յիմար կուսանքն: Ընդդէմ սոցա մահ սրբոցն պատուական է ասէ. (ո Տէր ես ծառայ քո եմ:) Ծառայութիւնն չորս տեսակ է: Նախ՝ արարչութեանն: Երկրորդ՝ արծաթով գնեալքն: Երրորդ՝ ընտոծինն որ ի տանն ծնեալ: Չորրորդ՝ յաւարի առեալն: Եւ այպէս չարիւք մեք ծառայք եմք Քրիստոսի: Նախ արարչութեամբն որ ստեղծեաց. ըստ այնմ որ ասէ Պօղոս կողոսացոց: (Նովաւ եղեւ ամենայն. այսինքն որդւովն. որ ինչ յերկինս եւ երկրի. որք երեւին եւ որք ոչն երեւին:) Եւ մարգարէն ասէ. (Նա արար զմեզ եւ ոչ մեք թաք. մեք ժողովուրք ի ձեռնն Նորա եւ խաշն արօտի Նորա:) Երկրորդ՝ զի գնեաց զմեզ. ոչ արծաթով կամ ոսկւով. այլ պատուական եւ անապական արեամբն իւրով: Եւ դարձեալ ասէ զադատացոցն. (Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք:) Երրորդ՝ ծառայ եմք ընտածին. որպէս ասէ: (Ո տէր ես ծառայ քո եմ. ծառայ եւ որդի աղախնոյ քոյ.) այսինքն, որդի եմք Ադամայ որ ծառայ եղեւ մեղաց. եւ աղախնոյն Եւայի մօրն՝ որ աղախին եղեւ հեշտութեան որ տիկինն էր: Եւ դարձեալ՝ ընտոծին եմք ի տան սուրբ եկեղեցոց ծնեալք եւ սնեալք հոգեպէս: Չորրորդ՝ ծառայ եմք Քրիստոսի. զի ազատեաց զմեզ ի գերողէն եւ յաւարի էառ. ըստ այնմ, (եւ ի բարձունս խաչին. գերեաց զգերութիւն. էառ աւար. բաշխեաց պարգես. եւ ետ որդւոց մարդական:) Արդ՝ վասն առաջին ծառայութեանն՝ պարտական եմք Աստուծոյ որպէստնկագործի տալ զպտուղն բարի գործոց մերոց ստեղծողին զմեզ: Ապա թէ ոչ՝ ասէ յաւետարանն. (տապան մահուն յարմատ ծառոյ կայ. ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարի՝ հատանի եւ ի հուր արկանի:) Վասն երկրորդ ծառայութեանն՝ որպէս ծառայն ոչ է Տէր կամաց իւրոց. այլ ի կամս գնողին իւրոյ. նոյնպէս եւ մեզ պարտ է ի կամս Քրիստոսի լինիլ. որպէս ասէ առաքեալն: (Չէք անձանց տեսարք. գնոց գնեցայք:) Եւ դարձեալ ասէ. (գնոց գնեցայք. մի լինիք ծառայք մարդկան:) Չի որ ծառայ Քրիստոսի է ազատ է յամենայն մարդկանէ: Վասն երրորդ ծառայութեանն՝ որ ընտոծին եմք ի տան Աստուծոյ սնեալք, ոչ է պարտ զձեռնն մեր ուրանալ եւ զանուն Նորա. որպէս անհաւատք եւ հերձուածօք, վասն ևոցա ասէ մարգարէն. (օտարացան ի մօրէ եկեղեցւոյ. խաբեցան յարգանդէ եւ խօսեցան սուտ:) Եւ վասն չորրորդին՝ ծառայ եմք որ ազատեաց ի գերողէն. զմարմինս ի մեղաց. եւ զհոգիս ի տանջանաց: Այլ ոչ է պարտ մտանել ծառայ մեղաց եւ դժոխոց խաւարի. ըստ այնմ, (փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի. եւ փոխեաց զմեզ յարքայութիւն որդւոյ իւրոյ սիրելւոյ ի մասն վիճակի սրբոցն ի լոյս:) Եւ արդ՝ ջանացարուք եղբարք այսօր յորում հասակի եւ եմք. եւ ի մեր ձեռս է

սրբութեամբ ծառայելն Աստուծոյ եւ գանձելն ի հանդերձեալսն. Չի մի յանկարծ եկեսցէ ձմեռն ծերութեան՝ կամ հիւանդութեան կամ մահու: Եւ ապա յայնժամ ոչ լիցիմք ձեռնահաս. գործելոյ եւ ասիցիմք. (ոչ են կամք իմ ի դոսա:): Չի աղաղակէ առաքեալն թե՛ (մի ինչ պատճառք. ահա ժամանակ ընդունելի. ահա օր փրկութեան:): Եւ դարձեալ ասէ. (մինչդեռ ժամանակս ի ձեռս մեր է՝ գործեսցուք զբարիս:): Ո՞գիտէ զմեր առաջիկայ. եւ շունչ մեր ի ձեռին նորա է. նա ըստ գթասէր ողորմութեան հօր՝ մի ածցէ եւ դիպեցուցէ մեզ օր՝ ուր ոչ լինին կամք մեր ի նոսա եւ իւր բարեբուն կամքն: Այլ մեր կամք եւ կեանք եւ օր մահուան եւ երթալոյն յատեան դատաստանին՝ ըստ նորա կամացն լիցին, եւ ըստ կամաց մերոց: Որ ոչ լինիմք ամօթով եւ խղճիւ մեղաց չարչարեալ: Այլ նայելով ի մեր բարի, վաստակն որ ամենայնիվ յաջողեալ լիցի, ինդալիցք եւ բերկրեալք լիցուք, վստահացեալք ի բարիսս Զրիստոսի Աստուծոյ մերոյ. որ է օրինեալ յաւիտեանս յաւիտենից ամեն:

Յայլէ քարոզ մահու ի Բանն Սիրաքայ: (Ով մահ գտան է յիշատակ քո:)
Եկղէս.41. 3: (Գլուխ. Ճևթ)

Ասէ իմաստունն Արիստոտել թե՛ վախճան ամենայն ահարկութեան՝ մահն է: Քանզի ամենայն իր՝ բնութեամբ ատէ զապականութիւնն իւր: Եւ որքան կարէ՛ ընդդիմանայ իւրոյ եղծանողին. եւ այս յայտ է ի հրոյն եւ ի ջրոյն եւ ի կենդանեաց եւ յամենայն իրաց: Քանզի որոյ էութիւնն լաւագոյն է, նորին եւ ապականութիւնն չարագոյն եւս է. որպէս ապականութիւնն բանականին՝ վատթար է քան զանբանին. եւ զգայականացն՝ քան զանզգայիցն. ապա ուրեմն չար է հոգւոյն մահն քան զմարմնոյն. որպէս ասէ Յորք. (մորթ ընդ մորթոյ՝ եւ որ է ինչ ընդ անձինն՝ տուժեսցի.) որպէս թէ ասէ. զժամանակաւորս ունիլ վասն մարմնոյն. եւ զմարմինն վասն հոգւոյն: Սակայն յիմարքն զնդդեմն առնեն. զի վասն մարմնոյ եւ ընչիցն՝ ստեն եւ բարկանան: Եւ ասէ Սիրաքն. (բերան ստախօս՝ սպանանէ զանձն:) Եւ Յակօբոս ասէ. (յիմաստութիւնս այս՝ երկրաւոր շնչաւոր եւ դիւական է:) Երկրաւոր՝ այսինքն զի ժողովել ջանան. եւ շնչաւոր՝ զի է վասն վաւաշոտ ցանկութեան. եւ դիւական է՝ վասն ամբարտաւանութեան աստի կենացս: Եւ այսպիսեացս՝ դառն է յիշատակ մահուն. զի գոյսն եղեալէն յինչս. եւ առնեն զանիրաւութիւն: *Եւ գիտելի է՝ զի վասն չորս պատճառի դառն է յիշատակ մահուն: Նախ՝ վասն բաժանելոյն ի միմեանց հոգւոյն եւ մարմնոյն: Երկրորդ՝ վասն հարկի մեռանելոյն: Երրորդ՝ զի ոչ գիտէ զժամ մահուն: Չորրորդ՝ զի յայնժամ ժողովին առնա ամենայն չարիք: Վասն այս չորս պատճառիս՝ դառն է յիշատակ մահուն. եւ զիւրաքանչիւրսն ցուցցուք: *Առաջին գլուխն՝ դառն է յիշատակ մահուն. վասն զի բաժանին ի միմեանց հոգին եւ մարմինն. զի յոյժ սիրով կապեալ էին. այլեւ տարերքն քակտին յիրերաց՝ ուստի գոյացաւ մարմին: Եւ մեծ է ցաւս այս: Նախզի՝ անջատի կատարողն՝ յորմէ ինքն է կատարեալ. վասն զի հոգին է կատարող մարմնոյ՝ բաժանի ի նմանէ: Նաեւ զհոգին կատարէ մարմինն ի մի անձնաւորութիւն: Եւ թեպէտ մնայ էութիւն հոգւոյն յետ բաժանելոյ ի մարմնոյն, այլ ոչ է կատարեալ անձն. այլ մասնաւոր: Երկրորդ՝ զի յայս մահուանէս՝ ամենայն սուրբք երկեան. որպէս նոյն ինքն որ եր սուրբ եւ կեանք՝ ամենեւին գիտելով զնոյն ցաւս զի մեծ է, աղաչեց զհայր ասելով (անցցէ բաժակս այս:) Թեպէտ Զրիստոս կամաւ

մեռաւ վասն ազատութեան մարդկան. ըստ այնմ, (լաւ է որ մի ոք մեռանի. եւ մի ամենայն ժողովուրդս կորիցէ:) Նաեւ Պօղոս ըստ բնական յօժարութեան ասէր. (ցանկամ ելանել ի մարմնոյ, եւ ընդ լինիլ.) այլ ըստ բնականին ասէ. (ոչ կամիմ մերկանալ. այլ զայն ի վերայ այսր զգենուլ. զի ընկղմեցի մահկանացուս ի կենաց անտի:) Որեւ երկնչելով ի մահուանէ՝ ետ կապել զակն ի ժամ գլխատմանն: Այսպէս դառն է յիշատակ մահուն վասն բաժանելոյ հոգւոյն ի մարմնոյն: Երկրորդ գլուխն՝ դառն է մահն վասն հարկի մեռանելոյն. զի մահն յոչ ոք ինայէ: Սենեքայ վարդապետն ասէ. այն ուխտադրութեամբն մտաք՝ զի ելանիցեմք. զի որպէս երկիրն հնգեկաւ անցանէ ի հօրէն առ որդին. եւ ի վաճառողէն առ գնողն. այսպէս մարմինս պարտաւորեալ մահու՝ ի յառաջինն Ադամայ անցանի յամենայն մարդ՝ որ սերի ի նմանէ: Եւ Սիրաք ասէ. (ոչ է ընդ իշխանութեամբ մարդոյ արգիլել զհոգին.) ապա ուրեմն որպէս դատապարտքն ի մահ ոչ ուրախանան ի բանտին. նոյնպէս մահու պատգամաւորքս ի տրտմութեան հովիտս գոլով. իբր առ ժամայն քարշիմք առաջի անաչառ դատաստանին եւ դատաւորին. վասն ունայն կենացս՝ ոչ է պարտ ուրախանալ: Վասն այն ասէ Սիրաքն. (յիշեա զդատաստանն իմ. զի այսպէս լինելոց է եւ քեզ. ինձ էրէկ, եւ քեզ այսօր:) Չոր օրինակ՝ երիտասարդ թագաւորազն մի՝ ետես զի մահն յոչ ոք ինայէր: Թողեալ զամենայն, գնաց յանապատ ծառայել Աստուծոյ. եւ յորժամ տրտմեցաւ ծնողն զի ոչ գոյր այլ որդի, գրեաց առ նա. ընդէ՞ր մեկուսացար որդեակ, թողլով զիս եւ զամենայն բարութիւնս: Եւ պատասխանեաց նմա. զի մի վասն սակաւ ուրախութեանց՝ մշտնջենաւոր լացից. որպէս ասէ աւետարանն. (վայ ձեզ մեծատանց՝ զի ընկալայք զուրախութիւն ձեր. վայ որ յագեալդ էք այժմ, զի քաղցիցիք. վայ որք ծիծաղիքդ՝ զի սգասչիք եւ լացչիք:) Եւ դարձեալ ասէ հայրն. ինդրեա յինէն զի՞նչ կամիս: Ասէ ցնա որդին. մի ինչս ինդրեմ ի քէն. զի մերժեսցես զմահն ի սահմանաց քոց. եւ եթէ զայս ոչ կարես, գոնեայ արա զայս. զի մանուկն առաջի ծերոյն, եւ զաւակն առաջին ծնողին հօր ոչ մեռանի: Ապա յայտ է՝ զի դառն է յիշատակ մահուն: Երրորդ պատճառ՝ դառն է մահն վասն անգիտանալոյ զժամ մահուն. զի չորս կերպիւ անտեղեակ լինիմք մահուն: Նախ՝ արժանաւորութիւնն: Երկրորդ՝ ժամանակն: Երրորդ՝ տեղիքն: Չորրորդ կերպն: Նախ արժանաւորութիւնն՝ զի ոչ գիտեմք եթէ արդար եւ եթէ մեղաւոր մեռանիմք. որպէս ասէ Սիրաքն. (եւ արդարք նաեւ իմաստունք՝ եւ գործք նոցա ի ձեռին Աստուծոյ:) Սակայն ոչ գիտէ մարդ թէ՛ արժանաւորի՞ մարդ ատելութեան եւ կամ սիրոյ: Բայց զայս գիտելի պարտ՝ զի որպէս գտանէ մահն զքեզ. այսպէս գտանես եւ դու զնա. այսինքն, թէ գտանէ զքեզ արդար եւ բարի. եղիցի քեզ մահն պատուական ըստ Դաւթի. (պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց:) Իսկ թէ գտանես զքեզ ի մեղս եւ ի չարիս, եղիցի քեզ մահն չար. որպէս ասէ նոյն ինքն մարգարէն. (մահ մեղաւորին չար է:) Երկրորդ՝ անգիտանամք զժամանակն. զի ոչ գիտեմք յորում ամի, կամ յամսի, ի յորօր, եւ կամ ի յորժամ մեռանելոց եմք: Եւ թէ ընդէ՞ր ոչ յայտնեաց Աստուած զօր մահուն: Այս է՝ զի ամենայն ժամ սպասեցուք նմա. որպէս ասէ աւետարանն. (հսկեցէք՝ զի ոչ գիտէք զգօրն եւ ոչ զժամն:) Արդ՝ իմաստուն մարդն նմանի թռչնոյ ճարտարի. զի յորժամ տեսանէ զաղեղն լարեալ, եւ զնետսն պատրաստեալ, զինքն ի փախուստ հարու: Նոյնպէս իմաստուն մարդն յորժամ տեսանէ զաղեղ բարկութեանն

Աստուծոյ լարեալ, եւ զնետ մահուն ի նմա պատրաստեալ, փախչի յԱստուծոյ առ Աստուած. այսինքն, ի բարկութենէն յողորմութիւնն. որպէս ասէ սաղմոսն. (եթէ ոչ դառնայք առնա՝ զսուր իւր սրեալ է. եւ զաղեղն իւր լարեալ:) Բայց տգետքն եւ ծոյքն՝ յամեն միւսն ի գալ նետին. այսինքն, մահուն. որպէս ասէ Սիրաք. (մի հեղգանար դառնալ ի Տէր. զի մահն ոչ հեղգանայ.) վասն որոյ ոչ գիտեմք զժամակն. հանապազ պատրաստ կացցուք: Երրորդ՝ անգիտանամք զտեղին. զի ոչ գիտեմք թէ յորում տեղուոջ մեռանելոց եմք. որպէս ասէ Սենեքայ վարդապետն. մահն դարանակալ լիցի քեզ յամենայն տեղի. թէ իմաստուն ես՝ յամենայն տեղիս սպասեա նմա. զի մի անպատրաստ գտեալ վնասեցէ զքեզ: Վասն այն պարտ է ի տան եւ ի դուրս՝ ի նստիլ եւ ի գնալ՝ ի ցամաքի եւ ի ծովի՝ յամենայն տեղիս եւ յամենայն գործս՝ ակն ունիլ մահուն հանապազօր: Չորրորդ՝ անգիտանայ մարդ զկերպ մեռանելոյն. թէ հրով թէ սրով. յան կարծակի թէ երկար հիւանդութեամբ. ի պատերազմի թէ ի խաղաղութան. ի մարդկանէ թէ՛ ի գազանաց եւ յայլն. որպէս ասէ Սիրաք. (ոչ գիտէ մարդ զկատարածն իւր.) այսինքն թէ՛ զի՞նչ կերպիւ մեռանելոց է: Այս երեք պատճառաւ՝ դառն է յիշատակ մահուն: Չորրորդ գլուխն՝ դառն է մահն. զի յայնժամ ելանեն ընդ առաջ հոգւոյն ամենայն չարքն յերեք կողմանէ. այսինքն, նախ ամենայն չար մեղքն զոր գործեաց՝ առաջի աչացն գան եւ տեսանէ զոր գործեալ եր եւ մոռացեալ ի մանկութեանէ: Երկրորդ՝ ընդառաջ գան ամենայն չար գունդքն դիւական. զորոց հրամանսն կատարեալ է ի կենդանութեան իւրում: Երրորդ՝ ընդ առաջ ելանեն չար տանջանք մեղացն եւ երկիւղին: Վասն առաջնոյն ասէ երկրորդ օրէնքն. (պահեսցին ձեզ չարիքն ի վախճանի աւուրցն. զի որպէս մանուկն՝ որ ընթեռնու զգիրն ի տախտակին՝ եւ յիշատակն մնայ ի մտին.) նոյնպէս յետ մահուն՝ ամենայն գործք մեղացն պահեալ լինին ի մտին եւ ոչ ջնջին: Վասն երկրորդին ասէ ոսկէ բերանն. զի՞նչ արասցես ով հագի յոր ժամ թողեալ զամենայն, միայն մտանես ի հեռի եւ յանձանօթ երկիրն: Ո՞վ լիցի քեզ ապաւեն ընդդէմ մռնչողացն որք պատրաստին ի գիշատել զքեզ: Վասն երրորդին ասէ Յոբ. (մեծատունն յորժամ ննջիցէ, ոչ ինչ տարցէ ընդ ինքեան, բայց ամենայն բարձեալ լիցի ի նմանէ ի ժամ մահւանն. որպէս մեծատունն՝ որ կաթիլ մի ջրոյ կարօտանայր. եւ ոչ տուաւ նմա:) Յորոց փրկեսցէ Զրիստոս Աստուած զամենայն հաւատացեալս եւ երկրպագուս անւան իւրոյ եւ արժանի արասցէ ջրոյն կենաց՝ որպէս անսուտ Տէրն պատմեաց. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

Այլ քարոզ մահու. ի Բանն սիրաքոյ: (Ո՛վմահ բարի է դատաստան քո:) Էկղէս. 41. 3: (Գլուխ. ԸԾ)

Վարդապետք ասեն թէ՛ Աստուած զնախախնամութիւնն իւր որ ի վերայ աշխարհի՝ միջնորդութեամբ պատճառաց ի միտք կատարէ. որպէս տեսանեմք զի լինելութիւն եւ ապականութիւն որ յերկրի, միջնորդութեամբ երկնային մարմնոցն լինի. եւ այս ոչ վասն անկարութեան որպէս այլոց թագաւորաց եւ իշխանաց. զի վասն որոյ կացուցանեն գործակալս՝ որք յամենայն տեղիս ինքեանք ոչ են բաւական: Իսկ Աստուած յոյժ զօրեղագոյն է. եւ ձգի ի ծագաց մինչ ի ծագս օգտակար առողջութեամբ. (եւ դարմանէ զամենայն քաղցրութեամբ որպէս ասէ սիրեցէքն:) Սակայն վասն անճառ

բարերարութեանն՝ հաղորդս առնէ զայլս իւրոյ բարերարութեանն: Յաղագս այսորիկ կամեցաւ առնել գործակալս յերկինս եւ յերկրի. նաեւ ի դժոխս: Յերկինս գիերշտակս. որ զոգիս մարդկան առ Աստուած տանին. որպէս ասէ Ղուկամ. (եղեւ մեռանիլ աղքատին եւ տանիլ հրրեշտակացն զնա ի զոգն Աբրահամու:) եւ ի դժոխս ունի գործակալ զդէս. որպէս ասէ Գրիգոր. դատապարտեալ մեղաւորք ի դժոխս տանջին ի նոցանէ. զի նոցա խրատովն յայսմ կենցաղս զչարն գործեցին: Իսկ թէ ոք կամիցի գիտել զդառնութիւն պատժոյն ի միտ ածցէ զչարութիւն վերակացուացն. զի թէ փոքրիկ եւ թիւնաւոր կենդանեացս ոչ կարէ տանիլ. եւ կամ հանգիստ գտանել, թէ յանկողինս դիպի ո՞րպէս կարասցէ համբերել. յորժամ տեսանէ զդաժանակերպ զգայարանս բանսարկութիւնն. եւ զտագնապն եւ զկիզանող բոցն որ տուեալ լինի ի նոցանէ. Ուստի երանելին անտօն որ գանեալ եղեւ ի դիւացն մինչ կենդանի էր, պատմեաց թէ ձաղումս այն՝ այնքան դառն էր, որ ոչ ինչ չարչարանք աստի կեանցս կարէ համեմատիլ ամենայն տանջանաց: Իսկ գործակալ եւ դատաւոր ի կեանս յայս՝ է մահն. զի զաստուածային եղեալ վճիռն ի գործ ածէ որ է այս. (անձն որ մեղիցէ՝ նոյն եւ մեռցի:) Այլ մեք ամենեքեն մեղաք ի նախահայրն մեր. հարկ է որ ամենեքեան մեռանիմք. որպէս ասէ սաղմոսն. (ով է մարդ որ կեցցէ եւ ոչ մեռցի, կամ փրկեսցէ զանձն իւր:) Վասն այն ասէ. (ով մահ բարի է դատաստան քո:) Արդ գիտելի է՝ զի վասն բազում պատճառի բարի է դատաստան մահուն: *Առաջին՝ զի արդար է. քան զի թեպէտ դատաւորք եկրի զննեն զմեղս ոմանս, այլ ոչ զամենեսեան. որպէս ասէ ոմն իմաստուն. ինն են որք խռովեցուցանեն զքաղաքս. եւ ոչ լինին նոցա իրաւունք: Առաջինն՝ դատաւորք սուտք ի յատենի: Երկրորդ՝ քահանայք ի տաճարի: Երրորդ՝ գեղեցիկ բոզք ի պառնկանոցի: Չորրորդ՝ խաբեբայ վաճառականք ի փողոցի: Հինգերորդ՝ դրամախաղացք ի ի հրապարակի: Վեցերորդ՝ փաղաքշօղքն եւ երկպառակքն ի յապարանս արքունի: Եօթներորդ՝ մատնօղքն ի ձեռն գրի: Ութներորդ՝ բամբասօղքն ի ծածուկ: Իններորդ՝ արբեալքն որք զեղքեալ լինին գիւնով: Այսպիսիքս եւ այլ բազում հեղգացօղք ի բարրի գործս՝ ոչ հարցափորձին ի մարդկանէ. սակայն մահն զամենայն դատէ. ուստի Ամրոսիոս ասէ: (Վայ է ինձ թէ ոչ լացից զմեղս իմ. եղուկ է ինձ թէ ոչ յարեայց ի մէջ գիշերի խոստովան լինիլ առ քեզ Տէր:) Վայ է ինձ թէ զճշմարտութիւնն լռեմ կամ թաքուցանեմ. զի արդէն իսկ տապար առ արմին անպտուղ ծառոց եղեալ կայ: Վասն այսորիկ որ իմաստունն է՝ պարտ է զի արկանիցէ աղբ շուրջ զծառովք իւրովք. այսինքն, որպէս աղաչեաց այգեգործն այն. եւ ոչ ետ թոյլ հատանել զծառն թգենույ, մինչեւ դիցէ աղբ. ասա զինչ եւ կամիս: Երկրորդ՝ զի ոչ հայի ի կաշառս. եւ ոչ ակն առնու բարեկամի. եւ ոչ երկնիչ ի հզօրաց: Չի այս երեքեանս՝ պատրեն զամենայն դատաւորս երկրի: Այլ մահն ոչ բնաւ խաբի ի սոցանէ. որպէս ասի յառակն. (ոչ ինայեսցէ յաւուր դատաստանի. եւ ոչ փոխանակեսցէ զթշնամութիւնն. եւ ոչ վաճառեսցի բազում կաշառօք. այլ դատէ զիրաքանչիւր որք ըստ գործոյն:) Ապա ուրեմն որ կմիցի դիւրաւ գերծանիլ ի նմանէ՝ ուղղէ զվարս իւր. զի ասէ Տէր. (յորժամ երթիցես ընդ ոսոխին քում առ իշխանն ի ճանապարհի, տուր զհաշիւն գերծանիլ ի նմանէ. գուցէ քարշիցէ առ դատաւորն. եւ դատաւորն մատնիցէ դահճի:) Երրորդ՝ զի հատուցանէ իւրաքանչիւր ումեք ըստ արժանոյն. այսինքն, մեղաւորացն

զպատիժն. եւ արդարոցն զհանգիստն. որպէս ասէ սիրեցէքն: (Գիտասցեն թէ՛ որով մեղանչէ ոք՝ Նովիմբ եւ տանջի.) զի որով եղանակաւ մեղանչէ մարդ՝ ըստ այնմ կերպի մահն պատժէ զնա: Քանզի որպէս ի մեղանչելն նախ շերմանալ ի խորհուրդն. երկրորդ հեշտանայ ի հաւանիլն. երրորդ յաւարտ հանէ գործովն. չորրորդ յամէ ի սովորութիւնն: Այսպէս մահն՝ նախ շեռուցանէ շերմամբ: Երկրորդ ի ներս ածէ զցաւ գլխոյն, զերկամանցն, եւ զայլ անդամոցն եւ դառնացուցանէ զբերանն: Երրորդ՝ մտանէ ինքն իսկ եւ բաժանէ զհոգին ի մարմնոյն: Չորրորդ՝ մտանէ զերեզմանի. եւ ապա ի բարեկամաց մտաց բնաջինջ ամէն. քանզի նա նախ մոռացաւ զՏէրն եւ զստեղծողն իւր: Ապա ուրեմն արդար է դատաստան մահուն. զի որ պարծեր վասն գեղեցկութեան մարմնոյն՝ կրեսցէ զամօթ վասն զագրահոտ շաղղին. որպէս ասեն վարդապետք. զի՞նչ գոյ ժահահոտ քան զգէշս մեռեալ մարդոյ. զի՞նչ զագիր քան զդիակունս վախճանեալ արանց: Չի որ ի կենդանութեանն յաչս ամենայն մարդոյ շնորհալի երեւիր՝ ի մեռելութեանն գարշելի ցուցանի: Որ զուարճանայր ի մեծութիւն. եւ հրեշտանայր ի փափկութիւնն. եւ փքանայր ի պատիւն. յորժամ մեռանի՝ յամենեցունց զրկի. փոխանակ հեշտութեանց՝ ի յորդանցն խաճանի մարմինն. փոխանակ ընչաւետութեանն մերկ եւ բոկ արտաքս մերժի. փոխանակ պատուոյն՝ յամենեցունց մոռացեալ լինի: Քանզի ընթերցեալ լինի ի տիեւերական արքայէն Աղէքսանդրու, որ ի միում քաղաքի յոյժ պատուով ընկալեալ եղել. եւ ընդ այլ բազում ընծայսն՝ նուիրեցին նմա եւ ակն պատուական. որոյ յատկութիւնն այս էր. զի ընդ կշռելն՝ միտեր քան զամենայն կշռորդս իւր: Իսկ եթէ արկանէին ի վերայ նորա հող կամ յարդ, կորուսանէր զամենայն զօրութիւնս իւր: Իբրեւ եղել հիացեալ Աղէքսանդր, հարցանէր թէ զի՞նչ նշանակէ իրս այս: Պատասխանեցին իմաստասերքն եւ ասեն: Ակնս այս՝ նշանակէ զանձն արքայի. զի մինչ կենդանի ես՝ զօրեղ եւ գեր ի վերոյ ես քան զամենեսեան. բայց ի ժամանել մահուն՝ կորուսանես զամենայն զօրութիւն եւ զմեծութիւն քո: Չորրորդ պատճառաւ՝ արդար է դատաստան մահուն. զի աշխարհս անդոսնել տայ. որպէս ասէ Գրիգոր թէ՛ սիրամարգ թռչունն յորժամ տեսանէ զգեղեցկութիւն թելոց, զուրճանայ ի յինքն. լարէ զագին. փքացեալ շրջի ի տեղեաց ի տեղի: Իսկ յորժամ հայի յոտնն, եւ տեսանէ զտգեղութիւն նորա, խոնարհեցուցնէ զագին եւ գլխակոր քայլէ: Այսպէս մեղաւորք եւ անպարհիշտք որք յղափացեալ են մարմնական եւ ժամանակաւոր գոյիք, ոչ նկատեն եւ ոչ խոնարհին թէ ուստի ունին. այլ պատճառ՝ զանձինս եւ զիմաստութիւնս իւրեանց համարին. յաղազս այնորիկ՝ աստ եւ անդ խրոխտալով շրջին. որպէս ասէ Դաւիթ. (Չուրջանակ անպարհիշտք շրջին.) եւ յետոյ զամօթ կրեն: Որպէս այր ոմն զինւոր յոյժ շերմացեալ ի փառս աշխարհի՝ եւ զցայգ եւ զցերեկ ի հնարս մտեալ թէ, որպէս կարացէ ի ծայրսն հասանիլ: Որոյ երեւեալ ի յանուրջ կին մի գեղեցիկ, հարցանէր ցնա եւ ասեր. ճանաչէ՞ս զիս. եւ նա պատասխանի ետ թէ ոչ. եւ փոքր ինչ յետոյ ցուցեալ կինն այն գլխոյնս իւր՝ եւ էր այսպէս զագիր, որ բնաւ ոչ էր տեսեալ նորա. եւ ասէ ցգինուորն. իմա՛ զի ես եմ աշխարհս եւ փառքս աշխարհիս. որ յառաջն իբրեւ զվայելուչ ձեւանամ. ի վերջն այս եմ զոր հաւաստի տեսանես:

Ապա ուրեմն որ կամիցի ճանաչեալ եւ անգոսնել զաշխարհս, հայեցի ի վերջ կատարածի իւրոյ. վասն այն ասէ: (Ով մահ բարի է դատաստան քո:)

Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ ազատողին ի մեղաց եւ մահու, փառք
յաւիտեանս ամէն:

Այլ քարոզ մահու. ի Բանն Սիրաքոյ որ ասէ: (Ի յամենայն գործս քո՝ ի
միտ Աստուած զվախճանն քո որ յաւիտեան ոչ մեղանչես:) Էկդես. 7. 40:
(Գլուխ. ԾԾԱ)

Որպէս ասեն վարդապետք, ոչ ինչ որ այսպէս ուսուցանէ զբարի
կառաւարութիւն կենաց մարդկան, որպէս յիշատակ մահուն: Քանզի որպէս
թռչուն ի յօդո՞ ագեան ուղղէ զգնացս իւր. եւ ձուկն ի ծովու. եւ նաւապետն
կալով ի յետին կողմն նուին՝ ի ձեռն քեղոյն տնօրինէ զճանապարհս իւր:
Այսպէս եւ այլ իմաստուն՝ թէ կամի որ ի բարութիւնս կարգաւորէ զկեանս իւր
զի մի կորիցէ ի ծովածուփ կենցաղոյս եւ ի փորձութենէ բանսարկութիւնն,
պարտի յամենայն ժամ ի միաբերել զօր մահուն: Չի այս է ծայրագոյն
իմաստասիրութիւն. որպէս ասէ իմաստունն. (իմաստասիրութիւն է խոկումն
մահու.) զի ոչ վասն այլ ինչ պատճառի զանազան մեղս գործէ մարդ, քան թէ
այնու որ զօր մահուն ի մտացն բնաշինչ առնէ. որպէս Ադամ վասն այն
մեղանչեաց ընդդէմ պատուիրանացն Աստուծոյ՝ զի զմահն ոչ յիշեաց: Եւ
զայս ցուցանէ Աստուած յանդիմանելովն զնա. յիշեա՞ (զի հող էիր եւ ի հող
դարձցիս:) Վասն այն ասէ իմաստունն Սիրաք. (յամենայն գործս քո՝ ի միտ
ած զվախճանն քո, զի յաւիտեան ոչ մեղանչես:) Եւ գիտելի է՝ զի յիշատակ
մահուն օդ տակար է վասն բազում պատճառի: Առաջին՝ վասն
խոնարհութեան. որպէս ասէ Սիքիա. (խոնարհութիւն քո ի ներքս ի քեզ է.)
Իբր թէ ասէ. ի քեզ ունիս՝ ուստի խոնարհիլ պարտիս: Եւ այս է պատճառն.
որ ի սահման մարդոյն մահկանացու եղեալ լինի. զի իմաստասերքն
սահմանեցին ասելով. զի՞նչ է մարդ՝ կենդանի բանաւոր մահկանացու: Իբր
թէ ասէ. ի հարկէ մեռանիլոց է մարդ. վասն այն ասէ Դաւիթ. (ծանկցեն
հեթանոսք թէ մարդիկք են սոքա:) Բեռնարատոս ասէ. յոյժ բարի է թէ մարդ
ճանաչէ զինքն, քան թէ զինքն անգիտանալով՝ զնթացս աստեղաց.
զբնութիւնս տարերաց. զցասումն զազանաց. զգօրութիւնս խոտոց: Նաեւ
զինչ եէ՞ եթէ զինքն ոչ ճանաչէ, ոչ ինք է. քանզի որ ոչ ճանաչէ, զինքն վասն
մեղաց եւ պակասութեան իւրոյ, ոչ ցաւի. ոչ ամաչէ ի մարդոյ. ոչ երկնչի
յԱստուծոյ: Վասն այն ասաց Աստուած Էզեկիէլի: (Որդի մարդոյ բրեա զորմդ.
եւ բրեցի եւ ահա դուռն մի. եւ ասեցիս. մուտ եւ տես զանօրէնութիւնդ եւ
զչարիս. մտի եւ տեսի զարշուծիւն սողոցն եւ անասնոց:) Արդ՝ զի՞նչ է բրել
որմոյն՝ եթէ ոչ, նկատել ի պակասութիւն անձինն. զոր թէ ոք արասցէ,
բազում զարշուծիւնս գտանէ յինքն: Եւ նմանութիւն սողոցն եւ զազանաց.
որպէս ասէ Դաւիթ. (մարդ ի պատի էր եւ ոչ իմացաւ:) Այս առաջին
օգտութիւն է յիշատակ մահուն: Երկրորդ՝ առ ի նշանակելոյ զաշխարհս. զի
ասեն վարդապետք. դիւրաբար անգոսնէ զամենայն, որ յամենայն ժամ
խորհի զինքն մահկանացու գոլ. որպէս ասէ յառաջին թագաւորութեանցն
թէ՛ (մերկացուցին զՍաւուղ ի լերինն գեբուայ.) Սաւուղն թարգմանի վատ
նօզ. որ նշանակէ զմեղաւորն՝ որ վատնէ զպարգեւսն տուեալ յԱստուծոյ:
Գեբու թարգմանի յղփութիւն անձրեւաց. եւ նշանակէ զմահն՝ որով ամենայն
ժողովուրդն աւերեալ լինի. որպէս ասէ աւետարանն. (անմիտ՝ յայսմ զիշերի
զոգիդ ի քէն ի բաց պահանջեն, եւ այլն:) Կարե ասիլ թէ՛ հոգին լինի բաժին

սատանայի. որպէս ասէ Ղուկաս. (մեռաւ մեծատունն եւ թաղեցաւ ի դժոխս:) Եւ մարմինն կերակուր օձից եւ որդանց. որպէս ասէ Սիրաք. (յորժամ մեռանի մարդ՝ ժառանգէ զգազանս, զօձս, եւ զորդունս:) Իսկ ինչքն լինին բաժին օտարաց. որպէս ասէ եգակի. (զոր ժողովես ո՛ւմ լինի.) իբր թէ ասէ օտարաց. յորոց բնաւին ոչ խորհիս: Այս երկրորդն: Երրորդն՝ օգտութիւն է յիշատակ մահուն առ ի ճանաչել զմարմնական հեշտախտութիւնս. քանզի մայրն յորժամ կախմ ի ստենէ հատանել զորդին, դառնագոյն իրօք օձանէ զստինսն: Չոր ընթերցեալ լինի յումեմնէ կրօնաւորէ. առ որ եկն պոռնիկ կին վասն խաբելոյ. որում ետ իջեան երկրնչելով, մի գուցէ վնասիցի ի գազանաց: Եւ յորժամ էին ի մասին ի միում խղճթի, ընկեաց սատանայ փորձութիւն ի սիրտս նորա. եւ նա ի միտ ածեալ զտանջանս դժոխոցն, վառեալ հուր խարշատեաց զմարմինն ասելով. թէ համբերես ժամանակաւոր հրոյս, կարես տանիլ զյաւիտենականն. այսպէս գերծաւ ի փորձութենէն: Եւ ի վագին եգիտ՝ զկինն մեռեալ եւ հոտեալ. զօր յետոյ ի միտ ածելով, յայլ փորձութեանցն զերծաներ. այսպէս օգտակար է յիշատակ մահուն: Չորրորդ՝ յորդորէ յողորմութիւն. խորհելով թէ՛ ոչ կարէ տանիլ ընդ ինքեան, բաշխէ աղքատաց. յուսալով թէ լաւագոյն փոխարէն լինելոց է. Որպէս ասեն վարդապետք. այն ոչ են բարիք մարդոյն զորր ընդ ինքեանս տանիլ ոչ կարեն. ապա ուղիղ բարի է ողորմութիւն ննջեցելոցն. որպէս ասէ յաւետարանն. (եկայք օրհնեալք հօր իմոյ. զի քաղցեայ եւ ետուք ինձ ուտել, եւ այլն:) Եւ գիտելի է՝ թեպէտ ոչ կարէ տանիլ ըստ սաղմոսին. (զի ոչ թէ ի մեռանիլ իւրում առցէ ընդ իւր զամենայն.) սակայն ի ձեռն ողորմութեան կարէ տանել. ըստ այնմ, (որ ողորմիլ աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ:) Այս չորրորդն: Հինգերորդ՝ օգուտ է յիշատակ մահուն, զի շարժէ ի գեղջ. որպէս այն որ Եսայի յԱստուծոյ կողմանէն ասաց ցեզեկիա. (ա՛րքայ պատրաստեա՛ զտուն քո զի մեռանիս. եւ նա ելաց դառն:) Նոյնպէս թագաորն նինուէացւոց ի խորդ եւ ի մոխիր զիջաւ ի բանիցն Յովնանու վասն կործանման Նինուէի:

Յայլմէ քարոզ վասն ննջեցելոցն. ի Բանն Յոբայ: (Ողորմեցարուք ինձ ողորմեցարուք ինձ ո՛վ բարեկամք իմ. զի ձեռն Տեառն մեխեցաւ յիս:) Յոբ. 19. 21: (Գլուխ. ԸԾԲ)

Ասեն իմաստունք յորժամ ոք երթայ ի ճանապարհ եւ անկանի յորոգայթ որ վասն պարտուց դնեն ի բանտ, յայնժամ թուղթ առաքէ առ ճշմարիտ սիրելիսն իւր, զի օգնեսցեն եւ վճարեսցեն զպարտս նորա: Այլ ճշմարիտ սիրելին եւ սուտն՝ երեք ցեղ որոշին: Նախ զի՝ սուտ սիրելին որչափ մերձ է՝ առ երեսս սեր ցուցանէ, եւ յորժամ հեռանայ՝ մոռանայ: Իսկ ճշմարիտ սիրելին առաւել հոգւոյ յորժամ հեռանայ. որպէս մայրն սակաւ հոգայ յորժամ մերձ է որդին. բայց ի հեռանալն անչափ լայ եւ հոգայ. եւ հանապազ յերազն տեսանէ: Երկրորդ՝ զի սուտ սիրելին սիրէ յորժամ փարթամ է. իսկ յաղքատութեանն ոչ: Իսկ ճշմարիտն՝ յամենայն ժամ սիրէ, եւ քան ի փարթամութեան, առաւել ի յաղքատութեան հոգայ: Երրորդ՝ զի սուտ սիրելին՝ զմարմինն միայն սիրէ եւ զհոգին ոչ այլ ճշմարիտ սիրելին զի կատարեալ է սերն, վասն այն սիրէ զմարմինն եւ զհոգին ի կեանս եւ ի մահ: Վասն որ անկանի յորոգայթ, գիտէ զճշմարիտ սիրելիսն. թող դրկէ առ նոսա զի օգնեսցեն նմա: Այսպէս հոգեւորապէս ննջեցեալքն զնացին զհեռագոյն

ճանապարհն. եւ ունին պարտք զմեղս. զի ոչ կարասցին աստ ապաշխարել եւ հատուցանել. եւ անդ ոչ գոյ ապաշխարութիւն եւ ոչ հատուցումն. վասն այն բերանով մարգարէին Յորայ՝ թուղթ եւ ողբ առաքեն յետս թէ: (Ողորմեցարուք ինձ ողորմեցարուք:) Չայս ինչ ասեն թէ՝ ազգականք մերր եւ սուտ սիրելիք՝ մոռացան զմեզ. այլ դուք քահանայք ճշմարիտ սիրելիք՝ մի մոռանայք զմեզ. եւ դուք օգնեցէք մեզ աղօթիւք եւ պատարագօք, որք ազատիւք ի յաւիտենիից պարտուցն: (Չի ձեռն Տեառն միտեցաւ յիս:) Ոչ ասեն թէ սուր Տեառն. զի սուրն եւ տանջանքն յաւիտենական մարմնով են առնլոց ի յաւուրն դատաստանի. այլ ձեռն Տեառն՝ որ նշանակէ զխրատն: Որ ձեռամբ հարկանէ եւ տրտմեցուցանէ զհոգիս պարտաւորացն այնոցիկ՝ որք ակն ունին ողորմեացն Աստուծոյ յաւուրն դատաստանի. Վասն այն աղաղակեն առ մեզ. զի օգնելն կենդանեաց՝ օգուտ է ննջեցելոց. որպէս աղաչանք քերցն Ղազարու՝ օգնեցին եղբօրն: *Այլ ասեն իմաստունք թէ պարտ է քարոզ տալ ի վերայ ննջեցելոց վասն երեք պատճառի: Առաջին՝ զի յորդորեցին մարդիկ վասն ննջեցելոց առնել՝ աղօթս եւ պատարագս պահս եւ տուրս աղքատաց. զի առաւել օգնութիւն հասանի կենդանեաց աղօթքն վասն մեռելոց: Երկրորդ՝ պարտ է քարոզել ի վերայ ննջեցելոց. զի եւ կենդանիքն պատրաստեցեն զինքեանս. զի եւ նոքա մահկանացուք են: Երրորդ պատճառ՝ զի կենդանիքն միտարեցին ի վերայ ննջեցելոցն, եւ մի անյուսութեամբ սուգ առցեն. զի անօգուտ է ննջեցելոցն: *Արդ՝ տեսցուք զառաջին գլուխն. զի վասն ինն պատճառի պարտ է զի կենդանիքն աղօթեն վասն ննջեցելոցն: Առաջին պատճառ՝ զի կենդանիքս պարտական ենք ննջեցելոցն. զի բազում բարութիւնս ուսեալեմք ի նոցանէ: Չի ծնաք ի նոցանէ եւ սնաք. եւ զամենայն ինչ ի նոցանէ ունիմք: Արդ՝ մի ծուլացուք վասն նոցա աղօթել. զի ծնօղքն վասն սիրոյ զաւակացն ծուլացան յապաշխարութենէ. եւ ի մարմնաւոր իրս զբաղեցան. եւ բազում մեղս գործեցին սուտ ասելով եւ իրս ժողովելով. վասն այն պարտ է զպարտս նոցա զաւակացն աղօթիւք վճարել: Եւ այս հաստատի օրինակաւ. որպէս գրեալ է յերկրորդ օրէնսն. Եթէ ոք մեռանիցի անորդի, առցէ զկին նորա եղբայր նորա: Եւ յարուցէ զաւակ յանուն մեռելոյն. ապա թէ չկամիցի առնուլ զկին եղբօրն, ելցէ կինն առ ծերսն եւ աստոցէ. ոչ կամի եղբայր առն իմոյ կանգնել զանուն եղբօր իւրոյ. եւ հանէ կինն զկօշիկն նորա. եւ թքանէ ընդ երեսս նորա. եւ լինի նախատիւք ժողովրդոցն: Այս է՝ նախնիքն առին կին ապաշխարութիւնն. եւ մեռան անզաւակ. զի ոչ կատարեցին զապաշխարութիւնն. ապա ուրեմն պարտ է մերձաւորացն նոցա առնուլ զապաշխարութիւնն եւ յարուցանել զաւակ նոցա. այսինքն, զկատարեալ ապաշխարութիւնն վասն ննջեցելոց: Այլ բազումք առնուն զինչս եւ զհայրենիս ննջեցելոց. եւ ոչ ապաշխարեն վասն նոցա. վասն այն առաջի Աստուծոյ եւ ամենայն սրբոց կիսս այս որ է ապաշխարութիւնն՝ ամբաստան լինի զնոցանէ. թէ նոքա զինչս եւ զստացուածս առին. եւ զիս ոչ առին յանուն ննջեցելոց. հանցէ զկօշիկս. այսինքն, զպատիւն ի նոցանէ. եւ թքանէ յերեսս նոցա. զի խայտառակին նախատանօք յատենին Քրիստոսի. ապա ուրեմն պարտ է օգնել ննջեցելոցն: Երկրորդ՝ զի յորժամ նոքա մեր օգնութեամբն ազատին ի տանջանց եւ կան առաջի Աստուծոյ, յայնժամ համարձակութիւն ունին առ Աստուած վասն մեր բարեխօսել. եւ պատրաստեն մեզ տեղի յարքայութեանն. որպէս ասէ

Տերն. (արարեք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասի այդ, ընկալցին զձեզ ի յարկս իւրեանց:) Երրորդ՝ պարտ է օգնել ևոցա. զի անչափ աղքատութիւնս կրեն ննջեցեալքն. զի գոր ինչ ունէին՝ յաշխարհս թողին. եւ զհանդերձեալ փառսն ոչ են առեալ. եւ պարտս հոլովս ունին. եթէ ներումն խնդրեն կամ ողորմութիւն՝ չտան ևոցա. որպէս ոչ ետուն իմաստուն կուսանքն յիմարացն ի յիւղոյն. եւ թէ փոխ խնդրեն՝ ոչ ոք տայ ևոցա. զի ամենեքեան աղքատ են եւ պարտական. վասն այն մեք որ կենդանի եմք եւ ունելոր՝ պարտ է զի յօգնութիւն հասնիմք ևոցա աղօթիւք: Զորրորդ պատճառաւ՝ պարտ է օգնել ևոցա. զի որ պարտական է յայս կեանս՝ եւ ոչ կարէ տալ նմա զփոխն՝ այլ իմն հնարիւք կարէ վճարել. զի գործ առնէ՝ եւ վարձ առնու՝ եւ վճարէ զպարտսն: Այլ ննջեցեալքն գնացեալ ի մէջ անդ ոչ կարեն վաստակս առնել. եւ ոչ գին վաճառ. եւ ոչ այլ ինչ. որպէս ասէ ժողովօղն. (զամենայն ինչ գոր ի ձեռին քումէ զօրութիւն, արա. վասն զի ոչ խորհուրդ եւ ոչ գործ եւ ոչ գիտութիւն է ի դժոխս յոր դու երթալոց ես:) Եւ թէ ոք ասիցէ՝ հոգիքն բաժանեալ՝ հանապազ ի գոչումն են եւ ի տրտմութիւն եւ ի խոստովանութիւն եւ ի պահս. այնու կրեն գտանել զփրկութիւն: Պատասխանեն վարդապետք թէ՝ անդ մեռեալքն ոչ ունին ապաշխարութիւն. զի անօգուտ է գոչումնս եւ տրտմիլն եւ խոստովանիլն եւ այլն ամենայն. զի ժամանակն անցեալ է. եւ չէ ժամանակ սերմանելոյ կամ վաստակելոյ. այլ ժամանակ է հնձելոյ եւ վարձս առնլոյ: Չի ասէ առաքեալն. (ահա ժամանակ ընդունելի. ահա օր փրկութեան. մի եւ մի իւրք տայցէք պատճառս՝ զի մի արատեսցի պաշտօնն ձեր:) Եւ չունին այլ ինչ հնարս մխիթարութեան. բայց զայն որ ասէ յաւետարանն թէ՝ (չունք կերակրին ի փշրանց ակելոյ ի սեղանոյ Տեառն իւրեանց.) զի հոգիք ննջեցելոցն կերկրին ի փշրանաց հրեշտակաց եւ սրբոց, եւ ի բարի մարդկանէ որք են յաշխարհս. այս է՝ ի բարի գործոց, ի պատարագէ եւ յաղօթից, եւ յողորմութեանց: Եւ զի յոյժ աղքատք են եւ յանճարն գգնացեալ. վասն այն պարտ է հասանիլ ևոցա յօգնութիւն: Չի գրեալ է թէ՝ երկու քահանայք պատարագ մատուցանէին. մինն վասն մեղաւորաց որք յաշխարհի են. եւ միւսն վասն մեռելոց որք բաժանեալ են: Եւ եղեւ խնդիր ի մէջ ևոցա թէ՝ ո՞րն է օգուտ. վասն ննջեցելո՞ցն, թէ վասն կենդանեացն: Մինն ասէր թէ՝ վասն մեղաւորաց որք յաշխարհի են՝ պարտ է աղօթել. զի ի մէջ բազում վշտի եւ փորձանաց են. եւ թէ անզեղջ մեռանին, ի դժոխս իջանեն: Այլ ննջեցեալքն անհոգ են. զի ի դուռն ողորմութեանն Աստուծոյ հասեալ են. եւ զմեղս խոստովանեալ են. եւ սակաւ պարտքն որր մնացեալ է ևոցա, հասարակաց աղօթիւքն եւ ողորմութեամբն Աստուծոյ ների ևոցա: Իսկ միւսն ասէր. ննջեցելոյն է օգուտ պատարագելն, քան կենդանեացն. եւ օրինակ տայ թէ՝ երկու ոմանք լինին միապէս աղքատք. այլ մինն ունիցի ողջ անդամ. աչս ունի որ տեսանէ. ոտս որ գնայ. ձեռս որ գործէ, եւ այլն: Իսկ միւսն յայսցանէ ոչ ունի եւ ոչ մի. ապա ուրեմն պարտ է առաւել կոնդին ողորմիլ: Սոյնպէս թեպէտ մեղաւորքն աղքատք են, այլ կենդանիք են. եւ կարեն ամենայն անդամօք ապաշխարել. բերանով խոստովանիլ. մարմնով ի պահս կալ ձեռօք ողորմութիւն բաշխել, եւ այլն: Իսկ ննջեցեալքն դատարկք են յայսցանէ. զի ոչ կարեն պահել. ոչ աղօթել. եւ ոչ խոստովանիլ. եւ ոչ ողորմութիւն տալ. եւ ոչ այլ ինչ հնարիւք կարեն զմեղս իւրենց քաւել. այլ մեք կարեմք վասն ևոցա քաւութիւն գործել. վասն այն ևոցա պարտ է առաւել աղօթել եւ պատարագ մատուցանել:

Հինգերորդ՝ պարտ է օգնել ևս. զի թէ մեր ոչ օգնեմք ննջեցելոցն, յորժամ մեր մեռանիմք, եւ մնացորդն մեր ոչ օգնեն մեզ. որպէս ասէ Տէրն թէ՛ (որով չափով չափեք չափեսցի ձեզ:) Եւ տես թէ դու որով չափով չափեցեր. բարւովն թէ չարովն. նոյնպէս եւ որդիքն քո քեզ չափեն բարի կամ չար: Վեցերորդ՝ զի բնական է բնութեան մարդոյս՝ որ գթայ ի հիւանդս. եւ նոքա որք ննջեցեալքն են՝ աւելի ողորմելի են քան զամենայն հիւանդս: Չի թէ զամենայն աշխարհիս ցաւն եւ հիւանդութիւնն ի մին մարդ ժողովին, ոչ լինի այնպէս ծանր, որպէս պարտական հոգին որ տանջի եւ ցաւի: Ի ներքուստ ի խղճէ մտաց. եւ յարտաքուստ ի տանջանաց. զի հանապազգ չարչարին. եւ զհիւանդութիւնս իւրեանց ոչ կարեն յայտնել մեզ. եւ ոչ ունին սպասաւոր. եւ ոչ կարեն օգնել միմեանց: Եօթներորդ՝ զի որք ոչ կատարեն զանդարձս ննջեցելոցն՝ հինգ ազգ մեղանչեն: Նախ Աստուծոյ. զի թէ կատարեալ էին զանդարձս, եւ ննջեցեալն հասաներ ի կայանս արդարոց ի տեղիս լուսոյ եւ հանգստեան, լինէր փառաբանիչ Աստուծոյ: Երկրորդ՝ մեղանչեն հրեշտակաց. զի նոքա առաւել ուրախանան յորժամ հոգիք սրբոց յաւելանին ևս ի փառաբանութիւնն Աստուծոյ: Երրորդ՝ մեղանչեն ընդդէմ ննջեցելոց. զի թէ կատարէին զանդարձս, նոքա փութով ժամանէին ի հանգիստն: Չորրորդ՝ մեղապարտ է այնպիսին եւ ինքեան. զի գրեալ է ի սիրեցեքն, (որով եւ մեղանչէ ոք՝ նովիմք եւ տանջի:) Չի որ լսէ զաղաղակ ննջեցելոց եւ ոչ ողորմի, նոյնպէս եւ ինքն աղաղակէ, եւ ոչ ոք աղորմի: Հինգերորդ՝ մեղանչեն ընդդէմ որդւոց իւրեանց. զի չար օրինակ տան որդւոցն ոչ կատարել զկտակս ննջեցելոցն: Ութներորդ՝ պարտ է օգնել ևս. զի ննջեցեալքն ի վերայ մեր բազում աշխատանս կրեցին. եւս առաւել ծնօղքն. ապա ուրեմն չէ պարտ անտես առնել զաշխատանս ևս. այլ բարի փոխարեն առնել: Չի զաւակքն պարտական են ծնողաց իւրեանց. եւ ծնօղքն կարեն խնդրել զպարտս իւրեանց. բայց ոչ իշխանութեամբ, այլ խոնարհութեամբ խնդրեն թէ, (ողորմեցարուք ինձ ողորմեցարուք ինձ ով բարեկամք իմ. զի ձեռն Տեառն միտցաւ յիս:) Աւաղ՝ ննջեցեալքն որք ի կեանս իւրեանց այլոց առնէին ողորմութիւն՝ այժմ հասեալ են յայն տեղին, որք յայլմէ խնդրեն ողորմութիւն. եւ դու թէպէտ մարմնական ինչ ոչ ունիս, այլ կատես աղօթիւք օգնել նմա. Աստուած ողորմի ասելով, կամ հայր մեր որ յերկրիսս, կամ այլ ինչ աղօթս, ամենեքեան օգուտք են ննջեցելոցն: Եւ թէ ինչս ունիս, ընչիւք պարտ է օգնել նմա. եւ զնդարձս կատարել: Չի թէ մեծատուն ոք երթայ յայնկոյս ծովուն եւ առնէ տիաթիկս, եւ բազում ինչ տայ որդւոց իւրոց, եւ սակաւ ինչ իւրն բաժին առնէ թէ՛ յետոյ յուղարկեցէք ինձ: Եւ որդիքն զամենն ի պէտս իւրեանց անցուցանեն. եւ հայրն ի սովոյ մեռանի, ո՞չ մահապարտք են նոքա: Այսպէս որք մեռան եւ զնացին յայնկոյս հեռագոյն ծովուն, զի յայս կենացս ի հանդերձեալն երթան. եւ անդարձով բազում ինչ որդւոցն տան. եւ սակաւ ինչ իւրեանց հոգւոյն բաժին տան: Իսկ մնացեալ որդիքն զամենայն ի պէտս իւրեանց անցուցանեն. եւ ծնօղքն սովամահ կորնչին. եւ նոքա ծանրագոյն մեղանչեն. վասն այն կանոն է եկեղեցւոյ՝ զի եպիսկոպոսն եւ քահանայքն հայր են ննջեցելոցն. բնութեամբ կատրել տան զկտակսն: Իններորդ՝ յորժամ մեռանիմք եւ ոչ հասանիմք ննջեցելոցն յօգնութիւն, տամք ևս պատճառ տրտմութեան. որպէս թէ ոք ի բանտի լիցի, եւ ակն ունի թէ բարեկամս հանէ զնա անտի. եւ բարեկամս անփոյթ առնէ, նա առաւել տրտմի քան զայն՝ որ չունի զոք բարեկամ: Այսպէս յորժամ

մեռանին ծնողքն, եւ յուսան թէ զաւակք մեր փրկեն զմեեզ, եւ նոքա անփոյթ առնեն, առաւել տրտմին քան զնոսա որք չունին զաւակ: Վասն այն Եսայի բամբասէ զանգութ զաւակացն. (որդիս ծնայ եւ բարձրացուցի. եւ նոքա զիս անարգեցին:) Եւ թէ ոք ասիցէ՝ որպէս կարէ մարդ յօգնութիւն հասանիլ ննջեցելոյն եւ ազատել զնա ի դժոխոցն: Ասեն վարդապետք թէ՝ որպէս մարդ մարմնաւոր որ մատնեալ է ի բանտ՝ բարեկամք նորա չորս կերպիւ կարեն ազատել զնա: Նախ ինքեամբ. զի մտչին առ թագաւորն եւ աղաչեն զնա: Երկրորդ՝ զի տան կաշառս սիրելեաց թագաւորին: Երրորդ՝ զի վարձեն բարեխօս, եւ առաքեն առ թագաւորն. եւ թէ այսու չկարեն փրկել, առնեն չորրորդ հնարս. այսինքն, զի բազում գանձս տան յարքունիս թագաւորին: Այսպէս կարեն ազատիլ ննջեցեալքն ի դժոխոց չորս կերպիւ: Նախ՝ որ քո անձամբդ դու աղաչես զԱստուած աղօթիւք վասն ննջեցելոցն: Երկրորդ՝ զի տասցես կաշառս իշխանաց նորա. այսինքն, աղքատաց եւ տնանկաց. եւ նոքա աղօթեն վասն նոցա եւ Աստուած լսէ. որպէս ասէ Դաւիթ. (զգանկութիւն տնանկաց լուար Տէր. ի պատրաստութիւն սրտից նոցա այլն:) Երրորդ՝ զի վարձու կալցէ զքահանայս աղօթիւք եւ պատարագօք: Չորրորդ՝ զի տացեն գանձս մարմնական ի տաճարն Աստուծոյ. որպէս արար յուրայ մակաբայեան. առաքեաց ի տաճարն երկու հազար դրամակշիռ ոսկի. զի աղօթեսցեն վասն նոցա որք մեռան ի պատերազմին: Դարձեալ գիտելի է՝ զի է ոք վճարէ զպարտս ննջեցելոյն, յորժամ ինքն մեռանի, եւ այլք արասցեն յանուն նորա բարիս, ոչ հասանի ի նա. այլ յայն՝ որում պարտական էր: Վասն զի գրեալ է ի վարս հարանց այլ ազգաց թէ՝ ոմն ի մեռելոցն եկն ի վանս կրօնաւորացն եւ ասէր. ողորմեցարուք ինձ. եւ ասացին. այլ զի՞նչ ինդրես՝ զի հատուցաք զպարտս քո: Պատասխանի ետ. այո հատուցիք: Բայց ես պարտկան էի այլոց ննջեցելոցն՝ նոքա առնի. զի ես ծուլացայ. եւ այժմ դատարկ եմ ես վասն այն աղաչեմ յաւելուլ ինձ աղօթս: Եւ դարձեալ գիտելի է՝ զի ոմանք նման են գազանին այն՝ որ զգերեզմանս բանայ եւ ուտէ զմարմին մեռելոյն. այսպէս բազումք են անողորմ՝ որք ոչ միայն թէ ոչ առնեն ողորմութիւն ննջեցելոցն, այլեւ չարաչար քարշեն զոսկերս նոցա եւ զգերեզմանս: Եւ այն ծանր մեղք է հայիոյել զմեռեալս, քան զկենդանիս. զի ընդդէմ է բնութեանն վրեժ առնուլ ի մեռելոցն: Եւ այսպէս է՝ որպէս ա յն որ տիգաւ խոցեաց զկողս Յիսուսի՝ առաւել գազանութիւն էր քան զայնս՝ որք ի խաչին բեւեռեցին: Ապա ուրեմն պարտէ առնել ողորմութիւն ննջեցելոյն՝ թէ հոգեւոր եւ թէ մարմնաւոր. զի ողորմածն Աստուած ողորմեսցի նոցա. եւ թողութիւն արասցէ ամենայն յանցանաց նոցա. եւ հանգուցէ այժմ ի տեղիս լուսոյ եւ ի տեղիս հանգստեան: Եւ ի միւսանգամ գալստեանն՝ երկնից արքայութեանն ժառանգորդս կացուցէ զնոսա ընդ ամենայն սուրբ եւ սիրելիս անուան իւրոյ Զրիստոս Աստուածն մեր եւ փրկիչն. եւ նմա եւ Յօր իւրում եւ Սուրբ Հոգւոյն՝ փառք եւ պատիւ եւ երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից ամեն:

Այլեւ քարոզ վասն ննջեցելոց. ի Բանն Սիրաքայ: (Ի միտ Աստուած զդատաստանս իմ. զի այնպէս լինելոց է դատաստանն Զո. ինձ եկն էհաս օրս այս:) Եկլէս. 38. 23: (Գլուխ. ԾԾԳ)

Վարդապետք ասեն թէ՝ Աստուած ոչ առնէ անփոյթ զփրկութիւն

մարդկան. այլ զանազան քարոզս առաքէ. զի բազում անգամ քարոզեալ է հրեշտակօք՝ յայտնեն դէքն դիւօք. զի յակամայ կամօք՝ յայտնեն դէքն վասն փրկութեան մարդկան ի տանջանաց դժոխոցն: Իսկ այժմ քարոզէ Աստուած միջնորդութեամբ մեռելոց բանիւս այս որ ասէ Սիրաք: (Ի միտ ած զդատաստանս իմ. զի այնպէս լինելոց է եւ դատաստանն քո:) Վասն այն ասէ Սողոմօն. (լաւ է երթալ ի տուն սգոյ, քան ի տուն արբեցութեան:) Չի այն է դպրոց բազում ինչ ուսման. վասն զի այն է կատարած ամենայն մարդկան. եւ կենդանին խորհի թէ զինչ լինելոց է: Եւ գիտելի է՝ զի մեռեալն եօթն ազգ քարոզ տայ կենդանեացն բարառնաբար՝ զի ի միտ առցուք: Առաջին՝ զայս ուսուցանէ թէ՛ որպէս ես մեռայ եւ ոչ ինչ տարոյ յաշխարհէս զատ ի գործոց. նոյնպէս դու մեռանիս եւ ոչ ինչ տանիս բաց ի բարի գործոց քոց. որպէս ասէ Յոբ. (մերկ եկի յորովայնէ մօր իմոյ. եւ մերկ անդամ դարձոյց անդրէն.) այս է՝ ի գերեզմանս: Եւ Պօղոս առ Տիմօթէոս ասէ. (ոչ ինչ բերաք յաշխարհս. եւ ոչ ինչ տանիլ կարօղ եմք:) Եւ պարտէ մեզ օրինակ առնուլ զչար մեծատունն որ ասէ յաւետարանն. զի ի բազում մեծութենէն զոր ունէր աստ՝ կաթիլ մի ջրոյ ոչ տուաւ անդ, թեպէտ շատ խնդրեաց: Վասն այն գրեալ է թէ՛ թագաւոր մի որ իշխէր տասն թագաւորաց՝ յորժամ եհաս օր մահուն նորա, հրամայեաց զպատանս իւր կապել ի ձող մի երկրայն. եւ շրջիլ ընդ քաղաքն եւ ասել բարձր ձայնիւ. յամենայն թագաւորութենէն զոր ունէր արքան՝ զայս չափ ինչ տանի ընդ իւր. վասն այն ասէ ննչեցեալն: (Յիշեա զդատաստան իմ:) Երկրորդ բան՝ քարոզէ եւ ասէ. որպէս ես գնացի եւ այլ ոչ դարձայ. նոյնպէս եւ դու գնալոց ես եւ այլ ոչ դառնալոց. ըստ այնմ, (ոգի որ ելանէ՛ այլ ոչ դառնայ:) Չի յոյժ կարօտ եմք դառնալոյ աստ եւ ապաշխարելոյ, եւ ոչ կարեմք: Չի որ աստ ի փոքր ժամանակս կարեմք ապաշխարել զմեղս, անդ ի բազում ժամանակս տանջիմք եւ ոչ օգտիմք: Վասն այն կրկին անգամ զարթոյց հրեշտակն զեղիա եւ ասէ. արի կեր եւ արբ. զի յերկար ծանապարհ կալ առաջի քոյ. եւ պահք քառասնօրեայ մնայ քեզ: Վասն այն պարտէ աստէն ուտել եւ ըմպել զապաշխարութիւն. զի բազում պահքն եւ տանջանք կան յետ մահու. արպէս նաւավարք պատրաստեն զկերակուր նաւին. զի ի վերայ ծովուն անհնար է գտանել: Այսպէս պարտ է եւ մեզ պատրաստել աստ հոգեւոր կերակուր. զի յորժամ ելանեմք ի ծով մահուն, մի սովամահ կորնչիցիմք. վասն այն ասէ ննչեցեալն: (Ի միտ ած զդատաստանս իմ:) Երրորդ բան՝ քարոզէ եւ ասէ թէ՛ յինչ կերպ որ մեռանիս՝ ի նմին մնալոց ես յաւիտեանս յաւիտենից. որպէս ասէ ժողովօղն. (թէ անցի փայտն ի հարաւ կամ ի կողմն հիւսիսոյ՝ ուր անկցի փայտն՝ անդ կացցէ:) Չի որչափ կենդանի եմք՝ հնար է փոփոխիլ ի չարէ ի բարի, եւ ի բարւոյ ի չար. բայց ի նոյն ժամս որ ելանէ հոգին ի մարմնոյն՝ թէ անկանիցի ի հարաւ որ ջերմ է եւ խոնաւ. այս է՝ ի շնորհն եւ ի սերն Զրիստոսի Աստուծոյ, անդ է մնալոց. եւ եթէ ի կողմն հիւսիսոյ որ ցուրտ է ի չոր. որ է մահու չափ մեղքն, անդ է մնալոց. զի հոգին յետ ելանելոյն՝ ոչ կարէ բարի գործել եւ ոչ չար. վասն այն պարտ է ջանալ մեզ եւ անկանիլ յաջ կողմն որ է հարաւ. եւ մի ի հիւսիս որ է ձախ կողմն: Այլ դժուարին է այնմ որ զամենայն ժամանակս ի ձախ եւ ի չարն գնաց, իսկ յօր մահուն ի յաջ կողմն միտել. վասն այն պարտէ այժմ վարժիլ ի կողմն Աստուծոյ. զի յօր մահուն անդ անկցուք որպէս ասէ: (Ի միտ ած զդատաստանս իմ:) Չորրորդ՝ բան՝ քարոզ է եւ ասէ թէ՛ լինելոց է դատաստան քո նման դատաստանին իմոյ. զի թէ յօր մահուն ծածկեսցես

գյանցանս ի խոստովանահօրէն, յայտնեցէ Աստուած ամենայն աշխարհի յաւուրն դատաստանի. եւ թէ դու յայտնես Աստուծոյ խոստովանութեամբն, յայնժամ Աստուած ծածկէ զմեղս քո. (զի այնպէս եղեւ դատաստանս իմ:) Յինգերորդ բան՝ քարոզէ եւ ասէ թէ, ամենայն մերձաւորք եւ բարեկամք իմ թողին զիս, յորժամ եղին ի գերեզմանի կերակուր որդանց, եւ ոչ ոք էր ընդիս: Այսպէս են առնելոց եւ բարեկամքն քո. վասն այն (ի միտ ած զդատաստանս իմ:) Վեցերորդ բան՝ ամենայն մեծութիւն քո յոչ ինչ է դառնալոց, որպէս եւ ինձ պատահեաց: Չի ամենայն փառք եւ մեղութիւն աշխարհիս՝ ի հինգ է կապեալ: Այս է՝ կամ իշխեցօղ է. կամ պատուական եւ մեծագգի է. կամ կատարեալ իմաստուն է. կամ մարմնով զօրեղ եւ գեղեցիկ է. կամ շատ փարթամութեան Տէր է: Յնգեքեան սոքա խափանելոց են ցօր մահուանն: Որպէս ասէ Դանիէլ թէ՝ (ետես թագաւորն պատկեր մի մեծ. եւ տեսիլ նորա ահագին յոյժ. գլուխ նորա յոսկոյ սրբոյ. ձեռքն եւ բազուկքն եւ լանջքն արծաթիք. եւ մէջքն եւ բարձքն պղնձիք. եւ սրունք եւ ոտքն կէսն յերկաթոյ եւ կէսն ի խեցոյ. եւ հատաւ վեմն առանց ձեռին՝ եւ ետար զպատկերն եւ մանրեաց զնա իսպառ:) Այս պատկերս՝ նշանակէ զմեծութիւն աշխարհիս. տեսիլն ահագին՝ զահարկու իշխանութիւնն նշանակէ. եւ ոսկի գլուխն՝ իմաստութիւն է. եւ մէջն պղնձի՝ զուժեղութիւնն ցուցանէ. իսկ ոտքն եկաթի եւ խեցի՝ զփարթամութիւնն ցուցանէ որ երկու ազգ է: Է ինչ որ նման երկաթոյ մնացական է որպէս հայրենիք. եւ որ իբրեւ զխեցի անցաւոր է՝ որպէս ոսկի եւ արծաթ եւ սոյնպիսիք: Իսկ վեմն՝ ցուցանէ զդատաստանն Աստուծոյ. որ յօր մահուն հարկանէ անխնայ՝ եւ զամենայն ի հող դարձուցանէ: Ո՞ր եւն այսոքիկ յառաջնոցն: Ահագին թագաւորութիւնն աղէքսանդրու: Ո՞ր մեծագոյութիւն կայսերացն: Ո՞ւ իմաստութիւնն Սողոմոնի: Ո՞ր գեղեցկութիւնն Աբսողոմի: Ո՞ւ զօրութիւնն Սամփսոնի. ամենայն ի հող դարձաւ: Չիթէ երթիցես ի գերեզմանս նոցա՝ ոչ ինչ գտանիցես: Ո՞վ մարդ ի միտ ած, զի քո կատարածն այսմ նման լինելոց է որպիսի ոք եւ իցես. զի ի հողոյ ստեղծար. եւ ի հող դառնալոց ես: Ով մխիթ՝ զի ա՞րդ հպարտանաս. զի մեզօք յղացար. եւ մերկ եւ աղտեղի ծնար. եւ ցաւօք կեցար. եւ լալով մեռանելոց ես. արդ՝ (ի միտ ած զդատաստանս իմ:) Եօթներորդ բան՝ քարոզ է եւ ասէ թէ՝ (ընդ դուռն մահու ահագին որ նեղ եւ անձուկ է՝ ենցանելոց ես ընդ որ ես անցի:) Չի ասէ Արիստոտել թէ՝ կատարած ամենայն ահարկութեանց մահն է. զի քան զամենայն ահարկութիւնս՝ ահարկու է. եւ ծով դառնութեան անդ է ժողովեալ. Վասն այն ասէ իմաստունն Սիրաք. (ո՞վ մահ՝ որպէս զի դառն է յիշատակ քո մարդոյ որ յուսացեալ է յինչս իւր:) *Եւ գիտելի է՝ զի վասն բազում պատճառի դառն եւ ահագին է անցանել ընդ դուռն մահու: Առաջին՝ զի յոյժ անողորմ է մահն. զի թէ ոք մարձ է ի մահ եւ անպատրաստ՝ եւ ինդրէ ի նմանէ ներումն ասելով, տուր ինձ սակաւ ժամանակ զի խոստովանեցայց, կամ տաց հրրաման տան իմոյ. իսկ նա բնաւ ոչ հայի ի կաշառս եւ յաղաչանս. եւ ոչ ընտրէ զտեցին. զի մի է նմա սպանանել զմարդն ի տան եւ ի մայրի: Նաեւ ոչ ընտրէ զժամանակն. զի նոյն է սպանանել նմա ի գիշերի եւ ի տունջեան ի տղայութեան եւ ի ծերութեան: Ոչ ընտրէ զդեմս. զթագաւորս եւ զաղքատս. զարդարս եւ զմեղաւորս. նաեւ ոչ ընտրէ զգէսս եւ զգործիս սպանման. զի միապէս գործիք են նմա սուր եւ հուր՝ շուր եւ քար, եւ այլն. այլ միշտ սպասէ մեզ որպէս զգաղտագողի թշմամի: Ապա յոյժ անմիտ է որ մնայ սակաւ

Ժամանակս ի մեղս: Եւ թեպէտ ահագին է մահն, եւս առաւել ի վերայ
 այլոցիկ՝ որք յուսացեալ են յինչս իւրեանց եւ սիրեն զաշխարհս: Եւ պարտ է
 զի տղայն առաւել երկընչի ի մահուն քան ծերն. եւ առողջն քան զտկարն: Չի
 թէ թշնամին սպառազինեալ սպասէ ումեք, առաւել երկիրդ կայ յորժամ
 յետուստ կողմանէ լինի քան յառաջ: Արդ՝ ծեր եւ տկարն տեսանէ առաջի իւր
 զթշնամի մահն՝ եւ զղջանայ եւ խոստովանի: Բայց առողջն եւ տղայն՝ անհոգ
 մնայ. եւ յանկարծ հասանի ի վերայ ևոցա մահն. վասն այն ոչ է պարտ
 անհոգ լինիլ: Չոր օրինակ՝ թէ ոք մտանիցէ ի տուն մի՝ եւ լինիցին անդ ԻԴ
 մարդք թշնամիք՝ որք վառեալ զինուք սպասեն նմա մահու. եւ նա ոչ գիտէ
 թէ ով իցէ սպանօղն: Այսպէս եւ քսան եւ չորս ժամք տուրնջեան եւ զիշերոյ՝
 սպասեն մեզ. եւ ոչ գիտեմք թէ ո՞ր է: (Երեկոյեա՞յն՝ թէ մեջ գիշերի՞ն, եւ այլն:) Վասն
 այն ահագին է դուռն մահու եւ երկնչիլ պարտ է: Երկրորդ՝ ահագին է՝
 զի բազում վիշտս հանդիպի ի ժամ մահուն: Առաջին՝ ցաւք ծանրագին. որք
 չտան թոյլ հոգալ վասն հոգւոյ: Երկրորդ՝ մերկանալն յամենայն ընչից. զոր
 բազում աշխատութեամբ ժողովեաց եւ յոյժ սիրէ: Երրորդ՝ բաժանումն
 հոգւոյն ի մարմնոյն. զի յոյժ սիրեն զիրեարս: Չորրորդ՝ զի ոչ զոք ունի
 ճանապարհորդակից. եւ յօտար երկիր երթայ, ուր բնաւ չէ զօք տեսեալ:
 Հինգերորդ՝ զի տեսանէ յամենայն կողմանց զթշնամիս իւր. որպէս որս մի ի
 մեջ բազում որսողաց. զի յետուստ կողմանէ տեսանէ զմեղս իւր զինեալ. եւ
 յառաջուստ զսատանայ՝ որ գայ ընդառաջ նորա: Ի վերոյ զդատաւորն ահեղ
 զոր բազում զայրացուցեալ է: Եւ ի ներքուստ կողմանէ զդժոխս: Ո՞վ թէ
 որպիսի ահագին է դուռն մահուն: Վեցերորդ՝ այնպէս ահագին է՝ զի եւ
 անասուն կենդանիք երկնչին ի մահուանէ. դողան. ձայն աղի ողորմ
 արձակեն. եւ թեպէտ դժուարին է ևոցա՝ բայց ի դատաստանեն եւ ի
 տանջանանց ոչ երկնչին: Իսկ զի՞նչ առնիցես դու ով մարդ մեղաւոր. որ ոչ թէ
 միայն այսոքիկ կան առաջի քոյ, այլեւ դատաստանն ահագին. եւ դժոխք
 անվճար: Վասն այն ասէ Սիրաքն. (Եթէ յիշեսցես զկատարածն քո, բնաւ ոչ
 գործեսցես զմեղս:) Եւ երեք ինչ է կատարածն մեր. մահն, եւ դատաստանն, եւ
 դժոխքն: Թէ զսոսա ի միտս քո պահես, ոչ մեղանչես: Եօթներորդ՝ այնպէս
 ահագին է՝ զի եւ սուրբքն եկնչին ի մահուանէ. որպէս գրեալ է թէ՝ հայր մի
 զնաց հնգետասան ամաց յանապատս. եւ անդ կեցեալ եօթանասուն ամ
 բազում աշխատութեամբ. պահօք եւ աղօթիք. եւ բազում սքանչելիս արար.
 Եւ էր սիրելի Աստուծոյ. եւ մարմինն չորացեալ: Բայց յօր մահուն՝ ոչ կամեր
 արձակիլ հոգւոյն ի մարմնոյն. որպէս ասէ Պօղոս կորնթացոց. (ոչ կամիմ
 մերկանալ. այլ զայն ի վերայ այսր զգենուլ:) Չի թեպէտ առաւել սուրբ ոք
 իցէ՝ այլ այս բնական է, որ ոչ կամի մեռանիլ. այլ զերկնային փառսն զգենուլ
 ի վերայ մարմնոյն. եւ այս ոչ լինի առանց մահու: Այլեւ Քրիստոս որ Տէր էր
 մահու եւ կենաց. եւ ամենայն ինչ էր ի ներքոյ հրամանաց նորա. բայց ի ժամ
 մահուն երկեալ. զի ցուցցէ զճշմարիտ մարդեղութիւն իւր. եւ ասէր. (տրտում
 է անձն իմ մինչեւ ի մահ. եւ յերկիրդէ մահորուն հոսեին քրտուք արեան. եւ
 աղօթէր. թէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինքէն:) Ով որդի Աստուծոյ. թէ դու
 որ ամենայն ինչ ի հրամանս քո է՝ այնպէս երկեար. վայ է եւ եղուկ մեզ. զի՞նչ
 հնարեսցուք թշուառականքս: Եւ այլ զի՞նչ՝ քան թէ յառաջ քան զմահն՝
 պատրաստեսցուք զմեզ ըստ օրինակի: Առաջին՝ որպէս թէ ոք ունիցի մեծ
 խնձոր կամ խարպիզակ, եւ կամիցի զնա բոլոր կլանել, վնասէ զնա. բայց թէ
 կտրատէ մասն եւ կերիցէ՝ ոչ ինչ վնասեսցէ: Այսպէս եւ մահն է որպէս մեծ

խնժոր եւ դառն. եւ որք ի կենդանութեանն ոչ յիշեն զմահն եւ սակաւ ապաշաւեն, այնպիսիքն խեղդեալ հոգւով անկանին ի դժոխս. ապա պարտ է հանապազ խոկալ զմահն՝ որ ի ժամ մահուն լինի նա դեղ կենաց: Երկրորդ օրինակ՝ որպէս նաւավարք ի ծովուն յորժամ գիտեն թէ կայ ինչ վիշտ եւ տեղի, որ անհնար է ընդ այն անցանել, թէ անպատրաստ կան մինչեւ հասցեն յայն տեղին, շուտով ընկղմին. այլ յառաջագոյն խորհին վասն տեղւոյն այն՝ զի անվնաս անցցեն: Այսպէս մեք իբրեւ նաւավար եմք ի ծով աշխարհիս. եւ վիշտ մեծ է օր մահուն. թէ ոք անհոգութեամբ կայ. ուտելով եւ ըմպելով հասանի յօր մահուն, ընկղմի ի դժոխս: Վասն այն պարտ է ի հեռաստանէ պատրաստիլ խոստովանութեամբ եւ ապաշխարհութեամբ, եւ զամենայն անիրաւս յետ դարձուցանէ կտակագրով. որպէս ասաց Եսայի առ թագաւորն Եզեկիա. (գրեա վասն տան քոյ զի մեռանելոց ես.) եւ զայն խրատն ամենեցուն տայ մարգարէն Եսայի: Դարձեալ՝ որպէս ի մահն Զրիստոսի հինգ մարմնաւոր սքանչելիք եղեն: Նախ երկիրն շարժեցաւ: Երկրորդ՝ վեմք պատառեցան: Երրորդ՝ գերեզմանք բացան: Չորրորդ՝ վարդագոյն տաճարին յերկուս հերձաւ: Հինգերորդ՝ արեգակն խաւարեցաւ: Այսպէս հոգեւորապէս լինելոց է ի մահ մեղաւորացն. եւ ապա փրկին: Առաջին՝ պարտ է որ սիրտն շարժի զղջմամբ. եւ զոր ինչ զրկեալէ յումեք է՝ ի բաց ընկեցէ. որպէս գերեզմանքն զմեռեալսն: Երկրորդ՝ վեմք պատառին. այս է, զի խստասրտութիւնն կակղասցի. եւ պատառեսցէ զչար կամս իւր: Երրորդ՝ զի գերեզմանք բացցին. այսինքն, զի բացցէ զխիղճ մտաց իւրոց եւ խոտովանեսցի: Չորրորդ՝ զի թէ յառաջագոյն խոստովանեալ է պատրուակաւ՝ ասա պատառեսցէ զվարագոյր մտանց: Կամ զառեջն եւ զթելն ծվէն ծվէն. այս է՝ մանրաբար զամենայն խոստովանի: Հինգերորդ՝ զի արեգակն խաւարեսցի, այս է՝ պայծառ վայելչութիւնն աշխարհիս արհամարհին յաչս նորա. եւ ոսկին եւ արծաթն եւ այլն. յայնժամ հոգին յետ երից աւուրց յարիցէ ընդ Զրիստոսի. այս է՝ յետ զղջման եւ խոստովանութեան եւ ապաշխարութեան՝ յարիցէ ի փառս Զրիստոսի Աստուծոյ մերոյ. որ է օրինեալ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Այլ քարոզ ննջեցելոց վասն մխիթարութեան. ի Բանն որ ասէ Սիրաք: (Սակաւ լոց ի վերայ մեռելոց. եւ ապա մխիթարեաց:) Էկլէս. 22. 11: (Գլուխ. ԸԾԴ)

Վարդապետք ասեն ոչ է պարտ անչափ սուգ առնուլ քրիստոնէից ի վերայ մեռելոց վասն տասն պատճառի: Առաջին՝ զի որպէս զամենայն բարեաց օրինակ ունիմք յառաջին սրբոցն ի բանից եւ ի գործոց. սոյնպէս եւ զչափ սգոյն եւ զմխիթարութեան ուսանիմք ի նոցանէ: Ի բանիցն՝ որպէս իմաստունն Սիրաք. (սակաւ լաց ի վերայ մեռելոց. եւ ապա մխիթարեաց:) Եւ առաքեալն ասէ. (ոչ կամիմ եթէ տգետք իցէք վասն ննջեցելոցն՝ զի մի տրտմեսցիք. որպէս այլքն որոց ոչ գոյ յոյս:) Իսկ ի գործոցն՝ ուսանիմք ի Զրիստոսէ. որ սակաւ մի արտասուեաց ի վերայ Ղազարու: Եւ Յոբ յորժամ լուաւ զկորուստ ամենայն ընչիցն, եւ զմահ որդւոցն, գոհանայր եւ ասէր. (Տէր եւ եւ Տէր Էառ. օրինեալ եղիցի անուն նորա:) Այնպէս պարտ է մեզ սակաւ մի արտասուել եւ զպարաս մեռելոցն հատուցանել. եւ ապա մխիթարիլ եւ գոհանալ զԱստուծոյ: Երկրորդ պատճառ՝ զի որք բարի

մահուամբ մեռանին՝ ազատին ի նեղութեանց աշխարհիս. եւ հասանին ի հանդիսան Աստուծոյ. որպէս ասէ տեսիլն Յօհաննու: (Երանի որք տերամբ մեռանին. ասէ հոգին սուրբ՝ այո զի հանգեան յամենայն աշխատութեանց աշխարհիս. եւ գործք իւրեանց միայն չոգան զհետ նոցա:) Եւ թէ կարէր մեռեալն խօսիլ, զայս ասէր: (Եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր. զի ես առ հայր իմ երթամ:) Այլ դուք զիս ոչ սիրէք. եւ ոչ վասն իմ օգտի լայք. այլ վասն ձեր օգտի եւ պակասութեան. այլ ես այժմ լաւագոյն եմ եւ ուրախ քան զայն՝ որ առ ձեզ էի. զի ազատեցայ յամենայն աշխատութեանց եւ ի ցնորից. ապա ոչ է պարտ անչափ տրտմիլ ի վերայ մեռելոց: Երրորդ՝ զի յորժամ բառնան զնաւն եւ հանեն ի ծովն, նա է ուրախութիւն եւ է տրտմութիւն, բայց յորժամ ի ցամաքն հանեն, կատարեալ ուրախութիւն է: Արդ՝ յորժամ ծնանի մարդն՝ նոր մտանէ ի նաւն որ ի մեջ ծովու աշխարհիս. յայնժամ խառն է ուրախութիւն եւ տրտմութիւն. բայց յորժամ բարի մահուանք հասանին ի նաւահանգիստն, այսինքն առ Աստուած՝ կատարեալ ուրախութիւն է: Վասն այն ասէ Սողոմօն. (լաւ էր օր մահուն քան զօր ծննդեան.) վասն այն ոչ տօնեմք զօր ծննդեան ամենայն սրբոց. այլ տօնեմք զօր հանգստեան. զի հասին առ Աստուծոյ եւ են ի տեղուջ լուսոյ եւ ի տեղուջ հանգստեան. եւ են մեզ բարեխօս վասն մարդկան մեղաւորաց. վասն այն չէ պարտ լալ: Զորրորդ պատճառ՝ զի ամենայն ինչ ցանկայ միաւորիլ ընդ սկզբան իւրոյ. եւ թէ բռնութեամբ արգիլի, ոչ առնու հանգիստ մինչ միաբանի ընդ սկզբանն իւրոյ. որպէս սկիզբն ամենայն գետոց ծովն է. եւ նա ոչ հանգչի բնաւ մինչեւ հասանի ի ծովն: Այլեւ տեղի քարանց երկիրս է. վասն այն յորժամ բռնութեամբ ձգեմք ի յօդդ, կամ ի ջուր, ոչ կանգնի, մինչեւ դառնայ յիւր տեղին յերկիր: Վասն ա յն ասէ Սիրաք. (ամենայն ինչ ի հողոյ են. եւ դարձեալ ի հող դարձցին. եւ ամենայն ջուրք դառնան ի ծովս: Արդ՝ սկիզբն ամենայն հոգւոց Աստուած է. վասն այն բնութեամբ կարօտին դառնալ առ Աստուած եւ միաւորիլ ընդ նմա. որպէս ասէ Ժողովօղն. (դարձցի հողն յերկիր որպէս եւ երն. եւ հոգին դարձցի առ Աստուած որ ետ զնա:) Եւ զի բանական հոգին առանց մահու մարմնոյն՝ ոչ կարէ միաւորիլ ընդ սկիզբն իւր. զի ասէ Պօղոս. (ցանկամ ելանել ի մարմնոյս եւ մտանել առ Աստուած.) վասն այն չէ պարտ լալ: Զինգերորդ պատճառ՝ զի մահն նման է քնոյ. որպէս ասաց Զրիստոս. (Ղազարոս բարեկամն մեր ննջեաց՝ երթամ զի զարթուցից զնա.) զի որպէս յառնէ ի քնոյ առողջ եւ ուրախ. այսպէս յարիցեն մեռեալքն կատարեալ առողջութեամբ եւ ուրախութեամբ: Վասն այն ասէ Պօղոս կորնթացոց: (Սերմանի ապականութեամբ, եւ յառնէ առանց ապականութեան. սերմանի անարգութեամբ, եւ յառնէ փառօք. սերմանի տկարութեամբ, եւ յառնէ զօրութեամբ. սերմանի մարմին շնչաւոր, եւ յառնէ մարմին հոգեւոր:) Թէ բոլորովին մեռեալ էր հոգւով եւ մարմնով՝ որպէս անհաւատքն որք չունին յոյս յարութեան, յանժամ պարտ էր լալ. որպէս ասէ Պօղոս թեսաղոնիկեցոցն. (ոչ կամիմ տգետս լինիլ վասն ննջեցելոց. զի մի տրտմեսչիք որպէս եւ այլքն որոց ոչ գոյ յոյս:) Ապա որ ի հաւատացելոց վերայ սուգ առնէ՝ պակասահաւատ է: Եւ թէ գնա մարդ ի ճանապարհ հեռի եւ դառնալոց է անտի բազում շահիւք, ոչ տրտմին ընտանիք նորա. զի ի գալստեանն բազում շահօք եկեցէ. որպէս ասէ Սողոմօն. (ոչ է մարդն ի տուն իւր. այլ գնացեալ է ի ճանապարհ հեռի. զքսակ արծաթոյն ի ձեռին իւրում առեալ է. եւ դառնալոց է ի լրման լուսնին:) Այսպէս մեռեալքն գնացին

ի հեռի ճանապարհ. եւ բարի գործքն իւրեանց ընդ նոսա. եւ դառնալոց են ի կատարածի աւուրն, յորժամ լուսինն կատարի. եւ բազում շահ վաս տակոց բերեն. այսինքն, զփառաւորեալ հոգին եւ զմարմինն. ապա ուրեմն ոչ է պարտ տրտմիլ: Վեցերորդ՝ զի հաւտացեալ ննջեցեալն՝ յերկու ազգ ձանձրութենէ ազատի: Նախ՝ ի դառնութենէ մահուն. զի բնական է՝ որ ի սպանանիլոյ մարդն ծարաւի կամ ցամաքի. որպէս ասէ Սողոմօն. (հոգի տրտմեալ՝ ցամաքեցուցանէ զոսկերս:) Վասն այն Զրիստոս մերձ ի չարչարանս փութացուցանէր զՅուդա թէ՛ (արա վաղվաղակի:) Այլեւ ծարաւեցաւ ի խաչին. որպէս եւ դրեալ է թէ՛ զոմն մահապարտ եղին ի բանտի. եւ ծանուցին ի գիշերն թէ ի վաղիւն սպանելոց են զքեզ. իսկ նա յերկիւղէ եւ ի ծարաւոյն այնպէս սպիտակացաւ մազն՝ որ յերեկոյին սեաւ էր, եւ ի վաղիւն ամենայն սպիտակ: Արդ՝ ի յայսպիսի դառնութենէ գերծեալ են մեռեալքն: Երկրորդ՝ զերծանի ի փարձութեանց մեղաց. զի որքան կենդանի էին ի մէջ փորձութեանց աշխարհի էին. եւ յորժամ մեռան՝ ազատեցան յամենայնէ. զի սատանայ եւ աշխարհս եւ կամ մարմինն այլ ոչ կարէ զնոսա ի մեղս ձգել. վասն այն ոչ է պարտ լալ զնոսա: Եօթներորդ՝ զմարմնով եւ զհոգւով մեռեալն պարտ է լալ. զի ասէ սաղմոսն. (մահ մեղաւորին չար է.) իսկ զարդարոցն ասէ. (պատւական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց.) եւ Սիրաքն ասէ. (սակաւ լաց ի վերայ մեռելոյն. զի հանգուցեալ է. բայց սուգ անպարշտաց զամենայն աւուրս է:) Եւ այսմ օրինակ ետ Դաւիթ. զի յորժամ Աբիսողօմ չար մահուամբ մեռաւ, այնչափ ելաց, զի ասէ թէ ոչ կամեր մխիթարիլ. բայց ի մահ փոքր որդւոյն որ ի Բերսաբէէ իր եւ անմեղ էր՝ սակաւ ելաց: Ապա ոչ է պարտ զհաւատացեալսն լալ: Ութներորդ՝ զի յայնժամ պարտ է տրտմիլ՝ յորժամ դատաւորն կաշառօք զդատաստանն թիւրէ. իսկ դատաստան մահուն առանց ակնառութեան է. զի զփոքունս եւ զմեծամեծս՝ զթագաւորս եւ զռամիկս զի մասունս եւ զտգետս՝ զչարս եւ զբարիս հաւասար վասն Ադամայ մեղացն սպանանէ, որպէս ասէ Սիրաքն. (մի երկնչիր ի դատաստանէ մահուն. զի դատաստանս այս յԱստուծոյ է ի վերայ ամենայն մարմնոյ.) ապա ոչ է պարտ լալ զմահն եւ դժուարիլ՝ զի հասարակաց է: Իններորդ պատճառ՝ զի իւրաքանչիւծ ոք զոր ինչ ունի՝ ի ներքոյ հրամանաց իւրոց առնէ անխափան՝ եւ ոչ ոք տրտնջայ. որպէս արեգակն առնէ արեւ. եւ առնէ գիշեր. առնէ պայծառ օր. եւ ամպ օր. երկայն օր եւ կարճ. եւ ոչ ոք լայ. զի այն է բնութիւն նորա: Նոյնպէս երկիրն երբեմն զարդարէ զերեսս իւր բուսովք եւ ծաղկօք. եւ երբեմն սառն. եղեամն, եւ ծիւն: Եւ ծովք երբեմն խաղաղանան. եւ երբեմն խռովին. եւ բազում այլ սոյնպիսիք: Իսկ դու ընդէ՞ր զայրանաս ի գործս արարչին. ո՞չ ապաքէն նորա հրամանօքն է: Չոր օրինակ՝ թէ ունիցի ոք բուրաստան, քաղէ ի նմանէ երբեմն ծաղիկ երբեմն խակ պտոռուղ, եւ երբեմն հասուն. արդ՝ յիմարութիւն է մարդոյ թէ ոք տրտնջայ թէ, ընդ է՞ր ոչ թողուս զծաղիկն որ միրգ դառնայ. կամ զխակն որ հասուն դառնայ. զի ինքնիշխան է: Նոյնպէս բուրաստան է աշխարհ Աստուծոյ զանազան ծաղկօք. եւ մատաղ մանկունքն ծաղիկք են. երիտասարդքն խակ. ծերքն հասուն. յորոց կամի քաղէ. ապա չէ պարտ ողբալ: Տասներորդ պատճառ՝ զի թէ վասն մահու չափ մեղուցելոցն այնչափ լաս, որ արտասուքն իբրեւ զծով դառնայ, ոչ կարես յարուցանել: Վասն այն յորժամ մերձ էր ի մեռանիլ փոքր որդին Դաւթի՝ անչափ ողբաց. իսկ յորժամ մեռաւ. յարեաւ լուաց զերեսս իւր. եւ էկեր հաց եւ ուրախացաւ. եւ

զարմացան ծառայքն. պատասխանի ետ եւ ասէ. որչափ կենդանի էր՝ ջանս եղի թերեւս յարուցէ Աստուած. եւ յորժամ մեռաւ, ընդէ՞ր անօգուտ չարչարեցայց. եւ զի ես առ նա եմ երթալոց. ոչ թէ նա առիս գալոց է: Այլեւ ոչ աղաչեն ննջեցեալքն թէ լացէք զմեզ. այլ աղօթս եւ ողորմութիւն խնդրեն. որպէս ասեր Յոբ ի դէմս նոցա. (ողորմեցարուք ինձ՝ ողորմեցարուք ինձ՝ ողորմեցարուք ինձ ով բարեկամք իմ:)

Այլ ոմանք մարդիկ նման են մատռուակին փարաւօսի՝ որ մոռացաւ զՅովսէփ ի բանտին՝ զի նա ի բարի երկիր էր. եւ ամենայն ինչ կարելի էր նմա առնել եւ ոչ արար: Մեռեալն ասէ՝ մի սիրեր զիս որպէս սիրէ շուն զոսկրն որչափ ծածկեալ է մտով. եւ յորժամ մերկանայ ի մտոյն ձգէ ի տեղի մի եւ մոռանայ: Նոյնպէս են ոմանք որք սիրեն զմարդն յորժամ կենդանի էր եւ ծածկեալ էր մարմնոց փարթամութեամբն. եւ յորժամ մերկացաւ յամենայնէ, մոռանան զնա ի սրտէ. որպէս ասէ Դաւիթ. (մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ. եւ եղէ ես որպէս զանօթ կորուսեալ:)

Այլ հաւտարիմ սիրելիքն՝ առաւել հոգան վասն մեռեալոյն, քան որ ի կենդանութեանն. եւ ոչ է հոգալն անչափ լալն եւ արտասւելն եւ զԱստուած բարկացուցանելն. այլ աղօթիւք եւ պատարագօք, եւ աղքատաց ողորմութեամբ. խաչ կանգնել. եւ եկեցեցի շինել. եւ զայլ ամենայն արդիւնսն զոր առնեն յանուն մեռելոյն, այն է հոգալ եւ սեր նորա. զի յոյժ օգուտ են ա ողթք եւ տուրք կենդանեացն վասն մեռելոցն. զի եւ նոքա առ Աստուած կենդանի են եւ ի դուռն ողորմութեան նորին ժամանեալ: Չորեւ արժանաւորեսցէ անճառ բարութեան իւրոյ, եւ անանց կենացն զամենայն հոգիս հաւատացելոց Զրիստոս Աստուածն մեր. եւ նմա փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին դարձեալ քարոզ վասն միսիթարութեան առաջին: (Գլուխ. ԾԾԵ)

Ասեն իմաստունք թէ՛ վասն չորս պատճառի պարտ է սգալ ի վերայ կորուսելոյն: Նախ՝ թէ զոր կորուսեալն այլ ոչ գտանէ ամենեւին, պարտ է սգալ: Երկրորդ՝ թէ կորուսալն ի ձեռն թշնամեացն երեւի, պարտ է սուգ ունել: Երրորդ՝ թէ այլ ումեք չլինի կորուսեալ որպէս զնորայն: Չորրորդ՝ թէ այլ զնորին նմանն չկարէ գտանել. պարտ է ի վերայ չորիցս այսպէս կորուսելոցս՝ սուգ առնել եւ ողբալ եւ տարակուսիլ: Այլ այժմ ով եղբայր՝ որ սգաւորդ ես ի վերայ մանկանց մեռելոյս՝ կորուստ քո ոչէ այն որ զնմանն չկարես գտանել. զի տալոց է Աստուած քեզ այլ զաւակ միսիթարութեան. որպէս զսեթ ետ միսիթարութիւն Ադամայ յետ սպանման Աբելի: Եւ զայս գիտեմք ի յօրինակաց. զի որ յայս տարի պտուղ եւ ծաղիկ եւ տերեւ ծառոյն թօթափի, ի միւս ամն դարձեալ ծաղիկ եւ զարդարի: Նոյնպէս եւ զաւակք մարդկան թեպէտ եւ թօթափին եւ թառամին. դարձեալ նորոգէ Աստուած. եւ տայ պտուղ եւ ծաղիկ զմիսիթարութեան որդիս. վասն այն չէ պարտ տրտմիլ: Դարձեալ՝ կորուստ քո ոչ է այն զոր այլ ոք չէ կորուսեալ. այլ այնպիսի է՝ որ ամենեցնուն հանդիպի. զի ամենայն մարդ որ ծննդեամբ յաշխարհս է եկեալ, մահուամբ ելանէ յաշխարհէ. եթէ փութով եւ եթէ յապաղելով՝ վերջ ամենեցուն մեռանիլն է. որպէս ասէ Դաւիթ. (ով է մարդ որ կեցցէ եւ ոչ տեսցէ զմահ:)

Չի զմահն պատուհաս եղ Աստուած ի վերայ Ադամայ եւ ասէ. (հող էիր եւ ի հող դարձցիս.) եւ յայնմ հետ է ճարակէ մահ զբնութիւնս մեր. եւ ոչ ոք կարէ զերծանիլ: Եւ պարտք է ի վերայ մեր. որքան փութով վճարեմք,

փութով ազատիմք: Ապա ուրեմն ոչ է պարտ քեզ սգալ. զի ոչ քեզ միայն է կորուստդ, այլև այդ ամենայն մարդկան պատահի. եւ ամենայն մարդոյ առաջի կայ: Այլեւ ոչ այնպէս է կորուստ քո՝ որ ոչ գտանես ամենեւին. զի ի յարութեանն աւուր՝ ամենեքեան տեսանեմք զմիմեանս. հայր զորդի. եւ եղբայր զեղբայր: Նաեւ այժմ յետ մահու տեսանեն հոգիքն զմիմեանս. որպէս մեծատունն ետես զՂազար ի գողն Աբրահամու հանգուցեալ. եւ այնպէս պայծառացեալ էր տեսութիւն մտացն՝ որ ի բազում ժամանակաց զհեռաւորն Աբրահամ ետես եւ ծանեաւ. քանի՞ առաւել ապա տեսանէ հայր զորդի. եւ զեղբայր եւ մխիթարի: Վասն այն որ զանմահութիւն հոգւոյ խոստովանիմք, եւ յարութեան ակնումնիմք, ոչ է պարտ սգալ որպէս զայնոսիկ որոց ոչ գոյ յոյս յարութեան: Իսկ եւ վասն չորրորդին ոչ է պարտ սգալ. զի կորուստ քո ոչ է ի ձեռս թշնամեացն դիւաց. այլ ի ձեռս Աստուծոյ որ ստեղծող է մեզ եւ բարեկամ. վասն զի քրիստոնէութեամբ հաւատով եւ յուսով վախճանեալն՝ երթայ առ Աստուած որում հաւատայրն. եւ ոչ կարէ թշնամին սատանայ ձեռն արրոկանել ի նա: Որպէս ասէ իմաստունն. (բայց հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են. եւ ոչ մերձենայ ի նոսա չար եւ մահ:.) Եւ այն է ձեռն եւ պահապանութիւնն Աստուծոյ՝ որպէս ասէ անտարանն եթէ՝ (հանգեաւ Ղազարոս ի գողն Աբրահամու:.) Գոգ Աբրահամու զհանգիստն նշանակէ. որ հագիք արդարոց ի հանգիստ են ի տեղոջ լուսոյ եւ ի տեղոջ հանգստեան: Այլեւ գոգն՝ զինամարկութիւնն նշանակէ. որպէս բազուկ եւ ձեռն ծնողին պահապանէ զգաւակն ի գոգն իւր. նոյնպէս եւ հոգիք արդարոցն՝ ընդ հովանեան Աստուծոյ են. եւ չարն ոչ մերձենայ ի նոսա: Դարձեալ՝ գուգն նշանակէ զխաղաղութիւնն. (եւ հոգիք արդարոցն են ի խաղաղութեան ասէ իմաստունն:.) Ապա ուրեմն չորիւք պատճառօքս այսոքիւք ոչ է պարտ քեզ սգալ. այլ մխիթարիլ եւ ուրախ լինիլ. զի յանձն է քո ընծայեցաւ նուէր Աստուծոյ ի հոտ անուշից. եւ ի բարեխօսութիւն քեզ եւ ի թողութիւն յանցանաց քոց: այսքան առ այս:

Դարձեալ նորին վասն մխիթարութեան երկրորդ: (Գլուխ. ԾԾԶ)

Ասէ իմաստունն Սողոմօն. (լաւ է երթալ ի տուն սգոյ, քան ի տուն արբեցութեան:.) Վասն չորս պատճառի լաւ է ի տուն սգոյ երթալ: Նախ՝ սուգն եւ տրտմութիւնն՝ հաճոյական նուէրք են Աստուծոյ. որպէս երանելին Յոբ յորժամ որդիքն իւր ուտէին եւ ըմպէին հանապազ յամենայն օր՝ վասն մեղաց նոցա պատարագ մատուցանէր Աստուծոյ: Իսկ յորժամ էր ի սուղ մահու նոցա, եմուտ ի տուն եւ այլ ոչ մատոյց պատարագ. բաւական նուէր համարէր զսուգն հաճոյական Աստուծոյ հանդերձ գոհութեամբ եւ մատուցանէր նմա: Այսպէս ամենայն սուգ՝ նուէր է Աստուծոյ. եւ յորժամ գոհութիւն մատուցանեն, առաւել հաճոյ է նմա եւ կամաւոր պատարագ: Երկրորդ՝ (լաւ է երթալ ի տուն սգոյ.) զի սուգն յերանութիւն տանի զմեզ. որպէս հրամայէ Տէրն. (երանի սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին.) զի սգոյն կատարումն՝ ուրախութիւն է. որպէս ուրախութեանն տրտմութիւն: Վասն այն ի սգաւոր եւ տրտմութեան կենցաղս՝ պարտ է ի սուգ եւ տրտմութիւն կենալ. զի ի կատարած այս սգոյս՝ ուրախութեան եւ մխիթարութեան հանդիպեսցուք. որպէս ասէ մարգարէն. (դարձոյց զսուգ իմ յուրախութիւն. եզերժ յինէն զքուրժ. եւ ինձ զգեցոյց զուրախութիւն:.) Եւ

Եսայի ասէ. (փոխանակ մոխրոյն օծումն ուրախութեան. եւ սգաւորացն հանդերձ փառաց. եւ փոխանակ անարգանց ձերոց ցնծութիւն. եւ ապա գերկիրն յաւիտենից ժառանգեսցեն. եւ ուրախութիւն ի վերայ գլխոց ևոցա:) Երրորդ՝ ի տուն սգոյն յորժամ մտանեմք, սգամք եւ ողբամք զմեզ. եթէ արդար եմք, սգամք զպանտուխտ եւ զնժգեհ եւ զանցաւոր կանս մեր. որ այսպէս ի ցաւ ի գառնութիւն ի հոգս եւ ի տրտմութիւն եքեր զմեզ. եւ ի վերջն ի մահն տարաւ: Իսկ թէ մեղաւոր եմք. սգամք զմեղս մեր. եւ տրտմիմք ի վերայ յանցանացն. եւ այնու զքաւութիւն մեղաց մերոց գտանեմք. որպէս ասէ առաքեալն. (որ ըստ Աստուծոյն տրտմութիւն է, զապաշխարութիւն գործ է ի մեզ առանց զղջանալոյ:) Վասն այն լաւ է երթալ ի տուն սգոյ: Զորրորդ՝ զի անդ տեսանեմք զկատարումն՝ զսգաւորն ի տրտմութեան, իւրաքանչիւր ոք տեսանեմք եւ իմանամք թէ՛ այն է կարածն մեր եւ ամենայն մարդոյ. եւ ի վայր զիջանեմք ի հպարտութենէ. զխստութիւն սրտիցս խրատեմք. եւ զղջումն ապաշխարութեան ի մեզ բերեմք: Զի թէ փրկիչն մեր ամենեցունցն Քրիստոս՝ յորժամ ետես զարտասուս քերցն Ղազարու՝ սգակից եղել. եւ արտասուեաց զմարդկային բնութիւնս որ այնպէս մահու գրաւեցաւ. քանի՞ առաւել եւս մեք յորժամ տեսանեմք զմեռեալն եւ զսգաւորն տրտմիմք եւ խոնարհիմք ի զղջումն: Վասն այն ասէ. (լաւ է երթալ ի տուն սգոյ, քան ի տուն արբեցութեան:) Վասն զի արբեցութեան տունն՝ անօրէնութեան եւ չարեաց է տեղի: Նախ վայ եւ եղուկ է մարմնական. որպէս ասէ իմաստունն. (ո՞ւմ վայ, ո՞ւմ եղուկ, ո՞ւմ ծեծ եւ աղաղակ, եթէ ոչ այնոցիկ՝ որք յամեն ի գինւոջ:) Երկրորդ՝ վայ է հոգւոյ. որպէս ասէ Եսայի. (վայ այնոցիկ՝ որք ելանեն ընդ առաւօտս. եւ զհետ լինին ցոյ. եւ երեկանանի ի նմին. զի գինին այրէ զնոսա. փողովք եւ թմբկօք արբենան. եւ ի գործս Տեառն ոչ հային:) Դարձեալ՝ որ մտանէ ի տուն արբեցութեան՝ կամ խայտառակի որպէս զՆոյ որ էարբ գինի եւ յայտնեցաւ որդւոցն. վասն որորջ եւ քանան մանուկ անիծաւ. կամ Նորոգոյն չարիս գործէ եւ վնասս. որպէս զղովտ զի արբեալ էր եւ ոչ գիտեր զննջելն ընդ իւր եւ զյառնելն ասէ սուրբ գիրն. եւ կամ հրով այրեսցի. որպէս որդիքն Ահարօսի Նաբաթ եւ Աբիութ. զի արբեալ մտին ի խորանն սուրբ եւ այրեցան հրով: Եւ այլ բազում վնասս գործէ գինին. զոր ոչ է ժամ մի ըստ միոջէ ասել: *Այլեւ գիտելի է՝ զի չորս ազգ մարդկան հրաման տայ իմաստունն ըմպել գինի: Նախ՝ աղքատաց եւ տնանկաց. զի մոռացին զթշուառութիւնս իւրեանց: Երկրորդ՝ տրտմեցելոց եւ սգաւորաց. զի մխիթարեսցին եւ ուրախացին: Երրորդ՝ տկարաց եւ հիւանդաց. զի առաղջացին ի ցաւոց: Զորրորդ ձերոց՝ զի զօրութիւն եւ զաւազան է ևոցա: Իսկ մեծամեծքն բարկասիրտք են՝ գինի մի արբցեն ասէ. զի մի ցրուեսցին խելքն. եւ թիւեսցեն զգատաստանն աղքատաց: Նոյնպէս եւ ոչ ուրախքն. զի մի տրտմեսցին. եւ ոչ առողջքն. զի մի տկարացին որպէս ցուցաւ ի վերոյ: Նաեւ ոչ տղայքն. զի մի այլ այլեսցէ զմիտսն եւ շարժեսցէ ի ցանկութիւն եւ ի բարկութիւն: Նոյնպէս եւ զգինին հոգեւոր որ է իմաստութիւն սուրբ գրոց՝ այնոցիկ որք աղքատ եւ տնանկ են յառաքիւնութեանց, եւ ցաւոտ եւ տրտում եւ տկարք են մեղօք, որք միշտ ցաւին եւ տրտմին ի խիղճէ մտաց ևոցա տուր զայն գինին. որպէս ասէ. (ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս. եւ թէ՛ (եկայք առիս ամենայն աշխատեալք. եւ ես հանգուցից զձեզ:) Եւ թէ՛ (Յիսուս Քրիստոս եկն յաշխարիս վասն մեղաւորաց որոց գլուխն ես եմ:) Այսպիսիս ևոցա յոյս եւ

մխիթարութիւն է եւ գաւազան ուղղութեան: Իսկ նոցա որ մեծացեալքն են առաքիւնութեամբ՝ եւ ուրախ են գործով, եւ արի եւ առողջ, անխայ է զիմաստութեան գինին. զի մի յագեալ եւ զմայլեալ լիցին գործնականաւ եւ տեսականաւ. եւ այլոց աղքատաց ի գործոց եւ տգիտաց յիմաստից անողորմ լիցին. եւ ոչ դատեն ողորմութեանը եւ ուղղութեամբ զնոսա. որպէս ասէ. (մեծամեծք բարկասիրտք են. գինի մի արբցեն.) որպէս Եղիա էր բարկասիրտ. եւ լցեալ գործնականաւ, եւ զմայլեալ իմաստիւք, փակեաց զերկինս ի վերայ Իսրայելի. եւ պատուհասեաց զարդարս եւ զմեղաւորս. զարծան եւ զանարծան ի միասին:

Դարձեալ նորին վասն մխիթարութեան երրորդ: (Գլուխ. ԾԾԷ)

Ասէ իմաստունն Սողոմօն. (Սիրտ իմաստնոյ ի տան սգոյ՞ եւ սիրտ անմտի ի տան արբեցութեան:) Ասաց յայլ ուրեք թէ. (բարի է երթալ ի տուն սգոյ, քան երթալ ի տուն արբեցութեան:) Այժմ զնոյն բան երկրորդ է թէ՛ (սիրտ իմաստնոյ ի տան սգոյն.) այսինքն թէ՛ ոչ կարէ երթալ ոտիւք ի տուն սգոյ. նա հանապազ որ իմաստուն է եւ աստուածսեր մտօքն՝ ի սուգ եւ ի տրտմութիւն կենայ: Չի երանութիւնն եւ արքայութիւնն է ժառանգութիւն սգաւորաց. որպէս հրամայեաց Տէրն. (երանի սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին:) Եւ գիտելի է՝ զի վեց եղանակաւ առաւել լինի սուգն: Նախ՝ վասն մեղաց. եւ չափ այսր սգոյ՝ է մինչ ի մահ. ըստ այնմ, (տրտում է անձն իմ մինչեւ ի մահ.) որ է վասն մեցաց աշխարհի: Երկրորդ՝ վասն սակաւ ինչ յապաղելոյ յաստուածային տեսոյն. որպէս մարգարեք ընդ աղօտ յառեալք ի նշոյս լուսոյն, զերկրիլն ի մարմնի ապաշխարէին. ըստ Դաւթի. (վայ ինձ՝ զի ընդ երկար եղեւ պանտխտութիւն իմ.) եւ չափ սուրբ՝ է մինչ ի հասանիլն ըղձալոյն: Երրորդ՝ սուգ ապաշխարողաց. որք են ընդ կարգաւ ինչ աստիճանի նուիրեալք. ըստ Պօղոսի. (աշխարհի ինձ ի խաչ էլեալ է, եւ ես աշխարհի:) Նմանապէս է եւ այս սուգ մինչ ի կատարած կենաց: Չորրորդ՝ է վասն մահուան ազգականաց եւ սիրեւելաց. եւ զչափն սուրբ ասէ մարգարէն. (ընդ երկոյս հանգիցեն լալիք. յառաւօտու եղիցի ուրախութիւն:) Հինգերորդ՝ վասն իւր մարմնոյ տանջմանն. ըստ այնմ, (ի մերձեալ առ իս չարաց յուտել զմարմին իմ, նեղիչք իմ եւ թշնամիք իմ, նոքա տկարացան եւ անկան.) եւ չափ սուրբ՝ է կսկիծ մարմնոյն: Վեցերորդ՝ է վասն յափշտակութեան ընչից. եւ զայս եղանակ սգոյ՝ չէ պարտ յաճախել վասն երկու պատճառի: Մէկ՝ զի որ զինչսն էառ՝ նաեւ զհոգսն: Երկու՝ զի մեղսն թեթեւացոյց: Այսքան առ այս:

Դարձեալ նորին չորրորդ վասն մխիթարութեան: (Գլուխ. ԾԾԸ)

Ասաց Աստուած Եզեկիայի. (ահաւասիկ յաւելում ի ժամանակս քո ամս հնգետասան:) Աստ ուսանիմք մեծ իմն կրօնս. այսինքն, թէ տարածամ մահիցէ թէ օր հասական իցէ, եւ թէ բնական, եւ թէ իղժընդակ ախտից, եւ թէ յուրուք նենգութենէ, պարտ է զայս ամենայն խնդրել յԱստուծոյ: Բնական այն է՝ որ ալեւորեալ եւ լի աւուրքք մեռանին. զոր ասէ Դաւիթ. (թիւ ամաց մարդկան եօթանասուն ամ. եւ թէ եւս զօրաւորք՝ ութսուն ամ.) այն է ասեն չափ մարդակայ ինոսա բնութեան՝ որ այնքան տեսն տարերքն ի միասին կապեալք: Եւ զի՞նչ է որ նա խահարքն յերկարակեացք լինէին. որպէս Ադամ

ինն հարիւր երեսուն ամ. Եւ Մաթուսաղա ինն հարիւր եօթանասուն ամ. Եւ այլքն սոյնպիսիք: Ոմանք ասեն թէ՛ Դաւիթ զթիւ սոցա ասէ յորում ժամանակի ինքն էր: Եւ այլք զնախահարցն թիւ՛ զամիսն կամ զթաբաթսն ասեն գոյ. իսկ ինձ իսկ թուի թէ՛ որպէս չափ հասակի մարդոյս չորս կանգուն է ըստ փիլիսոփայիցն. Եւ անելին Եւ նուազն ի սխալմանէ Է. Նոյնպէս այն է չափ ժամանակի մարդկայինս բնութեան: Իսկ որ յերկարին կամ պակաս մնան՝ ի ի ինամոցն Աստուծոյ Է. զի կամեր զառաջինսն երկարակեացս առնել. զի զգօրութիւնն Աստուծոյ Եւ զուղղութիւնսն պատմեսցեն ծննդոց իւրեանց ի բազում ազգս. իսկ զվերջինս վասն մեղաց սակաւակեաց առնէ: Եւ լինի մահ վասն մեղաց. ըստ այնմ, (մի լինիր խիստ. զի մի տարածամ մեռցիս:) Եւ լինի կեանք վասն արդարութեան. որպէս ասէ դիրն. (Եթէ պահեսցես զօրէս՝ յաւելցին ամբ կենաց քոց.) Արդ՝ սոքա են պատճառք տարածամ մահու Եւ երկար կենաց մարդկան. այսինքն, արդարութիւնն Եւ մեղքն: Բայց գիտելի է՝ զի արդարութիւնն լինի կենաց Եւ մահու պատճառ. Նոյնպէս Եւ մեղք մահուն Եւ կենաց պատճառ: Որպէս արդարութիւնն Եզեկիայի եղէ կենաց պատճառ, զի յաւելցի արդարութիւնն Եւ վարձն. Եւ զի օրինակ բարեաց լիցի: Եւ արդարութիւնն Յովսիայ եղէ մահու պատճառ. զի մի տեսցէ զգերութիւնն. Եւ զի մի բարեխօսեսցէ վասն ժողովրդեան: Նոյնպէս կային մեղքն եղէ պատճառ կելոյ՝ զի տանջեսցի: Եւ Սաւուղայն՝ զի չարչարեսցէ զժողովորդն՝ որք ինդրեցին թագաւորս: Եւ մեղքն սողոմայեցւոց Եւ որ առ ջրպեղեղան՝ եղէ պատճառ մահու. զի կրեսցեն պատիժս. Եւ այլոց երկիւղ լիցին: Արդ՝ այս է պատճառ ամենայն մարդկան տարածամ ելիցն յաշխարհէ Եւ կելոյն. մեղքն Եւ արդարութիւնն որպէս ասացաւ: Այլեւ մեղաւորաց տայ եկրար ժամանակս զի ապաշխարեսցեն. ըստ այնմ, (ոչ կամիմ զմահ մեղաւորին:) Այլեւ արդարք Եւ մեղաւորք կարեն զտարածամ մահս դարձուցանել թէ կամեսցին: Արդարք՝ որպէս Եզեկիա, զի արտասուօք դարձոյց զիրամանն Աստուծոյ. Եւ մեղաւորք՝ որպէս Նինուէացիքն որք ապաշխարութեամբ փրկեցան ի մահունէն: Եւ այս Աստուծոյ մարդասիրութեանն է. զի յորժամ դատաւորք աշխարհի ջճիռ մահու հատանեն, ինքեանք դատապարտեալքն ոչ կարեն յետս դարձուցանել զիրամանն. բայց թէ լինի այլ ոք համարձակ՝ զի միջնորդեսցէ: Իսկ առ Աստուած ոչ այնպէս. այլ ինքեանք որք զվճիռ մահուն առնուն, փոխեն Եւ Նինուէացիքն: Եւ այս Եւս գիտելի է՝ զի Աստուած վասն երեք պատճառի աստ զամենեսեան ոչ տանջէ: Նախզի՛ մի անցցէ աշխարհս. զի ամենեքեան յանցաւորք են. Եւ թէ զամենայն պատժեր, վաղ ուրեմն անցեալ էր աշխարհս: Երկրորդ՝ զի խոցանէ լինելոց էին ծնունդք պտանիք: Երրորդ՝ զի մի գիտացեն թէ՛ միայն այս է կեանք՝ Եւ ոչ գոյ հատուցումն: Իսկ զմասնաւոր ոմանս պատժէ վասն երեք պատճառի: Նախզի՛ ծանիցէ թէ գոյ դատաւոր Եւ հատուցանող: Երկրորդ՝ զի այլքն զգուշացին յայնպիսի մեղաց: Երրորդ՝ զի երեսեսցի մարդասիրութիւնն Աստուծոյ. զի ներէ անպարշտաց. Եւ տայ ժամանակ դարձի: Այսքան առ այս:

Դարձեալ՝ նորին հինգերորդ բան վասն միսիթարութեան: Հարցումն: (Գլուխ. ԾԾԸ)

Վասն Է՞ր չար մարդիկ վաղամարդ լինին: Չի ասէ Աստուած

մարգարեին թե՛ (ոչ կամիմ զմահ մեղաւորին. այլ զի դարձցի եւ ապաշխարեցե.) վասն այն ներե եւ յերկարե զկեանսն: Իսկ յորժամ խստասրտի մարդն եւ անզեղջ մնայ ի չարն, յայնժամ բառնայ Աստուած զնա ի կենաց: Եւ այս վասն չորս պատճառի: Նախզի՛ ինայե Աստուած եւ կարճե ի կենաց մարմնոյ. զի կարճեցին եւ մեղքն ընդ նմա, յորժամ նա ի կեանս ոչ կարճե զմեղս իւր. այս բարի է: Երկրորդ՝ յորժամ լնանի չափ մեղացն ընդ չափու կենացն, յանժամ թափե զկեանսն. որպէս չափ ցորենոյ յորժամ լնանի, թափի: Նոյնպէս եւ նորա կեանքն եւ մեղքն լցեալ են. ի միասին թափե. ըստ այնմ, (չեւ եր լցեալ մեղք ամուրիացւոցն:) Երրորդ՝ զի տեսանէ Աստուած որ անդարձ է մեղաւորն ի չարն, եւ հանապազ առաւելու, պատուհասէ զնա մահուամբ, զի առ հաւատչեայ լիցի յաւիտենից մահուն. որպէս առ ջրհեղեղան. եւ զսողոմայեցիսն պատժեաց. այս չար է. զի աստ մարմնով տանջէ. եւ անդ հոգւով: Չորրորդ պատճառ՝ մահ ածէ չարաց. զի այլքն տեսցեն եւ երկիցեն. որպէս թագաւորք երկրի զգողս եւ զվնասակարս պատժեն. զի այլքն երկիցեն. որպէս ասէ Դաւիթ. (տեսցեն արդարք եւ երկիցեն. զնովաւ ծիծաղեցին եւ ասացեն. այս այր է՝ որ ոչ արար զԱստուած իւր օգնական, եւ այլն:) Յայս պաճառս՝ մահ՝ գերութիւն՝ սով՝ հիւանդութիւն տայ ոմանց երկրի՝ գաւառի. զի այլքն երկիեն՝ դարձցին ի չարեանց:

Դարձեալ նորին վեցերորդ բան վասն Միսիթարութեան: Զարցումն: (Գլուխ. ԾԾԹ)

Վասն է՞ր փոքր տղայք մեռանին զի անմեղք են: Պատասխանի. վասն վեց պատճառի մահ ածէ Աստուած տղայոց: Նախզի՛ սիրե զնոսա Աստուած վասն բնական անմեղութեանն. եւ առ ինքն տանի. որպէս վաղահաս պտուղ յողկուզէ եւ ի ծառոյ. որպէս ասէ առական. (հաճայ եղեալ Աստուծոյ սիրեցաւ. եւ կենդանոյն ի միջոյ մեղաւորաց փոխեցաւ:) Երկրորդ՝ զի սիրե զձնօղսն. եւ տանի զգաւական բարի յիշատակ նոցա. որպէս գառն ողջակիզեալ ի հոտ անուշից: Արդ՝ թէ գառն որ ծնունդ է ոչխարաց՝ յիշատակ է մատուցողին, քանի՞ առաւել զաւական իւր որ ի միջաց ծնողացն ընծայի Աստուծոյ: Երրորդ՝ ինայե ի նոսա Աստուած նախահոգակ կամօք եւ մահ ածէ. զի մի յառաջիկայն ի փորձութիւն աշխարհի անկանիցի. եւ կամ ի պատրանս սատանայ. բառնայ զնոսա արդար կենօք. որպէս ասէ առական. (փոխեցաւ՝ զի մի պատրանք ինչ շրջեցէ զիմաստութիւն նորա:) Այս երեքեանս զոր ասացաք՝ ա մենեւին բարի են: Չորրորդ պատճառ՝ վասն չար ծնողացն բառնայ զգաւական. զի յիշատակ նոցա կորիցէ. ըստ այնմ, (եղիցին որդիք նորա ի սատակումն. եւ յազգէ շնջեցի անուն նորա:) Զինգերորդ՝ զի թէ ծնօղքն բարեգործ լինին, եւ ծնեալ զաւակքն չարաց պատճառ լինին ծնողացն, եւ կամ թէ չար յիշատակ մնան, վասն այն բառնայ զնոսա, զի ծնօղքն ի բարութեան մնացեն: Որպէս ասեն ի պատմութեանց թե՛ բարի առն եւ կնոջ միոյ՝ ոչ գոյր որդի. նա զհարեանց ինչսն զամեն վասն հոգւոյ առնէին. յորժամ զաւակ եղեւ նոցա, զբաժինն հոգւոյն պահեցին վասն զաւակին իւրեանց. յայնժամ հրեշտակն ընկեաց զմանուկն ի գետն եւ մեռաւ. եւ ծնօղքն դարձան յառաջին բարութիւնս իւրեանց: Վեցերորդ պատճառ՝ մահ ածէ զաւակացն վասն մեղաց ծնողացն. զի մորմոքեցին ի

վերայ նորա. կամ իմասցին թէ՛ այսպէս եւ Աստուած ի վերայ հոգւոց նոցա մորմոքի գոր մեղօք մեռուցին. եւ կամ երիցեն եւ դարձցին ի չարեացն: Այս երեք պատճառս՝ ոչ է ամենեւին բարի. այլ ունի չար ինչ: Կամ ի կողմանէ գաւակացն. կամ ի կողմանէ ծնողացն. այլ առաջին երեքն՝ ամենեւիմբ բարի են: Ե եւ այլ եւս եօթներորդ պատճառ. զի շնութեան եւ պոռնկութեան որդիքն լինին վաղամահ. որպէս ասէ առակն: (Որդիք անպարշտաց թերակատարք:) Եւ այս թերակատարութիւնս՝ Գ ազգ է: Կամ թերակատար լինին մահուամբ. որպէս առաջին որդին Դաւթի որ ի Բերսաբէէ որ ի շնութենէ ծնաւ՝ վաղամահ եղեւ. թէպէտ բազում անգամ աղաչեաց Դաւիթ՝ ոչ լուաւ Աստուած. այլ սատակեցաւ մանուկն. որպէս յայտ է ի թագաւորութեանց գիրսն: Կամ թերակատար լինին ժառանգութեամբ. զի ոչ ժառանգեն զհայրենիսն ծնողացն. որպէս Իսմայել թէպէտ ապրեցաւ, այլ ոչ ժառանգեաց զհայրենիսն Աբրահամու: Նոյնպէս եւ ամենայն շնութեան որդի՝ ոչ ժառանգէ զհայրենիսն զի ազգականքն առաւել ժառանգեն քան զնա: Կամ թերակատար լինին անուամբ. զի իւրեանքն շնութեան եւ պոռնկութեան որդիք կոչին. որպէս ասէ Եսայի. (որդիք շնութեան՝ որդիք պոռնկութեան՝ իւր պերճացայք, եւ այլն:) Եւ կամ թերակատար լինին ի նախատիսն ծնողացն. որպէս ասէ առակն. (զի յանօրէն անկողնաց ծնեալ որդիքն՝ վկայք են չարութեան ծնողացն.) որպէս օրինաւոր գաւակքն պատիւ ծնողացն. նոյնպէս եւ սոքա անպատուութիւն են: Եւ այս վասն կրկին պատճառի: Նախզի՝ ի տասն բան օրինացն՝ մին այն է որ ասէ. (մի շնար.) յորժամ զիրամանն Աստուծոյ արհամարիէ եւ շնար, արհամարեսցի ինքն՝ եւ գործն իւր՝ եւ վաստակն եւ ծնունդ նորա: Երկրորդ պատճառ՝ զի ախտաւոր հեշտութեան է ծնունդ. եւ ոչ օրինաւոր ամուսնութեան. որպէս տարածամ պտուղ ծառոյն որ ժաժ կոչեմք՝ փութով թափի ի ծառոյն. եւ անպիտան է կերակրոյ. կամ բուսանիլոյ. եւ նախատիւնք է ծառոյն. (զի ծառն ի պտղոյն ճանաչի.) եւ յախտից ժողովմանէն եղեւ պտուղ. եւ ոչ յառողջութենէ հիւթոյն: Նոյնպէս եւ գաւակն շնութեան. զի ծնողն ոչ գայ ի յանկողինսն վասն գաւակի. այլ վասն ախտաւոր հեշտութեան: Վասն այնորիկ վաղամահ եւ թերակատար լինին ծնունդքն: Այսքան պատճառաւս՝ տայ Աստուած մահ փոքրիկ տղայոց: Եւ թէ ոք ասիցէ՝ զի՞նչ մեղք է մանկանն որ ի շնութենէ ծնաւ. զի ոչ է իւր կաման եւ ոչ գիտութեամբն: Ասեմք թէ՛ ըստ այնմ որ իւր կաման եւ գիտութեամբն ոչ է իւր ծնունդն՝ չունի մեղադրութիւն մանուկն. այլ հայր եւ մայր նոր, որ այսպիսի շնութեամբ ծնան զնա: Այլ յորժամ ծնեալ մանուկն հետեւի չարութեան ծնողացն, իւր գիտութեամբն եւ իւր կաման լինի չար. վասն այն անիծէ առակն եւ ասէ թէ՛ (չարաբար մանկունք նոցա եւ անիծեալ ծնունդք նոցա:) Իսկ եթէ ծնեալ մանուկն ոչ հետեւի չարութեան ծնողացն, ոչ է նոցա մասնակից. այլ բարի: Դարձեալ՝ ասեմք եթէ՛ ի մարմնոյ քննութիւնն՝ գոյ այսպիսի խտրութիւն եթէ ուստի՞ է եւ յորմէ՞ ազգէ: Չոր օրինակ ծնանի ի շանէ շուն. եւ յոչխարէ ոչխար. այսպէս շուն ծնողացն՝ շուն լինի եւ ծնունդն: Իսկ հոգեւոր քննութիւնս՝ ոչ ինչ է խտրութիւն, յորժամ գան ի հաւատս ճշմարիտ եւ մկրտութեան արժանաւորին եւ զբարիս գործեն. թէպէտ շուն լինին ծնողքն, ոչ վնասին ծնունդքն. որպէս ասէ առաքեալն. (չիք խտիր. ոչ հրէի եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազատի, ոչ արւի եւ ոչ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Զրիստս յիսուս:) Այսքան առ այս:

Դարձեալ՝ նորին եօթներորդ բան Մխիթարանց վասն Մահու Երիտասարդաց: Հարցումն:

Վասն Է՞ր տարածամ մեռանին մանկունք՝ Երիտասարդք: Ասեն վարդապետք եթե՝ բնական մահ է, յորժամ ալեւորի մարդն եւ ծերանայ, եւ տարերքն թուլանան եւ ծերանան եւ լուծանին ի միմեանց, հոգին բաժանի եւ մահ գործէ մարմնոյն. իսկ որ յայլ եւ յայլ հասկն մեռանին, ի ինամոցն Աստուծոյ լինի: Իսկ մահ Երիտասարդաց՝ լինի վասն չորս պատճառի: Նախգի՝ է ծերութիւն մարմնոյ. եւ է ծերութիւն հոգւոյ: Չի ծերութիւն մարմնոյն՝ կրկին նշանակութիւն ունի: Նախ՝ նշանակէ գիմաստութիւն. զի բազում աւուրս՝ բազում է եւ իմաստութիւն: Երկրորդ՝ նշանակէ զանմեղութիւն հերացն սպիտակութիւն: Իսկ Երիտասարդոյն որ ծեր է հոգւով՝ ունի գիմաստութիւն եւ զհաւատն առ Աստուած. ունի եւ զվարսն մաքուր եւ անարատ. որպէս ասէ առակն. (ծերութիւն պատուական՝ ոչ բազմաժամանակեայն է, այլ այլք իմաստութիւնն է մարդոյ. եւ հասակ ծերութեանն կեանք անարատ:) Եւ զայս ունի Երիտասարդն որ ծերն է հոգւով. վասն այն պատուական է քան զծերն մարմնով, որ լինի անիմաստ եւ անզգաստ. զի այնպիսւոյ ծերութիւնն՝ ոչ է պատիւ նմա, այլ անարգութիւն. որ զայնքան ժամանակն յերկարեցաւ, եւ ազետ եւ անհաւատ մնաց. եւ առանց ուղղութեան վարուց: Ապա ուրեմն ի մաստուն Երիտասարդն՝ պատուական է առ Աստուած եւ առ մարդիկ. վասն այն ի կարգի վախճանի մարմնով: Երկրորդ՝ հասակ Երիտասարդին՝ է յեռացումն եւ ի ցանկութիւն. որպէս յայտ է ի մարմնոյն զի աճի: Եւ ոմանք եռան եւ ցանկան բարութեան. եւ ոմանք չարութեան. եւ երկուցն մահ ածէ Աստուած. զբարինսն ինամէ զի մի ի բազմափորձ կեանս որոգայթեսցին. եւ զչարսն կարծէ ի կենաց. զի մի չարն բազմացի: Եւ դու մի տարակուսիր թե՛ արդար Երիտասարդն ընդ անպարշտին մեռանի. զի թեպէտ մահուն ճանապարհն մի է յոր երկուքն ընթանան. այլ յոյս նոցա զանազան է: Չի բարին ի հանգիստ ընթանայ. զոր եւ սիրեաց եւ գործեաց. ըստ այնմ, (մահ մարդոյ հանգիստ է.) եւ չարն՝ ոչ ի հանգիստ, այլ ի նեղութիւն եւ ի տրտմութիւն. (զի մահ մեղաւորին չար է ասէ Դաւիթ:) Չոր օրինակ՝ ընդ մի ճանապարհ երկու ոմանք գնան առ թագաւորն. եւ մինն լի է ինդութեամբ. զի ի սպառ ընթանայ առ թագաւորն. եւ մինն լի տրտմութեամբ. զի ընթանայ ի տանջանս եւ ի մահ. նոյնպէս եւ երկու Երիտասարդն՝ մինն բարութեամբ մեռաւ. եւ մինն չարութեամբ: Երրորդ պատճառ՝ ասէ Սողոմօն. (կատարեալ ի սակաւուն ելից զժամանակս երկայն.) այսինքն, նա որ Երիտասարդն էր՝ ի սակաւ ժամանակն զերկար կենաց առաքինութիւնն գործեաց եւ կատարեաց. վասն այն փութապէս ի հանգիստն գնաց: Չոր օրինակ՝ ճարտար շինող լինի. զոր այլք ի մին տարին կատրեն գտունն. իսկ նա ի շաբաթն վճարէ: Նոյնպէս եւ այս. յորժամ զերկայն ժամանակի արդարութիւնն ի սակաւ ժամանակն կատարէ՝ ի վարձն եւ ի հանգիստն մտանէ փութով: Եւ այսպէս յայտնի է ի ներկայէն՝ որ չորք ոմանք շուտով վճարին եւ ելանեն ի կենաց. այս է պատճառն. որ յայնպիսին տուեալ էր Աստուած երկար կեանս կամ քառասուն ամ. յորժամ առաւել խստացաւ ի չարն՝ եւ զանօրէնութիւնն գործեաց ի յերեք կամ ի չորս ամն, վճարեաց զչափ մեղացն. վասն այն կարճացաւ կեանքն. զի յորժամ առաւելանի

մեղքն, կարծի կեանք եւ թիւ մարդոյն. որպէս առ Նոյիւ ասաց զթիւ մարդոյն հարիւր քսան ամ. եւ յորժամ յաւելան ի մեղս, զքսան ամս պակասեաց. եւ ի հարիւր ամս եկն ջրհեղեղն եւ կոյս զնոսա: Նոյնպէս եւ զարդարութիւնն իմասցիս. որ ի սակաւ ժամանակն զբազում ամաց գործն կատարեաց՝ հանգեցաւ խաղաղութեամբ ի Զրիստոս: Չորրորդ պատճառ՝ ասէ իմաստունն եթէ՝ (սիրելի է Տեառն անձն Նորա. վասն այնորիկ տազնապեցաւ ի միջոյ չարաց.) այն էր տազնապիլն եւ տապիլն՝ որպէս ասէ առաքեալն. (լաւ համարիմ ելանել ի մարմնոյս եւ ընդ Զրիստոսի լինիլ.) եւ դարձեալ ասէր. (ինձ կեանք Զրիստոս է. եւ մեռանիլն շահ:) Եւ Դաւիթ ասէր. (ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած. ե՞րբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ:) Արդ՝ որպէս սրբոցն Զրիստոս է ցանկալի. նոյնպէս սուրբքն Զրիստոսի են ցանկալի. լուր զինչ ասէ աւետարանն. (հայր՝ կամիմ զի ուր եսն իցեմ, եւ սոքա ընդիս իցեն. զի տեսանիցեն զփառս իմ:) Չոր օրինակ՝ մարդիկ ոմանք ցանկան տեսանել զփառաւոր մարդն. նոյնպէս եւ նա ցանկայ զի այլք տեսցեն զփառս Նորա: Վասն այն երիտասարդն որ ցանկալի լինի Աստուծոյ՝ հաճի ընդ նա եւ սիրէ. եւ փութով առ ինքն տանի: Այլ անհանճար մարդիկ յորժամ տեսանեն զարդարն որ վաղվաղակի մեռանի, կամ տարածամ մահուամբ, տարկուսին եւ հեղձնուն թէ՝ վասն է՞ր արդարն երկարակեաց ոչ եղել. վասն է՞ր ոչ յաջողեցաւ արդարոյն. ոչ գիտեն թէ իրաւունքն Աստուծայ է ի վերայ Նորա. եւ այց արար նմա. եւ փոխեաց ի կենցաղոյս յորոգայթէ ի հանգիստն յաւիտենից: (Տեսցեն ասէ եւ անգոսնեսցեն զնա. այլ զնոքք Տէր ծիծաղեսցի:) Այսինքն, յորժամ տեսանեն զարդարն ի նեղութիւն եւ ի վիշտս, ծաղր առնեն զնա եւ անարգեն. որպէս զՅոր բարեկամքն իւր. այսպէս եւ երկրասերքն եւ անմիտքն զբարի մարդն տեսեալ կամ ի նեղութիւնս մարմնոյն, կամ մեռեալ, արհամարհեն եւ անարգեն զնա: Թէ արդար էր՝ ընդէ՞ր մեռաւ. է՞ր ոչ փրկեաց զինքն արդար Տէրն իւր. որպէս հրեայքն զԶրիստոս անարգէին ի վերայ խաչին եւ ասէին. (եթէ որդի է Աստուծոյ՝ փրկեսցէ զանձն իւր. իջցէ ի խաչէդ եւ հաւատասցուք դմա:) Այլ զնոքք Տէր ծիծաղի. այսինքն, Տէր արհամարհէ զնոսա՝ անարգէ. Որ պատրաստէ արդարոցն հանգիստ՝ փառս յաւիտենականս.՝ Նոցա տանջանս՝ հուր անշէջ,՝ լալ աչաց,՝ կրճտել ատամանց յաւիտենից: Յորոց փրկասցէ Զրիստոս Աստուած զմեզ՝ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ի յաւիտենից տանջանացն: Եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից ամեն:

Դարձեալ՝ նորին ութներորդ բան Մխիթարանաց վասն մահու ծերոց:
 (Արդ արձակեա ցճառայս Զո տեր:)
 Ղուկ. 2. 29: (Գլուխ. ԾԿԱ)

Որպէս թագաւորք արձակեն ի բաց զկապեալսն. զի կամ ողորմեսցին գթութեամբ իւրեանց եւ ազատեսցեն. կամ թէ զպարասն թողցեն կամ վճարեսցեն. այսինքն, թէ տուգանք է՝ կամ թօպայարացեն յանցեալ վնասուցն եւ ապա արձակեն, եւ կամ յորժամ մինչ ի պայմանն կացցեն յերկար ժամանակս: Չոր այսմ նմա տեսանեմք զանազան պատճառ ելից մարդկան ի մարմնոյ բանտէ: Չի ըստ ողորմութեան կերպին՝ նախախնամութեամբ ածէ մահ տղայոց վաղվաղակի. զի մի յերկարեսցին ի

մարմնի վասն զանազան պատճառաց: Ոմանց վասն մեղաց ծնողաց՝ զի կսկծեսցին: Այլք զի մի ի մեղս անկցին: Կամ սիրե եւ անմեղ տանի առ ինքն: Եւ զայլս թողու ի մարմնի մինչ ի խորին ծերութիւն. կամ արդարութեամբ պիտանի է աշխարհի. (զի աղօթք արդարոցն՝ սիւնք են աշխարհի:.) Կամ թէ տանջէ զչարսն ծերութեամբ. զի ի զղջումն եկեսցեն. ըստ որում, (ոչ կամիմ զմահ մեղաւորին:.) Կամ վասն սակաւ յանցանաց յերկրարե ի մարմնի. զի այլնու վճարեսցէ եւ քաւեսցէ: Դարձեալ՝ երկարե զմարդ մինչ ի պայմանն. այսինքն, ի կենտ կոչմանն: Իսկ այս կրկին է: Նախ այն՝ որ ի ծերութիւն ժամանէ. եւ տարերքն լուծանին ի միմեանց. եւ լինի բնական մահ: Երկրորդ՝ որ կապէ ի մարմնի մինչեւ ինքն կամեսցի. որպէս զԵնովք եւ զԵղիա մինչեւ յերկրորդ գալուստն: Եւ զՍիմեօն մինչ յառաջին գալուստն: Իսկ ընտրելոց վախճանն թեպէտ մահ է եւ մեռանին, սակայն ինամբ է աստուածային ի վերայ խոցա. որպէս ասէ իմաստունն. (ոչ գիտեն անմիտք թէ այցելութիւն Աստուծոյ է ի վերայ սրբոցն Նորա. եւ իրաւունք ի վերայ ընտրելոց խոցա:.) Եւ այս զանազան եղանակաւ. զոր ցուցցուք տասն պատճառաւ: Առաջին՝ զի տեսանէ Աստուած զբազում ճգնութիւն արդարոյն եւ զվաստակ՝ ի ձեռն մահու հանգուցանէ զնոսա. որպէս ասէ. (արդարն եթէ հասցէ ի վախճանի, ի հանգստեան եղիցի.) յաղագս որոյ արգել զՍովսես չմտանել յերկին պարգեւաց: Երկրորդ՝ յորժամ պատուհասելոց իցէ զաշխարհն, նախ զընտրեալսն բառնայ մահուամբ, զի մի բարեխօսեսցեն անարժանիցն. որպէս զբարեպաշտն Յովսիա եբարձ. եւ ապա գերեց զԻսրայել: Երրորդ՝ սիրե զնոսա եւ առ ինքն կոչէ, փոխելով ի միջոյ մեղաւորաց. իբր անարժանս գոլ բնակութեան սրբոցն. որպէս ասէ. (հաճոյ եղեալ Աստուծոյ՝ սիրեցաւ. եւ կենդանոյն ի միջոյ մեղաւորաց փոփոխեցաւ:.) Զորրորդ՝ յառաջատես է Աստուած. ինամէ մահուամբ՝ զի մի կասեսցի յառաքինութենէն պատրանօք աշխարհի. որպէս ասէ. (յափշտակեցաւ՝ զի մի չարութիւն շիջուցէ զիմաստութիւն Նորա:.) Զինգերորդ՝ վասն այն մահ տայ ընտրելոցն՝ զի մի իմացին անմիտք ի մարդկանէ թէ՛ այն է խոցա փոխարենն որ յայս կեանս յերկար կենդանի մնան. յաղագս որոյ մեռանին զի հատուցումն ի հանդերձեալն է: Վեցերորդ՝ վասն այն կրեն սուրբ ընդ մեղաւորացն զպատուհաս՝ այսինքն, զմահտարածամ, զսուր, եւ զայլն, զի թէ փոշտեսակ յանցանք իցեն, ի ձեռն չարչարանացն եւ մահուն քաւեսցին. որպէս ասէ. (սակաւ ինչ խրատեալ՝ գտցեն մեծ բարութիւնս. զի իբրեւ զոսկի ի բովս քննեաց զնոսա. եւ իբրեւ զողջակէզս զոհի ընկալաւ զնսա:.) Եօթներորդ՝ զի որպէս Աստուած սրբոցն փափագելի է. որպէս ասէ Դաւիթ. (ծարաւի է անձն իմ առքեզ Աստուած.) այսպէս եւ սուրբք Աստուծոյ են ցանկալի. ընդ որոց ասէր Քրիստոս. (հայր կամիմ զի ուր են իցեմ, եւ սոքա ընդիս իցեն. զի տեսանիցեն զփառս իմ.) Որպէս ասէ աստ զերկուց փափագն. (ցանկալի է Տեառն անձն Նորա:.) Ութներորդ՝ զի թեպէտ մանուկ է հասակաւ, այլ կատարեալ է առաքինութեամբ. որպէս ասէ. (ծերութիւն պատուական՝ ոչ բազմաժամանակեայն է, եւ ոչ որ թուով ամացն չափիցի, այլ ալիք իմաստութիւնն է մարդոյ. եւ հասակ ծերութեանն՝ կեանք անարատ:.) Զաղագս որոյ կարճի ի կենացս յայս աղայ հասակաւ, զի կատարեալ է իմաստութեամբ. որպէս ասէ. (կատարեալ ի սակաւուն՝ ելից զժամանակս երկայնս:.) Իններորդ դարձեալ՝ ածէ փոքր տղային մահ վասն չարութեան ծնողացն. զի առաւել մորմոքեսցին աղէխարշեալ. որպէս

զԴաւիթ առաջին մանուկն որ ի Բերսաբէէ. եւ ոչ լաւ Աստուած աղօթից
նորա. զոր բազում անգամ աղաչեաց: Տասներորդ դարծեալ՝ մահ ածէ փոքր
տղային. զի տեսցեն զնա եւ ինքեան զգաստասցին ի մեղաց. որպէս զորդին
Րաբովամու որդւոյն Նաբատայ. Որ վկայեաց մարգարէն թէ՛ նա միայն մտցէ
քեզ ի գերեզման: Այսքան առ այս:

Դարծեալ նորին իններորդ բան վասն Միսիթարութեան: Զարցումն:
(Գլուխ. ԾԿԲ)

Չի՞նչ է ազատութիւն զոր արար Քրիստոս. ըստ այնմ որ ասէ. (թէ
որդին զձեզ ազատէ, ճշմարիտ ազատք լինիջիք:) Պատասխանի: Ասեմք եթէ
ազատութիւնն երեք է զոր արար Քրիստոս: Այսինքն, Նախ յառաջին
անիծիցն եւ ի դատապարտութեանցն ազատեաց եւ օրհնեաց զմեզ:
Երկրորդ՝ ի մահուն եւ ի դժոխոց ազատեաց եւ փրկեաց: Երրորդ՝ զմիտս մեր
ի ցանկութեանց աշխարհի ազատեաց եւ փրկեաց այսպէս. զի ամենայն
մարդ զայս աշխարհի կեանս՝ ճշմարիտ եւ մնացական համարէր. եւ
ծառայէր սմա որքան եւ կարէր. յուտելն եւ յմպելն՝ ի ժողովելն եւ ի պահելն ի
գրնելն եւ ի վաճառելն, եւ լայլն ամենայն: Իսկ Քրիստոս եկն եւ այլ կեանս
քարոզեաց. եւ զայս սուտ եւ ունայն. եւ ազատեաց զմիտս ի գերութենէ
սոքա: Արդ՝ այս ազատութիւնս մեծ է քան զառաջինն. զի թէ զայս
ազատութիւնս ոչ պահեմք, այլ զմեզ ի սեր եւ ի ցանկութիւն աշխարհիս
տամք, դառնամք յառաջին դատապարտութիւնն եւ ի դժոխս. ըստ այնմ,
(դարձցին մեղաւորք անգրէն ի դժոխս:) Այլեւ այս գիտելի է՝ զի թեպէտ
ազատեաց զմեզ Քրիստոս յաշխարհէ՝ սակայն ոչ դիւրաւ գերծանիմք ի
նմանէ. այլ որպէս չար Տեր՝ զհետ գայ ծառային փախուցելոյ. զի թերեւս
կորուսցէ զնա: Եւ այս լինի երիւք: Նախ՝ փառասիրութեամբ: Երկրորդ՝
զբաղմամբ: Երրորդ՝ հեշտութեամբ մարմնոյ եւ ծուլութեամբ. եւ այսպէս
կամի ըմբնել զմեզ: Այլ փախչիլ պարտ է մեզ ի փրկիչն մեր Քրիստոս. որպէս
ասէ անետարանիչն. (առ ի քեզ փախուստն մեզ:) Եւ այս լինի երիւք: Նախ՝
աղօթիւք եւ հաւատովք պնտել զմեզ. եւ այս հանէ զփառասիրութիւնն ի
մենջ: Երկրորդ՝ զխոստումն Քրիստոսի եւ զկիրս չարչարանաց առաջի աջաց
մեր պահել. եւ այս հանէ զզբաղումն աշխարհական: Երրորդ՝ արագել եւ
փութալ առ զօրագլուխն մարին մեր որ է Քրիստոս. եւ այս հերքէ
զծուլութիւն մարմնոյս. եւ զօրացուցանէ զմեզ հասանիլ անմահ կենացն
յաւիտենից. որպէս ասէ անետարանիչն Յօհաննէս: (Ունիք զԱստուծոյ մերոյ
զգրաւականն:) Եւ թէ զի՞նչ է անմահ կենացն յաւիտենից զգրաւական եւ առ
հաւատաչեայ: Վեցիւք իմանի առ մեզ: Նախ՝ պատուիրանն Աստուծոյ առ
մեզ. ըստ որում, (պատուէրք իմ կեանք են յաւիտենից:) Երկրորդ՝ ուխտ նորոյ
կտակին. որպէս ասերն. (հայր իմ ուխտեաց ինձ. եւ ես ձեզ ուխտեմ
զարքայութիւնն:) Երրորդ՝ հաւատով ճանաչումն Աստուծոյ. ըստ այնմ, (այս
են կեանք յաւիտենից. զի ծանիցեն՝ զքեզ միայն ճշմարիտ Աստուած, եւ զոր
առաքեցեր զՅիսուս Քրիստոս:) Չորրորդ՝ (հոգին որդեգրութեան առ մեզ
բնակեալ. որով աղաղակեմք աբբա հայր. այսուհետեւ չես ծառայ, այլ որդի
եւ ժառանգակից Քրիստոսի:) Զինգերորդ՝ մարմին եւ արիւն որդւոյն
Աստուծոյ զոր ճաշակեմք հոգւով. ըստ այնմ, (որ ուտէ զմարմին իմ, կեցցէ
յաւիտեան:) Իսկ վեցերորդ՝ մարդկային մարմինս մեր միացեալ բանին եւ

նստեալ ընդամէ հօր՝ առ հաւատչեայ է յարութեան մերոյ եւ արքայութեն երկնից, գլուխ գոլով եկեղեցւոյ եւ անդրանիկ մեռելոց: (Ուր ես եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի ասէ:) Այսոքիկ են գրաւական. եւ բեհ ուեալ ի մեզ յաիւտեանից եւ անմահ կենացն:

Դարձեալ նորին տասներորդ բան վասն միսիթարանաց: (Գլուխ. ԾԿԳ)

Տերն մեր ասէ ի խորհուրդ յարութեան մեռելոց. (Եթէ ոչ հատն ցորենոյ. անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կեայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ:) Վասն երկու պատճառի գայս օրինակ տայ: Նախ՝ ամենեցուն յայտնի է: Երկրորդ՝ զի յոյժ նման են բոյսք սերմանց յարութեան մարդկան: Նախ՝ սերմն ոչ բուսանի, թէ ոչ մեռանի. նոյնպէս մարդս նախ մեռանի, եւ ապա յառնէ: Երկրորդ՝ զի հատ մերկ սերմանի. եւ յառնէ զարդարեալ. նոյնպէս եւ մարմին մարդոյս՝ յառնէ զարդարեալ փառօք. զոր Աստուած զգեցուցանէ նմա: Երրորդ՝ եւ որպէս բազում սերմանք ի միում տեղոջ ամենեքեան ի յիւրեանց ազգն բուսանին. նոյնպէս թեպէտ բազում մարմինք ի մին հող եւ ի մին գերեզման մտանեն, ոչ խառնին մարմին կամ փոշի ի միմեանս ի յարութեանն: Եւ ոչ միայն սերմանիք, այլեւ գոն ի կենդանիսդ օրինակ յարութեան: Որպէս փիւնիկ հաւն որ մի է յԵգիպտոս բնակի. եւ ի հինգ հարիւր տարին բոյն շինէ. եւ ի կրծիցն հուր հանէ եւ այրի ինքն եւ բոյնն իւր. եւ յետ երից անուրջ՝ դարձեալ կենդանի որդին ծնանի եւ մեծանայ: Այլեւ հաւն հօբալ՝ քառասուն օր մեռանի. եւ դարձեալ կենդանանայ. եւ այլ բազումք են: Այլեւ գոն ի պատուական մարմնոց մարդկան օրինակք. որպէս ոսկերքն Եղիսէի մերձեալ ի մեռեալ ի մեռեալն, կենդանացաւ մեռեալն: Առաւել մարմինն Զրիստոսի կենդանի առնէ զմեզ: Չի չորս իր է պատճառ յարութեան եւ փառաց քրիստոսնէից: Նախ՝ հաւատքն ի Զրիստոս: Երկրորդ՝ մկրտութիւն անազանին: Երրորդ՝ հոգին սուրբ զոր ընկալաք: Չորրորդ՝ մարմին եւ արիւնն Զրիստոսի զոր ճաշակեցաք: Դարձեալ օրինակ՝ որ Եղիա զորդի այրւոյն կենդանացոյց: Այրի էին չորս տարեք ի պտղոյն ճաշակմանէ. եւ որդին մեռեալ մարդկան ազգ: Չերեսն որ եղ ի վերայ երեսոյն՝ զհայիլն նշանակէ բոլոր ի մարմին մարդկան: Եւ հանելն զամենեսեան ի տանէն՝ զի միայն զօրութիւնն Աստուծոյ յարուցանէ. որպէս միայն ստեղծ առանց օգնականի: Եւ աղաղակն՝ ձայն փողոյն: Եւ երիցս փչելն՝ զօրութիւն սրբոյ երրորդութեանն: Եւ որպէս բոլոր եւ ամբողջ մարմնով կենդանացաւ. նոյնպէս: ի յարութեանն բոլոր եւ ամբողջ մարմնոյ յառնեմք: Չի անելի անդամն կամ պակաս զոր աստ ունիմք, անդ հաւասարին: Եւ այս է պատճառն. զի աստ բնութիւնն գործէ ինամօքն Աստուծոյ. այլ բնութիւնն տկար եւ սխալական է. վասն ա յն սխալի կամ պակասի: Իսկ յայնժամ կարող զօրութիւնն Աստուծոյ յարուցանէ, որ անսխալ է գիտութեամբ. վասն այն բոլոր եւ անսխալ մարմնով յառնեմք: Դարձեալ՝ օրիակ Յովնան մարգարէն. որ անկաւ ի փոր կետին երեք տիւ եւ Գ գիշեր. եւ յորժամ եթուք ի յերկիր, էր ամբողջ եւ անապական մարմնով. որեւ մազ մի ի հերացն ոչ պակասեցաւ: Օրինակ է նախ թաղմանն եւ յարութեանն Զրիստոսի. որ երեք տիւ եւ երեք գիշեր եկաց ընդ մեռալս. եւ անապական մարմնով յարեաւ. նոյնպէս եւ մեք անապական մարմնով յառնեմք: Եւ երեք տիւ եւ երեք գիշեր. որպէս Ովսէէ ասէ. (յաւուրն

երրորդի յարիցուք եւ կացցուք առաջի ևոցա:) Այսպէս մին օր ծննդեանն է մեր. երկու օր մահուն. երեք օր յարութեան: Դարձեալ՝ երեք է որպիսութիւնն մեր: Նախ ի կեանս յայս մահկանացու: Երկրորդ՝ յետ մահու միայն հոգի առանց մարմնոյ: Երրորդ՝ յետ յարութեանն՝ անմահ հոգւով եւ մարմնով կացցուք առաջի ևորա ի դատաստան. որպէս ասէ առաքեալն յերկրորդ կորնթացւոց. (մեզ ամենեցուն յանդիման լինիլ կայ առաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր ոք զոր ինչ գործեաց յառաջ. եթէ բարի, եւ եթէ չար:) Այսոքիկ օրինակք են յարութեան մարդկան: Այլ ճշմարտութիւնն ի Քրիստոս ցուցաւ՝ որ գլուխ է մեր եւ պատճառ յարութեան մարդկան. (զի անդրանիկ է մեռելոց. եւ պտուղ ևնչեցելոց ասէ առաքեալն:) Այլեւ հաստատուն վկայ յարութեան՝ սուրբքն ամենայն, որք ճգնեցան. չարչարեացան. մահուամբ սրոյ մեռան վասն յուսոյ յարութեանն. զի ի Քրիստոսոս պսակեցին: Այլեւ գիտելի է՝ զի յարութիւնն եւ անմահ մնալն՝ հասարակաց է ամենայն մարդկան. այլ հատուցմունք յարութեանն՝ զանազան են. ըստ Տեանն որ ասէ. (ամենեքեան լուիցեն ձայնի որդւոյն Աստուծոյ եւ եկեցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ ի յարութիւն կենաց. եւ որոց չար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց:) Եւ այս է պատճառն. զի յարութիւնն եւ անմահ կեանքն՝ վասն բանական հոգւոյս է որ ամենեցուն է. եւ փառքն զանազան՝ վասն հաւատոց եւ գործոց Է: Որում եւ զմեզ զամենեսն՝ արժանի արացէ Քրիստոս Աստուծո՞ փառաց յարութեան իւրոյ եւ անմահ կենացն եւ անթառամ պսակացն. եւ դասեցէ ի դասս աշակողմեան եւ ի խորանն երանաւետ, ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան իւրոյ. եւ նմա փառք յաւիտեանս ամեն:

Նորին քարոզ վասն Նեռին. ի բանն՝ (Յայտնեցի մարդն անօրենութեան որդին կորստեան. հակառակն հպարտացեալ՝ այլն:) 2Թեսաղ. 2. 3: (Գլուխ. ԸԿԴ)

Տերն մեր յաւետարանին զգուշացոյց վասն գալստեան նեռինն: (Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեան, որպիսի ոչ եղեւ ի սկզբանէ աշխարհի. եւ մի այլ լիցի:) Վասն նեղութեան գիտելի է՝ թեպէտ մարմնաւոր բազում են նեղութիւնք մարդկան եւ անթուելիք՝ որք յիւրաքանչիւր ժամանակս եւ ի բազում տեղիս մարդկան հանդիպին: Այլ առհասարակ նեղութիւնք ամենայն մարդկան ազգի՝ տասն գլխաւորին: Առաջին այն՝ որ ի ձեռն յանցմանն Ադամայ ի փափկութեան դրախտէն անկաք յերկիր փշաբեր եւ անիծեալ. ի ցաւս եւ ի տրտմութիւնս միշտ զամենայն աւուրս կենաց մերոց: Երկրորդ՝ նեղութիւն է կարիքն եւ ցանկութիւն մարդկան. այսինքն, քաղց, ծարաւ, տքնիլ, ցանկալ, եւ այլ կիրք: Չի վասն սոցա հանապազ ի նեղութեան եմք. եւ ծառայեմք որպէս չար տերանց. զի թէ լնումք զցանկութիւն մարմնոյ՝ նեղութիւն է հոգւոյ. եւ թէ ոչ՝ նեղութիւն մարմնոյ: Երրորդ՝ նեղութիւն էր հասարակաց ջուրցն հեղեց ի ժամանակս Նոյի. որք ջնջեցան յերկրէ մարդ եւ անասուն. թռչուն եւ սողուն. եւ ամենայն շունչ կենդանի մեռան վասն մեղաց մարդկան: Չորրորդ՝ նեղութիւն են այլայլութիւն, ցաւք, վերք, հիւանդութիւնն, ծերութիւն, եւ այլն. որք յամենայն ուստեք պատել են զմեզ եւ կեղեքեն: Զինգերորդ՝ նեղութիւն է մահն հասարակաց. եւ տանջանք հոգւոյ. այս զոր աչօք տեսանեմք զմահ ամենայն

մարդկան. եւ մտօք իմանամք գտանջանս հոգւոց ուսեալք ի գրոց: Վեցերորդ՝ նեղութիւն է որ ի միմեանց ի մարդկանէ կրեմք. կռիւ, աղաղակ, տանջանս ի բռնաւորաց եւ ի չար իշխանաց. ի գողոց. յաւազանկաց, եւ յայլն: Եօթներորդ՝ նեղութիւն ի չար գազանաց եւ ի սողնոց չարաց. որք յերկիւղ եւ մեզ տուեալ. եւ յօրինակ անքուն որդաց դժոխոց պատրաստեալք: Ութներորդ՝ նեղութիւն ի տարերաց. ցրտոյ. եւ ջերմոյ. հողմոյ. ի դիւաց. յորոգայթից. եւ ի գանազան փորձանաց: Իններորդ՝ նեղութիւն է ի ժամանակս նեռինն. որ ամենայն երկրի եւ ամենայն մարդկան նեղութիւն հաստուցանէ. որպէս ասէ անտարանն. (եղիցին աւուրքն այնուքիկ նեղութեան:): Տասներորդ՝ օր նեղութեան է կատարածի աշխարհի. իբրեւ երկն յղոյ հ հասանի ի վերայ մարդկան. յորում հրով վառեցին երկինք եւ երկիր: Այն է օր խաւարի եւ միգի: Այն է օր հատուցման ըստ գործոց մարդկան: Այն է տանջանք յաւիտենական: Այն է դառնութիւն առանց քաղցրութեան: Այն է գիշեր առանց լուսոյ. որ ըմբռնէ գամենայն մեղաւորս երկրի: Արդ՝ թողեալ գայլն՝ բանս մեր է յաղագս նեղութեան նեռինն. որ դառնագոյն է քան գամենայն նեղութիւնս. որպէս հրամայէ Տէրն: (ոչ եղեւ իսկզբանէ աշխարհի. եւ մի այլ լիցի:): Չի քան զնեղութիւնս դատաստանին առաւել է նեղութիւն նեռինն: Նախզի՝ ի դատաստանին բարեացն հանգիստ է. եւ չարացն տանջանք: Դարձեալ՝ ի մէջ փորձութեան աշխարհիս՝ առաւել է նեռինն քան գամենայն: Այլ դատաստանն հատուցումն է գործոց եւ ոչ փորձանք: Վասն այն աս առաքեալն Պօղոս. (նախ յայտնեցի մարդն անօրէնութեան որդին կորստեան:): *Արդ՝ վասն գալստեան նեռինն՝ վեց իրս հարցանելի է: Առաջին՝ զբանս առաքելոյն որ ասէ: (Եկեցե՛ք ապաստամբութիւնն:): Ապստամբութիւն կոչէ զնեռնն: Չի նախ ինքն սատանայ ապստամբեցաւ յԱստուծոյ եւ անկաւ յերկնից: Երկրորդ՝ զԱդամ ապստամբեցոյց ի յԱստուծոյ եւ կորոյս: Երրորդ՝ նեռն ապստամբի եւ անհնազանդի Աստուծոյ: Չորրորդ՝ եւ գամենայն մարդիկ ապստամբութեամբն կորուսանէ. որպէս ասէ Տէրն. (եթէ հնար ինչ իցե՛՛ եւ զընտրեալսն կորուսանէ:): Եւ թէ ո՞վ է նեռնն. մի թէ սատանա՞յ է՝ ոչ: Այլ մարդն անօրէնութեան ասէ. այսինքն, մարդ է՝ այլաբանեակ է սատանայի. եւ լցեալ ամենայն չարութեամբ, եւ հնարիւք եւ խաբէութեամբ նորին: Անօրէն մարդ է՝ որ ոչ ունի օրէնս. ոչ զբնական. եւ ոչ զգրաւորն. եւ ոչ զաւետարանին: Դարձեալ անօրէն է՝ որ զինքն եւ գայլս անխնայ կորուսանէ: Հակառակ ճշմարտութեան. զի հակառակ է ամենայն բարեաց. եւ ընդունակ ամենայն չարի: Դարձեալ՝ ամենայն բարի գործոց՝ եւ ճշմարիտ բանից՝ եւ սուրբ հաւատոց՝ հակառակ է եւ կորուսիլ: Այլեւ հակառակ է խաչի՝ եկեղեցւոյ՝ պաշտաման՝ սրբութեանց՝ աղօթից՝ պահոց՝ եւ այլն: Հպարտութեամբ նստի ի տաճարն. այսինքն, յեկեղեցիս Աստուծոյ. եւ գամենայն պաշտամունս եւ զանաւնեալ Աստուածս խափանէ. եւ զինքն միայն Աստուածս կոչէ. եւ առաջին կռապաշտութեամբն զմարդիկ կործանէ: Այս առաջին հարցումն: *Երկրորդ հարցանելի է՝ վասն է՞ր ի յետին ժամանակս գայ: Ասեմք վասն չորս պատճառի: Նախ՝ որպէս զգալի օձին զլուին ջախտեալ՝ տուտն շարժի մինչ յերեկոյն եւ ապա սատակի. այսպէս իմանալի օձն սատանայ՝ զոր տեսիլն հրեղէն վիշապ կոչէ. (եւ տուտն նորա քարշեաց զերրորդ մասն աստեղաց:): Գլուխ նորա Սադաւէլ ջախջախեցաւ մկրտութեամբն եւ խաչին Զրիստոսի: Եւ տուտն նորա նեռն է՝ որ յետոյ

շարժի ի կատարածի: Երկրորդ պատճառ՝ յորժամ իմանայ գվախճան աշխարհի, եւ գտանջանս իւր մերձեալ, խստագոյն չարանայ ընդ ազգի մարդկան: (Չի նեռնն ազդեցութիւն է սատանայի ասէ առաքեալն յերկրորդ թեսաղոնիկեցւոց.) զի գամենայն չար գորութիւն իւր եւ զխաբէութիւն ի սա լնու: Երրորդ՝ ըստ տեսլեանն Դանիէլի չորս գազանաց, որք էին չորս թագաւորութիւնք: Չի մարաց թագաւորութիւնն բարձրաւ ի բաբելացւոց. եւ բաբելացւոցն ի պարսից. եւ պարսիցն՝ ի մ ակեդանացւոց. եւ մակեդոնացւոցն ի հռոմայեցւոց. եւ զհռոմայեցւոցն բառնայ նեռնն. եւ զնեռնն բառնայ Տեր մեր Քրիստոս. եւ թագաւորէ անվախճան: Վասն որոյ ասէ առաքեալն յերկրորդ թեսաղոնիկեցւոց. (մինչեւ բարձցի այդ որ այժմդ ունի.) այսինքն, ներոն եւ թագաւորքն հռոմայեցւոց. եւ ապա յայտնեցի ապստամբ նեռնն: Չորրորդ պատճառ՝ (մինչեւ քարգեցի անտարանն ընդ ամենայն երկիր:) Եւ ամենայն հեթանոսք հաւատան. եւ հրեայքն մասն յանհաւատութեան: Ապա երեւեցի նեռնն ի կորուստ ազգին հրեից՝ որք զճմարտութիւնն ուրացան. եւ զփրկիչն իւրեանց խաչեցին: Յաղագս այս չորս պատճառիս՝ ի վախճանի աշխարհս երեւի նեռնն: *Երրորդ հարցանելի է թէ՛ վասն Է՞ր թոյլ տայ Աստուած ի գալ նեռնն: Առաքեալն ի նոյն թղթին ասէ զպատճառն: Նախզի՛ զճմարիտ սերն Քրիստոսի ասեցին: Երկրորդ՝ զճմարիտ փրկութիւնն անագեցին: Երրորդ՝ ճմարիտ քարոզութեանն ոչ լուան: Չորրորդ՝ ճմարիտ նշանցն Քրիստոսի որ ի ծնունդն. ի խաչն, եւ ի յարութիւնն, ի հիւանդս. ի մեռեալս եւ յայլս կատարեր, ոչ հաւատացին: Վասն այն թոյլ տայ ստութեան եւ խաբէութեան նեռնն. զի նորա ստութեամբ կորիցեն: Չի սուտ սեր եւ սուտ փրկութիւն ցուցանէ. եւ պատիր բանիւք եւ ուրուական արուեստիւք խաբէ զնոսա: Եւ այսպէս ամենայն ուրեք յորժամ ճմարտութեանն ոչ հաւանին մարդիկ, թոյլ տայ ստութեան զի հաւանեցին. որպէս նախ ճմարիտ մարգարեիցն ոչ լուան, թոյլ ետ Աստուած սուտ մարգարեիցն Բահաղու: Եւ յորժամ պարսիկք եւ այլազգիք զառաքեալսն Քրիստոսի ոչ ընկալան, թոյլ ետ սուտ առաջնորդի նոցա: Եւ յորժամ ճմարիտ վարդապետաց ոչ հաւատան, թոյլ տայ հերձուածողաց մտանել ի նոսա: Եւ յորժամ բարի իշխանաց եւ առաջնորդաց ոչ հնազանդին, չար իշխան եւ առաջնորդ տայ եւ չարչարէ զչարսն: Նոյնպէս եւ ի ժամանակս նեռնն՝ թոյլ տայ Աստուած զի ստութեամբ խաբեցէ զմարդիկ: *Չորրորդ հարցումն. ո՞րքան իրօք պատրեցէ նեռնն: Ասեն վարդապետք թէ՛ չորիւք: Նախ՝ նշանօք աւ արուեստիւք ուրուական. որպէս թէ՛ զարգեակն ի չորս բաժանէ. եւ լերանց եւ ծառոց հրամայէ եւ գան եւ գնան: Այսպէս զի զդեւն որ արբանեակ են նորա՝ ի դեմս արեգական եւ լերին եւ ծառոց կերպարանէ առ աչօք եւ խաբէ: Երկրորդ՝ պարտիր քարոզութեամբ. զի մարգար ունի որպէս զՅովհաննէս. եւ առաքեալս վարդապետս. որք յամենայն երկիր քարոզեն սուտ զնեռնէն. եւ զտգետսն խաբեն: Երրորդ՝ առատ բաշխմամբ. զի յամենայն տեղիս ուր գանձ է թաղեալ՝ ի ձեռն դիւաց յայտնեցի նմա. եւ սա գրով ցուցանէ զտեղին. եւ առատ բաշխէ ընչասիրաց եւ խաբէ: Չորրորդ՝ խստագոյն տանջանօք առաւել քան զչար թագաւորսն եւ բռնաւորսն առաջինսն իմանայ եւ չարչարէ զսուրբս: Չի այն է ազդեցութիւնն առաջնոցն ի սա ժողովէ սատանայ, առ ի մոլորեցուցանել. (թէ հնար իցէ եւ զընտրեալսն ասէ Տեր:) Դարձեալ՝ եւ այլ իմն կերպիւ պատրէ չորս իրօք: Նախզի՛ ի պոռնկութենէ

լինի. եւ ամենայն պղծութեամբ լցեալ. եւ կուսածին անւանէ զինքն եւ սուրբ: Երկրորդ՝ զի թլփատի եւ այնու պատրէ զիրեայսն. եւ թագաւոր ասէ զինքն յուրայէ. այլ իցեղէն դանայ է (օձ դարանակալ ի ճանապարհի. որպէս ասաց Յակօբ:) Երրորդ՝ զի ատէ զամենայն հերձուածօղս. եւ յեկեղեցիս նստի. եւ այնու պատրէ զքրիստանեայս: Չորրորդ՝ զամենայն որ Աստուած անուանին կուռս՝ կորուսանէ. եւ զամենայն պաշտօն. որպէս խաչ, եկեղեցի, եւ այլն. եւ միայն զինքն կոչէ Աստուած եւ պաշտօն. եւ այնու պատրէ զայլազգիս եւ զկռապաշտս: *Յինգերորդ զիտելի է՝ զի չորս են կարապետ նեռինս: Առաջին՝ հրեայք. որք զՏէրն Քրիստոս ուրացան եւ խաչեցին եւ ասէին. (դու մարդ ես եւ զանձն քո Աստուած աննես. չիք մեր թագաւոր ասեն. եւ արիւն դորա ի վարայ մեր:) Վասն որոյ ասէ առաքեալն յերկրորդ թեսաղոնիկեցւոց: (Որք զՏէրն Քրիստոս սպանին. եւ զառաքեալսն եւ զմարգարտսն կոտորեցին. յԱստուծոյ աչացն ելին. եւ ամենայն մարդկան ատելիք եղեն:) Եւ դեռ այժմ ակն ունին գալստեան նեռինս. եւ յորժամ լսեն յամենայն աշխարհէ՝ ժողովին առ նա խնդութեամբ: Երկրորդ կարապետ՝ են չար բռնաւորք եւ կռապաշտք. որք զառաքեալսն եւ զսուրբն նախ չարչարեցին ի ներոնէ մինչ ի ժամանակս Կոստանդինոսի եւ Տրդատայ: Երրորդ՝ յետ այնորիկ կարապետն են այլազգիք՝ որք անարգեն զՔրիստոս. եւ հակառակ կան քրիստոնէից նորա. խաչի, եւ եկեղեցւոյ, եւ այլոցն: Չորրորդ կարապետ՝ են դասք հերձուածողաց. որպէս Արիոս հերձեալն. եւ Մակեդոն հոգեմարտն. նեստոր հայիոյիչ. քաղկեդոնիքն ուրացողք: (Որք զմիայն Տէրն ուրացեալք, ածեն ի վեայ անձանց զարագահասն կորուստ ասէ առաքեալն ի կաթողիկէն:) Այլեւ Յօհաննէս ասէ յառաջին թուղթն: (Լուայք թէ նեռն գալոց է: եւ արդէն իսկ բազումք են նեռիք. որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով որդի Աստուծոյ, նա իսկ է նեռն եւ ուրացող:) Եւ յայտ է՝ նոքա որք յերկուս բաժանեն զմին եւ զմիայն ճշմարիտ Աստուած մարդացեալն, եւ զմի Տէրն եւ զմի Քրիստոսն յերկու անձն, յերկու բնութիւն, յերկու կամս, յերկու գործ բաժանեն, բաժանին ի շնորհացն Քրիստոսի: Այսպէս չորեքին հաւասար կարպետ են նեռինս, եւ հակառակ Քրիստոսի եւ քրիստոնէից: *Վեցերորդ զիտելի է՝ զի չորս են յայնմ ժամանակի օգնական քրիստոնէից: Նախզի Տէրն յառաջգոյն զգուշացոյց. (յարիցեն սուտ Քրիստոսք, եւ սուտ մարգարեք, եւ տայցեն նշանս մեծամեծս, մի հաւատայցեք նոցա:) Եւ յայլ ուր ասէ. (ես եկի յանուն հօրր իմոյ՝ եւ ոչ հաւատացիք. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անունն՝ զնա ընդունիցիք.) այսինքն, որ Սովսէս եւ ամենայն մարգարեքն վասն իմ խօսեցան՝ դուք ոչ հաւատացիք, եւ այլն: Այլեւ Դանիէլ (պղծութիւն ասէ տաճարին. եւ փոքրիկ եղջիւր զնա կոչէ. որ զմեծամեծ հայիոյութիւնս բարբառի:) Այլեւ աւետարանիչն՝ նեռն կոչէ զնա: Եւ Պօղոս աստ (մարդ անօրէնութեան եւ որդի կորստեան.) զի զգուշացին սուրբք յայնմ ժամանակին: Երկրորդ օգնութիւն է՝ որ ասէ առաքեալն յերկրորդ թեսաղոնիկեցւոց թէ՛ (ի վերայ կորուսելոցն, եւ ոչ ի ճշմարտեալսն:) Չի որ հաստատ է ի հաւատն եւ ճշմարիտ յաղթել. այլ նոցա որք թերիք են տգետք եւ ընչասերք եւ երկնչոտք որպէս ցուցաւ ի վերոյ: Երրորդ օգնութիւն է՝ որ Եղիա եւ Ենովք իջանեն յերկիր. եւ յամենայն ուրեք ստեն զքարոզօղս նեռին. եւ հաստատեն զսիրտ հաւատացելոց: Չի որպէս յառաջին գալուստն Ովհաննէս եր կարապետ. այսպէս ի վերջինն՝ Եղիա է գալոց: Այլեւ երկուքն լինին վկայք ճշմերտութեանն. այսինքն, Ենովք՝ որ յառաջ քան զքրիստոնէիս

փոխեցաւ. եւ Եղիա յետոյ. յերկինս եւ կամ ի դրախտն. փոխանակ Ադամայ
եւ Եւայի որք ելին՝ երկուքն մտին. եւ դեռեւս կենդանի եւ մարմնով: Եւ
անտանօր երեւին յԵրուսաղէմ. եւ նեռնն սպանանէ զնոսա. եւ երեք տիւ եւ
երեք գիշեր ընկեցեալ լինին: Ապա յետոյ ձայն ելանէ յերկնից. Եղիա եւ
Ենովք բարեկամք իմ՝ ելէք եւ եկայք այսր: Յայնժամ յարիցեն նոքա անմահ
կենդանութեան. եւ լուսեղէն ամպօք ելանեն յերկինս: Եւ յորժամ
խայտառակի ստութիւն նեռինն, երթայ ի լեռնն ձիթենեաց զի համբարձցի.
եւ անտանօր Տէր Յիսուս հոգւով բերանոյ իւրոյ՝ սատակէ զնա. այսինքն,
հրամանաւ իւրով իբրեւ հուր վատնէ եւ կուրուսանէ զամենայն չարութիւնս
երկրի հանդերձ իշխանան իւրեանց: Չորրորդ օգնութիւն է՝ կարճութիւն
աւուրցն. որպէս ասէ Տէրն. (եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրիւր
ամենայն մարմին. բայց վասն ընտելոցն կարճեցին:) Եւ ոչ թէ կարճին
չափք աւուրցն եւ ժամուց կամ մասանց նորա: Այլ կրկին է կարճիլն: Նախ
զի՝ փութով անցանեն. շաբաթն որպէս զօր. եւ ամիսն իբրեւ զշաբաթ. եւ
տարին իբրեւ զամիս. որպէս ասէ Սաղմոսն: (Ամբ նոցա փութապէս անցցեն:)
Երկրորդ՝ կարճին աւուրքն նեռին. որպէս ասէ Դանիէլ. (ժամանակս, եւ
ժամանակ, եւ կէս ժամանակաց.) որ է երեք ամ եւ կէս: Եւ աւուրք եւ հազար
երկու հարիւր եւ եօթանասուն եւ հինգ: Չի յայս չափ աւուրս նեղութիւն
աշխարհի: Եւ մերձ է գալուստն Տեառն եւ փրկութիւն սրբոց: Ոմանք զմիջոց
յարութեանն, Եղիայի եւ Ենովքայ, եւ գալուստեանն, քառասուն օր ասեն: Եւ
ոմանք քառասուն եւ հինգ յաւետարեն օժանդակեալք: Չի ի
պայծառակերպութենէն մինչեւ ի յարութիւն Տեառն՝ քառասուն օր ասեն
վարդապետք: Եւ յայտ է ի չորից: Նախզի՝ յետ քառասուն աւուր
յարութեանն՝ հաստատեցին Տեառն եղբայրն եւ առաքեալքն զտօն
այլակերպութեանն: Երկրորդ՝ զի անտի մինչ ի տօն վերացման խաչին՝
քառասուն օր հանդիպի: Երրորդ՝ զի ի վեցէն օգոստոսի ինչ ի տասն եւ չորս
սեպտեմբերի՝ քառասուն օր է: Չորրորդ՝ նոյնպէս յետ սատակելոյ նեռինն՝ եւ
Եղիայի եւ Ենովքայ վերանալոյն մինչ ի յարութիւն հասարակաց՝ թուեն
ոմանք քառասուն. եւ ոմանք քառասուն եւ հինգ աւուրս: Եւ այս է
պատճառն. զի մինչ ի յուրբաթ խաչին՝ քառասուն օր է. եւ երկու օր
ուրբաթին՝ եւ շաբաթն եւ կիրակէն՝ եւ պատկեր օր այլակերպութեանն՝ լինի
քառասուն եւ հինգ. եւ այսպէս երկոքեանն ի մի խորհրդածին. Եւ յայսքան
աւուրս՝ (յորժամ ասիցեն չարք թէ՝ շինութիւն է եւ խաղաղութիւն, յայժամ
յանկարծակի հասցէ ի վերայ նոցա սատակումն որպէս երկն յողոյ եւ մի
ապրեցին ասէ Պողոս յառաջին թեսաղոնիկեցոց:) Եւ Տէրն ասէ. (որպէս
յաւուրս Նոյ ի ուտէին, ըսպէին եւ այլն. որ ըստ կարգի աշխարհաասիրացն
է. մինչ եկն ջրհեղեղն եւ կորոյս զամենեսեան. նոյնպէս եղիցի եւ գալուստն
որդւոյ մարդոյ:) Եւ ապա յայն ժամ ուրախութիւն է հաւատացելոց:
(Յայնժամ ամենայն ծունր կրկնեցի երկնաւորաց հրեշտակաց. եւ
երկրաւորաց մարդկան. եւ սանդարամետականաց մեռելոց որպէս ասէ
առաքեալն ի փիլիպեցոց:) Չի ամենայն ազգ եւ ամենայն լեզուք հաւատան
ի Զրիստոս. որպէս ի հռօմայեցոցն ասէ. (յորժամ լրումն հեթանոսաց մտցէ,
ապա ամենայն Իսրայէլ կեցցէ:) Յայնժամ դիցէ զթշնամիսն ի ներքոյ ոտից
իւրոց. եւ ո՞րք եւ թշնամիք Զրիստոսի. այսինքն, Նախ սատանայ: Երկրորդ՝
անհաւատք եւ չարք ի մարդկանէ: Երրորդ՝ մեղք: Չորրորդ՝ մահ եւ
ապականութիւնք եւ այլն: Չի թեպէտ առաջին գալստեմբն եբարձ Զրիստոս

զսոսա. այսինքն, զիշխանութիւն սատանայի. եւ զանհաւատութիւնն եւ զմեղս, եւ զտանջանս հոգւոց, այլ բոլորովիմբ յայնժամ բառնայ՝ յորժամ զսատանայ կապանօք ի հուրն առաքէ. յորժամ յառնեն մեռեալքն եւ մահն լուծանի ի մարդկանէ. յորժամ պակասին մեղք եւ մեղաւորք յերկրէ. եւ ժողովին յատակս դժոխոց: Յայնժամ արդարքն մտանեն ի կեանսն յաւիտենից.՝ ժառանգեն զխոստացեալ բարիսն ի Զրիստոսէ Աստուծոյ մերմէ: Որ է օրհնեալ ընդ Յօր՝ Ամենասուրբ Յոգւոյն յաւիտեանս յաւ:

Նորին հաւաքեալ քարոզ Յարութեան. ի բանն՝ (Փող հարկանի՝ մեռեալք ի Զրիստոս յարիցեն: Կամ հարիցեն մեռեալք. կամ այլ ինչ:) Կորն. 15. 5: (Գլուխ. ԸԿԵ)

Հանդերձեալք հանդերձ Աստուծով վասն յարութեան բանի: Նախ հարցանեմք եթէ՝ գո՞յ յարութիւն: Երկրորդ՝ թէ զի՞նչ է յարութիւն: Երրորդ՝ թէ վասն է՞ր յետոյ յառնեմք: Չորրորդ՝ թէ յո՞րպիսի տարերաց ժողովի մարմինն, կամ ի ձկանց կերեալ: Հինգերորդ՝ թէ ո՞րպէս ճանաչէ իւրաքանչիւր հոգի զիւրն մարմին: Վեցերորդ՝ թէ ո՞րպիսի մարմնով յառնեմք: Եօթներորդ՝ թէ վասն է՞ր ի յարութեանն անմահ եւ անապական մնամք: Ութներորդ՝ թէ ամենեքեան ամենայն անդամօք յառնեմք: Իններորդ՝ թէ ի մի հասակ կատրեալ եւ ի մի ժամանակաւ յառնեն: Եւ հոգեւոր է կենդանութիւնն: Տասներորդ՝ թէ ո՞ր մարմինք մնան ի կատարածի: Եւ թէ առ հասարակ զվարձս կամ զտանջանս ո՞չ առնուն հոգիք մինչեւ ի կատարած աշխարհի: Եւ անտանօր հանգուցուք զբանս: *Ոմանք ի մարդկանէ տկար եւ անհաւատ մտօք նայեցեալ ընդ կարգաւորութիւն երեւելոյս միշտ նոյնպէս գոլ, այսինքն, աւուրց եւ ամսոց, եղանակաց եւ ամաց, ոչ հաւատան այսոցիկ շարժելոց դադարումն լինիլ. եւ անշարժիցն շարժումն եւ կենդանութիւն: Եւ յայսմանէ ուրանան զկատարած կենցաղոյս եւ զյարութիւն մարդկան: Նաեւ այսու ուրանան եւս զսկիզբն աշխարհի, ինքն եղ եւ անեղ ասելով: Չի հարկ է որք ուրանան զմինն ի սոցանէ՝ ուրանան եւ զմիւսն. այսինքն, զվախճան կամ զսկիզբն. որպէս հեթանոսք եւ անհաւատք: Եւ հարկ է դարձեալ՝ որ որք խոստովանի զմինն, խոստովանի եւ զմիւսն. որպէս եկեղեցի հաւատացելոցս (հաւատամք հաստատեալ զյաւիտեանս բանին Աստուծոյ. որպէս գրէ առաքեալն. յոչ էից գերեւելիսս եղեալ:) Եւ նոյն բանին հաւատամք դարձեալ զվախճան աշխարհի եւ զկայ յայլ իմն նորոգումն վերափոխիլ. որպէս ասէ մարգարէն: (Եղիցին երկի նոր եւ երկիր նոր:) Եւ զի գոյ յարութիւն. հաստատի այս բնական քննութեամբ եւ սուրբ գրոց վկայութեամբ: Եւ բնական քննութեամբ նախ այսպէս: Եթէ տեսանեմք ի քաղաքական օրէնս՝զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ. եւ չարացն պատիժ. ապա եւ առ Աստուած արդար դատաստան: Այլ արդ՝ իկեանս յայս տեսանեմք զբազումս որիս բարիքն ի նեղութեան են. եւ չարքն ի հանգստեանն. ապա ուրեմն պիտոյ է եւ այլ կեանս՝ զի հատուցի բարեացն բարի, եւ չարացն չար. եւ այս ոչ լինի, եթէ ոչ իցէ յարութիւն: Եւ դարձեալ՝ հոգին եւ մարմինն ի միասին գործեցին զբարի կամ զչար. այլ արդ՝ եթէ հոգին առանց մարմնոյ պսակի կամ պատժի, ոչ է արդար դատաստան. այլ պարտ է զի յարիցէ եւ մարմինն. եւ ի միասին առցեն զհատուցումն բարեաց կամ չարեաց: Երկրորդ՝ զի հոգին մարդոյ անմահ է

վասն երկու պատճառի: Նախ՛հի՛ ոչ է ի չորից տարերց ժողովեալ որ քակտիլով մահանայ. եւ դարձեալ՝ զի հոգին ինքնաշարժ է. եւ ինքնաշարժն՝ մշտաշարժ է. եւ մշտաշարժն անմահ. ապա ուրեմն հոգին անմահ է. որպէս ի սահման իւր դնի. Եութիւն անմարմին. մշտաշարժ եւ շարժող մարմնոյ: Այլ արդ՝ յանմահութենէ հոգւոյն պարտ է զի լինիցի եւ մարմինն անմահ պատշաճեալ ի նմանէ. եւ այս ոչ լինի եթէ ոչ է յարութիւն մարմնոյն: Երրորդ՝ մարդն մասն եւ կատարումն է աշխարհի. ըստ որում աշխարհ յերից մասանց է առ կայացեալ: Կամ իմանսլիք են որպէս հրեշտակք. կամ զգալիք որպէս տարրեղէնք. կամ յերկուց գոյացեալ որպէս մարդ. այսինքն, ի հոգւոյ եւ ի մարմնոյ: Իսկ թէ մարդս ոչ յառնէ՝ աշխարհս անկատար մնայ. զի բոլորն մասամբն է կատարեալ. ապա ուրեմն գոյ յարութիւն: Այս ըստ բնականին: Իսկ վկայութեամբ սուրբ գրոց. որպէս ասաց Աստուած ցնոյ եթէ՝ (զմիս արեամբ շնչոյ մի ուտիցէք. զի զձեր արիւնդ ի ձեռաց գազանաց ինդրեցից, եւ ի ձեռաց ամենայն մարդոյ. որ հեղու զարիւն մարդոյ՝ փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա. զի ի պատկեր Աստուծոյ արարի ես զմարդն:.) Այս գյարութիւնն ասէ ի ձեռաց գազանաց ինդրելն. զի յառնեն մեր մարմինք որ մեռեալ են ի ձեռն գալանաց: Եւ առ Մովսէս ասէ. (Ես եմ Աստուած Աբրահամու, եւ Աստուած Իսահակայ, եւ Աստուած Յակօբայ. եւ Աստուած ոչ է մեռելոց, այլ կենդանեաց.) որոց հոգիքն ի ձեռս նորա կենդանի են. եւ մարմինքն ի ձեռս նորա կենդանի լինելոց են: Եւ աստուծահայրն Դաւիթ ասէ. (հանես զհոգի ի նոցանէ՝ պակասին եւ ի հող դառնան.) այս զմարմնոյն ասէ որ ի հող դառնան: (Եւ առաքես զոգի քո եւ ստանաս զնոսա. եւ նորոգես զերեսս երկրի.) այս գյարութիւնն ասէ: Եւ Եսայի ասէ. (յարիցեն մեռեալք եւ կենդանացին որք եղեալք են ի գերեզմանս:.) Եւ ի նորս՝ առաքեալն Պօղոս ի բազում ուրեք գրէ գյարութիւնն: Որպէս այն (փող հարկանի. եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն անապական մարմնով:.) Եւ թէ՛ (մարդով եղել մահ, եւ մարդով յարութիւն մեռելոց:.) Եւ ինքն Տէրն յայտնապէս ասէ գյարութիւնն մարմնոյն եթէ՛ (ամենեքեան որք եղեալ են ի գերեզմանս՝ լիցեն զձայն որդւոյն Աստուծոյն եւ եկեսցեն արտաքս:.) Եւ հաւատարիմ վկայ ընդհանուր յարութեանն՝ զգործս եցոյց. որ զՂազար չորեքօթայ ի գերեզմանէն յարոյց: Եւ զորպիսութիւն յարութեան մերոյ յաստուածացեալ մարմինն իւր երեւեցոյց. ըստ որում երեքօրեայ յարեաւ ի գերեզմանէն անապական մարմնով. եւ զբազումս յարոյց ընդ իւր. եւ մտին ի քաղաքն սուրբ: Վասն որոյ (եղել պտուղ ննջեցելոց. եւ անդրանիկ մեռելոց. ուստի եւ փրկիչին ակն ունիմք նորոգել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց:.) Բաւական են սակաւքս ի բազմաց սուրբ գրոց վկայութեանց՝ եթէ գոյ ճշմարտապէս յարութիւն մարդկան: Այս առաջին գլուխն: *Եկեսցուք յերկրորդն թէ՛ զի՞նչ է յարութիւն: Պատասխանեն վարդապետք եւ դնեն երեք սահման յարութեան: Ոմանք ասեն թէ՛ յարութիւնն ոչ այլ ինչ է, քան թէ վերստին կենդանանալ: Եւ ոմանք ասեն թէ՛ յարութիւն է հոգւոյ եւ մարմնոյ վերստին նորոգիլ. եւ այս Բ սահմանս՝ յայտնի են ըստ ինքեանց: Այլ ոմանք ասեն թէ՛ յարութիւն է այնմ որ անկաւ, վերստին յառնել ի կենդանութիւն յաւիտենական եւ անմահ. եւ այս սահմանս կատարեալ է: Այլ գիտելի է՝ զի կրկին է անկումն. այսինքն, նախ՛հի՛ հոգեւոր մահուամբ հոգին մեղօք անկանի. երկրորդ՝ մարմնաւոր.

վասն որոյ կրկին է յարութիւնն. հոգեւոր եւ մարմնաւոր: Այլ այժմ վասն հոգեւորին ոչ ինչ ասեմք. այլ վասն մարմնաւորին: Եւ դարձեալ՝ մարմնաւոր յարութիւնն կրկին է. նախզի՝ մարմնաւոր յարութիւնն կրկին է. նախզի՝ կարէ ոք յառնել միանգամ եւ դարձեալ մեռանիլ. որպէս վեց մեռեալքն որքք յարեան նախ քան զՔրիստոս. երեքն յաւուրս մարգարեիցն Եղիայի եւ Եղիսէի. եւ երեքն զորս յարոյց Քրիստոս. եւ յարութիւնս այս անկատար է. զի դարձեալ մեռան: Երկրորդ՝ է յարութիւն զի յառնէ ոք միանգամ, եւ այլ ոչ եւս մեռանի. եւ յարութիւնս այս կատարեալ է: Եւ այսպէս սահմանի եթէ՝ յարութիւն է այնմ որ անկաւ մարմնաւոր մահուամբ՝ վերստին յառնել անմահութեամբ ի կեանս յաւիտենականս: Եւ այսպէս էր յարութիւնն Քրիստոսի. որպէս ասէ Պօղոս կորնթացւոց. (գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց. այսուհետեւ ոչ մեռանի. եւ մահ նմա ոչ եւս տիրէ:) Այնպէս եղիցի եւ յարութիւն մեր ի վերջինն աւուր: Եւ յայսմանէ երեւի թէ՝ (Քրիստոս է առաջին պտուղ ննջեցելոց. որպսէ ասէ Պօղոս.) զի նախ քան զնա ոչ ոք յարեաւ կատարեալ յարութեամբ. զի Ղազար եւ այլքն որք յառաջ քան զՔրիստոս յարեան, ոչ էին կատրեալ. զի դարձեալ մեռան: Իսկ սուրբքն որք յարեան ընդ Քրիստոսի՝ տարակոյս է թէ կատարեալ յարեան թէ անկատար: Չի որմանք ասեն թէ՝ յարեան նոքա վկայք յարութեանն Քրիստոսի. եւ մտին ի քաղաքն սուրբ. եւ երեւեցան բազմաց. եւ վկայեցին զյարութիւնն Քրիստոսի. եւ դարձեալ մեռան: Իսկ ոմանք ասեն թէ՝ յարեան նոքա ընդ Քրիստոս. եւ զկնի Քրիստոսի յերկինս համբարձան: Այլ թեպէտ նոքա յարեան կատարեալ յարութեամբ որպէս ասեն ոմանք. այլ դեռեւս Քրիստոս է առաջին պտուղ ննջեցելոց. զի թեպէտ գերեզմանք նոցա բացան ի մեծի ուրբաթին. վասն որոյ ի նոյն օր մեք զգերեզմանս օրհնեմք. աեյլ նոքա յաւուր միաշաբաթին յարեան ընդ Քրիստոսի ի մեջ գիշերի. յորում ժամու համահաւասար յարութիւնն է լինելոց ամենայն մարդկան. ըստ այնմ, (ի մեջ գիշերի եղեւ բարբառ. ահա փեսայ գայ՝ ելէք ընդ առաջ նորա:) Այս երկրորդ գլուխն: *Երրորդ հարցումն է թէ՝ վասն էր յետոյ յառնեմք: Ոմանք թեթեւամիտք՝ ծանր եւ դժար համարին զյապաղումն քաղցր յուսոյ յարութեան կենացն եւ ասեն. ընդէ՞ր արդէն ոչ լինի յարութիւն՝ զի ազատիցուք ի ծառայական կենցաղոյս: Առ որս պատասխանեն վարդապետք. յորոց եւ սուրբն Գրիգոր Նիւսացի թէ՝ ամենայն ինչ աստուածային բանին տնօրինի եւ կարգաւորի. նոյնպէս եւ յարութեանն բան: Չի կամեցաւ Աստուած առնել մարդ ըստ նմանութեան իւրոյ. ըստ այնմ որ ասէ. (արասցուք մարդ ըստ պատկերի մերում:) Այլ յառաջատես գիտութեամբ ծանեաւ եւ զայն թէ՝ զպատկերին շնորհն եւ որ ըստ հրեշտակաց զբազմանալն կորուսանելոց էր մարդն: Վասն որոյ խառնեաց ընդ պատկերին Աստուծոյ զարու եւ զէզն. զի այնու ծննդեանմբ բազմացին հոգիք: Ուստի յայտ է. զի յորժամ ասաց. (արասցուք մարդ ըստ պատկերի մերում,) ոչ անդրէն ասաց զաճիլն. (զի ի Քրիստոս Յիսուս արու եւ Էզ ոչ է ասէ առաքեալն.) Այլարու եւ յէզն ասաց. (աճեցէք եւ բազմացարուք. եւ լցէք զերկիր.) այլ ոչ թէ զդրախտն. զի ի դրախտին ամուսնութիւն ոչ է: Այլ արդ՝ մարմնով աճումն ոչ է ըստ բնութեան. եւ բնութիւնն ըստ ժամանակի փոփոխման կատարի: Նաեւ աստանօր ետես նախանկար տեսչութեամբ զորքանութիւն ըստ թուոյ. եւ զորպիսութիւն չարաց եւ բարեաց: Եւ զերկայնութիւն ժամանակին թէ՝ յորքան ժամանակս թիւ մարդկան զլրումն

առցե. զի նոյն կէտ լրմանն՝ է վախճան ժամանակի. եւ իսկիզբն յաւիտենին՝ լինի վերտառութիւն համայնից մարդկան. որպէս գրէ առաքեալն կորընթացոց. (յանկարծակի յական թօթափել ի վերջին փողն՝ մեղեալք ի Զրիստոս յարիցեն:) Եւ այս վասն բազում պատճառի: Նախզի՝ շնորհն աստուածային պատկերին՝ որ համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի մուղանել ի կեանս. իսկ ներգործութեամբ չարին՝ յապաղեաց ժամանակաւ. եւ ի դադարիլ ժամանակին, ի նոյն կէտ համանգամայն վերտառացել մտանեն ի կեանս առաջին ըստ խոստման բանին: Երկրորդ՝ մարդս մասն է աշխարհիս. զի մարմինն է ի չորից տարերաց. եւ ոչ էր պարտ մասին փոփոխիլ առանց բոլորին. այլ յորժամ բոլոր ամենայն արածցք ազատեսցին յապականութենէ ծառայութեան որպէս գրէ առաքեալն հռոմայեցոց, յայնժամ եւ մարմինք մարդկան յանապականութիւն վերափոխեսցին: Երրորդ՝ զի որքան յապաղէ ժամանակն այնքան վարձ համատոյն աճի. զի հաւատն վարձ ոչ ունի թէ վկայութեամբ հաստատի: Այլ արդ՝ թէ օրըստօրէ յառնէր իւրաքանչիւր ոք, հաւատ յարութեանն խափանիր. զի հաւատն ոչ երեւելեացն է: Չորրորդ՝ զի ամենայն մարմինք մարդկան միանգամայն ստեղծան ի կողմանէ առաջին նիւթոյն. ըստ այնմ որ արար Աստուած զմարդն ի հողոյ: Եւ ի գործս ասէ. (արար ի միոջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան:) Պարտ է ապա զի ամենայն մարմինք մարդկան միանգամայն յարիցեն ի յօրն վերջին: Հինգերորդ՝ զի մեծ ուրախութիւն է եւ տօն յորժամ համանգամայն ամենայն մարդկան յական թօթափելն լիցի յարութիւն, քան յայլ եւ յայլ ժամանակս. որպէս ասէ Պօղոս յեբրայեցոց. (Աստուած վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի առանց մեր կատարեսցին:) Վեցերորդ՝ զի յարութիւնն գործ է սքանչելեացն Աստուծոյ եւ ոչ բնութեան. զի բնութիւնն հունաւորեալ է զօրութեամբ. յերկար ժամանակս գործէ: Իսկ Աստուած անհուն է զօրութեամբ. յանկարծակի ի նոյն վայրկեան ժամանակի յարուցանէ: Այլ երեւի թէ Էզեկիէլ հակառակ այսմ գյարութեան յերկար ժամանակս նշանակէ. որպէս ասէ. (մերձեցաւ ոսկր առ ոսկր. եւ յօդ եւ ջիլ եւ մորթ. եւ ապա եկն շունչ ի չորից հողմոց.) ապա ուրեմն յարութիւնն ոչ է ի կէտ վայրկենի: Վարդապետք ասեն թէ՝ որպէս Մովսէս թանձրամիտ ժողովրդեանն Իսրայելի պատմէ զլինելութիւն արարածոց ի վեց օր. զի կարիցեն հասկանալ. այլ որ համանգամայն եղեն երկինք եւ երկիր: Նոյնպէս եւ Էզեկիէլ թանձրամիտ ժողովրդեանն՝ գյարութիւն ննջեցելոց ի բազումս բաժանեաց. այլ ի նոյն կէտն է յարութիւն եւ միաւորութիւն հոգւոյ եւ նորոգումն մարմնոյ: Դարձեալ՝ երեւի թէ Յօհաննու տեսիլն այսմ հակառակ խօսի որ ասէ. (տեսի զհոգի սպանելոցն ի վկայութիւն Յիսուսի. զի կենդանացան եւ թագաւորեցին ընդ Զրիստոսի մինչ ի հազար ամ. այս է առաջին յարութիւն:) Ապա ուրեմն հասարակաց յարութիւնն ոչ յամէ մինչ ի վերջին օրն: Պատասխանեն վարդապետք թէ՝ հերձուածօղք զբանն Յօհաննու թիր իմացան որ ասէ երկու յարութիւն՝ առաջին եւ վերջին: Եւ նոքա իմացան թէ՝ երկու յարութիւն մարմնաւոր լինի. զի հազար ամաւ յառնեն եւ ընդ Զրիստոսի թագաւորեն. եւ մարեմնաւոր փափկանան. եւ ապա լինին վերջին յարութիւնն: Այլ այս հերձուած է եւ սուտ. զի ասեն վարդապետք թէ՝ առաջին յարութիւնն է հոգեւոր յարութիւն, յորժամ հոգիքն ի մեղաց յառնեն. որպէս գրէ Պօղոս յեփեսացոց: (Արի որ ննջեսդ. եւ

կանգնեաց ի մեռելոց. եւ լուսատու եղից քեզ Քրիստոս:) Իսկ երկրորդ յարութիւնն՝ լինի մարմնոյ յարութիւն ի վերջին աւուրն: Այլեւ թագաւորութիւնն Քրիստոսի ոչ է մարմնաւոր. այլ հոգեւոր. զի հաւատացեալք այժմ թագաւորեն ընդ Քրիստոս հազար ամ. որ է թիւ կատարեալ. եւ ցուցանէ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած: Այսպէս իմանի բանն Յօհաննու թէ՛ սուրբքն որք յարեան ի մեռելոց՝ եւ առաւել մարտիրոսքն թագաւորեն ընդ Քրիստոսի ի ստորինս եկեղեցի այժմ հաւատով: Իսկ յետ մահու յուսով ի հոգիս միացեալ՝ ընդ Քրիստոսի թագաւորեն յերկինս. իսկ ի կատարծի՝ սիրով միացեալ ընդ Քրիստոսի հոգւով եւ մարմնով թագաւորեն անվախճան կենօք: Ապա ուրեմն ոչ է պարտ թեթեւամիտ գոլ ընդ յապաղողումն յարութեանն. այլ հաւատով ակն ունիլ եւ արժանաւոր գտանել շնորհին: Չի թէ նահապատքն ի հեռուստ հետէ՛ հաւատով ընկալան. եւ այժմ դեռեւս են ի նոյն յարութեանն յոյս. եւ յուսով ի հոգիս ուրախացան. (եւ չեւ եւս ընկալեալ զաւետիսն. որպէս գրէ առաքեալն. Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ. զի մի առանց մեր կատարեսցին:)

Քանի՞ առաւել մեզ վերջնոցս ամենեւին պարտ է հաւատով ակն ունիլ բարութեանցն Տեառն յերկրին կենդանեաց: Չոր օրինակ՝ թէ որ գովեսցէ զամարան եղանակս. եւ զլիութիւն եւ զառատութիւն ամենայն բարեաց. այլ անփորձ որ միայն ցանկասցի աւուրն. այլ զի ոչ ինչ է սերմանեալ, ոչ ինչ ժողովեսցէ. նոյնպէս եւ յարութիւնն կամողաց եւ ոչ կամողաց ի միասին գալոց է. այլ նոքա ժողովեն՝ որք զբարեաց գործս աստ սերմանեցին: Եւ թէ ասիցէ որ՝ ընդէ՞ր ոչ գիտեմք զկատարածի օր եւ զյարութեան մերոյ. զի թերեւս դիտելով պատրաստեաք զմեզ այնմ աւուր: Ասեմք առ այս եթէ՛ ոչ էր օգուտ մեզ գիտել զօր կատարածի. եւ ոչ զօր մահուն մերոյ. վասն որոյ որ զամենայն յամենայնի անօրինէ՛ արգել ասելով. (ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս զոր հայր եդ յիւրում իշխանութեան:)

Եւ նախ դիցուք զպատճառս ոչ գիտելոյ զօր մահուն. որով երեւեսցի պատճառ կատարածի կենցաղոյս: Արդ նախ՝ եթէ գիտեր որ զօր մահուն, ոչ շիներ եւ ոչ տնկեր գիտելով զմահն մերծեալ: Երկրորդ՝ զի ամենայն որ սովորելով անապաշխար մեռաներ: Երրորդ՝ զի թէ ապաշխարեր մերծ ի մահ, ամենեքեան ընդ ապաշխարութեամբ մեռանէին. եւ ոչ որ արժանաւորիւր արդարութեան պսակին: Վասն ամենայն ժամ պարտիմք արթուն լինիլ եւ սպասել մահուան. յերկոյեայ՝ ի մեջ գիշերի, եւ յայլսն. (զի մի յանկարծ եկեալ գտանիցէ զմեզ ի քուն.) սոյն պատճառ է ոչ գիտելոյ զկատարած կենցաղոյս. զի ամենայն որ պատրաստ լիցի յանկարծակի գալստեանն Քրիստոսի. որպէս ինքն ասեր. (յորում ժամու ակն ոչ ունիցիք՝ զայ որդի մարդոյ:) Դարծեալ՝ գիտութիւն կատարածի խափանէ զվարձս հաւատոյ. զի վարձն ի հաւատն է եւ ոչ ի գիտութիւնն որպէս ասացաք: Դարծեալ՝ բնականապէս ըմբռնէ գիտութիւնն զոր ինչ ներգործէ բնութիւն: Իսկ աստուածայինքն՝ գիտութեամբ ոչ ըմբռնին. այլ հաւատովք իմանին: Արդ՝ որպէս (հաւատովք իմանամք հաստատեալ զյաւիտեանս.) նովին հաւատովք իմանամք զկատարած կենցաղոյս եւ զյարութիւն մեռելոց:

*Չորրորդ հարցումն. թէ տարակուսի որք թերահաւատ մտօք, եւ ի մեր տկարութեան չափս զամենագօրն Աստուած կամի հաւասարել, տեսեալ զմարմին բաժանեալ ի հոգւոյ. զոմանս ի հող լուծեալս. եւ զոմանս հրով փոշիացեալս. զոմանս ի գազանաց կերեալս եւ ի թռչնոց. եւ ի նոսա

խառնեալս. եւ զոմանս ի ձկանց կերալ. եւ զձուկ զայն այլ մարդոյ կերեալ: Ասեմք առ այս կարճառօտ բանիւ եթէ՝ մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ՝ (եւ հոգին զնացեալ ի կայանս հոգւոյ առ Աստուած որ ետ զնա ըստ Սողոմոնի:) Եւ մարմինն թէ ի հող լուծանի եւ յայլ տարերս, եւ թէ ի գազանաց եւ ի թռչնոց եւ ի ձկանց ուտի, եւ նոքա եւս ի տարերս լուծանին, տարերք ամենեքեան շտեմարանք են Աստուծոյ. (եւ տիեզերք ամենայն ի ձեռին Աստուծոյ են ըստ մարգարէին:): Եւ որպէս կարելի է քեզ ի քում ափիդ զսերմանս զանազանել. եւ ի քում շտեմարանս զեղեալս յիրաքանչիւր յարկեան յառաջ բերել. առաւել Աստուծոյ է կարելի զհոգինս ի յերկնից եւ զմարմինս ի տարերաց ի մի վայր ժողովել եւ յարուցանել: Իսկ թէ՝ զձուկն զայն որ եկեր զմարմին մարդոյ ուտէ մարդ. եւ ի յայնմ սերմանէ ծնանի զայլ մարդ: Գիտելի է՝ զի ասէն ոմանք թէ՝ կերակուրս զոր ինչ ուտեմք, ոչ յառնէ ի մարդն. այլ սակաւ հիւթն այն որ է սկիզբն գոյացութեան մերոյ ի ծնողացն ընկալեալ. ապա թէ կերակուրս այսոքիկ յառնեն ի մարդն, լինի մարդոյ մարմինն կարի մեծ եւ անհեթեթ: Եւ դարձեալ ասեն. ոչ միայն մարդոյս մարմին, այլեւ անշնչից եւ շնչաւորաց զոր ինչ ուտեմք յառնեն. որ է անպատշաճ: Եւ բերեն վկայութիւն թէ՝ (ամենայն կերակուր ընդ բերանն մտանէ եւ արտաքս երթայ:) Ասեմք առ այս թէ՝ եւ նիւթք ի մարդն որք յառնեն, եւ են որք ոչ: Այն նիւթն զոր ի ծնողացն ունիմք՝ բոլոր յառնէ. զի սկիզբն է գոյացութեան մերոյ: Եւ նիւթ կերակրոյն այն մասն որ փոխեցաւ ի գոյացութիւն մեր՝ յառնէ. զի մարմին եղել մարդոյ. այլ աւելորդքն ոչ յառնեն: Չի թէ սկիզբնական նիւթն միայն յառնէ, ամենեւին մարմին մարդոյ փոքրիկ եւ անկատար լինի: Եւ Տէրն վասն կերակրոյն ոչ ասաց թէ՝ ի մարմին մարդոյ ոչ հաւասարի, այլ զայն թէ՝ դառնութիւնն եւ ծանրութիւնն արատքս ելանէ. եւ քաղցրութիւնն եւ թեթեւութիւնն ի մարմինն փոխի: Ապա ուրեմն ձկան մարմինն ոչ յառնէ ի մեզ ըստ բոլոր նիւթոյն. այլ ըստ չափոյ զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ եւ եղել մարմին մարդոյ՝ այն մարդոյ մարմինն յառնէ: Եւ մարմին մարդոյն զոր եկեր ձուկն՝ ոչ յառնէ ի ծնեալ մարդն. այլ ի կերեալն: Այսպէս եւ թէ որք զմարմին մարդոյ ուտէ եւ ծնանի այլ մարդ, մարմին մարդոյն ոչ յառնէ ոչ յառնէ ի ծնեալ մարդն. եւ ոչ ի ծնողն որ եկեր. այլ ի կերեալ մարդն: Որոյ պատճառ է՝ զի մարմին կերեալ մարդոյն՝ է իւրն նիւթ գոյացական. եւ սոցա եղել նիւթ պատահական: Նոյնպէս եւ հիւթն սկզբնական՝ ոչ յառնէ ի ծնողն որ աւելորդ արտահոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ մարմինն, շինուածոյն: Այսպէս եւ կողն որ առաւ յԱդամայ եւ շինեցաւ կին՝ ոչ յառնէ յԱդամ. այլ յԵւա որոյ սկիզբն կազմութեան եղել փոխանակ սերման: Նմանապէս եւ հողն ուստի շինեցաւ Ադամ՝ ոչ մնայ ի տարերս. այլ յառնէ յԱդամ՝ որ սկիզբն եղել գոյացութեան նորա: Այս չորրորդ գլուխն: *Իսկ հինգերորդ հարցումն է թէ՝ որպէս անսխալ ճանաչէ իւրաքանչիւր հոգի զիւր մարմինն: Վարդապետք այսմ եղեալ են երկու պատճառս: Նախ՝ զամենակարօղ զօրութիւնն Աստուծոյ. այն որ արար յոչնչէ՝ կարօղ է զքակտեալն եւ զլուծեալն՝ ի մի ժողովել եւ նորոգել: Այլեւ արդարութեանն է գործ իւրաքանչ իւր փոշիս արդարոց եւ մեղաւորաց անխառնապէս որոշել. զի մի մասն ինչ արդարոցն ընդ մեղաւորացն տանջեսցի. եւ ոչ մասն ինչ մեղաւորաց ընդ արդարոցն փառաւորեսցի. ապա թէ ոչ՝ այս լինէր անիրաւութիւն. որ հեռի է յարդար իրաւանցն Աստուծոյ. որ հատուցանէ իւրաքանչիւր ումեք ըստ գործս. այսինքն, արդարոցն փառս. եւ

մեղաւորացն տանջանս. ըստ այնմ որ ասէ մարգարէն. (դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս նոցա:) Երկրորդ պատճառ. զի նշան իմն գոյ առանձնակի յատկական ի խառնուածոյ դիմացն անմարմին. եւ նշանս այս՝ անքակտելի է ի հոգւոյն եւ ի մարմնոյն խառնեալ: Չի թէպէտ հոգին բաժանի եւ մարմինն լուծանի, սա ոչ բաժանի ի հոգւոյն. եւ ոչ լուծանի ընդ մարմնոյն. այլ կայ եւ մնայ մշտնջենաւորապէս ի սկզբանէ խառնման հոգւոյն եւ մարմնոյն: Եւ թէպէտ մարմինն փոփոխի հասակաւ ի տղայութիւն, ի մանկութիւն, յերիտասարդութիւն, եւ ի ծերութիւն, սա այս խառնեալ դէմս՝ մի եւ նոյն անփոփոխելի մնայ յիւրաքանչիւր հասակս: Նոյնպէս թէ հիւանդութեամբ տգեղանայ դէմ մարմնոյ եւ դարձեալ առողջանայ՝ որպէս Նէեման ասորի, եւ թէ մեռանի եւ լուծանի, եւ թէ հոգին մեղօք հիւանդանայ ապաշխարութեամբ եւ դարձեալ առողջանայ, այս դէմս որ խառնեալ է յերկուց բնութեանց հոգւոյ եւ մարմնոյ՝ միշտ նոյնպէս կայ եւ մնայ անփոփոխելի: Եւ այսու անփոփոխելի նշանաւ ճանաչէ հոգի զմարմին. եւ հոգի զհոգի: Չի այսու նշանաւ ճանաչեաց հոգի մեծատանն զհոգին Ասրահամուն եւ զՂազարուն ի գոգ նորա հանգուցեալ: Իսկ այս նշանս անմարմին եւ անփոփոխելի է եւ մնացական. եւ ծածուկ ինքեան միայն գիտելի. որով անսխալ ճանաչէ իւրաքանչիւր հոգի զիւր մարմին եւ միաւորի: Չոր օրինակ՝ նշան դրոշմի կայ ի մէջ քոյն եւ անասնոյն եւ տանն. զի ելեալ ի տանէ երթայ խառնի ի հասարակ նախիրն. եւ ի դառնալն՝ այսու նշանաւ ճանաչէ զքեզ եւ զտունն: Եւ դու ճանաչես քո դրոշմին զնա. նոյնպէս հոգին բաժանեալ եւ մարմինն լուծեալ ի հասարակ տարրն, այս խառնեալ դրոշմիւ ճանաչեն զմիմեանս անսխալապէս: Եւ թէ տարակուսի ոք թէ՛ որպէս ի ժողովիլ մարմնոյն ի հասարակ տարրէ ոչ խառնի ընդ նոսա: Ասեմք եթէ զոր օրինակ՝ սնդիկ լուծալ եւ ի հող խառնեալ գնդապէս եւ փոշիացեալ, եւ յորժամ ի վայր ողովես, թողու զփոշիսն ի յորս խառնեալ էին. եւ պարզ միայն սնդիկն ժողովի: Այսպէս եւ ի մարդկան մարմին ոչ ինչ խառնի ի հասարակ տարերաց ի յորս լուծաւ. այլ ինքն միայն գոյացութիւն մարմնոյն խառնեսցի ընդ հոգւոյն: Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք՝ ցորեան եւ կորեակ եւ այլք հասարակ ի մի վայր սերմանին. եւ հասարակ ջրով եւ ջերմութեամբ սնանին. եւ ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեան. եւ կորեակն ի կորեակ: Նոյնպէս եւ մարմինք մարդոյ առ հասարակ մեռանին եւ ի հող լուծանին եւ յայլ տարերս. եւ յորժամ յառնեն. ոչ ունին ի հասարակ տարերց ընդ իւքանս. եւ ոչ այս մարմին ի յայն մարմնոյ ունի ինչ խառնումն: *Վացերորդ հարցումն է թէ՛ ո՞րպիսի մարմնով յառնեմք:

Գիտելի է՝ զի ոմանք հերձաւածօղք մոլորեցան վասն յարութեան մեռելոց. եւ ասացին թէ՛ մարմինն ոչ բազդկանայ ի չորից տարերց. այլ լինի պարզ: Եւ նոքա դարձեալ յերերիս բաժանեցան: Ոմանք ասացին թէ՛ ի յարութեանն մարմինք մարդկան ի հոգի փոխին. եւ բերեն վկայ զբանն Պօղոսի որ ասէ. (սերմանի մարմին շնչաւոր. եւ յառնէ մարմին հոգեւոր.) այլ բանն Պօղոսի ոչ է այսպէս թէ մարմինն եւութեամբ հոգի լինի. այլ նման հոգւոյ. զի անմահ լինի որպէս հոգի. եւ անկարօտ կերակրոյ: Եւ դարձեալ՝ ոմանք ասացին թէ՛ ի յարութեանն մարմինք մարդկան օդային լինին. կամ հողմային: զի երբեմն հողմ եւ օդ ի գրոց հոգի կոչին: Եւ այլք ոմանք ասացին թէ՛ մարմինք մարդկան ոչ լինին երկնային. այլ երկրային. որպէս վասն

յարութեանն ասէ Պօղոս կորնթացւոց. (այլ մարմինք երկնաւորաց. եւ այլ մարմինք երկրաւորաց:) Իսկ Յօբ՝ սուտ առնէ զնոսա զամենայն ասալով: (Քանզի գիտեմ որ կենդանի է որ լուծանելոցն է զիս, յարուցանել զմորթ իմ որ կրեաց զայս ամենայն:) Եւ դարձեալ՝ ոմանք հերձուածօղք ասացին թէ՛ այս մարմինս ոչ յառնէ. եւ ոչ այս մարդ որ մեռանի. այլ փոխանակ նորա նոր մարդ յառնէ: Իսկ Յօբ՝ ստէ զնոսա ասելով թէ՛ (մարմնով իմով տեսանեմ զԱստուած փրկիչ իմ, եւ ոչ այլօք:) Վասն զի Աստուած արդար դատաւոր է. ոչ է պատշաճ թէ այլ մարմին յարիցէ եւ պատուեսցի կամ պատժեսցի. այլ այն արար զբարի կամ զչար՝ նոյն յարիցէ. զի արդարապէս հատուցին նմա. ըստ այնմ, (մեզ ամենեցուն յանդիման լինիլ կայ առաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր ոք իւրով մարմնով զոր ինչ գործեաց. եթէ բարի. եւ եթէ չար:): Դարձեալ գիտելի է՝ զի Պօղոս զհատսերման օրինակ տալ յարութեան մարդկան ի կորնթացւոց ասելով. (անմիտ՝ դու զոր սերմանես՝ ոչ կենդանանայ, եթէ ոչ մեռանիցի, եւ թէ սերմանես՝ հատ մերկ. թէ ցորեան իցէ, այլ ազգ սերմս. եւ Աստուած տայ նմա մարմին որպէս եւ կամի:) Եւ վասն երկու պատճառի սերմանց օրինակէ զյարութիւն մեռելոց: Նախզի՝ սերմն բնաւ ոչ յառնէ, եթէ ոչ նախ մեռանի եւ յետոյ կենդանանայ. նոյնպէս մարմինք մարդկան՝ ամենեւին ոչ յառնեն, թէ ոչ մեռանին: Երկրորդ՝ զի սերմն մերկ սերմանի՝ եւ մերկ ոչ բուսանի. այլ զարդարեալ խոտով եւ տերեւով եօթն թով: Չի նախ արմատն. եւ յետոյ խոտն. յետ որոյ ծոցտն եւ ծունկն. եւ ապա տերեւն՝ պատեանքն՝ եւ քրիստն. եւ ապա ցորեան ատոք ի հասկին: Նոյնպէս մարմինք մարդկան մերկ մեռանին. այլ մերկ ոչ յառնեն. բայց գեղեցիկ յոյժ եւ պատւական զգեստով զարդարեալ. որպէս ի նոյն գլուխն ասէ Պօղոս եթէ՛ (պարտ է ապականացութիւնս այսմիկ զգենուլ զանապականութիւն. եւ մահկանացութիւնս՝ զանմահութիւն:) Եւ զարդարեալ լինի եօթն զարդիւք. այսինքն, երեք հոգւոյն. եւ Դ զարդ մարմնոյն որպէս ասեն վարդապետք: Վասն զի մարդս յայսմ աշխարհի եօթն պակասութիւն ունի. երեք հոգւոյն. եւ չորս մարմնոյն. այս եօթն պակասութիւնս՝ ի յարութեանն բառնի, եւ եօթն զարդ ընդունի: Առաջին պակասութիւն է հոգւոյ իմացականին խաւարն եւ տգիտութիւնն. իսկ ի յարութեանն՝ բառնի այս ի հոգւոյն. եւ լինի լոյս պայծառ եւ գիտութիւն աստուածային տեսութեանն. զի զԱստուած դեմ յանդիման տեսանէ. եւ զաստուածայինսն իմանայ: Երկրորդ պակասութիւն՝ է թուլութիւն եւ մոռացութիւն մտացն. զի աստ զԱստուած մոռանամք. եւ որոշիմ մեղօք ի նմանէ: Եւ այս բառնի ի հոգւոյն. եւ լինի ամրութիւն եւ հաստատութիւն. զի զԱստուած հաստատապէս ըմբռնեմք. եւ բնաւ ոչ բաժանիմք ի նմանէ. եւ ոչ մոռանամք: Երրորդ պակասութիւն է տրտմութիւնն ի հոգին. զի զբազում ինչ խնդրէ եւ ոչ կարէ առնուլ. եւ բազում ինչ ոչ խնդրէ, եւ լինի նմա: Եւ այս բառնի ի հոգւոյն. եւ ընդունի ուրախութիւն եւ տարփումն հոգեւոր առ Աստուած. ըստ այնմ, (դարձեալ տեսից զձեզ եւ ուրախ եղիցին սիրտք ձեր. եւ զուրախութիւնն ձեր՝ ոչ ոք հանիցէ ի ձեռք:) Իսկ առաջին պակասութիւն է մարմնոյն աստ՝ զի է մահ կանացու ապականացու եւ չարչարելի. որպէս քաղցն, ծարաւն, հիւանդանալն, եւ այլն. իսկ այս ամենայն բառնի ի մարմնոյն. եւ դնի անմահութիւն, անապականութիւն, եւ անչարչարութիւն. զի բնաւ ոչ չարչարի. որպէս ասէ Պօղոս. (սերմանի ապականութեամբ. եւ յառնէ առանց ապականութեան:) Երկրորդ պակասութիւն՝ է մարմնոյն

սեւութիւնն եւ աղտեղութիւնն. եւ բաժանի ի մարմնոյն. եւ զարդարի ի լուսնոյ որպէս զարեգակն. որպէս հրամայէ Տէր մեր. (փայլեսցին արդարքն իբրեւ զարեգակն յարքայութեան:) Երրորդ պակասութիւն է մարմնոյս՝ զի ծանր է եւ ծոյլ յամենայն գործս հոգեւորս. բառնի այս՝ եւ լինի թեթեւ. երազ. եւ արի յամենայն բարեգործութիւնս: Չի ուր կամք հոգւոյն խնդրէ՝ անդ ընթանայ եւ մարմինն անարգել ի յական թօթափելն. որպէս ասէ Պօղոս. (սերմանի տկարութեամբ. եւ յառնէ զօրութեամբ:) Եւ Սողոմօն թէ՛ (պայծառասցին արդարք. եւ իբրեւ զկայծակն ընդ եղեգն ընթասցին:) Չորրորդ պակասութիւն է. զի այժմ են մարմինք մեր թանձր եւ կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ եւ լինի անօսր եւ թափանցիկ՝ որ ոչ բանակամ պարիսպ ըմբռնել կարէ. որպէս զլոյս արեգական՝ անցանէ ընդ երկինս առանց ապականութեան: Եւ որպէս Քրիստոս յարեաւ մարմնով ի գերեզմանէն վիմովն կնքելով. եւ եմուտ առ աշակերտսն դրօքն փակելովք. նոյնպէս մարմինք սրբոցն՝ ընդ ամենայն երկինս անցանէն զօրութեամբ Աստուծոյ մինչեւ ի հրեղէն երկինս. որպէս ասէ Պօղոս. (սերմանի մարմին շնչաւոր. եւ յառնէ մարմին հոգեւոր:) Իսկ այսպիսի զարդս՝ լինի փառաւորեալ մարմնոց սրբոց: Իսկ մարմինք մեղաւորաց՝ ոչ այսպէս զարդարեսցին. որպէս ասէ Պօղոս. (ամենեքեան ննչեսցուք. այլ ոչ ամենեքեան նորոգիցուք:) Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ՛ սրբոց երկու իր հասարակ է: Մին յարութիւնն. զի ամենեքեան յառնեն: Եւ երկրորդ՝ անմահութիւն. զի առ հասարակ անմահ եւ անապական մարմնով յառնեն առանց ապականութեան: Բայց զեօթն զարդս զորս ունին սուրբքն որք են հարսունք Քրիստոսի՝ ոչ ունին անսուրբքն որք են հարսունք սատանայի: Վասն այն հոգիք մեղաւորացն լինին ի խաւարն անգիտութեան. եւ ի տրտմութիւնն յաւիտեանական. եւ որոշեալք յԱստուծոյ. եւ մարմինք նոցա լինին առաւել թանձր եւ ծանր եւ գարշելիք որպէս աստ. եւ երեւի որպէս բլուր մեծ յաչս իւրեանց. մարմինք նոցա սեւ եւ աղտեղի եւ չարչարելի. զի կրեն չարչարանս. եւ ցանկան մահուան եւ ոչ մեռանին. որպէս ասէ տեսիլն Յօհաննու. (յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ եւ ոչ գտցեն:) Այս առ վեցերորդ գլուխն: *Եօթներորդ հարցումն է թէ՛ վասն է՞ր ի յարութեանն անմահ եւ անապական մնամք: Վարդապետք այսմ դնեն բազում պատճառ. բնական եւ բարոյական: Եւ նախ բնական. զի այժմ հոգիս մեր փոփոխական է. որպէս խորհրդով, կամօք, եւ այլն. վասն որոյ զմիաւորութիւն ընդ մարմնոյ փոփոխական ունի: Իսկ ի յարութեանն՝ անփոփոխ սերտութեամբ հաստատի ասէ սուրբն Դիոնեսիոս. վասն որոյ անփոփոխ եւ անմահ միաւորի ընդ մարմնոյս: Երկրորդ՝ այժմ մարմին մեր յապականացու հողոյ է եւ տարերաց. վասն որոյ եւ ապականի դարձեալ. իսկ յայնժամ հող եւ տարերք յանապականութիւն փոխին. ըստ Պօղոսի. (արարածք ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան.) վասն որոյ յանապական տարերաց՝ կազմի անապական մարմին: Երրորդ՝ այժմ ի ժամանակի եղեալք. եւ ժամանակն փոփոխական է. վասն որոյ ընդ ժամանակին փոփոխիմք: Իսկ ի յարութեանն՝ յանփոփոխ յաւիտեանն ծնանիմք. ըստ այնմ, (որդիք յարութեանն են.) վասն որոյ ընդ յաւիտենին՝ անմահ եւ անփոփոխ մնամք: Չորրորդ՝ այժմ ի ծնողաց ապականացու ծնանիմք. վասն որոյ եւ ապականիմք. իսկ յայնժամ յանապական ծնողէ Աստուծոյ ծնանիմք. ըստ այնմ, (Աստուծոյ որդիք են.) վասն որոյ

անապական մնամք: Հինգերորդ՝ ստեղծաւ մարդն հաւասար հրեշտակաց. եւ յորժամ մեղանչեաց՝ (անասնոց հաւասարեցաւ ըստ Դաւթի.) եւ ընդ նոսա ապականեցաւ եւ պատժեցաւ. վասն որոյ ի յարութեանն՝ հրեշտակաց հաւասար յարուցանէ անմահ անապական եւ առանց կարօտութեան. ըստ այնմ, (հաւասար հրեշտակաց են ասէ Տէրն:) Վեցերորդ՝ կրկին են կեանք. մահկանացու եւ անմահ. եւ կրկին է մարդն. մահկանացու եւ անմահ. եւ որպէս այժմ հոգւով եւ մարմնով զմահկանացու կեանս վայելեաց. նոյնպէս եւ յայնժամ հոգւով եւ մարմնով զանմահ կեանս ժառանգեսցէ. վասն այն անմահ յառնէ: Եօթներորդ՝ մահն եւ ապականութիւնն ծնունդ է մեղաց. ըստ այնմ, (ցանկութիւն յղացեալ զմեղս ծնանի. եւ մեղքն զմահ.) եւ յայնժամ ոչ լինի մեղք. վասն որոյ եւ ոչ մահ. ըստ այնմ, (պակասեցին մեղաւորք յերկրէ. եւ անպարիշտք մի եւս գտցին ի նմա.) վասն որոյ անմահ յառնեմք: Ութներորդ՝ կեանք բարի է եւ անեզր. եւ մահն չար եւ եզերեալ. եւ որպէս այլաք ի բարի կենացն եւ մտաք ի չար մահուն. այսպէս եւ ելեալք ի մահունէ՝ մտանեմք յանեզր եւ յանվախճան կեանսն եւ բարութիւնն: Իններորդ՝ հոգին եւ մարմինն են մի անձն մարդոյ. վասն որոյ փոխակրեն ի միմեանց զբարիս եւ զչարիս. եւ որպէս աստ հոգիա ի մարմնոյն կրեաց. նոյնպէս եւ անդ մարմինն ի հոգւոյն կրեսցէ. եթէ զբարիս, եւ եթէ զչարիս: Տասներորդ՝ գործք մարդկան անցաւորք են որպէս ինքն. իսկ հատուցմունքն Աստուծոյ մշտնջենաւորք որպէս նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ՝ զի հատուցէ ոմանց զփառս, եւ ոմանց զտանջանս անմահ մարմնով: Եւ թէ ոք ասիցէ՝ վասն է՞ր ժամանակեայ մեղացն յաւիտեան պատժէ Աստուած: Ասեն վարդապետք թէ՛ արդարապէս պատժի մեղաւորն յաւիտեան: Նախ՝ քանզի մեղանչեաց յիւր յաւիտեանին. արժանապէս պատժի ի յաւիտենին Աստուծոյ: Դարձեալ՝ չար կամք մեղաւորին՝ է յաւիտենական. զի կամին յաւիտենական հեշտանալի մեղս թէ կարէին. ապա ուրեմն եւ պատիժն լինի յաւիտենական: Դարձեալ՝ մեղանչեն ընդդէմ յաւիտենին Աստուծոյ. վասն որոյ յաւիտեան պատժէ զնոսա: Դարձեալ՝ նիւթ հրոյն որ է աղտ մեղաց՝ է յաւիտենական. վասն որոյ յաւիտենական տանջէ զնոսա: Դարձեալ հինգերորդ՝ մեղքն որոշէ ի յաւիտենական կենացն. վասն այն անկանի ի մահն յաւիտենական: Եւ այս յայտ է բազում օրինակաւ: Նախզի՝ դնելն ի սակաւ մի ժամանակ. այլ ստացուածն է յաւիտենական: Դարձեալ՝ խոցումն ի վայրկեան ժամանակիս՝ ածէ մահ յաւիտենական: Դարձեալ՝ անկանիլ ի խորխորատ՝ է ժամանակաւոր. այլ մնալ անդ՝ է յաւիտենական: Դարձեալ՝ ժամանակաւ փորումն աչաց՝ առնէ մշտնջենաւոր կուրութիւն: Դարձեալ՝ ըմպումն մահադեղին ի միում րոպէի՝ ածէ զմահ յաւիտենական: Ապա ուրեմն՝ յիրաւի եւ արդարապէս հատուցանէ Աստուած չար փոխանակ չարեաց. այսինքն, պատիժս վասն անիրաւութեան նոցա. զի արդար է Աստուած: Իսկ հատուցանէ բարի փոխանակ բարեաց. եւ շնորհ փոխանակ շնորհաց. զի բարի եւ արդար է: Այլ չար փոխանակ բարեաց ոչ երբէք հատուցանէ. ոչ ի կեանս յայս, եւ ոչ ի հանդերձեալն. զի ոչ է անիրաւ. այլ արդար յամենայնի, եւ ճշմարիտ: Այս եօթներորդ գլուխն թէ՛ վասն է՞ր անմահ եւ անապական յառնեմք: *Ութներորդ հարցումն թէ՛ ամենեքեան ամենայն անդամօք յառնեմք: Պատասխանեն վարդապետք թէ՛ ամենայն մարդ յառնէ. այլեւ նոքա որք յարգանդի մօրն մեռան թէ առին զբանական հոգին: Եւ այս է պատճառ յարութեան. զի ամենայն մարդիկ առնուն վարձ

կամ պատիժ վասն իւրեանց գործոցն. կամ վասն սկզբնականին: Այլ արդ՝ երեխայքն որք յառաջ քան զմկրտիլն մեռանին՝ վասն Ադամայ մեղացն պատժին. եւ որք մկրտեալ մեռանին՝ առնուն վարձ ի խորհրդոյ եկեղեցւոյ եւ ի չարչարանացն Քրիստոսի յոր մկրտեցան: Ապա ուրեմն պարտ է զի ամենեքեան յարիցեն ի մեռելոց. ոպէս ասէ աւետարանն Յօհաննու. (ամենեքեան լսիցեն ձայն որդւոյն Աստուծոյ եւ եկեցցեն արտաքս.) եւ Պօղոս ասէ. (մեզ ամենեցուն յանդիման լինիլ կայ առաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրում մարմնով զոր ինչ գործեաց. եթէ բարի, եւ եթէ չար:) Եւ թէ ոք հակառակի: (Ոչ յարիցեն անպարիշտք ի դատաստան. եւ ոչ մեղաւորք ի խորհուրդս արդարոց ասէ մարգարէն:) Ասեմք առ այս եթէ՝ բան սաղմոսին այսպէս մեկնի. ոչ յարիցեն անպարիշտք ի յարութիւնս հոգեւորս. այսպէս, ի մեղաց ի շնորհսն. այլ յառնեմ մարմնով: Դարձեալ՝ ոչ յարիցեն ի դատաստան. այսինքն, ոչ կանգնեցին ի դատաստան. զի մեղօք կործանեալք են: Եւ դարձեալ՝ ոչ գան ի դատաստանի. զի մասն բարւոյ ոչ ունին որով քննին. այլ դատապարտին: Ծանիր եւ զայս. զի դատաստան հատուցման ամենեցուն է. այլ դատաստան քննութեան ոչ է ամենեցուն: Չի բոլորապէս ի չորս դասս բաղանին ի յարութեանն ամենայն մարդիկ: Մին դասն է կատարելոցն ընդ Աստուծոյ դատողացն զայս. որպէս առաքեալք. մարգարէք. մարտիրոսք, եւ այլք. սոքա ոչ քննին՝ այլ փրկին. իբր յայտնապէս կատարեալք. (ըստ Յօհաննու ընդունին զկեանսս յաւիտենականս. եւ ի դատաստան ոչ մտանեն:) Եւ միւս դասք արդարոցն՝ որք դատաստանաւն փրկին. որպէս ճշմարիտ հաւատացեալք. որք ունին զհաւատս ուղիղ եւ զգործս բարիս առաւելեալ ի վերայ հաւատոց. սոքա գան ի դատաստան եւ փրկին: Եւ թէ ո՞րք են կատարեալքն, եւ ո՞րք արդարք: Կատարեալքն այնք են՝ որոց ոչ են բաւական պատուիրանքն Աստուծոյ. այլ ի վեր քան զպատուիրանս Աստուծոյ առնեն. որպէս մարտիրոսութիւն, կրօնաւորութիւն, կուսութիւն, որ ոչ հրամայեցաւ: Եւ արդարն այն է՝ որ զպատուիրանն Աստուծոյ առանց տրտնջման կատարէ զոր ինչ ասացաւ յօրէնս հին յաւետարանն: Սոքա երկոքին դասք՝ ոմն դատաստանաւ, եւ ոմն առանց դատաստանի փրկին. եւ ի կեանս յաւիտենականս հրաւիրին. ըստ այնմ որ ասէ. (եկայք օրինեալք հօր իմոյ. ժառանգեցէք զկեանսս:) Երրորդ դասն՝ է անպարշտացն առանց դատաստանի կորուսելոցն. որք են անհաւատ եւ չարք: Սոքա ոչ գան ի դատաստան. զի յայտնի դատապարտեալք են. որպէս ասէ մարգարէն. (ոչ յարիցեն անպարիշտք ի դատաստան:) Եւ Յօհաննէս ասէ. (որ ոչ հաւատայ յորդի. արդէն իսկ դատապարտեալ է:) Չորրորդ դասն՝ է չարացն որք դատաստանաւն դատապարտին: Եւ ի սոցանէ որք ունին զհաւատս եւ ոչ զգործս, դատապարտին. որպէս չար հաւատացեալք. (զի հաւատք առանց գործոց մեռեալ են:) Եւ որք ունին գործս եւ ոչ հաւատս. նմանապէս կորնչին. զի աստէն հատուցաւ խոցա ըստ գործոց. որպէս մեծատանն: Իսկ թէ ոք հարցանէ, ո՞րք են այնոքիկ որք առանց դատաստանի կորնչին: Ասեն վարդապետ թէ՝ որք առանց օրինացն մեռան, առանց դատաստանի կորնչին. այսինքն, այլազգիք, տաճիկք, կռապաշտք, եւ հրեայք որք յետ չարչարանցն Քրիստոսի: Քանզի յետ չարչարանացն Քրիստոսի՝ պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ խոցա: Սոքա ամենեքեան առանց դատաստանի կորնչին ի հուրն. ըստ այնմ, (դիցես

զնոսա հնոց ի հուր ի ժամանակի երեսաց քոց:) Իսկ թե ո՞րք են որք դատաստանաւ դատապարտին՝ այսինքն, հրեայք որք նախ քան զգալուստն յօրէսս մեղաց. եւ չար քրիստոնեայք որք չար գործովք զԱստուած ուրացան: Սոցա ասասցի. (Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից. զի քաղցեալ եւ ոչ ետուք ինձ ուտել եւ այլն:) Այս թե ամենայն մարդիկ յառնեն վասն հատուցման: Իսկ թե ամենայն անդամօք յառնեն: Ասեն վարդապետք թե՛ բոլոր ամենայն անդամօք յառնեն անթերի. որոյ պատճառ է՝ զի մարդն հոգւով եւ մարմնով է կատրեալ: Եւ որպէս հոգին ունի զգօրութիւն իւր անպակաս. նոյնպէս եւ անդամոց մարմնոյն պարտ է լինիլ անպակաս. զի իցէ կատարեալ մարդ: Չի եթէ մազն որ է գեղեցկութիւն մարմնոյն յառնէ ըստ Տեառն թե՛ (մազ մի ի գլխոյ ոչ կորիցէ.) քանի՞ առաւել եւս անդամն որ յեութենէ մարմնոյն յարիցէ: Արդ՝ յարութիւնն երիս իրս ուղղէ ի բնութիւնն: Նախ՝ զպակասութիւնն. որպէս ի տղայս եւ յանդամահատս. եւ ի նւագեալ անդամս եւ ի չորացեալս. որպէս չորս մատնի, եւ այլքն. զի լցցին նոքա ի բոլոր մարմնոյն. որպէս գարեղէն նկանակ հացիցն: Երկրորդ՝ ուղղեսցին աւելիքն ի չափն. որպէս աւելորդ եղնգանց, հերաց, եւ վեցամատնիցն, եւ այլոցն որք չափաւորին: Երրորդ՝ ուղղի մոլորութիւնն՝ որ խանգարումն է անդամոցն ի միմեանս սխալեալ ըստ բնութեան տկարութեան: Եւ սոքա ուղղին. զի գործ է կարօղ զօրութեանն Աստուծոյ. եւ որչ տկար բնութեանս: Եւ թե ոք ասիցէ՝ բազում անդամք են ի մեզ լցեալ աղտեղի ապաւառով. եւ նոքա ո՞չ յառնեն: Ասեմք եթէ՛ անդամքն այնք որք աստ լցեալ են ապաւառով՝ անդ լցեալ լինին չորս հիւթովքն լուսաւորեալ լուսով: Եւ թե ոք ասիցէ՝ թե բազում անդամք են կենդանականք. որպէս սիրտքն, լեարդն, թոքն եւ այլքն. որք ի յարութեանն ոչ են պետք. զի ոչ է հարկ կենդանութեան մարմնական: Ասեմք. թեպէտ այնպիսի անդամքն ոչ են պետք ի յարութեանն. այլ յառնեն վասն կատարելութեան եւ գեղեցկութեան. որպէս ստինքն. զի ոչ է ի պէտս վասն կաթին. այլ յառնէ վասն կատարելութեան եւ գեղեցկութեան մարդոյն: Չի յարիցեն մարդիկ ըստ գոլոյն, եւ ամբողջ գոլոյն, գեղեցիկ գոլոյն: Գոլն է որպէս մարդն հոգի եւ մարմին: Ամբողջ գոլն՝ որպէս բոլոր անդամօքն: Գեղեցիկ գոլն՝ է որպէս ձեւովն, հերովն, եւ այլովքն որպէս ցուցաւ: *Իններորդ հարցորումն է թե՛ ամենեքեան ի մի հասակ կատարեալ եւ մի ժամանակաւ յառնեն: Ասացեալ են վարդապետք թե՛ ամենեքեան կատարեալ հասակաւ եւ մի ժամանակաւ յառնեն ի թիւ երեսնամեայ: Եւ այս է պատճառն. զի Աստուած ի սկզբան զբնութիւնս Ադամայ անթերի ստեղծ. նոյնպէս ի վարջին օրն անթերի նորոգէ: Իսկ մանկութիւնն թերի է. զի ոչ է հաս ի կատարումն. եւ ծերութիւնն պակասութիւն ունի. զի անցեալ է զկատարելութեամբն: Եւ ի մեջ մանկութեան եւ ծերութեան՝ երիտասարդութիւնն է որ է թիւ կատարեալ: Եւ յայս թիւս ստեղծաւ Ադամ երեսնամեայ: Դարձեալ՝ երկրորդն Ադամ յայս հասակս յարեաւ ի մեռելոց: Եւ ամենաքեան յայնմ թուի հասակի յառնեմք. որպէս ասէ Պօղոս եփեսացւոց. (մինչեւ հասցուք ամենեքեան միաբան յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Զրիստոսի:) Եւ այսպէս համահասակ թուով ժամանակի եւ կատարելութեամբ լինին. այլ համահասակ քանակաւ ոչ: Չի աստ ոմն մեծ լինի. եւ ոմն փոքր ի ջերմութենէն որ անհաւասար է ի նոսա. նոյնպէս եւ անդ: Այլ որ առաւել անճոռնի է մեծ է եւ հսկայ անդամ՝ եւ կարի փոքր եւ փանաքին՝ յերեսնամեայ հասակն իւրեանց չափաւորին: Եւ մեծ եւ փոքր ի

յարութեանն եռակի ասի: Նախ՝ վասն փառացն. (որպէս աստղ քան զաստղ
առաւել է փառօք ասէ առաքեալն:) Երկրորդ՝ վասն մեծացն գործոց. որպէս
ասէ տեսիլն. (տեսի անդ զմեռեալս մեծամեծս եւ փոքունս:) Երրորդ՝
քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւր երեսնամեայն յարիցէ. որպէս
հարիւր ամեան անցեալ, եւ քառասնօրեայն մեռեալ որ լինելոց եր
երեսնամեայ, ի նոյն հասակն յառնեն. որպէս ասէ Յոք. (անդ մեծամեծ եւ
փոքունք են:) Իսկ թէ ո՞րպիսի կենդանութեամբ յառնեն՝ հոգեւո՞ր թէ
մարմնաւոր: Ասեն վարդապետք թէ՛ հոգեւոր կենդանութեամբ եւ ոչ
մարմնաւոր: Այլ ոմանք ասեն թէ՛ յետ յարութեանն դառնայ մարդն յառաջին
գործն իւր զոր ունէր աստ. վարել, վստակիլ, շինել եւ այլն: Բայց Յոք՝ ստէ
զնոսա ասելով թէ՛ (իջանէ մարդ ի դժոխս՝ չեւ եւս ելցէ. եւ ոչ դարձցի ի տուն
իւր. եւ ոչ եւս ծանիցէ զնա տեղի իւր:) Եւ դարձեալ՝ ոմանք ասացին թէ՛ յետ
յարութեանն ուտեն եւ ըմպեն. կանայս առնեն եւ արանց լինին. որպէս
մահմետականքն ասեն: Այլեւ ոմանք ի հրէից եւ հերձաւածօղք: Այլ յադիմանէ
զնոսա Զրիստոս թէ՛ (յետ յարութեանն ոչ կանայս առնեն. եւ ոչ արանց
լինին. այլ են իբրեւ զիրեշտակս.) անկարօտ կերակրոյ եւ անմահ: Եւ թէ ոք
ասիցէ՛ Զրիստոս յետ յարութեանն եկեր՝ ապա եւ մեզ պարտ է ուտեն:
Ասեմք թէ՛ Զրիստոս ոչ վասն կարեաց եւ հեշտութեան եկեր. ուստի յայտ է՝
զի ի կերակուրն երեք իր լինի: Առաջին հատանելն ատամամբ: Երկրորդ՝
ծասկելն: Երրորդ՝ գնալն ի ստամոքսն եւ տալ զգօրութիւնն: Արդ՝ ի
ճաշակելն Զրիստոսի՝ առաջին երկուքն էին. այսինքն, հատանելն եւ ծամելն.
Եւ երեքն ոչ: Այլ Զրիստոս եկեր զի յարութիւնն հաստատեր. զի բազումք ի
տարակոյս էին: Իսկ ընդ հանուր յարութիւնն ոչ լինի ի ծածուկ որպէս
Զրիստոսի. այլ ամենեցուն յայտնի եւ առանց տարակուսանաց: Վասն այն ոչ
լինի պէտ մարմնական կերակրոյն. այլ կերակուր նոցա է հոգեւոր եւ
աստուածային տեսութիւնն. որ քաղցր է քան զամենայն կերակուր:
*Տասներորդ հարցումն է թէ՛ ո՞ր մարմինք մնան ի կատարածի:
Պատասխանի: Ասացեալ են վարդապետք թէ՛ երեք ազգ մարմին մնայ
յաշխարհս յետ յարութեանն: Նախ՝ վերին մարմինք երկին եւ լուսաւորք. զի
ամենեւին անապական են: Երկրորդ՝ չորս տարերքն. զի թէպէտ ըստ մասին
ապականին. այլ ըստ բոլորին ոչ. որպէս ասէ Ժողովօղն. (ազգ գայ եւ ազգ
զնայ. եւ երկիրս յաւիտեան մնայ:) Երրորդ մարդս. թէպէտ ի կողմանէ
մարմնոյն ապականացու է. բայց ի կողմանէ հոգւոյն անապական է. բայց ի
կողմանէ հոգւոյն անապական է: Իսկ այլ ամենայն մարմինք շնչաւորք եւ
անշունչք՝ տունկք եւ կենդանիք՝ ամենեքեան ապականին վասն երկու
պատճառի: Նախզի՛ ամենայն կենդանիք եւ բոյսք ստեղծան վասն
մարմնաւոր կենդանութեան մարդկան. որպէս ասէ յարարածսն. (ամենայն
զեռուն որ է կենդանի՝ ձեզ լիցի ի կերակուր իբրեւ զբանջար խոտոյ:) Իսկ
մարդիկ ի յարութեանն՝ ոչ են կարօտ կերակրոյ. զի անմահ են. վասն այն
անբան կենդանիք եւ տունկք ոչ յառնեն: Երկրորդ պատճառ. զի ասեն
իմաստունք թէ՛ տեսակ կենդանեաց երկնային մարմնոցն. իսկ ի
յարութեանն՝ խափանի շարժումն նոցա. վասն այն անբան կենդանիք եւ
տունկք խափանին: Եւ թէ ոք վկայ բերէ. (երկինք եւ երկիր անցցեն ասէ
աւետարանն եւ աստեղք անկցին. եւ լուսաւորք խաւարեացին:) Ասեն
վարդապետք թէ՛ երկինք եւ երկիր. այսինք, չորս տարերք ի կողմանէ
եութեան մնան. այլ ի կողմանէ պատահմանն անցանեն. վասն զի երկինքն

որ շարժի՝ յօդ դատաստանին դադարի եւ հաստատի յայն կարգն՝ որ նախ ստեղծաւ արեգակն յարեւելս. եւ լուսինն յարեւմուտս: որպէս ասէ Եսայի. (ոչ մտցէ քեզ արեգակն. եւ լուսինն ի քէն ոչ պակասեցի:.) Եւ չորս տարերքդ իւրաքանչիւր դադարին ի տեղի իւրեանց եւ բնաւ ոչ փոփոխին: Եւ դարձեալ՝ հուրն որ գայցէ նախ քան գյարութիւնն՝ որպէս ասէ Պետրոս. (երկինք եւ երկիր վառեցին հրով.) այնպէս սրբէ զերկիր եւ զայլ տարերս՝ զի երեսք երկրի այնպէս պայծառանան որպէս հայելի. եւ ջուրքն այնպէս պարզին իբրեւ գալթօր. եւ օդք այնպիսի պայծառանան որպէս զեթերն. եւ հուրն այնպէս փայլատակէ որպէս զլուսին. եւ լուսինն որպէս զարեգակն. եւ արեգակն եօթնապատիկ պայծառանայ: Եւ այս է պատճառն. զի յԱդամայ աշխարհս ապականեցաւ. որպէս ասէ արարածքն. (անհօծեալ լիցի երկիրն ի գործս քո:.) Վասն այն պատշաճէ՝ զի ի յարութեան մարդկայինս բնութեան՝ աշխարհս նորոգի եւ պայծառանայ. որպէս ասէ հռօմայեցւոց. (ամենայն արարածք հեծեն եւ յոգւոց հանեն մինչեւ ցայժմ. զի ազատեցին ի ծառայութենէ յազատութիւն փառաց որդւոյն Աստուծոյ:.) Իսկ այն որ ասէ. (արեգակն եւ լուսինն խաւարեցին. եւ աստեղք թօթափին.) թօթափիլ ոչ զանկանիլն ի վայր գայն ասէ, այլ զի իւրաքանչիւր մարմինք ընտրելոցն Աստուած ասցին յօթնապատիկ քան զարգակն. որպէս իթափօրակն լերինն: Եւ ինն դասուց հրեշտակաց լոյսն երկիր ծաւալին. ըստ այնմ թէ՛ (զօրութիւնք երկնից շարժեցին:.) Նաեւ համապայծառ լոյսն երրորդութեան ծածկէ զամենայն լոյս լուսաւորացդ. զայն ասէ խաւարումն արեգական եւ լուսնի աւ աստեղաց: Չոր օրինակ՝ լոյս ճրագի ծածկի ի մերձ եկեալ լուսոյ արեւու: Բեր այժմ ի վերջոյ գայն տեսցուք թէ՛ հոգիքն գնացեալ ի մէջ, ո՞չ ունին վարձս կամ տանջանս մինչ իկատարած աշխարհի: Եւ այսմ բազում պատճառ դնեն վարդապետք: Նախ այսպէս. զի ոչ վայելէ զի անկատար ինչ զվախճանական կատարումն առցէ, եթէ ոչ նախ իւր յատուկ կատարելութեամբ կատարեալ իցէ: Իսկ հոգին ի մարմնոյն բաժանեալ՝ տակաւին ոչ է կատարեալ իւր յատուկ կատարելութեամբն. ապա ուրեմն որքան բաժանեալ է ի մարմնոյն՝ ոչ կարե ունիլ զտեղի պսակացն որ է վարջին կատարումն մարդոյն: Երկրորդ՝ զի ամենայն ներգործութիւնք՝ ենթակայից են. եւ կամ անձանց. իսկ հոգի բաժանեալ ի մարմնոյ՝ ոչ անձն է եւ ոչ ենթակայ. ուստի ոչ պատկանի հոգւոյն բաժանեալ ի մարմնոյն ունիլ ներգործութիւն ինչ: Ապա ուրեմն ոչ ունի վարձս պսակացն որ ներգործութիւն ինչ է. այլ յորժամ հոգին միաւորեալ իցէ առ մարմինն, եւ յերկոցունց անձն լիցի, յայնժամ կարե ներգործութեամբ ունիլ զփառս եւ զպսակս: Չի վարձ ոչ պարգեւի, եթէ ոչ միայն առ անձն ներգործողին: Երրորդ՝ զի դրեալ է ի Մատթեոսն թէ՛ (սմանէ է արքայութիւնն երկնից առն տանուտեառն. որ ել ընդ առաւօտս ի վարձու ունիլ զմշակս:.) Զանզի տանուտեր զԱստուած կոչէ. եւ այգի զեկեղեցի. յոր առաքեաց Աստուած զմշակս ընդ առաւօտս յԱբելէ առաջին արդարոյ, մինչ ի կատարած աշխարհի: Ոմանք բարիք գոն յեկեղեցի. (եւ իբրեւ երեկոյ եղել, ասէ Տէր այգոյն ցգաւառապետն իւր, եւ այլն:.) Գաւառապետ կոչէ զԶրիստոս. եւ երեկոյ՝ զօր դատաստանին նշանակէ. զի յայնժամ ընտրեալքն ամենայն ժողովացին. եւ զդահեկան երանութեանն առնուն: Ուստի յայտ է՝ զի որպէս դահեկանն ոչ առաւ մինչեւ ցերեկոյն. նոյնպէս վարձ ոչ լինի տուեալ մինչեւ ցօր դատաստանին: Չորրորդ՝ զի գրեալ է ի Մատթեոսն թէ՛ (որպէս այր մի

գնացեալ ի տար աշխարհ՝ կոչեաց զծառայս իւր եւ ետ լոցա եւ այլն:) Այրն այն որ ի տեր աշխարհ գնաց՝ Զրիստոս է. որ մարմնովն համբարձաւ յերկինս. զի յատկաբար տեղի մարմնոյ երկիրս է. վասն այն յաւետարաննն իբրեւ ի տար աշխարհ գնալ ասի յորժամ յերկինս ածի: Եւ զկնի ասէ. (յետ ժամանկաց՝ եկեսցէ տեր ծառայիցն հատուցանել վարձս բարեգործողացն. եւ դատապարտել զհեղգսն: Ուստի յայտ է՝ զի հատուցումն յաւիտենական՝ ոչ տացի բարեացն մինչեւ ի գալն Զրիստոսի ի դատաստան: Եւ այսպէս հոգիք սրբոցն այժմ ոչ առնուն ըստ գործոց հատուցումն: Հինգերորդ՝ զի գրեալ է ի Մատթէոսն թէ՛ (Նման է արքայութիւնն Աստուծոյ առն, որ սերմանեաց սերմն բարի յագարակի իւրում:) Սերմն բարի են արք սուրբք ընտրեալք յԱստուծոյ. զոր Աստուած սերմանեաց ի յագարակ եկեղեցւոյ. իսկ որումն են արք չարք եւ անպիտանք: Եւ դժարակտրելի է զչարին արմատ եւ խլել առանց վնասելոյ բարեացն: Նմին իւր Տէրն հրամայեաց ծառայիցն. (թոյլ տուք երկոցունցն ածիլ մինչեւ ի ժամանակ հնձոցն. եւ յայն ժամ զորում քաղել առ ի յայրել. եւ զցորեանն ժողովել ի շտեմարանս.) այսինքն զմեղաւորս տանջել ի յաւիտենական հուրն. եւ զարդարս ժողովել ի յաւիտենական կեանս: Ապա ուրեմն ընտրեալքն մինչ ի դատաստանն ոչ ունին կեանս յաւիտենական: Վեցերորդ՝ զի ասէ առաքեալն յարկորդ կորնթացւոց. (մեզ ամենեցուն յանդիման լինիլ կայ առաջի ատենին Զրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր ոչ իւրով մարմնովն զոր ինչ գործեաց. եթէ բարի, եւ եթէ չար:) Իբրու թէ ասել. յայնժամ ընկալցի իւրաքանչիւր ոք ըստ գործոց իւրոց վարձս. ապա ուրեմն հոգիք սրբոցն ոչ առնուն փառս նախ քան զյարութիւնն: Վասն այն դարձեալ ի Նոյն գլուխն ասէ թէ՛ (ընդ այս տաղտկամք. զի զբնակութիւնս երկնից փափեգիմք զգնուլ.) այսինքն, զերանելի մարմինն. զի հոգւով եւս երանելի լիցուք. զի ոչ կարեմք հոգւով երանելի լինիլ, եթէ ոչ զի մարմնով երանելի լիցուք: Եօթներորդ՝ զի ասէ առաքեալն յեբրայեցւոց թէ՛ (սոքա ամենեքեան վկայեալք ի հաւատոցն՝ չեւ եւս ընկալեալ զաւետիսն. Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ՝ զի մի առանց մեր կատարեսցին:) Ութներորդ՝ զի ասէ ի Յօհաննու աւետարանն թէ՛ (երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի. դարձեալ գամ եւ առնում ձեզ առիս:) Վարստին գալն Զրիստոսի լինի եւ ապա սրբոցն տանիլն առ ինքն: Ապա ուրեմն Զրիստոս զսուրբն ոչ տանի առ ինքն մինչ ի դատաստանին օրն: Իններորդ՝ զի ասէ աւետարանն Մատթէոս: (Նման է արքայութիւնն երկնից առն թագաւորի՝ որ արար հարսանիս որդւոյ իւրոյ. եւ ժողովեաց զամենաեսեան զչարս եւ զբարիս. եւ լցան հարսանիքն բազմականօք եւ այլն:) Արդ՝ փեսայն Զրիստոս է. եւ հարսն հաւատացեալ ժողովուրդք: Արդ՝ այժմ ի մկրտութիւնն հաւատն դնի նշան հարսին. եւ յատ մահու՝ յուսով կոչի ի հարսանիս. եւ յետ յարութեան՝ սիրով միաւորին ընդ փեսային. ապա ուրեմն ի գալ փեսային լինի պսակ եւ հարսանիսս այս հոգեւորապէս: Տասներորդ՝ ասէ աւետարանն Մատթէոս. (ո՞վ իցէ հաւատարիմ եւ իմաստուն ծառայ՝ զոր կացոյց Տէր իւր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ լոցա կերակուր. զոր եկեալ յետոյ Տէրն գտանիցէ արարեալ այնպէս: Երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ կտրեսցէ:) Նոյնպէս եւ յառակսն որ զքանքարն ետ եւ զմնասն՝ յետոյ եկն եւ արար ինդիր: Այս է՝ ի միւսանգամ գալուստն որք զարծած բանին շահեցուցին, տայ զփառս եւ զմուտն ուրախութեան. եւ որք ոչ, նոյնպէս զտանջաս: Մետասաներորդ՝ յառակս

տասն կուսանացն ասէ (հինգ յիմար եւ հինգ իմաստուն.) այսինքն, արդարք եւ մեղաւորք հինգ հինգ զգայութեամբ: (Նիրպեցին ամենեքեան եւ ի քուն մտին.) զքուն մահուն ասէ մինչ ի կատարած: Եւ ի մէջ գիշերի յարութեանն աւուր՝ յարեալ ամենայն կուսանքն եւ կազմեցին զլապտերս. եւ յայնմաւուր իմաստունքն մտին յառազաստ փեսային. եւ յիմարքն արտաքոյ մնացին: Երկոտասաներորդ՝ ի նոյն գլուխն ասէ. (յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք հօր իւրոյ, յայնժամ նստի յաթոռ փառաց.) զդատողական աթոռն ասէ. (եւ յայնժամ կացուցէ զօրդիսն յաջմէ. եւ զայծիսն ի ձախմէ.) այսինքն է, բաժանեսցէ զարդարս եւ զմեղաւորս: Եւ արդարոցն ասիցէ. (եկայք օրինեալք հօր իմոյ.) եւ մեղաւորացն (երթայք յինէն անիծեալք:) Ապա ուրեմն մինչ ի վերջին օրն՝ ոչ է բաժանումն արդարոց եւ մեղաւորաց: Երեքտասաներորդ՝ ասէ յաւետարանին Յօհաննու: (Դարձեալ տեսից զձեզ եւ ուրախ եղիցին սիրտք ձեր. եւ զուրախութիւնն ձեր ոչ որ հարնկիցէ ի ձեւջ:) Արդ՝ դարձեալ տեսանել՝ զմիւս անգամ գալուստն նշանակէ. որով ուրախ լիցին առանց տրտմութեան: Չորեքտասաներորդ՝ ասէ առաքեալն առ Տիմոթէոս. (կայ եւ մնայ ինձ առդարութեան պսակն՝ զոր հատուցէ Տեր յաւուր յայնմիկ արդար դատաւորն. ոչ միայն ինձ, այլեւ ամենեցուն որք սիրեցին զնա:) Հինգերորդ՝ նոյն առաքեալն Պօղոս ասէ ի գործս. (հաստատեաց օր մի՝ յորում դատելոց է զամենայն:) Ապա ուրեմն մի է օր դատաստանի եւ ոչ հանապազ:) Վեշտասաներորդ՝ ասէ Յոբ. (մարմնով իմով տեսից զԱստուած փրկիչ իմ, եւ ոչ այլօք:) Եօթներեւ տասներորդ՝ մարգարէն Դաւիթ ասէ. (քեզ սպասեն արդարքն մինչեւ հատուցես.) որպէս թէ ակն ունին եւ մնան գալստեանն Զրիստոսի եւ վարձուցն հատուցման: Ութներեւ տասներորդ՝ ասէ Յօհաննէս ի կաթողիկէն. (գիտեմք զի յորժամ նայն յայտնացի՝ տեսանելոց ենք զնա որպէս եւ էն:) Իններեւ տասներորդ՝ ասէ սուրբն Դիոնեսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն եթէ՝ (մաքրելոց հոգին հասեալ ի վախճան, յայտնի եւ մերձակայ տեսանէ զամենայն փառս եւ զպսակս, զոր ընդունելոց են նոքա ի յարութեանն աւուր:) Եւ դէն երեք պատճառ: Նախ՝ զի համընթացք են ասէ ի վաստակն. այսինքն, հոգին եւ մարմինն. ի միասին հանիգիցեն եւ պսակեցին: Երկրորդ՝ զի զուգագրեալք են ի գիրն յաւիտենից ի միասին ժամանեսցեն: Երրորդ՝ հոգին եւ մարմինն զոյգ եւ ի միասին ստեղծան եւ ծնան ի մարմնաւոր կեանս. զոյգ եւ ի միասին մտցեն ի հոգեւոր կեանս: Զսաներորդ՝ ասէ սուրբն Կիրիլ աղեքսանդրացին ի հարցունս Տիբերեայ քահանայի եթէ՝ (հատուցմունքն դատաստանին հետեւին. եւ դատաստանն դատաւորին:) Արդ՝ մինչեւ եկեալ դատաւորն՝ ոչ են հատուցմունք. ոչ արդարոցն փառք, եւ ոչ մեղաւորացն տանջանք: Այսքան բաւականացի վասն յարութեան բանի ի փառս Զրիստոսի Աստուծոյ մերոյ. Որ է օրինեալ յաւիտեանս յեւիտենից ամէն:

Յայմէ քարոզ վասն Գալստեանն Զրիստոսի. ի բան աւետարանին որ ասէ: (Զի որպէս փայլակն որ ելանէ յար՛ելից եւ եր՛ի մինչեւի մուտս արեւու. այնպէս եղիցի՝ զալուստ Որդւոյ մարդոյ:) Մատ. 24. 27: (Գլուխ. ԾԿԶ)

Չփրկականն գալուստն Զրիստոսի Աստուծոյ մերոյ՝ կրկին անգամ ասէն սուրբ գիրք եւ հոգելից վարդապետք եկեղեցւոյ: Առաջինն ծածուկ եւ ողորմութեամբ. (որպէս՝ արնծրեւ ի վերայ գեղման:) Եւ երկրորդն՝ յայտնի է

արդարութեամբ եւ հրով. ըստ այնմ, (Աստուած մեր յայտաեպես եկեաց. եւ հուր առաջի նորա բորբոքեացի:) Առաջին գալուստն շնորհաց էր եւ ողորմութեան: Երկրորդն արդարութեան եւ տանջանաց. վասն այն ասէ յաւետարանին. (որպէս փայլակն որ ելանէ յարեւելից՝ այնպէս եղիցի եւ գալուստն որդւոյն մարդոյ:) Եւ վասն չորս պատճառի փայլական նմանի գալուստն Զրիստոսի: Նախ՝ շուտով գայ ի վայր. նոյնպէս Զրիստոս ի կատարածի աւուրն շուտով ի ջանէ ի յարկնից. որպէս ասէ տեսիլն Յօհաննու. (ահաւասիկ վարձահաստոյցն գայ վաղվաղակի. եւ հատուցանէ իւրաքանչիւրոց ըստ գործոց իւրեանց:) Երկրորդ՝ որպէս փայլակն յայտնի երեւի. նոյնպէս գալուստն Զրիստոսի յայտնի լինի. որպէս ասէ սաղմոսն. (Աստուած մեր յայտնապէս եկեաց:) Երրորդ՝ որպէս փայլակն յանկարծակի ծագէ. նոյնպէս եւ գալն Զրիստոսի յանկարծակի լինի. որպէս ասէ Պօղոս ի թեսաղոնիկեցւոց. (յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն է եւ շինութիւն, յայնժամ հասցի անկարծակի նոցա սատակումն իբրեւ երկնյալոյ:) Վասն այն եւ Զրիստոս ասէ թէ՛ (որպէս էր յաւուրս Նոյի՝ ուտէին ըմպէին, մինչեւ եկն ջրհեղեղն եւ կոյս գամենեսեան. այսպէս եղիցի եւ գալուստն որդւոյ մարդոյ:) Եւ չորրորդ՝ որպէս կայծակն որ յոյժ ահագին է, եւ ոչ կարէ կալ ընդդէմ նմա, եւ ոչ թաքչիլ ի նմանէ. այսպէս ահագին է եւ գալուստն Զրիստոսի. որպէս ասէ սաղմոսն. (դու ահաւոր ես՝ եւ ո՞վ կարէ կալ առաջի քոյ. որպէս երեւեցար յերկնից:) Եւ Եսայի ասէ. (ահաւասիկ օր Տեառն անհնարին եւ լի բարկութեամբ եւ սրտմտութեամբ, առնել գտիեզերս անապատ. եւ զմեղաւորս սատակել ի նմանէ:) Վասն այն ասէ յաւետարանին: (Որպէս փայլակն որ ելանէ յարեւելից՝ այնպէս եղիցի եւ գալուստն որդւոյ մարդոյ:) *Եւ արդ՝ վասն միւսանգամ գալստեանն Զրիստոսի՝ հինգ իրս գիտելի է: Նախ թէ՛ օրն այն անգիտելի է ի մարդկանէ: Երկրորդ՝ վասն գալստեան նեռին: Երրորդ՝ վասն նշանաց գալստեանն: Չորրորդ՝ վասն ձայնին փողոյ: Զինգերորդ՝ վասն դատաստանին Զրիստոսի: Եւ զամենայն կարճ ի կարճոյ:

*Եւ նախ զառաջին գլուխն թէ՛ գալուստն Զրիստոսի եւ կատարած աշխարհի անգիտելի է մարդկան, թէ երբ լինելոց է. որպէս ասէ աւետարանն Մատթեոս թէ՛ (վասն աւուրն այնորիկ եւ ժամուն՝ ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք յարկինս:) Իսկ մարկոս ասէ. (եւ ոչ որդի բայց միայն հայր:) Այլ զբանս զայս թէ՛ ոչ որդի գիտէ. վարդապետք Բ ազգ մեկնեն: Նախզի՝ որդին յայնմ կողմանէ որ Աստուած է՝ գիտէ. այլեւ մարդկութեամբն գիտէ Զրիստոս յայնմ կողմանէ՝ որ միացեալ է ընդ բանին Աստուծոյ: Այլ ի կողմանէ մարդկութեանն ինքն ըստ ինքեան՝ ոչ գիտէ. նա ամենայն մարդ կարեր գիտել զի մարդ են: Երկրորդ մեկնութիւն ասեն. զի Զրիստոս գիտէ զօրն զայն ինքն ըստ ինքեան. այլ ոչ գիտէ վասն մեր. զի ոչ յայտնեաց առաքելոցն. եւ ոչ այլոց: Եւ թէ ոք հարցանէ թէ՛ վասն Է՞ր ոչ յայտնեաց Զրիստոս զօրն զայն: Վարդապետք ասեն վասն երեք պատճառի: Առաջին՝ զի երկիցուք եւ զգուշ կացուք եւ հանապազ ի բարեգործութիւնս. զի վարձս բազումս առցուք. զի թէ գիտեր ոք զօրն զայն՝ բազում չարիս առնէր, թէ յորժամ մերձի օրն այն՝ ապաշխարեմ. այլ այժմ երկու իր զմեզ վախեցուցանէ: Մին՝ որ զմեր մահու օրն ոչ գիտեմք. եւ մին՝ որ զԶրիստոսի գալստեան օրն. զերկուսեանս յայտնի գիտեմք որք լինելոց են. այլ ոչ դիտեմք թէ ե՞րբ լինիցին. զի պատրաստ լիցուք. որպէս ասէ Տէրն. (եւ դուք եղերուք պատրաստք՝ զի յորում ժամու ոչ կարծիցեք, գայ որդի մարդոյ:) Երկրորդ

պատճառ՝ ոչ յայտնեաց վասն անհոգութեան մարդկան. վասն զի ժամանակ առաջին գալստեանն Քրիստոսի յայտնի էր ի գիրս սուրբս. այլ մարդիկ ծուլացան եւ ոչ կարացին գիտել. որպէս նախատեաց զնոսա Քրիստոս ասելով. (կեղծաւորք՝ գերեսս երկնի եւ երկրի գիտէք փորձել. իսկ զժամանակս զայս զի ա՛րդ ոչ փորձէք:) Եւ յորժամ եկն Քրիստոս՝ ոչ ընկալան զնա. այլ նախատեցին եւ նախատանօք սպանին. վասն այն գերկրորդ գալուստն թաքոյց ի մարդկանէ՝ զի յանկարծակի հասանիցէ ի վերայ գլխոց նոցա: Այլ ոչ կամի առնել զկրկին գալուստն ծածուկ որպէս զառաջին. այլ բազում հրեշտակօք եւ փառօք. զի ամենեքեան երկիցեն ի նմանէ: Երրորդ պատճառ՝ զի թէպէտ Աստուած բազում ինչ բաշխեալ է ազգի մարդկան. այլ է ինչ որ ընդ իշխանութեամբն եդ. զի երեւեսցի թէ Աստուած է. այսինքն, զսկիզբն ստեղծման աշխարհիս եդ ընդ ձեռամբ իւրով. զի երեքն միայն ստեղծեաց եւ ոչ ոք օգնեաց նմա. ոչ ի հրեշտակաց. եւ ոչ ի մարդկանէ. այլեւ զկատարած աշխարհիս եդ ընդ իւրով իշխանութեամբն. զի ինքն միայն գիտէ. եւ ոչ ումէք յայտնեաց. որպէս ասէ Քրիստոս. (ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս զոր հայր եդ յիւրում իշխանութեանն:) Այս առաջին գլուխն: *Երկրորդ ասելի է վասն գալստեան նեռինն. զի նախ քան զգալուստն Քրիստոսի՝ նեռնն գալոց է, եւ զմարդիկ խաբելոց: Ասեն վարդապետք թէ՛ Գ կերպիւ խաբէ զմարդիկ նեռն: Առաջին՝ զի բազում պարգէս տայ մարդկան. վասն զի ամենայն գանձն ծածկեալ կախարդութեամբ՝ սատանայ նմա յայտնէ: Եւ սիրեն մարդիկ զկաշառս. վասն այն բազումք զուտով խաբին ի նմանէ: Այլեւ զաշխարհս եւ զթագաւորութիւնս բաժանէ հետեւողաց իւրոց: Երկրորդ՝ սուտ սքանչելեօք հաւանեցուցանէ զմարդիկ. քանզի ասեն վարդապետք թէ՛ նեռն ի սերմանէ առն եւ կնոջ է եւ մարդ. բայց յորովայնէ մօրն Սադայել ինամէ զնա. եւ զամենայն կախարդութիւնս ուսուցանէ նմա. որպէս ասէ Պօղոս վասն նորա թէ՛ (յայտնեսցի մարդն անօրէնութեան որդին կորստեան. որոյ գալուստն ըստ ազդեցութեանն սատանայի է ամենայն զօրութեամբ եւ նշանօք եւ արուեստիւք ստօք:) Եւ Յօհաննէս ասէ ի տեսիլն. (առնէր նշանս բազումս. եւ տայր հորոյ ի յերկնից ի յերկիր իջանել առաջի մարդկան եւ մոլորեցուցանել.) զի որպէս Քրիստոս աշակերհացն ետ զհոգին սուրբ ըստ նմանութեան հորոյ. նոյնպէս եւ Սադայել հնազանդեցելոց իւրոց տայ զոգին պիղծ ի կերպարանս հորոյ՝ զի կորուսցէ զմարդիկ: Երրորդ կերպիւ՝ խաբէ սուրբ ցուցանելով զինքն եւ ողջախոհ կեղծաւորութեամբ. եւ զսուրբ գիրս մեկնէ ծուռ. ի հրեից ծնանի իցեղէն Դանայ. եւ ասէ զինքենն թէ՛ Քրիստոս իցէ. եւ թլփատեսցի. եւ զօրէս Սովսիսի պահեսցէ. եւ հաւատասցեն ի նա հրեայք: Չորրորդ կերպիւ զի յորժամ սիրով եւ նեղութեամբ եւ տանջանօք հաւանեցուցանէ. այլ յետոյ ինքն կորնչի. զի կարճ լինի ժամանակ նորա. երեք տարի եւ կէս. որպէս ասէ Քրիստոս թէ՛ (վասն ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնքիկ.) զի Քրիստոս սատակէ զնա. եւ յայնժամ ամենայն հրեայքն հաւատան Քրիստոս: Այս վասն նեռինն: *Երրորդ գլուխն ասելի է՝ զի նախ քան զգալուստն Քրիստոսի՝ բազում նշանք յայտնելոց են. որպէս ասէ յաւետարանին. (եղիցին նշանք յարեգակն եւ ի լուսին եւ յաստեղս:) Եւ թէ որպէս նշան լինի ի լուսաւորս՝ Մատթէոս յայտնի ասէ թէ՛ (արեգակն խաւարեսցի. եւ լուսինն ոչ տացէ զլոյս իւր. եւ աստեղք յերկնից անկցին. եւ զօրութիւնք յերկնից շարժեսցին:) Խաւարումն արեգակն եւ լուսին՝ ոչ լինի ըստ կարգի բնութեան. զի թէ ըստ

բնութեանն լինէին, կարէին աստեղաբաշխք գիտել զօրն զայն, այլ լինի սքանչելեօք որպէս յաւուրս խաչելութեանն Զրիստոսի. եւ անկումն ոչ լինի ճշմարիտ աստեղացն. այլ այնոցիկ՝ որք ի գոլորշեաց երկրի երեւին: Այլ հոգեպէս պարտ է իմանալ զսանս. զի Գ ազգ մարդկան կան յեկեղեցի. վերինք. եւ միջինք. եւ ներքինք: Վերինք եւ առաջնորդք եկեղեցոց որպէս կաթուղիկոսք. եպիսկոպոսք. եւ վարդապետք: Միջինք՝ քահանայաք եւ սարկաւագունք: Եւ ներքինք՝ առ հասարակ հաւատացեալ ժողովուրդք: Արեգակն զմեծամեղսն ցուցնէ. լուսին զմիջինսն. եւ աստեղք զփոքունսն: Եւ ի ժամանակս նեռինն այնպէս ծանր լինի նեղութիւնն՝ զի արեգակն խաւարեցի. զի յառաջնորդաց եկեղեցոյ բազումք խաւարին հաւատով. եւ լուսինն ոչ տացէ զլոյս իւր. զի քահանայք ոչ առնեն քահանայութիւն. եւ սարկաւագունք ոչ քարոզեսցեն: Եւ աստեղք յերկնից անկցին. այսինքն, զի բազում ժողովուրդք անկցին ի հաւատոց. որպէս ասէ Զրիստոս թէ՛ (յարիցեն սուտ Զրիստոսք, եւ սուտ մարգարէք. եւ տացեն նշանս մեծամեծս, մինչեւ մոլորեցուցանել. թէ հնար իցէ եւ զընտրեալսն:) Այլեւ ոմանք վարդապետք ասեն թէ՛ բազում նշանք լինի զգալապէս ի տարերս. զի այնու երկիցեն եւ զարհուրեսցին մարդիկ. այսինքն, զի ծովք խռովին եւ բարձրանան քան զլերիսս. եւ դարձեալ ի տեղիս իւրեանց խորանան որք ոչ երեւին: Եւ երկիր շարժեցի ի հիմանց. եւ ամենայն կենդանիք անկղին ի խոնարի. եւ թռչունք եւ գազանք եւ անասունք ի մի վայր ժողովին եւ աղաղակեսցեն. եւ շինուածք քակտեսցին յահագին հողմոց. եւ գետ հրեղէն ելանէ. եւ ծառք արիւն կաթեսցեն. եւ ամենայն աստեղք սգաւորեսցին. եւ գերեզմանք բացցին. եւ մարդիկ շրջեսցին իբրեւ զխելագարս: Վասն այսորիկ Ղուկաս յետ այորիկ որ ասէ եղիցի նշան յարեգակն եւ ի լուսին եւ յաստեղս, ասէ, (եւ յերկրի տազնապ հեթանոսաց մարդկան ի յահեղ բարբառոյ իբրեւ ծովու եւ խռովութեան ելանելոյ ողոց մարդկան յերկիւղէ եւ կարծեաց եկելոց ի վերայ ամենայն տիեզերաց:) Եւ ապա ամենայն մարդիկ որք կենդանիք իցեն՝ մեռանիցին, եւ յառաջագոյն մեռեալքն յառինցեն: Եւ այս թէ վասն Է՞ր լինի. կրկին պատճառ ասեն վարդապետք: Նախզի՛ նոքօք մեղանչեցին, այսինքն տարերօք, եւ նոքօք տանջիցին մարդիկ ի կենդանութեան իւրեանց: Երկրորդ՝ ասէ Ոսկեբերանն թէ՛ յորժամ տանուտերն մեռանի, ամենայն ընտանիք աղաղակեն. եւս առաւել յոր ժամ զմեռեալն ի տանէն հանեն: Նոյնպէս մարդս որ է տանուտեր աշխարհի, զի ամենայն արարածք վասն մարդոյն ստեղծան, յորժամ տեսանեն ստեղծուածքս զմարդն որ է տանուտեր աշխարհիս ի տազնապ եւ ի ցաւ եւ ի մեռանիլ, դղրդեալ գոչեն եւ աղաղակեն: Եւս առաւել յորժամ առ հասարակ մեռանին մարդիկք, եւ ելեալ ի տանէս իւրեանց երթան՝ եթէ ի դժոխս, եւ եթէ յարքայութիւնն: Այս երրորդ գլուխն: *Չորրորդ ասելի է վասն փողոյն. զի ի գալստեանն Զրիստոսի՝ ամենայն մարդիկ ի դատաստան կոչին ձայնիւ փողոյ: Եւ զի ամենայն մարդ գալոց է ի դատաստան ի փոքուէ մինչեւ ցմեծամեծս. որպէս ասէ տեսիլն: (Ահաւասիկ գալոց է ընդ ամպս. եւ տեսցեն զնա ամենայն աչք. եւ նոքա որք խոցեցին զնա՝ ողբասցեն զիւքեանս ի վերայ նորա:) Այլ վարդապետք ասեն թէ՛ յաւուրն դատաստանի չորս ցեղ մարդիկ երեւին: Ոմանք ոչ լինի դատեալ. այլ դատեն զայլս եւ փրկին. որք կատարեալ արդարքն են. որպէս առաքեալքն, մարգարէքն, մարտիրոսքն, եւ այլք: Ոմանք ոչ լինին դատեալ. այլ կորնչին. որպէս անհաւատք եւ չարք. զի նոքա ի վաղուց հետէ

դատապարտեալք են. որպէս ասէ Զրիստոս թէ՛ (որ ոչ հաւատայ յորդին Աստուծոյ, արդէն իսկ դատապարտեալ է:) Ոմանք դատեալ լինին եւ փրկին. այսինքն, ճշմարիտ հաւատացեալքն որք զղջացեալք են յամենայն մեղաց իւրեանց: Ոմանք ի դատաստան մտանեն. բայց կորնչին. այսինք, հաւատացեալք որք մահու չափ մեղօք մեռանին: Եւ զի ձայնիւ փողոյ յառնեն. ասէ Զրիստոս յաւետարանին թէ՛ (առաքեսցէ զհրեշտակս իւր փողով ծեծաւ. եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց:) Եւ Պօղոս յառաջին թեսաղոնիկեցւոց ասէ թէ՛ (ինքնին Տէր հրամանաւ եւ ի ձայն հրեշտակապետի եւ ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. եւ ամենայն մեռեալք յառնեն:) Որպէս ասեն վարդապետք վասն փողոյն թէ՛ այնպէս սարսելի է, թէ ուտեմ, եւ թէ ըմպեմ, եւ զինչ եւ առնեմ, այնպէս երեւի ինձ թէ՛ փողն այն գոչէ յականջս եւ ասէ. արիք ամենայն մեռեալք. եւ տուք զհաշիւ ձերոց: Որպէս այն թագաւորն որ բնաւ ոչ ուրախանայր. բայց արդար դատաստան առնէր: Եւ հարցին ցթագաւորն թէ, ընդէ՞ր ոչ ուրախանաս. եւ նա ասէ. վաղիւն տաց պատասխանի: Եւ ի վաղիւն հրամայեաց փողահարացն փող հարկանել. եւ երկեան յոյժ: Եւ ետ բերել զեղբայրն իւր՝ եւ նստոյց զնա մերկ ի վերայ փտած աթոռոյ միոյ. եւ հոր ի ներքոյ աթոռոյն. եւ սուր կախեալ ի վերայ զլիտոյն. եւ այլ սուր յառաջուստ եւ յետուստ. եւ յաջ եւ յահեակ կուսէն: Եւ ետ բերել զուսան եւ ուրախութիւն առաջի նորա: Եւ ասէ թագաւորն. եղբայր ընդէ՞ր ոչ ուրախանաս. եւ ասէ եղբայրն. ո՞րպէս ուրախանամ ի մէջ այս չափ նեղութեանս: Եւ ասէ թագաւորն. նոյնպէս եւ ես տեսանեմ զիս ի մէջ բազում նեղութեանց. քանզի որպէս դու վախեցար ի ձայնէ փողոյն ի մոյ որ չես ինձ վնասակար. նոյնպէս եւ ես երկնչիմ ի յետին փողոյն. զի գիթուոր եւ վնասակար եմ Աստուծոյ: Եւ փտեալ աթոռն մարմինս է. եւ հորն ի ներքոյ՝ գերեզմանն. եւ սուր կախեալ ի վերայ զլիտոյ իմոյ՝ դատաստանն Աստուծոյ. եւ սուրն յառաջուստ կուսէ՛ է յիշատակ ամենայն մեղաց իմոց. եւ յետուստ կուսէ՛ յիշատակ մահուն. եւ ի յաջ կուսէ՛ զի երկնչիմ թէ ի մեծութենէ հրեշտակացն զրկիմ. եւ յահեկէ՛ թէ ընդ դիւացն տանջիմ. վասն այն ոչ կարեմ ուրախանալ: Եւ այսպէս պարտ է ամենայն մարդոյ զձայն փողոյն ի յականջս պահել. եւ ոչ ուրախանալ ի վերայ աշխարհի: Այլ թէ որպիսի իցէ փողն այն. ոմանք ասացին թէ՛ մարմնաւոր է. բայց այլք ճշմարիտ ասեն թէ հոգեւոր լինի. վասն զի ճայն հրեշտակի լինի, կամ ձայն Զրիստոսի ահագին. այլ անուն նորա փող կոչի: Չի հարկանէին վասն երեք իրաց. մին վասն խորհուրդ առնելոյ. երկու՝ վասն պատերազմի. երեք՝ վասն տօնի: Նոյնպէս ի յաւուրն դատաստանի՝ փող հարկանի. զի ամենեքեան ժողովին առ հասարակ ի խորհուրդ: Այլեւ կռիւ անդ. զի ամեանայն արարածք կռուին ընդդէմ դժմոխայնոցն, որպէս ասէ Սողոմօս ի սերեցեքն: Այլեւ լինի տօն մեծ ամենայն սրբոց: Այս չորրորդ գլուխն: *Յինգերորդ գիտելի է վասն դատաստանին. զի Յիսուս Զրիստոս դատաւորն հարցաքննին առնէ ընդ մարդկան եւ դատաստան առնէ. եւ դատապարտէ յայնմ տեղուչ ուր ինքն դատապարտեցաւ ի խաչին մերձ յերուսաղէմ: Վասն Յովել ասէ. (ժողովեցից զամենայն ազգս՝ եւ ի ջուցից զնոսա ի ձորն Յովսափաթու. եւ դատեցայց զնոսա անդ:) Իսկ ձորն Յովսափաթու է մերձ ի լեռն ձիթենեաց: Այլ Զրիստոս ոչ իջանէ ի վերայ երկիր. այլ ի վերայ երեսաց օդոյդ նստի պայծառագոյն քան զարեգակն. զի ամենեքեան տեսցեն զնա: Եւ դժոխայինք ծանրացեալ կուտին ի վերայ երկրի ի տեղի նեղ. այլ սուրբքն

թռչին յօդս առաջի Զրիստոսի. որպէս ասէ Պօղոս յառաջին թեսաղոնիկեցւոց թէ՛ (յափշտակիցուք ամպօք ընդառաջ Տեառն յօդս:) Եւ յայնժամ կատարի բանն Աննայի թէ՛ (Տէր յերկնից որոտայ. եւ ինքն դատէ զամենայն գործս երկրի որ արդար է:) Եւ աստ գիտելի է՝ զի որպէս լինի յաւուրս անձրեւայինս: Նախ որոտայ. եւ ապա կայծ կայծէ. եւ յետոյ սաստիկ անձրեւ կամ կարկուտ գայ: Այսպէս ի կատարածի աւուրն՝ վեց անգամ որոտայ ի վերայ մեղաւորացն ասելով: Նախ թէ՛ (քաղցեայ եւ ոչ ետուք ինձ ուտել:) Երկրորդ՝ (ծարաւեցայ եւ ոչ արբուցիք ինձ:) Երրորդ՝ (մերկ էի եւ ոչ զգեցուցիք զիս:) Չորրորդ՝ (օտար էի եւ ոչ ժողովեցիք զիս:) Զինգերորդ՝ (հիւանդ էի եւ ոչ տեսիք զիս:) Վեցերորդ՝ (ի բանտի էի եւ ոչ եկիք առիս:) Եւ ապա կայծ կայծէ ի վերայ լոցա բանն այն որ ասէ. (երթաք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից:) Եւ յատոյ գայ ի վերայ լոցա անձրեւ եւ կարկուտ սաստիկ տանջանացն. որպէս ասէ սաղմոսն (տեղացի ի վերայ լոցա որոգայթ հուր եւ ծծումբ. այս մրրիկ բաժին բաժակի լոցա:) Եւ որպէս վեց ամգամ որորոտայ ի վերայ մեղաւորացն. Նոյնպէս վեց անգամ կայծ կայծէ ի վերայ լոցա: Վասն զի ի բանն այն որ վճիռ հատանէ ի վերայ լոցա կայ վեց խօսք ահարկու: Առաջին որ ասէ. (երթայք յինէն:) Ոհ թէ որպէս դժուարին իցէ խօսքս այս վասն մեղաւորացն յորժամ վարէ զնոսա յերեսաց իւրոց: Այլ թէ արտաքսեր զնոսա յերեսաց իւրոց օրհնութեամբ՝ կայր ինչ հնար: Այլ երկրորդ կայծակն է՝ զի անիծանէ զնոսա ասելով. (անիծեալք:) Եւ թեպէտ հաներ զնոսա յերեսաց իւրոց. բայց առաքեր զնոսա ի հանգիստ ինչ, ոչ լինէր յոյժ վտանգ: Այլ երրորդն է որ ասէ. (ի հուրն:) Այլ թէ ուներ հուրն այն վախճան՝ կայր ինչ հնար: Այլ չորրորդ է որ ասէ. (յաւիտենական:) Եւ թէ յայն տանջանսն լինէր ընկեր բարի, կայր ինչ մխիթարութիւն. այլ սատանայ է ընկեր: Զանգի հինգերորդ բանն է որ ասէ. (որ պատրաստեալ է սատանայի:) Եւ թէ մին լինէր չար ընկեր, բաական էր. այլ դէք: Զանգի ասէ վեցերորդն թէ՛ (եւ հրեշտակաց Նորա:) Եւ յորժամ զայս ամենայն կայծէ, յայնժամ երեք ցեղ անձրեւ տեղացէ ի վերայ լոցա: Առաջին՝ որոգայթ: Երկրորդ՝ հուր: Երրորդ՝ ծծումբ: Եւ այս ոչ է Նոյնպէս բովանդակ տանջանքն. այլ մասն ինչ. քանզի ասէ. (այս մրրիկ բաժին բաժակի լոցա:) Յորոց փրկեսցէ զմեզ եւ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ մարդասեր եւ Փրկիչն մեր Զրիստոս Աստուած ի հրոյն յաւիտենից. եւ ի տանջանացն անվախճանից. եւ նմա փառք եւ գոհութիւն յաւի:

Այլ քարոզ վասն Գալստեանն Զրիստոսի. ի Նոյն բանն: (Չի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ ի մուտս արեւու. այնպէս եղիցի՝ գալուստն որդւոյ մարդոյ:) Մատ. 24. 27: (Գլուխ. ԾԿԷ)

Վարդապետք ասեն թէ՛ գալն Զրիստոսի ի դատաստան՝ երկու ազգ է: Առաջին է՝ յորժամ գայ ի յօր մահուն մարդկան վասն առանձին դատաստանի: Երկրորդ՝ յորժամ գայ ի կատարածի աւուրն վասն առ հասարակ դատաստանի: Վասն առաջին գալստեանն՝ ասէ տեսիլն. (յիշեա ուստի անկարն. եւ ապաշխարեա. եւ զառաջին գործս քո արա. ապա թէ ոչ գամ ես եւ շարժեցիք զաշտարակն քո ի տեղւոջէ իւրմէ, եթէ ոչ ապաշխարսցես:) Չի հաւատացեալ մարդն յորժամ անկանի ի մեղս եւ ոչ զղջանայ, յայնժամ Զրիստոս գայ ի յօր մահուն. եւ զաշտարակն որ է

ամենայն բարի գործն, բառնայ ի նմանէ. ապա թէ դարձեալ զղջանայ, ամենայն բարի գործն նորա մնայ առ նա: Եւ վասն այս գալստեանս՝ ասէ Քրիստոս վասն ընտրելոցն. (Ես երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի: դարձեալ գամ եւ առնում զձեզ առիս:) Այլ այս առանձին դատաստանս՝ թէ սրբոցն է եւ թէ չարացն՝ երեք կերպիւ անկատար է: Նախ զի՝ յօր մահուն ոչ լինի տուեալ վարձ սրբոցն. եւ ոչ տանջանս չարացն. զի զայս ի յարութեանն առնուն հոգւով եւ մարմնով. որք ի միասին գործեցին զբարի կամ զչար. այլ հոգիք սրբոցն՝ ունին զփառս իւրեանց յուսով. եւ ուրախացեալք են ի բարի գործս: Նոյնպէս եւ չարացն հոգիք՝ տանջին յերկիւղէ հրոյն. այլեւ չարչարին ի գործոց իւրեանց: Երկրորդ՝ զի այս առանձին դատաստանս ի ծածուկ է. զի թէպէտ հոգին որ ելանէ՝ ի նմին ժամու գիտէ թէ ի կորուսելոցն է, թէ ի փրկելոցն. այլ ամենայն մարդիկ ոչ գիտեն: Նաեւ ոչ գիտեն զայն թէ չարքն վասն որ մեղաց կորնչին. եւ սուրբքն վասն որ արդարութեան փրկին: Երրորդ՝ զի թէպէտ ի յօր մահուն բաժանին ի միմեանց սուրբքն եւ չարքն մին մին. այլ ոչ միանգամայն ամենեքեան: Վասն այնորիկ հասարակ դատաստանն որ լինելոց է՝ հարկ է որ զայս երեք թերութիւնս լնու: Առաջին՝ զի սուրբքն հոգւով եւ մարմնով զփառսն ժառանգեն. եւ չարքն հոգւով եւ մարմնով զտանջանս յաւիտենից առնուն: Երկրորդ՝ պակասութիւնն լնանի՝ որք ամենեքեան առ հասարակ գիտացեն զփրկութիւնն ընտրելոցն, եւ զկորուստ չարացն. նոյնպէս եւ զայն թէ վասն է՞ր ոմանք փրկեցան եւ այլքն կորեան: Երրորդ՝ զի սուրբն եւ չարքն միանգամայն բաժանին ի միմեանց. սուրբքն ի յերկինս ելցեն. եւ չարքն ի դժոխոս իջցեն. վասն այն հասարակ դատաստանն յոյժ ահագին լինի: Վասն այն Քրիստոս զգալուստն իւր՝ փայլական նմանեցուցանէ. որ յոյժ ահագին է. քանզի ասէ: (զի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ ի մուտս արեւու. այնպէս եղիցի եւ զալուստն որդւոյ մարդոյ:)

Եւ փայլակն Գ յատկութիւն ունի: Նախզի՝ փայլուն է եւ լուսաւոր. այսպէս եւ զալուստն Քրիստոսի լուսաւոր լինի. որպէս ասէ առաքեալն Պօղոս. (մինչ եկեսցէ Տէր՝ որ լուսաւորեսցէ զգաղտնիս խաւարի: եւ յայտնեսցէ զխորհուրդս սրտից:) Երկրորդ՝ զի փայլակն զկակուղն թողու. եւ զպինտն այրէ. որպէս ասեն՝ զթուրն այրէ. եւ զփայտն ոչ. եւ զարծաթն ի մէջ քսակին հալէ. եւ զքսակն ոչ: Նոյնպէս զալուստն Քրիստոսի զքարասիրտն այրէ. եւ զխոնարհն ոչ. որպէս ասէ Սողոմօն. (Տէր ամբարտաւանից հակառակ կայ. տայ շնորհս խոնարհաց:) Երրորդ՝ փայլակն յորժամ հարկանէ, զամենայն ինչ յերկուս բաժանէ: Սոյնպէս Քրիստոս զմարդիկ ի գալստեան իւրում յերկուս բաժանէ. զարդարս ի յաջմէ՝ եւ զմեղաւորս ի ձախմէ. որպէս ասէ յաւետարանին թէ՝ (յորժամ նստի որդի մարդոյ ի յաթոռ փառաց, յայնժամ մեկնէ զնոսա ի միմեանց. որպէս հովիւ մի որ մեկնեսցէ զօղիսն ի յայծեաց: Վասն այն ասէ թէ՝ (որպէս փայլակն որ ելանէ յարեւելից. այնպէս եղիցի եւ զալուստն որդւոյն մարդոյ:) *Եւ արդ՝ վասն աւուրն դատաստանի՝ հինգ բան ասելի է: Նախ՝ վասն մատնողացն յայնմաւուր: Երկրորդ՝ վասն վկայեցիցն դատաստանին: Երրորդ՝ վասն վերջին հրոյ կատարածին: Չորրորդ՝ վասն դատաւորին Քրիստոսի: Հինգերորդ՝ վասն նեղութեան աւուրն դատաստանի: *Եւ նախ առաջին վասն մատնողացն մեղաւորաց: Չի ասեն վարդապետք թէ՝ ի վեց կողմանէ լինին մատնողք մեղաւորաց: Առաջին՝ մեղքն մատնէ զմեղաւորս. որպէս գող որ զգողութիւնն

ի շալակն ունի՝ մատնէ զինքն գող է. նոյնպէս մեղաւորն զմեղս ի շալակն ունի. զի կարէ այժմ ի վայր ձգել զմեղս իւր ոչ եւ ոչ կամի. յայն ժամ թէ կամենայ ձգել զմեղս, ոչ կարէ. այլ երթայ զհետ նորա: Եւ որպէս սուերն երթայ զհետ մարդոյն եւ ցուցանէ զնա. նոյնպէս եւ մեղք իւրաքանչիւր մարդոյ՝ զինքն ցուցանէ. եւ վկայէ թէ մեղաւոր է: Երկրորդ՝ մատնօղք են դելքն. զի որպէս գողք զգողակիցս մատնեն. նոյնպէս սատանայք մատնեն զմեղաւորս. զի ոչ ինչ մեղք լինի յաշխարհս, որ սատանայ կցորդ չէ եղեալ: Եւ այսպէս ասէ սատանայ առաջի Աստուծոյ թէ՛ մարդս այս յորժամ մկրտէին՝ ասաց երդմամբ թէ՛ հրադարիմ ի սատանայէ եւ ի գնացից նորա, եւ ի խաբէութեանց նորա. եւ սուտ ասաց. զի զքեզ թողեալ է եւ յիս դիմեալ. եւ յայն օրն մեծ ամօթ բերեն Զրիստոսի մեղաւորք. զի ասէ սատանայ առ Զրիստոս թէ՛ դու զմարդն ստեղծեր ի հողոյ. եւ զամենայն աշխարհս նմա ետուր ի ժառանգութիւն. եւ ի վերայ այօր՝ ի խաչելէր վասն նոցա եւ փրկեցեր: Նոքա զայս ամենայն երախտիսս քո մոռացան՝ եւ զհետ ինձ եկին, որ չեմ ստեղծեալ զնոսա. եւ ոչ աշխարհի բարութիւն տուեալ՝ եւ ոչ եմ խաչեալ վասն նոցա: Ասէ Ոսկէբերանն թէ՛ լաւ է որ ես ի դժոխս տանջիմ, քան այնպէս ամօթ բերեմ Զրիստոսի: Երրորդ՝ մատնօղք են մեղաւորաց նոքա՝ որք զչար օրինակն առին ի նոցանէ եւ ասեն՝ նոքա ուսուցին մեզ. որպէս ասեն յաշակս թէ՛ մանուկ մի առներ գողութիւն սակաւ. եւ հայրն ոչ խրատեր. այլ ի յինքն առնոյր զգողունսն. եւ նա վստահացեալ եղել անուանի գող. եւ յորժամ կալան եւ տարան ի չանկալ ձգել, ասէ ցհայրն՝ եկ համբուրեցից զքեզ, եւ եխած ատամամբն զքիթ հօրն եւ կտրեաց, եւ յորժամ սաստեցին նմա, ասաց թէ՛ դա ուսոյց զին գող լինիլ. զի ոչ խրատեաց զիս. եւ կալեալ զհայրն եւս կախեցին: Այսպէս դատապարտին ամենայն մարդիկ որ այլոց չար օրինակ լինին: Եւս առաւել առաջնոցք՝ որք հարք են ժողովրդեանն. եւ ոչ խրատեն զմեղաւորս եւ զկաշառակերս՝ եւ զշահակերս եւ զարբեցօղս եւ զայլ մեղաւորս. այլ առնուն ի նոցանէ կաշառս. եւ թողուն ի մեղս իւրեանց. եւ նոքա եւս տանջին. որպէս ասէ հռօմայեցւոց. (ոչ միայն որք զայն առնեն, այլեւ որք կամակից լինին գործելեացն:) Չորրորդ՝ մատնիչք վատ քրիստոնէիցն՝ լինին անհաւատքն. որպէս ասէ Զրիստոս յաւետարանին թէ՛ (արք նինւեացիք յարիցեն ի դատաստանի. եւ դատապարտեցեն զնոսա. զի զոչացան ի քարոզութեանն յովանու:) Չի ասեն անհաւատքն. թէ ծանուցեալ էաք զԶրիստոս՝ հաւատացեալ էաք. իսկ սոքա որք ունին զԶրիստոս եւ զբազում վարդապետս՝ ոչ ապաշխարեցին: Զինգերորդ՝ մատնիչք մեղաւորաց եւ մեղատանց՝ լինին գանձք եւ մեծութիւնք նոցա. որպէս ասէ Յակոբոս իկաթուղիկէն: (Այսպուհետեւ մեծատունք՝ լացեք եւ ողբացեք զթշառութիւն ձեր որ գալոց է ձեզ. մեծութիւնդ ձեր ոչ ինչ. եւ հանդերձ ձեր կերակուր ցեցոյ. արծաթ եւ ոսկի ձեր ժանկահար. եւ ժանկ նոցա լիցի ձեզ ի վկայութիւն. եւ կերիցէ զմարմինս ձեր յաւուրն յետնում:) Վասն զի զմեծատունս վերակացու եդ Աստուած իւր գանձուցն. զի իսկամ տարցեն աղքատացն. եւ զինչս իւրեանց ի հոգեւորն մսխեն: Բայց յորժամ պահեն եւ ոչ տան աղքատաց, նոքին մատնեն թէ՛ պահեաց զմեզ ազահութեամբ, կամօք, եւ ոչ ետ աղքատաց: Վեցերորդ՝ մատնօղք լինին երկինք եւ չորս տարերքն. որք երեք ազգ ձայնիւ խրատեն զմարդիկ ասելով: Առ ի քեզ. եւ տուր. եւ փախիր. այսինքն, առ ի մենջ զծառայութիւնս մեր. եւ դու ծառայեա Աստուծոյ. եւ թէ ոչ առնեն այսպէս,

փախիր ի տանջանաց դժոխոցն. զի մատնելոց եմք զքեզ: Առաջին ձայնն որ ասէ առ՝ Է ծառայական. զի ծառայեն մարդոյ չորս տարերքս: Երկրորդն որ ասէ տուր՝ Է խրատական: Իսկ երրորդն որ ասէ փախիր՝ Է երկիւղական: Երկինքն ասէ՝ Ես ծառայեմ քեզ լոյս տալով, զի գործ էիր. Եւ գիշեր, զի հանգչէիր. Եւ շրջէի զերեք եղանակս, զի մի ձանձրասցիս. Եւ արեւ, Եւ անձրեւ. Եւ ձիւն տեղայի յերկիր: Կրակն ասէ. Եւ զքեզ ջերմացուցանէի. Եւ զամենայն կերակուրս քո եփէի. Եւ զայլ ամենայն սպասաւորութիւնս որ հրովն լինի: Օղն ասէ. Ես առելտուր շնչոյ տամ քեզ. Եւ թռչունք ի վարայ իմ թռչին: Եւ ջուրն ասէ. Ես սրբեմ զքեզ. Եւ տանիմ զծարաւս քո. Եւ այլ բազում բարութիւնս առնեմ: Եւ հողն ասէ. Ես ունիմ զքեզ ի վերայ իմ. Եւ սնուցանեմ զքեզ ամենայն բուսօք Եւ ամենայն պտղօք որ յիս են: Երկրորդ ձայնն խրատական՝ խրատ տայ մարդկան Եւ ասէ թէ՝ Ես ծառայեմ քեզ. զի վասն քո ստեղծայ. Եւ յոյնպէս Եւ դու վասն Աստուծոյ քո ստեղծայ. Եւ յոյնպէս Եւ դու վասն Աստուծոյ ստեղծար. որպէս առնուս յինքեն ծառայութիւն. տուր Եւ Աստուծոյ. զի մի լիցի այն որ ստեղծ զիս վասն քոյ, տանջեսցէ զքեզ ինեւ: Երրորդ ձայնն որ ասէ փախիր՝ յոյժ ահարկու է. զի ասէ երկինքն թէ՝ ծառայութիւն ընկալար. Եւ ծառայութիւն ոչ արարեր Աստուծոյ. փախիր՝ զի Ես հրոյ տամ զքեզ կայծակամբ: Դուրն ասէ. Ես զքեզ այրեմ: Օղն ասէ. Ես կարկուտ Եւ ցատումն դրկեմ ի վերայ քոյ: Ջուրն թէ՝ Ես խեղդեմ զքեզ: Երկիրն թէ՝ Ես կլանեմ զքեզ: Իսկ դժոխքն ասէ. թէ ամենեքեան հալածեն զքեզ, Եւ առիս. Եւ ընկալայց զքեզ: Այս առաջին գլուխն է վասն մատնողաց մեղաւորաց: *Երկրորդն ասելի է վասն վկայիցն դատաստանին: Չի յայնմ դատաստանի՝ երեք ճշմարիտ վկայք լինին ընդդէմ մեղաւորին՝ որք ոչ երբէք ասեն սուտ: Մին վկայն ի վերուստ Աստուած. Եւ երկուսն ի ներքուստ խղճմտանքն. Եւ երրորդ յարտաքուստ հրեշտակն: Առաջին ճշմարիտ վկայէ Յիսուս Զրիստոս. որ է ճշմարիտ Աստուած Եւ դատաւոր. Եւ վկայէ յայնմ աւուր, յորժամ նստի յաթոռ փառաց իւրոց: Յայնժամ երեւին ամենայն գործիք չարչարանացն Զրիստոսի. Խաչն. Բելեռքն. Գեղարդն. Եղեգն. Փշոց պսակն. Զացախն. Եւ Լեղին: Չի խաչն փայտեղէն յոր Զրիստոս ի վերայ խաչեցաւ՝ ի լուսոյ կազմեալ երեւեսցի. Եւ զամենայն բարիս որ արարեալ է մեղաւորացն՝ յիշէ Եւ երախտէ Լոցա. Եւ զհինգ խոցուածս ձեռաց Եւ ոտաից Եւ կողին ցուցանէ Լոցա Եւ ասէ. ով մեղաւորք անգոհք Եւ երախտամոռացք. Ես ստեղծի զձեզ ի պատկեր իմ. Եւ վասն ձեր մեռայ. Եւ գնեցի զձեզ արեամբ իմով. զի վասն ձեր խաչեցայ Եւ բելեռեցայ. Եւ քացախ Եւ լեղի արբի. Եւ գեղարդեալեմք խոցեցայ. Եւ զձեզ առաւել սիրեցի քան զիս՝ զի վասն ձեր մեռայ: Ո՞ր է ծառայութիւնն իմ. ո՞ր է պտուղ չարչարացն իմոց. զիս խոտան համարեցայք քան զհող Եւ զմոխիր. զի ամենայն մեծութիւն աշխարհիս հող է. Եւ զիս խոտան համարեցայք քան զամենայն մեղս. զի վասն սիրոյ մեղացն մոռացայք զիս: Յայնժամ սուգ առնուն ամենայն մեղաւորք. սուգ առցեն հրեայքն. զի տեսցեն կենդանի Եւ կենդանարար զայն՝ ինքեանք սպանին. Եւ տեսցեն զխոցուածն զոր ոչ կարեն ուրանալ: Սուգ առնուն կռապաշտք. զի փոխանակ Աստուծոյ՝ կռոցն եկրպագեցին: Սուգ առնուն հերձուածօք՝ որք զեկեղեցիս ամբոխեցին: Սուգ առնուն սուտ քրիտոնեայք՝ որք անւամբ միայն են Եւ ոչ գործով: Սուգ առնուն ամենայն անհաւատք՝ որք ի Զրիստոս ոչ հաւատացին. որպէս գրեալ է յաւետարանին: (Եւ ապա երեւեսցն նշան որդւոյ մարդոյ յերկինս. այսինքն խաչն. Եւ յայնժամ

կոծեցին ամենայն ազգք երկրի. եւ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք:) Երկրորդ՝ ճշմարիտ վկայ խղճմտանք մարդոյն. որպէս ասէ Պօղոս ի հռօմայեցւոց. (վկայութեամբ մտաց իւրեանց. եւ յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեաց. կամ թէ պատասխանի իսկ տալ յաւուրն դատաստանի, յորում դատեսցէ Աստուած զգաղտնիս մարդկան:) Եւ Դանիէլ ասէ. (գետք հրոյ յորդեալ եւլաներ առաջի նորա. յատեան նստաւ. եւ դպրութիւնք բացան.) այսինքն, ծածկեալ խղճմտանք մարդկան բացան: Վասն զի իւրաքանչիւր ոք զամենայն մեղս իւր ի միտ ածէ. եւ մեղք ամենայն մարդոյ՝ յայտնին առաջի ամենեցուն. եւ Յօհաննու տեսիլն ասէ թէ՛ (տեսի զմեռեալս մեծամեծս եւ փոքունս՝ որք կային զաթոռովն. եւ գիրք բանէին: Եւ այլ գիր բացաւ որ էր գիր կենաց. եւ մեռելոցն. դատաստան եղեւ յայնցանէ՛ որ ի գիրս նոցա գրեալ էր ըստ գոծոց իւրաքանչիւրոց:) Այս գիրքս՝ երեկու ազգ յայտնի. մինն հասարակ: Առանձին գիրքն բազում. եւ հասարակն մին: Վարդապետք ասեն թէ՛ գիրքս այս ուր ամենայն գործք մարդկան չար եւ բարի գրեալ է՝ ոչ է մարմնաւոր. զի թէ մարմնաւոր էր՝ անչափ մեծ լինէր. եւ թէ մարմնապէս ընթեռնութիւնն զամենայն գործս մարդկան, երկար ժամանակի կարօտանայր. այլ գիրքս այս՝ հոգեւորք են. գիրք բազումք են խիղճք մտաց իւրաքանչիւր մարդոյ: Եւ մին գիր կենաց է Յիսուս Քրիստոս ամենայն գործք մարդկան գրեալ են ի նմա. զի գիտութիւնն Քրիստոսի գիտէ զամենայն գործս մարդկան զբարիս եւ զչարս: Վասն այն Քրիստոս ի գիրս իւր ի մին ըստեն ընթեռնու զամենայն գործս մարդկան: Եւ ի Քրիստոսի զօրութենէն՝ ամենեքեան ընթեռնուն ի գիրս իւրեանց զգործս իւրեանց. այսինքն, շուտով իմանան զամենայն գործս ի խիղճմտաց իւրեանց. վասն այն փութով լինի դատաստանն Աստուծոյ: Երրորդ՝ ճշմարիտ վկայ է պահապան հրեշտակն՝ որ ընկեր է լեալ մարդոյն. եւ վկայ ամենայն գործոց նորա. որպէս ասեն վարդապետք. մի գործեր մեղս յանկիւնս, կամ ի հրապարակս. զի հրեշտակն քո մօտ է եւ տեսանէ: Այս երկու գլուխն վասն վկայիցն դատաստանին: *Երրորդ գիտելի է վասն վերջին հրոյն կատարածի: Չի նախ քան զդատաստանն՝ հուր մեծ եւ սաստիկ վառի. որպէս ասէ սաղմոսն. (հուր առաջի նորա բորբոքեցի. եւ շուրջ զնովաւ մրրիկ յոյժ: Կոչեաց զերկինս ի վարուստ. եւ զերկիր ի դատել զժողովուրդ իւր:) Վարդապետք ասեն թէ՛ այն հուրն ընդ ամենայն երկիր սփռի եւ բարձրանայ ի վերայ բարձրագոյն լերանց հնգետասան կանգուն որպէս եւ ջրհեղեղն. եւ այրէ եւ մաքրէ զամենայն աղտեղութիւն աշխարհիս: Նախ՝ զորս ի բնութենէ աղտեղանան. որպէս չորս տարերքս վասն ընդ միմեանս խառնման: Երկրորդ՝ եւ զամենայն աղտեղութիւնս սրբէ որ ի մեղաց մարդկան. այլեւ հուրն զորս գտանէ կենդանի մարդ՝ առ ժամայն այրեալ ի մոխիր դարձուցանէ: Հուրս այս որ մաքրէ զաշխարհս՝ նախ քան զդատաստանն սկսանի. որպէս ասէ սաղմոսն. (հուր առաջի նորա բորբոքեցի. գնասցէ՛ այրեսցէ շուրջ զթշնամիս նորա:) Եւ յատ դատաստանին՝ երկու բաժին լինի: Մին բաժին՝ այեցողութիւնն, ծանրութիւնն, եւ մթութիւնն, եւ ամենայն աղտեղութիւն գոր էառ յաշխարհէս՝ որոշի եւ փաթաթի զմեղաւորօքն, եւ ընկղմէ ի դժոխս եւ տանջէ զնոսա: Եւ միւս բաժինն՝ լոյսն եւ թեթեւութիւնն՝ բարձրանայ եւ լինի ուրախութիւն եւ պսակ ընտրելոցն. որպէս ասէ սաղմոսն. (ձայն Տեառն բաժանէ զբոց ի հրոյ.) բոց զլոյսն ասէ. եւ հուր զայրելն: Եւ աւետարանն

ասէ. (որոյ հեղանոցն ի ձեռին իւրում սրբել զկալ իւր. եւ ժողովէ զցորենն յշտեմարանս. եւ զյարդն այրէ անշէջ հրով.) որ է հուրս այս տանջանք յաւիտենից: *Չորրորդ գլուխն ասելի է վասն դատաւորին Զրիստոսի. զի Յիսուս Զրիստոս յորժամ երեւի ի դատել՝ յոյժ ահարկու լինի մեղաւորացն. եւ քաղցր ի վերայ սրբոցն. ոչ թէ փոխէ զկերպարանս իւր առ նոսա Զրիստոս. այլ մի եւ նոյն կերպարանօք երեւի նոցա. որպէս թագաւորն միապէս երեւի սիրելեաց իւրոց եւ մահապարտաց. բայց սիրելեացն իբրեւ զհրեշտակ. եւ մահապարտացն իբրեւ զսատանայ. նոյնպէս եւ յայնժամ լինիցի: Եւ զի ահարկու է ի վերայ մեղաւորացն՝ ասէ տեղիլն Յոհաննու: (Աչք նորա իբրեւ զբոց հրոյ. եւ ձայն նորա իբրեւ ջուրոց բազմաց: եւ ի բերանոյ նորա սուր երկբերանեան սրեալ ելաներ:) Նոյնպէս եւ սաղմոսն ասէ: (Ապա թէ ոչ դառնայք առնու՝ զսուր իւր սրեալ է՝ եւ զաղէղն իւր լարեալ. եւ ի նմա է պատրաստեալ զանօթս մահու:) Սուր արդարութեանն Աստուծոյ այժմ թաքուցեալ է ի պատեան ողորմութեանն Աստուծոյ. բայց յայնժամ մերկացուցանէ ի պատենից ողորմութեանն. եւ ցուցանէ մեղաւորաց: Իսկ աղէղն ունի զայս յատկութիւն. զի որք են ի փայտին կողմն որ ծուռ է՝ զնոսա հարկանէ. եւ որք են ի լարին կոյսն որ ուղղորդ է՝ ոչ: Այսպէս աղէղն դատաստանին Աստուծոյ՝ հարկանէ եւ խոցէ զմեղաւորս որ ի ծուռ կողմն են. բայց զարդարսն ոչ հարկանէ որ ի յուղղորդ կողմն են. որպէս ասէ սաղմոսն թէ՝ (ապրեցուցանէ զայնսիկ՝ որք ուղիղ են սրտիւք:) Եւ աստ զհտելի է՝ զի կարէ որ ի ձեռաց երկրաւոր դատաւորացս զերծանիլ. զի հինգ կերպիւ թիւր դատաստան առնեն: Նախզի՝ երկնչին ի մեծամեծաց, յորժամ զան ի դատաստան: Երկրորդ՝ վասն ազահութեան. զի առնուն կաշառս: Երրորդ՝ վասն թշնամութեան: Չորրորդ՝ վասն սիրելեացն, որք երեսս առնեն նոցա: Հինգերորդ՝ վասն տգիտութեան. զի չգիտեն ուղիղ դատաստան առնել: Այլեւ կարէ որ փախչիլ ի դատաւորեն, յոր ժամ առ այլ որք քան զնա մեծէ ընթանայ. որպէս ի հարիւր աւագէն ի հագար աւագն երթան: Այլ Զրիստոս արդար է՝ եւ ոչ առնէ թիւր դատաստան այս հինգ կերպիւս: Նախզի՝ ոչ երրնչի յումեքէ. այլ ամենեքեան ի նմանէ եկնչին եւ դողան զի Աստուած է: Երկրորդ՝ ոչ առնու կաշառս. զի ոչ իրաց ինչ կարիք է: Երրորդ՝ եւ ոչ վասն թշնամութեան. զի զոչ ինչ ստեղծուած ատէ նա. բայց միայն զմեղաւորս զոր ինքն ոչ է ստեղծեալ: Չորրորդ՝ եւ ոչ է ստեղծեալ: Չորրորդ՝ եւ ոչ վասն սիրելութեան երեսս առնէ. զի ասէ աւետարանն թէ՝ (ոչ առնու ակն յումեքէ:) Հինգերորդ՝ եւ ոչ տգիտութեան. զի ամենագետ է. եւ իմաստութիւն է հոր Աստուծոյ: Այլեւ ոչ որք կարէ զերծանիլ ի նմանէ եւ երթալ առ մեծագոյնն որք. զի նա է թագաւոր թագաւորաց: Բայց սուր երկբերանեան ելանէ ի բերանոյ նորա. այն է զի կտրեսցէ զհոգի եւ զմարմին մեղաւորացն. եւ արկցէ ի դժոխս: Եւ ձայնն որպէս ջուր բազմաց. զի յաւուր ուրբաթուն յորժամ հեզաբարբառ ասաց. (Ես եմ, ի ձայնէ գառինն հրեայքն զգետնի հարան. յայնժամ ի դատաստանի աւուրն՝ ի ձայնէ առիւծուն յորժամ գոչէ՝ զի՞նչ լինիցին. որպէս ասէ Ամովս: (Առիւծ գոչեսցէ. ո՞վ իցէ որ ոչ սարսիցէ:) Եւ յահագին տեսութենէն՝ (ասիցեն լերանց թէ՝ անկերուք ի վերայ մեր. եւ բլոց թէ՝ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութենէ դատաւորին:) Այս չորրորդ գլուխն: *Հինգերորդն ասելի է վասն նեղութեան աւուրն դատաստանի: Նախ առաջին նեղութիւն է՝ զի երկինք եւ երկիր ի մի վայր շարժին եւ ժողովին. այսինքն, հրեշտակք եւ մարդիկ. որպէս ասէ աւետարանն. (զօրութիւնք

երկնից շարժեցին.) զի թէ յերեւիլ երկրաւոր թագաւորին: Դարձեալ՝ օրն այն մեղաւորացն նեղութիւն է յամենայն կողմանց. զի ի վերուստ կուսէ դատաւորն է բարկացեալ. ի վայր կոյս դժոխքն բացեալ զբերան իւր. ի յաջ կոյս մեղքն իւրեանց որք մատնեն զնոսա. ի ձախմէ դէքն անհամարք՝ որք քարշեն ի տանջանս. ի ներքուստ խիղճ մտացն որ այրէ զնոսա. արտաքուստ հուրն այն որ զաշխարհս այրէ: Ո՞վ մեղաւոր՝ ո՞ւր փախիցես. թաքչելոյ ոչ է հնար. եւ թէ յատնի երեւիս՝ ոչ կարես համբերել: Եւ արդ՝ ո՞ւր փախիցես. յերկի՞նս՝ ոչ. քանզի ասէ Դաւիթ. (թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես. եւ թէ իջանեմ ի դժոխս՝ եւ անդ մօտ ես:) Թէ առ հրեշտակս ապաւինիս պահել զքեզ՝ ոչ առնուն յանձն. զի այժմ պահեն. այլայլ ժամ փախչին ի մեղաւորաց: Թէ առ սուրբս ապաւինիս՝ ոչ ընդունին. զի անցեալ է ժամանակ ողորմութեան. եւ հասեալ է ժամ դատաստանի. որպէս ասէ Դաւիթ. (յորժամ ժամ առնիցեմ, զուղիղսն դատեցայց.) այսինքն, ոչ միայն զյայտնի չարսն դատեցայց. այլ զայնոսիկ որք ուղիղ երեւին առաջի մարդկան. (զի որք սուրբք են յաչս մարդկան, պիղծ են առաջի Աստուծոյ:) Որպէս ևոքա որք սաթրինճ խաղան, հերթով առնուն ի ձեռն զսաթրինճն եւ ձգեն ի թասն: Եւ որչափ խաղն միոյն է բազում ինչս տանի յընկերէն. եւ ընկերն խաղաղ նստի, մինչեւ յինքն դառնայ խաղն: Այսպէս այժմու ժամանակս մեղաւորաց է. եւ խաղն ի ձեռս ևոքա է. եւ խաղան ընդ Աստուծոյ: Եւ երեք սաթրինճ ի ձեռս՝ երեք ժամանակն է. այսինքն, անցեալն, ներկայն, եւ ապառնին: Անցեալն է որ վասն գործեցեալ մեղացն զղջանան: Ներկայս է՝ որ զբարիս գործեցեն: Ապառնին՝ որ զգուշանան ի մեղաց: Այլ մեղաւորքն այսմ հակառակ առնեն. զի զանցեալսն պատմեն եւ ուրախանան. ի ներկայս ղնեն մեղս ի վերայ մեղաց. եւ յապառնին ակն ունին երկայնակեց լինիլ եւ բազում մեղս գործել: Եւ այժմ խաղն մեղաւորաց է. եւ ճարտար խաղան. ուտելով, ըմպելով, եւ արբենալով, եւ պոռնկիւով. խլելով, եւ զրկելով. եւ Աստուած համբերէ ևոքա մինչեւ խաղն ի յինքն դառնայ յաւուրն դատաստանի. եւ յայնժամ ինքն խաղայ՝ եւ մեղաւորքն լռեն. եւ խիստ բարակ հարցանէ եւ քննէ զամենայն ժամանակս զոր բաշխեաց մեզ թէ որպէս անցուցաք. եւ յամենայն դատարկ բանի՝ համարս պահանջէ. որպէս ասէ աւետարանն թէ՝ (ընդ ամենայն դատարկ բանի՝ համար տալոց են մարդիկ յաւուրն դատաստանի.) եւ զամենայն խորհուրդս զոր մարդիկ ոչ համարին թէ մեղք է, յոյժ քննէ: Եւ որպէս խաղընկերն յորժամ յաղթէ՝ ի սպառ կողոպտէ եւ մերկացուցանէ զընկերն. այսպէս յորժամ Աստուած խաղայ եւ յաղթէ զմեղաւորս, յայնժամ կողոպտէ զնոսա յամենայն մեծութեանց աշխարհիս. ի տանց, ի զաւակաց, ի հայրենեաց եւ յամենայն իրաց: Եւ յորժամ դատաստան առնէ, ելցէ ի բերանոյ ևորա բանն այն թէ՝ (երթայք յինէն անիծեալք:) Յայնժամ ծառայք դատաւորին ոչ մնան ժամանակ ինչ. տարի մի, կամ ամիս մի, կամ օր մի. այլ ի նմին ժամու կատարեն զհարմանս դատաւորին. որպէս ասէ աւետարանն թէ՝ (սմանեցի արքայութիւնն երկնից ուռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց ժողովելոյ. որ իբրեւ լցաւ, հանեալ ի ցամաք. եւ նստեալ ժողովեցին զբարին յամենեսեան. եւ զխոտանն ի բաց ընկեցին. այնպէս եղիցի եւ ի կատարածի աշխարհի. ելցեն հրեշտակք եւ մեկնեցեն զչարս ի միջոյ. եւ արկցեն ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ եւկրճտել ատամացն:) Եւ յայսմանէ յայտնի թէ՝ ատեան ողորմութեանն Աստուծոյ քաղցր է, քան զատեան իրաւանցն: Եւ

արդ՝ զի՞նչ ունիմք այլ հևար. բայց այժմ դատեսցուք զմեզ յատեան ողորմութեանն առաջի խոստովանահօրն զղջմամբ եւ ապաշխարութեամբ. զի մի դատեալ ընդ այժիսն՝ լուիցուք գերթայքն. այլ կացցուք յաջմէ ի դասս ընտրելոցն՝ լսելով զքաղցր ձայնն թէ, (եկայք օրնեալք Յօր իմոյ.)՝ Նմա՝ Յօր Նորա՝ Յօգւոյն Սրբոյ՝ երգեսցուք զօրհնութիւնն՝ զփառս յանգրաւ յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ վասն դատաստանի աւուրն. ի բանն որ ասէ: (Չի հուր բորբոքեցաւի բարկութենէ իմմէ. այրեսցէ՝ իջցէ մինչ ի դժոխս ներքինս:) ԲՕր. 32. 22: (Գլուխ. ԾԿԸ)

Որպէս ամենակարող է Աստուած ի ստեղծանելն՝ եւ ամենողորմ ի շնորհելն՝ Նոյնպէս ճշմարիտ եւ արդար ի հատուցանելն: Չի արդարպէս բարեացն բարիս հատուցանէ. Նոյնպէս չարացն զտանջանս եւ զպատիժս արդապէս հատուցանէ: Եւ այս հատուցումնս չարաց՝ կամ աստ մարմնով է եւ ժամանակեայ, կամ անդ հոգւով եւ յաւիտենից: Չորմէ ասէ Աստուածային բերանն թէ՝ (զի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ. այրեսցէ եւ իջցէ:) *Արդ՝ Նախ եւ առաջին գիտել պարտ է՝ զի բարկութիւն ոչ է յԱստուած. եւ ոչ դառնութիւն. եւ ոչ սրտմտութիւն. այլ ամենեւին բարութիւն է Աստուած եւ քաղցրութիւն եւ ողորմութիւն: Եւ յայտ է ի բանն որ ասէ: (Յուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ:) Եւ ոչ ասէ թէ յեութենէ. եւ կամ թէ ի կամացս: Չի եութիւնն եւ կամքն Աստուծոյ՝ բարի է եւ զուտ եւ պարզ առանց իրիք խառնուածոյ. (զի ծառ բարի՝ պտուղ չար ոչ առնէ:) Այլ յորժամ բարկանայ Աստուած՝ այն է՝ զի մեք մեր գործովքս բռնութեամբ զնա բարկացուցանեմք. եւ զքաղցրութիւնն Նորա ի դառնութիւնն փոփոխեմք: Եւ զոր օրինակ՝ մեք բարի ստեղծաք ի պատկեր բարւոյն. այլ մեր կամաւս ախտացաք եւ փոփեցաք ի չարն. այն է՝ որ չինազանդեսցաք Աստուծոյ. Նոյնպէս բարի կամքն Աստուծոյ ձեւանայ եւ փոխի ի բարկութիւնն եւ ի սրտմտութիւնն եւ ի դառնութիւնն. զի այնու փոխեսցէ զմեզ ի յառաջին բարութիւնն մեր: Եւ այս բարկութիւնս ի յԱստուած ոչ է չար. զի եւ առ մեզ բարկանալն եւ ի գործ չեկեալն չէ չար. ըստ այնմ, (բարկանայք եւ մի մեղանչէք.) զի բարկանալն բանիւ է. եւ մեղանչելն սրտմտութիւնն եւ գործ բարկութեան, որ ի կատարումն ելանէ: Եւ դարձեալ՝ բարկանալն Աստուծոյ չէ չար. զի այնու զմեզ ի բարիս եւ ի յուղղութիւնս բերէ. Նաեւ սրմտիլն Աստուծոյ չէ չար. զի յորժամ մեք յամառիմք ի մեղս եւ ոչ դառնամք, յայնժամ սրտմտի Աստուած՝ եւ գործով խրատէ. զի թէ դարձեալեաք ի մեղացն՝ ոչ խրատէր: Այլ վասն երեք պատճառի պատուհասէ եւ խրատէ: Նախզի՝ մի ասիցեն թէ սասան Աստուծոյ միայն սպառնալիք է եւ ստոսկ բան. եւ արհամարհիցեն զաստուածային հրամանսն: Երկրորդ՝ պատժէ զմինն՝ զի այլքն խրատեսցին եւ զգուշացին. ըստ այնմ, (խրատեաց զնոսա եւ պահեաց զբազումս որպէս բիբական եւ այլն:) Երրորդ՝ մասնաւոր պատժէ եւ տայ զառ հաւատչեայ ճաշակն յաւիտենից տանջանացն. որպէս ասէ. (հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ:) *Երկրորդ՝ կատարեցաւ բանս Նախ ի Սողոմ եւ ի գոմոր. յորժամ տեղեաց Տէր յերկնից հուր եւ ծծումք ի նոսա, եւ այրեաց զնոսա. եւ զինչս եւ զանասունս նոցա եւ զբնակութիւնս. մինչեւ յանդունդս իջոյց զնոսա. եւ ջուր սեւ եւ անկենդան յանդնոց զնոսա ծածկեալ ի յիշատակ

չարութեան ևոցա: Եւսի՛ որպէս ևոքա ընդդէմ բնութեանս գործեցին. Եւսի՛ անձրեւն ի յերկնից հուր փոխեալ, ընդդէմ սովորութեան իւրոյ էջ ի յերկիր: Երկրորդ՝ ցուցանէ թէ՛ այնպիսեացն գործողք՝ կամ աստ տանջեսցին հրով, կամ ի հանդերձեալն այրին անշէջ հրով. զի բիւր մահու են արժանի, թէ ոչ ծանր եւ դառն ապաշխարեսցեն: Այսպէս եւ յառաջ քան զայս ի դարս Եւսի՛ ջրհեղեղաւ կորոյս զագգ մարդկան. (որք ուտէին եւ ըմպէին. կանայս ամենին եւ արանց լինէին:) Եւ զի անասնաբար խառնակէին՝ վասն որոյ ջրով հեղեղաւ կորոյս զնոսա եւ զանասունս ևոցա եւ զստացուածս. միայն Եւսի՛ ապրեալ ի տապանն, եւ սերմն աշխարհի ընդ իւր: Եւ այլքն ամենայն իսկաշ ջնջեալ: Եւ այն է պատճառն զի ևոքա զհետ գէջ ախտից հետեւեցան. գէջ ջրով սատակեցան. եւ միւսքն ընդդէմ բնութեան հրով ջերմացան. վասն այն հրով այեցան. որոց ասէ. (հուր բորբոքեցաւ ի բարկութենէ:) *Երրորդ՝ յորժամ յԵգիպտոս տանջէր փարաւօն զԺողովորդն Աստուծոյ ի խիստ կաւագործութիւն, եւ զմանկունս հեղձուցանէր. վասն որոյ վիճմնդիր եղել Աստուած. եւ ի ձեռն Մովսիսի տասն հարւածօք եհար զԵգիպտոս: Չգետն յարիւն փոփոխելով. եւ գորտիւ ապականեաց. խաւար շօշափելի. եւ մուկ եւ կեղեւանք. եւ շանաճանճ. եւ մարախ. եւ մահ անասնոց. կարկուտ եւ հուր ի մէջն. զի կարկուտն հարկանէր. եւ հուրն այրէր զամենայն ինչ: Եւ անդրանկաց սատակումն. որառաւել էր քան զամենայն հուր եւ այրեցումն: Եւ ի վերջոյ՝ ի ծովն ընկղմեցաւ փարաւօն զօրօքն իւրովք: Եւ Իսրայէլ ել յԵգիպտոսէ բարձր բազկաւ եւ հզօր ձեռամբ. ամպ հովանի ի տիւն. եւ գիշերն լոյս տայր ևոցա. եւ էանց ընդ ծովն եւ ել յանապատ. եւ փարաւօն զօրօքն ի խորս անդնդոց ընկղմեցաւ. փոխանակ մանկանցն զոր ի գետն հեղձուցին: Այսպէս հուր բարկութեանն Աստուծոյ այրեաց զնոսա ևոր եւ զանազան տանջանօք: *Չորրորդ դարձեալ՝ ի յանապատին յորժամ կորիս եւ դադար եւ Տփրօն հակառակեցան Մովսիսի եւ Ահարօնի, եւ արարին իւրեանց բուրվառ, վասն որոյ ևորա ևշան հարւածով սատակեցան. զի հուր բարկութեանն Աստուծոյ էջ ի յերկնից եւ այրեաց զկորիս եւ զերկու հարիւր յիսունսն ընդ ևմա. (եւ բացաւ երկիր եւ եկուլ զդադան եւ զաբիօն տամբ եւ ընտանեօք եւ ընչիւք ևոցա:) Եւ այն էր պատճառն. զի կորիսեանքն երկնաւոր իշխանութեանն ցանկացան. երկնային հրովն այրեցան. եւ դադանեանքն երկրաւոր իշխանութեան անարժան գուլով, ի յերկրէ պատժեցան: Այս է ասելն: (Հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ. այրեսցէ եւ իջցէ մինչ ի դժոխս ևերքինս: Չի անդ ասեն տանջեալ զհոգիսն մարմնովն իւրեանց ի տեղուջն ուր ընկղմեցան, մինչ յիջանելն Զրիստոսի ի դժոխս. եւ զնոսա անտի ազատեաց. ըստ մարգարէին որ ասէ. (հանէ զկապեալսն քաջութեամ. սոյնպէս եւ զդառնացողս որք բնակեալ են ի գերեզմանս՝ ևոցա ասէ:) Այլեւ որդիքն Ահարօնի Եւսի՛ եւ Աբիուօն՝ անարժան մտին ի խորանն օտար հրով խունկ արկանել: Եւ ել հուր ի բուրվառաց ևոցա՝ եւ այրեաց զնոսա. եւ ի զգեստ քահանայութեանն ոչ մերձեցաւ. յօրինակ այժմու քահանայից. որք անարժանութեամբ գործեն զխորհուրդս սուրբս՝ հոգիք ևոցա մեռանին ի մէջ մարմնոյն: Չայս ցուցանէ թէ՛ հրեղէնքն ի յերկնից վրէժխնդիր են քահանայից. որոց պարտ էր ևոցա ևմանիլ սրբութեամբ. եւ ապա քահանայագործել. զի ևոքա են իմանալի քահանայք բարձրելոյն: Այլեւ յորժամ էջ հուրն աստուածային ի լեռն Սինայ եւ ծխիւր ամպ եւ մեզն, եւ փայլակն եւ որոտն եւ ձայն փողոցն հարկանէր զլսելիս եւ զտեսանելիս, եւ

թէ գալան մերձենայր ի լեան քարկոծ լինէր, եւ Աստուած խօսէր եւ Մովսէս տայր պատասխանի, եւ յամելն քառասնօրեայ, չար ժողովուրդքն կուտեցան ի վերայ Ահարօնի. եւ արարին որթ եւ երկիրպագին պատկերին խոտակերի: Վասն որոյ բարկացեալ Աստուած՝ կամէր սատակել զնոսա. եւ Մովսէս անցոյց զբարկութիւնն. եւ որով սատակեաց զամենայն երկրպագուս որթուն: Եւ այսպէս զամս քառասուն բարկացուցին զՏէր. եւ սատակեաց զնոսա. ի հրայեացսն. ի փորձութիւնս. եւ ի կաղես օծիւ սատակէր. մինչ օձ պղնձի կանգնեաց Մովսէս բուժիչ հարուածոյն յօրինակ Քրիստոսի. որ բարձրացաւ ի խաչին. եւ բժշկեաց զթոյնս իմանալի օձին: Նոյնպէս ի Բելքեգովր որք կերին զգոհեալ եւ պղծեցան. եւ սատակեցան բազումք: Եւ այնչափ սուր եւ հուր բարկութեանն Աստուծոյ տեղեաց ի վերայ նոցա, մինչ սատակեաց զամենեսան որք ելին յԵգիպտոսէ, եւ գիտէին զգործս նոցա: Եւ ապա որդիք նոցա ծնեալք յանապատին, որք ոչ գիտէին զչար եւ զբարի, նոքա մտին յերկիրն պարգեւաց. յօրինակ նորոյս՝ զի որք ունին զգործս Եգիպտոսի չարութեան մեղաց, ոչ մտանեն յարքայութիւնն երկնից: Այլ անմեղք որպէս զմանուկ՝ նոքա մտանեն. ըստ Տեառն՝ որ մանուկ մի առեալ ի գիրկս ասէր. (որ ոք ոչ լինիցի իբրեւ զմնուկս զայս՝ ոչ մտանէ յարքայութիւնն երկնից:) Վասն նոցա ասէ. (հուր բորբոքեցաւ:) *Յինգերորդ՝ յաւուրս Եղիայի յորժամ անօրինեցաւ ժողովուրդն զհետ կռապաշտութեան, երեք ամ եւ վեց ամիս կապեցաւ երկինքն. զի արար ի վերայ նոցա երկին պղնձի. եւ երկիր երկաթի. զի ոչ ի երկնից անձրեւ ցողիւր. եւ ոչ երկիրս պտուղ տայր. եւ չորացաւ ամենայն բոյս երկրի. եւ ոչ մնաց արմատ դալարի. եւ սովու սատակեցաւ մարդ եւ անասուն. որպէս ասէ մարգարէն. (հուր եկեր զգեղեցկութիւն անապատի: Եւ թէ հրով դատաստանաւ եկեր զհորս բազումս.) վասն երաշտութեան եւ չորութեան ասեն: Մինչ երեւեցաւ Եղիա. եւ զերկու յիսնապետսն յիսնօքն իւրեանց այրեաց հրով: Եւ յորժամ հուր էջ ի պատարզն Եղիայի՝ զչորս հարիւր մոզսն Բահաղու կոտորեաց սրով. եւ աղօթեաց եւ էջ անձրեւ յերկնից. եւ դալարացաւ երկիր: *Վեցերորդ՝ հուր բորբոքեցաւ, յորժամ մատնեաց զնոսա ի ձեռս թագաւորին բաբիլացոց. եւ գերեաց զնոսա Նաբուգոդոնոսար. եւ ակերեց զսուրբ քաղաքն Երուսաղէմ. որք ասէին. տաճար Տեառն՝ տաճար Տեառն. իբրթէ տաճարն Աստուծոյ առ մեզ է. ոչ գոյ մեզ պատուհաս: Վասն որոյ նախ՝ ի սրբութեանցն արար զսկիզբն ակերելոյն. եւ այրեցին զքաղաքն հրով. եւ իբրեւ ի դոխս եւ ի գերեզման ի ջուցին ի Բաբիլօն: Վասն որոյ յորժամ ողորմեցաւ Աստուած եւ կամէր դարձուցանել, ասէր. (հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց:) Այսպէս եւ յամենայն ժամանակս որք անդարձ մնամք ի մեղս, բարկանայ Աստուած եւ խրատէ. ի սով, ի սուր, ի մահ, եւ ի գերութիւն. յաղքատութիւն, ի հիւանդութիւն, եւ յայլն: Չոմանս աստ տանջէ. եւ զոմանս անդ. զի բազում մեղաւորք աստ տանջին ի խրատ այլոց. զի այլքն զգուշացին. եւ բազումք առանց պատուհասի մնան. զի անդ անսպառ յաւիտենիւ տանջեսցին. ըստ այլմ, (մրուր նորա ոչ սպառեսցի. եւ արբցեն զնա ամենայն մեղաւորք երկրի:) Եւ այս է պատճառն. զի թէ աստ ոչ տանջէ, ասեն անզգամ մարդիկ. դատաւոր եւ դատաստան ոչ գոյ. ըստ որում (ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած:) Այլ թէ զամենայն չարս աստ տանջէր՝ ասէին թէ, այլ տանջանք ոչ է չարաց. այլ միայն աստ: Վասն այն զոմանս աստ տանջէ եւ թեթեւացուցանէ զպարտսն. եւ որք աստ ոչ տանջին, առաւել հատուցանի

Լոցա անդ: ըստ այնմ թե՛ (դիւրագոյն լիցի երկրին սողոմացւոց, քան քաղաքին այնմիկ.) զի Լոքա չափաւոր պատիժս կրեցին մարմնով: *Եօթներորդ՝ հուր բորբոքիլ ասէ ի վերայ սատանայի. զի Լոքա են պատճառ եւ առաջնորդ ամենայն մոլորութեան: Եւ եմուտ ի սիրելի աշակերտս Զրիստոսի. եւ արար մատնիչ. եւ ի ժողովուրդն եմուտ՝ եւ անարգանօք խաչեցին: Վասն այն յորժամ Բանն Աստուած երեւեցաւ ի յերկրի, յերեք տեղոջ այրեաց զնոսա: Նախ յորժամ հաներ զդուսն, ծածուկ եւ անմամին զօրութեամբ տանջեր եւ չարչարեր զնոսա. որք աղաղակեին (մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ:) Եւ երկրորդ՝ ի ժամ խաչին յորժամ սպասէին որպէս ամենայն հոգւոց մարդկան, հուր աստուածային ել ի զօրութենէ խաչին, եւ այրեաց զնոսա. մինչ փախստական լինէին ի դժոխս եւ ամրանային. եւ Լոյն հուր յամենայն խաչէ ցոլացեալ այրէ զնոսա: Վասն ա յն ի Նշանէ խաչին փախստական լինին. զի զէն է Զրիստոսի. եւ սատակէ զնոսա: Երրորդ՝ յորժամ Բանն Աստուած էջ բանկան հոգւովն ի դժոխս, զդրունս պղնձիս փշրեաց. եւ զնիզս երկաթիս խորատակեաց. եւ կապեաց զհզօրն. եւ ազատեաց առհասարակ զամենայն հոգիսն անտի: Եւ որպէս յեսու քակեաց զերկիքով եւ անէծ զշիւօղս Լոցա. Լոյնպէս փրկիչն մեր Յիսուս՝ քակեաց եւ աւերեաց զդժոխս. եւ անէծ որ շինէ զնա. որպէս ասէ մեղաւորաց ի դատեստանին. (երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից:) Իսկ թէ ո՞ր էր դժոխքն զոր աւերաց Զրիստոս: Ոմանք ասեն թէ՛ յանկեան եւ յեզեր ծովու ի ներքոյ ի խաւարային այրս. անդ ետդ սատանայ զաթոռն իւր. եւ անդ տաներ զհոգիսն եւ տանջեր: Չորմէ ասէ Դաւիթ. (փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց:) Եւ թէ զանմամին հոգին տեղիք ո՞րպէս արգիլէն: Ասեն վարդապետք թէ՛ յորժամ Աստուած թողու ի ձեռաց կարեն դէքն արգիլել զհոհիսն. որպէս այն որ մարմնական հուրն այրէ զանմամին հոգին: Եւ որպէս մարմինն պահի կենդանի ի յաւիտենից հուրն. Լոյնպէս եւ զհոգիսն արգելոյր ի դժոխս: Եւ ոմանք յերուսաղէմ ասեն դուռն մի խաւարչուտ այրի. եւ դիւահոտ եւ աղաղակ եւ այրեցումն դիւաց: Եւ այն եւս կարելի է Աստուծոյ, եթէ դուռն իցէ այն դժոխոց: Իսկ ի կատարածի՝ դժոխք է հուրն յաւիտենական՝ (որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց Լորա:) *Ութներորդ՝ հուր բորբոքիլ զայն ասէ՛ յորժամ չար թագաւորք եւ դատաւորք վառեցան հրով նախանձու. եւ չարչարեցին զեկեղեցի սուրբ որք են ժողովուրդք քրիստոնէից: Մինչեւ զօրացաւ հուր հոգւոյն սրբոյ այն՝ զոր Տէրն (Էարկ ի յերկիր. եւ փութայր զբորբոքումն:) Որ վառեցաւ ի բարեպաշտ թագաւորսն Տրդատես՝ եւ Կոստանդիանոս՝ եւ ի Թեոդոսեանսն եւ յայլսն: Որք այրեալ կործանեցին զպատկերս կոռցն. եւ զմեհեանս դիւաքնակս. եւ զամենայն կախարդք եւ զչար բոյսս Լոցա զոր գործեն. զի կախարդք եւ դիւքք երկիր են չար կամացն սատանայի. եւ զչար խորհուրդս Լորա յինքեանս կրեն որպէս կին զսերմն. եւ սնուցանեն եւ բուսուցանեն: Չոր աստուածային բարկութիւնն մի ըստ միոջէ հատուցանէ Լոցա. կամ աստ մարմնով, կամ անդ հոգւով: Չիթէ ներե սակաւ ժամանակս եւ մնայ դարձի՛ եւ յորժամ անդարձ կան, ապա հատուցանէ: Որպէս ասէ. (կուտեցից զչարիս ամենայն ի վերայ Լոցա.) կուտելն զներելն Նշանակէ եւ զժողովելն. որպէս զնետ ի կապարճս: Եւ ապա մի մի զնետ պատուհասի եղեալ ի յաղեղն ցասման՝ հարկանէ զնոսա: Որպէս Դաւիթ ասէ. (ապա թէ ոչ դառնայք առ նա, զսուր իւր սրեալ է. եւ զաղեղն իւր լարեալ:) Աղեղն եւ նետ է այժմու

խրատս որ ի հեռաստանէ գմասնաւորն հարու եւ խրատէ: Իսկ սուրն՝ մահն է մերձ եկեալ. եւ բոլորովին սպանանէ: Եւ այնպէս է բարկութիւնն Աստուծոյ: Չի թէ գհաշիւ մեղացն ոչ տամք խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, յայնժամ մատնիցէ ի բանտ. (ոչ ելանես ասէ Տէրն, մինչեւ հատուցանիցես գլխտին բնիոնն.) որ է վերջին կշռոյ անուն: Եւ այսպէս զի թէ մեք ոչ խոստովանիմք զմեղս եւ ապաշխարեմք, աստ մարմնով հատուցանէ որ վճարելի է տանջանքն. եւ անդ յանվճար եւ յանել բանտն յաւիտենից այրէ: *Ինկերորդ՝ հուր բորբոքիլ՝ զբարկութիւնն ասէ ի վերայ մեղաւորաց յաւուրն դատաստանի. որպէս ասէ Պօղոս. (յայտնելոց է բարկութիւնն Աստուծոյ ի վերայ անպարշտութեան եւ անօրէնութեան մարդկան. զի թէ գներելովն Աստուծոյ եւ զերկայնմտութեամբն արհամարհիցես, դարձես անձին քում բարկութիւն յաւուր արդար դատաւորութեանն Աստուծոյ:) Եւ մկրտիչն ասէր: (Ո՞ եցոյց ձեզ առանց պտղոյ ապաշխարութեան փախչիլ ի բարկութենէն Աստուոյ որ գալոցն է.) զի ոչ լեռն, եւ ոչ ձոր, եւ ոչ ծով կարէ փակել եւ թաքուցանել զմեզ ի բարկութենէն Աստուծոյ. բայց միայն ապաշխարութիւնն թափէ եւ փրկէ զմեզ: Եւ զի՞նչ իցէ բարկութիւնն՝ այն է զոր ասէ Եսայի: (Ո՞ պատմեսցէ ձեզ թէ հուր բորբոքեալ կայ. կամ ո՞ ասացէ ձեզ զտեղւոյն յաւիտենից.) որպէս թէ ասել ոչ ոք կարէ զսաստիկ բարկութիւնն. զի անասելի եւ անպատմելի է սրտմտութիւնն եւ բարկութիւնն յաւիտենից: Եւ որպէս մեծութիւն բարեացն անասելի է. (զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ եւ այլն.) զայն մեք լոյս ասեմք եւ փառք եւ արքայութիւն եւ հանգիստ եւ ա յլն. զի առ մեզ նոքա հաճելիք են: Նոյնպէս հուր եւ սառնամանիք եւ լալ աչաց եւ խաւար արատքին եւ որդն անքուն եւ այլ ինչ որ պատմի ի սուրբ գիրս, ի բազմաց զսական են գրեալ. զի գիտասցուք թէ՛ անասելի եւ անպատմելի, եւ անհանդուրժելի եւաններելի է անտի տանջանքն յաւիտենից. զոր այժմ ասէ: Զուր բորբոքիլ, եւ բարկութիւն, եւ այրել մինչ ի դժոխս. զի այրեցումն է եւ կսկիծ եւ ոչ մահ. եւ ոչ թեթեւութիւն խստութեանն: Որպէս գրէ առաքեալն. (որ ոք շինէ ի վերայ հիման հաւատոյն՝ փայտ խոտ եւ եղէգն.) փայտն նշանակէ զմարմնոյն մեղս մեծամեծս. որպէս. որպէս սպանութիւն, շնութիւն, գողութիւն, եւ այլն: Իսկ խոտ՝ զմտացն գիտն. զնախանձն. զհպարտութիւնն. զչար խորհուրդն, եւ զայլն: Իսկ եղէգն՝ զչար խօսսն. որ իբրեւ զեղէգն սրեն զլեզուս ի չարութիւն, ի յիշոցն, ի հայհոյութիւն, ի ստախոսութիւն, եւ յայլն: Սոքա լուցկին եւ այրելիք են յաւիտենից հրոյն: Չի որպէս հուրս այս անցաւոր նիւթով եւ հողմով բարբոքի. նոյնպէս զայն հուրն յաւիտենից՝ աղտեղութիւն մեղացն՝ անօրէնութիւն եւ չարիք բորբոքեն. եւ հողմն արտաքուստ բարկութիւնն Աստուծոյ է ի վերայ մեղաւորացն. որպէս ասէ Տէրն. (որ ոչ հնազանդի որդոյ՝ բարկութիւնն Աստուծոյ մնայ ի վերայ նորա:) Եւ ի չորս պատճառէ յաւիտենից է այրեցումն: Նախզի՛ այրելիք մեղքն եւ մեղաւորքն՝ յաւիտենական եւ անմահ են: Երկրորդ՝ զի հուրն անփոփոխելի եւ յաւիտենական: Երրորդ՝ եւ բարկութիւնն Աստուծոյ յաւիտենական է ի վերայ մեղաւորին: Չորրորդ՝ զի ժամանակն փոխեալ է ի յաւիտեանն եւ յանեզրն: Եւ թէ վասն Է՞ր լինի օր դատաստանի, եւ այնպիսի տանջանք: Ասեն վարդապետք թէ՛ Աստուած ի յիւր բարութենէն արար զաշխարհս. եւ վասն մեղաց բանաւորաց մարդկան եւ դիւաց՝ ածէ զօր դատաստանին: Չիթէ դէք եւ մեղաւորք ոչ էին, եւ ոչ օր դատաստանին. եւ

ոչ տանջանքն մեղաւորաց: Վասն այնորիկ ասէ: (Յուր բորբոքեցաւ:)
 *Տասներորդ՝ միտք բանիս որ ասէ. (հուր բորբոքեալ է ի բարկութենէ իմմէ.
 այրեցէ եւ իջցէ մինչ ի դժոխս ներքինս:.) Վասն դիւաց ասէ եւ սատանայի:
 Չի յօրն վերջին հրով բորբոքին ամենայն տիեզերք յերեսացն Աստուծոյ.
 որպէս ասէ մարգարէն Դաւիթ. (Ել ծուխ ի բարկութենէ նորա. եւ հուր
 յերեսաց նորա բորբոքեցի. եւ փայլատակունք հատան ի նմանէ. եւ
 խոնարհեցոյց գերկինս եւ էջ.) այսինքն, գերկնայինսն ասէ: (Եւ Աստուած
 մեր յայտնապէս եկեցէ. եւ հուր առաջի նորա բորբոքեցի: Կոչեցէ
 գերկինս ի վերուստ. եւ գերկիր ի դատել.) այսինքն, ձայնիւ փողոյն զհոգիսն
 կոչէ ի յերկնից. եւ զմարմինս յերկրէ առ ի դատել զժողովուրդ իւր: Այս
 ամենայն պատմութիւնս՝ վասն հրոյն է որ գալոց է առաջի Քրիստոսի. զի
 ամենայն հուր տարրական, եւ որ ի յերկրի, եւ հրեղէն ծովն որ ի հարաւ,
 ժողովին ի միասին. եւ գերկինս եւ գերկիր վառեն հրով. եւ զլերինս եւ
 զդաշտս՝ զբլուրս եւ զձորս հալեն. եւ պարզին որպէս զահակի. եւ բոլոր
 պատեն շուրջանակի զմեղաւորս ի վերայ բերանոյն դժոխոց. եւ ընդ
 աւարտիլ դատաստանին որ ասէ (երթայք ի հուրն յաւիտենից,) յայնժամ
 հուրն այն աղջամուղջ խաւարաւ յերկրէ առնու զսատանայ եւ զմեղաւորսն
 եւ զմեղսն. եւ ի ջանէ ի յատակս դժոխոց որէ ներքին դժոխք. եւ անդ տանջէ
 զնոսա: Չի սուրբ վարդապետք ներքին դժոխք ասեն զյատակս զժոխաց.
 որպէս ասէ Սողոմոն թէ՛ (մեղր կաթէէ ի շրթանց կնոջ պոռնկի. բայց
 կատարածն է ի յատակս դժոխոց:.) Ուստի իմանի թէ՛ ի դժոխս ոմանք են ի
 յատկասպէս որ կոչի ներքին դժոխք. եւ ոմանք ի մէջն. եւ ոմանք ի վերինն.
 զի մին. հուրն զանազան այրէ. նոյնպէս մին դժոխքն զանազան տանջէ
 զմեղաւորս: Եւ որպէս արքայութիւնն մի է. այլ օթեւանքն եւ փառքն եւ
 հանգիստն զանազան ըստ գործոցն: Նոյնպէս եւ դժոխքն մին է այլ
 տանջանքն առաւել եւ նւազ. ներքին, եւ միջին, եւ վերին դժոխք կոչի: Չի ի
 ներքին դժոխսն՝ են սատանայ եւ չար եւ անհաւատք եւ կռապաշտք եւ
 յայտնի չարագործք որք տանջին: Իսկ ի միջինն նոքա՝ որք միջակք են. որք
 ունին զհաւատս եւ ոչ զգործս. որպէս չար հաւատացեալք. եւ կամ ունին
 զգործս, եւ ոչ զհաւատս. զի նոցա հատուցաւ աստ: Եւ ի վերին դժոխս՝
 տղայք անմկրտեալք. որք խաւարաւ տանջին վասն պարտուցն Ադամայ.
 եւ չունին ներգործական մեղս. ոչ այրին հրով: Արդ՝ այսպէս մի է դժոխքն. եւ
 տանջանքն բազում ըստ բազում գործոցն: Եւ վայ ինձ մեղաւորիս. տես թէ
 զինչ ասէ: (Կերիցէ գերկիր եւ զամենայն բոյսս երկրի նոցա.) որպէս զինչ որ
 ուտի ի յորովայն մտանէ եւ կորչի. նոյնպէս ի մէջ հրոյն կորիցեն մեղաւորք:
 (Չերկիր ասէ:) Երկիր են երկրասէրք՝ որք զայս միայն խորհին եւ ոչ զվերինն:
 Եւ բոյսքն՝ իւրեանց չարութիւնն եւ մեղքն: Այլեւ երկիր են չար ծնողքն հայր
 եւ մայր. եւ բոյսքն չար ծնունդք զաւակք նոցա: Այլեւ երկիր են չարագործքն.
 եւ բոյսք չար գործակիցք նոցա: Այլեւ երկիր են չար ուսուցիչքն. եւ բոյսք չար
 ուսմունքն եւ հետեւողք նոցա. ասէ՛ (կերիցէ զնոսա:) (Բորբոքեցին հիմունք
 լերանց նոցա:) Հիմունք են զլիաւորքն դիւաց որպէս Սադաւել. եւ ի վերայ
 նոցա չար կամացն՝ հաստատեալ են դէւք եւ չարք ի մարդկանէ: Ասէ՛
 (կուտեցից զչարիս ամենայն ի վերայ նոցա. եւ նետիւք իմովք սպառեցից
 զնոսա:) Այսինքն զոր ինչ գործեցին չարիս մարդիկ եւ դէւք՝ զայն ամենայն
 կուտեմ եւ ժողովեմ ի գլուխ նոցա: Եւ նետ վրիժագործ ցասմանն Աստուծոյ՝
 սպառէ զնոսա. որ անթիւ է եւ անչափ եւ առաւել սաստիկ. որ ոչ սպառի եւ

ոչ վախճանի. (հուրն ասէ ոչ չի ջանի՝ եւ որդն ևոցա ոչ մեռանի:) (Մաշեալք եւ հիւծեալք ի սովու:) Այսինքն, մեղաւորք ի հոգեւոր հացեն եւ յըմպելոյն մաշին եւ հիւծին եւ ծարաւին. որպէս մեծատունն՝ որ պապակեալ էր բերանն ի ծարաւոյ: Յորժամ տեսանեն գԱբրահամ եւ գՂազար. այսինքն, զի մինչ ի վերանալն յերկինս արդարոցն՝ մեղաւորքն զևոցա փառսն տեսանեն թէ, յորպիսի փառոց զրկեցան: (Գազանաբեկ գէշ անկեալ ամենայն թռչնոց:) Վասն զի աստ գիշակեր թռչնոց դիւաց ուտել ետուն զվաստակս իւրեանց. յիրաւի անդ սովին եւ կարոտին: (Լարս առանց բժշկութեան՝ արձակեցից ի վարայ ևոցա զգազանս:) Որպէս չար օձն որ է իժն՝ անբժշկելի ունի գթոյնսն. Նոյնպէս անտի տանջանացն բուժումն ոչ է: Դարձեալ լարս՝ ասեն վարդապետք զկշիռս ուղիղ եւ արդար դատաստանին Աստուծոյ. զի ուղղորդ եւ անմոլար հատուցանէ. որպէս լարով ուղղեն զչինուածս. զի լարն եւ քանոնն՝ ոչ պակաս ունի եւ ոչ յաւելուած. Նոյնպէս դատաստանն Աստուծոյ՝ արդարապէս հատուցանէ: Իսկ գազան՝ զհրեղէն որդունսն ասէ. որք ի ներքուստ՝ են խիղճք մտացն՝ եւ յարտաքուստ՝ հրեղէն որդունքն՝ որք կրծեն եւ կսկծեն զայրեալ վերս մարմնոցն: (Որք այսր եւ անդր քարշեցցեն զնոսա ընդ երկիր:) Այս է. գտեղիսն յոր գործեցին զչարիսն ցուցնէ. իբր աստ եւ անդ տանջեն զգործողն: Եւ զի՞նչ իցեն հրեղէն որդունքն: Ասեն վարդապետք, յորժամ զչար ցանկութիւնն այր կամ կին յղանայ ի սիրտն, սերմ առեալ ի սատանայէ որպէս կինն ի յառնէ, եւ յորժամ գործէ զցանկութիւն մեղացն, յայնժամ ծնանի անքուն որդն ի ծովն հրեղէն. եւ որքան հեշտանամք եւ ծուլանամք ի մեղս՝ սնանին եւ մեծանան հրեղէն որդունքն անդ. որպէս մայր որ կաթամք սնուցանէ զծնունդն: Եւթէ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ եւ որդորմութեամբ ոչ սպանանէ զայն որդունս, յայնժամ ի դատաստանին յորժամ ասիցէ մեղաւորացն (երթայք ի հուրն յաւիտենից,) եւ գնան մեղաւորքն լի ամօթով ահիւ եւ դոզութեամբ քարշեալք ի հուրն, գան ապա որդունքն եւ գտանեն զհիւրեանց ծնօղսն. որպէս գառնիք զմայրսն. եւ կախին եւ այլ ոչ թողուրն ի յարւիտենից գիշատելոյ: Եւ վասն է՞ր աստ որդն. զի ունի զչորս յատկութիւնս որդանն: Նախզի՝ ի մեջ ի մեր մարմնոյս ծնանի որդն: Երկրորդ՝ ի փութ եւ ի խոց մասնէ: Երրորդ՝ առ մեզ մնայ եւ ուտէ: Չորրորդ՝ զի անկեալ ի վայր սատակի, եւ յայլս ոչ երթայ: Նոյնպէս եւ անքուն որդունքն՝ յարածամ միշտ եւ անդադար կարծեն եւ ուտեն. զորմէ ասէ Եսայի. (որդն ևոցա ոչ մեռանի:) Այլ զայս յիշելով՝ զարհուրեցուք եղբարք եւ գողասցուք. սարսիցուք ի բանէս եւ երկիւղալիցք լիցուք: Չմեղս խոստովանացուք. եւ ապաշխարութեամբ քաւեցուք: Չոխս՝ զնախանձ՝ զքէն՝ զատելութիւն ի սրտից հանցուք: Չստախօսութիւն եւ զհայհոյութիւն եւ զչար յիշոցս եւ զայլ աղտեղութիւնս ի լեզուէ սրբեցուք: Չորկրամոլութիւն եւ զպղծութիւն, զպորձնկութիւն եւ զգողութիւն, զծովութիւն եւ զայլ զազիր գործս մարմնոյ հատցուք՝ եւ ապա ազատեալք ի մեղաց, բեւեռեցուք զսիրտս մեր ի սերն Աստուծոյ եւ յահ եւ յերկիւղ ևոցա. զպատուիրանս պահեցուք. եւ ողորմութեան նորա ակնկալցուք յուսով յաւիտենից կենացն:

Այլ՝ զամենայն սուրբս՝ զսիրելիս Իւր առ Նա բարեխոս դիցուք: Որոց լիցի մեզ ամենեցուն հասանիլ ողորմութեան Նորին մեծի ողորմածին՝ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք ընդ Յօր եւ Սուրբ Յոգույն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Յայլմէ քարոզ վասն Դառնութեան աւուրն դատաստանի. ի բանն
Եսայեայ: (Ողբացէք՝ զի մերձ է օր Տեառն:.) Եսայ. 13. 6: (Գլուխ. ԾԿԹ)

Որպէս զանազանի լաց տղային՝ որ լուանայ մայրն զգլուխն կամ
զերեսն կամ յոր ժամ գաւազանաւ հարկանէ զնա, ի լալոյ որդէմեռ մօրն. եւ
ի լալոյ որ լինի վասն կորստեան աշխարհի եւ գաւառաց եւ քաղաքաց. եւ ի
վերայ կորստեան ազգատոհմի: Այսպէս եւ լաց եւ տանջանք աստի կենացս՝
զանազանին ի լալոյ եւ ի վերջին տանջանաց դատաստանին: Զանգի այն է
վերջին եւ անհնարին չար մեղաւորացն եւ այնոցիկ՝ որք աստ ոչ երկեան
յԱստուծոյ. վասն այնորիկ ասէ այնպիսեանցն: (Ողբացէք՝ զի մերձ է օր
Տեառն:.) Արդ՝ բազում են զոր պարտ է ի միտ ածել ի վերջին դատաստանէն,
որք յորդորեն յողբ եւ ի լացս: *Առաջինն է՝ ահագին սպառնալիքն Աստուծոյ.
որպէս ասէ յերկրորդ օրինացն: (Կալցի զդատաստանաց ձեռն իմ. եւ
հատուցից զվրեժ թշնամեաց իմոց. եւ ատելեաց իմոց հատուցից.
արբեցուցից զնետ իմ յարենէ ևոցա. եւ սուր իմ կերիցէ միս յարենէ
վիրաւորելոց:.) Եւ Յոբ ասէ. (փախերուք յերեսաց սրոյ. զի վրեժխնդիր
անօրէնութեան է սուրն. եւ զհտացէք զի դատաստան է:.) Եւ սաղմոսն ասէ.
(յորժամ ժամ անհիցեն, ուղիղ դատեցայց:.) Եւ Եսայի ասէ. (ահաւասիկ օր
Տեառն հասեալ է անհնարին անթշկելի լի բարկութեամբ. անել զտիեզերս
անապատ. եւ զմեղաւորս սատակել ի նմանէ:.) Եւ յովել ասէ. (հասեալ է օր
Տեառն՝ մերձ է օր խաւարի եւ միգի. օր ամպոյ եւ մառախւոյ:.) Եւ Սոփոնիա
ասէ. (ձայն աւուր տեառն խիստ եւ դառն. օր բարկութեան օրն այն. եւ օր
նեղութեան եւ վտանգի. որ թշուառութեան եւ ապականութեան. օր փողոյ եւ
աղաղակի:.) Եւ Մաղաքիա ասէ. (ահա եկեսցէ օր Տեառն բորբոքեալ իբրեւ
զինոց. եւ եղիցին ամենայն ամբարտաւանք եւ ամենեքեան որք զործեն
զնօրէնութիւն՝ եղեգն ևորին:.) Եւ Պօղոս յերայեցւոց ասէ. (ահեղ
ակնկալութեան դատաստանին. եւ նախանձ հրոյ՝ որ ուտիցէ
զհակառակորդս:.) *Երկրորդ՝ է հոգն զոր ունէին սուրբքն վասն
դատաստանին այն. զի ասէ Յոբ: (Չի՞նչ զործեցից՝ յորժամ յարիցէ Տէր ի
դատեալ. եւ յորժամ հարց եւ փորձ արասցէ ինձ՝ զի՞նչ պատասխանեցից
նմա:.) Եւ այլ վարդապետք. թէ ուաեմ, թէ ըմպեմ, եթէ զինչ եւ ամենմ, միշտ
երեւի հնչել յականջս իմ փողոյն այն որր ասէ. (արիք մեռեալք՝ եկայք ի
դատաստան:.) Եւ Դաւիթ ասէ. (Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ
զիս:.) Ուր ասէ Գրիգոր. կշտամբանք աստի կենացս՝ ներելով լինի. իսկ
կշտամբանք վերջին դատաստանին՝ աններելի. վասն այն խնդրէ զերծանիլ
յայնմ բարկութենէ: Նաեւ հայր ոմն հարցեալ յեղբօրէ ումեմնէ, ասէ՝ երթ
արա զխորհուրդս քո որպէս զխորհուրդս այնոցիկ՝ որք եղեալք են ի բանտի.
քանզի ևոքա հարցանեն, ո՞ր է դատաւորն. եւ երբ գայցէ. եւ վասն այսորիկ
ընկալեալ տանջանացն ողբան. այսպէս եւ կեանք արեղային պարտ է լինիլ
հանապազ ի լաց: Երրորդ՝ են ահագին նշանքն որք լինին յառաջ քան
զդատաստանն, յորոց գոչէ Դուկաս ասելով. (եղիցին նշանք յարեգակն եւ ի
լուսին եւ յաստեղս. եւ յաշխարհս տագնապ հեթանոսաց յահեղ բարբառոյ
իբրեւ ծովու եւ խռովութեան:.) Առաջին բանքն յայտնին ի յովել. (արեգակն
դարձցի ի խաւարս. եւ լուսինն յարին. միևչէն եկեալ իցէ օր Տեառն մեծ եւ
երեւելի:.) Եւ տեսիլն ասէ: (Տեսի ահեղ եւ շարժումն մեծ. եւ արեգակն

դարձաւ ի խաւար եւ եղել գիշեր մթին. եւ լուսինն բոլորովինն եղել յարին. աստեղք յերկնից թօթափեցան:) Եւ Մատթէոս ասէ. (արեգակն խաւարեացի. եւ լուսինն ոչ տացէ զլոյս իւր. եւ աստեղք յերկնից անկցին. եւ եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղել ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչեւ ցայժմ, եւ մի այլ լիցի:) Իսկ վասն խռովութեան ծովու՝ կարծեն ոմանք թէ՛ ամենեւին յոչ ինչ դարձցի. ըստ այնմ որ ասէ տեսիլն. (ծով այլ ոչ եւս:) Եւ այլ վարդապետք՝ ասեն թէ՛ ընթերցայ իգիւս հրեիցն՝ որք լինելոց են տասն եւ հինգ նշան ի տասն եւ հինգ աւուրս յառաջ քան զդատաստանն: Յառաջին օրն բարձրացի ծովն քառասուն կանգուն ի վերայ բարձրագոյն լերանց, եւ կացցէ իբրեւ զպարիսպ շուրջ զաշխարհաւս. ի նշան թէ՛ կարօղ Է Աստուած տապալել զաշխարհս որպէս հեղեղաւն: Յերկրորդ օրն՝ ի ջանէ ծովն ի խոնարի մինչեւ հազիւ երեւեսցի: Յերրորդ օրն՝ կետք մեծամեծք ելեալ ի վերայ երեսաց ջրոյն՝ զոչեսցեն մինչեւ յերկինս: Ի չորրորդ օրն՝ տունկք եւ բոյսք կաթեցուցեն ցօղ արեան: Ի հինգերորդ օրն՝ կործանեսցին ամենայն շինուածք: Ի վեցերորդ օրն՝ վեմք հարկանիցեն ընդ իրեարս: Ի յետներորդ օրն՝ ծով եւ երկիր վառեսցին հրով: Ի յոթներորդ օրն եղիցի ընդհանուր գետնաշարժ: Ի յիններորդ օրն՝ ամենայն լերիք եւ ձորք հաւասարեսցին: Ի տասներորդ օրն՝ ելեալ մարդիկ որք լինին յայրս եւ ի խորշ երկրի. եւ շրջեսցին որպէս խելագարեալս. եւ ոչ կարացեն խօսիլ ընդ միմեանս: Ի մետասաներորդ օրն՝ ամենայն մեռեալքն արտաքս ի գերեզմանաց իւրեանց ելցեն: Յերկուսասաներորդ օրն՝ թուեսցին աստեղաց անկանիլ յերկնից: Յերեքսասաներորդ օրն՝ մեռանիցին ամենայն մարդիկ: Ի չորեքսասաներորդ օրն՝ վառեսցին երկինք եւ երկիր. այսինքն, օղ: Ի հնգետասաներորդ օրն՝ եղիցին երկինքն եւ երկիր նոր. եւ յարիցեն ամենայն մեռալք: Եւ թէ վասն Էր այսպիսի նշանքս լինին յառաջագոյն: Կարէ դնիլ վեց պատճառ: Նախ՝ առ ի ցուցանել զապառնի չարն. զի ասէ Գրիգոր. բազում չարիք պարտին յառաջ ընթանալ. զի կարացեն ցուցանել զնվախճան չարն: Երկրորդ՝ զի ամենայնիւ յանցեաք. ամենայնիւ պատժիցուք. զի ասէ սուրբն Գրիգոր. զոր ինչ ընկալաք ի պետս կենաց դարձուցաք ի գործի մեղաց. վասն այնորիկ յիրաւի դարձցին մեզ ի գործի տանջանաց: Երրորդ՝ զի ասեն վարդապետք թէ՛ ի մերձեւալ վախճանի աշխարհի՝ ամենայն տարեք իբրեւ երկչոտք սարսեալ դոգացին: Չորրորդ՝ զի երեւեսցին ստեղծուածք պատրաստք առնուլ զվրեժ ի թշնամեաց ստեղծողին. զի որպէս ի հասանիլ պատերազմին լինին հանդեսք եւ ցուցումն զինուց եւ զինուորաց. այսպէս եւ ի կատարածի աշխարհի՝ զինեսցէ զարարածս առնուլ զվրեժս ի թշնամեաց. որպէս ասէ սիրեցեքն: Դիւզերորդ՝ առ ի ցուցանել զմեղաւորս անարժանս ամենայն բարեացն Աստուծոյ: Վեցերորդ՝ զի եղիցին յորդորիչք ցաւոց. զի ասէ Ոսկեբերանն. ընդ մեռանիլ տանուտեառն՝ խռովի տուն նորա. ընտանիքն սգան եւ սեւազգեստ լինին. այսպէս ի մերձեալ մահու բոլոր ազգի մարդկան վասն որոյ ամենայն ինչ եղեն, ամենեքեան սգացին: Չորրորդ՝ են նշանք չարչարանացն Քրիստոսի Աստուծոյ: Խաչն՝ բեւեռքն. գեղարդն, եւ այլն. որք բերեցին առաջի դատաւորին. եւ ի մարմին նորա երեւեցին սպիք խոցուածոց նորա. որպէս ասէ զԱքարիա. (հայեսցին այնք որք խոցեցին:) Քանզի յայնժամ յուշ առնիցին մարդկան չարչարանքն Քրիստոսի. եւ ինկրեսցի ի նոցանէ մահն Քրիստոսի իբրեւ զգին որ տուեալ է վասն նոցա. եւ նոքա յափշտակեցին

գինքեանս ի նմանէ. գորս այնպէս գնեալ էր ծանրագին: Նաեւ ոչ է պիտոյ ամբաստանութիւն յումեքէ. զի տեսանիցեն զխաչն եւ զՔրիստոս խոցուածօքն իւրովք: Հինգերորդ՝ մեծ է հանդէս արքունւոյն այն՝ յոր ամենայն աշխարհիցէ ժողովեալ. որպէս ասէ Յովէլ: (Չարթիցեն եւ ելցեն ամենայն զգգք ի ձորն Յովափաթու. զի անդ նստայց դատել զամենայն ազգս:) Եւ Մատթէոս ասէ. (յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, ժողովեցին առաջի նորա ամենայն ազգք:) Վեցերորդ՝ է ահագին կարողութիւն դատաւորին. յորմէ ոչ ոք կարացէ բողոքել առ յայլ: Եօթներորդ՝ է նրբահայեցութիւն դատաւորին. զի զբազում որք երեւին արդար՝ ցուցանէ անիրաւ: Չի ասէ Իզիդորոս. ի քննութիւն նրբահայեաց դատաւորին, եւ ոչ արդարութիւն արդարոյն անհոգք եղիցին. զի ոչ միայն զմեծագոյնսն, այլեւ զփոքրագոյնսն ածցէ ի դատաստան. որպէս ասէ ժողովօղն: Եւ ի վերայ բանին Յոբայ: (Ո՞չ ապաքէն ինքն տեսցէ զճանապարհս իմ. եւ ամենայն գնացք իմ թուեսցին:) Ասէ մեկնիչն. այսպէս Աստուած զճանապարհս իւրաքանչիւր ումեք գիտեսցէ եւ զգնացս թուեսցէ, մինչ զի ոչ մանրամասն խորհուրդք եւ թեթեւագոյն բանք գորս վասն սովորութեանն ոչ ինչ համարիմք, ի դատաստան նորա մնացեն առանց քննութեան. զի վասն խորհրդոցն ասէ սիրեցեքն. (քննէ զխորհուրդս:) Եւ սաղմոսն ասէ. (որ քննէ զսիրտ եւ զերիկամունս:) Եւ վասն բանից ասէ Մատթէոս. (ամենայն դատարկ բանի գոր խօսիցին մարդիկ տացեն պատասխանի յաւուրն դատաստանի.) ուր ասէ մեկնիչն. դատարկ բան է՝ որ ոչ լինի ի փառս Աստուծոյ, կամ ի շինութիւն ընկերին: Նաեւ ինդրեսցէ համար եւ ի ժամանակէն. թեպէտ եւ յոյժ անարգ համարին: Չի ասէ Բեռնարտոս. ամենայն ժամանակ տուեալ մարդոյն՝ ինդրեսցի ի նմանէ թէ, որպէս ծախեցաւ. զի որպէս մազ մի ոչ կորիցէ ի գլխոյն. նոյնպէս եւ ոչ կէտ մի ի ժամանակէն. որպէս Սոփոնիա: (Քննեցէք զԵրուսաղէմ ճրագով:) Եւ ոչ միայն պահանջեսցէ զհամար մեղաց իւրեանց. այլեւ յոմանց եւ զայլոց. որպէս ասէ Էզէկիէլ. (զարիւն նոցա ի ձեռաց քոց ինդրեսցից:) Պահանջեսցէ համար եւ վասն բարեացն զոր ետ մարդոյս. թէ բնական, եւ թէ շնորհական. եւ ի մեղացն զոր եթող նմա. եւ ի բարեացն զոր զանց արար: Ութներորդ՝ է անփոփոխութիւն դատաւորին. ոչ խոնարհի յաղաջանս ուրուք. որպէս ասէ յառակս. (լի է նախանձու սրտմտութիւն առն. եւ ոչ ինայեցէ յաւուր դատաստանի. եւ ոչ հաւանեսցի աղաջանաց ումեք:) Չի ասէ Ոսկէբերանն. յայնժամ ոչ մեծութիւնք, եւ ոչ ծնօղք, եւ ոչ հրեշտակք որք սովորք են բարեխօսեսցեն վասն մարդկան. զի յատկութիւն է դատաստանի եւ ոչ ընդունիլ զողոմութիւն: Իններորդ՝ է ահագնութիւն դատաւորին. զի ասէ Դանիէլ. (աթոռ նորա իբրեւ զբոց հրոյ. անիւք նորա որպէս զհուր բորբոքեալ. եւ գետ հրոյ յորդեալ ելաներ առաջի նորա:) Եւ Մաղաքիա ասէ: (Ո՞վ հանդարտեսցի յայտնութեան նորա:) Տասներորդ՝ է ծեծութիւն իրին՝ վասն որոյ լինի դատաստան. որ է արքայութիւնն յաւիտենական. եւ տանջանքն յաւիտենական. որպէս ասէ Մատթէոս. (արդարքն երթան ի կեանս յաւիտենականս. եւ մեղաւորքն ի տանջանս:)

Դարձեալ ի նոյն:

Արդ՝ պարտ է եկնչիլ մեզ ի դատաստանէն վասն բազում պատճառի: Նախ՝ վասն ահագնութեան դատաւորին. որպէս ասէ տեսիլն: (Ասիցեն լերանց թէ՛ անկերուք ի վերայ մեր. եւ բլրոց թէ՛ ծածկեցէք զմեզ յերեսաց

ևորա՝ որ ևստի յաթոռն ի բարկութենէ գառնին:) Երկրորդ՝ վասն շարժման երկնային գորութեանցն ըստ Մատթեոսի: Երրորդ՝ վասն անդառնալի վճռին. քան զի եղիցի այն յետին վճիռ ըստ Յոբայ: (Մի անգամ խօսեսցի Աստուած՝ եւ գնոյն ոչ կրկնեսցէ.) այսինքն, (երթայք յինէն անիծեալք:) Չորրորդ՝ վասն բազմութեան սպասաւորացն որք կատարեն զվճիռն. որպէս ասէ Մատթեոս. (ի կատարածի աշխարհիս՝ ելցեն հրեշտակք. եւ մեկնեսցեն զչարսն ի միջոյ արդարոց. եւ արկցեն զնոսա ի հնոց:) Հինգերորդ՝ վասն նեղութեան դատապարտելոցն. զի ասէ Գրիգոր: Ո՛ր թէ որպիսի անձուկ է յամենայն կողմանց ճանապարհի դատապարտելոցն: Ի վերայ կացցէ դատաւորն: Ի ներքոյ ահագին վիհ դժոխոցն: Ի յաջմէ մեղքն մատնիչ: Ի ձախմէ անթիւ դէքն որք քարշեն ի տանջանս: Ի ներքուստ տոչորումն խղճի մտացն: Յարտաքուստ բորբոքումն աշխարհիս. եւ թշուառական մեղաւորին այսպէս պաշարեալ՝ ո՛րք փախիցէ: Վեցերորդ՝ վասն տկարութեան դատապարտելոցն՝ որք ոչ կարացեն ընդդէմ կալ. որպէս եւ ոչ յարդն հրոյն. ըստ Մատթեոսի. (զյարդն այրեսցէ անշէջ հրով:) Եւ դարձեալ՝ (ասացից հնձողացն քաղեցէք նախ զորումն: եւ կապեցէք ի խրճուսս առ ի յայրել:) Եօթներորդ՝ վասն պակասելոյ ամենայն օգնականութեանց. զի ոչ ինչ ստեղծուած օգնեսցէ. նաեւ սուրբքն որք սովորք էին ընդդէմ կալ բարկութեանն Աստուծոյ, ուրախացին յորժամ տեսցեն վրեժ առեալ նախատանացն Աստուծոյ. որպէս ասէ Սաղմոսն. (ուրախ եղիցի արդարն յորժամ տեսցէ զհատուցումն. եւ զձեռս իւր լուսացէ յարեան մեղաւորի:) Ութներորդ՝ վասն յայտնիւոյ մեղացն. որպէս ասէ Եսայի. (յայտնեսցի ամօթ քո. եւ երեւեսցին նախատանք քո:) Եւ Պօղոս ասաւ. (եկեսցէ Տէր՝ որ լուսաւոր առնէէ զգաղտնիս խաւարի. եւ յայտնեսցէ զխորհուրդս սրտից:) Իններորդ՝ վասն բազում զօրաւոր սոխացն. որք են հրեշտակք, սուրբք, երկինք, երկիր, եւ դէք. ըստ Մատթեոսի. (առաքեսցէ որդի մարդեոյ զհեշտակս իւր. եւ ժողովեսցէ յարքայութենէ զամենայն գայթակղութիւսս. եւ զայնոսիկ որք գործեն զնօրէնութիւն. եւ արկցեն զնոսա ի հնոց հուրն:) Եւ յառակն ասէ. (յայնժամ կացցեն արդարքն բազում համարձակութեամբ հանդէպ նեղչաց իւրեանց:) Եւ Յոբ ասէ. (յայտնեսցեն երկինք զանօրէնութիւնս ևորա. յարիցէ ի վեարյ երկրի:) Եւ Սիրաք ասէ. (են հոգիք ևորա ստեղծեալք ի վրեժխնդրութիւն. եւ ի ժամ կատարծի հեղցեն զսրտմտութիւն:) Տասներորդ՝ վասն ստուգութեան մեղացն. զի նոյն ինքն եղիցի դատուոր եւ վկայ: Չի առաջի աչաց ևորա ամենայն մեղք գործեցան. որպէ ասէ Երեմիա: (Ես ինձէն դատաւոր եմ եւ վկայ ասէ Տէր:) Նաեւ ի կողմանէ մեղաւորացն եղիցի ստուգութիւնս այս՝ որք ունիցին զգիրս գրեալ ձեշռօք իւրեանց. այսինքն, ի խիղճս մտաց՝ որք վկայեսցեն ընդդէմ ևոցա ըստ Դանիէլի. (ի դատաստան ևստաւ. եւ դպրութիւնք բացան.) այսինքն, խիղճք մտացն: Մետասաներորդ՝ վասն չգիտելոյ զժամանակ դատաստանին. քանզի յանկարծակի եկեսցէ, յորժամ ակն ոչ ունիցին. ըստ Մատթեոսի. (որպէս յաւուրս Նոյի ուտէին եւ ըմպէին մարդիկ. եւ ոչ գիտացին, մինչեւ եկն ջրհեղեղն. նոյնպէս եղիցի եւ զալուստն որդւոյ մարդոյ:) Եւ Պօղոս յառաջին թեսաղոնիկեցոց ասէ. (յորժամ ասացեն թէ խաղաղութիւն եւ շինութիւն է, յանկարծակի եկեսցէ ի վերայ ևոցա սատակումն:) Երկուտասաներորդ՝ վասն մատնելոյն զմեղաւորսն ի ձեռն ամենաչար տանջանաց. ըստ Մատթեոսի. (բարկացեալ Տէրն ևորա

մատանեաց զևա դահճաց.) այսինքն, դիւաց. որք գերագանց են անգթութեամբ քան զամենայն տանջօղս: Յորոց եւ զմեզ փրկեսցէ Քրիստոս Աստուած ողորմութեամբն Իւրով. եւ Նմա փառք յաւիտեանս ամեն:

Յայլմէ քարոզ վասն սրբոց. ի բանն՝ (Երանի անեւեցուն՝ որք բնակեալ են ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրնեսցեն զՔեզ:) Սաղ. 83. 5: (Գլուխ. ԾՅ)

Երանի որովայնին որ կրեացն զՔազ ասէ Ղուկաս:) Գիտութիւն հպարտացուցանէ՝ այլ սեր շինէ:) Բանս այս յայտնի եղեւ ի ժամանակս Քրիստոսի. զի դպիրքն եւ փարիսեցիքն որք գիտունք էին, նախանձեցան ընդ Քրիստոսի. դիւահար ասէին եւ որդիք հիւսան: Իսկ կին մի առանց գիտութեան՝ բայց սիրով ասաց: (Երանի որովայնին որ կրեացն զՔեզ:) Վասն երկու պատճառի որովայն սուրբ կուսին երանի: Նախ՝ յամենայն չարութենէ եւ յապականութենէ մեկնեալ է. զի ամենայն կանայք չորս պակասութիւն ունին: Նախ՝ մեղօք յղանան: Երկրորդ՝ ծանրութեամբ տանին որսվայնքն: Երրորդ՝ զի ցաւօք ծնանին: Չորրորդ՝ զի մահւամբ ի հող դառնան: Յայս չորս պակասութենէ՝ սուրբ կոյսն ոչ ուներ: Վասն առաջնոյն ասէ Մատթէոս. (որ ի նմայն ծնեալ է՝ ի հոգւոյն սրբոյ է:) Վասն երկրորդին ասէ Սիրաք. (Երանի երկրի՝ որոյ թագաւոր քո շարիք է.) այսինքն, բարեխառն: Երրորդ՝ զի ծնաւ ուրախութեամբ, որպէս Էզէկիէլ. (մինչչեւ իցեն հասեալ ցաւք երկանց, ապրեցաւ եւ ծնաւ արու.) այսինքն, սուրբ նախ քան զցաւս եւ զիշտս զոր այլ կանայք կրեն, ծնաւ, զի ինքն (պատեաց զորդին իւր զանդրանիկ ըստ Ղուկասու.) եւ ոչ էին մանակաբարձք որք քաջալերեն զկանայս յերկունս: Չորրորդ՝ մարմին սուրբ կոսին ոչ ապականեցաւ ի հող դառնալով մահուամբ ըստ օրինի բնութեանս. որպէս եւ ոչ որդւոյն ապականեցաւ: Վասն այսորիկ ասէ տեսիլն Յօհաննու. (բացաւ տաճարն Աստուծոյ յերկինս՝ եւ երեւեցաւ տապանակ ուխտին՝ որ անփուտ փայտիւ եր կազմեալ.) որ զմարմին սուրբ կուսին նշանակէ որ անապական մնաց: Չորս զանազանութիւն կայ ի մէջ այլ կենդանեաց եւ մարդոյս: Նախ՝ կենդանիքն զոր ինչ առաջի ունին՝ ճանաչեն եւ ցանկան. իսկ զոր ինչ յաւիտեանական է, ոչ իմանան: Իսկ մարդս իմանայ զանցեալն, զներկայն, եւ զապանին: Երկրորդ՝ զի մարդս ոչ է վասն մարմնաւոր իրաց. այլ ամենայն ստեղծուածքս են վասն մարդոյս. զի չորս տարերքս վասն չորս խառնուածոյս են. եւ խառնուածքս վերայ բուսոց են. եւ բոյսքն վասն անբան կենդանեաց են. եւ կենդանիքն վասն մարդոյս են. եւ մարդս վասն երանութեան Աստուծոյ է: Երրորդ՝ զի անբան կենդանիք միայն զհինգ զգայութիւնս ունին. եւ զգալիս միայն ճանաչեն եւ սիրեն: Իսկ մարդս՝ ճանաչէ ստուգութեամբ. եւ իմանայ եւ սիրէ զԱստուած: Իսկ մեղաւորքն՝ են ի թիւս անասնոցն. եւ իջանեն իտանջանս: *Չանազան կերպիւ գրեցին զերանութիւնն: Ոմանք ասացին թէ՝ երանութիւնն է փափկութիւն մարմնոյ, ուտելոյ եւ խառնակութեանց: Բայց այս սուտ է վասն երկու պատճառի: Նախ՝ զերանութիւնն բանական հոգիքն միայն վայելեն. Աստուած, հերշտակք, եւ մարդիկք: Իսկ ուտելն եւ շաղաշարիլն հասարակ է եւ անբանից. եւ այսպիսի երանութիւնս տաղտկալի է. որպէս ասէ ժողովօղն ի բերանոյ մեղաւորացն. (ահա զոր տեսի ես զբարին որ է լաւ ուտելն, ըմպելն,

Եւ տեսանել զբարութիւնս յամենայն վաստակս իւր. վասն զի այն է նոր:) Երկրորդ՝ զի մարդիկ ի մէջ են իմանալեաց եւ զգալեաց. զի վերագոյն ունի զիմանալին. եւ ի ներքոյ զգգալին: Եւ երանութիւնն մեծ բարութիւն է քան զամենայն զոր ունի. եւ կատարելութիւն՝ վերին երանութիւնն է. ապա ուրեմն ոչ է պարտ կցորդութեամբ զգալեացս ունիլ զերանութիւնն որ ի վայր է քան զմարդս. այլ որր ի վեր է. այսինքն, յԱստուծոյ: Ոմանք ասացին զերանութիւնն լինիլ փարթամութիւն ընչից. որպէս ասէ Սաղմոսն. (շտեմարանք նոցա լի են եւ բղխին ի միմեանս. խաշինք նոցա բազմածինք են. արդ՝ երանեցի՞ց ժողովրդեան որոյ այս այսպէս է:) Արդ՝ այս սուտ է վասն Դ պատճառի: Նախզի՝ երանութիւնն միայն բարեացն է եւ Աստուծոյ սիրելեացն. իսկ հարստութիւնն չարացն եւ բարեացն է. եւ առաւել չարացն. որպէս ասէ Ղուկաս. (զգոյշ լերուք յամենայն ագահութենէ. զի ոչ եթէ ի մթերից են ամենայն կեանք նորա:) Երկրորդ՝ զի երանեմք զառատածեռն առաւել քան զռիշտն. բայց առատածեռնութիւնն ցրուէ զհարստութիւնն. եւ ռիշտն ժողովէ. ապա ուրեմն ոչ է երանութիւն: Երրորդ՝ զի ճշմարիտ երանութիւնն է բարի եւ հաստատուն. որ ոչ պակասի. եւ ոչ բռնութեամբ յափշտակի: Իսկ փարթամութիւնն ընդդէմ է այսմ. վասն այսորիկ ասէ Տէրն. (զուրախութիւնն ձեր ոչ որ հանիցէ ի ձեռն:) Կեսք ասացին թէ՛ մեծութիւն պատուոյն՝ է երանութիւն. որ է սուտ վասն երկու պատճառի: Նախզի՝ երանութիւնն քան զամենայն բարութիւնս բարձրագոյն է, եւ քան զամենայն սրբութիւնս գերագոյն. զի վերջ ամենայն առաքինութեանն՝ երանութիւնն է: Իսկ պատիւն եւ հարկիքն՝ ոչ են գերագոյն քան զամենեսեան. զի վասն առաքինութեանն պատիւ դնեն մարդոյն. եւ ոչ միայն առաքինութիւնն, այլեւ ամենայն խոնարհ՝ վեհագոյն է քան զամենայն հարկիս. զի ամենայն որ որ մի հունար ունի՝ պատիւ ունի: Երկրորդ՝ զի երանութիւնն լինի յատուկ կամօք եւ գործօք մարդոյն. իսկ ով որ որ հարկիս ընդունի, ոչ է յիւրմէն. այլ այլք մեծարեն եւ պատուեն. եւ այլոցն է գործն եւ ոչ իւրն: Նաեւ բազում անգամ մեծարի անարժանն: Ոմանք ասացին զերանութիւնն գոլ յիշխանութիւնն. որ ոչ է ճշմարիտ վասն երկու պատճառի: Նախզի՝ երանութիւնն է ամենեւին բարի. որպէս զի ոչ է հնար որ չար առնէ այլոց. իսկ իշխանութիւնն ի մէջն է. զի ոմանց բարի առնէ եւ ոմանց չար: Երկրորդ՝ երանութիւնն է կատարեալ բարութիւն եւ անպակաս. բայց իշխանութիւնն յոյժ պակասեալ եւ անկատար է: Չի յիշխանութիւն ելանելն է ոչ իւր կամօքն. այլ այլ կամօք ժողովոյն. յայնժամ դժուարին է նմա զամենեցուն կամս շահիլն. զի փոփոխին եւ այլայլին կամք նոցա. եւ որչափ բարձրագոյն է իշխանութիւնն՝ առաւել երկնչի: Այլք ասացին թէ՛ երանութիւնն կայանայ ի մարմնական առողջութիւնն. ի գեղեցկութիւնն. ի յուժեղութիւնն. ի յերագութիւնն. եւ ի սրատեսութիւնն: Եւ այս եւս սուտ է վասն երկու պատճառի: Նախ զի՝ երանութիւնն գերագոյն բարի է. եւ հոգին գերագոյն է քան զմարմինն: Ապա ուրեմն վասն բարութեան հոգւոյն է երանութիւնն. եւ ոչ մարմնոյն: Երկրորդ՝ եւ այլ զի արծիւն սրատես է քան զմարդս. շունն վազան. առիւծն ուժով. էշն սրալսող, եւ այլ: Երանութիւնն է պարառութիւն ամենայն բարեաց. եւ փախուստ ամենայն չարեաց. զոր ոչ որ կարէ ունիլ ի ներկայ կեանս: Չի եթէ որ հասանի կատարելութեան իմն միւս ինչ պակաս գտանի. զի թէ հարուստ է, ունի պակասութիւն գիտութեան. եւ անդրադարձեալ. եւ թէ գեղեցիկ է, ունի պակասութիւն կարողութեան. եւ

անդրաժողովարձեալ. եւ այլ սոյնպիսիք: Վասն այնորիկ ասէ Եսայի. (ժողովուրդ իմ որք երանեն զձեզ՝ խաբեն զձեզ. եւ զշաւիղս ոտից ձերոց մոլորեցուցանեն:) Վասն այնորիկ երանութիւնն ոչ է մամնական ինչ՝ եւ ոչ զգայութեամբ ըմբռնի. այլ է հոգեւոր եւ ճանաչում մտացն. ոչ ի յայն ճանաչումն որ հոգին զստեղծուածս ճանաչէ: Իսկ ճանաչել զԱստուած կրկին է: Նախ՝ միջնորդութեամբ արարածոցս. որպէս փիլիսոփայք զԱստուած ճանաչեցին. եւ ի յայս ճանաչումսս ոչ գոյ երանութիւն: Երկրորդ՝ ա նընդմիջաբար ի հանդերձեալն. յայն ժամ սուրբ երրորդութիւնն իմանալապէս ընդ մարդոյն միաւորի. որպէս ասէ Տէրն. (այս են յաւիտենական կեանք՝ զի ծանկցեն զքեզ միայն ճշմարի Աստուած. եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս:) Եւ յառակն ասէ: (Երանեալ է այր՝ որ եղիտ զիմաստութիւն. եւ մահկանացու որ ետես զհանճար. զի լաւ է զվաճառն զայն գտանել, քան զգանձս ոսկւոյ եւ արաթոյ. պատուականագոյն է քան զականս պատուականս. եւ ոչ ինչ է չար որ հակառակ կայցէ նմա:)

*Երանութիւն ամենայն սրբոց ի վեց կողմանէ լինի: Նախ ի վերին կողմանէն: Երկրորդ՝ ի ներքին: Երրորդ՝ ի յաջ կողմանէն: Չորրորդ՝ ի ձախ: Հինգերորդ՝ ի առաջին: Վեցերորդ՝ ի յատուստ կողմանէն: *Ի վերին կողմանէն՝ լինի յԱստուծոյ. եւ այս երեք մասն ունի: Նախ՝ է տեսութիւն երեսացն Աստուծոյ. որպէս ասէ Եսայի. (զթագաւորն փառաց տեսչիք:) Եւ վարդապետք ասեն թէ՛ մեղաւորքն լաւ կամին ի դժոխս լինիլ եւ զերեսն Աստուծոյ տեսանել, քան յարքայութեանն եւ ոչ տեսանել: Եւ ոսկէ բերանն ասէ. ինձ թի թէ՛ ծանրագոյն տանջանք է ի յերեսացն Աստուծոյ անկանիլ, քան թէ ի դժոխս այրիլ: Եւ այլք ասեն. այն ուրախութիւնն ճշմարիտ է՝ որ ի ստեղծողէն եւ ոչ ի ստեղծուածոցս ծնանի. մերձ այն ուրախութեանն՝ ամենայն հեշտութիւնն աշխարհիս ողբ է. ամենայն ուրախութիւն ցաւ է. ամենայն քաղցրութիւն դառն է. ամենայն գեղեցկութիւն գարշելի է: Վասն այսորիկ ասէ սաղմոսն. (ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած. երբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ:) Ամենայն վայելչութիւնք մարմնաւորք իբրեւ զկաթիլ մի ի ծոռվէ կաթեալ են յերանութենէն իկեանս յայս: Ապա ուրեամն վայ մեղաւորացն՝ որք աշխարհիս հեշտութեանն հետեւին. եւ զերանութիւնն թողուն. որպէս ասէ Երեմիա. (զի թողին զաղբիւր ջրոյ կենդաւոյ. եւ փորեցին ինքեանց գուբս ծակոտկենս:) Ամենայն հեշտութիւնք ի սկզբանէ մինչեւ ի կատարած համեմատելով յերանութիւնն. է իբրեւ զփոշի մի մղեղի ի չողն: Փիլիպպոսի մի ազգ կերակուրն բաւական էր. որպէս ասաց առ Տէրն. (ցոյց մեզ զհայր քո եւ շատ է մեզ:) Իսկ ի հանդերձեալն՝ սուրբ երրորդութիւնն յայտնի մեզ հասարակաբար. որպէս ասէ. (ես եւ հայրիմ առ նա եկեսցուք. եւ օթեւանս առնմա արասցուք:) Երկրորդ՝ է տեսութիւն մարդկութեանն Քրիստոսի. զի զի՞նչ այլ մեծագոյն ուրախութիւնն է քան զտեսանելն զՔրիստոս մարդ ստեղծող մարդոյս: Վասն այսորիկ ասէ Տէրն. (ես եմ դուռն. ընդիս եթէ ոք եկեսցէ՛ մտցէ եւ կեցցէ, եւ ճարակ գտցէ:) Ստանեմք առ ի տեսանել զաստուածութիւնն. եւ ճարակ գտանեմք ցնծութեան: Երրորդ՝ է համանգամայն տեսութիւն միաւորութեան ասուածութեանն եւ մարդկաութեանն Քրիստոսի ի մի եութիւն. այսինքն, զի տեսանեմք զեղբայրն մեր միաւորեալ ի բանն Աստուած: Եւ այն զի մեծ ուրախութիւն է տեսանել զորդին ծնողքն եպիսկոպոս, կամ թագաւոր եւ դատաւոր կենդանեաց եւ մեռելոց. եւ զոր ինչ բարութիւն գլուխն ունի՝ ա նդամքն

Իւրենց համարի. եւ անդրադարձեալ. որպէս Տէրն. (զոր ինչ արարիք միում ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարիք:) *Երկրորդ՝ ուրախութիւն ունին սուրբքն ի ներքին կողմանէն: Եւ այս երեք մասն ունի: Նախ՝ ուրախանան, զի իդժոխոցն փրկեցան. որպէս ասէ սաղմոսն. (անձինք մեր ապրեցան որպէս ճնճողուկք յորոգայթէ որսողաց:) Երկրորդ՝ յորժամ տեսանեն զթշամիսն Աստուծոյ ի տանջաս. որպէս ասէ սաղմոսն. (ուրախ եղիցի արդարն յորժամ տեսցէ զհասողունսն. եւ զձեռս իւր լուսացէ յարեան մեղաւորին:) Երրորդ՝ ուրախանան յորժամ տեսանեն զմեղսն որ այնչափ վնաս զոր աստ գործեաց մարդոյն՝ ի դժոխսն կապեալ կայ. որպէս ասէ սաղմոսն. (պակասեցին մեղաւորք յերկրէ:) *Երրորդ՝ ուրախութիւն սրբոցն՝ է յաջմէ. այսինքն, ի հրեղէն երկնից: Եւ այս երեք մասն ունի: Նախ՝ ուրախանան ի լուսաւորութենէ երկնից. որպէս ասէ Տուրիթ. (երանելի լինիմ եթէ յազգէ իմմէ ոք տեսանէ զլոյսն Երուսաղէմի:) Եւ սաղմոսն ասէ. (լոյս ծագեաց արդարոց սրից:) Երկրորդ՝ ուրախութիւն է ի սրբութենէ տեղոյն. որպէս ասէ Յօհաննէս ի տեսիլն. (մի մտցէ անդ ամենայն չարակամ: զի մի պղծեսցէ զնա ստութեամբ իւրով. բայց միայն մտցեն ի նա որոց անուանքն գրեալ են ի դպրութեան կենաց:) Երրորդ՝ վասն ընդ արդձակութեան տանն Աստուծոյ. որպէս ասէ բարուք: (Ո՞վ Իսրայել՝ որպէս զի մեծ է տունն Աստուծոյ. եւ ընդ արձակ է տեղի ստացուածոց նորա:) *Չորրորդ՝ ուրախութիւն է ամենայն սրբոցն ի ձախ կողմանէն. այսինքն, յաշխարհէս: Եւ այս ուրախութիւնս եւս երեք մասն ունի: Նախ՝ որ ի նեղութենէ եւ յօտարութենէ աշխարհիս փրկեցան. վասն զի յոյժ ցանկան ելանել. որպէս ասէ սաղմոսն. (վայ ինձ՝ զի ընդ երկար եղել պանտիստութիւն իմ. զի բնակեցայ ես ի վրանս կեդարու:) Երկրորդ՝ զի փրկեցան ի նաւակոծութենէ աշխարհիս. որպէս առաքեալքն աղաղակեցին ի ծովուն. (Տէր փրկեա զմեզ. քանզի կորնչիմք:) Երրորդ՝ զի ընտեալքն տկար եւ անզօր կային աստ ի բերանոյ առիւծուն. այսինքն, սատանայի. եւ այժմ յաղթեցին. որպէս ասէ սաղմոսն. (փրկեա զիս ի բերանոյ առիւծուն:) *Յինգերորդ՝ յառաջին կողմանէն սուրբքն ուրախանան. այսինքն, ի բարի ընկերացն: Եւ այս երեք մասն ունի: Նախ՝ ա յն ընկերքն բազում լինին եւ անթիւ. որպէս ասէ տեսիլն: (Յետ այսորիկ տեսի եւ ահա ժողովուրդ բազում որոց ոչ գոյ թիւ յամենայն ազգաց. եւ յամենայն ցեղից. եւ յամենայն լեզուաց. եւ յամենայն ժողովրդոց՝ որք կային առաջի աթոռոյն:) Ընդդէմ երեւի թէ՛ սակաւք իցեն որք փրկին քան զնոսա՝ որք կորնչին: Չի յորժամ հարցեալ եղել Տէրն թէ՛ (սակաւք իցեն որք ապրելոց իցեն:) Պատասխանի ետ. (մտէք ընդ նեղ դուռն. զի լայն ճանապարհաւն բազումք երթան որ տանի ի կորուստն:) Ընդէ՞ր ապա Յօհաննէս անթիւ ասէ զընտրեալսն: Ասելի է թէ՛ երկու բանքս ոչ են հակառակ միմեանց: Չի Զրիստոս ոչ ասէ թէ ա մենելին սակաւք լինին փրկեալքն. այլ թէ սակաւք լինին քեզ զկորուսեալսն. բայց թիւք ընտրելոցն ինքն ըստ ինքեան բազումք են: Իսկ թէ ո՞րքան՝ զանազանապէս են ասացեալ: Ոմանք ասացին թէ՛ այնչափ փրկին, որչափ անկան դելքն: Կեսք ասացին թէ՛ այնչափ փրկին, որչափ հրեշտակք մնացին: Իսկ ոմանք ասացին թէ՛ այն քան փրկին, որչափ անկան դելք. եւ հրեշտակք մնացին: Իսկ այլք ճշմարտագոյն ասացին թէ՛ ոչ ոք բաց յԱստուծոյ կարէ թուել թէ որչափ են փրկեալքն: Չի Աստուծոյ միայն յայտնին է թիւ ընտրելոցն: Վասն այսորիկ տեսեալ զթիւն ասէ թէ՛ լուայ զթիւ կնքելոցն. զի էին հարիւր

քառասուն եւ չորս հազար կնքեալ յազգէ որդւոցն Իսրայելի. եւ բաժանէ զԻրաքանչիւր ցեղսն ասելով թէ՛ (յազգէն Յուդայ երկոտասան հազար կնքեալ:) Պատասխանեն վարդապետք թէ՛ աստ թիւ եղեալ ի տեղի անհամար թոյ. զի երեք կերպիւ համար եղեալ է աստ. հարիւր քառասուն եւ չորս. եւ յամեն մէկի դնի հազարն: Հարիւրն ցուցանէ զկուսանսն. քառասունն ցուցանէ զապաշխարօղսն եւ զայրիսն. զի Տէրն քառասուն օր պահեաց: Իսկ չորսն ցուցանէ զկատարօղսն չորս աւետարանչացն: Իսկ նոքա որք փրկին՝ զանուանս որդւոյցն Իսրայելի մեկնեա բարոյականապէս: Չի յուդայն խոստովնօղ թարգմանի, եւ այլն: Երկրորդ մասն ուրախութեանն՝ է յազնուականութենէ ընկերացն. զի յարքայութեանն երկնից ոչ լինին անարգք եւ նւաստք. այլ ամենեքեան թագաւորք: Չի ասէ տեսիլն. (ելցեն ի քաղաքէն Աստուծոյ արտաքս շուք. գեղատուք, կռապաշտք, սպանօղք, պոռնիկք, եւ շնացօղք:) Իսկ սուրբքն լինին մեզ ընկեր. վասն այսորիկ ասեն վարդապետք. ի դուրս եկ սակաւ մի ի տանեղ մարմնոյդ. եւ ի դուռն կաց. եւ զմեծութիւնն Աստուծոյն նկատեա: Չի տեսաես զՄարիամ. ոչ զքոյրն Մովսէսի, այլ զմայրն Աստուծոյ ամենայն կուսանաց դասուքն: Չի թէ Մարիամ յընկղմիլն փարաւօսի երգէր գուսանօք եւ թմակօք. (օրհնեսցուք զՏէր՝ զի փառօք է փառաւորեալ:) Այսպէս եւ մեք յորժամ անցանեմք զծով կենցաղոյս, եւ թշնամիքն մեր ի դժոխս ընկղմին, սուրբ կոյսն երգէր զերգս օրհնութեան: Երրորդ մասն ուրախութեան՝ է սեր ընկերացն: զի յուրախութենէ եւ ի փառաց միմեաց ուրախանան. որպէս ասէ Պօղոս կորնթացւոց. (եթէ փառաւորի ինչ մի անդամն՝ ինդան ամենայն անդամքն ընդ նմա. այլ դուք մարմին Քրիստոսի եք. եւ անդամք յանդամոց նորա:) *Վեցերորդ՝ ուրախութիւն՝ սրբոցն՝ է ի կողմանէ մարմնոյն: Նախզի՝ զերծան ի մարմնոյ բանտես. որպէս ասէ Պօղոս հռոմայեցւոց. (այլ մի տառապեալ եմ ես. եւ ո՞վ ապրեցուցէ զիս ի մարմնոյ աստի մահու:) Եւ սաղմոսն ասաւ. (Տէր հան ի բանտէ զանձն իմ:) Երկրորդ՝ յերկիւղէ մահուն՝ որքան զամենայն ահարկու է ազատեցան. որպէս ասէ առաքեալն: (Ո՞ր է մահ յաղթութիւն քո. ո՞ր դժոխք խայթոց քո:) Եւ Սիրաք ասէ. (ո՞վ մահ՝ դառն է յիշատակ քո:) Երրորդ ուրախանան. զի ի վշտալից մարմնոյս ազատեցան. զի փոխանակ ապականութեանն՝ առնուն անապական մարմին. փոխանակ տկարութեանն՝ զօրաւոր: Եւ ընդդէմ թանձրութեանն՝ անօսր եւ թեթեւ: Եւ ընդդէմ մթացեալ մարմնոյն՝ լուսաւոր մարմինն. որպէս ասէ յառաջին կորնթացւոց: (Սերմանի ապականութեամբ, եւ յառնէ առանց ապականութեան. սրմանի անարգութեամբ, եւ յառնէ փառօք. սերմանի տկարութեամբ, եւ յառնէ զօրութեամբ. սերմանի մարմին շնչաւոր,՝ յառնէ մարմին հոգ՝որ: Ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. Որ է օրհնեալ յաւիտեանս ամեն:

Յայլմէ քարոզ եւ վերջին վասն Փառաց Արքայութեան. ի բանն Մատթէոսի որ ասէ: (Մուտ յուրախութիւն Տեառն քոյ:) Մատ. 25. 21: (Գլուխ. ԾՅԱ)

Որպէս ասէ առաքեալն. վարձք սրբոցն այնպիսի է՝ (զոր ակն ոչ ետես. ՚ ունկն ոչ լուաւ. ՚ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ:) Վասն առատութեան վարձուցն այն՝ ոչ ասաց Տէրն թէ՛ մտցէ ի քեզ ուրախութիւնն. այլ թէ դու մուտ

յուրախութիւնն: Արդ՝ գիտելի է. զի այլ վարդապետք ասեն թէ՛ տասն են մասունք երանութեանցն. հինգ առ մարինն. եւ հինգ առ հոգին: Առ մարմինն են այսք. գեղեցկութիւն. թեթեւութիւնն. զօրութիւն. առողջութիւն. եւ յաւիտենականութիւն: Եւ առ հոգին այս են. իմաստութիւն. սիրելութիւն. պատիւ. անհոգութիւն. եւ ուրախութիւն: *Առաջին մասն երանութեանն որ առ մարմինն է գեղեցկութիւնն. զոր յայսմ աշխարհի ոչ ոք կարէ ունիլ կատարելապէս. զի ո՞վ ոք ունիցի այնպիսի գեղեցկութիւն որպէս ծաղիկ. սպիտակութիւն որպէս շուշան. կարմրութիւն որպէս վարդ: Վասն որոյ ասէ Զրիստոս. (հայեցարուք ի շուշան վայրենի. որպէս աճէ. ամէն ասեմ ձեզ. եւ ոչ սողովօս զգեցաւ իբրեւ զմի ի ևոցանէ:) Բայց յարքայութեանն գեղեցկութիւն արդարոցն տուեալ լինի քան զարեգակն եօթանց աւուրց. որպէս ասէ Զրիստոս յաւետարանին: (ծագեսցին արդարքն յարքայութեան որպէս զարեգակն:) Վասն զի պարտ է մեզ նմանիլ Զրիստոսի գլխոյն մերոյ որ է ստեղծող արեգական. որպէս ասէ առաքեալն: (Նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ. կերպարանակից լինիլ մարմնոյ փառաց իւրոց:) Եւ այլ թէ՛ (յորժամ յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք:) Երկրորդ՝ երանութիւն մարմնոյն է թեթեւութիւնն. զոր ոչ ոք յաշխարհս կարէ ունիլ կատարելապէս. զի ամենայն թռչունք՝ առաւել են թեթեւ քան զմարդս: Այլ ի հանդերձեալն՝ նմանիմք հրեշտակաց. զոր օրինակ՝ ասէ Դանիէլ թէ՛ (եւառ վաղվաղակի հրեշտակն զգագաթանէ ամբակումայ. եւ տարաւ առ Դանիէլ ի Բաբելօս ի գուբն առիւծուց. եւ նոյն ժամայն դարձոյց:) Եւ ի կորնթացւոց ասէ Պօղոս (նորոգիցուք յանկարծակի յական թօթափելն:) Չոր օրինակ՝ որպէս արեգակն ծագէ յարեւելս՝ եւ լոյս նորա նոյն ժամայն յարեւմուտս հասանի. ըստ այնմ, (իբրեւ կայծակն ընդ եղեգն ընթացին:) Որոյ պատճառն է՝ զի հոգիք սրբոցն զամենայն զոր ինչ կամին՝ Աստուած կատարէ զամենայն. որպէս ասէ սաղմոսն. (զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր:) Երրորդ՝ երանութիւն եւ փառք մարմնոյն է զօրութիւնն. զոր յաշխարհս ոչ կարեմք ունիլ կատարելապէս: Չի զի՞նչ է զօրութիւն մարդկան. որ նաւ մի լի բազում մարդօք՝ թէ հողմ ընդդէմ ելանէ՝ ոչ կարեն շարժել զնա. այլ ամենեքեան յիմարին. որպէս ասէ սաղմոսն. (խռովեցան սասանեցան որպէս արբեալք. եւ ամենայն իմաստութիւն ևոցա ընկլաւ:) Բայց երանելիքն այնչափ զօրութիւն ունին. զի առանց աշխարատանց թէ կամին՝ զամենայն երկինսն շարժեն. զի զօրութեամբ նմանիմք հրեշտակաց. որպէս ասէ տէրն յաւետարանին. (եղիցին ամենեքեան որպէս հրեշտակս Աստուծոյ:) Չորրորդ՝ մասն երանութեան եւ փառաց մամնոյն՝ է առողջութիւնն. զոր յաշխարհի ոչ ոք ունի կատարեալ. եւ այս երեւի այնու՝ զի յորժամ մանուկն ծնանի, նախ աղաղակէ եւ զտանջանսն ցուցանէ. սկսանի քաղցնուլ՝ ծարաւիլ: Բայց ի կատարեալ առաողջութիւնն՝ ի յարութեանն հասանիմք. որպէս ասէ սաղմոսն. (բժշկեսցէ զամենայն հիւանդութիւնս քո.) եւ յայլ ուր ասէ. (առողջութիւն արդարոց ի տեառնէ է:) Եւ տեսիլն ասէ. (ջնջեսցէ Աստուած զամենայն արտօսը յաչաց սրբոցն. եւ մահ ևոցա ոչ եւս տիրեսցէ. ոչ սուգ. եւ ոչ աղաղակ. եւ ոչ ցաւ. զի աչն Աստուծոյ ծածկեսցէ զնոսա:) Յինգերորդ՝ երանութիւն եւ փառք սրբոցն՝ է յաւիտենականութիւնն. զոր ոչ ոք կարէ ունիլ կատարեալ յաշխարհս. որ հաստատէ զայլ նախ ասացեալ երանութիւնսն. զի զի՞նչ օգուտ էին մեզ այլ ամենայն երանութիւնքն թարց յաւիտենականութեան: Եթէ ոք ունիցի զամենայն երանութիւն աշխարհի՝

յորժամ մեռանի, ոչ ինչ է. որպէս ասէ Եսայի. (այնպէս լինի, որպէս թէ ոք յերազի ուտիցէ. եւ յորժամ արթնուցու՝ ոչ ինչ ունի:) Բայց արդարքն յաւիտեան մասն ընդ Աստուծոյ. որպէս ասէ Եսայի. (արդարքն յաւիտեան կեցցեն. եւ ի տեառն են կեանք ևոցա:) Եւ աւետարանն ասէ. (արդարքն ձայնի իմում լսեն. եւ զկնի իմ գան. եւ ես տամ ևոցն զկեանս յաւիտենականս:) Եւ Յօհաննու տեսիլն ասէ. (արքայութիւն յաւիտենից որ ոչ անցանէ:) Եւ Պօղոս ասէ վասն Զրիստոսի թէ՛ (ոչ մեռանի. եւ մահ նմա ոչ եւս տիրէ:) Եւ Զրիստոս ասէ վասն սրբոցն թէ՛ (յիս բնակեցցին եւ ես ի նոսա:) Ապա ուրեմն որպէս Զրիստոս յաւիտեան ոչ մեռանի. նոյնպէս եւ սուրբք նորա: Այսոքիկ են փառք եւ երանութիւն մամնոյն: *Իսկ առ հոգին եւս վերաբերին այլ եւս հինգ: Առաջին մասն երանութեան որ առ հոգին վերաբերի՝ է իմաստութիւնն. զոր յաշխարհս ոչ ոք ունի կատարեալ. զի ոչ ոք է որ կարէ գիտել թէ զի՞նչ է հոգին. եւ կամ թէ զինչ կայ ի ներքս ի մարմինն իւր. եւ թէ մարդն զինքն ոչ գիտէ, երեւի թէ ոչ ինչ գիտէ: Բայց ի հանդերձեալն՝ երանելիքն զամենայն ինչ գիտեն. վասն զի ամեայն իմաստութեան նախագաղափար Աստուած է. եւ յայնժամ՝ դէմ յանդիման. որպէս ասէ առաքեալն. (այժմ ոպէս հայելեալ՝ այլ յայնժամ դէմ յանդիման տեսանեմք:) Չի ասէ Յօհաննէս. (ամենայն ինչ նովաւ եղել:)

Ապա ուրեմն յորժամ տեսանեմք զնա՝ զամենայն տեսանեմք եւ ճանաչեմք: Երկրորդ մասն հոգեւոր երանութեանն՝ է սիրելութիւնն. զոր կատարեալ ոչ ոք ունի յաշխարհի. զի թեպէտ հայր սիրտ զորդին. սակայն բազում անգամ լինին թշնամիք միմեանց: Նոյնպէս եւ թէ եղբարք սիրեն զմիմեանս, յետոյ լինին թշնամիք միմեանց: Եւ բազում սրելիք հարց՝ լինին թշնամիք որդւոց: Իսկ ի հանդերձեալն՝ կատարեալ լինի սեր առանց թշնամութեան: Չի ասէ առաքեալն. (մեք ամենեքեան մի անգամք եմք ի Զրիստոս Է:) Արդ՝ որպէս անդամք մարմնոյն սիրով միացեալ են ի մարմինն. նոյնպէս եւ մեք սիրով միանամք ի Զրիստոս. որ է ճշմարիտ սիրելի. որպէս ասէ յաւետարանին. (որ սիրտ զիս՝ սիրեցցի ի հօրէ իմմէ. եւ ես սիրեցցի զնա:) Երրորդ մասն երանութեանն հոգեւոր՝ է պատիւն. զոր ոչ ոք ունի կատարելապէս յայսմ աշխարհի. որպէս ասի յառակաց. ուրախութեան հետեւի սուգ: Այլ ի հանդերձեալն՝ կատարեալ լինի պատիւ սրբոցն. զոր օրինակ՝ եթէ լինի աղքատ ոք, եւ յամենայն միսիթարութեաց ունայն, եւ ամենայն խոցուածովք եւ հիւանդութեամբ լցեալ մերկ եւ գարշելի, եթէ թագաւոր ոք յորժամ զօրեղ գթացեալ ի նա միսիթարէ, առողջացուցանէ եւ զգեցուցանէ եւ որդեգիր իւր առնէ, լինի այն մեծ պատիւ իւր: Արդ՝ աղքատն այն ցուցանէ զմարդկային բնութիւնս. որ վասն մեղաց եղել անմիսիթար յողորմութենէն Աստուծոյ. եւ խոցեցաւ լեզուք բանսարկւին. եւ մերկացաւ ի շնորհացն Աստուծոյ. եւ յորդիութենէն Աստուծոյ եղել որդի բարկութեան եւ ծառայ սատանայի: Իսկ թագաւորն թագաւորաց՝ է Աստուած. որ ետես զբնութիւնս յայսպիսի տառապանս եւ միսիթարեաց ասելով: (Ոչ եկի՝ եթէ ոչ առ աչխարս կորուսեալս:) Եւ Եսայեալ ասէ. (միսիթարել զբեկեալս սրտիւ:) Եւ բժշկեաց զխոցուած օձին, յորժամ ետ զորդին իւր որ խոցեցաւ վասն բնութեանս. եւ զգեցոյց մեզ զհանդերձս շնորհաց իւրոց. որպէս ասէ Եսայի: (Կրկին պատմուճանաւ զգեցոյց:) Կրկին ասէ. այսինքն, ասա շնորհօք. եւ ի ծառայութենէ սատանայի արար իւր որդեգիրս. որպէս ասէ Պօղոս: (Եղիջիք նմանօք Աստուծոյ՝ որպէս որդիք սիրելիք:) Նաեւ ժառանգս արքայութեանն.

որպես ասէ Պօղոս. (եթէ ժառանգ, ապա եւ ժառանգակիցք Քրիստոսի:) Ապա ուրեմն մեծ պատիւ է լինիլ որդի Աստուծոյ եւ ժառանգ արքայութեան: Չորրորդ մասն երանութեան որ առ հոգին՝ է անհոգութիւն. զոր ոչ ոք կատարեալ ունի յաշխարհի. վասն զի ամենայն ինչ աշխարհի չարչարանօք ստացեալ լինի. որպէս ասէ ի ծննդոց. (քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո:) Իսկ յարքայութեանն՝ է բոլորովին անհոգութիւն. վասն զի ոչ հոգան զկերակուր. զի ասէ Քրիստոս. (սստուցից զձեզ ի սեղան հօր իմոյ:) Եւ ոչ վասն հանդերձից. զի ասէ սաղմոսն. (եզերծ յինէն զքուրծ. եւ ինձ զգեցոյց զուրախութիւն:) Նաև ոչ վասն հանգստեան. զի ասէ Քրիստոս. (եկայք առիս ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք. եւ ես հանգուցից զձեզ:) Նաեւ ոչ վասն ընկերակցութեանն. զի են հրեշտակք եւ սուրբք. զոր ասէ Յօհաննէս ի տեսիլն թէ՛ (են ամենեքեան թագաւորք եւ թագուհիք:) Այլեւ ոչ վասն յափշտակութեան իմիք. զի ասէ Քրիստոս թէ՛ (ոչ ոք կարէ յափշտակել զնոսա ի ձեռաց հօր իմոյ:) Յինգերորդ երանութիւն հոգւոյն՝ է ուրախութիւն. զոր ոք ունի կատարեալ յաշխարհի. զի ուրախութիւն աշխարհիս խաբօղ է. որպէս ասէ ժողովօղն. (զծաղրն համարեցայ սխալանս. եւ ուրախութեանն ասացի թէ՛ սնտոի ես եւ խաբես:) Իսկ երանելիքն՝ ունին զամենայն կատրեալ ուրախութիւնս. եւ երեւի այսու՝ զի երանելիքն զփառս այլոց ինքեանց համարին: Արդ՝ նոքա բիւրք բիւրուց. եւ հազարք հազարաց յամենայն ազգաց որոց ոչ գոյ թիւ: Իսկ յորժամ զփառս ամենեցուն մի ոք ինքեան համարի, այնչափ լինի եւ ուրախութիւնն այն: Եւ թէ՛ զփառս այլոց ինքեանց համարին. յայտ է ի մարմնաւոր անդամս. զի յորժամ զգեցուցանեն զգլուխն՝ շնորհակալ լինի բերանն. եւ յորժամ հարականեն՝ բերանն աղաղակէ ընդէ՞ր հարկանես զիս: Եւ յորժամ հարկանեն, աչքն լայ նոյնպէս եւ սուրբքն զփառս, այլոց ինքեանց համարին. եւ այս է կատարեալ ուրախութիւն սրբոցն: Այսոքիկ են փառք հոգւոյ եւ մարմնոյ զոր ասացաք թէ, առնուն սուրբքն յարքայութեանն: *Այժմ ասելի է վասն տեղոյ փառացն որ է արքայութիւնն: Արդ՝ թեպէտ արքայութիւնն ի բազում տեղիս օրինակեցաւ. բայց առաւել յայտնի յերիս տեղիս: Այսինքն. Ի քաղաք Աստուծոյ. որպէս ասէ տեսիլն. (քաղաքին այնմիկ ոչ են պիտոյ արեգակն եւ լուսին. զի արեգակն նոցա Քրիստոս է:) Նաեւ ի տան. որպէս ասէ սաղմոսն. (ի տուն Տեառն ուրախացեալ երթիցուք:) Այլեւի պարտիզի. որպէս ասէ յերգսն. (եկ իի պարտեզ իմ: եւ կերիցուք զպտուղ ծառոյ իմոյ:) *Վասն առաջնոյն գիտելի է՝ զի Յօհաննէս ասէ ի տեսիլն: (Տեսի քաղաք մեծ եւ գեղեցիկ. որոյ էին երկոտասան դրունք. եւ էր քառակուսի. եւ նման սպիտակ ապակւոյ:) Արդ՝ վասն երկոտասան դրանցն գիտելի է՝ զի երկոտասան դրունքն օրինակին երկոտասան ցեղիցն Իսրայելի եւ որդոցն որք են այսոքիկ: Յովսէփ. Բենիամին. Դան. Իսաքար. Չաբոդօս. Ռուբէն. Յուդա. Դեւի. Շմաւոն. Գաթ. Ասեր. Նեփթաղիմ: Եւ բաժանին սոքա չորեք կուսի. այսինքն, ի կողմանէ արեւելից. յարեւմտից. ի հիւսիսոյ. եւ ի հարաւոյ: Ի կողմանէ արեւելից՝ էին դրունք երեք. այսինքն, Յովսէփ. Բենիամին. եւ Դան: Յովսէփ թարգմանի աճումն. որ ցուցանէ զկատարումն մարդրկային բնութեանս որ էր յանմեղութեանն: Բենիամին թարգմանի որդի ցաւոց. որ ցուցանէ զանկումն բնութեանս յանմեղութենէն ի մեղս: Դան թարգմանի դատաստան. որ դատեաց Աստուած զնախահարսն վասն մեղացն: Եւ ի կողմանէ հարաւոյ դրունք երեք. այսինքն, Շմաւոն. Իսաքար. եւ Չաբոդօս:

Սոքա ցուցանեն զնորոգումն բնութեանս: Շմաւոն կոչիլն թարգմանի լսող. եւ այս ցուցանէ զհնազանդութիւնն Զրիստոսի. որ լսեաց հօր եւ հնազանդ եղեւ մինչեւ ի մահ. եւ կենդանացոյց զբնութիւնս. որպէս ասէ առաքեալն. (որպէս Ադաման ամենեքեան մեռան. նոյնպէս եւ Զրիստոսի ամենեքան կենդանացին: Իսաքարն թարգմանի յաիշօղ զՏէր. եւ այս ցուցանէ զյիշումն Աստուծոյ յետ մեղանացն. որպէս ասէ Եսայեաւ. (մի թէ մոռանայցէ՞ մայր զմանուկ իւր. եւ նա թէ մոռանայցէ, ես ոչ մոռացայց ասէ Տէր. վասն զի ողորմած եւ գթած եմ ես Տէր Աստուած ձեր:)) Չաբողոնն թարգմանի զօրութիւն. եւ նշանակէ զզօրութիւնն Զրիստոսի՝ որ յաղթեաց զաշխարհս եւ զսատանայ. եւ զօրացոյց զմեզ. որպէս ասէ Յօհաննէս. (քաջալերիցարուք՝ զի ես յաղթեցի աշխարհի:)) Եւ ի կողմանէ հիւսիսոյ՝ դրունք երեք. այսինքն, Ռուբեն. Յուդա. Ղեւի. եւ սոքա ցուցանեն զդատաստանն վերջին: Ռուբենն թարգմանի տեսող. եւ նշանակէ զայն՝ որ մեղք ամենայն մարդոյ յայտնին ի դատաստանին. այսինքն, զոր յետ նորոգմանն գործեցին. եւ մոռացան զերախտիս նորա. զոր ասէ սաղմօսն. (զերախտիս բարեկամին քոյ մի մոռանար:)) Վասն այն սպառնայ Եսայեաւ տսելով. (յայտնեցից զամենայն առականս ամենայն ազգաց.) վասն այսր ասէ Պօղոս: (Չի՞նչ պտուղ ունէիք յայնժամ՝ որք այժմ զամօթի հարեալ էք:)) Յուդա թարգմանի խոստովանող. եւ ցուցանէ զայն՝ որ յորժամ դատապարտէ Զրիստոս զմեղաւորս, խոստովանին ասելով զբանն սաղմօսին որ ասէ. (այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց:)) Նաեւ ասեն զբան առաքելոյն որ ասէ. (թոշակ մեղաց մահ է.) եւ դառնան ի դժոխս. որպէս ասէ սաղմօսն. (դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս:)) Ղեւին թարգմանի յաւելումն. եւ նշանակէ զկատարեալ վարձ սրբոցն. եւ տանջանս մեղաւորացն. զոր մինչեւ ցայժմ ոչ ունէին կատաեալ. որպէս ասէ Սողոմօն. (տաց մինչեւ ցկես թագաւորութեան իմոյ:)) Իսկ ի դատաստանին տայ կատարեալ սրբոցն ասելով: (Եկայք օրհնեալք հօր իմոյ. ժառանգեցէք զոր պատրաստեալ է ձեզ:)) Եւ մեղաւորացն ասէ. (կուտեցից զամենայն չարիս ի վերայ նոցա:)) Իսկ ի կողմանէ արեւմտից՝ դրունք երեք. այսինքն, Գաթ. Ասեր. Նեփթաղիմ. սոքա նշանակեն զյատուկ վարձ երանելեացն: Գաթն թարգմանի պնտեալ զմէջ. որ ցուցանէ զկատարեալ մաքրումն սրբոցն յամենայն պղծութեանց. եւ զհաստատիլն եւ զլուսաւորիլն. որպէս ասէ Զրիստոս. (եղիցին գօտիք ձեր պնտեալ ընդ մէջ եւ ճրագունք լուցեալք:)) Չի որպէս գօտին պնտէ զմէջն եւ պատէ. նոյնպէս հաստատեալ են ի փառսն. նաեւ պատեալ են յամենայն կողմանց: (Եւ ճրագն լուցեալ.) այսինքն, զի լուսովն իւրով տեսանեմք զինքն. որպէս ասէ սաղմօսն. (լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս:)) Ասերն թարգմանի երանութիւն. եւ այս նշանակէ զտեսութիւն աստուածութեանն եւ մարդկութեանն. որպէս ասէ Յօհաննէս. (այս են յաւիտեանական կեանք՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած. եւ զոր առաքեցեր զՅիսուս Զրիստոս:)) Նեփթաղիմն թարգմանի լայնութիւն. որ ցուցանէ զառատութիւն ամենայն բարեաց արքայութեան: Չի ասէ Պօղոս. (պատրաստ եղերուք հասանիլ ընդ ամենայն սուրբս. ու է լայնութիւն. երկայնութիւն. բարձրութիւն. եւ խորութիւն:)) Այսոքիկ են երկոտասան անուանք որդոցն Իսրայելի եւ գործք ասացեալք՝ որք հոգեւորք դրունք կոչին. զի մեզ սօքօք բացեալ լինի արքայութիւն: *Նաեւ եր քաղաքն այն քառակուսի. որ ցուցանէ զչորս մարդկային առաքինութիւնսն. այսինքն, զխոհեմութիւնն.

զարդարութիւնն. զարիութիւնն. եւ զողջախոհութիւնն: Սոքա չորս
 առաքիւնութիւնքս՝ նշանակին չորս գետովն որք ելանեն ի դախտեն.
 ոռոգանեն եւ պտղաբերեն գերկիր: Նոյնպէս առաքիւնութիւնքս այսոքիկ՝
 արբուցանեն զմեզ. եւ պտղաբերեն ի մեզ զանազան առաքիւնութիւնս: Այլեւ
 եր քաղաքն այն ի սպիտակ ապակւոյ. ցուցանէ թէ՛ իմաստութիւնն
 աշխարհիս այս խաւար է: Իսկ իմաստութիւն արքայութեանն՝ յստակ եւ
 պայծառ. որպէս ասէ Պօղոս. (փոքր ի շատէ գիտեմք. եւ փոքր ի շատէ
 մարգարեանամք. եւ փոքր ի շատէ իմանամք. այլ յայնժամ դէմ յանդիման
 տեսանեմք զիմաստութիւնն հօր զՅիսուս Քրիստոս.) եւ նովաւ պայծառանայ
 իմաստութիւն մեր. որպէս ա սէ առաքեալն. (պայծառառացք նովաւ ամենայն
 բանին եւ ամենայն գիտութեամբ:) *Վասն երկրորդին գիտելի է՝ զի
 արքայութիւնն ասի տուն. որպէս ասէ սաղմոսն. (երանելիք են որք
 բնակեալք են ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրինեսցեն զքեզ:)
 Վասն տասն այս՝ ասէ սողմօն. (իմաստութիւն շինեաց իւր տուն. եւ
 կանգնեաց սիւնս եօթն:) Սիւնս այս՝ ցուցանէ զեօթն դասս սրբոցն որք են
 այսոքիկ: Նախահարք: Մարդարէք: Առաքեալք: Մարիրոսք: Վարդապետք:
 Խոստովանօքք: Եւ Կուսանք: Սոքա կոչին եօթն սիւնք. զի հաստատեցին
 զնուիրեալ եկեղեցիս վարուք բանիւ եւ օրինակօք: Չի նախահարքն
 հաստատեցին զեկեղեցի օրինակաւ հնազանդութեանն Աստուծոյ. ելին ի
 տանէ եւ յերկրէ եւ յազգէ իւրեանց: Մարգարէք յայտնութեամբ բանիցն.
 որպէս ասաց Եսայի. (ահա կոյս յղացի եւ ծնցի որդի. եւ կոչեսցի անուն
 նորա Էմանուէլ.) որ հաստատ հիմն է եկեղեցւոյ. որպէս ասէ առաքեալն.
 (զհիմն այլ ոք ոչ կարէ դնել. քան զեղեալն որ է Յիսուս Քրիստոս:) Առաքեալք
 հաստատելով զհաւատն Քրիստոսի. եւ պայծառ ցուցանելով զեկեղեցի
 քարոզութեամբն իւրեանց ժրաջան աշխատանօք. որպէս ասէ առաքեալն.
 (զառ ի յատոյսն մոռացեալ եմ, եւ յառաջադէմսն նկրտիմ:) Մարտիրոսք
 համբերութեամբ տանջանոց եւ վկայելով ճշմարտութեան առանց ամօթոյ.
 որպէս ասէ սաղմոսն. (խօսելի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց եւ ոչ
 ամաչելի:) Վարդապետք ուսմամբն իւրեանց լուսաւորելով զխաւարեալսն
 մեղօք. եւ ընդդէմ գոլով հերձուածողաց: Խոստովանօքք ապաշխարութեամբ
 եւ տալով օրինակ բարի եւ առաքիւնութեանց: Եւ կուսանք պահելով
 զսրբութիւնն. եւ յաղթելով զցանկութիւն մարմնոյ աղօթելով զտիւ եւ զգիշեր:
 Սոքա եօթն դասք սրբոցս՝ հաստատեցին զստորինս եկեղեցի. եւ այժմ
 զարդարեն զյաղթօղն եկեցեցի փառօք երանութեանն իւրեանց: *Եւ վասն
 երրորդին գիտելի է՝ զի արքայութիւնն կոչի պարտեզ: Չի պարտեզն հինգ
 յատկութիւն ունի. այսինքն, Կանաչութիւն ծաղկանց եւ տերեւոց: Երգ եւ
 ձայն թռչնոց: Կակղութիւն խոտոց: Յոտ ծաղկանց: Եւ Յամս պտղոց: Յայս
 հինգ յատկութեանց այժմ հեշտանան զգայութիւնք մեր: Ի կանաչութենէ
 տերեւոցն տեսանելիքն: Ի ձայնէ թռչնոցն լսելիքն: Ի կակղութենէ եւ ի
 խոտոցն շօշափելիքն: Ի հոտոյ ծաղկանցն հոտոտելիքն: Եւ ի համոց
 պտղոցն ճաշակելիքն: Արդ՝ յարքայութեանն որ կոչի պարտեզ՝ նոյնպէս
 հինգ կերպիւ հեշտանան զգայութիւնք մեր: Քանզի տեսանելիքն հեշտանան
 ի տեսութենէն Քրիստոսի, որ ստեղծօղ է ամենայն կանաչութեան. որպէս
 ասէ Քրիստոս. (տեսանիցէք զիս եւ ուրախ լինիցին Սիրաք ձեր:) Լսելիքն
 ձայնիւ օրինութեան սրբոց եւ հրեշտակաց. որպէս ասէ տեսիլն: (Լսելի զձայն
 հրեշտակաց բազմաց՝ որք ասէին ձայնիւ մեծաւ: (Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ Տեր

զօրութեանց:) Իսկ շօշափելիքն կակղութեամբ հանդերձիցն. որպէս ասէ տեսիլն: (Տուաւ նոցա արկանելիս սպիտակս. եւ ասացաւ նոցա զի հանգիցեն:) Յոտոտելիքն յաղօթից սրբոցն. որպէս ասէ տեսիլն. (եւ ունէին իւրաքանչիւր բուրվառ ինկալի ի ձեռս իւրեանց՝ որ է աղօթք սրբոցն:) Իսկ ճաշակելիքն՝ ի քաղցրութենէ աստուածութեանն. որպէս ասէ տեսիլն: (Սիրելեաց իմոց տաց ուտել ի ծառէն որ ի մէջ դրախտին:) Դրախտն ցուցանէ զարքայութիւնն. եւ ծառ կենացն՝ զՅիսուս Քրիստոս. որք կերակրին սուրբքն յուրախութենէ երեսաց նորա. որպէս ասէ սաղմոսն. (ուրախութեամբ երեսաց քոց արարեր զմեզ ուրախ:) Արդ՝ վասն ամենայն վերոյ գրեալ երանութեանս ասեն սուրբ վարդապետք: Անդ լինի տգեղութիւն գեղեցկութիւնն Աբիսողոմայ: Անդ լինի յամբողջութիւն արագութիւնն Ասայելի: Անդ համարեցի տկարութիւն ուժեղութիւնն Սամփսոնի: Անդ կարճակեցութիւն համարեցի երկարակեցութիւնն Մաթուսաղային: Անդ աղքատութիւն երեւեցի թագաւորութիւնն օգոստոսի: Քանզի այնքան են մասնաւոր ուրախութիւն սրբոցն՝ զոր ունի իւրաքանչիւր սուրբ յինքեան, զի միայն գիտութիւնն Աստուծոյ կարէ ըմբռնել զայն: Եւ զայս ոչ վասն սաստկութեան ինդութեանն, այլ վասն թուոյ ինդութեանց: Քանզի այնչափ են անտի ինդութիւնքն, մինչ զի ամենայն թուականք աշխարհիս ոչ կարեն թուել: Եւ ոչ ամենայն երկրաչափք չափել: Եւ ոչ ամենայն ճարտասանք արտայայտել բանիւ: Չի թէ ամենայն տերեւք ծառոց՝ եւ ամենայն աւազք որք յեզր ծովուն լեզու լինին, ոչ ինչ կարեն ասել յայնմանէ զոր ունին սուրբքն յարքայութեանն: Արդ՝ վասն վերոյ գրեալ երանութեանց արքայութեանն տեսանելի է թէ՛ ո՞վք լինին արժանաւորք այսմ: Աւետարանն հրամայոյ ասելով: (Որ արասցէ զկամս հօր իմոյ՝ նա մտցէ յարքայութիւնն:) Եւ թէ զի՞նչ են կամքն Աստուծոյ. ասէ առաքեալն. (այս են կամքն Աստուծոյ. սրբութիւնդ ձեր:) Եւ զի չորս կերպիւ յորդորիմք ի սրբութիւնն: Նախզի՛ ասէ դէտաացւոց. (սուրբք եղերուք. զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր:) Եւ զի վասն սրբելոյն զմեզ չարչարեցաւ. որպէս ասէ Պօղոս: (Եւ զի սրբեցէ զժողովուրդ իւր արեամբն, արտաքոյ դրանն չարչարեցաւ:) Երկրորդ՝ Եսայի ասէ: (Լուացարուք սրբեցարուք՝ ընկեցէք զչարիս ձեր յանձանց ձերոց:) Երրորդ՝ յերկրորդ Պետրոսն. (փոյթ անձին ունիջիք. անարատ եւ սուրբ լինիլ ձեզ:) Եւ զի զսրբութիւնս զայս ամենայն բնութիւն ջանայ ունիլ. քանզի ծովն ի բաց հանէ յինքենէ զմեռեալ դիակունս: Եւ զինի եռացեալ սրբէ զինքն. եւ ամենայն ինչ որ եփեալ լինի՝ ի բաց հանէ յինքենէ զաղտեղութիւնն. նաեւ հրահալելիքն: Ո՞րչափ առաւել բանական ստեղծուածն պարտ է մաքրել զինքն յաղտեղութենէն մեղաց: Չորրորդ՝ ասէ ավետարանն. (երանի այնոցիկ՝ որք սուրբք են սրտիւք. զի նոքա զԱստուած տեսցեն:) Չի զփառսն զայն տեսանել շնորհեցէ մեզ Տէր երանութիւնն Յօր. առաքիւնութիւնն Որդւոյ. եւ պարգեւք Յոգոյն Սրբոյ ամեն:

Պատճառ Յղութեան Ովհաննու կարապետին. որ ի տասն հոկտեմբերի կատարի:

Քանզի յայսմ ամի թուական Շ եկին՝ Էր ՌՆԺԸ: Եւ հոռոմոցն մահը: Եւ հոռոմոցն մահը: Իսկ հայոյն՝ ՇԸ: Վերադիր հոռոմոցն Գ: Աւագ լրումն յապրիլի ԺԲ. օրն կիրակէ: Եօթներեակն Դ: Իսկ վերադիր եբրայեցւոցն ԻԴ:

Լրումն ի սիսանի ժԲ: Եօթներեակն Է: Արդ՝ թշրին ամսոյ ի Ժ. Եւ ի սեպտեմբերի ԻԷ՝ եր սկիզբն տօնիցն՝ յորում ամենայն Իսրայել ժողովիր. Եւ մտանէր քահանայապետն ի սրբութիւն սրբոցն. Ե օր որթաքաւութեան՝ Եւ Է օր տաղաւարահարացն տօնէին. այսինքն ժԲ օր: Եւ ամենայն Իսրայելի ժողովիր յերուսաղէմ. Եւ չէր ումէք հնար երթալ ի տուն իւր, մինչ ի կտրումն տօնիցն: Եւ յաւետ առաւել քահանայապետին: Որպէս վկայէ Ղուկաս թէ, յետ աւուրցն այնոցիկ՝ (իբրեւ լցան աւուրք պաշտամանն, ապա գնաց Չաքարիա ի տուն իւր:) Եւ ոչ ասէ Եզական օր պաշտաման. այլ թէ աւուրք պաշտամանց: Չոր ցուցանէ անսխալ թշրին ի Ժ սկիզբն տօնին: Կրկնակն Ե. Եւ Է երեակն Է. լինի ԻԲ՝ երթ ԷԷ. մնաց մէկ՝ օրն կիրակի: Նոյնպէս Եւ ի սեպտեմբերի ԻԷ. կրկնակն Ե. Է. երեակն չորս. լինիլ ԼԶ. գնա ԷԷ. մնաց մէկ՝ օրն կիրակի. Եւ սկիզբն տօնին: Եւ ի թշրին ԺԵ. Եւ ի հոկտեմբերի Բ. եր սկիզբն տօնի տաղաւարահարացն. Եւ օրն ուրբաթ: Եւ կատարումն տօնի տաղաւարահարացն՝ լինի ի թշրին ԻԲ: Եւ ի հոկտեմբերի ութն օրն հինգ շաբաթի: Եւ ի սմին աւուր՝ ոչ գնաց Չաքարիա ի տուն իւր. վասն զի յետին օր եր: Եւ յոլովագոյն էին մատուցմունք գոհիցն Եւ պատարագացն. Եւ ոչ կարէր պարապիլ մինչեւ յերեկոյ՝ որ երթայր ի տուն իւր: Այլ ի թշրին ԻԳ. Եւ ի հոկտեմբերի թ գնաց Չաքարիա ի տուն իւր. Եւ օրն ուրբաթ: Եւ եղեւ յղութիւն Եղիսաբեթի ի թշրին ԻԴ. Եւ ի հոկտեմբերի Ժ. Եւ օրն շաբաթ: Բայց ոմանք ի թշրին ԻԳ ասեն: Եւ յաւուր ուրբաթու: Եւ այս սխալ Է. զի զպատկեր աւուր աւետեաց կուսին Մարիամու սխալ Է. Եւ բերէ յերեք շաբաթի: Վասն որոյ թշրին ԻԳ. Եւ ի հոկտեմբերի Ժ՝ Է յղութիւն Եղիսաբեթի յաւուր շաբաթու: Եւ այս վասն չորից: Նախզի՝ շաբաթն կարապետ Է կիրակէին որ Է տերունի: Եւ Ովհաննէս կարպետ Տեառն մերոյ Քրիստոսի առաջնոյ գալստեանն: Չի ասեր՝ (ապաշխարեցէք՝ զի մերեալ Է արքայութիւնն երկնից:) Այլ հոգւոցն բանտելոց Եւ երկրորդին. զի հոգւովն Եղիայի եկն: Երկրորդ՝ շաբաթն հանգիստ լսի. Եւ Ովհաննէս՝ Է հանգիստ կամացն Աստուծոյ երրեակ միութեանն որ ի Յորդանան: Երրորդ՝ շաբաթն լրումն Է անցեալ աւուրք շաբաթուն. Եւ սկիզբն հանդերձելոյն. իսկ Ովհաննէս լրումն հնոյն Եւ մարգարէից. Եւ սկիզբն նորոյս Եւ առաքելոց: Չորրորդ՝ շաբաթն մերձ գոլով կիրակէին, Եւ Ովհաննէս փեսաւեր փեսային. ձայն բանին. Եւ մկրտիչ նմին. Նաեւ ազգակից նորին: Վասն որոյ ի հոկտեմբերի Ժ յաւուր շաբաթու առնեմք զյղութիւնն Ովհաննու ի մաքուր արգանդի: Իսկ այլք յազգաց տօնեն զյղութիւնն Եղիսաբեթի ի սեպտեմբերի Իսրայելէ: Եւ այս կրկին կերպիւ երեւի սխալ: Մին՝ զի հակառակ գտանին աւետարանին Ղուկայ՝ որ ի լրման տօնիցն ասէ զյղութիւնն: Երկրորդ՝ զպատկեր օր աւետեաց կուսին՝ ոչ կարեն բերել ի չորեք շաբթի. այլ ի հինգ շաբաթի: Եւ զձնունդն ոչ կարեն բերել ի հինգ շաբաթի. այլ ի կիրակի: Չոր պարտ եր ըստ նոցայն սնտի կարծեացն՝ Եւ մոլոր մտացն՝ լինիլ յուրբաթի ծնունդն. զի այսպէս Է կարգն: Չի յորժամ յղութիւնն լինի ի Դ շաբաթի՝ լինի ծնունդն ի Ե շաբաթի. Եւ յորժամ առնեն զյղութիւնն ի Ե շաբաթի, պարտ Է լինիլ ծնունդն ի յուրբաթի: Այլ նոքա մոլորեալ սխալեացն ի ճշմարտութենէն: Իսկ մեք դասք ուղղափառաց՝ գնամք ըստ վերոյգրեցելոցդ. Եւ:

Աստանօր գիտելի Է զքարոզ աւագ տօնիցն գլխաւորաց՝ որպէս բոլորեալ զմասն տարւոյն զվերջին գիծն ի սկիզբն յանկելով գրոցս. ի փառս

եւ ի գովութիւն անսկզբան անվախճան յաւիտենի ամէն: Նորին քարոզ յաղագս մեծահանդես եւ փառաւորագոյն չորեսի տօնին՝ որ նախ քան զծնունդն փրկական պատուի յեկեղեցիս: (Գլուխ. ԾՅԳ)

Ամենայն տօնք եւ հանդեսք Սրբոց նահատակաց՝ մեծապատիւք եւ միանգամայն տօնախմբօղ եւ հանդիսասեր անձանց: Եւ մանաւանդ նախամեծ եւ գերահռչակ՝ յոգնապատիւ եւ փառաւորեալ տօնք եւ ուրախութիւնք յիշատակաց մեծի մարգարէին Դաւթի. եւ Յակօբայ արդարոյն. եւ այլ վեհիցն ըստ կարգի եղեալ: Նախզի՝ գլխաւորաց առաքելոց եւ մարգարէից են տօնքս այսոքիկ: Երկրորդ՝ զի գլուխ եւ կատարումն են ամենայն տարեկանաց տօնից եւ սրբոց հանդիսից: Երրորդ՝ զի սկիզբն եւ մերձաւոր վկայք են մեծի տօնի ծննդեան եւ յայտնութեան տեառն մերոյ Յիսուս Զրիստոսի: Եւ այս վեց իմն եղանակաւ: Նախզի՝ հինմս հաստատութեան սուրբ եկեղեցոյս՝ մարգարէք եւ առաքեալքն են: Եւ գլուխ անկեան եւ կատարումն՝ Է Յիսուս Զրիստոս: Երկրորդ՝ զի մարգարէքն եւ առաքեալքն են վկայք հաստաուն: Չի մարգարէն հոգւովն ետես. եւ առաքեալքն ականատեսք եղեն մարմնացեալ բանին Աստուծոյ: Երրորդ՝ ի հինն պատուական եր Դաւիթ. զի զոր հրեայքն պատուէին՝ յանուն Դաւթի մեծարէին: Եւ ի նորս զՅակօբոս կարգեցին առաջին եպիսկոպոս Երուսաղէմի. եւ արդար կոչէին զնա. եւ որ արդար է՝ ոչ ստէ: Չորրորդ՝ զի աստուածահայր կոչի Դաւիթ. ըստ այնմ, (զիրք ծննդեան Յիսուսի Զրիստոսի որդւոյ Դաւթի:) Եւ զՅակօբոս՝ եղբայր տեառն անանէ Պօղոս. ըստ այնմ, (զայլ ոք յառաքելոցն ոչ տեսի՝ բայց միայն զՅակօբոս գեղբայր Տեառն:) Ապա արժանաւոր վկայք են հայր եւ եղբայր նորին ըստ մարմնոյ: Յինգերորդ՝ որպէս թագաւորք երկրի զխորհուրդս եւ զգանձս իւրեանց հաւատարիմ արանց աւանդեն. այսպէս եկնաւոր թագաւորն՝ զխորհուրդ անօրէնութեան իւրոյ՝ սոցա հաւատաց. որպէս ասէր Դաւիթ. (ի սրտի իմում թաքուցի զբանսս քո. որպէս զի մի մեղայց քեզ:) Եւ զՅակօբոս պարիսպ անուանէին՝ որ անդժրելի պահեր զգանձն աստուածային: Վեցերորդ՝ զի ի մի եկին մարգարէքն եւ առաքեալքն ի ծննդեանն Զրիստոսի. այսինքն, հին կտակքն եւ նորս. որպէս ասէ առաքեալն. (արար զերկոսեանն մի:) Յաղագս այսորիկ՝ այսօր տօնէ ի միասին մարգարէին Դաւթի եւ առաքելոյն Յակօբայ եղբօր Տեառն: Նոյնպէս եւ այլ գլխաւոր առաքելոցն, եւ սրբոյն Ստեփաննոսի տօնք՝ ըստ խորհրդոյ կարգեցան աստ: Եւ ոչ թէ ի սոյն աւուրս նահատակեցան: Չի Դաւիթ հազար ամաւ յառաջ քան զԶրիստոսի գալուստն կատարեցաւ. եւ ըստ ոմանց ինն հարիւր իննսուն եւ ինն ամաւ: Եւ Աստուած եղբայրն Յակօբ յետ երեսուն ամի չարչարանաց Տեառն ի հրէիցն՝ յաշտարակէ տաճարին ընկեցեալ եղեւ վասն վկայութեանն Յիսուսի՝ եւ անդ կատարեալ: Եւ սուրբն Ստեփաննոս յետ մի ամի չարչարանաց Տեառն ի հրէիցն քարկոծեցաւ: Եւ Պետրոս եւ Պօղոս յետ երեսուն ամի չարչարանաց Տեառն եւ փրկչին ի Ներոնէ ի Յռօմ կատարեցան. Պետրոս խաչեալ՝ Պօղոս գլխատեալ: Իսկ Յօհաննէս ի խորին ծերութիւն հասեալ, յետ եօթանասուն եւ երկու ամի չարչարանացն՝ յեփեսոս քաղաքի իւրում մահւամբն կատարեցաւ: Եւ ոմանք կենդանոյն փոխեալ ասեն զնա Ենովքայ եւ Եղիայի: Իսկ Յակօբ եղբայր նորին՝ ի նոյն ամի յետ չարչարանաց տեառն, աղաչեցեալ ի հրէիցն յայլ եւ յայլ ժամանակս կատարեցան նոքա. բայց ի մի

աստ հաւաքեցան չորեքին գլխաւորագոյն տօնքս, վկայք եւ հաստատութիւն ծննդեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Զրիստոսի: Չոր երեք ինչ հարցանելի է մեզ հասարակաբար: *Նախ թէ՛ զի՞նչ է տօնն եւ նախատօնակն: Երկրորդ՝ թէ վասն է՞ր չորս են տօնքս այտօքիկ: Երրորդ՝ թէ վասն է՞ր եօթն են թուով տօնելի սուրբքն յաղագս որոյ տօնքս են: Տեսցուք զառաջին գլուխն: Գիտելի է՛ զի վասն տօնիցս՝ չորս ինչ ինդրելի է: Նախ թէ՛ զի՞նչ է տօնն եւ ի քանիս բաժանի: Երկրորդ՝ թէ վասն է՞ր տօնեմք մեք սրբոց: Երրորդ՝ թէ վասն է՞ր լինի ուրն օր մեծամեծ տօնք: Չորրորդ՝ թէ զի՞նչ նշանակէ նախատօնակն: *Եւ նախ թէ զի՞նչ է տօնն: Ասեմք եթէ տօնն՝ թարգմանի ուրախութիւն եւ պայծառութիւն. որ ի մի վայր ժողովիմք եւ ուրախանամք հոգեւոր կամ մարմնաւոր. քանզի անունս այս՝ ոչ է ի մեր լեզուէ. այլ յօտար ազգաց: Չի նոքա զուրախութեան կամ զհարսանեաց տան անուանեն. եւ զպայծառ հանդես՝ տօն կոչեն: Նոյնպէս եւ մեք յորժամ ուրախանամք հոգևով եւ պայծառանամք մարմնով, զայսպիսի օրս տօն կոչեմք. մարգարէն ասէ՛ (արարեք տօնս ուրախութեան:) Եւ երեք եղանակ է տօնից: Նախզի՛ հրեայքն մամնապէս տօնելն զոհիւք եւ հատարագօք՝ լուացմամբ եւ արեամբ. եւ զկատարեալն եւ զհոգեւորն ոչ գիտելն: Երկրորդ՝ տօն էր հեթանոսացն՝ որք ախտւք զչաստուածս եւ զդէս իւրեանց պատուելն պղծութեամբ. ըստ այնմ, (կերին եւ յագեցան. եւ յերեան ի խազալ առաջի կոնցն զոր արարին յանապատին:) Տեսեք եղբարք. զի ուտեն եւ ըմպել եւ խաղալ ի տօնսն՝ ի կռապաշտութիւնն մերձ է քան ի հրեութիւնն: Երրորդ՝ տօնեն քրիստոնեայք՝ այլ սրբութեամբ եւ մաքրութեամբ հոգւոյ եւ մարմնոյ: Եւ պարտ է ուրախանալ բանիւ եւ երգով եւ ընթերցմամբ գրոց եւ գիտութեամբ խորհրդոյ տօնին. որովք կերակրին հոգիք ժողովելոցն: Այս թէ զի՞նչ է տօնն: *Երկրորդ հարցումն է թէ՛ վասն է՞ր մեք տօնեմք. եթէ տերունականաց, եւ եթէ այլ սրբոց: Ասեմք եթէ՛ վասն վեց պատճառի: Նախզի՛ ինն դասք հրեշտակաց՝ միշտ եւ անդադար յօրհնաբանութիւնն Աստուծոյ են պարապեալք. որպէս Էզէկիէլ. (լուայ զձայն որք ասելն օրհնեալ եւ ն փառք Տեառն ի տեղուջէ իւրմէ:) Եւ Եսայի ասէ. (տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան: եւ սերովբեք շուրջ զնովաւ թռուցեալք աղաղակելն. սուրբ սուրբ Տէր զօրութեանց.) թռչիլն զուրախութիւնն նշանակէ. եւ աղաղակելն զօրհնաբանելն զԱստուած: Նոյնպէս եւ ինն աստիճան է յեկեղեցիս. պարտ է ուրախութեամբ եւ օրհնութեամբ համաձայնիլ երկնաւորացն: Երկրորդ պատճառ. տօնիս յիշտակաւ զԱստուած ի մեզ բերեմք. եւ մեք յԱստուած միանամք եւ ուրախանամք ի բազում տրտմութեանց. ըստ այնմ, (ոչ կարէր միսիթարիլ անձն իմ յիշեցի զԱստուած եւ ուրախ եղէ:) Եւ թէ՛ (ինձ մերձենալ առ Աստուած բարի է. պատմել զօրհնութիւնս նորա ի դրունս դստեր Սիօնի:) Երրորդ պատճառ. զի այժմու տօնս նշանակութիւն է եւ կրթութիւն հանդերձեալ ուրախութեանն. զի որ աստ յիշատակութեամբ տօնէ, անդ երանութեանն ժամանէ: Չորրորդ պատճառ. որպէս մարմնոյ կերակուրն է հաց եւ ջուր. եւ վայելչական կերակուր միրգ եւ գինի եւ այլ զանազան խորտիկք: Նոյնպէս հոգւոյն հարկաւոր կերակուրն է իմաստութիւն եւ առաքիլութիւն. եւ վայելչական՝ տօնք հոգեւոր ուրախութեան ըստ Դաւթի. (որպէս ի ճարպոյ պարարտութենէ լցցի անձն իմ. շրթամբք ցնծութեան օրհնեսցէ զքեզ բերան իմ:) Զինգերորդ պատճառ. զի յիշատակաւ տօնիս՝ հաղորդիմք որ է Տէր մեր

Յիսուս Զրիստոս՝ առանց չարչարանաց եւ առանց աշխատութեանց. զի յորժամ յօժարութեամբ կատարեմք, լոցին պասկացն հասանիմք. որպէս գրէ սուրբն Բասիլիոս: Վեցերորդ պատճառ. զի իւրքանչիւր տօսի սրբոցն՝ համարձակութիւն ունին բարեխօել սուրբքն առ Զրիստոս վասն տօնողաց եւ աշխարհի, թողութեան մեղաց, եւ այլ ինչ պարգեւաց: Յաղագս այսորիկ՝ տօնեմք ուրախութեամբ գտօն ամենայն սրբոց եւ սիրելեացն Աստուծոյ: *Երրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր ութն օր կատարեմք զմեծամեծ տօնս տերունականս. որպէս զծննդեանն. զխաչին. եւ զայլսն: Ասեմք թէ վասն երեք պատճառի: Նախ զի՛ եօթն օրն՝ կենցաղոյս Է չափ. եւ մին օրն՝ հանդերձեալ յաւիտենին. որպէս ասէ Սողոմօն. (տուր բաժինս եօթանց. այլեւ ութնից:) Չորեւ Դաւիթ յութներորդոց սաղմոսն վկայէ: Այլեւ ութնօրեայ թլփատութիւնն՝ զայն նշանակէ մեռեալ մորթ ի գերեզմանս թաղել. եւ Նորոգ մարմնով ի կեանս յարուցանել. զայս նշանակէ ութնօրեայ տօնելն: Երկրորդ՝ զի ութն օրն՝ երկու չորս Է. նշանակէ զչորս Է. նշանակէ զչորս բնութիւն մարմնոյս. եւ զչորս առաքինութիւն հոգւոյս ընդ միմեանս յարմարեալ յաւուր տօնիցն: Երրորդ՝ ութն թիւն՝ եօթն Է եւ մի. մինն աստուածութիւնն Է որ միակ Է եւ մի. եւ եօթն՝ զ գայութիւնքս. այս Է՛ զեօթն զգայութիւնս մեր ի մինն Աստուած խառնեմք. եւ ըստ կամաց Նորա գտօնսն կատարեմք: Յաղագս այսր խորհրդոյ՝ ութնօրեայ տօն կատարեմք: *Չորրորդ խնդիրն թէ, զի՞նչ Է Նախատօնական՝ որ յերկոյն սուրբ զգաստի խաչի եւ աւետարանաւ եւ լոյս վառեալ համաձայն պաշտեմք: Ասեմք թէ՛ որպէս ի գալ թագաւորի, Նախ կարապետք եւ աւետաւորք մտանեն, եւ քաղաքացիքն Նախ զարդարեն զինքեանս եւ զփողոցս, եւ կան պատրաստք: Այսպէս հոգեւոր սակաւ ինչ՝ այսօր ուրախանամք եւ պատրաստեմք զմեզ: Դարձեալ՝ կրկին Է տօն. մին տերունական. եւ միւս հասարակ սրբոցն: Արդ՝ ի տօնս տերունականս Նախատօնակ առնեմք յերեկոյիս. եւ ի վաղիւն զկատարեալ տօնն: Այս Է խորհուրդն. զի երեկոյս նշանակէ զկեանս զայս՝ որ տնօրէնութեանն փրկչին սակաւ ինչ տեսողք եղաք հաւատով. իսկ ի վաղն որ Է կատարեալ տօն, նշանակէ զհանդերձեալն. որք դեմ յանդիման տեսանելոց եմք զնա: Վասն որոյ զսրբութիւնսն՝ այս Է, զխաչն եւ զաւետարանն ի դուրս բերեմք. եւ զի պատմօղ եւ կատարումն են տնօրէնութեանն Զրիստոսի. եւ Նոյն ինքն Զրիստոս երեւի մեզ ի խաչն եւ յաւետարանն. եւ զմեզ ի լոյս Է Աստուած. նշանակ վառեալ մոմեղէնքն: Եւ զմեզ հաշտեցոյց ընդ Աստուած. եւ միաւորեաց զերկրաւորս եւ զերկրաւորս. զհրեայս եւ զհեթանոսս. զորս նշանակէ համաձայն պաշտելն: Եւ ապա ի գիշերն դնի սրբութիւն ի վերայ բազմոցին մինչեւ յառաւօտն որպէս ասացաք: Իսկ հասարակ սրբոց Նախատօնակ ոչ Է այսօր. այլ տօն լոցա՝ Է ի վաղիւն ի մեջ գիշերոյ ի վեր: Այս Է խորհուրդն. զի որքան են սուրբք ի վերայ երկրի կենդանի, ոչ տօնեմք լոցա մինչ ի հանդէս Նահատակութեան են: Այլ յետ մահուն եւ յարութեանն՝ առնուն զկատարեալ զփառս. վասն որոյ ի մեջ գիշերոյ ի վեր սկսանի տօն Նահատակութեան լոցա: Իսկ զխաւորացն սրբոց որպէս յաւագ տօնսս եւ յայլս՝ առնեմք Նախատօնակ որպէս ի տօնս տերունականս: Չի յառաջակայք եղեն Զրիստոսի եւ աթոռակիցք եւ զինուորք Նորա. վասն որոյ յերեկոյս տօնեմք գտօն կատարման ելից լոցա յերկրէ: Եւ ի վաղն՝ տօն պասկաց եւ փառաց լոցա. որք առին զհարիւրապատիկն աստ. եւ զբիւրապատիկն ի հանդերձեալն: Վասն որոյ յերեկոյն Նոյնպէս զսրբութիւնս յառաջ արտաքո

բերեմք. վասն որոյ ցանկացան եւ ելին յաշխարհէս. եւ ի լոյս են բնակեալ, եւ համագումար (յոգիս անդրանկաց կատարելոց.) վասն որոյ վառեալ մոեղիսաւ ի միասին համաձայն պաշտեմք: Այս առաջին գլուխն որ ասացաւ: *Տեսցուք գերկրորդ գլուխն թէ՛ վասն է՞ր չորս են տօնքս: Չխորհրդաւոր պատճառ չորս տօնիցս՝ բազում են եղեալ վարդապետք: Առաջին՝ նշանակե գչորեքկերպէն աթոռն՝ զոր ետեսն եզելիել: Չկերպարանս մարդոյ. առիւծոյ. եգին. եւ արծուոյ. եւ Տէր հաստատեալ ի նմա անմարմնապէս: Այսպէս գչորեսին տօնս աթոռս իմանալիս պատրաստեաց մարմնաւոր ծննդեանն իւրոյ. զի ինչ յայն աթոռն նստեր՝ երկնայինքն միայն փառաւորէին: Իսկ յորժամ գառաքեալս եւ զմարգարես կազմեաց աթոռ իւր, (ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա: եւ երկինք եւ երկիր լցան գիտութեամբ Տեառն.) ըստ այնմ, (զի երկնայինքն ի ձեռն եկեղեցւոյս ուսան զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ:) Արդ՝ այսպէս համեմատին. նմանութիւն առիւծոյն ի Դաւիթ պատշաճի. զի առիւծն թագաւոր է գազանաց. եւ Դաւիթ թագաւոր էր ազգաւ. որպէս վկայէ նահապետն Յակօբ վասն սորա. (առիւծ եւ կորիւն առիւծոյ Յուդա:) Եւ Յակօբ դարձեալ ի նմին թագաւորական ցեղէն. եւ առիւծաբար յաղթեաց ամենայն մարմնական ախտից: Իսկ նմանութիւն մարդոյն՝ ի Ստեփաննոս. զի նա էր (այր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Զրիստոսի:) Եւ դարձեալ՝ զի ետես գերկրիսս բացեալ. եւ զմարդացեալն Աստուած ընդաջմէ հօր: Իսկ կերպարան եգինն՝ են ամուլքն հաւատոյ Պետրոս եւ Պօղոս. որք ժրաջան աշխատութեամբ ընթացան ընդ ոլորտս տիեզերաց. սերմանեցին զբանն կենաց. եւ զփուշ մեղացն խլեցին. (սկսեալ յԵրուսաղէմէ մինչ ի Լիւրիկիա լցին զտիեզերս քարոզութեամբն Զրիստոսի:) Եւ ձեւ արծուոյն՝ յորդիսն որոտման. յաստուածաբան անտարանիչն Յօհաննէս. որ սրատես գուրզ որպէս զարծուի, եհաս ի խորս հոգւոյն սրբոյ. եւ անտեսաց մեզ զիսկզբանէ զբանն Աստուած անժամանա ծնունդ ի հօրէ: Այսպէս նշանակք են սոքա չորեքկերպէան աթոռոցն: Երկրորդ՝ նշանակք են սոքա չորս Եղեմաբուղիս գետոցն: Նախ՝ որպէս նոքա զդրախտն ոռոգանեն. եւ սոքա զսուրբ եկեղեցի՝ որ դրախտ է ի Զրիստոսէ անկեալ: Երկրորդ՝ զի գետն այն անսպառահոս է. անսպառ եւ միշտ են բանք սոցա առ մեզ: Երրորդ՝ մի էր աղբիւրն այն, եւ ի չորս բաժանի. այսպէս մի է քարոզութիւն սոցա. եւ ի չորս կողմ աշխարհիս որոշի: Չորրորդ՝ առաջին գետն Փիսոն կոչի. որ է բերան հրոյ. նշանակե գԴաւիթ. զի նա բացեալ զբերանն եւ առաեալ զհոգին, եւ հրով զգալուստն Տեառն նշանակեաց եթէ՛ (Աստուած մեր յայտնապէս եկեսցէ. եւ հուր յերեսաց նորա բորբոքեսցի:) Գեհոն որ է բերան յաւիտենից, կամ յորդորումն՝ է սրբոց Ստեփաննոս. որ յաւիտենից վկայ եղեւ չարչարանաց փրկչին. եւ զբազումս ի նոյն յորդորեաց նահատակութիւն: Տիգրիս կոչի արիութիւն, կամ լայնութիւն. նշանակեր զՊետրոս. զի արիաբար ժուժկալեաց խաչին. եւ Պեղոս լայնացեալ անտարանաւն ընդ ոլորտս տիեզեաց: Եփրատես՝ Յօհաննէս: Նախզի՛ երկուց գետոյ ի մի է խառնումն: Եւ Յօհաննէս զբանն մարմին եղեաել քարոզեաց. եւ ապա սփռեցաւ ի պտղաբերութիւն ընդ ոլորտս տիեզեաց: Այսպէս Բաղդատին չորեքին տօնքս չորից գետոցն Եղեմայ: Երրորդ՝ համեմատին չորս տօնքս այսոքիկ՝ չորս տարերացս. ուստի մարմինք մեր բաղկացեալ են: Երկիր նշանակե գԴաւիթ եւ զՅակօբոս. զի երկիրս ցուրտ է եւ ցամաք. ցրտութիւն երեւի ի Դաւիթ. զի հանդերձիւք ծածկէին. եւ ոչ կամեր

ջեռնուլ. կամ զի վերջածին էր, եւ ծերութեան գաւակ Եսսեայ. կամ զի ոչ կամեր հեշտանալ աստի կենօքս. այլ պանտխտանալ. եւ (վայ ասեր. զի ընդ երկար եղել պանտխտութիւն իմ. զի բնակեցայ ես ի վրանս Կեդարու.) Կեդար զխաւար մարմինն ասէ: Իսկ ցամաքութիւնն՝ Է յեղբայր Տեառն Յակօթոս. որ ցամաքեցոյց զախտս մարմնականս պահօք եւ աղօթիւք: Չի երիթացեալ էր զլիսով եւ դիմօք. եւ ճակատն եւ ծունկքն խստացեալք էին իբրեւ ուղտոյ ի բազում ծնրադրութենէն: Եւ զջուրն ի սուրբն Ստեփաննոս Է իմանալ: Նախ զի ջուրն սրբարար Է. եւ ապա զի բուսացանէ եւ պարարտացուցանէ զսերմանս որ ի ձեռն մշակաց: Այսպէս սա նախ զինքն սրբեաց զտերունի բաժակն ըմպելով. եւ զմկրտութիւն նորա մկրտիլով: Եւ ապա մարտիրոսական արեամբն. ռոգեաց զեկեղեցի սուրբ. սահման եւ կանոն եղել վկայութեան մահու: Եւ ի ձեռանէ Տեառն սերմանեցաւ իբրեւ զցորենահատ. եւ պարարտացեալ բուսաւ. ոչ միայն երեսնաւոր եւ վաթսնաւոր. այլեւ հարիւրաւոր եւ հազարաւոր. որք մինչ ի կատարած աշխարհի արեամբ վկայեն վասն Զրիստոսի: Եւ զօդոյդ բարեխառնութիւն ի սուրբ առաքեալսն Է տեսանել ի Պետրոս եւ Ի Պօղոս: Նախզի՝ օղն կառք Է թռչնոց. եւ սոքա կառք եղեն ամենայն հաւատացելոց յերկրէ յերկինս Ելանել: Չի ունէին զփականս արքայութեանն երկնից. որոց կամին բանան որպէս հետեւողաց Զրիստոսի. եւ որոց կամին փակեն եւ արգիլեն. որպէս զսիմօն կախարդն՝ զոր ընկեցին յերկիր. եւ նշաւակ եղել ամենեցուն տեսողացն զնա: Եւ որպէս օղն տեղի Է հոտոց եւ համոց. եւ նոքա հոտ անուշ էին առ Զրիստոսի.(ոմանց ի մահ անարժանիցն. եւ ոմանց ի կեանս արժանաւորացն:) Եւ դարձեալ՝ օղն ընդ ամանցանէ. զջուրս շարժէ. շունչ Է կենդանեաց. եւ խօսք բանականաց: Այսպէս եւ առաքեալն ընդ հիւանդս հիւանդանայր. կիսոց կաթն արբուցանէր. եւ կատարելոցն հաստատուն կերակուր. ընդ ամենայնի ամենայն լինէր. զի շահեսցի զամենայն: Եւ զհրոյ բնութիւն ունէին որդիքն զեբեթեայ: Նախզի՝ հուրն ջերմ Է եւ չոր. նոյնպէս ջերմ էին սոքա ի սեր վարդապետին եւ սիրեցեալք ի նմանէ: Եւ յայտնի Է՝ զի յօհաննէս զինքն սիրելի աշակերտ գրէ. (որեւ անկաւ զպարանոցան Յիսուսի.) գնաց զհետ նորա մինչեւ ի մահ: Եւ սիրոյն Զրիստոսի ցոյցք՝ զի նոքօք ել ի լեռն թաբօր. եւ նոքօք աղօթեաց. եւ Յօհաննու յանձնեաց զմայր իւր: Իսկ չորն՝ զի երկոքինն կոյսք եւ ցամաքք էին յախտից եւ անփորձ ի մարմնական հեշտութեանց: Եւ որպէս հուրն լուսաւոր Է եւ սրբէ զոսկի եւ այրէ զժանկն: Այսպէս եւ նոքա զհաւատացեալս լուսաւորեցին եւ սրբեցին ի մեղաց: Եւ նոյն երկնակառք հրովն՝ Յօհաննէս այրեաց զպատկերն Արտեմիդեայ: Եւ դարձեալ՝ հրոյ շարժումն ի վեր Է. եւ սոքա ի վերրուստ աստուածաբանեցին զորդին Աստուծոյ. եւ ի վեր շարժեցին զամենայն մարդիկ ի կեանս: Այսպէս համեմատին չորս տարերաց: Չորրորդ՝ բաղդատին սոքա չորս առաքիւնութեանց մարդոյս: Որ Է խոհեմութիւն. արիւնութիւն. ողջախոհութիւն. եւ արդարոութիւն: Խոհեմութիւնն յարմարի մարգարէին Դաւթի: Նախզի՝ խոհեմացեալ հոգւովն սրբով, գրեաց զսաղմոսարանն որ լի Է ամենայն իմաստութեամբ անցելոյն, եւ ներկայիս, եւ ապագային. երկնաւորին եւ երկրաւորիս. հոգւոյ եւ մարմնոյ. մահու եւ կենաց խրատով: Եւ դարձեալ՝ խոհեմացեալ հոգւովն՝ ետես զաստուածայինս. եւ եկեալ ի միտս՝ պատմէ: (Ես ասացի ի հիացման իմում, թէ ամենայն մարդ սուտ Է.) զի զինչ եւ խօսին վասն Աստուծոյ՝ յետնեալ

գտանին: Եւ արիութիւնն ի սուրբն Ստեփաննոս: Նախզի՛ որպէս արի մենամարտիկ՝ եմուտ ի հանդէս մենամարտութեան եւ նահատակութեան. եւ յաղթեաց բազմութեան հրէիցն. յանդիմանէր եւ սաստեր խոցաւ. եւ զքարկոծումն ոչ ինչ համարէր: Եւ դարձեալ՝ արհապէս վկայեաց վասն Քրիստոսի: (Ահա տեսանեմ զերկինս բացեալ. եւ զորդի մարդոյ զի կայ ընդաջմէ Աստուծոյ:.) Եւ ողջախոհութիւնն ի յորդիսն զԵբեթեայ. կոյս եւ սուրբ գոլով ի մարմնի որպէս ի վերոյ ասացաւ: Եւ արդարութիւնն յարմարի գլխաւորաց առաքելոցն: Նախզի՛ արդարապէս հատուցին չարացն եւ բարեացն. որպէս Անանիայ եւ Սափիրայ զմահն. եւ Տաբիթայն զկեանս: Եւ դարձեալ՝ շնորհօքն Քրիստոսի եւ աւետարանաւն՝ արդարացուցին զամենայն երկիր եւ զմարդիկ դարձուցանելով ի մեղաց: Եւ այսպէս բազում խորհուրդ չորիցն. որպէս չորս կողմուք երկրի. եւ չորս պահք գիշերոյ. եւ չորս եղանակք տարւոյն. եւ չորս չափք մանանային. եւ չորս կարդ ականց քահանային: Այլեւ չորս կառքն Էզեկիէլի. եւ չորս հիւսուկքն ի սրումն չոս եղջերաց. դիւրին է գոսսա առնուլ ի չորս տօնիցս վերայ եւ համեմատել: Այլ չափաւորութեան բանիս ինամ տարցուք: Այս երկրորդ գլուխ վասն չորս տօնիս: *Տեսցուք եւ զերրորդ գլուխն թէ՛ վասն Էր Եօթն եւ տօնելի սուրբքս. յաղագս որոց տօնս է: Ասեմք եթէ՛ բազում է խորհուրդ Եօթանց թուոց: Առաջին՝ զի պիղծն Արտեմոն՝ փոխեաց զտօն ծննդեանն Քրիստոսի զմկրտութեանն. զոր Յակօբոս Տեառն եղբայրն եր կարգեալ եւ կիրեղ Երուսաղէմի հայրապետն ի յունվարի վեցն զտօն ծննդեանն. եւ ի նոյն օրն զմկրտութեանն: Եւ ասաց թէ՛ առաքեալքն ի նախանձու է թաքուցին ի մէջն. եւ կարգեաց ի դեկտեմբերի ԻԵ զծնունդն. եւ ի յունվարի վեց զմկրտութիւնն: Արդ նազայլ ապականիչ եղել սուրբ եկեղեցւոյ. վասն որոյ ի դեմս նորա ասաց հոգին ի ձեռն մարգարէին. (յարուցից ի վերայ նորա Եօթն հովիւ. ութն վարչօք. այսինք, Է հովիւք՝ են Դաւիթ. Յակօբ. Պետրոս եւ Պօղոս. Ստեփաննոս. եւ Յօհաննէս եւ Յակօբոս. որոց տօնեմք աստ: Եւ ութնս վարիչ՝ Քրիստոս ծնեալ ի յունվարի վեցն. ըստ աւետարանչին Դուկասու վկայութեան. եւ Յակօբայ գրելոցն: Երկրորդ՝ Եօթն արքս այսոքիկ՝ Եօթն զօրութեամբ հոգւոյն վանեալ հերքեն զամենայն հերձուածօզս. որք Եօթանասուն են թուով. եւ զԵօթն գլխաւորս խոցաւ. այսինքն, զՍաբել լիբեացի. Արիոս անտիոքացի. եւ զՄակեդոն հայիոյիչ: Սոքա յանմարմին բնութիւնն լեզուագարեցան. եւ զՊօղոս սամոստացի. եւ զՆեստոր անտիոքացի. եւ զՄարկեղոս գաղատացի. եւ զԼեւոն պապն հռոմայեցի: Սոքա զմարդեղութիւն բանին հայիոյեցին. ըստ մարգարէին. (եդին յերկինս զբերանս իւրեանց. եւ զլեզուս իւրեանց ած էին զերկրաւ:.) Երրորդ՝ սոքա են Եօթն դարոյս կենցաղոյս առաջնորդք անմուարք. եւ սոքօք հանդիպիմք ութներորդին հանգստեան: Չորրորդ՝ սոքա են Եօթն սիւնքն հաստատուն՝ զոր իմաստութիւնն Քրիստոս կանգնեաց ի մէջ եկեղեցւոյ. որպէս ասէ Սողոմօն. (իմաստութիւն շինեաց իւր տուն. եւ կանգնեաց զսիւսս Եօթն եւ այլն:.) Հինգերորդ՝ սոքա են Եօթն ճրագուկք աշտանակին՝ զոր մարգարէն Չաքարիա ետես. (աշտանակ ոսկի. եւ գունդ մի ի վերայ. եւ Է բերան ճրագացն ընդդէմ զնդին լուցելոյ:.) Աշտանակն նշանակէ զսուրբ եկեղեցիս. որ ոսկի եւ անապական է հաւատովն. եւ գունդն ի վերայ՝ Քրիստոս. որ բոլոր է անսկիզբն աստուածութեամբն. եւ անվախճան մարդկութեամբն: Եւ Եօթն բերան ճրագացն՝ սոքա Եօթնեքին արքս ի

շնորհաց նորա լուսաւորք եւ ի նա ակնարկեալք: Վեցերորդ՝ եօթներին աչօք էր գարդարեալ վեմն առաջի Չօրաբաբելի: Չօրաբաբել նշանակէ գթրիստոս թագաւորն՝ որ դարձոյց զգերութիւնս մեր: Եւ վեմն՝ նշանակէ գեկեղեցիս ամրացեալ հաւատով. որպէս ասաց առ Պետրոս. (դու ես վեմ.) եւ եօթն աչք ի վիմին՝ սոքա եօթներքին արքս՝ որք աչք եւ լուսաւորիչք են տիեզեաց: Եօթներորդ՝ եօթն են դարձեալ գլխաւորք լուսաւորացն՝ որք կարգաւորեն գտարին. եւ եօթն արք սոքա՝ լուսաւորեն գեկեղեցի սուրբ. եւ կարգաւորեն գտարի տնօրէնութեանն Զրիստոսի մինչ ի լրումն եօթնեկի դարուց կենցաղոյս: Ութներորդ՝ պատուեալ էր ի հին օրէնս եօթեանն խորհուրդ: Վասն զի գեօթն օրհնեաց եւ սրբեաց Աստուած. եւ ի նմա հանգեալ ի գործոց իւրոց. վասն այսորիկ հրեայքն զեօթներորդ օրն, եւ զեօթն շաբաթն, եւ զեօթն ամիս, եւ զեօթն տարին, եւ զեօթնից եօթն պատուէին հրամանաւն Աստուծոյ: Իններորդ՝ եօթան խորհուրդն պատուեալ էր եւ առ հեթանոսս. եւ կոյս զնա կոչէին. զի ոչ ծնանի զոք ի ներքոյ տասնեկին. այլէւ անմայր ասէին. զի ոչ ծնանի յումբէ: Տասներորդ՝ զի շնորհ ունի եօթն թիւն ի շնորհաց ամսեանն ատամունքն երեւին. եւ յեօթն ամին՝ զատամունսն փոխեն: Եւ եօթն ամն ժամանակ է ուսման: Եւ այլ բազում է խորհուրդ եօթանց, յաղագս այնորիկ հարքն առաջին զմեծամեծ տօնսն՝ նախաշաւիղ ծննդեանն Զրիստոսի Աստուծոյ մերոյ իբր զվկայս հաստատուն կարգեցին. ի փառս եւ ի գովեստ եւ ի պատիւ մարդացեալ Բանին Աստուծոյ: Որէ օրհնեալ ընդ Յօր եւ Սուրբ հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւտենից ամէն:

Նորին քարոզ Դաւիթ եւ Յակօբայ. ի Բանն՝ (Փոքր էի ես ցեղբարս իմ, եւ կրտսեր ի տան Յօր իմոյ:)

Յերեք որոշմունս ժամենակաց բացատրի տեսութիւն մարգարեիցն այսպէս. ի ներկայն խրատեն. զանցեալն պատմեն. եւ հանդերձեալն տեսանեն: Վասն որոյ եւ մարգարէն Դաւիթ՝ զառաջարկեալ բանս երեք դիմօք խօսի առ մեզ: Նախ՝ վասն իւր ինքեան: Երկրորդ՝ վասն մարդկային բնութեան: Երրորդ՝ ի մարդացեալն բան: Եւ մեք՝ այսպէս երեք գիտով բացայայտեսցուք զբանս որ ասէ: (Փոքր էի ես յեղբարս իմ. եւ կրտսեր ի տան հօր իմոյ:) Բայց նախ քան ի մտանել բանիս՝ ինդրեսցուք սակաւ մի զվերնագիրն որ ասէ: (Այս բաղմոս ինքնագիր Դաւթի. արտաքոյ թուոյ:)
*Չամենայն սաղմոս մարգարէն թուեաց հոգւովն սրբով. այլ զայս ինքնագիր ասէ վասն երեք պատճառի: Նախզի՝ այլ սաղմոսքն վասն արածոյ է երկնի եւ երկրի, եւ այլոց է գրեալ: Իսկ զայս սաղմոս՝ ինքն Բանն Աստուած վասն իւր գրեաց ի մարգարէն. որ խօսի զխոնարհութիւնն նոցին եւ զմահ եւ զչարչարանս եւ զյաղթութիւնն բռնաւորին եւ զայլն: Երկրորդ՝ մարգարէն Դաւիթ զայլ ամեանայն սաղմոսսն՝ վասն այլոց գրեաց: Իսկ այս միայն ինքնագիր է՝ որ զիւր մարգարէին պատմութիւնս ունի. զխոնարհութեան՝ զփառաց՝ զգործոց՝ զյաղթեալ հսկային, եւ այլն: Երրորդ՝ զայլ սաղմոսսն այլ երգիչքն գրէին եւ եղանակէին: Իսկ զայս՝ միայն ինքն ձեռամբ իւրով գրեաց. եւ ի դեմս իւր ետես իբր ընդ հայելի օրինակաւ. զտնօրէնութիւնն բանին, եւ զփրկութիւնն մարդկան, զսկիզբն եւ զկատարած ամենայնի՝ ի փոքր այս մատենի գոյ տեսանել: Վասն այն ինքնագիր ասէ: Եւ արտաքոյ

թուոց ասէ: Նախգի՛ արտայոյ էր հարիւր յիսուն սաղմոսացն. իբր գկնիք ամրութեան ի վերոյ եղեալ. եւ դարձեալ՝ զի արտաքոյ թուոյ էր մարդանալն բանին. եւ ոչ ի թիւ եւ ի կարգ բնութեանս, թէ Աստուած մարդ լինի. եւ մարդն Աստուած ծնանի. եւ ապա մարդկան ազատութիւն լինի: Եւ յորժամ յաղթեաց զհսկայն գողիաթ, զխոնարհութիւն իւրոյ անձինն յայտ առնէ եւ ասէ: (Փոքր էի ես յեղբարս իմ:) Եւ որպէս զմարգարեութիւնս երեք դիմօք խօսի որպէս ասացաք: Եւ մեք երեք գլխով յայտնեսցուք զմեկնութիւնն: *Տեսցուք զառաջին գլուխն ի դէմս մարգարէին Դաւիթի. որ ունի Դ հարցումն: Նախ թէ՛ որպէս փոքր եւ եղբայր կոչի: Երկրորդ՝ վասն Է՞ր զփոքրութիւնն իւր յայտնէ: Երրորդ՝ թէ վասն Է՞ր անդրանիկքն անարգեցան: Չորրորդ՝ վասն Է՞ր զսաղմոսն ձայնիւ եւ քնարով երգէին: *Պարտ է գիտել զառաջինն թէ՛ չորս եղանակաւ ասի փոքր: Նախ ժամանակաւ. որպէս փոքր է կրտսերն քան զանդրանիկն: Երկրորդ՝ պատուով. որպէս փոքր է իշխանն քան զթագաւորն. եւ ռամիկն քան զիշխանն: Երրորդ՝ քանակաւ. որպէս փոքր է բլուրն քան զլեռն: Չորրորդ՝ փոքր ասի՝ որ կամաւ փոքրականայ. եւ զհանդերձն ծառայի զգեճու վասն խորհրդոյ ինչ. որպէս բազում թագաւորք առնեն վասն գործոյ իրիք: Արդ՝ մարգարէս Դաւիթ՝ փոքր ասէ զինքն քանակաւ մարմնոյն՝ որ չափաւոր էր հասակաւ. եւ ըստ ժամանակին՝ որ կրտսեր էր քան զամենայն եղբարսն: Նոյնպէս եւ եղբայրութիւնն է չորս կերպիւ: Նախ՝ արարչութեամբ ի վերուստ: Երկրորդ՝ նիւթով տարերաց ի ներքուստ: Երրորդ՝ մարմնաւոր ծննդեամբ: Չորրորդ՝ հոգեւոր աւազանաւ որպէս Զրիստոիւ եղեւ: Այս երեք ծնունդքս՝ կրտսեր եւ անդրանիկք ոչ են. զի հաւասար են թագաւորաց եւ աղքատաց. որ միոյ արարչի են եւ միապէս ի հողոյ. եւ ամենեքեան աւազանաւ անդրանիկք եղեն. որպէս ասէ առաքեալն. (չիք խտիր. ոչ հրէի եւ ոչ հեթանոսի. ոչ ծառայի եւ ոչ ազատի. զի ամենեքեան դուք մի էք ի Զրիստոս Յիսուս:) Ապա ուրեմն կրտսեր եւ անդրանիկ ասին մարմնաւորա ծնունդքն. որպէս Դաւիթ կրտսեր էր քան զայլ եօթնեսին եղբարսն: (Արածի զխաշինս հօր իմոյ:) Ասաց Նախ զեութիւնն իւր. եւ այժմ ասէ զգործ խոնարհութեան: *Երկրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր այնպէս զփոքրկութիւնն իւր յայտնէ: Ասեն վարդապետք թէ՛ վասն չորս պատճառի: Նախգի՛ սուրբքն սիրօղք են խոնարհութեան. (եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի:) Երկրորդ՝ ի յոյս աղքատաց եւ տկարաց. զի մի տրտմեսցին: Չի Աստուած՝ ոչ զմեծութիւնն սիրէ, եւ ոչ զաղքատն ատէ. այլ (զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ:) Երրորդ՝ ասէ զխոնարհութիւնն ի խրատ մեծատանց. զի ամենեքեան հաւասար աղքատք են բնութեամբ. (ոչ ինչ բերաք յաշխարհս, եւ ոչ տանիլ կարող եմք.) ապա պարտ է սիրել զաղքատս. եւ զինչս բաշխել Նոցա: Չորրորդ՝ զԱստուծոյ ամենազօր կարողութիւնն յայտնէ՝ որ ի փոքունց զմեծամեծս գործէ. ի հովուաց մարգարէ եւ թագաւորս առնէ. ի ձկնորսաց եւ ի մաքսաւորաց՝ առաքեալ եւ աւետարանիչս կազմէ. վասն այն ոչ է պարտ անյոյս լինիլ ի տկարութիւն իւր նայելով. այլ յուսալ ի զօրութիւնն Աստուծոյ. որ զտկարն զօրացուցանէ. եւ զկրտսերն անդրանիկ կարգէ: *Երրորդ հարցումն թէ վասն Է՞ր անդրանիկքն անարգէին եւ կրտսերքն պատուէին. որպէս Կային անազեցաւ. եւ Աբել պատուեցաւ. եւ Եսաւ անարգեցաւ. եւ Յակօբ սիրեցաւ: Նոյնպէս Դաւիթ ի մէջ եղբարցն կրտսեր էր որ պատուեցաւ: Ասեմք թէ՛ վայելչապէս պատուեաց Աստուած զանդրանիկսն: Նախգի՛

յանդրանիկ տեսութիւնս իւր ընտրեաց զնոսա յառաջ քան զլինիլն աշխարհի. եւ յետոյ զնոյն անդրանիկսն պատուեաց: Երկրորդ՝ զի նախկին զօրութիւն է ծնողաց: Եւ երրորդ՝ զի նախ բանայ զարգանդ ծնողին եւ գայ ի կեանս. որեւ եօթն օր աւելի ստանայ զկեանս անդրանիկն: Չորրորդ՝ զի մի է եւ միակ անդրանիկն ի մէջ բազում եղբարց. որպէս մին է գլուխն՝ եւ բազում անդամքն: Իսկ այն որ երբեմն անդրանիկն խոտիւր՝ բազում ունի խորհուրդ, եւ նշանակութիւնն: Նախ գայս ունի խորհուրդ. զի յառաջագոյն ընտրեալքն՝ յետոյ եղեն ի ժամանակի: Եւ սոքա որ երեւիսս մեզ կրտսերք եւ վերջինք՝ փոխին եւ լինին նախկինք եւ առաջինք ըստ նախաընտրութեանն Աստուծոյ: Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան զմարդն ստեղծեալ. եւ յորժամ մեղան՝ եղեն դէք եւ խոտեցան եւ եղեն կրտսերք. եւ մարդն ել ի տեղի խոտ եւ եղեւ անդրանիկ: Երրորդ՝ զանդրանիկ կեանս ի դրախտին անարգեաց Ադամ. եւ զերկրորդն ընտրեաց. եւ իւր անդրանիկն խոտեցաւ. եւ կրտսերն ընտրեցաւ: Չորրորդ՝ նշանակէ զհրեայս որք էին անդրանիկ ժողովուրդք, խոտեցան, եւ հեթանոսք կրտսեր՝ ընտրեցան եւ եղեն անդրանիկ ժողովուրդք Աստուծոյ: Հինգերորդ՝ նշանակէ զկրկին ծնունդս մարդոյ. առաջինն մարմնաւորը եւ խոտելի. եւ վերջինն հոգեւոր եւ ընտրելի: Վեցերորդ՝ մարմինն էրեց է ըստ կարգի քան զհոգին. եւ յայտ է՝ որքան կենդանի էմք՝ զերիցագոյն պատիւն մարմնոյն տամք. իսկ յետ մահու՝ փոխի եւ լինի հոգին էրեց եւ անդրանիկ անմահ կենօք. ըստ այնմ, (յոգիս անդրանկաց կատրելոց յերկինս:) Չայս նշանակէ զանդրանիկն խոտել. եւ զկրտսերն պատուել: Եօթներորդ՝ նշանակէ թէ, անփոփոխ եւ բնական ոչ է անդրանկութիւնն. այլ ստացական եւ փոփոխական. զի որք կամին՝ փոխին լինիլ անդրանիկ գործովք իւրեանց: Եւ որք ոչ կամին, փոխին լինիլ անարգք եւ վերջինք. որպէս վաճառեալ յԵսաւ. եւ զնեաց Յակէբ զանդրանկութիւն Նորա: Ութներորդ՝ նախկին ժամանկս. եւ երկրորդ հանդերձեալն. եւ կեանք ժամանակիս խոտելի է եւ անարգ. եւ հանդերձեալն պատուական է եւ ընտիր: Եւ որք աստ պատուով են՝ փոխին եւ լինին անդ անարգք. եւ անպատիւք պատուաւորք. որպէս նշանակեցաք Յեփրեմ եւ ի Սանասէ՝ որք փոխեցան յաջ եւ յահեակ: Վասն որոյ ասէ Տեառն. (բազումք գայցեն յարեւելից եւ յարեւմուտից՝ եւ մտցեն յարքայութիւնն. եւ որդիքն արքայութեան թէ ելցեն ի խաւարն:) Իններորդ՝ եւս մեծագոյն խորհուրդ. զի Բանն Աստուած որ անդրանիկ էր հօր՝ եղեւ կրտսեր մարդ ի ժամանակի եւ փոքր. ըստ որում կոչեաց զինքն փոքրիկ. զի զբնութիւն մարդոյս ընդ ինքեան խառնելով, արասցէ մեծ եւ անդրանիկ. ըստ այնմ, (որ մեծն էր, վասն մար աղքատացաւ. զի մեք Նորա աղքատութեամբ մեծասցուք:) Տասներորդ՝ ցուցանէ թէ, ոչ է այն անդրանիկ որ նախանծին լինի եւ մարմնովն քաջ. (զի ոչ հաճի Տէր ընդ իրանս առն հսկայից:) Այլ անդրանիկ է՝ որ զհաճոյսն Աստուծոյ կատարէ. ըստ այնմ, (հաճեցաւ Տէր ընդ երկիւղածս իւր. եւ ընդ այնոսիկ՝ որք յուսան յողորմութիւն Նորա.) որպէս Դաւիթ կրտսեր էր, եւ հաճեցաւ Տէր. այլ եղբարքն մեծամեծք, եւ խոտան գտան: Այսքան ըստ խորհրդոյ՝ որ անդրանիկքն խոտեին. եւ կրտսերքն պատուեին:

*Չորրորդ հարցումն որ ասէ: (Ձեռք իմ արարին զսաղմոսարան. եւ մատուկք իմ կազմեցին զգործի օրհնութեան:) Թէ վասն է՞ր մարգարեքն քնարաւ երգէին զօրհնութիւնն Աստուծոյ. որպէս Դաւիթ եւ այլքն: Ասեն վարդապետք այսմ հինգ պատճառ: Նախզի՞ մարդն հոգի է մարմին. ձայնիւ եւ ձեռք

երգէին. զի զերկու մասունս ի միմեանց լծակցէին եւ երգէին զօրհնութիւնս Աստուծոյ: Երկրորդ՝ նշանակէ զչերմ սերն առ Աստուած. զի ոչ միայն ձայնիւ եւ ձեռօք երգէին. այլ գործի առնէին գետթնաղի. գտասնաղի. եւ այնու օրհնէին զԱստուած: Երրորդ՝ զի քաղցր ձայնիւ հեշտացեալ մարդիկ, ծածկապէս ուսանէին զբանս հոգւոյն: Չորրորդ՝ սատանայագիւտ է քնարն եւ տաւիղն. որ յաւուրս ջրհեղեղին երեւեցաւ վասն մարմնոյ ցանկութեան. խառնեցին զնոսա ի բանս հոգւոյն սրբոյ. զի իւր սրովն խոցեցցեն զինքն եւ հալածեցցեն. որպէս ի Սաւուղայ: Զինգերորդ՝ զի մասունք արարածոց ձայն ունին՝ եւ բան ոչ ունին զի ընծայեցցեն Աստուծոյ. եւ մարդս գլուխ է արարածոց. վասն այն խառնէէ զձայնս լոցա ի բանս իւր. եւ մատուցանէ Աստուծոյ: Իսկ առ մեզ փոխեալ ի հոգեւորն. լոցայն կրկին աղի. եւ մերս ձայն եւ բան. եւ հոգի եւ մարմին: Եւ լոցա չորս աղին՝ որ է չորեքնութեայ բնութիւն մարմնոյս. եւ երեք առաքնութիւնք հոգւոյս: Եօթնաղին Դաւթի՝ եօթն զգայարանքս մեր. եւ եօթն զգայութիւնք հոգւոյն: Իսկ տասնաղին՝ զի տասն են զգայարանք մեր. հինգ հոգւոյ. եւ հինգ մարմնոյ: Այլեւ տասն թիւն՝ կատարեալ է. նշանակէ գետթնարփի շնորհս հոգւոյն սրբոյ. ի հոգի եւ ի միտս եւ ի մարմինս մեր ընկալեալ. զոր Դաւթ տասնաղի սաղմոսարանաւ երգէր: Իսկ ասելն (եղբարք իմ մեծամեծք՝ եւ ոչ հաճեցաւ Տէր ընդ նոսա:) Ասէ վասն վեց պատճառի: Նախզի՝ զերախտիսն Աստուծոյ հանապազ ի միտս ածցէ. որ առանց արժանոյ զամենայն բարութիւնս արար: Երկրորդ՝ խոնարհութեան է բանս. զի զշնորհս ընտրողին տայ որ հաճեցաւ ընդ նա: Երրորդ՝ զանսխալ տեսութիւնն նշանակէ առ Աստուած. զի ոչ որպէս տեսանէ մարդ, տեսանէ Աստուած. մարդ յերեսս հայի, եւ Աստուած ի սիրտն: Չորրորդ՝ սովորութիւն է Աստուծոյ՝ որ զօրութիւն ի տկարս ներգործէ որպէս զանտոհմս եւ գլիմարս աշխարհի արար առաքեալս իւր: Եւ առ Պօղոս ասէր. (շատ է քեզ. զի զօրութիւն իմ ի տկարութեան քում երեւի:) Զինգերորդ՝ զայն ցուցանէ թէ, մեծարգոյքն եւ պատուականքն աշխարհի՝ անարգք եւ անապիւք են առաջի Աստուծոյ. ըստ որում, (որ բարձր է առաջի մարդկան, պիղծ է առաջի Աստուծոյ:) Վեցերորդ՝ զի եղբարքն նախանձ ունէին ընդ նա. ուստի յայտէ որք ասէին. չարութիւն սրտի քո էած զքեզ այսր տեսանել զպատեարագմն. որպէս եղբարքն առ Յովսէփ ունէին նախանձ. եւ զի սոքա աննախանձ էին՝ տիրեցին եղբարքն: Այս առաջին գլուխն որ վասն իւր ասէ: (Փոքր էի ես յեղբարս իմ. եւ կրտսեր ի տան հօր իմոյ:) *Տեսցուք զերկրորդ գլուխն որ ասէ. (փոքր էի ես յեղբարս իմ. եւ արածէի զխաշինս հօր իմոյ:) Նշանակէ զմարդկայինս բնութիւն ճառելով. որպէս յայլ ուր ասէ. (փոքր ինչ խոնրահ արարեր դու զմարդն՝ քան զհրեշտակս փառօք եւ պատուով պսակեցեր զնա:) Չի փոքր է մարդկային բնութիւնս քան զհրեշտակացն՝ զոր եղբայր անուանէ: Եւ նա պարտ է տեսանել զեղբայրութիւնն ընդ հրեշտակաց. եւ ապա զփոքր լինիլն: Եղբարք անուանին հրեշտակք եւ մարդիկք վեց եղանակաւ: Նախ՝ ըստ արարչութեանն՝ որ ի միոյ արարչէ են գոյացեալք: Երկրորդ՝ ըստ հոգւոյն անմարմին բնութեան: Երրորդ՝ զի անմահ են եութեամբ: Չորրորդ՝ զի բանական են: Զինգերորդ՝ զի անձնիշխան են կամօք: Վեցերորդ՝ զի ի պատկերն Աստուծոյ ստեղծան հրեշտակք եւ մարդիկք: Այսպէս եղբարք կոչին: Իսկ փոքր եւ կրտսեր են մարդիկ վասն չորս պատճառի: Նախզի՝ հրեշտակք յառաջնումն աւուր գոյացան ընդ երկնի. եւ մարդն ի վերջոյ ի

վեցերորդ աւուրն: Երկրորդ՝ զի հրեշտակք անմարմինք են. եւ մարդիկք ընդ նիւթեղէն մամոյս կապեցան: Երրորդ՝ նոքա զբարձրագոյնն ընկալան տեղի յերկինս. եւ մարդս զխոնարհ տեղիս ի յերկրի: Չորրորդ՝ նոքա միանգամայն գոյացան ի միասին. հազարք հազարաց, եւ բիւրուց. եւ մարդիկ անասնական ծննդեամբ ընդ երկար ժամանակս լինին եւ կատարին: Վասն այն ասէ. (փոքր էի ես յեղբարս իմ. եւ կրտսեր ի տան հօր իմոյ:) Իսկ այն որ ասէ. (եղբարք իմ մեծամեծք եւ գեղեցիկք. եւ ոչ հաճեցաւ Տէր ընդ նոսա:): Չայն է իմանալ՝ զի թեպէտ հրեշտակք չորիւք պատուաւորք են քան զմարդիկ. այլ գալստեամբն Քրիստոսի մարդիկ գերապատիւք եղէն քան զհրեշտակս. որպէս ասէ սուրբն Գրիգոր Նարեկացին: Եւ զայս ցուցանեմ տասն կերպիւ: Նախ՝ Աստուած ընդ մարդկան շրջեցաւ. եւ ի մէջ էառ մարմին եւ ոչ ի հրեշտակաց. որպէս ասէ առաքեալն. (ոչ զհրեշտակաց բուռն հարկանէ. այլ զգաւակէն Աբրահամու:): Երկրորդ՝ զի զբնութիւնս մեր աստուածացոյց. եւ բնութեանս մեր երկրպագանէն ամենայն հրեշտակք. որպէս ասէ առաքեալն. (սմա կրկնի ամենայն ծունր երկնաւորաց եւ այլն:) Երրորդ՝ զի որպէս անմարմին Բանն Աստուած անտեսանելի էր ի նոցանէ. այսպէս եւ մարմնովն վերագոյն է ի նոցանէ ի ներքին կողմն վարագուրին ծածկեալ անմատոյց լուսովն: Իսկ ի միջի մերում երեւեցաւ. (եւ տեսաք եւ շօշափեցաք:): Չորրորդ՝ զի ուտելով եւ ըմպելով զԱստուած՝ աստուածանամք. եւ նոքա ոչ ունին զայս: Դիւցերորդ՝ զի ծնանելով ի հոգւոյն սրբոյ որդի Աստուծոյ լինիմք. իսկ նոքա ծառայք են նմա: Վեցերորդ՝ զի (հոգիք են հարկաւորք ի սպասաւորութիւն մեզ առաքեալք.) իսկ մեր նոցա ոչ սպասաւորեմք: Եօթներորդ՝ զի եկեղեցի հարսի եւ անդամ է Քրիստոսի. եւ նոքա ծառայք եւ օտարք ի նմանէ: Ութներորդ՝ մեր չարչարանացն Քրիստոսի եւ փառացն հաղորդիլ կարեմք. եւ նոքա ոչ կարեն. զի չունին մարմին: Իններորդ՝ զի մարդիկ օրըստօրէ յաւելուն ի գոյացական վարձս իւրեանց եւ ի փառս. եւ նոքա ոչ կարեն: Տասներորդ՝ զի մեր պաշխարութեամբ զթողութիւն մեղաց գտանեմք. եւ նոքա ոչ կարեն. եւ յայտ է յանկելոց դիւացն՝ որք ոչ ունին զղջումն եւ ոչ պաշխարութիւն: Վասն այն ասէ. (եղբարք իմ մեծամեծք՝ եւ ոչ հաճեցաւ Տէր ընդ նոսա:): Տուն հայրենի կոչէ զաշխարհս. վասն զի հայրն երկնաւոր որպէս գտուն յօրինեաց զաշխարհս. զերկինս որպէս ձեղուն. եւ զերկիրս որպէս յատակ. զլուսաւորս ճրագ վառեաց. զտունկս եւ զբոյսս զանազան ծաղկօք ի վայելչութիւն. եւ զանասուն կենդանիս ի ծառայութիւն. զոմն ի լուծ. զոմն ի բեռնակիր. զոմն ի զբօսանս. եւ զայլն. եւ զմարդն Տէր եւ թագաւոր կացոյց ի վերայ ամենայն արարածոց. ըստ այնմ, (զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա. զիսաշն եւ զարջառ եւ զամենայն ինչ: Եւս եւ գերեվայրի եւ այլն:) Եւ այսպէս ի դրախտին փափկութեան փառօք վայելչանայր: Իսկ յորժամ չարանախանձ բանսարկուն ի ներքս եմուտ, եւ զչարն գործեաց, զրկեաց զնա ի լուսոյն եւ ի դրախտէն փափկութեան եւ զծնունդս նորա. ի պատուոյն մերկացոյց. եւ էարկ ի գործ նախատանաց. վասն որոյ ասէ: (Արածէի զիսաշինս հօր իմոյ:) Այսինքն, անբան ախտից եղէ վերակացու. որպէս եւ յայլ ուր ասէ. (մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց անբանից. եւ նմանեցաւ նոցա:) Այլեւ առակ անառակին զայս յայտնէ եթէ, (ոչ յետ ինչ բազում աւուրց՝ առեալ զամենայն կրտսեր որդւոյն եւ զնաց. եւ անդ վատնեաց զինչս իւր. զի կայր անառակութեամբ. եւ յարեցաւ առ մի

ումն. եւ նա յղեաց արածել զխոզս.) այսինքն, զգիշասեր ախտ ցանկութեան: եւ աստ ասէ. (արածելի զխաշինս հօր իմոյ:) Ձեռք իմ արարին զսաղմոսարան. եւ մատուկք իմ կազմեցին զգործի օրհնութեան: Ձեռք՝ ոչ զմարմնոյ եւ զնիւթականս ասէ. այլ զգործիական եւ զանմարմին իմացուածս մտաց: Այն ձեռք է՝ զորմէ Յօհաննէս ասէ. (ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց:) Այսու իմացական ծայրիւք մտացն կամեցան ինդրել զԱստուած եւ որոշել. որպէս ասէ աւետարանն. (յարուցեալ զնացից առ հայր իմ:) եւ որպէս կարէին զնալ հեթանոսք՝ որք ոչ ունէին զօրէնս եւ ոչ մարգարէ եւ առաքեալ: Չայս առաքեալն ուսուցանէ: Նախգի ասէ. (հեթանոսք որք զօրէնս ոչ ունին, բնութիւն զօրինացն գործեն:) Չի բնական օրէնքն կայր ի նոսա. բնութեամբ Աստուածասեր է մարդս. կազմեր տաճար եւ բագին անծանօթին Աստուծոյ. որպէս առաքեալն Պօղոս գտեալ ի յաթէս եւ ասէ. (զոր դուք յանծանօթս պաշտէք, ես զնոյն քարոզեմ ձեզ.) եւ այսպէս հաւատացին ի Քրիստոս: Չայն ասէ. (ձեռք իմ արարին զսաղմոսարան. եւ մատուկք իմ կազմեցին զգործի օրհնութեան:) Երկրորդ եղանակ այս էր առ Աստուած զնալոյն. զի քննեցին զբնութիւնս բարի. եւ գտին զչարն հակառակ բնութեանս. օրէնք կարգեցին. զգողս եւ զշնացօղս տանջեցին. զխաղաղութիւն եւ զողջախոհութիւն սիրեցին. եւ այսպէս մինչ ի դրունս երկնաւորին հասին: Եւ զորս պայծառ հանդերձիւ տեսանէին, զիտէին թէ թագաւորն է. վասն որոյ մարդասեր եւ գթած հայրն երկնաւոր՝ տեսեալ լորդին իւր յայնպիսի տարակուսանս, եւ զի ոչ կարեր զճշմարտութիւնն գտանել, (ընդամաջ եղեւ հայրն երկնաւոր եւ համբուրեաց զնա:) Եւ զի՞նչ է համբուրեալն. այսինքն, խառնել զաստուածային բնութիւն ընդ մարդկայնոյն. եւ յայտնել զինքն ինդրողաց իւրոց. ետ եւ զառաջին պատմութեանն եւ զմատանին ի ձեռն նորա. եւ զեզն պարարակ ի միշտ զենումն ուրախութեան: Այս երկրորդ գլուխն ի վերայ մարդկայ ի նոսա բնութեան որ ասէ: (Փոքր էի ես յեղբարս իմ. եւ կրտսեր ի տան հօր իմոյ:) *Տեսցուք եւ զերրորդ գլուխն զբան մարգարէիս ասացեալ ի մարդացեալ բանն Աստուծո՞ որ ասէ: (Փոքր էի ես յեղբարս իմ:) Եղբայր կոչի նա մեզ ըստ այնմ, (պատմեցից զանուն քո եղբարց իմոց:) Եւ Դ եղանակաւ եղբայր կոչի: Նախգի՝ զմարմինս մեր էա՞մ՝ որ ի չորս տարեց է. եւ զմիտս եւ զհոգի եւ զամենայն ինչ որ է ի մարդ բաց ի մեղաց: Երկրորդ՝ զի որպէս ի կուսէ ծնաւ. եւ մէք ի կոյս աւազանէ ծնանիւք: Երրորդ՝ զի զնոյն հոգի առաք. զոր նա ի յորդանան. եւ մէք յաւազանէն. եւ որպէս բանական հոգին զմասունս անդամոց անքակտելի պահէ. նոյնպէս հոգին սուրբ միաւորէ զմեզ ի գլուխն Քրիստոսի: Չորրորդ կոչիմք եղբայր՝ զի ջրովն որ ել ի կողէն կենարարին մկրտիմք. եւ յարենէն ըմպեմք. եւ զմարմին նորա ճաշակեմք. եւ լինիմք անդամք եւ եղբարք Քրիստոսի: Ապա թէ եղբարք՝ ուրեմն ժառանգակից Քրիստոսի. եւ որդիք հօրն երկնաւորի: Տեսէք թէ յորպիսի պատիւ հանէ զմեզ եղբայրութիւն Քրիստոսի: Իսկ որ ասէ. (փոքր էի ես յեղբարս իմ:) Փոքրութիւնն նախ ըստ չորրորդ եղանակի է իմանալ. որ կամաւորութեամբ յանձն էա՞մ վասն մեր աղքատանալ որ մեծատունն էր. եւ հաւատասարեցաւ մեզ մարմնով չափ. (զի մէք նորա աղքատութեամբ ճոխասցուք:) Այլ զի՞նչ փոքրութիւն քան զայն՝ որ արարիչն Աստուած մարդ լինի: Տերն զծառայի կերպարանս առնու: Դատաւորն դատեցեալ լինի: Անմահն մեռանին եւ այլն: Այս առաջին եղանակ փոքրութեանն: Երկրորդ՝ փոքր կոչի ի մէջ եղբարց

իւրոց. այսինքն, որդւոցն Յովսէփու. զի որպէս Յովսէփի հայր կոչեցաւ Զրիստոսի. այսպէս եւ որդիք նորա եղբայր կոչին նմա. եւ դստերքն քոյր. եւ ի մէջ նոցա ժամանակաւ փոքր էր. վասն ա յն ասէ. (փոքր էի ես եղբարս իմ:) Երրորդ՝ փոքր համարիւր եւ կրտսեր յաչս հրէիցն. ուստի յայտ է՝ յորժամ զբժշկութիւնս կատարեր, ասէին. (ո՞չ սա է որդին Յովսէփայ. եւ եղբայր Յակօբայ եւ Յովսէայ: Արդ ուստի՞ է սմա այս իշխանութիւնս:) Չորրորդ՝ զի մեզ խոնարհութիւն ուսուցէ, փոքր կոչեաց զինքն եւ անարգ. ըստ այնմ, (ոչ ոք է ի ծնունդս կանացն մեծ քան զՈվհաննէս. բայց փոքրիկն յարքայութեանն մեծ է քան զնա:) եւ Եսայի ասէ վասն խաչին անագութեան. (ոչ գոյր նմա տեսիլ եւ ոչ փառք. այլ անարգ քան զամենայն որդւոց մարդկան:) եւ Դաւիթ ասէ. (ես որդն եմ եւ ոչ եմ մարդ. նախատինք մարդկան եւ արհամարհանք ժողովրդոց:) Այսպէս խոնարհութեամբ ասէ: (փոքր էի ես եղբարս իմ:) Իսկ որ ասէ. (եղբարք իմ մեծամեծք՝ եւ ոչ հաճեցաւ ընդ նոսա Տէր:) Եղբայր կոչէ զորդիս Ադամայ եւ զորդիսն Յովսէփու. զի սոքա են եղբարք նմա մարմնապէս. եւ ոչ ումեք եղեւ վկայութիւնն այն՝ որպէս ի յորդանան եւ ի թաբօր վկայեաց հայր. (դա է որդի իմ սիրելի. ընդ որ հաճեցայ՝ դմա լւարուք:) Այնչափ, մինչ արածէի զխաշինս հօր իմոյ. որպէս Տէրն յաւետարանին զինքն հովիւ կոչեաց: (ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ՝ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց:) Իսկ ոչխար կոչէ նախ զմարդկայինս բնութիւն. որպէս այն որ մոլորեցաւ մի ի թուոց հարիւր ոչ խարացն. եւ ինքն եդ զանձն ի վերայ նոցա. զկորուսեալն եգիտ եւ եբարձ ի վերայ ուսոյն: Երկրորդ՝ ոչխար կոչէ զհրէից ժողովուրդն ըստտ այնմ, (ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի:) եւ զնոսա խաչինս հօր անւանէ՝ զորս յանապին ժողովեաց. ըստ այնմ, (հորդան ետ որպէս խաշին ժողովրդեան իւրոյ. եւ եհան զնոսա որպէս զհօտ յանապատ:) Երրորդ՝ ոչխար կոչէ Զրիստոս զիւր հաւատացեալ ժողովուրդս. ըստ այնմ, (ոչխարք իմ ձայնի իմում լսեն. եւ ես տամ նոցա զկեանս յաւիտենից:) Չորրորդ՝ ոչխարք առաքեալքն Զրիստոսի. ըստ այնմ, (ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գոյլոց:) Դարձեալ հինգերորդ՝ ոչ խար կոչէ զանմարմին դասս հրեշտակաց. որք են իբրեւ զոչխարս յաւիտենականս. եւ սնանին եւ կերակրին ի բանէն Աստուծոյ անմամնապէս: Այս է միտքն թէ՛ որ այժմ փոքր երեւիմ ըստ մամնոյս՝ նոյն եմ որ արածեմ զխաչինս հօր իմոյ որ ի յերկինս են: Որպէս ի վերայ բերէ: * (Ձեռք իմ արարին զսաղմոսարան. եւ մատուցք իմ կազմեցին զգործի օրհնութեան:) Չոր բազմազան օրհնակով տեսանելի է: Արդ՝ նախ եւ առաջին՝ զլինելութիւն երկնի եւ երկրի եւ զայլ արարածոցս ասէ. զի տեսանելով զպայծառութիւն երկնի եւ զլուսաւորացդ, որպէս ի գրի ընթեռնումք զգօրութիւն եւ զփառս արարչին. ըստ այնմ, (երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:) Նոյնպէս եւ ամենայն արարածք՝ գործի օրհնութեան կազմեցան. ծով եւ ցամաք. լեռն եւ բլուր. կենդանիք եւ բոյսք, եւ այլն. զի յորժամ տեսանեմք զնոսա, յօրհնութիւն գամք արարչին: Չորր այժմ տեսանեմք մասնաւորապէս. եւ զոր ի հանդերձեալն՝ բոլորապէս. ըստ այնմ, (տեսից զերկինս եւ զգործս մատանց քոց. զլուսին եւ զարեգակն զորս դուհաստատեցեր:) Իբրթէ այժմ ոչ կարեմք հաւաստի տեսանել. այլ յայնժամ որպէս խոստացեալ է: Երկրորդ՝ (ձեռք իմ արարին զսաղմոսարան. եւ մատուցք իմ կազմեցին զգործի օրհնութեան:) Չմարդն ասէ. զի մարդս

միայն է բանական եւ խօսուն ի մէջ ամենայն կենդանեաց. եւ սա միայն ձեռամբն Աստուծոյ արարաւ. ըստ այնմ, (ձեռք քո արարին եւ ստեղծին զիս:) Եւ սա միայն է որ գստեղծօղն իւր ճանաչէ եւ օրինէ զԱստուած: Երրորդ՝ սաղմոսարան եւ գործի օրհնութեան էին մարգարէքն եւ առաքեալքն, եւ այժմ վարդապետք. զի սոքա քարոզեցին եւ ծանուցին զԱստուած. մարգարէքն ի հինն. եւ առաքեալքն ի նորս. եւ վարդապետք յետ նոցա զկամս Աստուծոյ քարոզեն եւ զօրէնս եւ զպատուիրանս նորա. զմահ եւ զկեանս: զյարութիւն եւ զդատաստան. զարքայութիւն եւ զգժոխս. եւ զայլն ամենայն սոքա պատմեն մեզ: Զորրորդ՝ սաղմոսարան եւ գործի օրհնութեան է աւետարանն Քրիստոսի եւ սուրբ խաչն Աստուած ընկալ. այլեւ եօթն խորհուրդն եկեղեցւոյ. որպէս մկրտութիւնն եւ պատարագն օրհնութեան: Այլեւ խոստովանութիւնն եւ ապաշխարութիւնն եւ այլքն ամենայն, մարդեղութեամբ Քրիստոսի տուան մեզ. եւ յայնմանէ՝ որ զձեռն տարածեաց ի վերայ խաչին՝ զօրացոյց զամենայն խորհուրդս եկեղեցւոյ. եւ սոքօք հաստատեաց զհաւատացեալ հօտս իւր: Վասն որոյ Բանն Աստուած փոքր կոչեցաւ. եւ մարդ եղեւ վասն մարդկան փրկութեան: Եւ որպէս նախ անմամնապէս վերին դասք զուարթնոցն օրհնէին զԱստուած. այժմ զալստեամբ փրկչին ազգ մարդկան եւ եկեղեցի սուրբ օրհներգու եւ փառաբանիչ եղեւ սուր երրորդութեանն: Եւ ի կատարածի՝ խոստացեալ է ամենայն սրբոց եւ սիրողաց անուան իւրոյ ի նոր նորոգումն երկնի եւ երկրի. խառնիլ ի դասս երկնաւորացն. եւ նոր օրհնութիւն եւ քառաբանութիւն մատուցանել ամենասուրբ երրորդութեանն: Որեւ նորոգիչն մեր Քրիստոս Աստուած՝ վասն անճառ խոնարհութեան եւ մարդեղութեան իւրոյ՝ եւ վասն աւուրս շնորհաց եւ սրբոց միջնորդաց աստուծաւոր մարգարէին եւ արքային Դաւթի եւ աստուածեղբօր առաքելոյն եւ նահատակին Յակօբայ որոց այսօր տօնս յիշատակի՝ արժանաւորեսցէ այժմ տօնել օրինակաւ եւ նմանութեամբ. եւ յայն ժամ ճշմարիտ տօնին եւ դէմ յանդիման տեսութեան եւ փառաբանութեան իւրոյ՝ արժանի արասցէ զամենայն տօնախմբօղ ժողովեալսս ի պատիւ եւ փառս, եւ ի գովեստ անուան իւրոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ օրհնեալ ընդ Զօր իւրում եւ ամենասուրբ Զոգւոյն, յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ Դաւթի եւ Յակօբայ ի Բանն՝ (Երդուաւ Տէր դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:) Սաղ. 131. 111: (Գլուխ. ԸՅԵ)

Յողորմութիւն յիրաւունս հաստատել է աթոռ քո ասէ մարգարէն:) Նշանակէ զգալուստ բանին մարմնապէս՝ որ ի դատաստան եկն յաշխարհս. դատապարտեաց զթշմամին եւ փրկեաց զմարդիկ. ըստ այնմ, (իշխան աշխարհիս այսորիկ՝ դատապարտեսցի:) Եւ (վասն տառապանաց աղքատաց եւ հեծութեան տնանկի՝ այժմ յարեայց. եւ եղից զփրկութիւն ի նոսա:) Այս էր ողորմութեան եւ իրաւանց աթոռն Աստուծոյ: Եւ որպէս աթոռն չորս ոտիւք հաստատի ըստ չորեքկերպեան կենդանեացն զոր ետեսն Էզէկիէլ: Այսպէս եւ աթոռ զալստեանն ի յերկիր՝ չորեքին տօնքս աթոռ հաստատութեան եղեն եւ վկայք անփոփոխելի: Եւ երկու իմն օրինակաւ գերագոյնք եւ սոքա քան զվերին քերովբեական աթոռնս: Նախ՝ քանզի

յայնմ աթոռն բազմեալ՝ միայն երկնայիքն փառաւորեին: Իսկ այժմ որ ի մարգարես եւ յառաքեալս բազմի՝ (ընդ ամենայն երկիր եւ բարբառ ևոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի եւ խօսք ևոցա.) զի վերինք եւ ներքինք եւ ամենայն աշխարհի՝ լցաւ գիտութեամբ սոցա: Եւ դարձեալ՝ զի ի ձեռն սոցա (ուսան զբազմապատիկ ի մաստութիւնն Աստուծոյ՝ որ ծածկեալ էր յազգաց եւ յաւիտեանց ըստ առաքելոյն:) Վասն այն գրէ յայլ մարգարես. (երկինք աթոռ իմ եւ. եւ երկիրս պատուանդան ոտից իմոց:) Ոտք կոչէ զմարդեղութիւն բանին վասն չորս պատճառի: Նախ՝ որպէս ասէ աստուածաբանն Գրիգոր. ոտքն մարմնով տնօրէնութեանն են նշանակք. զի մարմնով եկեալ զփրկութիւն մեր արար. եւ մարմնով համբարձաւ առ հայր: Երկրորդ՝ զի վերջին է մասն. նշանակէ զայն՝ որ ի վերջին ժամանկս երեւեցաւ մարմնով: Երրորդ՝ կրկին ոտքն՝ զհոգի եւ զմարմին նշանակեն. զոր էառ ի մերմէ բնութենէ: Չորրորդ՝ ներքոյ է բոլոր մարմնոյն. (եւ հիմն եկեղեցւոյ է Քրիստոս ըստ առաքելոյն:) Է եւ այլ եղանակ. զի ոտք են հաւատացեալք եւ առաքեալք նորին. եւ գլուխ է Քրիստոս. զի (անդամք եւ մարմին եմք նմա ըստ առաքելոյն:) Որեւ այժմ ի Դաւիթ խօսի երդմամբ եւ ասէ: (Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:) *Եւ յաղագս երից է ինդիր մեր: Նախ՝ վասն աւուրս պատշաճի: Երկրորդ տեսցուք զբան մարգարեիս: Երրորդ՝ վասն Դաւթի եւ Յակօբայ: *Տեսցուք զառաջին գլուխն վասն աւուրս պատշաճի՝ որ մէք ազգս հայոց Դաւթի եւ Յակօբայ տօնեմք. եւ այլազգիք ծնունդ առնեն Քրիստոսի: Չոր ոչ է պարտ ընդ վայր թողուլ. այլ բազում աշխատութեամբ զստոյգն գիտել: Նախ՝ պատմութիւն վասն որպիսութեան տօնիս. Երկրորդ՝ սուտ ցուցանել զտօնս ևոցա: Եւ առաջինն գիտելի է՝ զի ամենայն տօնից եւ հոգեւոր ուրախութեանց սկիզբն եւ արմատ՝ է տօն ծննդեանն Քրիստոսի: Չոր պիղծն Արտեմոն խանգարեց զեկեղեցի. եւ գրով արձանացոյց զաղանդն իւր. փոխեաց զտօն ծննդեանն Քրիստոսի որ ի յունվարի վեցն. եւ կարգեաց ի սմին աւուր ի դեկտեմբերի ԻԵ զծնունդն: Եւ յետ երկոտասան աւուր ի վեցն յունվարի զմկրտութիւնն: Չոր հարքն սուրբք եւ վարդապետք եկեղեցւոյ հոգւովն սրբով իմացեալ, կարգեցին յառաջ քան զծնունդն ի սմին աւուր զյիշատակ մեծին Դաւթի եւ առաքելոյն Յակօբայ. եւ ամբացուցին ամուր զինու եւ պիտ պարսպաւ: Չոր մարգարեքն հոգւով տեսեալ, եւ առաքեալք ականատես եղեալ, պատմեցին եւ հաստատեցին: Եւ սոքա երկոքինս այսպէս վկայեն. Նախ աստուածութեան նորա. եւ ապա մամաւոր ծննդեանն: Չի Դաւիթ ասէ. (յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ. եւ յառաջ քան զարեւ է անուն նորա:) Այս զաստուծութիւնն վկայեաց որդւոյ: Այլեւ ասէ. (Տէր ասացցիս որդի իմ ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ.) այս զմարմաւոր ծնունդն ասէ: Իսկ զայս օրն որ գուշակեաց մարագրեն՝ մէք ոչ գիտեաք. վասն որոյ Յակօբոս Տեառն եղբայրն որ ի սկզբանէ ականատես էր մարմաւոր ծննդեանն, եւ մինչ ի կատարումն խաչին ընդ նմա շրջեցաւ, եւ յետոյ ի Տեառնէ առաջին եպիսկոպոս կարգցաւ Երուսաղէմի, նա կարգեաց զերկոտասան ընթերցուածն խորհրդաւոր ծննդեանն. եւ զնոյն չափ զատկին: Եւ աղուհացից չորեք շաբաթի եւ ուրբաթի զմեծ կարգն: Եւ նա գրեց եւ կարգեաց զօր ծննդեանն Քրիստոսի ի յունվարի վեցն. եւ ի նոյն օրն զմկրտութիւնն: Վասն որոյ ի միասին տօն կատարեմք երկուց վկայիցն: Դաւթի մարգարեին եւ Յակօբայ առաքելոյն: Եւ յետոյ մեծն կիրեղ

Երուսաղեմի հայրապետն՝ այն որ զկոչումն ընծայութեան արար՝ եւ զփոքր ընթերցուածն կարգեաց ի վերոյ նորին հիմանն՝ եւ զայլ տօսսն նա կարգեաց: Եւ զայս աւուրս գրեալ՝ ասէ. ի դեկտեմբերի ԻԵ յիշատակ է Դաւթի մարգարէին եւ Յակօբայ առաքելոյն. զոր յայլ քաղաքս ծնունդ առնեն. յայտ է՝ զի յայլ արտեմոնի աղանդովն առնէին: Եւ մոլորեալք ասեն թէ՝ Յօհաննու աշակերտ է. եւ յոյժ ստեն. քանզի ի ծննդենն Զրիստոսի մինչեւ ի տասն ամն Կոմիդայ կայսեր՝ հարիւր իննսուն ամ է. յորում կալաւ զաթոռն հռօմայ սուրբն Բեկտոր. որ տասն եւ երեք եպիսկոպոս էր յետ Պետրոսի: Եւ նա մերժեաց զԹեոդորոս որ առաջին աղանդովն էր Արտեմոնի: Արդ՝ արտեմոն երկու հարիւր ամաւ յետոյ էր քան զառաքեալսն սուղ ինչ պակաս. որ շրջեալ կործանեցաւ ի քաջ հովուացն ի Բեկտորէ հռօմայ հայրապետէ. եւ ի զիփիանոսէ Կոստանդնուպօլսի: Չոր յետ սոցա ուղղափառութեան հարիւր ութսուն ամի՝ ի Պօղոսէ սամոստացոյ դարձեալ նորոգեցաւ չարեաց առաջնորդ ընթերցուածն Արտեմոնի: Եւ սկսան ծնունդ առնել ի դեկտեմբերի ԻԵ. քանզի ըստ եբրայեցոցն ի թշրին ի տասն. եւ ըստ հռօմայեցոց ի սեպտեմբերի ԻԵ պապանձումն Չաքարիայի, եւ ի նոյն օրն յղութիւն Եղիսաբեթի ասեն: Եւ անտի մինչ ի մարտի ԻԵ՝ համարեն վեց ամիս. եւ անդ ասեն զաւետիսն Գաբրիելի առ կոյսն սուրբ: Եւ անտի մինչ ի դեկտեմբերի ԻԵ՝ ինն ամիս եւ հինգ օր ասեն. եւ ծնունդ առնեն: Չոր կամիմք յառաջիկայդ ուսուցանել բազում վկայութեամբ: Այլ թէ զի՞նչ էր թշրին ամիս եւ պատանձումն Չաքարիայի: Հրամայեաց Աստուած յօրէնսն զեօթներորդ ամիսն պատուել. որ է թշրին եւ աշնանային առին ամիս. եւ երկուսասն օր տօնել. հինգ օր որթաքավութեան. եւ եօթն օր տաղաւարահարացն. յիշատակ քառասուն ամ յանապատին բնակելոյ: Եւ է այսպէս. թշրին ամբեան ի մինն որ է նուիրեալ օր սուրբ եւ պարապումն ամենայն Իսրայելի. աւ այս ի սեպտեմբերի ԺԵ էր՝ յորում ժողովեալ էր ամենայն Իսրայել յերկրէ հեռաստանէ. եւ զայր ի տաճարն Յերուսաղեմ զտօնն կատարեալ: Եւ չէր հնար ումէք մինչ ի կատարումն տօնին երթալ ի տուն իւր: Եւ ի սմին ամսոյ ի յինն՝ յերեկօրեայ սրբէին զանձինս իւրեանց. եւ ի տասն նորին ամոյն՝ սկիզբն էր քաւութեան տօնին որթագործութեան: Եւ յայսմ աւուր, եմուտ Չաքարիա՝ ի սուրբն սրբոց եւ եղեւ պապանձեալ. որ է ի սեպտեմբերի ԻԵ. եւ օրն կիրակի: Իսկ ի թշրին ի ԺԵ՝ տօն տաղաւարահարացն. որ է ի հոկտեմբերի երկու. եւ օրն ուրբաթ. եւ ոստօք եւ տերեւօք ձիթենեաց եւ ուռեաց՝ եւ ծաղկօք եւ պտղօք զեօթն օր տօնէին: Եւ ի թշրինի ԻԱ. եւ ի հոկտեմբերի ութն՝ կատարումն էր տօնին ի հինգ շաբաթի: Եւ ի սմին աւուր ոչ կարաց գնալ Չաքարիա ի տուն իւր. վասն զի յետին օր էր. եւ յոլովագոյն լինիէին զոիք եւ պատարագքն. եւ ոչ կարէր պարապիլ մինչեւ յերեկոյ: Բայց ի թշրինի քսան եւ երկու. եւ ի հոկտեմբերի ինն՝ գնաց Չաքարիա ի տուն իւր. եւ օրն՝ ուրբաթ. եղեւ յղութիւնն Եղիսաբեթի ի թշրինի ԻԳ եւ ի հոկտեմբերի տասն. եւ օրն շաբաթ: Եւ աստի մինչեւ ի նիսանի ԺԵ. եւ յապրիլի եօթն լինի վեց ամիս. յորում առաքեցաւ Գաբրիել առ կոյսն Մարիամ. եւ ետ զաւետիսն յաւուր չորեք շաբաթի: Եւ անտի մինչ ի Տբեթի ԻԱ եւ ի յունվարի վեցն՝ լինի ինն ամիս եւ հինգ օր: Աստ ծնեալ լինի Բանն Աստուած յաւուր Ե շաբաթու. եւ աւետիսն տուաւ յաւուր չորեք շաբաթի: Եւ յոյնք թեպէտ շատ ջանան, ոչ կարեն զաւետիսն ի չորեք շաբաթի ածել. եւ ի նոյն ամն զծունդն ի հինգ շաբաթի: Եւ այսպէս ճշմարիտ սեպիական է հայաստանեայցս տօն: Այս

առաջին վասն որպիսութեան տօնիս: *Եւ երկրորդն՝ զի սուտ եւ նոքա որք
 յայսմ աւուր ի դէկտեմբերի ԻՇ ծնունդ առնեն: Եւ զայս ցուցանեմ
 հնգետասան վկայութեամբ ի հարցն սրբոց: Նախզի՛ ասէ աւետարանն
 Ղուկասու. (իբրեւ լցան աւուրք պաշտամանն, գնաց Չաքարիա ի տուն իւր:)
 Եւ աւուրք պաշտաման՝ երկոտասան էր. հինգ քաւութեան վասն որթոյն
 յանապատին. եւ եօթն օր տաղաւարահարացն ի յիշատակ խորանաւ
 բնակելոյն յանապատին յամս քառասուն. եւ այլ սքանչելեացն որք
 գործեցան անդ: Յաղագս որոյ յետ երկոտասան աւուր կատմեք զծնունդն:
 Երկրորդ՝ զի եւ նոյն Ղուկաս կրկնէ վասն հաստատութեան եւ ասէ: (Եւ յետ
 աւուրցն այնոցիկ՝ յղացաւ Եղիսաբեթ) որպէս ասացաւ: Երրորդ՝ զի ոչ ասաց
 հրեշտակապետն Չաքարիայի թէ՛ ահա Եղիսաբեթ յղացի եւ ծնցի քեզ որդի
 զներկայն ցուցանելով. որպէս ասաց (ահա եղիցիս համր:) Եւ առ կոյսն թէ՛
 (ահա յղացիք.) այլ յապառնին ընկեց թէ՛ (Եղիսաբեթ ծնցի որդի. եւ
 կոչեսցես զանուն նորա Ուփաննես:) Չորրորդ՝ զի որ յամսեանն վեցերորդի
 հրեշտակապետն եկն առ կոյսն՝ ի յղութենէն Եղիսաբեթի ասաց գոլ վեց
 ամիս. եւ ոչ յաւետեացն. ըստ այնմ թէ՛ (ահա Եղիսաբեթ ազգական քո. եւ
 նա յդի է ի ծերութեան իւրում. եւ այս վեցերորդ ամիս է:) Հինգերորդ՝ ի նմին
 իրաց յայտնի է՝ զի ռամիկ ժողովուրդն ի տօնի քաւութեանն երեքօրեայ
 սրբութեամբ մերձենային առ դուռն տաճարին. ո՞րքան եւս առաւել
 քահանայապետն որ զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ
 տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց մի անգամ ի տաքւոջն:
 Ապա թէ ոչ՝ սուտ լինի աւետարանին վկայութիւնն թէ՛ (էին երկոքին արդարք
 առաջի Աստուծոյ.) ըստ ձեզ ապա եւ ժողովրդեանն ոչ նմանեցաւ: Վեցերորդ՝
 զի հարկ էր մատուցմունք նուիրաց ժողովրդեանն. եւ կատարեալ էր մի օր
 պաշտամանն: Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին. եւ մերձիլ
 յանկողինս. եւ ըստ օրինացն երեքօրեայ սրբութիւն չստանալ. որ անհնար էր
 ամենեւին: Թէպէտ ասեն գոյր այլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն
 կատարէր. այլ ոչ կատարէր զերեքօրեայ աւուրն ի միասին: Եօթներորդ՝ ասէ
 աւետարանն թէ՛ (Յիսուս էր իբրեւ ամաց երեսնից եկեալ ի մկրտութիւն.) որ
 ստոյգ նոյն ծննդեան օրն իմանի: Ապա թէ ոչ՝ պարտ էր ասել թէ՛ Յիսուս էր
 ա մաց իբրեւ երեսուն եւ միոյ. սկսեալ ի ծննդենէն եկն ի մկրտութիւն: Չի
 երկոտասան օրն թէպէտ պակաս է ի թիւս տարւոյն, այլ սկիզբն է տարւոյն:
 Չոր օրինակ՝ անցեալ լինի միաժամն աւուրն՝ կիրակէ կոչի. թէպէտ քսան եւ
 երեք ժամն պակաս է: Եւ այս ամենայն ազգաց յայտ է՝ որ ի յունվարի վեցն
 տօնեն մկրտութեան. ապա ուրեմն եւ նոյն օրն է եւ ծննդեանն: Ութներորդ՝
 զի թէ հաւատան աւետարանին եւ ոչ ստեն երեսուն ամաց գալ Քրիստոսի ի
 մկրտութիւնն ի հարկ է պարտին կատրել եւ զմկրտութիւնն ի նոյն տօնի
 ծննդեան իւրեանց ի դէկտեմբերի ԻՇ. որք իցեն ամենեւին սուտ: Իններորդ՝
 զի եւ նոքա իսկ որ զայս ասեն՝ առնեն ի յունվարի վեց ճրագալուց ընդ մեզ:
 Եւ ճրագալուցն ոչ է մկրտութեան, այլ ծննդեանն ի մէջ գիշերի: Տասներորդ՝
 զի եւ ազգն հռոմայեցւոց մինչեւ ցայսօր՝ յայտնապէս ի վեցն յունվարի
 գերից տօնից յիշատակս կատարեն: Նախ՝ զծննդեանն: Երկրորդ՝
 զմկրտութեանն: Երրորդ՝ ի կանայ գջուրն ի գինի փոխարկելոյ:
 Մետասաներորդ՝ յայտ է յամիսս նոցա. զի առաջին ամիս՝ սեպտեմբերի է
 նոցա. եւ վասն ծննդենն Քրիստոսի՝ փոխեցին եւ եդին գյունվարն առաջին
 ամիս: Երկոտասաներորդ յայտ է յանուանէ ամսոյն որ կոչի յունվարի. եւ

յունվարն ի հռոմ լեզուէ թարգմանի ծննդեանն ամիս: Երեքտասաներորդ՝
 ականատես տնօրէնութեանն եւ եղբայր Տեառն Յակօբոս որ կարգեաց
 զընթերցուածն՝ ի յունվարի վեցն ականդեաց գտօն ծննդեանն: Եւ ի նոյն
 աւուրն դարձեալ զմկրտութեանն: Այսպէս եւ Կիւրեղ երուսաղէմացի
 համախոհ նմա: Այսպէս ընկալեալք ի սոցանէ՝ եւ ի նիկիական ժողովն
 հաստատեցին առ մեզ. զոր ունի զայս ականդ այժմ սուրբ եւ ուղիղ
 ականդապահ եկեղեցիս հայաստանեայց ըստ վկայութեանցս որք եղան:
 Զորեքտասաներորդ՝ ըստ մեծին Գրիգորի աստուածաբանի. եւ ըստ սրբոյն
 Բարսեղի Կեսարացոյ. զի աստուածաբանն ի Զրիստոս ծնեալ ճառին ասէ:
 (Այսօր Աստուծոյ յայտնութեանս տօնէ:) Եւ Բարսեղ ի ծնունդն ի յիւրական
 ճառին ասէ: (Անուն դիցուք տօնիս աստուածայայտնութիւն:) Եւ այն է
 յայտնութիւնն՝ որ վկայեաց հայր ի վերայ որդւոյ. եւ հոգին սուրբ
 աղաւնակերպ իջմամբ: Եւ յայսմանէ յայտ է՝ զի սրբոցքն զծնունդն եւ
 զյայտնութիւնն ի մեասին տօնէին: Յիգետասաներորդ՝ զի Մակար
 Երուսաղէմի հայրապետն վասն տօնից գրեաց ի հայս թէ՝ ի Յակօբոյ մինչ ի
 Յոբնաղ ո յետ Կիւրղի՝ քառասուն եւ երկու եպիսկոպոսք այսոքիկ
 ամենեքեան ի յունվարի վեցն տօնեցին զծնունդ փրկչին: Եւ յետոյ փոխեցին.
 ոմանք վասն Երուսաղէմի թէ՝ ոչ կարեմք ի մին օր ի Բեթղէեմ եւ ի
 Յորդանան գնալ: Եւ այլք թէ՝ ի Զոմ դեկտեմբերի ԻՇ արեգական տօն
 կատարէին. եւ Պետրոս խափանեաց զայն. եւ կարգեաց տօն ծննդեան: Եւ
 այլք պատճառ ունին զԱրտեմոն որպէս ասացաւ: Իսկ ճշմարտութիւնն ի
 շնորհացն Աստուծոյ մնաց ի հայս. թեպէտ եւ յետոյ մոլորեցան ի սուղ
 ժամանակս յաւուրս եզրի. որ հաւանեցաւ Զերակլի. եւ վեց կաթողիկոսք՝
 ութսուն եւ չորս ամ կացին աղանդովն Քաղկեդոնի: Մինչ ի մեծն Յօհան
 կաթողիկոսն՝ որ դարձաւ ի յուղղափառութիւն եւ արար ժողով ի
 Մանազկերտ. եւ տօնեցին զայս զղջական երգով. մեղաք յամենայնի. եւ ի
 վերայ այսր ամենայնի՝ յայտնի վկայ սուրբն Գրիգոր լուսաւորիչն մեր: Չի որ
 ինչ էին ի ժամանակին այն կանոնք եւ տօնք ուղղափառաց՝ կարգեաց
 յաղագս մեր. եւ մեք զայն ամենայն անփոփոխ պահեցաք եւ ունիմք
 հաստատ: Արդ յորժամ եղբայրաբար սիրով տեսանեմք, պարտ է կատրել
 գտօն ծննդեանն Զրիստոսի թէ աստ եւ թէ անդ. զի զմի եւ զնոյն ծնունդն
 տօնեմք՝ թէ մեք եւ թէ նոքա: Այլ թէ ասիցեն թէ՝ մերս ճշմարիտ է քան
 զնոցայն եւ հակառակին, սուտ են քնաւ ամենեւին. եւ արտայոյ
 վկայութեանց աստուածաշունչ գրոց եւ հարց սրբոց. եւ յետոյ եկամուտ
 եկեալ եւ եդեալ ի պղծոյն Արտեմնէ որպէս ցուցաւ: Այս առաջին գլուխն
 վասն որպիսութեան տօնիս: *Երկրորդն վասն բանիս որ ասէ: (Երդուաւ Տեր
 Դաւթի ճշմարտութեամբ եւ այլն:) Նախ՝ ասելի է վասն երդմանն: Երկրորդ՝
 վասն պտղոյ որովայնին: Եւ վասն երդմանն գիտելի է՝ որպէս ասէ
 առաքեալն. (երկու անփոփոխ իրօք՝ որով անհնար է սուտ լինիլ Աստուծոյ.)
 այսինքն, մին որ Աբրապամու երդուաւ. (յանձն իմ երդումն ասէ. զի ի
 զաւակէ քումմէ օրհնեսցին ամենայն ազգք երկրի.) զաւակ նորա է Զրիստոս:
 Եւ երկրորդ՝ որ (Դաւթի երդուաւ ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա:) Առաջինն
 որ յանձն իւր երդուաւ Աբրահամու՝ նոյն ինքն Բանն Աստուած էր:
 Նախզի՝ որ յանձն իւր երդուաւ՝ եւ նոյն անձամբն իւրով կատարեաց
 զերդում որ մարմնացաւ ի զաւակէն Աբրահամու: Եւ երկրորդ՝ ոչ գոյր այլ
 քան զինքն մեծագոյն. վասն որոյ յանձն իւր երդնու: Եւ երկրորդն որ Դաւթի

երդնու ճշմարտութեամբ՝ նոյն ինքն ճշմարտութիւնն է Քրիստոս. որպէս ինքն ասաց. (ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւնն:) Չի որ յայնժամ ճշմարտութեամբ երդուաւ՝ այժմ ճշմարտութեամբ կատարեաց: Երկրորդ որ ասէ. (ի պտղոյ որովայնի:) Նախգի՝ պտուղն ոչ ի սերմանէ, այլ ի միջնորդ է փայտի ծնանի առանց խախտելոյ եւ բեկանելոյ: Այսպէս եւ Տէր մեր առանց սերման ի կուսէ ծնաւ անխախտելի մնացեալ արգանդին: Երկրորդ՝ ի բնութենէ ծառոյն է եւ աննման նմա. եւ Տէրն ի բնութենէ մարդոյս՝ եւ աննման է զի Աստուած է մարդացեալ: Երրորդ՝ պտուղն կատարումն է ծառոյն. եւ Տէր մեր կատարումն օրինաց եւ մարգարեից եղև: Չորրորդ՝ նախ դառն է՝ եւ ապա քաղցրանայ. եւ Տէր մեր նախ զհինն կատարեաց. եւ ապա զքաղցր լուծ նորոյս աւանդեաց. եւ կամ նոր եկելոցն դառն երեւի: եւ սովորեալ՝ քաղցրանայ նոցա: Հինգերորդ՝ զի ջերմութեամբ արեւու ծնանի. եւ զարգացեալ սնանի: եւ Տէր մեր յղացեալ եւ ծնեալ զօրութեամբ հոգւոյն. եւ նովաւ զարգացեալ. եւ ներգործեալ զգործ ներ մարդկութեան իւրոյ: Վեցերորդ՝ բոլոր է պտուղն. եւ է օրինակ բոլորի. զի վախճան առ սկիզբն յանկի. եւ Տէր մեր զպատկեր մարդկութեանս ընդ նախատիպ աստուածութեանն իւրոյ միաւորեաց. եւ կամ զի ի հօրէ ել եւ առհայր դարձաւ: Եօթներորդ՝ պտուղն թաղեալ յերկրի՝ բազմանայ արդեամբ. (եւ հատն ցորենոյ անկեալ յերկիր՝ բազում արդիւնս արար.) եւ որպէս որթ կոչէ զինքն. եւ ուռ զհաւատացեալս: Ութներորդ՝ կերակրելի է պտուղն. (եւ մարմին իմ ճշմարիտ կերակուր է ասէ:) Իններորդ՝ այլեւ բժշկական է պտուղն. եւ մեք պտղովն անմահացաք. եւ փոխանակ պտուղ լինի Տէր մեր՝ զի կեցուցէ դարձեալ. ըստ այնմ, (ծառ կենաց է ամենեցուն ասէ Սողոմօն:) Տասներորդ՝ պտուղն երեք որակս ունի. գոյն համ եւ հոտ. եւ իւրաքանչիւր զգայութեամբ՝ զմիկն ըմբռնեմք. եւ երկուքն արտաքոյ մնան. եւ ի մարդեղութիւն բանին՝ ընդ նմա է հայր եւ հոգին գործակից գոլով. եւ ի ճաշակել զմարմին բանին միացեալ, այլք արտաքոյ մնան: Եւ այս երկրորդ գլուխն: *Երրորդն վասն Դաւթի եւ Յակօբայ: Նախամեծար եւ աստուածահաճոյ արքայն Դաւիթ՝ եռապատիւ պարգևօք եր պայծառացեալ: Նախգի՝ մարգարէ էր: Երկրորդ՝ զի թագաւոր էր: Երրորդ՝ զի աստուածահայր կոչեցաւ: Նմանապէս եւ երիցս երջանկացեալն յԱստուծոյ առաքեալն Յակօբոս՝ երեք շնորհիւ էր զարդարեալ: Նախգի՝ աստուածեղբայր կոչեցաւ: Երկրորդ՝ զի առաքեալ էր նմին: Երրորդ՝ զի առաջին եղև եպիսկոպոս յերուսաղէմ: *Եւ նախ ա սացից վասն մեծին Դաւթի բաղդատութեամբ առ Տէր նորին եւ որդի. եւ այս ի կարճոյ: Առաջին՝ զի Դիթ մանու կ խարդեաշ եւ աչօք գեղեցիկ. յօրինակ Տեառն եւ որդւոյ նորին ըստ Սողոմօնի. (եղբօր որդին իմ կարմիր է եւ սպիտակ.) կարմիր ըստ արբեան եւ մարմնոյն. եւ սպիտակ ըստ անմեղութեան եւ աստուածութեանն. եւ նոյն վկայէ՝ (գեղեցիկ տեսլեամբ աստուածութեանն առաւել քան զամենայն որդիս մարդկան.) որ նստի յաշխարհս եւ հայի յանդունդս. եւ տեսեալ զհիւանդս՝ բժշկեր եւ զմեղաւորս: Երկրորդ՝ Դաւիթ օծաւ իւղով ի ձեռն Սամուէլի. եւ մարմին որդւոյ նորա օծաւ աստուածութեամբ ի ձեռն հօրն: Եռաց հոգին ի վերայ Դաւթի. եւ աղաւնակերպ հոգին ի վերայ Քրիստոսի: Եւ երիցս օծաւ Դաւիթ. եւ Տէր մեր յարգանդի, եւ ի յորդանան, եւ արեամբ ի վերայ խաչին: Երրորդ՝ Դաւիթ հովի էր ոչխարաց. եւ Տէր մեր հովի քաջ կոչեաց զինքն երկնաւորաց եւ

երկրաւորաց: Եւ որպէս նա ի բերանոյ գազանաց կորզեր զհօտն. եւ Տէր մեր փշրելով զժանիս մեղաւորին՝ կորզեր զհաւատացեալս իւր: Դաւիթ եթող զոչխարսն ի տուարածս. եւ չոգաւ ի պատերազմ. եւ Տէրն զիննսուն եւ ինն յանապատին. եւ եկն ի պատերազմ աշխարհի: Չորրորդ՝ Դաւիթ յաղթեաց Գողիաթու. եւ սրով նորին եսպան զնա. եւ Տէր մեր յաղթեաց դժոխոց եւ սատանայի. եւ սրով իւրով. այսինքն, միուամբ զմահ խափանեաց. եւ սպան զիշխանն մահու. փոխխանակ ցպոյն խաչն Քրիստոսի. եւ պարս հոգին եւ մարմինն: Եւ հինգ ողորկ քանր մաղախին՝ հինգ զգայութիւնք անբիժ եւ անարատ մարմնոյն: Եւ որպէս քառասուն օր արձանացաւ նախատիչն Իսրայելի. եւ քառասուն օր փորձեաց զՏէր նախատիչն մարդկան ազգի: Եւ անդ մին քարամբ եհար Դաւիթ զգողիաթ. եւ աստ մին բանիւ բերանոյ ի պարսէ լեզուոյ: Յինգերորդ՝ հալածեցաւ Դաւիթ ի Սաւուղայ. զի նախանձեցաւ ընդ նմա. եւ Տէր մեր հալածեցաւ յորդոցն Սաւուղայ՝ որք նախանձէին ընդ սքանչելիս նորա: Դաւիթ թագաւոր է զովէին. եւ Տեառն մերոյ որդի Դաւթի եւ Ովսանայ աղաղակէին: Վեցերորդ՝ այն չար խեղդեր զՍաւուղ. եւ նոյն չարն լկեր զորդիսն Սաւուղայ յաւուրս Տեառն: Եւ որպէս Դաւիթ Դիւրեր Սաւուղայ. այսպէս եւ որդին Դաւթի հալածեր զդեւս չարուեան յորդոցն Սաւուղայ. եւ որպէս Սաւուղ փոխանակ պատուելոյ խորհեր նմա չարիս: Նմանապէս եւ որդիք Սաւուղայ՝ որդոյն Դաւթի փոխանակ երկիրպագանելոյ ասէին. (եկայք արկցուք փայտ ի հաց նորա. եւ ջնջեսցուք զանուն նորա:) Եօթներորդ՝ որպէս ձգեաց Սաւուղ զգեղարդն Դաւթի եւ եհար զորմն եւ ապրեցաւ Դաւիթ. այսպէս եւ որդիք Սաւուղայ՝ հարին զկող Տեառն. եւ ոչ վնասեցին աստուածութեան նորա: Հարեալ որմն վկայէ թէ՛ սպանող է Դաւթի. եւ խոցեալ կողն եւ մեռեալ մարմինն Տեառն վկայէ զի աստուածասպանք են հրեայքն: Ութներորդ՝ Դաւիթ պաշարեցաւ յայրին. եւ Տէր մեր ի դժոխս եւ քակեաց զնա. եւ որպէս Դաւիթ ելեալ ի բարձր տեղոջ աղաղակեր առ Սաւուղ ո՞ւր է սուր քո. եւ Տէր մեր ել յերկինս. եւ աղաղակեաց (ո՞ւր է մահ յաղթութիւն քո:) Իններորդ՝ յետոյ խորհի Ակիտոփել զչար վասն Դաւթի եւ խեղդի. եւ Յուդա մատնեւ զՏէրն եւ խեղդի. եւ սիմէի անարգէ զԴաւիթ. եւ նա անյիշաչար լինի. եւ խաչօղքն զՏէրն (վահ որ քակէիր զտաճարն.) եւ նա աղօթեր եւ եթող նոցա: Տասներորդ՝ Դաւիթ երեսնամեայ թագաւորեաց. եւ Տէր մեր երեսնամեայ մկրտեցաւ. եւ ի գերեզմանէ յարեաւ յերեսուն եւ Դ ամն: Թագաւորեաց Դաւիթ. եւ Տէրն մարմնով ի վերայ երկրի: Թագաւորեաց նախ եօթն ամ ի վերայ Յուդայի. եւ ապա ի վերայ ամենայն Իսրայելի. եւ Տէր մեր յեօթն դարուս թագաւորէ հաւատացելոց. եւ ի վախճանի ամենայնի. (յորում ամենայն լեզու խոստովան լիցի եթէ, Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ հեր:) Եւ այսպէս բազում է բաղդատութիւն Տեառն եւ Դաւթի. եւ լիապէս գրեալ է յայլում տեղոջ: Այլ այս փոքր ի շատէ՛ զի գիտացես օրինակաւ զհամեմատութիւն Տեառն եւ Դաւթի: Արդ ամենայն ժամանակ թագաւորութեան Դաւթի՝ իս ամ. մեղաւ եւ զղջացաւ. եւ ապաշխարութեամբ զշնորհս թագաւորութեան եւ զմարգարեութեան ամբողջ պահեաց: Եւ այսու օրինակ է ամենայն մեղուցելոց՝ որք զղջանան եւ յուսով ապաւինին Աստուծոյ եւ զթողութիւն գտանեն: Եւ ամենայն ժամանակ կենաց նորա՝ եօթանասուն ամ. ի բարուք ծերութիւնն ժամանեալ փոխի յաշխարհեւ ակն ունելով զալստեան որդոյն իւրոյ ի փրկութիւն աշխարհի: *Իսկ վասն

Յակօբայլ եղբօրն Տեառն՝ որ էր ի նոյն թագաւորական ցեղէն Դաւթի. որպէս պատմէ աւետարանն. (Յովսէփ որդի Դաւթի.) եւ Յակօբ որդի Յովսէփայ. եւ եշապատուեալն շնորհօք որպէս ասացաւ ի վերոյ: Այլ եւս յաւելաւ տասնապահկ ըստ եօթնարփեան շնորհաց հոգւոյն: Նախգի՝ սա միայն յազգէ թագաւորացն՝ եւ ընկալաւ զշնորհս քահանայութեան Յաբիայէ. որ յետ Չաքարիայ, ի նա հասեալ. մինչդեռ ոչ էր զնոր քահանայութիւնս աւանդել Զրիստոս.այլ հնովն վարէին: Երկրորդ՝ սա միայն իշխէր մտանել ի սուրբն սրբոց նորոյս. զոր այլք ի հին քահանայիցն մի անգամ ի տարին մտանէին. եւ սա ամենայն աւուր մտեալ քաւութիւն գործեր ժողովրդեանն որք խաչեցին զԶրիստոս: Երրորդ՝ զի նա միայն էր որ ի հինն քահանայապետ էր. եւ ի նորս եղեւ առաջին եպիսկոպոս Յերուսաղէմ: Եւ ամենայն առաքեալքն նորա հրամանաւն ընթանային քարոզել ընդ տիեզերս՝ զային տեսանել զնա. որպէս ասէ Պօղոս. (Ելի Յերուսաղէմ. եւ զայլ ոք յառաքելոց ոչ տեսի. բայց միայն զՅակօբոս զեղբայրն Տեառն:) Զորրորդ՝ սա արար զառաջին պատարագն յերուսաղէմ ի տօնի վարդավառին. եւ տեսին առաքեալքն զհոգին սուրբ յայտնապէս ի ժամ պատարագին՝ զի հանգաւ ի վերայ նորա: Զինգերորդ՝ սա միայն ի մէջ որդւոցն Յովսէփու եւ այլ աշակերտացն՝ եղբայր Տեառն կոչեցաւ. վասն զի ի նմանէ եպիսկոպոս կարգեցաւ յերուսաղէմ. եւ հրամանատու առաքելոցն. եւ զի զառաջինն պատարագեաց յերուսաղէմ ի տօնի վարդավառին յետ Զրիստոսի. եւ զի հոգին սուրբ հանգեաւ ի նա որպէս ի Զրիստոս. եւ զի երեց եղբայր էր Զրիստոսի. եւ անդրանիկ որդի Յովսէփայ: Եւ զի ընդ Յովսէփայ սպասաւոր եղեւ աստուածածնին ծննդեանն: Եւ զի յետ մահուն Յովսէփայ՝ սպասաւորէր սրբոյ կուսին. վասն զի աստուածահայրն Յովսէփ՝ քառասուն ամաց էր յորժամ յանձնեցաւ անարատ կոյսն ի նա. եւ յերեսուն եւ մի ամին Տեառն՝ փոխեցաւ յաշխարհէս. վասն զի ետես զմկրտութիւնն եւ զվկայութիւնն հօր: Եւ յետ մկրտութեանն՝ զամենայն մի զնշանս եւ զամենայն վարդապետութիւնն: Որեւ զառաջին նշանն արար Տեառն ի հարսանիսն եղբօրն Յովսէփայ Կղեովայ ի կոչելն զմարիամ ի հարսանիսն Զրիստոսսիւ հանդերձ. անդ սկսաւ զսքանչելիսն ի պատիւ նորաին. եւ եղեւ ամենայն ամբն Յովսէփայ եօթանասուն եւ մէկ ամ: Իսկ յետ փոխելոն Յովսէփայ՝ սպասաւորէր սրբոյ կուսին արդարն Յակօբ մինչ ի խաչելութիւնն. եւ Տէրն ի Յօհաննէս յանձնեաց: Եւ վասն այսքան պատճառացս՝ տեառնեղբայր կոչեցաւ: Վեցերորդ՝ զի սա միայն սուրբ եւ արդար կոչեցաւ յամենեցունցն հրէից եւ ի հաւատացելոց: Որեւ զվկայութիւնն վասն Զրիստոսի ի բերանոյ արդարոյն կամեցան առնուլ: Եօթներորդ՝ սա այնպէս մաքուր եւ առաքինի էր վարուք՝ զի շնչաւոր իրս ոչ ինչ եկեր. եւ ոչ ի բաղանիս եմուտ. եւ ցապիս զգեւոյր որ է այծիս. որպէս մկրտիչն Ովհաննէս յանապատին բնակեր. նոյնպէս եւ սա ի մէջ քաղաքի կենցաղավարէր նմանեալ նմին կերակրովն եւ զգեստիւն: Ութներորդ՝ զի ծունկքն սորա յառաւել ծնրագրութենէն խստացեալ էին որպէս ուղտոյ. եւ ձեռք եւ ճակատն ստուարացեալք. եւ աչքն շրտուցեալք ի բազում արտասուաց եւ ի լալոյ: Իններորդ՝ զի սա աշակերտ էր եւ առաքեալ Զրիստոսի. վասն որոյ հոգաբարձու եղեալ՝ ոչ միայն անբաւ բիւրոց հաւատացելոցն որ յերուսաղէմ, այլեւ գրեաց զթուղթն խրատական ընդհանուր ամ հաւատացելոց: Այլեւ կարգեաց զընթերցուածն որ ի տօնի

ծննդեանն եւ յարութեանն Քրիստոսի որպէս ասացաւ ի վերոյ: Եւ նորին հրամանաւն փոխեցին զաւետարանն ի հրեիցն յազգս հեթանոսաց հաւատացելոց: Տասներորդ պատիւ սորա՝ զի ի վերայ ամենայն շնորհացն եւ ճգնութեանն՝ ընկալաւ զվկայութեան մահն որ վասն Քրիստոսի. զի զկնի երեսուն ամի չարչարնաց Տեառն՝ եւ այլք երեսուն եւ ութն ասեն, ի տօնի զատկին որ ամենայն հրեայքն ժողովեալ էին, ասեն ցՅակօբ երիցունքն հրեից. եւ սրբոյդ Աստուծոյ եւ արդարդ. եւ կաց ի վերայ աշտարակի տաճարին. եւ խօսեաց ի լսելիս ամենայն Իսրայելի թէ՛ ո՞րէ դուռն յԻսրայել. զի բազումք մոլորեցան զհետ նորա: Եւ նա ելեալ ասաց. զի՞ հարցանեք զիս յաղագս Յիսուսի. եւ նա է ընդ աջմէ Աստուծոյ. եւ գալոց է ընդ ամպս երկնից: Եւ ասեն ո՛հ ո՛հ արդարն մոլորեցաւ. չարիս գործեցաք զի հանաք զնա յաշտարակ տաճարին: Եւ ընկեցին զնա ի վայր՝ եւ նա անկեալ ի գուճս եւ ասէ. (Տէր՝ մի համրաիր սոցա զայս ի մեղս:)

Եւ հարին թափչաւ զգլուխն. եւ այնպէս աւանդեաց զհոգին ի ձեռս Աստուծոյ: Որում փառք եւ զօրութիւն եւ գոհութիւն Սուրբ Երրորդութեանն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Նորին քարոզ Սրբոյն Ստեփանոսի. ի Բանն որ ասէր: (Ստեփանոս այր լի շնորհօք եւ զօրութեամբ. տուն եր նշանս եւ արուեստս:) Գործ. 6. 8: (Գլուխ. ԾՅԶ)

Պայծառ եւ հրաշալի է տօնիս խորհուրդ ո՛վ եղբայրք իմ սիրելիք եւ անձկալիք ի Տէր: Պայծառ է՝ զի ըստ արփիափայլ ճառագայթիցն արեգական լուսաւոր է զիմանալի աչս տեսողական. եւ զնսեմ խաւարամած մթութեան մեղաց փարատէ աստուացաւեր մտաց: Եւ հրաշալի՝ զի զանմահ կենացն պարգեւս բաշխէ տօնասիրաց անձանց, հանելով ի գերակայ բարձրութիւնս իմանալեաց, եւ վերին զօրութեանցն հանդիսակից եւ տօնակից առնելով: Օն առեալ բացցուք զբերան մտաց. եւ առցուք զհոգի շնորհաց ի գոհութիւն՝ որ հանդիսադիրն է առաջին նահատակաց, ի գովեստ երկրորդին պսակաց հետեւողին բարեաց: Չի ո զվկայս ոչ գովէ՝ ո՞րպէս ի պատուոյ վկայիցն ամաչէ. եւ որ զվկայսն պատուասիրէ՝ իբր զվկայսն պատուագործէ: Որ հուպ է ի խունկն անուշ՝ զքիմսն զմայլէ. եւ որ մերձ է ի լոյսն՝ զաչսն լուսաւորէ. որ կարծէ թէ չէ կարօտ բարեխօսից, մի գայցէ ի պատիւ վկայից. եւ որ ձանձրանայ ի ճառս հանդիսից՝ զրկէ զանձն ի նոցին օգտից: Չի թէ տալ աղքատաց առաք պատուեր, զի ընկալցին զմեզ ի յարկան յաւիտենից. առաւել պատուելի են մեզ վկայքն սուրբքն՝ զի նոցին լիցուք յարկակից: Եւ արդ՝ քանզի շնորհ բարերար սուրբ հոգւոյն արժանի արար զմեզ ժամանել մեծի աւուրս յիշատակի երիցս երանեալ նախավկային սրբոյն Ստեփանոսի առաջին սարկաւագի եւ պանծալի նահատակի: Եւ զմայլեալ ուրախացոյց անմահ բաժակաւն. եւ զովացոյց զպասքումն ծարաւեացս իւրով քրտնաջան աշխատութեամբ, եւ յորդաբուղիս արեամբ հոսման: Արդ սկիզբն պատմութեան նորին է այսպէս: (Ստեփանոս այր լի շնորհօք:) *Եւ ի վերայ այսր, բանի՞ Դ ինչ քննելի է մեզ: Նախ որ ասէ (Ստեփանոս:) Երկրորդ՝ որ ասէ (այր:) Երրորդ՝ որ ասէ (շնորհ եւ զօրութիւն:) Չորրորդ՝ (առնէր նշանս եւ արուեստս:) *Տեսցուք զառաջին զլուխն: Նախ ի յանուանէն: Երկրորդ ի յազգէն: Երրորդ՝ ի գործոյն: Նախ ի

յանուանեն որ կոչի ստեփաննոս որ թարգմանի պսակ՝ վեց իրս բացայայտէ: Նախ պսակ՝ որպէս թագ թագաւորաց: Երկրորդ՝ պսակ կոչի եւ մարտիրոսաց: Երրորդ՝ պսակ կոչի եւ հարսանեաց: Չորրորդ՝ պսակ կոչի եւ ծաղկի բուսոց: Հինգերորդ՝ պսակ կոչի եւ պտուղ ծառոյ: Վեցերորդ՝ պսակ կոչի եւ գլուխանդամոց: Որեւ պսակն զբոլորն եւ զկատարումն նշանակէ՝ որպէս ի գովեստ նորին դրուատի: Ստեփաննոս պսակ արքայական եւ զարդ: Ստեփաննոս պսակ անթառամ կենաց: Ստեփաննոս հոգեւոր հարսանեաց: Ստեփաննոս ծաղիկ եւ անուշահոտ վարդ: Ստեփաննոս քաղցրաճաշակ պտուղ: Ստեփաննոս նախաշաւիղ վկայից: Ստեփաննոս ամենայն բարեաց լրումն: Ստեփաննոս կատարեալ սիրոյն կատարումն. յուսոյ հաստատութիւն. եւ հաւատոյ ուղղութիւն: Այսպէս կոչի առաքել եւ աշակերտ Քրիստոսի՝ որ առանց ամօթոյ եւ երկիւղի յայտնապէս զՔրիստոս Աստուած քարոզեաց ի մէջ տիրասպան ժողովոյն: Այլեւ վկայ կոչի. ոչ միայն զի բանիւ վկայեաց, այլեւ արեամբ զքարկոծում ի յանձն էառ. եւ զօրեղ զօրական զօրավարի Քրիստոսի զհնւորեալ եւ նահատակեալ: Այս յաղագս անուանն որ կոչի Ստեփաննոս եւ առաքեալ եւ վկայ Քրիստոսի: Երկրորդ՝ ի յազգէն. զի բազմերջանիկ վկայն Քրիստոսի էր ի թագաւորական զարմէն Յուդայի. ցեղակից եւս Քրիստոսի պատուեալ. եւ օրինապահ ծնողաց զաւակ: Եւ յորժամ ըմբռնեցաւ Քրիստոս ի դատաստան մահու, էր սա պատանի հասակաւ. եւ ծառայ քահանայապետին Կայիափայ: Եւ յորժամ ի տուն նորա ածին զփրկիչն մեր ասեն. զվարչամակն որով պատեալ էր զգլուխն, տարածեաց առաջի ոտից Տեառն. եւ գնաց ի վերայ նորա: Եւ յորժամ սաստէին թէ, զի՞նչ գործեցեր, ասաց. այսպէս արարին աշակերտքն եւ ժողովորդքն յորժամ աւանակաւ գայր յԵրուսաղէմ. եւ ես կամիմ աշակերտիլ սմա եւ երկիրպագանել. եւ ոչ հաւասարիմ անօրէն խորհրդոց ձերոց. եւ վասն այսց բանից՝ զան հարեալ ի քահանայապետէն ի բաց հանաւ ի նմանէ: Իսկ նա աղէխարշեալ եւ բազու մ արտասւօք տեսեալ զմահ նորա եւ զթաղումն, եւ ուրախացեալ ընդ առաքեալսն յարութեամբն Քրիստոսի, յարեցաւ ի նոսա եւ մկրտեցաւ ի Պետրոսէ եւ ի Յօհաննու: Եւ տեսեալ առաքեալքն պսակ կազմեալ ի լուսոյ ի վերայ ջրոյն, հանգեաւ ի վերայ նորա: Եւ վասն այնր անուանեցին զնա Ստեփաննոս՝ որ է պսակաւոր: Եւ արդիւնացոյց զանունն իւր մարտիրոսական արեամբ պսակեալ ի Տէր: Այս երկրորդ հարցումն վասն անուանն եւ ցեղին: *Իսկ երրորդ ի գործոյն: Յորժամ բազմացան հաւատացեալքն եւ եղեւ թիւ մարդկան իբրեւ հազարաց հնգից, որպէս պատմէ Ղուկաս ի գործսն, (եղեւ տրտունջ յունաց առ եբրայեցիս:) Այս էր՝ զի յունալեզու հրեայքն հաւատացեալք որք դարձեալ էին ի գերութենէն եւ մոռացեալ զեբրայեցոց լեզուն, կարծէին թէ՝ առաքեալքն զարշին ի մէնջ վասսն օտար լեզուիս, եւ յօտար աշխարհի գալոյն. եւ իւրեանց գաւառացն աւելի տան զկեանս մարմնո. վասն զի Քրիստոսի խոստովանօղքն ի հայրենեացն մեկնեալ լինէին: Եւ միան յաշակերտսն նայէին. եւ նոքա հոգային զՊետրոս նոցա հաւասարապէս. եւ նոցա այլ ա զգ թուէր: Ապա իբրեւ լուան առաքեալքն, կոչեցին զաշակերտսն ամենայն եւ ասեն. (ոչ է պարտ մեզ թողուլ զբան քարոզութեանն, եւ պաշտել զսեղանս աղքատաց. ընտրեցէք ձեզ եղբարս հաւատացեալս. եւ մէք աղօթից եւ բանից հպատակ լիցուք:) Ապա ընտրեցին (զՍտեփաննոս այր լի հաւատով եւ հոգւով սրբով.) զի որ (յերկուց եւ յերից

վկայից հաստատեցի ամենայն բան:) Իսկ նմա երկրորդասան առաքելալքն՝
 եւ եօթանասուն աշակերտքն եւ հինգ հազար հաւատացեալքն վկայեցին:
 Մանաւանդ նա յորովայնէ ընտեալ. եւ ընտրիչն հոգին սուրբ. որ եղել
 օթեւան եւ վկայ սուրբ երրորդութեանն: Այլեւ ընկերք նորա Փիլիպպոս որ
 մկրտեաց զներքինին. եւ հրեշտակն յափշտակեաց զնա Յողովոսս. եւ ապա
 հոգին սուրբ եկն ի վերայ ներքինւոյն. զի Փիլիպպոս սարկաւագ էր, ի ձեռն
 նորա ոչ տուաւ հոգին: Եւ Պրոփսոբոն աշակերպն Յօհաննու աւետարանչի.
 որ զաւետարանն եւ զտեսիլն գրեաց ի բերանոյն Յօհաննու. եւ Նիկանո
 վրա. եւ Պրմենա. եւ Տիմոնա. եւ Նիկողոյոս եկն անտի ոքացի. յորմէ
 հերձուած երեւեցաւ. ոչ ի կամաց սորա. այլ յաշակերտաց սորին:
 Ամենեքեան սոքա ընտիրք եւ հոգի ընկալք. թիւ խորհրդականք ըստ եօթն
 զօրութեանց հոգւոյն. եւ եօթն առաքիւնութեամբ զարդարեալք. սպասաւորք
 եւ պաշտօնեայք կոչեցեաք. եւ հոգաբարձուք ամենայն եկեղեցւոյն Աստուծոյ
 նորընծայ հաւատացելոցն: Եւ մի ոք վասն պաշտօնեայ անուանն՝ երկրորդ
 զնա առաքելական շնորհին կարծիցէ. քանզի եւ Պօղոս զինքն պաշտօնեայ
 Զրիստոսի խորհրդոցն կոչէ: Այլեւ ինքն Տէրն՝ (ոչ եկի պաշտօն առնուլ. այլ
 պաշտել. եւ ես եմ ի միջի ձերում իբրեւ զպաշտօնեայ:) Ապա եղբարք՝ տեսէք
 թէ որպէս ի մեծ պատու ունի պաշտօնեայ անունն. եւր մեծ գործ է
 սարկաւագութիւնն. եւ որպիսի ընտրութեամբ հոգւոյն սրբոյն եւ ամենայն
 առաքելոցն վկայութեամբ կարգեցան. որպէս ասէ. (Ստեփաննոս այր լի
 շնորհօք:) Այս առաջին գլուխն վասն անուանն: *Տեսցուք զերկրորդն որ ասէ
 (այր:) Գիտելի է՝ զի այրն երեք նշանակութիւն ունի: Նախ՝ ցուցանէ
 զպատկերն Աստուծոյ: Երկրորդ՝ զբական բարին: Երրորդ՝ զարիական
 գործն: Առաջինն որ ցուցանէ զպատկերն Աստուծոյ՝ որպէս ասէ Մովսէս.
 (արար Աստուած զմարդն ի պատկեր իւր:) Եւ թէպէտ պատեր գոլն հսարակ
 է ամենայն մարդոյ՝ զի անմահ է հոգին. եւ անձնիշխան բանական եւ այլն.
 այլ սուրբքն առաւել պատկեր եւ նման են Աստուծոյ տասն եղանակաւ: Նախ
 սիրովն. (զի Աստուած սեր է ասէ աւետարանիչն. եւ որ կայ ի սերն՝ բնակի
 յԱստուած եւ նման լինի Աստուծոյ:) Երկրորդ՝ զի Աստուած բարերար է եւ
 իննամօղ ամենայն արարածոց: Երրորդ՝ զի Աստուած ողորմած է գթած. ըստ
 այնմ, (ողորմած է Տէր:) Չորրորդ՝ Աստուած անոխակալ եւ անյիշաչար.
 վասն զի երկայնամիտ եւ ներօղ կոչի: Հինգերորդ՝ Աստուած կամեցող
 բարեաց է. ըստ այնմ, (ոչ կամիմ զմահ մեղաւորին ասէ. այլ կամիմ զի
 ամենայն մարդիկ կեցցեն՝ եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեցցեն:)
 Վեցերորդ՝ արդար եւ ուղիղ է Տէր. (արդար է՝ եւ զուղղութիւն սիրէ:)
 Եօթներորդ՝ Աստուած սուրբ է եւ անմեղ բնութեամբ: Ութներորդ՝ ճշմարիտ
 դիտօղ եւ սիրօղ է Աստուած. ըստ որում, (դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր:)
 Իններորդ՝ զի Աստուած նախատես է. զի Աստուած տեսող լսի: Տասներորդ՝
 զի թագաւոր է ամենայն արարածոց: Այսպէս սուրբն Ստեփաննոս այսու
 ամենայնիւ նման եւ պատկեր եղել նախատպին իւրոյ Զրիստոսի: Նախ
 սիրով. զի Զրիստոս եղ զանձն իւր ի մահ ի վերայ մեր. այսպէս եւ սա
 հաւասար նմին եղ զանձն ի մահ ի վերայ Զրիստոսի: Երկրորդ՝ որպէս Տէրն
 բարերար եւ իննամօղն էր աշակերտաց իւրոց. այսպէս եւ սա իննամօղ եւ
 անտես եղել ամենայն հաւատացելոցն. եւ կերակրէր զնոսա: Երրորդ՝ որպէս
 ողորմած եւ գթած էր Զրիստոս. զի ասէր՝ (գթամ ի ժողովուրդդ.) եւ
 արտասուէր ի վերայ նոցա. այսպէս եւ սուրբ գութ ունէր ի վերայ ազգին

իւրոյ եւ խարտեր գնոսա: (Արք եղբարք եւ հարք՝ լուարուք ինձ:) Չորրորդ՝ Տերն անխակալ եւ անյիշաչար էր. որպէս աղօթեր ի վերայ խաչողոցն. (հայր թող սոցա.) եւ սա նմանեալ Տեառն, աղօթեր ի վերայ քարկոծողացն. (Տեր թող սոցա՝ զի ոչ գիտեն զինչ գործեն:) Հինգերորդ՝ Տերն կամեցող բարեաց էր. որպէս ասեր. (կամիմ զի սոքա ընդիս իցեն. եւ ոչ կամիմ թէ ոք կորիցէ ի սոցանէ:) եւ այս երեւեցաւ յաղօթելն սորա. որպէս տերն աղօթեաց եւ հաւատաց Ղուսկիանոս որ խոցեաց զՔրիստոս. եւ սուրբս աղօթեաց, եւ հաւատաց Պօղոս որ քարկոծեր զՍտեփաննոս: Վեցերորդ՝ արդարութեամբ եւ ուղիղ դատեր տերն. որ զչարս յանդիմաներ սաստելով. եւ այլոցն խրատեր (մի ըստ աչս դատեք:) Նոյնպէս եւ սուրբս՝ արդարութեամբ դատեր զչար ժողովուրդս հրեից. (խստապարանոցք եւ անթլփատք սրտիւք եւ այլն:) Եօթներորդ՝ տեր սուրբ էր եւ անմեղ բնութեամբ. (զի ոչ արար մեղս ասէ մարգարէն.) եւ ինքն ասեր. (ո՞ յանդիմանսցէ զիս վասն մեղաց:) Այսպէս եւ սուրբն Ստեփաննոս՝ յորովայնէ ընտրեալ. եւ սուրբ եւ անմեղ կացեալ հոգւով եւ մարմնով. եւ սրբութեամբն զԱստուած տեսեալ. ըստ այնմ, (սուրբքն սրտիւ՝ զԱստուած տեսցեն:) Ութներորդ՝ Տերն ասաց. (ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք. որ զայ առիս՝ ոչ հանկից արտաքս.) եւ սուրբն Ստեփաննոս՝ սիրեաց զճշմարտութիւնն զՔրիստոսի. եւ հետեւեցաւ երկնաւոր ճանապարհի նորա: Իններորդ՝ նախատես էր Քրիստոս. զի գիտեր զինչ կրէր ի մարդն. եւ զի ասաց. (յայսմ հետէ տեսանիցէք զորդի մարդոյ ելեալ՝ ուր էր զառաջինն: եւ զայ ընդ ամպս երկնից:) Նմանապէս եւ սա կարողացաւ տեսութեամբն եւ ասաց. (ահա տեսանեմ զերինս բացեալ. եւ զՅիսուս զի կայ ընդաջմէ Աստուծոյ:) Տասներորդ՝ զի թագաւոր է Քրիստոս անվախճան. ըստ այնմ, (թագաւորեսցէ ի վերայ տանն յակօբայ յաւիտեանս. եւ վախճան մի լիցի:) Այսպէս եւ սուրբն Ստեփաննոս որ չարչարակից եղէ Քրիստոսի՝ թագակից է նմա. որպէս ասէ առաքեալն. (եթէ համբերեմք, ընդ նմին եւ թագաւորեմք.) եւ փոխանակ թագին եւ ծիրանւոյն՝ զառաքիւնութիւն եւ զանմահ երանութիւնն զգեցոյց նմա. եւ այնու եղէ պատկեր եւ նման Քրիստոսի: Վասն այնորիկ վկայէ գիրն: (Ստեփաննոս այր:) Այս առաջինն որ ասէ այր զպատկերն Աստուծոյ նշանակելով: Երկրորդ ասելն այր՝ ցուցանէ զբնական բարին որ ի մեզ է եղեալ: Չի ասեն վարդապետք եթէ՝ զբնական բարին ի բնութիւնս մեր սերմանեաց արարիչն վասն բազում պատճառի: Նախզի՝ ա յնու պատկեր եմք արարչին. որպէս նա սկիզբն եւ պատճառ է ամենայն բարեաց. նոյնպէս եւ մեք սկիզբն եւ պատճառ լինիմք ամենայն բարեաց: Երկրորդ՝ զի որ ոք բնութեանս հաղորդի՝ ամենեցուն հասարակ լիցի եւ բարւոյն հաղորդեալ: Երրորդ՝ զի մեր լիցի եւ ոչ օտար բարին, ի բնութիւնս մեր եղ: Չորրորդ՝ զի բնական եութեամբ լիցի. եւ ոչ պատահական բարին: Հինգերորդ՝ զի մի լիցի եկամուտ եւ դիւրաւ ի բաց դնելի: Վեցերորդ՝ զի մի կարօտութեամբ լիցի եւ պակաս. վասն այն ի բնութիւնս մեր հաստատեաց: Եօթներորդ՝ որպէս յշտեմարանէ յորժամ կամիմք, եւ զինչ կամիմք, եւ որքան, եւ որպէս եւ ուստի, առ ձեռն պատրաստ յառաջ բերիցեմք: Ութներորդ՝ զի մասն մեր բարւոյն՝ զբովանդակն լսողու զհոգի զմարմին մեր: Իններորդ՝ զի մեք ինքեամբ յինքենէ բարւոյն լիանամք, եւ ոչ յօտարաց: Տասներորդ՝ զի յորդորէ զմեզ միշտ ի բարին. վասն այն ի բնութիւնս մեր եացաւ: Մտասաներորդ՝ զի հաւասար լիցի բարին եւ եութիւնս մեր. վասն որոյ

անդասին ընդ բնութեանս սկզբնաւորեցաւ: Երկոտասաներորդ՝ զի մէք Տէր եւ իշան լինիմք բարուն. վասն այն ի բնութիւնս մեր եդաւ: Յայս միտս ասէր Տէրն. (արքայութիւնն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է:) Այս է՝ բարին ի գոյացութիւնս մեր էացեալ է: Իսկ չարն ի բնութիւնս սերմանեալ է, եւ ոչ արտաքոյ եութիւն ունի. այլ անէ է եւ անգոյ. այլ մեր յօժարութեան կամքս գոյացուցանէ զնա: Եւ յորժամ կամիմք՝ յայնժամ էանայ չարն. եւ ի կամս մեր ունականայ. վասն այն մեր է բարին եւ չարն. եւ մէք եմք Տէր բարի եւ չար գործոցն: Արարիչն բնութեանս է Տէր. եւ մէք գործոց եմք Տէր: Եւ որպէս մէք բնութեանս ոչ եմք տեսարք. եւ արարիչն Աստուած՝ մեր գործոցս ոչ է Տէր. այլ մ էք որ գործեցաք՝ մէք եմք պատճառ կրկին գործոցն մերոց: Վասն այն յիրաւի մէք պատիւ կամ պատիժ կրեմք. որպէս սորբն Ստեփաննոս զբնական բարին որ եդ Աստուած ի նմա սերմն՝ աճեցոյց եւ պտղաբերեաց յինքեան: Վասն այն կոչի այր: Այս երկու կերպն: Երրորդ կերպիւ ասի այր՝ վասն արիական գործոյն: Նախզի՝ արիութեամբ էր ի գործ պաշտմանն եւ սպասաւորութեան որբոցն եւ աղքատացն ի Զրիստոսի: Երկրորդ՝ զի արիացաւ ի պատերազմին եւ քաջութեամբ յանդիմաներ զհրեայսն: Երրորդ՝ այր էր եւ կատերեալ ըստ հասակի հոգւոյն. թեպէտ ժամանակաւ կրտսեր քան զայլ առաքեալսն. այլ առաջին եղեւ քան զամենեսեան: Չի Պետրոս որ զլուի էր առաքելոցն ի յերկրի. սա զլուի եղեւ նահատակացն որ յարկինս: Նա դաւանեաց զԶրիստոս որդի Աստուծոյ: Սա ետես զԶրիստոս ընդաջմէ հօր: Նա փակօղ եւ բացօղ էր արքայութեանն. եւ սա նախ եմուտ յարքայութիւնն: Նա ի յերկրի շրջեր եւ քարոզեր. եւ սա ի մէջ ասպարիզին քարոզեր: Նոյնպէս անտարանիչն Յօհաննէս սիրելի աշակերտ էր Զրիստոսի. եւ սա առաւել սիրեաց զԶրիստոս եւ քարկոծեցաւ: Նա ասաց (ի սկզբանէ էր Բանն.) եւ ի վերայ եբեր. (զԱստուած ոչ որ ետես երբէք.) եւ սա ասէ. (տեսի. զերկինս բացեալ. եւ զՅիսուս զի կայ ընդաջմէ Աստուծոյ:) Եւ եղբայր նորա Յակօբոս թեպէտ սրով վկայեցաւ ի Յերովդէ. այլ յետ սրբոյն Ստեփաննոսի. եւ ոչ նախ քան զնա: Նմանապէս եւ զայլ առաքեալսն իմասցիս: Այսպէս կատրեալ էր ըստ հոգւոյն հասակի քան զամենեսեան. վասն այն ասէ այր: Չորրորդ՝ զի արիացու տեսութեամբ քան զամենայն մարգարեսն. զի զոր մարգարեքն եւ նահապետքն՝ թագաւորք եւ արդարք ցանկացան տեսանել եւ ոչ տեսին: Իսկ սա ետես. եւ նոքա աղօտն ունէին զտեսութիւնն. իսկ սա յայտնի: Մովսէս ի հնումն ետես զյետոյսն Աստուծոյ. իսկ սա դէմ յանդիման ետես զերեսս սուրբ երրորդութեանն: Այսպէս քան զամենայն սուրբս որ ի հնումն եւ ի նորումնս՝ տեսութեամբ եւ հոգւով եւ մարմնով եւ քաջութեամբ՝ սա արի եւ առաւել եղեւ: Վասն այն ասէ: (Ստեփաննոս այր:) Այս երկրորդ հարցումն: *Իսկ երրորդ զլուին որ ասէ. (լի շնորհօք եւ զօրութեամբ:) Սրբոքն ոչ ի հարց ազգականութենէ պատմին. այլ յառաքինութենէ. որպէս Նոյ. Աբրահամ. Յօբ. Մովսէս, եւ այլք: Նախ՝ ի հարց ծնանիլն ակամայ է. այլ առաքինութիւնն կամաւ: Երկրորդ՝ զիպատուական է որ սկիզբն գովութեան ինքն լինի, քան այլոյ անուամբ գովի: Վասն այն սրբոյն Ստեփաննոսի գովութիւն դնէ զառաքինութիւն եւ ասէ: (Ստեփաննոս այր լի շնորհօք եւ զօրութեամբ:) Բազմաօրինակ է շնորպացն անուն եւ զօրութիւնն: Նախ՝ նշանակէ թէ, շնորհ հոգւոյն սրբոյ ծնաւ զսա աւագանաւն որդի Աստուծոյ. ոչ բնութեամբ, այլ ի զօրութենէն Աստուծոյ որ է Զրիստոս՝ յաջողեաց ի պատիւ եղբայրծութեան իւրոյ: Երկրորդ՝ այր ասաց զնա որ է

պատկեր Աստուծոյ. որպէս թէ Ստեփաննոս ճշմարիտ տատկեր է հօր Աստուծոյ. եւ լի շնորհօք՝ այսինքն հոգւովն սրբով. եւ զօրութեամբ՝ որդւովն. զի (Քրիստոս է Աստուծոյ զօրութիւն որպէս ասէ առաքեալն:) Ահա զարմանալի եւ մեծ գովութիւն. որ զանտանելին երկնի եւ երկրի զերեք երեւեան աստուածութիւնն մի ոք հողեղէն գոլով ի մարմնի լցեալ տանի. որպէս յայլ ուր մարդասիրապէս ասաց. (Ես յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեղս եւ ի խոնարհս. եւ յայնոսիկ՝ որք դողան ի բանից իմոց:) Երրորդ՝ շնորհ ասէ զպարգեւս հոգւոյն տուեալ է բան իմաստութեան. եւ գիտութեան. եւ լեզուաց. եւ հանճարոյ. եւ այլն: Եւ զօրութիւն զպատժողականն. որով Պետրոս ասաց ասաց Անանիայի եւ Սափիրայի: Եւ Պօղոս Ելիմաս մոգի: Զորրորդ շնորհ ասի պարտուց թողուլն. եւ սա հրեիցն որք պարտական էին արեան Տեառն իւրոյ՝ թողոյր յորժամ գային ի հաւատս: Նոյնպէս եւ իւր սպանողացն թողոյս. որպէս ասեր. (Տեր մի համարիր սոցա զայս ի մեղս:) Եւ զօրութիւն՝ զի զօրաւոր էր ի քարոզութիւն աւետարանին. զի գիտէր զօրէսս եւ զմարգարէս. եւ ընկալաւ զնորս քարոզութիւն: Զինգերորդ՝ շնորհք ասին աստուածային առաքինութիւնքն. որպէս հաւատն. յոյսն. եւ սերն. զի լի էր հաւատովն եւ յուսովն եւ սիրորովն որ ի Քրիստոս: Եւ զօրաւոր էր մարդկային առաքինութեամբն. որ է խոհեմութիւն. արիութիւն. ողջախոհութիւն. եւ արդարութիւն: Վեցերորդ՝ շնորհն համարձակութեամբ տայր խօսիլ զվկայութիւնն Քրիստոսի առաջի ազգաց. եւ զօրութիւնն էր որ ի չարչարանսս զհամբերութիւն գոծեր: Եօթներորդ՝ շնորհօքն առաքինութիւնն առ ինքն գործեր. եւ զօրութեամբ զգանազան սքանչելիսն կատարեր: Ութներորդ՝ շնորհօքն չարչարակից եղեւ Քրիստոսի. եւ զօրութեամբն ի կատարումն եհաս պսակին: Իններորդ՝ բուրվառ շնորհաց էր սուրբն Ստեփաննոս, միշտ զանուշահոտութիւն խնկելով ամենեցուն: Եւ աղբիւր զօրութեան էր՝ որ միշտ բոխեր եւ հոսեր ընդ բանին շնորհաց եւ զգործս արդեանց պտղաբերելով: Տասներորդ՝ շնորհն էր որ եբաց նմա զդուռն արքայութեանն երկնից. այն որ փակեցաւ ի ձեռն Ադամայ. եւ բացաւ ի ձեռն Քրիստոսի: Եւ զօրութիւնն էր որ զօրացոյց զտեսութիւն սրբոյն Ստեփաննոսի. զայն յորմէ սերովբէքն ծածկէին զդէմս յահագին փառացն, սա զօրացաւ ի մարմնի գոլով զգերամբարձ փառսն տեսանել. (ահա տեսի զերկիսս բացեալ. եւ զՅիսուս զի կայ ընդաջմէ Աստուծոյ:) Այս երրորդ հարցումն որ ասէ: (Ստեփաննոս այր լի շնորհօք եւ զօրութեամբ:) *Զորրորդ գլուխն որ ասէ: (Առներ նշանս եւ արուեստս:) Ամենայն իր Էութիւն եւ զօրութիւն եւ ներգործութիւն է. որպէս Էութիւն է ծաղիկն. եւ զօրութիւն ունի բժշկութեան եւ ներգործէ յորժամ բժշկէ: Նոյնպէս Էութիւն է մարդն. եւ զօրութիւն ունի գործելոյ. եւ ներգործէ յորժամ եւ կամի: Չի Էութիւնն սկիզբն է. եւ զօրութիւնն ի նմանէ. եւ գործն զօրութենէ: Վասն որոյ զսրբոյն Ստեփաննոսի նախ ասաց զԷութիւնն որ է այր. եւ ապա զզօրութիւնն որ է լի շնորհօք եւ զօրութեամբ: Այժմ ասէ զգործն՝ (որ առներ նշանս եւ արուեստս:) Եւ սոքաա ունին վեց զանազանութիւնս: Նախ որպէս ասացաք մի Էութիւնն՝ ունի զօրութիւն եւ ունի ներգործութիւն: Արդ՝ որ զօրութիւնն է՝ նշանն է. եւ այն որ գործն է՝ արուեստն է նորին: Այսպէս սուրբն Ստեփաննոս՝ ըստ զօրութեանն առներ զնշանս. եւ ըստ ներգործութեանն արուեստս մեծամեծս: Երկրորդ՝ մարդն հոգի է եւ մարմին. որ ի հոգւոյն յառաջ գայ՝ նիսան է. եւ որ ի մարմնոյն՝ գործն եւ արուեստն կատարի: Երրորդ՝ նշան է որ

բանիւ ցուցանի ի լսելիս. եւ արուեստ որ գործով ձեռացն կատարի ի տեսանելիս: Չորրորդ՝ նշան է նոր գործն եւ անսովորն. որպէս շրջեալ ասեմք աննիշ անծանօթ. եւ արուեստ է գործն՝ որ այլ տեսեալ լինի եւ գործեալ. եւ սա զնոյն առնէ: Զինգերորդ՝ նշան է ի վեր քան զբնութեան գործն որ կոչի սքանչելիք. որպէս զիծնէ զկոյրն լուսաւորել. եւ զմեռեալս յարուցանել. եւ այլն. իսկ արուեստն է՝ գործն ըստ բնութեան կարգի. սակայն փութապէս. որպէս բժիշկք տան հիւանդաց առողջութիւն ի բազում աւուրս. եւ սուրբքն փութապէս առողջացուցանեն: Վեցերորդ՝ նշան է գործն հոգեւոր որ ի հոգիս կատարի. որպէս թողղով զմեղս. որդի Աստուծոյ լինիլ. եւ այլ խորհուրդք եկեղեցւոյ. եւ արուեստ է գործն մարմնաւոր, եւ որ ի մարմինն կատարի. որպէս արուեստաւորք առեալ զնիւթն զարդարեն զանազան գունօք եւ արուեստիւք: Իսկ սուրբն Ստեփաննոս՝ զամենայն կատարէր. թէ հոգեւոր եւ թէ մարմնաւոր գործ եւ սպասաւորութիւն. մեծամեծ նշանս եւ արուեստս ի հոգի եւ ի մարմինս նոցա. զբան քարոզութեանն եւ զգործ առաքինութեանն: Չնոր նշանս եւ զիին արուեստս՝ առ մեռեալս եւ առ կենդանիս: Չթողութիւն մեղաց եւ զբաշխումն շնորհաց: Չի զդուս հալածէր. զախտսն բժշկէր. զհիւանդս մխիթարէր. զայրիս սփոփէր. զորբսն ինամէր. զրկելոցն պատսպարան լինէր եւ անիրաւացն յանդիմանիչ: Չայս է իմանալ որ ասէ: (Առնէր նշանս եւ արուեստս:) Չոր ոչ է գրեալ մի ըստ միոջէ. որպէս եւ Տեառն ամենայն սքանչելիքն ոչ գրեցան: Այլ նոքա ժխտօղ եւ տիրասպան ազգքն՝ որք զմարդգարենս կոտորեցին եւ զառաքեալսն հալածեցին. եւ զՏէրն ի խաչ հանին. որք սովորք էին բարեացն չար հատուցանել. յարեան ի վերայ սրբոյն եւ ածին յատեան. եւ կացուցին սուտ վկայս որպէս ի վերայ Զրիստոսի. (թէ լուաք ի դմանէ՝ որ հայիոյէր զՄովսէս եւ զԱստուած:) Եւ նա բացեալ զշնորպալից բերանն իւր, ուսուցանէր զնոսա դառնալ ի հաւատսն Զրիստոսի. եւ զչարսն յանդիմանէր: Եւ նոքա տեսին զերեսս նորա լուսափայլեալ իբրեւ զերեսս հրեշտակի՝ ոչ կարացին հանդուրժել. այլ ժողովեցան ի վերայ նորա եւ քարկոծ առնէին զսուրբն Աստուծոյ: Որ նմանեալ Տեառն իւրոյ՝ աղօթէր ի վերայ նոցա. (Տէր մի համարիր սոցա ի մեղս զայս.) ոչ եթէ զնոսա անմեղս առնէր ի չար գործելն. այլ որք եկեցցեն ի հաւատսն Զրիստոսի՝ թողութեան լիցին արժանի: Որեւ վաղվաղակի ընկալաւ զպտուղ աղօթիցն, զի սողոս որեւ Պօղոս՝ էր կամակից սպանման նորա. եւ պահէր զհանդերձս սպանողացն. զի փոյթ էր ի քարկոծերն: Որ ի ճանապարհին Դամասկեայ երեւեցաւ նմա փրկիչն. եւ շրտոյց զաչսն եւ ասէ. Սողոս զի՞ հալացես զիս. երթ ի Դամասկոս՝ եւ մկրտեաց եւ տեսանես. եւ քարոզեա զանուն իմ ի մէջ հեթանոսաց. զի անօթ ընտիր իմ ես դու ի մէջ ազգաց: Եւ Զրիստոս պսակողին սրբոց՝ եւ հատուցանողին բարեաց փրկչին մերոյ եւ Աստուծոյ՝ փառք եւ գոհութիւն ընդ Զօր իւրում եւ ամենասուրբ Զոգւոյն. այժմ եւ յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ քարոզ սրբոյն Ստեփաննոսի. ի Բանն (Ահա տեսանեմ զերկինս բացեալ. եւ զորդիմարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ:) Գործ. 7. 55: (Գլուխ. ԾՅԷ)

Անդրանիկն մարտիրոսաց՝ կոչեաց զմեզ ի հոգեւոր հարսանիս իւր. շնորհեա մեզ Տէր պարգեւ մտանել առ նա եւ ուրախ լինիլ յառազաստ

նորա: Ստուգետ ի մեզ զբան վարդապետութեան որպէս զշարս մարգարտաց եւ պատուական ականց, ընծայս մատուցանել հարսնարանի նորա: Որ հիւսեցեր պսակ իմանալի քում պսակաւորին նախնի՝ տուր մեզ յօրինել պսակս բան ի ճահ գովեստի նորին հանդիսի: Ընդունելի են վկայքն ամենեքեան. եւ ցանկալի յիշատակք մարտի նոցա. բայց առաւել նախամարտիկն եւ հզօր զինւորն. որ առաջին կոխեաց զպատերազմ զկնի թագաւորին Քրիստոսի: Սիրելի են ամենայն պտուղք երկրրագործաց. բայց առաւել ցանկալի է վաղահասն քան զամենայն: Այսպէս սուրբն Ստեփաննոս՝ նախ խայծեալ ի բարունակ խաչին. եւ առաջին պտուղ ընծայեցաւ թագաւորին: Սա նախ եմուտի բովս չարչարանաց մարմնոյ. եւ ընկալաւ զպայծառութիւն հոգւոյ: Սա յառաջագոյն փորձեաց զմահ եւ ծանեաւ թէ՛ սպանաւ մահուամբ անմահին. ի սմանէ ուսան ամենայն ընկերք իւր թէ՛ մեռեալ է մահ եւ սատակեալ իբրեւ զօձ եւ արհամարհեալ: Սա առաջին անարգեաց զդժոխս չգանալով ի նա յամենայն մարդկանէ յԱդամայ հետէ ի ձեռս Աստուծոյ աւանդելով զհոգի իւր: Սա առաջին պտուղ մահուն Քրիստոսի. եւ նախկին ընծայ բնութեանս մերոյ, Աստուծոյ ի հոտ անուշից: Չսա առաջին պտղաբերեցին առաքեալքն, առաջին սմա տալով ձեռնադրութիւն: Չայս իմացեալ մանկունք ակեղեցւոյ, ըստ կարի իւրեանց զարդարեն զտօն հնդիսի սորա քան զայլոցն գիշերային հսկմամբ՝ խաչիւք եւ ինկօք՝ կանթեղօք եւ մոմեցիւնօք՝ պայծառացուցեալ զպատիւ աւուրս: Չի սա հրեշտականման զուարթութեամբ բարձօղ եղել խաչին Քրիստոսի. եւ իւրով անուշահոտ վարուք՝ ուրախացուցեալ զուարճացոյց զերկինս եւ զերկիր. որպէս ասէ: (Ահա տեսանեմ զերկինս բացեալ:) Եւ ի վերայ այսր բանի՝ երեք ինչ քննելի է մեզ: Առաջին՝ թէ զի՞նչ է պատիւ անդրանկութեան: Երկրորդ՝ թէ վասն է՞ր փայլեցաւ դիմօք: Երրորդ՝ զբանս որ ասէ. (ահա տեսանեմ զերկինս բացեալ:) *Տեսցուք զառաջին զլուին թէ՛ զի՞նչ է պատիւ անդրանկութեանն: Ասեն վարդապետք եթէ զանազան եղանակաւ զերապատիւ Երանդրանկութեանն խորհուրդ. ոչ միայն յարարածս, այլեւ յարարիչն: Նախզի՛ անդրանիկն երեց ասի. եւ երեց է Աստուած քան զաշխարհս. եւ անդրանիկն զԱստուծոյ պատկերն ունի. զի հայր եւ ինսամացու է այլ հարազատ եղբարցն: Երկրորդ՝ անդրանիկ է Բանն Աստուած ի Զօրն ծնեալ. եւ կրտսեր այլ եղեալքս ի հօրէ գայացեալք: Չի որդին ծնունդ է ի հօրէ. եւ մեք արարածք. եւ նա ի բնութենէ. եւ մեք ի կամսն եղեալք. զի զամենայն ինչ զոր կամեցաւ՝ արար Տէր: Երրորդ՝ անդրանիկ է երկինք քան զերկիր ըստ պատուոյ եւ ըստ բարձրութեան. վասն որոյ զպատիւ անդրանկութեան նմա ետ Մովսէս արսելով. (ի սկզբանէ արար Աստուած զերկինս. եւ ապա զերկիր:) Չորրորդ՝ անդրանիկ է եւ առաջին կիրակէն քան զայլ աւուրս, եւ զլուիս նոցա. զի նա սկիզբն ամենայն աւուրց. եւ նա է վախճան. եւ նա է պատուիչ յարութեանն Քրիստոսի: Զինգերորդ՝ անդրանիկ եւ պատուական է արեգակն քան զլուսին եւ զայլ աստեղս, պայծառ ունելով զլոյսն. եւ տալով այլոցն. վասն ա յն ասէ Մովսէս. (արար Աստուած զլուսաւորն մեծ իշխանութիւն տուրընջեան. եւ զփոքրն գիշերոյ եւ զաստեղս:) Վեցերորդ՝ անդրանիկք են հրեշտակք քան զմարդիկ ժամանակաւ եւ բնութեամբ եւ տեղեաւ. զի նոքա յառաջին աւուրն ընդ լուսոյն յերկինս գոյացան անմարմին բնութեամբ. իսկ մարդս յետոյ արարաւ թանձր, մարմնով. եւ լ զերկիրս ընկալաւ տեղի. թեպէտ բանականութեամբ

հաւասարք են մարդրիկ եւ հրեշտակք: Եօթներորդ՝ անդրանիկ ասի հոգին քան զմարմինն բնութեամբ եւ պատուով. թեպետ համահաւասարք են ժամանակաւ գոյացեալք: Ութներորդ՝ անդրանիկ եւ մեծ է Աբրահամ քան զայլ նահապետսն. զի անդրանիկ է հրէիցն մարմնով. եւ քրիստոնէիցս հաւատով հայր: Իններորդ՝ անդրանիկ է եւ մեծն Մովսէս ի մարգարես. որ ետես զԱստուած. եւ օրէնս դիր եղեւ Իսրայէլի. վասն այն եւ բերան ի բերան խօսեցաւ ընդ Աստուծոյ եւ դեմ յանդիման: Տասներորդ՝ անդրանիկն բաժին էր Աստուծոյ. որպէս եղ ի յօրէնսն զամենայն անդրանիկս մարդոյ եւ անասնոյ բաժին տալ Աստուծոյ: Մետասաներորդ՝ անդրանիկ էր ազգն Իսրայէլի քան զամենայն հեթանոսս. զի նախ նոքա եկին ի պաշտօնն Աստուծոյ. վասն այն ասէ Աստուած. (որդի անդրանիկ է իմ Իսրայէլ. եւ սիրեցեալ ի պաշտօնն Աստուծոյ:) Երկուտասաներորդ անդրանիկ են եւ ընտրեալքն յԱստուծոյ. որ նախ քան զլինիլն աշխարհի՝ ի նախագաղափար տեսութիւնն ընտրեցան կամօքն Աստուծոյ. ըստ առաքելոյն. (յառաջ քան զլինիլն աշխարհի ընտրեաց զմեզ.) եւ քան զայս չիք ինչ պատուական: Երեքտասաներորդ՝ անդրանիկ են եւ իշխանք եւ հոգեւոր վերակացուք եւ խնամօղբ այլ հոգւոցն. որպէս քահանայք ուսուցիչք, եւ այլք. վասն որոյ երիցունք կոչին: Չորեքտասաներորդ՝ անդրանիկ են ըստ մարմնոյ վերակացուք եւ տեարք. որպէս թագաւորք երկրի եւ իշանք գաւառի. վասն որոյ տեարք եւ իշխանք անւանին: Զինգետասաներորդ՝ եւս մեծագոյն խորհուրդ. զի անդրանիկ Բանն Աստուած ի Զօրէ ծնեալ՝ եկն ի բնութիւնս մեր. եւ եղեւ գլուխ մեր. եւ մեք անդամք ի նա յարեցեալք. եւ եղաք անդրանիկ հրեշտակաց որ էաք կրտսեր նոցա. (զի ամենայն երկնաւորքն ծունր կրկնեն Քրիստոսի. եւ խոստովանին զնա Տէր:) Վեշտասաներորդ՝ մկրտութեամբն լինիմք որդիք Աստուծոյ եւ եղբարք Քրիստոսի. եւ գերազանցիմք երեք ազգաց. այսինքն, հասարակ մարդկան՝ եւ Իսրայէլի եւ հրեշտակաց երկնից: Չի ի մկրտութիւնն է երեք իր: Նախ՝ դաւանութիւն հաւատոյն: Երկրորդ՝ մկրտութիւն ջրոյն: Երրորդ՝ ծնանիլ ի հոգւոյն: Արդ՝ դաւանութեամբն գերազանցիմք մարդկան հեթանոսաց. եւ մկրտութեամբն հրէից. եւ ծննդեամբ հոգւոյն հրեշտակաց. զի նոքա ոչ ունին ծնանիլ ի հոգւոյն եւ լինիլ եղբայր Քրիստոսի: Եօթն եւ տասներորդ՝ պատուական է անդրանիկն եւ ըստ մարմնոյ. զի նախկին զօրութիւն է ծողացն: Ութն եւ տասներորդ՝ զի եւ նախ քանայ զարգանդ ծնողին եւ զայ ի կեանս, որեւ հինգ օր աւելի ստանայ զկեանս յարգանդի: Ինն եւ տասներորդ՝ զի մի է միակ անդրանիկն ի մէջ բազմեղբարցն. որպէս մի է գլուխն եւ անդամք բազումք: Զսաներորդ՝ այս է խորհուրդ անդրանկութեանն. զի որ յանդրանիկ տեսութիւնս իւր Աստուած ընտրեաց զնոսա յառաջ քան զլինիլն աշխարհի՝ յետոյ զնոյն անդրանիկսն պատուեաց ի ժամանակի: Արդ՝ այսպէս մեծ է խորհուրդ անդրանկութեանն. յաղագս այսորիկ մեծարգոյ եւ պատուական է անդրանիկն մարիոնոսաց նախկին ի վկայս եւ առաջին ի սարկաւագս սուրբն Ստեփաննոս. որոյ այսօր ի տօնս խրախութեան նորա հանդիսացուք մաբան: Այս առաջին գլուխն: *Երկրորդն թէ՛ վասն Է՞ր փայլեցաւ դիմօքն: Որպէս պատմի ի պրակս առաքելոցն եթէ՛ (յարեան ոմանք ի ժողովրդենն լիբեացուց ի կողմանցն հարաւոյ. եւ կիւրեանացուց որ է յայնկոյս Աղէքսանդրիոյ. եւ Աղէքսանդրիա մայրաքաղաք է լիբիոյ. եւ որ ի կիւլիկեցուց ի տարսնէ եւ ի սահմանաց նորին: Եւ յԱսիայ ի կողմանցն

Եփեսոսի: Սոքա էին հրեայքն որք ընդ ժամանակս ժամանակս գերեցան յասուրոց եւ ի քաղդեացոցոց եւ ի պարսից եւ յունաց թագաւորացն. եւ ի հայոց եւս: Եւ յայնժամ ազատեալք էին եւ եկեալք ի հրեաստան. եւ զի նոցա լեզուան էին ուր կացեալ էին եւ սնեալ ի գերութեանն՝ անտի գնոսա անուանէին: Սոքա ամենեքեան իբրեւ զշուն կատարի ժողովեցան ի վերայ սրբոյն Ստեփաննոսի. եւ ոչ կարէին զդէմ ունիլ նմա. մի զի վարժ եւ կիրթ էր օրինացն եւ գրոցն որք խօսեցան վասն Զրիստոսի: Եւ մի՝ զի հոգին սուրբ շարժէր զլեզու նորա. ըստ այնմ, (մի հոգայք թէ զինչ խօսիցիք կամ զինչ ասիցէք. այլ զոր հոգին տացէ՝ զայն խօսիցիք:) Ապա խաբեցին զարս ոմանս. եւ սուտ վկայս կացուցին որպէս ի վերայ Զրիստոսի յայնժամ: (Թէ լւաք որ հայիոյէր դա զՄովսէս եւ զԱստուած:) Այժմ ջատագով լինին Մովսէսի՝ զոր երբեմն քարկոծ առնէին հարքն նոցա յանապատին: Այլեւ Աստուծոյ զոր ընդ որթոյն փոխանակեցին: Եւ սուրբ տեղի գտաճարն ասէին՝ ուր կանգնեցին զչորեքդ իմի պատկերն. եւ զորմն լցին զանազան սողնօք, եւ ի ծածուկ պաշտէին: Ասեն վկայքն սուտք: (Մէք լուաք ի դմանէ՝ զի ասէր. Յիսուս նազօրացի՝ նա քակէ գտեղիս զայս. եւ փոխեսցէ զօրէնս զոր ետ մեզ Մովսէս: Այլ նա զայս ոչ ասէր. այլ փառաւոր առնէր զԱստուած մովսիսադիր օրինօքն. եւ զօրէնսն եւ զմարգարեութիւնն Մովսէսի ի Զրիստոս լցեալ եւ կատարեալ ցուցանէր: Բայց նոքա ի Զրիստոս լուան որ ասաց. (մի մնացէ այդր քար ի վերայ քարի որ ոչ քակտեսցի:) Եւ թէ՛ (լուարուք՝ զի ասացաւ առաջնոցն որպէս անկատարից մի շնալ. այլ ես ասեմ որպէս կատարելոց մի հայիր ի կին.) եւ այլն նմանապէս. զայս ի վերայ Ստեփաննոսի կարկատէին: Ով անիաւ իրին. Աստուած վճիռ տայ՝ եւ մարդ դատապարտի. Զրիստոս հրամայէ՝ եւ Ստեփաննոս զվրէժն հատուցանէ. թագաւորն ճշմարտէ զիրս. եւ զինուորն մեղադրի: Ասէ քահանայապետն թէ՛ (արդարեւ այդ այդպէս իցէ.) իշխէ՞ք զայդ ասել եւ մէք կենդանի. որպէս յայնժամ պատահեաց զպամուճանն ի վերայ Զրիստոսի. եւ հայեցեալ ի նա զի տեսցեն զողացեալ եւ երկուցեալ ընդ յնդիմանութիւնն. եւ սպանցեն զնա որպէս հայիոյիչ: Իսկ իբրեւ տեսին զերեսս նորա փայլեալ եւ լուսաւորեալ իբրեւ զերեսս հրեշտակի ասէ զիրն: Եւ այսմ դնեն վարդապետք բազում պատճառս: Նախզի՝ տեսին զերեսս նորա լուսաւորեալ որպէս հրեշտակի լռեցին եւ կացին ամօթով ի բանս սուտ վկայութեան իւրեանց: Երկրորդ՝ զի եռաց սիրտն ջերմ սիրով որդւոյն Աստուծոյ. վասն այն փոխեցաւ ի կերպ հրեշտակի. որպէս ասէ Սողոմօն. (սրտի բերկրելոյ՝ երեսք զուարթք:) Երրորդ՝ զի սուտ էին ասացեալքն՝ պայծառացաւ երեսն: Չորրորդ՝ զԱդամայ կերպարանն ի յինքն եբեր՝ զոր նախ քան զյանցանսն ի դրախտին ունէր: Զինգերորդ՝ փառաւորեցան երեսքն Մովսէսի յորժամ ետես զԱստուած. եւ սա չէր պակաս քան զՄովսէս. վասն այն լուսաւորեցան երեսքն: Վեցերորդ՝ զի հաղորդէր մաքրութեան հրաշտակացն. վասն այն կցորդ եղեւ գեղոյ նոցա. զի մէք զգեղեցկաշուք ոք տեսեալ՝ հրեշտակակերպ ասեմք: Եօթներորդ՝ եղեւ հրեշտակակերպ. զի որպէս զհրեշտակ համարձակ խօսեր զպատգամս Աստուծոյ. եւ տեսիլ երեսացն վկայէր ճշմարիտ խօսիցն: Ութներորդ՝ ասաց զիրն. (Ստեփաննոս այր լի շնորհօք սրբովք եւ զօրութեամբ.) վասն այն ի ջեալ ի վեայ նորա հոգին շնորհաց՝ լուսաւորեաց զդէմն. զի ամենայն յայտնապէս տեսցես զշնորհս հոգւոյն, եւ զզօրութիւնն Զրիստոսի ի նմա բնաակեալ: Իններորդ՝ փայլեցան երեք նորա ի մէջ

սպանողացն. զի ցուցցէ թէ՛ ոչ երկնչի ի մահուանէն: Տասներորդ՝ ի հարցանելն զնա վասն Քրիստոսի՝ պայծառացան դէմքն. զի արժանաւոր վկայ լինէր որդւոյն Աստուծոյ: Մետասաներորդ՝ պայծառացոյց Աստուած զգեղ երեսաց նորա. զի լռեսցէ ամբոխն. եւ մեղմով լուիցեն զբանն յաղագս Միածնին ի յօգուտ իւրեանց. որպէս եղեւ իսկ. յորժամ պապանձեցան, սկսաւ խօսիլ ընդ նոսա: (Արդ՝ եղբարք եւ հարք լուսարուք ինձ:) Երկուտասաներորդ՝ լուսաւորեցան երեսքն որպէս հրեշտակի՝ զի կարացէ տեսանել զերկինս բացեալ. եւ զՅիսուս ընդաջմէ հօր Աստուծոյ: Այս երկրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր լուսաւորեցան երեսք սրբոյն Ստեփաննոսի: *Երրորդ զլուինն որ ասէ: (Ահա տեսանեմ զերկինս բացեալ. եւ զորդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ:) Եւ ի վերայ այսր բանի՝ երեք ինչ ասելի է: Նախ զգերամբարձ զփառս սրբոյն Ստեփաննոսի քան զամենայն մարդկան: Երկրորդ՝ թէ վասն Է՞ր բացեալ ետես զերկինս: Երրորդ՝ վասն Է՞ր ասէ՝ որդի մարդոյ կայ ընդաջմէ Աստուծոյ: *Եւ զառաջինն գեիտելի է՝ զի զերամբարձ եւ անզուգական են փառք սրբոյն Ստեփաննոսի քան զամենայն մարդկան՝ որք ի հնումն եւ որք ի նորումսս եւ ընտրեալք եղեն Աստուծոյ: Նախ Ենովս որ յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ. եւ յոյսն անտեսանելի է: Ենովք վերացաւ. բայց ոչ է գրեալ թէ ետես նա զԱստուած: Նոյ արդար որ աշխարհի սերմն պահեցաւ. եւ ոչ նա ետես: Աբրահամ հայր հաւատոց՝ զԱստուած ոչ որպէս զԱստուած ետես. այլ որպէս զմարդ ի յերկնից: Յակօբ սանտուխ ետես. եւ որպէս ընդ մարդոյ ընդ Աստուծոյ կռուեր: Մովսես օրէնսդիրն որ ընդ Աստուած խօսեցաւ զյետոյան Աստուծոյ ետես ի կերպ հրոյ: Չի ինքն ասեր. (ոչ ոք կարէ տեսանել զերեսս իմ եւ ապրի:) Զեղիաս ոչ ի հողմն սաստիկ, ոչ ի հուր, ոչ ի շարժումն, այլ ի յօդ իմն սակաւ զԱստուծոյ մերձաւորութիւնն ետես: Նոյնպէս եւ մանովէ դատաւորն առաջին ասէ. կորեաք ով կին. զի զԱստուած տեսաք: Նոյնպէս եւ մարգարէքն տեսիլս ինչ կերպարանաց տեսանէին. որպէս Եսայի աթոռ ետես. եւ Էզեկիէլ չորեք կերպեան կառս. եւ այլ մարգարէքն երեւոյթ ինչ տեսանէին: Այլ սա՛ ոչ երեւոյթ ինչ, եւ ոչ ի յայլ կերպարանս, այլ դեմ յանդիման մարմնական աչօք զօրացաւ եւ ետես զփառս Աստուծոյ. եւ զՅիսուս զի կայր ընդաջմէ Աստուծոյ: Նմանապէս եւ առաքեալն Պետրոս. որ նախնի Դաւանօղն էր Քրիստոսի՝ եւ ջերմ ի սերն նորին քան զայլ աշակերիսն՝ զերեւումն Քրիստոսի ի նաւին ոչ ներեր. այլ ասեր (ի բաց զնա յինէն՝ զի այր մեղաւոր եմ ես:) Եւ սիրելի աշակերտն էր Քրիստոսս ասաց. (զԱստուած ոչ ոք ետես երբէք:) Նոյնպէս եւ ամենայն աշակերիքն զմարմին նորա մարմնաւոր աչօք տեսին. եւ ոչ զաստուածութեան զփառս: Եւ որք ի լերինն թաբօր պայծառացեալ տսին՝ թերաբաց զաստուածութեան զփառս եւ ամպով հովանացեալ. վասն որոյ զարհուրեալ թմրեցան եւ ոչ կարէին խօսիլ: Իսկ Յօհաննէս մեծն ի ծնունդս կանանց՝ որ մկրտեաց եւ զՏէրն, եւ ետես ցելեալ զերկինս, եւ զհոգին ի ջեալ, զձայնն Զօր լուաւ ի վերայ երկրի, եւ ոչ ի վերայ երկնից: Ապա ուրեմն սա դիր ամբարձեալ է փառօք անզուգական քան զամենայն սուրբս որ ի հնումն եւ ի նորումսս. որպէս ասէ: (Ահա աչօք իմովք տեսի զերկինս բացեալ. եւ զորդի մարդոյ զի կայ ընդաջմէ Աստուծոյ:) Այս առաջինն: *Երկրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր բացան նմա երկինք: Ասեմք եթէ՛ ամենատես հոգին սուրբ ոչ միայն բանայ զանդունդս. որպէս ասեր Սողոմօն. (հանճարով իւրով զանդունդս պատառեաց.) այլեւ բանայ զրկինս

երկնից սրատես արարեալ զընդունակն իւր. եւ նայիլ տայ յանձանօթ տեղին. որպէս սուրբն Ստեփաննոսի եղոյց որ վկայէ: (Ահա տեսանեմ զերկինս բացեալ:) Ո՞վ արժանապէս գովել կարացէ զկորովականի տեսութիւն աչաց սրբոյ նախավկային. յոյժ բարձրագոյն է քան զԵղիսէին որ ետես հրեղէն կառս եւ հեծեալս. այլ ի լեռնն ետես եւ ոչ յերկինս: Եւ քան զերկտրեակ աչս երկնից՝ առաւել է սա. զարեգականն ասեմ եւ զլուսին. զի նոքա ի խոնարհ հային. եւ ոչ ի բարձունս: Եւ զոր սա ետես արժանապէս՝ պատմէ աննախանձաբար անարժանիցն: Եւ ասեն վարդապետք թէ՛ վասն բազում պատճառաց բացան նմա երկինք: Առաջին՝ զոր Ադամ մեղօք փակեաց զերկինսն ինքեան եւ ծննդոց իւրոց: Ստեփաննոս արեամբն իւրով եբաց ինքեան եւ ընկերաց իւրոց եւ վկայակցաց իւրոց: Երկրորդ՝ եբաց զերկինս եւ ճանապարհ արար հոգւոց. նոյնպէս եւ սուրբն Ստեփաննոս եբաց եւ ճանապարհ արար դաւանողացն զՔրիստոս: Երրորդ պատճառաւ՝ բացան նմա երկինք՝ զի առաջին պտուղ էր վկայից. պարտ էր հիմն հաստատուն լինիլ. զի ուրախ զհետ ընթացեն եկեալքն: Չորրորդ բացան երկինք՝ եւ ետես զորդին ի կերպ Ադամայ ընդաջմէ Աստուած հօր. եւ վկայեաց համբարձմանն. եւ նստիլն որդւոյ ընդաջմէ հօր՝ ծանր թւեր հրեիցն: Հինգերորդ պատճառ՝ օրէն էր հրեիցն յորժամ հայիոյութիւն լսէին, պատառէին զպատմութեանն. աստ հայիոյէին զորդին Աստուծոյ. եւ զծառայ նորա զսուրբն Ստեփաննոս: Ոչ ոք էր օրինապահ որ պատառէր զպատմութեանն. առագաստն վերին բացաւ եւ եցոյց թէ՛ հայիոյեալն ի նոցանէ՛ Աստուած է ճշմարիտ. ոպէս յորժամ ի խաչին էր՝ վարագոյն պատռեցաւ. եւ յորժամ ի գերեզմանի՛ վեմքն: Վեցերորդ՝ վկայ կոչեցաւ. զի եբաց զերկինս եւ վկայեաց թէ՛ ի փառս աստուածութեան է Քրիստոս. զոր յետին ժամանակիս հանդերձեալ էին հերձաւծ խօսիլ թէ՛ որդի կրտսեր է քան զհայր. որպէս ասաց հեծեալն Արիոս եւ այլք. եբաց եցոյց զնա համապատիւ հօր եւ հաւասար: Եօթներորդ՝ հանդերձեալ էին բարբանջել թէ՛ որդի յետ կատարելոյ զտնօրէնութիւնն՝ ի հայր լուծաւ. որպէս փայլակն ի հրոյ վեացեալ եւ դարձեալ անփոխեալ: Եւ ոմանք թէ՛ զմարմինն յարեգակն եղ. եւ այլք թէ՛ յօդս պնտեցաւ. վասն որոյ վկայեաց աստ թէ՛ նովին մարմնովն կայ որդին կանգնեալ ընդաջմէ հօր: Ութներորդ՝ բանայր զերկինս յամօթ Սաբելի. որ մին անձն ասեր զերրորդութիւն. ցուցաւ աստ յատկութիւնն անձանց: Իններորդ պատճառաւ՝ եբաց զերկինս վասն հրեշտակաց. զոր երբեմն էրեց որդին որք են հրեշտակ՝ ի դարձի անառակին ասէին թէ՛ (ընդէ՞ր զեներ դմա զեզն պարարակ) արբիռ եւ անառակ ազգի մարդ կան. յայսմ ասուր բացեալ զանջրպետ հաստատութիւնն երկնից, եցոյց նոցա զսեր եւ զքաջութիւն զինուորին թէ՛ յաղագս այդ պիտեացդ յանձն առ ի զտնօրէնութեան խորհուրդ եւ չարչարեցայ. որ այդպէ չարչարանօք զան զհետ իմ: Տասներորդ՝ եբաց զհաստատութիւնն երկնից եւ եցոյց զփառս արդարոցն՝ զոր խոստացեալ է նոցա ի հանդերձեալն. Ստեփաննոս ետես ի մարմնի գոլով: Եւ աստ կատարեցաւ ասացեալն ի Տեառնէ: (Երանի այնոցիկ՝ որք սուրբքն են սրտիւք՝ զի նոքա զԱստուած տեսցեն:) Յաղագս այսոցիկ եւ առաւել քան զայս պատճառաց՝ բացան նմա երկինք: Այս երկրորդ հարցումն: *Իսկ երրորդն թէ՛ ընդէ՞ր մարգարէն Դաւիթ այլ մարգարէքն նստեալ ասեն. ըստ այնմ, (նիստ ընդաջմէ իմմէ.) եւ ինքն ասեր. (տեսանիցէք զորդին մարդոյ նստեալ ի վերայ ամպոց.) եւ սուրբն

Ստեփաննոս կանգնեալ ասէ: Արդ՝ նստիլն զհանգիստն նշանակէ յետ չարչարանաց աշխարհիս. այլեւ զհամապատիւն ընդ հօրն: Իսկ կանգնիլն աստ՝ բազում իրս նշանակէ: Նախ ցուցանէ թէ՛ յարեալ ի պսակել զսուրբն: Երկրորդ կայր՝ զի զանճառելի բարիսն ցուցներ նմա. եւ յինքն ձգէր վկայն իւր: Երրորդ՝ ցուցանէ թէ՛ ընդ նահատակսն է հանդիսգիրն Քրիստոս. եւ նա է օգնականն Լոցա. զի եւ այլ վկայքն քաջալերին: Չորրորդ՝ զանչափ սերն եւ զառաւել զուարճութիւնն նշանակէ. մինչ նստեալն էր ընդաջմէ՝ յորժամ ետես զյաղթութիւն մենամարտին, խնդութեամբ յարեալ ի պսակել զնա: Զինգերորդ կայր կանգնեալ՝ իբր միջնորդելով, զհաշտութիւն հօր Աստուծոյ ընդ մարդկան ազգի: Վեցերորդ կայրն՝ ցուցանէ զգալուստն փութանակի ի դատաստան եւ ի հատուցումն չարաց. ըստ այնմ, (վասն տառապանաց աղքատին եւ հեծութեան տնանկին՝ այժմ յարեայց ասէ Տէր.) եւ թէ՛ (յարեալ Աստուած եւ ցրուեցան ամենայն թշնամիք Լորա. փախեան ատելիք Լորա:) Եօթներորդ՝ բանալն զերկինս եւ կանգնիլն՝ նշանակէ թէ՛ անդ հրաւիրէ մտանել զամենայն հաւատացեալս իւր. եւ ժառանգել զարքայութիւնն. ոպէս ասաց. (երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի. դարձեալ գամ եւ առնում զձեզ առիս:) Ութներորդ կայրն՝ զկենդանին նշանակէ զոր դուք հրեայքդ մատնեցիք ի մահ եւ կենդանի տեսանեմ. եւ զոր դուք առաջի Պիղատոսի կացուցիք՝ կայ ընդաջմէ հօր իւրոյ: Իներորդ՝ յարեալ եւ եցոյց վկային իւրոյ զտեղի բել եռացն ի ձեռնս եւ յոտսն. եւ ի կողն զխոցուածն. եւ ասէ. յիս հայեաց որ կախեցայ ի խաչին. եւ ես տամ քեզ զյաղթութիւն: Տասներորդ՝ տեսեալ զօղագնաց նաւավարն որ ի նաւահանգիստն փութայ՝ բանայ զեկինս եւ դէմ ընդառաջ ելանէ նմա. եւ մեծարէ զնա (նստուցանել ի սեղան հօրն, եւ ինքն անցեալ պաշտեսցէ զնա որպէս խոստացաւ յաւետարանին:) Եւ զի որդի մարդոյ ասէ. զայն զոր դուք հրեայքդ զմարդկութիւնն միայն տեսանէք. ես ի փառս աստուածութեանն տեսնեմ զնա: Եւ դարձեալ զՅիսուս զոր ուրացայք առաջի պիղատոսի՝ ահա նա կայ ընդաջմէ Աստուծոյ հօր եակցին իւրոյ. եւ ոչ ոք կայ ընդ ինքն եւ ընդ հայրն. բայց ինքն միայն: Եւ թէ ոք ասիցէ՛ յաղագս հօր եւ որդւոյ աստուածաբանեաց. ո՞ր է հոգին սուրբ: Ասեմք նախ եթէ՛ ուր հայր է, անդ է եւ հոգին սուրբ. եւ ուր որդին՝ անդ եւ եակիցն իւր: Եւ դարձեալ՝ հոգին էր որ վառէր զնահատակն ի պատասխանիսն. ըստ այնմ որ ասէ. (Ստեփաննոս այր լի շնորհօք եւ զօրութեամբ.) եւ ի վերայ բերէ. (ոչ կարէին զդէմ ունիլ զիմաստութեանն եւ զհոգւոյն որով խօսէրն:) Ապա ուրեմն յաղագս համագոյ եւ միասնական սուրբ երրորդութեան խօսեցաւ եւ Աստուած արանեաց: Այս երրորդ գլուխն: *Չորրորդ հարցումն թէ՛ վասն Է՞ր քարկոծեցաւ: Ասեմք եթէ՛ յորժամ լուան զայսպիսի վկայութիւնս Քրիստոսի ասէ գիրն, (խցին զականջս իւրեանց. զի մի լուիցեն:) Նախզի՛ մէք ասեն, որպէս զմահապարտ սպանաք. դու ա՞րդ ասես թէ կայ յերկինս: Երկրորդ՝ խցին զականջս՝ զի կամեցան յետ սպանանելոյն զՔրիստոս, եւ զանունն եւս ջնջել ի լսելեաց մարդկան: Երրորդ՝ խցինն զականջս՝ զի լւան ի Քրիստոսէ. (տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան եւ եկեալ ընդ ամպս երկնից:) խցին զականջս. երկեան թէ՛ զգալն այլ կամի ասել կամի ասել ի դատել զմեզ: Չորրորդ՝ խցին զականջս՝ զի մի լուիցեն զվարդապետութիւն որ վասն Քրիստոսի. եւ զաչս խցին՝ զի մի տեսցեն զլոյսն, որպէս ասէ Դաւիթ. (որդպէս իժի եւ քարբի զի խցեալ են զականջս իւրեանց. զի մի լուիցեն զձայն թովչի

ճարտարի:) Եւ գիմեցին առ հասարակ ի վերայ որպէս զշուն կատաղի ժողովք չարաց. եւ հանեալ տարտաքոյ քաղաքին քարկոծ առնէին զնա: Եւ այս վասն բազում պատճառի: Նախ՝ քարկոծէին. զի օրէն էր նոցա թէ ոք հայիոյեր զվստուած քարկոծեր. այլ նա վասն փառաւոր առնելոյն զվստուած քարկոծեցաւ յանօրինացն. որպէս երբեմն հարք նոցա քարկոծեցին զմարգարէն Երիմիաս վասն հայրենի օրինացն: Երկրորդ պատճառաւ քարկոծէին՝ զի ամենեքեան հաղորդեցին անբիծ արեանն. եւ զի առաւել եւս կենդանոյն չարչարեցցի: Այլ նա իբրեւ զանուշահոտ ծաղիկս եւ զտերեւ վարդից՝ կակղագոյն ընդունէր, զի տեսանէր ի վերուստ զնահատակադիրն Զրիստոսի: Երրորդ պատճառ՝ զի կամեցան զԶրիստոս քարկոծ առնել յարտեան լերինն. եւ զի չէին գրեալ մարգարէքն թէ քարկոծեցցի Զրիստոս. վասն այն չկարացին առնել զայն. սմա արարին. եւ փոխանակ վարդապետին՝ զաշակերտն քարկոծեցին: Չորրորդ պատճառ՝ զի ասէ առաքեալն. (զպակասութիւն չարչարանացն Զրիստոսի Զրիստոսի ի մարմնի իմում կրեմ: զի այսոքիկ էին որ ինչ պակասք էին ի չարչարանացն Զրիստոսի. քարկոծումն. եւ սրով բաժանումն. եւ այլ ամենայն տանջանք. զքարկոծումն Ստեփաննոս կրեաց եւ ելից. եւ զայլ տանջանսն այլն հետեւօղք նմին: Յինգերորդ պատճառ՝ զի որոյ էր կենաց սուրբն Ստեփաննոս. եւ գլուխ արդեանց խաչելութեան. քարամբք քարկոծեցին եւ կասութիւն. զի ցորենն սուրբ՝ մտցէ յառաջագոյն ի շտեմարանս թագաւորին: Վեցերորդ՝ աստուածատունկ ծառ էր սուրբն Ստեփաննոս. եւ մրրկեալ ամպն որոտաց զանօրէնութիւն հրեիցն. եւ ի պարզոյ զկարկուտ քարանց ի ջրուցանէր ի վերայ նորա. այլ նա իբրեւ զշիթս քաղցր անձրեւաց ընդունէր վասն սիրոյ սիրեցելոյն Զրիստոսի: Եօթներորդ՝ քաղցր պտուղ էր սուրբն Ստեփաննոս կախեալ յոստոյ խաչին. քարինս արձակեցին ի նա. եւ զբարի պտուղն թափէին եւ յերկիր իջուցանէին: Ութներորդ պատճառ՝ քարկոծեցաւ սուրբն Ստեփաննոս. զի զվէմն Զրիստոսի հիմն եւ գլուխ անկեան ընդ ինքեան ունէր. կամեցաւ ժողովել զբազմութիւն քարանց ի շինուածս եկեղեցւոյ սրբոյ. որպէս ասաց առ Պետրոս. (դու ես վէմ. եւ ի վերայ այյոր վիմի՝ շինեցից զեկեղեցի մի:) Իններորդ պատճառ. զի քարինքն այնք՝ աստիճանք լինէին յերկինս բարձրանալոյ. ինքն ելցէ եւ զայլս ընդ նմին հանցէ: Տասներորդ պատճառ. զի քարինքն այնք՝ ամուր պարիսպ եւ աշտարակ լիցին ընդդէմ թշնամւոյն սատանայի. եւ ծածկեցէ զնա ի ժողովեալ չարց: Մետասաներորդ պատճառ. զի առ ինքն ժողովցէ զքարինսն եւ հարցէ զերեսս թշնամւոյն. զի որ չափ քարինքն զմարմինն վիրաւորէին. նոյն քան զանմարմին թշնամին հարկանէին: Երկորտասաներորդ պատճառ. զի կամեր փոխարէն մատուցանել չարչարանացն Զրիստոսի. փոխանակ փշոյն եւ լեղւոյն եւ ապտակին՝ զհարուածս քարնցն ի գլուխն եւ յերեսս եւ ի բերանն ընդունէր. հոսեր եւ արիւնն ի կողէն յաղագս կողահոս արեանն. փշրէին՝ դաստակք ձեռացն եւ ոտիցն յաղագս բեւեռացն. խոնահեր զպարանոցն յաղագս երկնաւոր գլխոյն որ խոնարհեցաւ ի վերայ խաչին: Եւ որպէս Տէրն գոչեաց. (հայր՝ ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ.) եւ նա աղաղակեաց. (Տէր Յիսուս ընկալ զհոգի իմ:) Եւ Տէրն որպէս աղօթեաց ի վերայ խաչողացն. (հայր թող սոցա եւ սա աղաչեր զՏէրն. (մի համարի սոցա զայս ի մեղս:) Այսպէս ուսանի ի վարդապետէն Զրիստոսէ. եւ այսպէս աշակերտն նորին սիրովն աղօթեաց ի վերայ նոցա:

Այսպես պարրտական եմք եղբարք զմիմեանս սիրելոյ. ոչ միայն զընկերս եւ զբարրեկամս, այլեւ զօտարս եւ զթշնամիս. բարի առնել չարաց. եւ սերրատելեաց. օրհնել զանիծիչս. եւ աղօթելի ի վերայ նեղչաց: Որեւ ինքն սուրբն Ստեփաննոս նախասարկաւագն եւ առաջին մարտիրոսն՝ որ աղօթեաց ի վերայ քարկոծողացն եւ լսելի եղեւ. աղաչեսցէ այժմ վասն մեր տօնողացս՝ եւ բարի փոխարէնս շնորհեսցէ. որ ըստ տկարութեան մերում հանդիսացուցաք զտօն ուրախութեան հարսանեաց նորա. ըստ կարողութեան իւրում յառագաստ մաքուր հարսնարանին ժողովեսցէ զմեզ:)

Եւ ինքն Տէր Զրիստոս Աստուած եւ փրկիչն ամենեցուն՝ որ կատարեաց զբաղձանս վկային իւրոյ սրբոյն Ստեփաննոսի, նախագործելով յեական լուսոյն զփառս պսակի նորա, պարգեւեսցէ մեզ տօնողացս զթողութիւն մեղաց. եւ նման փառք եւ գոհութիւն եւ բարեբանութիւն ըստ Հօր իւրում եւ ամենասուրբ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ սբոց Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի. ի Բանն՝ (Իբրեւ ճաշեցին, ասէ Տէրն ՅՍիմօն Պետրոս. Սիմօն Յովնանու սիրե՞ս զիս առաւել քան զգոսա եւ այլն:) Յօհ. 21. 15: (Գլուխ. ԸՅԸ)

Յայս լոյս շնորհաց եւ ճառագայթ փառաց Էականին Հօր. որ լոյս ծագեցար աշխարհի եւ ետուր լոյս եւ լուսաւորիչ զառաքեալն քո ի վերայ երկրի: Տուր ինձ լուսով բանի քոյ զալ առ քեզ. (եւ լուսով երեսաց քոց տեսանել զլոյս քո:) Չարթո զմիտս իմ խոստովան լինիլ անուան քում անմահդ Աստուած. որ վասն մեզ զմահ ճաշակեցեր եւ մահու ոչ հնազանդեցար. տուր ինձ բան երգել զփառս աստուածութեան քոյ: Յայտնեա զքեզ Տէր անարժանիս. զի ես յայտնեցից զքեզ արժանաւորաց քոց: Եղկելի են որք ստացան զաշխարհ եւ զքեզ գթասցիս ի նա. ծով է աշխարհս. եւ որր իջանէ ի սա՝ ընկղմի. ծով է ողորմութիւն քո. ձեռն տուր ինձ որպէս երբեմն Պետրոսի: Շնորհօք քո ստեղծեր զաշխարհ եւ ոչ իրաւամբք: Սէր մարդկան Էած զքեզ ի փրկել զմեզ եւ ոչ աղաչանք: Սիրով եւ շնորհօք ընտրեցեր զառաքեալսն քո՝ եւ ետուր քարոզս աշխարհի: Տուր մեզ մարդասէր շնորհօքդ արժանաւորիլ լսել եւ պատմել զհարցումս սիրոյ եւ զխրատ յորդորեալոյ առաքելոյն Պետրոսի որ ասէ: (Իբրեւ ճաշեցին, ասէ Տէր. Սիմօն Յովնանու սիրե՞ս զիս առաւել քան զգոսա:) (Արար Աստուած երկու լուսաւորս. զլուսաւորն մեծ յիշխանութիւն տունչեան. եւ զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ ասէ աստուածային գիրն ի ձեռն նախամարգարէն Մովսէսի:) Արեգակն եւ լուսին՝ նշանակեն զերկու առաքեալսն զՊետրոս եւ զՊօղոս ի մէջ եկեղեցւոյ: Չի նոքա ի մէջ լուսաւորացն երկնից՝ մեծք եւ զօրաւորք են. եւ առաւել ինամեն զերկիր քան զայլ լուսաւորս: այսպէս եւ Պետրոս եւ Պօղոս առաւել կարգաւորեն զեկեղեցիս եւ լուսաւորեն քան զայլ սուրբս: Չոր կամիմ երից իրաց քննութիւն տալ: Նախ՝ վասն թոյ տօնական աւուրս: Երկրորդ՝ վասն լուսաւորացդ մեծաց: Երրորդ՝ վասն առաջիկայ բանիս որ ասէ: (Իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմօն:) *Տեսցուք զառաջինն. զի երրորդ է կարգեալ տօն առաքելոցս. եւ երկու են տօնելիքս: Առաջինն Դաւթի եւ Յակօբայ: Երկրորդ՝ սրբոյն Ստեփաննոսի: Երրորդն՝ սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի. որ

Է թիւ խորհրդական: Նախ զի՝ ունի սկիզբն եւ մէջ եւ վախճան. սկիզբն զմինն. եւ մէջ զերկուսն. եւ վախճան զերեքն: Երկրորդ՝ պատուէ եւ իմաստունն Սողոմօն զերեք թիւն. (Գ են ասէ զոր անհնար է ինձ դիտել:) Եւ առասան երեք կղի՝ դժարախագելի Է: Երրորդ՝ զի երեք են մասունք ժամանակի. անցեալն եւ ներկայս. եւ ապառնին. եւ յիւրաքանչիւր եղանակ՝ երիս ունի կենդանակերպս արեգական: Չորրորդ ի լանջանոց քահանայապետին էին Գ ակունք ի կարգ մի շարեալ. եւ երկոտասան ցլուց տաճարին՝ երեք երեք հայեին յիւրաքանչիւր կողմ երկրի. որ յայտնապէս բերեր զխորհուրդ երկոտասան առաքելոցն ընդ չորս կողմ երկրի քարգեղոյ: Յինգերարդ՝ երեք են որք վկայեն Քրիստոսի անտեսութեանն. (հոգին եւ արիւնն եւ ջուրն:) Եւ օրէնքն երեք խնդրէ զվկայս հաստատութեան բանից եւ գործոց: Վեցերորդ՝ յերից գոյացեալ է մարդն. որ ունի հոգի եւ մարմին եւ միտս. եւ երեք մասունս հոգւոյն. բան ցասումն եւ ցանկութիւն. եւ երեք զօրութիւն մտաց. կամս եւ խորհուրդ եւ յիշողութիւն: Եւ այսպէս երեւիք պատուեալ է տօն սոցա ի փառս սրբոյ երրորդութեանն եւ ի սրբութիւն խորհրդոց եւ բանից եւ գործոց մերոց: Իսկ զի երկու են որոց տօնեմքս՝ զի այսպէս կամեցաւ Աստուած ի միասին կատարիլ վկայութեամբ եւ պատուիլ տօնիւ: Եւ այս եւս խորհրդական թիւ: Նախզի՝ երկու մարդք ձեռամբ արարչին ստեղծան. նոյնպէս սոքա Քրիստոսիւ ձեռին հօր ստեցծեալ. ոչ ի հողոյ եւ ի կողոյ, այլ ի հոգւոյ եւ ի ջրոյ. եւ զդրոշմն պատկերին անջինջ պահեցին առաւել քան զնոսա: Երկրորդ՝ զի երկու հրեշտակօք եկն Աստուած առ Աբրահամ ի Մամբրէ. եւ սոքօք առ ամենայն աշխարիս: Եւ որպէս երկու հրեշտակքն եկին ի կիզումն Սողոմայ. եւ սոքա ընթացան ի կիզումն մեղաց եւ ապականութեան: Երրորդ՝ երկու արք տանջեցին զգեղատոս եւ զփարաւօն. եւ ազատեցին զժողովուրդն Իսրայելի Մովսէս եւ Ահարօն: Եւ երկու սոքա նեղեն զիմանալին փարաւօն եւ զդժոխս. եւ ազատեն զհաւատացեալս ի վերինն Երուսաղէմ: Չորրորդ՝ երկու արք լցեալ հոգւով սրբով Բեսելիէլ եւ եղիաբ՝ կազմեցին զխորանն: Եւ սոքա լցեալք հոգւով սրբով՝ շինեցին զեկեղեցիս տաճար փառաց անւանն Աստուծոյ: Եւ որպէս երկու արքն յետու եւ քաղէր դիտեցին զերկիրն պարգեւաց. եւ սոքա դիտեցին զգաւառն իմանալի ի ժառանգութիւն նորս Իսրայելի: Յինգերորդ՝ երկու լուսաւորք մեծամեծք իշխանք տունջեան եւ գիշերոյ. եւ սոքա երկու կտակօքն լուսաւորիչք հրէից եւ հեթանոսաց. եւ հոգւոյ եւ մարմնոյ: Վեցերորդ՝ եկեսցուք ի կազմութիւն մեր. զի յերկուց ոտից հաստատեալ է մարդս. եւ երկու ձեռք. երկու աչք. երկու ականջք երկու փողք ռնգաց. այսպէս մարմին եղեղեցւոյ սրբոյ՝ սոքօք հաստատի. եւ սոքօք գործք գործէ զգործս հոգեւորս. եւ սոքա տեսանէ զբարին. եւ սոքօք լսէ զբանս եւ խրատու. եւ սոքօք պահի շնորի հոգւոյն սրբոյ ի մեզ: Վասն այն ասէ Սողոմօն. (լա՛վ են երկու քան զմին:) Եւ վասն այնորիկ Տէրն երկու Բ առաքեր զաշակերտսն: Եւ այսպէս ի նորին ինամոցն՝ առ միմեանս առաքեցան Պետրոս եւ Պօղոս ի հեռաւոր աշխարիս. եւ ի միասին կատարեցան ի Յոզ քաղաքի յաւուրս Ներոնի արքայի. Պետրոս խաչեալ. եւ Պօղոս զխատեալ: Վասն որոյ՝ եւ ի միասին տօնեն այսօր եկեղեցիք հայաստանեյց զյիշատակ երկուց լուսաւորչացն աշխարհի: Այս առաջին գլուխն վասն թուոյ տօնից: *Երկրորդն վասն լուսաւորչացն աշխարհի. զի ասաց Տէրն. (դուք էք լոյս աշխարհի.) եւ մարգարէն ի խորհուրդ սոցա ասացեալ. (արար Աստուած

երկու լուսաւորս. զմեծն յիշխանութիւն տունջեան. եւ զփոքրն յիշխանութիւն գիշերոյ:) Տիւն նշանակէ զհրեայսն որք ունիէին զճանաչումն Աստուծոյ. եւ զգիշեր էին հեթանոսք՝ որք ոչ ճանաչէին զԱսուած: Արդ՝ զՊետրոս առաքեալն եղ Աստուած ի վերայ հրեիցն իբրեւ զարեգակն. զի յորժամ քարոզեաց երկու անգամ հրեիցն. ութն հազար իբրեւ զլուսին եղ ի վերայ հեթանոսաց. զի քան զամենեսեան առաւել գործեաց ի հեթանոսս. որպէս եւ ինքն ասէր առ գաղատացիս. (որ յաջողեաց Պետրոս ի թլփատութիւնն՝ յաջողեաց եւ ինձ ի հեթանոս:) Դարձեալ՝ եւ Պօղոս է լուսատու գիշերոյ. զի եհան զհեթանոսս ի խաւարէ կռապաշտութեան. եւ էած ի լոյս աստուածգիտութեան հաւատոց: Եւ Պետրոս լուսատու տունջեան. զի իշխանութիւն ունի ի վերայ ամենայն հաւտացելոցս ի Բրիստոս. ապա ուրեմն Պետրոս արեգակն է. եւ Պօղոս լուսին: Եւ թէ ոք ասիցէ՝ որպէս կոչի արեգակն Պետրոս. զի արեգակն արդարութեան զԲրիստոս նշանակէ. ըստ այնմ, (ծագեցից երկիւղածաց իմոց զարեգակն արդարութեան:) Ասեմք եթէ՝ անունն ոչ է բնութեամբ որ ոչ փոփոխի. այլ դրութեամբ է. զի ըստ յատուկ գործոյն զանունն դնեմք: Արդ՝ տէրն մեր Յիսուս Բրիստոս՝ չորս յատկութիւն ունի. որ միայն առանձին նմա վայելէ: Նախ՝ է Բրիստոս սկիզբն եւ հիմն եկեղեցւոյ. որպէս Պօղոս. (զհիմն այլ ոչ ոք կարէ դնել, քան զեղեալն որ է Յիսուս Բրիստոս:) Եւ զայս յատկութիւնս ետ առաքելոյն Պետրոսի որ ասաց. (դու ես վեմ. եւ ի վերայ այդր վիմին՝ շինեցից զեկեղեցի իմ.) Վասն զի նա յառաջ խոստովանեցաւ զհաւատն Բրիստոսի ասելով. (դու ես Բրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ.) Եւ այս դաւանութիւն է հիմն քրիստոնէից: Երկրորդ յատկութիւն՝ որ Բրիստոս միայն է գլուխ ամենայն հաւատացելոց. որպէս ասէ Պօղոս եփեսացւոց. (Բրիստոս գլուխ է մարմնոյ եկեղեցւոց:) Եւ զայս գործս ետ Պետրոսի, յորժամ ասաց. (դու կոչեսցիս կեփաս) Որ է գլուխ: Չի նա է գլուխ առաքելոցն եւ առաջնորդ դաւանութեամբն եւ ծերութեամբն եւ ըստ սիրոյ պատուոյն: Երրորդ յատկութիւն է՝ զի Բրիստոս է հովիւ եկեղեցւոյ. որպէս ասէ աւետարանն. (ես եմ հովիւն քաջ:) Եւ զայս շնորհեաց առաքելոյն Պետրոսի, յորժամ ասաց. (արածեա զոչ խարիս իմ եւ զգառիսս:) Չորրորդ յատկութիւն է՝ զի Բրիստոս է դատաւոր եկեղեցւոյ. ըստ այնմ, (զամենայն դատաստան ետ որդւոյ իւրոյ:) Եւ զայս ասաց Պետրոսի. (զոր կարապետցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես, եղիցի արձակեալ յերկինս:) Եւ թեպէտ ամենայն առաքեալքն ունէին զայս չորս յատկութիւնս եւ զգործս. զի իւրաքանչիւր առաքեալ՝ հիմն է եւ սկիզբն ազգի իւրում. եւ գլուխ եւ հովիւ ժողովրդեան իւրոյ: Եւ ունին իշխանութիւն կապելոյ ի արձակելոյ. զի Տէրն հաւասար ետ ամենեցուն. ըստ այնմ, (փչեաց յառաքեալսն եւ ասէ. զոր մի անգամ կապիցէք՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակիցէք՝ եղիցի արձակեալ յերկինս:) Այլեւ Պետրոս նախ դաւանեաց զԲրիստոս եւ եղաւ գլուխ. վասն այնորիկ չորս յատկութիւնքս այսոքիկ՝ նախ նմա պատշաճին. եւ ապա այլ առաքելոցն: Ապա ուրեմն թէ զյատկութիւնն Բրիստոսի ունի առաքեալն, չէ զարմանք թէ կոչեսցի արեգակն Պետրոս. որպէս եւ այլ առաքեալքն կոչեսցան լոյս աշխարհի. որեւ ինքն Բրիստոս լոյս աշխարհի կոչեսցաւ: Այս առաջին պատճառ որ արեգակն կոչի Պետրոս: Երկրորդ պատճառ. զի չորս են աստիճանք զգալի լուսաւորաց. որք նշանակէ զիմանալի լուսաւորս: Առաջին՝ որ ունի լոյս ըստ ինքեան. բայց ոչ լուսաւորէ զայլս. որպէս մաքուր Բեհեզն: Այսպէս հաւատացեալ ժողովուրդք

ունին զլոյս գիտութեան եւ հաւատոյ. բայց ոչ լուսաւորեն զայլս: Երկորդ աստիճան՝ որ ունի լոյս եւ զայլս լուսաւորե՝ բայց ստացեալ է յայլմէ. որպէս ճրագն որ լուսաւորէ զաչս եւ վառի ի հրոյն: Նշանակէ զառաջնոցոս զքահանայս եւ զքարոզող վարդապետս. որք ունին զլոյս գիտութեան. եւ ուսուցանեն զժողովուրդն եւ առնուն յեպիսկոպոսն եւ ի կաթուղիկոսն եւ ի րաբունապետն զիշխանութիւնս: Երրորդ աստիճան՝ որ ունի լոյմ է զայլս լուսաւորէ եւ լուսաւորիչ առնէ բայց ինքն ոչ է աղբիւր լուսոյ. որպէս հուրն որ լուսաւորէ զայս եւ վառէ զճրագն՝ ոչ է աղբիւր լուսոյ որպէս զարեգակն. զի շիջանի: Նշանակէ զկաթուղիկոսն՝ որ ձեռնադրէ զեպիսկոպոսնս եւ զրաբունապետս. որ ուսուցանէ զվարդապետս. եւ չէ աղբիւր իմաստութեան եւ իշխանութեան. զի յայլմէ է ստացեալ. եւ կարէ փոփոխիլ: Չորրորդ աստիճանն է՝ որ է աղբիւր լուսոյ որպէս արեգակն. զի զամենայն աստեղս լուսաւորէ եւ ոչ շիջանի: Սա նշանակ է ամենայն առաքելոց գնդին. որք զամենայն եկեղեցիս իւրեանց քարոզեցին եւ լուսաւորեցին. եւ ետուն իշխանութիւն քահանայութեան կարգաց. այլեւ անշիջանելի է կարգ ևոցա եւ քահանայութիւն: Նոյնպէս նշանակէ արեգակն զՊետրոս առաքեալն՝ որ է աղբիւր լուսոյ. եւ զլիաւոր առաքելոցն կարգաց որպէս ասացաք: Երրորդ պատճառաւ՝ կոչի արեգակն Պետրոս վասն առաւել ճանաչմանն. զի որպէս ամենայն աստեղք եւ երկինք եւ երկիր առնուն զլոյս յարեգականէն. նոյնպէս ամենայն հաւատացեալք առնուն զլոյս հաւատոյ յառաջին դաւանութենէ Պետրոսի որ ասաց. (դու ես Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ:) Վասն այնորիկ յերկոտասան որդոցն Իսրայելի՝ Պետրոս օրինակ է Յուդայի. զի Յակօբ ի յօրհնելն իւրում ասաց նմա. (Յուդա կորիւն առիւծու. զքեզ օրհնեն եղբարք քո. եւ երկիր պագանեն որդիք մօր քոյ. մի պակասեսցի իշխան ի Յուդա. եւ մի պետ յերանաց նորա եւ այլն:) Յուդայն խոստովանող թարգմանի եւ իմաստուն. եւ զօրաւոր էր ի մէջ եղբարցն. եւ նա եղել երաշխաւոր Բենիամենի եւ տարաւ յեգիպտոս առ Յովսէփ: Եւ վասն օրհնութեան Յակօբայ՝ ի նմանէ կացին թագաւորք եւ իշխանք մինչ ի գալուստն Քրիստոսի: Յուդայ խոստովանող լսի. եւ Պետրոս ի մէջ եկոտասան առաքելոցն նախ դաւանեաց զՔրիստոս. եւ իմաստուն էր խոստովանութեամբն. եւ զօրաւոր սիրովն Քրիստոսի. եւ նա եբեր զԲենիամին. այսինքն, զՊողոս ի Յոզմ: Եւ ձեռքն նորա ի վերայ թշնամեացն եղել. որպէս Սիմօն կախարդի եւ այլ հակառակացն. եւ վասն այն եղբարքն երկրպագին նմա. զի ամենայն աշխարհ գնան յուխտ նմա: Եւ զի Քրիստոս որպէս զառիւծ եղ զանձն ի մահ խաչին վասն փրկութեան հոգւոցն. նոյնպէս Պետրոս որպէս կորիւն առիւծու եկն ի խաչ վասն անուանն Քրիստոսի: Եւ օրհնելն այն էր որ ասաց Քրիստոս. (ես աղաչեցի զհայր վասն քոյ. եւ մի պակասեսցին հաւատք քո: եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցես զեղբարս քո:) Այս կատարեցաւ առ խաչելութեամբ Քրիստոսի. զի թպէտ ուրացաւ՝ ոյ կորեաւ. եւ յորժամ զղջացաւ՝ հաստատեցան ամենայն առաքեալքն ի սերն Քրիստոսի: Եւ կատարի այս ի վերջին ժամանակս ներին. զի ի տասն թագաւորացն՝ երեք թագաւորք հռոմայեցւոց ոչ հնազանդին նմա. այլ մնան ի հաւատաս Քրիստոսի. եւ թէ այժմ ունին թերութիւն ի մարդեղութիւնն Քրիստոսի՝ որ յետ երեք հարիւր ամաց ի քաղկեդոնի ժողովոյն ընկալան. եւ այս է պատճառն որ զայ թակդիմք ի ևոցանէ. յետ ներին որք ամենեքեան ի մի լեզու ուղղափառութեամբ

զՔրիստոս ճշմարիտ Աստուած խոստովանին, յայնժամ հաստատիմք եւ մէք ի նոսա: Եւ յայս օրհնութենէս հաստատ մնայ թագաւորութիւն հռօմայեցւոց մինչ ի գալուստն Քրիստոսի: Վասն այնորիկ արեգակն է Պետրոս: Չորրորդ պատճառաւ կոչի արեգակն. զի որպէս արեգակն քան զամենայն լուսաւորս առաւել ունի զջերմութիւնն. նոյնպէս ի մէջ ամենայն առաքելոցն՝ Պետրոս առաւել ջերմ էր ի սերն Քրիստոսի. զի յորժամ երիցս հարցեալ եղել թէ (Սիմօն Յովնանու սիրե՞ս զիս առաւել քան զդոսա, պատասխանեաց այր Տէր. եւ դու գիտես զի սիրեմ զքեզ:) Եւ այս գիտելի է՝ զի հինգ նշանակ է՝ առաւել սիրոյն: Նախզի՝ յօրժարութեամբ լսէ սիրելոյն. եւ Պետրոս յօժարութեամբ լսեց. յորժամ ասաց (եկ զհետ իմ,) նա թողեալ վաղվաղակի զգործիսն, գնաց զհետ Քրիստոսի: Երկրորդ՝ զի ոչ գատի ի սիրելոյն իւրմէ. աւ առաքեալն Պետրոս՝ բնաւ ոչ կամեր գատիլ ի Քրիստոսէ. զի յորժամ եհարց Քրիստոսի կամի՞ք ուրեք երթալ: Պատասխանեաց Պետրոս. (Տէր բանս կենաց յաւիտենականաց ի քէն ունիմք. առ ո՞վ երթիցուք:) Երրորդ՝ զի յօժարութեամբ խօսի զնմանէ. եւ առաքեալն Պետրոս կախեալ ի խաչին գլխիվայր, ո չ դադարեր քարոզել զՔրիստոս, մինչեւ աւանդեաց զհոգին: Չորրորդ՝ զի թէ վիրաւորեալ իցէ՝ փութով հաշտեսցի. եւ Պետրոս յորժամ զհտաց վիրաւորեալ ուրացութեամբն, (ելեալ արտաքս ելաց դառնապէս:) Հինգերորդ նշանակ է՝ զի քարշէ զայլս ի սիրելութիւն նորա. եւ Պետրոս քարոզութեամբն իւրով՝ քաշեաց ի հաւատսն Քրիստոսի զայնքան ժողովուրդն հրեից. որպէս գրեալ է ի գործս առաքելոցն: Եւ այսպէս վասն ջերմ սիրոյն՝ արեգակն կոչի Պետրոս: *Իսկ առաքեալն Պօղոս կոչի լուսին. զի ունի զյատկութիւն լուսնի բազում կերպիւ: Նախզի՝ լուսինն միջակ է արեգականն եւ աստեղացն. զի քան աստեղս առաւել լուսաւոր է. եւ քան զարեգակն նուազ: Այսպէս եւ պօղոս յետոյ հաւատաց զՊետրոս, յորժամ նուազեցաւ տեսութիւն աչաց: Այլ առաւել քան զամենայն առաքեալսն լուսաւորեաց քարոզութեամբն. զի (յերուսաղէմ մինչ ի լուրիկէ՝ ելից քարոզութեամբն:) Երկրորդ՝ լուսինն սրընթաց է քան զամենայն աստեղս. զի յամիսն բոլորե զամենայն կերդանակերպս երկնից. եւ արեգակն ի տարին. եւ այլքն ի բազում ժամանակս: Այսպէս եւ առաքեալն Պօղոս՝ սրընթաց էր ի քարոզութիւնն. եւ փոյթ ի հաւատսն Քրիստոսի. վասն այն ոչ զմին աշխարհին, այլ զամենայն աշխարհիս ելից քարոզութեամբն: Երրորդ՝ լուսինն զգիշերս լուսաւորէ. եւ Պօղոս զազգս հեթանոսաց որպէս ասացաք՝ ի խաաւարէ կռապաշտութեանն ի լոյս աստուածաշտութեան եբեր: Չորրորդ՝ լուսինն նուազի եւ բոլորի. եւ սա նուազեցաւ առ խաչելութեամբն. եւ բոլորեցաւ յետ յարութեանն Քրիստոսի: Հինգերորդ՝ լուսինն մեղաց եւ ապաշխարութեան է օրինակ. եւ Պօղոս ասէ. (զլուխ մեղաւորաց ես եմ. եւ նախ յիս եցոյց զապաշխարութիւն:) Վեցերորդ՝ ընդդէմ երկնից շարժի լուսինն. եւ Պօղոս երբեմն հակառակեր առաքելոցն. եւ հալածեր զնոսա. որպէս ի քարկոծումն Ստեփաննոսի՝ (կամակից էր եւ պահեր զհանդերձս քարկոծողացն:) Եօթներորդ՝ հասարակ եւ յատուկ շարժումն ունի. եւ Պօղոս յատուկ շարժիւր ի սերն Քրիստոսի. եւ հասարակ (ընդ ամենայնին ամենայն լիներ. զի զամենայն շահեսցի:) Ութներորդ՝ ունի բնական լոյս. եւ յարեգակէն լոյս ընդունի. եւ Պօղոս ուներ զլոյս գիտութեան օրինացն. եւ ընկալաւ ի Քրիստոսէ զնորս շնորհաց: Իններորդ՝ հայելի է աշխարհի. զծովու եւ զգամաքի կերպարանն յինքն ցուցանէ. եւ Պօղոս հայելի է

ամենայն աշխարհի հրեից եւ հեթանոսաց. ծառայի եւ ազատի. մեղաւորաց եւ արդարոց. զի ամենեքեան ի նմանե ուսանեին: Տասներորդ՝ զամենայն աստեղաց զօրութիւն ի յինքն ընդունի եւ ազգէ յերկիր. ի ծով եւ ի ցամաք. ի կենդանիս եւ յանկենդանս: Այսպէս եւ առաքեալն Պօղոս՝ հին եւ նոր կտակարանօքն զօրացաւ. եւ գրել ետ զաւետարանն եւ զգործս առաքելոցն. եւ բազում թղթօք զօրացան բանք նորա յամենայն եկեղեցիս. յարեւելս եւ յարեւմուտս. ի հիւսիս եւ ի հարաւ. ի փառս Քրիստոս Աստուծոյ մերոյ. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

Նորին դարձեալ քարոզ ի նոյն Բանս: (Իբրեւ ճաշեցին՝ ասէ. Սիմօն Յովնանու սիրե՞ս զիս:) Յօհ. 21. 15: (Գլուխ. ԸՅԹ)

Եւ ի վերայ այսր Բանի՝ երեք ինչ ասելի է: Նախ՝ վասն ճաշոյն: Երկրորդ վասն հարցմանն: Երրորդ՝ վասն վախճանին: Տեսցուք զառաջինն որ ասէ. (Իբրեւ ճաշեցին:) Ծաշելն այն է՝ որ յետ յարութեանն եօթն աշակերտքն. այսինքն, Սիմօն Պետրոս. եւ Թօմաս եւ Նաթանայէլ. եւ որդիքն զԵբեթեայ. եւ երկու այլ յաշակերտացն գնացին առ ծովեզրն Տիբերեայ ձուկն որսալ. եւ զամենայն գիշերն աշխատեալ կալան եւ ոչ ինչ: Եւ յայգն՝ երեւեցաւ Տէրն. եւ գոյացոյց զհացն եւ զձուկնն եւ զհուրն. վկայ երեքանձնեալ աստուածութեանն: Նոյնպէս հարիւր յիսուն եւ երեք ձուկն ի յուռկանին ի նոյն խորհուրդ սրբոյ եւ զուգական երրորդութեանն: Դարձեալ՝ կայծակն հուր՝ գործելի է հրացեալ. գործելին մարմնոյն նշանակ. եւ հուրն աստուածութեանն միաւորեալ մի բնութիւն. եւ մի ներգործութիւն անբաժանելի: Չայս կայծակունս ետես անբաժանելի: Չայս կայծակունս ետես Եսայի ի վերայ բարձրացեալ աթոռոյն զոր սերովբէն ունելեօք մերձեցոյց ի բերան մարգարին եւ սրբեր զնա: Նոյնպէս հացն՝ նշանակէ զԲանն Աստուած մարմնացեալ. եւ կեանս տայ կերողացն: Իսկ ձուկն խորովեալ՝ նշանակէ զմարդկութիւնն. ի կասկարայս խաչին խորովեալ մարդասիրութեամբն ի փրկութիւն աշխարհի: Նոյնպէս եւ խորիսի մեղուն զոր ասէ Ղուկաս՝ ոմանք մեղր ասեն. մեղրն նշանակ է աստուածութեանն ի յերկնից իջեալ՝ եւ ի մոմ մարդկութեանն կնքեալ եւ ծածկեալ: Եւ ոմանք հաց ասեն իւրդով եւ մեղերք զանգեալ. եւ այս եւս օրինակ. հաց մարմին եւ հոգին. եւ մեղր աստուածութիւնն խառնեալ եւ միաւորեալ ի մարմնի անբաժանելի: Այսպէս եւ նաւն ի մէջ ծովուն Տիբերեայ. ծովն նշանակ է աշխարհի. որ միշտ ծփի եւ ալէկոծի ի մեղաց. եւ նաւն նշանակէ զեկեղեցի սուրբ ի մէջ աշխարհական ծովու բարձրացեալ: Եւ եօթն աշակերտքն ի նաւին՝ նշանակեն զընդանուր ամենայն առաջնորդս եկեղեցոյս. զհայրապետս եւ զվարդապետս եւ զքահանայս. որք եօթն աստիճանաւ ի յեօթն դար կենցաղոյս հովուեն զհաւատացեալ հօտս Քրիստոսի. իսկ գործին՝ ուռկան վարդապետութեան եւ բարեգործութեան նոցա. որք որսան եւ հանեն զահաւացեալս ի ծովէ աշխարհի: Իսկ թէ վասն Է՞ր ի գիշերի որսային: Այսմ դնեն վարդապետ Չ պատճառ: Նախ՝ յՕհան Ոսկեբերանն ասէ. առաքեալքն յերկիւղէ հրեիցն ոչ համարձակեին ի տիւն որսալ. ի գիշերն որսային: Երկրորդ՝ ասեն ոմանք թէ, ուռկանաւ առաւել որսան ի գիշերի քան ի տիւն. որպէս կարթն ի տիւն առաւել քան ի գիշերի: Երրորդ՝ զի զմարմնաւոր հոգսն գիշերոյ տացեն. եւ ի տիւն հոգեւորին պարապեցին:

Չորրորդ՝ գիշերն նշանակե՛ գիին օրէնսն որ ոչ կարէր արդարացուցանել. գայն ասէ (կալան եւ ոչ ինչ:) Իսկ այդ է նոր օրէնքս՝ որք շնորհօքն Զրիստոսի արդարանամք: Զինգերորդ՝ գիշերն նշանակե՛ գհակառակութիւն անհաւատից եւ հերձուածողաց՝ որք ոչ կարեն որսալ. իսկ տիւն է լոյս ուղղափառ հաւատոց քրիստոնէից՝ որք դիւրաւ լինին ի յորսալ: Վեցերորդ՝ գիշեր է որք խաւար են մեղօք. եւ քարոզեն այլոց որ ոչ ինչ է օգուտ. այլ որք ունին զգործս լուսոյն՝ եւ ուսուցանեն գայլս. նոքա օգտեսցին: Իսկ որ լի էր մեծամեծ ձկամբք հարիւր յիսուն եւ երեք՝ զլութիւն շնորհացն Զրիստոսի նշանակե՛ զոր այժմ ունի եկեղեցի. այլեւ զկատարելութիւն փառացն ի հանդերձեալն զոր առնուն սուրբք ի ձեռն Զրիստոսի: Իսկ թիւն հարիւր յիսուն եւ Գ ունի բազում խորհուրդ: Նախ որպէս ասացաք են ի խորհուրդ սրբոյ երրորդութեանն երեք յիսունքն. այլեւ երեք թիւն: Երկրորդ՝ յիսուն թիւն յոբելեան է եւ ազատարար. եւ երեք յիսունն՝ նշանակե՛ որ յետ զղջման եւ խոստովանութեանն եւ ապաշխարութեան՝ հասանիմք ազատութեան եւ թողութեան մեղաց. որպէս եւ հարիւր յիսուն սաղմոսն Դաւթի՝ զնոյն նշանակութիւնս ունի: Եւ երեք թիւն՝ զի երեք յիսնեակ թուոցն պատասխանեսցէ երրորդութեան անձանց միոյն Աստուծոյ: Երրորդ խորհուրդ. զի հարիւր յիսուն եւ երեք թիւն՝ լինի ԺԷ. զի թիւն ի միոյն սկսեալ մինչեւ ի ԺԷ ԺԷ՝ լինի ԸԾԴ. տասն թիւն զօրէնսն նշանակե՛. եւ եօթն զշնորհս հոգւոյն սրբոյ. եւ այսպէս նշանակե՛ զամենայն ընտրեալս որք ի հնումս եւ ի նորումս ընտրեցան շնորհօք ամենասուրբ երրորդութեան եւ միոյ աստուածութեան: Չորրորդ՝ երեք յիսունն նշանակե՛ զբոլոր ընթացս եկեղեցւոյ ի Զրիստոսէ մինչեւ ցնեռնն ըստ երեք ժամանակաց եկեղեցւոյ. որք են առաջին. միջին. եւ վերջին. եւ երեք ի վերայ՝ որ նշանակե՛ զերեք ամս հալածանաց նեռինն. որպէս եւ երկերիւր կանգունն որով քարշի ուռկանն առ ծով եզրն՝ նշանակե՛ զբոլոր ժամանակս եղեղեցւոյ. որ յինքն փակեալ ունի զկատարելութիւն հարիւրապատիկ պտղոյն. եւ համաձայնութիւն եւ զհաւասարութիւն կրկին սիրոյն. այսինքն, Աստուծոյ եւ եղբօրն: Այս առաջին զլուխն որ ասէ. (իբրեւ ճաշեցին:) *Տեսցուք զերկրորդն վասն հարցման որ ասէ: (Սիմոն Յովնանու սիրե՞ս զիս առաւել քան զդոսս:) Պարտ է գիտել՝ զի յորժամ կամեցաւ Զրիստոս զհօտն իւր յանձնել յառաքեալն Պետրոս, նախ վասն սիրոյ հարցանէ վասն երեք պատճառի: Առաջին՝ գայն ցուցանէ թէ, ոչ է պարտ փափագիլ քահանայապետութեան պատուոյ, եւ կամ զործել զգործ քահանայապետութեան վասն սիրոյ անձին իւրոյ. այլ միայն վասն սիրոյն որ առ Զրիստոս: Երկրորդ՝ գայն ցուցանէ թէ՛ սեր ընկերին եւ հոգ վասն փրկութեան նորա՝ ի յաստուածսիրութենէն ելանէ. եւ ի նա կախեալ կայ: Երրորդ՝ ցուցանէ թէ՛ ոչ ոք է արժան քահանայապետութեան աստիճանի, եթէ ոչ յատկապէս մեծ իցէ, ի սերն Աստուծոյ վասն այն հարցանէ (Սիմոն Յովնանու սիրե՞ս զիս:) Որպէս թէ ասիցէ Տերն թէ, սիրես, թէ ոչ առաւել սիրես զիս. այսինքն առաւել քան զքո իրս եւ զքեզ, մի յանձն կալցես վերակացու լինիլ ոչխարաց իմոց: Դարձեալ հարցանելի է թէ՛ վասն Է՞ր գայն միայն հարցանէ: Ասեն վարդապետք թէ՛ վասն չորս պատճառի: Նախ զի՛ զլուխ էր առաքելոցն. զնա հարցանէր, եւ նովաւ ընդ ամենեսեան խօսէր. որպէս այն որ ասաց թէ՛ (տաց քեզ զփականս արքայութեան.) ոչ թէ նորա միայն ետ, այլեւ ամենայն առաքելոցն: Երկրորդ՝ զի ծեր էր մարմնական հասակաւն. եւ պատշաճ վարդապետութեան օրինակի. զնա հարցանէր՝ զի

այլքն ի նմանե ուսցին հովիւ եւ առաջնորդ լինիլ հօտին Զրիստոսի: Երրորդ՝ զի Պետրոս առաւել սիրէր զԶրիստոս քան զամենայն աշակերտսն. եւ յայտ է ի հարցմանէս որ ասէ. (Սիմօն Յովնանու սիրե՞ս զիս առաւել քան զդոսա.) եւ վասն առաւել սիրոյն՝ առաւել պարգեւս ընկալաւ: Զորրորդ պատճառ. զի կարծիս կայր վասն ուրանալոյն առ խաչին. զկարծիսն զայն բառնայ թէ՛ ոչ ունի ոխս ընդ նմա. վասն այսքան պատճառացս՝ զնա միայն եհարց. եւ ի նա յանձնեաց զհօտն իւր Զրիստոս: Դարձեալ գիտելի է՝ թէ վասն է՞ր երեք անգամ հարցանէ վասն սիրոյ: Ասեմք թէ՛ վասն երեք պատճառի: Նախզի՛ երիցս ուրացաւ. եւ երիցս դաւանութեամբն՝ բժշկէ զերեք ուրացութեան վերսն Պետրոսի: Յայսմանէ ուսեալ ի մկրտութեանն եւ յայլ ամենայն խորհուրդս՝ եթէ ի հրաժարումն է ի սատանայէ, եւ եթէ ի դաւանութիւն հաւատոյն՝ երիցս անգամ կրկնեմք: Երկրորդ պատճառ. զի երեքկին վկայութիւն կատրեալ է. որպէս ասէ յօրէնսն. (յերկուց եւ յերից վկայից հաստատեսցի ամենայն բան.) վասն այն երեքկին խոստովանութիւն խնդրէ ի Պետրոսէ Զրիստոս: Երրորդ պատճառ. զի ցուցցէ թէ՛ սերն Աստուծոյ հայի ի հովուել ոչխարացն երեք կերպիւ: Նախզի՛ հովուելն զբանաւոր ոչխարս՝ շարժէ ի սերն Աստուծոյ զհովիւն: Երկրորդ՝ զի ըստ սիրոյն Աստուծոյ կրթի ի գործ հովուութեան: Երրորդ՝ զի հովուելն զոչխարս՝ որպէս առ վախճանական պատճառ՝ առ սերն Աստուծոյ է կարգեալ. այսինքն, զի սկիզբն եւ մէջն եւ վախճանն՝ ի սերն Աստուծոյ կարարին. յաղագս որոյ երիցս անգամ հարցանէր վասն սիրոյ: Դարձեալ գիտելի է՝ զի թեպէտ եհարց Զրիստոս զՊետրոս թէ՛ (սիրե՞ս զիս առաւել քան զդոսա՞) այլ Պետրոս ոչ պատասխանեաց թէ սիրեմ զքեզ առաւել քան զդոսա: Եւ այս վասն հինգ պատճառի: Նախզի՛ հեռացի յանդգնութենէ. եւ մեզ օրինակ լիցի. զի մի յանդգնութեամբ զանձինս մեր քան զընկերին առաւել համարեսցուք: Երկրորդ՝ զի ոչ գիտեր ստուգապէս զմեծութիւն սիրոյ առաքեալն. եւ զայն եւս օրինակ տայ մեզ ոչ ասել զայն՝ զոր ոչ գիտեմք ստուգապէս: Երրորդ՝ զի գիտեր փորձիւ զտկարութիւն իւր որ յայտնեցաւ ի յուրացութիւնն Զրիստոսի. եւ վասն այն ոչ համարեցաւ զսեր իւր ի վեր քան զսեր առաքելոյն: Զորրորդ՝ առ ի նշանակել զմաքուր խղճմտանսն եւ զսերն իւր. վասն այն ասեր. (դու գիտես զի սիրեմ զքեզ:) Զինգերորդ՝ առ ի գովութիւն եւ ի յայտնութիւն ամենագիտին Զրիստոսի. որպէս ասեր. (դու իսկ զամենայն գիտես, եւ զամենայն ճանաչես, եւ եթէ սիրեմ զքեզ:) Զի դու գիտես զճշմարիտն որ սրտագետ ես եւ քննես զսիրտս եւ զերիկամունս: (Տրտմեցաւ Պետրոս:) Ոչ թէ տրտմեցաւ իբր բարկացեալ թէ՛ զառաջին խոստովանութիւնն ոչ հաւատայ՝ վասն այն երեք անգամ հարցանէ, այլ տրտմեցաւ՝ զի երկեաւ յոյժ. զի գիտեր զԶրիստոս նախագետ՝ ասէ. պատահումն չար դիպելոց է ինձ իբրեւ զառաջինն: Վասն այն ասէ. (այո՛ Տեր սիրեմ զքեզ.) այլ ոչ որպէս կարծեմն, այլ որպէս դու գիտես որ յայտնի է քեզ հանդերձեալն: Եւ իբրեւ էառ զգրաւական սիրոյն երեք անգամ կատարեալ վկայութեամբ ըստ օրինացն, ապա յանձն առնէ նմա զհօտն իւր զոր գնեաց արեամբն իւրով: (Ասէ ցնա՝ արածեա զոչխարս իմ եւ զգառինս:) Իսկ թէ վասն է՞ր երիցս անգամ ասաց արածեա զգառինս իմ. եւ արածեա զոչխարս իմ: Ասեն վարդապետք վասն երեք պատճառի: Նախ՝ որպէս ասէ Ոսկեբերանն թէ՛ այնու ցուցանէ Զրիստոս թէ, որքան մեծ համարի զհովուել ոչխարացն, այնքան հոգտանի վասն նոցա: Երկրորդ՝ զի ցուցանէ այսու թէ՛

պարտէ առաջնորդաց հովելլ զհօտն Զրիստոսի երեք կերպիւ: Նախ օրինակաւ բարի վարուց. (զի տեսցեն ասէ զգործս ձեր բարիս՝ եւ փառաւորեսցեն Յայր ձեր որ յերկինս է:) Երկրորդ՝ բանիւ քարոզութեան եւ ուղիղ խրատով հովուեսցեն. ըստ այնմ, (երթայք ուսուցէք լոցա պահել զամենայն զոր ինչ պատւիրեցի ձեզ:) Երրորդ՝ զի հովուեսցեն օգնականութեամբ ժամանակաւորացս. այսինքն ողորմութեամբ. եւ լցցեն զպէտս լոցա. որպէս առաքեալքն ինամ տանէին ամենայն աղքատցն որք ի Զրիստոս հաւատացելոց: Երրորդ պատճառ զի պարտ է զհօտն Զրիստոսի պահել յերեք չարէ. այսինքն, ի բռնութենէ չար իշխանաց. եւ ի նենգութենէ հերձուածողաց. եւ ի փորձութենէ դիւաց. յաղագս այսորիկ՝ երեք անգամ ասաց. (արածեա զոչխարս իմ:) Իսկ թէ վասն է՞ր նախ զգառնս ասաց արածեա. եւ ասպ զոչխարս: Ասեմք եթէ՝ ոմանք են ի ժողովորդեան որպէս գառնք Նոր ծնեալք աւազանաւն. եւ Նոր եկեալ ի հաւատս եւ անմեղացեալ եւ դառ անկատարք են. լոցա առաւել պարտ է հոգ տանիլ եւ ինամել քան կատրելոցն՝ որք կիրթք են ամենայն գիտութեան: Դարձեալ ժողովուրդք որպէս գառնք են. եւ քահանայք եւ եպիսկոպոսք եւ կաթողիկոսք որպէս ոչխարք՝ որք ծնանին զգառնս եւ զժողովուրդս: Պարտ է առաջնոցդաց եւ վարդապետաց առաւել ժողովորդեանն քարոզել քան քահանայից եւ եպիսկոպոսաց: Դարձեալ գառնք են կուսանք եւ կրօնաւորք եւ որքք եւ այրիք. վասն անբիծ վարուցն՝ սուրբ գառնք կոչին: Եւ ոչխարք՝ որք ամուսնութեամբ են յաշխարհի եւ ոչխարք կոչին. զի ունին զբազում զբազմունս ի վերայ երկրի. տան եւ ընտանեաց եւ այլոցն: առաւել ինամ տանելի է կուսանաց եւ կրօնաւորաց եւ այրեաց եւ որքոց յամենայն իրս. քան ամուսնացելոցն յաշխարհի: Այս երկրորդ գլուխն վասն հարցմանն սիրոյ: *Տեսցուք զերրորդն վասն վախճանին որ ասէ: (Ամեն ամէն ասեմ քեզ. մինչ մանուկ էիր՝ անձամբ անձին գօտի ածե իր եւ այլն:) Ամէն՝ այսինքն, հաստատուն եւ ճշմարիտ զոր գիտեմ՝ այս է: (Մինչ մանուկ էիր:) Մանուկ կոչէ զանկատարութիւնն. որք յառաջ քան զխաչն եւ նախ քան զհոգին սուրբ՝ անկատարք էին մտօք: Անձամբ անձին գօտի ածելն այն է՝ որ քո զօրութեամբդ ասէիր դնեմ իմ ի մահ. այլ ոչ բունն հարէր զամենակարօղ զօրութենէ իմմէ. կամ գօտի զպարկեշտութիւն ասէ՝ զոր Պետրոս ի մանկութեան հասակն պարկեշտութեամբ եւ ժուժկալութեամբ զսպեր եւ ամփոխեր զինքն ամենայն ողջախոհ վարիւք: (Այլ յորժամ ծերացիս) այսինքն, հասակաւ եւ իմաստութեամբ առնելով զհոգին սրբոյ, (ձեռս ի վեր կալցես՝ եւ այլք ածցեն քեզ գօտի:) Չայն ասէ՝ որ վերացոյց զձեռն եւ յայմէ գօտի ածաւ յորժամ ի խաչ չուանօք կապեցաւ եւ ոչ բելեռօք պնտեցաւ. զի յերկար լիցի տանջանք Նորա. կամ զայն ասէ, զի կամեցաւ ելանել ի քաղաքէն ըստ աղաչանաց հաւատացելոց. ետես զՏէրն եւ դարձաւ. որպէս թագաւոր որ գիտէ զքաջութիւն զինուորին՝ ածէ նմա գօտի եւ հրամայէ ախոյեան լինիլ եւ արհանալ: Այսպէս եւ նա Տեառն հրամանաւն զօրացեալ չոգաւ եւ խաչեցաւ: (Եւ տարցեն ուր ոչն կամիցիս:) Ոչ զայն ասէ թէ՝ յոչ կամայ խաչեցաւ, այլ զի բանական կամքն այլ է մարդոյս. եւ զգայականն այլ է մարմնոյս. բանական կամօքն կամեր զխաչիլն. եւ յայտ է որ ասէ. (զձեռսդ ի վեր կալցես.) եւ զգայական կամքն խորշեր որ գտկարութիւն մարմնոյս՝ ցուցանէ. որպէս եւ ինքն Տէրն ասեր. (հոգիս յօժար է, բայց մարմինս տկար:) Չայն կամի ցուցանել առ Պետրոս թէ՝ առանց

տրտմութեան չմնայ մարմինդ ի ժամ քակիլոյ հոգւոյդ. զի այսպէս դժարին է տանջանք մարտիրոսութեան. վասն այնորիկ վարձն մեծագոյն է. որպէս ասէ իմաստասէրն. մահ է վախճան ահագութեանց եւ երկիւղի: Դարձեալ ասէ. (տարցեն գքեգ:) Չայն ցուցանէ թէ՛ չէ պարտ որ մարդ յանձնէ ինքն զինքն սպանանէ վասն Աստուծոյ. այլ յայլմէ, եւ կամ հրամանաւն Աստուծոյ. որպէս Սամփսոն արար. եւ ի գիրս մակաբայեցւոցն վասն Եղիազարու պատմի: Ապա թէ ոչ՝ ոչ է պարտ արտահանել զինքն ի կենաց. զի մահու եւ կենաց իշխեցող է Աստուած. որ կապեաց զհոգին ի մարմինն՝ եւ նա արձակէ որ վերստին անլոյծ կապէ: Արդ՝ Զրիստոս որ ասաց Պետրոսի զմահ Նորա՝ էր վասն երեք պատճառի: Նախզի՝ առաւել արիասցի իկրել զչարչարանս վասն Զրիստոսի: Երկրորդ՝ զի այնու գիտասցէ Պետրոս ստուգապէս թէ՛ Նախասահմանեցեալ է յԱստուած առ ի չարչարանս մարմնոյ. եւ առ ի մտանել ի փառսն երկնային: Երրորդ՝ զայն ցուցանէ թէ՛ որքան պարտական է քահանայապետն եւ առաջնորդն յօժար լինիլ ի չարչարանս վասն Զրիստոսի: Արդ այսու բանիւ՝ երկու ինչ նախ ասաց Տէրն Պետրոսի: Նախ՝ ասաց զժամանակ մահու Նորա. ասէ՛ (յորժամ ծերասցիս:) Երկրորդ՝ զկերպ մահւանն ասէ. (զձեռն ի վեր կալցես. եւ ի խաչ տարծիցիս:) Վասն այն աւետարանիչն մեկնէ զբան Զրիստոսի: (Չայն ասաց՝ նշանակեալ թէ որս մահու փառաւոր առնիցէ զԱստուած:) Փառքն Աստուած նախ խաչն է. ըստ այնմ. (չեւ էր հոգի. զի Յիսուս չեւ էր փառաւորեալ.) այսինքն խաչեալ: Երկրորդ՝ փառաւորի Աստուած վկայիցն արեամբ, յորժամ ցուցանիցեն մահու չափ սիրել զՏէրն. եւ մանաւանդ խաչի մահու: Երրորդ՝ փառաւորի Աստուած՝ ոչ թէ աստուածային փառքն առնանի ի մէնջ, այլ միայն արտաքուստ յաչս մարդկան: Չորրորդ՝ փառաւորի Աստուած յորժամ եկնային փառօքն՝ փառաւորէ զսուրբս իւր: (Չայս իբրեւ ասաց, ասէ եկ զկնի իմ:) Այսինքն, նախ ի խաչն. եւ ապա ի փառս: Եւ այս եւս գերադրական սիրոյ է նշանակ՝ որ զնա միայն կոչեաց զհետ իւր. եւ նա հնազանդեալ նմա զնաց զճանապարհ մահու Նորա անդարձապէս. եւ եկեալ մերձ խաչին, գովեաց նախ զխաչն. եւ ասաց զխորհուրդ խաչին. յայնժամ ասէ ցնոսա. մի խաչեք զիս գլուխ ի վեր որպէս զՏէրն իմ. այլ գլխիվայր խաչեցեք: Նախզի՛ իմ Տէրն յերկնից ի յերկիր էջ եւ ուղիղ ի խաչն բարձրացաւ. իսկ ես ի յերկրէս ի յերկինս կոչիմ, պարտ է գլխոյ իմոյ ի խոնարհ լինիլ: Եւ դարձեալ՝ զի ես զկերպարանս նախաստեղծին ցուցանեմ յիս. որ գլխավայրեցաւ չորս կերպիւ: Նախզի՛ գլուխն ոտիցն խոնարհեցաւ, եւ լուաւ խաբողին: Երկրորդ՝ զի զանձնիշխան կամս իւր խոնարհեցոյց ի չարն: Երրորդ՝ զի յերկնից յերկիր սողոսկեցաւ եւ անկաւ ի դրախտէն: Չորրորդ՝ նախածին մանուկն գլխիվայր անկանի յերկիր. յաղագս այսորիկ պարտ է ինձ գլխիվայր խաչիլ: Նոյնպէս եւ դուք ասէ թէ ոչ առնիցեք զաջն ձախ, եւ զձախն աջ. զվերինն ներքին, եւ զներքինն վերին. որպէս Տէրն ի խորհրդեանն արար: Նախ այս է միտքն. թեպէտ յաւետարանին չէ գրեալ. որ Տէրն ի վերանատանն գերեսն յարեւմուտս արար որպէս ի խաչին. եւ զհացն յաջ ձեռն էառ. եւ զբաժակն ի ձախն եւ օրհնեաց: Որ նշանակեր հացն ցամաք զԲանն Աստուած ի յերկինս ընդաջմէ հօր նստեալ: Եւ զբաժակն որ արեամբ կցորդ եղեւ մեզ՝ ի ձախակողմ աշխարհիս իջեալ: Իսկ մեք ի պատարագելն՝ գերեսս յարեւելս ունիմք. եւ զհացն ի ձախ կողմն դնեմք ի մաղզմայն որ է ի հիւսիս եւ խոնարհ. այս նշանակէ զցրտացեալ եւ զխոնարհեալ բնութիւնս մեր: Եւ

զբաժակն ընդ աջմէ մեզ ի սկիհն՝ որ բարձր է քան զմաղզմայն. այս նշանակէ զկուսական արգանդն գերամբարձեալ կուսական սրբութեամբ քան զամենայն մարդիկ: Իսկ վերինն ներքին այս է, որ Բանն Աստուած որ ի վերոյ է քան զամենայն երկինս՝ էջ ի ստորին կողմ երկրի. եւ մարմինս հողեղէն միաւորեալ բանին ել ի յերկինս գեր ի վերոյ ամենայն երկնաւորաց. եւ ապա մեք ապրեցաք: Երկրորդ՝ առ մեզ հասարակ տեսութիւն. որ ինչ որ մարմնաւոր է՝ աջ եւ առաջին է համարեալ մեզ. իսկ հոգեւորն՝ ձախ եւ յետին. պարտ է փոփոխել զայս. եւ զհոգեւորն որ է առաքինութիւն եւ չարչարանք՝ աջ եւ առաջին առնել. եւ զմարմնաւորն որ է հեշտութիւն եւ սեր աշխարհի ձախ եւ յետին առնել. եւ ապա ապրիլ: Նոյնպէս եւ զխորհուրդ խաչին ասաց. բունն զԲանն Աստուած նշանակէ ի յերկնից ի յերկիր խոնարհեալ եւ մարդացեալ. եւ խոստորնակն զմարդկային բնութիւնս մեր. եւ բեւեռն դարձն եւ ապաշխարութիւնն է՝ որ յետ մեղանաց դարձեալ զղջանամք եւ հաւատով եւ յուսով եւ սիրով ի նա կապիմք եւ պնտիմք: Եւ ապա ասէ. գոհանամ զքէն Տէր Աստուած իմ Յիսուս. ոչ այսու բերանովս ընդ որ սուտ եւ ճշմարիտ ելանէ, երբեմն խօսի եւ երբեմն ոչ, այլ այս բերանովս՝ որ միշտ զճշմարտութիւնն խօսի. գոհանամ զքէնս որ արժանի արարեր զիս քումդ խաչակցութեան եւ չարչարանաց. եւ ասացեալ զամենն, աւանդեաց զհոգին ի փառս Աստուծոյ: *Նոյնպէս եւ առաքեալն Պօղոս ուղեկից եղեալ Պետրոսի ի կեանս եւ ի մահ, ի չարչարանս եւ ի փառս, ի միասին ընթացան ի քարոզութիւն. եւ ի միասին դադարեցան ի քարոզելոյ. ի միասին նահատակեցան. եւ ի միասին պսակեցան. Պետրոս խաչեալ. եւ Պօղոս գլխատեալ. Պետրոս փակօղն արքայութեանն երկնից. եւ Պօղոս բացօղն եւ յափշտակեալն յերրորդ երկինս. Պետրոս վեմն եկեղեցւոյ. եւ Պօղոս խարիսխ եւ սիւն հաստատուն վիմին. Պետրոս խաչակիրն Զրիստոսի. եւ Պօղոս անօթ ընտրութեան՝ որ կրէր զանունն Յիսուսի: Պետրոս եւ Պօղոս երկու լուսատու տունջեան եւ գիշերոյ. դամբարք եկեղեցւոյ. ամուլք հաւատոյ. Պետրոս եւ Պօղոս ի կեանս սիրով կացին. եւ ի մահ յօժարութեամբ ընթացան. որպէս ի սերն Զրիստոսի եռացին սրտիւ՝ այսպէս եւ ի սեր միմեանց միացան հոգւով: (Չյետոյսն ուրացան. եւ յառաջիկայսն նկրտեցան. ուշ եղեալ ընթացան ի կետ կոչմանն Յիսուսի:) Որպէս ասեր. (ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի:) Երանի է քեզ քաղաքդ Ռոմ. թէ որպիսի պարծանօք պարծիս դու. եւ զորպիսի պայծառ արեգակունս ընդունիս առ քեզ. թէ զորպիսի ընծայս մատուցանես դու Աստուծոյ. կամ զորպիսի լոյս ծագես բոլոր ամենայն աշխարհի: Չգալի լոյսքն յարեւելից ծագին. եւ իմանալի լոյսքն յարեւմտից փայլեն. սոքա զաչս լուսաւորեն. եւ նոքա զմիտս պայծառացուցանեն: Սոքա անբանից են զուարճութիւն. եւ նոքա բանականաց խնդութիւն: Սոքա երբեմն լուսաւորեն եւ ծածկին. եւ նոքա միշտ բացափայլ ճառագայթեն: Որեւ ինքն Յիսուս լոյս փառացն հօր՝ որ լոյս կոչեաց զաշակերտսն իւր, եւ լուսաւորիչ աշխարհի կարգեաց. եւ լոյս փառաց զնոսա կոչեաց, ի շնորհաբաշխ աւուրս տօնի՝ եւ միջնորդութեամբ երկուց լուսաւորաց գլխաւորացն տօնիս, ի բարեխօսութիւն առեալ զհեղումն արեան սոցա, եւ զաղօթիցն ամենայն սրբոցն մեզ զամենայն յանցանս մեր: Ուղղեսցէ զամենայն ընթացս մեր զհետ շաւղաց սոցին. լուսաւորեսցէ զխաւարեալ միտս մեր: Արձակեսցէ զմեզ ի կապից մեղաց մերոց. թեթեւացուցէ զձանր բեռնիս մեր. եւ բացցէ

մեզ գղութն արքայութեանն երկնից: Որ ինքն է դուռն եւ ինքն է ճանապարհ ճշմարիտ. եւ ինքն է արքայութիւն եւ ինքն է կեանք յաւիտենից Զրիստոս Յիսուս Տէր մեր ողին Աստուծոյ. ընդ որում Յօր իւրում եւ Սուրբ Յոգւոյն՝ փառք եւ պատիւ եւ երկծպագութիւն յաւիտեանս ամէն:

Նորին քարոզ առաքելոյ Պօղոսի ի Բանն որ ասէ: (Պօղոս ծառայ Յիսուս Զրիստոսի՝ կոչեցեալ առաքեալ. որոշեալ յաւետարանն Աստուծոյ:) Յռօմ. 1. 1: (Գլուխ. ԸԶ)

Փողն բարձրաբարբառ եւ ազգարար՝ յերրորդ երկինս ելօղ՝ անհասիցն տեսօղ եւ անճառիցն պատմօղ՝ խորհրդոցն հազարապետն խորին՝ եւ աստուածային գանձուցն տնտես հաւտարիմ՝ անօթ ընտրութեան եւ քարոզն ճշմարտութեան առաքեալ եւ ինքնախօս բերան Աստուծոյ Պօղոս՝ գրէ ուրեմ ի թուղթս իւր ասելով: (Պօղոս ծառայ Յիսուսի Զրիստոսի՝ կոչեցեալ առաքեալ. որոշեալ յաւետարանն Աստուծոյ:) Եւ ի վերայ այս բանի՝ պարտ է չորս իրս տեսանել: Նախ՝ զպատուականութիւն առաքելոյն Պօղոսի քան զայլ առաքելոցն: Երկրորդ՝ տեսանելի է թէ՛ յերկոտասանիցն է սա թէ ոչ: Երրորդ՝ թէ վասն է՞ր այնքան թուղթ գրեաց: Չորրորդ՝ տեսանելի է զառաջիկայ բանիս մեկնութիւն որ ասէ: (Պօղոս ծառայ Յիսուսի Զրիստոսի՝ կոչեցեալ առաքեալ. որոշեալ յաւետարանն Աստուծոյ:) *Տեսցուք զառաջին գլուխն զպատուականութիւնն Պօղոսի: Ասեմք եթէ՛ պատուական է առաքեալն Պօղոս քան զայլս տասն եղանակաւ: Նախ՝ պատուական էր քան զայլ առաքեալսն քաղաքաւ եւ ազգաւ եւ ուսմամբ. որպէս ինքն ասէր. (յազգէ Բենիամենի՝ քաղաքաւ տարսնացի՝ ուսմամբ փարիսեցի՝ առ ոտս գամաղիէլի սնեալ եւ վարժեալ:) Երկրորդ՝ զի վրեժ ինդիր էր օրինացն Աստուծոյ. որպէս յայտնէ ի քարկոծելն զսուրբն Ստեփաննոս. որ կամակից էր եւ պահէր զհանդերձս նոցա զի փութապէս քարկոծեսցեն. եւ առեալ զթուղթն ի քահանայիցն երթայր ի Դամասկոս ի չարչարել զքրիստոնեայսն: Երրորդ՝ զի ի ճանապարհին երեւեցաւ նմա Տէրն. շրտոյց զաչս նորա. եւ կոչեաց զնա անօթ ընտիր իւր կրել զանունն Աստուծոյ ի մէջ ազգաց եւ հեթանոսաց. եւ յորժամ մկրտեցաւ յԱնանիայէ, բացան աչք նորա եւ քարոզէր զՔրիստոս: Չորրորդ՝ զի ի բազում քաղաքս ընթացաւ. ի բազում աշխարհս քարոզեաց զաւետարանն Աստուծոյ. (զի յԵրուսաղէմէ մինչեւ ի Լուրիկէ՛ ելից զաւետարանն Զրիստոսի ի վաթսուն եւ հինգ քաղաք հանդերձ գաւառօք իւրեանց: Յինգերորդ՝ զի բազում թուղթս գրեաց քան զայլ առաքեալսն վասն երեք պատճառի: Նախ՝ հոգ տարեալ հեռաւորացն ուր ոչ կարէր հասանիլ՝ թղթով խօսէր: Երկրորդ եւ զերկբայեալսն թղթով հաստատէր: Երրորդ՝ եւ յետնոցն որք զալոց էին՝ զքարոզն ի յեկեղեցիս թողոյր: Վեցերորդ՝ սա միայն (յերրորդ երկինս համբարձաւ. մարմնով թէ առանց մարմնոյ՝ Աստուած գիտէ. եւ լուաւ եւ ետես զանճառելիսն զոր ոչ է պարտ մարդոյ խօսիլ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց ասէ:) Եօթներորդ՝ սա միայն անինչ եւ անկերակուր քարոզեաց ամենեցուն ի գեօղ եւ ի քաղաք. (զի արժան է մշակն կերակրոյ իւրոյ:) Այլ նա ոչ առնոյր ի ժողովրդէնէն. զի մի խափան լիցի աւետարանին: Այլ ձեռն ի գործ՝ եւ բերանն ի քարոզելոյ զՔրիստոս ոչ դադարէր. (զիս եւ որոց ընդ իս էին ասէ պաշտեցին ձեռքս այսոքիկ:) Ութներորդ՝ սա միայն (ընդ ամենայնին

ամենայնի լիներ. ընդ հրեայս եւ ընդ հեթանոսս. ոչ թէ հրեայ եւ հեթանոս լիներ՝ այլ զի զնոսա շահեր.) ընդ նոսա միաբաներ. ընդ տկարս ցաւեր. եւ զհիւանդս բժշկեր. եւ մեզ ուսուցաներ՝ (թէ հնար ինչ է, ընդ ամենեսեան զխաղաղութիւն ստասջիք:) Իններորդ՝ այսպէս սիրեր զազգակիցս իւր՝ որեւ վասն նոցա նզով կամեր լինիլ ի Զրիստոսէ. որպէս երբեմն Մովսէս ասեր առ Աստուած. (թէ սոցա թողուս թող. ապա թէ ոչ՝ եւ զիս ջնջեա ի դպրութենէն յորեւ գրեցեր:) Այսպէս եւ մեզ պարտ է ունիլ սեր առ Զրիստոս եւ սեր առ ընկերս. եւ ղնել զանձն ի վերայ նոցա: Տասներորդ՝ սա միայն բազում վիշտս կրեաց ի հրեից եւ ի սուտ եղբարց. որպէս ինքն ասեր. (քարկոծեալ. ի բանտ արկեալ. գան արբեալ հինգիցս քառասուն մի պակաս. զի մինչ ի քառասունն հարկանէին. եւ դարձեալ կրկնէին. ի կապանս մտեալ. ընդ ծով եւ ընդ ցճամաք հետի ոտս վարեալ. նաւաբեկս եղեալ եւ փախստական. եւ զԶրիստոս ի քարոզելոյ ոչ դադարեր: Որեւ յետոյ զվերջինն առ Փիլիքս դատաւորն ի Կեսարիա առ կայսր բողոքեաց. եւ անտի տարեալ ի կայսր բազում շահ օգտութեան հանդիպեր. եւ ասեմ տասն գլխով: Առաջին՝ ժամանակ մի գերծումն յատենէն: Երկրորդ՝ դերել. այսինքն, ունայն լիներ նենգութիւն հրեիցն: Երրորդ՝ ի նշանաւոր քաղաք ընթացեալ: Չորրորդ՝ զի եւ անդ նահատակութիւն. այսինքն, արիութիւն եցոյց: Հինգերորդ՝ զի զվախճան կենցաղոյս վասն ճշմարիտ կրօնից ընդուներ: Վեցերորդ՝ զի փոխանակ անցաւորիս՝ զանանց կեանս. եւ վասն երկրաւորիս՝ զերկնայինսն ժառանգեր: Եօթներորդ՝ զի աստուածայաղթ պսակօք. այսինքն աստուածային բանիւք բարուք պատերազմաւ յաղթօղ երեւեալ, ընկալաւ զյաղթանակ նորին: Ութներորդ՝ եւ ի վերայ այսր՝ մարտիրոսութեանն պսակեցաւ արեամբ: Իններորդ՝ զի յարքունի ապարանս նշխար ոսկերացն պատուազարդեցաւ: Տասներորդ՝ զի յամ տօնիւ փառաւորեցաւ: Այս քան պատուական էր առաքեալն Պօղոս քան զամենայն առքեալսն: *Երկրորդ հարցանելի է թէ՛ յերկոտասանիցն է սա թէ ոչ: Երեւի թէ ոչ՝ զի յետ յարութեանն Զրիստոսի աշակերտեցաւ. կարգեալ էին երկոտասանքն: Ասեմք. եթէ ոք ի նկարագիրն հայի, ոչ ցուցանէ զնա յարկոտասանիցն: Ապա թէ ի տեսութիւն մտացն հայ ի ճշմարիտ յերկոտասանիցն է սա: Չի յորժամ Զրիստոս ասաց առաքելոցն թէ՛ (նստջիք յերկոտասան աթոռս դատել զերկոտասան ազգն Իսրայելի,) Պօղոս չէր կոչեցեալ յառաքելութիւն. մատաթիա չէր ընտրեալ վիճակաւ. եւ Յուդա թեպէտ ընդ նոսա էր, ոչ արժանաւորեցաւ նստիլ յաթոռ. այլ էջ յատակս դժոխոց: Այլ այսպէս իմանամք զիրամանս անետարանին. զի ի թուոց ոմանք անկատարք են որպէս չորս. ոմանք կատարեալ որպէս վեց. ոմանք գերակատար որպէս երկոտասան: Եւ ամենայն սուրբք եւ ընտրեալք որք լինին գերակատարք՝ համարին ի թիւ երկոտասանիցն. եւ նստին ընդ նոսա ի դատողական աթոռն. այսպէս առաքեալն Պօղոս՝ էր գերակատար քան զամենեսեան որպէս ցուցաւ. ապա ճշմարտապէս յերկոտասանիցն է սա: *Երրորդ հարցումն թէ՛ վասն է՞ր չորեքտասան թուղթ գրեաց: Ասեմք նախ եթէ՛ տասն կատրեալ թիւ է. զի տասն են մասունք արարածոց երկնի եւ երկրի. ծովու եւ ցաւաքի եւ այլն. եւ չորս են տարերք եւ սկզբունք աշխարհի. զի ցուցցէ զնոսա միոյ արարչի արարած գոլ՝ նոյնքան թուղթ գրեաց: Դարձեալ՝ տասն բան էր օրինաց հնոյն. եւ չորս անետարանն նորոյս. եւ չորեքտասան թուղթ Պօղոսի՝ զիին եւ զնոր օրէնս յինքեան բովանդակեալ

ունի: Եւ ոմանք այսպէս ասեն թէ՛ թուղթն Պօղոսի առ ընդհանուր եկեղեցիս տասն Է. եւ ի չորիցն երկուքն առ Տիմօթէոս Է. եւ մինն առ Տիտոս. եւ միւսն առ Փիլիմօն: Ապա ուրեմն տասն Է թուղթ Պօղոս ընդհանրական. որ համեմատի տասն բանեան օրինացն: Չի որպէս նովաւ հինն Իսրայելի եւ յԵգիպտոսէ եւ ազատեցաւ ի փարաւօնէ. նոյնպէս տասն թղթովս այս՝ նորն Իսրայել ելցէ ի դժոխոց. եւ ազատեցի ի ծառայութեն սատանայի. եւ հասցէ յերկիրն աւետաց: Այս առ երրորդ գլուխն: *Եկեսցուք ի չորրորդ գլուխն վասն առաջիկայ բանիս որ ասէ: (Պօղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի:) Նախ տեսանելի Է թէ՛ Մովսէս հինգ գիրս գրեաց. եւ այլ մարգարէքն եւ աւետարանիչքն ոչ դնէին զանւանս ի գիրս իւրեանց. իսկ սա դնէ զանուն իւր: Ասեմք նախ եթէ՛ մարգարէքն մերձակայիցն գրէին յաղագս իւրեանց. իսկ սա՝ հեռաւորացն գրեր. իսկ աւետարանիչք զբանս գրէին. չէր պարտ զանունս իւրեանց գրել. իսկ սա զիւր բանսն գրէ: Երկրորդ՝ յաւուրս Մովսէսի ոչ գոյին այլ մարգարէք. ոչ սուտ եւ ոչ ճշմարիտ. իսկ յաւուրս առաքելոցն՝ գոյին բազում ճշմարիտ առաքեալք. եւ բազում սուտք. պարտ էր գրել զանուանս իւրեանց՝ զի գիտացեն զգիրսն: Երրորդ՝ ոչ գրէին մարգարէքն զանւանս՝ զի մի գիտացեն ժողովուրդքն թէ ի նոցանէ Է պատգամս. այլ յԱստուծոյ. իսկ առաքեալքն խօսէին զբանս յերեսաց իւրեանց: Չորրորդ՝ մարգարէքն խստապարանոց եւ կատաղի ժողովրդեանն գրէին. որք քարակոծ առնէին եւ չարչարէին զմարգարէսն. զի թէ զանունն իւրեանց գրէին, վասն ատելութեան ոչ ընդունէին զպատգամս նոցա. իսկ առաքեալքն՝ աշակերտացն գրէին. որք հաճեալ էին ընդ նոսա եւ կարօտ էին տեսլեան նոցա. եւ ի լուր անուան նոցա ցնծային: Զինգերորդ՝ Մովսէս Աստուած էր անւանեալ. թաքոյց զանուն իւր՝ զի մի յետոյ պաշտօն առնուցուն. այլ առաքեալքն պաշտօնեայք էին Աստուծոյ. եւ ծառայք Քրիստոսի գրէին: Վեցերորդ՝ Մովսէս ոչ գրեաց զանունն. զի պատգամս առաջին մատամբն Աստուծոյ էր գրեալ. եւ ոչ ի ձեռացն Մովսէսի. իսկ առաքեալքն ձեռամբն իւրեանց գրէին զթուղթս: Եօթներորդ մարգարէքն ոչ դնէին զանունն. զի մի յետ մահու նոցա անցանելի թուեսցի գիրքն. իսկ առաքեալքն գրէին՝ զի ի կեանս եւ յետ մահու նոցա առաւել լսելի լիցի քարոզութիւն նոցա: Ութներորդ՝ մարգարէքն պատիւ արարին աւետարանին. զի ճշմարտութիւնն գրեսցի եւ մի օրինակն. իսկ առաքեալքն գրէին՝ զի նոր օրէնքս Քրիստոսի արձանացի եւ մնացէ: Իններորդ՝ ոչ սակաւ զօրութիւն լինէր յանւանէ առաքելոցն. այլ բազում բարութիւն. զի թէ հովանի նոցա զմեռեալս յարուցանէր եւ զդէս հալածեր, քանի առաւել անուանք նոցա: Տասներորդ՝ գրելով զանուն իւր առաքեալն Պօղոս՝ ցուցանէ թէ ողջունի Է թուղթս. եւ ոչ սպառնալիք որպէս մարգարէիցն: Իսկ յառաջ դնել զանունն՝ ցուցանէ զգրօղն պատուական, քան առ որս գրեցաւ. եւ պատիւ վարդապետին՝ հարկ առնէ աշակերտացն լսել զբանսն եւ կատարել: Այս թէ վասն Է՞ր մարգարէքն զանունս իւրեանց ոչ գրեցին. եւ առաքեալքն գրեցին: *Իսկ Պօղոս՝ թարգմանի յեբրայեցիս բերան փողոյ. կամ ընտրեալ զարմանալի: Իսկ ի յոյնն՝ հանդարտ: Եւ ի լատինն՝ փոքր. որեւ ամս գովութիւն Է նմին: Չի բերան փողոյ զսա կոչելով՝ նմանի փողոցն այնց՝ զորս Աստուած հրամայեաց հնչուցանել իսրաւելացոցն: Եւ երեք ինչ ազգէին փողքն այնք: Նախ գուշակէին զպատերազմ: Երկրորդ՝ զհամօրէն դատաստան ինչ: Երրորդ՝ զտօնս գլխաւորս: Նոյնպէս եւ սա գոչելով յորդորէ

գպատերազմ ընդ իշխանութիւնս խաւարինս. եւ գուշակէ գդատաստանն Զրիստոսի. եւ խրատէ զմեզ ասելով. (ամենեքեան կալով եմք առաջի ատենին Զրիստոսի:) Եւ հրաւիրէ զմեզ ի տօն վերինն Երուսաղէմի ասելով. (զվերինն խորհեցարուք՝ ուր Զրիստոս նստի ընդաջմէ հօր:) Դարձեալ՝ զի բերան փողոյն՝ թէ նեղագոյնն դի մերձ առ շրթունս փողահարին, գեղեցիկ ձայն արձակէ. ապա թէ արձակն դի մերձ առ շրթունս, ոչ տայ ձայն յարմար: Այս ցուցանէ զնեղ եւ զանձուկ վարս առաքելոյն՝ որոյ ձայնն զտի եզերս զարդարեաց: Իսկ որք արձակ կենցաղավարին՝ անյարմար փողք են. որք այլոց քարոզեն, եւ ինքեանք ոչ կատարեն: Իսկ ընտրեալ զարմանալի Է՝ զի ոչ ոք ի սրբոցն այնպէս զարմանալի ընտրեցաւ քան զնա: Նախզի՝ մինչդեռ հալածեր զեկեղեցին, քարշեաց Զրիստոս առ ինքն ի ճանապարհին Դամասկոսի: Երկրորդ՝ զի յառաջն սօղոս վայրենի՝ որ նման Սաւուղայ հալածեր զԴաւիթ եւ զգօրս նորա. եւ սա զՏէրն Դաւթի եւ զնորին հաւատացեալս. եւ եղև ընտրեալ եւ զարմանալի. որպէս ասէ ցնա Տէրն. (անօթ ընտիր իմ ես դու՝ կրել զանուն իմ ի մէջ ազգաց:) Երրորդ՝ զի օրհնեցաւ նա ի Բենիամին որ զայլ յափշտակօղ անուանեցաւ ի նահապետէն Յակօբայ. եւ ձեռամբն Անանիայի որ ոչխար թարգմանի՝ մկրտեցաւ եւ եղև գառն: Չորրորդ՝ եւ նա որ ընդ առաւօտս կենաց իւրոց որսայր զհաւատացեալս ի մահ ընդ երեկոյս՝ այսինքն, յետոյ բաշխեր ամենեցուն զբանն կենաց. այսպէս չորս կերպիւ ընտրեալ զարմանալի կոչեցաւ Պօղոս: Իսկ հանդարտ՝ զի ոչ Է բան սորա որպէս զտարափ սաստիկ անձրեաց՝ որ ողողեալ տանի զպարարտութիւն երկրի. այլ իբրև զանձրեւ հանդարտ մեղմով իջանէ եւ պտղաբերէ զբոյսս բանաւոր երկրի: Իսկ փոքրիկն՝ ցուցանէ զթեթև ընթացութիւն ի գնացս աւետարանին. քանզի որսորդ թռչունն՝ արծիւ կամ բազայ Է. որք ունին զկուրծսն նուրբ եւ ողնաւոր, եւ ոչ լայն եւ մեծ. եւ դիւրաւ պատառեն զօդ եւ հասանին որսոյն. որպէս նաւք ողնաւորք՝ դիւրաւ սահին ի վերայ ծովուն: Այսպէս եւ սա ոչ ընդ արձակեալ լայնացոյց զսիրտ իւր ի հեշտութիւն աշխարհիս. այլ փոքր եւ նուրբ ունելով զկուրծս, վասն այն արագ որսաց զտիեզերս: Այս որ ասի Պօղոս: *Իսկ ասելն (ծառայ Յիսուսի Զրիստոսի:) Գիտելի Է՝ զի եօթն եղանակ Է ծառայութեան: Նախ՝ ըստ արարչութեան. որպէս աղեալքս յԱստուծոյ: Երկրորդ՝ ըստ հրամանատրութեան. որպէս թագաւորաց: Երրորդ՝ ըստ պաշտման. որպէս տարերց կամ Աստուծոյ: Չորրորդ՝ ըստ գործոց. որպէս մեղաց կամ արդարութեան: Զինգերորդ՝ ստացմամբ զնոց զինքն կամ զծնօղսն: Վեցերորդ՝ արեամբ ստացեալ ի գերողաց: Եօթներորդ՝ ծառայէ վասն վարձուցն մշակութեան: Եւ սա այսու ամենայնիւ ծառայ կոչէ զինքն Յիսուսի Զրիստոսի. այսինքն, փրկչին եւ օծելոյն Աստուծոյ: Դարձեալ ծառայ ասելովն՝ նախ զլսօղսն ի խոնարհութիւն կրթէ: Եւ երկրորդ՝ զինքն մեծացուցանէ. ծառայ ոչ մարդոյ, այլ Յիսուսի Զրիստոսի՝ որ մեծ Է քան զամենայն թագաւորութիւնս: (Կոչեցեալ առաքեալ:) Նախ՝ բաժանէ զինքն ի սուտ առաքելոցն եւ յառաջնորդացն՝ որք ոչ են կոչեցեալ. այլ ինքնայօժար կամօք ելանեն ի պատիւ եւ ոչ յԱստուծոյ: Երկրորդ՝ ցուցանէ զխոնարհութիւնն իւր. զի որմարդիոր ոք՝ դնելով զքանոնն ի վերայ քարանցն որք ի դուրս են քան զորմն, ի ներս մղէ. եւ որք ի ներս կոյս, յառաջ մեծարէ, եւ այսպէս յարմարին շինուծքն: Նոյնպէս ճարտարպետն Աստուած՝ շինելով զեկեղեցի, դնէ ի վերայ քանոն զխոնարհութիւնն յետ մղելով եւ խրատելով

որք հպարտութեամբ ելանեն ի պատիւ. եւ յառաջ մեծարելով զխոնարհս: Որեւ սա կոչեցաւ յառաքելութեանս պատիւ՝ եւ գեղեցկապէս շինեցաւ եկեղեցիս Աստուծոյ: Երրորդ՝ ցուցանէ զմեծութիւն պատուոյն. զի որպէս Զրիստոսի առաքեցաւ ի հօրէ. նոյնպէս սա կոչեցաւ ի Զրիստոսէ: Դարձեալ կոչումն Աստուծոյ եռակի է. երբեմն կոչէ բարձրաձայնաբար որպէս զԱբրահամ. երբեմն սքանչելօք որպէս զՄովսէս առ հուրն. երբեմն ազդմամբ մտացն լուսաւորութեամբ: Եւ բոլորովին սոքօք կոչեցաւ ի ճանապարհին Դամասկեայ: Այլ ոմանք ասեն. թէ՛ Աստուած չորս ցեղ կոչէ զմարդն. որպէս զՍամուէլ յորժամ տղայ էր, երեք կոչելովն ոչ գնաց մօտ յԱստուած. այլ մօտ ի հեղի. ապա ի յետի դիրն՝ երկու հետ ձայնեաց. (Սամուէլ Սամուէլ.) ապա Աստուծոյ ասաց (ահաւասիկ եմ:) Առաջին կոչելովն կոչէ Աստուած մարդ տալով զհասարակաց պարգեւս. այսինքն, զկենդանութիւն, առողջութիւն, ուսումն, եւ այլ ինչ. եւ այսու ոչ իմանան զԱստուած. եւ ոչ իմանան զհրամանսս նորա: Երկրորդ՝ կոչէ յորժամ զխիղճ մտացն դատէ. եւ այսու ոչ ընթանան առ Աստուած: Երրորդ՝ յորժամ ի վարդապետաց խրատի. եւ այսու ոչ կատարէ զկամս Աստուծոյ: Իսկ չորրորդ՝ յորժամ երկու անգամ գոչէ (Սամուէլ Սամուէլ.) այս է՝ յոր ժամ զմարդն ի հիւանդութիւն ձգէ, ի կուրութիւն, կամ յայլ ինչ, եւ զմիտսն ի տանջանս դժխոցն, յայնժամ հաւանի հրամանացն Աստուծոյ եւ ասէ. (ահաւասիկ եմ:) Եւ այսպէս չորս կոչմամբս կոչեաց զՊօղոս: Նախ՝ յորժամ ետ նմա կենդանութիւն եւ իմաստութիւն: Երկրորդ՝ յորժամ ետ նմա խիղճ մտաց: Երրորդ՝ յորժամ լսեաց զքարոզութիւն առաքելոցն. եւ այս երեք կերպիս՝ ոչ հաւանեցաւ զալ յառաքելութիւն: Իսկ չորրորդ՝ յորժամ ի ճանապարհին Դամասկոսի կրկին անգամ կոչեցաւ (Սաւուղ Սաւուղ զի՞ հալածես զիս.) կրկին պատուհասեցաւ. մին՝ զի շլացան աչքն. եւ երկու՝ զի մտօքն ետես զպատիժն գործոց իւրոց. ապա հնազանդեցաւ հրամանացն Զրիստոսի. եւ կոչեցաւ յառաքելութիւն: Իսկ որ ասէ առաքեալ՝ գիտելի է. զի առաքելութեան եղանակքն վեց են. եւ են այսոքիկ: Մարդ ի մարդոյ առաքեալ: Կամ մարդ ի հրեշտակէ առաքեալ: Կամ մարդ յԱստուծոյ առաքեալ: Հրեշտակ ի հրեշտակէ առաքեալ: Կամ հրեշտակ յԱստուծոյ առաքեալ: Իսկ վերագոյն սոցա Աստուած յԱստուծոյ առաքեալ: Իսկ սա յԱստուծոյ առաքեցաւ: Իսկ գործք առաքելութեանն է ըստ տասն եղանակի: Առաջին՝ վասն պատգամաց. որպէս Գաբրիէլ առ կոյսն: Երկրորդ՝ վասն միջնորդելոյ. որպէս (առաքեալն եւ քահանայապետն խոստովութեան մերոյ:) Երրորդ՝ ի մշակութիւն. որպէս զԹառնայն յայգին: Չորրորդ՝ ի չարչարանս ինքեան. (որպէս զոչխար ի սպանդ վարեցաւ.) եւ այլոց որպէս տանջանքն ի ձեռն հրեշտակի: Հինգերորդ՝ ի բժշկութիւն. (առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զնոսա:) Վեցերորդ՝ յիշխանութիւն. (առաքեաց զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր:) Եօթներորդ՝ զաւետարանն քարոզել. որպէս առաքեալքն: Ութներորդ՝ որպէս զմարգարէսն: Իններորդ՝ վասն սրբութեան ըստ կայծականն մարգարէին: Տասներորդ՝ վասն տեսլեան մեկնութեան որպէս առ Դանիէլն: Իսկ սա առաքեցաւ վասն աւետարանին: (Որոշեալ յաւետարանն Աստուծոյ:) Եւ երեւիք ասի որոշեալ. կամ ըստ Էութեան, կամ ըստ զօրութեան, կամ ըստ ներգործութեան: Եւ այսպէս սա որոշեցաւ Էութեամբ յամենայն մարդկանէ եւ յազգէ իւրմէ: Եւ զօրութեամբ՝ մտօքն որոշեցաւ եւ զօրացաւ իմաստութեամբ: Եւ ներերգործութեամբ սքանչելեացն՝ կարողացաւ քան զամենայն մարդ:

Դարձեալ որոշեալ ասի, իբր թէ ընտրեալ. եւ երեք է ընտրութիւնն սորա: Առաջին՝ որպէս ինքն ասէ (Նախքան զլինլն աշխարհի ընտրեաց զմեզ:) Չի յորժամ անմեղ էր մարդն ի դրախտին՝ որպէս զոսկի անապական էր. եւ յորժամ յանցաւ եւ ել ի դրախտէն, եղեւ իբրեւ զտիղմ եւ զկաւ: Եւ որպէս բրուտն առեալ զկան ձեռք՝ (գործէ զոմն ի պատիւ, եւ զոմն յանարգանս.) եւ այս ոչ թէ ըստ արժանաւորապէս պատուոյն. այսպէս եւ Աստուած ի տղմացեալ ազգէն հրէից՝ առեալ զՊօղոս առաքեալն, կազմեաց անօթ ընտրութեան. եւ այս ողորմութեամբ եւ շնորհօք իւրովք: Երկրորդ՝ ընտրութիւն է յորովայնէ մօրն. որպէս ասէ գիրն: (Մինչչեւ ծնեալ էր յորովայնէ՝ զՅակօբ սիրեց. եւ զԵսաւ ատեցի:) Այսպէս եւ զսա ընտրեաց ի ծննդէն. որպէս ասէ զաղատացոց. (ընտրեաց զիս յորովայնէ մօր իմոյ:) Երրորդ ընտրութիւն էր՝ յորժամ կոչեաց յառաքելութիւն եւ որոշեաց զկա ի մօրէ. մայր սորա էր ժողովուրդն հրէից: զի մինչ յանհաւատութիւնն էր, որպէս յորովայնի մօր էր որ ոչ էր որոշեալ: Այլ յորժամ կոչեցաւ ի Քրիստոսէ, որոշեցաւ ի Նոցանէ. եւ ընտրեցաւ ի քարոզութիւն անտարանին եւ ի փառս արքայութեանն. որպէս ասէ. (զորս ընտրեաց՝ զնոսին եւ կոչեաց. եւ արդարացոյց եւ փառաւորս արար:) Իսկ որ ասէ: (Յաւետարանն Աստուծոյ:) Չմեծութիւնն գործոյն ցուցանէ ըստ չորս եղանակի: Նախ թէ՛ ոչ է սպասաւոր բանից Արիստոտելի, կամ Պղատոնի, այլ Աստուծոյ. զի որպէս Աստուած մշտնջենաւորէ. Նոյնպէս եւ անտարանն: Երկրորդ՝ Աստուծոյ ասելովն՝ ցուցանէ զպաշտամանցն առաւելութիւն. զի ի հնումն միայն զհայր Աստուած գիտէին. իսկ այժմ եւ զորդի եւ զհոգի Աստուած անտարանէ: Երրորդ՝ զայն ցուցանէ թէ՛ ոչ է մարմնաւոր եւ ժամանակեայ օրինաց սպասաւոր որպէս հինն. այլ Աստուծոյ. զի Նոր անտարանս՝ հոգեւոր է եւ անփոփոխ: Չորրորդ՝ զի ի հինն՝ մասնաւոր էր անտիսն. եւ այլքն սաստ եւ տրտմականք եւ բամբասանք: Իսկ այժմուս անտարանն Աստուծոյ լի բարութեամբ. այսինքն, թողուլ զպարտս. (լուծ իմ քաղցր է եւ բեռն իմ փոքր ոգի:) Եւ զայս անտարանեաց առաքեալն Պօղոս եթէ՛ (զլուիս մեղաւորաց ես եմ, որ հալածեցի զեկեղեցին Աստուծոյ. չեմ արժանի թէ կոչեցայց առաքեալ. այլ նախ յիս երեւեցոյց Աստուած զմարդասիրութիւն իւր. զի ուր առաւել եղեն մեղք՝ առաւել եղեն շնորհք:) Եւ այսպէս սոքա երկոքին առաքեալքս՝ կատրեալ սիրով սիրեցին զՔրիստոս եւ ընթացան զհետ սորա: *Առաքելոյն Պետրոսի սերն՝ յայտ է ի հարցմանէն Քրիստոսի: (Սիմոն Յովնանու սիրե՞ս զիս առաւել քան զդոսա. ասէ ցնա. այո Տէր. եւ դու գիտես զի սիրեմ զքեզ:) Եւ եցոյց զնշան սիրոյն՝ զի գնաց զհետ Քրիստոսի եւ խաչակից եղեւ նմա: Նոյնպէս եւ Պօղոս առաքեալն՝ յոյժ կատրեալ սիրով սիրեաց զՔրիստոսի. եւ սեր սորա երեւի ի հինգ իրս: Նախ՝ ի կրել զբազում չարչարանս վասն Քրիստոսի. որպէս ասէ. (վիշտս ի գետոց. վիշտ յաւազակաց. վիշտս ի սուտ եղբարց, եւ այլն:) Երկրորդ՝ յայտ է ի փափագումն սորա. որպէս ինքն ասեր. (ցանկամ ելանել ի մարմնոյս՝ եւ լինիլ ընդ Քրիստոսի:) Երրորդ՝ զի աշխատէր վասն անուան սորա ի քարոզութիւնն. զի ոչ կամեր դադարիլ ասելով. (զամ ի յետոյսն ուրացեալ եմ եւ յառաջիկայսն նկրտիմ:) Չորրորդ՝ յայտ է ի սերտ եւ ի հաստատուն սերն. ըստ այնմ, (ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւն, թէ անձկութիւն եւ այլն:) Յինգերորդ՝ ի յարամնայութիւն. զի էր սեր սորա մինչեւ ի մահ. որպէս ինքն ասեր. (զբարուք պատերազմն պատերազմեցայ. զընթացսն կատրեցի. զհաւատսն

պահեցի. այսուհետեւ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն՝ զոր հատուցե ինձ արդար դատաւորն. ոչ միայն ինձ. այլեւ ամենեցուն որք սիրեցին զյայտնութիւն Նորա:) Արդ գիտելի է՝ զի առաքեալքն Պետրոս եւ Պօղոս՝ նման են չոս իրաց: Նախ՝ նմանին ոսկոյ. զի փորձելով ի բովս նեղութեան, գտան անապական: Երկրորդ՝ նման են թելոյ. զի որպէս հան կրկին թելովս վերանայ յօդդ. նոյնպէս հաւատացեալքն Քրիստոսի բանիւք սոցա զոր խոստովանեցան զՔրիստոս որդի Աստուծոյ: Երրորդ՝ նմանին աթոռին փղոսկրեայ՝ զոր կազմեաց Սողոմօն ի յոր հանգեաւ Քրիստոս յառաքեալն Պետրոս ասելով. (ի վերայ այդր վիմի՝ շինեցից գեկեղեղի իմ.) եւ ի յառաքեալն Պօղոս յորժամ ասաց. (անօթ ընտրութեան ինձ Պօղոս, կրել զանուն իմ ի մէջ հեթանոսաց:) Չորրորդ՝ նմանին աղբեր. զի որպէս աղբիւրն ոռոգանէ գերկիր. նոյնպէս իմաստութիւն եւ գիտութիւն սոցա՝ առոգանէ գեկեղեցի սուր եւ յարագուարճ ծաղկեալ զարդարեալ պտղաբերէ եւ լուսաւորէ գնոսա: Աստ հաւատով եւ հուսով եւ բարի գործով. եւ անդ անթառամ պսակօք եւ երեսնաւոր եւ վաթսնաւոր եւ հարիւրոր արդեամբ եւ հատուցմամբն, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք եւ զօրութիւն եւ երկրպագութիւն այժմ եւ ի ներկայս եւ յանկետ յաւիտեանս որ գալոց է ամէն:

Նորին քարոզ Յօհաննու եւ Յակօբայ: (Դարձաւ Պետրոս եւ տեսանէր զաշակերտն զոր սիրէրն Յիսուս զի գայր զհետ Նորա եւ այլն:) Յօհ. 21. 20: (Գլուխ. ԾՁԱ)

Պայծ առ է մեզ Բան տօնախմբութեանս ո՛վ քրիստոսասէր ժողովուրդք. քանզի առաքելական է հաւենդեսս. վկայական մրցանակս. սրբազան տեղիս՝ եւ հրեշտակական է ժողովս: Արքունական է սեղանս. եւ երկնաւոր կոչեցեալ Քրիստոս: Բարի է կոչնատերս. եւ հոգեւոր կերակուր եւ ըմպելիս: Առաքելական է հարսանիսս. եւ պայծառազգեստ խրախճանութիւնս: Չի այսօր հոգեւորական տօնս մեզ կազմեաց անտարանիչն Յօհաննես. ոչ կերակուր եւ ըմպելի մարմնոյ յոր յագեցութիւնն շռայլութիւն գործէ. այլ հոգեւոր եւ աստուածային երանութեան սեղանս յօրինէ: Եւ շնորհ հոգւոյն պարգեւաց է՝ որ այսօր արժանաւորեաց զմեզ ժամանել մեծի աւուրս սրբազան յիշատակի առաքելոցն սրբոց, եւ հարագատ աշակերտացն Յակօբայ եւ Յօհաննիսի: Նոյն ինքն տացէ մեզ բան եւ իմաստութիւն. եւ ձեզ ունկն եւ լսողութիւն. ի գովեստ եւ ի պատմութիւն անտարանչացն պատուասիրութեան որ ասէ: (Դարձաւ Պետրոս եւ ետես զաշակերտն զոր սիրէրն Յիսուս:) Եւ վասն այսր բանի՝ չորս ինչ ասելի է մեզ: Նախ վասն տօնիս՝ որ վերջոյ է կարգեալ: Երկրորդ՝ վասն մեծութեան անտարանչին: Երրորդ՝ ի գովութենէ նորին: Չորրորդ՝ վասն առաջիկայ բանիս տեսութեան: *Տեսցուք զառաջինն որ տօնս այս՝ քան զայլ երիցն վերջոյ է կարգեալ. ոչ վասն փոքրկութեան. այլ առաւել վասն գերազանցութեան: Եւ այս յայտ է ի վեց պատճառաց եւ օրինակաց: Նախ զի՝ Աստուած հրամայեաց ի յօրէնսն զսկիզբն տօնին մեծարանօք ընդունիլ. եւ զկատարումն կրկին պատուել զոհիւք եւ պատարագօք. զի մի թուեսցին ձանձրացեալք տօնիւն: Այսպէս եւ սպասաւորք բանին՝ ի սկիզբանն զգուշ լինին նախերգութեամբ. զի զարթուցեն զլսօղս. եւ զվճարն գեղեցկացուցանեն. զի համ թողցեն

յասելեացն: Այսպես եւ տօնիս այս՝ կատարումն է այլ երիցն: Երկրորդ՝ որպես մարգարեքն նախ էին ժամանակաւ եւ առաքեալքն յետոյ. այլ նախապատիւ են առաքեալքն քան զմարգարես. որպես ասէ Պօղոս. (զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս. երկրորդ զմարգարես:) Այսպես եւ տօնս այս՝ նախապատիւ է քան զառաջինսն: Երկրորդ՝ որպես կոչեմք գերադրական. թագաւորաց թագաւոր. իշխանաց իշխան. Տերանց Տեր. այսպես եւ սա ի մէջ աւետարանչացն եւ առաքելոցն՝ գերադրական է փառօք: Նոյնպես եւ տօն սորա՝ գերադրական է քան զառաջինսն: Չորրորդ՝ որպես ասեմք. երկինք երկնից. սրբութիւն սրբոց. թեպէտ տեղեալ առաջին է սրբութեան խորանն. եւ ապա սրբութիւն սրբոցն. այլ ի նա միանգամ մտաներ քահանայապետն ի տարւոջն. եւ առաջին խորանն՝ յամենայն ժամ քահանայքն: Եւ երկինքս մեզ առաջին է քան զերկնից երկնս: Այլ երկինքն հրեշտակաց է բնակութիւն. եւ վերին երկինքն Աստուծոյ: Այսպես եւ տօնս այս աստուածաբան աւետարանչին է՝ որ բարձրագոյն է սրբութեամբ քան զամենայն մարդիկ: Հինգերորդ՝ զի յամենայն ուրեք հասարակքն նախադասք են քան զյատկականս. որպէս փայտն քան զայս անուն փայտ. եւ մարդն քան զպետրոս. այլ յատուկն պատուական է քան զհասարակն: Նոյնպես փառք սրբոցն զորս տօնեցաք՝ հասարակ է մարգարեից եւ առաքելոց եւ մարտիրոսաց. իսկ սորայս փառքս՝ յատուկ միայն իւրն է առանձինն. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայոյ: Վեցերորդ յայտ է՝ զի որքան տօն սորա մերձ է ի ծնունդ փրկչին՝ այսքան մօտաւոր եւ ընտանի է անհաս խորտրոցն Աստուծոյ, եւ պատուեալ տօնիւ: Յաղագս այսր պատճառաց՝ աստ կարգեցաւ տօն սրբոյ աւետարանչիս վերջոյ քան զայլ երեք տօնս: Այս առաջին գլուխն: *Երկրորդ գլուխն վասն պատուոյ աւետարանչին: Չի թեպէտ երկոտասանք էին թուով առաքեալքն որք նախ քան զլինիլն աշխարհի ընտրեցան՝ եւ ի Զրիստոսէ կոչեցան եւ զդատողական աթոռս ընկալան: Այլ սրբոյն Յօհաննէս՝ նախամեծար եւ գերագոյն պատիւ ընկալաւ երկոտասան թուով քան զայլ առաքեալսն: Նախզի՝ ըստ մարմնոյ ազգակից էր Զրիստոսի. զի մայր սոցա Սողոմէ՝ դուստր է Յովսէփայ որ աստուածահայր կոչեցաւ. եւ որպէս որդիքն Յովսէփու՝ եղբարք կոչին Զրիստոսի. եւ դստերքն քորք անուանին: Ապա ուրեմն Յակօբոս եւ Յօհաննէս՝ քեռորդիք էին Զրիստոսի: Եւ այս ոչ փոքր գովութիւն է՝ մարդացելոյն Աստուծոյ մարմնով ազգակից լինիլ: Երկրորդ՝ զի երկոքեանն կոյսք էին եւ սրբութեամբ սնեալ. ոչ հոգեկան եւ ոչ մարմնական, ոչ մահացու եւ ոչ ներելի մեղք էր ի նոսա. ըստ այնմ որ ասէ. (զծածուկ ախտ հոգւոյ իմոյ սանձեցեր. եւ զյայտնի գործ նորին խափանեցեր:) Երկրորդ՝ զի սիրելի աշակերտ կոչեցաւ. (աշակերտն այն զոր սիրերն Յիսուս:) Եւ այս մեծ երանութիւն է՝ որ սիրեցելոյն ի հօրէ սիրելի եղել աշակերտ: (Եւ որ զիսն սիրեն՝ սիրեմ ասէ Տեր. եւ գտցեն մեծ բարութիւնս:) Եւ ի մէջ աշակերտացն որպէս Պետրոս առաւել սիրեր զԶրիստոս. այսպէս Յօհաննէս առաւել սիրիւր ի Զրիստոսէ: Չորրորդ՝ զի անկաւ զլանջօքն նորա. եւ մաքրեցաւ որպէս զոսկի ի հուր. եւ այս մեծ նշան սիրոյ. զսիրտն մերձ եղեալ սրտին Զրիստոսի, եւ եղել սիրտ եւ կամք Զրիստոսի. եւ զծածուկս սրտի նորա ծանեալ զանճառելի խորհուրդս. եւ ի շնչոյն Զրիստոսի սրբեցաւ սիրտ եւ խորհուրդ եւ զգայութիւն նորա. որպէս ոսկի մաքրեալ ի հրոյ: Հինգերորդ՝ զի որդի սրբոյ կուսին կոչեցաւ. եւ ի նա յանձնեաց զմայրն իւր ի խաչին ասելով.

(ահա մայր քո. եւ ահա որդի քո:) Եւ այս յիրաւի՝ զի կոյսն Յօհաննէս սպասաւորեաց կուսին Մարիամու զերկոտասան ամն, մինչ փոխեցաւ առ կուսածինն որդի: Վեցերորդ՝ զի որդի որոտման կոչեցաւ ի Քրիստոսէ. ոչ որոտումն ամպոյ որ դժընդակ է լսելեաց, այլ որոտումն որ ելից զտիեզերս քաղցր բարբառով քան զամենայն երգս. զի ի վերուստ որոտմամբ աւետարարնեաց զբանն Աստուծոյ ի սկզբանէ ընդ Յոր Աստուծոյ Աստուած գոլով: Եօթներորդ՝ զի առաքեալ էր՝ եւ աւետարանիչ եղև Քրիստոսի. ոչ միայն բանիւ քարոզելով, այլեւ գիրս գրելով եւ արդեամբ ցուցանելով: Ութներորդ՝ զի զբաժակն Քրիստոսի եւ զմկրտութիւնն յանձն առին ըմպել եւ մկրտիլ երկոքին եղբարքն հարազատք. եւ նստիլ ընդաջմէ եւ յահեկէ Նորա ի փառս որդւոյն Աստուծոյ: Իններորդ՝ զի զհրաշալի տեսիլն ետես ի Պատմոս կղզին. որ ոչ փոքր ինչ շնորհ է յայտնութեան վասն կատարածի աշխարհի. եւ գալստեան Նեռինն. զհանգիստն արդարոց. եւ զտանջանս մեղաւորաց: Տասներորդ՝ վասն Նորա ասաց Տէրն. (թե կամիմ զի կացցէ դա մինչեւ ես գամ.) այսինքն, ոչ ի ձեռն հրեշտակի, եւ ոչ ի ձեռն մարդկան մեռանիլ. այլ ես գամ եւ վերափոխեմ զսիրելի աշակերտն իմ առիս: Չայս մեծարանս որպէս առ մայրն իւր սրբոյ երեւեցոյց. այսպէս եւ առ սա արար: Մետասաներորդ՝ զի ծերացեալ մարմնով, եւ քան զամենայն առաքեալսն բազում ժամանակս քարոզեաց ի յերկրի. ի բանտ եւ յաքսորանս կացեալ, ի ծով եւ ի ցամաք, սերմանեաց զբան վարդապետաութեանն. բազում սքանչելիս ցուցեալ. եւ բազում աշխարհս լուսաւորեալ: Երկրորտասաներորդ՝ զի վերացեալ եղև մարմնով յետ մահու. եւ ոչ ուրեք երեւի մարմին Նորա. այլ որպէս Մովսէսին կամ Եղիային՝ վեափոխեցաւ յերկինս: Այս երկրորդ գլուխն վասն մեծութեան սորա: *Երրորդն ասելի է ի գովութենէ Նորին: Թեպէտ ասացեալս ամենայն զմեծութիւն եւ զպատիւ Նորա յայտնէ. սակայն այլ իմն գոյ գովութիւն սրբոյս տեսանել: Նախ՝ ի յանուանէն. զի Յօհաննէս հնազանդութիւն լսի. որ այսպէս հնազանդ էին հրամանին Քրիստոսի եղբարքն. զի յորժամ միանգամ կոչեաց զնոսա, (թողին զնաւն եւ զհայրն իւրեանց Չեբեդոս ի նաւին. եւ զնացին զհետ Քրիստոսի:) Երկրորդ՝ սա որ ձկնորս էր եւ տգետ՝ քան զամենայն իմաստունս աշխարհիս գերազանցեաց իմաստութեամբ. զի Պղատոն զհոգին մարդոյ երբեմն յԱստուծոյ զօրութենէն ասէ. եւ յանչափ բարձրութիւն հանէ. եւ երբեմն յանասնոց կարգս իջուցանէ. եւ ի տունկս եւ ի բոյսս բնակեալ ասէ: Եւ Արիստոտել զնախախնամութիւնն Աստուծոյ մինչեւ յամպս ասէ: Եւ Պիթագորաս զկախարդութիւն յաւելու ի կորուստ հոգւոյ: Իսկ սորայս իմաստութիւն՝ զմարդիկ յերկինս հանէ. եւ զճշմարտութիւնն աստուաաբանէ: Եւ դարձեալ բանք սորա՝ արմատացան անջնջելի. եւ Նոցա ստութեան բանքն՝ եղծեալ կորեան եւ ապականեցան: Երրորդ՝ զոր գոնէ ընդ աղօտ տեսանէին հրեշտակք, եւ սերովսէքն ծածկէին զերեսս ի տեսութենէն Աստուծոյ, սա պայծառացեալ մտօք քան զնոսա ի խորս տեսութեանն Աստուծոյ միջամուխ եղեալ ասէր: (Որ էրն ի սկզբանէ զորմէ լուաք եւ ականատես եղեալ հայեցաք. եւ ձեռք իմացմանց մերոց շօշափեցին զբանն կենաց:) Եւ դարձեալ՝ զոր Նոքա ոչ գիտէին զյաւիտենից ծնունդն հօր եւ առ հօր՝ զի ծածկեալ էր խորհուրդն ի Նոցանէ. իսկ յորժամ ազժոյմամբ հոգւոյն սրբոյ ասաց: (Ի սկզբանէ էր Բանն՝ եւ Բանն էր առ առ Աստուած. եւ Աստուած էր Բանն.) Նոքա ընդ մեզ գիտացին ի Յօհաննու ձայնէն. որպէս ասէ առաքեալն. (ի ձեռն եկեղեցւոյ ուստն զբազմապատիկ

իմաստութիւնն Աստուծոյ:) Չորրորդ՝ որպէս արեգակն ի մէջ երկնից. նոյնպէս եւ սա ի մէջ եկեղեցւոյ ամենեցուն յայտնապէս ծագէ. եւ քան զարեգակն եւս առաւել պայծառ. զի նա երբեմն լուսաւորէ. եւ երբեմն ծածկի. եւ սա միշտ լուսաւորէ: Եւ դարձեալ՝ արեգակն գերեւելի ակունս լուսաւորէ. եւ սա զիմանալի հոգիս եւ զբանական միտս: Վասն որոյ ասէ յերգս. (հրաշագարդեալ երեւեցար ի մէջ սրբոցն որպս յաստեղս արգեակն:) Յինգերորդ՝ ի չորից Եդեմաբուղիս գետաց դրախտին՝ ի սա համեմատի գետն չորրորդ Եփրատես: Նախզի՝ այն գետ ոչ սահմանի տեղեալ որպէս այլքն. նոյնպէս եւ սա ոչ զմարդկութենէն ճառէ որ տեղեալ եւ ազգաւ սահմանի. այլ զառաջին ծնունդն՝ որ տեղեալ անբովանդակելի է. (եւ զազգատոհմն նորա ո՞ պատմէ ըստ մարգարեին:) Եւ դարձեալ՝ գետս այս առանձնակի գնայ՝ եւ մօտ ի Բաբիլօն ի Տիգրիս խառնի: Նոյնպէս եւ սա զաւետարանն որոշի պատմէ. եւ մօտ ի չարչարանսն՝ յնկերսն իւր խառնի: Եւ Բաբելօն խառնակումն լսի. նշանակէ զՅերովդէս եւ զՊիղատոս. որք խառնեալ միաբանեցան ի սպանանել զփրկիչն: Վեցերորդ՝ ի չորից տարերաց աշխարհի՝ սա ի հուրն համեմատի: Նախզի՝ հուրն սիրոյ է նշանակ. եւ նա էր սիրելի աշակերտ Քրիստոսի. եւ նշան սիրոյն՝ որ փարեր զսարսափելի պարանոցան. եւ փափկասուն եղեալ հանգչեր ի լանջսն որպէս սիրելի որդի ի գիրկս ծնողին: Եւ դարձեալ՝ որպէս հուրն մաքրէ եւ լուսաւորէ. նոյնպէս եւ նոքա լուսաւորեցին զհաւատացեալս. եւ մաքրեցին ի ժանկոյ մեղաց: Այլեւ երկնառաք հրովն՝ այրեաց Յօհաննէս զպատկերն Արտիմեդեայ: Եօթներորդ՝ ի չորից կառացն Էզեկիելի՝ ի սա բաղդատի արծուին: Նախ վասն սրատես գոլոյն. եւ դարձեալ՝ զի բարձրաթռիչ է եւ գերամբարձ: Նոյնպէս եւ սա սրատես մտօք բարձրաթռիչ եղեալ, եւ գերամբարձ քան զամենայն դասս իմանալեաց, եւ անտի զանճառելիսն մեզ աստուածաբանեաց: Ութներորդ՝ ի չորից առաքիւնութեանց հոգւոյն՝ արդարութիւնն ցուցանի ի սա: Նախզի՝ արդարութիւնն ոչ մասին, այլ բոլոր անձինն է առաքիւնութիւն: Այսպէս եւ բան քարոզութեան սորա՝ ոչ միոյ ազգի, այլ ամենայն քրիստոնէից է կարգաւորութիւն: Եւ դարձեալ՝ որպէս արդարութիւնն յարմարէ զայլ առաքիւնութիւնս. այսպէս եւ աւետարան սորա՝ յարմարիչ է այլ աւետարանչացն. զի զթողեալս ի նոցանէ զնշանսն՝ կարգաւ պատմէ: Իններորդ՝ ի չորից աւետարանչացն՝ չորրորդ է Յօհաննէսն. զի յորժամ բերին աշակերտքն գերեք աւետարանն՝ Մատթէոսին, զՄարկոսին, եւ զՂուկասուն, եւ Յօհաննէս ընթերցաւ. եւ վկայեաց թէ՛ ճշմարիտ է գրեալս: Բայց այսք՝ տարւոյ եւ կիսոյ վարդապետութիւնք են նշանաց Տեառն. այլ ի մկրտութենէն Քրիստոսի մինչ մատնեցաւ Ովհաննէս ի բանտն՝ պակաս է: Եւ աղաչեցեալ յաշակրտացն, ինքն գրեաց զպակասն չորրորդ. զլուիս աւետարանին: Եւ այս առաւել է քան զայլ աւետարանիչսն: Նախզի՝ զպակասն նոցա գրեաց: Եւ դարձեալ՝ նոքա զմարդեղութիւնն ցուցանեն. եւ նա զաստուածութիւնն յայտնաբանէ: Եւ որպէս առաւել է աստուածութիւնն քան զմարդկութիւնս. նոյնպէս առաւել է Յօհաննէս քան զայլ աւետարանիչսն: Տասներորդ գովութիւն սոցա՝ զի մարմնով սրբութեամբ՝ եւ կոյսք էին երկոքեան. եւ ի մէջ առաքելոցն նախապատիւք. որպէս յայտ է որ ի Թաբօր լեառն տարաւ զՅակօբոս եւ զՅօհաննէս. եւ զնոսա առաքեաց զգատիկն պատրաստել: Եւ սա մերձաւոր նստեր Քրիստոսի. որում Պետրոս ի հեռուստ ակնարկեր հարցանել. եւ նա

մերձաւոր անկեալ զլանջօքն, հարցաներ. (Տեր ո՞վ է որ մատնելոց է գրեգ:) Այսքան եւ առաւել քան զայս՝ գովութեան արժանաւորք են սուրբ եւ երանելի առաքեալքն Յակօբոս եւ Յօհաննէս որպէս ցուցաւ: Այս երրորդ գլուխն: *Տեսցուք զչորրորդ գառաջիկայ բանիս տեսութիւնն որ ասէ: (Դարձաւ Պետրոս եւ տեսանէ զաշակերտն:) Նախ խնդրելի է թէ՛ վասն է՞ր այնքան զինքն պատուէ աւետարանիչն ասելով. (աշակերտն զոր սիրէրն Յիսուս. որեւ անկաւ զլանջօքն Յիսուսի եւ այլն:) Ասէն վարդապետք եթէ՛ զայս ոչ վասն անձին գովութիւն դնէ. այլ զգութն Տեառն առ Պետրոս կամի ցուցանել թէ՛ այնչափ անյիշաչար եղեւ առաքելոյն Պետրոսի յետ ուրացութեանն, որ զայս աշակերտս Տերն այնչափ սիրէր, եւ անկաւ զլանջօքն, ոչ կոչեաց զնա. այլ զՊետրոս: Կամ խորհրդական բան կամեր յայտնել որպէս կատարելոյ. կամ ի խաչ կոչեր զՊետրոս: Եւ զկնի իմն՝ զայն ցուցաներ: Իսկ Պետրոս կամեր զՅօհաննէս ընդ իւր ընկեր առնուլ ի քարոզութիւնն կամ ի մկրտութիւնն: (Ասէ ցՏեր. իսկ սա զի՞:) Ո՞չ գայ ասէ զհետ մեր: (Ասէ ցնա Յիսուս. կամիմ զի կացցէ դա մինչեւ ես գամ:) Աստ գիտելի է՛ որպէս ինքն Քրիստոսի ի կրկին կեանս եւ ի կրկին վարս եկաց մի զհետ միոյ. այսինքն, չարչարանաց ի կեանս այս. եւ հանգստեան եւ անմահութեան զկնի յարութեանն: Նոյնպէս ձեւացոյց ի յեկեղեցիս կրկին կեանս եւ վարս համեմատ սոցա երկոցունց. այսինքն զներգործական եւ զտեսական վարս: Չորեւ յայս երկու աշակերտսս օրինակեաց. եւ զի ներգործականս պարտ է ի չարչարանս եւ ի մահ լինիլ՝ զայն օրինակեաց ի Պետրոս. ասէ՛ (եկ զհետ ի չարչարանս եւ ի խաչ:) Եւ զի տեսական խոկացումն ազատ է ի զգալապէս մարտիրոսութենէ՛ զայն օրինակեաց ի Յօհաննէս. ասէ՛ (կամիմ զի կացցէ դա մինչեւ ես գամ.) այսինքն, մինչեւ գամ եւ առնում զնա առիս: Չայն ցուցանէ թէ՛ տեսական վարքն աստ սկսանի. եւ յորժամ եկեսցէ ի դատաստան՝ փոխի տեսականն ի յաւիտեանական կեանս, եւ անդ կատարեսցի: Չի որպէս սերն ոչ երբեք անկանի. նոյնպէս եւ տեսական վարքն ոչ երբեք անկանի. այս ըստ մտաց տեսութեան: Դարձեալ որ ասէ. (կամիմ զի կացցէ դա մինչեւ ես գամ:) Ասացին ոմանք թէ՛ Յօհաննէս ոչ մեռաւ. այլ վերափոխեացաւ ընդ Ենովքայ եւ ընդ Եդիսիի ի դրախտն զգալի: Եւ այլք ասացին թէ՛ ի գերեզմանի իւր տարրացեալ ննջէ. եւ ոչ է մեռեալ. եւ զի խունկ իբրեւ զմանանայ ելանէ ի գերեզմանէն. ի շնչմանէ նոր լինին ելումն այն: Եւ ի կատարածի վասն Քրիստոսի չարչարանօք մեռանելոց է: Այսպէս մեկնէն զբանն Քրիստոսի թէ (կամիմ զի կացցէ դա՛) կեցցէ մինչ ի կատարած աշխարհիս յորժամ գայցէ ի դատաստան: Եւ զի սուտ է կարծիքս այս. յայտ է ի չորից: Նախզի՛ Քրիստոս կամեցաւ եզական շնորիս եւ բարութիւն ցուցանել Յօհաննու. այլ թէ մարմնով կենդանի է, կամ ի գերագմանի ննջէ, անօգուտ իր է եւ ոչ շնորի: Երկրորդ՝ զի թէ մարմնով կենդանի է եւ ի բացեալ է յերանելի կենացն, եւ ընկերք նորա ի փառս են եւ նա ի տանջանս, է ամենեւին սուտ: Երրորդ՝ զի յայնապէս աւետարանն զայս կարծիսս յանդիմանէ եւ ասէ թէ՛ (ոմանք համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի. եւ ոչ ասաց նմա Յիսուս թէ ոչ մեռանի.) զի ճշմարտապէս մեռաւ: Չորրորդ՝ ի հանգիստն Յօհաննու որ է զիրք աստուածաշունչ՝ յայտնապէս վկայէ թէ՛ (մինչ մեք ուրախ էաք եւ լայաք, աւանդեաց երանելին զհոգին ի ձեռս Աստուծոյ:) Այլ թէ զի՞նչ է ասելն (կացցէ դա մինչեւ ես գամ:) Այս է՛ յորժամ Պետրոս խնդրեաց զՅօհաննէս զի ընկերացի իւրն ի քարոզութիւն

եւ յայլ չարչարանս եւ ի խաչ, ասաց Յիսուս. (կամիմ զի կացցէ դա) այսինքն՝
Նախզի ոչ կամիմ զի քեզ ընկերացի ի քարոզութիւն: Եւ երկրորդ՝ ոչ կամիմ
զի մարտիրոսական մահուամբ կամ խաչիւ վախճանեսցի: Երրորդ՝ ոչ
կամիմ, զի ցաւօք եւ բուռն մահուամբ մեռցի որպէս սովորութիւն է մարդոյ
մահու: Այլ զայլ կամիմ. զի կացցէ դա արտաքոյ այս երիցս որք ասացան. եւ
կացցէ մինչեւ ես գամ. ոչ մինչեւ ես գամ. ոչ մինչ ի կատարծ աշխարհիս. եւ ի
հասարակաց դատաստանն, այլ մինչեւ գամ ես, եւ կոչեմ զնա յերկնային
փառսն ի կենաց աշխարհիս: Չի այսպէս է գրեալ ի վարս սրբոյն Յոհաննու
թէ՝ ի վախճան կենաց նորա երեւեցաւ Զրիստոս եւ կոչեաց զնա ի փառս
երկնային: Իսկ ասելն (քեզ զի՞ փոյթ է.) վասն կրկին պատճառի
յանդիմանեաց զՊետրոս: Նախզի՝ անվայելուչ էր գիտել Պետրոսի զանյայտ
խորհուրդն աստուածային նախախնամութեանն զոր ուներ ի վերայ
Յօհաննու. որպէս գրէ գործքն. (ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս զոր
հայր եղ յիւրում իշխանութեան:) Երկրորդ՝ այսու արգելու զանկարդ
ցանկութիւնս ոմանց՝ որք կամին զի ամենեքեան որք ի կարգս իւրեանց եւ ի
վարս են, եւ զայլոց կարգս արհամարհեն. եւ այս հակառակ է
Նախախնամութեանն Աստուծոյ. որ զանազան կարգս կացոյց յեկեղեցիս.
զոմն տեսական, եւ զոմն գործնական. վարդապետ եւ եպիսկոպոս.
քահանայ եւ աշխարհական. դպիր կամ սարկաւագ. աղօթող կամ պահացող
եւ այլն. վասն այն պարտ է զի ամենայն ոք զիւր գործն կատարեսցէ. որպէս
խրատէ եւ առաքեալն. (յոր կոչումն եւ կոչեցայք՝ ի նմին կացեք.) վասն այն
ասէ. (զի՞ քեզ փոյթ է նա՞ դու եկ զհետ իմ:) Եւ թէ ոք ասիցէ՝ ապա թէ
Յօհաննէս ոչ մարտիրոսացաւ, զի՞նչ լինի բանն որք նոքա յանձն առին
զբաժակն Զրիստոսի ըմպել եւ մկրտիլ ի մահն: Ասեմք նախ եթէ՝ Յօհաննէս
յիւր կողմանէն յօժար էր ի մարտիրոսութիւնն եւ ի չարչարանս վասն
Զրիստոսի. որպէս ի Պատմոս կղզին եւ Յեփեսոս բազում չարչարանս
կրեաց. այլ ի կամացն Զրիստոսի եղել արգելումն որ ասաց. (կամիմ զի
կացցէ դա:) Երկրորդ՝ զի յորժամ յեռս ձիթոյ արկին զնա եւ համբերեաց
յօժարութեամբ՝ մարտիրոսութիւն է նմա: Չի ասեն վարդապետք թէ՝
հաւասար է համբերութիւնն Յօհաննու որ ոչ վախճանեցաւ չարչարանօք, եւ
Պետրոսին որ վախճան էառ խաչիւ: Ապա ուրեմն յայտ է՝ զի ըմպեաց
զբաժակ եւ զչարչարանս որ խոստացաւ վասն Զրիստոսի: Եւ աստ գիտելի
է՝ զի հաւասար պատուեաց զսիրելի աշակերտն իւր զկոյսն Յօհաննէս. եւ
զսիրելի մայրն իւր զսուրբ կոյսն Մարիամ: Եւ այս երեք եղանակաւ: Նախ
որպէս մօր իւրոյ խոստացաւ գալ եւ աւանդեալ զհոգին. այսպէս եւ
աւետարանչիս խոստացաւ. (կամիմ զի կացցէ դա մինչեւ ես գամ:) Երկրորդ՝
որպէս ի փոխումն մօրն ինքն որդին էջ եւ աւանդեաց զհոգին. այսպէս եւ
սրբոյ աւետարանչիս՝ ինքն Զրիստոս եկն եւ երեւեցաւ եւ աւանդեաց զհոգին
առանց ցաւոց: Երրորդ՝ որպէս մարմին սրբոյ կուսին յետ երից աւուրց
վերափոխեալ եղել ի փառս. այսպէս եւ աւետարանչիս մարմինն
վերափոխեալ եղել ի տեղիս ուր ինքն կամեցաւ: Եւ յայտ է յերկուց: Նախզի՝
յորժամ եմուտ ի գերեզմանն, եւ կողմանեցաւ եւ ծածկեցաւ, յետ երից
աւուրց եկին աշակերտքն ի գերեզմանն. եւ ոչ գտին զմարմինն սուրբ:
Երկրորդ՝ յորժամ մեծն Կոստանդիանոս բազում խնդիրս արար, եւ բրեաց
զտեղին շուրջանակի, երեւեցաւ նմա սուրբն Յօհաննէս եւ ասէ. ով
աստուածասեր թագաւոր. մի ընդունայն աշխարտիր. եւ մի խնդրեր զիս

յերկրի. զի Աստուած որ ետ քեզ զթագաւորութիւնդ՝ փոխեաց զիս յերկնային փառս արաքայութեանն: Ապա յայտ է՝ որպէս ինքն Քրիստոս երեք օրեայ յարեալ ի գերագմանէն. եւ զմայրն իւր երեքօրեայ փոխեաց մարմնով. այսպէս եւ զսիրելի աշակերտն իւր երեքօրեայ փոխեաց մամնով: Եւ նախ ընկալան եզական շնորհօք զհասարակաց յարութիւնն որպէս մայրն իւր սուրբ եւ սիրելի աշակերտն. եւ են ի փառս անպատում հոգւով եւ մարմնով անվախճան կենօք: Այս վասն Յօհաննու: *Նմանապէս եւ եղբայր սորին Յակօբոս՝ ոչ ինչ նւագ քան զսա հոգւով եւ մարմնով. զի շերմեռանդ սիրով վառեալ ի սերն Քրիստոսի, խստագոյն յանդիմաներ գտիրասպան ազգն հրէից. եւ նոքա աղաչեցին զՅերովդէս զի սպանցէ զնա: Այս Յերովդէս որդի է Արքեղայոսի. եւ թռն մանկակոտորն Յերովդէի: Այս Յերովդէս է որ գլխատեաց զՈվհաննէս. եւ սա նախատեաց զՔրիստոս առ խաչելութեամբն եւ առաքեաց առ Պիղատոս: Սա շնորհ արար հրէիցն եւ եսպան սրով զՅակօբոս եղբայրն Յօհաննու. եւ ինքն որդնալից եղեալ ի հրեշտակէ սատակեցաւ: Այսպէս Յակօբոս եւ Յօհաննէս հարագատ եղբարք՝ ընկալան զբաժակ չարչարանացն Քրիստոսի. եւ մկրտեցան ի մահն. Յակօբոս սկիզբն ամենայն առաքելոցն եղեւ մահւամբ. եւ Յօհաննէս կատարումն: Եւ սոքա են ի ցեղէն Չաբուղոնի. եւ ակն սոցա է ի լանջս քահանայապետին որ է սոսկեքարն. որ գրեալն է Չաբուղօն: Եւ սոքա մաքրեցան որպէս զոսկի ի հուր. եւ ոսկեղէն բանիւքն իւրեանց՝ գլուխս սրբեցին ի հուր հոգւոյն. գեղեցիկք եւ վայելուչք. ընտրեալք յորովայնէ եւ կոչեցեալք ի Քրիստոս: Եւ ըստ մարմնոյ ազգակիցք էին Քրիստոսի. քեռ որդիք Տեառն կոչեցեալք. եւ ի վերայ այսց ամենայն փառաց՝ զի կուսութեամբ եւ սրբութեամբ կեցին եւ նա հատակեցան վասն Քրիստոսի: Եւ զարժանապէս գովութիւն սոցա եւ զփառս՝ զիտէ միայն ինքն որ պսակօղն է սոցա Քրիստոս. եւ ցուցանէ ի հանդերձեալ աշխարհն որ գալոցն է: *Այլ մեք ապաւինեալ ի բարեխօսութիւն սոցա՝ որք անդառնալի հայ ցուածովք մաղթեն վասն ամենայն աշխարհի եւ սրբոյ եկեղեցւոյ: Չի հայրաբար ինամեսցեն զորբութիւնս մերի մարմնաւոր կեանս աշխարհի, փրկելով զմեզ ի զանազան փորձանաց հակառակին:

Եւ յետ աստեացս՝ արժանի լինիլ սրբամաքուր տեսութեան սրբոց ի փառս արքաիւթեանն ընդաջմէ Քրիստոսի: Որում փառք եւ գոհութիւն եւ երկրպագութիւն մատուցի ամենասուրբ Երրորդութեան յամենայն արարածոց եւ յամենայն լեզուէ յամենայն յաւիտեանս յաւիտենից ամեն:

Նորին քարոզ դարձեալ Յօհաննու եւ Յակօբայ. ի Բանն Ովսէի: (Իբրեւ զառաւօտ պատրաստականգոցուք զնա. եւ եկեսցէ մեզ իբրեւ զանձրեւ կանուխ եւ անագան:) Ովսեայ. 6. 4: (Գլուխ. ԾՁԲ)

Առաւօտ պատրաստական է Տէր մեր Յիսուս Քրիստոս. զի որպէս յառաւօտուն որք կամին եւ պատրաստուն զինքեանս՝ ոչ թաքչի ի նոցանէ լոյս առաւօտուն. այլ ամենեքեան տեսանեն զնա: Այսպէս որք պատրաստեն զինքեանս՝ եւ կամին տեսանել զՔրիստոս հաւատով՝ ամենեցուն պատրաստ է որք տեսանեն զնա եւ լուսաւորին ի նմանէ. որպէս մարգարէն. (ընդ առաւօտս պատրաստ եղեց յանդիման լինիլ քեզ թագաւոր իմ եւ Աստուած իմ:) Այլեւ առաւօտ կոչի Քրիստոս վասն տասն պատճառի:

Նախզի՝ առաւօտն խառնէ. այսինքն, ի լուսոյն եւ ի գիշերոյն: Եւ Տէր մեր
 աստուածային եւ մարդկային բնութեան միաւորութեամբն՝ կոչի մի
 Քրիստոս: Երկրորդ՝ առաւօտն մերժումն է խաւարի. եւ Քրիստոս
 անգիտութեան եւ մեղաց: Երրորդ՝ յառաւօտն տեղի տան ամենայն չարք.
 գողք եւ ւաւազակք եւ այլք: Այսպէս եւ ի ծագմանն Քրիստոսի՝ խոյս ետուն
 ամենայն չարք. այսինքն. անօրէնութիւնք եւ կռապաշտութիւնք եւ դէք:
 Չորրորդ՝ առաւօտն ցնծութիւն է աչաց եւ ուրախութիւն սրտի. եւ Տէր մեր
 եբարձ գտրտմութիւն նախհարցն. (եւ սրբեաց զամենայն արտօսը յամենայն
 աչաց:) Յինգերորդ՝ առաւօտն վախճան է գիշերոյն, եւ սկիզբն աւուրն. եւ
 Քրիստոս լրումն է օրինաց եւ սկիզբն շնորհաց: Վեցերորդ՝ առաւօտն որքան
 յամէ՝ պայծառանայ լոյսն եւ նուազի խաւարն. այսպէս եւ ի տնօրէնութեան
 փրկչին՝ սակաւ սակաւ պայծառացաւ նորս խորհուրդ: Եօթներորդ՝
 առաւօտն հասուցանէ ի լոյս արեգական. եւ Քրիստոս է ճանապարհ որով
 գնամք առ հայր: Ութներորդ՝ ի նոյն բնութենէ լուսոյն է առաւօտն. եւ
 Քրիստոս՝ (որ ետեսն զիս ասէ, ետես զհայր:) Իններորդ՝ առաւօտն է առաջին
 լոյսն. եւ Տէր մեր է առաջին ծագումն ի հօրէ: Տասներորդ՝ զի նուազին
 լուսաւորք. որպէս լուսին եւ աստեղք. եւ յերեւիլ Տեառն մերոյ, նուազեցան
 իմաստք եկրաւորք. այլեւ բանք մարգարեիցն զտեղի առին: Իսկ որ ասէ.
 (իբրեւ զանձրեւ կանուխ եւ անագան:) Անձրեւ զշնորհս հոգւոյն սրբոյ
 նշանակէ. ըստ այնմ, (անձրեւ կամաց պատրաստեցեր ժողովրդեան քոյ
 Աստուած:) Այլեւ կանուխ անձրեւ մարմնապէս զսերմն բուսուցանէ եւ
 աճեցուցանէ. եւ անագանն ծաղկէ եւ պտղաբերէ: Եւ դարձեալ՝ կանուխ
 անձրեւն է ցօղն առաւօտու. եւ անագանն անձրեւն երեկոյի: Իսկ հոգեպէս
 բազում տեսութիւն ունի: Նախ եւ առաջին՝ յերկինս ի դասս հրեշտակաց
 կանուխ եւ անագան անձրեւ՝ առաւօտեան եւ երեկոյի ճանաչումն է ի նոսա:
 Չի տեսանելով ի բանն Աստուծոյ՝ առնուն զառաւօտու գիտութիւն. եւ
 տեսանելով յարարծս՝ առնուն զգիտութիւն երեկոյի: Երկրորդ՝ կանուխ
 անձրեւ նախ իմաստութիւնն Աստուծոյ ի հրեշտակս հեղու. եւ անակաւ ի
 նոցանէ ի մեզ իջանէ. որպէս ուսուցանէ մեծն Դիոնեսիոս: Երրորդ՝ կանուխ
 անձրեւ հեղումն ի մարգարեսն. եւ անագան յետոյ ի յառաքեալսն: Չորրորդ՝
 կանուխ էառ գլուխն մեր Քրիստոս. եւ անագան եհեղ ի յանգամս իւր
 զշնորհս հոգւոյն: Յինգերորդ՝ կանուխ փչեաց յառաքեալսն զհոգին սուրբ
 դրօքն փակելովք. եւ անագան յետ համբառնալոյն ի վերնատունն հրեղէն
 լեզուօք: Վեցերորդ՝ կանուխ առնուն հայրեպետք զշնորհս հոգւոյն սրբոյն. եւ
 յետոյ ինքեանք տան ի ժառանգաւորս եկեղեցւոյ. ըստ այնմ, (որպէս ցօղ զի
 իջանէ ի գլուխ եւ ի մօրուսն Ահարօնի:) Եօթներորդ՝ կանուխ է շնորհն որ ի
 մկրտութիւնն. եւ անագան՝ որ ի խոստովանութիւնն առնումք զթողութիւն
 մեղաց: Ութներորդ՝ կանուխն ծաղկեցուցանէ ի մեզ զհաւատն. եւ անագանն
 պտղաբերէ զգործս բարիս: Իններորդ՝ կանուխ անձրեւ եւ շարժէ յաղօթս
 զբարիս խնդրել. ըստ որում, (հոգին սուրբ բարեխօս լինի յանմռունչ
 հեծութիւնս.) եւ անագան շնորհն ի կատարումն աղօթից՝ յորժամ առնումք
 զխնդրելին: Տասներորդ՝ կանուխ շնորհն է ի կեանս յայս ի սուրբ եկեղեցիս.
 եւ անագան ի հանդերձեալն առ սուրբս եւ սիրեցեալս իւր. ըստ որում
 յարուցանէ եւ յերկնաւոր փառսն հանգուցանէ: Այսոքիկ են հոգեպէս կանուխ
 անձրեւ եւ անագան: *Եւ աստ գիտելի է՝ զի գործ ողորմութեանն եւ գործ
 արդարութեանն Աստուծոյ՝ ի ծագումն արեւուն եւ ի ցօղ առաւօտուն

օրինակի: Եւ այս վասն չորս պատճառի: Նախզի՛ լոյսն եւ ցօղն ի միոյ արեգականէն պատճառին. ուստի յայտ է զի ընդ ծագիլ արեւուն՝ ցօղն իջանէ յերկիր: Այսպէս ի միոյն Աստուծոյ յառաջէն յարարածս գործ արդարութեանն եւ գործ ողորմութեանն Աստուծոյ: Ողորմութիւն է գութն եւ ինամքն Աստուծոյ. եւ արդարութիւն պատժելն եւ խրատելն զմեզ. Երկրորդ՝ որպէս արեգակն ըստ ինքեան զլոյսն ծագէ՝ եւ զցօղն ոչ ըստ ինքեան, այլ ըստ պատահման հեղու՝ զի զվերացեալ գոլորշիսն ի գիշութենէ դարձուցանէ ի յերկիրս: Այսպէս ըստ ինքեան եւ առաջին կամօք զողորմութիւնն ծագէ Աստուած ի վերայ մարդկան. այլ զպատիժ եւ զհատուցումն երկրորդ կամօք ածէ ի վերայ մարդկան յայնմանէ՝ զի մեղքն մեր վերանան որպէս գոլորշիքն. եւ ապա դարձուցանէ զպատիժ մեղացն ի վերայ մեր: Երրորդ՝ զի երբեմն տապ արեւուն զցօղն պակասեցուցանէ. եւ երբեմն ցօղն զչորն կակղացուցանէ: Այսպէս յորժամ ի մեղսն յաճախեմք եւ անզեղջ մնամք, տապ արդարութեանն Աստուծոյ յաղթահարէ զողորմութիւնն եւ պակասէ ի մենջ. որպէս ասեր առ Իսրայել. (զի՞նչ արարից քեզ. Եփրեմ. զի ողորմութիւնն իմ իբրեւ զցօղ առաւօտու պակասեցաւ ի քեն.) եւ յորժամ զղջանամք ի մեղաց. ողորմութիւնն իջանէ առ մեզ եւ ծածկէ զարդարութիւնն Աստուծոյ: Չի չորս եղանակաւ սոքա փոխոխեն զմիմեանս. զի երբեմն ողորմութիւնն զարդարութիւնն ծածկէ. որպէս յարդարացուցանելն զանպարհշտն. եւ յառաջին գալուստն Քրիստոսի: Երբեմն արդարութիւնն ծածկէ զողորմութիւնն. որպէս ի պատիժ մանկանց առանց մկրտութեան մեռելոց. եւ յերկրորդ գալուստն Քրիստոսի: Եւ երբեմն երկոքինն ծածկին. որպէս ի նեղութիւնս իւրաքանչիւր արդարոց եւ անմեղաց. եւ ի հիւանդութիւնս տղայոց: Իսկ երբեմն եկոքեանն յայտնին. որպէս ի հատուցումն արդարոց. եւ ի պատիժ անարգեցելոցն: Չի զնոսա փառաւորէ ի վեր քան զարժանն. եւ զնոսա պատժէ սակաւ քան զարժանն: Այսքիկ ողորմութեանն են: Այլ իւրաքանչիւրոցն՝ հատուցանէ ըստ արժանեացն. այսինքն, բարեացն բարիս. եւ չարացն չարիս. այսոքիկ արդարութեանն են: Չորրորդ՝ որպէս լոյսն եւ ցօղն յառաւօտուն ի միասին երեւին. այսպէս ողորմութիւնն եւ արդարութիւնն Աստուծոյ ծագեաց ի մեզ, յորժամ Բանն Աստուծոյ մարմնով երեւեցաւ ի յերկրի. զի ողորմութեամբ իւրով ազատեաց զմարդիկ ի մեղաց եւ ի դժոխոց. եւ արդարութեամբ դատապարտեաց զթշնամին սատանայ եւ պատժեաց. ըստ այնմ, (այսուհետեւ իշխան աշխարհիս դատապարտեալ է. եւ ընկեցի արտաքս:)*

Դարձեալ՝ տեսցուք զբանս ի սուրբ առաքեալսն: (Որպէս զառաւօտ պատրաստական:) Եւ զի առաւօտն նշանակէ զլոյսն. որպէս ասէ Տէրն աշակերտացն իւրոց. (դուք էք լոյս աշխարհի:) Եւ զի լոյսս զգալի՝ բազում բարութիւնս ունի. վասն որոյ զնոսա լոյս իմանալի կոչեաց: Եւ ասեմ տասն եղանակաւ: Նախզի՛ լոյսն հալածէ զխաւար. նոյնպէս եւ առաքեալքն հալածեցին զխաւարն անգիտութեան եւ անհաւատութեան. եւ լուսով աստուածագիտութեան եւ հաւատոց՝ լուսաւորեցին զմարդիկ: Երկրորդ՝ լոյսն զտրտմութիւնն փարտէ եւ ուրախացուցանէ. այսպէս եւ առաքեալքն զտրտմութիւն մեղաց փարատեցին յաշխարհէ. եւ ուրախացուցին զմարդիկ արդարութեան լուսովն: Երրորդ՝ լոյսն զգազանս եւ զգողս փախուցանէ. եւ առաքեալքն զչար գազանն սատանայ փախուցին ի մարդկանէ: Եւ զի գող է թշնամին մեր՝ որ երբեմն ծածկաբար կողոպտէ զբարիսն մեր. եւ զազան՝ որ

յափշտակէ զհոգիս. ըստ այնմ, (ոսոյն ձեր սատանայ՝ իբրեւ զամիւծ գոչէ.) շրջի եւ խնդրէ թէ՛ զո՞ կլանիցէ: Չորրորդ՝ լոյսն զճանապարհորդս եւ զայլ արւեստաւորս յիւրաքանչիւր գործս յորդորէ. այսպէս եւ առաքեալքն յորդորեցին զմեզ ի ճանապարհս աստի կենաց. զոմանս յիմաստութիւն. զոմանս ի ի մարտիրոսութիւն, եւ յայլն: Յինգերորդ՝ զընտիրս եւ զխոտանս որոշէ լոյսն. այսպէս եւ առաքեալքն զբարիս եւ զչարս որոշեցին ի միմեանց. եւ ուսուցին մեզ խոտորիլ ի չարէ եւ առնել զբարի: Վեցերորդ՝ զբարեկամս եւ զթշնամիս ցուցանէ լոյսն. այսպէս եւ առաքեալքն զհրեշտակս՝ որք բարեկամք են մեզ ի կեանս եւ ի մահ. եւ զսատանայ որ թշնամի է մեզ ի սկզբանէ եւ առ յապայ՝ նոքա մեզ ծանուցին թէ՛ պարտ է մեզ պատերազմիլ ընդ սատանայ եւ հետեւիլ հրեշտակաց սրբոց: Եօթներորդ՝ լոյս միջնորդով զայլս լուսաւորէ. որպէս ընդ օդ եւ ընդ ապակի. այսպէս եւ առաքեալքն ինքեանք քարոզեցին. եւ յետոյ հայրապետօք եւ վարդապետօք եւ սուրբ գրովք իւրեանց լուսաւորեցին զաշխարհս. որպէս ակետարանն ի Յօհաննէ. եւ սքանչելի տեսիլն. եւ գործք առաքելոցն. եւ թուղթն կաթողիկէից եւ այլքն: Ութներորդ՝ ի թանձր եւ ի կարծր սիւթն անգործ մնայ լոյսն. որպէս ի քար եւ ի հող. այսպէս եւ առաքեալքն որք լոյսք եղեն աշխարհի՝ նոքա որք խստացեալ էին անհաւատութեամբ եւ թանձրացեալ մեղօք՝ անգործ մնացին: Եւ Տէրն ասէր. (որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:) Չի որք ընտրեալք էին ի սկզբանէ՝ կոչեցան ի հաւատս եւ արդարացան. եւ խոտեալքն ոչ կոչեցան եւ ոչ արդարացան: Իններորդ՝ լոյսն զբովանդակ փորուածս երկնից լնու. այսպէս եւ առաքեալքն զերկնաւոր միտս մարդկան լուսաւորեցին. այլեւ զհրեշտակս երկնից. զի ընդ ասել աստուածաբանին. (ի սկզբանէ էր Բանն՝ եւ Բանն էր առ Աստուած. եւ Աստուած էր Բանն.) զայսպիսի ծածկեալ խորհուրդս ոչ գիտէին հրեշտակք. այլ յառաքելոցն ուսան. եւ այլ բազում ինչ. ըստ այնմ, (հրեշտակք յերկեղեցւոյ ուսան զբազմապատիկ զիմաստութիւնն Աստուծոյ:) Տասներորդ՝ լոյսն ըստ չափու կարողութեան զաչս լուսաւորէ. այսպէս եւ առաքեալքն այնչափ քարոզեցին եւ գրեցին, որքան միտք մարդկան կարացին տանիլ. եւ զայլն լռութեամբ պատուեցին. ըստ այնմ, (կարծեմ թէ աշխարհսս ոչ կարէ տանիլ զգիրսն որք եթէ գրեալք էին:) Յաղագս այսորիկ՝ առաւօտ եւ լոյս կոչեցան առաքեալքն ի Տեառնէ: *Իսկ որ ասէ (եկեսցէ մեզ իբրեւ զանձեւ:) Ամպ կոչին մարգարէքն ի հնումն. եւ առաքեալքն ի նորումս. ըստ այնմ, (հրաման տաց ամպոց իմոց՝ զի մի տեղացեն յայգի իմ:) Իսկ անձրեւ Բանն Աստուծոյ եւ գիտութիւնն. զի առին նոքա յանեզրական ծովէ իմաստիցն Աստուծոյ. եւ հողմով հոգւոյն սրբոյ՝ անձրեւեն ի բանական երկիր ազգի մարդկան զշնորհս գիտութեանն եւ իմաստութեան Աստուծոյ: Եւ որք ընդունին զնոսա՝ դալարին եւ զուարճանան հոգւով. եւ տան զծաղիկ հաւատոց եւ զպտուղ բարեաց գործոց. ըստ այնմ, (ընդունելի լիցի որպէս զանձրեւ բարբառ իմ: Որպէս անձրեւ ի վերայ խոտոյ:) Իսկ որ ասէ. (իբրեւ զանձրեւ կանուխ եւ անագան:) Այս ի վերայ առաքելոցն զանագան կերպիւ է իմանալ: Նախզի՝ կանուխ անձրեւ էր առաքեալն Յակօբոս. զի յառաջ նա ակետարանեաց զՔրիստոս հրէիցն. եւ անագան անձրեւ Յօհաննէս. զի յետ երկոտան ամաց զկնի ննջման Աստուածամօր կուսին՝ ապա զնաց Յեփեսոս. եւ ակետարանեաց զՔրիստոս: Երկրորդ՝ կանուխ անձրեւ էր առաքեալն Յակօբոս կատարմամբն. զի ի նոյն ամի յետ չարչարանացն Քրիստոսի՝ որպէս յանձն է

առ ըմպել զբաժակն Զրիստոսի՝ ըմպեաց. զի հերովդէէ սրով գլխատեալ եղել նախ քան զամենայն առաքեալսն. եւ մարմինն ընկեցեալ ի ծով, գնաց յարեւմուտս ի սպանիա ի վիճակն իւր. եւ այնպէս հաւատացին նոքա ի Զրիստոս: Եւ անագան՝ աստուածաբանն Յօհաննէս. զի յետ եօթանասուն եւ երկու ամի վերանալոյ փրկչին՝ ծերացեալ ալեօք փոխեցաւ ի Զրիստոս ի վիճակն իւր Յեփեսոս: Երրորդ՝ կանուխ անձրել Էին այլ երեք անտարանիչքն. զի Մատթէոս զկնի վերանալոյն Զրիստոսի՝ յետ եօթն ամի գրեաց զաւետարանն յանտիոք քաղաքի եբրայեցւոցն ազգի: Եւ Մարկոս յետ տասն եւ հինգ ամի՝ աղէքսանդրացւոցն գրեաց հրամանաւն Պետրոսի կարճատօտ բանիւ. որպէս վարդապետն իւր: Եւ Ղուկաս յետ քսան եւ երկու ամի ի Դոմ գրեաց զաւետարանն իւր հրամանաւն Պողոսի առատ եւ երկար բանիւ. որպէս վարդապետն իւր: Եւ սոքա այսպէս կանուխ գրեցին զաւետարանն Զրիստոսի: Իսկ աւետարանիչն Յօհաննէս՝ անագան քան զամենեսեան յետ յիսուն եւ երեք ամի վերանալոյ Տեառն. յորժամ արձակեցաւ ի Պատմոս կղզւոյն՝ յունաց բարբառովն Յեփեսոս քաղաքի գրեաց զաւետարանն սուրբ: Չորրորդ՝ կանուխ անձրել՝ ըստ պսակացն. զի առաքեալքն ամենայն՝ եւ եղբայրն իւր Յակօբոս՝ նախ վախճանեցան. եւ յառաջ պսակեցան հոգւով յերկինս: Իսկ աւետարանիչն Յօհաննէս՝ յերկար ժամանակս յերկրի կացեալ, եւ բազում եւ զանազան չարչարանս կրեալ ի կռապաշտիցն ի գեօղս եւ ի քաղաքս, ի կղզիս եւ ի ցամաքի, եւ ապա անագան եւ յետոյ քան զամենայն առաքեալսն հանգուցեալ պսակեցաւ ի Զրիստոս: Հինգերորդ՝ նոյն ինքն սուրբն Յօհաննէս կանուխ ընկալաւ զհանգիստ հոգւոյն. զի յաւուր կիրակէի իջեալ ի շիրիմն, աւանդեաց զհոգին ի ձեռս Զրիստոսի եւ հանգեաւ հոգւով. որպէս յայտ է ի հանգիստն Յօհաննու աւետարանչին: Եւ ապա յետ երեք աւուրց՝ վերափոխեալ մարմնով պսակեցաւ անթառամ պսակաւն: Յաղագս այսորիկ ասէ մարգարէն Ովսէ: (Իբրել զանձրել կանուխ եւ անագան:) Որել շնորհն եւ ողորմութիւնն Զրիստոսի՝ որ այնպէս զնսա ի հանգիստ ժամանեցոյց, եւ զմեզ արժանաւորեսցէ աղօթիւք նոցա եւ բարեխօսութեամբ եւ աւուրս շնորհիւ. կաթիլ մի մխիթարութեան անձրելաց նոցին՝ տեղացէ յոգի եւ ի մարմինս մեր անյիշաչար գոլով գործելոցն ի մենջ. եւ պատսպարան ի ժամանակս կենաց մերոց: Աստ ժամանել սուրբ եւ կենսունակ բազմաբաշխ եւ մեծապարգել տօնի աստուածային ծննդեանն նորա ի սուրբոյ կուսէն: Եւ յետ աստեացս ելանելոյ՝ ի հող եւ ի հոգիս մասնաւոր լինիլ յարութեան շնորհացն եւ փառաց ողորմութեանն եւ գթութեանն Զրիստոսի Աստուծոյ մերոյ: Որով եւ ընդ որում Հօր միանգամայն եւ ամենասուրբ Հոգւոյն՝ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ եւ երկրպագութիւն, եւ անլռելի գոհութիւն եւ բարեբանութիւն յամենայն արարածոց եւ յամենայն լեզւէ. այժմ եւ առ յապայ եւ բոլոր յաւիտենիւ ամէն:

Նորին վասն միայնակեցաց: (Որ ոչ բողու զհայր կամ զմայր եւ այլն:) Մարկ. 10. 29: (Գլուխ. ԾՁԳ)

Իսկ վերագոյն կարգ սոցա որք են միայնակեացք՝ որք կոչին կամարարք՝ ըստ գործոյն ունին զանունն. զի ուրացեալք են զկամաս իւրեանց. եւ առնեն զկամս Աստուծոյ եւ զառաջնորդին: Արդ՝ վասն

միայնակեցաց՝ այսինքն, որք են մաքուր եւ պարզ եւ հոգեւոր՝ կոչին միայնակեացք. զի ի կենցաղական կենաց հրաժարեալք են: Նախ կոչի միայնակեաց՝ զի միայն կեայ, ուրացեալ զհայր եւ զմայր, զկին եւ զորդիս ըստ հրամանի Տեառն: Երկրորդ՝ զի միայն կայ ի յաղօթելն առանձնակի. զի հասարակ աղօթքն՝ քահանայից է եկեղեցւոյ: Երրորդ՝ զի միայնացուցեալ զմիասն ի զգայարանացն, միայն յԱստուած հայի, թողեալ զայլ արարածս արտաքոյ: Չորրորդ՝ զի միայն զհոգին կեցուցանէ. եւ զմարմինն սպանանէ: Զինգերորդ՝ զի ի կրկին կենաց՝ միայն զանտի կեանսն ստանայ եւ ոչ զայս. ըստ այնմ, (ինձ աշխարհի ի խաչ ելեալ է. եւ ես աշխարհի:) Վեցերորդ՝ զի մին կամս ունիցին ամենեքեան. այսինքն, զառաջնորդին եւ զԱստուծոյ: Արդ՝ սոքա միայնակեացք՝ կրկին իրօք բարձրագոյնք են քան զամենայն կարգս լուսաւորելոց եւ մաքրելոց: Նախզի՝ մաքրելոց դէմքն առ սարկաւազն է. եւ լուսաւորելոցն առ քահանայն. իսկ սոցա կատարելոցս՝ առ քահանայապետն. թեպէտ ի քահանայէն առնուն զկարգ եւ զօրհնութիւնս: Երկրորդ՝ զի ամենեւիմբ մաքրեալք են. այսինքն, մտօք՝ հոգւով՝ եւ մարմնով. եւ ոչ միայն տեսութեամբ լուսաւորեալք, այլ ի գերագոյն հանճարս եւ ի յիրս խորհրդոյն բարձրացեալք եւ հաղորդեալք: Արդ՝ սոքա առ հասարակ անուամբ կոչին արեղայք. որպէս կոչեմք քահանայ: Այլ բաժանին յերկու դասս: Ոմանք են մոնոզոնք. եւ ոմանք են կրօնաւորք եւ սքեմաւորք: Արդ՝ մոնոզոնք են ներքին եւ փոքունք. որպէս սարկաւագունք. որք միայն խոստանան զսրբութեամբ եւ զկուսութեամբ կեալն: Եւ սքեմաւորք են վեհագոյնք. որպէս երիցունք. որք ոչ միայն զկուսութիւնն յանձն առնուն, այլեւ ի մսամոլութենէ եւ ի գինըմպութենէ պահօք եւ տքնութեամբ չարչարին. եւ ի խաչ հանեն զանձինս վասն Քրիստոսի: Արդ՝ նուիրեալքն ի կանոնս ինչ գան ի դուռն եկեղեցւոյն առ քահանայն հոլանի եւ անգօտի, բաց զխով եւ գօտելոյծ: Որ ցուցանէ թէ՛ զսեր աշխարհիս ի բաց եմ լքեալ յանձնէ. եւ մերկացեալ յամենայնէ. եւ ոչ ունեմ պատրուակ ինչ մարմնական ծածկոյթ մեղաց: Եւ տանին յեկեղեցին մոմեղէն ի ձեռս. ոչ մի ոտամբ ծունր կրկնեալ որպէս սարկաւագն. եւ ոչ երկու ոտիւք որպէս քահանայն. եւ ոչ աւետարան ի վերայ գլխոյ որպէս եպիսկոպոսին: Այլ մերձ կանգնին յետոյ քահանային. եւ զգլուխն ի խոնարհ ունին: Չայս ցուցանէ թէ՛ ոչ ունին կարգս յայլս ներգործել. ոչ մաքրել զայլս որպէս սակաւագն. եւ ոչ լուսաւորել որպէս քահանայն. եւ ոչ կատարել որպէս եպիսկոպոսն: Այլ ինքն առ ինքեան ներգործել եւ կրել ի յինքն. եւ ոչ ի յայլս: Ապա ուրեմն միայնակեացն ոչ իշխեւ ավետարանն ընթեռնուլ. եւ ոչ բուրվառով խունկ արկանել. եւ ոչ մաքրել. եւ ոչ քառաոգել. եւ ոչ խաչ տալ. եւ ոչ որ ինչ քահանայիցն է գործ. եւ ոչ գաւազան առնուլ կամ իշխել հրամանաւ քահանայից կամ սարկաւագաց: Իսկ մերձ քահանային՝ ցուցանէ թէ, բազում իրօք հեռացեալ է յաշխարհական կենաց. եւ մերձ կացեալ քահանային: Պարտ է նմանապէս քահանային աղօթել, պահել, եւ աստուածատեսակ լինիլ. եւ ապա դառնայ քահանայն ի նուիրեալն եւ հարցանէ զնա: Նախ հրաժարիլ յամենայն կենցաղականաց. եւ ապա յանձն առնուլ զամենայն լուծ պատուիրանաց. եւ նախ խոստովանի եւ յանձն պահել զամենայն: Եւ թեպէտ բազումք են հրաժարականք ըստ մասին. սակայն յերիս գլխաւորին: Նախ ի սիրելեաց հրաժարիլ. այսինքն, ի ծնողաց, ի ծննդոց. եւ յեղբարց. որպէս հրամայեաց Քրիստոս վասն այսպիսեացս զկանոնն. (եթէ ոք ոչ

ուրանայ զհայր եւ զմայր եւ զայլս, եւ առնու զխաչ եւ զայ զհետ իմ, ոչ է ինձ արժանի:) Երկրորդ՝ ի մարմնական ընչից, ի հայրենեաց. ի վաճառաց եւ յայլոցն. (զի ոչ կարէք ասէ Աստուծոյ ծառայել եւ մամոնայի:) Երրորդ՝ հրաժարիլ ի հեշտութեանց զգայարանացս. այսինքն, յուտելոյ՝ յըմպելոյ՝ ի ննջելոյ ի տեսութեանց եւ ի զգեստից. ի ծուլութեանց. ի ձանձրութեանց, եւ յայլոցն: Այսոքիկ մարմնական հրաժարելիք: Իսկ հոգեկան: Նախ ի կամաց. զի ոչ իցէ Տէր կամաց իւրոց: Երկրորդ՝ ի չար խորհրդոց զմիտս անզբաղ պահեսցէ յամենայն ցնորից: Երրորդ՝ ի հպարտութեանց՝ ի սնափառութեանց՝ ի նախանձու՝ ի գիւնոյ՝ յատելութեանց, եւ յայլոցն: Յայսքանեացս հրաժարի առաջի քահանային եւ ուխտէ Աստուծոյ: Եւ քահանայն խաչակնքէ եւ դրոշմէ իբր Զրիստոսի եղեալ. ապա առնու զկտրոցն ինքնին ձեռամբ եւ տայ ի քահանայն. եւ նա կտրէ զհերս նորա խաչանման ի չորս տեղոջ. ի ճակատն. ի գագաթն. ի յիշողականն. եւ մերձ ի լսելիսն: Եւ մաքրեն զգագաթն բոլորապէս: Եւ այն է խորհուրդն՝ որ ասացաւ յարարողութիւնս քահանային. այսինքն, կտրեալ զամենայն ցանկութիւնս եւ զգեղեցկութիւն մարմնոյ. եւ զպճնիլն ոչ ընդունիլ. զի պճնիլն՝ զցանկութիւն ախտիցն որ ի սիրտն է՝ յայտնի առնէ: Իսկ զգեցուցանել հանդերձ ըստ պատշաճին զլզլեկ եւ խոշոր՝ ցուցանէ թէ՛ որպէս փափուկ զգեսան ի խոշորն փոխեցաւ. նոյնպէս եւ զվարս աշխարհական կենաց ի խիստն եւ ի խոշորն փոխարկեսցէ: Արդ՝ մոնոզոնն ունի Ե զգեստ: Նախ քուսիթայն ի գլուխն որ է ծֆուլն. որ նշանակէ զշնորհն Զրիստոսի ի գլուխն իջեալ. եւ բոլորն՝ զի բոլորապէս զհոգի եւ զմարմին պահպանէ շնորհքն Աստուծոյ: Երկրորդ՝ հանդերձն նեղ ստորոտիք՝ որ է խոշոր վարքն եւ նեղ եւ անծուկ ընթացքն: Երրորդ՝ գօտին ի զսպումն ցանկութեան երիկամանցն: Չորրորդ՝ հողաթափ յոտս՝ նշանակ արիութեան: Զինգերորդ՝ քառակուսի թիկնոցն՝ նշանակ խաչին: Իսկ կրօնաւորն որ է սքեմաւորն՝ ունի չորս զգեստ աւելի. այսինքն, զկնկուղն առանց խաւոյ. որ սպիտակ ծիրն. որ նշանակէ զծածկելն ամենայն զգայարանց. եւ զզսպելն զմիտս յերկրէ. եւ միայն յերկինս զուղղելն: Այլեւ ունի զսքեմն ի վերայ ուսոյն խաչանման. որ նշանակէ զլուծ պատուիրանին եւ զխաչն Զրիստոսի յուս իւր բարձեալ: Այլեւ զայծենի մշակեակն որպէս Ովհաննու եւ Եղիայի. որ է բնական զգեստ տուեալ մարդկայինս ազգի: Այլեւ զաղաբողոն նափորտն վերափորտն վերարկեալ ծածկոյթ մինչեւ ի ստորորտն. որ նշանակէ զսէր եւ զխոնարհութիւն՝ որ ծածկոյթ եւ զարդ է ամենայն առաքիւնութեանց: Այս հասարակ կարգաւիրացն է զգեստ: Այլ որք գերագոյնքն են եւ խստակրօն ճգնութեամբ՝ որպէս հարքն եգիպտացիք. թեզանատ բաճկոնաւ, եւ բոկ ոտիք ժուժկալին. իբր զնթացս երկրաւորն եւ զգործս մարմնական ի բաց եմ մերկացեալ: Այս առաջին զանազանութիւն. մոնոզանց եւ սքեմաւորաց: Այլեւ դարձեալ՝ ունին զանազանութիւն. զի մոնոզոնն ի մէջ եկեղեցւոյ մերձ ի դուռն առնու զկարգ. իսկ սքեմաւորն՝ մերձ ի բեմն առաջի սրբոյ սեղանոյն: Է եւ երրորդ զանազանութիւն. զի սքեմաւորն մերձ քահանային ի ներքին բեմն ելանէ. եւ ձեռօք իւրովք հաղորդի եւ մոնոզոնն ոչ: Այլեւ գիտելի է՝ թէ յաշխարհականց գայցէ ի կրօնաւորութիւն, զայսպիսի կարգս կատարելի է: Իսկ թէ յերիցանց կամ ի սարկաւազաց գայցէ ի կրօնաւորութիւն, ոչ կատարի այս կարգս ի վերայ նոցա. զի ունին զգերագոյնն կարգ. այլ միայն զհանդերձս փոխեսցեն:

*Եօթն բարք են մարդկան՝ որք Աստուծոյ հաճոյ են եւ ի մարդականէ գովին. որք են այսոքիկ: Առաջինն խոնարհութիւն. որ է հնազանդութիւն եւ հոգեւոր աղքատութիւն: Երկրորդն հեզութիւն. որ է երկայնամտութիւն եւ ընտրողութիւն եւ խորագիտութիւն: Երրորդն երկիւղածութիւն. որ է սրբականութիւն. եւ հաւատարմութիւն. եւ ի չարեաց օտարութիւն: Չորրորդ ողորմածութիւն. որ է մատակարարութիւն. եւ գթածութիւն. եւ Աստուծոյ նմանութիւն: Զինգերորդ սիրողութիւն. որ է կտարելութիւն. եւ միամտութիւն. եւ ողջախոհութիւն: Վեցերորդն անոխակալութիւն. որ է դիւրադարձութիւն. եւ լսողութիւն. եւ պատուիրանապահութիւն: Եօթներորդն ժուժկալութիւն. որ է քաջ նահատակութիւն. եւ յուսով առաքինութիւն. եւ յօժարութեամբ մարտիրոսութիւն: Իսկ հակառակ սոցին եօթն բարք են ի մարդն. որք ընդդէմ են ճշմարտութեան եւ քարոզութեան. որք են այսոքիկ: Առաջինն ամբարտաւանութիւն. որ է պերճութիւն. եւ սնափառութիւն. եւ դիւական արուեստականութիւն: Երկրորդն բարկացողութիւն. որ է սպանութիւն. եւ հրաբորբոք թշնամութիւն. եւ լեզուի անկարգութիւն: Երրորդն աներկիւղութիւն. որ է լրբութիւն. եւ յանդգնութիւն. եւ անամօթիւն: Չորրորդն անողորմածութիւն. որ է կռապաշտութիւն. եւ յափշտակութիւն. եւ ազահութիւն: Զինգերորդ եղբայրատեցութիւն. որ է զազանութիւն. եւ ստահակութիւն. եւ հակառակութիւն: Վեցերորդն ոխակալութիւն. որ է միշտ խռովութիւն. եւ սնտի խաբէութիւն. եւ դարանակալ կեղծաւորութիւն: Եօթներորդն անհամբերութիւն. որ է անյուսութիւն. որովայնամոլութիւն. եւ ուրացողութիւն: Եւ փրկողին զմեզ ի չարեաց եւ տուողին մեզ զգանազան պարգէս բարեաց Յիսուս Քրիստոս Աստուծոյ մերոյ, փառք պատիւ եւ գոհութիւն եւ երկրպագութիւն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Քարոզ վասն եկեղեցւոյ. ի Բանն որ ասէ: (Յեկեղեցիս բարիբանեցեք զԱստուած. եւ Տէր յաղբերացն իսրաէլի:) Սող. 67. 26: (Գլուխ. ԸՁԴ)

Նախ պարտ է եւ արժան մեզ իմանալ թէ՛ քանի՞ է նշանակութիւն բանիցս. եւ ապա մխիլ ի քննութիւն սոցա: Առաջին՝ վասն Է՞ր յեկեղեցիս աղօթեմք: Երկրորդ՝ զշինողն ժողովուրդ եւ զշինեալն ի քարանց՝ մի անուամբ եկեղեցի կոչեմք: Երրորդ՝ թէ վասն Է՞ր իգական անուամբ կոչի մերս եկեղեցի: Չորրորդ՝ վասն Է՞ր կոչի մերս եկեղեցի դուստր վերնոյն Սիօնի: Զինգերորդ՝ վասն Է՞ր կոչի քաղաք վերինն Սիօն: Վեցերորդ թէ՛ եկեղեցի երկնի է ի վերայ երկրի: Եօթներորդ՝ զի՞նչ նշանակէ սրբարան բեմբն. եւ այլն ըստ կարգի: *Եկեսցուք յառաջին գլուխն եւ ասացուք թէ՛ վասն Է՞ր յեկեղեցիս աղօթեմք: Ասեմք զայս վասն բազում պատճառի: Նախզի՛ յակեղեցին է զգուշաւոր է պատշաճ խօսակցութիւն Աստուծոյ. զի յորժամ արտաքոյ սորա լինիմք՝ մտածեմք թէ, հեռի եմք յԱստուծոյ: Եւ առ այս կարծիս՝ անզգուշ լինիմք յաղօթելն խառնելով ի սաղմոսն եւ յաղօթսն գործ. եւ ընդ գործն շատախօսութիւն. ուստի ծնանի դատարկաբանութիւն. եւ անտի խեղկատակութիւն. եւ անտի զեղիսութիւն մտաց եւ այլն. լեալ այլուհետեւ փոխանակ հաշտութեան Աստուծոյ աղօթիւք՝ կրկին խռովութիւն: Երկրորդ՝ զի թեպէտ Աստուած յամենայն տեղիս է հաւատամ եւ ես. բայց մեք ոչ յամենայն տեղուջ մերձ առ նա. այլ միայն աստ հաւատամ

կացեալ առաջի նորա. որով պտուղ հաւատոց՝ տամ զգգուշութիւն մարմնոյս եւ զայլն: Որպէս թագաւորն իշխանութեամբն՝ է յամենայն աշխարհն որք ընդ իշխանութեամբն. բայց որք ցանկան տեսութեան նորա՝ ի թագաւորական պալատն տեսանէն զնա: Երրորդ՝ զի յորժամ զգուշանամք մարմնով ի մէջ եկեղեցւոյ, օրըստօրէ առաջնորդ լինի մտացս մաքրութեան, առ ի կարօղ լինելոյ եւ սմա մտանել յիմանալի կայանսն Աստուծոյ. ըստ որում մարմինս ի զգալիսս: Չորրորդ՝ զի յորժամ ամ մտանեմք յեկեղեցի որ է տուն Աստուծոյ, ցուցանեմք հարազատապէս զսերն որդիական առ Տէրն տանս եւ բնակիչն. եւ նովաւ զպատուիրանին պահպանութիւն. եւ ապա առանց երկիւղի՝ զհրեշտակ աղօթիցն առաքեմք առ նա. եւ ապա լինի խաղաղութիւն հօրն առ որդիս. եւ ապա ծանօթանամք միմեանց. եւ ապա արժանաւորիմք խօսիլ ընդ նմա ի խորոց սրտէ. եւ ապա լինի հաշտութիւնն Աստուծոյ առ մեզ. եւ ապա պարգեւն եւ շնորհն Աստուծոյ առ մարդս: Իսկ որք ոչ մտանէն ի տունս Աստուծոյ, ունին զերկիւղ ծառայական որ ընդդէմ է այսմ ամենայնի: Հինգերորդ՝ պարտ է մեզ այնպէս պատրաստ եւ զգուշ լինիլ ի մէջ եկեղեցւոյ առաջի Աստուծոյ՝ որպէս ծառայ թագաւորին ի մէջ տաճարին առաջի արքային: Նախզի՝ նա կանգնի առաջի արքային եւ ոչ նստի. նոյնպէս եւ մեզ պարտ է ոչ նստիլ ի մէջ եկեղեցւոյ, այլ կանգնիլ. իբր թէ արի եմք եւ ոչ ընկղմեալ ի մեղս: Երկրորդ՝ զի նա ոչ դնէ եւ վերացուցանէ զոտսն. այլ ի վերայ երկուցն հաստատ է. իբր թէ հոգւովս եւ մարմնովս պատրաստ եմ ի կատարել զհարմանս քո: Երրորդ՝ զի կապէ զձեռնս ի վերայ կրծիցն. որպէս թէ չեմ իշխան, այլ ընդ իշխանութեամբն. նոյնպէս եւ մեք ի մէջ եկեղեցւոյ արասցուք այսպէս. որպէս թէ չեմք իշխան ի վերայ օրինացն լուծանելոյ. այլ ի ներքոյ օրինացն եւ հրամանացն Աստուծոյ. զի զոր ինչ ասեն՝ առնելի է մեզ: Չորրորդ՝ զի ոչ առնու գաւազան. որպէս թէ նշան ծուլութեան, կամ իշխանութեան. այսպէս եւ մեք արասցուք: Մի սիրել զհեշտութիւն եւ զծուլութիւն. որպէս ասաց Մովսէսի. (ընկեա զգաւազանդ.) այսինքն զծուլութիւնդ: Հինգերորդ՝ զի հանապազ զգգեստս ինչ թագաւորին արկեալ զուսովն՝ կանգնիլ առաջի նորա. այսպէս եւ քահանայից ոչ է պարտ առանց փիլոնի մտանել յեկեղեցիս առաջի նորա. որ է զգեստ՝ որով թագաւորեաց ի վերոյ մահու Տէր մեր յաւուր փեսայութեան իւրոյ: Վեցերորդ՝ զի ոչ թիկնի յանկիւնսն կամ յորմս արքայարանին. այլ ի մէջն ընդդէմ երեսացն կանգնի. նոյնպէս եւ որ մտանէ ի տունն Աստուծոյ՝ չէ պարտ թիկնիլ ի հիմունս եկեղեցւոյ. կամ ելանել յերեսացն Աստուծոյ ի խորանս աղօթից պատճառաւ: Եօթներորդ՝ զի ոչ գործէ ինչ բաց ի ծառայութենէն. նոյնպէս որ մտանէ յեկեղեցի յեւ յաղօթարանս՝ չէ պարտ գործել զգործ մարմնական. այլ սպասաւորել Աստուծոյ. զի որք գործեն՝ առաւել սիրեն զմարմնական գործն քան զԱստուած: Ութներորդ՝ զի ոչ խօսի ընդ ումեք. այսպէս եւ մեք ի ժամ աղօթիցն՝ մի խօսեսցուք ընդ ումեք. զի խօսակից մեր Աստուած է. եւ զԱստուած թողուլ եւ ընդ ումեք խօսիլ, սատանայ է խօսակից նմա: Իններորդ՝ զի ոչ ակն ածէ ումեք. այլ է միշտ աչքն թագաւորն՝ գուցէ հրամայիցի ինչ ի թագաւորէն. եւ նա պատրաստ լինի՝ զի մի ընդ այլս ակնարկելով խափան լիցի հրամանացն եւ պատիժս կրեսցէ: Նոյնպէս եւ մեզ չէ պարտ ակնարկել ումեք. կամ հայիլ յետս. զի մի միտքն ընդ զգայարանացն ցնդեսցի: Տասներորդ՝ զի ականջն եւ միտքն՝ են հանապազ առ թագաւորն եւ ի հարմեանս նորա, առ ի կատարել փութով. նոյնպէս եւ

մեզ պարտ է գնոյնս առնել. զի ականջք եւ միտք մեր՝ լիցին առ աղօթական ձայնս եւ յերգս. զի մի յիջանել շնորհացն թափուր մնասցուք: *Եկեսցուք յերկրորդ գլուխն թէ՛ վասն Է՞ր գտունս Աստուծոյ որ յանշունչ քարանց՝ եւ զժողովս քրիստոնէից մի անուամբ եկեղեցի կոչեմք: Եւ այս բազում պատճառաւ: Նախ ըստ անուանն. զի նա եկեղեցի. եւ սա: Երկրորդ՝ ըստ կայացման. զի նա ի բազում մարդոց. եւ սա ի բազում քարանց եւ փայտից եւ յայլոց: Երրորդ՝ ըստ գործոյն. զի նա ժողովումն. սա ժողովարան: Չորրորդ՝ ըստ ձեւոյն զի մարդն քառաձեւ. եւ սա չորեքկուսի խաչաձեւ: Հինգերորդ՝ ըստ որպիսութեան. զի նա ունի հինգ զգայարանս դրուք եւ մուտք իմաստից. նոյնպէս եւ սա ի չորս կողմանց. դուռն կամ նա ինն դրուք՝ չորս զգայարանօքն կրկին. եւ բերանն մեկին որ լինի ինն. եւ սա ունի չորս վերին գմբեթին. եւ Դ ի խոնարի կոյս. եւ դուռն լինի ինն: Վեցերորդ՝ զի նա ընկալեալ զհոգին Աստուծոյ աւագանաւն. եւ սա ընկալեալ օրհնութեամբն: Եօթներորդ՝ զի նա անձնաւորեալ բանականութեամբն եւ յատկութեամբն. եւ սա անձնաւորեալ օրհնութեամբն հաւասար նոցա: Ութներորդ՝ նա սրբութեամբ տաճար Աստուծոյ. եւ սա սրբեալ բնակարան Աստուծոյ: Իններորդ՝ նա ծնանի ախտաւոր որդի մարդոյ. եւ սա անախտութեամբ ծնանի որդի Աստուծոյ: Տասներորդ՝ նոքա տան եւ բաշխեն զհաց եւ զմպելի մարմնական. եւ սա տայ զհացն կենաց իջեալ յերկնից ազգի մարդկան պատճառ փրկութեան: Դարձեալ՝ նա ունի զչորեսին առաքինութիւնս սեղեն նուիրիչ աղօթից եւ վարուց մաքրութեան. եւ սա սեղան քառակուսի հացին սրբութեան: Դարձեալ՝ նա շինեցաւ ի վերայ հաւատո վիմին Պետրոսեան. եւ սա ի վերայ բանից առաքելոց մարգարեից եւ վարդապետաց հիման: *Եկեսցուք յերրորդ գլուխն թէ՛ վասն Է՞ր իգական անուամբ կոչի մերս եկեղեցի. եւ Զրիստոս փեսայ. ըստ առաքելոյն. (խօսեցայց զձեզ առն միում որպէս զկոյս մի սուրբ անդիման առնել փեսային Զրիստոսի:) Եւ Դաւիթ ասէ. (լուր դուստր եւ տես:) Եւ աւետարանն թէ՛ (նմանեցաւ արքայութիւնն առն թագաւորի՝ որ առնիցէ հարսանիս որդւոյ իւրոյ:) Համարձակութիւն տան մեզ զեկեղեցի եւ զԶրիստոս ի տիպ փեսային եւ հարսին օրինակեալ. այնու՝ զի օտար եւ մաքուր են ի կարծեաց ախտաւոր թուլութեան ամենազգոն միտք նոցա. պարտիմք եւ մեք այսմ վեհագոյն բարձրանալ. եւ ապա զխորհուրդս քննել զօրութեամբ: Եւ այսպէս բաղդատի հոգեւոր հարսանիքն եւ մարմնաւորն: Նախզի՝ յորժամ խօսեցեալ լինի հարսն առն՝ հեռի է ի նմանէ տեսութեանք. այսպէս եւ մեք հեռացեալ էաք ի նմանէ անաստուածութեամբ եւ մեղօք ոչ գիտելով զնա: Երկրորդ՝ միջնորդքն զան առ հարսն եւ խօսին զհարսն վասն փեսային. նոյնպէս մարգարեքն եւ առաքելքն զնացին առ հրեայս եւ առ հեթանոսս. եւ խօսեցան զնոսա հարսն փեսային Զրիստոսի ասելով. (լուր դուստր եւ տես. մոռա զժողովուրդ քո. զի ցանկացաւ թագաւորն Զրիստոս գեղոյ քոյ.) այսինքն հոգւոյդ որ է պատկեր Աստուծոյ: Երրորդ՝ զի զովեն զփեսայն առ հարսն. զփառսն եւ զգեղեցկութիւնն. եւ անդ ի բանից կաթի սեր փեսային ի սիրտ կուսին. նոյնպէս զովեցին զփեսայն Զրիստոսի առ հարսնացեալ ազգս մարդկան: (Եղբօր որդին իմ կարմիր է եւ սպիտակ. գեղեցիկ քան զամենայն որդիս մարդկան:) Եւ Դաւիթ ասէ. (գեղեցիկ քան զամենայն որդւոց մարդկան: Եւ մեծ է Տէր մեր՝ եւ օրհնեալ է յոյժ. եւ մեծութեան նորա ոչ գոյ չափ:) Եւ առաքեալն ասէ. (երանելին եւ միայն հզօրն՝ թագաւոր թագաւորաց:) Եւ ի բանից աստի սեր փեսային

Քրիստոսի կաթեաց ի սիրոս եկեղեցւոյ. որպէս ասէր հարսն առ փեսայն. (Խանդակաթ եմ ի սիրոյ քո. որ հարուստաց յԱստուած եւ ի Տէր:) Չորրորդ՝ զի գերեալ վարի միտք նորա ի սէր նորա. եւ թողու զհայր իւր եւ զմայր եւ ընթանա: Նոյնպէս եկեղեցիք ազգաց գերեալ ի սէրն Քրիստոսի՝ թողին զժողովուրդն եւ զտունն հօր. այսինքն զաւանդութիւն ծերոցն եւ զտաճարն: Եւ հեթանոսք զտուն կռոցն եւ զգոհն եւ զնացին զհետ փեսայն Քրիստոսի. ըստ այնմ, (լուր դուստր եւ տես.) եւ Պետրոս ասէ (մեք թողաք զամենայն:) Յինգերորդ՝ զի զհարսն առ փեսայն գովեն ասելով. (շրթունքն իբրեւ զլար կարմիր. աչքն աղաւնւոյ եւ այլն:) Եւ թէ՛ (կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ.) եւ զընկերսն եւս բերէ քեզ. այսինքն զոր ծնանի բանիւ եւ իմաստութեամբ ի հաւատս. կամ զհաւատ եւ զգործսն. որպէս հարսունքն զնաժիշտս իւրեանց: Վեցերորդ՝ զի յետ խօսելոյ զխաղաղութիւն ի մի անձնութիւն, զան պսական երկուքն ի մարմին մի. որպէս ասէր առ Ադամ. (այս այժմ ոսկր յոսկերաց իմոց. եւ մարմին ի մարմնոյ իմոյ.) այսպէս յետ հրաժարելոյ ի սատանայէ, եւ հաւատալոյ յամենասուր երրորդութիւնն, մկրտութեամբ աւազանին լինիմք ոսկր յոսկեաց նորա. եւ մարմին ի մարմնոյ նորա: Եւ յօղակապութեամբ սուրբ հոգւոյն՝ խառնիմք ընդ միմեանս: Եօթներորդ՝ զի յետ այսորիկ սերմն առեալ ի փեսայէն ծնանի որդիս զանազան. այսպէս եւ եկեղեցի սուրբ՝ սերմն առեալ ի բանից վարդապետութեան Քրիստոսի, յղացաւ եւ ծնաւ զհարս եւ զհայրապետս. զմարտիրոսս եւ զճգնաւորս. զարդարս եւ զսուրբս ուսուցանելով կրկին ստեամբ իմաստից կրկին կտակաց, հասուցանելով (ի յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի:) Ութներորդ՝ զի հարսն ոչ է օտար ի փեսայէն. այլ Էութենակից նմա. այսպէս փեսայն Քրիստոս՝ ոչ է օտար ի մէնջ. այլ բնութենակից եւ մարմնակից մեր է: Իններորդ՝ զի հարսն ոչ թողու զայր իւր եւ լինի առ այլում. զի շնութիւն է համարեալ. այսպէս ոչ է պարտ եկեղեցւոյ ընդունիլ զօտար վարդապետութիւնս որ զհակառակ օրինացն Քրիստոսի ուսուցանէ: Տասներորդ՝ զի զարդարի հարսն պատուական զարդիւք՝ զի հաճոյացի փեսային: Այսպէս եկեղեցի զարդարի առաքիւնութեամբ՝ զի հաճոյ լիցի Տեառն. ըստ այնմ, (հաճեցաւ Տէր ընդ Սիօն:) Եւ դարձեալ՝ զի յորժամ զարդարի հարսն՝ ոչ ասէ առ ընկերսն թէ գեղեցիկ իցէ. այլ առնու զհայելին եւ այնու ուղղէ զարդն. այսպէս եւ եկեղեցւոյ հարսն յորժամ զարդարի առաքիւնութեամբ, պարտ է առնուլ զգիրս աստուածայինս. եւ ըստ նոցա հրամանացն ուղղել զգործս բարիս: Եւ հարսն ժրագլուխ պսակ է առն: Այսպէս եւ զմեր բարի գործս տեսանելով՝ փառաւոր արասցեն զփեսայն մեր եկնաւոր: Այսքան առ այս: *Եկեսցուք ի չորրորդ գլուխն թէ՛ վասն Է՞ր կոչի մերս եկեղեցի դուստր վերնոյն Սիօնի. եւ նա մայր մեր. ըստ առաքելոյն. (թէ վերինն Երուսաղէմ ազատ է մեր մեր ամենեցուն:) Եւ Չաքարիա զմեզ դուստր կոչէ ասելով. (ուրախ լեր դուստր Սիօնի:) Եւ այս վասն բազում պատճառի: Նախզի՝ ամենայն սուրբ գիրք զժողովուրդս սրբոցն որ առ Աստուած զբուն արդարսն՝ մայր մեր կոչեցին. զի նոքա առաքեալքն եւ մարգարեքն ծնան զհայրապետսն հոգեւոր երկամբք. եւ նոքա գնացին եւ ժողովեցան ի վերինն Սիօն որ է դիատնոց ճշմարիտ ուր հաւաքեցան դէտքն. եւ Երուսաղէմ որ է խաղաղութիւն. այսինքն ազատ յամենայն թշուառութեանց. եւ հայրապետքն դուստր նոցա ծննդականք. զի նոքա ծնան բանիւ վարդապետութեան զհետեւօղս իւրեանց: Եւ այսպէս մի ի միոջէ

ծնանելով եւ անդ ժողովելով. նախնիքն երկրորդացս մայր. զի նոքա ծնան զսոսա: Եւ սոքա դուստր ծնեալք ի նոցանէ եւ ծնանին զայլս: Երրորդ՝ զի մայրն նախ յղանայ եւ ապա ծնանի. այսպէս նոքա նախ յղացան ի հոգւոյն սրբոյ ի հոգիս. եւ ապա զմեզ ծնան: Երրորդ՝ մայրն սնուցանէ կաթամբ զտղայն. եւ նոքա կրկին կտակօք իմաստնացուցին զմեզ. ըստ առաքելոյն. (տղայացելոցդ ի Քրիստոս կաթն ջամբեցի:): Չորրորդ՝ մայրն յետ կաթին տայ հաստատուն կերակուր. եւ նոքա յետ բանից քարոզութեան՝ զհացն հրեշտակաց իջեալ յերկնից զմարմինն եւ զարիւնն Տեառն: Հինգերորդ՝ զի մայրն սիրէ զորդին եւ պահէ յամենայն վնասակարաց: Այսպէս նոքա սիրեն զմեզ. եւ մեք զնոսա. եւ բանիւք պատգամաց նոցա պահիմք յամենայն վնասուց մեղաց: Վեցերորդ՝ զի մայրն տրտմի ըստ պակասութեան զաւակին զինչ եւ իցէ. եւ ուրախանայ ընդ յաջողածն. նոյնպէս նոքա տրտմին ընդ պակասիլն բարի զործոցն մերոց. եւ ուրախանան ընդ բարի գործսն. ըստ այնմ, (ուրախութիւն է յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ:): Եօթներորդ՝ զի որքան հեռի է զաւակն ի մօրէն, ի հոգս է եւ ի կասկած. եւ յորժամ մերձ լինի՝ անդորրանայ: Այսպէս եւ նոքա որչափ որ դեռ եւս աստ կամք, ի հոգս են եւ ի կասկած՝ գուցէ անկանիցին. եւ յորժամ խառնիմք ի նոսա, ապա անդորրանան: Ութներորդ՝ զի ուր եւ ընթանան որդիքն ի գործ ինչ՝ յերեկոյն առ մայրն ժողովեալ հանգիցեն: Այսպէս եւ մերս եկեղեցի՝ իւրաքանչիւր ոք ըստ կամաց եւ ընտրութեան իւրեանց ի գործ ինչ աստիճանի եւ վարուց ընթացեալ՝ եւ ընդ երեկ մահուն՝ առ նոսա ժողովեալ հանգիցեն: Այսքան առ այս: *Եկեսցուք ի հնգերորդ գլուխ թէ՛ վասն Է՞ր կոչի քաղաք վերինն Սիօն. ըստ առաքելոյն՝ (ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ յԵրուսաղէմ յերկինս:): Եւ այս վասն բազում պատճառի: Նախզի քաղաքն ի բազմաց է հաւաքեալ. եւ անդ են հազարք հազարաց եւ բիւրք բիւրուց անթուելիք հոգիք արդարոց սրբոց. որպէս ասէ Յօհաննէս. (տեսի զբազմութիւն հոգւոց շուրջ զաթոռովն Աստուծոյ:): Երկրորդ՝ զի քաղաքն պարսպով եւ դրամբք պարուրի: Եւ ետես Յօհաննէս զպարիսպ նորա յականց շափիւղայ: Եւ զդրունս յողջոց մարգարտաց. ըստ այնմ որ ասէ Եսայի. (աճից զքեւ պարիսպ յընտիր ականց պատուականաց: Երրորդ՝ զի ամենայն արուեստաւորք կան ի քաղաքն. եւ անդ կան դասք մարգարեից՝ առաքելոց՝ վարդապետաց՝ հայրապետաց՝ քահանայից՝ մարիրոսաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց եւ այլոց բազմաց: Չորրորդ՝ զի ամենայն իրաց գիւտ է քաղաքն զինչ եւ պիտոյ իցէ ումեք. եւ նա ամենայն բարութեամբ լցեալ է ի վեր քան զտես աչաց եւ լուր ականչաց եւ իմացումն սրտից: Հինգերորդ զի թագաւորաբնակ է քաղաքն. այսպէս նա երկնաւոր արքային գահոյարան: Վեցերորդ՝ զի զարդարի քաղաքն ի տես արքային զուարճութեան. նոյնպէս երկնաքաղաքացիքն՝ ի զարդ անկողոպտելի են զարդարեալ շնորհօք հոգւոյն ի շուր մաքրութեան եւ սրբութեան վարուք. եւ մեռուցմամբ ախտից եւ մատանեաւ պատկերագրութեան: Եօթներորդ՝ զի քաղաքացին ոչ է զրկեալ ի տեսութենէ թագաւորին որպէս ռամիկն որ ի բացեալ է. այլ հանապազ տեսանէ եւ ուրախ լինի. այսպէս նոքա հանապազ տեսանեն զԱստուած եւ են ուրախ ի սերն որ առ նոսա. որպէս ասէր. (դարձեալ տեսից զձեզ եւ ուրախ արարից. եւ զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի ձեւս:): Ութներորդ՝ զի գեղեցիկ է շինուած քաղաքին. այսպէս շինուած այնր քաղաքին՝ պաուլական է. զի ի հաւատոյ եւ ի յուսոյ եւ ի սիրոյ ձեռակերտի:

Իններորդ՝ զի արտաքոյ քաղաքին ելեալքն՝ յաւագակաց եւ ի գագանաց վնասին: Նոյնպէս որք արտաքոյ նորա եմք՝ վնասիմք յաւագկէն սատանայէ: որ կողոպտէ զամենայն բարութիւնս մեր՝ եւ առիւծաբար պատահէ: Տասներորդ՝ զի գագանք եւ աւագակք՝ ի քաղաքն ոչ մտանեն. եւ ոչ սատանայ ի վերին քաղաքն մտանէ. զի այն կենդանեացն է քաղաք եւ անմեղաց. եւ սատանայ անկմամբն մահացաւ զյաւիտենից մահն եւ մեղանչեաց անդարձ: *Եկեցուք՝ ի վեցերորդ գլուխն թէ՛ եկեղեցի երկինք է ի վերայ երկրի: Եւ այս վասն բազում պատճառի: Նախզի՛ Աստուածն մարդացաւ եւ մարդն Աստուածացաւ. երկնաւորն երկրաւոր եղեւ. ապա ուրեմն երկիրս երկինք եղեւ: Երկրորդ՝ զի երկնաւոր խաղաղութիւնն յերկիր իջաւ յասելն. (եւ յերկիրս խաղաղութիւն:) Եւ առաքեալն ասէ թէ՛ (զմիջնորմն ցանգոյն քակեաց. եւ արար խաղաղութիւն հեռաւորաց եւ մերձաւորաց:) Երրորդ՝ զի հաճութիւն եւ հեշտութիւն որ ընդ երկնայինսն՝ առ երկրաւորս եղեւ (ի մարդիկ հաճութիւն:) Չորրորդ՝ զի երկնաւորքն ի մարդիկ խառնեցան. եւ զմարդիկ ընդ ինքեան եւ զփառսն որ առ երկրաւոր կուռսն եր ի յերկինս առաքեցին. ըստ որումինքն ի յերկինս՝ վասն որոյ երկիրս երկինք եղեւ: Զինգերորդ՝ զի ասաց յանսուտ խոստմունսն. (եւ ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ի կատարած աշխարհի.) եւ մեք ի յեկեղեցի. ապա ուրեմն երկին է եկեղեցի: Վեցերորդ՝ զի ասաց. (ուր երկու եւ երեք ժողովեալ են յանուն իմ անդ եմ եւ ի մէջ նոցա.) եւ մեք բազում ժողովիմք յեկեղեցի. եւ նա ի մէջ մեր. ապա ուրեմն երկինք է եկեղեցի: Եօթներորդ՝ զի յորժամ սիրեմք զնա եւ զպատուիրանս նորա պահեմք՝ բնակի հայր եւ որդի եւ հոգին մաքրագործ. ըստ առաքելոյն. (դուք տաճար Աստուծոյ կենդանաւոր եք. եւ հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ:) Չի Աստուած բնակի ի մարդիկ որպէս ի հրշտակս. եւ մարդիկ ի տաճարս. ըստ որում հրեշտակք ի յերկինս. եւ միաձայնութեամբ երկնաւորաց եւ երկրաւորաց պաշտի արարիչն. ապա ուրեմն երկինք է եկեղեցի սուրբ: Եւ դարձեալ՝ ունի զնմանութիւն երկնիցն եկեղեցի սուրբ: Նախզի՛ նա բարձր է տեղեալ. եւ սա բարձր քան զհասարակ բնակութիւն մեր: Երկրորդ՝ նա լոյս է մշտակայ. եւ ի սա միշտ լուցանի լոյս կանթեղաց: Երրորդ՝ նա զարդարուն եւ գեղեցիկ է լուսաւորօք. եւ սա զարդարեալ զանազան կարգօք աստիճանաց. եւ լուսաւորեալ կրկին կտակօք. եւ այլ բազում պատուիրանօք որք լոյս տան աչաց: Չորրորդ՝ նա է անշարժական բնութեամբ. եւ զսա անշարժելի ասաց Տէրն ի դրանց դժոխոց. այսինքն ի բանից եւ ի բերանոց հերձուածողաց: Զինգերորդ՝ ի նա զանազան օրհնութիւնք իմանալիք ի բնակչաց հրեշտակացն. եւ ի սա բազմազան երգք օրհնութեան Աստուծոյ ի բնակչաց սորա: Վեցերորդ՝ նոքա անընդմիջաբար կան առաջի Աստուծոյ. եւ մեք ի մէջ եկեղեցւոյ անմիջոցք առաջի Աստուծոյ: Եօթներորդ՝ նոքա բնակիչք ի ներքուստ ի վեր կոյս առ փառաց աթոռն. եւ բնակեալքն ի նմա՝ մատուցանեն զօրհնութիւն: Եւ բնակեալքն ի սմա առ խորանն վերինն՝ աթոռ փառացն Աստուծոյ. եւ սեղանն սուրբ՝ նշանակ աստուածութեան. հանգուցեալ ի նմա նուիրեն զօրհնութիւնն եւ զաղօթսն: Ութներորդ՝ զի նա խաղաղութիւն է միշտ վերնական. եւ բնակեալքն ի սմա խաղաղացան. զի գայլք եւ գառիւք ի միասին ճարակին եւ ոչ վնասեն զիրեարս. այսինքն, ագահք եւ պարզամիտք՝ զրկօք եւ նենգաւորք եւ այլք՝ թողեալք զբարս իւրեանց բնակին յեկեղեցի սիրով. ապա ուրեմն երկինք է եկեղեցի ի վերայ

երկրի: Իններորդ՝ զի քահանայական օրհնութեամբ եւ կատարելական մեռնիւ՝ միացաւ հոգին սուրբ յեկեղեցի սուրբ. եւ որդին պատարագի ի նմա. վասն այն եւ հայր ընդունի զսա. ապա ուրեմն իրաւապէս եկեղեցին երկինք է ի վերայ երկրի: Տասներորդ՝ զի հրաման առաք ի մէջ եկեղեցւոյ յանուն որդւոյ զհայր կարգալ եւ թախանձել. այսինքն, մտանելովն յեկեղեցի՝ պարտ է մեզ մտանել յորդիութիւն. եւ զնմանութիւն նորա բերել ի մեզ. եւ զնմանութիւն հոր նորա որպէս նա. եւ ապա զհայր նորա մեզ կարգալ: Չի որպէս լսէ նմա անյապաղ. այսպէս եւ մեզ լուիցէ. եւ տես՝ զի թէ զնմանութիւն նորա բերեմք ի մեզ. եւ ապա մտանեմք յեկեղեցի. եւ զնա հայր կոչեմք, որպէս որդին առաջի հորն մտանէ եւ ապա աղերսէ, ճշմարիտ երկինք լինի եկեղեցիս: Իսկ թէ զնմանութիւն նորա ոչ ունիմք այլ զհակառակին, եւ մտանեմք յեկեղեցի, լինի եկեղեցի դժոխք եւ սանդարամետք. եւ բնակիչք սոցա սատանայ են. զորոյ զնմանութիւն ունին մեղսասերքն: Վասն որոյ պարտ է մեզ սրբութեամբ մտանել յեկեղեցի որ է երկինք. զի երկինքն որոյ է պատկեր. եկեղեցիս անմեղաց է տեղի: Վասն որոյ որք մեղանս՝ անկան ի նմանէ եւ այլ ոչ մտին կամ մտանեն. այլ ի տանջանս անվախճան: *Տեսցուք զէ երորդ գլուխն թէ՛ զի՞նչ նշանակէ սրբարան բեմբն: Ապա ցոյց է փառաց աթոռոյն Աստուծոյ. զորով շուրջ կան անընդմիաջաբար աթոռքն սերովբեքն եւ քերովբեքն: Իսկ սեղանն սուրբ՝ պատկեր Աստուծոյ. քանզի որպէս խաչն պատկեր նորա անուանի բնակելովն ի նմա զօրութիւն նորա. այսպէս եւ ի սմա տպաւորեցաւ զօրութիւն եւ ներգործութիւն հոգւոյն սրբոյ քահանայապետական օրհնութեամբ եւ կատարելականն մեռնիւ: Որպէս ասէ սուրբն Դիոնիսիոս թէ՛ Յիսուս հաճեցաւ լինիլ սեղան վասն մեր. սեղան ըստ աստուածութեան. եւ զմարդկային անճառ միացեալն ընդ ինքեան բնութեամբ՝ պատարագ ընծայեաց մահուամբ ի վերայ աստուածութեան. իբր ի վերայ սեղանոյ հոր. այսինքն, զի Յիսուս ընդ մեռնին շնորհի՛ իմացականապէս բնակի ի սեղանն եւ կատարէ զնա ըստ գերունակ աստուածութեան նման ինքեան ի վերայ որոյ մատուցանէ զինքն ըստ մարմնոյ պատարագ. որպէս յայնժամ եւ արդ օրըստօրէ բերելով ի հօրէ մեզ զքաւութեան մեղաց շնորհս: Առ այս հայի նուիրական սեղանոյն կանգնումն ի մէջ սրբոյ խորանին, եւ դնել զաւետարանն ի վերայ նորին. այսինքն զՔրիստոս: Եւ որպէս շուրջ զԱստուածով եւ անջրպետապէս ի նմանէ կան հրեշտակքն փառաբանիչք. այսպէս շուրջ զսեղանովն անանջրպետութեամբ ի սեղանոյն պարեն դասք պաշտօնեից: Եւ որպէս ի ներքին կողմն վարագուրին միայն կարապետն մեր եմուտ Յիսուս յանդիման լինիլ երեսացն Աստուած վասն մեր. այսպէս ի ներքին կողմն խորանին՝ միան քահանայն մտանէ ի պատկեր նմանութեան Քրիստոսի բարեխօսել վասն մեր: Եւ որպէս այժմ յոյս մեր՝ զՔրիստոսէ է կախեալ որ գրաւական է մարդկան ի յերկինս ըստ առաքելոյն. այսպէս եւ յոյս ամենայն եկեղեցւոյն՝ զքահանայէն է կախեալ զաղօթից՝ որ ի խորհուրդ աստուածային պատարագի՝ մաղթէ վասն մեր: Իսկ զանազան ծածկոյթ սեղանին՝ ունի զնմանութիւն անմատոյց լուսոյն եւ ամպոյն, որ շուրջ զնովաւ. եւ դարձեալ՝ արեմաթացւոյն է սպասաւորութիւն Յովսէփայ: Չի որպէս նա զմարմինն պատեալ զՏերն՝ եղ ի սնդոնի որ է պէսպէս պատմուճան. եւ ի գերեզման յուղարկեր յոյր ձեռն ամենայն մարդկան յարութիւն պարգեւեալ: Այսպէս եւ քահանայապետն ի վերայ զարդուց

կտաւոցն զհացն եւ զբաժակն օրհնութեամբ սրբելով՝ ճշմարտապէս մարմին Տեան առանց յերկուանելոյ հաւատամբ եւ ճաշակեմք. եւ նա մեզ զանմահութիւն եւ զանապականութիւն շնորհէ: Իսկ աթոռն ի վերայ որոյ հանգչի պատարագիչն. զի որպէս քահանայապետն մեր Քրիստոս իջեալ կատարեաց զսօրէնութիւն. եւ ապա ելեալ ընդ երկինս նստաւ ընդաջմէ Աստուծոյ: Այսպէս քահանայն ի տիպ Քրիստոսի իջեալ կատարէ զինկարկութիւն. եւ ելեալ յարտաքին վայրէն նստի ի բարձրագոյն աթոռն ընդաջմէ սեղանոյն: Իսկ լուցմունք շահիցն եւ լապտերացն՝ նախ նշանակեն զբազմութիւն հաւատացելոցն կացեալ առաջի Աստուծոյ. եւ զայս պատկեր զգալի՝ արարին իւրեւնց իմանալի մտացն, որ իմացականապէս արծարծի հրով սիրոյն Աստուծոյ: Երկրորդ՝ որպէս շահն լուցեալ ի խարուկէն՝ միշտ ի վեր կոյս ձկտի: Այսպէս եւ որք յեկեղեցիս ժողովուրդք՝ աստուածային սիրով կայծականցն բորբոքեալ, միշտ առ նա վերանան լուսաւոր խորհրդով զվերինն խորհելով: Երրորդ՝ զի որպէս հրեշտակք լոյս են ի վերին եկեղեցին. այսպէս եւ լոյսս այս՝ ի պատկեր նոցա վառեցաւ: Չորրորդ՝ ցուցանէ լոյսս այս զլոյսս սբոցն. (որք են ի տեղուք լուսոյ եւ ի տեղուք հանգստեան:) Հինգերորդ՝ լոյսքս զգալի՝ նշանակեն զլոյսն իմանալի, որ ի սուրբ եկեղեցիս քահանայական օրհնութեամբ եւ կատարելականն մեռնիւ. որով ծնանի զմեզ անախտ արգանդով աւագանին որդիս Աստուծոյ: Վեցերորդ՝ զի ի պատարագիլն ի վերայ խաչին՝ խաւարեցան լուսաւորք ի յօրինակ մտաց եւ հոգւոցն հրեից: Իսկ աստ ի վերայ սեղանոյս պատարագիլն՝ լուցանեմք բազում լոյսս. զի բազմապատիկ լուսաւորե զհոգի եւ զմիտս եւ զմարմինս մեր: Եօթներորդ՝ զի լոյսք զորո յեկեղեցիս վառեմք՝ ոչ շիջանին ի հողմոց. այսպէս եւ զգործս առաքիւնութեան աւ զաղօթս որք ի տանն Աստուծոյ Սենեկի՝ ոչ կորուսանեն կամ շիջուցանեն հողմք դիւական եւ փառք մարմնական. որպէս իմաստուն կուսանքն՝ աստ ի փառս Աստուծոյ վառեալ պահեցան: Ութներորդ՝ լոսք որք արտաքոյ տաճարին՝ շուտով շիջանին. այսպէս եւ գործք եւ աղօթք յայտնի մարդկան մարմնական փառօք՝ շիջանին որք ի փառս մարդկան պերճանան: *Իսկ խունկ զոր ծխեմք յեկեղեցին՝ բազում խորհուրդս ունի: Նախզի չոր է ինքն բնութեամբ. այսպէս աղօթողին պարտ է ցամաքիլ ի գիջախտութեանց. եւ ապա բուրե հօտն աղօթից նորա առ Աստուած: Երկրորդ՝ զի պտուղ է յանկենդան ծառոց. եւ աղօթողին պարտ է մեռանիլ յաշխարհիս՝ եւ մեռուցանել զախտն, եւ ապա աղօթել ի հաճոյն Աստուծոյ: Երրորդ՝ ի հուր անկեալ՝ վառի բոցով. այսպէս աղօթողն՝ լոյս լինի իմանալի հոգւով եւ մտօք: Չորրորդ՝ զի յորժամ ծասկեմք՝ դառն է ի սկիզբն. եւ յետոյ քաղցրանայ. այսպէս աղօթքն՝ առ ժամայն դառն եւ դժուար թուի. եւ յետոյ քաղցրանայ ի ճաշակս հոգւոց աղօթողին: Հինգերորդ՝ սպիտակ է խունկն. եւ մեք աղօթիւք սրբիմք հոգւով առնելով սպիտակ արկանելիս: Վեցերորդ՝ զի դեղ է ցաւոց եւ խոցից խունկն. եւ աղօթքն հոգեւոր ցաւոց եւ անբժշկելի խոցից որ ի սատանայէ: Եւ երեք միտք ի սաղմոսն է: Իսկ թէ որք ասիցէ՝ մարմնական նուէրն զի՞նչ պիտանացու է ի նորս. զի Աստուած հոգի է եւ զհոգեւոր նուէրս պահանջէ եւ ոչ մարմնաւոր: Ասեմք թէ՛ Աստուած միայն հոգեւոր նուիրագործութիւն՝ ի հոգեղինացն հրեշտակաց խնդրէ. իսկ մեք խառն գոլով ի հոգւոյ եւ ի մարմնոյ՝ կամի ի մենջ եւ զմարմնաւոր ինկարկութիւնս՝ ըղծից հոգւոյն ընթացակից տալ: Եւ օրինակ պատարագն Նոյի՝ որ ընկալաւ ընդ իմանալի

ինկոյ ծխոյ աղօթիցն, եւ զգգալի պատկեր նորա զպատարագն ի հոտ անուշից: Դարձեալ՝ նուէրն մարմնական՝ հաւատոյ եւ սիրոյ է նշանակ. եւ ընդունի զայս իբր թէ տալով նոցա նշանակ թէ՛ այսպէս ընկալաւ եւ զմտաւորական խնդիրն: Ապա թէ առանց սիրոյ եւ հաւատոյ լիցի այս՝ ասէ. (խունկ ձեր պիղծ են ինձ:) Իսկ թէ հաւատն եւ սերն առանց սոցին՝ ասէ. (ոչ մատուցեր ինձ խունկս ի Սաբա:) Այլ ուղղակին՝ երկոքեանս պիտոյ են. զի միմեանց վկայ լիցին. հոգեւորն մարմնաւորին, եւ մարմնաւորն հոգեւորին ի հոգի եւ ի մարմին եղելոցս. եւ Քրիստոս Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս ամէն:

Նորին Գրիգորի Ներբողեան ողբերգաբար սգեալ ի թաղումս տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յօհաննու Ռրոտնեցոյ: (Գլուխ. ԾՁԵ)

Որոց ուղիղ զգուշութեամբ են ստացեալ կեանս յանձին՝ նոցին յաւետ յիշատակութեամբ հասանի մահ եւ վախճան ասէ նուագերգօղն տեսօղ. եւ որոց ախորժելի է զնոցայն վիպասանութիւն ներբողել բանիւ՝ պէտս ունի վարժից կրթութեան իմաստից դեգերիլ, կամ իսկութեան նոցին հետեւիլ, զօրէն լուստեր նիւթից ի նմանոյն զնոյն ընդունիլ: Իսկ իմոյս կրտսերութեան անբաւական գոլով առ սոցա՝ միայն տհաս մտօք եւ տարտամ լեզուաւ, եւ միայն տկար մարմնով եւ ներքեւեալ ոգւով թակարթապատ հաղբիւ անճանճանչ խաւարին, շիջեալ եւ մեռեալ իմանալի մարդոյն անդամօք բնաւին, զի ա՞րդ զորքանն արժանապէս. զոր կարծեմ թէ, սակաւ ոք ի յագունց կարասցէ արդարեւ կշռապէս: Բայց երկու ինչ յորդորեալ հրաւիրեաց ձեռնարկել յայս հանդէս: Նախ վերամբարձ հարկի քումդ հրամանի ըստ փիլսոփային ներգովութեանց, գոլով գեղեցկագունիցն արժանի: Եւ ապա տարփումս եւ փափագումս ըստ տկարութեանս արտայայտնեցէ զայս պատկեր առն. վեհի. զի թէ պատմօղ բան ոչ հանդիպի այնու առաւել լիցի սքանչելի: Բայց այժմ ով կաճառք սրովբեագունոք եւ հոյլք հրեշտակերամ ժողովոց. օ՛ն անդր վերտառացեալ մտօք եւ մաքեալ լսելեօք ի սկզբան բանիս առ բանն անսկիզբն. ուստի ամենայն լրութիւն որ ինչ յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարի՝ նախ քան զլինիլ էին եւ յառաջ գոյութեան գոյից՝ նախանկար տեսութեամբ եւ յառաջ ընտրութեամբ որքանիւ ըստ ամանակին եւ որպիսութեանց՝ նորին կայանին զհանդերձեալն ներկայօրէն սահմանեալ: Որեւ հրաւիրեալ եւ կոչեալ ըստ ումեմն խորհրդոց հազարապետի խորոց անճառի՝ եւ արդարացուցեալ, եւ փառաւորս արարեալ: Եւ եթէ է այս. որպէս եւ է՝ իսկ. զոմն առ ընդհանրի եւ զմասն բոլորի զուգահաւասար համագումարեալ. յորոց լրմանէ համաքատակ գերամբարձութեամբ ի վերջին ժամուս եւ յանկման դարուս, յօրում նուագեցան սուրբքն եւ ճշմարտութիւնք մարդկան՝ մինս այս միայն պահեայ եւ պատահեալ, երեւեալ եւ պայծառ փայլեալ ի տանս արեւելեան ցեղից հայկազեան, լուսանշոյլ ցոլմանց արփիաւորչի մերոյն հսկողին: Եւ արդ ուստի՞ սկսեսցուք՝ եւ յորո՞ց ներբողեսցուք զանձն բարերջանկութեամբ առ լցեալ. եւ բազմադիմի շնորհիւ շքեղացեալ: Անուանակիր եւ շնորհընկալ գոլով բարբառոյ ձայնին. ընդ որդւոյն զԵբեղեայ բարձրաբարբառ քարոզ որոտման. եւ որդւոյն Աստուծոյ ճշմարիտ աստուածաբան: Զանզի որք արտաքին հանդիսիցն են վիպասան՝ ի մարմնոյ, եւ որ նորայն են առնուն

զնիւթ գովասանութեան. այսինքն ի դիւցազնական ազնէ. կամ յերեւելի գաւառէ. յիշխանական պատուոյ. կամ ի փարթամ գոյից. ի բազմահանճար իմաստից. կամ ի հնարագիւտ արհեստից. ի գարմանահրաշ գեղոյ. կամ ի քաջ զօրութեանց. եւ որք սաապէս եւ սովորեալք բանիւ ճախարակեայս յօրինել դրուատս: Եւ թէ ումեք հաճոյ թուեսցի՝ բազում ինչ եւ մեզ առ ձեռն պատրաստ առ այս նիւթ գտցի գովեստի: Գոլով նորա ազատ պայազատ յազնէ սիսական բնիկ հայկազնի: Գաւառաւ որոտնէի. իշխան ազգաւ. տիրելով բազմաց եւ փարթամ գոյից. բազմահանճար իմաստիւք առ լցեալ. ընդ ոգէշունչ մատենի՝ յարտաքինսն վարժեալ Սեփեստի. ընդ հնարագիւտ արհեստի՝ զիրաշս ձեռակրտէ. ընդ գարմանահրաշ գեղոյ շքեղաշուք շնորհի՝ եւ զգիրք մասնկանցն բարեչափ պատկանել հասակէ: Գոլով առ այս պնտակազմութեամբ ըստ հաւուցն նոյնաստեռի հարազատ ցեղի. զի թերեւս ոք սակաւուց մասանց սոցին ճահաւորեսցի. իսկ սա բոլորովին եղել ընդունակ շնորհի: Եւ այս զի՞նչ իցէ նմա գովութեանց արժանի. որեւ առ ոտն կոխեալ արհամարհեաց զունայնութիւն կենցաղոյս աշխարհի. ելեալ ի վերայ աշտարակի գերամբարձութեան, ձայներ ի լուր ամենեցունց միայն ելս դնել ի մտի՝ (ուր Զրիստոսի նստի ընդ աջմէ հայրենի:) Որեւ սեռ ազգին ունելով յոգիս անդրանկաց կատարելոցն արանց ի գաւառ վերնոյն Երուսաղէմի յիշխանութիւն տասն քաղաքաց ընդ փարթամութեան զուգաշահ քանքարաց՝ (զիմաստութիւնն որ ծածկեալն էր յազգաց:) Յաղթող ախտից ստորադասութեամբ ստորանկելոյն. եւ գործ ձեռաց՝ արդարութեան եւ իրաւանց: Որեւ գեղեցիկ տեսլեամբ առ որդիս մարդկան կերպացեալ ըստ կարի ի չափ հասակի ընտրելոցն նախնի. որոց բաղդատութեամբ իմն շարայարեսցի: Որպէս Ադամ առաջին ի պատկեր տիրական ստեղծեալ. եւ եղեմայ դրախտին վայելչացեալ. եւ սա նոյնատիպ պատկերան պայծառացեալ. նորատուն եւ իմանալի դրախտիւս փառագարդեալ: Յաճոյացեալն Աստուծոյ Աբել՝ յընկերադաւ եղբօրէ ի դաշտ հեռացեալ եւ սպանեալ. եւ սա ի տիրանենզ եւ եղբայրադաւ ընտանեաց տար աշխարհիկ վտարեալ եւ մահու առթեալ: Ենովս մարդ անւանեալ. եւ յուսով զարդարեալ. եւ սա նորին յուսոյն հաղորդեալ, ըստ նախանկար դեղոյն մարդ գերահռչակել: Ենովք պահոցն պահպանութեամբ ի գերատեղիս փոխեալ. եւ սա նովին ժուժկալութեամբ այսօր առ նոյն երկինս վերափոխեալ: Նոյ այր կատարեալ էր ասէ գիրն. որեւ ի հեղձմանէ համաշխարհական ջուրց ապրեցաւ. եւ այլոց պատճառ փրկութեան երեւեցաւ. եւ սա ամենայն որպիսութեամբ կատարեալ՝ ի ջրահեղձիկ մեղաց աշխարհի ազատեալ ապրեցաւ. եւ բազմաց առիթ ցուցաւ փրկութեան: Եբերայն պահեցաւ լեզու. զի ոչ միաբանեցաւ ընդ չար խորհուրդ վաղափուլն ամբարտակի շինուածոյ. իրաւապէս եւ սորայն իմաստ բանի յաւիտենից յիշատակ պահպանի. զի ոչ ժողովիր ի ժողովս արեան. եւ ոչ բնակեր ի սրտի տան նորա ամենայն ամբարտաւան կամ հերձադաւան: Մելքիսեդէկ քահանայ Աստուծոյ բարձրելոյ. եւ սա ըստ նորին կարգին քահանայ հետեւող նմին յաւիտեան առանց թիրելոյ: Աբրահամ հաւատով ընտրեալ. եւ հայր բազմաց ազգաց կոչեցեալ. եւ սա որդի հօր ժառանգակցեալ. որեւ հայր բազմաց հրաւիրեալ: Միաժինն Իսահակ պատարագաւն վկայեալ եւ օրինակեալ. եւ սա ինքնանուէր անձամբ չարչարակից նորին եւ փառացն հաղորդեալ: Յակօբ տեսողն Աստուծոյ եւ

հայր նահապետաց. եւ սա նմանապէս զԱստուած ունեալ միշտ ի սրտի եւ ի լեզուի, ուստի ծնաւ յարգանդէ մտաց հոյլս վարժապետաց: Յովսէփ յեղբարց վաճառեալ եւ ի գահոյս տիրութեան ժամանեալ. եւ սա երբեմն ի հայրեանեաց տարամերժեալ. եւ բոլոր սեռից լաւագոյն իմն տերութեամբ պատուեալ: Հայրն համբերութեան Յոբ նպատակ փորձութեան եղեալ եւ կրկին ստացեալ. եւ սա հանգոյն նմին ի բազմակործան փորձանաց գերծեալ. եւ համբերութեամբ զոգիս վերստին ստացեալ: Մեծն Մովսէս հնոյն օրէնսուսոյց. եւ տախտակաց բերող. եւ սա պատմող օրինաց նորոյս. եւ կտակարանաց ընթերցող: Ահարօն եւ որք ըստ նորայն սպասաւորք ստուերակերպ օրինակին մատուցման. իսկ սա նորոյս անփոփոխութեան գոլով նուիրող ճշմարիտ խորհրդեան: Յետու անուանակիր վեհին. որեւ առաջնորդ եղել բանակի. եւ սա կոչմամբ պետական համեմատ նորին՝ եւ առաջնորդ քաջ հովին ընտրութեան հօտին: Եւ զի՞ Է ինձ առեալ յերգ մասնաւորակի զնա՝ որ բոլորովին էր մարգարեաբուղիս հոգի. առաքելաշնորհ քարոզ. աստուածաբան անտարանիչ. վեմ դաւանութեան. եւ անօթ ընտրութեան: Չամենայն զի ա՞րդ ոք մարթասցի բանիւ մարմնեղէն յօրինել դրուատս ներբողի այնմ, որ յամենեարնեան բանէ պարառութեանցն եղել գովելի: Այն որ աղքատն էր հոգւով. եւ տրտում սգով: Որ բազմաց էր ուրախութիւն եւ փարթամութիւն լիով: Որ քաղց եւ ծարաւն էր արդարութեան. եւ զովացումն լրութեան առ պէտս կարօտութեան: Որ խաղաղարարն էր եւ հեզ. ողորմած եւ մաքուր սրտի՝ յորում Աստուած տեսանի: Որ հալածեալ վասն արդարութեան. եւ նախատեալ վասն փրկութեան. որ լոյսն էր խաւարելոց. եւ ուղղիչ մոլորելոց: Աղ անհամելոց. եւ համեմիչ նեխելոց: Որ խորագետն էր պարզամտութեամբ. եւ զգեօնացեալն հանդերձ մանկութեամբ: Որ բարձր էր խոնարհութեամբ. եւ մեծ սպասաւորութեամբ: Որ գանձն էր ազարակի. եւ լուսատու մարգարիտ հայոց աշխարհի: Որսորդն մարդկան. եւ մշակն սերմանեաց: Որ տանուտէր մտերիմ. եւ տնտես հաւատարիմ: Դաստիարակ այցելու. եւ կերակրիչ ի ժամու: Որ հայրն էր որ բոց. եւ ինամածու այեաց: Որ ծածկոյթ էր մերկաց. եւ ժողովօղ օտարաց: Արձակիչ բանտելոց. եւ բժիշկ հիւանդաց: Որ հանգիստն էր աշխատելոց. եւ սփոփումն վշտացելոց: Մեծութիւն աղքատաց. եւ սանձ մեծատանց: Որ իմաստն էր անխրատից. եւ կատարումն ծերոց: Դատաւոր անիրաւաց. եւ օրէնք անօրինաց: Որ խռովելոցն էր խաղաութիւն. եւ բարբարոսաց մարդասիրութիւն: Արդարոց խորհրդակից եւ սրբոց սննդակից: Որ տօնախմբօղն էր մարտիրոսաց. եւ յիշատակ վկայից: Պայծառութիւն տօնից. եւ զուարճութիւն ժողովոց: Որ հրեշտակն էր ի մարմնի. եւ այր ցանկալի հոգւոյ ըստ Դանիէլի: Որ մերձաւորաց սխրալի. եւ հեռաւորաց տարփալի: Որ առատ ձեռք եւ զուարթ երեսօք սփռեալ տայր աղքատաց, յօրինելով զբանն դատաստանի. (զի յաւիտեան մի սասանեսցի:) Որոյ բերանն խորհէր զիմաստութիւն. եւ լեզու նորա բղիւր զիրաւունս. զի յօրէնս Տեառն էին կամք նորա. եւ օրէնք նորա ի սրտի նորա. եւ Աստուած փառաւորիւր ի խորհուրդս նորա: Որ բանիւ խրատէր եւ գործով վկայէր: Որ գյանցաւորս յանդիմանէր. եւ չարացն սաստէր. որ հայելով յանգորոյսն մաշէր. եւ վաստակս արատուաց հոսէր: Որ (լայր ընդ լացօղս. եւ ինդայր ընդ ինդացօղս:) Որ ոչ չար հատոյց չարի. այլ բարի փոխանակ չարի. օրհնութիւն անիծողաց. սէր ատելեաց. եւ աղօթք

հալածչաց: Նա ոչ էառ նախատինս ի մերձաւորաց. կամ կաշառս իրաւանց. եւ ոչ առիթ գայթակղութեան փոքրկանց: Սա երկայնամիտ մեղուցելոց. եւ ընդունիչ զղջացելոց: Որ ներեր պարտապանաց. եւ շնորհեր գրպարտողաց. զի սա էր կրկին Յօհան Ոսկեբերան. վարդապետ ապաշխարութեան. մանաւանդ թէ աստուածաբան. եւ բարբառոյն ձայն: Սա երկրորդ լուսաւորիչ ի խաւարէ անգիտութեան ազգի հայկազեան. ոչ միայն հնգետասան ամօք. եւ նոյն չափ կիսական թուով ի մէջ թունալից մարմնեղէն վիրապի բերելով: Սա երկակի Յօհան օճնեան՝ մաքրելով զխամրեալսն յադանդոյն քաղկեդոնեան. եւ զոչ հաւանեալսն հերքեալ. եւ զբազում վանորայս ի ձեռաց լոցին ազատեալ: Սա քանոն ուղղափառութեան. եւ սին հաստատութեան: Սա հիմն հաւատոյ. եւ պայծառ ջահ եկեղեցւոյ: Սա ախոյեան անպարտելի. եւ պարիսպ անխոնարհելի: Սա ցրումն հակառակողաց. եւ վանիչ հերձաւածողաց առաջի ազգաց ազանց եւ թագաւորաց: Սա ուրախութիւն եւ պարծանք աշխարհի: Սա վերստին Կիրղոս. եւ երկրորդ Դեոսկորոս: Չի սովաւ նորոգեցաւ դաւանութիւնն որ Յեփեսոս. եւ հերքեալ կարկեցաւ ժանտաժանին Նեստորոս: Սովաւ ընտրութիւն բարեաց եւ մերժումն չարաց. ուղղութիւն թիրեւոց եւ քաւութիւն մեղացելոց: Սովաւ յոյս տարակուսելոց. եւ հաստատութիւն գայթակղելոց. ուսումն տգիտաց. եւ բարեկամութիւն գիտնոց: Սովաւ նուեր քահանայից. եւ պաշտպանութիւն պաշտօնէից. քարոզութիւն բանասիրաց. եւ պայծառութիւն բնաւից ուխտից համօրէն լրմանց: Սովաւ տղայոց պահպանութիւն. եւ մանկանց զգաստութիւն: կուսից ողջախոհութիւն. եւ ամուսնացելոց պարկեշտութիւն: Սովաւ ապաշխարութիւն պարկեշտելոց. պատկառումն յանդգնելոց. ժրութիւն ծուլից. արիութիւն տկարաց: Սովաւ պահպանութիւն օրինաց. քննութիւն իրրաւաց. հնազանդութիւն ապստամբից. կայ ամբարտաւանից: Չի ի սմանէ երկիւղ տերանց. մտերմութիւն ծառայից. ինամբ որդեաց. եւ պատիւ հարց. հանդարտութիւն պատերազմաց. խաղաղութիւն իշխանաց. եւ բարեմտութիւն իշխեցելոց: Այլեւ ի սմանէ ընթերցումն սուրբ գրոց. եւ վարժումն արտաքին կրթութեանց. տեսական իմաստից եւ գործնական արդեանց շարայարութեանց: Ի սմանէ յոքնանկար նորագիծ տառք. եւ երաժշտական եղանակք. ցայգացանկ հսկմունք. եւ ոտնկաց վերծանութիւնք: Ի սմանէ պահողաց պնտութիւն. ճգնաւորաց ժուժկալութիւն. վանականաց վարք. աշխարայնոց սահմանք: Ի սմանէ եւ օրինակ բարեաց. շինածք եկեղեցեաց հասարակութիւն կերակրոց. եւ պէտք միեղէն եղբայրութեանց: Եւ զայլս մասնաւորակի՝ համարիմ երկարութիւն դրոշմել ի քարտիզի պատճառ իմաստից տալով ինդրողացն մեղմով, նախանկար գովութեանց յապայս լինելով: Եւ գիտեմ զի ըղծալի է հաց քաղցելոց եւ ջուր ծարաւեաց. լոյս խաւարելոց. եւ առաջնորդ մոլորելոց: Ուրեմն ապա եւ հայր սրբոց. վարդապետ աշակերտաց. հովիւ ժողովրդոց. եւ պետ առաջնորդելոց: Պիտանի է ուսումն սիրողաց. եւ ինամիչ տածելոց. նաւապետ ընկղմելոց. եւ բժիշկ անտացելոց: Արդ ո՞վ սիրելի եղբարք՝ աշակերտք վարժապետին. որդիք հօրն. աղեղորմ սիրտիւ ձայնակից լերուք վշտացեալս անձին ողբալով. ոչ զնա, այլ զմեզ կոծելով. ոչ զհայրն, այլ զորբացեալսս: Խնդրելով զառաջնորդն լուսոյ, եւ ոչ գտանելով: Չինամօղ բժիշկն, եւ ոչ ուրեք է: Չիմաստուն նաւաստին, եւ ոչ երեւի: Չհովուապետն բարի, եւ ոչ

ժողով: Ով մեծի տառապանացս. ով վշտագին սգոյս. ով յանկարծահաս թշուառութեանցս: Մինչեւ ցայժմ իբր յառագաստի պարեաք՝ գնայաք միաբանութեամբ ի տանն Աստուծոյ. այժմ ի վերայ արագահաս թշուառութեանցս հառաչեմք. մինչեւ ցայժմ ուրախութեան երգք. այժմ ողբս դանբանական առեալ երգեմք: Ուրախութեան պատմութեանն ի սուգ դարձաւ. եւ խրախճանութիւնն ի տրտմութիւն: Որ մախանք յանկարծակի կողոպտեցին զհոգեւոր ուրախութիւնս մեր. որ էր հրեղինաց հրաշալի. եւ հողեղինաց ըղձալի: Չի ա՞րդ այժմ տեսանեմք զհամասփիւռ արեգակն ի մուտս խոնարհեալ. եւ ի տես մարմնական աչօք ըմբռնել. եւ զլիակատար ակն լուսոյ յարփոյն նուազեալ. կամ ըստ ամպով ծածկեալ: Եւ զպայծառ արուսեակն թօթափմամբ նսեմացեալ. կամ ընդ երկրաւ թաքուցեալ: Չի ա՞րդ այժմ տեսանեմք զօդապարիկն թռչուն՝ գերամբարձ արծուին ծերացեալ եւ յերկիր անկեալ. մանաւանդ թէ նորագալ եւ յերկինս սլացեալ. եւ անգեղ անկն ի նա ոչ հայեալ: Չի ա՞րդ այժմ տեսանեմք առիւծն արիական ի փաղանգէ աղետուց խաղալի եւ կոխան գտեալ. որեւ մանաւանդ ըստ առիւծուն Յուդայէ ննջեալ. եւ սրտիւ արթնացեալ որսոց պարապեալ: Չի ա՞րդ այժմ տեսանեմք գեզն պարարակ ակօսաբէկ եւ բազմավաստակ՝ դադարեալ յաշխատանաց գործոց բազմապտուղ սերմանց. զի զարդիւնն ժողովեսցէ: Չի ա՞րդ այժմ տեսանեմք զհատն կենդանացան հոգւոց կերակուր բանական. ի փոխակարծ ձմերան յարկար սերմանեալ. զի բազմացի քաջաբեր արդեամբ որոտ ընդոստ զարնանաշարժ արթնութեամբ: Չի ա՞րդ այժմ տեսանեմք զծառան բարձրաբերձ բիրտղէն ոստովք եւ թաւախիտ քաղցրորակ պտղովք յարմտոց տապալեալ. զի ի գնացս հոգւոյն անթառամ ծաղկօք վերըստին տնկեսցի բողբոջեալ: Չի ա՞րդ այժմ տեսանեմք զտաճար հոգւոյն սրբութեան ի հիմանց քակտեալ. զի նորոգ տաճար եւ առանց ձեռագործին կազմեալ շինեսցի: Չի ա՞րդ այժմ տեսանեմք զակն աղբեր կենեղուտ ջրոյն ցամաքեալ՝ անդրէն դարձեալ գետոյն եւ ծովուն սառուցեալ ի կորուստ նեղչաց ելից աւետեաց. եւ զի վտակօրէն հոսմամբ մշտախաղաց ուղիսիւք դարձեալ բղխեսցի: Չի ա՞րդ այժմ տեսանեմք զքառակի սեղան ներգոյութեամբ չորս յօրինեալ ընդ եօթնաշահեան լուսոյն նուազեալ. զի քառիցս եռակի, եւ եօթեանց կրկնակի փայլակնօրէն ճառագայթեսցի: Որեւ զի ա՞րդ այսօր տեսանեմք զգունագեղ ականաւոր ակն արտագունեալ. ոսկին սոփերային անպիտանացեալ. մաքրափայլն արծաթ ժանկիւ տգեղեալ. մարգարիտն անգին բեկմամբ անարգեալ: Չի ա՞րդ այսօր տեսանեմք զձեռամբն Աստուծոյ յօրինեալ պատկերն ի հող լուծեալ. եւ եղեալ փոշի գոլոշի ծուխ եւ օդ. եւ հողմ եւ երր: Այսօր լռեաց ձայնն քաղցր եւ ախորժակ լսելեաց. դադարեաց փառաբանիչ լեզուն. թռեաւ շնորհն աստուածապարգել. իցաւ սրատես ակն. սեղմեցաւ արագալուր ունկն: Ո՛վ ցաւագին աղետիս: Ո՛վ ծանարգոյն բեկմանս: Ո՛վ անկշռելի տարկուսիս: Ո՛վ անլոյծ երկանցս: Ո՛վ ծանրագոյն տրտմութեանցս: Ո՛վ աղէխարշ գորովոյս: Ո՛վ պակուցանօղ տագնապիս: Ո՛վ զարհուրելի երկիւղիս: Ո՛վ անդառնալի վճռիս: Ո՛վ անգիւտ կորստեանս: Ո՛վ անխաղաղ ալեացս: Ո՛վ անհանգիստ խռովութեանցս: Ո՛վ անբերելի սգոյս: Ո՛վ անդադար լալեացս: Ո՛վ անվճար ողբայս: Ո՛վ անեզր աղաղակիս: Ո՛վ անճաճանչ խաւարիս: Ո՛վ անառաւօտ գիշերոյս: Ո՛վ անել բանտիս: Ո՛վ մեծի տուգանացս: Վայ եւ եղունկ՝ ոչ միայն

համաթշուառս անձին, այլեւ համագումար աշակերտեալ խմբից. անպարուր զաւակաց ի ստինս: Մանաւանդ թէ՛ հայրագեծիկ որդեացս. ոչ ստիմ այլեւ եղուկ ասեմ բոլոր բովանդակ ազինս Աբեթեան եկեղեցւոյս հայկազեան. զի նուազեցաւ այսպիսի լոյս մշտաճաճանչ. շիջաւ ճրագն ճշմարտութեան. խզեցաւ սիւնն անխոնարհելի. խախտեցաւ խարխիսն անթիրելի. քակտեցաւ վեմն հաստահեղուս. տապալեցաւ անկիւնն քառակուսի: Շարժեցաւ հիմն արժանակառոյց. եւ եղեւ կործանումն մեծի տանս արեւելեան: Չի այսօր կողոպտեցաւ հոգեւոր գանձն: Այսօր արքունական ճոխութիւնն զրկեցաւ: Այսօր պակասեցաւ մեկնութիւն հոգեշունչ մատենից կամ մնաց ասելի է. գոր Պօղոս գոչէ. աւետարանն աղաղակէ. լուծումն սրբոց նրբից. եւ արտաբացումն արտաքին Սոփեստից: Այսօր յորում տօնեմք ծննդեանն եւ մկրտութեանն ի միում պատկերի, սոյն պատուեմք զօր ծննդեան սորին. եւ զվերսին կոչումն ելից յաշխարհի: Որեւ այսօր փոխեցաւ յիշատակն ի բնաւից սոսկալին առ անփոփոխն եղանակ հաւուցն նախկին: Այսօր եւ կոչումն մակագրութեանց օրինի՝ յեղագրեցաւ ըստ իրին անգիծ մատենիւ: Այսօր դատարկացաւ բազմոցին գահ: Այսօր վերացաւ աթոռոյն շնորհ: Այսօր ամայացաւ տեղակալութիւն դասուն: Այսօր ունայնացաւ զենն քրիստոսաւունակ: Այսօր ահա սոքա իւրքն ամենեքեան գոն. եւ ինքն ոչ է ի միջի. ակն ածեմ զաչս եւ ոչ տեսանեմ. յածիմ մտօք եւ ոչ երեւի. եթէ կական բարձայց՝ ոչ լսէ. եւ շօշափմամբ ոչ ըմբռնի. եթէ հարցից՝ ոչ պատասխանէ. եւ յարտասուս ոչ խնայէ: Աղաչանաց ոչ ողորմի. եւ պատագամաց ոչ անսա: Ի բարեկամսն ոչ ակնարկէ: Եւ ի մօտաւորաց հեռացեալ փախչի: Յազգայնոց օտար գտաւ. եւ ի սիրելեաց թիկունս դարձոյց: Չծառայս անաչառ դատէ. եւ ի տերանց ոչ ամաչէ: Ի բռնակալաց աներկիւղ է. եւ յիշխանաց անպատկառ: Ի պատուոյ ոչ փառաւորի. եւ յանարգանաց ոչ ըստ գտանի: Յաղերս ոչ խոնարհի. եւ զընծայս արհամարհէ: Կարեաց ոչ կարօտի. եւ զբնաւորականս խոտէ: Տիւ ոչ ծագէ. եւ զիշեր ոչ փոփոխի. զի եղանակք նմա անյեղք են. եւ ժամանակ մշտակայն յաւիտենից: Եւ զի այս այսպէս է որպէս եւ է իսկ. յաղագս որոյ՝ մի ինչ է յորսն իմ. երկիրպագանել՝ ուր կացեալ են ոտք նորա. թերեւս միսիթարեցայց սգով յանձկալի տապոյս. անկեալ ի վերայ երեսաց զփոշի նշխարաց մասանց նորին լիզելով: Չի ըղձալի է մեզ բնակութիւն տանս այսմիկ՝ զուգակշիռ ներքնոյն Սաղիմայ. զի եւ Քրիստոս հանգուցեալ է յոսկերս նոցա ի միաւոր շիրմի տապանի սոցա. երկու լուսաւորացս ասեմ. մեծին Որոտնեցւոյ. եւ խարագնազգեաց կրօնաւորի Մաղաքի այ ճգնաւորի: Ոչ յերեք տիւ զիշեր ըստ գրեցելոյ. այլ յերիս ժամանակս փոփոխելոյ. ուր եւ պաշտպանութիւնք իմանալեաց. եւ յարութիւն համայնից: Վասն որոյ ըղձալի է ինձ զրկափար համբուրեալ զփոշի այնր գարշապարաց՝ որով ուղիղ ոտնակացութեամբ տգներ. որով ի տունս աղօթից արագ աճախեր. որով ի վերոյ վիմին հաստատ էր: Ըղձալի է ինձ համբուրել զփոշի այնր գարշապարաց՝ որովք զգլուխ օձին ջախջախեաց. որովք զերկրաւորս արհամարհեաց. որովք յերկինս վերայ ճեմեաց: Ըղձալի է ինձ համբուրեալ զփոշի այնր ծնկաց՝ որովք ծնրահանգոյց չարչարանօք մաշէր. որովք ի ծունկս անկեալ աղաչէր. որովք զկթոտ ծունկս հաստատէր: Ըղձալի է ինձ համբուրել զփոշի այնր անդամոց՝ որովք գետնախշտի կողմաներ. որովք սակաւութ շատանայր. որովք յօդեալ պատշաճէր խաղալեօք հոգւոյն ի Քրիստոսի: Ըղձալի է ինձ

համբուրել գփոշի այնր լանջաց սրբութեամբ սրտի՝ որով գկռիւ արդարութեան ներգործեր. որով գստիսս հոգեւոր ջամբեր: Ըղծալի է ինձ համբուրել գփոշի այնր աջոյ՝ որով բժշկութիւնս բաշխեր. որով գքաւութիւն իսնորհեր. որով գողորմութիւն սփռեր: Ըղծալի է ինձ եռափափագ սրտիս համբուրել գփոշի մատանց այնոցիկ՝ որովք գուղղութիւն գրեր. որովք գՔրիստոս շօշափեր. որովք քառադրոշմ նշանիւք գդեւսն հալածեր: Ըղծալի է ինձ համբուրել գփոշի այնր բազկաց՝ որովք բարձեալ բերեր գամենեցունցն բարձօղն. որովք գգիրս սուրբս ընդգրկեր. որովք վերնատարած մաղթանօք գաղօթսն նուիրեր: Ըղծալի է ինձ համբուրել գփոշի այնր ուսոյ՝ որով ի հրահանգս կրթութեան հանդարտեր. որով յինքեան բառնայր գլուծ օրինացն. որով քառակերպ վակասիւք շքեղաւորիւր: Ըղծալի է ինձ մխիթարիլ եւ երեսօք համբուրել գփոշի այնր աստուածապաշտ բերանոյ՝ որով բացեալ գաստուածայինսն վարդապետեր: Ըղծալի է ինձ գլխակոր գագաթամբ համբուրել գփոշի այնր գլխոյ՝ որով գգլուխն գՔրիստոս յինքեան կրեր. որով գիւղ շնորհացն ընդուներ. որով գագգումն կենդանականց՝ բոլոր անդամոցն շնորհեր: Առ ի պահպանիլ ամբողջ գնագան յօդուածով ի լրումն մարմնոյդ քոյոյ հասակի աղաչեմ: Չայցելուս ի իսնամել: Չպետս յուսուցանել: Խնդրողացն ի շնորհել: Չքահանայս ի քաւել: Չպաշտօնեայս ի սպասաւորել: Չժառանգաւորս ի դաստիարակել: Չժողովուրդս ունկնդրութեան սոցին հետեւիլ: Այլեւ թագաւորաց հանդարտութիւն. եւ իշխանաց անդորրութիւն. ազատայնոց ազնուութիւն. եւ գինուորաց գուարթութիւն. քաղաքաց պահպանութիւն. եւ որք ի նոսա գանագան հասակաց իսնամարկութիւն: Որպէս գի յետ աստեացս ելանելոյ՝ երջանիկ գլխոյդ հետեւելով տեսանել գքեզ յանգուգական ի փառս: Ուր անպատում գեղեցկութիւն է՝ եւ անտրտում ուրախութիւն. ուր յաւեժ ցնծութիւն է՝ եւ գուարճացելոցն գեղապարութիւն. ու ակումբ սերովբեիցն է՝ եւ պարտք քերովբեիցն. ուր բիւրք հրեշտակացն են՝ եւ եկեղեցիք անդրանկաց. ուր աստուածաբանիցն կաճառք. եւ համախմբիցն գումարք: Անդ պսակագարդ եւ պաճուճագգեստ լուսեղէն փառօք փայլեսցիս ընդ հոմացեղիցն քոց հրեշտակերամ դասուցն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: Որով եւ ընդ որում Յօր համանգամայն եւ հոգւոյն սրբոյ՝ փառք յաւիտեանս ամեն:

Առաքեալ վարդապետի ասացեալ ներբողեան առ քաջ հռետորն եւ տրեգերալոյս վարդապետն մեծն Գրիգոր Տաթեւացի աշակերտ Յօհաննու Կոխիկ կոչեցելոյ: (Գլուխ. ԸԶԶ)

Արփիական լուսոյն անշիջանելի ճառագայթ կենդանութեան աղբիւր. լայնատարած ծով. յորդահոս գետ. անհատաբար վտակ. լուսաճաճանչ եւ արդիւնարար ցօղ. երկնային պարգեւ հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ. բղիսումն ի հօրէ. փառակից որդւոյն միածնի: Լոյս ծագեա ի խաւարեալ հոգիս, եւ բորբոքեա աստուածային հրովդ գսառուցեալ ի մեղաց. եւ արբո գպասքեալ անձս իմ ի կենդանի աղբերդ. կաթիլ մի շնորհեա ի համատարած ծովդ եւ առոգեա գկորդացեալս ի բարեաց, առ ի պտղաբերութիւն երրկնային սերմանց: Աճեցո ցօղովդ քաղցրատարափ գչորացեալ անդաստանս մտաց իմոց. եւ պարգեւես գիմաստութիւն քո գերկնային յիմար եւ տիմար ոգւոյս. որ ոչ ընտրես գարժանաւորս քոյոց

պարգեւացոյ. այլ տաս առատապէս զգանձոյ երկնային. եւ պարգեւես զշնորհսոյ վերին. զկեանսոյ անապական եւ զձիրոյ անմահութեան մարդկային բնութեան. ըստ էակցին քում եւ ծոցածին բանին հայրական եթէ՝ (ծագէ արեւ ի վերայ բարեաց եւ չարաց. եւ ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց:) Արդ ես խաւարեալս մեղօք՝ եւ ունայնս ի բարեաց՝ հեծեծանօք հայցեմ եւ արտասուօք պաղատիւ առ քեզ. տուր ինձ ի գանձուց քոց անապական. եւ փարթամացո զաղքատս ի բանից. եւ կերակրեա զմիտս իմ եւ զհոգի ըստ բանին Յիսուսի թէ, (ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ:) Չի հացն նիւթական՝ առ ժամանակ մի զմարմինն կերակրէ. իսկ բան քո անհիւթական՝ զհոգիս եւ զմարմինս կեցուցանէ. եւ անճառ փառացն յաւիտենից ժառանգորդ առնէ: Եւ արդ՝ ոչ ոք ի մարդկանէ խնդրեաց միամիտ եւ յորդառատ սիրով՝ եւ ունայն վաստակեցաւ. եւ ոչ ոք ի մարդկանէ դեգերեալ ժտեաց եւ ամօթով դարձեաւ: Այլ տաս ամենեցուն եւ պարգեւես ամենայնի առատապէս ըստ բանի քում էակցին թէ՝ (ամենայն ոք որ խնդրէ, առնու. եւ որ հայցէ, գտանէ. եւ որ բախէ, բացցի նմա:) Եւ թէ լեզուաւ իմաստնոց օրինաբանիս՝ չէ ինչ զարմանք. այլ այս է սքանչելի՝ զի գլխմարս իմաստնացուցանես. զի զաղքատս փարթամացուցանես. զի զտառապեալս մեծացուցանես. զի զտկարս կարողացուցանես. զի զհիւանդս առողջացուցանես. զի զքաղցեալս կերակրես. զի զծարաւիս արբուցանես. զի զխաւարեալս լուսաւորես. զի զանարժանս արժանացուցանես. զի զամաչեցեալս յաշաջ կոչես. զի զխորթացեալս որդիացուցանես. զի զանպիտանս ախորժես: Ո՛վ ամենասուրբ հոգի արարիչ գոյից եւ զարդարիչ ամենայնի. քեզ տաց զտեսարան մտաց իմոց. եւ յանձն առնեմ զգործարանս բարբառոյ իմոյ: Չի բանաս զմիտս իմ. եւ տաս ինձ խօսիլ բանս պատշաճաւորս. ըստ այնմ թէ, (ես տաց ձեզ զինչ ասիցեք, եւ զինչ խօսիցիք:) Եւ զի թեպէտ ես չեմ բաւական. այլ մեծաւ փափագանօք բաղձայ սիրտ իմ. ըղձանայ միտս եւ տենչայ խորհուրդ իմ բարբառիլ բանիւ եւ դրուատել բան ինչ ներբողենի առ երջանիկ եւ աշխարհալուր եռամեծ եւ տիեզերալոյս հռետորն քրիստոսատիպ եւ արթուն անուն Գրիգոր վարդապետն: Որ էր նա պետ վարժից եւ տեղեակ իմաստից. տեսակն ցանկալի. եւ տիպն հրաշալի: Յորդառատ աղբիւրն իմաստից եւ իմաստուն վաճառականն. բազմալոյս ճրագն եւ պայծառագոյն արուսեակն: Ամենահոգ տնտեսն եւ հաւատարիմ ծառայն: Արթուն դռնապանն եւ զգաստ մատակարարն: Հովին արթնական եւ պահապանն զգուշական: Աղն համեմիչ եւ նեխելոց պիտանացուն: Քաջ մշակն եկեղեցւոյ սրբոյ. եւ արդիւնարար վաստակաւորն Գրիգորիս: Երկրորդ լուսաւորիչն տոհմիս հայկազեան: Որ յայտնեցաւ ի վերջին դարս՝ ի յետին ժամանակս, եւ յերեկոյացեալ աւուրս. եւ յաշնանային եղանակս՝ ծաղիկ բազմերանգ գունով փթթեցաւ. լցեալ զտունս հայոց մեծաց անմահական հոտով. եւ ոռոգեաց զկորդացեալ երկիրս երկնաբուղիս վտակօքն: Եւ արդ՝ ոչ ոք գտաւ համեմատ նմա ի վերջին դարս. ոչ ի ձեւ հասակին եւ ոչ ի գեղ պատկերին. ոչ ի մաքրութիւն հոգւոյն, եւ ոչ յանարատութիւն մարմնոյն. ոչ ի մտացն տեսարան. եւ ոչ յիմաստն բազմազան. ոչ ի բարբառն ըղձական, եւ ոչ ի բանն արդիւնական. ոչ ի կերպն հրեշտակական, եւ ոչ ի վարսն անմարմնական. ոչ ի սերն տիրանման, եւ ոչ ի գուրթն հայրական: Քանզի ամենայնիւ էր լցեալ.

ամենայնիւ առատացեալ. ամենայնիւ գարդարեալ. ամենայնիւ սքանչացեալ: Յամենայնէ սիրեցեալ. յամենեցեանց մեծարեալ. զամենայն բարութիւնս առ ինքն ամփոփեալ. եւ ամենայն առաքինութեամբ ծաղկեալ եւ բարգաւաճեալ. ճոխացեալ եւ փարթամացեալ: Տեսլեամբն ահաւոր. եւ բանին զօրաւոր. եւ խօսիւքն հրաշաւոր: Հրեղինաց էր ցանկալի. եւ հողեղինացն հիանալի. երկնաւորացն համանման, եւ երկրաւորացս խրատիչ բարի: Զանգի ո՛վ ոք մոլորեալ զհետ խրատու չարին, եւ լսելով զբարբառ նորա ոչ վաղվադակի դառնայր ի ճանապարհն ճշմարտութեան: Ո՛վ ոք բորբոքեալ պոռնկական, ախտիւ, եւ ունկնդիր եղեալ բանից սորա, ոչ փութանակի շիջանէր բոց ցանկութեան նորա: Ո՛վ ոք սառուցեալ ի բարի գործոց, եւ քարոզութեամբ սորա ոչ տապանայր սիրովն աստուածային: Զանգի արդիւնարար էր սերմն բանին. եւ հմտավարժ էր մշակն վաստակաւոր. քանզի ճարտար էր սերմանօղն. եւ քրտնաջան էր մշակն. քանզի հոգեխառն էր բանն, եւ հնարագետ էր բժիշկն. քանզի արթուն էր հովին, եւ զգաստ էր դռնապանն: Ո՛վ անմարմին վարուցն. ով անհանգիստ տգնութեանցն. ով զգաստ բնութեան. ով աննիրհելի արթնութեանն. ով վայելուչ դիմացն. ո՛վ քաղցրահայեաց աչացն. ո՛վ քաղցրաբարբառ շրթանցն. ո՛վ հոգեշարժ խօսիցն. ո՛վ անխոնարհելի բազկացն. ո՛վ բազմարւեստ ձեռացն. ո՛վ շնորհագիծ մատանցն. ո՛վ գետնատարած ծնկանցն. ո՛վ յորդաբուղիս արտասուացն. ո՛վ անդադար աղօթիցն առ Աստուած: Թագաւորաց էր խրատիչ. եւ իշխանաց յանդիմանիչ. մեծատանց էր հրահանգիչ. եւ ստահակաց սաստիչ: Մեղուցելոց էրր քաւիչ. եւ յանցաւորաց սրբիչ: Մոլորելոց էր դարձուցիչ. եւ գլորելոցն կանգնիչ: Վիրաւորելոց բժիշկ. վշտացելոց սփոփիչ. եւ սգաւորաց մխիթարաիչ: Զահանայից էր քանոն. եւ վարդապետաց պարծանք: Ուղղափառաց էր ախոյեան. եւ հերձուածողաց էր վանիչ: Ապաշխարութեանն քարոզ էր, եւ մեղօք խաւարելոց լուսաւորիչ. իմաստասիրաց էր գերագոյն, եւ փիլիսոփայից վարժապետ. հեռաւորաց էր փափագելի, եւ մերձաւորացն սխրալի. ստութեան էր վանիչ, եւ ճշմարտութեան էր ուսուցիչ. հերձուածողաց հալածիչ, եւ հերետիկոսաց կարկիչ:

Եւ արդ՝ ոչ բաւ է լեզու իմ պատմել զորքանութիւն լաւութեանն նորա. ոչ զմարմնոյն գեղեցկութիւն, եւ ոչ զհոգւոյն պայծառութիւն. ոչ զմտացն իմաստութիւն, եւ ոչ զբանիցն շահաւետութիւն. զերեւելի փառսն, եւ զանտեսանելի լուսափայլութիւն. զոգելի ճոխութիւնն, եւ զիմնալի փարթամութիւնն. զպատկերն ցանկալի, եւ զտեսակն սարսափելի. զհոգեշարժ լեզուն, եւ զգեղեցկայարմար շրթունսն. զերկնակառոյց բազուկն, եւ զշնորհաբաշխ աջն. զպնտակազմ անդամսն, եւ զանսահելի ոտսն. զօձահալած գարշապարն, եւ զերկնաթռիչ գնացսն: Առաքինի էր վարուքն. աղօթից էր սիրօղ. ընթերցման էր պարապօղ. աշակերտաց էր մարզօղ. աստուածայի խորոցն քննօղ. ծածուկ բանից բացայայտօղ. եկեղեցւոյ էր զարդարօղ. եւ կանոնաց կապօղ: Պատմութեանց ճառօղ. քահանայից նսուցանօղ. ժողովրդեան խրատօղ. այրեաց ընդունօղ. որբոց խնամօղ: Չաղքատս սիրէր. զծերսն պատուէր. զհիւրսն ընդունէր. զքահանայս մեծարէր. զքաղցեալս կերակրէր. զծարաւեալսն արբուցանէր. զհիւանդս տեսանէր. զբանտեալսն դարմանէր. զայրիս տածէր. զորբսն խնամածէր. զմեղուցեալսն քաւուէր. զգերեալսն ազատէր. զվշտացեալսն

սփոփէր. զսգաւորսն մխիթարէր. զանխրատսն խրատէր. եւ զստահակսն յանդիմանէր: Անչափ էր սէրն. անբաւ էր գութն. անպատմելի էր խոնարհութիւնն. անձանձիր էր ուսուցանելն. աներկիւղ էր յանդիմանելն. անահ էր ի սաստելն. աննախանձ էր ի խարտելն. անաչառ էր ի դատելն. անախափան էր ի պատմելն. ամներ եւ ապա ուսուցանէր նման Յիսուսի: Արդեամբք յանձն իւր կատարէր. եւ բերանով այլոց քարոզէր: Աշխատութեամբ զգիշերն անցուցանէր. եւ ընթերցմամբ զցերեկն նահանջէր: Ի գիշերի աղօթից պարապէր. եւ ի տունջեան ընթեռնելով շատանայր: Ի գիշերի խոկմամբ զիմաստս գրոց հաւաքէր. եւ ի տունջեան աշակերտացն պատմէր: Ի գիշերի յաստուածային հոգւոյն ընդունէր. եւ ի տիւն փափագողացն շնորհէր: Ի գիշերի յերկնային ծովէն զմայլէր. եւ ի ցերեկի զկորդացեալ միտս մարդկան առնօզէր: Ի գիշեր յարփիական լուսոյն պայծառանար. եւ ի տունջեան առատապէս հայցողացն բաշխէր: Ի գիշերի անգին ակունս ժողովէր. եւ ի վաղիւն ի մի շարոց հաւաքէր: Ի գիշերի ի հայրաբուրդիս աղբերէն ըմպէր եւ ի տունջեան զծարաւեալսն արբուցանէր: Ի գիշերի զբանն կենաց ստանայր. եւ ի ցերեկի աղքատաց պարգեւ էր: Ի գիշերի ամենեցուն վարդապետէր եւ ուսուցանէր. եւ ի տուէ հնազանդելոցն իւրոց վարդապետէր: Եւ նա այնպիսի վարուք այնքան ցանկալի էր ամենեցուն՝ զի որք երթային առ ի յաշակերտիլ նմա, նախ ի տեսն ուրախանային. եւ ապա խօսիւքն ցնծային: Նախ ի պատկերին զեղեցկութիւնն ինդային. եւ ապա ընդ բարբառոյն համեղութիւնն զուարճանային: Յառաջ ընդ աստուածատիպ նկարն զարմանային. եւ ապա ընդ հրեղէն լեզուն հիանային: Նախ ի զգալի մասունս անդամոցն նկատէին. եւ ապա ընդ խորագոյն իմաստութիւնն զարհուրէին: Յառաջ ընդ ամենաշնորհ կերպարանն ակնարկէին. եւ ապա ցանկալի խօսիւք մխիթարէին: Եւ քանզի բաղձալի էր ամենեցուն տեսակն այն եւ հասակն: Որ աստուածային շնորհօքն էր զարդարեալ. որ աստուածային փառօքն էր շքեղացեալ. որ աստուածային լուսովն էր պայծառացեալ. որ յաստուածային բոցոյն էր վարդագունեալ. որ յաստուածային հոգւոյն էր փարթամացեալ. որ ի տիպն երկնային էր տպաւորեալ: Եւ արդ՝ հրաշալի էր ամենեցուն բերանն այն, եւ լեզուն՝ որ միշտ զհոգին սուրբ ընդունէր. որ միշտ ընդ Աստուած խօսակցէր. որ միշտ զՔրիստոս քարոզէր. որ միշտ զՔրիստոս դաւանէր. որ միշտ զՔրիստոս փառաւորէր. որ միշտ զՔրիստոսի տնօրէնութիւնն ճառէր. որ միշտ զամենասուրբ երրորդութիւնն խոստովանէր: Եւ արդ՝ ցանկալի էր ամենեցուն աստուածային աջն այն՝ որ անխոնարհ առ Աստուած տարածէր. որ արժանապէս զՔրիստոս պատարագէր. որ աներկիւղ զՔրիստոս շօշափէր. որ միշտ զնշանն Քրիստոսի ինքն դրոշմէր եւ հանապազ զդէմն խաչակնքէր: Եւ արդ՝ եթէ մարմնովն այս քան էր՝ ապա հոգւովն ո՞րչափ եւս եթէ անցաւոր եւ մահկանացու տարրականօքս այնպէս էր զարդարեալ, ապա ո՞րքան հոգւովն անմահ եւ երկնային, անարատ եւ անապական: Եւ եթէ ժամանակաւ երեւմամբն՝ եւ ստուերակերպ կերպարանօք այնքան էր պաճուճեալ ի շնորհաց հոգւոյն, ապա ո՞րքան անժամանակ՝ անվախճան եւ անծերանալի կենօքն փառաւոր էր: Գրիգորիոս թաբուսապետն. մեծ աշտանակ ճրագին անշիջանելի եւ համատարած լուսոյն. որ մեղօք խաւարելոց եւ բանտարգել հոգւոց եւ մտաց կուրացելոց՝ լոյս ծագէր եւ

մխիթարեր, եւ ի ճանապարհն վերին առաջնորդեր: Գրիգորիոս թաբուսապետն մեծ՝ յամենախնամ հօրէն լուսոյ էր լուսաւորեալ. աստուածային հոգւովն էր առատացեալ. ընդ Զրիստոսի էր միաւորեալ. երրորդութեամբն էր մաքրեալ. անպատմելի եւ անճառելի գիտութեամբն առ լցեալ: Գրիգոր թաբուսապետն մեծ՝ անտեսանելի գինւովն էր զմայլեան. եւ անուշահամ բաժական էր արբեալ. անշիջանելի հրով էր բորբոքեալ. եւ անհատական վտակովն էր պարարտացեալ. յանեղական լուսոյն էր պայծառացեալ. եւ անմահական հոտովն անուշացեալ: Գրիգորիոս թաբուսապետն մեծ՝ զքանքարն երկնային ընկալեալ՝ եւ կրկնապատիկ ի վերայ շահեցեալ եւ ի սեղանաւորս Տեառն արկեալ. եւ եկեղեցւոյ մանկանց աւանդեալ. երկնային քաղաքին արժանաւորեալ. եւ ի գողն արբահամու հանգուցեալ: Գրիգորիոս՝ իմաստուն տնտեսն խորհրդական հաստակառոյց տանն Աստուծոյ սուրբ եկեղեցւոյ. եւ անյաղթելի դրանց դժոխոց. որ զբազմերանգ զանազան եւ ախորժելի քաղցրահամ ճաշակս պատրաստեաց մանկանց եկեղեցւոյ: Չի որք կերակրին ի դառնագոյն եւ ի մահադէղ ճաշակաց բանսարկութիւնն, ազատին: Գրիգորիոս քաջ հռետորն եւ իմաստուն բժիշկն. որ զաներեւութաբար զբազմավեր խոցուած չարին՝ բժշկէր ամենառատ շնորհօք հոգւոյն. եւ զանտեսանելի զէսս նորա խորտակէր: Գրիգորիոս ուռն բանաւոր եւ լուսասաղարթ՝ հաստատեալ յորթն Զրիստոսի. եւ մշակեալ աջովն հայրական. եւ ոռոգեալ ի կենդանի եւ յանհատաբար վտակաց հոգւոյն, որ զանապական եւ զմայլեցուցիչ գինին արբոյց որդւոց մարդկան: Գրիգորիոս թաբուսապետն՝ մեծ ուռնանն եւ գործին երկնաւոր եւ ճարտարպետ որսորդին. որ ի մէջ ալէկոծ եւ դիակորոյս աշխարհածուփ մեղաց ծովուս զընկղմեալս ի խորս չարին եւ զտատանեալս խրտով բանսարկելին՝ զերծուցանէր ամենիմաստ գիտութեամբ հոգւոյն: Գրիգորիոս՝ հովիւն քաջ նման երկնաւոր հօտապետին Զրիստոսի. որ զմոլորեալ հօտս բանաւոր յանապատէ եկեղեցւոյ՝ ազատէր յիմանալի եւ ի պատառօղ զազանէն. եւ ի փարախն երկնային մուծանէր: Գրիգորիոս՝ վաճառականն անգին մարգարիտին. որ զամենայն անցաւոր եւ զսնոտի՝ դիւրագին վաճառեաց, եւ առ ոչ ինչ համարեցաւ. եւ միայն զմարգարիտն Զրիստոսի առ ինքն ընկալաւ: Եւ արդ ո՛վ եղբայրք՝ ողբասցուք զմեզ թէ յորպիսի տեսոյ զրկեցաք. եւ յորքան բարեաց վիրիպեցաք: Յորպիսի մեծութենէ աղքատացաք. եւ յորչափ լաւագոյն հօրէ որ բացաք: Յորպիսի վարդապետէ որոշեցաք. եւ յորքան քաղցրահամ աղբերէ ծարաւ մնացաք: Աւաղ՝ զմեզ զի այլ ոչ տեսանէ քաղցրահայեաց կերպարնն. եւ այլ ոչ բարբառի հրածորան լեզուն: Այլ ոչ սերմանէ զարդիւնարար հատն. եւ այլ ոչ մատռուակէ զուրախարար բաժակն անապական: Բայց գոհութիւն զարդարողին զնա. զի թեպէտ եւ մարմնովն հրաժարեցաւ ի մէնջ՝ այլ իմաստութեամբ հոգւոյն ի մեզէ. թեպէտ եւ իտեսութեանց մերոց անջատեցաւ, այլ անտրոհ աղօթիւքն առ մեզ է. թեպէտ եւ քաջ սերմանօղն ննջեաց, այլ սերմանեալն ի նմանէ ինքնին բերէ զպտուղն ըստ բանին Յիսուսի. որում փառք յաւիտեանս ամէն:

Մետրօպ վարդապետի ասացեալ ոտանաւոր առ սրբոյն Գրիգոր Տաթեւացի: (Գլուխ. ԸՁԷ)

Ի ժամ աշխան բուսեալ ծաղկի հաւատոյ. հանգոյն վարդի պայծառացեալ մէջ յայգոյ. Տէր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մեր հոգոյ. մայլեցուցեր զորդիսս քո ի հոտոյ:

Մաքուր մարմնով իբրեւ զջահ փայլեցար. խաւար մտաց մերոց դու լոյս ծագեցար. եւ ըստ հարանց մեզ առաջնորդ յայտնեցար. ճշմարտութեամբ զհետ լոցա ընթացար:

Երանել տէր սուրբ Գրիգոր աննման. գեր ի վերոյ եղեր դու քան զեպիփան. զբանն կենաց քարոզելով անխափան. միշտ յարածամ յեկեղեցիս հայաստան: Սուրբ երջանիկ մեծ հայրդ մեր հոգեւոր. բանիւ քոյին առնես զմեզ մտաւոր. ի բաց լինիլ մահաբերից թունաւոր. որք հերծուածովք զլոյսն առնեն մթաւոր:

Րաբունապետ առաքելոյն վիճակի. որ եւ անուամբ եւ Ստաթեր յորջորջի. պարգեւեցար ի նշխարացն կենդանի. մշտաքարոզ լինիլ ազգին արամի: Ո՛վ վեհագոյն եւ յաղթանակ ի մարտի. ի ձեռս մեր ետուր սուսեր երկսայրի. որով յաղթեմք երկատողաց մարտողի. եւ խորտակեմք զժանխս լոցա հանդիսի: Պարգեւեցար լուսաւորչէն մեր հոգոյ. ի գիշերի տեսլեամբ յանուրջս երագոյ. կանթեղ ձեռին յոյժ նուազել ի լուսոյ. որ լուսատու եղեր նորին հաւատոյ: Արթուն անուն հովիւ բարի միշտ զգաստ. անքուն ակամբ պահես զորդիսս նուաստ. ազատեցեր զմեզ ի գայլոց առանց փաստ. հրաւիրեցեր զմեզ յերկնային առագաստ:

Վարդապետաց ցեղին հայկայ ուսուցիչ. զի եւ բանիւ քոյին լինիմք քարոզիչ. այլեւ ռամիկ արանց հոգոյ կեցուցիչ. եւ լի թունօք չար բերանոց միշտ կապիչ: Աղբիւրաբար առատահոս բղխեցեր. զբանս հոգեշահ իբրեւ արձան մեզ թողեր. կրկին տասամբ եւ քառ թւով կազմեցեր. ոսկեպսակ զլիտոյ տոհմին մեր եղեր:

Րամեալ առ մի ի բազմականց պատուական. նման մեղուի յոլով ծաղկաց զանազան. մարգարեիցն որք հոգւով խօսեցան. բացերեւեալ բանիւ քոյին յայտնեցան:

Դարուս վերջին իբր արեգակն ծագեցար. ի ձմեռնացեալ ժամանակի յայտնեցար. քան զառաջինս վարդապետաց գեր ցուցար. աստուածային եւ սուրբ սիրով ջերմացար:

Անաղօտ ջահ եւ աշտանակ լուսընկալ. յեկեղեցիս հայաստանեայց միշտ փայլեալ. պատուեր ետուր դաւանութեամբ պինտ մալ. որպէս նախնի սուրբ հարանցն է հաստատեալ:

Պայծառ քարոզ եւ երկնայնոց տենչալի. որ զանմարմնոց վարս ցուցեր ի մարմնի. խստակրօն մարմնով մեռեալ ի յերկիր հոգւով ելեալ ընդ առաջ Տեառն Յիսուսի: Երես անկեալ զքեզ աղաչեմք տրտմալի. ով հայրդ մեր Գրիգորիոս պանծալի. վասն մեր լեր դու բարեխօս Քրիստոսի: Պահել զմեզ դաւանութեամբ վիմի: Տիեզերալոյս վարդապետին: Յօհաննու. չորիւք հնգօք ամօք կացեր յսպասու. շառաւիղէ նորին եղեր լուսատու. խաւարելոցս լոյս ծագեցար ի ժամու: Էին անեղ Բանին մարմնոյ միական. քարոզեցեր զանճառելի խառնարան. ոչ ելանել ճանապարհէն նախնական. այլ հաստատուն մալ ի նոյն յաւիտեան:

(Յիշատակարան յարմարողի գրքոյն) (Գլուխ. ԸԶԸ)

Օրհնութիւն գոհութիւն եւ բարեբանութիւն՝ փառք պատիւ եւ երկրպագութիւն ի բոլոր գոյից եւ ի լրմանէ եկեղեցւոյ՝ անկարօտին Աստուծոյ. եռանձնեայ եւ համագոյ սուրբ երրորդութեան հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ: Որ արժանի արար զանարժանս հասանիլ ի կատարումս գործոյս: *Արդ՝ ես թախծեալս մտօք եւ ցաւագին անձամբ՝ վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ՝ եւ տրուպս բանասիրաց փութոյ Գրիգոր պիտակ անուն իսնդորդ բանի: Հաւաքեցի ձեռամբ իմով զգիրքս քարոզողաց ի ստորասուզեալ ժամանակի: Ի թուաբերութեանս մեծի յուրն հարիւր յիսուն եւ վեց երորդի ամի: Ընդ հովանեաւ դրան սուրբ առաքելոյս եւ Ստաթէի: Եւ եղեւ պատճառ սորա յերից: Նախ՝ հարկեցեալ յեղբարց համաշունչ աշակերտաց: Երկրորդ՝ զի ոչ գոյր գիրք քարոզաց մերս վարդապետաց. բայց խորինն ասացուածք: Եւ երրորդ պատճառ՝ զի ես տարտամ հոգւով եւ ծոյլ մարմնով՝ ոչ կարացի բազմաց քարոզել. վասն որոյ հնարեցայ զգիրս քարոզաց՝ զի եւ ինձ մասն լիցի ընդ ձեզ բարեաց: Չի նախ քան զայս՝ լինէր յերից մինն. կամ ոչ քարոզել. կամ դժուարութեամբ աշխատիլ. կամ զայլոցն առեալ անպարկեշտ քարոզել: Չորեւ յերկուս հատորս արարի վասն դիւրութեան. զմինն Ձմերան. եւ զմիւսն Ամարան որպէս եւ տեսանէք: Առաջինն ի ծննդէնէն սկսեալ, եւ կարգաւ կատարեալ ի գալուստ հոգւոյն սրբոյ: Երկրորդն ի գալստէնէն սկսեալ, եւ յաւագ տօնսն աւարատեալ այսպիսի իմն կարգաւ: *Նախ յօրինացն հին: Եւ ապա ի նորս շնորհաց: Յետօանց առաքիւնութեանց: Եւ ի խորհրդոց եկեղեցւոյ: Եւ յամենայն մեղաց: Եւ ի հասարակ բոլոր եւ մասանց ապաշխարութեանց: Եւ ապա ի կարգս տօնացուցի յարմարեալ: Որոց առաջին հատորն ունի քարոզս. ԸԿ. թուով: Եւ երկրորդ ԸԶԴ նոյն չափով. սակաւ ինչ յաւելեալ: Եւ յայլ ուրեք ի քաղուածոյս սաղմոսացն: Եւ Յեսայեայն: Յառակացն: Եւ յերգոցն: Յաւետարանն՝ եւ յառաքեալն՝ քարոզք եւ բանք զխաւորք: Իսկ այն որ (նորին եւ յայլմէ) վերագրեալն է, զի յատկացին ի միմեանց. եւ մի գողացեալ թուեսցին ախմարաց մտաց: Եւ յայլմէն եւս՝ պիտանին եւ բարին ընտրեալ. եւ աւելորդն խոտեալ: *Արդ՝ աղաղակեմ ի խորոց սրտից առ համշիրակ դասս սրբազանից: Որ բազում աշխատութեամբ դիւրացուցաք ձեզ զբանս քարոզութեան. եւ դուք իսնդրեցէք դիւրութիւն մեզ յիշմամբ ձեր ի Տէր: Չի յուսով հաւատամ ի մարդասերն կամաց ի ձեռն իսնդրոյ ձերոյ մաղթանաց, ներումն շնորհիլ բազմաթիւ մերոց յանցանաց: Այլեւ վեհին իմոյ պետի. ազգիս հայոց մեծ հռետորի. Յօհաննէս մակրոտէի. կախեալ ի սերն սիրելի. բարեաց ի սմա յիշեալ լիցի. հանդերձ ծնողօքն իւր կրկնակի: Այլեւ զծնօղս վիժածիս. եւ համօրէն ազգատոհմիս. որք ըստ հոգւոյ եղեն վարժիչ. կամ ըստ արեան կցորդակից: Նախ քեռ որդւոյն իմոյ ըստ մարմնի. ծնընդամիտ երգաբանի. առաքելոյ առաքիւնի. եւ սիւնական գլխոյ արիի: Եւ նորաբոյս քահանայի. նախ ի Զրիստոս կոչեալ լինի. նորին եղբօրն բարսեղի. բարեաց մասին յիշեալ լիցին: Այլեւ գրոյս այս իսնդրողի. Յակօբ րաբուն համշիրակի. ի տանէ գողթնեայ ի բուստ բնակողի. որոյ յիշատակն՝ օրհնութեամբ եղիցի: Եւ զհարապետ միայնական. որ նա եղեւ մեզ օգնական. հոգալ զպետս մարմնական. աշակերտաց մերոց լրման. յիշման ի Տէր լիցի արժան. մասին բարեաց ողորմութեան: Եւ համօրէն վաստակողաց. ի սրբագիրս աշխատողաց. որք յառաջին եւ ի վերջին. ի կենաց գիրն արձանացին: Աշխոյժ մտօք ընթերցողաց. եւ բարեսէր ունկնդնողաց. եւ զօրինակն

շնորհողաց. ևաւել ուղղացն սխալանաց. ընդ քանքարին շահեցողաց. ժառանգեսցեն պարգեւ բարեաց: Որ եւ մաղթեմ ամենայնի. զգաղափարողոյ օրինակի. գրել զգիրս յիշատակի. ձեռամբ ձերով ի քարտիզի. եւ դուք ի գիրն կենդանի. լիցիք գրեալ անշնչելի: Եւ յուտողացս եւ յիշողացդ. այլեւ զամեն սասցողաց. յառիասարակ Տեառնէն բարեաց. հաղորդիցուք մասին շնորհաց: Որում պատիւ եւ սրբասաց. ի յերկնայնոց ու յերկրաւորաց. ի հանուրց գոյից եւ ի մասանց. այժմ եւ յանկետ ժամանակաց: Ամեն եղիցի եղիցի:

Վասն ողջունի. որպէս ասէ Տէրն առ աշակերտան իւր պատուեր տալով ևոցա: (Եւ իբրեւ մտանիցէք ի տուն, աղջոյն տաջիք նմա եւ ասացէք՝ ողջոյն տանս այսմիկ. եթէ իցէ տունն արժանի՝ եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա. ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի:) Մատ. 10.12:

Եւ արդ գիտելի է՝ զի ողջունատրութիւնս այս՝ բազմաւ կերպիւ առեալ լինի ի սուրբ գրոց: Նախ է ողջոյն փջման շնորհաց զոր ետ Աստուած Ադամայ. որպէս ասէ ի ծննդոց երկու գլուխն. (Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ. եւ փջեաց յերեսս նորա շունչ կենդանի. եւ եղեւ մարդն հողի կենդանի: Իսկ նա թեպետ ընկալաւ զողջոյնս այս՝ այլ ոչ պահեաց ողջամբ. այլ կորոյս զփջումն շնորհին. ըստ այնմ, (մի մնացէ հողի իմ ի դոսա:) Այլ վատնեաց զամենայ ինչս իւր եւ սկսաւ չքաւորիլ. եւ զկնի չքաւորութեան՝ եկեալ ի միտս իւր ասէ. (յարուցեալ զնացից առ ողջունապարգեւ հայրն իմ, որ յառաջագոյն ետ ինձ զփջումն շնորհին. դարձեալ ընկալայց ի նմանէ զողջոյն. ոչ իբրեւ զորդի որպէս յառաջն էի, այլ իբրեւ զծառայ: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. եւ դեռ հեռագոյն էր՝ ետես զնա հայրն իւր եւ գթացաւ. յարեաւ եւ ընթացաւ ընդառաջ. անկաւ զպարանոցաւ նորա եւ համբուրեաց զնա, տալով նմա զառաջին փջման շնորհաց ողջոյնն, վասն որոյ ասէ հայրն ցծառայսն իւր. (հանէք զպատմութեանն առաջին եւ ազուցէք նմա: Եւտուք զմատանին ի ձեռս նորա. եւ կօշիկս, յոտս նորա. եւ ածէք զեզն պարարակ եւ զենէք. զի կերիցուք եւ ուրախ լիցուք. զի ողջամբ ընկալաւ զնա ասէ աւետարանն:) Վասն որոյ եւ Տէրն մեր զփջման շնորհաց ողջոյնն ետ առաքելոցն. որպէս ասէ աւետարանն. (փջեաց ի նոսա եւ ասէ՝ առէք զհողի սուրբ:) Երկրորդ ողջոյն է ապրեցուցանողական. զոր ետ Աստուած Նոյի եւ ապրեցոյց զնա ի ջուրց հեղեղաց. որպէս ասէ ի ծննդոց 2 գլուխն: (Եւ ասէ Տէր Աստուած ցՆոյ. ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ. զի լցաւ երկինս անիրաւութեամբք ի նոցանէ. եւ ահա ես ապականեցից զնոսա եւ զերկիրս:) Արդ արա դու քեզ տապան ի չորեք կուսից փայտից. խորշս խորշս գործեսցես զտապանն. եւ նաւթիւ ծեփեսցես զնա ներքոյ եւ արտաքոյ: Եւ ահա ես ածից զքրիեղեղ ջրոյ ի վերայ երկրի ապականել զամենայն մարմինն յորում է շունչ կենդանի ի ներքոյ երկնից. եւ ինչ որ իցէ ի վերայ երկրի՝ սատակեսցի. եւ դու ամենայն տուն քո մուտ ի տապանդ. զի զքեզ տեսի արդար. առաջի ազգիդ այդորիկ. եւ ամենայն անասնոց սրբոց մոյծ ընդ քեզ եօթն արու եւ եգ, մուծանել զաւակ ի վերայ երկրի. եւ յամենայն անասնոց որք ոչ են սուրբք՝ երկու արու եւ եգ. եւ արար Նոյ այնպէս որպէս պատուիրեաց նմա Աստուած եւ փակեաց Տէր Աստուած արտաքոյ նորա զտապանն. եւ եղեւ ջրիեղեղ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր ի վերայ երկրի. եւ բազմացաւ ջուրն եւ վերացոյց զտապանն եւ բարձրացոյց յերկրէ.

Եւ ծածկեաց զամենայն լերինս եւ զբարձունս. եւ մեռաւ ամենայն մարմին շարժուն ի վերայ երկրի. եւ մնաց միայն Նոյ եւ որք ընդ նմա ի տապանակի անդ: Եւ օրհնեաց Տէր Աստուած զՆոյ եւ զամենայն որդիս Նորա եւ ասաց. (աճեցէք եւ բազմացարուք՝ եւ լցէք գերկիր. եւ տիրեցէք դմա: Դարձեալ ողջոյնս՝ Է նշան հաշտութեան, այլ ոչ եւս առանել զխռովութիւն. եւ զայս եւս ետ Աստուած Նոյի եւ որդւոց Նորա. որպէս ասէ ծննդոց թէ՛ (եւ ասէ Տէր Աստուած ցՆոյ եւ ցորդիս Նորա այս Է նշան ուխտին զոր ես տաց ընդիս եւ ընդ քեզ՝ եւ ի մէջ ամենայն շնչոյ կենդանւոյ որք են ընդ ձեզ յազգս յաւիտեանց. զաղեղն իմ եղից յամպս՝ եւ եղիցի յաւիտենական ուխտին ընդիս եւ ձեզ եւ ընդ ամենայն երկիր. եւ ոչ եւս եղիցի ջրհեղեղ ի սատակել զամենայն մարմին: Այս Է նշան ուխտին ասէ Աստուած զոր ուխտեցի ընդիս եւ ընդ ձեզ:) Երրորդ ողջոյն՝ Է հրաժարական. զոր օրինակ՝ մեծագոյն ոք տացէ աղջոյն փոքրագունի ուրուք, եւ հրաժարեցուցանէ զնա յայնմանէ՝ ուր տեղակացեալ իցէր, եւ հրաւիրէ զնա յայլ ուրեք վասն մատակարարելոյ սակի. եւ նա զհպատակութիւն յայտնելով՝ առնէ ըստ հրամանի մեծագունին, ընդունելով վերստին ողջոյն աւետեաց՝ ի նմանէ: Եւ արդ զողջոյնս այս՝ ետ Աստուած Աբրահամու ասելով. (Ել դու յերկրէ քումմէ եւ յազգէ քումմէ եւ ի տանէ հօր քոյ, եւ եկ յերկիր զոր ցուցից քեզ. եւ մեծացուցից զանուն քո՝ եւ եղիցիս օրհնեալ. եւ օրհնեցից զօրհնիչս քո. եւ անիծեցից զանիծիչս քո. եւ օրհնեսցիս ի քեզ ամենայն ազգ երկրի: Եւ երեւեցաւ Տէր Աբրահամու եւ ասէ ցնա. զաւակի քում տաց գերկիրս զայս. եւ շինեաց անդ Աբրահամ սեղան Տեառն եւ կոչեաց զանուն Տեառն:) Այսպէս եւ Մովսէսի ասաց հրաժարեցուցանելով զնա ի մեռելոտի գործոց հանել զնա հանդերձ ժողովրդեամբ յերկրէն Եգիպտացոց. որպէս ասէ յելից երկու գլուխն թէ՛ (կոչեաց զնա Տէր ի միջոյ մորենւոյն եւ ասէ. Մովսէս Մովսէս՝ եւ նա ասէ զի՞ Է. եւ նա ասէ. մի մերձեակար այսր. լոյծ զկօշիկս յոտից քոց. զի տեղիդ յորում կաս դու ի դմա երկիր սուրբ Է. եւ նա ասէ ցնա. ես եմ Տէր Աստուած Զօր Քոյ՝ Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակօբայ:) Եւ դարձեալ ասէ Տէր ցՄովսէս. (տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ յԵգիպտոս. եւ լուայ աղաղակի լոցա ի գործավարացն իւրեանց. զի գիտեմ զվիշտս լոցա. եւ իջի փրկել զնոսա ի ձեռաց Եգիպտացոցն. եւ հանել զնոսա յերկրէ յայնմանէ. եւ տանիլ զնոսա յերկիր բարի եւ ընդարձակ. յերկիր որ բղիւսէ զմեղր եւ զկաթն:) Իսկ զայսպիսի ողջունատրութիւնս՝ բազում մեծագոյնք մատուցանեն առ փոքրագոյնս. զի զնոսա առ իւրեանս տրասցեն. որպէս եւ Տէր մեր ասեր ցայնոսիկ որք կարիցէին ընդունիլ զողջոյնս զայս. (թէ ոք զայ առիս, եւ ոչ ատէ զհայր իւր կամ զմայր, զկին իւր եւ զորդիս, եւ զեղբարս եւ զքորս, նաեւ զանձն իւր եւս, ոչ կարէ իմ աշակերտ լինիլ:) Զորրորդ՝ ողջոյն Է դձական առողջութեան. որպէս ասէ քուսի յերկրորդ թագաւորաց առ Աբսոնոմ. ողջ լեր արքայ. եւ Եղիսէէ ասէ կինն սոմնացի ողջոյն քեզ. ողջոյն Է առն քում. ողջոյն Է մանկանն. եւ նա ասէ աղջոյն Է: Զինգերորդ՝ ողջոյն Է բաղձական խնդութեան. որպէս ասէ Տուբիթ. խնդութիւն քեզ միշտ եղիցի: Եւ Եսայի ասէ. (խնդա եւ ուրախ լեր ամուլ որ ոչ ծնանէիր. գոչեա եւ աղաղակեա որ ոչդ երկնէիր. զի բազումք են որդիք սկնդկիդ, առաւել քան զարաբւոյն:) Եւ դարձեալ ասէ. (ցնծացէք եւ ուրախ լերուք բնակիչքդ Սիօնի զի բարձաւ սուրբն Իսրայելի ի մէջ լոցա:) Վեցերորդ՝ ողջոյն Է տենչական օրհնութեան.

որպէս ասէ բոյոս ի գիրս Զռոմայ առ հնձօղս իւր. Տէր ընդ ձեզ. եւ ևոքա ասեն ցևա. օրհնեսցէ զքեզ Տէր: Եւ Դաւիթ ասէ. (օրհնեսցէ զձեզ Տէր ի Սիօնէ որ բնակեալն է յԵրուսաղէմ:) Եօթներորդ՝ ողջոյն է տուչական խաղաղութեան. որպէս ասէ Պօղոս ի բազում տեղիս. (շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն.) եւ Տէրն ասէ. (խաղաղութիւն ընդ ձեզ ես եմ մի երկնչիք:) Դարձեալ ասէ. (գիսաղաղութիւն զիմ տամ ձեզ. գիսաղաղութիւն թողում ձեզ.) ևաւս հրեշտակք երգէին. (փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն:) Ութներորդ՝ ողջոյն է աուետեաց եւ շնորհաց՝ զոր ետ հրեշտակապետն Գաբրիէլ կուսին Մարիամու ասելով. (ողջոյն ընդ քեզ լի շնորհօք.) զի գերազանցագոյն է ողջոյնս այս քան զայլ ողջոյնսն ամենայնի. վասն զի ողջոյն առաքն Աստուած էր. եւ ողջոյնաբերն հրեշտակապետ. եւ ողջոյն ընկալն կոյս. զի նովաւ առողջացաւ մարդկային բնութիւնս. զի ևա է միջնորդ աշխարհի եւ շնորհաց: Իններորդ՝ ողջոյն է բարեկամութեան զոր ընկալան առաքեալքն ի Տեառնէ. որպէս ասէ Տէրն. (դուք բարեկամք իմ էք, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ. ոչ եւս կոչեցից զձեզ ծառայս. զի ծառայն ոչ գիտէ թէ զինչ գործէ Տեառն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս. զի զամենայն զոր լուայ ի հօրէ իմմէ ծանուցի ձեզ:) Տասներորդ՝ ողջոյն է առաքելութեան զոր ետ Տէրն աշակերտացն. որպէս ասէ աւետարանն. (եւ յերեկոյի միաշաբաթօջ աւուրն, եւ դրօքն փակելովք ուր էին աշակերտքն ժողովեալք՝ վասն ահին հրեից, եկն Յիսուս ի մէջ նոցա եւ ասէ. ողջոյն ընդ ձեզ. իբրեւ զայս ասաց. եցոյց նոցա զձեռս եւ զկողս իւր. եւ խնդացին աշակերտքն իբրեւ տեսին զՏէրն:) Դարձեալ ասէ ցնոսա. (ողջոյն ընդ ձեզ. որպէս առաքեաց զիս հայր՝ եւ ես առաքեմ զձեզ. զնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Զօր եւ Որդւոյ եւ Զօգւոյն Սրբոյ. ուսուցէք նոցա պահել զամենայն զոր ինչ ասացի ձեզ:) Մետասաներորդ ողջոյնն՝ զխոնարհութիւն ցուցանէ. որպէս Եղիսէ առ կինն. եւ Տէրն առան տոհմ աշակերտսն իւր: Երկոտասաներորդ՝ ողջոյնն ցանկալի առնէ զողջունաբերն. որպէս առաքեալքն ցանկալի էին յաչս նորահաստատ քրիստոնէից. զի ողջունաբերք էին ի Տեառնէ: Երեքտասաներորդ՝ ողջոյնն զթշնամութիւն եւ զպատերազմ խափանէ. որպէս յայտ եղեւ առ Նոյի՝ զի նշան հաշտութեան ետ նմա: Զորեքտասաներորդ՝ ողջունիւ ճանաչեմք զմիմեանս. որպէս հաւատակիցք զհաւատակիցս իւրեանց. նմանապէս եւ այլն: Զնգետասաներորդ՝ ողջոյնն օրհնութիւն է ընդունողաց. վասն որոյ ասէ Տէրն. (եթէ արդժանի իցէ՝ ողջոյնն հանգիցի ի վերայ նորա:) Վեշտասաներորդ՝ ողջոյնն բոլորապէս բաժանի յիւրաքանչիւրսն. եւ ոչ հատանի մասն ինչ սմա եւ մասն ինչ նմա. այլ բոլորապէս սմա եւ նմա: Եօթնետասաներորդ՝ ողջոյնն բաժանէ զսիրելիսն յատելեաց. որպէս յայտ եղեւ Մովսեսիւ հանդերձ ժողովրդեամբն. ևաւս այնք որք ոչ ընդ ունին զողջոյն, ատելիք են Աստուծոյ. եւ որք ընդունին, սիրելիք. վասն որոյ ասէ Տէրն. (եւ որ ոչ ընկալցի զձեզ՝ եւ ոչ լուիցէ բանից ձերոց, իբրեւ ելանիցէք ի տանէն կամ ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսչիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն նոցա:) Արդ թօթափել ի փողոցն՝ ցուցանէ թէ վրեժխնդիր է նոցա Աստուած որք ոչ ընդ ունեցին զողջոյնն, եւ ոչ զողջոյնառաքն, եւ ոչ զողջունաբերն. դարձեալ փոշին նշանակէ զտրտունջ կամ զմեղադրանս ողջունաբերին. ևաւս փոշին զսաստ բանադրանաց նշանակ է թօթափել ի վերայ նոցա. կամ պատուհաս մարմնաւոր զի

զղաստասցին: Ութնեւտասներորդ՝ ողջոյնս մնալ առ ընդունօղս իւր որպէս կնիք մատանւոյ ի քարտիզի. այս է՝ խոցա որք հաւատով տան եւ սիրով ընդունին. իսկ որ բանիւ միայն ընդունի գողջոյնս եւ ոչ հոգւով, սփռի ի վերայ խոցա որպէս գլոյս. եւ դառնայ ի խոցանէ իբրեւ ճառագայթ արեգականն աշխարհէ. որպէս ասէ Տէրն. (ողջոյնն ձեր՝ առ ձեր դարձցի:) Այսքան օգտակարութիւն եւ շահաւետութիւն ունի ողջոյն տալն. վասն որոյ ողջոյն տամք առ միմեանս. զի շահ եւ օգուտ լիցի ողջունատուից եւ ողջունընկալից. զի ողջոյնն՝ բժշկէ գողջունատուն եւ գողջոյն ընկալն յամենայն ախտից ատելութեանց. վասն որոյ տամք ողջոյն միմեանց՝ զի մի ախտ ատելութեան տիրեսցէ մեզ. նաեւ կատարեսցի բան Տեառն որ ասաց. (ողջոյն տուք միմեանց.) իսկ որ յառաւօտն ողջոյն տամք միմեանց՝ յօրինակ այնր որ Քրիստոս ետ աղջոյն Մարիամանց ասելով. (ո՞ղջ էք. եւ նոքա կալան գոտս նորա եւ երկիրպագին նմա:) Այսպէս եւ ի ճաշուն տամք ողջոյն. որպէս Տէրն ետ ի Գալիլիէ յոր ժամադիր եղեւ խոցա. եւ նոքա երկուացան. նմանապէս եւ յերեկոյն տամք ողջոյն. որպէս եւ Տէրն ի միաշաբաթի աւուրն յերեկոյին եմուտ առ աշակերտսն. եւ ողջոյն ետ խոցա. վասն որոյ աշակերտք նորոց կտակարանաց եւ վարդապետք եկեղեցւոյ ընկալեալ զպատուեր ի Տեառնէ, զնոյն աւանդեն առ հաւատացեալս Քրիստոսի ասելով. (ողջոյն տանս այսմիկ որ ինքն է Քրիստոս. զի ողջոյնն Քրիստոսէ որ տուաւ մեզ ի Զօրէ Աստուծոյ. որպէս ասէ սուրբն Եփրեմ թէ՛ զի ողջոյնն ի յառաջինսն կարգեալ էր ի խորհուրդ Քրիստոսի. եւ ծածկեալ էր անգիտութեամբ: Դարձեալ ասէ. զի ողջոյնն որ այժմս տամք՝ ոչ է անզօր որպէս առաջինն. զի մինչ ի Քրիստոս՝ օրինակ միայն էր ընդ աղօտ նշան սիրոյ. իսկ Քրիստոսի՝ ողջոյնս այս նոյն ինքն է Քրիստոս. որպէս ասաց հրեշտակապետն Մարիամու՝ ողջոյն ընդ քեզ. այսինքն, ողջոյն ինքն Քրիստոս բնակեցաւ յարգանդի կուսին. եւ առեալ մարմին՝ միացոյց ընդ իւրում աստուածութեան. եւ ինքն միացաւ ի մարմնի անբաժանելի աստուածութեամբ. նոյնպէս յողջոյնս այս միացեալ է Քրիստոս՝ եւ անբաժանելի է ի սմանէ. որպէս ասէ Եփրեմ խորի թէ՛ յայսմ հետէ միաւորեալ է Քրիստոս ընդ ողջոյնս այս. եւ ընդ ձայնին՝ սփռի ի սիրտս հաւատացելոց. եւ է առ ընդունօղս եւ ի տուօղս անբաժանելի. որպէս Քրիստոս էր առ հօր եւ ի յարգանդի կուսին, եւ ի բոլոր աշխարհի. նոյնպէս եւ ողջոյնն է առ ողջունատուն, եւ է առ ողջունընկալս անբաժանելի: Վասն այսքան օգտութեան ասէ Քրիստոս թէ՛ (իբրեւ մտանիցէք ի տուն կամ ի քաղաք, ողջոյն տաշիք նմա եւ ասասշիք. ողջոյն տանս այսմիկ. եթէ իցէ արժանի որդի ողջունի, եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա.) իբրթէ ողջոյնն Քրիստոսի բնակեսցի ի նմա. ապա թէ չիցէ արժանի որդի ողջունի՝ ողջունն ձեր առ ձեզ դարձցի. այսինքն. հեռացի ի նմանէ եւ առ ձեզ հանգչիցի: Վասն որոյ՝ վարդապետք եկեղեցւոյ ուսեալք ի Քրիստոսէ զպատուեր նորին կատարելով ասեն հաւատացելոց թէ՛ ողջոյն ընդ ձեզ. իբր թէ ողջոյնն Քրիստոս ողջացուցէ զձեզ հոգւով եւ մարմնով. եւ ապա բնակեսցի եւ ընդ ձեզ եղիցի մինչեւ ի յաւիտեան: Այսքան առ այս վասն ողջունի, հաւաքեցեալ ի յումեննէ լոկ անուն Պետրոս արեղայէ:

(Յիշատակարան սրբոյ Մատենիս:)

Փառք պատիւ եւ գոհութիւն Ամենասուրբ Երրորդութեան Զօր եւ

Որդւոյ եւ Յոգւոյն Սրբոյ, որ իւրով առատ մարդասիրութեամբ եւ գթութեամբն, ետ կարողութիւն անարժանութեանս իմում տալ տպել եւ ի յանգ հանել զպատուական եւ զհոգէշահ մատեանս զայս, ի փառս իւրոյ մեծութեանն եւ բարերարութեանն, եւ ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ, եւ ի պարծանս ազգիս հայոց: Եւ եղև աւարտ սորին՝ ի թուին հայոց ՌՃՂ ի հոկտեմբերի քսան եւ հինգ:

Ի հայրապետութեան լուսակառոյց մեծի եւ անյաղթելի աթոռոյն սրբոյ Էջմիածնի տեառն Ղազարու գերընտիր եւ երջանիկ սրբազան եւ աստուածաբան կաթողիկոսին:

Եւ ի պատրիարգութեան սրբոյն Երուսղէմի եւ Կոստանդնուպօլսոյ՝ Բ-ուց սրբազանից Տեառն Գրիգորի եւ Տեառն Յակօբայ աստուածաբան վարդապետացն: Իսկ յընդհանրական մեծի աթոռոյ Էջմիածնի հաւատարիմ եւ ծայրագոյն նուիրակութեան Ովհաննիսի ճգնազգեաց եւ խոհեմազարդ եւ աստուածաբան վարդապետի եւ առաջնոցդի սրբոյն Թումայի առաքելոյն. որ է ի Գողթնեաց գաւառէն. որեւ ի սոյն ամի՝ եկեալ էր նուիրակ Կոստանդնուպօլիս. եւ բազում անգամ յորդորեաց տպել զսուրբ մատեանս զայս: Այս ինչ յայտ լիցի սրբազան հարցդ եւ մանկանցդ սրբոյ եկեղեցւոյ. քանզի չորք եղեն պատճառք տպեցման սուրբ մատենիս: Նախ՝ վերոյգրեցեալ սրբազան վեհն՝ որ եկն նուիրակ ի քաղաքս ի թուին 1182. եւ բազում անգամ յորդորեաց զիս եւ հարկ եդ ի վերայ իմ: Երկրորդ՝ զի մի կորիցէ աշխատանք եօթնալոյս վարդապետին մեծի Գրիգորի Տաթեւացւոյն: Երրորդ՝ զի ոչ գոյր ի մէջ ազգիս մերում գիրքս այս. բայց միայն անունն: Չորրորդ՝ զի ոչ ունէի մարմնաւոր յիշատակ ի վերայ երկրի: Նաեւ հարք իմ եւ եղբայրք՝ որք հանդիպիք ընթեռնուլ զքաղցրածորան մատեանս, միով հայր մերիւ յիշեցէք զննշեցեալսն իմ որք ի ներքուստ ծրեալ կան: Նաեւ յիշեցէք զլուսաւորել հոգի ի պատրիարգ Ովհաննէս վարդապետն՝ որ ետ պատուական օրինակ մի տպելոյ. եւ բազում անգամ հարկ եդ իմ վասն տպեցման. եւ ի յաւարտ սորա ոչ ժամանեց. այլ կոչեցաւ ի կոչողէն. Տեր դասաւորեսցէ զհոգի նորա ի դասս երկոտասան սրբոց վարդապետացն. զի բազում աշխարտանս ունի ի վերայ ազգիս մերոյ: Այլեւ յիշեցէք զՄիքաէլ վարդապետն Ագուլեաց Վանիցն որ այժմ տեղապահէ սրբազան վեհին. որ ետուր օրինակ մի տպելոյ: Եւ արդ՝ որք հանդիպիք մատենիս այսմիկ, եւ օգտիք ի սմանէ ընթեռնելով կամ լսելով, յիշեսցիք հոգեւորական սիրով ի մաքուր աղօթս ձեր, զմեղսամած անձն իմ անարժան ծառայիս ձերոյ, զմահտեսի Շահնազարս եւ զեղբայրն իմ զՍեիրատն. եւ զձնօղն մեր զՅախնազարն եւ զթագուհին. եւ զկողակիցս մեր զՅովսիսիմէն եւ զմիւս Յովսիսիմէն. եւ զորդեակն մեր զՅօհաննէսն. եւ զկուսակրօն եղբայրն մեր զտիրացու Ստեփաննոս ի Տեր հանգուցեալ. եւ զՊեճանն. եւ զքվերս մեր զԿիւզէլն եւ զՄարգարիտն եւ զԹումարն. եւ զպապս մեր զՏերունն եւ զՏեր Ովհաննէսն. եւ զմամիկս մեր զՄարիամն. եւ զմիւս Մարիամն. եւ զամենայն արեան արու զմերձաւորս մեր յիշեցէք ի Քրիստոս. եւ յիշեալ լիջիք ամէն: Նաեւ յիշեցէք զհոգեւոր եղբայրն իմ գետս թաղեցի Առաքելի որդի զՍիմօն աղէն: *Եւ արդ՝ զվերոյ գրեցեալ երկու եղբայրսն հարազատ՝ ոչ միան գովելոյ եմք պարտաւոր եղբարք, այլեւ հատելիլ հարկաւորիմք բարեզնաց շաւղաց նոցա. զի սոքա են որք ունին զաւակ ի Սիօն ըստ ասելոյն Եսայեայ՝ եւ երանութեան արժանիք: Չի ի բազում տեսակս բարեգործութեան՝ թուի

ինձ թե մեծ եւ յոյժ իմն տեսակ բարգործութեան է այս ճանաչողացն յայտնի. զորոյ զմեծութիւնն նա միայն կարէ գիտել որ ճանաչէ թէ որքան եւ որպիսի օգտութիւնք ծնանին ի սուրբ գրեանցն ընթերցմանէ: Բայց տացէ Տէր մեզ ճանաչել զան համեմատ բարութիւն գրեանց. եւ փափագ ունիլ այսպիսւոյ յիշատակի յաշխարհի յետ գնացիցն մերոց. որ իբր առատ աղբիւ բարութեան՝ միշտ զկնի ընթանայ պատճառին իւրոյ:

Պարտիք յիշել եւ գտաօղ մատենիս զթրակացի Աբրահամ դպիրն. որ իւր իսկ ձեռամբ անհանգիստ աշխատեալ՝ ետ զմուրն սեւաթոյր կապարեայ գրոց ոչ հաւատալով այլոց մշակաց, յիշեցէք եւ զծնօղն իւր զՍարգիսն եւ Չազիզն: Այլեւ յիշեցէք զիւր հոգեւոր եղբայրն զԿեսարայից զապաշնորի եւ զանպիտան դպիր Գեորքն: Դարձեալ յիշեցէք եւ զաշխատասեր գործոյս զարի եւ զքաջ շարագրօղ գրոցս կապարեղինաց զտիրացու Անտօնն. որ կորովամիտ նկատմամբ զգիրս, դեգերիւր ի շարաբարդութեան պատուախառն եւ սխալաշինջ օրինակի գրքոյս, թէ ի շարելն, թէ ի ցրուելն, եւ թէ ի փոփոխումն սխալեալ գրոց, ի սկզբէն մինչ ի կատարումն սորա. որ արդարեւ հազիւ այլ ումեք էր հնար յաւարտ եւ ի գլուխ ածել: Քանզի օրինակ մանրագիծ գրոյս ամարան՝ որոյ նշմարելն եւ ընթեռնուլն որ բազմաց ոչ գոյր կար, սա իբր յինքենէ գրեալ՝ զիրքանչիւր բառ եւ բան եղեալ առետեղ իւրում շարագրեաց. զորոյ երկս եւ աշխատանս՝ նա եւեթ գիտէ որ տեսօղն է գաղտնեաց. նաեւ զծնօղն իւր զԳրիգորն եւ զՄարիամն: Յիշեցէք եւ զմիւսն աշխատաւորն գործոյ տպման զխոյեցի սեւանեան Կարապետի որդի զԻնգնատիոսն՝ որ բազում աշխատանս կրեաց: Ընդ նմին յիշեցէք եւ զՅօհաննէս զաշխատակիցն գործոյս: Այլեւ յիշեցէք զսեբաստացի ծաղկարար տիրացու Բարսեղն եւ զՅակօբն: Չկնի ամենեցուն՝ յիշեցէք եւ զմեղօք մածեալ անձն իմ անհանճար՝ զսրբագրօղ սուրբ գրքոյս եւ զյարմարօղ ցանգոյս ըստ կարեաց, զՄարտիրոս դպիրս՝ եւ զորդեակն իմ զՍերօբէն եւ զՅօհաննէսն: Եւ հայցեմ ի սրբասեր ընթերցողաց հարցդ իմոց եւ եղբարցդ՝ զներումն տալ սխալման իմոյ: Յիշողքդ՝ յիշեալք միջիք ամեն:

Վ Ե Ր Ջ

Յանկ Գլխոց Սրբոյ Մատենիս

Քարոզ բարի եւ չար ճանապարհի 1:

Քարոզ տասն բանեան օրինաց 2:

Քարոզ դարձեալ տասն բանեան օրի 3:

Քարոզ դարձեալ տասն բանեան օրի 4:

Բարոզ վասն տասն հարուածոցն եգիպ 5:
 Բարոզ վասն տեսլեան եւ երազոց 6:
 Բարոզ եւ իրատ ամենայն մարդկան. (հայեաց ի քեզ՝ գուցէ լինիցի
 քան ծածուկ ի սրտի քում:) 7:
 Բարոզ սուրբ երրորդութեան 8:
 Բարոզ ի բանն տերունական որ ասէ. (յորժամ յաղօթս կացջիք՝
 ասասջիք հայր մեր որ յերկինս ես:) 9:
 Բարոզ դարձեալ հայր մեղայի 10:
 Բարոզ դարձեալ (եղիցին կամք քո) 11:
 Բարոզ վասն հաւատոյ առաջին 12:
 Բարոզ դարձեալ վասն հաւատոյ 13:
 Բարոզ դարձեալ վասն հաւատոյ յուսոյ եւ սիրոյ 14:
 Բարոզ վասն յուսոյ 15:
 Բարոզ վասն սիրոյ 16:
 Բարոզ դարձեալ վասն սիրոյ 17:
 Բարոզ վասն առաքիւնութեան 18:
 Բարոզ վասն խոհեմութեան 19:
 Բարոզ վասն իմաստութեան 20:
 Բարոզ վասն արիութեան 21:
 Բարոզ վասն գործոյ 22:
 Բարոզ վասն երկրագործաց 23:
 Բարոզ վասն հեղգաց 24:
 Բարոզ վասն քնոյ 25:
 Բարոզ վասն հալալ ամուսնութեան 26:
 Բարոզ վասն արդարութեան 27:
 Բարոզ դարձեալ վասն արդարութեան 28:
 Բարոզ դարձեալ վասն արդարութեան 29:
 Բարոզ դարձեալ վասն արդարութեան վաճառաց եւ կշռոց:
 Բարոզ վասն զրկանաց 31:
 Բարոզ վասն է խորհրդոց եկեղեցւոյ 32:
 Բարոզ վասն մկրտութեան 33:
 Բարոզ վասն հաղորդութեան 34:
 Բարոզ նոյն խորհուրդ 35:
 Բարոզ վասն պատարագի 36:
 Բարոզ ձեռնադրութեան 37:
 Բարոզ վասն քահանայութեան 38:
 Բարոզ վասն միայնակեցաց 39:
 Բարոզ վասն կարգի քահանայութեան 40:
 Բարոզ վասն կարգի քահանայութեան 41:
 Բարոզ վասն քահանայից 42:
 Բարոզ վասն խոստովանահարց 43:
 Բարոզ վասն պսակի 44:
 Բարոզ վասն պսակի 45:
 Բարոզ դարձեալ վասն պսակի 46:
 Բարոզ վասն մեղաց 47:
 Բարոզ դարձեալ վասն մեղաց 48:

Քարոզ դարձեալ վասն մեղաց 49:
Քարոզ վասն սկզբնական մեղաց 50:
Քարոզ վասն մահացու մեղաց 51:
Քարոզ վասն ներելի մեղաց 52:
Քարոզ վասն խորհրդոյ մեղաց 53:
Քարոզ վասն լեզուի 54:
Քարոզ վասն մեղաց լեզուի 55:
Քարոզ վասն չար լեզուի 56:
Քարոզ վասն բամբասանաց 57:
Քարոզ վասն լեզուի բարկութեան 58:
Քարոզ վասն համբերութեան 59:
Քարոզ վասն ծիծաղելոյ 60:
Քարոզ վասն ամբարտաւանութեան 61:
Քարոզ վասն նախանձու 62:
Քարոզ վասն ագահութեան 63:
Քարոզ վասն արծաթ սիրութեան 64:
Քարոզ վասն որկրամոլութեան 65:
Քարոզ վասն արբեցութեան 66:
Քարոզ վասն պատրանաց սատանայի 67:
Քարոզ վասն վնասուց պոռնիկ կանանց 68:
Քարոզ վասն լծոյ օրինաց 69:
Քարոզ վասն կռապաշտութեան 70:
Քարոզ վասն տարածամ մահու 71:
Քարոզ վասն աւուր չարի 72:
Քարոզ վասն նեղութեան 73:
Քարոզ վասն պատուհասի 74:
Քարոզ վասն ապաշխարութեան 75:
Քարոզ դարձեալ վասն ապաշխարութեան 76:
Քարոզ վասն գղջման 77:
Քարոզ վասն խոստովանութեան 78:
Քարոզ դարձեալ վասն խոստովանութեան 79:
Քարոզ վասն խոստովանութեան 80:
Քարոզ վասն աղօթից առաջին 81:
Քարոզ դարձեալ վասն աղօթից 82:
Քարոզ դարձեալ վասն աղօթից 83:
Քարոզ վասն կարգաց աղօթից 84:
Քարոզ դարձեալ վասն աղօթից 85:
Քարոզ վասն առաւօտու 86:
Քարոզ դարձեալ վասն առաւօտու 87:
Քարոզ վասն ճաշու ժամուն 88:
Քարոզ վասն օրինութեան սեղանոյ 89:
Քարոզ վասն երեկոյեան ժամուն 90:
Քարոզ վասն ձայնական աղօթից 91:
Քարոզ դարձեալ վասն ձայնական աղօթից 92:
Քարոզ դարձեալ վասն աղօթից 93:
Քարոզ վասն ուրախութեան եւ տրտմութեան 94:

Բարոզ վասն պահոց 95:
 Բարոզ վասն աղքատաց 96:
 Բարոզ վասն ողորմութեան 97:
 Բարոզ դարձեալ վասն ողորմութեան 98:
 Բարոզ դարձեալ վասն ողորմութեան 99:
 Բարոզ դարձեալ վասն ողորմութեան 100:
 Բարոզ հիման նորակերտ եկեղեցւոյ 101:
 Բարոզ վասն եկեղեցւոյ 102:
 Բարոզ նորակերտ դռան եկեղեցւոյ 103:
 Բարոզ վասն եկեղեցւոյ ժողովրդեան 104:
 Բարոզ դարձեալ վասն եկեղեցւոյ սրբոյ 105:
 Բարոզ դարձեալ վասն եկեղեցւոյ 106:
 Բարոզ վասն կուսանաց 107:
 Բարոզ դարձեալ վասն կուսանաց 108:
 Բարոզ դարձեալ վասն կուսանաց 109:
 Բարոզ սրբոյն Գրիգորի լուսաւորչին 110:
 Բարոզ վասն առաջնորդա եւ թագաւորաց 111:
 Բարոզ վասն մեծատանց 112:
 Բարոզ վասն մեծութեան եւ աղքատութեան 113:
 Բարոզ վասն դիւաց խաբէութեանց մեծատանց եւ աղքատաց 114:
 Բարոզ դարձեալ մեծատանց եւ աղքատաց 115:
 Բարոզ վասն հայրապետաց եւ առաջնորդաց 116:
 Բարոզ վասն վարդապետաց խրատու 117:
 Բարոզ դարձեալ վասն վարդապետաց խրատու 118:
 Բարոզ վասն երիտասարդաց կամ տղայոց 119:
 Բարոզ դարձեալ վասն խրատու տղայոց 120:
 Բարոզ վասն դատաւորաց աշխարհի 121:
 Բարոզ ի տօնս Պետրոսի եւ Պօղոսի ի խորհուրդ երկոտասան
 առաքելոց 122:
 Բարոզ վասն եօթանասուն եւ երկու աշակերտաց 123:
 Բարոզ վասն Բարդուղիմէոսի առաքելոյն 124:
 Բարոզ վասն խորհրդոյ տապանակին 125:
 Բարոզ աւուր վարդավառ 126:
 Բարոզ դարձեալ վարդավառին 127:
 Բարոզ դարձեալ վարդավառին 128:
 Բարոզ դարձեալ այլակերպութեան 129:
 Բարոզ փոխման աստուածածնին 130:
 Բարոզ դարձեալ աստուածածնին 131:
 Բարոզ դարձեալ աստուածածնին փոփոխման 132:
 Բարոզ դարձեալ փոխման աստուածածնին կուսին 133:
 Բարոզ դարձեալ աստուածածնին փոփման 134:
 Բարոզ վասն ծննդեան սուրբ կուսին ի Յովակիմայ յԱննայէ 135:
 Բարոզ խաչին մեծի 136:
 Բարոզ դարձեալ վասն խաչի 137:
 Բարոզ դարձեալ վասն խաչի 138:
 Բարոզ ի դէմս սուրբ եկեղեցւոյ 139:

Բարոզ դարձեալ վասն խաչի 140:
 Բարոզ մարտիրոսաց եւ սուրբոյն Գեորգայ 141:
 Բարոզ դարձեալ մարտիրոսաց 142:
 Բարոզ դարձեալ մարտիրոսաց 143:
 Բարոզ դարձեալ առ հասարակ ամենայն մարտիրոսաց 144:
 Բարոզ վասն հրեշտակապետաց 145:
 Բարոզ վասն հրեշտակաց եւ դիւաց 146:
 Բարոզ դարձեալ հրեշտակապետաց 147:
 Բարոզ վասն մահու մարտիրոսաց 148:
 Բարոզ վասն մահու 149:
 Բարոզ դարձեալ վասն մահու 150:
 Բարոզ դարձեալ վասն մահու 151:
 Բարոզ վասն ննջեցելոց 152:
 Բարոզ դարձեալ վասն ննջեցելոց 153:
 Բարոզ առաջին դարձեալ ննջեցելոց վասն մխիթարութեան 154:
 Բարոզ երկրորդ դարձեալ վասն մխիթարութեան 155:
 Բարոզ երրորդ վասն մխիթարութեան 156:
 Բարոզ չորրորդ վասն մխիթարութեան 157:
 Բարոզ հինգերորդ դարձեալ վասն մխիթարութեան 158:
 Բարոզ վեցերորդ դարձեալ վասն մխիթարութեան 159:
 Բարոզ եօթներորդ դարձեալ վասն մխիթարութեան 160:
 Բարոզ ութներորդ դարձեալ վասն մխիթարութեան 161:
 Բարոզ իններորդ դարձեալ վասն մխիթարութեան 162:
 Բարոզ տասներորդ բան վասն մխիթարութեան 163:
 Բարոզ վասն նեռին 164:
 Բարոզ վասն յարութեան 165:
 Բարոզ վասն գալստեանն Զրիստոսի 166:
 Բարոզ դարձեալ վասն գալստեանն Զրիստոսի 167:
 Բարոզ վասն դատաստանի աւուրն 168:
 Բարոզ դարձեալ վասն դատաստանի աւուրն 169:
 Բարոզ վասն ամենայն սրբոց 170:
 Բարոզ վերջին վասն փառոց արքայութեան 171:
 Պատճառ յղութեան Ովհաննու կրպետին 172:
 Բարոզ յաղագս մեծահանդես չորից տօնից 173:
 Բարոզ Դաւթի եւ Յակօբայ 174:
 Բարոզ դարձեալ Դաւթի եւ Յակօբայ 175:
 Բարոզ սրբոյն Ստեփաննոսի 176:
 Բարոզ դարձեալ սրբոյն Ստեփաննոսի 177:
 Բարոզ սրբոց առաքելոցն Պետ եւ Պօղ 178:
 Բարոզ դարձեալ Պետրոսի եւ Պօղոսի 179:
 Բարոզ սրբոյ առաքելոյն Պօղոսի 180:
 Բարոզ Յօհաննու եւ Յակօբայ 181:
 Բարոզ դարձեալ Յօհաննու եւ Յակօբայ 182:
 Բարոզ վասն միայնակեցաց 183:
 Բարոզ վասն եկեղեցւոյ 184:
 Ներբողական ի թաղումն Յօհաննու որոտնեցւոյն 185:

Նորբողական ի թաղումն Գրիգորի Տաթևացւոյն 186:
Ուսանաւոր ասացեալ ի Մեսրոպայ վարդապետէ 187:
Յիշատակարան սրբոյն Գրիգորի յարմարողի գրոյս 188:

Ցանկ սրբոյ Մատենիս Նշանաւոր բանից ի վերայ Այբուբենից:

- 252: Աբեղայից ասուիս զգեւուլն՝ եւ ոչ կտաւիս որպէս ի հինն 186:
Ագահութիւնն հոմանուն է. եւ յերիս իրս տեսանի. եւ յԲց պատճառի
- Ագահութիւնն բազում չարիս առնէ 255:
Ագահութիւնն պատճառն ամենայն մարդոյ կրկին է 254:
Ադամ եւ Եւա անմեղ էին կացեալ, որպէս աճեր բնութիւնս 193:
Ադամայ եւ Եւային մի մարմին գոլն՝ տայ ցոյց զմարդեղութիւն բանին,
եւ զմիաւորութիւն հարսնացեալ եկեղեցւոյ 200:
Ազատութիւնն երեք է՝ զոր արար Քրիստոս մեզ 608:
Աթոռ վասն Է՞ր կոչին հրեշտակք, եւ թէ կարգ անուանք եւ գործք ինն
դասուց զի՞նչ 566:
Ակն ածելն եւ ոչ յանդիմանելն զանհրաւն է մեծ վնաս 447:
Ակունք երկոտասան հիմանց քաղաքին ըստ տեսլեանն՝ օրինակին
յերկոտասան առաքեալսն 465:
Ահագին եւ դառն ցուցանի անցումն ընդ դուռն մահու 596:
Աղքատի եւ տնանկի զանազանութիւնն. եւ թէ եօթն եւ դասք
աղքատաց. եւ զի զօրութեամբ քահանայք կոչին 359:
Աղքատութիւնն յերեք բաժանի. եւ զի՞չ (մեծութիւն եւ աղքատութիւն
մի տար ինձ) 435:
Աղքատաց եւ աղքատասիրաց եւ հալածելոց վասն Է՞ր միապէս
խոստացեալ լինի արքայութիւնն 549:
Աղքատաց եւ տնանկաց ինամքն՝ օրինակին ի ինամս անասնոց 377:
Աղքատի հոգեւ մեղութեան շահն ցուցանի 430:
Աղօթելն մեր յեկեղեցիս՝ ունի բազում պատճառս 705:
Աղօթից առանձնական եւ հասարակաց զանազանութիւնն. եւ թէ ո՞յք
են ինն ժամք աղօթից 339:
Աղօթից օգնութիւնն 333:
Աղօթից սրբութիւնն երեք է. եւ թէ հաճոյական աղօթն զոր Աստուած
լսէ՝ ի չորս կողմանէ կատարի 331:
Աղօթից ժամքն քանի՞ք. եւ թէ վասն Է՞ր ի գիշերի աղօթեմք 334:
Աղօթից վեց եղանակն. եւ թէ ո՞րպիսի աղօթից ոչ լսէ Աստուած 359:
Աղօթից շատախօսութիւնն զի՞նչ 320:
Աղօթից սքանչելի գործ գոլն քան զայլ գործս երկոտասան
պատճառաւ 322:
Աղօթիւք մարմնական խնդիրք թէ վասն Է՞ր տրին, պատճառքն

ցուցանին. 328:

Աղօթն եօթն կերպիւ հաճոյ լինի. եւ եօթն են արգելմունքն. եւ թէ որպէս օգուտ եւ գովելի է 325:

Աճումն եւ առատութիւն ի գոյս ի վեց իրաց յայտ է՝ 480:

Ամբակումայ՝ (տեսէք արհամարհոտք զարմացարուք եւ եղծարուք ասելն ցուցանի 277:)

Ամբարտաւանին հակառակ է Աստուած վասն տասն պատճառի 243:

Ամուսնութեան պատուականութիւնն^{օօօ}

Ամուսնութեան թշուառութիւնն. եւ զի՞նչ կուսութեան մեծութիւն 412:

Ամպոյն հովանի գոյն ի վերայ Քրիստոսի. եւ զի՞նչ ձայնն 496:

Ամօթն եւ տրտմութիւնն որպէս զանազանին 395:

Այլակերպութեան տասն գլխօրէն հարցմունքն եւ մեկնութիւնն 481:

Այլակերպութեան ոչ գոլն առ աչօք ըստ ոմանց 493:

Այրեաց ունիլն երեք իրս վասն ողջախոհութեան 417:

Այր կոչիլն Ստեփաննոսի՝ երեք նշանակութիւնն ունի. եւ է պատկեր Աստուծոյ եւ նման տասն եղանակաւ 671:

Անապական ցուցանի խաչն Քրիստոսի 538:

Անառակ որդւոյ նշանակելն զմեղաւորս 63:

Անասնոց եւ բուսոց ինամ տանիլն ցուցանի. եւ զի՞նչ զպտղաբեր ծառս մի հատցես, եւ այլն 361:

Անարժանից դասքն քանի՞ք են որք ոչ մասն ի պատարագն. ո՞րք արժանաւորքն 155:

Անդրանկութեան խորհրդոյ գերապատուութիւն թէ զինչ է՝ քսան եղանակաւ ցուցանի 675:

Անդրանկաց անարգիլն՝ եւ կրտսերաց պատուիլն 659:

Անզգամին ոչ ուղղիլն՝ ցուցանի տասն պատճառաւ 101:

Անկումն եւ մահ սատանայի՝ է երեք 577:

Անկումն դիւաց ե՞րբ, եւ յո՞ր դասուց 581:

Անկման մարդոյն ի դրախտէն տասն աստիճանքն. եւ թէ որպէս կարելի է ելանել վերստին 414:

Անհաւատութեան չարն եւ վնասն 81:

Անմահ եւ անապական մնալոյ մեր ի յարութեան պատճառքն բնական եւ բարոյական 620:

Անմտութիւնն սատանայի եւ իմաստութիւն մարդոյս՝ երկու կերպիւ ցուցանին 578:

Անողորմութեան գէնն եւ վնասն 370:

Անունս Ստեփաննոս որ է պսակ՝ վեց իրս բացայայտէ 670:

Անօգուտ նեղութիւնն ո՞ր իցէ՝ զոր կրեն ոմանքս 558:

Անօրէնութեան կնքիլն ի քսակի ըստ Յոբայ զի՞նչ 213:

Աշակերտաց եօթանասնից կոչման պատճառն՝ եւ արձակիլն ի քարոզութիւն 468:

Ապաշխարութեան սահմանն եւ գործն 302:

Ապաշխարութեան եութիւնն է յերից. եւ թէ տասն են տեսակք ապաշխարութեան. եւ մինն է ընդունելի 299:

Ապաշխարութեան հինգ են եղանակք. եւ վաղվաղակի ապաշխարելոյ պատճառքն 300:

Ապաշխարութեան օրինակն ի բազում իրս ցուցանի՝ ի կենդանիս՝ եւ
 յանկենդանս 301:
 Ապաշխարող մեղաւորն՝ ընդունելի ցուցանի Աստուծոյ, քան
 զհպարտացեալ արդարն 311:
 Ապստամբութիւն կոչիլն նեռին. եւթէ վասն է՞ր ի յետին ժաեմանակս
 գայ. եւ թոյլ տալն Աստուծոյ նմա 610:
 Աշաշնորդաց եկեղեցւոյ տնտեսութեան որպիսութիւնն 438:
 Առնակին մարդոյ սեղեխ գոլոյ վնասն 124:
 Առաւել սիրոյ հինգ նշանակն 684:
 Առաւօտ կոչի Քրիստոս վասն տասն պատճառի 700:
 Առաւօտու աղօթից պատճառն 341:
 Առաւօտու աղօթից տասն ազգ օրինակն եւ վկայութիւնն 344:
 Առաքելութեանն գործ է ըստ տասն եղանակի. եւ զի՞նչ է որոշիլն
 յաւետարանն Աստուծոյ 693:
 Առաքելոց երկոտասան ընտրիլն ի Քրիստոսէ՝ ցուցանի քսան
 պատճառաւ 462:
 Առաքիւնութեան սահմանն բաժանումն 95:
 Առաքիւնութեան երեք են տեսակք. եւ ո՞րք ի նոցանէ գերագոյնք 330:
 Առաքիւնութեան գործն զի՞նչ իցէ 96:
 Առաքիւնութեան գովութիւնն 97:
 Առաքիւնութեանց աստուածայնոց զանազանութիւնն 84:
 Աստուածաբանութիւնն ի չորս տրամատի 565:
 Աստուածածնի բաղդատիլն ծիածանի բազում պատճառաւ 506:
 Աստուածածնի նմանիլն դրախտին եղեմայ 512:
 Աստուածածնի հոգւով եւ մարմնով յերկինս գոլն՝ վեց վկայութեամբ
 հաստատի 518:
 Աստուածածնի գովասանութիւնք 519:
 Աստուած վասն է՞ր ետ զսուրբս իւր ի փորձանս մարմնոյ 554:
 Աստուծոյ ոչ ստեղծանելն համանգամայն զմարդիկ որպէս
 զհրեշտակս. եւ կամ զԱդամ եւ զկինն ի միասին 91:
 Աստիճանք եկեղեցւոյն ինն են. եւ թէ որպէս արին 170:
 Աստիճանք զգալի լուսաւորաց չորս են՝ որք նշանակեն զիմանալի
 լուսաւորս 683:
 Աստուճանաւորաց հոգեւոր արատաւորութիւնն քանիք են 177:
 Արարողութիւն մկրտութեան չորս 151:
 Արբենալն Դ կերպիւ իմանի ի գիրս 265:
 Արբեցութեան տան՝ չարեաց տեղի գոլն 601:
 Արգանդ անորդի եւ ստիւնք ցամաքեալ զո՞րս պարտիւք իմանալ 270:
 Արդարութիւն առ մարդիկ եւ առ ընկերս ո՞րպէս գոլ պարտի 131:
 Արդարութիւն անհաւատից ո՞ր իցէ 424:
 Արդարութիւն անպիտան եւ անօգուտ չորս է 132:
 Արդարութիւն սահմանն եւ երեք եղանակքն նորին 130:
 Արդարութեան սերմանիլն եւ պտղոյ հնձիլն 127:
 Արիութեան գործոց ցուցումն ի չորս իրաց 105:
 Արծաթասեր մարդիկ երեք ազգք՝ նախատին ի Սողոմօնէ 261:
 Արծաթսիրութեան մոլութիւնն կրկին է. եւ թէ կռապաշտութիւն

համարի տասն կերպիւ. եւ ունայն է սեր նորին 258:
Արքայութիւնն երկնից որ է տեղի փառաց՝ ի տեսիլն Յօհաննու
(քաղաք ասի մեծ եւ գեղեցիկ եւ քառակուսի.) որոյ երկոտասան
դրունքն՝ օրինակին երկոտասան ցեղիցն Իսրայէլի մեկնողաբար 649:
Աւագ տօնից վկայք գոլն ծննդեանն եւ յայտնութեանն Քրիստոսի՝ վեց
իմն եղանակաւ ցուցանի 653:
Աւագ տօնից չորս գոլն՝ ունի զբազում համեմատութիւնս եւ
զպատճառս խորհրդաւորս 655:
Աւետարանչին Յօհաննու տասն գովութիւնն 696:

Բ

Բաբիլօսի որ ասի խառնակութիւն՝ նշանակելն զաշխարհս 468:
Բամբասելն զառաջնորդս՝ ցուցանի գոլ մեծ մեղք 232:
Բամբասողաց եւ յօժարութեամբ լսողաց մեղքն 233:
Բամբասողաց նման գոլն ութն զարշելի կենդանեաց 230:
Բանն թե՛ (հայեաց ի քեզ՝ գուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քում.
տասնեկի մտօք ցուցանի 49:
Բան պատուիրանին Աստուծոյ՝ չորս եղանակաւ պահի ի սրտի. եւ
տասն օգտութիւն ունի 451:
Բերքն սուրբք՝ յընտանի մեղր առակին 100:
Բարդուղիմէոսի զմարմնոյ հանդերձն մերկանալոյ խորհուրդն եւ
պատճառքն 470:
Բարի գործոց երեք տեսակ գոլն՝ վեց պատճառաւ ցուցանի 322:
Բարի արդարութիւնն ե՞րբ լինի չար եւ անպիտան 133:
Բարի մեծութիւնն՝ երեք եղանակաւ է. եւ վասն չորս պատճառի արի
յԱստուծոյ 428:
Բարկութեան վնասն տասն գլխով ցուցանի 234:
Բարք մարդկան որք հաճոյ են Աստուծոյ՝ են եօթն. ընդ դէմքն սոցին
եւս է 704:
Բեմն սրբազան եւ սեղանն սուրբ եկեղեցւոյ զի՞նչ նշանակեն 709:
Բերանոյ եւ լեզուի չորս իրօք առաւել մեղանչելն 234:
Բերանոյ լնանիլն կոպճով եւ հաց ստութեան ո՞ր իցէ ըստ իմաստնոյն
441:
Բորբոքումն հրոյ ի բարկութենէն Աստուծոյ երեւի կատարիլ ի տասն
տեղւոջ. ի սողօմ, յեգիպտոս, եւ յայլ 635:

Գ

Գալուստն Քրիստոսի ի փայլակն օրինակի Դ պատճառաւ. եւ թե
անգիտելի է գալուստն եւ կատարածն 626:
Գալուստ նեռինն 627:
Գանձն մարմնաւոր՝ վեց պակասութիւն ունի. եւ հոգեւորն վեց
բարութիւն 434:

Գաւազանի յօձ փոխիլոյ նշանակութիւնքն 535:
 Գինի ըմպել՝ չորս ազգ մարդկան հրաման տայ իմաստունն. եւ թէ ո՞րք
 որոց չէ պարտ 602:
 Գինի յըմպելոյ ժամն՝ նախ օրհնելն եւ շնորհակալիլն 349:
 Գինւոյ վնասն Գ ազգ մարդկան 266:
 Գիտութիւնն բարի եւ չար ցուցանի 271:
 Գիտութեան տեսակն է կրկին 98:
 Գողին հնարն զի՞նչ իցէ 26:
 Գողութիւնն հոգեւոր՝ մեծ ցուցանի քան զմարմնաւորն երեք
 պատճառաւ 229:
 Գողութեան պատուիրանն ցուցանի 237:^{ոո}
 Գողութեան անպատիժ գոլն յերեք տեղւոջ 271:
 Գողոց ոչ է երդումն վասն երկու պատճառի 591:
 Գովասանութիւն խաչին Քրիստոսի 342:
 Գործ ողորմութեանն՝ բարձրագոյն ցուցանի քան զայլ
 բարեգործութիւնս 375:
 Գործ ողորմութեանն եւ արդարութեանն Աստուծոյ ի ծագումն
 արեւուն եւ ի ցօղ առաւօտուն օրինակի չորս պատճառաւ 700:
 Գործելն եւ պահելն ի դրախտին զի՞նչ 108:
 Գործ եւ վաստակ սահմանիլն մարդոյս ի սկզբանէ 174:
 Գունդքն երկոտասան հրեշտակաց 462:
 Գրաւական եւ առհաւատչեայ անմահ կենացն առ մեզ՝ վեցիւք իմանի
 608:
 Գրիգորիոսի համեմատ գոլն նախնոյն Ադամայ 418:
 Գոտի ածելն Պետրոսի անձամբ անձին եւ գոլն մանուկ եւ այլ 687:

Դ

Դատաստան առնելն Քրիստոսի եւ հարցաքննութիւնն. եւ վեց անգամ
 որոտալն ի վերայ մեղաւորաց 629:
 Դատաւորք ի դատելն վասն Է՞ր նստին յաթոռ 459:
 Դատելն եւ յանդիմանելն՝ Է չորիւք ընտրութեամբ 446:
 (Դարձեալ Պետրոս եւ տեսանէ զաշակերտն եւ այլն՝ զո՞ր տեսութիւն
 ունի. եւ զի՞նչ թէ, (կացցէ դա) 697:
 Դաւանութիւն հաւատոյս մերոյ 750:
 Դաւթի եռապատիկ պարգեւքն. եւ թէ որպէս Բաղդատի առ Տէր
 բազում նմանութեամբ 668:
 Դեւք անկեալք՝ քահանայութիւն մարգարեութիւն եւ թագաւորութիւն
 ոչ ունին 168:
 Դիւաց սերմանելն զկռապաշտութիւն վասն Է՞ր. եւ զի՞նչ զպարտս
 հոգւոյ պահանջելն 280:
 Դուռն բազում եղանակաւ ասի 387:
 Դուռն բազում կերպիւ իմանի 523:
 Դուստր վերնոյն Սիօնի կոչիլն եկեղեցւոյս՝ Է բազում պատճառաւ 707:
 Դրախտի տնկիլն եւ անդ դնիլ մարդոյն եւ պատրիլն 572:
 Դրան եկեղեցւոյ օրհնութիւնն եւ օծումն զի՞նչ 390:
 Դրոշմն ճակատուն զի՞նչ 151:

Դրունքն երկոտասան քաղաքին Աստուծոյ ըստ տեսլեան 463:

Ե

Եզեկիայի յաւելումն ի կեանս հնգետասան ամ՝ ուսուցանէ զորպիսութիւնս մահուանց թէ, տարածամ իցէ թէ այլ ինչ 602:

Ելանել կարեմք յերկինս ի ձեռն վեց իրաց 62:

Եկեղեցի երկինք Է ի վերայ երկրի. եւ ունի զնմանութիւն նորին տասն պատճառաւ 708:

Եկեղեցւոյ պարտեզ կոչիլն 523:

Եկեղեցւոյ կարգ վասն Է՞ր բանիւ աւանդեցաւ 143:

Եկեղեցւոյ շինութիւն՝ ցուցանի ի խորանն վկայութեան տասն փեղկեան եւ եռայարկ. եւ թէ խորանն զի՞նչ նշանակէ 383:

Եկեղեցւոյ սեղանոյ՝ աւազանի եւ այլ սպասուց օրհնութեան հակառակօղքն 385:

Եկեղեցւոյ եւ Զրիստոս ի տիպ փեսայի եւ հարսին օրհնակիլն եւ բաղդատիլն տասն եղանակաւ 706:

Եկեղեցւոյ տեսութիւն թէ, (տեսի կին մի՝ որ նստեալ էր ի կարմիր գազանին եօթնագլխի եւ այլն.) եւ թէ գազան կոչի բանսարկուն 400:

Եկեղեցւոյ կին կոչիլն. (կին մի արկեալ զհլրեաւ զարեգակն եւ այլն.) եւ թէ Զոմ անուն է 398:

Երազք եւ տեսիլք քանի՞ եղանակօք իցեն 45:

Երազոյ հարցումն 120:

Երաժշտական երգն հինգ կերպիւ է անյարմար 583:

Երանութեան որպիսութիւնն եւ սահմանն. եւ թէ ո՞րք իցեն երանելիք 548:

Երանութեան զանազան կերպիւ գրիլն յոմանց. եւ թէ ո՞րպէս պարտի իմանիլ եւ զի՞նչ իցէ 644:

Երանութեան տասն են մասունք. հինգ առ մարմինն. եւ հինգ առ հոգին 647:

Երդմամբ երեք ազգ մեղանչի 16:

Երդումն Տեառն Դաւթի ճշմարտութեամբ զի՞նչ եւ վասն Է՞ր պտուղ որովայնի նորա ասի Զրիստոս 667:

Երեկոյի աղօթից պատճառքն 349:

Երինջ կիրթ գոլն Եփրեմի զի՞նչ 275:

Երիտասարդաց մահն Դ պատճառաւ 605:

Երկնաւորաց տօն կատարելն հարսնացեալ եկեղեցւոյ յերեք ժամանակս 409:

Երկնից եւ չորս տարերաց Գ ազգ ձայնիւ խրատելն զմարդիկ ի դատաստանին 631:

Երկնի եւ երկրի բորբոքիլն. եւ ո՞ր իցէ ներքին եւ միջին եւ վերին դժոխք. եւ թէ զի՞նչ (կերիցէ զերկիր եւ զամենայն բոյսս այլովքն) 639:

Երկնչիլ պարտ է գոլ մեզ ի դատաստանէ վերջնոյ տասն պատճառաւ. 643:

Երկրագործութեան բարի գոլն 109:

Երկրպագութեան արարածոց արգելումն 278:

Երրորդութեան ճշմարտութիւն՝ երեք վկայութեամբ հաստատի 56:

196: Եւա Է՞ր ոչ ի հողոյ, այլ ի կողից ստեղծաւ. եւ զի՞նչ թմրիլն Ադամայ

Եօթանասուն եւ երկու աշակերտացն նախանկարք եւ օրինակք բազումք են 466:

Եօթանց եւ ութնից բաժինքն ո՞րք իցեն. եւ տեսութիւն եօթն թուոյն բազում է 363:

575: Եօթն գլուխն եւ տասն եղջիրն սատանայի եւ տտան քարշելն զի՞նչ

Եօթն դասուց սրբոց ի զանազան սիւթս հրեղէն գոլն 561:

Եօթանասուներորդ եօթանց համառօտիլն ըստ Դանիէլի 468:

657: Եօթն սուրբք վասն էր եղան յաւագ տօնս. եւ զի՞նչ եօթանց խորհրդն

Ձ

Ձգայարանք մեր՝ գյատկութիւն դրան ունին ըստ վեցից 389:

Ձղջման ի մեղաց՝ վեց են պատճառք. եւ թէ ի գղջումն թողանին մեղք թէ ո՞չ 306:

Ձուրն եւ սուտն սատանայի զի՞նչ են եւ որպէս որոշին 433:

Ձրպարտութեան եղանակն՝ է բազում 141:

Ձօրութիւն խոստովանութեան զի՞նչ է 310:

Ձօրապետի չորս ազգ իմաստութիւն ունիլն ի պատերազմի 425:

Ը

Ընթացումն ի մեղս է երկու իրօք 281:

Ընտրելոց վախճանն թեպէտ է մահ՝ այլ խնամ գոլն ի վերայ ևոցա եւ այցելութիւն՝ տասն պատճառաւ ցուցանի 607:

Թ

Թագաւորութիւնն երկնից կրկին իմանի. եւ թէ զի՞նչ իցէ 552:

Թերահաւատից տարակուսանաց բանքն ընդդէմ յարութեան մարմնոց. եւ հարցումունքն զանազանք. եւ ևոցին պատասխանքն 617:

Թշնամոյ յաջ եւ յահեակ պատերազմն չորիւք 433:

Թշնամեաց եւ ատելեաց սեր եւ բարի առնելոյ պատճառքն 371:

Թշուառութիւն աղքատին զի՞նչ է 430:

Ժ

Ժամուց սկիզբն ընդԷ՞ր մէջ գիշերն է. եւ զի՞նչ Տեր եթէ զշրթունսն եւ Տեր զի բազումն եւ այլ ամենայն ժամուց խորհուրդքն 334:

Ժառանգաւորաց եկեղեցւոյ հոլանի հանդերձն. եւ զի՞նչ է ասելն ժառանգաւորք 187:

Ի

Իմաստնոյն երկու իր խնդրելն աղօթիւք 431:

Իմաստութեան բաժանումն ի տեսականն եւ ի գործնականն 101:

Իմաստութեան գովութիւնն Ժ եղանակաւ 103:

Ինն անգամ աղօթից խորհուրդքն յաւուրն զանազան պատճառաւ. եւ

երեք անգամ աշխարհականցն 338:

Ինն դասուց հրեշտակաց կարգաւորութիւնքն՝ ներգործութիւնքն՝ եւ լուսափայլութիւնքն 570:

Ինքնագիր եւ արտաքոյ թուոյ ասիլն սաղմոսիս փոքր Էի՝ երեք պատճառս ունի 658:

Իշխանութեան հոգեւոր եւ մարմնաւորի բանք. (որ հանճարեղն իցէ՝ եւ այլն) 422:

L

Լաւ գոլն երթալ ի տուն սգոյ՝ Է չորս պատճառաւ 601:

Լեզու խաղաղ եւ հանդարտ՝ ծնանի տասն բարութիւնս 235:

Լեզուի մահու առիթ գոլն վասն տասն պատճառի 220:

Լեզուի պոռնկութիւնն եւ կուսութիւնն 405:

Լեզու հոգեւոր եւ մարմնաւոր բարութիւնն. նաեւ տասն մեղքն եւ չարիքն 221:

Լեռն Տեառն միսիլն ի Յոբ ցուցանի 591:

Լոյս իմանալի կոչիլն աշակերտաց համեմատութեամբ զգալի լուսոյ տասն եղանակաւ 701:

Լուսաւորչիւն վասն Է՞ր Գրիգոր կոչեցաւ 421:

Լուսաւորչիւն ի գուբ անկման պատճառքն 418:

Լուցման ջահից եւ լապտերաց եկեղեցւոյ՝ ծածկութի սեղանոյ՝ եւ ինկարկելոյ՝ եւ ամենայն պաշտօնեից նշանակութիւնքն 710:

Լսելիքն ի Ե իրաց պատիլ պարտին 417:

Լցաւ երկիր փառօք եւ գիտութեամբ Տեառն եւ այլն զի՞նչ 276:

Խ

Խաչն վասն Է՞ր յայլ եւ այլ նիւթոյ կազմի. զի նախատիպն Էր փայտ 536:

Խաչ անունն զի՞նչ Է. եւ վասն Է՞ր քառաթեւ՝ եւ ձեւն միայն պաշտելի 542:

Խաչն նշան Է հակառակութեան ըստ զօրութեան, ներգործութեան, տեսոյն, եւ ձեւոյն 546:

Խաչի նի՞ւթն Է պաշտելի թէ գործն. եւ թէ զի՞ օծանի եւ օրհնի. զի Քրիստոս ի նմա Է միացեալ 537:

Խաչի բանք. (փայտ կենաց Է ամենեցուն այլովքն 531:

Խաչին որ յերեսս դրոշմի եւ ի կերակուրս՝ որ Է օծումն եւ օրհնութիւն 537:

Խաչի տօնն եւ հրաշքն՝ եւ պատմութիւն մասին խաչափայտի որ ի Յիսուսիմէ կոյսն 534:

Խոկումն յառաջ քան զխոստովանութիւնն Է հարկաւոր. եւ չէ պարտ խառնել պատմութիւն ի խոստովանութիւնն 318:

Խոնարհութեան գովութիւնն եւ օգտութիւնն 245:

Խոստովանութիւն մեղաւորին՝ պարտի գոլ արագ. եւ պատճառն ցուցանի 319:

Խոստովանութիւնն կատարեալ՝ երկոտասան հարկաւոր իրօք լինի 315:

Խոստովանութեան յապաղումն մինչ ի հիւանդութիւնն եւ յաղուհացսն՝ յիմարութիւն ցուցանի 321:

Խոստովանութեան հարկաւորութիւնն. եւ թէ քահանայից պարտ է խոստովանիլ. ցուցանի խորհուրդն եւ օգտութիւնն 308:

Խոստովանահօր զգուշութիւնն եւ եղանակ գիտութեանն որպէս գոլ պարտի 189:

Խորագիտութիւն օձին ի դէմն առաքելոցն եւ միամտութիւն աղաւնւոյն զի՞նչ իցէ 469:

Խորթն եւ որդին՝ չորիւք որոշին 560:

Խորհուրդ մկրտութեան եւ խաչին՝ է մի եւ նոյն 147:

Խորհրդոյ աւանդիլն հացիւ եւ գինւով վասն Է՞ր 160:

Խորհրդոյ եկեղեցւոյ որքանութիւնն 144:

Խորհրդոյ եութիւնն եւ արարողութիւնն զի՞նչ 161:

Խորհրդոյ մեղաց զգուշութիւն պարտի գոլ 217:

Խորհրդոյ սուրբ պահիլն ի մեղաց՝ հաստատի վկայութեամբ 218:

Խորհրդոյ պատարագի ցուցումն ժողովրդեան 158:

Խրատն Աստուծոյ՝ նշան է սիրոյ 457:

Խրատ իմաստնոց՝ ոսկւոյ եւ սարդիոնի համեմատի 450:

Խրատու եւ հնազանդութեան բանք 448:

Ծ

Ծաղրն նախատելի ցուցանի 239:

Ծառ կենաց է աստուածածինն բազում օրինակաւ 526:

Ծառայի կտրիլն ընդ մէջ երեք կերպիւ է 441:

Ծիծաղն ուստի՞ գոյանայ 239:

Ծիծաղիլն մարդկան ո՞յր վասն իցէ 240:

Ծիծաղելոյ վնասն ո՞րքան, եւ զի՞նչ պատիժն 241:

Ծնունդն հոգեւոր եւ մարմնաւոր՝ վեցիւք համեմատի եւ զանազանի 149:

Ծնունդ Զրիստոսի վասն Է՞ր առնեն այլազգիք ի տօսի Դաւթի եւ Յակօբայ. եւ ցուցումն աղանդոյն Արտեմօսի 664:

Ծնունդն Զրիստոսի ի դէկտեմբերի քսան եւ հինգ՝ սուտ գոլ ցուցանի հնգետասան վկայութեամբ 665:

Ծնօղքն պատուելիք են բազում պատճառաւ 18:

Ծովու նմանիլն կենացս այս. եւ կորնչիլն հոգւոց վեց ցեղ որոգայթիւք 510:

Կ

Կամօք չարացեալն եւ անգիտութեամբն՝ երիւք ճանաչի 446:

Կամքն եւ ժամանկն ո՞րպէս փոխեն զչարն ի բարի եւ զբարին ի չար 354:

Կանուխ եւ անազան անձրեւու հոգեպէս տեսութիւնն՝ է տասն 700:

Կաշառոյ վեց վնասն ի տուօղն եւ յառնօղն ի դատաստանի 460:

Կարգաւորաց ի գինւոյ ամենեւին արգելիլն. եւ կրկին. եւ կրկին է զօրութիւնն գինւոյ. եւ թէ ո՞յք ըմպիցեն 267:

Կարգի ունիլն զմաքրելն զլուսաւորելն եւ զկատարելագործելն 166:

Կարգ ունիլն ամենայն իրի 176:
 Կարգ ներքին մաքրելեացն են Ե 173:
 Կենդանիքն աղօթել պարտին վասն ննջելելոց ինն պատճառաւ 592:
 Կենցաղական ճանապարհք երկու են 9:
 Կինն Եւա ի՛ւ ասի բարի եւ օգնական մարդոյ՝ որ պատճառ եղել
 յանցման 192:
 Կին պոռնիկ կոչիլն կենցաղոյս. նաեւ նորոյն Յոսմայ 404:
 Կնոջ ոչ մտանելն յեկեղեցի ի ժամ մկրտութեան 145:
 Կնքահայրն զի՞նչ նշանակէ 145:
 Կշռելն զբաւականն եւ զարժանն ըստ առակին զի՞նչ 436:
 Կշռոց եւ վաճառաց նենգութիւնն 138:
 Կողին շինիլն կին եւ ածիլն առ Ադամ զի՞նչ 194:
 Կոյսն պարտի ունիլ վեց իրս 416:
 Կորիս եւ դադան մի մեղս գործելով՝ վասն ո՞ր պատճառի պատժեցան
 243:
 Կուսի ունիլն զերկոտասան կերպ փառաց՝ ցուցանի երկոտասան
 աստեղօքն յերկինս 518:
 Կուսի ծնունդն ի Յովակիմայ եւ յԱննայ Է. եւ թէ վասն Է՞ր դուստր եւ ոչ
 որդի 529:
 Կուսին Մարիամու չունիլն զչորս պակասութիւնս կանանց. եւ
 երանիլն որովայնին երկու պատճառաւ 643:
 Կուսութեան վեց եղանակն ընդդէմ վեցեկի պոռնկութեան 405:
 Կուսութեան եւ ամուսնութեան զաւակք ո՞յք. եւ ո՞րն իցէ առաւել
 ծնունդ 411:
 Կուսութեան օգտութեան հինգ եղանակն. եւ ցուցումն
 իւրաքանչիւրոցն 413:
 Կռապաշտութիւնն երեք ազգ Է 14:
 Կռապաշտութեան աստիճանքն. եւ քանդակելն դրօշելն եւ կուռք
 անունն զի՞նչ 280:
 Կռապաշտութեան մեղքն մեծ. եւ թէ ուստի՞ սկսաւ. եւ չարիքն
 անխտիր 279:
 Կրակի եօթն կերպիւ շիջանիլն՝ ցուցանէ զշիջումն սիրոյն Աստուծոյ ի
 մեղս 563:
 Կրօնաւորաց եւ մոնոզոնաց զգեստուց զանազանութիւնն երեք 704:

Յ

Հալալ ամուսնիւն որպէս լինի պղծեալ 113:
 Հալածումն վասն Զրիստոսի՝ Է երանութիւն եւ բարութիւն 549:
 Հակառակութիւն ոմանց թէ, ջուր պարտ Է խառնել ի խորհուրդն. եւ թէ
 ոչ Է պարտ պղծեալ տաճարի ընթեռնուլ 386:
 Հաճոյական աղօթք ո՞րն իցէ. եւ թէ՛ բազում Է շահ յաղօթից քան յայլ
 առաքիւնութեանց 329:
 Համբերութեան օգտութիւնն տասն գլխով 238:
 Հայիոյութիւն լեզուին ո՞րպէս Է մեծ մեղք 228:
 Հայր ասելն մեր Աստուծոյ՝ տասն ազգ բարութիւն ցուցանէ մեզ 60:
 Հայր կոչի Աստուած իմն եղանակաւ 59:

Հայր մեր վասն է՞ր ասի եւ ոչ իմ. եւ թէ զի՞նչ յերկինս 61:
 Հայր մերին մեկնութիւնս 64:
 Հանճարեղաց առաջնոցդ գոլն ըստ չորից պատճառոց. եւ թէ չորիւք
 թիւրին 458:
 Հասարակ աւուր աղօթից պատճառքն 346:
 Հատուցմանց եղանակք չորս եւ 13:
 Հարիւրապատիկ վարձ ո՞րն իցէ 546:
 Հարսին եւ փեսայի զգեստք զարդու վասն էր եւ եօթն 202:
 Հարսն եւ դուստր վասն էր կոչին Աստուծոյ ժողովուրդք քրիստոնէից
 390:
 Հաց եւ աղ կտրելն զի՞նչ 349:
 Հացն եւ գինին ո՞րպէս փոխի ի մարմին եւ յարին Զքրիստոսի
 հարցանելն անհաւատից հնգիւք տարակուսանօք 162:
 Հացի եւ գինւոյ տեսակն ոչ փոխի ի պատարագն. եւ տեսակ փայտի
 խաչին վասն է՞ր յայլ այլ նիւթի փոխի 537:
 Հաւատն ուստի՞ գոյանայ 72:
 Հաւատն զի՞նչ շահ օգտութեան ունի 81:
 Հաւատն յո՞ր մասն է հոգւոյն. եւ թէ քանի՞ եւ հաւատք 73:
 Հաւատոյ սահմանն 71:
 Հաւատոյ սահմանն դարձեալ 76:
 Հաւատոյ աստիճանքն քանի՞ 74:
 Հաւատոյ չորեքտասան աստիճանքն 544:
 Հաւատոյ եղանակք քանի՞ 77:
 Հաւատոյ եւ յուսոյ զանազանութիւնն 86:
 Հաւատոյն բարի գործ հարկաւոր է 80:
 Հաւատացելոց պատիւն առաւել է քան զԱդամայ եւ զհրեշտակաց Դ
 կերպիւ 522:
 Հաւատարիմ բառն չորիւք իմանի 438:
 Հաւատարմութիւն խոստովանութեան երեք ազգ է 316:
 Հաւու երիցս խօսելոյ նշանակութիւնն 112:
 Հեղզն տարտամն եւ վատն ի գործս՝ նախատի 115:
 Հերձուածողաց կերպարանն եւ նենգութիւնն 439:
 Հերձուածողաց ամենեցուն ուրն եւ պատճառք 403:
 Հերձուածողաց բանքն՝ ի վնասակար մեղս առակին 100:
 Հիմարկէքն եկեղեցւոյ. բանքն եւ արարողութիւնն 381:
 Հիմն կոչի Զքրիստոս. եւ առաքեալքն. եւ հաւատն. որպէս զանազանին
 464:
 Հիւանդութեան եւ առողջութեան պատճառքն հինգն 66:
 Հիւանդութեան եւ առողջութեան մարմնոյ պատճառքն 357:
 Հնազանդութիւնն է ծառ կենաց եւ անմահութեան 456:
 Հոգեւոր կերակուրն եւ ըմպելին՝ չորս եղանակաւ իմանի 348:
 Հոգի իւրաքանչիւր՝ որպէս անսխալ ճանաչէ զհարն մարմին յառնելն.
 եւ թէ ո՞րպիսի մարմնով 617:
 Հոգիքն գնացեալք ի մէնջ՝ ունի՞ն վարձս կամ տանջանս մինչ ի
 կատարած, թէ ոչ 624:
 Հոգւոց թշնամիքն եւ վեց 556:

Յոգույն կրկին անգամ մաքրելն զՄարիամ. եւ զանազանութիւն երկոցունցն 528:

Յոգուց չորս իրօք զարդարիլն 98:

Յոգուց հաւատացելոց հարսն կոչիլն Քրիստոսի. առ որս թէ, (բազում դասերք ստացան զմեծութիւն այլովքն 406:)

Յողմն հարաւոյ՝ ի հոգին սուրբ օրինակի վեց իրօք 524:

Յովութիւնն Քրիստոսի ո՞յք են ոչխարք 663:

Յուր բորբոքիլն ի բարկութենէն Աստուծոյ զի՞նչ. եւ թէ՛ երեք պատճառաւ է խրատն եւ պատուհասն Աստուծոյ 635:

Յրեշտակապետաց բանք. (աթոռք անկանէին. եւ թէ հին աւուրց զծերն նշանակէ՝ որ ունի չորս յատկութիւն 564:

Յրեշտակաց երեց եղբայր կոչիլն մեզ. եւ չորս գերագանց պատուով առաւել գոլն մեր քան զնոսա. 579:

Յրեշտակաց պահպանութիւնն առ որսիցէ 383:

Յրեշտակաց երից երրակ դասուցս զնազանութիւնն. այս կարգ եւ յեկաղացիս գտանի 366:

Յրեշտակաց ուրախ եւ տօնակից գոլնի փրկութեան մարդկան 357:

Յօր կրկին վկայելն ի Յորդանան եւ ի Թաբօր զի՞նչ 496:

Ձ

Ձայնական աղօթից պատճառքն 352:

Ձկան որսալն ի գիշերի ունի վեց պատճառ 685:

Ճ

Ճաշելոյ խորհուրդն յետ յարութեան ի Տիբերիա. հացի ձկան եւ հրոյ գոյանալն. զի՞նչ եւ հարիւր յիսուն եւ երեք ձուկն ի յուռկանին այլովն 685:

Մ

Մախացօղն եւ նախանձն՝ նման է երից իրաց 249:

Մահացու մեղաց գոլն եւ ներգործութիւնքն 214:

Մահն զի՞նչ, եւ ի քանի՞ դէմս բաժանի 583:

Մահն ըստ քանի՞ դիմաց հասանի ի վերայ բնութեանս 290:

Մահն յօժար կամօք երկու է. բարի եւ չար. է եւ զգալի եւ իմանալի մահ եւ կեանք 584:

Մահ սրբոց պատուական եւ մահ մեղաւորաց չար որպէս իցէ. եւ թէ՛ ծառայ գոլն է չորս տեսակ 585:

Մահու դատաստանն բարի գոլ ցուցանի բազում պատճառաւ. եւ թէ ինն են խռովիչք քաղաքաց՝ եւ չունին իրաւունս 588:

Մահու յիշատակն դառն գոլ ցուցանի չորս պատճառաւ 586:

Մատնօղք մեղաւորաց ի դատաստանին՝ են ի վեց կողմանէ 631:

Մարգարեից սպանալիքն պատուհասի 276:

Մարդկեղութիւն բանին՝ ոտք կոչի չորս պատճառաւ 664:

Մարդն արդար՝ ի վեց կողմանէ ունի օգնական 137:

Մարդն գոլով պատկեր Աստուծոյ՝ բերէ յինքեան զնմանութիւնն չորեք կերպեան անթոռոյն 568:

Մարդն ի մեղս անկեալ, քանի՞ պատճառօք ոչ դառնայ եւ ապաշխարե
 299:
 Մարդն կշիռ արդարութեան իմանի 139:
 Մարդն համեմատի յանդաստան եւ յայգի 112:
 Մարդոյ կենաց ժամանակն տիւ եւ գիշեր արարեցելոյ չորս
 պատճառքն 342:
 Մարդոյ հակառակ գոլն սատանայի վասն է՞ր է այնքան 572:
 Մարդոյն առաջին երկոտասան պարգեւքն կորուսալք՝ լինին
 գտեցեալք սուրբ կուսին 521:
 Մարդ որ բարի գործէ եւ յետոյ ի մեղս անկանի եւ զղջանայ՝ յիշի՞ն
 բարիքն թէ ոչ 210:
 Մարդս եւ այլ կենդանիք՝ չորիւք զանազանին ի միմեանց 644:
 Մարիամու ի պարտեզ օրինակիլն. եւ թէ զի՞նչ պիտոյ է պարտիզին. եւ
 քանի՞ յատկութիւն ունի 513:
 Մարիամու ծնողաց պատմութիւնն 526:
 Մարիամու նաւ շահաբեր գոլն բազում օրիակաւ 507:
 Մարմին աստուածամօրն՝ ոչ ասի թարց հոգւոյ վերափոխիլ 504:
 Մարմինն եւ արիւնն վասն է՞ր ի հաց եւ ի գինի մեծարի 157:
 Մարմինն Զրիստոսի վասն է՞ր կոչի հաղորդութիւն եւ այլ ինչ 153:
 Մարմինք ո՞րպիսիք մնան ի կատարածի 623:
 Մարտիրոսաց պատարգիլն՝ է եռակի. եւ թէ վասն է՞ր յերկար
 համբերէին ի տանջանս 555:
 Մեծութիւն եւ աղքատութիւն մարմնոյ կրկին է 436:
 Մեծութիւն եւ փառք աշխարհի՞ ի հինգ է կապեալ 595:
 Մեծութիւն մարդոյն՝ չորս պատճառաւ տրի յԱստուծոյ 428:
 Մեծութիւն մարդոյ եւ մեծութիւն Աստուծոյ՝ զանազանին բազում
 իրօք. եւ թէ՛ մեծութիւն ոչ է չար ըստ կարծեաց ոմանց 426:
 Մեծութիւն յերեք բաժանի 434:
 Մեծութեան եւ աղքատութեան ըստ ինքեանց բարի գոլն. եւ թէ որո՞վք
 չարանան 427:
 Մեղանյ եւ զղջումն՝ լուացարան ասի մեղաց. յայտ է ի պոռնիկ կինն
 305:
 Մեղանչելն հինգ ազգ այնց՝ որք ոչ կատարեն զանդարծս ննջեցելոնցն
 593:
 Մեղաց ակամայն եւ կամաւորն որպէս որոշին 204:
 Մեղաց ապաշխարութեամբ թողանիլն. եւ թէ գոլով ի բազում մեղս՝
 կարե՞ վասն միոյն ապաշխարել 298:
 Մեղաց բաժանմունքն 213:
 Մեղաց եւ արդարութեան գործքն՝ երեք իրօք զանազանին 254:
 Մեղաց զանազանութիւնն ի չորից 211:
 Մեղաց կամաւորն եւ ակամայն. եւ թէ որպէս զանազանին 305:
 Մեղաց նշանակիլն ժանկի. եւ ունիլ զտասն յատկութիւն նորին. եւ
 զի՞նչ ի փսիածն դառնալ 312:
 Մեղաց պատճառ գոլն մահու. եւ արդարութեանն՝ կենաց 603:
 Մեղաւորն անհաւատութեամբ զչորս իրս Աստուծոյ արհամարպէ եւ
 արհամարիի 206:

Մեղքն երկու է մինն հիւանդութիւն. եւ մինն մահացու 449:
 Մեղքն եւ մահն եւ մահու չափն զի՞նչ են 212:
 Մեղքն նմանի քնոյ 121:
 Մեղքն ոչ միայն հոգւոյն, այլեւ մարմնոյն բազում վնաս առնէ 207:
 Մեռեալ եւ կենդանի հաւատոյ զանազանութիւնն 78:
 Մեռելոց եօթն ազգ քարոզ տալն կենդանեաց բարառնաբար 595:
 Միայնակեաց կոչիլոյ վեց պատճառքն. եւ թէ կրկին իրօք
 բարձրագոյնք են քան զամենայն կարգս լուսաւորելոց 703:
 Միայնակեցաց հրաժարելիքն յերիս գլխաւորին. նաեւ երեք եւս
 հրաժարելիք հոգեկան 703:
 Միայնակեացք եւ արեղայք յերիս բաժանին. եւ թէ որպէս նուիրին. եւ
 զի՞նչ գործս ունին եւ զորպէս զգեստս 174:
 Միքայելի պատերազմն ընդ վիշապին յերկինս զի՞նչ 580:
 Մկրտութիւնն եւ խոստովանութիւնն՝ զմի շնորհս ունին 313:
 Մկրտութիւն մի՝ երիս խորհուրդս ցուցանէ 150:
 Մկրտութիւնն նշան է մահուն Քրիստոսի 147:
 Մոնոզոնաց եւ սքեմաւորաց նուիրիլն ի կանոնս ինչ. գործք եւ
 արարողութիւնք նոցա զի՞նչ 703:
 Մովսեսի եւ Եղիայի վկայելն զի՞նչ ի յայլակերպութեան 495:
 Մտաց կրկին գործն եւ որոշելն զբարի եւ զչար 284:
 Մրջեան օրինակ գոլն ծուլից 105:

3

Յակօբայ առաքելոյ գլխատիլն 699:
 Յակօբայ եւ Յօհաննու տօնի ի վերջոյ կարգիլն՝ ունի 2 պատճառ եւ
 օրինակ 695:
 Յակօբայ եւ Յօհաննու աւետարանչի կանուխ եւ անագան անձրեւ
 կոչիլն հինգ պատճառաւ 702:
 Յակօբայ Տեառն գերազանց շնորհաց ցուցումն եւ պատիւն 669:
 Յակօբայ օժանելն զվեմն արձան. որոյ մեծ խորհուրդն ի Քրիստոս ի
 խաչ ի հիմն հաւատոյ եւ եկեղեցւոյ ցուցանի 546:
 Յառնելն ամենեցուն ամենայն անդամօք ի յարութեանն. եւ թէ
 ամենայն մարդիկ ի չորս դասս բաղանին 621:
 Յառնելն մարմնոյ մերոց վասն Է՞ր յետոյ եւ ոչ արդէն լինի. եւ զի՞նչ
 յական թօթափիլն ըստ առաքելոյն 615:
 Յարութիւն ամենեցուն մի թէ Է՞ ի մի հասակ եւ մի ժամանակաւ 622:
 Յարութեան հաստատութեան բանք ընդդէմ ուրացողաց բնական
 օրինակօք եւ վկայութեամբ գրոց 613:
 Յարութեան մեռելոց օրինակքն՝ երեւին ի հատն ցորենոյ՝ ի փիւնիկ եւ
 ի հօբալ հաւն. Յեղիա եւ ի Յովնան 608:
 Յարութեան մարմնոյ սահմանն 614:
 Յաւերժահարսուք եւ քաջք զի՞նչ իցեն 574:
 Յետուայ քահանայ մեծ կոչիլն՝ Է ըստ չորից. եւ զի՞նչ սատանայի կալն
 ընդ աջմէ նորա, եւ հրեշտակի սաստելն 544:
 Յիշատակիլն առաքելոնց եւ մարգարեից եւ այլոց ի պատարագն
 զի՞նչ 158:

Յիշատակ մահուան օգտակար ցուցանի 590:
 Յիսնակք երեք ի տարուոջն զհ՞նչ 497:
 Յղութիւնն Ովհաննու ի հոկտեմբերի տասն գոլ՝ թուականաւ ստուգի
 652:
 Յովելեայ վեց խրատի վասն պատուհասի թէ, (փող հարեք ի Սիօս
 այլովքն. եւ ցուցումն ևոցին 291:
 Յորդորմունք աղօթից քանի՞ք են. եւ ոյք խափանօղք 332:
 Յուդայի ազահութեան մեծ վնասն 256:
 Յուսոյ ոչ ամաչեցուցանելն եւ ներգործութիւնն 86:
 Յուսոյ սահմանն 85:
 Յօհաննու աւետարանչի գերագոյն պատիւն երկոտասան թւով քան
 զայլսն 695:

Ն

Նախագիտութեանց եւ երագոց երեք գլխաւոր օգտութիւնքն 46:
 Նախախնամութիւնն Աստուծոյ հասարակ եւ առանձնակի ցուցանի
 372:
 Նախանձ մախանք եւ չարակնութիւն որպէս զանազանին 250:
 Նախանձու առաւել չար գոլն քան զբարկութիւն եւ զսրտմտութիւն
 249:
 Նախանձու կրկին գոլն՝ չար եւ բարի. եւ չարին հինգ յատկութիւնն
 247:
 Նախատօնակն յերեկոյի սուրբ զգեստիւ զհ՞նչ 655:
 Նեղութիւն աւուրն դատաստանի որպէս լինելոց է. եւ թէ մեղաւորն
 ո՞ր կարէ փախչիլ 634:
 Նեղութիւնք հասարակ ամենայն մարդկան ի տասն գլխաւորին 609:
 Նեղութիւնք քանի՞ք են զորս կրեմք. եւ ո՞յք են պատճառք 288:
 Նեղութեան եւ վշտաց շահն եւ օգտութիւնն 290:
 Նեռն ո՞րքան իրօք պատրէ. եւ թէ չորս են կարապետք ևորին 611:
 Նեռին նեղութիւնն առաւել է քան զդատաստանին 610:
 Ներելի մեղքն յերից ճանաչի. եւ թէ՛ զհ՞նչ վնաս է մեզ յամենայն
 մեղաց 216:
 Նիւթ խաչափայտին վասն է՞ր միայն պաշտի. եւ ոչ ամենայն նիւթ
 խաչի 537:
 Ննջեցելքն ի դժոխոց կարեն ազատիլ չորս կերպիւ 594:
 Նշան մարդոյ չորեքին՝ թէ ի սերն Աստուծոյ է թէ ի խռովութիւն 210:
 Նշանք բազումք նախ քան զգալուստն Քրիստոսի. եւ թէ լուսաւորաց
 խաւարումն զո՞րս ցուցանէ 627:
 Նշանքն տասն եւ հինգ ի տասն եւ հինգ աւուրս նախ քան
 զդատաստանն. եւ վեց պատճառք ևոցին 641:
 Նշանքն եւ արուեստքն Ստեփաննոսի. եւ ևոցին վեց
 զանազանութիւնքն 674:

Շ

Շաբաթն հանգիստ կամ պարապումն լեալ ցուցանի 16:
 Շահ ի մեծութենէն զհ՞նչ 429:

Շինեալ եկեղեցոյս եւ կենդանի տաճարոյս հարցմունք. եւ ցուցումս պատճառաց 384:

Շնորհքն եւ աւորքն զանազանին 553:

Շնութեան բազում տեսակքն 23:

Շնութեան եւ պռնկութեան որդւոց վաղամահ գոլն. եւ թէ եւ թերակատարք ըստ երից. եւ անպատուով ծնողաց 605:

Շռայլութեան ներհակ գոլն առատութեան չորիւք. եւ զի՞նչ գործն. մանաւանդ առ քահանայս 268:

Շրթուք քահանային որպէս պարտի զգուշանալ եւ նմանիլ հրեշտակաց 185:

Ո

Ոգիայի պատժիլն. եւ զի՞նչ է դասք պարուցն 477:

Ողորմութիւնն որ զրկանօք եւ անիրաւութեամբ՝ առնել պարտի թէ ոչ. կամ թէ որոց՝ արդարո՞ց թէ մեղաւորաց 374:

Ողորմութիւն ի հազար ազգս առնելն Աստուծոյ՝ եւ ածելն զմեղս հարց յորդիս՝ բազում տեսութիւն ունի 208:

Ողորմութեան բազում օգտութիւնն 366:

Ողորմութեան բանք. եւ թէ քանի՞ք են ստիպօղք առ ողորմութիւնն 367:

Ովսեի մարգարեի պռնկիլոյ խորհուրդն եւ ոչ պղծիլն 274:

Որդունքն հրեղէն եւ անքուն զի՞նչ իցեն 640:

Որդւոց լսելն զխրատս ծնողաց. եւ թէ հայր մեր է Աստուած. եւ մայր եկեղեցին 453:

Որկրամոլութեան վեց վնասն եւ պակասութիւնն՝ որ նմանի վեց ազգ ցաւոց 264:

Որովայնամոլութիւնն զի՞նչ է. եւ թէ է ընդդէմ Աստուծոյ բազում կերպիւ 263:

Ութն օր կատարումն մեծամեծ տօնից վասն Է՞ր 654:

Ուսուցման եւ գիտութեան յաւելումն որպէս յաւելու ի ցաւս 99:

Ուսուցանօղք այլոց եւ ուսանօղք՝ ի չորս դասս բաժանին 445:

Ուրախութիւնն հուգեւոր եւ մարմնաւոր զանազանին 355:

Չ

Չարաց վաղամահ գոլն չորս պատճառաւ լինի 603:

Չարին եկամուտ գոլն ի բնութիւնս 136:

Չար լեզուի վնասն 227:

Չար օր մարդոյ՝ երեք է 284:

Չորեքին աւագ տօնից աթոռ հաստատութեան կոչիլն եւ վկայք 664:

Չորեքկերպեան աթոռոյ նշանակութիւնն առ քանի՞ իրս վերաբերի՝ զոր ետես Էզէկէլ 567:

Չորեքտասան թղթոց խորհուրդն Պօղոսի. նաեւ վասն Է՞ր զանուն իւր դնէ (Պօղոս ծառայ.) եւ թէ երկոտասանի՞ցն իցէ սա թէ ոչ 681:

Պ

Պահիլ պարտի լեզուն ի չարէ վասն բազում ատճառի 225:

Պահոց տեսութիւնն ի վերայ երից իրաց. եւ թէ քանիք են օգտութիւնքն 358:

Պահպանութիւնն հրեշտակաց հասարակ եւ մասնաւոր քանի՞ 582:

Պայծառակերպութեան միջոցքն մինչ ի յարութիւնն քանի՞ք են 492:

Պայծառակերպութեան տասն գլխաւոր բանքն եւ հարցմունքն 486:

Պատարագ աղօթից լաւ ցուցանի քան զարիւն զոհից 353:

Պատարագի խորհուրդեան արարողութիւնք եղանակաւ 153:

Պատարագողի կրկին լուացումն ձեռաց 156:

Պատարագողին նախ հաղորդիլն. եւ ապա զայլս հաղորդելն 159:

Պատիւ եւ փառք որպէս զանազանին 477:

Պատուհասի անցանիլն պաշտմամբ եւ աղօթիւք՝ ցուցանի Դ իմն օրինկօք 294:

Պատուհասն կրկին Է. վրեժ կամ պատիժ. խրատ կամ հարուած. եւ որպէս զանազանին 291:

Պատրաստ եւ զգուշ գոլն մեր այնպէս պարտի ի մէջ եկեղեցւոյ՝ որպէս ծառայ առաջի արքայի տասն եղանակաւ 705:

Պատուական գոլն մահ սրբոց 583:

Պատուելն զՏէր յարդար վաստակոց որպէս պարտի գոլ 479:

Պատուիրանն թէ մի շնար 21:

Պատուիրանն Ե երորդ մի սպանաներ 20:

Պատուիրանն թէ մի ցանկար այլովքն 30:

Պատուիրանաց տասանցն բանք 33:

Պարիսպ եւ ցանգ են մարդոյս օրէնքն 10:

Պարտեզ կոչիլն արքայութեան. եւ հինգ յատկութիւն պարտիզին՝ ցուցանէ զհեշտութիւն Ե զգայարանաց յարքայութեանն Աստուծոյ 651:

Պարտեզ փակեալ եւ աղբիւր կնքեալն վեց մտօք իմանի 522:

Պետրոս յերկոտասան որդիսն Իսրայէլի՝ Յուդայի Է օրինակ 683:

Պետրոսի դնիլն յԱստուծոյ իբրեւ զարեգակն ի վերայ հրէից չորս պատճառաւ. եւ թէ ըստ Զրիստոսի գյատկութիւն արեգական ունի 682:

Պետրոսի եւ Պօղոսի տօնքն վասն Է՞ր երրորդ կարգեցան. եւ զի՞նչ Է խորհուրդ երեք թուոյն եւ երկուց տօնիլն 681:

Պետրոսի եւ Պօղոսի նման գոլն չորս իրաց 694:

Պետրոսի վարդապետելն մինչ գլխիվայր խաչիւր 688:

Պոռնիկ կանանց վնասն առ արս ի հայեցմանէ ո՞րքանք իցեն 272:

Պոռնկութիւնն Է վեց ազգ՝ ընդդէմ վեց ազգ կուսութեան 402:

Պոռնկութեան ընդդէմ գոլն աստուածային օրինաց 124:

Պսակի մեծ խորհուրդն. եւ նշան մատանւոյն զի՞նչ 199:

Պողաւետ եւ անպտուղ աղօթքն. եւ թէ աղօթք՝ խնդրուածք՝ պաղատանք եւ գոհութիւնք զի՞նչ իցեն 323:

Պօղոսի կոչիլն լուսին, ունելով գյատկութիւն նորին բազում կերպիւ 684:

Պօղոսի անուան թարգմանութիւնն եւ գովութիւնն եւ ծառայ Զրիստոսի գոլոյ եօթն եղանակն. եւ զի՞նչ կոչեցեալն առաքեալ 692:

Պօղոսի պատուականութիւնն քան զայլ առաքեալսն տասն եղանակաւ. եւ բազում շահ օգտութեանն մինչ ի կայսր տանիւր 690:

Ջ

Ջրոյ եւ հրոյ երբեք ասելն շատ 272:

Ռ

Ռիշտն եւ ազահն՝ վեց իրօք առ վիժեալն հաւասարի 262:

Ս

Սահման արդարութեանն՝ ունի զմիջին կշիռն 132:

Սահման հաւատոյն 83:

Սահման քահանայութեանն եւ դիտաւորութիւնն զի՞նչ 164:

Սաղմոսարան եւ գործի օրհնութեան ո՞րք իցեն եւ զորո՞ց իմանալ 663:

Սանտուխ կազմիլն սուրբ կուսին. եւ եօթն մատունքն 580:

Սանտուխն Յակօբայ եւ նշանակութիւնն. եւ զի՞նչ իջանելն յասորիս եւ ելանելն 546:

Սատանայ ուստի՞ Էր որ պատրեաց զմարդն. եւ թէ որպէս Է հակառակ Աստուծոյ. յո՞ր դասէ անկաւ 572:

Սատանայ վասն Է՞ր ոչ փրկի, եւ այլ հրեշտակ փոխանակ նորա ոչ ստեղծանի. եւ մեղքն Է անթողլի 573:

Սատանայի անկումն ո՞րքան Է. եւ թէ չէր նախանձեալ ընդ մարդոյն՝ մատնի՞ր ի հուրն թէ ոչ 576:

Սատանայի անունն ընդէ՞ր ոչ յիշի ի հիւս. եւ թէ ի նորս քանի՞ անուամբ կոչի 269:

Սատանայի երկու ամրոց եւ քաղաք շինելն. եւ Քրիստոսի կործանիլն չորիւք յաղթուեամբք 577:

Սատանայի զրպարտօղ լինիլն մարդկան 141:

Սատանայի իշխան կոչիլն. եւ կրկին կերպիւ գայթակղելի զմարդն 303:

Սատանայի յաջմէ եւ յահեկէ պատերազմիլն ընդ մեզ 431:

Սատանայի պատերազմն ընդ յերեք տեղուոջ 432:

Սեաւ եմ ես եւ գեղեցիկ բանն ի քանի՞ դեմս մեկնաբանի. եւ թէ զի՞նչ արեգական խեթիւ հայիլն եւ այլն 391:

Սերմանացան առակի մեկնութիւնն 110:

Սերման օրինակի արդարութիւնն 128:

Սեղան օրհնեքն նախ քան զկերակուրն, եւ յետոյ օրհնելն կրկին զի՞նչ 348:

Սեր աշխարհիս որպէս Է թշնամութիւն առ Աստուած 557:

Սեր ընկերին եւ Աստուծոյ՝ ընդ իրեարս կապեալ կան 93:

Սերն Պօղոսի առ Քրիստոս՝ երեւի ի հիւսգ իրս 694:

Սիրելին սուտ եւ ճշմարիտ՝ ըստ երից որոշի 591:

Սիրելոյ զմիմեանս պարտական գոլն մեր 88:

Սիրոյ բնութեան միացուցանելն 87:

Սիրոյ չորս յատկութիւնն 90:

Սիրոյ ընկերին զանազան պատճառքն 91:

Սիրոյ մեղութիւնն 84:

Սկզբնական մեղաց չորս վերքն ի հոգիս 214:

598: Սուգ անչափ ոչ պարտի գոլ ի վերայ մեռելոց վասն տասն պատճառի

Սուգն 2 եղանակաւ առաւել լինի 602:

Սուտ վկայելոյ մեծ վնասքն 27:

Սուրբք որք ոչ ունին մեղս՝ վասն Է՞ր տրին ի նեղութիւնս եւ ի չարչարանս 557:

Սպանումն անիրաւ՝ երեք եղանակաւ լինի 21:

Ստեփաննոս յո՞ր ազգէ էր. եւ զի՞նչ էր գործն 671:

Ստեփաննոս գերամբարձ եւ անգուգական փառքն քան զամենայն սուրբս. եւ թէ վասն Է՞ր բացան նմա երկինք. եւ ընդէ՞ր կանգնեալ ետես զՅիսուս 678:

Ստեփաննոս որպէս էր լի շնորհօք եւ ճշմարտութեամբ. եւ զի բազմապատիկ է շնորհացն անուն եւ զօրութիւն 673:

Սրբոց երանութիւնն ի վեց կողմանէ լինի. եւ իւրաքանչիւրն՝ ունի երեք մասն 645:

Սրբոց ուրախութեամբ կրելն զտանջանս վասն ի՞նչ իրաց էր 550:

Սրտմտութիւն եւ բարկութիւն՝ են այլ եւ այլ իր 235:

Վ

444: Վարդապետաց մտաց բաղդատիլն առ հայելին տասն եղանակաւ

Վարդավառ կոչիլն զի՞նչ նշանակէ 498:

Վեղար եւ գլխարկ արեղայից զի՞նչ նշանակէ 442:

Վերափոխումն Մարիամու. եւ թէ յո՞ր ցեղէ էր 499:

Վերափոխմանն պատմութիւն 524:

Վերափոխման տօնն վասն Է՞ր յոմանց մէկ օր. եւ յոմանց երեք օր տօնի. եւ մեք ինն օր տօնեմք եւ ի կիրակէի 505:

Վերջին դատաստանի բազում եւ ահագին իրաց պատահմունքն որք են տասն, յորդորեն ի յողբ եւ ի լաց 640:

Վերջին հուրն կատարածի ո՞րպէս սաստիկ վառի 632:

Վեմն եռակի ասի 544:

Վեմն եւ եօթն աչք վիմին եւ ծագումն՝ առ Չօրաբաբէլ եւ առ Քրիստոս մեկնին 543:

Վեմն որպէս էր Քրիստոսի. եւ զի՞նչ սրբութեանց գերիլն, եւ դագոնի կործանիլն 476:

Վկայութիւնն երեք է. սրտի, լեզուի, եւ արեամբ 547:

Վկայք երեք ճշմարիտք ո՞յք ընդդէմ մեղաւորին ի դատաստանի աւուրն 632:

Վրան ժամուն ի Մովսիսէ կազմեալ՝ իմանալեաց դասուցն նշանակի 571:

Վրեժխնդրութիւնն ի չորս տասակս բաժանի 237:

Վրեժխնդրութեան չորս վնասն 238:

Տ

Տանուտերաց յանաշխատ ընչից ողորմութիւնքն ընդունելիք են թէ ոչ. կամ աղքատք որք ոչ ունին զի՞նչ տայցեն 379:

Տապանակ ասի սուրբ կոյսն 327:
 Տապանակն վասն Է՞ր յառաջ ընթանայր եւ վեմն զկնի 475:
 Տապանակի չափն ո՞րքան. եւ զի՞նչ խորհուրդն. եւ յորո՞յ է տիպ 474:
 Տապանակի տօնն՝ եւ նաւակատեաց խորհուրդն 477:
 Տասանորդ մեր ո՞րն է այժմ 481:
 Տասն բանք օրինացն յերկուս տախտակս 13:
 Տասն հարուածքն Եգիպտոսի 39:
 Տարածամ մահուան բանք. եւ թէ երեք ազգ է տարածամն 282:
 Տեսական իմաստութեան օրինակ գոլն մեղուին 107:
 Տեսութիւն ընդարձակ՝ բանիս որ ասէ: (որովք եւ մեղանչէ ոք, նովիմքք
 եւ տանջի 41:
 Տեսութիւն հաւատոյ մտաց եւ աչաց որպէս զանազանին 72:
 Տեսութիւն սաղմոսին որ ասէ (փոքր էի ես յեղբարս իմ այլովքն՝
 ցուցանի առ հրեշտակս, եւ առ մարդիկ, եւ առ բանն մարդացեալ 660:
 Տգրուկ կոչիլն սատանայի վասն բազում պատճառի: եւ ո՞յք են երեք
 դասերքն 269:
 Տերունական բանի տեսութիւնն թէ, (եղիցին կամք քո այլովքն 66:
 Տերունականաց եւ այլ սրբոց տօնից վեց պատճառաւ ցուցումն 654:
 Տղայոյ զգուշանալն յերից իրաց. եւ հնազանդ գոլն հօր խրատու ըստ
 չորից 455:
 Տղայոց խրատու բանք. եւ թէ վասն Է՞ր գաւազանաւ խրատին 454:
 Տղայոց մահն 2 պատճառաւ ածի 604:
 Տնտես հաւատարիմ եւ իմաստուն ո՞յք իցեն. եւ նոյն առակի
 մեկնութիւնն կարգաւ 437:
 Տուն ասի արքայութիւնն. (իմաստութիւն շինեաց իւր տուն.) եւ է սեան
 ցուցումն 650:
 Տունն Աստուծոյ յանշունչ քարանց կազմեալ՝ եւ ժողովք քրիստոնէից
 վասն Է՞ր մի անուամբ եկեղեցի կոչին 706:
 Տուրք աղքատաց եւ նուէրք Աստուծոյ՝ ութն կերպիւ զանազանին 478:
 Տրդատայ ի տիպ եւ ի կերպ վարագի փոխիլոյ պատճառքն 420:
 Տրտմութիւն վասն չորից չինի 355:
 Տրտմութիւն Տեառն են մեղք մեղաւորաց 356:
 Տօն ամենայն սրբոց՝ վասն երեք պատճառի կացուցաւ 562:
 Տօնախմբութեան սրբոց պատճառի զի՞նչ 556:
 Տօնն զի՞նչ է, եւ քանի՞ տղանակ է տօնից 654:

Յ

Յանկութիւն եւ հեշտութիւն՝ մեղք եւ անօրէնութիւնք ո՞րքանիւք զանազանին 212:

Փ

Փախչիլ պարտ է մեզ ի փրկիչն մեր Զրիստոս երեք իրօք 608:
 Փայլական յատկութիւնն երեք 630:
 Փայլումն դիմաց սրբոյն Ստեփաննոսի՝ ունի երկոտասան պատճառս.
 եւ թէ սուտ վկայք ո՞յք, եւ զի՞նչ վկայէին 677:
 Փայտ խաչի՞ն եկեսցէ թէ ձեւ խաչին ի միւսանգամ գալստեանն. եւ թէ

քանի՞ Էր փայտ խաչին 538:

Փարաւօսի երազոյ մեկնութիւնս 46:

Փեսային գնալն ի տուն հարսին եւ բերելն ի պսակ 202:

Փողոյ ձայնին ի դատաստան կոչիլն ամենայն մարդկան. եւ թէ որպէս սարսելի Է 628:

Փոքրն չորս եղանակաւ ասի. Դաւիթ զո՞ր եղանակն ասէ վասն ինքեան. եւ վասն Է՞ր յայտնէ 658:

Փոքրութիւնս Զրիստոսի չորս եղանակաւ Է իմանալ 662:

Ր

Քահանայապետութիւնս երկրաւոր՝ յերկուս բաժանի 169:

Քահանայութեան եղանակք երեք են 63:

Քահանայութեան եութիւնն զարդարանքն եւ պատահմունքն 179:

Քահանայից կատարելութիւնն զի՞նչ իցէ 166:

Քահանայից յանցանքն չորս պատճառաւ մեծ Է քան զժողովրդեանս. եւ զի՞նչ հնարն 442:

Քահանայից որպէս պարտ Է սրբութիւն եւ իրաւամբք հովուել զժողովուրդն 443:

Քահանայից պատուիլն ի Զրիստոսէ վեց ազգ զգեստիւք 182: Զաղաք կոչիլն եկեղեցւոյս տասն պատճառաւ 708:

Քարկոծմանն Ստեփաննոսի երկոտասան են պատճառք. եւ թէ վասն Է՞ր խցին զականջս իւրեանց հրեայքն 680:

Քարոզողի զգուշանալն լեզուի եւ նայիլն ի վեց իրս 227:

Քարոզն ունի հինգ ինչ 114:

Քարոզ տալ պարտ էի վերայ ննջեցելոց վասն երեք պատճառի 591:

Քնարաւ երգելն մարգարեից զօրհնութիւնն Աստուծոյ. եւ զի՞նչ, եւ եօթն, եւ տասն աղին 660:

Քուն եւ արթնութիւն չորք են 120:

Քրիստոս որպէս եղել մեզ իմաստութիւն արդարութիւն փրկութիւն եւ սրբութիւն խաչին տես 532:

Քրիստոսի ահարկու երեւիլն ի վերայ մեղաւորաց. եւ քաղցր ի վերայ արդարոց ի դատելն. եւ զի՞նչ աղեղն նորա 633:

Քրիստոսի գալուստն Է երկու. ի յօր մահուն առանձին. եւ կատարածի առհասարակ 630:

Քրիստոսի դատապարտելն զմեղս ի մարմնի իւրում՝ Է բազում կերպիւ. եւ թէ որպէս լեալ մարմին ըստ նմանութեան մարմնոյ մեղաց 541:

Քրիստոսի երեք ազգ պատուով պատուելն զքահանայս 182:

Քրիստոսի երեք ինչ կամիլն ի սպասաւորաց եկեղեցւոյ 177:

Քրիստոսի եւ առաքելոց ճշմարիտ բարեկամ գոլն աշխարհի 554:

Քրիստոսի հարցանելն ցՍիմօն վասն սիրոյ երիցս. եւ զի՞նչ երիցս արածեայն 686:

Քրիստոսի մահուան՝ փոխարեն ոչ կարեն լինիլ չարչարանք սրբոցն. ուսուցանէ բնութիւնն. կարիքն. կարգն. եւ պատճառն 555:

Քրիստոսի Դ եղանակաւ եղբայր կոչիլն մեզ 662:

Քրիստոսի պատուելն հաւասար զմայր իւր եւ զաւետարանիչն Յօհաննէս երեք եղանակաւ 699:

Քրիստոսի սիրոյ օրինակ գոլն 89:

Քրիստոսի վեց գլխաւոր փրկութիւն գործելն մարդկան խաչիւն 542:



Օգնական քրիստոնէից չորս են յաւուրս նեռին. եւ թէ որպէս կարծին
աւուրք նորա եւ սատակի 612:

Օգուտն մեր գինչ իցէ ի սրբոցն՝ ցուցանէ առաքեալն չորս իրօք 559:

Օգտութիւն եւ շահ ողորմութեանն տասն եղանակաւ ցուցանի 368:

Օծանիլն մեռնաւ մկրտեցելոց 147:

Օծին հինգ իրօք նորոգելն գիանդերծն յօրինակ մեղաւորաց 472:

Օծիւ տանջելոյ պատճառքն գմեծն Գրիգորիոս 419:

Օձն խաբօղ՝ ի հեշտ ցանկութիւնս նշանակի 211:

Օձն պղնձի՝ ի խաչն օրինակի 535:

Օրէնքն վասն Է՞ր յանապատի տուան 474:

Օրինաց կատարումն՝ երեք օգտութիւն ունի 10:

Օրինակ պատրաստիլոյ յառաջ քան գմահն 597:

Օրինաց յանցաւորքն են կրկին 12:

Օր մահուն եւ ահագին դատաստանին որպէս Է չար 286:

Օր յարութեան եւ կատարածի ոչ գիտիլն՝ ցուցանի օգտակար 616:

Օր չար որն իցէ որ ասէ. (յաւուր չարէ փրկէ գնա Տէր) 380: